Հայկական գիտահետազոտական հանգույց

Armenian Research & Academic Repository

BY NC SA

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1291

22
Ц-76
1871

2010

# ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

## ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

# ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ԸՍՏ ՀԱՐԱԶԱՏ ՆԱԽՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՐՁ
ՀԱՒԱՏԱՐԻՄ ԲԱՑԱՅԱՅՏՈՒԹԵԱՄԲ Ի ՀԱՍԱՐԱԿԱՑ
ԼԵԶՈՒԻ

ՉՈՐՐՈՐԴ ՏԻՊ

ՀԱՆԴԵՐՁ ՎԿԱՅՈՒԹԵԱՄԲ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Յ. ՄԻՆԱՍԵԱՆ

1871

30359-42

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

01

12992-58

# ՑԱՆԿ

## ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ


| | | | Երես |
|---|---|---|---|
| Աւետարան ըստ Մատթէոսի | | | 1 |
| Աւետարան ըստ Մարկոսի | | | 107 |
| Աւետարան ըստ Ղուկասու | | | 172 |
| Աւետարան ըստ Յովհաննու | | | 284 |
| Գործք Առաքելոց | | | 373 |
| Թուղթ Պօղոսի Առ Հռովմայեցիս | | | 485 |
| » | » | Առ Կորնթացիս Առաջին | 534 |
| » | » | Առ Կորնթացիս Երկրորդ | 581 |
| » | » | Առ Գաղատացիս | 612 |
| » | » | Առ Եփեսացիս | 628 |
| » | » | Առ Փիլիպեցիս | 646 |
| » | » | Առ Կողոսացիս | 658 |
| » | » | Առ Թեսաղոնիկեցիս Առաջին | 669 |
| » | » | Առ Թեսաղոնիկեցիս Երկրորդ | 679 |
| » | » | Առ Տիմոթէոս Առաջին | 685 |
| » | » | Առ Տիմոթէոս Երկրորդ | 698 |
| » | » | Առ Տիտոս | 708 |
| » | » | Առ Փիլիմոն | 714 |
| » | » | Առ Եբրայեցիս | 716 |
| » | Կաթուղիկեայց Յակովբու | | 752 |
| » | » | Պետրոսի Առաջին | 764 |
| » | » | Պետրոսի Երկրորդ | 778 |
| » | » | Յովհաննու Առաջին | 786 |
| » | » | Յովհաննու Երկրորդ | 799 |
| » | » | Յովհաննու Երրորդ | 801 |
| » | » | Յուդայի Առաքելոյ | 802 |
| Յայտնութիւն Յովհաննու Առաքելոյ | | | 806 |

# ԱՒԵՏԱՐԱՆ

## ԸՍՏ

# ՄԱՏԹԷՈՍԻ

---

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի որդւոյ Դաւթի որդւոյ Աբրահամու ։

2 Աբրահամ ծնաւ զԻսահակ․ Իսահակ ծնաւ զՅակոբ․ Յակոբ ծնաւ զՅուդա, և զեղբարս նորա ։

3 Յուդա ծնաւ զՓարէս և զԶարա ՚ի Թամարայ․ Փարէս ծնաւ զԵզրոմն․ Եզրոմն ծնաւ զԱրամ ։

4 Արամ ծնաւ զԱմինադաբ․ Ամինադաբ ծնաւ զՆաասոնն․ Նաասոնն ծնաւ զՍաղմոնն ։

5 Սաղմոնն ծնաւ զԲոոս ՚ի Հռեքաբայ․ Բոոս ծնաւ զՈվբեթ ՚ի Հռութայ․ Ովբեթ ծնաւ զՅեսսէ․ Յեսսէ ծնաւ զԴաւիթ արքայ ։

6 Դաւիթ արքայ ծնաւ զՍողոմոնն ՚ի կնոջէն Ուրիայ ։

7 Սողոմոնն ծնաւ զՌոբովամ․ Ռոբովամ ծնաւ զԱբիա․ Աբիա ծնաւ զԱսափ ․

8 Ասափ ծնաւ զՅովսափատ․ Յովսափատ ծնաւ զՅովրամ․ Յովրամ ծնաւ զՈզիա ։

9 Ոզիա ծնաւ զՅովաթամ․ Յովաթամ ծնաւ զԱքազ․ Աքազ ծնաւ զԵզեկիա ։

10 Եզեկիա ծնաւ զՄանասէ․ Մա-

1 ա ԱԲՐԱՀԱՄԻ որդի բ Դաւթի որդի Յիսուս Քրիստոսի գ ծննդեան գիրք ․

2 դ Աբրահամ ծնաւ Իսահակին ․ ե Իսահակ ծնաւ Յակոբին ․ զ Յակոբ ծնաւ Յուդային եւ նորա եղբայրներուն ։

3 է Յուդային ծնաւ Փարէսին եւ Զարային Թամարէն ․ ը Փարէս ծնաւ Եզրոմին ․ Եզրոմ ծնաւ Արամին ։

4 Արամ ծնաւ Ամինադաբին ․ Ամինադաբ ծնաւ Նաասոնին ․ Նաասոն ծնաւ Սաղմոնին ։

5 Սաղմոն ծնաւ Բոոսին՝ Հռեքաբայէն ․ Բոոս ծնաւ Ովբեթին՝ Հռութէն ․ Ովբեթ ծնաւ Յեսսէին ․ թ Յեսսէն ծնաւ Դաւիթ թագաւորին ։

6 ժ Դաւիթ թագաւորը ծնաւ Սողոմոնին Ուրիայի կնկանէն ․

7 ի Սողոմոն ծնաւ Ռոբովամին ․ Ռոբովամ ծնաւ Աբիային ․ Աբիան ծնաւ Ասափին ․

8 Ասափ ծնաւ Յովսափաթին ․ Յովսափաթ ծնաւ Յորամին ․ Յորամ ծնաւ Ոզիային ․

9 Ոզիան ծնաւ Յովաթամին ․ Յովաթամ ծնաւ Աքազին ․ Աքազ ծնաւ Եզեկիային ․

10 լ Եզեկիա ծնաւ Մանասէին ․

ա Ծննդ. ԺԲ. 3. ԻԲ. 18. Գաղ. Գ. 16.
բ Սաղ. ՃԼԲ. 11. Եսայ. ԺԱ. 1. Երեմ. ԻԳ. 5. Մատթ. ԻԲ. 42. Յովհ. Է. 42. Գործ. Բ. 30. ԺԳ. 23. Հռովմ. Ա. 3.
գ Ղուկ. Գ. 23.
դ Ծննդ. ԻԱ. 2.
ե Ծննդ. ԻԵ. 26.
զ Ծննդ. ԻԹ. 35.
է Ծննդ. ԼԸ. 27.
ը Հռութ. Դ. 18. Ա Մնաց. Բ. 5, 9, ևն.
թ Ա Թագ. ԺԶ. 1. ԺԷ. 12.
ժ Բ Թագ. ԺԲ. 24.
ի Ա Մնաց. Գ. 10, ևն.
լ Դ Թագ. Ի. 21. Ա Մնաց. Գ. 13.

7/... 1922

նասէ ծնաւ զԱմոնն · Ամոն ծնաւ
զՅովսիա ։
11 Յովսիա ծնաւ զՅեքոնիա, եւ
զեղբարս նորա առ գերութեամբն
Բաբելացւոց ։
12 Յետ գերութեանն Բաբելացւոց
ծնաւ Յեքոնիա զՍաղաթիէլ · Սա-
ղաթիէլ ծնաւ զԶօրաբաբէլ ։
13 Զօրաբաբէլ ծնաւ զԱբիուդ ·
Աբիուդ ծնաւ զԵղիակիմ · Եղիա-
կիմ ծնաւ զԱզովր ։
14 Ազովր ծնաւ զՍադովկ · Սա-
դովկ ծնաւ զԱքիմ · Աքիմ ծնաւ
զԵղիուդ ։
15 Եղիուդ ծնաւ զԵղիազար · Ե-
ղիազար ծնաւ զՄատթան · Մատթան
ծնաւ զՅակովբ ։
16 Յակովբ ծնաւ զՅովսէփ զայրն
Մարեմայ՝ որում խօսեցեալ զՄա-
րիամ կոյս · յորմէ ծնաւ Յիսուս, որ
անուանեցաւ Քրիստոս ։
17 Արդ՝ ամենայն ազգք յԱբրա-
համէ մինչեւ ՚ի Դաւիթ՝ ազգք չո-
րեքտասանք · եւ ՚ի Դաւթէ մինչեւ
՚ի գերութիւնն Բաբելացւոց՝ ազգք
չորեքտասանք · եւ ՚ի գերութենէն
Բաբելացւոց մինչեւ ՚ի Քրիստոս՝
ազգք չորեքտասանք ։
18 Եւ ծ Յիսուսի Քրիստոսի ծնունդն
էր այսպէս ։ Խօսեցեալ զմայր նորա
Մարիամ Յովսէփու, մինչչեւ եկեալ
առ միմեանս՝ գտաւ յղացեալ ՚ի Հո-
գւոյն Սրբոյ ։
19 Եւ Յովսէփ այր նորա, քանզի
արդար էր՝ եւ ոչ կամէր առակել
զնա, խորհեցաւ լռելեայն արձա-
կել զնա ։
20 Եւ մինչդեռ նա զայս ածէր
զմտաւ, ահա հրեշտակ Տեառն ՚ի
տեսլեան երեւեցաւ նմա՝ եւ ասէ ·
Յովսէփ որդի Դաւթի՝ մի երկնչիր

Մանասէ ծնաւ Ամոնին · Ամոն ծը-
նաւ Յովսիային ·
11 ժ Յովսիան ծնաւ Յեքոնիային՝
եւ նորա եղբայրներին, ի Բաբելա-
ցոց գերութեան ժամանակին ·
12 Բաբելացոց գերութիւնիցն ետեւ՝
լ Յեքոնիան ծնաւ Սաղաթիէլին ·
Սաղաթիէլ ծնաւ խ Զօրաբաբէլին ·
13 Զօրաբաբէլ ծնաւ Աբիուդին ·
Աբիուդ ծնաւ Եղիակիմին · Եղիա-
կիմ ծնաւ Ազորին ·
14 Ազոր ծնաւ Սադօկին · Սադօկ
ծնաւ Աքիմին · Աքիմ ծնաւ Եղի-
ուդին ·
15 Եղիուդ ծնաւ Եղիազարին ·
Եղիազար ծնաւ Մատթանին · Մատ-
թան ծնաւ Յակոբին ·
16 Յակոբ ծնաւ Յովսէփ՝ Մարիա-
մին մարդը · որ նորան նշանած էր
Մարիամ կոյսը · որ նորանից ծնաւ
Յիսուս՝ որ կոչուեցաւ Քրիստոս ։
17 Այսպէս՝ ամէն ազգերը Աբրա-
համիցը մինչեւ Դաւիթը՝ տասնուչորս
ազգ (են)՝ եւ Դաւիթից մինչեւ Բա-
բելացոց գերութիւնը տասնուչորս
ազգ · եւ Բաբելացոց գերութենիցը
մինչեւ Քրիստոս՝ տասնուչորս ազգ ։
18 Եւ ծ Յիսուսի Քրիստոսի ծը-
նունդն այսպէս էր · նորա մայր Մա-
րիամը նշանած էր Յովսէփին, եւ
դեռ որ իրար մօտ չէին եկած՝ ինքը
կ Սուրբ Հոգուցն յղացած գտաւ ։
19 Եւ նորա մարդ Յովսէփը՝ որով-
հետեւ արդար (մարդ) էր, եւ չէր
ուզում որ նորան հ խայտառակ ա-
նէ, միտք արաւ որ ձայն չը հա-
նած՝ արձակէ նորան ։
20 Եւ դեռ որ նա այս մտածմունքիս
մէջն էր՝ ահա Տէրին հրեշտակը երա-
զում երեւեցաւ նորան եւ ասաց ·
Դաւթի որդի Յովսէփ՝ մի վախենար՝

ժ Ա Մնաց · Գ · 15. 16 ։
ի Դ Թագ · ԻԴ · 14—16 ։ ԻԵ · 11. Բ Մնաց · ԼԶ · 10 ։ 20 ։ Երեմ · ԻԷ · 20 ։ ԼԹ · 9 ։ ԾԲ · 11. 15. 28, 29 ։ 30 ։ Դան · Ա · 2 ։
լ Ա Մնաց · Գ · 17. 19 ։
խ Եզր · Գ · 2 ։ Ե · 2 ։ Նէեմ · ԺԲ · 1 ։ Անգ · Ա · 1 ։
ծ Ղուկ · Ա · 27 ։
կ Ղուկ · Ա · 35 ։
հ Բ Օրէն · ԻԴ · 1 ։

առնուլ առ քեզ զՄարիամ կին քո. քանզի որ ՚ի նմանէ ծնեալ է՝ ՚ի Հոգւոյն Սրբոյ է։

21 Ծնցի որդի, եւ կոչեսցես զանուն նորա Յիսուս. զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր ՚ի մեղաց իւրեանց։

22 Այս ամենայն եղեւ, զի լցցի որ ասացաւն ՚ի Տեառնէ ՚ի ձեռն Եսայեայ մարգարէի։

23 Ահա կոյսն յղասցի՝ եւ ծնցի որդի, եւ կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ. որ թարգմանի՝ ընդ մեզ Աստուած։

24 Եւ զարթուցեալ Յովսէփ ՚ի քնոյ անտի, արար որպէս հրամայեաց նմա հրեշտակն Տեառն, եւ առ յինքն զկին իւր։

25 Եւ ոչ գիտէր զնա, մինչեւ ծնաւ զորդին իւր զանդրանիկ. եւ կոչեաց զանուն նորա Յիսուս։

քո Մարիամ կինդ քեզ ՚մօտ առնել. ´ պատճառանոր նորանում ծընվածը՝ Սուրբ Հոգուցն է։

21 ˀ Նա որդի կը ծնի եւ նորա անունը * Յիսուս կը դնես. նորա համար որ ˁ նա իրեն ժողովուրդ կազատէ իրենց մեղքերիցը։

22 Բայց այս ամէն բաներս այսպէս էղաւ՝ որ կատարվի Տէրիցն ասված բանը Եսայի մարգարէին ձեռովը (թէ).

23 ∴ Ահա կոյսը կը յղանայ եւ որդի կը ծնի. եւ նորա անունին Էմմանուէլ կը կանչեն. որ նշանակում է՝ Աստուած մեզ հետ։

24 Եւ Յովսէփ որ քնից զարթնացաւ՝ արաւ ինչպէս որ Տէրին հրեշտակը հրամայեց իրեն. եւ առաւ իրեն կինը իրեն մօտ։

25 Եւ չէր գիտում նորան, մինչեւ որ նա իրեն = առաջինեկ որդին ծընաւ. եւ նորա անունը կոչեց Յիսուս։

## ԳԼ. Բ

1 Եւ ի ծնանելն Յիսուսի ի Բեթղեհէմ Հրէաստանի յաւուրս Հերովդի արքայի, ահա մոգք յարեւելից եկին յԵրուսաղէմ։

2 Եւ ասեն. Ո՞ւր է որ ծնաւ արքայն Հրէից. զի տեսաք զաստղն նորա յարեւելս, եւ եկաք երկրպագանել նմա։

3 Եւ իբրեւ լուաւ արքայ Հերովդէս՝ խռովեցաւ, եւ ամենայն Երուսաղէմ ընդ նմա։

4 Եւ ժողովեալ զամենայն զքահանայապետս եւ զդպիրս ժողովրդեանն, հարցանէր ՚ի նոցանէ՝ թէ Ո՞ւր ծնանիցի Քրիստոսն։

5 Եւ նոքա ասեն ցնա. ՚Ի Բեթ-

1 Եւ երբոր = Յիսուս ծնվաւ Հրէաստանին երկրի Բեթղեհէմում՝ Հերոդէս թագաւորի օրերին, ահա մոգեր ÷ արեւելքից եկին Երուսաղէմ,

2 Եւ ասացին. ÷ Ո՞րտեղ է որ ծնվաւ Հրէաներին թագաւորը. որ մենք ∓ նորան աստղը տեսինք արեւելքում, եւ եկինք որ երկրպագութիւն անենք նորան։

3 Եւ երբոր Հերոդէս թագաւորն աս լսեց՝ չփոթվեցաւ, եւ ամէն Երուսաղէմն էլ նորա հետ։

4 Եւ ամէն ⊢ քահանայապետներին ու ⊣ ժողովրդի կարգացողները ժողովեց եւ նորանցից ⊢ հարցուց, թէ Քրիստոսը ո՞րտեղ պիտի ծնվի։

5 Եւ նորանք ասացին նորան. թէ

´ Ղուկ. Ա. 35։
ˀ Ղուկ. Ա. 31։
* Այսինքն՝ Փրկիչ։
ˁ Գործ. Դ. 12։ Ե. 31. ԺԳ. 23. 38։
∴ Եսայ. Է. 14։
= Ելից. ԺԳ. 2։ Ղուկ. Բ. 7. 21։
—
= Ղուկ. Բ. 4. 6, 7։
÷ Ծննդ. Ժ. 30։ ԻԵ. 6։ Գ Թագ. Դ. 30։
÷ Ղուկ. Բ. 11։
∓ Թուոց. ԻԴ. 17։ Եսայ. Կ. 3։
⊢ Բ Մնաց. ԼԶ. 14։
⊣ Բ Մնաց ԼԴ. 13։
⊢ Մաղ. Բ. 7։

ղեհէմ Հրէաստանի. զի այսպէս գրեալ է 'ի ձեռն մարգարէին ։

6 Եւ դու Բեթղեհէմ երկիր Յուդայ՝ ոչինչ կրսեր ես յիշխանս Յուդայ. 'ի քէն ելցէ ինձ իշխան, որ հովուեսցէ զժողովուրդ իմ զԻսրայէլ ։

7 Յայնժամ Հերովդէս գաղտ կոչեաց զմոգսն, եւ ստուգեաց 'ի նոցանէ զժամանակ աստեղն երեւելոյ ։

8 Եւ արձակեաց զնոսա 'ի Բեթղեհէմ, ասէ. Գնացէք ստուգեցէք վասն մանկանն, եւ յորժամ գտանիցէք՝ ազդ արասջիք ինձ. զի եւ ես եկեալ երկիրպագից նմա ։

9 Եւ նոքա իբրեւ լուան 'ի թագաւորէն՝ գնացին. եւ ահա աստղն զոր տեսին յարեւելս՝ առաջնորդէր նոցա, մինչեւ եկեալ եկաց 'ի վերայ՝ ուր էր մանուկն ։

10 Իբրեւ տեսին զաստղն, խնդացին յոյժ ուրախութիւն մեծ ։

11 Եւ իբրեւ մտին 'ի տունն, տեսին զմանուկն հանդերձ Մարիամաւ մարբն իւրով, եւ անկեալ երկիրպագին նմա. եւ բացեալ զգանձս իւրեանց՝ մատուցին նմա պատարագս՝ ոսկի եւ կնդրուկ եւ զմուռս ։

12 Եւ հրաման առեալ 'ի տեսլեան չդառնալ անդրէն առ Հերովդէս՝ ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց ։

13 Եւ իբրեւ գնացին նոքա անտի, ահա հրեշտակ Տեառն երեւէր 'ի տեսլեան Յովսեփու, եւ ասէր. Արի առ զմանուկդ եւ զմայր իւր՝ եւ փախիր յԵգիպտոս, եւ անդ լինիջիր մինչեւ ասացից քեզ, քանզի 'ի խնդիր է Հերովդէս կորուսանել զմանուկդ ։

Հրէաստանի Բեթղեհէմումը. ինչու որ՝ այսպէս է գրված մարգարէի ձեռքը.

6 ա Դու էլ Բեթղեհէմ. Յուդայի երկիր՝ բնաւ փոքր չես Յուդայի իշխաններին մէջ. քեզանից ինձ իշխան պիտի դուրս գայ, բ որ իմ Իսրայէլ ժողովուրդս կառավարէ ։

7 Այն ժամանակը Հերովդէս թագաւորը մոգերը իրեն մօտ կանչեց, եւ նորանցից այն երեւցած աստղի ժամանակին հաստատ տեղեկացաւ.

8 Եւ նորանց դէպի Բեթղեհէմ ուղարկեց եւ ասաց. Գնացէք շիտակ իմացէք՝ այն երախային համար, եւ երբոր կը գտնէք, ինձ էլ իմաց արէք. որ ես էլ գամ նորան երկրպագութիւն անեմ ։

9 Եւ նորանք երբոր (սա) լսեցին թագաւորիցը՝ գնացին. եւ ահա այն աստղը որ արեւելքումը տեսել էին, ճանապարհը ցոյց տալով նորանց՝ մինչեւ որ եկաւ կանգնեց այն տեղին վերայ, որ տեղ որ երախան էր ։

10 Երբոր այն աստղը տեսին, շատ մեծ ուրախութեամբ ուրախացան ։

11 Եւ երբոր տունը մտին, տեսին երախան իրեն մայր Մարիամին հետ, եւ երեսներին վերայ ընկնելով երկրպագութիւն արին նորան. եւ իրենց գանձերը բացին՝ եւ գ ընծայ տուին նորան. ոսկի եւ կնդրուկ եւ զմուռս.

12 Եւ դ երազում հրաման առին՝ որ կրկին յետ չդառնան Հերովդէսի մօտ, և ուրիշ ճանապարհով գնացին իրենց աշխարհը ։

13 Եւ երբոր նորանք այն տեղիցը գնացին. ահա Տէրին հրեշտակը երազում երեւցաւ Յօսէփին՝ եւ ասաց. Վեր կաց առ երախան եւ իրեն մայրը եւ փախիր Եգիպտոս. եւ այն տեղ մնա մինչեւ որ ասեմ քեզ, պատճառն որ՝ Հերովդէսն ուզումէ այդ երախայդ կորցնել ։

ա Միք. Ե. 2. Յովհ. Է. 42. | բ Յայտ. Բ. 27. | գ Սաղ. ՀԲ. 10. | Եսայ. Կ. 6. | դ Մատ. Ա. 20.

14 Եւ նա յարուցեալ առ զմանուկն եւ զմայր իւր գիշերի՝ եւ գնաց յԵգիպտոս, եւ անդ էր մինչեւ ցվախճան Հերովդի։

15 Զի լցցի ասացեալն 'ի Տեառնէ 'ի ձեռն մարգարէին, որ ասէ. Յեգիպտոսէ կոչեցից զորդի իմ։

16 Յայնժամ իբրեւ ետես Հերովդէս թէ խաբեցաւ 'ի մոգուց անտի, բարկացաւ յոյժ. եւ առաքեաց կոտորեաց զամենայն մանկունս որ էին 'ի Բեթղեհէմ եւ յամենայն սահմանս նորա՝ յերկեմենից եւ 'ի խոնարհ, ըստ ժամանակին զոր ստուգեաց 'ի մոգուց։

17 Յայնժամ կատարեցաւ ասացեալն 'ի ձեռն Երեմիայ մարգարէի՝ որ ասէ.

18 Ձայն գուժեաց 'ի Հռամայ, ողբումն եւ լալումն եւ աշխարումն յոյժ. Հռաքէլ լայր զորդիս իւր, եւ ոչ կամէր մխիթարել՝ զի ոչ էին։

19 Եւ 'ի վախճանելն Հերովդի, ահա հրեշտակ Տեառն 'ի տեսլեան երեւէր Յովսեփայ յԵգիպտոս։

20 Եւ ասէ. Արի՛ առ զմանուկդ եւ զմայր իւր, եւ գնա յերկիրն Իսրայելի. զի մեռան որ խնդրէին զանձն մանկանդ։

21 Եւ նա յարուցեալ առ զմանուկն եւ զմայր նորա, եւ եկն յերկիրն Իսրայելի։

22 Եւ իբրեւ լուաւ եթէ Արքեղայոս թագաւորեաց Հրէաստանի փոխանակ Հերովդի հօրն իւրոյ, երկեաւ երթալ անդր. եւ հրաման առեալ 'ի տեսլեան, գնաց 'ի կողմանս Գալիլեացւոց։

23 Եւ եկեալ բնակեցաւ 'ի քաղաքին՝ որ կոչէր Նազարեթ. զի լցցի բանն մարգարէիցն, թէ Նազովրեցի կոչեսցի։

14 Եւ նա վերկացաւ առաւ երախան եւ իրեն մայրը գիշերով եւ գնաց Եգիպտոս. եւ այն տեղ էր մինչեւ Հերովդէսի մեռնիլը։

15 Որ կատարուի Տէրոջն ասածը մարգարէի ձեռովն՝ որ ասում է. „Եգիպտոսից կը կանչեմ իմ որդին։

16 Այն ժամանակը երբոր Հերովդէս տեսաւ՝ թէ այն մոգերից խաբուեցաւ, շատ բարկացաւ. եւ ուղարկեց ամէն երախաներն որ Բեթղեհէմումն ու նորա չորս կողմումն էին՝ երկուտարեկաններից [illegible] եւ նորանցից ցածերը կոտորեց, այն ժամանակին նայելով որ մոգերիցն իմացաւ։

17 Այն ժամանակը կատարուեցաւ Երեմիա մարգարէին ձեռով ասածը՝ որ ասում է.

18 Լալոյ և ձայն լսուեցաւ Հռամային մէջ. սուգ եւ լաց եւ շատ մեծ ողբ. Հռաքէլ իրեն որդոց վերայ լաց էր լինում՝ եւ չէր կամենում որ մխիթարուի. ինչու որ՝ նորանք չը կային։

19 Եւ երբոր Հերովդէս մեռաւ, ահա Տէրին հրեշտակը Եգիպտոսի մէջ երազում երեւեցաւ Յովսէփին,

20 Եւ ասաց. Վեր կաց առ երախան եւ իրեն մայրը եւ գնա Իսրայէլացոց երկիրը. պատճառանոր՝ մեռան նորանք՝ որ երախայիդ կեանքն ուզումէին առնել։

21 Եւ նա վերկացաւ, երախան եւ իրեն մայրը առաւ եւ եկաւ Իսրայէլացոց երկիրը։

22 Եւ երբոր լսեց՝ թէ Արքեղայոս Հրէաստանին վերայ թագաւորութիւն է անում իրեն հայր Հերովդէսին տեղը, վախեցաւ գնալ այն տեղ. եւ ժ երազում հրաման առնելով գնաց Գալիլեայի կողմերը։

23 Եւ եկաւ բնակուեցաւ այն քաղաքումն՝ որ ի Նազարէթ էր ասվում. որ կատարուի մարգարէներին կ խօսքը՝ թէ Նազօրեցի կը կոչուի։

ւ Ովսէ. ԺԱ. 1։ | ժ Դէ. Գ. 13։ | ի Յովհ. Ա. 45։ | Ա. Թագ. Ա. 11։
ե Երեմ. ԼԱ. 15։ | Ղու. Բ. 39։ | կ Դատ. ԺԳ. 5։ | —

## ԳԼ. Գ.

1 Յաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս մկրտիչ քարոզել յանապատին Հրէաստանի։

2 Եւ ասէր. Ապաշխարեցէ՛ք՝ զի մերձեալ է արքայութիւնն երկնից։

3 Զի սա է՝ վասն որոյ ասացաւ 'ի ձեռն Եսայեայ մարգարէի, որ ասէ. Ձայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք զճանապարհ Տեառն, եւ ուղիղ արարէք զշաւիղս նորա։

4 Եւ ինքն Յովհաննէս ունէր հանդերձ 'ի ստեւոյ ուղտու, եւ գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր. եւ կերակուր նորա էր մարախ եւ մեղր վայրենի։

5 Յայնժամ ելանէին առ նա ամենայն Երուսաղէմացիք՝ եւ ամենայն Հրէաստան՝ եւ ամենայն կողմն Յորդանանու։

6 Եւ մկրտէին 'ի նմանէ 'ի Յորդանանու, եւ խոստովան լինէին ըզ մեղս իւրեանց։

7 Եւ տեսեալ զբազումս 'ի սադուկեցւոցն եւ 'ի փարիսեցւոց եկեալս 'ի մկրտութիւն նորա, ասէ ցնոսա. Ծնունդք իժից՝ ո՞ եցոյց ձեզ փախչել 'ի բարկութենէն, որ գալոց է։

8 Արարէք այսուհետեւ պտուղ արժանի ապաշխարութեան։

9 Եւ մի համարիցիք ասել յանձինս՝ թէ Ունիմք մեք հայր զԱբրահամ. ասեմ ձեզ, Զի կարող է Աս-

1 Այն օրերը ա Յօհաննէս մկրտիչն եկաւ, որ Հրէաստանի բ անապատումը քարոզ տայ,

2 Եւ ասումէր. Ապաշխարեցէ՛ք՝ որ գ երկնքի թագաւորութիւնը մօտեցել է։

3 Ինչու որ սա է՝ որ նորա համար ասելէ Եսայի մարգարէին ձեռովը, որ ասումէ. դ Կանչօղի ձայն անապատումը՝ թէ ե պատրաստ արէք Տէրին ճանապարհը, եւ շիտակ արէք նորա գնալոյ ճանապարհը։

4 Եւ զ Յօհաննէս ինքն հագուստ ունէր է ուղտու բրդից եւ կաշիէ գօտին իրեն մէջքին, եւ նորա կերակուրը ը մարախ էր եւ թ վայրի մեղր։

5 ժ Այն ժամանակը ամէն Երուսաղէմացիք եւ ամէն Հրէաստան եւ Յորդանանու ամէն կողմերը նորա մօտ էին գալս գնում,

6 Եւ նորանից մկրտվում Յորդանանին մէջ եւ ի իրենց մեղքերը խոստովանում։

7 Եւ (ինքն) որ տեսաւ թէ սադուկեցիներիցն ու փարիսեցիներիցը շատերը եկել էին որ իրանից մկրտվէին, ասաց նորանց. լ Իժի ձագուկներ՝ ձեզ ով սովորցուց խ փախչիլ այն բարկութենից, որ գալու է։

8 Այսուհետեւ ապաշխարութեան արժանի պտուղ արէք։

9 Եւ չկարծէք ասել ձեր միջումը՝ թէ. ծ Մենք Աբրահամը ունենք հայր. ասումեմ ձեզ, թէ Աստուած

ա Մարկ. Ա. 4. 15. Ղուկ. Գ. 2, 3. Յովհ. Ա. 28.
բ Յես. ԺԳ. 10.
գ Դան. Բ. 44. Գլ. Դ. 17. Ժ. 7.
դ Եսայ. Խ. 3. Մարկ. Ա. 3. Ղու. Գ. 4. Յովհ. Ա. 23.
ե Ղու. Ա. 76.
զ Մարկ. Ա. 6.
է Դ Թագ. Ա. 8. Զաք. ԺԳ. 4.
ը Ղև. ԺԱ. 22.
թ Ա Թագ. ԺԴ. 25. 26.
ժ Մարկ. Ա. 5. Ղու. Գ. 7.
ի Գործ. ԺԹ. 4. 18.
լ Մատ. ԺԲ. 34. ԻԳ. 33. Ղու. Գ. 7, 8, 9.
խ Հռովմ. Ե. 9. Ա Թես. Ա. 10.
ծ Յովհ. Ը. 33. 39. Գործ. ԺԳ. 26. Հռովմ. Դ. 1. 12. 16.

տուած ՚ի քարանցս յայսցանէ յա-
րուցանել որդիս Աբրահամու ։
10 Զի ահաւասիկ տապար առ ար-
մին ծառոց դնի . ամենայն ծառ որ
ոչ առնիցէ պտուղ բարի , հատա-
նի եւ ՚ի հուր արկանի ։
11 Ես մկրտեմ զձեզ ջրով յապաշ-
խարութիւն . բայց որ զկնի իմ գայ՝
հզօրագոյն է քան զիս , եւ ես չեմ
բաւական բառնալ զկօշիկս նորա .
նա մկրտեսցէ զձեզ ՚ի Հոգին Սուրբ՝
եւ ՚ի հուր ։
12 Որոյ հեծանոցն ՚ի ձեռին իւրում.
եւ սրբեսցէ զկալ իւր , եւ ժողո-
վեսցէ զցորեանն ՚ի շտեմարանս իւր,
եւ զյարդն այրեսցէ անշէջ հրով ։
13 Յայնժամ գայ Յիսուս ՚ի Գա-
լիլեէ ՚ի Յորդանան առ Յովհաննէս՝
մկրտել ՚ի նմանէ ։
14 Եւ Յովհաննէս արգելու զնա եւ
ասէ . Ինձ պիտոյ է ՚ի քէն մկրտել՝
եւ դու առ իս գաս ։
15 Պատասխանի ետ Յիսուս՝ եւ
ասէ ցնա . Թոյլ տուր այժմ , զի
այսպէս վայել է մեզ լնուլ զամե-
նայն արդարութիւն . եւ ապա թոյլ
ետ նմա ։
16 Եւ իբրեւ մկրտեցաւ Յիսուս ,
ել վաղվաղակի ՚ի ջրոյ անտի . եւ
ահա բացան նմա երկինք . եւ ետես
զՀոգին Աստուծոյ՝ զի իջանէր իբ-
րեւ զաղաւնի , եւ գայր ՚ի վերայ
նորա ։
17 Եւ ահա ձայն յերկնից՝ որ ա-
սէր . Դա է որդի իմ սիրելի , ընդ
որ հաճեցայ ։

կարող է էս քարերիցս որդիք՝ դուրս
հանել Աբրահամու համար ։
10 Ինչու որ՝ հիմիկ կացինը ծառե-
րի արմատին մօտ դրած է . ամէն
[ե] ծառ որ բարի պտուղ չի բերում ,
կը կտրվի եւ կրակին մէջ կը ձգվի
11 [զ] Ես ջրով եմ մկրտում ձեզ՝
ապաշխարութեան համար . բայց նա՝
որ ինձանից ետեւ կը գայ , ինձանից
զօրաւոր է . եւ ես արժանի չեմ նո-
րա կօշիկները վեր առնել . [է] նա ձեզ
Սուրբ Հոգով եւ կրակով կը մկրտէ .
12 Որ [ը] հոսելքն իրեն ձեռին է ,
եւ իրեն կալը կը սրբէ եւ ցորենն
կը հաւաքէ իրեն ամբարը , [թ] դար-
մանը անշէջելի կրակով կայրէ ։
13 Այն [ժ] ժամանակը Յիսուս [ի] Գա-
լիլեայիցն եկաւ Յորդանան Յօհան-
նէսին մօտ՝ որ նորանից մկրտվի ։
14 Եւ Յօհաննէսն արգելեց նորան
եւ ասաց . Ինձ պէտք է որ քեզանից
մկրտվիմ՝ եւ դու ինձ մօտ ես գա-
լիս ։
15 Յիսուս պատասխան տուաւ եւ
ասաց նորան . Թող տուր հիմիկ , ին-
չու որ՝ այսպէս կը վայելէ մեզ՝ որ
ամէն արդարութիւնն կատարենք .
եւ յետոյ թող տուաւ նորան ։
16 Եւ երբոր [լ] մկրտվեցաւ Յիսուս՝
շուտով ջրիցը դուրս եկաւ . եւ ա-
հա երկինքը բացվեցաւ նորան համար .
եւ Աստուծոյ [խ] Հոգին տեսաւ որ
իջանում էր աղաւնու պէս եւ գա-
լիս նորա վերայ ։
17 Եւ ահա երկինքերիցը [ծ] ձայն եկաւ՝
որ ասումէր . Դա է իմ սիրելի [կ] Որ-
դիս որ դորան հաւանեցայ ։

[ե] Մատ . Է . 19 . Ղու . ԺԳ . 7 . Յովհ . ԺԵ . 6 .
[զ] Մարկ . Ա . 8 . Ղու . Գ . 16 . Յովհ . Ա . 15 . 26 . 33 . Գործ . Ա . 5 . ԺԱ . 16 . ԺԹ . 4 .
[է] Եսայ . Դ . 4 . ԽԴ . 3 . Մաղ . Գ . 2 . Գործ . Բ . 3 , 4 . Ա Կորնթ . ԺԲ . 13 .
[ը] Մաղ Գ . 3 .
[թ] Մաղ . Դ . 1 . Մատ . ԺԳ . 30 .
[ժ] Մարկ . Ա . 9 . Ղու . Գ . 21 .
[ի] Մատ . Բ . 22 .
[լ] Մարկ . Ա . 10 .
[խ] Եսայ . ԺԱ . 2 . Ղուկ . Գ . 22 . Յովհ . Ա . 32 . 33 .
[ծ] Յովհ . ԺԲ . 28 .
[կ] Սաղ . Բ . 7 . Եսայ . ԽԲ . 1 . Մատ . ԺԲ . 18 . ԺԷ . 5 . Մարկ . Ա . 11 . Ղու . Թ . 35 . Եփես . Ա . 6 . Կող . Ա . 13 . Բ Պետ . Ա . 17 .

—

## ԳԼ. Դ

1 Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատ ՚ի Հոգւոյն՝ փորձել ՚ի Սատանայէ ։

2 Եւ պահեալ զքառասուն տիւ եւ զքառասուն գիշեր՝ ապա քաղցեաւ ։

3 Եւ մատուցեալ փորձիչն՝ ասէ ցնա. Եթէ Որդի ես Աստուծոյ՝ ասա՛ զի քարինքս այսոքիկ հաց լինիցին ։

4 Նա պատասխանի ետ եւ ասէ. Գրեալ է՝ թէ Ո՛չ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ, որ ելանէ ՚ի բերանոյ Աստուծոյ ։

5 Յայնժամ առեալ ածէ զնա Սատանայ ՚ի քաղաքն Սուրբ, եւ կացուցանէ զնա ՚ի վերայ աշտարակի տաճարին ։

6 Եւ ասէ ցնա. Եթէ Որդի ես Աստուծոյ՝ արկ զքեզ աստի ՚ի վայր. զի գրեալ է թէ Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո, եւ ՚ի վերայ ձեռաց բարձցեն զքեզ՝ զի մի երբեք հարցես զքարի զոտն քո ։

7 Ասէ ցնա դարձեալ Յիսուս. Գրեալ է՝ թէ Ո՛չ փորձեսցես զՏէր Աստուած քո ։

8 Դարձեալ առնու ածէ զնա Սատանայ ՚ի լեառն մի բարձր յոյժ, եւ ցուցանէ նմա զամենայն թագաւորութիւնս աշխարհի, եւ զփառս նոցա ։

9 Եւ ասէ ցնա. Զայս ամենայն քեզ տաց՝ եթէ անկեալ երկրպագանիցես ինձ ։

10 Յայնժամ ասէ ցնա Յիսուս. Երթ յետս իմ Սատանայ. զի գրեալ է՝ Տեառն Աստուծոյ քում երկրպագցես, եւ զնա միայն պաշտեսցես ։

1 Այն ժամանակը = Յիսուս ǂ Հոգւովը տարուեցաւ անապատը՝ որ Սատանայէն փորձուի ։

2 Եւ քառասուն ցերեկ ու քառասուն գիշեր ծոմ պահելուն ետեւ՝ անօթեց ։

3 Եւ փորձիչն եկաւ, նորան ասաց. Թէ որ դու Աստուծոյ որդին ես, ասա՛ որ այս քարերս հաց լինին

4 Նա պատասխան տուաւ եւ ասաց. Գրուած է՝ որ, Ո՛չ թէ մինակ հացով կապրի մարդ, այլ ամէն խօսքովը՝ որ ÷ Աստուծոյ բերանէնը դուրս է գալիս ։

5 Այն ժամանակը Սատանան նորան առաւ տարաւ ⊤ սուրբ քաղաքը, եւ տաճարի աշտարակին վերայ կանգնացուց,

6 Եւ նորան ասաց. Թէ որ Աստուծոյ Որդին ես՝ այս տեղէն քեզ վէր ձգէ. ինչու որ գրված է՝ թէ Իւրեն ‡ հրեշտակներին հրամայելէ քեզ համար՝ եւ ձեռներին վերայ կառնեն քեզ՝ որ ընաւ մէկ ժամանակ քո ոտքդ քարի չի դպցնես ։

7 Կրկին Յիսուս նորան ասաց. Գրուած է՝ թէ, ւ Մի՛ փորձեր քո Տէր Աստուածդ ։

8 Սատանան նորէն առաւ նորան տարաւ մէկ շատ բարձր սարի վերայ՝ եւ ցոյց տուաւ նորան աշխարհքի ամէն թագաւորութիւնները եւ նորանց փառքը ։

9 Եւ նորան ասաց. Այս ամէնը քեզ կը տամ՝ թէ որ երեսիդ վերայ ընկնելով ինձ երկրպագութիւն անես

10 Այն ժամանակը Յիսուս նորան ասաց. Դէ՛ն գնա ինձանից Սատանայ. ինչու որ գրված է՝ թէ, ‡ Քո Տէր Աստուծոյդ պէտք է երկրպագութիւն անես եւ միմիայն նորան պաշտես ։]

= Մարկ. Ա. 12, 13։ Ղուկ. Դ. 1. 2։ ǂ Գ Թագ. ԺԸ. 12։ Եզեկ. Գ. 14։ Ը. 3։ ԺԱ։ 1. 24։ Ի. 2։ ԻԳ. 5։ Գործ. Ը. 39։ ÷ Բ Օրին. Ը. 3։ ⊤ Նէեմ. ԺԱ. 1. 18։ Եսայ. ԽԸ. 2։ ԾԲ. 1։ Մատ. ԻԷ. 53։ Յայտ. ԻԱ. 2։ ‡ Սաղ. ՂԱ. 11, 12։ ւ Բ Օրին. Զ. 16։ ‡ Բ Օրին. Զ. 13։ Ժ. 20։ Յես. ԻԴ. 14. Ա Թագ. Է. 3։

11 Ապա եթող զնա Սատանայ. եւ
ահա հրեշտակք մատեան եւ պաշ-
տէին զնա։
12 Եւ իբրեւ լուաւ Յիսուս եթէ
Յովհաննէս մատնեցաւ, մեկնեցաւ
գնաց 'ի Գալիլեա։

13 Եւ թողեալ զՆազարէթ, եկն
բնակեցաւ 'ի Կափառնաում 'ի ծո-
վեզերին, 'ի սահմանս Զաբուղոնի
եւ Նեփթաղիմայ։
14 Զի լցցի բանն՝ որ ասացաւ 'ի
ձեռն Եսայեայ մարգարէի։

15 Երկիր Զաբուղոնի եւ երկիր
Նեփթաղիմայ՝ ճանապարհ ծովու՝
յայնկոյս Յորդանանու, Գալիլեա
հեթանոսաց։
16 Ժողովուրդ որ նստէր 'ի խա-
ւարի՝ ետես լոյս մեծ. եւ որոց նստէ-
ին յաշխարհին եւ 'ի ստուերս
մահու, լոյս ծագեաց նոցա։
17 Յայնմ հետէ սկսաւ քարոզել
Յիսուս՝ եւ ասել. Ապաշխարեցէք
զի մերձեալ է արքայութիւն երկ-
նից։
18 Մինչդեռ զնայր Յիսուս ընդ
եզր ծովուն Գալիլեացւոց, ետես
երկուս եղբարս՝ զՍիմոն զկոչեցեալն
Պետրոս, եւ զԱնդրէաս եղբայր նո-
րա՝ արկեալ ուռկան 'ի ծով. քան-
զի ձկնորսք էին։
19 Եւ ասէ ցնոսա. Եկայք զկնի
իմ, եւ արարից զձեզ որսորդս
մարդկան։
20 Եւ նոքա թողեալ վաղվաղակի
զուռկանսն՝ գնացին զհետ նորա։
21 Եւ մատուցեալ անտի յառաջ՝
ետես այլ երկուս եղբարս, զՅակո-
բոս Զեբեդեայ եւ զՅովհաննէս զեղ-
բայր նորա 'ի նաւի՝ Զեբեդեաւ
հանդերձ հարբն իւրեանց, մինչ

11 Յետոյ Սատանան թողեց նո-
րան. եւ ահա ը հրեշտակները մօտ ե-
կան եւ ծառայութիւն էին անում
նորան։
12 Եւ երբոր Յիսուս լսեց՝ թէ
թ Յովհաննէսը մատնուեցաւ, ինքն հե-
ռացաւ գնաց Գալիլեա,
13 Եւ Նազարէթը թողեց. եկաւ
բնակուեցաւ Կափառնայումի մէջ ծո-
վի եզրին մօտ. Զաբուղոնի եւ Նեփ-
թաղիմի երկրում.
14 Որ կատարուի այն խօսքը՝ որ
Եսայի մարգարէի ձեռովը ասած է՝
(թէ)
15 ժ Զաբուղոնի երկիրը եւ Նեփ-
թաղիմի երկիրը՝ ծովու ճանապարհը՝
Յորդանանու այն կողմը, Հեթանո-
սաց Գալիլեան.
16 ի Ժողովուրդն որ խաւարին մէջ
նստած էր, մեծ լոյս տեսաւ. եւ
լոյս ծագեց նորանց որ մահի երկ-
րումն ու շուքումը նստած էին։
17 Նրանից ետեւ լ Յիսուս սկսեց
քարոզել եւ ասել. խ Ապաշխարե-
ցէք՝ որ երկնքի թագաւորութիւնը
մօտեցել է։
18 Երբոր Յիսուս ծ Գալիլեացոց
ծովի եզրումը ման էր գալիս տեսաւ
երկու եղբարք՝ կ Սիմոնը՝ որ Պետ-
րոս էր կոչված, եւ նորա Անդրէաս
եղբայրը. որ ուռկանն ձգել էին
ծովը. ինչու որ՝ ձկնորս էին,
19 Եւ նորանց ասաց. Իմ ետեւէս
եկէք, եւ ձեզ հ մարդկանց որսորդ
կանեմ։
20 ձ Նորանք էլ շուտով իրենց գոր-
ծիքները թողին՝ եւ նորա ետեւէն
գնացին։
21 Եւ այն տեղից որ առաջ գնաց՝
ղ երկու ուրիշ եղբարք տեսաւ, Յա-
կոբոս Զեբեդեանը՝ եւ նորա Յո-
հաննէս եղբայրը՝ որ նաւին մէջ ի-

ը Երր. Ա. 14։
թ Մարկ. Ա. 14։ Ղուկ. Դ. 20։ Դ. 14. 31։ Յովհ. Դ. 43։
ժ Եսայ. Թ. 1. 2։
ի Եսայ. ԽԲ. 7։ Ղուկ. Բ. 32։
լ Մարկ. Ա. 14. 15։
խ Մատ. Գ. 2։ Ժ. 7։
ծ Մարկ. Ա. 16, 17, 18։ Ղուկ. Ե. 2։
կ Յովհ. Ա. 42։
հ Ղուկ. Ե. 10, 11։
ձ Մարկ. Ժ. 28։ Ղուկ. ԺԸ. 28։
ղ Մարկ. Ա. 19. 20։ Ղուկ. Ե. 10։

կարգէին զուռկանս իւրեանց, եւ կոչեաց զնոսա։

22 Եւ նոքա թողեալ վաղվաղակի զնաւն եւ զհայրն իւրեանց, գնացին զհետ նորա։
23 Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն կողմն Գալիլեացւոց. ուսուցանէր ՚ի ժողովուրդս նոցա եւ քարոզէր զաւետարանն արքայութեան, եւ բժշկէր զամենայն հիւանդութիւն՝ եւ զամենայն ախտ ՚ի ժողովրդեանն։
24 Եւ ել լուր նորա ընդ ամենայն երկիրն Ասորւոց, եւ մատուցին առ նա զամենայն հիւանդս՝ որ նեղեալ էին ՚ի պէսպէս ցաւս եւ ՚ի տանջանս, եւ զդիւահարս եւ զլուսնոտս եւ զանդամալոյծս, եւ բժշկեաց զնոսա։
25 Եւ երթային զհետ նորա ժողովուրդք բազումք ՚ի Գալիլեէ եւ ՚ի Դեկապօլեայ եւ յԵրուսաղէմէ եւ ՚ի Հրէաստանէ, եւ յայնկոյս Յորդանանու, եւ բժշկեաց զնոսա։

րենց հայր Զեբեդէոսին հետ իրենց ուռկանները շինում էին, եւ նորանց կանչեց։
22 Նորանք էլ շուտով նաւը եւ իրենց հայրը թողին. եւ նորա ետեւէն գնացին։
23 Եւ Յիսուս ման էր գալիս Գալիլեայի ամէն կողմերը. նորանց [ա] ժողովարաններին մէջ սովորցնում էր՝ եւ [բ] արքայութեան աւետարանն քարոզում, եւ ժողովրդի մէջ եղած ամէն [գ] հիւանդութիւններն ու ցաւերը բժշկում էր։
24 Եւ նորա համբաւը գնաց բոլոր Ասորոց ամէն երկիրը. եւ ամէն հիւանդներին որ կերպ կերպ ցաւերով եւ չարչարանքներով տանջուած էին, նորա մօտ բերին. եւ դիւահարներին ու լուսնոտները եւ անդամալոյծները. եւ նորանց բժշկեց։
25 Եւ [դ] նորա ետեւէն շատ ժողովուրդներ էին գնում Գալիլեայից եւ Դեկապօլիսից՝ եւ Երուսաղէմից եւ Հրէաստանից, եւ Յորդանանու այն կողմից եւ նորանց բըժըշկեց։

## ԳԼ. Ե

1 Եւ տեսեալ զժողովուրդսն՝ ել ՚ի լեառն. եւ իբրեւ նստաւ անդ՝ մատեան առ նա աշակերտքն նորա։
2 Եւ բացեալ զբերան իւր ուսուցանէր զնոսա, եւ ասէր։
3 Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից։
4 Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին։
5 Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր։

1 Եւ երբոր [ե] ժողովուրդները տեսաւ՝ վեր էլաւ սարը. եւ երբոր այնտեղ նստեց, նորա աշակերտները եկին նորա մօտ.
2 Եւ իրեն բերանը բանալով, նորանց սովորցնում էր՝ եւ ասում.
3 Երանի [զ] հոգով աղքատներին՝ որ նորանցն է երկնքի արքայութիւնը։
4 [է] Երանի սգաւորներին՝ որ նորանք պիտի մխիթարուին։
5 [ը] Երանի հեզահոգիներին՝ որ նորանք պիտի [թ] ժառանգեն երկիրը։

ա Մատ. Թ. 35. Մարկ. Ա. 21. 39. Ղու. Դ. 15. 44.
բ Մատ. ԻԴ. 14. Մարկ. Ա. 14.
գ Մարկ. Ա. 34.
դ Մարկ. Գ. 7.
—
ե Մարկ. Գ. 13. 20.
զ Ղու. Զ. 20. Սաղ. ՂԱ. 17. Առակ. ԺԶ. 19. ԻԹ. 23. Եսայ. ԿԶ. 15. ԿԶ. 2.
է Եսայ. ԿԱ. 2. 3. Ղու. Զ. 21. Յովհ. ԺԶ. 20. Բ Կորնթ. Ա. 7. Յայտ. ԻԱ. 4.
ը Սաղ. ԼԶ. 11.
թ Հռոմ. Դ. 13.

6 Երանի՛ որ քաղցեալ եւ ծա-
րաւի իցեն արդարութեան, զի նո-
քա յագեսցին։
7 Երանի՛ ողորմածաց, զի նոքա
ողորմութիւն գտցեն։
8 Երանի՛ այնոցիկ՝ որ սուրբ են
սրտիւք, զի նոքա զԱստուած տես-
ցեն։
9 Երանի՛ խաղաղարարաց, զի
նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին։
10 Երանի՛ որ հալածեալ իցեն վա-
սն արդարութեան, զի նոցա է ար-
քայութիւն երկնից։
11 Երանի՛ է ձեզ՝ յորժամ նախա-
տիցեն զձեզ եւ հալածիցեն, եւ
ասիցեն զամենայն բան չար զձէնջ
սուտ վասն իմ։
12 Ցնծացէք եւ ուրախ լերուք,
զի վարձք ձեր բազում են յերկինս.
զի այսպէս հալածեցին զմարգարէսն
որ յառաջ քան զձեզ էին։
13 Դուք էք աղ երկրի. ապա թէ
աղն անհամի՝ ի՞ւ յաղիցի. ոչ ինչ
ազդիցէ այնուհետեւ, բայց եթէ
ընկենուլ արտաքս եւ կոխան լի-
նել ՚ի մարդկանէ։
14 Դուք էք լոյս աշխարհի. ոչ
կարէ քաղաք թաքչել՝ որ ՚ի վերայ
լերին կայցէ։
15 Եւ ոչ լուցանեն ճրագ՝ եւ դնեն
ընդ գրուանաւ, այլ ՚ի վերայ աշ-
տանակի. եւ լոյս տայ ամենեցուն՝
որ ՚ի տանն իցեն։
16 Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր

6 Երանի՜ նորանց՝ որ զ սոված եւ-
ծարաւ են արդարութեան համար՝
որ նորանք պիտի կշտանան։
7 Երանի՜ է ողորմածներին՝ որ նո-
րանք պիտի ողորմութիւն գտնեն։
8 Երանի՜ նորանց՝ որ ըսրտով սուրբ
են, որ նորանք պիտի թ Աստուած
տեսնեն։
9 Երանի՜ խաղաղութիւն անող-
ներին՝ որ նորանք պիտի Աստուծոյ
որդիք կոչվին։
10 Երանի՜ նորանց՝ որ ժ արդա-
րութեան համար հալածված են՝ որ
նորանցն է երկնքի արքայութիւնը։
11 Երանի՜ է ձեզ՝ երբոր ի նախա-
տինք կը տան եւ կը հալածեն ձեզ,
եւ լ իմ պատճառաւս ամէն չար բան
սուտ տեղը կասեն ձեր վերայ։
12 խ Ցնծացէք եւ ուրախ էլէք՝ որ
ձեր վարձքը շատ է երկինքումը.
ինչու որ՝ այնպէս էլ ծ հալածեցին
մարգարէներին որ ձեզանից առաջ
կային։
13 Դուք երկրի աղն էք. թէ որ
կ աղն անհամանայ, ինչով պիտի ա-
ղանվի. նորանից ետեւ բնաւ մին
բանի համար գործածելի չէ, միայն
թէ դուրս ձգվի եւ մարդկանց ոտի
տակը կոխան լինի։
14 Դուք հ աշխարհքի լոյսն էք՝ այն
քաղաքն որ սարի վերայ կայ՝ չի
կարող թագուն մնալ։
15 Եւ ձ ճրագը չեն վառել եւ աշ-
ալի տակ դնել, այլ ճրագակալի վե-
րայ՝ եւ լոյս կը տայ ամէնին՝ որ
տանը մէջ են։
16 Այնպէս էլ ձեր լոյսը պէտք է

զ Եսայ. ԾԵ. 1. ԿԵ. 13.
է Սաղ. ԽԱ. 1. Մատ. Զ. 14. Մարկ. ԺԱ. 25. Բ Տիմ. Ա. 16. Եբր. Զ. 10. Յակ. Բ. 1.
ը Սաղ. ԺԵ. 2. ԻԴ. 4. Եբր. ԺԲ. 14.
թ Ա Կորնթ. ԺԳ. 12. Ա Յովհ. Գ. 2, 3.
ժ Բ Կորնթ. Դ. 17. Բ Տիմ. Բ. 12. Ա Պետ. Գ. 14.
ի Ղուկ. Զ. 22.
լ Ա Պետ. Դ. 14.
խ Ղու. Զ. 23. Գործ. Ե. 41. Հռովմ. Ե. 3. Յակ. Ա. 2. Ա Պետ. Դ. 13.
ծ Նէեմ. Թ. 26. Բ Մնաց. ԼԶ. 16. Մատ. ԻԳ. 34. 37. Գործ. Է. 52. Ա Թես. Բ. 15.
կ Մարկ. Թ. 50. Ղուկ. ԺԴ. 34, 35.
հ Առակ. Դ. 18. Փիլիպ. Բ. 15.
ձ Մարկ. Դ. 21. Ղուկ. Ը. 16. ԺԱ. 33.

առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, եւ փառաւորեսցեն զՀայր ձեր՝ որ յերկինս է։

17 Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել՝ այլ լնուլ։

18 Ամէն ասեմ ձեզ՝ Մինչեւ անցցեն երկինք եւ երկիր, յովտ մի՝ որ նշանախեց մի է, ոչ անցցէ յօրինացն եւ 'ի մարգարէից՝ մինչեւ ամենայն եղիցի։

19 Որ ոք լուծցէ մի ինչ 'ի պատուիրանացս յայսցանէ 'ի փոքունց, եւ ուսուսցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայութեան երկնից. իսկ որ արասցէ եւ ուսուսցէ, նա մեծ կոչեսցի յարքայութեան երկնից։

20 Բայց ասեմ ձեզ. Զի եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր աւելի քան զդպրացն եւ զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից։

21 Լուարուք՝ զի ասացաւ առաջնոցն, թէ Մի՛ սպանաներ, զի որ սպանանիցէ՝ պարտական լիցի դատաստանի։

22 Այլ ես ասեմ ձեզ. Եթէ ամենայն որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց, պարտաւոր լիցի դատաստանի. եւ որ ասիցէ ցեղբայր իւր Յիմար, պարտաւոր լիցի ատենի. եւ որ ասիցէ ցեղբայր իւր Մորոս, պարտաւոր լիցի 'ի գեհենն հրոյն։

23 Եթէ մատուցանիցես զպատարագ քո 'ի վերայ սեղանոյ, եւ անդ յիշեսցես՝ եթէ եղբայր քո ունի ինչ խէթ զքէն,

24 Թո՛ղ զպատարագն քո առաջի

լուսաւորէ մարդկանց առաջքին, որ ձեր ՚բարի գործքը տեսնեն, եւ ‡փառաւորեն ձեր Հայրը որ երկնքումն է։

17 Չը՛ ՚կարծէք թէ ես եկել եմ՝ որ օրէնքը կամ մարգարէները քանդեմ. չեմ եկել քանդելու, բայց կատարելու համար։

18 Ճշմարիտն ասում եմ ձեզ՝ Որ մինչեւ ՚երկինքն ու երկիրս անցնին, օրէնքին ու մարգարէներէնը մէն կէտ՝ որ պզտիկ նշանագիր է, չի անցնիլ մինչեւ ամէնը կատարուի։

19 Ո՛վ որ այս ՚փոքր պատուիրանքներիցս մէկը քանդէ, եւ մարդկանց այնպէս սորվեցնէ՝ նա փոքր կը կոչուի երկնքի արքայութեանը. բայց նա՝ որ կանէ եւ կը սորվեցնէ, մեծ կը կոչուի երկնքի արքայութեանը։

20 Միայն թէ ասում եմ ձեզ՝ Թէ որ ձեր ՚արդարութիւնը չաւելնայ աւելի քան կարդացողներինը եւ փարիսեցիներինը, չէք մտնիլ երկնքի արքայութիւնը։

21 Լսեցէք՝ որ առաջին մարդկանցը ասուեցաւ, թէ ՚Մի՛ սպաններ՝ ինչու-որ՝ ով որ կը սպաննէ, պարտական կը լինի դատաստանին։

22 Բայց ես ասում եմ ձեզ՝ Թէ ով որ ՚զուր տեղը կը բարկանայ իրեն եղբօր վըրայ, պարտական կը լինի դատաստանին. եւ ով որ իրեն եղբօրը կանէ՝ ՚Յիմար, պարտական կը լինի մեծ դատաստանին. եւ ով որ իրեն եղբօրը կանէ՝ Մորոս, պարտական կը լինի գեհենի կրակին։

23 (Ուրեմն) թէ որ ՚սեղանին վըրայ քու պատարագդ մատուցանես՝ եւ այնտեղ միտքդ բերես՝ թէ քու եղբայրդ քեզմէնից մէն խռովութիւն ունի,

24 Քու ՚պատարագդ սեղանին ա-

ՂԱ Պետ. Բ. 12։
‡ Յովհ. ԺԵ. 8։ Ա Կորնթ. ԺԴ. 25։
Ր Հռովմ. Գ. 31։ Ժ. 4։ Գաղ. Գ. 24։
; Ղուկ. ԺԶ. 17։
Ն Յակ. Բ. 10։
Ղ Հռովմ. Թ. 31։ Ժ. 3։
Եսայ. Ի. 13։ Բ Օրին. Ե. 17։
Ա Յովհ. Գ. 15։
Յակ. Բ. 20։ Բ Թագ. Զ. 20։
Ղ Մատ. Ը. 4։ ԻԴ. 19։
Մատ. ԺԸ. 19։ Ա Տիմ. Բ. 8։ Ա Պետ. Գ. 7։

սեղանոյն․ Երթ նախ հաշտեաց ընդ
եղբօր քում, եւ ապա եկեալ մա-
տուսջիր զպատարագն քո։
25 Լեր իրաւախոհ ընդ ոսոխի
քում վաղվաղակի, մինչդեռ իցես
ընդ նմա 'ի ճանապարհի․ գուցէ
մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի,
եւ դատաւորն դահճի, եւ արկա-
նիցիս 'ի բանտ։
26 Ամէն ասեմ քեզ․ Ո՛չ ելանի-
ցես անտի, մինչեւ հատուցանիցես
զյետին նաքարակիտն։
27 Լուարուք՝ զի ասացաւ, Մի՛
շնար։
28 Բայց ես ասեմ ձեզ․ Թէ ամե-
նայն որ հայի 'ի կին մարդ առ 'ի
ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ
ընդ նմա 'ի սրտի իւրում։

29 Եթէ ակն քո աջ գայթակղե-
ցուցանէ զքեզ, խլեա զնա՛ եւ ըն-
կեա 'ի քէն․ զի լաւ է քեզ եթէ
մի յանդամոց քոց կորիցէ, եւ մի
ամենայն մարմինդ քո անկանիցի 'ի
գեհեն։
30 Եւ եթէ աջ ձեռն քո գայ-
թակղեցուցանէ զքեզ, հատ զնա՛
եւ ընկեա 'ի քէն․ զի լաւ է քեզ
եթէ մի յանդամոց քոց կորիցէ, եւ
մի ամենայն մարմինդ քո արկանի-
ցի 'ի գեհեն։
31 Առաջին ասացաւ, եթէ Որ
արձակիցէ զկին իւր՝ տացէ նմա
զարձակմանն։
32 Բայց ես ասեմ ձեզ, եթէ Ամե-
նայն որ արձակէ զկին իւր առանց
բանի պոռնկութեան՝ նա տայ նմա
շնալ․ եւ որ զարձակեալն առնէ՝
շնայ։

33 Դարձեալ լուարուք, զի ասա-

առջին թող․ եւ գնա առաջ հաշտու-
վիր քու եղբօրդ հետ․ եւ յետոյ եկ
քու պատարագդ տուր։
25 Քո հակառակ ⁻ոսոխիդ հետ շու-
տով քո բանդրդ չհանած ատեն՝ քա-
նի որ նորա հետ է ճանապարհումն
ես․ որ չըլլայ թէ ոսոխդ քեզ
դատաւորին մատնէ, եւ դատաւորն
դահճին․ եւ բանտն ընկնես։
26 Ճշմարիտն ասում եմ քեզ․
Դուրս չես գալ այն տեղիցը, մինչեւ
որ վերջին դանկըն էլ չը վճարես։
27 Լսել էք՝ որ ասվեցաւ՝ թէ ⁺Շը-
նութիւն չանես։
28 Բայց ես ասում եմ ձեզ․ Թէ
ամէն ով որ ˀ մին կնկան մտիկ տայ
նորան ցանկանալոյ համար, նա իս-
կոյն շնացաւ նորա հետ իրան սըր-
տին մէջ։
29 Թէ որ քո ᵍ աջ աչքդ գայթակ-
ղացնում է քեզ, – հանիր նորան եւ
քեզանից դէն ձգիր․ ինչու որ՝ լաւ
է քեզ համար, թէ քո անդամնե-
րիցդ մինը կորչի․ եւ քո ամէն մար-
մինդ չընկնի գեհենը։
30 Եւ թէ որ քո աջ ձեռքդ գայ-
թակղացնում է քեզ, կտրիր նորան
եւ քեզանից դէն ձգիր․ ինչու որ՝
լաւ է քեզ համար՝ թէ քո անդամ-
ներիցդ մինը կորչի․ եւ քո ամէն
մարմինդ չընկնի գեհենը։
31 Այս էլ ասվեցաւ՝ թէ ‡ Ով որ
իրեն կնիկը արձակէ, թող արձակ-
ման թուղթ տայ նորան։
32 Բայց ես ասում եմ ձեզ․ Թէ
Ով որ իրեն կնիկը արձակէ առանց
պոռնկութեան պատճառի, ⁺նորա
շնութեան պատճառն ինքն կը լինի․
եւ ով որ այն դուրս արածին առ-
նէ, շնութիւն կը գործէ։
33 Կրկին լսել էք՝ որ ° ասվեցաւ ա-

* Առակ․ ԻԵ․ 8։ Ղուկ․ ԺԲ․ 58, 59։ ‡ Սաղ․ ԼԲ․ 6։ Եսայ․ ԾԵ․ 6։ ⁺ Ելից․ Ի․ 14։ Բ Օրին․ Ե․ 18։

ˀ Յոբ․ ԼԱ․ 1։ Առակ․ Զ․ 25։ Ծննդ․ ԼԴ․ 2։ Բ Թագ․ ԺԱ․ 2։ ᵍ Մատ․ ԺԸ․ 8, 9։ Մարկ․ Թ․ 44–47։

– Հռովմ․ Ը․ 13։ Ա Կորնթ․ Թ․ 27։ Կող․ Գ․ 5։ ‡ Բ Օրին․ ԻԴ․ 1։ Երեմ․ Գ․ 1։ Մատ․ ԺԹ․ 3, եւ։

Մարկ․ Ժ․ 2, եւ։ ⁺ Մատ․ ԺԹ․ 9։ Ղուկ․ ԺԶ․ 18։ Հռովմ․ Է․ 3։ Ա Կորնթ․ Է․ 10, 11։ ° Մատ․ ԻԳ․ 16։

ցաւ առաջնոցն. Մի՛ երդնուցուս
սուտ, բայց հատուսցես Տեառն
զերդմունս քո։
34 Այլ ես ասեմ ձեզ՝ Ամենեւին
մի՛ երդնուլ. մի՛ յերկինս՝ զի աթոռ
է Աստուծոյ.
35 Եւ մի՛ յերկիր՝ զի պատուան-
դան է ոտից նորա. եւ մի՛ յԵրուսա-
ղէմ՝ զի քաղաք է մեծի արքայի։
36 Եւ մի՛ ՚ի գլուխ քո երդնու-
ցուս, զի ոչ կարես մազ մի սպի-
տակ առնել՝ կամ թուխ։
37 Այլ եղիցի ձեր բանն, այոն՝ ա-
յո, եւ ոչն՝ ոչ. զի աւելին քան
զայս ՚ի չարէն է։
38 Լուարուք, զի ասացաւ. Ակն
ընդ ական, եւ ատամն ընդ ատա-
ման։
39 Այլ ես ասեմ ձեզ, Մի՛ կալ
հակառակ չարին. այլ եթէ ոք ա-
ծիցէ ապտակ յաջ ծնօտ քո՝ դար-
ձո՛ նմա եւ զմիւսն։
40 Եւ որ կամիցի ոք դատել եւ
առնուլ զշապիկս քո, թո՛ղ ՚ի նմա
եւ զբաճկոն քո։
41 Եւ որ տարապարհակ վարիցէ
զքեզ մղոն մի, երթ ընդ նմա եւ
երկուս։
42 Որում խնդրէ ՚ի քէն՝ տուր.
եւ որ կամի փոխ առնուլ ՚ի քէն՝ մի՛
դարձուցաներ զերեսս։
43 Լուարուք ապաքէն, զի ասա-
ցաւ. Սիրեսցես զընկեր քո, եւ ա-
տեսցես զթշնամին քո։
44 Այլ ես ասեմ ձեզ. Սիրեցէք

առջինների մարդիկանցը, թէ ա Սուտ եր-
դում չի՛ անես, այլ բ Տէրոջը արած
երդումներդ վճարէ։
34 Բայց ես ասումեմ ձեզ. գ Բնաւ
երդում մի՛ անէք. ոչ երկնքովը՝
որ դ Աստուծոյ աթոռն է.
35 Եւ ոչ երկրովը՝ որ նորա ոտն
գնելոյ տեղն է. եւ ոչ ե Երուսա-
ղէմովը՝ որ մեծ թագաւորի քաղա-
քըն է.
36 Եւ ոչ քո գլխովդ երդում ա-
նես՝ որ կարող չես մին մազ սպի-
տակ անել կամ թուխ։
37 Բայց ձեր խօսքն թող լինի,
զ այոն՝ այո. եւ ոչն՝ ոչ. եւ նրա-
նից աւելին չարիցն է։
38 Լսել էք՝ որ ասվեցաւ՝ թէ է Աչ-
քին տեղ աչք, եւ ատամին տեղ՝
ատամ։
39 Բայց ես ասումեմ ձեզ. ը Չա-
րին հակառակ մի՛ կենաք. ապա թէ
որ թ մինը ապտակ կը տայ քո աջ ե-
րեսիդ, միւսն էլ նորան դար-
ձուր։
40 Եւ ով որ կուզէ քեզ հետ կռիւ
անել եւ քո շապիկդ առնել, քո
վերարկուդ էլ թող նորա մնա։
41 Եւ ով որ զոռ անելով քեզ բռ-
նած ժ մին մղոն ճանապարհ կը քշէ,
նորա հետ երկուսն էլ գնա։
42 Ով որ քեզանից բան ուզէ՝
տուր. եւ ով կամենայ քեզանից
ի փոխ առնել երեսդ յետ մի դար-
ձներ նորանից։
43 Մինչել լսել էք՝ որ ասվեցաւ՝
թէ Քո լ ընկերդ սիրէ եւ քո խ թշ-
նամիդ ատէ։
44 Բայց ես ասումեմ ձեզ. ծ Սիրե-

ա Ելից. Ի. 7. 16. Ղեւ. ԺԹ. 12. Բ Օրին. Ե. 11. Թու. Լ. 2.
բ Բ Օրին. ԻԳ. 23.
գ Մատ. ԻԳ. 16. 18. 22. Յակ. Ե. 12.
դ Եսայ. ԿԶ. 1.
ե Սաղ. ԽԸ. 2. 2ե. 3.
զ Կող. Դ. 6. Յակ. Ե. 12.
է Ելից. ԻԱ. 24. Ղեւ. ԻԴ. 20. Բ Օրին. ԺԹ. 21.
ը Առակ. Ի. 22. ԻԴ. 29. Ղու. Զ. 29. Հռովմ. ԺԲ. 17. 19. Ա Կորնթ. Զ. 7. Ա Թես. Ե. 15. Ա Պետ. Գ. 9.
թ Եսայ. Ծ. 6. Ողբ. Գ. 30.
ժ Մատ. ԻԷ. 32. Մարկ. ԺԵ. 21.
ի Բ Օրին. ԺԵ. 8. 10. Ղու. Զ. 30. 35.
լ Ղեւ. ԺԹ. 18.
խ Բ Օրին. ԻԳ. 6. Սաղ. ԽԱ. 10.
ծ Ղու. Զ. 27. 35. Հռովմ. ԺԲ. 14. 20.

զթշնամիս ձեր. օրհնեցէք զանի-
ծիչս ձեր. բարի արարէք ատելեաց
ձերոց. եւ աղօթս արարէք 'ի վե-
րայ այնոցիկ՝ որ լլկեն զձեզ եւ
հալածեն:
45 Զի եղիջիք որդիք Հօր ձերոյ՝
որ յերկինսն է. զի զարեգակն իւր
ծագէ 'ի վերայ չարաց եւ բարեաց,
եւ ածէ անձրեւ 'ի վերայ արդա-
րոց եւ մեղաւորաց:
46 Զի եթէ սիրիցէք զայնոսիկ որ
սիրեն զձեզ՝ զի՞նչ վարձ իցէ,
ո՛չ ապաքէն եւ մաքսաւորք զնոյն
գործեն:
47 Եւ եթէ տայցէք միայն ողջոյն
բարեկամաց ձերոց՝ զի՞նչ աւելի
առնէք, ո՛չ ապաքէն մաքսաւորք
եւ մեղաւորք զնոյն գործեն:
48 Արդ՝ եղերուք դուք կատար-
եալք. որպէս եւ Հայրն ձեր եր-
կնաւոր կատարեալ է:

ցէք ձեր թշնամիները. օրհնեցէք
ձեզ անիծողները. բարի արէք ձեզ
ատողներին. եւ աղօթք արէք նո-
րանց վերայ, որ ձեզ * կը չարչա-
րեն եւ կը հալածեն,
45 Որ որդիք լինիք ձեր Հօրն,
որ երկնքումն է. որ նա իւրան ա-
րեգակը † ծագեցնումէ չար եւ բարի
մարդկանց վերայ, եւ անձրեւ է
ածում արդարներին եւ մեղաւոր-
ներին վերայ:
46 Բայց թէ որ ‡ մինակ նորանց
սիրէք որ ձեզ սիրումեն, էլ ինչ
վարձք կը լինի ձեզ. չէ՞ որ մաք-
սաւորներն էլ այնպէս են անում:
47 Եւ թէ որ մինակ ձեր բարե-
կամներին բարեւ տաք. ինչ աւելի
բան կանէք. չէ՞ որ մաքսաւորներն
եւ մեղաւորներն էլ այնպէս են ա-
նում:
48 Ուրեմն դուք § կատարեալ եղէք՝
ինչպէս որ ձեր ‖ երկնաւոր Հայրը
կատարեալ է:

## ԳԼ. Զ

1 Զգոյշ լերուք ողորմութեան
ձերում՝ մի առնել առաջի մարդ-
կան, որպէս թէ 'ի ցոյց ինչ նոցա.
գուցէ եւ վարձս ոչ ընդունիցիք 'ի
Հօրէն ձերմէ՝ որ յերկինսն է:
2 Այլ յորժամ առնիցես ողորմու-
թիւն, մի հարկաներ փող առաջի
քո, որպէս կեղծաւորքն առնեն 'ի
ժողովուրդս եւ 'ի հրապարակս,
որպէս զի փառաւորեսցին 'ի մարդ-
կանէ. ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ
են վարձք նոցա:
3 Այլ դու յորժամ ողորմութիւն
առնիցես, մի գիտասցէ ձախ քո
զինչ գործէ աջ քո:
4 Որպէս զի եղիցի ողորմութիւն
քո 'ի ծածուկ. եւ Հայրն քո որ

1 Զգուշ կացէք ձեր ողորմու-
թեանը՝ որ մարդկանց առաջին չի
անէք, իբր նորանց ցոյց տալոյ հա-
մար. որ չըլինի, թէ վարձք չառ-
նէք ձեր Հօրիցը՝ որ երկնքումն է:
2 Բայց = երբոր ողորմութիւն ա-
նես. փող փչել չի տաս քու առա-
ջից. ինչպէս որ կեղծաւորներն են
անում ժողովարաններին մէջ եւ փո-
ղոցներումը՝ որ մարդկանցից փառա-
ւորվին. ճշմարիտ ասումեմ ձեզ.
որ նորանց վարձքը մինակ այն է:
3 Բայց երբոր դու ողորմութիւն
անես, թող չիմանայ քու ձախ ձե-
ռըդ՝ թէ ինչ է գործում քու աջդ.
4 Որ այնպէս քու ողորմութիւնդ
ծածուկ լինի, եւ քու Հայրդ՝ որ

* Ղուկ. ԻԳ. 34. Գործ. Է. 60. Ա Կորնթ. Դ. 12, 13. Ա Պետ. Բ. 23. Գ. 9.
† Յոբ. ԻԵ. 3.
‡ Ղուկ. Զ. 32.
§ Ծննդ. ԺԷ. 1. Ղեւտ. ԺԱ. 44. ԺԹ. 2. Ղուկ. Զ. 36. Կող. Ա. 28. Գ. 12. Յակ. Ա. 4. Ա Պետ. Ա. 15, 16.
‖ Եփես. Ե. 1.

—

= Հռովմ. ԺԲ. 8.

տեսանէ 'ի ծածուկ՝ հատուսցէ քեզ
յայտնապէս։
5 Եւ յորժամ յաղօթս կայցես,
մի՛ լինիցիս որպէս կեղծաւորքն. զի
սիրեն 'ի ժողովուրդս եւ յանկիւնս
հրապարակաց կալ յաղօթս, որպէս
զի երեւեսցին մարդկան. ամէն ա-
սեմ ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա։

6 Այլ դու յորժամ կայցես յա-
ղօթս, մուտ 'ի սենեակ քո՛ եւ փա-
կեա զդուրս քո, եւ կա՛ց յաղօթս
առ Հայր քո 'ի ծածուկ. եւ Հայրն
քո՛ որ տեսանէ 'ի ծածուկ, հա-
տուսցէ քեզ յայտնապէս։
7 Եւ յորժամ կայցէք յաղօթս,
մի՛ շատախօսք լինիք իբրեւ զհե-
թանոսն. զի համարին եթէ 'ի բա-
զում խօսից իւրեանց լսելի լինի-
ցին։
8 Արդ՝ մի՛ նմանիցէք նոցա. զի
գիտէ Հայրն ձեր զինչ պիտոյ է
ձեզ, մինչչեւ ձեր խնդրեալ ինչ
իցէ 'ի նմանէ։
9 Եւ արդ՝ այսպէս կացէք դուք
յաղօթս. Հայր մեր որ յերկինս,
սուրբ եղիցի անուն քո։
10 Եկեսցէ արքայութիւն քո. ե-
ղիցին կամք քո որպէս յերկինս եւ
յերկրի։
11 Զհաց մեր հանապազորդ տուր
մեզ այսօր։
12 Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր,
որպէս եւ մեք թողումք մերոց
պարտապանաց։
13 Եւ մի՛ տանիր զմեզ 'ի փոր-
ձութիւն, այլ փրկեա՛ զմեզ 'ի չա-
րէն, զի քո է արքայութիւն եւ
զօրութիւն եւ փառք յաւիտեանս
ամէն։
14 Զի եթէ թողուցուք մարդկան

ծածուկը տեսնումէ, [բ] յայտնի կը
հատուցանէ քեզ։
5 Եւ երբոր աղօթք անես, մի՛
լինիր կեղծաւորներին պէս. ինչու
որ՝ նորանք սիրումեն ժողովարան-
ներին մէջ եւ փողոցների գլխումը
աղօթք անել, որ մարդկանց երեւ-
ւին։ Ճշմարիտ ասումեմ ձեզ, որ
նորանց վարձքը մինակ այն է։
6 Բայց դու ինչ ժամանակ որ
աղօթք անես, [գ] մտիր քո խուցդ՝ եւ
քո դռներդ փակէ եւ ծածուկ
աղօթք արա դէպի քո Հայրդ. եւ
քո Հայրդ որ ծածուկը տեսնող է՝
յայտնի կը հատուցանէ քեզ։
7 Եւ այն ժամանակը որ աղօթք
անէք, [դ] շատախօս մի լինիք. ինչ-
պէս հեթանոսները. որ նորանք
կարծումեն՝ թէ իրանց [ե] շատ խօսե-
լուն համար կը լսվին։
8 Ուրեմն նորանց նման մի լինիք.
ինչու որ՝ ձեր Հայրը գիտումէ՝ թէ
ինչ պէտք է ձեզ, քանի որ մին
բան դեռ չէք խնդրել նորանից։
9 Ուրեմն դուք այսպէս աղօթք
արէք. Մեր Հայր որ երկնքումն ես՝
քո [զ] անունդ սուրբ լինի։
10 Քո արքայութիւնդ գայ, քո
[է] կամքդ լինի ինչպէս [ը] երկնքումն,
այնպէս էլ երկրիս վերայ։
11 Մեր [թ] ամէն օրվան հացին այս
օր տուր մեզ։
12 Եւ մեր [ժ] պարտքը թող մեզ.
ինչպէս որ մենք էլ թողումենք մեր
պարտականներին։
13 Եւ մեզ [ի] փորձանքի մէջ մի
ձգեր. բայց մեզ [լ] չարիցն ազա-
տէ. ինչու որ՝ քո է [խ] թագաւորու-
թիւնը՝ եւ զօրութիւնը՝ եւ փառքը՝
յաւիտեան. ամէն։
14 Գառձատոր՝ եթէ դուք մարդ-

բ Ղու. ԺԴ. 14.
գ Դ Թագ. Դ. 33.
դ Ժող. Ե. 2.
ե Գ Թագ. ԺԸ. 26. 29.
զ Ղու. ԺԱ. 8. 12.
է Մատ. ԻԶ. 39. 42. Գործ. ԻԱ. 14.
ը Սաղ. ՃԲ. 20. 21.
թ Յովբ. ԻԳ. 12. Առակ. Լ. 8.
ժ Մատ. ԺԸ. 21. 22.
ի Մատ. ԻԶ. 41. Ղու. ԻԲ. 40. 46. Ա Կոր. Ժ. 13. Բ Պետ. Բ. 9. Յայտ. Գ. 10.
լ Յովհ. ԺԷ. 15.
խ Ա Մնաց. ԻԹ. 11.

զյանցանս նոցա, թողցէ և ձեզ Հայրն ձեր երկնաւոր։

15 Ապա թէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, և ոչ Հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր։

16 Եւ յորժամ պահիցէք՝ մի լինիք իբրև զկեղծաւորսն տրտմերեսք. որ ապականեն զերեսս իւրեանց, որպէս զի երևեսցին մարդկան թէ պահիցեն. ամէն ասեմ ձեզ, Այն իսկ են վարձք նոցա։

17 Այլ դու յորժամ պահիցես, օծ զգլուխ քո՛ և լուա զերեսս քո։

18 Զի մի երևեսցիս մարդկան իբրև զպահօղ. այլ Հօրն քում ՚ի ծածուկ, և Հայրն քո՛ որ տեսանէ ՚ի ծածուկ, հատուսցէ քեզ յայտնապէս։

19 Մի գանձէք ձեզ գանձս յերկրի. ուր ցեց և ուտիճ ապականեն, և ուր գողք ական հատանեն և գողանան։

20 Այլ գանձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ ցեց և ոչ ուտիճ ապականեն, և ոչ գողք ական հատանեն և գողանան։

21 Զի ուր գանձք ձեր են՝ անդ և սիրտք ձեր եղիցին։

22 Ճրագ մարմնոյ ակն է. եթէ ակն քո առատ է, ամենայն մարմինդ լուսաւոր եղիցի։

23 Ապա թէ ակն քո չար է՝ ամենայն մարմինդ խաւարին եղիցի. իսկ արդ՝ եթէ լոյսդ որ ՚ի քեզ է՝ խաւար է, խաւարն որչափ ևս։

կանց իրենց մեղքը ծ թողէք՝ ձեր երկնաւոր Հայրն էլ ձեզ թողութիւն կը տայ։

15 Ապա թէ որ դուք կ մարդկանց չէք թողել իրենց մեղքը, ձեր Հայրն էլ ձեր մեղքը ձեզ չի թողել։

16 Եւ այն ժամանակը որ հ ծոմ կը պահէք, չը լինի որ կեղծաւորների պէս տրտում երևէք, որ իրենց երեսը այլայլումեն, որ մարդկանց երևեն թէ ծոմ են պահում. ճշմարիտ ասումեմ ձեզ՝ թէ նորանց վարձքը միայն այն է։

17 Բայց դու ինչ ժամանակ որ ծոմ պահես, քո ձ գլուխդ իւղով օծէ՛ և քո երեսդ լուա,

18 Որ մարդկանց առաջին չերևես ծոմ պահօղի նման, բայց ծածուկ քո Հօրդ առաջին. և քո Հայրդ՝ որ ծածուկը տեսնումէ, յայտնի կը հատուցանէ քեզ։

19 Ձեզ ղ համար գանձ մի հաւաքէք երկրիս վերայ. որ տեղ որ ցեցն ու ժանկը ապականումեն. և որ տեղ որ գողերը գետնի տակը փորումեն և գողանում։

20 Բայց ճ երկնքումն ձեզ համար գանձ ժողովեցէք՝ որ այն տեղ ոչ ցեց և ոչ ժանկ չեն ապականում, և գողերը գետնի տակըն չեն փորում և գողանում.

21 Պատճառը՝ ինչ տեղ որ ձեր գանձերն են, այնտեղ էլ ձեր սիրտը կը լինի։

22 մ Մարմնոյ ճրագն՝ աչքն է. թէ որ քո աչքդ պարզ է, քո ամէն մարմինդ լուսաւոր կը լինի.

23 Բայց թէ որ քո աչքդ չար է, քո ամէն մարմինդ խաւար կը լինի. Ուրեմն՝ թէ որ այն լոյսը որ քեզանումն է՝ խաւար է, ապա խաւարը որչափ կը լինի։

ծ Մարկ. ԺԱ. 25, 26. Եփես. Դ. 32. Կող. Գ. 13.
կ Գղ. ԺԸ. 35. Յակ. Բ. 13.
հ Եսայ. ԾԸ. 5.
ձ Հռովմ. Գ. 3. Դան. Ժ. 3.
ղ Ղուկ. ԺԲ. 33. Ա Տիմ. Զ. 17. Եբր. ԺԳ. 5. Յակ. Ե. 1, 2.
ճ Գղ. ԺԹ. 21. Ղուկ. ԺԲ. 33, 34. ԺԸ. 22. Ա Տիմ. Զ. 19. Ա Պետ. Ա. 4.
մ Ղուկ. ԺԱ. 34, 36.



7/Т 1922

[ա] 24 Ո՛չ ոք կարէ երկուց տերանց ծառայել· կամ զմին ատիցէ, եւ զմիւսն սիրիցէ· կամ զմին մեծարիցէ, եւ զմիւսն արհամարհիցէ· ոչ կարէք Աստուծոյ ծառայել եւ մամոնայի։

25 Վասն այսորիկ ասեմ ձեզ· Մի՛ հոգայք վասն ոգւոց ձերոց՝ զինչ ուտիցէք, կամ զինչ ըմպիցէք· եւ մի՛ վասն մարմնոց ձերոց՝ թէ զինչ ագանիցիք· ոչ ապաքէն ոգի առաւել է քան զկերակուր՝ եւ մարմին քան զհանդերձ։

26 Հայեցարուք 'ի թռչունս երկնից՝ զի ոչ վարեն եւ ոչ հնձեն եւ ոչ ժողովեն 'ի շտեմարանս, եւ Հայրն ձեր երկնաւոր կերակրէ զնոսա· ոչ ապաքէն դուք առաւել էք քան զնոսա։

27 Իսկ արդ՝ ո 'ի ձէնջ առ հոգալ բերում՝ յաւելուլ կարիցէ 'ի հասակ իւր կանգուն մի։

28 Եւ վասն հանդերձի զի՞ հոգայք· հայեցարուք 'ի շուշանն վայրենի՝ որպէս աճէ· ոչ ջանայ, եւ ոչ նիւթէ։

29 Ասեմ ձեզ՝ զի եւ ոչ Սողոմոն յամենայն 'ի փառսն իւրում զգեցաւ իբրեւ զմի 'ի նոցանէ։

30 Իսկ եթէ զխոտն 'ի վայրի որ այսօր է՝ եւ վաղիւն 'ի հնոց արկանի, Աստուած այնպէս զգեցուցանէ· որչափ եւս առաւել զձեզ թերահաւատք։

31 Մի՛ այսուհետեւ հոգայցէք՝ եւ ասիցէք· Զի՞նչ կերիցուք՝ կամ Զի՞նչ արբցուք՝ կամ Զի՞նչ զգեցցուք։

32 Զի զայդ ամենայն հեթանոսք խնդրեն· քանզի գիտէ Հայրն ձեր երկնաւոր՝ թէ պիտոյ է ձեզ այդ ամենայն։

33 Խնդրեցէք նախ զարքայու-

24 Ոչ ով կարող չէ [ա] երկու տիրոջ ծառայութիւն անել· կամ մէկը կատէ՝ եւ միւսը կը սիրէ, կամ մէկը կը պատուէ՝ եւ միւսը ոչինչի տեղ կը համարէ։ Չէք կարող [բ] Աստուծոյ ծառայել եւ մամոնային։

25 Սրա համար ասում եմ ձեզ· [գ] Հոգս մի՛ անէք ձեր հոգուն համար, թէ ինչ պիտի ուտէք, կամ ինչ պիտի խմէք· եւ ոչ ձեր մարմնոյն համար՝ թէ ինչ պիտի հագնիք։ Չէ՞ որ հոգին աւելի է կերակուրից՝ եւ մարմինը շորերից։

26 Մտիկ արէք [դ] երկնքի թռչուններին՝ որ ոչ վարում են, եւ ոչ հնձում, եւ ոչ ամբարներում ժողովում, եւ ձեր երկնաւոր Հայրը կերակրում է նրանց· չէ՞ որ դուք նրանցից աւելի էք։

27 Հիմիկ՝ ձեզանից ո՞վ է կարող իրեն հոգս անելովն իրեն հասակին վերայ մին կանգուն էլ աւելացնել։

28 Եւ շորերի համար ինչու էք հոգս անում· մտիկ արէք վայրի շուշան ծաղիկին՝ թէ ինչպէս է մեծանում· ոչ ջանք է անում՝ եւ ոչ մանում։

29 Ասում եմ ձեզ՝ թէ Սողոմոնն էլ իրեն ամէն փառքի մէջ նրանց մինին նման չը հագաւ։

30 Բայց թէ որ վայրի խոտն՝ որ այսօր կայ եւ վաղը կրակը կը ձգուի՝ Աստուած այնպէս է հագցնում, ապա որքան աւելի ձեզ՝ թերահաւատներ։

31 Սրա համար էլ հոգս մի՛ անէք՝ եւ մի՛ ասէք· թէ Ի՞նչ ուտենք, կամ Ի՞նչ խմենք, կամ Ի՞նչ հագնենք։

32 Ինչու որ՝ այդ ամէն բաները հեթանոսներն են ուզում· պատճառն որ՝ ձեր երկնաւոր Հայրը գիտէ՝ թէ այդ ամէնը պէտք է ձեզ։

33 Դուք առաջ [ե] Աստուծոյ ար-

[ա] Ղուկ. ԺԶ. 13։
[բ] Գաղ. Ա. 10։ Ա Տիմ. Զ. 17։ Յակ. Դ. 4։ Ա Յովհ. Բ. 15։
[գ] Սաղ. ԾԵ. 22։ Ղուկ. ԺԲ. 22, 23։ Փիլիպ. Դ. 6։ Ա Պետ. Ե. 7։
[դ] Յոբ. ԼԸ. 41։ Սաղ. ՃԽԷ. 9։ Ղուկ. ԺԲ. 24,
[ե] Գ Թագ. Գ. 13, Սաղ. ԼԷ. 25, Մարկ. Ժ. 30, Ղուկ. ԺԲ. 31. Ա Տիմ. Դ. 8։

թիւնն Աստուծոյ եւ զարդարու-
թիւն նորա. եւ այդ ամենայն յա-
ւելցի ձեզ։
34 Մի՛ այսուհետեւ հոգայցէք վա-
սըն վաղուին. զի վաղիւն վասն
իւր հոգասցի. շատ է աւուրն չար
իւր։

քայութիւնը եւ նորա արդարու-
թիւնը խնդրեցէք. եւ այդ ամէն
բաները կաւելնան ձեզ։
34 Ուրեմն՝ վաղուան համար հոգս
մի՛ ընէք, ինչու որ՝ վաղվան օրն ի-
րեն համար հոգս կընէ. օրի համար
բաւական է իրեն նեղութիւնը։

## ԳԼ. Է։

1 Մի՛ դատէք՝ զի մի՛ դատիցիք։
2 Զի որով դատաստանաւ դա-
տէք՝ դատելոց էք. եւ որով չափով
չափէք՝ չափեսցի ձեզ։

3 Զի՞ տեսանես զշիւղ յական
եղբօր քո, եւ 'ի քում ականդ ըզ-
գերանդ ոչ տեսանես։
4 Կամ զիա՞րդ ասես ցեղբայր քո,
Թո՛ղ հանից զշիւղդ յականէ քում-
մէ. եւ ահաւասիկ 'ի քում ականդ
գերան կայ։
5 Կեղծաւոր՝ հան նախ զգերա-
նդ յականէ քումմէ, եւ ապա հա-
յեսցիս հանել զշիւղն յականէ եղ-
բօր քո։
6 Մի՛ տայք զսրբութիւն շանց.
եւ մի՛ արկանէք զմարգարիտս ձեր
առաջի խոզաց, զի մի՛ առ ոտն կո-
խիցեն զնոսա, եւ դարձեալ երկի-
ծուցանիցեն զձեզ։
7 Խնդրեցէք՝ եւ տացի ձեզ, հայ-
ցեցէք՝ եւ գտջիք, բախեցէք՝ եւ
բացցի ձեզ։
8 Զի ամենայն որ խնդրէ՝ առ-
նու, եւ որ հայցէ՝ գտանէ, եւ որ
բախէ՝ բացցի նմա։

9 Ո՞ իցէ 'ի ձէնջ մարդ՝ զոր
խնդրիցէ որդի իւր հաց, միթէ քար
տայցէ նմա։

1 ա Մի՛ դատէք՝ որ չը դատուիք.
2 Պատճառնոր՝ բ ինչ դատաստա-
նով որ ուրիշը դատէք, նոյնով
պիտի դատուիք. եւ ինչ չափով որ
չափէք, նոյնով կը չափուի ձեզ։
3 Ի՞նչու քու գ եղբօրդ աչքին
մէջի ծեղը տեսնումես, եւ քու աչ-
քիդ մէջինի գերանը չես տեսնում։
4 Կամ ինչպէս ես ասում եղ-
բօրդ՝ Թո՛ղ քու աչքէդ ծեղը հա-
նեմ, եւ ահա քու աչքիդ մէջինի գե-
րան կայ։
5 Կեղծաւոր՝ առաջ քու աչքէդ
գերանը հանէ, եւ յետոյ մաքիկ ա-
րա՛ որ քու եղբօրդ աչքէն ծեղը
հանես։
6 դ Սուրբ բանը մի՛ տաք շներին.
եւ ձեր մարգարիտները խոզերի
առաջն մի՛ ձգէք. որ նորանից ոտով
կոխ չը տան՝ եւ յետ դառնան ձեզ
պատառեն։
7 ե Խնդրեցէք եւ կը տրվի ձեզ.
ման եկէք եւ կը գտնէք. դուռն
թակեցէք եւ կը բացվի ձեզ։
8 Ինչու որ՝ զ ամէն ով որ կը խնդ-
րէ՝ կառնէ, եւ ով որ ման կը գայ
կը գտնէ, եւ ով որ կը թակէ կը
բացվի նորան։
9 Ո՞վ է է ձեզանից էն մարդն որ
նորանից իրեն որդին հաց ուզէ,
միթէ քար կը տայ նորան։

ա Ղուկ. Զ. 37. Հռովմ. Բ. 1. ԺԴ. 3. 4. 10. 13. Ա Կորնթ. Դ. 3. 5. Յակ. Դ. 11. 12.
բ Մարկ. Դ. 24. Ղուկ. Զ. 38.
գ Ղուկ. Զ. 41. 42.
դ Առակ. Թ. 7. 8. ԻԳ. 9. Գործ. ԺԳ. 45. 46.
ե Գլ. ԻԱ. 22. Մարկ. ԺԱ. 24. Ղուկ. ԺԱ. 9. 10. ԺԸ. 1. Յովհ. ԺԴ. 13. ԺԵ. 7. ԺԶ. 23. 24. Յակ. Ա. 5. 6. Ա Յովհ. Գ. 22. Ե. 14. 15.
զ Առակ. Ը. 17. Երեմ. ԻԹ. 12. 13.
է Ղուկ. ԺԱ. 11. 12. 13.

10 Եւ կամ խնդրիցէ ձուկն, միթէ օձ տայցէ նմա։

11 Արդ՝ եթէ դուք որ չարքդ էք՝ գիտէք պարգեւս բարիս տալ որդւոց ձերոց, որչափ եւս առաւել Հայրն ձեր որ յերկինս է՝ տացէ բարիս այնոցիկ որ խնդրեն զնա։

12 Զամենայն զոր միանգամ կամիջիք՝ թէ արասցեն ձեզ մարդիկ՝ այնպէս եւ դուք արարէք նոցա. զի այն իսկ են օրէնքն եւ մարգարէքն։

13 Մտէք ընդ նեղ դուռն. քանզի ընդարձակ է դուռն՝ եւ համարձակ ճանապարհն՝ որ տանի ՚ի կորուստ, եւ բազումք են որ մտանեն ընդ նա։

14 Քանզի անձուկ է դուռն՝ եւ նեղ ճանապարհն՝ որ տանի ՚ի կեանս, եւ սակաւք են որ գտանեն զնա։

15 Զգոյշ լերուք ՚ի սուտ մարգարէիցն՝ որ գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց, եւ ՚ի ներքոյ են գայլք յափշտակողք։

16 ՚Ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա. միթէ քաղիցեն ՚ի փշոց խաղող՝ կամ ՚ի տատասկէ թուզ։

17 Այնպէս ամենայն ծառ բարի՝ պտուղ բարի առնէ, եւ ծառ չար՝ պտուղ չար առնէ։

18 Ո՛չ կարէ ծառ բարի պտուղ չար առնել, եւ ոչ ծառ չար՝ պտուղ բարի առնել։

19 Ամենայն ծառ՝ որ ոչ առնէ պտուղ բարի, հատանի եւ ՚ի հուր արկանի։

20 Ապա ՚ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա։

10 Եւ կամ ձուկն ուզէ՝ միթէ օձ կը տայ նորան։

11 Ուրեմն թէ որ ա դուք որ չար էք՝ գիտումէք լաւ պարգեւներ տալ ձեր որդոցն. սրա որքան աւելի ձեր Հայրն որ երկնքումն է, բարի բաներ կը տայ նորանց որ ուզումն իրենից։

12 Ամէն ինչ բ որ կամենումէք՝ թէ մարդիկը ձեզ անեն, այնպէս էլ դուք արէք նորանց. ինչու որ՝ իսկ գ սա է օրէնքը եւ մարգարէքը։

13 դ Նեղ դռնովը ներս մտէք. ինչու որ՝ լայն է դուռն՝ եւ համարձակ ճանապարհն՝ որ դէպի կորուստն է տանում. եւ շատ են նորանք որ նորանով են մտնում։

14 Քանզի նեղ է դուռը՝ եւ նեղ ճանապարհը, որ դէպի կեանքն է տանում. եւ քիչ են նորանք՝ որ գտնումն նորան։

15 Զգոյշ կացէք ե սուտ մարգարէներիցն՝ որ զ ոչխարի շորերով ձեզ մօտ են գալիս, եւ իրենց միջումը է յափշտակօղ գայլեր են։

16 ը Իրենց պտղիցը նորանց ճանաչեցէք. կը լինի՞ որ թ փշերիցը խաղող քաղեն. կամ տատասկիցը թուզ։

17 Այնպէս ժ ամէն բարի ծառ՝ բարի պտուղ է բերում. եւ չար ծառը չար պտուղ է բերում։

18 Չի կարօղ բարի ծառը՝ չար պտուղ բերել, եւ ոչ էլ չար ծառը բարի պտուղ բերել։

19 ի Ամէն ծառ՝ որ բարի պտուղ չի բերում, կտրվումէ եւ կրակի մէջ է ձգվում։

20 Ուրեմն իրենց պտղիցը ճանաչեցէք նորանց։

ա Ծննդ. Զ. 5. Ը. 21.
բ Ղուկ. Զ. 31.
գ Ղեւտ. ԺԹ. 18. Գլ. ԻԲ. 40. Հռովմ. ԺԳ. 8, 9, 10. Գաղ. Ե. 14. Ա Տիմ. Ա. 5.
դ Ղուկ. ԺԳ. 24.
ե Բ Օրին. ԺԳ. 3. Երեմ. ԻԳ. 16. Գլ. ԻԴ. 4, 5. 11. 24. Մարկ. ԺԳ. 22. Հռովմ. ԺԶ. 17, 18. Եփես. Ե. 6. Կող. Բ. 8. Բ Պետ. Բ. 1, 2, 3. Ա Յովհ. Դ. 1.
զ Միք. Գ. 5. Բ Տիմ. Գ. 5.
է Գործ. Ի. 29, 30.
ը Հասմբ. 20. Գլ. ԺԲ. 33.
թ Ղուկ. Զ. 43, 44.
ժ Երեմ. ԺԱ. 19. Գլ. ԺԲ. 33.
ի Գլ. Գ. 10. Ղուկ. Գ. 9. Յովհ. ԺԵ. 2. 6.

21 Ո՛չ ամենայն որ ասէ ցիս՝ Տէր Տէր, մտցէ յարքայութիւն երկնից. այլ որ առնէ զկամս Հօր իմոյ՝ որ յերկինս է։

22 Բազումք ասիցեն ցիս յաւուրն յայնմիկ. Տէր Տէր՝ ո՞չ յանուն քո մարգարէացաք, եւ յանուն քո դեւս հանաք, եւ յանուն քո զօրութիւնս բազումս արարաք։

23 Եւ յայնժամ ասացից ցնոսա՝ եթէ Ո՛չ երբէք գիտէի զձեզ. 'ի բաց կացէք յինէն ամենեքեան՝ որ գործէիք զանօրէնութիւն։

24 Ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ՝ եւ առնէ զնոսա, նմանեսցի առն իմաստնոյ՝ որ շինեաց զտուն իւր 'ի վերայ վիմի։

25 Իջին անձրեւք՝ եւ յարեան գետք, շնչեցին հողմք՝ եւ բախեցին զտունն, եւ ոչ կործանեցաւ. քանզի 'ի վերայ վիմի հաստատեալ էր։

26 Եւ ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ՝ եւ ոչ առնէ զնոսա, նմանեսցի առն յիմարի՝ որ շինեաց զտուն իւր 'ի վերայ աւազոյ։

27 Իջին անձրեւք՝ յարեան գետք, շնչեցին հողմք՝ հարին զտունն, եւ անկաւ. եւ էր կործանումն նորա մեծ յոյժ։

28 Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս զամենայն զբանս զայսոսիկ, զարմանային ժողովուրդքն ընդ վարդապետութիւն նորա։

29 Զի իբրեւ իշխանութեամբ ուսուցանէր՝ եւ ոչ որպէս դպիրքն։

21 Ո՛չ թէ [ց] ամէն ով որ ինձ ասումէ՝ Տէր Տէր՝ երկնքի արքայութիւնը կը մտնէ. բայց նա՛ որ իմ Հօրս կամքը կատարումէ՝ որ երկնքումն է։

22 Շատ մարդիք այն օրը կասեն ինձ. Տէր Տէր. չէ՞ որ [ւ] մենք քո անունովդ մարգարէութիւն արինք, եւ քո անունովդ դեւեր հանեցինք, եւ քո անունովդ շատ հրաշքներ արինք.

23 Եւ [ձ] այն ժամանակը կասեմ նորանց՝ թէ, Ես ու մին ժամանակ ձեզ չեմ ճանաչել. [ն] ինձանից դէն գնացէք ամէնքդ՝ որ անօրէնութիւն էիք գործում։

24 Ամէն ով որ այս իմ խօսքերս լսում եւ նորանց կատարումէ, նա այն իմաստուն մարդուն նման կը լինի, որ իւրեն տունը քարի վերայ շինեց.

25 Անձրեւներն եկին՝ եւ գետերը վարարեցին՝ քամիներ փչեցին եւ այն տունին թափեցին, եւ չը կործանուեցաւ. ինչու որ՝ քարի վերայ հաստատուած էր։

26 Եւ ամէն ով որ այս իմ խօսքերս լսում եւ նորանց չի կատարում, նա այն անխելք մարդուն նման կը լինի՝ որ իւրեն տունը աւազի վերայ շինեց.

27 Անձրեւներն եկին՝ եւ գետերը վերկացան՝ քամիներ փչեցին՝ եւ տունը թափեցին եւ ընկաւ, եւ նորա կործանվիլը շատ սաստիկ էր։

28 Եւ էլաւ երբոր Յիսուս այս ամէն բաներս կատարեց, [=] ժողովուրդները զարմանում էին նորա վարդապետութեանը վերայ.

29 Ինչու որ՝ [ւ] իշխանութիւն ունողի պէս էր սովորցնում. եւ ոչ թէ իրենց կարդացողներին պէս։

[ց] Ովսէ. Ը. 2. Գլ. ԻԵ. 11, 12. Ղուկ. Զ. 46. ԺԳ. 25. Գործ. ԺԹ. 13. Հռովմ. Բ. 13. Յակ. Ա. 22.
[ւ] Թուոց. ԻԴ. 4. Յովհ. ԺԱ. 51. Ա Կորնթ. ԺԳ. 2.
[ձ] Գլ. ԻԵ. 12. Ղուկ. ԺԳ. 25. 27. Բ Տիմ. Բ. 19.
[ն] Սաղ. Ե. 5. Զ. 8. Գլ. ԻԵ. 41.
[ը] Ղուկ. Զ. 47, 48.
[=] Գլ. ԺԳ. 54. Մարկ. Ա. 22. Զ. 2. Ղուկ. Դ. 32.
[ւ] Յովհ. Է. 46.

## ԳԼ. Ը

1 Այլ իբրեւ էջ ՚ի լեռնէ անտի,
գնացին զկնի նորա ժողովուրդք
բազումք ։
2 Եւ ահա մատուցեալ բորոտ մի
երկիրպագանէր նմա, եւ ասէր.
Տէր՝ եթէ կամիս՝ կարող ես զիս
սրբել ։
3 Ձգեաց զձեռն իւր եւ հասոյց
՚ի նա Յիսուս՝ եւ ասէ. Կամիմ՝
սրբեաց. եւ վաղվաղակի սրբեցաւ
՚ի նմանէ բորոտութիւնն ։
4 Եւ ասէ ցնա Յիսուս, Զգոյշ
լեր՝ մի ումեք ասիցես. այլ երթ
ցոյց զանձն քո քահանային. եւ
մատո զպատարագն, զոր հրամայ-
եաց Մովսէս, ՚ի վկայութիւն նոցա ։

5 Եւ մտեալ ՚ի Կափառնաում,
մատեաւ առ նա հարիւրապետ մի,
աղաչէր զնա,
6 Եւ ասէր. Տէր՝ մանուկ իմ
անկեալ կայ ՚ի տան անդամալոյծ՝
չարաչար տանջեալ ։
7 Ասէ ցնա Յիսուս. Ես եկից՝
եւ բժշկեցից զնա ։
8 Պատասխանի ետ հարիւրապե-
տըն՝ եւ ասէ. Տէր՝ չեմ բաւական՝
եթէ ընդ յարկաւ իմով մտցես.
այլ ասա բանիւ, եւ բժշկեսցի մա-
նուկն իմ ։
9 Քանզի եւ ես այր մի եմ ընդ
իշխանութեամբ, ունիմ ընդ ինեւ
զինուորս. ասեմ սմա Երթ՝ եւ եր-
թայ, եւ այլում թէ Եկ՝ եւ գայ,
եւ ծառայի իմում թէ Արա զայդ՝
եւ առնէ ։

10 Իբրեւ լուաւ Յիսուս՝ զարմա-
ցաւ, եւ ասէ ցայնոսիկ՝ որ զհետն
երթային. Ամէն ասեմ ձեզ՝ եւ ոչ
յԻսրայէլի այսպիսի հաւատս գտի
երբէք ։

1 Բայց երբոր այն սարէն վար
եկաւ, շատ ժողովուրդներ ՚նորան
ետեւէն գնացին ։
2 Եւ ահա = մին բորոտ մարդ մօտ
եկաւ երկրպագութիւն արաւ նո-
րան եւ ասաց. Տէր՝ թէ որ կամե-
նաս, կարող ես ինձ սրբել ։
3 Յիսուս իւրեն ձեռքն մեկնեց եւ
նորան հասցրուց եւ ասաց. Կամե-
նում եմ՝ սրբվիր. եւ շուտով բո-
րոտութիւնը սրբվեցաւ նորանից ։
4 Եւ Յիսուս ասաց նորան. Զգոյշ
կաց՝ ըռաւ ǂ մին մարդոյ բան չա-
սես. միայն թէ գնա քո անձդ
ցոյց տուր քահանային. եւ † Մովսէ-
սիցը հրամայած պատարագըն արա,
որ վկայութիւն լինի նորանց ։
5 Եւ ‡ երբոր մտաւ Կափառնա-
յում, մին հարիւրապետ եկաւ նո-
րա մօտ, աղաչումէր նորան,
6 Եւ ասում. Տէր՝ իմ տղան ան-
դամալոյծ պառկած է տանը մէջ եւ
սաստիկ տանջվումէ ։
7 Յիսուս նորան ասաց. Ես կը-
գամ եւ նորան կը բժշկեմ ։
8 Հարիւրապետը պատասխան
տուաւ եւ ասաց. Տէր՝ § արժանի
չեմ որ իմ տանս ծածկին տակը
մտնես, բայց ‖ միայն խօսքով ա-
սա՝ եւ իմ տղան կը բժշկվի ։
9 Ինչու որ՝ ես էլ մին իշխանու-
թեան տակ լինող մարդ եմ. իմ ձե-
ռիս տակը զինուորներ ունիմ եւ
ասումեմ սորան թէ, Գնա՝ եւ գը-
նումէ. եւ միւսին թէ, Եկ՝ եւ գա-
լիս է. եւ իմ ծառային՝ թէ, Էս
բանըս արա եւ անումէ ։
10 Երբոր Յիսուս լսեց, զարմացաւ
եւ ասաց նորանց որ իւրեն ետեւէն
գնումէին. Ճշմարիտ ասումեմ ձեզ,
որ Իսրայէլին մէջն էլ ըռաւ մին ժա-
մանակ այսպէս հաւատք չը գտի ։

= Մարկ. Ա. 40. ԶԷ։ Ղուկ. Ե. 12։
ǂ Գլ. Թ. 30։ Մարկ. Ե. 43։
† Ղեւտ. ԺԴ. 3, 4. 10։ Ղուկ. Ե. 14։
‡ Ղուկ. Է. 1, ԶԷ.
§ Ղուկ. ԺԵ. 19. 21.
‖ Սաղ. ՃԵ. 20։

11 Բայց ասեմ ձեզ, զի բազումք
յարեւելից եւ յարեւմտից եկեսցեն՝
եւ բազմեսցին ընդ Աբրահամու՝ եւ
ընդ Իսահակայ՝ եւ ընդ Յակոբու
յարքայութեան երկնից։
12 Եւ որդիքն արքայութեան ել-
ցեն 'ի խաւարն արտաքին. անդ ե-
ղիցի լալ եւ կրճել ատամանց։

13 Եւ ասէ Յիսուս ցհարիւրապե-
տն. Ե՛րթ՝ եւ որպէս հաւատա-
ցերդ եղիցի քեզ. եւ ողջացաւ մա-
նուկն նորա յաւուր յայնմիկ։
14 Եւ եկեալ Յիսուս 'ի տուն Պետ-
րոսի, ետես զի զզոքանչ նորա ան-
կեալ դնէր տապացեալ։
15 Կալաւ զձեռանէ նորա՝ եւ ե-
թող զնա ջերմն. յառն եկաց՝ եւ
պաշտէր զնոսա։
16 Իբրեւ եղեւ երեկոյ՝ մատուցին
առ նա դիւահարս բազումս, եւ ե-
հան զայսսն բանիւ. եւ զամենայն
հիւանդագինս բժշկեաց։
17 Զի լցցի բանն՝ որ ասացաւ 'ի
ձեռն Եսայեայ մարգարէի. Նա զ-
հիւանդութիւնս մեր վերացոյց, եւ
զցաւս մեր եբարձ։
18 Տեսեալ Յիսուսի ժողովուրդս
բազումս զիւրեւ, հրամայեաց եր-
թալ յայնկոյս։
19 Եւ մատուցեալ դպիր մի ասէ
ցնա. Վարդապետ՝ եկից եւ ես
զկնի քո ուր եւ երթիցես։

20 Ասէ ցնա Յիսուս. Աղուեսուց
որջք գոն՝ եւ թռչնոց երկնից բոյնք,
այլ Որդւոյ մարդոյ ոչ գոյ՝ ուր դի-
ցէ զգլուխ իւր։

21 Եւ այլ ոմն յաշակերտացն նո-

11 Բայց ասում եմ ձեզ, որ շատ
մարդիկ ե արեւելքից ու արեւ-
մուտքից կը գան, եւ Աբրահամի եւ
Իսահակի եւ Յակոբի հետ երկնքի
արքայութենումը կը նստեն,
12 Եւ ը արքայութեան որդիքն
դուրս կելլին թ դրսի խաւարը, որ
այն տեղ լաց եւ ատամների կըր-
ճտալը կը լինի։
13 Եւ Յիսուս ասաց հարիւրապե-
տին. Գնա՛ եւ ինչպէս որ հաւա-
տացիր՝ թող այնպէս լինի քեզ. եւ
նորան տղան այն օրը առողջացաւ։
14 Եւ երբոր ժ Յիսուս եկաւ Պետ-
րոսի տունը, տեսաւ որ ի նորա զո-
քանչը անկողնի մէջ պառկած էր։
15 Նորան ձեռքից բռնեց, եւ տեն-
դը թողեց նորան. վերկացաւ եւ
ծառայութիւն էր անում նորանց։
16 Երբոր լ իրիկուն էղաւ՝ շատ դի-
ւահարներ բերին նորան մօտ՝ եւ
նա մէկ խօսքով հանեց դեւերը, եւ
ամէն հիւանդներին բժշկեց.
17 Որ կատարուի Եսայի մարգա-
րէի ձեռով ասած բանը. թէ խ Նա
մեր հիւանդութիւնները վերացրուց՝
եւ մեր ցաւերը վեր առաւ։
18 Յիսուս երբոր շատ ժողովուրդ-
ներ տեսաւ իրեն չորս կողմը,
հրաման տուաւ այն կողմը գնալ։
19 Եւ մին կարգապետ մօտ եկաւ
եւ նորան ասաց. ծ Վարդապետ՝ ես
էլ քո ետեւէդ կը գամ որ տեղ որ
գնաս։
20 Եւ Յիսուս նորան ասաց. Աղ-
ուեսները կենալոյ փոսեր ունին,
եւ երկնքի թռչունները բոյն. բայց
Որդին մարդոյ մին տեղ չունի՝ որ
իրեն գլուխը դնէ։
21 Եւ նորա կ աշակերտներիցը մինը

ե Ծննդ. ԺԲ. 3. Եսայ. Բ. 2, 3. ԽԹ. 10. Մաղ. Ա. 11. Ղուկ. ԺԳ. 29. Գործ. Ժ. 45. ԺԱ. 18. ԺԴ. 26. Հռովմ. ԺԵ. 9. Ա. Եփես. Գ. 6.
ը Գլ. ԻԱ. 43.
թ Գլ. ԺԳ. 42. 50. ԻԲ. 13. ԻԴ. 51. ԻԵ. 30. Ղուկ. ԺԳ. 28. Բ Պետ. Բ. 17. Յուդ. 13.
ժ Մարկ. Ա. 29. 30. 31. Ղուկ. Դ. 38. 39.
ի Ա Կորնթ. Թ. 5.
լ Մարկ. Ա. 32. Ա. Ղուկ. Դ. 40. 41.
խ Եսայ. ԾԳ. 4. Ա Պետ. Բ. 24.
ծ Ղուկ. Թ. 57. 58.
կ Ղուկ. Թ. 59. 60.

ցն ասէ ցնա · Տէր՝ տուր ինձ հրա-
ման՝ զի երթայց նախ թաղեցից
զհայր իմ ։
22 Ասէ ցնա Յիսուս · Ե՛կ զկնի իմ,
եւ թո՛յլ տուր մեռելոցն թաղել զ
մեռեալս իւրեանց ։
23 Եւ իբրեւ եմուտ ՚ի նաւն, գնա-
ցին զկնի նորա աշակերտքն նորա ։

24 Եւ ահա շարժումն մեծ եղեւ
՚ի ծովուն՝ մինչ նաւին ծածկել յալ-
եաց անտի, եւ ինքն ննջէր ։

25 Եւ մատուցեալ աշակերտքն յա-
րուցին զնա եւ ասեն · Տէր՝ փըր-
կեա զմեզ՝ զի կորնչիմք ։
26 Եւ ասէ ցնոսա · Ընդէ՞ր վատա-
սիրտ էք թերահաւատք · յայն-
ժամ յարուցեալ սաստեաց հողմոցն
եւ ծովուն, եւ եղեւ խաղաղու-
թիւն մեծ ։
27 Եւ մարդիկն զարմացան՝ եւ
ասէին · Ո՞րպիսի ոք իցէ սա՝ զի եւ
հողմք եւ ծով հնազանդին սմա ։

28 Եւ իբրեւ անց յայնկոյս յեր-
կիրն Գերգեսացւոց, պատահեցին
նմա դիւահարք երկու՝ ելեալք ՚ի
գերեզմանացն, չարաչարք յոյժ ·
որպէս զի չէր հնար անցանել ու-
մեք ընդ այն ճանապարհ ։

29 Եւ ահա աղաղակեցին եւ ա-
սեն · Զի՞ կայ մեր եւ քո Յիսուս
Որդի Աստուծոյ, եկիր առաջաժամ
տանջել զմեզ ։
30 Եւ էր հեռագոյն ՚ի նոցանէ ե-
րամակ մի խոզից արօտական ։
31 Եւ դեւքն աղաչէին զնա եւ
ասէին · Եթէ հանես զմեզ աստի,
հրաման տուր մեզ երթալ յերամակ
խոզիցն ։
32 Եւ ասէ ցնոսա՝ Երթայք · եւ
նոքա ելեալ գնացին յերամակն խո-
զից · եւ դիմեաց ամենայն երամակն

սաց նորան · [հ] Տէր՝ ինձ հրաման
տուր որ գնամ առաջ իմ հայրս
թաղեմ ։
22 Յիսուս նորան ասաց · Իմ ե-
տեւէս եկ, եւ թող մեռելները ի-
րենց մեռելները թաղեն ։
23 Եւ երբոր մտաւ նաւը, նորա
աշակերտները նորա ետեւէն գնա-
ցին ։
24 Եւ ահա մեծ ալէկոծութիւն էլաւ
ծովին մէջ, մինչեւ որ նաւն էլ
ծածկվումէր ալիքներիցը · [յ] եւ ին-
քը քնած էր ։
25 Եւ աշակերտները մօտ եկին՝
նորան զարթնացրին եւ ասացին ·
Տէր՝ մեզ փրկէ՛՝ որ կորչումենք ։
26 Եւ նորանց ասաց · Ինչո՞ւ վախ-
կոտ էք թերահաւատներ ։ Այն
ժամանակը վերկացաւ՝ [ղ] քամիներին
եւ ծովին սաստեց, եւ մեծ խա-
ղաղութիւն եղաւ ։
27 Եւ մարդիկը զարմացան եւ ա-
սումէին · Սա ինչպէսի մարդ է՝ որ
քամիներն ու ծովն էլ հնազանդ-
վումեն սորան ։
28 Եւ երբոր այն [ե] կողմն անցին
Գերգեսացոց երկիրը, երկու դիւա-
հար մարդ պատահեցին նորան, գե-
րեզմաններիցը դուրս եկած՝ որ
այնքան չառ չար էին, մինչեւ որ
հնար չէր, թէ մին մարդ այն ճա-
նապարհովը անց կենայ ։
29 Եւ ահա աղաղակեցին եւ ա-
սացին · Յիսուս Որդի Աստուծոյ, քեզ
ինչ բան կայ մեզ հետ, որ եկել
ես անժամանակ մեզ տանջել ։
30 Եւ նորանցից հեռու մին խոզի
երամակ կար որ արածումէր ։
31 Եւ դեւերն աղաչումէին նորան
եւ ասում՝, թէ որ մեզ այս տեղից
հանես, հրաման տուր մեզ՝ որ գը-
նանք այն խոզերին երամակը ։
32 Եւ նորանց ասաց՝ Գնացէք · եւ
նորանք դուրս եկին գնացին խոզե-
րին երամակը · եւ խոզերին ամէն

[հ] Ա Թագ. ԺԹ. 20 ։ ա ։ Ղու. Ը. 23, ա ։
[յ] Մարկ. Դ. 37 ։
[ղ] Սաղ. ԿԵ. 7 ։ ՁԹ. 9 ։ ՃԷ. 29 ։
[ե] Մարկ. Ե. 1, ա ։ Ղու. Ը. 26, ա ։

'ի դարէ անտի 'ի ծով, եւ մեռան 'ի ջուրսն ։
33 Եւ խոզարածքն փախեան, եւ երթեալ 'ի քաղաքն պատմեցին զամենայն, եւ զիրս դիւահարացն ։
34 Եւ ահա ամենայն քաղաքն ել ընդ առաջ Յիսուսի ․ իբրեւ տեսին զնա՝ աղաչեցին, զի գնասցէ 'ի սահմանաց նոցա ։

երամակին այն բարձր տեղիցը վարեց ծովին մէջ, եւ ջրերին մէջը մեռան ։
33 Եւ խոզարածները փախան, եւ գնացին քաղաքը ․ պատմեցին ամէնը, եւ դիւահարներին բաներն էլ ։
34 Եւ ահա ամէն քաղաքը դուրս ելաւ Յիսուսի առաջը ․ երբոր նորան տեսին՝ ʳ աղաչեցին որ գնայ իրենց երկրիցը ։

## ԳԼ․ Թ

1 Եւ մտեալ 'ի նաւ անց յայնկոյս, եւ եկն 'ի քաղաք իւր ։
2 Եւ ահա մատուցին առ նա անդամալոյծ մի, որ դնէր 'ի մահճս ․ եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ ցանդամալոյծն ․ Թողեալ լիցին քեզ մեղք քո ։
3 Եւ ահա ոմանք 'ի դպրացն ասեն ընդ միտս ․ Հայհոյէ դա ։
4 Եւ ծանուցեալ Յիսուսի զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա ․ Ընդէ՞ր խորհիք դուք չարիս 'ի սիրտս ձեր ։
5 Զի՞նչ դիւրին է ․ ասել՝ Թողեալ լիցին քեզ մեղք քո, թէ ասել Արի եւ շրջեաց ։
6 Այլ զի գիտասջիք՝ եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս ․ յայնժամ ասէ ցանդամալոյծն ․ Արի՛ առ զմահիճս քո՝ եւ երթ 'ի տուն քո ։
7 Եւ յարուցեալ գնաց 'ի տուն իւր ։
8 Իբրեւ տեսին ժողովուրդքն, զարմացան ․ եւ փառաւոր առնէին զԱստուած զտուիչն այնպիսի իշխանութեան մարդկան ։
9 Եւ անցեալ ընդ այն Յիսուսի՝ ետես զայր մի, զի նստէր 'ի մաք-

1 Եւ նաւը մտաւ անցաւ այն կողմը, եւ = եկաւ իրեն քաղաքը ։
2 Եւ ահա ‡ մէկ անդամալոյծ բերին նորան մօտ, որ մահճին մէջ դրած էր ․ † Եւ Յիսուս նորանց հաւատքը տեսնելով՝ անդամալուծին ասաց ․ Քո մեղքերդ թողլած լինին քեզ ։
3 Եւ ահա կարգադրողներիցը մէն քանիսը իրենց մտքումն ասացին ․ թէ, Հայհոյում է դա ։
4 Յիսուս ‡ նորանց մտածմունքն իմացաւ եւ ասաց նորանց ․ Ի՞նչու էք չար բան մտածում դուք ձեր սրտերումը ։
5 Ո՞րն է հեշտ, ասել՝ թէ, Քո մեղքերդ թողլած լինին քեզ, թէ ասել՝ Վէր կաց եւ ման եկ ։
6 Բայց որ դուք իմանաք՝ թէ Որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրիս վերայ մեղաց թողութիւն տալոյ ․ այն ժամանակին անդամալուծին ասաց ․ Վէրկաց քո մահիճդ առ եւ գնա քո տունդ ։
7 Եւ նա վերկացաւ եւ գնաց իրեն տունը ։
8 Երբոր ժողովուրդները տեսին, զարմացան՝ եւ Աստուծոյ փառք էին տալիս, որ այնպիսի իշխանութիւն է տուել մարդկանց ։
9 Եւ Յիսուս երբոր այն տեղից առաջ գնաց, տեսաւ մէն Մատթէոս

ʳ Բ Օրին․ Ե․ 25 ․ Ա Թագ․ ԺԵ․ 18 ․ Ղուկ․ Ե․ 8 ․ | Գործ․ ԺԶ․ 39 ․ — = Գլ․ Դ․ 13 ․ ‡ Մարկ․ Բ․ 3 ․ | Ղուկ․ Ե․ 18 ․ † Գլ․ Ը․ 10 ․ ‡ Սաղ․ ՃԼԹ․ 2 ․ Գլ․ ԺԲ․ 25 ․ | Մարկ․ ԺԲ․ 15 ․ Ղուկ․ Ե․ 22 ․ Զ․ 8 ․ Թ․ 47 ․ ԺԱ․ 17 ․

մաքսաւորութեան՝ Մատթէոս անուն.
եւ ասէ ցնա՝ Ե՛կ զկնի իմ. եւ յա-
րուցեալ գնաց զկնի նորա։

բ 10 Եւ եղեւ իբրեւ բազմեալ էր
նա 'ի տան, եւ ահա բազում մաք-
սաւորք եւ մեղաւորք եկեալ եւ
բազմեալ էին ընդ Յիսուսի՝ եւ ընդ
աշակերտս նորա։
11 Իբրեւ տեսին փարիսեցիքն՝ ա-
սէին ցաշակերտս նորա. Ընդէ՞ր ընդ
մաքսաւորս եւ ընդ մեղաւորս ու-
տէ վարդապետն ձեր։

12 Իսկ Յիսուս իբրեւ լուաւ՝ ասէ
ցնոսա. Ո՛չ է պիտոյ բժիշկ կարո-
ղաց՝ այլ հիւանդաց։
13 Երթա՛յք՝ ուսարուք զինչ է.
Զողորմութիւն կամիմ, եւ ոչ զզոհ.
զի ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զ-
մեղաւորս։

14 Յայնժամ մատեան առ նա ա-
շակերտքն Յովհաննու՝ եւ ասեն.
Ընդէ՞ր մեք եւ փարիսեցիքն պա-
հեմք յաճախ, եւ քո աշակերտքդ
ոչ պահեն։
15 Ասէ ցնոսա Յիսուս. Միթէ
մարթ ինչ իցէ մանկանց առագաս-
տի սուգ առնուլ՝ մինչ փեսայն ընդ
նոսա իցէ. այլ եկեսցեն աւուրք՝
յորժամ բարձցի 'ի նոցանէ փեսայն,
եւ ապա պահեսցեն։
16 Ո՛չ ոք արկանէ կարկատան ան-
թափ 'ի վերայ հնացեալ ձորձոյ. զի
առնու [illegible] զլրութիւնն նորա 'ի
հանդերձէն, եւ եւս չար պատա-
ռումն լինի։
17 Եւ ոչ արկանեն գինի նոր 'ի
տիկս հինս. ապա թէ ոչ՝ տիկքն
պատառին՝ եւ գինին հեղու, եւ
տիկքն կորնչին. այլ արկանեն զգի-

անուն մարդ, որ նստած ա մաքսա-
ւորութիւն էր անում. եւ նորան
ասաց. Իմ ետեւէս եկ. եւ նա վեր-
կացաւ գնաց նորան ետեւէն։
10 Եւ էլաւ երբոր նորան տանը
սեղանի նստած էր, եւ ահա ուրիշ
էլ շատ մաքսաւորներ եւ մեղաւոր-
ներ եկել էին. եւ Յիսուսի ու իր
բ աշակերտներին հետ նստած էին։
11 Երբոր փարիսեցիքը տեսին, նո-
րա աշակերտներին ասացին. Ի՞նչու
ձեր գ վարդապետը մաքսաւորներին
եւ դ մեղաւորներին հետ հաց է ու-
տում։
12 Բայց Յիսուս երբոր լսեց, նո-
րանց ասաց. Կարողներին բժիշկ
պէտք չէ, այլ հիւանդներին։
13 Գնացէք սովորեցէք՝ թէ ինչ է
որ [illegible]՝ ե Ողորմութիւն եմ կամե-
նում՝ եւ ոչ մատաղ. ինչու որ՝ ես
չեմ եկել որ զ արդարներ կանչեմ,
այլ մեղաւորներ։
14 Այն ժամանակին Յօհաննէսի ա-
շակերտները նորան մօտ եկին եւ
ասացին. Ի՞նչու է մենք եւ փարի-
սեցիքը շատ ծոմ ենք պահում, եւ
քո աշակերտներդ չեն պահում։
15 Յիսուս նորանց ասաց՝ ը Միթէ
կարելի է որ հարսանիքի տղայք
սուգ անեն քանի որ փեսան նորանց
հետ է. բայց օրեր կը գան՝ որ փե-
սան նորանցից կառնուի, եւ թ նո-
րանից ետեւ կը պահեն։
16 Ո՛չ ով չը մաշված կարկատանի
կտոր հին շորի վերայ չի ձգել. ին-
չու որ՝ նա այն հին շորի ուժըն էլ
կառնէ գուրս կը գնայ՝ եւ նորա պա-
տառուածքըն էլ աւելի չար կը լինի։
17 Եւ նոր գինին հին տիկերի մէջ
չեն ածել. ապա թէ ոչ՝ տիկերը կը
պատառվին՝ եւ գինին կը թափվի,
եւ տիկերն էլ կը կորչին. բայց նոր

ա Մարկ. Բ. 14. Ղուկ. Ե. 27.
բ Մարկ. Բ. 15, եւ. Ղուկ. Ե. 29, եւ.
գ Գլ. ԺԱ. 19. Ղուկ. Ե. 30. ԺԵ. 2.
դ Գաղ. Բ. 15.
ե Ովսէ. Զ. 6. Միք. Զ. 6, 7. 8. Գլ. ԺԲ. 7.
զ Ա Տիմ. Ա. 15.
է Մարկ. Բ. 18, եւ. Ղուկ. Ե. 33, եւ. ԺԸ. 12.
ը Յովհ. Գ. 29.
թ Գործ. ԺԳ. 2, 3. ԺԴ. 23. Ա Կորնթ. Է. 5.

նի նոր 'ի տիկս նորս, եւ երկոքին
պահին։
18 Մինչդեռ նա զայս խօսէր ընդ
նոսա, ահա իշխան մի մատուցեալ
երկիրպագանէր նմա՝ եւ ասէր.
Դուստրն իմ արդ եւս վախճանե-
ցաւ. այլ եկեսցես դիցես զձեռն քո
'ի վերայ նորա՝ եւ կեցցէ։

19 Յարեաւ Յիսուս՝ եւ գնաց զկնի
նորա աշակերտօքն հանդերձ։
20 Եւ ահա կին մի տեառատես եր-
կոտասանամեայ՝ մատուցեալ յետոյ
մերձեցաւ 'ի զրոշակ հանդերձի նո-
րա։
21 Զանզի ասէր 'ի միտս իւրում.
Թէ միայն մերձենամ 'ի հանդերձս
նորա՝ փրկիմ։
22 Իսկ Յիսուս իբրեւ դարձաւ եւ
ետես զնա՝ ասէ. Քաջալերեաց
դուստր՝ հաւատք քո կեցուցին ըզ
քեզ. եւ փրկեցաւ կինն 'ի ժամէն
յայնմանէ։
23 Իբրեւ եկն Յիսուս 'ի տուն իշ-
խանին, եւ ետես զփողահարսն եւ
զամբոխս յոյժ, ասէ ցնոսա. 'Ի բաց
գնացէք։
24 Զի ոչ եթէ մեռեալ է աղջիկդ՝
այլ ննջէ։
25 Եւ ծաղր առնէին զնա. եւ
իբրեւ ել ամբոխն 'ի բաց, եմուտ՝
կալաւ զձեռանէ նորա, եւ յարեաւ
աղջիկն։
26 Եւ ել համբաւս այս ընդ ամե-
նայն երկիրն ընդ այն։
27 Եւ մինչդեռ անցանէր ընդ այն
Յիսուս, զհետ եղեն նորա կոյրք
երկու, աղաղակէին՝ եւ ասէին,
Ողորմեաց մեզ Որդի Դաւթի։

28 Եւ իբրեւ եկն 'ի տուն, մատու-
ցան առ նա կոյրքն. եւ ասէ ցնո-
սա Յիսուս. Հաւատա՞յք՝ եթէ կա-

գինին նոր տիկերի մէջ կածեն, եւ
երկուքն էլ կը պահուին։
18 Դեռ քանի որ նա սա խօսումէր
նորանց հետ, ահա՛ ծ մին իշխան ե-
կաւ նորան երկրպագութիւն արաւ՝
եւ ասաց. Իմ աղջիկս ճիշդ հիմիկ
մեռնելու վերայ է. միայն թէ եկ եւ
քո ձեռքդ նորան վերայ դիր՝ եւ
կապրի։
19 Յիսուս վերկացաւ եւ աշակերտ-
ներովը գնաց նորա ետեւէն։
20 Եւ ահա՛ կ մին կին, որ տաս-
ներկու տարի միշտ արիւն թափե-
լով ցաւագար էր, մօտ եկաւ՝ եւ
ետեւէն նորա շորի ծայրին դիպաւ։
21 Ինչուոր՝ իրեն մտքումն ասու-
մէր՝ թէ, Միմիայն նորա շորին դիպ-
չիմ, կը փրկուիմ։
22 Բայց երբոր Յիսուս յետ դար-
ձաւ եւ նորան տեսաւ, ասաց. հ Ժիր
կաց իմ դուստր՝ քո հաւատքդ քեզ
ազատեցուց. եւ իսկ այն ժամին
կինն ազատուեցաւ։
23 Երբոր ձ Յիսուս եկաւ իշխանին
տունը, տեսաւ ղ փող փչօղները եւ
շատ ամբոխը, նորանց ասաց. ճ Հե-
ռա՛ն գնացէք,
24 Ինչուոր՝ այդ աղջիկդ մեռած
չէ, բայց քնած է։
25 Եւ ծաղր էին անում նորան.
եւ երբոր ամբոխը դուրս ՚ելաւ,
ներս մտաւ՝ նորան ձեռիցը բռնեց.
եւ աղջիկը վերկացաւ։
26 Եւ այս համբաւս դուրս եկաւ
այն ամէն երկիրը։
27 Եւ ինչ ժամանակ որ Յիսուս
այն տեղիցն անցանումէր, երկու
կոյր աղաղակումէին նորա ետեւէն՝
եւ ասում. մ Որդի Դաւթի՝ մեզ ո-
ղորմիա։
28 Եւ երբոր տունը մտաւ, կու-
յրերը նորան մօտ եկին. եւ Յիսուս
նորանց ասաց. Հաւատումէք թէ

ծ Մարկ. Ե. 22, ա։ Ղու. Ը. 41, ա։
կ Մարկ. Ե. 25։
Ղու. Ը. 43։
հ Ղու. Ե. 50։ Ը. 48։ ԺԷ. 19։ ԺԸ. 42։
ձ Մարկ. Ե. 38։ Ղու. Ը. 51։
ղ Բ Մնաց. ԼԵ. 25։
ճ Գործ. Ի. 10։
մ Գլ. ԺԵ. 22։ Ի. 30, 31։ Մարկ. Ժ. 47, 48։ Ղու. ԺԸ. 38, 39։

րող եմ առնել ձեզ զայդ. ասեն ցնա՝ Այո Տէր։
ɔ 29 Յայնժամ մերձեցաւ յաչս նո-
ցա՝ և ասէ. Ըստ հաւատոց ձերոց
եղիցի ձեզ։
30 Եւ բացան աչք նոցա. և
սաստեաց նոցա Յիսուս՝ և ասէ.
Զգո՛յշ կացէք՝ մի ոք գիտասցէ։

31 Եւ նոքա ելեալ համբաւեցին
զնա ընդ ամենայն երկիրն ընդ այն։

32 Եւ ՚ի լինելն նոցա արտաքս,
ահա մատուցին առ նա այր մի՝
համր դիւահար։
33 Եւ ՚ի հանել զդևն՝ խօսեցաւ
համրն. և զարմացան ժողովուրդ-
քըն՝ և ասեն. Թէ և ոչ երբէք
երևեցաւ այսպիսի ինչ յԻսրայէլի։

34 Իսկ փարիսեցիքն ասէին, Թէ
Իշխանաւն դիւաց հանէ զա զդևս։

35 Եւ շրջէր Յիսուս ընդ ամե-
նայն քաղաքս և ընդ գիւղս. ու-
սուցանէր ՚ի ժողովուրդս նոցա,
և քարոզէր զաւետարանն արքա-
յութեան. և բժշկէր զամենայն
ախտս և զամենայն հիւանդու-
թիւնս ՚ի ժողովրդեանն։
36 Եւ տեսեալ զժողովուրդսն՝ գը-
թացաւ ՚ի նոսա. զի էին աշխատ-
եալք և ցրուեալք իբրև զոչխարս,
որոց ոչ իցէ հովիւ։

37 Յայնժամ ասէ ցաշակերտսն
իւր. Հունձք բազում են՝ և մշա-
կք սակաւ։
38 Արդ՝ աղաչեցէք զՏէր հնձոց՝
զի հանցէ մշակս ՚ի հունձս իւր։

կարող եմ դա անել ձեզ. և նորան
ասացին. Այո Տէր։
29 Այն ժամանակը նորանց աչքե-
րին մօտեցաւ՝ և ասաց. Ձեր հա-
ւատալոյն պէս թող լինի ձեզ։
30 Եւ նորանց աչքերը բացվեցին.
և Յիսուս նորանց սաստեց՝ և ա-
սաց. ɔ Զգո՛յշ կացէք՝ որ մին մարդ
չիմանայ։
31 Եւ նորանք որ դուրս գնացին,
այն ամէն ՝ երկրումը նորա անունը
յայտնի արին։
32 Եւ երբոր նորանք դուրս էին
գնում, ահա չմին համր դիւահար
մարդ բերին նորա մօտ։
33 Եւ երբոր դևը դուրս ելաւ,
համրը խօսեց. և ժողովուրդները
զարմացան և ասացին. Երբէք մին
ժամանակ Իսրայէլի մէջ այսպիսի
բան չի երևեցաւ։
34 Բայց փարիսեցիքն ասումէին.
Թէ, Դա ⁼ դևերի իշխանովն է հա-
նում դևերը։
35 Եւ Յիսուս ՝ ամէն քաղաքներին
ու գիւղերը ման էր գալիս. նորանց
ժողովարաններին մէջ սովորցնու-
մէր. և արքայութեան աւետա-
րանը քարոզում և ժողովուրդի
մէջի ամէն ցաւերին ու ամէն ՝ հի-
ւանդութիւնները բժշկումէր։
36 Եւ ժողովուրդներին որ տե-
սաւ՝ ՝ խղճն եկաւ նորանց վե-
րայ. որ աշխատած և ցրված
էին, ինչպէս ⁼ ոչխարներ որ հո-
վիւ չունէին։
37 Այն ժամանակին իրեն աշա-
կերտներին ասաց. ⁼ Հունձքը շատ
են՝ և մշակները քիչ։
38 Ուրեմն ՝ աղաչեցէք հնձի Տի-
րոջը՝ որ մշակներ ուղարկէ իրեն
հունձը։

ɔ Գլ. Ը. 4. ԺԲ. 16. ԺԷ. 9. Ղու. Ե. 14.
ʻ Մարկ. Է. 36.
ʻ Գլ. ԺԲ. 22. Ղու. ԺԱ. 14.
⁼ Գլ. ԺԲ. 24. Մարկ. Գ. 22. Ղու. ԺԱ. 15.
ʻ Մարկ. Զ. 6. Ղու. ԺԳ. 22.
⁼ Գլ. Դ. 23.
ʻ Մարկ. Զ. 34.
— Թու. ԻԷ. 17. Գ Թագ. ԻԲ. 17. Եզեկ. ԼԴ. 5. Զաք. Ժ. 2.
⁼ Ղու. Ժ. 2. Յովհ. Դ. 35.
ʻ Բ Թես. Գ. 1.

—

## ԳԼ. Ժ

1 Եւ կոչեցեալ առ ինքն զեր-
կոտասանեսին աշակերտսն իւր, ետ
նոցա իշխանութիւն այսոց պղծոց
հանել զնոսա, եւ բժշկել զամենայն
ցաւս եւ զամենայն հիւանդու-
թիւնս:
2 Եւ առաքելոցն երկոտասանից
էին անուանք այսոքիկ. առաջին
Սիմովն՝ անուանեալն Պետրոս, եւ
Անդրէաս եղբայր նորա:
3 Յակոբոս Զեբեդեայ, եւ Յով-
հաննէս եղբայր նորա. Փիլիպպոս,
եւ Բարթողիմէոս. Թովմաս, եւ
Մատթէոս մաքսաւոր. Յակոբոս
Ալփեայ, եւ Ղեբէոս՝ որ անուանե-
ցաւ Թադէոս:
4 Սիմովն Կանանացի. եւ Յու-
դայ Իսկարիովտացի՝ որ եւ մատ-
նեացն զնա:
5 Զնոսա երկոտասանեսին առա-
քեաց Յիսուս, պատուիրեաց նոցա՝
եւ ասէ. 'ի ճանապարհ հեթանո-
սաց մի երթայցէք, եւ 'ի քաղաք
Սամարացւոց մի մտանիցէք:
6 Այլ երթայք առաւել առ ոչ-
խարսն կորուսեալս տանն Իսրայէլի:
7 Եւ իբրեւ երթայցէք՝ քարո-
զեցէք եւ ասացէք, թէ մերձեալ
է արքայութիւն երկնից:
8 Զհիւանդս բժշկեցէք, զբորոտս
սրբեցէք, զդեւս հանէք, ձրի ա-
ռէք՝ եւ ձրի տուք:
9 Մի ստանայք ոսկի՝ եւ մի ար-
ծաթ՝ եւ մի պղինձ 'ի գօտիս ձեր:
10 Մի պարկ 'ի ճանապարհ, եւ
մի երկուս հանդերձս, մի կօշիկս,

1 Եւ իրեն տասներկու ա աշա-
կերտները իրեն մօտ կանչեց, եւ
նորանց իշխանութիւն տուաւ ամէն
պիղծ դեւերին վերայ, որ նորանց
հանեն. եւ ամէն ցաւերն ու ամէն
հիւանդութիւնները բժշկեն:
2 Եւ այն տասներկու առաքելոց
անունները այս էին. բ առաջինը Սի-
մոն՝ Պետրոս կոչուածը, եւ նորա
եղբայր Անդրէասը,
3 Յակոբոս Զեբեդեան՝ եւ նորա
եղբայր Յովհաննէսը. Փիլիպպոս եւ
Բարթողիմէոս. Թովմաս եւ Մատ-
թէոս մաքսաւորը. Յակոբոս Ալ-
փեանը, եւ Ղեբէոսն որ Թադէոս
կոչվեցաւ:
4 գ Սիմոն Կանանացին՝ եւ դ Յու-
դա Իսկարիովտացին՝ նա, որ մատ-
նեց նորան:
5 Այս տասներկուսը Յիսուս ու-
ղարկեց, նորանց պատուէր տուաւ
եւ ասաց. ե Հեթանոսներին ճանա-
պարհը չը գնաք. եւ զ Սամարացւոց
քաղաքը չը մտնէք:
6 Բայց է աւելի գնացէք Իսրայէլի
տան ը կորած ոչխարներին մօտ:
7 Եւ թ երբոր կը գնաք, քարո-
զեցէք եւ ասացէք. ժ Երկնքի ար-
քայութիւնը մօտեցել է:
8 Հիւանդները բժշկեցէք. բո-
րոտները սրբեցէք. դեւերը հանե-
ցէք. ի ձրի առել էք՝ ձրի տուէք:
9 Վեր լ չի առնէք ոչ ոսկի եւ
ոչ արծաթ, եւ ոչ էլ պղինձ փող
ձեր գօտիներումը:
10 Ո՛չ ճանապարհի պարկ, եւ ոչ
երկու շոր՝ ոչ կօշիկ ոչ գաւազան.

ա Մարկ. Գ. 13, 14. Զ. 7. Ղու. Զ. 13. Թ. 1.
բ Յովհ. Ա. 42.
գ Ղու. Զ. 15. Գործ. Ա. 13.
դ Յովհ. ԺԴ. 26.
ե Գլ. Դ.
զ Բ Թագ. ԺԷ. 24. Յովհ. Դ. 9. 20.
է Գլ. ԺԵ. 24. Գործ. ԺԳ. 46.
ը Եսայ. ՆԳ. 6. Երեմ. Ծ. 6. 17. Եզեկ. ԼԴ. 5. 16. Ա Պետ. Բ. 25.
թ Ղու. Թ. 2.
ժ Գլ. Գ. 2. Դ. 17. Ղու. Ժ. 9.
ի Գործ. Ը. 18. 20.
լ Ա Թագ. Թ. 7. Մարկ. Զ. 8. Ղու. Թ. 3. Ժ. 4. ԻԲ. 35.
խ Մարկ. Զ. 8.

մի ցուպ. զի արժանի է մշակն կերակրոյ իւրոյ։

11 Յոր քաղաք մտանիցէք կամ 'ի գեօղ, հարցանիցէք՝ թէ ո՛ է 'ի նմա արժանի. եւ անդ լինիջիք՝ մինչեւ ելանիցէք անտի։

12 Եւ իբրեւ մտանիցէք 'ի տունն, ողջոյն տայջիք նմա՝ եւ ասասջիք. Ողջոյն տանս այսմիկ։

13 Եթէ իցէ տունն արժանի, եկեսցէ ողջոյնն ձեր 'ի վերայ նորա. ապա թէ ոչ իցէ արժանի, ողջոյնն ձեր առ ձեզ դարձցի։

14 Եւ որ ոչ ընկալցի զձեզ՝ եւ ոչ լուիցէ բանից ձերոց, իբրեւ ելանիցէք 'ի տանէն՝ կամ 'ի քաղաքէն յայնմանէ, թօթափեսջիք զփոշին յոտից ձերոց։

15 Ամէն ասեմ ձեզ՝ Դիւրագոյն լիցի երկրին Սոդոմացւոց եւ Գոմորացւոց յաւուրն դատաստանի, քան քաղաքին այնմիկ։

16 Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրեւ զոչխարս 'ի մէջ գայլոց. եղերո՛ւք այսուհետեւ խորագէտք իբրեւ զօձս, եւ միամիտք իբրեւ զաղաւնիս։

17 Զգո՛յշ լինիջիք 'ի մարդկանէ. զի մատնեսցեն զձեզ յատեանս. եւ 'ի ժողովուրդս իւրեանց տանջեսցեն զձեզ։

18 Եւ առաջի դատաւորաց եւ թագաւորաց տանիցին զձեզ վասն իմ 'ի վկայութիւն նոցա եւ հեթանոսաց։

19 Այլ յորժամ մատնեսցեն զձեզ, մի՛ հոգայցէք՝ թէ որպէս կամ զինչ խօսիցիք. զի տացի ձեզ 'ի

ինչու որ՝ [ծ] մշակն իր կերակուրին արժանի է։

11 Ո՛ր [կ] քաղաքը՝ կամ գիւղ որ մտնէք, հարցրէք՝ թէ նորանում ո՛վ է արժանի, եւ այնտեղ կացէք՝ մինչեւ որ այնտեղից դուրս գնաք։

12 Եւ երբոր տունը կը մտնէք, ողջոյն տուէք նորան եւ ասացէք. Ողջոյն այս տանս։

13 Թէ որ [հ] այն տունը արժանի է, ձեր ողջոյնը նորա վերայ կը գայ. բայց թէ որ արժանի չէ՝ ձեր [ձ] ողջոյնը յետ կը դառնայ դէպի ձեզ։

14 Եւ ով որ [ղ] ձեզ չի ընդունի՝ եւ ձեր խօսքերին ականջ չի դնէ, երբոր այն տանիցը կամ այն քաղաքիցը դուրս կը գնաք, ձեր [ճ] ոտներիցը փոշին թափ տուէք։

15 Ճշմարիտ ասում եմ ձեզ, որ [մ] Սոդոմացւոց եւ Գոմորացւոց երկրին համար աւելի հեշտ կը լինի դատաստանի օրումը քան այն քաղաքին։

16 Ահա ես [յ] ուղարկում եմ ձեզ ինչպէս ոչխարներ գայլերի մէջ. [ն] ասահամար խորագէտ եղէք՝ ինչպէս օձերը, եւ [շ] միամիտ՝ ինչպէս աղաւնիքը։

17 Զգո՛յշ կացէք մարդկանցից. ինչու որ ձեզ [ո] դատաստանն կը քաշեն եւ [չ] իրենց ժողովարաններին մէջ կը տանջեն ձեզ։

18 Եւ [պ] դատաւորների եւ թագաւորների առաջը կը տանեն ձեզ իմ պատճառովս՝ որ նորանց եւ հեթանոսներին վկայութիւն լինի։

19 Բայց երբոր կը մատնեն ձեզ, հոգս մի՛ անէք՝ թէ [ջ] ինչպէս կամ ինչ պիտի խօսիք. ինչու որ՝ իսկ այն

[ծ] Ղուկ. Ժ. 7։ Ա Կորն. Թ. 7, 13։ Ա Տիմ. Ե. 18։
[կ] Ղուկ. Ժ. 8։
[հ] Ղուկ. Ժ. 5։
[ձ] Սաղ. ԼԵ. 13։
[ղ] Մարկ. Զ. 11։ Ղուկ. Թ. 5։ Ժ. 10, 11։
[ճ] Նեեմ. Ե. 13։ Գործ. ԺԳ. 51։ ԺԸ. 6։
[մ] Գլ. ԺԱ. 22. 24։
[յ] Ղուկ. Ժ. 3։
[ն] Հռովմ. ԺԶ. 19։ Եփես. Ե. 15։
[շ] Ա Կորնթ. ԺԴ. 20։ Փիլիպ. Բ. 15։
[ո] Գլ. ԻԴ. 9։ Մարկ. ԺԳ. 9։ Ղուկ. ԺԲ. 11։ ԻԱ. 12։
[չ] Գործ. Ե. 40։
[պ] Գործ. ԺԲ. 1։ ԻԴ. 10։ ԻԵ. 7. 23։ Բ Տիմ. Դ. 16։
[ջ] Մարկ. ԺԳ. 11, 12, 13։ Ղուկ. ԺԲ. 11։ ԻԱ. 14, 15։

ժամուն յայնմիկ զինչ խօսիցիք :

20 Զի ոչ եթէ դուք իցէք՝ որ
խօսիցիքն, այլ Հոգին Հօր ձերոյ՝
որ խօսիցի 'ի ձեզ :
21 Մատնեսցէ եղբայր զեղբայր 'ի
մահ, եւ հայր զորդի . եւ յարիցեն
որդիք 'ի վերայ հարց՝ եւ սպանա-
նիցեն զնոսա :
22 Եւ եղիջիք ատեցեալք յամե-
նեցունց վասն անուան իմոյ . իսկ
որ համբերեսցէ իսպառ, նա կեցցէ :
23 Եւ յորժամ հալածեսցեն զձեզ
'ի քաղաքիս յայսմիկ՝ փախիջիք
յայլ . եւ եթէ յայնմանէ հալածի-
ցեն զձեզ՝ փախիջիք 'ի միւս : Ամէն
ասեմ ձեզ՝ Ո՛չ սպառեսջիք զքա-
ղաքս Իսրայէլի՝ մինչեւ եկեսցէ Որ-
դի մարդոյ :
24 Ո՛չ է աշակերտ առաւել քան
զվարդապետ, եւ ոչ ծառայ քան
զտէր իւր :
25 Շատ իցէ աշակերտին՝ եթէ
եղիցի իբրեւ զվարդապետ իւր, եւ
ծառային՝ իբրեւ զտէր իւր . եթէ
զտանուտէրն Բէեղզեբուղ կոչեցին,
որչափ եւս առաւել զընտանիս նո-
րա :
26 Մի այսուհետեւ երկնչիցիք 'ի
նոցանէ . զի ոչ ինչ է 'ի ծածուկ՝
որ ոչ յայտնեսցի, եւ գաղտնի՝ որ
ոչ ծանիցի :
27 Զոր ասեմ ձեզ 'ի խաւարի՝ ա-
սացէք 'ի լոյս . եւ զոր լսէք յուն-
կանէ՝ քարոզեցէք 'ի վերայ տանե-
եաց :
28 Եւ մի երկնչիք յայնցանէ՝ որ
սպանանեն զմարմին, եւ զոգի ոչ
կարեն սպանանել . այլ երկերուք

ժամումը — կը տրուի ձեզ ինչ որ
պիտի խօսիք :
20 Վասնզի — չէ թէ դուք էք
որ կը խօսիք, բայց ձեր Հօրը Հո-
գին է որ ձեզմանում կը խօսի :
21 ‡ Եղբայր եղբայրը մահու կը
մատնէ, եւ հայրն որդին . եւ որ-
դիքը վեր կը կենան իրենց հարանց
վրայ՝ եւ նորանց կը սպաննեն :
22 Եւ = ամէնին ատելի կը լինիք
իմ անունիս համար . բայց ≠ ով որ կը
համբերէ մինչեւ վերջը՝ նա կապրի :
23 Եւ երբոր այս ÷ քաղաքումս
հալածեն ձեզ, փախէք ուրիշը . եւ
թէ որ նորանից էլ հալածեն ձեզ,
փախէք այն միւսը : Ճշմարիտն ա-
սումեմ ձեզ, Որ չէք վերջացնիլ
Իսրայէլի քաղաքները . մինչեւ — Որ-
դին մարդոյ կը գայ :
24 ‡ Աշակերտը վարդապետիցն աւե-
լի չէ, եւ ոչ ծառան իրենն տիրո-
ջիցը :
25 Բաւական է՝ թէ աշակերտն ի-
րենն վարդապետին նման լինի . եւ ծա-
ռան իրենն տիրոջը նման : Թէ որ տա-
նուտէրը + Բէեղզեբուղ կոչեցին,
այս որքան աւելի նորան ընտա-
նիքը :
26 Ասորհամար ել մի վախնաք
նորանցից . ինչուոր՝ ° իսկի ծածուկ
բան չը կայ՝ որ յայտնի չը լինի . եւ
թաքուն բան՝ որ չիմացուի :
27 Ինչ որ խաւարումն ասումեմ
ձեզ, լուսի մէջն ասացէք . եւ ինչ
որ ականջում լսումէք՝ կտուրներին
վրայ քարոզեցէք :
28 Մի ‡ վախնաք նորանցից՝ որ
մարմինը սպանումեն եւ հոգին չեն
կարող սպաննել . բայց աւելի վախ-

— Եղկ . Դ . 12 . Երեմ . Ա . 7 . = Բ Թագ . ԻԴ . 2 . Գործ . Դ . 8 . Զ . 10 . Բ Տիմ . Դ . 17 . ‡ Միք . Է . 6 . Համար . 35 , 36 . Ղու . ԻԱ . 16 . ≠ Ղու . ԻԱ . 17 . ÷ Դան . ԺԲ . 12 , 13 . Գղ . ԻԴ . 13 . Մարկ . ԺԳ . 13 . ∻ Գղ . Բ . 13 . Դ . 12 . ԺԲ . 15 . Գործ . Ը . 1 . Թ . 25 . ԺԴ . 6 . — Գղ . ԺԶ . 23 . ‡ Ղու . Զ . 40 . Յովհ . ԺԳ . 16 . ԺԵ . 20 . + Գղ . ԺԲ . 24 . Մարկ . Գ . 22 . Ղու . ԺԱ . 15 . Յովհ Ը . 48 . 52 . ° Մարկ . Դ . 22 . Ղու . Ը . 17 . ԺԲ . 2 , 3 . ‡ Եսայ . Ը . 12, 13 . Ղու . ԺԲ . 4 . Ա Պետ . Գ . 14 .

զուք առաւել յայնմանէ՝ որ կա-
րօղն է զոգի եւ զմարմին կորուսա-
նել ՚ի գեհենի ։
29 Ո՞չ ապաքէն երկու ճնճղուկք
գանկի միով վաճառին, եւ մի ՚ի
նոցանէ յերկիր ոչ անկցի առանց
Հօր ձերոյ ։
30 Այլ ձեր եւ ամենայն խոյլ հեր
գլխոյ թուեալ է ։
31 Եւ արդ՝ մի երկնչիցիք՝ զի
լաւ էք քան զբազում ճնճղուկս ։
32 Ամենայն որ խոստովանեսցի յիս
առաջի մարդկան, խոստովանեսցիմ
եւ ես զնմանէ առաջի Հօր իմոյ՝ որ
յերկինսն է ։
33 Եւ որ ուրասցի զիս առաջի
մարդկան, ուրացայց եւ ես զնա
առաջի Հօր իմոյ՝ որ յերկինսն է ։

34 Մի համարիք եթէ եկի արկա-
նել խաղաղութիւն յերկիր. ոչ եկի
արկանել խաղաղութիւն, այլ սուր ։

35 Քանզի եկի քակել զայր ՚ի հօ-
րէ իւրմէ, եւ զդուստր ՚ի մօրէ իւր-
մէ, եւ զհարսն ՚ի սկեսրէ իւրմէ ։

36 Եւ թշնամիք առն ընտանիք
իւր ։
37 Որ սիրէ զհայր կամ զմայր ա-
ռաւել քան զիս՝ ոչ է ինձ արժա-
նի. եւ որ սիրէ զուստր կամ զդ
դուստր առաւել քան զիս՝ չէ ինձ
արժանի ։
38 Եւ որ ոչ առնու զխաչ իւր՝
եւ գայ զկնի իմ, չէ ինձ արժանի ։
39 Որ գտանէ զանձն իւր, կո-
րուսցէ զնա՝ եւ որ կորոյս զանձն
իւր վասն իմ, գտցէ զնա ։

ցէք նորանից՝ որ կարող է հոգին
եւ մարմինը կորցնել գեհենին մէջ ։

29 Չէ՞ որ երկու ծիտ մէն դանկի
են ծախվում. եւ նորանցից մէկը չի
ընկնիլ գետինը առանց ձեր Հօրը ։

30 Բայց ձեր = գլխի ամէն մազե-
րն էլ համարված է ։
31 Ուրեմն մի վախենաք. ինչու որ՝
դուք աւելի լաւ էք քան շատ ծտեր ։
32 Ամէն ով որ ինձ ‡ մարդկանց
առաջին կը դաւանէ՝ ես էլ նորան
կը դաւանեմ իմ ÷ Հօրս առաջին որ
երկնքումն է ։
33 Եւ ով որ ‡ ինձ կուրանայ
մարդկանց առաջին՝ ես էլ նորան
կուրանամ իմ Հօրս առաջին՝ որ եր-
կնքումն է ։
34 Չը կարծէք թէ եկել եմ երկ-
րիս վերայ ⁑ խաղաղութիւն ձգել.
չեմ եկել խաղաղութիւն ձգել,
բայց սուր ։
35 Պատճառն որ՝ եկի որ մարդըն
իրեն հօրիցը, եւ աղջիկըն իրեն մօ-
րիցն, եւ ⁎ հարսըն իրեն սկեսու-
րիցը բաժանեմ ։
36 Եւ մարդոյ ⁑ թշնամիներն իրեն
ընտանիքը կը լինին ։
37 Ով որ = հայրը կամ մայրը ին-
ձանից աւելի կը սիրէ, նա ինձ
արժանի չէ. եւ ով որ իրեն որդին
կամ աղջիկը ինձանից աւելի կը սի-
րէ, նա ինձ արժանի չէ ։
38 Եւ ով որ ‡ իրեն խաչը չառնէ եւ
իմ ետեւէս գայ, նա ինձ արժանի չէ ։
39 Ով որ ⁎ իրեն անձը կը գտնէ՝
կը կորցնէ նորան, եւ ով որ իրեն
անձըն ինձ համար կորցրուց, կը
գտնէ նորան ։

= Ա Թագ. ԺԴ. 45. Բ Թագ. ԺԴ. 11. Ղուկ. ԻԱ. 18. Գործ. ԻԷ. 34. ‡ Ղուկ. ԺԲ. 8. Հռովմ. Ժ. 9, 10.
÷ Յայտ. Գ. 5. ‡ Մարկ. Ը. 38. Ղուկ. Թ. 26. Բ. Տիմ. Բ. 12. ⁑ Ղուկ. ԺԲ. 49. 51, 52, 53. ⁎ Միք. Է. 6.
⁑ Սաղ. ԽԱ. 9. ԾԵ. 13. Միք. Է. 6. Յովհ. ԺԳ. 18. = Ղուկ. ԺԴ. 26. ‡ Գլ. ԺԶ. 24. Մարկ. Ը. 34.
Ղուկ. Թ. 23. ԺԴ. 27. ⁎ Գլ. ԺԶ. 25. Ղուկ. ԺԷ. 33. Յովհ. ԺԲ. 25.

40 Որ ընդունի զձեզ՝ զիս ընդու-
նի, եւ որ զիս ընդունի՝ ընդունի
զառաքիչն իմ։
41 Որ ընդունի զմարգարէ յա-
նուն մարգարէի՝ զվարձս մարգա-
րէի առցէ. եւ որ ընդունի զար-
դար յանուն արդարոյ՝ զվարձս ար-
դարոյ առցէ։
42 Եւ որ արբուսցէ միում 'ի փո-
քրկանցս յայսցանէ բաժակ մի
ջուր ցուրտ միայն՝ յանուն աշա-
կերտի, ամէն ասեմ ձեզ. Ո՛չ կո-
րուսցէ զվարձս իւր։

40 Ո՛վ որ է ձեզ կընդունի՝ ինծի
կընդունի. եւ ով որ ինծի կընդու-
նի, ինծի ուղարկողին կընդունի։
41 Ո՛վ որ ւ մարգարէ կընդունի
մարգարէի անունովը՝ նա մարգա-
րէի վարձք կառնէ. եւ ով որ ար-
դարը կընդունի արդարի անունովը՝
արդարի վարձք կառնէ։
42 Եւ ե ով որ այս փոքրիկներէն
մէկին՝ միմիայն մէկ աման ցուրտ ջուր
խմցնէ աշակերտի անունովը, ճըշ-
մարիտն ասեմ ձեզ, նա չի կոր-
ցնել իրեն վարձքը։

## ԳԼ. ԺԱ.

1 Եւ եղեւ իբրեւ կատարեաց
Յիսուս զպատուէր երկոտասանից
աշակերտացն իւրոց, գնաց անտի
քարոզել եւ ուսուցանել 'ի քաղաքս
նոցա։
2 Իսկ Յովհաննէս իբրեւ լուաւ
'ի բանտին զգործսն Քրիստոսի, ա-
ռաքեաց 'ի ձեռն աշակերտացն իւ-
րոց։
3 Եւ ասէ ցնա. Դո՞ւ ես որ գա-
լոցն ես, եթէ այլում ակնկալ-
ցուք։
4 Պատասխանի ետ Յիսուս՝ եւ
ասէ ցնոսա. Գնացէք պատմեցէք
Յովհաննու, զոր լուայք եւ տեսէք։
5 Կոյրք տեսանեն, կաղք գնան,
բորոտք սրբին, եւ խուլք լսեն,
եւ մեռեալք յառնեն, եւ աղքատք
աւետարանին։
6 Եւ երանեալ է՝ որ ոչ գայ-
թակղեսցի յիս։

1 Եւ եղաւ երբոր Յիսուս իրեն
տասներկու աշակերտներին պատ-
ուիրանքները վերջացուց, այն տե-
ղէն գնաց որ նորանց քաղաքնե-
րումը քարոզ տայ եւ սովորցնէ։
2 Բայց – Յովհաննէս երբոր բան-
տումը բ Քրիստոսին գործքերը լսեց,
իրեն աշակերտներին ձեռքովը ուղար-
կեց,
3 Եւ նորան ասաց. ‡ Դու ես նա
որ պիտոր է գայ, թէ ուրիշի սպա-
սենք։
4 Յիսուս պատասխան տուաւ եւ
նորանց ասաց. Գնացէք՝ Յովհաննէսին
պատմեցէք, ինչ որ լսեցիք եւ տեսիք։
5 Կուրերը տեսնումեն, կաղերը
գնումեն, բորոտները սրբվումեն.
խուլերը լսումեն, ‡ մեռելները յա-
րութիւն են առնում, եւ ‡ աղքատ-
ներին աւետարան է քարոզվում։
6 Եւ երանելի է նա, որ ‡ ինծի
վրայ չի գայթակղվիլ։

է Գղ. ԺԸ. 5, Ղու. Թ. 48, Ժ. 16, Յովհ. ԺԲ. 44, ԺԳ. 20, Գաղ. Դ. 14.
ւ Գ Թագ. ԺԷ. 10, ԺԸ. 4, Դ Թագ. Դ. 8.
ե Գղ. Ը. 5, 6, ԻԵ. 40, Մարկ. Թ. 41, Եբր. Զ. 10.

—

– Գղ. ԺԴ. 3.
բ Ղու. Է. 18, 19, ու.
‡ Ծննդ. ԽԹ. 10, Թու. ԻԴ. 17, Դան. Թ. 24, Յովհ. Զ. 14.
‡ Եսայ. ԻԹ. 18, ԼԵ. 4, 5, 6, ԽԲ. 7, Յովհ. Բ. 23, Գ. 2, Ե. 36, Ժ. 25, 38, ԺԴ. 11.
‡ Սաղ. ԻԲ. 26, Եսայ. ԿԱ. 1, Ղու. Դ. 18, Յակ. Բ. 5.
‡ Եսայ. Ը. 14, 15, Գղ. ԺԳ. 57, ԻԴ. 10, ԻԶ. 31, Հռովմ. Թ. 32, 33, Ա Կորնթ. Ա. 23, Բ. 14, Գաղ. Ե. 11, Ա Պետ. Բ. 8.

7 Եւ իբրեւ նոքա գնացին , սկը-
սաւ Յիսուս ասել ժողովրդեանն ըզ
Յովհաննէ . Զինչ ելէք տեսանել
յանապատին , եղէգն շարժուն 'ի
հողմոյ ։

8 Այլ զինչ ելէք տեսանել . մարդ
'ի հանդերձս փափկութեան զար-
դարեալ . ահաւասիկ որ զփափուկ-
սն զգեցեալ են՝ 'ի տունս թագա-
ւորաց են ։
9 Այլ զինչ ելէք տեսանել . մար-
գարէ . այո՛ ասեմ ձեզ , եւ առա-
ւել եւս քան զմարգարէ ։

10 Զի նա է վասն որոյ գրեալն
է . Ահա ես առաքեմ զհրեշտակ
իմ առաջի երեսաց քոց՝ որ պատ-
րաստեսցէ զճանապարհս քո առա-
ջի քո ։
11 Ամէն ասեմ ձեզ՝ Չէ՛ յարու-
ցեալ 'ի ծնունդս կանանց մեծ քան
զՅովհաննէս մկրտիչ . բայց փոք-
րիկն յարքայութեան երկնից մեծ է
քան զնա ։
12 Բայց յաւուրցն Յովհաննու մը-
կրտչի մինչեւ ցայժմ՝ արքայու-
թիւնն երկնից բռնադատի , եւ բը-
ռունք յափշտակեն զնա ։

13 Քանզի ամենայն օրէնք եւ մար-
գարէք մինչեւ ցՅովհաննէս մար-
գարէացան ։
14 Եւ թէ կամիք ընդունել՝ նա
է Եղիա՝ որ գալոցն է ։
15 Որ ունիցի ականջս լսելոյ լը-
ւիցէ ։
16 Ո՞ւմ նմանեցուցից զազգս զայս .
նման է մանկանց՝ որ նստիցին 'ի
հրապարակս , կարդայցեն զընկերս
իւրեանց ,
17 Եւ ասիցեն . Փողս հարաք ձեզ՝

7 Բայց երբոր ե նորանք գնացին ,
Յիսուս սկսեց ժողովուրդներին ա-
սել Յօհաննէսին համար . Դուք
գնացիք ինչ տեսնելու անապատու-
մը , զ մի՞ն եղէգ՝ որ քամուցը շար-
ժվելումէ ։
8 Ապա ինչ տեսնելու դուրս գը-
նացիք . մի՞ն մարդ փափուկ շորերով
զարդարված . ահա նորանք որ փա-
փուկ հագած են՝ թագաւորաց տը-
ներումն են ։
9 Ուրեմն ինչ տեսնելու դուրս
գնացիք . մի՞ն մարգարէ . իրաւն ա-
սումեմ ձեզ , որ է մարգարէից էլ
շատ աւելի է ։
10 Ինչու որ՝ նա այն է՝ որ նորա
համար գրված է . թէ , Ահա ես իմ
հրեշտակս կուղարկեմ քո երեսից
առաջին , որ քո ը առաջից քո ճա-
նապարհըդ պատրաստէ ։
11 Ճշմարիտ ասումեմ ձեզ . Որ
կանանց ծնվածներին մէջ աւելի մեծ
առաջ եկած չէ՞ քան Յօհաննէս մը-
կրտիչը . բայց երկնքի արքայու-
թեան միջին փոքրը նորանից մեծ է ։
12 Բայց թ Յօհաննէս մկրտչի օրե-
րերից մինչեւ հիմիկ երկնքի ար-
քայութիւնը ուժով է առնըվում՝
եւ ուժաւորները յափշտակումեն նո-
րան ։
13 Ինչու որ՝ ամէն օրէնքն ու մար-
գարէքը մինչեւ ժ Յօհաննէսը մար-
գարէացան ։
14 Եւ թէ կամենաք ընդունիլ ,
ի նա է Եղիան , որ պէտք է գայ ։
15 Ով որ լսելու ականջ ունի՝ թող
լ լսէ ։
16 Ո՞ւմ նմանեցնեմ այս ազգըս .
այն տղայոցը նման է՝ որ փողոցնե-
րումը նստեն եւ իրենց ընկերնե-
րին կանչեն ,
17 Եւ ասեն . Փող փչեցինք ձեզ

ե Ղու . Է . 24 ։
զ Եփես . Դ . 14 ։
է Գլ . ԺԴ . 5 ։ ԻԱ . 26 ։ Ղու . Ա . 76 ։ Է . 26 ։
ը Մաղ . Գ . 1 ։ Մարկ . Ա . 2 ։ Ղու . Ա . 76 ։ Է . 27 ։
թ Ղու . ԺԶ . 16 ։
ժ Մաղ . Դ . 6 ։
ի Մաղ . Դ . 5 ։ Գլ . ԺԷ . 12 ։ Ղու . Ա . 17 ։
լ Գլ . ԺԳ . 9 ։ Ղու . Ը . 8 ։ Յայտ . Բ . 7 . 11 . 17 . 29 ։ Գ . 6 . 13 . 22 ։
խ Ղու . Է . 31 ։

եւ ոչ կաքաւեցէք, ողբացաք ձեզ՝ եւ ոչ կոծեցարուք։

18 Եկն Յովհաննէս, ոչ ուտէր եւ ոչ ըմպէր. եւ ասեն՝ Դեւ գոյ ՚ի նմա։

19 Եկն ՚Որդի մարդոյ՝ ուտէ եւ ըմպէ. եւ ասեն, Ահա այր կերող եւ արբեցող, բարեկամ մաքսաւորաց եւ մեղաւորաց. եւ արդարացաւ իմաստութիւն յորդւոց իւրոց։

20 Յայնժամ սկսաւ նախատել զքաղաքսն՝ յորս եղեն բազում զօրութիւնք նորա, եւ ոչ ապաշխարեցին։

21 Վայ քեզ Քորազին, վայ քեզ Բեթսայիդա. զի եթէ ՚ի Տիւրոս եւ ՚ի Սիդոն եղեալ էին զօրութիւնքն՝ որ ՚ի ձեզ եղեն, վաղու եւս արդեօք խորգով եւ մոխրով ապաշխարեալ էր։

22 Բայց ասեմ ձեզ. Դիւրագոյն լիցի երկրին Տիւրոսի եւ Սիդոնի յաւուրն դատաստանի՝ քան ձեզ։

23 Եւ դու Կափառնաում, մի մինչեւ յերկինս բարձրասցիս, այլ մինչեւ ՚ի դժոխս իջցես. զի եթէ ՚ի Սոդոմ եղեալ էին զօրութիւնքն՝ որ ՚ի քեզ եղեն, ապաքէն կային եւս մինչեւ ցայսօր։

24 Բայց ասեմ ձեզ՝ Եթէ երկրին Սոդոմացւոց դիւրագոյն լիցի յաւուրն դատաստանի՝ քան քեզ։

25 Յայնմ ժամանակի պատասխանի ետ Յիսուս՝ եւ ասէ. Գոհանամ զքէն Հայր՝ Տէր երկնի եւ երկրի. զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ՚ի գիտնոց, եւ յայտնեցեր տղայոց։

համար՝ եւ դուք չեկլիք. սուգ արինք ձեզ համար՝ եւ լաց չլացաք։

18 Յովհաննէսը եկաւ, ոչ ուտամէր եւ ոչ խմում. եւ ասումեն՝ Դեւ կայ նորանում։

19 Որդին մարդոյ եկաւ՝ ուտումէ եւ խմում, եւ ասումեն. Ահա ուտող եւ խմող մարդ. մաքսաւորների եւ մեղաւորների բարեկամ. եւ իմաստութիւնն արդարացաւ իրեն որդիներիցը։

20 Այն ժամանակը սկսեց նախատինք տալ այն քաղաքներին՝ ուր որ նորա շատ հրաշքներն էլան՝ եւ չապաշխարեցին։

21 Վայ քեզ Քորազին. վայ քեզ Բեթսայիդա. ինչու որ՝ եթէ Տիւրոսի եւ Սիդոնի մէջն էլած էին այն հրաշքներն որ ձեր մէջն էլան, շատ կանուխ [ֆ] քրձով եւ մոխրով ապաշխարել էին։

22 Բայց ասումեմ ձեզ. Դատաստանի օրն աւելի հեշտ կը լինի Տիւրոսի եւ Սիդոնի երկրին համար՝ քան [մ] ձեզ։

23 Եւ դու Կափառնայում. մինչեւ երկինքը չես բարձրանալ, բայց մինչեւ դժոխքը կը ցածանաս. ինչու որ՝ եթէ Սոդոմի մէջն էլած էին այն հրաշքներն՝ որ քեզանում էլան, ուղորդ որ՝ մինչեւ այսօր դեռ մնումէին։

24 Բայց ասումեմ ձեզ՝ Որ դատաստանի օրն Սոդոմացոց երկրին համար աւելի հեշտ [ն] կը լինի. քան քեզ։

25 Այն ժամանակը Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց. Գոհանումեմ քեզանից. ով Հայր, երկնքի եւ երկրի Տէր. որ իմաստուններիցն ու գիտուններիցն այս բաները ծածկեցիր՝ եւ տղայոցն յայտնեցիր։

հ Գլ. Թ. 10։
յ Ղու. Է. 35։
ն Ղու. Ժ. 13, ...
շ Յովն. Գ. 7, 8

մ Գլ. Ժ. 15։ Համր. 24։
յ Եսայ. ԺԴ. 13։ Թղթ. Բ. 1։

ն Գլ. Ժ. 15։
շ Ղու. Ժ. 21։
ո Սաղ. Ը. 2։ Ա Կորնթ. Ա. 19.

27։ Բ. 8։ Բ Կորնթ. Գ. 14։
չ Գլ. ԺԶ. 17։

26 Այո՛ Հայր. զի այսպէս հաճոյ
եղեւ առաջի քո։
27 Ամենայն ինչ տուաւ ինձ 'ի
Հօրէ իմմէ. եւ ոչ ոք ճանաչէ զՈր-
դի՝ եթէ ոչ Հայր, եւ ոչ զՀայր ոք
ճանաչէ՝ եթէ ոչ Որդի, եւ ում
Որդին կամիցի յայտնել։

28 Եկայք առ իս ամենայն վաս-
տակեալք եւ բեռնաւորք, եւ ես
հանգուցից զձեզ։
29 Առէք զլուծ իմ 'ի ձեզ, եւ ու-
սարուք յինէն՝ զի հեզ եմ եւ խո-
նարհ սրտիւ. եւ գտջիք հանգիստ
անձանց ձերոց։

30 Զի լուծ իմ քաղցր է. եւ բեռն
իմ փոքրոգի։

26 Իրաւ է ով Հայր. ինչու որ՝
այսպէս հաճոյ էղաւ քո առաջիդ։
27 Ամէն բան ինձ տրուած իմ ¬ Հօ-
րիցս. եւ ոչ ով չի ճանաչում Որ-
դին՝ բայց միայն Հայրը եւ ոչ ով
չի ճանաչում Ը Հայրին՝ բայց միայն
Որդին. եւ ում որ Որդին կամենայ
յայտնել։
28 Ինձ մօտ եկէք՝ ամէն վաստա-
կածներ եւ բեռնաւորներ. եւ ես
հանգիստ կը տամ ձեզ։
29 Իմ լուծըս ձեր վերայ առէք,
եւ ինձանից – սովորեցէք. ինչու որ՝
ես հեզահոգի եմ եւ սրտով • խո-
նարհ. եւ ձեր անձին համար հան-
գստութիւն Է կը գտնէք.
30 Ինչու որ՝ իմ լուծըս քաղցր է,
եւ իմ բեռս ⊤ թեթեւ։

## ԳԼ. ԺԲ

1 Յայնժամ գնայր Յիսուս ընդ
արտորայսն նոցա 'ի շաբաթու, եւ
աշակերտքն նորա քաղցեան, եւ
սկսան հասկ կորզել եւ ուտել։

2 Փարիսեցիքն իբրեւ տեսին՝ ա-
սեն ցնա. Ահաւասիկ աշակերտքն
քո գործեն, զոր ոչ է արժան գոր-
ծել 'ի շաբաթու։
3 Եւ նա ասէ ցնոսա. Ո՞չ իցէ
ընթերցեալ ձեր՝ զոր արար Դա-
ւիթ, յորժամ քաղցեաւն, եւ որ
ընդ նմայն էին։

4 Զիարդ եմուտ 'ի տունն Ա-
տուծոյ՝ եւ եկեր զհացսն առաջա-
ւորութեան. զոր ոչ էր օրէն նմա
ուտել, եւ ոչ որոց ընդ նմայն էին,
բայց միայն քահանայից։
5 Կամ թէ չիցէ ընթերցեալ յօ-

1 Այն ժամանակը Յիսուս շա-
բաթ օրը գնաց նորանց արտերին
= մէջ, եւ նորան աշակերտները սո-
վեցին, եւ սկսեցին հասկ պոկել եւ
ուտել։
2 Երբոր փարիսեցիքը տեսին՝ նո-
րան ասացին. Ահա քո աշակերտ-
ներդ բան են անում, որ արժան
չէ շաբաթ օրը անել։
3 Նա էլ ասաց նորանց. Դուք
չէ՞ք կարդացել նա՞ որ Դաւիթն ա-
րաւ այն ժամանակն որ ինքը Բ սո-
վեց. եւ նորանք էլ որ նորա հետն
էին.
4 Թէ ինչպէս Աստուծոյ տունը
մտաւ եւ առաջաւորութեան հացը
÷ կերաւ. որ օրէնք չէր նորան ու-
տել, եւ ոչ էլ նորանց որ նորա հետն
էին. բայց միայն ⊤ քահանայից։
5 Կամ թէ չէ՞ք կարդացել Ի օրէն-

¬ ԳԼ. ԻԸ. 18. Ղուկ. Ժ. 22. Յովհ. Գ. 35. ԺԳ. 3. ԺԷ. 2. Ա Կորնթ. ԺԵ. 27.
Ը Յովհ. Ա. 18. Զ. 46. Ժ. 15.
– Յովհ. ԺԳ. 15. Փիլիպ. Բ. 5. Ա Պետ. Բ. 21. Ա Յովհ. Բ. 6.
• Զաք. Թ. 9. Փիլիպ. Բ. 7, 8.
Է Երեմ. Զ. 16.
⊤ Ա Յովհ. Ե. 3.

—

= Բ Օրին. ԻԳ. 25. Մարկ. Բ. 23. Ղուկ. Զ. 1.
Բ Ա Թագ. ԻԱ. 6.
÷ Ելից. ԻԵ. 30. Ղեւ. ԻԴ. 5.
⊤ Ելից. ԻԹ. 32, 33. Ղեւ. Ը. 31. ԻԴ. 9.
Ի Թուոց. ԻԸ. 9. Յովհ. Է. 22.

րէնս՝ զի 'ի շաբաթս քահանայքն 'ի
տաճարին պղծեն զշաբաթն, եւ ան-
մեղք են ։
6 Բայց ասեմ ձեզ՝ Զի մեծ քան
զտաճարն է աստ ։
7 Եւ եթէ գիտէիք զինչ է՝ Զո-
ղորմութիւն կամիմ՝ եւ ոչ զպատ-
արագ, ոչ դատապարտէիք դուք
զանպարտսն ։
8 Զի տէր է շաբաթու՝ Որդին
մարդոյ ։
9 Եւ գնացեալ անտի Յիսուս եկն
'ի ժողովուրդն նոցա ։
10 Եւ ահա էր այր մի՝ որոյ ձեռն
իւր գօսացեալ էր · հարցին զնա՝ եւ
ասեն, եթէ Պարտ իցէ 'ի շաբաթու
բժշկել · զի չարախօսեսցեն զնմա-
նէ ։
11 Եւ նա ասէ ցնոսա · Ո՞վ է 'ի
ձէնջ մարդ՝ որոյ իցէ ոչխար մի,
եւ անկանիցի այն 'ի խորխորատ 'ի
շաբաթու · միթէ ոչ ունիցի եւ յա-
րուցանիցէ զնա ։
12 Իսկ արդ՝ որչափ եւս առաւել
է մարդ քան զոչխար · ապա ու-
րեմն արժան է 'ի շաբաթու բարիս
գործել ։
13 Յայնժամ ասէ ցայրն · Ձգեա
զձեռն քո, եւ նա ձգեաց՝ եւ եղեւ
ողջ իբրեւ զմիւսն ։
14 Իսկ փարիսեցիքն ելեալ ար-
տաքս խորհուրդ առնէին զնմանէ՝ թէ
որպէս կորուսցեն զնա ։
15 Եւ Յիսուս իբրեւ գիտաց, մեկ-
նեցաւ անտի · եւ գնացին զհետ
նորա ժողովուրդք բազումք, եւ
բժշկեաց զամենեսեան ։
16 Եւ սաստեաց նոցա՝ զի մի
յայտնեսցեն զնմանէ ումեք ։
17 Զի լցցի, որ ասացաւն 'ի ձե-
ռն Եսայեայ մարգարէի ։

քումը, որ քահանայքը շաբաթ օ-
րերը տաճարին մէջ շաբաթը պղ-
ծումն, եւ մեղք չէ նորանց ։
6 Բայց ասում եմ ձեզ՝ Որ տա-
ճարիցն էլ մեծն է դ այստեղ ։
7 Բայց թէ որ գիտէիք՝ ինչ է
այն բանը՝ թէ Ողորմութիւն եմ ու-
զում եւ ոչ թէ ե մատաղ · դուք
չէիք դատապարտիլ այն անմեղները ։
8 Ինչու որ՝ շաբաթու տէրն՝ Որ-
դին մարդոյ է ։
9 Եւ Յիսուս այն տեղից ը գնաց՝
եկաւ նորանց ժողովարանը ։
10 Եւ այնտեղ մին մարդ կար՝ որ
նորա ձեռքը չորացած էր · նորան
հարցրին եւ ասացին՝ թէ Շաբաթ
օրը պէ՞տք է բժշկութիւն թ անել ·
որ նորա վերայ չարախօսեն ։
11 Եւ նա ասաց նորանց · Ո՞վ է
ձեզանից այն մարդը · որ մին ոչ-
խար ունենայ եւ նա ընկնի փոսի
մէջ շաբաթ ժ օրը, միթէ չի բռնիլ
նորան եւ վերկացնիլ ։
12 Ապա որքան աւելի է մարդ
քան թէ ոչխար · որահամար պէտք
է շաբաթ օրը բարիք գործել ։

13 Այն ժամանակը ասաց այն մար-
դոյն · Ձեռքդ մեկնէ, նա էլ մեկ-
նեց · եւ ողջ էղաւ այն միւսին պէս ։
14 Բայց փարիսեցիքը դուրս ի գը-
նացին · եւ նորա համար խորհուրդ
արին՝ թէ ինչպէս կորցնեն նորան ։
15 Եւ Յիսուս երբոր իմացաւ, այն
տեղից լ հեռացաւ · եւ շատ ժողո-
վուրդներ նորա ետեւէն խ գնացին ·
եւ ամէնքը բժշկեց ։
16 Եւ նորանից ծ սաստեց՝ որ իրե-
նից մին մարդոյ բան չի յայտնեն ·
17 Որ կատարուի Եսայի մարգարէի
ձեռով ասածը ·

դ Բ Մնաց . Զ . 18 · Մաղ . Գ . 1 ·
ե Ովսէ . Զ . 6 · Միք . Զ . 6, 7 . 8 · Գլ . Թ . 13 ·
ը Մարկ . Գ . 1 · Ղու . Զ . 6 ·
թ Ղու . ԺԳ . 14 · ԺԴ . 3 · Յովհ . Թ . 16 ·
ժ Ելից . ԻԳ . 4 . 5 · Բ Օրին . ԻԲ . 4 ·
ի Գլ . ԻԵ . 1 · Մարկ . Գ . 6 · Ղու . Զ . 11 · Յովհ . Ե . 18 · Ժ . 39 · ԺԱ . 53 ·
լ Գլ . Ժ . 23 · Մարկ . Գ . 7 ·
խ Գլ . ԺԹ . 2 ·
ծ Գլ . Թ . 30 ·

[է] 18 Ահա մանուկ իմ՝ զոր ընտրեցի, եւ սիրելի իմ՝ ընդ որ հաճեցաւ անձն իմ. եդից զՀոգի իմ ՚ի վերայ նորա, եւ իրաւունս հեթանոսաց պատմեսցէ։

19 Ո՛չ հակառակեսցի՝ եւ ոչ աղաղակեսցէ, եւ ոչ ոք լուիցէ ՚ի հրապարակս զբարբառ նորա։

20 Զեղէգն ջախջախեալ ոչ փշրեսցէ, եւ զպատրոյգն առկայծեալ ոչ շիջուսցէ. մինչեւ հանցէ ՚ի յաղթութիւն զդատաստան։

21 Եւ յանուն նորա հեթանոսք յուսասցին։

22 Յայնժամ մատուցան առ նա դիւահար մի կոյր եւ համր, եւ բժշկեաց զնա. որպէս զի համրն եւ կոյրն խօսեսցի եւ տեսանիցէ։

23 Զարմացան ամենայն ժողովուրդքն՝ եւ ասէին. Միթէ սա իցէ Քրիստոսն որդի Դաւթի։

24 Բայց փարիսեցիքն իբրեւ լուան՝ ասեն. Ո՛չ ինչ հանէ դա զդեւս՝ եթէ ոչ Բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց։

25 Իբրեւ գիտաց Յիսուս զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա. Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝ աւերի. եւ ամենայն քաղաք կամ տուն բաժանեալ յանձն իւր՝ ոչ կացցէ։

26 Եւ եթէ Սատանայ զՍատանայ հանէ, յանձն իւր բաժանեցաւ. արդ՝ զիա՞րդ կացցէ թագաւորութիւն նորա։

27 Եւ եթէ ես Բէեղզեբուղաւ հանեմ զդեւս՝ որդիքն ձեր իւ՞ հանիցեն. վասն այնորիկ նոքա եղիցին ձեր դատաւորք։

28 Ապա թէ Հոգւով Աստուծոյ հանեմ ես զդեւս, ուրեմն հասեալ է ՚ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ։

18 Ահա իմ մանուկս՝ որ ես ընտրեցի. եւ իմ սիրելիս՝ որ իմ անձս հաւանել է նորան. իմ Հոգիս նորա վերայ կը դնեմ, եւ հեթանոսներին իրաւունքը կը պատմէ։

19 Նա չի հակառակիլ. եւ չի աղաղակիլ, եւ փողոցներին մէջ ոչ ով նորա ձայնը չի լսիլ.

20 Ջարդուած եղէգը չի փշրիլ, եւ մարջի կայծը հանած պատրոյգը չի անցնիլ. մինչեւ դատաստանը դուրս հանէ յաղթութեամբ։

21 Եւ նորա անուանին հեթանոսները յոյս կը դնեն։

22 Այն ժամանակը մէն կոյր եւ համր դիւահար բերին նորան մօտ՝ եւ նորան բժշկեց. այնպէս որ համրը եւ կոյրը խօսեց եւ տեսաւ։

23 Բոլոր ժողովուրդները զարմացան եւ ասացին. Զը լինի՞ թէ սա է Քրիստոսը Դաւթի որդին։

24 Բայց փարիսեցիքն երբոր լսեցին՝ ասացին. Թէ Դա դեւերը ուրիշ բանով չի հանում. բայց միայն Բէեղզեբուղ դեւերի իշխանի ձեռամբ։

25 Երբոր Յիսուս նոցանից միտքերին [ը] իմացաւ, ասաց նոցանից. Ամէն թագաւորութիւն որ իրեն մէջ բաժանուած է՝ կը կործանուի. եւ ամէն քաղաք կամ տուն որ իրեն մէջ բաժանուած է՝ չի մնալ։

26 Եւ թէ որ Սատանան Սատանային հանէ, իրեն միջումը բաժանուեցաւ. էլ ինչպէս նորա թագաւորութիւնը կը կենայ։

27 Եւ եթէ ես Բէեղզեբուղովն եմ հանում դեւերը, ապա ձեր որդիքն ինչով կը հանեն. նորա համար նոքա կը լինին ձեզ դատաւոր։

28 Ապա թէ որ ես Աստուծոյ Հոգովն եմ հանում դեւերին, ուրեմն Աստուծոյ արքայութիւնը ձեզ վերայ հասել [ժ] է։

[է] Եսայ. ԽԲ. 1։
[ը] Գլ. Գ. 17։ ԺԷ. 5։
[թ] Գլ. Թ. 32։ Մարկ. Գ. 11։ Ղու. ԺԱ. 14։
[ժ] Գլ. Թ. 34։ Մարկ. Գ. 22։ Ղու. ԺԱ. 15։
[ի] Գլ. Թ. 4։ Յովհ. Բ. 25։ Յայտ. Բ. 23։
[լ] Դան. Բ. 44։ Է. 14։ Ղու. Ա. 33։ ԺԱ. 20։ ԺԷ. 20, 21։

29 Կամ զիա՞րդ կարէ ոք մտանել
'ի տուն հզօրի՝ եւ զգործիսն նորա
յափշտակել . եթէ ոչ նախ կապի-
ցէ զհզօրն , եւ ապա զտունն նորա
յափշտակիցէ :
30 Որ ոչ ընդ իս է , հակառակ
իմ է . եւ որ ոչ ժողովէ ընդ իս՝
ցրուէ :
31 Վասն այդորիկ ասեմ ձեզ .
Ամենայն մեղք եւ հայհոյութիւնք
թողցին մարդկան , բայց զՀոգւոյն
հայհոյութիւն մի՛ թողցի :
32 Եւ որ ոք ասիցէ բան զՈրդւոյ
մարդոյ՝ թողցի նմա . բայց որ ըզ
Հոգւոյն Սրբոյ ասիցէ՝ մի՛ թողցի
նմա , մի՛ յայսմ աշխարհի՝ եւ մի՛ 'ի
հանդերձելումն :
33 Կամ արարէք զծառն բարի՝ եւ
զպտուղ նորա բարի . կամ արա-
րէք զծառն չար՝ եւ զպտուղ նորա
չար . քանզի 'ի պտղոյ անտի ծառն
ճանաչի :
34 Ծնունդք իժից՝ զիա՞րդ կարի-
ցէք բարիս խօսել՝ որ չարքդ էք .
քանզի 'ի յաւելուածոյ սրտի խօսի
բերան :
35 Մարդ բարի՝ 'ի բարի գանձուց
սրտի իւրոյ հանէ զբարիս . եւ մարդ
չար՝ 'ի չար գանձուց սրտի իւրոյ ,
հանէ զչարիս :
36 Բայց ասեմ ձեզ . Թէ ընդ ա-
մենայն դատարկ բանի զոր խօսիցին
մարդիկ , տացեն համար յաւուրն
դատաստանի :
37 Զի 'ի բանից քոց արդարա-
ցիս , եւ 'ի բանից քոց պարտաւո-
րեսցիս :
38 Յայնժամ պատասխանի ետուն
նմա ոմանք 'ի դպրացն եւ 'ի փա-
րիսեցւոց՝ եւ ասեն . Վարդապետ՝
կամիմք նշան ինչ տեսանել 'ի քէն :

29 Կամ ինչպէս մէկ մարդ կարող է
զօրաւոր մարդոյ տունը ↄ մտնել՝ եւ
նորա բաները յափշտակել . թէ որ ա-
ռաջ այն զօրաւոր մարդը չկապէ ,
եւ յետոյ նորա տունը յափշտակէ :
30 Ո՛վ որ ինձ հետ չէ՝ նա ինձ հա-
կառակ է . եւ ով որ ինձ հետ չի
ժողովում՝ նա ցրվումէ :
31 Դորահամար ասումեմ ձեզ . Ա-
մէն մեղք եւ հայհոյանք կը թող-
վին ʅ մարդկանց , բայց Հոգւոյն դէմ
հայհոյանքը ւ չի թողվիր :
32 Եւ ով որ Որդւոյն մարդոյ - դէմ՝
բան ասէ՝ կը թողվի ւ նորան . բայց
ով որ Սուրբ Հոգւոյն դէմ ասէ , նո-
րան չի թողվիր . ոչ այս աշխարհ-
քումս՝ եւ ոչ այն :
33 Կամ ծառը բարի արէք՝ եւ նո-
րա պտուղն էլ ¬ բարի . կամ ծառը
չար արէք՝ եւ նորա պտուղն էլ
չար . ինչու որ՝ ծառն իրեն պտղիցը
կը ճանաչվի :
34 Իժի զաւակներ՝ դուք ինչ-
պէս կարող էք բարի բաներ խօսիլ՝
որ չար էք . ինչու որ՝ սրտի աւել-
ցածիցը կը խօսի ɭ բերանն :
35 Բարի մարդը՝ իրեն սրտի բարի
գանձիցը բարիք կը հանէ , եւ չար
մարդը իրեն սրտի չար գանձիցը
չար կը հանէ :
36 Միայն թէ ասումեմ ձեզ . Թէ
ամէն դատարկ բանի համար որ
մարդիկ կը խօսին՝ պատասխան պի-
տի տան դատաստանի օրումը :
37 Ինչու որ՝ քո խօսքերիցդ կար-
դարանաս , եւ քո խօսքերիցդ կը
դատապարտվիս :
38 Այն ժամանակը մէկ քանիսը
կարդացողներիցը եւ փարիսեցինե-
րիցը պատասխան տուին եւ ասա-
ցին . Վարդապետ՝ ուզումենք որ
քեզանից մէկ նշան ⁻ տեսնենք :

ↄ Եսայ. ԽԹ. 24։ Ղու. ԺԱ. 21, 22, 23։
ʅ Մարկ. Գ. 28։ Ղու. ԺԲ. 10։ Եբր. Զ. 4. Ժ. 26. 29։ Ա. Յովհ. Ե. 16։
ւ Գործ. Է. 51։
- Գլ. ԺԱ. 19. ԺԳ. 55։ Յովհ. Է. 12. 52։
ւ Ա. Տիմ. Ա. 13։
¬ Գլ. Է. 17. ԻԳ. 33։
ɭ Ղու. Զ. 45։
⁻ Գլ. ԺԶ. 1։ Մարկ. Ը. 11։ Ղու. ԺԱ. 16, 29։ Յովհ. Բ. 18։ Ա. Կորնթ. Ա. 22։

39 Նա պատասխանի ետ՝ եւ ասէ ցնոսա. Ազգ չար եւ շնացող նշան խնդրէ. եւ նշան մի տացի նմա, բայց նշանն Յովնանու մարգարէի։
40 Զի որպէս էր Յովնան 'ի փոր կիտին զերիս տիւ եւ զերիս գիշերս, նոյնպէս եղիցի եւ Որդի մարդոյ 'ի սիրտ երկրի զերիս տիւ եւ զերիս գիշերս։
41 Արք Նինուէացիք յարիցեն 'ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ եւ դատապարտեսցեն զսա, զի զղջացան 'ի քարոզութեանն Յովնանու. եւ արդ աւասիկ մեծ քան զՅովնան է աստ։

42 Դշխոյն հարաւոյ յարիցէ 'ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ եւ դատապարտեսցէ զսա. զի եկն 'ի ծագաց երկրի՝ լսել զիմաստութիւնն Սողոմոնի. եւ ահա մեծ քան զՍողոմոն է աստ։

43 Այլ յորժամ այսն պիղծ ելանէ 'ի մարդոյ՝ շրջի ընդ անջրդին տեղիս. խնդրէ հանգիստ՝ եւ ոչ գտանէ։
44 Յայնժամ ասէ. Դարձայց 'ի տուն իմ՝ ուստի ելի. եւ եկեալ գտանէ զնա պարապորդ, մաքրեալ եւ յարդարեալ։

45 Յայնժամ երթայ՝ եւ առնու ընդ իւր եօթն այլ այսս չարագոյնս քան զինքն, եւ մտեալ բնակէ անդ. եւ լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն. այնպէս եղիցի եւ ազգիս այսմիկ չարի։
46 Մինչդեռ նա ընդ ժողովուրդսն խօսէր, ահա մայր նորա եւ

39 Նա պատասխան տուաւ եւ նորանց ասաց. Չար եւ շնացող ազգը նշան է ա ուզում. եւ նշան չի տրվիլ նորան, բայց միայն Յօնան մարգարէի նշանը։
40 Պատճառնոր՝ ինչպէս Յօնան երեք օր եւ երեք գիշեր կէտ ձըկան փորումն բ էլաւ, այնպէս էլ Որդին մարդոյ երեք օր եւ երեք գիշեր երկրի սրտումը կը լինի։
41 Նինուէացոց մարդիկը դատաստանին վեր կը կենան այս ազգիս գ հետ, եւ սորան դ կը դատապարտեն. ինչու որ՝ նորանք Յօնանու քարոզութեանը ե ապաշխարեցին. եւ հիմիկ ահա Յօնանիցն աւելի մեծն է այստեղ։
42 Հարաւային երկրի թագուհին դատաստանին վեր կը կենայ այս ազգիս զ հետ, եւ սորան կը դատապարտէ. ինչու որ՝ նա երկրի ծայրիցը եկաւ՝ որ Սողոմոնի իմաստութիւնն լսէ. եւ ահա Սողոմոնիցն աւելի մեծն է այստեղ։
43 Բայց ինչ ժամանակ որ պիղծ ոգին դուրս է գալիս է մարդկըց՝ անջուր տեղերումը ման է ը գալիս. հանգիստ է խնդրում՝ եւ չի գտնում։
44 Այն ժամանակին ասումէ. Յետ դառնամ իմ տունս՝ որ այն տեղից դուրս ելի. եւ գալիս է նորան գտնում՝ պարապ, սրբած եւ պատրաստած։
45 Այն ժամանակը գնում իրենից էլ աւելի չար՝ եօթը ոգի է առնում իրեն հետ, եւ մտնում բնակվումէ այն տեղ. եւ այն մարդոյ յետինն աւելի չար է լինում քան թէ թ առաջինը. այսպէս էլ կը լինի այս չար ազգիս։
46 Դեռ քանի որ սա ժողովուրդներին հետ խօսումէր, ահա նորան

ա Եսայ. ԾԻ. 3. Գլ. ԺԶ. 4. Մարկ. Ը. 38. Յովհ. Դ. 48.
բ Յովն. Ա. 17.
գ Ղուկ. ԺԱ. 32.
դ Երեմ. Գ. 11. Եզեկ. ԺԶ. 51. 52. Հռոմ. Բ. 27.
ե Յովն. Գ. 5.
զ Գ Թագ. Ժ. 1. Բ Մնաց. Թ. 1. Ղուկ. ԺԱ. 31.
է Ղուկ. ԺԱ. 24.
ը Յովբ. Ա. 7. Ա Պետ. Ե. 8.
թ Եբր. Զ. 4. Ժ. 26. Բ Պետ. Բ. 20, 21, 22.

եղբարք նորա կային արտաքոյ՝ եւ
խնդրէին խօսել ընդ նմա ։

47 Եւ ասէ ոմն ցնա. Ահա մայր
քո՝ եւ եղբարք քո կան արտաքոյ,
եւ խնդրեն խօսել ընդ քեզ ։

48 Նա պատասխանի ետ այնմիկ՝
որ ասացն ցնա, եւ ասէ. Ո՞վ է իմ
մայր, կամ ովք են իմ եղբարք ։

49 Եւ ձգեաց զձեռն իւր յաշա-
կերտսն՝ ասէ. Ահա մայր իմ եւ
եղբարք իմ ։
50 Զի որ առնիցէ զկամս Հօր իմոյ
որ յերկինսն է, նա է իմ եղբայր՝
եւ քոյր՝ եւ մայր ։

‡ մայրը եւ նորա = եղբայրքը դուր-
սը կանգնել էին՝ եւ ուզումէին որ
նորա հետ խօսին ։
47 Եւ մին մարդ նորան ասաց.
Ահա քո մայրդ եւ քո եղբայրքդ
դուրսը կանգնած են, եւ ուզումեն
որ քեզ հետ խօսին ։
48 Նա պատասխան տուաւ նո-
րան՝ որ ասաց իրեն, եւ ասաց.
Ո՞վ է իմ մայրս կամ ովք են իմ եղ-
բայրքս ։
49 Եւ իրեն ձեռքը դէպի աշա-
կերտներին մեկնեց՝ եւ ասաց. Ահա
իմ մայրս եւ իմ եղբայրքս ։
50 Ինչու որ՝ ով որ իմ Հօրս կամ-
քը ‡ կատարէ որ երկնքումն է,
նա է իմ եղբայրս՝ քոյրս եւ մայրս ։

## ԳԼ. ԺԳ.

1 Յաւուր յայնմիկ ելեալ Յիսուս
՚ի տանէն՝ նստէր առ ծովեզերբն ։
2 Եւ ժողովեցան առ նա ժողո-
վուրդք բազումք, մինչեւ մտանել
նմա ՚ի նաւն՝ եւ նստել. եւ ամե-
նայն ժողովուրդն կայր առ [ծովե-
զերբն ։
3 Եւ խօսէր ընդ նոսա բազում
առակօք՝ եւ ասէր ։
4 Ահա ել սերմանացանն սերմա-
նել. եւ ՚ի սերմանելն իւրում, էր
որ անկաւ առ ճանապարհաւ. եւ
եկին թռչունք երկնից՝ եւ կերին
զնա ։

5 Եւ այլն անկաւ յապառաժի,
ուր ոչ գոյր հող բազում. եւ վաղ-
վաղակի բուսաւ՝ առ ՚ի չգոյէ հիւ-
թոյ երկրին ։
6 ՚Ի ծագել արեւու տապացաւ,
եւ զի ոչ գոյին արմատք՝ չորա-
ցաւ ։
7 Եւ այլն անկաւ ՚ի մէջ փշոց,

1 Այն օրը Յիսուս տանիցը դուրս
ելաւ՝ եւ ծովի = եզրին մօտ նստեց ։
2 Եւ շատ ժողովուրդներ նորա
մօտ ‡ ժողովվեցան, մինչեւ որ նա
նաւը մտաւ եւ ‡ նստեց. եւ բոլոր
ժողովուրդը ծովի եզրումը կանգ-
նել էր ։
3 Եւ նորանց հետ շատ բան էր
խօսում առակներով, եւ ասում.
4 Ահա մին սերմ ցանող մարդ
դուրս գնաց որ սերմը ‡ ցանէ. եւ
իրեն սերմելուց ժամանակը մին քա-
նիսը ճանապարհի վերայ ընկաւ՝ եւ
երկնքի թռչունքը եկաւ եւ նորան
կերաւ ։
5 Եւ միւսը քարքարուտ տեղ ըն-
կաւ՝ որ տեղ որ շատ հող չկար,
եւ շուտով բուսաւ հողի պակա-
սութեան պատճառովը ։
6 Երբոր արեգակը ծագեց, տա-
քացաւ. եւ որովհետեւ արմատ չու-
նէր՝ չորացաւ ։
7 Եւ միւսը ընկաւ փշերին մէջ

‡ Մարկ. Գ. 31։ Ղուկ. Ը. 19, 20, 21։
= Գլ. ԺԳ. 55։ Մարկ. Զ. 3։ Յովհ. Բ. 12։ Է. 3. 5։ Գործ. Ա. 14։ Ա Կորնթ. Թ. 5։ Գաղ. Ա. 19։

‡ Յովհ. ԺԵ. 14։ Գաղ. Ե. 6։ Զ. 15։ Կող. Գ. 11։ Եբր. Բ. 11։

= Մարկ. Դ. 1։
‡ Ղուկ. Ը. 4։
‡ Ղուկ. Ե. 3։
‡ Ղուկ. Ը. 5։

եւ ելին փուշքն եւ հեղձուցին
զնա։
8 Եւ այլն անկաւ յերկիր բարի,
եւ տայր պտուղ. էր որ հարիւրա-
ւոր, եւ էր որ վաթսնաւոր. եւ էր
որ երեսնաւոր։
9 Որ ունիցի ականջս լսելոյ,
լուիցէ։
10 Եւ մատուցեալ աշակերտքն ա-
սեն ցնա. Ընդէ՞ր առակօք խօսիս
ընդ նոսա։
11 Նա պատասխանի ետ՝ եւ ասէ
ցնոսա. Քանզի ձեզ տուեալ է գի-
տել զխորհուրդս արքայութեանն
երկնից, եւ նոցա չէ՛ տուեալ։

12 Զի որ ունիցէ՝ տացի նմա եւ
յաւելցի. եւ որ ոչն ունիցէ, եւ
զոր ունիցին՝ բարձցի ՚ի նմանէ։

13 Վասն այնորիկ առակօք խօ-
սիմ ընդ նոսա. զի տեսանեն՝ եւ ոչ
տեսանեն, եւ լսեն՝ եւ ոչ լսեն, եւ
ոչ առնուն ՚ի միտ։
14 Եւ կատարի առ նոսա մարգա-
րէութիւնն Եսայեայ՝ որ ասէ.
Լսելով լուիջիք՝ եւ մի՛ իմասջիք,
եւ տեսանելով տեսջիք՝ եւ մի՛ տես-
ջիք։
15 Զի թանձրացաւ սիրտ ժողո-
վրդեանս այսորիկ, եւ ականջօք
իւրեանց ծանրածանր լուան. եւ զաչս
իւրեանց կափուցին, զի մի՛ երբեք
տեսցեն աչօք՝ եւ ականջօք լուի-
ցեն՝ եւ սրտիւք իմասցին, եւ դարձ-
ցին եւ բժշկեցից զնոսա։

16 Բայց ձեր երանի է աչացդ՝ զի
տեսանեն, եւ ականջաց ձերոց՝ զի
լսեն։

եւ փշերը դուրս ելին ու խեղ-
դեցին ՚նորան։
8 Եւ միւսը բարի երկրի վերայ
ընկաւ, եւ պտուղ էր տալիս. կար
որ ՚ի հարիւր, եւ կար որ վաթսուն,
եւ կար որ երեսուն։
9 Ո՛վ որ լսելոյ ականջ ունի՝
թող լսէ։
10 Եւ աշակերտները մօտ եկին՝
եւ նորան ասացին. Ինչո՞ւ նորանց
հետ առակներով ես խօսում։
11 Նա պատասխանն տուաւ՝ եւ նո-
րանց ասաց. Նրահամար որ՝ ձեզ
տրուած է երկնքի արքայութեան
ի խորհուրդները գիտել, բայց նո-
րանց չէ տրուած։
12 Պատճառն որ՝ ով որ ε ունի նո-
րան կը տրուի եւ կաւելանայ. եւ
ով որ չունի նորանից՝ նա էլ որ
ունի, վերկառնուի։
13 Նրահամար առակներով եմ խօ-
սում նորանց հետ, որ տեսնումեն
եւ չեն տեսնում. եւ լսումեն՝ եւ
չեն լսում, եւ մտքերը չեն առնում։
14 Եւ Եսայեայի մարգարէութիւնը
կատարվումէ նորանց վերայ՝ որ ա-
սումէ. Լսելով Է կը լսէք, եւ չէք
իմանալ. եւ տեսնելով կը տեսնէք,
եւ չէք տեսնիլ։
15 Ինչու որ՝ այս ժողովրդի սիր-
տը թանձրացաւ, եւ իրենց ականջ-
ներովը ծանր ի լսեցին, եւ իրենց
աչքերը խփեցին՝ որ չըլնի մի ժա-
մանակ աչքերով չը տեսնեն՝ եւ ա-
կանջներով չը լսեն, եւ սրտով չի-
մանան, եւ յետ դառնան եւ ես
նորանց բժշկեմ։
16 Բայց երանի ի է ձեր աչքերին՝
որ տեսնումեն, եւ ձեր ականջնե-
րին՝ որ լսումեն։

ե Ծննդ. ԻԶ. 12։
զ Գլ. ԺԱ. 15։ Մարկ. Դ. 9։
է Գլ. ԺԱ. 25։ ԺԶ. 17։ Մարկ. Դ. 11։ Ա Կորնթ. Բ. 10։ Ա Յովհ. Բ. 27։
ը Գլ. ԻԵ. 29։ Մարկ. Դ. 25։ Ղուկ. Ը. 18։ ԺԹ. 26։
թ Եսայ. Զ. 9։ Եզե. ԺԲ. 2։ Մարկ. Դ. 12։ Ղուկ. Ը. 10։ Յովհ. ԺԲ. 40։ Գործ. ԻԸ. 26. 27։ Հռովմ. ԺԱ. 8։ Բ Կորնթ. Գ. 14. 15։
ժ Եբր. Ե. 11։
ի Գլ. ԺԶ. 17։ Ղուկ. Ժ. 23. 24։ Յովհ. Ի. 29։

17 Ամէն ասեմ ձեզ. Զի բազում մարգարէք եւ արդարք ցանկացան տեսանել զոր տեսանէքդ՝ եւ ոչ տեսին, եւ լսել զոր լսէքդ՝ եւ ոչ լուան։

18 Եւ արդ՝ լուարուք դուք զառակ սերմանացանին։

19 Յամենայնէ՝ որ լսէ զբանն արքայութեան՝ եւ ոչ առնու 'ի միտ, գայ չարն՝ եւ յափշտակէ զսերմանեալն 'ի սրտի նորա. այն է՝ որ առ ճանապարհաւն սերմանեցաւ։

20 Եւ որ յապառաժին սերմանեցաւ՝ այն է, որ իբրեւ լսէ զբանն, եւ վաղվաղակի խնդութեամբ ընդունի զնա։

21 Բայց քանզի ոչ ունի արմատս յինքեան, այլ առ ժամանակ մի է. 'ի լինել նեղութեան եւ հալածանաց վասն բանին՝ վաղվաղակի գայթակղի։

22 Իսկ որ 'ի մէջ փշոցն սերմանեցաւ՝ այն է, որ իբրեւ լսէ զբանն, եւ հոգք աշխարհիս եւ պատրանք մեծութեան հեղձուցանեն զբանն, եւ լինի անպտուղ։

23 Իսկ որ յերկիրն բարւոք սերմանեցաւ՝ այն է, որ իբրեւ լսէ զբանն՝ եւ 'ի միտ առնու, եւ տայ զպտուղ. է որ հարիւր, եւ է որ վաթսուն, եւ է որ երեսուն։

24 Այլ առակ արկ առ նոսա՝ եւ ասէ. Նմանեցաւ արքայութիւն երկնից առն, որ սերմանիցէ սերմն բարի յագարակի իւրում։

25 Եւ 'ի քուն լինել մարդկան, եկն թշնամի նորա. եւ ցանեաց 'ի վերայ որոմն 'ի մէջ ցորենոյն՝ եւ գնաց։

26 Եւ իբրեւ բուսաւ խոտն՝ եւ

17 Ճշմարիտն ասումեմ ձեզ. Որ շատ մարգարէներ եւ արդարներ ցանկացան ու տեսնել նա՝ որ դուք էք տեսնում, եւ չը տեսին. եւ լսել նա՝ որ դուք էք լսում՝ եւ չը լսեցին։

18 Եւ հիմիկ լսեցէք դուք սերմ ցանողին խ առակը։

19 Այն ամէնեքը՝ որ արքայութեան ծ բանը լսում եւ միտք չի առնում, գալիս է չարն՝ եւ նորա սրտի մէջ սերմածը յափշտակում. ա՛ն նա է՝ որ ճանապարհին վերայ սերմվեցաւ։

20 Եւ նա որ քարքարուտ տեղը սերմվեցաւ՝ նա է, որ երբոր բանը լսումէ՝ շուտով ուրախութենով կ ընդունումէ նորան։

21 Բայց որովհետեւ արմատ չունի իրեն մէջ, քիչ ժամանակ է մնում. երբոր նեղութիւն եւ հալածանք են լինում այն բանին համար, շուտով հ գայթակղվումէ։

22 Բայց նա որ ձ փշերին մէջ սերմվեցաւ՝ նա ղ է, որ երբոր բանը լսումէ, աշխարհքիս հոգերն եւ մեծութեան խաբեբայութիւնը այն բանը խեղդումեն՝ եւ անպտուղ է լինում։

23 Բայց նա որ բարի երկրումը սերմվեցաւ՝ նա է, որ երբոր բանը լսումէ՝ միտքն էլ է առնում եւ պտուղ տալիս. կայ որ հարիւր, եւ կայ որ վաթսուն, եւ կայ որ երեսուն։

24 Ուրիշ առակ էլ նորանց առաջին դրաւ եւ ասաց. Երկնքի արքայութիւնը նմանվեցաւ մին մարդոյ՝ որ իւրեն արտումը բարի սերմ ցանեց։

25 Եւ որ ժամանակ մարդիկը քնացին, նորա թշնամին եկաւ եւ ցորենին մէջ որոմ ցանեց եւ գնաց։

26 Եւ երբոր խոտը բուսաւ՝ եւ

լ Եբր. ԺԱ. 13. Ա Պետ. Ա. 10. 11.
խ Մարկ. Դ. 11. Ղուկ. Ը. 11.
ծ Գլ. Դ. 23.
կ Եսայ. ԾԸ. 2. Եզեկ. ԼԳ. 31, 32.
հ Գլ. ԺԱ. 6. Բ Տիմ. Ա. 15.
ձ Երեմ. Դ. 3.
ղ Գլ. ԺԹ. 23. Մարկ. Ժ. 23. Ղուկ. ԺԸ. 24. Ա Տիմ. Զ. 9. Բ Տիմ. Դ. 10.

արար պտուղ, ապա երեւեցաւ եւ
որոմնն ։
27 Մատուցեալ ծառայք տանու-
տեառնն ասեն ցնա . Տէ՛ր՝ ո՞չ սեր-
մն բարի սերմանեցեր յագարակին
քում , արդ՝ ուստի՞ ունիցի զորոմ-
նն ։
28 Եւ նա ասէ ցնոսա . Այր թշ-
նամի արար զայն ։ Ասեն ցնա ծա-
ռայքն . Կամի՞ս զի երթիցուք քա-
ղեսցուք զայն 'ի բաց ։
29 Եւ նա ասէ ցնոսա . Մի՛ , գու-
ցէ մինչ քաղիցէք զորոմնն , եւ ըզ
ցորեանն ընդ նմին 'ի բաց խլիցէք ։
30 Թոյլ տուք երկոցունց աճել 'ի
միասին մինչեւ 'ի հունձս , եւ 'ի
ժամանակի հնձոցն ասացից ցհնձօղ-
սն . Քաղեցէք նախ զորոմնն եւ
կապեցէք զայդ խրձունս առ 'ի
յայրել , եւ զցորեանն ժողովեցէք
'ի շտեմարանս իմ ։
31 Այլ առակ արկ առ նոսա՝ եւ
ասէ . Նման է արքայութիւն երկ-
նից հատոյ մանանխոյ , զոր առեալ
մարդոյ՝ սերմանեաց յագարակի իւ-
րում ։
32 Որ փոքր է քան զամենայն սեր-
մանիս . եւ յորժամ աճիցէ , մեծ է
քան զամենայն բանջարս . եւ լինի
ծառ՝ մինչեւ գալ թռչնոց երկնից
եւ հանգչել յոստս նորա ։
33 Այլ առակ խօսեցաւ ընդ նո-
սա՝ եւ ասէ . Նման է արքայու-
թիւն երկնից խմորոյ , զոր առեալ
կնոջ թաքոյց 'ի գրիւս երիս ալեր՝
մինչեւ ամենայն խմորեցաւ ։
34 Զայս ամենայն խօսեցաւ Յի-
սուս առակօք ընդ ժողովուրդսն .
եւ առանց առակի ոչինչ խօսէր ընդ
նոսա ։
35 Զի լցցի ասացեալն 'ի մարգա-
րէէն . Բացից առակօք զբերան իմ՝

պտուղ տուաւ՝ ապա որոմն էլ ե-
րեւեցաւ ։
27 Տան տիրոջ ծառաները եկին
նորան ասացին . Տէ՛ր՝ չէ՞ որ դու
քո արտումդ բարի սերմը սերմա-
ցիր , ապա ինչ տեղից է այն որոմը ։
28 Նա էլ ասաց նորանց . Թշնամի
մարդ է արել այն ։ Ծառաները ա-
սացին նորան . Կամենում ես որ գը-
նանք նա քաղենք դուրս հանենք ։
29 Նա էլ նորանց ասաց . Ոչ . չը
լինի թէ երբոր որոմը քաղէք ,
ցորենն էլ նորա հետ դուրս հա-
նէք .
30 Թող տուէք որ երկուսը միա-
սին մեծանան մինչեւ հունձքը . եւ
հնձի ժամանակը հնձողներին կա-
սեմ՝ թէ , Առաջ որոմը քաղեցէք եւ
նորան խուրձ խուրձ կապեցէք որ
այրէք , եւ ցորենը իմ ամբարնե-
րիս մէջ [ա] ժողովեցէք ։
31 Մին ուրիշ առակ էլ նորանց ա-
ռաջին դրաւ՝ եւ ասաց . Երկնքի
արքայութիւնը նման է մանանեխի
[բ] հատի . որ նորան մին մարդ ա-
ռաւ՝ եւ իւրն արտին մէջ սերմեց ,
32 Որ ամէն սերմացներիցը փոքր է .
եւ երբոր կաճի , ամէն բանջարի
վերայ մեծանում է եւ ծառ լինում՝
մինչեւ որ երկնքի թռչունները գան
եւ նորա ճղերին վերայ հանգիստ
առնեն .
33 Ուրիշ առակ էլ խօսեց նորանց
հետ եւ ասաց . Երկնքի արքայու-
թիւնը նման է [գ] խմորի որ նորան
մին կին առաւ՝ եւ երեք չափ ա-
լիւրի մէջ դրեց , մինչեւ որ ա-
մէնն էլ խմորուեցաւ ։
34 Էս ամէն բաները Յիսուս [դ] ա-
ռակներով խօսեց ժողովուրդներին
հետ . եւ առանց առակի բան չէր
խօսում նորանց հետ .
35 Որ մարգարէի ասածը կատար-
վի՝ թէ Առակներով կը բանամ իմ

[ա] Գղ . Գ . 12 ։
[բ] Եսայ . Բ . 23 ։ Մկր . Դ . 1 ։ Մարկ . Դ . 31 ։ Ղուկ . ԺԳ . 18, 19 ։
[գ] Ղուկ . ԺԳ . 21 ։
[դ] Մարկ . Դ . 33, 34 ։

բղխեցից զծածկեալսն 'ի սկզբանէ աշխարհի։

36 Յայնժամ թողեալ Յիսուսի զժողովուրդսն՝ եկն 'ի տուն․ մատեան առ նա աշակերտքն նորա՝ եւ ասեն․ Մեկնեա մեզ զառակ որոմանցն ագարակի։

37 Նա պատասխանի ետ՝ եւ ասէ ցնոսա․ Որ սերմանէ զսերմն բարի՝ է Որդի մարդոյ։

38 Եւ ագարակն աշխարհս է․ սերմն բարի նոքա են՝ որ որդիքն արքայութեանն են․ իսկ որոմն որդիք չարին են։

39 Եւ թշնամին որ վարեաց զայն՝ Սատանայ է․ եւ հունձքն կատարած աշխարհիս է․ եւ հնձօղքն հրեշտակք են։

40 Որպէս ժողովի որոմնն՝ եւ 'ի հուր այրի, այնպէս եղիցի 'ի կատարածի աշխարհիս։

41 Առաքեսցէ Որդի մարդոյ զհրեշտակս իւր, եւ ժողովեսցեն յարքայութենէ նորա զամենայն գայթակղութիւնս, եւ զայնոսիկ որ գործեն զանօրէնութիւն։

42 Եւ արկցեն զնոսա 'ի հնոց հրոյ․ անդ եղիցի լալ՝ եւ կրճել ատամանց։

43 Յայնժամ արդարքն ծագեսցեն իբրեւ զարեգակն յարքայութեան երկնից։ Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։

44 Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից գանձի ծածկելոյ յագարակի, զոր գտեալ մարդոյ՝ թաքոյց․ եւ 'ի խնդութենէ անտի երթայ վաճառէ զամենայն ինչ զոր ունի, եւ գնէ զագարակն զայն։

ւ բերանովս՝ եւ դուրս կը բղխեմ աշխարհքի սկզբէնը ծածկուած = բաները։

36 Այն ժամանակը Յիսուս ժողովուրդները թողլոյ՝ եկաւ տուն․ աշակերտները նորան մօտ եկին եւ ասացին․ Այն արտի որոմներին առակը մեկնէ մեզ։

37 Նա պատասխանեան տուաւ եւ նորանց ասաց․ Այն բարի սերմը ցանողը՝ Որդին մարդոյ է․

38 Եւ ւ արտը՝ այս աշխարհքս է․ բարի սերմը նորանք են՝ որ արքայութեան որդիք են․ եւ որոմը՝ չարի որդիքն ¬ են․

39 Եւ թշնամին որ այն սերմեց, Սատանան է․ եւ հունձքն աշխարհքի վերջն Լ է․ եւ հնձօղները՝ հրեշտակներն են։

40 Ինչպէս որ որոմը հաւաքւում եւ կրակի մէջ այրւում է, այնպէս էլ աշխարհքիս վերջումը կը լինի։

41 Որդին մարդոյ իւրեն հրեշտակները կուղարկէ՝ եւ նորա արքայութենից ամէն — գայթակղութիւնները կը ժողովեն՝ եւ նորանց էլ՝ որ անօրէնութիւն են գործում։

42 Եւ նորանց կը ձգեն կրակի = փուռը մէջ, որ այնտեղ լաց եւ ատամների կրճտելը Լ կը լինի։

43 Այն ժամանակը ⊤ արդարները արեգակին պէս կը ծագին երկնքի արքայութեան մէջ։ Ո՛վ որ լսելոյ ականջ ունի՝ թող ε լսէ։

44 Դարձեալ՝ երկնքի արքայութիւնը նման է մին արտի մէջ պահված գանձի, որ նորան մին մարդ գտաւ պահեց․ եւ ուրախութենից գնում ամէն ինչ որ ունի ɔ ծախում՝ եւ այն արտը — գնում։

ւ Սաղ. ՀԸ. 2։
= Հռովմ. ԺԶ. 25. 26։ Ա Կորնթ. Բ. 7։ Եփես. Գ. 9։ Կող. Ա. 26։
ւ Գլ. ԻԳ. 14։ ԻԸ. 19։ Մարկ. ԺԶ. 15. 20։ Ղուկ. ԻԴ. 47։ Հռովմ. Ժ. 18։ Կող. Ա. 6։
¬ Ծննդ. Գ. 13։ Յովհ. Ը. 44։ Գործ. ԺԳ. 10։
Լ Յովէլ. Գ. 13։ Յայտ. ԺԴ. 15։
— Գլ. ԺԸ. 7։ Բ Պետ. Բ. 1, 2։
= Գլ. Գ. 12։ Յայտ. ԺԹ. 20։ Ի. 10։
Լ Գլ. Ը. 12. Համար. 50։
⊤ Դան. ԺԲ. 3։ Ա Կորնթ. ԺԵ. 42, 43։
ε Համար. 9։
ɔ Փիլիպ. Գ. 7, 8։
— Եսայ. ԾԵ. 1։ Յայտ. Գ. 18։

45 Դարձեալ՝ նման է արքայու-
թիւն երկնից առն վաճառականի՝
որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս ։

46 Եւ գտեալ մի պատուական
մարգարիտ՝ երթեալ վաճառեաց
զամենայն զոր ինչ ունէր, եւ գնե-
եաց զայն մարգարիտ ։
47 Դարձեալ՝ նման է արքայու-
թիւն երկնից ուռկանի արկելոյ ՚ի
ծով՝ եւ յամենայն ազգաց ժողո-
վելոյ ։
48 Զոր՝ իբրեւ լցաւ, հանեալ ՚ի
ցամաք՝ եւ նստեալ ժողովեցին զը-
բարի բարին յամանս, եւ զխոտա-
նըն ՚ի բաց ընկեցին ։
49 Այնպէս եղիցի ՚ի կատարածի
աշխարհիս. ելցեն հրեշտակք՝ եւ
մեկնեսցեն զչարս ՚ի միջոյ արդա-
րոց ։
50 Եւ արկցեն զնոսա ՚ի հնոց հը-
րոյն. անդ եղիցի լալ եւ կրճել ա-
տամանց ։
51 Ասէ ցնոսա Յիսուս. Իմացա-
րո՞ւք զայս ամենայն ։ Ասեն ցնա.
Այո՛ Տէր ։
52 Եւ նա ասէ ցնոսա. Վասն այ-
սորիկ ամենայն դպիր աշակերտեալ
արքայութեանն երկնից՝ նման է ա-
ռն տանուտեառն, որ հանէ ՚ի
գանձէ իւրմէ զնոր եւ զհին ։

53 Եւ եղեւ իբրեւ կատարեաց
Յիսուս զառակս զայսոսիկ՝ փոխե-
ցաւ անտի ։
54 Եւ եկեալ ՚ի գաւառ իւր՝ ու-
սուցանէր զնոսա ՚ի ժողովրդեանն
նոցա, մինչեւ զարմանալ նոցա եւ
ասել. Ուստի իցէ սմա իմաստու-
թիւնն եւ զօրութիւնք ։

55 Ո՞չ սա է հիւսանն որդի. ոչ
մայր սորա կոչի Մարիամ. եւ եղ-

45 * Դարձեալ՝ երկնքի արքայու-
թիւնը նման է մէկ վաճառական
մարդոյ. որ գեղեցիկ մարգարիտ-
ներու ման կը գայ.
46 Եւ երբոր մէկ պատուական
‡ մարգարիտ գտաւ, գնաց ամէն
ինչ որ ունէր ծախեց՝ եւ այն մար-
գարիտը գնեց ։
47 Դարձեալ՝ երկնքի արքայու-
թիւնը նման է մէկ ծովը ձգած ուռ-
կանի, որ ամէն կերպ ցեղէ * ժողո-
վեց.
48 Եւ երբոր լցուաւ՝ նորան ցա-
մաքը հանեցին, նստեցին եւ բարե-
րը ժողովեցին ամաններու մէջ, եւ
անպէտքները դուրս ձգեցին ։
49 Այսպէս ալ կը լինի աշխարհքիս
վերջին. ° հրեշտակները դուրս կը
գան՝ եւ չարերը կը ջոկեն արդար-
ներու միջէն,
50 Եւ նորանց կը ձգեն կրակի
‡ փուռը մէջ, որ այնտեղ լաց եւ
ատամներու կրճտուքը կը լինի ։
51 Յիսուս ասաց նորանց. Հաս-
կացա՞ք այս ամէն բաները. ասա-
ցին նորան. Այո Տէր ։
52 Նա ալ նորանց ասաց. Ասոր
համար ամէն կարգացողը որ եր-
կնքի արքայութեան բաներին ա-
ղեկացած է, նման է տանուտէր մար-
դոյ՝ որ իրեն գանձէն նորը եւ
հինը = հանէ ։
53 Եւ Երբ Յիսուս այս
առակները կատարեց, այն տեղէն
գնաց ։
54 Եւ եկաւ իրեն ‡ գաւառը՝ եւ
նորանց ժողովարաններումը սովոր-
ցնումէր նորանց, մինչեւ որ զար-
մանամէին նորանք եւ ասում. Ա-
րան ուր տեղէն է այս իմաստութիւ-
նը եւ զօրութիւնները ։
55 Չէ՞ որ սա ‡ հիւսան որդին է.
չէ՞ որ սորա մայրը՝ Մարիամ կը

‡ Առակ. Բ. 4. Գ. 14. 15. Ը. 10. 19.
* Գլ. ԻԲ. 10.
° Գլ. ԻԵ. 32.
‡ Համար. 42.
= Երգ. Է. 13.
‡ Գլ. Բ. 23. Մարկ. Զ. 1. Ղուկ. Դ. 16. 23.
‡ Եսայ. ԽԹ. 7. Մարկ. Զ. 3. Ղուկ. Գ. 23. Յովհ. Զ. 42.

բարք սորա Յակոբոս՝ 'եւ Յովսէս՝ եւ Սիմոն, եւ Յուդաս։

56 Եւ քորք սորա ամենեքեան առ մեզ են. արդ ուստի՞ է սմա այս ամենայն։

57 Եւ գայթագղէին 'ի նմա։ Եւ Յիսուս ասէ ցնոսա. Ոչ է մարգարէ անարգ՝ եթէ ոչ յիւրում գաւառի եւ յիւրում տան։

58 Եւ ոչ արար անդ զօրութիւնս բազումս վասն անհաւատութեան նոցա։

կոչվի. եւ սորա ‡ եղբայրքը Յակոբոս՝ եւ ⊦ Յօսէս՝ եւ Սիմոն, եւ Յուդա։

56 Եւ չէ՞ որ սորա ամէն քոյրերը մեզ մօտ են. ասա ո՞ր տեղից է սորան այս ամէն բաները։

57 Եւ ⁊ գայթակղվումէին նորան վերայ. Յիսուս էլ նորանց ասաց. ⊦ Մարգարէ անարգված չի լինիլ՝ բայց իրեն երկրին եւ իրեն տանը ⊦ մէջ։

58 Եւ այնտեղ շատ հրաշքներ ⊏ չարաւ նորանց անհաւատութեանը պատճառաւը։

## ԳԼ. ԺԴ

1 Յայնմ ժամանակի լուաւ Հերովդէս չորրորդապետն զլուր Յիսուսի։

2 Եւ ասէ ցծառայս իւր. Նա է Յովհաննէս մկրտիչ, նա յարեաւ 'ի մեռելոց, եւ վասն այնորիկ զօրութիւնք լինին նովաւ։

3 Քանզի Հերովդէս կալեալ զՅովհաննէս, կապեաց զնա եւ եդ 'ի բանտի՝ վասն Հերովդիայ կնոջ Փիլիպպոսի եղբօր նորա։

4 Զի ասէր ցնա Յովհաննէս. Ոչ է արժան քեզ ունել զդա։

5 Եւ կամէր զնա սպանանել, բայց երկնչէր 'ի ժողովրդենէ անտի. քանզի իբրեւ զմարգարէ ունէին զնա։

6 Եւ իբրեւ եղեն ծնունդք Հերովդի՝ կաքաւեաց դուստրն Հերովդիայ 'ի մէջ բազմականին. եւ հաճոյ թուեցաւ Հերովդի։

7 Ուստի եւ երդմամբ խոստացաւ տալ նմա զինչ եւ խնդրեսցէ։

8 Եւ նա յառաջագոյն խրատեալ

1 Այն ժամանակը Հերօդէս – չորրորդապետը Յիսուսին համբաւը լսեց,

2 Եւ իրեն ծառաներին ասաց. Նա Յօհաննէս մկրտիչն է, նա մեռելներին միջիցը յարութիւն առաւ. եւ նորահամար հրաշքներ են լինում նորանով։

3 Պատճառը՝ Հերօդէս բռնեց ⊧ Յօհաննէսը՝ նորան կապեց եւ բանտի մէջ դրաւ՝ Հերօդիայի համար. որ իրեն եղբայր Փիլիպպոսին կնիկն էր։

4 Ինչու որ՝ Յօհաննէս նորան ասումէր, թէ, Արժան չէ ÷ քեզ՝ որ դորան կն ունենաս։

5 Եւ ուզումէր որ նորան սպանէ, բայց ժողովրդիցը վախումէր, ինչու որ՝ նորան մարգարէի տեղ էին ‡ դնում։

6 Եւ երբոր Հերօդէսի ծնընդեան օրն էկաւ, Հերօդիայի աղջիկը սենեակի նստածներին մէջ պար եկաւ՝ եւ Հերօդէսին լաւ թուեցաւ.

7 Նորահամար էլ երդումով խոստացաւ նորան՝ թէ ինչ որ ուզէ՝ տայ նորան։

8 Նա էլ ինչպէս որ առաջ իրեն

‡ Գլ. ԺԲ. 46.
⊦ Մարկ. ԺԵ. 40.
⁊ Գլ. ԺԱ. 6.
Մարկ. Զ. 3, 4.
⊦ Ղուկ. Դ. 24.
Յովհ. Դ. 44.
⊏ Մարկ. Զ. 5, 6.
– Մարկ. Զ. 14.
Ղուկ. Թ. 7.
⊧ Մարկ. Զ. 17.
Ղուկ. Գ. 19, 20.
÷ Ղևտ. ԺԸ. 16.
Ի. 21.
‡ Գլ. ԻԱ. 26.
Ղուկ. Ի. 6.

'ի մօրէ իւրմէ, Տո՛ւր ինձ, ասէ, այսր 'ի վերայ սկտեղ զգլուխն Յովհան-նու մկրտչի։
9 Եւ տրտմեցաւ թագաւորն. բայց վասն երդմանցն եւ բազմակա-նացն՝ հրամայեաց տալ նմա։

10 Եւ առաքեաց գլխատեաց զ-Յովհաննէս 'ի բանտի։
11 Եւ բերաւ գլուխ նորա սկտեղբ եւ տուաւ աղջկանն, եւ տարաւ առ մայր իւր։
12 Եւ մատուցեալ աշակերտքն նորա՝ բարձին զմարմինն եւ թա-ղեցին, եւ եկեալ պատմեցին Յի-սուսի։
13 Եւ իբրեւ լուաւ Յիսուս, գը-նաց անտի նաւու յանապատ տեղի առանձինն։ Իբրեւ լուան ժողո-վուրդքն, գնացին զհետ նորա հե-տի 'ի քաղաքաց անտի։
14 Եւ իբրեւ ել՝ ետես ժողովուրդ բազում, գթացաւ 'ի նոսա, եւ բժշկեաց զհիւանդս նոցա։

15 Իբրեւ ընդ երեկս եղեւ, մատ-եան առ նա աշակերտքն՝ եւ ասեն. Տեղիս անապատ է՝ եւ օրս տարա-ժամեալ, արձակեա՛ զժողովուրդս, զի երթիցեն շուրջ 'ի շէնսն՝ գնես-ցեն իւրեանց կերակուրս։

16 Եւ ասէ Յիսուս. Ո՛չ ինչ պի-տոյ է զոցա երթալ. տուք դուք զոցա ուտել։
17 Եւ նոքա ասեն ցնա. Ոչ ինչ ունիմք աստ, բայց հինգ նկանակ եւ երկուս ձկունս։

18 Եւ ասէ ցնոսա. Բերէ՛ք այսր զայն։
19 Եւ հրամայեաց բազմեցուցա-նել զժողովուրդսն 'ի վերայ խոտոյ. եւ առեալ զհինգ նկանակսն եւ

մօրմէն խրատուեր առնելով՝ ասաց. Այս սկուտեղին վրայ Յովհաննէս մը-կրտչին գլուխը տուր ինձ։
9 Եւ թագաւորը տրտմեցաւ՝ բայց իրեն երդումին՝ եւ իրեն հետ նըս-տած մարդկանց համար՝ հրաման տուաւ, որ տան նորան։
10 Եւ ուղարկեց բանտի մէջ Յո-հաննէսին գլուխը կտրեց։
11 Եւ նորա գլուխը սկուտեղի վրայ բերին եւ աղջկանը տուին՝ եւ նա տարաւ իրեն մօրը մօտ։
12 Եւ նորա աշակերտները եկին նորա մարմինը վեր առին եւ թա-ղեցին. եւ եկին Յիսուսին պատ-մեցին։
13 Եւ Յիսուս երբոր է լսեց՝ այն տեղէն նաւով գնաց առանձին մի անապատ տեղ։ Ժողովուրդները երբոր լսեցին, այն տեղի քաղաքնե-րէն ոտով գնացին նորան ետեւէն։
14 Եւ երբոր դուրս ելաւ՝ եւ այն շատ ժողովուրդը տեսաւ, ւխղճաց նորանց վրայ, եւ նորանց հիւանդ-ները բժշկեց։
15 Եւ երբոր իրիկուան դէմ է էլաւ՝ աշակերտները նորան մօտ եկին եւ ասացին. Տեղս անապատ է՝ եւ օրս էլ անցել է. այդ ժողովուրդներդ թող տուր՝ որ գնան չորս կողմի գիւղերն իրենց համար կերակուր գնեն։
16 Եւ Յիսուս ասաց. Պէտք չէ դորանց որ գնան. դուք տուէք դորանց ուտել։
17 Եւ նորանք ասացին նորան. Մենք այստեղ բան չունենք, բայց միայն հինգ հատ հաց՝ եւ երկու ձուկն։
18 Եւ նորանց ասաց. Դա այստեղ բերէք։
19 Եւ հրաման տուաւ որ ժողո-վուրդը խոտի վրայ նստեցնեն. եւ այն հինգ հացը եւ երկու ձուկն

ե Գլ. Ժ. 23։ ԺԲ. 15։ Մարկ. Զ. 32։ Ղու. Թ. 10։ Յովհ. Զ. 1։ 2։ ղ Գլ. Թ. 36։ Մարկ. Զ. 34։ ե Մարկ. Զ. 35։ Ղու. Թ. 12։ Յովհ. Զ. 5։

զերկուս ձկունսն՝ հայեցաւ յերկի–
՚նս, օրհնեաց եւ եբեկ՝ եւ ետ ցա–
շակերտսն զնկանակսն, եւ աշա–
կերտքն ժողովրդոցն։
20 Կերան ամենեքեան՝ եւ յագե–
ցան, եւ բարձին զնշխարս կոտո–
րոցն երկոտասան սակառի լի։
21 Եւ որք կերանն՝ էին արք իբ–
րեւ հինգ հազար. թող զկանայս
եւ զմանկտի։
22 Եւ ստիպեաց վաղվաղակի զա–
շակերտսն մտանել ՚ի նաւ՝ եւ յա–
ռաջել յայնկոյս, մինչ ինքն զժո–
ղովուրդսն արձակիցէ։

23 Եւ իբրեւ արձակեաց զժողո–
վուրդսն, ել ՚ի լեառն առանձինն
կալ յաղօթս. եւ իբրեւ ընդ երեկս
եղեւ, անդ էր միայն։
24 Եւ նաւն մեկնեալ էր ՚ի ցա–
մաքէն բազում ասպարիզօք ծփեալ
յալեացն. քանզի ընդդէմ էր հող–
մոյն։
25 Եւ ՚ի չորրորդում պահու գի–
շերոյն եկն առ նոսա Յիսուս գնա–
լով ՚ի վերայ ծովուն։
26 Իբրեւ տեսին զնա աշակերտ–
քն զի գնայր ՚ի վերայ ծովուն՝
խռովեցան, եւ ասեն թէ Առաչօք
ինչ իցէ. եւ առ ահին աղաղակե–
ցին։
27 Եւ վաղվաղակի խօսեցաւ ընդ
նոսա Յիսուս՝ եւ ասէ. Քաջալերա–
ցարուք՝ ես եմ, մի երկնչիք։
28 Պատասխանի ետ նմա Պետրոս՝
եւ ասէ. Տէր՝ եթէ դու ես, հրա–
մայեա ինձ գալ առ քեզ ՚ի վերայ
ջրոցս։
29 Եւ նա ասէ, Եկ. եւ իջեալ
՚ի նաւէն Պետրոս՝ գնայր ՚ի վերայ
ջրոյն, եւ եկն առ Յիսուս։
30 Եւ տեսեալ զհողմն սաստիկ՝
երկեաւ. եւ իբրեւ սկսաւ ընկղմիլ՝
աղաղակեաց՝ եւ ասէ. Տէր փրկեա
զիս։
31 Եւ վաղվաղակի Յիսուս ձըգ–

առաւ. դէպի երկինքը նայեց՝ օրհ–
նեց եւ ճեղքեց, եւ այն հացերը
աշակերտներին տուաւ՝ եւ աշա–
կերտներն ալ ժողովուրդներին։
20 Ամէնքը կերին եւ կշտացան,
եւ աւելցած կտորներէն տասներ–
կու քթոց լիքը վեր առին։
21 Եւ նորանք որ կերին՝ հինգ
հազարի չափ մարդիկ էին՝ կանան–
ցից ու երախաներէն զատ։
22 Եւ շուտով աշակերտներին ստի–
պեց որ նաւը մտնեն՝ եւ իրմէնց
առաջ անցնին այն կողմը. մինչեւ
որ ինքն այն ժողովուրդները ար–
ձակէ։
23 Եւ երբոր ժողովուրդները բար–
ձակեց, վեր ելաւ սարը, որ մինակ
աղօթք ընէ. եւ երբոր իրիկուն
գ էլաւ, մինակ այնտեղ էր։
24 Եւ նաւն շատ ասպարէզ հե–
ռացել էր ցամաքէն՝ եւ ալէկոծու–
թեան մէջ էր. ինչու որ՝ քամին
ներհակ էր։
25 Եւ գիշերի չորս բաժինին ժա–
մանակը՝ Յիսուս ծովին վերայ գնա–
լով՝ նորանց մօտ եկաւ։
26 Աշակերտները երբոր տեսին
նորան՝ որ ծովին վերայ կը գնումէր,
շփոթվեցան եւ ասացին թէ, Աչքի
երեւոյթ բան է, եւ վախէլուցն
աղաղակեցին։
27 Եւ Յիսուս շուտով խօսեց նո–
րանց հետ՝ եւ ասաց. Սրտապինդ
կացէք՝ ես եմ. մի վախնաք։
28 Պետրոս պատասխան տուաւ
նորան եւ ասաց. Տէր՝ թէ որ դու
ես, հրաման տուր ինձ. որ ջրին
երեսովը քեզ մօտ գամ։
29 Նա էլ ասաց. Եկ. եւ Պետ–
րոս նաւիցը վեր ելաւ ջրի երեսո–
վը գնաց՝ եւ եկաւ Յիսուսին մօտ։
30 Եւ այն սաստիկ քամին տես–
նելով՝ վախեցաւ. եւ երբոր սկսեց
ընկղմիլ, աղաղակեց եւ ասաց.
Տէր՝ ինձ փրկէ։
31 Եւ շուտով Յիսուս իւր ձեռը

ա Վր. ԺԵ. 36. | բ Մարկ. Զ. 46. | գ Յովհ. Զ. 16. | դ Յովբ. Թ. 8.

հաց զձեռն իւր՝ կալաւ զնա եւ ասէ. Թերահաւատ՝ ընդէ՞ր երկմտեցեր։

32 Եւ իբրեւ ելին ՚ի նաւն՝ հանդարտեաց հողմն։

33 Եւ որ ՚ի նաւին էին՝ մատեան երկիրպագին նմա՝ եւ ասեն. Արդարեւ Որդի Աստուծոյ ես դու։

34 Եւ անցեալ եկին ՚ի ցամաք ՚ի Գեննեսարէթ։

35 Եւ իբրեւ ծանեան զնա՝ արք տեղւոյն այնորիկ, առաքեցին ընդ ամենայն գաւառն՝ եւ ածին առ նա զամենայն հիւանդս։

36 Եւ աղաչէին զնա, զի գոնէ միայն ՚ի քղանցս հանդերձի նորա մերձեսցին. եւ որ միանգամ մերձեցան՝ փրկեցան։

մեկնեց՝ նորան բռնեց եւ ասաց. Թերահաւատ՝ ինչու երկմտեցիր։

32 Եւ երբոր նաւը մտան, քամին հանդարտեց։

33 Եւ նորանք որ նաւին մէջն էին՝ մօտ եկան նորան երկրպագութիւն տուին՝ եւ ասացին. Իրաւ՝ որ դու Աստուծոյ Որդին ես։

34 Եւ անցան ի ցամաքը՝ եւ եկան Գեննեսարէթ։

35 Եւ երբոր այնտեղի մարդիկը ճանաչեցին նորան, ուղարկեցին այն ամէն գաւառը՝ եւ ամէն հիւանդները նորան մօտ բերին։

36 Եւ նորան աղաչումէին՝ որ գոնէ միայն նորա շորի ծայրին դպչին. եւ նորանք որ մէկ անգամ ձ դիպան, փրկուեցան։

## ԳԼ. ԺԵ

1 Յայնժամ մատեան առ Յիսուս որ յԵրուսաղէմէ փարիսեցիքն եւ դպիրք՝ եւ ասեն։

2 Ընդէ՞ր աշակերտքն քո անցանեն զաւանդութեամբ ծերոցն. զի ոչ լուանան զձեռս յորժամ հաց ուտեն։

3 Նա պատասխանի ետ՝ եւ ասէ ցնոսա. Եւ դուք ընդէ՞ր անցանէք զպատուիրանաւն Աստուծոյ՝ վասն ձերոյ աւանդութեանն։

4 Զի Աստուած ասաց. Պատուեա զհայր քո եւ զմայր։

5 Եւ որ բամբասէ զհայր կամ զմայր՝ մահու վախճանեսցի։

6 Եւ դուք ասէք. Որ ասիցէ

1 Այն ժամանակը Յիսուսի մօտ եկան Երուսաղէմիցն ա փարիսեցիքն եւ կարդացողները, եւ ասացին.

2 Ինչու քո բ աշակերտները ծերերի աւանդութիւնն գ անցնում են. պատճառն՝ ձեռները չեն լուանում երբոր հաց են ուտում։

3 Նա էլ պատասխան տուաւ եւ նորանց ասաց. Ապա դուք ինչու Աստուծոյ պատուիրանքըն էք անցնում ձեր աւանդութեան պատճառաւը։

4 Ինչոր՝ Աստուած ասաց. Թէ քո հօրը եւ մօրը դ պատուէ։

5 Եւ նա որ իւրեն հօրը կամ մօրը կը բամբասէ, մահով պիտի ե մեռնի։

6 Եւ դուք ասումէք՝ թէ Ո՛վ որ

---

ւ Սաղ. Բ. 7. Մարկ. Ա. 1. Գլ. ԺԶ. 16. ԻԶ. 63. Ղու. Դ. 41. Յովհ. Ա. 49. Զ. 69. ԺԱ. 27. Գործ. Ը. 37. Հռովմ. Ա. 4.

խ Մարկ. Զ. 53.

ծ Գլ. Թ. 20. Մարկ. Գ. 10. Ղու. Զ. 19. Գործ. ԺԹ. 12.

ա Մարկ. Է. 1.

բ Մարկ. Է. 5.

գ Կող. Բ. 8.

դ Ելից. Ի. 12. Ղեւ. ԺԹ. 3. Բ Օրին. Ե. 16. Առակ. ԻԳ. 22. Եփես. Զ. 2.

ե Ելից. ԻԱ. 17. Ղեւ. Ի. 9. Բ Օրին. ԻԷ. 16. Առակ. Ի. 20. Լ. 17.

ցհայր իւր կամ ցմայր իւր, թէ
պատարագ է՝ զոր յինէն օգտիցիս,
եւ ոչ պատուիցէ զհայր իւր եւ զմ
մայր իւր. եւ խոտէք զբանն Աս-
տուծոյ վասն ձերոյ աւանդու-
թեանն։
7 Կեղծաւորք՝ բարւոք մարգա-
րէացաւ 'ի վերայ ձեր Եսայի՝ եւ
ասէ։
8 Ժողովուրդս այս շրթամբք
պատուէ զիս, եւ 'ի սիրտ իւրեանց
հեռացեալ մեկուսի է յինէն։
9 Զուր պաշտեն զիս. ուսուցա-
նեն վարդապետութիւնս՝ զմարդ-
կան պատուիրանս։
10 Եւ կոչեցեալ առ ինքն զժո-
ղովուրդն՝ ասէ ցնոսա. Լուարուք
եւ 'ի միտ առէք։
11 Ո՛չ որ ինչ մտանէ ընդ բերան՝
պղծէ զմարդ, այլ որ ինչ ելանէ 'ի
բերանոյ՝ այն պղծէ զմարդ։

12 Յայնժամ մատուցեալ աշա-
կերտացն նորա՝ ասեն ցնա. Գիտես՝
զի փարիսեցիքն իբրեւ լուան զբանն՝
գայթակղեցան։
13 Նա պատասխանի ետ նոցա՝ եւ
ասէ. Ամենայն տունկ զոր ոչ տն-
կեաց Հայր իմ երկնաւոր, խլեսցի։
14 Թո՛յլ տուք զնոսա. կոյրք են՝
կուրաց առաջնորդք. կոյր կուրի
յորժամ առաջնորդէ՝ սխալէ, եւ
երկոքեան 'ի խորխորատ անկանին։
15 Պատասխանի ետ նմա Պետրոս
եւ ասէ. Մեկնեա մեզ զառակս
զայս։
16 Ասէ Յիսուս. Տակաւին եւ
դուք անմիտ էք։
17 Եւ ոչ իմանայք, եթէ ամենայն
որ մտանէ 'ի բերան, յորովայն եր-
թայ՝ եւ արտաքս ելանէ։

իրեն հօրը կամ մօրը ասէ՝ Թէ,
Պատարագ է ^ա նա, որ ինձմանից
պիտի շահվիս, եւ չի պատուէ իրեն
հօրը եւ իրեն մօրը. եւ այդպէս ձեր
աւանդութեանը համար՝ Աստուծոյ
խօսքին ոչինչի տեղ էք դնում։
7 Կեղծաւորներ՝ լաւ ^բ մարգա-
րէացաւ ձեզ վերայ Եսային՝ եւ ա-
սաւ.
8 Այս ժողովուրդս պռօշներովն է
պատուում ^գ ինձ. եւ իրենց սիրտն
ինձմանից հեռացած ջոկված է։
9 Զուր տեղն են պաշտում ինձ.
մարդկանցից պատուիրած վարդա-
պետութիւններն են ^դ սովորցնում։
10 Եւ ժողովուրդներին իրեն մօտ
կանչեց, եւ նորանց ասաց. Լսե-
ցէք եւ մտքներդ ^ե առէք,
11 Ո՛չ թէ ինչ որ մտնումէ ^զ բե-
րանը՝ պղծումէ մարդուն, այլ ինչ
որ բերանիցը դուրս է գալիս, նա
է որ մարդուն պղծումէ։
12 Այն ժամանակը նորա աշա-
կերտներն եկին՝ նորան ասացին.
Գիտում ես՝ որ փարիսեցիքն երբոր
այն բանը լսեցին գայթակղվեցան։
13 Նա պատասխան տուաւ նորանց
եւ ասաց. Ամէն ^է տունկ որ իմ երկ-
նաւոր Հայրս չը տնկեց. թող պոկվի։
14 Թո՛յլ տուէք նորանց՝ կոյր են
կուրերի ^ը առաջնորդ. կոյրն երբոր
կուրին առաջնորդէ, կը մոլորվի եւ
երկուքն էլ փոսի մէջ կընկնին։
15 Պետրոս նորան պատասխան
տուաւ՝ եւ ասաց. Այս առակս
մեզ ^թ մեկնէ։
16 Յիսուս ասաց. Դուք էլ դեռ
անխելք ^ժ էք.
17 Եւ չէք իմանում, թէ ամէն
բան որ բերանն է մտնում, փորն է
^ի գնում եւ դուրս է գալիս։

ա Մարկ. Է. 11, 12։
բ Մարկ. Է. 6։
գ Եսայ. ԻԹ. 13։ Եզեկ. ԼԳ. 31։
դ Եսայ. ԻԹ. 13։ Կող. Բ. 18—22. Տիտ. Ա. 14։
ե Մարկ. Է. 14։
զ Գործ. Ժ. 15։ Հռովմ. ԺԴ. 14. 17. 20։ Ա Տիմ. Դ. 4։ Տիտ. Ա. 15։
է Յովհ. ԺԵ. 2։ Ա Կորնթ. Գ. 12, [illegible]։
ը Եսայ. Թ. 16։ Մաղ. Բ. 8։ Գղ. ԺԳ. 16։ Ղուկ. Զ. 39։
թ Մարկ. Է. 17։
ժ Գղ. ԺԶ. 9։ Մարկ. Է. 18։
ի Ա Կորնթ. Զ. 13։

18 Իսկ որ ելանէ 'ի բերանոյ՝ 'ի սրտէ անտի գայ. եւ այն պղծէ զմարդն։

19 Զի 'ի սրտէ ելանեն խորհուրդք չարք՝ սպանութիւնք, շնութիւնք, պոռնկութիւնք, գողութիւնք, սուտ վկայութիւնք, հայհոյութիւնք։

20 Այս ամենայն է՝ որ պղծէ զմարդն, այլ անլուայ ձեռօք ուտել՝ ոչ պղծէ զմարդ։

21 Եւ ելեալ անտի Յիսուսի գնաց 'ի կողմանս Տիւրոսի եւ Սիդոնի։

22 Եւ ահա կին մի Քանանացի 'ի սահմանաց անտի նոցա ելեալ, աղաղակէր եւ ասէր. Ողորմեա ինձ Տէր որդի Դաւթի, դուստր իմ չարաչար դիւահարի։

23 Եւ նա ոչ ետ նմա պատասխանի. եւ մատուցեալ աշակերտքն նորա՝ աղաչէին զնա եւ ասէին. Արձակեա զդա զի աղաղակէ զհետ մեր։

24 Նա պատասխանի ետ եւ ասէ. Ո՛չ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի։

25 Եւ նա մատուցեալ երկիրպագանէր նմա եւ ասէր. Տէր՝ օգնեա ինձ։

26 Պատասխանի ետ նմա եւ ասէ. Ո՛չ է բարւոք առնուլ զհաց մանկանց՝ եւ արկանել շանց։

27 Եւ նա ասէ. Այո Տէր, քանզի եւ շունք կերակրին 'ի փշրանաց անկելոց 'ի սեղանոյ տեառն իւրեանց։

28 Յայնժամ պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. Ո՛վ կին դու՝ մեծ են հաւատք քո, եղիցի քեզ որպէս եւ կամիս. եւ բժշկեցաւ դուստր նորա 'ի նմին ժամու։

18 Բայց այն որ բերանիցն է դուրս [ա] գալիս, յառաջ սրտիցն է գալիս՝ եւ նա է մարդուն պղծում։

19 Ինչու որ՝ սրտիցն են դուրս գալիս [բ] չար խորհուրդներ՝ սպանութիւններ, շնութիւններ, պոռնկութիւններ, գողութիւններ, սուտ վկայութիւններ, հայհոյութիւններ։

20 Այս ամէնս է՝ որ մարդուն պղծումէ. բայց անլուայ ձեռքով ուտելը՝ մարդուն չի պղծում։

21 Եւ Յիսուս այն տեղից դուրս ելաւ գնաց Տիւրոսի եւ Սիդոնի [գ] կողմերը։

22 Եւ ահա մին Քանանացի կին նորանց երկրիցը դուրս ելաւ՝ աղաղակումէր եւ ասում. Տէր՝ որդի Դաւթի՝ ինձ ողորմեա. իմ աղջիկս սաստիկ դիւահարվումէ։

23 Եւ նա պատասխան չի տուաւ նորան. եւ նորա աշակերտներն եկին նորան աղաչումէին՝ եւ ասում. Արձակէ նորան. ինչու որ՝ մեր ետեւէն աղաղակումէ։

24 Նա պատասխան տուաւ եւ ասաց. Ես ուրիշ տեղ չեմ [դ] ուղարկվել՝ եթէ ոչ Իսրայէլի տան կորած ոչխարներին մօտ։

25 Նա էլ մօտեցաւ նորան երկրպագութիւն էր անում եւ ասում. Տէր՝ ինձ օգնէ։

26 Պատասխան տուաւ նորան՝ եւ ասաց. Լաւ չէ՝ երախաներին հացն առնել՝ եւ շներին [ե] ձգել։

27 Նա էլ ասաց. Այդպէս է Տէր՝ ինչու որ՝ շներն էլ իրենց տիրոջ սեղանիցն ընկած փշրանքներիցն են կերակրվում։

28 Այն ժամանակը Յիսուս պատասխան տուաւ նորան՝ եւ ասաց. Ո՜վ կին դու՝ մեծ է քո հաւատքդ. ինչպէս որ ուզումես՝ այնպէս լինի քեզ. եւ նորա աղջիկը բժշկվեցաւ այն ժամումը։

[ա] Յակ. Գ. 6.
[բ] Ծնն. Զ. 5. Ը. 21. Առակ. Զ. 14. Երեմ. ԺԷ. 9. Մարկ. Է. 21.
[գ] Մարկ. Է. 24.
[դ] Գլ. Ժ. 5. 6. Գործ. Գ. 25, 26. ԺԳ. 46. Հռովմ. ԺԵ. 8.
[ե] Գլ. Է. 6. Փիլիպ. Գ. 2.

29 Եւ գնացեալ անտի Յիսուսի, եկն ՚ի ծովեզրն Գալիլեացւոց, եւ ելեալ ՚ի լեառն նստէր անդ։

30 Մատեան առ նա ժողովուրդք բազումք, որ ունէին ընդ իւրեանս՝ կաղս, կոյրս, համերս, միակողմանիս եւ այլս բազումս. եւ ընկեցին զնոսա առ ոտս նորա՝ եւ բժշկեաց զնոսա.

31 Մինչեւ զարմանալ ժողովրդոցն՝ որ տեսանէին, զի համերքն խօսէին՝ կաղք գնային՝ միակողմանիք բժշկէին՝ կոյրք տեսանէին, եւ փառաւոր առնէին զԱստուած Իսրայէլի։

32 Եւ կոչեցեալ առ ինքն Յիսուսի զաշակերտսն՝ ասէ. Գթամ ՚ի ժողովուրդս, զի արդ երեք աւուրք են զի կան առ իս, եւ ոչ ունին զինչ ուտիցեն. եւ արձակել զդոսա նօթիս՝ չկամիմ, գուցէ ՚նքթիցեն զճանապարհայն։

33 Ասեն ցնա աշակերտքն. Ուստի՞ արդ՝ մեզ յանապատի աստ ուստի իցէ այնչափ հաց՝ մինչեւ յագեցուցանել զայսչափ ժողովուրդ։

34 Եւ ասէ ցնոսա Յիսուս. Քանի՞ նկանակ ունիք. եւ նոքա ասեն. Եօթն. եւ սակաւ ձկունս։

35 Եւ հրամայեաց ժողովրդեանն բազմել ՚ի վերայ գետնոյ։

36 Եւ առեալ զեօթն նկանակսն եւ զձկունսն՝ գոհացաւ եւ եբեկ եւ ետ ցաշակերտսն, եւ նոքա ժողովրդեանն։

37 Կերան ամենեքեան եւ յագեցան. եւ բարձին զնշխարս կոտորոցն՝ եօթն զամբիւղ լի։

38 Եւ որք կերանն՝ էին արք իբրեւ չորք հազարք. թող զկանայս եւ զմանկտի։

39 Իբրեւ արձակեաց զժողովուրդ-

29 Եւ Յիսուս այն տեղէն ն գնաց Գալիլեացոց ծովի շ եզրին եկաւ. եւ վեր ելաւ սարը, եւ այնտեղ նստաւ։

30 Եւ շատ ժողովուրդներ նորա մօտ = եկան, որ իրենց հետ ունէին կաղեր՝ կոյրեր՝ համրներ՝ միակողմանիներ, եւ ուրիշ շատեր էլ. եւ նորանց ձգեցին նորա ոտները, եւ նորանց բժշկեց։

31 Մինչեւ որ զարմանումէին այն ժողովուրդներն որ տեսնումէին, որ համրները խօսում, կաղերը գնումէին, միակողմանիները բժշկվում, կոյրերն տեսնումէին, եւ փառաւորումէին Իսրայէլին Աստուածը։

32 Եւ Յիսուս աշակերտներին իւրեն մօտ կանչեց եւ ւ ասաց. Խղճա գալիս է այս ժողովրդի վերայ. ինչու որ՝ երեք օր է՝ որ իմ մօտ են, եւ բան չունին որ ուտեն. եւ չեմ ուզում նորանց սոված ճանապարհ ձգել. որ չըլինի թէ սովածութենիցը թուլանան ճանապարհումը։

33 Աշակերտները նորան ղ ասացին. Ասպէս մեզ այստեղ անապատումն ո՞ր տեղից այնչափ հաց կը լինի՝ որ այդքան ժողովուրդը կշտացնենք։

34 Եւ Յիսուս նորանց ասաց. Քանի՞ հատ հաց ունիք. եւ նորանք ասացին՝ Եօթը, եւ քիչ ձկներ։

35 Եւ հրաման տուաւ ժողովրդին՝ որ գետնի վերայ նստին։

36 Եւ այն եօթը հացը՝ եւ ք ձկները առաւ, ր գոհացաւ եւ կտրեց եւ աշակերտներին տուաւ՝ եւ նորանք էլ ժողովրդին։

37 Ամէնքը կերին եւ կշտացան. եւ աւելցած կտորներից եօթը քթոց լցրին վեր առին։

38 Եւ նորանք որ կերին չորս հազարի չափ մարդիկ էին. կանանցից եւ երախաներից զատ։

39 Երբոր այն ժողովուրդներին

ն Մարկ. Է. 31։
շ Գլ. Դ. 18։
= Եսայ. ԼԵ. 5, 6։ Գլ. ԺԱ. 5։ Ղու. Է. 22։
ւ Մարկ. Ը. 1։
ղ Դ Թագ. Դ. 43։
ք Գլ. ԺԴ. 19։
ր Ա Թագ. Թ. 13։ Ղու. ԻԲ. 19։

այն, ել 'ի նաւ՝ եւ եկն 'ի սահմանս
Մագդաղենայ։

## ԳԼ. ԺԶ

1 Եւ մատուցեալ փարիսեցիքն
եւ սադուկեցիք փորձելով խնդ-
րէին 'ի նմանէ՝ նշան յերկնից ցու-
ցանել նոցա։
2 Նա պատասխանի ետ՝ եւ ասէ
ցնոսա․ Յորժամ երեկոյ լինի՝ ա-
սէք, Պարզ լինիցի՝ զի կարմրացեալ
է երկինն։

3 Եւ առաւօտու՝ Այսօր մրրիկ,
զի չառագունի տրտմութեամբ եր-
կինն։ Արդ՝ զերեսս երկնի կարէք
քննել, իսկ զնշանս ժամանակիս ոչ
կարէք գիտել։

4 Ազգ չար եւ շնացող՝ նշան
խնդրէ, եւ նշան մի տացի նմա,
բայց նշանն Յովնանու մարգարէի․
եւ եթող զնոսա եւ գնաց։
5 Գնացին եւ աշակերտքն յայն-
կոյս, եւ մոռացան առնուլ հաց։
6 Ասէ ցնոսա Յիսուս․ Տեսէք եւ
զգոյշ լերուք 'ի խմորոյ սադուկեց-
ւոցն եւ փարիսեցւոցն։
7 Նոքա խորհէին ընդ միմեանս՝
եւ ասէին թէ Հաց ոչ բարձաք։

8 Գիտաց Յիսուս եւ ասէ․ Զի՞
խորհիք 'ի միտս ձեր թերահաւատք՝
եթէ հաց ոչ ունիք։
9 Տակաւին չիմանայք՝ եւ ոչ յի-
շէք զհինգ նկանակն 'ի հինգ հա-
զարսն, եւ քանի սակառի բարձէք։

10 Եւ ոչ զեօթն նկանակն 'ի չորս
հազարսն, եւ քանի զամբիւղս բար-
ձէք։
11 Արդ՝ զիա՞րդ ոչ իմանայք՝ եթէ
ոչ վասն հացի ասացի ձեզ՝ զգոյշ

* արձակեց․ մտաւ նաւը եւ եկաւ
Մագդաղէնի կողմերը։

1 Եւ փարիսեցիքն ու սադուկե-
ցիքը նորա մօտ ** եկին․ եւ փոր-
ձելով նորանից խնդրում էին՝ որ եր-
կնքիցը մի նշան ցոյց տայ իրենց։
2 Նա պատասխանեց ասաւ՝ եւ
ասաց նորանց․ Ո՛ր ժամանակ իրի-
կուն է լինում՝ ասում էք թէ, Պարզ
կը լինի․ ինչու որ՝ երկինքը կարմը-
րացել է։
3 Եւ առաւօտն ―――Ճ+ Այսօր
մրրիկ ԽԼՆԷ․ ինչու որ երկինքը
տրտմութեամբ կարմրացել է։ Այս
երկնքի երեսը կարող էք քննել՝
բայց այս ժամանակիս նշանը չէք
կարող հասկանալ։
4 Չար եւ շնացող ազգը նշան է
*** խնդրում․ եւ նշան չի տրուիլ նո-
րան, բայց միայն Յօնան մարգարէին
նշանը․ եւ նորանց թողեց եւ գնաց։
5 Աշակերտներն էլ գնացին այն
† կողմը, եւ մոռացան հաց վերառնել։
6 Յիսուս նորանց ասաց․ Տեսէք
եւ զգոյշ կացէք սադուկեցոց եւ
փարիսեցոց ‡ խմորից։
7 Նորանք իրենց մէջ միտք էին
անում՝ եւ ասում․ թէ Հաց չենք
վերառել։
8 Յիսուս իմացաւ եւ ասաց․ Ո՛վ
թերահաւատներ՝ ինչո՞ւ էք ձեր միտ-
քումը հոգս անում՝ թէ հաց չունինք։
9 Դեռ չէ՞ք ‡‡ իմանում՝ եւ միտք-
ներդ չէ՞ք բերում այն հինգ հացը
հինգ հազար մարդկանցը, եւ քանի
քթոց վերառիք։
10 Եւ ոչ էլ այն եօթը հացը չորս
հազար ‖ մարդկանցը․ եւ քանի
քթոց վերառիք։
11 Ուրեմն ինչպէս չէք իմանում՝
որ հացի համար չասացի ձեզ՝ զգոյշ

* Մարկ. Ը. 10։ —
** Գլ. ԺԲ. 38։ Մարկ. Ը. 11։ Ղուկ. ԺԱ. 16։ ԺԲ. 54—56։ Ա Կորնթ. Ա. 22։
*** Գլ. ԺԲ. 39։
† Մարկ. Ը. 14։
‡ Ղուկ. ԺԲ. 1։
‡‡ Գլ. ԺԴ. 17։ Յովհ. Զ. 9։
‖ Գլ. ԺԵ. 34։

լինել ՚ի խմորոյ փարիսեցւոցն և սադուկեցւոց ։
12 Յայնժամ ՚ի միտ առին, թէ ոչ ասաց զգուշանալ ՚ի խմորոյ, այլ յաղանդոյ փարիսեցւոցն և սադուկեցւոց ։
13 Եւ եկեալ Յիսուս ՚ի կողմանս Փիլիպպեայ Կեսարեայն, հարցանէր ցաշակերտսն և ասէր. Զո՞ ոք ասեն զինէն մարդիկ թէ իցէ Որդի մարդոյ ։
14 Եւ նոքա ասեն. Ոմն զՅովհաննէս մկրտիչ, և այլք զԵղիա, և կէսք զԵրեմիա, կամ զմի ոք ՚ի մարգարէիցն ։
15 Ասէ ցնոսա Յիսուս. Իսկ դուք զո՞ ասէք զինէն թէ իցեմ ։
16 Պատասխանի ետ Սիմոն Պետրոս և ասէ. Դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ կենդանւոյ ։
17 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա. Երանի քեզ Սիմոն որդի Յովնանու, զի մարմին և արիւն ոչ յայտնեաց քեզ՝ այլ Հայր իմ որ յերկինս է ։
18 Եւ ես քեզ ասեմ. զի Դու ես վէմ, և ՚ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, և դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն ։
19 Եւ տաց քեզ զփականս արքայութեանն երկնից. և զոր միանգամ կապեսցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս. և զոր արձակեսցես յերկրի, եղիցի արձակեալ յերկինս ։
20 Յայնժամ սաստեաց աշակեր-

կացէք՝ փարիսեցւոց և սադուկեցւոց խմորիցը ։
12 Այն ժամանակը հասկցան որ չասաց՝ թէ խմորիցն զգուշ կենան, այլ փարիսեցւոց և սադուկեցւոց օրէնքէն ։
13 Եւ Յիսուս գալով գնաց Փիլիպպեայ Կեսարիայի կողմերը, և աշակերտներին հարցնումէր և ասում. թէ, Մարդիկն ինձ համար ո՞վ են ասում՝ որ Որդին մարդոյ ե լինի ։
14 Եւ նորանք ասացին. Մինն ----ն թէ Յովհաննէս մկրտիչն է. ուրիշներն էլ՝ թէ Եղիան. և կէսն էլ՝ թէ Երեմիան, կամ մարգարէներիցն մինը ։
15 Յիսուս նորանց ասաց. Ապա դուք ո՞վ էք ասում ինձ համար որ լինիմ ։
16 Սիմոն Պետրոս պատասխան տուաւ նորան և ասաց. Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստուծոյ է Որդին ։
17 Յիսուս պատասխան տուաւ՝ և ասաց նորա. Երանի քեզ՝ Յովնանի որդի Սիմոն, ինչու որ՝ մարմին և ը արիւն քեզ չի յայտնեց, բայց իմ թ հայրս՝ որ երկնքումն է ։
18 Եւ ես ասում եմ քեզ. որ Դու ես ժ վէմ, և այդ ի վիմից վերայ իմ եկեղեցիս կը շինեմ, և դժոխքի դռները չեն յաղթիլ լ դորան ։
19 Եւ երկնքի արքայութեան խ բանալիքը քեզ կը տամ, և այն որ երկրի վերայ կը կապես, երկնքումն էլ կապուած կը լինի. և այն որ երկրի վերայ կարձակես, երկնքումն էլ արձակուած կը լինի ։
20 Այն ժամանակը աշակերտներին

ե Մարկ. Ը. 27. Ղուկ. Թ. 18.
զ Գլ. ԺԴ. 2. Ղուկ. Թ. 7, 8, 9.
է Գլ. ԺԴ. 33. Մարկ. Ը. 29. Ղուկ. Թ. 20. Յովհ. Զ. 69. ԺԱ. 27. Գործ. Ը. 37. Թ. 20. Ա Յովհ. Դ. 15. Ե. 5. Եբր. Ա. 2, 5.
ը Եփես. Բ. 8.
թ Ա Կորնթ. Բ. 10. Գաղ. Ա. 16.
ժ Յովհ. Ա. 42.
ի Եփես. Բ. 20. Յայտ. ԻԱ. 14.
լ Յովբ. ԼԸ. 17. Սաղ. Թ. 13. ՃԷ. 18. Եսայ. ԼԸ. 10.
խ Գլ. ԺԸ. 18. Յովհ. Ի. 23.

տայն, զի մի ումեք ասիցեն՝ թէ նա է Քրիստոսն։
21 Յայնմհետէ սկսաւ Յիսուս ցուցանել աշակերտացն իւրոց՝ թէ պարտ է նմա երթալ յԵրուսաղէմ, եւ բազում չարչարանս չարչարիլ ՚ի քահանայապետից եւ ՚ի դպրաց եւ ՚ի ծերոց ժողովրդեանն՝ եւ սպանանիլ, եւ յերիր աւուր յառնել։
22 Եւ առեալ զնա մեկուսի Պետրոսի, սկսաւ կալել ընդ նմա եւ ասել․ Քաւ լիցի քեզ Տէր, մի՛ եղիցի քեզ այդ։
23 Եւ նա դարձեալ ՚ի Պետրոս՝ ասէ․ Երթ յետս իմ Սատանայ, գայթակղութիւն իմ ես․ զի ոչ խորհիս դու զԱստուծոյն, այլ ըզ մարդկանն։
24 Յայնժամ Յիսուս ասէ ցաշակերտսն իւր․ Եթէ որ կամի զկնի իմ գալ՝ ուրասցի զանձն, եւ առցէ զխաչ իւր՝ եւ եկեսցէ զկնի իմ։
25 Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա․ եւ որ կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա։
26 Զինչ օգտիցի մարդ՝ թէ զաշխարհս ամենայն շահեսցի, եւ զանձն իւր տուժեսցէ․ կամ զինչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ։
27 Զի գալոց է Որդի մարդոյ փառօք Հօր իւրոյ՝ հանդերձ հրեշտակօք իւրովք, եւ յայնժամ հա-

սաստեց՝ որ իսկի մէկն մարդայ [հ] չասեն․ թէ նա Քրիստոսն է։
21 Նորանից ետեւ Յիսուս սկսեց աշակերտներին [յ] յայտնել, թէ պէտք է նորան՝ որ Երուսաղէմ գնայ եւ քահանայապետներից ու կարդացողներիցը եւ ժողովրդի ծերերիցը շատ չարչարանքով չարչարուի՝ սպանուի եւ երեք օրումը յարութիւն առնէ։
22 Եւ Պետրոս նորան մէկ կողմը առաւ․ եւ սկսեց նորա հետ հակառակիլ եւ ասել՝ Քաւ լիցի քեզ Տէր՝ այդ բանը չի լինի քեզ։
23 Եւ նա դարձաւ դէպի Պետրոսը՝ եւ ասաց․ Յետ գնա ինձանից [ւ] Սատանայ՝ ինձ [զ] գայթակղութիւն ես․ ինչու որ՝ դու Աստուծոյ բաները չես միտք առնում, բայց մարդկանց բաները։
24 Այն ժամանակը Յիսուս իրեն աշակերտներին ասաց․ Թէ որ մէկն մարդ կամենում է իմ ետեւէս գալ, նա թող իրեն անձին ուրանայ՝ եւ իրեն խաչըն առնէ, եւ իմ ետեւէս [ր] գայ։
25 Պատճառանոր՝ ով որ իրեն անձը կուզէ ազատել, կը կորցնէ նորան․ եւ ով որ իրեն անձը կը կորցնէ ինձ համար, կը գտնէ [յ] նորան։
26 Ի՞նչ օգուտ է մարդոյ՝ որ ամէն աշխարհքըս առնէ՝ եւ իրեն անձին վնաս տայ․ կամ թէ ինչ գին կը տայ մարդ՝ իրեն անձը փրկելոյ [ն] համար։
27 Ինչու որ՝ գալու է Որդին մարդոյ իրեն Հօր [ւ] փառքովն իրեն [-] հրեշտակներին հետ․ եւ [չ] այն ժա-

[հ] Գլ. ԺԷ. 9։ Մարկ. Ը. 30։ Ղու. Թ. 21։
[յ] Գլ. Ի. 17։ Մարկ. Ը. 31։ Թ. 31։ Ժ. 33։ Ղու. Թ. 22։ ԺԸ. 31։ ԻԴ. 6, 7։
[ւ] Բ Թագ. ԺԲ. 22։
[զ] Հռովմ. Ը. 7։
[ր] Գլ. Ժ. 38։ Մարկ. Ը. 34։ Ղու. Թ. 23։ ԺԴ. 27։ Գործ. ԺԴ. 22։ Ա Թես. Գ. 3։ Բ Տիմ. Գ. 12։
[յ] Ղու. ԺԷ. 33։ Յովհ. ԺԲ. 25։
[ն] Սաղ. ԽԹ. 7, 8։
[ւ] Գլ. ԻԶ. 64։ Մարկ. Ը. 38։ Ղու. Թ. 26։
[-] Դան. Է. 10։ Զաք. ԺԴ. 5։ Գլ. ԻԵ. 31։ Յուդ. 14։
[չ] Յովբ. ԼԴ. 11։ Սաղ. ԿԲ. 12։ Առակ. ԻԴ. 12։ Երեմ. ԺԷ. 10։ ԼԲ. 19։ Հռովմ. Բ. 6։ Ա Կորնթ. Գ. 8։ Բ Կորնթ. Ե. 10։ Ա Պետ. Ա. 17։ Յայտ. Բ. 23։ ԻԲ. 12։

տուսցէ իւրաքանչիւր ըստ գործս
իւր։
28 Ամէն ասեմ ձեզ. Զի իցեն ո-
մանք 'ի սոցանէ՝ որք աստ կան,
որք ոչ ճաշակեսցեն զմահ՝ մինչեւ
տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ար-
քայութեամբ իւրով։

մանաւանդ ամէն մէկին հատուցումը
կը տայ իրեն գործքերուն չափովը։
28 Ճշմարիտ ասումեմ ձեզ, որ
Այստեղ կենողներէն մէն քանիներ
կան, որ մահ չեն ճաշակեր՝ մինչեւ
որ Որդին մարդոյ տեսնեն իրեն
թագաւորութիւնովը եկած։

## ԳԼ. ԺԷ

1 Եւ յետ վեց աւուր առնու ընդ
իւր Յիսուս զՊետրոս եւ զՅակոբոս
եւ զՅովհաննէս զեղբայր նորա, եւ
հանէ զնոսա 'ի լեառն մի բարձր
առանձինն։
2 Եւ այլակերպեցաւ առաջի նո-
ցա. եւ լուսաւորեցան երեսք նո-
րա իբրեւ զարեգակն, եւ հան-
դերձք նորա եղեն սպիտակ իբրեւ
զլոյս։
3 Եւ ահա երեւեցան նոցա Մով-
սէս եւ Եղիա՝ որ խօսէին ընդ
նմա։
4 Պատասխանի ետ Պետրոս եւ
ասէ ցՅիսուս. Տէր՝ բարւոք է մեզ
աստ լինել. եթէ կամիս՝ արասցուք
երիս տաղաւարս՝ մի քեզ եւ մի
Մովսիսի եւ մի Եղիայի։
5 Եւ մինչդեռ նա խօսէր, ահա
ամպ լուսաւոր հովանի եղեւ 'ի վե-
րայ նոցա. ձայն եղեւ յամպոյն՝ եւ
ասէ. Դա է որդի իմ սիրելի՝ ընդ
որ հաճեցայ, զդա լուարուք։
6 Իբրեւ լուան աշակերտքն, ան-
կան 'ի վերայ երեսաց իւրեանց՝ եւ
երկեան յոյժ։
7 Եւ մատուցեալ Յիսուս բուռն
եհար զնոցանէ՝ եւ ասէ. Յառն կա-
ցէք՝ եւ մի երկնչիք։
8 Ամբարձին զաչս իւրեանց՝ եւ
ոչ զոք տեսին՝ բայց միայն զՅի-
սուս։

1 Եւ վեց օրից ետեւ Յիսուս
Պետրոսը եւ Յակոբը եւ նորա եղ-
բայր Յօհաննէսը իրեն հետ առաւ,
եւ նոցանից առանձին մէն բարձր սար
– հանեց։
2 Եւ նոցանից առաջին՝ նորա կեր-
պարանքը փոխուեցաւ՝ եւ նորա ե-
րեսն արեգակին պէս լուսաւորուե-
ցաւ, եւ նորա շորերը լուսոյ պէս
սպիտակ էղան։
3 Եւ ահա Մօսէսը եւ Եղիան
նոցանից երեւեցան՝ որ նորա հետ
խօսումէին։
4 Պետրոս պատասխան տուաւ՝
եւ ասաց Յիսուսին. Տէր՝ լաւ է որ
մենք այստեղ կենանք. թէ որ կա-
մենաս, երեք տաղաւար կը շինենք՝
մէնը քեզ համար՝ մէնը Մօսէսին,
եւ մէնը Եղիային։
5 Եւ դեռ քանի որ նա ‡ խօսու-
մէր՝ ահա մէն լուսաւոր ամպ շուք
արաւ նոցանից վերայ. այն ամպիցը
ձայն էղաւ՝ եւ ասաց. Դա է իմ
‡ սիրելի Որդին՝ որ զորան հաւանել
⁼ եմ. զորան ականջ ⁼ դրէք։
6 Երբոր աշակերտները ⁼ լսեցին,
իրենց երեսներին վերայ վէր ընկան.
եւ շատ վախեցան։
7 Եւ Յիսուս մօտեցաւ՝ նոցանից
‡ բռնեց եւ ասաց. Վերկացէք՝ եւ
մի վախենաք։
8 Իրենց աչքերը բարձրացրին եւ
ոչ ով չի տեսին, բայց միայն Յի-
սուսին։

| | | | |
|---|---|---|---|
| ղ Մարկ. Թ. 1։ | Ղու. Թ. 28։ | Ղու. Գ. 22։ | 23։ |
| Ղու. Թ. 27։ | ‡ Բ Պետ. Ա. 17։ | ⁼ Եսայ. ԽԲ. 1։ | ⁼ Բ Պետ. Ա. 18։ |
| — | ‡ Գղ. Գ. 17։ | Ի Բ Օրէն. ԺԸ. 15 | ‡ Դան. Ը. 18։ Թ. |
| = Մարկ. Թ. 2։ | Մարկ. Ա. 11։ | 19։ Գործ. Գ. 22։ | 21։ Ժ. 10. 18։ |

9 Եւ մինչդեռ իջանէին ՚ի լեռնէ անտի , պատուիրեաց նոցա Յիսուս՝ եւ ասէ ․ Մի ումեք ասիցէք զտեսիլդ՝ մինչեւ Որդի մարդոյ ՚ի մեռելոց յարիցէ ։

10 Հարցին զնա աշակերտքն եւ ասեն ․ Զիարդ դպիրքն ասեն , եթէ Եղիայի նախ պարտ է գալ ։

11 Պատասխանի ետ Յիսուս՝ եւ ասէ ցնոսա ․ Եղիա գայ՝ եւ հաստատեսցէ զամենայն ։

12 Այլ ասեմ ձեզ՝ զի Եղիա եկեալ իսկ է ․ եւ ոչ ծանեան զնա , այլ արարին ընդ նմա՝ զոր ինչ կամեցան ․ նոյնպէս եւ Որդի մարդոյ չարչարելոց է ՚ի նոցանէ ։

13 Յայնժամ ՚ի միտ առին աշակերտքն՝ թէ վասն Յովհաննու մկրտչի ասաց ցնոսա ։

14 Եւ իբրեւ եկին ՚ի ժողովուրդն , մատեաւ այր մի՝ ՚ի ծունր իջանէր եւ ասէր ․ Տէր ողորմեա՛ որդւոյ իմում , զի լուսնոտի՝ եւ չարաչար հիւանդանայ ․ բազում անգամ անկանի ՚ի հուր՝ եւ երբեմն ՚ի ջուր ։

15 Եւ մատուցի զնա աշակերտացն քոց՝ եւ ոչ կարացին բժշկել ։

16 Պատասխանի ետ Յիսուս՝ եւ ասէ ․ Ո՛վ ազգ անհաւատ եւ թիւր , մինչեւ ցե՞րբ իցեմ ընդ ձեզ՝ մինչեւ յե՞րբ անսայցեմ ձեզ ․ ած զնա առ իս ։

17 Եւ սաստեաց ՚ի նա Յիսուս՝ եւ ել ՚ի նմանէ դեւն , եւ բժշկեցաւ մանուկն ՚ի ժամէն յայնմանէ ։

18 Յայնժամ մատեան աշակերտքն առանձինն՝ եւ ասեն ցՅիսուս ․ Մեք ընդէր ոչ կարացաք հանել զնա ։

9 Եւ երբոր այն սարիցը վէր էին գալիս , Յիսուս նորանց պատուէր ը տուաւ եւ ասաց ․ Այդ տեսիլքը ոչ մին մարդոյ չասէք , մինչեւ որ Որդին մարդոյ մեռելների միջից յարութիւն առնէ ։

10 Աշակերտները նորան հարցրին եւ ասացին ․ Ի՞նչպէս է՝ որ կարդացողներն թ ասումեն՝ թէ առաջ Եղիան պէտք է գայ ։

11 Յիսուս պատասխան տուաւ՝ եւ ասաց նորանց ․ Եղիան կը գայ՝ եւ ամէն բան ժ կը հաստատէ ։

12 Բայց ասում եմ ձեզ՝ որ Եղիան իսկ հիմիկ եկած ի է՝ եւ նորան չը ճանաչեցին ․ այլ ինչ որ ուզեցին՝ նորան լ արին ․ այնպէս էլ Որդին մարդոյ նորանցից պիտի խ չարչարուի ։

13 Այն ժամանակն աշակերտները ծ հասկացան՝ թէ Յովհաննէս մկրտչին համար ասաց նորանց ։

14 Եւ երբոր ժողովրդին մէջ կ եկին , մին մարդ մօտեցաւ՝ ծունր էր դնում եւ ասում ․ Տէր իմ որդւոյս ողորմեա ․ որ լուսնոտամէ՝ եւ սաստիկ հիւանդանում ․ շատ անգամ կրակն է ընկնում ․ եւ մին քանի անգամ էլ ջուրը ։

15 Եւ նորան քո աշակերտներիդ մօտ բերի՝ եւ չը կարացին բժշկել ։

16 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց ․ Ո՛վ անհաւատ եւ ծուռ ազգ ․ մինչեւ երբ ձեզ հետ պիտի լինիմ՝ մինչեւ երբ ձեզ պիտի համբերեմ ․ նորան ինձ մօտ բեր ։

17 Եւ Յիսուս նորան սաստեց ․ եւ դեւը նորանից դուրս եկաւ , եւ տղան իսկ այն ժամին բժշկվեցաւ ։

18 Այն ժամանակն աշակերտներն առանձին մօտ եկին ․ եւ Յիսուսին ասացին ․ Մենք ինչու չը կարացինք հանել նորան ։

ը Գլ․ ԺԶ․ 20։ Մարկ․ Ը․ 30։ Թ․ 9։
թ Մաղ․ Դ․ 5։ Գլ․ ԺԱ․ 14։ Մարկ․ Թ․ 11։
ժ Մաղ․ Դ․ 6։ Ղու․ Ա․ 16, 17։ Գործ․ Գ․ 21։
ի Գլ․ ԺԱ․ 14։ Մարկ․ Թ․ 12, 13։
լ Գլ․ ԺԴ․ 3․ 10։
խ Գլ․ ԺԶ․ 21։
ծ Գլ․ ԺԱ․ 14։
կ Մարկ․ Թ․ 14։ Ղու․ Թ․ 37։

19 Եւ նա ասէ ցնոսա . Վասն
թերահաւատութեան ձերոյ ։ Ամէն
ասեմ ձեզ՝ եթէ ունիցիք հաւատս
քան զհատ մանանխոյ , ասասջիք
լերինդ այդմիկ՝ Փոխեաց աստի անդր,
եւ փոխեսցի . եւ ոչ ինչ անհնարին
լինիցի ձեզ ։

20 Բայց այս ազգ ոչ ելանէ՝ եթէ
ոչ աղօթիւք եւ պահովք ։

21 Եւ մինչդեռ շրջէին նոքա 'ի
Գալիլեա՝ ասէ ցնոսա Յիսուս .
Մատնելոց է Որդի մարդոյ 'ի ձեռս
մարդկան ։

22 Եւ սպանցեն զնա , եւ յերիր
աւուր յարիցէ . եւ տրտմեցան յոյժ ։

23 Եւ իբրեւ եկին նոքա 'ի Կափառ-
նաում , մատեան՝ որք զերկդրամ-
եանն պահանջէին՝ առ Պետրոս ,
եւ ասեն . Վարդապետն ձեր ոչ
տայ զերկդրամեանն , եւ ասէ՝ Այո ։

24 Եւ իբրեւ եմուտ 'ի տուն՝ յա-
ռաջեաց քան զնա Յիսուս եւ ասէ՝
Զինչ թուի քեզ Սիմոն . թագա-
ւորք ազգաց յումմէ՞ առնուն
զհարկս կամ զհաս , յորդւոց իւր-
եանց՝ թէ յօտարաց ։

25 Եւ իբրեւ ասաց՝ թէ յօտա-
րաց , ասէ ցնա Յիսուս . Ապա ու-
րեմն ազատ են որդիքն ։
26 Բայց զի մի գայթակղեցու-
ցուք զնոսա , երթ 'ի ծով՝ եւ ըն-
կեա կարթ , եւ զառաջին ձուկն որ
ելանիցէ՝ առ եւ բաց զբերան նո-
րա , եւ գտանիցես սատեր . եւ
զայն առեալ տացես նոցա ընդ իմ
եւ ընդ քո ։

19 Նա էլ նորանց ասաց . Ձեր թե-
րահաւատութեանը համար ։ Ճշմա-
րիտն ասում եմ ձեզ՝ Թէ որ մանա-
նեխի հատի չափ հաւատ [հ] ունե-
նաք , եւ այս սարին ասէք՝ Այստե-
ղից այնտեղ փոխուէ՛ կը փոխուի . եւ
բնաւ մին բան անկարելի չի լինիլ
ձեզ համար ։
20 Միայն թէ՝ այս ցեղս ուրիշ
բանով դուրս չի գալ՝ եթէ ոչ ա-
ղօթքով եւ ծոմով ։
21 Եւ դեռ քանի որ նորանք Գա-
լիլեային մէջ ման էին [ձ] գալիս , Յի-
սուս նորանց ասաց . Որդին մարդոյ
պէտք է մարդկանց ձեռքը մատ-
նուի ։
22 Եւ նորան կը սպանեն՝ եւ երեք
օրումն յարութիւն կ'առնէ . եւ նո-
րանք շատ տրտմեցան ։
23 Երբոր նորանք եկին [ղ] Կափառ-
նայում , երկդրամեան հարկ [ճ] ու-
ղորդներն եկին Պետրոսին մօտ եւ
ասացին . Ձեր Վարդապետը երկ-
դրամեանը չի տալիս , եւ նա ա-
սաց՝ Այո ։
24 Եւ երբոր տունը մտաւ , Յիսուս
նորանցից առաջ խօսեց եւ ասաց .
Սիմօն՝ ինչպէս է երեւում քեզ .
ազգերի թագաւորները ումից են
առնում գլխահարկը կամ տուրքը ,
իրենց որդիքներիցը , թէ օտարնե-
րիցը ։
25 Եւ երբոր ասաց՝ թէ Օտարնե-
րիցը . Յիսուս նորան ասաց . Ապա
ուրեմն՝ որդիքները ազատ են ։
26 Բայց որ նորանց չը գայթակղ-
ցացնենք՝ գնա ծովը եւ կարթը
ձգէ , եւ առաջին ձուկը որ դուրս
կը գայ՝ առ , նորա բերանը բաց՝ եւ
մին սատեր կը գտնես՝ եւ նա առ
եւ նորանց տուր՝ իմ տեղս եւ քո
տեղդ ։

[հ] Մտ. ԻԱ. 21 ; Մարկ. ԺԱ. 23 ; Ղուկ. ԺԷ. 6 ; Ա. Կորնթ. ԺԳ. 9 ; ԺԴ. 2 ;
[ձ] Մտ. ԺԶ. 21 ; Ի. 17 ; Մարկ. Ը. 31 ; Թ. 30, 31 ; Ժ. 33 ; Ղուկ. Թ. 22, 44 ; ԺԸ. 31 ; ԻԴ. 6, 7 ;
[ղ] Մարկ. Թ. 33 ;
[ճ] Ելից. Լ. 13 ; ԼԸ. 26 ;

—

## ԳԼ. ԺԸ.

1 Յայնմ աւուր մատեան աշակերտքն առ Յիսուս՝ եւ ասեն. Ո՞վ իցէ ՚ի մէնջ մեծ յարքայութեան երկնից։

2 Եւ կոչեաց առ ինքն Յիսուս մանուկ մի, կացոյց զնա ՚ի մէջ նոցա։

3 Եւ ասէ. Ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ դարձջիք եւ եղիջիք իբրեւ զմանկտի, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից։

4 Արդ՝ որ խոնարհեցուսցէ զանձն իբրեւ զմանուկս զայս, նա է մեծ յարքայութեան երկնից։

5 Եւ որ ոք ընկալցի մանուկ մի այսպիսի յանուն իմ, զիս ընդունի։

6 Եւ որ ոք գայթակղեցուսցէ զմի ՚ի փոքրկանցս յայսցանէ յիս հաւատացելոց, լաւ է նմա եթէ կախիցէ երկան իշոյ ընդ պարանոց նորա՝ եւ ընկղմիցի ՚ի խորս ծովու։

7 Վայ աշխարհի ՚ի գայթակղութեանց. հարկ է գալ գայթակղութեանց. բայց վայ մարդոյն այնմիկ՝ յորոյ ձեռն գայցէ գայթակղութիւն։

8 Եթէ ձեռն քո կամ ոտն գայթակղեցուսցէ զքեզ, հատ զնա՝ եւ ընկեա ՚ի քէն. լաւ իցէ քեզ միաձեռանի կամ կաղ մտանել ՚ի կեանս, քանթէ երկուս ձեռս եւ երկուս ոտս ունել, եւ անկանել ՚ի հուրն յաւիտենական։

9 Եւ եթէ ակն քո գայթակղեցուսցէ զքեզ՝, խլեա զնա եւ ընկեա ՚ի քէն. լաւ իցէ քեզ միականի

1 Այն օրը աշակերտները Յիսուսին մօտ եկին՝ եւ ասացին. Մեզանից ով մեծ կը լինի երկինքի արքայութեանը = մէջ։

2 Եւ Յիսուս մին երախայ կանչեց իրեն մօտ՝ եւ նորան կանգնացրուց նորանց միջումը։

3 Եւ ասաց. Ճշմարիտն ասեմ ձեզ. Թէ որ չը դառնաք եւ չը լինիք երախաների ₣ նման, չէք մտնիլ երկինքի արքայութիւնը։

4 Ուրեմն ով որ իրեն անձին այս երախայիս նման ‡ կը խոնարհացնէ, նա է մեծ երկինքի արքայութեանը մէջ։

5 Եւ ով որ մին այսպէսի երախայ իմ անունովս ÷ կընդունի, նա ինձ կընդունի։

6 Եւ ով որ կը գայթակղացնէ այս փոքրներէս ŀ մինը՝ որ ինձ հաւատացեալ են, լաւ էր նորան՝ որ մին իշու ջաղացի քար նորա վզիցը կախուէր եւ ծովի խոր տեղը խեղդուէր։

7 Վայ աշխարհքիս՝ գայթակղութիւններին համար. պէտք է որ գայթակղութիւններ ʅ գան, բայց վայ այն ŀ մարդուն՝ որ նորա ձեռովը կը գայ գայթակղութիւնը։

8 Թէ որ քո ձեռդ կամ ոտդ քեզ գայթակղացնէ, կտրէ նորան՝ եւ քեզանից ձգէ՝ լաւ է քեզ՝ որ մին ձեռնանի կամ կաղ մտնես կեանքը, քան թէ երկու ձեռք եւ երկու ոտք ունենաս՝ եւ յաւիտենական կրակին մէջ ɛ ընկնես։

9 Եւ թէ որ քո աչքդ քեզ գայթակղացնէ, հանէ նորան՝ եւ քեզանից ձգէ. լաւ է քեզ՝ որ մին

= Մարկ. Թ. 33. Ղուկ. Թ. 46. ԻԲ 24.
₣ Սաղ. ՃԼԱ. 2. Գլ. ԺԹ. 14. Մարկ. Ժ. 14. Ղուկ. ԺԸ. 16. Ա Կորնթ. ԺԴ. 20. Ա Պետ. Բ. 2.
‡ Գլ. Ի. 27. ԻԳ. 11.
÷ Գլ. Ժ. 42. Ղուկ. Թ. 48.
ŀ Մարկ. Թ. 42. Ղուկ. ԺԷ. 1. 2.
ʅ Ղուկ. ԺԷ. 1. Ա Կորնթ. ԺԱ. 19.
ŀ Գլ. ԻԶ. 24.
ɛ Գլ. Ե. 29. 30. Մարկ. Թ. 42-45.

մտանել ՚ի կեանս, քան երկուս
աչս ունել՝ եւ անկանել ՚ի գեհենն
հրոյն։
10 Զգոյշ լերուք՝ մի արհամարհի-
ցէք զմի ՚ի փոքրկանցս յայսցանէ.
ասեմ ձեզ, զի հրեշտակք նոցա
յերկինս հանապազ տեսանեն զե-
րեսս Հօր իմոյ՝ որ յերկինս է։
11 Զի եկն Որդի մարդոյ կեցու-
ցանել զկորուսեալն։
12 Զինչ թուի ձեզ. եթէ լինիցի
մարդոյ հարիւր ոչխար՝ եւ մոլո-
րիցի մի ՚ի նոցանէ, ոչ թողուցու-
զիննսուն եւ զինն ոչխարսն ՚ի լե-
րինս, եւ երթայցէ խնդրիցէ զմո-
լորեալն։
13 Եւ եթէ լինիցի գտանել զնա.
ամէն ասեմ ձեզ, զի ուրախ լինի
՚ի վերայ նորա առաւել՝ քան ՚ի վե-
րայ իննսուն եւ իննոյն, որ չի-
ցեն մոլորեալ։
14 Այսպէս ոչ են կամք առաջի
Հօր իմոյ որ յերկինս է՝ եթէ կո-
րիցէ մի ՚ի փոքրկանցս յայսցանէ։
15 Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո,
Երթ յանդիմանեա զնա՝ յորժամ դու
եւ նա միայն իցէք. եթէ լուիցէ
քեզ, շահեցար զեղբայր քո։

16 Ապա թէ ոչ լուիցէ քեզ, առ
ընդ քեզ միւս եւս՝ կամ երկուս.
զի ՚ի բերանոյ երկուց եւ երից վը-
կայից հաստատեսցի ամենայն բան։

17 Իսկ եթէ նոցա ոչ լուիցէ, ա-
սասջիր յեկեղեցւոջ. ապա թէ եւ
եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ
իբրեւ զհեթանոսն եւ զմաքսաւոր։

18 Ամէն ասեմ ձեզ. Զոր կապի-
ցէք յերկրի՝ եղիցի կապեալ յեր-

աչքանի մտնես կեանքը, քան թէ
երկու աչք ունենաս՝ եւ գեհենի
կրակին ընկնիս։
10 Զգոյշ կացէք՝ որ այս փոքրիկնե-
րիցս մէկը չանարգէք. ասում եմ
ձեզ՝ որ նորանց բ հրեշտակներն եր-
կնքումը միշտ իմ Հօրս գ երեսը տես-
նում են՝ որ երկնքումն է։
11 Պատճառն որ՝ Որդին մարդոյ ե-
կաւ՝ որ կորածին դ ազատէ։
12 Ի՞նչպէս է երեւում ձեզ՝ թէ
որ մին մարդ հարիւր ոչխար ու-
նենայ՝ եւ նորանցից մէկը մոլորուի,
նա չի՞ թողնիլ իննսուն եւ ինը ոչ-
խարը սարերումը, եւ գնալ այն
մոլորուածին ման գալ։
13 Եւ երբոր կը գտնէ նորան.
ճշմարիտ ասում եմ ձեզ, որ նորա
վերայ աւելի ուրախ կը լինի, քան
այն իննսուն եւ իննին վերայ, որ
չեն մոլորուած։
14 Այսպէս էլ իմ Հօրս՝ որ եր-
կնքումն է, չի կամենում, որ այս
փոքրիկներիցս մէկը կորչի։
15 Թէ որ քո եղբայրդ քեզ դէմ
մեղք զ անէ. գնա նորան յանդի-
մանէ՝ երբոր դու եւ նա մենակ լի-
նիք. թէ որ լսէ քեզ՝ քո եղբայ-
րդ է շահեցիր։
16 Բայց թէ որ չի լսէ քեզ, մին
կամ երկու ուրիշին էլ քեզ հետ
առ. ինչու որ՝ երկու կամ երեք վը-
կայի բերանով ամէն բան ը կը հաս-
տատուի։
17 Բայց թէ որ նորանց էլ չի լսէ,
եկեղեցուն ասա՝ ապա թէ որ ե-
կեղեցուն էլ չի լսէ, թող լինի քեզ
համար ինչպէս հեթանոս կամ թ մաք-
սաւոր։
18 Ճշմարիտ ասում եմ ձեզ, թէ
Այն որ երկրիս վերայ կը կապէք,

բ Սաղմ. ԼԴ. 7։ ԺԳ. 7։ Եբր. Ա. 14։
գ Եսթ. Ա. 14։ Ղու. Ա. 19։
դ Ղու. Թ. 56։ ԺԹ. 10։ Յովհ. Գ. 17։ ԺԲ. 47։
ե Ղու. ԺԵ. 4։
զ Ղեւ. ԺԹ. 17։ Ղու. ԺԷ. 3։
է Յակ. Ե. 20։ Ա. Պետ. Գ. 1։
ը Բ Օրին. ԺԷ. 6։ ԺԹ. 15։ Յովհ. Ը. 17։ Բ Կորնթ. ԺԳ. 1։ Եբր. Ժ. 28։
թ Հռովմ. ԺԶ. 17։ Ա Կորնթ. Ե. 9։ Բ Թես. Գ. 6. 14։ Բ Յովհ. 10։

կինս, եւ զոր արձակիցէք յերկրի՝
եղիցի արձակեալ յերկինս:

19 Դարձեալ ̃ ասեմ ձեզ. Եթէ
երկու 'ի ձէնջ միաբանիցեն յերկրի
վասն ամենայն իրաց, զինչ եւ
խնդրեսցեն՝ եղիցի նոցա 'ի Հօրէ
իմմէ որ յերկինսն է:
20 Զի ուր իցեն երկու կամ երեք
ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես
'ի մէջ նոցա:
21 Յայնժամ մատուցեալ առ նա
Պետրոս՝ եւ ասէ. Տէր՝ քանիցս
անգամ եթէ մեղիցէ ինձ եղբայր
իմ, եւ թողից նմա. մինչեւ ցեօթն
անգամ:

22 Ասէ ցնա Յիսուս. Ո՛չ ասեմ
քեզ՝ թէ մինչեւ ցեօթն անգամ,
այլ մինչեւ յեօթանասնեկին‿եօթն:

23 Վասն այսորիկ նմանեցաւ ար-
քայութիւն երկնից՝ առն թագաւո-
րի, որ կամեցաւ համար առնել 'ի
մէջ ծառայից իւրոց:
24 Եւ իբրեւ սկսաւ առնել, մա-
տուցան առ նա պարտապան մի բիւր
քանքարոյ:
25 Իբրեւ ոչ ունէր հատուցանել,
հրամայեաց՝ զնա վաճառել տէրն
նորա, եւ զկին նորա՝ եւ զորդիս՝
եւ զամենայն որ ինչ եւ ունէր՝
եւ հատուցանել:
26 Եւ անկեալ ծառայն երկիրպա-
գանէր նմա՝ եւ ասէր. Երկայնամիտ
լեր առ իս՝ եւ զամենայն հատու-
ցից քեզ:

27 Գթացեալ տէր ծառային այ-
նորիկ՝ արձակեաց զնա, եւ զփոխն
եթող նմա:
28 Եւ ելեալ ծառայն այն եգիտ
զմի 'ի ծառայակցաց իւրոց, որ պար-
տէր նմա հարիւր դահեկան. եւ

երկնքումն էլ կապուած ɔ կը լինի. եւ
այն՝ որ երկրիս վերայ կարձակէք,
երկնքումն էլ արձակուած կը լինի:
19 Այս էլ ասումեմ ձեզ՝ թէ որ
ձեզանից երկու հոգի երկրի վերայ
միաբան ւ լինին ամէն բանի համար,
ինչ որ խնդրեն՝ ɩ կը լինի նորանց
իմ Հօրիցս՝ որ երկնքումն է:
20 Ինչու որ՝ որ տեղ երկու կամ
երեք հոգի իմ անուանովս ժողովուած
լինին՝ այնտեղ ես նորանց մէջն եմ:
21 Այն ժամանակը Պետրոս նորան
մօտ եկաւ եւ ասաց. Տէր թէ որ
իմ եղբայրս ինձ դէմ մեղք անէ՞,
քանի անգամ պէտք է թողութիւն
տամ նորան. մինչեւ եօթն ՛ ան-
գամ:
22 Յիսուս նորան ասաց. Չեմ ա-
սում քեզ՝ թէ մինչեւ եօթն անգամ,
բայց մինչեւ եօթանասուն անգամ
ɩ եօթը:
23 Սրա համար երկնքի արքայու-
թիւնը նմանվեցաւ մին թագաւոր
մարդոյ. որ ուզումէր իրեն ծառա-
ներիցը հաշիւ առնել:
24 Եւ երբոր սկսեց առնել, նո-
րան մօտ մին տասն հազար քան-
քարի պարտական բերին:
25 Երբոր չունէր վճարել, նորա
տէրը հրամանն տուաւ՝ որ նորան եւ
նորա կնիկը եւ նորա որդիքը եւ ա-
մէն ինչ որ ունէր ˀ ծախեն՝ եւ
պարտքը վճարէ:
26 Եւ ծառան երեսին վերայ ընկ-
նելով երկրպագութիւն էր անում
նորան եւ ասում. Երկայնամիտ կաց
ինձ համար. եւ ամէնը կը հատու-
ցանեմ քեզ:
27 Տէրը խղճաց այն ծառայի վե-
րայ՝ նորան արձակեց, եւ փոխն էլ
բաշխեց նորան:
28 Եւ երբոր այն ծառան դուրս
եկաւ՝ իրեն ընկեր ծառաներիցը մի-
նը գտաւ՝ որ իրեն հարիւր դահե-

ɔ Գլ. ԺԶ. 19. Յովհ. Ի. 23. Ա. Կորնթ. Ե. 4, 5.
ւ Գլ. Ե. 24. ɩ Ա. Յովհ. Գ. 22. Ե. 14.
՛ Ղու. ԺԷ. 4. ɩ Գլ. Զ. 14. Մարկ. ԺԱ. 25. Կող. Գ. 13.
ˀ Դ. Թագ. Դ. 1. Նեեմ. Ե. 8.

կալեալ զնա խեղդէր՝ եւ ասէր.
Հատո ինձ զոր պարտիս։

29 Արդ՝ անկեալ ծառայակիցն առ
ոտս նորա, աղաչէր զնա եւ ասէր.
Երկայնամիտ լեր առ իս՝ եւ հատու-
ցից քեզ։
30 Եւ նա ոչ կամէր. այլ չոգաւ
արկ զնա 'ի բանտ՝ մինչեւ հատուսցէ զպարտսն։
31 Իբրեւ տեսին ծառայակիցքն որ
ինչ եղեւն՝ տրտմեցան յոյժ, եւ ե-
կեալ ցուցին տեառն իւրեանց զա-
մենայն որ ինչ եղեւն։
32 Յայնժամ կոչեաց զնա տէրն
իւր եւ ասէ. Ծառայ չար՝ զամե-
նայն զպարտսն թողի քեզ՝ վասն զի
աղաչեցեր զիս։

33 Իսկ արդ՝ ոչ էր պարտ եւ քեզ
ողորմել ծառայակցին քում, որպէս
ես քեզ ողորմեցայ։
34 Եւ բարկացեալ տէրն նորա՝
մատնեաց զնա դահճաց, մինչեւ
հատուսցէ զամենայն զպարտսն։
35 Նոյնպէս եւ Հայր իմ որ յեր-
կինս է՝ արասցէ ձեզ, եթէ ոչ թո-
ղուցուք իւրաքանչիւր եղբօր իւրում
'ի սրտից ձերոց զյանցանս նոցա։

կան պարտական էր, եւ նորան
բռնեց՝ խեղդում էր եւ ասում. Վճա-
րէ ինձ ինչ որ պարտական ես։
29 Ապա այն ընկեր ծառան՝ նորա
ոտներն ընկաւ, նորան աղաչում էր
եւ ասում, Երկայնամիտ կաց ինձ
համար՝ եւ կը հատուցանեմ քեզ։
30 Եւ նա չէր կամենում. այլ գը-
նաց՝ նորան ձգեց բանտը մինչեւ
որ պարտքը վճարէ։
31 Երբոր նորա ընկեր ծառաները
տեսին ինչ որ եղաւ, շատ տրտմե-
ցան՝ եւ եկին ամէն ինչ որ եղաւ,
իրենց տիրոջը յայտնեցին։
32 Այն ժամանակին իրեն տէրը
կանչեց նորան եւ ասաց. Ո՛վ չար
ծառայ՝ ես ամէն պարտքդ բաշ-
խեցի քեզ. որովհետեւ դու աղա-
չեցիր ինձ։
33 Ուրեմն պէտք չէ՞ր քեզ էլ՝ որ
քո ընկեր ծառային ողորմէիր՝ ինչ-
պէս որ ես քեզ ողորմեցայ։
34 Եւ նորա տէրն բարկացաւ՝ եւ
նորան մատնեց դահիճների ձեռքը,
մինչեւ որ ամէն պարտքը վճարէ։
35 Այսպէս էլ իմ Հայրս որ երկն-
քումն է, ձեզ ւ կանէ, թէ որ դուք
ամէն մէկդ իրեն եղբօրը ձեր բոլոր
սրտիցը չթողէք նորանց յանցանքը։

## ԳԼ. ԺԹ

1 Եւ եղեւ՝ իբրեւ կատարեաց
Յիսուս զբանս զայսոսիկ, փոխեցաւ
'ի Գալիլեէ՝ եւ եկն 'ի սահմանս
Հրէաստանի յայնկոյս Յորդանանու։
2 Եւ գնացին զհետ նորա ժողո-
վուրդք բազումք, եւ բժշկեաց զն
նոսա անդ։
3 Եւ մատուցեալ առ նա փարի-
սեցիքն փորձէին զնա եւ ասէին.
Եթէ Արժան իցէ ումեք արձակել
զկին իւր ըստ ամենայն վնասու։

4 Պատասխանի ետ նոցա եւ ա-
սէ. Չիցէ՞ ընթերցեալ ձեր՝ թէ որ

1 Եւ եղաւ՝ երբոր Յիսուս այս
խօսքերս — վերջացրուց, Գալիլեա-
յիցը գնաց՝ եւ Հրէաստանի կող-
մերն եկաւ, Յորդանանի այն կողմը։
2 Եւ շատ ժողովուրդներ նորա
ետեւէն ‡ գնացին՝ եւ նորանց այն-
տեղ բժշկեց։
3 Եւ փարիսեցիքը նորա մօտ ե-
կին՝ նորան փորձում էին եւ ասում.
Թէ, Արժան է մին մարդս՝ որ իրեն
կնիկը արձակէ ամէն վնասի համար
որ լինի։
4 Նորանց պատասխան տուաւ եւ
ասաց. Դուք չէք կարդացել՝ թէ

ւ Առակ. ԻԱ. 13։ Գլ. Զ. 12։ Մարկ. ԺԱ. 26։ Յակ. Բ. 13։
— Մարկ. Ժ. 1։ Յովհ. Ժ. 40։
‡ Գլ. ԺԲ. 15։

հաստատողն 'ի սկզբանէ՝ արու եւ
էգ արար զնոսա, եւ ասէ ։
5 Վասն այսորիկ թողցէ այր ըզ
հայր եւ զմայր՝ եւ երթիցէ զհետ
կնոջ իւրոյ եւ եղիցին երկոքեան 'ի
մարմին մի ։
6 Ապա ուրեմն ոչ են երկու՝ այլ
մի մարմին. արդ՝ զոր Աստուած
զուգեաց՝ մարդ մի մեկնեսցէ ։
7 Ասեն ցնա. Իսկ Մովսէս ըն-
դէ՞ր պատուիրեաց տալ թուղթ
մեկնելոյ՝ եւ արձակել ։

8 Ասէ ցնոսա. Մովսէս վասն
խստասրտութեան ձերոյ հրամայեաց
ձեզ արձակել զկանայս ձեր. այլ 'ի
սկզբանէ ոչ եղեւ այնպէս ։

9 Բայց ասեմ ձեզ, զի Ամենայն
որ արձակեսցէ զկին իւր՝ եւ ոչ
վասն պոռնկութեան, եւ առնիցէ
այլ՝ շնայ, եւ որ զարձակեալն առ-
նիցէ՝ շնայ ։

10 Ասեն ցնա աշակերտքն իւր.
Եթէ այդպէս ինչ վնաս իցէ ընդ
այր եւ ընդ կին, լաւ է չամուսնա-
նալ ։
11 Եւ նա ասէ ցնոսա. Ո՛չ ամե-
նեքեան բաւական են այդմ բանի,
այլ որոց տուեալ է ։
12 Զի են ներքինիք՝ որ յորովայ-
նէ մօր իւրեանց ծնան այնպէս.
եւ են ներքինիք՝ որ 'ի մարդկանէ
եղեն ներքինիք. եւ են ներքինիք՝
որ զանձինս իւրեանց արարին ներ-
քինիս վասն արքայութեան երկնից.
որ կարօղն է առնուլ՝ առցէ ։

13 Յայնժամ մատուցան առ նա
մանկունս, զի ձեռն դիցէ 'ի վերայ

նա որ սկզբիցն ‡ ստեղծեց՝ նորանց
արու եւ էգ արաւ, եւ ասաց.
5 Սորա համար մարդն իւրն հայրը
եւ մայրը կը թողէ եւ իւրն կնկանը
հետ ⸗ կը գնայ՝ եւ երկուքը մին
մարմին ⁑ կը լինին ։
6 Ուրեմն երկու չեն, այլ մին
մարմին են. ապա նա որ Աստուած
միաւորեց, թող մարդը չը ջոկէ ։
7 Նորան ասացին. Ապա ինչու
Մովսէսը պատուիրեց մեզ՝ որ ար-
ձակման թուղթ տանք եւ արձա-
կենք ։
8 Նորանց ասաց. Մովսէս ձեր
քարասրտութեան համար պատուէր
տուաւ ձեզ՝ որ ձեր կնանքը ար-
ձակէք, բայց սկզբիցն այնպէս
չէր ։
9 Միայն թէ ասում եմ ձեզ՝ Ամէն
ով որ իւրն կինը † կարձակէ, եւ ոչ
թէ պոռնկութեանը պատճառաւ,
եւ ուրիշը կառնէ՝ նա շնութիւն է
գործում. եւ նա էլ՝ որ այն արձա-
կածը կառնէ, շնութիւն է գործում ։
10 Իւրն աշակերտները նորան ա-
սացին. Թէ որ մարդոյ եւ կնկանը
մէջ այդպիսի ինչ պմուսրութիւն
⁂ կայ, լաւ է չամուսնանալը ։
11 Եւ նա ասաց նորանց. Ամէնքը
կարող չեն այդ ⁕ բանին, բայց նո-
րանք՝ որ նորանց տրված է ։
12 Ինչու որ՝ կան ներքինիք՝ որ ի-
րենց մօր փորից այնպէս են ծըն-
վել. եւ կան ներքինիք՝ որ մարդ-
կանցից են եղած ներքինիք. եւ կան
‖ ներքինիք՝ որ իրենց անձը ներքի-
նի են արել երկնքի արքայութեան
համար. ով որ կարող է առնել՝ թող
առնէ ։
13 Այն ժամանակին երախաներ երե-
րին նորա մօտ՝ որ ձեռք դնէ նո-

‡ Ծննդ. Ա. 27 ։ Ե. 2 ։ Մաղ. Բ. 15 ։
⸗ Ծննդ. Բ. 24 ։ Մարկ. Ժ. 5—9 ։ Եփես. Ե. 31 ։
⁑ Ա Կորնթ. Զ. 16 ։ Է. 2 ։
※ Բ Օրէն. ԻԴ. 1 ։ Գլ. Ե. 31 ։
† Գլ. Ե. 32 ։ Մարկ. Ժ. 11 ։ Ղուկ. ԺԶ. 18 ։ Ա Կորնթ. Է. 10. 11 ։
⁂ Ըաւկ. ԻԸ. 19 ։
⁕ Ա Կորնթ. Է. 2. 7. 9. 17 ։
‖ Ա Կորնթ. Է. 32. 34 ։ Թ. 5. 15 ։
¶ Մարկ. Ժ. 13 ։ Ղուկ. ԺԸ. 15 ։

նոցա՝ եւ աղօթս արասցէ. եւ աշակերտքն նոցա սաստէին նոցա։

14 Ասէ Յիսուս. Թոյլ տուք մանկտւոյդ՝ եւ մի արգելուք զդոսա գալ առ իս, զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից։

15 Եւ եդեալ ձեռս ի վերայ նոցա՝ գնաց անտի։

16 Եւ ահա մատուցեալ մին առ նա՝ ասէ. Վարդապետ բարի՝ զինչ բարի գործեցից՝ զի ընդունիցիմ զկեանսն յաւիտենականս։

17 Եւ նա ասէ ցնա. Զի՞ հարցանես զինէ զբարւոյ, մի է բարի, եւ թէ կամիս ի կեանսն յաւիտենականս մտանել՝ պահեա զպատուիրանսն։

18 Ասէ ցնա՝ Զո՞րս. ասէ ցնա Յիսուս. Զմի սպանանիցես՝ եւ մի շնար՝ եւ մի գողանար եւ մի սուտ վկայեր։

19 Պատուեա զհայր քո եւ զմայր, եւ սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո։

20 Ասէ ցնա պատանին. Զայդ ամենայն պահեցի ի մանկութենէ իմէ. արդ՝ եւ եւս զի՞նչ պակաս իցէ իմ։

21 Ասէ ցնա Յիսուս. Եթէ կամիս կատարեալ լինել, երթ՝ վաճառեա զինչս քո՝ եւ տուր աղքատաց, եւ ունիցիս գանձս յերկինս, եւ եկ զկնի իմ։

22 Իբրեւ լուաւ պատանին զբանն, գնաց տրտմեալ, զի ունէր ստացուածս բազումս։

23 Ասէ Յիսուս ցաշակերտսն. Ամէն ասեմ ձեզ. զի դժուարաւ մտցէ մեծատունն յարքայութիւն երկնից։

բանից վերայ եւ աղօթք անէ. եւ նորա աշակերտները սաստումէին նորանց։

14 Յիսուս ասաց. Թոյլ տուէք այդ երախաներին՝ եւ դորանց մի արգելէք որ ինձ մօտ գան. ինչուոր՝ լ այդպիսիներին է երկնքի արքայութիւնը։

15 Եւ նորանց վերայ ձեռք դրաւ՝ եւ այնտեղից գնաց։

16 Եւ ահա մինը նորա մօտ խ եկաւ եւ ասաց. Բարի Վարդապետ՝ ես ինչ բարի Ե— գործեմ՝ որ յաւիտենական կեանքըն ծ ընդունիմ։

17 Նա էլ նորան ասաց. Ինչու ես ինձ բարոյ համար հարցնում. մին է բարի. Թէ որ կամենում ես յաւիտենական կեանքըն մանել, պատուիրանքները պահէ։

18 Նորան ասաց՝ Ո՞րը. Յիսուս նորան ասաց. Մի սպանանել, մի շնար, մի գողանար, մի կ սուտ վկայեր,

19 Պատուէ քո հայրըդ եւ քո հմայրըդ, եւ քո ընկերըդ՝ քո անձիդ պէս ձ սիրէ։

20 Այն պատանին նորան ասաց. Այդ ամէնըդ իմ երախայութենիցս պահեցի. ապա ինչ բանով եմ պակաս։

21 Յիսուս նորան ասաց. Թէ որ կամենում ես կատարեալ լինել, գնա քո ապրանքըդ ղ ծախէ՝ եւ աղքատներին տուր, եւ գանձ կունենաս երկնքումը եւ իմ ետեւէս եկ։

22 Երբոր պատանին այս բանս լսեց, տրտմեցաւ եւ գնաց. պատճառոր՝ շատ ապրանք ունէր։

23 Յիսուս աշակերտներին ասաց. ճշմարիտն ասում եմ ձեզ՝ որ հարուստ մարդը շատ դժուար կը մանէ երկնքի ճ արքայութիւնը։

լ Գլ. ԺԸ. 3.
խ Մարկ. Ժ. 17. Ղուկ. ԺԸ. 18.
ծ Ղուկ. Ժ. 25.
կ Ելից. Ի. 13. Բ Օրին. Ե. 17.
հ Գլ. ԺԵ. 4.
ձ Ղևտ. ԺԹ. 18. Գլ. ԻԲ. 39. Հռոմ. ԺԳ. 9. Գաղ. Ե. 14. Յակ. Բ. 8.
ղ Գլ. Զ. 20. Ղուկ. ԺԲ. 33. ԺԶ. 9. Գործ. Բ. 45. Դ. 34, 35. Ա Տիմ. Զ. 18, 19.
ճ Գլ. ԺԳ. 22. Մարկ. Ժ. 24. Ա Կորնթ. Ա. 26. Ա Տիմ. Զ. 9, 10.

24 Դարձեալ ասեմ ձեզ · Դիւրին է մալխոյ մտանել ընդ ծակ ասղան, քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանել ։

25 Իբրեւ լուան աշակերտքն՝ զարմացան յոյժ եւ ասեն · Իսկ ո՞ կարիցէ ապրել ։

26 Հայեցաւ 'ի նոսա Յիսուս՝ եւ ասէ · Առ 'ի մարդկանէ այդ անհնար է, այլ առ յԱստուծոյ ամենայն ինչ զօրաւոր ։

27 Յայնժամ պատասխանի ետ Պետրոս եւ ասէ ցնա · Ահաւասիկ մեք թողաք զամենայն · եւ եկաք զհետ քո, արդ զինչ լինիցի մեզ ։

28 Ասէ ցնոսա Յիսուս · Ամէն ասեմ ձեզ · զի դուք որ եկիք զհետ իմ, 'ի միւսանգամ գալստեանն՝ յորժամ նստցի Որդի մարդոյ յաթոռ փառաց իւրոց, նստջիք եւ դուք յերկոտասան աթոռ՝ դատել զերկոտասան ազգն Իսրայէլի ։

29 Եւ ամենայն որ ոք եթող ըզտուն՝ կամ զեղբարս կամ զքորս կամ զհայր կամ զմայր՝ կամ զկին կամ զորդիս՝ կամ զագարակս վասն անուան իմոյ, հարիւրապատիկ առցէ՝ եւ զկեանսն յաւիտենականս ժառանգեսցէ ։

30 Բազումք եղիցին առաջինք յետինք՝ եւ յետինք առաջինք ։

24 Դարձեալ ասումեմ ձեզ · Աւելի հեշտ է՝ որ ուղտն ասեղի ծակիցն անցնի՝ քան թէ հարուստն երկնքի արքայութիւնը մանէ ։

25 Աշակերտանքն երբոր լսեցին, շատ զարմացան եւ ասացին · Ապա ո՞վ կարէ ապրել ։

26 Յիսուս նորանց մտիկ տալով եւ ասաց · Այդ բանը մարդկանց կողմանէ անկարելի է, բայց Աստուծոյ կողմանէ՝ ամէն բան կարելի մ է ։

27 Այն ժամանակը Պետրոս պատասխան տուաւ եւ ասաց նորան · Ահա մենք ամէն բան թողինք եւ քո ետեւէդ ն եկինք · ապա ինչ պիտի լինի մեզ ։

28 Յիսուս նորանց ասաց · Ճշմարիտ ասումեմ ձեզ՝ թէ դուք որ իմ ետեւէս եկիք, իմ նորէն գալոյ ժամանակումս երբոր Որդին մարդոյ իրեն փառաց աթոռի վերայ կը նստի, դուք էլ տասներկու աթոռի վերայ շ կը 'նստիք՝ եւ Իսրայէլի տասներկու ցեղին կը դատէք ։

29 Եւ ամէն մի որ թողեց տունը՝ կամ եղբայրքը՝ կամ քոյրերը՝ կամ հայրը կամ մայրը կամ կինը կամ որդիքը կամ արտերը իմ անուանս ո համար, հարիւրապատիկ կառնէ՝ եւ յաւիտենական կեանքը կը ժառանգէ ։

30 Շատ առաջինները յետինք կը լինին՝ եւ յետինները չ առաջինք ։

## ԳԼ. Ի

1 Քանզի նման է արքայութիւն երկնից առն տանուտեառն, որ ել ընդ առաւօտս 'ի վարձու ունել մշակս յայգի իւր ։

2 Եւ արկ վարձս մշակացն ա-

1 Պատճառն որ՝ երկնքի արքայութիւնը նման է մին տանուտէր մարդոյ՝ որ առաւօտանց դուրս եկաւ՝ իրեն այգոյ համար մշակներ բռնել ։

2 Եւ այն մշակներին՝ օրը մին

մ Ծննդ. ԺԸ. 14 ։ Յոբ. ԽԲ. 2 ։ Երեմ. ԼԲ. 17 ։ Զաք. Ը. 6 ։ Մարկ. Ժ. 27 ։ Ղուկ. Ա. 37 ։ ԺԸ. 27 ։

յ Մարկ. Ժ. 28 ։ Ղուկ. ԺԸ. 28 ։

ն Բ Օրին. ԼԳ. 9 ։ Գլ. Դ. 20 ։ Ղուկ. Ե. 11 ։

շ Գլ. Ի. 21 ։ Ղուկ. ԻԲ. 28, 29 ։ 30 ։ Ա Կորնթ. Զ. 2, 3 ։ Յայտ. Բ. 26 ։

ո Մարկ. Ժ. 29. 30 ։ Ղուկ. ԺԸ. 29, 30 ։

չ Գլ. Ի. 16 ։ ԻԱ. 31, 32 ։ Մարկ. Ժ. 31 ։ Ղուկ. ԺԳ. 30 ։

—

աւուրն դահեկան, եւ առաքեաց զը-
նոսա յայգի իւր:
3 Եւ ելեալ զերրորդ ժամու՝ ե-
տես այլս զի կային դատարկ 'ի հը-
րապարակի:
4 Ասէ եւ ցնոսա. Երթայք եւ
դուք յայգի իմ, եւ որ ինչ արժան
իցէ՝ տաց ձեզ:
5 Գնացին եւ նոքա. եւ դար-
ձեալ ելեալ զվեց ժամու եւ զինն
ժամու՝ արար նոյնպէս:
6 Եւ զմետասաներորդ ժամու ե-
լեալ եգիտ այլս՝ զի կային դատարկ,
ասէ եւ ցնոսա. Ընդէ՞ր կայք աստ
զօրս ցերեկ դատարկ:
7 Ասեն ցնա. Զի ոչ ոք կալա-
ւ զմեզ 'ի վարձու. ասէ ցնոսա. Եր-
թայք եւ դուք յայգին, եւ որ ինչ
արժան է՝ առնուցուք:
8 Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ ասէ
տէր այգւոյն ցվերակացու իւր.
Կոչեա զմշակսն եւ տուր նոցա
վարձս՝ սկսեալ 'ի յետնոցն մինչեւ
ցառաջինսն:
9 Իբրեւ եկին որք զմետասանե-
րորդ ժամուն, առին մէն մի դա-
հեկան:
10 Եկեալ եւ առաջինքն՝ համա-
րէին թէ աւելի առնուցուն, եւ ա-
ռին մէն մի դահեկան եւ նոքա:
11 Իբրեւ առին, տրտնջէին զտա-
նուտեառնէն՝ եւ ասէին.
12 Թէ Դոքա յետինքդ մի ժամ
գործեցին, եւ հաւասարակիցս մեզ
արարեր զդոսա, որ զծանրութիւն
աւուրն բարձաք եւ զտօթ:
13 Նա պատասխանի ետ միում
'ի նոցանէ՝ եւ ասէ. Ընկեր՝ չզրկեմ
զքեզ. ոչ դահեկանի միոջ սակ
արկեր ընդ իս:
14 Ա՛ռ զքոյդ՝ եւ երթ, եթէ կա-
միմ յետնոյս տալ որպէս եւ քեզ:
15 Եթէ չիցէ՞ ինձ իշխանութիւն

դահեկանի խօսեց, եւ նորանց ու-
ղարկեց իւրեն այգին:
3 Եւ երեք ժամին դուրս եկաւ՝
ուրիշներ էլ տեսաւ որ փողոցներին
մէջ պարապ կանգնել էին:
4 Նորանց էլ ասաց. Դուք էլ
գնացէք իմ այգին՝ եւ ինչ որ ար-
ժան է կը տամ ձեզ:
5 Նորանք էլ գնացին. եւ դար-
ձեալ վեց ժամին եւ ինը ժամին
դուրս եկաւ՝ եւ այնպէս արաւ:
6 Եւ տասնումէկ ժամին էլ դուրս
եկաւ՝ ուրիշներ գտաւ որ պարապ
կանգնել էին. նորանց ասաց. Ի՞ն-
չու էք այստեղ բոլոր ցերեկս պա-
րապ կանգնել:
7 Նորան ասացին. Նորա համար որ՝
ոչ ով մեզ բանի չի բռնեց. նորանց
ասաց. Դուք էլ գնացէք իմ այգին,
եւ ինչ որ արժան է՝ կառնէք:
8 Եւ երբոր իրիկուն էղաւ, այգոյ
տէրն իւրեն տան վերակացուին ա-
սաց. Մշակներին կանչէ եւ նորանց
վարձքը տուր՝ յետիններիցն սկսած
մինչեւ առաջինները:
9 Երբոր նորանք եկին՝ որ տաս-
նումէկ ժամին էին, ամէն մէկը
մին դահեկան առին:
10 Առաջիններն էլ եկին՝ եւ կար-
ծումէին թէ աւելի կառնեն եւ նո-
րանք էլ ամէն մէկը մին դահեկան
առին:
11 Երբոր առին, տան տիրոջիցը
տրտնջումէին եւ ասում.
12 Թէ, Այդ յետիններդ մին ժամ
աշխատեցին, եւ դորանց մեզ հետ
հաւասար արիր, որ օրի ծանրու-
թիւնն ու տաքութիւնը քաշեցինք:
13 Նա նորանցից մէկին պատաս-
խան տուաւ եւ ասաց. Ո՛վ ընկեր՝
չեմ զրկում քեզ. չէ՞ որ դու ինձ
հետ մին դահեկան ես խօսացել:
14 Քուկդ առ եւ գնա. ես ու-
զումեմ որ այս յետիններին տամ
ինչպէս քեզ:
15 Միթէ ես իշխանութիւն = չու-

= Հռովմ. Թ. 21.

յինս առնել զինչ եւ կամիմ. կամ թէ ակն քո չար է, զի ես առատ եմ։

16 Այսպէս եղիցին յետինք առաջինք՝ եւ առաջինք յետինք. զի բազումք են կոչեցեալք, եւ սակաւք են ընտրեալք։

17 Իբրեւ ելանէր Յիսուս յԵրուսաղէմ, առ զերկոտասանսն առանձինն, եւ ՚ի ճանապարհին ասէ ցնոսա։

18 Ահաւասիկ ելանեմք յԵրուսաղէմ. եւ Որդի մարդոյ մատնեսցի քահանայապետիցն՝ եւ դպրաց. եւ դատապարտեսցեն զնա ՚ի մահ։

19 Եւ մատնեսցեն զնա հեթանոսաց՝ այպանել եւ հարկանել եւ ՚ի խաչ հանել, եւ յերիր աւուր յարիցէ։

20 Յայնժամ մատեաւ առ նա մայր որդւոցն Զեբեդեայ որդւովքն իւրովք հանդերձ. երկիրպագանէր՝ եւ խնդրէր ինչ ՚ի նմանէ։

21 Եւ նա ասէ ցնա. Զի՞նչ կամիս. ասէ ցնա. Ասա զի նստցին սոքա երկու որդիքս իմ, մի ընդ աջմէ քումմէ՝ եւ մի ընդ ահեկէ յարքայութեան քում։

22 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. Ո՛չ գիտէք զինչ խնդրէք. կարէ՞ք ըմպել զբաժակն՝ զոր ես ըմպելոց եմ, կամ զմկրտութիւնն զոր ես մկրտելոց եմ՝ մկրտել. ասեն ցնա. Կարող եմք։

23 Ասէ ցնոսա Յիսուս. Զբաժակն իմ ըմպիցէք, եւ զմկրտութիւնն զոր ես մկրտելոց եմ՝ մկրտիցիք,

նիմ իմ ապրանքիս վրայ՝ որ ինչ որ ուզեմ ընեմ. կամ թէ քու աչքդ չար է՝ որ ես առատաձեռն եմ։

16 Այսպէս յետիններն առաջինք է կը լինին, եւ առաջիններն յետինք. ինչու որ՝ շատ են ֊ կանչուած, բայց քիչ են ընտրուած։

17 Երբոր Յիսուս պիտի ելնէր ի Երուսաղէմ, տասներկուքին առանձին իրեն հետ առաւ՝ եւ ճանապարհումն ասաց նորանց.

18 Ահա վեր ենք ելլում Երուսաղէմ՝ եւ Որդին մարդոյ ւ կը մատնուի քահանայապետներին եւ կարգացողներին ձեռքը, եւ մահով կը դատապարտեն նորան։

19 Եւ նորան կը մատնեն հեթանոսներին ի ձեռքը՝ որ նորան խաղատակեն եւ ծեծեն եւ խաչ հանեն, եւ երեք օրումն յարութիւն կառնէ։

20 Այն ժամանակը Զեբեդեանց որդոց մայրը իրեն որդոցն հետ նորան մօտ ը եկաւ երկրպագութիւն էր անում, եւ նորանից մին բան խնդրում։

21 Նա էլ ասաց նորան. Ի՞նչ ես խնդրում. նորան ասաց. Ասա՛ որ այս իմ երկու որդիքս մինը քո աջ կողմդ՝ եւ մինը ձախ կողմդ նստին քո ժ արքայութեանդ։

22 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց. Չէք գիտում՝ թէ ինչ էք խնդրում. կարօղ էք դուք այն բաժակը ի խմել՝ որ ես պիտի խմեմ. կամ այն ւ մկրտութեամբ մկրտուիլ՝ որ ես պիտի մկրտուիմ. նորանք ասացին. Կարող ենք։

23 Յիսուս նորանց ասաց. Իմ է բաժակս կը խմէք, եւ այն մկրտութեամբն որ ես պիտի մկրտուիմ՝ կը

ճ Բ Օրին. ԺԵ. 9։ Առակ. ԻԳ. 6։ Գլ. Զ. 23։
ֆ Գլ. ԺԹ. 30։
֊ Գլ. ԻԲ. 14։
Ի Մարկ. Ժ. 32։ Ղուկ. ԺԸ. 31։ Յովհ. ԺԲ. 12։
ւ Գլ. ԺԶ. 21։
ի Գլ. ԻԷ. 2. Մարկ. ԺԵ. 1. 16. Ղուկ. ԻԳ. 1. Յովհ. ԺԸ. 28, ԺԹ. Գործ. Գ. 13։
ը Մարկ. Ժ. 35։
թ Գլ. Դ. 21։
ժ Գլ. ԺԹ. 28։
ի Գլ. ԻԶ. 39. 42։ Մարկ. ԺԴ. 36։ Ղուկ. ԻԲ. 42։ Յովհ. ԺԸ. 11։
լ Ղուկ. ԺԲ. 50։
խ Գործ. ԺԲ. 2։ Հռովմ. Ը. 17։ Բ Կորնթ. Ա. 7։ Յայտ. Ա. 9։

բայց նստուցանել ընդ աջմէ եւ ընդ
ահեկէ իմմէ՝ ոչ է իմ տալ, այլ
որոց պատրաստեալ է ՚ի Հօրէ իմմէ։
24 Եւ լուեալ տասանցն, բարկա-
ցան ՚ի վերայ երկուցն եղբարցն։
25 Յիսուս կոչեաց զնոսա առ ին-
քըն՝ եւ ասէ. Գիտէք՝ զի իշխանք
ազգաց տիրեն նոցա, եւ մեծա-
մեծքն իշխեն նոցա։
26 Ոչ այնպէս իցէ եւ ՚ի ձերում
միջի. այլ որ կամիցի ՚ի ձէնջ մեծ
լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ։
27 Եւ որ կամիցի ՚ի ձէնջ առա-
ջին լինել՝ եղիցի ձեր ծառայ։
28 Որպէս Որդի մարդոյ ոչ եկն
պաշտօն առնուլ՝ այլ պաշտել. եւ
տալ զանձն իւր փրկանս փոխանակ
բազմաց։
29 Եւ յելանելն նոցա յԵրիքովէ,
գնացին զհետ նորա ժողովուրդք
բազումք,
30 Եւ ահա կոյրք երկու նստէին
առ ճանապարհաւն. իբրեւ լուան
թէ Յիսուս անցանէ՝ աղաղակեցին
եւ ասեն. Ողորմեա՛ց մեզ Յիսուս
որդի Դաւթի։
31 Եւ ամբոխն սաստեաց նոցա՝
զի լռեսցեն. եւ նոքա եւս առա-
ւել աղաղակէին եւ ասէին, Տէր՝
ողորմեա՛ց մեզ որդի Դաւթի։
32 Զանգի առ Յիսուս, կոչեաց
զնոսա եւ ասէ. Զի՞նչ կամիք, զի
արարից ձեզ։
33 Ասեն ցնա. Տէր՝ զի բացցին
աչք մեր։

մկրտուիք. բայց՝ իմ աջ եւ ձախ
կողմն նստացնելն՝ իմս չէ որ տամ.
բայց միայն նրանց որ իմ Հօրիցս
պատրաստած ծ է։
24 Եւ այն տասնները երբոր կ լսե-
ցին, բարկացան այն երկու եղբարց
վերայ։
25 Յիսուս նրանց կանչեց իրեն
մօտ եւ ասաց. Գիտումէք՝ որ ազ-
գերին իշխանները նրանց վերայ
տիրապետութիւն են անում, եւ
մեծամեծները նրանց վերայ իշխա-
նութիւն են անում։
26 Այնպէս չպիտի լինի ձեր հ մի-
ջումը. բայց ձեզանից ով որ կամե-
նայ մեծ լինել, թող ձեր պաշտօնե-
այ ձ լինի։
27 Եւ ձեզանից ով որ կամենայ ա-
ռաջին ղ լինել, թող ձեր ծառայ լինի
28 ճ Ինչպէս որ՝ Որդին մարդոյ չե-
կաւ որ իրեն մ ծառայեն, բայց որ
ինքը յ ծառայէ. եւ շատերի ն տեղ
իրեն անձը փրկութեան գին շ տայ։
29 Եւ երբոր Երիքովիցը դուրս
ո ելին, շատ ժողովուրդներ գնա-
ցին նրանց ետեւէն։
30 Եւ ահա երկու կոյր ճանապար-
հին վերայ նստած չ էին. երբոր
լսեցին՝ թէ Յիսուսն անցանում է,
աղաղակեցին եւ ասացին. Յիսուս
որդի Դաւթի՝ մեզ ողորմեա։
31 Եւ ամբոխը սաստեց նրանց
որ ձայն չը հանեն. Իսկ նրանք էլ
աւելի աղաղակումէին եւ ասում.
Տէր՝ որդի Դաւթի. մեզ ողորմեա։
32 Յիսուս կանգնեց՝ կանչեց նը-
րանց եւ ասաց. Ի՞նչ էք ուզում որ
անեմ ձեզ։
33 Նրանք ասացին. Տէր՝ որ մեր
աչքերը բացուին։

ծ Գլ. ԻԵ. 34։
կ Մարկ. Ժ. 41։
Ղուկ. ԻԲ. 24, 25։
հ Ա Պետր. Ե. 3։
ձ Գլ. ԻԳ. 11։
Մարկ. Թ. 35։
Ժ. 43։
ղ Գլ. ԺԸ. 4։
ճ Յովհ. ԺԳ. 4։
մ Փիլիպ. Բ. 7։
յ Ղուկ. ԻԲ. 27։
Յովհ. ԺԳ. 14։
ն Գլ. ԻԶ. 28։ Հռ-
ովմ. Ե. 15. 19։
Եբր. Թ. 28։
շ Եսայ. ԾԳ. 10.
11։ Դան. Թ. 24.
26։ Յովհ. ԺԱ.
51, 52։ Ա Տիմ.
Բ. 6։ Տիտ. Բ.
14։ Ա Պետր. Ա.
19։
ո Մարկ. Ժ. 46։
Ղուկ. ԺԸ. 35։
չ Գլ. Թ. 27։
—

34 Եւ գթացեալ Յիսուս մերձեցաւ յաչս նոցա, եւ վաղվաղակի տեսին եւ գնացին զհետ նորա։

34 Եւ Յիսուս խղճաց. նորանց աչքերին ձեռնեցաւ՝ եւ շուտով տեսին. եւ նորա ետեւէն գնացին։

## ԳԼ. ԻԱ.

1 Իբրեւ մօտ եղեն յԵրուսաղէմ, եւ եկին ՚ի Բեթփագէ մերձ ՚ի լեառն Ձիթենեաց. յայնժամ Յիսուս առաքեաց երկուս յաշակերտացն իւրոց։

2 Եւ ասէ ցնոսա. Երթայք ՚ի գեօղդ՝ որ ապաքէն ձեր է, եւ անդէն գտանէք էշ կապեալ՝ եւ յաւանակ ընդ նմին. լուծէք ածէք ինձ։

3 Եւ եթէ ոք ասիցէ ինչ ձեզ, ասասջիք, եթէ Տեառն իւրեանց պիտոյ են. եւ վաղվաղակի առաքեսցէ զնոսա։

4 Բայց այս ամենայն եղեւ՝ զի լցցի բան մարգարէին՝ որ ասէ։

5 Ասացէք դստեր Սիովնի. ահա թագաւոր քո գայ քեզ հեզ, եւ հեծեալ յէշ եւ յաւանակի իշոյ։

6 Գնացին աշակերտքն, եւ արարին որպէս հրամայեաց նոցա Յիսուս։

7 Եւ ածին զէշն եւ զյաւանակն, եւ արկին զնոքօք ձորձս իւրեանց. եւ նստաւ ՚ի վերայ նոցա։

8 Եւ բազում ժողովուրդք տարածեցին զհանդերձս իւրեանց ՚ի ճանապարհին, եւ այլք հատանէին ոստս ՚ի ծառոց՝ եւ տարածանէին ՚ի ճանապարհին։

9 Եւ ժողովուրդքն՝ որ առաջին եւ զհետ երթային՝ աղաղակէին եւ ասէին. Օրհնութիւն որդւոյ Դաւթի. օրհնեալ որ գայ յանուն Տեառն. օրհնութիւն ՚ի բարձունս։

1 Երբոր Երուսաղէմին ա մօտեցան՝ եւ Բեթփագէ եկան Ձիթենեաց բ սարին մօտ, այն ժամանակը Յիսուս իրեն աշակերտներէն երկուքը ղրկեց,

2 Եւ նորանց ասաց. Գնացէք այդ գիւղը՝ որ ձեր առաջին է, եւ այնտեղ մէկ կապած էշ կը գտնէք՝ եւ քուռակն էլ նորա հետ, նորան արձակեցէք բերէք ինձ մօտ։

3 Եւ թէ որ մէկ մարդ բան մը ասէ ձեզ. ասացէք թէ, Նորանք Տէրին պէտք են. եւ շուտով կուղարկէ նորանց։

4 Բայց այս ամէն բաները եղաւ՝ որ մարգարէի խօսքն կատարուի որ ասումէ։

5 Սիօնի գ աղջկանը ասացէք. ահա՝ քու թագաւորդ քեզ մօտ է գալիս. հեզահոգի՝ եւ էշին եւ իշի քուռակին հեծած։

6 Աշակերտները գնացին եւ դ արին՝ ինչպէս որ Յիսուս հրամայեց նորանց։

7 Եւ էշին ու քուռակը բերին՝ եւ իրենց շորերը նորանց վերայ ե ձըգեցին, եւ նորանց վերայ նստեց։

8 Եւ շատ ժողովուրդներ իրենց հագուստը ճանապարհի վերայ փռեցին. եւ ուրիշները ծառերից ճղներ էին կտրում եւ ճանապարհի վերայ զ փռում։

9 Եւ ժողովուրդներն որ առաջին եւ ետեւէն գնումէին, աղաղակումէին եւ ասում, Օրհնութիւն Որդոյն է Դաւթի. օրհնեալ է ը նա՝ որ գալիս է Աստուծոյ անունովը. օրհնութիւն ՚ի բարձունս։

ա Մարկ. ԺԱ. 1. Ղուկ. ԺԹ. 29.
բ Զաք. ԺԴ. 4.
գ Եսայ. ԿԲ. 11. Զաք. Թ. 9. Յովհ. ԺԲ. 15.
դ Մարկ. ԺԱ. 4.
ե դ. Թագ. Թ. 13.
զ Ղեւտ. ԻԳ. 40. Յովհ. ԺԲ. 13.
է Սաղ. ՃԺԷ. 24.
ը Սաղ. ՃԺԷ. 25. Գլ. ԻԳ. 39.

10 Եւ ՚ի մտանելն նորա յԵրու-
սաղէմ՝ դղրդեցաւ քաղաքն ամե-
նայն, եւ ասէ՝ Ո՞վ իցէ սա։
11 Եւ ժողովուրդքն ասէին. Սա
է՝ մարգարէն Յիսուս՝ որ ՚ի Նազա-
րեթէ Գալիլեացւոց։
12 Եւ եմուտ Յիսուս ՚ի տաճարն՝
եւ եհան արտաքս զամենեսեան, որ
վաճառէին եւ գնէին ՚ի տաճարի
անդ. եւ զսեղանս հատավաճառացն
կործանեաց՝ եւ զաթոռս աղաւնե-
վաճառացն։
13 Եւ ասէ ցնոսա. Գրեալ է՝ Տուն
իմ տուն աղօթից կոչեսցի. եւ դուք
արարէք զդա այրս աւազակաց։

14 Եւ մատեան առ նա կոյրք եւ
կաղք ՚ի տաճարին, եւ բժշկեաց
զնոսա։
15 Իբրեւ տեսին քահանայապետա-
քըն եւ դպիրք զսքանչելիսն զոր
արար, եւ զմանկունսն որ աղաղա-
կէին ՚ի տաճարին եւ ասէին, Ով-
սաննա, օրհնութիւն Որդւոյ Դաւ-
թի, բարկացան։
16 Եւ ասեն ցնա. Լսե՞ս զինչ ա-
սեն դոքա. ասէ ցնոսա Յիսուս.
Այո, չիցէ՞ ընթերցեալ ձեր՝ թէ
՚ի բերանոյ տղայոց եւ ստնդիեցաց
հաստատեցեր զօրհնութիւն։

17 Եւ թողեալ զնոսա ել արտա-
քոյ քաղաքին ՚ի Բեթանիա, եւ անդ
ագաւ։
18 Եւ ընդ այգն իբրեւ դարձաւ
անդրէն ՚ի քաղաքն քաղցեաւ։
19 Եւ տեսեալ թզենի մի ՚ի վե-
րայ ճանապարհին՝ եկն ՚ի նա, եւ
ոչ ինչ եգիտ ՚ի նմա՝ բայց միայն
տերեւ. եւ ասէ ցնա. Մի այսու-
հետեւ ՚ի քէն պտուղ եղիցի յաւի-

10 Եւ երբոր նա Երուսաղէմ Բ մը-
տաւ, բոլոր քաղաքն դղրդաց եւ
ասաց՝ Սա ո՞վ է։
11 Եւ ժողովուրդներն ասացին.
Սա Յիսուս Գ մարգարէն է՝ որ Գա-
լիլեայի Նազարեթիցն է։
12 Եւ Յիսուս մտաւ Դ տաճարն՝
եւ ամէնը որ տաճարին մէջ ծախում
եւ առնումէին, դուրս հանեց. եւ
ըստակ Ե փոխօղների տախտակները՝
եւ աղաւնի ծախօղների աթոռները
կործանեց։
13 Եւ ասաց նորանց. Գրված է՝
թէ, Իմ տունս աղօթքի Զ տուն
պէտք է կոչվի. եւ դուք աւազակ-
ների այրն էք Է արել դա։
14 Եւ տաճարին մէջ կուրեր եւ
կաղեր եկին նորան մօտ՝ եւ նորանց
բժշկեց։
15 Երբոր քահանայապետներն ու
կարդացօղներն այն հրաշքները տե-
սին որ արաւ, եւ երեխաներըն որ
տաճարի միջումն աղաղակումէին
եւ ասում. Ովսաննա, օրհնութիւն
Որդւոյ Դաւթի, բարկացան։
16 Եւ նորան ասացին. Լսո՞ւմես
թէ դորանք ինչ են ասում. Յիսուս
նորանց ասաց. Այո. դուք այն չէք
կարդացել՝ թէ տղաների եւ կա-
թնկերների բերանիցն օրհնութիւն
Ը հաստատեցիր։
17 Եւ նորանց թողեց՝ քաղաքիցը
դուրս գնաց դէպի Բեթանիա՝ եւ
այնտեղ Թ մնաց։
18 Եւ Ժ առաւօտանց երբոր նորէն
յետ դարձաւ քաղաքը, անօթեց։
19 Եւ ճանապարհին վերայ մին
թզի Ի ծառ տեսաւ՝ նորա մօտ ե-
կաւ եւ նորա վերայ բան չը գտաւ,
բայց միայն տերեւ. եւ նորան ա-
սաց. Սրանից ետեւ յաւիտեան քե-

Բ Մարկ. ԺԱ. 15. Ղու. ԺԹ. 45. Յովհ. Բ. 13. 15.
Գ Գլ. Բ. 23. Ղու. Է. 16. Յովհ. Զ. 14. Է. 40. Թ. 17.
Դ Մարկ. ԺԱ. 11. Ղուկ. ԺԹ. 45. Յովհ. Բ. 15.
Ե Բ Օրին. ԺԴ. 25.
Զ Եսայ. ԾԶ. 7.
Է Երեմ. Է. 11. Մարկ. ԺԱ. 17. Ղու. ԺԹ. 46.
Ը Սաղ. Ը. 2.
Թ Մարկ. ԺԱ. 11. Յովհ. ԺԱ. 18.
Ժ Մարկ. ԺԱ. 12.
Ի Մարկ. ԺԱ. 13.

տեան · եւ առժամայն չորացաւ թզենին ։

20 Իբրեւ տեսին աշակերտքն՝ զարմացան եւ ասեն, թէ Զիարդ վաղվաղակի ցամաքեցաւ թզենին ։

21 Պատասխանի ետ Յիսուս՝ եւ ասէ ցնոսա · Ամէն ասեմ ձեզ, եթէ ունիցիք հաւատս եւ ոչ երկմտիցէք՝ ոչ միայն թզենւոյդ առնիցէք, այլ թէ լերինդ ասիցէք, Բարձիր եւ անկիր ՚ի ծով, եղիցի ։

22 Եւ զամենայն ինչ զոր եւ խնդրիցէք յաղօթս հաւատովք՝ առնուցուք ։

23 Եւ իբրեւ եկն ՚ի տաճարն · մատեան առ նա մինչդեռ ուսուցանէր, քահանայապետքն եւ ծերք ժողովրդեանն՝ եւ ասեն · Որո՞վ իշխանութեամբ առնես զայդ · եւ ո՞վ ետ քեզ զիշխանութիւնդ զայդ ։

24 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա · Հարցից եւ ես զձեզ բան մի · զոր թէ ասիցէք ինձ, եւ ես ձեզ ասացից՝ որով իշխանութեամբ առնեմ զայս ։

25 Մկրտութիւնն Յովհաննու ուստի՞ էր, յերկնից թէ ՚ի մարդկանէ · եւ նոքա խորհէին ընդ միմեանս՝ եւ ասէին,

26 Եթէ ասեմք Յերկնից, ասէ ցմեզ · Իսկ ընդէ՞ր ոչ հաւատացիք նմա · եւ եթէ ասեմք ՚ի մարդկանէ, երկնչիմք ՚ի ժողովրդենէն · զի ամենեքին զՅովհաննէս իբրեւ ըզ մարգարէ ունէին ։

27 Պատասխանի ետուն Յիսուսի եւ ասեն · Ո՛չ գիտեմք · ասէ ցնոսա եւ նա · Եւ ոչ ես ասեմ ձեզ՝ որով իշխանութեամբ առնեմ զայս ։

զանկից էլ պտուղ չը լինի · եւ շուտով այն թըզի ծառը չորացաւ ։

20 Աշակերտները երբոր տեսին՝ ծ զարմացան եւ ասացին թէ Ի՞նչպէս շուտով թըզի ծառը չորացաւ ։

21 Յիսուս պատասխան տուաւ՝ եւ ասաց նոցանից · Ճշմարիտն ասում եմ ձեզ · թէ որ մ հաւատք ունենաք եւ յ չի երկմտէք, ոչ թէ միայն թըզի ծառին այդ կանէք, այլ թէ որ այդ սարին էլ ասէք՝ Վեր կաց եւ ծովն ն ընկիր, կը լինի ։

22 Եւ ամէն ինչ՝ որ աղօթքի մէջ հաւատքով շ խնդրէք, կառնէք ։

23 Եւ երբոր եկաւ ո տաճարը՝ դեռ քանի որ այնտեղ սովորեցնում էր, քահանայապետները ու ժողովրդի ծերերն նորա մօտ եկին եւ չ ասացին · Դու ինչ իշխանութենով ես անում դա · եւ ով տուաւ քեզ այդ իշխանութիւնդ ։

24 Յիսուս պատասխան տուաւ՝ եւ ասաց նոցանից · Ես էլ ձեզանից մին բան կը հարցնեմ · թէ որ նա ինձ ասէք, ես էլ ձեզ կասեմ՝ թէ ինչ իշխանութենով եմ անում սա ։

25 Յօհաննէսի մկրտութիւնը որ տեղից էր, երկնքից էր, թէ մարդկանցից · եւ նոքանք իրենց մէջ միտք էին անում եւ ասում,

26 Թէ որ ասենք՝ Երկնքից էր, կասէ մեզ թէ՝ Ապա ինչու չը հաւատացիք նորան · եւ թէ որ ասենք՝ Մարդկանցից, ժողովրդից վախենում ենք · ինչու որ՝ ամէնքը Յօհաննէսը մարգարէի տեղ էին պ ընդունած ։

27 Պատասխան տուին Յիսուսին եւ ասացին · Չենք գիտում · նա էլ նոցանից ասաց · Ես էլ չեմ ասիլ ձեզ՝ թէ ինչ իշխանութենով եմ անում սա ։

ծ Մարկ. ԺԱ. 20.
մ Գլ. ԺԷ. 19. Ղուկ. ԺԷ. 6.
յ Յակ. Ա. 6.
ն Ա Կորնթ. ԺԳ. 2.

շ Գլ. Է. 7. Մարկ. ԺԱ. 24. Ղուկ. ԺԱ. 9. Յովհ. Ե. 16. Ա Յովհ. Գ. 22. Ե. 14.

ո Մարկ. ԺԱ. 27. Ղուկ. Ի. 1.
չ Ելից. Բ. 14. Գործ. Դ. 7. Է. 27.

պ Գլ. ԺԴ. 5. Մարկ. Զ. 20. Ղուկ. Ի. 6.

28 Բայց զինչ թուի ձեզ․ առն միոջ էին երկու որդիք, եւ մատուցեալ առ առաջինն ասէ․ Որդեակ՝ երթ այսօր գործեա յայգւոջ։

29 Նա պատասխանի ետ եւ ասէ․ Երթամ Տէր, եւ ոչ չոգաւ։

30 Մատուցեալ եւ առ միւսն, եւ ասէ նոյնպէս․ Նա պատասխանի ետ եւ ասէ․ Ո՛չ կամիմ․ բայց յետոյ զղջացաւ՝ եւ չոգաւ յայգին։

31 Արդ՝ ո՞ յերկոցունց արար զկամս հօրն․ ասեն՝ Յետինն․ ասէ ցնոսա Յիսուս․ Ամէն ասեմ ձեզ, զի մաքսաւորք եւ պոռնիկք յառաջեսցեն քան զձեզ յարքայութիւն երկնից։

32 Զի եկն Յովհաննէս ճանապարհաւ արդարութեան՝ եւ ոչ հաւատացէք նմա․ եւ մաքսաւորք եւ պոռնիկք հաւատացին նմա, եւ դուք տեսէք՝ եւ ոչ զղջացարուք յետոյ հաւատալ նմա։

33 Այլ առակ լուարուք․ Այր մի էր տանուտէր՝ որ տնկեաց այգի եւ ցանկով պատեաց զնա, եւ փորեաց 'ի նմա հնձան, եւ շինեաց աշտարակ․ եւ ետ զնա մշակս, եւ գնաց 'ի տար աշխարհ։

34 Իբրեւ մերձեցաւ ժամանակ պտղոյ, առաքեաց զծառայս իւր առ մշակսն՝ առնուլ զպտուղս նորա։

35 Եւ կալեալ մշակացն զծառայս նորա, զոմն տանջեցին՝ զոմն սպանին՝ զոմն քարկոծեցին։

36 Դարձեալ առաքեաց այլ ծառայս բազումս քան զառաջինսն, եւ արարին նոցա նոյնպէս։

37 Յետոյ առաքեաց առ նոսա

28 Միայն թէ՝ ի՞նչպէս է երեւում ձեզ․ մին մարդ երկու որդի ունէր․ եւ եկաւ առաջինին ասաց․ Որդի՛ գնա այսօր այգումը բանէ արա։

29 Եւ նա պատասխան տուաւ եւ ասաց․ Կը գնամ աղէ․ եւ չը գնաց։

30 Այն միւսին մօտն էլ գնաց եւ այնպէս ասաց․ Նա պատասխան տուաւ եւ ասաց․ Չեմ կամենում․ բայց յետոյ զղջացաւ՝ եւ գնաց այգին։

31 Հիմիկ այս երկուսիցս որն արաւ իւրեն հօր կամքը․ ասացին՝ Յետինը։ Յիսուս նորանց ասաց․ ճշմարիտն ասում եմ ձեզ․ որ մաքսաւորներն ու Ղ պոռնիկները ձեզանից առաջ կը մտնեն երկնքի արքայութիւնը։

32 Ինչու որ՝ Յովհաննէս արդարութեան − ճանապարհովն եկաւ՝ եւ չը հաւատացիք նորան․ եւ - մաքսաւորներն ու պոռնիկները հաւատացին նորան․ եւ դուք տեսէք եւ չը զղջացիք՝ որ յետոյ հաւատայք նորան։

33 Ուրիշ առակ էլ լսեցէք․ Մին տանուտէր մարդ կար՝ որ այգի տնկեց եւ նորան պարսպով Ղ պատեց․ եւ նորան մէջ հնձան փորեց եւ աշտարակ շինեց․ եւ տուաւ նորան մշակներին, եւ գնաց հեռու + աշխարհքը։

34 Երբոր պտղի ժամանակը մօտեցաւ, իւրեն ծառաներըն ուղարկեց մշակներին մօտ՝ որ նորա պտուղները ր առնեն։

35 Եւ մշակները նորա ծառաները բռնեցին՝ մինը տանջեցին, միւսը սպանեցին, միւսն էլ ջ քարկոծեցին։

36 Դարձեալ ուղարկեց ուրիշ ծառաներ առաջիններիցը շատ՝ եւ նորանց էլ այնպէս արին։

37 Յետոյ իւրեն որդին նորանց մօտ

Ղ Ղու. Է. 29. 50. − Գղ. Գ. 1, ա. - Ղու. Գ. 12, 13. Ղ Սաղ. Ձ. 9. Երգ. Ը. 11. Եսայ. Ե. 1. Երեմ. Բ. 21. Մարկ. ԺԲ. 1. Ղու. Ի. 9. + Գղ. ԻԵ. 14. 15. ր Եբր. Ը. 11, 12. ջ Բ Մնաց. ԻԴ. 21. ԼԶ. 16. Նեեմ. Թ. 26. Գղ. Ե. 12. ԻԳ. 34. 37. Գործ. Է. 52. Ա Թես. Բ. 15. Եբր. ԺԱ. 36. 37.

զորդի իւր՝ եւ ասէ. Թերեւս ամա-
չեսցեն յորդւոյ աստի իմմէ։
38 Իսկ մշակքն իբրեւ տեսին զոր-
դին, ասեն ընդ միտս. Սա է ժա-
ռանգն, եկայք սպանցուք զսա, եւ
կալցուք զժառանգութիւն սորա։
39 Եւ առեալ հանին զնա արտա-
քոյ քան զայգին՝ եւ սպանին։
40 Արդ՝ յորժամ եկեսցէ տէր այ-
գւոյն, զինչ արասցէ մշակացն այ-
նոցիկ։
41 Ասեն զնա. Զչարսն չարաչար կո-
րուսցէ. եւ զայգին տացէ այլոց
մշակաց, որք տացեն նմա զպտուղս
'ի ժամու իւրեանց։
42 Ասէ ցնոսա Յիսուս. Չիցէ՞ եր-
բեք ընթերցեալ ձեր 'ի գիրս.
Զվէմն՝ զոր անարգեցին շինողքն,
նա եղեւ գլուխ անկեան. 'ի Տեառ-
նէ եղեւ այս, եւ է սքանչելի յաչս
մեր։
43 Վասն այսորիկ ասեմ ձեզ,
Զի բարձցի 'ի ձէնջ արքայութիւնն
Աստուծոյ, եւ տացի ազգի՝ որ առ-
նիցէ զպտուղս նորա։
44 Եւ որ անկցի 'ի վերայ վիմիս
այսորիկ՝ փշրեսցի, եւ յոյր վերայ
անկցի՝ հոսեսցէ զնա։
45 Իբրեւ լուան քահանայապետ-
քըն եւ դպիրք եւ փարիսեցիք զա-
ռակս նորա, գիտացին՝ թէ վասն
նոցա ասաց։
46 Եւ խնդրէին զնա ունել, բայց
երկեան 'ի ժողովրդոցն. քանզի

ուղարկեց եւ ըսաւ. Կը լինի որ այս
իմ որդւոյս ամաչեն։
38 Բայց մշակներն երբոր որդին
տեսան, իրենց մտքումն ասացին.
Սա է = ժառանգն. եկէք սորան
÷ սպանենք, եւ սորա ժառանգու-
թեանը տիրանանք։
39 Եւ բռնեցին + նորան. այգուցը
դուրս հանեցին եւ սպանեցին։
40 Արա երբոր այն այգոյ տէրը
գայ, ինչ կանէ այն մշակներին։
41 Նորան * ասացին. Այն չարերը
չար պատժով ‡ կը կորցնէ, եւ այ-
գին կը տայ ուրիշ = մշակների՝ որ
նորա պտուղները տան իրենց ժա-
մանակին։
42 Յիսուս նորանց ասաց. Բնաւ-
մին ժամանակ դուք չէք կարդացել
‡ գրքումը՝ թէ Այն քարն, որ շի-
նողներն անարգեցին, նա էլաւ ան-
կիւնի գլուխ. այս բանս Տէրիցն է-
լաւ՝ եւ մեր աչքերի առաջին զար-
մանալի է։
43 Սորա համար ասում եմ ձեզ. որ
Աստուծոյ արքայութիւնը ձեզանից
վեր ÷ կառնուի, եւ այն ազգին կը
տրուի, որ նորա պտուղները կը
բերէ։
44 Եւ ով որ այս ⁼ քարիս՟ վերայ
ընկնի՝ կը փշրուի. եւ ում վերայ
որ նա ընկնի, կը ջարդէ ɫ նորան։
45 Երբոր քահանայապետներն ու
կարդացողները եւ փարիսեցիքը նո-
րան առակները լսեցին, հասկացան՝
որ իրենց համար ասաց։
46 Եւ խնդրումէին որ բռնեն նո-
րան, բայց ժողովուրդներիցը վա-

— Սաղ. Բ. 8. Եբր. Ա. 2.
÷ Սաղ. Բ. 2. Գլ. ԻՋ. 3. Իե. 1. Յովհ. ԺԱ. 53. Գործ. Դ. 27.
* Գլ. ԻՋ. 50. Ճ. Մարկ. ԺԳ. 46. Ճ. Ղու. ԻԲ. 54. Ճ. Յովհ. ԺԸ. 12. Ճ. Գործ. Բ. 23.
o Ղու. Ի. 16.
‡ Ղու. ԻԱ. 24. Եբր. Բ. 2.
= Գործ. ԺԳ. 46. ԺԵ. 7. ԺԸ. 6. ԻԸ. 28. Հռովմ. Թ. Ժ. ԺԱ.
‡ Սաղ. ՃԺԸ. 22. Եսայ. ԻԸ. 16. Մարկ. ԺԲ. 10. Ղու. Ի. 17. Գործ. Դ. 11. Եփես. Բ. 20. Ա. Պետ. Բ. 6, 7.
‡ Գլ. Ը. 12.
⁼ Եսայ. Ը. 14. 15. Զաք. ԺԲ. 3. Ղու. Ի. 18. Հռովմ. Թ. 33. Ա. Պետ. Բ. 8.
ɫ Եսայ. Կ. 12. Դան. Բ. 44.

լորեւ զմարգարէ ունէին զնա ։

## ԳԼ. ԻԲ

1 Դարձեալ պատասխանի ետ Յիսուս, եւ ասէ ցնոսա առակօք ։

2 Նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի՝ որ արար հարսանիս որդւոյ իւրում ։

3 Եւ առաքեաց զծառայս իւր կոչել զհրաւիրեալսն ՚ի հարսանիսն. եւ ոչ կամէին գալ ։

4 Դարձեալ առաքեաց այլ ծառայս՝ եւ ասէ. Ասացէք հրաւիրելոցն. ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի. զուարակք իմ եւ պարարակք զենեալ են, եւ ամենայն ինչ պատրաստ է. եկայք ՚ի հարսանիսս ։

5 Եւ նոքա յուլացեալ գնացին՝ ոմն յագարակ իւր, եւ ոմն ՚ի վաճառ իւր ։

6 Եւ այլք կալան զծառայս նորա, թշնամանեցին, եւ սպանին ։

7 Իսկ թագաւորն իբրեւ լուաւ՝ բարկացաւ, եւ առաքեաց զզօրս իւր եւ սատակեաց զսպանողսն զայնոսիկ, եւ զքաղաքն նոցա այրեաց ։

8 Յայնժամ ասէ ցծառայս իւր. Հարսանիքս պատրաստ են, եւ հրաւիրեալքն չէին արժանի ։

9 Արդ՝ երթայք յանցս ճանապարհաց, եւ զորս միանգամ գտանիցէք՝ կոչեցէք ՚ի հարսանիսս ։

10 Եւ ելեալ ծառայքն ՚ի ճանապարհս ժողովեցին զամենեսեան զորս եւ գտին՝ զչարս եւ զբարիս. եւ լցան հարսանիքն բազմականօք ։

11 Եւ մտեալ թագաւորն հայել

խեցան. ինչու որ՝ նորան մարգարէի տեղ էին ճանաչում ։

1 Դարձեալ Յիսուս պատասխան տուաւ՝ եւ նորանց ասաց = առակներով ։

2 Երկնքի արքայութիւնը նմանեցաւ թագաւոր մարդոյ, որ իրեն որդոյն հարսանիք արաւ,

3 Եւ իրեն ծառաներին ուղարկեց՝ որ հրաւիրած մարդիքը կանչեն հարսանիքը. եւ նորանք չը կամեցան գալ ։

4 Նորէն ուրիշ ծառաներ ուղարկեց եւ ասաց. Ասացէք հրաւիրածներին. ահա իմ սեղանս պատրաստեցի. իմ արջառներս եւ մասցուները մորթուած ‡ են, եւ ամէն բաներս պատրաստ է, եկէք հարսանիքը ։

5 Եւ նորանք հոգս չարին ու գընացին, մինն իրեն արտը, եւ միւսն իրեն առուտուրին ետեւէն ։

6 Եւ ուրիշները նորա ծառաները բռնեցին՝ թուքումուր տուին եւ սպանեցին ։

7 Բայց թագաւորն երբոր այս լըսեց, բարկացաւ՝ եւ իրեն զօրքն ‡ ուղարկեց՝ եւ այն սպանողները սատակեցուց, եւ նորանց քաղաքն այրեց ։

8 Այն ժամանակն իրեն ծառաներին ասաց. Հարսանիքս պատրաստ է՝ եւ հրաւիրածներն արժանի ÷ չէին.

9 Ուրեմն գնացէք դէպի ճանապարհների անցքն՝ եւ ով որ գտնէք, կանչեցէք հարսանիքս ։

10 Եւ ծառաները դուրս գնացին՝ ճանապարհներին վերայ ով որ գտին՝ չարը եւ բարին՝ ամէնը ‡ ժողովեցին՝ եւ հարսանիքը հարսանքաւորներով լցուաւ ։

11 Եւ թագաւորը մտաւ՝ որ սեղան

ւ Համար. 11 ։ Ղուկ. Է. 16 ։ Յովհ. Է. 40 ։

= Ղուկ. ԺԴ. 16 ։ Յայտ. ԺԹ. 7. 9 ։

‡ Առակ. Թ. 2 ։

‡ Դան. Թ. 26 ։ Ղուկ. ԺԹ. 27 ։

÷ Գլ. Ժ. 10. 13 ։ Գործ. ԺԳ. 46 ։

‡ Գլ. ԺԳ. 38. 47 ։

զբազմականօքն, ետես անդ այր մի՝
որ ոչ էր զգեցեալ հանդերձ հար-
սանեաց ։
12 Եւ ասէ ցնա. Ընկեր՝ զիա՞րդ
մտեր այսր, զի ոչ ունէիր հանդերձ
հարսանեաց. և նա պապանձե-
ցաւ ։
13 Յայնժամ ասէ թագաւորն ցպա-
շտօնեայսն. Կապեցէք զդորա զոտս
և զձեռս՝ և հանէք զդա ՚ի խա-
ւարն արտաքին, անդ եղիցի լալ
և կրճել ատամանց ։

14 Զի բազումք են կոչեցեալք,
և սակաւք են ընտրեալք ։
15 Յայնժամ գնացեալ փարիսե-
ցիքն, առին խորհուրդ զնմանէ՝ թէ
որպէս զնիցեն նմա որոգայթ բան-
իւք ։
16 Եւ առաքեն առ նա զաշա-
կերտսն իւրեանց Հերովդիանոսօքն
հանդերձ՝ և ասեն. Վարդապետ՝
գիտեմք զի ճշմարիտ ես, և զճա-
նապարհն Աստուծոյ ճշմարտու-
թեամբ ուսուցանես, և ոչ է քեզ
փոյթ զումեքէ, և ոչ հայիս յերեսս
մարդոյ ։
17 Արդ՝ ասա մեզ, զիա՞րդ թուի
քեզ. Պա՞րտ է հարկս տալ կայսեր՝
թէ ոչ ։
18 Գիտաց Յիսուս զխորամանկու-
թիւն նոցա, և ասէ. Զի՞ փորձէք
զիս կեղծաւորք ։
19 Ցուցէք ինձ զդահեկան հար-
կին. և նոքա մատուցին նմա դա-
հեկան մի ։
20 Եւ ասէ ցնոսա. Ո՞յր է պատ-
կերս այս՝ կամ գիր ։
21 Ասեն՝ կայսեր. յայնժամ ասէ
ցնոսա. Երթայք՝ տուք զկայսերն՝
կայսեր, և զԱստուծոյն՝ Աստու-
ծոյ ։
22 Իբրև լուան՝ զարմացան. և
թողին զնա և գնացին ։

Նստօղներին մտիկ անէ, և այնտեղ
մին մարդ տեսաւ՝ որ հարսանիքի
շոր չէր հագած ։
12 Եւ նորան ասաց. Ընկեր՝ ինչ-
պէս մտիր դու այստեղ՝ որ հարսա-
նիքի շոր չունէիր. և նա պա-
պանձվեցաւ ։
13 Այն ժամանակը թագաւորն ա-
սաց ծառաներին, Դորա ոտներըն
ու ձեռները կապեցէք. և դորան
դրսի խաւարն ե հանեցէք. այնտեղ
որ լաց՝ և ատամների կրճտելը
կը լինի ։
14 Ինչու որ՝ շատ են կանչըված և
քիչ են ը ընտրըված ։
15 Այն ժամանակը փարիսեցիքն
գնացին՝ նորա համար խորհուրդ թ ա-
րին. թէ ինչպէս խօսքերով որո-
գայթ գնեն նորան ։
16 Եւ իրենց աշակերտները Հերո-
դէսեաններին հետ նորա մօտ ուղար-
կեցին և ասացին. Վարդապետ՝
գիտումենք որ ճշմարիտ ես՝ և
Աստուծոյ ճանապարհը ճշմարտու-
թենով սովորցնումես, և ըսու մին
մարդուց հոգս չունիս, և մարդոյ
երեսպաշտութիւն չես անում ։
17 Ուրեմն ասա մեզ. ինչպէս է
երեւում քեզ. Կայսերին հարկ տալ
պէտք է, թէ չէ ։
18 Յիսուս նորանց չարութիւնըն
իմացաւ և ասաց. Ինչու էք փոր-
ձում ինձ կեղծաւորներ ։
19 Հարկի տալը ցոյց տուէք ինձ.
և նորանք մին դահեկան հանեցին
տուին նորան ։
20 Եւ նորանց ասաց. Այս պատ-
կերս կամ գիրս ումն է ։
21 Ասացին՝ կայսերին. այն ժամա-
նակին ասաց նորանց. Գնացէք՝ կայ-
սերինը կայսերին ժ տուէք, և Աս-
տուծունըն Աստուծուն ։
22 Երբոր լսեցին, զարմացան. և
նորան թողին և գնացին ։

ղ Բ Կորնթ. Ե. 3. Եփես. Դ. 24. Կող. Գ. 10. 12. Յայտ. Գ. 4. ԺԶ. 15. ԺԹ. 8.
ե Գլ. Ը. 12.
ը Գլ. Ի. 16.
թ Մարկ. ԺԲ. 13. Ղուկ. Ի. 20.
ժ Գլ. ԺԵ. 25. Հռովմ. ԺԳ. 7.

23 Յայնմ աւուր մատեան առ նա
սադուկեցիքն, որ ասեն՝ թէ Չիք
յարութիւն. հարցին զնա
24 Եւ ասեն. Վարդապետ՝ Մով-
սէս ասաց. Եթէ որ մեռցի անոր-
դի՝ արասցէ զկին նորա եղբայր
իւր, եւ յարուսցէ զաւակ եղբօր
իւրում։
25 Էին առ մեզ եղբարք եօթն.
առաջինն արար կին՝ եւ մեռաւ.
եւ զի ոչ ունէր զաւակ, եթող զկին
իւր եղբօր իւրում։
26 Նոյնպէս եւ երկրորդն, եւ
երրորդն, մինչեւ ցեօթներորդն։
27 Յետ ամենեցուն մեռաւ եւ կինն։
28 Արդ՝ 'ի յարութեան՝ ո՞յր յեօ-
թանցն եղիցի նա կին. զի ամենե-
քին կալան զնա կին։

29 Պատասխանի ետ նոցա Յիսուս
եւ ասէ. Մոլորեալ էք՝ ոչ գիտէք զգ
գիրս եւ ոչ զզօրութիւն Աստու-
ծոյ։
30 Զի 'ի յարութեան ոչ կանայս
առնեն՝ եւ ոչ արանց լինին, այլ են
իբրեւ զհրեշտակս յերկինս։

31 Բայց վասն յարութեան մեռե-
լոց չիցէ՞ ընթերցեալ ձեր զասա-
ցեալն ձեզ յԱստուծոյ։

32 Ես եմ Աստուած Աբրահամու,
Աստուած Իսահակայ եւ Աստուած
Յակոբայ. եւ չէ Աստուած՝ Աս-
տուած մեռելոց՝ այլ կենդանեաց։
33 Իբրեւ լուան ժողովուրդքն՝
զարմանային ընդ վարդապետու-
թիւն նորա։
34 Իսկ փարիսեցիքն իբրեւ լուան՝
եթէ պապանձեցոյց զսադուկեցիսն,
ժողովեցան 'ի միասին։
35 Եւ եհարց մի ոմն 'ի նոցանէ՝
զնա փորձելով, եւ ասէ։

23 Այն օրը ՛սադուկեցիքը նորա
է մօտ եկին՝ որ ասում էին՝ թէ Յա-
րութիւն ը չկայ. եւ նորան հարցրին
24 Եւ ասացին. Վարդապետ՝ Մո-
վսէսն թ ասաց, թէ որ մին մարդ ա-
ռանց զաւակի մեռնի, նորա կնոջը
թող իրեն եղբայրն առնէ, եւ իրեն
եղբօր համար զաւակ յարուցանէ։
25 Մեզ մօտ եօթն եղբարք կային.
նորանց առաջինը կին առաւ եւ մե-
ռաւ, եւ որովհետեւ զաւակ չունէր՝
իրեն կնոջը թողեց իրեն եղբօրը։
26 Այնպէս էլ երկրորդը եւ եր-
րորդը՝ մինչեւ եօթներորդը։
27 Ամենիցն ետեւ կինն էլ մեռաւ։
28 Ապա յարութեան ժամանակին
այն եօթնիցը նա որին պիտի լինի
կին. ինչու որ՝ ամէնքը նորան իրենց
կին առին։
29 Յիսուս նորանց պատասխան
տուաւ եւ ասաց. Մոլորվածներ՝
դուք ոչ գիրքերն էք ժ գիտում եւ
ոչ Աստուծոյ զօրութիւնը։
30 Ինչու որ՝ յարութեան ժամանա-
կին ոչ կին կառնեն. եւ ոչ մարդոյ
կը գնան. բայց երկնքումն հրեշ-
տակների նման ի են։
31 Միայն թէ մեռելների յարու-
թիւն առնելոյն համար դուք չէ՞ք
կարդացել այն Աստուածանից ձեզ
ասվածը.
32 Ես եմ Աբրահամի Աստուածը,
Իսահակայ Աստուածը, եւ Յակոբի
լ Աստուածը. եւ Աստուած մեռելների
Աստուած չէ, այլ կենդանիների։
33 Երբոր ժողովուրդները լսեցին,
զարմանումէին նորան վարդապե-
տութեանը խ վերայ։
34 Բայց փարիսեցիքն երբոր ծ լսե-
ցին, թէ սադուկեցիներըը պապան-
ձեցրաւ, միատեղ հաւաքվեցան։
35 Եւ նորանցից մինն փորձելով
հարցրաւ կ նորան, եւ ասաց.

է Մարկ. ԺԲ. 18. Ղուկ. Ի. 27.
ը Գործ. ԻԳ. 8.
թ Բ Օրէն. ԻԵ. 5.
ժ Յովհ. Ի. 9.
ի Ա Յովհ. Գ. 2.
լ Ելից. Գ. 6. 16. Մարկ. ԺԲ. 26. Ղուկ. Ի. 37. Գործ. Է. 32. Եբր. ԺԱ. 16.
խ Գլ. Է. 28.
ծ Մարկ. ԺԲ. 28.
կ Ղուկ. Ժ. 25.

36 Վարդապետ՝ ո՞ր պատուիրան
է մեծ յօրէնս։
37 Եւ Յիսուս ասէ ցնա. Սիրես-
ցես զՏէր Աստուած քո յամենայն
սրտէ քումմէ՝ եւ յամենայն անձնէ
քումմէ՝ եւ յամենայն մտաց քոց։
38 Այս է մեծն եւ առաջին պատ-
ուիրան։
39 Եւ երկրորդն նման սմին. Սի-
րեսցես զընկեր քո՝ իբրեւ զանձն քո։
40 Յայս երկուս պատուիրանս ա-
մենայն օրէնք եւ մարգարէք կախ-
եալ կան։
41 Եւ ՚ի ժողովել փարիսեցւոցն՝
եհարց ցնոսա Յիսուս՝ եւ ասէ.
42 Զինչ թուի ձեզ վասն Քրիս-
տոսի, ո՞յր որդի է. ասեն ցնա՝
Դաւթի։
43 Ասէ ցնոսա Յիսուս. Իսկ զի-
արդ Դաւիթ Հոգւովն կոչէ զնա
Տէր՝ եւ ասէ.
44 Ասաց Տէր ցՏէր իմ. Նիստ ընդ
աջմէ իմմէ՝ մինչեւ եդից զթշնամիս
քո պատուանդան ոտից քոց։
45 Իսկ եթէ Դաւիթ զնա Տէր կո-
չէ՝ զիա՞րդ որդի նորա իցէ։
46 Եւ ոչ ոք կարէր տալ նմա պա-
տասխանի բան մի, եւ ոչ իշխէր
ոք յայնմ օրէ հարցանել զնա եւ-
ոչինչ։

36 Վարդապետ՝ օրէնքումն ո՞ր
պատուիրանքն է մեծ։
37 Եւ Յիսուս նորան ասաց. Սի-
րէ՛ քո Տէր Աստուածդ քո ամէն
սրտովդ՝ քո ամէն անձովդ՝ եւ քո
ամէն [զ] մտքովդ։
38 Այս է մեծ եւ առաջին պատ-
ուիրանքը։
39 Եւ երկրորդը սորան նման. Քո
ընկերիդ քո անձիդ պէս [է] սիրէ։
40 Այս երկու պատուիրանքներիցս
ամէն օրէնքն ու մարգարէքն կախ-
ուած [ը] են։
41 Եւ երբոր փարիսեցիքն հա-
ւաքուած էին, Յիսուս նորանցից
հարցրուց եւ ասաց.
42 Ձեզ ի՞նչպէս է երեւում Քրիս-
տոսի համար՝ ո՞ւմ որդին է. նորան
ասացին. Դաւթի։
43 Յիսուս էլ նորանց ասաց. Ապա
ի՞նչպէս Դաւիթ Հոգովը նորան Տէր
է կոչում՝ եւ ասում.
44 Տէրն իմ Տէրին [ժ] ասաց. Թէ իմ
աջ կողմս նստիր, մինչեւ քո թշնա-
միներդ քո ոտացդ կոխելիքը դնեմ։
45 Ապա՝ թէ որ Դաւիթ նորան
Տէր է կոչում, ի՞նչպէս նորա որդին
կը լինի։
46 Եւ ոչ ով կարող չէր մին բան
պատասխան տալ [ի] նորան. եւ այն
օրիցն ետեւ՝ էլ մինը չէր [լ] համար-
ձակւում՝ որ նորանից բնաւ մին
բան հարցնէ։

## ԳԼ. ԻԳ

1 Յայնժամ խօսեցաւ Յիսուս ընդ
ժողովուրդսն՝ եւ ընդ աշակերտսն
իւր, եւ ասէ.
2 Յաթոռն Մովսիսի նստան դպ-
իրքն եւ փարիսեցիք.

1 Այն ժամանակը Յիսուս ժո-
ղովուրդներին եւ իւրեն աշակերտ-
ներին հետ խօսեց, եւ ասաց.
2 Մօսէսի աթոռին վերայ կարդա-
ցողներն ու փարիսեցիքը [խ] նստանցին

[զ] Բ Օրին. Զ. 5. Ժ. 12. Լ. 6. Ղուկ. Ժ. 27.
[է] Ղեւտ. ԺԹ. 18. Գլ. ԺԹ. 19. Մարկ. ԺԲ. 31. Ղուկ. Ժ. 27. Հռովմ. ԺԳ. 9. Գաղ. Ե. 14. Յակ. Բ. 8.
[ը] Գլ. Է. 12. Ա Տիմ. Ա. 5.
[թ] Մարկ. ԺԲ. 35. Ղուկ. Ի. 41.
[ժ] Սաղ. ՃԺ. 1. Գործ. Բ. 34. Ա Կորնթ. ԺԵ. 25. Եբր. Ա. 13. Ժ. 12, 13.
[ի] Ղուկ. ԺԴ. 6.
[լ] Մարկ. ԺԲ. 34. Ղուկ. Ի. 40.

—

[խ] Նեեմ. Ը. 4. 8. Մաղ. Բ. 7. Մարկ. ԺԲ. 38. Ղուկ. Ի. 45.

3 Զամենայն ինչ զոր ասիցեն
ձեզ՝ արարէք եւ պահեցէք. բայց
ըստ գործոյն նոցա մի՛ առնէք, զի
ասեն եւ ոչ առնեն։
4 Կապեն բեռինս ծանունս եւ
դժուարակիրս, եւ դնեն ՚ի վերայ
ուսոց մարդկան. եւ մատամբ իւր-
եանց ոչ կամին շարժել զնոսա։
5 Եւ զամենայն զգործս իւրեանց
առնեն ՚ի ցոյց մարդկան. լայնեն
զգրապանակս իւրեանց, եւ եր-
կայնեն զքղանցս հանդերձից իւր-
եանց։
6 Սիրեն զյառաջագահս ընթ-
րիս, եւ զնախաթոռս ՚ի ժողո-
վուրդս՝ եւ զողջոյնս ՚ի հրապա-
րակս։
7 Եւ կոչել ՚ի մարդկանէ՝ Ռաբ-
բի Ռաբբի։
8 Բայց դուք մի՛ զոք կոչէք Վար-
դապետ, զի մի է ձեր Ուսուցիչ.
եւ ամենեքին դուք եղբարք էք։
9 Եւ հայր մի՛ կոչէք ձեզ յերկ-
րի, զի ձեր մի է Հայր՝ որ յեր-
կինսն է։
10 Եւ մի՛ կոչիցիք ուսուցիչք, զի
Ուսուցիչ ձեր Քրիստոս է։
11 Եւ մեծն ՚ի ձէնջ եղիցի ձեր
սպասաւոր։
12 Որ բարձրացուցանէ զանձն՝
խոնարհեսցի, եւ որ խոնարհեցու-
ցանէ զանձն՝ բարձրասցի։
13 Վա՜յ ձեզ դպրաց եւ փարի-
սեցւոց կեղծաւորաց. զի փակէք
զարքայութիւն երկնից առաջի
մարդկան. դուք ոչ մտանէք,

3 Ամէն ինչ որ կասեն ձեզ՝ ա-
րէք եւ պահեցէք. բայց նորանց
գործքերին պէս մի՛ անէք. ինչու որ՝
ասումեն եւ չեն [բ] անում։
4 Ծանր եւ դժուար տանելի
[գ] բեռներ են կապում եւ մարդկանց
ուսերին վերայ դնում, եւ իրենց
մատովը չեն ուզում շարժել նորանց։
5 Եւ իրենց ամէն [դ] գործքերը
մարդկանց ցոյց տալոյ համար են
անում. իրենց [ե] գրապանակներն
լայնացնումեն. եւ իրենց շորերի
ծայրն երկայնացնում։
6 Սիրումեն նստելոյ ժամանակը ըն-
թրումին վերեւի տեղերը, ժողո-
վարաններին մէջ առաջին աթոռ-
ները, եւ փողոցներին մէջ բարեւ-
առնելը,
7 Եւ մարդկանցից Ռաբբի Ռաբ-
բի կոչվիլը։
8 Բայց դուք մինին Վարդապետ
[է] չը կանչէք. պատճառն որ ձեր Ու-
սուցիչը մինն է. եւ դուք ամէն-
քդ եղբարք էք։
9 Եւ երկրիս վերայ մինին ձեզ
հայր չը կանչէք. ինչու որ՝ ձեր Հայ-
րը մինն է՝ որ երկնքումն է։
10 Եւ դուք ուսուցիչ չը կանչը-
վիք. ինչու որ՝ ձեր Ուսուցիչը
Քրիստոսն է։
11 Եւ նա՝ որ ձեր միջումը մեծ
է, ձեզ ծառայ պիտի [թ] ըլնի։
12 Ով որ իրեն անձը կը բարձ-
րացընէ՝ [ժ] կը խոնարհվի. եւ նա որ
իրեն անձը կը խոնարհացընէ՝ կը
բարձրանայ։
13 Վա՜յ ձեզ կարգացողներ եւ
փարիսեցիներ [ի] կեղծաւորներ. որ
երկնքի արքայութիւնը մարդկանց
առաջին փակումէք. դուք չէք

բ Հռովմ. Բ. 19, 21.
գ Ղուկ. ԺԱ. 46. Գործ. ԺԵ. 10. Գաղ. Զ. 13.
դ Գլ. Զ. 1, 2. 5. 16.
ե Թւ. ԺԵ. 38. Բ Օրին. Զ. 8. ԻԲ. 12. Առակ. Գ. 3.
զ Մարկ. ԺԲ. 38, 39. Ղուկ. ԺԱ. 43. Ի. 46. Գ Յովհ. 9.
է Յակ. Գ. 1. Բ Կորնթ. Ա. 24. Ա Պետ. Ե. 3.
ը Մաղ. Ա. 6.
թ Գլ. Ի. 26, 27.
ժ Յոբ. ԻԲ. 29. Առակ. ԺԵ. 33. ԻԹ. 23. Ղուկ. ԺԴ. 11. ԺԸ. 14. Յակ. Դ. 6. Ա Պետ. Ե. 5.
ի Ղուկ. ԺԱ. 52.

եւ որոց մտանենն՝ չտայք թոյլ մտանել ։

14 Վայ ձեզ դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց . զի ուտէք ըզ տունս այրեաց՝ պատճառանօք երկարէք զաղօթս , վասն զի աւելի դատաստան ընդունիցիք ։

15 Վայ ձեզ դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց . զի յածէք ընդ ծով եւ ընդ ցամաք առնել եկամուտ մի . եւ յորժամ լինիցի , առնէք զնա որդի գեհենի կրկին եւս քան զձեզ ։

16 Վայ ձեզ առաջնորդք կոյրք , զի ասէք՝ Որ երդնու ՛ի տաճարն՝ չէ ինչ , բայց որ երդնու յոսկին որ ՛ի տաճարին է՝ արժան է ։

17 Մորոսք եւ կոյրք՝ զինչ մեծ է , ոսկին՝ եթէ տաճարն՝ որ սրբէ զոսկին ։

18 Եւ որ երդնու ՛ի սեղանն՝ չէ ինչ , բայց որ երդնու ՛ի պատարագն որ ՛ի վերայ նորա է՝ արժան է ։

19 Յիմարք եւ կոյրք՝ զինչ մեծ է , պատարագն , եթէ սեղանն՝ որ սրբէ զպատարագն ։

20 Իսկ արդ՝ որ երդնու ՛ի սեղանն , երդնու ՛ի նա՝ եւ յամենայն որ ՛ի վերայ նորա է ։

21 Եւ որ երդնու ՛ի տաճարն , երդնու ՛ի նա՝ եւ ՛ի բնակիչն նորա ։

22 Եւ որ երդնու յերկինս , երդնու յաթոռն Աստուծոյ՝ եւ յայն որ նստին ՛ի վերայ նորա ։

23 Վայ ձեզ դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց . զի տասանորդէք զանանուխ եւ զսամիթ եւ ըզ

մտնում՝ եւ նորանց որ մտնումեն՝ թոյլ չէք տալիս որ մտնեն ։

14 Վայ ձեզ կարդացողներ եւ փարիսեցիներ կեղծաւորներ . որ որբեւէրիների տներին ուտում էք՝ եւ պատճառներով երկար աղօթք էք անում նորա համար աւելի դատաստան կառնէք ։

15 Վայ ձեզ կարդացողներ եւ փարիսեցիներ կեղծաւորներ . որ ծով եւ ցամաք շուռ էք գալիս՝ որ մէն մարդ հաւատք բերէք . եւ երբոր կը լինի , նորան երկու տակ ձեզանից աւելի գեհենի որդի էք անում ։

16 Վայ ձեզ կոյր ե առաջնորդներ՝ որ ասում էք՝ թէ նա որ տաճարովն երդում ծ անէ , բան չէ . բայց նա որ ոսկովն երդում անէ որ տաճարի մէջն է , պարտական է ։

17 Անմիտներ եւ կոյրեր . որն է մեծ , ոսկին թէ տաճարն՝ որ ոսկուն կ սրբում է ։

18 Եւ նա որ սեղանովն երդում անէ՝ բան չէ . բայց նա որ նորա վերայ լինող պատարագովն երդում անէ , պարտական է ։

19 Յիմարներ եւ կոյրեր . որն է մեծ , պատարագը թէ հ սեղանն , որ պատարագին սրբում է ։

20 Ուրեմն ով որ սեղանովն երդում արաւ , նա նորանով՝ եւ այն ամէն բաներովն երդում արաւ՝ որ նորա վերայ են ։

21 Եւ նա որ տաճարովն երդում արաւ՝ նորանով եւ նորա մէջումը բնակողովն երդում ձ արաւ ։

22 Եւ նա որ երկնքովն երդում արաւ , Աստուծոյ աթոռովն երդում ղ արաւ , եւ նորանով էլ՝ որ նորա վերայ նստում է ։

23 Վայ ձեզ կարդացողներ եւ փարիսեցիներ կեղծաւորներ . որ անանուխին եւ սամիթին եւ չամանին

ւ Մարկ . ԺԲ . 40 . Ղուկ . Ի . 47 . ը Տիմ . Գ . 6 . Տիտ . Ա . 11 .
ե Գղ . ԺԵ . 14 . Համար . 24 .
ծ Գղ . Ե . 33 , 34 .
կ Եկց . Լ . 29 .
հ Եկց . ԻԹ . 37 .
ձ Գ Թագ . Ը . 13 . Բ Մնաց . Զ . 2 . Սաղ . ԻԶ . 8 . ՃԼԲ . 14 .
ղ Գղ . Ե . 34 . Սաղ . ԺԱ . 4 . Գործ . Է . 49 .

չամանն , եւ թողէք զծանր ծանր
օրինացն՝ զդատաստան եւ զողոր-
մութիւն եւ զհաւատս․ զայս ար-
ժան էր առնել՝ եւ զայն չթողուլ ։

24 Առաջնորդք կոյրք , որ զմժ-
ղուկս քամէք՝ եւ զուղտս կլանէք ։

25 Վայ ձեզ դպրաց եւ փարիսեց-
ւոց կեղծաւորաց․ զի սրբէք զար-
տաքին զբաժակին եւ զսկաւառա-
կին , եւ 'ի ներքոյ լի են յափշտա-
կութեամբ եւ անխառնութեամբ ։

26 Փարիսեցի կոյր՝ սրբեա նախ
զներքին բաժակին եւ զսկաւառա-
կին , զի լինիցի եւ արտաքինն նո-
ցա սուրբ ։

27 Վայ ձեզ դպրաց եւ փարիսեց-
ւոց կեղծաւորաց․ զի նման էք գե-
րեզմանաց բռելոց․ որ արտաքոյ
երեւին գեղեցիկք՝ եւ 'ի ներքոյ լի
են ոսկերօք մեռելոց եւ ամենայն
պղծութեամբ ։

28 Նոյնպէս եւ դուք արտաքոյ
երեւիք մարդկան արդարք , եւ 'ի
ներքոյ լի էք կեղծաւորութեամբ
եւ անօրէնութեամբ ։

29 Վայ ձեզ դպրաց եւ փարիսեց-
ւոց կեղծաւորաց․ զի շինէք զշի-
րիմս մարգարէից՝ եւ զարդարէք ըզ
գերեզմանս արդարոց ։

30 Եւ ասէք․ Եթէ էաք յաւուրս
հարցն մերոց , ոչ հաղորդէաք ար-
եան մարգարէիցն ։

31 Ապա ուրեմն վկայէք զանձանց՝
եթէ որդիք էք այնոցիկ՝ որ կոտո-
րէին զմարգարէսն ։

32 Եւ դուք լցէք զչափ հարցն
ձերոց ։

33 Օձք՝ ծնունդք իժից , զիարդ

---

տասանորդ էք [ե] տալիս , եւ թողու-
մէք օրէնքի ծանր ծանր [զ] բաները՝
դատաստանը , ողորմութիւնը եւ
հաւատքը․ սա պէտք էր անել՝ եւ
նա չթողնել ։

24 Կո՛յր առաջնորդներ․ որ մը-
ժեղները քամումէք , եւ ուղտերը
կուլ էք տալիս ։

25 Վայ ձեզ կարդացողներ եւ փա-
րիսեցիներ կեղծաւորներ․ որ [է] բա-
ժակը եւ սկուտեղը դրսեւանց
սրբումէք եւ ներսեւանց յափշ-
տակութենով եւ անկարգութենով
լիքն էք ։

26 Կո՛յր փարիսեցի՝ առաջ բաժա-
կի եւ սկուտեղի մէջը սրբիր , որ
նորանց դուրսն էլ սուրբ լինի ։

27 Վայ ձեզ կարդացողներ եւ փա-
րիսեցիներ կեղծաւորներ․ որ նման
էք ծեփած [ը] գերեզմաններին՝ որ
դրսեւանց գեղեցիկ են երեւում՝
եւ ներսեւանց մեռելների ոսկերքով
եւ ամէն պղծութենով լիքն են ։

28 Այնպէս էլ դուք դրսեւանց ար-
դար էք երեւում մարդկանց՝ եւ
ներսեւանց կեղծաւորութենով եւ
անօրէնութենով լիքն էք ։

29 Վայ ձեզ կարդացողներ եւ
փարիսեցիներ [թ] կեղծաւորներ․ որ
մարգարէների տապանները շինու-
մէք՝ եւ արդարների գերեզմանները
զարդարումէք ․

30 Եւ ասում , թէ որ մեր հարանց
օրերումը լինէինք , մենք մասնակից
չէինք լինել մարգարէների արիւնին ։

31 Ուրեմն դուք ձեզանից վկայու-
մէք , թէ նորանց որդիքն էք՝ որ
մարգարէներին [ժ] կոտորումէին ։

32 Եւ դուք ձեր հարանց չափը
լցրել [ի] էք ։

33 Օձեր՝ իժերի [լ] զաւակներ՝ ինչ-

---

[ե] Ղուկ․ ԺԱ․ 42 ։
[զ] Ա Թագ․ ԺԵ․ 22 ․ Ովսէ․ Զ․ 6 ։ Միք․ Զ․ 8 ։ Գլ․ Թ․ 13 ։ ԺԲ․ 7 ։
[է] Մարկ․ Է․ 4 ։ Ղուկ․ ԺԱ․ 39 ։
[ը] Ղուկ․ ԺԱ․ 44 ։ Գործ․ ԻԳ․ 3 ։
[թ] Ղուկ․ ԺԱ․ 47 ։
[ժ] Գործ․ Է․ 51 , 52 ։ Ա Թես․ Բ․ 15 ։
[ի] Ծննդ․ ԺԵ․ 16 ։ Ա Թես․ Բ․ 16 ։
[լ] Գլ․ Գ․ 7 ։ ԺԲ․ 34 ։

փախնուցուք՞ 'ի դատաստանէ գեհենին :

34 Վասն այդորիկ ահաւասիկ ես առաքեմ առ ձեզ մարգարէս եւ իմաստունս եւ դպիրս, եւ 'ի նոցանէ սպանանիցէք եւ 'ի խաչ հանիցէք, եւ 'ի նոցանէ տանջիցէք 'ի ժողովուրդս ձեր, եւ հալածիցէք Դ'ի քաղաքէ 'ի քաղաք :

35 Որպէս զի եկեսցէ 'ի վերայ ձեր ամենայն արիւն արդար հեղեալ յերկրի . յարենէն Աբելի արդարոյ մինչեւ ցարիւնն Զաքարիայ որդւոյ Բարաքեայ՝ զոր սպանէք ընդ մէջ տաճարին եւ սեղանոյ :

36 Ամէն ասեմ ձեզ . Եկեսցէ այն ամենայն 'ի վերայ ազգիս այսորիկ :

37 Երուսաղէմ, Երուսաղէմ . որ կոտորէիր զմարգարէսն՝ եւ քարկոծ առնէիր զառաքեալսն առ քեզ . քանիցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո՝ զոր օրինակ ժողովէ հաւ զձագս իւր ընդ թեւովք, եւ ոչ կամեցարուք :

38 Ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր աւերակ :

39 Բայց ասեմ ձեզ՝ թէ Ոչ եւս տեսանիցէք զիս յայսմ հետէ, մինչեւ ասիցէք, Օրհնեալ եկեալ յանուն Տեառն :

պէս կը փախչիք գեհեննի դատաստանիցը :

34 Դրա համար՝ ահա ես ձեզ մօտ մարգարէներ եւ իմաստուններ եւ կարգագօծներ Է կը ղրկեմ . եւ դուք նորանցից կըսպանէք —եւ խաչ կը հանէք՝ եւ նորանցից ձեր ժողովարաններին մէջ կը տանջէք՝ եւ քաղաքից քաղաք =կը հալածէք .

35 Որ այսպէս ձեզ վերայ գայ ամէն արդար Հարիւնը՝ որ երկրի վերայ թափուել է . արդար ÷ Աբելի արիւնից մինչեւ Բարաքիայի որդի Զաքարիայի ꝑ արիւնը, որ նորան տաճարի եւ սեղանի մէջ սպանեցիք:

36 Ճշմարիտ ասում եմ ձեզ . որ այն ամէնը կըգայ այս ազգիս վերայ:

37 Երուսաղէմ՝ Երուսաղէմ՝ որ մարգարէներին ∋ կոտորում էիր, եւ քեզ մօտ ուղարկուածներին —քարկոծում էիր . քանի անգամ կամեցայ քո երախաներդ ‡ ժողովել . ինչպէս որ հաւն իրեն ձագերը թեւերին տակն է + ժողովում, եւ դուք չկամեցաք :

38 Ահա ձեր տունն աւերուած կը թողնի ձեզ :

39 Բայց ասում եմ ձեզ . թէ, Հիմիկուց ետեւ էլ չէք տեսնիլ ինձ՝ մինչեւ որ ասէք . Օրհնեալ է Տէրի անունով * եկածը :

## ԳԼ. ԻԴ

1 Եւ ելեալ արտաքս Յիսուս 'ի տաճարէն գնայր . եւ մատեան աշակերտքն ցուցանել նմա զշինուածս տաճարին :

2 Եւ նա պատասխանի ետ եւ ասէ ցնոսա . Տեսանէ՞ք զայդ ամենայն, ամէն ասեմ ձեզ . Ո՛չ մնաս-

1 Եւ Յիսուս տաճարից դուրս եկաւ = գնում էր՝ եւ աշակերտները մօտ եկին՝ որ տաճարի շինուածքը ցոյց տան նորան :

2 Եւ նա պատասխան տուաւ՝ եւ ասաց նորանց . Տեսնում էք այդ ամէնը . Ճշմարիտ ասում եմ ձեզ .

Է Գլ. ԻԱ. 34, 35. Ղու. ԺԱ. 49. — Գործ. Ե. 40. Է. 58, 59. ԻԲ. 19. = Գլ. Ժ. 17. Բ Կորնթ. ԺԱ. 24, 25. Հ Ցայտ. ԺԸ. 24. ÷ Ծննդ. Դ. 8. Ա Յովհ. Գ. 12. ꝑ Բ Մնաց. ԻԴ. 20, 21. ∋] Ղու. ԺԳ. 34.

— Բ Մնաց. ԻԴ. 21. ‡ Բ Օրին. ԼԲ. 11, 12. + Սաղ. ԺԷ. 8. ՂԱ. 4. * Սաղ. ՃԺԸ. 26. Գլ. ԻԱ. 9.

—

= Մարկ. ԺԳ. 1. Ղու. ԻԱ. 5.

ցէ այդր քար ՚ի քարի վերայ՝ որ ոչ
քակտեսցի։
3 Եւ մինչդեռ նստէր ՚ի լերինն
Ձիթենեաց, մատեան առ նա աշակերտքն առանձինն եւ ասեն. Ասա՛
մեզ՝ Երբ լինիցի այդ, եւ կամ զի՞նչ
նշան իցէ քոյոյ գալստեանն եւ
վախճանի աշխարհիս։
4 Պատասխանի ետ Յիսուս՝ եւ
ասէ ցնոսա. Զգո՛յշ լերուք՝ գուցէ
ոք զձեզ խաբիցէ։
5 Զի բազումք գայցեն յանուն
իմ, եւ ասիցեն՝ թէ Ես եմ Քրիստոսն. եւ զբազումս մոլորեցուցանիցեն։
6 Լսելոց էք պատերազմունս՝ եւ
համբաւս պատերազմաց. զգո՛յշ լերուք՝ մի՛ խռովեսջիք, զի պարտ է
լինել այդմ ամենայնի, այլ չեւ է
կատարած։
7 Յարիցէ ազգ յազգի վերայ, եւ
թագաւորութիւն ՚ի թագաւորութեան վերայ. եւ եղիցին սովք եւ
սրածութիւնք եւ սասանութիւնք
՚ի տեղիս տեղիս։
8 Սակայն եւ այն ամենայն սկիզբըն է երկանց։
9 Յայնժամ մատնեսցեն զձեզ ՚ի
նեղութիւնս, եւ սպանանիցեն ըզձեզ. եւ եղիջիք ատեցեալք յամենայն ազգաց վասն անուան իմոյ։
10 Եւ յայնժամ գայթակղեսցին
բազումք, եւ զմիմեանս մատնեսցեն՝ եւ ատեսցեն զմիմեանս։
11 Եւ բազում սուտ մարգարէք
յարիցեն, եւ զբազումս մոլորեցուսցեն։

որ այդ տեղ քար քարի վերայ չի՛
մնայ որ ☩ չքանդուի։
3 Եւ երբոր Ձիթենեաց սարին
վերայ նստած էր, աշակերտներն առանձին նորա ‡ մօտ եկին՝ եւ ասացին. ⊤ Ասա՛ մեզ. այդ բանդ երբ
կը լինի. կամ թէ գալուդ եւ աշխարհքիս վերջին նշանն ինչ է։
4 Յիսուս պատասխան տուաւ՝ եւ
նորանց ասաց. Զգո՛յշ կեցէք որ
չը լինի թէ մէկը խաբէ ⊦ ձեզ։
5 Ինչու որ՝ շատ մարդիկ կը գան
իմ անունովս եւ կասեն՝ թէ, Ես
Քրիստոսն ւ եմ. եւ շատերը ⊦ կը մոլորացնեն։
6 Կռիւներ եւ կռիւներու համբաւ
լսելու էք. զգո՛յշ կեցէք, մի՛ չփոթվիք. ինչու որ՝ այն ամէն բաները
պէտք է լինին. միայն թէ դեռ
վերջն չէ։
7 Ազգ ազգի վերայ վեր Ը կը կենայ, եւ թագաւորութիւն թագաւորութեան վերայ. եւ սովեր կը
լինին. եւ սաստիկ մահեր՝ եւ տեղ
տեղ երկրի շարժմունքներ։
8 Բայց դեռ այն ամէնն՝ նեղութեանց սկիզբն է։
9 Այն ժամանակը ձեզ նեղութեանց մէջ ꝑ կը ձգեն. եւ ձեզ կը
սպաննեն, եւ իմ անունիս համար
ամէն ազգերէն ատելի կը լինիք։
10 Եւ այն ժամանակը շատեր ‡ կը
գայթակղվին. եւ իրար կը մատնեն եւ իրար կատեն։
11 Եւ շատ սուտ մարգարէք դուրս
‡ կը գան՝ եւ շատերը ⊾ կը մոլորացընեն։

‡ Դ Թագ. Թ. 7։ Երեմ. ԻԶ. 18։ Միք. Գ. 12։ Ղուկ. ԺԹ. 44։
‡ Մարկ. ԺԳ. 3։
⊤ Ա Թես. Ե. 1։
⊦ Եփես. Ե. 6։ Կող. Բ. 8. 18։ Բ Թես. Բ. 3։ Ա Յովհ. Դ. 1։
ւ Երեմ. ԺԴ. 14։ ԻԴ. 21. 23։ Համար. 24։ Յովհ. Ե. 43։
⊦ Համար. 11։
Ը Բ Մնաց. ԺԵ. 6։ Եսայ. ԺԹ. 2։ Անգ. Բ. 22։ Զաք. ԺԴ. 13։
ꝑ Գղ. Ճ. 17։ Մարկ. ԺԴ. 9։ Ղուկ. ԻԱ. 12։ Յովհ. ԺԵ. 20։ ԺԶ. 2։ Գործ. Դ. 2, 3։ Է. 59։ ԺԲ. 1։ Ա Պետ. Դ. 16։ Յայտ. Բ. 10. 13։
‡ Գղ. ՃԱ. 6։ ԺԴ. 57։ Բ Տիմ. Ա։ 15։ Դ. 10. 16։
‡ Գղ. Է. 15։ Գործ. Ի. 29։ Բ Պետ. Բ. 1։
⊾ Ա Տիմ. Դ. 1։ Համար. 5. 24։

12 Եւ վասն բազմանալոյ անօրէնութեան, ցամաքեսցի սէր բազմաց։
13 Բայց որ համբերեսցէ 'ի սպառ, նա կեցցէ։
14 Եւ քարոզեսցի աւետարանս արքայութեան ընդ ամենայն տիեզերս՝ 'ի վկայութիւն ամենայն հեթանոսաց, եւ ապա եկեսցէ կատարած։
15 Այլ՝ յորժամ տեսանիցէք զպղծութիւն աւերածոյն, որ ասացեալն է 'ի ձեռն Դանիէլի մարգարէի. Զի կայցէ 'ի տեղւոջն սրբութեան. որ ընթեռնուն 'ի միտ առցէ։
16 Յայնժամ որ 'ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն 'ի լերինս։
17 Եւ որ 'ի տանիս կայցէ, մի իջցէ առնուլ ինչ 'ի տանէ իւրմէ։
18 Եւ որ յանդի իցէ, մի դարձցի յետս առնուլ զհանդերձ իւր։
19 Բայց վայ իցէ յղեաց եւ ստնտուաց յաւուրսն յայնոսիկ։
20 Յաղօթս կացէք՝ զի մի լինիցի փախուստն ձեր ձմերայնի, եւ մի 'ի շաբաթու։
21 Զի եղիցի յայնժամ նեղութիւն մեծ, որպիսի ոչ եղեւ 'ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցայժմ, եւ ոչ այլ լիցի։
22 Եւ եթէ ոչ կարճէին աւուրքն այնոքիկ, ոչ ապրէր ամենայն մարմին. բայց վասն ընտրելոցն կարճեսցին աւուրքն այնոքիկ։
23 Յայնժամ թէ ոք ասիցէ ձեզ՝ Ահաւասիկ աստ է Քրիստոսն կամ անդ, մի հաւատայցէք։

12 Եւ անօրէնութեան շատանալուն պատճառաւը՝ շատերի սէրը կը ցամքի։
13 Բայց ով որ մինչեւ վերջը ե կը համբերէ, նա կապրի։
14 Եւ այս արքայութեան զ աւետարանս ամէն աշխարհքումը է կը քարոզվի՝ որ ամէն հեթանոսներին վկայութիւն լինի՝ եւ յետոյ վերջը կը գայ։
15 Ուրեմն՝ երբոր աւերածի ը պղծութիւնը տեսնէք, որ Դանիէլ մարգարէի ձեռքովն ասուած թ է՝ Որ սրբութեան տեղումը կը կանգնի. ով որ կարդայ թող միտք ժ առնէ.
16 Այն ժամանակը նորանք՝ որ Հրէաստանումն են, թող սարերը փախչին։
17 Եւ ով որ կտուրի վերայ է՝ թող վէր չը գայ, որ իրեն տանիցը մին բան վեր առնէ։
18 Եւ ով որ յանդումն է՝ թող յետ չի դառնայ որ իրեն շորերը վեր առնէ։
19 Բայց այն օրերը վայ կը լինի յղացածներին եւ ծիծ ի տուողներին։
20 Աղօթք արէք՝ որ այն ձեր փախչիլը ձմեռուան ժամանակը եւ շաբաթ օրը չը լինի։
21 Պատճառն որ այն ժամանակը մեծ նեղութիւն լ կը լինի. ինչպէս որ աշխարհքիս ստեղծագործութեան սկզբիցը մինչեւ հիմիկ չէ լեալ՝ եւ էլ չի լինիլ։
22 Եւ թէ որ այն օրերը չը կարճանային, ընաւ մին մարմին չէր ապրիլ. բայց ընտրուածներին համար այն օրերը խ կը կարճանան։
23 Այն ժամանակը թէ որ մինն ասէ ծ ձեզ՝ Ահա այստեղ է Քրիստոսը կամ այնտեղ, մի հաւատաք։

ե Գլ. Ժ. 22. Մարկ. ԺԳ. 13. Եբր. Գ. 6. 14. Յայտ. Բ. 10.
զ Գլ. Դ. 23. Թ. 35.
է Մարկ. ԺԶ. 15. Հռովմ. Ժ. 18. Կող. Ա. 6. 23.
ը Մարկ. ԺԳ. 14. Ղու. ԻԱ. 20.
թ Դան. Թ. 27. ԺԲ. 11.
ժ Դան. Թ. 23. 25.
ի Ղու. ԻԳ. 29.
լ Դան. Թ. 26. ԺԲ. 1. Յովէլ. Բ. 2.
խ Եսայ. ԿԵ. 8. 9. Զաք. ԺԴ. 2. 3.
ծ Մարկ. ԺԳ. 21. Ղու. ԺԷ. 23. ԻԱ. 8.

24 Զի յարիցեն սուտ քրիստոսք եւ սուտ մարգարէք. եւ տացեն նշանս մեծամեծս եւ արուեստս, մինչեւ մոլորեցուցանել՝ թէ հնար ինչ իցէ եւ զընտրեալսն։

25 Ահա յառաջագոյն ասացի ձեզ։

26 Արդ եթէ ասիցեն ձեզ. Ահաւասիկ յանապատի է, մի՛ ելանիցէք. եւ թէ Ահա ի շտեմարանս է, մի՛ հաւատայցէք։

27 Զի որպէս փայլակն՝ որ ելանէ յարեւելից՝ եւ երեւի մինչեւ յարեւմուտս, այնպէս եղիցի գալուստն Որդւոյ մարդոյ։

28 Զի ուր գէշն իցէ, ՚անդր ժողովեսցին արծուիք։

29 Վաղվաղակի յետ նեղութեան աւուրցն այնոցիկ արեգակն խաւարեսցի, եւ լուսին ոչ տացէ զլոյս իւր, եւ աստեղք անկցին յերկնից, եւ զօրութիւնք երկնից շարժեսցին։

30 Եւ ապա երեւեսցի նշան Որդւոյ մարդոյ յերկինս, եւ յայնժամ կոծեսցին ամենայն ազգք երկրի. եւ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ՚ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ եւ փառօք բազմօք։

31 Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ, եւ ժողովեսցեն զընտրեալս նորա ՚ի չորից հողմոց՝ ՚ի ծագաց երկնից մինչեւ ՚ի ծագս նոցա։

32 ՚Ի թզենւոյ անտի ուսարուք զառակն. զի յորժամ նորա ոստքն կակղասցին եւ տերեւն ցուցեալ, գիտէք թէ մերձ է ամառն։

24 Վասն զի՝ սուտ քրիստոսներ եւ սուտ մարգարէներ դուրս ՚ կը գան՝ եւ շատ մեծ նշաններ եւ հրաշքներ ցոյց կու տան, մինչեւ որ, եթէ կարելի ՚ ըլլար, ընտրուածներն ալ կը մոլորեցնէին։

25 Ահա առաջ ըսի ձեզ։

26 Արդ թէ որ ըսեն ձեզ. Ահա անապատին մէջ է՝ դուրս չը գաք. եւ թէ Ահա սենեակներուն մէջ է՝ չը հաւատաք։

27 Վասն զի՝ ինչպէս կայծակն՝ որ արեւելքէն դուրս կու գայ մինչեւ արեւմուտքը կերեւի, այնպէս ալ Որդւոյ մարդոյ գալը ՚ կը լլայ։

28 Վասն զի՝ ուր որ մեռած մարմին ՚ կը լլայ, այնտեղ կը հաւաքուին արծիւները։

29 Շուտով այն նեղութեան օրերուն՝ ետեւ՝ արեգակը ՚ կը խաւարի. եւ լուսինն իրեն լոյսը չի տար. եւ աստղերն երկինքէն վար կ'իյնան, եւ երկինքի զօրութիւնները կը շարժին։

30 Եւ յետոյ Որդւոյ մարդոյ ՚ նշանը երկինքը կերեւի՝ եւ այն ժամանակն երկրի ամէն ազգերը լաց ՚ կը լլան. եւ Որդին մարդոյ կը տեսնեն երկինքի ամպերուն վրայ եկած զօրութենով եւ շատ ՚ փառքով։

31 Եւ իրեն հրեշտակները մեծ փողով ՚ կը ղրկէ. եւ իրեն ընտրածներն կը ժողովեն չորս կողմերը՝ երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը։

32 Այն թզենի ՚ ծառէն ՚ սորվեցէք առակը՝ որ երբոր նորա ճղերը կը կակղին, եւ տերեւը կը բուսնի, գիտնամէք որ ամառը մօտ է։

է Բ Օրէն. ԺԳ. 1։ Համար. Ծ. 11։ Բ Թես. Բ. 9, 10, 11։ Յայտ. ԺԳ. 13։
ը Յովհ. Զ. 37. Ժ. 28, 29։ Հռովմ. Ը. 28, 29, 30։ Բ Տիմ. Բ. 19։
ը Ղու. ԺԷ. 24։
թ Յովբ. ԼԹ. 30։ Ղու. ԺԷ. 37։
ժ Դան. Է. 11, 12։
ի Եսայ. ԺԳ. 10։ Եզեկ. ԼԲ. 7։ Յովէլ. Բ. 10։ 31։ Գ. 15։ Ամովս. Ե. 20։ Ը. 9։ Մարկ. ԺԳ. 24։ Ղու. ԻԱ. 25։ Գործ. Բ. 20։ Յայտ. Զ. 12։
լ Դան. Է. 13։
խ Զաք. ԺԲ. 12։
ծ Գլ. ԺԶ. 27։ Մարկ. ԺԳ. 26։ Յայտ. Ա. 7։
կ Գլ. ԺԳ. 41։ Ա Կորնթ. ԺԵ. 52։ Ա Թես. Դ. 16։
հ Ղու. ԻԱ. 29։

33 Նոյնպէս եւ դուք յորժամ տեսանիցէք զայս ամենայն, գիտասջիք թէ մերձ է 'ի դուրս։

34 Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ո՛չ անցցէ ազգս այս՝ մինչեւ այս ամենայն եղիցի։

35 Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ մի՛ անցցեն։

36 Բայց վասն աւուրն այնորիկ եւ ժամու, ո՛չ ոք գիտէ՝ ո՛չ հրեշտակք երկնից՝ եւ ո՛չ Որդի՝ բայց միայն Հայր։

37 Այլ որպէս աւուրքն Նոյի, այնպէս եղիցի գալուստն Որդւոյ մարդոյ։

38 Զի որպէս էին յաւուրսն որ յառաջ քան զջրհեղեղն, ուտէին եւ ըմպէին՝ կանայս առնէին եւ արանց լինէին, մինչեւ յօրն՝ յորում եմուտ Նոյ 'ի տապանն։

39 Եւ ո՛չ գիտացին՝ մինչեւ եկն ջրհեղեղն եւ եբարձ զամենեսին, այնպէս եղիցի եւ գալուստն Որդւոյ մարդոյ։

‡ 40 Յայնժամ թէ իցեն երկու յագարակի, մին առցի՝ եւ միւսն թողցի։

41 Եւ եթէ երկու աղայցեն 'ի մի երկանս, մին առցի՝ եւ միւսն թողցի։

42 Արթո՛ւն կացէք՝ զի ո՛չ գիտէք յորում ժամու Տէրն ձեր գայ։

43 Զայն գիտասջիք, եթէ գիտէր տանուտէրն՝ յորում պահու գող գայ, հսկէր՝ եւ ո՛չ տայր ական հատանել զտան իւրոյ։

33 Այնպէ՛ս էլ դուք՝ որ ժամանակ այս ամէն բաներս կը տեսնէք, իմացէք որ դուռը մօտ —է։

34 Ճշմարիտ ասումեմ ձեզ՝ թէ Այս ազգս չի ÷ անցնիլ, մինչեւ այս ամէնս լինի։

35 Երկինքն ու երկիրս կանցնին՝ եւ իմ խօսքերս չեն + անցնիլ։

36 Միայն թէ այն օրին եւ ժամին համար՝ ոչ ով ∘ չի գիտում՝ ոչ երկնքի հրեշտակները՝ եւ ոչ Որդին՝ բայց միայն ÷ Հայրը։

37 Բայց ինչպէս էլան Նոյի օրերն՝ այնպէս էլ կը լինի Որդոյ մարդոյ գալը։

38 Ինչու որ՝ ինչպէս որ այն օրերն էին՝ որ ջրհեղեղիցն առաջ — կային, որ ուտումէին եւ խմումէին, կին էին առնում՝ եւ մարդոյ էին գնում, մինչեւ այն օրն, որ Նոյ մտաւ տապանը։

39 Եւ չըգիտացին՝ մինչեւ որ ջրհեղեղն եկաւ, եւ ամէնքը վեր առաւ. այնպէս էլ կը լինի Որդոյ մարդոյ գալը։

40 Այն ժամանակը թէ որ երկու հոգի արտումը լինին՝ մինը կառնուի՝ եւ միւսը ÷ կը թողուի։

41 Եւ թէ որ երկու հոգի մին ջաղացում աղան՝ մինը կառնուի՝ եւ միւսը կը թողուի։

42 Արթո՛ւն ÷ կացէք՝ ինչու որ՝ չէք գիտում թէ ձեր Տէրն ո՛ր ժամումը կըգայ։

43 Նա իմացէ՛ք՝ թէ որ տան տէրը գիտենար՝ թէ գողը գիշերի որ պահումը ÷ կը գայ, արթուն կը կենար եւ թող չէր տայ՝ որ իրեն տան տակը փոս փորէ։

– Յակ. Ե. 9.
÷ Գլ. ԺԶ. 28. ԻԴ. 36. Մարկ ԺԳ. 30. Ղու. ԻԱ. 32.
+ Սաղ. ՃԲ. 26. Եսայ. ԾԱ. 6. Երեմ. ԼԱ. 35, 36. Գլ. Ե. 18. Մարկ. ԺԳ. 31. Ղու. ԻԱ. 33. Եբր. Ա. 11.
∘ Մարկ. ԺԳ. 32. Գործ. Ա. 7. Ա Թես. Ե. 2. Բ Պետ. Գ. 10.
÷ Զաք. ԺԴ. 7.
– Ծննդ. Զ. 3. 4. 5. Է. 5. Ղու. ԺԷ. 26. Ա Պետ. Գ. 20.
÷ Ղու. ԺԷ. 34, 35.
÷ Գլ. ԻԵ. 13. Մարկ. ԺԳ. 33, 35. Ղու. ԻԱ. 36.
÷ Ղու. ԺԲ. 39. Ա Թես. Ե. 2. Բ Պետ. Գ. 10. Յայտ. Գ. 3. ԺԶ. 15.

44 Վասն այսորիկ եւ դուք եղե-
րուք պատրաստք, զի յորում ժա-
մու ոչ ակն ունիցիք՝ գայ Որդի
մարդոյ։
45 Իսկ ո՞վ իցէ հաւատարիմ ծա-
ռայ եւ իմաստուն, զոր կացոյց
տէր իւր ՚ի վերայ ծառայից իւրոց՝
տալ նոցա կերակուր ՚ի ժամու։

46 Երանի է ծառային այնմիկ՝ զոր
եկեալ տէրն գտանիցէ արարեալ
այնպէս։
47 Ամէն ասեմ ձեզ, Զի ՚ի վե-
րայ ամենայն ընչից իւրոց կացուս-
ցէ զնա։
48 Ապա թէ ասիցէ ծառայն չար
՚ի սրտի իւրում, Տէր իմ յամէ
գալ։
49 Եւ սկսանիցի հարկանել զծա-
ռայակիցս իւր, ուտիցէ եւ ըմպիցէ
ընդ արբեցողս։
50 Գայցէ տէր ծառային այնորիկ
յաւուր յորում ոչ ակն ունիցի,
եւ ՚ի ժամու յորում ոչ գիտիցէ։
51 Եւ կտրեսցէ զնա ընդ մէջ, եւ
զբաժին նորա ընդ կեղծաւորս դի-
ցէ. անդ եղիցի լալ եւ կրճել ա-
տամանց։

44 Սորա համար դուք էլ պատրաստ
ւ կացէք. ինչու որ՝ այն ժամին՝ որ
դուք չէք սպասեր, Որդին մարդոյ
կը գայ։
45 Ապա ով կը լինի այն հաւատա-
րիմ եւ իմաստուն ն ծառան՝ որ նո-
րան իրեն Տէրն՝ իրեն ծառաներին
վերայ դրաւ, որ նորանց կերակուր
տայ իրենց ժամանակին։
46 Երանի է այն ւ ծառային՝ որ
տէրն երբոր կը գայ, նորան այնպէս
արած գտնէ։
47 Ճշմարիտ ասում եմ ձեզ. Որ
նորան իրեն ամէն ապրանքներին վե-
րայ է կը դնէ։
48 Ապա թէ որ չար ծառան իրեն
սրտումն ասէ, թէ, Իմ տէրս գալն
ուշացնումէ,
49 Եւ սկսէ իրեն ընկեր ծառա-
ները ծեծել՝ եւ հարբեցողներին
հետ ուտէ եւ խմէ.
50 Կըգայ այն ծառային տէրը այն
օրն՝ որ նա չի սպասեր, եւ այն ժա-
մը՝ որ նա չի գիտեր,
51 Եւ նորան մէջէնը կը կտրէ եւ
նորա բաժինը կեղծաւորներին հետ
կը դնէ. որ այնտեղ լաց եւ ատամ-
ներին կրճտելը բ կը լինի։

## ԳԼ. ԻԵ

1 Յայնժամ նմանեսցի արքա-
յութիւն երկնից տասն կուսանաց,
որոց առեալ զլապտերս իւրեանց
ելին ընդ առաջ փեսայի եւ հարսին։

2 Հինգն ՚ի նոցանէ յիմարք էին՝
եւ հինգն իմաստունք։
3 Յիմարքն առին զլապտերսն,
եւ ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին։
4 Իսկ իմաստունքն առին ձէթ
ամանովք ընդ լապտերս իւրեանց։

1 Այն ժամանակն երկնքի արքա-
յութիւնը կը նմանի տասն կուսա-
նաց. որ իրենց լապտերները վեր
առին՝ եւ դուրս ելլին փեսայի եւ
հարսի = առաջը։
2 Նորանցից հինգը յիմար էին եւ
հինգն բ իմաստուն։
3 Յիմարները լապտերները վեր ա-
ռին՝ եւ ձէթ վեր չառին իրենց հետ։
4 Բայց իմաստունները իրենց
լապտերներին հետ ամաններով ձէթ
վեր առին։

ւ Գլ. ԻԵ. 13։ Ա Թես. Ե. 6։
ն Ղուկ. ԺԲ. 42։ Գործ. Ի. 28։ Ա Կորնթ. Դ. 2։ Եբր. Գ. 5։
ւ Յայտ. ԺԶ. 15։
է Գլ. ԻԵ. 21. 23։ Ղուկ. ԻԲ. 29։
բ Գլ. Ը. 12։ ԻԵ. 30։
—
= Եփես. Ե. 29, 30։ Յայտ. ԺԹ. 7։ ԻԱ. 2. 9։
բ Գլ. ԺԳ. 47։ ԻԲ. 10։

5 Եւ ՚ի յամել փեսային, նիրհեցին ամենեքեան եւ ՚ի քուն մտին։

6 Եւ ՚ի մէջ գիշերի եղեւ բարբառ. Ահա փեսայ գայ՝ ելէք ընդ առաջ նորա։

7 Յայնժամ յարեան ամենայն կուսանքն՝ եւ կազմեցին զլապտերս իւրեանց։

8 Ասեն յիմարքն ցիմաստունսն, Տուք մեզ ՚ի ձիթոյ ձերմէ, զի ահա շիջանին լապտերքս մեր։

9 Պատասխանի ետուն իմաստունքն՝ եւ ասեն. Գուցէ ոչ իցէ մեզ եւ ձեզ բաւական, այլ երթայք ՚ի վաճառականս՝ եւ գնեսջիք ձեզ։

10 Իբրեւ նոքա գնացին գնել՝ եկն փեսայն, եւ պատրաստքն մտին ընդ նմա ՚ի հարսանիսն՝ եւ փակեցաւ դուռնն։

11 Յետոյ գան եւ այլ կուսանքն՝ եւ ասեն. Տէր Տէր՝ բաց մեզ։

12 Նա պատասխանի ետ եւ ասէ. Ամէն ասեմ ձեզ՝ թէ Ո՛չ գիտեմ զձեզ։

13 Արթուն կացէք զի ոչ գիտէք զօրն եւ զժամն։

14 Որպէս այր մի գնացեալ ՚ի տար աշխարհ, կոչեաց զծառայս իւր՝ եւ ետ նոցա զինչս իւր։

15 Ումեմն ետ հինգ քանքար՝ եւ ումեմն երկուս՝ ումեմն մի, իւրաքանչիւր ըստ իւրում կարի, եւ գնաց։

16 Զաղա վաղվաղակի՝ որ առ ըզհինգն՝ գործեաց նոքօք, եւ շահեցաւ այլ եւս հինգ։

17 Նոյնպէս եւ որ զերկուսն, շահեցաւ այլ եւս երկուս։

5 Եւ փեսան որ ուշացաւ՝ ամէննքը թմրեցին, եւ * քնացին։

6 Կէս գիշերուընը ձայն եղաւ՝ թէ Ահա փեսան գալիս է՝ գնացէք ելէք նորան † առաջը։

7 Այն ժամանակն ամէն կուսանքը վեր կացան եւ իրենց լապտերները ‡ պատրաստեցին։

8 Յիմարները ասացին իմաստուններին. Ձեր իւղիցը մեզ էլ տըւէք. ինչու որ մեր լապտերները հանգչում են։

9 Իմաստունները պատասխանն տըւին՝ եւ ասացին. Գուցէ թէ մեզ եւ ձեզ հերիք չլինի. բայց գնացէք ծախողներին մօտ եւ ձեզ համար գնեցէք։

10 Երբոր նորանք գնացին որ գընեն, փեսան եկաւ՝ եւ պատրաստ կացածները նորան հետ հարսանիքը մտին՝ եւ դուռը § փակվեցաւ։

11 Յետոյ այն միւս կուսանքն էլ եկին՝ եւ ասացին. Տէ՛ր Տէ՛ր՝ ‖ բաց մեզ։

12 Նա պատասխան տուաւ եւ ասաց. Ճշմարիտ ասում եմ ձեզ՝ թէ չեմ ճանաչում ¶ ձեզ։

13 Արթուն ** կացէք. ինչու որ՝ չէք գիտում ոչ օրն եւ ոչ ժամը։

14 Ինչպէս մէն մարդ որ հեռու աշխարհը գնալու †† էլաւ՝ իրեն ծառաները կանչեց. եւ իրեն ապրանքը նորանց տուաւ։

15 Մէկին հինգ քանքար տուաւ՝ միւսին երկու, եւ միւսին մէն. ամէն մէկին իրեն կարողութեան ‡‡ չափովը՝ եւ գնաց։

16 Նա՝ որ հինգն առաւ, շուտով գնաց՝ նա բանեցրուց եւ ուրիշ հինգ էլ շահվեցաւ։

17 Այնպէս էլ նա՝ որ երկուսն առաւ, ուրիշ երկուս էլ շահվեցաւ։

* Ա Թես. Ե. 6։
† Գլ. ԻԴ. 31։ Ա Թես. Դ. 16։
‡ Ղու. ԺԲ. 35։
§ Ղու. ԺԳ. 25։
‖ Գլ. Է. 21, 22, 23։
¶ Սաղ. Ե. 5։ Ամբ. Ա. 13։ Յովհ. Թ. 31։
** Գլ. ԻԴ. 42. 44։ Մարկ. ԺԳ. 33. 35։ Ղու. ԻԱ. 36։ Ա Կորնթ. ԺԶ. 13։ Ա Թես. Ե. 6։ Ա Պետ. Ե. 8։ Յայտ. ԺԶ. 15։
†† Գլ. ԻԱ. 33։ Ղու. ԺԹ. 12։
‡‡ Հռովմ. ԺԲ. 6։ Ա Կորնթ. ԺԲ. 7. 11. 29։ Եփես. Դ. 11։

18 Եւ որ զմին առ՝ գնաց փոր-
եաց զերկիր, եւ թաքոյց զարծաթ
տեառն իւրոյ։
19 Յետ բազում ժամանակի գայ
տէր ծառայիցն այնոցիկ՝ եւ առնէ
համարս 'ի մէջ նոցա։
20 Եւ մատուցեալ՝ որ զհինգ քան-
քարն առ, մատոյց այլ եւս հինգ
քանքար՝ եւ ասէ. Տէր՝ հինգ քան-
քար ետուր ցիս, արդ՝ ահաւասիկ
հինգ այլ եւս քանքար 'ի վերայ շա-
հեցայ։
21 Ասէ ցնա տէրն իւր. Ածնիւ
ծառայ՝ բարի եւ հաւատարիմ, ո-
րովհետեւ 'ի սակաւուդ հաւատա-
րիմ ես, 'ի վերայ բազմաց կացու-
ցից զքեզ. մուտ յուրախութիւն
տեառն քո։
22 Մատուցեալ եւ որոյ զերկուսն
քանքարսն առեալ էր՝ եւ ասէ.
Տէր՝ երկուս քանքարս ետուր ցիս.
ահաւասիկ երկուս եւս այլ քան-
քարս զոր 'ի վերայ շահեցայ։
23 Ասէ ցնա տէրն իւր. Ածնիւ
ծառայ՝ բարի եւ հաւատարիմ, ո-
րովհետեւ 'ի սակաւուդ հաւատա-
րիմ ես, 'ի վերայ բազմաց կացու-
ցից զքեզ. մուտ յուրախութիւն
տեառն քո։
24 Մատուցեալ եւ որոյ զմի քան-
քարն առեալ էր, եւ ասէ. Տէր՝
գիտէի, զի այր մի խիստ ես, հնձ-
ձես՝ զոր ոչ սերմանեցեր, եւ ժո-
ղովես՝ ուստի ոչ սփռեցեր։
25 Երկեայ՝ գնացի եւ թաքուցի
զքանքարն քո յերկրի. արդ՝ ահա-
սիկ քոյդ ցքեզ։
26 Պատասխանի ետ տէրն՝ եւ ա-
սէ ցնա. Ծառայ չար եւ վատ. գի-
տէիր եթէ հնձեմ՝ ուստի ոչ սեր-
մանեցի, եւ ժողովեմ՝ ուստի ոչ
սփռեցի։
27 Պարտ էր քեզ արկանել զար-
ծաթս իմ 'ի սեղանաւորս, եւ ե-

18 Եւ նա՝ որ մէկը առաւ, գը-
նաց, գետինը փորեց՝ եւ իրեն տի-
րոջը արծաթը թաքցրուց։
19 Շատ ժամանակից ետեւ այն
ծառաներին տէրն եկաւ՝ եւ նորան-
ցից հաշիւ առաւ։
20 Եւ նա՝ որ հինգ քանքար ա-
ռաւ՝ առաջ եկաւ ուրիշ հինգ քան-
քար էլ բերաւ տուաւ՝ եւ ասաց.
Տէր՝ դու ինձ հինգ քանքար տը-
ւիր. եւ ահա ուրիշ հինգ քանքար
էլ նորանից վերայ շահվեցայ։
21 Իրեն տէրը նորան ասաց.
Ապրիս ծառայ՝ բարի եւ հաւատա-
րիմ՝ որովհետեւ այդ քիչ բանումդ
հաւատարիմ ես, քեզ շատ բանե-
րի վերայ ւ կը դնեմ. մտիր քո տի-
րոջդ ե ուրախութիւնը։
22 Նա էլ որ երկու քանքար էր
առել, առաջ եկաւ եւ ասաց. Տէր՝
դու ինձ երկու քանքար տուիր.
ահա երկու ուրիշ քանքար էլ՝ որ
նորանից վերայ շահվեցայ։
23 Իրեն տէրն նորան ասաց. Ապ-
րիս ծառայ՝ բարի եւ ժ հաւատա-
րիմ. որովհետեւ այդ քիչ բանումդ
հաւատարիմ ես, քեզ շատ բաների
վերայ կը դնեմ, մտիր քու տիրոջդ
ուրախութիւնը։
24 Նա էլ՝ որ մին քանքար էր ա-
ռել, առաջ եկաւ եւ ասաց. Տէր՝
գիտացի՝ որ դու մին խստասիրտ
մարդ ես, որ հնձումես նա՝ որ չը-
սերմեցիր. եւ այն տեղից հաւա-
քումես՝ որ չը փռեցիր.
25 Վախեցայ գնացի եւ քո քան-
քարդ գետնի մէջ թաքցրի. ապա
ահա քոնը քեզ։
26 Տէրն պատասխան տուաւ՝ եւ
ասաց նորան. Չար եւ ծոյլ ծառայ՝
գիտացիր՝ որ այն տեղից եմ հնձ-
ւում, որ չըսերմեցի. եւ այնտե-
ղից եմ հաւաքում՝ որ չըփռեցի.
27 Պէտք էր քեզ՝ որ իմ արծա-
թիս սառկ փոխողներին տայիր՝ եւ

ւ Գլ. ԻԴ. 47. Համր. 34. 36. | Ղուկ. ԺԲ. 44. ԻԲ. 29. 30. | ե Բ Տիմ. Բ. 12. Եբր. ԺԲ. 2. Ա | Գծտ. Ա. 8. ժ Համր. 21.

կեալ ես տոկոսօք պահանջէի զիմն։

28 Արդ՝ առէք ՚ի դմանէ զքանքարդ՝ եւ տուք այնմ որ ունիցի զտասն քանքարն։

29 Զի ամենայնի որ ունիցի՝ տացի եւ յաւելցի, եւ որ ոչն ունիցի՝ եւ զոր ունիցին, բարձցի ՚ի նմանէ։

30 Եւ զծառայդ անպիտան հանէք ՚ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց։

31 Եւ յորժամ եկեսցէ Որդի մարդոյ փառօք իւրովք՝ եւ ամենայն հրեշտակք ընդ նմա, յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց։

32 Եւ ժողովեսցին առաջի նորա ամենայն ազգք, եւ մեկնեսցէ զնոսա ՚ի միմեանց, որպէս հովիւ զի մեկնեսցէ զօդիս յայծեաց։

33 Եւ կացուսցէ զօդիսն ընդ աջմէ իւրմէ՝ եւ զայծիսն ՚ի ձախմէ։

34 Յայնժամ ասասցէ թագաւորն ցայնոսիկ՝ որ ընդ աջմէն իցեն. Եկայք օրհնեալք Հօր իմոյ ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն ՚ի սկզբանէ աշխարհի։

35 Զի քաղցեայ՝ եւ ետուք ինձ ուտել. ծարաւեցի՝ եւ արբուցէք ինձ. օտար էի՝ եւ ժողովեցէք զիս։

36 Մերկ՝ եւ զգեցուցէք զիս. հիւանդ էի՝ եւ տեսէք զիս. ՚ի բանտի էի՝ եւ եկիք առ իս։

ես կըգայի եւ շահով կառնէի իմս։

28 Ասոր առէք դորանից քանքարը, եւ տուէք նորան որ տասն քանքարն ունի։

29 Ինչու որ՝ ամէն ով որ ունի՝ նորան կը տրվի եւ ‡ կաւելանայ. եւ նա որ չունի, նորանից ՚նա էլ որ ունի՝ վեր կառնուի։

30 Եւ այդ անպիտան ծառային հանեցէք դուրս ч խաւարն՝ որ այնտեղ լաց եւ ատամների կրճտելը կըլինի։

31 Եւ երբ ժամանակ Որդին մարդոյ իրեն փառքովը ɔ կըգայ՝ եւ ամէն հրեշտակները նորա հետ, այն ժամանակն իրեն փառաց աթոռին վերայ կը՚նստի։

32 Եւ ամէն ազգերը կը ժողովվին նորան ւ առաջին. եւ նորանց կըջոկէ ς իրարից՝ ինչպէս մին հովիւ որ ոչխարներն այծերից կըջոկէ։

33 Եւ ոչխարներըն իրեն աջ կողմը կըկանգնեցնէ՝ եւ այծերը ձախ կողմը։

34 Այն ժամանակը թագաւորը կասէ նորանց՝ որ աջ կողմն են, Եկէք՝ իմ Հօրս օրհնվածներ՝ ժառանգեցէք այն ʻ արքայութիւնը, որ աշխարհքի սկզբիցը պատրաստված է ձեզ ɔ համար։

35 Ինչու որ՝ ես սովեցի՝ եւ տուիք ինծ ՝ ուտել. ծարաւեցի՝ եւ խմեցրիք ինծ. օտար էի՝ եւ ինծ ձեզ մօտ ւառիք։

36 Մերկ էի՝ եւ ինծ = հագցրիք. հիւանդ էի՝ եւ ինծ այցի առիք. բանտի մէջ էի՝ եւ ինծ մօտ ւեկիք։

‡ Գլ. ԺԳ. 12. Մարկ. Դ. 25. Ղուկ. Ը. 18. ԺԹ. 26. Յովհ. ԺԵ. 2.
ч Գլ. Ը. 12. ԻԴ. 51.
ɔ Զաք. ԺԴ. 5. Գլ. ԺԶ. 27. ԺԹ. 28. Մարկ. Ը. 38. Գործ. Ա. 11. Ա Թեսս. Դ. 16. Բ Թեսս. Ա. 7. Յուդ. 14. Յայտ. Ա. 7.
ւ Հռովմ. ԺԴ. 10. Բ Կորնթ. Ե. 10. Յայտ. Ի. 12.
ς Եզեկ. Ի. 38. ԼԴ. 17. 20. Գլ. ԺԳ. 49.
ʻ Հռովմ. Ը. 17. Ա Պետ. Ա. 4. 9. Գ. 9. Յայտ. ԻԱ. 7.
ɔ Գլ. Ի. 23. Մարկ Ժ. 40. Ա Կորնթ. Բ. 9. Եբր. ԺԱ. 16.
՝ Եսայ. ԾԸ. 7. Եզեկ. ԺԸ. 7. Յակ. Ա. 27.
ւ Եբր. ԺԳ. 2. Գ Յովհ. 5.
= Յակ. Բ. 15, 16.
ւ Բ Տիմ. Ա. 16.

37 Յայնժամ պատասխանի տացեն
նմա արդարքն եւ ասասցեն · Տէր՝
Երբ տեսաք զքեզ քաղցեալ՝ եւ
կերակրեցաք , կամ ծարաւի՝ եւ
արբուցաք ։
38 Ե՞րբ տեսաք զքեզ օտար՝ եւ
ժողովեցաք , կամ մերկ՝ եւ զգե-
ցուցաք ։
39 Ե՞րբ տեսաք զքեզ հիւանդ՝
կամ ՚ի բանտի , եւ եկաք առ քեզ ։
40 Պատասխանի տացէ թագաւորն՝
եւ ասասցէ ցնոսա · Ամէն ասեմ ձեզ ·
որովհետեւ արարէք միում յեղբարցս
այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարէք ։

41 Յայնժամ ասասցէ եւ ցայնո-
սիկ՝ որ ընդ ահեկէն իցեն · Երթայք
յինէն անիծեալք ՚ի հուրն յաւիտե-
նականն , որ պատրաստեալ է Սա-
տանայի եւ հրեշտակաց նորա ։

42 Զի քաղցեայ՝ եւ ոչ ետուք
ինձ ուտել , ծարաւեցայ՝ եւ ոչ ար-
բուցէք զիս ։
43 Օտար էի՝ եւ ոչ ժողովեցէք
զիս , մերկ էի՝ եւ ոչ զգեցուցէք
զիս , հիւանդ՝ եւ ՚ի բանտի՝ եւ ոչ
տեսէք զիս ։
44 Յայնժամ պատասխանի տացեն
եւ նոքա՝ եւ ասասցեն · Տէր՝ Երբ
տեսաք զքեզ քաղցեալ՝ կամ ծա-
րաւի կամ օտար կամ մերկ կամ
հիւանդ կամ ՚ի բանտի , եւ ոչ պաշ-
տեցաք զքեզ ։
45 Յայնժամ պատասխանի տացէ
նոցա՝ եւ ասասցէ · Ամէն ասեմ
ձեզ , Որովհետեւ ոչ արարէք միում
՚ի փոքրկանցս յայսցանէ՝ եւ ոչ ինձ
արարէք ։
46 Եւ երթիցեն նոքա ՚ի տանջան-
սն յաւիտենականս · եւ արդարքն
՚ի կեանսն յաւիտենականս ։

37 Այն ժամանակին արդարներն
պատասխան կուտան նորան եւ կա-
սեն · Տէր՝ Երբ տեսինք քեզ ա-
նօթ՝ եւ կերակուր տուինք · կամ
ծարաւ՝ եւ խմցուցինք ։
38 Ե՞րբ տեսինք քեզ օտար՝ եւ
մեզ մօտ առինք , կամ մերկ՝ եւ
հագցուցինք ։
39 Ե՞րբ տեսինք քեզ հիւանդ՝ կամ
բանտի մէջ՝ եւ եկինք քեզ մօտ ։
40 Թագաւորն էլ պատասխան կը-
տայ՝ եւ նորանց կասէ · Ճշմարիտն
ասեմ ձեզ՝ որովհետեւ այս իմ
փոքր եղբայրներիցս մէկին ~ արիք ,
ինձ արիք ։
41 Այն ժամանակը նորանց էլ կա-
սէ՝ որ ձախ կողմն են · Ինձանից
գնացէք Հ անիծածներ՝ յաւի-
տենական կրակին – մէջը , որ պատ-
րաստած է Սատանային եւ նորա
հրեշտակներին = համար ։
42 Ինչու որ՝ ես սովեցի՝ եւ չտուի-
ք ինձ ուտել · ծարաւեցի՝ եւ
ինձ չխմցուցիք ։
43 Օտար էի՝ եւ ինձ ձեզ մօտ
չառիք · մերկ էի՝ եւ ինձ չհագցու-
ցիք · հիւանդ՝ եւ բանտի մէջ էի՝
եւ ինձ տեսն չի եկաք ։
44 Այն ժամանակը նորանք էլ պա-
տասխան կուտան եւ կասեն · Տէր՝
քեզ Երբ տեսինք սոված կամ ծա-
րաւ կամ օտար կամ մերկ՝ կամ
հիւանդ կամ բանտի մէջ՝ եւ քեզ
ծառայութիւն չարինք ։
45 Այն ժամանակը պատասխան
կը տայ նորանց՝ եւ կասէ · Ճշմարի-
տն ասեմ ձեզ՝ Որովհետեւ այս
փոքրներիցս մէկին չարիք՝ ինձ էլ
Ղ չարիք ։
46 Նորանք կը գնան յաւիտենա-
կան տանջանքը , եւ արդարները
յաւիտենական + կեանքը ։

~ Առակ. ԺԳ. 31: ԺԹ. 17: Գլ. Ժ. 42: Մարկ. Թ. 41: Եբր. Զ. 10:
Հ Սաղ. Զ. 8: Գլ. Է. 23: Ղուկ. ԺԳ. 27:
– Գլ. ԺԳ. 40. 42:
= Բ Պետ. Բ. 4: Յուդ. 6:
Ղ Առակ. ԺԴ. 31: ԺԷ. 5: Զաք. Բ. 8: Գործ. Թ. 5:
+ Դան. ԺԲ. 2: Յովհ. Ե. 29: Հռովմ. Բ. 7, 8:

## ԳԼ. ԻԶ

1 Եւ եղեւ իբրեւ կատարեաց
Յիսուս զամենայն զբանս զայսո-
սիկ, ասէ ցաշակերտսն իւր:
2 Գիտէ՞ք, զի յետ երկուց ա-
ւուրց զատիկ լինի. եւ Որդի մար-
դոյ մատնի 'ի խաչ ելանել:
3 Յայնժամ ժողովեցան քահա-
նայապետքն եւ դպիրքն եւ ծերք
ժողովրդեանն 'ի սրահ քահանայա-
պետին՝ որում անուն էր Կայիափա:
4 Եւ արարին խորհուրդ՝ զի նեն-
գութեամբ կալցին զՅիսուս՝ եւ
սպանցեն:
5 Բայց ասէին, թէ Մի 'ի տօնի
աստ՝ զի մի խռովութիւն լինիցի 'ի
ժողովրդեանն:
6 Իբրեւ եկն Յիսուս 'ի Բեթա-
նիա 'ի տան Սիմոնի բորոտի,
7 Մատեաւ առ նա կին մի՝ որ
ունէր շիշ իւղոյ ծանրագնի, եւ
թափեաց 'ի գլուխ նորա 'ի բազմա-
կանսն,
8 Իբրեւ տեսին աշակերտքն՝ բար-
կացան՝ եւ ասեն. Ընդէ՞ր է կորուստ
այդ իւղոյդ:
9 Զի մարթ էր վաճառել զդա
մեծագնի՝ եւ տալ աղքատաց:
10 Գիտաց Յիսուս՝ եւ ասէ ցնոսա.
Զի՞ աշխատ առնէք զկինդ, գործ
մի բարի գործեաց դա յիս:
11 Յամենայն ժամ զաղքատս ընդ
ձեզ ունիք, բայց զիս ո՛չ հանա-
պազ ընդ ձեզ ունիք:
12 Արկանել դորա զիւղդ 'ի մար-
մին իմ, առ 'ի թաղելոյ զիս նշա-
նակեաց:
13 Բայց ամէն ասեմ ձեզ, զի Ուր
եւ քարոզեսցի աւետարանս այս

1 Եւ եղաւ՝ երբոր Յիսուս այս
ամէն խօսքերը միրջացուց, իրեն
աշակերտներին ասաց.
2 Գիտումէք՝ որ երկու օրէն ե-
տեւ զատիկ ա կը լինի. եւ Որդին
մարդոյ կը մատնուի որ խաչուի:
3 Այն ժամանակը քահանայա-
պետներն ու կարգացողները եւ
ժողովրդի ծերերը բ ժողովեցան
քահանայապետին սրահն՝ որ նորա
անունը Կայիափա էր:
4 Եւ խորհուրդ արին՝ որ հնար-
քով Յիսուսը բռնեն եւ սպանեն:
5 Բայց ասումէին՝ թէ Այս տօ-
նին [illegible] որ ժողովրդին մէջ խռ-
ովութիւն չըլինի:
6 Երբոր Յիսուս եկաւ գ Բեթա-
նիա՝ Սիմօն բորոտին դ տունը,
7 Նորան մօտ մին կին եկաւ՝ որ
մին շիշով թանկագին իւղ ունէր
եւ սեղան նստողներին մէջ նորան
գլխին վերայ թափեց:
8 Երբոր աշակերտները ե տեսին,
բարկացան եւ ասացին. Ինչու այդ
իւղը կորաւ.
9 Ինչու որ՝ կարելի էր շատ թանկ
ծախել դրան եւ աղքատներին տալ:
10 Յիսուս իմացաւ եւ նորանց ա-
սաց. Ի՞նչու էք այդ կնկանը նե-
ղութիւն տալիս. դա մին բարի
բան գործեց ինձ վերայ:
11 Ամէն ժամանակ աղքատները
ձեզ հետ զ ունիք՝ բայց ինձ միշտ
ձեզ հետ է չունիք:
12 Դորա այդ իւղը իմ մարմնոյս
վերայ թափելն՝ իմ թաղուելս նշա-
նակեց:
13 Բայց ճշմարիտն ասումեմ ձեզ՝
որ Ամէն աշխարհքի մէջ որ տեղ որ

ա Մարկ. ԺԴ. 1. Ղուկ. ԻԲ. 1. Յովհ. ԺԳ. 1. բ Սաղ. Բ. 2. Յովհ. ԺԱ. 47. Գործ. Դ. 25, 27. գ Գլ. ԻԱ. 17. դ Մարկ. ԺԴ. 3. Յովհ. ԺԱ. 1, 2. ԺԲ. 2. ե Յովհ. ԺԲ. 3. զ Բ Օրին. ԺԵ. 11. Յովհ. ԺԲ. 8. է Գլ. ԺԸ. 20. ԻԸ. 20. Յովհ. ԺԳ. 33. ԺԴ. 19. ԺԶ. 5. 28. ԺԷ. 11.

ընդ ամենայն աշխարհ՝ խօսեսցի եւ
զոր արար դա՝ 'ի յիշատակ դորա։

14 ‡Յայնժամ գնաց մի յերկոտա-
սանիցն անուանեալն Յուդա Սկա-
րիովտացի՝ առ քահանայապետսն,
եւ ասէ։
15 Զի՞նչ կամիք տալ ինձ, եւ ես
մատնեցից զնա ձեզ. եւ նոքա կշռ-
եցին նմա երեսուն արծաթի։

16 Եւ յայնմ հետէ խնդրէր պա-
րապ՝ զի մատնեսցէ զնա նոցա։

17 Եւ յառաջնում աւուր բաղար-
ջակերացն մատեան աշակերտքն
առ Յիսուս՝ եւ ասեն. Ո՞ւր կա-
միս՝ զի պատրաստեսցուք քեզ ու-
տել զզատիկն։
18 Եւ նա ասէ ցնոսա. Երթայք
'ի քաղաքն առ այս անուն, եւ ա-
սացէք ցնա. Վարդապետ ասէ՝
ժամանակ իմ մերձեալ է, առ քեզ
առնեմ զզատիկ աշակերտօքս հան-
դերձ։
19 Եւ արարին աշակերտքն որ-
պէս հրամայեաց նոցա Յիսուս, եւ
պատրաստեցին զզատիկն։
20 Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ կայր
բազմեալ ընդ երկոտասան աշա-
կերտսն։
21 Եւ մինչդեռ ուտէին նոքա, ա-
սէ. Ամէն ասեմ ձեզ, զի մի ոմն
'ի ձէնջ մատնելոց է զիս։
22 Եւ տրտմեցան յոյժ. եւ սկսան
ասել ցնա իւրաքանչիւր ոք 'ի նո-
ցանէ՝ Միթէ ես իցեմ Տէր։
23 Նա պատասխանի ետ եւ ասէ.
Որ մխեաց ընդ իս զձեռն իւր 'ի
սկաւառակին՝ նա մատնելոց է զիս։

24 Որդի մարդոյ երթայ՝ որպէս

այս աւետարանս կը քարոզուի, դորա
յիշատակին համար նա էլ կը խօսու-
ի՝ որ դա արաւ։
14 Այն ժամանակը տասներկուսիցը
‹ մինն՝ որ Յուդա Իսկարիովտացի էր
անուանւած՝ գնաց քահանայապետ-
ներին ‡ մօտ եւ ասաց.
15 Ինչ էք կամենում տալ ‡ ինձ.
եւ ես կը մատնեմ նորան ձեր ձեռ-
քը. եւ նորանք երեսուն արծաթի
տուլ խոստացան նորան։
16 Եւ նորանից յետեւ յարմար ժա-
մանակ էր ուզում որ նորան մատնէ
նորանց ձեռքը։
17 Եւ բաղարջակերաց առաջին
‡ օրն աշակերտներըր Յիսուսի մօտ
եկին եւ ասացին. Ո՞ր տեղ ես կա-
մենում՝ որ քեզ համար զատիկ ու-
տելու տեղ պատրաստենք։
18 Նա էլ նորանց ասաց. Գնացէք
քաղաքն՝ այս անուն մարդոյ մօտ,
եւ նորան ասացէք. Վարդապետն
ասում է՝ իմ ժամանակս մօտացել է՝
զատիկն իմ աշակերտներիս հետ
քեզ մօտ կանեմ։
19 Եւ աշակերտներն արին ինչպէս
որ Յիսուս հրամայեց նորանց. եւ
զատիկն պատրաստեցին։
20 Եւ երբոր իրիկուն ‹ էլաւ՝
տասներկու աշակերտներին հետ սե-
ղան էր նստել։
21 Եւ երբոր նորանք դեռ ուտու-
մէին. ասաց՝ ճշմարիտն ասում եմ
ձեզ՝ որ ձեզանից մինը կմատնէ ինձ։
22 Եւ շատ տրտմեցան. եւ նո-
րանց ամէն մէկն սկսեցին նորան
ասել. Տէր՝ մի՞ թէ ես եմ։
23 Նա պատասխան տուաւ եւ ա-
սաց. Նա որ ինձ հետ իւրն ձեռն
սկաւառակի մէջը ‡ կը մացնէ, նա
կը մատնէ ինձ։
24 Մարդոյ Որդին կը գնայ՝ ինչպէս

‹ Մարկ. ԺԴ. 10. Ղուկ. ԻԲ. 3. Յովհ. ԺԳ. 2. 30. ‡ Գլ. Ժ. 4.
‡ Զաք. ԺԱ. 12. Գլ. ԻԷ. 3. ‡ Ելք. ԺԲ. 6. 18. Մարկ. ԺԴ. 12. Ղուկ. ԻԲ. 7.
‹ Մարկ. ԺԴ. 17–21. Ղուկ. ԻԲ. 14. ‡ Սաղ. ԽԱ. 9. Ղուկ. ԻԲ. 21.
Յովհ. ԺԳ. 18. 21.

եւ գրեալ է վասն նորա. բայց վա՜յ
մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն Որդի
մարդոյ մատնեսցի. լաւ էր նմա՝
թէ չէր ծնեալ մարդն այն։

25 Պատասխանի ետ Յուդա՝ որ
մատնելոցն էր զնա՝ եւ ասէ. Մի՛-
թէ ես իցեմ Վարդապետ. ասէ
ցնա՝ Դու ասացեր։
26 Եւ մինչդեռ ընթրէին նոքա՝ առ
Յիսուս հաց՝ օրհնեաց եւ եբեկ, եւ
ետ աշակերտացն՝ եւ ասէ. Առէք
կերայք՝ այս է մարմին իմ։

27 Եւ առեալ բաժակ գոհացաւ՝
ետ նոցա եւ ասէ. Արբէք ՚ի դմանէ
ամենեքին։
28 Զի այդ է արիւն իմ նորոյ
ուխտի, որ ՚ի վերայ բազմաց հեղա-
նի ՚ի թողութիւն մեղաց։

29 Բայց ասեմ ձեզ. Ո՛չ եւս ար-
բից յայսմ հետէ ՚ի բերոյ որթոյ մին-
չեւ ցօրն ցայն՝ յորժամ արբից զդա
ընդ ձեզ նոր յարքայութեան Հօր
իմոյ։
30 Եւ օրհնեցին, եւ ելին ՚ի լեառն
Ձիթենեաց։
31 Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս.
Ամենեքին դուք գայթակղելոց էք
յինէն յայսմ գիշերի, զի գրեալ է՝
թէ Հարից զհովիւն եւ ցրուեսցին
ոչխարք հօտին։

32 Եւ յետ յառնելոյն իմոյ, յա-
ռաջեցից քան զձեզ ՚ի Գալիլեա։

33 Պատասխանի ետ Պետրոս՝ եւ
ասէ ցնա. Թէպէտ եւ ամենեքեան

որ նորա համար գրուած ծ է. բայց
վա՜յ այն մարդուն՝ որ նորա ձեռովը
Որդին մարդոյ կը մատնուի. լաւ
էր նորան՝ թէ այն մարդը ծնուած
չը լինէր։
25 Յուդան որ նորան մատնելու
էր՝ պատասխան տուաւ եւ ասաց.
Միթէ ես եմ Վարդապետ. նորան
ասաց՝ Դու ասացիր։
26 Եւ գեռ որ նորանք հ ճաշում
էին, Յիսուս հաց առաւ՝ օրհնեց
եւ ձ կտրեց, եւ աշակերտներին
տուաւ՝ եւ ասաց. Առէք կերէք՝
աս է իմ ղ մարմինս։
27 Եւ բաժակն առաւ՝ գոհացաւ՝
նորանց տուաւ, եւ ասաց. Դրանից
ամէնքդ ճ խմեցէք.
28 Ինչու որ՝ դա է իմ մ արիւնս
նոր ուխտի եւ յ պայմանի՝ որ շա-
տերի վերայ ն թափւում է, մեղաց
թողութեան համար։
29 Միայն թէ՝ ասում եմ ձեզ՝ թէ
Այսանից ետեւ որթի շ բերքիցն էլ
չեմ խմիլ՝ մինչեւ այն օրն՝ որ գա-
րան ձեզ հետ նոր խմեմ իմ Հօրս
արքայութեանը ո մէջ։
30 Եւ օրհնեցին՝ եւ դուրս ելան
Ձիթենեաց չ սարը։
31 Այն ժամանակը Յիսուս նորանց
ասաց. Դուք ամէնքդ այս պ գիշերս
կը գայթակղիք ջ ինձանից. ինչու
որ՝ գրուած է՝ թէ Հովիւը կը զար-
կեմ՝ եւ հօտի ոչխարները ռ կը ցրու-
ին։
32 Եւ իմ յարութիւն առնելուցս
ետեւ ձեզանից առաջ կը գնամ ս Գա-
լիլեա։
33 Պետրոս պատասխան տուաւ եւ
ասաց նորան. Թէ եւ ամէնքն էլ

ծ Սաղ. ԽԱ. Եսայ. ԾԳ. Դան. Թ. 26. Մարկ. Թ. 12. Ղուկ. ԻԴ. 25. 26. 49. Գործ. ԺԷ. 2, 3. ԻԶ. 22, 23. Ա Կորնթ. ԺԵ. 3.
կ Յովհ. ԺԳ. 12.
հ Մարկ. ԺԴ. 22. Ղուկ. ԻԲ. 19.
ձ Ա Կորնթ. ԺԱ. 23, 24. 25.
ղ Ա Կորնթ. Ժ. 16.
ճ Մարկ. ԺԴ. 23.
մ Ելից. ԻԴ. 8. Ղեւ. ԺԷ. 11.
յ Երեմ. ԼԱ. 31.
ն Գր. Ի. 28. Հռովմ. Ե. 15. Եբր. Թ. 22.
շ Մարկ. ԺԴ. 25. Ղուկ. ԻԲ. 18.
ո Գործ. Ժ. 41.
չ Մարկ. ԺԴ. 26.
պ Մարկ. ԺԴ. 27. Յովհ. ԺԶ. 32.
ջ Գր. ԺԱ. 6.
ռ Զաք. ԺԳ. 7.
ս Գր. ԻԸ. 7. 10. 16. Մարկ. ԺԴ. 28. ԺԶ. 7.

գայթակղեսցին 'ի քէն, սակայն ես ոչ գայթակղեցայց։

34 Ասէ ցնա Յիսուս. Ամէն ասեմ քեզ՝ զի յայսմ գիշերի՝ մինչչեւ հաւու խօսեալ իցէ, երիցս ուրասցիս զիս։

35 Ասէ ցնա Պետրոս. Թէ եւ մեռանել հասանիցէ ընդ քեզ, ընդ քեզ ոչ ուրացայց. նոյնպէս եւ ամենայն աշակերտքն ասէին։

36 Յայնժամ գայ Յիսուս ընդ նոսա 'ի գիւղ մի՝ որում անուն էր Գեթսեմանի, եւ ասէ ցնոսա. Նստարուք այդր, մինչեւ երթայց կացից յաղօթս։

37 Եւ առեալ ընդ իւր զՊետրոս՝ եւ զերկուս որդիսն Զեբեդեայ, սկսաւ տրտմել եւ հոգալ։

38 Յայնժամ ասէ ցնոսա. Տրտում է ոգի իմ մինչեւ 'ի մահ, կացէք աստ՝ եւ սկեցէք ընդ իս։

39 Եւ մատուցեալ յառաջ սակաւիկ մի՝ անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց, եկաց յաղօթս՝ եւ ասէ. Հայր իմ, եթէ հնար է՝ անցցէ բաժակս այս յինէն. բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու։

40 Գայ առ աշակերտսն, եւ գտանէ զնոսա 'ի քուն, եւ ասէ ցՊետրոս. Ա՞յդպէս ոչ կարացէք մի ժամ արթուն կալ ընդ իս։

41 Արթուն կացէք եւ աղօթս արարէք՝ զի մի անկանիցիք 'ի փորձութիւն. հոգիս յօժար է՝ բայց մարմինս տկար։

42 Դարձեալ երկրորդ անգամ չոգաւ՝ եկաց յաղօթս Յիսուս՝ եւ ասէ. Հայր իմ՝ եթէ հնար իցէ անցանել յինէն բաժակիս այսմիկ, ա-

գայթակղուին քեզանից, բայց ես չեմ գայթակղիլ։

34 Յիսուս նորան ասաց. Ճշմարիտ ասեմ քեզ. Թէ այս գիշեր՝ դեռ հաւն չը խօսած՝ երեք անգամ կուրանաս Լ ինձ։

35 Պետրոս նորան ասաց. Թէ որ քեզ հետ մեռնելու էլ լինիմ՝ չեմ ուրանալ քեզ. այնպէս էլ ամէն աշակերտներն էին ասում։

36 Այն ժամանակը Յիսուս նորանց հետ մին գիւղ + եկաւ՝ որ նորա անունը Գեթսեմանի էր՝ եւ նորանց ասաց. Այդ տեղ նստեցէք. մինչեւ որ գնամ աղօթք անեմ։

37 Եւ Պետրոսն ու Զեբեդեայի երկու ր որդիքըն իրեն հետ առաւ, սկսեց տրտմիլ եւ հոգս քաշել։

38 Այն ժամանակը նորանց ասաց. Իմ հոգիս մեռնելոյ չափ տրտմած ͻ է. այստեղ կացէք եւ ինձ հետ արթուն մնացէք։

39 Եւ մին քիչ առաջ գնաց՝ իրեն երեսին վերայ ընկաւ՝ աղօթք – արաւ՝ եւ ասաց. Իմ ÷ Հայր՝ թէ որ կարելի է թող այս + բաժակս ինձանից անցանէ. բայց չէ թէ ինչպէս ես եմ կամենում, այլ ինչպէս * դու։

40 Եկաւ աշակերտներին մօտ, եւ նորանց քնի մէջ գտաւ՝ եւ ասաց Պետրոսին. Այդպէս՝ մին ժամ էլ չը կարացիք ինձ հետ արթուն կենալ։

41 Արթուն կացէք՝ եւ աղօթք արէք՝ որ փորձանքի մէջ $ չընկնիք. հոգիս յօժար է՝ բայց մարմինս տկար։

42 Դարձեալ երկրորդ անգամ Յիսուս գնաց եւ աղօթք արաւ՝ եւ ասաց. Իմ Հայր՝ թէ կարելի է, որ այս բաժակս ինձանից անցանէ.

Լ Մարկ. ԺԴ. 30. Ղուկ. ԻԲ. 34. Յովհ. ԺԳ. 38.
+ Մարկ. ԺԴ. 32-35. Ղուկ. ԻԲ. 39. Յովհ. ԺԸ. 1.
ր Գէ. Գ. 21.
ͻ Յովհ. ԺԲ. 27.
– Մարկ. ԺԴ. 36. Ղուկ. ԻԲ. 42. Եբր. Ե. 7.
÷ Յովհ. ԺԲ. 27.
+ Գէ. Ի. 22.
* Յովհ. Ե. 30. Զ. 38. Փիլիպ. Բ. 8.
$ Մարկ. ԺԴ. 33. ԺԴ. 38. Ղուկ. ԻԲ. 40. 46. Եփես. Զ. 18.

սա թէ ոչ՝ արբից զսա . եղիցին կամք քո :

43 Եւ եկեալ միւսանգամ եգիտ զնոսա ՚ի քուն, զի էին աչք նորանց ծանրացեալք :

44 Եթող զնոսա՝ եւ գնաց, եկաց յաղօթս երրորդ անգամ, եւ դարձեալ զնոյն բան ասաց :

45 Յայնժամ գայ առ աշակերտսն՝ եւ ասէ ցնոսա . Ննջեցէք այսուհետեւ եւ հանգերուք . զի ահա հասեալ է ժամ, եւ Որդի մարդոյ մատնի ՚ի ձեռս մեղաւորաց :

46 Արիք երթիցուք աստի . զի ահաւասիկ եհաս՝ որ մատնելոցն է զիս :

47 Եւ մինչդեռ նա զայն խօսէր՝, ահա Յուդա մի յերկոտասանիցն եկն, եւ ընդ նմա ամբոխ բազում սրովք եւ բրօք ՚ի քահանայապետացըն՝ եւ ՚ի ծերոց ժողովրդեանն :

48 Եւ որ մատնելոցն էր զնա, ետ նոցա նշան՝ եւ ասէ . Ընդ որում ես համբուրեցից՝ նա է, զնա ունիջիք :

49 Եւ վաղվաղակի մատուցեալ առ Յիսուս՝ ասէ . Ո՛ղջ լեր Վարդապետ . եւ համբուրեաց ընդ նմա :

50 Եւ Յիսուս ասէ ցնա . Ը՛նկեր՝ վասն որոյ եկիր . յայնժամ մատուցեալ արկին ձեռս ՚ի Յիսուս, եւ կալան զնա :

51 Եւ ահա մի ոմն յայնցանէ՝ որ էին ընդ Յիսուսի, ձգեաց զձեռն եւ եհան զսուր իւր՝ եւ եհար ըզ ծառայ քահանայապետին, եւ ՚ի բաց եհան զունկն նորա :

52 Յայնժամ ասէ ցնա Յիսուս . Դարձո՛ զսուր քո ՚ի տեղի իւր . զի ամենեքեան՝ որ սուր առնուցուն՝ սրով անկանիցին :

ապա թէ ոչ՝ կը խմեմ սորան . թող քո կամքդ լինի :

43 Եւ նորէն եկաւ նորանց քնի մէջ գտաւ . ինչու որ՝ նորանց աչքերը ծանրացել էին :

44 Նորանց թողեց եւ գնաց՝ եւ երրորդ անգամ աղօթք արաւ՝ եւ նորէն այն խօսքն ասաց :

45 Այն ժամանակն աշակերտներին մօտ եկաւ՝ եւ նորանց ասաց . Այսուհետեւ քնած էրէք՝ եւ հանգիստ առէք . ինչու որ՝ ահա հասել է ժամանակը՝ եւ Որդին մարդոյ մատնըւում է մեղաւորաց ձեռքը :

46 Վե՛ր կացէք գնանք այս տեղից . ինչու որ՝ ահա հասաւ նա՝ որ պիտի ինձ մատնէ :

47 Եւ դեռ քանի որ նա այն բանը խօսում էր, ահա Յուդան՝ այն տասներկուսից մինն՝ եկաւ՝ եւ նորա հետ մեծ ամբոխ սրերով եւ բըրներով՝ քահանայապետներիցն ու ժողովրդի = ծերերիցը :

48 Եւ նա՝ որ նորան մատնելու էր, նորանց նշան տուաւ եւ ասաց . Որին որ ես կը համբուրեմ՝ նա է . նորան բռնեցէք :

49 Եւ շուտով Յիսուսի մօտ եկաւ՝ եւ ասաց, Ո՛ղջ կաց Վարդապետ՝ եւ նորան † համբուրեց :

50 Եւ Յիսուս նորան ասաց . † Ը՛նկեր ինչու համար եկիր . եւ այն ժամանակը մօտ եկին Յիսուսին ձեռք ձգեցին՝ եւ նորան բռնեցին :

51 Եւ ահա նորանցից մինն՝ որ Յիսուսի հետ էին, ձեռը մեկնեց եւ իրեն սուրըն հանեց՝ եւ քահանայապետի ծառային զարկեց, եւ նորա ականջը † կտրեց :

52 Այն ժամանակը Յիսուս նորան ասաց . Քո սուրըդ իրեն տեղը դիր . † պատճառն որ՝ նորանք որ սուր կառնեն, սրով պիտի † ընկնեն :

= Մարկ . ԺԴ . 43 .
Ղու . ԻԲ . 47 .
Յովհ . ԺԸ . 3 .
Գործ Ա . 16 .
† Բ Թագ . Ի . 9 .
† Սաղ . ԽԱ . 9 .
Ծն . 13 .
† Յովհ . ԺԸ . 10 .
† Ծննդ . Թ . 6 .
Յայտ . ԺԳ . 10 .

53 Թէ համարիցիս՝ թէ ոչ կարեմ
աղաչել զՀայր իմ. եւ հասուցա-
նիցէ ինձ այժմ աստ՝ աւելի քան
զերկոտասան գունդս հրեշտակաց։
54 Այլ զիարդ լնուցուն գիրք՝
թէ այսպէս պարտ է լինել։
55 Յայնժամ ասաց Յիսուս զամ-
բոխն. Իբրեւ 'ի վերայ աւազակի
ելիք սուսերօք եւ բրօք՝ ունել
զիս. հանապազ առ ձեզ 'ի տաճա-
րին նստէի եւ ուսուցանէի, եւ ոչ
կալայք զիս։
56 Այլ այս ամենայն եղեւ՝ զի
լցցին գիրք մարգարէիցն. յայնժամ
աշակերտքն ամենեքին թողին զնա
եւ փախեան։
57 Իսկ նոքա կալեալ զՅիսուս
ածին առ Կայիափա քահանայապետ՝
ուր դպիրքն եւ ծերքն ժողովեալ էին։

58 Եւ Պետրոս զհետ նորա եր-
թայր բացագոյն մինչեւ 'ի սրահ քա-
հանայապետին. եւ մտեալ 'ի ներքս
նստէր ընդ սպասաւորսն տեսանել
զկատարածն։
59 Իսկ քահանայապետքն եւ ա-
մենայն ատեանն խնդրէին սուտ
վկայութիւն զՅիսուսէ, զի սպան-
ցեն զնա։
60 Եւ ոչ գտանէին 'ի բազմաց
սուտ վկայիցն մատուցելոց. յետոյ
մատուցեալ երկու սուտ վկայք,

61 Ասէին՝ թէ Սա ասէր՝ կարող
եմ քակել զտաճարն Աստուծոյ, եւ
զերիս աւուրս շինել։
62 Եւ յարուցեալ քահանայապետն
ասէ ցնա. Զոսա ինչ պատասխա-
նի, զինչ դոքա ամբաստանեն զքէն։

63 Եւ Յիսուս լուռ կայր. պա-

53 Կամ թէ կարծեմ մի որ չեմ
կարող իմ Հօրըս աղաչել՝ եւ հիմիկ
տասներկուքէ գունդ հրեշտակներից
աւելի կը հասցնէ ինձ զ այստեղ։
54 Բայց ինչպէս կը կատարուին
գրքերը՝ թէ այսպէս պէտք է է լինել։
55 Այն ժամանակը Յիսուս այն
ամբոխին ասաց. Ինչպէս մէն աւա-
զակի վերայ սրերով եւ բիրերով
դուրս ելիք ինձ բռնել. միշտ ձեզ
մօտ տաճարումը նստումէի՝ եւ սո-
վորցնումէի՝ եւ չը բռնեցիք ինձ։
56 Բայց այս ամէնս էլաւ՝ որ մար-
գարէներին գրքերը ը կատարուին.
այն ժամանակին ամէն աշակերտները
նորան թողին եւ թ փախան։
57 Բայց նորանք Յիսուսին բռնե-
ցին եւ տարան Կայիափա քահանա-
յապետին ժ մօտ, որ տեղ որ կարդա-
ցողներն ու ծերերը ժողոված էին։
58 Եւ Պետրոս հեռուանց գնումէր
նորա եւեւէն մինչեւ քահանայա-
պետին սրահը. եւ ներս մտաւ ծա-
ռաներին հետ նստեց՝ որ վերջը
տեսնէ։
59 Բայց քահանայապետներն ու
բոլոր ատեանը Յիսուսի համար սուտ
վկայութիւն էին ուզում՝ որ նորան
սպանեն։
60 Եւ այն շատ սուտ վկաներից
որ այն տեղ էին ի եկել, բան չէին
գտնում. յետոյ երկու սուտ վկաներ
առաջ լ եկին,
61 Ասումէին՝ թէ Սա ասումէր՝ ես
կարող եմ Աստուծոյ տաճարը քան-
դել՝ եւ երեք օրումը խ շինել։
62 Եւ քահանայապետը վերկացաւ
նորան ասաց. Պատասխան չես տա-
լիս՝ ինչ որ դորանք քեզանից ծ գան-
գատումեն։
63 Եւ Յիսուս լուռ էր կ կենում.

զ Դ Թագ. Զ. 17. Դան. Է. 10.
է Եսայ. ԾԳ. 7, 12. Համար. 24. Ղուկ. ԻԴ. 25. 44. 46.
ը Ողբ. Դ. 20. Համար. 54.
թ Յովհ. ԺԸ. 15.
ժ Մարկ. ԺԴ. 53. Ղուկ. ԻԲ. 54. Յովհ. ԺԸ. 12, 13. 24.
ի Սաղ. ԻԷ. 12. ԼԵ. 11. Մարկ. ԺԴ. 55. Գործ. Զ. 13.
լ Բ Օրին. ԺԹ. 15.
խ Գլ. ԻԷ. 40. Յովհ. Բ. 19.
ծ Մարկ. ԺԴ. 60.
կ Եսայ. ԾԳ. 7. Գլ. ԻԷ. 12. 14.

տասխանի ես քահանայապետին և ասէ ցնա. Երդմնեցուցանեմ զքեզ յԱստուած կենդանի, զի ասասցես մեզ՝ թէ Դու ես Քրիստոսն որդի Աստուծոյ։

64 Ասէ ցնա Յիսուս. Դու ասացեր. բայց ասեմ ձեզ, յայսմհետէ տեսանիցէք զՈրդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրութեանն՝ և եկեալ ընդ ամպս երկնից։

65 Յայնժամ քահանայապետն պատառեաց զհանդերձս իւր, և ասէ. Հայհոյեաց, զի՞ ևս պիտոյ են մեզ վկայք, ահա արդ լուայք զհայհոյութիւն դորա։

66 Զի՞նչ հաճոյ է ձեզ. Նոքա պատասխանի ետուն և ասեն. Մահապարտ է։

67 Յայնժամ թքին ընդ երեսս նորա, և կափեցին զնա. և ոմանք ապտակեցին, և ասեն.

68 Մարգարէաց մեզ Քրիստոս. ո՞վ է՝ որ եհարն զքեզ։

69 Իսկ Պետրոս նստէր արտաքոյ ի գաւթին. մատեաւ առ նա աղախին մի, և ասէ. Եւ դու ընդ Յիսուսի Գալիլեացւոյ էիր։

70 Նա ուրացաւ առաջի ամենեցուն՝ և ասէ, թէ Ո՛չ գիտեմ զինչ խօսիս։

71 Եւ ի ելանել նորա արտաքս ընդ դրունսն՝ ետես զնա այլ կին մի, և ասէ ցայնոսիկ՝ որ անդն կային. Եւ սա ընդ Յիսուսի Նազովրեցւոյ էր։

72 Եւ դարձեալ ուրացաւ երդմամբ, թէ Ո՛չ գիտեմ զայրն։

73 Եւ յետ սակաւ միոյ մատուց-

քահանայապետը պատասխան տըւաւ, և նորան ասաց. Կենդանի Աստուածովն եմ երդում [հ] տալիս քեզ՝ որ ասես մեզ՝ թէ Դու ես որդի Աստուծոյ Քրիստոսը։

64 Նորան ասաց. Դու ասացիր. բայց ասում եմ ձեզ՝ որ հիմիկուց ետև կը տեսնէք Որդին [ձ] մարդոյ Աստուծոյ զօրութեան աջ կողմը նըստած՝ և երկնքի ամպերին վերայ [ղ] եկած։

65 Այն ժամանակը քահանայապետըն իւրեն շորերը [ճ] պատառեց և ասաց. Հայհոյեց. էլ ինչ պէտք է մեզ վկայ. ահա հիմիկ դորա հայհոյանքը լսեցիք։

66 Ի՞նչ հաճոյ է ձեզ. Նորանք պատասխան տուին՝ և ասացին. Դա մահապարտ [մ] է։

67 Այն ժամանակը թքեցին նորա [յ] երեսին. և բռնցքով թակեցին. և մին քանիսն էլ [ն] ապտակ տուին նորան, և ասացին.

68 Դու Քրիստոս՝ մարգարէացիր մեզ՝ նա ով է որ քեզ [շ] զարկեց։

69 Եւ Պետրոս դուրսը նստած էր [ո] սրահումը. մին աղախին նորան մօտ եկաւ, և ասաց. Դու էլ այն Յիսուս Գալիլեացուն հետն էիր։

70 Նա ամենի առաջին ուրացաւ՝ և ասաց. Չեմ գիտում թէ դու ինչ ես խօսում։

71 Եւ երբոր նա դռնեցը դուրս գնաց, մին ուրիշ կին նորան տեսաւ՝ և նորանց որ այն տեղ կային ասաց. Սա էլ Յիսուս Նազօրեցուն հետն էր։

72 Եւ նորէն երդումով ուրացաւ՝ թէ Ես այն մարդը չեմ ճանաչում։

73 Եւ մին քիչ յետոյ՝ նորանք որ

հ Ղեւ. Ե. 1. Ա. Թագ. ԺԴ. 24. 26.
ձ Դան. Է. 13. Գլ. ԺԶ. 27. ԻԴ. 30. ԻԵ. 31. Ղու. ԻԱ. 27. Յովհ. Ա. 51. Հռովմ. ԺԴ. 10. Ա Թես. Դ. 16. Յայտ. Ա. 7.
ղ Սաղ. ՃԺ. 1. Գործ. Է. 55.
ճ Դ Թագ. ԺԸ. 37. ԺԹ. 1.
մ Ղեւ. ԻԴ. 16. Յովհ. ԺԹ. 7.
յ Եսայ. Ծ. 6. ԾԳ. 3. Գլ. ԻԷ. 30.
ն Ղու. ԻԲ. 63. Յովհ. ԺԹ. 3.
շ Մարկ. ԺԴ. 65. Ղու. ԻԲ. 64.
ո Մարկ. ԺԴ. 66. Ղու. ԻԲ. 55. Յովհ. ԺԸ. 16, 17. 25.

կալ որք կային անդ, ասեն ցՊետ-
րոս. Արդարեւ եւ դու 'ի նոցանէ
ես, քանզի եւ խօսք քո յայտ առ-
նեն զքեզ։
74 Յայնժամ սկսաւ՝ նզովել եւ
երդնուլ, թէ Ո՛չ գիտեմ զայրն.
եւ իսկոյն հաւ խօսեցաւ։
75 Եւ յիշեաց Պետրոս զբանն
Յիսուսի զոր ասաց, թէ Մինչչեւ
հաւու խօսեալ լիցէ՝ երիցս ուրա-
ցիս զիս. եւ ելեալ արտաքս՝ ելաց
դառնապէս։

այնտեղ կանգնած էին, եկին Պետ-
րոսին ասացին. Իրաւ որ դու էլ
նորանցից ես. ինչու որ՝ քո խօսքդ
էլ յայտնում է քեզ։
74 Այն ժամանակին սկսեց անիծել
եւ զ երդուել՝ թէ Ես այն մարդը չեմ
ճանաչում, եւ շուտով հաւը կանչեց։
է 75 Եւ Պետրոս յիշեց Յիսուսի այն
խօսքերն՝ որ ասաց. թէ Հաւը դեռ
չի կանչած՝ երեք անգամ կուրանաս
զինձ. եւ դուրս գնաց դառն ար-
տասուքով լաց եղաւ։

## ԳԼ. ԻԷ

1 Իբրեւ այգ եղեւ, խորհուրդ
արարին ամենայն քահանայապետքն
եւ ծերք ժողովրդեանն վասն Յի-
սուսի սպանանել զնա։
2 Կապեցին զնա, եւ տարան զը-
նացին. եւ ետուն 'ի ձեռս Պոն-
տացւոյ Պիղատոսի դատաւորի։
3 Յայնժամ տեսեալ Յուդայի՝ որ
մատնեացն զնա, թէ դատապարտե-
ցաւ, զղջացաւ՝ եւ դարձոյց զար-
ծաթն առ քահանայապետսն եւ
ծերս ժողովրդեանն։
4 Եւ ասէ. Մեղայ, զի մատնե-
ցի զարիւն արդար. եւ նոքա ա-
սեն. Մեզ չէ փոյթ, դու գիտես։
5 Եւ ընկեց զարծաթն 'ի տաճա-
րին՝ եւ գնաց, եւ չոգաւ խեղդե-
ցաւ։
6 Իսկ քահանայապետացն առեալ
զարծաթն՝ ասեն. Ո՛չ է արժան ըն-
դունել զդա 'ի կորբանն, քանզի
գին արեան են։
7 Խորհուրդ առեալ՝ գնեցին նո-
ւաւ զագարակն բրուտի 'ի գերեզման
օտարաց։
8 Վասն այնորիկ կոչեցաւ ագա-

1 Երբոր առաւօտ եղաւ, ամէն
քահանայապետներն ու ժողովրդին
ծերերը Յիսուսի համար խորհուրդ
արին՝ որ սպանեն ա նորան։
2 Նորան կապեցին, եւ առին
գնացին, եւ Պոնտացի Պիղատոս
դատաւորի ձեռքը բ տուին։
3 Այն ժամանակը Յուդան՝ որ
նորան մատնեց՝ տեսաւ որ դատա-
պարտուեցաւ, զղջացաւ՝ եւ այն ար-
ծաթը յետ դարձրուց քահանայա-
պետներին եւ ժողովրդի գ ծերե-
րին,
4 Եւ ասաց. Մեղայ՝ ինչու որ
արդար արիւն մատնեցի. նորանք
էլ ասացին՝ Մենք հոգս չունենք.
դու գիտես։
5 Եւ արծաթը ձգեց տաճարին
մէջ՝ եւ յետ եկաւ, եւ գնաց դ խեղ-
դուեցաւ։
6 Բայց քահանայապետներն այն
արծաթն առին՝ եւ ասացին. Ար-
ժան չէ՞ որ դա գանձանակին մէջն
ընդունենք, ինչու որ՝ արիւնի գին է։
7 Խորհուրդ արին՝ եւ նորանով
բրուտի արտատեղը գնեցին՝ որ օտա-
րականների գերեզմանատեղ լինի։
8 Նրա համար՝ այն արտատեղն՝

ե Ղու. ԻԲ. 59. զ Մարկ ԺԴ. 71. է Համար. 34. Մարկ. ԺԴ. 30. Ղու. ԻԲ. 61. 62. Յովհ. ԺԳ. 38.

—

ա Սաղ. Բ. 2. Մարկ. ԺԵ. 1. Ղու. ԻԲ. 66. բ Գլ. Ի. 19. Ղու. ԻԳ. 1. Յովհ. ԺԸ. 28. Գործ. Գ. 13. գ Գլ. ԻԶ. 14, 15. դ Բ Թագ. ԺԷ. 23. Գործ. Ա. 18.

րակն այն, Ագարակ արեան՝ մինչեւ ցայսօր:
9 Յայնժամ լցաւ՝ որ ասացաւն ՚ի ձեռն Երեմիայ մարգարէի. Եւ առին զերեսուն արծաթին զգինս վաճառելոյն, զոր արկին յորդւոցն Իսրայէլի:
10 Եւ ետուն զնա յագարակն բրուտի. որպէս հրամայեաց ինձ Տէր:
11 Եւ Յիսուս եկաց առաջի դատաւորին. եհարց զնա դատաւորն՝ եւ ասէ. Դու ես թագաւորն Հրէից. եւ Յիսուս ասէ. Դու ասես:
12 Եւ ՚ի չարախօսելն նորա ՚ի քահանայապետիցն եւ ՚ի ծերոց, ոչ ինչ ետ պատասխանի:
13 Յայնժամ ասէ ցնա Պիղատոս. Ո՞չ լսես՝ որչափ զքեւ հակառակ քո վկայեն:
14 Եւ ոչ ետ նմա պատասխանի՝ եւ ոչ բան մի, [մինչեւ զարմանալ դատաւորին յոյժ:
15 Բայց ըստ տօնի սովոր էր դատաւորն արձակել ժողովրդեանն կապեալ մի՝ զոր կամէին:
16 Ունէին յայնժամ կապեալ մի նշանաւոր, որում անուն էր Յեսու Բարաբբա:
17 Իբրեւ ժողովեցան, ասէ ցնոսա Պիղատոս. Զո՞ կամիք յերկուց աստի՝ զի արձակեցից ձեզ, զՅեսու Բարաբբա՞ն եթէ զՅիսուս զանուանեալն Քրիստոս,
18 Քանզի գիտէր՝ թէ առ նախանձու մատնեցին զնա:
19 Եւ մինչ նստէր յատենին, առաքեաց առ նա կինն իւր՝ եւ ասէ. Չկայ ինչ քո եւ արդարոյն այնո-

Արիւնի արտ կոչուեցաւ մինչեւ այս ե օր:
9 Այն ժամանակը կատարուեցաւ նա՝ որ Երեմիա մարգարէի ձեռովը ասուեցաւ. Եւ այն երեսուն արծաթի փողերն առին՝ այն ծախուածի գինը՝ որ նորան Իսրայէլի որդի-ներէն առել զ էին,
10 Եւ նորանք բրուտի արտին տը-ւին՝ ինչպէս որ հրամայեց ինձ Տէրը:
11 Եւ Յիսուս կանգնեց դատա-ւորի առաջին. դատաւորը հարցուց նորան՝ եւ ասաց. է Դու ես Հրէից թագաւորն. Եւ Յիսուս ա-սաց. Դու ես ը ասում:
12 Եւ երբոր քահանայապետներն ու ծերերը նորանից չարախօսու-թիւն էին անում, նա իսկի պա-տասխան թ չտուաւ:
13 Այն ժամանակը Պիղատոս ասաց նորան. Չես լսում թէ դորանք որչափ քեզ հակառակ են ժ վկայում:
14 Եւ նորան բնաւ մին բան էլ պատասխան չտուաւ. մինչեւ որ դատաւորն էլ շատ զարմացաւ:
15 Բայց սովորութիւն էր դատա-ւորին՝ որ տօնի ժամանակին մին ժա բանտարկեալ արձակէ ժողովրդին համար. որին որ ուզում էին:
16 Այն ժամանակը մին անուանի բանտարկեալ ունէին. որ նորան ա-նունը Յեսու Բարաբբա էր:
17 Երբոր հաւաքուեցան, Պիղա-տոս նորանց ասաց. Այս երկուսից որին էք ուզում՝ որ ձեզ համար արձակեմ. Յեսու Բարաբբային, թէ Յիսուսին, որ Քրիստոս է կոչված:
18 Պատճառը՝ գիտացէր՝ որ նախանձից էին մատնել նորան:
19 Եւ դեռ քանի որ դատաստան էր նստած, նորա կինն ուղարկեց նորան մօտ՝ եւ ասաց. Այդ արդար

ե Գործ. Ա. 19.
զ Զաք. ԺԱ. 12, 13.
Մարկ. ԺԵ. 2.
Ղու. ԻԳ. 3.
Յովհ. ԺԸ. 33.
ը Յովհ. ԺԸ. 37.
Ա Տիմ. Զ. 13.
թ Վր. ԻԶ. 63.
Յովհ. ԺԹ. 9.
ժ Վր. ԻԶ. 62.
Յովհ. ԺԹ. 10.
ժա Մարկ. ԺԵ. 6.
Ղու. ԻԳ. 17.
Յովհ. ԺԸ. 39.

րիկ, զի բազում անցք անցին ընդ իս այսօր յանուրջս վասն նորա։

20 Իսկ քահանայապետքն եւ ծերք հաւանեցուցին զժողովուրդսն, զի խնդրեսցեն զԲարաբբան՝ եւ զՅիսուս կորուսցեն։

21 Պատասխանի ետ դատաւորն՝ եւ ասէ ցնոսա. Զո՞ կամիք զի արձակեցից ձեզ յերկուց այտի. եւ նոքա ասեն՝ զԲարաբբա։

22 Ասէ ցնոսա Պիղատոս. Իսկ զի՞ արարից զՅիսուս զանուանեալն Քրիստոս։

23 Ասեն ամենեքեան՝ Խաչեսցի. Եւ նա ասէ, Զի՞նչ չար արար. եւ նոքա առաւել եւս աղաղակէին եւ ասէին, Խաչեսցի։

24 Եւ տեսեալ Պիղատոսի թէ ոչ ինչ օգնէ՝ այլ առաւել խռովութիւն լինի, առեալ ջուր՝ լուաց ըզ ձեռս առաջի ժողովրդեանն՝ եւ ասէ. Քաւեալ եմ ես յարենէ արդարոյդ այդորիկ. դուք գիտասջիք։

25 Պատասխանի ետ ամենայն ժողովուրդն՝ եւ ասէ. Արիւն դորա ՚ի վերայ մեր եւ ՚ի վերայ որդւոց մերոց։

26 Յայնժամ արձակեաց նոցա ըզ Բարաբբայն, եւ զՅիսուս գան հարեալ՝ ետ ՚ի ձեռս՝ զի խաչեսցի։

27 Յայնժամ զինուորք դատաւորին առին զՅիսուս յապարանսն. եւ ժողովեցին ՚ի վերայ նորա զամենայն զգունդն։

28 Մերկացին զնա, եւ արկին ըզ նովաւ քղամիդ կարմիր։

29 Եւ բոլորեալ պսակ ՚ի փշոց՝ ե-

մարդոյդ հետ դու բան չունիս. ինչու որ՝ շատ բաներ երազումս այսօր իմ գլխուս անցան նորան համար։

20 Բայց քահանայապետներն ու ծերերը ժողովուրդներին հաւանեցրին՝ որ Բարաբբային ուզեն՝ եւ Յիսուսին ւ կորցնեն։

21 Պատասխան տուաւ դատաւորն ու ասաց նորանց՝ Այս երկուսիցս ո՞րին էք ուզում՝ որ արձակեմ ձեզ համար. եւ նորանք ասացին՝ Բարաբբային։

22 Պիղատոս ասաց նորանց. Ապա ի՞նչ անեմ Քրիստոս կոչված Յիսուսին։

23 Ամէնքն էլ ասացին. Պէտք է խաչվի. եւ նա ասաց. Ի՞նչ չար բան է արել. եւ նորանք էլ աւելի աղաղակումէին եւ ասում՝ Պէտք է խաչվի։

24 Եւ Պիղատոս երբոր տեսաւ՝ թէ բնաւ օգուտ չի անում, բայց աւելի խռովութիւն է լինում, ջուր առաւ՝ ժողովրդի առաջին ձեռները ի լուաց՝ եւ ասաց. Ես այդ արդարիս արիւնիցն անպարտ եմ, դուք գիտէք։

25 Բոլոր ժողովուրդը պատասխան տուաւ եւ ասաց. Դորա արիւնը մեզ վերայ եւ մեր որդոց ծ վերայ։

26 Այն ժամանակը Բարաբբային արձակեց նորանց համար, եւ Յիսուսին է ծեծեց, եւ ձեռները տուաւ՝ որ խաչվի։

27 Այն ժամանակը դատաւորի զինուորները՝ Յիսուսին տարան հ պալատը, եւ ամէն զինուորների գունդը հաւաքեցին նորա վերայ։

28 Նորան մերկացրին՝ եւ նորա վերայ մին կարմիր յ քղամիդ ձգեցին։

29 Եւ փշերից մին ղ թագ բռ-

ւ Մարկ. ԺԵ. 11. Ղուկ. ԻԳ. 18. Յովհ. ԺԸ. 40. Գործ. Գ. 14. ի Բ Օրին. ԻԱ. 6.

ծ Բ Օրին. ԺԹ. 10. Եսա. Բ. 19. Բ Թագ. Ա. 16. Գ Թագ. Բ. 32. Գործ. Ե. 28.

է Եսայ. ԾԳ. 5. Մարկ. ԺԵ. 15. Ղուկ. ԻԳ. 16. 24. 25. Յովհ. ԺԹ. 1. 16.

հ Մարկ. ԺԵ. 16. Յովհ. ԺԹ. 2. յ Ղուկ. ԻԳ. 11. ղ Սաղ. ԿԹ. 19. Եսայ. ԾԳ. 3.

դին 'ի գլուխ նորա, եւ եղէգն յա-
ջոյ ձեռին նորա. ծունր իջեալ ա-
ռաջի նորա՝ կատակէին եւ ասէին.
Ո՛ղջ եր Թագաւոր Հրէից։

30 Եւ թքեալ 'ի նա՝ առնուին զե-
ղէգնն եւ ծեծէին զգլուխ նորա։

31 Եւ յորժամ ձաղեցին զնա, մեր-
կացուցին 'ի նմանէ զքղամիդն՝ եւ
ագուցին նմա զիւր հանդերձն, եւ
տարան զնա 'ի խաչ հանել.
32 Եւ ելեալ արտաքս՝ գտին այր
մի Կիւրենացի՝ անուն Սիմոն, զնա
կալան պահակ՝ զի բարձցէ զխաչն
նորա։
33 Եւ եկեալ 'ի տեղին անուանեալ
Գողգոթա, որ տեղի է կառափելոյ,
34 Ետուն նմա ըմպել գինի ընդ
լեղի խառնեալ. եւ իբրեւ ճաշա-
կեաց, ոչ կամէր ըմպել։
35 Եւ հանեալ զնա 'ի խաչ՝ բա-
ժանեցին զհանդերձս նորա վիճա-
կաւ. զի լցցի բանն՝ որ ասացաւ
'ի մարգարէէն. Բաժանեցին զհան-
դերձս իմ յինքեանս. եւ 'ի վերայ
պատմուճանի իմոյ վիճակս արկա-
նէին։
36 Եւ նստեալ պահէին զնա։
37 Եւ եդին 'ի վերայ գլխոյ նորա՝
գրեալ զվնաս նորա. Թէ Այս է Յի-
սուս Թագաւորն Հրէից։
38 Յայնժամ հանին ընդ նմա 'ի
խաչ երկուս աւազակս, մի յաջմէ
նորա՝ եւ մի յահեկէ։

39 Եւ որ անցանէինն՝ հայհոյէին
զնա, շարժէին զգլուխս իւրեանց,

յօրինեցին՝ նորան գլուխը դրին, եւ
նորա աջ ձեռին մին եղէգ. նորա
առաջին ծունր դնելով՝ ծաղր էին
անում եւ ասում. Ո՛ղջ կաց Հրէից
Թագաւոր։
30 Եւ նորան թքելով այն եղէգըն
առնումէին եւ նորա գլուխը [ճ] թա-
կումէին։
31 Եւ երբոր ծաղր արին նորան,
այն կարմիր քղամիդը նորանից հա-
նեցին՝ եւ նորան տարան որ խաչ
[մ] հանեն։
32 Եւ երբոր դուրս [յ] էլան, մին
Կիւրենացի մարդ գտին՝ Սիմոն [ն] ա-
նունով. նորան ուժով բռնեցին քա-
շեցին՝ որ նորան խաչը վեր առնէ։
33 Երբոր [շ] Գողգոթա ասած տե-
ղըն եկին, որ գլխատելոյ տեղ է,
34 Նորան լեղայ հետ խառնած գի-
նի տուին [ո] խմելու, եւ երբոր համն
առաւ, չէր կամենում որ խմէ։
35 Եւ երբոր նորան խաչ հանե-
ցին, նորա շորերը վիճակով [չ] բա-
ժանեցին. որ կատարվի այն խօսքն՝
որ մարգարէից ասած էր՝ թէ իմ
շորերս իրենց մէջ բաժանեցին՝ եւ
իմ վերարկուիս վերայ վիճակ էին
[պ] ձգում։
36 Եւ նստած պահումէին [ջ] Նորան։
37 Եւ նորան մեղքը գրեցին՝ եւ
իրեն գլխին վերայ դրին՝ թէ Սա
է Յիսուս Հրէից [ռ] Թագաւորը։
38 Այն ժամանակը նորա հետ եր-
կու [ս] աւազակներ էլ խաչ հանեցին՝
մինը նորա աջ կողմը եւ միւսը նո-
րա ձախ կողմը։
39 Եւ նորանք որ այնտեղից ան-
ցանում էին, հայհոյումէին [վ] Նորան.
իրենց գլխները շարժում,

[ճ] Եսայ. Ծ. 6, Գլ. ԻԶ. 67.
[մ] Եսայ. ԾԳ. 7.
[յ] Թուո. ԺԵ. 35. Գ Թագ. ԻԱ. 13. Գործ. Է. 58. Եբր. ԺԳ. 12.
[ն] Մարկ. ԺԵ. 21. Ղուկ. ԻԳ. 26.
[շ] Մարկ. ԺԵ. 22. Ղուկ. ԻԳ. 33. Յովհ. ԺԹ. 17.
[ո] Սաղ. ԿԹ. 21. Համմար. 48.
[չ] Մարկ. ԺԵ. 24. Ղուկ. ԻԳ. 34. Յովհ. ԺԹ. 24.
[պ] Սաղ. ԻԲ. 18.
[ջ] Համմար. 54.
[ռ] Մարկ. ԺԵ. 26. Ղուկ. ԻԳ. 38. Յովհ. ԺԹ. 19.
[ս] Եսայ. ԾԳ. 12. Մարկ. ԺԵ. 27. Ղուկ. ԻԳ. 32, 33. Յովհ. ԺԹ. 18.
[վ] Սաղ. ԻԱ. 7. ՃԸ. 25. Մարկ. ԺԵ. 29. Ղուկ. ԻԳ. 35.

40 Եւ ասէին. Վա՜հ որ քակէիր զտաճարն, եւ զերիս աւուրս շինէիր զնա. ապրեցո՛ զքեզ, թէ Որդի ես Աստուծոյ՝ էջ ՚ի խաչէդ։
41 Նոյնպէս եւ քահանայապետքն ձաղէին հանդերձ դպրօքն եւ ծերովք՝ եւ ասէին.
42 Զայլս ապրեցոյց՝ զինքն ոչ կարէ ապրեցուցանել. եթէ թագաւոր է Իսրայէլի՝ իջցէ այժմ ՚ի խաչէդ՝ եւ հաւատասցուք զմա։
43 Եթէ յուսացաւ յԱստուած, փրկեսցէ այժմ զդա՝ եթէ կամի ընդ դա. քանզի ասաց՝ եթէ Աստուծոյ Որդի եմ։
44 Զնոյն եւ աւազակքն՝ որ խաչեալ էին ընդ նմա, նախատէին զնա։
45 Եւ ՚ի վեց ժամէ աւուրն՝ խաւար եղեւ ՚ի վերայ ամենայն երկրի մինչեւ ցինն ժամ։
46 Եւ զինն ժամաւն կարդաց Յիսուս ՚ի ձայն մեծ եւ ասէ. Էլի՛ Էլի՛ լամա սաբաքթանի. այսինքն է. Աստուած իմ Աստուած իմ ընդէ՞ր թողեր զիս։
47 Ոմանք յայնցանէ որ անդն կային, իբրեւ լուան՝ ասէին. Զեղիա կարդայ դա։
48 Եւ վաղվաղակի ընթացաւ մի ոմն ՚ի նոցանէ՝ առ սպունգ լի քացախով, հարեալ յեղեգան՝ եւ արբուցանէր նմա։
49 Եւ կէսքն ասէին. Թո՛ղ տեսցուք եթէ գա՞յ Եղիա փրկել զդա։
50 Եւ Յիսուս դարձեալ աղաղակեաց ՚ի ձայն մեծ՝ եւ արձակեաց զոգին։
51 Եւ ահա վարագոյր տաճարին

40 Ու ասում. Վա՛հ որ տաճարը *քանդում՝ եւ երեք օրում † շինում էիր. ազատիր քեզ՝ թէ որ Աստուծոյ Որդին ես, վէր եկ ‡ խաչից։
41 Այնպէս էլ քահանայապետները ծաղր էին անում կարգացողներին եւ ծերերին հետ՝ եւ ասում.
42 Ուրիշներին ազատեցաւ. ինքն իրեն չի կարում ազատել. թէ որ Իսրայէլի թագաւորն է, հիմիկ թո՛ղ վէր գայ խաչից, եւ հաւատանք դորան։
43 Թէ որ Աստուծոյն § յուսացաւ, հիմիկ թո՛ղ փրկէ դորան, թէ որ ուզումէ դորան. ինչու որ՝ ասաց. թէ Աստուծոյ Որդի եմ։
44 Այնպէս էլ աւազակները որ նորա հետ խաչված էին՝ նորան –նախատումէին։
45 Եւ օրի վեց ժամիցը մինչեւ իննը ժամն ամէն երկրի վերայ խաւար ‖ էղաւ։
46 Եւ իննը ժամին դէմ, Յիսուս մեծ ձայնով կանչեց եւ ասաց. ¶ Էլի՛ Էլի՛ լամա սաբաքթանի. որ կասէ. Իմ Աստուած՝ իմ Աստուած՝ ինչու թողիր * ինձ։
47 Մէն քանի մարդիկ նորանցից՝ որ այնտեղ կանգնած էին՝ երբոր լսեցին, ասումէին՝ Դա Եղիային է կանչում։
48 Եւ շուտով նորանցից մինը վազեց՝ սպունգ քացախով լըցրեց առաւ՝ եղէգի վերայ անցրուց՝ եւ նորան տուաւ, որ ‡ խըմէ։
49 Եւ կէսն ասումէին. Թո՛ղ տեսնենք. եթէ Եղիան կըգա՞յ դորան փրկել։
50 Եւ Յիսուս դարձեալ մեծ ձայնով կանչեց՝ եւ արձակեց –հոգին։
51 Եւ ահա տաճարին վարագուրը

* Գլ. ԻԶ. 61։ Յովհ. Բ. 19։
† Գլ. ԻԶ. 63։
‡ Սաղ. ԻԲ. 8։
§ Մարկ. ԺԵ. 32։
Ղուկ. ԻԳ. 39։
‖ Իմաստ. Ը. 9։
Մարկ. ԺԵ. 33։
Ղուկ. ԻԳ. 44։
¶ Եբր. Ե. 7։
* Սաղ. ԻԲ. 1.
‡ Սաղ. ԿԸ. 21։
Մարկ. ԺԵ. 36։
Ղուկ. ԻԳ. 36։
Յովհ. ԺԹ. 29։
– Մարկ. ԺԵ. 37։
Ղուկ. ԻԳ. 45։

ցելաւ յերկուս՝ 'ի վերուստ մինչեւ
'ի վայր, եւ երկիր շարժեցաւ, եւ
վէմք պատառեցան։
32 Եւ գերեզմանք բացան, եւ բա-
զում մարմինք ննջեցելոց սրբոց յար-
եան։
33 Եւ ելեալ 'ի գերեզմանաց յետ
յարութեանն նորա, մտին 'ի քա-
ղաքն սուրբ, եւ երեւեցան բազ-
մաց։
54 Իսկ հարիւրապետն՝ եւ որ ընդ
նմա պահէին զՅիսուս, իբրեւ տե-
սին զշարժումն եւ զեղեալսն, եր-
կեան յոյժ եւ ասեն. Արդարեւ
Աստուծոյ Որդի էր սա։

55 Էին անդ կանայք բազումք,
կային 'ի հեռաստանէ՝ եւ հայէին,
որք եկին զհետ Յիսուսի 'ի Գալիլեէ
պաշտել զնա։

56 Յորս էր Մարիամ Մագդաղե-
նացի՝ եւ Մարիամ Յակոբայ՝ եւ
Յովսեայ մայր, եւ մայր որդւոցն
Զեբեդեայ։
57 Եւ իբրեւ երեկոյ եղեւ, եկն
այր մի մեծատուն յԱրիմաթեայ՝ ո-
րում անուն էր Յովսէփ. որ եւ ա-
շակերտեցաւ իսկ Յիսուսի։

58 Սա մատուցեալ առ Պիղատոս,
խնդրեաց զմարմինն Յիսուսի. յայն-
ժամ Պիղատոս հրամայեաց տալ ըզ
մարմինն։
59 Եւ առեալ զմարմինն Յովսէփ՝
պատեաց սուրբ կտաւովք,
60 Եւ եդ 'ի նոր գերեզմանի՝ զոր
փորեաց 'ի վիմի. եւ թաւալեցուցե-
ալ կափարիչ դրան գերեզմանին
վէմ մի մեծ՝ գնաց։
61 Անդ էր Մարիամ Մագդաղե-
նացի՝ եւ միւս Մարիամն, նստէին
հանդէպ գերեզմանին։

երկու կտոր ճղվեցաւ վերեւիցը մին-
չեւ բ ցածը, եւ երկիրը շարժվե-
ցաւ. եւ քարեր պատառվեցան.
32 Եւ գերեզմանները բացվան. եւ
շատ մարմիններ սուրբ ննջեցելոց
յարութիւն առին.
33 Եւ գերեզմաններիցը դուրս ե-
լին նորա յարութենիցն ետեւ՝ սուրբ
քաղաքը մտին՝ եւ շատերին երե-
ւեցան։
54 Բայց հարիւրապետը եւ նո-
րանք՝ որ նորա հետ Յիսուսին գ պա-
հում էին, երբոր այն շարժմունքը
եւ այն էղածները տեսին, շատ վա-
խեցան եւ ասացին. ճշմարիտ որ
սա Աստուծոյ Որդի էր։
55 Այն տեղ շատ կանայք կային՝
որ հեռուանց կանգնել էին՝ եւ մի-
տիկ էին տալիս. որ Գալիլեայիցը
Յիսուսի ետեւէն եկին որ ծառայու-
թիւն անեն դ նորան։
56 Նորանց միջումն էր Մարիամ
Մագդաղենացին՝ եւ Մարիամ Յա-
կոբի եւ Յօսէփի ե մայրը՝ եւ Զեբե-
դիայի որդոց մայրը։
57 Եւ երբոր իրիկուն էղաւ, Արի-
մաթեայիցը մին հարուստ մարդ ե-
կաւ՝ որ նորա անունը Յօսէփ զ էր,
որ ինքն էլ աշակերտ էղած էր Յի-
սուսին։
58 Սա գնաց Պիղատոսին մօտ եւ
Յիսուսի մարմինը խնդրեց. այն
ժամանակը Պիղատոս հրամայեց՝ որ
մարմինը տան։
59 Եւ Յօսէփ մարմինն առաւ՝
մաքուր կտաւներով պատանեց,
60 Եւ է նոր գերեզմանի մէջ դրաւ՝
որ քարին մէջ փորել է էր. եւ գերեզ-
մանի դրան առաջին մին մեծ քար
ձգեց փակելոյ համար. եւ գնաց։
61 Այն տեղ էր Մարիամ Մագ-
դաղենացին եւ միւս Մարիամն, որ
գերեզմանին դէմ նստած էին։

բ Եղից. ԻԶ. 31. Բ Մնաց. Գ. 14. Մարկ. ԺԵ. 38. Ղուկ. ԻԳ. 45.
գ Համ. 36. Մարկ. ԺԵ. 39. Ղուկ. ԻԳ. 47.
դ Ղուկ. . 2, 3.
ե Մարկ. ԺԵ. 40.
զ Մարկ. ԺԵ. 43. Ղուկ. ԻԳ. 50. Յովհ. ԺԹ. 38.
է Եսայ. ԾԳ. 9.

62 Եւ ՚ի վաղիւն անդր՝ որ է յետ ուրբաթուն, ժողովեցան քահանայապետքն եւ փարիսեցիքն առ Պիղատոս.
63 Եւ ասեն. Տէր յիշեցաք զի մոլորեցուցիչն այն ասէր՝ մինչ կենդանին էր, թէ Յետ երից աւուրց յառնեմ.
64 Արդ՝ հրամայեա զգուշանալ գերեզմանին մինչեւ ցերիս աւուրս, գուցէ եկեալ աշակերտքն գիշերի՝ գողասցեն զնա, եւ ասիցեն ժողովրդեանն, թէ Յարեաւ ՚ի մեռելոց. եւ լինիցի յետին մոլորութիւնն չար քան զառաջինն.
65 Ասէ ցնոսա Պիղատոս. Ունիք զզօրականս, երթայք զգուշացարուք որպէս եւ գիտէք.
66 Եւ նոքա երթեալ զգուշացան գերեզմանին, եւ կնքեցին զվէմն հանդերձ զօրականօքն.

62 Եւ նորա վաղվան օրն՝ որ ուրբաթէն ետեւ է, քահանայապետներն ու փարիսեցիները հաւաքուեցան Պիղատոսի մօտ.
63 Եւ ասացին. Տէր մտքներս բերինք, որ այն մոլորագնողը դեռ քանի որ կենդանի էր, ասումէր. թէ Երեք օրից ետեւ յարութիւն ε կառնեմ.
64 Ուրեմն հրաման տուր. որ մինչեւ երեք օր գերեզմանը զգուշութենով պահեն. որ չըլլինի թէ աշակերտները գիշերը գան նորան գողանան՝ եւ ժողովրդին ասեն՝ թէ Մեռելների միջից յարութիւն առաւ, եւ յետին մոլորութիւնը չար լինի քանի թէ առաջինը.
65 Պիղատոս ասաց նորանց. Պահապան զինուորներ ունիք. գնացէք զգոյշ պահեցէք ինչպէս որ գիտումէք.
66 Նորանք էլ գնացին գերեզմանին պահպանութիւն արին. եւ պահապան զինուորներին հետ քարը ƀ կնքեցին.

## ԳԼ. ԻԸ

1 Եւ յերեկոյի շաբաթուն՝ յորում լուսանայր միաշաբաթին, եկն Մարիամ Մագդաղենացի, եւ միւս Մարիամն՝ տեսանել զգերեզմանն.
2 Եւ ահա շարժումն մեծ եղեւ. զի հրեշտակ Տեառն իջեալ յերկնից մատուցեալ ՚ի բաց թաւալեցոյց ըզվէմն ՚ի դրաց անտի, եւ նստէր ՚ի վերայ նորա.
3 Եւ էր տեսիլ նորա իբրեւ զփայլակն, եւ հանդերձ նորա սպիտակ իբրեւ զձիւն.
4 Եւ յահէ անտի նորա խռովեցան պահապանքն, եւ եղեն իբրեւ զմեռեալս.

1 Եւ շաբաթ իրիկունն՝ որ մէկ շաբթի էր – լուսանում, Մարիամ Մագդաղենացին եկաւ՝ եւ միւս Ғ Մարիամն էլ, որ գերեզմանը տեսնեն.
2 Եւ մեծ շարժում էլաւ՝ ինչու որ Տէրի հրեշտակն երկնքիցը վէր եկաւ՝ գնաց գռնիցն այն քարը հեռու թաւալեց՝ եւ նորան վերայ ÷ նստեց.
3 Եւ նորան կերպարանքը փայլակի պէս էր՝ եւ նորան հագուստը ձիւնի պէս ⊤ սպիտակ.
4 Եւ նորան ահիցը պահապանները շփոթվեցան, եւ մեռելի նըման էլան.

ε Գլ. ԺԶ. 21. ԺԷ. 23. Ի. 19. ԻԶ. 61. Մարկ. Ը. 31. Ժ. 34. Ղու. Թ. 22. ԺԸ. 33. ԻԴ. 6, 7. Յովհ. Բ. 19.
ƀ Դան. Զ. 17.
– Մարկ. ԺԶ. 1. Ղու. ԻԴ. 1. Յովհ. Ի. 1.
Ғ Գլ. ԻԷ. 56.
÷ Մարկ. ԺԶ. 5. Ղու. ԻԴ. 4. Յովհ. Ի. 12.
⊤ Դան. Ժ. 6.

5 Պատասխանի ետ հրեշտակն՝ եւ
ասէ ցկանայսն. Մի՛ երկնչիք դուք,
գիտեմ զի զՅիսուս զխաչելեալն
խնդրէք։
6 Չէ՛ աստ, քանզի յարեաւ, որ-
պէս ասացն. եկա՛յք տեսէ՛ք զտեղին
ուր կայր։
7 Եւ վաղվաղակի երթա՛յք ասա-
ցէ՛ք աշակերտացն նորա՝ թէ Յար-
եաւ. եւ ահա յառաջանայ քան ըզ
ձեզ 'ի Գալիլեա, անդ տեսանիցէք
զնա, ահա ասացի ձեզ։

8 Եւ ելեալ վաղվաղակի 'ի գե-
րեզմանէ անտի ահիւ եւ խնդու-
թեամբ բազմաւ՝ ընթանային պատ-
մել աշակերտացն։
9 Եւ ահա պատահեաց նոցա Յի-
սուս՝ եւ ասէ. Ո՛ղջ էք. եւ նոքա
մատուցեալ կալան զոտս նորա՝ եւ
երկիրպագին նմա։

10 Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս.
Մի՛ երկնչիք, երթա՛յք ասացէ՛ք եղ-
բարցն իմոց՝ զի երթիցեն 'ի Գա-
լիլեա, եւ անդ տեսցեն զիս։
11 Իբրեւ նոքա գնացին, ահա ո-
մանք 'ի զօրականացն եկին 'ի քա-
ղաքն՝ եւ պատմեցին քահանայա-
պետիցն զամենայն որ ինչ եղեւն։
12 Եւ նոքա ժողովեալ հանդերձ
ծերովքն, խորհուրդ առեալ՝ արծաթ
յոյժ ետուն զօրականացն,
13 Եւ ասեն. Ասասջի՛ք՝ եթէ ա-
շակերտքն նորա եկեալ գիշերի գո-
ղացան զնա՝ մինչ մեք 'ի քուն էաք։
14 Եւ եթէ լուր լինիցի այդ առ դա-
տաւորն, մեք հաճեսցուք զնա՝ եւ
զձեզ անհոգս արասցուք։
15 Եւ նոքա առեալ զարծաթն,
արարին որպէս ուսանն. եւ ել համ-
բաւս այս 'ի Հրեայս մինչեւ ցայսօր։

16 Իսկ մետասան աշակերտքն գն-

5 Հրեշտակը՝ պատասխան տուաւ՝
եւ այն կանանցն ասաց. Դուք մի՛
վախենաք. գիտումեմ՝ որ Յիսուս
խաչվածին էք ուզում։
6 Այստեղ չէ. պատճառն որ՝ յա-
րութիւն առաւ՝ ինչպէս որ է ասաց.
եկէք տեսէք այն տեղը որ նա կայր։
7 Եւ շուտով գնացէք նորա ա-
շակերտներին ասացէք՝ թէ նա յա-
րութիւն առաւ. եւ ահա նա ձեզա-
նից առաջ Գալիլեա 'կերթայ. այն-
տեղ նորան կը տեսնէք. ահա ասա-
ցի ձեզ։
8 Եւ շուտով գերեզմանիցը դուրս
եկին՝ վախով եւ շատ ուրախութե-
նով վազեցին՝ որ աշակերտներին
պատմեն։
9 Եւ ահա Յիսուս է պատահեց
նորանց՝ եւ ասաց. Ողջ կացէք. եւ
նորանք մօտ եկին՝ նորա ոտները
բռնեցին՝ եւ նորան երկրպագու-
թիւն արին։
10 Այն ժամանակը Յիսուս նորանց
ասաց. Մի՛ վախենաք. գնացէք իմ
եղբայրներիս ասացէք՝ որ գնան Գա-
լիլեա, եւ այնտեղ կը տեսնեն ըինձ։
11 Երբոր նորանք գնացին. ահա
զինուորներիցը մին քանիսն եկին
քաղաքը՝ եւ ամէն ինչ որ էլաւ՝
պատմեցին քահանայապետներին։
12 Եւ նորանք ծերերին հետ հա-
ւաքուած խորհուրդ արին՝ եւ այն
զինուորներին շատ փող տուին,
13 Եւ ասացին. Ասացէք՝ թէ նորա
աշակերտները գիշերը գեւ որ մենք
քնած էինք՝ եկին գողացան նորան։
14 Եւ թէ որ այդ բանը դատաւորին
ականջը հասնէ, մենք նորան կը հա-
ւանեցնենք՝ եւ ձեզ անհոգ կանենք։
15 Եւ նորանք փողերն առին՝ եւ
այնպէս արին ինչպէս որ սովրեցին.
եւ այս ձայնս Հրէաներին մէջ դուրս
եկաւ մինչեւ այսօր։
16 Բայց տասնումին աշակերտնե-

ե Գլ. ԺԲ. 40. ԺԶ. 21. ԺԷ. 23. Ի. 19. | շ Գլ. ԻԶ. 32. Մարկ. ԺԶ. 7. | ե Մարկ. ԺԶ. 9. | Յովհ. Ի. 14. | ը Յովհ. Ի. 17. | Հռովմ. Ը. 29. | Եբր. Բ. 11.

նացին 'ի Գալիլեա 'ի լեառն՝ ուր
ժամադիր եղեւ նոցա Յիսուս:

17 Եւ տեսեալ զնա, երկիրպա-
գին նմա. եւ ոմանք յերկուանային:

18 Եւ մատուցեալ Յիսուս խօսե-
ցաւ ընդ նոսա՝ եւ ասէ. Տուաւ
ինձ ամենայն իշխանութիւն յեր-
կինս եւ յերկրի. որպէս առաքեաց
զիս Հայր, եւ ես առաքեմ զձեզ:

19 Գնացէք այսուհետեւ՝ աշակերտ-
եցէք զամենայն հեթանոսս. մկ-
րտեցէք զնոսա յանուն Հօր՝ եւ
Որդւոյ՝ եւ Հոգւոյն Սրբոյ:
20 Ուսուցէք նոցա ՚պահել զամե-
նայն՝ որ ինչ պատուիրեցի ձեզ. եւ
ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամե-
նայն աւուրս, մինչեւ 'ի կատարած
աշխարհի:

րը գնացին Գալիլեա՝ այն սարն՝ որ
Յիսուս նորանց հետ խօսք էր Ե կա-
պել:
17 Երբոր նորան տեսան, երկրպա-
գութիւն արին նորան, եւ մէկ
քանիսն երկմտեցան:
18 Եւ Յիսուս մօտ եկաւ, նորանց
հետ խօսեց՝ եւ ասաց. Ամէն ♦ իշխա-
նութիւնն ինձ տրւել երկինքումն
եւ երկրումս. ինչպէս որ Հայրն ինձ
ուղարկեց, այնպէս էլ ես ձեզ ու-
ղարկումեմ:
19 Ուրեմն ♦ գնացէք ամէն հեթա-
նոսներին աշակերտ ւ շինեցէք՝ նո-
րանց մկրտեցէք Հօր եւ Որդու եւ
Հոգւոյն Սրբոյ անուանովը:
20 Նորանց սովորցրէք՝ որ ամէն
ինչ որ ձեզ ♦ պատուիրեցի՝ պահեն.
եւ ահա ես ձեզ հետ եմ ամէն օր,
մինչեւ աշխարհքի վերջը:

# ԱՒԵՏԱՐԱՆ
## ԸՍՏ
# ՄԱՐԿՈՍԻ

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 ՍԿԻԶԲՆ աւետարանի Յիսուսի
Քրիստոսի Որդւոյ Աստուծոյ:
2 Որպէս եւ գրեալ է 'ի մարգա-
րէս. Ահաւասիկ ես առաքեմ զհրեշ-
տակ իմ առաջի քո, որ հանդեր-
ձեսցէ զճանապարհ քո առաջի քո:

3 Ձայն բարբառոյ յանապատի,
պատրաստ արարէք զճանապարհ

1 ԱՍՏՈՒԾՈՅ Որդի Յիսուս Քր-
իստոսի աւետարանին սկիզբը:
2 Ինչպէս որ մարգարէներումը
գրւած է՝ Ահա ես իմ հրեշտակը
կուղարկեմ քո առաջից՝ որ քո
ճանապարհդ քո առաջից Ե պատ-
րաստէ:
3 Կանչողի ձայն անապատումը՝
Պատրաստ արէք Տէրի ճանապարհը՝

Ե Գլ. ԻԶ. 32. Համառ. 7.
♦ Դան. Է. 13, 14. Գլ. ԺԱ. 27. ԺԶ. 28. Ղուկ. Ա. 32. Ժ. 22. Յովհ. Գ. 35. Ե. 22. ԺԳ. 3. ԺԷ. 2. Գործ. Բ. 36. Հռովմ. ԺԴ. 9. Ա Կորնթ. ԺԵ. 27. Եփես. Ա. 20, 21. Փիլիպ. Բ. 9, 10. Եբր. Ա. 2. Բ. 8. Ա Պետր. Գ. 22. Յայտ. ԺԷ. 14.
Է Մարկ. ԺԶ. 15.
Ը Եսայ. ԾԲ. 10. Ղուկ. ԻԴ. 47. Գործ. Բ. 38, 39. Հռովմ. Ժ. 18. Կող. Ա. 23.
Ի Գործ. Բ. 42.

—

– Մատթ. ԺԴ. 33. Ղուկ. Ա. 35. Յովհ. Ա. 34.
Բ Մաղ. Գ. 1. Մատթ. ԺԱ. 10. Ղուկ. Է. 27.

Տեառն, եւ ուղիղ արարէք զշա-
ւիղս նորա։
4 Եւ եղեւ՝ զի Յովհաննէս մկր-
տէր յանապատի, եւ քարոզէր
մկրտութիւն ապաշխարութեան ՚ի
թողութիւն մեղաց։
5 Եւ ելանէր առ նա ամենայն
աշխարհն Հրէաստանի, եւ Երուսա-
ղէմացիք ամենեքեան. եւ մկրտէին
՚ի նմանէ ՚ի Յորդանան գետ՝ խոստո-
վանեալ զմեղս իւրեանց։
6 Եւ էր Յովհաննէս զգեցեալ
ստեւ ուղտու, եւ գօտի մաշկեղէն
ընդ մէջ իւր. եւ կերակուր նորա
մարախ եւ մեղր վայրենի։
7 Քարոզէր եւ ասէր. Գայ զօ-
րաւորն քան զիս զկնի իմ, որում
չեմ բաւական խոնարհել լուծանել
զխրացս կօշկաց նորա։

8 Ես մկրտեցի զձեզ ջրով, եւ նա
մկրտեսցէ զձեզ Հոգւովն Սրբով։
9 Եւ եղեւ յաւուրսն յայնոսիկ
եկն Յիսուս ՚ի Նազարեթէ Գալի-
լեացւոց, եւ մկրտեցաւ ՚ի Յով-
հաննէ ՚ի Յորդանան։
10 Եւ նոյն ժամայն ընդ վերա-
նալ ՚ի ջրոյն, ետես ցելեալ զեր-
կինս, եւ զՀոգին Աստուծոյ իբրեւ
զաղաւնի՝ զի իջանէր ՚ի վերայ նորա։
11 Ձայն եղեւ յերկնից՝ եւ ասէ.
Դու ես Որդի իմ սիրելի, ընդ քեզ
հաճեցայ։
12 Եւ նոյն ժամայն Հոգին հանէ
զնա յանապատ։
13 Եւ էր նա անդ զաւուրս քա-
ռասուն փորձեալ ՚ի Սատանայէ,
եւ էր ընդ գազանս. եւ հրեշտակք
պաշտէին զնա։

եւ շիտակ արէք նորա գնալու գ ճա-
նապարհները։
4 Եւ էլաւ՝ որ Յօհաննէս անա-
պատումը՝ մկրտումէր, եւ ապաշ-
խարութեան մկրտութիւն քարո-
զում՝ մեղաց թողութեան դ համար։
5 Եւ Հրէաստանի ամէն աշխարհ-
քըն ու ամէն Երուսաղէմացիքը
գնումէին նորա մօտ՝ եւ նորանից
մկրտւումէին Յորդանան գետումը՝
իրենց մեղքերը ե խոստովանելով։
6 Եւ Յօհաննէս ուղտու բուրդ
էր զհագած, եւ կաշիէ գօտիկ ի-
րեն մէջքին՝ եւ նորա կերակուրը
մարախ էր եւ վայրի է մեղր։
7 Քարոզումէր եւ ասում. Ին-
ձանից զօրաւորն իմ ետեւէս է գա-
լիս՝ որ նորան ես չեմ արժանի խո-
նարհիլ եւ նորա կօշիկներին կա-
պըն արձակիլ։
8 Ես թ ջրով մկրտեցի ձեզ՝ եւ
նա Սուրբ Հոգով կմկրտէ ժ ձեզ։
9 Եւ էլաւ որ այն օրերը Յի-
սուս Գալիլեացոց Նազարէթիցն ե-
կաւ, եւ Յօհաննէսից Յորդանա-
նումը ի մկրտուեցաւ։
10 Եւ շուտով որ ջրիցը դուրս ե-
կաւ՝ տեսաւ երկինքը ճղված՝ եւ
Աստուծոյ Հոգին աղաւնու պէս՝ որ
վէր էր գալիս նորա լ վերայ։
11 Ձայն էլաւ երկնքիցն եւ ասաց՝
Դու ես իմ սիրելի Որդիս, քեզ խ հա-
ւանեցի։
12 Եւ շուտով Հոգին նորան ա-
նապատը ծ հանեց։
13 Եւ նա այնտեղ էր քառասուն
օր Սատանայիցը փորձված. եւ գա-
զաններին հետ էր՝ եւ հրեշտակներ
ծառայումէին կ նորան։

գ Եսայ. Խ. 3. Մատթ. Գ. 3. Ղուկ. Գ. 4. Յովհ. Ա. 15. 23.
դ Մատթ. Գ. 1. Ղուկ. Գ. 3. Յովհ. Գ. 23.
ե Մատթ. Գ. 5.
զ Մատթ. Գ. 4.
է Ղեւտ. ԺԱ. 22.
ը Մատթ. Գ. 11. Յովհ. Ա. 27. Գործ. ԺԳ. 25.
թ Գործ. Ա. 5. ԺԱ. 16. ԺԹ. 4.
ժ Եսայ. ԽԴ. 3. Յովէլ. Բ. 28. Գործ. Բ. 4. Ժ. 45. ԺԱ. 15. 16. Ա Կորնթ. ԺԲ. 13.
ի Մատթ. Գ. 13. Ղուկ. Գ. 21.
լ Մատթ. Գ. 16. Յովհ. Ա. 32.
խ Սաղ. Բ. 7. Մատթ. Գ. 17. Գլ. Թ. 7.
ծ Մատթ. Դ. 1. Ղուկ. Դ. 1.
կ Մատթ. Դ. 11.

14 Եւ յետ մատնելոյն Յովհաննու, եկն Յիսուս ՚ի Գալիլեա. քարոզէր զաւետարանն Աստուծոյ՝ եւ ասէր.
15 Թէ կատարեալ է ժամանակ, եւ հասեալ է արքայութիւնն Աստուծոյ. ապաշխարեցէք՝ եւ հաւատացէք յաւետարանն։
16 Իբրեւ անցանէր առ ծովեզերբն Գալիլեացւոց, ետես զՍիմովն եւ զԱնդրէաս զեղբայր Սիմովնի, զի արկեալ էր նոցա ուռկանս ՚ի ծով. քանզի ձկնորսք էին։
17 Եւ ասէ ցնոսա Յիսուս. Եկայք զկնի իմ, եւ արարից զձեզ լինել որսորդս մարդկան։
18 Եւ վաղվաղակի թողեալ զուռկանսն, գնացին զհետ նորա։
19 Եւ մատուցեալ անտի սակաւիկ մի յառաջ, ետես զՅակոբոս Զեբեդեան՝ եւ զՅովհաննէս զեղբայր նորա. եւ զնոսա ՚ի նաւին մինչ կազմէին ուռկանս, եւ կոչեաց զնոսա։
20 Եւ վաղվաղակի թողեալ զհայրն իւրեանց զԶեբեդէոս ՚ի նաւին վարձկանօքն հանդերձ, գնացին զհետ նորա։
21 Եւ մտանեն ՚ի Կափառնաում, եւ իսկ եւ իսկ ՚ի շաբաթուն մտեալ ՚ի ժողովուրդն ուսուցանէր զնոսա։
22 Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա, զի ուսուցանէր զնոսա իբրեւ իշխանութեամբ՝ եւ ոչ որպէս դպիրքն։
23 Եւ էր ՚ի ժողովրդեանն նոցա այր մի, յորում այս պիղծ դեւ ՚ի նմա. որ աղաղակեաց՝ եւ ասէ։
24 Թո՛յլ տուր, զի՞ կայ մեր եւ

14 Եւ երբոր Յովհաննէս ^ մատնըւեցաւ՝ Յիսուս եկաւ Գալիլեա. Աստուծոյ աւետարանը քարոզումէր եւ ) ասում.
15 Թէ, ժամանակը կատարուել է, եւ Աստուծոյ արքայութիւնը ^ հասել. ապաշխարեցէք՝ եւ աւետարանին հաւատացէք։
16 Երբոր Գալիլեացոց ծովի եզերքին մօտ ^ անցանումէր, տեսաւ Սիմոնին եւ նորա Անդրէաս եղբօրը՝ որ նորանք ուռկանները ծովն էին ձգել. ինչու որ՝ ձկնորս էին։
17 Եւ Յիսուս նորանց ասաց. Իմ ետեւէս եկէք՝ եւ կանեմ ձեզ որ մարդկանց որսորդ լինիք։
18 Եւ շուտով ուռկանները թողին եւ նորա ետեւէն ^ գնացին։
19 Եւ այնտեղից որ մին քիչ առաջ գնաց՝ Յակոբոս Զեբեդեանին եւ նորա Յովհաննէս եղբայրը տեսաւ. երբոր նորանք նաւին մէջ ուռկանները շինումէին՝ եւ նորանց ^ կանչեց։
20 Եւ շուտով իրենց Զեբեդէոս հայրը վարձկաններին հետ նաւին մէջ թողին, եւ նորա ետեւէն գնացին։
21 Եւ մտին Կափառնայում՝ եւ շուտով շաբաթ օրը ժողովարանին մէջ մտաւ՝ եւ սովորցնումէր նորանց։
22 Եւ զարմանումէին նորա վարդապետութեանը = վերայ. ինչու որ՝ ինչպէս իշխանութեամբ էր սովորցնում նորանց՝ եւ ոչ թէ նորանց կարդացողներին պէս։
23 Եւ նորանց ժողովարանին մէջ մին մարդ կար՝ որ պիղծ դեւ կար ^ նորանում. որ աղաղակից եւ ասաց.
24 Թող արա՝ դու ինչ բան ու-

| | | | |
|---|---|---|---|
| Մատթ. Դ. 12։ | փես. Ա. 10։ | Ղու. Ե. 4։ | Մատթ. Դ. 13։ |
| Մատթ. Դ. 23։ | Մատթ. Գ. 2։ | Մատթ. ԺԹ. 27։ | Ղու. Դ. 31։ |
| Դան. Թ. 25. | Դ. 17։ | Ղու. Ե. 11։ | Մատթ. Է. 28։ |
| Գաղ. Դ. 4։ Ես- | Մատթ. Դ. 18։ | Մատթ. Դ. 21։ | Ղու. Դ. 33։ |

քո Յիսուս Նազովրեցի, եկիր կո-
րուսանել զմեզ, գիտեմք զքեզ՝ ով
ես Սուրբդ Աստուծոյ:

25 Սաստեաց 'ի նա Յիսուս՝ և ա-
սէ. Կարկեա՛ց՝ և ել 'ի դմանէ:

26 Եւ զարկոյց զնա այսն պիղծ.
և աղաղակեաց 'ի ձայն մեծ, և
ել 'ի նմանէ:
27 Եւ զարմացան ամենեքին, մին-
չև հարցանել ընդ միմեանս՝ և ասել.
Զինչ է այս նոր վարդապետու-
թիւն, զի իշխանութեամբ և այսոց
պղծոց սաստէ՝ և հնազանդին նմա:

28 Եւ ել լուր նորա ընդ ամենայն
կողմն Գալիլեացւոց:
29 Եւ վաղվաղակի ելեալ 'ի ժո-
ղովրդենէն, եկն 'ի տուն Սիմոնի
և Անդրեայ՝ Յակոբաւ և Յովհան-
նու հանդերձ:
30 Եւ զոքանչ Սիմոնի դնէր ջեր-
մացեալ, և վաղվաղակի ասեն ցնա
վասն նորա:
31 Եւ մատուցեալ յարոյց զնա՝
կալեալ զձեռանէ նորա. և եթող
զնա ջերմն՝ և պաշտէր զնոսա:

32 Եւ ընդ երեկս եղեալ 'ի մտա-
նել արեգականն, բերէին առ նա
զամենայն հիւանդս և զդիւահարս:

33 Եւ էր ամենայն քաղաքն ժո-
ղովեալ առ դրունսն:
34 Եւ բժշկեաց բազում հիւանդս
'ի պէսպէս ախտից, և դևս բա-
զումս եհան. և ոչ տայր խօսել
դիւացն, զի գիտէին զնա թէ Քրի-
ստոս է:
35 Եւ ընդ այգն ընդ առաւօտս
յարուցեալ՝ ել և գնաց յանապատ
տեղի, և անդ կայր յաղօթս:

նս մեզ — հետ՝ Յիսուս Նազորե-
ցի. եկիր որ մեզ կորսնես. գիտե-
մնք քեզ թէ ով ես դու՝ Աստու-
ծոյ Սուրբդ:
25 Յիսուս նորան սաստեց՝ և Հա-
սաց. Պապանձվի՛ր՝ և դորանից
դուրս ել:
26 Եւ պիղծ դևը նորան գետինը
— զարկեց. և մեծ ձայնով աղաղա-
կեց, և նորանից դուրս ելաւ:
27 Եւ ամէնքը զարմացան մինչեւ
որ իրար հետ քախսալով հարցնու-
մէին՝ և ասում. Սա ինչ նոր վար-
դապետութիւն է՝ որ իշխանութե-
նով պիղծ դևերին էլ սաստումէ՝
և հնազանդվումեն նորան:
28 Եւ նորա համբաւը Գալիլեա-
ցոց ամէն կողմերը դուրս գնաց:
29 Եւ շուտով ժողովարանիցն որ
դուրս էլաւ, եկաւ Սիմոնի և Անդ-
րէասի — տունը՝ Յակոբի և Յոհան-
նէսի հետ:
30 Եւ Սիմոնի զոքանչը անկողով
պառկած էր՝ և շուտով նորա հա-
մար ասացին նորան:
31 Եւ մօտ եկաւ նորան ձեռքը
բռնեց՝ և նորան վերկացրուց. և
անդը թողեց նորան՝ և նա ծա-
ռայումէր նորանց:
32 Եւ երբոր իրիկուն էլաւ արե-
գակին մտնելոյ ժամանակը, ամէն
հիւանդներին ու դիւահարներ բե-
րին նորա Հ մօտ:
33 Եւ բոլոր քաղաքը ժողոված
էր դրների առաջին:
34 Եւ շատ հիւանդներ բժշկեց
կերպ կերպ ցաւերից՝ և շատ դե-
ւեր հանեց. և թոյլ չէր տալիս
դևերին որ — խօսին. ինչուոր՝ գի-
տումէին նորան որ Քրիստոս է:
35 Եւ առաւօտից որ լուսացաւ՝
վեր կացաւ դուրս ելաւ և մին ա-
նապատ տեղ — գնաց, և այնտեղ
աղօթք էր անում:

= Մատթ. Ը. 29: Ը Համար. 34: — Գղ. Թ. 29:
= Մատթ. Ը. 14: Ղու. Դ. 38: Է Մատթ. Ը. 16:
Ղու. Դ. 40: — Գղ. Գ. 12: Ղու. Դ. 41:
Գործ. ԺԶ. 17, 18: Ր Ղու. Դ. 42:

36 Եւ գնաց զհետ նորա Սիմոն՝
եւ որ ընդ նմայն էին։
37 Եւ իբրեւ գտին զնա՝ ասեն
ցնա, թէ Ամենեքին խնդրեն զքեզ։
38 Եւ ասէ ցնոսա. Եկայք եր-
թիցուք եւ յայլ մօտաւոր գիւղա-
քաղաքսն, զի եւ անդ քարոզեցից.
զի յայս իսկ եկեալ եմ։
39 Եւ քարոզէր ՚ի ժողովուրդս
նոցա ընդ ամենայն Գալիլեացիս,
եւ զդեւս հանէր։
40 Գայ առ նա բորոտ մի, աղա-
չէր՝ ՚ի ծունր իջանէր՝ եւ ասէր.
Տէր՝ եթէ կամիս, կարող ես զիս
սրբել։
41 Իսկ Յիսուս գթացեալ ձգեաց
զձեռն, մերձեցաւ ՚ի նա՝ եւ ասէ
ցնա. Կամիմ՝ սրբեաց։
42 Եւ իբրեւ ասացն ցնա, վաղ-
վաղակի գնաց ՚ի նմանէ բորոտու-
թիւնն՝ եւ սրբեցաւ։
43 Եւ սաստեալ նմա՝ եհան զնա
արտաքս վաղվաղակի, եւ ասէ։
44 Զգոյշ լեր՝ մի ումեք ինչ ասի-
ցես. այլ երթ ցոյց զքեզ քահա-
նային. եւ մատո վասն սրբութեան
քո պատարագ՝ զոր հրամայեաց
Մովսէս, ՚ի վկայութիւն նոցա։
45 Եւ նա ելեալ՝ սկսաւ քարո-
զել յոյժ եւ հռչակել զբա-
նըն, մինչ ոչ եւս կարող լինել նմա
յայտնապէս ՚ի քաղաք մտանել, այլ
արտաքոյ յանապատ տեղիս էր.
եւ գային առ նա յամենայն կող-
մանց։

36 Եւ Սիմոնն նորա ետեւէն գնաց,
եւ նորանք էլ որ նորան հետ էին։
37 Եւ երբոր նորան գտին՝ ասա-
ցին նորան, թէ՝ Ամէնքը քեզ են
ման գալիս։
38 Եւ նորանց ասաց. Եկէք ու-
րիշ մօտիկ գիւղաքաղաքներն էլ
ɜ գնանք, որ այնտեղ էլ քարոզեմ.
ինչու որ ես իսկ որա համար եմ – եկած։
39 Եւ ամէն Գալիլեացոց երկրին
մէջ նորանց ժողովարաններումը
քարոզումէր, եւ դեւեր էր ‡ հա-
նում։
40 Մին բորոտ նորա մօտ * եկաւ,
աղաչումէր՝ ծունր էր գնում՝ եւ ա-
սում. Տէր՝ թէ որ կամենաս, կա-
րող ես ինձ սրբել։
41 Յիսուս էլ խղճալով ձեռքը
մեկնեց, նորան մօտեցաւ՝ եւ նո-
րան ասաց. Կամենումեմ՝ սրբվիր։
42 Եւ երբոր սա ասաց նորան,
շուտով բորոտութիւնը գնաց նո-
րանից՝ եւ սրբվեցաւ։
43 Եւ նորան սաստկելով՝ շուտով
դուրս հանեց նորան, եւ ասաց
նորան.
44 Զգոյշ կաց ընաւ մին մարդու
բան չասես. բայց գնա քահանային
քեզ ցոյց տուր, եւ քո սրբու-
թեանդ համար պատարագ արա՝ այն
որ Մովսէսը հրամայեց՝ նորանց վկա-
յութիւն լինելոյ * համար։
45 Եւ նա երբոր դուրս գնաց,
սկսեց շատ քարոզել եւ այն բանը
տարածել, մինչեւ որ էլ նա կարող
չէր յայտնի մտնել քաղաք՝ բայց
դուրս անապատ տեղերում ‡ էր.
եւ ամէն կողմերից գալիս էին նո-
րա – մօտ։

## ԳԼ. Բ

1 Եւ մտեալ դարձեալ ՚ի Կա-
փառնաում յետ աւուրց։

1 Եւ դարձեալ որ մտաւ Կափառ-
նայում մին քանի օրից – ետեւ,

ɜ Ղու. Դ. 43.
– Եսայ. ԿԱ. 1. Յովհ. ՃԶ. 28. ԺԷ. 4.
‡ Մատթ. Դ. 23. Ղու. Դ. 44.
* Մատթ. Ը. 2. Ղու. Ե. 12.
* Ղևտ. ԺԴ. 3, 4. 10. Ղու. Ե. 14.
‡ Ղու. Ե. 15.
– Գլ. Բ. 13.
– Մատթ. Թ. 1. Ղու. Ե. 18.

2 Լուր եղեւ եթէ 'ի տան է. եւ ժողովեցան բազումք՝ մինչեւ տեղի եւս ոչ լինել՝ եւ ոչ առ դրանն. եւ խօսէր նոցա զբանն։

3 Եւ գային առ նա՝ բերէին անդամալոյծ մի բարձեալ 'ի չորից։

4 Եւ իբրեւ ոչ կարէին մերձենալ առ նա յամբոխէ անտի, քակեցին զյարկն՝ ուր էր Յիսուս, եւ բացեալ զառաստաղն իջուցին զմահիճսն, յորում կայր անդամալոյծն։

5 Եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա, ասէ ցանդամալոյծն. Որդեակ՝ թողեալ լիցին քեզ մեղք քո։

6 Եւ էին ոմանք 'ի դպրաց անտի՝ որ անդ նստէին. եւ խորհէին 'ի սիրտս իւրեանց.

7 Զի՞նչ է դա՝ որ խօսի սա բղ հայհոյութիւնս. ո՞վ կարէ թողուլ զմեղս, եթէ ոչ՝ մի Աստուած։

8 Եւ գիտաց Յիսուս յոգի իւր՝ թէ այնպէս խորհէին 'ի սիրտս իւրեանց, եւ ասէ. Զի՞ խորհիք զայդ 'ի սիրտս ձեր։

9 Զի՞նչ դիւրին է, ասել ցանդամալոյծն՝ Թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ ասել՝ Արի առ զմահիճս քո եւ երթ 'ի տուն քո։

10 Այլ զի գիտասջիք եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ 'ի վերայ երկրի թողուլ զմեղս, ասէ ցանդամալոյծն։

11 Քեզ ասեմ, Արի առ զմահիճս քո՝ եւ երթ 'ի տուն քո։

12 Եւ յարեաւ վաղվաղակի առեալ զմահիճսն, ել առաջի ամենեցուն. մինչեւ զարմանալ ամենեցուն՝ եւ փառաւոր առնել զԱստուած՝ եւ ասել, թէ Այսպիսի ինչ երբէք ոչ տեսաք։

2 Լսվեցաւ թէ տանն է. եւ շատ մարդիկ ժողովվեցան՝ մինչեւ որ տեղ էլ չկար եւ ոչ էլ դրան առաջին. եւ Աստուծոյ բանը խօսում էր նորանց։

3 Եւ գալիս էին նորա մօտ՝ եւ մին անդամալոյծ էին բերում չորս մարդով վեր առած։

4 Եւ երբոր չէին կարողանում մօտենալ նորան՝ ամբոխի պատճառաւն՝ այն տան ծածքը քակեցին, որ տեղ որ Յիսուսն էր. եւ օճորքը բաց արին եւ այն մահիճը վէր բերին, որ նորանում անդամալուծը կար։

5 Եւ Յիսուս նորանց հաւատքը տեսնելով՝ անդամալուծին ասաց. Որդի քո մեղքերդ թողված լինին քեզ։

6 Եւ կարդացողներին մին քանիսը կային՝ որ այն տեղ նստած էին. եւ իրենց սրտումը միտք էին անում, թէ

7 Այս ի՞նչ է՝ որ սա հայհոյութիւն է խօսում. ով է կարող մեղք թողնել եթէ ոչ՝ միայն բ Աստուածը։

8 Եւ Յիսուս իրեն հոգուն մէջ գիտաց թէ իրենց սրտումն այնպէս են միտք անում, եւ ասաց. Ինչո՞ւ էք ձեր սրտերումը դա գ մտածում։

9 Ո՞րն է դ հեշտ. անդամալուծին ասել՝ թէ, քո մեղքերդ թողված լինին քեզ, թէ ասել՝ Վեր կաց, քո մահիճդ առ եւ քո տունդ գնա։

10 Բայց որ իմանաք, թէ Որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրիս վերայ մեղաց թողութիւն տալ. անդամալուծին ասաց,

11 Ասում եմ քեզ՝ Վեր կաց, քո մահիճդ առ եւ գնա քո տունդ։

12 Եւ ե չուշացաւ վերկացաւ եւ մահիճին առաւ՝ եւ ամէնի առաջին դուրս գնաց. մինչեւ որ ամէնքը զարմանումէին եւ Աստուծոյն փառաւորում եւ ասում՝ թէ Բնաւ մին ժամանակ այսպիսի բան չենք տեսել։

բ Յոբ. ԺԴ. 4։ Եսայ. ԽԳ. 25։ գ Մատթ. Թ. 4։ դ Մատթ. Թ. 5։

13 Եւ ել դարձեալ ՚ի ծովեզրն,
եւ ամենայն ժողովուրդն գայր առ
նա. եւ ուսուցանէր զնոսա։

14 Եւ մինչդեռ անցանէր, ետես
զՂեւի Ալփեայ՝ զի նստէր ՚ի մաք-
սաւորութեան. եւ ասէ ցնա, Ե՛կ
զկնի իմ. եւ յարուցեալ գնաց
զկնի նորա։
15 Եւ եղեւ ՚ի բազմելն նորա ՚ի
տան նորա, եւ բազում մաքսաւորք
բազմեալ էին ընդ Յիսուսի՝ եւ ընդ
աշակերտսն նորա. քանզի էին բա-
զումք՝ որ երթային զհետ նորա։

16 Իսկ դպիրքն եւ փարիսեցիք
իբրեւ տեսին՝ թէ ուտէ ընդ մաք-
սաւորս եւ ընդ մեղաւորս, ասեն
ցաշակերտսն նորա. Զի՞ է՝ զի ընդ
մեղաւորս եւ ընդ մաքսաւորս ու-
տէք եւ ըմպէք։

17 Իբրեւ լուաւ Յիսուս՝ ասէ
ցնոսա. Ո՛չ ինչ է պիտոյ բժիշկ
ողջոց՝ այլ հիւանդաց, եւ ոչ եկի
կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս։

18 Եւ էին աշակերտքն Յովհան-
նու եւ փարիսեցիքն ՚ի պահս, գան
եւ ասեն ցնա. Ընդէ՞ր աշակերտքն
Յովհաննու եւ փարիսեցիքն պա-
հեն, եւ քո աշակերտքդ ոչ պա-
հեն։
19 Եւ ասէ ցնոսա Յիսուս. Մի-
թէ մարթ ինչ իցէ որդւոց առա-
գաստի մինչ ընդ նոսա իցէ փեսայն՝
պահել. ցորքան ընդ իւրեանս ու-
նիցին զփեսայն, ոչ է մարթ պա-
հել։
20 Այլ եկեսցեն աւուրք՝ յորժամ
վերասցի ՚ի նոցանէ փեսայն, եւ ա-
պա պահեսցեն յաւուրսն յայնմիկ։
21 Ո՛չ ոք կարկատ նոր անթափ

13 Եւ դարձեալ դէպի ծովի եզրը
դուրս է գնաց, եւ ամէն ժողովուր-
դը նորա մօտ էր գալիս. եւ նո-
րանց սովորցնումէր։
14 Եւ երբոր շանցանումէր, տե-
սաւ Ղեւի Ալփեանին՝ որ նստած
մաքսաւորութիւն էր անում. եւ
նորան ասաց. Իմ ետեւէս եկ. եւ
վերկացաւ՝ գնաց նորա ետեւէն։
15 Եւ էրաւ՝ երբոր նորան տանը
մէջ սեղանի նստած էր՝ եւ շատ
մաքսաւորներ եւ մեղաւորներ Յի-
սուսին եւ նորա աշակերտներին հետ
սեղան էին է նստած. պատճառնոր՝
շատ մարդիկ էին՝ որ նորան ետե-
ւէն գնումէին։
16 Բայց կարդացողներն ու փա-
րիսեցիքն երբոր տեսին՝ թէ մաք-
սաւորներին եւ մեղաւորներին հետ
ուտումէ՝ նորա աշակերտներին ա-
սացին. Դա ինչ է որ մաքսաւոր-
ներին եւ մեղաւորներին հետ ու-
տում եւ խմումէք։
17 Յիսուս երբոր լսեց՝ ասաց նո-
րանց. Առողջներին բժիշկ պէտք
չէ՝ բայց է հիւանդներին. եւ չեկի
որ արդարներին կանչեմ՝ այլ մե-
ղաւորներին։
18 Եւ Յօհաննէսի աշակերտներն
ու փարիսեցիները ծոմումն էին՝ ե-
կին եւ նորան է ասացին. Ինչու Յօ-
հաննէսի աշակերտներն ու փարի-
սեցիները ծոմ են պահում, եւ քո
աշակերտներդ չեն պահում։
19 Եւ Յիսուս նորանց ասաց. Մի-
թէ կարելի է՝ որ հարսանիքի որ-
դիքը ծոմ պահեն՝ դեռ քանի որ
փեսան նորանց հետ է. քանի որ
փեսան իրենց հետ ունին՝ կարելի
չէ որ ծոմ պահեն։
20 Բայց օրեր կըգան՝ որ փեսան
նորանցից վեր կառնուի. եւ ապա
այն օրը կը պահեն։
21 Ո՛չ ով նոր չմաշված կարկա-

Ե Մատթ. Թ. 9։
Զ Մատթ. Թ. 9։
Ղու. Ե. 2։

Ե Մատթ. Թ. 10։
Է Մատթ. Թ. 12.
13։ ՃՐ. ։ 11։

Ղու. Ե. 31.
32։ ԺԹ. 10։ Ա
Տիմ. Ա։ 15։

Թ Մատթ. Թ. 14։
Ղու. Ե. 33։

արկանէ 'ի վերայ հնացեալ ձորձոյ. ապա թէ ոչ՝ առնու լրութիւնն խորոյ նորն 'ի հնոյ անտի, եւ չար եւս պատառումն լինի:
22 Եւ ոչ ոք արկանէ գինի նոր 'ի տիկս հինս, ապա թէ ոչ՝ պայթեցուցանէ գինին զտիկսն, գինին հեղու, եւ տիկքն կորնչին. այլ գինի նոր՝ 'ի տիկս նորս արկանելի է:

23 Եւ եղեւ նմա 'ի շաբաթու անցանել ընդ արտորայս. եւ աշակերտքն 'ի ճանապարհն երթալով՝ սկսան հասկ կորզել եւ ուտել:

24 Եւ փարիսեցիքն ասեն ցնա. Տե՛ս զի՛նչ գործեն աշակերտքն քո 'ի շաբաթու՝ զոր չէ արժան:

25 Եւ ասէ ցնոսա Յիսուս. Ո՞չ երբէք իցէ ընթերցեալ ձեր զոր արարն Դաւիթ, յորժամ պիտոյն եղեւ՝ եւ քաղցեաւ նա եւ որ ընդ նմայն էին:
26 Զիարդ եմուտ 'ի տունն Աստուծոյ առ Աբիաթարաւ քահանայապետիւ, եւ զհացն առաջաւորութեան եկեր՝ եւ ետ այնոցիկ որ ընդ նմայն էին. զոր ոչ էր օրէն ուտել, բայց միայն քահանայիցն:
27 Եւ ասէ ցնոսա. Շաբաթ վասն մարդոյ եղեւ, եւ ոչ եթէ մարդ վասն շաբաթու:
28 Ապա ուրեմն՝ տէր է Որդի մարդոյ՝ եւ շաբաթու:

տանիկ կտոր հին շորի վերայ չի ձգիլ. ապա թէ ոչ՝ նորն իրեն ուժովն այն հինը կառնէ, եւ պատառուածքն էլ աւելի չար կը լինի:
22 Եւ ոչ ով նոր գինին հին տիկերի մէջ չի ածիլ. ապա թէ ոչ՝ գինին տիկերը կը պատառէ՝ գինին կը թափվի, եւ տիկերը կը կորչին. բայց նոր գինին՝ նոր տիկերի մէջ պէտք է ածիլ:
23 Եւ էլաւ որ նա շաբաթ օրը արտերին մէջովը ‡ անցանումէր. եւ աշակերտներն իրենց գնալոյ ժամանակին սկսեցին հասկ պոկել եւ է ուտել:
24 Եւ փարիսեցիքը նորան ասացին. Տե՛ս ի՛նչ են գործում քո աշակերտներդ շաբաթ օրն՝ որ արժան չէ:
25 Եւ Յիսուս նորանց ասաց. Դուք բնաւ չէ՞ք կարդացել նա, որ Դաւիթն արաւ, երբոր պէտք էլաւ՝ եւ սովեց նա եւ նորանք էլ, որ նորան հետն էին.
26 Ինչպէս Աստուծոյ տունը մըտաւ Աբիաթար քահանայապետի օրերին. եւ առաջաւորութեան հացը կերաւ՝ եւ նորանց էլ տուաւ որ նորան հետն էին՝ որ ուրիշի օրէնք չէր ուտել՝ բայց միայն ⁺ քահանայից:
27 Եւ նորանց ասաց. Շաբաթն մարդոյ համար էլաւ, եւ ոչ թէ մարդը շաբաթի համար:
28 Ուրեմն Որդին մարդոյ շաբաթին էլ տէրն է:

## ԳԼ. Գ

1 Եւ եմուտ միւսանգամ 'ի ժողովուրդն, եւ էր անդ այր մի որոյ ձեռն իւր գօսացեալ էր:
2 Եւ սպասէին նմա՝ եթէ բժշկիցէ զնա 'ի շաբաթու՝ զի չարախօսեսցեն զնմանէ:

1 Եւ դարձեալ ժողովարանին մէջ մտաւ, եւ այնտեղ մին մարդ կար՝ որ նորա ձեռքը չորացած = էր:
2 Եւ սպասումէին նորան՝ թէ շաբաթ օրը բժշկէ նորան, որ չարախօսեն նորանից:

⁺ Մատթ. ԺԲ. 1: Ղու. Զ. 1:
‡ Բ Օրին. ԻԳ. 25:
˜ Ա Թագ. ԻԱ. 6:
⁺ Ելից. ԻԹ. 32. 33: Ղև. ԻԴ. 9:
⁺ Մատթ. ԺԲ. 8:
= Մատթ. ԺԲ. 9: Ղու. Զ. 6:

3 Եւ ասէ ցայրն՝ որոյ ձեռն գօ-
սացեալ էր , Արի՛ անց ՚ի մէջ ։

4 Եւ ասէ ցնոսա . Զի՞նչ ար-
ժան է ՚ի շաբաթու , բարի՞ ինչ
գործել՝ եթէ չար առնել , ոգի մի
ապրեցուցանել՝ եթէ կորուսանել .
Եւ նոքա լռեցին ։
5 Եւ հայեցեալ Յիսուսի զնոքօք
լի ցասմամբ , տրտմեալ վասն կու-
րութեան սրտից նոցա՝ ասէ ցայրն .
Ձգեա զձեռն քո . եւ նա ձգեաց ,
եւ ողջացաւ ձեռն նորա ։

6 Եւ ելեալ արտաքս վաղվաղակի
փարիսեցիքն Հերովդիանոսօքն հան-
դերձ , խորհուրդ առնէին վասն նո-
րա՝ թէ զիա՞րդ կորուսցեն զնա ։
7 Իսկ Յիսուս աշակերտօքն իւ-
րովք գնաց ՚ի ծովեզրն . եւ բազում
ժողովուրդ ՚ի Գալիլեացւոց երթային
զհետ նորա . եւ ՚ի Հրէաստանէ ,

8 Եւ յԵրուսաղէմէ , եւ յայնկոյս
Յորդանանու , եւ որք ՚ի Տիւրոսէ
եւ ՚ի Սիդոնէ , բազում ժողովուրդ
իբրեւ լուեալ՝ որչափ ինչ առնէր ,
գային առ նա ։

9 Եւ ասէ ցաշակերտսն իւր ,
զի նաւակ մի պատրաստական կայ-
ցէ նմա վասն ամբոխին՝ զի մի՛
նեղեսցեն զնա ։
10 Քանզի զբազումս բժշկեաց .
մինչ գալ խռնել զնովաւ՝ զի մերձես-
ցին առ նա , որք ունէին ախտս ինչ ։

11 Եւ այսք պիղծք յորժամ տե-
սանէին զնա , անկանէին առաջի նո-
րա , աղաղակէին եւ ասէին .
12 Թէ Դու ես Որդին Աստուծոյ .
Եւ նա յոյժ սաստէր նոցա , զի մի՛
յայտնի արասցեն զնա ։
13 Ելանէ ՚ի լեառն՝ եւ կոչէ առ

3 Եւ ասաց այն մարդուն՝ որ նո-
րա ձեռքը չորացած էր . Վե՛ր կաց
եկ մէջ տեղը ։
4 Եւ նորանց ասաց . Ի՞նչ ար-
ժան է շաբաթ օրը . բարի՞ բան
գործել՝ թէ չար անել . մին հոգի
ապրեցնել՝ թէ կորցնել . Եւ նորանք
լուռ կացան ։
5 Եւ Յիսուս շատ բարկութենով
չորս կողմը նորանց մտիկ տուաւ՝
նորանց սրտերի կուրութեան հա-
մար տրտմելով եւ այն մարդուն
ասաց . Ձեռքդ մեկնէ . Եւ նա
մեկնեց , եւ նորա ձեռքն ողջացաւ ։
6 Եւ փարիսեցիները շուտով
դուրս [բ] գնացին Հերովդէսականներին
[գ] հետ . նորա համար խորհուրդ էին
անում՝ թէ ինչպէս կորցնեն նորան ։
7 Բայց Յիսուս իրեն աշակերտա-
ներին հետ ծովի եզրը գնաց . եւ
շատ ժողովուրդ նորա ետեւէն գը-
նացին Գալիլեացիներից . եւ
[դ] Հրէաստանից ,
8 Եւ Երուսաղէմից ու Յորդա-
նանի այն կողմից , եւ նորանք էլ
որ Տիւրոսից ու Սիդոնից էին ,
շատ ժողովուրդ երբոր լսեցին՝ թէ
որքան բաներ էր անում , նորա
մօտ էին գալիս ։
9 Եւ իրեն աշակերտներին ասաց ,
որ մին պզտիկ նաւ պատրաստ լի-
նի իրեն համար այն ամբոխի պատ-
ճառաւն՝ որ չնեղեն նորան ։
10 Ինչու որ՝ շատերին բժշկեց .
մինչեւ որ եկին նորա վերայ թափ-
վեցան՝ որ նորան դիպչին՝ նորանք
որ մին ցաւ ունէին ։
11 Եւ պիղծ դեւերն երբոր նորան
[ե] տեսնում էին , նորա առաջին ընկ-
նում էին , աղաղակում եւ ասում .
12 Թէ , Դու ես Աստուծոյ [զ] Որդին .
Եւ նա շատ սաստում էր նորանց ,
որ զինքը [է] չյայտնեն ։
13 Վեր ելաւ [ը] սարը՝ եւ իրեն

բ Մատթ . ժբ . 14 ։
գ Մատթ . իբ . 16 ։
դ Ղու . Զ . 17 ։
ե Գղ . Ա . 23 , 24 ։
Ղու . Դ . 41 .
զ Մատթ . ժԴ . 33 ։
Գղ . Ա . 1 ։
է Մատթ . ժբ . 16 ։
Գղ . Ա . 25 . 34 ։
ը Մատթ . Ժ . 1 ։
Զ . 12 ։ Թ . 1 ։

ինքն զորս ինքն կամեցաւ, եւ չո-
գան առ նա։
14 Եւ արար երկոտասանս՝ զի ի-
ցեն ընդ նմա, եւ զի առաքեսցէ զնոսա քարոզել,
15 Եւ ունել իշխանութիւն բժշ-
կելոյ զցաւս՝ եւ հանելոյ զդեւս։
16 Եւ եդ անուն Սիմոնի՝ Պետ-
րոս.
17 Եւ Յակոբայ Զեբեդեայ՝ եւ
Յովհաննու եղբօրն Յակոբայ, եդ
նոցա անուանս Բանէրեգէս, որ է
Որդիք որոտման,
18 Եւ զԱնդրէաս, եւ զՓիլիպպոս,
եւ զԲարթողոմէոս, եւ զՄատթէոս
զմաքսաւորն, եւ զԹովմաս, եւ զՅակոբոս Ալփեայ, եւ զԹադէոս,
եւ զՍիմոն Կանանացի,
19 Եւ զՅուդա Իսկարիովտացի,
որ եւ մատնեացն զնա։
20 Գան ՚ի տուն, եւ գայ միւսան-
գամ ընդ նոսա ժողովուրդն. մինչ
զի եւ հաց եւս ոչ ժամանել ուտել
նոցա։
21 Եւ իբրեւ լուան որ իւրքն էին՝
ելին ունել զնա, զի համարէին թէ
մոլեգնեալ իցէ։

22 Եւ դպիրքն՝ որ յԵրուսաղէմէ
իջեալ էին, ասէին թէ Բէեղզե-
բուղ գոյ ՚ի դմա, եւ իշխանաւ դի-
ւացն հանէ դա զդեւս։

23 Եւ կոչեցեալ զնոսա առ ինքն,
առակօք խօսէր ընդ նոսա. Զիարդ
կարէ Սատանայ զՍատանայ հանել։

24 Եւ արդ՝ եթէ թագաւորութիւն
յանձն իւր բաժանեսցի, ոչ կարէ
կալ թագաւորութիւնն այն։
25 Եւ եթէ տուն յանձն իւր բա-
ժանեսցի, ոչ կարէ կալ տունն։
26 Եւ եթէ Սատանայ ՚ի վերայ
անձին իւրոյ յարեաւ եւ բաժանեալ

մօտ կանչեց նորանց որ ինքը կա-
մեցաւ. եւ նորա մօտ գնացին։
14 Եւ տասներկու հոգի կարգեց՝
որ իրեն հետ լինին, եւ որ նորանց
ուղարկէ՝ որ քարոզեն,
15 Եւ իշխանութիւն ունենան ցա-
ւերը բժշկելոյ՝ եւ դեւերը հանելոյ։
16 Եւ Սիմոնի անունը Պետրոս
բ դրաւ.
17 Եւ Զեբեդեան Յակոբին՝ եւ
Յակոբի եղբայր Յօհաննէսին, նո-
րանց անունը Բանէրեգէս դրաւ,
որ է՝ Որոտմունքի որդիք,
18 Եւ Անդրէասին, եւ Փիլիպպո-
սին, եւ Բարթուղիմէոսին, եւ Մատ-
թէոս մաքսաւորին, եւ Թօմասին,
եւ Յակոբոս Ալփեանին, եւ Թադէո-
սին, եւ Սիմօն Կանանացուն,
19 Եւ Յուդա Իսկարիօտացուն՝ նա
որ մատնեց նորան։
20 Տուն եկին, եւ կրկին նորանց
հետ ժողովուրդն եկաւ՝ մինչեւ որ
ժամանակ էլ չէր նորանց՝ որ հաց
դ ուտեն։
21 Եւ երբոր նորա ընտանիքը լը-
սեցին՝ դուրս եկին որ նորան բըռ-
նեն. ինչու որ՝ համարում էին, թէ
նա գժւել ե է։
22 Եւ կարդացողները՝ որ Երու-
սաղէմիցն էին եկել, ասում էին՝ թէ
Բէեղզեբուղ կայ զ դորանում, եւ
դեւերի իշխանովն է հանում դա
դեւերը։
23 Եւ նորանց իրեն մօտ կանչեց՝
առակներով նորանց հետ է խօսու-
մէր. Թէ ի՞նչպէս Սատանայ կարող
է Սատանայն հանել։
24 Որովհետեւ՝ եթէ թագաւորութիւն
իրեն միջումը բաժանուի, այն թա-
գաւորութիւնը կարող չէ կենալ։
25 Եւ եթէ տուն իրեն միջումը բա-
ժանուի, այն տունը կարող չէ կենալ։
26 Եւ եթէ Սատանան իրեն անձին
վերայ վերկացաւ եւ բաժանուած է,

բ Յովհ. Ա. 42։
դ Մր. Զ. 31։
ե Յովհ. Է. 5։ Ժ. 20։
զ Մատթ. Թ. 34։ Ժ. 25։ Ղուկ. ԺԱ. 15։ Յովհ. Է. 20։ Ը. 48. 52։ Ժ. 20։
է Մատթ. ԺԲ. 25։

է, ո՛չ կարէ կալ, այլ վախճանեալ է։

27 Այլ ո՛չ ոք կարէ զկարասի հզօրի մտեալ 'ի տուն նորա՝ աւար հարկանել, եթէ ո՛չ նախ զհզօրն կապիցէ, եւ ապա զտուն նորա աւար հարկանիցէ։

28 Ամէն ասեմ ձեզ, զի ամենայն թողցի որդւոց մարդկան մեղք եւ հայհոյութիւնք՝ որչափ եւ հայհոյիցեն։

29 Բայց որ հայհոյեսցէ զՀոգին Սուրբ, ոչ ունիցի թողութիւն յաւիտեան. այլ պարտական լիցի յաւիտենից մեղաց։

30 Զի ասէին՝ թէ Այս պիղծ զայ 'ի նմա։

31 Գան եղբարքն եւ մայր նորա, եւ արտաքոյ կացեալ՝ յղեցին եւ կոչէին զնա։

32 Եւ անդ ժողովուրդն շուրջ էր զնովաւ նստէր. եւ իբրեւ ասացին ցնա, Ահաւասիկ մայր քո եւ եղբարք քո կան արտաքոյ, եւ խնդրեն զքեզ.

33 Պատասխանի ետ նոցա եւ ասէ. Ո՞վ է իմ մայր կամ եղբարք։

34 Հայեցաւ շուրջ զիւրեւ յաշակերտսն զի նստէին, եւ ասէ. Ահաւասիկ մայր իմ եւ եղբարք իմ։

35 Զի որ առնիցէ զկամս Աստուծոյ, նա է իմ եղբայր եւ քոյր եւ մայր։

կարող չէ կենալ, այլ վերջացած է։

27 Բայց ոչ ով կարող չէ զօրաւոր մարդու տուն մտնել եւ նորա բաներին ծ յափշտակել, եթէ առաջ այն զօրաւորը չկապէ, եւ ապա նորա տունը յափշտակէ։

28 Ճշմարիտն ասում եմ ձեզ՝ թէ Մարդկանց որդոցն ամէն մեղքեր եւ հայհոյանքներ կը թողվին՝ որքան որ ‡ հայհոյեն.

29 Բայց նա որ Սուրբ Հոգուն կը հայհոյէ՝ յաւիտեան թողութիւն չունենայ. այլ յաւիտենական մեղաց պարտական կը լինի։

30 Պատճառոր՝ ասում էին՝ թէ Պիղծ ոգի կայ նորանում։

31 Նորա եղբարքն ու մայրն եկին, եւ դուրսը կանգնած՝ ուղարկեցին եւ նորան հ կանչում էին։

32 Եւ այնտեղ ժողովուրդը նորա չորս կողմերը նստած էր. եւ երբոր ասացին նորան՝ Ահա քո մայրդ ու քո եղբարքդ դուրսը կանգնած են, եւ քեզ են խնդրում.

33 Նորանց պատասխանն տուաւ եւ ասաց՝ Ո՞վ է իմ մայրս կամ եղբարքս։

34 Իրեն չորս կողմերը աշակերտներին մտիկ տուաւ՝ որ նստած էին, եւ ասաց. Ահա իմ մայրս եւ իմ եղբարքս։

35 Ինչու որ՝ ով որ Աստուծոյ կամքը կատարէ՝ նա է իմ եղբայրս եւ քոյրս եւ մայրս։

## ԳԼ. Դ

1 Դարձեալ սկսաւ ուսուցանել առ ծովեզերբն. եւ խռնեցան զնովաւ ժողովուրդք բազումք, մինչեւ 'ի նաւ մտանել նմա, եւ նստել 'ի ծովուն. եւ ամենայն ժողովուրդն զծովեզերբն զցամաքն ունէին։

2 Եւ ուսուցանէր զնոսա առակօք

1 Նորէն ծովի եզրին մօտ սկսաւ = սովրցնել. եւ շատ ժողովուրդներ նորա չորս կողմերը կիտվեցան, մինչեւ որ նաւ մտաւ, եւ ծովի վերայ նստաւ. եւ ամէն ժողովուրդները ծովին եզրովը ցամաքը բռնած էին։

2 Եւ շատ բան առակներով սո-

ծ Եսայ. ԽԹ. 24։ Մատթ. ԺԲ. 29. ‡ Մատթ. ԺԲ. 31։ | Ղու. ԺԲ. 10։ Ա Յովհ. Ե. 16։ հ Մատթ. ԺԲ. 46։ | Ղու. Ը. 19։ — = Մատթ. ԺԳ. 16 | Ղու. Ը. 4։

բազում ինչ. եւ ասէր նոցա ՚ի
վարդապետութեան իւրում։

3 Լուարուք. ահա ել սերմա-
նող սերմանել։
4 Եւ եղեւ ՚ի սերմանելն, այն
անկաւ առ ճանապարհաւ, եւ եկին
թռչունք եւ եկեր զնա։
5 Եւ այլն անկաւ յապառաժի,
ուր ոչ գոյր հող բազում. եւ վաղ-
վաղակի բուսաւ, քանզի ոչ գոյր
հիւթ երկրին։
6 Եւ յորժամ ծագեաց արեւ՝ ջե-
ռաւ, եւ զի ոչ գոյին արմատք՝
ցամաքեցաւ։
7 Եւ այլն անկաւ ՚ի մէջ փշոց.
ելին փուշքն եւ հեղձուցին զնա,
եւ պտուղ ոչ ետ։
8 Եւ այլն անկաւ յերկիր բար-
ւոք. եւ ելեալ աճեցեալ տայր պտ-
ուղ, եւ բերէր ընդ միոյ երեսուն՝
եւ ընդ միոյ վաթսուն՝ եւ ընդ միոյ
հարիւր։
9 Եւ ասէր. Որ ունիցի ականջս
լսելոյ՝ լուիցէ։
10 Եւ իբրեւ եղեւ առանձինն՝ հար-
ցին զնա, որ զնովաւն էին աշա-
կերտօքն հանդերձ՝ զառակէն։

11 Եւ ասէ ցնոսա. Ձեզ տուեալ
է գիտել զխորհուրդս արքայութեան
Աստուծոյ, բայց նոցա որ արտա-
քինքն են՝ ամենայն ինչ առակօք
լինի։
12 Զի տեսանելով տեսցեն՝ եւ մի
տեսցեն, եւ լսելով լուիցեն՝ եւ մի
իմասցին. զի մի երբեք դարձցին՝
եւ թողցի նոցա։
13 Եւ ասէ ցնոսա. Ոչ գիտէք
զառակս զայս, եւ զիարդ զամենայն
առակսն գիտիցէք։
14 Որ սերմանէն՝ զբանն սերմանէ։

վարդապետում էր նրանց. եւ իրեն վար-
դապետութեանը մէջն, ասում էր
⁝ նրանց.
3 Լսեցէք՝ ահա մին սերմ ցանող
դուրս գնաց, որ սերմը ցանէ։
4 Եւ սերմնելոյ ժամանակին էլաւ
որ մինը ճանապարհի վերայ ընկաւ,
եւ թռչունն եկաւ եւ նրան կերաւ։
5 Եւ միւսը քարքարուտ տեղ
ընկաւ՝ որ այնտեղ շատ հող չկար.
եւ շուտով բուսաւ. ինչու որ՝ բա-
ւական հող չկար։
6 Եւ երբոր արեգակը ծագեց՝
տաքացաւ, եւ որովհետեւ արմատ
չունէր՝ չորացաւ։
7 Եւ միւսն ընկաւ փշերին մէջ,
փշերը դուրս եկին եւ խեղդեցին
նրան. եւ պտուղ չտուաւ։
8 Եւ միւսը բարի երկրի վերայ
ընկաւ. եւ դուրս եկաւ աճեց եւ
պտուղ էր ÷ տալիս, եւ մինի տեղ
վաթսուն՝ եւ մինի տեղ հարիւր։

9 Եւ ասում էր. Ո՛վ որ լսելու
ականջ ունի՝ թող լսէ։
10 Եւ երբոր մենակ ⸗ էլաւ՝ նա-
րանք որ նրան մօտ էին աշակերտ-
ներին հետ՝ հարցրին նրան այն ա-
ռակները։
11 Եւ նրանց ասաց. Ձեզ տըր-
ված է Աստուծոյ արքայութեան
խորհուրդները գիտել, բայց նը-
րանց որ դրսի են՝ ամէն բան ա-
ռակներով է ⊢ լինում.
12 Որ տեսնելով տեսնեն՝ եւ չը-
տեսնեն, եւ լսելով լսեն՝ եւ չի-
մանան. որ ընաւ չդարձնան, եւ
թողութիւն լինի նրանց։
13 Եւ նրանց ասաց. Այս առա-
կըս չէք գիտում, եւ ինչպէս ա-
մէն առակները կը գիտենաք։
14 Նա որ սերմանում է՝ Աստուծոյ բա-
նըն է ⊢ սերմանում։

⁝ Գղ. ԺԲ. 38.
÷ Յովհ. ԺԵ. 5.
Կող. Ա. 6.
⸗ Մատթ. ԺԳ. 10.
Ղուկ. Ը. 9. Ա
⊢ Ա. Կորնթ. Ե. 12.
Կող. Դ. 5. Ա
Թես. Դ. 12. Ա
Տիմ. Գ. 7.
⁓ Եսայ. Զ. 9.
Մատթ. ԺԳ. 14
Ղուկ. Ը. 10.
Յովհ. ԺԲ. 40.
Գործ. ԻԸ. 26.
Հռովմ. ԺԱ. 8.
⊢ Մատթ. ԺԳ. 19.

15 Եւ նոքա են որ առ ճանա-
պարհաւն, ուր բանն սերմանի. եւ
յորժամ լսեն զնա, գայ Սատանայ՝
եւ հանէ զբանն սերմանեալ 'ի սիրտս
նոցա։
16 Եւ նոքա են որ յապառաժին
սերմանեցան. որք յորժամ լսիցեն
զբանն, վաղվաղակի խնդութեամբ
ընդունին։
17 Եւ զի ոչ ունին արմատս յան-
ձինս, այլ առ ժամանակ մի են. ա-
պա 'ի հասանել նեղութեան կամ
հալածման վասն բանին, վաղվա-
ղակի գայթակղին։
18 Իսկ որ 'ի մէջ փշոցն սերմա-
նեցան՝ նոքա են, որ իբրեւ զբանն
լսեն,
19 Եւ հոգք աշխարհիս եւ պատ-
րանք մեծութեան մտանեն, եւ հեղ-
ձուցանեն զբանն՝ եւ անպտուղ լինի։
20 Եւ նոքա են որ յերկիրն բա-
րւոք սերմանեցան, որք լսեն զբանն
եւ ընդունին, եւ տան պտուղ՝ ընդ
միոյ երեսուն՝ եւ ընդ միոյ վաթսուն՝
եւ ընդ միոյ հարիւր։
21 Եւ ասէ ցնոսա. Միթէ գայ
ճրագ, զի ընդ գրուանաւ դնիցի
կամ ընդ մահճօք. ոչ ապաքէն 'ի
վերայ աշտանակի դնիցի։
22 Զի չէ ինչ 'ի ծածուկ՝ որ թէ
ոչ յայտնեսցի. եւ ոչ եղեւ ինչ
գաղտնի, եթէ ոչ 'ի յայտ գայցէ։
23 Եթէ ոք ունիցի ականջս լսե-
լոյ՝ լուիցէ։
24 Եւ ասէ ցնոսա. Տեսէք զինչ
լսէքդ, եւ յաւելցի ձեզ որոց լսէքդ.
որով չափով չափէք՝ նովին չափես-
ցի ձեզ։
25 Որ ոք ունիցի՝ տացի նմա. եւ
որ ոչն ունիցի, եւ զոր ունիցին՝
բարձցի 'ի նմանէ։

15 Եւ նորանք են՝ որ ճանապար-
հի վերայ են՝ որտեղ որ բանը սերմն-
վում. եւ երբոր նա լսումեն, Սա-
տանան գալիս է՝ եւ նորանց սրտե-
րումը սերմնած բանը հանում։
16 Եւ որ քարքարուտ տեղը սեր-
մնվեցան, նորանք են՝ որ երբոր
բանը լսումեն, շուտով ուրախու-
թենով ընդունումեն։
17 Եւ իրենց մէջ արմատ չունենին՝
էլ քիչ ժամանակ են մնում. յետոյ
երբոր նեղութիւն կամ հալածմունք
են հասնում՝ այն բանին համար,
շուտով գայթակղվումեն։
18 Բայց որ փշերին մէջ սերմնվե-
ցան՝ նորանք են, որ երբոր բանը
լսումեն,
19 Աշխարհքի հոգսերն ու մեծու-
թեան խաբեբայութիւնները մտա-
նումեն եւ բանը խեղդում՝ եւ ան-
պտուղ է ը լինում։
20 Եւ որ բարի երկրի վերայ սերմ-
նվեցան՝ նորանք են՝ որ բանը լսու-
մեն եւ ընդունում, եւ պտուղ են
տալիս՝ մինի տեղ երեսուն՝ եւ մինի
տեղ վաթսուն՝ եւ մինի տեղ հարիւր։
21 Եւ նորանց ասաց. Միթէ ճը-
րագը նրահամար է գալիս՝ որ տաշ-
տին կամ մահճին տակը թ դընվի.
չէ որ ճրագակալի վերայ կը դնվի։
22 Ինչու որ՝ բնաւ ծածուկ բան
չըկայ՝ որ ժ չը յայտնվի. եւ թաքուն
բան չեղաւ, որ դէպի յայտնութիւն
չըգայ։
23 Թէ որ մինը լսելոյ ականջ ու-
նենայ՝ թող ի լսէ։
24 Եւ նորանց ասաց. Տեսէք թէ
ինչ էք լսում, եւ կաւելանայ ձեզ
նա որ լսումէք. ինչ չափով որ չա-
փէք՝ նորանով էլ ձեզ լ կը չափվի։
25 Ով որ ունի՝ նորան խ կը տրվ-
վի. եւ ով որ չունի, նորանից նա
էլ որ ունի՝ վերկանվի։

ը Ա. Տիմ. Զ. 9. 17.
թ Մատթ. Ե. 15. Ղուկ. Ը. 16. ԺԱ. 33.
ժ Մատթ. Ժ. 26. Ղուկ. ԺԲ. 2.
ի Մատթ. ԺԱ. 15. Համար. 9.
լ Մատթ. Է. 2. Ղուկ. Զ. 38.
խ Մատթ. ԺԳ. 12. ԻԵ. 29. Ղուկ. Ը. 18. ԺԹ. 26.

26 Եւ ասէր. Այսպէս է արքա-
յութիւն Աստուծոյ. որպէս զի այր
մի արկանիցէ սերմանիս յերկիր,
27 Եւ ննջիցէ եւ յառնիցէ զցայգ
եւ զցերեկ. եւ սերմանիքն բուսա-
նիցին եւ աճիցեն. եւ նա ոչ գիտէ՝
28 Թէ երկիրն ինքնին բերէ ըզ
պտուղ. նախ զխոտն՝ եւ ապա ըզ
հասկն, ապա զցորեանն ատոք 'ի
հասկին։
29 Այլ յորժամ տայցէ զպտուղն,
վաղվաղակի առաքէ մանգաղ. զի
հասեալ են հունձք։
30 Եւ ասէր. Ո՞ւմ նմանեցուս-
ցուք զարքայութիւնն Աստուծոյ,
կամ որով առակաւ առակեսցուք
զնա։
31 Որպէս հատն մանանխոյ՝ որ
յորժամ սերմանիցի յերկրի, փոքրա-
գոյն է քան զամենայն սերմանիս՝
որ են յերկրի։
32 Եւ յորժամ սերմանիցի, բու-
սանի եւ լինի մեծ քան զամենայն
բանջար, եւ արձակէ ոստս մեծա-
մեծս, մինչեւ բաւական լինել ընդ
հովանեաւ նորա թռչնոց երկնից
բնակել։
33 Եւ այնպիսի առակօք խօսէր
ընդ նոսա զբանն, որպէս կարօղ
լինէին լսել։
34 Եւ առանց առակի ոչ ինչ խօ-
սէր ընդ նոսա, բայց առանձինն ա-
շակերտացն իւրոց մեկնէր զամե-
նայն։
35 Եւ ասէ ցնոսա յաւուրն յայն-
միկ՝ իբրեւ ընդ երեկս լինէր. Ե-
կայք անցցուք յայն կողմն։
36 Թողուն զժողովուրդն, եւ առ-
նուն զնա նաւաւն հանդերձ, եւ
այլ եւս նաւք որ էին ընդ նմա։
37 Եւ լինէր մրրիկ մեծ հողմոյ,
եւ զալիսն 'ի նաւն զեղոյր, մինչ
գրեթէ լի իսկ լինել։

26 Եւ ասումէր. Աստուծոյ ար-
քայութիւնն այսպէս ծ է. ինչպէս
թէ մին մարդ սերմ ձգէ հողի մէջ,
27 Եւ գիշեր ու ցորեկ քնանայ
եւ վերկենայ. եւ այն սերմը բուսա-
նէ եւ աճի՝ եւ ինքը չըգիտում։
28 Ինչու որ՝ երկիրն ինքն իրեն
է պտուղ բերում՝ առաջ խոտ՝ եւ
յետոյ հասկը՝ եւ նրանից ետեւ լըց-
ված ցորենըն իրեն հասկին մէջ։
29 Բայց երբոր պտուղը կըսոյ՝
շուտով մանգաղ ‡ կուղարկէ.
ինչու որ հունձքը հասել է։
30 Եւ ասումէր. Աստուծոյ ար-
քայութիւնըն ում նմանեցնենք,
կամ ինչ առակով յայտնենք նրան
հ օրինակը։
31 Ինչպէս մանանեխի հատըն՝ որ
երբոր հողի մէջ սերմէլի, ամէն սեր-
մանքերցն աւելի փոքր է՝ որ երկրի
վերայ են,
32 Եւ երբոր սերմէլի, բուսնումէ
եւ ամէն բանջարիցն աւելի մեծ է
լինում, եւ մեծ մեծ ճղներ է դուրս
բերում, մինչեւ որ բաւական է լի-
նում՝ որ երկնքի թռչունները նորա
շուքին տակ բնակվեն։
33 Եւ այնպէսի առակներով էր
խօսում բանը նրանց Յ հետ, ինչ-
պէս որ նորանք կարօղ էին լսել։
34 Եւ առանց առակի ոչ ինչ չէր
խօսում նրանց հետ, միայն թէ
առանձին իրեն աշակերտաներին ա-
մէն բան մեկնումէր։
35 Եւ այն օրն՝ երբոր իրիկվան
դէմ էր ‡ լինում, նրանց ասաց.
Եկէք անցանենք այն կողմը։
36 Ժողովուրդը թողին, եւ նո-
րան միայն նաւովն առին, եւ ու-
րիշ նաւերըն էլ՝ որ նորա հետ էին։
37 Եւ քամոյ մեծ մրրիկ էր լի-
նում, եւ ալիքները նաւին մէջն էր
թափում, մինչեւ որ համարեա
թէ լցվումէր։

| | | | |
|---|---|---|---|
| Ժ Մատթ. ԺԳ. 24. | Ղու. ԺԳ. 18. | ԺԻ. 20. | Ղ Մատթ. Ը. 18. |
| Լ Յովբ. ԺԴ. 15. | Գործ. Բ. 41. | Յ Մատթ. ԺԳ. 34. | 23. Ղու. Ը. 22. |
| Կ Մատթ. ԺԳ. 31. | Դ. 4. Ե. 14. | Յովհ. ԺԶ. 12. | — |

38 Եւ ինքն ննջէր 'ի խելս նաւուն
'ի վերայ բարձի. զարթուցանէին
զնա եւ ասէին. Վարդապետ՛ ոչ
ինչ է քեզ փոյթ, զի կորնչիմք ա-
ստանօր:
39 Եւ զարթուցեալ սաստեաց հող-
մոյն եւ ծովուն, ասէ. Դադարեա՛
կարկեա՛ց, եւ դադարեաց հողմն,
եւ եղեւ խաղաղութիւն մեծ:
40 Եւ ասէ ցնոսա. Ընդէ՞ր այդ-
պէս վատասիրտք էք, չեւ եւս ու-
նիք հաւատս. եւ երկեան երկիւղ
մեծ, եւ ասէին ցմիմեանս. Ո՞ ոք
արդեօք իցէ սա, զի եւ հողմ եւ
ծով հնազանդին սմա:

38 Եւ ինքը նաւի յետին կողմու-
մը բարձի վերայ ննջումէր. նո-
րան զարթնացնումէին եւ ասում.
Վարդապետ՛ դու հոգս չունիս,
որ մենք կորչումենք այստեղ:
39 Եւ նա զարթնացաւ՝ եւ քա-
մոյն սաստեց՝ եւ ծովին ասաց. Դա-
դարէ՛ պապանձուէ՛. եւ քամին դա-
դարեց, եւ մեծ խաղաղութիւն էղաւ:
40 Եւ նորանց ասաց. Ինչու այդ-
պէս վախկոտ էք. դեռ հաւատք
չունիք. եւ մեծ վախով վախեցան,
եւ միմեանց ասացին. Սա ո՞վ
պիտի լինի՝ որ քամին եւ ծովն էլ
հնազանդվումեն սորան:

## ԳԼ. Ե

1 Եւ եկին յայնկոյս ծովուն յաշ-
խարհն Գերգեսացւոց:
2 Եւ ընդ ելանելն նորա 'ի նաւէ
անտի, պատահեաց նմա այր մի 'ի
գերեզմանացն՝ զոր ունէր այս պիղծ:
3 Որոյ եւ բնակութիւն իւր իսկ
'ի գերեզմանս էր. եւ ոչ շղթայիւք
ոք եւս կարէր կապել զնա:
4 Վասն բազում անգամ ոտնա-
կապօք եւ շղթայիւք կապելոյ, եւ
խզելոյ 'ի նմանէ զշղթայսն, եւ
զոտնակապսն խորտակելոյ. եւ ոչ
ոք կարէր ապարանել զնա:
5 Քանզի հանապազորդ զցայգ եւ
զցերեկ 'ի գերեզմանս եւ 'ի լերինս
աղաղակէր, եւ կոծէր զանձն իւր
քարամբք:
6 Իբրեւ ետես զՅիսուս 'ի հե-
ռաստանէ, ընթացաւ եւ երկիր ե-
պագ նմա:
7 Աղաղակեաց 'ի ձայն մեծ՝ եւ
ասէ, Զի՞ կայ իմ եւ քո՛ Յիսուս
Որդի Աստուծոյ բարձրելոյ. երդ-
մնեցուցանեմ զքեզ յԱստուած, մի
տանջեր զիս:
8 Քանզի ասէր ցնա. Ե՛լ այսդ
պիղծ 'ի մարդոյ այտի:

1 Եւ եկան ծովի այն կողմը՝
Գերգեսացոց =աշխարհը:
2 Եւ նորա նաւիցը դուրս գալոյ
ժամանակը, նորան մին մարդ պա-
տահեց գերեզմաններիցն՝ որ նորան
պիղծ դեւ բռնել էր.
3 Որ նորա բնակութիւնը գերեզ-
մաններումն էր. եւ ոչ ով շղթա-
ներով էլ չէր կարող կապել նորան,
4 Ինչու որ՝ շատ անգամ ոտաց
կապերով եւ շղթաններով կապումէ-
ին՝ եւ նա շղթաները կտրումէր,
եւ ոտաց կապերը ջարդումէր. եւ
ոչ ով կարող չէր բռնել նորան,
5 Ինչու որ՝ միշտ գիշեր ու ցերեկ
գերեզմաններումն ու սարերումն
աղաղակումէր. եւ ինքն իրեն ծե-
ծումէր քարերով:
6 Երբոր հեռուանց Յիսուսին տե-
սաւ՝ վազեց գնաց եւ նորան եր-
կրպագութիւն արաւ,
7 Մեծ ձայնով աղաղակեց՝ եւ
ասաց. Քեզ ինչ բան կայ ինձ հետ՝
Յիսուս բարձրեալ Աստուծոյ Որդի.
Աստուծով երդւում եմ տալիս քեզ,
մի տանջեր ինձ:
8 (Պատճառնոր՝ նորան ասումէր՝
Ո՛վ պիղծ դեւ՝ այդ մարդուցդ
դուրս եկ:)

= Մատթ. Ը. 28.| Ղուկ. Ը. 26.

9 Եւ հարցանէր ցնա՝ թէ Զի՞նչ անուն է քո․ եւ ասէ ցնա․ Լեգէոն անուն է իմ, քանզի բազումք եմք։

10 Եւ աղաչէին զնա յոյժ, զի մի՛ տարաբերեսցէ զնոսա արտաքս քան զաշխարհն։

11 Եւ անդ էր առ լերամբն երամակ մի խոզաց արօտական մեծ։

12 Աղաչեցին զնա ամենայն դեւքն եւ ասեն, Առաքեա՛ զմեզ 'ի խոզսն, զի մտցուք 'ի նոսա։

13 Եւ հրամայեաց նոցա․ եւ իբրեւ ելին այսքն պիղծք՝ մտին 'ի խոզսն, եւ դիմեաց երամակն 'ի դարէ անտի 'ի ծովն․ էին իբրեւ երկու հազարք, եւ հեղձնուին 'ի ծովուն։

14 Եւ խոզարածքն փախեան, եւ պատմեցին 'ի քաղաքի եւ յագարակս, եւ ելին տեսանել զինչ իցէ՝ որ գործեցաւն։

15 Գան առ Յիսուս, եւ տեսանեն զդիւահարն զի նստէր զգեցեալ եւ զգաստացեալ, որ ունէր զլեգէոնն, եւ զահի հարան։

16 Եւ պատմեցին նոցա՝ որոց տեսեալն էր, թէ զի՞նչ եղեւ դիւահարին, եւ զինչ վասն խոզիցն։

17 Եւ սկսան աղաչել զնա գնալ 'ի սահմանաց նոցա։

18 Եւ իբրեւ եմուտ նա 'ի նաւն, աղաչէր ‡զնա դիւահարն՝ զի ընդ նմա իցէ։

19 Եւ Յիսուս ոչ ետ նմա թոյլ, այլ ասէ ցնա․ Երթ 'ի տուն քո առ ընտանիս քո, եւ պատմեա նոցա, որ ինչ միանգամ Տէր արար քեզ՝ եւ ողորմեցաւ քեզ։

20 Եւ չոգաւ՝ եւ սկսաւ քարոզել 'ի Դեկապօլին, զոր ինչ արար նմա Յիսուս, եւ ամենեքին զարմանային։

21 Եւ իբրեւ անց †Յիսուս մի-

9 Եւ հարցնումէր նորան՝ թէ Քո անունդ ինչ է․ եւ նորան ասումէր․ Իմ անունս լեգէոն է, ինչու որ մենք շատ ենք։

10 Եւ նորան շատ աղաչումէին, որ իրենց այն աշխարհքիցը դուրս չուղարկէ։

11 Եւ այնտեղ սարի մօտ խոզերի մին մեծ երամակ կար՝ որ արածումէր։

12 Ամէն դեւերը նորան աղաչեցին եւ ասացին, Ուղարկէ՛ մեզ այն խոզերին մէջ՝ որ նորանց մէջը մտանենք։

13 Եւ հրաման տուաւ նորանց․ եւ պիղծ դեւերն երբոր դուրս ելին, խոզերին մէջը մտին, եւ երամակն այն բարձր տեղիցը դէպի ծովը վազեց․ երկու հազարի չափ էին, եւ ծովին մէջումը խեղդվումէին։

14 Եւ խոզարածները փախան՝ եւ քաղաքումը ու արտերումը պատմեցին․ եւ դուրս ելին որ տեսնեն թէ ինչ է այն՝ որ գործվեցաւ։

15 Յիսուսի մօտ եկին, եւ դիւահարին տեսին որ նստած էր հագած եւ խելքը գլուխն եկած՝ նա՝ որ լեգէոնը ունէր․ եւ վախեցան։

16 Եւ նորանց պատմեցին՝ նորանք որ տեսել էին, թէ ինչ էլաւ այն դիւահարին, եւ ինչ խոզերի համար։

17 Եւ սկսեցին աղաչել նորան՝ որ իրենց երկրիցը դուրս ‡ գնայ։

18 Եւ երբոր նա նաւը մտաւ՝ դիւահարն աղաչումէր նորան՝ որ նորա հետ † լինի։

19 Եւ Յիսուս թոյլ չը տուաւ նորան, բայց նորան ասաց․ Գնա քո տունդ՝ քո ընտանեացդ մօտ, եւ նորանց պատմէ՛ ամէն ինչ որ Տէրն արաւ քեզ՝ եւ ողորմեցաւ քեզ։

20 Եւ գնաց եւ սկսեց Դեկապօլիսին մէջ քարոզել ինչ որ Յիսուս իրեն արաւ, եւ ամէնքը զարմանումէին։

21 Եւ երբոր Յիսուս նորէն այն

‡ Մատթ. Ը. 34։| Գործ. ԺԶ. 39։| † Ղուկ. Ը. 38։

անցեալ յայն կողմն՝ ժողովեցաւ
առ նա ժողովուրդ բազում, եւ էր
առ ծովեզերբն։
22 Եւ ահա մի 'ի ժողովրդապե-
տացն գայր, որում անուն էր Յայ-
րոս. եւ իբրեւ ետես զնա՝ անկանէր
առ ոտս նորա։
23 Աղաչէր զնա յոյժ եւ ասէր,
թէ Դուստր նորա մերձ է 'ի մահ,
զի եկեալ դնիցես ձեռն, որպէս
զի ապրեսցի եւ կեցցէ։
24 Եւ գնաց ընդ նմա. երթայր
եւ ժողովուրդ բազում զհետ նորա,
եւ նեղէին զնա։
25 Եւ կին մի էր՝ 'ի տեռատեսու-
թեան արեան զերկոտասան ամ։

26 Եւ յոյժ վշտացեալ 'ի բազում
բժշկաց, եւ ծախեալ զինչս իւր
զամենայն՝ եւ չէր ինչ օգտեալ,
այլ եւս առաւել զայրացեալ։

27 Իբրեւ լուաւ զՅիսուսէ՝ եկն 'ի
մէջ ամբոխին յետոյ՝ եւ բուռն ե-
հար զհանդերձէ նորա։
28 Զանգի խորհէր 'ի միտ. թէ
Միայն մերձեցայց 'ի հանդերձս նո-
րա, փրկեցայց։
29 Եւ վաղվաղակի ցամաքեցաւ
աղբիւր արեան նորա. եւ գիտաց
'ի մարմին իւր՝ թէ բժշկեցաւ 'ի
տանջանացն։
30 Եւ անդէն վաղվաղակի գիտաց
Յիսուս յանձն իւր զզօրութիւնն որ
ել 'ի նմանէ, դարձաւ յամբոխն եւ
ասէ. Ո՞վ մերձեցաւ 'ի հանդերձս
իմ։
31 Եւ ասեն ցնա աշակերտքն.
Տեսանես՝ զի ամբոխդ նեղէ զքեզ,
եւ ասես՝ թէ Ո՞վ մերձեցաւ 'ի հան-
դերձս իմ։
32 Եւ շուրջ հայէր տեսանել՝ թէ
ով զայն արար։
33 Եւ կինն զարհուրեալ եւ դո-
ղացեալ վասն որոյ գաղտն արար.

կողմն Փ անցաւ՝ շատ ժողովուրդ
նորա մօտ ժողովեցան, եւ նա ծո-
վին եզրումն էր։
22 Եւ ահա ժողովրդապետներիցը
մինը գալիս էր՝ որ նորա անունը
Յայրոս Ի էր. եւ երբոր նորան տե-
սաւ, ընկաւ նորա ոտները։
23 Նորան շատ աղաչումէր եւ ա-
սում՝ թէ Իմ աղջիկը մեռնելոյ
մօտ է, որ գաս ձեռքդ նորան վե-
րայ դնես՝ որ ողջանայ եւ ապրի։
24 Եւ նորան հետ գնաց. եւ շատ
ժողովուրդ էլ նորա ետեւէն գնու-
մէին, եւ նորան նեղացնումէին։
25 Եւ մին կին կար արիւն թա-
փելոյ հիւանդութեան մէջ տասներ-
կու տարի։
26 Եւ շատ բժիշկներիցը շատ չար-
չարանք էր քաշել, եւ իրեն ամէն
ապրանքը ծախել՝ եւ մին օգուտ
չէր առցել, բայց ցաւն էլ աւելի
սաստկացել էր։
27 Երբոր Յիսուսի համար լսեց՝
ամբոխին մէջ ետեւիցն եկաւ՝ եւ
ձեռքը դիպցրուց նորա շորին.
28 (Ինչու որ՝ իրեն միտումը մտա-
ծումէր, թէ որ միմիայն նորա շորե-
րին մօտենամ, կը փրկվիմ։)
29 Եւ շուտով նորա արիւնի աղ-
բիւրը ցամաքեցաւ. եւ իրեն մարմ-
նումն իմացաւ՝ թէ այն տանջան-
քիցը բժշկվեցաւ։
30 Եւ շուտով իսկ այն ժամումը
Յիսուս իրեն անձնումն իմացաւ այն
Ի զօրութիւնն՝ որ իրենից դուրս
գնաց, դարձաւ դէպի ամբոխն ու
ասաց. Ո՞վ դիպաւ իմ շորերիս։
31 Եւ աշակերտներն ասացին նո-
րան. Տեսնումես որ այդ ամբոխդ
նեղացնումէ քեզ, եւ ասումես՝ թէ
Ո՞վ իմ շորերիս դիպաւ։
32 Եւ չորս կողմը նայումէր՝ որ
տեսնէ թէ նա ով արաւ։
33 Եւ կինը վախենալով եւ դողա-
լով այն բանին համար՝ որ ծածուկ

Փ Մատթ. Թ. 1։ Ղու. Ը. 40։ | Ի Մատթ. Թ. 18։ Ղու. Ը. 41։ | Ղ Ղւ. ԺԵ. 25։ Մատթ. Թ. 20։ | Ի Ղու. Զ. 19։ Ը. 46։

քանզի գիտէր զինչ եղեւ նմա, եկն անկաւ առաջի նորա, եւ ասաց զամենայն իրսն ստուգութեամբ։

34 Եւ Յիսուս ասէ ցնա. Դուստր՝ հաւատք քո կեցուցին զքեզ. երթ 'ի խաղաղութիւն, եւ եղիջիր ողջ 'ի տանջանաց քոց։

35 Մինչդեռ նա զայն խօսէր, գան ոմանք 'ի տանէ ժողովրդապետին, եւ ասեն՝ թէ Դուստրն քո մեռաւ, զի՞ եւս աշխատ առնես զվարդապետդ։

36 Իսկ Յիսուս իբրեւ լուաւ զբանն ասացելոյ, ասէ ցժողովրդապետն. Մի՛ երկնչիր, բայց միայն հաւատա.

37 Եւ ոչ զոք եթող ընդ իւր երթալ, բայց միայն զՊետրոս եւ զՅակոբոս եւ զՅովհաննէս զեղբայրն Յակոբայ։

38 Գայ 'ի տուն ժողովրդապետին, եւ տեսանէ ամբոխ յոյժ եւ լալականս, եւ աղաղակս յոյժ։

39 Եւ մտեալ 'ի ներքս՝ ասէ ցնոսա. Զի՞ խռովեալ էք եւ լայք, մանուկն ոչ է մեռեալ, այլ ննջէ։

40 Եւ ծաղր առնէին զնա. եւ նորա հանեալ արտաքս զամենեսեան, առնու ընդ իւր զհայր մանկանն եւ զմայր, եւ զոսա որ ընդ նմայն էին, եւ մտանէ ուր դնէր մանուկն։

41 Եւ կալեալ զձեռանէ մանկանն, ասէ ցնա. Տալիթա կումի, որ թարգմանի, Աղջիկ դու՛ քեզ ասեմ արի։

42 Եւ վաղվաղակի յարեաւ աղջիկն եւ գնայր, քանզի էր ամաց երկոտասանից. եւ զարմացան մեծաւ զարմանալեօք։

43 Եւ պատուէր տայր նոցա յոյժ, զի մի ոք գիտասցէ զայն. եւ ասաց տալ նմա ուտել։

ղալու՝ ինչու որ՝ գիտումէր, ինչ էլաւ իրեն. եկաւ ընկաւ նորան առաջին՝ եւ ամէն բաները ճշմարտութենով ասաց։

34 Եւ Յիսուս նորան ասաց. Դուստր՝ քո հաւատքդ ազատեցուց ա քեզ. գնա խաղաղութենով, եւ քո տանջանքիցդ ողջ լինիս։

35 Դեռ քանի որ նա այն Բ-ը խօսումէր, ժողովրդապետի տանիցը մէն քանիսն եկին եւ ասացին՝ թէ Քո աղջիկդ մեռաւ. էլ ինչու ես աշխատացնում բ վարդապետին։

36 Եւ Յիսուս երբոր ասած բանը լսեց՝ ժողովրդապետին ասաց. Մի՛ վախենար, բայց միայն հաւատա։

37 Եւ ընաւ մէն մարդ չը թողեց՝ որ իրեն հետ գնայ, բայց միայն Պետրոսին եւ Յակոբին եւ Յակոբի եղբայր Յօհաննէսին։

38 Ժողովրդապետի տունն եկաւ. այնտեղ մեծ ամբոխ տեսաւ եւ լացողներ, եւ շատ աղաղակ։

39 Եւ ներս մտաւ՝ եւ նորանց ասաց. Ինչու էք շփոթված եւ լաց էք լինում. երեխան մեռած չէ, բայց քնած գ է։

40 Եւ ծաղր էին անում նորան. եւ նա ամէնը դուրս դ հանեց, եւ երեխայի հօրն ու մօրը եւ նորանց որ նորան հետ էին՝ իրեն հետ առաւ, մտաւ այնտեղը՝ որ երեխան դրած էր։

41 Եւ երեխայի ձեռքիցը բռնելով՝ նորան ասաց. Տալիթա կումի, որ կը թարգմանուի. Ո՛վ աղջիկ՝ (քեզ եմ ասում՝) վե՛ր կաց։

42 Եւ շուտով վերկացաւ աղջիկը եւ գնումէր, ինչու որ տասներկու տարեկանի չափ էր. եւ մեծ զարմանքով զարմացան։

43 Եւ նորանց շատ պատուիրեց՝ որ ընաւ մէն մարդ չիմանայ այն ե բանը. եւ ասաց՝ որ նորան բան տան ուտելու։

ա Մատթ. Թ. 22։ Մրկ. Ժ. 52։ Գործ. ԺԴ. 9։
բ Ղու. Ը. 49։ գ Յովհ. ԺԱ. 11։ դ Գործ. Թ. 40։
ե Մատթ. Ը. 4։ Թ. 30։ ԺԲ. 16։ ԺԷ. 9։ Մրկ. Գ. 12։ Ղու. Ե. 14։

—

## ԳԼ. Զ

1 Եւ ել անտի, եկն 'ի գաւառ
իւր. եւ երթային զհետ նորա ա-
շակերտքն իւր։
2 Եւ եղեւ 'ի շաբաթուն՝ սկսաւ
ուսուցանել 'ի ժողովրդեանն. եւ
բազումք իբրեւ լսէին՝ զարմանա-
յին ընդ վարդապետութիւն նորա,
եւ ասէին. Ուստի՞ է սմա այս, կամ
զի՞նչ է իմաստութիւնս որ տուեալ
է սմա, զի զօրութիւնք այսպիսիք
'ի ձեռաց սորա լինին։
3 Ո՞չ սա է մանուկ հիւսանն,
եւ որդին Մարեմայ, եղբայր Յա-
կոբայ եւ Յովսեայ եւ Յուդայի եւ
Սիմոնի, եւ չիցե՞ն քորք դորա աստ
առ մեզ. եւ գայթակղէին 'ի նա։
4 Եւ ասէ ցնոսա Յիսուս. Ո՛չ է
մարգարէ անարգ, բայց եթէ 'ի
գաւառի իւրում եւ յազգատոհմի
եւ 'ի տան իւրում։
5 Եւ ո՛չ կարէր անդ եւ ո՛չ մի
ինչ զօրութիւն առնել, բայց սա-
կաւ հիւանդաց ձեռն եդեալ՝ բժշ-
կէր զնոսա։
6 Եւ զարմանայր վասն անհաւա-
տութեան նոցա։ Եւ շրջէր շուրջ
զգաւառօքն, եւ ուսուցանէր։
7 Եւ կոչեաց առ ինքն զերկո-
տասանսն, եւ սկսաւ առաքել զն
նոսա երկուս երկուս. եւ տայր նո-
ցա իշխանութիւն 'ի վերայ այսոց
պղծոց։
8 Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի
ինչ բարձցեն 'ի ճանապարհ, բայց
միայն գաւազան. մի պարկ, մի
հաց, մի պղինձ 'ի գօտիս։

1 Եւ այն տեղէն դուրս գնաց,
եկաւ իրեն [ա] գաւառը. եւ նորա աշա-
կերտները նորան հետեւէն գնումէին։
2 Եւ էրաւ որ շաբաթ օրը սկսեց
ժողովարաններին մէջ սովրեցնել. եւ
շատ մարդիկ երբոր լսումէին՝ զար-
մանումէին նորա վարդապետու-
թեան վերայ եւ ասում. Սորան որ-
տեղից է այս [բ] բանս, կամ սա ինչ
իմաստութիւն է՝ որ տրված է սո-
րան՝ որ այսպիսի զօրութիւններ են
լինում սորա ձեռքովը։
3 Չէ՞ որ սա հիւսան տղան է՝ եւ
Մարիամայ որդին, Յակոբի եւ Յօ-
սէի եւ Յուդայի եւ Սիմոնի [գ] եղ-
բայրը. եւ չէ՞ որ դորա քոյրերը
այստեղ մեզ մօտ են. եւ նորա վե-
րայ [դ] գայթակղվումէին։
4 Եւ Յիսուս նորանց ասաց. Մար-
գարէ անարգված չէ՝ բայց միայն
իրեն գաւառին եւ իրեն ազգական-
ներին եւ իրեն տանը [ե] մէջ։
5 Եւ չէր կարօղանում այնտեղ
բնաւ մին զօրութիւն էլ [զ] անել.
բայց մին քիչ հիւանդների վերայ
ձեռքը դնում եւ բժշկումէր նորանց։
6 Եւ նորանց անհաւատութեան
համար [է] զարմանումէր։ Եւ գաւառ-
ների չորս կողմերը ման էր գալիս,
եւ [ը] սովրեցնումէր։
7 Եւ տասներկուսին իրեն մօտ
[թ] կանչեց, եւ սկսեց նորանց երկու
երկու ուղարկել՝ եւ նորանց իշխա-
նութիւն էր տալիս պիղծ դեւերին
վերայ։
8 Եւ նորանց պատուիրեց՝ որ
ճանապարհի համար բնաւ մին բան
վեր չառնեն, բայց միայն մին գա-
ւազան. ո՛չ պարկ, ո՛չ հաց, ո՛չ պղ-
ինձ փող գօտիներումը։

ա Մատթ. ԺԳ. 54։ Ղուկ. Դ. 16։
բ Յովհ. Զ. 42։
գ Մատթ. ԺԲ. 46։ Գաղ. Ա. 19։
դ Մատթ. ԺԱ. 6։
ե Մատթ. ԺԳ. 57։ Յովհ. Դ. 44։
զ Ծննդ. ԺԹ. 22։ ԼԲ. 25։ Մատթ. ԺԳ. 58։ Գլ. Թ. 23. 24։
է Եսայ. ԾԹ. 16։
ը Մատթ. Թ. 35։ Ղուկ. ԺԳ. 22։
թ Մատթ. Ժ. 1։ Գլ. Գ. 13. 14։ Ղուկ. Թ. 1։

9 Այլ ագանել հողաթափս, եւ Մի զգենուցուք՝ ասէ, երկուս պարեգօտս ։

10 Եւ ասէր ցնոսա. Յոր տուն մտանիցէք, անդէն օթեւանս կալջիք՝ մինչեւ ելանիցէք անտի ։

11 Եւ որ ոչ ընկալցին զձեզ, եւ ոչ լուիցեն ձեզ, յորժամ ելանիցէք անտի՝ թօթափեսջիք զփոշի ոտից ձերոց 'ի վկայութիւն նոցա ։

12 Եւ ելեալ քարոզէին՝ զի ապաշխարեսցեն ։

13 Եւ դեւս բազումս հանէին, եւ օծանէին իւղով զբազում հիւանդս՝ եւ բժշկէին զնոսա ։

14 Եւ լուաւ արքայ Հերովդէս, քանզի յայտնի եղեւ անուն նորա, եւ ասէր. Թէ Յովհաննէս մկրտիչ յարեաւ 'ի մեռելոց, եւ վասն այնորիկ զօրութիւնք լինին նովաւ ։

15 Այլք ասէին թէ Եղիա է, եւ այլքն՝ թէ Մարգարէ է՝, կամ թէ իբրեւ զմի 'ի մարգարէից ։

16 Իբրեւ լուաւ Հերովդէս, ասէ. Զորոյ ես զգլուխն հատի զՅովհաննու, նա է նա, յարեաւ 'ի մեռելոց ։

17 Զի ինքն Հերովդէս առաքեաց կալաւ զՅովհաննէս, եւ կապեաց զնա, եւ եդ 'ի բանտի վասն Հերովդիայ կնոջ Փիլիպպոսի եղբօր նորա, զի նա կին արար զնա ։

18 Քանզի ասէր Յովհաննէս ցՀերովդէս, թէ Ո՛չ է օրէն քեզ ունել զկին եղբօր քո ։

19 Եւ Հերովդիա ոխացեալ էր ընդ նմա, եւ կամէր սպանանել զնա, եւ ոչ կարէր ։

9 Բայց ժ հողաթափ հագնին՝ եւ երկու միրարկու չը հագնիք՝ ասաց ։

10 Եւ նորանց ասաց. Ո՛ր տուն որ մտնէք, այնտեղ մնացէք՝ մինչեւ որ այնտեղից դուրս ի գնաք ։

11 Եւ նորանք որ ձեզ չընդունեն, եւ ձեզ ականջ լ չը դնեն, երբոր այնտեղից դուրս կը գնաք՝ ձեր ոտների փոշին թափ տուէք՝ որ նորանց վկայութիւն է լինի ։

12 Եւ դուրս էլան, քարոզումէին՝ որ ապաշխարեն ։

13 Եւ շատ դեւեր էին հանում, եւ շատ հիւանդներ իւղով ծ օծումէին՝ եւ նորանց բժշկում ։

14 Եւ Հերովդէս թագաւորը լսեց, ինչու որ՝ նորա անունը յայտնի էլաւ. եւ ասումէր՝ թէ Յօհաննէս մկրտիչը մեռելների միջից յարութիւն առաւ, եւ նրա համար զօրութիւններ են լինում նորանով ։

15 Ուրիշներն ասումէին՝ թէ Եղիան է. եւ ուրիշները թէ Մարգարէ է, կամ թէ մարգարէներիցը մինին հ պէս ։

16 Երբոր Հերովդէս լսեց, ասաց. Սա Յօհաննէսն է՝ որ նորա գլուխը ես կտրեցի. նա մեռելների միջիցը յարութիւն ձ առաւ ։

17 Ինչու որ՝ ինքն Հերովդէս ուղարկեց, Յօհաննէսին բռնեց՝ եւ նորան կապեց՝ եւ դրաւ բանտի մէջ՝ Հերովդիայի համար, որ իրեն եղբօր Փիլիպպոսի կինն էր, պատճառն որ՝ նա իրեն կին առաւ նորան ։

18 Ինչու որ՝ Յօհաննէս Հերովդէսին ասումէր՝ թէ Օրէնք չէ քեզ՝ որ քո եղբօր կինը ղ ունենաս ։

19 Եւ Հերովդիան նորա դէմ ոխ էր պահում, եւ ուզումէր սպանել նորան՝ եւ չէր կարօղանում.

ժ Գործ. ԺԲ. 8.
ի Մատթ. Ժ. 11. Ղուկ. Թ. 4. Ժ. 7, 8.
լ Մատթ. Ժ. 14. Ղուկ. Ժ. 10.
խ Գործ. ԺԳ. 51. ԺԸ. 6.
ծ Յակ. Ե. 14.
կ Մատթ. ԺԴ. 1. Ղուկ. Թ. 7.
հ Մատթ. ԺԶ. 14. Գլ. Ը. 28.
ձ Մատթ. ԺԴ. 2. Ղուկ. Գ. 19.
ղ Ղև. ԺԸ. 16. Ի. 21.

20 Զի Հերովդէս երկնչէր ՚ի Յովհաննէ. քանզի գիտէր զնա այր արդար եւ սուրբ, եւ պահէր զնա. եւ լուեալ ՚ի նմանէ բազում ինչ առնէր, եւ քաղցրութեամբ լսէր նմա։

21 Իբրեւ օր մի լինէր պարապոյ, յորժամ ընթրիս տայր Հերովդէս յաւուր ծննդոց իւրոց՝ նախարարաց իւրոց եւ հազարապետաց եւ մեծամեծաց Գալիլեացւոց.

22 Եւ ՚ի մտանել դստերն Հերովդիայ՝ եւ ՚ի կաքաւել, հաճոյ եղեւ Հերովդի եւ բազմականացն։ Ասէ թագաւորն ցաղջիկն. Խնդրեա յինէն զոր ինչ կամիս, եւ տաց քեզ։

23 Եւ երդուաւ նմա բազում անգամ, թէ Զոր ինչ եւ խնդրեսցես դու յինէն, տաց քեզ, մինչեւ ցկէս թագաւորութեան իմոյ։

24 Նա ելեալ ասէ ցմայր իւր՝ Զի՞նչ խնդրեցից. եւ նա ասէ, Զգլուխն Յովհաննու մկրտչի։

25 Եւ մտեալ անդրէն փութանակի առ թագաւորն՝ ասէ. Կամիմ զի այժմ տացես ինձ վաղվաղակի ՚ի վերայ սկտեղ զգլուխն Յովհաննու մկրտչի։

26 Եւ տրտմեցաւ յոյժ թագաւորն, այլ վասն երդմանցն եւ կոչնականացն՝ ոչ կամեցաւ անարգել զնա։

27 Եւ առաքեաց վաղվաղակի թագաւորն դահիճ, եւ հրամայեաց բերել զգլուխն նորա. եւ չոգաւ գլխատեաց զնա ՚ի բանտին։

28 Եւ եբեր զգլուխն նորա սկտեղբ՝ եւ ետ ցաղջիկն. եւ աղջիկն տարաւ ետ մօր իւրում։

29 Իբրեւ լուան աշակերտքն նորա, եկին բարձին զմարմինն՝ եւ եդին ՚ի գերեզմանի։

20 Պատճառով՝ Հերովդէսն Յօհաննէսից ա վախում էր. ինչու որ՝ նորան արդար եւ սուրբ մարդ էր ճանաչում. եւ նորան պահել էր տալիս. եւ նորանից շատ բան լսելով՝ անում էր, եւ քաղցրութեամբ ականջ էր դնում նորան։

21 Երբոր մին յարմար օր բ պատահեց, որ ժամանակ Հերովդէս իրեն ծննդեան օրն ընթրիք էր տալիս իրեն իշխաններին եւ զօրապետներին եւ Գալիլեացոց գ մեծամեծներին,

22 Եւ Հերովդիայի աղջիկն որ մտաւ՝ եւ պար եկաւ, Հերովդէսին եւ նորա հետ նստողներին հաճոյ էկաւ. թագաւորն ասաց աղջկանը. Խնդրէ՛ ինձանից ինչ որ կամենաս, եւ կը տամ քեզ։

23 Եւ շատ անգամ երդում արաւ նորան՝ թէ, Ինչ բան որ դու խնդրես ինձանից, կը տամ քեզ, մինչեւ իմ թագաւորութեան դ կէսը։

24 Նա գնաց եւ իրեն մօրն ասաց՝ Ի՞նչ խնդրեմ. եւ նա ասաց, Յօհաննէս մկրտչին գլուխը։

25 Եւ շուտով նորէն մտաւ թագաւորին մօտ՝ եւ ասաց. Կամենում եմ որ հիմիկ շուտով սկուտեղի վերայ տաս ինձ Յօհաննէս մկրտչին գլուխը։

26 Եւ թագաւորը շատ ե տրտմեցաւ. բայց իրեն երդումներին եւ կանչված մարդկանցը համար չը կամեցաւ անարգել նորան։

27 Եւ թագաւորը շուտով դահիճ ուղարկեց եւ հրամայեց, որ նորան գլուխը բերէ. եւ գնաց նորան գլուխը կտրեց բանտին մէջ։

28 Եւ նորա գլուխը սկուտեղով բերաւ՝ եւ աղջկանը տուաւ. եւ աղջիկը տարաւ տուաւ իրեն մօրը։

29 Երբոր նորա աշակերտները լսեցին, եկին նորա մարմինը վերցրին՝ եւ գերեզմանի մէջ դրին։

ա Մատթ. ԺԴ. 5։ ԻԱ. 26։ | բ Մատթ. ԺԴ. 6։ գ Ծննդ. Խ. 20։ | դ Եսթ. Ե. 3. 6։ Է. 2։ | ե Մատթ. ԺԴ. 9։

30 Ժողովեցան ա առաքեալքն առ
Յիսուս, եւ պատմեցին նմա զամե-
նայն ինչ զոր արարին եւ զոր ու-
սուցին։
31 Եւ ասէ ցնոսա Յիսուս. Եկայք
դուք առանձինն յանապատ տեղի,
եւ հանգիջիք սակաւ մի. զի էին
բազումք որ երթային եւ գային,
եւ հաց անգամ չժամանէին ուտել։

32 Եւ գնացին նաւու յանապատ
տեղի առանձինն։
33 Եւ տեսին զնոսա զի երթային,
եւ զգացին բազումք. եւ հետի յա-
մենայն քաղաքաց խուռն ընթանա-
յին անդր, եւ մերձենային առ նո-
սա։
34 Եւ ելեալ ետես ամբոխ բա-
զում, եւ գթացաւ ՚ի նոսա, զի
էին իբրեւ ոչխարք՝ որոց ոչ իցէ
հովիւ. եւ սկսաւ ուսուցանել ըզ
նոսա յոյժ։
35 Եւ իբրեւ բազում ժամ եղեւ,
մատուցեալ աշակերտքն ասէին.
Տեղիս անապատ է, մինչդեռ աւուր
կայ,
36 Արձակեա զժողովուրդս, զի
երթեալ շուրջ յագարակս եւ ՚ի
գեօղս՝ գնեսցեն իւրեանց զինչ ու-
տիցեն, զի աստ ուտել ինչ ոչ ու-
նին։
37 Նա պատասխանի ետ եւ ասէ
ցնոսա. Դուք տուք դոցա ուտել.
ասեն ցնա՝ Երթիցուք գնեսցուք
երկերիւր դահեկանի հաց, եւ տա-
ցուք դոցա ուտել։
38 Ասէ ցնոսա. Քանի՞ նկանակ
ունիք՝ երթայք տեսէք. իբրեւ գի-
տացին, ասեն ցնա. Հինգ՝ եւ եր-
կուս ձկունս։
39 Եւ հրամայեաց նոցա բազմել
երախանս երախանս ՚ի վերայ դա-
լար խոտոյ։

30 Առաքեալները Յիսուսի մօտ
ա ժողովուեցան, եւ նորան պատմե-
ցին ամէն ինչ որ արին եւ ինչ որ
սովրեցրին։
31 Եւ Յիսուս նորանց ասաց. Դուք
առանձին անապատ տեղ եկէք, եւ
մին քիչ հանգիստ առէք. պատ-
ճառն՝ շատ մարդիկ էին որ գնում
եւ գալիս գ էին, եւ հաց ուտելու
ժամանակ էլ չունէին։
32 Եւ նաւով առանձին անապատ
տեղ դ գնացին։
33 Եւ տեսին նորանց որ գնումէին՝
եւ շատ մարդիկ իմացան. եւ ամէն
քաղաքներիցն իրար վերայ գիզված
ոտով այնտեղ էին վազում, եւ նո-
րանց մօտենումէին։
34 Եւ դուրս ելաւ, շատ ամբոխ
տեսաւ, եւ նորանց վերայ ե խղճաց.
ինչու որ ոչխարներին պէս էին, որ
հովիւ չունէին. եւ սկսեց նորանց
շատ բան զ սովրեցնել։
35 Եւ երբոր շատ ժամանակ ան-
ցաւ՝ աշակերտները մօտ եկին եւ
է ասացին. Այս տեղս անապատ է.
դեռ քանի որ ցերեկ է,
36 Թող տուր այդ ժողովուրդներդ
որ ՚չորս կողմով եղած շէներն ու
գիւղերը գնան՝ իրենց համար գնեն
ինչ որ ուտելու լինին. պատճառն՝
այստեղ ուտելու բան չունին։
37 Նա պատասխան տուաւ եւ նո-
րանց ասաց. Դուք տուէք դորանց
ուտել. նորան ասացին՝ Գնանք եր-
կու հարիւր դահեկանի հաց գնենք,
եւ դորանց տանք՝ որ թ ուտեն։
38 Նորանց ասաց. Քանի հատ հաց
ունիք՝ գնացէք տեսէք. երբ որ գի-
տացին, նորան ասացին. Հինգ՝ եւ
երկու ժ ձուկն։
39 Եւ հրամայեց նորանց՝ որ դաս
դաս կանանչ խոտի վերայ նստին։

ա Ղու. Թ. 10.
բ Մատթ. ԺԴ. 13.
գ Մր. Գ. 20.
դ Մատթ. ԺԴ. 13.

ե Մատթ. Թ. 36.
ԺԴ. 14.
զ Ղու. Թ. 11.
է Մատթ. ԺԴ. 15.

Ղու. Թ. 12.
թ Թու. ԺԱ. 13. 22.
Դ Թագ. Դ. 43.
ժ Մատթ. ԺԴ. 17.

Ղու. Թ. 13.
Յովհ. Զ. 9.
Մատթ. ԺԵ. 34.
Մր. Ը. 5.

40 Եւ բազմեցան դասք դասք՝ առ
հարիւր եւ առ յիսուն։
41 Եւ առեալ զհինգ նկանակսն եւ
զերկուս ձկունսն, հայեցաւ յեր-
կինս, օրհնեաց՝ մանրեաց զնկա-
նակսն՝ եւ ետ աշակերտացն զի
արկցեն նոցա, եւ զերկուս ձկունսն
բաշխեաց ամենեցուն։
42 Կերան, եւ յագեցան,
43 Եւ բարձին զնշխարսն երկո-
տասան սակառի լի, եւ ՚ի ձկանց
անտի։
44 Եւ էին որ կերանն՝ իբրեւ արք
հինգ հազար։
45 Եւ նոյն ժամայն ճեպեաց զա-
շակերտսն մտանել ՚ի նաւ, եւ յա-
ռաջագոյն քան զնա երթալ յայն-
կոյս ՚ի Բեթսայիդա, մինչ ինքն ըզ
ժողովուրդսն արձակիցէ։
46 Եւ հրաժարեալ ՚ի նոցանէ՝ ել
՚ի լեառն կալ յաղօթս։
47 Եւ իբրեւ երեկոյ եղեւ, էր
նաւն ՚ի մէջ ծովուն, եւ ինքն ՚ի
ցամաքի։
48 Եւ ետես զնոսա հողմակոծեալս
՚ի վարելն, զի էր հողմն ընդդէմ
նոցա. եւ զչորրորդ պահու գիշե-
րոյն գայ առ նոսա գնալով ՚ի վե-
րայ ծովուն, եւ կամէր զանց ա-
նել առ նոքօք։

49 Նոքա իբրեւ տեսին զի գնայր
՚ի վերայ ծովուն, համարեցան թէ
առաչօք ինչ լինիցի, եւ զաղաղակ
բարձին։
50 Քանզի ամենեքեան տեսին զնա՝
եւ խռովեցան. եւ նա անդէն վաղ-
վաղակի խօսեցաւ ընդ նոսա եւ
ասէ. Քաջալերացարուք, ես եմ՝
մի երկնչիք։
51 Եւ ել ՚ի նաւն առ նոսա, եւ
դադարեաց հողմն։ Եւ առաւել եւս
յիմարեալ էին ՚ի միտս իւրեանց,
եւ զարմանային յոյժ։
52 Քանզի եւ ՚ի վերայ հացին ոչ

40 Եւ դաս դաս նստեցին մինչեւ
հարիւր՝ եւ մին ալ յիսուն։
41 Եւ այն հինգ հացն ու երկու
ձուկն առաւ, դէպի երկինքը նա-
յեց՝ օրհնեց, այն հացերը կտորեց,
եւ աշակերտներին տուաւ՝ որ ձգեն
նորանց ɔ առաջը. եւ այն երկու
ձուկը բաժանեց ամէնին։
42 Կերին եւ կշտացան,
43 Եւ մնացած կտորները տասներ-
կու քթոց լիքը վեր առին, եւ այն
ձկներիցն էլ։
44 Եւ նորանք որ կերին՝ հինգ
հազարի չափ մարդիկ էին։
45 Եւ շուտով աշակերտներին սաս-
տեց, որ նաւ − մտնեն, եւ իրենից
առաջ այն կողմը Բեթսայիդա գնան՝
մինչեւ որ ինքը ժողովուրդներին
արձակէ։
46 Եւ նորանցից բաժանուեցաւ,
եւ վեր էլաւ սարին՝ որ աղօթք անէ։
47 Եւ երբոր իրիկունն էլաւ՝ նաւը
ծովին մէջն էր, եւ ինքը ‡ ցամա-
քումը։
48 Եւ նորանց տեսաւ՝ որ նաւ վա-
րելոյ ժամանակին աշխատումէին.
ինչու որ քամին ներհակ էր նորանց.
եւ գիշերի չորս բաժնի ժամանակը
ծովի վերայ գնալով՝ նորանց մօտ
եկաւ, եւ ուզումէր որ նորանցից
+ անցանէ։
49 Նորանք երբոր տեսին՝ որ ծո-
վին վերայ գնումէր՝ կարծեցին թէ
աչքի երեւոյթ բան լինի, եւ ձայ-
նով աղաղակ բարձրացրին։
50 Ինչու որ՝ ամէնքը նորան տեսին՝
եւ շփոթվեցան. եւ նա շուտով նո-
րանց հետ խօսեց եւ ասաց. Սրտա-
պինդ կացէք, ես եմ՝ մի վախենաք։

51 Եւ վեր էլաւ նաւը նորանց մօտ՝
եւ քամին հանդարտեց. եւ իրենց
մաքերումն էլ աւելի յիմարված էին,
եւ շատ զարմանումէին.
52 Ինչու որ՝ այն հացին վերայ էլ

ɔ Ա Թագ. Թ. 13. Մատթ. ԻԶ. 26. | − Մատթ. ԺԴ. 22. Յովհ. Զ. 17. | ‡ Մատթ. ԺԴ. 23. Յովհ. Զ. 16, 17. | + Ղուկ. ԻԴ. 28.

իմացան, զի էր միտս նոցա թմբր-
եալ։
53 Եւ իբրեւ անցին յայնկոյս, ե-
կին յերկիրն Գեննեսարէթ։
54 Եւ իբրեւ ելին 'ի նաւէ անտի՝
իսկ եւ իսկ ծանեան զնա արք տե-
ղւոյն այնորիկ։
55 Եւ ընթացեալ այսր անդր ընդ
ամենայն գաւառն, սկսան մահճօք
բերել զհիւանդս, ուր լսէին՝ թէ
անդ իցէ։
56 Եւ ուր եւ մտանէր 'ի գեօղս
կամ 'ի քաղաքս կամ յագարակս,
'ի հրապարակս դնէին զախտաժէտս,
եւ աղաչէին զնա՝ զի գոնէ 'ի քղ-
անցս հանդերձից նորա մերձե-
նայցեն. եւ որ միանգամ մերձե-
ցանն՝ փրկեցան։

* չիմացան. պատճառն որ՝ նորանց
միտքը թմրած † էր։
53 Եւ երբոր այն կողմն անցան,
Գեննեսարեթի երկիրն = եկան։
54 Եւ երբոր այն նաւիցը դուրս
ելան, այն տեղի մարդիկը շուտով
ճանաչեցին նորան։
55 Եւ այս կողմս այն կողմն ամէն
գաւառը վազելով սկսեցին հիւանդ-
ները մահիճներով բերել՝ որտեղ որ
լսումէին՝ թէ այնտեղ է։
56 Եւ որտեղ որ մտնումէր գիւ-
ղեր կամ քաղաքներ կամ չէներ՝
ցաւագարները փողոցներին մէջ էին
դնում, եւ նորան աղաչում՝ որ լինի
թէ նորա շորերի ծայրին ‡ մօտե-
նան. եւ ամէն նորանք որ մօտե-
ցան՝ փրկվեցան։

## ԳԼ. Է

1 Եւ ժողովեցան առ նա փա-
րիսեցիքն եւ ոմանք 'ի դպրացն՝ որ
եկեալ էին յԵրուսաղեմէ։

2 Եւ տեսեալ զոմանս յաշակեր-
տացն նորա, զի խառնակ ձեռօք,
այսինքն է՝ անլուայ ուտէին հաց,
բամբասեցին։

3 Զի փարիսեցիքն եւ ամենայն
Հրեայք՝ եթէ ոչ բռնայլիր լուանան
զձեռս, հաց ոչ ուտեն. քանզի ու-
նին զաւանդութիւն ծերոցն։

4 Եւ 'ի հրապարակէ մտեալ՝ ե-
թէ ոչ նախ մկրտիցին, ոչ ուտեն.
եւ այլ ինչ բազում է՝ զոր ընկա-
լան ունել, մկրտութիւնս բաժա-
կաց եւ ստամանաց եւ պղնձեաց եւ
մահճաց։

5 Ապա հարցանեն զնա փարիսե-
ցիքն եւ դպիրքն՝ թէ Ընդէ՞ր աշա-
կերտքն քո ոչ գնան ըստ աւան-

1 Եւ ժողովվեցան նորա մօտ փա-
րիսեցիներն ու կարդացողներիցը
մին քանիսն՝ որ Երուսաղէմիցն էին
= եկել։
2 Եւ երբոր տեսին՝ որ նորա ա-
շակերտներիցը մին քանիսը՝ խառ-
նակ ձեռքով, այսինքն՝ առանց
լուանալոյ հաց էին ուտում, բամ-
բասեցին։
3 Պատճառնոր՝ փարիսեցիներն ու
ամէն Հրէաները՝ թէոր մին լաւ չը
լուանան ձեռները՝ հաց չեն ու-
տում. ինչուոր ծերերի աւանդու-
թիւնն են պահում։
4 Եւ փողոցից որ գալիս են՝
եթէ առաջ չըլուացվին, չեն ու-
տում. եւ ուրիշ էլ շատ բան կայ՝
որ ընդունեցին պահել. բաժակ-
ների եւ փարչերի եւ պղնձէ ա-
մանների եւ մահիճների լուաց-
մունքներ։
5 Յետոյ փարիսեցիներն ու կար-
դացողները հարցրին նորան՝ թէ, Ին-
չու քո աշակերտները ծերերի ա-

* ԳԼ. Ը. 17. 18. | = Մատթ. ԺԴ. 34.
† ԳԼ. Գ. 5. ԺԶ. 14. | ‡ Մատթ. Թ. 20.

ԳԼ. Ե. 27. 28. | = Մատթ. ԺԵ. 1.
Գործ. ԺԹ. 12.
—

ղութեամբ ծերոցն . այլ խառնակ
ձեռօք հաց ուտեն ։
6 Նա պատասխանի ետ եւ ասէ
ցնոսա՝ թէ Բարւոք մարգարէացաւ
Եսայի վասն ձեր կեղծաւորաց, որ-
պէս ասաց . Ժողովուրդս այս շրթ-
թամբք մեծարէ զիս, եւ սիրտք
նոցա հեռացեալ 'ի բացեայ են յի-
նէն ։
7 Զուր պաշտեն զիս . ուսուցա-
նեն վարդապետութիւնս զմարդկան
պատուիրեալս ։
8 Թողեալ զպատուիրանն Աստու-
ծոյ, ունիք զմարդկան աւանդու-
թիւն . մկրտութիւնս ստամանաց
եւ բաժակաց, եւ այլոց նմանեաց
այգին առնէք բազում ։
9 Եւ ասէ ցնոսա . Բարւոք խո-
տէք զպատուիրանն Աստուծոյ, զի
զձեր աւանդութիւնն հաստատի-
ցէք ։
10 Զի Մովսէս ասէ . Պատուեա
զհայր քո եւ զմայր . եւ որ չարա-
խօսեսցէ զհօրէ կամ զմօրէ, մահու
վախճանեսցի ։
11 Եւ դուք ասէք . Եթէ ասիցէ
ոք ցհայր կամ ցմայր՝ Կորբան, ՞որ
է պատարագ, զոր յինէն օգտեա-
ցիս ։
12 Եւ ոչ եւս տայք թողուլ նմա առ-
նել ինչ հօրն կամ մօր ։
13 Եւ անարգէք զբանն Աստուծոյ
ձերով աւանդութեամբն, զոր ա-
ւանդեցէք . եւ բազում ինչ այլ որ
այսպիսի նմանն է՝ առնէք ։
14 Եւ կոչեալ առ ինքն զամենայն
ժողովուրդն, ասէ ցնոսա . Լուա-
րուք ինձ ամենեքեան՝ եւ 'ի միտ
առէք ։
15 Ո՛չինչ արտաքուստ 'ի մարդ
մտեալ՝ եթէ կարիցէ պղծել զնա,
այլ որ ելանէ 'ի նմանէ՝ այն է որ
պղծէ զմարդն ։

աւանդութեան պէս չեն բ գնում . այլ
խառնակ ձեռքով հաց են ուտում ։
6 Նա պատասխան տուաւ եւ նո-
րանց ասաց՝ թէ, Եսային լաւ մար-
գարէացաւ ձեզ կեղծաւորներիդ վե-
րայ՝ ինչպէս որ ասաց . Այս ժողո-
վուրդս պռօշներովն է պատուում
ինձ, եւ նորանց սրտերն ինձանից
հեռացած ջոկված գ են ։
7 Զուր տեղն են պաշտում ինձ .
մարդկանցից պատուիրած վարդա-
պետութիւններն են սովորցնում ։
8 Աստուծոյ պատուիրանքը թո-
ղած՝ մարդկանց աւանդութիւններն
էք պահում, փարչերի եւ ամանե-
ների լուացմունքները՝ եւ սորանց
նման էլ շատ բաներ էք անում ։
9 Եւ նորանց ասաց . Լաւ էք
անարգում Աստուծոյ պատուիրան-
քըն, որ ձեր աւանդութիւնը պինտ
պահէք .
10 Ինչուոր՝ Մովսէս ասաց . Քո
հայրըդ եւ մայրըդ դ պատուէ . եւ
նա որ հօրիցը կամ մօրիցը չարախօ-
սութիւն կանէ, թող մահով ե մեռնի ։
11 Եւ դուք ասումէք՝ թէ որ մի-
նը հօրը կամ մօրն ասէ թէ, զ Կոր-
բան, այսինքըն պատարագ է նա՝
որ ինձանից պէտք է շահվիս ։
12 Եւ էլ թօղլ չէք տալիս նորան
որ մին բան անէ հօրը կամ մօրը ։
13 Եւ Աստուծոյ բանըն անար-
գումէք ձեր աւանդութեանովը որ ա-
ւանդեցիք . եւ ուրիշ էլ շատ բա-
ներ՝ որ սրան նման է՝ անումէք ։
14 Եւ ամէն ժողովուրդն իրեն
մօտ կանչեց, եւ նորանց ասաց .
Ամէներդ ինձ լսեցէք՝ եւ մտքներդ
է առէք ։
15 Ոչ մին բան չըկայ որ դըր-
սիցը մարդու մէջ մտած՝ կարօղանայ
պղծել նորան . այլ որ նորանից
դուրս է գալիս՝ նա է որ մարդուն
պղծումէ ։

բ Մատթ. ԺԵ. 2 ։
գ Եսայ. ԻԹ. 13 ։ Մատթ. ԺԵ. 8 ։
դ Ելից. Ի. 12 ։ Օրին. Ե. 16 ։ Մատթ. ԺԵ. 4 ։
ե Ելից. ԻԱ. 17 ։ Ղեւ. Ի. 9 ։ Առակ. Ի. 20 ։
զ Մատթ. ԺԵ. 5 ։ ԻԳ. 18 ։
է Մատթ. ԺԵ. 10 ։

| | |
|---|---|
| 16 Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։ | 16 Ով որ լսելու ականջ ունի՝ թող շ լսէ։ |
| 17 Եւ իբրեւ եմուտ 'ի տուն յամբոխէ անտի, հարցանէին զնա աշակերտքն վասն առակին։ | 17 Եւ երբոր այն ամբոխից տուն եկաւ՝ աշակերտները հարցին նորան այն առակին Է համար։ |
| 18 Եւ ասէ ցնոսա, Այդպէս եւ դուք անմիտ էք, ոչ իմանայք՝ եթէ ամենայն որ արտաքուստ 'ի ներքս մտանէ 'ի մարդ, ոչ կարէ զնա պղծել։ | 18 Եւ նորանց ասաց. Այդպէս դուք էլ անխելք էք. չէք իմանում՝ թէ ամէն ինչ որ դրսից է մտնում մարդու մէջ՝ չի կարող պղծել նորան, |
| 19 Զի ոչ եթէ 'ի սիրտ նորա մտանէ, այլ յորովայն՝ եւ արտաքս ելանէ, եւ սրբէ զամենայն կերակուրս։ | 19 Պատճառը՝ ոչ թէ նորա սիրտն է մտնում, բայց փորն՝ եւ դուրս է գալիս, եւ ամէն կերակուրները մաքրում է։ |
| 20 Եւ ասէր, թէ Որ ինչ 'ի մարդոյն ելանէ՝ այն պղծէ զմարդ։ | 20 Եւ ասում էր՝ Ինչ որ մարդուցը դուրս է գալիս՝ նա է պղծում մարդուն. |
| 21 Զի 'ի ներքուստ 'ի սրտէ մարդկան խորհուրդք չարութեան ելանեն. շնութիւնք, պոռնկութիւնք, | 21 Ինչու որ ներսից՝ մարդկանց սրտից են դուրս ‡ գալիս, չար խորհուրդներ, շնութիւններ, պոռնկութիւններ, |
| 22 Գողութիւնք, սպանութիւնք, ագահութիւնք, չարութիւնք, նենգութիւնք, գիջութիւնք, չարակնութիւն, հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անզգամութիւն։ | 22 Գողութիւններ, սպանութիւններ, ագահութիւններ, չարութիւններ, նենգութիւններ, պիղծ ցանկութիւններ, նախանձութիւն, հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անզգամութիւն։ |
| 23 Այս ամենայն չարիք 'ի ներքուստ ելանեն, եւ պղծեն զմարդ։ | 23 Այս ամէն չար բաները ներսից են դուրս գալիս, եւ մարդուն պղծում են։ |
| 24 Եւ անտի յարուցեալ՝ եկն 'ի սահմանս Տիւրոսի եւ Սիդոնի. եւ մտեալ 'ի տուն՝ ոչ ումեք կամէր յայտնել, եւ ոչ կարաց ծածկել։ | 24 Եւ այնտեղից վերկացաւ՝ եկաւ Տիւրոսի եւ Սիդոնի է կողմերը. եւ տուն որ մտաւ՝ չէր ուզում որ մէկին յայտնուի, եւ չկարողացաւ ծածկուիլ։ |
| 25 Լուաւ կին մի զնմանէ, որոյ դուստր իւր 'նեղեալ էր յայսոյ պղծոյ. եկն անկաւ առաջի նորա։ | 25 Մէկ կին նորան համար լսեց՝ որ նորան աղջիկը պիղծ դեւից չարչարուած էր. եկաւ եւ նորա առաջին ընկաւ։ |
| 26 Եւ կինն էր հեթանոս՝ Փիւնիկեցի Ասորի յազգէ. եւ աղաչէր զնա՝ զի զդեւն հանցէ 'ի դստերէ նորա։ | 26 Եւ այն կինը հեթանոս էր՝ Փիւնիկեցի Ասորոց ազգից. եւ աղաչում էր նորան՝ որ դեւը իրեն աղջկանից դուրս հանէ։ |
| 27 Եւ Յիսուս ասէ ցնա. Թոյլ տուր՝ նախ յագեսցին մանկունք. | 27 Եւ Յիսուս նորան ասաց. Թող՝ որ առաջ երախաները կշտանան. |

շ Մատթ. ԺԱ. 15։ \| Է Մատթ. ԺԵ. 15։ ‡ Ծննդ. Զ. 5։ Ը. \| 21։ Մատթ. ԺԵ. 19։ \| ‡ Մատթ. ԺԵ. 21։

զի ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց եւ արկանել շանց:
28 Նա պատասխանի ետ եւ ասէ. Տէր՝ եւ շունք 'ի փշրանաց սեղանոյ մանկանցն կերակրին:
29 Եւ ասէ ցնա. Վասն այդր բանի երթ, ել դեւն 'ի դստերէ քումմէ:
30 Գնաց 'ի տուն իւր, եւ եգիտ ելեալ զդեւն. եւ զդուստրն, զի անկեալ դնէր 'ի մահիճս:
31 Եւ ելեալ միւսանգամ 'ի սահմանացն Տիւրոսի եւ Սիդոնի, եկն 'ի ծովեզրն Գալիլեացւոց 'ի մէջ սահմանացն 'ի Դեկապօլիս:
32 Եւ բերին առաջի նորա խուլ մի եւ համր. եւ աղաչէին՝ զի ձեռն դիցէ 'ի վերայ նորա:
33 Եւ առեալ զնա մեկուսի յամբոխէ անտի, արկ զմատունս իւր ընդ ականջս նորա՝ եւ եթուք անդր, եւ կալաւ զլեզուէ նորա:
34 Հայեցաւ յերկինս՝ յոգւոց եհան՝ եւ ասէ. Եփփաթա՝ որ է բացիր:
35 Եւ նոյնժամայն բացան լսելիք նորա, եւ լուծան կապանք լեզուի նորա. եւ խօսէր ուղիղ:
36 Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի ումեք ասիցեն. եւ որչափ նա պատուիրէր նոցա, նոքա եւս առաւել քարոզէին.
37 Եւ եւս քան զեւս զարմանային եւ ասէին. Զամենայն ինչ բարւոք գործեաց սա, զի խլից լսել տայ՝ եւ համրոց խօսել:

ինչու որ՝ լաւ չէ՞ երախաներուն հացն առնել եւ շուներուն ձգել:
28 Նա պատասխան տուաւ եւ ասաց. Տէ՛ր՝ շուներն էլ երախաներուն փշրանքներէն են կերակրուիլ:
29 Եւ նորան ասաց. Այդ խօսքիդ համար գնա, դեւը դուրս ելաւ քու աղջկանէդ:
30 Գնաց իրեն տունը, եւ գտաւ որ դեւը դուրս էր ելել, եւ աղջիկն՝ որ մահճին վերայ պառկած էր:
31 Եւ նորէն Տիւրոսի եւ Սիդոնի կողմերէն դուրս գնաց, եւ Գալիլեացւոց ծովի եզրն եկաւ՝ Դեկապոլիսի մէջէն ւ կողմերը:
32 Եւ մէն խուլ եւ համր մարդ բերին նորա փ մօտը. եւ աղաչումէին որ ձեռքն դնէ նորա վերայ:
33 Եւ նորան ամբոխէն մէն կողմը տարաւ, իրեն մատները նորան ականջներուն մէջ տարաւ՝ եւ թքեց այնտեղ, եւ նորա լեզուիցը ք բռնեց,
34 Երկինքը օ նայեց, յոգոց հանեց եւ ֆ ասաց. Եփփաթա՝ որ է ասել, բացուիր:
35 Եւ շուտով իսկ այն ժամանակը նորա ականջները բացուան, եւ լեզուի կապանքները ա արձակուեցան. եւ շիտակ խօսումէր:
36 Եւ նորանց պատուիրեց՝ որ բնաւ մէկին ւ չասեն. եւ որչափ նա պատուիրումէր նորանց, նորանք էլ աւելի քարոզումէին.
37 Եւ չափիցն էլ աւելի զարմանումէին եւ ասում. Սա ամէն բան լաւ գործեց. ինչու որ՝ խուլերին լսել է տալիս՝ եւ համրերին խօսել:

## ԳԼ. Ը.

1 Յաւուրսն յայնոսիկ դարձեալ ժողովուրդ բազում էր, եւ ինչ ոչ ունէին ուտել. կոչեաց զաշակերտսն իւր՝ եւ ասէ ցնոսա:

1 Այն օրերը դարձեալ շատ ժողովուրդ կար, եւ բան չունէին = ուտելու. իրեն աշակերտները կանչեց՝ եւ նորանց ասաց.

ւ Մատթ. ժե. 29:
փ Մատթ. թ. 32: Ղուկ. ժԱ. 14.
ք Գլ. Ը. 23: Յովհ. թ. 6:
օ Գլ. Զ. 41: Յովհ. ժԱ. 41: ժէ. 1:
ֆ Յովհ. ժԱ. 33. 38:
ա Եսայ. ԼԵ. 5, 6: Մատթ. ժԱ. 5:
ւ Գլ. Ե. 43:
—
= Մատթ. ժե. 32:

2 Գթամ ես 'ի վերայ ժողովրդեանդ · զի արդ երեք աւուրք են՝ մինչ առ իս են, եւ ոչ ունին զինչ ուտիցեն ։

3 Եւ եթէ արձակեմ զդոսա նօթիս 'ի տունս իւրեանց՝ նքթիցին 'ի ճանապարհի · զի ոմանք 'ի դոցանէ 'ի հեռաստանէ եկեալ են ։

4 Պատասխանի ետուն նմա աշակերտքն նորա · Ուստի՞ կարէ ոք յագեցուցանել զդոսա հացիւ յանապատի աստ ։

5 Եւ հարցանէր զնոսա · Քանի՞ նկանակ հաց ունիք · եւ նոքա ասեն՝ Եօթն ։

6 Եւ հրամայեաց ժողովրդեանն բազմել 'ի վերայ երկրի · եւ առեալ զեօթն նկանակսն՝ գոհացաւ՝ եբեկ, եւ տայր աշակերտացն զի արկցեն · եւ արկին առաջի ժողովրդեանն ։

7 Եւ ձկունս սակաւ ունէին · եւ զայն եւս օրհնեաց, եւ հրամայեաց արկանել ։

8 Կերան եւ յագեցան, եւ բարձին զնշխարս կոտորոցն՝ եօթն զամբիղ ։

9 Եւ էին որ կերանն՝ իբրեւ չորք հազարք · եւ արձակեաց զնոսա ։

10 Եւ նոյնժամայն մտեալ 'ի նաւ հանդերձ աշակերտօքն՝ եկն 'ի կողմանս Դաղմանութեայ ։

11 Ելին փարիսեցիքն՝ եւ սկսան վիճել ընդ նմա, եւ խնդրէին 'ի նմանէ նշան յերկնից՝ փորձելով զնա ։

12 Եւ հառաչեաց յոգի իւր՝ եւ ասէ · Զի՞ է՝ զի ազգս այս նշան խնդրէ · ամէն ասեմ ձեզ, թէ տացի նշան ազգիս այսմիկ ։

13 Եթող զնոսա · դարձեալ եմուտ 'ի նաւ՝ եւ գնաց յայնկոյս ։

14 Եւ մոռացան հաց բառնալ ·

2 Խեղճս գալիս է այդ ժողովրդի վերայ · ինչու որ՝ հիմիկ երեք օր է որ ինձ մօտ են, եւ բան չունին որ ուտեն ։

3 Եւ թէ որ նորանց սոված արձակեմ դէպի իրենց տունը սովածութենիցը կըթուլանան ճանապարհումը · ինչու որ՝ դորանցից կան, որ հեռու տեղից են եկել ։

4 Նորա աշակերտները պատասխան տուին նորան · Ո՞րտեղից կարող ես հացով կշտացնել դորանց այս անապատ տեղումս ։

5 Եւ նորանց հարցնումէր՝ Թէ քանի՞ հատ հաց ունիք · եւ նորանք ասացին՝ * Եօթն ։

6 Եւ ժողովրդին հրամայեց որ երկրի վերայ նստին · եւ այն եօթն հացըն առաւ՝ գոհացաւ, կտրեց, եւ աշակերտներին էր տալիս՝ որ ձգեն · եւ ձգեցին ժողովրդին առաջը ։

7 Եւ մին քիչ ձուկըն ունէին · եւ նա էլ օրհնեց, եւ հրամայեց որ † ձգեն ։

8 Կերին եւ կշտացան · եւ աւելցած կտորներըն եօթը քթոց վեր առին ։

9 Եւ նորանք որ կերին՝ չորս հազարի չափ էին · եւ նորանց արձակեց ։

10 Եւ շուտով այն ժամին աշակերտներին հետ նաւ ‡ մտաւ՝ եւ Դաղմանութեայի կողմերն եկաւ ։

11 Փարիսեցիներըն ելին՝ եւ սկսեցին նորա հետ § հակառակիլ · եւ նորան փորձելով նորանից մին նշան էին խնդրում երկնքիցը ։

12 Եւ նա շատ տրտմեցաւ իրեն սրտումը՝ եւ ասաց · Ի՞նչ է, որ այս ազգս նշան է խնդրում · ճշմարիտըն ասումեմ ձեզ, թէ որ այս ազգիս նշան տրվիլի ։

13 Նորանց թողեց · նորէն նաւ մտաւ՝ եւ այն կողմը գնաց ։

14 Եւ մոռացան իրենց հետ հաց

* Մատթ. ԺԵ. 34. Գլ. Զ. 38.
† Մատթ. ԺԴ. 19. Գլ. Զ. 41.
‡ Մատթ. ԺԵ. 39.
§ Մատթ. ԺԲ. 38. ԺԶ. 1. Յովհ. Զ. 30.

բայց միայն մի նկանակ ունէին ընդ
ինքեանս 'ի նաւին ։
15 Եւ պատուիրէր նոցա եւ ասէր.
Զգոյշ լերուք 'ի խմորոյ անտի
փարիսեցւոց՝ եւ 'ի խմորոյ Հերով-
դիանոսաց ։
16 Եւ խորհէին ընդ միմեանս եւ
ասէին, թէ Զի հացս ոչ ունիմք ։
17 Գիտաց Յիսուս՝ եւ ասէ ցնո-
սա. Զի՞ խորհիք 'ի միտս ձեր
թերահաւատք՝ թէ հաց ոչ ունիք.
տակաւին ոչ իմանայք եւ ոչ յիշէք.
ապշութիւն ունի զսիրտս ձեր ։
18 Աչս գոն՝ եւ ոչ տեսանէք, ա-
կանջս են՝ եւ ոչ լսէք, եւ ոչ իմա-
նայք տակաւին, եւ ոչ յիշէք ։
19 Յորժամ զհինգ նկանակն 'ի
հինգ հազարսն, եւ քանի սակառի
լի բարձէք զկոտորոցն. եւ ասեն,
Երկոտասան ։
20 Եւ յորժամ զեօթն նկանակն
'ի չորս հազարսն, քանի զամբիղ
լի բարձէք զկոտորոցն. եւ նոքա
ասեն, Եօթն ։
21 Եւ ասէ ցնոսա. Իսկ զիա՞րդ
ոչ իմանայք ։
22 Գան 'ի Բեթսայիդա. եւ ա-
ծեն առաջի նորա կոյր մի, եւ ա-
ղաչէին զնա՝ զի մերձեսցի 'ի նա ։
23 Եւ առեալ զձեռանէ կուրին՝
եհան արտաքոյ շինին, եթուք յաչս
նորա, եւ ձեռն եդ 'ի վերայ նորա.
եւ հարցանէր ցնա՝ թէ տեսանիցե՞ս
ինչ ։
24 Բացաւ՝ եւ ասէր. Տեսանեմ
զմարդիկն՝ զի շրջին իբրեւ զծառս ։
25 Դարձեալ եդ ձեռս 'ի վերայ
աչաց նորա՝ երաց, եւ տեսանէր.
ողջացաւ՝ եւ տեսանէր համարձակ
զամենայն ։

դ վերցանել՝ բայց միայն մին հաց
ունէին իրենց հետ նաւի մէջ ։
15 Եւ նորանց պատուիրումէր եւ
ե ասում. Զգոյշ կացէք այն փարի-
սեցիների խմորից եւ Հերովդէսեան-
ների խմորից ։
16 Եւ իրար հետ միտք էին ա-
նում եւ ասում, թէ Նրա համար
է որ հաց զ չունինք ։
17 Յիսուս իմացաւ եւ նորանց ա-
սաց՝ թէ Ինչ էք միտք անում ձեր
սրտերումդ ով թերահաւատներ,
թէ հաց չունինք. դեռ չէք իմա-
նում եւ չէք է յիշում. Թմրութիւնը
բռնել է ձեր սրտերը ։
18 Աչք ունիք՝ եւ չէք տեսնում.
ականջ ունիք՝ եւ չէք լսում. եւ
դեռ չէք իմանում, եւ չէք յիշում,
19 Որ ժամանակ այն հինգ հացը
հինգ հազարին համար կոտրեցի, քանի
քթոց լիքը վեր առիք նորա ը կտոր-
ները. եւ նորան ասացին՝ Տասներկու ։
20 Եւ որ ժամանակ եօթը հացը
չորս հազարին համար, քանի քթոց
լիքը վեր առիք նորա թ կտորները.
եւ նորանք ասացին, Եօթն ։
21 Եւ նորանց ասաց. Ապա ինչ-
պէս չէք ժ իմանում ։
22 Բեթսայիդա եկին, եւ նորա
առաջը մին կոյր բերին, եւ նորան
աղաչումէին՝ որ դիպչի նորան ։
23 Եւ կոյրին ձեռքիցը բռնեց՝
գիւղիցը դուրս հանեց, նորա աչքե-
րին մէջ թքեց, եւ ձեռքը դրա-
նորան ի վերայ. եւ նորան հարցը-
նումէր՝ թէ մին բան տեսնումէ ։
24 Բացվաւ՝ եւ ասումէր. Մարդիկ
տեսնումեմ՝ որ ծառերի պէս ման
են գալիս ։
25 Նորէն ձեռքերը նորան աչքե-
րին վերայ դրաւ՝ բաց արաւ, եւ
տեսնումէր. ողջացաւ՝ եւ ամէն
բան համարձակ տեսնումէր ։

դ Մատթ. ԺԶ. 5. ե Մատթ. ԺԶ. 6. Ղու. ԺԲ. 1. զ Մատթ. ԺԶ. 7. է Գլ. Զ. 52. ը Մատթ. ԺԴ. 20. Գլ. Զ. 43. Ղու. Թ. 17. Յովհ. Զ. 13. թ Մատթ. ԺԵ. 37. ժ Գլ. Զ. 52. Համ. մար. 17. ի Գլ. Է. 33.

26 Արձակեաց զնա 'ի տուն իւր՝ եւ ասէ. 'Ի շէնդ մի մտանիցես, այլ երթ 'ի տուն քո. եւ յորժամ 'ի շէնն մտանիցես՝ մի ումեք ասիցես 'ի շինին։

27 Եւ ել Յիսուս աշակերտօքն հանդերձ 'ի շէնս Կեսարիա Փիլիպպեայ. եւ 'ի ճանապարհին հարցանէր զաշակերտսն եւ ասէր. Զո՞ ասեն զինէն մարդիկ՝ թէ իցեմ։

28 Նոքա ետուն պատասխանի՝ եւ ասեն. ԶՅովհաննէս մկրտիչ, եւ այլք՝ զԵղիա, եւ այլք՝ զմի ոք 'ի մարգարէից անտի։

29 Ասէ ցնոսա. Իսկ դուք զո՞ ասէք զինէն՝ թէ իցեմ. պատասխանի ետ Պետրոս, եւ ասէ ցնա. Դու ես Քրիստոսն։

30 Եւ սաստեաց 'ի նոսա՝ զի մի ումեք ասիցեն զնմանէ։

31 Եւ սկսաւ ուսուցանել զնոսա, թէ պարտ է Որդւոյ մարդոյ բազում չարչարանս ընդունել, եւ անարգիլ յերիցանց եւ 'ի քահանայապետից եւ 'ի դպրաց, եւ մեռանել՝ եւ յետ երից աւուր յառնել։

32 Եւ համարձակ զբանն խօսէր. եւ առեալ զնա մեկուսի Պետրոսի՝ սկսաւ սաստել նմա։

33 Եւ նա դարձաւ ետես զաշակերտսն, սաստեաց Պետրոսի եւ ասէ. Երթ յետս իմ Սատանայ, զի ոչ խորհիս դու զԱստուծոյն՝ այլ զմարդկան։

34 Եւ կոչեցեալ առ ինքն զժողովուրդն աշակերտօքն հանդերձ՝ ասէ ցնոսա. Եթէ ոք կամի գալ զհետ իմ՝ ուրասցի զանձն իւր, եւ բարձցէ զխաչ իւր, եւ եկեսցէ զհետ իմ։

35 Զի որ կամիցի ապրեցուցա-

26 Նորան ուղարկեց իրեն տունը՝ եւ ասաց. գիւղը չի մտնես, բայց քո տունդ գնա. եւ երբոր գիւղը մտնես՝ գեղին մէջ մինին [ծ] չասես։

27 Եւ Յիսուս աշակերտներին հետ դուրս գնաց Փիլիպպեայ Կեսարիայի [է] գիւղերը. եւ ճանապարհումն աշակերտներին հարցնումէր եւ ասում՝ Մարդիկը ինձ համար ով են ասում՝ որ լինիմ։

28 Նորանք պատասխան տուին՝ եւ ասացին. թէ Յովհաննէս մկրտիչը, եւ ուրիշները թէ Եղիան, եւ ուրիշները թէ Մարգարէներիցը [ը] մինը։

29 Նորանց ասաց. Ապա դուք ով էք ասում ինձ համար՝ որ լինիմ. Պետրոս պատասխան տուաւ, եւ նորան ասաց. Դու Քրիստոսն [թ] ես։

30 Եւ նորանց սաստեց՝ որ ինքն մինին բան չասեն իրեն [ժ] համար։

31 Եւ սկսեց սովրեցնել նորանց, թէ պիտոր է՝ որ Որդին մարդոյ շատ չարչարանք քաշէ, եւ անարգվի ծերերիցն ու քահանայապետներիցը եւ կրթողներիցը, եւ մեռնի՝ եւ երեք օրումը յարութիւն [ի] առնէ։

32 Եւ համարձակ խօսեց բանը. եւ Պետրոս նորան մէն կողմ քաշեց՝ եւ սկսեց սաստել նորան։

33 Եւ նա դարձաւ, աշակերտներին անեաւ՝ Պետրոսին սաստեց եւ ասաց. Յետ գնա ինձանից Սատանայ. ինչու որ՝ դու Աստուծոյ բաները չես միտք անում՝ բայց մարդկանց բաները։

34 Եւ ժողովուրդն աշակերտներին հետ իրեն մօտ կանչեց. եւ նորանց ասաց. Թէ որ մինն ուզումէ իմ ետեւէս գալ՝ նա թող իրեն անձին ուրանայ, եւ իրեն խաչը վեր առնէ՝ եւ իմ ետեւէս [լ] գայ.

35 Պատճառն ով որ կամենայ ի-

ծ Մատթ. Ը. 4։ Գլ. Ե. 43։
է Մատթ. ԺԶ. 13։ Ղու. Թ. 18։
ը Մատթ. ԺԴ. 2։
թ Մատթ. ԺԶ. 16։ Յովհ. Զ. 69։ ԺԱ. 27։
ժ Մատթ. ԺԶ. 20։
ի Մատթ. ԺԶ. 21։ ԺԷ. 22։ Ղու. Թ. 22։
լ Մատթ. Ժ. 38։ ԺԶ. 24։ Ղու. Թ. 23։ ԺԴ. 27։

նել զանձն իւր՝ կորուսցէ զնա. եւ որ կորուսցէ զանձն իւր վասն աւետարանին, ապրեցուսցէ զնա։

36 Զինչ օգուտ է մարդոյ՝ եթէ զաշխարհս ամենայն շահեսցի, եւ զանձն իւր տուժեսցէ։

37 Կամ զինչ տացէ մարդ՝ փոխանակ անձին իւրոյ։

38 Զի որ ոք ամօթ համարեսցի զիս եւ զբանս իմ 'ի շնացող եւ 'ի մեղաւոր ազգիս այսմիկ, եւ Որդի մարդոյ յամօթ արասցէ զնա՝ յորժամ եկեսցէ փառօք Հօր իւրոյ եւ հրեշտակաց սրբոց։

39 Եւ ասէ ցնոսա. Ամէն ասեմ ձեզ. զի են ոմանք 'ի սոցանէ որ աստ կան, որք մի ճաշակեսցեն զմահ՝ մինչեւ տեսցեն զարքայութիւն Աստուծոյ եկեալ զօրութեամբ։

րեն անձին ազատելուն՝ կը կորցնէ զնորան. եւ ով որ իրեն անձին աւետարանին համար կը կորցնէ, կապրեցնէ նորան։

36 Ի՞նչ օգուտ է մարդուս՝ որ ամէն աշխարհքս առնայ՝ եւ իրեն անձին վնաս տայ։

37 Պատճառն որ՝ ինչ բա՞ն կը տայ մարդն իրեն անձին տեղակ։

38 Ինչու որ՝ ով որ ինձ եւ իմ խօսքերս ամօթ կը համարէ այս շնացող եւ մեղաւոր ազգիս մէջ, Որդին մարդոյ էլ նորան ամօթ կանէ՝ երբոր իրեն Հօր փառքովը ու սուրբ հրեշտակներովը կը գայ։

39 Եւ նորանց ասաց. Ճշմարիտ ասում եմ ձեզ. թէ այստեղ կանգնածներիցը մէն քանիսը կան՝ որ մահ չեն տեսնիլ՝ մինչեւ որ Աստուծոյ արքայութիւնը տեսնեն զօրութենով եկած։

## ԳԼ. Թ

1 Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Յիսուս զՊետրոս եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս, եւ հանէ զնոսա 'ի լեառն մի բարձր առանձինն. եւ յայլակերպս եղեւ առաջի նոցա։

2 Եւ ձորձք նորա եղեն փայլուն սպիտակ յոյժ, որպէս թափիչք երկրի ոչ կարեն այնպէս սպիտակացուցանել։

3 Եւ երեւեցաւ նոցա Եղիա Մովսիսիւ հանդերձ, եւ խօսէին ընդ Յիսուսի։

4 Պատասխանի ետ Պետրոս՝ եւ ասէ ցՅիսուս. Ռաբբի՛ բարւոք է մեզ աստ լինել. եւ արասցուք երիս տաղաւարս՝ մի քեզ եւ մի Մովսիսի եւ մի Եղիայի։

1 Եւ վեց օրէն ետեւ Յիսուս Պետրոսին եւ Յակոբոսին եւ Յովհաննէսին իրեն հետ առաւ, եւ նորանց առանձին մէն բարձր սար հանեց. եւ նորա կերպարանքը փոխուեցաւ նորանց առաջին։

2 Եւ նորա շորերը փայլուն եւ շատ սպիտակ եղան. որ երկրիս վերայ կտաւ սպիտակացնողները չեն կարող այնպէս սպիտակացնել։

3 Եւ Եղիան Մովսէսին հետ նորանց երեւեցաւ, եւ Յիսուսին հետ խօսումէին։

4 Պետրոս պատասխան տուաւ՝ եւ Յիսուսին ասաց. Ռաբբի՛ լաւ է որ մենք այստեղ կենանք. եւ երեք տաղաւար կը շինենք՝ մէկը քեզ համար եւ մէկը Մովսէսին եւ մէկը Եղիային.

շ Յովհ. ԺԲ. 25։
ъ Մատթ. Ժ. 33։ Ղուկ. Թ. 26։ ԺԲ. 9։
ւ Հռովմ. Ա. 16։
ր Տիմ. Ա. 8։ Բ. 12։
ս Մատթ. ԺԶ. 28։ Ղուկ. Թ. 27։
չ Մատթ. ԻԴ. 30։ ԻԵ. 31։ Ղուկ. ԻԲ. 18։
—
ս Մատթ. ԺԷ. 1։ Ղուկ. Թ. 28։
ե Դան. Է. 9։ Մատթ. ԻԸ. 3։

5 Քանզի ոչ գիտէր զինչ խօ-
սէր, զի զարհուրեալ էին։

6 Եւ եղեւ ամպ մի հովանի ՚ի վե-
րայ նոցա. ձայն եղեւ յամպոյ ան-
տի՝ եւ ասէ. Դա է Որդի իմ սիրե-
լի, դմա լուարուք։

7 Եւ յանկարծակի հայեցեալ
այսր անդր՝ ոչ եւս զոք ուրեք տե-
սին, բայց միայն զՅիսուս ընդ իւր-
եանս։

8 Եւ մինչդեռ իջանէին ՚ի լեռնէ
անտի, պատուիրեաց նոցա զի մի ու-
մեք պատմեսցեն զոր տեսինն, բայց
յորժամ Որդի մարդոյ ՚ի մեռելոց
յարիցէ։

9 Եւ նոքա զբանն ՚ի միտ ունէ-
ին, եւ խնդրէին ընդ միմեանս՝ թէ
զինչ իցէ ՚ի մեռելոցն յառնել։

10 Հարցին զնա եւ ասեն. Զինչ
է այն զոր դպիրքն ասեն՝ եթէ նախ
Եղիայի պարտ է գալ։

11 Նա պատասխանի ետ նոցա՝ եւ
ասէ. Եղիա նախ եկեալ յարդա-
րեսցէ զամենայն. եւ զիարդ գրեալ
է զՈրդւոյ մարդոյ, զի բազում ինչ
չարչարեսցի եւ անարգեսցի։

12 Այլ ես ասեմ ձեզ, Եթէ Ե-
ղիա եկն, եւ արարին ընդ նմա զինչ
եւ կամեցան. որպէս եւ գրեալ է
վասն նորա։

13 Եւ եկեալ առ աշակերտսն,
տեսանէ ամբոխ շուրջ զնոքօք, եւ
զդպիրսն՝ զի վիճէին ընդ նոսա։

14 Եւ վաղվաղակի ամենայն ժո-
ղովուրդն իբրեւ տեսին զնա՝ զար-

5 Պատճառնոր՝ չէր գիտում ինչ
էր խօսում. ինչուոր՝ խիստ վա-
խեցած էին։

6 Եւ մին ամպ էկաւ՝ որ նորանց
վերայ շուք արաւ. այն ամպիցը
ձայն էկաւ՝ եւ ասաց. Դա է իմ
սիրելի Որդին, դորան ականջ
դրէք։

7 Եւ շուտով որ այս կողմն այն
կողմը նայեցին՝ էլ ուրիշ մարդ չը-
տեսան, բայց միմիակ Յիսուսին իրենց
հետ։

8 Եւ երբոր այն սարիցը վեր էին
գալիս, նորանց պատուիրեց՝ որ ընաւ
մէկին չըպատմեն ինչ որ ‡ տեսան,
բայց այն ժամանակն որ Որդին
մարդոյ մեռելների միջիցը յարու-
թիւն առնէ։

9 Եւ նորանք այն խօսքը մտքներ-
ումը պահում էին, եւ իրար հետ
հարցնումէին՝ թէ ինչ է այն մեռել-
ների միջիցն յարութիւն առնելը։

10 Նորան հարցրին եւ ասացին.
Ի՞նչ է նա՝ որ կարդացողներն ա-
սումեն՝ թէ, Պէտք է որ առաջ Ե-
ղիան † գայ։

11 Նա պատասխան առաւ նո-
րանց՝ եւ ասաց. Եղիան առաջ կը
գայ, եւ ամէն բան կարգին կը դը-
նէ. բայց ինչպէս է գրված Որդոյ
մարդոյ ⊢ համար, թէ շատ պիտի
չարչարվի եւ ∼ անարգվի։

12 Միայն թէ ես ասումեմ ձեզ՝
թէ Եղիան եկաւ, եւ ինչ որ ուզե-
ցին, նորան ⊢ արին. ինչպէս որ էլ
նորան համար գրված է։

13 Եւ երբոր եկին աշակերտնե-
րին մօտ, նորանց շատ կողմեն
ամբոխ ⊏ տեսան, եւ կարդացողնե-
րին՝ որ նորանց հետ հակառակու-
թիւն էին անում։

14 Եւ շուտով ամէն ժողովուրդն
երբոր տեսան նորան, զարմացան եւ

‡ Մատթ. ԺԷ. 9։
† Մաղ. Դ. 5։ Մատթ. ԺԷ. 10։
⊢ Սաղ. ԻԲ. 6։ Եսայ. ԾԳ. 2, 3. Դան. Թ. 26։
∼ Ղու. ԻԳ. 11։ Փիլիպ. Բ. 7։
⊢ Մատթ. ԺԱ. 14։ ԺԷ. 12։ Ղու. Ա. 17։
⊏ Մատթ. ԺԷ. 14։ Ղու. Թ. 37։

մացան , եւ ընդ առաջ ընթացեալ
ողջոյն տային նմա ։
15 Եւ եհարց ցնոսա՝ թէ Զինչ
վիճէիք ընդ նոսա ։
16 Պատասխանի ետ մի ոմն 'ի ժո-
ղովրդենէն՝ եւ ասէ ․ Վարդապետ՝
ածի զորդի իմ առ քեզ , զոր ունի
այս համր ։
17 Եւ ուր հասանէ՝ զարկուցանէ
զնա ․ եւ փրփրէ՝ եւ կրճտէ զատա-
մունս իւր եւ ցամաքի ․ եւ ասացի
ցաշակերտացն քո զի հանցեն , եւ ոչ
կարացին հանել զնա ։
18 Պատասխանի ետ նոցա եւ ասէ ․
Ո՜վ ազգ անհաւատ՝ մինչեւ յե՞րբ ի-
ցեմ առ ձեզ ․ մինչեւ ցե՞րբ անսայ-
ցեմ ձեզ ․ ածէ՛ք զնա առ իս ։
19 Եւ ածին զնա առ նա ․ իբրեւ
ետես զնա այսն , վաղվաղակի չարչա-
րեաց զնա , եւ անկեալ յերկիր թա-
ւալէր եւ փրփրէր ։
20 Եհարց ցհայր նորա եւ ասէ ․
Քանի՞ ժամանակք են՝ յորմէհետէ
այդ եղեւ դմա ․ եւ նա ասէ՝ 'ի
մանկութենէ ։
21 Բազում անգամ 'ի հուր արկա-
նէ զդա եւ 'ի ջուր՝ զի կորուսցէ ․
այլ եթէ կարող ինչ ես , օգնեա
մեզ Տէ՛ր՝ գթացեալ 'ի վերայ մեր ։
22 Եւ Յիսուս ասէ ցնա ․ Ասա-
ցեր՝ թէ կարող ես ․ ամենայն ինչ
հնարաւոր է այնմ , որ հաւատայն ։
23 Եւ վաղվաղակի աղաղակեաց
հայր մանկանն՝ եւ ասէ ․ Հաւատամ ,
օգնեա անհաւատութեանս իմում ։
24 Իբրեւ ետես Յիսուս՝ եթէ կու-
տի ժողովուրդն 'ի վերայ , սաս-
տեաց այսոյն պղծոյ եւ ասէ ․ Համ-
րըդ եւ խուլ այս՝ ես ասեմ քեզ հը-
րամանս , ե՛լ 'ի դմանէ , եւ այլ եւս
մի՛ մտանիցես 'ի դա ։

առաջ վազելով նորան բարեւ էին
տալիս ։
15 Եւ նորանց հարցրուց՝ թէ Ի՞նչ
էիք հակառակում նորանց հետ ։
16 Ժողովրդի միջից մինը պա-
տասխան տուաւ՝ եւ [Ի] ասաց ․ Վարդա-
պետ՝ իմ որդիս քեզ մօտ բերի ,
որ նորան համր դեւ բռնել է ․
17 Եւ որտեղ որ նորան հանդիպու-
մէ՝ նորան գետնովն է տալիս ․ եւ
փրփրացնումէ՝ եւ ատամները կըր-
ճըտացնումէ եւ ցամաքում ․ եւ քո
աշակերտներին ասացի՝ որ հանեն ,
եւ չկարողացան հանել նորան ։
18 Նորանց պատասխան տուաւ եւ
ասաց ․ Ո՛վ անհաւատ ազգ՝ մինչեւ
երբ ձեզ հետ պիտի լինիմ , մինչեւ
երբ ձեզ պիտի համբերեմ ․ նորան
ինձ մօտ բերէ՛ք ։
19 Եւ նորան բերին նորա մօտ ․
երբոր դեւը նորան տեսաւ , շուտով
տառապեց չարչարեց [Ժ] նորան ․ եւ գե-
տինն ընկած թաւալում եւ փրփը-
րում էր ։
20 Նորա հօրն հարցրուց եւ ա-
սաց ․ Քանի՞ ժամանակ է՝ որ այդ
բանըդ էլաւ դորան ․ եւ նա ասաց՝
Երախայութենիցը ․
21 Շատ անգամ կրակին մէջն է
ձգում եւ ջրին մէջն՝ որ դորան կոր-
ցնէ ․ այս թէ որ մին բան կա-
րող ես՝ օգնէ՛ մեզ Տէ՛ր՝ խղճալով
մեզ վերայ ։
22 Եւ Յիսուս նորան ասաց ․ Ասա-
ցիր՝ թէ որ կարող ես ․ ամէն բան
կարելի է նորան՝ որ կ հաւատումէ ։
23 Եւ շուտով տղայի հայրն ա-
ղաղակեց՝ եւ ասաց ․ Հաւատումեմ ,
իմ անհաւատութեանս օգնէ ։
24 Երբոր Յիսուս տեսաւ՝ թէ ժո-
ղովուրդը կիտվումէ , այն պիղծ
դեւին սաստեց եւ ասաց ․ Ո՛վ
համր եւ խուլ դեւ՝ ես հրամայու-
մեմ քեզ , դորանից դո՛ւրս եկ , եւ
նորէն դորա մէջ չմտնես ։

Ի Մատթ. ԺԷ. 14։ Ղու. Թ. 38։ | Ժ Գղ. Ա. 26։ Ղու. Թ. 42։ | ԺԱ Մատթ. ԺԷ. 21։ Գղ. ԺԱ. 23։ | Ղու. ԺԷ. 6։ Յովհ. ԺԱ. 40։

25 Եւ աղաղակեաց՝ եւ յոյժ լլկեաց զնա, եւ ել․ եւ եղեւ պատանեակն իբրեւ զմեռեալ, մինչեւ բազմաց խօսել թէ Մեռաւ։

26 Եւ Յիսուս կալեալ զձեռանէ նորա՝ յարոյց զնա, եւ կանգնեցաւ։

27 Եւ իբրեւ եմուտ նա ՚ի տուն, աշակերտքն առանձինն հարցին զնա․ Մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա։

28 Եւ ասէ ցնոսա․ Այդ ազգ ոչ իւիք ելանէ, եթէ ոչ պահովք եւ աղօթիւք։

29 Եւ անտի ելեալ անցանէին ընդ Գալիլեացւովք․ եւ ոչ կամէր եթէ ոք գիտասցէ։

30 Քանզի ուսուցանէր զաշակերտսն իւր՝ եւ ասէր ցնոսա, թէ Որդի մարդոյ մատնելոց է ՚ի ձեռս մարդկան, եւ սպանցեն զնա․ եւ իբրեւ սպանցի՝ յետ երից աւուր յարիցէ։

31 Եւ նոքա ոչ գիտէին զբանն, եւ երկնչէին հարցանել զնա։

32 Եկն ՚ի Կափառնաում․ եւ իբրեւ եմուտ ՚ի տուն, հարցանէր զնոսա․ Զի՞նչ վիճէիք զճանապարհայն ընդ միմեանս։

33 Եւ նոքա լուռ լինէին․ քանզի ընդ միմեանս վիճէին ՚ի ճանապարհին՝ թէ ով մեծ իցէ։

34 Եւ իբրեւ նստաւ՝ կոչեաց զերկոտասանսն եւ ասէ ցնոսա․ Եթէ ոք կամի առաջին լինել՝ եղիցի ամենեցուն կրտսեր՝ եւ ամենեցուն պաշտօնեայ։

35 Եւ առեալ մանուկ մի կացոյց ՚ի մէջ նոցա․ եւ ընկալեալ զնա ՚ի գիրկս իւր, ասէ ցնոսա։

36 Որ միանգամ յայսպիսի ման-

25 Եւ չար աղաղակեց՝ եւ սաստիկ չարչարեց նորան, եւ դուրս եկաւ․ եւ տղան մեռածի պէս էղաւ․ մինչեւ որ շատերն ասում էին՝ թէ, Մեռաւ։

26 Եւ Յիսուս նորա ձեռքը բըռնեց, նորան վերկացրուց, եւ կանգնեց։

27 Եւ երբոր նա տուն մտաւ՝ աշակերտներն առանձին հարցրին նորան․ Մենք ինչու չկարացինք հանել ւ նորան։

28 Եւ նորանց ասաց․ այդ ցեղդ ուրիշ բանով դուրս չիգալ, եթէ ոչ ծոմով եւ աղօթքով։

29 Եւ այնտեղից դուրս եկած՝ Գալիլեայից մէջովն անցանում էին․ եւ չէր ուզում որ մինն իմանայ։

30 Ինչու որ՝ իրեն աշակերտները սովորցնում էր՝ եւ նորանց ասում էր՝ թէ, Որդին մարդոյ մարդկանց ձեռքը պիտի մատնուի, եւ նորան կըսպանեն․ եւ երբոր կսպանուի, երեք օրումը յարութիւն փ կառնէ։

31 Եւ նորանք այն բանը չէին իմանում․ եւ վախում էին որ հարցընեն նորան։

32 Կափառնայում ք եկաւ․ եւ երբոր տուն մտաւ, նորանց հարցնումէր․ ճանապարհումն ինչ էիք հակառակում իրար հետ։

33 Եւ նորանք լուռ էին կենում․ պատճառ որ՝ ճանապարհումն իրար հետ հակառակում էին թէ՝ ով լինի մեծը։

34 Եւ երբոր նստեց, տասներկուսին կանչեց եւ նորանց ասաց․ Թէ որ մինն ուզում է առաջին լինել՝ թող ամէնիցը փոքր՝ եւ ամէնին սպասաւոր օ լինի։

35 Եւ մին երախայ առաւ, կանգնացրուց նորանց ֆ մէջ․ եւ նորան առաւ իրեն գիրկը ու նորանց ասաց․

36 Ով որ այսպէսի երախաներից

ւ Մատթ․ ԺԷ․ 19։
փ Մատթ․ ԺԷ․ 22։ Ղու․ Թ․ 44։
ք Մատթ․ ԺԸ․ 1։ Ղու․ Թ․ 46։ ԻԲ․ 24։
օ Մատթ․ Ի․ 26, 27։ Գլ․ Ժ․ 43։
ֆ Մատթ․ ԺԸ․ 2։ Գլ․ Ժ․ 16։

կրտսեայ ընկալցի յանուն իմ, զիս ըն-
դունի. եւ որ զիս ընդունիցի, ոչ
զիս ընդունի՝ այլ զայն՝ որ առա-
քեացն զիս:
37 Պատասխանի ետ նմա Յովհան-
նէս եւ ասէ. Վարդապետ՝ տեսաք
զոմն, զի յանուն քո դեւս հանէր՝
եւ զմեօք կնի ոչ շրջէր, եւ արգե-
լաք զնա:
38 Եւ նա ասէ. Մի արգելուք
զնա. զի ոչ ոք է՝ որ արասցէ զօրու-
թիւնս յանուն իմ, եւ կարիցէ հայ-
հոյել զիս:
39 Զի որ ոչն է ընդ մեզ հակա-
ռակ, 'ի մեր կոյս է:
40 Եւ որ ոք արբուսցէ ձեզ ջուր
բաժակաւ յանուանս յայս՝ թէ դուք
Քրիստոսի էք, ամէն ասեմ ձեզ՝
մի կորուսցէ զվարձս իւր:

41 Եւ որ ոք գայթակղեցուսցէ զմի
'ի փոքրկանցս՝ որ հաւատան յիս,
լաւ էր նմա առաւել՝ եթէ արկեալ էր
ընդ պարանոց նորա երկան իշոյ,
եւ ընկեցեալ 'ի ծով:
42 Եւ եթէ գայթակղեցուսցէ զք-
քեզ ձեռն քո, հատ՝ ընկեա 'ի բաց,
զի լաւ իցէ քեզ խեղ մտանել 'ի
կեանսն յաւիտենից, քան երկուս
ձեռս ունել՝ եւ երթալ 'ի գեհենն 'ի
հուրն անշէջ:

43 Ուր որդն նոցա ոչ մեռանի՝ եւ
հուրն ոչ շիջանի:
44 Եւ եթէ ոտն քո գայթակղե-
ցուսցէ զքեզ, հատ՝ ընկեա զնա 'ի
բաց. լաւ իցէ քեզ կաղ մտանել 'ի
կեանսն յաւիտենից, քան երկուս
ոտս ունել՝ եւ անկանել 'ի գեհեն 'ի
հուրն անշէջ:
45 Ուր որդն նոցա ոչ մեռանի՝ եւ
հուրն ոչ շիջանի:
46 Եւ եթէ ակն քո գայթակղե-

մէկն իմ անունովս կընդունի՝ ինձ
կընդունի. եւ ով որ ինձ կընդունի՝
ինձ չի ընդունիլ, այլ նորան՝ որ ինձ
[ɔ] ուղարկեց:
37 Յովհաննէս նորան պատասխան
տուաւ եւ ասաց. Վարդապետ՝
մէկը տեսանք որ քո անունովդ դե-
ւեր էր հանում, եւ չէր հետեւում,
եւ արգելեցինք նորան:
38 Եւ նա ասաց. Մի արգելէք
նորան. ինչու որ՝ ոչ ով չկայ՝ որ
իմ անունովս զօրութիւն անէ, կա-
րենայ հայհոյել [ʼ] ինձ,
39 Քանզի՝ նա որ մեզ հա-
կառակ չէ՝ մեր կողմն [ʻ] է:
40 Եւ ով որ մին բաժակով ջուր
կը խմցնէ ձեզ այս անունովս՝ թէ
դուք Քրիստոսինն էք, ճշմարիտ
ասում եմ ձեզ՝ նա չի կորցնիլ իւրն
[;] վարձքը:
41 Եւ ով որ կը գայթակղեցնէ
այս փոքրիկներիցս մինը՝ որ ինձ հա-
ւատումեն, աւելի լաւ էր նորան՝
որ իւրն վզիցը մին իշու ջաղացի
քար անցուցէին, եւ ծովը [ъ] ձգէին:
42 Եւ եթէ քո ձեռդ քեզ գայ-
թակղեցնէ՝ կտրէ նորան, քեզա-
նից դէն ձգէ. ինչու որ՝ լաւ է քեզ՝
որ խեղ մտնես յաւիտենական կեան-
քը, քանթէ երկու ձեռք ունենաս՝
եւ գեհենը գնաս այն անշիջելի
կրակին [ւ] մէջ,
43 Որ տեղ որ նորանց որդը չի
մեռնում՝ եւ կրակը [«] չի անցնում:
44 Եւ եթէ քո ոտդ քեզ գայ-
թակղեցնէ, կտրէ նորան՝ քեզա-
նից դէն ձգէ. լաւ է քեզ որ կաղ
մտնես յաւիտենական կեանքը, քան
թէ երկու ոտք ունենաս՝ եւ գեհենն
ընկնես այն անշիջելի կրակին մէջ,
45 Որ տեղ որ նորանց որդը չի
մեռնում՝ եւ կրակը չի անցնում:
46 Եւ եթէ քո աչքդ քեզ գայ-

[ɔ] Մատթ. Ժ. 40: Ղուկ. Թ. 48:
[ʟ] Թուոց. ԺԱ. 28: Ղուկ. Թ. 49.
[ʼ] Ա Կորնթ. ԺԲ. 3:
[ʻ] Մատթ. ԺԲ. 30:
[;] Մատթ. Ժ. 42:
[ъ] Մատթ. ԺԸ. 6: Ղուկ. ԺԷ. 1:
[ւ] Բ Օրին. ԺԳ. 6: Մատթ. Ե. 29: ԺԸ. 8:
[«] Եսայ. ԿԶ. 24:

ցուսցէ զքեզ , հան զնա 'ի բաց · լաւ իցէ քեզ միով ականբ մտանել յարքայութիւն Աստուծոյ , քան երկուս աչս ունել՝ եւ անկանել 'ի գեհեն :
47 Ուր որդն նոցա ոչ մեռանի՝ եւ հուրն ոչ շիջանի :
48 Զի ամենայն ինչ հրով յաղեսցի , եւ ամենայն ողջակէզ աղիւ յաղեսցի :
49 Բարւոք է աղ · եւ եթէ աղն անհամեսցի , իւ համեմեսցի · արդ՝ դուք կալարուք յանձինս ձեր զաղն , եւ խաղաղութիւն արարէք ընդ միմեանս :

թակղեցնէ՝ դուրս հանէ՛ նորան · լաւ է քեզ՝ որ միայն աչքով Աստուծոյ արքայութիւնը մտնես , քան թէ երկու աչք ունենաս՝ եւ գեհենն ընկնես ,
47 Որ տեղ որ նորանց որդը չի մեռնում՝ եւ կրակը չի անցնում ·
48 Պատճառնոր՝ ամէն բան կրակով պէտք է աղամվի , եւ ամէն մատաղն աղով պէտք է ւ աղամվի :
49 Աղը բարի դ է · եւ թէ որ աղն անհամանայ , ինչով պիտի համեմվանայ · ուրեմն դուք աղը պահեցէք ձեր Է անձներումը , եւ իրար հետ խաղաղութիւն = արէք :

## ԳԼ. Ժ

1 Եւ անտի յարուցեալ գայ 'ի սահմանս Հրէաստանի յայնկոյս Յորդանանու · եւ երթային դարձեալ խռնեալ ժողովուրդն առ նա · եւ որպէս սովոր էր՝ միւսանգամ ուսուցանէր զնոսա :
2 Իսկ փարիսեցիքն մատուցեալ փորձելով հարցանէին զնա՝ եւ ասէին , եթէ Արժան իցէ առն զկին իւր արձակել :
3 Նա պատասխանի ետ նոցա եւ ասէ · Զի՞նչ պատուիրեաց ձեզ Մովսէս :
4 Եւ նոքա ասեն · Մովսէս հրաման ետ գիր մեկնելոյ գրել , եւ արձակել :
5 Պատասխանի ետ Յիսուս՝ եւ ասէ ցնոսա · Վասն խստասրտութեան ձերոյ գրեաց ձեզ զպատուիրանն զայն :
6 Այլ 'ի սկզբանէ արարածոց , արու եւ էգ արար զնոսա Աստուած , եւ ասէ ·
7 Վասն այսորիկ թողցէ այր ըզ

1 Եւ այն տեղիցը վերկացաւ եկաւ Հրէաստանի կողմերը՝ Յորդանանի այն = կողմը · եւ նորէն ժողովուրդը կիտուած ՟գնումէին նորա մօտ , եւ ինչպէս որ նորան սովորութիւնն էր՝ նորէն սովորցնումէր նորանց :
2 Բայց փարիսեցիները մօտ եկին , եւ փորձելով նորան հարցնումէին եւ ասում · թէ Արժան է մարդոյ՝ որ իւրեն կնիկն ը արձակէ :
3 Նա պատասխան տուաւ նորանց եւ ասաց · Մովսէսն ինչ պատուիրեց ձեզ :
4 Եւ նորանք ասացին · Մովսէսն հրաման տուաւ՝ արձակման թուղթ գրել , եւ է արձակել :
5 Յիսուս պատասխան տուաւ եւ նորանց ասաց · Ձեր քարասրտութեան համար այն պատուիրանքը գրեց ձեզ ·
6 Բայց ստեղծագործութեան ըսկըզբիցն Աստուած նորանց արու եւ էգ ե արաւ , եւ ասաց ·
7 Սրա համար մարդն իւրեն հայրն

ւ Ղկ. Բ. 13. Եզեկ. ԽԳ. 24.
դ Մատթ. Ե. 13. Ղուկ. ԺԴ. 34.
Է Եփես. Դ. 29. Կող. Դ. 6.
= Հռովմ. ԺԲ. 18. ԺԴ. 19. Բ Կորնթ. ԺԳ. 11. Եբր. ԺԲ. 14.
= Մատթ. ԺԹ. 1. Յովհ. Ժ. 40. ԺԱ. 7.
ը Մատթ. ԺԹ. 3.
է Բ Օրին. ԻԴ. 1. Մատթ. Ե. 31. ԺԹ. 7.
ե Ծննդ. Ա. 27. Ե. 2.

հայր իւր եւ զմայր, եւ երթիցէ ըզ
հետ կնոջ իւրոյ։
8 Եւ եղիցին երկոքին ՚ի մարմին
մի. եւ այսուհետեւ ոչ են երկու՝
այլ մարմին մի։
9 Արդ՝ զոր Աստուած զուգեաց,
մարդ մի մեկնեսցէ։
10 Եւ ՚ի տան դարձեալ աշակերտ-
քըն վասն հարցին զնա։
11 Եւ ասէ ցնոսա. Եթէ այր ար-
ձակեսցէ զկին իւր՝ եւ արասցէ
այլ, շնայ։
12 Եւ կին եթէ ելցէ յառնէ իւր-
մէ՝ եւ եղիցի առն այլում, շնայ։

13 Եւ մատուցանէին առ նա ման-
կունս՝ զի ձեռն դիցէ նոցա. իսկ
աշակերտքն սաստէին այնոցիկ՝ որ
մատուցանէինն։
14 Իբրեւ ետես Յիսուս, բարկա-
ցեաւ սաստեաց նոցա եւ ասէ. Թոյլ
տուք մանկտւոյդ գալ առ իս, եւ
մի արգելուք զդոսա. զի այդպիսե-
ացդ է արքայութիւն Աստուծոյ։

15 Ամէն ասեմ ձեզ. Որ ոչ ըն-
կալցի զարքայութիւն Աստուծոյ
իբրեւ զմանուկ՝ ոչ մտցէ ՚ի նա։

16 Եւ առեալ զնոսա ՚ի գիրկս՝
ձեռն եդ ՚ի վերայ՝ եւ օրհնեաց ըզ
նոսա։
17 Եւ ընդ ելանելն նորա անտի
՚ի ճանապարհ, ահաւասիկ ոմն մե-
ծատուն ընթացեալ ՚ի ծունր իջա-
նէր, հարցանէր զնա եւ ասէր.
Վարդապետ բարի՝ զինչ արարից՝
զի զկեանսն յաւիտենականս ժա-
ռանգեցից։
18 Եւ Յիսուս ասէ ցնա. Զի՞ ա-
սես զիս բարի. չիք ոք բարի՝ բայց
մի Աստուած։

ու մայրը կը թողէ, եւ իրեն կնո-
կանը հետ է կը գնայ.
8 Եւ երկուքը մէն մարմին կը
լինին. եւ նորանից հետեւ երկու չեն՝
բայց մէն մարմին են։
9 Ուրեմն նա որ Աստուած միա-
ւորեց՝ թող մարդը չը ջոկէ։
10 Եւ տան մէջն աշակերտները
նորէն խակ այն բանը հարցրին նորանը
11 Եւ նորանց ասաց. Թէ որ մարդ
իրեն կնիկն արձակէ՝ եւ մէն ու-
րիշն առնէ, շնութիւն է ը գործում։
12 Եւ կինը՝ թէ որ իրեն մարդու-
ցը դուրս գնայ՝ եւ ուրիշ մարդոյ
լինի՝ շնութիւն է գործում։
13 Եւ նորա մօտ երախաներ էին
բերում՝ որ ձեռքն դնէ նորանց
թ վերայ. բայց աշակերտները սաս-
տումէին նորանց՝ որ բերումէին։
14 Երբոր Յիսուս տեսաւ՝ բարկա-
ցաւ եւ նորանց սաստեց եւ ասաց.
Թոյլ տուէք այդ երախաներին՝ որ
ինձ մօտ գան, եւ մի արգելէք՝ զո-
րանց. ինչու որ այդպիսիներինն է Աս-
տուծոյ ժ արքայութիւնը։
15 Ճշմարիտն ասումեմ ձեզ՝ Ով որ
Աստուծոյ արքայութիւնը չընդունի
ինչպէս երախայ՝ նա չի մտնել նո-
րան ի մէջ։
16 Եւ նորանց գիրկն առաւ՝ ձե-
ռքն դրաւ նորանց վերայ՝ եւ նո-
րանց օրհնեց։
17 Եւ այնտեղից որ դուրս գնաց
ճանապարհը, ահա մէն հարուստ
մարդ վազելով եկաւ՝ ծունր էր գը-
նում՝ նորան հարցնումէր եւ ասում.
Բարի Վարդապետ. ինչ գործեմ՝
որ յաւիտենական կեանքը լ ժա-
ռանգեմ։
18 Եւ Յիսուս նորան ասաց. Ին-
չու ես ինձ բարի ասում՝ ոչ ով
բարի չը կայ, բայց միայն մէնն Աս-
տուած։

է Ծննդ. Բ. 24. Ա Կորնթ. Զ. 16 Եփես. Ե. 31.
ը Մատթ. Ե. 32. ԺԹ. 9. Ղու. ԺԶ. 18. Հռոմ. Է. 3. Ա Կորնթ. Է. 10, 11.
թ Մատթ. ԺԹ. 13. Ղու. ԺԸ. 13.
ժ Ա Կորնթ. ԺԴ. 20. Ա Պետ. Բ. 2.
ի Մատթ. ԺԸ. 3.
լ Մատթ. ԺԹ. 16. Ղու. ԺԸ. 18.

19 Զպատուիրանսն գիտես. Մի՛
շնար, Մի՛ սպանաներ, Մի՛ գողա-
նար, Մի՛ սուտ վկայեր, Պատուեա՛
զհայր քո եւ զմայր։
20 Նա պատասխանի ետ եւ ասէ
ցնա. Վարդապետ՝ զայդ ամենայն
արարի ՚ի մանկութենէ իմմէ, արդ՝
զինչ եւս պակաս իցեմ։
21 Եւ Յիսուս հայեցեալ ՚ի նա՝
սիրեաց զնա, եւ ասէ ցնա. Մի
ինչ պակաս է ՚ի քէն. եթէ կամիս
կատարեալ լինել, երթ զոր ինչ ու-
նիս վաճառեա՝ եւ տուր աղքա-
տաց, եւ ունիցիս գանձս յերկինս,
եւ ա՛ռ զխաչն՝ եւ եկ զկնի իմ։

22 Եւ նա խոժոռեալ ընդ բանն՝
գնաց տրտում. զի ունէր ինչս բա-
զում։
23 Եւ հայեցեալ յայսկոյս յայն-
կոյս Յիսուս, ասէ ցաշակերտսն.
Զիա՛րդ դժուարին է՝ որ զինչս ու-
նին, մտանել յարքայութիւն Աս-
տուծոյ։
24 Եւ աշակերտքն զարմացեալ
էին ՚ի վերայ բանիցն նորա. իսկ
Յիսուս դարձեալ պատասխանի ետ
նոցա եւ ասէ. Որդեակք՝ որչափ
դժուարին է յուսացելոց յինչս՝ մտա-
նել յարքայութիւն Աստուծոյ։

25 Դիւրին է մալխոյ ընդ ծակ
ասղան անցանել՝ քան մեծատան
յարքայութիւն Աստուծոյ մտանել։
26 Եւ նոքա առաւել եւս զարմա-
նային եւ ասէին ընդ միմեանս. Եւ
ո՞ կարասցէ ապրել։
27 Հայեցեալ ընդ նոսա Յիսուս՝
ասէ. Առ ՚ի մարդկանէ այդ անհնա-
րին է, այլ ոչ առ ՚ի յԱստուծոյ։
28 Սկսաւ ասել ցնա Պետրոս, Ա-

19 Պատուիրանքները գիտես՝
Մի՛ շնար, Մի՛ սպաններ, Մի՛ գողա-
նար, Մի՛ սուտ վկայեր, Քո հայրդ
ու մայրդ է պատուէ։
20 Նա պատասխանեց ասաց եւ Նո-
րան ասաց. Վարդապետ՝ այդ ա-
մէնը իմ երախայութենէս պահ-
պանած եմ. ինչ բանով եմ պակաս։
21 Եւ Յիսուս Նորան մտիկ տալով՝
Նորան սիրեց, եւ Նորան ասաց.
Մէկ բան պակաս է քեզանից. թէ
որ կամենաս կատարեալ լինել, գնա,
ինչ որ ունիս՝ ծախէ եւ աղքատ-
ներին տուր. եւ գանձ կունենաս
ը երկնքումը. եւ խաչդ առ՝ եւ
իմ ետեւէս եկ։
22 Եւ նա այս բանին համար դըժ-
ուարացաւ՝ եւ տրտմած գնաց.
պատճառ՝ շատ ապրանք ունէր։
23 Եւ Յիսուս այս կողմն այն կող-
մը նայելով՝ աշակերտներին ասաց.
Ի՞նչպէս դժուար է՝ որ նորանք որ
ապրանք ունին՝ Աստուծոյ արքա-
յութիւնը թ մտնեն։
24 Եւ աշակերտները զարմացել
էին նորա խօսքերին վերայ. բայց
Յիսուս նորէն պատասխան տուաւ
նորանց եւ ասաց. Որդեակներ՝ որ-
քան դժուար է՝ որ նորանք՝ որ
իրենց յոյսն ապրանքի վերայ են
դրել, Աստուծոյ արքայութիւնը
ժ մտնեն։
25 Աւելի հեշտ է որ ուղտն ասեղի
ծակով անցանի, քան թէ հարուստն
Աստուծոյ արքայութիւնը մտնէ։
26 Եւ նորանք էլ աւելի զարմա-
նում էին՝ եւ մէկը միւսին ասում.
Ապա ով կարենայ ապրել։
27 Յիսուս նորանց մտիկ տալով
եւ ասաց. Մարդկանց կողմանէ՝
այդ անկարելի է, բայց ոչ թէ Ա-
ստուծոյ ի կողմանէ։
28 Պետրոսն սկսեց Նորան ասել.

է Ելից. Ի. Հռովմ. ԺԳ. 9.
ը Մատթ. Զ. 19, 20. ԺԹ. 21. Ղուկ. ԺԲ. 33. ԺԶ. 9.
թ Մատթ. ԺԹ. 23. Ղուկ. ԺԸ. 24.
ժ Յոբ. ԼԱ. 24. Սաղ. ԾԲ. 7. ԿԲ. 10. Ա Տիմ. Զ. 17.
ի Երեմ. ԼԲ. 17. Մատթ. ԺԹ. 26. Ղուկ. Ա. 37.

հաւասիկ մեք թողաք զամենայն,
եւ եկաք զհետ քո։
29 Պատասխանի ետ Յիսուս եւ ա-
սէ. Ամէն ասեմ ձեզ՝ ոչ ոք է որ
եթող զտուն կամ զեղբարս կամ
զքորս կամ զհայր կամ զմայր կամ
զորդիս կամ զագարակս՝ վասն իմ
կամ վասն աւետարանին.
30 Եթէ ոչ առնուցու հարիւրա-
պատիկ այժմ յայսմ ժամանակի՝ տու-
նս եւ եղբարս եւ քորս եւ մայրս եւ
որդիս եւ ագարակս հալածանօք
հանդերձ, եւ յաշխարհին որ գալոց
է՝ զկեանսն յաւիտենականս։
31 Զի բազումք եղիցին առաջինք
յետինք՝ եւ յետինք առաջինք։
32 Եւ էին ՚ի ճանապարհի մինչ-
դեռ ելանէին յԵրուսաղէմ. եւ եր-
թայր Յիսուս առաջի քան զնոսա,
եւ զարմացեալ էին որ զհետն եր-
թային եւ երկնչէին։ Եւ առեալ
միւսանգամ զերկոտասանսն առան-
ձինն, սկսաւ ասել նոցա զինչ անցք
անցանելոց իցեն ընդ նա։
33 Թէ Ահաւասիկ ելանեմք յԵ-
րուսաղէմ. եւ Որդի մարդոյ մատ-
նեսցի քահանայապետից եւ դպր-
րաց. եւ դատեսցին զնա ՚ի մահ,
եւ մատնեսցեն զնա հեթանոսաց.
34 Եւ կատակեսցեն զնովաւ, եւ
հարկանիցեն զնա, եւ թքանիցեն ՚ի
նա, եւ սպանցեն. եւ յերիր աւուր
յարիցէ։
35 Եւ երթային առ նովաւ Յա-
կովբոս եւ Յովհաննէս՝ որդիքն Զե-
բեդեայ, եւ ասեն ցնա. Վարդա-
պետ՝ կամիմք զի զոր ինչ խնդրես-
ցուք ՚ի քէն՝ արասցես մեզ։
36 Եւ նա ասէ ցնոսա. Զինչ
կամիք յինէն՝ զի արարից ձեզ։

Ահա մենք ամէն բան թողինք, եւ
քու ետեւէդ [հ] եկինք։
29 Յիսուս պատասխան տուաւ եւ
ասաց. Ճշմարիտ ասումեմ ձեզ՝
թէ ոչ ով չկայ՝ որ տունը կամ
եղբայրները կամ քոյրերը կամ հայ-
րը կամ մայրը կամ որդիքը կամ
արտերը թողնէ՝ ինձ համար կամ ա-
ւետարանին համար.
30 Որ հարիւրապատիկ հիմիկ այս
ժամանակումս չառնէ տներ եւ
եղբայրներ եւ քոյրեր եւ մայրեր եւ
որդիք եւ արտեր հալածմունքի հետ,
եւ այն նոր գալու աշխարհքումն՝
յաւիտենական [յ] կեանքը.
31 Պատճառոր՝ շատ առաջիններ
յետինք կը լինին՝ եւ յետինները
[ւ] առաջինք։
32 Եւ ճանապարհի վերայ էին՝ որ
Երուսաղէմ էին գնում, եւ Յիսուս
նորանցից առաջ էր [ե] գնում. եւ
նորանք՝ որ ետեւէն գնումէին, զար-
մացած էին եւ վախենումէին։ Եւ
տասներկուսին նորէն առանձին ա-
ռաւ, սկսեց նորանց ասել՝ թէ ինչ
բաներ իրեն վերայ պիտի [զ] անցանէին.
33 Թէ, Ահա վեր ենք ելլում Ե-
րուսաղէմ. եւ Որդին մարդոյ կը
մատնուի քահանայապետներին ու
կարգացողներին ձեռքը. եւ նորան
մահու կը դատապարտեն, եւ նո-
րան հեթանոսներին կը մատնեն.
34 Եւ նորան ծաղր կանեն, եւ
նորան կը ծեծեն, եւ նորա վերայ
կը թքեն, եւ կը սպանեն. եւ երեք
օրումն յարութիւն կառնէ։
35 Եւ Զեբեդեայի որդիքը՝ Յա-
կոբոսն ու Յովհաննէսը նորան մօտ
էին գնում՝ եւ նորան ասացին. Վար-
դապետ՝ ուզումենք որ՝ ինչ որ քե-
զանից խնդրենք՝ մեզ [է] անես։
36 Եւ նա նորանց ասաց. Ի՞նչ էք
խնդրում ինձանից՝ որ ձեզ անեմ։

[հ] Մատթ. ԺԹ. 27։ Ղուկ. ԺԸ. 28։
[յ] Բ Մնաց. ԻԵ. 9։ Ղուկ. ԺԸ. 30։
[ւ] Մատթ. ԺԹ. 30։ Ի. 16։ Ղուկ. ԺԳ. 30։
[ե] Մատթ. Ի. 17։ Ղուկ. ԺԸ. 31։
[զ] Գլ. Ը. 31։ Թ. 31։ Ղուկ. Թ. 22։ ԺԸ. 31։
[է] Մատթ. Ի. 20։

37 Եւ նոքա ասեն ցնա. Տուր մեզ՝ զի նստցուք մի յաջմէ քումմէ եւ մի յահեկէ՝ 'ի փառսն քում։

38 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Ո՛չ գիտէք զինչ խնդրէք. կարէ՞ք ըմպել զբաժակն՝ զոր ես ըմպելոց եմ, կամ զմկրտութիւնն մկրտել՝ զոր ես մկրտելոցն եմ։

39 Եւ նոքա ասեն ցնա, Կարեմք. եւ Յիսուս ասէ ցնոսա. Զբաժակն՝ զոր ես ըմպելոց եմ՝ ըմպիցէք, եւ զմկրտութիւնն՝ զոր ես մկրտելոց եմ՝ մկրտիցիք։

40 Այլ նստուցանել ընդ աջմէ իմմէ եւ ընդ ահեկէ՝ ոչ է իմ տալ, այլ որոց պատրաստեալ իցէ։

41 Եւ լուեալ զայն տասանցն, սկսան բարկանալ Յակոբայ եւ Յովհաննու։

42 Եւ Յիսուս կոչեաց զնոսա առ ինքն, եւ ասէ ցնոսա. Գիտէք՝ զի որ յառաջն իշխանքն են հեթանոսաց, տիրեն նոցա. եւ մեծամեծք նոցա, իշխեն նոցա։

43 Ո՛չ նոյնպէս իցէ եւ 'ի ձերում միջի. այլ որ կամիցի 'ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ։

44 Եւ որ կամիցի 'ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ամենեցուն ծառայ։

45 Քանզի եւ Որդի մարդոյ ոչ եկն առնուլ պաշտօն՝ այլ պաշտել, եւ տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց։

46 Եւ գան յԵրիքով. եւ ընդ ելանելն նորա յԵրիքովէ աշակերտօքն եւ բազում ժողովրդով, որդի

37 Եւ նորանք ասացին նորան. Տուր մեզ՝ որ մէկը քո աջ կողմդ եւ միւսը քո ձախ կողմդ նստինք քո փառքումդ։

38 Յիսուս պատասխան տուաւ եւ նորանց ասաց. Չէք գիտում՝ ի՛նչ էք խնդրում. կարօղ էք այն բաժակը խմել՝ որ ես պիտի խմեմ, կամ այն մկրտութենովը մկրտուիլ՝ որ ես պիտի մկրտուիմ։

39 Եւ նորանք ասացին նորան. Կարօղ ենք. եւ Յիսուս նորանց ասաց. Այն բաժակըն որ ես պիտի խմեմ, կը խմէք, եւ այն մկրտութենովն՝ որ ես պիտի մկրտուիմ կը մկրտուիք.

40 Բայց իմ աջ եւ իմ ձախ կողմս նստեցնելն իմս չէ՝ որ տամ. բայց նորանց՝ որ պատրաստուած է։

41 Եւ այն տասներն որ լսեցին, սկսեցին բարկանալ Յակոբին եւ Յօհաննէսին վերայ։

42 Եւ Յիսուս նորանց իրեն մօտ կանչեց, եւ նորանց ասաց. Գիտումէք՝ որ հեթանոսներին իշխան կոչվածները նորանց վերայ տիրումեն, եւ նորանց մեծամեծներն իշխանութիւն են անում նորանց վերայ։

43 Այնպէս չպիտի լինի ձեր միջումդ. բայց ձեզանից ով որ կամենայ մեծ լինել՝ թող ձեզ պաշտօնեայ լինի։

44 Եւ ձեզանից ով որ կամենայ առաջին լինել՝ թող ամէնից ծառայ լինի.

45 Պատճառով՝ Որդին մարդոյ էլ չեկաւ՝ որ իրեն ծառայեն՝ բայց որ ինքը ծառայէ, եւ իրեն անձը շատերի տեղակ փրկութեան գին տայ։

46 Եւ Երիքով եկին. եւ երբոր նա աշակերտներովն ու շատ ժողովուրդներով Երիքովից դուրս ե-

ա Մատթ. Ի. 24։
բ Ղու. ԻԲ. 25։
գ Մատթ. Ի. 26-28։ Մրկ. Թ. 35։ Ղու. Թ. 48։
բ Յովհ. ԺԳ. 14։ Փիլիպ. Բ. 7։
դ Մատթ. Ի. 28։ Ա Տիմ. Բ. 6։ Տիտ. Բ. 14։

Տիմէի Բարտիմէոս կոյր նստէր մու-
րացիկ յանցս ճանապարհին։

47 Իբրեւ լուաւ՝ թէ Յիսուս Նա-
զովրեցի է, սկսաւ աղաղակել եւ
ասել. Որդի Դաւթի Յիսուս՝ ողոր-
մեա՛ց ինձ։
48 Եւ սաստէին նմա բազումք՝ զի
լռեսցէ. եւ նա առաւել եւս աղա-
ղակէր. Որդի Դաւթի ողորմեա՛ց
ինձ։
49 Դադարի առ Յիսուս՝ եւ հրա-
մայեաց կոչել զնա. կոչեն զկոյրն՝
եւ ասեն ցնա. Քաջալերեա՛ց արի՛
կոչէ զքեզ։

50 Եւ նորա ընկեցեալ զձորձս
իւր, յարեաւ եւ եկն առ Յիսուս։
51 Պատասխանի ետ նմա Յիսուս
եւ ասէ. Զի՞նչ կամիս՝ թէ արա-
րից քեզ. ասէ ցնա կոյրն. Ռաբ-
բունի՛ զի բացայց։
52 Եւ Յիսուս ասէ ցնա. Ե՛րթ
հաւատք քո կեցուցին զքեզ. եւ
վաղվաղակի բացաւ, եւ երթայր
զհետ նորա 'ի ճանապարհին։

կաւ, Տիմէի որդի Բարտիմէոս կոյ-
րը ճանապարհին վերայ նստած էր
Է մուրացող։
47 Երբոր լսեց՝ թէ Յիսուս Նա-
զորեցին է, սկսեց աղաղակել եւ
ասել. Յիսո՛ւս որդի Դաւթի՝ ինձ
ողորմեա։
48 Եւ շատ մարդիկ սաստումէին
նորան՝ որ լուռ կենայ. եւ նա էլ
աւելի էր աղաղակում. Որդի Դաւ-
թի՝ ինձ ողորմեա։
49 Յիսուս կանգնեց եւ հրամայեց՝
որ նորան կանչեն. կոյրին կանչե-
ցին՝ եւ նորան ասացին. Սիրտդ
պինդ բռնէ. վե՛ր կաց, քեզ կան-
չում է։
50 Եւ նա իւրեն շորերը ձգեց՝ վեր-
կացաւ եւ Յիսուսին մօտ եկաւ։
51 Յիսուս նորան պատասխան
տուաւ եւ ասաց. Ի՞նչ ես կամե-
նում, որ անեմ քեզ. կոյրը նորան
ասաց. Ռաբբունի՛ որ բացվիմ։
52 Եւ Յիսուս նորան ասաց. Գը-
նա՛ քո հաւատքդ քեզ — ազատեցուց.
եւ շուտով բացվեց, եւ ճանապար-
հումը նորան ետեւէն գնումէր։

## ԳԼ. ԺԱ.

1 Եւ յորժամ մերձ եղեն յԵրու-
սաղէմ 'ի Բեթփագէ եւ 'ի Բե-
թանիա մօտ 'ի լեառն Ձիթենեաց,
առաքէ երկուս յաշակերտաց ան-
տի։
2 Եւ ասէ ցնոսա. Երթայք դուք
'ի գեօղդ՝ որ յանդիման ձեր կայ. եւ
նոյնժամայն իբրեւ մտանէք 'ի նա,
գտանէք յաւանակ մի կապեալ՝ յո-
րոյ վերայ ոչ ոք 'ի մարդկանէ նըս-
տաւ, լուծէք զնա եւ ածէք։

3 Եւ եթէ ոք ասասցէ ձեզ՝ եթէ
Զի՞ լուծանէք զյաւանակդ, ասաս-
ջիք՝ եթէ Տեառն պիտոյ է.
եւ վաղվաղակի առաքեսցէ զնա
այսր։

1 Եւ երբոր Երուսաղէմին մօ-
տեցան, Բեթփագէ եւ Բեթանիա
եկան Ձիթենեաց սարին մօտ՝ այն ա-
շակերտներիցն երկուսը — ուղար-
կեց,
2 Եւ նորանց ասաց. Գնացէք
դուք այդ գիւղդ՝ որ ձեր առաջին
կայ. եւ շուտով երբոր նորան մէջ
մտնէք, մին աւանակ կը գտնէք կա-
պած՝ որ նորա վերայ բնաւ մարդ
չէ նստած. նորան արձակեցէք եւ
բերէք։
3 Եւ թէ որ մինն ասէ ձեզ.
թէ Ինչու համար էք այդ աւանակդ
արձակում, ասացէք՝ թէ Նա ան-
րին պէտք է. եւ շուտով նորան
այստեղ կուղարկէ։

Է Մատթ. Ի. 29, Ղու. ԺԸ. 35, | — Մատթ. Թ. 22, Գլ. Ե. 34, | — Մատթ. ԻԱ. 1, Ղու. ԺԹ. 29, | Յովհ. ԺԲ. 14.

4 Չոգան, եւ գտին զյաւանակն կապեալ առ դուրս արտաքոյ 'ի փողոցի անդ, եւ լուծին զնա։

5 Եւ ոմանք յորոց անդ կային, ասեն ցնոսա. Զի՞ գործէք, զի՞ լուծանէք զյաւանակդ։

6 Եւ նոքա ասեն ցնոսա, որպէս ասացն Յիսուս. եւ թոյլ տուան, նոցա։

7 Ածին զյաւանակն առ Յիսուս. եւ արկանեն 'ի վերայ նորա հանդերձս, եւ նստաւ 'ի վերայ նորա։

8 Եւ բազումք զհանդերձս իւրեանց տարածանէին 'ի վերայ ճանապարհին, եւ այլք ոստս 'ի ծառոց հատանէին եւ արկանէին զճանապարհաւն։

9 Եւ որ առաջին եւ զկնի երթային, աղաղակէին, եւ ասէին. Ովսաննայ Բարձրելոյն։

10 Օրհնեալ որ գալոց յանուն Տեառն. օրհնեալ թագաւորութիւնդ եկեալ հօր մերոյ Դաւթի. խաղաղութիւն յերկինս՝ եւ փառք 'ի բարձունս։

11 Եւ եմուտ Յիսուս յԵրուսաղէմ 'ի տաճարն, եւ հայեցաւ շուրջ զամենեքումբք. եւ զի էր երեկոյացեալ ժամն, ել 'ի Բեթանիա երկոտասանիւքն հանդերձ։

12 Եւ 'ի վաղիւ անդր մինչդեռ ելանէին 'ի Բեթանիայ, քաղցեաւ։

13 Եւ տեսեալ թզենի մի 'ի բացուստ տերեւալից, եկն՝ թէ գտանիցէ ինչ 'ի նմա. եւ իբրեւ եկն 'ի նա՝ ոչինչ եգիտ, բայց միայն տերեւ. զի ոչ իսկ էր ժամանակ թզոյ։

14 Պատասխանի ետ եւ ասէ ցնա. Մի եւս ոք յաւիտեան 'ի քէն պտ-

4 Գնացին եւ աւանակը գտին դուրսը փողոցին մէջ դրանների առաջին կապած, եւ նորան արձակեցին։

5 Եւ մին քանիսը նորանցից՝ որ այնտեղ կանգնած էին՝ ասացին նորանց. Ի՞նչ էք անում. ինչու համար էք արձակում այդ աւանակը։

6 Եւ նորանք ասացին նորանց, ինչպէս որ Յիսուս ասաց. եւ թոյլ տուին նորանց։

7 Աւանակը Յիսուսին մօտ բերին. եւ նորա վերայ չորեր ձգեցին, եւ նորան վերայ նստեց։

8 Եւ շատ մարդիկ իրենց չորերը ճանապարհին վերայ փռումէին, եւ ուրիշները ծառերիցը ճղներ էին կտրում եւ ճանապարհին վերայ բ փռում։

9 Եւ նորանք որ առաջին եւ ետեւէն գնումէին՝ աղաղակումէին եւ ասում. Ովսաննայ գ Բարձրելոյն.

10 Օրհնեալ է՝ որ Տէրին անունովը գալիս է. օրհնեալ է մեր Դաւիթ հօր եկած թագաւորութիւնը. խաղաղութիւն երկնքումը՝ եւ փառք 'ի բարձունս։

11 Եւ Յիսուս մտաւ Երուսաղէմ՝ տաճարին դ մէջ. եւ չորս կողմով ամէն բանի մտիկ տուաւ. եւ որովհետեւ իրիկվան ժամանակ էր, դուրս գնաց Բեթանիա՝ աշակերտներովն հետ։

12 Եւ վաղվան՝ օրն երբոր Բեթանիայիցը դուրս էին գալիս, նա ե սովեց.

13 Եւ հեռուանց մին թզի ծառ տեսաւ տերեւով շլիքըն. եւ մօտ եկաւ՝ որ նորա վերայ մին բան գտանէ. եւ երբոր եկաւ՝ բնաւ մին բան չգտաւ նորանում՝ բայց միայն տերեւ. ինչու որ դեռ թզի ժամանակը չէր.

14 Պատասխան տուաւ եւ նորան ասաց. Մինչ քեզանից էլ յաւի-

բ Մատթ. ԻԱ. 8.
գ Սաղ. ՃԺԸ. 26.
ՃԺԸ. 1.
դ Մատթ. ԻԱ.
12.
ե Մատթ. ԻԱ. 18.
զ Մատթ. ԻԱ. 19.

տուղ կերիցէ. եւ լսէին աշակերտքն նորա:

15 Գան յԵրուսաղէմ. եւ մտեալ 'ի տաճարն՝ սկսաւ հանել զվաճառականսն եւ զգնօղս՝ որ էին 'ի տաճարին. եւ զսեղանս հատավաճառացն ցրուեաց, եւ զաթոռս աղաւնեվաճառացն կործանեաց:

16 Եւ ոչ թողոյր՝ եթէ ոք անօթ ինչ անցուցանիցէ ընդ տաճարն:

17 Եւ ուսուցանէր եւ ասէր ցնոսա. Գրեալ է՝ Տուն իմ տուն աղօթից կոչեսցի ամենայն հեթանոսաց, եւ դուք արարէք զդա այր աւազակաց:

18 Լուան Քահանայապետքն եւ դպիրք. եւ խնդրէին՝ թէ որպէս կորուսցեն զնա, բայց երկնչէին 'ի նմանէ. զի ամենայն ժողովուրդն զարմացեալ էր ընդ ուսումն նորա:

19 Եւ իբրեւ երեկոյ լինէր՝ արտաքոյ քան զքաղաքն ելանէին:

20 Եւ մինչդեռ այգուցն անցանէին, տեսին զթզենին ցամաքեալ յարմատոց:

21 Յիշեաց Պետրոս՝ եւ ասէ ցնա. Ռաբբի՝ ահաւասիկ թզենին զոր անիծեր, ցամաքեցաւ:

22 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Եթէ ունիցիք զհաւատսն Աստուծոյ,

23 Ամէն ասեմ ձեզ. Որ ոք ասիցէ լերինս այսմիկ՝ Բարձիր եւ անկիր 'ի ծով, եւ ոչ երկմտիցէ 'ի սրտի իւրում, այլ հաւատայցէ՝ թէ զոր ասէ լինի, եղիցի նմա զոր ինչ եւ ասիցէ:

24 Վասն այսորիկ ասեմ ձեզ. Զամենայն ինչ՝ վասն որոյ աղօթս

անկէ պտուղ չուտէ. եւ նորա աշակերտները լսեցին:

15 Եկին ե Երուսաղէմ. եւ տաճարը մտաւ՝ սկսեց դուրս հանել վաճառականներին ու գնօղները՝ որ տաճարումն էին. եւ ըստակ փոխօղներին սեղանները ցրւեց, եւ աղաւնի ծախօղներին աթոռները կործանեց.

16 Եւ չէր թողում՝ որ մէկը մին անօթ տաճարին մէջէն անցուցանէ,

17 Եւ սովորցնումէր ու նորանց ասում. Գրված է թէ, Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչվի ամէն հեթանոսներին զ համար. եւ դուք աւազակների բոյն արիք է դարան:

18 Քահանայապետներն ու կարգօղները լսեցին եւ խնդրումէին՝ թէ ինչպէս կորցընեն ը նորան. բայց վախենումէին նորանից. ինչու որ՝ ամէն ժողովուրդը նորա վարդապետութեան վերայ զարմացել թ էին:

19 Եւ երբոր իրիկուն էր լինում՝ քաղաքէն դուրս էին գնում:

20 Եւ առաւօտանց երբոր նորա մօտովն անցնումէին՝ տեսին այն թզենի ծառն արմատից ժ չորացած:

21 Պետրոս միտքը բերաւ՝ եւ նորան ասաց. Ռաբբի՝ ահա այն թզենի ծառն որ անիծեցիր՝ չորացաւ:

22 Յիսուս պատասխան տուաւ եւ նորանց ասաց. Թէ որ Աստուծոյ հաւատքն ունենաք,

23 ի ճշմարիտ ասումեմ ձեզ, թէ Ով որ այս սարին ասէ՝ թէ Վեր կաց եւ ծովն ընկիր, եւ իւրեան սրտումը չի երկմտի, բայց հաւատայ՝ թէ նա որ ասումէ կըլինի, նորան կըլինի ինչ որ ի կասէ:

24 Որահամար ասումեմ ձեզ՝ թէ Ամէն բան, որ նորա համար ա-

ե Մատթ. ԻԱ. 12. Ղու. ԺԹ. 45. Յովհ. Բ. 14.
զ Եսայ. ԾԶ. 7.
է Երեմ. Է. 11.
ը Մատթ. ԻԱ. 45, 46. Ղու. ԺԹ. 47.
թ Մատթ. Է. 28. Գդ. Ա. 22. Ղու. Դ. 32.
ժ Մատթ. ԻԱ. 19.
ի Մատթ. ԺԷ. 20. ԻԱ. 21. Ղու. ԺԷ. 6.

աղօթելով խնդրիցէք, եւ հաւատայցէք թէ առնուցուք, եղիցի ձեզ։

25 Եւ յորժամ յաղօթս կայցէք, թողուցուք, եթէ ունիցիք ինչ զումեքէ. զի եւ Հայրն ձեր՝ որ յերկինս է, թողցէ ձեզ զյանցանս ձեր։

26 Զի եթէ դուք՝ ոչ թողուցուք, եւ ոչ Հայրն ձեր որ յերկինս է՝ թողցէ ձեզ զյանցանս ձեր։

27 Գան միւսանգամ յԵրուսաղէմ. եւ մինչդեռ 'ի տաճարի անդ զգնայր, գան առ նա քահանայապետքն եւ դպիրք եւ ծերք։

28 Եւ ասեն ցնա. Որով իշխանութեամբ առնես զայդ, եւ ով ետ քեզ զիշխանութիւնդ զայդ։

29 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Հարցից եւ ես զձեզ բան մի, տուք ինձ պատասխանի. եւ ես ասացից ձեզ՝ որով իշխանութեամբ առնեմ զայս։

30 Մկրտութիւնն Յովհաննու յերկնից էր՝ եթէ 'ի մարդկանէ, տուք ինձ պատասխանի։

31 Խորհէին ընդ միմեանս՝ եւ ասէին. Եթէ ասեմք՝ եթէ Յերկնից, ասէ ցմեզ. Իսկ ընդէր ոչ հաւատացէք նմա։

32 Այլ եթէ ասեմք՝ 'Ի մարդկանէ, երկնչիմք 'ի ժողովրդենէն. զի ամենեքին գիտէին զՅովհաննէս՝ թէ մարգարէ էր։

33 Պատասխանի ետուն եւ ասեն ցՅիսուս. Ոչ գիտեմք։ Եւ Յիսուս ետ նոցա պատասխանի եւ ասէ. Եւ ոչ ես ասեմ ձեզ, որով իշխանութեամբ առնեմ զայս։

աղօթք անելով խնդրէք, եւ հաւատացէք՝ թէ կառնէք, նա կը լինի դ ձեզ։

25 Եւ որ ժամանակ աղօթք անէք, թողութիւն տուէք՝ թէ որ մէկիցը մէկ բան ե ունենաք. որ ձեր Հայրն էլ՝ որ երկնքումն է՝ ձեր մեղքը թողէ ձեզ.

26 Պատճառնոր՝ եթէ դուք թողութիւն չտաք, ձեր հայրն էլ՝ որ երկնքումն է, ձեր մեղքը չի թողիլ զ ձեզ։

27 Դարձեալ Երուսաղէմ եկին. եւ գնա քանի որ նա տաճարումը ման էր գալիս, քահանայապետներն ու կարգացողները եւ ծերերը նորան մօտ է եկին,

28 Եւ նորան ասացին. Ի՞նչ իշխանութենով ես անում դա՝ եւ ով տուաւ քեզ այդ իշխանութիւնդ։

29 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց նորանց, Ես էլ ձեզանից մէն բան կը հարցընեմ. ինձ պատասխան տուէք, եւ ես էլ կասեմ ձեզ՝ թէ ինչ իշխանութենով եմ անում աս։

30 Յօհաննէսի մկրտութիւնն երկնքիցն էր թէ մարդկանցիցը. ինձ պատասխան տուէք։

31 Իրար հետ միտք էին անում եւ ասում. Եթէ ասենք՝ թէ Երկնքիցը, մեզ կասէ. Ապա ինչու չըհաւատացիք նորան.

32 Բայց եթէ ասենք՝ մարդկանցից, ժողովրդիցը վախենումենք. ինչու որ՝ ամէնքը ճանաչումէին Յօհաննէսին՝ թէ մարգարէ ը էր։

33 Պատասխան տուին եւ Յիսուսին ասացին. Չենք գիտում։ Եւ Յիսուս նորանց պատասխան տուաւ եւ ասաց. Ես էլ չեմ ասիլ ձեզ, թէ ինչ իշխանութենով եմ անում աս։

դ Մատթ. Է. 7. Ղու. ԺԱ. 9. Յովհ. ԺԴ. 13. ԺԵ. 7. ԺԶ. 24. Յակ. Ա. 5. 6.
ե Մատթ. Զ. 14. Կող. Գ. 13.
զ Մատթ. ԺԸ. 35.
է Մատթ. ԻԱ. 23. Ղու. Ի. 1.
ը Մատթ. Գ. 5. ԺԴ. 5. Մարկ. Զ. 20.

—

## ԳԼ. ԺԲ

1 Եւ սկսաւ խօսել ընդ նոսա ա-
ռակօք՝ եւ ասել. Այր մի տնկեաց
այգի, եւ ած շուրջ զնովաւ ցանգ,
եւ գուր հնձանի փորեաց, եւ շինեաց
աշտարակ. եւ ետ զնա ցմշակս,
եւ գնաց 'ի տար աշխարհ։

2 Եւ առաքեաց առ մշակսն 'ի
ժամանակին ծառայ մի, զի 'ի մշակաց
անտի առցէ 'ի պտղոյ այգւոյն։
3 Եւ նոցա կալեալ՝ զան հարին
զնա, եւ արձակեցին ունայն։

4 Դարձեալ առաքեաց առ նոսա
այլ ծառայ, եւ զնա կառափնատե-
ցին՝ եւ արձակեցին անարգեալ։
5 Եւ դարձեալ այլ առաքեաց,
եւ զնա սպանին. եւ զբազումս
այլս՝ զոմանս հարկանէին եւ զոմանս
սպանանէին։
6 Ապա որդի մի էր իւր սիրելի,
զնա առաքեաց առ նոսա յետոյ, եւ
ասէ. Թերեւս ամաչեսցեն յորդւոյ
աստի իմմէ։
7 Իսկ մշակքն իբրեւ տեսին զնա
թէ գայ՝ ասեն ցմիմեանս. Սա է ժա-
ռանգն, եկայք սպանցուք զսա, եւ
մեր լիցի ժառանգութիւնն։

8 Եւ կալեալ զնա սպանին, եւ
հանին արտաքոյ այգւոյն։
9 Արդ՝ զինչ արասցէ տէր այգ-
ւոյն. եկեսցէ եւ կորուսցէ զմշակսն,
եւ տացէ զայգին 'ի ձեռս այլոց։
10 Եւ ոչ զգիրն զայն իցէ ընթեր-
ցեալ ձեր՝ թէ Զվէմն, զոր անար-
գեցին շինողքն, նա եղեւ գլուխ
անկեան։
11 'Ի Տեառնէ եղեւ այս, եւ է
սքանչելի յաչս մեր։
12 Եւ խնդրէին զնա ունել, եւ
երկեան 'ի ժողովրդենէ անտի, զի
գիտացին թէ առ նոսա ասաց զա-

1 Եւ սկսեց նորանց հետ առակ-
ներով խօսիլ՝ եւ ասել. Մին մարդ
այգի տնկեց, եւ նորա չորս կող-
մերը պարիսպ քաշեց, եւ գուբ
հնձանի փորեց, եւ աշտարակ շի-
նեց՝ եւ նորան մշակներին տուաւ՝
եւ հեռու աշխարհք = գնաց։
2 Եւ ժամանակով մշակների մօ-
տըն մին ծառայ ուղարկեց որ այն
մշակներիցն այգոյ պտուղիցն առնէ։
3 Եւ նորանք բռնեցին՝ նորան
ծեծեցին, եւ դատարկ ճանապարհ
ձգեցին։
4 Դարձեալ ուրիշ ծառայ ուղար-
կեց. եւ նորան գլուխը պատառեցին՝
եւ թուքումուր տալով արձակեցին։
5 Դարձեալ ուրիշը ուղարկեց՝ եւ
նորան սպանեցին. եւ էլ շատ ու-
րիշները, մին քանիսը ծեծումէին
եւ մին քանիսին սպանում։
6 Ապա մին սիրելի որդի ունէր՝
յետոյ նորան ուղարկեց նորանց
մօտ, եւ ասաց. Լինի որ այս իմ
որդույս ամաչեն։
7 Բայց մշակները երբոր տեսին
նորան՝ որ գալիս էր, իրար ասա-
ցին. Սա է ժառանգը. եկէք սո-
րան սպանենք՝ եւ ժառանգութիւնը
մեզ լինի։
8 Եւ նորան բռնեցին, սպանե-
ցին եւ այգուցը դուրս հանեցին։
9 Ապա այգոյ տէրն ինչ կանէ.
կըգայ եւ այս մշակներս կըկորցնէ,
եւ այգին ուրիշներին ձեռքը կըտայ։
10 Եւ դուք չէք կարդացել այն
գրածը՝ թէ Այն քարն՝ որ շինող-
ներն անարգեցին՝ նա էլաւ ան-
կիւնի ÷ գլուխ։
11 Տէրիցն էլաւ այս բանս, եւ
մեր աչքերին առաջին զարմանալի է։
12 Եւ կամենում էին՝ որ նորան
բռնեն, եւ ժողովրդից ‡ վախե-
ցան. ինչու որ՝ իմացան՝ թէ այն ա-

= Մատթ. ԻԱ. 33. Ղու. Ի. 9. | ÷ Սաղ. ՃԺԸ. 22. ‡ Մատթ. ԻԱ. 45, 46. Գլ. ԺԱ. 18. Յովհ. Է. 25. 30. 44.

առակն ․ եւ թողին զնա եւ գնացին ։

13 Եւ առաքեն առ նա զոմանս ՚ի փարիսեցւոց անտի՝ եւ ՚ի Հերովդիանոսաց , զի զնա որսասցեն բանիւ ։

14 Եւ նոքա եկեալ հարցանէին զնա նենգութեամբ՝ եւ ասէին ․ Վարդապետ՝ գիտեմք զի ճշմարիտ ես , եւ ոչ ինչ փոյթ է քեզ զումեքէ ․ զի ոչ հայիս յերեսս մարդկան , այլ ճշմարտութեամբ զճանապարհն Աստուծոյ ուսուցանես ․ արդ՝ ասա մեզ , Արժան է հարկս տալ կայսեր՝ թէ ոչ ․ տացուք՝ եթէ ոչ տացուք ։

15 Եւ Յիսուս գիտաց զկեղծաւորութիւն նոցա , ասէ ցնոսա ․ Զի՞ փորձէք զիս կեղծաւորք ․ բերէք ինձ դահեկան մի՝ զի տեսից ։

16 Եւ նոքա բերին ․ եւ ասէ ցնոսա ․ Ո՞յր է պատկերս այս կամ գիր ․ եւ նոքա ասեն ցնա ․ Կայսեր ։

17 Պատասխանի ետ Յիսուս , եւ ասէ ցնոսա ․ Երթայք տուք զկայսերն՝ կայսեր , եւ զԱստուծոյն՝ Աստուծոյ ․ եւ զարմացան ընդ նա ։

18 Գան առ նա Սադուկեցիքն որ ասեն՝ թէ Չիք յարութիւն ․ հարցանէին զնա եւ ասէին ։

19 Վարդապետ՝ Մովսէս գրեաց մեզ ․ եթէ ուրուք եղբայր մեռանիցի եւ թողուցու կին՝ եւ որդի ոչ թողուցու ․ զի առցէ եղբայր նորա զկին նորա , եւ յարուսցէ զաւակ եղբօր իւրում ։

20 Արդ՝ եղբարք եօթն էին առ մեզ ․ առաջինն առ կին՝ եւ մեռաւ , եւ ոչ եթող զաւակ ։

21 Եւ երկրորդն առ զնոյն՝ եւ մեռաւ , եւ ոչ նա եթող զաւակ ․ նոյնպէս եւ երրորդն առ զնոյն ։

առակըն իրենց համար ասաց ․ եւ նորան թողին եւ գնացին ։

13 Եւ փարիսեցիներից ու Հերովդէսականներից մէկ քանի հոգի նորա մօտ ուղարկեցին՝ որ խօսքով որսան դ նորան ։

14 Եւ նորանք եկին՝ հարցնում էին նորան խաբեբայութիւնով եւ ասում ․ Վարդապետ՝ գիտեմք՝ որ ճշմարիտ ես , եւ բնաւ մէկից հոգս չունիս՝ եւ մարդոց երեսպաշտութիւն չես անում , բայց Աստուծոյ ճանապարհը ճշմարտութիւնով ես սովորցնում ․ ապա ասա մեզ , Կայսերին հարկ տալ արժան է՝ թէ չէ՝ տանք՝ թէ չտանք ։

15 Եւ Յիսուս իմացաւ նորանց կեղծաւորութիւնը , նորանց ասաց ․ Ինչու էք փորձում ինձ՝ կեղծաւորներ ․ մին դահեկան բերէք ինձ՝ որ տեսնեմ ։

16 Եւ նորանք բերին ․ եւ նորանց ասաց ․ Այս պատկերս կամ գիրս ումն է ․ եւ նորանք ասացին նորան՝ Կայսերինը ։

17 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց նորանց ․ Տուէք Կայսերինը կայսերին՝ եւ Աստուծոյինը՝ Աստուծոյն ․ եւ զարմացան նորան վերայ ։

18 Նորան մօտ եկին ե սադուկեցիքն որ ասում էին՝ թէ Յարութիւն զ չկայ ․ նորան հարցնում էին եւ ասում ․

19 Վարդապետ՝ Մովսէս մեզ համար է գրեց ․ թէ որ մէկի եղբայրը մեռնի եւ կինը թողէ ու որդի չը թողէ՝ թող նորա եղբայրը նորան կինըն առնէ , եւ իրեն եղբօրը համար զաւակ վերկացնէ ։

20 Արդ մեզ մօտ եօթն եղբարք կային ․ առաջինը կին առաւ՝ եւ մեռաւ , եւ զաւակ չթողեց ․

21 Եւ երկրորդը նորան առաւ՝ եւ մեռաւ , եւ նա էլ զաւակ չթողեց ․ այնպէս էլ երրորդը նորան առաւ ։

դ Մատթ . ԻԲ . 15 ։ Ղու . Ի . 20 ։ | ե Մատթ . ԻԲ . 23 ։ Ղու . Ի . 27 ։ | զ Գործ . ԻԳ . 8 ։ | է Բ Օրին . ԻԵ . 5 ։

22 Եւ եօթնեքեան իսկ. եւ ոչ
թողին զաւակ. յետ ամենեցուն
մեռաւ եւ կինն:
23 Արդ՝ 'ի յարութեանն յորժամ
յառնիցեն, ո՞յր 'ի նոցանէ լինիցի
կինն. զի եօթնեքեան կալան զնա
կին:
24 Պատասխանի ետ Յիսուս եւ ա-
սէ ցնոսա. Ո՞չ վասն այդորիկ իսկ
մոլորեալ էք. զի ոչ գիտէք զգիրս՝
եւ ոչ զզօրութիւնն Աստուծոյ:

25 Զի յորժամ 'ի մեռելոց յարի-
ցեն, ոչ արք կանայս առնեն, եւ
ոչ կանայք արանց լինին. այլ իբրեւ
զհրեշտակս լինին՝ որ յերկինս են:

26 Այլ վասն յարութեան մեռելոց
զի յառնեն, ոչ իցէ ընթերցեալ ձեր
'ի գիրսն Մովսէսի 'ի մորենւոջն.
որպէս ասաց ցնա Աստուած. Ես
եմ ասէ՝ Աստուած Աբրահամու,
Աստուած Իսահակայ, եւ Աստուած
Յակովբայ:

27 Եւ ոչ է Աստուած՞ մեռելոց՝
այլ կենդանեաց. եւ արդ՝ դուք
յոյժ մոլորեալ էք:
28 Եւ մատուցեալ մի ոմն 'ի դպրա-
ցն՝ լսէր նոցա մինչ վիճէին.
իբրեւ ետես եթէ բարւոք ետ նոցա
զպատասխանին, եհարց զնա եւ
ասէ. Ո՞ր պատուիրան է առաջին:

29 Եւ Յիսուս ասէ ցնա. Առաջին
քան զամենայն՝ Լո՛ւր Իսրայէլ՝ Տէր
Աստուած մեր՝ Տէր մի է:

30 Եւ սիրեսցես զՏէր Աստուած
քո յամենայն սրտէ քումմէ, եւ
յամենայն անձնէ քումմէ, եւ յա-
մենայն մտաց քոց, եւ յամենայն
զօրութենէ քումմէ. այս է առաջին
պատուիրան:
31 Եւ երկրորդն նման սմին. Սի-

22 Եւ իսկ եօթն էլ՝ եւ զաւակ
չըթողին. եւ ամէնիցն ետեւ կինն
էլ մեռաւ:
23 Ապա յարութեան ժամանակին՝
երբոր յարութիւն կառնեն, նորան-
ցից որին կըլինի կին. ինչու որ՝
եօթն էլ նորան կին առին:
24 Յիսուս պատասխան տուաւ եւ
նորանց ասաց. Չէ՞ որ ճիշդ դրա
համար մոլորված էք՝ որ ոչ գիրքն
էք գիտում եւ ոչ Աստուծոյ զօրու-
թիւնը.
25 Պատճառն որ՝ երբոր մեռելների
միջից յարութիւն կառնեն՝ ոչ մար-
դիք կին կառնեն՝ եւ ոչ կանայք մար-
դոյ կը գնան՝ բայց հրեշտակների
պէս կըլինին՝ որ երկնքումն ը են:
26 Միայն թէ մեռելների յարու-
թեան համար՝ թէ յարութիւն պի-
տի առնեն, դուք չէ՞ք կարդացել
Մովսէսի գրքին մէջ՝ թէ Աստուած
ինչպէս մորենոյն մէջ նորան ասաց.
Ես եմ Աբրահամու Աստուածը, եւ
Իսահակայ Աստուածը, եւ Յակո-
բայ բ Աստուածը:
27 Եւ Աստուած՝ մեռելների Աս-
տուած չէ՞, բայց կենդանիներին. ու-
րեմն դուք շատ մոլորված էք:
28 Եւ կարդացողներիցը մինը մօտ
եկաւ՝ նորանց լսումէր՝ գիտէ քանի որ
հակառակումէին. երբոր տեսաւ թէ
լաւ պատասխան տուաւ նորանց՝ նո-
րան հարցրուց եւ ասաց. Առաջին
պատուիրանքն որն ե է:
29 Եւ Յիսուս նորան ասաց. Ա-
մէնից առաջինը սա է՝ Լսէ՛ Իս-
րայէլ՝ մեր Տէր Աստուածը մին
Տէր ե է.
30 Եւ սիրէ՛ քո Տէր Աստուա-
ծդ՝ քո ամէն սրտովդ, եւ քո ա-
մէն անձնովդ, եւ քո ամէն մտքովդ,
եւ քո ամէն զօրութենովդ. սա է
առաջին պատուիրանքը:
31 Եւ զերկրորդը սորան նման.

ա Ա Կորնթ. ԺԵ. 42. 49. 52.
բ Ելից. Գ. 6.
գ Մատթ. ԻԲ. 35.
դ Բ Օրէն. Զ. 4.
Ղուկ. Ժ. 27.

սիրեսցես զընկեր քո՝ իբրեւ զանձն
քո. մեծ քան զսոսա այլ պատուի-
րան ոչ գոյ։
32 Եւ ասէ ցնա դպիրն. Բարւոք
է Վարդապետ. ճշմարտութեամբ
ասացեր՝ թէ մի է Աստուած, եւ ոչ
գոյ այլ բաց 'ի նմանէ։
33 Եւ սիրել զնա յամենայն սրտէ
եւ յամենայն զօրութենէ եւ յամե-
նայն մտաց, եւ սիրել զընկերն
իբրեւ զանձն, առաւել է քան զող-
ջակէզս եւ զզոհս։
34 Եւ տեսեալ Յիսուսի թէ իմաս-
տութեամբ ետ զպատասխանին՝ ա-
սէ ցնա. Ոչ հեռի յարքայութենէ
Աստուծոյ. եւ ոչ եւս ոք իշխէր
ինչ հարցանել զնա։
35 Պատասխանի ետ Յիսուս եւ
ասէ, մինչ ուսուցանէր 'ի տաճա-
րին. Զիարդ ասեն դպիրքն, եթէ
Քրիստոս որդի Դաւթի է։
36 Եւ ինքն Դաւիթ Հոգւովն
Սրբով ասէ. Ասաց Տէր ցՏէր իմ,
Նիստ ընդ աջմէ իմմէ՝ մինչեւ եդից
զթշնամիս քո պատուանդան ոտից
քոց։
37 Արդ՝ եթէ ինքն իսկ Դաւիթ
զնա Տէր կոչէ՝ զիարդ իցէ որդի
նորա. եւ բազում ժողովուրդ լսէր
նմա քաղցրութեամբ։
38 Եւ ասէր ուսուցանելով 'ի վար-
դապետութեան իւրում. Զգոյշ լե-
րուք 'ի դպրաց անտի, որ կամին
'ի հանդերձս երկայնս շրջել. զո-
ղջոյնս խնդրել 'ի հրապարակս,
39 Եւ զնախաթոռս 'ի ժողովուր-
դս, եւ զգահագլուխս յընթրիս։

Քու ընկերդ քու անձիդ պէս սիրէ.
ասոնցմէ աւելի մեծ ուրիշ պատու-
իրանք ւ չկայ։
32 Եւ կարգացողը նորան ասաց.
Լաւ է Վարդապետ. ճշմարտութե-
նով ասացիր՝ թէ մին Աստուած է,
եւ նորանից զատ ուրիշ ֆ չկայ։
33 Եւ նորան սիրելը ամէն սրտով
եւ ամէն զօրութենով եւ ամէն միտ-
քով, եւ ընկերին անձին պէս սի-
րելը՝ աւելի է քանթէ ողջակէզներին
ու զոհերը։
34 Եւ Յիսուս որ տեսաւ՝ թէ ի-
մաստութենով պատասխան տուաւ՝
նորան ասաց. Դու Աստուծոյ արքա-
յութենիցը հեռու չես. Եւ նորանից
ետեւ էլ մինը չէր համարձակվում՝
որ նորան մին բան ք հարցնէ։
35 Յիսուս պատասխան տուաւ եւ
ասաց, գերքանի որ տաճարումը
սովորցնումէր. Կարգացողները
ինչպէս են ասում՝ թէ Քրիստոսը
Դաւթի որդին հ է։
36 Եւ ինքը Դաւիթ Սուրբ Հո-
գովը յ ասումէ. Տէրն իմ Տէրիս
ասաց. Իմ աջ կողմս նստէ՝ մինչեւ
քո թշնամիներդ քո ոտացդ կո-
խելիք ղ դնեմ։
37 Ապա՝ թէ որ իսկ ինքը Դաւիթ
նորան Տէր է կոչում՝ ինչպէս
նորան որդին կըլինի. եւ շատ ժո-
ղովուրդներ քաղցրութենով լսու-
մէին նորան։
38 Եւ իրեն վարդապետութեան
մէջ սովրցնելով ֆ ասումէր. Զգ-
գոյշ կացէք կարգացողներիցն՝ որ կա-
մենումէն պայծառ հագուստներով
չուռ ճ գալ, եւ բաց փողոցներումն
առաջին բարեւները յ խնդրել,
39 Եւ ժողովարաններին մէջ ա-
ռաջին աթոռները, եւ սեղան նըս-
տելու ժամանակը գլխաւոր տեղերը,

ւ Ղւ. ԺԹ. 18. Մատթ. ԻԲ. 39. Հռովմ. ԺԳ. 9. Գաղ. Ե. 14. Յակ. Բ. 8.
ֆ Բ Օրին. Դ. 39. Եսայ. ԽԵ. 6. 14. ԽԶ. 9.
ֆ Ա Թագ. ԺԵ. 22. Ովսէ. Զ. 6. Միք. Զ. 6, 7. 8.
ք Մատթ. ԻԲ. 46.
հ Մատթ. ԻԲ. 41. Ղու. Ի. 41.
յ Բ Թագ. ԻԳ. 2.
ղ Սաղ. ՃԺ. 1.
ֆ Գլ. Դ. 2.
ճ Մատթ. ԻԳ. 2. Ղու. Ի. 46.
յ Ղու. ԺԱ. 43.

40 Որ ուտեն զտունս այրեաց, պատճառանօք յերկարեալ զաղօթս, զի աւելի եւս դատաստան ընկալցին։
41 Նստէր Յիսուս ընդդէմ գանձանակին, տեսանէր թէ զիարդ ժողովուրդն արկանէր պղինձ 'ի գանձանակն. եւ բազում մեծատունք արկին բազում ինչ։
42 Եկն այրի մի՝ եւ արկ երկուս լումայս, որ է նաքարակիտ մի։
43 Եւ կոչեցեալ առ ինքն զաշակերտսն, ասէ ցնոսա. Ամէն ասեմ ձեզ՝ զի այրին այն աղքատացեալ շատ արկ քան զամենեսեան՝ որ արկին 'ի գանձանակն։
44 Քանզի ամենեքին յաւելորդաց իւրեանց արկին. այլ նա 'ի չքաւորութենէ իւրմէ՝ զամենայն ինչ զոր ունէր՝ արկ զողջ չափ զկեանս իւր։

40 Որ որբեւէրիներին տուները
ն ուտեն, եւ պատճառներով երկար աղօթք են անում՝ որ էլ աւելի դատապարտութիւն առնեն։
41 Յիսուս գանձանակի դիմացը կանգնած էր՝ տեսնումէր թէ ժողովուրդն ինչպէս էր պղինձ ձգում ւ գանձանակը. եւ շատ հարուստներ շատ բան = ձգեցին։
42 Մին որբեւէրի կին եկաւ՝ եւ երկու լումայ ձգեց, որ մին նաքարակիտ է։
43 Եւ իրեն աշակերտներին իրեն մօտ կանչեց, եւ նոցանց ասաց. ճշմարիտն ասումեմ ձեզ՝ թէ այն խղճալի որբեւէրին շատ ձգեց քան թէ այն ամէնքն՝ որ գանձանակը ւ ձգեցին,
44 Պատճառնոր ամէնքն իրենց աւելցածներիցը ձգեցին. բայց նա իրեն չքաւորութենիցն ամէն ինչ որ ունէր՝ իրեն կեանքի ամէն ապրուստը ¬ ձգեց։

## ԳԼ. ԺԳ

1 Եւ յելանելն նորա 'ի տաճարէ անտի, ասէ ցնա մի յաշակերտացն նորա. Վարդապետ, տես որպիսի են քարինքս, եւ որպիսի շինուածքս։
2 Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. Տեսանես զայդ ամենայն շինուածս. ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ թողցի այդր քար 'ի քարի վերայ որ ոչ քակեսցի։
3 Եւ մինչ նստէր նա 'ի լերինն Ձիթենեաց յանդիման տաճարին, հարցանէին ցնա առանձինն Պետրոս եւ Յակոբոս եւ Յովհաննէս եւ Անդրէաս։
4 Ասա մեզ՝ Երբ լինիցի այդ. եւ զինչ նշան է՝ յորժամ կատարելոց իցէ այդ ամենայն։
5 Պատասխանի ետ Յիսուս, եւ

1 Եւ տաճարիցն որ դուրս գնաց՝ նորա աշակերտներիցը մինը նորան ասաց. Վարդապետ, տես այս ինչպէսի քարեր են, եւ ինչպէսի շինուածներ = են։
2 Յիսուս նորան պատասխան տուաւ եւ ասաց. Տեսնումես այդ ամէն շինուածներդ. ճշմարիտն ասումեմ ձեզ. որ այստեղ քար քարի վերայ չի թողվի՝ որ ÷ չքանդվի։
3 Եւ երբոր նա Ձիթենեաց սարին վերայ նստած էր տաճարին դիմացը, Պետրոսն ու Յակոբոսը եւ Յօհաննէսն ու Անդրէասն առանձին հարցնումէին նորան.
4 Ասա մեզ. այդ բաները Երբ կլինին եւ նշանն ինչ է երբոր այդ ամէն բաներդ պիտի ÷ կատարվին։
5 Յիսուս պատասխան տուաւ եւ

ն Մատթ. ԻԳ. 14։
ւ Ղուկ. ԻԱ. 1։
* Դ Թագ. ԺԲ. 9։
ւ Բ Կորնթ. Ը. 12։
¬ Բ Օրին. ԻԴ. 6։
Ա Յովհ. Գ. 17։
= Մատթ. ԻԴ. 1։
Ղուկ. ԻԱ. 5։
÷ Ղուկ. ԺԹ. 44։
÷ Մատթ. ԻԴ. 3։
Ղուկ. ԻԱ. 7։

ասէ ցնոսա. Զգոյշ կացէք, մի ոք
զձեզ խաբեսցէ։
6 Զի բազումք եկեսցեն յանուն
իմ, եւ ասիցեն՝ թէ Ես եմ Քրիս-
տոսն. եւ զբազումս մոլորեցուս-
ցեն։
7 Այլ յորժամ լսիցէք պատե-
րազմունս եւ համբաւս պատերազ-
մաց՝ մի խռովիցիք, զի պարտ է
լինել. բայց չեւ է կատարածն։
8 Զի յարիցէ ազգ յազգի վերայ,
եւ թագաւորութիւն ՚ի թագաւո-
րութեան վերայ. եւ եղիցին շարժ-
մունք ՚ի տեղիս տեղիս, սովք եւ
սրածութիւնք եւ խռովութիւնք.
այլ այն ամենայն սկիզբն է երկանց։

9 Եւ զձեզ իսկ մատնեսցեն յա-
տեանս, եւ ՚ի ժողովուրդս տան-
ջիցիք, եւ առաջի դատաւորաց եւ
թագաւորաց կայցէք վասն իմ ՚ի
վկայութիւն նոցա։

10 Եւ ամենայն հեթանոսաց. բայց
նախ պարտ է աւետարանիս քարո-
զել։
11 Այլ յորժամ տանիցին զձեզ
մատնել, մի յառաջագոյն հոգաս-
ցէք, եւ մի զմտաւ ածիցէք՝ թէ
զինչ խօսիցիք. այլ որ ինչ տացի
ձեզ ՚ի ժամուն յայնմիկ՝ զայն խօ-
սիցիք. զի ոչ դուք էք որ խօսի-
ցիքն՝ այլ Հոգին Սուրբ։
12 Մատնեսցէ եղբայր զեղբայր ՚ի
մահ՝ եւ հայր զորդի. եւ յարիցեն
որդիք ՚ի վերայ հարց, եւ սպանա-
նիցեն զնոսա։
13 Եւ եղիջիք ատեցեալք յամե-
նեցունց վասն անուան իմոյ. այլ որ
համբերեսցէն իսպառ՝ նա կեցցէ։
14 Եւ յորժամ տեսանիցէք զպղ-

նոցանից ասաց. Զգոյշ կացէք,
չըլլայ որ մէկը խաբէ դ ձեզ.
6 Ինչու որ շատ մարդիկ կուգան
իմ անունովս, եւ կասեն՝ թէ Ես
եմ Քրիստոսը եւ շատ մարդ կը մո-
լորացնեն։
7 Բայց երբոր կռիւներ եւ կը-
ռիւներու համբաւը կը լսէք՝ մի՛ շը-
փոթիլք, ինչու որ՝ պէտք է որ նա
լինի. բայց դեռ վերջը չէ։
8 Պատճառնոր՝ ազգ ազգի վերայ
վեր կելլէնայ՝ եւ թագաւորութիւն
թագաւորութեան վերայ. եւ տեղ
տեղ երկրի շարժմունքներ կըլլի-
նին, եւ սովեր եւ սաստիկ մահեր
եւ խռովութիւններ. բայց այն ա-
մէնը նեղութեանց սկիզբն ե է։
9 Եւ իսկ ձեզ էլ ատեաններին
կըմատնեն, եւ ժողովարաններին
մէջ կըտանջվիք, եւ դատաւորնե-
րի եւ թագաւորների առաջին կը-
կանգնիք ինձ համար՝ որ նոցանց
վկայութիւն զ ըլլի,
10 Եւ ամէն հեթանոսներին. մի-
այն թէ առաջ պէտք է՝ որ այս ա-
ւետարանս է քարոզվի։
11 Բայց երբոր ձեզ կը տանեն որ
մատնեն՝ առաջուց հոգս չանէք եւ
չմտածէք թէ ինչ պիտի ը խօսիք.
բայց ինչ որ այն ժամումը կը տրվ-
վի ձեզ՝ նա պիտի խօսիք. ինչու որ՝
դուք չէք՝ որ խօսումէք, բայց
Սուրբ թ Հոգին։
12 Եղբայր եղբօրը կըմատնէ մա-
հի մէջ՝ եւ հայր որդին. եւ որդիք
վերկելլենան հօրանց վերայ, եւ
նոցանց ժ կը սպաննեն։
13 Եւ ամէնին ատելի կը լինիք իմ
անուանս ի համար. բայց ով որ մին-
չեւ վերջը կը համբերէ՝ նա լ կապրի։
14 Եւ երբոր տեսնէք աւերածի

դ Երեմ. ԻԹ. 8. Եփես. Ե. 6. Բ Թես. Բ. 3.
ե Մատթ. ԻԴ. 8.
զ Մատթ. Ժ. 17, 18. ԻԴ. 9. Յայտ. Բ. 10.
է Մատթ. ԻԴ. 14.
ը Մատթ. Ժ. 19. Ղուկ. ԺԲ. 11. ԻԱ. 14.
թ Գործ Բ. 4. Դ. 8. 31.
ժ Միք. Է. 6. Մատթ. Ժ. 21. ԻԴ. 10. Ղուկ. ԻԱ. 16.
ի Մատթ. ԻԴ. 9. Ղուկ. ԻԱ. 17.
լ Դան. ԺԲ. 12. Մատթ. Ժ. 22. ԻԴ. 13. Յայտ. Բ. 10.

ծութիւն աւերածին, զի կայցէ 'ի
տեղւոջ՝ ուր չիցէ արժան. որ ըն-
թեռնուն 'ի միտ առցէ. յայնժամ
որ 'ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն
'ի լերինս։
15 Եւ որ 'ի վերայ տանեացն իցէ՝
մի իջցէ 'ի տուն, եւ մի մտցէ բառ-
նալ ինչ 'ի տանէ իւրմէ։
16 Եւ որ յագարակին իցէ՝ մի
դարձցի յետս առնուլ զձորձս իւր։
17 Բայց վայ իցէ յղեաց եւ ստն-
տուաց յաւուրսն յայնոսիկ։
18 Յաղօթս կացէք՝ զի մի ձմե-
ռանի լինիցի այն։
19 Եղիցին աւուրքն այնոքիկ նե-
ղութեանց՝ որպիսի ոչ եղեն երբէք
այնպիսիք 'ի սկզբանէ արարածոց
մինչեւ ցայժմ, եւ մի այլ լիցի։

20 Եւ եթէ ոչ էր կարճեալ Աս-
տուծոյ զաւուրսն զայնոսիկ վասն
ընտրելոց իւրոց, ոչ ապրէր ամե-
նայն մարմին. այլ վասն ընտրելոցն
զորս ընտրեաց՝ կարճեաց զաւուրսն
զայնոսիկ։
21 Յայնժամ եթէ ոք ասիցէ ձեզ,
եթէ Ահաւասիկ է Քրիստոսն՝ կամ
աւանիկ, մի հաւատայցէք։

22 Զի յարիցեն սուտ քրիստոսք
եւ սուտ մարգարէք, եւ տացեն
նշանս եւ արուեստս՝ առ 'ի մոլորե-
ցուցանելոյ եթէ հնար ինչ իցէ եւ
զընտրեալսն։

23 Բայց դուք զգոյշ լերուք՝ ա-
հաւասիկ յառաջագոյն ասացի ձեզ
զամենայն։
24 Այլ յաւուրսն յայնոսիկ յետ
նեղութեանն այնորիկ, արեգակն
խաւարեսցի, եւ լուսին ոչ տացէ
զլոյս իւր։

պղծութիւնը, որ այն տեղուանք կը
կայնի՝ որ արժան [ե] չէ. ով որ կար-
դումէ, միտք [ժ] առնէ. այն ժամա-
նակը նորանք որ Հրէաստանումն են՝
թող սարերը [ի] փախչին.
15 Եւ ով որ կտուրների վերայ է՝
թող վէր չգայ տուն մէջ եւ չը մտնէ՝
իրեն տանիցը մին բան վերառնելու։
16 Եւ ով որ յանդումն է՝ թող յետ
չդառնէ, որ իրեն շորերն առնէ։
17 Բայց այն օրերը վայ կը լինի
յղացածներին եւ ծիծ [կ] տուօղներին
18 Աղօթք արէք՝ որ նա ձմեռան
ժամանակին չը լինի։
19 Այն օրերն այնպէսի նեղու-
թիւններ կը լինին՝ ինչպէս որ աշ-
խարհքի սկզբէնը մինչեւ հիմիկ ըստա-
մին ժամանակ չեն եղած, եւ էլ չեն
[յ] լինիլ։
20 Եւ թէ որ Աստուած իրեն ընտ-
րըվածներին համար այն օրերը չէր
կարճացրել, ընաւ մին մարմին չէր
ապրիլ. բայց այն ընտրըվածներին
համար՝ որ ընտրեց՝ այն օրերը կար-
ճացրուց։
21 Այն ժամանակը թէ որ մինն
ասէ ձեզ՝ թէ, Ահա այս տեղ է
Քրիստոսն կամ այն տեղ, մի [ղ] հա-
ւատաք.
22 Պատճառանոր՝ սուտ քրիստոսներ
եւ սուտ մարգարէներ վէր կը կե-
նան. եւ նշաններ եւ հրաշքներ ա-
ռաջ կը բերեն՝ որ եթէ կարելի լի-
նէր՝ ընտրըվածներին էլ կը մոլորա-
ցրնէին։
23 Բայց դուք զգոյշ [ճ] կացէք. ա-
հա ամէն բանը առաջուց ասացի
ձեզ։
24 Բայց այն օրերն այն նեղութե-
նիցն ետեւ արեգակը կը խաւարի՝
եւ լուսինն իրեն լոյսը [մ] չի տալ.

ե Մատթ. ԻԴ. 15. ժ Դան. Թ. 27. ի Ղու. ԻԱ. 21. կ Ղու. ԻԱ. 23. ԻԴ. 29. յ Դան. Թ. 26. ԺԲ. 1. Յովէլ. Բ. 2. Մատթ. ԻԴ. 21. ղ Մատթ. ԻԴ. 23. Ղու. ԺԷ. 23. ԻԱ. 8. ճ Բ Թես. Գ. 17. մ Դան. Է. 10. Սոփ. Ա. 15. Մատթ. ԻԴ. 29. Ղու. ԻԱ. 25.

25 Եւ աստեղք յերկնից թօթա-
փեսցին, եւ զօրութիւնք յերկինս
շարժեսցին։
26 Եւ յայնժամ տեսցեն զՈրդի
մարդոյ եկեալ ամպովք՝ զօրու-
թեամբ եւ փառօք բազմօք։
27 Եւ յայնժամ առաքեսցէ զհ-
րեշտակս իւր, եւ ժողովեսցէ զընտ-
րեալս իւր ՚ի չորից հողմոց՝ ՚ի ծա-
գաց երկրի մինչեւ ՚ի ծագս երկնից։

28 Բայց դուք ՚ի թզենւոյ անտի
ուսջիք զառակն · յորժամ ոստկա-
ռաքն նորա կակղանայցեն եւ տե-
րեւ արձակիցի ՚ի նմա, գիտէք թէ
մերձ է ամառն։
29 Նոյնպէս եւ դուք՝ յորժամ
տեսանիցէք զայս ամենայն եղեալ,
գիտասջիք թէ մերձ է առ դրուս։
30 Ամէն ասեմ ձեզ, թէ Ո՛չ անց-
ցէ ազգս այս՝ մինչեւ այս ամենայն
եղիցի։
31 Երկինք եւ երկիր անցցեն, եւ
բանք իմ ոչ անցանիցեն։
32 Այլ վասն աւուրն այնորիկ եւ
ժամու՝ ոչ ոք գիտէ՝ ոչ հրեշտակք
յերկինս՝ եւ ոչ Որդի, բայց Հայր
միայն։
33 Զգո՛յշ եղերուք · սկեցէք եւ
կացէք յաղօթս · զի ոչ գիտէք երբ
ժամանակն իցէ։

34 Որպէս այր մի գնացեալ ՚ի տար
աշխարհ՝ թողուցու զտուն իւր · եւ
տայցէ ծառայից իւրոց իշխանու-
թիւն, եւ իւրաքանչիւր զգործս
իւր · եւ դռնապանին պատուէր
տայցէ, զի արթուն լինիցի։

35 Արդ՝ արթո՛ւն կացէք, զի ոչ
գիտէք երբ տէր տանն գայցէ՝ յե-

25 Եւ աստեղներն երկինքէցը կը
թափվին, եւ զօրութիւնները եր-
կինքումը կը շարժվին։
26 Եւ այն ժամանակը կը տեսնեն
Որդին մարդոյ ամպերով եկած, շատ
զօրութենով եւ փառքով։
27 Եւ այն ժամանակն իրեն հրեշ-
տակներն կուղարկէ, եւ իրեն ընտ-
րըվածներին չորս կողմիցը կը ժողո-
վէ երկրի ծայրիցը մինչեւ երկնքին
ծայրը։
28 Բայց դուք՝ թզենի ծառիցը սո-
վորեցէք առակը · երբոր նորա ճը-
ղերը մին քիչ կը կակղին եւ տերեւ-
կարձակվի նորանում՝ գիտումէք
թէ ամառը մօտ է։
29 Այնպէս էլ դուք՝ երբոր տես-
նէք այս ամէն բաներս էլած՝ իմա-
ցէք թէ նա մօտիկ է դռներին։
30 Ճշմարիտ ասումեմ ձեզ, թէ
Այս ազգս չի անցնիլ՝ մինչեւ որ
այս ամէնս լինի։
31 Երկինքն ու երկիրս կանցանին,
բայց իմ խօսքերս չեն շ անցանիլ։
32 Միայն թէ այն օրին եւ ժամին
համար ոչ ով չի գիտում՝ ոչ հրեշ-
տակներն երկինքումը՝ եւ ոչ Որդին,
բայց միայն Հայրը։
33 Զգո՛յշ կացէք, արթո՛ւն մնա-
ցէք եւ աղօթք արէք · ինչու որ՝ չէք
գիտում, թէ այն ժամանակն երբ
ո կը լինի։
34 Ինչպէս մին մարդ՝ որ հեռու
աշխարհնը գնալոյ ժամանակին՝ իրեն
տունը կը թողէ · եւ իրեն ծառանե-
րին իշխանութիւն կը տայ, եւ ա-
մէն մէկին իրեն գործը · եւ դռնա-
պանին հրաման կը տայ՝ որ արթուն
չ կենայ։
35 Ուրեմն արթո՛ւն պ կացէք · ին-
չու որ՝ չէք գիտում, տան տէրն երբ

յ Դան. Է. 13. 14։ Մատթ. ԺԶ. 27։ ԻԴ. 30։ Գլ. ԺԴ. 62։ Գործ. Ա. 11։ Ա Թես. Դ. 16։ Բ Թես. Ա. 7. 10։ Յայտ. Ա. 7։
ն Մատթ. ԻԴ. 32։ Ղու. ԻԱ. 29։
շ Եսայ. Խ. 8։
ո Մատթ. ԻԴ. 42։ ԻԵ. 13։ Ղու. ԺԲ. 40։ ԻԱ. 34։ Հռովմ. ԺԳ. 11։ Ա Թես. Ե. 6։
չ Մատթ. ԻԴ. 45։ ԻԵ. 14։
պ Մատթ. ԻԴ. 42. 44։

—

ընդերեկոյ՝ եթէ ՚ի մէջ գիշերի՝ եթէ
՚ի հաւախօսի՝ եթէ ընդ առաւօտս ։

36 Գուցէ եկեալ յանկարծակի՝
գտանիցէ զձեզ ՚ի քուն ։
37 Բայց զոր ձեզդ ասեմ, ամե-
նեցուն ասեմ՝ Արթուն կացէք ։

կը գայ՝ իրիկնաժամ, թէ մէջ գիշերը,
թէ հաւի խօսելոյ ժամանակը, թէ
առաւօտեան ·
36 Որ չըլինի թէ յանկարծ գայ՝
եւ ձեզ քնի մէջ գտնէ ։
37 Բայց ինչ որ ձեզ եմ ասում՝ ա-
մէնին էլ ասում եմ · Արթուն կացէք ։

## ԳԼ. ԺԴ

1 Եւ էր զատիկն եւ բաղարջա-
կերք յետ երկուց աւուրց · խնդ-
րէին քահանայապետքն եւ դպիրք՝
եթէ զիարդ զնա նենգաւ կալեալ
սպանանիցեն ։
2 Բայց ասէին՝ թէ Մի ՚ի տօնի
աստ, զի մի խռովութիւն լինիցի ՚ի
ժողովրդեանն ։
3 Եւ մինչ էր ՚ի Բեթանիա՝ ՚ի
տան Սիմոնի բորոտի բազմեալ,
եկն կին մի՝ որ ունէր շիշ իւղոյ
նարդեան ազնուի մեծագնոյ, եւ
բեկեալ զշիշն՝ եհեղ ՚ի վերայ գլխոյ
նորա ։
4 Եւ աշակերտքն զչարէին եւ
ասէին · Ընդէր եղեւ կորուստ իւ-
ղոյդ այդորիկ ։
5 Մարթ էր զայդ իւղ վաճառել
աւելի քան երեք հարիւր դահե-
կանի, եւ տալ աղքատաց · եւ
զայրանային նմա յոյժ ։

6 Եւ Յիսուս ասէ ցնոսա · Թոյլ
տուք դմա՝ զի աշխատ առնէք, զի
գործ մի բարի գործեաց դա յիս ։

7 Յամենայն ժամ զաղքատս ընդ
ձեզ ունիք, եւ յորժամ կամիք՝ կա-
րող էք առնել նոցա բարիս · այլ
զիս ոչ յամենայն ժամ ընդ ձեզ ու-
նիք ։
8 Դա զոր ունէրն՝ արար · յա-
ռաջագոյն խնկեաց զմարմին իմ ՚ի
նշան պատանաց ։
9 Ամէն ասեմ ձեզ · Ուր եւ քա-
րոզեսցի աւետարանս այս ընդ ամե-

1 Եւ երկու օրէն ետեւ զատիկն
էր եւ ա բաղարջակերքը · քահանայա-
պետներն ու կարգացողները խնդ-
րում էին՝ թէ ինչպէս նորան նեն-
գութիւնով բռնեն եւ սպանեն ։
2 Բայց ասում էին՝ թէ, Այս տօ-
նիս չըլինի՝ որ ժողովրդին մէջ խը-
ռովութիւն չըլինի ։
3 Եւ երբոր Բեթանիա էր՝ Սի-
մօն բորոտի տանը սեղան բ նստած՝
մին կին եկաւ՝ որ մին շիշ ազնիւ
թանկագին նարդոսի իւղ ունէր,
եւ այն շիշը կոտրեց՝ եւ նորան
գլխին վերայ թափեց ։
4 Եւ աշակերտները դժուարա-
նում էին եւ ասում · Ինչու այդ իւղը
զուր տեղը կորաւ ։
5 Կարելի էր այդ իւղը երեք հա-
րիւր դահեկանիցն աւելի թանգ
ծախել, եւ աղքատներին տալ · եւ
չար բարկութիւնով տրտնջում էին
նորա վերայ ։
6 Եւ Յիսուս նորանց ասաց ·
Թող տուէք դորան · ինչու էք նեղու-
թիւն տալիս դորան · ինչու որ՝ դա
մին բարի բան գործեց ինձ վերայ ։
7 Ամէն ժամանակ աղքատները
ձեզ հետ ունիք, եւ երբոր կամե-
նաք՝ կարող էք նորանց բարի գ ա-
նել · բայց ինձ ամէն ժամանակ ձեզ
հետ չունիք ։
8 Դա ինչ որ ունէր՝ արաւ · ա-
ռաջուց իմ մարմինը օծեց՝ որ պա-
տանքի նշան լինի ։
9 Ճշմարիտ ասում եմ ձեզ՝ որ
Ամէն աշխարհքին մէջ որտեղ որ այս

ա Մատթ. ԻԶ. 2. Ղուկ. ԻԲ. 1. | Յովհ. ԺԱ. 55. ԺԲ. 1.
բ Մատթ. ԻԶ. 6. Է. 37. | Յովհ. ԺԲ. 1. 3. գ Բ Օրին. ԺԵ. 11.

նայն աշխարհ, եւ զոր արար դա՝
խօսեսցի վասն յիշատակի դորին:

10 Եւ Յուդաս Իսկարիովտացի մի
յերկոտասանից անտի, գնաց առ
քահանայապետսն՝ զի մատնեսցէ
զնա նոցա:
11 Նոքա իբրեւ լուան՝ խնդացին,
եւ խոստացան տալ նմա արծաթ.
եւ խնդրէր՝ թէ զիարդ պարապով
մատնեսցէ զնա:

12 Եւ յառաջնում աւուր բաղար-
ջակերացն՝ յորժամ զզատիկն զե-
նուին, ասեն ցնա աշակերտքն. Ո՞ւր
կամիս՝ երթիցուք պատրաստես-
ցուք՝ զի կերիցես զզատիկն:

13 Եւ առաքէ երկուս յաշակեր-
տաց անտի եւ ասէ ցնոսա. Երթայք
'ի քաղաք, եւ իբրեւ մտանիցէք
'ի քաղաքն՝ պատահեսցէ ձեզ այր
մի՝ որ սափոր ջրոյ յուս ունիցի,
երթայք զհետ նորա:
14 Եւ յոր տուն մտանիցէ, ասա-
ջիք տանուտեառն. Վարդապետ ա-
սէ՝ Ո՞ւր են իջեւանքն, ուր աշա-
կերտօքս ուտիցեմ զզատիկն:

15 Եւ նա ցուցցէ ձեզ վերնատուն
մի մեծ զարդարեալ. անդ պատ-
րաստեսջիք մեզ:
16 Եւ գնացին պատրաստել աշա-
կերտքն նորա. եկին 'ի քաղաքն՝ եւ
գտին որպէս ասաց նոցա. եւ պատ-
րաստեցին զզատիկն:

17 Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ գայ
երկոտասանիւքն հանդերձ:
18 Եւ իբրեւ բազմեցան՝ եւ դեռ
ուտէին, ասէ Յիսուս. Ամէն ասեմ
ձեզ՝ զի մի ոմն 'ի ձէնջ մատնելոց
է զիս, որ ուտէ հաց ընդ իս:

19 Եւ նոքա սկսան տրտմել՝ եւ

ւետարանս կը քարոզուի՝ դորա յի-
շատակին համար նա էլ կը խօսուի՝
որ դա արաւ:
10 Եւ Յուդա Իսկարիովտացին՝ այն
տասներկուսիցը մինը, քահանայա-
պետներին մօտ գնաց՝ որ նորան
մատնէ նորանց ա ձեռքը:
11 Նորանք երբոր լսեցին՝ ուրա-
խացան, եւ խոստացան՝ որ նորան
արծաթ տան. եւ խնդրում էր՝ թէ
ինչպէս յարմար ժամանակով մատ-
նէ նորան:
12 Եւ բաղարջակերաց առաջին
օրն՝ որ ժամանակ որ զատկին գա-
ռը մորթում էին, աշակերտները
նորան ասացին. Ի՞նչ տեղ ես կա-
մենում որ գնանք պատրաստենք՝
որ զատիկը բ ուտես:
13 Եւ այն աշակերտներիցն երկու-
սին ուղարկեց եւ նորանց ասաց.
Գնացէք քաղաքը, եւ երբոր մըտ-
նէք քաղաքը՝ մին մարդ կը պատահի
ձեզ՝ որ ջրի կուժըն ուսին վերայ
կունենայ. նորա ետեւէն գնացէք:
14 Եւ որ տուն մտնէ, այն տան
տիրոջն ասացէք. Վարդապետն ա-
սում է՝ Ո՞ւր է այն վերի դալոյ սե-
ղըն՝ որ նորանում զատիկը ուտեմ
աշակերտներիս հետ:
15 Եւ նա մին մեծ զարդարած
վերնատուն ցոյց կտայ ձեզ. այն
տեղ պատրաստեցէք մեզ համար:
16 Եւ նորան աշակերտները գը-
նացին որ պատրաստեն. քաղաքն
եկին՝ եւ այնպէս գտին ինչպէս որ
նորանց ասաց. եւ զատիկը պատ-
րաստեցին:
17 Եւ երբոր իրիկուն էլաւ՝ տաս-
ներկուսին հետ գ եկաւ:
18 Եւ երբոր սեղան նստեցին՝ եւ
դեռ ուտում էին, Յիսուս ասաց.
Ճշմարիտն ասում եմ ձեզ՝ որ ձե-
զանից մինը կը մատնէ ինձ. նա որ
հաց ինձ հետ ուտում է:
19 Եւ նորանք սկսեցին տրտմել՝

ա Մատթ. ԻԶ. 14. Ղու. ԻԲ. 3, 4. բ Մատթ. ԻԶ. 17. Ղու. ԻԲ. 7. գ Մատթ. ԻԶ. 20.

ասել՝ մի ըստ միոջէ․ Միթէ ես ի-
ցեմ, եւ միւսն՝ Միթէ ես իցեմ։
20 Նա պատասխանի ետ եւ ասէ
ցնոսա․ Մի յերկոտասանից այտի,
որ մխեաց ընդ իս ՚ի սկուտեղն։

21 Այլ Որդի մարդոյ երթայ՝ որ-
պէս եւ գրեալ է վասն նորա․ բայց
վայ իցէ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն
Որդի մարդոյ մատնեսցի․ լաւ էր
նմա՝ թէ չէր իսկ ծնեալ մարդն
այն։
22 Եւ մինչդեռ ուտէին, առեալ
Յիսուսի հաց՝ օրհնեաց եւ եբեկ՝
ետ նոցա, եւ ասէ․ Առէք՝ այդ է
մարմին իմ։
23 Եւ առեալ բաժակ՝ գոհացաւ
եւ ետ նոցա, եւ արբին ՚ի նմանէ
ամենեքեան։
24 Եւ ասէ ցնոսա․ Այս է արիւն
իմ նորոյ ուխտի, որ վասն բազ-
մաց հեղանի։
25 Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ եւս
յաւելից ըմպել ՚ի բերոյ որթոյ
մինչեւ ցօրն ցայն՝ յորժամ արբից
զնա նոր յարքայութեան Աստու-
ծոյ։
26 Եւ գոհացեալ՝ ելին ՚ի լեառն
Ձիթենեաց։
27 Եւ ասէ ցնոսա Յիսուս․ Ա-
մենեքին գայթակղելոց էք յինէն
յայսմ գիշերի․ զի գրեալ է, թէ
Հարից զհովիւն՝ եւ ոչխարքն ցրու-
եսցին։
28 Այլ յետ յարութեան իմոյ՝
յառաջագոյն երթայց քան զձեզ ՚ի
Գալիլեա։
29 Պատասխանի ետ Պետրոս եւ
ասէ ցնա․ Թէպէտ եւ ամենեքին
գայթակղեսցին, այլ ես ոչ։
30 Եւ ասէ ցնա Յիսուս․ Ամէն
ամէն ասեմ քեզ․ թէ դու իսկ
յայսմ գիշերի մինչչեւ հաւու խօ-

եւ մէկը միւսին ետեւէ ըսել՝ Միթէ
ես եմ․ եւ միւսը Միթէ ես եմ։
20 Նա պատասխանեց անոնց եւ նո-
րանց ասաց․ Այդ տասներկուքէդ
մէկն՝ որ ինծի հետ ձեռքըն այդ բա-
կուռակին մէջը մտցուց։
21 Բայց Որդին մարդոյ կերթայ՝
ինչպէս որ նորա համար գրած է․
սակայն վայ է այն մարդուն՝ որ նո-
րան ձեռքովը Որդին մարդոյ կը
մատնուի․ լաւ էր նորան՝ թէ այն
մարդը բնաւ ծնած ե չըլլինէր։
22 Եւ գնալով որ ուտէին,
Յիսուս հաց առաւ՝ օրհնեց եւ կտրե-
ց՝ տուաւ նորանց եւ ասաց․
Առէք՝ դա է իմ զ մարմինս։
23 Եւ բաժակն առաւ՝ գոհացաւ,
նորանց տուաւ, եւ ամէնքը խմե-
ցին նորանից։
24 Եւ նորանց ասաց․ սա է իմ
արիւնս նոր ուխտի եւ պայմանի,
որ շատերի աւգուտ թափվումէ։
25 Ճշմարիտն ասում եմ ձեզ․
թէ որթի բերքէն էլ չեմ խմել
մինչեւ այն օրն, երբոր նորան նոր
կը խմեմ Աստուծոյ արքայութեանը
մէջ։
26 Եւ գոհացան՝ եւ դուրս ելան
Ձիթենեաց է սարը։
27 Եւ Յիսուս նորանց ասաց․
Ամէնքդ այս գիշերս կըգայթակղը-
վիք ը ինձանից․ ինչուոր՝ գրած է՝
թէ Հովիւը կըզարկեմ՝ եւ ոչխար-
ները թ կցրուին։
28 Բայց իմ յարութենիցս ետեւ
ձեզանից առաջ կերթամ ժ Գալիլեա։

29 Պետրոս պատասխան տուաւ եւ
նորան ասաց․ Թէեւ ամէնքն էլ
գայթակղուեն, բայց ես ի չէ։
30 Եւ Յիսուս նորան ասաց․ Ճըշ-
մարիտն ասում եմ քեզ․ թէ իսկ
դու այս գիշերս՝ դեռ քանի որ հաւն

ե Մատթ․ ԻԶ․ 24։ Ղու․ ԻԲ․ 22։
զ Մատթ․ ԻԶ․ 26։ Ղու․ ԻԲ․ 19․ Ա Կորնթ․ ԺԱ․ 23։
է Մատթ․ ԻԶ․ 30։
ը Մատթ․ ԻԶ․ 31։
թ Զաք․ ԺԳ․ 7։
ժ Գլ․ ԺԶ․ 7։
ի Մատթ․ ԻԶ․ 33․ 34։ Ղու․ ԻԲ․ 33, 34։ Յովհ․ ԺԳ․ 37, 38։

տալ իցէ՝ երիցս ուրասցիս զիս ։

31 Իսկ Պետրոս առաւել եւս պըն-
դէր եւ ասէր . Եթէ մեռանել եւս
հասանիցէ ընդ քեզ , զքեզ ոչ ու-
րացայց . նոյնպէս եւ ամենեքեան
ասէին ։
32 Գան 'ի գեօղն՝ որում անուն
էր Գեթսեմանի . եւ ասէ ցաշա-
կերտսն . Նստարո՛ւք աստ՝ մինչեւ
ես յաղօթս կացից ։
33 Եւ առնու ընդ իւր զՊետրոս
եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս , եւ
սկսաւ տխրել եւ հոգալ ։
34 Յայնժամ ասէ ցնոսա . Տըր-
տում է անձն իմ մինչեւ 'ի մահ ,
Մնացէք աստ՝ եւ արթուն կացէք ։

35 Եւ մատուցեալ սակաւիկ մի
յառաջ , անկաւ 'ի վերայ երեսաց
իւրոց յերկիր . եւ կայր յաղօթս ,
զի եթէ հնար ինչ է՝ անցցէ 'ի նը-
մանէ ժամն ։
36 Եւ ասէ . Աբբա Հայր՝ ամե-
նայն ինչ քեզ հնարաւոր է , անցո
զբաժակս զայս յինէն . բայց ոչ որ-
պէս ես կամիմ՝ այլ որպէս դու կա-
միս ։
37 Եւ գայ՝ գտանէ զնոսա զի նըն-
ջէին , եւ ասէ ցՊետրոս . Սիմոն նըն-
ջես . ոչ կարացեր ժամ մի արթուն
կալ ։
38 Արթուն կացէք եւ յաղօթս կա-
ցէք , զի մի մտջիք 'ի փորձութիւն .
ոգիս յօժար է՝ բայց մարմինս տկար ։

39 Եւ դարձեալ չոգաւ եկաց յա-
ղօթս , եւ զնոյն բանս ասաց ։
40 Դարձաւ միւսանգամ անդրէն ,
եւ եգիտ զնոսա 'ի քուն . քանզի
էին աչք նոցա ծանրացեալ , եւ ոչ
գիտէին թէ զինչ պատասխանի
տայցեն նմա ։
41 Գայ երրորդ անգամ , եւ ասէ

չի խօսացել՝ երեք անգամ կուրա-
նաս ինձ ։
31 Բայց Պետրոսն էլ աւելի խօս-
քըն հաստատումէր եւ ասում . Թէ
որ քեզ հետ մեռնելու էլ լինիմ ,
քեզ չեմ ուրանալ . այնպէս էլ ա-
մէնքըն էին ասում ։
32 Եկին այն գիւղն՝ որ նորան ա-
նունըր Գեթսեմանի էր . եւ աշա-
կերտներին ասաց . Այստեղ նստե-
ցէք՝ մինչեւ որ ես աղօթք [1] անեմ ։
33 Եւ Պետրոսին ու Յակոբին եւ
Յօհաննէսին իրեն հետ առաւ , եւ
սկսեց տրտմիլ եւ հոգալ ։
34 Այն ժամանակը նորանց ասաց .
Իմ անձս մեռնելու չափ տրտմած
[2] է . այստեղ մնացէք եւ արթուն
կացէք ։
35 Եւ մին քիչ առաջ գնաց , ի-
րեն երեսին վերայ գետնին ընկաւ ,
եւ աղօթք էր անում՝ որ եթէ կա-
րելի է՝ այն ժամն իրենից անցանէ ։

36 Եւ ասաց . [3] Աբբա Հայր՝ ա-
մէն բան կարելի է [4] քեզ . այս բա-
ժակըս ինձանից անցուցրու՝ բայց
չէ թէ ինչպէս ես եմ կամենում , այլ
ինչպէս որ դու ես [5] կամենում ։
37 Եւ եկաւ գտաւ նորանց որ
քնած էին՝ եւ Պետրոսին ասաց .
Սիմոն քնումես . չկարացիր մին
ժամ արթուն կենալ ։
38 Արթուն կացէք եւ աղօթք ա-
րէք , որ փորձութեան մէջ չը մը-
նէք . հոգիս յօժար է , բայց մար-
մինս [6] տկար ։
39 Եւ դարձեալ գնաց աղօթք ա-
րաւ , եւ նոյն այն խօսքերըն ասաց ։
40 Նորէն դարձաւ եւ նորանց քնի
մէջ գտաւ . ինչու որ՝ նորանց աչ-
քերը ծանրացել էին , եւ չէին գի-
տում՝ թէ ինչ պատասխան տան
նորան ։
41 Երրորդ անգամ եկաւ եւ նո-

[1] Մատթ. ԻԶ. 36 ; Ղուկ. ԻԲ. 39 ; Յովհ. ԺԸ. 1 ;
[2] Յովհ. ԺԲ. 27 ;
[3] Հռովմ. Ը. 15 ; Գաղ. Դ. 6 ;
[4] Եբր. Ե. 7 ;
[5] Յովհ. Ե. 30 ; Զ. 38 ;
[6] Հռովմ. Է. 22, 23 ; Գաղ. Ե. 17 ;

ցնոսա · Ննջեցէք այսուհետեւ եւ հանգերուք , զի հասեալ է վախճան եկն ժամ՝ եւ ահա մատնի Որդի մարդոյ 'ի ձեռս մեղաւորաց ։

42 Օ՛ն արիք գնասցուք · զի ահաւասիկ մերձեցաւ՝ որ մատնելոցն է զիս ։

43 Եւ մինչդեռ նա զայն խօսէր՝ գայ Յուդա Իսկարիովտացի մի յերկոտասանիցն , եւ ընդ նմա ամբոխ սուսերօք եւ բրօք՝ 'ի քահանայապետիցն եւ 'ի դպրաց եւ 'ի ծերոց ։

44 Տուեալ էր նշան մատնչին՝ եւ ասէր · Ընդ որում ես համբուրեցից՝ նա է · կալջիք զնա՝ եւ տարջիք զգուշութեամբ ։

45 Եւ մատուցեալ վաղվաղակի՝ ասէ ցնա · Ռաբբի Ռաբբի · եւ համբուրեաց զնա ։

46 Եւ նոքա արկին 'ի նա ձեռս՝ եւ կալան զնա ։

47 Եւ մի ոմն յայնցանէ՝ որ ընդ նմայն կային՝ ձգեաց սուր , եւ եհար զծառայ քահանայապետին , եւ 'ի բաց եհատ զունկն նորա ։

48 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա · Իբրեւ 'ի վերայ աւազակի ելէք սուսերօք եւ բրօք ունել զիս ։

49 Հանապազ առ ձեզ էի՝ եւ ուսուցանէի 'ի տաճարին , եւ ոչ կալայք զիս · այլ զի լցցին գիրք մարգարէիցն ։

50 Յայնժամ թողին զնա աշակերտքն ամենեքին՝ եւ փախեան ։

51 Եւ ոմն երիտասարդ գնայր երթայր զհետ նորա՝ արկեալ զիւրեւ կտաւ մի 'ի մերկուց · ունէին զնա երիտասարդքն ։

52 Եւ նորա թողեալ զկտաւն՝ փախեաւ մերկ 'ի նոցանէ ։

րանց ասաց · Սրանից ետեւ քնեցէք եւ հանգիստ առէք , ինչու որ վերջն հասել է · ժամն եկաւ , եւ ահա Որդին մարդոյ մատնըւումէ մեղաւորաց մ ձեռքը ։

42 Ապա վեր կացէք յ գնանք · ահա մօտեցաւ նա՝ որ պիտի ինձ մատնէ ։

43 Եւ դեռ քանի որ նա այն բան խօսումէր , Յուդա Իսկարիօտացին՝ այն տասներկուսիցը մինն եկաւ , եւ նորան հետ ամբոխ սրերով եւ բրերով քահանայապետներիցն ու կարգադրողներիցը եւ ն ծերերիցը ։

44 Մատնիչը նորանց նշան էր տուել՝ եւ ասել , թէ Որին որ ես կը համբուրեմ՝ նա է · նորան բռնեցէք եւ զգուշութեամբ տարէք ։

45 Եւ շուտով մօտ եկաւ եւ նորան ասաց · Ռաբբի , Ռաբբի , եւ նորան համբուրեց ։

46 Եւ նորանք ձեռք ձգեցին նորան՝ եւ նորան բռնեցին ։

47 Եւ նորանցից մինն՝ որ նորա մօտ կային՝ սուրը քաշեց , եւ քահանայապետի ծառային զարկեց , եւ նորա ականջը կտրեց ։

48 Յիսուս պատասխան տուաւ եւ նորանց ասաց · Ինչպէս մին աւազակի վերայ սրերով եւ բրերով դուրս եկէք ինձ շ բռնել ։

49 Միշտ ձեզ մօտ էի եւ տաճարումն սովորեցնումէի · եւ ինձ չբռնեցիք · բայց նորա համար՝ որ մարգարէներին գրքերը ո կատարւին ։

50 Այն ժամանակն ամէն աշակերտները նորան թողին՝ եւ չ փախան ։

51 Եւ մին երիտասարդ նորա ետեւէն գնումէր՝ որ մերկ մարմնոյն վերայ կտաւ էր առել · եւ երիտասարդները բռնումէին նորան ։

52 Եւ նա կտաւը թողեց՝ եւ մերկ փախաւ նորանցից ։

մ Յովհ · ԺԳ · 1 ։
յ Մատթ · ԻԶ · 46 ։
Յովհ · ԺԸ · 1 , 2 ։
ն Մատթ · ԻԶ · 47 ։
Ղուկ · ԻԲ · 47 ։
Յովհ · ԺԸ · 3 ։
շ Մատթ · ԻԶ · 55 ։
Ղուկ · ԻԲ · 52 ։
ո Սաղ · ԻԲ · 6 ։
Եսայ · ՆԳ · 7 ։
Ղուկ · ԻԲ · 37 ։
ԻԴ · 44 ։
չ Սաղ · ՁԸ · 8 ։
Համար 27 ։

53 Եւ տարան զՅիսուս առ քա-
հանայապետն Կայիափա. եւ գային
ընդ նմա ամենայն քահանայապետ-
քըն՝ եւ դպիրք եւ ծերք։

54 Եւ Պետրոս երթայր 'ի հե-
ռաստանէ զհետ նորա մինչեւ 'ի
ներքս խոկ 'ի գաւիթ քահանայա-
պետին, եւ նստէր ընդ սպասա-
ւորսն՝ եւ ջեռնոյր առ լուսովն։
55 Իսկ քահանայապետքն՝ եւ ա-
մենայն ատեանն խնդրէին հակառակ
Յիսուսի վկայութիւն ինչ, զի սպա-
նանիցեն զնա. եւ ոչ գտանէին։
56 Զի բազումք սուտ վկայու-
թիւն վկայէին զնմանէ, եւ նման
միմեանց ոչ էին վկայութիւնքն։

57 Այլք յարուցեալ վկայէին
սուտ զնմանէ, եւ ասէին.
58 Թէ Մեք լուաք 'ի դմանէ՝ զի
ասէր. Ես քակեցից զտաճարդ զայդ
ձեռագործ, եւ զերիս աւուրս շի-
նեցից այլ՝ անձեռագործ։

59 Սակայն եւ այնպէս չէր նման
վկայութիւնն նոցա։
60 Ապա յարուցեալ քահանայա-
պետն 'ի մէջ՝ հարցանէր զՅիսուս,
եւ ասէր. Ոչինչ տաս պատասխա-
նի, զինչ դոքա զքէն վկայեն։

61 Եւ նա լուռ եւ եթ կայր՝ եւ
չտայր ինչ պատասխանի. դար-
ձեալ քահանայապետն հարցանէր
զնա կրկին անգամ եւ ասէր. Դու
ես Քրիստոսն՝ Որդի Աստուծոյ օրհ-
նելոյն։
62 Պատասխանի ետ Յիսուս եւ ա-
սէ ցնա. Դու ասացեր՝ թէ ես եմ.
բայց տեսանիցէք զՈրդի մարդոյ
նստեալ ընդ աջմէ Զօրութեանն,
եւ եկեալ ընդ ամպս երկնից։
63 Եւ քահանայապետն պատառ-

53 Եւ Յիսուսին տարան Կայիա-
փա քահանայապետին մօտ. եւ ա-
մէն քահանայապետներն ու կար-
գաւորները եւ ծերերը նորան մօտ
էին ղ գալիս։
54 Եւ Պետրոս հեռուանց գնու-
մէր նորա ետեւէն մինչեւ ներս քա-
հանայապետին սրահի ներսը, եւ
սպասաւորներին հետ նստումէր՝ եւ
լուսոյն մօտ տաքանումէր։
55 Բայց քահանայապետներն ու
ամէն ատեանը Յիսուսին հակառակ
մին վկայութիւն էին ուզում՝ որ նո-
րան սպանեն՝ եւ չէին ճ գտնում։
56 Պատճառը՝ շատ մարդիկք սուտ
վկայութիւն էին վկայում նորանից.
եւ վկայութիւններն իրար նման
չէին։
57 Ոմանք վերկացան եւ նորա-
նից սուտ էին վկայում, եւ ասում.
58 Թէ Մենք դորանից լսեցինք,
որ ասումէր՝ Ես այդ ձեռքով շի-
նած տաճարդ կքանդեմ, եւ երեք
օրում ուրիշը կշինեմ՝ որ ձեռքով
մ չի շինած։
59 Բայց եւ այնպէս նորանց վկա-
յութիւնն իրար նման չէր։
60 Ապա քահանայապետը վերկա-
ցաւ մէջ տեղը՝ եւ Յիսուսին հարց-
նումէր եւ յ ասում. Ինչու պատաս-
խան չես տալիս. ինչ են վկայում
դորանք քեզանից։
61 Եւ նա լուռ էր կենում՝ եւ
ընաւ մին պատասխան չէր ն տալիս.
քահանայապետը նորէն երկրորդ ան-
գամ նորան հարցնումէր եւ ասում.
Դու ես Քրիստոսը՝ օրհնեալ Աս-
տուծոյ շ Որդին։
62 Յիսուս պատասխան տուաւ եւ
նորան ասաց. Դու ասացիր՝ որ ես
եմ. բայց կտեսնէք Որդին մարդոյ
Զօրութեան աջ կողմը նստած, եւ
երկնքի ամպերով ո եկած։
63 Եւ քահանայապետը չուռալ ի-

ղ Մատթ. ԻԶ. 57. Ղուկ. ԻԲ. 54. Յովհ. ԺԸ. 13.
ճ Մատթ. ԻԶ. 59.
մ Գլ. ԺԵ. 29. Յովհ. Բ. 19.
յ Մատթ. ԻԶ. 62.
ն Եսայ. ՆԳ. 7.
շ Մատթ. ԻԶ. 63.
ո Մատթ. ԻԴ. 30. ԻԶ. 64. Ղուկ. ԻԲ. 69.

ռեաց վաղվաղակի զպատմուճանս իւր՝ եւ ասէ. Զի՞նչ եւս պիտոյ են մեզ վկայք։

64 Ահա լուայք ամենեքին զհայհոյութիւն ՚ի բերանոյ դորա. զիա՞րդ թուի ձեզ. եւ ամենեքեան դատապարտեցին զնա՝ թէ Մահապարտ է։

65 Եւ ոմանք սկսան թքանել ընդ երեսս նորա, ձորձ զգլխով արկանել, կափել եւ ասել. Մարգարէա՛ց մեզ Քրիստոս՝ ո՛վ է այն որ հարին զքեզ. եւ սպասաւորքն ապտակս հանէին նմա։

66 Եւ Պետրոս մինչդեռ էր ՚ի խոնարհ ՚ի գաւթին, գայ աղախին մի քահանայապետին,

67 Եւ տեսանէ զնա՝ զի ջեռնոյր. հայեցաւ ընդ նա՝ եւ ասէ. Եւ դու ընդ Յիսուսի Նազովրեցւոյ էիր։

68 Նա ուրացաւ եւ ասէ. Ո՛չ գանգիտեմ եւ ո՛չ գիտեմ զինչ դուդ ասես, եւ իբրեւ ել յարտաքին գաւիթն, եւ հաւ խօսեցաւ։

69 Դարձեալ տեսեալ զնա աղախինն, եւ սկսաւ ասել ցայնոսիկ՝ որ շուրջն կային, թէ Եւ սա ՚ի նոցանէ է։

70 Եւ նա դարձեալ ուրացաւ. եւ յետ սակաւ միոյ՝ դարձեալ որ շուրջն կային, ասէին ցՊետրոս. Արդարեւ եւ դու ՚ի նոցանէ ես, քանզի Գալիլեացի ես, եւ խօսքդ խակ քո նման են։

71 Եւ նա սկսաւ նզովել, երդնուլ եւ ասել՝ թէ Ո՛չ գիտեմ զայրն զորմէ դուքդ ասէք։

72 Եւ նոյնժամայն կրկին հաւ խօսեցաւ. եւ յիշեաց Պետրոս զբանն՝ զոր ասաց ցնա Յիսուս, թէ Չեւ իցէ հաւու երկիցս խօսեալ՝ զի դու-

բին շորերը պատռեց՝ եւ ասաց. Էլ ինչ պէտք է մեզ վկայ։

64 Ահա ամէնքդ դորա բերանիցը հայհոյանքը լսեցիք. ինչպէս է երեւում ձեզ. եւ ամէնքը դատապարտեցին նորան՝ թէ Մահապարտ է։

65 Եւ մին քանիսն սկսեցին նորան երեսին թքել, գլխին վերայ չոր ձգել, բռնցքով թակել եւ ասել. Մեզ մարգարէացիր Քրիստոս՝ թէ նա ո՞վ է որ քեզ զարկեց. եւ սպասաւորները նորան ապտակ էին տալիս։

66 Եւ Պետրոս դեռ որ ներքին կողմը սրահին մէջն էր, քահանայապետին մին աղախինը եկաւ,

67 Եւ նորան տեսաւ՝ որ տաքանումէր. մտիկ տուաւ նորան եւ ասաց. Դու էլ Յիսուս Նազովրեցոյն հետ էիր։

68 Նա ուրացաւ եւ ասաց. Չեմ ճանաչում եւ չեմ գիտում, թէ դու ինչ ես խօսում. եւ երբոր դուրս գնաց գաւթի սրահը, հաւը խօսեց։

69 Նորէն աղախինը նորան տեսաւ, եւ սկսեց ասել նորանց՝ որ չորս կողմովը կանգնած էին, թէ Սա էլ նորանցից ‒ է։

70 Եւ նա կրկին ուրացաւ. եւ մին քիչ յետոյ նորանք՝ որ չորս կողմովը կանգնած էին, նորէն ասացին Պետրոսին. Ճշմարիտ՝ որ դու էլ նորանցից ‡ ես, ինչու որ՝ Գալիլեացի ես, եւ խօսքդ էլ նման + է։

71 Եւ նա սկսեց անիծել, երդում ուտել եւ ասել՝ թէ Չեմ գիտում այն մարդին՝ որ դուք ասում էք։

72 Եւ շուտով հաւն երկրորդ անգամ ◦ խօսեց. եւ Պետրոս միտքը բերաւ այն բանըն՝ որ Յիսուս նորան ասաց. Թէ Հաւը դեռ երկու-

◦ Մատթ. ԻԶ. 58. 69. Ղու. ԻԲ 55. Յովհ. ԺԸ. 16.
‒ Մատթ. ԻԶ. 71. Ղու. ԻԲ. 58. Յովհ. ԺԸ. 25.
‡ Մատթ. ԻԶ. 73. Ղու. ԻԲ. 59. Յովհ. ԺԸ. 26.
+ Գործ. Բ. 7.
◦ Մատթ. ԻԶ. 75.

երկիցս ուրասցիս զիս. եւ սկսաւ լալ։

## ԳԼ. ԺԵ

1 Եւ վաղվաղակի ընդ առաւօտն խորհուրդ արարեալ քահանայապետիցն հանդերձ ծերովքն եւ դպրօք՝ եւ ամենայն ատենին, կապեցին ըզՅիսուս՝ եւ տարան մատնեցին Պիղատոսի։

2 Եհարց զնա Պիղատոս եւ ասէ. Դու ես թագաւորն Հրէից. Նա պատասխանի ետ նմա եւ ասէ՝ Դու ասես։

3 Եւ չարախօսէին զնմանէ յոյժ քահանայապետքն, եւ նա ոչինչ տայր պատասխանի։

4 Իսկ Պիղատոս դարձեալ հարցանէր զնա. Ոչինչ տաս պատասխանի, տե՛ս՝ քանի՛ ամբաստանեն զքէն։

5 Եւ Յիսուս այնուհետեւ ոչինչ ետ պատասխանի, մինչեւ զարմանալ յոյժ Պիղատոսի։

6 Բայց ըստ տօնի արձակէր նոցա զմի ոք զկապեալ, զոր ինքեանք խնդրէին։

7 Եւ էր՝ որում անուն էր Բարաբբա՝ կապեալ ընդ խռովիչսն, որոց 'ի խռովելն՝ այր մի սպանեալ էր։

8 'Ի ձայն բարձր սկսաւ աղաղակել ամբոխն եւ խնդրել՝ որպէս սովոր էր, զի արձակեսցէ նոցա ըզԲարաբբայն։

9 Պատասխանի ետ Պիղատոս եւ ասէ ցնոսա. Կամի՞ք՝ զի արձակեցից ձեզ զթագաւորն Հրէից։

10 Քանզի գիտէր՝ թէ առ նա-

---

անգամ չը խօսած՝ դու երեք անգամ ինձ կուրանաս. եւ սկսաւ լաց լինել։

1 Եւ շուտով առաւօտանց՝ քահանայապետները ծերերին ու կարգացողներին հետ՝ եւ բոլոր ատեանն էլ խորհուրդ արին, եւ Յիսուսին կապեցին՝ եւ տարան մատնեցին ա Պիղատոսին։

2 Եւ Պիղատոս նորան հարցրուց եւ ասաց. Դու ես Հրէից բ թագաւորը. Նա պատասխան տուաւ նորան եւ ասաց. Դու ես ասում։

3 Եւ քահանայապետները շատ չարախօսութիւն էին անում նորանից. եւ նա բնաւ պատասխան չէր տալիս։

4 Բայց Պիղատոս նորէն հարցընում էր նորան. Բնաւ պատասխան չես տալիս, տե՛ս որքան չարախօսութիւն են անում գ քեզանից։

5 Եւ Յիսուս նորանից ետեւ ոչ մին պատասխան չը տուաւ, մինչեւ որ՝ Պիղատոսը շատ դ զարմանում էր։

6 Բայց տօնին ժամանակին մին բանտարկեալ էր արձակում նորանց համար՝ որին որ իրենք ե խնդրումէին։

7 Եւ մինը կար՝ որ նորան անունն Բարաբբա էր՝ խռովութիւն անողներին հետ կապուած, որ իրենց խռովութեանը մին մարդ էին սպանել։

8 Ամբոխն սկսեց բարձր ձայնով աղաղակել, եւ խնդրել՝ ինչպէս որ սովոր էր, որ Բարաբբային արձակէ նորանց համար։

9 Պիղատոս պատասխան տուաւ եւ նորանց ասաց. Կամենումէք՝ որ Հրէից թագաւորն արձակեմ ձեզ համար։

10 Պատճառն որ՝ գիտումէր որ քա-

---

ա Սաղ. Բ. 2. Մատթ. ԻԷ. 1. Ղուկ. ԻԲ. 66. ԻԳ. 1. Յովհ. ԺԸ. 28. Գործ. Գ. 13. Դ. 23. բ Մատթ. ԻԷ. 11. գ Մատթ. ԻԷ. 13. դ Եսայ. ԾԳ. 7. Յովհ. ԺԹ. 9. ե Մատթ. ԻԷ. 15. Ղուկ. ԻԳ. 17. Յովհ. ԺԸ. 39.

խանձու մատնեցին զնա քահանայապետքն ։
11 Որք եւ զամբոխն հաւանեցուցին՝ զի արձակեսցէ նոցա զԲարաբբայն ։
12 Դարձեալ պատասխանի ետ Պիղատոս եւ ասէ ցնոսա ․ Իսկ զինչ կամիք՝ թէ արարից զարքայն Հրէից ։
13 Եւ նոքա դարձեալ աղաղակէին՝ յուզեալք 'ի քահանայապետիցն, 'Ի խաչ հան զդա ։
14 Ասէ ցնոսա Պիղատոս ․ Զինչ ինչ չար արարեալ իցէ դորա ․ եւ նոքա առաւել եւս աղաղակէին եւ ասէին ․ 'Ի խաչ հան զդա ։
15 Իսկ Պիղատոս իբրեւ զմիտս կամեցաւ հաճել զամբոխին, արձակեաց նոցա զԲարաբբայն ․ եւ զՅիսուս զան հարեալ ետ 'ի ձեռս, զի 'ի խաչ ելանիցէ ։
16 Եւ զինուորքն տարան զնա 'ի ներքս 'ի գաւիթն՝ ուր հրապարակն էր ․ եւ կոչեն միանգամայն զամենայն զգունդն ։
17 Եւ զգեցուցանեն նմա քղամիդ կարմիր եւ ծիրանիս, եւ եդին 'ի գլուխ նորա պսակ արարեալ 'ի փշոց ։
18 Եւ սկսան ողջոյն տալ նմա՝ եւ ասել ․ Ո՛ղջ եր արքայդ Հրէից ։
19 Եւ ծեծէին զգլուխն եղեգամբ, եւ թքանէին ընդ երեսս, եւ 'ի ծունր իջեալ երկրպագանէին նմա ։
20 Եւ իբրեւ կատակեցին զնա՝ մերկացուցին զքղամիդն եւ զծիրանիս, եւ զգեցուցին նմա զիւր հանդերձն, եւ ածին արտաքս, զի 'ի խաչ հանցեն զնա ։
21 Եւ ածէին պահակ զՍիմոն Կիւրենացի՝ որ ընդ այն անցանէր՝ եկեալ յագարակէ, զհայրն Աղեքսանդրի եւ Ռուփայ ․ զի բարձցէ զխաչափայտն նորա ։

հանայապետները նախանձով էին մատնել նորան ,
11 Որ ամբոխին էլ համոզեցին՝ որ Բարաբբային արձակէ նորանց դ համար ։
12 Պիղատոս նորէն պատասխան տուաւ եւ նորանց ասաց ․ Այս Հրէից թագաւորին ինչ էք ուզում՝ որ անեմ ։
13 Եւ նորանք քահանայապետներից գրգռված դարձեալ աղաղակեցին՝ Խաչ հանէ դորան ։
14 Պիղատոս նորանց ասաց ․ Դա ինչ չար բան է արել ․ եւ նորանք էլ աւելի էին աղաղակում եւ ասում ․ Խաչ հանէ դորան ։
15 Բայց Պիղատոս՝ որովհետեւ կամեցաւ ամբոխի կամքը կատարել, Բարաբբային արձակեց նորանց ե համար ․ եւ Յիսուսին ծեծեց, եւ ձեռները տուաւ, որ խաչվի ։
16 Եւ զինուորները նորան տարան ներսի սրահն՝ որտեղ որ հրապարակն ը էր ․ եւ բոլոր գունդը մին տեղ կանչեցին ։
17 Եւ նորան կարմիր քղամիդ եւ ծիրանի շորեր հագցրին, եւ փշերից շինած պսակ նորան գլուխը դրին,
18 Եւ սկսեցին նորան ողջոյն տալ՝ եւ ասել ․ Ո՛ղջ կաց Հրէից թագաւոր ։
19 Եւ նորան գլուխը եղէգով թակում ու երեսին թքումէին՝ եւ ծունր դնելով երկրպագութիւն էին տալիս նորան ։
20 Եւ երբոր ծաղր արին նորան՝ այն քղամիդըն ու ծիրանի շորերը նորանից հանեցին, եւ իրեն շորերը հագցրին իրեն, եւ դուրս տարան, որ խաչ հանեն նորան ։
21 Եւ ուժով բռնեցին Սիմոն Կիւրենացուն, Աղէքսանդրի եւ Ռուփի հայրն՝ որ յանդիցն եկած այն տեղիցն անցանում էր ․ որ նորա խաչափայտը թ վեր առնէ ։

դ Մատթ. ԻԷ. 20 ։ Գործ. Գ. 14 ։ | ե Մատթ. ԻԷ. 26 ։ Յովհ. ԺԹ. 1. 16 ։ ը Մատթ. ԻԷ. 27 ։ | թ Մատթ. ԻԷ. 32 ։ Ղուկ. ԻԳ. 26 ։

22 Եւ ածեն զնա ՚ի Գողգոթա՝
տեղի մի, որ թարգմանի՝ տեղի կա-
ռափելոյ:
23 Եւ տային նմա գինի զմռսեալ,
եւ նա ոչ առ. եւ հանեն զնա
՚ի խաչ:
24 Եւ բաժանեցին զհանդերձս նո-
րա, արկեալ վիճակս ՚ի վերայ՝ թէ
ո զինչ առնուցու:
25 Էր ժամ երրորդ՝ եւ հանին
զնա ՚ի խաչ:
26 Եւ էր գիր վնասու նորա գրե-
եալ՝ թէ Թագաւոր է Հրէից:
27 Եւ ընդ նմա հանեն ՚ի խաչ
երկուս աւազակս. մի ընդ աջմէ՝
եւ մի ընդ ահեկէ նորա:
28 Եւ լցաւ գիրն, որ ասէ՝ թէ
Ընդ անօրէնս համարեցաւ:

29 Եւ որք անցանէինն՝ հայհոյէին
զնա շարժեալ զգլուխս իւրեանց եւ
ասէին. Վա՜հ, որ քակէիր զտաճարն՝
եւ զերիս աւուրս շինէիր,

30 Ապրեցո զանձն քո եւ էջ ՚ի
խաչէդ:
31 Նոյնպէս եւ քահանայապետքն
այպն արարեալ ընդ միմեանս հան-
դերձ դպրօքն՝ ասէին. Զայլս ապ-
րեցոյց՝ զանձն ոչ կարէ ապրեցու-
ցանել:
32 Քրիստոսդ արքայդ Իսրայէլի,
իջցէ այժմ ՚ի խաչէդ այդի, զի տես-
ցուք եւ հաւատասցուք զնա. եւ
որ ընդ նմա ՚ի խաչին ելեալ էին՝
նախատէին զնա:

33 Եւ իբրեւ վեց ժամ եղեւ՝ խա-
ւար կալաւ զամենայն երկիր մին-
չեւ ցինն ժամ:
34 Եւ յիններորդ ժամուն աղա-

22 Եւ տարան նորան Գողգոթա,
մին տեղ՝ որ կը թարգմանուի գլխա-
տելոյ ժ տեղ:
23 Եւ նորան զմռսած գինի էին
տալիս, բայց նա ի չառաւ. եւ նո-
րան խաչ հանեցին:
24 Եւ նորա շորերը բաժանեցին,
վիճակ ձգելով նորանց վերայ՝ թէ
ով ինչ պիտի լ առնէ:
25 Ժամին երեքն էր՝ եւ նորան
խաչ խ հանեցին:
26 Եւ նորա վնասին գիրը գրուած
էր՝ թէ Հրէից թագաւորն ծ է:
27 Եւ նորան հետ երկու աւազակ
խաչ հանեցին. մէկը նորա աջ կող-
մը՝ եւ մէկը ձախ կ կողմը:
28 Եւ կատարուեցաւ այն գիրն,
որ ասում՝ թէ Անօրէններին հետ
հ համարուեցաւ:
29 Եւ նորանք՝ որ այնտեղով ան-
ցանում էին, նորան հայհոյում էին,
իրենց գլխները շարժում եւ ձ ա-
սում. Վա՜հ որ տաճարը քանդում
էիր՝ եւ երեք օրում ղ շինում,
30 Ապրեցրու քո անձը եւ վէր
եկ խաչիցդ:
31 Այնպէս էլ քահանայապետները
կարդացողներին հետ իրար մէջ ծաղր
էին անում՝ եւ ասում. Ուրիշներին
ապրեցրուց՝ իրեն անձը չի կարո-
ղանում ապրեցնել:
32 Այդ Քրիստոսդ՝ Իսրայէլի թա-
գաւորը թող հիմիկ այդ խաչիցդ
վէր գայ, որ տեսնենք եւ զորան
հաւատանք. եւ նորանք էլ որ նո-
րա հետ խաչուած էին, նորան նա-
խատինք էին ճ տալիս:
33 Եւ երբոր ժամը վեցն էրաւ՝
խաւար ամէն երկրին բռնեց մինչեւ
ինը մ ժամը:
34 Եւ ինը ժամին Յիսուս մեծ ձայ-

ժ Մատթ. ԻԷ. 33:
Ղու. ԻԳ. 33:
Յովհ. ԺԹ. 17:
ի Մատթ. ԻԷ. 34:
լ Սաղ. ԻԲ. 18:
Ղու. ԻԳ. 34:
Յովհ. ԺԹ. 23:
խ Մատթ. ԻԷ. 45:
Ղու. ԻԳ. 44:
Յովհ. ԺԹ. 14:
ծ Մատթ. ԻԷ. 37:
Յովհ. ԺԹ. 19:
կ Մատթ. ԻԷ. 38:
հ Եսայ. ԾԳ. 12:
Ղու. ԻԲ. 37:
ձ Սաղ. ԻԲ. 7:
ղ Մր. ԺԴ. 58:
Յովհ. Բ. 19:
ճ Մատթ. ԻԷ. 44:
Ղու. ԻԳ. 39:
մ Մատթ. ԻԷ. 45:
Ղու. ԻԳ. 44:

աղաղակեաց Յիսուս 'ի ձայն մեծ, եւ
ասէ. Էլի՛ Էլի՛ լամա սաբաքթանի.
որ թարգմանի՝ Աստուած իմ, Աս-
տուած իմ, ընդէ՞ր թողեր զիս։
35 Եւ ոմանք 'ի նոցանէ՝ որ շուրջն
կային անդ, իբրեւ լուան, ա-
սէին՝ թէ Զեղիա կարդայ։

36 Եւ ընթացեալ մի ոմն՝ ելից
սպունգ մի քացախով, եւ հարեալ
զեղեգան՝ տայր ըմպել նմա, եւ ա-
սէ. Թոյլ տուք տեսցուք՝ գա՞յ Ե-
ղիա իջուցանել զդա։
37 Եւ Յիսուս արձակեաց ձայն
մեծ՝ եւ եհան զոգի։
38 Եւ վարագոյր տաճարին պա-
տառեցաւ յերկուս՝ 'ի վերուստ մին-
չեւ 'ի խոնարհ։
39 Եւ տեսեալ հարիւրապետին՝ որ
կայր անդ, եթէ աղաղակեաց եւ
եհան զոգի, ասէ. Արդարեւ այրս
այս Որդի Աստուծոյ էր։

40 Էին եւ կանայք՝ որ հայէին 'ի
հեռաստանէ. յորս էր Մարիամ Մագ-
դաղենացի, եւ Մարիամ Յակովբու
փոքրկան, եւ Յովսեայ մայրն, եւ
Սողոմէ։
41 Որք յորժամ էին 'ի Գալիլեա՝
գնային շրջէին նորա եւ պաշտէին
զնա, եւ այլ բազում կանայք՝ որ
ընդ նմա խաղ ելեալ էին յԵրուսա-
ղէմ։
42 Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ քանզի
ուրբաթ էր՝ որ 'ի շաբաթն մտանէր,

43 Եկեալ Յովսէփ, որ յԱրիմա-
թեայն էր՝ այր պարկեշտ նախա-
րար, որ եւ ինքն իսկ ակնունէր
արքայութեանն Աստուծոյ. համար-
ձակեցաւ եմուտ առ Պիղատոս, եւ
խնդրեաց զմարմինն Յիսուսի։

ձայնով աղաղակեց եւ ասաց. Էլի Էլի
լամա [ա] սաբաքթանի. որ կը թարգ-
մանուի՝ Իմ Աստուած, իմ Աստ-
ուած, ինչու թողիր ինձ։
35 Եւ մէկ քանիներ նորանցից՝ որ
նորան մօտ կանգնած էին, երբոր
լսեցին, ասում էին՝ թէ Եղիային է
կանչում։
36 Եւ մինը վազեց մին սպունգ
քացախով լցրուց, եւ եղէգի վերայ
[բ] անցրուց, եւ տուաւ նորան՝ որ
խմէ, եւ [գ] ասաց. Թող տեսնենք՝ թէ
Եղիան կը գայ որ նորան վէր բերէ։
37 Եւ Յիսուս մեծ ձայն արձակեց՝
եւ հոգին [դ] հանեց։
38 Եւ տաճարի վարագոյրն երկու-
կտոր պատառուեցաւ՝ վերեւից մին-
չեւ ցածը։
39 Եւ հարիւրապետն՝ որ այնտեղ
կանգնած [զ] էր, երբոր տեսաւ՝ թէ
աղաղակեց եւ հոգին հանեց, ասաց.
Ճշմարիտ որ՝ այս մարդս Աստուծոյ
Որդի էր։
40 [է] Կանայք էլ կային՝ որ հեռու-
անց մտիկ էին [ը] տալիս. որ նորանց
միջումն էր Մարիամ Մագդաղենա-
ցին, եւ Մարիամ՝ փոքր Յակոբի եւ
Յօսէի մայրը, եւ Սողոմէն,
41 Որ նորանք՝ երբոր նա Գալիլ-
եա էր՝ նորա ետեւէն ման էին գա-
լիս եւ նորան [թ] ծառայում էին. եւ
էլ ուրիշ շատ կանայք՝ որ իսկ նո-
րան հետ Երուսաղէմ էին եկել։
42 Եւ երբոր իրիկուն [ժ] էլաւ, ին-
չուոր՝ ուրբաթ օր էր՝ որ շաբաթն
էր մտնում,
43 Յօսէփն եկաւ՝ որ Արիմաթիա-
յեցն էր՝ պարկեշտ իշխանաւոր
մարդ՝ որ ինքն էլ Աստուծոյ արքա-
յութեանն [ի] սպասում էր. սա համար-
ձակեցաւ՝ Պիղատոսի մօտ մտաւ,
եւ Յիսուսին մարմինը խնդրեց։

ա Սաղ. ԻԲ. 1.
Մատթ. ԻԷ. 46.
բ Մատթ. ԻԷ. 48.
Յովհ. ԺԹ. 29.
գ Սաղ. ԿԸ. 21.
դ Մատթ. ԻԷ. 50.
Ղուկ. ԻԳ. 46.
Յովհ. ԺԹ. 30.
ե Մատթ. ԻԷ. 51.
Ղուկ. ԻԳ. 45.
զ Մատթ. ԻԷ. 54.
Ղուկ. ԻԳ. 47.
է Մատթ. ԻԷ. 55.
Ղուկ. ԻԳ. 49.
ը Սաղ. ԼԸ. 11.
թ Ղուկ. Ը. 2, 3.
ժ Մատթ. ԻԷ. 57.
Ղուկ. ԻԳ. 50.
Յովհ. ԺԹ. 38.
ի Ղուկ. Բ. 25. 38.

44 Եւ Պիղատոս զարմացաւ՝ թէ այնչափ վաղ մեռաւ. եւ կոչեցեալ առ ինքն զհարիւրապետն, եհարց զնա եւ ասէ՝ թէ Արդարեւ այնչափ վաղ մեռաւ։

45 Եւ իբրեւ ստուգեաց ՚ի հարիւրապետէն անտի, շնորհեաց զմարմինն Յովսեփայ։

46 Եւ Յովսեփի գնեալ կտաւ՝ եւ իջուցեալ զնա պատեաց կտաւովն, եւ եդ ՚ի գերեզմանի, զոր էր փորեալ ՚ի վիմէ. եւ թաւալեցոյց վէմ մի ՚ի դուռն գերեզմանին։

47 Իսկ Մարիամ Մագդաղենացի եւ Մարիամ Յակոբայ եւ Յովսեայ, տեսին զտեղին՝ ուր եդաւ։

44 Եւ Պիղատոս զարմացաւ՝ որ այնքան շուտով մեռաւ. եւ հարիւրապետին իրեն մօտ կանչելով, նորան հարցուց եւ ասաց՝ թէ Իրաւ է որ այնքան շուտով մեռաւ։

45 Եւ երբոր այն հարիւրապետիցն տեղեկացաւ՝ մարմինը Յովսէփին շնորհեց։

46 Եւ Յովսէփ կտաւ գնեց՝ եւ նորան վէր բերաւ եւ կտաւով պատեց, եւ գերեզմանին մէջ դրաւ՝ որ նորան քարից փորել ր էր. եւ մէկ մեծ քար ձգեց գերեզմանի դրան առաջին։

47 Բայց Մարիամ Մագդաղենացին եւ Յակոբի եւ Յովսէի Մարիամը տեսին այն տեղն՝ որ դրվաւ։

## ԳԼ. ԺԶ

1 Եւ իբրեւ անց շաբաթն, Մարիամ Մագդաղենացի եւ Մարիամ Յակոբայ եւ Սողոմէ՝ գնեալ պատրաստեցին խունկս, զի եկեալ օծցեն զնա։

2 Եւ ընդ առաւօտս միաշաբաթուն գան ՚ի գերեզմանն ընդ արեւագալն։

3 Եւ ասէին ցմիմեանս՝ Ո՞վ թաւալեցուսցէ մեզ զվէմն ՚ի դրաց գերեզմանին։

4 Եւ հայեցեալ տեսին՝ զի թաւալեցուցեալ էր զվէմն ՚ի գերեզմանէն. քանզի էր մեծ յոյժ։

5 Եւ մտեալ ՚ի ներքս ՚ի գերեզմանն՝ տեսին երիտասարդ մի, զի նստէր ընդ աջմէ կողմանէ՝ զգեցեալ պատմուճան սպիտակ, եւ զարհուրեցան։

6 Եւ նա ասէ ցնոսա. Մի երկնչիք, զՅիսուս խնդրէք զՆազովրեցի զխաչելեալն, յարեաւ՝ չէ աստ. ահաւասիկ տեղին՝ ուր եդին զնա։

1 Եւ երբոր շաբաթն անցաւ, Մարիամ Մագդաղենացին եւ Յակոբի Մարիամն ու ա Սողոմէն՝ գնացին խունկ պատրաստեցին, որ գան նորան բ օծեն։

2 Եւ միաշաբաթի օրն առաւօտուն արեգակին ծագելոյ ժամանակին՝ եկին գ գերեզմանը,

3 Եւ իրար ասամէին՝ Ո՞վ պիտի այն քարը մեզ համար գերեզմանի դրանէցը թաւալէ։

4 Եւ նայեցին տեսին՝ որ քարը գերեզմանիցն հեռու էր թաւալած. ինչու որ շատ մեծ էր։

5 Եւ գերեզմանին մէջն որ մտան, մէկ երիտասարդ տեսին՝ որ աջ կողմը նստած էր՝ սպիտակ վերարկու հագած, եւ շատ դ վախեցան։

6 Եւ նա ասաց նորանց. ե Մի վախնաք, դուք Յիսուս Նազովրեցի խաչուածն էք ուզում. նա յարութիւն առաւ. այստեղ չէ. ահա այն տեղն՝ ուր որ նորան դրին։

ր Մատթ. ԻԷ. 59, 60. Ղուկ. ԻԳ. 53. Յովհ. ԺԹ. 40.

ա Մատթ. ԻԸ. 1. Ղուկ. ԻԴ. 1. Յովհ. Ի. 1.

բ Ղուկ. ԻԳ. 56.

գ Ղուկ. ԻԴ. 1. Յովհ. Ի. 1.

դ Ղուկ. ԻԴ. 3. Յովհ. Ի. 11, 12.

ե Մատթ. ԻԸ. 5, 6, 7.

7 Այլ երթայք ասացէք աշա-
կերտաց նորա եւ զՊետրոս՝ եթէ ա-
հա յառաջագոյն երթայ քան զձեզ
'ի Գալիլեա, անդ տեսանիցէք զնա՝
որպէս ասացն ձեզ:
8 Եւ իբրեւ լուան՝ ելին եւ փա-
խեան 'ի գերեզմանէն, քանզի զա-
հի հարեալ էին. եւ ոչ ումեք ինչ
ասացին, զի երկնչէին:

9 Յարուցեալ Յիսուս առաւօ-
տուն առաջնոյն միաշաբաթուն՝ ե-
րեւեցաւ Մարիամու Մագդաղե-
նացւոյ, յորմէ հանեալ էր զեօթն
դեւն:
10 Եւ նա երթեալ պատմեաց այ-
նոցիկ՝ որ ընդ նմայն էին, մինչդեռ
սգային եւ լային:
11 Նոքա իբրեւ լուան՝ թէ կեն-
դանի է, եւ երեւեցաւ նմա, ոչ
հաւատացին:
12 Յետոյ երեւեցաւ այլով կեր-
պարանաւ՝ որք երթային յանդաս-
տան:
13 Նոքա չոգան պատմեցին այ-
լոց, եւ ոչ նոցա հաւատացին:

14 Յետոյ մինչդեռ բազմեալ էին
մետասանքն՝ երեւեցաւ նոցա, եւ
թշնամանեաց զանհաւատութիւն նո-
ցա եւ զխստասրտութիւն. զի որ
երեւեցաւ նոցա յարուցեալ 'ի մե-
ռելոց՝ եւ նոքա ոչ հաւատացին:

15 Եւ ասէ ցնոսա. Երթայք յաշ-
խարհ ամենայն, եւ քարոզեցէք
զաւետարանն ամենայն արարածոց:
16 Որ հաւատայ եւ մկրտեսցի՝
կեցցէ, եւ որ ոչն հաւատայ՝ դա-
տապարտեսցի:
17 Նշանք՝ այսոքիկ՝ որ հաւա-

7 Բայց գնացէք նորա աշակերտա-
ներին եւ Պետրոսին ասացէք՝ թէ
ահա նա ձեզանից առաջ կը գնայ
Գալիլեա. այնտեղ կը տեսնէք նո-
րան ինչպէս որ նա ասաց դ ձեզ:
8 Եւ երբոր լսեցին՝ դուրս ելին
եւ փախան գերեզմանիցը, պատ-
ճառոր՝ ահով բռնուած էին, եւ
բնաւ մինին բան ե չասացին. ինչու
որ վախնումէին:
9 Յիսուս որ յարութիւն առաւ՝
միաշաբթի առաւօտանց առաջ երե-
ւեցաւ Մարիամ զ Մագդաղենացուն՝
որ նորանից եօթը դեւ էր է հա-
նել:
10 Եւ նա գնաց պատմեց նորանց՝
որ նորան հետն ը էին, քանի որ
սուգ եւ լաց էին անում:
11 Նորանք երբոր լսեցին՝ թէ
կենդանի է, եւ երեւեցաւ նորան՝
թ չհաւատացին:
12 Յետոյ ուրիշ կերպարանքով
երեւեցաւ նորանց՝ որ յանդն էին
ժ գնում:
13 Նորանք գնացին ուրիշներին
պատմեցին՝ եւ նորանց էլ չհաւա-
տացին:
14 Յետոյ՝ երբոր տասնմէկը սե-
ղան էին նստած՝ նորանց երեւե-
ցաւ եւ նորանց անհաւատութիւնն
ու քարասրտութիւնը յանդիմանեց՝
որ չհաւատացին նորանց, որ նո-
րան մեռելների միջից յարութիւն
առած երեւեցաւ ի նորանց:
15 Եւ նորանց լ ասաց. Գնացէք
ամէն աշխարհք, եւ աւետարանն ա-
մէն ստեղծուածներին խ քարոզեցէք:
16 Ով որ հաւատայ եւ մկրտուի՝
ծ կապրի. եւ ով որ չհաւատայ՝
կ կը դատապարտուի:
17 Նորանց՝ որ հաւատումեն, այս

դ Մատթ. ԻԶ. 32: Գլ. ԺԴ. 28:
ե Մատթ. ԻԸ. 8: Ղու. ԻԴ. 9:
զ Յովհ. Ի. 14:
է Ղու. Ը. 2:
ը Ղու. ԻԴ. 10: Յովհ. Ի. 18:
թ Ղու. ԻԴ. 11:
ժ Ղու. ԻԴ. 13:
ի Ղու. ԻԴ. 36: Յովհ. Ի. 19: Ա Կորնթ. ԺԵ. 5:
լ Մատթ. ԻԸ. 19: Յովհ. ԺԵ. 16:
խ Կող. Ա. 23:
ծ Յովհ. Գ. 18. 36: Գործ. Բ. 38: ԺԶ. 30, 31, 32: Հռովմ. Ժ. 9: Ա Պետ. Գ. 21:
կ Յովհ. ԺԲ. 48:

ատանն , երթիցեն զհետ այնոցիկ · յանուն իմ դեւս հանիցեն , լեզուս խօսեսցին ,
18 Ի ձեռս իւրեանց օձս բարձ-
ցեն , եւ եթէ մահացու ինչ դեղ արբցեն՝ նոցա ինչ ոչ վնասեսցէ · 'ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն՝ եւ բժշկեսցին ։
19 Եւ ինքն Տէր Յիսուս յետ խօ-
սելոյն ընդ նոսա՝ համբարձաւ յեր-
կինս , եւ նստաւ ընդ աջմէ Հօր ։
20 Եւ նոքա ելեալ քարոզէին ընդ ամենայն երկիր՝ Տեառն գործակցու-
թեամբ · եւ զբանն հաստատէին ամենայն նշանօք՝ որք երթային զհետ նոցա ։

նշաններս կը հետեւին · իմ անունովս դեւեր [ղ] կը հանեն , լեզուներ [ճ] կը խօսին ,
18 Իրենց ձեռներովը օձեր վեր կառնեն , եւ թէ որ մէկ մահացու դեղ խմեն՝ վնաս չի տալ [մ] նորանց · հի-
ւանդներուն վերայ ձեռք կդնեն՝ եւ [յ] կբժշկին ։
19 Եւ ինքը՝ Տէր Յիսուսը նորանց հետ խօսելուն [ն] ետեւ՝ երկինքն [շ] համբարձաւ , եւ Հօր աջ կողմը [ո] նստաւ ։
20 Եւ նորանք դուրս գնացին , բոլոր աշխարհքին մէջ քարոզեցին՝ Տէրն օգնականութեամբը , եւ Աստուծոյ խօսքը հաստատեցին [չ] նշանաց ։

# ԱՒԵՏԱՐԱՆ
## ԸՍՏ
# ՂՈՒԿԱՍՈՒ

---

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 ՔԱՆԶԻ բազումք յօժարեցին վերստին կարգել զպատմութիւնն վասն իրացն հաստատելոց 'ի մեզ ·
2 Որպէս աւանդեցին մեզ՝ որ 'ի սկզբանէ ականատեսք եւ սպասաւորք եղեն բանին ։
3 Կամ եղեւ եւ ինձ , որ 'ի սկզբա-
նէ զհետ երթեալ էի ամենայնի՝ ճշմարտութեամբ կարգաւ գրել քեզ՝ քաջդ Թէոփիլէ ·

1 ՈՐՈՎՀԵՏԵՒ շատ մարդիկ յօ-
ժարեցին՝ որ նոր կարգեն այն բա-
ներին պատմութիւնը՝ որ մեր մէջն հաստատուեցան ·
2 Ինչպէս որ մեզ աւանդեցին [ա] նորանք՝ որ սկզբէն իրենց աչ-
քովը տեսան եւ սպասաւոր էղան [բ] բանին ·
3 Ես էլ , որ սկզբէն ամէն բա-
ներին ճշմարտութեամբ [գ] հետեւեցի՝ կամեցայ , որ կարգով [դ] գրեմ քեզ՝ ով պատուական [ե] Թէոփիլէ ·

ղ Ղու. Ժ. 17 ։ Գործ. Ե. 16 ։ Ը. 7 ։ ԺԶ. 18 ։ ԺԹ. 12 ։
ճ Գործ. Բ. 4 ։ Ժ. 46 ։ ԺԹ. 6 ։ Ա Կորնթ. ԺԲ. 10. 28 ։
մ Ղու. Ժ. 19 ։ Գործ. ԻԸ. 5 ։
յ Գործ. Ե. 15. 16 ։ Թ. 17 ։ ԻԸ. 8 ։ Յակ. Ե. 14, 15 ։
ն Գործ. Ա. 2 ։ 3 ։
շ Ղու. ԻԴ. 51 ։
ո Սաղ. ՃԺ. 1 ։ Գործ. Է. 55 ։
չ Գործ. Ե. 12 ։ ԺԴ. 3 ։ Ա Կորնթ. Բ. 4, 5 ։ Եբր. Բ. 4 ։

—

ա Եբր. Բ. 3 ։ Ա Պետ. Ե. 1 ։ Բ Պետ. Ա. 16 ։ Ա Յովհ. Ա. 1 ։
բ Մարկ. Ա. 1 ։ Յովհ. ԺԵ. 27 ։
գ Գործ. ԺԵ. 19. 25. 28 ։ Ա Կորնթ. Է. 40 ։
դ Գործ. ԺԱ. 4 ։
ե Գործ. Ա. 1 ։

4 Զի ծանիցես զբանիցն՝ որոց ա-
շակերտեցար, զճշմարտութիւն։
5 Եւ եղեւ յաւուրս Հերովդի
արքայի Հրէաստանի, քահանայ ոմն
անուն Զաքարիա 'ի դասակարգէ
Աբիայ. եւ կին նորա 'ի դստերաց
Ահարոնի, եւ անուն նորա Եղի-
սաբեթ։
6 Եւ էին արդարք երկոքին ա-
ռաջի Աստուծոյ, գնային յամենայն
պատուիրանս եւ յիրաւունս Տեառն
անարատք։
7 Եւ ոչ գոյր նոցա որդեակ,
քանզի Եղիսաբեթ ամուլ էր. եւ
երկոքեան անցեալ էին զաւուրբք
իւրեանց։
8 Եւ եղեւ 'ի քահանայանալն նո-
րա ըստ կարգի աւուրցն հասանե-
լոյ առաջի Աստուծոյ,
9 Ըստ օրինի քահանայութեանն՝
ելանէր նմա խունկ արկանել մտեալ
'ի տաճարն Տեառն։
10 Եւ ամենայն բազմութիւն ժո-
ղովրդեանն կային յաղօթս արտա-
քոյ՝ 'ի ժամ խնկոցն։
11 Եւ երեւեցաւ նմա հրեշտակ
Տեառն. զի կայր ընդ աջմէ սեղա-
նոյ խնկոցն։
12 Եւ խռովեցաւ Զաքարիա իբ-
րեւ ետես, եւ անկաւ ահ 'ի վերայ
նորա։
13 Ասէ ցնա հրեշտակն Տեառն.
Մի երկնչիր Զաքարիա՝ զի լսելի
եղեն աղօթք քո, եւ կին քո Եղի-
սաբեթ ծնցի քեզ որդի՝ եւ կոչես-
ցես զանուն նորա Յովհաննէս։

4 Որ իմանաս այն բաների ճըշ-
մարտութիւնը, որ դ սովորեցիր։
5 Եւ Հերովդէս Հրէաստանի թա-
գաւորին օրերը, մին քահանայ է-
լաւ Զաքարիա ե անունով Աբիայի
դասակարգութենիցը. եւ նորա կինն
Ահարոնի աղջիկներիցը, եւ նորա
անունը զ Եղիսաբեթ։
6 Եւ երկուսն էլ Աստուծոյ առա-
ջին արդար էին՝ եւ Տէրի ամէն
պատուիրանքներումն ու իրաւունք-
ներումն անմեղ էին է գնում։
7 Բայց նորանք որդի չունէին,
պատճառն որ՝ Եղիսաբեթն ամուլ
էր. եւ երկուսն էլ իրենց օրերին
անցուցել էին։
8 Եւ էլաւ որ՝ երբոր նա Աս-
տուծոյ առաջին քահանայութիւն
էր անում՝ իրեն հասած կարգի ը օ-
րերումը,
9 Քահանայութեան սովորու-
թեան պէս վիճակ ընկաւ նորան՝ որ
Աստուծոյ տաճարը մտնէ, եւ խըն-
կարկութիւն թ անէ։
10 Եւ ժողովրդի ամէն բազմու-
թիւնը դուրսն աղօթք էին անում՝
խնկարկութեան ժ ժամանակին։
11 Եւ Տէրի հրեշտակն երեւեցաւ
նորան. որ կանգնած էր խնկի սե-
ղանի աջ ի կողմը։
12 Եւ Զաքարիան երբոր տեսաւ՝
շփոթվեցաւ, եւ վախ ընկաւ նորան
լ վերայ։
13 Տէրի հրեշտակը նորան ասաց.
Մի վախենար Զաքարիա. ինչու որ՝
քո աղօթքդ լսվեցաւ, եւ քո Ե-
ղիսաբեթ կինդ մին որդի կծնի
քեզ՝ եւ նորա անունը Յոհաննէս
խ կըկանչես։

դ Յովհ. Ի. 31.
ե Մատթ. Բ. 1.
զ Ա Մնաց. ԻԴ. 10. 19. Նեեմ. ԺԲ. 4. 17.
է Ծննդ. Է. 1. ԺԵ. 1. Գ Թագ. Թ. 4. Դ Թագ. Ի. 3. Յոբ. Ա. 1. Գործ. ԻԳ. 1. ԻԴ. 16. Փիլիպ. Գ. 6.
ը Ա Մնաց. ԻԴ. 19. Բ Մնաց. Ը. 14. ԼԱ. 2.
թ Ելից. Լ. 7, 8. Ա Թագ. Բ. 28. Ա Մնաց. ԻԳ. 13. Բ Մնաց. ԻԹ. 11.
ժ Ղեւ. ԺԶ. 17. Յայտ. Ը. 3, 4.
ի Ելից. Լ. 1.
լ Դատ. Զ. 22. ԺԳ. 22. Դան. Ժ. 8. Համար. 29. Գղ. Բ. 9. Գործ. Ժ. 4. Յայտ. Ա. 17.
խ Համար. 60. 63.

14 Եւ եղիցի քեզ՝ ուրախութիւն
եւ ցնծութիւն , եւ բազումք 'ի ծը-
նընդեան նորա խնդասցեն .
15 Զի եղիցի մեծ առաջի Տեառն .
եւ գինի եւ օղի մի արբցէ . եւ Հոգ-
ւով Սրբով լցցի անդստին յորովայ-
նէ մօր իւրոյ :
16 Եւ զբազումս յորդւոցն Իսրա-
յէլի դարձուսցէ 'ի Տէր Աստուած
իւրեանց :
17 Եւ ինքն եկեսցէ առաջի նորա
հոգւով զօրութեամբ Եղիայի , դար-
ձուցանել զսիրտս հարց յորդիս , եւ
զանհաւանս յիմաստութիւն արդա-
րոց . պատրաստել Տեառն ժողո-
վուրդ կազմեալ :

18 Եւ ասէ Զաքարիա ցհրեշտա-
կըն . Եւ ի՞ւ գիտացից զայդ , զի
ես ծեր եմ , եւ կին իմ անցեալ զա-
ւուրբք իւրովք :
19 Պատասխանի ետ հրեշտակն եւ
ասէ ցնա . Ես եմ Գաբրիէլ՝ որ կամ
առաջի Աստուծոյ , եւ առաքեցայ
խօսել ընդ քեզ՝ եւ աւետարանել
քեզ զայդ :

20 Եւ ահա եղիցիս համր , եւ մի
կարասցես խօսել մինչեւ ցօրն՝ յո-
րում այդ լինիցի . փոխանակ զի ոչ
հաւատացեր բանից իմոց՝ որք լցցին
'ի ժամանակի իւրեանց :

21 Եւ ժողովուրդն ակն ունէր Զա-
քարիայ , եւ զարմանային ընդ յա-
մելն նորա 'ի տաճարին :
22 Եւ իբրեւ ել՝ ոչ կարէր խօսել
ընդ նոսա . եւ իմացան՝ թէ տեսիլ
ետես 'ի տաճարի . եւ նա նշանացի
խօսէր ընդ նոսա , եւ կայր պա-
պանձեալ :

14 Եւ քեզ ուրախութիւն եւ ցըն-
ծութիւն կըլինի , եւ շատ մարդիկ
նորա ծնանելովը հ կուրախանան .
15 Ինչու որ՝ նա մեծ կըլինի Տէրոջը
առաջին՝ եւ գինի եւ օղի թող
ձ չխմէ , եւ դեռ իրեն մօրը փո-
րումը Սուրբ Հոգովը ղ կըլցուի :
16 Եւ Իսրայէլի որդիներէն շատ
հոգի կըդարձնէ դէպի իրենց Տէր
ճ Աստուածը :
17 Եւ ինքը կերթայ նորա առաջին
Եղիայի հոգովը ու մ զօրութեամբը՝
որ հարանց սրտերը դէպի որդիքը
դարձնէ . եւ անհնազանդները դէ-
պի արդարներին իմաստութիւնին՝ որ
Տէրոջը համար բարեկարգ ժողո-
վուրդ պատրաստէ :
18 Եւ Զաքարիան հրեշտակին ա-
սաց . Այս ինչով ճանաչեմ՝ այդ
յ բանըդ . պատճառ որ՝ ես ծեր եմ ,
եւ իմ կինս իրեն օրերին անցուցել է :
19 Հրեշտակը պատասխան տուաւ
եւ նորան ասաց . Ես Գաբրիէլը
ն եմ՝ որ Աստուծոյ առաջին եմ
կանգնում , եւ ուղարկուեցայ՝ որ քեզ
հետ խօսիմ , եւ այդ բանդ քեզ ա-
ւետիք տամ :
20 Եւ ահա համր կըլինիս , եւ
չես կարենալ խօսիլ , մինչեւ այն
օրն՝ որ այդ բանդ շ կըլինի . պատ-
ճառն որ՝ չհաւատացիր իմ խօս-
քերիս՝ որ իրենց ժամանակին պի-
տի կատարուին :
21 Եւ ժողովուրդն սպասումէին
Զաքարիային՝ եւ զարմանումէին նո-
րա տաճարին մէջ ուշանալուն համար :
22 Եւ երբոր դուրս եկաւ՝ չէր
կարողանում խօսիլ նորանց հետ .
եւ իմացան՝ թէ տաճարին մէջ տե-
սիլք տեսաւ . եւ նա նշաններով էր
խօսում նորանց հետ՝ եւ պապանձ-
ված էր մնում :

հ Համար . 58 .
ձ Թուոց . Զ . 3 .
Դատ . ԺԳ . 4 .
Գլ . Է . 33 .
ղ Երեմ . Ա . 5 .
Գաղ . Ա . 15 .
ճ Մաղ . Դ . 5 , 6 .
մ Մաղ . Դ . 5 .
Մատթ . ԺԱ . 14 .
Մարկ . Թ . 12 .
յ Ծննդ . ԺԷ . 17 .
ն Դան . Ը . 16 .
Թ . 21 , 22 , 23 .
Մատթ . ԺԸ . 10 .
Եբր . Ա . 14 .
շ Եզեկ . Գ . 26 .
ԻԴ . 27 .

23 Եւ եղեւ իբրեւ լցան աւուրք պաշտաման նորա, գնաց 'ի տուն իւր։
24 Եւ յետ աւուրցն այնոցիկ յղացաւ Եղիսաբեթ կին նորա, եւ թաքուցանէր զանձն ամիսս հինգ, եւ ասէր.
25 Զինչ գործ գործեաց ընդ իս Տէր յաւուրս յորս հայեցաւ յիս բառնալ զնախատինս իմ 'ի մարդկանէ։
26 Եւ յամսեանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակ յԱստուծոյ 'ի քաղաք մի Գալիլեացւոց, որում անուն էր Նազարեթ.
27 Առ կոյս խօսեցեալ առն, որում անուն էր Յովսէփ 'ի տանէ Դաւթի. եւ անուն կուսին Մարիամ։
28 Եւ եկեալ առ նա՝ ասէ. Ուրախ լեր բերկրեալդ, Տէր ընդ քեզ։
29 Եւ նա ընդ բանն խռովեցաւ, եւ խորհէր ընդ միտս՝ թէ որպիսի ինչ իցէ ողջոյնս այս։
30 Եւ ասէ ցնա հրեշտակն. Մի երկնչիր Մարիամ, զի գտեր շնորհս յԱստուծոյ։
31 Եւ ահա յղասջիր՝ եւ ծնցես որդի. եւ կոչեսցես զանուն նորա Յիսուս։
32 Նա եղիցի մեծ, եւ Որդի Բարձրելոյ կոչեսցի. եւ տացէ նմա Տէր Աստուած զաթոռ Դաւթի հօր նորա. եւ թագաւորեսցէ 'ի վերայ տանն Յակոբայ 'ի յաւիտեանս։
33 Եւ թագաւորութեան նորա վախճան մի լիցի։

23 Եւ եղաւ՝ երբոր նորա պաշտօնի օրերը լցուան, գնաց իրեն տունը։
24 Եւ այն օրերիցն ետեւ նորա Եղիսաբեթ կինը յղացաւ, եւ հինգ ամիս իրեն անձը ծածուկ պահում էր եւ ասում.
25 Սա ինչ բան է՝ որ Տէրն ինձ վերայ գործեց այս օրերումս՝ որ ինձ վերայ նայեց՝ որ իմ նախատինքս մարդկանց միջիցը վեր առնէ։
26 Եւ վեցերորդ ամսիցը Գաբրիէլ հրեշտակն Աստուածանից ուղարկուեցաւ Գալիլեացոց մին քաղաքն՝ որ նորան անունը Նազարեթ էր,
27 Մին կուսի մօտ՝ որ նշանուած էր մին մարդու՝ որ նորան անունը Յօսէփ էր՝ Դաւթի տանիցը. եւ այն կուսին անունը՝ Մարիամ։
28 Եւ հրեշտակն որ նորա մօտ եկաւ՝ ասաց. Ուրախ լեր շնորհքով Լցուածդ. Տէրը քեզ հետ։
29 Եւ նա այն խօսքերին համար շփոթուեցաւ, եւ իրեն մաքումը մտածումէր՝ թէ ինչպէսի բան պիտի լինի այս բարեւս։
30 Եւ հրեշտակը նորան ասաց. Մի վախենար Մարիամ. ինչու որ Աստուածանից շնորհք գտար.
31 Եւ ահա կըյղանաս՝ եւ որդի կըծնես. եւ նորա անունը Յիսուս կըկանչես։
32 Նա մեծ կըլինի, եւ Որդի Բարձրելոյն կըկոչուի. եւ Տէր Աստուած նորա Դաւիթ հօր թախտը կըտայ նորան. եւ Յակոբայ տանը վերայ յաւիտեան կըթագաւորէ.
33 Եւ նորա թագաւորութեանը վերջ չի լինիլ։

Դ Թագ. ԺԱ. 5։ Ա Մնաց. Թ. 25։
Ծննդ. Լ. 23։ Եսայ. Դ. 1։ ԿԴ. 1. 4։
Մատթ. Ա. 18. ԳԼ. Բ. 4, 5։
Դան. Թ. 23։ Ժ. 19։
Դատ. Զ. 12։
Համաչ. 12։
Եսայ. Է. 14։ Մատթ. Ա. 21։
ԳԼ. Բ. 21։
Մարկ. Ե. 7։
Բ Թագ. Է. 11. 12։ Եսայ. Թ. 6, 7։ ԺԶ. 5։ Երեմ. ԻԳ. 5։ Սաղ. ՃԼԲ. 11։ Յայտ. Գ. 7։
Դան. Բ. 44։ Է. 14. 27։ Աբդ. 21։ Միք. Դ. 7։ Յովհ. ԺԲ. 34։ Եբր. Ա. 8։

34 Եւ ասէ Մարիամ ցհրեշտակն․
Զիա՞րդ լինիցի ինձ այդ, քանզի զայր
ոչ գիտեմ։
35 Պատասխանի ետ հրեշտակն եւ
ասէ ցնա․ Հոգի Սուրբ եկեսցէ ՚ի
քեզ, եւ զօրութիւն Բարձրելոյն
հովանի լիցի ՚ի վերայ քո․ քանզի
եւ որ ծնանելոցն է ՚ի քէն՝ սուրբ է
եւ Որդի Աստուծոյ կոչեսցի։

36 Եւ ահա Եղիսաբեթ ազգական
քո՝ եւ նա յղի է ՚ի ծերութեան իւ-
րում․ եւ այս վեցերորդ ամիս է
նորա՝ որ ամուլն կոչեցեալ էր․
37 Զի ոչ տկարասցի առ յԱստու-
ծոյ ամենայն բան։
38 Եւ ասէ Մարիամ․ Ահաւասիկ
կամ աղախին Տեառն, եղիցի ինձ
ըստ բանի քում․ եւ գնաց ՚ի նմա-
նէ հրեշտակն։
39 Յարուցեալ Մարիամ յաւուրսն
յայնոսիկ, գնաց ՚ի լեռնակողմն
փութապէս ՚ի քաղաքն Յուդայ։
40 Եւ եմուտ ՚ի տունն Զաքարիայ,
եւ ետ ողջոյն Եղիսաբեթի։
41 Եւ եղեւ իբրեւ լուաւ զողջոյնն
Մարիամու Եղիսաբեթ, խաղաց
մանուկն յորովայնի նորա․ եւ լցաւ
Եղիսաբեթ Հոգւով Սրբով։
42 Եւ ՚ի ձայն բարձր աղաղակեաց
եւ ասէ․ Օրհնեալ ես դու ՚ի կա-
նայս, եւ օրհնեալ է պտուղ որո-
վայնի քո։
43 Եւ ուստի է ինձ այս, զի ե-
կեսցէ մայր Տեառն իմոյ առ իս։
44 Զի ահաւասիկ իբրեւ եղեւ
ձայն ողջունի քո յականջս իմ, խա-
ղաց ցնծալով մանուկս յորովայնի
իմում։
45 Եւ երանի, որ հաւատայցէ՝ ե-
թէ եղիցի կատարումն ասացելոցս
նմա ՚ի Տեառնէ։

34 Եւ Մարիամն ասաց հրեշտա-
կին․ Այդ բանը ինչպէս կլինի
ինձ, որ ես մարդ չեմ գիտում։
35 Հրեշտակը պատասխան տուա-
ւ նորան ասաց․ Սուրբ Հոգին
կգայ քեզ վերայ, եւ Բարձրելոյն
զօրութիւնը քեզ վերայ շուք ‡ կա-
նէ․ ինչու որ՝ նա էլ, որ քեզա-
նից պիտի ծնվի, սուրբ է, եւ
Աստուծոյ Որդի ✝ կկոչվի։
36 Եւ ահա քո ազգականն Եղիսա-
բեթը, նա էլ յղի է իրեն պառա-
ւութեանումը․ եւ սա նորան վեցերորդ
ամիսն է՝ նա որ ամուլ էր կոչված․
37 Ինչու որ՝ Աստուծոյ առաջին
բնաւ մին բան անկարելի ° չէ։
38 Եւ Մարիամն ասաց․ Ահա
ես Տէրին աղախինն եմ․ թող քո
խօսքիդ պէս լինի ինձ․ եւ հրեշ-
տակը գնաց նորանից։
39 Մարիամն այն օրերին վերկա-
ցաւ, եւ փութալէս սարերին կող-
մը գնաց Յուդայի ‡ քաղաքը։
40 Եւ Զաքարիայի տունը մտաւ,
եւ Եղիսաբեթին բարեւ տուաւ։
41 Եւ էլաւ երբոր Եղիսաբեթ
Մարիամին բարեւը լսեց, երախան
նորան փորումը խաղաց․ եւ Եղի-
սաբեթ Սուրբ Հոգով լցվաւ․
42 Եւ բարձր ձայնով աղաղակեց
եւ ասաց․ Օրհնեալ ես դու կա-
նանց մէջ, եւ օրհնեալ է քո փո-
րիդ — պտուղը։
43 Եւ սա ինչ տեղից է ինձ՝ որ
իմ Տէրիս մայրն ինձ մօտ գայ․
44 Ինչու որ՝ ահա երբոր քո բա-
րեւիդ ձայնն իմ ականջս հասաւ,
իմ երախաս իմ փորիս մէջն ուրա-
խանալով խաղաց։
45 Եւ երանի է նորան՝ որ կհա-
ւատայ՝ թէ այն բաները կկատար-
վին, որ Տէրիցն իրեն ասած են։

‡ Մատթ. Ա. 20։ ✝ Մատթ. ԺԴ. 33։ ԻԶ. 63, 64։ Մարկ. Ա. 1։ Յովհ. Ա. 34. Ի. 31։ Գործ. Ը. 37։ Հռովմ. Ա. 4։ ° Ծննդ. ԺԸ. 14։ Երեմ. ԼԲ. 17։ Զաք. Ը. 6։ Մատթ. ԺԹ. 26։ Մարկ. Ժ. 27։ Ղուկ. ԺԸ. 27։ Հռովմ. Դ. 21։ ‡ Յեսու. ԻԱ. 9, 10, 11։ — Գաղ. Ե. 21։

46 Եւ ասէ Մարիամ. Մեծացու-
ցէ անձն իմ զՏէր.
47 Եւ ցնծացաւ հոգի իմ յԱս-
տուած Փրկիչ իմ :
48 Զի հայեցաւ ՚ի խոնարհու-
թիւն աղախնոյ իւրոյ. զի ահա
յայսմհետէ երանեսցեն ինձ ամե-
նայն ազգք :
49 Զի արար ինձ մեծամեծս Հզ-
օրն, եւ սուրբ է անուն նորա :
50 Եւ ողորմութիւն նորա ազգաց
յազգս երկիւղածաց իւրոց :
51 Արար զօրութիւն բազկաւ իւ-
րով. ցրուեաց զամբարտաւանս մը-
տօք սրտից իւրեանց :
52 Քակեաց զհզօրս յաթոռոց, եւ
բարձրացոյց զխոնարհս :
53 Զքաղցեալս լցոյց բարու-
թեամբ, եւ զմեծատունս արձա-
կեաց ունայնս :
54 Պաշտպանեաց Իսրայէլի ծա-
ռայի իւրում՝ յիշել զողորմութիւնս :
55 Որպէս խօսեցաւ առ հարս մեր՝
Աբրահամու եւ զաւակի նորա՝ յա-
ւիտեան :
56 Եկաց Մարիամ առ նմա իբրեւ
ամիսս երիս, եւ դարձաւ ՚ի տուն
իւր :
57 Եւ Եղիսաբեթի լցան ժամա-
նակք ծննդեան, եւ ծնաւ որդի :
58 Եւ լուան որ շուրջ զնովաւ
էին՝ եւ ազգատոհմ նորա, զի մեծ
արար Տէր զողորմութիւն իւր ընդ
նմա. եւ խնդային ընդ նմա :

46 Եւ Մարիամն ասաւ. Թող
իմ անձս փառաւորէ բ Տէրին.
47 Եւ իմ հոգիս ուրախացաւ՝ իմ
Փրկիչ Աստուծովս :
48 Պատճառը՝ իրեն աղախնոյն
խոնարհութեանը մտիկ գ արաւ,
ինչու որ՝ ահա հիմիկուց ետեւ ա-
մէն ազգերն երանի կտան դ ինձ.
49 Պատճառը՝ Զօրաւորը մեծ
մեծ բաներ արաւ ե ինձ, եւ սուրբ
է նորան անունը :
50 Եւ նորա ողորմութիւնը ազգէց
ազգ նորան վախեցողներին վերայ
է է :
51 Զօրութիւն արաւ իրեն ը բա-
զուկովը՝ ցրւեց ամբարտաւաններին
իրենց սրտի թ մտածմունքներովը :
52 Զօրաւորներին իրենց աթոռի-
ցը կործանեց, եւ խոնարհներին
ժ բարձրացուց :
53 Սովածներին բարութեամբ լցու-
ցուց, եւ հարուստներին դատարկ
ի թափեց :
54 Իրեն Իսրայէլ ծառային խնա-
մաք արաւ՝ իրեն ողորմութիւն-
ները լ յիշելով :
55 Ինչպէս որ մեր հարանց խօսա-
ցաւ՝ Աբրահամին եւ նորա զա-
ւակին՝ մինչեւ խ յաւիտեան :
56 Մարիամը մնաց նորան մօտ ե-
րեք ամսի չափ՝ եւ յետոյ դարձաւ
իրեն տունը :
57 Եւ Եղիսաբեթի ծնելու ժա-
մանակը լցուաւ, եւ որդի ծնաւ :
58 Եւ նորանք՝ որ նորա չորս կող-
մն էին՝ եւ նորա ազգականները
լսեցին՝ թէ Տէրն իրեն ողորմու-
թիւնը մեծ արաւ նորան վերայ.
եւ ուրախացան նորան ծ հետ :

բ Ա Թագ. Բ. 1. Սաղմ. ԼԴ. 2, 3. Լե. 9. Ամբ. Գ. 18.
գ Ա Թագ. Ա. 11. Սաղ. ՃԼԸ. 6.
դ Մաղ. Գ. 12. Գղ. ԺԱ. 27.
ե Սաղ. ՀԱ. 19. ՃԻԸ. 2, 3.
զ Սաղ. ՃԺԱ. 9.
է Ծննդ. ԺԷ. 7. Ելից. Ի. 6. Սաղ. ՃԳ. 17. 18.
ը Սաղ. ՂԸ. 1. ՃԺԸ. 15. Եսայ. Խ. 10. ԾԱ. 9. ԾԲ. 10.
թ Սաղ. ԼԳ. 10. Ա Պետ. Ե. 5.
ժ Ա Թագ. Բ. 6. Յոբ. Ե. 11. Սաղ. ՃԽԶ. 6.
ի Ա Թագ. Բ. 5. Սաղ. ԼԳ. 10.
լ Սաղ. ՂԸ. 3. Երեմ. ԼԱ. 3. 20.
խ Ծննդ. ԺԷ. 19. Սաղ. ՃԼԲ. 11. Հռովմ. ԺԱ. 28. Գաղ. Գ. 16.
ծ Համար. 14.

59 Եւ եղեւ յաւուրն ութերորդի՝
եկին թլփատել զմանուկն, եւ կո-
չէին զնա յանուն հօր իւրոյ Զա-
քարիա։
60 Պատասխանի ետ մայր նորա եւ
ասէ. Ո՛չ՝ այլ կոչեսցի Յովհաննէս։
61 Եւ ասեն ցնա. Թէ չիք ոք
է յազգի քում, որոյ կոչի անուն
Յովհաննէս։
62 Ակնարկէին հօրն նորա՝ թէ
զի՞նչ կամիցի կոչել զնա։
63 Եւ խնդրեաց տախտակ, գրեաց՝
եւ ասէ. Յովհաննէս է անուն դո-
րա. եւ զարմացան ամենեքին։
64 Եւ բացաւ բերան նորա վաղ-
վաղակի՝ եւ լեզու նորա, եւ խօ-
սէր՝ եւ օրհնէր զԱստուած։
65 Եւ եղեւ ահ 'ի վերայ ամենե-
ցուն՝ որ լսէին զայս, եւ որ շուրջ
բնակեալ էին զնոքօք. եւ ընդ ամե-
նայն լեռնակողմն Հրէաստանի պատ-
մէին ամենայն բանքս այսոքիկ։
66 Եւ եդին ամենեքեան որ լսէ-
ին՝ 'ի սիրտս իւրեանց, եւ ասէին.
Զի՞նչ լինիցի մանուկս այս. եւ ձեռն
Տեառն էր ընդ նմա։
67 Եւ Զաքարիա հայր նորա լցաւ
Հոգւով Սրբով, մարգարէացաւ եւ
ասէ.
68 Օրհնեալ Տէր Աստուած Իս-
րայէլի, զի յայց եղ մեզ, եւ արար
փրկութիւն ժողովրդեան իւրում։
69 Եւ յարոյց եղջիւր փրկութեան
մեզ 'ի տանէ Դաւթի ծառայի իւ-
րոյ։
70 Որպէս խօսեցաւ բերանով սրբ-

59 Եւ եղաւ՝ ութերորդ օրը եկին,
որ երախային թլփատեն, եւ նորան
իրեն հօր անունովը Զաքարիա է-
ին [ա] կոչում։
60 Նորա մայրը պատասխան տը-
ւաւ եւ ասաց. Չէ՛ այլ Յօհաննէս
պիտի [բ] կոչվի։
61 Եւ նորան ասացին՝ թէ Ո՛չ ով
չկայ քո ազգումդ՝ որ նորան ա-
նունն Յօհաննէս կոչվի։
62 Նորա հօրն աչքով էին ա-
նում՝ թէ ինչ կկամենայ կոչել
նորան։
63 Եւ նա տախտակ խնդրեց, գը-
րեց՝ եւ ասաց, դորա անունը Յօ-
հաննէս է. եւ ամէնքը [գ] զարմացան
64 Եւ շուտով նորան բերանն ու
լեզուն բացվաւ. եւ խօսում էր՝ եւ
Աստուծոյն [դ] օրհնում։
65 Եւ ահ ընկաւ ամէնի վերայ,
որ այս բան լսում էին, եւ որ նո-
րանց չորս կողմանը բնակված էին.
եւ Հրէաստանի սարերի ամէն կող-
մերումն այս ամէն բաները [ե] պատ-
մվում էին։
66 Եւ ամէնքն՝ որ լսում էին՝ ի-
րենց սրտերումը դրին եւ [զ] ասա-
ցին. Այս երախան ինչ պիտի լի-
նի. եւ Տէրին ձեռքը նորան հետն
[է] էր։
67 Եւ նորա հայր Զաքարիան
Սուրբ Հոգով լցվաւ, մարգարէա-
ցաւ եւ [ը] ասաց.
68 Օրհնեալ է Իսրայէլի Տէր
[թ] Աստուածն՝ որ մեզ տեսութիւն
եկաւ՝ եւ իրեն ժողովրդին համար
փրկութիւն [ժ] արաւ,
69 Եւ իրեն Դաւիթ ծառայի տա-
նիցը փրկութեան եղջիւր վերկաց-
րուց մեզ [ի] համար.
70 Ինչպէս որ խօսեց սրբոց բե-

[ա] Ծննդ. ԺԷ. 12։ Ղև. ԺԲ. 3։
[բ] Համար. 13։
[գ] Համար. 13։
[դ] Համար. 20։
[ե] Համար. 39։
[զ] Ղկ. Բ. 19. 51։
[է] Ծննդ. ԼԹ. 2։ Սաղ. Ձ. 17։ ՁԹ. 21։ Գործ. ԺԱ. 21։
[ը] Յովէլ. Բ. 28։
[թ] Գ Թագ. Ա. 48։ Սաղ. ԽԱ. 13։ ՀԲ. 18։ ՃԶ. 48։
[ժ] Եփս. Գ. 16։ Գ. 31։ Սաղ. ՃԺԱ. 9։ Ղկ. Ե. 16։
[ի] Սաղ. ՃԼԲ. 17։

բոց՝ որ յաւիտենից մարգարէքն նորա էին։

71 Փրկութիւն ՚ի թշնամեաց մերոց, եւ ՚ի ձեռաց ամենայն ատելեաց մերոց։

72 Առնել ողորմութիւն ընդ հարս մեր, եւ յիշել զուխտն իւր սուրբ՝

73 Զերդումն, զոր երդուաւ Աբրահամու հօր մերում՝ տալ մեզ,

74 Առանց երկիւղի, ՚ի ձեռաց թշնամեաց մերոց փրկեալս, պաշտել զնա,

75 Սրբութեամբ եւ արդարութեամբ առաջի նորա զամենայն աւուրս կենաց մերոց։

76 Եւ դու մանուկ՝ Մարգարէ Բարձրելոյ կոչեսցիս. զի երթիցես առաջի երեսաց Տեառն պատրաստել զճանապարհս նորա։

77 Տալ գիտութիւն փրկութեան ժողովրդեան նորա, ՚ի թողութիւն մեղաց նոցա։

78 Վասն գթութեանց ողորմութեան Աստուծոյ մերոյ, որովք այց արասցէ մեզ արեգակն ՚ի բարձանց։

79 Երեւել՝ որոց ՚ի խաւարի եւ ՚ի ստուերս մահու նստէին. ուղղել զոտս մեր ՚ի ճանապարհս խաղաղութեան։

80 Եւ մանուկն աճէր՝ եւ զօրանայր հոգւով. եւ էր յանապատ մինչեւ յօր երեւելոյ նորա Իսրայէլի։

բանովը՝ որ յաւիտենից նորա մարգարէներն ո էին.

71 Փրկութիւն մեր թշնամիներիցը. եւ ամէն մեզ ատողներին ձեռքիցը.

72 Որ մեր հարանց վերայ ողորմութիւն անէ, եւ իրեն սուրբ ուխտն ու պայմանը Հ յիշէ՝

73 Այն երդումն, որ մեր հայր Աբրահամին երդուաւ՝ որ մեզ - տայ,

74 Որ մեր թշնամիներին ձեռքիցն ազատուած՝ առանց վախի պաշտենք ա իրեն

75 Սրբութենով եւ արդարութենով նորա առաջին՝ մեր կենաց ամէն Հ օրերումը։

76 Եւ դու ով երախայ՝ Բարձրելոյն մարգարէ կը կոչուիս. ինչու որ՝ պիտի գնաս Տէրին երեսաց առաջին՝ որ նորա ճանապարհը ⁊ պատրաստես.

77 Նորա ժողովրդին փրկութեան գիտութիւն տաս իրենց մեղաց թողութեան ր համար,

78 Մեր Աստուծոյ քաղցր ողորմութեան համար, որ նորանով արեգակը վերեւէն տեսութիւն ց ըրաւ մեզ.

79 Որ երեւի նորանց՝ որ խաւարումն ու մահու շուքումը նստած էին, որ մեր ոտները դէպի խաղաղութեան ճանապարհը - ուղղէ։

80 Եւ երախան աճեցաւ՝ եւ հոգով ժ զօրանում. եւ անապատներումն էր մինչեւ այն օրն՝ որ նա երեւեցաւ + Իսրայէլին։

ո Երեմ. ԻԳ. 5. 6. Լ. 10. Դան. Թ. 24. Գործ. Գ. 21. Հռովմ. Ա. 2.
Հ Ղկ. ԻՁ. 42. Սաղ. ՂԸ. 3. ՃԵ. 8. 9. ՃՁ. 45. Եզեկ. ԺՁ. 60. Համար. 54.
- Ծննդ. ԺԲ. 3. ԺԵ. 4. ԻԲ. 16. 17. Եբր. Զ. 13. 17.
ա Հռովմ. Զ. 18. 22. Եբր. Թ. 14.
Հ Երեմ. ԼԲ. 39. 40. Եփես. Դ. 24. Բ Թես. Բ. 13. Բ Տիմ. Ա. 6. Տիտ. Բ. 12. Ա Պետ. Ա. 15. Բ Պետ. Ա. 4.
⁊ Եսայ. Խ. 3. Մաղ. Գ. 1. Դ. 5. Մատթ. ԺԱ. 10. Համար. 17.
ր Մարկ. Ա. 4. Ղկ. Գ. 3.
ց Թուո. ԻԴ. 17. Եսայ. ԺԱ. 1. Զաք. Գ. 8. Զ. 12. Մաղ. Դ. 2.
- Եսայ. Թ. 2. ԽԲ. 7. ԽԹ. 9. Մատթ. Դ. 16. Գործ. ԻԶ. 18.
ժ Ղկ. Բ. 40.
+ Մատթ. Գ. 1. ԺԱ. 7.

—

## ԳԼ. Բ

1 Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել հրաման յՕգոստոս կայսերէ՝ աշխարհագիր առնել ընդ ամենայն տիեզերս։

2 Այս առաջին աշխարհագիր եղեւ 'ի դատաւորութեան Ասորւոց Կիւրենեայ։

3 Եւ երթային ամենեքեան մտանել յաշխարհագիր յիւրաքանչիւր քաղաքի։

4 Ել եւ Յովսէփ 'ի Գալիլեէ 'ի քաղաքէ Նազարեթէ՝ 'ի Հրէաստան 'ի քաղաք Դաւթի, որ կոչի Բեթղեհէմ. վասն լինելոյ նորա 'ի տանէ եւ յազգէ Դաւթի։

5 Մտանել յաշխարհագիր Մարեմաւ հանդերձ՝ զոր խօսեալն էր նմա, եւ էր յղի։

6 Եւ եղեւ 'ի հասանելն նոցա անդր, լցան աւուրք ծնանելոյ նորա։

7 Եւ ծնաւ զորդին իւր զանդրանիկ, եւ պատեաց 'ի խանձարուրս՝ եւ եդ զնա 'ի մսուր. զի ոչ գոյր նոցա տեղի յիջեւանին։

8 Եւ հովիւք էին 'ի տեղւոջն յայնմիկ բացօթեայք, որ պահէին զպահպանութիւնս գիշերոյ հօտից իւրեանց։

9 Եւ հրեշտակ Տեառն երեւեցաւ նոցա, եւ փառք Տեառն ծագեցին առ նոսա. եւ երկեան երկիւղ մեծ։

10 Եւ ասէ ցնոսա հրեշտակն. Մի երկնչիք՝ զի աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն.

11 Զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է Օծեալ Տէր, 'ի քաղաքի Դաւթի։

1 Եւ էյաւ որ այն օրերը՝ հրաման դուրս ելաւ Օգոստոս կայսերէն, որ ամէն աշխարհքի մէջի մարդիկը գրի տակ ձգվին։

2 Այս առաջին աշխարհագիրս Կիւրենի Ասորոց դատաւորութեան ժամանակումն — էյաւ։

3 Եւ ամէնքը գնացին՝ որ այն աշխարհագիրը մանեն՝ ամէն մէկն իրեն քաղաքը։

4 Յովսէփն էլ Գալիլեայէն՝ Նազարէթ քաղաքէն գնաց Հրէաստան Դաւթի ÷ քաղաքը, որ Բեթղէհէմ է կոչված. ինչու որ՝ նա Դաւթի տանէն ու ազգէն ÷ էր,

5 Որ աշխարհագիրը մանէ Մարիամին հետ՝ որ նշանված էր նորան, եւ յղի էր։

6 Եւ երբոր նորանք այնտեղ հասան, նորա ծնելոյ օրերը լցվան։

7 Եւ իրեն առջինեկ որդին ծընաւ, եւ պատեց խանձարուրներուն մէջ՝ եւ մսուրի մէջ ÷ դրաւ. ինչու որ՝ այն իջեւանումը տեղ չէկար նորանց համար,

8 Եւ այնտեղ հովիւներ կային դուրս տեղը կացող՝ որ գիշեր ժամանակն իրենց հօտերը պահումէին։

9 Եւ Տէրի հրեշտակն երեւեցաւ նորանց, եւ Տէրի փառքը նորանց վերայ ծագեց. եւ մեծ վախով Ւ վախեցան։

10 Եւ հրեշտակը նորանց ասաց. Մի վախենաք, ինչու որ՝ ահա մեծ ուրախութեան աւետիք եմ տալիս ձեզ, որ ամէն ժողովրդին պիտի ըլինի։

11 Պատճառնոր՝ այս Ւ օր ձեզ Փրկիչ ծնվաւ՝ Դաւթի ≡ քաղաքումն. որ նա Օծեալ Տէր Բ է։

— Գործ. Ե. 37. Բ Ա Թագ. ԺԶ. 1. 4. Յովհ. Է. 42. ÷ Մատթ. Ա. 16. Գլ. Ա. 27.

÷ Մատթ. Ա. 25. Ւ Գլ. Ա. 12. Ղ Ծննդ. ԺԲ. 3. Մատթ. ԻԸ. 19. Մարկ. Ա. 15.

Գլ. ԻԴ. 47. Կող. Ա. 23. Ւ Եսայ. Թ. 6. ≡ Մատթ. Ա. 21. Բ Մատթ. Ա. 16.

ԺԶ. 16. Գլ. Ա. 43. Գործ. Բ. 36. 38. Ժ. 36. Փիլիպ. Բ. 11.

12 Եւ այս նշանակ ձեզ. գտանիցէք մանուկ պատեալ 'ի խանձարուրս, եւ եդեալ 'ի մսուր։

13 Եւ յանկարծակի եղեւ ընդ հրեշտակին ընդ այնմիկ բազմութիւն զօրաց երկնաւորաց, որ օրհնէին զԱստուած՝ եւ ասէին.

14 Փառք 'ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, 'ի մարդիկ հաճութիւն։

15 Եւ եղեւ իբրեւ վերացան 'ի նոցանէ հրեշտակքն յերկինս, ասեն ցմիմեանս հովիւքն. Եկայք երթիցուք մինչեւ ցԲեթղեհէմ, եւ տեսցուք զի՞նչ է բանս այս որ եղեւ, զոր Տէր եցոյց մեզ։

16 Եւ եկին փութանակի. եւ գտին զՄարիամ եւ զՅովսէփ, եւ զմանուկն եդեալ 'ի մսուր։

17 Եւ ծանեան վասն բանին՝ որ ասացաւ նոցա զմանկանէն։

18 Եւ ամենեքեան՝ որ լսէին, զարմանային վասն բանիցն՝ զոր խօսեցան ընդ նոսա հովիւքն։

19 Եւ Մարիամ զամենայն զբանս զայսոսիկ պահէր, եւ խելամուտ լինէր 'ի սրտի իւրում։

20 Եւ դարձան հովիւքն, փառաւոր առնէին եւ օրհնէին զԱստուած վասն ամենայնի՝ զոր լուան եւ տեսին. որպէս պատմեցաւ նոցա։

21 Եւ իբրեւ լցան աւուրք ութ թլփատել զնա, եւ կոչեցաւ անուն նորա Յիսուս՝ որ կոչեցեալն էր 'ի հրեշտակէն, մինչչեւ յղացեալ էր զնա յորովայնի։

22 Եւ իբրեւ լցան աւուրք սրբութեան նորա ըստ օրինացն Մովսէ-

12 Եւ աս լինի ձեզ նշան. մին երախայ կը գտնէք խանձարուրներով պատած, եւ մսուրի մէջ դրած։

13 Եւ յանկարծակի այն հրեշտակին հետ էլաւ երկնաւոր զօրքի բազմութիւնն, որ Աստուծոյն օրհնումէին՝ եւ ժ ասում.

14 Փառք Աստուծոյ է 'ի բարձունս, եւ երկրի վերայ լ խաղաղութիւն, եւ մարդկանց մէջ խ հաճութիւն։

15 Եւ էլաւ երբոր հրեշտակները նորանցից երկինքը վերացան, հովիւները իրար ասացին. Եկէք գընանք մինչեւ Բեթղեհէմ, եւ տեսնենք ինչ է այս բանն՝ որ էլաւ, որ Տէրը ցոյց տուաւ մեզ։

16 Եւ շուտով եկին եւ գտին Մարիամին եւ Յովսէփին, եւ երախային մսուրի մէջ դրած։

17 Եւ իմացան այն բանըն՝ որ այն երախային համար ասվեցաւ նորանց։

18 Եւ ամէնքն՝ որ լսումէին, զարմանումէին այն բաներին համար՝ որ հովիւները նորանց հետ խօսեցին։

19 Եւ Մարիամն այս ամէն բաները պահում եւ իրեն սրտումը ծ մտածումէր։

20 Եւ հովիւները դարձան. Աստուծոյն փառաւորանում եւ օրհնումէին այն ամէն բաներին համար՝ որ տեսին. ինչպէս որ նորանց պատմըվեցաւ։

21 Եւ երբոր ութ օր կ լցվաւ՝ որ նորան թլփատեն, նորան անունը Յիսուս կոչվեցաւ՝ նա որ հրեշտակից էր կոչված, դեռ քանի որ նա չէր յղացված հ փորումը։

22 Եւ երբոր նորա սրբութեան օրերը լցվան՝ Մովսէսի օրէնքին

ժ Ծննդ. ԻԸ. 12; ԼԲ. 1, 2; Սաղ. ՃԳ. 20, 21; ՃԽԸ. 2; Դան. Է. 10; Եբր. Ա. 14; Յայտ. Ե. 11.
ի Ղկ. ԺԹ. 38; Եփես. Ա. 6; Գ. 10. 21; Յայտ. Ե. 13.
լ Եսայ. ԾԷ. 19; Ղկ. Ա. 79; Հռովմ. Ե. 1; Եփես. Բ. 17; Կող. Ա. 20.
խ Յովհ. Գ. 16; Եփես. Բ. 4-7; Բ Թես. Բ. 16; Ա Յովհ. Դ. 9, 10.
ծ Ծննդ. ԼԷ. 11; Ղկ. Ա. 66; Համար. 51.
կ Ծննդ. ԺԷ. 12; Ղեւտ. ԺԲ. 3; Ղկ. Ա. 59.
հ Մատթ. Ա. 21. 25; Ղկ. Ա. 31.

սի, ածին զնա յԵրուսաղէմ յանդի-
ման առնել Տեառն։
23 Որպէս և գրեալ է յօրէնս
Տեառն, թէ Ամենայն արու՝ որ
բանայ զարգանդ, Սուրբ Տեառն
կոչեսցի։
24 Եւ տալ պատարագս՝ ըստ ա-
սացելոյն յօրէնս Տեառն, զոյգս
տատրակաց, կամ երկուս ձագս
աղաւնեաց։
25 Եւ ահա այր մի էր յԵրուսա-
ղէմ, որոյ անուն էր Սիմէոն. և
էր այրն այն արդար և երկիւղած,
և ակն ունէր մխիթարութեանն
Իսրայէլի, և Հոգի Սուրբ էր ՚ի
նմա։
26 Եւ էր նորա հրաման առեալ
՚ի Հոգւոյն Սրբոյ՝ մի տեսանել զը-
մահ, մինչև տեսցէ զՕծեալն Տեառն։
27 Եւ եկն Հոգւովն ՚ի տաճարն.
և ՚ի բերել ածին ծնողացն զմանուկն
Յիսուս՝ առնել նոցա ըստ սովորու-
թեան օրինացն ՚ի վերայ նորա.
28 Եւ նա առեալ զնա ՚ի գիր-
կս իւր, և օրհնեաց զԱստուած,
և ասէ.
29 Արդ՝ արձակես զծառայս քո
Տէր ըստ բանի քում ՚ի խաղաղու-
թիւն.
30 Զի տեսին աչք իմ զփրկու-
թիւն քո,
31 Զոր պատրաստեցեր առաջի
ամենայն ժողովրդոց։
32 Լոյս ՚ի յայտնութիւն հեթա-
նոսաց, և փառս ժողովրդեան քում
Իսրայէլի։
33 Եւ էին հայրն և մայրն նորա
զարմացեալ ՚ի վերայ բանիցն, որ
խօսէին զնմանէ։
34 Եւ օրհնեաց զնոսա Սիմէոն,
և ասէ ցՄարիամ մայր նորա. Ա-

ծ պէս, նորան տարան Երուսաղէմ՝
որ Տէրի առաջին կանգնացնեն։
23 Ինչպէս որ Տէրի օրէնքումը
գրւած է՝ թէ, Ամէն արու որ ար-
գանդ ղ բանայ, Տէրին սուրբ պի-
տի կոչւի։
24 Եւ որ Տէրի օրէնքումն ասա-
ծին պէս պատարագ բերեն մին զոյգ
տատրակ, կամ աղաւնու երկու
ճ ձագ։
25 Եւ ահա Երուսաղէմումը մին
մարդ կար՝ որ նորան անունը Սիմէօն
էր. և այն մարդն արդար և Աստ-
ուածավախ էր, և Իսրայէլի մխի-
թարութեանն էր մ սպասում, և
Սուրբ Հոգի կար նորանում։
26 Եւ նա Սուրբ Հոգուցը հրա-
ման էր առել՝ որ յ մահ չտեսանէ,
մինչև որ Տէրին Օծեալը տեսանէ։
27 Եւ նա Հոգւովն եկաւ ն տաճա-
րը. և երբոր ծնողները Յիսուս
երախային բերին՝ որ օրէնքի սովո-
րութեան պէս նորա վերայ անեն.
28 Նա էլ նորան առաւ ընդգրկեց
իրեն գիրկը, և Աստուծոյն օրհնեց,
ու ասաց,
29 Տէր հիմիկ՝ քո խօսքիդ պէս
խաղաղութենով ես արձակում քո
շ ծառայիդ։
30 Ինչու որ՝ իմ աչքերս քո փըր-
կութիւնդ ո տեսան,
31 Որ նորան ամէն ժողովուրդ-
ներին առաջին պատրաստեցիր.
32 Լոյս՝ որ հեթանոսներին պիտի
յայտնուի, և փառք քո Իսրայէլ
ժողովրդիդ չ համար։
33 Եւ նորա հայրն ու մայրը զար-
մացել էին այն բաներին վերայ՝ որ
նորա համար խօսւմէին։
34 Եւ Սիմէօնն օրհնեց նորանց,
և նորա մայր Մարիամին ասաց.

ծ Ղև. ԺԲ. 2, 3, 4. 6.
ղ Ելից. ԺԳ. 12. ԻԲ. 29. ԼԴ. 19. Թու. Գ. 13. Ը. 17. ԺԸ. 15.
ճ Ղև. ԺԲ. 2. 6. 8.
մ Եսայ. Խ. 1. Մարկ. ԺԵ. 43. Համար. 38.
յ Սաղ. ՁԹ. 48. Եբր. ԺԱ. 5.
ն Մատթ. Դ. 1.
շ Ծննդ. ԽԶ. 30. Փիլիպ. Ա. 23.
ո Եսայ. ԾԲ. 10. Ղկ. Գ. 6.
չ Եսայ. Թ. 2. ԽԲ. 6. ԽԹ. 6. Կ. 1. 2. 3.

հա սա կայ ՚ի գլորումն եւ ՚ի կանգ-
նումն բազմաց ՚ի մէջ Իսրայէլի,
եւ ՚ի նշան հակառակութեան։

35 Եւ ընդ քո իսկ անձն անցցէ
սուր, զի յայտնեսցին ՚ի բազում
սրտից խորհուրդք։
36 Եւ անդ էր Աննա մարգարէ՝
դուստր Փանուէլի՝ յազգէ Ասերայ.
սա ինքն անցեալ էր զաւուրբք բազ-
մօք՝ կեցեալ ընդ առն ամս եօթն ՚ի
կուսութենէ իւրմէ։
37 Եւ էր այրի ամաց իբրեւ ութ-
սուն եւ չորից՝ որ ոչ մեկնէր ՚ի տա-
ճարէն, այլ պահօք եւ աղօթիւք
պաշտէր զցայգ եւ զցերեկ։

38 Եւ սա ՚ի նմին ժամու յարուց-
եալ գոհանայր զՏեառնէ, եւ խօ-
սէր զնմանէ ընդ ամենեսին՝ որ ակն
ունէին փրկութեանն Երուսաղէմի։

39 Եւ իբրեւ կատարեցին զամե-
նայն ըստ օրինացն Տեառն, դարձան
անդրէն ՚ի Գալիլեա ՚ի քաղաքն իւր-
եանց Նազարէթ։
40 Եւ մանուկն աճէր եւ զօրանայր
լի իմաստութեամբ. եւ շնորհք Աս-
տուծոյ էին ՚ի վերայ նորա։
41 Եւ երթային ծնօղք նորա ամի
ամի յԵրուսաղէմ ՚ի տօն զատկին։

42 Եւ իբրեւ եղեն նորա ամք եր-
կոտասան, ելանել նոցա յԵրու-
սաղէմ ըստ սովորութեան տօնին,
43 Եւ կատարել զաւուրսն՝ եւ
դառնալ անդրէն, մնաց Յիսուս մա-
նուկն յԵրուսաղէմ. եւ ոչ գիտա-
ցին ծնօղքն նորա։
44 Կարծէին զնմանէ՝ թէ ընդ ու-
ղեկիցսն իցէ. եկին իբրեւ աւուր

Ահա սա կայ շատ մարդկանց համար
ընկնելոյ եւ կանգնելոյ [ա] պատճառ
Իսրայէլին մէջ, եւ հակառակու-
թեան նշան։
35 Եւ խակ քո անձնովդ սուր
կանցնէ, որ շատ սրտերից խոր-
հուրդները [բ] յայտնուին։
36 Եւ այնտեղ էր Աննա մարգարէն
Փանուէլի աղջիկը Ասերի ազգից.
սա ինքը շատ օրերը անցուցել էր
որ իրեն կուսութեան ժամանակիցն
եօթն տարի էր միացել մարդոյ հետ։
37 Եւ ութսուն եւ չորս տարոյ չափ
որբեւէրի էր՝ որ տաճարից չէր
հեռանում. բայց ծոմով եւ աղօթ-
քով գիշերուցերեկ ծառայումէր
[գ] Աստուծոյն։
38 Եւ սա էլ այն ժամումը վեր-
կացաւ եւ Տէրից գոհանումէր, եւ
նորան համար ամէնին հետ խօսու-
մէր՝ որ Երուսաղէմի փրկութեանն
սպասումէին։
39 Եւ երբոր ամէն բաները Տէրի
օրէնքին պէս կատարեցին, յետ
դարձան Գալիլեա՝ իրենց Նազա-
րէթ քաղաքը։
40 Եւ երախան [դ] աճումէր եւ զօ-
րանում իմաստութենով լցված. եւ
Աստուծոյ շնորհքը նորա վերայ էր։
41 Եւ նորա ծնօղքը տարուց տա-
րի Երուսաղէմ էին գնում զատկի
[ե] տօնին։
42 Եւ երբոր նա տասն երկու տա-
րեկան էլաւ, նորանք տօնի սովո-
րութեան պէս Երուսաղէմ գնացին
43 Եւ երբոր այն օրերը կատար-
վեցան՝ եւ յետ դարձան, Յիսուս
տղան Երուսաղէմումը մնաց. եւ
նորա ծնօղքը չիմացան.
44 Կարծումէին՝ թէ նա ճանա-
պարհի ընկերներին հետ կըլինի.

[ա] Եսայ. Ը. 14։ Ովսէ. ԺԴ. 9։ Մատթ. ԻԱ. 44։ Հռովմ. Թ. 32, 33։ Ա Կորնթ. Ա. 23, 24։ Բ Կորնթ. Բ. 16։ Ա Պետ. Բ. 7, 8։ Հ Գործ. ԻԸ. 22։
[բ] Սաղ. ԽԲ. 10։ Յովհ. ԺԹ. 25։
[գ] Գործ. ԻԶ. 7։ Ա Տիմ. Ե. 5։ Հ Մարկ. ԺԵ. 43։ Համար. 25։ Գլ. ԻԴ. 21։
[դ] Համար. 52։ Գլ. Ա. 80։
[ե] Ելից. ԻԳ. 15. 17։ ԼԴ. 23։ Բ Օրին. ԺԶ. 1. 16։

միոյ ճանապարհ՝ եւ խնդրէին զնա
ընդ դրացիսն եւ ընդ ծանօթս ։

45 Եւ իբրեւ ոչ գտին, դարձան
անդրէն յԵրուսաղէմ խնդրել զնա ։

46 Եւ եղեւ յետ երից աւուրց՝
գտին զնա 'ի տաճարին, զի նստէր
ընդ վարդապետսն. լսէր 'ի նոցանէ,
եւ հարցանէր զնոսա ։

47 Զարմանային ամենեքեան՝ որ
լսէին 'ի նմանէ՝ ընդ իմաստութիւնն
եւ ընդ պատասխանիս նորա ։

48 Եւ իբրեւ տեսին զնա՝ զարմա-
ցան. եւ ասէ ցնա մայրն իւր.
Որդեակ՝ զի՞նչ գործ գործեցեր դու
ընդ մեզ. ահաւասիկ հայր քո եւ ես
տառապեալք՝ խնդրէաք զքեզ ։

49 Եւ ասէ ցնոսա. Զի՞ խնդրէիք
զիս, ո՞չ գիտէիք՝ եթէ 'ի տան Հօր
իմոյ պարտ է ինձ լինել ։

50 Եւ նոքա ոչ իմացան զբանն՝
զոր խօսեցաւ ընդ նոսա ։
51 Եւ էջ ընդ նոսա, եւ գնաց 'ի
Նազարէթ. եւ էր նոցա հնազանդ.
եւ մայր նորա պահէր զամենայն բա-
նսն 'ի սրտի իւրում ։

52 Եւ Յիսուս զարգանայր իմաս-
տութեամբ եւ հասակաւ, եւ շնոր-
հօք յԱստուծոյ եւ 'ի մարդկանէ ։

մին օրվան չափ ճանապարհ եկին՝
եւ նորան ման էին գալիս դրացի-
ներին ու ծանօթներին մօտ ։
45 Եւ երբոր չգտան, յետ դար-
ձան Երուսաղէմ՝ որ նորան ման
գան ։
46 Եւ էլաւ որ երեք օրիցն ետեւ
նորան տաճարին մէջ գտան, որ
վարդապետներին հետ նստած էր.
նորանց ականջ էր դնում, եւ նո-
րանցից հարցնում ։
47 Եւ ամէնքն՝ որ նորանից լսու-
մէին՝ զարմանումէին նորան իմաս-
տութեան եւ պատասխաններին
ɔ վերայ.
48 Եւ երբոր նորան տեսին՝ շատ
զարմացան. եւ նորա մայրն ասաց
նորան. Որդեակ՝ ա՛յ ի՞նչ բան արիր
մեզ հետ. ահա՛ քո հայրը եւ ես
մեծ նեղութենով ման էինք գալիս
քեզ համար ։
49 Եւ նորանց ասաց. Ի՞նչ էիք
ինձ ման գալիս. չէիք գիտում՝ թէ
պէտք է, որ ես իմ Հօրս տանը
– լինիմ ։
50 Եւ նորանք չիմացան այն բա-
նը՝ որ նորանց հետ ‡ խօսեց ։
51 Եւ նորանց հետ վերեկաւ, եւ
գնաց Նազարէթ. եւ նորանց հը-
նազանդ էր. եւ նորա մայրը այն
ամէն բաները պահումէր իրեն
+ սրտումը ։
52 Եւ Յիսուս աճումէր իմաստու-
թենով եւ • հասակով, եւ շնորհ-
քով Աստուծոյ եւ մարդկանց ա-
ռաջին ։

## ԳԼ. Գ.

1 'Ի հնգետասաներորդի ամի
տէրութեանն Տիբերեայ կայսեր,
'ի դատաւորութեան Հրէաստանի
Պիղատոսի Պոնտացւոյ, եւ 'ի չոր-
րորդապետութեան Գալիլեացւոց Հե-
րովդի, եւ 'ի Փիլիպպոսի եղբօր

1 Տիբերիոս կայսերի տէրութեան
տասն եւ հինգ տարին, Պոնտացի
Պիղատոսի Հրէաստանի վերայ դա-
տաւորութեան ժամանակին, եւ
Հերովդէսի՝ Գալիլեացոց վերայ չոր-
րորդապետութեան ժամանակին,

ɔ Մատթ. Է. 28. Մարկ. Ա. 22. Գլ. Դ. 22, 32. Յովհ. Է. 15. 46. – Յովհ. Բ. 16. ‡ Գլ. Թ. 45. ԺԸ. 34. + Համար. 19. Դան. Է. 28. • Ա. Թագ. Բ. 26. Համբ. 40.

նորա չորրորդապետութեան Իտուրացւոց եւ Տրաքոնացւոց աշխարհին , եւ 'ի չորրորդապետութեան Լիւսանեայ Աբիլինացւոց ,

2 Եւ 'ի քահանայապետութեան Աննայի եւ Կայիափայ՝ եղեւ բան Աստուծոյ 'ի վերայ Յովհաննու որդւոյ Զաքարիայ՝ յանապատի անդ :

3 Եւ եկն յամենայն կողմն Յորդանանու քարոզել մկրտութիւն ապաշխարութեան 'ի թողութիւն մեղաց :

4 Որպէս եւ գրեալ է 'ի գիրս պատգամաց Եսայեայ մարգարէի . Ձայն բարբառոյ յանապատի՝ պատրաստ արարէք զճանապարհ Տեառն , եւ ուղիղ արարէք զշաւիղս նորա :

5 Ամենայն ձորք լցցին , եւ ամենայն լերինք եւ բլուրք խոնարհեսցին . եւ եղիցին դժուարինքն 'ի դիւրինս , եւ սապարքն 'ի հարթ ճանապարհս :

6 Եւ տեսցէ ամենայն մարմին ըզփրկութիւն Աստուծոյ :

7 Եւ ասէ ցժողովուրդսն ելեալս մկրտել 'ի նմանէ . Ծնունդք իժից՝ ո եցոյց ձեզ փախչել 'ի բարկութենէն՝ որ գալոց է :

8 Արարէք այսուհետեւ պտուղս արժանի ապաշխարութեան . եւ մի սկսանիցիք ասել՝ եթէ Ունիմք հայր զԱբրահամ . զի ասեմ ձեզ , եթէ կարող է Աստուած 'ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս Աբրահամու :

9 Բայց ահաւասիկ տապար առ արմին ծառոց կայ . ամենայն ծառ՝ որ ոչ առնէ զպտուղ բարւոք , հատանի եւ 'ի հուր արկանի :

եւ նորա Փիլիպպոս եղբօր՝ Իտուրացոց եւ Տրաքոնացոց աշխարհներին վերայ չորրապետութեան ժամանակին , եւ Լիւսանիայի Աբիլենացոց վերայ չորրորդապետութեան ժամանակին ,

2 Եւ Աննայի եւ Կայիափայի քահանայապետութեան օրերը՝ Աստուծոյ խօսքը Զաքարիայի որդի Յովհաննէսին վերայ եղաւ՝ անապատին –մէջ :

3 Եւ նա եկաւ Յորդանանի ամէն ÷ կողմերն , որ ապաշխարութեան մկրտութիւնը քարոզէ՝ մեղաց թողութեան ÷ համար :

4 Ինչպէս որ Եսայի մարգարէի խօսքերի գրքումը գրուած է . Կանչողի ձայն ‡ անապատումն . պատրաստ արէք Տէրի ճանապարհը , եւ շիտակ արէք նորա գնալոյ ճանապարհները .

5 Թող ամէն ձորերը լցուին , եւ ամէն սարերն ու զարերը խոնարհուին . եւ դժուարինները հեշտ լինին , եւ զառուփոսերը հաւասար ճանապարհներ լինին .

6 Եւ թող ամէն մարմին Աստուծոյ փրկութիւնը † տեսնէ :

7 Եւ այն ժողովուրդներին՝ որ դուրս էին եկած , որ նորանից մկրտուէին՝ ասաց . Իժի ձագուկներ՝ ով սովրեցրուց ձեզ փախչիլ այն բարկութենիցն՝ որ գալու է :

8 Այսուհետեւ ապաշխարութեան արժանի պտուղներ արէք . մի սկսէք ասել՝ թէ Մենք Աբրահամ ունինք հայր . ես ասում եմ ձեզ , թէ Աստուած կարող է այս քարերից որդիք հանել Աբրահամին համար :

9 Բայց ահա կացինը ծառերի արմատին մօտ դրած է . ամէն ծառ՝ որ բարի պտուղ ւ չի բերում , կկտրուի եւ կրակի մէջ կձգուի :

| | | | |
|---|---|---|---|
| – Յովհ . ԺԱ . 49 . | Մարկ . Ա . 4 . | Մարկ . Ա . 3 . | Գլ . Բ . 10 . |
| 51 . ԺԸ . 13 . | ÷ Գլ . Ա . 77 . | Յովհ . Ա . 23 . | ւ Մատթ . Գ . 7 . |
| Գործ . Դ . 6 . | ‡ Եսայ . Խ . 3 . | † Սաղ . ՂԸ . 2 . | † Մատթ . Է . 19 . |
| Բ Մատթ . Գ . 1 . | Մատթ . Գ . 3 . | Եսայ . ԾԲ . 10 . | |

10 Հարցանէին զնա ժողովուրդքն եւ ասէին. Իսկ արդ՝ զի՞նչ գործեսցուք։

11 Պատասխանի ետ եւ ասէ ցնոսա. Ո՞յր իցեն երկու հանդերձք, տացէ զմին այնմ՝ որ ոչն գուցէ. եւ որ կայցէ կերակուր՝ նոյնպէս արասցէ։

12 Եկին եւ մաքսաւորք մկրտել, եւ ասեն ցնա. Վարդապետ՝ զի՞նչ գործեսցուք։

13 Եւ նա ասէ ցնոսա. Մի՛ ինչ աւելի քան զհրամայեալն ձեզ առնիցէք։

14 Հարցանէին զնա եւ զինուորքն՝ եւ ասէին. Եւ մեք զի՞նչ գործեսցուք. ասէ ցնոսա. Մի՛ զոք խռովեցէք՝ եւ մի՛ զոք զրպարտիցէք, շատ լիցին ձեզ թոշակքն ձեր։

15 Մինչ ակն ունէր ժողովուրդն՝ եւ խորհէին ամենեքեան ՚ի սիրտս իւրեանց վասն Յովհաննու՝ մի՛ թէ նա իցէ Քրիստոսն։

16 Պատասխանի ետ ամենեցուն եւ ասէ. Ես մկրտեմ զձեզ ջրով. բայց գայ զօրագոյն քան զիս, որոյ չեմ բաւական բառնալ զկօշիկս. նա մկրտեսցէ զձեզ Հոգւով Սրբով եւ հրով։

17 Որոյ հեծանոցն ՚ի ձեռին իւրում սրբել զկալ իւր՝ եւ ժողովել զցորեանն ՚ի շտեմարանս իւր, եւ զյարդն այրեսցէ անշէջ հրով։

18 Բազում եւ այլ ինչ մխիթարութեամբ աւետարանէր ժողովրդեանն։

19 Բայց Հերովդէս չորրորդապետ յանդիմանեալ ՚ի նմանէ վասն Հերովդիայ կնոջ եղբօր իւրոյ, եւ վասն ամենայն չարեացն՝ զոր գործեաց Հերովդէս։

10 Եւ ժողովուրդները նորան հարցնումէին եւ ասում. Ապա ինչ ա գործենք։

11 Պատասխան տուաւ եւ նորանց ասաց. Նա՛ որ երկու շոր ունի, թող մինը նորան տայ՝ որ չունի. եւ նա էլ՝ որ կերակուր ունի, թող այնպէս բ անէ։

12 Մաքսաւորներն էլ եկին՝ որ մկրտուէին, եւ նորան ասացին. Վարդապետ ինչ գ գործենք։

13 Եւ նա ասաց նորանց. Ձեզ հրամայածիցն աւելի բան մի դ անէք։

14 Զինուորներն էլ նորան հարցնումէին եւ ասում. Ապա մենք ինչ գործենք. նորանց ասաց. Մէկու մի նեղացրնէք՝ մէկին զրպարտութիւն մի անէք, ձեր վարձքերը բաւական լինին ե ձեզ։

15 Դեռ որ ժողովուրդն սպասումէր՝ եւ ամէնքն իրենց սրտերումը մտածումէին Յօհաննէսին համար՝ մի թէ սա լինի Քրիստոսն.

16 Նա ամէնքին պատասխան տուաւ եւ ասաց. Ես ջրով եմ մկրտում զ ձեզ. բայց ինձանից էլ զօրաւորն է գալիս՝ որ ես արժանի չեմ նորա կօշիկները վեր առնել. նա ձեզ Սուրբ Հոգով եւ կրակով կմկրտէ.

17 Որ նորա հասելքն իրեն ձեռին է՝ որ իրեն կալը կսրբէ՝ եւ ցորենքն իրեն համբարը կը ժողովէ, եւ դարմանը կայրէ անանցնելի է կրակով։

18 Ուրիշ էլ շատ բաներ միխիթարութենով աւետիք էր տալիս ժողովրդին։

19 Բայց Հերովդէս չորրորդապետը նորանից յանդիմանուած իրեն եղբօր կնկան Հերովդիայի պատճառովը, եւ այն ամէն չար գործքերին համար՝ որ Հերովդէսն ը արաւ,

ա Գործ. Բ. 37։
բ Ղկ. ԺԱ. 41։ Բ Կորնթ. Ը. 14։ Յակ. Բ. 15, 16։ Ա Յովհ. Գ. 17։ Դ. 20։
գ Մատթ. ԻԱ. 32։ Ղկ. Է. 29։
դ Ղկ. ԺԹ. 8։
ե Ելից. ԻԳ. 1։ Ղև. ԺԹ. 11։
զ Մատթ. Գ. 11։
է Միք. Դ. 12։ Մատթ. ԺԳ. 30։
ը Մատթ. ԺԴ. 3։ Մարկ. Զ. 17։

20 Յաւել եւ զայն եւս 'ի վերայ
ամենայնի , եւ եդ 'ի բանտի զՅով–
հաննէս ։
21 Եւ եղեւ 'ի մկրտել ամենայն ժո–
ղովրդեանն , եւ ընդ Յիսուսի մկր–
տելոյն` եւ կալ յաղօթս , բանալ երկ–
նից ,
22 Եւ իջանել Հոգւոյն Սրբոյ
մարմնաւոր տեսլեամբ իբրեւ զա–
ղաւնի 'ի վերայ նորա · եւ գալ ձայն
յերկնից` որ ասէր · Դու ես Որդի
իմ սիրելի` ընդ քեզ հաճեցայ ։
23 Եւ ինքն Յիսուս էր ամաց իբ–
րեւ երեսնից` սկսեալ` որոց որպէս
կարծէր , որդի Յովսեփայ · որ Յա–
կովբայն · որ Հեղեայն · որ Մա–
տաթեայն ։
24 Որ Ղեւեայն · որ Մելքեայն ·
որ Յաննեայն · որ Յովսեփայն ։
25 Որ Մատաթեայն · որ Ամով–
սայն · որ Նաւումայն · որ Եսղ–
եայն · որ Նանգեայն ։
26 Որ Մաաթայն · որ Մատաթա–
թայն · որ Սեմեայն · որ Յովսե–
քեայն · որ Յովդայն ։
27 Որ Յովհանանայն · որ Ռեսայն ·
որ Զորաբաբելին · որ Սաղաթիէ–
լին · որ Ներեայն ։
28 Որ Մելքեայն · որ Ադդեայն ·
որ Կոսամայն · որ Եղմովդադայն ·
որ Էրայն ։
29 Որ Յեսուայն · որ Եղիազա–
րայն · որ Յովրամայն · որ Մատ–
թայն · որ Ղեւեայն ։
30 Որ Սիմէոնին · որ Յուդային ·
որ Յովսեփայն · որ Յովնանայն ·
որ Եղիակիմայն ։
31 Որ Մելեայն · որ Մեննեայն ·
որ Մատաթայն · որ Նաթանայն ·
որ Դաւթին ։

20 Այն ամէնին վերայ ալ էլ աւե–
լացուց` որ Յօհաննէսին բանտի
մէջ դրաւ ։
21 Եւ էլաւ ամէն ժողովուրդի
մկրտուելուց ժամանակին , եւ երբոր
Յիսուս մկրտուեցաւ` եւ աղօթք էր
անում , երկինքը [a] բացուաւ ·
22 Եւ Սուրբ Հոգին մարմնաւոր
կերպարանքով աղաւնու պէս մէր
էր գալիս նորա վերայ · եւ երկնու–
քիցը ձայն եկաւ` որ ասում էր · Դու
ես իմ սիրելի Որդին` քեզ հաւա–
նեցի ։
23 Եւ ինքն Յիսուս սկսած էր ե–
րեսուն տարեկանի չափ [b] լինել` որ
ինչպէս որ կարծում էին , Յօսէփի
որդին [c] էր եւ նա` Յակոբին · եւ
նա` Հեղիին · եւ նա` Մատաթի–
ային ·
24 Եւ նա` Ղեւիին · եւ նա` Մել–
քիին · եւ նա` Յաննէին · եւ նա`
Յօսէփին ·
25 Եւ նա` Մատաթէին · եւ նա`
Ամօսին · եւ նա` Նաւումին · եւ նա`
Եսղիին · եւ նա` Նանգէին ·
26 Եւ նա` Մաաթին · եւ նա`
Մատաթաթին · եւ նա` Սեմիին · եւ
նա` Յօսէքին · եւ նա` Յօդին ·
27 Եւ նա` Յօհանանին · եւ նա` Ռէ–
սին · եւ նա` Զօրաբաբէլին · եւ նա`
Սաղաթիէլին · եւ նա` Ներիին ·
28 Եւ նա` Մելքիին · եւ նա` Ադ–
դէին · եւ նա` Կոսամին · եւ նա`
Եղմօդադին · եւ նա` Էրին ·
29 Եւ նա` Յեսուին · եւ նա` Եղի–
ազարին · եւ նա` Յօրամին · եւ նա`
Մատթային · եւ նա` Ղեւիին ·
30 Եւ նա` Սիմէօնին · եւ նա` Յու–
դային · եւ նա` Յօսէփին · եւ նա
Յօնամին · եւ նա` Եղիակիմին ·
31 Եւ նա` Մելեային · եւ նա`
Մէլէնային · եւ նա` Մատաթին ·
եւ նա` [d] Նաթանին · եւ նա` [e] Դաւ–
թին ·

[a] Մատթ. Գ. 13 ։ Յովհ. Ա. 32 ։
[b] Թուոց. Դ. 3 ։ 35 . 39 . 43 . 47 ։
[c] Մատթ. ԺԳ. 55 ։ Յովհ. Զ. 42 ։
[d] Զաք. ԺԲ. 12 ։
[e] Բ Թագ. Ե. 14 ։ Ա Մնաց. Գ. 5 ։

32 Որ Յեսսեայն · որ Ովբեդայն · որ Բոոսայն · որ Սաղմոնայն · որ Նաասոնին ։
33 Որ Ամինադաբայն · որ Արամայն · որ Ադմեայն · որ Առնեայն · որ Եսրոմայն · որ Փարեսին · որ Յուդային ։
34 Որ Յակովբայն · որ Իսահակայն · որ Աբրահամու · որ Թարային · որ Նաքովրայն ։
35 Որ Սերուքայն · որ Ռագաւայն · որ Փաղեկայն · որ Եբերայն · որ Սաղային ։
36 Որ Կայնանայն · որ Արփաքսադայն · որ Սեմայն · որ Նոյին · որ Ղամեքայն ։
37 Որ Մաթուսաղային · որ Ենովքայն · որ Յարեդին · որ Մաղաղիէլին · որ Կայնանայն ։
38 Որ Ենովսայն · որ Սեթայն · որ Ադամայն · որ Աստուծոյն ։

32 Եւ նա՝ յ Յեսսէին · եւ նա՝ Յովբէդին · եւ նա՝ Բոոսին · եւ նա՝ Սաղմօնին · եւ նա՝ Նաասոնին ·
33 Եւ նա՝ Ամինադաբին · եւ նա՝ Արամին · եւ նա՝ Ադմէին · եւ նա՝ Առնէին · եւ նա՝ Եսրոմին · եւ նա՝ Փարեսին · եւ նա՝ Յուդային ·
34 Եւ նա՝ Յակոբին · եւ նա՝ Իսահակին · եւ նա՝ Աբրահամին · եւ նա՝ ն Թարային · եւ նա՝ Նաքօրին ·
35 Եւ նա՝ Սերուքին · եւ նա՝ Ռագաւին · եւ նա՝ Փաղեկին · եւ նա՝ Եբերին · եւ նա՝ Սաղային ·
36 Եւ նա՝ շ Կայնանին · եւ նա՝ Արփաքսադին · եւ նա՝ ո Սէմին · եւ նա՝ Նոյին · եւ նա՝ Ղամեքին ·
37 Եւ նա՝ Մաթուսաղային · եւ նա՝ Ենովքին · եւ նա՝ Յարեդին · եւ նա՝ Մաղաղիէլին · եւ նա՝ Կայնանին ·
38 Եւ նա՝ Ենովսին · եւ նա՝ Սէթին · եւ նա՝ Ադամին · եւ նա՝ չ Աստուծոյն ։

## ԳԼ. Դ

1 Եւ Յիսուս լի Հոգւով Սրբով դարձաւ ՚ի Յորդանանէ · եւ վարէր Հոգւովն յանապատ ,
2 Աւուրս քառասուն փորձել ՚ի Սատանայէ , եւ ոչ եկեր եւ ոչ արբ յաւուրսն յայնոսիկ · եւ ՚ի կատարելն նոցա՝ քաղցեաւ ։
3 Եւ ասէ ցնա Սատանայ · Եթէ Որդի ես Աստուծոյ , ասա քարիդ այդմիկ՝ զի հաց լիցի ։
4 Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ · Գրեալ է , եթէ Ո՛չ հացիւ միայն կեցցէ մարդ , այլ ամենայն բանիւ Աստուծոյ ։
5 Եւ հանեալ զնա ՚ի լեառն մի բարձր՝ եցոյց նմա զամենայն թագաւորութիւնս աշխարհի ՚ի վայրկեան ժամանակի ։

1 Եւ Յիսուս Սուրբ Հոգւով լցուած Յորդանանէն պ դարձաւ եւ Հոգւով վարուեցաւ ջ անապատը ։
2 Քառասուն օր Սատանայէն փորձուեցաւ · եւ այն օրերը ոչ կերաւ եւ ոչ ռ խմեց · եւ երբոր նորանք կատարուեցան , անօթեց ։
3 Եւ Սատանան նորան ասաց · Թէ որ դու Աստուծոյ Որդին ես , այդ քարիդ ասա՝ որ հաց լինի ։
4 Յիսուս նորան պատասխան տուաւ եւ ասաց · Գրուած է , թէ Ո՛չ միմիայն հացով կապրի մարդ , այլ Աստուծոյ ամէն ս խօսքով ։
5 Եւ նորան մէկ բարձր սար հանեց՝ եւ աշխարհքին ամէն թագաւորութիւնները ցոյց տուաւ նորան մէկ աչքի թափ տալոյ ժամանակում

յ Հռութ. Դ. 18, եւ։ Ա Մնաց. Բ. 10, եւ։
ն Ծննդ. ԺԱ. 24-26։
շ Ծննդ. ԺԱ. 12։
ո Ծննդ. Ե. 6, եւ։ ԺԱ. 10, եւ։
չ Ծննդ. Ե. 1, 2։
պ Մատթ. Դ. 1։ Մարկ. Ա. 12։
ջ Համար. 14։ Գլ. Բ. 27։
ռ Ելից. ԼԴ. 28։ Գ Թագ. ԺԹ. 8։
ս Բ Օրին. Ը. 3։

6 Եւ ասէ ցնա սատանայ · Քեզ տաց զայս ամենայն իշխանութիւն եւ զփառս սոցա , զի ինձ տուեալ է , եւ ում կամիմ՝ տամ զսա ։

7 Արդ՝ դու եթէ անկեալ երկիրպագանիցես առաջի իմ , քեզ եղիցի ամենայն ։

8 Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ · Գրեալ է , Երկիրպագցես Տեառն Աստուծոյ քում , եւ զնա միայն պաշտեսցես ։

9 Եւ ած զնա յԵրուսաղէմ , եւ կացոյց 'ի վերայ աշտարակի տաճարին , եւ ասէ ցնա · Եթէ Որդի ես Աստուծոյ , արկ զքեզ աստի 'ի վայր ։

10 Զի գրեալ է՝ եթէ Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո՝ պահել զքեզ ։

11 Զի 'ի վերայ ձեռաց բարձցեն զքեզ , մի երբեք հարցես զքարի զոտն քո ։

12 Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ · Ասացեալ է , թէ Ո՛չ փորձեսցես զՏէր Աստուած քո ։

13 Եւ կատարեալ զամենայն փորձութիւնս սատանայի , 'ի բաց եկաց 'ի նմանէ առ ժամանակ մի ։

14 Եւ դարձաւ Յիսուս զօրութեամբ Հոգւոյն 'ի Գալիլեա · եւ ել համբաւ զնմանէ ընդ ամենայն կողմանս գաւառին ։

15 Եւ նա ուսուցանէր 'ի ժողովուրդս նոցա փառաւորեալ յամենեցունց ։

16 Եւ եկն 'ի Նազարէթ՝ ուր սնեալն էր · եւ եմուտ ըստ սովորութեան իւրում յաւուրն շաբաթուց 'ի ժողովուրդն ։

17 Եւ ետուն նմա գիրս Եսայ-

6 Եւ Սատանան ասաց նորան · Այս ամէն իշխանութիւններս եւ սորանց փառքը քեզ կտամ · ինչու որ՝ ինձ տրուած է · եւ ում որ կամենամ՝ կտամ ա նորան ։

7 Ուրեմն՝ եթէ իմ առաջիս ընկած երկրպագութիւն անես , ամէնը քեզ լինի ։

8 Յիսուս նորան պատասխան տուաւ եւ ասաց · Գրուած է՝ թէ , Քո Տէր Աստուծոյդ պէտք է երկրպագութիւն անես , եւ նորան մինակ պաշտես ։

9 Եւ տարաւ նորան Երուսաղէմ , եւ տաճարին աշտարակին վերայ կանգնեցրուց , եւ նորան ասաց · Թէ որ Աստուծոյ Որդին ես , այս տեղից քեզ վէր գ ձգէ ·

10 Պատճառն որ՝ գրուած է՝ թէ Իւրեն հրեշտակներին հրամայել է քեզ համար՝ որ քեզ դ պահեն ·

11 Որ ձեռներին վերայ քեզ վեր առնեն՝ որ ընաւ մին ժամանակ քո ոտքդ քարի չի դիպցընես ։

12 Յիսուս նորան պատասխան տուաւ եւ ասաց · Ասուած է՝ թէ Մի փորձեր քո Տէր ե Աստուծոյդ ։

13 Եւ Սատանան երբոր այն ամէն փորձութիւնները կատարեց , հեռացաւ նորանից մին զ ժամանակ ։

14 Եւ է Յիսուս Հոգւոյ ը զօրութենովը դարձաւ թ Գալիլեա · եւ նորա համբաւը դուրս գնաց այն գաւառի ամէն կողմերը ։

15 Եւ նա սովորցնում էր նորանց ժողովարաններումը , եւ ամէնիցը փառաւորւում էր ։

16 Եւ եկաւ Նազարէթ՝ ուրտեղ որ մեծացել ժ էր · եւ իւրեն սովորութեան պէս շաբաթ օրը ժողովարանին մէջ ժա մտաւ ·

17 Եւ Եսայի մարգարէի գիրքը

ա Յովհ · ԺԲ · 31 · ԺԴ · 30 · Եփես · Բ · 2 · 7 ·
բ Բ Օրին · Զ · 13 · Ժ · 20 ·
գ Մատթ · Դ · 5 ·
դ Սաղ · ՂԱ · 11 ·
ե Բ Օրին · Զ · 16 ·
զ Յովհ · ԺԴ · 30 · Եբր · Դ · 15 ·
է Մատթ · Դ · 12 · Յովհ · Դ · 43 ·
ը Համեր · 1 ·
թ Գործ · Ժ · 37 ·
ժ Մատթ · Բ · 23 · ԺԳ · 54 · Մարկ · Զ · 1 ·
ժա Գործ · ԺԳ · 14 · ԺԷ · 2 ·

հայ մարգարէի, եւ յարեաւ ըն-
թեռնուլ. եւ եբաց գգիրսն՝
եգիտ զայն տեղի՝ յորում գրեալն
էր.
18 Հոգի Տեառն 'ի վերայ իմ,
վասն որոյ եւ օծ իսկ զիս. աւետա-
րանել աղքատաց առաքեաց զիս,
բժշկել զբեկեալս սրտիւք.
19 Քարոզել գերեաց զթողու-
թիւն, եւ կուրաց տեսանել. ար-
ձակել զվիրաւորս 'ի թողութիւն,
քարոզել զտարեկան Տեառն ընդու-
նելի:
20 Եւ խփեալ զգիրսն ետ ցպաշ-
տօնեայն. եւ նստաւ. եւ ամենե-
ցուն՝ որ 'ի ժողովրդեանն էին աչք՝
'ի նա հայէին:
21 Եւ սկսաւ ասել ցնոսա. Այսօր
լցան գիրքս այս յականջս ձեր:
22 Եւ ամենեքին վկայէին նմա,
եւ զարմանային ընդ բանս շնոր-
հացն՝ որ ելանէին 'ի բերանոյ նո-
րա. եւ ասէին՝ Ո՞չ սա է՞ որդին
Յովսեփայ:
23 Եւ ասէ ցնոսա. Ապաքէն ա-
սիցէք առ իս զառակս զայս. Բժիշկ՝
բժշկեա զանձն քո. որչափ լուաք
զոր արարեր 'ի Կափառնաում, ա-
րա եւ աստ 'ի քում գաւառի:
24 Եւ ասէ. Ամէն ասեմ ձեզ՝ թէ
չէ մարգարէ ընդունելի 'ի քաղաքի
իւրում:
25 Արդարեւ ասեմ ձեզ. զի բա-
զում այրիք էին յաւուրս Եղիայի
'ի մէջ Իսրայէլի՝ յորժամ փակե-
ցան երկինք զերիս ամս եւ զվեց
ամիս, եւ եղեւ սով մեծ ընդ ամե-
նայն երկիր:
26 Եւ ոչ առ մի 'ի նոցանէ առա-

տուին նորան՝ եւ վերկացաւ՝ որ
կարդայ. եւ երբոր գիրքը բացաւ՝
այն տեղը գտաւ՝ որ նորանում
գրուած էր.
18 Տէրին Հոգին ինձ վրայ [հ] է.
եւ իսկ նորահամար էլ օծեց ինձ.
նա ինձ ուղարկեց՝ աղքատներին ա-
ւետիք տալ, սրտով կոտրուածնե-
րին բժշկել,
19 Գերիներին թողութիւն քա-
րոզել, եւ կոյրերին տեսութիւն.
խոցուածներին արձակել դէպի թո-
ղութիւն, Տէրի ընդունելի տարին
քարոզել:
20 Եւ գիրքը խփեց՝ եւ պաշտօն-
եային տուաւ, եւ նստեց. եւ
ժողովարանին մէջ ամէն ըլնողների
աչքերը նորան էին մտիկ տալիս:
21 Եւ սկսեց ասել նորանց՝ Այսօր
այս գիրքս կատարուեցաւ ձեր ա-
կանջներումդ:
22 Եւ ամէնքը վկայումէին նո-
րան, եւ զարմանումէին այն շնոր-
հաց խօսքերին վերայ՝ որ դուրս էին
գալիս նորա [ձ] բերանիցը. եւ ա-
սումէին՝ Չէ՞ որ սա Յօսէփի որդին
է:
23 Եւ նորանց ասաց. Լինի թէ
այս առակս ասէք ինձ. Բժիշկ՝ քո
անձդ բժշկէ. ինչափ բաներ լսե-
ցինք՝ որ Կափառնայումին մէջ [ճ] ա-
րիր՝ այստեղ էլ արա քո [մ] գաւա-
ռումդ:
24 Եւ ասաց. Ճշմարիտն ասու-
մեմ ձեզ՝ թէ Մարգարէն ընդունե-
լի չէ իւրեն [յ] քաղաքումը:
25 Իրաւի ասումեմ ձեզ. թէ Ե-
ղիայի օրերումն Իսրայէլին մէջ շատ
որբեւէրիններ կային՝ երբոր երկին-
քըն երեք տարի եւ վեց ամիս փակ-
վեցաւ, եւ ամէն երկրի մէջ մեծ
սով [ն] էլաւ.
26 Եւ Եղիան նորանցից մէկին

[հ] Եսայ. ԿԱ. 1.
[ձ] Սաղ. ԽԵ. 2. Մատթ. ԺԳ. 54. Մարկ. Զ. 2. Ղկ. Բ. 47.
[ղ] Յովհ. Զ. 42.
[ճ] Մատթ. Դ. 13. ԺԱ. 23.
[մ] Մատթ. ԺԳ. 54. Մարկ. Զ. 1.
[յ] Մատթ. ԺԳ. 57. Մարկ. Զ. 4. Յովհ. Դ. 44.
[ն] Գ Թագ. ԺԷ. 9. ԺԸ. 1. Յակ. Ե. 17.

քեցաւ Եղիա, բայց միայն 'ի Սարեփթայ Սիդոնացւոց՝ առ կին մի այրի:

27 Եւ բազում բորոտք էին յԻսրայէլի առ Եղիսէիւ մարգարէիւ. եւ ոչ ոք 'ի նոցանէ սրբեցաւ, բայց միայն Նէեման Ասորի:

28 Եւ լցան ամենեքին՝ բարկութեամբ 'ի ժողովրդեանն՝ իբրեւ լուէին զայս:

29 Եւ յարուցեալ հանին զնա արտաքոյ քաղաքին, եւ ածին զնա մինչեւ յարտեւան լերինն՝ յորոյ վերայ քաղաքն նոցա շինեալ էր՝ գահավէժ առնել զնա:

30 Եւ նա անցեալ ընդ մէջ նոցա՝ գնայր:

31 Եւ էջ 'ի Կափառնաում 'ի քաղաքն Գալիլեացւոց, եւ ուսուցանէր զնոսա 'ի շաբաթուն:

32 Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա, զի իշխանութեամբ էր բան նորա:

33 Եւ էր 'ի ժողովրդեանն այր մի, զոր ունէր այս դիւի պղծոյ, եւ աղաղակեաց 'ի ձայն մեծ,

34 Ասէ. Թոյլացո՛ զի՞ կայ մեր եւ քո՝ Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ. գիտեմք զքեզ՝ ով ես Սուրբդ Աստուծոյ:

35 Սաստեաց 'ի նա Յիսուս եւ ասէ. Պապանձեաց եւ ել 'ի դմանէ. զգետնեաց զնա դեւն 'ի միջի անդ՝ եւ ել 'ի նմանէ, եւ ինչ ոչ վնասեաց նմա:

36 Եւ եղեն զարմանալիք 'ի վերայ ամենեցուն, խօսէին ընդ միմեանս եւ ասէին. Զի՞նչ է բանս այս, զի իշխանութեամբ եւ զօրութեամբ սաստէ այսոց պղծոց՝ եւ ելանեն:

մօտ չուղարկվեցաւ, բայց միայն Սիդոնացոց Սարեփթան՝ մին որբեւէրի կնկան մօտ:

27 Եւ շատ բորոտներ կային Իսրայէլին մէջ Եղիսէ մարգարէին ժամանակին. եւ նորանցից ոչ ով չըսրբվեցաւ, բայց միայն Նէեման ւ Ասորին:

28 Եւ ամէնքն՝ որ ժողովարանին մէջ էին, բարկութենով լցվան երբոր աս լսեցին:

29 Եւ վէրկացան՝ նորան քաղաքէցը դուրս հանեցին, եւ տարան նորան մինչեւ այն սարի գլուխն՝ որ նորանց քաղաքը նորա վերայ շինված էր՝ որ բարձր տեղիցը վէր ձըգեն նորան:

30 Եւ նա նորանց միջովն անցաւ ս գնաց:

31 Եւ վէրեկաւ Կափառնայում՝ Գալիլեացոց ւ քաղաքը, եւ շաբաթ օրերումը սովորցնումէր նորանց:

32 Եւ զարմանումէին նորա վարդապետութեան վերայ, ինչու որ նորա խօսքն իշխանութենով ղ էր:

33 Եւ ժողովարանին մէջ մին մարդ կար՝ որ նորան պիղծ դեւ բռնել էր, եւ մեծ ձայնով ջ աղաղակեց,

34 Եւ ասաց. Թո՛ղ արա. դու ինչ բան ունիս մեզ հետ՝ Յիսուս Նազօրեցի. եկի՞ր որ մեզ կորցնես. գիտեմենք ռ քեզ՝ ով ես դու՝ Աստուծոյ ս Սուրբը:

35 Յիսուս սաստեց նորան եւ ասաց. Պապանձվիր եւ դուրս ել դորանից. դեւն այն մէջ տեղումը գետինը զարկեց նորան՝ եւ դուրս եկաւ նորանից, եւ բնաւ մին վնաս չըգործեց նորան:

36 Եւ զարմանք էլաւ ամէնին վերայ. իրար հետ խօսումէին եւ ասում. Սա ինչ բան է՝ որ իշխանութենով եւ ուժով պիղծ դեւերին սաստումէ՝ եւ դուրս են գալիս:

ւ Դ Թագ. Ե. 14. ս Յովհ. Ը. 59. Ժ. 39.
ւ Մատթ. Դ. 13. Մարկ. Ա. 21. ղ Մատթ. Զ. 28.
29. Ցիտ. Բ. 15. ջ Մարկ. Ա. 23. ռ Համար. 42.
ս Սաղ. ՁԶ. 10. Դան. Թ. 24. Գլ. Ա. 35.

37 Եւ երթայր հռչակ զնմանէ ընդ
ամենայն տեղիս շուրջ զգաւառաւն ։
38 Եւ յարուցեալ 'ի ժողովրդենէ
անտի, եմուտ 'ի տուն Սիմոնի ։
39 Զորանչ Սիմոնի տագնապէր
ջերմամբ մեծաւ, եւ աղաչեցին ըզ
նա վասն նորա ։
40 Եկաց առ նմա՝ սաստեաց ջեր-
մանն, եւ եթող զնա. եւ վաղ-
վաղակի յարեաւ՝ եւ պաշտէր զնո-
սա ։
41 Եւ ընդ արեւուն մտանել՝ ա-
մենեքեան, որոց էին հիւանդք 'ի
պէսպէս ցաւս՝ բերէին զնոսա առ
նա. եւ նա իւրաքանչիւր ումեք 'ի
նոցանէ դնէր ձեռս՝ եւ բժշկէր ըզ
նոսա ։
42 Ելանէին դեւք 'ի բազմաց, ա-
ղաղակէին եւ ասէին՝ եթէ Դու ես
Որդի Աստուծոյ. եւ նա սաստէր՝
եւ ոչ տայր նոցա թոյլ խօսել, զի
գիտէին զնա՝ թէ Քրիստոսն է ։

43 Եւ իբրեւ աւր եղեւ՝ ել գնաց
յանապատ տեղի. եւ ժողովուրդքն
խնդրէին զնա. եկին մինչեւ առ
նա՝ եւ արգելուին զնա՝ զի մի գը-
նասցէ 'ի նոցանէ ։

44 Եւ նա ասէ ցնոսա. Եւ այլոց
քաղաքաց պարտ է ինձ աւետա-
րանել զարքայութիւն Աստուծոյ,
զի յայն իսկ առաքեցայ ։

45 Եւ քարոզէր 'ի ժողովուրդսն
Գալիլեացւոց ։

37 Եւ նորա համբաւն՝ գնումէր
այն գաւառի ամէն չորս կողմերըն ։
38 Եւ վերկացաւ այն ժողովարա-
նիցն ու մտաւ Սիմոնին տունը ։
39 Սիմոնին զոքանչը սաստիկ անհ-
գամ չարչարվումէր՝ եւ նորան յա-
ղաչեցին նորա համար ։
40 Նորա մօտ կանգնեց՝ սաստեց
տենդին, եւ թողեց նորան. եւ շու-
տով վերկացաւ՝ եւ նորանց ծա-
ռայումէր ։
41 Եւ արեգակին մտնելոյ ժա-
մանակին՝ ամէնքըն՝ որ կերպ կերպ
ցաւերով հիւանդներ ունէին՝ նո-
րանց բերումէին նորա մօտ. եւ
նա նորանց ամէն մէկին վերայ ձեռք
էր դնում՝ եւ նորանց ⁻բժշկումէր ։
42 Շատ մարդկանցից էլ դուրս
էին գալիս դեւեր, եւ աղաղակու-
մէին ու ասում՝ թէ Դու ես Աս-
տուծոյ ⸗ Որդին. եւ նա սաստումէր
նորանց՝ եւ թոյլ չէր տալիս՝ որ
խօսին. ինչու որ՝ գիտումէին՝ թէ
նա Քրիստոսն ⸗ է ։
43 Եւ երբոր ցերեկ էլաւ՝ դուրս
ելաւ գնաց անապատ տեղ. եւ
ժողովուրդները մաս էին գալիս
նորան՝ եւ եկին մինչեւ նորան մօ-
տը. եւ արգելումէին նորան՝ որ
չը գնայ ⁻իրենցից ։
44 Եւ նա ասաց նորանց. Պէտք
է՝ որ ես ուրիշ քաղաքներին էլ
Աստուծոյ արքայութիւնըն աւետա-
րանեմ. ինչու որ՝ իսկ դրա համար
ուղարկվեցայ ։
45 Եւ Գալիլեացոց ժողովարան-
ներին մէջ ⁺քարոզումէր ։

## ԳԼ. Ե

1 Եւ եղեւ 'ի խռնել զնովաւ
ժողովրդեանն եւ լսել զբանն Ա-
ստուծոյ, եւ ինքն կայր առ ծովա-
կին Գեննեսարեթայ ։

1 Եւ էլաւ որ ժողովուրդը նորա
վերայ կիտվումէր, եւ Աստուծոյ
բանը լսում, եւ ինքն Գեննեսա-
րեթի ծովակին մօտ կանգնած ⁻էր ։

| | | | |
|---|---|---|---|
| Հ Մատթ. Ը. 14 ։ | Բ Մարկ. Ա. 34 ։ | 35 ։ | ⁻ Մատթ. Դ. 18 ։ |
| Մարկ. Ա. 29 ։ | Գ. 11 ։ | ⁻ Մարկ. Ա. 35 ։ | Մարկ. Ա. 16 ։ |
| ⁺ Մատթ. Ը. 16 ։ | Դ Մարկ. Ա. 25. | ⁺ Մարկ. Ա. 39 ։ | |
| Մարկ. Ա. 32 ։ | 34 ։ Համեմ. 34. | — | |

2 Եւ ետես երկուս նաւս՝ զի կա-
յին առ ծովակին, եւ ձկնորսքն ե-
լեալ 'ի նոցանէ՝ լուանային զգոր-
ծիսն։
3 Եւ նա 'ի մի նաւուցն՝ որ էր
Սիմովնի, եւ աղաչեաց զնա սակա-
ւիկ մի ածել 'ի ներքս 'ի ցամա-
քէն. նստաւ՝ եւ ուսուցանէր 'ի
նաւէ անտի զժողովուրդսն։
4 Եւ իբրեւ լռեաց 'ի խօսիցն,
ասէ ցՍիմովն. Խաղացի 'ի խորսն,
եւ արկէք զգործիս ձեր յորս։
5 Պատասխանի ետ Սիմովն եւ
ասէ ցնա. Վարդապետ՝ զամենայն
գիշերս աշխատ եղեալ՝ եւ ոչինչ
կալաք. բայց վասն քո բանիդ արկ-
ցուք զգործիսս։
6 Զայս իբրեւ արարին՝ փակե-
ցին 'ի ներքս բազմութիւն ձկանց
յոյժ, մինչեւ պատառէին ուռ-
կանք նոցա։
7 Եւ ակնարկէին ընկերացն 'ի
միւս նաւն՝ գալ օգնել նոցա. եւ
եկին՝ եւ լցին երկոքին նաւքն,
մինչեւ մերձ ընկղմել նոցա։
8 Իբրեւ ետես Սիմովն Պետրոս՝
անկաւ առ ծունկս Յիսուսի եւ ա-
սէ. 'Ի բաց գնա յինէն Տէր, զի
այր մեղաւոր եմ ես։
9 Քանզի ահ պատեաց զնա եւ
զամենեսեան որ ընդ նմայն էին՝
վասն որսոյ ձկանցն զոր ըմբռնե-
ցին.
10 Նոյնպէս եւ զՅակովբոս եւ
զՅովհաննէս՝ զորդիսն Զեբեդեայ,
որ էին ընկերք Սիմովնի. եւ ա-
սէ ցՍիմովն Յիսուս. Մի երկնչիր՝
յայսմհետէ զմարդիկ որսայցես 'ի
կեանս։
11 Եւ հանեալ զնաւսն 'ի ցամաք,
թողին զամենայն, եւ գնացին ըզ
հետ նորա։

2 Եւ երկու նաւ տեսաւ՝ որ ծո-
վակին մօտ կանգնած էին, եւ ձուկ
որսացողները նորանցից դուրս էին
ելած՝ եւ գործիքները լուանումէին։
3 Նա այն նաւերից մէկին մէջ
մտաւ՝ որ Սիմօնինն էր, եւ նորան
աղաչեց՝ որ նաւը մին քիչ ցամա-
քիցը ներս տանի. նստեց՝ եւ նաւի-
ցը սովորցնումէր ժողովուրդներին։
4 Եւ երբոր խօսքը վերջացրուց,
Սիմօնին ասաց. Նաւը դէպի խորը
տար, եւ ձեր գործիքները ձգե-
ցէք որսալոյ բ համար։
5 Սիմօն պատասխան տուաւ՝ եւ
նորան ասաց. Վարդապետ՝ այս
բոլոր գիշերս աշխատեցինք՝ եւ բը-
նաւ մին բան չը բռնեցինք, միայն
թէ քո խօսքիդ համար գործիքներս
կը ձգենք։
6 Երբոր սա արին՝ ձկների մեծ
բազմութիւն ներս փակեցին, մին-
չեւ որ նորանց ուռկանները պա-
տառվումէին։
7 Եւ աչքով էին նշան անում միւս
նաւի մէջ լինող ընկերակիցներին՝ որ
գան իրենց օգնեն. եւ եկին՝ եւ
երկու նաւն էլ լցվան, մինչեւ որ
թաղվելոյ մօտ էին։
8 Երբոր Սիմօն Պետրոս տեսաւ՝
ընկաւ Յիսուսի ծնկները ու ասաց.
Տէր ինձանից հեռու գ գնա, ինչու-
որ՝ ես մեղաւոր մարդ եմ։
9 Զարմանալը՝ ահ պատեց նորան
եւ ամէնին էլ՝ որ նորա հետ էին՝
այն ձկների որսին համար, որ բռը-
նեցին.
10 Այնպէս էլ Զեբեդեայի որդի-
ներին՝ Յակոբին եւ Յօհաննէսին,
որ Սիմօնի ընկերակիցներն էին. եւ
Յիսուս Սիմօնին ասաց. Մի վախե-
նար՝ սրանից ետեւ մարդկանց կը
որսաս դէպի դ կեանքը։
11 Եւ նաւը հանեցին ցամաքը,
ամէն բաները ե թողին, եւ նորան
ետեւէն գնացին։

բ Յովհ. ԻԱ. 6.
գ Բ Թագ. Զ. 9. Գ Թագ. ԺԷ. 18.
դ Մատթ. Դ. 19. Մարկ. Ա. 17.
ե Մատթ. Դ. 20. ԺԹ. 27. Մարկ. Ա. 18. Ղուկ. ԺԸ. 28.

12 Եւ եղեւ 'ի հասանելն նորա 'ի մի քաղաքացն, ահա այր մի լի բորոտութեամբ իբրեւ ետես զՅիսուս՝ անկեալ 'ի վերայ երեսաց աղաչէր զնա՝ եւ ասէ․ Տէր՝ եթէ կամիս, կարող ես զիս սրբել ։

13 Ձգեաց զձեռն իւր՝ հասոյց 'ի նա՝ եւ ասէ․ Կամիմ՝ սրբեաց․ եւ վաղվաղակի գնաց 'ի նմանէ բորոտութիւնն ։

14 Եւ նա պատուիրեաց նմա մի ումեք ասել, այլ թէ երթ ցոյց զանձն քո քահանային, եւ մատո պատարագ վասն սրբութեան քո՝ որպէս եւ հրամայեաց Մովսէս, 'ի վկայութիւն նոցա ։

15 Եւ յորդէր առաւել բանն զնմանէ․ եւ ժողովէին ժողովուրդք բազումք՝ լսել եւ բժշկել 'ի հիւանդութեանց իւրեանց ։

16 Եւ նա խոյս տայր յանապատ տեղիս, եւ կայր յաղօթս ։

17 Եւ եղեւ 'ի միում աւուրց՝ եւ ինքն ուսուցանէր, եւ փարիսեցիքն եւ օրինացն վարդապետք նստէին, որ ժողովեալ էին յամենայն քաղաքաց Գալիլեացւոց՝ եւ Հրէաստանի եւ Երուսաղէմի․ եւ զօրութիւն Տեառն էր 'ի բժշկել զնոսա ։

18 Եւ ահա արք բերէին մահճօք զայր մի՝ որ էր անդամալոյծ, եւ խնդրէին զնա մուծանել 'ի ներքս՝ եւ դնել առաջի նորա ։

19 Եւ իբրեւ ոչ գտանէին՝ թէ ընդ որ մուծանիցեն զնա 'ի ներքս վասն ամբոխին, ելին 'ի տանիս, եւ 'ի ցուցոյն կախեցին զնա, եւ իջուցին մահճօքն հանդերձ 'ի մէջ առաջի Յիսուսի ։

20 Եւ տեսեալ զհաւատս նոցա՝

12 Եւ էղաւ՝ երբոր նա քաղաքներէն մէկուն մէջ հասաւ, ահա մէկ մարդ՝ որ բորոտութենով լեցուն էր, երբոր Յիսուսին տեսաւ՝ երեսին վրայ ինկաւ, նորան աղաչեց՝ եւ ըսաւ․ Տէր՝ թէ որ կամենաս, կարող ես ինձ ա սրբել ։

13 Իսկն ձեռքը մեկնեց՝ հասցուց նորան՝ եւ ասաց․ Կամենումեմ՝ սրբուէ․ եւ շուտով բորոտութիւնը գնաց նորանից ։

14 Եւ նա պատուիրեց նորան՝ որ բնաւ մէկին բ չասէ, բայց թէ՝ գնա, քո անձրդ ցոյց տուր քահանային, եւ քո սրբութեանդ համար պատարագ բեր՝ ինչպէս որ Մովսէսն էլ հրամայեց, որ նորանց վկայութիւն գ լինի ։

15 Եւ նորա համբաւն էլ աւելի շատանումէր․ եւ շատ ժողովուրդներ ժողովւումէին՝ որ լսեն եւ իրենց հիւանդութիւններիցը դ բժշկուին ։

16 Եւ նա քաշւումէր անապատ տեղերանք, եւ աղօթք էր ե անում ։

17 Եւ մէն օր էղաւ՝ որ ինքը ուսուցանումէր՝ եւ փարիսեցիներն ու օրինաց վարդապետները նստած էին, որ Գալիլեացոց եւ Հրէաստանի ամէն քաղաքներիցն ու Երուսաղէմիցը հաւաքուած էին․ եւ Տէրի զօրութիւնը կար նորանց բժշկելոյ համար ։

18 Եւ ահա մարդիկ մէն մարդ էին բերում մահիճով՝ որ անդամալուծ էր, եւ ուզումէին՝ որ նորան ներս տանեն, եւ նորա առաջին զ դնեն ։

19 Եւ երբոր տեղ չէին գտնում՝ որ նորան ներս տանեն՝ այն ամբոխի պատճառովը, վէր էլան կտուրը, եւ օձաքիցը կախեցին նորան, եւ մահիճովը վէր բերին մէջ տեղը Յիսուսին առաջին ։

20 Եւ նորանց հաւատքըն որ տե-

ա Մատթ․ Ը․ 2․ Մարկ․ Ա․ 40․
բ Մատթ․ Ը․ 4․
գ Ղև․ ԺԴ․ 4․ 10․ 21, 22․
դ Մատթ․ Դ․ 25․ Մարկ․ Գ․ 7․ Յովհ․ Զ․ 2․
ե Մատթ․ ԺԴ․ 23 Մարկ․ Զ․ 46․
զ Մատթ․ Թ․ 2․ Մարկ․ Բ․ 3․

ասէ ցնա. Այր դու՝ թողեալ լի-
ցին քեզ մեղք քո։
21 Սկսան խորհել դպիրքն եւ
փարիսեցիքն, եւ ասեն. Ո՞ է սա՝
որ խօսի զհայհոյութիւնս, ո՞վ կարէ
թողուլ զմեղս՝ բայց միայն Աստ-
ուած։
22 Իբրեւ գիտաց Յիսուս զխոր-
հուրդս նոցա, պատասխանի ետ եւ
ասէ ցնոսա. Զի՞ խորհիք ՚ի սիրտս
ձեր։
23 Զի՞նչ դիւրագոյն է. ասել՝
Թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ
ասել՝ Արի եւ գնա։
24 Այլ զի գիտասջիք՝ եթէ իշխա-
նութիւն ունի Որդի մարդոյ յերկրի
թողուլ զմեղս. ասէ ցանդամալու-
ծն, Քեզ ասեմ՝ արի առ զմա-
հիճս քո՝ եւ երթ ՚ի տուն քո։

25 Եւ առժամայն յարուցեալ ա-
ռաջի ամենեցուն՝ առ զիւրեւ յորոյ
վերայ անկեալ դնէր, գնաց ՚ի տուն
իւր, եւ փառաւոր առնէր զԱստ-
ուած։
26 Զարմանք կալան զամենեսեան,
եւ փառաւոր առնէին զԱստուած.
լի եղեն ահիւ, եւ ասեն՝ եթէ Տե-
սաք այսօր նոր նշանս։
27 Եւ յետ այնորիկ ել անտի՝ եւ
ետես մաքսաւոր մի՝ որում անուն
էր Ղեւի, զի նստէր ՚ի մաքսաւո-
րութեանն. եւ ասէ ցնա, Եկ զկնի
իմ։

28 Եւ թողեալ զամենայն, յար-
եաւ գնաց զկնի նորա։
29 Եւ արար ընդունելութիւն մեծ
նմա Ղեւի ՚ի տան իւրում. եւ էր
ժողովուրդ բազում մաքսաւորաց
եւ այլոց՝ որ էին բազմեալ ընդ
նոսա։
30 Եւ տրտնջէին փարիսեցիքն եւ
դպիրքն նոցա զնմանէ առ աշա-

ասաւ՝ նորան ասաց. Ո՛վ մարդ՝ քո
մեղքերդ թողլած լինին քեզ։
21 Կարգագօղներն ու փարիսեցի-
ներն սկսեցին միտք անել, եւ ա-
սացին. Սա ո՞վ է՝ որ հայհոյանք է
խօսում. ո՞վ է կարող մեղքը թողել՝
բայց միայն ի Աստուած։
22 Յիսուս երբոր նորանց մտած-
մունքները իմացաւ, պատասխան
տուաւ եւ նորանց ասաց. Ի՞նչ էք
միտք անում ձեր սրտերումդ։
23 Ո՞րն է աւելի հեշտ. ասել՝ թէ
Քո մեղքերդ թողլած լինին քեզ,
թէ ասել՝ Վեր կաց եւ գնա։
24 Բայց որ իմանաք՝ թէ Որդին
մարդոյ իշխանութիւն ունի՝ երկրիս
վերայ մեղքերը թողելոյ. անդա-
մալուծին ասաց, Քեզ եմ ասում՝
վեր կաց քո մահիճքդ առ՝ եւ գնա
քո տունդ։
25 Եւ իսկ այն ժամին ամէնին
առաջին վերկացաւ, իրեն վերայ
առաւ նա՝ որ նորա վերայ ընկած
պառկած էր, գնաց իրեն տունը, եւ
փառք էր տալիս Աստուծոյ։
26 Զարմանք բռնեց ամէնին, եւ
փառք էին տալիս Աստուծոյն. ա-
հով լցված, եւ ասումէին՝ թէ, Այ-
սօր նոր նշան տեսանք
27 Եւ նորանից ետեւ Յիսուս այն
տեղիցը դուրս գնաց՝ եւ մին մաք-
սաւոր տեսաւ՝ որ նորան անունը
Ղեւի էր, եւ նստած մաքսաւո-
րութիւն էր անում. եւ նորան ա-
սաց, Իմ ետեւէս ի եկ։
28 Եւ նա ամէն բան թողեց, վեր-
կացաւ գնաց նորա ետեւէն։
29 Եւ Ղեւին նորան մեծ հացկե-
րութիւն արաւ իրեն տանը ներսը.
եւ շատ ժողովուրդ կար մաքսա-
ւորների եւ ուրիշների՝ որ նորանց
հետ սեղան էին նստել։
30 Եւ փարիսեցիներն ու նորանց
կարգագօղները նորանից տրտնջա-

ւ Մատթ. Թ. 3. Մարկ. Բ. 6, 7. ի Սաղ. ԼԲ. 5 | Եսայ. ԽԳ. 25. ի Մատթ. Թ. 9. Մարկ. Բ. 13. | 14. ղ Մատթ. Թ. 10. Մարկ. Բ. 15. | ճ Գղ. ԺԵ. 1.

կերպան նոցա՝ եւ ասէին. Ընդէր ընդ մաքսաւորս եւ ընդ մեղաւորս ուտէք եւ ըմպէք։

31 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Ո՛չ ինչ են պիտոյ բժիշկք ողջոց, այլ հիւանդաց։
32 Եւ ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն։

33 Եւ նոքա ասեն ցնա. Ընդէր աշակերտքն Յովհաննու պահեն ստէպ՝ եւ խնդրուածս առնեն, նոյնպէս եւ փարիսեցւոցն. եւ քոյդ ուտեն եւ ըմպեն։

34 Եւ նա ասէ ցնոսա. Միթէ կարօղ էք մանկանց առագաստի, մինչ փեսայն ընդ նոսա իցէ, հրաման տալ պահել։
35 Եկեսցեն աւուրք՝ յորժամ բարձցի ՚ի նոցանէ փեսայն. ապա պահեսցեն յաւուրսն յայնոսիկ։
36 Ասաց եւ առակ մի առ նոսա, թէ Ո՛չ ոք արկանէ ՚ի նոր հանդերձէ ՚ի վերայ հնացեալ ձորձոյ. ապա թէ ոչ՝ եւ զնորն պատառէ, եւ ընդ հնոյն չմիաբանի կապերտն որ ՚ի նորոյն։
37 Եւ ոչ ոք արկանէ գինի նոր ՚ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ պայթեցուցանէ գինին նոր զտիկսն հինս. ինքն հեղու, եւ տիկքն կորնչին։

38 Այլ գինի նոր ՚ի տիկս նորս արկանելի է, եւ երկոքին պահին։
39 Եւ ոչ ոք ըմպէ զհինն՝ եւ կամիցի զնորն. քանզի ասէ՝ թէ Հինն քաղցրագոյն է։

մէջէն նորա աշակերտներին առաջին՝ եւ ասում. Ինչու էք մաքսաւորների եւ մեղաւորների հետ ուտում եւ խմում։
31 Յիսուս պատասխան տուաւ եւ նորանց ասաց. Առողջներին բժիշկ պէտք չէ, այլ հիւանդներին։
32 Չեմ եկել՝ որ արդարները կանչեմ, այլ մեղաւորներին՝ որ [Յ] ապաշխարեն։
33 Եւ նորանք ասացին նորան. Ինչու Յովհաննէսին աշակերտները շատ ժամանակ ծոմ են պահում՝ եւ աղօթք անում, այնպէս էլ փարիսեցիները. եւ քո աշակերտները ուտում եւ խմում։
34 Եւ նա նորանց ասաց. Միթէ կարօղ էք հարսանիքի տղաներին, դեռ քանի որ փեսան նորանց հետ է, հրաման տալ որ ծոմ պահեն։
35 Օրեր կըգան՝ երբոր փեսան վերկացուի նորանցից. ապա այն օրերը կըպահեն։
36 Մին առակ էլ ասաց նորանց, թէ Ո՛չ ով մին նոր շորից հին հագուստի վերայ կարկատան չի ձգիլ. ապա թէ չէ՝ այն նորըն էլ կը պատռէ, եւ կտորն՝ որ նորիցն է, հինին հետ [Փ] չի միաբանվիլ։
37 Եւ ոչ ով նոր գինին հին տիկերի մէջ չի ածիլ. ապա թէ չէ՝ նոր գինին հին տիկերը կըպատառէ. ինքը կը թափվի, եւ տիկերը կըկորչին։
38 Բայց նոր գինին նոր տիկերի մէջ պէտք է ածվի, եւ երկուքն էլ կըպահվին։
39 Եւ ոչ ով չկայ՝ որ հինը խմէ՝ եւ նորը կամենայ. ինչու որ՝ ասումէ՝ թէ, Հինն աւելի քաղցր է։

## ԳԼ. Զ

1 Եւ եղեւ ՚ի շաբաթու յերկրորդում առաջնոյն՝ անցանել նմա ընդ արտորայսն. եւ աշակերտքն նո-

1 Եւ էրաւ՝ որ նա երկրորդի առաջին շաբաթ օրն արտերանը անցանումէր, եւ նորան աշակերտները

[Յ] Մատթ. Թ. 13։ Ա Տիմ. Ա. 15։ | [Ւ] Մատթ. Թ. 14։ Մարկ. Բ. 18։ | [Փ] Մատթ. Թ. 16, 17։ Մարկ. Բ. 21, 22։

րա կորզէին հասկ՝ շփէին ընդ ձեռս, եւ ուտէին։

2 Եւ ոմանք 'ի փարիսեցւոցն ասէին ցնոսա. Զի՞նչ գործէք՝ զոր չէ օրէն 'ի շաբաթու։

3 Պատասխանի ետ նոցա Յիսուս եւ ասէ. Չիցէ՞ ընթերցեալ ձեր՝ զոր արարն Դաւիթ, յորժամ քաղցեաւն ինքն՝ եւ որ ընդ նմայն էին։

4 Զիա՞րդ եմուտ նա 'ի տունն Աստուծոյ, եւ զհացն առաջաւորութեան եկեր, եւ ետ այնոցիկ՝ որ ընդ նմայն էին. զոր ոչ էր օրէն ումեք ուտել, բայց միայն քահանայապետիցն։

5 Եւ ասէ ցնոսա. Տէր է Որդի մարդոյ եւ շաբաթու։

6 Եւ եղեւ 'ի միւսում շաբաթու մտանել նմա 'ի ժողովուրդն՝ եւ ուսուցանել. եւ էր անդ այր մի՝ եւ ձեռն իւր աջ գօսացեալ էր։

7 Եւ սպասէին նմա դպիրքն եւ փարիսեցիք՝ թէ 'ի շաբաթու բժշկիցէ, զի գտանիցեն չարախօսութիւն զնմանէ։

8 Եւ նա գիտէր զխորհուրդս նոցա, ասէ ցայրն՝ որոյ ձեռնն գօսացեալ էր. Արի՛ անց 'ի մէջ. եւ նա յարուցեալ եկաց։

9 Ասէ ցնոսա Յիսուս. Հարցից ինչ զձեզ. Զի՞նչ արժան է 'ի շաբաթու, բարի ինչ առնել՝ եթէ չար գործել, ոգի մի ապրեցուցանել՝ թէ կորուսանել։

10 Եւ հայեցեալ շուրջ զամենեքումբք զայրագին՝ ասէ ցնա. Ձգեա զձեռն քո. եւ նա ձգեաց, եւ հաստատեցաւ ձեռն նորա իբրեւ զմիւսն։

11 Նոքա լցան յիմարութեամբ,

հասկ էին պոկում՝ ափին մէջ փշրում, եւ * ուտում։

2 Եւ փարիսեցիներիցը մին քանիսն ասացին նորանց. Դուք ինչու էք անում՝ որ շաբաթ օրն օրէնք † չէ։

3 Յիսուս նորանց պատասխան տուաւ եւ ասաց. Դուք չէք կարդացել նա՝ որ Դաւիթն արաւ, երբոր սոված ինքը եւ նորանք՝ որ նորան հետն ‡ էին։

4 Ինչպէս նա Աստուծոյ տունը մտաւ, եւ առաջաւորութեան հացը կերաւ, եւ նորանց էլ տուաւ՝ որ նորան հետն էին. որ օրէնք չէր ուտել, բայց միայն § քահանայապետներին։

5 Եւ նորանց ասաց. Որդին մարդոյ շաբաթի էլ տէրն է։

6 Եւ էլաւ՝ որ նա միւս շաբաթ օրը ժողովարանին մէջ մտաւ՝ եւ սովորցնումէր. եւ այնտեղ մին մարդ կար՝ եւ նորա աջ ձեռքը չորացել ‖ էր։

7 Եւ կարդացողները ու փարիսեցիները սպասումէին նորան՝ թէ շաբաթ օրը բժշկէ, որ նորանից չարախօսելոյ պատճառ գտնեն։

8 Եւ նա գիտումէր նորանց միտածմունքները, եւ այն մարդուն՝ որ նորա ձեռքը չորացել էր՝ ասաց. Վե՛ր կաց եկ մէջ տեղը. եւ նա վերկացաւ կանգնեց։

9 Յիսուս նորանց ասաց. Մին բան հարցնեմ ձեզանից. Ի՞նչ արժան է շաբաթ օրը, բարի բան անել՝ թէ չար գործել, մին հոգի ազատել՝ թէ կորցնել։

10 Եւ շատ բարկացած չորս կողմանը ամէնին վերայ նայեց՝ եւ նորան ասաց. Քո ձեռքդ մեկնէ. եւ նա մեկնեց, եւ նորա ձեռքը միւսին պէս հաստատվեցաւ։

11 Նորանք յիմարութենով լցո-

* Մատթ. ԺԲ. 1. Մարկ. Բ. 23.
† Ելից. Ի. 10.
‡ Ա. Թագ. ԻԱ. 6.
§ Ղև. ԻԴ. 9.
‖ Մատթ. ԺԲ. 9. Մարկ. Գ. 1. Ղւ. ԺԳ. 14. ԺԴ. 3. Յովհ. Թ. 16.

եւ խօսէին ընդ միմեանս՝ թէ զինչ
առնիցեն Յիսուսի ։
12 Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այ-
նոսիկ ել 'ի լեառն կալ յաղօթս ,
եւ հանէր զգիշերն 'ի գլուխն յա-
ղօթսն Աստուծոյ ։
13 Եւ իբրեւ այգ եղեւ՝ կոչեաց
զաշակերտսն իւր , եւ ընտրեաց 'ի
նոցանէ երկոտասանս , զորս եւ ա-
ռաքեալս անուանեաց ։
14 ԶՍիմոն՝ զոր եւ Պետրոս ան-
ուանեաց , եւ զԱնդրէաս զեղբայր
նորին , եւ զՅակովբոս եւ զՅովհան-
նէս , եւ զՓիլիպպոս եւ զԲարթո-
ղիմէոս ,
15 Եւ զՄատթէոս եւ զԹովմաս ,
եւ զՅակովբոս Ալփեայ , եւ զՍիմոն
զկոչեցեալն Նախանձայոյզ ,
16 Եւ զՅուդա Յակովբեայ , եւ ըզ
Յուդա Իսկարիովտացի՝ որ եղեւ
իսկ մատնիչ ։
17 Եւ իջեալ նոքօք հանդերձ 'ի
տեղի մի տափարակ . եւ ժողով ա-
շակերտացն նորա եւ բազմութիւն
յոյժ ժողովրդեանն , յամենայն Հր-
էաստանէ եւ յԵրուսաղէմէ եւ
յայնմ կողմանէ եւ 'ի ծովեզերէն
Տիւրոսի եւ Սիդոնի .
18 Որ եկին լսել 'ի նմանէ եւ բժշ-
կել 'ի հիւանդութեանց իւրեանց .
եւ նեղեալքն յայսոց պղծոց բժշ-
կէին ։
19 Եւ ամենայն ժողովուրդն խնդ-
րէր մերձենալ 'ի նա , զի զօրու-
թիւն բազում ելանէր 'ի նմանէ՝ եւ
բժշկէր զամենեսին ։
20 Եւ նա ամբարձ զաչս իւր յա-
շակերտսն իւր՝ եւ ասէ . Երանի աղ-
քատացդ հոգւով , զի ձեր է ար-
քայութիւնն Աստուծոյ ։
21 Երանի՝ որ քաղցեալ են այժմ ,

վան , եւ իրար հետ խօսումէին՝
թէ ինչ անեն Յիսուսին ։
12 Եւ եղաւ այն օրերն՝ որ վեր-
ելաւ սարը աղօթք անել , գիշերը
լուսացրուց աղօթք անելով դէպի
դ Աստուած ։
13 Եւ երբոր առաւօտ եղաւ՝ իրեն
աշակերտները կանչեց , եւ նորան-
ցից տասներկուսին ընտրեց՝ որ էլ
առաքեալ անուանեց ե նորանց ։
14 Սիմոնին՝ որ էլ Պետրոս ան-
ուանեց զ նորան , եւ նորա Անդ-
րէաս եղբօրը , եւ Յակոբին եւ Յո-
հաննէսին , եւ Փիլիպպոսին եւ Բար-
թողիմէոսին ,
15 Եւ Մատթէոսին եւ Թովմասին
եւ Յակոբոս Ալփեանին , եւ Սիմո-
նին՝ նախանձայոյզ կոչուածին ։
16 Եւ Յակոբայ է Յուդային , եւ
Յուդա Իսկարիովտացուն՝ որ էլ մատ-
նիչ էլաւ ։
17 Եւ վէր եկաւ նորանց հետ
մին տափակ տեղ . եւ այնտեղ էր
նորա աշակերտների ժողովն ու ժո-
ղովրդի մեծ բազմութիւն , ամէն
Հրէաստանից ու Երուսաղէմից եւ
միւս կողմերից ու Տիւրոսի եւ Սի-
դոնի ծովի ը եզրից .
18 Որ եկին նորանից լսել եւ ի-
րենց հիւանդութիւններից բժշկ-
վիլ . եւ պիղծ դեւերից չարչար-
ւածները բժշկւումէին ։
19 Եւ ամէն ժողովուրդը խնդ-
րումէր՝ որ մօտենայ թ նորան , ին-
չու որ՝ նորանից շատ զօրութիւն էր
դուրս գալիս՝ եւ ամէնին ւ բժշկու-
մէր ։
20 Եւ նա իրեն աչքերը դէպի ի-
րեն աշակերտներին բարձրացրուց՝
եւ ասաց . Երանի ձեզ՝ հոգով աղ-
քատներից , որ ձերն է Աստուծոյ
ժ արքայութիւնը ։
21 Երանի նորանց՝ որ հիմիկ ի սո-

դ Մատթ. ԺԴ. 23.
ե Մատթ. Ժ. 1.
զ Յովհ. Ա. 42.
է Յուդ. 1.

ը Մատթ. Դ. 25.
Մարկ. Գ. 7.
թ Մատթ. ԺԴ. 36.
Մարկ. Ե. 30.

Ղկ. Ը. 46.
ժ Մատթ. Ե. 3.
ԺԱ. 5. Յակ.
Բ. 5.

ի Եսայ. ԾԵ. 1.
ԿԵ. 13. Մատթ.
Ե. 6.

զի յագեսջիք։ Երանի՛ որ լան այժմ, զի ծիծաղեսջիք։

22 Երանի է ձեզ, յորժամ նախատիցեն զձեզ մարդիկ, եւ յորժամ որոշիցեն զձեզ եւ նախատիցեն, եւ հանիցեն անուն չար զձէնջ վասն Որդւոյ մարդոյ։

23 Ուրախ լիջիք յաւուր յայնմիկ եւ ցնծասջիք, զի ահա վարձք ձեր բազում են յերկինս. ըստ նմին օրինակի առնէին մարգարէիցն հարքն իւրեանց։

24 Բայց վա՜յ ձեզ մեծատանցդ, զի ընկալայք զմխիթարութիւն ձեր։

25 Վա՜յ ձեզ՝ որ յագեալդ էք այժմ, զի քաղցիցէք. վա՜յ ձեզ՝ որ ծիծաղիքդ այժմ, զի սգայցէք եւ լայցէք։

26 Վա՜յ ձեզ՝ յորժամ բարի ասիցեն զձէնջ ամենայն մարդիկ, զի այդպէս առնէին սուտ մարգարէիցն հարքն նոցա։

27 Այլ ձեզ ասեմ՝ որ լսէքդ. Սիրեցէք զթշնամիս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց։

28 Օրհնեցէք զանիծիչս ձեր, աղօթս արարէք 'ի վերայ նեղչաց ձերոց։

29 Որ հարկանէ զծնօտ քո՝ մատո նմա եւ զմիւսն. եւ որ հանէ 'ի քէն զբաճկոն քո՝ մի արգելուր 'ի նմանէ եւ զշապիկս։

30 Ամենայնի՝ որ խնդրէ 'ի քէն՝ տուր, եւ զոր ինչ հանէ ոք 'ի քէն՝ մի պահանջեր։

ված են, որ պիտի կշտանան. Երանի՜ նորանց՝ որ հիմիկ լաց են լինում, որ պիտի ա ծիծաղեն։

22 Երանի՜ ձեզ, երբոր մարդիկ նախատինք կըտան բ ձեզ, եւ երբոր ձեզ կըքշեն եւ կատեն, եւ ձեզ վերայ չար անուն կըդնեն՝ Որդոյ մարդոյ գ պատճառով.

23 Ուրախ էլէք այն օրը եւ ցընծացէք, ինչուոր՝ ահա ձեր վարձքը շատ է դ երկնքումը. իսկ այդ կերպով մարգարէներին էին անում նորանց ե հարքը։

24 Բայց վա՜յ զ ձեզ՝ է հարուստներիդ, ինչուոր՝ ձեր մխիթարութիւնը ը ընդունեցիք։

25 Վա՜յ ձեզ՝ որ հիմիկ կշտացել թ էք, ինչուոր՝ պիտի սովէք. վա՜յ ձեզ՝ որ հիմիկ ծիծաղումէք, ինչուոր՝ սուգ պիտի անէք, եւ լաց պիտի ժ լինիք։

26 Վա՜յ ձեզ՝ երբոր ամէն մարդիկ ձեզանից բարի ասեն, ինչուոր՝ այդպէս էլ սուտ մարգարէներին էին անում նորանց ի հարքը։

27 Բայց ձեզ՝ որ լսումէք, լ ասումեմ. Սիրեցէք ձեր թշնամիները, բարի արէք ձեզ ատողներին.

28 Օրհնեցէք ձեզ անիծողներին, աղօթք արէք ձեզ նեղացնողների խ վերայ։

29 Նա որ քո մին երեսից զարկումէ՝ միւսն էլ դէմ արա ծ նորան. եւ նա որ քո վերարկուդ քեզանից հանումէ՝ շապիկդ էլ մի արգելիր կ նորանից։

30 Ամէնին՝ որ ուզումէ քեզանից՝ տուր, եւ ինչ որ մինը քեզանից հանումէ՝ յետ մի հ ուզիր։

ա Եսայ. ԿԱ. 3. Մատթ. Ե. 4.
բ Մատթ. Ե. 11. Ա Պետ. Բ. 19. Գ. 14. Դ. 14.
գ Յովհ. ԺԶ. 2.
դ Մատթ. Ե. 12. Գործ. Ե. 41. Կող. Ա. 24. Յակ. Ա. 2.
ե Գործ. Է. 51.
զ Ամովս. Զ. 1. Յակ. Ե. 1.
է Ղկ. ԺԲ. 21.
ը Մատթ. Զ. 2. 5. 16. Ղկ. ԺԶ. 25.
թ Եսայ. ԿԵ. 13.
ժ Առակ. ԺԴ. 13.
ի Յովհ. ԺԵ. 19. Ա Յովհ. Դ. 5.
լ Ելից. ԻԳ. 4. Առակ. ԻԵ. 21. Մատթ. Ե. 44. Համար. 35. Հռովմ. ԺԲ. 20.
խ Ղկ. ԻԳ. 34. Գործ. Է. 60.
ծ Մատթ. Ե. 39.
կ Ա Կորնթ. Զ. 7.
հ Բ Օրին. ԺԵ. 7. 8. 10. Առակ. ԻԱ. 26. Մատթ. Ե. 42.

31 Եւ որպէս կամիք՝ թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արասջիք եւ դուք նոցա։
32 Եւ եթէ սիրէք դուք զսիրելիս ձեր՝ զի՞նչ շնորհ է ձեր, զի եւ մեղաւորք սիրեն զսիրելիս իւրեանց։

33 Եւ եթէ բարի առնէք բարերարաց ձերոց՝ ո՞ր շնորհ է ձեր, զի եւ մեղաւորք զնոյն գործեն։

34 Եւ եթէ տայք փոխ այնոցիկ՝ յորոց ակն ունիցիք առնուլ՝ ո՞ր շնորհ է ձեր. քանզի եւ մեղաւորք մեղաւորաց փոխ տան, զի առցեն անդրէն զկշիռն։

35 Բայց սիրեցէք զթշնամիս ձեր, եւ բարի արարէք ատելեաց ձերոց. եւ տուք փոխ՝ ուստի ոչ ակն ունիցիք առնուլ. եւ եղիցին վարձք ձեր բազում, եւ եղիջիք որդիք Բարձրելոյ. զի նա քաղցր է ՚ի վերայ չարաց եւ ապաշնորհաց։

36 Եղերո՛ւք գթածք՝ որպէս եւ Հայրն ձեր գթած է։
37 Մի՛ դատէք՝ եւ ոչ դատիցիք. մի՛ պատժէք՝ եւ ոչ պատժիցիք. արձակեցէք՝ եւ արձակիցիք։
38 Տուք՝ եւ տացի ձեզ. չափ բարւոք թաթաղուն շարժուն զեղուն տացեն ՚ի գոգս ձեր. նովին չափով՝ որով չափէք, չափեսցի ձեզ։
39 Ասաց եւ առակ մի առ նոսա. Միթէ կարիցէ՞ կոյր կուրի առաջնորդել, ո՞չ ապաքէն երկոքին ՚ի խորխորատ անկանիցին։
40 Ո՛չ է աշակերտ լաւ քան ըզ վարդապետ իւր. ամենայն կատարեալ եղիցի իբրեւ զվարդապետ իւր։

31 Եւ ինչպէս որ կամենումէք՝ թէ մարդիկը ձեզ անեն, այնպէս էլ դուք արէք փնորանց։
32 Եւ թէ որ դուք ձեզ սիրողներին սիրէք՝ ինչ շնորհք է ձեզ, ինչու որ՝ մեղաւորներն էլ իրենց սիրողներին ք սիրումեն։
33 Եւ թէ որ ձեր բարերարներին բարի անէք՝ ինչ շնորհք է ձեզ, ինչու որ՝ մեղաւորներն էլ իսկ այնպէս են անում։
34 Եւ եթէ փոխ տաք նորանց՝ որ նորանցից յետ առնելոյ յոյս ունիք՝ ինչ շնորհք է օ ձեզ. ինչու որ՝ մեղաւորներն էլ մեղաւորներին փոխ են տալիս, որ հաւասար չափը յետ առնեն։
35 Բայց սիրեցէք ձեր — թշնամիները, եւ բարի արէք ձեզ ատողներին. եւ փոխ տուէք նորանց՝ որ յետ առնելոյ յոյս ֆ չունիք. եւ ձեր վարձքը շատ կլինի, եւ Բարձրելոյ որդիք + կլինիք. ինչու որ՝ նա քաղցր է չարերի եւ երախտամոռների վերայ։
36 Ուրեմն ողորմած էլէք՝ ինչպէս որ ձեր Հայրն էլ ողորմած օ է։
27 Մի դատէք՝ եւ չէք ֆ դատվիլ. մի պատժէք՝ եւ չէք պատժվիլ. արձակեցէք՝ եւ կարձակվիք։
38 Տուէք՝ եւ կըտրվի — ձեզ. լաւ թափ արված շարժված առատ չափ կըտան ձեր Է գոգը. որ չափով որ չափէք՝ նորանով կըչափվի ֆ ձեզ։
39 Մին առակ էլ ասաց նորանց՝ թէ, Միթէ կարօղ է կոյրը կոյրին փ առաջնորդել, չէ՞ որ երկուքն էլ փոսի մէջ կընկնին։
40 Աշակերտն իրեն վարդապետիցը լաւ ի չէ. ամէն կատարեալն իրեն վարդապետին պէս կըլինի։

փ Մատթ. Է. 12։
ք Մատթ. Ե. 46։
օ Մատթ. Ե. 42։
— Համար. 27։
ֆ Սաղ. ԼԷ. 26։
Համար. 30։
+ Մատթ. Ե. 45։
օ Մատթ. Ե. 47։
ֆ Մատթ. Է. 1։
— Առակ. ԺԹ. 17։
Է Սաղ. ՀԹ. 12։
ֆ Մատթ. Է. 2։
Մարկ. Դ. 24։
Յակ. Բ. 13։
փ Մատթ. ԺԵ. 14։
ի Մատթ. Ժ. 24։
Յովհ. ԺԴ. 16։
ԺԵ. 20։

41 Զի՞ տեսանես զշիւղ յական եղբօր քո, եւ ՚ի քում ական զգերանդ ոչ նշմարես։

42 Կամ զիա՞րդ կարես ասել ցեղբայր քո. Եղբայր՝ թող հանից զշիւղ յականէ քումմէ, եւ դու ՚ի քում ական զգերանդ ոչ տեսանես. կեղծաւոր՝ հան նախ զգերանդ յականէ քումմէ, եւ ապա հայեսցիս հանել զշիւղ յականէ եղբօր քո։

43 Զի ոչ է ծառ բարի՝ որ առնէ պտուղ չար, եւ ոչ դարձեալ ծառ չար՝ որ առնէ պտուղ բարի.

44 Զի իւրաքանչիւր ծառ ՚ի պտղոյ իւրմէ ճանաչի. զի ոչ եթէ ՚ի փշոց քաղեն թուզ, եւ ոչ ՚ի մորենւոյ կթեն խաղող։

45 Մարդ բարի ՚ի բարի գանձուց սրտի իւրոյ բղխէ զբարի, եւ մարդ չար ՚ի չարէն բղխէ զչար. քանզի ՚ի յաւելուածոյ սրտին խօսի բերան նորա։

46 Զի՞ կոչէք զիս՝ Տէր Տէր, եւ զոր ասեմն ոչ առնէք։

47 Ամենայն որ գայ առ իս, եւ լսէ զբանս իմ եւ առնէ զնոսա, ցուցից ձեզ ում նման է։

48 Նման է առն՝ որ շինիցէ տուն. որ փորեաց եւ խորեաց, եւ եդ հիմն ՚ի վերայ վիմի. ՚ի յառնել հեղեղաց՝ բաղխեաց գետ զտունն, եւ ոչ կարաց շարժել զնա. զի հաստատեալ էր հիմն ՚ի վերայ վիմի։

49 Իսկ որ լսէ զբանս իմ՝ եւ ոչ առնէ, նման է առն՝ որ շինիցէ տուն ՚ի վերայ հողոյ առանց հիման. զոր բաղխեաց գետ, եւ վաղվաղակի անկաւ. եւ եղեւ կործանումն տանն այնորիկ մեծ։

41 Ինչո՞ւ քո եղբօրդ աչքին միջի ծեղը տեսնումես, ու քո աչքիդ միջի գերանը չես ղ տեսնում։

42 Կամ ինչպէ՞ս կարող ես քո եղբօրդ ասել. Եղբա՛յր՝ թող քո աչքիցդ ծեղը հանեմ, ու քո աչքիդ միջի գերանը չես տեսնում. կեղծաւոր՝ առաջ քո աչքիցդ գերանը հանէ, ու ապա մաքիկ արա՝ որ քո եղբօրդ աչքիցը ծեղը ճ հանես։

43 Ինչու որ՝ բարի ծառ չկայ՝ որ չար պտուղ բերէ, ու այնպէս էլ չար ծառ չկայ՝ որ բարի պտուղ մ բերէ.

44 Ինչու որ՝ ամէն մէկ ծառ իրեն պտղիցն է յ ճանաչվում. պատճառն որ՝ ոչ փշերիցը թուզ են քաղում, ու ոչ մորենիցը խաղող են կթում։

45 Բարի մարդն իրեն սրտի բարի գանձուցը բարիք է ն բղխում, ու չար մարդը չար գանձուցը չարիք է բղխում. ինչու որ՝ սրտի աւելցածիցն է խօսում նորա շ բերանը։

46 Ինչո՞ւ էք ինձ Տէր Տէր կոչում, ու նա որ ասումեմ, չէք ո անում։

47 Ամէն՝ ով որ ինձ մօտ է գալիս, ու իմ խօսքերս լսումէ՝ ու նորանից անում, ցոյց տամ ձեզ՝ թէ ում նման պ է։

48 Նման է այն մարդոյն որ տուն կը շինէ. որ փորեց ու խորացրուց, ու հիմը քարի վերայ դրաւ. Ջրի հեղեղներ որ վերկացան՝ գետն այն տանը թակեց, ու չի կարողացաւ շարժել նորան, ինչու որ՝ նորա հիմը քարի վերայ հաստատած էր։

49 Բայց նա՝ որ իմ խօսքերս լսումէ՝ ու չի անում, նման է այն մարդոյն՝ որ տունը հողի վերայ կը շինէ առանց հիմունքի. գետը նորան թակեց, ու շուտով վէր ընկաւ. ու այն տանը կործանվիլը սաստիկ էլաւ։

ղ Մատթ. է. 3.
ճ Առակ. ԺԸ. 17.
մ Մատթ. է. 16. 17.
յ Մատթ. ԺԲ. 33.
ն Մատթ. ԺԲ. 35.
շ Մատթ. ԺԲ. 34.
ո Մաղ. Ա. 6.
Մատթ. է. 21.
Իծ. 11. Գլ.
ԺԳ. 25.
պ Մատթ. է. 24.

## Գլ. Է

1 Եւ եղեւ իբրեւ կատարեաց
զամենայն զբանս իւր 'ի լսելիս ժո-
ղովրդեանն, եմուտ 'ի Կափառնա-
ում:
2 Հարիւրապետի ուրումն ծա-
ռայ չարաչար հիւանդացեալ՝ մերձ
էր 'ի վախճանել, որ էր նմա պատ-
ուական:
3 Իբրեւ լուաւ զՅիսուսէ, առա-
քեաց զծերս 'ի Հրէից, աղաչէր
զնա՝ զի եկեսցէ ապրեցուսցէ զծա-
ռայն նորա:
4 Եւ նոքա եկեալ առ Յիսուս՝
աղաչէին զնա ստէպ՝ եւ ասէին,
թէ Արժանի է՝ որում զշնորհս զայս
առնես:
5 Զի սիրէ զազգս մեր, եւ զժո-
ղովրդանոցն նա շինեաց մեզ:
6 Եւ Յիսուս գնայր ընդ նոսա.
իբրեւ ոչինչ կարի հեռի էր 'ի տա-
նէն, յղեաց առ նա հարիւրապետն
բարեկամս, եւ ասէ ցնա. Տէր՝ մի
ինչ աշխատ լինիր, զի չեմ բաւա-
կան՝ եթէ ընդ յարկաւ իմով մտա-
նիցես:
7 Վասն որոյ եւ ոչ զանձն հա-
մարեցայ արժանի առ քեզ գալոյ.
այլ ասա բանիւ՝ եւ բժշկեսցի մա-
նուկս իմ:
8 Քանզի եւ ես այր մի՛ եմ կար-
գեալ ընդ իշխանութեամբ. ունիմ
ընդ ինեւ զինուորս, եւ ասեմ
սմա՝ Երթ, եւ երթայ. եւ այլում՝
թէ Եկ, եւ գայ. եւ ծառայի ի-
մում՝ թէ Արա զայս, եւ առնէ:
9 Եւ իբրեւ լուաւ զայս Յիսուս՝
զարմացաւ, դարձաւ առ ժողո-
վուրդն՝ որ երթային զհետ նորա՝
եւ ասէ. Ամէն ասեմ ձեզ՝ թէ եւ
ոչ յԻսրայէլի այսչափ հաւատս գտի:
10 Եւ դարձան անդրէն պատգա-

1 Եւ երբոր իրեն ամէն խօսքե-
րը կատարեց ժողովրդի ականջնե-
րուն, մտաւ = Կափառնաում:
2 Մէկ հարիւրապետի ծառայ
խիստ հիւանդացած՝ մեռնելու մօտ
էր, որ պատուական էր նորան:
3 Երբոր Յիսուսին համար լսեց,
Հրէաների ծերերը ուղարկեց՝ որ
աղաչեն նորան՝ որ գայ իրեն ծա-
ռային ապրեցնէ:
4 Եւ նորանք Յիսուսին մօտ ե-
կին՝ նորան խիստ աղաչումէին՝ եւ
ասում, թէ Արժանի է նա՝ որ այս
շնորհքըս անես նորան.
5 Պատճառնոր՝ մեր ազգին սի-
րումէ, եւ ժողովարանը նա շինեց
մեզ համար:
6 Եւ Յիսուս նորանց հետ գը-
նաց. երբոր տանիցը շատ հեռու
չէր, հարիւրապետը բարեկամներ
ուղարկեց նորա մօտ, եւ նորան ա-
սաց. Տէր՝ աշխատանք մի քաշիր,
ինչու որ՝ արժանի չեմ՝ որ իմ ծած-
քիս տակը մանես:
7 Նորահամար էլ ես իմ անձս ար-
ժանաւոր չը համարեցի՝ որ քեզ մօտ
գամ. բայց խօսքով ասա՝ եւ իմ
տղաս կը բժշկվի:
8 Ինչու որ՝ ես էլ մէն իշխանու-
թեան տակ լինող մարդ եմ. իմ
ձեռքս տակը զինուորներ ունիմ, եւ
մինին ասումեմ՝ թէ Գնա, եւ նա
գնումէ. եւ միւսին՝ թէ Եկ, եւ
գալիս է. եւ իմ ծառայիս՝ թէ Այս
բանըս արա, եւ անումէ:
9 Եւ երբոր Յիսուս սա լսեց՝ զար-
մացաւ, դարձաւ դէպի ժողովուրդն՝
որ նորա ետեւէն գնումէին՝ եւ ա-
սաց. Ճշմարիտ ասումեմ ձեզ՝ թէ
Իսրայէլին մէջ էլ այսքան հաւատք
չը գտի:
10 Եւ այն ուղարկված մարդիկըն

= Մատթ. Ը. 5:

ծառայքն ՚ի տուն, եւ գտին զծա-
ռայն հիւանդ՝ բժշկեալ ։
11 Եւ եղեւ ՚ի վաղիւն երթայր ՚ի
քաղաք մի, որում անուն էր Նա-
յին . երթային ընդ նմա եւ աշա-
կերտք նորա եւ ժողովուրդ բա-
զում ։
12 Իբրեւ մերձ եղեւ ՚ի դուռն
քաղաքին, եւ ահա հանէին մեռեալ
մի՝ որդի միամօր մօր իւրոյ, եւ նա
էր այրի . եւ ժողովուրդ բազում
քաղաքին էր ընդ նմա ։
13 Իբրեւ ետես զնա Տէր՝ գթա-
ցաւ ՚ի նա եւ ասէ . Մի լար ։
14 Եւ մատուցեալ մերձեցաւ ՚ի
դագաղն . եւ որք բարձեալ տա-
նէին՝ կանգ առին, եւ ասէ . Պա-
տանեակ դու՝ քեզ ասեմ՝ արի ։
15 Կանգնեցաւ եւ նստաւ մեռե-
ալն, եւ սկսաւ խօսել . եւ ետ
զնա ցմայր իւր ։
16 Եւ առ կալաւ զամենեսին, եւ
փառաւոր առնէին զԱստուած եւ
ասէին, թէ Մարգարէ մեծ յա-
րուցեալ է ՚ի միջի մերում, եւ թէ
Այց արար Աստուած ժողովրդեան
իւրում ՚ի բարութիւն ։
17 Եւ ել զրոյց այս ընդ ամե-
նայն Հրէաստան վասն նորա՝ եւ
ընդ ամենայն կողմանս աշխարհին ։
18 Եւ պատմեցին Յովհաննու ա-
շակերտքն իւր վասն ամենայնի այ-
սորիկ ։
19 Եւ կոչեաց առ ինքն երկուս
ոմանս յաշակերտացն իւրոց Յով-
հաննէս, առաքեաց առ Տէր եւ
ասէ . Դու ես որ գալոցն ես, եթէ
այլում ակն կալցուք ։
20 Եւ եկեալ արքն առ նա՝ ա-
սեն . Յովհաննէս մկրտիչ առաքեաց
զմեզ առ քեզ՝ եւ ասէ, Դու ես որ

յետ դարձան տուն, եւ հիւանդ
ծառային բժշկուած գտին ։
11 Եւ յետեւի օրուընէ էլաւ՝ որ
մէկ քաղաք էր գնում, որ նորան
անունը Նային էր . նորա աշակերտա-
ներն էլ նորա հետ գնումէին եւ
շատ ժողովուրդ էլ ։
12 Երբոր մօտեցաւ քաղաքի դը-
ռանը, ահա մին մեռեալ էին դուրս
բերում՝ որ իւրեն մօր միածնունդ
որդին էր, եւ նա որբեւէրի էր . եւ
քաղաքիցը շատ ժողովուրդ կար
նորա հետ ։
13 Երբոր Տէրը նորան տեսաւ՝
խղճաց նորա վերայ եւ ասաց . Լաց
մի լինիր ։
14 Եւ մօտ եկաւ նաժին մօտե-
ցաւ . եւ նորանք՝ որ վեր առած
տանումէին՝, կանգնեցին . եւ ա-
սաց, Ո՛վ երիտասարդ՝ քեզ եմ ա-
սում՝ վեր * կաց ։
15 Մեռեալը վերկացաւ, նստեց
եւ սկսեց խօսել . եւ նորան տուաւ
իւրեն մօրը ։
16 Եւ ահ բռնեց † ամէնին, եւ
Աստուծոյն փառք էին տալիս՝ եւ
ասում, թէ Մին մեծ ‡ մարգարէ
է առաջ եկել մեր միջումը, եւ
թէ Աստուած իւրեն ժողովրդին
տեսութիւն եկաւ § բարութեամբ ։
17 Եւ այս ձայնս նորա համար
դուրս գնաց բոլոր Հրէաստանն՝ ու
այն աշխարհքի ամէն կողմերը ։
18 Եւ Յովհաննէսին պատմեցին ի-
րեն աշակերտներն այս ամէն բա-
ներիս ‖ համար ։
19 Եւ Յովհաննէս իրեն աշակերտա-
ներիցն երկու հոգի կանչեց իրեն
մօտ, ուղարկեց Տէրին մօտ եւ ա-
սաց . Դու ես նա որ պէտք է գայ,
թէ ուրիշի սպասենք ։
20 Եւ այն մարդիկը նորա մօտ ե-
կին եւ ասացին . Յովհաննէս մկրտի-
չը մեզ ուղարկեց քեզ մօտ՝ եւ ա-

* Գլ. Ը. 54 ։ Յովհ. ԺԱ. 43 ։ Գործ. Թ. 40 ։ Համեմ. Դ. 17 ։
† Գլ. Ա. 65 ։
‡ Գլ. ԻԴ. 19 ։ Յովհ. Գ. 19 ։ Զ. 14 ։ Թ. 17 ։
§ Գլ. Ա. 68 ։
‖ Մատթ. ԺԱ. 2 ։

գալոց ես, եթէ այլում ակն կալ-
ցուք :
21 Եւ 'ի նմին ժամու բժշկեաց ըզ
բազումս 'ի հիւանդութեանց եւ 'ի
հարուածոց եւ յայսոց չարաց, եւ
կուրաց բազմաց շնորհեաց տեսա-
նել :
22 Պատասխանի ետ նոցա եւ ա-
սէ . Երթայք պատմեցէք Յովհան-
նու՝ զոր տեսէքդ եւ լուայք . զի
կոյրք տեսանեն, եւ կաղք գնան,
բորոտք սրբին, խուլք լսեն, մեռ-
եալք յառնեն, աղքատք աւետա-
րանին :
23 Եւ երանի իցէ՝ որ ոչ գայ-
թակղեսցի յիս :
24 Եւ իբրեւ գնացին հրեշտակքն
Յովհաննու, սկսաւ խօսել ընդ ժո-
ղովուրդսն վասն Յովհաննու . Զի՞
ելէք յանապատ տեսանել, եղէգն
շարժուն 'ի հողմոյ :
25 Այլ զի՞նչ ելէք տեսանել, մարդ
'ի հանդերձս փափկութեան զար-
դարեալ . ահաւասիկ որք 'ի հան-
դերձս երեւելիս եւ 'ի փափկու-
թեան են՝ յարքունիս են :
26 Այլ զի՞նչ ելէք տեսանել, մար-
գարէ . այո ասեմ ձեզ՝ առաւել եւս
քան զմարգարէ :
27 Զի սա է՝ վասն որոյ գրեալ
է, Թէ Ահա առաքեմ զհրեշտակ
իմ առաջի քո՝ որ յարդարեսցէ ըզ
ճանապարհս քո առաջի քո :
28 Ասեմ ձեզ . Մեծ 'ի ծը-
նունդս կանանց մարգարէ քան ըզ
Յովհաննէս ոչ ոք է . բայց փոքրիկն
յարքայութեան Աստուծոյ մեծ է
քան զնա :
29 Եւ ամենայն ժողովուրդն իբրեւ
լուաւ՝ եւ մաքսաւորքն, արդարա-

սումէ, Դու ես նա որ պէտք է
գար, թէ ուրիշի սպասենք,
21 Եւ Յիսուս նոյն ժամումը
շատ մարդկանց բժշկեց հիւանդու-
թիւններից եւ չարչարանքից եւ չար
ոգիներից, եւ շատ կոյրերին տես-
նել շնորհեց :
22 Պատասխան տուաւ նրանց եւ
ասաց . Գնացէք Յոհաննէսին ե պատ-
մեցէք՝ ինչ որ տեսիք եւ լսեցիք .
թէ կոյրերը տեսնումեն, կաղերը
գնումեն, բորոտները սրբվումեն,
խուլերը լսումեն, մեռելները յա-
րութիւն են ը առնում, աղքատնե-
րին աւետարան է թ քարոզվում :
23 Եւ երանի է նրան՝ որ ինձ
վերայ չի գայթակղվի :
24 Եւ երբոր Յոհաննէսի ուղար-
կըված մարդիկը գնացին, սկսեց
ժողովուրդներին հետ Յոհաննէսի
համար ժ խօսել . Ի՞նչ տեսնելոյ
դուրս գնացիք անապատը, մի՞ ե-
ղէգ՝ որ քամուցը շարժվումէ :
25 Ապա ինչ տեսնելոյ դուրս գը-
նացիք, մի՞ մարդ փափուկ շորե-
րով զարդարված . ահա նրանք՝ որ
փառաւոր շորերումն ու փափկու-
թիւնումն են՝ թագաւորների պա-
լատներումն են :
26 Ապա ինչ տեսնելոյ դուրս գը-
նացիք, մի՞ մարգարէ . Իրաւի ա-
սումեմ ձեզ՝ որ մարգարէից էլ ա-
ւելի է :
27 Ինչու որ՝ սա նա է՝ որ նորա
համար գրված է, թէ Ահա իմ հը-
րեշտակս ուղարկումեմ քո առա-
ջից՝ որ քո առաջից քո ճանապար-
հըդ ի պատրաստէ :
28 Ճշմարիտն ասումեմ ձեզ՝ որ
կանանց ծնվածներին մէջ ոչ ով ա-
ւելի մեծ մարգարէ չկայ՝ քան Յո-
հաննէսը . բայց Աստուծոյ արքայու-
թեան միջի փոքրը նրանից մեծ է :
29 Եւ ամէն ժողովուրդն երբոր
սա լսեցին՝ եւ մաքսաւորները . Ա-

ե Մատթ. ԺԱ. 5.
ը Եսայ. ԼԵ. 5.
թ Ղկ. Դ. 18.
ժ Մատթ. ԺԱ. 7.
ի Մաղ. Գ. 1.

ցուցին զԱստուած․ զի մկրտեցան 'ի մկրտութիւնն Յովհաննու։

30 Իսկ փարիսեցիքն եւ օրինականք զխորհուրդն Աստուծոյ անարգեցին յանձինս իւրեանց, զի ոչ մկրտեցան 'ի նմանէ։

31 Արդ՝ ում նմանեցուցից զմարդիկ ազգիս այսորիկ․ եւ ում իցեն նմանօղք։

32 Նման է մանկտւոյ՝ որ 'ի հրապարակս նստիցին, կարդայցեն ընդ միմեանս եւ ասիցեն․ Փողս հարաք ձեզ՝ եւ ոչ կաքաւեցէք, ողբացաք՝ եւ ոչ լացէք։

33 Եկն Յովհաննէս մկրտիչ՝ ոչ ուտէր եւ ոչ ըմպէր, եւ ասէք․ Դեւ գոյ 'ի նմա։

34 Եկն Որդի մարդոյ՝ ուտէ եւ ըմպէ, եւ ասէք․ Ահա այր կերօղ եւ արբեցօղ՝ բարեկամ մաքսաւորաց եւ մեղաւորաց։

35 Եւ արդարացաւ իմաստութիւն յորդւոց իւրոց։

36 Աղաչէր զնա ոմն 'ի փարիսեցւոցն՝ զի կերիցէ հաց ընդ նմա․ եւ մտեալ 'ի տուն փարիսեցւոյն՝ բազմեցաւ։

37 Եւ կին մի էր 'ի քաղաքին մեղաւոր․ իբրեւ գիտաց թէ բազմեալ է 'ի տան փարիսեցւոյն, բերեալ շիշ մի իւղոյ ազնուի․

38 Կայր յետոյ առ ոտս նորա, լայր․ եւ արտասուօքն սկսաւ թանալ զոտս նորա, եւ հերօք գլխոյ իւրոյ ջնջէր, եւ համբուրէր զոտս նորա, եւ օծանէր իւղովն։

39 Եւ տեսեալ փարիսեցւոյն՝ որ կոչեացն զնա, ասէր ընդ միտս իւր․ Սա թէ մարգարէ ոք էր, ապա գիտէր՝ թէ ով եւ որպիսի ոք կին մերձենայ 'ի սա, զի մեղաւոր է։

տուծոյն արդարացուցին․ ինչու որ՝ Յօհաննէսի մկրտութենովը ւ մըկրտուեցան։

30 Բայց փարիսեցիներն ու օրէնք գիտցողներն Աստուծոյ խորհուրդը անարգեցին իրենց ի անձներումը․ ինչու որ՝ չըմկրտուեցան նորանից։

31 Ապա ում նմանեցնեմ այս ազգիս մարդիկը․ եւ ում նման ծ են։

32 Այն տղայոց նման են որ փողոցներումը նստին, իրար կանչեն եւ ասեն․ Փող փչեցինք ձեզ համար՝ եւ պար չեկիք, սուգ արինք՝ եւ լաց չելաք։

33 Յօհաննէս մկրտիչն եկաւ՝ ոչ ուտումէր եւ ոչ խմումէր, եւ ասումէիք՝ թէ Դեւ կայ Նորանում։

34 Որդին մարդոյ եկաւ՝ ուտում եւ խմումէ, եւ ասումէք․ Ահա ուտօղ եւ խմօղ մարդ՝ մաքսաւորներին եւ մեղաւորներին բարեկամ։

35 Եւ իմաստութիւնն արդարացաւ իրեն հ որդիքներիցը։

36 Փարիսեցիներիցը մինն աղաչումէր նորան՝ որ հաց ուտէ իրեն ձ հետ․ եւ մտաւ փարիսեցոյ տունը՝ եւ սեղան նստեց։

37 Եւ այն քաղաքումը մին մեղաւոր կին կար․ երբոր իմացաւ, թէ փարիսեցոյ տանը սեղան է նստած, մին շիշ պատուական իւղ բերաւ․

38 Նորա ետեւիցը նորա ոտաց մօտ կանգնած էր, եւ լաց էր լինում․ եւ արտասուքովը նորա ոտներըն սկսեց թրջել, եւ իրեն գլխի մազերովը սրբումէր, եւ նորա ոտները համբուրումէր եւ իւղովն օծում։

39 Եւ փարիսեցին՝ որ նորան կանչեց, երբոր տեսաւ՝ իրեն մտքումն ասումէր․ Սա թէ որ մին մարգարէ էր, ապա կըգիտէր՝ թէ ով կամ ինչպիսի կին է նա՝ որ իրեն մօտենումէ, ինչու որ մեղաւոր ղ է։

ւ Մատթ. Գ. 5.
Գլ. Գ. 12.
ի Գործ. Ի. 27.
ծ Մատթ. ԺԱ. 16.
լ Մատթ. Գ. 4.
Մարկ. Ա. 6.
Գլ. Ա. 15.
հ Մատթ. ԺԱ. 19.
ձ Մատթ. ԻԶ. 6.
Մարկ. ԺԴ. 3.
Յովհ. ԺԱ. 2.
ղ Գլ. ԺԵ. 3.

40 Պատասխանի ետ Յիսուս եւ
ասէ ցնա. Սիմովն՝ ունիմ ինչ ասել
քեզ. եւ նա ասէ. Ասա Վարդա-
պետ. եւ ասէ.
41 Երկու պարտապանք՝ էին ու-
րումն փոխատուի. մինն պարտէր
հինգ հարիւր դահեկան, եւ միւսն
յիսուն:
42 Եւ իբրեւ ոչ գոյր նոցա հա-
տուցանել, երկոցունցն շնորհեաց.
արդ ասա՝ ով առաւել սիրեսցէ
զնա:
43 Ասէ Սիմովն. Ինձ այսպէս
թուի՝ եթէ որում զբազումն շնոր-
հեաց. եւ նա ասէ ցնա. Ուղիղ
դատեցար:
44 Եւ դարձեալ 'ի կինն կողմն,
ասէ ցՍիմովն. Տեսանես զայս կին,
մտի 'ի տուն քո՝ ջուր ոտից իմոց
ոչ ետուր, իսկ սա արտասուօք իւ-
րովք եթաց զոտս իմ, եւ հերով
իւրով ջնջեաց:
45 Համբոյր մի դու ոչ ետուր
ինձ. սա ուստի յորմէ հետէ
մտեալ եմ՝ ոչ դադարեաց 'ի համ-
բուրելոյ զոտս իմ:
46 Իւղով զգլուխ իմ ոչ օծեր.
սա իւղով անուշիւ օծ:
47 Վասն որոյ ասեմ քեզ. Թո-
ղեալ լիցին սմա մեղք իւր բազում,
զի յոյժ սիրեաց. զի որում շատ
թողուցու՝ շատ սիրէ, եւ որում
սակաւ՝ սակաւ:

48 Եւ ասէ ցնա. Թողեալ լիցին
քեզ մեղք քո:
49 Եւ սկսան՝ որ բազմեալքն էին
ընդ նմա, ասել ընդ միտս իւ-
րեանց. Ո՞վ է սա՝ որ զմեղս թո-
ղու:
50 Եւ նա ասէ ցկինն. Հաւատք
քո կեցուցին զքեզ՝ երթ 'ի խաղա-
ղութիւն:

40 Յիսուս պատասխան տուաւ եւ
նորան ասաց. Սիմոն մին բան ու-
նիմ քեզ ասելոյ. եւ նա ասաց.
Ասա Վարդապետ. եւ ասաց.
41 Երկու մարդ պարտական էին
մին փոխ տուօղի. մինը հինգ հա-
րիւր դահեկան պարտական էր, եւ
միւսը յիսուն:
42 Եւ երբոր նորանք բան չունէ-
ին՝ որ վճարեն, երկուսին էլ բաշ-
խեց. հիմիկ ասա՝ նորանցից ով
աւելի կը սիրէ նորան:
43 Սիմոնն ասաց. Ինձ այսպէս է
երեւում, թէ նա՝ որ նորան շատ
բաշխեց. եւ նա ասաց նորան.
Շիտակ դատեցիր:
44 Եւ դարձաւ դէպի կինն ու
Սիմոնին ասաց. Տեսնո՞ւմես այս կի-
նըս, քո տունդ մտի՝ իմ ոտացս
ջուր չը տուիր, բայց սա իւրեն ար-
տասունքովը իմ ոտներս թրջեց,
եւ իւրեն մազերովը սրբեց:
45 Դու մին համբոյր չը տուիր ինձ.
սա՝ ինչ քանի որ այստեղ եմ մը-
տել՝ իմ ոտներս համբուրելուցը
չը դադարեց:
46 Դու իւղով չօծեցիր իմ ե գը-
լուխս. սա՝ անուշ իւղով օծեց:
47 Նրահամար ասումեմ քեզ.
Սորա շատ մեղքերն իրեն թողված
կը լինին, ինչու որ շատ զ սիրեց.
պատճառ որ՝ որին որ շատ կը թող-
վի՝ նա շատ կը սիրէ, եւ որին որ
քիչ՝ նա քիչ:
48 Եւ նորան ասաց. Քո մեղքերդ
թողված լինին յ քեզ:
49 Եւ նորանք՝ որ նորա հետ սե-
ղան էին նստած, սկսեցին իրենց
մտքումն ասել. Սա ով է՝ որ մեղք
է ն թողում:
50 Եւ նա ասաց այն կնկանը.
Քո հաւատքդ ազատեցրուց քեզ՝ գը-
նա շ խաղաղութեամբ:

ե Սաղ. ԻԳ. 5:
զ Ա Տիմ. Ա. 14:
յ Մատթ. Թ. 2: Մարկ. Բ. 5:
ն Մատթ. Թ. 3: Մարկ. Բ. 7:
շ Մատթ. Թ. 22: Մարկ. Ե. 34: Ձ. 52: Գլ. Ը.
48: Ծլ. 42:
—

## ԳԼ. Ը

1 Եւ եղեւ յետ այնորիկ՝ եւ ինքն շրջէր ընդ քաղաքս եւ ընդ գեօղս, քարոզէր եւ աւետարանէր զարքայութիւն Աստուծոյ. եւ երկոտասանքն ընդ նմա,

2 Եւ կանայք ոմանք՝ որ բժշկեալ էին յայսոց չարաց եւ ՚ի հիւանդութեանց. Մարիամ՝ որ կոչէր Մագդաղենացի, յորմէ եօթն դեւ ելեալ էր,

3 Եւ Յովհաննա կին՝ Քուզայ՝ հազարապետին Հերովդի, եւ Շուշան, եւ այլք բազումք, որք պաշտէին զնա յընչից իւրեանց։

4 Եւ ՚ի ժողովել բազում ժողովրդոց, եւ ըստ քաղաքաց քաղաքաց եկելոց առ նա՝ ասէ առակաւ։

5 Ել սերմանողն սերմանել զսերմանիս իւր. եւ ՚ի սերմանելն իւրում՝ էր որ անկաւ առ ճանապարհաւ՝ եւ եղեւ կոխան, եւ թռչունք երկնից կերան զնա։

6 Եւ այլ անկաւ յապառաժի. եւ ընդ բուսանելն՝ չորացաւ առ ՚ի չգոյէ հիւթոյ։

7 Եւ այլ անկաւ ՚ի մէջ փշոց, եւ ընդ նմին բուսեալ փշոյն՝ հեղձուցին զնա։

8 Եւ այլ անկաւ յերկիր բարի եւ պարարտ. եւ բուսեալ՝ արար պտուղ հարիւրապատիկ. զայս իբրեւ խօսեցաւ, ասէ. Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։

9 Հարցանէին զնա աշակերտքն՝ թէ զինչ իցէ առակն։

10 Եւ նա ասէ. Ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեան Աստուծոյ, բայց այլոցն առակօք.

1 Եւ նրանից յետոյ էլաւ՝ որ նա ման էր գալիս քաղաքներն ու գիւղերը, քարոզումէր եւ Աստուծոյ արքայութիւնըն աւետարանում. եւ այն տասներկուքն էլ նորա հետ,

2 Եւ քանի մի կանայք՝ որ չար դեւերից եւ հիւանդութիւններից բժշկված = էին. Մարիամն՝ որ Մագդաղենացի էր կոչվում, որ նորանից եօթը դեւ էին դուրս ‡ եկել,

3 Եւ Յօհաննան՝ Հերօդէսի ազնուտս Քուզայի կինը, եւ Շուշանը, եւ շատ ուրիշներ, որ իրենց ապրանքներիցը նորան ծառայութիւն էին անում։

4 Եւ երբոր շատ ժողովուրդներ հաւաքւեցան, եւ ամէն մէկ քաղաքներից նորա մօտ եկին՝ առակով † ասաց.

5 Մին սերմ ցանօղ մարդ դուրս գնաց՝ որ իրեն սերմացուը ցանէ. եւ իրեն սերմելոյ ժամանակը կար որ ճանապարհի վերայ ընկաւ՝ եւ կոխվեցաւ, եւ երկնքի թռչունները նորան կերին։

6 Եւ միւսը քարքարուտ տեղ ընկաւ. եւ բուսնելոյ ժամանակը՝ չորացաւ հողի պակասութեան պատճառովը։

7 Եւ միւսը փշներին մէջ ընկաւ, եւ փշերը նորա հետ բուսան՝ եւ խեղդեցին նորան։

8 Եւ միւսը բարի եւ պարարտ երկրի վերայ ընկաւ. եւ բուսաւ՝ եւ հարիւրապատիկ պտուղ տուաւ. երբոր այս բան խօսեց, ասաց. Ով որ լսելոյ ականջ ունի՝ թող լսէ։

9 Աշակերտները նորան հարցընումէին՝ թէ ինչ է այն ÷ առակը։

10 Եւ նա ասաց. Ձեզ տրված է Աստուծոյ արքայութեան խորհուրդները գիտել, բայց ուրիշնե-

= Մատթ. ԻԷ. 55. 56. | ‡ Մարկ. ԺԶ. 9. † Մատթ. ԺԳ. 2. | Մարկ. Գ. 1. ÷ Մատթ. ԺԳ. 10. | Մարկ. Դ. 10.

զի տեսցեն՝ եւ մի՛ տեսցեն, եւ լուիցեն՝ եւ մի՛ իմասցին ։
11 Բայց առակն այս ինչ է․ սերմն բանն Աստուծոյ է ։
12 Եւ որք առ ճանապարհաւն, այնոքիկ են՝ որ լսենն․ եւ ապա գայ Սատանայ՝ հանէ զբանն 'ի սրտից նոցա, զի մի՛ հաւատասցեն՝ եւ ապրեսցին ։
13 Եւ որք յապառաժին, որք յորժամ լսիցեն՝ խնդութեամբ ընդունին զբանն, եւ արմատս ոչ ունիցին․ որք առ ժամանակ մի հաւատան, եւ 'ի ժամանակի փորձութեան հեռանան ։
14 Իսկ որ 'ի մէջ փշոցն անկաւ՝ նոքա են, որ իբրեւ լսեն զբանն՝ եւ 'ի հոգս եւ 'ի մեծութիւն եւ 'ի ցանկութիւն աշխարհիս զբաղեալ հեղձնուն, եւ անպտուղ լինին ։
15 Իսկ որ յերկիրն պարարտ, որոց բարւոք եւ զուարթագին սրտիւ լուեալ զբանն ընդունին, եւ տան պտուղ համբերութեամբ ։
16 Ո՛չ ոք լուցանէ ճրագ եւ թաքուցանէ ընդ կարասեաւ՝ կամ դնէ ընդ մահճօք, այլ 'ի վերայ աշտանակի դնէ, զի որ մտանեն՝ զլոյս տեսցեն ։
17 Զի ոչ ինչ ծածուկ՝ որ ոչ յայտ լիցի․ եւ ոչ գաղտնի՝ որ ոչ ծանիցի, եւ եկեսցէ 'ի յայտ ։
18 Տեսէք այսուհետեւ զիարդ լսէք․ զի որ ոք ունիցի՝ տացի նմա, եւ որ ոչն ունիցի՝ եւ զոր կարծէն թէ ունիցի, բարձցի 'ի նմանէ ։
19 Եկին առ նա մայրն եւ եղբարք իւր, եւ ոչ կարէին հասանել 'ի նա վասն բազմութեանն ։

ընեն առակներով․ որ տեսնեն՝ եւ չտեսնեն, եւ լսեն՝ եւ † չիմանան ։
11 Միայն թէ առակը աս է․ սերմը Աստուծոյ բանն ‡ է ։
12 Եւ որ ճանապարհի վերայ են, նորանք են՝ որ լսումեն․ եւ ապա Սատանան գալիս՝ բանը նորանց սրտիցն հանումէ, որ չը հաւատան՝ եւ ապրին ։
13 Եւ որ քարքարուտի վերայ են, նորանք են որ երբոր լսեն՝ բանիցն ուրախութենով ընդունումեն, եւ արմատ չունին․ նորանք մին ժամանակ հաւատում, բայց փորձութեան ժամանակին հեռանումեն ։
14 Բայց նա՝ որ փշերին մէջն ընկաւ, նորանք են՝ որ երբոր բանը լսումեն՝ հոգսերով եւ մեծութենով եւ աշխարհքի ցանկութիւններով զբաղված՝ խեղդվումեն, եւ պտուղ չեն տալիս ։
15 Բայց նա՝ որ պարարտ երկրին վերայ ընկաւ, նորանք են՝ որ բարի եւ յօժար սրտով բանը լսումեն՝ եւ ընդունում, եւ համբերութենով պտուղ են տալիս ։
16 Ո՛չ ով ճրագ չի վառիլ եւ ամանի տակ թաքցնիլ՝ կամ մահճի տակ դնիլ, բայց ճրագակալի վերայ կը դնէ, որ նորանք՝ որ ներս են մտնում, լոյս § տեսնեն ։
17 Բնաւ ծածուկ բան չկայ՝ որ ‖ չը յայտնուի․ եւ ոչ թաքուն բան՝ որ չիմացվի, եւ դէպի լոյսը գայ ։
18 Ապա տեսէք՝ թէ դուք ինչպէս էք լսում․ ինչու որ՝ ով որ ունի, նորան կը տրվի, եւ ով որ չունի՝ նա էլ որ կարծումէ՝ թէ ունի, նորանից վեր ¶ կառնվի ։
19 Նորա մայրն ու նորան եղբարքը նորա մօտ ⁋ եկին, եւ չէին կարողանում նորա մօտ հասնել բազմութեան պատճառաւը ։

† Եսայ․ Զ․ 9 ։ Մարկ․ Դ․ 12 ։ ‡ Մատթ․ ԺԳ․ 18 ։ Մարկ․ Դ․ 14 ։
§ Մատթ․ Ե․ 15 ։ Մարկ․ Դ․ 21 ։ Գլ․ ԺԱ․ 33 ։ ‖ Մատթ․ Ժ․ 26 ։
Գլ․ ԺԲ․ 2 ։ ¶ Մատթ․ ԺԳ․ 12 ։ ԻԵ․ 29 ։ Գլ․ ԺԹ․ 26 ։
⁋ Մատթ․ ԺԲ․ 46 ։ Մարկ․ Գ․ 31 ։

20 Ազդ եղեւ նմա եւ ասեն. Մայր
քո եւ եղբարք քո կան արտաքոյ՝
եւ կամին զքեզ տեսանել:

21 Եւ ասէ ցնոսա. Մայր իմ եւ
եղբարք իմ սոքա են՝ որ զբանն
Աստուծոյ լսեն եւ առնեն:
22 Եւ եղեւ ՚ի միում աւուրց ինքն
ել ՚ի նաւ՝ եւ աշակերտքն նորա,
եւ ասէ ցնոսա. Անցցուք
յայնկոյս ծովակիս. եւ գնացին:

23 Եւ մինչդեռ նաւէին՝ ՚ի քուն
եմուտ, եւ էջ մրրիկ հողմոյ ՚ի ծո-
վակն՝ եւ ուռնոյր, եւ տագնա-
պէին:

24 Մատուցեալ զարթուցին զնա
եւ ասեն. Վարդապետ վարդապետ՝
կորնչիմք աւասիկ. եւ նա յարու-
ցեալ սաստեաց հողմոյն եւ խռո-
վութեան ջուրցն՝ եւ հանդարտե-
ցին, եւ եղեւ խաղաղութիւն:
25 Ասէ ցնոսա. Ո՞ւր են հաւատք
ձեր. եւ զահի հարեալ զարմացան,
եւ ասէին ցմիմեանս. Ո՞վ արդեօք
իցէ սա՝ զի եւ հողմոց եւ ջրոց հրա-
մանս տայ, եւ հնազանդին սմա:

26 Եւ նաւեցին իջին յաշխարհն
Գերգեսացւոց. որ է յայնկոյս հան-
դէպ Գալիլեայ:
27 Եւ ընդ ելանելն նորա ՚ի ցա-
մաք, պատահեաց այր մի ՚ի քաղա-
քէն՝ յորում էին դեւք. եւ բազում
ժամանակս չէր հանդերձ զգեցեալ՝
եւ ոչ ՚ի տան բնակեալ, այլ ՚ի
գերեզմանս:
28 Եւ տեսեալ զՅիսուս, աղա-
ղակեաց եւ անկաւ առաջի նորա,
եւ ասէ մեծաձայն. Զի՞ կայ իմ եւ
քո Յիսուս Որդի Աստուծոյ բարձ-
րելոյ, աղաչեմ զքեզ՝ մի տանջեր
զիս:
29 Քանզի հրամանն տայր այսոյն
պղծոյ ելանել ՚ի մարդոյ անտի. զի

20 Նորան իմաց ըրին եւ ասա-
ցին. Քո մայրդ ու քո եղբարքդ
դուրսը կայնած են՝ եւ ուզումեն
քեզ տեսնել:
21 Եւ նորանց ասաց. Իմ մայրս
եւ իմ եղբարքս ասոնք են՝ որ Աս-
տուծոյ խօսքը լսումեն եւ անում:
22 Եւ էրաւ օրերից մէկումն՝ որ
ինքը նաւ մտաւ, եւ նորա աշա-
կերտներն էլ, եւ նորանց է ասաց.
Եկէք անցանենք ծովակին այն կող-
մը. եւ գնացին:
23 Եւ գնալ որ նաւով գնումէին՝
նա քուն մտաւ. եւ քամոյ մրրիկ
ընկաւ այն ծովակին մէջ՝ եւ ջ-ւը
բարձրանումէր, եւ նեղութեան մէջ
էին:
24 Մօտ եկին, նորան զարթնա-
ցուցին եւ ասացին. Վարդապետ
վարդապետ՝ ահա կորչումենք. եւ
նա վերկացաւ, եւ քամոյն եւ ջրին
ալէկոծութեանը սաստեց՝ եւ հան-
դարտեցին, եւ խաղաղութիւն էրաւ:
25 Ասաց նորանց. Ի՞նչ տեղ է
ձեր հաւատքը. եւ նրանք վախեցած
զարմացան, եւ իրար ասումէին.
Սա ով արդեօք լինի՝ որ քամիներին
ու ջրերին հրաման է տալիս, եւ
հնազանդումեն սորան:
26 Եւ նաւով գնացին, հասին Գեր-
գեսացոց աշխարհքին՝ որ այն կողմն
է Գալիլեայի դիմացը:
27 Եւ երբոր նա դուրս էր գալիս
ցամաքը, քաղաքիցը մէկ մարդ պա-
տահեց նորան՝ որ նորանում դեւեր
կային. եւ շատ ժամանակ շոր չէր
հագած՝ եւ ոչ տան մէջ բնակված,
այլ գերեզմաններումը:
28 Եւ Յիսուսին որ տեսաւ, ա-
ղաղակեց եւ նորան առաջին ընկաւ,
եւ բարձր ձայնով ասաց. Քեզ ի՞նչ
բան կայ ինձ հետ՝ Յիսուս բարձ-
րեալ Աստուծոյն Որդի. աղաչու-
մեմ քեզ՝ մի տանջեր ինձ:
29 Զաւանդանոր՝ նա պիղծ դեւին
հրաման էր տալիս՝ որ այն մար-

‡ Մատթ. Ը. 23.| Մարկ. Դ. 35.| ‖ Մատթ. Ը. 28.| Մարկ. Ե. 1.

բազում ժամանակս յափշտակեալ
էր զնա, եւ կապէր 'ի շղթայս,
եւ պահէր յերկաթս, եւ խզէր զկա-
պանսն, եւ վարէր 'ի դիւէն յանա-
պատս։

30 Եհարց զնա Յիսուս՝ եւ ասէ.
Զի՞նչ անուն է քեզ. եւ նա ասէ,
Լեգէոն. զի դեւք բազումք մտեալ
էին 'ի նա։
31 Եւ աղաչէին զնա՝ զի մի՛ հրա-
ման տացէ նոցա երթալ յանդունդս։
32 Եւ էր անդ երամակ մի խոզից
բազմաց արօտական 'ի լերինն, եւ
աղաչեցին զնա՝ զի հրաման տացէ
նոցա մտանել 'ի նոսա. եւ հրամա-
յեաց նոցա։
33 Եւ ելեալ դեւքն յառնէն՝ մտին
'ի խոզսն. եւ դիմեաց երամակն
'ի զահէ անտի 'ի ծովակն՝ եւ հեղ-
ձաւ։
34 Իբրեւ տեսին խոզարածքն զիր-
սն որ եղեն՝ փախեան, եւ պատ-
մեցին 'ի քաղաքին եւ յագարակսն։

35 Եւ իբրեւ ելին տեսանել ըզ
գործն, եւ եկին առ Յիսուս, եւ
գտին զայրն՝ ուստի դեւքն ելեալ
էին, զգեցեալ եւ զգաստացեալ
նստէր առ ոտս Յիսուսի. եւ եր-
կեան։

36 Պատմեցին նոցա՝ որոց տեսեալն
էր թէ զիարդ փրկեցաւ դիւահարն։

37 Եւ աղաչէր զնա ամենայն բազ-
մութիւնն շուրջ զգաւառաւքն Գեր-
գեսացւոց՝ գնալ 'ի սահմանաց նո-
ցա, քանզի ահիւ մեծաւ տագնա-
պեալ էին. եւ նա մտեալ 'ի նաւ՝ դար-
ձաւ անդրէն։
38 Աղաչէր զնա այրն՝ ուստի դե-
ւքն ելեալ էին, շրջել ընդ նմա.
արձակեաց զնա՝ եւ ասէ.

39 Դարձ 'ի տուն քո, եւ պատմեա

դուցը դուրս գայ. Ինչուոր շատ
անգամ յափշտակել էր նորան, եւ
շղթաներով կապվումէր, եւ եր-
կաթների մէջ պահվում, եւ նա կա-
պանքները կտրում, եւ դեւիցը
քշվումէր անապատ տեղ։
30 Յիսուս նորան հարցրուց՝ եւ
ասաց. Քո անունդ ինչ է. եւ նա
ասաց. Լեգէոն, ինչուոր՝ շատ դե-
ւեր էին մտած նորա մէջ։
31 Եւ աղաչումէին նորան՝ որ չը
հրամայէ նորանց գնալ [ժ] անդունդը։
32 Եւ այնտեղ շատ խոզերի մին
երամակ կար՝ որ այն սարին վերայ
արածումէին, եւ աղաչեցին նորան՝
որ հրաման տայ իրենց մտնել նո-
րանց մէջ. եւ հրամայեց նորանց։
33 Եւ դեւերն այն մարդուցը դուրս
ելին՝ եւ խոզերին մէջ մտին. եւ
երամակն այն բարձր տեղիցը վա-
զեց ծովակին մէջ՝ եւ խեղդվեցաւ։
34 Երբոր խոզարածները տեսին
այն բաներին՝ որ էլան, փախան, եւ
այն քաղաքին ու գեղերին մէջ պատ-
մեցին։
35 Եւ երբոր [illegible] դուրս էլան
այն բաները տեսնելու, եւ Յիսու-
սին մօտ եկին, այն մարդը գտին՝
որ նորանից դեւերը դուրս էին ե-
կել, որ հագված եւ խելքը գլուխն
եկած՝ Յիսուսին ոտներին մօտ նըս-
տած էր. եւ վախեցան։
36 Նորանք՝ որ տեսել էին, պատ-
մեցին նորանց, թէ ինչպէս փրկը-
վեցաւ այն դիւահարը։
37 Եւ Գերգեսացոց ամէն չորս
կողմերին էլած մարդիկն [ի] աղաչու-
մէին նորան՝ որ իրենց սահմաննե-
րիցը [լ] գնայ, պատճառոր՝ սաստիկ
ահով եւ վախով բռնված էին. եւ
նա նաւ մտաւ՝ եւ յետ դարձաւ։
38 Այն մարդն՝ որ նորանից դե-
ւերը դուրս էին եկել, նորան աղա-
չումէր՝ որ նորա հետ մնայ. [խ] ար-
ձակեց նորան՝ եւ ասաց.
39 Դարձիր քո տունդ, եւ պատ-

ժ Յայտ. Ի. 3. | ի Մատթ. Ը. 34. | լ Գործ. ԺԶ. 39. | խ Մարկ. Ե. 18.

զոր միանգամ արար քեզ Աստուած. գնաց 'ի քաղաքն՝ և քարոզէր զոր ինչ արար նմա Յիսուս։

40 Եւ իբրև դարձաւ անդրէն Յիսուս, ընկալաւ զնա ժողովուրդն. քանզի ամենեքեան ակն ունէին նմա։

41 Եւ ահա եկն այր մի՝ որում անուն էր Յայրոս, և նա էր իշխան ժողովրդեանն. անկեալ առ ոտս Յիսուսի՝ աղաչէր զնա մտանել 'ի տուն նորա։

42 Զի դուստր միամօր էր նորա՝ ամաց իբրև երկոտասանից, և էր մերձ 'ի մահ. և ընդ երթալն նորա՝ ժողովուրդքն նեղէին զնա։

43 Եւ կին մի էր 'ի տեռատեսութեան արեան ամաց երկոտասանից, որ 'ի բժիշկս ծախեալ էր զամենայն ինչս իւր. որում ոչ էր լեալ հնար յումեքէ բժշկել։

44 Մատուցեալ յետոյ մերձեցաւ 'ի քղանցս հանդերձի նորա. և նոյն ժամայն եկաց բղխումն արեան նորա։

45 Եւ ասէ Յիսուս. Ո՞վ է որ մերձեցաւն յիս. իբրև ամենեքեան ուրանային, ասէ Պետրոս՝ և որ ընդ նմա էին. Վարդապետ՝ ժողովուրդք պնդեն և նեղեն զքեզ։

46 Եւ ասէ Յիսուս. Ոմն մերձեցաւ յիս. քանզի գիտացի եթէ զօրութիւն ել յինէն։

47 Իբրև տես կինն՝ եթէ ոչ ծածկեցաւ 'ի նմանէ, եկն դողալով և անկաւ առաջի նորա, թէ վասն որոյ իրաց մերձեցաւ 'ի նա՝ պատմեաց առաջի ամենայն ժողովրդեանն, և թէ որպէս բժշկեցաւ առժամայն։

48 Եւ ասէ. Քաջալերեա՛ց դուստր՝

մէջ ամէն ինչ որ Աստուած քեզ արաւ. Նա գնաց քաղաքն՝ ու քարոզումէր ինչ որ Յիսուս իրեն արաւ։

40 Եւ երբոր Յիսուս յետ դարձաւ, ժողովուրդն ընդունեց նորան. ինչու որ՝ ամէնքն էլ սպասումէին նորան։

41 Եւ ահա մին 'մարդ եկաւ՝ որ նորա անունն Յայրոս էր, և նա ժողովարանի իշխան [Յ] էր. Յիսուսի ոտներին ընկած՝ աղաչումէր նորան, որ իրեն տունը մտնէ.

42 Ինչու որ՝ մին միածնունդ աղջիկ ունէր, իբր տասներկու տարեկան, և նա մեռնելու մօտ էր. և նորա գնալու ժամանակը ժողովուրդները նեղացնումէին նորան։

43 Եւ մին կին կար արիւն թափելու հիւանդութեան մէջ տասներկու տարուց՝ որ իրեն ամէն ապրանքները բժիշկներին էր տուել՝ [Ղ] փճացրել. որ նորան հնար չէր եղած՝ մինիցը բժշկվելու։

44 Սա մօտ եկաւ, և ետեւիցը նորա շորի ծայրերին դիպաւ. և շուտով իսկ այն ժամին նորա արիւնի վազելը դադարեց։

45 Եւ Յիսուս ասաց. Ո՞վ է որ ինձ դիպաւ. երբոր ամէնքն ուրանումէին, Պետրոս և նորանք որ նորա հետ էին՝ ասացին. Վարդապետ՝ ժողովուրդները սղմումեն և նեղացնումեն քեզ։

46 Եւ Յիսուս ասաց. Մէկը դիպաւ ինձ. ինչու որ՝ իմացայ՝ որ զօրութիւն դուրս եկաւ [Ճ] ինձանից։

47 Երբոր կինը տեսաւ՝ որ չը ծածկվեցաւ նորանից, դողալով եկաւ՝ և նորան առաջին ընկաւ, և ամէն ժողովրդի առաջին պատմեց՝ թէ ինչ բանի համար նորան դիպաւ, և թէ ինչպէս իսկ այն ժամին բժշկվեցաւ։

48 Եւ Նա ասաց. Սրտապինդ կաց

Յ Մատթ. Թ. 18. Մարկ. Ե. 22. | Ղ Մատթ. Թ. 20. Ճ Մարկ. Ե. 30. | Գլ. Զ. 19.

հաւատք քո կեցուցին զքեզ , երթ ՚ի խաղաղութիւն ։

49 Եւ մինչդեռ նա խօսէր ,* գայ ոմն ՚ի տանէ ժողովրդապետին , եւ ասէ ցնա . Մեռաւ դուստրն քո , մի՛ ինչ աշխատ առներ զդա ։

50 Իսկ Յիսուս իբրեւ լուաւ , պատասխանի ետ նմա՝ եւ ասէ . Մի՛ երկնչիր , միայն հաւատա՛ եւ կեցցէ ։

51 Եւ մտեալ ՚ի տունն՝ ոչ զոք եթող մտանել , բայց միայն զՊետրոս եւ զՅակոբոս եւ զՅովհաննէս , եւ զհայր մանկանն եւ զմայր նորա ։

52 Լային ամենեքեան՝ եւ կոծէին զնա . եւ նա ասէ , Մի՛ լայք՝ զի չէ մեռեալ , այլ ննջէ ։

53 Եւ նոքա ծաղր առնէին զնա , զի գիտէին՝ թէ մեռաւ ։

54 Եւ նորա հանեալ զամենեսին արտաքս ,

55 Կալաւ զձեռանէ նորա՝ բարբառեցաւ եւ ասէ . Արի՛ կաց մանուկ դու ։

56 Եւ դարձաւ ոգի նորա , եւ կանգնեցաւ վաղվաղակի . եւ հրամայեաց տալ նմա ուտել ։

57 Եւ զարմացան ծնողքն նորա . եւ նա պատուիրէր մի՛ ումեք ասել՝ որ ինչ եղեւն ։

դուստր՝ քո հաւատքդ ազատեցուց քեզ , գնա խաղաղութեամբ ։

49 Եւ դեռ որ նա խօսումէր , այն ժողովրդապետի տանիցը մին մարդ եկաւ , եւ նորան * ասաց . Քո աղջիկդ մեռաւ , էլ դորան մի աշխատացներ ։

50 Բայց Յիսուս երբոր լսեց , նորան պատասխան տուաւ եւ ասաց . Մի վախենար , միայն հաւատա՛ եւ նա կապրի ։

51 Եւ տունն որ մտաւ՝ բնաւ մինին չի թողեց որ մտնէ , բայց միայն Պետրոսին , եւ Յակոբին եւ Յօհաննէսին , եւ երախայի հօրն ու նորա մօրը ։

52 Ամէնքը լաց էին լինում՝ եւ նորա վերայ ողբ անում . եւ նա ասաց , Լաց մի լինիք , ինչու որ՝ մեռած չէ , այլ քնած է ։

53 Եւ նորանք ծաղր էին անում նորան , ինչու որ՝ գիտումէին , որ մեռաւ ։

54 Եւ նա ամէնին դուրս հանեց ,

55 Նորա ձեռիցը բռնեց , խօսեց եւ ասաց . Ո՛վ երախայ՝ վերկաց , կանգնէ ։

56 Եւ նորա հոգին դարձաւ , եւ շուտով կանգնեց . եւ հրամայեց՝ որ նորան բան տան ուտելու ։

57 Եւ նորա ծնողքը զարմացան . եւ նա պատուիրումէր՝ որ բնաւ մինին չասեն ինչ որ էլաւ ։

## ԳԼ. Թ

1 Եւ կոչեցեալ զերկոտասան առաքեալսն , ետ նոցա զօրութիւն եւ իշխանութիւն ՚ի վերայ ամենայն դիւաց , եւ բժշկել զհիւանդութիւնս ։

2 Եւ առաքեաց զնոսա քարոզել զարքայութիւն Աստուծոյ , եւ բժշկել զախտաժէտս ։

1 Եւ տասներկու առաքեալներին կանչեց , եւ նորանց զօրութիւն եւ իշխանութիւն տուաւ ամէն դեւերին վերայ , եւ հիւանդութիւնները – բժշկելոյ .

2 Եւ նորանց ուղարկեց՝ որ Աստուծոյ արքայութիւնը քարոզեն . եւ ցաւագարները բժշկեն .

* Մարկ. Ե. 35 ։
յ Յովհ. ԺԱ. 11. 13 ։
ն Գլ. Է. 14 ։ Յովհ. ԺԱ. 43 ։
ւ Մատթ. Ը. 4 ։ Թ. 30 ։ Մարկ. Ե. 43 ։
– Մատթ. Ժ. 1 ։ Մարկ. Գ. 13 ։ Զ. 7 ։
բ Մատթ. Ժ. 7 ։
Տ ։ Մարկ. Զ. 12 ։ Գլ. Ժ. 1. 9 ։

3 Եւ ասէ ցնոսա. Մի՛ ինչ բառնայք ՚ի ճանապարհ. մի՛ գաւազան եւ մի՛ մախաղ, մի՛ հաց եւ մի՛ արծաթ, մի՛ երկուս հանդերձս ունիցիք։

4 Եւ յոր տուն մտանիցէք՝ անդ ագջիք, եւ անտի գնայցէք։

5 Եւ որք ոչ ընդունիցին զձեզ, յորժամ ելանիցէք ՚ի քաղաքէն յայնմանէ, զփոշի ոտից ձերոց թօթափեսջիք ՚ի վկայութիւն նոցա։

6 Եւ ելեալ շրջէին ընդ քաղաքս եւ ընդ գեօղս՝ աւետարանէին, եւ բժշկէին ընդ ամենայն տեղիս։

7 Լուաւ Հերովդէս չորրորդապետ զգործսն ամենայն. եւ զարմանայր վասն ասելոյն յոմանց.

8 Թէ Յովհաննէս յարեաւ ՚ի մեռելոց, եւ յոմանց՝ թէ Եղիա յայտնեցաւ, եւ յայլոց՝ թէ Մարգարէ ոմն յառաջնոցն յարեաւ։

9 Ասէ Հերովդէս. ԶՅովհաննէս ես գլխատեցի. իսկ սա ո՞վ իցէ զորմէ զայսպիսի իրս լսեմ. եւ խնդրէր տեսանել զնա։

10 Դարձան առաքեալքն, եւ պատմեցին նմա զամենայն՝ զոր արարին. եւ առեալ զնոսա՝ խուսեաց առանձինն ՚ի տեղի անապատ քաղաքի միոյ, որում անուն էր Բեթսայիդա։

11 Եւ ժողովուրդքն իբրեւ գիտացին, գնացին զհետ նորա. եւ ընկալեալ զնոսա՝ խօսէր ընդ նոսա վասն արքայութեանն Աստուծոյ, եւ որոց պէտք էին բժշկութեան՝ բժշկէր։

3 Եւ նորանց ասաց. Ոչ մին բան վեր չառնէք ճանապարհի համար. ոչ գաւազան, ոչ պարկ, ոչ հաց եւ ոչ արծաթ, երկու հագուստ էլ ‡ չունենաք։

4 Եւ որ տուն որ մտնէք՝ այն տեղ մնացէք, եւ այնտեղիցը = գնացէք։

5 Եւ նորանք՝ որ ձեզ ɫ չընդունեն, երբոր այն քաղաքիցը դուրս կը գնաք, ձեր ոտների փոշին թափ տուէք՝ որ նորանց վկայութիւն ղ լինի։

6 Եւ դուրս գնացին եւ ման էին գալիս քաղաքներին ու գիւղերը աւետարանը քարոզումէին եւ ամէն տեղ բժշկութիւն ɫ անում։

7 Հերոդէս չորրորդապետն այն ամէն գործերը ε լսեց. եւ զարմանումէր նորա համար՝ որ մին քանիսն ասումէին.

8 Թէ Յօհաննէսը մեռելների միջիցը յարութիւն առաւ, եւ մին քանիսը թէ, Եղիան յայտնուեցաւ՝ եւ ուրիշները թէ, Առաջին մարգարէներիցը մինը յարութիւն առաւ։

9 Եւ Հերոդէսն ասաց. Յօհաննէսին գլուխը ես կտրեցի. բայց սա ո՞վ է՝ որ նորանից այսպիսի բաներ եմ լսում. եւ խնդրումէր, որ տեսնէ ϸ նորան։

10 Առաքեալները դարձան եւ պատմեցին նորան ամէն՝ ինչ որ ♦ արին. եւ նորանց առաւ՝ եւ գնաց առանձին մին անապատ տեղ՝ մին քաղաքի մօտ՝ որ նորան անունը Բեթսայիդա ‡ էր։

11 Եւ ժողովուրդներն երբոր գիտացին, նորան ետեւէն գնացին. եւ նորանց ընդունեց եւ նորանց հետ խօսումէր, եւ նորանց՝ որ բժշկութեան կարօտ էին՝ բժշկամէր։

‡ Մատթ. Ժ. 9. Մարկ. Զ. 8. Ղու. Ժ. 4. ԻԲ. 35.
= Մատթ. Ժ. 11. Մարկ. Զ. 10.
ɫ Մատթ. Ժ. 14.
ղ Գործ. ԺԳ. 51.
ɫ Մարկ. Զ. 12.
ε Մատթ. ԺԴ. 1. Մարկ. Զ. 14.
ϸ Ղու. ԻԳ. 8.
♦ Մարկ. Զ. 30.
‡ Մատթ. ԺԴ. 13.

12 Եւ օրն սկսաւ տարաժամել ·
մատեան երկոտասանքն եւ ասեն
ցնա · Արձակեա զժողովուրդդ ,
զի երթեալ շուրջ 'ի գիւղսն եւ
յագարակս՝ հանգիցեն , եւ գտցեն
կերակուր · զի աստ յանապատ տեղ-
ւոջ եմք ։
13 Ասէ ցնոսա · Դուք տուք դոցա
ուտել · Եւ նոքա ասեն · Ո՛չ գոյ
մեր աւելի քան զհինգ նկանակ եւ
զերկուս ձկունս , բայց եթէ երթի-
ցուք գնեսցուք բաւական ժողո-
վրդեանդ կերակուր ։

14 Քանզի էին արք իբրեւ հինգ
հազար · Ասէ ցաշակերտսն · Բազ-
մեցուցէք զդոսա դասս դաս՝ յի-
սուն յիսուն ։
15 Եւ արարին այնպէս , եւ բազ-
մեցուցին զամենեսեան ։
16 Եւ առեալ զհինգ նկանակսն եւ
զերկուս ձկունսն՝ հայեցաւ յերկի-
նս , օրհնեաց եւ եբեկ՝ եւ տայր
ցաշակերտսն արկանել ժողովր-
դեանն ։
17 Կերան եւ յագեցան ամենեքե-
ան · եւ բարձին զնշխարս կոտո-
րոցն՝ երկոտասան սակառի ։
18 Եւ եղեւ 'ի կալն նորա յաղօթս
առանձինն , էին ընդ նմա եւ աշա-
կերտքն նորա · Եհարց զնոսա եւ
ասէ · Զո՞ ոք ասեն զինէն ժողո-
վուրդքն՝ թէ իցեմ ։

19 Եւ նոցա պատասխանի տուեալ
ասեն · ԶՅովհաննէս մկրտիչ , եւ
այլք զԵղիա , իսկ այլք՝ թէ Մար-
գարէ ոք յառաջնոցն յարեաւ ։

20 Ասէ ցնոսա · Դուք զի՞ս ոք ա-
սէք զինէն՝ թէ իցեմ · պատասխանի
ետ Պետրոս եւ ասէ · ԶՔրիստոսն
Աստուծոյ ։
21 Նա սաստեաց 'ի նոսա , եւ

12 Եւ օրն սկսեց մթնել · աշակեր-
տքը մօտ եկին եւ նորան ասա-
ցին · Թող տուր այդ ժողովուրդը ,
որ չորս կողմով եղած գիւղերն ու
շէները գնան , հանգիստ առնեն ,
եւ կերակուր գտնեն · ինչու որ՝ այս
տեղ անապատ տեղ ւ ենք ։
13 Նորանց ասաց · Դուք տուէք
դորանց ուտել · Եւ նորանք ասա-
ցին · Մենք հինգ հատ հացից եւ
երկու ձկներից աւելի բան չունինք ,
եթէ ոչ՝ գնանք այդ ժողովրդին
համար բաւական կերակուր գը-
նենք ։
14 Ինչու որ՝ հինգ հազարի չափ
մարդիկ էին ։ Աշակերտներին ա-
սաց · Նստացրէք դորանց դաս
դաս՝ յիսուն յիսուն ։
15 Եւ այնպէս արին , եւ ամէնին
նստացրին ։
16 Եւ այն հինգ հացն ու երկու
ձուկն առաւ , դէպի երկինքը նա-
յեց , օրհնեց եւ կոտրեց , եւ տալիս
էր աշակերտներին՝ որ ձգեն ժողո-
վրդին ։
17 Ամէնքը կերան եւ կշտացան ·
եւ կտորների փշրանքները վերա-
ռին՝ տասներկու քթոց ։
18 Եւ եղաւ՝ երբոր նա առանձին
աղօթք էր անում՝ նորան աշա-
կերտներն էլ նորա հետ էին · Հար-
ցրուց նորանց եւ ասաց · Ժողո-
վուրդները ինձ համար ով են ա-
սում՝ որ ե լինիմ ։
19 Եւ նորանք պատասխան տը-
ւին եւ ասացին · զ Յովհաննէս մկրը-
տիչը , եւ ուրիշները՝ Եղիան , եւ
ուրիշները թէ Առաջին մարգարէ-
ներից մինը յարութիւն առաւ ։
20 Նորանց ասաց · Դուք ով էք
ասում ինձ համար՝ որ լինիմ · Պետ-
րոս պատասխան տուաւ եւ ասաց ·
Աստուծոյ է Քրիստոսը ։
21 Նա սաստեց նորանց , եւ պատ-

դ Մատթ. ԺԴ. 15 ։ Մարկ. Զ 35 ։ Յովհ. Զ. 1. 5 ։
ե Մատթ. ԺԶ. 13 ։ Մարկ. Ը. 27 ։
զ Մատթ. ԺԴ. 2 ։ Համար. 7, 8 ։
է Մատթ. ԺԶ. 16 ։ Յովհ. Զ. 69 ։

պատուիրեաց մի ումեք ասել զայն ։
22 Եւ ասէ, թէ Պարտ է Որդւոյ
մարդոյ բազում չարչարիլ եւ ա-
նարգիլ 'ի քահանայապետից եւ 'ի
ծերոց եւ 'ի դպրաց, եւ սպանա-
նիլ՝ եւ յերիր աւուր յառնել ։

23 Եւ ասէր առ ամենեսին, Եթէ
ոք կամի զհետ իմ գալ, ուրասցի
զանձն՝ եւ առցէ զխաչ իւր հանա-
պազ՝ եւ եկեսցէ զհետ իմ ։

24 Զի որ կամիցի զանձն իւր կե-
ցուցանել՝ կորուսցէ զնա, եւ որ
կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ կե-
ցուսցէ զնա ։

25 Զինչ օգուտ է մարդոյ՝ եթէ
զաշխարհ շահեսցի, եւ զանձն իւր
կորուսցէ կամ տուժեսցի ։
26 Զի որ ամօթ համարեսցի զիս
եւ զբանս իմ, զնա եւ Որդի մար-
դոյ յամօթ արասցէ յորժամ գայցէ
փառօք իւրովք՝ եւ Հօր՝ եւ հրեշ-
տակաց սրբոց ։
27 Բայց արդարեւ ասեմ ձեզ, ե-
թէ Են ոմանք 'ի դոցանէ որ այդր
կան՝ որք մի ճաշակեսցեն զմահ,
մինչեւ տեսցեն զարքայութիւն Աս-
տուծոյ ։
28 Եւ եղեւ յետ այսց բանից իբ-
րեւ աւուրք ութ, առեալ զՊետ-
րոս եւ զՅակոբոս եւ զՅովհաննէս՝
ել 'ի լեառն կալ յաղօթս ։

29 Եւ 'ի կալ նորա յաղօթս՝ եղեւ
տեսիլ երեսաց նորա այլակերպ. եւ
փոխեցաւ հանդերձ նորա՝ եւ եղեւ
սպիտակ փայլուն ։

30 Եւ ահա արք երկու խօսէին
ընդ նմա, որ էին Մովսէս եւ Եղիա,

ուրիշին՝ որ նա բնաւ մէկուն [հ] չասեն ։
22 Եւ ասաց՝ թէ, պէտք է, որ
Որդին մարդոյ շատ չարչարուի եւ
անարգուի քահանայապետներէն ու
ծերերէն եւ կարդացողներէն, եւ
սպաննուի՝ եւ երեք օրուան յարու-
թիւն [յ] առնէ ։
23 Եւ ամէնին ասումէր, Թէ որ
մէկը կամենում է իմ ետեւէս գայ՝
թող իրեն անձին ուրանայ՝ եւ ա-
մէն օր իրեն խաչին առնէ՝ եւ իմ
ետեւէս [ղ] գայ ։
24 Պատճառնոր՝ ով որ կամենայ
իրեն անձին ապրեցնել՝ կը կորցնէ
նորան . եւ ով որ իրեն անձը կը
կորցնէ ինձ համար՝ կապրեցնէ նո-
րան ։
25 Ինչ օգուտ է մարդոյ՝ որ
աշխարհքըս առնոյ, եւ իրեն ան-
ձը կորցնէ, կամ նորան վնաս [ճ] տայ ։
26 Ինչուոր՝ ով որ ինձ եւ իմ
խօսքերս ամօթ կը համարէ՝ Որդին
մարդոյ ալ նորան ամօթ կանէ՝ եր-
բոր իրեն եւ Հօր եւ սուրբ հրեշ-
տակներու փառքովը [մ] կը գայ ։
27 Բայց ճշմարիտն ասումեմ ձեզ .
թէ Այստեղ կեցողներէցը մէն քա-
նիսը կան, որ մահ չեն տեսնել,
մինչեւ որ Աստուծոյ արքայութիւ-
նը [յ] տեսնեն ։
28 Եւ եղաւ՝ որ ութ օրի չափ այս
խօսքերէցս ետեւ, Պետրոսին եւ
Յակոբին եւ Յովհաննէսին առաւ՝
եւ վեր ելաւ . մէն սար աղօթք
[ն] անելոյ ։
29 Եւ նորան աղօթք անելոյ ժա-
մանակը՝ նորան երեսի կերպարանքն
ուրիշ կերպ էլաւ . եւ նորա հա-
գուստը փոխուեցաւ՝ եւ սպիտակ
փայլուն էլաւ ։
30 Եւ ահա երկու մարդ խօսու-
մէին նորա հետ . որ նորանք Մօ-
սէսն ու Եղիան էին ,

հ Մատթ. ԺԶ. 20.
յ Մատթ. ԺԶ. 21. ԺԷ. 22.
ղ Մատթ. Ժ. 38. ԺԶ. 24. Մարկ. Ը. 34. Ղւ. ԺԴ. 27.
ճ Մատթ. ԺԶ. 26. Մարկ. Ը. 36.
մ Մատթ. Ժ. 33. Մարկ. Ը. 38. Բ Տիմ. Բ. 12.
յ Մատթ. ԺԶ. 28. Մարկ. Թ. 1.
ն Մատթ. ԺԷ. 1. Մարկ. Թ. 2.

31 Երեւեալ փառօք. եւ ասէին զելիցն նորա՝ զոր կատարելոց էր յԵրուսաղէմ։

32 Իսկ Պետրոս՝ եւ որ ընդ նմայն էին՝ ծանրացեալք ՚ի քնոյ՝ զարթեան, տեսին զփառսն նորա՝ եւ զերկուս արսն, որ կային առ նմա։

33 Եւ եղեւ ՚ի մեկնելն նոցա ՚ի նմանէ, ասէ Պետրոս ցՅիսուս. Վարդապետ՝ բարւոք է մեզ աստ լինել, եւ արասցուք երիս տաղաւարս, մի քեզ եւ մի Մովսէսի՝ եւ մի Եղիայի. եւ ոչ գիտէր զինչ խօսէր։

34 Եւ իբրեւ զայս ասաց, եկն ամպ եւ հովանի եղեւ ՚ի վերայ նոցա. եւ երկեան ՚ի մտանելն նոցա ընդ ամպովն։

35 Ձայն եղեւ յամպոյն եւ ասէ. Դա է Որդի իմ ընտրեալ, դմա լուարուք։

36 Եւ ընդ լինել բարբառոյն՝ գտաւ Յիսուս միայն. եւ նոքա լռեցին, եւ ոչ ումեք պատմեցին յաւուրսն յայնոսիկ եւ ոչ ինչ՝ յորոց տեսինն։

37 Եւ եղեւ ՚ի վաղիւն մինչ իջանէին նոքա ՚ի լեռնէ անտի, ընդ առաջ եղեւ նմա ժողովուրդ բազում։

38 Եւ ահա այր մի ՚ի ժողովրդենէ անտի աղաղակեաց եւ ասէ. Վարդապետ՝ աղաչեմ զքեզ, հայեաց յորդի իմ, զի միամօր է ինձ։

39 Եւ ահա այս հարկանէ ՚ի նմա, եւ յանկարծ գոչէ եւ զարկուցանէ զնա եւ թաւալեցուցանէ եւ փրփրեցուցանէ, եւ հազիւ մեկնի ՚ի նմանէ խորտակեալ զնա։

40 Եւ աղաչեցի զաշակերտան քո, զի հանցեն զնա, եւ ոչ կարացին։

31 Փառքով երեւցած՝ եւ նորա վախճանին համար խօսումէին՝ որ Երուսաղէմումը պէտք էր կատարէ։

32 Բայց Պետրոս եւ նորանք՝ որ նորա հետ էին՝ որ քնով ծանրացած էին, զարթնացան՝ տեսին նորա փառքը, եւ այն երկու մարդին՝ որ նորա մօտ կանգնած էին։

33 Եւ էլաւ երբոր նորանք հեռանումէին նորանից, Պետրոս ասաց Յիսուսին. Վարդապետ՝ լաւ է, որ մենք այս տեղ կենանք, եւ երեք տաղաւար շինենք, մէնը քեզ համար. եւ մէնը Մօւսէսին եւ մէնը Եղիային. եւ չէր գիտում՝ թէ ինչ էր խօսում։

34 Եւ երբոր աս ասաց, մէն ամպ եկաւ եւ նորանց վերայ չուք արաւ, եւ վախեցան. երբոր այն ամպին մէջ մտան,

35 Ձայն էլաւ ամպիցն ու ասաց. Դա է իմ ընտրած – Որդին, դորան ականջ դրէք։

36 Եւ այն ձայնը որ էլաւ՝ Յիսուս մենակ գտաւ, եւ նորանք լուռ կացան եւ այն օրերումը ընաւ մինի մարդայ չէ պատմեցին այն բաներիցն՝ որ տեսածին։

37 Եւ էլաւ վաղուան օրումին՝ երբոր այն սարիցը վէր էին գալիս՝ շատ ժողովուրդ նորան առաջն էկաւ։

38 Եւ ահա այն ժողովրդիցը մէն մարդ աղաղակեց եւ ասաց. Վարդապետ՝ աղաչումեմ քեզ, մտիկ արա իմ որդոյս. ինչու որ՝ միածնունդ է ինձ։

39 Եւ ահա դեւ բռնումէ նորան, եւ յանկարծ գոռգոռումէ՝ եւ նորան գետնովէ տալիս, եւ թաւալցնումէ նորան եւ փրփրացնում, եւ դժուար թէ նորան կոտրատելուցն ետեւ հեռանումէ նորանից։

40 Եւ քո աշակերտներից աղաչեցի, որ հանեն նորան, եւ չկարացին։

բ Պետ. Ա. 18։ Ժ. 9։ | ≈ Մատթ. Գ. 17։ ւ Գործ. Գ. 22։ | դ Մատթ. ԺԷ. 9։ ջ Մատթ. ԺԷ. 14։ | Մարկ. Թ. 14. 17։

41 Պատասխանի ետ Յիսուս եւ
ասէ. Ո՞վ ազգ անհաւատ եւ թիւր,
մինչեւ յե՞րբ եղէց ընդ ձեզ՝ եւ ան-
սայցեմ ձեզ. մատո այսր զորդին
քո։
42 Եւ մինչդեռ մատչէր, զար-
կոյց զնա դեւն՝ եւ չարչարեաց։
43 Սաստեաց Յիսուս այսոյն պղ-
ծոյ, եւ բժշկեաց զմանուկն. եւ ետ
զնա ցհայր իւր։
44 Եւ զարմանային ամենեքեան
՚ի վերայ մեծամեծացն Աստուծոյ.
եւ ՚ի զարմանալն ամենեցուն ՚ի վե-
րայ ամենայնի՝ զոր առնէր, ասէ
ցաշակերտսն իւր. Դիք դուք ՚ի
լսելիս ձեր զբանս զայսոսիկ. զի
Որդի մարդոյ մատնելոց է ՚ի ձեռս
մարդկան։
45 Եւ նոքա ոչ գիտէին զբանն,
եւ էր ծածկեալ ՚ի նոցանէ՝ զի մի
գիտասցեն՝ եւ երկնչէին հարցանել
ցնա վասն բանին այնորիկ։
46 Եմուտ խորհուրդ ՚ի նոսա՝ թէ
ո՞ արդեօք մեծ իցէ ՚ի նոցանէ։
47 Յիսուս իբրեւ ծանեաւ զխոր-
հուրդս սրտից նոցա, առ մանուկ մի՝
կացոյց ՚ի մէջ նոցա առ իւր,
48 Եւ ասէ ցնոսա. Որ ոք ըն-
կալցի զմանուկս զայս յանուն իմ՝
զիս ընդունի, եւ որ զիս ընդու-
նիցի՝ ընդունի զառաքիչն իմ. զի
որ փոքրիկն է յամենեսին ՚ի ձեզ՝
նա եղիցի մեծ։
49 Պատասխանի ետ Յովհաննէս
եւ ասէ. Վարդապետ՝ տեսաք զոմն
որ յանուն քո դեւս հանէր՝ եւ ար-
գելաք զնա, զի ոչ շրջի ընդ մեզ։
50 Ասէ ցնոսա Յիսուս. Մի ար-

41 Յիսուս պատասխան տուաւ ե-
ւասաց. Ո՛վ անհաւատ եւ ծուռ
ազգ, մինչեւ երբ ձեզ հետ պիտի
լինիմ եւ համբերեմ ձեզ. քո որ-
դին այստեղ բեր։
42 Եւ դեռ որ մօտ էր գալիս,
դեւը գետնովլ զարկեց ՚նորան՝ եւ
շատ սաստիկ չարչեց։
43 Յիսուս սաստեց պիղծ դեւին,
եւ տղային բժշկեց. եւ ՚նորան տը-
ւաւ իրեն հօրը։
44 Եւ ամէնքը զարմանումէին Աս-
տուծոյ մեծամեծ գործքերին վե-
րայ. եւ դեռ որ ամէնքը զարմա-
նումէին այն ամէն բաներին վերայ՝
որ անումէր, իրեն աշակերտներին
ասաց. Այս բաները դրէք դուք
ձեր — ականջները. որ Որդին մար-
դոյ մարդկանց ձեռքը պիտի մատ-
նուի։
45 Եւ ՚նորանք չէին գիտում այն
բանը եւ ծածկված էր ՚նորանցից՝
որ — չիմանան. եւ վախումէին
հարցնել ՚նորան այն բանին համար։
46 Մին խորհուրդ մտաւ ՚նորանց
մէջ՝ թէ ՚նորանցից ով լինի Հ մեծը։
47 Յիսուս երբոր ՚նորանց սրտերի
մտածմունքները իմացաւ՝ մին ե-
րախայ առաւ՝ եւ ՚նորանց միջումը
կանգնացրուց իրեն մօտ,
48 Եւ ՚նորանց ասաց. Ով որ այս
երախայիս կ'ընդունի իմ անունովս՝
ինձ ∓ կ'ընդունի. եւ ով որ ինձ կ'ըն-
դունի՝ իմ ուղարկողին կ'ընդունի.
պատճառն որ՝ ով որ ձեր ամէնից
մէջ շատ փոքրն է՝ նա մեծ ₔ կը
լինի։
49 Յօհաննէս պատասխան տուաւ
եւ ₔ ասաց. Վարդապետ մինը տե-
սինք՝ որ քո անունովդ դեւեր էր
հանում՝ եւ արգելեցինք ՚նորան,
ինչու որ՝ մեզ հետ ման չէր գալիս։
50 Յիսուս ՚նորանց ասաց. Մի

— Մատթ. ԺԷ. 22: — Մարկ. Թ. 32: Ղկ. Բ. 50: ԺԸ. 34:
Հ Մատթ. ԺԸ. 1: Մարկ. Թ. 34: ∓ Մատթ. Ժ. 40: ԺԸ. 5: Մարկ. Թ. 37: Յովհ. ԺԲ. 44: ԺԳ. 20: ₔ Մատթ. ԻԳ. 11, 12:
ₔ Թու. ԺԱ. 28: Մարկ. Թ. 38:

զերուք, զի որ ոչն է ձեր թշնամի՝ ՚ի ձեր կողմն է։

51 Եւ եղեւ ՚ի կատարել աւուրց վերանալոյ նորա՝ եւ ինքն զերեսս հաստատեաց երթալ յԵրուսաղէմ։

52 Եւ առաքեաց հրեշտակս առաջի երեսաց իւրոց․ եւ իբրեւ չոգան՝ մտին ՚ի գիւղ մի Սամարացւոց պատրաստել ինչ նմա։

53 Եւ ոչ ընկալան զնա, զի դէմ եդեալ էր նորա երթալ յԵրուսաղէմ։

54 Իբրեւ տեսին աշակերտքն Յակովբոս եւ Յովհաննէս, ասեն․ Տէ՛ր կամիս, զի ասասցուք, եւ իջցէ հուր յերկնից՝ եւ սատակեսցէ զնոսա։

55 Դարձաւ սաստեաց ՚ի նոսա՝ եւ ասէ․ Ո՛չ գիտէք՝ որոյ հոգւոյ էք դուք։

56 Զի Որդի մարդոյ ոչ եկն զոգիս մարդկան կորուսանել՝ այլ կեցուցանել․ եւ գնացին յայլ գեօղ։

57 Եւ մինչդեռ երթային նոքա ՚ի ճանապարհի, ասէ ոմն ցնա․ Եկից զկնի քո՝ յոր վայր եւ երթիցես։

58 Ասէ ցնա Յիսուս, Աղուեսուց որջք գոն, եւ թռչնոց երկնից զագարք․ եւ Որդւոյ մարդոյ ոչ գոյ՝ ուր դիցէ զգլուխ։

59 Ասէ ցմիւս եւս․ Ե՛կ զկնի իմ․ եւ նա ասէ․ Տէր հրաման տուր ինձ երթալ նախ թաղել զհայր իմ։

60 Ասէ ցնա Յիսուս․ Թող զմեռեալս թաղել զմեռեալս իւրեանց, եւ դու երթ պատմեա զարքայութիւն Աստուծոյ։

61 Ասէ եւ այլ ոմն․ Եկից զկնի

արգելէք նորան․ պատճառն որ՝ ով որ ձեր թշնամի չէ՝ ձեր կողմն — է։

51 Եւ եղաւ՝ երբոր նորա վերանալոյ օրերը ÷ կատարվումէին, եւ ինքն երեսը հաստատեց՝ որ գնայ Երուսաղէմ։

52 Եւ իրեն երեսի առաջին պատգամաւորներ ուղարկեց՝ եւ երբոր գնացին Սամարացոց մին գիւղ մըտին որ նորա համար բան պատրաստեն․

53 Եւ չընդունեցին նորան․ ինչու որ՝ իրեն երեսը դրած էր՝ որ Երուսաղէմ + գնայ։

54 Երբոր Յակոբոս եւ Յօհաննէս աշակերտները տեսին՝ ասացին․ Տէր՝ կըկամենաս՝ որ ասենք, եւ կրակ վէր գայ երկնքիցն՝ ու նորանց • սատակացնէ։

55 Դարձաւ՝ սաստեց նորանց եւ ասաց․ Չէք գիտում՝ թէ որ հոգոյ էք դուք․

56 Պատճառն որ՝ Որդին մարդոյ չեկաւ՝ որ մարդկանց հոգիները կորցնէ, այլ որ ‡ ազատեցնէ․ եւ գընացին ուրիշ գիւղ։

57 Եւ դեռ որ ճանապարհումը գնումէին՝ մին մարդ նորան ասաց․ Ես էլ քո ետեւէդ կըգամ՝ որ տեղ որ — գնաս։

58 Յիսուս նորան ասաց․ Աղուէսները բոյն ունին, եւ երկնքի թռչունները գագարելոյ տեղ՝ եւ Որդին մարդոյ տեղ չունի՝ որ իրեն գլուխը դնէ։

59 Մին ուրիշին ասաց՝ Իմ ետեւէս եկ․ եւ նա ասաց․ Տէր հրամանն տուր՝ որ գնամ առաջ իմ հայրս ‡ թաղեմ։

60 Յիսուս նորան ասաց․ Թող մեռելներին՝ որ իրենց մեռելները թաղեն․ եւ դու գնա Աստուծոյ արքայութիւնը պատմէ։

61 Մին ուրիշն էլ ասաց․ Տէր՝

— Մատթ. ԺԲ. 30։
Ղկ. ԺԱ. 23։
÷ Մարկ. ԺԶ. 19։
Գործ. Ա. 2։
+ Յովհ. Դ. 4. 9։
• Դ Թագ. Ա. 10։
12։
‡ Յովհ. Գ. 17։
ԺԲ. 47։
— Մատթ. Ը. 19
‡ Մատթ. Ը. 21։

քո Տէր, բայց նախ հրաման տուր ինձ հրաժարել 'ի տանէ իմմէ։

62 Ասէ ցնա Յիսուս. Ո՛չ ոք արկանէ զձեռն զմաճով եւ հայիցի յետս, եթէ յաջողեալ իցէ արքայութեան Աստուծոյ։

քո ետեւէդ կուգամ. միայն թէ առաջ հրաման տուր ինձ, որ իմ տանս բարեւ մնաս է անեմ։

62 Յիսուս նորան ասաց. Ո՛չ ով՝ որ ձեռքը մաճի վերայ դնէ՝ եւ յետ նայի՝ Աստուծոյ արքայութեան համար յաջողված չէ։

## ԳԼ. Ժ

1 Յետ այսորիկ երեւեցոյց Տէր եւ այլ եւս եօթանասուն եւ երկուս. եւ առաքեաց զնոսա երկուս երկուս առաջի իւր յամենայն քաղաքս եւ 'ի տեղիս, ուր ինքն երթալոց էր։

2 Եւ ասէ ցնոսա. Հունձք բազում են, եւ մշակք սակաւ. արդ՝ աղաչեցէք զՏէր հնձոց, զի հանցէ մշակս 'ի հունձս իւր։

3 Երթայք, ահա առաքեմ զձեզ իբրեւ զգառինս 'ի մէջ գայլոց։

4 Մի բառնայք քսակ, մի մախաղ, մի կօշիկս, եւ 'ի ճանապարհի ումեք ողջոյն մի տայցէք։

5 Յոր տուն մտանիցէք՝ նախ ասասջիք՝ թէ Ողջոյն տանս այսմիկ։

6 Եւ եթէ իցէ անդ որդի ողջունի, հանգիցէ 'ի վերայ նորա ողջոյնն ձեր. ապա թէ ոչ՝ 'ի ձեզ դարձցի։

7 Եւ 'ի նմին տան ագանիջիք, ուտիջիք եւ ըմպիջիք 'ի նոցանէ. զի արժանի է մշակն վարձու իւրոյ. մի փոխիցիք տանէ 'ի տուն։

8 Յոր քաղաք մտանիցէք՝ եւ ընդունիցին զձեզ, ուտիջիք զինչ առաջի դնիցեն ձեր։

9 Եւ բժշկեսջիք՝ որ 'ի նմա հիւանդք իցեն. եւ ասասջիք նոցա,

1 Սրանից ետեւ Տէրն ուրիշ եօթանասուն եւ երկու հոգի էլ կարգեց. եւ նորանց երկու երկու իրեն առաջին ուղարկեց այն ամէն քաղաքներին ու տեղերին՝ որ ուր որ ինքը պէտք էր ա գնալ։

2 Եւ նորանց ասաց. Հունձքը շատ է, եւ մշակները բ քիչ. ուրեմն աղաչեցէք հնձի Տիրոջն՝ որ մշակներ ուղարկէ իրեն գ հունձքը։

3 Գնացէք. ահա ուղարկում եմ ձեզ ինչպէս գառներ գայլերի դ մէջ։

4 Վեր մի առնէք ոչ քսակ, ոչ պարկ, ոչ ե կօշիկներ. եւ ճանապարհումը բնաւ մէկին բարեւ զ չտաք։

5 Որ տուն որ մտնէք՝ առաջ ասացէք՝ թէ Ողջոյն այս է տանս։

6 Թէ որ այնտեղ ողջունի որդի լինի, ձեր ողջոյնը նորա վերայ կը մնայ. ապա թէ չէ՝ յետ կը դառնայ դէպի ձեզ։

7 Եւ այն տանը ը մնացէք, նորանցից կերէք եւ թ խմեցէք. ինչու որ՝ մշակն իրեն վարձքին արժանի ժ է. տանից տուն մի փոխվէք։

8 Որ քաղաք որ մտնէք՝ եւ ձեզ ընդունեն, կերէք՝ ինչ որ կդնեն ձեր առաջին։

9 Եւ հիւանդներին՝ որ այնտեղ լինին՝ ի բժշկեցէք. եւ նորանց ա-

է Գ Թագ. ԺԹ. 20.

—

ա Մատթ. Ժ. 1. Մարկ. Զ. 7.
բ Մատթ. Թ. 37, 38. Յովհ. Դ. 35.
գ Բ Թես. Գ. 1.
դ Մատթ. Ժ. 16.
ե Մատթ. Ժ. 9, 10. Մարկ. Զ. 8. Ղկ. Թ. 3.
զ Դ Թագ. Դ. 29.
է Մատթ. Ժ. 12.
ը Մատթ. Ժ. 11.
թ Ա Կորնթ. Ժ. 27.
ժ Մատթ. Ժ. 10. Ա Կորնթ. Թ. 4, 14. Ա Տիմ. Ե. 18.
ի Ղկ. Թ. 2.

Մերձեալ է ՚ի վերայ ձեր արքայութիւնն Աստուծոյ։

10 Իսկ յոր քաղաք մտանիցէք՝ եւ ոչ ընդունիցին զձեզ, իբրեւ ելանիցէք ՚ի հրապարակս նորա, ասասջիք.

11 Եւ փոշին որ կառեալ է ՚ի քաղաքէ ձերմէ յոտս մեր՝ թօթափեսցուք ՚ի ձեզ. բայց զայս գիտասջիք՝ զի մերձեալ է արքայութիւն Աստուծոյ։

12 Ասեմ ձեզ, զի Սոդոմացւոց ընդարձակագոյն լիցի յաւուրն յայնմիկ՝ քան քաղաքին այնմիկ։

13 Վայ քեզ Քորազին. վայ քեզ Բեթսայիդա. զի եթէ ՚ի Տիւրոս եւ ՚ի Սիդովն եղեալ էին զօրութիւնքն՝ որ եղեն ՚ի ձեզ, վաղուց եւս արդեօք ՚ի խորգ եւ ՚ի մոխիր նստեալ ապաշխարեալ էր։

14 Բայց Տիւրոսի եւ Սիդովնի ընդարձակագոյն լիցի ՚ի դատաստանի՝ քան ձեզ։

15 Եւ դու Կափառնաում, որ մինչեւ յերկինս բարձրացեալ ես, մինչեւ ՚ի դժոխս իջցես։

16 Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ, եւ որ զձեզ անարգէ՝ զիս անարգէ. եւ որ զիս անարգէ՝ զառաքիչն իմ անարգէ. եւ որ ինձ լսէ՝ լսէ այնմիկ, որ զիս առաքեաց։

17 Դարձան եօթանասունն եւ երկուքն խնդութեամբ եւ ասեն. Տէր՝ եւ դեւք հնազանդին մեզ յանուն քո։

18 Եւ ասէ ցնոսա. Տեսանէի զՍատանայ անկեալ յերկնից իբրեւ զփայլակն։

ասցէք՝ թէ Աստուծոյ արքայութիւնը մօտեցել է ձեզ [լ] վերայ։

10 Բայց որ քաղաք որ մտնէք, եւ ձեզ չընդունին՝ երբոր դուրս գաք նորա բաց փողոցներն՝ ասացէք.

11 Այս փոշին էլ՝ որ ձեր քաղաքիցը մեր ոտներիս է կպել՝ թափ ենք տալիս ձեզ [խ] վերայ. միայն թէ սա գիտացէք, որ Աստուծոյ արքայութիւնը մօտեցել է։

12 Ասումեմ ձեզ՝ որ Սոդոմացոց համար աւելի հեշտ կըլինի այն օրումը քանթէ այն քաղաքին [ծ] համար։

13 Վայ քեզ Քորազին. վայ քեզ [կ] Բեթսայիդա. պատճառն որ՝ եթէ Տիւրոսին ու Սիդոնին մէջ էլած էին այն զօրութիւնները՝ որ ձեր մէջն էլան՝ շատ առաջուց քուրձի ու մոխրի մէջ նստած ապաշխարել [հ] էին.

14 Բայց Տիւրոսի եւ Սիդոնի համար աւելի հեշտ կըլինի դատաստանին օրումը քանթէ ձեզ համար։

15 Եւ դու [ձ] Կափառնայում՝ որ մինչեւ երկինքը բարձրացած [ղ] ես՝ մինչեւ դժոխքը պիտի վէր [մ] իջաս։

16 Ով որ ձեզ կըլսէ՝ ինձ [յ] կըլսէ. եւ ով որ ձեզ կանարգէ՝ ինձ [ն] կանարգէ. եւ ով որ ինձ կանարգէ, ինձ ուղարկողին [շ] կանարգէ. եւ ով որ ինձ կըլսէ՝ նորան կըլսէ, որ ինձ ուղարկեց։

17 Այն եօթանասունն եւ երկուքն ուրախութենով յետ դարձան եւ [ո] ասացին. Տէր՝ դեւերն էլ հնազանդվումեն մեզ քո անունով։

18 Եւ նորանց ասաց. Տեսնումէի Սատանային, որ կայծակի պէս երկնքից վէր էր [չ] ընկնում։

լ Մատթ. Գ. 2։ Գ. 17։ Ժ. 7։ Համար. 11։
խ Մատթ. Ժ. 14։ Ղկ. Թ. 5։ Գործ. ԺԳ. 51։ ԺԸ. 6։
ծ Մատթ. Ժ. 15 Մարկ. Զ. 11։
կ Մատթ. ԺԱ. 21։
հ Եզեկ. Գ. 6։
ձ Մատթ. ԺԱ. 23։
ղ Ծննդ. ԺԱ. 4։
ճ Օրին. Ա. 28։ Եսայ. ԺԴ. 13։ Երեմ. ԾԱ. 53։
մ Եզեկ. ԻԶ. 20։ ԼԲ. 18։
յ Մատթ. Ժ. 40։ Մարկ. Թ. 37։ Յովհ. ԺԳ. 20։
ն Ա Թես. Դ. 8։
շ Յովհ. Ե. 23։
ո Համար. 1։
չ Յովհ. ԺԲ. 31։ ԺԶ. 11։ Յայտ. Թ. 1։ ԺԲ. 8, 9։

19 Ահա ետու ձեզ իշխանութիւն կոխել զօձս եւ զկարիճս եւ զամենայն զօրութիւն թշնամւոյն, եւ ձեզ ոչ ինչ մեղանչեսցեն։

20 Բայց ընդ այն մի՛ խնդայք՝ եթէ այսք հնազանդին ձեզ, այլ խնդացէ՛ք՝ զի անուանք ձեր գրեալ են յերկինս։

21 Ի նմին ժամու ցնծացաւ Յիսուս Հոգւովն Սրբով եւ ասէ. Գոհանամ զքէն Հայր՝ Տէր երկնից եւ երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ 'ի գիտնոց՝ եւ յայտնեցեր զայս տղայոց. այո՛ Հայր, զի այսպէս հաճոյ եղեւ առաջի քո։

22 Ամենայն ինչ տուաւ ինձ 'ի Հօրէ իմմէ. եւ ոչ ոք գիտէ՝ թէ ո՛վ է Որդի, եթէ ոչ՝ Հայր, եւ ո՛ է Հայր՝ եթէ ոչ Որդի, եւ ում կամիցի Որդին յայտնել։

23 Եւ դարձեալ առանձինն առ աշակերտսն ասէ. Երանի աչացն՝ որ տեսանիցեն՝ զոր տեսանէքդ։

24 Ասեմ ձեզ. Զի բազում մարգարէք եւ թագաւորք կամեցան տեսանել՝ զոր դուքդ տեսանէք, եւ ոչ տեսին. եւ լսել՝ զոր լսէքդ, եւ ոչ լուան։

25 Եւ ահա յարեաւ ոմն օրինական՝ փորձէր զնա եւ ասէր. Վարդապետ՝ զի՞նչ գործեցից՝ զի զկեանսն յաւիտենականս ժառանգեցից։

26 Եւ նա ասէ ցնա. Յօրէնսն զի՞նչ գրեալ է, որպէս ընթեռնուս։

27 Նա պատասխանի ետ եւ ասէ. Սիրեսցես զՏէր Աստուած քո յա-

19 Ահա իշխանութիւն տուի ձեզ՝ որ օձերը եւ կարիճները եւ թշնամոյ ամէն զօրութիւնը կոխէք, եւ ձեզ բնաւ վնաս չ'ընեն։

20 Միայն թէ՝ նորա համար մի՛ ուրախանաք՝ որ դեւերը հնազանդվումեն ձեզ՝ բայց ուրախացէ՛ք՝ որ ձեր անուններն երկինքումը գըրված են։

21 Նոյն այն ժամումը Յիսուս Սուրբ Հոգովը ցնծացաւ եւ ասաց. Գոհանումեմ քեզանից ով Հայր՝ երկնքի եւ երկրի Տէր, որ իմաստուններիցն ու գիտուններիցն այս բաները ծածկեցիր եւ տղայոցը յայտնեցիր սրան. իրաւի ով Հայր. ինչու որ՝ այսպէս հաճոյ էլաւ քո առաջից։

22 Ամէն բան տրվաւ ինձ իմ Հօրիցս. եւ ոչ ով չի գիտում՝ թէ ով է Որդին՝ բայց միայն Հայրը. եւ թէ ով է Հայրը բայց միայն Որդին, եւ ում որ Որդին կամենայ յայտնել։

23 Եւ դարձաւ դէպի աշակերտներին առանձին՝ եւ ասաց. Երանի է այն աչքերին՝ որ տեսնումեն նա՝ որ դուք տեսնումէք։

24 Ասումեմ ձեզ՝ թէ շատ մարգարէներ եւ թագաւորներ կամեցան տեսնել նա՝ որ դուք էք տեսնում, եւ չտեսան. եւ լսել նա՝ որ դուք էք լսում, եւ չլսեցին։

25 Եւ ահա մին օրէնք գիտող վերկացաւ՝ նորան փորձումէր եւ ասում. Վարդապետ՝ ինչ պիտի անեմ՝ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ։

26 Եւ նա ասաց նորան. Օրէնքումն ինչ է գրված, ինչպէս ես կարդում։

27 Նա պատասխան տուաւ եւ ասաց. Սիրէ՛ քո Տէր Աստուածըդ

ւ Մարկ. ԺԶ. 18։ Գործ. ԻԸ. 5։
ղ Ելից. ԼԲ. 32։ Սաղ. ԿԹ. 28։ Եսայ. Դ. 3։
Դան. ԺԲ. 1։ Փիլիպ. Դ. 3։ Եբր. ԺԲ. 23։ Յայտ. ԺԳ. 8։ Ի. 12։ ԻԱ. 27։
ճ Մատթ. ԺԱ. 25։
ռ Մատթ. ԻԸ. 18։ Յովհ. Գ. 35։ Ե. 27։ ԺԷ. 2։
ս Յովհ. Ա. 18։ Զ. 44. 46։
չ Մատթ. ԺԳ. 16։
պ Ա Պետ. Ա. 10։
ջ Մատթ. ԺԹ. 16։ ԻԲ. 35։

մենայն սրտէ քումմէ , եւ յամե-
նայն անձնէ քումմէ , եւ յամենայն
զօրութենէ քումմէ , եւ յամենայն
մտաց քոց ․ եւ զընկեր քո իբրեւ
զանձն քո ։
28 Եւ ասէ ցնա ․ Ուղիղ տուր
պատասխանի , զայդ արա՛ եւ
կեցցես ։
29 Նա իբրեւ կամեցաւ զանձն
արդարացուցանել՝ ասէ ցՅիսուս ․
Եւ ո՛վ է իմ ընկեր ։
30 Պատասխանի ետ Յիսուս եւ ա-
սէ ․ Այր մի իջանէր յԵրուսաղէմէ
յԵրիքով , եւ անկաւ ՚ի ձեռս ա-
ւազակաց , որք մերկացուցին զնա՛
եւ վէրս ՚ի վերայ եդին , թողին
կիսամահ եւ գնացին ։

31 Դէպ եղեւ քահանայի միոջ ի-
ջանել ընդ նոյն ճանապարհ , եւ
տեսեալ զնա՝ զանց արար ։
32 Նոյնպէս եւ Ղեւտացի մի ե-
կեալ ընդ նոյն տեղի՝ տեսեալ եւ
զանց արար ։
33 Սամարացի ոմն ճանապարհոր-
դեալ եկն ընդ նոյն առ նովաւ , եւ
տեսեալ զնա՝ գթացաւ ։

34 Եւ մատուցեալ պատեաց զվէրս
նորա , արկեալ ՚ի վերայ ձէթ եւ
գինի ․ եւ եդեալ ՚ի վերայ գրաս-
տու իւրոյ՝ ած զնա ՚ի պանդոկի մի ,
եւ դարմանեաց զնա ։
35 Եւ ՚ի վաղիւ անդր իբրեւ ե-
լանէր անտի , հանեալ ետ ցպան-
դոկապետն երկուս դահեկանս՝ եւ
ասէ ․ Դարմանս տար դմա , եւ զոր
ինչ ծախեսցես ՚ի դա՛ ՚ի միւսան-
գամ դարձեալ իմում հատուցից
քեզ ։
36 Արդ՝ ո՛ յերիցունց ՚ի նոցանէ
թուի քեզ մերձաւոր լեալ անկե-
լոյն ՚ի ձեռս աւազակաց ։
37 Եւ նա ասէ ․ Որ արար զո-

քո ամէն սրտովդ , քո ամէն անձ-
նովդ , քո ամէն զօրութենովդ ,
եւ քո ամէն ɜ մտքովդ ․ եւ քո ըն-
կերդ քո անձիդ – պէս ։

28 Եւ նորան ասաց ․ Շիտակ պա-
տասխան տուիր՝ դա արա՝ եւ
‡ կապրիս ։
29 Նա՝ որովհետեւ կամեցաւ ի-
րեն անձին արդարացնել՝ Յիսուսին
ասաց ․ Եւ իմ ընկերս ո՛վ + է ։
30 Յիսուս պատասխան տուաւ եւ
ասաց ․ Մին մարդ Երուսաղէմիցը
վեր էր գալիս Երիքով ․ եւ աւա-
զակներին ձեռքն ընկաւ՝ որ մերկա-
ցրին նորան՝ եւ խոցեր զրին նորա
վերայ , կիսամահ թողին եւ գնա-
ցին ։
31 Պատահեց՝ որ մին քահանայ
իսկ այն ճանապարհովը գնումէր՝
եւ նորան տեսաւ՝ * անցաւ ։
32 Այնպէս էլ մին Ղեւտացի իսկ
այն տեղն եկաւ , տեսաւ եւ ան-
ցաւ ։
33 Մին Սամարացի՝ որ ճանա-
պարհ էր գնում՝ եկաւ իսկ նորա
§ մօտ ․ եւ նորան որ տեսաւ՝ խեղճն
եկաւ ․
34 Եւ մօտ եկաւ՝ նորա խոցերին
վերայ ձէթ եւ գինի ածեց եւ պա-
տեց ․ եւ իրեն անասունին վերայ
դրաւ՝ մին իջեւանի տարաւ նորան ,
եւ նորա համար հոգս արաւ ։
35 Եւ հետեւի օրուանը՝ երբոր այն
տեղիցը դուրս էր գնում՝ երկու
դահեկան հանեց եւ իջեւանի տի-
րոջը տուաւ եւ ասաց ․ Դորա հա-
մար հոգս արա , եւ ինչ որ դորա
համար կը ծախսես՝ իմ միւսանգամ
դարձիս ժամանակը կը վճարեմ քեզ ։
36 Հիմիկ այն երեքիցն մին է ե-
րեւում քեզ՝ թէ մօտաւոր է աւա-
զակներին ձեռքն ընկած մարդոյն ։
37 Եւ նա ասաց ․ Նա՝ որ ողոր-

ɜ Բ Օրին․ Զ․ 5 ։
– Ղև․ ԺԹ․ 18․
‡ Ղև․ ԺԸ․ 5 ։
Նեեմ․ Թ․ 29 ։
Եզեկ․ Ի․ 11
13․ 21 ։ Հռովմ․
Ժ․ 5 ։
+ Գղ․ ԺԶ․ 15 ։
o Սաղ․ ԼԸ․ 11 ։
§ Յովհ․ Դ․ 9 ։

ողորմութիւնն 'ի վերայ նորա։ Ասէ ցնա Յիսուս. Ե՛րթ եւ դու արա նոյնպէս։

38 Եւ եղեւ 'ի գնալն նոցա, եւ ինքն եմուտ 'ի գեօղ մի, եւ կին մի անուն Մարթա ընկալաւ զնա 'ի տան իւրում։

39 Եւ նորա էր քոյր մի, որում անուն էր Մարիամ. որ եւ եկն նստաւ առ ոտս Տեառն, եւ լսէր զբանս նորա։

40 Եւ Մարթա զբաղեալ էր 'ի բազում սպասու. եկն եկաց առ նմա եւ ասէ. Տէ՛ր ոչինչ է փոյթ քեզ, զի քոյրդ իմ միայն եթող զիս 'ի սպասու. արդ՝ ասա դմա, զի օգնեսցէ ինձ։

41 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. Մա՛րթա Մարթա՛ դու հոգաս եւ զբաղում իւիք զբաղեալ ես.

42 Բայց առն սակաւ ինչ պիտոյ է. Մարիամ մասն բարի ընտրեաց, որ ոչ բարձցի 'ի նմանէ։

մութիւն արաւ նորա վերայ։ Յիսուս նորան ասաց. Գնա դու էլ ճիշդ այնպէս արա։

38 Եւ էլաւ որ նորանց գնալու ժամանակին ինքն էլ մին գիւղ մըտաւ. եւ մին կին Մարթա անուն նորան ընդունեց իրեն = տունը։

39 Եւ նա մին քոյր ունէր՝ որ նորան անունը Մարիամ էր. որ էլ ‡ եկաւ Տէրին ոտներին մօտ նստեց, եւ նորա խօսքերը † լսում էր։

40 Մարթան ծառայութեան համար շատ զբաղմունքի մէջ էր. եկաւ նորան մօտ կանգնեց եւ ասաց. Տէ՛ր դու բնաւ հոգս չունե՞ս՝ որ իմ քոյրս ինձ մենակ թողեց ծառայութեան մէջ. ասա սորան՝ որ օգնէ ինձ։

41 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց. Մա՛րթա Մարթա՛ դու հոգս ես քաշում եւ շատ բաներով զբաղված ես.

42 * Բայց այստեղ քիչ բան պէտք է. Մարիամը բարի բաժինն ընտրեց՝ որ մէր չառնվիլ նորանից։

## ԳԼ. ԺԱ.

1 Եւ եղեւ 'ի տեղւոջ ուրեք կալ յաղօթս. եւ իբրեւ դադարեաց՝ ասէ ցնա ոմն յաշակերտացն իւրոց. Տէ՛ր ուսո մեզ յաղօթս կալ, որպէս եւ Յովհաննէս ուսոյց աշակերտաց իւրոց։

2 Ասէ ցնոսա, Յորժամ կայցէք յաղօթս, ասասջի՛ք. Հա՛յր մեր՝ սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո։

3 Զհաց մեր հանապազորդ տուր մեզ զօրըստօրէն։

4 Եւ թող մեզ զմեղս մեր, զի եւ մեք թողումք ամենայնի որ պարտիցի մեզ. եւ մի տանիր զմեզ 'ի փորձութիւն։

5 Եւ ասէ ցնոսա. Ո՞վ է 'ի ձէնջ

1 Եւ էլաւ որ մին տեղ աղօթք էր անում. եւ երբոր դադարեց, իրեն աշակերտներիցը մինն ասաց նորան. Տէ՛ր՝ սովորցրու մեզ աղօթք անել, ինչպէս որ Յոհաննէսն իրեն աշակերտներին սովորցրուց։

2 Ասաց նորանց. Երբոր աղօթք անէք, ասացէք. Մեր Հա՛յր, քո անունդ սուրբ լինի. քո արքայութիւնդ = գայ։

3 Մեր ամէն օրվան հացըն օրէց օր տուր մեզ։

4 Եւ մեր մեղքերը թո՛ղ մեզ. որ մենք էլ թողումենք այն ամէնին՝ որ պարտական են մեզ. եւ մեզ փորձանքի մէջ մի՛ ձգեր։

5 Եւ նորանց ասաց. Ձեզանից

= Յովհ. ԺԱ. 1. ԺԲ. 2, 3։
‡ Ա Կորնթ. Է. 32, 35։
† Գլ. Ը. 35. Գործ. ԻԲ. 3։
* Յոհ. Բայց մին բան պէտք է։
= Մատթ. Զ. 9։

որոյ իցէ բարեկամ , եւ երթիցէ
առ նա 'ի մէջ գիշերի , եւ ասիցէ
ցնա . Բարեկամ՝ տուր ինձ փոխ
երիս նկանակս .
6 Զի բարեկամ իմ եկն առ իս
յուղւոյ , եւ ոչինչ ունիմ դնել
առաջի նորա :
7 Եւ նա 'ի ներքուստ տացէ
պատասխանի եւ ասիցէ . Մի աշ-
խատ առներ զիս , զի դուրքդ փա-
կեալ են , եւ մանկունքս ընդ ինեւ
կան յանկողնի . ոչ կարեմ յառնել
եւ տալ քեզ :
8 Ասեմ ձեզ՝ եթէ ոչ յարուցեալ
տայցէ նմա վասն բարեկամու-
թեանն , սակայն վասն ժտութեանն
յարուցեալ տայցէ նմա՝ զինչ եւ
պիտոյ իցէ :
9 Եւ ես ասեմ ձեզ , Խնդրեցէք՝
եւ տացի ձեզ , հայցեցէք՝ եւ գտա-
ջիք . բախեցէք՝ եւ բացցի ձեզ :

10 Զի ամենայն որ խնդրէ՝ ա-
ռնու , եւ որ հայցէ՝ գտանէ , եւ որ
բախէ՝ բացցի նմա :

11 Յո՞ ոք 'ի ձէնջ հայր՝ խնդրիցէ
որդի իւր ձուկն , միթէ փոխանակ
ձկանն օձ տայցէ նմա :
12 Եւ կամ խնդրիցէ ձու , միթէ
կարիճ տայցէ նմա :
13 Իսկ եթէ դուք որ չարքդ էք՝
գիտէք պարգեւս բարիս տալ որդ-
ւոց ձերոց , որչափ եւս առաւել
Հայր ձեր յերկնից տացէ բարիս
այնոցիկ , որ խնդրեն 'ի նմանէ :

14 Եւ հանէր դեւ մի համր . եւ
եղեւ յելանել դիւին՝ խօսեցաւ
համրն , եւ զարմացան ամենայն
ժողովուրդքն :
15 Եւ ոմանք 'ի նոցանէ ասեն՝
Բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց
հանէ զա զդեւս :

ով է , որ բարեկամ ունենայ , եւ
կէս գիշերին նորա մօտ գնայ , եւ
նորան ասէ . Բարեկամ՝, ինձ երեք
հաց փոխ տուր .
6 Ինչու որ՝ իմ բարեկամս ինծի
մօտ եկաւ ճանապարհէն , եւ բան
չունիմ՝ որ նորան առաջին դնեմ :
7 Եւ նա՝ պատասխան տայ ներ-
սիցն եւ ասէ . Մի աշխատցըներ
ինծի . ինչու որ՝ դռները փակված են ,
եւ երախաներս ինծի հետ անկող-
նումն են . չեմ կարող վեր կենալ
եւ տալ քեզ :
8 Ասումեմ ձեզ՝ թէ որ բարեկա-
մութեան համար վեր չը կենայ եւ
տայ ե նորան , բայց նորա խխա ա-
ղաչանքին համար վեր կը կենայ եւ
կը տայ նորան՝ ինչ որ էլ պէտք լինի :
9 Եւ ես ասումեմ զ ձեզ , Խընդ-
րեցէք՝ եւ կը տրվիլի ձեզ , ման ե-
կէք՝ եւ կը գտնէք , դուռը թակե-
ցէք՝ եւ կը բացվիլի ձեզ :
10 Ինչու որ՝ ամէն ով որ կը խընդ-
րէ՝ կառնէ , եւ ով որ ման կը գայ՝
կը գտնէ , եւ ով որ կը թակէ՝ կը
բացվիլի նորան :
11 Ձեզանից ով է այն հայրն՝ որ
նորանից իրեն որդին ձուկն ուզէ ,
միթէ ձկան տեղ օձ կը տայ է նորան :
12 Եւ կամ ձու ուզէ , միթէ կա-
րիճ կը տայ նորան :
13 Ապա թէ որ դուք , որ չար էք՝
գիտումէք բարի պարգեւներ տալ
ձեր որդոցը , էլ որքան աւելի ձեր
Հայրն երկնքիցը բարի բաներ կը
տայ նորանց , որ ուզումեն նորա-
նից :
14 Եւ մին համր դեւ էր ը հանում ,
եւ էլաւ այն դեւի դուրս գալոյ
ժամանակին՝ որ համրը խօսեց , եւ
ամէն ժողովուրդները զարմացան :
15 Եւ նորանցից մին քանիսն ա-
սացին թէ՝ Դա դեւերին իշխան Բէ-
եղզեբուղովն է հանում թ դեւերը :

| | | | |
|---|---|---|---|
| ե Ղկ. ԺԸ. 1, ա. | ԺԱ. 24. Յովհ. | 22. | ԺԲ. 22. |
| զ Մատթ. Է. 7. | ԺԵ. 7. Յակ. Ա. | է Մատթ. Է. 9. | թ Մատթ. Թ. 34. |
| ԻԱ. 22. Մարկ. | 6. Ա Յովհ. Գ. | ը Մատթ. Թ. 32. | ԺԲ. 24. |

16 Եւ այլք փորձէին եւ նշան
յերկնից խնդրէին 'ի նմանէ։

17 Իսկ նորա գիտացեալ զխոր-
հուրդս նոցա՝ ասէ ցնոսա. Ամե-
նայն թագաւորութիւն բաժանեալ
յանձն՝ աւերի, եւ տուն բաժա-
նեալ յանձն կործանի։

18 Ապա եթէ եւ Սատանայ բա-
ժանեցաւ յանձնէ, զիարդ կացցէ
թագաւորութիւն նորա. զի ասէք
զինէն եթէ Բէեղզեբուղաւ իշխա-
նաւն դիւաց հանէ զդեւս։

19 Եթէ ես Բէեղզեբուղաւ հա-
նեմ զդեւս, որդիքն ձեր իւ՞ հա-
նիցեն. վասն այդորիկ նոքին եղի-
ցին ձեր դատաւորք։
20 Իսկ եթէ մատամբ Աստուծոյ
հանեմ զդեւս, ապա հասեալ է 'ի
վերայ ձեր արքայութիւն Աստու-
ծոյ։
21 Յորժամ հզօր վառեալ՝ պա-
հիցէ զտուն իւր, 'ի խաղաղու-
թեան են ինչք նորա։
22 Բայց եթէ հզօրագոյն քան
զնա 'ի վերայ եկեալ յաղթեսցէ
նմա, զսպառազինութիւնն հանէ՝
յոր յուսացեալ էր, եւ զաւար նո-
րա բաշխեսցէ։
23 Որ ոչ է ընդ իս՝ հակառակ իմ
է, եւ որ ոչ ժողովէ ընդ իս՝ ցրը-
ուէ։
24 Յորժամ այսն ելանիցէ 'ի մար-
դոյ՝ շրջի ընդ անջրդին տեղիս,
խնդրէ հանգիստ. եւ իբրեւ ոչ
գտանէ, ասէ. Դարձայց անդրէն
'ի տուն իմ ուստի ելի։

25 Եւ գայ գտանէ մաքրեալ եւ
յարդարեալ։
26 Յայնժամ երթայ եւ առնու
եօթն այլ այսս չար եւս քան զին-

16 Եւ ուրիշները փորձում եւ եր-
կնքիցը մին նշան էին խնդրում
ե նորանից։
17 Բայց նա նորանց ը մտածմունք-
ները թ իմանալով՝ նորանց ասաց.
Ամէն թագաւորութիւն որ իրեն
մէջ բաժանուած է՝ կաւերուի, եւ
տուն՝ որ իրեն մէջ բաժանուած է՝
կը կործանուի։
18 Ապա թէ որ Սատանան էլ ինքն
իրենից բաժանուեցաւ, նորա թա-
գաւորութիւնն ինչպէս կը կենայ.
պատճառն որ ինձ համար ասումէք,
թէ Դա դեւերի իշխան Բէեղզեբու-
ղովն է հանում դեւերը։
19 Եթէ ես Բէեղզեբուղովն եմ
հանում դեւերն, ձեր որդիքն ին-
չով են հանում. դորա համար նորանք
կը լինին ձեր դատաւոր։
20 Բայց եթէ Աստուծոյ մատովն
եմ հանում ժ դեւերը, ապա Աս-
տուծոյ արքայութիւնը ձեր վերայ
հասել է։
21 Երբոր զօրաւոր ի զէնք հա-
գած իրեն տունը պահէ, նորան
ապրանքները խաղաղութեննով են։
22 Բայց թէ որ նորանից էլ աւելի
զօրաւոր գայ նորա վերայ՝ եւ նորան
յաղթէ, նորա զէնքերն՝ որ յոյսը
նորանց վերայ էր դրել, կը հանէ
եւ նորա լ աւարը կը բաժանէ։
23 Ով որ ինձ հետ չէ՝ ինձ հակա-
ռակ է, եւ ով որ ինձ հետ չի ժո-
ղովում՝ խ ցրւումէ։
24 Երբոր պիղծ դեւը դուրս է
գալիս մարդուցն՝ անջուր տեղե-
րանքումէ մանգալիս եւ հանգիստ
խնդրում. եւ երբոր չի գտնում՝
ասումէ. Յետ դառնամ իմ տունն՝
որտեղից որ դուրս ծ եկի։
25 Եւ գալիս է նորան սրբած եւ
պատրաստուած է գտնում։
26 Այն ժամանակը գնում եւ ի-
րենից էլ աւելի չար եօթը դեւէ

է Մատթ. ԺԲ. 38. ԺԶ. 1.
ը Մատթ. ԺԲ. 25.
Մարկ. Գ. 24.
թ Յովհ. Բ. 25.
ժ Ելից. Ը. 19.
ի Մատթ. ԺԲ. 29.
Մարկ. Գ. 27.
լ Եսայ. ԾԳ. 12.
Կող. Բ. 15.
խ Մատթ. ԺԲ. 30.
ծ Մատթ. ԺԲ. 43.

քըն՝ եւ մտանէ բնակէ անդ, եւ
լինի յետինն մարդոյն այնորիկ չար
քան զառաջինն։

27 Եւ եղեւ մինչդեռ խօսէր զայս,
ձայն եբարձ կին մի ՚ի ժողովրդե-
նէ անտի եւ ասէ. Երանի է որո-
վայնին՝ որ կրեաց զքեզ, եւ ստ-
եանցն՝ որ դիեցուցին զքեզ։

28 Եւ նա ասէ. Նա՛ երանի այ-
նոցիկ է, որ լսեն զբանն Աստու-
ծոյ եւ պահեն։
29 Եւ ՚ի դիզանել ՚ի վերայ նորա
ժողովրդեանն, սկսաւ ասել. Ազգս
այս ազգ չար է. նշան խնդրէ,
եւ նշան յերկնից ոչ տացի սմա՝
բայց նշանն Յովնանու։

30 Զի որպէս եղեւ Յովնան նշան
Նինուէացւոց, այնպէս եղիցի եւ
որդի մարդոյ ազգիս այսմիկ։

31 Դշխոյն հարաւոյ յարիցէ ՚ի
դատաստանի ընդ արս ազգիս այ-
սորիկ՝ եւ դատապարտեսցէ զնոսա,
զի եկն ՚ի ծագաց երկրի լսել զի-
մաստութիւնն Սողոմոնի. եւ ահա
աւելի քան զՍողոմոն է աստ։

32 Արք Նինուէացիք յարիցեն
՚ի դատաստանի ընդ ազգիս ընդ
այսմիկ՝ եւ դատապարտեսցեն զսա,
զի ապաշխարեցին ՚ի քարոզութեանն
Յովնանու. եւ ահա աւելի քան
զՅովնան է աստ։
33 Ո՛չ ոք լուցեալ ճրագ՝ դը-
նէ ՚ի թաքստեան, եւ ոչ ընդ
գրուանաւ. այլ ՚ի վերայ աշտա-
նակի, զի որ մտանեն՝ լոյս տեսա-
նիցեն։
34 Ճրագ մարմնոյ ակն է. յոր-

առնում՝ եւ մտնումէ բնակվում
այն տեղ, եւ այն մարդոյն յետինն
աւելի չար է լինում քան թէ ւ ա-
ռաջինը։
27 Եւ էլաւ դեռ քանի որ սա խօ-
սումէր, ժողովրդի միջիցը մին կին
ձայն բարձրացրուց եւ ասաց. Ե-
րանի է այն փորին՝ որ քեզ պահեց,
եւ այն ծըծերին՝ որ քեզ փ ծըծա-
ցրին։
28 Եւ նա ասաց. Էլ աւելի երա-
նի է՝ նորանց, որ Աստուծոյ բանը
լսումեն եւ ց պահում։
29 Եւ երբոր ժողովուրդները, նո-
րա վերայ դիզվումէին՝ սկսեց ասել.
Այս ազգս չար ազգ ղ է. նշան է
խնդրում, եւ երկնքիցը նշան չի
տրվիլ սորան՝ բայց միայն Յովնա-
նու նշանը.
30 Պատճառնոր՝ ինչպէս որ Յովնան
նշան էլաւ Նինուէացոց համար,
այնպէս էլ Որդին մարդոյ այս ազ-
գիս համար ֆ կը լինի։
31 Հարաւային երկրի թագուհին
դատաստանին վեր կը կենայ այս
ազգիս մարդկանց հետ եւ սորանց
կը դատապարտէ, պատճառն որ՝ նա
երկրի ծայրիցն եկաւ, որ Սողոմոնի
իմաստութիւնը լսէ, եւ ահա Սո-
ղոմոնիցն էլ աւելին այստեղ ք է։
32 Նինուէացոց մարդիկը դատաս-
տանին վեր կը կենան այս ազգիս
հետ եւ սորան կը դատապարտեն,
ինչու որ՝ նորանք Յովնանու քարո-
զութեանն յ ապաշխարեցին. եւ
ահա Յովնանիցն էլ աւելին այստեղ է։
33 Ո՛չ ով ճրագ չի վառում եւ
թաքուն տեղ դնում եւ ոչ տաշտի
տակ, բայց ճրագակալի վերայ, որ
նորանք որ ներս են մտնում՝ լոյս
ն տեսնեն։
34 Մարմնոյ ճրագն աչքն է. եր-

ւ Յովհ. Ե. 14. Եբր. Զ. 4. Ժ. 26. Բ պետ. Բ. 20.
փ Ղկ. Ա. 28. 48.
ց Մատթ. Է. 21. Ղկ. Ը. 21. Յակ. Ա. 25.
ղ Մատթ. ԺԲ. 38. 39.
ֆ Յովն. Ա. 17. Բ. 10.
ք Գ թագ. Ժ. 1.
յ Յովն. Գ. 5.
ն Մատթ. Ե. 15. Մարկ. Դ. 21. Ղկ. Ը. 16.

ժամ ակնն առատ է, ամենայն մար-
մինն լուսաւոր եղիցի. և երբ ակն
չար է, և մարմինն խաւարին եղիցի։
35 Արդ զգոյշ լեր, գուցէ լոյսդ
որ ՚ի քեզ է՝ խաւար իցէ։
36 Եթէ մարմինդ քո ամենայն լու-
սաւոր է՝ և չգուցէ մասն ինչ խա-
ւարին, եղիցի լուսաւոր ամենայն.
որպէս յորժամ ճրագդ նշուլիւք
լուսաւորեսցէ զքեզ։
37 Եւ մինչդեռ խօսէր զայս, ա-
ղաչէր զնա ոմն փարիսեցի՝ զի ճաշ
կերիցէ առ նմա. և նա մտեալ
բազմեցաւ։
38 Իբրև տես փարիսեցին՝ զար-
մացաւ, զի նախ ոչ մկրտեցաւ յա-
ռաջ քան զճաշ։
39 Ասէ ցնա Տէր. Այժմ դուք
փարիսեցիք զարտաքին բաժակին
և զպնակին սրբէք. և ներքինն
ձեր լի է յափշտակութեամբ և չա-
րութեամբ։
40 Անմիտք՝ ոչ ապաքէն որ զար-
տաքինն արար՝ և զներքինն նոյն
արար։
41 Բայց ասդէ զարժանն խոկ՝ տուք
ողորմութիւն, և ահա ամենայն
սուրբ է ձեր։
42 Այլ վայ ձեզ փարիսեցւոց՝ զի
տասանորդէք զանանուխ և զփե-
գենայ և զամենայն բանջար, և
անցանէք զիրաւամբք և զսիրովն
Աստուծոյ. զայս արժան էր առնել,
և զայն ոչ անցանել։
43 Վայ ձեզ փարիսեցւոց, զի սի-
րէք զբարձրագահս ՚ի ժողովուրդս,
և զնախողջոյնս ՚ի հրապարակս։
44 Վայ ձեզ՝ զի էք դուք իբրև
զգերեզմանս անյայտս, և մարդիկ
գնան ՚ի վերայ՝ և ոչ գիտեն։

բոր աչքը պարզ է, ամէն մարմինը
լուսաւոր կը լինի. և երբոր աչքը
չար է՝ մարմինն էլ խաւար ւ կը լինի։
35 Ուրեմն՝ զգոյշ կաց, չը լինի որ
այն լոյսն, որ քեզանում է՝ խաւար
լինի։
36 Թէ որ քո ամէն մարմինդ լու-
սաւոր է և բնաւ խաւարի մին մասը
չը կայ, ամէնը լուսաւոր կը լինի.
ինչպէս այն ժամանակն՝ որ ճրագն
իւրեն շառագայթովը լուսաւորէ քեզ։
37 Եւ դեռ որ սա խօսում էր՝ մին
փարիսեցի աղաչում էր նորան՝ որ
նորա մօտ հաց ուտէ. և նա մտաւ՝
և սեղան նստեց։
38 Երբոր փարիսեցին տեսաւ՝ զար-
մացաւ, որ ճաշիցն առաջ ‒ չը
լուացվաւ։
39 Տէրն ասաց նորան. Հիմիկ դուք
փարիսեցիներդ բաժակի և պնակի
դրսի կողմը ւ սրբում էք. և ձեր
ներսիդը յափշտակութենով և չա-
րութենով լիքն ‒ է։
40 Անմիտներ՝ չէ՞ որ նա որ դըր-
սինն արաւ՝ ներսինն էլ նա արաւ։
41 Բայց աւելի նա արէք որ ար-
ժանն է, ողորմութիւն տուէք և
ահա ձեր ամէն բանը սուրբ ւ է։
42 Բայց վայ ձեզ փարիսեցիներիդ՝
որ անանուխի և փեգենայի և ա-
մէն բանջարի տասանորդ էք տալիս
և Աստուծոյ իրաւունքն ու սի-
րուն անցանում էք. նա պէտք էր
անել, և նորանով ‒ չանցանել։
43 Վայ ձեզ փարիսեցիներիդ, որ
ժողովարաններին մէջ վերևի տե-
ղերն էք սիրում, և փողոցներին
մէջ առաջին ‒ բարևները։
44 Վայ ւ ձեզ՝ որ դուք գերեզ-
մաններին պէս էք, որ չեն տես-
նվում և մարդիկ նորանց վերայ
գնում են և չեն ‒ գիտում։

ւ Մատթ. Զ. 22։
‒ Մարկ. Դ. 3։
ւ Մատթ. ԻԳ. 25։
‒ Տիտ. Ա. 15։

ւ Եսայ. ԾԸ. 7։
Դան. Դ. 27։
Ղկ. ԺԲ. 33։
‒ Մատթ. ԻԳ. 23։

‒ Մատթ. ԻԳ. 6։
Մարկ. ԺԲ. 38, 39։
ւ Մատթ. ԻԳ. 27։

‒ Սաղ. Ե. 9։

45 Պատասխանի ետ ոմն յօրինականացն՝ եւ ասէ ցնա, Վարդապետ՝ զայս բանս ասելով եւ զմեզ թշնամանես։

46 Եւ նա ասէ. Եւ ձեզ վայ օրինականացդ. զի բառնայք մարդկան բեռինս դժուարակիրս, եւ դուք մատամբ միով ՚ի բեռինսն ոչ մերձենայք։

47 Վայ ձեզ՝ զի շինէք զշիրիմս մարգարէիցն, եւ հարքն ձեր սպանին զնոսա։

48 Ապա ուրեմն վկայէք՝ եթէ կամակից էք գործոց հարցն ձերոց. զի նոքա կոտորեցին զնոսա, եւ դուք զգերեզմանս նոցա շինէք։

49 Վասն այնորիկ իմաստութիւնն Աստուծոյ ասաց. Առաքեցից ՚ի նոսա մարգարէս եւ առաքեալս, եւ ՚ի նոցանէ սպանանիցեն եւ հալածիցեն։

50 Զի խնդրեսցի արիւն ամենայն մարգարէից՝ հեղեալ ՚ի սկզբանէ աշխարհի՝ յազգէ յայդմանէ ։

51 Յարենէն Աբելի մինչեւ յարիւնն Զաքարիայ կորուսելոյ ընդ սեղանն եւ ընդ տաճարն. այո ասեմ ձեզ՝ խնդրեսցի յազգէ յայդմանէ։

52 Վայ ձեզ օրինականացդ. զի թափուցանէք զփականս գիտութեանն. դուք ոչ մտանէք, եւ որ մտանելոցն են՝ արգելուք։

53 Եւ ՚ի խօսելն զայս ամենայն առ նոսա առաջի ամենայն ժողովրդեանն, զամօթի հարկանէին. եւ սկսան դպիրքն եւ փարիսեցիք դժնել՝ եւ զրգռել ընդ նմա վասն բազում իրաց։

54 Եւ սպասել որսալ ինչ բանս ՚ի բերանոյ նորա, զի չարախօսեսցեն զնմանէ։

45 Պատասխան տուաւ օրէնք գիտացողներից մինը եւ ասաց նորան՝ Վարդապետ՝ այդ բաներդ ասելով մեզ էլ նախատինք ես տալիս։

46 Եւ նա ասաց, Ձեզ օրէնք գիտացողներիդ էլ վայ. ինչու որ՝ դժուար տանելի բեռներ էք բեռնում մարդկանց, եւ դուք մին մատով չէք մօտենում այն ւ բեռներին։

47 Վայ ձեզ, որ մարգարէներին տապանները շինում էք եւ ձեր հայրերն սպանեցին ջ նորանց.

48 Ապա ուրեմն վկայում էք՝ թէ ձեր հայրանց գործքերին հետ կամակից էք. ինչու որ՝ նորանք կոտորեցին նորանց, եւ դուք նորանց գերեզմանները շինում էք։

49 Սորա համար Աստուծոյ իմաստութիւնն ասաց. Թէ՝ Մարգարէներ եւ առաքեալներ կուղարկեմ նորանց մօտ, եւ նորանցից կըսպանեն եւ ‒ կըհալածեն.

50 Որ ամէն մարգարէների արիւնն որ աշխարհքի սկզբից թափւած է՝ այս ազգից խնդրուի,

51 Աբելի ‡ արիւնից մինչեւ Զաքարիայի * արիւնն՝ որ սեղանին ու տաճարին մէջ կորաւ. իրաւի՝ ասում եմ ձեզ, Այդ ազգից կը խնդրուի։

52 Վայ ձեզ օրէնք գիտողներիդ՝ որ գիտութեան բանալիքը թաքցնում էք. դուք չէք մտնում, եւ նորանց՝ որ մտնելու են • արգելում էք։

53 Եւ երբոր այս ամէն բաներս ասաց նորանց ամէն ժողովրդի առաջին, շատ ամօթ էին քաշում՝ եւ կարգացողներն ու փարիսեցիներըն սկսեցին նախանձով բարկանալ եւ շատ բաների համար նորա հետ հակառակել։

54 Եւ սպասում էին՝ որ նորա բերանից մին խօսք որսան, որ չարախօսեն նորա § վերայ։

ւ Մատթ. ԻԳ. 4.
ջ Մատթ. ԻԳ. 29.
‒ Մատթ. ԻԳ. 34.
‡ Ծննդ. Դ. 8.
* Բ Մնաց. ԻԴ. 20, 21.
• Մատթ. ԻԳ. 13.
§ Մարկ. ԺԲ. 13.

## ԳԼ . ԺԲ

1 Որովք 'ի կուտել բիւրաւորաց ժողովրդեանն՝ մինչեւ կոխել զմիմեանս, սկսաւ ասել ցաշակերտսն իւր. Նախ՝ զգոյշ լերուք անձանց 'ի խմորոյ փարիսեցւոցն, որ է կեղծաւորութիւն։

2 Չի ոչինչ է 'ի ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, եւ գաղտնի՝ որ ոչ ծանիցի։

3 Վասն զի՝ զոր ինչ ասիցէք 'ի խաւարի, լուիցի 'ի լոյս. եւ զոր յունկանէն խօսեցարուք 'ի շտեմարանս, քարոզեսցի 'ի վերայ տանեաց։

4 Բայց ձեզ ասեմ սիրելեաց իմոց. Մի զարհուրիցիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմինն, եւ յետ այնորիկ աւելի ինչ ոչ ունիցին առնել։

5 Այլ ցուցից ձեզ յումմէ երկնչիցիք. Երկնչիջիք յայնմանէ՝ որ յետ սպանանելոյ ունի իշխանութիւն արկանել 'ի գեհեն. այո ասեմ ձեզ՝ Յայնմանէ երկնչիջիք։

6 Ո՞չ ապաքէն հինգ ձագ երկուց դանգաց վաճառի, եւ մի 'ի նոցանէ ոչ է մոռացեալ առաջի Աստուծոյ։

7 Այլ ձեր եւ ամենայն խել հեր գլխոյ թուեալ է. մի երկնչիք՝ զի քան զբազում ձագս լաւ էք դուք։

8 Ասեմ ձեզ. զի Ամենայն որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան, եւ Որդի մարդոյ խոստովանեսցի զնմանէ առաջի հրեշտակաց Աստուծոյ։

9 Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացեալ լիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ։

1 Այն ժամանակին երբոր հազարաւոր ժողովուրդներ գիզուեցին՝ մինչեւ որ իրար կոխ էին տալիս՝ սկսեց իրեն աշակերտներին = ասել. Առաջ անձներնիդ զգո՛յշ պահեցէք փարիսեցոց խմորիցն՝ որ կեղծաւորութիւն ÷ է.

2 Ինչու որ՝ բնաւ ծածուկ բան չկայ՝ որ չի յայտնուելի եւ թագուն բան՝ որ ‡ չիմացուելի.

3 Պատճառն որ՝ ինչ որ խաւարումն ասէք, լուսոյ մէջ կը լսուելի. ինչ որ ներսինները տան մէջ ականջում խօսէք՝ կտուրների վերայ կը քարոզուելի։

4 Բայց ∓ ձեզ՝ իմ սիրելիներիս ⊢ ասումեմ. Մի վախենաք նորանցից՝ որ մարմինքն սպանումեն, եւ նորանից ետեւ աւելի բան չունեին՝ որ անեն։

5 Բայց ցոյց կըտամ ձեզ՝ թէ ումից պէտք է վախենաք. Նորանից վախեցէք, որ սպանելուցն ետեւ իշխանութիւն ունի գեհենի մէջ ձգելոյ. իրաւի ասումեմ ձեզ՝ Նորանից վախեցէք։

6 Չէ՞ որ հինգ ծիտ երկու դանկի են ծախվում. եւ նորանցից մինն էլ Աստուծոյ առաջին մոռացուած չէ։

7 Բայց ձեր գլխի ամէն մազերն էլ համարված է. մի վախենաք. ինչու որ՝ դուք աւելի լաւ էք քան շատ ծտեր։

8 Ասումեմ ձեզ՝ թէ Ամէն ով որ ինձ մարդկանց առաջին կը դաւանէ՝ Որդին մարդոյ էլ նորան կը դաւանէ Աստուծոյ հրեշտակներին ւ առաջին։

9 Եւ ով որ ինձ կուրանայ մարդկանց առաջին՝ ուրացված կը լինի Աստուծոյ հրեշտակների առաջին։

= Մատթ. ԺԶ. 6։ Մարկ. Ը. 15։
÷ Մատթ. ԺԶ. 12։
‡ Մատթ. Ժ. 26։ Մարկ. Դ. 22։ Ղկ. Ը. 17։
∓ Եսայ. ԾԱ. 7. 8. 12։ 13։ Երեմ. Ա. 8։ Մատթ. Ժ. 28։
⊢ Յովհ. ԺԵ. 14. 15։
ւ Մատթ. Ժ. 32 Մարկ. Ը. 38։ Բ Տիմ. Բ. 12։ Ա Յովհ. Բ. 23։

10 Եւ ամենայն որ ասէ բան զՈրդւոյ մարդոյ՝ թողցի նմա. բայց որ զՀոգին Սուրբ հայհոյեսցէ՝ մի թողցի նմա։

11 Այլ յորժամ տանիցին զձեզ 'ի ժողովուրդս եւ 'ի պետութիւնս եւ յիշխանութիւնս, մի հոգայցէք՝ որպէս թէ զինչ պատասխանի տայցէք. կամ զինչ ասիցէք։

12 Զի Հոգին Սուրբ ուսուսցէ ձեզ 'ի նմին ժամու՝ զինչ պարտ իցէ խօսել։

13 Ասէ ոմն 'ի ժողովրդենէն ցնա. Վարդապետ՝ ասա ցեղբայր իմ բաժանել ընդ իս զժառանգութիւնն։

14 Եւ նա է ասէ ցնա. Այր դու՝ ո կացոյց զիս դատաւոր կամ բաժանարար 'ի վերայ ձեր։

15 Եւ ասէ ցնոսա. Տեսէք եւ զգոյշ լերուք յամենայն ագահութենէ, զի ոչ եթէ 'ի մթերից ընչից ուրուք իցեն կեանք նորա։

16 Խօսեցաւ առ նոսա առակ մի՝ եւ ասէ. Առն ուրումն մեծատան եկաւն անդք առհմակսաց։

17 Եւ խորհէր 'ի միտս իւր՝ եւ ասէր. Զի՞ գործեցից՝ զի ոչ գոյ տեղի ուր ժողովեցից զարդիւնս իմ։

18 Եւ ասէ. Գիտեմ զինչ արարից. քակեցից զշտեմարանս իմ, եւ ևս մեծամեծս շինեցից. եւ անդր ժողովեցից զցորեան եւ զամենայն բարութիւնս իմ։

19 Եւ ասացից ցանձն իմ. Անձն՝ ունիս բազում բարութիւնս համբարեալ ամաց բազմաց. հանգիր՝ կեր՝ արբ եւ ուրախ լեր։

20 Ասէ ցնա Աստուած. Անմիտ՝ յայսմ գիշերի զոգիդ 'ի քէն 'ի բաց

10 Եւ ամէն ով որ Որդւոյ մարդոյ դէմ բան ասէ՝ կը թողուի նորան. բայց ով որ Սուրբ Հոգւոյն հայհոյէ՝ նորան ե չի թողուիր։

11 Բայց երբոր կը տանեն ձեզ ժողովարաններու մէջ եւ դատաւորներու եւ իշխաններու առաջքն, հոգս մի զ անէք՝ իբր թէ ինչ պատասխան պիտի տաք, կամ ինչ պիտի ասէք.

12 Պատճառն որ՝ Սուրբ Հոգին իսկ այն ժամին կը սորվեցնէ ձեզ՝ թէ ինչ պէտք է խօսիլ։

13 Ժողովրդին միջիցը մինն ասաց նորան. Վարդապետ՝ իմ եղբօրս ասա՛ որ ժառանգութիւնն ինծ հետ բաժանէ։

14 Եւ նա ասաց նորան. Ո՛վ մարդ՝ ինծ ով կարգեց ձեզ վերայ դատաւոր կամ է բաժնին անօղ։

15 Եւ նորանց ասաց. Տեսէք եւ զգոյշ կացէք ամէն ը ագահութենիցը, պատճառն որ՝ ընաւ մէկի կեանքն իրեն կիտոված ապրանքներիցը չէ։

16 Նորանց մէկ առակ խօսեց եւ ասաց. Մէկ հարուստ մարդոյ արտերն առատ պտուղ տուին.

17 Եւ իրեն մտքումը մտածումէր եւ ասում. Ի՞նչ անեմ՝ որ տեղ չը կայ որ իմ պտուղներս այնտեղ ժողովեմ։

18 Եւ ասաց. Գիտացեմ ինչ կանեմ. իմ ամբարներս կը քանդեմ, եւ էլ աւելի մեծ կը շինեմ, եւ իմ ցորենս եւ ամէն բարիքներս կը ժողովեմ այնտեղ.

19 Եւ իմ անձիս կասեմ. Ո՛վ անձս՝ շատ բարիքներ ունիս շատ տարիների համար է ամբարված. առա հանգիստ առ՝ կեր՝ խմէ եւ ուրախ լեր.

20 Աստուած նորան ասաց. Ո՛վ անմիտ. այս գիշերս քո ժ հոգիդ

ե Մատթ. ժ. 31. 32. Մարկ. գ. 28. Ա Յովհ. ե. 16.
զ Մատթ. ժ. 19. Մարկ. ժգ. 11. Ղւկ. իա. 14.
է Յովհ. ժը. 36.
ը Ա Տիմ. Զ. 7, 8.
թ Ժող. ժԱ. 9. Ա Կորնթ. ժե. 32. Յակ. ե. 5.
ժ Յոբ. ի. 22. Իէ. 8. Սաղ. ԽԲ. 7. Յակ. Դ. 14.

պահանջիցեն, իսկ զոր պատրաստեցերն՝ ում լինիցի։
21 Նոյնպէս և որ գանձէ անձին, և ոչ յԱստուած մեծանայցէ։
22 Ասէ ցաշակերտսն իւր. Վասն այդորիկ ասեմ ձեզ. մի հոգայք ընդ ոգւոյ՝ թէ զինչ ուտիցէք, և մի ընդ մարմնոյ՝ թէ զինչ զգենուցուք։
23 Զի ոգի առաւել է քան զկերակուր, և մարմին քան զհանդերձ։
24 Հայեցարուք ընդ ագռաւս, զի ոչ սերմանեն և ոչ հնձեն, որոց ոչ գոն շտեմարանք՝ և ոչ համբարանոցք, և Աստուած կերակրէ զնոսա. որչափ ևս առաւել զձեզ՝ որ լաւ էք քան զթռչունս։
25 Ո՞վ ՚ի ձէնջ առ հոգալ՝ կարիցէ յաւելուլ ՚ի հասակ իւր կանգուն մի։
26 Իսկ արդ՝ եթէ ՚ի փոքուն չէք բաւական՝ վասն այլոյն զի հոգայցէք։
27 Հայեցարուք ընդ շուշանն՝ որպէս աճէ, ոչ ջանայ՝ և ոչ նիւթէ. ասեմ ձեզ, Եւ ոչ Սողոմոն յամենայն ՚ի փառսն իւր՝ զգեցաւ իբրև զմի ՚ի նոցանէ։
28 Իսկ եթէ զխոտն՝ որ այսօր ՚ի բացի է՝ և վաղիւ ՚ի հնոց արկանելի, Աստուած այնպէս զգեցուցանէ. որչափ ևս առաւել զձեզ՝ թերահաւատք։
29 Եւ դուք մի խնդրէք՝ զինչ ուտիցէք կամ զինչ ըմպիցէք, և մի զբաղնուք.
30 Զի զայն ամենայն հեթանոսք աշխարհի խնդրեն. այլ ձեր Հայր գիտէ՝ զի պիտոյ է այն ամենայն։

քեզանից յետ կը խնդրեն. ապա նա որ պատրաստեցիր՝ ում է կը լինի։
21 Այնպէս էլ նա՝ որ իրեն անձին համար գանձ հաւաքէ, և Աստուծով է չը հարուստանայ։
22 Իրեն աշակերտներին ասաց. Դրա համար ասում եմ ձեզ. հոգս մի անէք հոգոյ համար՝ թէ ինչ պիտի ուտէք, և ոչ մարմնոյ համար՝ թէ ինչ պիտի հագնիք.
23 Ինչու որ՝ հոգին աւելի է քան թէ կերակուրը, և մարմինը քան թէ հագուստը։
24 Մտիկ արէք ագռաւներին. որ ոչ սերմանում և ոչ հնձում. որ նորանք ոչ մառաններ ունին և ոչ ամբարներ, և Աստուած կերակրում է նորանց. ապա որքան էլ աւելի ձեզ՝ որ թռչուններից աւելի լաւ էք։
25 Ձեզանից ով կարող է իրեն հոգս անելովն իրեն հասակին վերայ մին գազ աւելացնել։
26 Ապա թէ որ փոքր բանի համար բաւական չէք՝ ինչու ուրիշ բաների համար հոգս էք անում։
27 Մտիկ արէք շուշաններին, թէ ինչպէս է մեծանում. ոչ ջանք է անում և ոչ մանում. ասում եմ ձեզ՝ թէ Սողոմոնն էլ իրեն ամէն փառքին մէջ նորանց մինին նման չը հագաւ։
28 Բայց թէ որ խոտին որ այսօր յանդումը կայ՝ և վաղը փռան մէջ կը ձգվի, Աստուած այնպէս է հագցընում, ապա որքան էլ աւելի ձեզ՝ ով թերահաւատներ։
29 Եւ դուք մի խնդրէք՝ թէ ինչ պիտի ուտէք կամ ինչ պիտի խըմէք, և հոգս մի քաշէք.
30 Ինչու որ՝ այդ ամէն բաները աշխարհքի հեթանոսներն են խնդրում, բայց ձեր Հայրը գիտում է՝ որ այն ամէնը պէտք է ձեզ։

խ Սաղ. ԼԹ. 6. Երեմ. ԺԷ. 11. ծ Մատթ. Զ. 20.
Համար. 33. Ա Տիմ. Զ. 18, 19. Յակ. Բ. 5.
կ Մատթ. Զ. 25. հ Յոբ. ԼԸ. 41.
Սաղ. ՃԽԷ. 9.

31 Բայց խնդրեցէք զարքայութիւն Աստուծոյ. եւ այն ամենայն յաւելցի ձեզ։
32 Մի՛ երկնչիր հօտ փոքրիկ. զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն։
33 Վաճառեցէք զինչս ձեր եւ տուք ողորմութիւն. եւ արարէք ձեզ քսակս անանց հնանալոյ, գանձ անպակաս յերկինս. ուր ոչ գող մերձենայ, եւ ոչ ցեց ապականէ։
34 Զի ուր գանձն ձեր է, անդ եւ սիրտք ձեր եղիցին։
35 Եղիցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս՝ եւ ճրագունք լուցեալք։
36 Եւ դուք նմանօղք մարդկան՝ որ ակն ունիցին տեառն իւրեանց՝ թէ երբ դառնայցէ 'ի հարսանեաց. զի յորժամ գայցէ եւ բախիցէ, վաղվաղակի բանայցեն նմա։
37 Երանի իցէ ծառայիցն այնոցիկ՝ զորս եկեալ տէրն գտցէ արթունս. ամէն ասեմ ձեզ՝ զի գօտի ընդ մէջ ածցէ՝ եւ բազմեցուսցէ զնոսա, եւ անցեալ պաշտեսցէ զնոսա։
38 Եւ եթէ յերկրորդ՝ կամ յերրորդ պահու եկեսցէ՝ եւ գտցէ այնպէս, երանելի են ծառայքն այնոքիկ։
39 Բայց զայն գիտասջիք, եթէ գիտէր տանուտէրն յորում ժամու գող գայ՝ հսկէր, եւ չտայր թոյլ ակահատ առնել 'ի տան իւրում։
40 Եւ դուք եղերուք պատրաստ՝ զի յորում ժամու ոչ կարծիցէք, գայ Որդի մարդոյ։

31 Բայց Աստուծոյ արքայութիւնը խնդրեցէք, եւ այն ամէնը կաւելնայ ↄ ձեզ։
32 Մի՛ վախնա՛ր փոքր հօտ. ինչու որ՝ ձեր Հօրը հաճոյ եղաւ՝ որ արքայութիւնը տայ ւ ձեզ։
33 Ձեր ապրանքը ծախեցէք՝ եւ ողորմութիւն ɛ տուէք. ձեզ համար քսակներ շինեցէք՝ անանց հնանալոյ՝ անպակաս գանձ երկինքումը, ուրտեղ որ՝ ոչ գող է մօտենում եւ ոչ ցեցն է ʻ ապականում.
34 Պատճառն որ՝ ինչ տեղ որ ձեր գանձն է՝ այնտեղ էլ ձեր սրտերը կը լինին։
35 Թող ձեր գօտիկները պինտ կապված լինին ; մէջքերումը՝ եւ ճրագները ъ վառված։
36 Եւ դուք այն մարդկանց նման՝ որ իրենց տիրոջն սպասումեն՝ թէ երբ կը դառնայ հարսանիքներիցը. որ երբոր գայ եւ դուռը թակէ, շուտով բանան նորա համար։
37 Երանի է այն ծառաներին՝ որ տէրն երբոր գայ, արթուն գտնէ ւ նորանց. ճշմարիտն ասումեմ ձեզ՝ թէ նա գօտիկը մէջքին կը կապէ եւ նորանց սեղան կը նստացնէ եւ առաջ եկած կը ծառայէ նորանց։
38 Եւ թէ որ գիշերի երկրորդ կամ երրորդ պահին գայ՝ եւ այնպէս գտնէ՝ երանելի են այն ծառաները։
39 Բայց սա իմացէք՝ թէ որ տան տէրը գիտէր՝ թէ գողն ո՞ր ժամումը կը գայ՝ արթուն կը կենար եւ թող չէր տալ որ իրենն տունը - ծակէ։
40 Եւ դուք պատրաստ կացէք՝ ինչու որ՝ այն ժամին որ չէք կարծիլ, Որդին մարդոյ ւ կը գայ։

ↄ Մատթ. Զ. 33։
ւ Մատթ. ԺԱ. 25, 26։
ɛ Մատթ. ԺԹ. 21։ Գործ. Բ. 45։ Դ. 34։
ʻ Մատթ. Զ. 20։ Ղկ. ԺԶ. 9։ Ա Տիմ. Զ. 19։
; Եփես. Զ. 14։ Ա Պետ. Ա. 13։
ъ Մատթ. ԻԵ. 1, 13։
ւ Մատթ. ԻԴ. 46։
- Մատթ. ԻԴ. 43։ Ա Թես. Ե. 2։ Բ Պետ. Գ. 10։ Յայտ. Գ. 3։ ԺԶ. 15։
ւ Մատթ. ԻԴ. 44։ ԻԵ. 13։ Մարկ. ԺԳ. 33։ Ղկ. ԻԱ. 34. 36. Ա Թես. Ե. 6։ Բ Պետ. Գ. 12։

41 Ասէ Պետրոս . Տէր՝ առ մեզ ասասցես 'զառակդ զայդ՝ եթէ առ ամենեսեան ։

42 Եւ ասէ Տէր . Ո՞վ իցէ հաւատարիմ տնտես եւ իմաստուն , զոր կացուսցէ տէր իւր 'ի վերայ գերդաստանի իւրոյ տալ 'ի ժամու զկերակուր ։

43 Երանի իցէ ծառային 'այնմիկ՝ զոր եկեալ տէր իւր գտանիցէ արարեալ այնպէս ։

44 Արդարեւ ասեմ ձեզ՝ զի 'ի վերայ ամենայն ընչից իւրոց կացուսցէ զնա ։

45 Ապա եթէ ասիցէ ծառայն այն 'ի սրտի իւրում . Յամէ տէր իմ 'ի գալ . եւ սկսանիցի հարկանել զծառայսն եւ զաղախնայս , ուտել եւ ըմպել եւ արբենալ ։

46 Եկեսցէ տէր ծառային այնորիկ՝ յաւուր յորում ակն ոչ ունիցի , եւ 'ի ժամու յորում ոչ գիտիցէ . ընդ մէջ կտրեսցէ զնա , եւ զբաժին նորա ընդ անհաւատս դիցէ ։

47 Եւ ծառայ՝ որ գիտիցէ զկամս տեառն իւրոյ՝ եւ ոչ պատրաստեսցէ ըստ կամաց նորա , արբցէ գան բազում ։

48 Եւ որ ոչն գիտիցէ՝ եւ արժանի գանի ինչ գործիցէ , արբցէ գան սակաւ . ամենայնի՝ որում շատ տուաւ , շատ խնդրեսցի 'ի նմանէ . եւ որում բազում աւանդեցաւ , առաւել եւս պահանջեսցեն 'ի նմանէ ։

49 Հուր եկի արկանել յերկիր . եւ զի՞նչ կամիմ թէ արդէն իսկ բորբոքէր ։

50 Եւ մկրտութիւն մի ունիմ մկրտել , եւ զիա՞րդ փութամ մինչեւ կատարեսցի ։

51 Համարիք եթէ խաղաղութիւն

41 Պետրոս ասաց . Տէր . այդ առակը մեզ ասացիր , թէ ամէնուն ։

42 Եւ Տէրն ասաց . Ո՞վ է այն հաւատարիմ եւ իմաստուն տնտեսն՝ որ նորան՝ իւրն տէրը տան ընտանեաց վերայ կարգեց՝ որ նորանց կերակուր տայ ճիշդ դ ժամանակին ։

43 Երանի է այն ծառային՝ որ իւրն տէրն երբոր գայ , այնպէս արած գտնէ նորան ։

44 Ճշմարիտն ասում եմ ձեզ՝ թէ իւրն ամէն ապրանքներին վերայ կը դնէ ե նորան ։

45 Ապա թէ այն ծառան իւրն սրտումն ասէ՝ թէ Իմ տէրս ուշանումէ գալ , եւ սկսէ ծառաներին եւ աղախիններին ծեծել , ուտել եւ խմել եւ զ հարբենալ .

46 Կը գայ այն ծառային տէրն այն օրը՝ որ նա չի սպասիլ , եւ այն ժամին , որ նա չի գիտիլ . նորան միջիցը կը կտրէ , եւ նորա բաժինն անհաւատներին հետ կը դնէ ։

47 Եւ ծառան որ իւրն տիրոջ կամքը գիտենայ եւ նորա կամացն պէս չը պատրաստէ , շատ ծեծ է կուտէ ։

48 Եւ նա որ չը գիտենայ՝ եւ ծեծի արժանի բան գործէ , քիչ ծեծ ը կուտէ . այն ամէնին ում որ շատ տրվաւ՝ նորանից շատ կը խնդրուի . եւ ում որ շատ պահ տրվաւ՝ նորանից էլ աւելի կը խնդրեն ։

49 Ես եկի՝ որ կրակ ձգեմ երկրիս թ վերայ . եւ ի՞նչ ուզումեմ որ իսկ հիմակուց բորբոքվէր ։

50 Բայց մին մկրտութիւն ունիմ որ պիտի ժ մկրտվիմ . եւ քանի նեղս եմ քաշում մինչեւ որ նա կատարվի ։

51 Միթէ կարծումէք թէ ի եկի

դ Մատթ. ԻԴ. 45. ԻԵ. 21. Ա Կորնթ Դ. 2.
ե Մատթ. ԻԴ. 47.
զ Մատթ. ԻԴ. 48.
է Թու. ԺԵ. 30. Բ Օրին. ԻԵ. 2. Յովհ. Թ. 41. ԺԵ. 22. Գործ ԺԷ. 30. Յակ. Դ. 17.
ը Գղ. Ե. 17. Ա Տիմ. Ա. 13.
թ Համար. 51.
ժ Մատթ. Ի. 22. Մարկ. Ժ. 38.
ի Մատթ. Ժ. 34. Համար. 49.

եկի տալ յերկիր · Ո՛չ ասեմ ձեզ, այլ բաժանումն ։

52 Զի եղիցին յայսմհետէ հինգ 'ի տան միում բաժանեալք, երեքն յերկուց, եւ երկուքն յերից ։

53 Բաժանեսցի հայր յորդւոյ՝ եւ որդի 'ի հօրէ, մայր 'ի դստերէ՝ եւ դուստրն 'ի մօրէ, սկեսուր 'ի հարսնէ՝ եւ հարսն 'ի սկեսրէ իւրմէ ։

54 Ասաց եւ ցժողովուրդսն · Յորժամ տեսանիցէք ամպ ծագեալ յարեւմտից, իսկոյն ասէք՝ թէ Անձրեւ գայ, եւ լինի այնպէս ·

55 Եւ յորժամ հարաւ շնչեալ, ասէք՝ թէ Խորշակ լինի, եւ լինի այնպէս ։

56 Կեղծաւորք՝ զերեսս երկնի եւ երկրի գիտէք փորձել, իսկ զժամանակս զայս զիարդ ոչ փորձէք ։

57 Ընդէ՞ր եւ յանձանց իսկ ոչ ընտրէք զարժանն ։

58 Յորժամ երթայցես ընդ ոսոխի քում առ իշխան, 'ի ճանապարհի տուր գնաչիւն զերծանել 'ի նմանէ · գի գուցէ քարշիցէ զքեզ առ դատաւորն, եւ դատաւորն մատնիցէ դահճի, եւ դահիճն արկանիցէ 'ի բանտ ։

59 Ասեմ քեզ, Ո՛չ ելանիցես անտի՝ մինչեւ հատուցանիցես զյետին բնիոնն ։

խաղաղութիւն տալ երկրիս վերայ · Չէ՛ ասումեմ ձեզ՝ բայց — բաժանմունք ։

32 Ինչու որ՝ սորանից ետեւ հինգ հոգի մին տան մէջ բաժանուած կը լինին, երեքն երկուսից եւ երկուսն ‡ երեքից ։

33 Հայրը կը բաժանուի որդուցը՝ եւ որդին հօրիցը, մայրն աղջկանիցը՝ եւ աղջիկն իրեն մօրիցը · կեսուրը հարսիցը՝ եւ հարսն իրեն կեսուրիցը ։

54 Ժողովուրդներին էլ ասաց · Երբոր տեսնումէք թէ արեւմտիցն ամպ է դուրս գալիս՝ շուտով ասումէք՝ թէ, Անձրեւ կը գայ, եւ այնպէս է * լինում ։

55 Եւ երբոր հարաւային քամին փչումէ, ասումէք՝ թէ Տօք կը լինի եւ այնպէս է լինում ։

56 Կեղծաւորներ՝ երկնքի եւ երկրի երեսը գիտումէք փորձել · բայց այս ժամանակըս ինչու չէք փորձում ։

57 Եւ ինչու իսկ ձեզանից էլ չէք ընտրում նա՝ որ արժանն է ։

58 Երբոր քո հակառակ ոսոխից հետ իշխանի մօտ գնալու * լինիս, ճանապարհումը աշխատիր տուր՝ որ նորա ձեռքիցն ‡ ազատվիս · որ չը լինի թէ քեզ դատաւորին մօտ քաշէ՝ եւ դատաւորը դահճին մատնէ, եւ դահիճը բանտի մէջ ձգէ ։

59 Ասումեմ քեզ · Այնտեղից դուրս չես գայ՝ մինչեւ որ վերջին դանկն էլ չը վճարես ։

## ԳԼ. ԺԳ.

1 Եկին ոմանք 'ի նմին ժամանակի, եւ պատմեցին նմա վասն Գալիլեացւոցն, որոց զարիւնն Պիղատոս խառնեաց ընդ զոհս նոցա ։

2 Պատասխանի ետ եւ ասէ ցնոսա · Համարիք եթէ այն Գալիլեա-

1 Իսկ այն ժամանակին մին քանի մարդիկ եկին եւ պատմեցին նորա այն Գալիլեացիներին համար, որ նորանց արիւնը Պիղատոս նորանց մատաղին հետ խառնեց ։

2 Պատասխանի տուաւ եւ նորանց ասաց · Միթէ կարծումէք թէ այն

— Միք. Է. 6. Յովհ. Է. 43. Թ. 16. Ժ. 19. | ‡ Մատթ. Ժ. 35. † Մատթ. ԺԶ. 2. | * Ղուկ. ԻԵ. 8. Մատթ. Ե. 25. ‡ Սաղ. ԼԲ. 6. | Եսայ. ԾԵ. 6. —

ցիք եղեն մեղաւոր քան զամենայն
Գալիլեացիս , զի զայնպիսի անցս
կրեցին ։

3 Ո՛չ , ասեմ ձեզ . Այլ եթէ ոչ
ապաշխարիցէք՝ ամենեքին նոյնպէս
կորնչիջիք ։
4 Կամ նոքա ութուտասանքն ,
յորոց վերայ աշտարակն անկաւ 'ի
Սելովամ , եւ սպան զնոսա . համա-
րիք եթէ նոքա պարտապանք եղեն
քան զամենայն մարդիկ՝ որ բնա-
կեալ են յԵրուսաղէմ ։

5 Ո՛չ , ասեմ ձեզ . Այլ եթէ ոչ
ապաշխարիցէք՝ ամենեքեան նոյն-
պէս կորնչիջիք ։
6 Ասաց եւ զառակս զայս . Թզենի
մի էր ուրումն տնկեալ յայգւոջ ի-
րում . եւ եկն խնդրել պտուղ 'ի
նմանէ , եւ ոչ եգիտ ։

7 Ասէ ցայգեգործն . Ահա երեք
ամք են՝ յորմէ հետէ գամ խնդրել
պտուղ 'ի թզենւոջդ՝ եւ ոչ գտա-
նեմ . արդ՝ կոտեա զդա , ընդէ՞ր
եւ զերկիրդ խափանէ ։
8 Նա պատասխանի ետ եւ ասէ .
Տէ՛ր թո՛ղ զդա յայս ամ եւս , մին-
չեւ շուրջ զդովաւ բրեցից եւ ար-
կից աղբ .
9 Թերեւս արասցէ պտուղ . ապա
թէ ոչ՝ յամէ եւս հատցես զդա ։

10 Եւ ուսուցանէր 'ի միում 'ի
ժողովրդարանացն 'ի շաբաթու ։
11 Եւ ահա կին մի՝ զոր ունէր
այս հիւանդութեան ամս ութուտա-
սան . եւ էր կորացեալ , եւ ոչ
կարէր ամենեւին 'ի վեր հայել ։

12 Եւ տեսեալ զնա Յիսուսի կո-
չեաց առ ինքն՝ եւ ասէ ցնա . Կին
դու՝ արձակեալ ես 'ի հիւանդութե-
նէ քումմէ ։
13 Եւ եդ 'ի վերայ նորա ձեռն ,

Գալիլեացիներն աւելի մեղաւոր է-
լան , քանթէ ամէն Գալիլեացիները ,
որ այնպիսի բան եկաւ նորանց վե-
րայ .
3 Չէ , ասումեմ ձեզ . Բայց թէ
որ չապաշխարէք , ամէնքդ էլ այն-
պէս կկորչիք .
4 Կամ այն տասնութ հոգին որ
Սելովամի մէջ աշտարակը վէր ընկաւ
նորանց վերայ , եւ նորանց սպանեց .
մի թէ կարծումէք թէ նորանք ա-
ւելի պարտական էլան քան ամէն
մարդիկը՝ որ Երուսաղէմումը բնակ-
ված են .
5 Չէ , ասումեմ ձեզ . Բայց թէ
որ չապաշխարէք՝ ամէնքդ էլ այն-
պէս կը կորչիք ։
6 Այս առակըս էլ ասաց . Մին
մարդ իրեն այգի մէջ մին թզենի
ծառ էր տնկել . եւ եկաւ , որ պը-
տուղ խնդրէ նորանից , եւ չը
գտաւ ։
7 Այգեպանին ասաց . Ահա ե-
րեք տարի է՝ որ գալիս եմ պտուղ
խնդրել այս թզենի ծառից , եւ
չեմ գտնում . ուրեմն կտրէ դորան ,
էլ ինչու է դա երկիրըդ խափանում
8 Նա պատասխան տուաւ եւ ա-
սաց . Տէ՛ր այս տարիս էլ թո՛ղ դո-
րան , մինչեւ որ դորա չորս կող-
մանը փորեմ եւ աղբ ածեմ .
9 Որ լինի թէ պտուղ բերէ , ա-
պա թէ չէ՝ առաջուցն եսեւ կտրէ
դորան ։
10 Եւ մին ժողովարանի մէջ սո-
վորցնումէր շաբաթ օրումը ։
11 Եւ ահա մին կին որ հիւան-
դութեան դեւ բռնել էր նորան
տասնութ տարի . եւ կծկված էր՝
եւ բնաւ չէր կարողանում դէպի
վեր նայիլ .
12 Եւ Յիսուս որ նորան տեսաւ՝
իրեն մօտ կանչեց՝ եւ նորան ասաց .
Ո՛վ կին՝ արձակված ես քո հիւան-
դութենիցդ ։
13 Եւ ձեռքը դրաւ նորա վերայ ,

= Եսայ . Ե . 2 վ Մատթ . ԻԱ . 19 ։

եւ առ ժամայն ուղղեցաւ , եւ փա–
ռաւոր առնէր զԱստուած ։
14 Պատասխանի ետ ժողովրդա–
պետն ցասուցեալ՝ թէ Ընդէր 'ի
շաբաթու բժշկեաց Յիսուս , եւ ա–
սէ ցժողովուրդն · Վեց օր է՝ յորս
արժան է գործել , յայնս եկայք
բժշկեցարուք , եւ մի յաւուր շա–
բաթու ։
15 Պատասխանի ետ նմա Տէր՝ եւ
ասէ · Կեղծաւորք՝ իւրաքանչիւր ոք
'ի ձէնջ 'ի շաբաթու ոչ արձակէ
զեզն իւր կամ զէշ 'ի մսրոյ՝ եւ տանի
տայ ջուր ։
16 Իսկ այս՝ դուստր Աբրահամու
էր · զոր կապեաց Սատանայ ահա–
ւասիկ ութուտասն ամ , ոչ էր
արժան արձակել 'ի կապանաց անտի
'ի շաբաթու ։
17 Եւ զայս իբրեւ ասէր , յամօթ
լինէին ամենեքին՝ որ հակառակն
կային նմա · եւ ամենայն ժողո–
վուրդն ուրախ լինէր 'ի վերայ ամե–
նայն փառաւորութեանցն , որ գոր–
ծէին 'ի նմանէ ։
18 Եւ ասէր · Ո՞ւմ նման է ար–
քայութիւն Աստուծոյ , եւ որում
նմանութեան նմանեցուցից զնա ։
19 Նման է հատոյ մանանխոյ , զոր
առեալ մարդոյ արկ 'ի պարտէզ իւր ·
աճեաց եւ եղեւ ծառ , եւ թռչունք
երկնից բնակեալ էին յոստս նորա ։
20 Եւ դարձեալ ասէ · Ո՞ւմ նմա–
նեցուցից զարքայութիւն Աստուծոյ ։
21 Նման է խմորոյ , զոր առեալ
կնոջ թաքոյց յալեր երից գրուից ,
մինչեւ խմորեցաւ ամենայն ։
22 Եւ շրջէր ընդ քաղաքս եւ ընդ
գեօղս՝ ուսուցանէր · եւ ճանապարհ
արարեալ յԵրուսաղէմ ·

եւ շուտով շիտակվեցաւ , եւ Աս–
տուծոյն բ փառաւորումէր ։
14 Ժողովարանին գլխաւորը շատ
բարկացաւ , թէ Ինչու համար
Յիսուս շաբաթ օրումը բժշկեց ·
պատասխան տուաւ եւ ժողովրդին
ասաց · Վեց օր կայ՝ որ նորան–
ցում օրէնք է գործ գ գործել , այն
օրերը եկէք բժշկվեցէք , եւ չէ թէ
շաբաթ դ օրը ։
15 Տէրը պատասխան տուաւ նո–
րան եւ ասաց · Կեղծաւորներ՝ մի–
թէ ձեզանից ամէն մէկը շաբաթ
օրն իրեն եզը կամ էշը չի արձա–
կիլ մսուրքէն ու տանիլ ջուր ե տալ ։
16 Բայց սա՝ որ Աբրահամի աղ–
ջիկն էր · որ հիմիկ տասնութ տա–
րի է , որ Սատանան կապել է սո–
րան · միթէ արժան չէր որ շաբաթ
օրն այն կապանքներէն զ արձակվիլ ։
17 Եւ երբոր սա ասաց՝ ամօթով
էին լինում այն ամէնքը՝ որ հակա–
ռակ կային նորան · եւ ամէն ժո–
ղովուրդն ուրախանումէր այն ամէն
փառաւոր գործքերին համար՝ որ
նորանով գործվումէին ։
18 Եւ ասումէր · Աստուծոյ ար–
քայութիւնն ում նման է · եւ ինչ
նմանութենով նմանեցնեմ է նորան ։
19 Մանանեխի հատի նման է , որ
նորան մին մարդ առաւ իրեն պար–
տէզին մէջ ցանեց · մեծացաւ եւ
ծառ էղաւ՝ եւ երկնքին թռչունները
նորա ճղերին վերայ բնակված էին ։
20 Եւ նորան ասաց · Ո՞ւմ նմա–
նեցնեմ Աստուծոյ արքայութիւնը ·
21 Խմորի նման է , որ նորան
մին կին առաւ եւ երեք չափ ա–
լիւրի մէջ պահեց , մինչեւ որ ա–
մէնը խմորվեցաւ ։
22 Եւ մտն էր գալիս քաղաքնե–
րումն ու գիւղերումը եւ ը սո–
վորցնումէր · եւ երբոր ճանապարհ
ընկած գնումէր դէպի Երուսաղէմ ,

բ Մարկ . ԺԶ . 18 · Գործ . Թ . 17 ·
գ Ելից . Ի . 9 ·
դ Մատթ . ԺԲ . 10 · Մարկ . Գ . 2 · Ղկ . Զ . 7 · ԺԴ . 3 ·
ե Ղկ . ԺԴ . 5 ·
զ Ղկ . ԺԹ . 9 ·
է Մատթ . ԺԳ . 31 · Մարկ . Դ . 30 ·
ը Մատթ . Թ . 35 · Մարկ . Զ . 6 ·

23 Ասէ ոմն ցնա. Տէ՛ր՝ եթէ սակաւք իցեն, որ ապրելոց իցեն. եւ նա ասէ ցնոսա։

24 Ջանացարուք մտանել ընդ դուռն նեղ. ասեմ ձեզ, զի բազումք խնդրեսցեն մտանել՝ եւ ոչ կարասցեն։

25 Յորմէ հետէ մտցէ տանուտէրն եւ փակեսցէ զդուռնն. եւ սկսանիցիք կալ արտաքոյ՝ եւ բախել զդուռնն, եւ ասել. Տէր Տէր՝ բաց մեզ. եւ պատասխանի տուեալ ասիցէ ձեզ. Ո՛չ գիտեմ զձեզ ուստի էք։

26 Յայնժամ սկսանիցիք ասել. Կերաք առաջի քո եւ արբաք, եւ 'ի հրապարակս մեր ուսուցեր։

27 Եւ ասիցէ. Ասեմ ձեզ, ոչ գիտեմ զձեզ ուստի էք. 'ի բաց կացէք յինէն ամենայն մշակք անիրաւութեան։

28 Անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց. յորժամ տեսանիցէք զԱբրահամ եւ զԻսահակ եւ զՅակոբ՝ եւ զամենայն մարգարէս յարքայութեան Աստուծոյ, եւ զձեզ հանեալ արտաքս։

29 Եւ եկեսցեն յարեւելից եւ յարեւմտից եւ 'ի հիւսիսոյ եւ 'ի հարաւոյ, եւ բազմեսցին յարքայութեան Աստուծոյ։

30 Եւ ահա իցեն յետինք՝ որ եղիցին առաջինք, եւ իցեն առաջինք՝ որ լինիցին յետինք։

31 Ի նմին աւուր մատեան ոմանք փարիսեցիք, եւ ասեն ցնա. Ե՛լ եւ գնա աստի, զի Հերովդէս կամի սպանանել զքեզ։

23 Մինն ասաց նորան. Տէ՛ր՝ միթէ քիչ են նորանք, որ պիտի ապրին. եւ նա ասաց նորանց.

24 Ջանք արէք որ նեղ դռնովը ներս բ մտնէք. ասում եմ ձեզ, թէ, Շատ մարդիկ կը խնդրեն մտնել եւ չեն գ կարենալ։

25 Նրանից ետեւ որ տան տէրը դ կը մտնէ եւ դուռը կը փակէ. եւ կսկսէք դուրսը կանգնել եւ դուռը թակել՝ եւ ասել. Տէր Տէր՝ բաց ե մեզ. պատասխան տալով կասէ ձեզ. Չեմ ճանաչում ձեզ թէ ինչ տեղից զ էք։

26 Այն ժամանակը կսկսէք ասել. Քո առաջից կերինք եւ խմեցինք, եւ մեր փողոցներումը սովորցրիր։

27 Եւ կասէ. Ասում եմ ձեզ, ես չեմ ճանաչում է ձեզ. թէ ինչ տեղից էք. հեռու կացէք ինձանից դուք անիրաւութեան ամէն թ մշակներդ։

28 Այնտեղ կը լինի լաց եւ ատամների ժ կրճտել. երբոր Աբրահամին եւ Իսահակին եւ Յակոբին եւ ամէն մարգարէներին Աստուծոյ արքայութեան մէջը կը տեսնէք՝ եւ ձեզ դուրս ի հանած։

29 Եւ արեւելքիցն ու արեւմուտքից, եւ հիւսիսից ու հարաւից ՟կը գան եւ Աստուծոյ արքայութենումը կը նստին։

30 Եւ ահա յետիններ կան՝ որ առաջին կը լինին. եւ առաջիններ կան՝ որ յետին լ կը լինին։

31 Նոյն այն օրը մին քանի փարիսեցիք մօտ եկին եւ նորան ասացին. Դուրս եկ եւ գնա այս տեղից. ինչու որ Հերովդէս կամենումէ որ քեզ սպանէ։

բ Մատթ. Է. 13.
գ Յովհ. Է. 34. Ը. 21. ԺԳ. 33. Հռովմ. Թ. 31.
դ Սաղ. ԼԲ. 6. Եսայ. Ծե. 6.
ե Մատթ. ԻԵ. 10.
զ Ղկ. Զ. 46.
է Մատթ. Է. 23. ԻԵ. 12.
ը Մատթ. Է. 23. ԻԵ. 41. Համար. 25.
թ Սաղ. Զ՛. 8. Մատթ. ԻԵ. 41.
ժ Մատթ. Ը. 12. ԺԳ. 42. ԻԴ. 51.
ի Մատթ. Ը. 11.
լ Մատթ. ԺԹ. 30. Ի. 16. Մարկ. Ժ. 31.

32 Եւ ասէ ցնոսա · Երթայք ա-
սացէք աղուեսուն այնմիկ · Ահա-
ւասիկ հանեմ դեւս, եւ բժշկու-
թիւնս կատարեմ այսօր եւ վաղիւ ·
եւ յերիր աւուր կատարիմ ։
33 Բայց պարտ է այսօր եւ վա-
ղիւ եւ ՚ի միւսում աւուր գնալ ·
զի ոչ է մարթ մարգարէի կորնչել
արտաքոյ քան զԵրուսաղէմ ։
34 Երուսաղէմ Երուսաղէմ՝ որ
կոտորէիր զմարգարէս, եւ քարկոծ
առնէիր զառաքեալսն առ քեզ · քա-
նիցս անգամ կամեցայ ժողովել զոր-
դիս քո, որպէս հաւ զձագս իւր ընդ
թեւովք եւ ոչ կամեցարուք ։

35 Ահա թողեալ լիցի ձեզ տուն
ձեր ։ Բայց ասեմ ձեզ, եթէ Ո՛չ եւս
տեսանիցէք զիս, մինչեւ ասիցէք՝
Օրհնեալ եկեալն յանուն Տեառն ։

32 Եւ նորանց ասաց · Գնացէք
ասացէք այն աղուէսին, թէ Ահա
դեւեր եմ հանում եւ բժշկութիւն-
ներ կատարում այսօր եւ վաղը ·
եւ երեք օրումը ՛ կը կատարեմ ։
33 Բայց այսօր եւ վաղը եւ միւս
օրը պէտք է գնալ · ինչու որ՝ կա-
րելի չէ՞ որ մին մարգարէ Երուսա-
ղէմից դուրս կորչի ։
34 Երուսաղէմ Երուսաղէմ՝ որ
մարգարէները կոտորում, եւ քեզ
մօտ ուղարկուածները քարկոծում-
էիր · քանի անգամ կամեցայ քո որ-
դիքներդ ժողովել՝ ինչպէս որ հաւն
իրեն ձագերը թեւերին տակը · եւ
; չը կամեցաք ։
35 Ահա ձեր տունը թողած կը լինի
ն ձեզ · բայց ասումեմ ձեզ՝ թէ էլ
ինձ չէք տեսնի՝ մինչեւ որ ասէք ·
Օրհնեալ է Տէրի անունով ւ եկածը ։

## ԳԼ. ԺԴ

1 Եւ եղեւ ՚ի մտանելն նորա ՚ի
տուն ուրումն իշխանացն փարիսե-
ցւոց ՚ի շաբաթու ուտել հաց, եւ
նոքա սպասէին նմա ։
2 Եւ ահա այր ոմն էր անդ ջրգո-
ղեալ առաջի նորա ։
3 Պատասխանի ետ Յիսուս եւ ա-
սէ ցօրինականսն եւ ցփարիսեցիս ·
Եթէ արժան իցէ ՚ի շաբաթու բժշ-
կել ։
4 Եւ նոքա լուռ եղեն · եւ բուռն
հարեալ զնմանէ՝ բժշկեաց զնա, եւ
արձակեաց ։
5 Եւ ասէ ցնոսա · Ո՞յր ուրուք
՚ի ձէնջ էշ կամ եզն՝ անկանիցի ՚ի
ջրհոր, եւ ոչ վաղվաղակի հանիցէ
զնա յաւուր շաբաթու ։
6 Եւ ոչ կարացին տալ նմա պա-
տասխանի առ այն ։
7 Ասաց եւ առ կոչնականսն ա-

1 Եւ էջաւ որ նա մին շաբաթ
օր փարիսեցոց իշխաններէ մինին
տունը մտաւ՝ որ հաց ուտէ · եւ
նորանք սպասումէին նորան ։
2 Եւ ահա այնտեղ մին ջրգող-
ված մարդ կար նորան առաջին ։
3 Յիսուս պատասխան տուաւ եւ
այն օրէնք գիտողներին եւ փարի-
սեցիներին ասաց · Միթէ արժան է
շաբաթ օրը բժշկութիւն = անել ։
4 Եւ նորանք լուռ կացան · եւ
ձեռով բռնեց նորան՝ եւ նորան
բժշկեց եւ արձակեց ·
5 Եւ նորանց ասաց · Ձեզանից
մին էշը կամ եզը ջրհորի մէջ ընկ-
նի եւ շուտով չըհանէ նորան շա-
բաթ բ օրը ։
6 Եւ չըկարացին պատասխան տալ
նորան այն բանին համար ։
7 Այն կանչված մարդկանցն էլ

՛ Եբր · Բ · 10 ·
; Մատթ · ԻԳ · 37 ·
ն Ղեւ · ԻԶ · 31. 32 ·
Սաղ · ԿԹ · 25 ·
Եսայ · Ա · 7 ·

Գած · Թ · 27 ·
ւ Մրկ · Գ · 12 ·
Սաղ · ՃԺԸ · 26 ·
Մատթ · ԻԱ · 9 ·
Մարկ · ԺԱ · 10 ·

Գլ · ԺԹ · 38 ·
Յովհ · ԺԲ · 13 ·

= Մատթ · ԺԲ · 10 ·
բ Ելից · ԻԳ · 5 · Բ

Օրին · ԻԲ · 4 ·
Գլ · ԺԳ · 15 ·

առակ մի , հայեցեալ թէ զիարդ
բարձրնտիր լինէին , ասէ ցնոսա ։

8 Յորժամ կոչիցէ ոք զքեզ 'ի
հարսանիս՝ կամ 'ի կոչունս , մի
բազմիցիս յառաջին բարձին . գուցէ
պատուականագոյն եւս քան զքեզ
իցէ կոչեցեալ 'ի նմանէ ։
9 Եւ եկեալ՝ որ զքեզն եւ զնա
կոչեաց , ասիցէ ցքեզ . Տուր սմա
տեղի . եւ ապա սկսանիցիս ամօ-
թով զյետին տեղին ունել ։
10 Այլ յորժամ կոչիցիս , երթի-
ջիր՝ բազմեսջիր 'ի յետին տեղ-
ւոջ . զի յորժամ գայցէ՝ որ կո-
չեացն զքեզ , ասիցէ ցքեզ . Բարե-
կամ 'ի վեր մատիր . յայնժամ եղիցի
քեզ փառք առաջի բազմակցացն քոց ։
11 Զի ամենայն որ բարձրացու-
ցանէ զանձն , խոնարհեսցի . եւ որ
խոնարհեցուցանէ զանձն , բարձ-
րասցի ։
12 Ասէ եւ ցկոչնատէրն . Յորժամ
առնիցես ճաշ կամ ընթրիս , մի
կոչեր զբարեկամս քո , եւ մի զեղ-
բարս քո , եւ մի զազգականս քո ,
եւ մի զդրացիս քո , եւ մի զմեծա-
մեծս . զի մի եւ նոքա փոխարէն
կոչեսցեն զքեզ , եւ լինիցի քեզ
հատուցումն ։

13 Այլ յորժամ առնիցես ընդու-
նելութիւն , կոչեա զաղքատս եւ
զխեղս եւ զկաղս եւ զկոյրս ։
14 Եւ երանելի լինիցիս . զի ոչ
ունին փոխարէն հատուցանելոյ քեզ .
եւ հատուսցի քեզ փոխարէն 'ի յա-
րութեան արդարոց ։

15 Իբրեւ լուաւ զայս ոմն 'ի բազ-
մականացն՝ ասէ ցնա . Երանի որ
կերիցէ ճաշ յարքայութեան Աս-
տուծոյ ։
16 Եւ նա ասէ . Այր ոմն զոր-

մին առակ ասաց , տեսնելով թէ
ինչպէս վերեւի տեղերն էին ընտ-
րում . ասաց նորանց .
8 Երբոր մէկը քեզ հարսանիք
կամ հացկերութիւն կանչէ , առա-
ջին բարձին վերայ մի նստիր . չը լինի
թէ քեզանից էլ աւելի պատուա-
կան մարդ լինի կանչված նորանից .
9 Եւ նա՝ որ քեզ եւ նորան
կանչեց , գայ եւ քեզ ասէ . Սո-
րան տեղ տուր . եւ ապա սկսես
ամօթով յետին տեղը նստիլ ։
10 Բայց երբոր կանչվիս՝ ‡ գնա
յետին տեղը նստէ . որ նա որ
կանչեց քեզ՝ երբոր գայ , ասէ քեզ .
Բարեկամ՝ վերեւ նստէ . այն ժա-
մանակը քեզ հետ նստօղներին ա-
ռաջին փառք կը լինի քեզ .
11 Պատճառն որ՝ ամէն ով որ
իրեն անձը բարձրացնում է՝ կը խո-
նարհվի . եւ ով որ իրեն անձը խո-
նարհացնում է , † կը բարձրանայ ։
12 Եւ հացկերութեան տիրոջն էլ
ասաց . Երբոր ճաշ կամ ընթրիք
անես , մի կանչեր քո բարեկամնե-
րից , եւ ոչ քո եղբայրներից , եւ
ոչ քո ազգականներից եւ ոչ քո
հարեւաններից եւ ոչ էլ մեծամեծ-
ներին . որ չըլինի թէ նորանք էլ
նորա տեղ կանչեն քեզ եւ նա հա-
տուցում լինի քեզ ։
13 Բայց երբոր հացկերութիւն
անես՝ կանչէ աղքատներին եւ խե-
ղերին եւ կաղերին եւ ‡ կուրերին ,
14 Եւ երանելի կը լինիս . ինչու
որ՝ բան չունեն որ նորա տեղ վը-
ճարեն քեզ . եւ արդարների յա-
րութեան ժամանակին նորա տեղ
հատուցում կը լինի քեզ ։
15 Երբոր այն տեղան նստօղներից
մինն այս բանս լսեց՝ նորան ասաց .
Երանի նորան՝ որ Աստուծոյ ար-
քայութիւնումը ճաշ ∥ կուտէ ,
16 Եւ նա ասաց . Մին մարդ

‡ Առակ . ԻԵ . 6 , 7 . | Սաղ . ԺԸ . 27 . Առակ . ԻԹ . 23 . Մատթ . ԻԳ . 12 . | Ղկ . ԺԸ . 14 . Յակ . Դ . 6 . Ա Պետ . Ե . 5 .
† Յոբ . ԻԹ . 29 . | ‡ Նէեմ . Ը . 10 . 12 . ∥ Յայտ . ԺԹ . 9 .

ծեաց ընթրիս , եւ հրաւիրեաց ըզ
բազումս ։
17 Եւ առաքեաց զծառայս իւր ՚ի
ժամու ընթրեացն կոչել զհրաւի-
րեալսն՝ թէ Եկայք , զի ահաւասիկ
պատրաստ է ամենայն ինչ ։
18 Եւ սկսան մի ըստ միոջէ ամե-
նեքեան հրաժարել . առաջինն ասէ .
Ագարակ գնեցի , եւ հարկ է ելա-
նել տեսանել զնա , աղաչեմ զքեզ՝
կալ զիս հրաժարեալ ։
19 Եւ միւսն ասէ . Լուծս հինգ
եզանց գնեցի , եւ երթամ փորձել
զնոսա , աղաչեմ զքեզ՝ կալ զիս
հրաժարեալ ։
20 Եւ միւսն ասէ . Կին առի , եւ
վասն այնորիկ ոչ կարեմ գալ ։
21 Եւ եկեալ ծառայն պատմեաց
զայն տեառն իւրում ։ Յայնժամ
բարկացեալ տանուտէրն՝ ասէ ցծա-
ռայն իւր . Ել վաղվաղակի ՚ի հրա-
պարակս եւ ՚ի փողոցս քաղաքիդ ,
եւ զաղքատս եւ զխեղս եւ զկաղս
եւ զկոյրս մոյծ այսր ։
22 Եւ ասէ ծառայն . Տէր՝ եղեւ
զոր հրամայեցերն , եւ կայ եւս
տեղի ։
23 Եւ ասէ տէրն ցծառայն . Ե՛լ
՚ի ճանապարհս եւ ՚ի ցանգս , եւ ա-
րա այսր մտանել , զի լցցի տունս
իմ ։
24 Ասեմ ձեզ , զի Ո՛չ ոք յայնց
կոչեցելոց ճաշակեսցէ յընթրեաց
իմոց ։
25 Եւ երթային ընդ նմա ժողո-
վուրդք բազումք . դարձաւ եւ ասէ
ցնոսա ։
26 Եթէ ոք գայ առ իս՝ եւ ոչ ա-
տեայ զհայր իւր եւ զմայր եւ զկին
եւ զորդիս եւ զեղբարս եւ զքորս ,
նաեւ զանձն եւս իւր , ոչ կարէ
իմ աշակերտ լինել ։

ընթրիք տուաւ եւ շատ մարդիկ
ե հրաւիրեց ,
17 Եւ ընթրիքի ժամին որ եկաւ՝
իրեն ծառան ուղարկեց՝ որ այն
հրաւիրածները կանչէ թէ , Եկէք ,
որ ահա ամէն բան պատրաստ ը է ։
18 Եւ ամէնքն սկսեցին մէն մէն
յետ քաշվիլ . առաջինն ասաց .
Արտ գնեցի , եւ պէտք է՝ որ եր-
թամ նորան տեսնեմ . աղաչումեմ
քեզ՝ որ ինձ թող տաս ։
19 Եւ միւսն ասաց . Հինգ զոյգ
եզ գնեցի , եւ գնումեմ որ նորանց
փորձեմ . աղաչումեմ քեզ՝ որ ինձ
թող տաս ։
20 Եւ միւսն ասաց . Կին առի ,
եւ նորահամար չեմ կարող գալ ։
21 Եւ ծառան եկաւ եւ այս բա-
ները պատմեց իրեն տիրոջը . այն
ժամանակը տան տէրը բարկացաւ
եւ իրեն ծառային ասաց . Դուրս գնա
շուտով քաղաքին բաց տեղերանքն
ու փողոցները . եւ աղքատներին
ու խեղերին , եւ կաղերին ու կու-
րերին ներս մտցրու այս տեղս ։
22 Եւ ծառան ասաց . Տէր՝ ինչ որ
հրամայեցիր էլաւ , եւ դեռ էլ տեղ
կայ ։
23 Եւ տէրն ասաց ծառային .
Դուրս գնա ճանապարհներին ու պատ-
նի տակերին՝ եւ ստիպէ որ այստեղս
մտնեն , որ իմ տունս լցվի ։
24 Ասումեմ ձեզ՝ թէ , Այդ կանչ-
վածներիցն ընաւ մինն էլ իմ ընթ-
րիքիս համը չը պիտի թ առնէ ։
25 Եւ շատ ժողովուրդներ նորա
հետ գնումէին . դարձաւ եւ նորանց
ասաց ։
26 Թէ որ մինն ինձ մօտ ժ գայ՝ եւ
չատէ իրեն հայրըն ու մայրը , կնի-
կանըն ու որդիքներին , եւ եղբայր-
ներին եւ ի քոյրերին , եւ իսկ իրեն
անձին լ էլ . նա չի կարող ինձ ա-
շակերտ լինել ։

ե Մատթ . ԻԲ . 2 ։ ը Առակ . Թ . 2 . 5 ։ | թ Մատթ . ԻԱ . 43 ։ ԻԲ . 8 ։ Գործ . ԺԳ . 46 ։ | ժ Բ Օրին . ԺԳ . 6 ։ ԼԳ . 9 ։ Մատթ . Ժ . 37 ։ | ի Հռովմ . Թ . 13 ։ լ Յայտ . ԺԲ . 11 ։

27 Զի որ ոչ բառնայ զխաչ իւր՝ եւ գայ զհետ իմ, ոչ կարէ իմ աշակերտ լինել։

28 Ո՞վ ոք ՚ի ձէնջ կամիցի շինել աշտարակ, եւ ոչ նախ նստեալ համարիցի զծախսն՝ եթէ ունիցի բաւական ՚ի կատարումն։

29 Զի գուցէ իբրեւ արկանիցէ հիմն՝ եւ ոչ կարիցէ կատարել, ամենեքին որ տեսանիցեն, սկսանիցին ծաղր առնել զնա.

30 Եւ ասել. թէ Այս այր սկսաւ շինել, եւ ոչ կարաց կատարել։

31 Կամ ո՛ր թագաւոր երթեալ տայցէ պատերազմ ընդ այլում թագաւորի. եւ ոչ նստեալ նախ խորհիցի, եթէ կարող իցէ տասն հազարաւ զդէմ ունել զայնորիկ՝ որ գայցէ ՚ի վերայ նորա քսան հազարաւ։

32 Ապա թէ ոչ՝ մինչդեռ հեռագոյն իցէ, հրեշտակութիւն առաքեալ՝ աղաչիցէ ՚ի խաղաղութիւն։

33 Արդ՝ այսպէս ամենայն ոք ՚ի ձէնջ՝ որ ոչ հրաժարիցէ յամենայն ընչից իւրոց, ոչ կարէ իմ աշակերտ լինել։

34 Բարւոք է աղ. ապա թէ աղն անհամեսցի, իւ համեմեսցի։

35 Ո՛չ յերկիր՝ եւ ոչ յաղբ է պիտանացու, այլ ընկենուլ զնա արտաքս. որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։

27 Ինչու որ՝ ով որ իրեն խաչը վեր չառնէ եւ իմ ետեւէս գայ՝ նա չի կարող ինձ աշակերտ ‡ լինել։

28 Ձեզմանից ով է՝ որ կամենայ աշտարակ շինել՝ եւ առաջ չի նստի եւ ծախսը համարէ՝ եթէ աւարտելոյ համար բաւական բան ⁂ ունի.

29 Որ չը լինի թէ երբոր հիմունքն ձգէ եւ չկարողանայ աւարտել, ամէնքն որ տեսնեն, սկսեն ծաղր անել նորան.

30 Եւ ասել. թէ Այս մարդըս սկսեց շինել, եւ չկարողացաւ աւարտել։

31 Կամ թէ՝ մի թագաւոր կը գնայ ուրիշ թագաւորի հետ կռուանէ. եւ չի նստիլ առաջ միաբանել՝ եթէ տասն հազարով կարող է դէմ կենալ նորան՝ որ քսան հազարով պիտի գայ իրեն վերայ։

32 Ապա թէ չէ՝ քանի որ հեռու է՝ պատգամաւոր կուղարկէ՝ եւ կաղաչէ՝ որ խաղաղութիւն անէ։

33 Ուրեմն այսպէս էլ ձեզմանից ամէն մէկն՝ որ իրեն ամէն ապրանքից չհրաժարվի՝ չի կարող ինձ աշակերտ լինել։

34 Աղն լաւ բան է. բայց թէ որ աղն անհամանայ, ինչով պիտի § համեմանայ.

35 Ո՛չ հողի համար է պիտանի եւ ոչ աղբի համար, այլ պէտք է դուրս ձգել. Ով որ լսելոյ ականջ ունի՝ թող լսէ։

## ԳԼ. ԺԵ

1 Եւ էին մերձ առ նա ամենայն մաքսաւորք եւ մեղաւորք՝ լսել ՚ի նմանէ։

2 Տրտնջէին փարիսեցիքն եւ դպիրք՝ եւ ասէին. Ընդէ՞ր սա զմեղաւորս ընդունի՝ եւ ուտէ ընդ նոսա։

1 Եւ ամէն մաքսաւորները ու մեղաւորները մօտենումէին նորան որ լսեն = նորանից։

2 Փարիսեցիները ու կարգացողները տրտնջումէին եւ ասում. Սա ինչու է մեղաւորներին ընդունում՝ եւ նորանց հետ ‡ ուտում։

‡ Մատթ. ԺԶ. 24. Մարկ. Ը. 34. Գլ. Թ. 23. Բ Տիմ. Գ. 12.

⁂ Ղուկ. ԻԳ. 27.

§ Մատթ. Ե. 13. Մարկ. Թ. 50.

= Մատթ. Թ. 10.

‡ Գործ. ԺԱ. 3. Գաղ. Բ. 12.

3 Ասաց առ նոսա զառակս զայս․
4 Ո՞վ ոք իցէ 'ի ձէնջ մարդ՝ ո-
րոյ իցէ հարիւր ոչխար, եւ կորու-
սանիցէ մի 'ի նոցանէ․ ոչ թողու-
ցու զինն-սուն եւ զինն յանապատի,
եւ երթայցէ զհետ կորուսելոյն՝ մին-
չեւ գտանիցէ զնա։
5 Եւ իբրեւ գտանէ, դնէ զնա 'ի
վերայ ուսոց իւրոց խնդալով․

6 Եւ երթայ 'ի տուն․ կոչէ զբա-
րեկամս եւ զդրացիս, եւ ասէ ցնո-
սա․ Ուրախ եղերուք ընդ իս, զի
գտի զոչխարս իմ զկորուսեալ։

7 Ասեմ ձեզ․ զի Այսպէս է ու-
րախութիւն յերկինս վասն միոյ մե-
ղաւորի՝ որ ապաշխարիցէ, քան
վասն իննսուն եւ ինն արդարոց՝ ո-
րոց չիցէ պիտոյ ապաշխարութիւն

8 Կամ ո՞վ իցէ կին, որոյ իցեն
դրամք տասն․ եւ եթէ կորուսա-
նիցէ դրամ մի, ոչ լուցանիցէ ճրագ,
եւ ածիցէ աւել 'ի տան եւ խնդրի-
ցէ աղէկ՝ մինչեւ գտանիցէ։
9 Եւ իբրեւ գտանէ, կոչէ զբա-
րեկամս եւ զդրացիս՝ եւ ասէ․ Ու-
րախ լերուք ընդ իս, զի գտի ըզ
դրամն իմ զոր կորուսի։

10 Այնպէս՝ ասեմ ձեզ, Ուրա-
խութիւն եղիցի առաջի հրեշտակաց
Աստուծոյ 'ի վերայ միոյ մեղաւորի՝
որ ապաշխարիցէ։
11 Եւ ասէ․ Առն միոջ էին երկու
որդիք․
12 Ասէ կրտսերն 'ի նոցանէ ցհայ-
րն․ Հա՛յր՝ տուր ինձ բաժին, որ
անկանի յընչիցդ․ եւ նա բաժա-
նեաց նոցա զկեանսն։
13 Եւ յետ ոչ բազում աւուրց՝
ժողովեալ զամենայն կրտսեր որդ-
ւոյն՝ գնաց յաշխարհ հեռի․ եւ անդ
վատնեաց զինչս իւր, զի կեայր ա-
նառակութեամբ։

3 Այս առակը ասաց նորանց․
4 Ձեզանից ո՞վ է այն մարդը՝ որ
հարիւր ոչխար ունենայ, եւ նորան-
ցից մինը ‡ կորցնէ․ նա չի թողնիլ
այն իննսունեւ ինը անապատումը
եւ այն կորածին ետեւէն գնալ՝
մինչեւ որ գտնէ նորան։
5 Եւ երբոր կը գտնէ՝ ուրախա-
նալով իրեն ուսերին վերայ կը դնէ
նորան․
6 Եւ տուն կը գայ․ բարեկամնե-
րին եւ դրացիներին կը կանչէ եւ
նորանց կասէ․ Ուրախացէք ինձ
հետ․ ինչու որ իմ կորած ոչխարը
† գտի։
7 Ասումեմ ձեզ, թէ Այսպէս ա-
ւելի ուրախութիւն կը լինի երկին-
քումը մին մեղաւորի համար՝ որ ա-
պաշխարէ, քանթէ իննսուն եւ ինն
արդարներին համար՝ որ ապաշխա-
րութիւն պէտք չէ ⸸ նորանց։
8 Կամ ո՞վ է այն կինը՝ որ տասը
դրամ ունենայ, եւ թէ որ մին դը-
րամ կորցնէ՝ ճրագ չի վառել եւ
տան մէջն աւելել եւ չատ չուռ
գալ՝ մինչեւ որ գտնէ։
9 Եւ երբոր կը գտնէ բարեկամ-
ներին եւ դրացիներին կը կանչէ եւ
կասէ․ Ուրախացէք ինձ հետ․ ին-
չու որ իմ դրամը գտի՝ որ կորցը-
րել էի։
10 Ասումեմ ձեզ, Այնպէս էլ՝ Աս-
տուծոյ հրեշտակներին առաջին ու-
րախութիւն կը լինի մին մեղաւորի
համար որ կապաշխարէ։
11 Եւ ասաց․ Մին մարդ երկու
որդի ունէր․
12 Նորանցից փոքրն ասաց հօրը․
Հա՛յր՝ ինձ բաժին տուր ինչ որ կը
հասնէ ինձ ապրանքներիցդ, եւ նա
իրեն ապրանքը բաժանեց ⸗ նորանց։
13 Եւ չատ օր չանցաւ՝ որ փոքր
որդին ամէն բաները ժողովեց եւ
հեռու աշխարհք գնաց․ եւ այն տեղ
իրեն ապրանքը մսխեց, ինչու որ՝ ա-
նառակութենով էր կեանք վարում։

‡ Մատթ. ԺԸ. 12 | † Ա Պետ. Բ. 10. 25 | ⸸ Ղկ. Ե. 32 | ⸗ Մարկ. ԺԲ. 44

14 Եւ իբրեւ սպառեաց զամենայն ,
եղեւ սով սաստիկ յաշխարհին յայն-
միկ , եւ սկսաւ ինքն չքաւորել ։
15 Եւ գնացեալ յարեցաւ ՚ի մի
ոմն ՚ի քաղաքացւոց աշխարհին այ-
նորիկ . եւ յղեաց զնա յագարակ
իւր արածել խոզս ։
16 Եւ ցանկայր լնուլ զորովայն
իւր յեղջերէն , զոր խոզքն ուտէին ,
եւ ոչ ոք տայր նմա ։

17 Եւ եկեալ ՚ի միտս իւր՝ ասէ .
Քանի՜ վարձկանք իցեն ՚ի տան հօր
իմոյ հացալիցք , եւ ես աստ սովա-
մահ կորնչիմ ։
18 Յարուցեալ գնացից առ հայր
իմ , եւ ասացից ցնա . Հայր՝ մեղայ
յերկինս եւ առաջի քո .
19 Եւ ոչ եւս եմ արժանի կոչել
որդի քո , արա զիս իբրեւ զմի ՚ի
վարձկանաց քոց ։
20 Եւ յարուցեալ եկն առ հայր
իւր . եւ մինչդեռ հեռագոյն էր ,
ետես զնա հայրն՝ եւ գթացաւ .
յարեաւ եւ ընթացաւ ընդ առաջ .
անկաւ զպարանոցաւն նորա , եւ
համբուրեաց զնա ։
21 Եւ ասէ ցնա որդին . Հայր՝
մեղայ յերկինս եւ առաջի քո , ոչ
եւս եմ արժանի կոչել որդի քո ։

22 Ասէ հայրն ցծառայս իւր .
Վաղվաղակի հանէք զպատմուճանն
առաջին , եւ ագուցէք նմա , եւ
տուք մատանի ՚ի ձեռն նորա , եւ
կօշիկս յոտս նորա ։
23 Եւ ածէք զեզն պարարակ՝ զե-
նէք , կերիցուք եւ ուրախ լիցուք ։
24 Զի այս որդի իմ մեռեալ էր՝
եւ եկաց , կորուսեալ էր՝ եւ գտաւ .
եւ սկսան ուրախ լինել ։
25 Եւ էր երէց որդին նորա յա-
գարակի . եւ մինչդեռ գայր՝ եւ
մերձ եղեւ ՚ի տունն , լուաւ զձայն
երգոց եւ զպարուց ։

14 Եւ երբոր ամէնը հատցուց՝
սաստիկ սով էլաւ այն աշխարհ-
քումը՝ եւ ինքն սկսեց չքաւորիլ ։
15 Եւ գնաց այն աշխարհքի քա-
ղաքացիներին մէկին մօտ մտաւ .
եւ նա նորան ուղարկեց իւրեան յանդն
որ խոզ արածացնէ ։
16 Եւ ցանկանումէր՝ որ իւրեան փորը
լցնէ այն եղջիւրովը՝ որ խոզերն
ուտումէին՝ եւ ոչ ով չէր տալիս
նորան ։
17 Եւ երբոր իւրեան խելքը եկաւ ,
ասաց . Քանի՜ բանվորներ կան իմ
հօրս տանը՝ հացով լցված՝ եւ ես այս
տեղ սովամահ կորչումեմ ։
18 Վեր կենամ գնամ իմ հօրս մօտ՝
եւ նորան ասեմ . Հայր՝ ես մեղայ
երկնքին դէմ եւ քո առաջին .
19 Եւ էլ արժանի չեմ , որ քեզ
որդի կոչվիմ . ինձ քո բանվորներէ
մէկին պէս արա ։
20 Եւ վերկացաւ եկաւ իւրեան հօր
մօտ . եւ դեռ որ հեռու էր՝ հայրը
տեսաւ նորան եւ խղճաց . վերկա-
ցաւ եւ առաջը վազեց՝ նորա վը-
զովն ընկաւ՝ եւ համբուրեց Է նո-
րան ։
21 Եւ որդին ասաց նորան . Հայր՝
ես մեղայ երկնքի դէմ եւ քո ա-
ռաջին , եւ էլ չեմ արժանի՝ որ
քեզ որդի Է կոչվիմ ։
22 Հայրն ասաց իւրեան ծառանե-
րին . Շուտով առաջին պատմու-
ճանը հանեցէք եւ հագցրէք նորան ,
եւ մատանի դրէք նորա ձեռքը
եւ կօշիկներ նորան ոտները .
23 Եւ մասցու եզը բերէք մոր-
թեցէք՝ ուտենք եւ ուրախ լինինք .
24 Ինչու որ՝ այս իմ որդիս մեռած
էր, եւ կենդանացաւ . կորած էր, եւ
գտաւ . եւ սկսեցին ուրախ Ը լինել ։
25 Եւ նորա մեծ որդին յանդումն
էր . եւ երբոր գալիս էր եւ տանն
մօտեցաւ՝ տաղերի եւ պար գալոյ
ձայնը լսեց .

Ե Գործ. Բ. 39 ։ Եփես. Բ. 13. | 17 ։ Է Սաղ. ԾԱ. 4 ։ | Ը Համար. 32 ։ Եփես. Բ. 1 ։ Ե. 14 ։ | Եսայ. Գ. 1 ։

26 Եւ կոչեցեալ առ ինքն զմի 'ի ծառայիցն՝ հարցանէր թէ զինչ իցէ այն ։

27 Եւ նա ասէ ցնա ․ Զի եղբայր քո եկեալ է , եւ եզեն հայր քո զեզն պարարակ , զի ողջամբ ընկալաւ զնա ։

28 Բարկացաւ՝ եւ ոչ կամէր մտանել , եւ հայրն ելեալ արտաքս՝ աղաչէր զնա ։

29 Պատասխանի ետ եւ ասէ ցհայրն ․ Այս քանի ամք են՝ զի ծառայեմ քեզ , եւ երբէք զպատուիրանաւ քով ոչ անցի ․ ուլ մի երբէք ոչ ետուր ինձ՝ զի ուրախ եղէց ընդ բարեկամս իմ ։

30 Յորժամ եկն որդիդ քո այդ՝ որ եկեր զկեանս քո ընդ պոռնիկս , զեներ դմա զեզն պարարակ ։

31 Եւ ասէ ցնա ․ Որդեակ՝ դու հանապազ ընդ իս ես , եւ ամենայն որ ինչ իմ է՝ քո է ։

32 Այլ ուրախ լինել եւ խնդալ պարտ էր , զի եղբայր քո այս մեռեալ էր՝ եւ եկեաց , կորուսեալ էր՝ եւ գտաւ ։

26 Եւ ծառաներից մէկին կանչեց իրեն մօտ՝ հարցնում էր թէ դա ինչ է ։

27 Եւ նա ասաց նորան ․ Նորա համար որ քո եղբայրդ եկել է , եւ քո հայրդ մատղացու եզը մորթեց՝ որովհետեւ ողջութեամբ ընդունեց նորան ։

28 Բարկացաւ եւ չէր ուզում ներս մտնել՝ եւ հայրը դուրս եկաւ՝ աղաչում էր նորան ։

29 Պատասխան տուաւ՝ եւ ասաց հօրը ․ Այս քանի տարի է՝ որ քեզ ծառայում եմ՝ եւ քո պատուիրանքից բնաւ մին ժամանակ դուրս չեմ եկել ․ մին ուլ չտուիր ինձ՝ որ իմ բարեկամներիս հետ ուրախ լինեմ ․

30 Երբոր այդ քո որդիդ եկաւ՝ որ քո ապրանքդ պոռնիկներին հետ կերաւ , մատղացու եզը մորթեցիր դորա համար ։

31 Եւ նորան ասաց ․ Որդեակ՝ դու ամէն ժամանակին ինձ հետ ես , եւ ամէն ինչ որ իմն է՝ քոնն է ։

32 Բայց ուրախ լինել եւ խնդալ պէտք էր ․ ինչու որ՝ այս քո եղբայրդ մեռած էր եւ կենդանացաւ ․ կորած էր եւ ‡ գտնւաւ ։

## ԳԼ . ԺԶ

1 Եւ ասէր առ աշակերտսն ․ Այր մի էր մեծատուն , որոյ էր տնտես ․ եւ եկեալ զնմանէ ամբաստանութիւն որպէս թէ վատնիցէ զինչս նորա ։

2 Կոչեաց , եւ ասէ ցնա ․ Զինչ է այս զոր լսեմ զքէն , տուր զհամար տնտեսութեանն քո ․ զի ոչ եւս կարես լինել տնտես ։

3 Ասէ ընդ միտս իւր տնտեսն ․ Զինչ գործեցից , զի տէր իմ հանէ զտնտեսութիւնս ․ գործել ոչ կարեմ՝ մուրանալ ամաչեմ ։

1 Եւ աշակերտներին ասաց ․ Մին հարուստ մարդ կար՝ որ տնտես ունէր ․ եւ չարախօսութիւն էլաւ նորանից իրեն թէ նորա ապրանքը նա մսխում է ․

2 Կանչեց՝ եւ ասաց նորան ․ Սա ինչ է որ ես լսում եմ քեզանից ․ քո տնտեսութեանդ համարը տուր ․ ինչու որ էլ կարող չես տնտես լինել ։

3 Տնտեսն իրեն մտքումն ասաց ․ Ինչ անեմ ․ որ իմ տէրս տնտեսութիւնն ինձանից առնում է ․ գործ գործել չեմ կարող՝ եւ մուրանալ ամաչում եմ ․

‡ Համար ․ 24 ։

4 Գիտեմ զինչ արարից · զի յոր-
ժամ 'ի բաց լինիցիմ 'ի տնտեսու-
թենէս՝ ընկալցին զիս 'ի տունս իւ-
րեանց ։
5 Եւ կոչեցեալ առ ինքն մի ըստ
միոջէ 'ի պարտապանաց տեառն իւ-
րոյ, ասէ ցառաջինն · Քանի՛ ինչ
պարտիս տեառն իմում ։
6 Եւ նա ասէ · Հարիւր մար ձի-
թոյ · ասէ ցնա · Կա՛ զգիր քո, եւ
նիստ գրեա՛ վաղվաղակի յիսուն ։
7 Դարձեալ ասէ ցմիւսն · Դու
քանի՛ ինչ պարտիս, եւ նա ասէ ·
Հարիւր քոռ ցորենոյ · եւ ասէ ցնա ·
Կա՛ զգիր քո՝ եւ նիստ գրեա՛ ութ-
սուն ։
8 Եւ գովեաց տէրն զտնտեսն ա-
նիրաւութեան, զի իմաստութեամբ
արար · զի որդիք աշխարհիս այսո-
րիկ իմաստնագոյն են քան զորդիս
լուսոյ յազգս իւրեանց ։
9 Եւ ես ձեզ ասեմ · Արարէք
ձեզ բարեկամս 'ի մամոնայէ անի-
րաւութեան · զի յորժամ պակասի-
ցէ այն՝ ընկալցին զձեզ 'ի յարկսն
յաւիտենականս ։
10 Որ 'ի փոքրուն հաւատարիմ է,
եւ 'ի բազմին հաւատարիմ է · եւ
որ 'ի փոքրուն անիրաւ է, եւ 'ի
բազմին անիրաւ է ։
11 Իսկ արդ՝ եթէ յանիրաւ մա-
մոնայն չեղէք հաւատարիմք, ըզ
ճշմարիտն ձեզ ո՞ հաւատասցէ ։
12 Եւ եթէ յօտարին չեղէք հա-
ւատարիմք, զձերն ո՞ տացէ ձեզ ։
13 Ո՛չ որ ծառայ կարէ երկուց
տերանց ծառայել · զի եթէ զմին
ատիցէ, եւ զմիւսն սիրիցէ · կամ
զմին մեծարիցէ, եւ զմիւսն արհա-
մարհիցէ · ոչ կարէք Աստուծոյ ծա-
ռայել եւ մամոնայի ։

4 Գիտեմ ինչ կ'ընեմ, որ եր-
բոր այս տնտեսութենէս դուրս
գամ՝ [illegible] ընդունին զիս իրենց
տուները ։
5 Եւ իրեն տիրոջը պարտականնե-
րին մէն մէն իրեն մօտ կանչեց,
առաջինին ասաց · Ի՞նչքան բան
ես պարտական իմ տիրոջս ։
6 Եւ նա ասաց · Հարիւր մար
ձէթ · նորան ասաց · Քո գիրդ առ
եւ նստէ շուտով գրէ յիսուն ։
7 Յետոյ միւսին էլ ասաց · Դու
ինչքան բան ես պարտական · եւ
նա ասաց · Հարիւր քոռ ցորեն · եւ
նորան ասաց · Քո գիրդ առ եւ
նստէ գրէ ութսուն ։
8 Եւ տէրն այն անիրաւ տնտե-
սին գովեց, որ իմաստութենով
գործեց · պատճառն որ՝ այս աշ-
խարհքիս որդիքը լուսոյ որդիքնե-
րիցն աւելի իմաստուն են իրենց
ցեղին – մէջ ։
9 Եւ ես ասում ձեզ · Թէ
Անիրաւ մամոնայիցը բարեկամներ
արէք ձեզ † համար՝ որ երբոր նա
պակասի, յաւիտենական բնակա-
րաններին մէջ ընդունեն ձեզ ։
10 Ո՛վ որ քիչ բանի մէջ հաւա-
տարիմ է, շատ բանի մէջ էլ հա-
ւատարիմ ‡ է · եւ նա որ քիչ բանի
մէջ անիրաւ է, շատ բանի մէջ էլ
անիրաւ է ։
11 Ուրեմն՝ թէ որ անիրաւ մամօ-
նայի մէջ հաւատարիմ չէլաք · ապա
ճշմարիտն ով կը տայ ձեր ձեռքը ։
12 Եւ թէ որ օտար բանի մէջ հա-
ւատարիմ չէլաք, ապա ձերն ով
կը տայ ձեզ ։
13 Ո՛չ ով ծառայ չի կարող երկու
տիրոջ ‡ ծառայել · ինչու որ կամ
մէկին կատէ եւ միւսին կը սիրէ · կամ
մէկին կը պատուէ եւ միւսին ոչինչի
տեղ կը համարէ · կարող չէք Աստու-
ծոյ ծառայել եւ մամօնային ։

– Յովհ. ԺԲ. 36 ։ Եփես. Ե. 8 ։ Ա Թես. Ե. 5 ։ | † Դան. Դ. 27. Մատթ. Զ. 19. ԺԹ. 21. Ղկ. ԺԱ. 41 ։ Ա Տիմ. Զ. 17—19 ։ ‡ Մատթ. ԻԵ. 21. | Ղկ. ԺԹ. 26 ։ ‡ Մատթ. Զ. 24 ։

14 Իբրեւ լսէին զայս ամենայն փարիսեցիքն` քանզի արծաթասէրք էին, եւ անգոսնէին զնա։

15 Եւ ասէ ցնոսա. Դուք էք` որ արդարացուցանէք զանձինս առաջի մարդկան, սակայն Աստուած գիտէ զսիրտս ձեր. զի որ առաջի մարդկան բարձր է, պիղծ է առաջի Աստուծոյ։

16 Օրէնքն եւ մարգարէք մինչեւ ցՅովհաննէս. յայնմհետէ արքայութիւն Աստուծոյ աւետարանի, եւ ամենայն ոք զնա բռնադատէ։

17 Դիւրին իցէ երկնից եւ երկրի անցանել, քան յօրինացն միոյ նշանախեցի անկանել։

18 Ամենայն` որ արձակէ զկին իւր, եւ առնէ այլ, շնայ. եւ որ զարձակեալն առնէ, շնայ։

19 Այր մի էր մեծատուն եւ ագանէր բեհեզս եւ ծիրանիս, եւ ուրախ լինէր հանապազ առատապէս։

20 Եւ աղքատ մի անուն Ղազարոս անկեալ կայր առ դրան նորա վիրաւորեալ.

21 Եւ ցանկայր յագել 'ի փշրանացն` որ անկանէին 'ի սեղանոյ մեծատանն. այլ եւ շունք եւս գային, եւ լիզուին զվէրս նորա։

22 Եւ եղեւ մեռանել աղքատին, եւ տանել հրեշտակաց զնա 'ի գոգն Աբրահամու. մեռաւ եւ մեծատունն` եւ թաղեցաւ։

23 Եւ 'ի դժոխսն ամբարձ զաչս իւր, մինչ 'ի տանջանսն էր. եւ ետես

14 Այս ամէն բաները երբոր փարիսեցիները լսեցին` որոնք արծաթասէր էին, ծաղր էին անում ի նորան։

15 Եւ նորանց ասաց. Դուք էք` որ մարդկանց առաջին ձեր անձերը լ արդարացնում էք` բայց Աստուած գիտում է ձեր խ սրտերը. ծ պատճառն որ` ով որ մարդկանց առաջին բարձր է` նա պիղծ է Աստուծոյ առաջին։

16 Օրէնքն ու մարգարէքը մինչեւ կ Յովհաննէսն էին. նորանից ետեւ Աստուծոյ արքայութիւնն է աւետարանվում, եւ ամէն մարդ ուժով է բռնում նորան։

17 Աւելի հեշտ է որ երկինքն ու երկիրս անցնեն, քան օրէնքից մին պզտիկ նշանագիր վեր հ ընկնի։

18 Ամէն ով որ իրեն կնիկը զուրս է անում եւ ուրիշը առնում, շնութիւն է գործում. եւ նա որ այն զուրս արածն է առնում` շնութիւն է ձ գործում։

19 Մին հարուստ մարդ կար` եւ շատ ազնիւ բեհեզներ եւ ծիրանի շորեր էր հագնում` եւ ամէն ժամանակ շատ ուրախութեան մէջ էր։

20 Եւ մին աղքատ մարդ էլ կար` Ղազարոս անուն. որ խոցերով լցված նորա դռան մօտ վեր ընկած էր.

21 Եւ ցանկանում էր` որ իրեն փորը լցնէ այն փշրանքներիցն` որ այն հարուստին սեղանիցն ընկնում էին` բայց շներն էլ գալիս նորա խոցերը լիզում էին։

22 Եւ էլաւ որ աղքատը մեռաւ, եւ հրեշտակները տարան նորան Աբրահամին գոգը. հարուստն էլ մեռաւ` եւ թաղվեցաւ։

23 Եւ դժոխքին մէջ` երբոր տանջանքի մէջ էր, իրեն աչքերը

ի Մատթ. ԻԳ. 14 · լ Գղ. Ժ. 29 · խ Սաղ. Է. 9 · ծ Ա Թագ. ԺԶ. 7 · կ Մատթ. Դ. 17 · ԺԱ. 12, 13 · Գղ. Է. 29 · հ Սաղ. ՃԲ. 26. 27 · Եսայ. Խ. 8 · ԽԱ. 6 · Մատթ. Ե. 18 · Ա Պետ. Ա. 25 · ձ Մատթ. Ե. 32 · ԺԹ. 9 · Մարկ. Ժ. 11 · Ա Կորնթ. Է. 10, 11 ·

զԱբրահամ 'ի հեռաստանէ, եւ զՂազարոս 'ի գոգ նորա հանգուցեալ։

24 Եւ նա աղաղակեաց եւ ասէ. Հայր Աբրահամ՝ ողորմեա ինձ, եւ առաքեա զՂազարոս, զի թացցէ զծագ մատին իւրոյ 'ի ջուր, եւ զովացուսցէ զլեզու իմ. զի պապակիմ 'ի տապոյ աստի։

25 Եւ ասէ ցնա Աբրահամ. Որդեակ՝ յիշեա, զի ընկալար անդէն զբարիս քո 'ի կեանս քում, եւ Ղազարոս նոյնպէս զչարչարանս. արդ՝ սա աստ մխիթարի, եւ դու աստ պապակիս։

26 Եւ 'ի վերայ այսր ամենայնի՝ վիհ մեծ է ընդ մեզ եւ ընդ ձեզ. եթէ կամիցին աստի առ ձեզ անցանել՝ ոչ կարեն, եւ ոչ այտի ոք առ մեզ անցանել։

27 Եւ ասէ. Արդ աղաչեմ զքեզ հայր, զի արձակեսցես զդա 'ի տուն հօր իմոյ։

28 Են իմ անդ եղբարք հինգ, որպէս զի ասասցէ նոցա վկայութիւն. զի մի եւ նոքա գայցեն յայս տեղի տանջանաց։

29 Եւ ասէ Աբրահամ. Ունին զՄովսէս եւ զմարգարէս, նոցա լուիցեն։

30 Եւ նա ասէ. Ո՛չ հայր Աբրահամ, բայց եթէ 'ի մեռելոց ոք երթիցէ առ նոսա, եւ ապաշխարեսցեն։

31 Եւ ասէ ցնա. Եթէ Մովսիսի եւ մարգարէիցն ոչ լսեն, եւ ոչ թէ 'ի մեռելոց ոք յառնիցէ՝ հաւատասցեն։

բարձրացուց Աբրահամին հեռուանց տեսաւ՝ եւ Ղազարոսին էլ որ նորա գոգումը հանգիստ առած էր.

24 Եւ նա աղաղակեց եւ ասաց. Հայր Աբրահամ՝ ինձ ողորմէ, եւ Ղազարոսին ուղարկէ որ իրեն մատի ծայրը թացանէ ջրումը, եւ իմ լեզուս ւ հովացնէ. ինչու որ այս սաստիկ տաքութենիցս ի պապակվումեմ։

25 Եւ Աբրահամն նորան ասաց. Որդի՝ միտքդ բեր, որ քո բարիքդ քո կենդանութեանդ ընդունեցիր՝ այնպէս էլ Ղազարոսն ծ չարչարանքներ. հիմիկ՝ սա այս տեղ մխիթարվումէ, եւ դու այդ տեղ պապակվումես։

26 Եւ այս ամենուս վերայ՝ մեր մէջ եւ ձեր մէջ մեծ անդունդ կայ, որ եթէ կամենան աստեղից ձեզ մօտ անցանել՝ չեն կարող, եւ ոչ էլ այդ տեղից մինը կարող է մեզ մօտ անցանել։

27 Եւ ասաց. Արա աղաչումեմ քեզ հայր՝ որ դորան ուղարկես իմ հօրս տունը.

28 Ինչու որ՝ ես այնտեղ հինգ եղբայր ունիմ. որ նորանց վկայութիւն տայ. որ նորանք էլ չըգան այս տանջանքիս տեղը։

29 Եւ Աբրահամն ասաց. Նորանք Մօւսէսին եւ մարգարէներին ունին՝ թող նորանց ականջ կ'դնեն։

30 Եւ նա ասաց. Չէ, հայր Աբրահամ, բայց թէ որ մեռելներիցը մինը նորանց մօտ գնայ, կապաշխարեն։

31 Եւ նորան ասաց. Թէ որ Մօւսէսին եւ մարգարէներին ականջ չեն դնում՝ թէ որ մեռելներիցը մինն էլ յարութիւն առնէ՝ չեն հ հաւատալ։

## ԳԼ. ԺԷ

1 Ասաց եւ ցաշակերտսն իւր. Ո՛չ է մարթ չգալ գայթակղու-

1 Իրեն աշակերտներին էլ ասաց. Թէ կարելի չէ՝ որ գայթակ-

ւ Զաք. ԺԴ. 12.
ի Եսայ. ԿԶ. 24. Մարկ. Թ. 44, 46.
ծ Յոբ. ԻԱ. 13. Գղ. Զ. 24.
կ Եսայ. Ը. 20. ԼԴ. 16. Յովհ. Ե. 39. 45. Գործ. ԺԵ. 21. ԺԷ. 11.
հ Յովհ. ԺԲ. 10, 11.

թեան. բայց վայ այնմիկ է՝ յոյր
ձեռն գայցէ ։
2 Լաւ էր նմա՝ թէ վէմ երկա-
նաքար կախէր զպարանոցէ նորա՝
եւ անկանէր 'ի ծով, քան թէ գայ-
թակղեցուցանէ զմի ոք 'ի փոքրը-
կանցս յայսցանէ ։
3 Զգոյշ կացէք անձանց. եթէ
մեղիցէ եղբայր քո, սաստեա նմա.
եւ եթէ ապաշխարիցէ, թող նմա ։
4 Եւ եթէ եօթն անգամ մեղիցէ
քեզ, եւ եօթն անգամ դարձցի 'ի
քեզ՝ եւ ասիցէ, Ապաշխարեմ, թող-
ցես նմա ։
5 Եւ ասեն առաքեալքն ցՏէր.
Յաւել մեզ հաւատս ։
6 Եւ ասէ Տէր. Եթէ ունիցիք
հաւատս քան զհատ մանանխոյ, եւ
ասիցէք թզենւոյ այդմիկ, Խլեաց
եւ անկեաց 'ի ծովու, եւ հնազան-
դեսցի ձեզ ։
7 Իսկ ով ոք 'ի ձէնջ, որ ունի-
ցի ծառայ հողագործ կամ հովիւ,
որ իբրեւ մտանիցէ յագարակէ՝ ա-
սիցէ ցնա վաղվաղակի. Թէ Ա՛նց
բազմեաց ։
8 Այլ ո՛չ ասիցէ ցնա. Թէ Պատ-
րաստեա զինչ ընթրեաց իցեմ, եւ
գօտի ածեալ պաշտեա զիս մինչեւ
կերայց եւ արբից, եւ ապա կերի-
ցես եւ արբցես դու ։
9 Միթէ շնորհ ինչ ունիցի ծա-
ռային այնմիկ, զի արար զամենայն
հրամանսն ։
10 Նոյնպէս եւ դուք՝ յորժամ ա-
նիցէք զամենայն հրամայեալսն ձեզ,
ասասջիք՝ Թէ Ծառայք անպիտանք
եմք. զոր պարտէաքն առնել, ա-
րարաք ։

գայթիչն = չըգայ. բայց վայ է այն
մարդուն՝ որ նորա ձեռօքը կըգայ.
2 Աւելի լաւ էր նորան՝ որ նորա
վըզինը ջաղացի քար կախուէր եւ
ծովըն ընկնէր՝ քան թէ այս փոքըր-
ներիցս մէկին գայթակղացնէ ։
3 Զգոյշ կացէք անձներնիդ. Թէ
որ քու եղբայրդ մեղք ÷ անէ՝ սաս-
տէ ÷ նորան. եւ թէ որ ապաշխա-
րէ՝ Թողութիւն տուր նորան ։
4 Եւ թէ որ եօթն անգամ քեզ
դէմ մեղք անէ՝ եւ եօթն անգամ
քեզ մօտ դառնայ եւ ասէ՝ Ապաշ-
խարումեմ՝ Թողութիւն տուր նո-
րան ։
5 Եւ առաքեալներն ասացին Տէ-
րին՝ Մեր հաւատքըն աւելցուր ։
6 Եւ Տէրն ասաց. Թէ որ մանա-
նեխի հատին չափ հաւատք ունե-
նաք, եւ այս թըզի ծառիս ասէք.
Պոկուէ՛ եւ ծովըն մէջ անկըւէ՝ կը
հնազանդուի = ձեզ ։
7 Բայց ձեզմէնից ով է նա՝ որ
մէն հողագործ կամ հովիւ ծառայ
ունենայ, որ երբոր յանդիցը ÷-
÷- մանէ՝ շուտով ասէ նորան՝
Թէ Ե՛կ սեղան նստէ.
8 Բայց չասէ նորան՝ Թէ Պատ-
րաստէ ինչ որ իրիկուան ուտելի ու-
տեմ, եւ գօտիկըդ կապած ինծ
ծառայէ՝ մինչեւ որ ուտեմ եւ խըմ-
մեմ, եւ յետոյ դու ալ կեր եւ
+ խմէ ։
9 Միթէ այն ծառայինը շնորհա-
կալ կըլլայ որ այն ամէն հրաման-
ները արաւ ։
10 Ասանկ ալ դուք՝ երբոր ամէն
ձեզ հրամայուած բաներըն անէք,
ասացէք Թէ՝ Մենք անպիտան ծա-
ռաներ ~ ենք. նա որ պարտական
էինք անելու, արինք ։

= Մատթ. ԺԸ. 6. 7. Մարկ. Թ. 42. Ա Կորնթ ԺԱ. 19.
÷ Մատթ. ԺԸ. 15. 21. ÷ Ղեւ. ԺԹ. 17. Առակ ԺԷ. 10. Յակ. Ե. 19.
= Մատթ. ԺԷ. 20. ԻԱ. 21. Մարկ. Թ. 23. ԺԱ. 23.
+ Գղ. ԺԲ. 37.
~ Յոբ. ԻԲ. 3. ԼԵ. 7. Սաղ. ԺԶ. 2. Մատթ. ԻԵ. 30. Հռովմ. Գ. 12. ԺԱ. 35. Ա Կորնթ. Թ. 16. 17. Փիլիմ. 11.

11 Եւ եղեւ մինչեւ երթայր նա
յԵրուսաղէմ , եւ ինքն անցանէր
ընդ մէջ Սամարիայ եւ Գալիլեաց-
ւոց ։
12 Եւ մինչդեռ մտանէր 'ի գեօղ
ուրեմն , պատահեցին նմա տասն
այր բորոտ՝ որք կային 'ի հեռաս-
տանէ ։
13 Բարձին զձայն՝ եւ ասեն . Յի-
սուս Վարդապետ՝ ողորմեա՛ մեզ ։

14 Եւ իբրեւ եսես զնոսա , ասէ
ցնոսա . Երթայք ցուցէք զանձինս
քահանայիցն . եւ եղեւ իբրեւ գը-
նային , առժամայն սրբեցան ։

15 Մի ոմն 'ի նոցանէ իբրեւ եսես՝
եթէ բժշկեցաւ , դարձաւ անդրէն՝
'ի ձայն մեծ փառաւոր առնէր
զԱստուած ։
16 Անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց
առ ոտս նորա , եւ գոհանայր զնմա-
նէ . եւ ինքն էր Սամարացի ։

17 Պատասխանի ետ Յիսուս եւ ա-
սէ . Ո՞չ տասն սուրբ սրբեցան , իսկ
արդ՝ ինունքն ուր են ։
18 Զի ոչ գտան դառնալ տալ
փառս Աստուծոյ , բայց միայն այ-
լազգիս այս ։
19 Եւ ասէ ցնա . Արի՛ գնա՛ . զի
հաւատք քո կեցուցին զքեզ ։

20 Իբրեւ հարցաւ 'ի փարիսեց-
ւոցն՝ թէ Երբ գայցէ արքայութիւն
Աստուծոյ . պատասխանի ետ նոցա
եւ ասէ . Ո՛չ գայ արքայութիւն
Աստուծոյ խորամնօք ։

21 Եւ չասիցեն , թէ Ահաւասիկ
աստ է՝ կամ անդ . զի ահա արքա-
յութիւն Աստուծոյ 'ի ներքս 'ի
ձեզ է ։

11 Եւ էլաւ՝ երբոր նա Երուսա-
ղէմ էր գնում՝ եւ ինքը Սամարի-
այի եւ Գալիլեացոց մէջէն ե անց-
նում էր ,
12 Եւ երբոր մին գիւղ էր մտա-
նում , տասն բորոտ մարդիկ պա-
տահեցին նորան որ հեռուանց
զ կանգնեցին ,
13 Ձայները բարձրացրին՝ եւ ա-
սացին . Յիսուս Վարդապետ՝ մեզ
ողորմեա՛ ։
14 Եւ երբոր տեսաւ նորանց՝ ա-
սաց նորանց . է Գնացէք անձներդ
քահանաներին ցոյց տուէք . եւ է-
լաւ երբոր գնացին՝ չուտով սրբը-
վեցան ։
15 Նորանցից մինն երբոր տեսաւ՝
թէ բժշկըվեցաւ , յետ դարձաւ՝
բարձր ձայնով փառք էր տալիս
Աստուծոյն ։
16 Իրեն երեսին վերայ ընկաւ
նորան ոտներին առաջին , եւ գո-
հանումէր նորանից . եւ ինքը Սա-
մարացի էր ։
17 Յիսուս պատասխան տուաւ եւ
ասաց . Չէ՞ որ տասն էին սորանք
որ սրբվեցան . ապա այն ինն ուր են ,
18 Որ ընտւ չի գտվան որ յետ
դառնան՝ եւ Աստուծոյն փառք տան .
բայց միայն այս այլազգիս ։
19 Եւ ասաց նորան . Վեր կաց
գնա՛ . ինչու որ քո հաւատքդ ազ-
ատեցրուց ը քեզ ։
20 Երբոր փարիսեցիներիցը հարց-
վեցաւ՝ թէ Աստուծոյ արքայու-
թիւնն երբ պիտի գայ . պատաս-
խան տուաւ նորանց եւ ասաց . Ա-
ստուծոյ արքայութիւնը դըրսի նը-
շաններով չի գալ ,
21 Եւ չեն ասիլ՝ թէ Ահա այս
տեղ է կամ ժ այնտեղ . ինչու որ՝
ահա Աստուծոյ արքայութիւնը ձեր
ձեր ներսումն է ։

ե Գղ . Թ . 51 , 52 . Յովհ . Դ . 4 .
զ Ղև . ԺԳ . 46 .
է Ղև . ԺԴ . 2 . Մատթ . Ը . 4 . Գղ . Ե . 14 .
ը Մատթ . Թ . 22 . Մարկ . Ե . 34 . Ժ . 52 . Գղ . Է . 50 . Ը . 48 . ԺԸ . 42 .
թ Համր . 23 .
ժ Հռովմ . ԺԴ . 17 .

22 Ասաց եւ ցաշակերտսն . Ե–
կեսցեն աւուրք ցանկանալոյ ձեզ
մի յաւուրցն Որդւոյ մարդոյ տե–
սանել՝ եւ ոչ տեսանիցէք ։
23 Եւ եթէ ասիցեն ձեզ՝ եթէ
Ահաւասիկ է՝ կամ անդ , մի երթայ–
ցէք զհետ ։
24 Զի որպէս փայլակն փայլատա–
կեալ ՚ի ներքոյ երկնից՝ ընդ երկ–
նիւք ծագիցէ , նոյնպէս եւ Որդի
մարդոյ յաւուրն իւրում ։

25 Բայց նախ պարտ է նմա բա–
զում չարչարիլ՝ եւ խոտել յազգէս
յայսմանէ ։
26 Եւ որպէս եղեւ յաւուրսն Նո–
յի , նոյնպէս եղիցի եւ յաւուրս
Որդւոյ մարդոյ ։
27 Ուտէին՝ ըմպէին՝ կանայս առ–
նէին՝ եւ արանց լինէին , մինչեւ
յօրն՝ յորում եմուտ Նոյ ՚ի տապա–
նն , եւ եկն ջրհեղեղն՝ եւ կորոյս
զամենեսին ։
28 Նոյնպէս՝ եւ որպէս յաւուրսն
Ղովտայ եղեւ , ուտէին , ըմպէին ,
գնէին , վաճառէին , տնկէին , շի–
նէին ։
29 Եւ յորում աւուր ել Ղովտ ՚ի
Սոդոմայ , տեղաց հուր եւ ծծումբ
յերկնից՝ եւ կորոյս զամենեսին .

30 Ըստ նմին օրինակի եղիցի եւ
յաւուրն , յորում Որդի մարդոյ
յայտնելոց է ։
31 Յայնմ աւուր որ կայցէ ՚ի տա–
նիս՝ եւ կարասի իւր ՚ի տան , մի
իջցէ առնուլ զայն . եւ որ յանդի
իցէ , նոյնպէս մի դարձցի յետս ։

32 Յիշեցէք զկինն Ղովտայ ։

33 Որ խնդրիցէ զանձն իւր ապ–

22 Աշակերտներին էլ ասաց . Օ–
րեր կը գան՝ որ դուք կը ցանկանաք
Որդու մարդոյ օրերից մէկը տես–
նելոյ , եւ չէք խ տեսնիլ ։
23 Եւ թէ որ ասեն ձեզ՝ Ահա
այստեղ է կամ այնտեղ՝ ետեւէն
ծ չը գնաք .
24 Պատճառն որ՝ ինչպէս կայծա–
կըն որ փայլումէ , երկնքի տակը
[illegible] լոյս է տալիս երկնքի տա–
կովը մինչեւ [illegible] այնպէս էլ
Որդին մարդոյ իրեն կ օրումը ։
25 Բայց առաջ պէտք է՝ որ նա
շատ չարչարուի եւ անարգուի այս
հ ազգիցս ։
26 Եւ ինչպէս որ Նոյին օրերին
էլաւ՝ այնպէս էլ Որդու մարդոյ օ–
րերին ձ կը լինի .
27 Ուտումէին՝ խմումէին՝ կին է–
ին առնում՝ եւ մարդոյ էին գնում ,
մինչեւ այն օրն՝ որ Նոյ մտաւ տա–
պանը . եւ ջրհեղեղն եկաւ եւ ա–
մէնին կորցրուց ։
28 Այնպէս էլ՝ ինչպէս որ Ղովտին
օրերին էլաւ . ուտումէին , խմու–
մէին , գնումէին՝ ծախումէին , տըն–
կումէին՝ ղ չինումէին ,
29 Եւ այն օրն՝ որ Ղովտ Սոդո–
միցը դուրս եկաւ՝ կրակ եւ ծծումբ
թափուեցաւ երկնքիցն ու ամէնին
ճ կորցրուց ։
30 Իսկ այն կերպովը էլ կը լինի
այն օրն՝ որ Որդին մարդոյ մ կը
յայտնուի ։
31 Այն օրն ով որ կտուրի վերայ
լինի եւ իրեն բաները տան մէջը՝
թող վէր չը գայ , որ նրանց յ առ–
նէ . եւ ով որ յանդումը լինի՝ այն–
պէս էլ թող յետ չը դառնայ ։
32 Մըտքներդ բերէք Ղովտի
ն կնոջը ։
33 Ով որ կը կամենայ իրեն ան–

խ Մատթ . Թ . 15 ։ Յովհ . ԺԷ . 12 ։
ծ Մատթ . ԻԴ . 23 ։ Մարկ . ԺԳ . 21 ։ Ղկ . ԻԱ . 8 ։
կ Մատթ ԻԴ . 27 ։
հ Մարկ . Ը . 31 ։ Թ . 31 ։ Ժ . 33 ։ Ղկ . Թ . 22 ։
ձ Ծննդ . Է ։ Մատթ . ԻԴ . 37 ։
ղ Ծննդ . ԺԹ ։
ճ Ծննդ . ԺԹ . 16 . 24 ։
մ Բ Պետ . Բ . 7 ։
յ Մատթ . ԻԴ . 17 ։ Մարկ . ԺԳ . 15 ։
ն Ծննդ . ԺԹ . 26 ։

րեցուցանել, կորուսցէ զնա. եւ որ կորուսցէ, ապրեցուսցէ զնա։

34 Ասեմ ձեզ. Յայնմ գիշերի՝ թէ եղիցին երկու 'ի մի մահիճս, մին առցի՝ եւ միւսն թողցի։

35 Եւ եթէ եղիցին երկու աղալ 'ի միասին, մին առցի՝ եւ միւսն թողցի. եւ եթէ իցեն երկու յանդի, մին առցի՝ եւ միւսն թողցի։

36 Պատասխանի ետուն եւ ասեն ցնա. Ուր Տէր։

37 Եւ նա ասէ ցնոսա. Ուր մարմին է, անդր եւ արծուիք ժողովեսցին։

ձըն ապրեցնել՝ կը կորցնէ նորան. եւ ով որ կը կորցնէ, կապրեցնէ ւնորան։

34 Ասում եմ ձեզ. Այն գիշերը եթէ երկու հոգի մին մահճի մէջ լինին՝ մինը կառնըվի եւ միւսը = կը թողվի։

35 Եւ եթէ երկու հոգի միտեղ աղալոյ վերայ լինին՝ մինը կառնըվի եւ միւսը կը թողվի. եւ եթէ երկու հոգի յանդումը լինին՝ մինը կառնըվի եւ միւսը կը թողվի։

36 Պատասխան տուին՝ եւ նորան ասացին. Տէր՝ ւ ո՞րտեղ։

37 Եւ նա ասաց նորանց. Որտեղ որ մարմին կայ, արծիւներն էլ այնտեղ կը հաւաքվին։

## ԳԼ. ԺԸ.

1 Ասաց եւ առակ մի նոցա՝ առ այն, թէ պարտ է յամենայն ժամ կալ նոցա յաղօթս եւ մի ձանձրանալ։

2 Ասէ. Դատաւոր մի էր 'ի քաղաքի ուրեմն, յԱստուծոյ ոչ երկնչէր՝ եւ 'ի մարդկանէ ոչ ամաչէր։

3 Եւ այրի մի էր 'ի նմին քաղաքի, գայր առ նա եւ ասէր. Դատ արա ինձ յոսոխէ իմմէ։

4 Եւ ոչ կամէր 'ի բազում ժամանակս. յետ այնորիկ ասէ 'ի միտս իւրում. Եթէ եւ յԱստուծոյ ոչ երկնչիմ, եւ 'ի մարդկանէ ոչ ամաչեմ,

5 Գոնէ վասն աշխատ առնելոյ զիս այրւոյս՝ արարից նմա դատ, զի մի իսպառ եկեալ թախանձիցէ զիս։

6 Եւ ասէ Տէր. Լուարուք զինչ դատաւորն անիրաւութեան ասէր։

7 Իսկ Աստուած ոչ առնիցէ վր-

1 Մին առակ էլ ասաց նորանց՝ նորա վերայ թէ պէտք է նորանց՝ որ ամէն ժամանակ աղօթք անեն եւ = չըձանձրանան։

2 Ասաց. Մին դատաւոր կար մին քաղաքի մէջ, որ Աստուածանից չէր վախենում եւ մարդկանցից էլ չէր ամաչում։

3 Եւ մին որբեւէրի էլ կար այն քաղաքումը, նորա մօտ էր գալիս եւ ասում, թէ Իրաւունք արա ինձ իմ հակառակ ոսոխիցս։

4 Եւ նա շատ ժամանակ չէր կամենում. նորանից ետեւ իւրեն մտքումն ասաց. Թէեւ Աստուածանից չեմ վախենում եւ մարդկանցից չեմ ամաչում,

5 Բայց որովհետեւ այս որբեւէրիս աշխատացնում է ինձ՝ իրաւունք կանեմ նորան՝ որ չըգայ աղաչելով իսպառ ձանձրացնէ ‡ ինձ։

6 Եւ Տէրն ասաց. Լսեցէք թէ անիրաւ դատաւորն ինչ էր ասում։

7 Բայց Աստուած միթէ իւրեն

ւ Մատթ. Ժ. 29։ ԺԶ. 25։ Մարկ. Ը. 35։ Ղլ. Թ. 24։ Յովհ. ԺԲ. 25։
= Մատթ. ԻԴ. 40, 41։ Ա Թես. Դ. 17։
ւ Յոբ. ԼԹ. 30։
Մատթ. ԻԴ. 28։
—
= Ղլ. ԺԱ. 5։ ԻԱ. 36։ Հռովմ. ԺԲ 12։ Եփես. Զ. 18։ Կող. Դ. 2։ Ա Թես. Ե. 17։
‡ Ղլ. ԺԱ. 8։

րէժխնդրութիւն ծառայից իւրոց ,
որ աղաղակեն առ նա 'ի տուէ եւ
'ի գիշերի . եւ երկայնամիտ միայն
լինիցի առ նոսա :
8 Այո , ասեմ ձեզ . զի Արասցէ
զվրէժխնդրութիւն նոցա վաղվա-
ղակի . բայց Որդի մարդոյ եկեալ
գտանիցէ՞ արդեւօք հաւատս յերկ-
րի :
9 Ասաց եւ առ ոմանս պանծա-
ցեալս յանձինս , թէ արդարք իցեն՝
եւ խոտիցեն զբաղումս , զառակս
զայս :
10 Արք երկու ելին 'ի տաճարն
կալ յաղօթս , մին փարիսեցի՝ եւ
միւսն մաքսաւոր :
11 Փարիսեցին կայր մեկուսի , եւ
զայս առանձինն աղօթս մատուցա-
նէր . Աստուած իմ՝ գոհանամ ըզ
քէն , զի ոչ եմ իբրեւ զայլս 'ի
մարդկանէ , զյափշտակօղս՝ եւ զա-
նիրաւս՝ եւ զշնացս , կամ իբրեւ
զայս մաքսաւոր :
12 Այլ պահեմ երկիցս 'ի շաբա-
թու , եւ տամ տասանորդս յամե-
նայն ստացուածոց իմոց :
13 Եւ մաքսաւորն կայր մեկուսի ,
եւ ոչ կամէր եւ ոչ զաչսն ընդ եր-
կինս ամբառնալ . այլ կոծէր զկուրծս
իւր՝ եւ ասէր . Աստուած՝ քաւեա
զիս զմեղաւորս :
14 Ասեմ ձեզ . Էջ սա արդա-
րացեալ 'ի տուն իւր քան զնա . զի
ամենայն՝ որ բարձրացուցանէ զանձն
իւր , խոնարհեսցի . եւ որ խոնար-
հեցուցանէ զանձն , բարձրասցի :
15 Մատուցանէին առ նա եւ ման-
կունս՝ զի մերձեսցէ 'ի նոսա . իբ-
րեւ տեսին աշակերտքն՝ սաստէին
նոցա :

ծառաներին համար վրէժ չի խնդ-
րել , որ ցերեկ եւ գիշեր աղաղա-
կումեն դէպի ‡ նա . եւ մինակ նո-
րանց համար երկայնամիտ կը լինի :
8 Իրաւի՛ ասումեմ ձեզ՝ թէ
շուտով վրէժխնդրութիւն կանէ
նորանց ∓ համար . բայց Որդին մար-
դոյ երբոր կըգայ՝ միթէ հաւատք
կը գտնէ՞ երկրի վերայ :
9 Մին քանի մարդկանց էլ՝ որ
իրենց մտքերումը պարծենումէին՝
իբր թէ արդար են՝ եւ ուրիշներին
ոչ ինչ էին համարում՝ այս առա-
կըս ⊦ ասաց .
10 Երկու մարդ վեր ելան տա-
ճարն որ աղօթք անեն . մինը փա-
րիսեցի եւ միւսը մաքսաւոր :
11 Փարիսեցին ջոկ կանգնած էր
եւ առանձին այս աղօթքըս էր ւ ա-
նում . Ի՛մ Աստուած , գոհանումեմ
քեզանից՝ որ ես ուրիշ մարդկանց
պէս չեմ՝ յափշտակօղների , եւ ա-
նիրաւների , եւ շնացօղների , կամ
թէ այս մաքսաւորիս ⊦ պէս ,
12 Այլ շաբաթը երկու անգամ
պաս եմ պահում՝ եւ իմ ամէն ապ-
րանքներիցս տասանորդ եմ տալիս
13 Եւ մաքսաւորը հեռու կանգ-
նած էր՝ եւ իրեն աչքերն էլ չէր
կամենում դէպի երկինքը բարձրա-
ցնել . բայց իրեն կուրծքը թակու-
մէր եւ ասում . Ա՛ստուած՝ քաւէ
ինձ մեղաւորիս :
14 Ասումեմ ձեզ՝ թէ Սա արդա-
րացած գնաց իրեն տունը քանթէ
նա . ինչու որ՝ ամէն ով որ իրեն
անձը բարձրացնումէ՝ կը խոնարհ-
վի , եւ ով որ իրեն անձը խոնար-
հացնումէ՝ ɛ կը բարձրանայ :
15 Երախաներ էլ էին բերում նո-
րա մօտ՝ որ նորանց Բ մօտենայ . ա-
շակերտներն երբոր տեսին , սաս-
տումէին նորանց :

‡ Ցայտ . Զ . 10 :
∓ Եբր . Ժ . 37 : Բ Պետ . Գ . 8 . 9 :
⊦ Գղ . Ժ . 29 : ԺԶ . 15 :
ւ Սաղ . ՃԼԵ . 2 :
⊦ Եսայ . Ա . 15 , ՆԸ . 2 : Ցայտ . Գ . 17 :
ɛ Յոբ . ԻԲ . 29 : Մատթ . ԻԳ . 12 : Գղ . ԺԴ . 11 : Յակ . Գ . 6 : Ա Պետ . Ե . 5 , 6 :
Բ Մատթ . ԺԹ . 13 : Մարկ . Ժ . 13 :

16 Իսկ Յիսուս կոչեցեալ զնոսա առ ինքն՝ ասէ · Թոյլ տուք մանկտւոյդ գալ առ իս , եւ մի արգելուք զդոսա · զի այդպիսեացդ է արքայութիւն Աստուծոյ ։

17 Ամէն ասեմ ձեզ · Որ ոչ ընդունիցի զարքայութիւն Աստուծոյ իբրեւ զմանուկ , ոչ մտցէ ՚ի նա ։

18 Եւ եհարց զնա ոմն իշխան եւ ասէ · Վարդապետ բարի՝ զի՞նչ գործեցից , զի զկեանսն յաւիտենականս ժառանգեցից ։

19 Ասէ ցնա Յիսուս · Զի՞ ասես զիս բարի · չի՛ք ոք բարի՝ բայց մի Աստուած ։

20 Զպատուիրանսն գիտես · Մի՛ շնար , Մի՛ սպանաներ , Մի՛ գողանար , Մի՛ սուտ վկայեր , Պատուեա՛ զհայր քո եւ զմայր ։

21 Եւ նա ասէ · Զայդ ամենայն պահեցի ՚ի մանկութենէ իմմէ ։

22 Իբրեւ լուաւ զայն Յիսուս՝ ասէ ցնա · Միւս եւս պակաս է քեզ · զամենայն ինչ՝ զոր ունիս , վաճառեա եւ տուր աղքատաց , եւ ունիցիս գանձս յերկինս , եւ եկ զկնի իմ ։

23 Նա իբրեւ լուաւ զայս , տրտմեցաւ · քանզի էր մեծատուն յոյժ ։

24 Իբրեւ ետես զնա Յիսուս տրտմեալ , ասէ · Ո՞րպէս դժուարաւ որ ինչս ունիցին՝ մտանիցեն յարքայութիւն Աստուծոյ ։

25 Դիւրագոյն իցէ մալխոյ ընդ ծակ ասղան անցանել՝ , քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանել ։

26 Եւ որ լուանն՝ ասէին · Եւ ո՞ կարիցէ ապրել ։

16 Բայց Յիսուս նորանց իրեն մօտ կանչեց , եւ ասաց · Թո՛յլ տուէք այդ երախաներին՝ որ ինձ մօտ գան , եւ մի՛ արգելէք դորանց · ինչու որ՝ այդպիսիներինն է Աստուծոյ ժ արքայութիւնը ։

17 Ճշմարիտ ասում եմ ձեզ · Թէ Ով որ Աստուծոյ արքայութիւնը չընդունի ինչպէս երախայ՝ նա չի մտնիլ նորա ի մէջ ։

18 Եւ մի իշխան՝ հարցրուց նորան եւ ասաց · Բարի Վարդապետ՝ ինչ գործեմ , որ յաւիտենական կեանքը լ ժառանգեմ ։

19 Յիսուս նորան ասաց · Ի՞նչու ես ինձ բարի ասում · ոչ ով բարի չէկայ՝ բայց միայն մինն Աստուած ։

20 Պատուիրանքները գիտուես · Մի՛ շնար , Մի՛ սպաներ , Մի՛ գողանար , Մի՛ սուտ խ վկայեր , Պատուէ՛ քո հայրդ , եւ ծ մայրդ ։

21 Եւ նա ասաց · Այդ ամէնը իմ երեխայութենիցս պահեցի ։

22 Յիսուս երբոր սա լսեց՝ նորան ասաց · Մին բան էլ պակաս է քեզ · ամէն ինչ՝ որ ունիս , ծախէ՛ եւ աղքատներին տո՛ւր , եւ գանձ կունենաս երկնքումը , եւ իմ ետեւէս կ եկ ։

23 Նա երբոր սա լսեց՝ տրտմեցաւ · ինչու որ՝ շատ հարուստ էր ։

24 Յիսուս երբոր նորան տրտմած տեսաւ , ասաց · Նորանք որ ապրանք ունին՝ ինչպէս դժուարութենով կը մտնեն Աստուծոյ հ արքայութիւնը ։

25 Աւելի հեշտ է որ ուղտն ասեղի ծակով անցանէ , քանթէ հարուստն Աստուծոյ արքայութիւնը մտնէ ։

26 Եւ նորանք որ լսեցին՝ ասում էին · Էլ ով կարէ ապրիլ ։

ժ Ա Կորնթ. ԺԴ. 20 ։ Ա Պետ. Բ. 2 ։

ի Մարկ. Ժ. 15 ։

լ Մատթ. ԺԹ. 16 ։ Մարկ. Ժ. 17 ։

խ Ելից. Ի. 12—16 ։ Բ Օրին. Ե. 16—20 ։ Հռովմ. ԺԳ. 9 ։

ծ Եփես. Զ. 2 ։ Կող. Գ. 20 ։

կ Մատթ. Զ. 19. 20 ։ ԺԹ. 21 ։ Ա Տիմ. Զ. 19 ։

հ Առակ. ԺԱ. 28 ։ Մատթ. ԺԹ. 23 ։ Մարկ. Ժ. 23 ։

27 Եւ նա ասէ. Անհնարինք առ ՚ի մարդկանէ, հնարաւորք են յԱստուծոյ։
28 Եւ ասէ Պետրոս. Ահաւասիկ մեք թողաք զամենայն ինչ զմեր, եւ եկաք զհետ քո։
29 Եւ նա ասէ ցնոսա. Ամէն ասեմ ձեզ. եթէ Ո՛չ ոք է՛ որ եթող զտուն կամ զծնօղս կամ զեղբարս կամ զկին կամ զորդիս՝ վասն արքայութեան Աստուծոյ,
30 Եթէ ոչ առնուցու բազմապատիկ ՚ի ժամանակիս յայսմիկ. եւ յաշխարհին որ գալոց է՝ զկեանսն յաւիտենականս ժառանգեսցէ։
31 Եւ առեալ զերկոտասանսն առանձինն՝ ասէ ցնոսա. Ահաւասիկ ելանեմք յԵրուսաղէմ. եւ կատարեսցին ամենայն գրեալքն մարգարէիւք վասն Որդւոյ մարդոյ։
32 Զի մատնեսցի հեթանոսաց եւ կատակեսցի.
33 Եւ հարկանիցեն եւ սպանանիցեն զնա, եւ յերիր աւուր յարիցէ։
34 Եւ նոքա ոչինչ իմացան յայնցանէ, այլ էր բանն ծածկեալ ՚ի նոցանէ, եւ ոչ գիտէին զասացեալսն։
35 Եւ եղեւ ՚ի մօտել նորա յԵրիքով, կոյր ոմն նստէր առ ճանապարհաւն մուրացիկ։
36 Իբրեւ լուաւ զանցանել ժողովրդեանն, հարցանէր՝ թէ Զինչ իցէ այն։
37 Եւ պատմեցին նմա, թէ Յիսուս Նազովրեցի անցանէ։
38 Աղաղակեաց եւ ասէ. Յիսուս որդի Դաւթի ողորմեաց ինձ։

27 Եւ նա ասաց. Այն բաները որ անկարելի են մարդկանց մօտ՝ Աստուծոյ մօտ կարելի ձ են։
28 Եւ Պետրոս ասաց. Ահա մենք մեր ամէն բաները թողինք եւ քու ետեւէդ ղ եկինք։
29 Եւ նա ասաց նորանց. Ճշմարիտն ասումեմ ձեզ, թէ Ո՛չ ով չկայ՝ որ տուները կամ ծնողները կամ եղբայրները կամ կինը կամ որդիքը թողեց՝ Աստուծոյ արքայութեան ճ համար,
30 Որ շատ աւելի չառնէ այս ժամանակումս՝ եւ այն աշխարհքումն՝ որ գալու է՝ յաւիտենական կեանքը մ ժառանգէ։
31 Եւ այն տասներկուսին առանձին առաւ եւ նորանց յ ասաց. Ահա մենք էլլում Երուսաղէմ. եւ ամէն բաներն որ մարգարէներին ձեռովն Որդւոյ մարդոյ համար գրված են, ն կը կատարվին.
32 Ինչու որ՝ հեթանոսներին ձեռքը կը մատնուի եւ ծաղր շ կը լնի.
33 Եւ կը ծեծեն եւ կըսպանեն նորան. եւ երեք օրումը յարութիւն կառնէ։
34 Եւ նորանք ոչ ինչ չիմացան այն բաներիցը՝ բայց խօսքը ծածկըված էր նորանցից՝ եւ ասած բաները չէին ո գիտում։
35 Եւ երբոր նա Երիքովին չ մօտենումէր, մին կոյր ճանապարհի վերայ նստած էր՝ մուրացկան։
36 Երբոր ժողովրդի անցանելը լսեց, հարցնումէր՝ թէ նա ինչ է։
37 Եւ պատմեցին նորան՝ թէ Յիսուս Նազօրեցին է անցանում։
38 Աղաղակեց եւ ասաց. Յիսուս որդի Դաւթի՝ ինձ ողորմեա։

ձ Երեմ. ԼԲ. 17. Զաք. Ը. 6. Մատթ. ԺԹ. 26. Ղկ. Ա. 37.
ղ Մատթ. ԺԹ. 27.
ճ Բ Օրին. ԼԳ. 9.
մ Յոբ. ԽԲ. 10.
յ Մատթ. ԺԶ. 21. ԺԷ. 22. Ի. 17. Մարկ. Ժ. 32.
ն Սաղ. ԻԲ. Եսայ. ԾԳ.
շ Մատթ. ԻԷ. 2. Ղկ. ԻԳ. 1. Յովհ. ԺԸ. 28. Գործ. Գ. 13.
ո Մարկ. Թ. 32. Ղկ. Բ. 50. Թ. 45. Յովհ. Ժ. 6. ԺԲ. 16.
չ Մատթ. Ի. 29. Մարկ. Ժ. 46.

39 Եւ որ առաջին երթային՝ սաստէին նմա, զի լռեսցէ. եւ նա եւս առաւել աղաղակէր, Որդի Դաւթի ողորմեա ինձ։
40 Զտեղի առ Յիսուս, եւ հրամայեաց ածել զնա առ ինքն. եւ իբրեւ մերձ եղեւ առ նա, եհարց զնա եւ ասէ.
41 Զի՞նչ կամիս դու՝ զի արարից քեզ. եւ նա ասէ. Տէր զի բացցին աչք իմ՝ եւ տեսից։
42 Եւ Յիսուս ասէ ցնա. Հայեաց, հաւատք քո կեցուցին զքեզ։
43 Եւ առժամայն ետես, երթայր զհետ նորա՝ եւ փառաւոր առնէր զԱստուած. եւ ամենայն ժողովուրդն տեսեալ, տային օրհնութիւն Աստուծոյ։

39 Եւ նորանք՝ որ առաջ էին գնում, սաստումէին նորան՝ որ լռէ. եւ նա էլ աւելի աղաղակումէր. Որդի Դաւթի՝ ինձ ողորմեա։
40 Յիսուս կանգնեց եւ հրամայեց՝ որ նորան իրեն մօտ բերեն. եւ երբոր իրեն մօտ եկաւ՝ հարցրուց նորան եւ ասաց.
41 Ի՞նչ ես ուզում դու որ անեմ քեզ. եւ նա ասաց. Տէ՛ր՝ որ իմ աչքերս բացվին եւ տեսնեմ։
42 Եւ Յիսուս ասաց նորան. Նայէ, քո հաւատքդ ապրեցրուց ~քեզ։
43 Եւ շուտով տեսաւ, եւ նորա ետեւէն գնումէր՝ եւ Աստուծոյն Հ փառաւորում. եւ ամեն ժողովուրդն՝ որ տեսաւ՝ օրհնութիւն էր տալիս Աստուծոյն։

## ԳԼ. ԺԹ

1 Եւ մտեալ շրջէր ընդ Երիքով։
2 Եւ ահա այր մի անուն կոչեցեալ Զաքէոս, եւ նա էր մաքսապետ, եւ նոյն մեծատուն.
3 Եւ խնդրէր տեսանել՝ եթէ ո՛վ իցէ Յիսուս, եւ ոչ կարէր ՚ի բազմութենէն, զի կարճ էր հասակաւ։
4 Եւ ընթացեալ յառաջս, ել ՚ի ժանտաթզենին՝ զի տեսանիցէ զնա. քանզի ընդ այն կողմ անցանելոց էր։
5 Իբրեւ եկն ՚ի տեղին, հայեցաւ ՚ի վեր Յիսուս՝ եւ ասէ ցնա. Զաքէ՛ փութա՛ էջ այտի, զի այսօր ՚ի տան քում արժան է ինձ ագանել։
6 Փութացաւ եւ էջ՝ եւ ընկալաւ զնա ուրախութեամբ։
7 Իբրեւ տեսին ամենեքին, տրտնջէին եւ ասէին՝ թէ Առ առն մեղաւորի եմուտ լուծանել։

1 Եւ մտաւ Երիքովի միջովն անցնում էր
2 Եւ ահա մին մարդ՝ անունը Զաքէոս կոչված. եւ նա մաքսաւորների գլխաւորն էր, եւ ինքն էր հարուստ.
3 Եւ ուզումէր որ տեսնէ՝ թէ ով է Յիսուսը, եւ մարդկանց բազմութեան պատճառովը չէր կարողանում. ինչու որ հասակովը կարճ էր։
4 Եւ առաջ վազեց ու վեր ելաւ մին ժանտաթզենի ծառ՝ որ տեսնէ նորան. ինչու որ Յ—— կողմովը պէտք էր անցանէ։
5 Երբոր այնտեղն եկաւ՝ Յիսուս վեր նայեց եւ նորան ասաց. Զաքէ՛ շուտ արա այդ տեղիցդ վէր եկ, ինչու որ՝ պէտք է ինձ՝ որ այս օր քո տանդ վէր գամ։
6 Նա փութալով վէր եկաւ եւ ուրախութենով ընդունեց նորան։
7 Ամէնքն երբոր տեսին, տրտնջումէին եւ ասում. թէ, Մեղաւոր մարդոյ մօտ մտաւ հանգիստ առնելոյ —համար։

դ ԳԼ. ԺԷ. 19։ | Գործ. Դ. 21։ | ԺԱ. 18։ | — Մատթ. Թ. 11։
Հ ԳԼ. Ե. 26։ | | — | ԳԼ. Ե. 30։

8 Եկն եկաց Զաքէոս՝ եւ ասէ ցՏէր · Տէր՝ ահա զկէս ընչից իմոց տամ աղքատաց · եւ եթէ զոք զըրկեցի, հատուցից չորեքկին ։

9 Եւ ասէ ցնա Յիսուս · Այսօր եղեւ փրկութիւն տանս այսմիկ · քանզի եւ սա որդի Աբրահամու է ։

10 Զի եկն Որդի մարդոյ խնդրել եւ կեցուցանել զկորուսեալն ։

11 Եւ մինչդեռ նոքա զայն լսէին, յաւել առակ մի եւ ասէ, վասն մերձենալոյ նորա յԵրուսաղէմ, եւ համարելոյ նոցա եթէ առ ժամայն յայտնելոց է արքայութիւն Աստուծոյ ։

12 Ասէ · Այր ոմն ազնուական գնաց յաշխարհ հեռի՝ առնուլ իւր թագաւորութիւն եւ դառնալ ։

13 Եւ կոչեցեալ զծառայս իւր՝ ետ նոցա տասն մնաս, եւ ասէ ցնոսա · Ցարդեցէք զայդ մինչեւ եկից ։

14 Եւ քաղաքացիքն նորա ատէին զնա, առաքեցին հրեշտակս զհետ նորա եւ ասեն, թէ Ո՛չ կամիմք թագաւորել դմա ՚ի վերայ մեր ։

15 Եւ եղեւ դառնալ նմա առեալ զթագաւորութիւնն, եւ կոչել զծառայսն՝ որոց տուեալ էր զարծաթն, զի գիտասցէ թէ ո զինչ շահեցաւ ։

16 Եկն առաջինն եւ ասէ · Տէր մնասն քո՝ տասն մնաս արար ։

17 Եւ ասէ ցնա · Ազնիւ ծառայ եւ բարի, զի ՚ի փոքու հաւատարիմ եղեր, լիջիր իշխանութիւն ունել ՚ի վերայ տասն քաղաքի ։

8 Զաքէոսն ելաւ կանգնեցաւ եւ Տէրոջն ասաց · Տէր՝ ահա իմ ապրանքներիս կէսն աղքատներին կը տամ · եւ եթէ մէկը բ զրկեցի՝ չորս անգամ գ կը վճարեմ ։

9 Եւ Յիսուս նորան ասաց · Այս օր փրկութիւն եղաւ այս տանս · ինչու որ՝ սա դ էլ Աբրահամու որդի ե է ·

10 Պատճառն որ՝ Որդին մարդոյ եկաւ, որ ման գայ եւ ապրեցնէ զ կորածին ։

11 Եւ գետ որ նորանք այս բանս լսեցին՝ մէկ առակ աւելցուց եւ ասաց, իրեն Երուսաղէմին մօտենալուն համար, եւ նորանց կարծելուն համար՝ թէ Աստուծոյ արքայութիւնը շուտով պիտի է յայտնուէր ։

12 Ասաց · Մէկ մեծազգի մարդ գնաց հեռու աշխարհք, որ թագաւորութիւն առնէ իրեն համար եւ յետ ը դառնայ,

13 Եւ իրեն ծառաներին կանչեց, տասը մնաս տուաւ նորանց, եւ ասաց նորանց · Այդ բանացրէք մինչեւ որ գամ ։

14 Եւ նորա քաղաքացիները, նորան ատում էին · նորան ետեւէն պատգամաւորներ ուղարկեցին եւ ասացին · թէ, Չենք ուզում որ դա թագաւորէ մեզ թ վերայ ։

15 Եւ եղաւ՝ որ նա թագաւորութիւնն առաւ՝ յետ դարձաւ · եւ այն ծառաներին՝ որ արծաթը նորանց էր տուել, կանչեց, որ գիտենայ, թէ ով ինչ շահեցաւ ։

16 Առաջինն եկաւ եւ ասաց · Տէր քո մնասդ տասը մնաս արաւ ։

17 Եւ նորան ասաց · Ազնիւ եւ բարի ծառայ՝ որովհետեւ այդ քիչ բանումդ հաւատարիմ էլար՝ թող տասը քաղաքի վերայ իշխանութիւն ժ ունենաս ։

բ Գղ. Գ. 14 ։
գ Ելից. ԻԲ. 1 ։ Ա Թագ. ԺԲ. 3 ։ Բ Թագ. ԺԲ. 6 ։
դ Հռովմ. Դ. 11, 12. 16 ։ Գաղ. Գ. 7 ։
ե Գղ. ԺԳ. 16 ։
զ Մատթ. Ժ. 6 ։ ԺԵ. 24. ԺԸ. 11 ։
է Գործ. Ա. 6 ։
ը Մատթ. ԻԵ. 14 ։ Մարկ. ԺԳ. 34 ։
թ Յովհ. Ա. 11 ։
ժ Մատթ. ԻԵ. 21 ։ Գղ. ԺԶ. 10 ։

18 Եկն երկրորդն եւ ասէ. Մնասն
քո արար հինգ մնաս։
19 Ասէ եւ ցնա. Եւ դու լեր
'ի վերայ հինգ քաղաքաց։
20 Եկն միւսն եւ ասէ. Տէր՝ ա-
հա մնասն քո՝ զոր ունէի ծրարեալ
'ի վարշամակի։
21 Երկնչէի 'ի քէն, զի այր բռ-
նաւոր ես. բառնաս՝ զոր ոչ եդիր,
եւ հնձես՝ զոր ոչ սերմանեցեր։

22 Եւ ասէ ցնա. Ի բերանոյ
քումմէ դատեցայց զքեզ ծառայ
անհաւատ. գիտէիր թէ ես այր մի
ստամբակ եմ, բառնամ՝ զոր ոչ
եդի, եւ հնձեմ՝ ուր ոչ սերմանեցի։

23 Եւ ընդէր ոչ ետուր զարծաթն
իմ 'ի սեղանաւորս, եւ եկեալ ես
տոկոսեօք պահանջէի։
24 Եւ ասէ ցպաշտօնեայսն. Առէք
'ի դմանէ զմնասն, եւ տարայք տուք
այնմ՝ որ ունիցի զտասն մնասն։

25 Եւ ասեն ցնա. Տէր՝ ունի
տասն մնաս։
26 Ասեմ ձեզ, եթէ Ամենայնի՝
որ ունիցի, տացի. եւ յայնմանէ՝
որ ոչն ունիցի, եւ զոր ունիցին՝
բարձցի 'ի նմանէ։
27 Բայց զթշնամիսն իմ զայնո-
սիկ, որ ոչն կամէին զիս թագա-
ւորել 'ի վերայ նոցա, ածէք այսր
եւ սպանէք առաջի իմ։
28 Եւ իբրեւ զայս ասաց, գնայր
յառաջ՝ ելանել յԵրուսաղէմ։
29 Եւ եղեւ իբրեւ մերձեցաւ 'ի
Բեթփագէ եւ 'ի Բեթանիա մօտ 'ի
լեառն՝ որ կոչի Ձիթենեաց, առա-
քեաց երկուս յաշակերտացն իւրոց՝
եւ ասէ։
30 Երթայք դուք 'ի գեօղն՝ որ
հանդէպ մեր կայ, յոր իբրեւ մտա-
նէք՝ գտանիցէք յաւանակ կապեալ,

18 Երկրորդն եկաւ՝ եւ ասաց. Քո
մնասդ հինգ մնաս արաւ։
19 Նորան էլ ասաց. Թող դու էլ
հինգ քաղաքի վերայ լինիս։
20 Միւսն էլ եկաւ եւ ասաց. Տէր
ահա քո մնասդ՝ որ վարշամակի մէջ
պատած պահումէի.
21 Վախենումէի քեզանից. ինչու-
որ՝ դու մին քարասիրտ մարդ ես.
վեր ես առնում նա՝ որ չը դրիր՝ եւ
հնձումես նա՝ որ է չը սերմանեցիր։
22 Եւ ասաց նորան. Քո բերանիցդ
քեզ կը դատեմ, անհաւատ ը ծա-
ռայ. դու գիտումէիր՝ որ ես մին
քարասիրտ մարդ թ եմ, վեր եմ առ-
նում նա՝ որ չը դրի, եւ հնձումեմ՝
որ տեղ որ չը սերմեցի.
23 Էլ ինչու իմ արծաթըս առակ
փոխօղներին չը տուիր, որ ես գայի
շահով յետ առնէի։
24 Եւ ծառաներին ասաց. Առէք
դորանից այն մնասը, եւ տարէք
տուէք նորան՝ որ տասը մնասըն
ունի։
25 Եւ նորան ասացին. Տէր. տասը
մնաս ունի։
26 Ասումեմ ձեզ, թէ, Ամէնին որ
ունի, կը տրվի. եւ նա որ չունի,
նորանից նա էլ, որ ունի, վեր
ժ կառնըվի։
27 Բայց այն իմ թշնամիներիս՝ որ
չէին ուզում, որ ես նորանց վերայ
թագաւորեմ, այստեղ բերէք եւ
սպանեցէք իմ առաջիս։
28 Եւ երբոր էս ասաց, առաջ
գնաց, որ վեր ելլէ ի Երուսաղէմ։
29 Եւ էլաւ երբոր Բեթփագէին
եւ Բեթանիային մօտեցաւ այն սա-
րին մօտ՝ որ Ձիթենեաց սար է
կոչվում՝ իւրեն աշակերտներիցն եր-
կուսը ուղարկեց եւ լ ասաց.
30 Գնացէք դուք այդ գիւղը, որ
մեր դիմացն է. եւ երբոր մտնէք
նորա մէջ՝ մին աւանակ կը գտնէք

է Մատթ. ԻԵ. 24։ ը Բ Թագ. Ա. 16։ Յոբ. ԺԵ. 6։ Մատթ. ԺԲ. 37։ թ Մատթ. ԻԵ. 26։ ժ Մատթ. ԺԳ. 12։ ԻԵ. 29։ Մարկ. Դ. 25։ Ղկ. Ը. 18։ ի Մարկ. Ժ. 32։ լ Մատթ. ԻԱ. 1։ Մարկ. ԺԱ. 1։

յորում ոչ 'ի մարդկանէ երբէք ոչ նստաւ. լուծէք զնա եւ ածէք։

31 Եւ եթէ ոք հարցանիցէ զձեզ՝ թէ Ընդէ՞ր լուծանէք, այսպէս ասասջիք ցնա, թէ Տեառն իւրում պիտոյ է։

32 Երթեալ չոքան որ առաքեցանն, գտին որպէս ասացն ցնոսա, կայր յաւանակն։

33 Եւ մինչդեռ լուծանէին զյաւանակն, ասեն տեարքն նորա ցնոսա. Զի՞ լուծանէք զյաւանակդ։

34 Եւ նոքա ասեն. Տեառն իւրում պիտոյ է։

35 Եւ ածին զնա առ Յիսուս. եւ արկին զնովաւ հանդերձս, եւ հեծուցին զՅիսուս։

36 Եւ մինչդեռ երթայր, զհանդերձս իւրեանց տարածանէին ընդ ճանապարհաւն։

37 Եւ իբրեւ այն ինչ մերձ եղեւ 'ի զառ 'ի վայր լերինն Ձիթենեաց, սկսաւ ամենայն բազմութիւն աշակերտացն ուրախութեամբ օրհնել զԱստուած 'ի ձայն մեծ վասն ամենայն եղելոց զօրութեանցն՝ զոր տեսին.

38 Եւ ասէին. Օրհնեալ որ գայ թագաւորդ յանուն Տեառն. խաղաղութիւն յերկինս, եւ փառք 'ի բարձունս։

39 Եւ ոմանք 'ի փարիսեցւոցն յամբոխէ անտի ասեն ցնա. Վարդապետ՝ սաստեա աշակերտացդ քոց։

40 Պատասխանի ետ եւ ասէ. Ասեմ ձեզ՝ զի եթէ դոքա լռեսցեն, քարինքդ աղաղակեսցեն։

41 Եւ իբրեւ մերձեցաւ, տեսեալ զքաղաքն՝ ելաց 'ի վերայ նորա, եւ ասէ.

կապված, որ նորա վերայ բնաւ մին ժամանակ մարդ չը նստել. նորան արձակեցէք եւ բերէք։

31 Եւ թէ որ մինը հարցնէ ձեզ՝ թէ Ինչու էք արձակում՝ նորան այսպէս ասացէք՝ թէ Տէրին պէտք է սա։

32 Երբոր գնացին նորանք որ ուղարկվեցան, այնպէս գտին ինչպէս որ նորանց ասաց, աւանակը կանգնած էր։

33 Եւ երբոր աւանակին արձակումէին՝ նորա տէրերին ասացին նորանց. Ինչու էք արձակում այդ աւանակըդ։

34 Եւ նորանք ասացին. Տէրին պէտք է սա։

35 Եւ նորան բերին Յիսուսի մօտ. եւ չորեր ձգեցին նորա վերայ, եւ Յիսուսին ͻ հեծացրին։

36 Եւ գնա որ գնումէր՝ իրենց չորերը փռումէին ճանապարհին ւ վերայ։

37 Եւ երբոր մօտեցաւ որ Ձիթենեաց սարիցը դէպի ցածը վէր գնայ՝ աշակերտներին ամէն բազմութիւնը ուրախութենով ՛սկսեց օրհնութիւն տալ Աստուծոյն բարձր ձայնով՝ այն ամէն էլած զօրութիւններին համար որ տեսել էին.

38 Եւ ասումէին. Օրհնեալ է գա՝ որ գալիս է թագաւոր Տէրի ɕ անունովը. խաղաղութիւն երկնքումը եւ փառք ′ 'ի բարձունս։

39 Եւ փարիսեցիներիցը մին քանիսն, որ ժողովուրդներին մէջ էին, նորան ասացին. Վարդապետ՝ սաստէ քո աշակերտներին։

40 Պատասխան տուաւ եւ ասաց՝ Ասումեմ ձեզ՝ որ եթէ սորանք էլ լռւ կենան՝ այդ քարերդ ; կաղաղակին։

41 Եւ երբոր մօտեցաւ, տեսաւ քաղաքին՝ եւ լաց էլաւ նորա վերայ եւ ъ ասաց.

ͻ Դ Թագ. Թ. 13. Մատթ. ԻԱ. 7. Մարկ. ԺԱ. 7.
Յովհ. ԺԲ. 14.
ւ Մատթ. ԻԱ. 8.
ɕ Սաղ. ՃԺԸ. 26.
Ղւ. ԺԳ. 35.
′ Ղւ. Բ. 14. Եփես. Բ. 14.
; Ամբ. Բ. 11.
ъ Յովհ. ԺԱ. 35.

42 Եթէ գիտէիր դու գոնէ յա-
ւուրս յայսմիկ զխաղաղութիւնն քո.
բայց այժմ ծածկեցաւ յերեսաց քոց ։
43 Զի եկեսցեն աւուրք 'ի վերայ
քո, եւ պատեսցեն զքեւ թշնա-
միք քո պատնէշ. եւ պաշարեսցեն
զքեզ, եւ նեղեսցեն զքեզ յամե-
նայն կողմանց ։
44 Եւ յատակեսցեն զքեզ, եւ
զորդիս քո 'ի քեզ, եւ ոչ թողու-
ցուն քար 'ի քարի վերայ յամենայնի
'ի քեզ. փոխանակ զի ոչ ծանեար
զժամանակ այցելութեան քո ։

45 Եւ մտեալ 'ի տաճարն սկսաւ
հանել զաղաւնէվաճառսն, եւ ըզ
գնօղս. եւ զսեղանս հատավաճա-
ռացն ցրուեաց ։
46 Եւ ասէ ցնոսա. Գրեալ է՝ Եւ
եղիցի տուն իմ տուն աղօթից, եւ
դուք արարէք զդա այրս աւազա-
կաց ։
47 Եւ ուսուցանէր զնոսա հանա-
պազ 'ի տաճարին. իսկ քահանայա-
պետքն եւ դպիրք եւ գլխաւորք
ժողովրդեանն խնդրէին զնա կո-
րուսանել,
48 Եւ ոչ գտանէին՝ թէ զինչ ա-
րասցեն. զի ժողովուրդն ամենայն
կախեալ կային զնմանէ 'ի լսել ։

42 Եթէ գոնէ այս օրս գիտնա-
յիր քո խաղաղութիւնդ. բայց հի-
միկ ծածկըւեցաւ քո երեսիդ ։
43 Ինչու որ՝ օրեր կը գան քեզ
վերայ, եւ քո թշնամիներդ քո չորս
կողմակդ պատնէշ կը պատեն եւ
քեզ կը պաշարեն եւ ամէն կողմէն
քեզ ա կը նեղացնեն.
44 Եւ հիմնայատակ կանեն քեզ
եւ քո որդիկդ էլ քո բ մէջումդ.
եւ բնաւ քար քարի վերայ չեն թո-
ղուլ քո գ մէջումդ. ինչու որ՝ չը ճա-
նաչեցիր Ա–ծոյ քեզ տես գալոյ
դ ժամանակը ։
45 Եւ մտաւ տաճարն ու սկսեց
զուրս հանել աղաւնի ծախօղներին
եւ գնօղներին, եւ բատակ փախօղ-
ների սեղանները ե ցրւեց,
46 Եւ նորանց ասաց. Գրւած է՝
Թէ իմ տունս աղօթքի տուն պի-
տի զ լինի, եւ դուք դորան աւա-
զակների բոյն է արիք ։
47 Եւ ամէն օր սովորցնումէր նո-
րանց տաճարին մէջ. բայց քահա-
նայապետներն ու կարդացօղները
եւ ժողովրդի գլխաւորները խնդր-
րումէին, որ կորցնեն ը նորան,
48 Եւ չէին գտնում՝ թէ ինչ ա-
նեն. պատճառն որ՝ բոլոր ժողո-
վուրդը նորանից կախւած էր որ
նորա խօսքը լսէ ։

## ԳԼ. Ի

1 Եւ եղեւ 'ի միում աւուրցն
յայնցանէ, մինչդեռ ուսուցանէր
զժողովուրդն 'ի տաճարի անդ՝ եւ
աւետարանէր, հասին 'ի վերայ
քահանայապետքն եւ դպիրք ծե-
րովքն հանդերձ,
2 Եւ ասեն ցնա. Ասա մեզ՝ որով
իշխանութեամբ գործես դու զայդ,

1 Եւ եղաւ [որ այն օրերից մի-
նումը դեռ քանի որ տաճարումը
սովորցնումէր ժողովրդին եւ ա-
ւետարանում, քահանայապետներն
ու կարդացօղները ծերերին հետ
վերայ ա հասին,
2 Եւ նորան ասացին. Ասա մեզ,
դու ինչ իշխանութիւնով ես ա-

ա Եսայ. ԻԹ. 3. 4։ Երեմ. Զ. 3. 6։ Գլ. ԻԱ. 20։
բ Գ Թագ. Թ. 7, 8։ Միք. Գ. 12։
գ Մատթ. ԻԴ. 2։ Մարկ. ԺԳ. 2։ Գլ. ԻԱ. 6։
դ Դան. Թ. 24։ Գլ. Ա. 68. 78։ Ա Պետ. Բ. 12։
ե Մատթ. ԻԱ. 12. Մարկ. ԺԱ. 11. 15։ Յովհ. Բ. 14, 15։
զ Եսայ. ԾԶ. 7։
է Երեմ. Է. 11։
ը Մարկ. Ժ. 18։ Յովհ. Է. 19։ Ը. 37։

—

ա Մատթ. ԻԱ. 23։

կամ ո՞վ է՝ որ ետ քեզ զայդ իշ-
խանութիւն.
3 Պատասխանի ետ եւ ասէ ցնո-
սա. Հարցից եւ ես զձեզ բան մի,
եւ ասացէք ինձ.
4 Մկրտութիւնն Յովհաննու յերկ-
նից էր՝ եթէ 'ի մարդկանէ.
5 Եւ նոքա խորհեցան 'ի միտս
իւրեանց եւ ասեն.
6 Եթէ ասեմք Յերկնից, ասէ.
Իսկ ընդէ՞ր ոչ հաւատացէք նմա.
եւ եթէ ասեմք 'ի մարդկանէ, ամե-
նայն ժողովուրդն քարկոծ առնեն
զմեզ. զի հաստատեալ է 'ի միտս
զՅովհաննէ, թէ մարգարէ է.

7 Եւ պատասխանի ետուն չգի-
տել թէ ուստի իցէ.
8 Եւ Յիսուս ասէ ցնոսա. Եւ ոչ
ես ասեմ ձեզ, որով իշխանու-
թեամբ առնեմ զայս.
9 Սկսաւ ասել առ ժողովուրդն՝
զառակս զայս. Այր մի տնկեաց
այգի, եւ ետ զնա մշակաց. եւ
ինքն գնաց 'ի ճանապարհ ժամա-
նակս բազումս.
10 Եւ 'ի ժամու՝ առաքեաց առ
մշակսն ծառայ, զի 'ի պտղոյ այգ-
ւոյն տացեն նմա. եւ մշակքն զան
հարեալ զնա, եւ արձակեցին ու-
նայն.
11 Եւ յաւել միւս եւս ծառայ
յղել. նոքա եւ զնա եւս զան հա-
րեալ՝ անարգեցին, եւ առաքեցին
ունայն.
12 Եւ յաւել զերրորդն առաքել.
նոքա եւ զնա վիրաւորեցին, եւ
հանին արտաքս.
13 Ասէ տէր այգւոյն. Զի՞նչ ա-
րարից, առաքեցից զորդի իմ սի-
րելի, թերեւս 'ի սմանէ պատկա-
ռեսցեն.
14 Իբրեւ տեսին զնա մշակքն,
խորհեցան ընդ միմեանս եւ ասեն.
Սա է ժառանգն. սպանցուք զսա,

նում ‡ դա, կամ ո՞վ է նա, որ այդ
իշխանութիւնըդ տուաւ քեզ.
3 Պատասխանեց տուաւ եւ ասաց
նորանց. Ես էլ ձեզանից մին բան
կը հարցնեմ, եւ ասացէք ինձ.
4 Յօհաննէսի մկրտութիւնն եր-
կնքցի՞ն էր, թէ մարդկանցից.
5 Եւ նորանք իրենց միջումը
միտք արին եւ ասացին.
6 Թէ որ ասենք, Երկնքից.
կասէ. Ապա ինչու չը հաւատացիք
նորան. եւ թէ որ ասենք՝ Մարդ-
կանցից, ամէն ժողովուրդը մեզ
քարկոծ կանեն. ինչու որ՝ իրենց
մտքումը հաստատ դրել են Յօհան-
նէսին համար՝ թէ մարգարէ ‡ է.
7 Եւ պատասխան տուին՝ չը գի-
տենք, թէ ուր տեղից է.
8 Եւ Յիսուս նորանց ասաց.
Ես էլ չեմ ասիլ ձեզ՝ թէ ինչ իշ-
խանութեամբ եմ անում սա.
9 Ապա սկսեց այս առակս ասել
ժողովրդին. Մին մարդ ‡ այգի
տնկեց, եւ մշակներին տուաւ նո-
րան, եւ ինքը ճանապարհ գնաց
շատ ‡ ժամանակ.
10 Եւ ժամանակին որ եկաւ՝ մին
ծառայ ուղարկեց մշակներին մօտ,
որ այգու պտուղից իրեն տան. եւ
մշակները ծեծեցին նորան եւ դա-
տարկ յետ արձակեցին.
11 Եւ նրա վերայ մին ուրիշ ծա-
ռայ էլ ուղարկեց. եւ նորան էլ
ծեծեցին, թուքումուր տուին եւ
դատարկ յետ ուղարկեցին.
12 Եւ նրա վերայ երրորդին էլ
ուղարկեց. նորանք նորան էլ խո-
ցեցին եւ դուրս հանեցին.
13 Այգոյ տէրն ասաց. Ի՞նչ ա-
նեմ. իմ սիրելի որդիս կուղարկեմ՝
լինի թէ սորանից ամաչեն.

14 Մշակները երբոր նորան տե-
սին՝ իրար հետ խորհուրդ արին եւ
ասացին. Սա է ժառանգը. սպա-

‡ Գործ. Դ. 7. Է. 27.
‡ Մատթ. ԺԴ. 5. ԻԱ. 26. Ղկ. Է. 29.
‡ Մատթ. ԻԱ. 33.
Մարկ. ԺԲ 1.

զի մեր լիցի ժառանգութիւնն ։
15 Եւ հանին զնա արտաքս քան
զայգին եւ սպանին ․ արդ՝ զինչ ա-
րասցէ ընդ նոսա տէր այգւոյն ։
16 Ո՞չ ապաքէն գայցէ եւ կորու-
սանիցէ զմշակսն զայնոսիկ, եւ տա-
ցէ զայգին այլոց ․ Իբրեւ լուան՝
ասեն ․ Քաւ՝ մի լիցի ։
17 Եւ նա հայեցեալ ընդ նոսա՝
ասէ ․ Իսկ զինչ իցէ այն՝ որ գրեալն
է ․ թէ Զվէմն զոր անարգեցին շի-
նողքն, նա եղեւ գլուխ անկեան ։
18 Ամենայն՝ որ ընդհարցի ընդ
վէմն ընդ այն՝ խորտակեսցի, եւ
յորոյ վերայ անկցի՝ հոսեսցէ զնա ։
19 Եւ խնդրէին դպիրքն եւ քա-
հանայապետք արկանել ՚ի նա ձեռս
՚ի նմին ժամու, եւ երկեան ՚ի ժո-
ղովրդենէն ․ զի գիտացին՝ թէ առ
նոսա ասաց զառակն զայն ։

20 Եւ ապա սպասեցին, եւ առա-
քեցին զաւաճանս կեղծաւորեալս
զանձինս առ արդարս ունել, զի
ըմբռնեսցեն զնա բանիւք, առ ՚ի
մատնել զնա պետութեան եւ իշ-
խանութեան դատաւորի ։

21 Հարցին զնա եւ ասեն ․ Վար-
դապետ՝ գիտեմք եթէ ուղիղ խօ-
սիս եւ ուսուցանես, եւ ոչ առնես
ակն՝ այլ ճշմարտութեամբ զճանա-
պարհն Աստուծոյ ուսուցանես ։

22 Արժա՞ն է մեզ կայսեր հարկս
տալ՝ թէ ոչ ։
23 Եւ հայեցեալ ընդ խորամանկու-
թիւն նոցա ասէ ցնոսա ․

24 Ցուցէք ինձ զդահեկանն ․ եւ
նոքա ցուցին ․ եւ ասէ ․ Զո՞յր պատ-
կեր եւ գիր ունի ․ պատասխանի
ետուն եւ ասեն՝ Զկայսեր ։

նմենք սպանենք ․ որ ժառանգութիւնը
մեզ լինի ։
15 Եւ այգիէն դուրս հանեցին
նորան եւ սպանեցին ․ ապա այգոյ
տէրն ինչ պիտի անէ նորանց ։
16 Չէ՞ որ կուգայ եւ այն մշակնե-
րը կը կորուսանէ եւ այգին ուրիշներին
կը տայ ․ Երբոր աս լսեցին՝ ասա-
ցին ․ Քաւ լիցի ։
17 Եւ նա մտիկ տալով նորանց եւ
ասաց ․ Ապա ինչ է նա որ գրած է՝
թէ, Այն քարն՝ որ շինողներն անար-
գեցին՝ նա էղաւ անկիւնի ի գլուխ ։
18 Ամէն՝ ով որ այս քարիս վերայ
ընկնի՝ կը փշրուի՝ եւ ում վերայ որ
ւ ընկնի՝ կը ջարդէ ւ նորան ։
19 Եւ կարգագօղներն ու քահա-
նայապետները խակ այն ժամուն
ուզումէին, որ ձեռք ձգեն նորա
վերայ, եւ ժողովրդէնը վախե-
ցան ․ ինչու որ՝ գիտացին որ՝ իրենց
համար ասաց այն առակը ։
20 Եւ ապա սպասեցին եւ նենգա-
ւոր մարդիկ ուղարկեցին՝ որ կեղ-
ծաւորութենով իրենց անձները
արդար երեւցընեն ․ որ խօսքով
բռնեն նորան՝ որ մատնեն նորան
դատաւորի աէրութեանն ու ե իշ-
խանութեանը ։
21 Նորան հարցրին եւ ասացին ․
Վարդապետ՝ գիտեմք, որ շի-
տակ ես խօսում եւ սովրցնում, եւ
երեսպաշտութիւն չես անում ․ բայց
ճշմարտութենով Աստուծոյ ճանա-
պարհը է սովրցնումես ։
22 Արժան է մեզ՝ որ կայսերին
հարկ տանք, թէ չէ՞ ։
23 Եւ նորանց չարութիւնը իմա-
նալով ասաց նորանց ․ Ինչու էք
փորձում ինձ ․
24 Ցոյց տուէք ինձ այն դահե-
կանը ․ եւ նորանք ցոյց տուին ․ եւ
ասաց ․ Ո՞ւմ պատկերըն ու գիրըն
ունի ․ պատասխան տուին եւ ա-
սացին ․ Կայսերին ։

25 Եւ նա ասէ ցնոսա. Արդ երթայք տուք զկայսերն կայսեր, եւ զԱստուծոյն Աստուծոյ։
26 Եւ ոչ կարացին զնա բմբռնել բանիւք առաջի ժողովրդեանն. եւ զարմացեալ ընդ պատասխանին նորա՝ լռեցին։
27 Մատուցեալ ոմանք ՚ի Սադուկեցւոցն, որք հակառակէին չլինել յարութեան, հարցին զնա
28 Եւ ասեն. Վարդապետ՝ Մովսէս գրեաց մեզ, Եթէ ուրուք եղբայր մեռանիցի, որոյ իցէ կին, եւ անորդի իցէ, զի առնուցու եղբայր նորա զկինն, եւ յարուսցէ զաւակ եղբօր իւրում։
29 Արդ՝ եօթն եղբարք էին. եւ առաջինն առեալ կին՝ մեռաւ անորդի։
30 Առ զնա եւ երկրորդն, մեռաւ եւ նա անորդի։
31 Առ զնա եւ երրորդն. նոյնպէս եւ եօթանեքեան. եւ ոչ թողին որդիս։
32 Մեռաւ եւ կինն։
33 Արդ ՚ի յարութեան ում ՚ի նոցանէ լինիցի կին. զի եօթանեքեան կալան զնա կին։
34 Պատասխանի ետ նոցա Յիսուս եւ ասէ. Որդիք աշխարհիս այսորիկ կանայս առնեն՝ եւ արանց լինին։
35 Իսկ որ արժանի լինիցին այնմ աշխարհի հասանել՝ եւ յարութեանն որ ՚ի մեռելոց, ոչ կանայս առնեն, եւ ոչ արանց լինին։
36 Քանզի եւ ոչ մեռանել եւս կարեն, զի հաւասար հրեշտակաց են՝ եւ որդիք Աստուծոյ. քանզի յարութեան որդիք են։

25 Եւ նա ասաց նորանց. Ուրեմն գնացէ՛ք կայսերինը կայսերին տուէք, եւ Աստուծոյինն Աստուծոյ։
26 Եւ չըկարացին խօսքերով բռնել նորան ժողովրդի առաջին. եւ նորա պատասխանին վերայ զարմացան եւ լուռ կացան։
27 բ Սադուկեցիներից՝ որ հակառակումէին թէ յարութիւն գ չըկայ, մինի քանիսը մօտ եկին եւ նորան հարցրին.
28 Եւ ասացին. Վարդապետ. Մովսէսը գրեց է մեզ. դ Թէ որ մինի եղբայրը մեռանի, որ կին ունենայ՝ եւ անորդի լինի, որ նորան եղբայրն այն կինըն առնէ, եւ իրեն եղբօր համար զաւակ վերկացնէ։
29 Ապա՝ եօթն եղբարք կային՝ եւ առաջինը կին առաւ եւ առանց զաւակի մեռաւ։
30 Երկրորդն էլ նորան առաւ, եւ նա էլ առանց զաւակի մեռաւ։
31 Երրորդն էլ նորան առաւ. այնպէս այն եօթն էլ, եւ որդի չըթողին։
32 Եւ ամենից ետև այն կինն էլ մեռաւ։
33 Ապա յարութեան ժամանակին նորանցից որին պիտի լինի կին. ինչու որ՝ այն եօթն էլ կին առին նորան։
34 Յիսուս պատասխան տուաւ նորանց եւ ասաց. Այս աշխարհքիս որդիքը են կին առնում եւ մարդոյ գնում։
35 Բայց նորանք որ արժանի լինին այն աշխարհքին հասնելոյ եւ մեռելների միջից յարութիւն առնելոյ, ոչ կին կառնեն եւ ոչ մարդոյ կըգնան,
36 Պատճառն՝ որ՝ էլ չեն կարող մեռնիլ. ինչու որ՝ հրեշտակներին հաւասար են եւ Աստուծոյ ե որդիք, նրահամար որ յարութեան որդիք զ են։

բ Մատթ. ԻԲ. 23։ Մարկ. ԺԲ. 18։ | գ Գործ. ԻԳ. 6. 8։ | դ Բ Օրին. ԻԵ. 5։ | ե Ա Կորնթ. ԺԵ. 42. 49. 52։ Ա Յովհ. Գ. 2։ | զ Հռովմ. Ը. 23։

37 Այլ զի յառնեն մեռեալք, եւ Մովսէս ցուցակեաց 'ի մորենւոջն, որպէս ասէ զՏէառնէ Աստուծոյ Աբրահամու եւ զԱստուծոյ Սահակայ եւ զԱստուծոյ Յակոբայ։

38 Եւ Աստուած չէ մեռելոց՝ այլ կենդանեաց, զի ամենեքին նմա կենդանի են։

39 Պատասխանի ետուն ոմանք 'ի դպրացն եւ ասեն. Վարդապետ՝ բարւոք ասացեր։

40 Եւ ոչ եւս ոք իշխէր հարցանել զնա՝ եւ ոչինչ։

41 Ասէ եւ առ նոսա. Զիարդ ասեն զՔրիստոսէ՝ թէ որդի է Դաւթի։

42 Զի ինքն Դաւիթ ասէ 'ի գիրս Սաղմոսաց. Ասաց Տէր ցՏէր իմ, Նիստ ընդ աջմէ իմմէ,

43 Մինչեւ եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց։

44 Իսկ արդ՝ եթէ Դաւիթ զնա Տէր կոչէ, զիարդ որդի նորա իցէ։

45 Եւ լուիլու ամենայն ժողովրդեանն ասէ ցաշակերտսն։

46 Զգոյշ լերուք 'ի դպրացն, որ կամին պատմուճանօք շրջել, եւ սիրեն ողջոյնս 'ի հրապարակս եւ զնախաթոռս 'ի ժողովուրդս եւ ըզ բարձերէցս յընթրիս։

47 Որ ուտեն զտունս այրեաց, եւ պատճառանօք յերկարեն զաղօթս. Նոքա ընկալցին աւելի դատաստանս։

37 Բայց ՙդրահամար թէ մեռելները յարութիւն կառնեն՝ Մովսէսն էլ մարգարէացաւ մորենոյն մօտ՝ ինչպէս որ Տէրին համար ասումէ՝ Աստուած Աբրահամու եւ Աստուած Սահակայ եւ Աստուած ծ Յակօբայ։

38 Եւ Աստուած մեռելներին չէ՝ բայց կենդանիներին. ինչու որ՝ ամէնքը կենդանի են է նորան։

39 Կարդացողներիցը մին քանիսը պատասխան տուին նորան եւ ասացին. Վարդապետ՝ լաւ ասացիր.

40 Եւ բնաւ մինն էլ չէր համարձակւում՝ որ նորանից մին բան հարցնէ։

41 Եւ նորանց էլ ասաց. Ի՞նչպէս են ասում Քրիստոսի համար՝ թէ Դաւթի որդին հ է։

42 Եւ Դաւիթ ինքն Սաղմոս գըրքումն ասումէ. Տէրն իմ Տէրին ասաց՝ թէ Իմ աջ կողմս ձ նստէ,

43 Մինչեւ որ քո թշնամիներդ քո ոտացդ կոխելիք դնեմ։

44 Ապա՝ թէ որ Դաւիթ Տէր է կոչում նորան, ինչպէս նորա որդին կըլինի։

45 Եւ ամէն ժողովրդի առաջին որ լսումէին՝ ասաց աշակերտաներին.

46 Զգոյշ կացէք կարդացողներիցն՝ որ լայն պատմուճաններով կամենումեն ճ ման գալ, եւ սիրումեն բաց տեղերանքումը բարեւ մ անելը, եւ ժողովարաններին մէջ առաջին աթոռները՝ եւ ընթրիքներումը վերեւի տեղերը.

47 Որ որբեւէրիներին տներըն ուտումեն, եւ պատճառներով երկար աղօթք են անում. նորանք աւելի դատապարտութիւն յ կըրգունին։

ծ Ելից. Գ. 6.
է Հռովմ. Զ. 10, 11.
հ Մատթ. ԻԲ. 42.
Մարկ. ԺԲ. 35.
ձ Սաղ. ՃԹ. 1.
Գործ. Բ. 34.
ղ Մատթ. ԻԳ. 1.
Մարկ. ԺԲ. 38.
ճ Մատթ. ԻԳ. 5.
մ Ղկ. ԺԱ. 43.
յ Մատթ. ԻԳ. 14.

—

## ԳԼ. ԻԱ

1 Եւ հայեցեալ ետես զմեծատունսն՝ որ արկանէին զպատարագս իւրեանց ՚ի գանձանակն ։

2 Ետես և զկին մի այրի աղքատ, որ արկ անդր երկուս լումայս ։

3 Եւ ասէ . Արդարեւ ասեմ ձեզ . զի այրին այն աղքատ՝ առաւել արկ քան զամենեսին ։

4 Ամենեքին նոքա ՚ի մթերից իւրեանց արկին յընծայսն Աստուծոյ . բայց նա ՚ի կարօտութենէ իւրմէ զամենայն զկեանս իւր զոր ունէր՝ արկ ։

5 Եւ յասելն ումանց զտաճարէն, թէ Գեղեցիկ վիմօք և աշտարակօք զարդարեալ է, ասէ .

6 Զայդ ամենայն զոր տեսանէք, եկեսցեն աւուրք՝ յորս ոչ թողցի այդր քար ՚ի քարի վերայ, որ ոչ քակտեսցի ։

7 Հարցին զնա և ասեն . Վարդապետ՝ երբ լինիցի այդ, և զի՞նչ նշան իցէ՝ յորժամ այդ լինելոց իցէ ։

8 Եւ նա ասէ . Զգո՛յշ կացէք, մի խաբիցիք . զի բազումք գայցեն յանուն իմ և ասիցեն՝ թէ Ես եմ . և մերձեցաւ ժամանակ . մի երթայցէք զկնի նոցա ։

9 Եւ յորժամ լսիցէք պատերազմունս և խռովութիւնս՝ մի զարհուրիցիք . զի պարտ է նախ այնմ լինել . այլ ոչ առ ժամայն կատարած ։

10 Յայնժամ ասէ ցնոսա . Յարիցէ ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն ՚ի թագաւորութեան վերայ ։

1 Եւ մտիկ ըրաւ, տեսաւ հարուստները՝ որ իրենց տուրքը գանձանակն էին ա ձգում ։

2 Մին որբեւէրի աղքատ կին էլ տեսաւ՝ որ երկու լումայ ձգեց այն տեղ .

3 Եւ ասաց . Ճշմարիտն ասեմ ձեզ՝ թէ այն աղքատ որբեւէրին ամէնիցն աւելի բ ձգեց .

4 Ինչու որ՝ նորանք ամէնքն իրենց աւելորդներիցը ձգեցին Աստուծոյ ընծաներին մէջ, բայց նա իրեն կարօտութիւնիցն իրեն բոլոր կենաց ապրուստն՝ որ ունէր՝ ձգեց ։

5 Եւ երբոր մին քանի մարդ ասում էին տաճարին համար՝ թէ, Գեղեցիկ քարերով եւ աշտարակներով զարդարված է, նա գ ասաց .

6 Այդ ամէնքը՝ որ տեսնում էք՝ օրեր կը գան՝ որ այդտեղ քար քարի վերայ չի թողլի՝ որ դ չը քանդվի ։

7 Հարցրին նորան եւ ասացին . Վարդապետ՝ դա երբ կը լինի, եւ ինչ է նշանն՝ երբոր այդ պիտի լինի ։

8 Եւ նա ասաց . Զգո՛յշ կացէք՝ որ ե չխաբուիք . ինչու որ՝ շատ մարդիկ կըգան իմ անունովս եւ կասեն՝ թէ, Ես եմ . եւ ժամանակը մօտեցաւ . նորանց ետեւէն մի գնաք ։

9 Եւ երբոր կռիւներ եւ խռովութիւններ կը լսէք՝ մի՛ չփաթվիք . ինչու որ՝ պէտք է, որ առաջ նա լինի, բայց դեռ շուտով վերջը չէ ։

10 Այն ժամանակը նորանց ասաց . Ազգ ազգի վերայ վեր կը կենայ եւ թագաւորութիւն թագաւորութեան զ վերայ ։

ա Մարկ. ԺԲ. 41 ։
բ Բ Կորնթ. Ը. 12 ։
գ Մատթ. ԻԴ. 1 ։ Մարկ. ԺԳ. 1 ։
դ Ղկ. ԺԹ. 44 ։
ե Մատթ. ԻԴ. 4 ։ Մարկ. ԺԳ. 5 ։ Եփես. Ե. 6 ։ Բ Թես. Բ. 3 ։
զ Մատթ. ԻԴ. 7 ։

11 Եւ շարժմունք մեծամեծք. եւ ՚ի տեղիս տեղիս սովք եւ սրածութիւնք, եղիցին արհաւիրք եւ նշանք մեծամեծք յերկնից։

12 Բայց յառաջ քան զայս ամենայն, մխեսցեն զձեռս իւրեանց ՚ի ձեզ՝ եւ հալածեսցեն. մատնեսցեն ՚ի ժողովուրդս եւ ՚ի բանտս, եւ տանիցին առաջի դատաւորաց եւ թագաւորաց վասն անուան իմոյ։

13 Եւ լինիցի ձեզ այն ՚ի վկայութիւն։

14 Արդ՝ դիք ՚ի սիրտս ձեր՝ մի յառաջագոյն կրթել տալոյ պատասխանի։

15 Զի ես տաց ձեզ բերան եւ իմաստութիւն, որում ոչ կարիցեն կալ հակառակ՝ կամ տալ պատասխանի ամենայն հակառակորդքն ձեր։

16 Մատնեսջիք եւ ՚ի ծնողաց եւ յեղբարց եւ յազգականաց եւ ՚ի բարեկամաց, եւ սպանանիցեն ՚ի ձէնջ.

17 Եւ եղիջիք ատեցեալք յամենեցունց վասն անուան իմոյ։

18 Եւ մազ մի ՚ի գլխոյ ձերմէ ոչ կորիցէ.

19 Եւ համբերութեամբ ձերով ստասջիք զոգիս ձեր։

20 Այլ յորժամ տեսանիցէք շուրջ պատեալ զօրօք զԵրուսաղէմ, յայնժամ գիտասջիք թէ մերձ է աւեր նորա։

21 Յայնժամ որ ՚ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն ՚ի լերինս, եւ որ ՚ի մէջ նորա իցեն՝ խուսեսցին, եւ որ ՚ի գաւառս իցեն՝ մի մտցեն ՚ի նա.

11 Եւ մեծամեծ գետնաշարժութիւններ՝ եւ տեղ տեղ սովեր եւ սաստիկ մահեր. եւ երկինքից ահաւոր բաներ եւ մեծամեծ նշաններ կը լինին։

12 Բայց այս բաներից առաջ իրենց ձեռները ձեզ վերայ կը ձգեն եւ է կը հալածեն. ժողովարանների եւ բանտերի մէջ ը կը մատնեն, եւ կը տանեն դատաւորների եւ թագաւորների թ առաջին իմ անուանս ժ համար։

13 Եւ նա՛ կը լինի ձեզ վկայութեան ի համար։

14 Ուրեմն ձեր սրտի մէջ դրէք՝ որ առաջուց միտք չանէք պատասխան տալոյ լ համար։

15 Ինչու որ՝ ես բերան եւ իմաստութիւն կը տամ ձեզ. որ ձեր ամէն հակառակօղները չեն կարենալ դէմ կենալ կամ պատասխան տալ խ նորան։

16 Կը մատնուիք էլ ծնողներից եւ եղբայրներից եւ ազգականներից եւ ծ բարեկամներից. եւ ձեզանից կ կը սպանեն։

17 Եւ ամէնքին ատելի կը լինէք իմ անուանս հ համար։

18 Բայց ձեր գլխից մին մազ ձ չի կորչիլ։

19 Եւ ձեր համբերութեամբը ձեր հոգին կը շահէք։

20 Բայց երբոր կը տեսնէք թէ Երուսաղէմը չորս կողմից պատած է զօրքերով՝ այն ժամանակը գիտացէք թէ նորա քանդուիլը մօտիկ ղ է։

21 Այն ժամանակը նորանք՝ որ Հրէաստանումն են՝ թող սարերը փախչին, եւ նորանք՝ որ նորան մէջ են՝ թող դուրս քաշվին, եւ նորանք՝ որ նորա գաւառներումն են՝ թող չի մտնեն նորան մէջ։

է Մարկ. ԺԳ. 9։ Յովհ. Բ. 10։
ը Գործ. Դ. 3։ Ե. 18։ ԺԲ. 4։ ԺԴ. 24։
թ Գործ. ԻԵ. 23։
ժ Ա. Պետ. Բ. 13։
ի Փիլիպ. Ա. 28։ Բ Թես. Ա. 5։
լ Մատթ. Ժ. 19։ Մարկ. ԺԳ. 11։ Ղկ. ԺԲ. 11։
խ Գործ. Զ. 10։
ծ Միք. Է. 6։ Մարկ. ԺԳ. 12։
կ Գործ. Է. 59։ ԺԲ. 2։
հ Մատթ. Ժ. 22։
ձ Մատթ. Ժ. 30։
ղ Մատթ. ԻԴ. 15։ Մարկ. ԺԳ. 14։

22 Զի աւուրք վրէժխնդրութեան
են այնոքիկ՝ առ 'ի կատարելոյ ա-
մենայն գրելոց։
23 Բայց վայ իցէ յղեաց եւ սըն-
տուաց յաւուրսն այնոսիկ. զի ե-
ղիցի տագնապ մեծ 'ի վերայ երկ-
րի, եւ բարկութիւն ժողովրդեան
այնմիկ։
24 Եւ անկցին 'ի սուր սուսերի,
եւ գերեսցին յամենայն հեթանոսս.
եւ Երուսաղէմ եղիցի կոխան յազ-
գաց՝ մինչեւ կատարեսցին ժամա-
նակք հեթանոսաց։

25 Եւ եղիցին նշանք յարեգակն
եւ 'ի լուսին եւ յաստեղս. եւ յերկ-
րի տագնապ հեթանոսաց՝ յահեղ
բարբառոյ իբրեւ ծովու եւ խռո-
վութեան։

26 Ցամաքելոյ ոգւոց մարդկան յեր-
կիւղէ եւ 'ի կարծեաց եկելոց 'ի վե-
րայ աշխարհի. զի զօրութիւնք
երկնից շարժեսցին.

27 Եւ յայնժամ տեսցեն զՈրդի
մարդոյ եկեալ՝ ամպովք զօրու-
թեամբ եւ փառօք բազմօք։
28 Եւ յորժամ սկսանիցի այս լի-
նել, ամբարձջիք եւ բարձրացու-
ջիք զգլուխս ձեր. զի մերձ է
փրկութիւն ձեր։
29 Եւ ասաց առակ մի նոցա. Տե-
սէք զթզենին եւ զամենայն ծառ.
30 Յորժամ ցուցանիցեն զպտուղ
իւրեանց, տեսանէք՝ եւ 'ի նոցանէ
ճանաչէք, եթէ մերձ է ամառն։
31 Նոյնպէս եւ դուք՝ յորժամ
տեսանիցէք զայս ամենայն եղեալ՝
գիտասջիք թէ մերձ է արքայու-
թիւնն Աստուծոյ։

22 Ինչու որ՝ այն օրերը վրէժ
խնդրելոյ օրերն են՝ որ ամէն գըր-
ւածները [ճ] կատարուին։
23 Բայց այն օրերումը վայ կը լինի
յղացածներին եւ [մ] ծծտաւողներին.
ինչու որ՝ մեծ նեղութիւն կը լինի
երկրիս վերայ, եւ Աստուծոյ բարկու-
թիւնն այն ժողովրդին վերայ։
24 Եւ սրի բերան կընկնին, եւ
ամէն հեթանոսներին մէջ գերի կը
տանուին. եւ Երուսաղէմը հեթա-
նոսներից կոխած կը լինի՝ մինչեւ
որ հեթանոսներին ժամանակները
[յ] կատարուին։
25 Եւ նշաններ կը լինին, արե-
գակումն ու լուսնումը եւ աստեղ-
ներումը, եւ երկրումս հեթանոս-
ների տառապիկ ահ եւ վախ ինչպէս
ծովի եւ խռովութեան ահաւոր
[ն] ձայներից։
26 Որովհետեւ մարդկանց հոգիները
դուրս կը գան վախի համար եւ այն
բաներին մտիկ տալոյ համար՝ որ բո-
լոր աշխարհքի վերայ պիտի գան.
ինչու որ՝ երկնքի զօրութիւնները
[շ] կը շարժուին։
27 Եւ այն ժամանակը կը տեսնեն
Որդին մարդոյ ամպերի վերայ եկած
զօրութենով եւ շատ [ո] փառքով։
28 Եւ երբոր այս բաները կըսկսեն
լինել՝ վեր առէք եւ բարձրացրէք
ձեր գլուխներդ. ինչու որ՝ ձեր
փրկութիւնը մօտ [չ] է։
29 Եւ նորանց մին առակ ասաց. Տե-
սէք թզենի ծառին ու ամէն [պ] ծառերը.
30 Երբոր իրենց պտուղն երե-
ւցնումեն՝ տեսնումէք եւ նորան-
ցից ճանաչումէք, թէ ամառը մօտ է։
31 Այնպէս էլ դուք՝ երբոր այս
ամէն բաները էլած տեսնէք՝ գի-
տացէք, որ Աստուծոյ արքայու-
թիւնը մօտ է։

ճ Դան. Թ. 26. 27։ Զաք. ԺԱ. 1։
մ Մատթ. ԻԴ. 19։
յ Դան. Թ. 27։ ԺԲ. 7։ Հռովմ. ԺԱ. 25։
ն Մատթ. ԻԴ. 29։ Մարկ. ԺԳ. 24։ Բ Պետ. Գ. 10—12։
շ Մատթ. ԻԴ. 29։
ո Մատթ. ԻԴ. 30։ Յայտ. Ա. 7։ ԺԳ. 14։
չ Հռովմ. Ը. 19. 23։
պ Մատթ. ԻԴ. 32։ Մարկ. ԺԳ. 28։

32 Ամէն ասեմ ձեզ. թէ ո՛չ անցցէ ազգս այս, մինչեւ այս ամենայն լինիցի։
33 Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ ոչ անցանիցեն։
34 Զգոյշ լերուք անձանց, գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ եւ արբեցութեամբ եւ հոգովք աշխարհականօք, եւ յանկարծակի հասանիցէ ՚ի վերայ ձեր օրն այն։
35 Զի իբրեւ որոգայթ հասանիցէ ՚ի վերայ ամենեցուն, որ բնակեալ են ընդ ամենայն երեսս երկրի։
36 Արթո՛ւն կացէք այսուհետեւ, յամենայն ժամ աղօթս արարէք. զի արժանի լինիջիք զերծանել յայնցանէ յամենայնէ՝ որ լինելոց է, եւ կալ առաջի Որդւոյ մարդոյ։
37 Եւ ՚ի տուէ ՚ի տաճարին ուսուցանէր, եւ զգիշերս ելեալ ագանէր ՚ի լերինն՝ որ կոչէր Ձիթենեաց։
38 Եւ ամենայն ժողովուրդն կանխէր ընդ առաւօտս առ նա ՚ի տաճարն լսել նմանէ։

32 Ճշմարիտն ասում եմ ձեզ՝ թէ Այս ազգս չի անցանիլ, մինչեւ որ՝ այս ամէն բաներս լինին։
33 Երկինքն եւ երկիրս կանցանեն եւ իմ խօսքերս չեն Հ անցանիլ։
34 Զգոյշ կացէք անձներիդ՝ որ ձեր սրտերը չծանրանան շուայտութենով եւ արբեցութենով եւ աշխարհական հոգսերով, եւ այն օրը յանկարծ հասնէ ձեզ — վերայ.
35 Ինչու որ՝ որոգայթի պէս կը հասնէ այն ամէնին վերայ՝ որ բոլոր երկրին երեսին վերայ բնակված — են։
36 Ուրեմն արթո՛ւն Հ կացէք, ամէն ժամանակ աղօթք ÷ արէք, որ արժանի լինիք ազատվիլ այն ամէն բաներիցն՝ որ պիտի լինին, եւ կանգնիլ Որդւոյ մարդոյ ÷ առաջին։
37 Եւ ցերեկը տաճարումը ՚ սովորցնումէր եւ գիշերները դուրս գալիս եւ կենում այն սարումն՝ որ Ձիթենեաց էր — կոչվում։
38 Եւ ամէն ժողովուրդն առաւօտից շուտով գնումէր տաճարը նորա մօտ՝ որ նորանից բան լսէ։

## ԳԼ. ԻԲ

1 Մերձեցաւ տօն բաղարջակերացն՝ որ կոչէր Պասքա։
2 Եւ խնդրէին քահանայապետքն եւ դպիրք՝ թէ որպէս սպանանիցեն զնա. բայց երկնչէին ՚ի ժողովրդենէ անտի։
3 Այս եմուտ Սատանայ ՚ի Յուդա ՚ի կոչեցեալն Իսկարիովտացի, որ էր ՚ի թուոյ երկոտասանիցն։
4 Չոգաւ եզ բանս ընդ քահանայապետսն՝ եւ ընդ դպիրս՝ եւ ընդ

1 Բաղարջակերաց տօնը մօտեցաւ՝ որ Պասքա էր — կոչվում։
2 Եւ քահանայապետներն ու կարգաւորները խնդրումէին՝ թէ ինչպէս սպանեն Ֆ նորան. բայց ժողովրդիցը վախենումէին։
3 Այս Սատանան մտաւ Իսկարիօտացի ասած Յուդային մէջ՝ որ տասներկուսի թուից ÷ էր։
4 Նա գնաց քահանայապետներին ու կարգաւորներին եւ ժողո-

Ղ Մատթ. ԻԴ. 35։
— Հռովմ. ԺԳ. 13։ Ա Թես. Ե. 6։ Ա Պետ. Դ. 7։
• Ա Թես. Ե. 2։ Բ Պետ. Գ. 10։ Յայտ. Գ. 3։
ԺԶ. 15։
Ղ Մատթ. ԻԴ. 42։ ԻԵ. 13։ Մարկ. ԺԴ. 33։
÷ Գլ. ԺԸ. 1։
ր Սաղ. Ա. 5։ Եփես. Զ. 13։
ջ Յովհ. Ը. 1, 2։
— Գլ. ԻԱ. 39։

—

— Մատթ. ԻԶ. 2։ Մարկ. ԺԴ. 1։
ֆ Սաղ. Բ. 2։ Յովհ. ԺԱ. 47։ Գործ. Դ. 27։
÷ Մատթ. ԻԶ. 14։ Մարկ. ԺԴ. 10։ Յովհ. ԺԳ. 2. 27։

իշխանս ժողովրդեանն , զի մատնեսցէ զնա նոցա ։
5 Եւ խնդացին , եւ խոստացան տալ նմա արծաթ ։

6 Եւ յանձն առ , եւ խնդրէր պարապ մատնել զնա նոցա՝ մեկուսի յամբոխէն ։

7 Եկն օր բաղարջակերացն , յորում օրէն էր զենուլ զպասեքն ։

8 Եւ առաքեաց զՊետրոս եւ զՅովհաննէս եւ ասէ ․ Երթայք պատրաստեցէք մեզ զպասեքն՝ զի կերիցուք ։
9 Եւ նոքա ասեն ․ Ո՞ւր կամիս՝ զի պատրաստեսցուք ։
10 Եւ ասէ ցնոսա ․ Ահա իբրեւ մտանիցէք ՚ի քաղաքն , պատահեսցէ ձեզ այր մի բարձեալ սափոր ջրոյ ․ երթիջիք զհետ նորա ՚ի տունն , յոր մտանիցէ ,
11 Եւ ասասջիք ցտանուտէր տանն ․ Վարդապետն ասէ քեզ ․ Ո՞ւր են վանքն իմ , յորում զպասեքն ուտիցեմ աշակերտօքս հանդերձ ։

12 Եւ նա ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ զարդարեալ , եւ անդ պատրաստեսջիք ։
13 Եւ գնացեալ գտին որպէս եւ ասացն նոցա ․ եւ պատրաստեցին զպասեքն ։
14 Եւ իբրեւ ժամ եղեւ՝ բազմեցաւ , եւ երկոտասան առաքեալքն ընդ նմա ։
15 Եւ ասէ ցնոսա ․ Ցանկալով ցանկացայ զայս պասեք ուտել ընդ ձեզ՝ մինչչեւ չարչարեալ իցեմ ։

16 Բայց ասեմ ձեզ , թէ ոչ եւս կերայց ՚ի սմանէ՝ մինչեւ լցցի յարքայութեան Աստուծոյ ։

վերդի իշխաններին հետ խօսք կապեց՝ որ նորան մատնէ նորանց ։
5 Եւ նորանք ուրախացան եւ խոստացան՝ որ արծաթ տան ՚նորան ։
6 Եւ նա խօսք տուաւ եւ յարմար ժամանակ էր ուզում՝ որ նորան ամբոխից հեռու պահած մատնէ նորանց ։
7 Բաղարջակերաց օրն եկաւ՝ որ օրէնք էր պասէքը նորանում ՚ի մորթել ։
8 Եւ Պետրոսին եւ Յօհաննէսին ուղարկեց եւ ասաց ․ Գնացէք պասէքը պատրաստեցէք մեզ համար որ ուտենք ։
9 Եւ նորանք ասացին ․ Ի՞նչ տեղ ես կամենում՝ որ պատրաստենք ։
10 Եւ նորանց ասաց ․ Ահա երբոր քաղաքը կը մտնէք՝ մին մարդ կը պատահի ձեզ ջրի կուժը վերկալած ․ նորան ետեւէն գնացէք այն տունն՝ որ նա կը մտնէ ․
11 Եւ այն տան տիրոջն ասացէք ․ Վարդապետն ասում է քեզ ․ թէ Ո՞ւր է իմ վեր գալոյ տեղն՝ որ նորանում պասէքն ուտեմ իմ աշակերտներիս հետ ։
12 Եւ նա մին մեծ զարդարած վերնատուն ցոյց կըտայ ձեզ , եւ այնտեղ պատրաստեցէ՛ք ։
13 Եւ գնացին այնպէս գտին՝ ինչպէս որ ասաց նորանց ․ եւ պասէքը պատրաստեցին ։
14 Եւ ժամն որ էկաւ՝ սեղան նստաւ ․ եւ տասներկու առաքեալներն էլ նորա հետ ։
15 Եւ նորանց ասաց ․ Ցանկանալով ցանկացայ՝ որ այս պասէքըս ձեզ հետ ուտեմ՝ իմ չարչարվելուցս առաջ ։
16 Բայց ասում եմ ձեզ՝ թէ սորանից էլ չեմ ուտիլ՝ մինչեւ որ՝ կատարվի Աստուծոյ ՚ի արքայութենումը ։

փ Զաք․ ԺԱ․ 12 ։ | Մարկ․ ԺԴ․ 12 ։ | Մարկ․ ԺԴ․ 17 ։ | Գործ․ Ա․ 41 ։
ե Մատթ․ ԻԶ․ 17 ։ | ղ Մատթ․ ԻԶ․ 20 ։ | ե Գղ․ ԺԴ․ 15 ։ | Յայտ․ ԺԹ․ 9 ։

17 Եւ ընկալեալ բաժակ՝ գոհա-
ցաւ եւ ասէ · Առէք զայդ՝ եւ բա-
ժանեցէք 'ի ձեզ ։
18 Ասեմ ձեզ՝ թէ Յայսմհետէ ոչ
արբից 'ի բերոյ որթոյ՝ մինչեւ ե-
կեսցէ արքայութիւն Աստուծոյ ։

ը19 Եւ առեալ հաց գոհացաւ՝ ե-
բեկ եւ ետ նոցա եւ ասէ · Այս է
մարմին իմ , որ վասն բազմաց
տուեալ · զայս արասջիք առ իմոյ
յիշատակի ։
20 Նոյնպէս եւ զբաժակն յետ
ընթրեացն առ՝ եւ ասէ · Այս բա-
ժակ է նոր ուխտ իմով արեամբ
վասն ձեր հեղլոյ ։

21 Բայց ահաւասիկ ձեռն մատնչի ի-
մոյ ընդ իս 'ի սեղանս ։
22 Եւ Որդի մարդոյ ըստ սահմա-
նելոյն երթայ , բայց վայ մարդոյն
այնմիկ՝ յոյր ձեռն մատնեսցի ։

23 Եւ նոքա սկսան խնդրել ընդ
միմեանս , թէ ով է 'ի նոցանէ՝ որ
զայն գործելոց իցէ ։
24 Եւ եղեւ հակառակութիւն 'ի
մէջ նոցա · թէ ո 'ի նոցանէ համա-
րեսցի մեծ ։
25 Եւ նա ասէ ցնոսա · Թագա-
ւորք ազգաց տիրեն նոցա · եւ որ
իշխենն նոցա՝ բարերարք կոչին ·

26 Այլ դուք ոչ այնպէս · այլ որ
մեծն է 'ի ձեզ՝ եղիցի իբրեւ ըզ
կրտսերն , եւ առաջնորդն իբրեւ
զսպասաւորն ։
27 Ո՞վ է մեծ , բազմեալն՝ եթէ
սպասաւորն · ոչ ապաքէն բազ-

17 Եւ բաժակըն առաւ՝ գոհացաւ
եւ ասաց · Առէք զայսա եւ ձեր
միջումը բաժանեցէք ։
18 Ասում եմ ձեզ՝ թէ , Սրանից ե-
տեւ որթի բերքից չեմ խմիլ՝ մին-
չեւ որ՝ Աստուծոյ արքայութիւնը
ը գայ ։
19 Եւ հաց առաւ , գոհացաւ ,
կտրեց եւ նրանց տուաւ եւ թ ա-
սաց · Սա է իմ մարմինս՝ որ չա-
տերին համար տրվում է · սա ա-
րէք իմ յիշատակիս ժ համար ։
20 Այնպէս էլ ընթրիքիցն ետեւ
բաժակըն առաւ , եւ ասաց · Այս
բաժակս նոր ուխտ եւ պայման է
իմ արիւնովս՝ որ ձեզ համար ի թափ-
վում ։
21 Բայց ահա իմ մատնողիս ձեռքն
ինձ հետ այս սեղանումն լ է ։
22 Եւ Որդին մարդոյ խ կը գնայ
ինչպէս որ սահմանուած է · բայց
վա՛յ այն մարդուն՝ որ նրա ձեռովը
ծ կը մատնուի ։
23 Եւ նրանք սկսեցին հարցնել
իրենց մէջերն՝ թէ իրենցից ով է նա՝
որ պիտի այն բանը կգործէ ։
24 Նրանց միջումը հակառակու-
թիւն էլ եղաւ՝ թէ իրենցից ով պի-
տի մեծ հ համարուի ։
25 Եւ նա ասաց նրանց · Ազգե-
րին թագաւորները տիրապետում են
նրանց վերայ , եւ նրանք՝ որ իշ-
խանութիւն են անում նրանց վե-
րայ՝ բարերար են ձ կոչվում ։
26 Բայց դուք այնպէս չէք · այլ
ով որ ձեր միջումը մեծ է՝ թող
փոքրի պէս լինի , եւ առաջնորդը
ծառայի ղ պէս ։
27 Ո՞վ է մեծ , սեղան ճ նստողը՝
թէ ծառան · չէ՞ որ սեղան նստողը ·

ը Մատթ. ԻԶ. 29 ։ Մարկ. ԺԴ. 25 ։
թ Մատթ. ԻԶ. 26 ։ Մարկ. ԺԴ. 22 ։
ժ Ա Կորնթ. ԺԱ. 24 ։
ի Ա Կորնթ. Ժ. 16 ։
լ Սաղ. ԽԱ. 9 ։ Մատթ. ԻԶ. 21. 23 ։ Մարկ. ԺԴ. 18 ։ Յովհ. ԺԳ. 21. 26 ։
խ Մատթ. ԻԶ. 24.
ծ Գործ. Բ. 23 ։ Դ. 28 ։
կ Մատթ. ԻԶ. 22 ։ Յովհ. ԺԳ. 22. 25 ։
հ Մարկ. Թ. 34 ։ Ղկ. Թ. 46 ։
ձ Մատթ. Ի. 25 ։ Մարկ. Ժ. 42 ։
ղ Մատթ. Ի. 26 ։ Ա Պետ. Ե. 3 ։
ճ Ղկ. Թ. 48 ։
մ Ղկ. ԺԲ. 37 ։

մեալն. բայց ես եմ ՚ի միջի ձերում
իբրեւ սպասաւոր:
28 Եւ դուք էք՝ որ ցանկ կայիք
ընդ իս ՚ի փորձութիւնս իմ.
29 Եւ ես ուխտեմ ձեզ՝ որպէս
եւ Հայր իմ ուխտեաց ինձ ար-
քայութիւն.

30 Զի ուտիջէք եւ ըմպիջէք ՚ի սե-
ղանն իմ յարքայութեանն իմում,
եւ նստջիք յերկոտասան աթոռ՝
դատել զերկոտասան ազգ Իսրայէլի:

31 Եւ ասէ Տէր. Սիմոն Սիմոն՝
ահա Սատանայ խնդրեաց զձեզ
խարբալել իբրեւ զցորեան.
32 Այլ ես աղաչեցի վասն քո՝ զի
մի պակասեսցեն հաւատք քո. եւ
դու երբեմն դարձցիս՝ եւ հաստա-
տեսցես զեղբարս քո:
33 Եւ նա ասէ ցնա. Տէր՝ ընդ
քեզ պատրաստ եմ եւ ՚ի բանտ եւ
՚ի մահ երթալ:
34 Եւ նա ասէ ցնա. Ասեմ քեզ
Պետրէ, չիցէ այսօր հաւու խօ-
սել՝ մինչեւ երիցս ուրասցիս զիս
չգիտել:
35 Եւ ասէ ցնոսա. Յորժամ առա-
քեցի զձեզ առանց քսակի եւ մա-
խաղի եւ կօշկաց, միթէ կարօտա-
ցա՞յք ինչ:
36 Եւ նոքա ասեն. Եւ ոչ ինչ.
ապա ասէ. Այլ այժմ որ ունիցի
քսակ՝ բարձցէ, նոյնպէս եւ մա-
խաղ. եւ որ ոչն ունիցի, վաճա-
ռեսցէ զձորձս իւր՝ եւ գնեսցէ իւր
սուսեր:
37 Բայց ասեմ ձեզ. զի այս եւս
որ գրեալ է՝ պարտ է զի կատա-
րեսցի յիս, թէ Ընդ անօրէնս հա-

բայց ես՝ ձեր մէջումը ծառայի պէս
յ եմ:
28 Եւ դուք էք, որ միշտ ինձ
հետ էիք իմ ն փորձութիւններումս:
29 Եւ ես հաստատ խոստանամ
ձեզ արքայութիւնը՝ ինչպէս որ
Հայրն էլ ինձ հաստատ շ խոստա-
ցաւ.
30 Որ ուտէք եւ խմէք իմ սեղա-
նիս վերայ իմ ո արքայութեանս,
եւ տասներկու աթոռի վերայ նստ-
իք՝ Իսրայէլի տասներկու ցեղին
դատաստան անելոյ չ համար:
31 Եւ Տէրն ասաց. Սիմօն Սի-
մօն. ահա Սատանան պ ուզեց՝ որ
ձեզ խախալէ ցորենի ջ պէս.
32 Բայց ես աղաչեցի քեզ համար՝
որ քո հաւատքդ ռ չպակասի. եւ
դու մին ժամանակ դառնաս եւ քո
եղբայրներդ ս հաստատես:
33 Եւ նա ասաց նորան. Տէր.
ես պատրաստ եմ՝ որ քեզ հետ եւ
բանտի եւ մահի մէջ էլ գնամ:
34 Եւ նա ասաց նորան. Ասու-
մեմ քեզ Պետրէ, որ այսօր դեռ
հաւը չը խօսած, դու երեք անգամ
կուրանաս չըգիտել վ ինձ:
35 Եւ նորանց ասաց. Երբոր ու-
ղարկեցի ձեզ առանց քսակի, եւ
պարկի եւ կօշիկների՝ միթէ կարօ-
տացա՞ք մին տ բանի:
36 Եւ նորանք ասացին. Ոչ
մին բանի էլ ոչ. ապա ասաց. բայց
հիմիկ ով որ քսակ ունի, թող վեր
առնէ, այնպէս էլ պարկը, եւ ով
որ չունի՝ թող իւրեն շորերը ծախէ
եւ իւրեն համար սուր գնէ:
37 Բայց ասումեմ ձեզ, թէ սա
էլ որ գրված է, պէտք է կատար-
վի ինձանում՝ թէ, Անօրէններին

յ Մատթ. Ի. 28. Յովհ. ԺԳ. 13. 14. Փիլիպ. Բ. 7.
ն Եբր. Դ. 15.
շ Մատթ. ԻԴ. 47. Ղկ. ԺԲ. 32. Ա Կորնթ. Ա. 7. Բ Տիմ. Բ. 12.
ո Մատթ. Ը. 11. Ղկ. ԺԴ. 15. Յայտ. ԺԹ. 9.
չ Սաղ. ԽԹ. 14. Մատթ. ԺԹ. 28. Ա Կորնթ. Զ. 2. Յայտ. Գ. 21.
պ Ա Պետ. Ե. 8.
ջ Ամովս. Թ. 9.
ռ Յովհ. ԺԷ. 9. 11. 15.
ս Սաղ. ԽԱ. 13. Յովհ. ԻԱ. 15. 16. 17.
վ Մատթ. ԻԶ. 34. Մարկ. ԺԴ. 30. Յովհ. ԺԳ. 38.
տ Մատթ. Ժ. 9. Ղկ. Թ. 3. Ժ. 4.

մարեցաւ · զի որ վասն իմ ինչ է՝
վճարեալ է ։

38 Եւ նոքա ասեն · Տէր՝ ահաւա-
սիկ են աստ երկու սուրք · եւ նա
ասէ ցնոսա · Բաւական են ։
39 Եւ ելեալ գնաց ըստ սովորու-
թեանն 'ի լեառն Ձիթենեաց · գնա-
ցին զհետ նորա եւ աշակերտքն ։

40 Իբրեւ եհաս 'ի տեղին՝ ասէ
ցնոսա · Յաղօթս կացէք չմտանել
'ի փորձութիւն ։
41 Եւ ինքն մեկնեցաւ 'ի նոցանէ
իբրեւ քարընկէց մի , եդ ծունր՝
կայր յաղօթս ։
42 Եւ ասէր · Հայր՝ եթէ կամիս
անցո զբաժակս զայս յինէն · բայց
ոչ իմ կամք՝ այլ քոյդ լիցին ։

43 Եւ երեւեցաւ նմա հրեշտակ
յերկնից՝ եւ զօրացուցանէր զնա ·
եւ էր 'ի տագնապի , եւ մտադիւ-
րութեամբ եւս կայր յաղօթս ։

44 Եւ հոսէին 'ի նմանէ քրտունք
իբրեւ զկայլակս արեան՝ ոլոռն ո-
լոռն , հեղեալ յերկիր ։

45 Եւ յարուցեալ յաղօթիցն՝ եկն
առ աշակերտսն , եգիտ զնոսա 'ի
քուն 'ի տրտմութենէն .

46 Եւ ասէ ցնոսա · Զի՞ ննջէք ,
արիք կացէք յաղօթս՝ զի մի մտա-
նիցէք 'ի փորձութիւն ։
47 Եւ մինչդեռ խօսէր , ահաւա-
սիկ ամբոխ · եւ որ կոչէրն Յուդա՝
մի յերկոտասանիցն՝ առաջնորդէր
նոցա ։ Իբրեւ մերձեցաւ առ Յի-
սուս՝ համբուրել զնա · քանզի

հետ ր համարուեցաւ · պատճառն որ՝
ինչ որ ինծի համար ասուած է՝ գլուխ
է եկած ։
38 Եւ նորանք ասացին · Տէր՝ ա-
հա այստեղ երկու սուր կայ · եւ
նա ասաց նորանց · Բաւական են ։
39 Եւ դուրս ելաւ իրեն սովորու-
թեան ց ալէս գնաց Ձիթենեաց սա-
րը՝ աշակերտներն էլ նորա ետեւէն
– գնացին ։
40 Երբոր այնտեղը հասաւ՝ նո-
րանց ասաց · Աղօթք արէք՝ որ
փորձութեան մէջ ÷ չմտնէք ։
41 Եւ ինքը նորանցից հեռացաւ
մին քար ձգելոյ չափով՝ ծունր դր-
րաւ՝ աղօթք էր – անում ·
42 Եւ ասում · Հայր՝ եթէ կամե-
նում ես՝ այս բաժակըս անցացրու
ինձանից · միայն թէ՝ ոչ իմ կամքս՝
բայց քո [illegible] ° լինի ։
43 Եւ հրեշտակ ‡ երեւեցաւ նո-
րան երկնքիցը , եւ զօրացնում էր
նորան , եւ մեռնելոյ չափ խռովու-
թեան մէջ էր , եւ աւելի ջանքով
աղօթք էր = անում ։
44 Եւ քրտունքը վազում էր նո-
րանից , ինչպէս արիւնի կաթիլք՝
որ կլոր կլոր երկրի վերայ էին
թափվում ։
45 Եւ աղօթքից վերկացաւ՝ ե-
կաւ աշակերտներին մօտ , եւ նո-
րանց քնի մէջ գտաւ տրտմութեան
պատճառով ·
46 Եւ նորանց ասաց · Ինչու էք
քնում · վերկացէք աղօթք ‡ արէք ,
որ փորձութեան մէջ չմտնէք ։
47 Եւ դեռ որ խօսում էր՝ ահա
ամբոխ , եւ նա որ Յուդա էր կոչ-
վում՝ այն տասներկուսիցը մինն՝
առաջնորդում էր ‡ նորանց · երբոր
մօտեցաւ Յիսուսին՝ համբուրելու նո-

ր Եսայ . ԾԳ . 12 · Մարկ . ԺԵ . 28 ·
ց Մատթ . ԻԶ . 36 · Մարկ . ԺԴ . 32 · Յովհ . ԺԸ . 1 ·
– Ղկ . ԻԱ . 37 ·

÷ Մատթ . Զ . 13 · ԻԶ . 41 · Մարկ . ԺԴ . 38 · Համառ . 46 ·
+ Մատթ . ԻԶ . 39 · Մարկ . ԺԴ . 35 ·

° Յովհ . Ե . 30 · Զ . 38 ·
‡ Մատթ . Դ . 11 ·
= Յովհ . ԺԲ . 27 · Եբր . Ե . 7 ·
բ Համառ . 40 ·

‡ Մատթ . ԻԶ . 47 · Մարկ . ԺԴ . 43 · Յովհ . ԺԸ . 3 ·

զայն նշան տուեալ էր նոցա, թէ ընդ որում ես համբուրեցից, նա է՝ զնա ունիցիք ։

48 Ասէ ցնա Յիսուս . Յուդա՛ համբուրելո՞վ մատնես զՈրդի մարդոյ ։

49 Իբրեւ տեսին՝ որ զնովաւն էին՝ որ ինչ եղեւն, ասեն ցնա . Տէ՛ր հարցուք զնոսա սրով ։

50 Եւ եհար մի ոմն 'ի նոցանէ զքահանայապետին ծառայ, եւ 'ի բաց եհատ զաջոյ ունկն նորա ։

51 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ . Թո՛յլ տուք մինչեւ ցայդ վայր . եւ մատուցեալ յունկնն՝ բժշկեաց զնա ։

52 Եւ ասէ ցեկեալսն 'ի վերայ նորա՝ զքահանայապետսն եւ զիշխանս տաճարին եւ զծերս . Իբրեւ 'ի վերայ աւազակի ելիք սուսերօք եւ բրօք ։

53 Հանապազ ընդ ձեզ էի 'ի տաճարին, եւ ոչ ձգեցիք ձեռս յիս . այլ այս է ձեր ժամ՝, եւ իշխանութիւն խաւարի ։

54 Եւ կալեալ զնա՝ ածին եւ մուծին 'ի տուն քահանայապետին . եւ Պետրոս երթայր զհետ նորա հեռաստին ։

55 Իբրեւ լուցին կրակ 'ի մէջ գաւթին՝ եւ նստան շուրջ, նստաւ եւ Պետրոս 'ի մէջ նոցա ։

56 Եւ ետես զնա աղախին ոմն՝ զի նստէր առ լոյսն, հայեցաւ ընդ նա եւ ասէ . Եւ սա ընդ նմա էր՝ որ ընդ նմայն էին ։

57 Իսկ Պետրոս ուրացաւ եւ ասէ . Ո՛չ գիտեմ զնա կին դու ։

58 Եւ յետ սակաւ միոյ, այլ ոմն ետես զնա, եւ ասէ . Եւ դու 'ի

բան . պատճառն որ՝ նա նշան էր տուել նորանց, թէ որին որ ես կը համբուրեմ՝ նա է՝ նորան բռնեցէք ։

48 Յիսուս նորան ասաց . Յուդա՛ համբուրելո՞վ ես Որդին մարդոյ մատնում ։

49 Երբոր նորանք՝ որ նորա հետն էին՝ տեսին ինչ որ էլաւ՝ նորան ասացին . Տէ՛ր սրով զարկե՞նք նորանց ։

50 Եւ նորանցից մէկը քահանայապետին ծառային զարկեց՝ եւ նորան աջ ականջը դ կտրեց ։

51 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց . Թո՛ղ տուէք մինչեւ այդ տեղըդ . եւ ականջին մօտեցաւ եւ բժշկեց նորան ։

52 Եւ իրեն վերայ եկածներին՝ քահանայապետներին ու տաճարի իշխաններին եւ ծերերին ե ասաց . Ինչպէս մին աւազակի վերայ դուրս եկիք սրերով եւ բրերով ։

53 Ամէն օր ձեզ հետ էի տաճարումը . եւ ձեր ձեռները չը ձգեցիք ինձ վերայ . աս ձեր ժամն է եւ խաւարի զ իշխանութիւնը ։

54 Եւ նորան բռնեցին տարան եւ մարդիկ քահանայապետին է տարին . եւ Պետրոս հեռուանց գնումէր նորան ը ետեւէն ։

55 Երբոր սրահին մէջ կրակ վառեցին եւ չորս կողմով նստեցին, Պետրոսն էլ նստեց նորանց թ միջումը ։

56 Մին աղախին տեսաւ նորան՝ որ լուսոյ մօտ նստած էր . մտիկ տուաւ նորան եւ ասաց . Սա էլ նորանց հետ էր՝ որ նորա հետն էին ։

57 Բայց Պետրոս ուրացաւ եւ ասաց . Ո՛վ կին . ես նորան չեմ գիտում ։

58 Եւ մին քիչ յետոյ մին ուրիշը տեսաւ նորան եւ ժ ասաց . Դու էլ

դ Մատթ. ԻԶ. 51 ։
Մարկ. ԺԴ. 47 ։
Յովհ. ԺԸ. 10 ։
ե Մատթ. ԻԶ. 55 ։
Մարկ. ԺԴ. 48 ։
զ Յովհ. ԺԲ. 27 ։
է Մատթ. ԻԶ. 57 ։
ը Մատթ. ԻԶ. 58 ։
Յովհ. ԺԸ. 15 ։
18 ։
թ Մատթ. ԻԶ. 69 ։
Մարկ. ԺԴ. 66 ։
Յովհ. ԺԸ. 17 ։
ժ Մատթ. ԻԶ. 71 ։
Մարկ. ԺԴ. 69 ։
Յովհ. ԺԸ. 25 ։

նոցանէ ես. եւ Պետրոս ասէ. Այր դու՝ չեմ 'ի նոցանէ։

59 Եւ իբրեւ ժամ մի անց 'ի վերայ, այլ ոմն վիճէր եւ ասէր. Սոյգ եւ սա ընդ նմա էր, քանզի Գալիլեացի է։

60 Ասէ Պետրոս. Այր դու՝ չգիտեմ զինչ խօսիս. եւ առ ժամայն մինչդեռ նա զայն ասէր, խօսեցաւ հաւ։

61 Դարձաւ Տէր՝ եւ հայեցաւ 'ի Պետրոս. եւ յիշեաց Պետրոս զբանն Տեառն՝ զոր ասաց ցնա. Մինչչեւ հաւու խօսեալ իցէ, երիցս ուրասցիս՝ չգիտել զիս։

62 Եւ ելեալ արտաքս՝ ելաց դառնապէս։

63 Եւ արքն, որ պահէին զնա, այպն առնէին զնովաւ, եւ հարկանէին։

64 Ծածկէին զերեսս նորա եւ տանջէին. եւ հարցանէին զնա եւ ասէին. Մարգարէացի՛ր՝ ով է՛ որ եհարն զքեզ։

65 Եւ այլ բազում ինչ հայհոյութեամբ խօսէին 'ի նա։

66 Եւ իբրեւ այգ եղեւ, ժողովեցաւ ծերակոյտ ժողովրդեանն՝ քահանայապետքն եւ դպիրք, եւ հանին ածին զնա յատեանն իւրեանց՝ եւ ասեն, Եթէ դու ես Քրիստոսն, ասա մեզ։

67 Ասէ ցնոսա. Եթէ ասացից ձեզ, ոչ հաւատայք.

68 Եւ եթէ հարցից ինչ զձեզ, չտայք ինձ պատասխանի՝ կամ արձակիցէք։

69 Բայց յայսմհետէ նստցի Որդի մարդոյ ընդ աջմէ զօրութեանն Աստուծոյ։

նորանցից ես. եւ Պետրոս ասաց. Ո՛վ մարդ՝ ես նորանցից չեմ։

59 Եւ երբոր մին ժամ վերայ անցաւ՝ մին ուրիշը հաստատում էր եւ ասում, Շիտակ, որ սա էլ նորան հետն էր. է ինչու որ՝ Գալիլեացի է։

60 Պետրոս ասաց. Ո՛վ մարդ՝ չեմ գիտում թէ դու ինչ ես խօսում. եւ իսկ այն ժ-ա-մ-ը դեռ որ նա այն բանը ասումէր՝ հաւը խօսեց։

61 Տէրն՝ դարձաւ եւ մտիկ տուաւ Պետրոսին՝ եւ Պետրոսը միտքը բերաւ Տէրի այն խօսքըն որ ասաց ւ նորան, թէ Հաւը դեռ չխօսած, երեք անգամ կուրանաս՝ չը գիտել ի ինձ։

62 Եւ դուրս գնաց եւ դառն արտասունքով լաց էլաւ։

63 Եւ մարդիկն՝ որ նորան պահումէին՝ ծաղր էին անում նորան եւ ֆ զարկում։

64 Նորան երեսը ծածկում եւ չարչարումէին, եւ նորան հարցընումէին եւ ասում. Մարգարէացի՛ր՝ ով է նա՝ որ քեզ զարկեց։

65 Եւ էլ ուրիշ շատ բաներ հայհոյանքով խօսումէին նորա դէմ։

66 Եւ երբոր առաւօտ է՛լաւ՝ ժողովրդի ծերերն ու քահանայապետներն ու կարդացօղները հ ժողովվեցան, եւ նորան հանեցին տարան իրենց ատեանը՝ եւ ծ ասացին. Թէ որ դու Քրիստոսն ես, ասա մեզ։

67 Նորանց ասաց. Թէ որ ասեմ ձեզ, այնպէս էլ դուք չէք հաւատայ։

68 Եւ թէ որ մին բան հարցնեմ ձեզ, ինձ պատասխան չէք տայ կամ արձակիլ։

69 Բայց սրանից ետեւ Որդին մարդոյ՝ Աստուծոյ զօրութեան աջ կողմըն ղ կը նստի։

է Մատթ. ԻԶ. 73. Մարկ. ԺԴ. 70. Յովհ. ԺԸ. 26.
ւ Մատթ. ԻԶ. 75. Մարկ. ԺԴ. 72.
ի Մատթ. ԻԶ. 34. 75. Յովհ. ԺԳ. 38.
ֆ Մատթ. ԻԶ. 67, 68. Մարկ. ԺԴ. 65.
{ Մատթ. ԻԷ. 1.
հ Գործ. Դ. 26. ԻԲ. 5.
ծ Մատթ. ԻԶ. 63. Մարկ. ԺԴ. 61.
ղ Մատթ. ԻԶ. 64. Մարկ. ԺԴ. 62. Եբր. Ա. 3. Ը. 1.

70 Եւ ասեն ամենեքեան · Ուրեմն դու ես Որդին Աստուծոյ · եւ նա ասէ ցնոսա · Դուք ասէք , թէ ես եմ ։

71 Եւ նոքա ասեն · Զինչ եւս պիտոյ է մեզ վկայութիւն , զի մեզէն իսկ լուաք ՚ի բերանոյ դորա ։

70 Եւ ամէնքն ասացին · Ուրեմն դու ես Աստուծոյ Որդին · եւ նա ասաց նորանց · Դուք էք ‡ ասում , որ ես եմ ։

71 Եւ նորանք ասացին · Էլ ինչ պէտք է մեզ վկայութիւն , ինչու որ՝ իսկ մենք ինքը լսեցինք դորա ′ բերանիցը ։

## ԳԼ. ԻԳ

1 Եւ յարուցեալ ամենայն բազմութիւնն նոցա , ածին զնա առ Պիղատոս ։

2 Եւ սկսան չարախօս լինել ըզ նմանէ եւ ասել · Զսա գտաք՝ զի թիւրէր զազգս մեր , եւ արգելոյր ՚ի տալոյ հարկս կայսեր , եւ ասէր զանձնէ՝ եթէ Քրիստոսն իցէ Թագաւոր ։

3 Իսկ Պիղատոս եհարց զնա եւ ասէ · Դու ես Թագաւորն Հրէից · Նա պատասխանի ետ նմա եւ ասէ · Դու ասացեր ։

4 Ասէ Պիղատոս ցքահանայապետսն եւ ցժողովուրդսն · Զգտանեմ ինչ վնաս յառն յայսմիկ ։

5 Եւ նոքա պնդէին եւ ասէին , եթէ Խռովէ զժողովուրդս , ուսուցանէ ընդ ամենայն Հրէաստան՝ սկսեալ ՚ի Գալիլեէ մինչեւ ցայսր ։

6 Իսկ Պիղատոս իբրեւ լուաւ զԳալիլեէ , եհարց՝ եթէ Գալիլեացի իցէ այրն ։

7 Եւ իբրեւ գիտաց՝ եթէ յիշխանութենէ Հերովդի է , ետ տանել զնա առ Հերովդէս · քանզի եւ նա յԵրուսաղէմ էր յաւուրսն յայսմիկ ։

8 Եւ Հերովդէս իբրեւ ետես ըզ Յիսուս , ուրախ եղեւ յոյժ · զի ցանկայր ՚ի բազում ժամանակաց

1 Եւ նորանց ամէն բազմութիւնը վերկացաւ՝ եւ նորան տարան Պիղատոսի = մօտ ,

2 Եւ սկսեցին չարախօսութիւն անել նորանից եւ ասել · Սորան գտինք՝ որ մեր ազգին ƒ ծռում եւ արգելում էր կայսերին հարկ ǂ տալուցը · եւ ինքն իրեն համար ասում՝ թէ Քրիստոս Թագաւորն Ŧ է ։

3 Բայց Պիղատոս հարցրուց նորան եւ ասաց · Ի Դու ես Հրէից Թագաւորը · նա պատասխան տուաւ նորան եւ ասաց · Դու ասացիր ։

4 Պիղատոս ասաց քահանայապետներին ու ժողովրդքին · Ես մին վնաս չեմ գտնում այս Ղ մարդումս

5 Եւ նորանք սաստկացնումէին եւ ասում · թէ ժողովրդները խռովացնումէ , եւ բոլոր Հրէաստանին մէջ սովրցնում՝ Գալիլեացիցըն սկսած մինչեւ այստեղս ։

6 Բայց Պիղատոսն երբոր Գալիլեայի համար լսեց , հարցրուց՝ եթէ այդ մարդդ Գալիլեացին է ։

7 Եւ երբոր իմացաւ՝ թէ Հերովդէսի իշխանութենիցն ե է · տանել տուաւ նորան Հերովդէսին մօտ · ինչու որ՝ նա էլ այն օրերը Երուսաղէմումն էր ։

8 Եւ Հերովդէսն՝ երբոր Յիսուսին տեսաւ՝ շատ ուրախ էլաւ · ինչու որ՝ շատ ժամանակից հետէ ցան-

‡ Մատթ. ԻԶ. 64։ Մարկ. ԺԴ. 62։
′ Մատթ. ԻԶ. 65։ Մարկ. ԺԴ. 63։
= Մատթ. ԻԷ. 2։ Մարկ. ԺԵ. 1։ Յովհ. ԺԸ. 28։
ƒ Գործ. ԺԷ. 7։
ǂ Մատթ. ԺԷ. 27։ ԻԲ. 21։ Մարկ. ԺԲ. 17։
Ŧ Յովհ. ԺԹ. 12։
Ի Մատթ. ԻԷ. 11։ Ա Տիմ. Զ. 13։
Ղ Ա Պետ. Բ. 22։
ե Գլ. Գ. 1։

տեսանել զնա. քանզի լսէր բա-
զում անգամ զնմանէ, եւ ակն ու-
նէր նշան ինչ լինել՝ տեսանել 'ի
նմանէ.
9 Հարցանէր զնա բանիւք բազ-
մօք. եւ նա ոչ ինչ ետ նմա պա-
տասխանի.
10 Կային քահանայապետքն եւ
դպիրք՝ եւ սաստկագոյն չարախօ-
սէին զնմանէ.
11 Արհամարհեաց զնա եւ Հերովդէս
հանդերձ իւրովք զօրականօքն.
եւ այպն արարեալ, արկ զնովաւ
հանդերձս սպիտակս, եւ ետ տա-
նել անդրէն առ Պիղատոս.
12 Եւ եղեն բարեկամք Պիղատոս
եւ Հերովդէս յաւուր յայնմիկ.
քանզի յառաջ թշնամիք էին մի-
միեանց.
13 Կոչեաց Պիղատոս զքահանա-
յապետսն եւ զիշխանս եւ զժողո-
վուրդն,
14 Եւ ասէ ցնոսա. Ածիք մատու-
ցիք ինձ զայրս զայս իբրեւ զխո-
տորեցուցիչ ժողովրդեանն. եւ ա-
հաւասիկ առաջի ձեր քննեցի, եւ
մեղս ինչ ոչ գտի յառնդ յայդմիկ՝
զորոյ դուք չարախօսէքդ զդմանէ.
15 Այլ եւ ոչ Հերովդէս, քանզի
ետու տանել զդա առ նա. եւ արդ՝
ոչինչ մահու արժանի է գործեալ
դորա.
16 Խրատեցից զդա, եւ արձակե-
ցից.
17 Զի հարկ էր մի մի ըստ տօնի
արձակել նոցա.
18 Եւ նոքա աղաղակէին ամե-
նայն բազմութեամբն՝ եւ ասէին.
Բարձ զդա՝ եւ արձակեա մեզ ըզ
Բարաբբա.

կանուխէր տեսնել ը նորան. պատ-
ճառն որ՝ շատ անգամ նորա համար
լսուէր, եւ ապասուէր՝ որ մէկ
նշան տեսնէ նորանից թ եղած.
9 Շատ խօսքերով հարցնուէր
նորան՝ եւ նա ոչ մէկ պատասխան
չտուաւ նորան.
10 Քահանայապետներն ու կար-
դացողները կանգնած էին՝ եւ շատ
սաստիկ չարախօսումէին նորանից.
11 Հերովդէսն էլ իւրեն զինուորնե-
րին հետ անարգեց նորան. եւ
ծաղր անելով մէկ սպիտակ շոր
ձգեց նորա վերայ, եւ յետ տանել
տուաւ Պիղատոսի ժ մօտ.
12 Եւ Պիղատոս ու Հերովդէս բա-
րեկամ էղան այն օրը. ինչու որ՝
առաջ իրար հետ թշնամի ի էին.
13 Պիղատոս կանչեց քահանայա-
պետներին ու իշխաններին եւ լ ժո-
ղովրդին,
14 Եւ նորանց ասաց. Դուք ինձ
մօտ բերիք այս մարդս ինչպէս
ժողովրդի խ մոլորացնող. եւ ահա
ձեր առաջին դատեցի՝ եւ մէկ վնաս
չգտի այս մարդումս այն բանե-
րին համար, որ դուք չարախօսե-
ցիք ծ զորանից.
15 Եւ ոչ էլ Հերովդէսը. ինչու որ՝
զորան տանել տուի նորա մօտ. եւ
ահա բնաւ մեռնելոյ արժանի բան
չի գործել դա.
16 Կը խրատեմ զորան՝ եւ կ կար-
ձակեմ.
17 Պատճառն որ՝ տօնին ժամանա-
կին հարկաւոր էր՝ որ մէկ մարդ
արձակէ նորանց հ համար.
18 Եւ նորանք ամէն բազմութե-
նովն աղաղակումէին եւ ձ ասում.
Դորան վերցուր՝ եւ Բարաբբային
արձակէ մեզ համար.

ը Ղկ. Թ. 9.
թ Մատթ. ԺԴ. 1.
Մարկ. Զ. 14.
ժ Եսայ. ԾԳ. 3.
ի Գործ. Դ. 27.
լ Մատթ. ԻԷ. 23.
Մարկ. ԺԵ. 14.
Յովհ. ԺԸ. 38.
ԺԹ. 4.
խ Համար. 1, 2.
ծ Համար. 4.
կ Մատթ. ԻԷ. 26.
Յովհ. ԺԹ. 1.
հ Մատթ. ԻԷ. 15.
Մարկ. ԺԵ. 6.
Յովհ. ԺԸ. 39.
ձ Գործ. Գ. 14.

19 Որ էր վասն խռովութեան ի-
րիք եղելոյ 'ի քաղաքին եւ սպա-
նութեան մտեալ 'ի բանտ ։
20 Դարձեալ Պիղատոս սկսաւ
խօսել․ քանզի կամէր արձակել
զՅիսուս ։
21 Եւ նոքա անդրէն աղաղակէին
եւ ասէին․ 'ի խաչ հան զդա ։
22 Եւ նա երիցս ասէ ցնոսա․
Զի՞նչ չար արար սա․ ոչ ինչ վնաս
մահու գտի 'ի սմա․ խրատեցից ըզ
սա եւ արձակեցից ։
23 Եւ նոքա տագնապէին մեծաձայն՝
եւ խնդրէին զնա 'ի խաչ հանել․
եւ զօրանային բարբառք նոցա եւ
քահանայապետացն ։
24 Եւ Պիղատոս հաւանեցաւ առ-
նել զխնդրուածս նոցա ։
25 Արձակեաց նոցա զԲարաբբայն՝
զոր վասն խռովութեան եւ սպա-
նութեան արկեալ էր 'ի բանտ, զոր
եւ խնդրէինն իսկ․ եւ զՅիսուս
մատնեաց կամաց նոցա ։
26 Իբրեւ տարին զնացին զնա, ըմ-
բռնեցին զոմն Սիմոն Կիւրենացի՝
որ գայր յանդէ․ եդին 'ի վերայ նո-
րա զխաչն[ե] բերել զկնի Յիսուսի ։
27 Եւ երթայր զհետ նորա բազ-
մութիւն ժողովրդեանն, եւ կա-
նանց՝ որ կոծէին եւ աշխարէին զնա ։
28 Դարձաւ Յիսուս եւ ասէ ցնո-
սա․ Դստերք Երուսաղէմի՝ մի լայք
'ի վերայ իմ, այլ լացէք 'ի վերայ
անձանց եւ 'ի վերայ որդւոց ձերոց ։
29 Զի եկեսցեն աւուրք, յորս ա-
սիցեն՝ թէ Երանի ամլոց եւ որո-
վայնից՝ որ ոչ ծնան, եւ ստեանց՝
որ ոչ դիեցուցին ։

19 Որ նա քաղաքումն եղած խռո-
վութեան եւ մարդասպանու-
թեան համար բանտն էր մտել ։
20 Պիղատոս նորէն սկսեց խօսել․
ինչու որ՝ կամենումէր արձակել
Յիսուսին ։
21 Եւ նորանք նորէն աղաղակու-
մէին եւ ասում․ Խա՛չ հանէ զո-
րան ։
22 Եւ նա երեք անգամ ասաց
նորանց․ Ի՞նչ չար բան գործեց
սա․ բնաւ մեռնելոյ վնաս չըգտի
սորանում․ կը խրատեմ սորան եւ
կարձակեմ ։
23 Եւ նորանք բարձր ձայնով
ստիպում եւ խնդրումէին՝ որ խաչ
հանէ նորան․ եւ նորանց ու քա-
հանայապետներին աղաղակը զօ-
րանումէր ։
24 Եւ Պիղատոս հաւանեցաւ՝, որ
նորանց խնդիրքըն ըլնէ ։
25 Բարաբբային արձակեց նորանց
համար՝ որ խռովութեան եւ մար-
դասպանութեան համար բանտի մէջ
էր ձգված, որ նորանք էլ իսկ նո-
րան էին խնդրում․ եւ Յիսուսին
մատնեց նորանց կամացը ։
26 Երբոր նորան տարին գնացին,
մին մարդ՝ Սիմօն Կիւրենացի բռ-
նեցին՝ որ յանդիցն էր գալիս․ խա-
չը նորա վերայ դրին, որ Յիսու-
սին ետեւէն [ե] բերէ ։
27 Եւ շատ ժողովուրդ էր գնում
նորա ետեւէն․ եւ կանայք էլ՝ որ կոծ
եւ սուգ էին անում նորա վերայ ։
28 Յիսուս դարձաւ եւ նորանց ա-
սաց․ Երուսաղէմի աղջիկներ՝ լաց
մի լինիք ինձ վերայ՝ այլ լաց էլէք
ձեր անձներից եւ ձեր որդոց վե-
րայ ։
29 Ինչու որ՝ օրեր կը գան՝ որ նո-
րանցում կասեն՝ թէ Երանի ա-
մուլներին եւ այն փորերին, որ չը
ծնան, եւ այն ծըծերին, որ [զ] չը
ծըծացրին ։

[դ] Մատթ. ԻԷ. 26։ Մարկ. ԺԵ. 15։ | Յովհ. ԺԹ. 16։ [ե] Մատթ. ԻԷ. 32։ | Մարկ. ԺԵ. 21։ Յովհ. ԺԹ. 17։ | [զ] Մատթ. ԻԴ. 19։ Գղ. ԻԱ. 23։

30 Յայնժամ սկսանիցին ասել լեռանց՝ թէ Անկերուք 'ի վերայ մեր, եւ բլրոց՝ թէ Ծածկեցէք զմեզ։

31 Զի եթէ ընդ փայտ դալար զայս առնեն, ընդ չորն զինչ լինիցի։

32 Ածին եւ այլ երկուս չարագործս՝ սպանանել ընդ նմա։

33 Իբրեւ չոգան 'ի տեղին՝ կոչեցեալ Գագաթն, անդ հանին զնա 'ի խաչ. եւ զչարագործսն զմին ընդ աջմէ՝ եւ զմին ընդ ձախմէ խաչեցին։

34 Եւ Յիսուս ասէ. Հայր՝ թող զոսա, զի ոչ գիտեն՝ զինչ գործեն։ Եւ 'ի բաժանել զհանդերձս նորա, արկին վիճակս։

35 Եւ կայր ժողովուրդն հայեցեալ. անգոսնէին զնա իշխանքն հանդերձ նոքօք՝ եւ ասէին. Զայլս ապրեցոյց, ապրեցուսցէ եւ զանձն՝ եթէ դա է Քրիստոս Որդի Աստուծոյ ընտրեալն։

36 Այպն առնէին զնա եւ զինուորքն, եկեալ առաջի՝ մատուցանէին նմա քացախ.

37 Եւ ասէին. Եթէ դու ես թագաւորն Հրէից՝ փրկեա զանձն քո։

38 Եւ էր գիր գրեալ 'ի վերայ նորա՝ Յունարէն եւ Դաղմատերէն եւ Եբրայեցերէն գրով, եթէ Սա է արքայն Հրէից։

39 Իսկ մի ոմն 'ի կախելոց չարագործացն հայհոյէր զնա, եւ ասէր. Ո՞չ դու ես Քրիստոսն՝ փրկեա զանձն քո եւ զմեզ։

30 Այն ժամանակը կսկսեն ասել սարերին՝ թէ, Մեզ վերայ ընկէք, եւ բլուրներին՝ թէ, Ծածկեցէք ջ մեզ։

31 Ինչու որ՝ եթէ կանաչ փայտին սա են անում, ապա չորին ինչ ռ կը լինի։

32 Ուրիշ երկու չարագործ մարդիկ էլ տարան, որ նորա հետ ս սպանեն։

33 Երբոր եկին այն տեղը՝ որ Գագաթն էր կոչվում, այնտեղ խաչ հանեցին նորան. եւ այն չարագործներին էլ, մինը աջ կողմն ու միւսը ձախ կողմը վ խաչեցին։

34 Եւ Յիսուս ասաց. Հայր՝ թողութիւն տուր տ դորանց. ինչու որ՝ չեն գիտում թէ ինչ են ր անում. եւ երբոր նորա շորերը բաժանումէին, վիճակ ց ձգեցին։

35 Եւ ժողովուրդը կանգնած ւ նայումէին, իշխանները նորանց հետ ծաղր էին անում՝ եւ փ ասում. ուրիշներին ապրեցրուց՝ թող իրեն անձին էլ ապրեցնէ՝ եթէ դա է Քրիստոսն, Աստուծոյ ընտրրված Որդին։

36 Զինուորներն էլ ծաղր էին անում նորան. եւ մօտ գալով քացախ էին տալիս նորան.

37 Եւ ասում. Թէ որ դու Հրէից թագաւորն ես՝ փրկէ քո անձըդ։

38 Եւ գիր էր գրված նորա վերայ, Յունարէն, Լատիներէն եւ Եբրայեցերէն գրով, թէ Սա է Հրէից ք թագաւորը։

39 Եւ այն կախված չարագործներից մինը հայհոյումէր նորան եւ ասում. Չէ՞ որ դու ես Քրիստոսը. փրկէ քո անձըդ եւ մեզ օ էլ։

ջ Եսայ. Բ. 19։ Ովսէ. Ժ. 8։ Յայտ. Զ. 16։ Թ. 6։
ռ Առակ. ԺԱ. 31։ Երեմ. ԻԵ. 29։ Եզեկ. Ի. 47։ ԻԱ. 3, 4։ Ա Պետ. Դ. 17։
ս Եսայ. ԾԳ. 12։ Մատթ. ԻԷ. 38։
վ Մատթ. ԻԷ. 33, Մարկ. ԺԵ. 22։ Յովհ. ԺԹ. 17, 18։
տ Մատթ. Ե. 44։ Գործ. Է. 60։ Ա Կորնթ. Դ. 12։
ր Գործ. Գ. 17։
ց Մատթ. ԻԷ. 35։ Մարկ. ԺԵ. 24։ Յովհ. ԺԹ. 23։
ւ Սաղ. ԻԲ. 17։ Զաք. ԺԲ. 10։
փ Սաղ. ԻԲ. 7։ Մատթ. ԻԷ. 39։ Մարկ. ԺԵ. 29։
ք Մատթ. ԻԷ. 37։ Մարկ. ԺԵ. 26։ Յովհ. ԺԹ. 19։
օ Մատթ. ԻԷ. 44։ Մարկ. ԺԵ. 32։

40 Պատասխանի ետ ընկերն սաստեալ նմա եւ ասէ · Ձերկնչիս դու յԱստուծոյ՝ զի 'ի նմին պատժի կաս ։

41 Եւ մեք յիրաւի, զի արժանի որոց գործեցաքն՝ առնումք զհատուցումն · եւ սա ապիրատ ինչ ոչ գործեաց ։

42 Եւ ասէ ցՅիսուս · Յիշեա զիս Տէր՝ յորժամ գայցես արքայութեամբ քով ։

43 Եւ ասէ ցնա Յիսուս · Ամէն ասեմ քեզ · Այսօր ընդ իս իցես 'ի դրախտին ։

44 Եւ էր իբրեւ վեցերորդ ժամ · եւ խաւար եղեւ 'ի վերայ ամենայն երկրի մինչեւ ցիններորդ ժամ · խաւարեցաւ արեգակն ։

45 Եւ հերձաւ վարագոյր տաճարին ընդ մէջ ։

46 Եւ կարդաց Յիսուս 'ի ձայն մեծ՝ եւ ասէ · Հայր՝ 'ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ · զայս իբրեւ ասաց , եհան զոգի ։

47 Եւ տեսեալ հարիւրապետին՝ զոր ինչ եղեւն , փառաւոր արար զԱստուած՝ եւ ասէ · Արդարեւ այրս այս արդար էր ։

48 Եւ ամենայն ժողովուրդքն՝ որ եկեալ էին , եւ տեսանէին զանցսն զայն՝ եւ զգործ , բախէին զկուրծս՝ եւ դառնային ։

49 Կային եւ ամենայն ծանօթքն նորա 'ի հեռաստանէ · եւ կանայքն , որ եկեալ էին զհետ նորա 'ի Գալիլեէ՝ տեսանէին զայն ։

50 Եւ ահա այր մի անուն Յովսէփ , որ էր նախարար՝ այր բարեգործ եւ արդար ։

51 Սա չէր միաբանեալ ընդ խոր-

40 Նորա ընկերը պատասխան տուաւ սաստելով նորան՝ եւ ասաց · Չես վախենում դու Աստուածանից , որ դու ճիշդ այն պատժին մէջն ես ։

41 Եւ մենք իրաւունքով · ինչու որ՝ մեր արած գործքերին արժանի հատուցումն ենք առնում · եւ սա մին անիրաւ բան չը գործեց ։

42 Եւ Յիսուսին ասաց · Տէր՝ ինձ յիշէ երբոր քո թագաւորութենով գաս ։

43 Եւ Յիսուս ասաց նորան · Ճշմարիտն ասում եմ քեզ , թէ այսօր ինձ հետ դրախտումը կը լինիս ։

44 Եւ վեց ժամին գէմ էր · եւ ամէն երկրի վերայ խաւար էղաւ մինչեւ ինը բ ժամը · արեգակը խաւարեցաւ ։

45 Եւ տաճարի վարագուրը մէջից գ պատառվեցաւ ։

46 Եւ Յիսուս մեծ ձայնով կանչեց եւ ասաց · դ Հայր՝ իմ հոգիս քո ձեռքդ եմ աւանդում · երբոր սա ասաց · հոգին ե հանեց ։

47 Եւ հարիւրապետն՝ որ տեսաւ ինչ որ էղաւ , Աստուծոյն փառք տուաւ եւ ասաց · Շիտակ որ՝ այս մարդս արդար զ էր ։

48 Եւ ամէն ժողովուրդները , որ եկել էին եւ այն էղած բաները տեսնումէին , կուրծքերը թակումէին՝ եւ յետ դառնում ։

49 Նորան ամէն ծանօթներն էլ հեռուանց կանգնած էին , եւ այն կանայքն էլ , որ Գալիլեայիցը նորա հետեւէն էին եկել՝ եւ տեսնումէին այն է բաները ։

50 Եւ ահա մին մարդ՝ Յովսէփ անուն՝ որ իշխան էր՝ բարեգործ եւ արդար ը մարդ ։

51 Սա չէր միաբանվել նորանց

բ Մատթ. Իէ. 45 · Մարկ. ԺԵ. 33 · գ Մատթ. Իէ. 51 · Մարկ. ԺԵ. 38 · դ Սաղ. ԼԱ. 5 · Ա Պետ. Բ. 23 · ե Մատթ. Իէ. 50 · Մարկ. ԺԵ. 37 · Յովհ. ԺԹ. 30 · զ Մատթ. Իէ. 54 · Մարկ. ԺԵ. 39 · է Սաղ. ԼԸ. 11 · Մատթ. Իէ. 55 · Մարկ. ԺԵ. 40 · Յովհ. ԺԹ. 25 · ը Մատթ. Իէ. 57 · Մարկ. ԺԵ. 42, 43 · Յովհ. ԺԹ. 38 ·

հուրդս եւ ընդ գործս նոցա · յԱրիմաթեայ քաղաքէ Հրէից, որ եւ ինքն իսկ ակն ունէր արքայութեանն Աստուծոյ ։
52 Սա մատուցեալ առ Պիղատոս՝ խնդրեաց զմարմինն Յիսուսի ·
53 Եւ իջուցեալ զնա՝ պատեաց պատատանակալաւ, եւ եդ 'ի կաւածոյ գերեզմանին · ուր չէր բնաւ զոք եդեալ ։
54 Եւ օրն էր ուրբաթ, եւ շաբաթ լուսանայր ։
55 Եւ երթեալ զհետ նորա կանայքն՝ որ եկեալ էին ընդ նմա 'ի Գալիլեէ · տեսին զգերեզմանն, եւ որպէս եդաւ մարմին նորա ։

56 Դարձան, եւ պատրաստեցին խունկս եւ իւղս · եւ 'ի շաբաթուն հանգարտեցին վասն պատուիրանին ։

խորհուրդին եւ գործքերին հետ · Հրէաների Արիմաթիա քաղաքեցը որ իսկ ինքն էլ սպասումէր Աստուծոյ = արքայութեանը ։
52 Սա գնաց Պիղատոսին մօտ եւ Յիսուսին մարմինը խնդրեց ։
53 Եւ վէրբերաւ նորան ազնիւ-կտաւով պատեց, եւ քարից փորած գերեզմանի մէջ դրաւ՝ որ այն տեղ էլ ոչ մին մարդ դրած ‡ չէր ։
54 Եւ օրն ուրբաթ էր՝ եւ շաբաթ էր ‡ լուսանում ։
55 Եւ այն կանայքն՝ որ Գալիլեայից նորա հետ էին եկել՝ գնացին նորան ÷ ետեւէն, տեսին գերեզմանը՝ եւ թէ ինչպէս դրվաւ նորա ‡ մարմինը ։
56 Յետ դարձան՝ եւ խունկեր եւ իւղեր ‹ պատրաստեցին · եւ շաբաթ օրը հանգարտ միայն պատուիրանքին ‡ պահեցին ։

## ԳԼ. ԻԴ

1 Բայց 'ի միաշաբաթուն վաղ քաջ ընդ առաւօտն եկին 'ի գերեզմանն · բերին զխունկսն՝ զոր պատրաստեցին · եւ այլ կանայք ընդ նոսա ։
2 Եւ գտին զվէմն թաւալեցուցեալ 'ի գերեզմանէ անտի ։
3 Եւ մտեալ 'ի ներքս՝ ոչ գտին զմարմինն Տեառն Յիսուսի ։
4 Եւ եղեւ ընդ հիանալն նոցա վասն այնորիկ, եւ ահա արք երկու հասին առ նոսա 'ի հանդերձս լուսաւորս ։

5 Եւ իբրեւ զահի հարան, եւ խոնարհեցուցին զերեսս իւրեանց յերկիր, ասեն ցնոսա · Զի խնդրէք զկենդանին ընդ մեռեալս ։

1 Բայց մէկ շաբթի օրն առաւօտանց կանուխ եկին = գերեզմանը, եւ բերին այն խունկերը, որ ‡ պատրաստեցին · եւ ուրիշ կանայք էլ նորանց հետ ։
2 Եւ քարը գերեզմանից հեռու թաւալած ‡ գտին ։
3 Եւ ներս մտին եւ Տէր Յիսուսին մարմինը ÷ չըգտին ։
4 Եւ երբոր նրահամար շատ զարմանումէին՝ ահա երկու մարդ հասին նորանց լուսաւոր ‡ շորերով ։
5 Եւ երբոր ահով լցվան, եւ իրանց երեսները գետնի երկիրը խոնարհացրին, նորանց ասացին · Ինչու էք կենդանին մեռելներին մէջ խնդրում ։

= Մարկ. ԺԵ. 43 ։ Գլ. Բ. 25. 38 ։
‡ Մատթ. ԻԷ. 59 ։ 60 ։ Մարկ. ԺԵ. 46 ։
‡ Մատթ. ԻԷ. 62 ։
÷ Գլ. Ը. 2 ։
‡ Մարկ. ԺԵ. 47 ։
‹ Մարկ. ԺԶ. 1 ։
‡ Ելից. Ի. 10 ։
—
= Մատթ. ԻԸ. 1 ։ Մարկ. ԺԶ. 1 ։ Յովհ. Ի. 1 ։
‡ Գլ. ԻԳ. 56 ։
‡ Մատթ. ԻԸ. 2 ։ Մարկ. ԺԶ. 4 ։
÷ Համաք. 23 ։ Մարկ. ԺԶ. 5 ։
‡ Յովհ. Ի. 12 ։ Գործ. Ա. 10 ։

6 Չէ աստ՝ այլ յարեաւ. յիշեցէք՝ որպէս խօսեցաւ ընդ ձեզ մինչ էրն 'ի Գալիլեա։

7 Եւ ասէր՝ թէ Պարտ է Որդւոյ մարդոյ մատնել 'ի ձեռս մարդոց մեղաւորաց, եւ 'ի խաչ ելանել՝ եւ յերրորդ աւուր յառնել։

8 Եւ յիշեցին զբանսն նորա։

9 Եւ դարձան պատմեցին զայս ամենայն մետասանիցն, եւ այլոցն ամենեցուն։

10 Եւ էին Մարիամ Մագդաղենացի եւ Յովհաննա եւ Մարիամ Յակոբեայ, եւ այլք ընդ նոսա՝ որ պատմեցին զայս առաքելոցն։

11 Եւ երեւեցան առաջի նոցա չափազանցութիւն բանքն նոցա՝ եւ չհաւատային նոցա։

12 Բայց Պետրոս յարուցեալ ընթացաւ 'ի գերեզմանն, եւ հայեցեալ տեսանէ զկտաւսն լոկ՝ զի կային. եւ գնաց ընդ միտս զարմացեալ թէ զինչ եղեւ։

13 Եւ ահա երկուք 'ի նոցանէ երթային 'ի նմին աւուր 'ի գեօղ մի, որ հեռի էր յԵրուսաղեմէ վաթսուն ասպարիզաւ, եւ էր անուն նորա Էմմաուս։

14 Եւ նոքա խօսէին ընդ միմեանս վասն ամենայն անցիցն անցելոց։

15 Եւ եղեւ ընդ խօսելն նոցա եւ ընդ վիճելն՝ եւ ինքն իսկ Յիսուս մերձեցաւ՝ եւ երթայր ընդ նոսա.

16 Եւ նոցա աչք կալեալ էին առ 'ի չճանաչելոյ զնա։

17 Եւ ասէ ցնոսա. Զինչ են բանքդ՝ վասն որոյ վիճիքդ ընդ միմեանս՝ մինչ դեռ գնայքդ, եւ տրտմեալ էք։

6 Այստեղ չէ, բայց յարութիւն առաւ. մտքներդ բերէք՝ ինչպէս որ ձեզ հետ խօսեց՝ երբոր Գալիլեայումն դ էր.

7 Եւ ասումէր, թէ Պէտք է որ Որդին մարդոյ մեղաւոր մարդկանց ձեռքը մատնուի՝ եւ խաչ հանուի՝ եւ երեք օրումն յարութիւն առնէ։

8 Եւ նորա խօսքերը ե յիշեցին։

9 Եւ յետ դարձան եւ այս ամէն բաներս պատմեցին տասնումէկին եւ ամէն զ ուրիշներին։

10 Եւ նրանք էին Մարիամ Մագդաղենացին, եւ Յօհաննան, եւ Յակոբայ Մարիամը, եւ նորանց հետ ուրիշներն էլ՝ որ այս բաները պատմեցին է առաքեալներին։

11 Եւ նորանց առածներն առասպելական խօսքեր երեւեցաւ նորանց առաջին՝ եւ չէին հաւատում ը նորանց։

12 Բայց Պետրոս վերկացաւ վազեց գերեզմանին, եւ նայելով տեսաւ՝ որ կտաւները մինակ թ կային. եւ գնաց զարմանալով իրեն միտքումը, թէ ինչ էլաւ։

13 Եւ ահա նորանցից երկու հոգի իսկ այն օրը մին գիւղ էին գնում՝ որ վաթսուն ասպարէզով Երուսաղէմիցը հեռու էր, եւ նորա անունն Էմմաուս ժ էր։

14 Եւ նորանք իրար հետ խօսումէին այն ամէն անցած բաներին համար։

15 Եւ էլաւ երբոր նորանք խօսում եւ հակառակումէին՝ իսկ Յիսուս ինքն էլ մօտեցաւ՝ եւ գնումէր նորանց ի հետ։

16 Եւ նորանց աչքերը բռնըված էին՝ որ չըճանաչէին լ նորան։

17 Եւ նորանց ասաց. Դա ինչ խօսքեր են՝ որ դորանց համար իրար հետ հակառակումէք գնալոյ ժամանակը, եւ տրտմած էք։

դ Մատթ. ԺԶ. 21. ԺԷ. 23. Մարկ. Ը. 31. Թ. 31. Ղկ. Թ. 22.
ե Յովհ. Բ. 22.
զ Մատթ. ԻԸ. 8. Մարկ. ԺԶ. 10.
է Ղկ. Ը. 3.
ը Մարկ. ԺԶ. 11. Համար 25.
թ Յովհ. Ի. 3. 6.
ժ Մարկ. ԺԶ. 12.
ի Մատթ. ԺԸ. 20. Համար. 36.
լ Յովհ. Ի. 14. ԻԱ. 4.

18 Պատասխանի ետ մի ոմն ՚ի նոցանէ՝ որում անուն էր Կղէովպաս, եւ ասէ ցնա. Դու միայն կաս յԵրուսաղէմ, որ ոչ գիտացեր զինչ գործեցաւ ՚ի նմա յաւուրս յայսոսիկ։

19 Եւ ասէ ցնոսա. Զի՞նչ. եւ նոքա ասեն. ԶՅիսուսէ Նազովրեցւոյ, որ եղեւ այր մարգարէ՝ հզօր արգեամբք եւ բանիւք առաջի Աստուծոյ, եւ ամենայն ժողովրդեանն։

20 Ո՞րպէս մատնեցին զնա քահանայապետքն եւ իշխանքն մեր ՚ի դատաստան մահու՝ եւ հանին զնա ՚ի խաչ։

21 Մեք այն ակն ունէաք՝ թէ նա է՝ որ փրկելոցն իցէ զԻսրայէլ. այլ եւ համագերձ այսու ամենայնիւ, այս երրորդ օր է՝ յորմէ հետէ այն գործեցաւ։

22 Այլ եւ կանայք ոմանք ՚ի մէնջ զարմացուցին զմեզ. որք կանխեալ լինէին առաւօտս չոքան ՚ի գերեզմանն,

23 Եւ ոչ գտին զմարմինն նորա. եկին եւ ասեն, թէ եւ տեսիլ եւս հրեշտակաց տեսին, որք ասէին ըզ նմանէ՝ թէ կենդանի է։

24 Եւ գնացին ոմանք ՚ի մէնջ ՚ի գերեզմանն, եւ գտին նոյնպէս, որպէս եւ կանայքն ասացին. բայց զնա ոչ տեսին։

25 Եւ նա ասէ ցնոսա. Ո՜վ անմիտք եւ հեղգամիտք ՚ի հաւատալ յամենայնի, զոր խօսեցան մարգարէքն։

26 Ո՞չ զնոյն պարտ էր չարչարել Քրիստոսի, եւ մտանել ՚ի փառս իւր։

27 Եւ սկսեալ ՚ի Մովսիսէ եւ յա-

18 Պատասխան տուաւ նորանցից մինը, որ նորա անունը Կղէօպաս էր, եւ ասաց նորան. Միթէ Երուսաղէմումը միմիայն դու ես մնացել՝ որ չիմացար այն բաները, որ այս օրերս գործուեցաւ նորանում։

19 Եւ նա ասաց նորանց. Ի՞նչ. եւ նորանք ասացին. Յիսուս Նազովրեցու համար՝ որ մին մարգարէ մարդ էր, զօրաւոր գործքերով եւ խօսքերով Աստուծոյ եւ ամէն ժողովրդի առաջին։

20 Թէ ինչպէս մեր քահանայապետներն ու իշխանները մահի դատաստանին մատնեցին նորան՝ եւ խաչ հանեցին նորան։

21 Մենք յոյս ունէինք թէ նա է՝ որ Իսրայէլին պիտի փրկէ. բայց այս ամէնից վերայ, ահա երեք օր է՝ որ այն բանը գործուեցաւ։

22 Եւ մեր միջիցն էլ մին քանի կանայք զարմացրին մեզ. որ առաւօտանց կանուխ գնացին գերեզմանը,

23 Եւ նորա մարմինը չգտան, եկին եւ ասացին. թէ հրեշտակների տեսիլք էլ տեսին՝ որ նորա համար ասում էին՝ թէ կենդանի է։

24 Եւ մեզանից մին քանիսը գնացին գերեզմանը՝ եւ ճիշդ այնպէս գտին, ինչպէս որ կանայքն ասացին, բայց նորան չտեսին։

25 Եւ նա ասաց նորանց. Ո՜վ անմիտներ եւ թուլասիրտներ հաւատալու ամէն բաներին՝ որ մարգարէները խօսեցին։

26 Չէ՞ որ պէտք էր՝ որ ճիշդ այնպէս չարչարուէր Քրիստոսը, եւ իւրեն փառքը մտնէ։

27 Եւ սկսեց Մովսէսից ու ա-

ա Յովհ. ԺԹ. 25.
բ Մատթ. ԻԱ. 11. Ղուկ. Է. 16. Յովհ. Դ. 2. Դ. 19. Զ. 14. Գործ. Բ. 22.
գ Գործ. Է. 22.
դ Ղուկ. ԻԳ. 1. Գործ. ԺԳ. 27, 28.
ե Ղուկ. Ա. 68. Բ. 38. Գործ. Ա. 6.
զ Մատթ. ԻԸ. 8. Մարկ. ԺԶ. 10. Յովհ. Ի. 18.
է Համար. 12.
ը Համար. 46. Գործ. ԺԷ. 3. Ա Պետ. Ա. 11.
թ Համար. 44.
ժ Ծննդ. Գ. 15. ԻԲ. 18. ԻԶ. 4. ԽԹ. 10. Թուոց. ԻԱ. 9. Բ Օրին. ԺԸ. 15.

մենայն մարգարէից, մեկնէր նոցա՝
որ ինչ յամենայն գիրս գրեալ էր
զնմանէ ։
28 Իբրեւ մերձեցան ՚ի գեօղն յոր
երթային, եւ նա պատճառէր հե-
ռագոյն եւս ուրեք երթալ ։
29 Եւ բռնադատեցին զնա՝ եւ ա-
սեն․ Առ մեզ ագիր, զի ընդ ե-
րեկս է՝ եւ տարաժամեալ է օրս,
եւ եմուտ ագանել անդ ընդ նոսա ։
30 Եւ եղեւ ՚ի բազմելն նորա ընդ
նոսա, առեալ զհացն՝ օրհնեաց, ե-
բեկ եւ ետ նոցա ։
31 Եւ նոցա բացան աչք՝ եւ ծա-
նեան զնա․ եւ նա եղեւ ՚ի նոցանէ
աներեւոյթ ։
32 Եւ ասեն ցմիմեանս․ Ո՞չ իսկ
եւ սիրտք մեր ճմլէին ՚ի մեզ՝ մինչ
խօսէրն ընդ մեզ զճանապարհայն․
եւ որպէս բանայր մեզ զգիրս ։
33 Եւ յարուցեալ նոյնժամայն՝
դարձան յԵրուսաղէմ, եւ գտին
ժողովեալ զմետասանսն՝ եւ զորս
ընդ նոսայն էին ։
34 Եւ ասեն՝ թէ Արդարեւ յա-
րեաւ Տէր՝ եւ երեւեցաւ Սիմովնի ։
35 Եւ նոքա պատմէին զայն՝ որ
զճանապարհայնն, եւ թէ զիարդ եա
ծանօթս նոցա ՚ի բեկանել հացին ։
36 Մինչդեռ զայն խօսէին, ինքն
իսկ Յիսուս եկաց ՚ի մէջ նոցա՝ եւ
ասէ ցնոսա․ Խաղաղութիւն ընդ
ձեզ․ ես եմ, մի երկնչիք ։
37 Եւ զահի հարեալ երկնչէին․
եւ համարէին ոգի ինչ տեսանել ։

մէջ ւ մարգարէներիցը, մեկնումէր
նորանց՝ ամէն ինչ որ գրված էր
իրեն համար ։
28 Երբոր մօտեցան այն գիւղին,
որ գնումէին՝ նա այնպէս էր ցոյց
տալիս՝ թէ մին աւելի հեռու տեղ
է ղ գնալու ։
29 Եւ բռնադատեցին նորան եւ
ճ ասացին, Մեզ մօտ մնա, ինչու
որ իրիկուն է եւ օրս անցել է եւ
մտաւ որ նորանց հետ այնտեղ մնայ ։
30 Եւ էլաւ երբոր նա նորանց
հետ սեղան նստեց, հացըն առաւ՝
օրհնեց, կտրեց ու տուաւ ― նորանց ։
31 Եւ նորանց աչքերը բացվան՝
եւ նորան ճանաչեցին․ եւ նա ա-
ներեւոյթ էլաւ նորանցից ։
32 Եւ իրար ասացին․ Չէ՞ որ իսկ
մեր սրտերը հալվումէին մեզանում՝
երբոր ճանապարհումը մեզ հետ խօ-
սումէր, եւ ինչպէս գրքերը բա-
նումէր մեզ համար ։
33 Եւ չուտով վերկացան՝ յետ
դարձան Երուսաղէմ, եւ այն տաս-
նումէկին ժողովված գտին, եւ նո-
րանց էլ՝ որ նորանց հետ էին ։
34 Եւ ասացին․ թէ Իրաւ՝ որ
Տէրը յարութիւն առաւ՝ եւ երեւե-
ցաւ - Սիմօնին ։
35 Եւ նորանք պատմումէին նա՝
որ ճանապարհումն էլաւ, եւ թէ
ինչպէս իրեն ճանաչցրուց իրենց
հաց կտրելոյ ժամանակը ։
36 Դեռ քանի որ սա խօսումէին,
իսկ ինքը Յիսուս կանգնեց նորանց
միջումն ու նորանց ասաց․ Խաղա-
ղութիւն ձեզ հետ՝ ես եմ․ մի Հ վա-
խենաք ։
37 Եւ ահով լցված վախեցան, եւ
համարումէին՝ թէ հոգի են + տես-
նում ։

ւ Սաղ․ ձԶ․ 9․ 10․ ԻԲ․ ձԼԲ․ 11․ Եսայ․ Է․ 14․ Թ․ 6․ Ի․ 10․ 11․ Ծ․ 6․ ԾԳ․ Երեմ․ ԻԳ․ 5․ ԼԳ․ 14․ 15․ Եզեկ․ ԼԴ․ 23․ ԼԷ․ 25․ Դան․ Թ․ 24․ Միք․ Ե․ 20․ Մաղ․ Գ․ 1․ Դ․ 2․ Յովհ․ Ա․ 45․
ղ Ծննդ․ ԼԲ․ 26․ ԽԲ․ 7․ Մարկ․ Զ․ 48․
ճ Ծննդ․ ԺԹ․ 3․ Գործ․ ԺԶ․ 15․
― Մատթ․ ԺԴ․ 19․
- Ա Կորնթ․ ԺԵ․ 5․
Հ Մարկ․ ԺԶ․ 14․ Յովհ․ Ի․ 19․ Ա Կորնթ․ ԺԵ․ 5․
+ Մարկ․ Զ․ 49․

38 Եւ ասէ ցնոսա. Զի՞ խռովեալ էք՝ եւ ընդէ՞ր խորհուրդք ելանեն ՚ի սիրտս ձեր։

39 Տեսէք զձեռս իմ եւ զոտս, զի ես նոյն եմ. շօշափեցէք զիս եւ տեսէք. զի ոգի՝ մարմին եւ ոսկերս ոչ ունի, որպէս զիս տեսանէք զի ունիմ։

40 Եւ զայս ասացեալ՝ եցոյց նոցա զձեռսն եւ զոտսն։

41 Եւ մինչդեռ տակաւին չհաւատային ՚ի խնդութենէն՝ եւ զարմացեալ էին, ասէ ցնոսա. Ունի՞ք ինչ կերակուր աստ։

42 Եւ նոքա ետուն նմա՛ ձկան խորովելոյ մասն, եւ խորիսխ մեղու։

43 Եւ առ՝ եկեր առաջի նոցա, եւ զմնացորդսն ետ նոցա։

44 Եւ ասէ ցնոսա. Այս բանք են՝ զոր խօսեցայ ընդ ձեզ, մինչ առ ձեզն էի, թէ Պարտ է լնուլ ամենայն գրելոցն յօրէնսն Մովսէսի եւ ՚ի մարգարէս եւ ՚ի սաղմոսն վասն իմ։

45 Յայնժամ եբաց զմիտս նոցա իմանալ զգիրս։

46 Եւ ասէ ցնոսա, թէ Այսպէս պարտ էր չարչարել Քրիստոսի, եւ յառնել ՚ի մեռելոց յաւուր երրորդի.

47 Եւ քարոզել յանուն նորա ապաշխարութիւն եւ թողութիւն մեղաց յամենայն ազգս՝ սկսեալ յԵրուսաղեմէ։

48 Եւ դուք էք վկայք այսոցիկ։

49 Եւ ահա ես առաքեմ զաւետիս Հօր իմոյ ՚ի ձեզ. եւ դուք նստա-

38 Եւ նորանց ասաց. Ինչո՞ւ էք շփոթված՝ ինչո՞ւ համար խորհուրդներ են վերկենում ձեր սրտերումը։

39 Տեսէք իմ ձեռներս եւ ոտքերս՝ որ հէնց ես նա եմ. բռնեցէք ինձ եւ տեսէք. ինչու որ՝ հոգին մարմին եւ ոսկերք չունի, ինչպէս որ ինձ տեսնում էք որ r ունիմ։

40 Եւ այս որ ասաց, ձեռքերն ու ոտքերը ցոյց տուաւ նորանց։

41 Եւ դեռ քանի որ չէին հաւատում ուրախութենիցը եւ զարմացած ɔ էին. նորանց ասաց. Կերակուր բան ունի՞ք – այստեղ։

42 Եւ նորանք խորոված ձկան կըտոր տուին նորան՝ եւ մեղրի հացի կտոր։

43 Եւ առաւ կերաւ նորանց առաջին, եւ աւելցածները տուաւ ‡ նորանց։

44 Եւ ասաց նորանց. Սա այն բաներն են՝ որ ձեզ հետ խօսեցի՝ քանի որ ձեզ հետ էի, թէ, Ամէնը պէտք է կատարվի՝ որ Մովսէսի օրէնքումն ու մարգարէներումը եւ սաղմոսներումը ինձ համար գրված + է։

45 Այն ժամանակը նորանց միտքները բացաւ՝ որ գրքերին * իմանան։

46 Եւ նորանց ասաց. Թէ Այսպէս պէտք ‡ էր, որ Քրիստոսը չարչարվի՝ եւ երեք օրումը մեռելների միջիցն յարութիւն առնէ.

47 Եւ նորա անունովը ապաշխարութիւն եւ մեղաց թողութիւն – քարոզվի ամէն ազգերի միջումը՝ Երուսաղէմիցն ‡ սկսած։

48 Եւ դուք էք էս բաներիս համար ‡ վկայ։

49 Եւ ահա ես իմ Հօրս աւետիքը կուղարկեմ ձեզ վերայ. եւ դուք

r Յովհ. Ի. 20. 27.
ɔ Ծննդ. ԽԵ. 26.
– Յովհ. ԻԱ. 5.
‡ Գործ. Ժ. 41.
+ Մատթ. ԺԶ. 21. ԺԷ. 22. Ի. 18. Մարկ. Ը. 31. Ղկ. Թ. 22. ԺԸ. 31. Համար. 6.
* Գործ. ԺԶ. 14.
‡ Համար. 26. Սաղ. ԻԲ. Եսայ. Ծ. 6. ԾԳ. 2, &c. Գործ. ԺԷ. 3.
– Դան. Թ. 24. Գործ. ԺԳ. 38. 46. Ա Յովհ. Բ. 12.
‡ Ծննդ. ԺԲ. 3. Սաղ. ԻԲ. 27. Եսայ. ԽԹ. 6. 22. Երեմ. ԼԱ. 34. Ովսէ. Բ. 23. Միք. Դ. 2. Մաղ. Ա. 11.
‡ Յովհ. ԺԵ. 27. Գործ. Ա. 8. 22. Բ. 32. Գ. 15.

րուք ՚ի քաղաքիս յԵրուսաղէմ, մինչեւ զգենուցուք զօրութիւն ՚ի բարձանց։
50 Եհան զնոսա մինչեւ ՚ի Բեթանիա, եւ ամբարձեալ զձեռս իւր՝ օրհնեաց զնոսա։
51 Եւ եղեւ յօրհնելն նորա զնոսա, մեկնեցաւ ՚ի նոցանէ, եւ վերանայր յերկինս։
52 Եւ նոքա երկիրպագեալ նմա՝ դարձան յԵրուսաղէմ ուրախութեամբ մեծաւ։
53 Եւ էին հանապազ ՚ի տաճարին, գովէին եւ օրհնէին զԱստուած։

նստեցէք Երուսաղէմ քաղաքումս՝ մինչեւ վերեւից զօրութիւն ∓ հագնիք։
50 Եւ նորանց հանեց մինչեւ Բեթանիա. եւ իւրեն ձեռները բարձրացրուց եւ նորանց ⊦ օրհնեց։
51 Եւ էղաւ՝ զեռ որ նա օրհնումէր նորանց՝ հեռացաւ նորանցից, եւ դէպի երկինքը ⊾ վերանումէր։
52 Եւ նորանք երկրպագութիւն արին նորան, եւ մեծ ուրախութենով յետ դարձան ⊦ Երուսաղէմ։
53 Եւ ամէն ժամանակ տաճարումն ꞓ էին. գովումէին եւ օրհնումէին Աստուծոյն։

# ԱՒԵՏԱՐԱՆ
## ԸՍՏ
# ՅՈՎՀԱՆՆՈՒ

---

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 Ի ՍԿԶԲԱՆԷ էր Բանն. եւ Բանն էր առ Աստուած. եւ Աստուած էր Բանն։
2 Նա էր ՚ի սկզբանէ առ Աստուած։
3 Ամենայն ինչ նովաւ եղեւ, եւ առանց նորա եղեւ եւ ոչինչ՝ որ ինչ եղեւն։
4 Նովաւ կեանք էր, եւ կեանքն էր լոյս մարդկան.
5 Եւ լոյսն ՚ի խաւարի անդ լուսաւորէ, եւ խաւար նմա ոչ եղեւ հասու։

1 ՍԿԶԲՈՒՄՆ էր – Բանը. եւ Բանն Աստուծոյ մօտ ϐ էր. եւ Բանն Աստուած ÷ էր։
2 Նա սկզբումն Աստուծոյ մօտն ÷ էր։
3 Ամէն ինչ նորանով էղաւ, եւ առանց նորան բնաւ ոչ ինչ չէղաւ, ինչ որ ⊦ էղաւ։
4 Նորանով կեանքը ⊾ էր, եւ կեանքը մարդկանց լոյսն ⊦ էր։
5 Եւ լոյսը խաւարումը լոյս էր տալիս, եւ խաւարը՝ չիմացաւ ꞓ նորան։

∓ Եսայ. ԽԴ. 3։ Յովէլ. Բ. 28։ Յովհ. ԺԴ. 16. 26։ ԺԵ. 26։ ԺԶ. 7։ Գործ. Ա. 4։ Բ. 1. 33։
⊦ Գործ. Ա. 12։
⊾ Դ Թագ. Բ. 11։ Մարկ. ԺԶ. 19։ Յովհ. Ի. 17։ Գործ. Ա. 9։ Եփես. Դ. 8։
⊦ Մատթ. ԻԸ. 9. 17։
ꞓ Գործ. Բ. 46։ Ե. 40։

—

– Առակ. Ը. 22. 23. 33։ Կող. Ա. 17։ Ա Յովհ. Ա. 1։ Յայտ. Ա. 2։ ԺԹ. 13։
ϐ Առակ. Ը. 30։ Գլ. ԺԵ. 5։ Ա Յովհ. Ա. 2։
÷ Փիլիպ. Բ. 6։ Ա Յովհ. Ե. 7։
∓ Ծննդ. Ա. 1։
⊦ Սաղ. ԼԳ. 6։ Համար. 10։ Կող. Ա. 16։ Եփես. Գ. 9։ Եբր. Ա. 2։ Յայտ. Դ. 11։
⊾ Գլ. Ե. 26։ Ա Յովհ. Ե. 11։
⊦ Գլ. Ը. 12։ Թ. 5։ ԺԲ. 35. 46։
ꞓ Գլ. Գ. 19։

6 Եղեւ այր մի առաքեալ յԱստուծոյ, անուն նորա Յովհաննէս։

7 Սա եկն ՚ի վկայութիւն՝ զի վկայեսցէ վասն Լուսոյն. զի ամենեքին հաւատասցեն նովաւ։
8 Ո՛չ էր նա Լոյսն. այլ զի վկայեսցէ վասն Լուսոյն։
9 Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւորէ զամենայն մարդ՝ որ գալոց է յաշխարհ։
10 Յաշխարհի էր, եւ աշխարհ նովաւ եղեւ. եւ աշխարհ զնա ոչ ծանեաւ։
11 Յիւրսն եկն, եւ իւրքն զնա ոչ ընկալան։
12 Իսկ որք ընկալան զնա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել՝ որոց հաւատասցեն յանուն նորա.

13 Ոյք ոչ յարենէ եւ ոչ ՚ի կամաց մարմնոյ եւ ոչ ՚ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան։
14 Եւ Բանն մարմին եղեւ՝ եւ բնակեաց ՚ի մեզ. եւ տեսաք զփառս նորա՝ զփառս իբրեւ զՄիածնի առ ՚ի Հօրէ, լի շնորհօք եւ ճշմարտութեամբ։

15 Յովհաննէս վկայէ վասն նորա, աղաղակեաց եւ ասէ. Սա է՝ զորմէ ասէի, Որ զկնի իմ գալոցն էր՝ առաջի իմ եղեւ. զի նախ քան զիս էր։

6 Մին մարդ էլաւ Աստուածանից ուղարկված, որ նորան անունը [բ] Յօհաննէս էր։
7 Սա վկայութեան համար եկաւ, որ Լուսոյ համար վկայէ. որ ամէնքը նորանով [գ] հաւատան։
8 Նա չէր Լոյսը, բայց որ Լուսոյն համար վկայէ։
9 Նա էր ճշմարիտ Լոյսը, որ ամէն մարդոյն լուսաւոր է անում՝ որ այս աշխարհքս գալու [դ] է։
10 Աշխարհքումն էր, եւ աշխարհքը նորանով [ե] էլաւ, եւ աշխարհքը չը ճանաչեց նորան։
11 Իւրեաններին մէջ եկաւ, եւ իւրեանները չընդունեցին [զ] նորան։
12 Բայց նորանք՝ որ նորան ընդունեցին՝ իշխանութիւն տուաւ նորանց՝ որ Աստուծոյ որդիք [է] լինին. նորանց որ նորա անունին հաւատումեն,
13 Որ նորանք ոչ արիւնից եւ ոչ մարմնոյ կամքից, եւ ոչ մարդոյ կամքից, բայց Աստուածանից [ը] ծնեցան։
14 Եւ [թ] Բանը [ժ] մարմին էլաւ՝ եւ մեր միջումը [ի] բնակվեցաւ. եւ նորա փառքը տեսինք ինչպէս Հօրիցն էլած միածին Որդոյ [լ] փառքը. շնորհքով՝ եւ ճշմարտութեամբ [խ] լիքն։
15 Յօհաննէս վկայումէ նորա [ծ] համար. աղաղակեց եւ ասաց, Սա է՝ որ սորա համար ասումէի, թէ նա որ ինձանից ետեւ գալու [կ] էր, ինձանից առաջ էլաւ. ինչու որ՝ նա ինձանից առաջ էր.

բ Մաղ. գ. 1. Մատթ. գ. 1. Ղու. գ. 2. Համար. 33.
գ Գործ. ժթ. 4.
դ Համար. 4. Եսայ. խթ. 6. Ա Յովհ. բ. 8.
ե Համար. 3. Եբր. Ա. 2. ժԱ. 3.
զ Ղու. ժթ. 14. Գործ. գ. 26. ժԳ. 46.
է Եսայ. ԾԶ. 5. Հռովմ. Ը. 15. Գաղ. գ. 26. Բ Պետ. Ա. 4. Ա Յովհ. գ. 1.
ը Գղ. գ. 5. Յակ. Ա. 18. Ա Պետ. Ա. 23.
թ Մատթ. Ա. 16. 20. Ղու. Ա. 31. 35. Բ. 7. Ա Տիմ. գ. 16.
ժ Եբր. Բ. 11. 14. 16, 17.
ի Հռովմ. Ա. 3, ...
լ Եսայ. ի. 5. Մատթ. ժէ. 2. Գղ. Բ. 11. ժԱ. 40. Բ Պետ. Ա. 17.
խ Կող. Ա. 19. Բ. 3. 9.
ծ Համար. 32. Գղ. գ. 32. Ե. 33.
կ Մատթ. գ. 11. Մարկ. Ա. 7. Ղու. գ. 16. Համար. 27. 30. Գղ. գ. 31. Գղ. Ը. 58. Կող. Ա. 17.

16 Զի 'ի լրութենէ անտի նորա՝ մեք ամենեքին առաք շնորհս փոխանակ շնորհաց ։

17 Զի օրէնքն 'ի ձեռն Մովսիսի տուան․ շնորհքն եւ ճշմարտութիւն 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն ։

18 ԶԱստուած ոչ ոք ետես երբեք․ բայց միածինն Որդի որ է 'ի ծոց Հօր, նա պատմեաց ։

19 Եւ այս է վկայութիւնն Յովհաննու, յորժամ առաքեցին առ նա Հրէայքն յԵրուսաղեմէ քահանայս եւ Ղեւտացիս, զի հարցցեն զնա՝ թէ Դու ո ես ։

20 Եւ խոստովան եղեւ, եւ ոչ ուրացաւ․ խոստովան եղեւ, եթէ Ես ոչ եմ՝ Քրիստոսն ։

21 Եւ հարցին զնա․ Իսկ ո՞վ ես դու, Եղիա՞ ես․ եւ ասէ․ Ո՛չ եմ․ Իսկ մարգարէ՞ն ես դու․ պատասխանի ետ՝ թէ Ո՛չ ։

22 Իսկ ասեն մեզ՝ Դու ո՞վ ես, զի պատասխանի տարցուք՝ որոց առաքեցինն զմեզ․ զի՞ ասես վասն քո ։

23 Ասէ․ Ես՝ ձայն բարբառոյ յանապատի․ ուղիղ արարէք զճանապարհս Տեառն, որպէս ասաց Եսայի մարգարէ ։

24 Եւ որք առաքեցանն՝ 'ի փարիսեցւոց անտի էին ։

25 Հարցին զնա՝ եւ ասեն․ Իսկ զի՞ մկրտես՝ եթէ դու չես Քրիստոսն, եւ ոչ Եղիա, եւ ոչ մարգարէն ։

26 Պատասխանի ետ նոցա Յով-

16 Ինչու որ՝ նորա լիութենէն մենք ամէնքս շնորհք առինք շնորհքի տեղ ։

17 Պատճառն որ՝ օրէնքը Մովսէսի ձեռքովը տրուեցաւ․ շնորհքն ու ճշմարտութիւնը Յիսուսի Քրիստոսի ձեռքովն եղաւ ։

18 Ո՛չ ով չի տեսաւ Աստուծոյն բնաւ մէկ – ժամանակ, բայց միածին Որդին՝ որ Հօր ծոցումն է՝ նա պատմեց ։

19 Եւ աս է Յօհաննէսի վկայութիւնը, երբոր Հրէաներն Երուսաղէմից քահանաներ եւ Ղեւտացիներ ուղարկեցին նորա մօտ՝ որ հարցնեն նորան՝ թէ Դու ով ես ։

20 Եւ խոստովանեցաւ՝ թէ Ես չեմ Քրիստոսը ։

21 Եւ նորան հարցրին․ Ապա դու ով ես․ միթէ Եղիան ես․ եւ ասաց․ Չեմ․ Ապա մարգարէ՞ն ես դու․ պատասխան տուաւ՝ թէ Չէ ։

22 Ապա ասին մեզ, Դու ով ես, որ պատասխան տանինք նորանց, որ մեզ ուղարկեցին․ ինչ ես ասում քեզ համար ։

23 Ասաց․ Ես եմ՝ ձայն կանչօղի անապատումը՝ թէ շինակեցէք Տէրին – ճանապարհը, ինչպէս որ Եսայի մարգարէն ասաց ։

24 Եւ նորանք՝ որ ուղարկւեցան, փարիսեցիներիցն էին ։

25 Նորան հարցրին եւ ասացին․ Ապա ինչու ես մկրտում, եթէ որ դու ոչ Քրիստոսն ես, եւ ոչ Եղիան, եւ ոչ էլ մարգարէն ։

26 Յօհաննէս պատասխան տուաւ

– Գղ. Գ. 34 ։ Եփես. Ա. 6–8 ։ Կող. Ա. 19 ։ Բ. 9, 10 ։
ւ Ելից. Ի. 1. ա ։ Բ Օրին. Դ. 44 ։ Ե. 1. ԼԴ. 4 ։
ղ Հռովմ. Գ. 24 ։ Ե. 21 ։ Զ. 14 ։
Ը Գղ. Ը. 32 ։ ԺԴ. 6 ։
– Ելից. ԼԳ. 20 ։ Բ Օրին. Դ. 12 ։ Մատթ. ԺԱ. 27 ։ Ղու. Ժ. 22 ։ Գղ. Զ. 46 ։ Ա Տիմ. Ա. 17 ։ Զ. 16 ։ Ա Յովհ. Դ. 12. 20 ։

– Համար. 14 ։ Գղ. Գ. 16. 18 ։ Ա Յովհ. Գ. 9 ։
Հ Գղ. Ե. 33 ։
+ Ղու. Գ. 15 ։ Գղ. Գ. 28 ։ Գործ. ԺԳ. 25 ։
ք Մաղ. Դ. 5 ։ Մատթ. ԺԷ. 10 ։
ɔ Բ Օրին. ԺԸ. 15. 18 ։
– Մատթ. Գ. 3 ։ Մարկ. Ա. 3 ։ Ղու. Գ. 4 ։ Գղ. Գ. 28 ։
‡ Եսայ. Խ. 3 ։

Յովհաննէս եւ ասէ . Ես մկրտեմ զձեզ
ջրով . 'ի միջի ձերում կայ , զոր
դուքն ոչ գիտէք ։
27 Որ զկնի իմ գալոցն է , որ առաջի իմ եղեւ . որում չեմ ես արժանի՝ եթէ լուծից զխրացս կօշկաց նորա ։
28 Այս 'ի Բեթաբրայ եղեւ յայնկոյս Յորդանանու , ուր էրն Յովհաննէս՝ եւ մկրտէր ։
29 'Ի վաղիւ անդր տեսանէ զՅիսուս՝ զի գայր առ նա , եւ ասէ . Ահաւասիկ Գառն Աստուծոյ՝ որ բառնայ զմեղս աշխարհի ։
30 Սա է՝ վասն որոյ ես ասէի , զկնի իմ գայ այր՝ որ առաջի իմ եղեւ , զի յառաջ իսկ էր քան զիս ։
31 Եւ ես ոչ գիտէի զնա . այլ զի յայտնի լիցի Իսրայէլի , վասն այնորիկ եկի ես ջրով մկրտել ։
32 Վկայեաց Յովհաննէս եւ ասէ , թէ Տեսանէի զՀոգին՝ զի իջանէր իբրեւ զաղաւնի յերկնից , եւ հանգչէր 'ի վերայ նորա ։
33 Եւ ես ոչ գիտէի զնա . այլ որ առաքեացն զիս մկրտել ջրով՝ նա ասաց ցիս . Յոր վերայ տեսանիցես զՀոգին , զի իջանիցէ եւ հանգչիցի 'ի վերայ նորա , նա է՝ որ մկրտէ Հոգւովն Սրբով ։
34 Եւ ես տեսի եւ վկայեցի՝ եթէ Սա է Որդին Աստուծոյ ։
35 'Ի վաղիւ անդր կայր Յովհաննէս , եւ յաշակերտաց անտի նորա երկու ։

նորանց եւ ասաց . Ես ջրով եմ մկրտում + ձեզ . ձեր միջումն կայ մէկն՝ որ դուք նորան չէք ° գիտում ,
27 Որ նա ինձանից յետոյ գալու է , որ ինձանից առաջ ‡ էլաւ . որ ես արժանի չեմ՝ որ նորա կօշիկների կապանքըն արձակեմ ։
28 Սա Բեթաբարայումն էլաւ , Յորդանանի այն կողմը . որ տեղ որ Յօհաննէսն էր՝ եւ = մկրտումէր ։
29 Յետեւի օրը Յօհաննէս տեսաւ Յիսուսին՝ որ իրենն մօտ էր գալիս , եւ ասաց . Ահա Աստուծոյ ‡ Գառն՝ որ աշխարհքի մեղքը վեր է հանում ։
30 Սա է՝ որ սորա համար ես ասումէի՝ թէ ինձանից յետոյ մարդ կըգայ՝ որ ինձանից առաջ էլաւ . ինչու որ՝ նա իսկ ինձանից առաջ * էր ։
31 Եւ ես նորան՝ չէի գիտում . բայց որ յայտնի լինի Իսրայէլին՝ նորա համար ես եկի որ ջրով + մկրտեմ ։
32 Յօհաննէսն վկայեց եւ ասաց . Թէ Տեսնումէի Հոգին՝ որ աղաւնոյ պէս վէր էր գալիս երկնքիցը՝ եւ նորա վերայ = մնում ։
33 Եւ ես չէի գիտում նորան . բայց նա որ ինձ ուղարկեց՝ որ ջրով մկրտեմ , նա ասաց ինձ . Թէ Ում վերայ տեսնես որ Հոգին վէր գայ եւ նորա վերայ մնայ՝ նա է որ Սուրբ Հոգովը + կըմկրտէ ։
34 Եւ ես տեսի եւ վկայեցի՝ թէ Սա է Աստուծոյ Որդին ։
35 Յետեւի օրը Յօհաննէս կանգնած էր՝ եւ երկու հոգի էլ նորա աշակերտներիցը .

+ Մատթ . Գ . 11 ։ ° Մաղ . Գ . 1 ։ ‡ Համար . 15 ։ Համար . 30 ։ Գործ . ԺԹ . 4 ։ = Դատ . Է . 24 ։ Գղ . Ժ . 40 ։ ‡ Ելից . ԺԲ . 3 ։ Եսայ . ԾԳ . 7 ։ Համար . 36 ։ Գործ . Ը . 32 ։ Ա Պետ . Ա . 19 ։ Յայտ . Ե . 6 ։ ... ‡ Եսայ . ԾԳ . 11 ։ Ա Կորնթ . ԺԵ . 3 ։ Գաղ . Ա . 4 ։ Եբր . Ա . 3 ։ Բ . 17 ։ Թ . 28 ։ Ա Պետ . Բ . 24 ։ Գ . 18 ։ Ա Յովհ . Բ . 2 ։ Գ . 5 ։ Դ . 10 ։ Յայտ . Ա . 5 ։ * Համար . 15 . 27 ։ + Մաղ . Գ . 1 ։ Մատթ . Գ . 6 ։ Ղու . Ա . 17 . 76 ։ 77 ։ Գ . 3 , 4 ։ = Մատթ . Գ . 16 ։ Մարկ . Ա . 10 ։ Ղու . Գ . 22 ։ Գղ . Ե . 32 ։ + Մատթ . Գ . 11 ։ Գործ . Ա . 5 ։ Բ . 4 ։ Ժ . 44 ։ ԺԹ . 6 ։

36 Եւ հայեցեալ ընդ Յիսուսի՝ զի գնայր, ասէ. Ահաւասիկ Քրիստոս Գառն Աստուծոյ։

37 Լուան ՚ի նմանէ երկու աշակերտքն՝ զի խօսէր, եւ գնացին ըզհետ Յիսուսի։

38 Իբրեւ դարձաւ Յիսուս եւ ետես զնոսա՝ զի երթային զհետ նորա, ասէ ցնոսա. Զի՞նչ խնդրէք. Նոքա ասեն ցնա. Ռաբբի, որ թարգմանեալ կոչի վարդապետ, ուր են օթեւանք քո։

39 Ասէ ցնոսա. Եկայք եւ տեսէք. Եկին եւ տեսին՝ ուր էին օթեւանք նորա. եւ առ նմա ագան այն օր, զի ժամ էր իբրեւ տասներորդ։

40 Էր Անդրէաս եղբայր Սիմովնի վիմի, մի յերկուց անտի, որ լուանն ՚ի Յովհաննէ՝ եւ գնացին զհետ նորա։

41 Գտանէ սա նախ զեղբայր իւր զՍիմոն, եւ ասէ ցնա. Գտաք զՄեսիայ՝ որ թարգմանի Քրիստոս։

42 Սա ած զնա առ Յիսուս. հայեցեալ ընդ նա Յիսուսի՝ ասէ. Դու ես Սիմոն որդի Յովնանու, դու կոչեսցիս Կեփաս, որ թարգմանի Պետրոս։

43 ՚Ի վաղիւ անդր կամեցաւ ելանել ՚ի Գալիլեա. գտանէ զՓիլիպպոս, եւ ասէ ցնա Յիսուս. Եկ զկնի իմ։

44 Եւ էր Փիլիպպոս ՚ի Բեթսայիդայ, ՚ի քաղաքէ Անդրեայ եւ Պետրոսի։

45 Գտանէ Փիլիպպոս զՆաթանայէլ, եւ ասէ ցնա. Զորմէ գրեաց Մովսէս յօրէնսն՝ եւ մարգարէքն. գտաք զՅիսուս զորդի Յովսեփայ ՚ի Նազարեթէ։

36 Եւ մտիկ տալով Յիսուսին՝ որ ման էր գալիս, եւ ասաց. Ահա Քրիստոսն՝ Աստուծոյ Է Գառն։

37 Այն երկու աշակերտները լսեցին նորանից՝ որ խօսումէր, եւ Յիսուսի ետեւէն գնացին։

38 Երբոր Յիսուս դարձաւ եւ նորանց տեսաւ՝ որ գնումէին իրեն ետեւէն՝ նորանց ասաց. Ի՞նչ էք ուզում. Նորանք ասացին նորան. Ռաբբի՝ (որ թարգմանված ասվում է՝ վարդապետ.) քո բնակարանդ որտեղ է։

39 Նորանց ասաց. Եկէք եւ տեսէք. Եկին եւ տեսին՝ որ տեղ որ նորա բնակարանն էր. եւ այն օրը նորա մօտ մնացին, ինչու որ՝ տասն ժամի մօտ էր։

40 Անդրէաս վէմ Սիմօնի եղբայրն այն երկուսիցը մէկն էր՝ որ Յօհաննէսիցը լսեցին եւ նորան ետեւէն Ը գնացին։

41 Սա առաջ իրեն Սիմօն եղբօրը գտաւ եւ նորան ասաց. Մեսիային գտինք՝ որ կըթարգմանվի Քրիստոս։

42 Սա նորան բերաւ Յիսուսի մօտ. Յիսուս նորան մտիկ տալով եւ ասաց. Դու Սիմօնն ես Յօնանի որդին. դու պիտի կոչվիս Կեփաս, որ կըթարգմանվի Թ Պետրոս։

43 Յետեւի օրը կամեցաւ, որ դուրս գնայ Գալիլեայ. Փիլիպպոսին գտաւ. եւ Յիսուս նորան ասաց. Իմ ետեւէս եկ։

44 Եւ Փիլիպպոս Բեթսայիդայիցն էր, Անդրէասի եւ Պետրոսի Ժ քաղաքիցը։

45 Փիլիպպոս գտաւ Նաթանայէլին՝ եւ նորան Ի ասաց. Նա որ նորա համար Մօսէսն օրէնքումը Լ գրեց՝ եւ Խ մարգարէները, գտինք Յօսէփի որդի Յիսուսին Ծ Նազարէթիցը։

Է Համար. 29։
Ը Մատթ. Դ. 18։
Թ Մատթ. ԺԶ. 18։
Ժ Գլ. ԺԲ. 21։
Ի Գլ. ԻԱ. 2։
Լ Ծննդ. Գ. 15։ ԽԹ. 10։ Բ Օրէն. ԺԸ. 18։ Ղու. ԻԴ. 27։
Խ Եսայ. Դ. 2։ Է. 14։ Թ. 6։ ԾԳ. 2։ Միք. Ե. 2։ Զաք. Զ. 12։ Թ. 9։
Ծ Մատթ. Բ. 23։ Ղու. Բ. 4։

46 Ասէ ցնա Նաթանայէլ, Իսկ 'ի Նազարեթէ մարթ ինչ իցէ բարւոյ ինչ լինել. ասէ ցնա Փիլիպպոս. Ե՛կ եւ տես։
47 Իբրեւ ետես Յիսուս զՆաթանայէլ՝ զի գայր առ նա. ասէ վասն նորա. Ահա արդարեւ Իսրայէլացի՝ յորում նենգութիւն ոչ գոյ։

48 Ասէ ցնա Նաթանայէլ. Ո՞ւստի ճանաչես զիս. Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. Մինչչեւ էր Փիլիպպոսի կոչեցեալ զքեզ՝ զի էիր 'ի ներքոյ թզենւոյ, տեսի զքեզ։

49 Պատասխանի ետ նմա Նաթանայէլ եւ ասէ. Ռաբբի՝ դու ես Որդի Աստուծոյ, Դու ես Թագաւորն Իսրայէլի։
50 Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. Փոխանակ զի ասացի քեզ՝ թէ տեսի 'ի ներքոյ թզենւոյն, հաւատաս, մեծամեծս եւս քան զայս տեսցես։

51 Եւ ասէ ցնա. Ամէն ամէն ասեմ ձեզ. տեսանիցէք զերկինս բացեալ՝ եւ զհրեշտակս Աստուծոյ՝ զի ելանիցեն եւ իջանիցեն 'ի վերայ Որդւոյ մարդոյ։

46 Նաթանայէլ նորան ասաց. Միթէ կարելի է որ Նազարէթից բարի բան լինի։ Փիլիպպոս նորան ասաց. Ե՛կ եւ հ տես։
47 Երբոր Յիսուս տեսաւ Նաթանայէլին՝ որ իրեն մօտ էր գալիս՝ ասաց նորա համար. Ահա՛ ճշմարիտ ծ Իսրայէլացի. որ նորանում խաբէութիւն չկայ։
48 Նաթանայէլն ասաց նորան. Ի՞նչ տեղից ես ճանաչում ինձ։ Յիսուս պատասխան տուաւ եւ նորան ասաց. Դեռ որ Փիլիպպոսը քեզ չէր կանչել՝ որ թզենի ծառին տակն էիր՝ քեզ տեսի։
49 Նաթանայէլ պատասխան տուաւ նորան եւ ասաց. Ռաբբի՝ դու ես Աստուծոյ ղ Որդին, Դու ես Իսրայէլին ճ թագաւորը։
50 Յիսուս պատասխան տուաւ նորան եւ ասաց. Որովհետեւ ասացի քեզ՝ թէ թզենի ծառին տակը տեսի քեզ՝ հաւատում ես. որանից էլ աւելի մեծ բաներ կը տեսնես։
51 Եւ նորանց ասաց. Ճշմարիտ ճշմարիտն ասում եմ ձեզ. թէ այսուհետեւ երկինքը բացված կը տեսնէք, եւ Աստուծոյ հրեշտակներին՝ որ վեր կելլին եւ վէր կը գան Որդւոյ մարդոյ յ վերայ։

## ԳԼ. Բ

1 Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին 'ի Կանա Գալիլեացւոց. եւ անդ էր մայրն Յիսուսի։
2 Կոչեցաւ եւ Յիսուս եւ աշակերտքն նորա 'ի հարսանիսն։
3 Եւ 'ի պակասել գինւոյն, ասէ մայրն ցՅիսուս. Գինի ոչ ունին։

4 Եւ ասէ ցնա Յիսուս. Զի՞ կայ

1 Եւ երրորդ օրը հարսանիք էր Գալիլեացոց Կանայումը, եւ Յիսուսին մայրն այնտեղ ն էր։
2 Յիսուս էլ եւ նորա աշակերտները կանչվեցան այն հարսանիքը։
3 Եւ գինին որ պակասեցաւ՝ մայրըն ասաց Յիսուսին. Գինի չունին։
4 Եւ Յիսուս նորան ասաց. Ո՛վ

հ Գլ. Է. 41. 42. 52.
ծ Սաղ. ԼԲ. 2. ՀԳ. 1. Գլ. Ը. 39. Հռովմ. Բ. 28. 29. Թ. 6.
ղ Մատթ. ԺԴ. 33.
ճ Մատթ. ԻԱ. 5. ԻԷ. 11. 42. Գլ. ԺԲ. 37. ԺԹ. 3.
յ Ծննդ. ԻԸ. 12. Մատթ. Դ. 11. Ղուկ. Բ. 9. 13. ԻԲ. 43. ԻԴ. 4. Գործ. Ա. 10.
—
ն Տես. ԺԹ. 28.

իմ եւ քո՞ կին դու , չեւ է հա-
սեալ ժամանակ իմ ։

5 Ասէ մայրն նորա ցպաշտաւնե-
այսն · Որ զինչ ասիցէ ձեզ՝ արասջիք ։
6 Անդ էին թակոյկք կճեայք
վեց՝ ըստ սրբութեան Հրէից · տա-
նէին մի մի ՚ի նոցանէ մարս երկուս
կամ երիս ։
7 Ասէ ցնոսա Յիսուս · Լցէք ըզ
թակոյկսդ ջրով · եւ լցին զնոսա
մինչեւ ՚ի վեր ։
8 Եւ ասէ ցնոսա · Արդ՝ առէք
եւ բերէք տաճարապետին · եւ նո-
քա բերին ։
9 Եւ իբրեւ ճաշակեաց տաճա-
րապետն զջուրն գինի եղեալ , եւ
ոչ գիտէր ուստի իցէ · բայց սպասա-
ւորքն գիտէին՝ որք արկին զջուրն ·
կոչէ ընդ փեսայն տաճարապետն ·
10 Եւ ասէ · Ամենայն մարդ զա-
նոյշ գինին յառաջագոյն դնէ ·
եւ յորժամ արբենան , յայնժամ
զյոռին · դու պահեցեր զանոյշ գի-
նիդ մինչեւ ցայժմ ։
11 Զայս արար սկիզբն նշանաց
Յիսուս ՚ի Կանա Գալիլեացւոց , եւ
յայտնեաց զփառս իւր · եւ հաւա-
տացին ՚ի նա աշակերտքն նորա ։
12 Յետ այսորիկ էջ Յիսուս ՚ի
Կափառնաում , ինքն եւ մայր իւր
եւ եղբարք իւր · եւ անդ լինէր ոչ
բազում ինչ աւուրս ։
13 Եւ էր մերձ զատիկն Հրէից ,
եւ ել Յիսուս յԵրուսաղէմ ։
14 Եւ եգիտ ՚ի տաճարին՝ զի վա-
ճառէին զարջառս եւ զոչխարս եւ
զաղաւնիս , եւ զլումայափոխսն՝ որ
նստէին ։
15 Եւ արար խարազան չուանեայ ,
եւ եհան զամենեսին ՚ի տաճարէն ,
զոչխարսն եւ զարջառս , եւ զպղ-

Բ կին դու՝ քեզ ինչ բան կայ ինձ
Գ հետ · իմ ժամանակս դեռ Դ չի
հասել ։
5 Նորա մայրն սպասաւորներին
ասաց · Ինչ որ ասէ ձեզ՝ արէք ։
6 Այն տեղ վեց քարէ կարաս
կային Հրէաների լուացմունքին հա-
մար՝ որ նորանցից ամէն մէկն եր-
կու կամ երեք մար էին Ե տանում ։
7 Յիսուս նորանց ասաց · Այդ
կարասներդ ջրով լցէք · նորանց
լցրին մինչեւ բերանը ։
8 Եւ նորանց ասաց · Հիմիկ առէք
եւ բերէք սեղանապետին համար ·
եւ նորանք բերին ։
9 Եւ երբոր սեղանապետն այն
ջրի համն առաւ որ գինի էր եղած՝
եւ չէր գիտում թէ ինչ տեղից է ·
բայց սպասաւորները գիտումէին՝
որ ջուրը լցրել էին · սեղանապետը
փեսային հետ խօսեց ,
10 Եւ ասաց · Ամէն մարդ անոյշ
գինին առաջ է տալիս · եւ երբոր
կը հարբենան՝ այն ժամանակը վա-
տը · Զ Եւ դու այդ անոյշ գինիդ
մինչեւ հիմիկ պահեցիր ։
11 Նշանների սկիզբը Յիսուս սա
արաւ Գալիլեացոց Կանայումը եւ
իրեն փառքը Է յայտնեց · եւ նորա
աշակերտները հաւատացին նորան ։
12 Սրանից ետեւ Յիսուս վէր ե-
կաւ Կափառնայում , ինքը եւ իրեն
մայրն ու իրեն Ը եղբայրները · եւ
շատ օր չը մնացին այն տեղ ։
13 Եւ Հրէից զատիկը մօտիկ էր ,
եւ Յիսուս վեր ելաւ Թ Երուսաղէմ ։
14 Եւ տաճարումը գտաւ նորանց՝
որ եզներ եւ ոչխարներ եւ աղաւ-
նիներ էին ծախում , եւ փող փո-
խողներին էլ որ նստած Ժ էին ։
15 Եւ չուանէ խարազան շինեց ,
եւ ամէնին տաճարիցը հանեց , ոչ-
խարներին եւ եզներին՝ եւ Ի փող փո-

Բ Գլ. ԺԹ. 26 ։
Գ Բ Թագ. ԺԶ. 10 ։ ԺԹ. 22 ։
Դ Գլ. Է. 6 ։
Ե Մարկ. Է. 3 ։
Զ Գլ. Դ. 46 ։
Է Գլ. Ա. 14 ։
Ը Մատթ. ԺԲ. 46 ։
Թ Ելից. ԺԲ. 14 ։ Բ Օրին. ԺԶ. 1. 16 ։ Համար. 23 ։ Գլ. Ե. 1 ։ Զ. 4 ։ ԺԱ. 55 ։
Ի Մատթ. ԻԱ. 12 ։ Մարկ. ԺԱ. 15 ։ Ղուկ. ԺԹ. 45 ։

զպղինձս հատավաճառացն ցրուեաց, եւ զսեղանսն կործանեաց ։

16 Եւ որ զաղաւնիսն վաճառէին՝ ասէ ցնոսա · Աւէք զայդ աստի, եւ մի առնէք զտուն Հօր իմոյ՝ տուն վաճառի ։

17 Ապա յիշեցին աշակերտքն նորա, թէ գրեալ է · Նախանձ տան քո կերիցէ զիս ։

18 Պատասխանի ետուն Հրէայքն եւ ասեն ցնա · Զինչ նշան ցուցանես դու մեզ՝ զի զայդ առնես ։

19 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա · Քակեցէք զտաճարդ զայդ, եւ զերիս աւուրս կանգնեցից զդա ։

20 Ասեն ցնա Հրէայքն · Զքառասուն եւ զվեց ամ շինեցաւ տաճարս, եւ դու զերիս աւուրս կանգնեսցես զդա ։

21 Բայց նա ասէր վասն տաճարի մարմնոյն իւրոյ ։

22 Իսկ յորժամ յարեաւն 'ի մեռելոց, յիշեցին աշակերտքն նորա, թէ այս է՝ զոր ասացն · եւ հաւատացին գրոյն, եւ բանին՝ զոր ասաց Յիսուս ։

23 Եւ իբրեւ էր յԵրուսաղէմ 'ի զատկին 'ի տօնի, բազումք հաւատացին յանուն նորա · զի տեսանէին զնշանսն՝ զոր առնէր ։

24 Բայց ինքն Յիսուս ոչ հաւատայր զանձն նոցա · քանզի ինքն գիտէր զամենայն ։

25 Եւ զի ոչ էր պիտոյ՝ եթէ ոք վկայեսցէ վասն մարդոյ · զի ինքն իսկ գիտէր՝ զինչ կայր 'ի մարդն ։

խօզների պղինձները ցրուեց եւ տախտակները կործանեց ։

16 Եւ նորանց որ աղաւնի էին ծախում, նորանց ասաց · Դրանք վեր առէք այստեղից՝ եւ իմ Հօրս տունը մի անէք առուտուրի է տուն ։

17 Այն ժամանակը նորա աշակերտները յիշեցին թէ գրուած է՝ Քո տանդ նախանձն ուտումէ ւ ինձ ։

18 Հրէաները պատասխան տուին եւ ասացին նորան · Դու ինչ նշան ես ցոյց տալիս մեզ՝ որ դա խ անումես ։

19 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց նորանց · Քանդեցէք այդ տաճարդ, եւ երեք օրումը կը կանգնացնեմ ծ դորան ։

20 Հրէաներն ասացին նորան՝ · Այս տաճարս քառասուն եւ վեց տարում շինուեցաւ՝ եւ դու երեք օրում կը կանգնացնես դորան ։

21 Բայց նա իրեն մարմնոյ տաճարին համար էր կ ասում ։

22 Ապա երբոր նա մեռելների միջից յարութիւն առաւ՝ նորա աշակերտները յիշեցին թէ սա նա է՝ որ նա ասաց · եւ հաւատացին գրքին՝ եւ այն խօսքին որ Յիսուսն հ ասաց ։

23 Եւ երբոր Երուսաղէմումն էր զատկի տօնումը շատ մարդիք հաւատացին նորա անունին · ինչու որ տեսնումէին այն նշաններին՝ որ նա անումէր ։

24 Բայց ինքն Յիսուս իրեն անձը չէր հաւատում նորանց · պատճառն որ՝ ինքն ամէն բան գիտումէր,

25 Եւ պէտք չէր որ մէնը վկայէր մարդոյ համար · ինչու որ՝ իսկ ինքըն գիտումէր՝ թէ ինչ կայ մարդոյ ձ ներսումը ։

է Ղու. Բ. 49 ։
ւ Սաղ. ԿԹ. 9 ։
խ Մատթ. ԺԲ. 38 ։ Գլ. Զ. 30 ։
ծ Մատթ. ԻԶ. 61 ։ ԻԷ. 40 ։ Մարկ. ԺԴ. 58 ։ ԺԵ. 29 ։
կ Ա Կորնթ. Գ. 16 ։ Զ. 19 ։ Բ Կորնթ. Զ. 16 ։ Կող. Բ. 9 ։ Եբր. Ը. 2 ։
հ Ղու. ԻԴ. 8 ։
ձ Ա Թագ. ԺԶ. 7 ։ Ա Մնաց. ԻԸ. 9 ։ Մատթ. Թ. 4 ։ Մարկ. Բ. 8 ։ Գլ. Զ. 64 ։ ԺԶ. 30 ։ Գործ. Ա. 24 ։ Յայտ. Բ. 23 ։

## ԳՒ․ Գ

1 Եւ էր այր մի 'ի փարիսեցւոց անուանի՝ Նիկոդեմոս անուն նորա՝ իշխան Հրէից ։

2 Սա եկն առ նա գիշերի՝ եւ ասէ ցնա ․ Ռաբբի՝ գիտեմք եթէ յԱստուծոյ եկեալ ես վարդապետ ․ զի ոչ ոք կարէ զայդ նշանս առնել՝ զոր դու առնես , եթէ ոչ Աստուած իցէ ընդ նմա ։

3 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա ․ Ամէն ամէն ասեմ քեզ , Եթէ ոչ ոք ծնցի վերստին՝ ոչ կարէ տեսանել զարքայութիւն Աստուծոյ ։

4 Ասէ ցնա Նիկոդեմոս ․ Զիա՞րդ կարէ մարդ ծնանել՝ որ ծեր իցէ ․ միթէ մարթ ինչ իցէ անդրէն յորովայն մօր իւրոյ կրկին մտանել եւ ծնանել ։

5 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ․ Ամէն ամէն ասեմ քեզ , Եթէ ոչ ոք ծնցի 'ի ջրոյ եւ 'ի Հոգւոյ , ոչ կարէ մտանել յարքայութիւնն Աստուծոյ ։

6 Զի ծնեալն 'ի մարմնոյ՝ մարմին է , եւ ծնեալն 'ի Հոգւոյ՝ հոգի է ։

7 Դու մի զարմանար , թէ՞ ասացի քեզ՝ Պարտ է ձեզ ծնանել վերստին ։

8 Զի հողմ ուր կամի՞ շնչէ ․ եւ զձայն նորա լսես ․ այլ ոչ գիտես՝ ուստի գայ , կամ յո երթայ ․ այնպէս եւ ամենայն ծնեալն 'ի Հոգւոյն ։

9 Պատասխանի ետ 'Նիկոդեմոս եւ ասէ ցնա ․ Զիա՞րդ մարթի այդմ լինել ։

10 Պատասխանի ետ Յիսուս եւ

1 Եւ փարիսեցիներիցը մին մարդ կար՝ անունը Նիկոդիմոս՝ Հրէաների իշխան ։

2 Սա գիշերը նորա մօտ եկաւ եւ նորան ասաց ․ Ռաբբի՝ գիտենք որ Աստուածանից վարդապետ ես – եկել ․ ինչու որ՝ ոչ ով չի կարող այդ նշաններդ անել՝ որ դու ես ‡ անում , թէ որ Աստուած նորա հետ † չլինի ։

3 Յիսուս պատասխան տուաւ եւ 'նորան ասաց ․ Ճշմարիտն ճշմարիտն ասում եմ քեզ ․ Թէ որ մինը նոր չծնվի՝ կարող չէ Աստուծոյ արքայութիւնը ‡ տեսնել ։

4 Նիկոդիմոս նորան ասաց ․ Մարդ ինչպէս կարող է ծնվիլ՝ որ ծեր է ․ միթէ կարելի է՝ որ նորէն երկրորդ անգամ իւրեն մօր փորը մտնէ եւ ծնվի ։

5 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց ․ Ճշմարիտն ճշմարիտն ասում եմ քեզ ․ Թէ որ մինը ջրից եւ Հոգուց ‡ չծնվի , նա կարող չէ Աստուծոյ արքայութիւնը մտնել ․

6 Պատճառն որ՝ մարմնուց ծնվածը՝ մարմին է ․ եւ Հոգուց ծնվածը՝ հոգի է ։

7 Դու մի զարմանար՝ որ ասացի քեզ , թէ Պէտք է ձեզ՝ որ նոր ծնվէք ։

8 Ինչու որ՝ քամին որ տեղ որ ուզում է՝ փչում է , եւ նորա ձայնը լսում ես ․ բայց չես գիտում՝ թէ ինչ տեղից է գալիս կամ ուր տեղ է գնում ․ ճիշդ այսպէս ‡ է եւ ամէն Հոգուց ‡ ծնվածը ։

9 Նիկոդիմոս պատասխան տուաւ եւ նորան ասաց ․ Դա ինչպէս կարող է ‡ լինիլ ։

10 Յիսուս պատասխան տուաւ եւ

– Գւ․ Է․ 50 ։ Ճթ․ 39 ։
‡ Գւ․ Թ․ 16․ 33 ։ Գործ․ Բ․ 22 ։
‡ Գործ․ Ժ․ 38 ։
† Գւ․ Ա․ 13 ։ Գաղ․ Զ․ 15 ։ Տիտ․ Գ․ 5 ։ Յակ․ Ա․ 18 ։ Ա Պետ․ Ա․ 23 ։ Ա Յովհ․ Գ․ 9 ։
‡ Մարկ․ ԺԶ․ 16 ։ Գործ․ Բ․ 38 ։
‡ Սաղ․ ԾԱ․ 5 ։ Ա Կորնթ․ Բ․ 11 ։
‡ Գւ․ Զ․ 53․ 61 ։

ասէ ցնա. Դու ես վարդապետդ Իս-
րայէլի՝ եւ զայդ ոչ գիտես։

11 Ամէն ամէն ասեմ քեզ. զի զոր
ինչ գիտեմք՝ խօսիմք, եւ զոր տե-
սաք՝ վկայեմք. եւ զվկայութիւն
մեր ոչ ընդունիք։

12 Իսկ արդ՝ եթէ զերկրաւորս
ասացի ձեզ՝ եւ ոչ հաւատայք. դի-
արդ եթէ զերկնաւորսն ասացից
հաւատայցէք։
13 Եւ ոչ ոք ել յերկինս, եթէ ոչ
որ էջն յերկնից՝ Որդին մարդոյ, որ
էն յերկինս։

14 Եւ որպէս Մովսէս բարձրա-
ցոյց զօձն յանապատին, նոյնպէս
բարձրանալ պարտ է Որդւոյ մար-
դոյ.
15 Զի ամենայն որ հաւատայ 'ի
նա՝ մի կորիցէ, այլ ընկալցի զկ
կեանսն յաւիտենականս։
16 Զի այնպէս սիրեաց Աստուած
զաշխարհ՝ մինչեւ զՈրդին իւր միա-
ծին ետ. զի ամենայն որ հաւատայ
'ի նա՝ մի կորիցէ, այլ ընկալցի զկ
կեանսն յաւիտենականս։

17 Զի ոչ առաքեաց Աստուած
զՈրդի իւր յաշխարհ՝ թէ դատեսցի
զաշխարհ, այլ զի փրկեսցի աշխարհ
նովաւ։
18 Որ հաւատայ 'ի նա, ոչ դա-
տապարտեսցի. եւ որ ոչ հաւատայ
'ի նա՝ արդէն իսկ դատապարտեալ
է. զի ոչ հաւատաց յանուն միածնի
Որդւոյն Աստուծոյ։
19 Եւ այս իսկ է դատաստան. զի
լոյս եկն յաշխարհ՝ եւ սիրեցին

նորան ասաց. Դու ես Իսրայէլի
վարդապետն՝ եւ այդ բաները չես
գիտում։
11 Ճշմարիտ ճշմարիտ ասու-
մեմ քեզ՝ թէ ինչ որ գիտումենք՝
նա ենք խօսում, եւ ինչ որ տե-
սենք՝ նա ենք ը վկայում. եւ մեր
վկայութիւնը չէք թ ընդունում։
12 Բայց թէ որ երկրաւոր բաննե-
րըն ասացի ձեզ եւ չէք հաւա-
տում. ապա ինչպէս կը հաւատաք
թէ որ երկնաւոր բաններըն ասեմ։
13 Եւ ոչ ով վեր չէլաւ երկինքը,
եթէ ոչ Որդին մարդոյ՝ որ երկըն-
քիցը վէր եկաւ՝ նա որ երկըն-
քումն ժ է։
14 Եւ ինչպէս որ Մօսէսն օձը
բարձրացրուց ի անապատումը՝ իսկ
այնպէս էլ պէտք է որ Որդին մար-
դոյ լ բարձրանայ.
15 Որ ամէն ով որ հաւատայ նո-
րան՝ չի կորչի, այլ յաւիտենական
կեանքըն խ ընդունի։
16 Պատճառն որ՝ Աստուած այն-
պէս սիրեց աշխարհքին՝ մինչեւ որ
իւրեն միածին Որդին տուաւ. որ
ամէն ով որ հաւատայ նորան՝ չը
կորչի, այլ յաւիտենական կեան-
քըն ծ ընդունի։
17 Ինչու որ՝ Աստուած իւրեն Որ-
դին չուղարկեց աշխարհքս՝ որ աշ-
խարհքին դատէ՝ բայց որ աշխարհ-
քը նորանով կ փրկվի։
18 Ով որ հաւատումէ նորան՝ չի
դատապարտվիլ՝ եւ ով որ չըհաւա-
տում նորան՝ արդէն դատապար-
ված է. ինչու որ՝ չըհաւատաց Աս-
տուծոյ միածին Որդոյն հ անունը։
19 Եւ իսկ աս է դատաստանն՝ որ
լոյսն եկաւ աշխարհքս՝ եւ մարդիք

ը Մատթ. ԺԱ. 27. Գլ. Ա. 18. Ե. 16. Ը. 28. ԺԲ. 49. ԺԴ. 24.
թ Համառ. 32.
ժ Առակ. Լ. 4. Գլ. Զ. 33. 38. 51. 63. ԺԶ. 28. Գործ. Բ. 34. Ա Կորնթ. ԺԵ. 47. Եփես. Դ. 9. 10.
ի Թու. ԻԱ. 9.
լ Գլ. Ը. 28. ԺԲ. 32.
խ Համառ. 36. Գլ. Զ. 47.
ծ Հռովմ. Ե. 8. Ա Յովհ. Դ. 9.
կ Ղու. Թ. 56. Գլ. Ե. 45. Ը. 15. ԺԲ. 47. Ա Յովհ. Դ. 14.
հ Գլ. Ե. 24. Զ. 40. 47. Ի. 31.

մարդիկ զխաւար առաւել քան զլոյս․ զի էին գործք նոցա չարութեան ։

20 Զի ամենայն որ զչար գործէ՝ ատեայ զլոյս․ եւ ոչ գայ առ լոյսն, զի մի յանդիմանեսցին գործք նորա ։

21 Իսկ որ առնէ զճշմարտութիւն՝ գայ առ լոյսն, զի յայտնի լիցին գործք նորա, թէ Աստուծով գործեցան ։

22 Յետ այսորիկ եկն Յիսուս եւ աշակերտքն նորա յերկիրն Հրէաստանի․ եւ անդ շրջէր նոքօք հանդերձ եւ մկրտէր ։

23 Մկրտէր եւ Յովհաննէս ՚ի յԱյնովն մերձ առ Սաղիմ, զի ջուրք բազում էին անդ․ եւ գային եւ մկրտէին ։

24 Զի չեւ եւս էր արկեալ Յովհաննէս ՚ի բանտ ։

25 Եւ եղեւ խնդիր յաշակերտացն Յովհաննու ընդ Հրէից վասն սրբութեան ։

26 Եկին առ Յովհաննէս եւ ասեն ցնա․ Ռաբբի՝ որ էրն ընդ քեզ յայնկոյս Յորդանանու, որում դու վկայեցեր, ահաւասիկ նա մկրտէ՝ եւ ամենեքին գան առ նա ։

27 Պատասխանի ետ Յովհաննէս եւ ասէ․ Ո՛չ կարէ մարդ առնուլ յանձնէ եւ ոչինչ, եթէ ոչ իցէ տուեալ նմա յերկնից ՚ի վերուստ ։

28 Դուք ձեզէն վկայէք ինձ, զի ասացի ձեզ՝ թէ Չեմ ես Քրիստոսն, այլ թէ առաքեալ եմ առաջի նորա ։

29 Որ ունի հարսն՝ նա է փեսայ․

խաւարն աւելի սիրեցին քան թէ լոյսը, ինչու որ՝ նորանց գործերը չար [ձ] էին ։

20 Պատճառն որ՝ ամէն ով որ չար է գործում՝ լոյսին ատում է, և դէպի լոյսը չի գալիս, որ նորա գործերը [ղ] չի յանդիմանվին ։

21 Բայց նա՝ որ ճշմարտութիւն է գործում՝ դէպի լոյսն է գալիս, որ նորա գործերը յայտնի լինին թէ Աստուծով գործվեցան ։

22 Սրանից յետոյ Յիսուս եկաւ Հրէաստանի երկիրը, և նորա աշակերտներն էլ․ և այնտեղ նորանց հետ ման էր գալիս և [ճ] մկրտում էր ։

23 Յօհաննէսն էլ Այնոնումն էր մկրտում՝ Սաղիմայ [մ] մօտ․ ինչու որ՝ շատ ջուր կար այնտեղ․ և գալիս էին և [յ] մկրտվում ։

24 Պատճառն որ՝ Յօհաննէս դեռ բանտի մէջ չէր [ն] գրած ։

25 Եւ Յօհաննէսի աշակերտները Հրէաների հետ հակառակեցին սրբութեան համար ։

26 Յօհաննէսի մօտ եկին և նորան ասացին․ Ռաբբի՝ նա որ Յորդանանի այն կողմն էր քեզ հետ՝ որ դու նորա համար [շ] վկայեցիր, ահա նա մկրտում է, և ամէնքը նորա մօտ են գալիս ։

27 Յօհաննէս պատասխան տուաւ և ասաց․ Մարդ բնաւ կարօղ չէ ինքն իրենից մին բան առնել, թէ որ վերևիցն երկնքիցը տրված չըլինի [ո] նորան ։

28 Դուք ձեզանից վկայումէք ինձ համար՝ որ ասացի ձեզ՝ թէ Ես Քրիստոսը [չ] չեմ՝ բայց թէ նորա առաջին ուղարկված [պ] եմ ։

29 Ով որ հարսն ունի՝ նա է [ջ] փե-

ձ Գղ. Ա. 4. 9. 10, 11. Ը. 12.
ղ Յոբ. ԻԴ. 13. 17. Եփես. Ե. 13.
ճ Գղ. Գ. 2.
մ Ա Թագ. Թ. 4.
յ Մատթ. Գ. 5. 6.
ն Մատթ. ԺԴ. 3.
շ Գղ. Ա. 7. 15. 27. 34.
ո Ա Կորնթ. Դ. 7. Եբր. Ե. 4. Յակ. Ա. 17.
չ Գղ. Ա. 20. 27.
պ Մաղ. Գ. 1. Մարկ. Ա. 2. Ղուկ. Ա. 17.
ջ Մատթ. ԻԲ. 2. Բ Կորնթ. ԺԱ. 2. Եփես. Ե. 25. 27. Յայտ. ԻԱ. 9.

իսկ բարեկամ փեսային՝ որ կայ եւ լսէ նմա, ուրախութեամբ ուրախ լինի վասն ձայնի փեսային. արդ՝ այս ուրախութիւն որ իմն է, լցեալ է։

30 Նմա պարտ է աճել, եւ ինձ նուազանալ։

31 Որ ՚ի վերուստ գայ՝ ՚ի վերոյ է քան զամենայն. որ յերկրէ աստի է, յերկրէ է՝ եւ յերկրէ խօսի։

32 Որ յերկնից գայ, զոր ինչ տեսն եւ զոր լուաւ՝ վկայէ. եւ զվկայութիւն նորա ոչ ոք ընդունի։

33 Որ ընդունի զվկայութիւն նորա՝ կնքեաց, թէ Աստուած ճշմարիտ է։

34 Զի զոր Աստուածն առաքեաց՝ զբանս Աստուծոյ խօսի. զի ոչ եթէ չափով տայ Աստուած զՀոգին։

35 Հայր սիրէ զՈրդի, եւ զամենայն ինչ ետ ՚ի ձեռս նորա։

36 Որ հաւատայ յՈրդի, ընդունի զկեանսն յաւիտենականս. եւ որ ոչ հնազանդի Որդւոյ, ոչ տեսցէ զկեանս, այլ բարկութիւն Աստուծոյ մնայ ՚ի վերայ նորա։

ան. բայց փեսայի բարեկամը՝ որ կայ եւ լսում է նորան, փեսայի ձայնին համար ուրախութենով = ուրախանում է. ուրեմն այս իմ ուրախութիւնս լցուած է։

30 Նորան պէտք է որ աճի, եւ ես պակասեմ։

31 Նա որ վերեւիցն է = գալիս, ամենիցը վերեւ է. նա որ այս երկրիցս է՝ երկրիցն է եւ երկրիցն է = խօսում։

32 Նա որ երկնքիցն է ր գալիս՝ ինչ որ տեսաւ եւ ինչ որ լսեց՝ վկայում է. եւ նորա վկայութիւնքն բնաւ մինը ◦ չի ընդունում։

33 Ով որ նորա վկայութիւնքն ընդունում է՝ կնքով հաստատեց թէ Աստուած ճշմարիտ − է։

34 Պատճառն որ՝ նա որ Աստուած ուղարկեց նորան, Աստուծոյ բանքն է ‡ խօսում. ինչու որ՝ Աստուած Հոգին չափով + չի տալիս։

35 Հայրը սիրում է Որդուն՝ եւ ամէն բան նորա ձեռքը ◦ տուաւ։

36 Ով որ հաւատում է Որդուն՝ յաւիտենական կեանքերն ընդունում է. եւ ով որ չի հնազանդվում Որդուն՝ կեանքը չի տեսնիլ, բայց Աստուծոյ բարկութիւնն է մնում նորա ‡ վերայ։

## Գլ. Դ

1 Իբրեւ գիտաց Յիսուս՝ եթէ լուան փարիսեցիքն՝ եթէ Յիսուս բազում աշակերտս առնէ եւ մկրտէ քան զՅովհաննէս.

2 Թէպէտ ոչ եթէ Յիսուս ինքնին մկրտէր՝ այլ աշակերտքն նորա։

1 Երբոր Յիսուս գիտաց՝ թէ փարիսեցիները լսեցին՝ թէ Յիսուս շատ աշակերտներ է անում եւ Յովհաննէսից էլ աւելի − մկրտում.

2 (Ինչու որ՝ չէ թէ Յիսուսն ինքն էր մկրտում՝ բայց նորան աշակերտները։)

= Երգ. Ե. 1.
= Համար. 13. Գլ. Ը. 23.
‡ Մատթ. ԻԸ. 18. Գլ. Ա. 15. 27. Հռովմ. Թ. 5.
+ Ա Կորնթ. ԺԵ. 47.
ր Գլ. Զ. 33. Ա Կորնթ. ԺԵ. 47.
Եփես. Ա. 21. Փիլիպ. Բ. 9.
◦ Համար. 11. Գլ. Ը. 26. ԺԵ. 15.
− Հռովմ. Գ. 4. Ա Յովհ. Ե. 10.
‡ Գլ. Ե. 16.
+ Գլ. Ա. 16.
◦ Մատթ. ԺԱ. 27. ԻԸ. 18. Ղուկ. Ժ. 22. Գլ. Ե. 20. 22. ԺԳ. 3. ԺԷ. 2. Եբր. Բ. 8.
‡ Ամբ. Բ. 4. Գլ. Ա. 12. Զ. 47. Համար. 15, 16. Հռովմ. Ա. 17. Ա Յովհ. Ե. 10.

—

− Գլ. Գ. 22. 26.

3 Եթող զՀրէաստան երկիր եւ
եկն միւսանգամ ՚ի Գալիլեա։
4 Եւ էր նմա անցանել ընդ Սա-
մարիա։
5 Գայ նա ՚ի քաղաք մի Սամա-
րացւոց՝ որում անուն էր Սիւքար.
մերձ ՚ի գեօղն՝ զոր ետ Յակոբ
Որդւոյ իւրում Յովսեփայ։
6 Եւ անդ էր աղբիւր մի Յակո-
բայ. եւ Յիսուս վաստակեալ ՚ի
ճանապարհէն, նստէր ՚ի վերայ աղ-
բերն. եւ էր ժամ իբրեւ վեցերորդ։

7 Գայ կին մի ՚ի Սամարիայ հա-
նել ջուր. ասէ ցնա Յիսուս. Տո՛ւր
ինձ ըմպել։
8 Զի աշակերտքն նորա երթեալ
էին ՚ի քաղաք անդր, զի կերա-
կուրս գնեսցեն։
9 Ասէ ցնա կինն Սամարացի.
Դու որ Հրէայդ ես, զիա՞րդ յինէն
ըմպել խնդրես ՚ի կնոջէ Սամարաց-
ւոյ, զի ոչ երբէք խառնակին Հրէ-
այք ընդ Սամարացիս։

10 Պատասխանի ետ նմա Յիսուս
եւ ասէ. Եթէ գիտէիր դու զպար-
գեւսն Աստուծոյ, եւ ո՞վ է՝ որ ա-
սէդ ցքեզ՝ թէ Տուր ինձ ըմպել,
դու արդեօք խնդրէիր ՚ի նմանէ՝ եւ
տայր քեզ ջուր կենդանի։

11 Ասէ ցնա կինն. Տէ՛ր դու
քանզի եւ դոյլ իսկ ոչ ունիս, եւ
ջրհորս խոր է. իսկ արդ՝ ուստի
ունիցիս զջուրն կենդանի։
12 Միթէ դու մեծ ինչ ոք իցես՝
քան զհայրն մեր Յակոբ՝ որ զայս
ջրհոր ետ մեզ. եւ ինքն աստի
արբ, եւ որդիք նորա եւ խաշինք
նորա։
13 Պատասխանի ետ նմա Յիսուս
եւ ասէ. Ամենայն որ ըմպէ ՚ի ջրոյ
յայդմանէ՝ միւսանգամ ծարաւէ.

3 Հրէաստանի երկիրը թողից եւ
նորէն եկաւ Գալիլեա։
4 Եւ պէտք էր նորան՝ որ Սա-
մարիայի միջովն անցանէր։
5 Այսպէս նա Սամարացոց մին քա-
ղաքը եկաւ՝ որ նորան անունը Սիւ-
քար էր. այն գիւղին մօտ՝ որ Յա-
կոբ տուաւ իրեն որդի ե Յովսէփին։
6 Եւ Յակոբի մին աղբիւր կար
այնտեղ. եւ Յիսուս ճանապարհի-
ցը վաստակել եւ այն աղբիւրին վե-
րայ նստել էր. եւ վեց ժամին դէմ
էր։
7 Սամարիայեցի մին կին եկաւ՝
որ ջուր հանէ. Յիսուս նորան ա-
սաց. Ինձ տուր որ խմեմ։
8 Պատճառն որ՝ նորա աշակերտա-
ները քաղաքն էին գնացել՝ որ կե-
րակուր գնեն։
9 Սամարացի կինն ասաց նորան.
Դու որ Հրէայ ես՝ ինչպէս ես ու-
զում ջուր խմել ինձանից՝ մին Սա-
մարացի կնկանից. ինչու որ՝ Հրէա-
ները բնաւ չեն խառնվում Սամա-
րացոց զ հետ։
10 Յիսուս պատասխան տուաւ նո-
րան եւ ասաց՝ Թէ որ դու Աստու-
ծոյ պարգեւը գիտենայիր, եւ թէ
ով է նա՝ որ քեզ ասում՝ թէ Տուր
ինձ խմել, ապա դու նորանից կը
խնդրէիր՝ եւ նա կենդանի ջուր կը
տար է քեզ։
11 Կինը նորան ասաց. Տէ՛ր դու
ջուր քաշելոյ աման էլ չունիս՝ եւ
հորս խոր է. ապա ինչ տեղից պի-
տի ունենաս կենդանի ջուրը։
12 Միթէ դու մին աւելի մեծ
մարդ ես քան մեր հայր Յակոբը՝ որ
այս հորս տուաւ մեզ. եւ ինքը
սորանից խմեց, եւ նորա որդիքն
ու նորա անասունները։
13 Յիսուս պատասխան տուաւ նո-
րան եւ ասաց. Ամէն ով որ այդ
ջրից խմէ՝ կրկին կը ծարաւի. բայց

ե Ծննդ. ԼԳ. 19։ ԽԸ. 22։ Յես. ԻԴ. 32։
զ Դ Թագ. ԺԷ. 24։ Ղուկ. Թ. 52. 53։ Գործ. Ա. 28։
է Եսայ. ԺԲ. 3։ ԽԴ. 3։ Երեմ. Բ. 13։ Զաք. ԺԳ. 1։ ԺԴ. 8։

բայց որ ըմպէ 'ի ջրոյն, զոր ես տաց նմա՝ մի՛ ծարաւեսցի յաւիտեան :

14 Այլ ջուրն զոր ես տաց նմա, եղիցի նմա աղբիւր ջրոյ բղխելոյ 'ի կեանսն յաւիտենականս :

15 Ասէ ցնա կինն . Տէ՛ր՝ տո՛ւր ինձ զջուրն զայն, զի մի՛ ծարաւեցից . եւ մի՛ եկից այսր հանել ջուր :

16 Ասէ ցնա Յիսուս . Ե՛րթ, կոչեա՛ զայր քո՝ եւ եկ այսր :

17 Պատասխանի ետ նմա կինն եւ ասէ . Չիք իմ այր . ասէ ցնա Յիսուս . Բարւոք ասացեր՝ թէ Չիք իմ այր .

18 Զի հինգ այր փոխեալ է քո, եւ զոր այժմ ունիս՝ չէ քո այր . զայդ արդար ասացեր :

19 Ասէ ցնա կինն . Տէ՛ր՝ թուի ինձ, թէ մարգարէ իցես դու :

20 Հարքն մեր 'ի լերինս յայսմիկ երկիրպագին . եւ դուք ասէք՝ եթէ յԵրուսաղէմ եւ եթ է տեղի, ուր արժան իցէ երկիրպագանել :

21 Ասէ ցնա Յիսուս . Կի՛ն հաւատա՛ ինձ, զի եկեսցէ ժամանակ՝ յորժամ ո՛չ 'ի լերինս յայսմիկ եւ ո՛չ յԵրուսաղէմ երկիրպագանիցէն Հօր :

22 Դուք երկիրպագանէք՝ որում ո՛չն գիտէք, մեք երկիրպագանեմք որում գիտեմքն . զի փրկութիւն 'ի Հրէից է :

23 Այլ եկեսցէ ժամանակ՝ եւ այժմ իսկ է . յորժամ ճշմարիտքն երկրպագուք՝ երկիրպագանիցեն Հօր հոգւով եւ ճշմարտութեամբ . քան-

ով որ այն ջրէն խմէ՝ որ ես կը տամ նորան՝ նա յաւիտեան ե չծարաւիլ :

14 Բայց այն ջուրն՝ որ ես կը տամ նորան՝ ջրի աղբիւր կը լինի նորանում, որ յաւիտենական կենաց մէջ է կը բղխի :

15 Կինը նորան ասաց . Տէ՛ր՝ տո՛ւր ինձ այն ջուրը, որ չը ծարաւիմ, եւ չըգամ այս տեղ ջուր զ հանելու:

16 Յիսուս նորան ասաց . Գնա՛ կանչէ՛ քո մարդը՝ եւ եկ այստեղ:

17 Կինը պատասխան տուաւ նորան եւ ասաց . Ես մարդ չունիմ . Յիսուս նորան ասաց . Լաւ ասացիր՝ թէ, Ես մարդ չունիմ .

18 Պատճառն որ՝ դու հինգ մարդ ես փոխել՝ եւ նա որ հիմիկ ունիս, քո մարդդ չէ . դա շիտակ ասացիր:

19 Կինը նորան ասաց . Տէ՛ր՝ երեւումէ ինձ՝ թէ դու մարգարէ ը ես:

20 Մեր հարքն այս սարումս երկրպագութիւն թ արին . եւ դուք ասումէք՝ թէ միայն Երուսաղէմումն է այն տեղն՝ որ պէտք է երկրպագութիւն ժ անել :

21 Յիսուս նորան ասաց . Ո՛վ կին . հաւատա՛ ինձ՝ որ ժամանակ կըգայ, որ ո՛չ այս սարումս երկրպագութիւն կանեն Հօրը, եւ ո՛չ էլ ի Երուսաղէմումը :

22 Դուք երկրպագութիւն էք անում նորան՝ որ դուք չէք լ գիտում . մենք երկրպագութիւն ենք անում նորան՝ որ գիտումենք . ինչու որ՝ փրկութիւնը Հրէաներիցն խ է :

23 Բայց ժամանակ կըգայ՝ եւ իսկ հիմիկ է, որ ճշմարիտ երկրպագողները ծ հոգով եւ ճշմարտութենով երկրպագութիւն կանեն կ Հօ-

ե Գլ. Զ. 35. 58.
զ Գլ. Է. 38.
է Գլ. Զ. 34. Հռովմ. Զ. 23. Ա Յովհ. Ե. 20.
ը Ղուկ. Է. 16. ԻԴ. 19. Գլ. Զ. 14. Է. 40.
թ Դատ. Թ. 7.
ժ Բ Օրին. ԺԲ. 5. 11. Գ Թագ. Թ. 3. Բ Մնաց. Է. 12.
ի Մաղ. Ա. 11. Ա Տիմ. Բ. 8.
լ Դ Թագ. ԺԷ. 29.
խ Եսայ. Բ. 3. Ղուկ. ԻԴ. 47. Հռովմ. Թ. 4, 5.
ծ Փիլիպ. Գ. 3.
կ Գլ. Ա. 17.

զի եւ Հայր այնպիսի երկրպագուս
իւր խնդրէ։
24 Հոգի է Աստուած, եւ երկր-
պագուաց նորա՝ հոգւով եւ ճշմար-
տութեամբ պարտ է երկիրպագա-
նել։
25 Ասէ ցնա կինն. Գիտեմք՝ զի
Մեսիա գայ՝ անուանեալն Քրիս-
տոս. յորժամ եկեսցէ նա, պատ-
մեսցէ մեզ զամենայն։
26 Ասէ ցնա Յիսուս. Ես եմ՝ որ
խօսիմս ընդ քեզ։
27 Եւ յայն բան եկին աշակերտ-
քն նորա, եւ զարմանային՝ զի
ընդ կնոջն խօսէր. բայց ոչ որ ա-
սաց 'ի նմանէ, թէ Զի՞նչ խնդ-
րես, կամ զի՞նչ խօսիս ընդ դմա։

28 Եթող կինն զսափորն իւր՝ եւ չո-
գաւ 'ի քաղաքն, եւ ասէ ցմարդիկն։
29 Եկայք տեսէք զայր մի, որ ա-
սաց ինձ զամենայն՝ որ ինչ իմ գոր-
ծեալ է. միթէ նա իցէ Քրիստոսն։
30 Ելին 'ի քաղաքէն՝ եւ գային
առ նա։
31 Եւ մինչչեւ եկեալ էին նոքա,
աղաչէին զնա աշակերտքն եւ ա-
սէին. Ռաբբի՝ հաց կեր։
32 Նա ասէ ցնոսա. Ես կերա-
կուր ունիմ ուտել, զոր դուքդ ոչ
գիտէք։
33 Ասէին աշակերտքն՝ ընդ մի-
մեանս. Միթէ եբեր ինչ ոք դմա
ուտել։
34 Ասէ ցնոսա Յիսուս. Իմ կե-
րակուր այն է՝ զի արարից զկամս
այնորիկ՝ որ առաքեացն զիս, եւ
կատարեցից զգործն նորա։
35 Ո՞չ դուք ասէք՝ եթէ Այլ եւս
չորք ամիսք են, եւ հունձք գան.
աւասիկ ես ասեմ ձեզ. Ամբար-
ձէք զաչս ձեր, եւ տեսէք զարտո-
րայսն, զի սպիտակացեալ են՝ եւ
'ի հունձս հասեալ։

րը, պատճառն որ՝ Հայրն էլ այն-
պէս իրեն երկրպագողներ է ուզում
24 Աստուած Հոգի է, եւ նորան
երկրպագողներն էլ պէտք է՝ որ
հոգով եւ ճշմարտութենով երկըր-
պագութիւն [հ] անեն։
25 Կինն ասաց նորան. Գիտու-
մենք՝ որ Մեսիան պիտի գայ՝ որ
Քրիստոս է կոչվում. երբոր կըգայ՝
նա ամէն բան կը պատմէ [յ] մեզ։
26 Յիսուս նորան ասաց. Ես եմ՝
որ քեզ հետ [ւ] խօսում եմ։
27 Եւ այս խօսքիս միջոց նորա
աշակերտներն եկին, եւ զարմանու-
մէին, որ այն կնկան հետ խօսու-
մէր. բայց նորանցից բնաւ մինը
չասաց՝ թէ ի՞նչ ես ուզում կամ
ինչ ես խօսում դորան հետ։
28 Կինն իրեն կուժը թողեց՝ եւ
գնաց քաղաքը, եւ մարդկանց ասաց.
29 Եկէք տեսէք մին մարդ՝ որ
ինձ ասաց այն ամէնքին՝ ինչ որ գոր-
ծել եմ. միթէ նա է [ք] Քրիստոսը։
30 Դուրս էլան քաղաքիցը՝ եւ նո-
րան մօտ էին գալիս։
31 Եւ դեռ որ նորանք չէին ե-
կած՝ աշակերտներն աղաչումէին նո-
րան եւ ասում. Ռաբբի՝ հաց կեր։
32 Նա նորանց ասաց. Ես կերա-
կուր ունիմ ուտելու, որ դուք
չէք գիտում նորան։
33 Աշակերտներն իրար ասումէ-
ին. Միթէ մին մարդ դորան բան
բերաւ ուտելու։
34 Յիսուս նորանց ասաց. Իմ կե-
րակուրս նա է՝ որ նորա կամքըն
անեմ, որ ուղարկեց ինձ, եւ նո-
րա գործը [ձ] կատարեմ։
35 Միթէ դուք չէք ասում՝ թէ
Չորս ամիս էլ կայ՝ եւ հունձը կը
գայ. ահա ես ասումեմ ձեզ. Բարձ-
րացրէք ձեր աչքերը՝ եւ տեսէք
արտերը որ սպիտակացել են՝ եւ
հունձին [ջ] հասել։

[հ] Բ Կորնթ. Գ. 17։
[յ] Համար. 29. 39։
[ւ] Գլ. Թ. 37։ Մատթ. ԻԶ. 63, 64։ Մարկ. ԺԴ. 61, 62։
[ք] Համար. 25։
[ձ] Յոբ. ԻԳ. 12։ Գլ. Զ. 38։ ԺԵ. 4։ ԺԹ. 30։
[ջ] Մատթ. Թ. 37։ Ղուկ. Ժ. 2։

36 Եւ որ հնձէն՝ վարձս առնու, եւ ժողովէ պտուղ 'ի կեանսն յաւիտենականս. զի որ սերմանէն, եւ որ հնձէ՝ հաւասարակ ցնծասցեն։

37 Յայսմ խօսք է բանն ճշմարիտ. զի այլ է՝ որ սերմանէ, եւ այլ է՝ որ հնձէ։

38 Ես առաքեցի զձեզ հնձել՝ զոր ոչ դուք վաստակեցէք. այլք վաստակեցին, եւ դուք 'ի վաստակս նոցա մտէք։

39 Եւ 'ի քաղաքէն յայնմանէ Սամարացւոց՝ բազումք հաւատացին 'ի նա, վասն բանի կնոջն վկայելոյ՝ եթէ Ասաց զամենայն, որ ինչ իմ գործեալ էր։

40 Իսկ իբրեւ եկին առ նա Սամարացիքն, աղաչէին զնա լինել առ նոսա. եւ եկաց անդ աւուրս երկուս։

41 Եւ եւս բազումք հաւատացին 'ի նա վասն բանին նորա։

42 Եւ ասէին ցկինն՝ թէ Ո՛չ այսուհետեւ վասն քո խօսիցդ հաւատամք, զի մեզէն իսկ լուաք 'ի դմանէ. եւ գիտեմք՝ եթէ դա է ճշմարիտ Փրկիչ աշխարհի։

43 Եւ յետ երկուց աւուրց ել անտի եւ գնաց 'ի Գալիլեա։

44 Զի ինքն իսկ Յիսուս վկայեաց՝ եթէ Մարգարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի։

45 Այլ յորժամ եկն նա 'ի Գալիլեա, ընկալան զնա Գալիլեացիքն. զի տեսեալ եւս էր զամենայն նշանսն, զոր արար յԵրուսաղէմ 'ի տօնին. քանզի եւ նոքա եկեալ էին 'ի տօնն։

46 Եկն դարձեալ 'ի Կանա Գալիլեացւոց՝ ուր արար զջուրն գինի. եւ անդ էր թագաւորազն մի, որոյ

36 Եւ նա որ հնձումէ՝ վարձք է առնում, եւ յաւիտենական կենաց մէջ պտուղ ժողովում. որ նա որ սերմանումէ՝ եւ նա որ հնձումէ՝ իրար հետ ն ուրախանան։

37 Որովհետեւ ճշմարիտ է այն խօսքն՝ թէ ուրիշ է՝ որ սերմանումէ, եւ ուրիշ է՝ որ հնձումէ։

38 Ես ուղարկեցի ձեզ հնձել նա՝ որ դուք չաշխատեցիք. ուրիշներն աշխատեցին, եւ դուք նորանց աշխատանքին մէջը մտիք։

39 Եւ Սամարացոց այն քաղաքիցը շատ մարդիկ հաւատացին նորան այն կնկան խօսքին համար՝ որ վկայումէր՝ թէ Ասաց ինձ ամէնը՝ ինչ որ գործել էի։

40 Ապա երբոր Սամարացիները նորա մօտ եկին, նորան աղաչեցին որ իրենց հետ մնայ. եւ երկու օր մնաց այնտեղ։

41 Եւ էլ շատ մարդիկ հաւատացին նորան՝ նորա խօսքին համար։

42 Եւ այն կնկան ասումէին՝ թէ Որանից ետեւ ոչ թէ քո խօսքերիդ համար ենք հաւատում. ինչու որ՝ իսկ մենք ինքներս լսեցինք դորանից. եւ գիտումենք ճշմարտապէս՝ որ դա է աշխարհքի * Փրկիչը։

43 Եւ երկու օրից ետեւ այնտեղից դուրս եկաւ եւ գնաց Գալիլեա։

44 Պատճառն որ՝ իսկ ինքը Քրիստոս վկայեց՝ թէ մարգարէ իրեն գաւառումը պատիւ չունի։

45 Բայց երբոր նա Գալիլեա եկաւ, Գալիլեացիներն ընդունեցին նորան. ինչու որ՝ տեսել էին այն ամէն ղ նշաններն, որ տօնի ժամանակին արաւ Երուսաղէմին մէջ. պատճառն որ՝ նորանք էլ եկել էին այն Հ տօնը։

46 Նորէն Գալիլեացոց Կանան եկաւ՝ այնտեղ որ ջուրը գինի — արաւ. եւ այնտեղ մին թագաւորա-

ն Դան. ԺԲ. 3։
ւ Համար 29։
* Գլ. ԺԷ. 8։ Ա Յովհ. Դ. 14։
ւ Մատթ. ԺԳ. 57։ Մարկ. Զ. 4։
Ղուկ. Դ. 24։
ղ Գլ. Բ. 23։ Գ. 2։
Հ Օրին. ԺԶ. 16։
— Գլ. Բ. 1, 11։

որդի նորա հիւանդ՝ կայր ՚ի Կափառնայում։

47 Նա իբրեւ լուաւ, եթէ Յիսուս եկեալ է ՚ի Հրէաստանէ ՚ի Գալիլեա. եկն առ նա եւ աղաչէր՝ զի իջցէ եւ բժշկեսցէ զորդի նորա. քանզի մերձ էր ՚ի մեռանել։

48 Ասէ ցնա. Եթէ ոչ նշանս ինչ եւ արուեստս տեսանէք՝ ոչ հաւատայք։

49 Ասէ ցնա թագաւորազն. Տէր՝ էջ մինչչեւ մեռեալ իցէ մանուկն իմ։

50 Ասէ ցնա Յիսուս. Ե՛րթ՝ որդին քո կենդանի է. եւ հաւատաց այրն բանին՝ զոր ասաց նմա Յիսուս, եւ գնաց։

51 Եւ մինչդեռ իջանէր՝ ընդ առաջ եղեն նմա ծառայքն նորա, աւետիս ետուն եւ ասեն, թէ Մանուկն նորա կենդանի է։

52 Հարցանէր ցնոսա զժամն ժամուն՝ յորում ապաքինեցաւ. եւ ասեն ցնա. Երէկ յեօթներորդ ժամու եթող զնա ջերմն։

53 Գիտաց հայրն նորա՝ եթէ յայնմ ժամու՝ յորում ասացն ցնա Յիսուս՝ թէ Որդին քո կենդանի է. եւ հաւատաց ինքն եւ ամենայն տուն իւր։

54 Զայս դարձեալ երկրորդ նշանս արար Յիսուս՝ եկեալ ՚ի Հրէաստանէ ՚ի Գալիլեա։

ցեղ մարդ կար, ~ որ նորան որդին Կափառնայումի մէջ հիւանդ էր։

47 Նա երբոր լսեց, թէ Յիսուս Հրէաստանիցն եկել է Գալիլեա. նորա մօտ եկաւ եւ աղաչում էր՝ որ վէր գայ եւ իրեն որդին բժշկէ. ինչու որ՝ մեռնելոյ մօտ էր։

48 Յիսուս նորան ասաց, Թէ որ նշաններ եւ հրաշքներ չտեսնէք՝ չէք ~ հաւատալ։

49 Թագաւորացեղը նորան ասաց. Տէր՝ վէր եկ դեռ քանի որ չի մեռել իմ տղան։

50 Յիսուս նորան ասաց. Գնա քո որդիդ կենդանի է. եւ մարդը հաւատաց այն խօսքին՝ որ Յիսուս նորան ասաց՝ եւ գնաց։

51 Եւ դեռ որ վէր էր գալիս, նորա ծառաները նորան առաջը եկին, աւետիս տուին եւ ասացին, թէ Քո տղադ կենդանի է։

52 Նորանից հարցնում էր այն ժամին համար՝ որ նորանում ողջացաւ. եւ նորան ասացին. Երէկ եօթը ժամին տենդը թողեց նորան։

53 Նորա հայրն իմացաւ՝ թէ իսկ այն ժամումն՝ որ Յիսուս նորան ասաց՝ թէ Քո որդիդ կենդանի է. եւ հաւատաց ինքն ու նորա բոլոր տունը։

54 Սա կրկին երկրորդ նշան արաւ Յիսուս՝ երբոր Հրէաստանիցն եկաւ Գալիլեա։

## ԳԼ. Ե

1 Յետ այսորիկ տօն էր Հրէից. եւ ել Յիսուս յԵրուսաղէմ։

2 Եւ էր յԵրուսաղէմ ՚ի Պրոբատիկէ աւազանին, որ կոչէր Եբրայեցերէն Բեթհեզդա՝ հինգ սրահ։

3 Յորս անկեալ դնէր բազմութիւն յոյժ հիւանդաց, կուրաց, կաղաց, գօսացելոց, որ ակնունէին ջրոյն յուզելոյ։

1 Սրանից ետեւ տօն էր ~ Հրէաների. եւ Յիսուս վեր ելաւ Երուսաղէմ։

2 Եւ Երուսաղէմի մէջ Պրոբատիկէ աւազանումը, որ Եբրայեցերէն Բեթհեզդա էր կոչվում՝ հինգ սրահ ~ կար,

3 Որ նորանցում խիտ շատ հիւանդներ կային վէր ընկած՝ կուրեր, կաղեր, չորացածներ, որ ջրերի շարժվելոյն էին սպասում։

« Ա Կորնթ. Ա. 22։ — | = Ղև. ԻԳ. 3։ բ Օրէն. ԺԶ. 1։ | Գլ. Բ. 13։ բ Նեեմ. Գ. 1։ | ԺԲ. 39։

4 Եւ հրեշտակ Տեառն իջանէր
ըստ ժամանակի յաւազանն՝ եւ յու-
զէր զջուրսն. եւ որ նախ 'ի շար-
ժումն ջուրցն իջանէր, բժշկէր՝ ոչ
ունելով նշան հիւանդութեան։

5 Եւ անդ էր այր մի, որոյ երես-
ուն եւ ութ ամ էր 'ի հիւանդու-
թեան իւրում։
6 Զնա իբրեւ ետես Յիսուս՝ զի
անկեալ դնէր, եւ գիտաց՝ եթէ բա-
զում ժամանակք են այնուհետեւ,
ասէ ցնա. Կամի՞ս ողջ լինել։

7 Պատասխանի ետ նմա հիւան-
դըն. Տէր՝ ոչ զոք ունիմ, թէ յոր-
ժամ ջուրքն յուզիցին՝ արկցէ զիս
յաւազանն. եւ մինչ ես գանդա-
ղիմ, այլ ոք քան զիս յառաջագոյն
իջանէ։

8 Ասէ ցնա Յիսուս. Արի՛ ա՛ռ ըզ
մահիճս քո՝ եւ գնա՛։
9 Եւ ողջացաւ այրն, եւ յար-
եաւ՝ առ զմահիճս իւր՝ եւ շրջէր.
եւ էր շաբաթ յաւուրն յայնմիկ։

10 Ասեն Հրէայքն ցբժշկեալն. Շա-
բաթ է՝ եւ ոչ է արժան քեզ առ-
նուլ զմահիճս քո։
11 Պատասխանի ետ նոցա եւ ասէ.
Որ բժշկեացն զիս, նա ասաց ցիս,
Ա՛ռ զմահիճս քո՝ եւ գնա։

12 Հարցին ցնա եւ ասեն. Ո՞վ է
այրն՝ որ ասաց ցքեզ, Ա՛ռ զմահիճս
քո՝ եւ շրջեա՛ց։
13 Եւ բժշկեալն ոչ գիտէր՝ թէ
ով իցէ. քանզի Յիսուս խոյս ետ
վասն ամբոխին 'ի տեղւոջէ անտի։

14 Յետ այսորիկ գտանէ զնա Յի-
սուս 'ի տաճարին, եւ ասէ ցնա.
Ահաւասիկ ողջացար, մի եւս մե-

4 Եւ Տէրին հրեշտակը ժամանա-
կով վէր էր գալիս այն աւազանը՝
եւ ջրերը շարժում. եւ ով որ ա-
ռաջ վէր էր գալիս այն շարժված
ջրերին մէջը՝ բժշկվումէր՝ որ ինչ
հիւանդութեան նշան չէր մնում։
5 Եւ այնտեղ մին մարդ կար,
որ երեսուն եւ ութ տարի էր իրեն
հիւանդութենումը։
6 Երբոր Յիսուս նորան տեսաւ՝
որ վէր ընկած էր, եւ գիտաց՝ թէ
շատ ժամանակ է մնացել, նորան
ասաց. Կամենումես, որ ողջ լի-
նիս։
7 Հիւանդը պատասխան տուաւ
նորան. Տէր՝ բնաւ մին մարդ չու-
նիմ՝ որ երբոր ջրերը շարժվին՝
ինձ աւազանին մէջը ձգէ. եւ մին-
չեւ որ ես շարժվումեմ, մին ու-
րիշը ինձանից առաջ վէր է գա-
լիս։
8 Յիսուս նորան ասաց. Վէր
կաց, քո մահիճդ ա՛ռ եւ ‡ գնա։
9 Եւ մարդը ողջացաւ եւ վեր-
կացաւ՝ իրեն մահիճն առաւ եւ
մանն էր գալիս. եւ այն օրը շաբաթ
÷ էր։
10 Հրէաները ասացին բժշկվա-
ծին. Շաբաթ է, եւ արժան չէ
քեզ, որ քո մահիճդ վեր ‡ առնես։
11 Նա պատասխան տուաւ նո-
րանց՝ եւ ասաց. Նա՛ որ ինձ բը-
ժըշկեց՝ նա ասաց ինձ՝ թէ Քո մա-
հիճդ ա՛ռ եւ գնա։
12 Հարցրին նորան եւ ասացին.
Ո՞վ է այն մարդն՝ որ քեզ ասաց՝
թէ Քո մահիճդ առ եւ մանն եկ։
13 Եւ բժշկվածը չէր գիտում թէ
ով է. ինչու որ՝ Յիսուս ամբոխին
պատճառովը այնտեղիցը քաշվե-
ցաւ։
14 Սրանից ետեւ Յիսուս նորան
գտաւ տաճարումը՝ եւ նորան ա-
սաց. Ահա ողջացար՝ էլ չմեղան-

‡ Մատթ. Թ. 6։ Մարկ. Բ. 11։ Ղուկ. Ե. 24։ | ÷ Գղ. Թ. 14։ ‡ Ելից. Ի. 10. Նեեմ. ԺԳ. 19. | Երեմ. ԺԷ. 21. ※ Մատթ. ԺԲ. 2։ Մարկ. Բ. | 24։ Գ. 4։ Ղուկ. Զ. 2։ ԺԳ. 14։

զմեղանչեր՝ զի մի՛ չար ևս ինչ լինիցի քեզ։

15 Գնաց այրն՝ և պատմեաց Հրէիցն, եթէ Յիսուս էր՝ որ բժշկեացն զնա։

16 Եւ վասն այնորիկ հալածէին զՅիսուս Հրէայքն, զի զայն առնէր ՚ի շաբաթու։

17 Եւ Յիսուս պատասխանի ետ նոցա. Հայր իմ մինչև ցայժմ գործէ, և ես գործեմ։

18 Վասն այնորիկ առաւել խնդրէին Հրէայքն սպանանել զնա. զի ոչ միայն լուծանէր զշաբաթն, այլ և Հայր իւր կոչէր զԱստուած, և հաւասար առնէր զանձն Աստուծոյ։

19 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. Ամէն ամէն ասեմ ձեզ. ոչ կարէ Որդի մարդոյ առնել յանձնէ և ոչինչ, եթէ ոչ տեսանիցէ զՀայրն զի առնէ. զի զոր նոյն առնէ, նոյն և Որդին նմին նման գործէ։

20 Զի Հայր սիրէ զՈրդի, և զամենայն ինչ ցուցանէ նմա՝ զոր ինքն առնէ. և մեծամեծս ևս քան զսոյնս ցուցանէ նմա զգործս, ընդ որ դուք զարմանայք։

21 Զի որպէս Հայր յարուցանէ զմեռեալս և կենդանի առնէ, նոյնպէս և Որդի՝ զորս կամի կենդանի առնէ։

22 Եւ ոչ եթէ Հայր դատի զոք, այլ զամենայն դատաստան ետ Որդւոյ իւրոյ։

չես՝ որ էլ աւելի չար բան չլինի զ քեզ։

15 Մարդը գնաց և Հրէաներին պատմեց՝ թէ Յիսուսն էր որ ինձ բժշկեց։

16 Եւ նրահամար Հրէաները Յիսուսին հալածումէին՝ որ շաբաթ օրն էր անում այն բանը։

17 Եւ Յիսուս պատասխան տուաւ նորանց. թէ իմ Հայրս մինչև հիմիկ գործումէ՝ և ես էլ ը գործումեմ։

18 Նրահամար Հրէաները էլ աւելի հետևումէին՝ որ սպանեն զնա. որ ոչ թէ միայն շաբաթ օրերն էր քանդում՝ բայց Աստուծոյն էլ իրեն Հայր էր կոչում, և իրեն անձն Աստուծոյն հաւասար էր թ անում։

19 Յիսուս պատասխան տուաւ և ասաց նորանց. Ճշմարիտ ճշմարիտ ասումեմ ձեզ. թէ Որդին մարդոյ իրենից կարող չէ մին բան անել, թէ որ չտեսնէ Հօրն որ ժ անումէ. ինչու որ՝ ինչ որ նա է անում, իսկ Որդին էլ այն բաները է նորա նման անում։

20 Պատճառն որ Հայրը սիրումէ ի Որդուն, և ցոյց է տալիս նորան այն ամէն բաները, որ ինքն է անում, և սորանցից էլ աւելի մեծ մեծ գործքեր է ցոյց տալիս նորան, որ դուք նորա համար զարմանումէք։

21 Պատճառն որ՝ ինչպէս որ Հայրը մեռելները յարուցանումէ և կենդանի անում, իսկ այնպէս էլ Որդին՝ ում որ կամենումէ՝ կենդանի է լ անում։

22 Եւ չէ թէ Հայրը մինը դատումէ, բայց ամէն դատաստանը տուաւ իրեն խ Որդւոյն,

զ Մատթ. ԺԲ. 45։ Յհ. Ը. 11։
է Յհ. Թ. 4։ ԺԴ. 10։
ը Յհ. Է. 9։
թ Յհ. Ժ. 30. 33։ Փիլիպ. Բ. 6։
ժ Համար. 30։ Յհ. Ը. 28։ Թ. 4։ ԺԲ. 49։ ԺԴ. 10։
ի Մատթ. Գ. 17։ Յհ. Գ. 35։ Բ Պետ. Ա. 17։
լ Ղու. Է. 14։ Ը. 54։ Յհ. ԺԱ. 25. 43։
խ Մատթ. ԺԱ. 27։ ԻԸ. 18։ Համար. 27։ Յհ. Գ. 25։ ԺԷ. 2։ Գործ. ԺԷ. 31։ Ա Պետ. Դ. 5։

23 Զի ամենեքեան պատուեսցեն զՈրդի՝ որպէս պատուեն զՀայր. որ ոչ պատուէ զՈրդին՝ ոչ պատուէ զՀայր զառաքիչն նորա։

24 Ամէն ամէն ասեմ ձեզ. զի Որ զբանն իմ լսէ, եւ հաւատայ այնմ՝ որ առաքեացն զիս, ընդունի ըզկեանսն յաւիտենականս. եւ 'ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ 'ի մահուանէ 'ի կեանս։

25 Ամէն ամէն ասեմ ձեզ. զի գայ ժամանակ՝ եւ այժմ իսկ է, յորժամ մեռեալք լսիցեն ձայնի Որդւոյն Աստուծոյ. եւ որք լսիցենն՝ կեցցեն։

26 Զի որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում, նոյնպէս ետ եւ Որդւոյ ունել կեանս յանձին իւրում։

27 Եւ իշխանութիւն ետ նմա դատաստան առնել. եւ զի Որդի մարդոյ է.

28 Ընդ այն մի զարմանայք. զի եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին՝ որ 'ի գերեզմանս կայցեն, լսիցեն ձայնի նորա։

29 Եւ եկեսցեն արտաքս. որոց բարիս գործեալ իցէ՝ 'ի յարութիւն կենաց, եւ որոց զչար արարեալ՝ 'ի յարութիւն դատաստանաց։

30 Ո՛չ կարեմ ես յանձնէ առնել եւ ոչինչ. այլ որպէս լսեմ՝ դատիմ, եւ դատաստանն իմ արդար է. զի ոչ խնդրեմ զկամս իմ, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս։

23 Որ ամէնքը պատուեն Որդուն, ինչպէս որ Հօրն են պատուում. ով որ Որդուն չի պատուում՝ Հօրն էլ չի պատուում, որ ուղարկեց ծ նորան։
24 Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. թէ նա որ իմ խօսքիս ականջ է դնում, եւ հաւատում նորան՝ որ ինձ կ ուղարկեց, յաւիտենական կեանքը կընդունի. եւ դատաստանի չի մտնիլ, բայց մահիցը փոխուեցաւ դէպի հ կեանքը։
25 Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. թէ ժամանակ է գալիս՝ եւ ճիշդ հիմիկ է, երբոր մեռելները Աստուծոյ Որդոյ ձայնը ձ կը լսեն, եւ նորանք, որ կը լսեն՝ կապրին։
26 Պատճառն որ՝ ինչպէս որ Հայրն իրեն անձնումը կեանք ունի, ճիշդ այնպէս էլ Որդուն տուաւ՝ որ իրեն անձնումը կեանք ունենայ.
27 Եւ նորան իշխանութիւն ղ շնորհեաւ, որ դատաստան անէ. ինչու որ՝ Որդի մարդոյ ճ է.
28 Նորա վերայ ինչու էք զարմանում. պատճառն որ՝ ժամանակ կը գայ, որ ամէնքն՝ որ գերեզմաններումն են, նորա ձայնը կը լսեն,
29 Եւ դուրս կը գան մ նորանք, որ բարի են գործել՝ դէպի կենաց յարութիւնը, եւ նորանք՝ որ չար են արել՝ դէպի դատաստանի յ յարութիւնը։
30 Ես ինձանից չեմ կարող բնաւ մին բան ն անել, բայց ինչպէս որ լսում եմ՝ այնպէս եմ դատում, եւ իմ դատաստանս արդար է. պատճառն որ՝ իմ կամքս չեմ խնդրում, այլ նորա կամքն՝ որ ինձ շ ուղարկեց։

ծ Ա. Յովհ. Բ. 23։
կ Գլ. Գ. 16. 18։ Զ. 40. 47։ Ը. 51։ Ի. 31։
հ Ա. Յովհ. Գ. 14։
ձ Համար. 28։ Եփես. Բ. 1. 5։ Ե. 14։ Կող. Բ. 13։
ղ Համար. 22։ Գործ. Ժ. 42։ ԺԷ. 31։
ճ Դան. Է. 13, 14
մ Եսայ. ԻԶ. 19։ Ա. Կորնթ. ԺԵ. 52։ Ա. Թես. Դ. 15։
յ Դան. ԺԲ. 2։ Մատթ. ԻԵ. 32, 33. 46։
ն Համար. 19։
շ Մատթ. ԻԶ. 39։ Գլ. Դ. 34։ Զ. 38։

31 Եթէ ես վկայեմ վասն իմ, վկայութիւնն իմ չէ ճշմարիտ ։

32 Այլ է՝ որ վկայէ վասն իմ · եւ դուք գիտէք, եթէ ճշմարիտ է վկայութիւնն՝ զոր վկայեաց վասն իմ ։
33 Դուք առաքեցէք առ Յովհաննէս՝ եւ վկայեաց ճշմարտութեանն ։

34 Այլ ես ոչ եթէ 'ի մարդկանէ առնում վկայութիւն · այլ զայս ասեմ՝ զի դուք ապրիջիք ։
35 Նա էր ճրագն՝ որ լուցեալ էր եւ ծագէր · եւ դուք կամեցարուք ցնծալ առ ժամանակ մի 'ի լոյս նորա ։
36 Այլ ես ունիմ վկայութիւն մեծ եւս քան զՅովհաննու · զգործս զորս ետ ցիս Հայր՝ զի կատարեցից զնոսա · նոքին իսկ գործքն՝ զոր գործեմ, վկայեն վասն իմ, եթէ Հայր առաքեաց զիս ։

37 Եւ որ առաքեացն զիս Հայր՝ նա վկայեաց վասն իմ։ Դուք ոչ զձայն նորա երբէք լուարուք · եւ ոչ զտեսիլ նորա տեսէք ։

38 Եւ ոչ զբանն նորա ունիք 'ի ձեզ բնակեալ · զի զոր նա առաքեաց՝ դուք նմա ոչ հաւատայք ։

39 Քննեցէք զգիրս · զի դուք համարիք նոքօք ունել զկեանսն յաւիտենականս · եւ նոքին իսկ են՝ որ վկայեն վասն իմ, որովք համարիք ունել կեանս ։

31 Թէ որ ես ինձ համար վկայումեմ՝ իմ վկայութիւնս ճշմարիտ =չէ ։
32 Ուրիշն է՝ որ ինձ համար վկայումէ · եւ դուք գիտումէք՝ թէ ճշմարիտ է այն վկայութիւնն՝ որ ինձ համար ւ վկայեց ։
33 Դուք ուղարկեցիք Յօհաննէսին մօտ՝ եւ վկայութիւն տուաւ ղ ճշմարտութեանը ։
34 Բայց ես ոչ թէ մարդկանցից եմ վկայութիւն առնում · բայց սա ասումեմ՝ որ դուք ապրիք ։
35 Նա ճրագ էր՝ որ վառվումէր եւ լոյս Էտալիս · եւ դուք կամեցաք մին քիչ ժամանակ ուրախանալ նորա –լուսովը ։
36 Բայց ես Յօհաննէսիցն էլ աւելի մեծ վկայութիւն =ունիմ · այն գործքերըն՝ որ Հայրն ինձ տուաւ, որ կատարեմ Լնորանց · իսկ այն գործքերն՝ որ գործումեմ, ինձ համար վկայումեն, թէ Հայրն ուղարկեց ինձ ։
37 Եւ Հայրն որ ինձ ուղարկեց նա ինձ համար վկայեց · դուք բնաւ մին ժամանակ ոչ նորա ձայնը ≠լսեցիք, եւ ոչ նորա կերպարանքը ր տեսիք ։
38 Եւ ոչ էլ նորա խօսքը ձեզանում բնակված ունիք · պատճառն որ՝ նա որ նա ուղարկեց՝ դուք չէք հաւատում նորան ։
39 Քննեցէք գրքերն · որ դուք կարծումէք թէ նորանցով ունիք յաւիտենական յ կեանքը՝ եւ իսկ նորանք են, որ ինձ համար վկայումեն՝ որ նորանցով կարծումէք թէ կեանքըն –ունիք ։

= Գլ. Ը. 14։ Յայտ. Գ. 14։
ւ Մատթ. Գ. 17։ ԺԷ. 5։ Գլ. Ը. 18։ Ա Յովհ. Ե. 6. 7. 9։
ղ Գլ. Ա. 15. 19. 27. 32։
Է Բ Պետ. Ա. 19։
– Մատթ. ԺԳ. 20։ ԻԱ. 26։ Մարկ. Զ. 20։
= Ա Յովհ. Ե. 9։
Լ Գլ. Գ. 2։ Ժ. 25։ ԺԵ. 24։
≠ Մատթ. Գ. 17։ ԺԷ. 5։ Գլ. Զ. 27։ Ը. 18։
ր Բ Օրին. Դ. 12։ Գլ. Ա. 18։ Ա Տիմ. Ա. 17։ Ա Յովհ. Դ. 12։
յ Եսայ. Ը. 20։ ԼԴ. 16։ Ղուկ. ԺԶ. 29։ Համար. 46։ Գործ. ԺԷ. 11։
– Բ Օրին. ԺԸ. 15. 18։ Ղուկ. ԻԴ. 27։

40 Եւ դուք ոչ կամիք գալ առ իս՝ զի զկեանսն ունիցիք։
41 Ես փառս 'ի մարդկանէ ոչ առնում։
42 Այլ գիտեմ զձեզ՝ թէ զսէրն Աստուծոյ ոչ ունիք յանձինս։

43 Ես եկի յանուն Հօր իմոյ՝ եւ ոչ ընդունիք զիս. եթէ այլ ոք եկեսցէ յիւր անուն, զնա ընդունիցիք։
44 Զիարդ կարէք դուք հաւատալ. զի փառս 'ի միմեանց առնուք, եւ զփառս զառ 'ի միոյն Աստուծոյ ոչ խնդրէք։
45 Մի համարիք՝ եթէ ես չարախօս ինչ լիցիմ զձէնջ առ Հօր. գոյ որ չարախօս կայ զձէնջ Մովսէս, յոր դուքն յուսացեալ էք։

46 Զի եթէ հաւատայիք դուք Մովսիսի, հաւատայիք արդեօք եւ ինձ. զի նա վասն իմ իսկ գրեաց։

47 Զի եթէ նորա գրոցն ոչ հաւատայք, զիարդ իմոց բանիցս հաւատայցէք։

40 Եւ դուք չէք կամենում ինձ մօտ գալ՝ որ կեանքն † ունենաք։
41 Ես մարդկանցից փառք չեմ * առնում.
42 Բայց ճանաչումեմ ձեզ՝ որ Աստուծոյ սէրը չունիք ձեր անձնե֊րումը։
43 Ես իմ Հօրս անունովն եկի՝ եւ ինձ չէք ընդունում. թէ որ մին ուրիշը կը գայ իրեն անունովը, նորան կընդունիք։
44 Ի՞նչպէս կարող էք դուք հաւատալ՝ որ իրարից էք փառք ∘ առնում, եւ այն փառքն որ մին Աստուածանից է՝ չէք ‡ խնդրում։
45 Մի կարծէք՝ որ ես Հօր մօտ չարախօս եմ ձեզանից. կայ մինն որ ձեզանից չարախօսումէ, այն Մօսէսն՝ որ դուք ձեր յոյսը նորա վրայ էք = դրել։
46 Ինչու որ՝ եթէ դուք Մօսէսին հաւատայիք, ապա ինձ էլ կը հաւատայիք. պատճառն որ՝ նա ինձ համար ‖ գրեց։
47 Բայց թէ որ նորա գրքերին չէք հաւատում, ինչպէս իմ խօսքերիս կը հաւատաք։

## ԳԼ. Զ

1 Յետ այսորիկ գնաց Յիսուս յայնկոյս ծովուն Գալիլեացւոց Տիբերեայ։
2 Եւ զհետ երթայր նորա ժողովուրդ բազում. զի տեսանէին զնշանսն՝ զոր առնէր 'ի վերայ հիւանդաց։
3 Ել 'ի լեառն Յիսուս, եւ անդ նստէր աշակերտօքն հանդերձ։

4 Եւ էր մերձ զատիկ տօնն Հրէից։

1 Սորանից ետեւ գնաց Յիսուս Գալիլեացոց Տիբերիա ծովի միւս = կողմը։
2 Եւ շատ ժողովուրդ էր գնում նորան ետեւէն. ինչու որ՝ տեսնումէին այն նշանները՝ որ անումէր հիւանդներին վերայ։
3 Յիսուս վեր ելաւ սարը, եւ աշակերտներին հետ նստումէր այն տեղ։
4 Եւ Հրէաների զատիկ տօնը մօտիկ ‖ էր։

† Գլ. Ա. 11. Գ. 19.
* Համար. 34. Ա Թես. Բ. 6.
∘ Գլ. ԺԲ. 43.
‡ Հռովմ. Բ. 29.
= Հռովմ. Բ. 12.
‖ Ծննդ. Գ. 15. ԺԲ. 3. ԺԸ. 18. ԻԲ. 18. ԽԹ. 10. Բ Օրին. ԺԸ. 15. 18. Գլ. Ա. 45. Գործ. ԻԶ. 22.

—

= Մատթ. ԺԴ. 13. Մարկ. Զ. 32. Ղուկ. Թ. 10. 12.
‖ Ղեւ. ԻԳ. 5. 7. Բ Օրին. ԺԶ. 1. Գլ. Բ. 13. Ժ. 1.

5 Բարձ 'ի վեր զաչս իւր Յիսուս
եւ տեսեալ, զի ժողովուրդ բազում
գայր առ նա · ասէ ցՓիլիպպոս ·
Ուստի՞ գնեսցուք հաց՝ զի կերիցեն
դոքա ։
6 Զայս ասէր փորձելով զնա ·
այլ ինքն գիտէր՝ զինչ առնելոց էր ։
7 Պատասխանի ետ նմա Փիլիպ-
պոս · Երկերիւր դահեկանի հաց
չէ՛ դոցա բաւական՝ թէպէտ եւ իւ-
րաքանչիւր ոք սակաւ ինչ առնու-
ցու ։
8 Ասէ ցնա մի յաշակերտացն
նորա Անդրէաս՝ եղբայր Սիմոնի
վիմի ·
9 Է՛ աստ պատանեակ մի, որ ու-
նի հինգ նկանակ գարեղէն՝ եւ եր-
կուս ձկունս · այլ այն զի՞նչ է առ
այսչափ մարդիկ ։
10 Ասէ Յիսուս · Բազմեցուցէք
զմարդիկդ · եւ էր խոտ յոյժ 'ի տեղ-
ւոջն · եւ բազմեցան մարդիկն թը-
ւով իբրեւ հինգ հազար ։
11 Եւ առ զհացսն Յիսուս եւ գո-
հացաւ եւ բաշխեաց բազմակա-
նացն · նոյնպէս եւ 'ի ձկանցն որ-
չափ եւ կամէին ,
12 Եւ իբրեւ յագեցան, ասէ ցա-
շակերտսն · Ժողովեցէք զնշխա-
րեալ կոտորսդ՝ զի մի ինչ կորիցէ ։
13 Ժողովեցին եւ լցին երկոտա-
սան սակառի զկոտորացն 'ի հինգ
գարեղէն նկանակէ անտի, որ յա-
ւելաւ 'ի կերողացն ։
14 Իսկ մարդիկն իբրեւ տեսին
զնշանսն զոր արար՝ ասէին · ե-
թէ Սա է ճշմարիտ մարգարէն, որ
գալոց էր յաշխարհ ։
15 Յիսուս իբրեւ գիտաց՝ եթէ
գալոց են յափշտակել զնա, զի ա-
րասցեն զնա թագաւոր, գնաց
դարձեալ 'ի լեառն միայն ։

5 Յիսուս իրեն աչքերը բարձ-
րացուց եւ տեսաւ, որ շատ ժո-
ղովուրդ էր գալիս իրեն ÷ մօտ ·
Փիլիպպոսին ասաց · Ի՞նչ տեղից
հաց գնենք՝ որ դորանք ուտեն ։
6 Այս բանըս փորձելոյ համար էր
ասում · բայց ինքը գիտումէր՝ թէ
ինչ պիտի անէր ։
7 Փիլիպպոսը պատասխան տը-
ւաւ նորան · Երկու հարիւր դահե-
կանի հաց բաւական չէ դորանց
համար՝ այնպէս որ ամէն մէկը մին
քիչ † առնէ ։
8 Նորա աշակերտներիցը մինը
[illegible] Անդրէաս՝ մէկ Սիմոնի եղ-
բայրն՝ ասաց նորան ։
9 Այստեղ մին տղայ կայ, որ
հինգ գարէ հաց ունի եւ երկու
ձուկ · բայց նա ինչ է այսչափ
մարդկանց ‡ համար ։
10 Յիսուս ասաց · Այդ մարդկան-
ցը նստացրէք · եւ շատ խոտ կար
այն տեղը · եւ մարդիկը նստեցին
համարով իբր հինգ հազար ։
11 Եւ Յիսուս հացերն առաւ եւ
գոհացաւ եւ բաժանեց նըստողնե-
րին · այնպէս էլ ձկներիցն որչափ
որ կամէին ։
12 Եւ երբոր կշտացան, աշա-
կերտներին ասաց · Ժողովեցէք այդ
աւելցած կտորները՝ որ բան չը
կորչի ։
13 Ժողովեցին եւ կտորներիցը տաս-
ներկու քթոց լցրին այն հինգ
գարէ հացիցն՝ որ ուտողներիցն ա-
ւելացաւ ։
14 Բայց մարդիկն երբոր տեսան
այն նշանքն որ արաւ, ասումէին՝
թէ Այս այն ճշմարիտ մարգարէն
է՝ որ պէտք էր աշխարհք ⁑ գալ ։
15 Յիսուս երբոր գիտաց՝ թէ գա-
լու են իրեն յափշտակելոյ՝ որ թա-
գաւոր անեն իրեն՝ միւսանգամ
գնաց սարը մենակ ։

÷ Մատթ. ԺԴ. 14 Մարկ. Զ. 34 Ղու. Թ. 11 ։ | † Թու. ԺԱ. 21, 22 ։ | ‡ Դ Թագ. Դ. 43 ։ | ⁑ Ծննդ. ԽԹ. 10 ։ Բ Օրին. ԺԸ. 15 18 ։ Մատթ. ԺԱ. 3 ։ Ղկ. Ա. 21 ։ Դ. 19. 25 ։ Է. 40 ։

16 Եւ իբրեւ երեկոյ եղեւ, իջին աշակերտքն նորա 'ի ծովեզրն։

[ե] 17 Եւ մտեալ 'ի նաւ՝ գային յայնկոյս ծովուն 'ի Կափառնաում. եւ իբրեւ նսեմացաւ, եւ չեւ եւս եկեալ էր առ նոսա Յիսուս։

18 Եւ ծովն 'ի սաստիկ հողմոյ շնչելոյ յուզէր։

19 Եւ վարեալ իբրեւ ասպարէզս քսան եւ հինգ կամ երեսուն, տեսանէին զՅիսուս՝ զի գնայր 'ի վերայ ծովուն՝ եւ մերձ էր 'ի նաւն, զարհուրեցան յոյժ։

20 Նա ասէ ցնոսա. Ես եմ՝ մի՛ երկնչիք։

21 Եւ կամէին ընդունել զնա 'ի նաւն. եւ վաղվաղակի եհաս նաւն յերկիրն՝ յոր երթային։

22 Ի վաղիւ անդր ժողովուրդն՝ որ կայր յայնկոյս ծովուն, տեսանէր՝ թէ այլ նաւ ոչ գոյր անդ բայց միայն 'ի միայն, յոր մտին աշակերտքն Յիսուսի. եւ զի չէր մտեալ Յիսուս ընդ աշակերտսն իւր 'ի նաւն, բայց միայն աշակերտքն նորա գնացին։

23 Իբրեւ այլ նաւք գային 'ի Տիբերիայ մօտ յայն տեղին՝ ուր զհացն կերան։

24 Իսկ իբրեւ եսես ժողովուրդն եթէ Յիսուս ոչ է անդ՝ եւ ոչ աշակերտքն նորա, մտին նոքա ընդ նաւսն, եւ եկին 'ի Կափառնաում խնդրել զՅիսուս։

25 Եւ իբրեւ գտին զնա յայնկոյս ծովուն, ասեն ցնա. Ռաբբի՛ երբ եկիր այսր։

26 Պատասխանի ետ նոցա Յիսուս եւ ասէ. Ամէն ամէն ասեմ ձեզ. Խնդրէք զիս, ոչ եթէ զի ըզ նշանս ինչ տեսէք, այլ զի կերայք 'ի հացէ անտի՝ եւ յագեցարուք։

27 Երթայք գործեցէք մի՛ զկերա-

ե Մատթ. ԺԴ. 23.| Մարկ. Զ. 47.

16 Եւ երբոր իրիկուն էղաւ՝ նորան աշակերտները վար եկան ծովուն եզերքը։

17 Եւ մտան նաւն ու գնացին ծովի այն կողմը՝ Կափառնաումը. եւ երբոր մթնցաւ՝ Յիսուս դեռ չէր եկել նորանց մօտ։

18 Եւ ծովը սաստիկ քամի փչելուցը շարժվումէր։

19 Եւ երբոր քսան եւ հինգ կամ երեսուն ասպարէզի չափ առաջ գնացին՝ Յիսուսին տեսին՝ որ ծովին վերայ գալիս էր՝ եւ նաւին մօտիկ էր՝ եւ շատ ահով լցվան։

20 Եւ նա ասաց նորանց. Ես եմ՝ մի՛ վախենաք։

21 Եւ կամենումէին նորան ընդունել նաւին մէջը. եւ նաւը շուտով հասաւ այն երկիրն՝ որ գնումէին։

22 Յետեւի օրն այն ժողովուրդն՝ որ ծովի այն կողմն էր՝ տեսաւ որ ուրիշ նաւ չկար այնտեղ այն մինիցը զատ՝ որ Յիսուսին աշակերտները նորա մէջ մտին. եւ որ Յիսուս աշակերտներին հետ նաւը չէր մտած, բայց միայն նորան աշակերտները գնացին։

23 Բայց Տիբերիայիցն ուրիշ նաւեր եկին այն տեղին մօտ՝ որ հացը կերին։

24 Ամա երբոր ժողովուրդը տեսաւ՝ թէ ոչ Յիսուսն այնտեղ է եւ ոչ նորան աշակերտները, նորանք այն նաւերն մտին եւ եկին Կափառնաումը, որ Յիսուսին ման գան։

25 Եւ երբոր նորան ծովի այն կողմը գտին՝ նորան ասացին. Ռաբբի՛ երբ եկիր այստեղ։

26 Յիսուս պատասխան տուաւ նորանց եւ ասաց. Ճշմարիտ ճշմարիտ ասումեմ ձեզ. Դուք ինձ ման էք գալիս՝ չէ թէ նորա համար՝ որ մին նշան տեսիք, բայց որ այն հացիցը կերիք՝ եւ կշտացաք։

27 Գնացէք ոչ թէ կորչելու կե-

տական կերակուրն, այլ զկերակուրն, որ մնայ 'ի կեանսն յաւիտենականս, զոր Որդին մարդոյ տացէ ձեզ. քանզի զնա Հայր կնքեաց Աստուած։

28 Ասեն ցնա. Զի՞նչ առնիցեմք՝ զի զգործն Աստուծոյ գործեսցուք։

29 Պատասխանի ետ Յիսուս՝ եւ ասէ ցնոսա. Այս է գործն Աստուծոյ, զի հաւատասջիք յայն որ առաքեացն զիս։

30 Ասեն ցնա. Զի՞նչ նշան առնիցես՝ զի տեսցուք եւ հաւատասցուք, զի՞նչ գործիցես։

31 Հարքն մեր կերան զմանանայն յանապատի անդ՝ որպէս եւ գրեալ է. Հաց յերկնից ետ նոցա ուտել։

32 Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ Մովսէս ետ ձեզ զհացն յերկնից, այլ Հայրն իմ տայ ձեզ զհացն յերկնից զճշմարիտ։

33 Զի հաց յԱստուծոյ է, որ իջանէ յերկնից՝ եւ կեանս տայ աշխարհի։

34 Ասեն ցնա. Տէ՛ր՝ յամենայն ժամ տուր մեզ զհացն զայն։

35 Ասէ ցնոսա Յիսուս. Ես եմ հացն կենաց. որ գայ առ իս՝ ոչ քաղցիցէ, եւ որ հաւատայ յիս՝ ոչ երբէք ծարաւեսցի։

36 Այլ ասացի ձեզ՝ թէ տեսէք զիս, եւ ոչ հաւատայք։

37 Զամենայն՝ զոր տայ ինձ Հայր,

րակուրը գործեցէք, բայց այն կերակուրին, որ յաւիտենական կեանքին մէջ կը մնայ, որ նորան Որդին մարդոյ կըտայ ը ձեզ. պատճառն որ՝ Աստուած Հայրը կնքով հաստատեց թ նորան։

28 Նորան ասացին. Ի՞նչ պիտի անենք՝ որ Աստուծոյ գործքերը գործենք։

29 Յիսուս պատասխան տուաւ եւ նորանց ասաց. Սա է Աստուծոյ գործքն՝ որ հաւատաք նորան՝ որ նա ժ ուղարկեց։

30 Նորան ասացին. Ի՞նչ նշան կանես՝ որ տեսնենք եւ հաւատանք. ինչ ի կը գործես։

31 Մեր հարքն անապատին մէջ մանանայ լ կերին. ինչպէս որ գրուած է թէ՝ Երկնքիցը հաց տուաւ նորանց խ ուտել։

32 Յիսուս նորանց ասաց. Ճշմարիտ ճշմարիտն ասում եմ ձեզ. թէ Մովսէս չտուաւ ձեզ այն հացն երկնքիցը, բայց իմ Հայրս երկնքիցը ճշմարիտ հացը կըտայ ձեզ։

33 Պատճառն որ՝ Աստուածանից հացը նա է՝ որ երկնքիցն է վէր գալիս՝ եւ աշխարհքին կեանք տալիս։

34 Նորան ասացին. Տէ՛ր՝ ամէն ժամանակ տուր մեզ այն ծ հացը։

35 Յիսուս նորանց ասաց. Ես եմ կենաց կ հացը. ով որ ինձ մօտ է գալիս՝ չի սովիլ, եւ ով որ ինձ հաւատամէ՝ բնաւ մէն ժամանակ հ չի ծարաւիլ։

36 Բայց ասացի ձեզ՝ թէ տեսէք ինձ՝ եւ չէք ձ հաւատամ։

37 Ամէն ում որ Հայրն տալիս ղ է

ը Համար. 54. Գլ. Դ. 14.
թ Մատթ. Գ. 17. ԺԷ. 5. Մարկ. Ա. 11. Թ. 7. Ղու. Գ. 22. Թ. 35. Գլ. Ա. 33. Ե. 37. Ը. 18. Գործ. Բ. 22. Բ Պետ. Ա. 17.
ժ Ա Յովհ. Գ. 23.
ի Մատթ. ԺԲ. 38. ԺԶ. 1. Մարկ. Ը. 11. Ա Կորնթ. Ա. 22.
լ Ելից. ԺԶ. 15. Թուոց. ԺԱ. 7. Նէեմ. Թ. 15. Ա Կորնթ. Ժ. 3.
խ Սաղ. ՀԸ. 24, 25.
ծ Գլ. Դ. 15.
կ Համար. 48. 59.
հ Գլ. Դ. 14. Է. 37.
ձ Համար. 26. 65.
ղ Համար. 45.

առ իս եկեսցէ. եւ որ գայ առ իս՝
ոչ հանից արտաքս ։

38 Զի իջի ես յերկնից՝ ոչ զի ըզ
կամս իմ արարից, այլ զկամս այ-
նորիկ՝ որ առաքեացն զիս ։

39 Այս են կամք Հօր իմոյ, որ
առաքեացն զիս. զի զամենայն՝ զոր
ետ ցիս Հայր՝ ոչ կորուսից ՚ի նմա-
նէ, այլ յարուցից զնա յաւուրն
յետնում ։

40 Այս են կամք Հօր իմոյ, զի
ամենայն որ տեսանիցէ զՈրդի եւ
հաւատայցէ ՚ի նա, ընկալցի զկեան-
սն յաւիտենականս. եւ ես յարու-
ցից զնա յաւուրն յետնում ։

41 Տրտնջէին զնմանէ Հրէայքն,
զի ասաց՝ թէ Ես եմ հացն իջեալ
յերկնից ։

42 Եւ ասէին. Ո՞չ սա է Յիսուս
որդի Յովսեփու, զորոյ մեք գիտեմք
զհայրն եւ զմայր. եւ արդ՝ զիարդ
ասէ՝ թէ Ես յերկնից իջի ։

43 Պատասխանի ետ Յիսուս, եւ
ասէ ցնոսա. Մի՛ քրթմնջէք ընդ
միմեանս ։

44 Ո՛չ ոք կարէ գալ առ իս, եթէ
ոչ Հայրն՝ որ զիս առաքեաց՝ ձգես-
ցէ զնա. եւ ես յարուցից զնա յա-
ւուրն յետնում ։

45 Գրեալ է ՚ի մարգարէս, Եւ ե-
ղիցին ամենեքեան ուսեալք յԱս-
տուծոյ. ամենայն որ լուաւ ՚ի Հօրէ՝
եւ ուսանի, գայ առ իս ։

46 Երբեւ ոչ եթէ զՀայր ուրուք
տեսեալ իցէ, եթէ ոչ՝ որ էն յԱս-
տուծոյ, նա եւեթ զՀայր ։

ինձ, ինձ մօտ կը գայ. եւ նա որ
ինձ մօտ է գալիս՝ դուրս չեմ հա-
նել [ֆ] նորան .

38 Պատճառն որ՝ ես վեր չեկի եր-
կինքից՝ որ իմ կամքս [ժ] անեմ,
բայց նորա կամքըն՝ որ ինձ [յ] ու-
ղարկեց ։

39 Սա է իմ Հօրս կամքն, որ ինձ
ուղարկեց. որ այն ամէնքն՝ որ
Հայրն ինձ տուաւ՝ նորանից [ն] չը-
կորցնեմ. այլ վերջին օրումը յա-
րուցանեմ նորան ։

40 Սա է իմ Հօրս կամքն, որ ա-
մէն ով որ տեսնէ Որդուն եւ հա-
ւատայ նորան, յաւիտենական կեան-
քըն ընդունի. եւ ես վերջին օրու-
մը կը յարուցանեմ [ւ] նորան ։

41 Հրեաները տրտնջումէին նո-
րանից՝ որ ասաց, թէ Ես եմ եր-
կինքից վեր եկած հացը ։

42 Եւ ասումէին. Չէ՞ որ սա Յո-
սեփի որդին է՝ որ մենք գիտու-
մենք նորա հօրը. ապա ինչպէս է
ասում՝ թէ Ես երկինքից վեր [ր] եկի ։

43 Յիսուս պատասխան տուաւ եւ
ասաց նորանց. Մի՛ տրտնջէք իրար
հետ ։

44 Ո՛չ ով կարող չէ ինձ մօտ
գալ, եթէ Հայրն՝ որ ինձ ուղար-
կեց՝ չըքաշէ նորան. եւ ես վերջին
օրումը կը յարուցանեմ [ւ] նորան ։

45 Գրած է մարգարէներին մէջ
թէ՝ Եւ ամէնքն Աստուծանից ու-
սուցած [ղ] կը լինեն. ամէն ով որ Հօ-
րից է լսում եւ սովորում՝ գալիս
է ինձ [ղ] մօտ ։

46 Եւ չէ թէ մէկը տեսել է
[ր] Հօրը. բայց միայն նա՝ որ ինքն
Աստուծանից է. նա տեսաւ [ր] Հօրը ։

[ֆ] Մատթ. ԻԴ. 24. Յվհ. Ժ. 28, 29. Բ Տիմ. Բ. 19. Ա Յովհ. Բ. 19.
[ժ] Մատթ. ԻԶ. 39. Յվհ. Ե. 30.
[յ] Յվհ. Դ. 34.
[ն] Յվհ. Ժ. 28. ԺԷ. 12. ԺԸ. 9.
[ւ] Հռմոր. 27. 47. 55. Յվհ. Դ. 15. 16. Դ. 14.
[ր] Մատթ. ԺԳ. 55. Մարկ. Զ. 3. Ղուկ. Դ. 22.
[ւ] Եբր. Ա. 4. Հռմոր. 66.
[ղ] Եսայ. ԾԴ. 13. Երեմ. ԼԱ. 34. Միք. Դ. 2. Եբր. Ը. 10. Ժ. 16.
[ղ] Հռմոր. 37.
[ր] Յվհ. Ա. 18. Ե. 37.
[ր] Մատթ. ԺԱ. 27. Ղուկ. Ժ. 22. Յվհ. Ա. 18. Ե. 29. Ը. 19.

47 Ամէն ամէն ասեմ ձեզ . զի Որ հաւատայ յիս , ընդունի զկեանսն յաւիտենականս ։

48 Ես եմ հացն կենաց ։

49 Հարքն ձեր կերան զմանանայն յանապատին , եւ մեռան ։

50 Այս է հացն , որ յերկնից իջեալ է . զի որ ուտիցէ ոք 'ի սմանէ՝ մի՛ մեռանիցի ։

51 Ես եմ հացն կենդանի՛ , որ յերկնից իջեալ ։

52 Եթէ ոք ուտիցէ 'ի հացէ յայսմանէ՝ կեցցէ 'ի յաւիտեան . եւ հացն՝ զոր ես տաց՝ մարմին իմ է , զոր ես տաց վասն կենաց աշխարհի ։

53 Մարտնչէին ընդ միմեանս Հրէայքն եւ ասէին . Զիա՞րդ կարէ սա տալ մեզ զմարմին իւր յուտել ։

54 Ասէ ցնոսա Յիսուս . Ամէն ամէն ասեմ ձեզ , եթէ ոչ կերիջիք զմարմին Որդւոյ մարդոյ՝ եւ արբջիք զարիւն նորա , ոչ ունիք կեանս յանձինս ։

55 Որ ուտէ զմարմին իմ՝ եւ ըմպէ զարիւն իմ , ունի զկեանսն յաւիտենականս . եւ ես յարուցից զնա յաւուրն յետնում ։

56 Զի մարմին իմ ճշմարիտ կերակուր է , եւ արիւն իմ ճշմարիտ ըմպելի է ։

57 Որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ՝ յիս բնակեսցէ , եւ ես 'ի նմա ։

58 Որպէս առաքեաց զիս կենդանին Հայր , եւ ես կենդանի եմ վասն Հօր , եւ որ ուտէն զիս , եւ նա կեցցէ վասն իմ ։

59 Այս է հացն՝ որ յերկնից ի-

47 Ճշմարիտն ճշմարիտն ասում եմ ձեզ . թէ Ով որ ինձ հաւատումէ՝ յաւիտենական կեանքըն Հ ընդունումէ ։

48 Ես եմ կենաց ÷ հացը ։

49 Ձեր հայրը մանանան կերին անապատումը , եւ բ մեռան ։

50 Սա է այն հացն , որ երկնքիցն է վէր եկել՝ որ եթէ մէկը սորանից ուտէ՝ ց չի մեռնիլ ։

51 Ես եմ կենդանի հացը , որ երկնքիցն է վէր − եկել ։

52 Թէ որ մէկն այս հացիցս ուտէ՝ յաւիտեան կապրի . եւ այն հացն՝ որ ես կըտամ՝ իմ մարմինս է , որ ես նորան աշխարհքի կենաց համար ‡ կըտամ ։

53 Հրէաներն իրար հետ կռւում էին եւ + ասում . Սա ինչպէս կարող է իրեն մարմինը տալ մեզ օ ուտելու ։

54 Յիսուս նորանց ասաց . ճշմարիտն ճշմարիտն ասում եմ ձեզ , Թէ որ Որդւոյ մարդոյ մարմինը չուտէք եւ նորան արիւնը չըխմէք , կեանք չունիք ձեր անձին ‡ մէջն ։

55 Ո՛վ որ իմ մարմինս ուտումէ եւ իմ արիւնս խմում , յաւիտենական կեանքըն ունի . եւ ես յետին օրումը կըյարուցանեմ − նորան ։

56 Ինչու որ՝ իմ մարմինս ճշմարիտ կերակուր է , եւ իմ արիւնս ճշմարիտ խմելիք է ։

57 Ո՛վ որ իմ մարմինս ուտումէ եւ իմ արիւնս խմում՝ ինձանում կըբնակվի , եւ ես Բ նորանում ։

58 Ինչպէս որ կենդանի Հայրն ինձ ուղարկեց , եւ ես կենդանի եմ Հօր համար , այնպէս էլ նա՝ որ ինձ ուտումէ , կենդանի կըլինի ինձ համար ։

59 Սա է այն հացըն՝ որ երկնքիցն

Հ Գլ. Գ. 16. 18. 36. Համար. 40.
÷ Համար. 33. 35.
բ Համար. 31.
ց Համար. 51. 59.

− Գլ. Գ. 13.
‡ Եբր. Ժ. 5. 10.
+ Գլ. Ե. 43. Թ. 16. Ժ. 19.
օ Գլ. Գ. 9.

‡ Մատթ. ԻԶ. 26. 28.
− Համար. 27. 40. 64. Գլ. Դ. 14.

Բ Ա Յովհ. Գ. 24. Դ. 15. 16.

ջեալ է՝ ոչ որպէս կերան հարքն ձեր զմանանայն՝ եւ մեռան . որ ուտէ զհացս զայս՝ կեցցէ յաւիտեան ։

60 Զայս ասաց ՚ի ժողովրդեանն՝ յուսուցանելն ՚ի Կափառնաում ,

61 Եւ բազումք յաշակերտացն իբրեւ լուան՝ ասեն . Խիստ է բանդ այդ , ո՞ կարէ լսել զմա ։

62 Իբրեւ գիտաց Յիսուս յանձն իւր՝ եթէ տրտնջեն վասն այնորիկ աշակերտքն , ասէ ցնոսա . Ա՞յդ գայթակղեցուցանէ զձեզ ։

63 Իսկ արդ՝ եթէ տեսանիցէք զՈրդի մարդոյ , զի ելանիցէ ուր էր զառաջինն ։

64 Հոգին է կենդանարար , մարմինն ինչ ոչ օգնէ . զբանն՝ զոր ես խօսեցայ ընդ ձեզ՝ հոգի է եւ կեանք ։

65 Այլ են ոմանք ՚ի ձէնջ՝ որ ոչ հաւատան , քանզի գիտէր Յիսուս ՚ի սկզբանէ , ով են այնոքիկ՝ որ ոչն հաւատան , եւ ով է այն՝ որ մատնելոցն է զնա . եւ ասէր .

66 Վասն այնորիկ ասացի ձեզ՝ թէ ոչ ոք կարէ գալ առ իս , եթէ ոչ իցէ տուեալ նմա ՚ի Հօրէ իմմէ ։

67 Յայնմհետէ բազումք յաշակերտացն նորա չոգան յետս , եւ ոչ եւս շրջէին ընդ նմա ։

68 Ասէ Յիսուս ցերկոտասանսն աշակերտսն . Միթէ եւ դուք կամիք երթալ ։

69 Պատասխանի ետ նմա Սիմոն Պետրոս . Տէ՛ր առ ո՞վ երթիցուք . բանս կենաց յաւիտենականաց ունիս ։

է վեր եկել , չէ թէ ինչպէս որ ձեր հարքը մանանան կերին եւ մեռան . ով որ այս հացս ուտումէ՝ յաւիտեան ÷ կապրի ։

60 Այս բաները ժողովարանի մէջ ասաց՝ երբոր Կափառնայումի մէջ սովորցնումէր ։

61 Եւ աշակերտներիցը շատերն երբոր — լսեցին՝ ասացին . Դժուար է այդ բանը , ով կարող է լսել ϯ զորան ։

62 Երբոր Յիսուս գիտաց իրեն անձնումը՝ թէ աշակերտները տրտնջումէին նորա համար , նորանց ասաց . Դա է գայթակղեցնում ձեզ ։

63 Ապա եթէ Որդին մարդոյ տեսնէք , որ վեր ելլի ուր որ առաջ Ի էր ։

64 Հոգին է կենդանացնող , մարմինը մին օգուտ չի տալիս . այն բանն՝ որ ես ձեզ հետ խօսեցի՝ հոգի է եւ Ղ կեանք ։

65 Բայց ձեզանից մին քանիսը կան , որ չեն Ե հաւատում , պատճառն որ՝ Յիսուս սկզբիցը գիտումէր , ով են նորանք՝ որ չեն հաւատում , եւ ով է նա՝ որ պիտի մատնէր իրեն . եւ Ճ ասումէր .

66 Նորահամար ասացի ձեզ՝ թէ ոչ ով կարող չէ ինձ մօտ գալ , եթէ իմ Հօրիցս տրուած Բ չը լինի ։

67 Սորանից ետեւ նորան աշակերտներիցը շատերը յետ գնացին , եւ էլ ման չէին գալիս նորա Ժ հետ ։

68 Յիսուս տասներկու աշակերտներին ասաց . Միթէ դուք էլ էք կամենում գնալ ։

69 Սիմոն Պետրոսն պատասխան տուաւ նորան . Տէ՛ր ում մօտ գընանք . դու յաւիտենական կենաց խօսքեր Ե ունիս .

÷ Համար . 49 , 50 , 51 .
ϯ Համար . 67 . Մատթ . ԺԱ . 6 .
Ի Գլ . Գ . 13 . Մարկ . ԺԶ . 19 . Գործ . Ա . 9 . Եփես . Դ . 8 .
Ղ Բ Կորնթ . Գ . 6 .
Ե Համար . 36 .
Ճ Գլ . Բ . 24 , 25 . ԺԳ . 11 .
Բ Համար . 44 , 45 .
Ժ Համար . 61 .
Ե Գործ . Ե . 20 .

70 Եւ մեք հաւատացաք եւ ծանեաք՝ եթէ դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ ։

71 Պատասխանի ետ նոցա Յիսուս · Ո՞չ ես զձեզ զերկոտասանսդ ընտրեցի, եւ մի ՚ի ձէնջ Սատանայ է ։

72 Եւ ասէր զՍիմոնեանն Յուդայ Սկարիովտացւոյ · զի նա խաղ մատնելոց էր զնա · եւ մի էր յերկոտասանիցն ։

70 Եւ մենք հաւատացինք եւ ճանաչեցինք՝ թէ դու ես Քրիստոսն Աստուծոյ ւ Որդին ։

71 Յիսուս պատասխան տուաւ նորանց · Չէ՞ որ ես ձեզ տասներկուսիդ փ ընտրեցի, եւ ձեզանից մինը Սատանայ ք է ։

72 Եւ — Իսկարիովտացի Սիմոնեան Յուդային համար էր ասում · ինչու որ՝ խաղ նա պիտի մատնէր նորան · եւ ինքը տասներկուսիցը մինն էր ։

## ԳԼ. Է

1 Եւ յետ այսորիկ շրջէր Յիսուս ՚ի Գալիլեա · քանզի ոչ կամէր ՚ի Հրէաստանի շրջել, զի խնդրէին զնա Հրէայքն սպանանել։

2 Եւ էր մերձ տօնն Հրէից տաղաւարահարաց ։

3 Ասեն ցնա եղբարքն նորա · Գնա՛ աստի եւ երթ ՚ի Հրէաստան, զի եւ աշակերտքն քո տեսցեն ըզ գործսդ քո՝ զոր գործես ։

4 Զի ոչ ոք է՝ որ ՚ի ծածուկ ինչ գործէ, եւ խնդրէ ինքն համարձակ լինել · եթէ զայդ գործես, յայտնեա զանձն քո աշխարհի ։

5 Քանզի եւ եղբարքն իսկ չէին հաւատացեալ ՚ի նա ։

6 Ասէ ցնոսա Յիսուս · Ժամանակ իմ չեւ է հասեալ, բայց ձեր ժամանակ յամենայն ժամու պատրաստ է ։

7 Ո՛չ կարէ աշխարհս ատել ըզ ձեզ · բայց զիս ատեայ, զի ես վկայեմ վասն նորա՝ եթէ գործքն իւր չարութեան են ։

8 Դուք ելէ՛ք ՚ի տօնն յայն,

1 Եւ սորանից ետեւ Յիսուս ման էր գալիս Գալիլեային մէջ · ինչու որ՝ չէր կամենում Հրէաստանումը ման գալ, պատճառն որ՝ Հրէաները խնդրումէին սպանել ա նորան ։

2 Եւ Հրէաներին տաղաւարահարաց տօնը մօտիկ բ էր ։

3 Նորան եղբայրներն ասացին նորան · Այստեղից գնա՛ ելի եւ գնա՛ Հրէաստան, որ քո աշակերտներդ էլ տեսնեն քո գործքերդ՝ որ գ գործումես ։

4 Ինչու որ՝ ոչ ով չկայ՝ որ թաքուն մէկ բան անէ, եւ խնդրէ որ ինքը ճանաչուած լինի · թէ որ դա գործումես, քո անձդ յայտնէ աշխարհքին ։

5 Պատճառն որ՝ իսկ նորա եղբայրներն էլ չէին հաւատացել դ նորան ։

6 Յիսուս նորանց ասաց · Իմ ժամանակս դեռ հասած չէ, բայց ձեր ժամանակը միշտ պատրաստ ե է ։

7 Աշխարհքը կարող չէ ձեզ ատել · բայց ինձ ատումէ, ինչու որ՝ ես նորա համար վկայումեմ՝ թէ նորա գործքերը չար է են ։

8 Դուք գնացէ՛ք այն տօնը, ես

ւ Մատթ. ԺԶ. 16. Մարկ. Ը. 29. Ղուկ. Թ. 20. Գլ. Ա. 49. ԺԱ. 27.
փ Ղուկ. Զ. 13.
ք Գլ. ԺԳ. 27.
—
ա Գլ. Ե. 16. 18.
բ Ղև. ԻԳ. 34.
գ Մատթ. ԺԲ. 46. Մարկ. Գ. 31. Գործ. Ա. 14.
դ Մարկ. Գ. 21.
ե Գլ. Բ. 4. Ը. 20. Համար. 8. 30.
զ Գլ. ԺԵ. 19.
է Գլ. Գ. 19.

ես ոչ երթամ 'ի տօնն յայն․ զի
իմ ժամանակ չեւ է լցեալ։
9 Զայս իբրեւ ասաց՝ ինքն մնաց
անդէն 'ի Գալիլեա։
10 Իբրեւ ելին եղբարքն նորա,
ապա եւ ինքն ել 'ի տօնն․ ոչ յայտ-
նի, այլ իբրեւ 'ի ծածուկ։

11 Եւ Հրէայքն խնդրէին զնա 'ի
տօնի անդ՝ եւ ասէին, Ո՞ւր իցէ
նա։
12 Եւ քրթմնջիւն էր զնմանէ 'ի
ժողովուրդն․ կէսքն ասէին՝ թէ
Բարւոք է․ այլքն ասէին՝ Ո՛չ, այլ
մոլորեցուցանէ զժողովուրդն։

13 Եւ ոչ ոք համարձակ խօսէր
զնմանէ՝ վասն երկիւղին Հրէից։

14 Իբրեւ տօնն ընդմիջեցաւ, ել
Յիսուս 'ի տաճարն՝ եւ ուսուցա-
նէր։
15 Զարմանային Հրէայքն եւ ա-
սէին․ Զիարդ գիրս գիտէ սա,
զի ուսեալ ինչ չիք։
16 Պատասխանի ետ նոցա Յի-
սուս եւ ասէ․ Իմ վարդապետու-
թիւնս չէ իմ, այլ այնորիկ՝ որ
առաքեացն զիս։
17 Եթէ ոք կամի զկամս նորա
առնել՝ գիտասցէ վասն վարդապե-
տութեանս, յԱստուծոյ իցէ ար-
դեօք, եթէ ես ինչ յանձնէ իմմէ
խօսիմ։
18 Որ յանձնէ իւրմէ խօսի, փա-
ռս անձին իւրում խնդրէ․ իսկ որ
խնդրէ զփառս այնորիկ՝ որ առա-
քեացն զնա՝ նա ճշմարիտ է, եւ
անիրաւութիւն ոչ գոյ 'ի նմա։

19 Ո՞չ Մովսէս ետ ձեզ զօրէնս,

չեմ գնում այն տօնը․ ինչու որ՝ իմ
ժամանակս դեռ լցված ը չէ։
9 Սա որ ասաց՝ ինքը մնաց այն
տեղ Գալիլեային մէջ։
10 Երբոր նորան եղբայրները գնա-
ցին, ապա ինքն էլ գնաց այն տօ-
նը, չէ թէ յայտնի, բայց իբր մին
ծածուկ կերպով։
11 Եւ Հրէաները խնդրումէին նո-
րան այն տօնումը եւ ասում, թէ
Նա ո՞րտեղ պիտի թ լինի։
12 Եւ ժողովրդին մէջ քրթմնջ-
մունք կար նորա ժ համար․ կէսն
ասումէին՝ թէ Բարի մարդ ի է․ ու-
րիշներն ասումէին՝ չէ, այլ ժողո-
վրդին մոլորացնումէ։
13 Եւ ոչ ով համարձակ չէր խօ-
սում նորա վերայ, Հրէաների վա-
խին լ համար։
14 Երբոր տօնն կէս էլաւ, Յի-
սուս վեր էլաւ տաճարն՝ ու ա-
վարդումէր։
15 Հրէաները զարմանումէին եւ
ասում․ Սա ինչպէս է գիտում
գրքերն, որ ինքը ուսած խ չէ։
16 Յիսուս պատասխան տուաւ նո-
րանց եւ ասաց․ Իմ վարդապե-
տութիւնս իմն չէ, այլ նորանն է՝
որ ինձ ծ ուղարկեց։
17 Թէ որ մինը կամենումէ նորա
կամքն անել՝ նա կիմանայ իմ
վարդապետութեանս համար, եթէ
Աստուածանից է, կամ եթէ ես
իմ անձնիցս եմ կ խօսում։
18 Նա որ իւրն անձնիցն է խօ-
սում, իւրն անձին փառքն է
խնդրում․ բայց նա՝ որ նորա փառ-
քն է խնդրում՝ որ ուղարկեց նո-
րան՝ նա ճշմարիտ է, եւ անիրաւ-
ութիւն չկայ հ նորանում։
19 Չէ՞ որ Մովսէսը տուաւ ձեզ

ը Գլ. Ը. 20։ Համար. 6։
թ Գլ. ԺԱ. 56։
ժ Գլ. Թ. 16։ Ժ. 19։
ի Մատթ. ԻԱ. 46։ Ղուկ. Է. 16 Գլ. Զ. 14։ Համար. 40։
լ Գլ. Թ. 22։ ԺԲ. 42։ ԺԹ. 38։
խ Մատթ. ԺԳ. 54։ Մարկ. Զ. 2։ Ղուկ. Դ. 22։ Գործ. Բ. 7։
ծ Գլ. Գ. 11։ Ը. 28։ ԺԲ. 49։ ԺԴ. 10. 24։
կ Գլ. Ը. 43։
հ Գլ. Ե. 41։ Ը. 50։

եւ ոչ ոք 'ի ձէնջ առնէ զօրէնսն ։

20 Զի՞ խնդրէք զիս սպանանել ․
պատասխանի ետ ժողովուրդն եւ
ասէ ․ Դեւ քո 'ի քեզ ․ ո՞վ խնդրէ
զքեզ սպանանել ։
21 Պատասխանի ետ նոցա Յիսուս
եւ ասէ ․ Գործ մի գործեցի , եւ ա-
մենեքին զարմացեալ էք ։
22 Վասն այնորիկ Մովսէս ետ
ձեզ թլփատութիւն , զի ոչ եթէ
'ի Մովսիսէ էր , այլ 'ի հարց անտի ․
եւ 'ի շաբաթու թլփատէք զմարդ ։

23 Իսկ արդ՝ եթէ թլփատութիւն
առնու մարդ 'ի շաբաթու , զի մի
օրէնքն Մովսէսի լուծցին ․ ընդ իս
ցասուցեալ էք՝ զի ողջոյն իսկ մարդ
բժշկեցի 'ի շաբաթու ։
24 Մի՛ ըստ աչս դատէք , այլ ու-
ղիղ դատաստան արարէք ։
25 Ասէին ոմանք յԵրուսաղէմաց-
ւոց անտի ․ Ո՞չ նա է սա՝ զոր խնդ-
րէին սպանանել ։
26 Եւ ահաւասիկ յայտնապէս խօ-
սի , եւ չասեն ինչ ընդ դմա ․ գու-
ցէ արդեօք եւ իշխանքն գիտացին՝
թէ սա իցէ Քրիստոսն ։
27 Այլ զսա գիտեմք ուստի է ․
իսկ Քրիստոսն յորժամ գայցէ , ոչ
ոք գիտէ ուստի է ։

28 Աղաղակեաց Յիսուս 'ի տաճա-
րին , ուսուցանէր՝ եւ ասէր ․ Եւ
զիս գիտէք , եւ ուստի եմ գիտէք ․
եւ յանձնէ իմմէ ոչ եմ եկեալ ,
այլ է ճշմարիտ՝ որ առաքեացն զիս՝
զոր դուքն ոչ գիտէք ։

օրէնքը , եւ ձեզանից ոչ ով չի
կատարում ʾ օրէնքը ։
20 Ինչո՞ւ էք ուզում ինձ սպանել ․
ժողովուրդը պատասխան տուաւ եւ
ասաց ․ Դեւ կայ քեզանում ․ ո՞վ
է ուզում՝ որ քեզ ᶜ սպանէ ։
21 Յիսուս պատասխան տուաւ
նորանց եւ ասաց ․ Մին գործ գոր-
ծեցի , եւ ամէնքդ զարմացել էք ։
22 Նորահամար Մովսէսը ձեզ տը-
ւաւ թլփատութիւնը , չէ թէ որ
Մովսէսիցն ʿ էր , բայց այն հին
ʾ հայրանցիցը ․ եւ շաբաթ օրը մարդ
էք թլփատում ։
23 Արդ եթէ մարդ շաբաթ օրը
թլփատութիւն է առնում , որ Մո-
վսէսին օրէնքը չը քանդվի , ինձ վե-
րայ բարկացած էք՝ որ ես ամբողջ
մարդ բժշկեցի շաբաթ ʾ օրը ։
24 Աչքի երեւութով մի դատէք ,
բայց շիտակ դատաստան ՙ արէք ։
25 Երուսաղէմացիներիցը մին քա-
նիսն ասումէին ․ Չէ՞ որ սա նա է
որ ուզումէին նորան սպանել ։
26 Եւ ահա յայտնի խօսումէ , եւ
բան չեն ասում դորան ․ չըլինի՞ որ
իշխաններն էլ իմացան՝ որ սա է
ˉ Քրիստոսը ։
27 Բայց սորան գիտումենք թէ
որտեղից ՙ է ․ եւ Քրիստոսն երբոր
կըգայ , ինաւ մինը չի գիտենալ թէ
որտեղից է ։
28 Յիսուս աղաղակեց տաճարու-
մը , սովորեցնումէր եւ ասում ․ Թէ
ինձ գիտումէք , եւ թէ ինչ տեղից
եմ եկել ˉ գիտումէք ․ եւ իմ անձ-
նիցս չեմ ՙ եկել ․ բայց նա ճշմա-
րիտ է՝ որ ինձ ˉ ուղարկեց ․ որ
դուք նորան չէք ˉ գիտում ։

ʾ Ելից . ԻԴ . 3 ․ Բ Օրին . ԼԴ . 4 ․ Գլ . Ա . 17 ․ Գործ . Է . 38 ․
ՙ Մատթ . ԺԲ . 14 ․ Մարկ . Գ . 6 ․ Գլ . Ե . 16 . 18 ․ Ժ . 31 . 39 ․ ԺԱ . 53 ․
ᶜ Գլ . Ը . 48 . 52 ․ Ժ . 20 ․
ʿ Ղև . ԺԲ . 3 ․
ʾ Ծննդ . ԺԷ . 10
ʾ Գլ . Ե . 8 , 9 . 16 ․
ՙ Բ Օրին . Ա . 16 . 17 ․ Առակ . ԻԴ . 23 ․ Գլ . Ը . 15 ․ Յակ . Բ . 1 ․
ˉ Համար . 48 ․
ՙ Մատթ . ԺԳ . 55 ․ Մարկ . Զ . 3 ․ Ղուկ . Դ . 22 ․
ˉ Գլ . Ը . 14 ․
ՙ Գլ . Ե . 43 ․ Ը . 42 ․
ˉ Գլ . Ե . 32 ․ Ը . 26 ․ Հռովմ . Գ . 4 ․
ˉ Գլ . Ա . 18 ․ Ը . 55 ․

29 Ես գիտեմ զնա, զի 'ի նմանէ
իսկ եմ, եւ նա առաքեաց զիս ։

30 Խնդրէին զնա ունել, եւ ել
'ի ձեռաց նոցա · եւ ոչ ոք արկ 'ի
նա ձեռն, զի չեւ էր հասեալ ժամ
նորա ։

31 Եւ բազումք 'ի ժողովրդենէն
հաւատացին 'ի նա՝ եւ ասէին · Քրի-
ստոսն յորժամ գայցէ՝ միթէ ա-
ւելի ինչ նշանս առնիցէ, քան զոր
սայս առնէ ։
32 Եւ լուան փարիսեցիքն զտր-
տունջ ժողովրդեանն զնմանէ · եւ
առաքեցին քահանայապետքն եւ
փարիսեցիք սպասաւորս՝ զի կալ-
ցին զնա ։

33 Ասէ Յիսուս · Փոքր մի եւս
ժամանակ ընդ ձեզ եմ · եւ երթամ
առ այն՝ որ առաքեացն զիս ։
34 Խնդրիցէք զիս՝ եւ ոչ գտանի-
ցէք · եւ ուր եսն երթամ, դուք
ոչ կարէք գալ ։
35 Ասեն Հրէայքն ընդ միմեանս ·
Ուր յօ երթայցէ դա, զի մեք ոչ
գտանիցեմք զդա · միթէ 'ի սփիւռս
հեթանոսաց երթայցէ՝ եւ ուսու-
ցանիցէ զհեթանոսս ։

36 Զինչ է բանն այն՝ զոր ասաց ·
Խնդրիցէք զիս՝ եւ ոչ գտանիցէք ·
եւ ուր եսն երթամ, դուք ոչ կա-
րէք գալ ։
37 Ի վերջնում աւուր մեծի տօ-
նին կայր Յիսուս՝ աղաղակէր եւ
ասէր · Եթէ ոք ծարաւի իցէ՝ եկեսցէ
առ իս, եւ արբցէ ։
38 Որ հաւատայ յիս՝ որպէս եւ ա-
սեն գիրք · Գետք յորովայնէ նորա

29 Ես գիտեմ նորան, ինչու որ
իսկ նորանից եմ, եւ նա ուղար-
կեց ինձ ։
30 Եւ ուզումէին բռնել *նորան,
եւ նորանից ձեռներիցը դուրս գնաց ·
եւ ոչ ով ձեռք չը ձգեց *նորան ·
ինչու որ նորա ժամանակը դեռ
չէր հասել ։
31 Եւ ժողովրդիցը շատ մարդիկ
հաւատացին նորան՝ եւ ասումէին ·
Քրիստոսն երբոր կըգայ՝ միթէ ա-
ւելի նշաններ կանէ, քան նա՝ որ
սա է ɔ անում ։
32 Եւ փարիսեցիներն լսեցին ժո-
ղովրդքին այն տրտունջն՝ որ նորա
համար արել էին · եւ քահանայա-
պետներն ու փարիսեցիներն սպա-
սաւորներ ուղարկեցին՝ որ բռնեն
նորան ։
33 Յիսուս ասաց · Մին քիչ ժա-
մանակ էլ ձեզ հետ եմ՝ եւ գնու-
մեմ նորա մօտ, որ ուղարկեց –ինձ ։
34 Ինձ ման կըգաք եւ չէք գտ-
նիլ, եւ որտեղ որ ես եմ գնում,
դուք չէք կարող ‡ գալ ։
35 Հրէաներն իրար ասացին · Այս
դա ուր ուզէ երթալ, որ մենք
չըգտնենք դորան · միթէ հեթա-
նոսներին մէջ ցրված ժողովրդ-
ներին մօտ կըգնայ եւ հեթանոս-
ներին + կըսովորցնէ ։
36 Ի՞նչ է այն խօսքն՝ որ ասաց ·
Թէ ինձ ման կըգաք՝ եւ չէք գտ-
նիլ՝ եւ որտեղ որ ես եմ գնում,
դուք չէք կարող գալ ։
37 Տօնին վերջին մեծ օրը Յի-
սուս կանգնած էր՝ աղաղակումէր
եւ • ասում · Թէ որ մինը ծարաւ է՝
թող ինձ մօտ գայ, եւ § խմէ ։
38 Նա որ ինձ հաւատումէ՝ ինչ-
պէս որ գիրքն էլ = ասումէ, նո-

Լ Մատթ. ԺԱ. 27։ Գլ. Ժ. 15։
* Մարկ. ԺԱ. 18։ Ղու. ԺԹ. 47։ Ի. 19։ Համար. 20։ Ը. 37։
բ Համար. 44։ Ը. 20։
ɔ Մատթ. ԺԲ. 23։ Գլ. Գ. 2։ Ը. 30։
– Գլ. ԺԳ. 33։ ԺԶ. 16։
‡ Սփռ. Ե. 6։ Գլ. Ը. 21։ ԺԳ. 33։
\+ Եսայ. ԺԱ. 12։ Յակ. Ա. 1։ Ա Պետ. Ա. 1։
• Ղե. ԻԳ. 36։
§ Եսայ. ԾԵ. 1։ Գլ. Զ. 35։ Յայտ. ԻԲ. 17։
= Բ Օրին. ԺԸ. 15։

բղխեսցեն ջրոյ կենդանութեան ։

39 Զայս ասէր վասն Հոգւոյն՝ զոր ընդունելոց էին, որ հաւատային ՚ի նա. զի չեւ էր Հոգի, քանզի Յիսուս չեւ էր փառաւորեալ ։

40 Ոմանք ՚ի ժողովրդենէն իբրեւ լուէին զբանս զայս, ասէին. Սա է ճշմարիտ մարգարէն ։

41 Այլքն ասէին՝ Սա է Քրիստոսն. իսկ կէսքն ասէին՝ Միթէ ՚ի Գալիլեէ՞ գալոց իցէ Քրիստոսն ։

42 Ո՞չ գիրք ասեն, եթէ ՚ի զաւակէ Դաւթի, եւ ՚ի Բեթղեհէմ գեղջէ՝ ուր Դաւիթն էր, գալոց է Քրիստոս ։

43 Եւ եղեւ հերձուած ՚ի մէջ ժողովրդեանն վասն նորա ։

44 Եւ ոմանք ՚ի նոցանէ կամէին ունել զնա. այլ ոչ ոք մխեաց ՚ի նա ձեռս ։

45 Եւ եկին անդրէն սպասաւորքն առ քահանայապետսն եւ փարիսեցիս, եւ ասեն ցնոսա. Ընդէ՞ր ոչ ածէք զնա այսր ։

46 Պատասխանի ետուն սպասաւորքն եւ ասեն. Ո՛չ երբէք այնպէս խօսեցաւ մարդ՝ որպէս այրն այն ։

47 Պատասխանի ետուն փարիսեցիքն՝ եւ ասեն. Միթէ եւ դուք մոլորեցարո՞ւք ։

48 Միթէ ոք յիշխանացն հաւատաց ՚ի նա՝ կամ ՚ի փարիսեցւոց.

րա փորից կենդանի ջրերի գետեր բ կը բղխեն ։

39 Այս բանըս ասաց Հոգւոյն համար՝ որ պիտի ընդունէին նորանք, որ հաւատացին գ նորան, ինչու որ՝ դեռ Հոգին չէկար, որովհետեւ Յիսուս դեռ չէր դ փառաւորված ։

40 Ժողովրդից մին քանիսն երբոր այս խօսքըս լսեցին, ասացին. Սա ճշմարիտ մարգարէն ե է ։

41 Ուրիշներն ասացին. Սա Քրիստոսն զ է. բայց կէսն ասացին՝ Միթէ Քրիստոսը Գալիլեայիցը է կը գայ ։

42 Չէ՞ որ գրքերն ասում են, թէ Քրիստոսը Դաւթին ը զաւակիցը, եւ Բեթղեհէմ գիւղից պիտի գայ՝ որտեղ որ Դաւիթն թ էր ։

43 Եւ տարաձայնութիւն էլաւ ժողովրդին մէջ նորա ժ համար ։

44 Եւ նորանից մին քանիսը կամեցան բռնել ի նորան. բայց ընաւ մինը ձեռք չը ձգեց նորա վերայ ։

45 Եւ սպասաւորները յետ եկին քահանայապետներին ու փարիսեցիներին մօտ. եւ նորանք ասացին նորանց. Ի՞նչու համար նորան չը բերիք այստեղ ։

46 Սպասաւորները պատասխան տուցին եւ ասացին. ընաւ մին ժամանակ մին մարդ չը խօսեց՝ ինչպէս որ այն լ մարդը ։

47 Փարիսեցիքը պատասխան տուցին եւ ասացին. Միթէ դուք էլ մոլորվեցաք ։

48 Միթէ իշխաններիցը կամ փարիսեցիներիցը մինը հաւատաց ՚ի նորան ։

բ Առակ. ԺԸ. 4. Եսայ. ԺԲ. 3. ԽԴ. 3. Գլ. Դ. 14.
գ Եսայ. ԽԴ. 3. Յովէլ. Բ. 28. Գլ. ԺԶ. 7. Գործ. Բ. 17. 33. 38.
դ Գլ. ԺԲ. 16. ԺԶ. 7.
ե Բ Օրին. ԺԸ. 15 18. Գլ. Ա. 21. Զ. 14.
զ Գլ. Դ. 42. Զ. 70.
է Համար. 52. Գլ. Ա. 46.
ը Սաղ. ՃԼԲ. 11. Երեմ. ԻԳ. 5. Միք. Ե. 2. Մատթ. Բ. 5. Ղուկ. Բ. 4.
թ Ա Թագ. ԺԶ. 1. 4.
ժ Համար. 12. Գլ. Թ. 16. Ժ. 19.
ի Համար. 30.
լ Մատթ. Է. 29.

49 Այլ այն խառնամաճ ամբոխ՝
որ ոչ գիտէ զօրէնս , եւ նզովեալ
են ։
50 Ասէ Նիկոդեմոս ցնոսա՝ որ ե-
կեալն էր առ նա գիշերի յառաջա-
գոյն՝ եւ մի էր ՚ի նոցանէ ։
51 Միթէ օրէնքն մեր դատին
զմարդ՝ եթէ ոչ լսեն ինչ նախ ՚ի
նմանէ , կամ գիտեն զինչ գործէ ։
52 Պատասխանի ետուն նմա եւ
ասեն . Միթէ եւ դու եւս ՚ի Գա-
լիլեէ՞ իցես . քննեա եւ տես՝ զի
մարգարէ ՚ի Գալիլեէ ոչ յառնէ ։
53 Եւ գնացին իւրաքանչիւրոք ՚ի
տեղի իւր ։

## ԳԼ . Ը

1 Իսկ Յիսուս գնաց ՚ի լեառն
Ձիթենեաց ։
2 Եւ ընդ առաւօտն դարձեալ
եկն ՚ի տաճարն , եւ գայր առ նա
ամենայն ժողովուրդն . եւ նստեալ
ուսուցանէր զնոսա ։
3 Ածին առ նա դպիրքն եւ քա-
հանայապետքն եւ փարիսեցիքն՝ կին
մի ըմբռնեալ ՚ի շնութեան , եւ կա-
ցուցեալ զնա առաջի ,
4 Ասեն ցնա . Վարդապետ , կինս
այս ըմբռնեալ՝ ինքն յայտնապէս
շնացեալ է ։
5 Եւ յօրէնս Մովսէս մեզ պատ-
ուիրեաց զայսպիսիս քարկոծել .
արդ՝ դու զինչ ասես վասն դորա ։
6 Զայս ասէին փորձելով զնա ,
զի ունիցին ամբաստանութիւն ըզ
նմանէ . իսկ Յիսուս ՚ի խոնարհ նա-
յելով՝ գրէր մատամբն յերկիր ։
7 Իսկ իբրեւ ստիպեցին հար-
ցանելով զնա , հայեցեալ ՚ի վեր՝
ասէ ցնոսա . Անմեղն ՚ի ձէնջ նախ

49 Բայց այն ռամիկ ժողովուրդը .
որ օրէնքը չգիտեր եւ անիծեալ
են ։
50 Նիկոդիմոսն՝ որ առաջ գիշե-
րը նորա մօտ էր եկել՝ եւ նորան-
ցից մինն էր . ասաց նորանց .
51 Միթէ մեր օրէնքները դատա-
մնն մի մարդ՝ թէ որ առաջ բան
չը լսեն նորանից կամ գիտենան՝ թէ
ինչ է գործում ։
52 Պատասխան տուին նորան եւ
ասացին . Միթէ դու էլ Գալիլեա-
ցին ես , քննէ եւ տես որ Գալի-
լեայից մարգարէ դուրս չի գալ ։
53 Եւ ամէն մէկը գնացին իրենց
տեղը ։

1 Բայց Յիսուս գնաց Ձիթենեաց
սարը ։
2 Եւ առաւօտանց նորէն եկաւ
տաճարը , եւ ամէն ժողովուրդը նո-
րա մօտ էր գալիս . եւ նստած սո-
վորցնումէր նորանց ։
3 Կարգագրիչները , քահանայա-
պետները ու փարիսեցիները մի կին
բերին շնութեան մէջ բռնուած ,
եւ կանգնացրին նորան առաջին .
4 Նորան ասացին . Վարդա-
պետ՝ այս կինս որ բռնել ենք՝
ինքը յայտնապէս շնացած է ։
5 Եւ օրէնքումը Մօսէս պատ-
ուիրեց մեզ , որ այսպէսիները քար-
կոծելին . ապա՝ դու ինչ ես ասում
դորա - համար ։
6 Այս բաները նորան փորձելոյ
համար էին ասում , որ չարախօ-
սութիւն ունենան նորանից . բայց
Յիսուս ցած նայելով մատովը գը-
րումէր երկրի վերայ ։
7 Բայց երբոր ստիպեցին հար-
ցնելով նորան , վեր նայեց՝ եւ ա-
սաց . Ձեզանից ով որ անմեղ է՝

ե Գլ . ԺԲ . 42 ։ Գործ . Զ . 7 ։ Ա Կորնթ . Ա . 20 . 26 ։ Բ . 8 ։
զ Գլ . Գ . 2 ։
է Օրին Ա . 17 ։ ԺԷ . 8 ։ Ձ ։ ԺԹ . 15 ։
հ Եսայ . Թ . 1 , 2 ։ Մատթ . Դ . 15 ։ Գլ . Ա . 46 ։ -ա- մար . 41 ։
ը Ղեւ . Ի . 10 ։ Բ Օրին . ԻԲ . 22 ։

նա ընկեսցէ քար 'ի վերայ դորա։

8 Եւ դարձեալ 'ի խոնարհ նայե-
լով՝ գրէր յերկրի։
9 Եւ լուեալ նոցանէն մի ըստ
միոջէ, ելանէին յառաջնոցն մինչեւ
'ի վերջինսն. եւ մնաց միայն Յիսուս,
եւ կինն կայր առաջի նորա։

10 Պատասխանի ետ Յիսուս եւ
ասէ ցնա. Կին դու՝ ուր են, ոչ ոք
զքեզ դատապարտեաց։
11 Եւ ասէ. Ո՛չ Տէր. եւ ասէ
Յիսուս. Եւ ոչ ես դատապարտեմ
զքեզ. երթ՝ յայսմհետէ մի մեղան-
չեր։
12 Դարձեալ խօսեցաւ ընդ նոսա
Յիսուս եւ ասէ. Ես եմ լոյս աշ-
խարհի. որ գայ զհետ իմ՝ ընդ խա-
ւար մի գնասցէ, այլ ընկալցի ըզ
լոյսն կենաց։
13 Ասեն ցնա փարիսեցիքն. Դու
վասն անձին քո վկայես՝ եւ վկա-
յութիւն քո չէ ճշմարիտ։
14 Պատասխանի ետ Յիսուս եւ
ասէ ցնոսա. Թէպէտ եւ ես վկա-
յեմ վասն անձին իմոյ՝ վկայութիւն
իմ ճշմարիտ է, զի գիտեմ ուստի
եկի՝ եւ յո երթամ. բայց դուք ոչ
գիտէք ուստի գամ, կամ յո եր-
թամ։

15 Դուք ըստ մարմնոյ դատիք.
ես ոչ դատիմ եւ ոչ զոք։

16 Թէպէտ եւ դատիմ ես զոք՝
դատաստանն իմ ճշմարիտ է. զի չեմ
միայն, այլ ես՝ եւ որ առաքեացն
զիս Հայր։
17 Եւ յօրէնսն ձեր գրեալ է՝
թէ Երկուց մարդոց վկայութիւն
ճշմարիտ է։

թող առաջ նա քար ձգէ դորա
բ վերայ։
8 Եւ նորէն ցած նայելով գրու-
մէր երկրին վերայ։
9 Եւ ասոնք որ լսեցին մինը մէկից
ետեւ դուրս էլին գնում, առաջին-
ներիցն սկսած մինչեւ գ յետինները.
եւ Յիսուս մենակ մնաց, եւ կինը
կանգնած էր նորան առաջին։
10 Յիսուս պատասխան տուաւ եւ
ասաց նորան. Ո՛վ կին՝ ուր են, ոչ
ով քեզ չը դատապարտեց։
11 Եւ ասաց. Ոչ՝ Տէր. եւ Յի-
սուս ասաց. Ես էլ չեմ քեզ դ դա-
տապարտում. գնա՝ այսուհետեւ
մեղք մի ե գործեր։
12 Յիսուս նորէն խօսեց նորանց
հետ եւ ասաց. Ես եմ աշխարհքին
զ լոյսը. ով որ իմ ետեւէս գայ՝ նա
խաւարում չի գնալ, բայց կենաց
լոյսը կընդունի։
13 Փարիսեցիներն ասացին նորան.
Դու քո անձից համար ես վկայում՝
եւ քո վկայութիւնդ ճշմարիտ է չէ։
14 Յիսուս պատասխան տուաւ եւ
ասաց նորանց. Թէեւ իմ անձիս
համար վկայումեմ՝ իմ վկայութիւնս
ճշմարիտ է. ինչու որ՝ գիտումեմ
թէ որտեղից եկի եւ որտեղ եմ
գնում. բայց դուք չէք գիտում՝
թէ որտեղից եմ գալիս, եւ որտեղ
եմ ը գնում։
15 Դուք մարմնոյ վերայ նայելով
էք դատաստան թ անում. ես չեմ
դատում ոչ մինին ժ էլ։
16 Թէ եւ դատեմ էլ մինին, իմ
դատաստանս ճշմարիտ է. ինչու որ՝
մենակ չեմ՝ բայց ես եւ Հայրն՝ որ
ինձ ի ուղարկեց։
17 Եւ ձեր օրէնքումն էլ գր-
ւած է՝ թէ Երկու մարդկանց վկա-
յութիւնը ճշմարիտ լ է։

բ Բ Օրին. ԺԷ. 7. Հռովմ. Բ. 1.
գ Հռովմ. Բ. 22.
դ Ղուկ. Թ. 56. ԺԲ. 14. Յհ. Գ. 17.
ե Յհ. Ե. 14.
զ Յհ. Ա. 4, 5 9. Գ. 19. Թ. 5. ԺԲ. 35. 36. 46.
է Յհ. Ե. 31.
ը Յհ. Է. 28. Թ. 29.
թ Յհ. Է. 24.
ժ Յհ. Գ. 17. ԺԲ. 47. ԺԸ. 36.
ի Համար. 29. Յհ. ԺԶ. 32.
լ Բ Օրին. ԺԷ. 6. ԺԹ. 15. Մատթ. ԺԸ. 16. Բ Կորնթ. ԺԳ. 1. Եբր Ժ. 28.

18 Ես եմ որ վկայեմ վասն իմ, եւ վկայէ վասն իմ՝ որ առաքեացն զիս Հայր։
19 Ասէին ցնա. Ո՞ւր է Հայր քո. պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Ո՛չ զիս գիտէք՝ եւ ոչ բզ Հայրն իմ. եթէ զիս գիտէիք, եւ զՀայրն իմ թերեւս գիտէիք։
20 Զայս բան խօսեցաւ ՚ի տան գանձին՝ յորժամ ուսուցանէր ՚ի տաճարի անդ. եւ ոչ ոք կալաւ զնա, զի չեւ եւս հասեալ էր ժամ նորա։
21 Ասէ դարձեալ ցնոսա Յիսուս. Ես երթամ եւ խնդրիցէք զիս. եւ ՚ի մեղս ձեր մեռանիցիք. զի ուր ես երթամ, դուք ոչ կարէք գալ,
22 Ասէին Հրէայքն. Միթէ զիւ– րայլի՞ն երթայցէ, զի ասէ՝ թէ ուր ես երթամ՝ դուք ոչ կարէք գալ։
23 Եւ ասէ ցնոսա. Դուք ՚ի ներքուստ աստի էք, եւ ես ՚ի վերուստ անտի եմ. դուք յաշխարհէ աստի էք, ես չեմ յայսմ աշխարհէ։
24 Բայց ասացի ձեզ՝ թէ ՚ի մեղս ձեր մեռանիցիք. զի թէ ոչ հաւատայցէք թէ ես եմ, մեռանիցիք ՚ի մեղս ձեր։
25 Ասեն ցնա. Դու ով ես. ասէ ցնոսա Յիսուս. Նախ զի եւ խօսիմ իսկ ընդ ձեզ։
26 Բազում ինչ ունիմ վասն ձեր խօսել եւ դատել. այլ որ առաքեացն զիս՝ ճշմարիտ է. եւ ես զոր լուայ ՚ի նմանէ, զայն խօսիմ յաշխարհի։
27 Եւ ոչ գիտացին՝ թէ զՀօրէ ասէր ցնոսա։

18 Ես եմ՝ որ ինծի համար վկայումեմ, եւ Հայրն է՝ որ ինծի ուղարկեց՝ ինծի համար ե վկայումէ։
19 Ասումէին նորան. Ո՞ր տեղ է քո Հայրդ. Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց նորանց. Ո՛չ ինծի էք գիտում՝ եւ ոչ իմ զ Հօրս. թէ որ ինծի գիտնայիք՝ կինի որ իմ Հօրս էլ է գիտնայիք։
20 Այս բանս Յիսուս գանձատան մէջ խօսեց նորանց հետ՝ երբոր տաճարումը ը սովորցնումէր. եւ ոչ ով չը բռնեց թ նորան. պատճառն որ՝ դեռ նորա ժամը չէր ժ հասել։
21 Յիսուս նորէն ասաց նորանց. Ես գնումեմ եւ ինծի մանն ի կը գաք. եւ ձեր մեղացը մէջ լ կը մեռնիք. ինչու որ՝ որտեղ որ ես եմ գնում, դուք չէք կարող գալ։
22 Հրէաներն ասումէին. Միթէ ինքն իրեն կսպանէ, որ ասումէ՝ թէ Որտեղ որ ես եմ գնում՝ դուք չէք կարող գալ։
23 Եւ ասաց նորանց. Դուք այս տեղից ներքեւիցն էք, եւ ես այն տեղից վերեւիցն խ եմ. դուք այս աշխարհքիցս էք՝ ես չեմ այս ծ աշխարհքիցս։
24 Բայց ասացի ձեզ՝ թէ Ձեր մեղացը մէջ կ կը մեռնիք. ինչու որ՝ եթէ չը հաւատաք՝ թէ նա ես եմ, ձեր մեղացը մէջ հ կը մեռնիք։
25 Ասացին նորան. Դու ով ես. Յիսուս ասաց նորանց. Առաջ նա՝ որ ճիշտ ձեզ հետ խօսումեմ։
26 Շատ բան ունիմ ձեզ համար խօսել եւ դատել. բայց նա որ ինծի ուղարկեց՝ ճշմարիտ ձ է. եւ ես ինչ որ նորանից լսեցի՝ նա եմ խօսում ղ աշխարհումը։
27 Եւ չիմացան՝ թէ Հօր համար էր ասում նորանց։

ե Գլ. Ե. 37.
զ Համար 55. Գլ. ԺԶ. 3.
է Գլ. ԺԴ. 7.
ը Մարկ. ԺԲ. 41.
թ Գլ. Է. 30.
ժ Գլ. Է. 8.
ի Գլ. Է. 34. ԺԳ. 33.
լ Համար. 24.
խ Գլ. Գ. 31.
ծ Գլ. ԺԵ. 19. ԺԷ. 16. Ա Յովհ. Դ. 5.
կ Համար. 21.
հ Մարկ. ԺԶ. 16.
ձ Գլ. Է. 28.
ղ Գլ. Գ. 32. ԺԵ. 15.

28 Ասէ ցնոսա Յիսուս. Յորժամ
բարձրացուցանիցէք զՈրդի մարդոյ՝
յայնժամ գիտասջիք՝ թէ ես եմ.
եւ յանձնէ իմմէ ինչ ոչ առնեմ,
այլ որպէս ուսոյց զիս Հայրն իմ,
զայն խօսիմ։
29 Եւ որ առաքեացն զիս՝ ընդ իս
է. ոչ եթող զիս միայն, զի ես ըզ
հաճոյս նորա առնեմ հանապազ։
30 Իբրեւ զայս խօսեցաւ՝ բազումք
հաւատացին ՚ի նա։
31 Եւ ասէր Յիսուս առ Հրէայսն
հաւատացեալս. Եթէ դուք կացջիք
՚ի բանի իմում, ճշմարիտ աշա-
կերտք իմ էք.
32 Եւ ծանիջիք զճշմարտութիւ-
նըն, եւ ճշմարտութիւնն ազատես-
ցէ զձեզ։
33 Պատասխանի ետուն նմա եւ
ասեն. Զաւակ Աբրահամու եմք,
եւ ոչ ումեք երբէք ծառայեցաք.
զիարդ ասես թէ Ազատք լինիջիք։
34 Պատասխանի ետ նոցա Յի-
սուս. Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ
Ամենայն որ առնէ զմեղս, ծառայ
է մեղաց։
35 Եւ ծառայն ոչ յաւիտեան կայ
՚ի տան, իսկ որդին յաւիտեան կայ։
36 Իսկ արդ՝ եթէ Որդին զձեզ
ազատեսցուցէ, ճշմարիտ ազատք
լինիջիք։
37 Գիտեմ զի զաւակ Աբրահամու
էք. այլ խնդրէք սպանանել զիս,
զի բանն իմ չիք տեղի ՚ի ձեզ։
38 Ես՝ զոր տեսի առ Հօր իմում՝

28 Յիսուս ասաց նորանց. Երբոր
Որդայն մարդոյ Ն կը բարձրացնէք՝
այն ժամանակը կիմանաք՝ թէ ես
– եմ. եւ իմ անձնիցս բան չեմ
= անում. բայց ինչպէս իմ Հայրս
սովորցրուց ինձ, նա եմ Ն խօ-
սում։
29 Եւ նա՝ որ ինձ ուղարկեց՝ ինձ
⊤ հետ է. ինձ մինակ ք չը թողեց,
ինչու որ՝ ես միշտ այն բաներն եմ
անում, որ հաճոյ են ɜ նորան։
30 Երբոր այս բա՛ն խօսեց՝ շատ
մարդիկ հաւատացին – նորան։
31 Եւ Յիսուս հաւատացեալ Հրէա-
ներին ասաց. Թէ որ դուք իմ խօս-
քիս մէջ կենաք՝ իմ ճշմարիտ աշա-
կերտներս էք։
32 Եւ ճշմարտութիւնը կը ճանա-
չէք. եւ ճշմարտութիւնը կազատէ
‡ ձեզ։
33 Պատասխան տուին նորան եւ
ասացին. Մենք Աբրահամի զաւակ
ենք, եւ բնաւ մինին * չը ծառայե-
ցինք. էլ ինչպէս ես ասում՝ թէ
Ազատ կը լինէք։
34 Յիսուս պատասխան տուաւ նո-
րանց. ճշմարիտ ճշմարիտ ասու-
մեմ ձեզ՝ թէ Ամէն մէկ որ մեղք է
անում՝ մեղքի ծառայ ◦ է։
35 Եւ ծառան յաւիտեան չի կե-
նում տանը մէջ, բայց որդին յա-
ւիտեան է ‡ կենում։
36 Ուրեմն եթէ Որդին ազատէ
ձեզ, ճշմարիտ ազատ – կը լինէք։
37 Գիտումեմ որ Աբրահամի զա-
ւակ էք. բայց ուզումէք՝ որ ինձ
Բ սպանէք. ինչու որ՝ իմ խօսքիս
համար տեղ չը կայ ձեզանում։
38 Ես ինչ որ տեսի իմ Հօրս մօտ՝

Ն Գլ. Գ. 4. ԺԲ. 32.
– Հռովմ. Ա. 4.
= Գլ. Ե. 19. 30.
Ն Գլ. Գ. 11.
⊤ Գլ. ԺԴ. 10. 11.
ք Համար. 16.
ɜ Գլ. Դ. 34. Ե. 30. Զ. 38.
– Գլ. Է. 31. Ժ. 42. ԺԱ. 45.
‡ Հռովմ. Զ. 14. 18. 22. Ը. 2. Յակ. Ա. 25. Բ. 12.
* Ղկ. ԻԲ. 42. Մատթ. Դ. 9. Համար. 39.
◦ Հռովմ. Զ. 16. 20. Բ Պետ. Բ. 19.
‡ Գաղ. Դ. 30.
– Հռովմ. Ը. 2. Գաղ. Ե. 1.
Բ Գլ. Ե. 20. Համար. 40.

խօսիմ. եւ դուք՝ զոր լուարուք
'ի հօրէն ձերմէ՝ առնէք։
39 Պատասխանի ետուն նմա եւ
ասեն. Հայր մեր Աբրահամ է. ա-
սէ ցնոսա Յիսուս. Եթէ որդիք
Աբրահամու էիք՝ զգործս Աբրա-
համու գործէիք։
40 Այլ այժմիկ խնդրէք սպանա-
նել զիս, զայր մի որ ձեզ զճշմար-
տութիւն խօսեցայ, զոր լուայ 'ի
Հօրէ իմմէ. զայդ Աբրահամ ոչ ա-
րար։
41 Դուք առնէք զգործս հօրն ձե-
րոյ. ասեն ցնա. Մեք 'ի պոռնկու-
թենէ չեմք ծնեալ. մի է Հայր մեր
Աստուած։
42 Ասէ ցնոսա Յիսուս. Եթէ
Աստուած էր Հայր ձեր, սիրէիք
արդեօք զիս. զի ես յԱստուծոյ ե-
լի եւ եկի. եւ ոչ եթէ յանձնէ ինչ
եկի, այլ նա առաքեաց զիս։
43 Ընդէր զխօսս իմ ոչ գիտէք
դուք. վասն զի ոչ կարէք լսել զբ
բանն իմ։
44 Դուք 'ի հօրէ 'ի Սատանայէ
էք. եւ զցանկութիւնս հօրն ձերոյ
կամիք առնել. զի նա մարդասպան
էր 'ի սկզբանէ, եւ 'ի ճշմարտու-
թեան ոչ եկաց, զի ոչ գոյ ճշմար-
տութիւն 'ի նմա. յորժամ խօսիցի
սուտ՝ յիւրոց անտի խօսի. զի սուտ
է եւ հայր նորա։
45 Իսկ ես՝ զի զճշմարտութիւն
խօսիմ, ոչ հաւատայք ինձ։
46 Ո՞ 'ի ձէնջ յանդիմանէ զիս
վասն մեղաց. եթէ զճշմարիտն ա-
սեմ ձեզ՝ ընդէր ոչ հաւատայք ինձ։

նա եմ չ խօսում. եւ դուք՝ ինչ որ
ձեր հօրիցը լսեցիք անումէք։
39 Պատասխան տուին նորան եւ
ասացին. Մեր հայրն Աբրահամն
է. Յիսուս նորանց պ ասաց. Թէ որ
Աբրահամին որդիքը լինէիք՝ Աբրա-
համին գործքերը ջ կը գործէիք։
40 Բայց հիմիկ ուզումէք որ ինձ
սպանէք, մին մարդ՝ որ ճշմարտու-
թիւնը խօսեցի ռ ձեզ. նա որ իմ
Հօրիցս լսեցի. այդ բանըդ Աբրա-
համ ս չարաւ։
41 Դուք ձեր հօր գործքերըն էք
անում. ասացին նորան. Մենք
պոռնկութենիցը չենք ծնված. մեր
Հայրը մին է՝ վ Աստուած։
42 Յիսուս նորանց ասաց. Թէ որ
ձեր Հայրն Աստուած լինէր, ապա
ինձ տ կը սիրէիք. ինչու որ՝ ես Ա-
ստուածանից դուրս էլայ եւ ր եկի.
եւ չէ թէ իմ անձնիցս եկի, բայց
նա ուղարկեց ց ինձ։
43 Ինչու համար իմ խօսքըս չէք
իմանում. նորա համար որ դուք չէք
կարօղ իմ բանըս ւ լսել։
44 Դուք Սատանայ հօրիցն էք. եւ
կամենումէք ձեր հօր ցանկութիւն-
ները փ անել. ինչու որ՝ նա սկզբ-
բիցը մարդասպան էր, եւ ճշմար-
տութեան մէջ չը մնաց, պատճառն
որ՝ ճշմարտութիւն չը կայ ք նորա-
նում. երբոր սուտ խօսի՝ իւր իւրեն
բաներիցն է խօսում. ինչու որ՝ սուտ
է եւ նորա ստութեան հայր։
45 Բայց ես՝ որովհետեւ ճշմար-
տութիւնըն եմ խօսում, ինձ չէք
հաւատում։
46 Ձեզանից մի է որ ինձ մեղաց
համար յանդիմանէ. թէ որ ճշմա-
րիտըն եմ ասում ձեզ՝ ինչու չէք
հաւատում ինձ։

չ Գղ. գ. 32. ե. 19. 30. ժԴ. 10. 24։
պ Մատթ. գ. 9։ Հռոմ. 33։
ջ Հռովմ. թ. 28։ թ. 7։ Գաղ. գ. 7. 29։
ռ Համար. 26։
ս Համար. 37։
վ Եսայ. ԿԴ. 16։ ԿԴ. 8։ Մաղ. Ա. 6։
տ Ա Յովհ. ե. 1։
ր Գղ. ճՁ. 27։ ժԷ. 8. 25։
ց Գղ. ե. 43։ Է. 28, 29։
ւ Գղ. Է. 17։
փ Մատթ. ժԳ. 38։ Ա Յովհ. գ. 8։
ք Յուդ. 6։

47 Որ էն յԱստուծոյ՝ զբանս Աստուծոյ լսէ. եւ դուք վասն այնորիկ ոչ լսէք, զի չէք յԱստուծոյ։

48 Պատասխանի տուին Հրէայքն՝ եւ ասեն ցնա. Ո՞չ բարւոք ասեմք մեք՝ եթէ Սամարացի ես դու, եւ դեւ գոյ 'ի քեզ։

49 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. Յիս դեւ ոչ գոյ՝ այլ պատուեմ զՀայր իմ, եւ դուք անարգէք զիս։

50 Ես ոչ խնդրեմ զփառս իմ. է որ խնդրէն՝ եւ դատի։

51 Ամէն ամէն ասեմ ձեզ. Եթէ ոք զբանն իմ պահեսցէ՝ զմահ մի տեսցէ 'ի յաւիտեան։

52 Ասեն ցնա Հրէայքն. Արդ գիտացաք թէ դեւ գոյ 'ի քեզ. Աբրահամ մեռաւ եւ մարգարէքն. եւ դու ասես՝ Եթէ ոք զբանն իմ պահեսցէ՝ մի ճաշակեսցէ զմահ 'ի յաւիտեան։

53 Միթէ դու մեծ ինչ ոք իցես քան զհայր մեր Աբրահամ, որ մեռաւ եւ մարգարէքն մեռան. արդ՝ դու զո՞ առնես զքեզ։

54 Պատասխանի ետ Յիսուս, Եթէ ես փառաւորեմ զանձն իմ, փառք իմ ոչինչ են. է Հայր՝ որ փառաւորէ զիս, զորմէ դուքդ ասէք՝ թէ Աստուած մեր է։

55 Եւ ոչ ճանաչէք զնա. բայց ես գիտեմ զնա. եւ թէ ասեմ՝ թէ ոչ գիտեմ զնա, ձեզ նման սուտ լինիմ. այլ գիտեմ զնա, եւ զբանն նորա պահեմ։

56 Աբրահամ հայր ձեր ցանկացաւ տեսանել զօր իմ, ետես եւ ուրախ եղեւ։

47 Նա որ Աստուածանից է՝ Աստուծոյ բաներին ականջ է դնում. եւ դուք նորա համար ականջ չէք դնում, որ Աստուածանից [ժ] չէք։

48 Հրէաները պատասխան տուին եւ նորան ասացին. Չէ՞ որ լաւ ենք ասում՝ թէ դու Սամարացի ես, եւ դեւ կայ [ի] քեզանում։

49 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց. Ինձանում դեւ չկայ՝ բայց իմ Հօրս պատուում եմ, եւ դուք անարգում էք ինձ։

50 Ես իմ փառքս չեմ խնդրում. կայ մէկն՝ որ խնդրում է եւ [լ] դատում։

51 Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. Թէ որ մէկն իմ խօսքս պահէ՝ նա մահ չի տեսնիլ [խ] յաւիտեան։

52 Հրէաներն ասացին նորան. Հիմիկ իմացանք՝ որ դեւ կայ քեզանում. Աբրահամը մեռաւ եւ [ծ] մարգարէները. եւ դու ասում ես՝ Թէ որ մէկն իմ խօսքս պահէ՝ նա յաւիտեան մահ չի տեսնիլ։

53 Միթէ դու մէկ աւելի մեծն ես քան մեր հայր Աբրահամը, որ մեռաւ եւ մարգարէներն մեռան. ապա դու քեզ ով ես անում։

54 Յիսուս պատասխան տուաւ. Թէ որ ես իմ անձս փառաւորեմ, իմ փառքս ոչինչ [կ] է. Հայրն է՝ որ ինձ փառաւորում է, որ դուք նորա համար ասում էք՝ թէ, Մեր Աստուածն [հ] է։

55 Եւ չէք ճանաչում [ձ] նորան. բայց ես գիտեմ նորան. եւ թէ որ ասեմ՝ թէ չեմ գիտում նորան, ձեզ նման սուտ կըլինիմ. բայց գիտեմ նորան, եւ նորա խօսքն պահում եմ։

56 Աբրահամ ձեր հայրը ցանկացաւ իմ օրըս [ղ] տեսնել, տեսաւ եւ ուրախ [ճ] էլաւ։

ժ Գլ. Ժ. 26, 27։ Ա Յովհ. Դ. 6։
ի Գլ. Է. 20։ Ժ. 20։ Համար. 52։
լ Գլ. Ե. 41։ Է. 18։
խ Գլ. Ե. 24։ ԺԱ. 26։
ծ Զաք. Ա. 5։ Եբր. ԺԱ. 13։
կ Գլ. Ե. 31։
հ Գլ. Ե. 41։ ԺԶ. 14։ ԺԷ. 1։ Գործ. Գ. 13։
ձ Գլ. Է. 28, 29։
ղ Ղու. Ժ. 24։
ճ Եբր. ԺԱ. 13։

57 Ասեն ցնա Հրէայքն. Յիսուն ամ չեւ եւս է քո, եւ զԱբրահամ տեսեր։

58 Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ամէն ասեմ ձեզ. յառաջ քան զլինելն Աբրահամու եմ ես,

59 Վէմս առին, զի արկցեն ՚ի վերայ նորա. եւ Յիսուս խոյս ետ, եւ ել գնաց ՚ի տաճարէ անտի։

57 Հրէաները նորան ասացին. Դու դեռ յիսուն տարեկան չես, եւ Աբրահամին էլ տեսեր։

58 Յիսուս նորանց ասաց. Ճշմարիտ ճշմարիտ ասումեմ ձեզ. եւ Աբրահամի լինելուցն էլ առաջ ւ եմ։

59 Հրէաները քարեր վերառին, որ նորա վերայ ղ ձգեն. եւ Յիսուս մին կողմը քաշվեցաւ, եւ դուրս ելաւ գնաց Հ տաճարիցը։

## ԳԼ. Թ

1 Եւ մինչդեռ անցանէր՝ ետես այր մի կոյր ՚ի ծնէ։

2 Եւ հարցին զնա աշակերտքն նորա՝ եւ ասեն. Ռաբբի՝ ո՞յր մեղս է, սորա՝ թէ հօր եւ մօր իւրոյ, զի կոյր ծնցի։

3 Պատասխանի ետ Յիսուս. Ո՛չ դորա մեղս է, եւ ոչ հօր եւ մօր իւրոյ. այլ զի յայտնի լիցին գործքն Աստուծոյ ՚ի դմա։

4 Եւ ինձ պարտ է գործել զգործս այնորիկ՝ որ առաքեացն զիս, մինչ աւուր կայ. գայ գիշեր՝ յորժամ ոչ ոք կարէ գործել։

5 Մինչդեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշխարհի։

6 Զայս իբրեւ ասաց, եթուք ՚ի գետնի՝ եւ արար կաւ ՚ի թքոյն, եւ ծեփեաց զկաւն ՚ի վերայ աչաց կուրին։

7 Եւ ասէ ցնա. Երթ լուա յաւազանին Սելովմայ. որ թարգմանի Առաքեալ. չոգաւ լուացաւ, եկն եւ տեսանէր։

8 Իսկ դրացիքն՝ եւ որոց տեսեալն էր զնա յառաջագոյն՝ թէ

1 Եւ երբոր անցնում էր՝ մին մարդ տեսաւ ծնընդենէ կոյր։

2 Եւ նորա աշակերտները հարցուցին նորան եւ ասացին. Ռաբբի՝ ում մեղքն է, սորան՝ թէ իւրեն հօրն ու մօրը, որ սա կոյր = ծնաւ։

3 Յիսուս պատասխան տուաւ. Ո՛չ դորան մեղքն է, եւ ոչ էլ իւրեն հօրը եւ ոչ մօրը. բայց որ Աստուծոյ գործքերը յայտնի լինին ‡ դորանում։

4 Եւ ինձ պէտք է՝ որ նորա գործքերը գործեմ, որ ինձ ուղարկեց՝ դեռ քանի որ օր կայ. գիշերը գալիս է՝ որ այն ժամանակին ոչ ով կարող չէ ÷ գործել։

5 Քանի որ աշխարհքի մէջ եմ՝ աշխարհքի լոյսն ∓ եմ։

6 Երբոր աս ասաց՝ թքեց գետինը՝ եւ այն թքերէնը ցեխ շինեց՝ եւ այն ցեխը ծեփեց կոյրին աչքերին ŀ վերայ։

7 Եւ նորան ասաց. Գնա՛ լուացվիր Սելովամայ աւազանումը. որ թարգմանվումէ՝ Առաքեալ. գնաց լուացաւ՝ եկաւ եւ ǂ տեսնումէր։

8 Բայց դրացիներն եւ նորանք՝ որ առաջուց տեսել էին նորան՝ որ

ւ Ելից. Գ. 14. Եսայ. ԽԳ. 13. Գլ. ԺԷ. 5. 24. Կող. Ա. 17. Յայտ. Ա. 8.
ղ Գլ. Ժ. 31. 39. ԺԱ. 8.
Հ Ղուկ. Դ. 30.

—

= Համար. 34.
‡ Գլ. ԺԱ. 4.
÷ Գլ. Դ. 34. Ե. 19. 36. ԺԱ. 9. ԺԲ. 35. ԺԷ. 4.
∓ Գլ. Ա. 5. 9. Գ. 19. Ը. 12. ԺԲ. 35. 46.
ŀ Մարկ. Է. 33. Ը. 23.
~ Նեեմ. Գ. 15.
ǂ Դ Թագ. Ե. 14.

մուրացիկ էր, ասէին. Ո՞չ սա էր՝ որ նստէրն եւ մուրանայր. կէսքն ասէին. Նա է։

9 Այլքն ասէին. Ո՛չ.՞ այլ նման է նմա. եւ ինքն ասէր՝ թէ Ես եմ։

10 Ասեն ցնա. Իսկ զիա՞րդ բացան աչք քո։

11 Նա ետ պատասխանի. Այր մի՝ որում Յիսուս անուն, կաւ արար՝ եւ ծեփեաց զաչս իմ, եւ ասէ ցիս. Ե՛րթ ՚ի Սելովամ, եւ լուա. չոքայ լուացայ՝ եւ տեսանեմ։

12 Ասեն ցնա. Ո՞ւր է նա. ասէ ցնոսա. Ո՛չ գիտեմ։

13 Ածին առ փարիսեցիսն զնա, որ երբեմն կոյրն էր։

14 Եւ էր շաբաթ՝ յորժամ զկաւն արար Յիսուս, եւ եբաց զաչս կուրին։

15 Դարձեալ հարցանէին զնա փարիսեցիքն, թէ զիա՞րդ տեսանես. եւ նա ասէ ցնոսա. Կաւ եդ ՚ի վերայ աչաց իմոց, եւ լուացայ՝ եւ տեսանեմ։

16 Ասեն ոմանք ՚ի փարիսեցւոցն. Ո՛չ է այրն այն յԱստուծոյ, զի ըզշաբաթս ոչ պահէ. կէսքն ասէին. Իսկ զիա՞րդ կարէ մարդ մեղաւոր այսպիսի նշանս առնել. եւ էին հերձուածք ՚ի մէջ նոցա։

17 Ասեն դարձեալ ցկոյրն. Դու զի՞ ասես վասն նորա՝ զի եբաց զաչս քո. եւ նա ասէ՝ թէ Մարգարէ է։

18 Եւ ոչ հաւատային Հրէայքն զնմանէ՝ թէ կոյր էր՝ եւ բացաւ. մինչեւ կոչեցին զծնողս բացելոյն։

19 Հարցին զնոսա եւ ասեն. Սա՞ է որդին ձեր, զորմէ դուքն ասէիք,

մուրացկան էր, ասումէին թէ՝ Չէ՞ որ սա էր՝ որ նստումէր եւ մուրանում. կէսերն ասումէին՝ թէ Նա է։

9 Ուրիշներն ասումէին. թէ Չէ. բայց նորան նման է. եւ ինքն ասումէր՝ թէ Ես եմ։

10 Նորան ասացին. Ապա քո աչքերդ ինչպէս բաց էլան։

11 Նա պատասխան տուաւ. Մին մարդ՝ որ Յիսուս են ասում, ցեխ շինեց եւ իմ աչքերիս ծեփեց եւ ինձ ը ասաց. Գնա Սելոամ, եւ լուա՛ց. գնացի լուացայ եւ տեսնումեմ։

12 Նորան ասացին. Նա՞ ո՞րտեղ է. Նորանց ասաց. Չեմ գիտում։

13 Փարիսեցիներին մօտ տարան նորան, որ մին ժամանակ կոյր էր։

14 Եւ շաբաթ օր էր՝ երբոր Յիսուս ցեխը շինեց եւ կոյրին աչքերը բացաւ։

15 Նորէն փարիսեցիներն ¨ էին հարցնում նորան՝ թէ ինչպէս ես տեսնում. եւ նա նորանց ասաց. Ցեխ դրաւ իմ աչքերիս վերայ՝ եւ լուացայ եւ տեսնումեմ։

16 Այն փարիսեցիներիցը մինքանիսն ասացին. Այն մարդն Աստուածանից չէ՝ ինչու որ՝ շաբաթ օրերը չի պահում. կէսն ասումէին՝ Ապա ինչպէս կարող է մեղաւոր մարդը նշաններ թ անել. եւ տարաձայնութիւն էր նորանց ժ մէջումը։

17 Նորէն ասացին կոյրին. Դու ինչ ես ասում նորա համար՝ որ քո աչքերդ բացաւ. եւ նա ասաց թէ Մարգարէ ի է։

18 Եւ Հրէաները չէին հաւատում նորա համար՝ թէ կոյր էր եւ բացվաւ. մինչեւ որ աչքը բացվածին ծնողքը կանչեցին։

19 Նորանց հարցրին եւ ասացին. Սա՞ է ձեր որդին՝ որ դուք նորա

ը Համար. 6, 7։ | Գ. 2։ | Ժ. 19։ | 14։
թ Համար. 33. Գլ. | ժ Գլ. Ե. 12. 43. | ի Գլ. Գ. 19. Զ.

եթէ կոյր ծնաւ. արդ՝ զիա՞րդ տեսանէ։
20 Պատասխանի ետուն նոցա ծնողքն նորա՝ եւ ասեն. Գիտեմք զի սա է որդին մեր, եւ զի կոյր ծնաւ.
21 Բայց զիարդ այժմ տեսանէ՝ ոչ գիտեմք. կամ թէ՝ ո՛ եբաց զաչս զորա՝ մեք ոչ գիտեմք. զդա իսկ հարցէք, ինքնին ՚ի չափ հասեալ է. ինքն իսկ խօսեսցի վասն իւր։
22 Զայս ասացին ծնողքն նորա, զի երկնչէին ՚ի Հրէից. քանզի ուխտ եդեալ էր Հրէից, եթէ որ խոստովանեսցի զնա Քրիստոս՝ ՚ի բաց կացցէ ՚ի ժողովրդենէն։
23 Վասն այնորիկ ասացին ծնողքն նորա, թէ Ինքնին ՚ի չափ հասեալ է, զնա իսկ հարցէք։
24 Դարձեալ կրկին անգամ կոչեցին զայրն՝ որ կոյրն էր, եւ ասեն ցնա. Տո՛ւր փառս Աստուծոյ. մեք գիտեմք՝ զի այրն այն մեղաւոր է։
25 Եւ նա ասէ. Թէ մեղաւոր իցէ՝ ես ոչ գիտեմ. բայց զայս գիտեմ, զի կոյր էի՝ եւ արդ տեսանեմ։
26 Դարձեալ ասեն ցնա. Զի՞նչ արար քեզ, զիա՞րդ եբաց զաչս քո։
27 Պատասխանի ետ նոցա. Այժմ ասացի ձեզ՝ եւ ոչ լուարուք. զի՞ կամիք միւսանգամ լսել. միթէ եւ դո՛ւք կամիք աշակերտել նմա։
28 Նոքա հայհոյէին զնա՝ եւ ասէին. Դո՛ւ լիջիր նորա աշակերտ. մեք Մովսէսի աշակերտ եմք։
29 Մեք գիտեմք՝ զի ընդ Մովսէսի խօսեցաւ Աստուած. զդա ոչ գիտեմք ուստի իցէ։

համար ասումէք՝ թէ կոյր ծնվաւ. ապա ինչպէս է տեսնում։
20 Նորա ծնողքը պատասխան տուին եւ ասացին. Գիտենք որ սա մեր որդին է, եւ թէ կոյր ծնվաւ.
21 Բայց թէ հիմիկ ինչպէս է տեսնում՝ նա չենք գիտում. կամ թէ ով բացաւ նորա աչքերը՝ մենք չենք գիտում. իրեն հարցրէք. ինքը չափը հասած է՝ թող ինքը խօսի իրեն համար։
22 Նորա ծնողքը սա ասացին. պատճառն որ՝ Հրէաներիցը վախենումէին. ինչու որ՝ Հրէաները ուխտ էին դրել որ՝ եթէ մինը Քրիստոս դաւանէ նորան՝ ժողովարանիցը դուրս լինի։
23 Նորահամար նորա ծնողքն ասացին՝ թէ Ինքը չափը հասած է՝ իրենից հարցրէք։
24 Նորէն երկրորդ անգամ կանչեցին այն մարդուն՝ որ կոյր էր, եւ նորան ասացին. Աստուծոյ փառք տուր. մենք գիտումենք՝ որ այն մարդը մեղաւոր է։
25 Եւ նա ասաց. Եթէ մեղաւոր է՝ ես չեմ գիտում, միայն թէ սա եմ գիտում, որ կոյր էի՝ եւ հիմիկ տեսնումեմ։
26 Նորէն ասացին նորան. Ի՞նչ արաւ քեզ. ինչպէս բացաւ քո աչքերդ։
27 Նորանց պատասխան տուաւ. Հիմիկ ձեզ ասացի եւ չլսեցիք. ինչու էք կրկին կամենում լսել. միթէ դուք էլ էք կամենում նորան աշակերտ լինել։
28 Նորանք հայհոյումէին նորան եւ ասում. Դու լինիս նորան աշակերտ. մենք Մովսէսի աշակերտաներն ենք։
29 Մենք գիտումենք՝ որ Աստուած Մովսէսի հետ խօսեց. սորան չենք գիտում՝ որ տեղից է։

ւ Գղ. Է. 13. ԺԲ. 42. ԺԹ. 38. | Գործ. Ե. 13. | ժ Համար. 34. ՃԶ. 2. | ծ Յես. Է. 19 Ա Թագ. Զ. 5. | լ Համար. 16. | հ Գղ. Ը. 14.

30 Պատասխանի ետ այրն եւ ասէ ցնոսա. Այդ խոկ են սքանչելիք. զի դուք ոչ գիտէք՝ ուստի իցէ, եւ զիմ զաչս եբաց:

31 Գիտեմք՝ զի Աստուած մեղաւորաց ոչ լսէ. բայց եթէ աստուածապաշտ ոք իցէ՝ եւ զկամս նորա առնիցէ, նմա լսէ:

32 'Ի յաւիտենից ոք ոչ լուաւ՝ եթէ եբաց ոք զաչս կուրի 'ի ծնէ կոյր ծնելոյ:

33 Եթէ ոչ յԱստուծոյ էր այրն այն՝ ոչ կարէր առնել ինչ:

34 Պատասխանի ետուն եւ ասեն ցնա. 'Ի մեղս խոկ ծնեալ ես ամենեւին, եւ դու վարդապետես լինիս մեր. եւ հանին զնա արտաքս:

35 Լուաւ Յիսուս, եթէ հանին զնա արտաքս, եւ իբրեւ եգիտ զնա՝ ասէ ցնա. Դու հաւատաս յՈրդի Աստուծոյ:

36 Նա պատասխանի ետ եւ ասէ. Տէր՝ ով է՝ զի հաւատացից 'ի նա:

37 Ասէ ցնա Յիսուս. Եւ տեսեր զնա, եւ որ խօսիդ ընդ քեզ՝ նա է:

38 Եւ նա ասէ. Հաւատամ Տէր, եւ երկիր եպագ նմա:

39 Եւ ասէ Յիսուս. 'Ի դատաստան եկի յաշխարհս յայս, զի որ ոչն տեսանենն՝ տեսցեն, եւ որք տեսանենն՝ կուրասցին:

40 Լուան ոմանք 'ի փարիսեցւոցն՝ որք ընդ նմա էին, եւ ասեն ցնա. Միթէ եւ մեք կոյրք իցեմք:

30 Այն մարդը պատասխան տըւաւ եւ նորանց ասաց. Ճիշդ դա է զարմանալի բանը՝ որ դուք չէք գիտում՝ թէ սա ուր տեղից է՝ եւ իմ աչքերս ծ բացաւ:

31 Գիտեմնք՝ որ Աստուած մեղաւորներին ւ չի լսում. բայց թէ որ մինն աստուածապաշտ է՝ եւ նորա կամքը կատարումէ՝ նորան լըսումէ:

32 Յաւիտենից մին մարդ չըլսեց՝ թէ մինը ծնընդից կոյր ծնվածի աչքերը բացաւ:

33 Թէ որ այն մարդն Աստուածանից չէր՝ մին բան չէր կարող ձ անել:

34 Պատասխան տուին՝ եւ նորան ասացին. Դու իսպառ մեղքերի մէջն ես ծնվել, եւ դու վարդապետես լինում ճ մեզ. եւ դուրս հանեցին նորան:

35 Յիսուս լսեց՝ որ նորան դուրս հանեցին, եւ երբոր նորան գտաւ՝ նորան ասաց. Դու հաւատումես Աստուծոյ յ Որդուն:

36 Նա պատասխան տուաւ եւ ասաց. Տէր՝ ով է նա՝ որ հաւատամ նորան:

37 Յիսուս նորան ասաց. Հէնց տեսար նորան. եւ խոկ նա է, որ քեզ հետ ն խօսումէ:

38 Եւ նա ասաց. Հաւատումեմ Տէր՝ եւ երկրպագութիւն արաւ նորան:

39 Եւ Յիսուս ասաց. Ես դատաստանի համար եկի այս ւ աշխարհքս՝ որ նորանք՝ որ չեն տեսնում՝ տեսնեն, եւ նորանք՝ որ տեսնումեն՝ մ կուրանան:

40 Փարիսեցիներիցը մին քանիսն՝ որ նորա հետ էին՝ լսեցին եւ նորան ասացին. Միթէ մենք էլ կոյր շ ենք:

ծ Գլ. Գ. 10:
ւ Յոբ. ԻԷ. 9: ԼԵ. 12: Սաղ. ԺԸ. 41: ԿԶ. 18: Առակ. Ա. 28: ԺԵ. 29: ԻԸ. 9: Եսայ. Ա. 15: Երեմ. ԺԱ. 11: ԺԴ. 12: Եզեկ. Ը. 18: Միք. Գ. 4: Զաք. Է. 13:
ձ Համար. 16:
ճ Համար. 2:
յ Մատթ. ԺԴ. 33: ԺԶ. 16: Մարկ. Ա. 1: Գլ. Ժ. 36: Ա Յովհ. Ե. 13:
ն Գլ. Դ. 26:
ւ Գլ. Ե. 22. 27: Գ. 17: ԺԲ. 47:
մ Մատթ. ԺԳ. 13:
շ Հռովմ. Բ. 19:

41 Ասէ ցնոսա Յիսուս. Եթէ կոյրք էիք՝ ոչ էր ձեր մեղ. բայց արդ ասէք՝ եթէ Տեսանեմք, եւ մեղքն ձեր ՚ի ձեզ հաստատեալ են։

41 Յիսուս նորանց ասաց. Թէ որ կոյր լինէիք՝ մեղք չէիք ունենալ. բայց հիմիկ ասում էք թէ՝ Տեսնում ենք, եւ ձեր մեղքերը հաստատուած են ձեզանում։

## ԳԼ. Ժ

1 Ամէն ամէն ասեմ ձեզ. Որ ոչ մտանէ ընդ դուռն ՚ի գաւիթ ոչխարաց, այլ ընդ այլ ելանէ՝ նա գող է, եւ աւազակ։

2 Իսկ որ մտանէ ընդ դուռն, հովիւ է ոչխարաց։

3 Նմա դռնապանն բանայ, եւ ոչխարքն ձայնի նորա լսեն. եւ զիւր ոչխարսն կոչէ յանուանէ, եւ հանէ զնոսա։

4 Եւ յորժամ զիւրսն զամենայն հանիցէ, առաջի նոցա երթայ, եւ ոչխարքն զհետ նորա երթան. զի ճանաչեն զձայն նորա։

5 Զօտարի զհետ ոչ երթիցեն, այլ փախիցեն ՚ի նմանէ, զի ոչ ճանաչեն զձայն օտարաց։

6 Զայս առակ ասաց նոցա Յիսուս, եւ նոքա ոչ գիտէին, եթէ զինչ էր՝ որ խօսէրն ընդ նոսա։

7 Դարձեալ ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ամէն ասեմ ձեզ, զի Ես եմ դուռն ոչխարաց։

8 Ամենեքեան՝ որ յառաջ քան զիս եկին, գողք էին եւ աւազակք. այլ ոչ լուան նոցա ոչխարքն։

9 Ես եմ դուռն. ընդ իս եթէ ոք մտանիցէ, կեցցէ՝ մտցէ եւ ելցէ, եւ ճարակ գտցէ։

10 Գող ոչ գայ, եթէ ոչ՝ զի գողասցի եւ սպանցէ եւ կորուսցէ. Ես եկի զի զկեանս ունիցին, եւ առաւել եւս ունիցին։

1 Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. Նա որ դռնովը չի մտնում ոչխարների գաւիթը՝ բայց ուրիշ կողմից է վեր ելնում այն տեղ՝ նա գող է եւ աւազակ։

2 Բայց նա որ դռնովն է մտնում, ոչխարներին հովիւն է։

3 Դռնապանը նորա համար բանում է. եւ ոչխարները նորա ձայնին լսում են, եւ իրեն ոչխարներին իր ենց անունովն է կանչում, եւ նորանց դուրս հանում։

4 Եւ երբոր իրեններին ամէնը հանում է, նորանց առաջին գնում է, եւ ոչխարները նորա ետեւէն գնում են. ինչու որ՝ նորա ձայնը ճանաչում են։

5 Օտարի ետեւէն չեն գնում. բայց նորանից փախչում են, ինչու որ՝ օտարների ձայնը չեն ճանաչում։

6 Այս առակը Յիսուս ասաց նորանց. եւ նորանք չէին գիտում, թէ ինչ էր նա, որ խօսում էր նորանց հետ։

7 Նորէն Յիսուս նորանց ասաց. Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. թէ Ես եմ ոչխարներին դուռն։

8 Ամէնքն՝ որ ինձանից առաջ եկան, գողեր եւ աւազակներ էին. ոչխարներն էլ նորանց չլսեցին։

9 Ես եմ դուռն. թէ որ մէկն ինձանով ներս մտնէ՝ նա կապրի. կը մտնէ եւ դուրս կը գայ, եւ արօտ կը գտնէ։

10 Գողը չի գալիս, բայց մինակ որ գողանայ եւ սպանէ եւ կորցնէ. Ես եկի որ կեանք ունենան, եւ էլ աւելի ունենան։

գ Գղ. ԺԵ. 22, 24։ — | Գղ. ԺԴ. 6։ Եփես. Բ. 18։

11 Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ 'ի վերայ ոչխարաց ։

12 Իսկ վարձկանն՝ որ ոչ է հովիւ, որոյ ոչ իւր են ոչխարքն. իբրեւ տեսանէ զգայլն զի գայ, թողու զոչխարսն եւ փախչի, եւ գայլն յափշտակէ զնոսա եւ ցրուէ ։

13 Քանզի վարձկան է, եւ չէ փոյթ նմա վասն ոչխարացն ։

14 Ես եմ հովիւն քաջ, եւ ճանաչեմ զիմսն եւ ճանաչիմ յիմոցն ։

15 Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ եւ ես զՀայր. եւ զանձն իմ դնեմ 'ի վերայ ոչխարաց ։

16 Նաեւ՝ այլ եւս ոչխարք են իմ, որ ոչ են յայսմ գաւթէ, եւ զայն եւս պարտ է ինձ ածել այսր. եւ ձայնի իմում լուիցեն, եւ եղիցին մի հօտ եւ մի հովիւ ։

17 Վասն այնորիկ սիրէ զիս Հայր իմ, զի ես դնեմ զանձն իմ. զի միւսանգամ առից զնա ։

18 Ո՛չ ոք հանէ զնա յինէն. այլ ես դնեմ զնա անձամբ իմով. իշխանութիւն ունիմ դնել զնա, եւ իշխանութիւն ունիմ միւսանգամ առնուլ զնա. զայս պատուէր առի 'ի Հօրէ իմմէ ։

19 Դարձեալ հերձուած լինէր 'ի մէջ Հրէից վասն բանիցս այսոցիկ ։

20 Եւ ասէին բազումք 'ի նոցանէ. Դեւ գոյ 'ի նմա եւ մոլեգնի. զի՞ բնաւ լսէք նմա ։

11 Ես եմ բարի հովիւը. բարի հովիւն իւրն անձը դնումէ ոչխարներին բ վերայ ։

12 Բայց վարձկանն՝ որ հովիւ չէ, որ ոչխարներն իւրնը չեն. երբոր տեսնումէ՝ որ գայլը գալիս է, ոչխարները թողումէ եւ փախչում. եւ գայլը յափշտակումէ նորանց եւ գ ցրւում ։

13 Պատճառն որ՝ վարձկան է, եւ ոչխարներին համար հոգս չունի ։

14 Ես եմ բարի հովիւը, եւ իմոնքներին ճանաչումեմ եւ իմոնքներիցն էլ դ ճանաչւումեմ ։

15 Ինչպէս որ Հայրն ինձ ե գիտումէ, այնպէս էլ ես Հօրը գիտումեմ, եւ իմ անձըս դնումեմ ոչխարներին զ վերայ ։

16 Եւ դեռ ուրիշ ոչխարներ էլ ունիմ, որ այս գաւթիցս է չեն, եւ նորանց էլ պէտք է, որ ես այստեղ բերեմ. եւ իմ ձայնիս կը լսեն, եւ մին հօտ եւ մին հովիւ ը կը լինին ։

17 Նորահամար իմ Հայրս սիրումէ ինձ, պատճառն որ իմ անձըս դնումեմ՝ որ մին էլ առնեմ թ նորան ։

18 Ո՛չ ով նորան չի հանում ինձանից. բայց ես ինքս իմ անձնովս եմ դնում նորան. իշխանութիւն ունիմ նորան դնելոյ եւ իշխանութիւն ունիմ նորան նորէն ժ առնելոյ. այս պատուէրս իմ Հօրիցս ի առի ։

19 Նորէն տարաձայնութիւն էր լինում Հրէաներին մէջ՝ այս բաներիս լ համար ։

20 Եւ նորանցից շատերն ասումէին՝ թէ Դեւ կայ նորանում եւ խ գժվումէ. ինչու համար խաղա ականջ էք դնում նորան ։

բ Եսայ. Խ. 11 ։ Եզեկ. ԼԴ. 12. 23 ։ ԼԷ. 24 ։ Եբր. ԺԳ. 20 ։ Ա Պետ. Բ. 25 ։ Ե. 4 ։
գ Զաք. ԺԱ. 16, 17 ։
դ Բ Տիմ. Բ. 19 ։
ե Մատթ. ԺԱ. 27 ։
զ Գլ. ԺԵ. 13 ։
է Եսայ. ԾԶ. 8 ։
ը Եզեկ. ԼԷ. 22 ։ Եփես. Բ. 14 ։ Ա Պետ. Բ. 25 ։
թ Եսայ. ԾԳ. 7, 8. 12 ։ Եբր. Բ. 9 ։
ժ Գլ. Բ. 19 ։
ի Գլ. Զ. 38 ։ ԺԵ. 10 ։ Գործ. Բ. 24. 32 ։
լ Գլ. Է. 43 ։ Թ. 16 ։
խ Գլ. Է. 20 ։ Ը. 48. 52 ։

21 Այլքն ասէին · Այսպիսի բանք
ոչ դիւահարի են · միթէ դեւ կարէ՞
զաչս կուրի բանալ ։

22 Եղեն յայնժամ նաւակատիքն
յԵրուսաղէմ , եւ ձմեռն էր ։

23 Եւ շրջէր Յիսուս 'ի տաճարին՝
'ի սրահին Սողոմոնի ։
24 Շուրջ եղեն զնովաւ Հրէայքն
եւ ասեն · Մինչեւ յե՞րբ թափես զո-
գիս մեր , եթէ դու ես Քրիստոսն՝
ասա մեզ համարձակ ։

25 Պատասխանի ետ նոցա Յիսուս
եւ ասէ · Ասացի ձեզ՝ եւ ոչ հա-
ւատայք ինձ · զգործսն՝ զոր ես
գործեմ յանուն Հօր իմոյ՝ նոքին
իսկ վկայեն վասն իմ ։

26 Այլ դուք ոչ հաւատայք , զի
չէք յոչխարաց անտի իմոց ։
27 Ոչխարք իմ ձայնի իմում լսեն ,
եւ ես ճանաչեմ զնոսա , եւ զկնի
իմ գան ։
28 Եւ ես տամ նոցա զկեանս
յաւիտենականս · եւ մի կորիցեն
յաւիտեան · եւ մի ոք յափշտա-
կեսցէ զնոսա 'ի ձեռաց իմոց ։
29 Հայրն իմ՝ որ ետ ինձ զնոսա ,
մեծ է քան զամենայն , եւ ոչ ոք
կարէ յափշտակել 'ի ձեռաց Հօր ի-
մոյ ։
30 Ես եւ Հայր իմ մի եմք ։
31 Վէմս առին Հրէայքն՝ զի քար-
կոծ արասցեն զնա ։
32 Պատասխանի ետ նոցա Յի-
սուս · Բազում գործս բարիս ցու-
ցի ձեզ 'ի Հօրէ իմմէ · վասն որոյ
գործոյ 'ի նոցանէ քարկոծ առնէք
զիս ։
33 Պատասխանի ետուն նմա Հրէ-

21 Այլքն ասումէին · Այսպիսի
խօսքեր դիւահարի չեն · միթէ դե-
ւը [ծ] կարող է կոյրի աչքերը բա-
նալ ։
22 Այն ժամանակին Երուսաղէմու-
մը նաւակատիք տօն էլաւ՝ եւ ձը-
մեռն էր ։
23 Եւ Յիսուս ման էր գալիս տա-
ճարումը Սողոմոնի սրահին [§] մէջ ։
24 Հրէաները նորան չորս կողմո-
վը պատեցին եւ ասացին · Մինչեւ
երբ մեր հոգիներըս հանես · թէ որ
դու ես Քրիստոսը , համարձակ ա-
սա մեզ ։
25 Յիսուս պատասխան տուաւ
նորանց եւ ասաց · Ասացի ձեզ եւ
ինձ չէք հաւատում · այն գործքե-
րըն՝ որ իմ Հօրս անունովը գոր-
ծումեմ՝ իսկ նորանք վկայումեն
ինձ [յ] համար ։
26 Բայց դուք չէք [ղ] հաւատում ·
ինչու որ՝ իմ ոչխարներիցս չէք ։
27 Իմ ոչխարներս իմ ձայնիս լը-
սումեն եւ ես ճանաչումեմ նո-
րանց , եւ իմ ետեւէս գալիս [ճ] են ։
28 Եւ ես յաւիտենական կեանքն
եմ տալիս նորանց , եւ յաւիտեան
չեն կորչիլ՝ եւ ոչ ով չի յափշտա-
կիլ նորանց իմ [մ] ձեռքիցս ։
29 Իմ [յ] Հայրս՝ որ նորանց տուաւ
ինձ , ամէնից մեծ է , եւ ոչ ով
կարող չէ իմ Հօրս ձեռքիցը յա-
փշտակել [ն] նորանից ։
30 Ես եւ իմ Հայրս մէն [շ] ենք ։
31 Հրէաներն քարեր վեր առին՝
որ նորան քարկոծ [ո] անեն ։
32 Յիսուս նորանց պատասխան
տուաւ · Շատ բարի գործքեր ցոյց
տուի ձեզ իմ Հօրիցս · նորանցից
որ գործի համար էք ինձ քարկոծ
անում ։
33 Հրէաները պատասխան տը-

[ծ] Ելից · Դ · 11 · Սաղ · ՂԴ · 9 · ՃԽԶ · 8 ·
[§] Գլ · Թ · 6 · 7 · 32 · 33 ·
[հ] Գործ · Գ · 11 · Ե · 12 ·
[յ] Համառ · 38 · Գլ · Փ · 2 · Ե · 36 ·
[ղ] Գլ · Ը · 47 · Ա · Յովհ · Դ · 6 ·
[ճ] Համառ · 4 · 14 ·
[մ] Գլ · Զ · 37 · ԺԼ · 11 · 12 · ԺԸ · 9 ·
[յ] Գլ · ԺԳ · 28 ·
[ն] Գլ · ԺԵ · 2 · 6 · ՃԱ ·
[շ] Գլ · ԺԵ · 11 · 22 ·
[ո] Գլ · Ը · 59 ·

այքն ․ Վասն բարւոյ գործոյ ոչ ատ-
նեմք զքեզ քարկոծ , այլ վասն
հայհոյութեանն ․ եւ զի դու մարդ
ես , եւ զանձն քո Աստուած առ-
նես ։
34 Պատասխանի ետ նոցա Յի-
սուս ․ Ո՞չ յօրէնս ձեր գրեալ է ․
Ես ասացի թէ աստուածք իցէք ։
35 Իսկ եթէ զնոսա աստուածս ա-
սէ , առ որս բանն Աստուծոյ եղեւ ․
եւ չէ մարթ եղծանել գրոյն ։
36 Իսկ զոր Հայր սրբեաց՝ եւ ա-
ռաքեաց յաշխարհ , դուք ասէք՝ թէ
Հայհոյես ․ զի ասացի՝ թէ Որդի
Աստուծոյ եմ ։
37 Եթէ ոչ գործեմ զգործս Հօր
իմոյ , մի հաւատայք ինձ ։
38 Ապա թէ գործեմ , թէեւ ինձ
ոչ հաւատայք , սակայն գործոյն
հաւատացէք ․ զի գիտասջիք եւ
ծանիջիք՝ եթէ Հայր յիս է եւ ես
'ի Հայր ։
39 Դարձեալ խնդրէին զնա ու-
նել , եւ ել 'ի ձեռաց նոցա ։
40 Եւ գնաց միւսանգամ յայնկոյս
Յորդանանու՝ 'ի տեղին , ուր էր
Յովհաննէս զառաջինն՝ եւ մկրտէր ,
եւ անդ լինէր ։
41 Եկին բազումք առ նա՝ եւ ա-
սէին ․ զի Յովհաննէս նշան ինչ ոչ
արար ։
42 Բայց զամենայն , զոր ասաց
Յովհաննէս վասն նորա , ճշմարիտ
էր ․ եւ բազումք հաւատացին 'ի
նա անդ ։

ւմն ․ Բարի գործքի համար քեզ
քարկոծ չենք անում , բայց հայ-
հոյութեան համար ․ եւ որ դու
մարդ ես , եւ քո անձըդ Աստուած
ւ ես անում ։
34 Յիսուս նորանց պատասխան
տուաւ ․ Չէ՞ որ ձեր օրէնքումը
գրված է՝ թէ Ես ասացի՝ թէ աստ-
ուածներ դ էք ։
35 Ապա թէ որ նորանց աստ-
ուածներ է ասում՝ որ Աստուծոյ
խօսքն էլաւ նորանց Ն վերայ ․ եւ
կարելի չէ որ գիրքը քանդվի ․
36 Ապա նորան որ Հայրը — սրբ-
բեց եւ ուղարկեց = աշխարհք ,
դուք ասում էք թէ Հայհոյում ես ․
պատճառն որ Լ ասացի՝ թէ Աստու-
ծոյ Որդի ⁊ եմ ։
37 Թէ որ իմ Հօրս գործքը չեմ
գործում , մի հաւատաք բ ինձ ։
38 Ապա թէ որ գործումեմ , թէեւ
ինձ չըհաւատաք , գոնեա գործ-
քերին ջ հաւատացէք ․ որ գիտե-
նաք եւ ճանաչէք , թէ Հայրն ին-
ձանում է եւ ես Հօր – միջումը ։
39 Նորէն ուզումէին որ նորան
բռնեն , եւ նորանց ձեռքիցը դուրս
‡ ելաւ ։
40 Եւ կրկին գնաց Յորդանանի
այն կողմն՝ այնտեղն , որ Յօհան-
նէսն առաջուց կար եւ + մկր-
տումէր ․ եւ այնտեղ էր լինում ։
41 Շատ մարդիկ նորա մօտ եկին՝
եւ ասացին ․ թէ Յօհաննէս մին
նշան չըգործեց ․
42 Բայց ամէն ինչ որ Յօհաննէս
նորա համար • ասաց , ճշմարիտ էր ․
եւ այնտեղ շատ մարդիկ հաւատա-
ցին ÷ նորան ։

ւ Գլ․ Ե․ 18․
դ Սաղ․ ՁԲ․ 6․
Ն Հռովմ․ ԺԴ․ 1․
— Գլ․ Զ․ 27․
= Գլ․ Դ․ 17․ Ե․ 36, 37․ Ը․ 42․
Լ Գլ․ Ե․ 17, 18․ Համար․ 30․
⁊ Ղուկ․ Ա․ 35․ Գլ․ Թ․ 35․ 37․
բ Գլ․ ԺԵ․ 24․
ջ Գլ․ Ե․ 36․ ԺԴ․ 10, 11․
– Գլ․ ԺԴ․ 10, 11․ ԺԷ․ 21․
‡ Գլ․ Է․ 30․ 44․ Ը․ 59․
+ Գլ․ Ա․ 28․
• Գլ․ Գ․ 30․
÷ Գլ․ Ը․ 30․ ԺԱ․ 45․

—

## ԳԼ. ԺԱ.

1 Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս ՚ի Բեթանիա, ՚ի գեղջէ Մարիամայ եւ Մարթայի քեռ նորա։

2 Այս այն Մարիամ էր՝ որ օծ զՏէրն իւղով եւ ջնջեաց զոտս նորա հերօք իւրովք. որոյ եղբայրն Ղազարոս հիւանդ էր։

3 Առաքեցին առ նա քորքն նորա՝ եւ ասեն. Տէր՝ ահաւասիկ՝ զոր դուն սիրէիր՝ հիւանդացեալ է։

4 Իբրեւ լուաւ Յիսուս, ասէ. Այն հիւանդութիւն չէ ՚ի մահ, այլ վասն փառացն Աստուծոյ. զի փառաւոր լիցի Որդի Աստուծոյ այնուիկ։

5 Եւ սիրէր Յիսուս զՄարթա եւ զքոյրն նորա զՄարիամ եւ զՂազար։

6 Իբրեւ լուաւ թէ հիւանդացեալ է, զանեղի կալաւ անդէն ուր էրն՝ աւուրս երկուս։

7 Ապա յետ այնորիկ ասէ ցնոսա. Եկայք երթիցուք միւսանգամ ՚ի Հրէաստան։

8 Ասեն ցնա աշակերտքն. Ռաբբի՝ այժմ եւս խնդրէին զքեզ Հրէայքն քարկոծ առնել. եւ դարձեալ երթաս անդրէն։

9 Պատասխանի ետ Յիսուս. Ո՞չ երկոտասան ժամ է աւուր. եթէ ոք գնայ ՚ի տուընջեան՝ ոչ գայթակղի. զի զլոյս աշխարհիս այսորիկ տեսանէ։

10 Ապա թէ ոք գնայ գիշերի՝ գայթակղի, զի լոյս ոչ գոյ ընդ նմա։

11 Զայս իբրեւ ասաց. յետ այսորիկ ասէ ցնոսա. Ղազարոս բարեկամ մեր ննջեաց, այլ երթամ զի զարթուցից զնա։

1 Եւ մին Ղազարոս մարդ կար հիւանդ՝ Բեթանիայիցը, Մարիամի եւ նորա քոյր Մարթայի ա գիւղիցը։

2 Սա այն Մարիամն էր՝ որ Տէրին իւղով օծեց եւ նորա ոտները սրբեց իրեն մազերովը. որ նորա Ղազարոս եղբայրը հիւանդ բ էր։

3 Նորա քուրերքն ուղարկեցին նորա մօտ եւ ասացին. Տէր՝ ահա նա՝ որ դու սիրում էիր՝ հիւանդացել է։

4 Յիսուս երբոր լսեց՝ ասաց. Այն հիւանդութիւնը մեռնելոյ համար չէ՝ այլ Աստուծոյ փառաց համար. որ Որդին Աստուծոյ նորանով գ փառաւորվի։

5 Եւ Յիսուս սիրում էր Մարիամին եւ նորա քոյր Մարթային եւ Ղազարին։

6 Երբոր լսեց՝ թէ նա հիւանդացել է, երկու օր մնաց այն տեղին՝ որ դ էր։

7 Ապա նրանից ետեւ ասաց նորանց. Եկէք նորէն գնանք Հրէաստան։

8 Աշակերտները նորան ասացին. Ռաբբի՝ ճիշդ հիմիկ Հրէաները ուզում էին քեզ քարկոծ ե անել. եւ դարձեալ այնտեղ ես գնում։

9 Յիսուս պատասխան տուաւ. Չէ՞ որ օրը տասներկու ժամ զ ունի. թէ որ մինը ցերեկը կըգնայ, նա չի գայթակղվիլ. ինչու որ՝ այս աշխարհքիս լոյսը տեսնում է։

10 Ապա թէ որ մինը գիշերումը կըգնայ՝ կըգայթակղվի. ինչու որ՝ լոյս չըկայ նորա է հետ։

11 Երբոր սա ասաց, սրանից ետեւ ասաց նորանց. Մեր Ղազարոս բարեկամը քուն էլաւ. բայց կըգնամ՝ որ զարթնացնեմ ը նորան

ա Ղուկ. Ժ. 38. 39.
բ Մատթ. ԻԶ. 7. Մարկ. ԺԴ. 3. Գլ. ԺԲ. 3.
գ Գլ. Թ. 3. Համար. 40.
դ Գլ. Ժ. 40.
ե Գլ. Ժ. 31.
զ Գլ. Թ. 4.
է Գլ. ԺԲ. 35.
ը Բ Օրին. ԼԱ. 16. Դան. ԺԲ. 2. Մատթ. Թ. 24. Գործ. Է. 59. Ա Կորնթ. ԺԵ. 18. 51.

12 Ասեն ցնա աշակերտքն. Տէր՝
եթէ ննջեաց՝ ապա ապրի ։

13 Այլ Յիսուս վասն մահուան
նորա ասէր. Նոցա այսպէս թուե-
ցաւ՝ թէ վասն ննջելոյ քնոյն ասէ ։

14 Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս
յայտնապէս. Ղազարոս մեռաւ ։
15 Եւ ես ուրախ եմ վասն ձեր,
զի դուք հաւատասջիք ինձ, զի ես
չէի անդ. բայց արդ՝ եկայք երթի-
ցուք առ նա ։
16 Ասէ Թովմաս՝ անուանեալն Երկ-
ուորեակ՝ ցաշակերտակիցսն. Ո՛ն ե-
կայք եւ մեք՝ զի ընդ նմա մեռցուք ։

17 Եկն Յիսուս՝ եգիտ զնա չո-
րեքօրեայ ՚ի գերեզմանի ։
18 Եւ էր Բեթանիա մերձ յԵրու-
սաղէմ՝ իբրեւ ասպարիզօք հնգե-
տասանիւ ։
19 Բազումք ՚ի Հրէից անտի եկեալ
էին առ Մարթա եւ Մարիամ, զի
մխիթարեսցեն զնոսա վասն եղբօրն ։
20 Մարթա իբրեւ լուաւ՝ թէ Յի-
սուս գայ, ընդ առաջ գնաց նորա.
բայց Մարիամ նստէր անդէն ՚ի
տան ։
21 Ասէ Մարթա ցՅիսուս. Տէր՝
եթէ աստ լեալ էիր՝ եղբայրն իմ
չէր մեռեալ ։
22 Այլ եւ արդ գիտեմ, եթէ զոր
ինչ խնդրեսցես յԱստուծոյ՝ տացէ
քեզ Աստուած ։
23 Ասէ ցնա Յիսուս. Յարիցէ
եղբայրն քո ։
24 Ասէ ցնա Մարթա. Գիտեմ զի
յարիցէ ՚ի յարութեան՝ յաւուրն
յետնում ։
25 Ասէ ցնա Յիսուս. Ես իսկ եմ
յարութիւն եւ կեանք. որ հաւա-
տայ յիս, թէպէտ եւ մեռանի՝
կեցցէ ։

12 Աշակերտները նորան ասացին.
Տէր՝ թէ որ քուն էլաւ՝ ապա կա-
ռողջանայ ։
13 Բայց Յիսուս նորա մեռնելոյն
համար էր ասում. նորանց այնպէս
երեւեցաւ թէ քնի թմբրնկած լի-
նելոյն համար էր ասում ։
14 Այն ժամանակը Յիսուս յայտնի
ասաց նորանց. Ղազարոսը մեռաւ ։
15 Եւ ես ուրախ եմ ձեզ համար՝
որ դուք հաւատաք ինձ, որ ես
այնտեղ չէի. բայց հիմիկ եկէք
գնանք նորա մօտ ։
16 Թօմաս Երկուորեակ կոչվածն
իւր ընկեր աշակերտներին ասաց.
Ապա եկէք՝ որ մենք էլ նորա հետ
մեռնինք ։
17 Յիսուս եկաւ՝ նորան չորս օր
գերեզմանի մէջ դրած գտաւ ։
18 Եւ Բեթանիան մօտ էր Երու-
սաղէմին աւան հինգ ասպարէզի
չափով ։
19 Հրէաներիցը շատեր եկել էին
Մարթային եւ Մարիամին մօտ, որ
եղբօր կողմանէ մխիթարեն նորանց ։
20 Երբոր Մարթան լսեց՝ թէ Յի-
սուս գալիս է, գնաց նորա առա-
ջը. բայց Մարիամն այնտեղ տանը
մէջ նստած էր ։
21 Մարթան Յիսուսին ասաց.
Տէր՝ թէ որ դու այստեղ էլած լի-
նէիր՝ իմ եղբայրս չէր մեռնել ։
22 Բայց հիմիկ էլ գիտեմ, թէ
ինչ որ Աստուածանից խնդրես՝
Աստուած կը տայ Բ քեզ ։
23 Յիսուս նորան ասաց. Քո եղ-
բայրդ յարութիւն կառնէ ։
24 Մարթան նորան ասաց. Գի-
տեմ որ յարութիւն կառնէ յա-
րութեանը յետին Է օրումը ։
25 Յիսուս նորան ասաց. Ես եմ
Է յարութիւն եւ Ւ կեանք. ով որ
ինձ հաւատայ՝ թէ եւ մեռնի՝
Ի կապրի ։

Բ Գլ. Թ. 31 ։
Ժ Ղու. ԺԴ. 14 ։
Գլ. Ե. 29 ։
Է Գլ. Ե. 21 ։ Զ. 39, 40. 44 ։
Ւ Գլ. ԽԱ. 4 ։ Զ. 35 ։ ԺԴ. 6 ։ Կող. Գ. 4 ։ Ա Յովհ. Ա. 1 ։ 2 ։ Ե. 11 ։
Ի Գլ. Գ. 36 ։ Ա Յովհ. Ե. 10 ։ ...

26 Եւ ամենայն որ կենդանի է եւ
հաւատայ յիս, մի՛ մեռցի ՚ի յաւի-
տեան. հաւատա՞ս այդմիկ։
27 Ասէ ցնա. Այո՛ Տէր՝ ես հա-
ւատացի, ծԹէ դու ես Քրիստոսն
Որդի Աստուծոյ, որ յաշխարհ գա-
լոց էիր։
28 Եւ զայս իբրեւ ասաց, գնաց
եւ կոչեաց զՄարիամ զքոյր իւր լռ-
ռելեայն՝ եւ ասէ. Վարդապետն ե-
կեալ է եւ կոչէ զքեզ։
29 Նա իբրեւ լուաւ՝ յարեաւ
վաղվաղակի, եւ եկն առ նա։
30 Չեւ եւս էր եկեալ Յիսուս ՚ի
գեօղն. այլ էր անդէն ՚ի տեղւոջն՝
ուր ընդ առաջ եղեւ նմա Մարթա։
31 Իսկ Հրէայքն՝ որ էին ընդ նմա
՚ի տանն անդ՝ եւ մխիթարէին զնա,
իբրեւ տեսին զՄարիամ՝ թէ յա-
րեաւ վաղվաղակի եւ գնաց, գնա-
ցին եւ նոքա զհետ նորա. համա-
րէին թէ ՚ի գերեզմանն երթայ՝ զի
լացցէ անդ։

32 Իսկ Մարիամ իբրեւ եկն ուր
էրն Յիսուս՝ եւ ետես զնա, անկա-
ւաւ առ ոտս նորա եւ ասէ. Տէր՝ եթէ
աստ էիր դիպեալ՝ ոչ էր մեռեալ
եղբայրն իմ։

33 Յիսուս իբրեւ ետես զնա զի
լայր, եւ որ ընդ նմա էին Հրէայքն՝
լային, խռովեցաւ յոգի իւր իբրեւ
զայրացեալ։

34 Եւ ասէ. Ո՞ւր եդիք զնա.
ասեն ցնա. Տէր՝ եկ եւ տես։

35 Եւ արտասուեաց Յիսուս։
36 Ասէին Հրէայքն. Տեսէք որ-
չափ սիրէր զնա։
37 Կէսքն ՚ի նոցանէ ասէին. Ո՞չ
կարէր սա, որ եբաց զաչս կուրին,
առնել՝ զի եւ սա մի՛ մեռցի։

26 Եւ ամէն ով որ կենդանի է
եւ ինձ հաւատումէ, նա յաւիտեան
չի մեռնիլ. հաւատումես սորան։
27 Նորան ասաց. Այո՛ Տէր, ես
հաւատացի՝ թէ դու ես Քրիստոսն
Աստուծոյ ծ Որդին, որ պէտք է
աշխարհքը գայիր։
28 Եւ երբոր սա ասաց, գնաց
թաքուն կանչեց իրեն Մարիամ
քոյրը եւ ասաց. Վարդապետն ե-
կել է եւ քեզ կանչումէ։
29 Նա երբոր լսեց՝ շուտով վեր-
կացաւ, եւ եկաւ Յիսուսին մօտ։
30 Յիսուս դեռ չէր եկել գիւղը՝
բայց այնտեղն էր՝ որտեղ որ Մար-
թան եկաւ նորան առաջը։
31 Բայց Հրէաներն՝ որ այնտեղ
տանը մէջ նորա հետ էին՝ եւ նո-
րան մխիթարումէին, երբոր Մա-
րիամին տեսին՝ թէ շուտով վեր-
կացաւ եւ գնաց՝ նորանք էլ նորա
ետեւէն գնացին. կարծումէին՝ թէ
գերեզմանն է գնում, որ այնտեղ
լաց է լինի։
32 Բայց Մարիամն երբոր եկաւ
այն տեղն՝ որ Յիսուսն էր՝ եւ նո-
րան տեսաւ, նորա ոտներըն ընկաւ
եւ ասաց. Տէր՝ թէ որ այստեղ պա-
տահած լինէիր՝ իմ եղբայրս չէր
հ մեռնիլ։
33 Յիսուս երբոր նորան տեսաւ՝
որ լաց էր լինում եւ Հրէաներն էլ՝
որ նորա հետ էին՝ լաց էին լի-
նում, իրեն հոգուն մէջ դժուարա-
ցաւ շատ արտմածի նման։
34 Եւ ասաց. Ի՞նչ տեղ դրիք
նորան. նորան ասացին. Տէր՝ եկ
եւ տես։
35 Եւ Յիսուս յ արտասուեց։
36 Հրէաներն ասումէին. Տեսէք՝
թէ որքան էր սիրում նորան։
37 Նորանցից կէսն ասումէին.
Միթէ սա որ կոյրին աչքերը բա-
ցաւ՝ չէր կարող անել՝ որ սա էլ
ղ չը մեռնի։

ծ Մատթ. ԺԶ. 16։ | 14. 70։
Գւ. Դ. 42։ Զ. | է Համար. 19։

հ Համար. 21։ | ղ Գւ. Թ. 6։
յ Ղու. ԺԹ. 41։

38 Յիսուս դարձեալ զայրացեալ
ընդ միտս իւր, գայ ՚ի գերեզմանն.
եւ էր այր մի, եւ վէմ մի եդեալ
՚ի վերայ նորա։
39 Եւ ասէ Յիսուս. Ի բաց արա-
րէք զվէմդ. ասէ ցնա Մարթա՝
քոյր մեռելոյն. Տէր՝ արդ հոտեալ
իցէ, քանզի չորեքօրեայ է։

40 Ասէ ցնա Յիսուս. Ո՞չ ասացի
քեզ, եթէ հաւատասցես՝ տեսցես
զփառսն Աստուծոյ։
41 Եւ բարձին ՚ի վեր անտի զվէմն,
Յիսուս ամբարձ զաչս իւր ՚ի վեր,
եւ ասէ. Հա՛յր՝ գոհանամ զքէն,
զի լուար ինձ։
42 Եւ ես գիտէի՝ զի՛ յամենայն
ժամ լսես ինձ. այլ վասն ժողո-
վրդեանս, որ շուրջ կան՝ ասեմ,
զի հաւատասցեն՝ թէ դու առա-
քեցեր զիս։
43 Զայս իբրեւ ասաց, ՚ի ձայն
մեծ աղաղակեաց եւ ասէ. Ղա՛-
զարէ՝ արի եկ արտաքս։
44 Եւ ել մեռեալն ոտիւք կապե-
լովք, եւ ձեռօքն երիզապնդօք,
երեսօքն վարշամակապատօք, եւ
ասէ ցնոսա Յիսուս. Լուծէք զդա՝
եւ թողէք երթալ։

45 Բազումք ՚ի Հրէիցն՝ որ եկեալ
էին առ Մարեմանս, իբրեւ տեսին
զոր արարն, հաւատացին ՚ի նա։

46 Եւ ոմանք ՚ի նոցանէ գնացին
առ փարիսեցիսն, եւ պատմեցին
նոցա՝ զոր արարն Յիսուս։

47 Ժողովեցին քահանայապետքն
եւ փարիսեցիք ատեան, եւ ասեն.
Զինչ արասցուք, զի այրն այն
բազում նշանս առնէ։
48 Եթէ թողումք զնա այնպէս,
ամենեքին հաւատան ՚ի նա. եւ

38 Յիսուս նորէն իրեն մտքումը
սաստիկ տրտմած՝ եկաւ գերեզմա-
նը. եւ նա մէկ այր էր՝ եւ մէկ
քար նորա վերայ դրած։
39 Եւ Յիսուս ասաց. Այդ քարըդ
դէն ձգեցէք. մեռելին քոյր՝ Մար-
թան նորա ասաց. Տէ՛ր՝ հիմիկ հո-
տած կըլլինի. ինչու որ՝ չորս օր-
վան է։
40 Յիսուս նորան ասաց. Չէ՞ որ
քեզ ասացի. եթէ հաւատաս՝ Աս-
տուծոյ փառքը [ա] կը տեսնես։
41 Եւ երբոր քարը վերառին, Յի-
սուս իրեն աչքերը դէպի վեր բարձ-
րացուց եւ ասաց. Հա՛յր՝ գոհա-
նումեմ քեզանից, որ ինձ լսեցիր։
42 Եւ ես գիտումեմ՝ որ ամէն ժա-
մանակ լսումես ինձ. բայց այս ժո-
ղովրդիս համար եմ ասում՝ որ
չորս կողմերս կանգնած են, որ հա-
ւատան թէ դու ուղարկեցիր [բ] ինձ։
43 Երբոր աս ասաց, մեծ ձայնով
աղաղակեց եւ ասաց. Ղա՛զարէ՝
վե՛ր կաց՝ դո՛ւրս եկ։
44 Եւ մեռեալը դուրս եկաւ կա-
պած ոտներով, եւ ձեռները չորե-
րով պատած, եւ երեսը վարշա-
մակներով [գ] պատած. եւ Յիսուս
նորանց ասաց. Արձակեցէք դորան
եւ թողէք որ գնայ։
45 Հրէաներիցը շատերին՝ որ Մա-
րիամին մօտն էին եկել՝ երբոր տե-
սին նա՝ որ նա արաւ, հաւատա-
ցին [դ] նորան։
46 Եւ նորանցից մին քանիսը գը-
նացին փարիսեցիներին մօտ, եւ
նորանց պատմեցին ինչ որ Յիսուսն
արաւ։
47 Քահանայապետներն ու փա-
րիսեցիներն ատեան [ե] ժողովեցին, եւ
ասացին. Ի՞նչ անենք, ինչու որ՝
այն մարդը շատ նշաններ է [զ] անում։
48 Թէ որ նորան այսպէս թողնենք՝
ամէնքը կը հաւատան նորան, եւ

[ա] Համար. 4. 23։
[բ] Գլ. ԺԲ. 30։
[գ] Գլ. Ի. 7։
[դ] Գլ. Բ. 23. Ժ. 42։ ԺԲ. 11. 18։
[ե] Սաղ. Բ. 2։ Մատթ. ԻԶ. 3։ Մարկ. ԺԴ. 1։ Ղուկ. ԻԲ. 2։
[զ] Գլ. ԺԲ. 19։ Գործ. Դ. 16։

գայցեն Հռոմք՝ եւ բառնայցեն
զազգս մեր՝ եւ զտեղի։
49 Մի ոմն 'ի նոցանէ անուն Կա-
յիափա, որ քահանայապետ էր
տարւոյն այնորիկ, ասէ ցնոսա.
Դուք ոչինչ գիտէք,
50 Եւ ոչ իմաւ խորհել խոկ, թէ
լաւ է մեզ՝ զի այր մի մեռանիցի 'ի
վերայ ժողովրդեանս, եւ մի ամե-
նայն ազգս կորիցէ։
51 Զայս ոչ յանձնէ ինչ ասաց.
այլ զի քահանայապետ էր տար-
ւոյն այնորիկ, մարգարէացաւ՝ եթէ
մեռանելոց էր Յիսուս 'ի վերայ ազ-
գին։
52 Եւ ոչ 'ի վերայ ազգին միայն,
այլ զի եւ զորդիսն Աստուծոյ ըզ
ցրուեալսն ժողովեսցէ 'ի մի։
53 Ապա յայնմ օրէ խորհուրդ ա-
րարին՝ զի սպանցեն զնա։
54 Եւ Յիսուս այնուհետեւ ոչ ե-
թէ համարձակ շրջէր 'ի մէջ Հրէ-
իցն. այլ գնաց անտի յերկիր մի՝
որ մերձ էր յանապատ, 'ի քաղաք
մի՝ որում անուն էր Եփրայիմ, եւ
անդ լինէր աշակերտօքն հանդերձ։

55 Եւ էր մերձ զատիկն Հրէից,
եւ բազումք ելին յԵրուսաղէմ 'ի
գաւառէ անտի յառաջ քան
զզատիկն, զի սրբեսցեն զանձինս
իւրեանց։
56 Խնդրէին զՅիսուս, եւ ասէին
ընդ միմեանս մինչ կային 'ի տաճա-
րին. Զիա՞րդ թուի ձեզ՝ եթէ ոչ
գայցէ 'ի տօն աստ. պատուէր
տուեալ էր քահանայապետիցն եւ
փարիսեցւոց, զի թէ ոք գիտասցէ՝
թէ ուր է, գուշակեսցէ զնմանէ՝
զի կալցեն զնա։

Հռոմայեցիքը կը գան ու մեր ազգը
եւ տեղը վեր կառնեն։
49 Նորանցից մինը Կայիափա ա-
նունով՝ որ այն տարւան քահանա-
յապետն էր՝ նորանց ձ ասաց. Դուք
բնաւ բան չէք գիտում,
50 Եւ իմաւ էլ չէք մտածում, թէ
լաւ է մեզ համար՝ որ մին մարդ
մեռնի ժողովրդիս վերայ՝ եւ ա-
մէն ազգըս ղ չը կորչի։
51 Այս բանըս ոչ թէ իրենից ա-
սաց. բայց որովհետեւ այն տար-
ւան քահանայապետն էր, մարգա-
րէացաւ՝ թէ Յիսուս պիտի մեռնէր
ազգին վերայ։
52 Եւ ոչ թէ միմիայն ազգին ճ վե-
րայ, բայց որ Աստուծոյ ցրւած որ-
դիքներին էլ միատեղ – ժողովէ։
53 Ապա այն օրիցն ետեւ խոր-
հուրդ արին՝ որ նորան սպանեն։
54 Եւ Յիսուս նորանից ետեւ էլ
համարձակ չէր ման գալիս Հրէա-
ներին յ մէջ. բայց այնտեղից գնաց
մին երկիր, որ անապատին մօտ
էր. մին քաղաքի մէջ որ նորան
անունը Եփրայիմ ն էր. եւ այնտեղ
էր կենում աշակերտներին հետ։
55 Եւ Հրէաներին զատիկը մօտ
էր, եւ այն գաւառիցը շատ մար-
դիկ առաջ վեր ելան Երուսաղէմ,
որ իրենց անձները ո սրբեն։

56 Ման էին գալիս Յիսուսին,
եւ իրար շ ասում՝ երբոր տաճա-
րումն էին. Ի՞նչպէս է երեւում
ձեզ. միթէ այս տօնիս չի գալ նա
այստեղ. Բայց քահանայապետներին
ու փարիսեցիները հրաման էին
տւել, որ եթէ մինը գիտենայ՝
թէ ինչ տեղ է, նորա համար ի-
մաց տայ՝ որ բռնեն նորան։

ձ Ղուկ. Գ. 2. Գլ. ԺԸ. 14. Գործ. Դ. 6։
ղ Գլ. ԺԸ. 14։
ճ Եսայ. ԽԹ. 6. Ա Յովհ. Բ. 2։
մ Գլ. Ժ. 16. Եփես. Բ 14—17։
յ Գլ. Դ 1. 3. Է. 1։
ն Բ Մնաց. ԺԳ. 19։
շ Գլ. Բ. 13. Ե. 1. Զ. 4։
ո Համար. 7։

## ԳԼ. ԺԲ

| | |
|---|---|
| 1 Իսկ Յիսուս վեց աւուրբ յառաջ քան զզատիկն եկն 'ի Բեթանիա, ուր էր Ղազար մեռեալն, զոր յարոյցն 'ի մեռելոց։ | 1 Բայց Յիսուս զատկից վեց օր առաջ եկաւ Բեթանիա, ուրտեղ որ մեռած Ղազարոսն էր՝ որ նորան մեռելների միջից ա յարոյց։ |
| 2 Եւ արարին անդ նմա ընթրիս․ եւ 'ի սպասու կայր Մարթա, եւ Ղազար մի էր 'ի բազմելոց ընդ նմա։ | 2 Եւ այնտեղ հացկերոյթ արին նորա բ համար․ եւ Մարթան ծառայումէր սեղանին, եւ Ղազարը նորա հետ նստողներից մինն էր։ |
| 3 Իսկ Մարեմայ առեալ լիտր մի իւղոյ նարդեան ազնուի մեծագնոյ, օծ զոտսն Յիսուսի, եւ հերովք իւրովք մաքրէր զոտս նորա․ եւ տունն լի եղեւ 'ի հոտոյ իւղոյն։ | 3 Բայց Մարիամը մին լիտր նարդոսի ազնիւ մեծագին իւղ գ առաւ․ եւ Յիսուսին ոտներին օծեց, եւ իրեն մազերովը սրբումէր նորան ոտները․ եւ տունը լցուաւ այն իւղին հոտովը։ |
| 4 Ասէ մի ոմն յաշակերտաց նորա՝ Յուդա Իսկարիովտացի, որ մատնելոցն էր զնա։ | 4 Աշակերտներից մինը՝ Յուդա Իսկարիօտացին, որ նորան մատնելու էր՝ ասաց․ |
| 5 Ընդէր ոչ իւղդ այդ վաճառեցաւ երեք հարիւր դահեկանի, եւ տուաւ աղքատաց։ | 5 Ինչու համար այդ իւղը երեք հարիւր դահեկանի չը ծախուեցաւ, եւ աղքատներին տրուաւ։ |
| 6 Զայս ասաց՝ ոչ զի զաղքատաց ինչ փոյթ էր նմա․ այլ զի գող էր՝ եւ զարկղն ինքն ունէր․ եւ որ ինչ անկանէր՝ նա կրէր։ | 6 Սա ասաց չէ թէ որ նա աղքատների համար հոգս ունէր․ բայց նրա համար որ գող էր՝ եւ քսակը ինքն ունէր․ եւ ինչ որ ընկնումէր՝ նա էր դ պահում։ |
| 7 Ասէ Յիսուս․ Թո՛յլ տուր դմա, զի յօրն պատանաց իմոց պահեսցէ զայդ։ | 7 Յիսուս ասաց․ Թո՛յլ տուր դորան, որ մինչեւ իմ պատանքիս օրը պահէ դա։ |
| 8 Զաղքատս յամենայն ժամ ընդ ձեզ ունիք․ զիս ոչ հանապազ ընդ ձեզ ունիք։ | 8 Աղքատներն ամէն ժամանակ ձեզ հետ ունիք․ ե բայց ինձ ամէն ժամանակ չունիք ձեզ հետ։ |
| 9 Իբրեւ գիտաց ժողովուրդ բազում 'ի Հրէից թէ անդ է՝ եկին, ոչ միայն վասն Յիսուսի, այլ զի եւ զՂազար տեսցեն, զոր յարոյցն 'ի մեռելոց։ | 9 Երբոր Հրէաներից շատ ժողովուրդ գիտաց՝ թէ զ այնտեղ է՝ եկին, ոչ թէ միայն Յիսուսին համար, բայց որ Ղազարին էլ տեսնեն, որ նորան մեռելների միջից է յարոյց։ |
| 10 Խորհուրդ արարին քահանայապետքն՝ զի եւ զՂազար սպանցեն։ | 10 Քահանայապետները խորհուրդ արին որ Ղազարին էլ ը սպանեն։ |
| 11 Քանզի բազումք 'ի Հրէից երթային եւ հաւատային 'ի Յիսուս։ | 11 Պատճառն որ՝ Հրէաներից շատ մարդիկ գնումէին եւ հաւատում թ Յիսուսին։ |

ա Գլ. ԺԱ. 1. 43։
բ Մատթ. ԻԶ. 6։
Մարկ. ԺԴ. 3։
գ Ղու. Է. 38, 39։
Գլ. ԺԱ. 2։
դ Գլ. ԺԳ. 29։
ե Մատթ. ԻԶ. 11։
Մարկ. ԺԴ. 7։
զ Գլ. ԺԱ. 43, 44։
է Ղու. ԺԶ. 31։
ը Գլ. ԺԱ. 45։
Համար. 18։

12 Ի վաղիւն անդր՝ ժողովուրդ բազում որ եկեալ էր ՚ի տօնն, իբրեւ լուան՝ թէ գայ Յիսուս յԵրուսաղէմ,

13 Առին ոստս արմաւենեաց, եւ ելին ընդ առաջ նորա՝ աղաղակէին եւ ասէին. Ովսաննայ, օրհնեալ որ գալոցդ յանուն Տեառն՝ թագաւորդ Իսրայէլի։

14 Եւ գտեալ Յիսուսի էշ մի, նստաւ ՚ի վերայ նորա. որպէս եւ գրեալ է.

15 Մի երկնչիր դուստր Սիոնի՝ ահաւասիկ թագաւոր քո գայ նստեալ ՚ի վերայ յաւանակի իշոյ։

16 Եւ զայն ինչ ոչ գիտացին աշակերտքն նորա զառաջինն, այլ յորժամ փառաւորեցաւ Յիսուս, յայնժամ յիշեցին, եթէ այն էր՝ որ գրեալն էր վասն նորա. եւ զայն արարին նմա։

17 Եւ ժողովուրդն վկայէր՝ որ էր ընդ նմա, թէ զՂազար կոչեաց եւ եհ ՚ի գերեզմանէն, եւ յարոյց զնա ՚ի մեռելոց։

18 Եւ վասն այնորիկ ընդ առաջ եղեւ նմա ժողովուրդն, զի լուան եթէ զայն նշանս արարեալ էր նորա։

19 Իսկ փարիսեցիքն ասէին ընդ միմեանս. Տեսանէք՝ զի ոչինչ օգտիք. ահաւասիկ աշխարհ ամենայն զկնի նորա գնաց։

20 Էին անդ ոմանք եւ հեթանոսք յելելոցն անդր, զի երկիրպագանիցեն ՚ի տօնին։

21 Նոքա մատեան առ Փիլիպպոս՝ որ ՚ի Բեթսայիդա Գալիլեացւոյն էր, աղաչէին զնա եւ ասէին. Տէր՝ կամիմք զՅիսուս տեսանել։

12 Նորա յետեւի օրը շատ ժողովուրդ՝ որ եկել էին տօնը, երբոր լսեցին՝ թէ Յիսուս գալիս է բ Երուսաղէմ.

13 Արմաւի ծառի ճղներ առին, եւ դուրս գնացին նորան առաջը, աղաղակում էին եւ ասում. Ովսաննայ, օրհնեալ որ Տէրի անունովը գալիս ես՝ դու Իսրայէլի գ թագաւորդ։

14 Եւ Յիսուս մին էշ գտաւ, եւ նորա վերայ նստեց. ինչպէս որ գրուած է՝ դ թէ.

15 Մի վախենար Սիօնի աղջիկ, ահա քո թագաւորդ գալիս է՝ իշի աւանակի վերայ ե նստած։

16 Եւ աշակերտներն առաջ չիմացան այն զ բանը. բայց երբոր Յիսուս է փառաւորվեցաւ՝ այն ժամանակը մտքներն բերին՝ թէ նա էր՝ որ նորա համար գրուած ը էր. եւ այն բաներն արին նորան։

17 Եւ ժողովուրդն՝ որ նորա հետ էր՝ վկայում էր, թէ Ղազարին գերեզմանիցը մինակ դուրս կանչեց. եւ այնպէս մեռելներին միջիցը յարոյց նորան։

18 Եւ նորա համար ժողովուրդը գնաց նորան առաջը, ինչու որ՝ լսեցին թէ նա այն նշանքն արել թ էր։

19 Բայց փարիսեցիներն իրար մէջ ասում էին. Տեսնում էք՝ որ բնաւ հնար չէք գտնում. ահա ամէն աշխարհք նորա ետեւէն ժ գնաց։

20 Այնտեղ մին քանի հեթանոսներ էլ կային նորանց ի միջումը. որ եկել էին այնտեղ, որ երկրպագութիւն անեն այն լ տօնումը։

21 Նորանք եկին Փիլիպպոսին մօտ՝ որ Գալիլեացոց Բեթսայիդայեցն էր, նորան աղաչում էին եւ ասում. Տէր՝ կամենում ենք Յիսուսին խ տեսնել։

բ Մատթ. ԻԱ. 8. Մարկ. ԺԱ. 8. Ղուկ. ԺԹ. 35, 36, ա.
գ Սաղ. ՃԺԸ. 25, 26.
դ Մատթ. ԻԱ. 7.
ե Զաք. Թ. 9.
զ Ղուկ. ԺԸ. 34.
է Յով. Է. 39.
ը Յով. ԺԴ. 26.
թ Համար. 11.
ժ Յով. ԺԱ. 47, 48.
ի Գործ. ԺԷ. 4.
լ Գ. թագ. Ը. 41, 42. Գործ. Ը. 27.
խ Յով. Ա. 44.

22 Գայ Փիլիպպոս եւ ասէ ցԱնդ-
րէաս. Անդրէաս եւ Փիլիպպոս ա-
սեն ցՅիսուս։
23 Եւ Յիսուս պատասխանի ետ
նոցա՝ եւ ասէ. Եկն ժամ զի փա-
ռաւորեսցի Որդի մարդոյ։
24 Ամէն ամէն ասեմ ձեզ. Եթէ
ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր
մեռանիցի,
25 Ինքն միայն կայ. ապա եթէ
մեռանիցի՝ բազում արդիւնս առնէ։
Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա.
Եւ որ ատեայ զանձն իւր յաշխար-
հիս յայսմիկ, 'ի կեանսն յաւիտե-
նականս պահեսցէ զնա։

26 Եթէ ոք զիս պաշտիցէ՝ զկնի
իմ եկեսցէ, եւ ուր եսն եմ՝ անդ
եւ պաշտօնեայն իմ եղիցի. եթէ
ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա
Հայրն իմ։
27 Բայց այժմ անձն իմ խռովեալ է.
եւ զինչ ասացից. Եթէ Հայր՝ ապրեցո
զիս 'ի ժամէ աստի յայսմանէ, այլ
վասն այնորիկ եկի 'ի ժամս յայս։
28 Հայր՝ փառաւորեա զանուն քո.
Եկն բարբառ յերկնից. Եւ փառա-
ւոր արարի, եւ դարձեալ փառաւոր
արարից։
29 Եւ՝ ժողովուրդն՝ որ կայր եւ
լսէր՝ ասէին. Որոտումն լինել.
կէսքն ասէին. Հրեշտակ խօսեցաւ
ընդ նմա։

30 Պատասխանի ետ Յիսուս՝ եւ
ասէ. Ո՛չ վասն իմ ինչ եկն բար-
բառս այս, այլ վասն ձեր։
31 Այժմիկ դատաստան է աշխար-
հիս այսորիկ. այժմիկ իշխան աշ-
խարհիս այսորիկ ընկեցի արտաքս։

22 Փիլիպպոսն եկաւ եւ Անդրէա-
սին ասաց. Անդրէասն ու Փիլիպ-
պոսն ասացին Յիսուսին։
23 Եւ Յիսուս պատասխան տուաւ
նորանց՝ եւ ասաց. Ժամը հասաւ՛
որ Որդին մարդոյ [ա] փառաւորուի։
24 Ճշմարիտն ճշմարիտն ասա-
ցեմ ձեզ. Թէ որ ցորենի հատը հո-
ղի մէջ չինկնի եւ [բ] մեռնի,
25 Ինքն մինակ կը մնայ. բայց թէ
որ մեռնի՝ շատ պտուղ կը բերէ.
ով որ իրեն անձը սիրումէ՝ կը կոր-
ցընէ նորան. եւ ով որ իրեն ան-
ձըն ատումէ այս աշխարհըումս,
յաւիտենականին կենաց մէջ կը պա-
հէ [գ] նորան։
26 Թէ որ մէկը ծառայէ ինձ՝ թող
նա իմ ետեւէս գայ. եւ ուրեղ որ
ես եմ՝ այնտեղ էլ իմ պաշտօնեայս
կը լինի. թէ որ մէկը ծառայէ ինձ,
իմ Հայրս կը պատուէ [դ] նորան։
27 Բայց հիմիկ իմ անձս նեղա-
ցած է. եւ ինչ ասեմ. Հայր՝ ազա-
տեցրու ինձ այս ժամիցս. բայց իսկ
նորահամար եկի այս ժամիս [ե] մէջը։
28 Հայր՝ փառաւորէ քո անունդ.
երկնքիցը ձայն եկաւ, Փառաւորե-
ցի եւ նորէն [է] կը փառաւորեմ։

29 Եւ ժողովուրդն՝ որ կանգնած
էր եւ լսումէր՝ ասումէին, թէ
Որոտմունք է լինում. եւ կէսն ա-
սումէին՝ թէ Հրեշտակ խօսեց նո-
րա հետ։
30 Յիսուս պատասխան տուաւ եւ
ասաց. Այս ձայնս ոչ թէ ինձ հա-
մար եկաւ, բայց ձեզ [ը] համար։
31 Հիմիկ է այս աշխարհքիս դա-
տաստանը. հիմիկ այս աշխարհքիս
իշխանը դուրս [թ] կը ձգուի։

ա Յհ. ԺԳ. 32. ԺԷ. 1.
բ Ա Կորնթ. ԺԵ. 36.
գ Մատթ. Ժ. 39. ԺԶ. 25. Մարկ. Ը. 35. Ղուկ. Թ. 24. ԺԷ. 33.
դ Յհ. ԺԴ. 3. ԺԷ. 24. Ա Թես. Դ. 16.
ե Մատթ. ԻԶ. 38, 39. Ղուկ. ԺԲ. 50. Յհ. ԺԳ. 21.
զ Ղուկ. ԻԲ. 53. Յհ. ԺԸ. 37.
է Մատթ. Գ. 17.
ը Յհ. ԺԱ. 42.
թ Մատթ. ԺԲ. 29. Ղուկ. Ժ. 18. Յհ. ԺԴ. 30. ԺԶ. 11. Գործ. ԻԶ. 18. Բ Կորնթ. Դ. 4. Եփես. Բ. 2. Զ. 12.

32 Եւ ես յորժամ բարձրացայց
յերկրէ, զամենեսին ձգեցից առ իս :

33 Զայս ասէր, նշանակելով՝ թէ
որով մահու մեռանելոց իցէ :
34 Պատասխանի ետ նմա ժողո-
վուրդն · Մեք լուաք յօրինաց՝ եթէ
Քրիստոսն յաւիտեան կայ, եւ դու
զիարդ ասես՝ թէ պարտ է բարձ-
րանալ Որդւոյ մարդոյ · ո՞վ է այն
Որդին մարդոյ :

35 Ասէ ցնոսա Յիսուս · Փոքր մեւս
եւս ժամանակ լոյս ընդ ձեզ է ·
գնացէք մինչդեռ զլոյսն ունիք,
զի մի խաւար ձեզ հասցէ · զի որ
գնայ 'ի խաւարի, ոչ գիտէ յո եր-
թայ :

36 Մինչդեռ զլոյսն ընդ ձեզ ու-
նիք՝ հաւատացէք 'ի լոյսն, զի որ-
դիք լուսոյ եղիջիք · զայս խօսե-
ցաւ Յիսուս, եւ չոգաւ՝ թաքեաւ
'ի նոցանէ :
37 Եւ այնչափ նշանս արարեալ էր
առաջի նոցա · եւ նոքա ոչ հաւա-
տային 'ի նա :
38 Զի լցցի բանն Եսայեայ մար-
գարէի զոր ասացն · Տէ՛ր ո հաւա-
տաց 'ի լուր մեր, եւ բազուկ
Տեառն ում յայտնեցաւ :
39 Վասն այնորիկ ոչ կարէին հա-
ւատալ, զի միւանգամ ասէ Եսայի :

40 Թէ կուրացոյց զաչս նոցա, եւ
թմբրեցոյց զսիրտս նոցա · զի մի տեսա-
ցեն աչօք, եւ իմասցին սրտիւք,
եւ դարձցին՝ եւ բժշկեցից զնոսա :

32 Եւ ես երբոր կը բարձրանամ
Երկրիցս, ամէնքն կը քաշեմ ինձ
+ մօտ :
33 Այս բանս ասումէր՝ որ ցոյց
տայ թէ ինչ մահով պիտի ‡ մեռնի:
34 Ժողովուրդը պատասխան տը-
ւաւ նորան · Մենք օրէնքիցը լսե-
ցինք՝ թէ Քրիստոսը յաւիտեան կը
կենայ · եւ դու ինչպէս ես ասում՝
թէ պէտք է՝ որ Որդին մարդոյ
բարձրանայ · ո՞վ է այն Որդին
‡ մարդոյ:
35 Յիսուս նորանց ասաց · Մին
քիչ ժամանակ դեռ լոյսը ձեզ հետ
– է · գնացէք, քանի որ լոյսն
ունիք՝ որ խաւարը ձեզ ‡ չբռնանէ ·
պատճառն որ՝ ով որ խաւարումն
է գնում, չգիտում թէ ուր է
+ գնում:
36 Դեռ քանի որ լոյսը ձեզ հետ
ունիք՝ հաւատացէք լուսոյն, որ
* լուսոյ որդիք լինիք · Յիսուս սա
խօսեց, եւ գնաց ‡ թաք կացաւ
նորանցից:
37 Եւ այնքան նշաններ էր արել
նորանց առաջին · եւ նորանք չէին
հաւատում նորան ·
38 Որ Եսայի մարգարէին խօսքը
կատարուի՝ որ ասաց · Տէ՛ր մեր
խօսքին ով հաւատաց, եւ Տէրին
բազուկն ում – յայտնուեցաւ :
39 Նորա համար չէին կարօղանում
հաւատալ · ինչու որ՝ Եսային նորէն
ասումէ ·
40 Թէ նորանց աչքերը ‡ կուրա-
ցրուց, եւ նորանց սրտերը թմրա-
ցրուց · որ աչքով չը տեսնեն, եւ
սրտով չիմանան, եւ դառնան՝ եւ
բժշկեմ նորանց :

‡ Գլ. Գ. 14. Ը. 28.
+ Հռովմ. Ե. 18. Եբր. Բ. 9.
‡ Գլ. ԺԸ. 32.
‡ Սաղ. ՀԹ. 36. 37. ՃԺ. 4. Եսայ. Թ. 7. ԾԴ. 6. Եզեկ. ԼԷ. 25. Դան. Բ. 44. Է. 14. 27. Միք. Դ. 7.
– Գլ. Ա. 9. Ը. 12. Թ. 5. Համար. 46.
‡ Երեմ. ԺԳ. 16. Եփես. Ե. 8.
+ Գլ. ԺԱ. 10. Ա Յովհ. Բ. 11.
* Ղուկ. ԺԶ. 8. Եփես. Ե. 8. Ա Թես. Ե. 5. Ա Յովհ. Բ. 9–11.
‡ Գլ. Ը. 59. ԺԱ. 54.
– Եսայ. ԾԳ. 1. Հռովմ. Ժ. 16.
‡ Եսայ. Զ. 9, 10. Մատթ. ԺԳ. 14.

41 Զայս ասաց Եսայի՝ զի ետես զփառս նորա, եւ խօսեցաւ վասն նորա։

42 Բայց սակայն եւ յիշխանաց անտի բազումք հաւատացին 'ի նա. այլ վասն փարիսեցւոյն ոչ յայտնէին, զի մի 'ի ժողովրդենէն ելանիցեն։

43 Քանզի սիրեցին զփառս մարդկան՝ առաւել քան զփառսն Աստուծոյ։

44 Եւ Յիսուս աղաղակէր եւ ասէր. Որ հաւատայ յիս՝ ոչ հաւատայ յիս, այլ յայն՝ որ առաքեացն զիս։

45 Եւ որ տեսանէ զիս, զայն տեսանէ՝ որ առաքեացն զիս։

46 Ես լոյս յաշխարհ եկի, զի ամենայն որ հաւատայ յիս՝ 'ի խաւարի մի՛ մնասցէ։

47 Եւ թէ ոք լուիցէ բանից իմոց, եւ ոչ պահեսցէ, ես ոչ դատիմ զնա. քանզի ոչ եկի՝ թէ դատեսցայց զաշխարհ, այլ զի փրկեցից զաշխարհ։

48 Որ անարգէ զիս, եւ ոչ ընդունի զբանս իմ, գոյ՝ որ դատի զնա. բանն զոր ես խօսեցայ, նա դատի զնա յաւուրն յետնում։

49 Զի ես յանձնէ իմմէ ոչ խօսեցայ. այլ որ առաքեացն զիս Հայր, նա ետ ինձ պատուէր՝ զինչ ասացից՝ եւ զինչ խօսեցայց։

50 Եւ գիտեմ՝ եթէ պատուէրն այն կեանք են յաւիտենականք. արդ՝ զոր եսն խօսիմ, որպէս ասաց ինձ Հայրն՝ այնպէս խօսիմ։

41 Եսային աս ասաց. երբոր նորա փառքը տեսաւ, եւ նորա համար է խօսեց։

42 Բայց այնպէս էլ իշխաններիցը շատերը հաւատացին նորան. բայց փարիսեցւոց պատճառովը չէին յայտնում, որ ժողովարանիցը դուրս ը չըլլնին։

43 Ինչու որ՝ մարդկանց փառքըն աւելի սիրեցին քանթէ Աստուծոյ թ փառքը։

44 Եւ Յիսուս աղաղակումէր եւ ասում. Նա որ ինձ հաւատումէ՝ ոչ թէ ինձ է հաւատում, բայց նորան՝ որ ինձ ժ ուղարկեց։

45 Եւ նա որ ինձ տեսանումէ, նորան է տեսնում՝ որ ինձ ի ուղարկեց։

46 Ես լոյս եկի աշխարհքս, որ ամէն ով հաւատումէ ինձ՝ խաւարի մէջ լ չըմնայ։

47 Եւ թէ որ մինն իմ խօսքերիս լսէ եւ չըպահէ, ես չեմ դատել խ նորան. պատճառն որ՝ ես չեկի՝ որ աշխարհքը ծ դատեմ, այլ որ աշխարհքը փրկեմ։

48 Ով որ ինձ անարգումէ, եւ իմ խօսքերս կ չի ընդունում. կայ՝ որ կը դատէ նորան. այն խօսքն՝ որ ես խօսեցի, նա կը դատէ նորան յետին հ օրումը։

49 Ինչու որ՝ ես իմ անձնիցս ձ չը խօսեցի. բայց Հայրն՝ որ ինձ ուղարկեց, նա պատուէր տուաւ ինձ՝ թէ ինչ պիտի ասեմ՝ եւ ինչ պիտի ղ խօսիմ։

50 Եւ գիտումեմ՝ որ այն պատուիրանքը յաւիտենական կեանք է. ապա ինչ որ ես խօսումեմ, այնպէս եմ խօսում՝ ինչպէս որ Հայրն ասաց ինձ։

է Եսայ. Զ. 1։
ը Գլ. Է. 13։ Թ. 22։
թ Գլ. Ե. 44։
ժ Մարկ. Թ. 36։ Ա Պետ. Ա. 21։
ի Գլ. ԺԴ. 9։
լ Համար. 35. 36։ Գլ. Գ. 19։ Ը. 12։ Թ. 5. 39։
խ Գլ. Ե. 45։ Ը. 15. 26։
ծ Գլ. Գ. 17։
կ Ղու. Ժ. 16։
հ Բ Օրին. ԺԸ. 19։ Մարկ. ԺԶ. 16։
ձ Գլ. Ը. 38։ ԺԴ. 10։
ղ Բ Օրին. ԺԸ. 18։

—

## ԳԼ. ԺԳ

1 Յառաջագոյն քան զտօնն զատ-
կի, գիտաց Յիսուս, թէ հասեալ
է ժամ նորա՝ զի փոխեսցի յաշխար-
հէ աստի առ Հայր, սիրեաց զիւրսն՝
որ յաշխարհի աստ էին. ի սպառ
սիրեաց զնոսա։
2 Եւ 'ի լինել ընթրեացն, Սա-
տանայի իսկ արկեալ էր 'ի սիրտ՝
զի մատնեսցէ զնա Յուդա Սիմովնի
Իսկարիովտացւոյ։
3 Գիտաց Յիսուս զի զամենայն
ինչ ետ Հայր 'ի ձեռս նորա, եւ թէ
յԱստուծոյ ել, եւ առ Աստուած
երթայ։
4 Յառնէ յընթրեաց անտի, եւ
դնէ զհանդերձսն, եւ առեալ ղեն-
ջակ մի՝ ածածաւ։
5 Եւ ապա առեալ ջուր՝ արկ 'ի
կոնք, եւ սկսաւ լուանալ զոտս ա-
շակերտացն, եւ սրբէր ղենջակաւն՝
զոր ածածեալ էր։
6 Գայ առ Սիմովն Պետրոս, եւ
նա ասէ ցնա. Տէ՛ր՝ դու զիմ զոտս
լուանաս։
7 Պատասխանի ետ նմա Յիսուս՝
եւ ասէ. Զոր ինչ ես գործեմ,
դու այժմ ոչ գիտես, բայց ապա
գիտասցես։
8 Ասէ ցնա Պետրոս. Ո՛չ լուա-
ցես զոտս իմ յաւիտեան. պատաս-
խանի ետ նմա Յիսուս. Եթէ ոչ
լուացից զքեզ, ոչ ունիս ընդ իս
մասն։
9 Ասէ ցնա Սիմոն Պետրոս. Տէ՛ր՝
մի՛ միայն զոտս իմ, այլ եւ զձե-
ռս եւ զգլուխս։
10 Ասէ ցնա Յիսուս. Լուացելոյն

1 Զատկի տօնիցն առաջ Յի-
սուս ա գիտենալով, որ իրեն ժամը հա-
սել բ է՝ որ այս աշխարհքիցս փոխ-
վի դէպի Հայրը, իրեններին՝ որ
այս աշխարհքումս էին՝ սիրեց. եւ
մինչեւ վերջը սիրեց նորանց։
2 Եւ երբոր ընթրիքն էր լինում,
Սատանան Սիմօնեան Յուդա Իսկա-
րիօտացուն սրտին մէջ էր ձգել՝ որ
մատնէ գ նորան։
3 Յիսուս գիտաց՝ որ Հայրն ա-
մէն բան իրեն ձեռքը դ տուաւ, եւ
որ Աստուածանից եկաւ, եւ Աս-
տուծոյ մօտն է ե գնում։
4 Հացկերութիւնից վերկացաւ եւ
շորերը վէր դրաւ, եւ մին ղեն-
ջակ առաւ մէջքովը է պատեց.
5 Եւ յետոյ ջուր առաւ՝ լցրեց
տաշտակը, եւ սկսեց աշակերտնե-
րին ոտները լուանալ, եւ այն ղեն-
ջակովը՝ որ մէջքումը պատած էր՝
սրբում էր։
6 Սիմօն Պետրոսին մօտ եկաւ,
եւ նա նորան ասաց. Տէ՛ր՝ դու ես
իմ ոտներս ը լուանում։
7 Յիսուս պատասխան տուաւ
նորան՝ եւ ասաց. Ինչ որ գործում
եմ, դու հիմիկ չես գիտում, բայց
յետոյ թ կը գիտենաս։
8 Պետրոս նորան ասաց. Դու
իմ ոտներս յաւիտեան չը պիտի
լուանաս. Յիսուս պատասխան ար-
աւ. Թէ որ քո ոտներդ չը լուա-
նամ, դու ինձ հետ բաժին ժ չու-
նիս։
9 Սիմօն Պետրոս նորան ասաց.
Տէ՛ր՝ ոչ թէ իմ ոտներս միայն,
բայց իմ ձեռներս եւ գլուխս էլ։
10 Յիսուս նորան ասաց. Լուա-

ա Մատթ. ԻԶ. 2. բ Գլ. ԺԲ. 23. ԺԷ. 1. 11. գ Ղուկ. ԻԲ. 3. Համար. 27. դ Մատթ. ԺԱ. 27. ԻԸ. 18. Գլ. Գ. 35. ԺԷ. 2. ե Գործ. Բ. 36. Ա Կորնթ. ԺԵ. 27. Եբր. Բ. 8. զ Գլ. Ը. 42. ԺԶ. 28. է Ղուկ. ԻԲ. 27. Փիլիպ. Բ. 7. 8. ը Մատթ. Գ. 14. թ Համար. 12. ժ Գլ. [Գ. 5. Ա Կորնթ. Զ. 11. Եփես. Ե. 26. Տիտ. Գ. 5. Եբր. Ժ. 22.

չէ ինչ պիտոյ՝ բայց զի զոտսն
լուանայցէ, քանզի ամենեւին
սուրբ է. եւ դուք սուրբ էք,
այլ ոչ ամենեքին։
11 Զի գիտէր զայն՝ որ մատնելոցն
էր զնա. վասն այնորիկ ասաց, թէ
Ո՛չ ամենեքին սուրբ էք։

12 Եւ յորժամ լուաց զոտս նոցա,
առ զհանդերձս իւր՝ եւ դարձեալ
բազմեցաւ, եւ ասէ ցնոսա. Գիտէ՞ք
զինչ արարի ձեզ։

13 Դուք կոչէք զիս Վարդապետ
եւ Տէր. եւ բարւոք ասէք, քան-
զի եմ իսկ։
14 Իսկ արդ՝ եթէ ես լուացի զո-
տս ձեր՝ Տէրս եւ Վարդապետս,
եւ դուք պարտիք զմիմեանց զոտս
լուանալ։
15 Զի օրինակ մի ետու ձեզ, զի
որպէս ես ձեզ արարի, եւ դուք
արասջիք։
16 Ամէն ամէն ասեմ ձեզ. Ո՛չ է
ծառայ մեծ քան զտէր իւր. եւ ոչ
առաքեալ՝ մեծ քան զայն՝ որ ա-
ռաքեացն զնա։

17 Եթէ զայս գիտէք, երանելի
եւս էք՝ եթէ առնիցէք զայս։

18 Ո՛չ վասն ամենեցուն ձեր ա-
սեմ. զի ես գիտեմ, զորս ընտրե-
ցի. այլ զի լցցի գիրն, թէ Որ
ուտէր ընդ իս հաց՝ արար ինձ խա-
բէութիւն։

19 Յայսմհետէ իսկ ասեմ ձեզ՝
մինչչեւ եղեալ, զի յորժամ լինի-
ցի՝ հաւատասջիք թէ ես եմ։
20 Ամէն ամէն ասեմ ձեզ. Որ

ցածին բան պէտք չէ՝ բայց միայն
որ ոտները լուանայ. ինչու որ՝ իս-
պառ սուրբ է. եւ դուք սուրբ
էք, բայց չէ թէ ժ ամէնդ։
11 Պատճառն որ՝ գիտումէր նո-
րան, որ իրեն պիտի մատնէր.
նրահամար ասաց, թէ Ամէնդ
սուրբ ի չէք։
12 Եւ երբոր նորանց ոտները լը-
ւացաւ, իրեն շորերն առաւ՝ եւ
նորէն սեղան նստեց, եւ նորանց
ասաց. Գիտումէք թէ ես ինչ արի
ձեզ։
13 Դուք ինձ Վարդապետ եւ Տէր
էք կոչում. եւ լաւ էք անում,
ինչու որ ես ճիշդ նա լ եմ։
14 Ապա թէ որ ես՝ Տէրս եւ
Վարդապետս ձեր ոտները խ լուա-
ցի, դուք էլ պէտք է՝ որ իրար
ոտները ծ լուանաք։
15 Ինչու որ՝ ձեզ մին օրինակ
տուի, որ ինչպէս որ ես ձեզ արի,
դուք էլ կ անէք։
16 Ճշմարիտն ճշմարիտն ասու-
մեմ ձեզ. Ծառան աւելի մեծ չէ
քան թէ իրեն տէրը. եւ ոչ էլ ու-
ղարկվածն աւելի մեծ է՝ քան թէ
նա՝ որ ուղարկեց հ նորան։
17 Թէ որ սա գիտումէք, էլ ա-
ւելի երանելի էք՝ թէ որ սա ձ ա-
նէք։
18 Ձեզ ամէնդ համար չեմ ա-
սում. ինչու որ՝ ես գիտումեմ նո-
րանց, որ ընտրեցի. բայց որ գիր-
քը կատարվի՝ թէ, նա որ ինձ հետ
հաց էր ուտում՝ ինձ խաբէութիւն
ղ արաւ։
19 Իսկ հիմիկուց եսեւ ասումեմ
ձեզ՝ դեռ քանի որ ճ չի եղել. որ
երբոր լինի՝ հաւատաք թէ ես եմ։
20 Ճշմարիտն ճշմարիտն ասու-

ժ Յվ. ԺԵ. 3։
ի Յվ. Զ. 65։
լ Մատթ. ԻԳ. 8։
10։ Ղու. Զ.
46։ Ա Կորնթ.
Ը. 6։ ԺԲ. 3։
Փիլիպ. Բ. 11։
խ Ղու. ԻԲ. 27։
ծ Հռովմ. ԺԲ. 10։
Գաղ. Զ. 1, 2։
Ա Պետ. Ե. 5։
կ Մատթ. ԺԱ. 29։
Փիլիպ. Բ. 5։ Ա
Պետ. Բ. 21։ Ա
Յովհ. Բ. 6։
հ Մատթ. Ժ. 24։
Ղու. Զ. 40։
Յվ. ԺԵ. 20։
ձ Յակ. Ա. 25։
ղ Սաղ. ԽԱ. 9։
Մատթ. ԻԶ. 23։
Համար. 21։
ճ Յվ. ԺԴ. 29։
ԺԶ. 4։

ընդունի՝ զոր ոք ես առաքեցից, զիս ընդունի · եւ որ զիս ընդունի, ընդունի զայն՝ որ առաքեացն զիս ։

21 Զայս իբրեւ ասաց Յիսուս, խռովեցաւ յոգի իւր՝ վկայեաց եւ ասէ · Ամէն ամէն ասեմ ձեզ, զի մի ոմն 'ի ձէնջ մատնելոց է զիս ։

22 Հայէին ընդ միմեանս աշակերտքն տարակուսեալք, թէ զումէ՞ ասիցէ ։

23 Եւ էր մի ոմն յաշակերտացն բազմեալ առ Յիսուսիւ, զոր սիրէր Յիսուս ։

24 Ակնարկէ նմա Սիմովն Պետրոս՝ հարցանել՝ ով իցէ, վասն որոյ ասէն ։

25 Եւ նա անկեալ զլանջօքն Յիսուսի, ասէ ցնա · Տէր՝ ով է ։

26 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ · Այն է՝ որում ես թաթից զպատառն՝ եւ տաց · եւ թաթեալ զպատառն տայ Յուդայի Սկարիովտացւոյ ։

27 Եւ յետ պատառոյն՝ ապա եմուտ 'ի նա Սատանայ · եւ ասէ ցնա Յիսուս · Արդ՝ զոր ինչ առնելոց ես՝ արա վաղվաղակի ։

28 Եւ զայս ոչ ոք իմացաւ 'ի բազմականացն անտի, թէ առ ինչ ասաց ցնա ։

29 Զի ոմանք համարէին, թէ՝ զի զարկղն ունէր Յուդա, ասաց նմա Յիսուս, Գնեա ինչ որ պիտոյ իցէ մեզ 'ի տօնիս · եւ կամ՝ զի աղքատաց ինչ տացէ ։

30 Իսկ նորա առեալ զպատառն՝ ել արտաքս վաղվաղակի · եւ էր գիշեր ։

սեմ ձեզ · Ով որ ընդունումէ մինին՝ որ ես կուղարկեմ՝ ինձ է ընդունում · եւ նա որ ինձ է ընդունում, նորան է ընդունում, որ ինձ [ա] ուղարկեց ։

21 Յիսուս երբոր այս [բ] ասաց՝ տրտմեցաւ իրեն հոգուն մէջ, վկայեց եւ [գ] ասաց · Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ, թէ ձեզանից մինը պիտի մատնէ [դ] ինձ ։

22 Աշակերտները տարակուսած իրար մտիկ էին տալիս, թէ ում համար ասած լինի ։

23 Եւ աշակերտներիցը մինը Յիսուսին մօտ նստած էր, որ Յիսուս նորան [ե] սիրումէր ։

24 Սիմօն Պետրոս նորան աչքով էր անում՝ որ հարցնէ՝ թէ նա ով է, որ նորա համար ասումէ ։

25 Եւ նա Յիսուսի լանջքանը ընկաւ, եւ նորան ասաց · Տէր՝ նա ով է ։

26 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց · Նա է՝ որ ես պատառը թաց կանեմ եւ նորան կըտամ · եւ պատառը թաց արաւ եւ տուաւ Յուդա Իսկարիովտացուն ։

27 Եւ այն պատառիցն հետեւ՝ Սատանան մտաւ նորան [զ] մէջը · եւ Յիսուս նորան ասաց · Ինչ որ անելու ես՝ շուտով արա ։

28 Եւ այս բանըս այն սեղան նստողներիցն ոչ ով չիմացաւ՝ թէ ինչ պատճառով ասաց նորան ։

29 Ինչու որ՝ մին քանիս կարծումէին՝ թէ որովհետեւ Յուդան փողի քսակըն ունէր, Յիսուս նորան ասաց՝ թէ Գնէ ինչ բան որ այս տօնիս պէտք է [է] մեզ · կամ՝ թէ՝ որ աղքատներին բան տայ ։

30 Եւ նա երբոր պատառըն առաւ, շուտով դուրս գնաց · եւ գիշեր էր ։

[ա] Մատթ. Ժ. 40 · ԻԵ. 40 · Ղուկ. Ժ. 16 ·
[բ] Մատթ. ԻԶ. 21 · Մարկ. ԺԴ. 18 · Ղուկ. ԻԲ. 21 ·
[գ] Գլ. ԺԲ. 27 ·
[դ] Գործ. Ա. 17 · Ա Յովհ. Բ. 19 ·
[ե] Գլ. ԺԹ. 26 · Ի. 2 · ԻԱ. 7 · 20 · 24 ·
[զ] Ղուկ. ԻԲ. 3 · Գլ. Զ. 71 ·
[է] Գլ. ԺԲ. 6 ·

31 Եւ իբրեւ ել, ասէ ՚Յիսուս. Այժմ փառաւորեցաւ Որդի մարդոյ. եւ Աստուած փառաւորեցաւ ՚ի նմա։

32 Զի եթէ Աստուած փառաւորեցաւ ՚ի նմա, եւ Աստուած փառաւորեսցէ զնա յանձն իւր. եւ վաղվաղակի փառաւորեսցէ զնա։

33 Որդեակք իմ՝ փոքր ինչ ժամանակ ընդ ձեզ եմ. խնդրիցէք զիս. եւ որպէս ասացի ցՀրէայսն, եթէ Ուր ես երթամ, դուք ոչ կարէք գալ. եւ արդ ձեզ ասեմ։

34 Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրիցէք զմիմեանս. որպէս սիրեցի ես զձեզ, զի եւ դուք սիրեսջիք զմիմեանս։

35 Յայսմ գիտասցեն ամենեքեան՝ եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս։

36 Ասէ ցնա Սիմոն Պետրոս. Տէր՝ յո՞ երթաս. պատասխանի ետ Յիսուս. Ուր ես երթամ՝ դու ոչ կարես այժմ գալ զկնի իմ, բայց ապա եկեսցես զկնի իմ։

37 Ասէ ցնա Պետրոս. Տէր՝ ընդէ՞ր ոչ կարիցեմ գալ այժմ զկնի քո. արդէն զանձն իմ իսկ եդից ՚ի վերայ քո։

38 Պատասխանի ետ Յիսուս. Զանձն քո դնիցես ՚ի վերայ իմ. ամէն ամէն ասեմ քեզ. Չեւ իցէ հաւու խօսեալ, ՚մինչ դու երիցս ուրասցիս զիս։

31 Եւ երբոր դուրս գնաց, Յիսուս ասաց. Հիմիկ Որդին մարդոյ Է փառաւորուեցաւ. եւ Աստուած նորանում – փառաւորուեցաւ.

32 Որ՝ եթէ Աստուած նորանում փառաւորուեցաւ, Աստուած էլ նորան կը փառաւորէ իրեն = անձնումը. եւ շուտով կը փառաւորէ Է նորան։

33 Իմ որդեակներս՝ մին քիչ ժամանակ էլ ձեզ հետ եմ. ինձ ման կը գաք. եւ ինչպէս որ Հրէաներին ասացի, թէ Որտեղ որ ես գնումեմ՝ դուք չէք կարող ÷ գալ. եւ հիմիկ ձեզ եմ ասում։

34 Նոր պատուիրանք եմ տալիս ձեզ, որ իրար սիրէք. ինչպէս որ ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար ր սիրէք։

35 Սորանով կը գիտենան ամէնքն՝ որ իմ աշակերտներս էք, եթէ իրար ց սիրէք։

36 Սիմոն Պետրոսը նորան ասաց. Տէր՝ ուր ես գնում. Յիսուս պատասխան տուաւ. Որտեղ որ ես գնումեմ՝ դու հիմիկ չես կարող իմ ետեւէս գալ. բայց յետոյ իմ ետեւէս – կը գաս։

37 Պետրոս նորան ասաց. Տէր՝ ինչու չեմ կարող հիմիկ քո ետեւէդ գալ. իսկ իմ անձըս էլ քեզ վերայ ‡ կը դնեմ։

38 Յիսուս պատասխան տուաւ. Քո անձըդ կը դնես ինձ վերայ. ճշմարիտ ճշմարիտ ասումեմ քեզ. որ Դեռ հաւը չը խօսած՝ դու երեք անգամ կուրանաս ինձ։

## ԳԼ. ԺԴ

1 Մի խռովեսցին սիրտք ձեր.

1 Ձեր սրտերդ թող – չը շփոթ-

Է Գլ. ԺԲ. 23։ – Գլ. ԺԴ. 13։ Ա Պետ. Դ. 11։ = Գլ. ԺԷ. 1. 4, 5, 6։ Է Գլ. ԺԲ. 23։ ÷ Գլ. Է. 34։ Ը. 21։ ր Ղե. ԺԹ. 18։ Գլ. ԺԵ. 12 17։ Եփես. Ե. 2։ Ա Թես. Դ. 9։ Յակ. Բ. 8։ Ա Պետ. Ա. 22։ Ա Յովհ. Բ. 7, 8։ Գ. 11. 23։ Դ. 21։ ց Ա Յովհ. Բ. 5։ Դ. 20։ – Գլ. ԻԱ. 18։ Բ Պետ. Ա. 14։ ‡ Մատթ. ԻԶ. 33, 34։ 35։ Մարկ. ԺԴ. 29. 30. 31։ Ղուկ. ԻԲ. 33. 34։

—

= Համար. 27։ Գլ. ԺԶ. 3. 22։

այլ հաւատացէք յԱստուած , եւ
յիս հաւատացէք ։
2 Ի տան Հօր իմոյ օթեվանք բա-
զում են . ապա թէ ոչ՝ ասացեալ
էր իմ ձեզ , թէ երթամ պատրաս-
տեմ ձեզ տեղի ։
3 Եւ եթէ երթամ եւ պատրաս-
տեմ ձեզ տեղի , դարձեալ գամ ,
եւ առնում զձեզ առ իս . զի ուր
եսն իցեմ , եւ դուք անդ իցէք ։

4 Եւ ուր երթամն՝ գիտիցէք ,
եւ զճանապարհն գիտիցէք ։

5 Ասէ ցնա Թովմաս . Տէր՝ ոչ
գիտեմք յո երթաս , եւ զիարդ
զճանապարհն կարասցուք գիտել ։

6 Ասէ ցնա Յիսուս . Ես եմ ճա-
նապարհ եւ ճշմարտութիւն եւ
կեանք . ոչ ոք գայ առ Հայր՝ եթէ
ոչ ինեւ ։
7 Եթէ զիս գիտէիք՝ ապա եւ
զՀայրն իմ գիտէիք , եւ այսուհե-
տեւ գիտասջիք զնա ։
8 Ասէ ցնա Փիլիպպոս . Տէր՝
ցոյց մեզ զՀայր՝ եւ շատ է մեզ ։

9 Ասէ ցնա Յիսուս . Այսչափ
ժամանակս ընդ ձեզ եմ , եւ ոչ
ծանեար զիս Փիլիպպէ . որ ետեսն
զիս՝ ետես զՀայրն . եւ դու զիարդ
ասես՝ եթէ Ցոյց մեզ զՀայր ։

10 Ո՞չ հաւատաս՝ եթէ ես 'ի
Հայր , եւ Հայր յիս է . զբանս զոր
ես խօսիմ ընդ ձեզ , ոչ եթէ յանձ-
նէ ինչ խօսիմ , այլ Հայրն՝ որ յիս
բնակեալ է , նա գործէ զգործսն ։

վին . բայց Աստուծոյն հաւատա-
ցէք՝ եւ ինծի հաւատացէք ։
2 Իմ Հօրս տանը շատ բնակա-
րաններ կան . ապա թէ չէր՝ ես
ձեզ ասած կը լինէի , որ կը գնամ ես
ձեզ համար տեղ բ կը պատրաստեմ ։
3 Եւ թէ որ գնամ եւ ձեզ հա-
մար տեղ պատրաստեմ , նորէն կը
գամ եւ ձեզ ինձ մօտ գ կառնեմ .
որ որտեղ որ ես լինիմ՝ այնտեղ էլ
դուք դ լինիք ։
4 Եւ որտեղ որ ես գնումեմ՝
գիտումէք , եւ ճանապարհը գի-
տումէք ։
5 Թովմաս նորան ասաց . Տէր՝
չենք գիտում՝ որտեղ ես գնում ,
եւ ինչպէս կարենանք ճանապար-
հը գիտել ։
6 Յիսուս նորան ասաց . Ես եմ
ե ճանապարհը եւ զ ճշմարտութիւնը
եւ է կեանքը . ոչ ով չի գալ Հօր
մօտ՝ եթէ ոչ ը ինձանով ։
7 Թէ որ ինձ գիտենայիք՝ իմ
Հօրս էլ թ կը գիտենայիք . եւ սորա-
նից ետեւ կը գիտենաք նորան ։
8 Փիլիպպոս նորան ասաց . Տէր՝
Հայրը ցոյց տուր մեզ՝ եւ բաւա-
կան է մեզ ։
9 Յիսուս նորան ասաց . Այսքան
ժամանակ ձեզ հետ եմ , եւ ինձ
չճանաչեցիր՝ Փիլիպպոս . ով որ ինձ
տեսաւ՝ Հօրը տեսաւ . եւ դու ինչ-
պէս ես ասում , թէ Հայրը ցոյց
տուր ժ մեզ ։
10 Չես հաւատում՝ որ ես Հօր
մէջն եմ , եւ Հայրն ի ինձանում .
այն բանն՝ որ ես խօսումեմ ձեզ
հետ , չէ թէ իմ անձնէցս եմ խօ-
սում , բայց Հայրն՝ որ ինձանում
բնակված է , նա է գործում այն
լ գործերը ։

բ Գլ . ԺԳ . 33 . 36 ։
գ Համառ . 18 . 28 ։ Գործ . Ա . 11 ։
դ Գլ . ԺԲ . 26 ։ ԺԷ . 24 ։ Ա Թես . Դ . 16 ։
ե Եբր . Թ . 8 ։
զ Գլ . Ա . 17 ։ Ը . 32 ։
է Գլ . Ա . 4 ։ ԺԱ . 25 ։
ը Գլ . Ժ . 9 ։
թ Գլ . Ը . 19 ։
ժ Գլ . ԺԲ . 45 ։ Կող . Ա . 15 ։ Եբր . Ա . 3 ։
ի Համառ . 20 ։ Գլ . Ժ . 38 ։ ԺԷ . 21 . 23 ։
լ Գլ . Ե . 19 ։ Է . 16 ։ Ը . 28 ։ ԺԲ . 49 ։

11 Հաւատա՞յք ինձ, եթէ ես 'ի Հայր՝ եւ Հայր յիս։

12 Ապա թէ ոչ՝ գոնէ վասն գործոցն հաւատացէք ինձ. ամէն ամէն ասեմ ձեզ, թէ Որ հաւատայն յիս, զգործսն զոր ես գործեմ՝ եւ նա գործեսցէ, եւ մեծամեծս եւս քան զնոյնս գործեսցէ. զի ես առ Հայր երթամ։

13 Եւ զոր ինչ խնդրիցէք յանուն իմ, արարից զայն,

14 Զի փառաւորեսցի Հայր յՈրդի։

15 Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պահեսջիք։

16 Եւ ես աղաչեցից զՀայր, եւ այլ Մխիթարիչ տացէ ձեզ. զի ընդ ձեզ բնակեսցէ 'ի յաւիտեան։

17 ԶՀոգին ճշմարտութեան՝ զոր աշխարհս ոչ կարէ ընդունել. զի ոչ տեսանէ զնա, եւ ոչ ճանաչէ զնա. բայց դուք ճանաչէք զնա, զի առ ձեզ բնակեսցէ՝ եւ ընդ ձեզ եղիցի։

18 Ո՛չ թողից զձեզ որբս. գամ առ ձեզ։

19 Փոքր մեւս եւս՝ եւ աշխարհս ոչ եւս տեսանէ զիս, բայց դուք տեսանիցէք զիս. զի ես կենդանի եմ, եւ դուք կենդանի լինելոց էք։

20 Յայնմ աւուր գիտասջիք դուք, զի ես 'ի Հօր իմում՝ եւ դուք յիս՝ եւ ես 'ի ձեզ։

21 Որ ունի զպատուիրանս իմ՝ եւ պահէ զնոսա, նա է՛ որ սիրէ զիս. եւ որ սիրէն զիս՝ սիրեսցի 'ի Հօրէ

11 Հաւատացէ՛ք ինձ, որ ես Հօր մէջն եմ՝ եւ Հայրն ինձմանում։

12 Ապա թէ չէ՝ գոնեա գործքերին համար հաւատացէք ի ինձ. ճշմարիտը ճշմարիտը ասում եմ ձեզ, թէ Ով որ ինձ հաւատում է, այն գործքերը որ ես եմ գործում՝ նա էլ կը գործէ, եւ նրանցից աւելի մեծ բաներ էլ կը գործէ. ինչու որ՝ ես Հօր մօտն եմ ծ գնում։

13 Եւ ինչ որ խնդրէք իմ անունով՝ նա կ կատարեմ,

14 Որ Հայրը փառաւորուի] Որդովը։

15 Թէ որ ինձ սիրում էք՝ իմ պատուիրանքներս հ պահեցէք։

16 Եւ ես Հօրը կաղաչեմ, եւ ուրիշ Մխիթարիչ կը տայ ձեզ. որ ձ յաւիտեան ձեզ հետ բնակի։

17 Ճշմարտութեան ղ Հոգին՝ որ աշխարհքս ճ կարող չէ ընդունել նորան. եւ չի ճանաչում նորան. բայց դուք նորան ճանաչում էք, ինչու որ՝ ձեզ մօտ կը բնակի՝ եւ ձեզ հետ մ կը լինի։

18 Ձեզ որբ չեմ յ թողիլ. ձեզ մօտ ն կը գամ։

19 Մին փոքր ժամանակ էլ՝ եւ աշխարհքն էլ չի տեսնիլ ինձ, բայց դուք կը տեսնէք շ ինձ. ինչու որ՝ ես կենդանի եմ, եւ դուք կենդանի պիտի ո լինիք։

20 Այն օրը դուք կը ճանաչէք, որ ես իմ Հօրս մէջն եմ, եւ դուք ինձմանում՝ եւ ես չ ձեզանում։

21 Ով որ իմ պատուիրանքներս ունի՝ եւ նորանց պահում է, նա է՛ որ ինձ սիրում է. եւ նա՝ որ ինձ սի-

ի Գղ. Ե. 36. Ժ. 38.
ծ Մատթ. ԻԱ. 21. Մարկ. ԺԶ. 17. Ղուկ. Ժ. 17.
կ Մատթ. Է. 7. ԻԱ. 22. Մարկ. ԺԱ. 24. Ղուկ. ԺԱ. 9. Գղ. ԺԵ. 7. 16. ԺԶ. 23. 24. Յակ. Ա. 5. Ա Յովհ. Գ. 22. Ե. 14.
հ Համար. 21. 23. Գղ. ԺԵ. 10. 14. Ա Յովհ. Ե. 3.
ձ Գղ. ԺԵ. 26. ԺԶ. 7. Հռովմ. Ը. 15. 26.
ղ Գղ. ԺԵ. 26. ԺԶ. 13. Ա Յովհ. Դ. 6.
ճ Ա Կորնթ. Բ. 14.
մ Ա Յովհ. Բ. 27.
յ Մատթ. ԻԸ. 20.
ն Համար. 3. 28.
շ Գղ. ԺԶ. 16.
ո Ա Կորնթ. ԺԵ. 20.
չ Համար. 10. Գղ. Ժ. 38. ԺԷ. 21. 23. 26.

ինձ. եւ ես սիրեցից զնա, եւ երեւեցուցից նմա զիս:

22 Ասէ ցնա Յուդա՝ ոչ Իսկարիովտացին. Տէր՝ զի՞ եղեւ, զի մեզ յայտնելոց ես զքեզ՝ եւ ոչ աշխարհի:

23 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. Եթէ ոք սիրէ զիս՝ զբանն իմ պահեսցէ, եւ Հայր իմ սիրեսցէ զնա. եւ առ նա եկեսցուք եւ օթեւանս առ նմա արասցուք:

24 Եւ որ ոչն սիրէ զիս, զբանս իմ ոչ պահէ. եւ բանն իմ՝ զոր լսէք՝ ոչ է իմ, այլ Հօրն՝ որ առաքեացն զիս:

25 Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ մինչ առ ձեզս եմ:

26 Իսկ մխիթարիչն Հոգին Սուրբ՝ զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուսցէ ձեզ զամենայն, եւ յիշեցուսցէ զամենայն՝ որ ինչ ասացի ձեզ:

27 Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ. ոչ որպէս աշխարհս տայ՝ տամ ես ձեզ. մի խռովեսցին սիրտք ձեր՝ եւ մի զարհուրեսցին:

28 Լուայք, զի՝ ասացի ես ձեզ, թէ երթամ եւ գամ առ ձեզ. եթէ սիրէիք զիս՝ ապա ուրախ լինել էր ձեր՝ թէ ես առ Հայր երթամ, զի Հայր իմ մեծ է քան զիս:

29 Եւ այժմ ասացի ձեզ մինչչեւ եղեալ. զի յորժամ լինիցի՝ հաւատասջիք:

րումէ՝ իմ Հօրից կը սիրուի. եւ ես կը սիրեմ նորան, եւ ինձ կերեւացնեմ ⁊ նորան:

22 Յուդան՝ ոչ թէ այն Իսկարիովտացին, նորան ասաց. Ինչու համար է, որ մեզ կը յայտնես քեզ՝ եւ աշխարհքին ‡ չէ:

23 Յիսուս պատասխան տուաւ եւ նորան ասաց. Թէ որ մէկն ինձ սիրումէ՝ իմ խօսքերս կը պահէ, եւ իմ Հայրս կը սիրէ — նորան. եւ նորան մօտ կը գանք եւ բնակութիւն կանենք նորա ⁘ մօտ:

24 Եւ նա՝ որ ինձ չի սիրում, իմ խօսքերս չի պահում. եւ իմ խօսքս՝ որ լսումէք՝ իմս չէ, բայց Հօրն է՝ որ ինձ ⁑ ուղարկեց:

25 Այս խօսեցի ձեզ նաւ՝ դեռ քանի որ ձեզ մօտ եմ:

26 Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին՝ որ Հայրն իմ անուանովս ⁂ կուղարկէ, նա ամէն բան կը սովորեցնէ ձեզ, եւ ինչ որ ձեզ ասացի, ձեր մտքներդ ⸗ կը բերէ:

27 Խաղաղութիւն եմ թողում ձեզ, իմ խաղաղութիւնս եմ տալիս ⸰ ձեզ. չէ թէ՝ ինչպէս աշխարհքն է տալիս՝ ես տալիս եմ ձեզ. ձեր սրտերդ չը շփոթուին եւ ⁜ չը վախենան:

28 Լսեցիք, որ ես ասացի ♯ ձեզ, թէ Գնումեմ եւ էլ կը գամ ձեզ մօտ. թէ որ ինձ սիրէիք, ապա ուրախ կը լինէիք՝ որ ես Հօր մօտն եմ + գնում. ինչու որ՝ իմ Հայրս մեծ է ինձանից:

29 Եւ հիմիկ ասացի ∘ ձեզ. դեռ քանի որ չի եղել՝ որ երբոր լինի, ∻ հաւատաք:

⁊ Համար. 15. 23. Ա Յովհ. Բ. 5. Ե. 3.

‡ Ղու. Զ. 16.

— Համար. 15.

⁘ Ա Յովհ. Գ. 24. Յայտ. Գ. 20.

⁑ Համար. 10. Գլ. Ե. 19. 38. Է. 16. Ը. 28. ԺԲ. 49.

⁂ Համար. 16. Ղու. ԻԴ. 49. Գլ. ԺԵ. 26. ԺԶ. 7.

⸗ Գլ. Բ. 22. ԺԲ. 16. ԺԶ. 13. Ա Յովհ. Բ. 20. 27.

⸰ Փիլիպ. Դ. 7. Կող. Գ. 15.

⁜ Համար. 1.

♯ Համար. 3. 18.

\+ Համար. 12. Գլ. ԺԶ. 16. Ի. 17.

∘ Գլ. Ե. 18. Ժ. 30. Փիլիպ. Բ. 6.

∻ Գլ. ԺԳ. 19. ԺԶ. 4.

30 Ո՛չ ևս այլ շատ խօսեցայց
ընդ ձեզ. գայ իշխան աշխարհիս
այսորիկ՝ և յիս ինչ ոչ գտանէ:
31 Այլ զի ծանիցէ աշխարհ, ե-
թէ սիրեմ զՀայր. և որպէս պատու-
իրեաց ինձ Հայր՝ այնպէս առ-
նեմ. ո՛ն արիք՝ գնասցուք աստի:

30 Էլ շատ չեմ խօսիլ ձեզ հետ.
այս աշխարհքիս իշխանը գալիս է,
և ինձանում բան ա չի գտնում:
31 Բայց որ աշխարհքը գիտենայ՝
թէ ես սիրում եմ Հօրը. և ինչպէս
որ Հայրը պատուիրեց ինձ, այնպէս
եմ անում. Էլ վեր կացէք գնանք
բ այստեղից:

## ԳԼ. ԺԵ

1 Ես եմ որթն ճշմարիտ, և
Հայր իմ մշակ է:
2 Ամենայն ուռ որ յիս է՝ և ոչ
բերէ պտուղ, կարէ զնա. և ամե-
նայն՝ որ բերէ պտուղ՝ սրբէ զնա,
զի առաւել ևս պտղաբեր լիցի:

3 Դուք արդէն իսկ սուրբ էք
վասն բանին՝ զոր խօսեցայ ընդ
ձեզ:
4 Կացէք յիս՝ և ես ՚ի ձեզ. որ-
պէս ուռն՝ ոչ կարէ պտուղ բերել
յանձնէ իւրմէ, եթէ ոչ իցէ հաս-
տատեալ յորթն, նոյնպէս և դուք՝
եթէ ոչ յիս հաստատեալ իցէք:

5 Ես եմ որթ՝ և դուք ուռ. որ
հաստատեալ է յիս՝ և ես ՚ի նմա,
նա բերէ պտուղ յոլով. զի առանց
իմ ոչինչ կարէք առնել:

6 Եթէ որ ոչ է հաստատեալ
յիս, ել նա արտաքս իբրև զուռն՝
և ցամաքեցաւ, և ժողովեն զնա
և ՚ի հուր արկանեն՝ և այրի:

7 Եթէ կայցէք յիս՝ և բանք իմ
՚ի ձեզ կայցեն, որ ինչ կամիցիք
խնդրեսջիք՝ և լինիցի ձեզ:

8 Յայսմիկ փառաւորեցաւ Հայր

1 Ես եմ ճշմարիտ որթն, և իմ
Հայրս մշակն է:
2 Ամէն ճիւղն որ ինձանում է՝
և պտուղ չըտալիս, նորան կտրու-
մէ. և այն ամէնն՝ որ պտուղ է
տալիս՝ սրբումէ նորան, որ էլ ա-
ւելի պտղաբեր ա լինի:
3 Հիմիկ դուք սուրբ էք՝ այն
բանին համար՝ որ ձեզ հետ բ խօսեցի

4 Կացէք ինձանում՝ և ես ձե-
զանում. ինչպէս որ ճիւղն իրեն
անձնիցը կարող չէ պտուղ բերել,
եթէ որթումը հաստատված չըլինի,
այնպէս էլ դուք՝ եթէ ինձանում
հաստատված գ չըլինիք:
5 Ես որթն եմ՝ և դուք ճիւղ.
նա՝ որ ինձանում է հաստատված՝
և ես նորանում, նա շատ պտուղ
է դ բերում. ինչու որ՝ առանց ինձ՝
ինու մէն բան չէք կարող անել:
6 Թէ որ մինն ինձանում չէ
հաստատված, նա դուրս է ձգվում
ինչպէս ճիւղ՝ և չորանումէ. և
ժողովումեն նորան և կրակի մէջ
են ձգում՝ և ե այրվումէ:
7 Թէ որ կենաք ինձանում՝ և
իմ խօսքերս ձեզանում կենան, ինչ
որ կամենաք՝ կը խնդրէք՝ և կը
լինի զ ձեզ:
8 Սրանով փառաւորվեցաւ իմ

ա Գլ. ԺԲ. 31. ԺԶ. 11. բ Գլ. Ժ. 18. Փիլիպ. Բ. 8. Եբր. Ե. 8.

ա Մատթ. ԺԵ. 13. բ Գլ. ԺԴ. 10. ԺԷ. 17. Եփես. Ե. 26. Ա Պետ. Ա. 22. գ Կող. Ա. 23. Ա Յովհ. Բ. 6: դ Ովսէ. ԺԴ. 8. Փիլիպ. Ա. 11. Դ. 13. Գործ. Դ. 12. ե Մատթ. Գ. 10. Է. 19. զ Համար. 16. Գլ. ԺԴ. 13. 14. ԺԶ. 23.

իմ, զի պտուղ յոյժ բերիցէք. եւ
եղիջիք իմ աշակերտք։
9 Որպէս սիրեաց զիս Հայր, եւ
ես սիրեցի զձեզ. հաստատուն կա-
ցէք ՚ի սէր իմ։
10 Եթէ պահիցէք ՚զպատուիրանս
իմ, կայջիք ՚ի սէր իմ. որպէս ես
զպատուիրանս Հօր իմոյ պահեցի,
եւ կամ ՚ի սէր նորա։

11 Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի
ուրախութիւնն իմ ՚ի ձեզ լիցի, եւ
ձեր ուրախութիւնն լցեալ եղիցի։
12 Այս է պատուէր իմ, զի սի-
րեսջիք զմիմեանս, որպէս եւ ես
զձեզ սիրեցի։
13 Մեծ եւս քան զայս սէր ոչ ոք
ունի, եթէ զանձն իւր դիցէ ՚ի վե-
րայ բարեկամաց իւրոց։
14 Դուք բարեկամք էք իմ, ե-
թէ առնիցէք՝ զոր ես պատուիրեմ
ձեզ։
15 Ո՛չ եւս կոչեմ զձեզ ծառայս,
զի ծառայն ոչ գիտէ զինչ գործէ
տէրն նորա. այլ զձեզ կոչեցի բա-
րեկամս, զի զամենայն, զոր լուայ
՚ի Հօրէ իմմէ՝ ծանուցի ձեզ։

16 Ո՛չ եթէ դուք ընտրեցէք զիս,
այլ ես ընտրեցի զձեզ, եւ եդի ըղ
ձեզ, զի դուք երթայցէք՝ եւ պտղա-
բերք լինիցիք. եւ պտուղն ձեր
կացցէ. եւ զոր ինչ խնդրիցէք ՚ի
Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ։
17 Զայս պատուիրեմ, զի սիրես-
ջիք զմիմեանս։
18 Եթէ աշխարհ զձեզ ատեայ,
գիտասջիք զի նախ զիս ատեաց։

[ե] Հայրս՝ որ շատ պտուղ բերէք.
եւ իմ աշակերտներս [զ] լինիք։
9 Ինչպէս որ իմ Հայրս ինձ սի-
րեց՝ ես էլ ձեզ սիրեցի. հաստատ
կացէք իմ սիրոյս մէջը։
10 Թէ որ իմ պատուիրանքներս
պահէք, իմ սիրոյս մէջը կը կենաք.
ինչպէս որ ես իմ Հօրս պատուի-
րանքները պահեցի, եւ նորա սի-
րոյն մէջը [թ] կենում եմ։
11 Սա խօսեցի ձեզ նրա՝ որ իմ
ուրախութիւնս ձեզանում լինի, եւ
ձեր ուրախութիւնը լցված [ժ] լինի։
12 Սա է իմ պատուիրանքս՝ որ
իրար սիրէք, ինչպէս որ ես ձեզ
[է] սիրեցի։
13 Ոչ ով աւելի մեծ սէր չունի
քանթէ նա՝ որ իրեն անձը դնէ ի-
րեն բարեկամներին [ւ] վերայ։
14 Դուք իմ բարեկամներս էք,
թէ որ անէք նա՝ որ ես պատուի-
րում եմ [ե] ձեզ։
15 Էլ ծառայ չեմ կանչում ձեզ,
ինչու որ՝ ծառան չի գիտում՝ թէ
իրեն տէրն ինչ է գործում. բայց
ձեզ բարեկամ կանչեցի, ինչու որ՝
ամէն ինչ՝ որ լսեցի իմ Հօրիցս, ի-
մացրի [ծ] ձեզ։
16 Չէ թէ դուք ինձ [կ] ընտրեցիք.
բայց ես ձեզ ընտրեցի՝ եւ ձեզ
[ն] դրի, որ դուք գնաք՝ եւ պտղա-
բեր լինիք. եւ ձեր պտուղը մնայ.
եւ ինչ որ իմ Հօրիցս խնդրէք իմ
անունովս՝ նա կը տայ [յ] ձեզ։
17 Սա եմ պատուիրում ձեզ՝ որ
իրար [ղ] սիրէք։
18 Թէ որ աշխարհքըն ատում է ձեզ,
գիտացէք՝ որ առաջ ինձ [ձ] ատեց։

ե Մատթ. Ե. 16. Փիլիպ. Ա. 11.
զ Գլ. Ը. 31. ԺԳ. 35.
թ Գլ. ԺԴ 15. 21. 23.
ժ Գլ. ԺԶ. 24. ԺԷ. 13. Ա Յովհ. Ա. 4.
է Գլ. ԺԳ. 34. Ա Թես. Դ. 9. Ա Պետ. Դ. 8. Ա Յովհ. Գ. 11. Գ. 21.
ւ Գլ. Ժ. 11. 15. Հռովմ. Ե. 7. 8. Եփես. Ե. 2. Ա Յովհ. Գ. 16.
ե Գլ. ԺԴ. 15. 23. Մատթ. ԺԲ. 50.
ծ Ծննդ. ԺԸ. 17. Գլ. ԺԵ. 26. Գործ. Ի. 27.
կ Գլ. Զ. 71. ԺԳ. 18. Ա Յովհ. Դ. 10. 19.
ն Մատթ. ԻԸ. 19. Մարկ. ԺԶ. 15. Կող. Ա. 6.
յ Համար. 7. Գլ. ԺԴ. 13.
ղ Համար. 12.
ձ Ա Յովհ. Գ. 1. 13.

19 Եթէ յաշխարհէ աստի էիք՝ աշխարհ զիւրսն սիրէր արդեօք · բայց զի չէք յաշխարհէ · այլ ես ընտրեցի զձեզ յաշխարհէ , վասն այնորիկ ատեայ զձեզ աշխարհ ։

20 Յիշեցէք զբանն՝ զոր ասացի ձեզ · թէ Ո՛չ է ծառայ մեծ քան զտէր իւր , եթէ զիս հալածեցին , ապա եւ զձեզ հալածեսցեն · եթէ զբանն իմ պահեցին , ապա եւ զձերն պահեսցեն ։

21 Այլ զայսոսիկ արասցեն ընդ ձեզ վասն անուան իմոյ · զի ոչ գիտեն զայն՝ որ առաքեացն զիս ։

22 Իմ եթէ չէր եկեալ՝ եւ խօսեցեալ ընդ նոսա , մեղ ինչ ոչ գոյր նոցա · բայց արդ չիք պատճառք վասն մեղաց իւրեանց ։

23 Որ զիս ատեայ , եւ զՀայրն իմ ատեայ ։

24 Եթէ զգործսն չէր գործեալ ՚ի նոսա , զոր ոչ այլ ոք գործեաց , մեղ ինչ ոչ գոյր նոցա · բայց արդ տեսին՝ եւ ատեցին՝ եւ զիս եւ զՀայր իմ ։

25 Այլ զի լցցի բանն , որ յօրէնս նոցա գրեալ է , թէ Ատեցին զիս տարապարտուց ։

26 Բայց յորժամ եկեսցէ Մխիթարիչն , զոր ես առաքեցից ձեզ ՚ի Հօրէ , զՀոգին ճշմարտութեան , որ ՚ի Հօրէ ելանէ , նա վկայեսցէ վասն իմ ։

27 Եւ դուք վկայէք , զի ՚ի սկզբանէ ընդ իս էք ։

19 Թէ որ այս աշխարհքիցս ըլլէիք՝ ապա աշխարհքս իրենններին ʃ կը սիրէր · բայց որովհետեւ աշխարհքիցը ɔ չէք · այլ ես ընտրեցի ձեզ աշխարհքէն , նորա համար աշխարհքս ատումէ ձեզ ։

20 Յիշեցէք այն խօսքերն՝ որ ասացի ձեզ · թէ Ծառան իրեն տիրոջիցը մեծ ˜ չէ · թէ որ ինձ հալածեցին , ապա ձեզ էլ կը հալածեն · թէ որ իմ խօսքերս պահեցին՝ ապա ձերինն էլ ւ կը պահեն ։

21 Բայց այս բաները կանեն ձեզ իմ անուանս = համար · ինչու որ՝ չը ճանաչեցին նորան՝ որ ինձ ուղարկեց ։

22 Թէ որ ես չէի եկել՝ եւ նորանց հետ խօսացել , նորանք մեղք չէին ւ ունենալ · բայց հիմիկ ընաւ պատճառ չունին իրենց մեղքերը ¬ համար ։

23 Ով որ ինձ է ատում՝ իմ Հօրս էլ է Լ ատում ։

24 Թէ որ այն՝ գործքերը՝ չէի գործել նորանց մէջ , որ մէկ ուրիշ մարդ չը գործեց , նորանք ընաւ մեղք չունէին · բայց հիմիկ տեսան՝ եւ ատեցին ինձ՝ եւ իմ − Հօրս ·

25 Բայց որ այն բանը կատարվի՝ որ նորանց օրէնքումը գրած է · թէ Զուր տեղը ատեցին = ինձ ։

26 Այլ երբոր Մխիթարիչը կըգայ՝ որ նորան ես Հօրիցը կուղարկեմ ձեզ , ճշմարտութեան Լ Հոգին , որ Հօրիցն է դուրս գալիս , նա կը վկայէ ինձ + համար ։

27 Եւ դուք էլ r կը վկայէք , ինչու որ՝ սկզբիցն ինձ հետ ɔ էք ։

ʃ Ա Յովհ. Դ. 5։
ɔ Գլ. Ժէ. 14։
˜ Մատթ. Ժ. 24։ Ղուկ. Զ. 40։ Գլ. ԺԳ. 16։
ւ Եզեկ. Գ. 7։
= Մատթ. Ժ. 22. ԻԴ. 9։ Գլ. ԺԶ. 3։
ւ Գլ. Թ. 41։
¬ Հռովմ. Ա. 20։ Յակ. Դ. 17։
Լ Ա Յովհ. Բ. 23։
− Գլ. Գ. 2։ Է. 31։ Թ. 32։
= Սաղ. ԼԵ. 19։ ԿԸ. 4։
Լ Ղուկ. ԻԴ. 49։ Գլ. ԺԴ. 17. 26։ ԺԶ. 7. 13։ Գործ. Բ. 33։
+ Ա Յովհ. Ե. 6։
r Ղուկ. ԻԴ. 48։ Գործ. Ա. 8. 21. 22։ Բ. 32։ Գ. 15։ Դ. 20. 23։ Ե. 32։ Ժ. 39։ ԺԳ. 31։ Ա Պետ. Ե. 1։ Բ Պետ. Ա. 16։
ɔ Ղուկ. Ա. 2։ Ա Յովհ. Ա. 1, 2։

## ԳԼ. ԺԶ

1 Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի
մի՛ գայթագղեսջիք:
2 'Ի ժողովրդոց բերեալ հանի-
ցեն զձեզ. այլ եկեսցէ ժամանակ՝
զի ամենայն որ սպանանիցէ զձեզ,
համարիցի պաշտօն մատուցանել
Աստուծոյ:
3 Եւ զայն արասցեն ընդ ձեզ.
քանզի ոչ ծանեան զՀայր, եւ ոչ
զիս:
4 Այլ եւ զայս խօսեցայ ընդ
ձեզ, զի յորժամ եկեսցէ ժամա-
նակ՝ յիշեսջիք՝ թէ ես ասացի ձեզ:
5 Զայս 'ի սկզբանէ ոչ ասացի
ձեզ, քանզի ընդ ձեզ էի: Բայց
արդ երթամ ես առ առաքիչն իմ.
եւ ոչ ոք 'ի ձէնջ հարցանէ զիս,
թէ Յո՞ երթաս:
6 Այլ զի զայս խօսեցայ ընդ
ձեզ, տրտմութիւն ելից զսիրտս
ձեր:
7 Այլ ես զճշմարիտն ասեմ ձեզ.
լաւ է ձեզ՝ եթէ ես երթամ. զի
եթէ ես ոչ երթայց՝ Մխիթարիչն
ոչ եկեսցէ առ ձեզ. ապա եթէ
երթամ, առաքեցից զնա առ ձեզ:
8 Եւ նա եկեալ յանդիմանեսցէ
զաշխարհ վասն մեղաց՝ եւ վասն
արդարութեան եւ վասն դատաս-
տանի:
9 Վասն մեղաց՝ զի ոչ հաւա-
տան յիս:
10 Վասն արդարութեան՝ զի առ
Հայր իմ երթամ, եւ ոչ եւս տե-
սանէք զիս:

1 Աս խօսեցի ձեզ հետ, որ
ա չըգայթակղըւիք:
2 Իրենց ժողովարաններիցը ձեզ
դուրս բ կը հանեն. բայց ժամանակ
կը գայ՝ որ ամէն ով որ սպանէ
ձեզ, կը կարծէ թէ Աստուծոյն
պաշտօն է գ մատուցանում:
3 Եւ նա կանենն ձեզ վերայ. ին-
չու որ՝ ոչ Հօրը ճանաչեցին՝ եւ ոչ
դ ինձ:
4 Բայց աս էլ խօսեցի ձեզ
հետ, որ երբոր ժամանակը կը գայ՝
մտքներդ բերէք, թէ ես ասացի
ե ձեզ:
5 Այս բաները սկըզբունը չասացի
զ ձեզ. պատճառն որ՝ ես ձեզ հետ
էի: Բայց հիմիկ ես ինձ ուղարկո-
ղին մօտն եմ գնում. եւ ձեզանից
ընաւ մէկը չի հարցնում ինձ, թէ
Ո՞ւր ես է գնում:
6 Այլ որովհետեւ աս խօսեցի
ձեզ հետ, տրտմութիւնը լցրուց
ձեր ը սրտերը:
7 Բայց ես ճշմարիտն ասում եմ
ձեզ՝ թէ լաւ է ձեզ համար, որ
ես գնամ. ինչու որ՝ եթէ ես չը
գնամ, Մխիթարիչը չի գալ ձեզ
թ մօտ. բայց թէ որ գնամ, նորան
կուղարկեմ ձեզ ժ մօտ:
8 Եւ նա երբոր կը գայ աշխարհ-
քին կը յանդիմանէ, մեղաց համար,
եւ արդարութեան համար, եւ դա-
տաստանի համար:
9 Մեղաց համար՝ որ ինձ չեն
ի հաւատում:
10 Արդարութեան լ համար՝ որ ես
իմ Հօրս մօտն եմ գնում, եւ էլ
ինձ չէք խ տեսնել:

ա Մատթ. ԺԱ. 6. ԻԴ. 10. ԻԶ. 31.
բ Գլ. Թ. 22. 34. ԺԲ. 42.
գ Գործ. Է. 59. Թ. 1. ԻԶ. 9, 10, 11.
դ Գլ. ԺԵ. 21. Հռովմ. Ժ. 2. Ա Կորնթ. Բ. 8. Ա Տիմ. Ա. 13.
ե Գլ. ԺԳ. 19. ԺԴ. 29.
զ Մատթ. Թ. 15.
է Համար. 10. 16. Է. 33. ԺԳ. 3. ԺԴ. 28.
ը Համար. 22. Գլ. ԺԴ. 1.
թ Գլ. Է. 39. ԺԴ. 16. 26. ԺԵ. 26.
ժ Գործ. Բ. 33. Եփես. Դ. 8.
ի Գործ. Բ. 32.
լ Գործ. Բ. 32.
խ Գլ. Գ. 14. Է. 32.

11 Վասն դատաստանի՝ զի իշխան
աշխարհիս այսորիկ դատապար-
տեալ է։
12 Եւս բազում ինչ ունիմ ասել
ձեզ, այլ ոչ կարէք հանդարտել
այժմիկ։
13 Յորժամ եկեսցէ նա՝ Հոգին
ճշմարտութեան, առաջնորդեսցէ
ձեզ ամենայն ճշմարտութեամբ.
զի ոչ եթէ յանձնէ ինչ խօսիցի,
այլ զոր լսիցէ՝ խօսիցի, եւ զգալոցն
պատմեսցէ ձեզ։

14 Նա զիս փառաւորեսցէ, զի
յիմմէ անտի առնուցու եւ պատ-
մեսցէ ձեզ։
15 Զամենայն ինչ զոր ունի Հայր՝
իմ է. վասն այնորիկ ասացի ձեզ,
թէ յիմմէ անտի առնուցու եւ պատ-
մեսցէ ձեզ։
16 Փոքր մի, եւ ոչ եւս տեսանէք
զիս. եւ արդ սակաւիկ մի, եւ
տեսանիցէք զիս. եւ ես երթամ
առ Հայր։
17 Ասէին ոմանք յաշակերտաց
անտի ցմիմեանս. Զի՞նչ է այս՝ զոր
ասէ ցմեզ, թէ Փոքր մի՝ եւ ոչ
տեսանէք զիս. եւ դարձեալ սա-
կաւիկ մի՝ եւ տեսանիցէք զիս. եւ
թէ ես առ Հայր երթամ։

18 Եւ ասէին, Զի՞նչ իցէ այն
փոքր միւս եւս. չգիտեմք զի՞նչ
խօսի։
19 Գիտաց Յիսուս եթէ կամէին
զնա հարցանել, եւ ասէ ցնոսա.
Վասն այդորիկ խնդրէք ընդ միմ-
եանս, զի ասացի թէ Փոքր մի՝ եւ
ոչ տեսանէք զիս, եւ դարձեալ սա-
կաւիկ միւս եւս, եւ տեսանիցէք
զիս։

11 Դատաստանի ծ համար՝ որ այս
աշխարհքիս իշխանը դատապարտու-
ւած կ է։
12 Էլ շատ բան ունիմ որ ձեզ
ասեմ, բայց հիմիկ չէք կարող
հ տանել։
13 Երբոր նա՝ ճշմարտութեան Հո-
գին ձ կը գայ, նա ձեզ ամէն ճըշ-
մարտութենով ղ կառաջնորդէ.
պատճառն որ՝ չէ թէ իրենն անձնի-
ցը մէն բան կը խօսի, բայց ինչ որ
կը լսէ՝ նա կը խօսի, եւ նոր գալու
բաները կը պատմէ ձեզ։
14 Նա ինծ կը փառաւորէ, ինչու
որ՝ իմ բաներիցս կառնէ եւ կը
պատմէ ձեզ։
15 Ամէն ինչ որ Հայրն ունի՝ իմս
է. Նրահամար ասացի ձեզ, թէ իմ
ճ բաներիցս կառնէ եւ կը պատմէ
ձեզ։
16 Մէն քիչ ժամանակ էլ, եւ էլ
չէք տեսնիլ ինծ. եւ յետոյ մէն
քիչ էլ, եւ կը տեսնէք մ ինծ. եւ
ես Հօրը մօտն եմ յ գնում։
17 Աշակերտներիցը մէն քանիսն
իրար ասումէին. Աս ինչ է որ ա-
սումէ մեզ. թէ Մէն քիչ ժամա-
նակ՝ եւ էլ չէք տեսնիլ ինծ, եւ
նորէն՝ մէն քիչ էլ, եւ կը տեսնէք
ինծ, եւ թէ ես իմ Հօրս մօտն եմ
գնում։
18 Եւ ասումէին. Ի՞նչ է այն մէն
քիչ ժամանակը. չենք գիտում՝ թէ
ինչ է խօսում։
19 Յիսուս իմացաւ՝ թէ ուզու-
մէին հարցնել իրեն՝ եւ ասաց նո-
րանց. Դրահամար հարցնումէք ի-
րար մէջ, որ ասացի՝ թէ Մէն քիչ
ժամանակ, եւ չէք տեսնիլ ինծ, եւ
նորէն մէն քիչ էլ, եւ կը տեսնէք
ինծ։

ծ Գործ. ԻԶ. 18։
կ Ղուկ. Ժ. 18։ Գլ. ԺԲ. 31։ Եփես. Բ. 2։ Կող. Բ. 15։ Եբր. Բ. 14։
հ Մարկ. Դ. 33։ Ա Կորնթ. Գ. 2։ Եբր. Ե. 12։
ձ Գլ. ԺԴ. 17։ ԺԵ. 26։
ղ Գլ. ԺԴ. 26։ Ա Յովհ. Բ. 20. 27։
ճ Մատթ. ԻԱ. 27։ Գլ. Գ. 35։ ԺԴ. 3։ ԺԷ. 10։
մ Համար. 10։ Գլ. Է. 33։ ԺԴ. 33 ԺԴ. 19։
յ Համար. 28։ Գլ. ԺԴ. 3։

20 Ամէն ամէն ասեմ ձեզ, զի
լայջիք և ողբասջիք դուք, և
աշխարհ խնդասցէ. դուք տրտմես-
ջիք, այլ տրտմութիւնն ձեր յուրա-
խութիւն եղիցի։

21 Կին յորժամ ծնանիցի՝ տրտ-
մութիւն է նմա, զի հասեալ է ժամ
նորա. այլ յորժամ ծնցի զմանուկն,
ոչ ևս յիշէ զնեղութիւն վասն
խնդութեանն. զի ծնաւ մարդ յաշ-
խարհ։

22 Եւ դուք այժմ տրտմութիւն
ունիք. այլ դարձեալ տեսից զձեզ,
և ուրախ լիցին սիրտք ձեր. և
զուրախութիւնն ձեր ոչ ոք հանիցէ
'ի ձէնջ։
23 Եւ յայնմ աւուր զիս ինչ ոչ
հարցանիցէք. Ամէն ամէն ասեմ
ձեզ՝ զի Զոր ինչ խնդրիցէք 'ի Հօ-
րէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ։

24 Մինչև ցայժմ ոչինչ խնդրե-
ցիք յանուն իմ. խնդրեցէք, և
առնուցուք. զի ուրախութիւնն
ձեր լցեալ իցէ։
25 Զայս առակօք խօսեցայ ընդ
ձեզ. եկեսցէ ժամանակ՝ յորժամ ոչ
ևս առակօք խօսեցայց ընդ ձեզ.
այլ յայտնապէս զՀօրէ պատմեցից
ձեզ։
26 Յայնմ աւուր խնդրեսջիք յա-
նուն իմ. և ոչ ասեմ ձեզ, եթէ
ես աղաչեցից զՀայր վասն ձեր։
27 Զի ինքն իսկ Հայր սիրէ զձեզ՝
զի դուք զիս սիրեցիք, և հաւա-
տացիք, եթէ ես յԱստուծոյ ելի։

28 Ելի 'ի Հօրէ՝ և եկի յաշխարհ.
դարձեալ թողում զաշխարհ, և եր-
թամ առ Հայր։
29 Ասեն ցնա աշակերտքն. Ահա

20 Ճշմարիտն ճշմարիտն ասու-
մեմ ձեզ, որ դուք լաց կը լինիք
և կը ողբաք, և աշխարհքը կու-
րախանայ. դուք կը տրտմիք, բայց
ձեր տրտմութիւնը ուրախութիւն
կը լինի։
21 Մին կին, երբոր ծնի՝ տրտ-
մութիւնը բռնումէ նորան, ինչու
որ՝ նորա ժամանակը հասել է.
բայց երբոր երախան ծնվումէ,
այն նեղութիւնը չի յիշում այն ու-
րախութեան համար՝ որ մին մարդ
ծնվաւ աշխարհքի՝ մէջ։
22 Եւ դուք հիմիկ տրտմութիւն
ւ ունիք, բայց նորէն կը տեսնեմ
ձեզ, և ձեր սրտերն ուրախ կը լի-
նին. և ձեր ուրախութիւնը բնաւ
մինը չի հանիլ - ձեզանից։
23 Եւ այն օրը բնաւ մին բան
չէք հարցնիլ ինձ. ճշմարիտն ճըշ-
մարիտն ասումեմ ձեզ՝ թէ ինչ որ
իմ Հօրիցս խնդրէք իմ անունովս,
նա կը տայ ւ ձեզ։
24 Մինչև հիմիկ՝ բնաւ բան չը
խնդրեցիք իմ անունովս. խնդրե-
ցէք և կառնէք, որ ձեր ուրա-
խութիւնը կատարեալ ղ լինի։
25 Այս բաները առակով խօսեցի
ձեզ հետ. ժամանակ կը գայ, եր-
բոր էլ առակով չեմ խօսիլ ձեզ
հետ. բայց յայտնի կը պատմեմ ձեզ
Հօր համար։
26 Այն օրն իմ անունովս կը
խնդրէք. և չեմ ասում ձեզ՝ թէ
ես ձեզ համար կաղաչեմ Լ Հօրը։
27 Ինչու որ՝ իսկ Հայրն ինքը սի-
րումէ – ձեզ. ինչու որ՝ դուք ինձ
սիրեցիք և հաւատացիք, թէ ես
Աստուածանից դուրս = ելի։
28 Հօրից դուրս ելի՝ և եկի
աշխարհքը. դարձեալ աշխարհքը
թողումեմ և Հօրը մօտ Է երթումեմ։
29 Աշակերտները նորան ասացին.

ն Եսայ. ԻԶ. 17.
ւ Համար. 6.
= Ղու. ԻԴ. 41. 52. Գէ. ԺԴ. 1. 27. Ի 20. Գործ. Բ. 46. ԺԳ. 52. Ա Պետ. Ա. 8.
ւ Մատթ Է. 7.
Գէ. ԺԴ. 13. ԺԵ. 16.
ղ Գէ. ԺԵ. 11.
ջ Համար. 23.
– Գէ. ԺԴ. 21. 23.
= Համար. 30. Գէ. Գ. 13. ԺԵ. 8.
Է Գէ. ԺԴ. 3.

արդ յայտնութեամբ խօսիս. և առակ և ոչ մի ինչ ասես։

30 Այժմիկ գիտեմք՝ եթէ գիտես զամենայն. և ոչինչ պիտոյ է՝ եթէ ոք հարցանիցէ զքեզ. յայսմիկ հաւատամք՝ եթէ յԱստուծոյ ելեր։

31 Պատասխանի ետ նոցա Յիսուս, և ասէ. Այժմ հաւատայք։

32 Ահա եկեսցէ ժամ, և եկեալ իսկ է, զի ցրուեսջիք իւրաքանչիւր առ իւր, և զիս միայն թողուցուք. և չեմ միայն, զի Հայր ընդ իս է։

33 Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ընդ իս խաղաղութիւն ունիցիք. յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք, այլ քաջալերեցարուք, զի ես յաղթեցի աշխարհի։

Ահա հիմիկ յայտնի ես խօսում, և ընաւ մին առակ չես ասում։

30 Հիմիկ գիտեմնք՝ որ դու ամէն բան գիտես. և ընաւ պէտք չէ՝ որ մէկը հարցնէ քեզ. սորանով հաւատումենք՝ թէ դու Աստուածմէնից դուրս եկիր։

31 Յիսուս պատասխան տուաւ նորանց և ասաց. Հիմիկ հաւատամէք։

32 Ահա ժամանակ կը գայ, և մինչև հիմիկ եկած է, որ ամէն մէկդ կը ցրվիք իրեն տեղը, և ինձ մինակ կը թողէք. այլ մինակ չեմ. ինչու որ՝ Հայրն ինձ հետ է։

33 Աս խօսեցի ձեզ հետ, որ ինձանում խաղաղութիւն ունենաք. աշխարհքումս նեղութիւն կունենաք, բայց սրտապինդ կացէք, ինչու որ ես աշխարհքին յաղթեցի։

## ԳԼ. ԺԷ.

1 Զայս խօսեցաւ Յիսուս, և համբարձ զաչս իւր յերկինս և ասէ. Հայր հասեալ է ժամ. փառաւորեա զՈրդի քո, զի և Որդի քո փառաւորեսցէ զքեզ։

2 Որպէս ետուր նմա իշխանութիւն ամենայն մարմնոյ. զի ամենայնի, զոր ետուր նմա, տացէ ըզ կեանսն յաւիտենականս։

3 Այս են յաւիտենական կեանքն, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած, և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս։

1 Երբոր Յիսուս աս խօսեց՝ իրեն աչքերը բարձրացուց դէպի երկինքն ու ասաց. Հայր՝ ժամը հասել է, փառաւորէ քու Որդիդ՝ որ քու Որդին էլ քեզ փառաւորէ։

2 Ինչպէս որ նորան իշխանութիւն տուիր ամէն մարմնոյ վերայ, որ յաւիտենական կեանքը տայ այն ամէնին՝ որ տուիր նորան։

3 Աս է յաւիտենական կեանքը, որ քեզ միայն ճշմարիտ Աստուած ճանաչեն, և նորան, որ ուղարկեցիր՝ Յիսուսին Քրիստոսին։

ա Գլ. ԻԱ. 17։ բ Համար. 27։ Գլ. ԺԷ. 8։ գ Մատթ. ԻԶ. 31։ Մարկ. ԺԴ. 27։ դ Գլ. Ի. 10։ ե Գլ. Ը. 29։ ԺԴ. 10, 11։ զ Եսայ. Թ. 6։ Գլ. ԺԴ. 27։ Հռովմ. Ե. 1։ Եփես. Բ. 14։ Կող. Ա. 20։ է Գլ. ԺԵ. 19, 20, 21։ Բ Տիմ. Գ. 12։ ը Գլ. ԺԴ. 1։ թ Հռովմ. Ը. 37։ Ա Յովհ. Դ. 4։ Ե. 4։

ա Գլ. ԺԲ. 23։ ԺԳ. 32։ բ Դան. Է. 14։ Մատթ. ԺԱ. 27. ԻԸ. 18։ Գլ. Գ. 35։ Ե. 27։ Ա Կորնթ. ԺԵ. 25. 27։ Փիլ. Բ. 10։ Եբր. Բ. 8։ գ Համար. 6. 9. 24։ Գլ. Զ. 37։ դ Եսայ. ՆԳ. 11։ Երեմ. Թ. 24։ ե Ա Կորնթ. Ը. 4։ Ա Թես. Ա. 9։ զ Գլ. Գ. 34։ Ե. 36, 37։ Զ. 29. 58։ Է. 29։ Ժ. 36։ ԺԱ. 42։

4 Ես զքեզ փառաւորեցի յերկրի. զգործն կատարեցի, զոր ետուր ցիս՝ զի արարից։

5 Եւ այժմ փառաւորեա զիս Հայր՝ առ 'ի քէն փառօքն՝ զոր ունէի յառաջ քան զլինելն աշխարհի առ 'ի քէն։

6 Յայտնեցի զանուն քո մարդկանն՝ զորս ետուր ինձ յաշխարհէ. քո էին, եւ ինձ ետուր զնոսա. եւ զբանն քո պահեցին։

7 Արդ գիտացին՝ եթէ զամենայն ինչ՝ զոր ետուր ինձ, առ 'ի քէն են.

8 Զի զբանն՝ զոր ետուր ինձ՝ ետու նոցա. եւ նոքա ընկալան, եւ ծանեան ճշմարտութեամբ՝ թէ առ 'ի քէն ելի. եւ հաւատացին՝ եթէ դու առաքեցեր զիս։

9 Արդ՝ ես վասն նոցա աղաչեմ, եւ ոչ վասն աշխարհի աղաչեմ. այլ վասն նոցա՝ զորս ետուրն ինձ, զի քո են։

10 Եւ որ ինչ իմ է՝ ամենայն քո է. եւ որ ինչ քո է՝ այն իմ է. եւ փառաւորեալ եմ 'ի նոսա։

11 Եւ ես ոչ եւս եմ յաշխարհի, եւ նոքա յաշխարհի են, եւ ես առ քեզ գամ. Հայր սուրբ՝ պահեա զնոսա յանուն քո, որով ետուրն ինձ. զի եղիցին մի, որպէս եւ մեք մի եմք։

12 Մինչ էի յաշխարհի ընդ նոսա, ես պահէի զնոսա յանուն քո, որով ետուրն ինձ, եւ պահեցի. եւ ոչ

4 Ես քեզ փառաւորեցի երկրի [է] վերայ. այն գործը [ը] կատարեցի, որ տուիր ինձ՝ որ [թ] ընեմ։

5 Եւ հիմիկ Հայր՝ փառաւորէ ինձ քեզ մօտ այն փառքովը որ նորան աշխարհքի ըլլալուցն առաջ ունէի քեզ [ժ] մօտ։

6 Քո անունդ յայտնեցի այն [ի] մարդկանց՝ որ աշխարհքիցը տուիր [լ] ինձ. քու էին, եւ ինձ տուիր նորանց. եւ քու խօսքդ պահեցին։

7 Հիմիկ իմացան՝ որ այն ամէն բաներն՝ որ ինձ տուիր՝ քեզմանից է.

8 Ինչու որ՝ այն խօսքերն՝ որ ինձ տուիր՝ նորանց [խ] տուի. եւ նորանք ընդունեցին, եւ ճշմարտութեամբ իմացան՝ որ քեզմանից դուրս [ծ] ելլի. եւ հաւատացին՝ թէ դու ուղարկեցիր ինձ։

9 Արդէն ես նորանց համար եմ աղաչում, եւ աշխարհքի համար չեմ աղաչում. բայց նորանց համար՝ որ ինձ տուիր, ինչու որ՝ քու [կ] էին։

10 Եւ ինչ որ իմս է՝ այն ամէնը քու է. եւ ինչ քու է՝ նա իմս [հ] է. եւ ես փառաւորված եմ նորանցմով։

11 Եւ ես էլ աշխարհքումն չեմ, եւ նորանք աշխարհքումն են, եւ ես քեզ մօտ եմ [ձ] գալիս. ով Հայր սուրբ՝ պահէ նորանց քո [ղ] անուանովդ, որ նորանով տուիր ինձ. որ մէկ [ճ] ըլլան, ինչպէս որ մենք էլ մէկ [մ] ենք։

12 Դեռ քանի որ աշխարհքումս նորանց հետ էի, ես էի պահում նորանց քո անուանովդ, նորանց որ

է Գլ. ԺԳ. 31. ԺԴ. 13.
ը Գլ. Դ. 34. Ե. 36. Թ. 3. ԺԹ. 30.
թ Գլ. ԺԴ. 31. ԺԵ. 10.
ժ Գլ. Ա. 1, 2. Ժ. 30. ԺԴ. 9. Փիլիպ. Բ. 6. Կող. Ա. 15. 17. Եբր. Ա. 3. 10.
ի Համար. 26. Սաղ. ԻԲ. 22.
լ Համար. 2. 9. 11. Գլ. Զ. 37. 39. Ժ. 29. ԺԵ. 19.
խ Գլ. Ը. 28. ԺԲ. 49. ԺԴ. 10.
ծ Համար. 25. Գլ. ԺԶ. 27. 30.
կ Ա Յովհ. Ե. 19.
հ Գլ. ԺԶ. 15.
ձ Գլ. ԺԴ. 1. ԺԶ. 28.
ղ Ա Պետ. Ա. 5. Յուդ. 1.
ճ Համար. 21. 22.
մ Գլ. Ժ. 30.

ոչ 'ի նոցանէ կորեաւ, բայց որդին
կորստեան, զի գիրն լցցի։

13 Բայց արդ՝ առ քեզ գամ. եւ
զայս խօսիմ յաշխարհի, զի ունիցին
զուրախութիւնն իմ լիով յանձինս
իւրեանց.

14 Ես ետու նոցա զբանն քո, եւ
աշխարհս ատեաց զնոսա, զի չեն
յաշխարհէ, որպէս եւ ես չեմ յաշ-
խարհէ։
15 Ո՛չ զայս աղաչեմ, զի բարձ-
ցես զնոսա յաշխարհէ. այլ զի պա-
հեսցես զնոսա 'ի չարէ։
16 Յաշխարհէ աստի չեն, որպէս
եւ ես չեմ յաշխարհէ։
17 Սուրբ արա զնոսա ճշմարտու-
թեամբ քով, զի քո բանդ ճշմար-
մարտութիւն է։
18 Որպէս զիս առաքեցեր յաշ-
խարհ, եւ ես առաքեցի զնոսա
յաշխարհ։
19 Եւ 'ի վերայ նոցա ես սուրբ
առնեմ զանձն իմ, զի եղիցին եւ
նոքա սրբեալք ճշմարտութեամբ։

20 Այլ ո՛չ վասն նոցա միայն ա-
ղաչեմ, այլ եւ վասն ամենայն հա-
ւատացելոց բանիւն նոցա յիս։

21 Զի ամենեքին մի իցեն, որպէս
դու Հայր յիս՝ եւ ես 'ի քեզ, զի
եւ նոքա 'ի միզ իցեն. զի եւ աշ-
խարհ հաւատասցէ՝ եթէ դու առա-
քեցեր զիս։
22 Եւ ես՝ զփառսն զոր ետուր ինձ՝

տուիր ինձ, էլ յ պահեցի. եւ նը-
րանցից մէկը ն չը կորաւ, բայց մի-
նակ կորուստի շ որդին, որ գիրքը
ո կատարուի։
13 Բայց հիմիկ քեզ մօտ եմ գա-
լիս. եւ այս բանս աշխարհքումս
խօսումեմ, որ իմ ուրախութիւնս
լիութենով ունենան իրենց անձնե-
րումը։
14 Ես քո խօսքդ նրանց չ տուի,
եւ աշխարհքս նրանց ատեց, պատ-
ճառն որ՝ աշխարհքիցս պ չեն, ինչ-
պէս որ ես էլ աշխարհքիցս ջ չեմ։
15 Սա չեմ աղաչում, որ աշ-
խարհքիցս վեր առնես նրանց.
բայց որ չարիցը պահես ռ նրանց։
16 Այս աշխարհքիցս չեն, ինչպէս
որ ես էլ աշխարհքիցս ս չեմ։
17 Նրանց սուրբ արա քո ճըշ-
վ մարտութենովդ. ինչու որ՝ քո
խօսքդ ճշմարտութիւն տ է։
18 Ինչպէս որ ինձ ուղարկեցիր
աշխարհք, ես էլ նրանց ուղար-
կեցի ր աշխարհք։
19 Եւ ես նրանց վերայ իմ ան-
ձըս սուրբ եմ անում, որ նրանք
էլ ճշմարտութենով սրբած ց ըլ-
նին։
20 Բայց ոչ թէ միմիայն նրանց
համար եմ աղաչում, այլ ամէնին
համար էլ՝ որ նրանց խօսքովը կը
հաւատան ինձ,
21 Որ ամէնքը ւ մին ըլնին, ինչ-
պէս որ՝ դու Հայր ինձանում՝ եւ
ես քեզանում, որ նրանք էլ մե-
զանում փ ըլնին. որ աշխարհքը հա-
ւատայ՝ թէ դու ուղարկեցիր ինձ։
22 Եւ ես՝ այն փառքն՝ որ ինձ

յ Գլ. Զ. 39. Ժ. 28. Եբր. Բ. 13.
ն Գլ. ԺԸ. 9. Ա Յովհ. Բ. 19.
շ Գլ. Զ. 71. ԺԳ. 18.
ո Սաղ. ՃԸ. 8. Գործ. Ա. 20.
չ Համար. 8.
պ Գլ. ԺԵ. 18, 19. Ա Յովհ. Գ. 13.
ջ Գլ. Ը. 23. Համար. 16.
ռ Մատթ. Զ. 13. Գաղ. Ա. 4. Բ Թես. Գ. 3. Ա Յովհ. Ե. 18.
ս Համար. 14.
վ Գլ. ԺԵ. 3. Գործ. ԺԵ. 9. Եփես. Ե. 26. Ա Պետ. Ա. 22.
տ Բ Թագ. Է. 28. Սաղ. ՃԺԸ. 142. 151. Գլ. Ը. 40.
ր Գլ. Ի. 21.
ց Ա Կորնթ. Ա. 2. 30. Ա Թես. Դ. 7. Եբր. Ժ. 10.
ւ Համար. 11. 22, 23. Գլ. Ժ. 16. Հռովմ. ԺԲ. 5. Գաղ. Գ. 28.
փ Գլ. Ժ. 38. ԺԴ. 11.

ետու նոցա, զի իցեն մի՝ որպէս
եւ մեք մի եմք:
23 Ես 'ի նոսա՝ եւ դու յիս, զի
եղիցին կատարեալք 'ի մի. եւ գի-
տասցէ աշխարհ՝ եթէ դու առա-
քեցեր զիս. եւ սիրեցի զնոսա որ-
պէս դու զիս սիրեցեր:

24 Հայր՝ զորս ետուրն ինձ, կա-
միմ՝ զի ուր եմն ես, եւ նոքա իցեն
ընդ իս. զի տեսանիցեն զփառսն իմ,
զոր ետուրն զիս. զի սիրեցեր զիս
յառաջ քան զլինելն աշխարհի:

25 Հայր արդար՝ եւ աշխարհ ըզ
քեզ ոչ ծանեաւ. այլ ես զքեզ
ծանեայ, եւ նոքա ծանեան, եթէ
դու առաքեցեր զիս:
26 Եւ ծանուցի նոցա զանուն քո,
եւ ծանուցից. զի սէրն՝ զոր սիրե-
ցեր զիս, 'ի նոսա իցէ, եւ ես 'ի
նոսա:

տուիր՝ նորանց տուի, որ մէկ ըլ-
նին՝ ինչպէս որ մենք ալ մէկ + ենք:
23 Ես նորանցմում՝ եւ դու ինձա-
նում, որ մէկի մէջ կատարեալ
• ըլնին. եւ աշխարհքը գիտենայ՝
թէ դու ուղարկեցիր ինձ. եւ ես
սիրեցի նորանց՝ ինչպէս որ դու
ինձ սիրեցիր:
24 Հայր՝ նորանք՝ որ դու ինձ
§ տուիր, կամենումեմ որ՝ ինչտեղ
որ ես եմ, նորանք էլ ինձ հետ ըլ-
նին. որ իմ փառքս տեսնեն, որ
տուիր ինձ. ինչու որ՝ աշխարհքի
ըլնելուցն առաջ սիրեցիր = ինձ:
25 Արդար Հայր՝ աշխարհքը չը
ճանաչեց ‡ քեզ. բայց ես ճանաչե-
ցի ÷ քեզ, եւ սորանք ճանաչեցին,
որ դու ուղարկեցիր ∓ ինձ:
26 Եւ քու անունդ ճանաչացրի
նորանց, եւ ⊦ կը ճանաչացնեմ. որ
այն սէրն, որ ինձ սիրեցիր՝ նորան-
ցում ըլնի, եւ ես էլ ւ նորանցում:

## ԳԼ. ԺԸ

1 Զայս իբրեւ ասաց Յիսուս,
ել աշակերտօքն հանդերձ յայնկոյս
ձորոյն Կեդրոնի, ուր էր պարտէզ.
յոր եմուտ ինքն եւ աշակերտքն
իւր:
2 Գիտէր եւ Յուդա՝ որ զնա
մատնելոց էր, զտեղին. զի բազում
անգամ ժողովեալ էր անդր Յիսուսի
աշակերտօքն հանդերձ:

3 Եւ Յուդայի առեալ ընդ իւր
զգունդն, եւ 'ի քահանայապետիցն
եւ 'ի փարիսեցւոց սպասաւորս, գայ
անդր ջահիւք եւ լապտերօք եւ զի-
նուք:

1 Յիսուս երբոր աս ասաց, աշա-
կերտներին հետ գնաց = Կեդ-
րոնի ձորի միւս կողմը, ուրտեղ որ
պարտէզ ‡ կար. որ նորա մէջ մտաւ
ինքը եւ իրեն աշակերտները:
2 Յուդան էլ՝ որ զինքը մատնէր
նորան, գիտումէր այնտեղը. ին-
չու որ՝ Յիսուս շատ անգամ ժո-
ղովվիլ էր այնտեղ աշակերտներին
÷ հետ:
3 Եւ Յուդան զինուորների գուն-
դըն ու քահանայապետներիցն ու
փարիսեցիներիցը սպասաւորներ ա-
ռաւ իրեն հետ, եւ եկաւ այնտեղ
ջահերով եւ լապտերներով եւ ∓ զէն-
քերով:

+ Գլ. ԺԴ. 20: Ա Յովհ. Ա. 3. Դ. 24:
• Կող. Գ. 14:
§ Գլ. ԺԲ. 26: ԺԴ. 3: Ա Թես. Դ. 16:
= Համար. 5:
‡ Գլ. ԺԵ. 21. ԺԶ. 3:
÷ Գլ. Է. 29: Ը. 55: Ժ. 15:
∓ Համար. 8: Գլ. ԺԶ. 27:
⊦ Համար. 6: Գլ. ԺԵ. 15:
ւ Գլ. ԺԵ. 9:
—
= Մատթ. ԻԶ. 36: Մարկ. ԺԴ. 32: Ղու. ԻԲ. 39:
‡ Բ Թագ. ԺԵ. 23:
÷ Ղու. ԻԱ. 37: ԻԲ. 39:
∓ Մատթ. ԻԶ. 47: Մարկ. ԺԴ. 43: Ղու. ԻԲ. 47: Գործ. Ա. 16:

4 Իսկ Յիսուս իբրեւ ետես զայն ամենայն եկեալ ՚ի վերայ նորա, ել եւ ասէ ցնոսա. Զո՞ խնդրէք։

5 Պատասխանի ետուն նմա. ԶՅիսուս Նազովրեցի. ասէ ցնոսա Յիսուս. Ես եմ. կայր ընդ նոսա եւ Յուդա, որ մատնէրն զնա։

6 Իբրեւ ասաց՝ թէ Ես եմ, յետս յետս չոգան, եւ զարկան զգետնի։

7 Դարձեալ եհարց զնոսա. Զո՞ խնդրէք. եւ նոքա ասեն, ԶՅիսուս Նազովրեցի։

8 Պատասխանի ետ նոցա Յիսուս. Ասացի ձեզ թէ Ես եմ. արդ՝ եթէ զիս խնդրէք՝ թո՛յլ տուք դոցա երթալ։

9 Զի լցցի բանն, զոր ասաց. թէ Զոր ետուրն ցիս, ոչ կորուսի ՚ի նոցանէ եւ ոչ զոք։

10 Իսկ Սիմոնի Պետրոսի՝ քանզի ունէր սուր՝ ձգեաց զնա եւ եհար զքահանայապետին ծառայ, եւ ՚ի բաց առ զունկն նորա զաջոյ. եւ էր անուն ծառային Մաղքոս։

11 Ասէ Յիսուս ցՊետրոս. Արկ զսուրդ անդրէն ՚ի պատեան իւր. զբաժակն՝ զոր ետ ինձ Հայր՝ ոչ ըմպիցե՞մ զնա։

12 Իսկ գունդն եւ հազարապետն եւ սպասաւորք Հրէիցն կալան ըզ Յիսուս, եւ կապեցին.

13 Եւ ածին զնա նախ առ Աննա, որ էր աներ Կայիափայի. որ քահանայապետն էր տարւոյն այնորիկ։

14 Այս այն Կայիափա էր՝ որ խրատն ետ Հրէից, եթէ Լաւ է առն միում մեռանել ՚ի վերայ ժողովրդեանն։

4 Բայց Յիսուս երբոր տեսաւ այն ամէնքը, որ իրեն վերայ էր եկել, դուրս ելաւ եւ նորանց ասաց. Ո՞ւմ էք ուզում։

5 Պատասխան տուին նորան թէ՝ Յիսուս Նազօրեցուն. Յիսուս նորանց ասաց. Ես եմ. Յուդան էլ՝ որ նորան մատնումէր՝ կանգնած էր նորանց հետ։

6 Երբոր Յիսուս ասաց թէ Ես եմ, նորանք յետ գնացին, եւ գետնի վերայ զարկվեցան։

7 Նորէն հարցրուց նորանց՝ թէ Ո՞ւմ էք ուզում. եւ նորանք ասացին. Յիսուս Նազօրեցուն։

8 Յիսուս նորանց պատասխան տուաւ. Ձեզ ասացի թէ Ես եմ. ուրեմն թէ որ ինձ էք ուզում, թո՛ղ տուէք դորանց, որ գնան,

9 Որ կատարվի այն բանն՝ որ ասաց, թէ՝ Նորանց՝ որ ինձ տուիր, նորանցից բնաւ մէկին էլ չեմ ե կորցրել։

10 Բայց Սիմոն Պետրոսը՝ որովհետեւ սուր ունէր՝ քաշեց նորան եւ քահանայապետի ծառային զարկեց, եւ նորան աջ ականջը կտրեց. եւ այն ծառային անունը Մաղքոս էր։

11 Յիսուս Պետրոսին ասաց. Սուրդ է դարձրու իր պատեանին մէջ. այն բաժակը որ իմ Հայրս տուաւ ինձ, նա ե չը խմե՞մ։

12 Բայց զինուորներին գունդը եւ հազարապետն ու Հրէաներին սպասաւորները բռնեցին Յիսուսին, եւ կապեցին,

13 Եւ տարան ը նորան Աննային մօտ, որ Կայիափային աները էր. որ նոյն տարւան քահանայապետն թ էր։

14 Սա այն Կայիափան էր, որ Հրէաներին խրատ տուաւ՝ թէ Լա՛ւ է, մին մարդ մեռնի ժողովրդի ժ վերայ։

ե Գլ. ԺԷ. 12։
զ Մատթ. ԻԶ. 51։ Մարկ. ԺԴ. 47։ Ղուկ. ԻԲ. 49. 50։
է Մատթ. Ի. 22։ ԻԶ. 39. 42։
ը Մատթ. ԻԶ. 57
թ Ղուկ. Գ. 2։
ժ Գլ. ԺԱ. 50։

15 Եւ երթայր զհետ Յիսուսի
Սիմովն Պետրոս, եւ միւս աշա-
կերտն։ Եւ աշակերտն այն՝ քանզի
ծանօթ էր քահանայապետին՝ ե-
մուտ ընդ Յիսուսի ՚ի գաւիթ քա-
հանայապետին։
16 Եւ Պետրոս կայր առ դրանն
արտաքոյ. ել միւս աշակերտն՝ որ
էր ծանօթ քահանայապետին, եւ
ասաց ցդռնապանն, եւ եմոյծ ՚ի
ներքս զՊետրոս։
17 Ասէ աղջիկն՝ որ դռնապանն
էր, զՊետրոս. Միթէ եւ դու յա-
շակերտաց առնն այնորիկ իցես.
եւ նա ասէ՝ Ո՛չ եմ։
18 Կային անդ ծառայքն եւ սպա-
սաւորքն խարոյկ արկեալ. քանզի
ցուրտ էր, եւ ջեռնուին. կայր
ընդ նոսա եւ Պետրոս՝ եւ ջեռնոյր։

19 Եւ քահանայապետն եհարց ըզ
Յիսուս վասն աշակերտացն՝ եւ
վասն վարդապետութեան նորա։

20 Պատասխանի ետ նմա Յիսուս.
Ես յայտնապէս խօսեցայ յաշխար-
հի. ես յամենայն ժամ ուսուցի ՚ի
ժողովրդեանն, եւ ՚ի տաճարի անդ՝
ուր ամենայն Հրէայք ժողովեալ է-
ին, եւ ՚ի ծածուկ ինչ ոչ խօսե-
ցայ։
21 Զի՞ հարցանես զիս. հարց զայ-
նոսիկ՝ որ լուանն, թէ զինչ խօ-
սեցայ ընդ նոսա. ահաւասիկ նոքա
գիտեն զինչ ասացի ես։
22 Իբրեւ նա զայն ասաց, մի ոմն
՚ի սպասաւորացն, որ անդ կայր,
ած ապտակ Յիսուսի՝ եւ ասէ. Այդ-
պէս պատասխանի տաս քահանա-
յապետին։
23 Եւ Յիսուս ասէ ցնա. Եթէ
չար ինչ խօսեցայ՝ վկայեա վասն
չարին. իսկ եթէ բարի, ընդէ՞ր
հարկանես զիս։

15 Եւ Սիմոն Պետրոսն ու միւս
աշակերտը գնացին Յիսուսին ե-
տեւէն։ Այն աշակերտը՝ որովհետեւ
ճանաչ էր քահանայապետին, Յի-
սուսին հետ մտաւ քահանայապետ-
ին տունը։
16 Եւ Պետրոս դրան մօտ կանգնած
էր դուրսը. այն միւս աշակերտը,
որ քահանայապետին ճանաչ էր,
դուրս ելաւ եւ դռնապանին ասաց,
եւ Պետրոսին ներս մտցուց։
17 Այն աղջիկը՝ որ դռնապան էր՝
Պետրոսին ասաց. Միթէ դու էլ
այն մարդու աշակերտներիցն ես.
եւ նա ասաց՝ Թէ Չեմ։
18 Այնտեղ ծառաները եւ սպա-
սաւորը կանգնած էին, կրակը վա-
ռած, ինչու որ ցուրտ էր՝ եւ տա-
քանումէին. Պետրոսն էլ նորանց
հետ կանգնած էր եւ տաքանումէր։
19 Եւ քահանայապետն Յիսուսին
հարցրուց իւր աշակերտներին հա-
մար՝ եւ իրեն վարդապետութեան
համար։
20 Յիսուս պատասխան տուաւ նո-
րան. Ես յայտնի խօսեցի աշխարհ-
քին մէջ. ես ամէն ժամանակ սո-
վորցի ժողովարանումը, եւ ճիշդ
տաճարին մէջ, որտեղ որ ամէն
Հրէաները ժողոված էին, եւ բնաւ
մին ծածուկ բան չը խօսեցի։
21 Ինչու ես ինձ հարցնում՝ նո-
րանց հարցրու՝ որ լսեցին, թէ ինչ
խօսեցի նորանց հետ. ահա նորանք
գիտեն՝ ինչ որ խօսեցի։
22 Երբոր նա աս ասաց, սպասա-
ւորներիցը մինը, որ այնտեղ կանգ-
նած էր, Յիսուսին ապտակ տուաւ՝
եւ ծ ասաց. Այդպէս ես պատաս-
խան տալիս քահանայապետին։
23 Եւ Յիսուս նորան ասաց. Թէ
որ չար բան խօսեցի՝ վկայէ այն
չարին համար. բայց թէ որ բարի,
ինչու ես զարկում ինձ։

է Մատթ. ԻԶ. 58. Մարկ. ԺԴ. 54. Ղուկ. ԻԲ. 54.
ւ Մատթ. ԻԶ. 69. Մարկ. ԺԴ. 66. Ղուկ. ԻԲ. 54.
ե Մատթ. ԻԶ. 55. Ղուկ. Դ. 15. Գլ. Է. 14. 26. 28. Ը. 2.
ծ Երեմ. Ի. 2. Գործ. ԻԳ. 2.

24 Եւ առաքեաց զնա Աննա կա-
պեալ առ Կայիափա քահանայա-
պետ։
25 Եւ Սիմովն Պետրոս կայր անդ՝
եւ ջեռնոյր․ ասեն ցնա՝ Միթէ եւ
դու յաշակերտաց անտի նորա ի-
ցես․ նա ուրացաւ եւ ասէ՝ Թէ
Ոչ եմ։
26 Եւ ասէ մի ոմն ՚ի ծառայից
քահանայապետին՝ ազգական այնո-
րիկ, զորոյ զունկն եհատ Պետրոս․
Ո՞չ ես իսկ տեսի զքեզ ՚ի պարտիզի
անդ ընդ նմա։

27 Դարձեալ ուրացաւ Պետրոս․
եւ վաղվաղակի հաւ խօսեցաւ։
28 Եւ ածեն զՅիսուս ՚ի վանացն
Կայիափայ յապարանս դատաւորին․
եւ էր այգուց․ եւ նոքա ոչ մտին
յապարանսն, զի մի պղծեսցին,
այլ զի ուտիցեն զպասեքն։

29 Ել առ նոսա Պիղատոս ար-
տաքս՝ եւ ասէ․ Զի՞նչ չարախօ-
սութիւն մատուցանէք զառնէն
զայնմանէ։
30 Պատասխանի ետուն եւ ասեն
ցնա․ Եթէ չէր չարագործ այրն
այն, ապա ոչ մատնէաք զնա քեզ։

31 Ասէ ցնոսա Պիղատոս․ Առէք
զնա դուք, եւ ըստ ձերոց օրինացն
դատեցարուք․ ասեն ցնա Հրէայքն․
Մեզ ոչ է արժան սպանանել զոք։

32 Զի լցցի բանն Յիսուսի՝ զոր
ասաց, նշանակեալ՝ թէ որով մա-
հու մեռանելոց իցէ։
33 Եմուտ միւսանգամ յապարան-
սն Պիղատոս, կոչեաց զՅիսուս՝
եւ ասէ ցնա․ Դու ես թագաւորն
Հրէից։

24 Եւ Աննան նորան կապած ու-
ղարկեց Կայիափա քահանայապե-
տին [ա] մօտ։
25 Եւ Սիմոն Պետրոսն այնտեղ
կանգնած էր՝ եւ տաքանում էր․ նո-
րան [բ] ասացին, Միթէ դու էլ նո-
րան աշակերտներիցն ես․ նա ու-
րացաւ եւ ասաց՝ Թէ Ոչ եմ։
26 Եւ քահանայապետին ծառանե-
րիցը մէկն՝ որ ազգական էր նո-
րան, որ Պետրոս նորան ականջը
կտրեց, ասաց․ Չէ՞ որ հետդ ես
տեսի քեզ այն պարտէզումը նորա
հետ։
27 Պետրոս դարձեալ ուրացաւ․
եւ շուտով հաւը [գ] խօսեց։
28 Եւ Յիսուսին Կայիափայէն տա-
նիցը տարան դատաւորին [դ] պալա-
տը․ եւ առաւօտ էր․ եւ նորանք
չը մտին պալատին մէջ, որ չը
պղծուին, բայց որ զատիկը [ե] ու-
տեն։
29 Պիղատոս դուրս ելաւ նորանց
մօտ եւ ասաց․ Այն մարդուն հա-
մար ի՞նչ չարախօսութիւն էք ա-
նում։
30 Պատասխան տուին եւ նորան
ասացին․ Թէ որ այն մարդը չարա-
գործ չը լինէր, ապա նորան չէինք
մատնել քեզ։
31 Պիղատոս նորանց ասաց․ Դուք
առէք նորան, եւ ձեր օրէնքին
պէս դատեցէք․ Հրէաները նորան
ասացին․ Մեզ արժան չէ որ մեն
զոք սպանենք․
32 Որ Յիսուսին խօսքը կատարուի՝
որ ասաց, ցոյց տալով թէ ինչ մա-
հով պիտի [զ] մեռնի։
33 Պիղատոս նորէն մտաւ պալա-
տը, Յիսուսին կանչեց՝ եւ նորան
ասաց․ Դու ես Հրէաներին [է] թա-
գաւորը։

[ա] Մատթ. ԻԶ. 57.
[բ] Մատթ. ԻԶ. 69. 71 Մարկ. ԺԴ. 69. Ղուկ. ԻԲ. 58.
[գ] Մատթ. ԻԶ. 74. Մարկ. ԺԴ. 72. Ղուկ. ԻԲ. 60. Գլ. ԺԳ. 38.
[դ] Մատթ. ԻԷ. 2. Մարկ. ԺԵ. 1. Ղուկ. ԻԳ. 1. Գործ. Գ. 13. Մատթ. ԻԷ. 27.
[ե] Գործ. Ժ. 28. ԺԱ. 3.
[զ] Մատթ. Ի. 19. Գլ. ԺԲ. 32. 33.
[է] Մատթ. ԻԷ. 11.

34 Պատասխանի ետ Յիսուս . 'Ի
քէ՞ն ասես զայդ , եթէ այլք ասա-
ցին քեզ զինէն ։
35 Պատասխանի ետ Պիղատոս .
Միթէ և ես Հրէա՞յ իցեմ . ազգն
քո և քահանայապետք մատնեցին
զքեզ ինձ , զի՞նչ գործ գործեալ է
քո ։
36 Պատասխանի ետ Յիսուս . Իմ
արքայութիւն չէ յայսմ աշխարհէ .
եթէ յաշխարհէ աստի էր արքա-
յութիւնն իմ , սպասաւորքն իմ
մարտնչէին արդեօք՝ զի մի մատ-
նեցայց Հրէից . բայց արդ՝ թագա-
ւորութիւնն իմ չէ աստի ։

37 Ասէ ցնա Պիղատոս . Ապա թէ
այդպէս իցէ , թագաւոր ոմն ես
դու . պատասխանի ետ Յիսուս .
Դու ասես՝ թէ թագաւոր իցեմ .
բայց ես յայդ իսկ ծնեալ եմ , և
'ի դոյն իսկ եկեալ եմ յաշխարհ ,
զի վկայեցից ճշմարտութեանն . ա-
մենայն՝ որ 'ի ճշմարտութենէ է՝
լսէ բարբառոյ իմոյ ։

38 Ասէ ցնա Պիղատոս . Զի՞նչ է
ճշմարտութիւն . զայս իբրև ա-
սաց , դարձեալ ել առ Հրէայսն և
ասէ ցնոսա . Ես և ոչ մի ինչ
պատճառս գտանեմ 'ի նմա ։

39 Բայց է ձեր սովորութիւն , զի
զմի ոք արձակեցից ձեզ 'ի զատ-
կիս . արդ կամի՞ք՝ զի արձակեցից
ձեզ զթագաւորն Հրէից ։

40 Աղաղակեցին ամենեքեան՝ և
ասէին . Մի՛ զդա , այլ զԲարաբ-
բա . և էր Բարաբբայն այն աւա-
զակ ։

34 Յիսուս պատասխան տուաւ .
Քեզմէ՞նից ես ասում դա , թէ ու-
րիշներն ասացին քեզ ինձ համար ։
35 Պիղատոս պատասխան տուաւ .
Միթէ ես էլ Հրէայ եմ . քո ազգդ
և քահանայապետները քեզ մատ-
նեցին ինձ , դու ի՞նչ բան ես ա-
րել ։
36 Յիսուս պատասխան ն տուաւ .
Իմ թագաւորութիւնս այս աշխարհ-
քիցս ն չէ . թէ որ իմ թագաւո-
րութիւնս այս աշխարհքիցս լինէր ,
ապա իմ ծառաները կռիւ կանէին՝
որ չը մատնուէի Հրէաներին ձեռ-
քը . բայց հիմիկ իմ թագաւորու-
թիւնս այստեղիցս չէ ։
37 Պիղատոս ասաց նորան . Ապա
թէ որ այդպէս է , դու մին թա-
գաւոր ես . Յիսուս պատասխան
տուաւ . Դու ես ասում՝ որ ես
թագաւոր եմ . բայց ես իսկ դրա-
համար եմ ծնուած , և իսկ դրա-
համար եմ եկել աշխարհք , որ
ճշմարտութեանը վկայեմ . ամէն՝
ով որ ճշմարտութենիցն է՝ իմ խօս-
քիս = լսում է ։
38 Պիղատոս նորան ասաց . Ի՞նչ
է ճշմարտութիւնը . երբոր աս ա-
սաց , նորէն դուրս գնաց Հրէանե-
րին մօտ և նորանց ասաց . Ես
բնաւ մին պատճառ չեմ գտնում
ն նորանում ։
39 Բայց ձեր սովորութիւնն է՝ որ
զատկի ժամանակին մին մարդ ար-
ձակեմ ձեզ համար . ուրեմն կա-
մենում էք՝ որ Հրէաների թագա-
ւորին արձակեմ ձեզ ղ համար ։
40 Ամէնքն աղաղակեցին՝ և ձա-
ւումէին . Դորան չէ , բայց Բա-
րաբբային . և այն Բարաբբան ա-
ւազակ =էր ։

| | | | |
|---|---|---|---|
| ն Ա Տիմ . Զ . 13 ։ | Ը . 15 ։ | ն Մատթ . Իէ . 24 ։ | Մարկ . ԺԵ . 6 ։ |
| ղ Դան . Բ . 44 ։ Է . | = Գղ . Ը . 47 ։ Ա | Ղու . ԻԳ . 4 ։ | Ղու . ԻԳ . 17 ։ |
| 14 ։ Ղու . ԺԲ . | Յովհ . Գ . 19 | Գղ . ԺԸ . 4 . 6 ։ | ն Գործ . Գ . 14 ։ |
| 14 ։ Գղ . Զ . 15 ։ | Գ . 6 ։ | ղ Մատթ . Իէ . 15 ։ | = Ղու . ԻԳ . 19 ։ |

## ԳԼ. ԺԹ

1 Յայնժամ առ Պիղատոս զՅի-
սուս եւ գան եհար։
2 Եւ զինուորացն արարեալ պը-
սակ 'ի փշոց, եդին 'ի գլուխ նորա,
եւ զգեցուցին նմա հանդերձ ծի-
րանի։
3 Եւ գային առ նա, եւ ասէին.
Ո՛ղջ եր արքայ Հրէից. եւ հանէին
նմա ապտակս։
4 Ել դարձեալ Պիղատոս ար-
տաքս եւ ասէ ցնոսա. Ահա ածեմ
զնա արտաքս առ ձեզ, զի գիտաս-
ջիք՝ թէ վնաս ինչ 'ի նմա ոչ գտա-
նեմ։
5 Ել Յիսուս արտաքս եւ ունէր
պսակ 'ի փշոց, եւ հանդերձ ծիրա-
նի. եւ ասէ ցնոսա. Ահա այրդ
ցձեզ։
6 Իբրեւ տեսին զնա քահանայա-
պետքն եւ սպասաւորք, աղաղակ
բարձին՝ եւ ասեն. 'Ի խաչ հան՝
'ի խաչ հան զդա. ասէ ցնոսա Պի-
ղատոս. Առէք զդա 'ի ձեզ, եւ ձե-
զէն հանէք 'ի խաչ. զի ես 'ի դմա
վնաս ինչ ոչ գտանեմ։
7 Պատասխանի ետուն նմա Հրէ-
այքն. Մեք օրէնս ունիմք, եւ
ըստ օրինաց մերոց պարտի մեռա-
նել. զի զանձն իւր Որդի Աստու-
ծոյ արար։
8 Իբրեւ լուաւ զբանս զայս Պի-
ղատոս, առաւել եւս երկեաւ։
9 Եմուտ դարձեալ անդրէն յա-
պարանսն, եւ ասէ ցՅիսուս. Ուս-
տի ես դու. եւ Յիսուս ոչ ետ նմա
պատասխանի։
10 Ասէ ցնա Պիղատոս. Ընդ իս
ոչ խօսիս, ոչ գիտես եթէ իշխա-
նութիւն ունիմ հանել զքեզ 'ի խաչ,

1 Այն ժամանակը Պիղատոս Յի-
սուսին առաւ եւ — ծեծեց։
2 Եւ զինուորները փշերից մին
պսակ շինեցին, նորան գլուխը
դրին, եւ ծիրանի չոր հագցրին
նորան։
3 Եւ գալիս էին նորա մօտ, եւ
ասում. Ո՛ղջ կաց Հրէից թագա-
ւոր. եւ ապտակներ էին տալիս
նորան։
4 Պիղատոս նորէն դուրս գնաց
եւ նորանց ասաց. Ահա նորան
դուրս եմ բերում ձեզ մօտ, որ գի-
տենաք թէ՝ ես բնաւ մին վնաս
չեմ գտնում ꝑ նորանում։
5 Յիսուս դուրս եկաւ եւ փշե-
րից պսակ ունէր, եւ ծիրանի հա-
գուստ. եւ նորանց ասաց. Ահա
այդ մարդը ձեր առաջին։
6 Երբոր քահանայապետներին ու
սպասաւորները նորան տեսին, ա-
ղաղակեցին՝ եւ ÷ ասացին. Խաչ հա-
նէ դորան. Պիղատոս նորանց ա-
սաց. Ձեզ մօտ առէք դորան, եւ
խակ ձեզանից խաչ հանեցէք. ին-
չու որ՝ ես բնաւ վնաս չեմ գտնում
դորանում։
7 Հրէաները պատասխան տուին
նորան. Մենք օրէնք ունինք, եւ
մեր օրէնքին պէս պէտք է = մեռնի.
ինչու որ՝ իրեն անձըն Աստուծոյ
Որդի Ի արաւ։
8 Երբոր Պիղատոս այս բանս լը-
սեց, էլ աւելի վախեցաւ։
9 Նորէն մտաւ պալատին մէջ,
եւ Յիսուսին ասաց. Դու ինչ տե-
ղից ես. եւ Յիսուս պատասխան
չը տուաւ Ղ նորան։
10 Պիղատոս ասաց նորան. Ինձ
հետ չես խօսում. միթէ չես գի-
տում, որ իշխանութիւն ունիմ քեզ

— Մատթ. Ի. 19։ ԻԷ. 26։ Մարկ. ԺԵ. 15։ Ղու. ԺԸ. 33։

ꝑ Գլ. ԺԸ. 38։ Համար. 6։

÷ Գործ. Գ. 13։

= Ղև. ԻԴ. 16։

Ի Մատթ. ԻԶ. 65։ Գլ. Ե. 18։ Ժ. 33։

Ղ Եսայ. ԾԳ. 7։

Մատթ. ԻԷ. 12. 14։

եւ իշխանութիւն ունիմ արձակել
զքեզ։
11 Պատասխանի ետ Յիսուս. Ո՛չ
ունէիր դու իշխանութիւն 'ի վերայ
իմ եւ ոչ մի, եթէ ոչ էր տուեալ
քեզ 'ի վերուստ. վասն այնորիկ՝ որ
մատնեացն զիս քեզ, նորա մեծ
մեղք են։
12 Եւ յայնմհետէ Պիղատոս խնդ-
րէր արձակել զնա. եւ Հրէայքն
աղաղակէին եւ ասէին. Եթէ զդա
արձակես՝ չես բարեկամ կայսեր.
ամենայն ոք, որ թագաւոր կոչէ
զանձն իւր, հակառակ է կայսեր։

13 Իսկ Պիղատոս իբրեւ լուաւ
զբանս զայսոսիկ, ած զՅիսուս ար-
տաքս, եւ նստաւ 'ի վերայ բեմին,
'ի տեղւոջն՝ որ կոչէր Քարայատակ,
եւ Եբրայեցերէն Կապպաթա։
14 Էր ուրբաթն զատկի՝ եւ էր ժամ
իբրեւ վեցերորդ, եւ ասէ ցՀրէայսն.
Ահա թագաւորդ ձեր ցձեզ։
15 Եւ նոքա աղաղակէին. Բարձ
'ի մէնջ, բարձ 'ի մէնջ՝ եւ հան զդա
'ի խաչ. ասէ ցնոսա Պիղատոս. Եւ
զթագաւորդ ձեր 'ի խաչ հանիցեմ.
պատասխանի ետուն քահանայա-
պետքն. Չի՛ք մեր թագաւոր բայց
'ի կայսերէ։

16 Յայնժամ ետ զնա 'ի ձեռս նո-
ցա, զի 'ի խաչ ելանիցէ։
17 Եւ նոքա առեալ տանէին զնա.
եւ բարձեալ էր ինքնին զխաչա-
փայտն, եւ ելանէր 'ի տեղին՝ որ
անուանեալն էր Գագաթան, եւ
կոչէր Եբրայեցերէն Գողգոթա։

18 Ուր եւ 'ի խաչն իսկ հանին զնա.
եւ ընդ նմա երկուս եւս այլ
աստի եւ անտի, եւ 'ի մէջի զՅի-
սուս։

խաչ հանելու, եւ իշխանութիւն
ունիմ քեզ արձակելու։
11 Յիսուս պատասխան տուաւ.
Դու իշխանութիւն չէիր ունենալ
ինձ վերայ, թէ որ վերեւիցը ՚չէր
տրված ՚ե քեզ. ՚նորահամար՝ նա որ
ինձ մատնեց քեզ, նորա մեղքը
աւելի մեծ է։
12 Եւ ՚նրանից ետեւ Պիղատոս ու-
զումէր՝ որ ՚նորան արձակէ. եւ
Հրէաներն աղաղակումէին եւ ա-
սում. Թէ որ դորան արձակես՝ կայ-
սերին բարեկամ ՚ չես. ամէն ով որ
իրեն անձը թագաւոր է կոչում,
նա կայսերին հակառակ ՚ն է։
13 Պիղատոս երբոր այս բաները
լսեց, Յիսուսին դուրս բերաւ, եւ
բեմին վրայ ՚նստեց, այն տեղը՝ որ
Քարայատակ էր կոչվում, եւ Եբ-
րայեցերէն Կապպաթա։
14 Զատկի ուրբաթն էր՝ իբր վեց
ժամն էր, եւ Հրէաներին ասաց.
Ահա ձեր թագաւորը ձեր ՚ առաջին։
15 Եւ նորանք աղաղակումէին,
Մեզանից վեր առ, մեզանից վեր
առ՝ եւ խաչ հանէ դորան. Պիղա-
տոս ՚նորանց ասաց. Ես ձեր թա-
գաւորը խաչ հանեմ. քահանայա-
պետները պատասխան տուին.
Մենք թագաւոր չունինք կայսե-
րիցը ՚ ջոկ։
16 Այն ժամանակը նորան տուաւ
նորանց ձեռքը, որ խաչ ՚ հանեն։
17 Եւ նորանք առին տարան նո-
րան. եւ խաչափայտն ինքն էր
՚ վերառել, եւ դուրս էր գնում
այն տեղը՝ որ Գագաթան էր աս-
վում, եւ Եբրայեցերէն Գողգոթա
էր ՚ կոչվում։
18 Այնտեղ խաչ հանեցին նորան.
եւ նորա հետ երկու ուրիշ մարդ էլ
նորա այս կողմը եւ այն կողմը, եւ
Յիսուսին մէջ տեղը։

ե Ղու. ԻԲ. 53. Փլ. Ա. 30.
զ Ղու. ԻԳ. 2.
է Գործ. ԺԷ. 7.
ծ Մատթ. ԻԷ. 62.
ծ Ծննդ. ԽԹ. 10.
ւ Մատթ. ԻԷ. 26. 31. Մարկ. ԺԵ. 15. Ղու. ԻԳ. 24.
ե Մատթ. ԻԷ. 31. 33. Մարկ. ԺԵ. 21. 22. Ղու. ԻԳ. 26. 33.
ծ Թուոց. ԺԵ. 36. Եբր. ԺԳ. 12.

19 Գրեաց եւ տախտակ մի Պիղատոս, եւ եդ 'ի վերայ խաչին. եւ էր գրեալ. ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ՝ ԹԱԳԱՒՈՐ ՀՐԷԻՑ։

20 Զայն տախտակ ընթերցան բազումք 'ի Հրէից, զի մօտ էր 'ի քաղաք անդր տեղին՝ ուր խաչեցաւն Յիսուս. եւ էր գրեալ Եբրայեցերէն, Դաղմատարէն եւ Յունարէն։

21 Ասեն ցՊիղատոս ՚քահանայապետքն Հրէից. Մի՛ գրեր Թագաւոր Հրէից, այլ թէ Նա ասաց՝ Թագաւոր եմ Հրէից։

22 Պատասխանի ետ Պիղատոս. Զոր ինչ գրեցի՝ գրեցի։

23 Իսկ զինուորքն իբրեւ հանին 'ի խաչ զՅիսուս, առին զհանդերձս նորա՝ եւ արարին չորս մասունս, իւրաքանչիւր զինուորի մասն. իսկ զպատմուճանն՝ քանզի էր առանց կարանի՝ 'ի վերուստ փորանկեալ ամենեւին։

24 Ասեն ցմիմեանս. Մի՛ պատառեսցուք զայդ, այլ արկցուք վիճակս 'ի վերայ դորա՝ ում եւ եղիցի. զի լցցի գիրն՝ որ ասէ. Բաժանեցին զհանդերձս իմ յիւրեանս, եւ 'ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկին. զինուորքն զայս ինչ գործեցին։

25 Եւ կային առ խաչին Յիսուսի մայրն նորա, եւ քոյր մօր նորա Մարիամ Կղէովպայ, եւ Մարիամ Մագդաղենացի։

26 Յիսուս իբրեւ ետես զմայրն եւ զաշակերտն՝ զոր սիրէր, զի կայր մօտ, ասէ ցմայրն. Կին դու՝ ահա որդի քո։

27 Ապա ասէ ցաշակերտն. Ահա մայր քո. եւ յայնմ ժամանակէ առ աշակերտն զնա առ իւր։

19 Պիղատոս էլ մին տախտակ գրեց, եւ խաչին վերայ դրաւ. եւ գրած էր. ՅԻՍՈՒՍ ՆԱԶՕՐԵՑԻ՝ ԹԱԳԱՒՈՐ էՀՐԷԻՑ։

20 Այս տախտակը Հրէաներից շատ մարդիկ կարդացին. ինչու որ՝ քաղաքին մօտ էր այն տեղը՝ որ Յիսուս խաչուեցաւ. եւ այն գրուած էր Եբրայեցերէն, Լատիներէն եւ Յունարէն։

21 Հրէաներին քահանայապետները ասացին Պիղատոսին. Մի՛ գրեր Թագաւոր Հրէից, այլ թէ Նա ասաց՝ թէ Թագաւոր եմ Հրէից։

22 Պիղատոս պատասխան տուաւ. Ինչ որ գրեցի՝ գրեցի։

23 Բայց զինուորները երբոր Յիսուսին խաչ հանեցին, նորա շորերն առին՝ եւ չորս բաժին արին, ամէն մէկ զինուորի համար մին ըբաժին. բայց պատմուճանը՝ որովհետեւ առանց կարի էր՝ վերեւից բոլորը մին հիւսած.

24 Իրար ասացին. Դորան չպատռենք, բայց վիճակ ձգենք դորա վերայ՝ ում որ դուրս գայ. որ գիրքը կատարուի, որ ասում է. Թէ Իմ շորերս իրենց մէջ բաժանեցին եւ իմ պատմուճանիս վերայ վիճակ թձգեցին. զինուորները այն բաներն արին։

25 Եւ Յիսուսի խաչին մօտ կանգնած էին նորա ժմայրը, եւ նորա մօր քոյրը Մարիամ իԿղէօպային՝ եւ Մարիամ Մագդաղենացին։

26 Յիսուս երբոր տեսաւ իրեն մօրը եւ այն աշակերտին՝ որ լսիրում էր, որ մօտիկ կանգնած էր, մօրն ասաց. Ո՛վ կին՝ ահա քո խորդիդ։

27 Յետոյ աշակերտին ասաց. Ահա քո մայրդ. եւ այն ժամանակից՝ այն աշակերտն իրեն մօտ առաւ ծՆորան։

է Մատթ. ԻԷ. 37. Մարկ. ԺԵ. 26. Ղու. ԻԳ. 38.
ը Մատթ. ԻԷ. 35. Մարկ. ԺԵ. 24. Ղու. ԻԳ. 34.
թ Սաղ. ԻԲ. 18.
ժ Մատթ. ԻԷ. 55. Մարկ. ԺԵ. 40. Ղու. ԻԳ. 49.
ի Ղու. ԻԴ. 18.
լ Գրծ. ԺԳ. 23. Ի. 2. ԻԱ. 7. 20. 24.
խ Գրծ. Բ. 4.
ծ Գրծ. Ա. 14. ԺԶ. 32.

28 Յետ այսորիկ իբրեւ գիտաց
Յիսուս, եթէ ահա ամենայն ինչ
կատարեալ է, զի կատարեսցի գի-
րըն, ասէ. Ծարաւի եմ։
29 Եւ անդ կայր աման ինչ լի
քացախով. եւ նոքա սպունգ լը-
ցեալ քացախով ընդ լեղւոյ՝ շուրջ
եդեալ զմշտկաւ զոպայի՝ մատուցին
'ի բերան նորա։
30 Իբրեւ առ Յիսուս զքացախն
հանդերձ լեղւովն՝ ասէ. Ամենայն
ինչ կատարեալ է. եւ խոնարհե-
ցուցեալ զգլուխն՝ աւանդեաց զո-
գին։
31 Իսկ Հրէայքն՝ քանզի ուրբաթ
էր, զի մի՛ անդէն 'ի խաչին ագա-
նիցին մարմինքն մինչեւ ցշաբաթն,
զի էր օր մեծ շաբաթուն այնորիկ.
աղաչեցին զՊիղատոս, զի խորտա-
կեսցեն զբարձս նոցա՝ եւ բարձ-
ցին։
32 Եկին զինուորքն, եւ զառաջ-
նոյն խորտակեցին զբարձս, նոյն-
պէս եւ զմիւսոյն՝ որ ընդ նմա 'ի
խաչին ելեալ էր։
33 Բայց իբրեւ եկին առ Յիսուս՝
եւ տեսին, զի այն ինչ մեռեալ էր,
ոչ խորտակեցին զբարձս նորա։
34 Այլ մի ոմն 'ի զինուորացն տէ-
գաւ խոցեաց զկողս նորա. եւել
վաղվաղակի արիւն եւ ջուր։
35 Եւ որ եսեանն՝ վկայեաց, եւ
ճշմարիտ է վկայութիւն նորա. եւ
նա գիտէ թէ ճշմարիտ ասէ, զի եւ
դուք հաւատասջիք։
36 Այս եղեւ՝ զի լցցի գիրն, եթէ
Ոսկր նորա մի՛ փշրեսցի։
37 Եւ դարձեալ միւս գիր ասէ,
եթէ Հայեսցին 'ի նա՝ յոր խոցե-
ցինն։
38 Յետ այսորիկ աղաչեաց զՊիղա-
տոս Յովսէփ, որ յԱրիմաթեայ էր

28 Անկէ ետեւ երբոր Յիսուս
գիտցաւ, թէ ամէն բան կատար-
ված է, որ գիրքը կատարուի՝ ա-
սաց. Ծարաւ ւեմ։
29 Եւ այնտեղ մէկ աման կար քա-
ցախով լեցը. եւ նորանք մէկ բը-
պունգ լցրին քացախով լեղոյ հետ՝
եւ զոպայի մշտիկի վերայ պատած
նորա բերանին = մօտացրին։
30 Երբոր Յիսուս այն քացախըն
լեղոյ հետ առաւ՝ ասաց. Ամէն բան
կատարված ւէ. եւ գլուխը խո-
նարհայրուց եւ հոգին աւանդեց։

31 Բայց Հրէաներն՝ որովհետեւ
ուրբաթ օրն ղ էր, որ մարմինները
չը մնան խաչի վերայ մինչեւ շա-
բաթ օրը, ինչու որ՝ այն շաբաթի
օրն մեծ Է էր. Պիղատոսին աղաչե-
ցին, որ նորանց ծունկները ջար-
դեն. եւ վեր առնըվին։
32 Զինուորներն եկին եւ առա-
ջինին ծունկները ջարդեցին, այն-
պէս էլ միւսին՝ որ նորա հետ խաչ-
ված էր։
33 Բայց երբոր Յիսուսի մօտ ե-
կին եւ տեսին, որ նա մեռած էր,
նորա ծունկները չը ջարդեցին։
34 Այլ զինուորներից մէկը գե-
ղարդով նորա կողը խոցեց. եւ շու-
տով արիւն եւ ջուր դուրս – ելաւ։
35 Եւ նա որ այն բաները տեսաւ՝
վկայեց. եւ վկայութիւնը ճշմարիտ
է. եւ նա գիտումէ թէ ճշմարիտն
է ասում. որ դուք էլ հաւատաք։
36 Սա էլաւ՝ որ գիրքը կատար-
վի, թէ նորա ոսկորը չը պիտի
= փշրվի։
37 Եւ կրկին ուրիշ գիրք ասու-
մէ, թէ Պիտի կը տան նորան՝ որ
Է խոցեցին։
38 Սրանից ետեւ պիղատոսին ա-
ղաչեց Յօսէփը, որ Արիմաթեայից

ւ Սաղ. ԿԹ. 21.
= Մատթ. ԻԷ. 48.
ւ Գլ. ԺԷ. 4.
ղ Համար. 42.
Մարկ. ԺԵ. 42.
Է Բ Օրին. ԻԱ. 23.
– Ա Յովհ. Ե. 6. 8.
= Ելից. ԺԲ. 46.
Թուոց. Թ. 12.
Սաղ. ԼԳ. 20.
Է Սաղ. ԻԲ. 16.
17. Զաք. ԺԲ.
10. Յայտ. Ա. 7.

աշակերտ Յիսուսի 'ի ծածուկ՝ վասն ահին Հրէից, զի բարձցէ զմարմինն Յիսուսի. եւ հրամայեաց Պիղատոս. եկն եւ եբարձ զնա։

39 Եկն եւ Նիկոդեմոս՝ որ եկեալն էր առ Յիսուս 'ի գիշերի զառաջինն. եւ եբեր զմուռս խառն ընդ հալուէ՝ իբրեւ լտերս հարիւր։

40 Առին զմարմինն Յիսուսի, եւ պատեցին կտաւովք՝ խնկովք հանդերձ, որպէս օրէն էր Հրէից պատել։

41 Եւ էր 'ի տեղւոջն, յորում խաչեցաւ՝ պարտէզ, եւ 'ի պարտիզի անդ գերեզման նոր, յորում ոչ ոք երբէք էր եդեալ։

42 Անդ վասն ուրբաթուն Հրէից՝ զի մօտ էր գերեզմանն՝ եդին ըզ Յիսուս։

+ էր՝ Հրէաներու վախիցը ծածուկ աշակերտ Յիսուսին, որ Յիսուսին մարմինը վեր ŗ առնէ. եւ Պիղատոս հրաման տուաւ. եւ ապա եկաւ եւ վեր առաւ նորան։

39 Նիկոդեմոսն ալ եկաւ՝ որ առաջ Յիսուսին մօտն էր եկել ɔ գիշերը. եւ զմուռս հալուէի հետ խառնուած բերաւ՝ հարիւր լիտրի չափ։

40 Յիսուսին մարմինն առին, եւ այն խունկերին հետ կտաւներով պատեցին, ինչպէս որ Հրէաներու օրէնքն էր — պատել։

41 Եւ այն տեղուանք, որ խաչուեցաւ՝ մին պարտէզ կար, եւ այն պարտէզուանք մին նոր գերեզման, որ նորանում բնաւ մին ժամանակ մին մարդ չէր դրված։

42 Այնտեղ դրին ÷ Յիսուսին Հրէաներու ուրբաթին համար. պատճառն որ՝ գերեզմանը մօտ + էր։

## ԳԼ. Ի

1 Եւ 'ի միաշաբաթուջն Մարիամ Մագդաղենացի գայ առաւօտուն ընդ արշալոյսն 'ի գերեզման անդր, եւ տեսանէ զվէմն բարձեալ 'ի դրաց գերեզմանին։

2 Ապա ընթանայ եւ գայ առ Սիմովն Պետրոս եւ առ միւս աշակերտն՝ զոր սիրէրն Յիսուս, եւ ասէ ցնոսա. Բարձին զՏէր 'ի գերեզմանէ անտի, եւ ոչ գիտեմ՝ ուր եդին զնա։

3 Ել Պետրոս եւ միւս աշակերտն՝ եւ գային 'ի գերեզմանն։

4 Ընթանային երկոքեան 'ի միասին. եւ միւս աշակերտն յառաջեաց ընթացաւ փութապէս քան զՊետրոս, եւ եկն նախ 'ի գերեզմանն։

1 Եւ մէկ շաբթի օրը Մարիամ Մագդաղենացին առաւօտանց լուսնալոյ ժամանակին եկաւ գերեզմանը, եւ տեսաւ որ քարը գերեզմանի դռնիցը վեր էր — առած։

2 Ապա վազեց եւ եկաւ Սիմոն Պետրոսին մօտ եւ միւս աշակերտին մօտ՝ որ Յիսուս սիրումէր ꝑ նորան, եւ ասաց նորանց. Տէրին վերացին այն գերեզմանիցը, եւ չենք գիտում՝ թէ որտեղ դրին նորան։

3 Դուրս եկաւ Պետրոսն ու միւս աշակերտը եւ գալիս էին ÷ գերեզմանը։

4 Երկուքը մէն տեղ վազում էին. եւ միւս աշակերտը շուտով անցաւ Պետրոսիցը, եւ առաջ եկաւ գերեզմանը։

+ Մատթ. ԻԷ. 57. Մարկ. ԺԵ. 42. Ղու. ԻԳ. 50.
ŗ Գլ. Թ. 22. ԺԲ. 42.
ɔ Գլ. Գ. 1, 2. Է. 50.
— Գործ. Ե. 6.
÷ Եսայ. ԾԳ. 9.
+ Համար. 31.
— Մատթ. ԻԸ. 1. Մարկ. ԺԶ. 1. Ղու. ԻԴ. 1.
ꝑ Գլ. ԺԳ. 23. ԺԹ. 26. ԻԱ. 7. 20. 24.
÷ Ղու. ԻԴ. 12.

5 Եւ խոնարհեալ տեսանէ՝ զի կային անդ կտաւքն, բայց 'ի ներքս ոչ եմուտ։

6 Եկն եւ Սիմովն Պետրոս՝ որ գայր զհետ նորա, եւ եմուտ 'ի գերեզմանն, եւ տեսանէ զկտաւսն՝ զի կային անդ։

7 Եւ վարշամակն որ էր 'ի գլուխ նորա՝ ոչ ընդ այլ կտաւսն կայր, այլ ուրոյն ծալեալ 'ի մի կողմն։

8 Յայնժամ եմուտ եւ միւս աշակերտն, որ եկեալ էր յառաջագոյն 'ի գերեզմանն, ետես եւ հաւատաց։

9 Զի չեւեւս գիտէին զգիրս՝ թէ Պարտ է նմա 'ի մեռելոց յառնել։

10 Չոգան դարձեալ առ միմեանս աշակերտքն։

11 Բայց Մարիամ կայր արտաքոյ գերեզմանին՝ եւ լայր. եւ մինչդեռ լայր՝ խոնարհեցաւ 'ի գերեզմանն,

12 Եւ տեսանէ երկուս հրեշտակս 'ի սպիտակս, զի նստէին մի 'ի սնարից եւ մի յոտից՝ ուր կայր մարմինն Յիսուսի։

13 Եւ նոքա ասեն ցնա. Կին՝ զի լաս. ասէ ցնոսա. Զի բարձին զՏէրն իմ 'ի գերեզմանէ անտի, եւ ոչ գիտեմ՝ ուր եդին զնա։

14 Զայս իբրեւ ասաց, դարձաւ 'ի թիկունս կոյս, եւ տեսանէ զՅիսուս զի կայր. եւ ոչ գիտէր՝ թէ Յիսուս իցէ։

15 Ասէ ցնա Յիսուս. Կին զի՞ լաս, զո՞ խնդրես. Նմա այսպէս թուեցաւ թէ պարտիզպանն իցէ, ասէ ցնա. Տէր՝ եթէ դու

5 Եւ վէր խոնարհված տեսաւ՝ որ կտաւները այնտեղ ա կային, բայց ներս չը մտաւ։

6 Սիմոն Պետրոսն էլ եկաւ՝ որ նորա ետեւէն գալիս էր, եւ մտաւ գերեզմանին մէջը, եւ կտաւները տեսաւ՝ որ այն տեղ կային։

7 Եւ բ վարշամակն՝ որ նորա գլխին էր՝ ուրիշ կտաւներին հետ չը կար, բայց ջոկ ծալած մէկ կողմը դրած էր։

8 Այն ժամանակը միւս աշակերտն էլ ներս մտաւ, նա որ առաջ գերեզմանն էր եկել, տեսաւ եւ հաւատաց։

9 Ինչու որ՝ դեռ չէին գիտում գրքերը՝ թէ Պէտք է որ նա մեռելների միջիցը յարութիւն գ առնէ։

10 Այս աշակերտները դարձեալ գնացին իրար մօտ։

11 Բայց Մարիամը գերեզմանին դուրսը կանգնած էր՝ եւ լաց էր լինում. եւ լաց լինելոյ ժամանակը՝ խոնարհվեցաւ գերեզմանին դ մէջ,

12 Եւ երկու հրեշտակ տեսաւ սպիտակ շորերով, որ նստած էին, մինը գլխի կողմը եւ միւսն ոտների կողմը, որտեղ որ Յիսուսի մարմինը կար։

13 Եւ նորանք ասացին նորան. Ով կին՝ ինչու ես լաց լինում. նորանց ասաց. Նրահամար՝ որ իմ Տէրիս վեր առին այս գերեզմանիցս, եւ չեմ գիտում՝ թէ որտեղ դրին նորան։

14 Երբոր աս ասաց, դարձաւ իրեն յետին կողմը, եւ Յիսուսին տեսաւ՝ որ կանգնած ե էր. եւ չէր գիտում՝ թէ Յիսուսն զ է։

15 Յիսուս նորան ասաց. Կին զու՞ ինչու ես լաց լինում, ում ես ման գալիս. նորան այնպէս երեւեցաւ՝ թէ նա պարտէզպանն է, նորան

ա Գլ. ԺԹ. 40.
բ Գլ. ԺԱ. 44.
գ Սաղ. ԺԶ. 10. Գործ. Բ. 25— 31. ԺԳ. 34, 35.
դ Մարկ. ԺԶ. 5.
ե Մատթ. ԻԸ. 9. Մարկ. ԺԶ. 9.
զ Ղուկ. ԻԴ. 16. 31. Գլ. ԻԱ. 4.

բարձեր զնա՝ ասա ինձ՝ ուր եդիր
զնա, զի ես առից զնա։

16 Ասէ ցնա Յիսուս. Մարիամ.
եւ նա դարձաւ, եւ ասէ ցնա
Եբրայեցերէն. Ռաբբունի, որ
թարգմանի Վարդապետ։

17 Ասէ ցնա Յիսուս. Մի մերձե-
նար յիս, զի չեւեւս ելեալ եմ առ
Հայր իմ. այլ երթ դու առ եղ-
բարսն իմ, եւ ասա ցնոսա. Ելա-
նեմ ես առ Հայրն իմ՝ եւ առ Հայր
ձեր, եւ Աստուածն իմ՝ եւ Աստ-
ուած ձեր։

18 Գայ Մարիամ Մագդաղենացի՝
եւ պատմէ աշակերտացն, եթէ ե-
տես նա զՏէր, եւ զայս ինչ ասաց
ցնա։
19 Եւ էր երեկոյ 'ի միաշաբաթւոջ
աւուրն. եւ դրաքն փակեալ՝ ուր
էին աշակերտքն ժողովեալ վասն
ահին Հրէից, եկն Յիսուս՝ եւ եկաց
'ի մէջ նոցա, եւ ասէ ցնոսա.
Ողջոյն ընդ ձեզ։

20 Իբրեւ զայս ասաց՝ եցոյց նոցա
զձեռսն եւ զկողսն իւր. եւ խնդացին
աշակերտքն իբրեւ տեսին զՏէր։

21 Ասէ ցնոսա դարձեալ. Ողջոյն
ընդ ձեզ, որպէս առաքեաց զիս
Հայր իմ, եւ ես առաքեմ զձեզ։

22 Եւ զայս իբրեւ ասաց՝ փչեաց
'ի նոսա եւ ասէ. Առէք Հոգի
Սուրբ։
23 Եթէ ումեք թողուցուք զմեղս՝
թողեալ լիցի նոցա. եթէ զուրուք
ունիցիք՝ կալեալ լիցի։
24 Իսկ Թովմաս՝ մի յերկոտասա-

ասաց. Տէ՛ր՝ թէ որ դու վեր առիր
նորան՝ ասա ինձ՝ որտեղ ես դրել
նորան, որ ես վեր առնեմ նորան։
16 Յիսուս նորան ասաց. Մա-
րիամ. եւ նա յետ դարձաւ, եւ
նորան ասաց՝ Եբրայեցերէն. Ռաբ-
բունի, որ կը թարգմանուի՝ Վար-
դապետ։
17 Յիսուս նորան ասաց. Մի
մօտենար ինձ, ինչու որ՝ դեռ չեմ
վեր ելլել իմ Հօրս մօտ. բայց դու
գնա իմ եղբայրներիս ժ մօտ, եւ
նորանց ասա. Ես վեր եմ ելլում
իմ Հօրս մօտ՝ եւ ձեր Հօր ի մօտ,
իմ Աստուծոյս մօտ՝ եւ ձեր Աստու-
ծոյն լ մօտ։
18 Մարիամ Մագդաղենացին ե-
կաւ՝ եւ աշակերտներին պատմեց,
թէ նա տեսաւ Տէրին, եւ այս
բանս իրեն խ ասաց։
19 Եւ մէկ շաբթի օրը, երբոր ի-
րիկուն էր՝ եւ դռները փակված,
այնտեղ որ աշակերտները ժողով-
ված էին Հրէաների վախիցը, Յի-
սուս եկաւ՝ եւ նորանց մէջումը
կանգնեց, եւ նորանց ասաց. Ող-
ջոյն ծ ձեզ։
20 Երբոր սա ասաց՝ իրեն ձեռ-
ները ու իրեն կողը ցոյց տուաւ
նորանց. եւ աշակերտները ուրա-
խացան երբոր Տէրին կ տեսան։
21 Նորէն ասաց նորանց. Ողջոյն
ձեզ. ինչպէս որ իմ Հայրս ինձ ու-
ղարկեց, ես էլ ձեզ եմ հ ուղար-
կում։
22 Եւ երբոր սա ասաց՝ փչեց դէ-
պի նորանց եւ ասաց. Առէք Սուրբ
Հոգին։
23 Թէ որ մինի մեղքը թողէք՝
թողված կը լինի նորանց. թէ որ
մինինը բռնէք՝ բռնված ձ կը լինի։
24 Բայց Թոմաս տասներկուսից

ժ Սաղ. ԻԲ. 22. Մատթ. ԻԸ. 10. Հռովմ. Ը. 29. Եբր. Բ. 11.
ի Գլ. ԺԶ. 28.
լ Եփես. Ա. 17.
խ Մատթ. ԻԸ. 10. Ղու. ԻԴ. 10.
ծ Մարկ. ԺԶ. 14. Ղու. ԻԴ. 36. Ա Կորնթ. ԺԵ. 5.
կ Գլ. ԺԶ. 22.
հ Մատթ. ԻԸ. 18. Գլ. ԺԵ. 18, 19. Եբր. Գ. 1. Բ Տիմ. Բ. 2.
ձ Մատթ. ԺԶ. 19. ԺԸ. 18.

նոցին՝ անուանեալն Երկուորեակ, ոչ էր ընդ նոսա՝ յորժամ եկն Յիսուս։

25 Ասէին ցնա՛ այլ աշակերտքն, եթէ Տեսաք զՏէր. եւ նա ասէ ցնոսա. Եթէ ոչ տեսից ի ձեռս նորա զնշան բեւեռացն, եւ արկից զմատունս իմ ի տեղիս բեւեռացն, եւ մխեցից զձեռս իմ ի կողս նորա, ոչ հաւատամ։

26 Եւ յետ ութ աւուր դարձեալ էին ի ներքս աշակերտքն, եւ Թովմաս ընդ նոսա. գայ Յիսուս դրօքն փակելովք. եւ եկաց ի մէջ եւ ասէ. Ողջոյն ընդ ձեզ։

27 Ապա ասէ ցԹովմաս. Բեր ըղ մատունս քո եւ արկ այսր, եւ տես զձեռս իմ, եւ բեր զձեռն քո՝ եւ մխեա ի կողս իմ, եւ մի լինիր անհաւատ՝ այլ հաւատացեալ։

28 Պատասխանի ետ Թովմաս՝ եւ ասէ ցնա. Տէր իմ՝ եւ Աստուած իմ։

29 Ասէ ցնա Յիսուս. Այժմ զի տեսերդ զիս եւ հաւատացեր. երանի որոց ոչ իցէ տեսեալ եւ հաւատասցեն։

30 Բազում եւ այլ նշանս արար Յիսուս առաջի աշակերտացն իւրոց՝ որ ոչ է գրեալ ի գիրս յայսմիկ։

31 Այլ այս այնչափ ինչ գրեցաւ՝ զի հաւատայցէք, եթէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ. եւ զի հաւատայցէք, եւ զկեանսն յաւիտենականս ընդունիցիք յանուն նորա։

մէկը՝ Երկուորեակ կոչվածը, նորանց հետ չէր՝ երբոր Յիսուս եկաւ։

25 Միւս աշակերտներն ասում էին նորան, թէ Տէրին տեսանք. եւ նա ասաց նորանց, Թէ որ նորա ձեռներումն բեւեռների նշանը չտեսնեմ, եւ իմ մատներս չդնեմ բեւեռներին տեղը, եւ իմ ձեռներըս չը մտցնեմ նորա կողը՝ չեմ հաւատալ։

26 Եւ ութ օրից ետեւ աշակերտները դարձեալ ներսումն էին, եւ Թովմասն էլ նորանց հետ. Յիսուս դռներըն փակված լինելով՝ եկաւ եւ նորանց միջումը կանգնեց եւ ասաց. Ողջոյն ձեզ։

27 Յետոյ Թովմասին ասաց. Բեր քո մատներդ եւ այստեղ դիր, եւ իմ ձեռներըս տես, եւ քո ձեռներըդ բեր՝ եւ իմ կողս մտցրու, եւ մի լինիր անհաւատ՝ այլ ճ հաւատացեալ։

28 Թովմաս պատասխան տուաւ եւ նորան ասաց. Իմ Տէրս եւ իմ Աստուածս։

29 Յիսուս նորան ասաց. Դու որ տեսար ինձ՝ հաւատացիր. երանի նորանց՝ որ չեն տեսել եւ մ հաւատում են։

30 Յիսուս ուրիշ էլ շատ նշաններ արաւ իւրեն աշակերտներին առաջին՝ որ չեն գրված այս յ գրքումս։

31 Բայց սա այնքան գրվեցաւ՝ որ ն հաւատաք, թէ Յիսուս է Քրիստոսն Աստուծոյ Որդին. եւ որ հաւատաք, եւ յաւիտենական կեանքըն ընդունիք նորա շ անունովը։

## ԳԼ. ԻԱ.

1 Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց զանձն իւր Յիսուս աշակերտ-

1 Սորանից ետեւ Յիսուս դարձեալ իւրեն անձը յայտնեց իւրեն ա-

ղ Գլ. ԺԱ. 16։ ճ Ա Յովհ. Ա. 1։ մ Բ Կորնթ. Ե. 7։ Ա Պետ. Ա. 8։ յ Գլ. ԻԱ. 25։ ն Ղու. Ա. 4։ շ Գլ. Գ. 15, 16։ Ե. 24։ Ա Պետ. Ա. 9։

տացն իւրոց առ ծովեզերբն Տիբերիայ. եւ յայտնեաց այսպէս։

2 Էին ՚ի միասին Սիմովն Պետրոս, եւ Թովմաս անուանեալն Երկուորեակ, եւ Նաթանայէլ՝ որ ՚ի Կանայ Գալիլեացւոց, եւ որդիքն Զեբեդեայ, եւ այլք յաշակերտաց անտի երկու։

3 Ասէ ցնոսա Սիմովն Պետրոս. Երթամ ձուկն որսալ. ասեն ցնա. Գամք եւ մեք ընդ քեզ. գնացին եւ մտին ՚ի նաւ, եւ յայնմ գիշերի կալան եւ ոչինչ։

4 Իբրեւ այգ եղեւ՝ կայր Յիսուս յեզր ծովուն, բայց ոչ ծանեան աշակերտքն, թէ Յիսուս իցէ։

5 Ասէ ցնոսա Յիսուս. Մանկունք՝ միթէ ունիք ինչ ուտելոյ. պատասխանի ետուն եւ ասեն ցնա. Ո՛չ։

6 Ասէ ցնոսա. Արկէք յաջակողմն նաւին զուռկանդ, եւ գտանիցէք. արկին, եւ ոչ կարէին ձգել ՚ի բազմութենէ անտի ձկանցն։

7 Ասէ աշակերտն այն, զոր սիրէրն Յիսուս՝ ցՊետրոս. Տէր է այն. Սիմովն Պետրոս իբրեւ լուաւ թէ Տէր է, արկաւ զիւրեւ զափածանելին՝ քանզի մերկ էր, եւ ընկէց զինքն ՚ի ծովն։

8 Եւ այլ աշակերտքն նաւաւն խաղային, քանզի չէին հեռի ՚ի ցամաքէն. այլ իբրեւ երկերիւր կանգնաւ, քարշէին զգործին հանդերձ ձկամբն։

9 Իբրեւ ելին ՚ի ցամաք, տեսանեն կրակեալ կայծակունս, եւ ձուկն մի ՚ի վերայ, եւ հաց։

10 Ասէ ցնոսա Յիսուս. Բերէք ՚ի ձկանց այտի՝ զոր դուքդ կալարուք այժմիկ։

աշակերտներին Տիբերիայ ծովի եզերքին մօտ. եւ այս կերպով յայտնեց։

2 Միասին էին Սիմոն Պետրոսը, եւ Թովմասն Երկուորեակ անուանուածը, եւ =Նաթանայէլը՝ որ Գալիլեայոյ Կանայէն էր, եւ Զեբեդեայի որդիքները, եւ անոր աշակերտներէն ուրիշ երկու հոգի ╞ էր։

3 Սիմոն Պետրոսը նորանց ասաց. Ես գնում եմ ձուկը բռնելու. նորան ասացին. Մենք էլ կը գանք քեզ հետ. գնացին եւ մտին նաւը, եւ այն գիշերը բնաւ բան չը բռնեցին։

4 Երբոր առաւօտ էլաւ՝ Յիսուս ծովին եզրումը կանգնած էր, բայց աշակերտները ╪ չը ճանաչեցին, թէ Յիսուսն է։

5 Յիսուս նորանց ասաց. Մանկունք՝ մէն ուտելու բան ╤ ունիք. պատասխան տուին եւ նորան ասացին. Ոչ։

6 Նորանց ասաց. Ուռկանը աջ կողմն ձգեցէք, եւ կը գտնէք. նորանք ձգեցին, եւ չէին կարողանում քաշել՝ ձկների շատութեան ┝ պատճառով։

7 Այն աշակերտն՝ որ Յիսուս սիրում էր ═ Նորան՝ Պետրոսին ասաց. Նա Տէրն է. Սիմոն Պետրոսն երբոր լսեց՝ թէ Տէրն է, շորերն իւրեն վերայ առաւ, ինչու որ՝ մերկ էր, եւ ինքն իրեն ձգեց ծովին մէջ։

8 Եւ միւս աշակերտները նաւովն էին գալիս. ինչու որ ցամաքից հեռու չէին. բայց երկու հարիւր կանգի չափ, եւ ուռկանը ձկներովը քաշում էին։

9 Երբոր դուրս ելան ցամաքը, տեսան անթուխի կրակ վառած, եւ նորա վերայ մէն ձուկ եւ հաց։

10 Յիսուս նորանց ասաց. Բերէք ինձ այդ ձկներից՝ որ դուք հիմիկ բռնեցիք։

= Գլ. Ա. 45.
╞ Մատթ. Դ. 21.
╪ Գլ. Ի. 14.
╤ Ղուկ. ԻԴ. 41.
┝ Ղուկ. Ե. 4, 6, 7.
═ Գլ. ԺԳ. 23. Ի. 2.

11 Ելանէ Սիմոնն Պետրոս եւ ձը-
գէր զգործին ՚ի ցամաք՝ լի մեծա-
մեծ ձկամբք, հարիւր յիսուն եւ
երիւք. եւ այնչափ ինչ կայր, եւ
ոչ պատառեցաւ գործին։

12 Ասէ ցնոսա Յիսուս. Եկայք
ճաշեցէք. եւ ոչ որ յաշակերտացն
իշխէր հարցանել՝ թէ Դու ո՞վ ես.
զի գիտէին թէ Տէրն է։

13 Գայ Յիսուս՝ եւ առնու զհացն՝
եւ տայ նոցա, նոյնպէս եւ զձուկնն։

14 Զայս երիցս անգամ երեւեցաւ
Յիսուս աշակերտացն, յարուցեալ
՚ի մեռելոց։

15 Եւ իբրեւ ճաշեցին, ասէ ցՍի-
մոն Պետրոս Յիսուս. Սիմոն Յովհան-
նու սիրե՞ս զիս առաւել քան զդոսա.
ասէ ցնա. Այո՛ Տէր, եւ դու գիտես՝
զի սիրեմ զքեզ. ասէ ցնա՝ Արած-
եա՛ զգառինս իմ։

16 Դարձեալ ասէ ցնա. Սիմոն
Յովհաննու սիրե՞ս զիս. ասէ ցնա.
Այո՛ Տէր, եւ դու գիտես՝ զի սի-
րեմ զքեզ. ասէ ցնա՝ Արածեա՛
զոչխարս իմ։

17 Ասէ ցնա երիցս անգամ. Սի-
մոն Յովհաննու սիրե՞ս զիս. տրտ-
մեցաւ Պետրոս, զի ասացն ցնա
երիցս՝ թէ Սիրե՞ս զիս. եւ ասէ
ցնա. Տէ՛ր դու զամենայն գիտես.
եւ դու իսկ զամենայն ճանաչես,
եւ թէ սիրեմ զքեզ. ասէ ցնա Յի-
սուս. Արածեա՛ զոչխարս իմ։

18 Ամէն ամէն ասեմ քեզ. զի
մինչ մանուկն էիր, անձամբ ան-
ձին գօտի ածէիր՝ եւ երթայիր յո՛
եւ կամէիր. եւ յորժամ ծերասցիս,

11 Սիմոն Պետրոսը մտաւ եւ ուռ-
կանը քաշումէր դէպի ցամաքը՝
մեծ մեծ ձըկներով լիքը, հարիւր
յիսուն եւ երեք հատ. եւ այնքան
բան կար՝ եւ գործիքը չը պատառ-
վեցաւ։

12 Յիսուս նորանց ասաց. Եկէք
ճաշ է կերէք. եւ աշակերտներիցը
ոչ ով չէր համարձակվում հարցը-
նել՝ թէ Դու ով ես. ինչու որ՝ գի-
տումէին թէ Տէրն է։

13 Յիսուս եկաւ՝ եւ հացն առաւ՝
եւ նորանց տուաւ, եւ այնպէս էլ
ձուկըն։

14 Այս երեք անգամն Յիսուս ա-
շակերտներին երեւեցաւ, մեռել-
ների միջիցը յարութիւն առնելուցն
ըետեւ։

15 Եւ երբոր ճաշը կերին, Յի-
սուս ասաց Սիմոն Պետրոսին. Սի-
մոն Յօնանի որդի՝ դորանցից աւելի
սիրումես ինձ. նորան ասաց. Այո՛
Տէր, դու էլ գիտումես՝ որ քեզ
սիրումեմ. նորան ասաց. Արածա-
ցրու իմ գառներս։

16 Նորէն ասաց նորան. Սիմոն
Յօնանի որդի՝ սիրումես ինձ. նո-
րան ասաց. Այո՛ Տէր՝ դու էլ գի-
տումես՝ որ քեզ սիրումեմ. նորան
ասաց. Արածացրու իմ բ ոչխար-
ները։

17 Նորէն՝ երեք անգամն ասաց
նորան. Սիմոն Յօնանի որդի՝ սիրու-
մես ինձ. Պետրոսը տրտմեցաւ. ա-
ռաջնաւ երեք անգամ նորան ա-
սաց՝ թէ Սիրումես ինձ. եւ նորան
ասաց. Տէր՝ դու ամէն բան գի-
տումես, եւ ամէն բան ժ ճանա-
չումես, եւ որ՝ սիրումեմ քեզ. Յի-
սուս նորան ասաց. Արածացրու
իմ ոչխարներս։

18 Ճշմարիտը ճշմարիտը ասու-
մեմ քեզ, թէ դու քանի որ աղայ
էիր՝ ինքդ քո գօտիկդ կապու-
մէիր՝ եւ որ տեղ որ ուզումէիր՝

ե Գործ. Ժ. 41. | բ Գործ. Ի. 28. | Ա Պետ. Բ. 25. | ժ Գղ. Բ. 24, 25.
ը Գղ. Ի. 19. 26. | Եբր. ԺԳ. 20. | Ե. 2. 4. | ԺԶ. 30.

ձեռս 'ի վեր կալցես եւ այլք ած-
ցեն քեզ գօտի, եւ տարցին՝ ուր
ոչն կամիցիս։

19 Զայս ասաց՝ նշանակելով թէ
որով մահու փառաւոր առնիցէ
զԱստուած. եւ զայս իբրեւ ասաց,
ասէ ցնա. Եկ զկնի իմ։
20 Դարձաւ Պետրոս՝ եւ տեսանէ
զաշակերտն, զոր սիրէր Յիսուս,
զի երթայր զկնի, որ եւ անկաւ
զլանջօքն նորա եւ ասէ, Տէր՝ ով
է՝ որ մատնելոցն է զքեզ։

21 Զնա տեսեալ Պետրոսի, ասէ
ցՅիսուս. Տէր՝ իսկ սա զի։
22 Ասէ ցնա Յիսուս. Եթէ կամիմ,
զի կացցէ դա՝ մինչեւ ես գամ.
քեզ զի փոյթ է՝ դու եկ զկնի
իմ։
23 Եւ ել բանս այս յեղբարս՝ եւ
համարեցան թէ աշակերտն այն
ոչ մեռանիցի. եւ ոչ ասաց նմա
Յիսուս եթէ ոչ մեռանիցի. այլ թէ
կամիմ ես՝ թէ կացցէ դա՝ մինչեւ
ես գամ։

24 Այս աշակերտ է՝ որ վկայէ
վասն այսոցիկ. որ եւ գրեացն իսկ
զայսոսիկ, եւ գիտեմք, եթէ ճըշ-
մարիտ է վկայութիւն նորա։
25 Բայց է եւ այլ ինչ բազում,
զոր արար Յիսուս, զոր եթէ գրեալ
էր մի ըստ միոջէ, կարծեմ թէ եւ
ոչ աշխարհս բաւական էր տանել
զգիրսն, որ թէ գրեալ էին։

գնումէիր. եւ երբոր կը ծերանաս,
ձեռներդ վեր կառնես. եւ ուրիշ-
ները գօտիկ կը կապեն քեզ, եւ կը
տանին՝ տեղ որ չես ե ուզիլ։
19 Սա ասաց՝ ցոյց տալով թէ նա
ինչ մահով պիտի փառաւորէ Աս-
տուծոյն. եւ երբոր աս ասաց, նո-
րան ասաց. Իմ ետեւէս ւ եկ.
20 Պետրոսը յետ դարձաւ՝ եւ
տեսաւ այն աշակերտին, որ Յիսուս
է սիրումէր նորան, որ ետեւէն գա-
լիս էր, նա՝ որ էլ նորա լանջքին
ընկաւ եւ ասաց. Տէր՝ ով է նա՝
որ քեզ պիտի մատնէ։
21 Պետրոսն երբոր տեսաւ նորան,
Յիսուսին ասաց. Տէր՝ ապա սա ինչ։
22 Յիսուս նորան ասաց. Թէ որ
կամենումեմ, որ դա կենայ, մին-
չեւ որ ես գամ. դու ինչ հոգս
ունիս, դու իմ ետեւէս ծ եկ։
23 Եւ այս բանս դուրս ելաւ եղ-
բայրներին միջումը՝ եւ կարծեցին
թէ այն աշակերտը չի մեռնիլ. եւ
Յիսուս չասաց նորան՝ թէ չի մեռ-
նիլ. բայց թէ՝ որ կամենումեմ որ
դա կենայ մինչեւ որ ես գամ,
դու ինչ հոգս ունիս։
24 Այս աշակերտս է, որ այս բա-
նիս համար վկայումէ. որ էլ այս
բաներս գրեց, եւ գիտումենք որ
նորա վկայութիւնը ճշմարիտ լ է։
25 Բայց ուրիշ էլ շատ բաներ
հ կան՝ որ Յիսուս արաւ, որ եթէ
նորանք մին մին գրված լինէին,
կարծումեմ թէ աշխարհըս էլ բա-
ւական չէր լինիլ այն գրքերը տա-
նելոյ, թէ որ գրված ձ լինէին։

ե Յհ. ԺԳ. 36. Գործ. ԺԲ. 3, 4.
ւ Բ Պետ. Ա. 14.
ի Յհ. ԺԳ. 23. 25. Ի. 2.
ծ Մատթ. ԺԶ. 27. 28. ԻԵ. 31. Ա կորնթ. Դ. 5. ԺԱ. 26. Յայտ. Բ. 25. Գ. 11. ԻԲ. 7. 20.
լ Յհ. ԺԹ. 35. Գ Յովհ. 12.
հ Յհ. Ի. 30.
ձ Ամով. Է. 10.

# ՎԱԽՃԱՆ ՍՐԲՈՑ ԱՒԵՏԱՐԱՆԱՑ

# ԳՈՐԾՔ
## ԱՌԱՔԵԼՈՑ

### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 ԶԲԱՆՆ առաջին՝ զոր արարի
վասն ամենայնի, ո Թէոփիլէ. զոր
սկսաւ Յիսուս առնել եւ ուսուցանել։
2 Մինչեւ յօրն պատուիրելոյ ա-
ռաքելոցն 'ի ձեռն Հոգւոյն Սրբոյ.
զորս ընտրեացն, եւ վերացաւ։

3 Որոց յանդիման կացոյց զինքն
կենդանի յետ չարչարանացն իւրոյ
'ի բազում արուեստս՝ յաւուրս քա-
ռասուն երեւել նոցա՝ եւ ասել
վասն արքայութեանն Աստուծոյ։

4 Եւ 'ի հաղորդել ընդ նոսա հա-
ցին, պատուէր տայր նոցա՝ յԵրու-
սաղեմէ մի մեկնել, այլ սպասել
աւետեացն Հօր՝ զոր լուարուքն յի-
նէն։
5 Զի Յովհաննէս մկրտեաց 'ի
ջուր. այլ դուք մկրտիջիք 'ի Հո-
գին Սուրբ, ոչ յետ բազում ինչ
աւուրց այսոցիկ։
6 Եւ նոքա մատուցեալ հարցա-
նէին զնա՝ եւ ասէին. Տէր՝ եթէ
'ի ժամանակի աստ յայսմիկ հաստա-
տանելոց իցես զարքայութիւն Իս-
րայէլի։
7 Ասէ ցնոսա. Ո՛չ է ձեր գիտել
զժամս եւ զժամանակս, զոր Հայր
եդ յիւրում իշխանութեան։

1 ԱՌԱՋԻՆ խօսքըն արի՝ ով
ա Թէօփիլէ՝ ամէն բանի համար. որ
Յիսուս սկսեց ընել եւ սորվեցնել։
2 Մինչեւ այն օրն՝ որ Սուրբ
Հոգւոյ ձեռքովը պատուէր տուաւ
բ առաքեալներուն. որ ընտրեց, եւ
գ վերացաւ։
3 Որ իրեն չարչարանքներէն ետե-
ւը զինքը կենդանի կանգնեցուց նո-
րանց առաջին՝ շատ հրաշքներով՝
որ քառասուն օր երեւցաւ նո-
րանց՝ եւ Աստուծոյ արքայութեան
համար դ խօսեց։
4 Եւ նորանց հետ հացով հաղորդ-
վելոյ ժամանակը, պատուէր էր տա-
լիս նորանց՝ որ ե Երուսաղէմից չը
հեռանան, բայց սպասեն Հօր աւե-
տիքին՝ որ զ ինձանից լսեցիք։
5 Ինչու որ՝ Յովհաննէսը ջրով
է մկրտեց. բայց դուք Սուրբ Հո-
գովը ը պիտի մկրտուիք, ոչ թէ շատ
օրերէն ետեւ։
6 Եւ նորանք մօտ եկին հարցնու-
մէին նորան՝ եւ ասում. թ Տէր՝
միթէ հիմիկ այս ժամանակումս
պիտի հաստատես Իսրայէլի ժ թագա-
ւորութիւնը։
7 Ասաց նորանց. Ձեր գործը չէ
որ գիտենաք ժամերըն ու ժամա-
նակներըն, որ Հայրըն իրեն իշխա-
նութեանումը ի դրաւ։

ա Ղու. Ա. 3.
բ Մարկ. ԺԶ. 19. Ղու. Թ. 51. ԻԴ. 51. Համեմ. 9. Ա Տիմ. Գ. 16.
գ Մատթ. ԻԸ. 19. Մարկ. ԺԶ. 15. Յովհ. Ի. 21. Գր. Ժ. 41, 42.
դ Մարկ. ԺԶ. 14. Ղու. ԻԴ. 36. Յովհ. Ի. 19. 26. ԻԱ. 1. 14. Ա Կորնթ. ԺԵ. 5.
ե Ղու. ԻԴ. 43. 49.
զ Ղու. ԻԴ. 49. Յովհ. ԺԴ. 16. 26. 27. ԺԵ. 26. ԺԶ. 7. Գր. Բ. 33.
է Մատթ. Գ. 11. Գր. ԺԱ. 16. ԺԹ. 4.
ը Յովէլ. Գ. 18. Գր. Բ. 4. ԺԱ. 15.
թ Մատթ. ԻԴ. 3.
ժ Եսայ. Ա. 26. Դան. Է. 27. Ամովս. Թ. 11.
ի Մատթ. ԻԴ. 36. Մարկ. ԺԳ. 32. Ա Թես. Ե. 1.

8 Այլ առջիք զօրութիւն 'ի հա-
սանել Հոգւոյն Սրբոյ 'ի վերայ ձեր.
եւ եղիջիք ինձ վկայք յԵրուսաղէմ
եւ յամենայն Հրէաստանի եւ 'ի Սա-
մարիա, մինչեւ 'ի ծագս երկրի:

9 Եւ զայս իբրեւ ասաց՝ մինչդեռ
հայէին նոքա՝ վերացաւ. եւ ամպն
կալաւ զնա յաչաց նոցա:

10 Եւ մինչդեռ պշուցեալ էին ընդ
երկինս երթալոյ նորա, եւ ահա-
ւասիկ արք երկու երեւեցան նոցա
'ի հանդերձս սպիտակս:

11 Որք եւ ասացին. Արք Գալի-
լեացիք՝ զի՞ կայք հայեցեալ ընդ
երկինս. այս Յիսուս՝ որ վերա-
ցաւն 'ի ձէնջ յերկինս, այնպէս
եկեսցէ՝ զոր օրինակ տեսէք զնա
երթալ յերկինս:

12 Ապա դարձան յԵրուսաղէմ
յանուանեալ լեռնէն Ձիթենեաց.
որ է մերձ յԵրուսաղէմ ըստ շաբա-
թու ճանապարհի:

13 Եւ իբրեւ մտին, ելին 'ի վեր-
նատունն՝ ուր վաներն իսկ էին.
Պետրոս եւ Յակոբոս, Յովհաննէս
եւ Անդրէաս, Փիլիպպոս եւ Թով-
մաս, Բարթողիմէոս եւ Մատ-
թէոս, Յակոբոս Ալփեան եւ Շմա-
ւոն Նախանձայոյզ՝ եւ Յուդա Յա-
կովբեան:

14 Սոքա ամենեքեան էին հանա-
պազորդեալ միաբան յաղօթս հան-
դերձ կանամբք, եւ Մարեմաւ մօր-
բն Յիսուսի՝ եւ եղբարբք նորա:

8 Բայց երբոր Հոգին ձեզ վե-
րայ ւ կը հասնի, դուք զօրութիւն
փ կառնէք. եւ ինձ վկայ կը լինիք
Երուսաղէմումն ու ամէն Հրէաս-
տանի եւ Սամարիայի մէջ, մինչեւ
երկրի ք ծայրերը:

9 Եւ երբոր սա ասաց, դեռ քա-
նի որ նորանք օ նայուածքին՝ վերա-
ցաւ. եւ ամպը վեր առաւ նորան
նորանց ֆ աչքերից:

10 Եւ դեռ որ խիստ մտիկ տալով
նայուածքին նորա դէպի երկինքը
գնալուն, եւ ահա երկու մարդիկ
երեւեցան նորանց սպիտակ ա շո-
րերով,

11 Որ էլ ասացին. Ո՛վ Գալի-
լեացի մարդիկ՝ ինչ էք կանգնած
եւ մտիկ էք տալիս դէպի բ եր-
կինքը. այս Յիսուս որ ձեզանից
վերացաւ երկինքը, ճիշդ այնպէս
կը գայ՝ ինչպէս որ նորան տեսիք
գնալ դէպի գ երկինքը:

12 Այնուհետեւ այն Ձիթենեաց
անուանեալ սարէն յետ դարձան
Երուսաղէմ. որ մօտ էր Երուսաղէ-
մին՝ շաբաթ օրի ճանապարհի դ չափ:

13 Եւ երբոր մտին, վերելան վեր-
նատունն՝ ուրեղ որ բնակված ե է-
ին. Պետրոսն ու Յակոբոսը, Յո-
հաննէսն ու Անդրէասը, Փիլիպ-
պոսն ու Թովմասը, Բարթողիմէոսն
ու զ Մատթէոսը, Յակոբոս Ալ-
փէոսին ու Շմաւոն է Նախանձայոյզը՝
եւ Յուդա ը Յակոբեանը:

14 Սորանք ամէնքը միշտ միաբան
աղօթք էին թ անուամ կանանց ժ հետ,
եւ Յիսուսի մայր Մարիամի՝ եւ նո-
րա եղբայրներին ի հետ:

ւ Ղու. ԻԴ. 49.
փ Գծ. Բ. 1-4.
ք Ղու. ԻԴ. 48. Յովհ. ԺԵ. 27. Համառ. 22. Գծ. Բ. 32.
օ Ղու. ԻԴ. 51. Յովհ. Զ. 63.
ֆ Համառ. 2.
ա Մատթ. ԻԸ. 3. Մարկ. ԺԶ. 5. Ղու. ԻԴ. 4. Յովհ. Ի. 12. Գծ. Ժ. 3. 30.
բ Գծ. Բ. 7. ԺԳ. 31.
գ Դան. Է. 13. Մատթ. ԻԴ. 30. Մարկ. ԺԴ. 26. Ղու. ԻԱ. 27. Յովհ. ԺԴ. 3. Ա Թես. Ա. 10. Դ. 16. Բ Թես. Ա. 10. Յայտ. Ա. 7.
դ Ղու. ԻԴ. 52.
ե Գծ. Թ. 37. 39. Ի. 8.
զ Մատթ. Ժ. 2, 3, 4.
է Ղու. Զ. 15.
ը Յուդ. 1.
թ Գծ. Բ. 1. 46.
ժ Ղու. ԻԴ. 49. 55. ԻԴ. 10.
ի Մատթ. ԺԳ. 55.

15 Եւ յաւուրսն յայնոսիկ յարուցեալ Պետրոս ՚ի մէջ եղբարցն՝ ասէ. եւ էր անդ բազմութիւն անուանց իբրեւ հարիւր եւ քսանից։

16 Արք եղբարք՝ պարտ էր կատարել գրոյն. զոր յառաջագոյն ասաց Հոգին Սուրբ ՚ի բերանոյ Դաւթի՝ վասն Յուդայի, որ եղեւ առաջնորդ ունողացն Յիսուսի։

17 Զի ՚ի թիւս մեր էր ընդ մեզ. եւ հասեալ էր նմա վիճակ պաշտամանս այսորիկ։

18 Սա ստացաւ գեօղ ՚ի վարձուց անիրաւութեան. եւ ուռուցեալ հերձաւ ընդ մէջ՝ եւ հեղաւ ամենայն փոր նորա։

19 Եւ յայտնի եղեւ ամենեցուն՝ որ բնակեալ են յԵրուսաղէմ. մինչեւ կոչել գեղջն այնմիկ բարբառովն իւրեանց Ակեղդամայ. այսինքն է՝ Գեօղ արեան։

20 Զի գրեալ է ՚ի գիրս Սաղմոսաց. Եղիցի բնակութիւն նորա աւերակ, եւ մի ոք իցէ՝ որ բնակիցէ ՚ի նմա. եւ զկարգ նորա առցէ այլ։

21 Արդ՝ պարտ է յարանցս յայսցանէ՝ եկելոցս ընդ մեզ յամենայն ժամանակի, յորում մուտ եւ ել առ մեզ Տէր Յիսուս։

22 Սկսեալ ՚ի մկրտութենէն Յովհաննու մինչեւ յօրն՝ յորում վերացաւ ՚ի մէնջ. վկայ յարութեան նորա ընդ մեզ լինել միում ՚ի սոցանէ։

23 Եւ կացուցին երկուս. զՅովսէփ որում Բարսաբայն կոչէին, որ անուանեցաւ Յուստոս, եւ զՄատաթիա։

15 Եւ այն օրերը Պետրոս վերկացաւ եղբայրներին մէջ եւ ասաց. եւ այնտեղ հարիւր եւ քսան հոգիների չափ բազմութիւն —կային.

16 Մարդիկ եղբարք՝ պէտք էր որ այն գրվածը կատարվէր. որ առաջուց ասաց Սուրբ Հոգին Դաւթի բերանովը Յուդային =համար, որ Յիսուսի բռնողներին առաջնորդ ∠ էլաւ.

17 Պատճառն որ՝ նա մեզ հետ մեր համարումն ÷ էր. եւ այս պաշտօնիս վիճակը նորան էլ հասած ⁝ էր։

18 Սա անիրաւութեան ⁝ վարձքովը մին գիւղ —ստացաւ. եւ ուռած մէջիցը ճղվեցաւ, եւ նորա ամէն փորը դուրս թափվեցաւ.

19 Եւ յայտնի էլաւ ամէնին՝ որ Երուսաղէմում բնակված են. մինչեւ որ այն գիւղի անունն իրենց լեզուովն Ակեղդամայ կոչվեցաւ. որ է ասել՝ Արեան գիւղ.

20 Ինչու որ՝ Սաղմոս գրքումը գրված է՝ Նորա բնակութիւնն աւերակ պիտի լինի, եւ մինն էլ չի լինի՝ որ նորանում ⫶ բնակվի. եւ նորան կարգը ուրիշը պիտի ÷ առնէ։

21 Հիմիկ պէտք է՝ որ այս մարդկանցից որ մեզ հետ եկել են այն ամէն ժամանակին՝ որ Տէր Յիսուսը մեզ հետ ներս մտաւ եւ դուրս էլաւ.

22 Յօհաննէսի մկրտութենիցն բռնած մինչեւ այն * օրն՝ որ մեզանից ⁑ վերացաւ. որ սորանցից մինը մեզ հետ վկայ լինի նորա —յարութեանը։

23 Եւ երկու ⁑ կանգնացրին. Յովսէփին՝ որ Բարսաբա էին կոչում, որ Յուստոս անուանվեցաւ՝ եւ ⁑ Մատաթիային։

— Յայտ. Գ. 4.
= Սաղ. ԽԱ. 9. Յովհ. ԺԳ. 18.
∠ Ղու. ԻԲ. 47. Յովհ. ԺԸ. 3.
— Մատթ. Ժ. 4. Ղու. Զ. 16.
÷ Համար. 25. Գլ. ԺԲ. 25. Ի. 24. ԻԱ. 19.
⁝ Մատթ. ԻԶ. 15. Բ Պետ. Բ. 15.

— Մատթ. ԻԷ. 5. 7. 8.
⫶ Սաղ. ԿԹ. 25.
÷ Սաղ. ՃԸ. 8.
* Մարկ. Ա. 1.
⁑ Համար 9.
— Յովհ. ԺԵ. 27. Համար. 8. Գլ. Դ. 33.
⁑ Գլ. ԺԵ. 22.

24 Եւ կացեալ յաղօթս՝ ասեն .
Դու Տէր՝ սրտագէտ ամենայնի՝
յայտնեա զմի ոք՝ զոր ընտրեցեր
՚ի սոցանէ յերկուցունց ։
25 Առնուլ զվիճակ պաշտամանս
այսորիկ՝ եւ զառաքելութեան , յոր-
մէ անկաւ Յուդաս՝ գնալ ՚ի տեղի
իւր ։
26 Եւ ետուն վիճակս նոցա , եւ
ելանէր վիճակն Մատաթեայ . եւ
համարեցաւ ընդ մետասան առա-
քեալսն ։

24 Եւ աղօթք ընելով ըսացին .
Դու Տէր՝ որ ամէնուն սիրտը գիտու-
մես՝ այս երկուսիցս մէնը յայտնէ՛
որն որ ‡ ընտրեցիր ,
25 Որ այս պաշտօնիս եւ առա-
քեալ լինելոյ վիճակին առնէ , որ
նորանից Յուդան վէր ընկաւ՝ որ
գնայ իրեն † տեղը ։
26 Եւ նորանց վերայ վիճակ ձր-
գեցին , եւ վիճակն ընկաւ Մատա-
թիայեն վերայ , եւ նա տասնումէկ
առաքեալներին հետ համարվեցաւ ։

## ԳԼ . Բ

1 Եւ ՚ի կատարել աւուրցն Պեն-
տեկոստէից՝ էին ամենեքեան միա-
բան ՚ի միասին ։
2 Եւ եղեւ յանկարծակի հնչիւն
յերկնից՝ եկեալ իբրեւ սաստիկ հող-
մոյ . եւ ելից զամենայն տունն՝
յորում նստէին ։
3 Եւ երեւեցան նոցա բաժանեալ
լեզուք իբրեւ ՚ի հրոյ . եւ նստաւ
իւրաքանչիւր ՚ի վերայ նոցա ։
4 Եւ լցան ամենեքեան Հոգւով
Սրբով , եւ սկսան խօսել յայլ եւ
այլ լեզուս՝ որպէս եւ Հոգին տայր
բարբառել նոցա ։
5 Եւ էին յԵրուսաղէմ բնակեալ
Հրէայք՝ արք երկիւղածք յամենայն
ազգաց՝ որ ՚ի ներքոյ երկնից ։
6 Եւ իբրեւ եղեւ բարբառս այս՝
եկն միաբան բազմութիւնն եւ
խռնեցաւ . զի լսէին յիւրաքանչիւր
լեզուս խօսել նոցա ։
7 Արանչանային ամենեքեան , եւ
զարմանային՝ եւ ասէին ընդ մի-
մեանս . Ո՞չ ահաւասիկ ամենեքին սո-
քա որք խօսին՝ Գալիլեացիք են ։

1 Եւ երբոր Պէնտէկոստէի օրե-
րը ‑ կատարվումէին , ամէնքը միա-
բան մէն տեղ ‡ էին ։
2 Եւ յանկարծակի երկնքիցը
սաստիկ ձայն էլաւ՝ սաստիկ քա-
մու պէս եկած . եւ լցրուց — բո-
լոր տունըն՝ որ նորանում նստած
‡ էին ։
3 Եւ երեւեցան նորանց՝ բաժան-
ված լեզուներ ինչպէս կրակից . եւ
նստեց նորանց ամէն մէկին վերայ ։
4 Եւ ամէնքըն Սուրբ Հոգով
† լցվեցան , եւ սկսեցին ուրիշ լեզու-
ներով խօսել՝ ինչպէս որ Հոգին
նորանց խօսել էր ⊦ տալիս ։
5 Եւ Երուսաղէմումը բնակված
էին Հրէաներ՝ Աստուածավախ մար-
դիկ՝ երկնքի ներքեւ ամէն ազգե-
րիցը ։
6 Եւ երբոր այս ձայնս էլաւ՝
բազմութիւնն եկաւ մինատեղ եւ
կիտավեցաւ . պատճառն որ՝ լսումէին
նորանց՝ որ ամէն մէկի լեզուներ-
րովը խօսումէին .
7 Հիանումէին ամէնքըն եւ զար-
մանում՝ եւ մէնմէնի ասում .
Ահա չէ՞ որ սորանք ամէնքը որ
խօսումեն , Գալիլեացի ⲋ են ։

‡ Ա Թագ . ԺԶ . 7 ։ Ա Մնաց . ԻԸ . 9 ։ ԻԹ . 17 ։ Երեմ . ԺԱ . 20 ։ ԺԷ . 10 ։ Գլ . ԺԵ . 8 ։
Յայտ . Բ . 23 ։
† Համար . 17 ։
—
‑ Ղև . ԻԳ . 15 ։ Բ Օրին . ԺԶ . 9 ։
Գլ . Ի . 16 ։
‡ Գլ . Ա . 14 ։
‡ Գլ . Դ . 31 ։
† Գլ . Ա . 5 ։
⊦ Մարկ . ԺԶ . 17 ։
Գլ . Ժ . 46 ։ ԺԹ . 6 ։ Ա Կորնթ . ԺԲ . 10 . 28 . 30 ։ ԺԴ . 1 ։ ԺԴ . 2 , Ը ։
ⲋ Գլ . Ա . 11 ։

8 Եւ զիա՞րդ լսեմք մեք իւրաքանչիւր բարբառս մեր՝ յորում ծնեալ եմք ։

9 Պարթեւք եւ Մարք եւ Իլամացիք՝ եւ որ բնակեալ են ՚ի Միջագետս, ՚ի Հրէաստանի, եւ ՚ի Գամիրս, ՚ի Պոնտոս, եւ յԱսիա ։

10 ՚Ի Փռիւգիայ, եւ ՚ի Պամփիւլիայ, յԵգիպտոս, եւ ՚ի կողմանս Լիբիացւոց, որ ընդ Կիւրենացիս, եւ որ եկք Հռովմայեցիք ։

11 Հրէայք՝ եւ եկք նոցուն, Կրետացիք եւ Արաբացիք՝ լսեմք խօսից նոցա ՚ի մեր լեզուս զմեծամեծս Աստուծոյ ։

12 Արանչանային ամենեքեան զարմացեալք, եւ առէին ցմիմեանս . Զի՞նչ կամիցի այս լինել ։

13 Եւ կիսոյն ընդ խաղ արկեալ առէին, թէ Քաղցուալից իցեն ։

14 Յարուցեալ Պետրոս հանդերձ մետասանիւքն՝ ամբարձ զձայն իւր՝ եւ խօսեցաւ ընդ նոսա . Արք Հրէաստանեայք՝ եւ որ բնակեալ էք յԵրուսաղէմ ամենեքին, այս ձեզ յայտնի լիցի՝ եւ ունկն դիք բանից իմոց ։

15 Ո՛չ որպէս դուքդ կարծէք, թէ սոքա արբեալ իցեն . զի դեռ երեք ժամք են աւուրս ։

16 Այլ այս է՝ որ ասացաւ ՚ի ձեռն մարգարէին Յովելեայ ։

17 Եւ եղիցի յետ այսորիկ յաւուրս յետինս՝ ասէ Աստուած, հեղից յՈգւոյ իմմէ ՚ի վերայ ամենայն մարմնոյ . եւ մարգարէասցին ուստերք ձեր, եւ դստերք ձեր . եւ երիտասարդք ձեր տեսիլս տեսցեն, եւ ծերք ձեր երազովք երազեսցին ։

8 Եւ ինչպէս է՝ որ մենք ամէն մէկս մեր լեզուներովս լսումենք՝ որ նորանում ծնած ենք .

9 Պարթեւներ եւ Մարք եւ Ելամացիք, եւ նորանք՝ որ բնակված են Միջագետումը, Հրէաստանումը, եւ Գամիրքումը, Պոնտոսումը, եւ Ասիայի մէջ .

10 Փռիւգիայի եւ Պամփիլիայի մէջ, Եգիպտոսում, եւ Լիբիացոց չորս կողմերումը, նորանք՝ որ Կիւրենացոց հետ են, եւ նոր եկած Հռօմայեցիքը .

11 Հրէաներ՝ եւ նորանց մօտ դարձածներ, Կրետացիք եւ Արաբացիք, լսումենք որ՝ նորանք մեր լեզուներովս Աստուծոյ մեծամեծ բաները խօսումեն ։

12 Հիանումէին ամէնքը եւ զարմանում, եւ մինն միւսին ասում . Սա ինչ պիտի լինի ։

13 Եւ կէսերը ծաղր անելով ասումէին, թէ Քաղցուով հարբած են ։

14 Վերկացաւ Պետրոս այն տասնումէկին հետ՝ իւրեն ձայնը բարձրացրուց՝ եւ նորանց հետ խօսեց . Ո՛վ Հրէաստանցի մարդիկ, եւ ամէնքդ՝ որ բնակված էք Երուսաղէմումը, սա ձեզ յայտնի լինի՝ եւ իմ խօսքերիս ականջ դրէք ։

15 Չէ՛ թէ ինչպէս որ դուք կարծումէք, թէ սորանք հարբած են . ինչու որ՝ դեռ օրիս ե երեք ժամն է ։

16 Բայց սա է՝ որ Յովէլ մարգարէի ձեռամբ ասվեցաւ ։

17 Եւ կը լինի որանից ետեւ յետին օրերումն՝ Աստուած է ասումէ, որ իմ Հոգուցս կը թափեմ ամէն մարմնոյ ը վերայ . եւ ձեր որդիքները, եւ ձեր աղջիկները թ կը մարգարէանան . եւ ձեր երիտասարդները տեսիլքներ կը տեսնեն, եւ ձեր ծերերը երազներով երազ կը տեսնեն ։

ե Ա Թես. Ե. 7 ։
է Եսայ. ԽԴ. 3 ։
Եզեկ. ԺԱ. 19 ։ ԼԶ. 27 ։ Յովէլ
Բ. 28, 29 ։ Զաք
ԺԲ. 10 ։ Յովհ.
Է. 38 ։
ը Գլ. Ժ. 45 ։
թ Գլ. ԻԱ. 9 ։

18 Եւ ՚ի վերայ ծառայից իմոց՝ եւ
՚ի վերայ աղախնեաց իմոց՝ յաւուրս
յայնոսիկ հեղից յհոգւոյ իմմէ, եւ
մարգարէասցին։
19 Եւ տաց նշանս յերկինս ՚ի վեր,
եւ նշանս յերկիր ՚ի խոնարհ, արիւն
եւ հուր եւ մրրիկ ծխոյ։

20 Արեգակն դարձցի ՚ի խաւար,
եւ լուսին յարիւն՝ մինչչեւ եկեալ
իցէ օր Տեառն մեծ եւ երեւելի։
21 Եւ եղիցի ամենայն՝ որ կար-
դասցէ զանուն Տեառն՝ կեցցէ։
22 Արք Իսրայէլացիք՝ լուարուք
զբանս զայսոսիկ. զՅիսուս Նազով-
րեցի, զայր ցուցեալ յԱստուծոյ ՚ի
ձեզ զօրութեամբ եւ նշանօք եւ
արուեստիւք, զոր արար նովաւ
Աստուած ՚ի միջի ձերում. որպէս
եւ դուք իսկ գիտէք։

23 Զնա նախասահմանեալ խորհրդով եւ
կանխագիտութեամբն Աստուծոյ՝
մատնեալ ՚ի ձեռս անօրինաց, բե-
ւեռեալ ՚ի փայտի սպանէք։

24 Զոր Աստուած յարոյց լուծեալ
զերկանս մահու. քանզի ոչ էր
հնար ըմբռնել նմա ՚ի նմանէ։

25 Դաւիթ իսկ ասէ զնմանէ.
Յառաջագոյն տեսանէի զՏէր առա-
ջի իմ յամենայն ժամ, զի ընդ
աջմէ իմմէ է, զի մի սասանեցայց։

26 Վասն այսորիկ ուրախ եղեւ
սիրտ իմ, եւ ցնծացաւ լեզու իմ, եւս
եւ մարմին իմ բնակեսցէ յուսով։

18 Եւ իմ ծառաներուս վրայ՝ եւ
իմ աղախիններուս վրայ՝ այն օրե-
րուն իմ Հոգւոյս կը թափեմ, եւ
[ե] կը մարգարէանան.
19 Եւ նշաններ կը տամ վերեւ
երկինքումը, եւ նշաններ ներքեւ
երկիրումն, արիւն եւ կրակ եւ ծխո
[ւ] մրրիկ.
20 Արեգակը խաւար կը դառնայ,
եւ լուսինն արիւն՝ դեռ որ Տէրն
մեծ եւ երեւելի օրը [խ] չեկած.
21 Եւ կը լինի ամէն՝ ով որ Տէրն
անունը կը կանչէ՝ [ծ] կապրի.
22 Ով Իսրայէլացի մարդիկ՝ այս
բաներս լսեցէք. Յիսուս Նազօրե-
ցին՝ այն մարդը՝ որ Աստուածա-
նից ցոյց տրվեցաւ ձեզանում զօրու-
թենով եւ նշաններով եւ հրաշքնե-
րով, որ Աստուած նորանով արաւ
ձեր [կ] մէջումը. ինչպէս որ դուք
ինքներդ էլ գիտումէք.
23 Նորան՝ որ Աստուծոյ սահման-
ված խորհրդովը ու կանխագիտու-
թենովը մատնըված [հ] էր անօրէն-
ների ձեռքովը, փայտի վերայ բե-
ւեռած [ձ] սպանեցիք,
24 Որ նորան Աստուած յարոյց
մահի ցաւերը [ղ] խափանելով. ին-
չու որ՝ կարելի չէր, որ նա բռ-
նըվէր նորանից.
25 Դաւիթ ինքն էլ է ասում նո-
րա համար. Առաջուց տեսնումէի
Տէրըն ամէն ժամ իմ [ճ] առաջիս.
ինչու որ՝ իմ աջ կողմն էր, որ չը
սասանվիմ.
26 Որահամար իմ սիրտս ուրախ
էլաւ, եւ իմ լեզուս ցնծացաւ, եւ
իմ մարմինս էլ յուսով կը բնակվի.

ե Գլ. ԻԱ. 4. 9. 10. Ա Կորնթ. ԺԲ. 10. 28. ԺԴ. 1. ա.
ւ Յովել. Բ. 30. 31.
խ Մատթ. ԻԴ. 29. Մարկ. ԺԳ. 24. Ղուկ. ԻԱ. 25.
ծ Հռովմ. Ժ. 13.
կ Յովհ. Գ. 2. ԺԴ. 10. 11. Գլ. Ժ. 38. Եբր. Բ. 4.
հ Մատթ. ԻԶ. 24. Ղուկ. ԻԲ. 22. ԻԴ. 44. Գլ. Դ. 28.
ձ Գլ. Ե. 30.
ղ Համար. 32. Գլ. Գ. 15. Դ. 10. Ժ. 40. ԺԳ. 30. 34. ԺԷ. 31. Հռովմ. Դ. 24. Ը. 11. Ա Կորնթ. Զ. 14. ԺԵ. 15. Բ Կորնթ. Դ. 14. Գաղ. Ա. 1. Եփես. Ա. 20. Կող. Բ. 12. Ա Թես. Ա. 10. Եբր. ԺԳ. 20. Ա Պետ. Ա. 21.
ճ Սաղ. ԺԶ. 8.

27 Զի ոչ թողցես զանձն իմ ՚ի
դժոխս՝ եւ ոչ տացես Սրբոյ քում
տեսանել զապականութիւն։
28 Ծանուցեր ինձ զճանապարհս
կենաց. լցուցեր զիս ուրախութեամբ
յերեսաց քոց ՚ի քաղցրութենէ։
29 Արք եղբարք՝ պարտ է հա–
մարձակութեամբ ասել վասն նահա–
պետին Դաւթի. զի մեռաւ եւ
թաղեցաւ. եւ գերեզման նորա կայ
՚ի միջի մերում մինչեւ ցայսօր։
30 Զի մարգարէ էր, եւ գիտէր՝ եթէ
երդմամբ երդուաւ նմա Աստուած,
՚ի պտղոյ յորովայնէ նորա նստուցա–
նել յաթոռ նորա։
31 Յառաջագոյն ծանուցեալ խօ–
սեցաւ վասն յարութեանն Քրիստո–
սի. զի ոչ թողաւ ոգի նորա ՚ի
դժոխս՝ եւ ոչ մարմին նորա ետես
զապականութիւն։
32 Զայս Յիսուս յարոյց Աստուած՝
որում ամենեքին մեք վկայեմք։
33 Աջովն Աստուծոյ բարձրացեալ,
զաւետիսն Հոգւոյն Սրբոյ ընկալեալ
՚ի Հօրէ՝ սփռեաց զայս, զոր դուք
իսկ տեսանէք եւ լսէք։
34 Զի ոչ եթէ Դաւիթ ել յերկինս.
ասէ իսկ ինքն՝ Ասաց Տէր ցՏէր իմ.
Նիստ ընդ աջմէ իմմէ,
35 Մինչեւ եդից զթշնամիս քո
պատուանդան ոտից քոց։
36 Արդ՝ ճշմարտիւ գիտասցէ ա–
մենայն տունն Իսրայէլի, զի եւ
Տէր զնա եւ Օծեալ Աստուած ա–
րար. զայն Յիսուս՝ զոր դուքն
խաչեցէք։

27 Քանզի որ՝ իմ անձըս չես
թողուր դժոխքումը եւ քու Սրբոյդ
ապականութիւն տեսնել չես տար։
28 Կեանքի ճանապարհները ճա–
նաչցուցիր ինծի. քու երեսովդ ուրա–
խութիւնովը լցուցիր ինծի։
29 Մարդիկ եղբարք՝ պէտք է որ
համարձակութենով ասեմ Դաւիթ
նահապետին մ համար. թէ նա մե–
ռաւ եւ թաղուեցաւ. եւ նորա գե–
րեզմանը մինչեւ այս օր մեր մէ–
ջումը կայ։
30 Բայց որովհետեւ մարգարէ էր,
եւ գիտումէր՝ որ Աստուած երդու–
մով երդուեր նորան, որ նորա փո–
րի պտղէը նորա աթոռին վերայ
յ նստեցնէ.
31 Առաջուց իմացած խօսեց Քը–
րիստոսի յարութեան համար. որ
նորա հոգին դժոխքումը չը թող–
ուաւ՝ եւ նորա մարմինն ապակա–
նութիւն ն չը տեսաւ։
32 Այս Յիսուսս Աստուած յա–
րոյց՝ որ նորան մենք ամէնքս ո վը–
կայումենք.
33 Աստուծոյ աջովը չ բարձրա–
ցած. եւ Սուրբ Հոգւոյ աւետիքը
Հօրմէն պ առած՝ թափեց ջ աս, որ
դուք տեսնում եւ լսումէք։
34 Քանզի որ՝ ոչ թէ Դաւիթը
վեր ելաւ երկինքը. բայց եւ ինքն
է ասում՝ Տէրն իմ Տէրոջս ասաց.
Իմ աջ կողմս ռ նստէ,
35 Մինչեւ քու թշնամիներդ քու
ոտացդ ս կոխելիք դնեմ։
36 Հիմիկ թող հաստատութենով
գիտենայ Իսրայէլի բոլոր տունը,
որ Աստուած նորան Տէր եւ Օծեալ
արաւ. այն Յիսուսին՝ որ դուք
վ խաչեցիք։

մ Գ Թագ. Բ. 10. Գլ. ԺԳ. 36.
յ Բ Թագ. Է. 12. 13. Սաղ. ՃԼԲ. 11. Ղուկ. Ա. 32. 69. Հռովմ. Ա. 3. Բ Տիմ. Բ. 8.
ն Սաղ. ԺԵ. 10. Գլ. ԺԳ. 35.
շ Համար. 24.
ո Գլ. Ա. 8.
չ Գլ. Ե. 31. Փիլիպ. Բ. 9. Եբր. Ժ. 12.
պ Յովհ. ԺԴ. 26. ԺԵ. 26. ԺԶ. 7. 13. Գլ. Ա. 4.
ջ Գլ. Ժ. 45. Եփես. Դ. 8.
ռ Սաղ. ՃԺ. 1. Մատթ. ԻԲ. 44.
Ա Կորնթ. ԺԵ. 25. Եփես. Ա. 20. Եբր. Ա. 13.
վ Գլ. Ե. 31.

37 Եւ լուեալ զայս զղջացան 'ի սիրտս իւրեանց. եւ ասեն ցՊետրոս՝ եւ ցայլ առաքեալսն. Զի՞նչ գործեսցուք՝ արք եղբարք։

38 Ասէ ցնոսա Պետրոս. Ապաշխարեցէք՝ եւ մկրտեսցի իւրաքանչիւրոք 'ի ձէնջ յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի 'ի թողութիւն մեղաց, եւ ընկալջիք զպարգեւս Հոգւոյն Սրբոյ։
39 Զի ձեզ են աւետիքս՝ եւ որդւոց ձերոց, եւ ամենայն հեռաւորաց՝ զորս կոչեսցէ Տէր Աստուած մեր։
40 Եւ այլովք բանիւք բազմօք վկայութիւն դնէր, եւ մխիթարէր զնոսա եւ ասէր. Ապրեցարուք յազգէ աստի խոտորելոյ յայսմանէ։
41 Նոքա յօժարութեամբ ընկալեալ զբանն նորա մկրտեցան. եւ յաւելան յաւուր յայնմիկ ոգիք իբրեւ երեք հազարք։
42 Եւ էին հանապազորդեալք վարդապետութեան առաքելոցն, եւ հաղորդութեանն՝ եւ բեկանելոյ հացին եւ աղօթից։
43 Եւ լինէր ամենայն անձին ահ եւ երկեւղ. բազում նշանք եւ արուեստք 'ի ձեռս առաքելոցն գործէին։
44 Ամենայն հաւատացեալքն էին 'ի միասին, եւ ունէին զամենայն ինչ հասարակաց։
45 Եւ զստացուածս եւ զինչս վաճառէին, եւ բաշխէին զայն ամենեցուն՝ ում զիարդ պիտոյ ինչ լինէր։
46 Հանապազօր կանխեալ միաբանութեամբ 'ի տաճարն, եւ տա-

37 Եւ երբոր սա լսեցին, իրենց սրտերումը Հ զղջացան. եւ ասացին Պետրոսին եւ միւս առաքեալներին. Ի՞նչ պիտի գործենք՝ մարդիկ եղբարք։
38 Պետրոս նորանց ասաց. Ապաշխարեցէք՝ եւ ձեզանից ամէն մէկը թող մկրտուի Տէր Յիսուսի Քրիստոսի անունովը՝ մեղաց թողութեան համար. եւ Սուրբ Հոգոյ աւետիքը ⊤ կընդունէք։
39 Ինչու որ՝ ձեզ եւ ձեր որդոց համար է այս ɾ աւետիքս, եւ այն ամէն հեռաւորներին համար՝ որ նորանց մեր Տէր Աստուածը շկը կանչէ։
40 Եւ ուրիշ շատ խօսքերով վկայութիւն էր դնում, եւ յորդորում նորանց՝ եւ ասում. Ազատվեցէք այս ծուռ ազգիցս։
41 Մին քանիսը նորա խօսքը յօժարութենով ընդունեցին եւ մկրտուեցան. եւ այն օրն երեք հազարի չափ հոգիք աւելացան։
42 Եւ միշտ առաքելոց վարդապետութեանն ու հաղորդութեանը, եւ հացի կտրելոյն եւ աղօթքին հետեւում — էին։
43 Եւ ամէն անձին վերայ ահ եւ վախ էր լինում. շատ նշաններ եւ հրաշքներ էին գործվում առաքելոց ÷ ձեռքովը։
44 Ամէն հաւատացեալներն իրար հետ միասեղ էին, եւ ամէն բան հասարակաց + ունէին։
45 Եւ ստացուածքներն ու ամէն բաները ծախում եւ բաշխումէին այն ամէնին, ում որ մէն բան պէտք էր ∘ լինում։
46 Մինչ եւ ամէն օր ‡ միաբանութենով տաճարն էին = գնում,

Հ Զաք. ԺԲ. 10. Ղու. Գ. 10 Գղ. Թ. 6. ԺԶ. 30.
⊤ Ղու. ԻԴ. 47 Գղ. Գ. 19.
ɾ Յովէլ. Բ. 28. Գղ. Գ. 25.
ց Գղ. Ժ. 45. ԺԱ. 15. 18. ԺԴ. 26. ԺԵ. 3. 8. 14. Եփես. Բ. 13 17.
— Հռոմ. 46. Գղ. Ա. 14. Հռովմ ԺԲ. 12. Եփես Զ. 18. Կող. Դ. 2. Եբր. Ժ. 25.
÷ Մարկ. ԺԶ. 17. Գղ. Դ. 33. Ե. 12.
+ Գղ. Դ. 32. 34.
∘ Եսայ. ԾԸ. 7.
‡ Գղ. Ա. 14.
= Ղու. ԻԴ. 53. Գղ. Ե. 42.

տընէն՝ բեկանէին զհացն, եւ առ-
նուին կերակուր ուրախութեամբ
եւ միամտութեամբ սրտիւ։
47 Օրհնէին զԱստուած՝ եւ ունէին
շնորհս առ ամենայն ժողովուրդն․
եւ Տէր յաւելոյր ՚ի փրկեալսն
հանապազօր ՚ի նոյն։

եւ հացը տներումը կտրում, եւ ու-
րախութեամբ եւ սրտի միամտու-
թեամբ կերակուր ա առնում։
47 Աստուծոյն օրհնումէին, եւ ա-
մէն ժողովրդի առաջին շնորհք
բ ունէին․ եւ Տէրը միշտ եւ ամէն
օր փրկվածներ էր աւելացնում նո-
րանց գ հետ։

## ԳԼ. Գ.

1 Պետրոս եւ Յովհաննէս ելա-
նէին ՚ի տաճար անդր յիններորդ
ժամու աղօթիցն։
2 Եւ էր այր մի կաղ յորովայ-
նէ մօր իւրոյ՝ զոր բարձեալ դնէին
հանապազ առ դրան տաճարին՝ որ
կոչէր Գեղեցիկ, խնդրել ողորմու-
թիւն յայնցանէ՝ որ մտանէին ՚ի
տաճարն։
3 Որոյ տեսեալ զՊետրոս եւ ըզ
Յովհաննէս՝ զի մտանէին ՚ի տաճա-
րըն, աղաչէր ողորմութիւն առնուլ։
4 Հայեցաւ ՚ի նա Պետրոս Յով-
հաննու հանդերձ, եւ ասէ․ Հայ-
եաց ՚ի մեզ։
5 Նա դարձաւ ՚ի նոսա, եւ ակն
ունէր առնուլ ինչ ՚ի նոցանէ։
6 Եւ ասէ Պետրոս․ Արծաթ եւ
ոսկի ոչ ունիմ․ բայց զոր ունիմս՝
զայս տաց քեզ․ յանուն Յիսուսի
Քրիստոսի Նազովրեցւոյ արի՝ եւ
գնա։
7 Եւ կալեալ զաջոյ ձեռանէ նո-
րա՝ յարոյց զնա․ եւ անդէն հաս-
տատեցան բարձք նորա՝ եւ սրունք։
8 ՚Ի վեր վազեաց եւ սկսաւ գը-
նալ, եւ եմուտ ընդ նոսա ՚ի տա-
ճարն․ գնայր եւ վազվազէր՝ եւ
օրհնէր զԱստուած։
9 Եւ ետես ամենայն ժողովուր-

1 Պետրոսն ու Յօհաննէսը գնու-
մէին — տաճարն աղօթքի ժամը
ա իններին։
2 Եւ մին մարդ կար իւրեն մօր
փորիցը կաղ՝ որ նորան ամէն օր
վերառած դնումէին տաճարի դրան
մօտ՝ որ Գեղեցիկ էր բ կոչվում,
որ ողորմութիւն խնդրէ նրանցից՝
որ տաճարն էին գ մտնում։
3 Երբոր տեսաւ Պետրոսին եւ
Յօհաննէսին՝ որ տաճարն էին մըտ-
նում, աղաչումէր՝ որ ողորմութիւն
առնէ նորանցից։
4 Պետրոսը Յօհաննէսին հետ մը-
տիկ արաւ նորան՝ եւ ասաց․ Դէ-
պի մեզ նայէ։
5 Նա դարձաւ դէպի նորանց,
եւ յոյս ունէր՝ որ մին բան առնէ
նորանցից։
6 Եւ Պետրոս ասաց․ Արծաթ
եւ ոսկի չունիմ․ բայց ինչ որ ու-
նիմ, նա քեզ կտամ․ Յիսուսի
Քրիստոսի Նազօրեցոյ անուանը
վեր կաց՝ եւ դ գնա։
7 Եւ նորա աջ ձեռիցը բռնեց՝
եւ վերկացրուց նորան․ եւ չուտով
հաստատվեցան նորա բարձքը՝ եւ
ոտաց սրունքը․
8 Վեր վազեց՝ եւ սկսեց գնալ,
եւ նորանց հետ մտաւ ե տաճարը․
եւ գնումէր՝ եւ վազ էր տալիս՝ եւ
Աստուծոյն օրհնում։
9 Եւ ամէն ժողովուրդը տեսաւ

ա Գր. Ի. 7։
բ Ղու. Բ. 52։
Գր. Դ. 33։
Համմ. ԺԴ. 18։
գ Գր. Ե. 14. ԺԱ. 24։
—
— Գր. Բ. 46։

ա Սաղ. ՃԵ. 17։
բ Գր. ԺԴ. 7։
գ Յովհ. Թ. 8։
դ Գր. Գ. 10։
ե Եսայ. ԼԵ. 6։

դն զնա, զի գնայր՝ եւ օրհնէր
զԱստուած ։
10 Եւ ճանաչէին զնա՝ զի նա էր,
որ նստէր վասն ողորմութեան առ
Գեղեցիկ դրան տաճարին, եւ լը-
ցան զարմանալեօք 'ի վերայ նշանին՝
որ եղեւ ։
11 Եւ մինչ նա ունէր զՊետրոս եւ
զՅովհաննէս, ընթացաւ ամենայն
ժողովուրդն առ նոսա 'ի սրահն՝ որ
կոչէր Սողոմոնի՝ զարմացեալք ։

12 Իբրեւ ետես Պետրոս, պա-
տասխանի ետ ժողովրդեանն ։ Արք
Իսրայէլացիք՝ զի՞ զարմացեալք էք
'ի վերայ այսորիկ, կամ ընդ մեզ զի՞
էք պշուցեալ, իբրու թէ անձին
զօրութեամբ ինչ՝ կամ քաջութեամբ
արարեալ իցէ գնալ դմա ։
13 Աստուած Աբրահամու՝ եւ Աս-
տուած Սահակայ՝ եւ Աստուած Յա-
կոբայ, Աստուած հարցն մերոց
փառաւորեաց զՈրդի իւր զՅիսուս ։
զոր դուքն մատնեցիք՝ եւ ուրա-
ցայք առաջի Պիղատոսի, 'ի դատել
նորա արձակել ։

14 Եւ դուք զՍուրբն եւ զԱրդա-
րըն ուրացայք, եւ խնդրեցիք այր
մի մարդասպան շնորհել ձեզ ։
15 Եւ զԱռաջնորդ կենացն սպա-
նէք, զոր Աստուած յարոյց 'ի մեռե-
լոց ։ որում մեք իսկ վկայ եմք ։

16 Եւ հաւատովք անուան նորա
զդա՝ զոր տեսանէքդ եւ գիտէք,
հաստատեաց անուն նորա ։ եւ հա-
ւատքն որ նովաւ են՝ ետուն դմա զա-
ռողջութիւնս զայս յանդիման ձեր
ամենեցուն ։

նորան, որ գնումէր՝ եւ Աստուծոյն
է օրհնում ։
10 Եւ ճանաչումէին նորան, որ սա
նա էր, որ ողորմութեան համար
նստումէր տաճարի Գեղեցիկ դրա-
նը, եւ զարմանքով լցվան այն նշ-
անին համար՝ որ ը էլաւ ։
11 Եւ գեւ որ նա Պետրոսին եւ
Յովհաննէսին բռնած էր, ամէն ժո-
ղովուրդը վազեց նորանց մօտ թ
սրահն՝ որ Սողոմոնի էր կոչվում,
եւ ժ զարմացան ։
12 Երբոր Պետրոսն տեսաւ, պա-
տասխան տուաւ ժողովրդին ։ Ո՛վ
Իսրայէլացի մարդիկ՝ ինչու էք զար-
մացել ասոր վրայ՝ կամ մեզ վրայ
ինչու էք սաստիկ նայում, իբր թէ՝
մենք մեր զօրութենով եւ քաջու-
թենով տուած ըլլինք դորան գնալը ։
13 Աբրահամու Աստուածը՝ Սա-
հակայ Աստուածը՝ եւ Յակոբայ
Աստուածը, մեր հայրերուն ի Աստ-
ուածը փառաւորեց իրեն Որդի
ի Յիսուսին ։ նորան՝ որ դուք լ մատ-
նեցիք, եւ ուրացաք Պիղատոսի
առաջին, երբոր նա դատումէր՝ որ
խ արձակէ ։
14 Եւ այն ծ Սուրբին եւ Արդարին
ուրացաք, այլ խնդրեցիք՝ որ մէկ
մարդասպան մարդ շնորհէ կ ձեզ ։
15 Եւ կենաց Առաջնորդին սպա-
նեցիք. որ նորան Աստուած մեռել-
ներէն հ յարուցց ։ որ նորան
իսկ մենք ձ վկայումենք ։
16 Եւ նորա անունի հաւատքովը
սորան որ տեսնումէք եւ գիտու-
մէք, նորա անունը ղ հաստատեց ։
եւ հաւատքն՝ որ նորանով է՝ այս
առողջութիւնս տուաւ դորան ձեր
ամէնից առաջին ։

է Գլ. Դ. 16. 21 ։
ը Յովհ. Թ. 8 ։
թ Յովհ. Ժ. 23 ։
Գլ. Ե. 12 ։
ժ Գլ. Ե. 30 ։
ի Յովհ. Է. 39 ։
ԺԲ. 16 ։ ԺԷ. 1 ։
լ Մատթ. ԻԷ. 2 ։
խ Մատթ. ԻԷ. 20 ։
Մարկ. ԺԵ. 11 ։
Ղուկ. ԻԳ. 18.
20, 21 ։ Յովհ.
ԺԸ. 40 ։ ԺԹ.
15 ։ Գլ. ԺԳ. 28 ։
ծ Սաղ. ԺԶ. 10 ։
Մարկ Ա. 24 ։
Ղուկ. Ա. 35 ։
Գլ. Բ. 27 ։ Գ.
27 ։
կ Գլ. Է. 52 ։ ԻԲ.
14 ։
հ Գլ. Բ. 24 ։
ձ Գլ. Բ. 32 ։
ղ Մատթ. Թ. 22 ։
Գլ. Դ. 10 ։ ԺԴ.
9 ։

17 Եւ արդ եղբարք՝ գիտեմ զի
անգիտութեամբ արարէք՝ որպէս եւ
իշխանքն ձեր։
18 Այլ Աստուած՝ որպէս յառաջա-
գոյն պատմեաց 'ի բերանոյ ամենայն
մարգարէից զչարչարելն Քրիստոսի
իւրոյ՝ նոյնպէս եւ կատարեաց։
19 Արդ՝ ապաշխարեցէք եւ դար-
ձարուք 'ի ջնջել զմեղս ձեր։
20 Որպէս զի եկեսցեն ժամանակք
հանգստեան յերեսաց Տեառն. եւ
առաքեսցէ զյառաջագոյն նկատեալն
ձեզ՝ զՅիսուս Քրիստոս։
21 Զոր պարտ է երկնից ընդունել
մինչեւ 'ի ժամանակս ամենեցուն
հաստատելոյ. զորոց խօսեցաւ Աս-
տուած 'ի բերանոյ սրբոց մարգա-
րէից։
22 Մովսէս ասաց զհարսն մեր,
թէ Մարգարէ յարուսցէ ձեզ Տէր
Աստուած ձեր յեղբարց ձերոց՝ իբ-
րեւ զիս, նմա լուիջիք ըստ ամե-
նայնի՝ որ զինչ եւ խօսեսցի առ
ձեզ։
23 Եւ եղիցի ամենայն անձն՝ որ
ոչ լուիցէ մարգարէին այնմիկ, սա-
տակեսցի 'ի ժողովրդենէն։
24 Եւ ամենայն մարգարէք՝ որ 'ի
Սամուէլէ եւ այսր խօսեցան, եւ
պատմեցին զաւուրս զայսոսիկ։
25 Դուք էք որդիք մարգարէիցն
եւ ուխտին, զոր ուխտեաց Աս-
տուած ընդ հարս ձեր, եւ ասէ ցԱբ-
րահամ. 'Ի զաւակի քում օրհնես-
ցին ամենայն ազգք երկրի։
26 Ձեզ նախ յարոյց Աստուած

17 Եւ հիմի՛կ եղբարք, գիտե-
մ[ա], որ անգիտութենով արիք՝
ինչպէս որ ձեր իշխաններն [ա] էլ։
18 Բայց Աստուած՝ ինչպէս որ
[բ] ամէն մարգարէների բերանովը
պատմեց իրեն Քրիստոսի չարչար-
վիլը, այնպէս էլ [գ] կատարեց։
19 Ուրեմն՝ զղջացէք եւ յետ դար-
ձէք, որ ձեր մեղքերը [դ] ջնջվին,
20 Որ Տէրի երեսիցը հանգստա-
նալու ժամանակները գան. եւ Յի-
սուսին Քրիստոսին ուղարկէ, որ
առաջուց ձեզ համար սահմանված է,
21 Որ նորան երկինքը պէտք է
[ե] ընդունի՝ մինչեւ այն ամէն բա-
ների հաստատուելու [զ] ժամանակնե-
րը. որ նորանց համար խօսեց Աստ-
ուած իրեն սուրբ մարգարէների
[է] բերանովը։
22 Մովսէս մեր հարանցն ասաց,
թէ Ձեր Տէր Աստուածը մարգարէ
վերկեկացնէ ձեզ համար ձեր եղ-
բայրների մէջիցը՝ ինձ նման, նորան
լսեցէք ամէն բանի համար՝ ինչ որ
կը խօսի [ը] ձեզ։
23 Եւ կը լինի, որ ամէն անձն՝
որ այն մարգարէին չը լսէ, նա ժո-
ղովրդի մէջիցը թող սատակվի։
24 Եւ ամէն մարգարէներն՝ որ
Սամուէլիցը մինչեւ հիմիկ մարգա-
րէացան, ճիշդ այս օրերս պատ-
մեցին։
25 Դուք էք այն մարգարէների
որդիքն՝ եւ այն ուխտին, որ Աստ-
ուած մեր հարանց հետ հաստատեց,
եւ Աբրահամին ասաց. Քո զա-
ւակովդ պիտի օրհնվին երկրի ա-
մէն [ժ] ազգերը։
26 Աստուած առաջ ձեզ [ի] համար

[ա] Ղու. ԻԳ. 34. Յովհ. ԺԶ. 3. Գր. ԺԳ. 27. Ա Կորնթ. Բ. 8. Ա Տիմ. Ա. 13.
[բ] Ղու. ԻԴ. 44. Գր. ԻԶ. 22.
[գ] Սաղ. ԻԲ. Եսայ. Ծ. 6. ԾԳ. 5. Դան. Թ. 26. Ա Պետ. Ա. 10. 11.
[դ] Գր. Բ. 38.
[ե] Գր. Ա. 11.
[զ] Մատթ. ԺԷ. 11.
[է] Ղու. Ա. 70.
[ը] Բ Օրին. ԺԸ. 15. 18. 19. Գր. Է. 37.
[թ] Գր. Բ. 39. Հռովմ. Թ. 4. 8. Ծն. 8. Գաղ. Գ. 26.
[ժ] Ծննդ. ԺԲ. 3. ԺԸ. 18. ԻԲ. 18. ԻԶ. 4. ԻԸ. 14. Գաղ. Գ. 8.
[ի] Մատթ. Ա. 5. Ծն. 24. Ղու. ԻԴ. 47. Գր. ԺԳ 32, 33 46.

զՈրդի իւր, եւ առաքեաց զնա օրհնել զձեզ՝ 'ի դառնալ ձեզ իւրաքանչիւր 'ի չարեաց ձերոց:

վերկացուց իրեն Որդին, եւ նորան ուղարկեց՝ որ ձեզ Հօրհնէ, որ ձեր ամէն մէկդ յետ դառնաք ձեր ∓ չարութիւնիցը:

## ԳԼ. Դ

1 Եւ մինչդեռ խօսէին նոքա ընդ ժողովրդեանն, հասին 'ի վերայ նոցա քահանայապետքն եւ իշխանք տաճարին՝ եւ սադուկեցիքն,

2 Զայրացեալք վասն ուսուցանելոյ նոցա զժողովուրդն՝ եւ պատմելոյ Յիսուսիւ զյարութիւն մեռելոց:

3 Արկին 'ի նոսա զձեռս իւրեանց. եւ եդին զնոսա 'ի բանտի մինչեւ 'ի վաղիւն, զի էր ընդ երեկս:

4 Իսկ բազումք 'ի լսողաց բանին հաւատացին. եւ եղեւ թիւ մարդկան իբրեւ հազարաց հնգից:

5 Եւ եղեւ 'ի վաղիւ անդր՝ ժողովել նոցա զիշխանսն եւ զերիցունս եւ զդպիրսն յԵրուսաղէմ,

6 Եւ զԱննա քահանայապետ՝ եւ զԿայիափա, եւ զՅովհաննէս եւ զԱղեքսանդրոս, եւ որք միանգամ էին յազգէ քահանայութեանն:

7 Եւ կացուցեալ զնոսա 'ի մէջ՝ հարցանէին. Որո՞վ զօրութեամբ կամ որո՞վ անուամբ արարէք դուք զայս:

8 Յայնժամ Պետրոս լցեալ Հոգւով Սրբով՝ ասէ ցնոսա. Իշխանք ժողովրդեան՝ եւ երիցունք Իսրայէլի.

9 Եթէ արժանն ինչ իցէ դատել զմեզ այսօր վասն երախտեաց առն միոյ տկարի, որով սա բժշկեցաւ:

1 Եւ դեռ քանի որ նորանք ժողովրդին հետ խօսումէին, քահանայապետներն ու տաճարի իշխանները եւ սադուկեցիքը նորանց վերայ հասին

2 Սաստիկ բարկացած նորահամար՝ որ նորանք ժողովրդին սովրցնումէին, եւ Յիսուսի ձեռովը մեռելների յարութիւն առնելը = պատմումէին.

3 Իրենց ձեռները ձգեցին նորանց, եւ բանտի մէջ դրին մինչեւ առաւօտ. ինչու որ՝ իրիկվան դէմ էր:

4 Բայց այն խօսքը լսողներէցը շատերը հաւատացին. եւ մարդկանց համարը հինգ հազարի չափ էլաւ:

5 Եւ յետեւի օրն էլաւ՝ որ նորանք իշխաններին եւ երէցներին ու կարդացողներին ժողովեցին Երուսաղէմ,

6 Եւ Աննա քահանայապետին՝ եւ Կայիափային, եւ Յօհաննէսին եւ Աղէքսանդրոսին, եւ այն ամէնին՝ որ քահանայական ցեղիցն ₣ էին.

7 Եւ նորանց կանգնացրին մէջ տեղը՝ ⊥ նորանց հարցնումէին. Ի՞նչ զօրութենով կամ ո՞ր անունով արիք դուք ÷ աս:

8 Այն ժամանակը Պետրոս Սուրբ Հոգով լցված՝ նորանց ∓ ասաց. Ո՛վ ժողովրդի իշխաններ՝ եւ Իսրայէլի երէցներ.

9 Թէ որ արժան է՝ որ մեզ այս օր դատէք մին տկար մարդոյ երախտիք անելոյ համար, թէ ում ձեռովը սա բժշկվեցաւ,

Լ Համար. 22:
∓ Մատթ. Ա. 21:
—
= Մատթ. ԻԲ. 23:

ԳԼ. ԻԳ. 8:
₣ Ղու. Գ. 2:
Յովհ. ԺԱ. 49:
ԺԸ. 13:

÷ Ելից. Բ. 14:
Մատթ. ԻԱ. 23:
ԳԼ. Ե. 27:

∓ Ղու. ԺԲ. 11, 12:

10 Յայտնի լիցի ամենեցուն ձեզ՝ եւ ամենայն ժողովրդեանդ Իսրայէլի. զի յանուն Յիսուսի Քրիստոսի Նազովրեցւոյ՝ զոր դուքն խաչեցէք՝ զոր Աստուած յարոյց 'ի մեռելոց, նովաւ սա կայ աւասիկ առաջի ձեր ողջացեալ։

11 Նա է վէմն՝ անարգեալ 'ի ձէնջ շինողաց, որ եղեւ գլուխ անկեան։

12 Եւ չիք այլով իւիք փրկութիւն. զի եւ ոչ անուն այլ գոյ 'ի ներքոյ երկնից տուեալ 'ի մարդիկ՝ որով արժան իցէ կեալ մեզ։

13 Հայեցեալ 'ի համարձակութիւնն Պետրոսի եւ Յովհաննու, եւ 'ի վերայ հասեալ՝ թէ արք անգէտք եւ տգէտք դպրութեան են, զարմանային. զի ճանաչէին զնոսա՝ թէ ընդ Յիսուսի էին։

14 Եւ զայրն եւս տեսանէին ընդ բժշկեալն՝ զի կայր ընդ նոսա. եւ ո՛չինչ կարէին տալ պատասխանի։

15 Եւ հրամայեալ նոցա արտաքս քան զատեանն ելանել, խորհէին ընդ միմեանս։

16 Եւ ասէին. Զի՞նչ արասցուք արանցս այսոցիկ՝ զի երեւելի նշան եղեւ 'ի ձեռն սոցա. ամենայն բնակչաց Երուսաղէմի յայտ է, եւ ոչ կարեմք ուրանալ։

17 Այլ զի մի առաւել համբաւեսցի 'ի ժողովուրդն, սպառնասցուք նոցա՝ մի եւս խօսել յանունն յայն՝ մի ումեք 'ի մարդկանէ։

18 Եւ կոչեցեալ զնոսա պատուիրեցին ամենեւին մի խօսել՝ եւ մի ուսուցանել յանուն Յիսուսի։

10 Թող յայտնի լինի ձեզ ամէնիդ՝ եւ ամէն Իսրայէլի ժողովըրդիդ. որ Յիսուսի Քրիստոսի Նազօրեցոյ է անուանովը որ նորան դուք խաչեցիք՝ որ նորան Աստուած յարոյց մեռելների միջիցը, հէնց նորանով սա հիմիկ ձեր առաջին ողջացած է կայ։

11 Նա է ձեզանից շինօղներիցդ անարգված քարը, որ անկիւնի գլուխ է եղաւ։

12 Եւ էլ մին ուրիշ բանով փըրկութիւն չըկայ. ինչու որ՝ էլ ուրիշ անուն չըկայ երկնքի ներքեւ մարդկանց տըւած՝ որ նորանով կարելի լինի մեզ ապրիլ։

13 Պետրոսի եւ Յօհաննէսի համարձակութիւնը տեսնելով, եւ գիտենալով թէ ազէտ եւ առանց ուսմունքի մարդիկ են, է զարմանումէին. ապաժամ որ ճանաչումէին նորանց՝ որ Յիսուսի հետ էին։

14 Եւ այն բժշկված մարդոյն էլ տեսնումէին՝ որ նորանց հետ կայր. եւ բնաւ չէին կարող մին պատասխան է տալ։

15 Եւ հրամայեցին նորանց՝ որ ատեանիցն դուրս գնան, եւ իրար հետ խորհուրդ արին

16 Եւ ասացին. Ի՞նչ անենք այս մարդկանցս՝ որ երեւելի նշան եղաւ սորանց է ձեռովը. որ ամէն Երուսաղէմի մէջ բնակօղներին էլ յայտնի է, եւ կարող չենք ուրանալ։

17 Միայն թէ՝ որ աւելի չըտարածվի ժողովրդին մէջ՝ ահ տանք նորանց, որ 'էլ այն անունովը չըխօսին մարդկանց մինի հետ։

18 Եւ նորանց կանչեցին եւ պատուէր տուին՝ որ բնաւ չըխօսին, եւ էլ չըսովրցնեն Յիսուսի է անունովը։

Է Գլ. Գ. 6. 16։
Ղ Գլ. Բ. 24։
Է Սաղ. ՃԺԸ. 22։
Եսայ. ԻԸ. 16։

Մատթ. ԻԱ. 42։
Ը Մատթ. Ա. 21։
Գլ. Ժ. 43։ Ա.
Տիմ. Բ. 5։ 6։

Թ Մատթ. ԺԱ. 25։
Ա Կորնթ. Ա. 27։
Ժ Գլ. Գ. 11։
Է Յովհ. ԺԱ. 47։

Լ Գլ. Գ. 9։ 10։
Է Գլ. Ե. 40։

19 Իսկ Պետրոս եւ Յովհաննէս պա-
տասխանի տուեալ՝ եւ ասեն ցնոսա,
եթէ արժան իցէ առաջի Աստուծոյ՝
ձեզ լսել առաւել քան Աստուծոյ,
ընտրեցէք։

20 Այլ մեք ոչ կարեմք զոր տե-
սաքն եւ լուաք՝ չխօսել։

21 Նոքա սպառնացեալ արձակե-
ցին զնոսա, եւ ոչինչ գտեալ՝ թէ
որպէս պատուհասեսցեն զնոսա՝
վասն ժողովրդեանն. զի ամենե-
քեան փառաւոր առնէին զԱստուած
վասն իրացն եղելոց։

22 Զի ամաց էր այրն՝ աւելի քան
զքառասուն, յորոյ վերայ եղեւ
նշանս այս բժշկութեան։

23 Եւ նոքա արձակեալ՝ եկին առ
իւրեանսն, եւ պատմեցին՝ որչափ
ինչ ասացին զնոսա քահանայա-
պետքն եւ երիցունքն։

24 Եւ նոցա լուեալ միաբանին բար-
ձրացին իւրեանց առ Աստուած՝ եւ
ասեն. Դու Տէր Աստուած՝ որ արա-
րեր զերկինս եւ զերկիր՝ զծով եւ
զամենայն՝ որ ՚ի նոսա.

25 Որ ՚ի բերանոյ հօր մերոյ Դաւ-
թի ծառայի քո՝ ՚ի ձեռն Հոգւոյն
Սրբոյ ասացեր. Զմէ՞ խռովեցան հե-
թանոսք՝ եւ ժողովուրդք խորհեցան
՚ի նանիս։

26 Յառնեցին եղեն թագաւորք
երկրի, եւ իշխանք ժողովեցան ՚ի
միասին վասն Տեառն եւ վասն Օծե-
լոյ նորա։
27 Ժողովեցան արդարեւ ՚ի քա-
ղաքիս յայսմիկ ՚ի վերայ սրբոյ Որդւոյ

19 Բայց Պետրոսն ու Յովհաննէսը
պատասխան տուին՝ եւ նորանց ա-
սացին. Վճիռ կտրեցէք, եթէ ար-
ժան է Աստուծոյ առաջին՝ որ ձեզ
աւելի ականջ դնենք՝ քան թէ
ծ Աստուծոյն.
20 Ինչու որ՝ մենք չենք կարող
չը խօսիլ նման՝ որ տեսինք եւ ե լսե-
ցինք։
21 Նորանք ան ատեն արձակե-
ցին նորանց, եւ ոչ ինչ բան չը
գտին՝ թէ ինչպէս պատիժ տան նո-
րանց՝ ժողովրդի զ պատճառովը.
ինչու որ՝ ամէնքն էլ այն եղած բա-
ներին համար փառք էին տալիս
ղ Աստուծոյն։
22 Պատճառն որ՝ այն մարդը քա-
ռասուն տարուց էլ աւելի էր, որ
նորա վերայ այս բժշկութեան նշա-
նըս էլաւ։
23 Եւ այն ասեղին՝ որ արձակվե-
ցան՝ եկին իրենցներին մօտ, եւ
պատմեցին ողջան բան որ քահա-
նայապետներն ու էրեցներն ասա-
ցին ճ նորանց։
24 Եւ նորանք երբոր լսեցին, ի-
րենց ձայները բարձրացրին դէպի
Աստուած եւ ասացին. Դու Տէր
Աստուած՝ որ արիր երկինքը եւ եր-
կիրը՝ ծովը եւ ամէն բան՝ որ նո-
րանցում մ է.
25 Որ մեր Հայր Դաւթի՝ քո ծա-
ռայի բերանովը խօսեցիր եւ ասա-
ցիր Սուրբ Հոգոյ ձեռովը. Ի՞նչու
համար հեթանոսները խռովեցան՝
եւ ժողովուրդները ունայն բաներ
յ մտածեցին։
26 Երկրի թագաւորները վերկա-
ցան եւ իշխանները միասին հա-
ւաքվեցան Տէրին համար՝ եւ նորա
Օծեալին համար։
27 Իրաւի որ հաւաքվեցան այս
ն քաղաքումս քո սուրբ Որդի Յի-

ծ Գր. Ե. 29։
է Գր. Ա. 8։ Բ. 32։
ձ Գր. ԺԲ. 15։ Ա. Յովհ. Ա. 1. 3։
ղ Մատթ. ԻԱ. 26։ Ղու. Ի. 6. 19։ ԻԲ. 2։ Գր. Ե. 26։
ղ Գր. Գ. 7, 8։
ճ Գր. ԺԲ. 12։
մ Դ Թագ. ԺԹ. 15։
յ Սաղ. Բ. 1։
ն Մատթ. ԻԶ. 3։ Ղու. ԻԲ. 2։ ԻԳ. 1. 8։

քո Յիսուսի՝ զոր օծերն, Հերովդէս եւ Պոնտացի Պիղատոս՝ ազգօք եւ ժողովրդովք Իսրայէլի,

28 Առնել՝ որչափ ձեռն քո եւ կամք յառաջագոյն սահմանեցին լինել։

29 Եւ արդ՝ Տէր, հայեաց ՚ի սպառնալիս նոցա, եւ տուր ծառայից քոց ամենայն համարձակութեամբ խօսել զբանն քո։

30 ՚Ի ձգել զձեռն քո ՚ի բժշկութիւն, եւ նշանս եւ արուեստս՝ լինել անուամբն սրբոյ Որդւոյ քո Յիսուսի։

31 Եւ մինչ կային նոքա յաղօթս՝ շարժեցաւ տեղին՝ յորում էին ժողովեալ, եւ լցան ամենեքին Հոգւովն Սրբով. եւ խօսէին զբանն Աստուծոյ համարձակութեամբ։

32 Եւ բազմութեան հաւատացելոցն էր սիրտ եւ անձն մի. եւ ոչ ոք ՚ի նոցանէ ասէր զինչս իւրոց, թէ իւր իցէ. այլ էր նոցա ամենայն ինչ հասարակաց։

33 Եւ զօրութեամբ բազմաւ տային վկայութիւն առաքեալքն զյարութեանն Տեառն Յիսուսի Քրիստոսի. եւ շնորհք մեծամեծք էին ՚ի վերայ ամենեցուն նոցա։

34 Եւ ոչ ոք կարօտէր ՚ի նոսա. զի որ միանգամ տեարքն էին գեղից կամ ագարակաց՝ վաճառէին եւ բերէին զգինս վաճառելոցն։

35 Դնէին առ ոտս առաքելոցն.

սուրբ ծառային վերայ, որ դուն օծեցիր. Հերովդէսը եւ Պոնտացի Պիղատոսը՝ հեթանոսներովն ու Իսրայէլի ժողովուրդներովը,

28 Որ ընեն՝ որչափ որ քու ձեռքդ եւ կամքդ առաջուց սահմանեց որ ըլլայ։

29 Եւ հիմակ՝ Տէր, նայէ՛ անոնց սպառնալիքին, եւ տուր քու ծառաներուդ՝ որ ամեն համարձակութենով քու բանդ խօսին.

30 Դուն ալ քու ձեռքդ երկնցնես, որ բժշկութիւն, եւ նշաններ եւ հրաշքներ ըլլան, քու սուրբ Որդիին Յիսուսին անունովը։

31 Եւ երբ քանի որ անոնք աղօթք էին ըրած՝ շարժեցաւ այն տեղը՝ որ ժողոված էին, եւ ամէնքը Սուրբ Հոգւով լեցուն. եւ Աստուծոյ բանը համարձակութենով կխօսէին։

32 Եւ այն հաւատացեալներուն բազմութիւնը մէկ սիրտ՝ եւ մէկ անձն էր. եւ անոնցմէ բնաւ մէկն ալ չէր ըսեր իրեն ապրանքներուն համար՝ թէ իրենն է. հապա անոնց ամէն բաները հասարակաց էր։

33 Եւ առաքեալները շատ զօրութենով վկայութիւն էին տալիս Տէր Յիսուսի Քրիստոսի յարութիւն առնելուն համար. եւ մեծ մեծ շնորհքներ կային անոնց ամէնուն վերայ։

34 Եւ անոնց մէջ ոչ մէկը կարօտութիւն չունէր. պատճառն որ՝ անոնք ամէնքը՝ որ գեղերի կամ տուներու տէր էին՝ ծախում, եւ ծախածի գինը բերում էին

35 Առաքելոց ոտներին մօտ դը-

ւ Ղու. Ա. 35.
ը Ղու. Դ. 18. Եսյ. Ժ. 36.
ւ Գլ. Բ. 23. Գ. 18.
ղ Համար. 13. 31. Գլ. Թ. 27. ԺԴ. 46 ի ԺԴ. 3.
ԺԹ. 8. ԻԶ. 26. ԻԸ. 31. Եփես. Զ. 19.
ճ Գլ. Բ. 43. Ե. 12.
մ Համար. 27.
յ Գլ. Գ. 6. 16.
ն Գլ. Բ. 2. 4.
ԺԶ. 26.
շ Համար. 29.
ո Գլ. Ե. 12. Հռովմ. ԺԵ. 5, 6. Բ Կորնթ. ԺԴ. 11. Փիլիպ. Ա. 27. Բ. 2. Ա Պետ. Գ. 8.
չ Գլ. Բ. 44.
պ Գլ. Ա. 8.
ջ Գլ. Ա. 22.
ռ Գլ. Բ. 47.
ս Գլ. Բ. 45.
վ Համար. 27. Գլ. Ե. 2.

եւ բաշխէին իւրաքանչիւր՝ որպէս ումեք պիտոյ ինչ լինէր։

36 Յովսէփ՝ որ կոչեցաւն Բառնաբաս յառաքելոց անտի, որ թարգմանի՝ Որդի մխիթարութեան. Ղեւտացի՝ յազգէ Կիպրացի.
37 Էր նորա գիւղ, վաճառեաց՝ եւ եբեր զգինն՝ եդ առ ոտս առաքելոցն։

նում. եւ ամէնին բաժանումէին՝ ինչպէս որ մէկին մին բան պէտք էր ա լինում։
36 Յովսէփն՝ որ առաքեալներիցը Բառնաբաս կոչվեցաւ, որ Մխիթարութեան որդի կասուի. Ղեւտացի ցեղիցը՝ Կիպրոսեցի.
37 Նա մին գիւղ ունէր, ծախեց՝ եւ գինը բերաւ առաքելոց ոտներին մօտ բ դրաւ։

## ԳԼ. Ե

1 Իսկ այր ոմն Անանիա անուն, հանդերձ կնաւ իւրով Սափիրաւ վաճառեաց ագարակ.
2 Եւ խորեաց 'ի գնոյ անտի՝ գիտելով եւ կնոջն. եւ եբեր մասն ինչ՝ եդ առ ոտս առաքելոցն։

3 Ասէ Պետրոս. Անանիա՝ ընդէ՞ր եկն Սատանայ զսիրտ քո՝ ստել քեզ Հոգւոյն Սրբոյ, եւ խորել 'ի գնոց գեղջն։
4 Ո՞չ ապաքէն մինչ կայրն՝ քո էր, եւ 'ի վաճառելն՝ ընդ քո իշխանութեամբ էր. զի՞ է՝ զի եդիր 'ի սրտի քում զիրս զայս. ոչ ստեցեր մարդկան, այլ Աստուծոյ։

5 Եւ լուեալ Անանիա զբանս զայսոսիկ, անկաւ՝ եւ եհան զոգի. եւ եղեւ ահ մեծ 'ի վերայ ամենեցուն՝ որ լսէին զայն։
6 Յոտն կացին երիտասարդքն՝ եւ ամփոփեցին զնա, եւ տարան թաղեցին։
7 Եւ եղեւ իբրեւ ժամք երեք անցին, եւ կին նորա ոչ գիտէր զինչ եղեալն էր, եմուտ 'ի ներքս։
8 Պատասխանի ետ նմա Պետրոս եւ ասէ. Ասա դու ինձ՝ թէ այնչափ գնոյ զգեօղն վաճառեցէք. եւ նա ասէ. Այո՛ այնչափ։

1 Բայց՝ մին Անանիա անուն մարդ, իւրն Սափարիա կնկան հետ՝ մին ագարակ ծախեց,
2 Եւ նորա գնիցը գողեց որ կինն էլ գիտումէր. եւ մնացը բաժին բերաւ առաքելոց ոտներին մօտ ա դրաւ։
3 Պետրոս ասաց. Անանիա՝ ինչու բ համար Սատանան քո՛ սիրտդ լցրուց՝ որ դու սուտ խօսես Սուրբ Հոգուն, եւ ագարակի գնիցը գ գողես։
4 Չէ՞ որ գեւղանի որ կար՝ քոնն էր, եւ երբոր ծախուեցի՝ քո իշխանութեանդ տակն էր. ինչ է որ այս բանս դրիր քո սրտիդ մէջ. ոչ թէ մարդկանց սուտ ասացիր, բայց Աստուծոյն։
5 Եւ Անանիան երբոր այս բանս լսեց, վերընկաւ եւ հոգին դ հանեց. եւ մեծ վախ էկաւ ամէնին վերայ՝ որ նա լսեցին։
6 Երիտասարդները վերկացան՝ պատանեցին նորան, եւ տարան ե թաղեցին։
7 Եւ էկաւ երբոր երեք ժամ անցան, եւ նորա կինն, չէր գիտում ինչ որ էլած էր, ներս մտաւ։
8 Պետրոս պատասխան տուաւ նորան՝ եւ ասաց. Դու ինձ ասա՝ թէ այնչափ գնով ծախեցիք այն ագարակը. եւ նա ասաց. Այո՛ այնչափ։

ա Գլ. Բ. 45.
բ Համար. 34, 35.

Գլ. Ե. 1, 2.
ա Գլ. Դ. 37.

բ Թուա. Լ. 2. բ Օրին. ԻԳ. 21. Ժող. Ե. 4.

գ Ղուկ. ԻԲ. 3.
դ Համար. 10. 11.
ե Յովհ. ԺԹ. 40.

9 Եւ ասէ ցնա Պետրոս . Զի՞ է
զի միաբանեցայք դուք փորձել զՀոգին Տեառն . ահա ոտքն՝ որ թա-
ղեցին զայրն քո ՚ի դրան , հանցեն
եւ զքեզ ։

10 Եւ անկաւ անդրէն՝ առ ոտս
նորա՝ եւ եհան զոգի . մտին երի-
տասարդքն՝ գտին զնա մեռեալ , եւ
հանին թաղեցին առ առն իւրում ։

11 Եւ եղեւ երկիւղ մեծ ՚ի վերայ
ամենայն եկեղեցւոյն , եւ ՚ի վերայ
ամենեցուն՝ որ լսէին զայն ։

12 Եւ ՚ի ձեռս առաքելոց լինէին
նշանք եւ արուեստք բազումք ՚ի
ժողովրդեանն . եւ էին միաբան ա-
մենեքեան ՚ի սրահին Սողոմոնի ։

13 Եւ յայլոց անտի ոչ ոք իշխէր
մերձենալ առ նոսա . այլ յարգէր
զնոսա ժողովուրդն ։

14 Եւ առաւել եւս յաւելուին հա-
ւատացեալքն ՚ի Տէր , բազմութիւն
արանց եւ կանանց ։

15 Մինչեւ ՚ի հրապարակս հա-
նել զհիւանդս , եւ դնել պատգա-
րակօք եւ մահճօք իւրեանց . զի
ընդ անցանելն Պետրոսի՝ գոնէ հո-
վանի նորա հասցէ ումեք ՚ի նոցա-
նէ ։

16 Եւ ժողովէր բազմութիւն
շուրջ ՚ի քաղաքաց անտի յԵրուսա-
ղէմ . բերէին զհիւանդս եւ զնե-
ղեալս յայսոց պղծոց ; որք եւ բը-
ժըշկէին ամենեքեան ։

17 Յարուցեալ քահանայապետն ,
եւ ամենեքին որ ընդ նմա՝ եւ ա-
ղանդ սադուկեցւոց՝ լցան նախան-
ձու ։

9 Եւ Պետրոսն ասաց նորան .
Ի՞նչ է՝ որ միաբանվեցաք դուք ,
որ Տէրի Հոգին ՚ւ փորձէք . ահա
նորանց ոտները՝ որ քո մարդը թա-
ղեցին՝ դրան մօտ են՝ քեզ էլ կը
հանեն ։

10 Եւ շուտով վերընկաւ նորա
ոտներին առաջին՝ եւ հոգին հա-
նեց . երիտասարդները ներս մտին՝
նորան մեռած գտին , եւ հանեցին
իրեն մարդոյն մօտ ՚ւ թաղեցին ։

11 Եւ մեծ ահ էլաւ ամէն եկե-
ղեցոյն վերայ , եւ ամէնին վերայ՝
որ աս ըլսեցին ։

12 Եւ առաքեալներին ձեռովը նշ-
շաններ եւ հրաշքներ էին լինում
ժողովրդին ՚ի մէջ . եւ ամէնքը մի-
աբան Սողոմոնի սրահումն ՚ւ էին ։

13 Եւ այն ուրիշներից ոչ մինը
չէր համարձակվում մօտենալ ՚ւ նո-
րանց . բայց ժողովուրդը պատիւ
էր տալիս ՚ւ նորանց ։

14 Եւ էլ աւելի շատանումէին
Տէրի հաւատացեալները . մարդ-
կանց եւ կանանց բազմութիւնք ,

15 Մինչեւ որ հիւանդները հա-
նումէին բաց փողոցները , եւ ի-
րենց սայլերումն ու մահիճներումը
այնտեղ դնում . որ երբոր Պետրոսն
անցանէ , լինի թէ նորա շուքը նո-
րանցից մինին ՚ւ հասանէ ։

16 Եւ այն չորս կողմի քաղաքնե-
րիցը բազմութիւն էին հաւաքվում
Երուսաղէմ , բերումէին հիւանդ-
ները ու պիղծ դեւերից չարչար-
վածները . որ ամէնքն էլ ՚ւ բժշկ-
վումէին ։

17 Վերկացաւ քահանայապետն
ու ամէնքը՝ որ նորան հետ էին ,
եւ սադուկեցոց աղանդը՝ նախան-
ձով լցվան ,

ղ Համար . 3 ։ Մատթ . Դ . 7 ։
ե Համար . 5 ։
ը Համար . 5 ։ Գլ . Բ . 43 ։ ԺԹ . 17 ։
թ Գլ . Բ . 43 ։ ԺԴ . 3 ։ ԺԹ . 11 ։ Հռովմ . ԺԵ . 19 ։ Բ Կորնթ . ԺԲ . 12 ։ Եբր . Բ . 4 ։
ժ Գլ . Գ . 11 ։ Դ . 32 ։
է Յովհ . Թ . 22 ։ ԺԲ . 42 ։ ԺԹ . 38 ։
ւ Գլ . Բ . 47 ։ Դ . 21 ։
ե Մատթ . Թ . 21 ։ ԺԴ . 36 ։ Գլ . ԺԹ . 12 ։
ծ Մարկ . ԺԶ . 17 , 18 ։ Յովհ . ԺԴ . 12 ։
կ Գլ . Դ . 1 , 2 . 6 ։

18 Եւ արկին զձեռս յառաքեալսն, և եդին զնոսա հրապարակաւ ՚ի բանտի։

19 Այլ հրեշտակ Տեառն գիշերի եբաց զդուրս բանտին, և յ հանեալ զնոսա՝ ասէ.

20 Գնացէք՝ կացէք ՚ի տաճարին, և խօսեցարուք ընդ ժողովրդեանն զամենայն պատգամս ղ կենացս այսոցիկ։

21 Եւ իբրև լուան, մտին ընդ առաւօտն ՚ի տաճարն՝ և ուսուցանէին. եկն քահանայապետն՝ և որ ընդ նմա, կոչեցին միաբան զատեանն՝ և զամենայն ծերակոյտ որդւոցն Իսրայէլի, և առաքեցին ՚ի բանտն ածել զնոսա։

22 Եւ իբրև եկին սպասաւորքն՝ ոչ գտին զնոսա ՚ի բանտին. դարձեալ անդրէն պատմեցին,

23 Եւ ասեն. Թէ զբանտն գտաք փակեալ ամենայն զգուշութեամբ, և զպահապանսն՝ զի կային առ դրանն. բացաք՝ և ՚ի ներքս զոք ոչ գտաք։

24 Իբրև լուան զբանս զայս իշխանք տաճարին՝ և քահանայապետքն՝ հիանային վասն նոցա, թէ զինչ արդեօք լինիցի այն։

25 Եւ եկն ոմն պատմեաց նոցա՝ թէ Ահա արքն՝ զորս եդիք ՚ի բանտի՝ կան ՚ի տաճարին, և ուսուցանեն զժողովուրդն։

26 Յայնժամ երթեալ իշխանն սպասաւորօքն հանդերձ՝ ած զնոսա ոչ բռնութեամբ. քանզի երկնչէին ՚ի ժողովրդենէն՝ զի մի քարկոծեսցին։

27 Եւ ածեալ զնոսա՝ կացուցին յատենի. եհարց զնոսա քահանայապետն,

18 Եւ ձեռք ձգեցին առաքեալներին, և նորանց յայտնի դրին բանտերին հ մէջ։

19 Բայց յետոյ Տէրի հրեշտակը գիշերով բանտի դռները բաց արաւ, նորանց հանեց՝ և յ ասաց.

20 Գնացէք տաճարին մէջ կանգնեցէք, և այս կեանքիս ամէն հրամանները խօսեցէք ժողովրդի ղ հետ։

21 Եւ երբոր լսեցին, առաւօտանց մտին տաճարին մէջ՝ և սովրցնումէին. եկաւ քահանայապետը և նորանք՝ որ նորա հետ էին, ատեանը, և Իսրայէլի որդոց ամէն ծերակոյտը կանչեցին միատեղ, և ուղարկեցին բանտն՝ որ բերեն ձ նորանց։

22 Եւ երբոր սպասաւորները եկին՝ նորանց չը գտին բանտին մէջ. ետ դարձան և պատմեցին,

23 Եւ ասացին. Թէ Բանտն ամէն զգուշութենով փակված գտինք, և պահապաններն էլ՝ որ դրանը մօտ կանգնած էին. բացինք՝ և ներսումն բնաւ մարդ չը գտինք։

24 Երբոր տաճարին իշխանները ու քահանայապետները այս բանս լսեցին, զարմանումէին նորանց համար, թէ նա ինչ պիտի ճ լինի։

25 Եւ մինն եկաւ նորանց պատմեց՝ թէ Ահա այն մարդիկն՝ որ բանտի մէջ դրիք, տաճարումը կանգնած են՝ և սովրցնումեն ժողովրդին։

26 Այն ժամանակին իշխանն սպասաւորներին հետ գնաց՝ նորանց բերին առանց բռնութեան. վասն որ՝ ժողովրդիցը վախենումէին՝ որ ջ չը քարկոծվին։

27 Եւ երբոր բերին նորանց՝ կանգնեցրին ատեանին առաջին. քահանայապետը հարցրուց նորանց,

հ Ղուկ. ԻԱ. 12։
յ Գործ. ԺԲ. 7. ԺԶ. 26։
ղ Յովհ. Զ. 69. ԺԷ. 3. Ա Յովհ. Ե. 11։
ձ Գործ. Դ. 5, 6։
ճ Ղուկ. ԻԲ. 4. Գործ. Դ. 1։
ջ Մատթ. ԻԱ. 26։

28 Եւ ասէ . Ո՞չ պատուիրելով
պատուիրեցաք ձեզ՝ մի՛ ուսուցանել
յանուանն յայն . եւ արդ՝ ահաւասիկ
լցէք զԵրուսաղէմ ուսմամբ ձերով ,
եւ կամիք ածել ՚ի վերայ մեր զա-
րիւն զառն զայնորիկ ։

29 Պատասխանի ետ պետրոս եւ
այլ առաքեալքն , եւ ասեն . Հնա-
զանդել պարտ է Աստուծոյ առա-
ւել՝ քան մարդկան ։
30 Աստուած հարցն մերոց յարոյց
զՅիսուս՝ զոր դուք սպանէք կա-
խեալ զփայտէ ։
31 Զնա Աստուած Առաջնորդ եւ
Փրկիչ բարձրացոյց աջովն իւրով
տալ ապաշխարութիւն Իսրայէլի՝
եւ թողութիւն մեղաց ։

32 Եւ մեք եմք վկայք՝ բանիցս
այսոցիկ , եւ Հոգին Սուրբ՝ զոր ետ
Աստուած հնազանդելոց իւրոց ։

33 Եւ նոքա իբրեւ լուան , սաս-
տկանային՝ եւ խորհէին սպանանել
զնոսա ։
34 Յարուցեալ ոմն ՚ի մէջ ատե-
նին փարիսեցի՝ որում անուն էր
Գամաղիէլ . օրէնսուսոյց՝ պատուա-
կան ամենայն ժողովրդեանն . հրա-
մայեաց սակաւիկ մի զարսն ար-
տաքս առնել ,
35 Եւ ասէ զնոսա . Արք Իսրա-
յէլացիք՝ հայեցարուք ՚ի ձեզ վասն
արանցս այսոցիկ՝ զինչ արժան իցէ
գործել ։
36 Յառաջ քան զաւուրս զայսո-
սիկ յարեաւ Թեւդաս՝ ասել զանձ-
նէ , թէ իցէ ոմն . յոր անկան արք
թուով իբրեւ չորեքհարիւր . որ

28 Եւ ասաց . Չէ՞ որ պատուիրե-
լով պատուիրեցինք ձեզ՝ որ չըսո-
վորցնէք այն [ա] անունովը . եւ հի-
միկ՝ ահա Երուսաղէմը լցրիք ձեր
ուսմունքովը , եւ կամենումէք այն
մարդու [բ] արունը մեր վերայ [գ] բե-
րել ։
29 Պատասխան տուաւ Պետրոսը
եւ առաքեալները , եւ ասացին .
Աստուծոյ պէտք է աւելի հնա-
զանդիլ՝ քան [դ] մարդկանց ։
30 Մեր հարանց Աստուածը յա-
րոյց այն [ե] Յիսուսին՝ որ դուք փայ-
տից կախած [զ] սպանեցիք .
31 Աստուած [է] նորան [ը] Առաջնորդ
եւ Փրկիչ բարձրացրուց իւրեն [թ] ա-
ջովը որ Իսրայէլին ապաշխա-
րութիւն տայ եւ մեղաց [ժ] թողու-
թիւն ։
32 Եւ մենք ենք նորա վկաներ
այս խօսքերիս [ի] համար , եւ Սուրբ
Հոգին՝ որ Աստուած իւրեն հնազանդ
լինողներին տուաւ [լ] նորան ։
33 Եւ նորանք երբոր լսեցին ,
բարկանումէին . եւ մտածումէին ,
որ նորանց [խ] սպանեն ։
34 Մին փարիսեցի վերկացաւ ատ-
եանին մէջ , որ նորա անունը Գա-
մաղիէլ [ծ] էր . օրէնք սովրցնող՝ ա-
մէն ժողովրդի առաջին պատուա-
կան . հրաման տուաւ որ այն
մարդկանց մինչքիչ դուրս տանեն ,
35 Եւ նորանց ասաց . Իսրայէլացի
մարդիկ՝ ձեզ վերայ նայեցէք այս
մարդկանցս համար , թէ ինչ պէտք
է անել ։
36 Այս օրերիցս առաջ Թեւդասը
վերկացաւ՝ իւրեն համար ասելով
թէ ինքը մին մեծ բան է . որ չորս
հարիւրի չափ մարդիկ նորա ետե-

ա Գլ. Դ. 18։
բ Մատթ. ԻԳ. 35։ ԻԷ. 25։
գ Գլ. Բ. 2. 36։ Գ. 15։ Է. 52։
դ Գլ. Դ. 19։
ե Գլ. Գ. 13. 15։ ԻԲ. 14։
զ Գլ. Ժ. 39։ ԺԳ. 29։ Գաղ. Գ. 13։ Ա Պետ. Բ. 24։
է Գլ. Բ. 33. 36։ Փիլիպ. Բ. 9։ Եբր. Բ. 10։ ԺԲ. 2։
ը Գլ. Գ. 15։
թ Մատթ. Ա. 21։
ժ Ղուկ. ԻԴ. 47։ Գլ. Գ. 26։ ԺԳ. 38։ Եփես. Ա. 7։ Կող. Ա. 14։
ի Յովհ. ԺԵ. 26. 27։
լ Գլ. Բ. 4։ Ժ. 44։
խ Գլ. Բ. 37։ Է. 54։
ծ Գլ. ԻԲ. 3։

սպանաւ՝ եւ ամենեքեան՝ որ միաբան էին ընդ նմա, քակտեցան՝ եւ եղեն յոչինչ։

37 Յետ նորա յարեաւ Յուդա Գալիլեացի՝ յաւուրս աշխարհագրին. եւ ապստամբեցոյց ժողովուրդ բազում զկնի իւր. եւ նա կորեաւ՝ եւ ամենեքեան որ նմայն հաւանեալ էին, ցրուեցան։
38 Եւ արդ ասեմ ձեզ. ի բաց կացէք յարանցդ յայդցանէ՝ եւ թոյլ տուք դոցա. զի թէ ի մարդկանէ իցէ խորհուրդդ այդ կամ գործդ, քակտեսցի.
39 Ապա թէ յԱստուծոյ է՝ ոչ կարէք քակել զդոսա. գուցէ եւ աստուածամարտք գտանիցիք։

40 Հաւանեցան նմա. եւ կոչեցեալ զառաքեալսն՝ գան հարին, եւ պատուիրեցին մի եւս խօսել յանուն Յիսուսի. եւ արձակեցին զնոսա։
41 Եւ նոքա գնացին խնդալով յերեսաց ատենին, զի վասն անուան Տեառն արժանի եղեն անարգելոյ։
42 Եւ զամենայն օր ի տաճարին եւ ի տանն ոչ դադարէին ուսուցանել՝ եւ աւետարանել զՅիսուս Քրիստոս։

ւէն ընկան. որ սպանուեցաւ՝ եւ ամէնքն էլ՝ որ նորա հետ միաբանած էին, քանդուեցան՝ եւ ոչինչ էլան։
37 Նորանից ետեւ Գալիլեացի Յուդան վերցուցաւ աշխարհագրի օրերումը. եւ շատ ժողովուրդ ապստամբեցուց իրեն հետ. նա էլ կորաւ՝ եւ ամէնքն էլ՝ որ նորան հաւանել էին՝ ցրուեցան։
38 Եւ հիմիկ ասում եմ ձեզ. Հեռի կացէք այդ մարդկանցից, եւ թողէք դորանց. պատճառն որ՝ եթէ այդ խորհուրդը կամ այդ գործը մարդկանցից է՝ + կը քանդուի.
39 Բայց թէ որ Աստուածանից է՝ չէք կարող քանդել * դորանց. չըլինի որ Աստուծոյ դէմ կռիւ անող էլ ‡ գտնուիք։
40 Հաւան կացան նորան. եւ առաքեալներին − կանչեցին՝ ծեծեցին, եւ պատուէր տուին՝ որ էլ չըխօսեն Յիսուսի անունովը. եւ արձակեցին ‡ նորանց։
41 Եւ նորանք ուրախանալով գնացին ատեանին երեսից, ինչու որ՝ արժանի էլան Տէրի անուանին համար ‡ անարգուիլ։
42 Եւ ամէն օր չէին = դադարում տաճարումը եւ տներումը սովորեցնել՝ եւ Յիսուսի Քրիստոսի համար ի աւետարանել։

## ԳԼ. Զ

1 Եւ յաւուրսն յայնոսիկ ի բազմանալ աշակերտացն, եղեւ տրտունջ Յունաց առ Հեբրայեցիսն. զի արհամարհեալ լինէին ի պաշտամանն հանապազորդ այրիք նոցա։

1 Եւ այն օրերն՝ երբոր աշակերտները = շատացան, Յունաց տրտունջ էլաւ Եբրայեցոց ‡ դէմ. ինչու որ՝ նորանց որբեւէրի կանայքն ամէն օրուան պաշտամունքին մէջ ‡ անարգվումէին։

+ Առակ. ԻԱ. 30։ Եսայ. Ը. 10։ Մատթ. ԺԵ. 13։
* Ղու. ԻԱ. 15։ Ա Կորնթ. Ա. 25։
‡ Գլ. Է. 51։ Թ. 5։ ԻԳ. 9։
− Գլ. Դ. 18։
‡ Մատթ. Ժ. 17։ ԻԳ. 34։ Մարկ ԺԳ. 9։
‡ Մատթ. Ե. 12։ Հռովմ. Ե. 3։ Բ Կորնթ. ԺԲ. 10։ Փիլիպ. Ա. 29։ Եբր Ժ. 34։ Յակ. Ա. 2։ Ա Պետ. Դ. 13. 16։
= Գլ. Դ. 20. 29։
ի Գլ. Բ. 46։

= Գլ. Բ. 41։ Դ. 4։ Ե. 14։ Հռովմ. 7։
‡ Գլ. Թ. 29։ ԺԱ. 20։
‡ Գլ. Դ. 35։

2 Կոչեցին երկոտասանքն զբազմութիւն աշակերտացն՝ եւ ասեն. Ո՛չ է հաճոյ մեզ թողուլ զբանն Աստուծոյ եւ պաշտել զսեղանս։

3 Ընտրեցէք՝ եղբարք, վկայեալ ՚ի ձէնջ այրս եօթն, (լի Հոգւով Սրբով եւ իմաստութեամբ,) զորս կացուսցուք ՚ի վերայ պիտոյիցս այսոցիկ։

4 Եւ մեք աղօթից եւ պաշտաման եւ բանին հպատակ լիցուք։

5 Եւ հաճոյ թուեցաւ բանն առաջի ամենայն բազմութեանն. եւ ընտրեցին զՍտեփաննոս՝ այր լի հաւատով եւ Հոգւով Սրբով, եւ զՓիլիպպոս եւ զՊրոքորոն եւ զՆիկանովրոս եւ զՏիմոնէս եւ զՊարմենաս, եւ զՆիկողայոս՝ զեկն Անտիոքացի։

6 Զորս կացուցին առաջի առաքելոցն, եւ աղօթս արարեալ եդին ՚ի վերայ նոցա զձեռս։

7 Եւ բանն Աստուծոյ աճէր. եւ բազմանայր թիւ աշակերտացն յոյժ յԵրուսաղէմ, եւ բազում ժողովք ՚ի քահանայիցն անսային հաւատոյն։

8 Ստեփաննոս, այր լի շնորհօք եւ զօրութեամբ, առնէր սքանչելիս եւ նշանս մեծամեծս ՚ի ժողովրդեանն։

9 Յարեան ոմանք ՚ի ժողովրդենէն, որ կոչէր Լիբերտացւոց, եւ Կիւրենացւոց եւ Աղեքսանդրացւոց՝ եւ որ ՚ի Կիւլիկեցւոց՝ եւ յԱսիայ, վիճել ընդ Ստեփաննոսի։

2 Տասներկուքը կանչեցին աշակերտներու բազմութիւնը՝ եւ ասացին. Մեզ հաճոյ չէ՝ որ Աստուծոյ խօսքը թողունք՝ եւ սեղաններին ծառայենք։

3 Եղբարք՝ եօթը մարդ ընտրեցէք, որ ձեզմէնց բարի վկայութիւն ունի, եւ Սուրբ Հոգւով եւ իմաստութեամբ լցուած են, որ նորանց այս պէտքական բաներիս վերայ կանգնեցնենք։

4 Եւ մենք աղօթքին եւ բանի ու պաշտամունքին կհետեւենք։

5 Եւ այն խօսքն ամէն բազմութեան առաջին հաւանելի երեւեցաւ. եւ ընտրեցին Ստեփաննոսին՝ որ Սուրբ Հոգւով եւ հաւատքով լցուած մարդ մ՚էր, եւ Փիլիպպոսին եւ Պրոխորոնին եւ Նիկանորային եւ Տիմոնային եւ Պարմենային եւ Անտիոքացի նոր դարձած Նիկողայոսին։

6 Նորանց կանգնեցուցին առաքեալներին առաջին. եւ աղօթք անելով՝ ձեռք դրին նորանց վերայ։

7 Եւ Աստուծոյ խօսքը մեծանում էր՝ եւ աշակերտներին համարն աւելի շատանում Երուսաղէմումն. եւ քահանաներիցը շատ բազմութիւն հնազանդվում էին հաւատքին։

8 Ստեփաննոս մարդը՝ շնորհքով եւ զօրութեամբ լցուած, մեծ մեծ նշաններ եւ հրաշքներ էր անում ժողովրդին մէջ։

9 Մին քանի մարդիկ՝ այն ժողովարաններից՝ որ Լիբերտացոց էր կոչվում, եւ Կիւրենացոց եւ Աղեքսանդրացոց՝ եւ նորանց՝ որ Կիւլիկիայից ու Ասիայից էին, վիճեցան, որ Ստեփաննոսին հետ վիճաբանութիւն անեն.

դ Ելից. ԺԸ. 17. ե Բ Օրին. Ա. 13. Գրծ. Ա. 21. ԺԶ. 2. Ա Տիմ. Գ. 7. զ Գրծ. Բ. 42. է Գրծ. ԺԱ. 24. ը Գրծ. Ը. 5. 26. ԻԱ. 8. թ Յայտ. Բ. 6. 15. ժ Գրծ. Ա. 24. ի Գրծ. Ը. 17. Թ. 17. ԺԳ. 3. Ա Տիմ. Դ. 14. Ե. 22. Բ Տիմ. Ա. 6. լ Գրծ. ԺԲ. 24. ԺԹ. 20. Կող. Ա. 6. խ Յովհ. ԺԲ. 42.

10 Եւ ոչ կարէին զդէմ ունել զիմաստութեանն եւ զհոգւոյն, որով խօսէր։

11 Յայնժամ հրապուրեցին արս ոմանս ասել, թէ Լուաք զդորա խօսել բանս հայհոյութեան ՚ի Մովսէս եւ յԱստուած։

12 Եւ խառնեցին զժողովուրդն եւ զերիցունս եւ զդպիրսն, եւ հասեալ ՚ի վերայ, յափշտակեցին զնա, եւ ածին յատեանն։

13 Եւ կացուցին վկայս սուտս՝ որ ասէին. Այրս այս ոչ դադարէ խօսել բանս հայհոյութեան զտեղւոյն սրբոյ՝ եւ զօրինացն։

14 Լուաք ՚ի դմանէ, զի ասէր՝ թէ Յիսուս Նազովրեցի՝ նա քակեսցէ զտեղիս զայս, եւ փոխեսցէ զօրէնսն զոր ետ մեզ Մովսէս։

15 Եւ հայեցեալ ՚ի նա ամենեցուն՝ որ նստէին յատենին, տեսին զերեսս նորա իբրեւ զերեսս հրեշտակի։

10 Բայց չէին կարօղանում հակառակ կենալ այն իմաստութեանը՝ եւ այն հոգւոյն, որ նորանով խօսումէր դ նա։

11 Այն ժամանակը մին քանի մարդկանց սովորեցրին՝ որ նորանց ասեն, թէ Մենք լսեցինք դորանից՝ որ հայհոյութեան բաներ էր խօսում՝ Մովսէսին եւ Աստուծոյն ե հակառակ։

12 Եւ ժողովրդին եւ երէցներին ու կարգադրողներին խառնեցին. եւ վերայ հասին յափշտակեցին նորան՝ եւ տարան ատեանը։

13 Եւ սուտ վկաներ կանգնեցրին՝ որ ասումէին. Այս մարդս չի դադարում սուրբ տեղոյն եւ օրէնքին դէմ հայհոյութեան բաներ խօսելուցը։

14 Մենք լսեցինք դորանից՝ որ ասումէր, թէ Յիսուս Նազօրեցին՝ նա այս տեղս կը քանդէ, եւ այն օրէնքն՝ որ Մովսէսը տուաւ մեզ, է կը փոխէ։

15 Եւ ամէնքն՝ որ այն ատեանումը նստած էին, մտիկ տուին նորան, եւ նորա երեսն հրեշտակի երեսի նման տեսին։

## ԳԼ. Է

1 Ասէ քահանայապետն՝ թէ Արդարեւ այդ այդպէս իցէ։

2 Եւ նա ասէ. Արք եղբարք եւ հարք՝ լուարուք ինձ. Աստուած փառաց երեւեցաւ հօր մերում Աբրահամու մինչդեռ ՚ի Միջագետս էր, մինչչեւ բնակեցուցեալ էր զնա ՚ի Խառան. եւ ասէ ցնա։

3 Ե՛լ յերկրէ քումմէ [եւ յազգէ քումմէ, եւ եկ յերկիր՝ զոր ցուցից քեզ։]

4 Յայնժամ ելեալ յերկրէն Քաղդէացւոց բնակեցաւ ՚ի Խառան. եւ անտի յետ մեռանելոյ հօր նորա

1 Եւ քահանայապետն ասաց. Թէ Շիտակ որ այդ բանդ այդպէս է։

2 Եւ նա ասաց, Մարդիկ եղբարք եւ հարք՝ ինձ լսեցէք. Փառաց Աստուածն երեւեցաւ մեր հայր Աբրահամին՝ դեռ որ Միջագետումն էր, դեռ որ նորան Խառանին մէջ չէր բնակացրել. եւ ասաց ա նորան.

3 Դուրս եկ քո երկրիցդ եւ քո ազգիցդ, եւ եկ այն երկիրն՝ որ ես ցոյց կը տամ բ քեզ։

4 Այն ժամանակը Քաղդէացոց երկրիցը դուրս եկաւ՝ Խառանումը գ բնակվեցաւ. եւ նորա հօր մեռ-

դ Ղու. ԻԱ. 15. Գլ. Ե. 39. Ելից. Դ. 12. Եսայ. ԾԴ. 17.
ե Գ. Թագ. ԻԱ. 10. 13. Մատթ. ԻԶ. 59. 60.
զ Գլ. ԻԵ. 8.
է Դան. Թ. 26.
—
ա Գլ. ԻԲ. 1.
բ Ծննդ. ԺԲ. 1.
գ Ծննդ. ԺԱ. 31. ԺԲ. 4, 5.

փոխեաց, եւ պանդխտեցոյց զնա յերկիրս յայսմիկ, յորում դուք այժմ բնակեալ էք։

5 Եւ ոչ ետ նմա ժառանգութիւն ՚ի սմա, եւ ոչ քայլ մի ոտին, եւ խոստացաւ տալ նմա զնա ՚ի բնակութիւն, եւ զաւակի նորա յետ նորա, մինչ ոչ գոյր նորա որդի։

6 Խօսեցաւ Աստուած այսպէս. թէ եղիցի զաւակ նորա պանդուխտ յօտար երկրի. եւ ծառայեցուսցեն զնա՝ եւ չարչարեսցեն ամս չորեքհարիւր։

7 Եւ զազգն՝ որում ծառայեսցեն՝ դատեցայց ես, ասէ Աստուած. եւ յետ այսորիկ ելցեն՝ եւ պաշտեսցեն զիս ՚ի տեղւոջս յայսմիկ։

8 Եւ ետ նմա ուխտ թլփատութեան. եւ ապա ծնաւ զԻսահակ, եւ թլփատեաց զնա յաւուր ութերորդի. եւ Իսահակ զՅակոբ. եւ Յակոբ զերկոտասան նահապետսն։

9 Եւ նահապետքն նախանձեալ ընդ Յովսեփայ՝ վաճառեցին յԵգիպտոս. եւ էր Աստուած ընդ նմա։

10 Եւ փրկեաց զնա յամենայն նեղութեանց նորա. եւ ետ նմա շնորհս եւ իմաստութիւն առաջի փարաւոնի արքային Եգիպտացւոց. եւ կացոյց զնա իշխան Եգիպտացւոց եւ ամենայն տան նորա։

11 Եւ եկն սով յամենայն երկիրն Եգիպտոսի, եւ ՚ի Քանան նեղութիւն մեծ. եւ ոչ գտանէին կերակուր հարքն մեր։

մեռնելուն ետեւ՝ նորան այնտեղիցը փոխեց, եւ պանդխտացրուց այս երկրումս, որ սորանում հիմիկ դուք բնակված էք։

5 Եւ սորանում ժառանգութիւն չը տուաւ նորան, եւ ոչ մին ոտի քայլի չափ. եւ խոստացաւ՝ որ այս տեղս բնակութիւն տայ ա նորան. եւ նորանից ետեւ՝ նորա զաւակներին, դեռ որ նա որդի չունէր։

6 Աստուած այսպէս խօսեց. թէ նորա զաւակը պանդուխտ կը լինի օտար երկրի բ մէջ. եւ ծառայութեան մէջ կը ձգեն նորան, եւ կը չարչարեն չորս հարիւր գ տարի։

7 Եւ այն ազգին՝ որ կը ծառայեն, նորան ես կը դատեմ, ասաց Աստուած. եւ որանից ետեւ դուրս կը գան՝ եւ այս տեղումս ինձ դ կը պաշտեն։

8 Եւ նորան թլփատութեան ուխտ ե տուաւ. եւ յետոյ Սահակին ծնաւ, եւ ութ օրումը թլփատեց զ նորան. եւ Սահակը է Յակոբին, եւ Յակոբն ը տասներկու նահապետներին։

9 Եւ նահապետները նախանձելով Յովսէփին հետ, եւ ծախեցին թ Եգիպտոս. եւ Աստուած նորան հետ ժ էր։

10 Եւ նորան փրկեց իրեն ամէն նեղութիւններիցը. եւ նորան շնորհք եւ իմաստութիւն տուաւ Եգիպտացոց Փարաւոն թագաւորին առաջին. եւ նորան իշխան կարգնեցրուց Եգիպտացոց, եւ իրեն բոլոր տանը ի վերայ։

11 Եւ սով եկաւ Եգիպտոսի ամէն երկիրը, եւ Քանան էլ՝ եւ մեծ նեղութիւն կար. եւ մեր հարքը կերակուր չէին լ գտնում։

ա Ծննդ. ԺԲ. 7. ԺԳ. 15. ԺԵ. 3. 18. ԺԷ. 8. ԻԶ. 3.
բ Ծննդ. ԺԵ. 13. 16.
գ Ելից. ԺԲ. 40. Գաղ. Գ. 17.
դ Ելից. Գ. 12.
ե Ծննդ. ԺԷ. 9, 10. 11.
զ Ծննդ. ԻԱ. 2, 3. 4.
է Ծննդ. ԻԵ. 26.
ը Ծննդ. ԻԹ. 31, [illegible] Լ. 5, [illegible] ԼԵ. 18. 23.
թ Ծննդ. ԼԷ. 4 11. 28. Սաղ. ՃԵ. 17.
ժ Ծննդ. ԼԹ. 2 21. 23.
ի Ծննդ. ԽԱ. 37. ԽԲ. 6.
լ Ծննդ. ԽԱ. 54.

12 Եւ լուեալ Յակոբայ, թէ գտանի կերակուր յԵգիպտոս՝ առաքեաց զհարսն մեր յառաջագոյն:

13 Եւ յերկրորդումն եւս ծանօթս Յովսէփ եղբարց իւրոց. եւ յայտնի եղեւ ազգն նորա Փարաւոնի:

14 Առաքեաց Յովսէփ եւ կոչեաց զՅակոբ զհայր իւր, եւ զամենայն ազգատոհմն՝ ոգիս եօթանասուն եւ հինգ:

15 Եւ էջ Յակոբ յԵգիպտոս՝ եւ վախճանեցաւ ինքն եւ հարքն մեր:

16 Եւ փոխեցան 'ի Սիւքեմ, եւ եդան յայրին, զոր առաւ Աբրահամ գնոց արծաթոյ յորդւոցն Եմովրայ՝ 'ի Սիւքեմ:

17 Որպէս մերձեցաւ ժամանակ աւետեացն՝ զոր խոստացաւ Աստուած Աբրահամու, աճեաց ժողովուրդն՝ եւ բազմացաւ յԵգիպտոս.

18 Մինչեւ յարեաւ այլ թագաւոր յԵգիպտոս՝ որ ոչ ճանաչէր զՅովսէփ.

19 Նա հնարեցաւ ազգին մերում, եւ չարչարեաց զհարսն մեր առնել ընկեցիկ զմանկունս նոցա՝ զի մի ապրեսցին:

20 Յորում ժամանակի ծնաւ եւ Մովսէս, եւ էր կայտառ առաջի Աստուծոյ. որ եւ սնաւ 'ի տան հօր իւրոյ ամիսս երիս:

21 Եւ յընկեցիկն առնել զնա՝ եբարձ զնա դուստր Փարաւոնի, եւ սնոյց զնա իւր յորդեգիրս:

22 Եւ վարժեցաւ Մովսէս ամենայն իմաստութեամբ Եգիպտացւո-

12 Եւ Յակոբն՝ որ լսեց թէ Եգիպտոսումը կերակուր է գտնւում, մեր հայրերին ուղարկեց առաջին հ անգամը:

13 Եւ երկրորդ անգամը Յովսէփին զինքը ճանաչել տուաւ իւրեն եղբայրներին. եւ նորա ազգը յայտնի էլաւ ձ Փարաւոնին:

14 Յովսէփն ուղարկեց եւ կանչեց իւրեն հայր ղ Յակոբին, եւ ամէն ազգատոհմին՝ եօթանասուն եւ հինգ ճ հոգիք:

15 Եւ Յակոբը վէր եկաւ մ Եգիպտոս՝ եւ վախճանւեցաւ ինքը եւ մեր հայրքն յ էլ:

16 Եւ փոխւեցան ն Սիւքեմ, եւ դրւեան այն քարայրին մէջ, որ նորան Աբրահամը Եմօրայի որդիքներից գնեց արծաթով՝ շՍիւքեմումը:

17 Երբոր այն աւետիքի ժամանակը մօտեցաւ՝ որ Աստուած Աբրահամին ո խոստացաւ, ժողովուրդը մեծացաւ եւ շատացաւ չ Եգիպտոսումը:

18 Մինչեւ որ ուրիշ թագաւոր վերկացաւ Եգիպտոսումը՝ որ Յովսէփին չէր ճանաչում:

19 Նա հնարք գործեց մեր ազգին համար, եւ մեր հայրերը չարչարեց՝ որ իւրենց երախաները դուրս ձգեն՝ որ պ չապրին,

20 Որ Մովսէսն էլ այն ժամանակումը ջ ծնւեցաւ, եւ գեղեցիկ էր Աստուծոյ առաջին. որ էլ իւրեն հօր տանն երեք ամիս ռ կերակրւեցաւ:

21 Եւ երբոր դուրս ձգեցին նորան, Փարաւոնի աղջիկը վերառաւ նորան, եւ մեծացուց նորան՝ որ իւրեն որդեգիր ս լինի:

22 Եւ Մովսէս վարժւեցաւ Եգիպտացոց ամէն իմաստութեանը. եւ

հ Ծննդ. ԽԲ. 1:
ձ Ծննդ. ԽԵ. 4. 16:
ղ Ծննդ. ԽԵ. 9. 27:
ճ Ծննդ. ԽԶ. 27: Բ Օրին. Ժ. 22:
մ Ծննդ. ԽԶ. 5:
յ Ծննդ. ԽԹ. 33: Ելից. Ա. 6:
ն Ելից. ԺԴ. 19: Յես. ԻԴ. 32:
շ Ծննդ. ԻԳ. 16: ԼԵ 19:
ո Ծննդ. ԺԵ. 13. Համար. 6:
չ Ելից. Ա. 7, 8. 9: Սաղ. ՃԵ. 24, 25:
պ Ելից. Ա. 22:
ջ Ելից. Բ. 2:
ռ Եբր. ԺԱ. 23:
ս Ելից. Բ. 3—10:

ցին · եւ էր զօրաւոր բանիւք եւ
գործովք իւրովք ։
23 Իբրեւ լցաւ նորա քառասնա-
մեայ ժամանակ, անկաւ 'ի սիրտ
նորա շրջել զեղբարբքն իւրովք՝
զորդւովքն Իսրայէլի ։

24 Եւ տեսեալ զոմն զրկեալ՝ ըղ-
ջարեցաւ, եւ խնդրեաց զվրէժ
զրկելոյն՝ սպանեալ զեգիպտացին ։

25 Զմտաւ ածէր՝ թէ իմասցին եղ-
բարք նորա · զի Աստուած 'ի ձեռն
նորա տալոց էր զփրկութիւն նո-
ցա · եւ նոքա ոչ իմացան ։
26 Եւ 'ի վաղիւ անդր երեւեցաւ
նոցա մինչդեռ մարտնչէին՝ եւ վա-
րեաց զնոսա 'ի խաղաղութիւն, ա-
սէ · Արք՝ եղբարք էք, ընդէր
զրկէք զմիմեանս ։

27 Իսկ որ զրկէր զընկերն՝ մեր-
ժեաց զնա՝ եւ ասէ · Ո՞ կացոյց
զքեզ իշխան եւ դատաւոր 'ի վե-
րայ մեր ։
28 Միթէ սպանանել կամիցիս զիս՝
զորօրինակ սպաներ երէկ զեգիպ-
տացին ։
29 Եւ փախեաւ Մովսէս 'ի բա-
նիցս յայսցանէ, եւ եղեւ պան-
դուխտ յերկրին Մադիամու · ուր
ծնաւ երկուս որդիս ։
30 Եւ 'ի կատարել ամացն քա-
ռասնից, երեւեցաւ նմա յանապա-
տի լերինն Սինայ հրեշտակ Տեառն
'ի բոց հրոյ մորենւոյն ։

31 Եւ Մովսէսի տեսեալ՝ զարմա-
ցաւ ընդ տեսիլն, եւ 'ի մատչելն
նորա նշմարել՝ եղեւ ձայն Տեառն ·

32 Ես եմ Աստուած հարց քոց,
Աստուած Աբրահամու՝ եւ Իսահա-

զօրաւոր էր իրեն խօսքերովը ու
Հգործքերովը ։
23 Երբոր նորա քառասուն տա-
րեկան ժամանակը լրցաւ, նորա
սրտին մէջ ինկաւ՝ որ իրեն եղբայր-
ներին՝ Իսրայէլի որդիքներին մէջ
մտն = գայ ։
24 Եւ երբոր տեսաւ, որ մէկը
զրկված էր, պժուար եկաւ իրեն ·
այն զրկվածին համար վրէժխնդրու-
թիւն արաւ՝ եւ Եգիպտացին ըս-
պանեց ·
25 Կարծումէր՝ թէ նորա եղբայր-
քը կիմանան, որ Աստուած նորա
ձեռովը փրկութիւն պիտի տայ նո-
րանց · եւ նորանք չիմացան ։
26 Եւ յետեւի օրուանը երեւեցաւ
նորանց՝ որ կռիւ էին անում, եւ
յորդորեց նորանց դէպի խաղա-
ղութիւն, ասաց · Մարդիկ՝ դուք
եղբարք էք, ինչու էք իրար ր զըր-
կում ։
27 Բայց նա՝ որ ընկերին զրկու-
մէր, նախատեց նորան՝ եւ ասաց ·
Քեզ ով կանգնացրուց մեզ վերայ
իշխան եւ յ դատաւոր ·
28 Միթէ կամենումես ինձ էլ
սպաննել, ինչպէս որ երէկ Եգիպ-
տացուն սպաննեցիր ։
29 Եւ այս խօսքերցս Մովսէս փա-
խաւ, եւ պանդուխտ էլաւ Մա-
դիամի երկրումը · ուր որ երկու
որդիք = ծնաւ ։
30 Եւ երբոր քառասուն տարին
կատարվեցաւ, Սինա սարի անա-
պատումը Տէրին հրեշտակը երեւե-
ցաւ նորան կրակի բոցով մորենոյն
‡ մէջ ։
31 Եւ Մովսէսն երբոր տեսաւ՝ զար-
մացաւ այն տեսիլքին համար, եւ
երբոր մօտենումէր որ մտիկ անէ,
Տէրին ձայնն էլաւ ·
32 Ես եմ քո հարանց Աստուա-
ծը, Աբրահամու եւ Սահակայ եւ

Հ Ղու · ԻԴ · 19 ·
= Ելք · Բ · 11, 12 ·
ր Ելք · Բ · 13 ·
յ Ղու · ԺԲ · 14 ·
ԳԼ · Դ · 7 ·
= Ելք · Բ · 15 · 22 · Գ · 20 · ԺԸ · 3, 4 ·
‡ Ելք · Գ, 2 ·

կայ՝ եւ Յակովբայ · եւ զահի հա–
րեալ Մովսէս՝ ոչ իշխէր հայել ։

33 Եւ ասէ ցնա Տէր · Լոյծ ըզ
կօշիկս ոտից քոց , զի տեղիդ՝ յո–
րում դուդ կացես՝ երկիր սուրբ է ։

34 Տեսանելով տեսի զչարչարանս
ժողովրդեան իմոյ՝ որ յԵգիպտոս ,
եւ լուայ հեծութեան նոցա՝ եւ իջի
փրկել զնոսա · եւ արդ եկ առա–
քեցից զքեզ յԵգիպտոս ։

35 Զայն Մովսէս՝ զոր ուրացանն
եւ ասեն · Ո՞ կացոյց զքեզ իշխան
եւ դատաւոր 'ի վերայ մեր , զնա
Աստուած իշխան եւ փրկիչ առա–
քեաց 'ի ձեռն հրեշտակին , որ ե–
րեւեցաւ նմա 'ի մորենւոջն ։

36 Նա եհան զնոսա՝ արարեալ
նշանս եւ արուեստս յերկրին Եգիպ–
տացւոց՝ եւ 'ի Կարմիր ծովուն , եւ
յանապատին՝ ամս քառասուն ։

37 Այս Մովսէս է , որ ասաց
ցորդիսն Իսրայէլի · Մարգարէ յա–
րուսցէ ձեզ Տէր Աստուած ձեր
յեղբարց ձերոց իբրեւ զիս , նմա
լուիջիք ։

38 Սա է՝ որ եղեւ յեկեղեցւոջն՝
յանապատին ընդ հրեշտակին , որ
խօսեցաւ ընդ նմա 'ի լերինն Սինայ՝
եւ ընդ հարսն մեր · որ ընկալաւ
զպատգամս կենդանիս՝ տալ մեզ ։

39 Որում ոչ կամեցան հնազանդ
լինել հարքն մեր · այլ մերժեցին՝
եւ դարձան սրտիւք իւրեանց յե–
գիպտոս ։

Յակոբայ Աստուածը · եւ Մովսէս
սաստիկ ահով բռնուած էր՝ եւ չէր
համարձակիլ + նայիլ ։

33 Եւ Տէրն ասաց նորան · Կօ–
շիկներդ հանէ ոտներէդ , պատ–
ճառն որ՝ տեղդ՝ որ դու կանգնել
ես , սուրբ երկիր ° է ։

34 Տեսնելով տեսի իմ ժողովր–
դիս չարչարանքներն՝ որ Եգիպտո–
սումն է , եւ լսեցի նորանց հառա–
չանքը՝ եւ վար եկի որ նորանց
փրկեմ · եւ հիմիկ եկ քեզ ուղար–
կեմ ‡ Եգիպտոս ։

35 Այն Մովսէսին՝ որ նորան ու–
րացան եւ ասացին · Քեզ ով կանգ–
նացրուց մեզ վերայ իշխան եւ դա–
տաւոր , իսկ նորան Աստուած իշ–
խան եւ փրկիչ ուղարկեց այն հր–
րեշտակին ձեռամբն՝ որ մորենայն մէջ
երեւեցաւ = նորան ։

36 Նա հանեց Բ նորանց՝ եւ նշան–
ներ եւ հրաշքներ արաւ Եգիպտա–
ցոց Ք երկրումը · եւ Կարմիր Ր ծո–
վումն , ու անապատումը քառա–
սուն Ի տարի ։

37 Սա է այն Մովսէսը , որ Իսրա–
յէլի որդոցն ասաց · Ձեր Տէր Աստ–
ուածը մարգարէ մը կը կացնէ ձեզ
համար ձեր եղբայրներիցը իմձ
Հ նման , նորան Ի լսեցէք ։

38 Սա է՝ որ էլաւ ժողովրդին
մէջ Ջ անապատումը հրեշտակին
Բ հետ , որ նորա հետ Սինայ սարու–
մը խօսեց՝ եւ մեր հարանց հետ ·
որ Ժ կենդանի հրամաններ առաւ՝
որ տայ Է մեզ ։

39 Որ մեր հարքը չը կամեցան հը–
նազանդ լինիլ նորան · բայց զէն
ձգեցին՝ եւ իրենց սրտերովը դար–
ձան Եգիպտոսի մէջ ,

+ Մատթ. ԻԲ. 32 ։ Եբր. ԺԱ. 16 ։
° Ելից. Գ. 5 ։ Յես. Ե. 15 ։
‡ Ելից. Գ. 7 ։
= Ելից. ԺԴ. 19 ։ Թուոց. Ի. 16 ։
Բ Ելից. ԺԲ. 41 ։ ԼԳ. 1 ։
Ք Ելից. Է. Ը. Թ. Ժ. ԺԱ. ԺԴ. Սաղ. ՃԵ. 27 ։
Ր Ելից. ԺԴ. 21. 27 , 28 ։ 29 ։
Ի Ելից. ԺԶ. 1. 35 ։
Հ Բ Օրին. ԺԸ. 15. 18 ։ Գործ. Գ. 22 ։
Ի Մատթ. ԺԷ. 5 ։
Ջ Ելից. ԺԹ. 3. 17
Բ Եսայ. ԿԳ. 9 ։ Գաղ. Գ. 19 ։ Եբր. Բ. 2 ։
Ժ Ելից. ԻԱ. 1 ։ Բ Օրին. Ե. 27. 31 ։ ԼԳ. 4 ։ Յովհ. Ա. 17 ։
Է Հռովմ. Գ. 2 ։

40 Եւ ասէին ցԱհարոն. Արա՛ մեզ աստուածս, որ երթիցեն առաջի մեր. զի Մովսէսն այն՝ որ եհան զմեզ յերկրէն Եգիպտացւոց, ոչ գիտեմք զի եղեւ նմա։

41 Եւ արարին յաւուրսն յայնոսիկ որթ, եւ մատուցին զոհս կռոց, եւ ուրախ լինէին ՚ի գործս ձեռաց իւրեանց։

42 Դարձոյց Աստուած՝ եւ մատնեաց զնոսա ՚ի պաշտօն զօրութեանն երկնից. որպէս եւ գրեալ է ՚ի գիրս մարգարէից. Միթէ զոհս եւ պատարագս մատուցէ՞ք ինձ զամս քառասուն յանապատին՝ տունդ Իսրայէլի։

43 Եւ առէք զխորանն Մողոքայ, եւ զաստղն աստուծոյն Հռեմփայ զպատկերսն՝ զոր արարէք երկիրպագանել նոցա. եւ փոխեցից ըզձեզ յայն կողմն Բաբելացւոց։

44 Խորանն վկայութեան էր ընդ հարսն մեր յանապատին. որպէս հրաման ետ՝ որ խօսէրն ընդ Մովսէսի, առնել զայն ըստ օրինակին՝ զոր տեսանէր։

45 Զոր եւ ընկալեալ բերին հարքն մեր հանդերձ Յեսուաւ ՚ի մտանել ազգացն, զորս մերժեաց Աստուած յերեսաց հարցն մերոց, մինչեւ յաւուրս Դաւթի,

46 Որ եգիտ շնորհս առաջի Աստուծոյ, եւ խնդրեաց գտանել ըզյարկս Աստուծոյ Յակոբայ։

40 Եւ Ահարոնին ասացին. Մեզ համար աստուածներ շինէ, որ մեր առաջին գնան. պատճառն որ՝ այն Մովսէսն՝ որ Եգիպտացոց երկրիցը մեզ հանեց, չենք գիտում ինչ էլաւ [ւ] նորան։

41 Եւ այն օրերը մին հորթ շինեցին, եւ մատաղ արին կուռքերին, եւ ուրախանումէին իրենց ձեռներին [խ] գործքերումը։

42 Աստուած նորանցմէ երես դարձուց եւ նորանց [ծ] մատնեց՝ որ երկնքի զօրութիւնը [կ] պաշտեն. ինչպէս որ գրուած է մարգարէներին գրքերումը. Միթէ մատաղներ եւ պատարագներ բերիք ինձ քառասուն տարի անապատումը, ով Իսրայէլի [հ] տուն։

43 Եւ Մողոքայ վրանըն առիք, եւ Հռեմփա Աստուծոյ աստղը. այն պատկերքն՝ որ առիք նորանց երկրպագութիւն անելոյ համար. եւ ձեզ կը փոխեմ Բաբելացւոց այն կողմը։

44 Վկայութեան խորանը մեր հարանց հետ անապատումն էր. ինչպէս հրամանն տուաւ նա՝ որ Մովսէսին հետ խօսումէր, որ նորան անէ այն օրինակին պէս՝ որ [ձ] տեսաւ,

45 Որ նորան էլ մեր հարքն առին բերին Յեսուայ հետ այն ազգերին [ղ] երկիրը, որ Աստուած դուրս ձըգեց մեր հարանց երեսիցը. մինչեւ Դաւթին [ճ] ժամանակը,

46 Որ նա Աստուծոյ առաջին շընորհք [մ] գտաւ, եւ խնդրեց՝ որ Յակոբի Աստուծոյ համար բնակարան [յ] շինէ։

ւ Ելից. ԼԲ. 1.
խ Բ Օրին. Թ. 16. Սաղ. ՃԶ. 19.
ծ Սաղ. ՁԱ. 12. Եզեկ. Ի. 25. 39. Հռովմ. Ա. 24. Բ Թես. Բ. 11.
կ Բ Օրին. Դ. 19. ԺԷ. 3. Դ Թագ. ԺԷ. 16. ԻԱ. 3. Երեմ. ԺԹ. 13.
հ Ամովս. Ե. 25, 26.
ձ Ելից. ԻԵ. 40. ԻԶ. 30. Եբր. Ը. 5.
ղ Յեսու. Գ. 14.
ճ Նէեմ. Թ. 24. Սաղ. ԽԴ. 2. ՀԸ. 55. Գռ. ԺԳ. 19.
մ Ա Թագ. ԺԶ. 1. Բ Թագ. Է. 1. Սաղ. ՁԹ. 19. Գռ. ԺԳ. 22.
յ Գ Թագ. Ը. 17. Ա Մնաց. ԻԲ. 7. Սաղ. ՃԼԲ. 4. 5.

47 Նաև Սողոմոն շինեաց նմա
տուն .
48 Այլ ոչ եթէ Բարձրեալն 'ի
ձեռագործ տաճարս բնակէ . այլ
որպէս մարգարէն ասէ .
49 Երկինք աթոռ իմ են , և եր-
կիրս պատուանդան ոտից իմոց .
զիարդ տուն շինիցէք ինձ՝ ասէ
Տէր , կամ զի՞նչ տեղի հանգստեան
իմոյ :
50 Ո՞չ ձեռն իմ արար զայս ամե-
նայն :
51 Խստապարանոցք և անթլփ-
փատք սրտիւք և ականջօք . դուք
հանապազ Հոգւոյն Սրբոյ հակառակ
կայք . որպէս հարքն ձեր և դուք :
52 Զո՞ 'ի մարգարէիցն ոչ հալա-
ծեցին հարքն ձեր . և սպանին
զայնոսիկ՝ որ յառաջագոյն պատմէ-
ցին վասն գալստեան Արդարոյն ,
որոյ դուք այժմ մատնիչք և սպա-
նօղք եղէք .
53 Ոյք առիք զօրէնս 'ի հրամանս
հրեշտակաց , և ոչ պահեցիք :
54 Եւ լուեալ զայս՝ զայրանային
'ի սիրտս իւրեանց , և կրճտէին
զատամունս 'ի վերայ նորա :
55 Եւ նա էր լի Հոգւով Սրբով .
հայեցաւ յերկինս՝ և ետես զփառս
Աստուծոյ , և զՅիսուս՝ զի կայր
ընդ աջմէ Աստուծոյ . և ասէ ,
Ահա տեսանեմ զերկինս բացեալ՝
և զՈրդի մարդոյ զի կայ ընդ աջմէ
Աստուծոյ :

47 Սողոմոնն էլ նորա համար
տուն ◦ շինեց :
48 Բայց Բարձրեալը ոչ թէ ձեռ-
քով շինած տաճարում է բնակ-
վում , այլ ինչպէս որ մարգարէն
ւ ասում է .
49 Երկինքն իմ աթոռն է , և
երկիրն իմ ոտաց դնելոյ տեղը .
ինչպէսի տուն շինեցիք ինձ , ա-
սում է Տէրը , կամ որն է իմ հան-
գիստ առնելոյ * տեղը :
50 Չէ՞ որ իմ ձեռն արաւ այս ա-
մէնը :
51 ւ Խստապարանոցներ՝ և սըր-
տերով ու ականջներով ա չըթլփատ-
ւածներ . դուք միշտ Սուրբ Հոգոյն
հակառակ էք կենում . ինչպէս որ
ձեր հարքն՝ -նոյն- էլ դուք :
52 Մարգարէներիցն որին չը հա-
լածեցին ձեր է հարքը . և սպա-
նեցին նորանց՝ որ առաջուց պատ-
մեցին այն Արդարին գալուն համար ,
որ դուք հիմիկ նորան մատնիչ և
սպանող ա էլաք ,
53 Որ դուք օրէնքըն առիք հրեշ-
տակներին հրամաններովը և ° չը պա-
հեցիք ,
54 Եւ երբոր լսում էին այս բաները,
իրենց սրտերումը շատ սաստիկ
բարկանում էին և ատամները կըր-
ճտացնում նորա է վերայ :
55 Եւ նա լցված էր Սուրբ * Հո-
գով . դէպի երկինքը նայեց՝ և
Աստուծոյ փառքը տեսաւ , և Յի-
սուսին՝ որ կար Աստուծոյ աջ կող-
մը . և ասաց . Ահա տեսանում եմ
երկինքը ◦ բացված , և մարդոյ Որ-
դին՝ որ կայ Աստուծոյ աջ ◦ կող-
մումը :

ւ Գ Թագ . Զ : 1 . Ը . 20 . Ա Մնաց . ԺԷ . 12 . Բ Մնաց . Գ . 1 .
ււ Գ Թագ . Ը . 27 . Բ Մնաց . Բ . 6 . Զ . 18 . Գր . ԺԷ . 24 .
ա Եսայ . ԿԶ . 1 . 2 Մատթ . Ե . 34 . 35 . ԻԳ . 22 .
ւ Ելից . ԼԲ . 9 . ԼԳ . 3 . Եսայ . ԽԸ . 4 .
ա Ղև . ԻԶ . 41 . Բ Օրին . Ժ . 16 . Երեմ . Գ . 4 . Զ . 10 . Թ . 26 . Եզեկ . ԽԴ . 9 .
է Բ Մնաց . ԼԶ . 16 . Մատթ . ԻԱ . 35 . ԻԳ . 34 . 37 . Ա Թես . Բ . 15 .
ա Գր . Գ . 14 .
ա Ելից . Ի . 1 . Գաղ . Գ . 19 . Եբր . Բ . 2 .
է Գր . Ե . 33 .
ա Գր . Զ . 5 .
բ Եզեկ . Ա . 1 . Մատթ . Գ . 16 . Գր . Ժ . 11 .
ց Դան . Է . 13 .

56 Աղաղակեալ 'ի ձայն մեծ՝ խցին զականջս իւրեանց, եւ դիմեցին առ հասարակ 'ի վերայ նորա ։

57 Եւ հանեալ արտաքոյ քաղաքին՝ քարկոծէին. եւ վկայքն դնէին զձորձս իւրեանց առ ոտս երիտասարդի միոջ՝ որ կոչէր Սաւուղ ։

58 Եւ քարկոծ առնէին զՍտեփանոս, որ կարդայր եւ ասէր. Տէր Յիսուս՝ ընկալ զհոգի իմ ։

59 Եդ ծունր՝ աղաղակեաց 'ի ձայն բարձր. Տէր՝ մի համարիր զոցա զայս մեղս. եւ զայս իբրեւ ասաց՝ ննջեաց. եւ Սօղոս էր կամակից սպանման նորա ։

56 Մեծ ձայնով աղաղակեցին՝ իրենց ականջներին խփեցին, եւ ամէնքն առ հասարակ վազեցին նորա վերայ,

57 Եւ քաղաքիցը դուրս — հանեցին՝ եւ նորան ÷ քարկոծումէին. վկաներն էլ իրենց շորերը մին երիտասարդ մարդայ ոտաց մօտ դընում որ Սաւուղ էր + կոչվում,

58 Եւ քարկոծումէին Ստեփաննոսին, որ կանչումէր եւ * ասում. Տէր Յիսուս՝ իմ հոգիս ‡ ընդունէ ։

59 Ծունր դրաւ՝ եւ բարձր ձայնով — աղաղակեց. Տէր՝ սա դորանց համար մեղք մի ‡ համարիր. եւ երբոր սա ասաց, ննջեց ։ Եւ Սօղոս կամակից էր նորա ÷ սպանվելուն ։

## ԳԼ · Ը

1 Եւ եղեւ յաւուր յայնմիկ հալածումն մեծ 'ի վերայ եկեղեցւոյն Երուսաղէմի. եւ ամենեքեան ցրուեցան 'ի գեօղս Հրէաստանի եւ 'ի Սամարիա՝ բաց յառաքելոցն ։

2 Եւ թաղեցին զՍտեփանոս արք երկիւղածք՝ եւ արարին կոծ մեծ 'ի վերայ նորա ։

3 Բայց Սօղոս վնասակար էր եկեղեցւոյն. 'ի տունս տունս մտանէր քարշէր զարս եւ զկանայս՝ մատնէր 'ի բանտ ։

4 Եւ սփռեալքն՝ շրջէին աւետարանէին զբանն ։

5 Իսկ Փիլիպպոս իջեալ 'ի քա-

1 Եւ այն օրը մեծ հալածմունք էլաւ Երուսաղէմումը եկեղեցւոյն վերայ. եւ ամէնքը ցրւեցան Հրէաստանի գիւղերին մէջ եւ Սամարիայի — մէջ, առաքեալներից ջոկ ։

2 Եւ Աստուածավախ մարդիկ Ստեփաննոսին վերացրին՝ եւ մեծ սուգ արին նորա ‡ վերայ ։

3 Բայց Սօղոս վնաս էր տալիս եկեղեցւոյն. եւ տնից տուն էր մտնում, եւ մարդկանց եւ կանանց քաշում՝ եւ մատնում բանտի ÷ մէջ ։

4 Եւ ցրվածները ման էին գալիս՝ եւ Ա-ծոյ խօսքն ∓ աւետարանում ։

5 Բայց Ի Փիլիպպոսը վար եկաւ

— Գ Թագ. ԻԸ. 13. Ղու. Գ. 29. Եբր. ԺԳ. 12. ÷ Ղկ. ԻԳ. 16. + Բ Օրին. ԺԳ. 9. 10. ԺԷ. 7. Համար. 59. Գլ. ԻԲ. 20. * Գլ. Թ. 14. ‡ Սաղ. ԼԱ. 5. Ղու. ԻԳ. 46. — Գլ. Թ. 40. Ի. 36. ԻԱ. 5. ‡ Մատթ. Ե. 44. Ղու. Զ. 28. ԻԳ. 34. ÷ Համար. 57. Գլ. ԻԲ. 20.

— Գլ. ԺԱ. 19. ‡ Ծննդ. ԻԳ. 2. Ծ. 10. Բ Թագ. Գ. 31. ÷ Գլ. Է. 57. Թ. 1. 13. 21. ԻԲ. 4. ԻԶ. 10. 11. Ա Կորնթ. ԺԵ. 9. Գաղ. Ա. 13. Փիլիպ. Գ. 6. Ա Տիմ. Ա. 13. ∓ Մատթ. Ժ. 23. Գլ. ԺԱ. 19. Ի Գլ. Զ. 5.

ղաքն Սամարացւոց՝ քարոզէր նոցա
զՔրիստոս ։
6 Ունէին միտ ժողովուրդքն
բանիցն Փիլիպպոսի միաբան՝ ՚ի լսել
նոցա եւ ՚ի տեսանել զնշանսն ,
զոր առնէր ։

7 Քանզի բազումք որ ունէին
զայս պիղծս՝ աղաղակէին ՚ի ձայն
մեծ , եւ ելանէին ։
8 Եւ բազում անդամալոյծք եւ
կաղք բժշկէին ։
9 Եւ եղեւ ուրախութիւն մեծ ՚ի
քաղաքին յայնմիկ ։ Այր ոմն անուն
Սիմովն՝ յառաջագոյն էր ՚ի քաղա-
քին . մոգ էր , եւ ապշեցուցանէր
զազգն Սամարացւոց . ասել զանձ-
նէ՝ թէ իցէ մեծ ոմն ։

10 Յոր հայէին ամենեքին ՚ի փոք-
ուէ մինչեւ ՚ի մեծամեծս՝ եւ ասէ-
ին . Սա է զօրութիւն Աստուծոյ ,
որ կոչի մեծ ։
11 Հայէին ՚ի նա վասն բազում
ժամանակաց մոգութեամբքն ապ-
շեցուցանելոյ զնոսա ։

12 Բայց յորժամ հաւատացին Փի-
լիպպոսի , որ աւետարանէր վասն
արքայութեանն Աստուծոյ , եւ
անուանն Յիսուսի Քրիստոսի ,
մկրտէին ամենեքեան արք եւ կա-
նայք ։
13 Այլ եւ ինքն Սիմովն հաւատաց ,
եւ մկրտեալ կանխէր առ Փիլիպ-
պոս . տեսեալ զնշանսն եւ զմեծա-
մեծ զօրութիւնսն որք լինէին ,
զարմանայր ։

14 Իբրեւ լուան՝ որ յԵրուսաղէմ
առաքեալքն էին , թէ եւ ՚ի Սամա-
րիա ընկալան զբանն Աստուծոյ ,
առաքեցին առ նոսա զՊետրոս եւ
զՅովհաննէս ։

15 Որք իջեալ կացին յաղօթս ՚ի

Սամարացոց քաղաքը՝ եւ Քրիստո-
սին քարոզումէր նորանց ։
6 Ժողովուրդները միաբան ա-
կանջ էին դնում Փիլիպպոսին խօս-
քերին , երբոր նորանք լսումէին եւ
տեսնում այն նշանները , որ ա-
նումէր ։
7 Պատճառն որ՝ շատերին որ պիղծ
դեւեր ունէին՝ մեծ ձայնով աղա-
ղակումէին , եւ դուրս ՚ը գային ։
8 Շատ անդամալուծներ եւ կա-
ղեր էլ բժշկվումէին ։
9 Եւ շատ ուրախութիւն էլաւ
այն քաղաքումը ։ Մին Սիմօն անուն
մարդ՝ առաջուց այն քաղաքումն
էր . կախարդ էր , եւ Սամարացոց
ազգը ՚ի յիմարացնումէր՝ իրեն ան-
ձին համար ասելով թէ մին մեծ
բան է ,
10 Որ փոքրներիցը մինչեւ մեծե-
րը ամէնքը նորան էին նայում , եւ
ասում . թէ Սա է Աստուծոյ զօրու-
թիւնը՝ որ մեծ է կոչվում ։
11 Մտիկ էին տալիս նորան . ին-
չու որ՝ շատ ժամանակ կախար-
դութիւններով յիմարացրել էր նո-
րանց ։
12 Բայց երբոր հաւատացին Փի-
լիպպոսին , որ Աստուծոյ արքա-
յութեանը համար էր ՚ի աւետարա-
նում , եւ Յիսուս Քրիստոսի ա-
նուանին համար , ամէնքը մկրտվու-
մէին՝ մարդիկը եւ կանայքը ։
13 Եւ Սիմօն ինքն էլ հաւատաց ,
եւ երբոր մկրտվեցաւ՝ միշտ Փիլիպ-
պոսին հետ էր . եւ երբոր տեսնու-
մէր այն նշանները ու մեծ մեծ
զօրութիւնները՝ որ լինումէին ,
զարմանումէր ։
14 Երբոր առաքեալքն՝ որ Երու-
սաղէմումն էին՝ լսեցին , թէ Սա-
մարիայի մէջն էլ Աստուծոյ խօս-
քըն ընդունեցին , Պետրոսին եւ
Յօհաննէսին ուղարկեցին նորանց
մօտ ,
15 Որ նորանք վէր եկին եւ ա-

ւ Մարկ . ԺԶ . 17 ։| Ե Գլ . ԺԳ . 6 ։ | Ը Գլ . Ե . 36 ։ | Թ Գլ . Ա . 3 ։

վերայ նոցա, որպէս զի առցեն զՀոգին Սուրբ։
16 Զի ցայնժամ չեւ եւս էր եւ ոչ
'ի վերայ միոյ նոցա հասեալ. բայց
միայն մկրտեալք էին յանուն Տեառն
Յիսուսի։

17 Յայնժամ եդին զձեռս 'ի վերայ
նոցա՝ եւ առնուին զՀոգի Սուրբ։

18 Տեսեալ Սիմոնի՝ թէ ձեռն 'ի
վերայ դնելով առաքելոցն՝ տուեալ
լինի Հոգին Սուրբ, մատոյց նոցա
ինչս՝ եւ ասէ։
19 Տուք եւ ինձ զիշխանութիւնս
զայս, զի յոյր վերայ դնիցեմ զձեռս՝ առցէ Հոգի Սուրբ։
20 Եւ Պետրոս ասէ ցնա. Արծաթ
քո ընդ քեզ լիցի 'ի կորուստ, զի
զպարգեւսն Աստուծոյ համարեցար
ընչիւք ստանալ.

21 Ո՛չ գոյ քեզ մասն եւ վիճակ
'ի բանիդ յայդմիկ. քանզի սիրտ
քո ոչ է ուղիղ առաջի Աստուծոյ։

22 Ապաշաւեա դու 'ի չարեացդ
քոց յայդցանէ, եւ աղաչեա զՏէր.
թերեւս թողութիւն լիցի քեզ 'ի
մտածմանէ խորհրդոց սրտի քո։
23 Քանզի 'ի դառնութիւն մաղձի, եւ 'ի կնճիռն անիրաւութեան
տեսանեմ զքեզ։
24 Պատասխանի ետ Սիմոնն եւ ասէ. Աղաչեցէք դուք վասն իմ զՏէր, զի մի ինչ եկեսցէ 'ի վերայ
իմ՝ յորոց դուքդ ասացէք։

25 Եւ նոքա եկեալ զվկայութիւն՝
խօսեցան զբանն Աստուծոյ, եւ
դարձան յԵրուսաղէմ. եւ 'ի բա-

գօթք ըրին նորանց վրայ, որ
Սուրբ Հոգին զ առնեն.
16 Ինչու որ՝ մինչեւ այն ժամա-
նակը դեռ նորանցից ոչ մէկին վե-
րայ Սուրբ Հոգին չէր է հասել. բայց
միայն Տէր Յիսուսի անուանովը
մկրտուած ը էին։
17 Այն ժամանակը ձեռները դը-
րին նորանց վրայ՝ եւ նորանք Սուրբ
Հոգին ի առնումէին։
18 Սիմոնն երբոր տեսաւ՝ թէ ա-
ռաքեալներին ձեռն վերադնելովը՝
Սուրբ Հոգին արվըւումէ, փող բե-
րաւ նորանց եւ ասաց.
19 Ինձ էլ տուէք այս իշխանու-
թիւնս, որ ում վրայ ձեռք դը-
նեմ՝ Սուրբ Հոգին առնէ։
20 Եւ Պետրոս նորան ասաց. Քո
արծաթդ քեզ հետ կորչի. պատ-
ճառն որ՝ դու կարծեցիր թէ Աս-
տուծոյ լ պարգեւները փողով կառ-
նես։
21 Դու բաժին եւ վիճակ չունիս
այդ բանումը. պատճառն որ՝ քո
սիրտդ շիտակ չէ Աստուծոյ առա-
ջին։
22 Ապաշխարէ դու քո այդ չա-
րութիւնիցդ՝ եւ Տէրին աղաչէ, որ
գուցէ թողութիւն լինի քեզ քո
սրտիդ խ խորհուրդներիցը։
23 Ինչու որ՝ տեսանումեմ քեզ՝ որ
մաղձի դառնութեանումն ու անիրա-
ւութեան կապանքներումն ծ ես։
24 Սիմոն պատասխան տուաւ եւ
ասաց. Դուք ինձ համար աղա-
չանք արէք կ Տէրին, որ ինձ վե-
րայ մին բան չըգայ նորանցից, որ
դուք ասացիք։
25 Եւ նորանք վկայութիւն տա-
լով՝ Աստուծոյ բանը խօսեցին, եւ
դարձան Երուսաղէմ. եւ Սամա-

զ Գլ. Բ. 38.
է Գլ. ԺԹ. 2.
ը Գլ. Ժ. 48. ԺԹ. 5.
թ Մատթ. ԻԸ. 19. Գլ. Բ. 38.
ժ Գլ. Զ. 6. ԺԹ. 6. Եբր. Զ. 2.
ի Գլ. Բ. 38. Ժ. 45. ԺԱ. 17.
լ Մատթ. Ժ. 8. Դ Թագ. Ե. 16.
խ Դան. Դ. 27. Բ Տիմ. Բ. 25.
ծ Եբր. ԺԲ. 15.
կ Ծննդ. Ի. 7. 17. Ելք. Ը. 8. Թուոց. ԻԱ. 7. Գ Թագ. ԺԳ. 6. Յոբ. ԽԲ. 8. Յակ. Ե. 16.

զում գեօղս Սամարացւոցն աւե-
տարանէին ։

26 Հրեշտակ Տեառն խօսեցաւ առ Փիլիպպոս՝ եւ ասէ · Արի եւ գնա դու 'ի կողմն հարաւոյ՝ ընդ ճանապարհ, որ իջանէ յԵրուսաղեմէ 'ի Գազայ, զի այս է անապատ ։

27 Եւ յարուցեալ գնաց · եւ ահաւասիկ այր մի Եթէովպացի, ներքինի հզօր, Կանդակայ տիկնոջ Եթէովպացւոյ · որ էր 'ի վերայ ամենայն գանձուց նորա · որ եկեալ էր երկիրպագանել յԵրուսաղէմ ·

28 Եւ էր անդրէն դարձեալ · եւ նստեալ 'ի կառս իւրում, ընթեռնոյր զմարգարէն զԵսայի ։

29 Ասէ Հոգին ցՓիլիպպոս · Մատիր՝ եւ յարեա՛ց 'ի կառսդ յայդոսիկ ։

30 Եւ ընթացեալ Փիլիպպոս՝ լսէր զի ընթեռնոյր զԵսայի մարգարէ, եւ ասէ · Գիտիցե՞ս արդեօք՝ զոր ընթեռնուցուս ։

31 Եւ նա ասէ՝ Զիա՞րդ կարիցեմ, թէ ոք ոչ առաջնորդեսցէ ինձ · եւ աղաչեաց զՓիլիպպոս ելանել նստել ընդ նմա ։

32 Եւ գլուխ գրոյն՝ զոր ընթեռնոյր՝ էր այս · Իբրեւ զոչխար 'ի սպանդ վարեցաւ, եւ իբրեւ զգառն առաջի կրճողի իւրոյ անմռունչ, այնպէս ոչ բանայ զբերան իւր ։

33 'Ի խոնարհութեան նորա դատաստան նորա բարձաւ · եւ զազգատոհմն նորա ո պատմեսցէ · զի բառնին յերկրէ կեանք նորա ։

34 Պատասխանի ետ ներքինին Փիլիպպոսի, եւ ասէ · Աղաչեմ զքեզ՝ վասն ո՞յր ասէ մարգարէն զայս · վասն իւր, եթէ վասն այլոյ ուրուք ։

35 Եբաց Փիլիպպոս զբերան իւր,

բացին շատ գիւղերի մէջն աւետա-
րանութիւն ։

26 Տէրոջ հրեշտակը խօսեց Փիլիպպոսին հետ՝ եւ ասաց · Վե՛ր կաց դու եւ գնա հարաւային կողմին՝ այն ճանապարհովը, որ Երուսաղեմից վար է գալիս Գազայ, որ է անապատ ։

27 Եւ վերկացաւ գնաց · եւ ահա մին Եթովպացի ʃ մարդ, Եթովպացոց Կանդակ թագուհոյ ներքինին եւ իշխան · որ նորա ամէն գանձին վերայ էր · որ եկել էր Երուսաղէմ երկրպագութիւն ɟ անելու ։

28 Եւ այնտեղից յետ էր դառնում · եւ իրեն կառքումը նստած, Եսայեայ մարգարէութիւնը կարդում էր ։

29 Սուրբ Հոգին Փիլիպպոսին ասաց · Մօտեցիր եւ հասիր այդ կառքին ։

30 Եւ Փիլիպպոսն առաջ վազեց՝ եւ լսում էր որ Եսայեայ մարգարէութիւնը կարդում էր, եւ ասաց · Գիտումես դա որ դու կարդումես

31 Նա էլ ասաց՝ Ի՞նչպէս կը կարողանամ, թէ որ մինը չառաջնորդէ ինձ · եւ Փիլիպպոսին աղաչեց՝ որ վերելլի նստի նորա հետ ։

32 Եւ գրի գլուխն՝ որ կարդումէր՝ սա էր · Ինչպէս ոչխար վարվեցաւ սպանդելոյ տեղ · եւ ինչպէս գառն իրեն խուզողին առաջին լուռ կացած՝ այնպէս՛ չի բանում իրեն ˜ բերանը ։

33 Նորա խոնարհութիւնովը նորա դատաստանն վեր առաւ, նորա ցեղն ով պիտի պատմէ · ինչու որ՝ նորա կեանքը երկրիցս վեր է առնուում ։

34 Ներքինին պատասխան տուաւ Փիլիպպոսին՝ եւ ասաց · Աղաչումեմ քեզ՝ մարգարէն սա ում համար է ասում · իրեն համար, թէ մին ուրիշին համար ։

35 Փիլիպպոսն իրեն բերանը բա-

ʃ Սոփ. Գ. 10 ։ | ɟ Յովհ. ԺԲ. 20 ։ | ˜ Եսայ. ԾԳ. 7, 8 ։|

եւ սկսեալ 'ի գրոցս յայսցանէ՝ աւետարանեաց նմա զՅիսուս ։

36 Իբրեւ երթային զճանապարհայն՝ եկին 'ի ջուր ինչ ։ եւ ասէ ներքինին, Ահաւասիկ ջուր՝ զի՞նչ արգելու զիս 'ի մկրտելոյ ։
37 Եւ ասէ ցնա ։ Եթէ հաւատաս բոլորով սրտիւ քով՝ մարթ է ։ պատասխանի ետ եւ ասէ ։ Հաւատամ՝ եթէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ ։
38 Եւ հրամայեաց կացուցանել զկառսն ։ եւ իջին երկոքեան 'ի ջուրսն՝ Փիլիպպոս եւ ներքինին, եւ մկրտեաց զնա ։
39 Եւ իբրեւ ելին 'ի ջրոյ անտի՝ Հոգին Սուրբ եկն 'ի վերայ ներքինւոյն, եւ հրեշտակ Տեառն յափշտակեաց զՓիլիպպոս, եւ ոչ եւս ետես զնա ներքինին ։ եւ գնայր զճանապարհս իւր ուրախութեամբ ։

40 Բայց Փիլիպպոս գտաւ յԱզովտոս ։ եւ շրջեալ աւետարանէր ամենայն քաղաքացն մինչեւ 'ի գալ նորա 'ի Կեսարիա ։

ցաւ, եւ՛ այս գրքէն սկսած՝ Յիսուս Քրիստոսն աւետարանեց նորան ։
36 Երբոր ճանապարհովը գնացին, եկին մէկ ջրի մօտ ։ եւ ներքինին ասաց ։ Ահա ջուր՝ ինչ կարգելէ ինձ՝ որ մկրտուիմ ։
37 Եւ նորան ասաց ։ Թէ որ քո բոլոր սրտովդ հաւատամս, կարելի է ։ Նա պատասխան տուաւ եւ ասաց ։ Հաւատամ՝ թէ Յիսուս Քրիստոսն Աստուծոյ Որդին է ։
38 Եւ հրաման տուաւ, որ կառքը կանգնեցնեն ։ եւ երկուսն էլ ներ եկին ջուրը՝ Փիլիպպոսն ու ներքինին, եւ մկրտեց նորան ։
39 Եւ երբոր այն ջրիցը դուրս եկին, Սուրբ Հոգին եկաւ ներքինոյն վերայ ։ եւ Տէրին հրեշտակը Փիլիպպոսին յափշտակեց, եւ ներքինին էլ չտեսաւ նորան ։ եւ ուրախութենով գնումէր իրեն ճանապարհը ։
40 Բայց Փիլիպպոս Ազոտումը գտաւ ։ եւ ման էր գալիս ու աւետարանում՝ մինչեւ որ եկաւ Կեսարիա ։

## ԳԼ. Թ

1 Իսկ Սաւղոս տակաւին լցեալ սպառնալեօք եւ սպանմամբ աշակերտացն Տեառն, մատուցեալ առ քահանայապետն ։
2 Խնդրեաց 'ի նմանէ թուղթս 'ի Դամասկոս առ ժողովուրդսն ։ որպէս թէ զոք գտցէ զայնր ճանապարհի՝ արս կամ կանայս, կապեալս ածցէ յԵրուսաղէմ ։

3 Եւ ընդ երթալ նորա՝ եղեւ մերձենալ 'ի Դամասկոս ։ յանկար-

1 Բայց Սօղոսն՝ որ դեռ լցված էր ահուփախ տալովը, եւ Տէրի աշակերտները սպանելոյ մաքովը, քահանայապետներին մօտ – եկաւ,
2 Եւ նորանցից թղթեր խնդրեց Դամասկոսի ժողովարաններին վերայ ։ որ եթէ մէկը գտնէ այն ճանապարհին հետեւօղ՝ մարդիկ կամ կանայք, նորանց կապած բերէ Երուսաղէմ ։
3 Եւ երբոր նա գնումէր՝ մօտեցաւ Դամասկոսին, եւ յանկար-

ւ Ղու. ԻԴ. 27 ։
Գլ. ԺԸ. 28 ։
ա Գլ. Հ. 47 ։
ւ Մատթ. ԻԸ. 19 ։
Մարկ. ԺԶ. 16 ։
ղ Մատթ. ԺԶ. 16 ։

Յովհ. Զ. 70 ։
Թ. 35. 38. ԺԱ.
27 ։ Գլ. Թ. 20 ։
Ա Յովհ. Դ. 15 ։
Ե. 5. 13 ։
է Գ Թագ. ԺԸ. 12 ։

Դ Թագ. Բ. 16 ։
Եզեկ. Գ. 12.
14 ։
—
ա Գլ. Ը. 3 ։ Գաղ.
Ա. 13 ։ Ա Տիմ.

Ա. 13 ։
բ Գլ. ԻԲ. 6 ։ ԻԶ.
12 ։ Ա Կորնթ.
ԺԵ. 8 ։

ծակի շուրջ զնովաւ փայլատակեաց լոյս յերկնից :

4 Եւ անկեալ յերկիր, լուաւ բարբառ՝ որ ասէր ցնա. Սաւուղ Սաւուղ՝ զի՞ հալածես զիս :

5 Եւ ասէ՝ Ո՞վ ես Տէր. Եւ նա ասէ. Ես եմ Յիսուս՝ զոր դուն հալածես. խիստ է քեզ ընդդէմ խթանի աքացել :

6 Եւ զարհուրեալ՝ եւ անշշունջ լեալ ասաց. Տէր՝ զիս զի՞նչ կամիս առնել :

7 Եւ ասէ ցնա Տէր. Այլ յառն կաց՝ եւ մուտ ՚ի քաղաքդ, եւ պատմեսցի քեզ՝ զի՞նչ պարտ իցէ առնել. Իսկ արքն՝ որ ընդ նմայն երթային, կային անշշունջ. զձայնն միայն լսէին՝ բայց տեսանէին ոչ զինչ :

8 Յարեաւ Սաւղոս յերկրէ անտի, եւ աչօք բացօք ոչ զոք տեսանէր. զձեռանէ առեալ նորա՝ մուծին ՚ի Դամասկոս :

9 Եւ էր անդ աւուրս երիս՝ եւ ոչ տեսանէր, եւ ոչ եկեր եւ ոչ արբ :

10 Եւ էր ոմն աշակերտ ՚ի Դամասկոս՝ Անանիա անուն. ասէ ցնա Տէր ՚ի տեսլեան. Անանիա, եւ նա ասէ. Աւասիկ եմ Տէր :

11 Եւ ասէ ցնա Տէր. Յոտն կաց՝ եւ գնա ընդ փողոցն՝ որ կոչի Ուղիղ, եւ խնդրեսցես յապարանս Յուդայ՝ Սաւղոս անուն զՏարսոնացի՝ զի կայ զեւ յաղօթս :

12 Եւ ետես ՚ի տեսլեան այր մի Անանիա անուն՝ մտեալ եւ եդեալ ՚ի վերայ նորա ձեռն, որպէս զի տեսցէ :

13 Պատասխանի ետ Անանիա. Տէր՝ լուայ ՚ի բազմաց վասն առնն

ծակի նորա չորս կողմանը լոյս փայլեց երկնքիցը.

4 Եւ վերջինկաւ գետնին եւ ձայն լսեց՝ որ ասումէր նորան, Սաւուղ Սաւուղ՝ ինչու ես ինձ † հալածում:

5 Եւ նա ասաց. ով ես Տէր. Եւ նա ասաց. Ես Յիսուսն եմ՝ որ դու հալածում ես. դժուար է քեզ խըթանին քացի † տալ:

6 Եւ խիստ վախով բռնըված ու ապուշ մնացած ասաց, Տէր՝ ինձ ինչ ես կամենում որ ես † անեմ:

7 Եւ Տէրն ասաց նորան. Կանգնէ եւ մտիր այդ քաղաքդ, եւ կը պատմվիլի քեզ՝ թէ ինչ պէտք է քեզ որ անես. բայց այն մարդիկն՝ որ նորա հետ գնումէին, ապուշ կանգնած † էին. միայն ձայնը լսումէին, բայց ոչ մին բան չէին տեսնում:

8 Սօղոս վերկացաւ գետնիցը, եւ բաց աչքով ոչ մինին չէր տեսնում. նորա ձեռքիցը բռնած մըտցրին Դամասկոս:

9 Եւ այնտեղ էր երեք օր՝ եւ չէր տեսնում. եւ ոչ կերաւ եւ ոչ խմեց:

10 Եւ Դամասկոսումը մին աշակերտ կար Անանիա † անուն, որ Տէրը տեսիլքին մէջ նորան ասաց. Անանիա, եւ նա ասաց. Այստեղ եմ Տէր:

11 Եւ Տէրը նորան ասաց. Վէր կաց՝ եւ գնա այն փողոցն՝ որ Շիտակ է կոչվում, եւ Յուդայի տանը ման եկ մին Սօղոս անուն Տարսոնացի մարդին, որ գեւ աղօթք է † անում:

12 Եւ տեսիլքին մէջ տեսաւ մին Անանիա անուն մարդ՝ որ մտաւ եւ ձեռքը դրաւ իրեն վերայ, որ տեսնէ:

13 Անանիան պատասխան տուաւ. Տէր՝ ես այս մարդոյն համար չատե-

† Մատթ. ԻԵ. 40. ա.
† Գլ. Ե. 39.
† Ղու. Գ. 10. Գլ. Բ. 37. ԺԶ. 30.
† Դան. Ժ. 7. Գլ. ԻԲ. 9. ԻԶ. 13.
† Գլ. ԻԲ. 12.
† Գլ. ԻԱ. 39. ԻԲ. 3.

այնորիկ՝ որչափ արար չարիս սրբոց քոց յԵրուսաղէմ։

14 Եւ աստ ունի իշխանութիւն 'ի քահանայապետից կապել զամենեսեան, որ կարդան զանուն քո։

15 Ասէ ցնա Տէր. Երթ դու՝ զի անօթ ընտրութեան է ինձ նա, կրել զանուն իմ առաջի հեթանոսաց՝ եւ թագաւորաց՝ եւ որդւոցն Իսրայէլի։

16 Քանզի ես իսկ ցուցից նմա՝ որչափ պարտ իցէ նմա չարչարիլ վասն անուան իմոյ։

17 Եւ գնաց Անանիա, եւ եմուտ յապարանսն. եւ եդեալ 'ի վերայ նորա ձեռս, ասէ. Սաւուղ եղբայր՝ 'ի վեր հայեաց, Տէր առաքեաց զիս, Յիսուս՝ որ երեւեցաւն քեզ 'ի ճանապարհին՝ յորում գայիր. որպէս զի անսցես՝ եւ լցցիս Հոգւով Սրբով։

18 Եւ վաղվաղակի անկան յաչաց նորա իբրեւ կեղեւանք. եհաս՝ եւ յարեաւ մկրտեցաւ։

19 Եւ առեալ կերակուր՝ զօրացաւ. եւ եղեւ 'ի Դամասկոս ընդ աշակերտսն աւուրս ինչ։

20 Եւ վաղվաղակի 'ի ժողովուրդսն քարոզեաց զՅիսուս, թէ նա է Որդին Աստուծոյ։

21 Զարմացեալ էին °ամենեքեան, որ լսէինն, եւ ասէին. Ո՞չ սա էր՝ որ աւեր հարկանէր յԵրուսաղէմ զայնոսիկ, որ կարդային զանուն Յիսուսի. եւ այսր նմին իրի եկեալ է, զի կապեալս զնոսա տարցի առ քահանայապետսն։

րից լսեցի՝ թէ Երուսաղէմումը որչափ չարիք արաւ քու [թ] սուրբերիդ։

14 Եւ այստեղ էլ քահանայապետներից իշխանութիւն ունի՝ որ այն ամէնքը կապէ, որ քու անունդ [ժ] կանչումեն։

15 Տէրն ասաց նորան. Գնա դու, ինչու որ՝ նա ինձ համար ընտրուած աման [ի] է, որ իմ անունը վեր առնէ տանի [լ] հեթանոսներին. թագաւորներին եւ Իսրայէլի որդոց [խ] առաջին։

16 Ինչու որ՝ ես նորան ցոյց կը տամ՝ թէ նա որչափ իմ անունիս համար պիտի [ծ] չարչարուի։

17 Եւ Անանիան [կ] գնաց՝ եւ մտաւ այն տունը. եւ ձեռները դրաւ նորա [հ] վերայ, եւ ասաց. Սաւուղ եղբայր՝ վեր նայէ. Տէրն ուղարկեց ինձ, այն Յիսուսն՝ որ երեւեցաւ քեզ ճանապարհումը երբ որ գալիս էիր. որ տեսնես՝ եւ Սուրբ Հոգով [ձ] լցվիս։

18 Եւ շուտով նորա աչքերիցը կեղեւներ պէս վեր ընկան. տեսաւ՝ եւ վերկացաւ եւ մկրտուեցաւ։

19 Եւ կերակուր առաւ՝ զօրացաւ. եւ մին քանի օր Դամասկոսումն աշակերտներին հետ [ղ] էլաւ։

20 Եւ շուտով ժողովարաններումը Յիսուսին քարոզեց, թէ նա է Աստուծոյ [ճ] Որդին։

21 Ամէնքն էլ՝ որ լսումէին, զարմացած էին, եւ ասումէին. Չէ՞ որ սա էր՝ որ Երուսաղէմումը կործանումէր [մ] նորանց, որ Յիսուսին անունը կանչումէին. եւ իսկ նորահամար է այստեղ եկել, որ նորանց կապած տանի քահանայապետներին մօտ։

թ Համար. 1։
ժ Համար. 21։ Գլ. Է. 59։ ԻԲ. 16։ Ա Կորնթ. Ա. 2։ Բ Տիմ. Բ. 22։
ի Գլ. ԺԳ. 2։ ԻԲ. 21։ ԻԶ. 17։ Հռովմ. Ա. 1։ Ա Կորնթ. ԺԵ. 10։ Գաղ. Ա. 15։ Եփես. Գ. 7, 8։ Ա Տիմ. Բ. 7։ Բ Տիմ. Ա. 11։
լ Հռովմ. Ա. 5։ ԺԱ. 13։ Գաղ. Բ. 7, 8։
խ Գլ. ԻԵ. 22, 23։ ԻԶ. 1, ա։
ծ Գլ. Ի. 23։ ԻԱ. 11։ Բ Կորնթ. ԺԱ. 23։
կ Գլ. ԻԲ. 12, 13։
հ Գլ. Ը. 17։
ձ Գլ. Բ. 4։ Դ. 31։ Ը. 17։ ԺԳ. 52։
ղ Գլ. ԻԶ. 20։
ճ Գլ. Ը. 37։
մ Գլ. Ը. 3։ Համար. 1։ Գաղ. Ա. 13, 23։

22 Այլ Սօղոս առաւել եւս զօրանայր՝ եւ յաղթահարէր զՀրէայսն, որ բնակեալ էին 'ի Դամասկոս. եւ խելամտեցուցանէր, թէ սա է Քրիստոսն ։
23 Իբրեւ կատարէին աւուրք բազումք, խորհեցան Հրէայքն սպանանել զնա ։
24 Յայտնեցաւ Սօղոսի նենգութիւն նոցա, քանզի պահէին ըղ դրունսն 'ի տուէ եւ 'ի գիշերի՝ որպէս զի սպանցեն զնա ։
25 Եւ առեալ զնա աշակերտացն 'ի գիշերի՝ ընդ պարիսպն կախեալ իջուցին զամբողովաւ ։
26 Իբրեւ եկն Սօղոս յԵրուսաղէմ, ընդ եղանէր յարել յաշակերտսն. եւ ամենեքեան երկնչէին 'ի նմանէ, չհաւատային թէ իցէ աշակերտ ։
27 Բայց Բառնաբաս առեալ զնա՝ ած առ առաքեալսն. եւ պատմեաց նոցա՝ որպէս 'ի ճանապարհին եաես զՏէր, եւ զի խօսեցաւ ընդ նմա. եւ զի 'ի Դամասկոս համարձակեցաւ յանուն Յիսուսի ։
28 Եւ էր ընդ նոսա 'ի մտանել եւ ելանել յԵրուսաղէմ, համարձակեալ յանուն Տեառն ։
29 Խօսէր՝ եւ վիճէր ընդ Յոյնսն. եւ նոքա խորհէին սպանանել զնա ։
30 Եւ իմացեալ եղբարց՝ իջուցին զնա 'ի Կեսարիա, եւ առաքեցին զնա 'ի Տարսոն ։
31 Բայց եկեղեցին ընդ ամենայն Հրէաստան՝ եւ 'ի Սամարիա եւ 'ի Գալիլեա ունէր խաղաղութիւն, շինեալ եւ երթեալ զերկիւղի

22 Բայց Սօղոսն էլ աւելի զօրանում եւ յաղթում էր այն Հրէաներին, որ Դամասկոսումը բնակված յ էին. հաստատ հասկացնում էր՝ թէ սա է Քրիստոսը ։
23 Երբոր շատ օրեր անցնում էին, Հրէաները խորհուրդ արին՝ որ սպանեն ն նորան ։
24 Նորանց նենգութիւնը յայտնի էղաւ Սօղոսին, ինչու որ՝ գիշեր եւ ցերեկ դռները պահում էին՝ որ նորան շ սպանեն ։
25 Եւ աշակերտները նորան գիշերին առին, եւ քթոցով պարսպից կախելով վեր ո բերին ։
26 Երբոր Սօղոս Երուսաղէմ եկաւ, ջանք էր անում, որ աշակերտներին հետ միաւորվի. եւ ամէնքը նորանից վախենում էին, եւ չէին հաւատում թէ աշակերտ չ է ։
27 Բայց Բառնաբաս նորան պ առաւ տարաւ առաքեալներին մօտ. եւ նոցանց պատմեց՝ թէ ինչպէս ճանապարհումը Տէրին տեսաւ, եւ թէ նորա հետ խօսեց, եւ թէ Դամասկոսումը համարձակ քարոզեց Յիսուսին ջ անունը ։
28 Եւ նորանց հետ էր Երուսաղէմումը մտնելով եւ դուրս գալով, եւ Յիսուսի անունը համարձակ ռ քարոզելով ։
29 Յոյնաց հետ էլ խօսում՝ եւ վիճաբանութիւն էր ս անում. եւ նորանք խորհուրդ էին անում որ սպանեն վ նորան ։
30 Իսկ եղբարքն՝ որ իմացան, նորան տարան Կեսարիա, եւ ուղարկեցին նորան Տարսոն ։
31 Բայց եկեղեցին բոլոր Հրէաստանի՝ Սամարիայի եւ Գալիլեայի մէջ խաղաղութիւն ունէր, շինվում եւ Տէրի երկիւղին հետե–

յ Գլ. ԺԸ. 28.
ն Գլ. ԻԳ. 12. ԻԵ. 3. Բ Կորնթ. ԺԱ. 26.
շ Բ Կորնթ. ԺԱ. 32.
ո Յեսու. Բ. 15. Ա Թագ. ԺԹ. 12.
չ Գլ. ԻԲ. 17. Գաղ. Ա. 17, 18.
պ Գլ. Դ. 36. ԺԳ. 2.
ջ Համար 20. 22.
ռ Գաղ. Ա. 18.
ս Գլ. Զ. 1. ԺԱ. 20.
վ Համար. 23. Բ Կորնթ. ԺԱ. 26.

Տեառն . եւ մխիթարութեամբ Հոգ-
ւոյն Սրբոյ բազմանայր ։
32 Եւ եղեւ ՚ի շրջելն Պետրոսի
առ ամենեքումբք , իջանել նմա եւ
առ սուրբսն՝ որ բնակեալ էին ՚ի
Լիւդիայ ։
33 Եւ եգիտ անդ այր մի , որում
անուն էր Ենեաս , ութամեան զնէր
՚ի մահիճս անդամալոյծ ։

34 Եւ ասէ ցնա Պետրոս . Ենեա՛
բժշկէ զքեզ Տէր Յիսուս Քրիստոս ,
արի՛ եւ քեզէն թօթափեա զանկո-
ղինս քո , եւ վաղվաղակի յարեաւ ։

35 Եւ տեսին զնա ամենեքեան ,
որ բնակեալ էին ՚ի Լիւդիա եւ ՚ի
Սարոնայ , որք եւ դարձան իսկ ՚ի
Տէր ։
36 Եւ ՚ի Յոպպէ էր կին մի աշա-
կերտեալ՝ անուն Տաբիթա , որ թարգ-
մանեալ կոչի Այծեմնիկ . սա էր լի
գործովք բարեօք եւ ողորմու-
թեամբք , զոր առնէր ։
37 Եւ եղեւ յաւուրսն յայնոսիկ
հիւանդանալ նմա եւ մեռանել .
լուացին զնա՝ եւ եդին ՚ի վերնա-
տան անդ ։
38 Եւ մերձ էր Լիւդիա ՚ի Յոպ-
պէ . աշակերտացն լուեալ եթէ Պետ-
րոս անդ է , առաքեցին երկուս արս
առ նա՝ աղաչել , զի մի՛ դանդաղես-
ցի գալ առ նոսա ։
39 Եւ յարուցեալ Պետրոս՝ եկն
ընդ նոսա . զոր իբրեւ եկն՝ հանին
՚ի վերնատունն . եւ կացին շուրջ
զնովաւ այրիքն ամենայն . լային եւ
ցուցանէին զձորձս եւ զհանդերձս ,
որչափ առնէր նոցա Այծեմնիկն ։

40 Եւ հանեալ արտաքս զամենեսե-
եան Պետրոսի , եդ ծունր՝ եկաց
յաղօթս . եւ դարձաւ ՚ի մարմինն

ւում . եւ Սուրբ Հոգւոյ մխիթա-
րութենովն = շատանումէր ։
32 Եւ էլաւ երբոր Պետրոս մանն
էր գալիս չորս կողմանը ամէնին
մօտ , եկաւ այն սրբերին մօտ , որ
Լիւդիայի մէջ բնակված ր էին ։
33 Եւ այնտեղ մին մարդ գտաւ ,
որ նորա անունն Ենեա էր . ութ
տարի մահճի մէջ անդամալուծ
դրած ։
34 Եւ Պետրոսն ասաց նորան .
Ենեա՛ Տէր Յիսուս Քրիստոսը քեզ
բժշկէ , վե՛ր կաց , դու ինքդ քո
անկողինդ թաժի տակ չինէ . եւ
շուտով ɔ վերկացաւ ։
35 Եւ ամէնքը նորան տեսին՝ որ
բնակված էին Լիւդիայի եւ Սարո-
նի – մէջ , եւ նորանք էլ դարձան
դէպի ‡ Տէրը ։
36 Եւ Յոպպէի մէջ մին աշակերտ
էլած կին կար՝ անունը Տաբիթա ,
որ կը թարգմանվի Այծեմնիկ . սա
լիքն էր բարի գործքերով եւ ո-
ղորմութենով որ + անումէր ։
37 Եւ էլաւ այն օրերն՝ որ նա
հիւանդացաւ եւ մեռաւ , լուացին
նորան եւ դրին • վերնատանը ։

38 Եւ Լիւդիան մօտիկ էր Յոպ-
պէին . երբոր աշակերտանները լսեցին՝
թէ Պետրոսն այնտեղ է , նորա մօտ
երկու մարդ ուղարկեցին աղաչելով ,
որ չուշանայ նորանից մօտ գալ ։
39 Եւ Պետրոս վերկացաւ՝ եւ նո-
րանց հետ եկաւ . երբոր եկաւ , նո-
րան հանեցին այն վերնատանը . եւ
ամէն որբեւէրիները նորա չորս կող-
մովը կանգնեցին . լաց էին լինում ,
եւ ցոյց տալիս այն հագուստներն
ու այն շորերը , որչափ որ Այծե-
մնիկը նորանց համար անումէր ։
40 Եւ Պետրոսն ամէնին դուրս
§ հանեց , ծունր դրաւ աղօթք – ա-
րաւ . եւ դարձաւ դէպի մարմինը

= Գլ . Ը . 1 .
ր Գլ . Ը . 14 .
ɔ Գլ . Գ . 6 . 16 .
Գ . 10 .
– Ա . Մնաց . Ե . 16 .
‡ Գլ . ԺԱ . 21 .
+ Ա . Տիմ . Բ . 10 .
Տիտ . Գ . 8 .
• Գլ . Ա . 13 .
§ Մատթ . Թ . 25 .
= Գլ . Ե . 59 .

եւ ասէ․ Տաբիթա՛ արի՛ կաց յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի․ եւ նա եբաց զաչս իւր․ եւ տեսեալ զՊետրոս՝ նստաւ կանգուն։

41 Ձեռն ետ նմա՝ եւ յարոյց զնա․ կոչեաց զսուրբսն եւ զայրիս, առաջի կացոյց զնա կենդանի։

42 Եւ յայտնի եղեւ ընդ ամենայն Յոպպէ, եւ հաւատացին բազումք ՚ի Տէր։

43 Եւ եղեւ աւուրս բազումս լինել նմա ՚ի Յոպպէ՝ առ ումեմն Սիմոնի խաղախորդի։

եւ ըսաւ․ Տաբիթա՛ վեր կաց Տէր Յիսուսի Քրիստոսի անունովը․ եւ նա աչքերը ‡ բացաւ․ եւ Պետրոսին որ տեսաւ՝ շիտակ նստաւ։

41 Եւ ձեռքը տուաւ նորան՝ եւ վերկացուց նորան․ եւ կանչեց սրբերին եւ որբեւէրիներին, եւ նորանց առաջին կենդանի կանգնացուց նորան։

42 Եւ յայտնի էղաւ ամէն Յոպպէի մէջ, եւ շատերը հաւատացին † Տէրին։

43 Եւ նա շատ օր մնաց Յոպպէումը՝ մին կաշի քերող Սիմոնի ÷ մօտ

## ԳԼ․ Ժ

1 Այր մի էր ՚ի Կեսարիա՝ անուն Կոռնելիոս հարիւրապետ, ՚ի գնդէ՝ որ կոչէր Իտալացի։

2 Բարեպաշտօն եւ երկիւղած յԱստուծոյ ամենայն տամբ իւրով․ առնէր ողորմութիւնս բազումս ՚ի ժողովրդեանն, եւ յաղօթս կայր առ Աստուած յամենայն ժամ։

3 Եւես ՚ի տեսլեան յայտնապէս զիններորդ ժամու աւուրն զհրեշտակ Աստուծոյ, զի մտանէր առ նա՝ եւ ասէր ցնա․ Կոռնելի՛։

4 Եւ նա հայեցեալ ընդ նա զարհուրեցաւ, եւ ասէ․ Զի՞ է Տէր․ եւ ասէ ցնա․ Աղօթք քո՝ եւ ողորմութիւնք քո ելին յիշատակաւ առաջի Աստուծոյ։

5 Եւ արդ յղեա արս ՚ի Յոպպէ՝ եւ կոչեա զՍիմոն զոմն՝ որ կոչի Պետրոս։

6 Նա մանեալ է առ Սիմոնի ումեմն խաղախորդի, որոյ է տունն մերձ ՚ի ծով։

1 Կեսարիայումն մին մարդ կար՝ Կոռնէլիոս անուն հարիւրապետ, այն գնդիցն՝ որ Իտալիացի էր կոչւում,

2 — Բարեպաշտ եւ աստուածավախ իրեն ամէն տանովը․ եւ շատ ողորմութիւն էր անում ժողովրդին մէջ․ եւ ամէն ժամ աղօթք էր անում դէպի ‡ Աստուած։

3 Նա օրի իննը ժամումը տեսիլքին մէջ յայտնի տեսաւ Աստուծոյ հրեշտակը, որ մտնումէր նորան մօտ՝ եւ նորան ասում․ Ո՛վ † Կոռնէլիոս։

4 Եւ նա երբոր նայեց դէպի նա՝ շատ վախով բռնուեցաւ, եւ ասաց․ Ի՞նչ է՝ Տէր․ եւ նա ասաց նորան․ Քո աղօթքդ՝ եւ քո ողորմութիւններդ վեր էլան Աստուծոյ առաջին՝ որ յիշվին։

5 Եւ հիմիկ մարդիկ ուղարկէ Յոպպէ՝ եւ մին Սիմոն կանչէ՝ որ Պետրոս է կոչվում։

6 Նա մնալ է մին կաշի քերող Սիմոնի մօտ, որ նորա տունը ծովին մօտ ÷ է։

‡ Մարկ. Ե. 41. 42. Յովհ. ԺԱ. 43.
† Յովհ. ԺԱ. 45.
ԺԲ. 11.
÷ Գլ. Ժ. 6.

— Համար. 22։ Գլ. Ը. 2։ ԽԲ. 12.
‡ Համար. 35.
† Համար. 30։ Գլ. ԺԱ. 13.
÷ Գլ. Թ. 43.

7 Եւ իբրեւ գնաց հրեշտակն՝ որ
խօսէր ընդ նմա, կոչեաց երկուս
'ի ծառայից իւրոց՝ եւ զինուոր մի
բարեպաշտօն 'ի սպասաւորացն իւ-
րոց ·
8 Եւ պատմեալ նոցա զամենայն,
առաքեաց զնոսա 'ի Յոպպէ ։
9 Եւ 'ի վաղիւ անդր 'ի ճանա-
պարհ անկանել նոցա՝ եւ մօտ 'ի
քաղաքն լինել, ել Պետրոս 'ի տա-
նիսն կալ յաղօթս զվեցերորդ ժա-
մուն ։
10 Քաղցեաւ եւ կամէր ճաշակել ·
եւ 'ի պատրաստելն նոցա՝ եղեւ 'ի
վերայ նորա զարմացումն ։

11 Եւ տեսանէր զերկինս բացեալ ·
եւ զչորեցունց անկեանց կապեալ ա-
նօթ ինչ իբրեւ զկտաւ մեծ,
իջեալ նստեալ 'ի վերայ երկրի ։
12 Յորում էին ամենայն չորքոտա-
նիք եւ սողունք երկրի եւ թռչունք
երկնից ։
13 Եւ եղեւ ձայն առ նա · Արի
Պետրոս, զե՛ն եւ կեր ։

14 Եւ Պետրոս ասէ · Քաւ լիցի
Տէր, զի ոչ երբէք կերայ խառնակ
ինչ եւ անսուրբ ։
15 Ձայն եղեւ կրկին անգամ առ
նա · Զոր Աստուած սրբեաց՝ դու
մի պղծեր ։
16 Այս եղեւ երիցս եւ վերացաւ
անօթն յերկինս ։
17 Եւ մինչդեռ զարմացեալ էր
ընդ միտս Պետրոս՝ թէ զինչ իցէ
տեսիլն զոր ետես · ահա արքն ա-
ռաքեալք 'ի Կոռնելեայ՝ հարցին
զտապարանացն Սիմոնի, կային առ
դրանն ։
18 Կոչեցին եւ հարցանէին, եթէ
Սիմոն՝ որ կոչի Պետրոս՝ աստ մի-
ւանի իցէ ։

7 Եւ երբոր գնաց այն հրեշտակն՝
որ նորա հետ խօսումէր, իրեն ծա-
ռաներից երկուսին՝ եւ իրեն սպա-
սաւորներից մին բարեպաշտ զին-
ուոր կանչեց ·
8 Եւ ամէնը պատմեց նորանց,
եւ ուղարկեց նորանց Յոպպէ ։
9 Եւ յետեւեալ օրը՝ երբոր նորանք
ճանապարհ ընկան, եւ այն քաղա-
քին մօտեցան, Պետրոս վեր ելաւ
կտուրը վեց ժամին՝ որ աղօթք
ա անէ ։
10 Սովեց՝ եւ կամենումէր հաց
ուտել · եւ երբոր նորանք դեռ
պատրաստումէին՝ յափշտակութիւն
ելաւ նորա վերայ,
11 Եւ տեսաւ երկինքը ~ բացված ·
եւ մին մեծ կտաւի պէս աման՝
չորս ծայրերը կապած կախած, եւ
վէր եկաւ եւ նստաւ երկրի վերայ,
12 Որ նորանում կային երկրի ա-
մէն կերպ չորս ոտանիքներ եւ սո-
ղուններ եւ երկնքի թռչուններ ։
13 Եւ երկնքիցն ձայն եկաւ նո-
րան · Վե՛ր կաց Պետրոս, մորթէ՛
եւ կե՛ր ։
14 Եւ Պետրոսն ասաց · Քաւ լիցի
Տէր, ինչու որ՝ ոչ մին ժամանակ
խառնակ եւ պիղծ բան ~ չը կերայ ։
15 Դարձեալ ձայն եկաւ նորան ·
Նա որ Աստուած սրբեց՝ դու պիղծ
մի համարիր ։
16 Սա երեք անգամ էլաւ՝ եւ այն
ամանը վերացաւ երկինքը ։
17 Եւ Պետրոս դեռ որ զարմացած
էր իրեն մտքումը, թէ ինչ պիտի
լինի այն տեսիլքը՝ որ տեսաւ · ահա
այն Կոռնէլիոսիցն ուղարկված մար-
դիքը՝ Սիմոնի տան համար հարցրին,
եւ դրան մօտն կանգնեցին ·
18 Կանչեցին եւ հարցնումէին,
թէ Այն Սիմոնն՝ որ Պետրոս է կոչ-
վում՝ այստեղ է կենում ։

ե Գլ. ԺԱ. 5, ա. զ Գլ. Ի. 55. Յայտ. ԺԹ. 11. ժ Ղև. ԺԱ. 4. Ի. 25. Բ Օրին. ԺԴ. 3. 7. Եզեկ. Դ. 14. է Մատթ. ԺԵ. 11. Հռոմ. 28. Հը-ռովմ. ԺԴ. 14. 17. 20. Ա Կորնթ. Ժ. 25. Ա Տիմ. Դ. 4. Տիտ. Ա. 15.

19 Եւ մինչդեռ Պետրոս զմտաւ ածէր վասն տեսլեանն, ասէ Հոգին ցնա. Ահաւասիկ արք ոմանք խնդրեն զքեզ։

20 Այլ արի էջ եւ երթ ընդ նոսա առանց իրիք խղճելոյ, զի ես առաքեցի զնոսա։

21 Եւ իբրեւ էջ Պետրոս առ նոսա, ասէ. Ահաւասիկ ես եմ՝ զոր խնդրէքդ. զի՞նչ իրք են՝ վասն որոյ եկիքդ։

22 Եւ նոքա ասեն, Կոռնելիոս հարիւրապետն՝ այր արդար եւ երկիւղած յԱստուծոյ, վկայեալ յամենայն ազգէն Հրէից. հրաման առ ՚ի հրեշտակէ սրբոյ՝ կոչել զքեզ ՚ի տուն իւր՝ եւ լսել բանս ՚ի քէն։

23 Կոչեաց զնոսա ՚ի ներքս՝ եւ առ իւր ագոյց. եւ ՚ի վաղիւ անդր յարուցեալ Պետրոս՝ գնաց ընդ նոսա. եւ ոմանք յեղբարց անտի՝ որ ՚ի Յոպպէ էին՝ եկին ընդ նմա։

24 Եւ ՚ի վաղիւ անդր մտին ՚ի Կեսարիա. եւ Կոռնելիոս մնայր նոցա, կոչեցեալ զազգատոհմն իւր, եւ զկարեւոր բարեկամսն։

25 Եւ եղեւ ՚ի մտանելն Պետրոսի՝ ընդ առաջ եղեւ նմա Կոռնելիոս, անկեալ առ ոտսն՝ երկիր պագանէր։

26 Եւ Պետրոս կանգնեաց զնա՝ եւ ասէ. Յոտն կաց՝ եւ ես ինքն մարդ եմ։

27 Եւ խօսելով ընդ նմա եմուտ ՚ի ներքս. եւ գտանէր անդ ժողովեալ բազումս։

28 Եւ ասէ ցնոսա. Դուք ինքնին գիտէք՝ որպէս անմարթ է առն Հրէի հպել կամ մերձենալ առ այ-

19 Եւ դեռ որ Պետրոս տեսիլքին համար միտք էր անում, Հոգին նորան ասաց. Ահա մին քանի մարդիկ քեզ ր ուզումեն։

20 Բայց վե՛ր կաց վէր եկ, եւ նորանց հետ գնա առանց մին խղճմտանք անելոյ, ինչու որ՝ ես ուղարկեցի ձ նորանց։

21 Եւ երբոր Պետրոս վէր եկաւ նորանց մօտ, ասաց. Ահա ես եմ՝ որ ուզումէք. ինչ բան կայ՝ որ նորա համար եկիք դուք։

22 Եւ նորանք ասացին, Կոռնելիոս հարիւրապետը՝ արդար եւ աստուածավախ է մարդ, որ Հրէաների բոլոր ազգիցը բարի վկայութիւն ունի. նա հրաման առաւ սուրբ հրեշտակիցն՝ որ քեզ կանչէ իրեն տունը՝ եւ քեզանից խօսքեր լսէ։

23 Ներս կանչեց նորանց՝ եւ իրեն մօտ պահեց. եւ յետեւի օրը Պետրոս վերկացաւ՝ եւ նորանց հետ գնաց. եւ այն եղբայրներիցն՝ որ Յոպպէյումն էին, մին քանիսը նորա հետ ի եկին։

24 Եւ հետեւեալ օրը մտին Կեսարիա. եւ Կոռնելիոս իրեն ազգականներին եւ ընտանի բարեկամներին կանչել էր, եւ սպասումէր նորանց։

25 Եւ էլաւ երբոր Պետրոս ներս էր մտնում՝ Կոռնելիոսը դուրս եկաւ նորա առաջը, եւ նորա ոտներն ընկած երկրպագութիւն էր անում։

26 Եւ Պետրոս կանգնացրուց նորան՝ եւ ասաց. Վէ՛ր կաց՝ ես ինքս էլ մարդ ձ եմ։

27 Եւ նորա հետ խօսելով ներս մտաւ. եւ այնտեղ շատ մարդ ժողոված գտաւ։

28 Եւ նորանց ասաց. Դուք ինքներդ գիտումէք՝ թե ինչպէս չի վայելում Հրէայ մարդոյ՝ որ մին այ-

ր Գլ. ժԱ. 12. ձ Գլ. ժե. 7. է Գլ. ժ. 1, 2. ԺԸ. ւ Գլ. ԻԲ. 12. ի Համար. 45. Գլ. ժԱ. 12. ձ Գլ. ժԴ. 14. 15. Յայտ. ժԹ. 10. ԻԲ. 9.

լաւգի ․ եւ ինձ Աստուած եցոյց մի՛
զոք խառնակ կամ անսուրբ ասել
'ի մարդկանէ ։

29 Վասն այսորիկ եւ առանց ընդ
բանս ինչ ածելոյ եկի կոչեցեալ ․
բայց արդ հարցանեմ, Յի՞նչ պէտս
կոչեցէք զիս ։
30 Եւ Կոռնելիոս ասէ ․ Յառաջ
քան զչորս աւուրս մինչ ցայս ժամ
կայի յաղօթս յինն ժամն 'ի տան ի-
մում, եւ ահա այր մի եկն՝ եկաց
առաջի իմ 'ի հանդերձս պայծառս,
եւ ասէ ․
31 Կոռնելի՛ լուան եղեն աղօթք
քո ․ եւ ողորմութիւնք քո յիշեցան
առաջի Աստուծոյ ։
32 Եւ արդ՝ յղեա՛ 'ի Յոպպէ՝ եւ
կոչեա՛ զՍիմոն, որ կոչեցեալն է
Պետրոս ․ սա մանեալ է 'ի տան Սի-
մոնի ուրուք խաղախորդի մերձ
'ի ծովն ․ որ եկեսցէ, եւ խօսեսցի
բանս ընդ քեզ ։
33 Եւ ես իսկ եւ իսկ յղեցի առ
քեզ ․ դու բարւոք արարեր՝ զի ե-
կիր ․ արդ՝ ամենեքին մեք առաջի
Աստուծոյ կամք լսել զամենայն,
զոր հրամայեալ է քեզ 'ի Տեառնէ ։

34 Եբաց Պետրոս զբերան իւր՝ եւ
ասէ ․ Ճշմարտութեամբ հասեալ
եմ, զի ոչ գոյ աչառութիւն առ
'ի յԱստուծոյ ․
35 Այլ յամենայն ազգս՝ որ եր-
կնչին 'ի նմանէ՝ եւ գործեն զար-
դարութիւն, ընդունելի է նմա ։

36 Զբանն առաքեաց որդւոցն Իս-
րայէլի՝ աւետարանել զխաղաղու-

լազգւոյ զիրաշի կամ ՝ մօտենայ ․ եւ
Աստուած ինձ ցոյց [a] տուաւ, որ
մարդկանցից ոչ մէկն էլ խառնակ
կամ անսուրբ չը պիտի ասէի ։
29 Սրա համար էլ առանց մին բան
մտածելոյ եկի, երբոր կանչվեցայ ․
բայց հիմիկ հարցնում եմ, Ի՞նչ բանի
համար կանչեցէք ինձ ։
30 Եւ Կոռնելիոսն ասաց ․ Չորս
օրից առաջ մինչեւ այս ժամն՝ իմ
տանս մէջ աղօթք էի անում ինը
ժամին եւ ահա մին մարդ եկաւ՝
կանգնեց իմ առաջիս պայծառ շո-
րերով, եւ ասաց ․
31 Կոռնելիոս՝ քու աղօթքդ [b] լսու-
եցաւ ․ եւ քո ողորմութիւններդ
յիշվեցան Աստուծոյ [c] առաջին ։
32 Եւ հիմիկ ուղարկէ Յոպպէ՝ եւ
կանչէ այն Սիմոնին՝ որ Պետրոս է
կոչվում ․ սա մնալ է մին կաշի քե-
րող Սիմոնի տան ծովին մօտ ․ որ
նա գայ, եւ քեզ հետ խօսի ։

33 Եւ ես շուտով քեզ մօտ ու-
ղարկեցի ․ ու դու շատ լաւ արիր՝
որ եկիր ․ հիմիկ մէնք ամէնքս Աս-
տուծոյ առաջին կանգնած ենք՝ որ
լսենք այն ամէնն, որ Տէրից քեզ
հրամայած է ։
34 Պետրոսն իրեն բերանը բացաւ՝
եւ ասաց ․ Ճշմարտութենով հաս-
կացել եմ, որ Աստուծոյ առաջին
երեսպաշտութիւն [d] չը կայ ․
35 Այլ թէ ամէն ազգերումը, ով
որ վախենում է նորանից՝ եւ ար-
դարութիւն գործում, ընդունելի
է [e] նորան ։
36 Նա այն բանն ուղարկեց Իսրա-
յէլի որդոցը համար՝ որ խաղաղու-

[a] Յովհ․ Դ․ 9 ։ ԺԸ․ 28 ։ Գղ․ ԺԱ․ 3 ։ Գաղ․ Բ․ 12․ 14 ։
[b] Գղ․ ԺԵ․ 8, 9 ։ Եփես․ Գ․ 6 ։
[c] Գղ․ Ա․ 10 ։
[d] Մատթ․ ԻԲ․ 3 ։ Մարկ․ ԺԶ․ 5 ։ Ղու․ ԻԴ․ 4 ։
[e] Հռովմ․ 4, ... ։ Դան․ Ժ․ 12 ։
Եբր․ Զ․ 10 ։
Բ Օրէն․ Ժ․ 17 ։ Բ Մնաց․ ԺԹ․ 7 ։ Յոբ․ ԼԴ․ 19 ։ Հռովմ․ Բ․ 11 ։ Գաղ․ Բ․ 6 ։ Եփես․ Զ․ 9 ։ Կող․ Գ․ 25 ։ Ա Պետ․ Ա․ 17 ։
Գղ․ ԺԵ․ 9 ։ Հռովմ․ Բ․ 13․ 27 ։ Գ․ 22․ 29 ։ Ժ․ 12, 13 ։ Ա Կորնթ․ ԺԲ․ 13 ։ Գաղ․ Գ․ 28 ։ Եփես․ Բ․ 13․ 18 ։ Գ․ 6 ։

թիւն 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի. սա է ամենայնի Տէր։

37 Դուք ինքնին գիտէք զբանն, որ եղեւ ընդ ամենայն Հրէաստան սկսեալ 'ի Գալիլեէ յետ մկրտութեանն զոր քարոզեաց Յովհաննէս։

38 ԶՅիսուս՝ որ 'ի Նազարեթէ՝ զոր օծ Աստուած Հոգւով Սրբով եւ զօրութեամբ. որ շրջեցաւ բարի առնել՝ եւ բժշկել զամենայն ըմբռնեալս 'ի Սատանայէ. զի Աստուած էր ընդ նմա։

39 Եւ մեք վկայ եմք ամենայնի՝ զոր արար յերկրին Հրէաստանի՝ եւ յԵրուսաղէմ. զոր եւ սպանին կախեալ զփայտէ։

40 Զնա Աստուած յարոյց յերրորդ աւուր. եւ ետ նմա յայտնի լինել.

41 Ո՛չ ամենայն ժողովրդեանն. այլ մեզ վկայիցս յառաջագոյն ընտրելոցս յԱստուծոյ. որ եւ կերաք՝ եւ արբաք ընդ նմա՝ յետ յարութեանն նորա 'ի մեռելոց։

42 Եւ պատուիրեաց մեզ քարոզել ժողովրդեանն՝ եւ վկայութիւն դնել, թէ նա է սահմանեալն յԱստուծոյ՝ դատաւոր կենդանեաց եւ մեռելոց։

43 Նմա ամենայն մարգարէք վկայեն, թողութիւն մեղաց առնուլ անուամբ նորա՝ ամենայն հաւատացելոց 'ի նա։

թիւն աւետարանէ Յիսուսի Քրիստոսի կ ձեռովը. նա է ամէնի հ Տէրը։

37 Դուք ինքներդ գիտումէք այն բանն, որ էղաւ ամէն Հրէաստանումը Գալիլեայիցն սկսած՝ այն մկրտութենիցն ետեւ, որ Յօհաննէսը ձ քարոզեց։

38 Այն Յիսուսին՝ որ Նազարէթիցն էր՝ որ նորան Աստուած Սուրբ Հոգով եւ զօրութենով ղ օծեց. որ ման եկաւ բարի անելոյ՝ եւ Սատանայիցն ամէն բռնվածները բժշկելոյ համար. ինչու որ՝ Աստուած նորա հետն ճ էր։

39 Եւ մենք վկայ ենք այն ամէնին՝ որ Հրէաստանի երկրումը՝ եւ Երուսաղէմումն մ արաւ. որ նորան էլ փայտից կախած յ սպանեցին։

40 Նորան Աստուած յարոյց երեք օրումը. եւ նորան յայտնի ն արաւ.

41 Ո՛չ թէ ամէն ժողովրդին, բայց մեզ Աստուածանից առաջ ընտրված շ վկաներիս. որ էլ կերինք եւ խմեցինք նորա հետ՝ նորա մեռելների միջիցն յարութիւն առնելուցն ո ետեւ։

42 Եւ պատուիրեաց մեզ՝ որ ժողովրդին չ քարոզենք՝ եւ վկայութիւն դնենք, թէ նա Աստուածանից սահմանված պ է կենդանիների եւ մեռելների ջ դատաւոր։

43 Նորան ամէն մարգարէները վկայութիւն են ռ տալիս, որ նորա անունովը մեղաց թողութիւն կառնեն այն ամէնքը՝ որ հաւատումեն ս նորան։

կ Եսայ. ԾԷ. 19. Եփես. Բ. 14. 16. 17. Կող. Ա. 20.
հ Մատթ. ԻԸ. 18. Հռովմ. Ժ. 12. Ա Կորնթ. ԺԵ. 27. Եփես. Ա. 20. 22. Ա Պետ. Գ. 22. Յայտ. ԺԷ. 14. ԺԹ. 16.
ձ Ղու. Դ. 14.
ղ Ղու. Դ. 18. Գրծ. Բ. 22. Դ. 27. Եբր. Ա. 9.
ճ Յովհ. Գ. 2.
մ Գրծ. Բ. 32.
յ Գրծ. Ե. 30.
ն Գրծ. Բ. 24.
շ Յովհ. ԺԴ. 17. 22. Գրծ. ԺԳ. 31.
ո Ղու. ԻԴ. 30. 43. Յովհ. ԻԱ. 13.
չ Մատթ. ԻԸ. 19. 20. Գրծ. Ա. 8.
պ Յովհ. Ե. 22. 27. Գրծ. ԺԷ. 31.
ջ Հռովմ. ԺԴ. 9. 10. Բ Կորնթ. Ե. 10. Բ Տիմ. Դ. 1. Ա Պետ. Դ. 5.
ռ Եսայ. ԾԳ. 11. Երեմ. ԼԱ. 34. Դան. Թ. 24. Միք. Է. 18. Զաք. ԺԳ. 1. Մաղ. Դ. 2. Գրծ. ԻԶ. 22.
ս Գրծ. ԺԵ. 9. ԻԶ. 18. Հռովմ. Ժ. 11. Գաղ. Գ. .

44 Եւ մինչդեռ խօսէր Պետրոս զբանս զայս, հանգեաւ Հոգին Սուրբ ՚ի վերայ ամենեցուն՝ որ լսէին զբանն։
45 Զարմացան՝ որք ՚ի թլփատութենէ անտի հաւատացեալք եկեալ էին ընդ Պետրոսի. զի եւ ՚ի հեթանոսս պարգեւք Հոգւոյն Սրբոյ զեղուին։
46 Քանզի լսէին ՚ի նոցանէ խօսել լեզուս՝ եւ մեծացուցանել զԱստուած։
47 Յայնժամ պատասխանի ետ Պետրոս. Միթէ զջուր ոք արգելուլ կարէ՞ առ ՚ի չմկրտելոյ զսոսա. որք եւ զՀոգին Սուրբ ընկալան՝ որպէս եւ մեք։
48 Եւ հրամայեաց նոցա մկրտել յանուն Յիսուսի Քրիստոսի. յայնժամ աղաչեցին զնա լինել առ նոսա աւուրս ինչ։

44 Եւ դեռ քանի որ Պետրոսն այս բաներս խօսումէր, Սուրբ Հոգին վեր եկաւ այն ամէնին վրայ՝ որ այն խօսքը ‡ լսումէին։
45 Զարմացան այն թլփատութենից հաւատացեալներն՝ որ Պետրոսին հետ եկել = էին. որ հեթանոսներին մէջ էլ Սուրբ Հոգոյ պարգեւները ‡ թափվումէին։
46 Ինչու որ լսումէին՝ որ նորանք լեզուներով խօսումէին՝ եւ Աստուծուն փառաւորում։
47 Այն ժամանակը Պետրոս պատասխան տուաւ՝ եւ ասաց. Միթէ մինը կարող է ջուրն արգելել՝ որ սորանք չը մկրտվին. որ Սուրբ Հոգին ընդունեցին՝ ինչպէս որ ‡ մենք։
48 Եւ նորանց հրաման ∓ տուաւ որ Յիսուսի Քրիստոսի անունովը ⱶ մկրտվին. այն ժամանակը աղաչեցին նորան՝ որ մին քանի օր այն տեղ կենայ։

## Գլ. ԺԱ.

1 Լուան առաքեալքն եւ եղբարք՝ որ էին ՚ի կողմանս Հրէաստանի, զի եւ ՚ի հեթանոսս ընկալան զբանն Աստուծոյ։
2 Բայց յորժամ ել Պետրոս յԵրուսաղէմ, խզէին ՚ի նմանէ՝ որ ՚ի թլփատութենէ անտի հաւատացեալքն.
3 Եւ ասէին, թէ Մտեալ առ արս անթլփատս՝ եւ կերեր ընդ նոսա։
4 Եւ սկսաւ Պետրոս պատմել նոցա կարգաւ՝ եւ ասէ.
5 Ես էի ՚ի քաղաքին ՚ի Յոպպէ յաղօթս՝ եւ տեսանէի ՚ի զարմացման տեսիլ. իջանել անօթ ինչ իբրեւ կտաւոյ մեծի չորեքցանց պա–

1 Առաքեալներ եւ այն եղբայրները՝ որ Հրէաստանի կողմերումն էին՝ լսեցին, որ հեթանոսներին մէջ էլ Աստուծոյ խօսքըն ընդունեցին։
2 Բայց երբոր Պետրոս վեր ելաւ Երուսաղէմ, այն հաւատացեալներն՝ որ թլփատութենիցն էին քաշվումէին = նորանից։
3 Եւ ասում, թէ նա անթլփատ մարդկանց մօտ ‡ գնաց, եւ նորանց հետ ‡ կերաւ։
4 Եւ Պետրոսն սկսեց կարգով պատմել նորանց՝ եւ ∓ ասաց.
5 Ես Յոպպէ քաղաքումն աղօթք էի անում՝ եւ յափշտակութիւնով տեսիլք տեսի. որ մին մեծ կտաւի պէս աման՝ չորս ծայրից

‡ Գլ. Դ. 31. Ը. 15. 16. 17.
= Համար. 23.
‡ Գլ. ԺԱ. 18. Գաղ. Գ. 14.
‡ Գլ. ԺԱ. 17. ԺԵ 8, 9. Հռովմ. Ժ. 12.
∓ Ա Կորնթ. Ա. 17.
ⱶ Գլ. Բ. 38. Ը. 16.

—

= Գլ. Ժ. 45. Գաղ. Բ. 12.
‡ Գլ. Ժ. 28.
‡ Գաղ. Բ. 12.
∓ Ղուկ. Ա. 3.

նոց կախեալ յերկնից՝ եւ եհաս
մինչեւ առ իս ։
6 Յոր պշուցեալ հայէի․ եւ տեսի
զչորքոտանիս երկրի, եւ զգազա-
նս, եւ զսողունս, եւ զթռչունս
երկնից ։
7 Եւ լուայ բարբառ՝ որ ասէր
ցիս․ Արի Պետրոս՝ զե՛ն եւ կե՛ր ։
8 Եւ ասեմ․ Քա՛ւ լիցի Տէր, զի
խառնակ ինչ եւ անսուրբ ոչ եր-
բէք եմուտ ՚ի բերան իմ ։

9 Պատասխանի ետ ինձ երկիցս
անգամ բարբառն յերկնից․ Զոր
Աստուած սրբեաց՝ դու մի խառ-
նակ համարիր ։
10 Այս եղեւ երիցս, եւ վերացաւ
ամենայն դարձեալ յերկինս ։

11 Եւ ահա անդրէն երեք արք ե-
կին կացին առ ապարանիցն՝ ուր
եսն էի, առաքեալք ՚ի Կեսարիայ
առ իս ։
12 Եւ ասէ ցիս Հոգին՝ երթալ
ընդ նոսա՝ եւ մի ինչ խղճել․ Եկին
ընդ իս եւ սոքա վեցեքին եղ-
բարքս, եւ մտաք ՚ի տուն առնն
այնորիկ ։
13 Եւ պատմեաց մեզ՝ որպէս ե-
տես զհրեշտակն ՚ի տան իւրում,
զի կայր եւ ասէր ցնա․ Առաքեա
՚ի Յոպպէ, եւ կոչեա զՍիմոն, զկո-
չեցեալն Պետրոս ․
14 Որ խօսեսցի բանս ընդ քեզ,
որովք կեցցես դու եւ ամենայն
տուն քո ։
15 Եւ իբրեւ սկսայ խօսել՝ եկն
Հոգին Սուրբ ՚ի վերայ նոցա․ որ-
պէս եւ ՚ի վերայ մեր ՚ի սկզբանն ։
16 Յիշեցի զբանն Տեառն՝ զոր ա-
սէրն․ Յովհաննէս մկրտեաց ՚ի ջուր․
բայց դուք մկրտիջիք ՚ի Հոգին
Սուրբ ։

կախուած երկնքիցն վէր էր գալիս՝ եւ
հասաւ մինչեւ ինձ ŀ մօտ ։
6 Նորան պշշած նայում էի․ եւ
տեսի երկրի չորս ոտանիներն ու
գազանները, եւ սողացողներն ու
երկնքի թռչունները ։
7 Եւ ձայն լսեցի՝ որ ասում էր ինձ․
Պետրոս՝ վեր կաց՝ մորթէ եւ կեր ։
8 Եւ ասացի․ Քաւ լիցի Տէր․
ինչու որ՝ ոչ մին ժամանակ մին
խառնակ եւ անսուրբ բան իմ բե-
րանս չէ մտած ։
9 Այն ձայնը երկնքիցն ինձ երկ-
րորդ անգամ պատասխան տուաւ․
Նա որ Աստուած սրբեց՝ դու խառ-
նակ մի համարեր ։
10 Սա երեք անգամ էլաւ, եւ
բոլոր առանք նորէն վերացաւ եր-
կինքը ։
11 Եւ ահա շուտով երեք մար-
դիկ եկին կանգնեցին՝ այն տան
առաջին, որտեղ որ ես կայի, Կե-
սարիայիցն ինձ մօտ ուղարկած ։
12 Եւ Հոգին ինձ ասաց՝ որ նո-
րանց հետ գնամ՝ եւ բնաւ խղճմ-
տանք չանեմ․ սորանք էլ այս
վեց եղբարքս ինձ հետ եկին, եւ
մտանք այն մարդին ŀ տունը ։
13 Եւ պատմեց մեզ՝ թէ ինչպէս
տեսաւ հրեշտակին իւրեն տանը մէջ,
որ կանգնած էր՝ եւ ասում էր նո-
րան․ Ուղարկէ Յոպպէ, եւ Պետ-
րոս կոչուած Սիմոնին ւ կանչէ ․
14 Որ քեզ հետ բաներ կը խօսի,
որ նորանով կապրես դու՝ եւ քո
ամէն տունդ ։
15 Եւ երբոր սկսեցի խօսել, Սուրբ
Հոգին եկաւ նորանց վերայ․ ինչ-
պէս որ մեզ վերայ ŀ սկզբումը ։
16 Յիշեցի Տէրի այն խօսքըն՝ որ
ասում էր․ Յովհաննէսը ջրով ŀ մկր-
տեց․ բայց դուք Սուրբ Հոգով
ŀ կը մկրտուիք ։

ŀ Գլ․ Ժ․ 9, ա։
ւ Յովհ․ ԺԶ․ 13։ Գլ․ Ժ․ 19։ ԺԵ․ 7։

ŀ Գլ․ Ժ․ 23։
ւ Գլ․ Ժ․ 30։
ŀ Գլ․ Բ․ 4։
ŀ Մատթ․ Գ․ 11։ Յովհ․ Ա․ 26․ 33։ Գլ․ Ա․ 5։ ԺԹ․ 4։
ŀ Եսայ․ ԽԴ․ 3։ Յովէլ․ Բ․ 28։ Գ․ 18։

17 Իսկ արդ՝ եթէ զհաւասարական
պարգեւն ետ Աստուած եւ նոցա՝
որպէս եւ մեզ՝ 'ի հաւատալն 'ի
Տէր Յիսուս Քրիստոս . ես զի՞նչ
կարող էի արգելուլ զԱստուած ։

18 Եւ լուեալ զայս , լռեցին եւ
փառաւոր առնէին զԱստուած՝ եւ
ասէին . Ապաքէն եւ 'ի հեթանոսս
ետ Աստուած զապաշխարութիւն
կենաց ։
19 Եւ ցրուեալքն 'ի նեղութենէն
որ եղեւ 'ի վերայ Ստեփաննոսի՝
հասին մինչեւ 'ի Փիւնիկէ եւ 'ի
Կիպրոս եւ յԱնտիոքիա . ոչ ումեք
խօսէին զբանն , բայց միայն
Հրէից ։
20 Եւ էին ոմանք 'ի նոցանէ արք
Կիպրացիք եւ Կիւրենացիք՝ որք
մտեալ յԱնտիոք՝ խօսէին ընդ Յոյն-
սն աւետարանեալ զՏէր Յիսուս ։

21 Եւ էր ձեռն Տեառն ընդ նոսա ,
եւ բազմութիւն հաւատացելոց
դարձաւ 'ի Տէր ։
22 Լուր եղեւ բանս այս յականջս
եկեղեցւոյն , որ էր յԵրուսաղէմ ,
վասն նոցա . եւ առաքեցին զԲառ-
նաբաս մինչեւ յԱնտիոք ։

23 Որ իբրեւ եկն՝ եւ ետես զշ-
նորհսն Աստուծոյ՝ ուրախ եղեւ , եւ
մխիթարէր զամենեսին՝ յօժարու-
թեամբ սրտի կալ նոցա 'ի Տէր ։

24 Զի էր այր՝ զուարթամիտ՝ եւ
լի Հոգւով Սրբով եւ հաւատովք .
եւ յաւելաւ ժողովուրդ բազում
Տեառն ։
25 Եւ ել 'ի Տարսոն խնդրել զ-
Սօղոս , եւ գտեալ զնա՝ ած յԱն-
տիոք ։

17 Ուրեմն՝ թէ որ Աստուած հա-
ւասարակից պարգեւը նորանց էլ է տը-
ւաւ , ինչպէս որ մեզ՝ որ Տէր Յի-
սուս Քրիստոսին հաւատացինք . ես
ինչպէս կարող էի Աստուծոյն ը ար-
գելել ։
18 Եւ երբոր սա լսեցին , լուռ
կացան եւ փառաւորումէին Աստու-
ծոյն՝ եւ ասում . Ուրեմն հեթա-
նոսներին էլ Աստուած կենաց ա-
պաշխարութիւնը թ տուաւ ։
19 Եւ նորանք որ ցրւած էին այն
նեղութենիցն՝ որ Ստեփաննոսի վե-
րայ էլաւ , մինչեւ Փիւնիկէ եւ
Կիպրոս եւ Անտիոքիա հասին . ոչ
մէկին Աստուծոյ բանը չէին խօ-
սում , բայց միայն ժ Հրէաներին ։
20 Եւ նորանցից մին քանիսը կա-
յին Կիպրացի եւ Կիւրենացի մար-
դիկ , որ Անտիոք մտած խօսումէ-
ին Յոյնաց հետ՝ ու աւետարանում
Տէր ի Յիսուսը ։
21 Եւ Տէրին ձեռքը նորանց հետ
լ էր . եւ շատերը հաւատացին՝ եւ
դէպի Տէրը խ դարձան ։
22 Այս բանս , որ նորանց համար
էլաւ՝ լսեցաւ այն եկեղեցւոյ ա-
կանջներումը , որ Երուսաղէմումն
էր , եւ Բառնաբասին ուղարկեցին
մինչեւ ծ Անտիոք ։
23 Նա երբոր եկաւ , եւ Աստու-
ծոյ շնորհքները տեսաւ՝ ուրախ է-
լաւ , եւ մխիթարումէր ամէնին՝
որ սրտի յօժարութենով Տէրին հետ
կ մնան .
24 Ինչու որ՝ նա արթուն մտքով
մարդ էր՝ եւ Սուրբ Հոգով եւ հա-
ւատքով հ լցված . եւ շատ ժողո-
վուրդ աւելացաւ Տէրին ձ համար ։
25 Եւ դուրս եկաւ գնաց Տարսոն՝
որ Սօղոսին խնդրէ , եւ նորան գը-
տաւ բերաւ ղ Անտիոք ։

է Գլ. ԺԵ. 8. 9.
ը Գլ. Ժ. 47.
թ Հռովմ. Ժ. 12. 13. ԺԵ. 9. 16.
ժ Գլ. Ը. 1.
ի Գլ. Զ. 1. Թ. 29.
լ Ղու. Ա. 66. Գլ. Բ. 47.
խ Գլ. Թ. 35.
ծ Գլ. Թ. 27.
կ Գլ. ԺԳ. 43. ԺԴ. 22.
հ Գլ. Զ. 5.
ձ Համար. 21. Գլ. Ե. 14.
ղ Գլ. Թ. 30.

26 Եւ եղեւ նոցա զամն ողջոյն ժողովել յեկեղեցին՝ եւ ուսուցանել ժողովուրդ բազում, եւ անուանել նախ յԱնտիոք զաշակերտսն Քրիստոնեայս ։

˚27 Ընդ աւուրսն ընդ այնոսիկ իջին յԵրուսաղեմէ մարգարէք՝ յԱնտիոք ։

28 Յարուցեալ մի ոմն 'ի նոցանէ անուն Ագաբոս՝ նշանակեաց Հոգւովն սով մեծ լինել ընդ ամենայն աշխարհ, որ եղեւ առ Կղօդեաւ ։

29 Բայց յաշակերտացն անտի, որպէս զիարդ կարող ոք էր՝ իւրաքանչիւրոք 'ի նոցանէ որոշեցին առաքել 'ի պէտս եղբարցն՝ որ բնակեալ էին 'ի Հրէաստանի ։

30 Զոր եւ արարին իսկ՝ առաքեալ առ երիցունսն 'ի ձեռն Բառնաբայ եւ Սօղոսի ։

26 Եւ էլաւ որ նորանք այն բոլոր տարին ժողովվումներին այն եկեղեցոյն մէջ եւ շատ ժողովուրդ սովրեցնում. եւ աշակերտներին առաջ Անտիոքումն Քրիստոնեայ անուանվեցան ։

27 Եւ այն օրերը Երուսաղէմիցը մարգարէներ վէր եկին Անտիոք ։

28 Նորանցից մինը՝ Ագաբոս անուն վերկացաւ՝ Հոգովը նշանակեց, թէ բոլոր աշխարհքիս մէջ մեծ սով պիտի լինի, որ Կղօդիոսի ժամանակումն ւ էլաւ ։

29 Բայց այն աշակերտներիցն, ինչպէս որ մինը կարող էր՝ նորանց ամէն մէկին ընտրեցին՝ որ պէտք ըլնող բան ուղարկէն այն եղբայրներին՝ որ Հրէաստանումը բնակված ղ էին.

30 Որ արին էլ՝ եւ ուղարկեցին երէցներին մօտ՝ Բառնաբասի եւ Սօղոսի Ը ձեռովը ։

## ԳԼ. ԺԲ

1 Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ արկ Հերովդէս արքայ ձեռն՝ չարչարել զոմանս յեկեղեցւոյն ։

2 Եւ սպան զՅակովբ զեղբայրն Յովհաննու սրով ։

3 Եւ տես եթէ հաճոյ է Հրէիցն, յաւել եւս ունել զՊետրոս. եւ էին աւուրքն բաղարջակերաց ։

4 Զոր եւ կալեալ եդ 'ի բանտի, եւ մատնեաց չորից չորրորդաց զինուորաց պահել զնա. եւ կամէր յետ զատկին ածել զնա ժողովրդեանն ։

5 Եւ Պետրոս 'ի պահեստի էր 'ի բանտին. եւ աղօթք սաստիկ լինէին յեկեղեցւոյն վասն նորա առ Աստուած ։

1 Այն ժամանակները Հերօդէս թագաւորը ձեռք ձգեց՝ որ եկեղեցուցը մին քանիսը չարչարէ ։

2 Եւ Յօհաննէսի՝ եղբօրը Յակօբին սրով — սպանեց ։

3 Երբոր տեսաւ՝ թէ Հրէաներին հաճոյ է, էլ աւելացաւ՝ Պետրոսին էլ բռնեց. եւ բաղարջակերաց օրերին Ե էր ։

4 Երբոր նորան բռնեց՝ բանտի մէջ դրաւ, եւ մատնեց չորս անգամ չորս զինուորներին՝ որ պահեն. եւ կամենումէր՝ որ զատկիցն ետեւ նորան բերէ Զ ժողովրդին ։

5 Եւ Պետրոս բանտին մէջ պահված էր. եւ նորա համար անդադար աղօթք էր լինում եկեղեցուցը դէպի Աստուած ։

˚ Գլ. Բ. 17. ԺԳ. 1. ԺԵ. 32. ԻԱ. 9. Ա կորնթ. ԺԲ. 28. Եփես. Դ. 11.
Ն Գլ. ԻԱ. 10.
Դ Հռովմ. ԺԵ. 26 Ա կորնթ. ԺԶ. 1.

Բ կորնթ. Թ. 1.
Ը Գլ. ԺԲ. 25.
—
= Մատթ. Ի. 21. Ի. 23.
Ե Ելից. ԺԲ. 14. 15. ԻԳ. 15.
Զ Յովհ. ԻԱ. 18.

6 Իբրեւ կամեցաւ զնա ածել Հերովդէս. 'ի գիշերին յայնմիկ էր Պետրոս 'ի քուն 'ի մէջ երկուց զինուորաց կապեալ կրկին շղթայիւք. եւ պահապանք առաջի դրանն պահէին զբանտն։

7 Եւ ահա հրեշտակ Տեառն եկն եկաց 'ի վերայ՝ եւ լոյս ծագեաց 'ի տանն, խթեաց զկողն Պետրոսի՝ յարոյց զնա՝ եւ ասէ. Արի վաղվաղակի. եւ անկան շղթայք 'ի ձեռաց նորա։

8 Եւ ասէ հրեշտակն ցնա. Ա՛ծ զգօտի քո. եւ արկ զհողաթափս յոտս քո. եւ արար այնպէս. եւ ասէ ցնա. Արկ զձորձս քո՝ եւ եկ զկնի իմ։

9 Եւ ելեալ երթայր զհետ, եւ ոչ գիտէր թէ ճշմարիտ իցէ՝ որ ինչ եղեւ 'ի հրեշտակէն. զի համարէր երազ տեսանել։

10 Եւ իբրեւ անցին նոքա զառ մի պահ եւ զառ երկուս, եկին մինչեւ 'ի դուռն երկաթի՝ որ հանէր 'ի քաղաքն. որ ինքնին բացաւ նոցա. եւ ելեալ անցին ընդ փողոց մի. եւ վաղվաղակի 'ի բաց եկաց 'ի նմանէ հրեշտակն։

11 Եւ Պետրոս իբրեւ 'ի միտ եկեալ, ասէ. Արդ գիտեմ ճշմարիտ, եթէ առաքեաց Տէր զհրեշտակ իւր. եւ փրկեաց զիս 'ի ձեռաց Հերովդի, եւ յամենայն ակնկալութենէ ժողովրդեանն Հրէից։

12 Եւ յեալ 'ի միտս՝ եկն 'ի տուն Մարիամու մօր Յովհաննու, որ կոչեցաւն Մարկոս. ուր էին բա-

6 Երբոր Հերովդէս կամեցաւ՝ որ նորան դուրս բերէ. այն գիշերը Պետրոսը քնած էր երկու զինուորների մէջ՝ երկու շղթայով կապուած. եւ պահապանները դռան առաջին բանտը պահում էին։

7 Եւ ահա Տէրոջ հրեշտակը եկաւ կանգնեց նորա դ վերայ, եւ տանը մէջ լոյս ծագեց, եւ խթեց Պետրոսի կողերին՝ եւ նորան զարթնացրուց՝ եւ ասաց. Վեր կաց շուտով. եւ շղթաները վեր ընկան նորա ձեռներիցը։

8 Եւ հրեշտակն ասաց նորան. Քո գօտիկդ կապէ՛ եւ հողաթափներդ դիր ոտքերդ, եւ այնպէս արաւ. եւ ասաց նորան. Շորերդ քեզ վերայ ձգէ՛ եւ իմ ետեւէս եկ։

9 Եւ դուրս եկաւ գնում էր նորա ետեւէն, եւ չէր գիտում՝ թէ ճշմարիտ է այն բանն՝ որ հրեշտակիցն ե էլաւ. մինչեւ որ՝ կարծում էր՝ թէ երազ է տեսնում։

10 Եւ երբոր նորանք անցան առաջին պահապաններովը եւ երկրորդ պահապաններովը, եկին մինչեւ երկաթի դուռն՝ որ դէպի քաղաքն էր տանում. որ ինքն իրենից բացուեցաւ նորանց համար, եւ մէյին մին փողոց անցան, եւ շուտով հրեշտակը նորանից է հեռացաւ։

11 Եւ Պետրոսին միտքն երբոր իրեն վերայ եկաւ, ասաց. Հիմիկ շիտակ գիտցայ, որ Տէրն իրեն հրեշտակին ը ուղարկեց. եւ փրկեց ինձ Հերովդէսին ձեռքիցը, եւ այն ամէն բաներիցն՝ որ Հրէաների ժողովուրդն թ սպասում էր։

12 Եւ երբոր միտք արաւ՝ եկաւ Յովհաննէսին մայր ժ Մարիամայ տունը, որ Մարկոս է կոչվեցաւ. որ

դ Գղ. Ե. 19.
ե Սաղ. ՃԻԶ. 1.
զ Գղ. Ժ. 3. 17. ԺԱ. 5.
է Գղ. ԺԶ. 26.
ը Սաղ. ԼԴ. 7. Դան. Գ. 28. Զ. 22. Եբր. Ա. 14.
թ Յոբ. Ե. 19. Սաղ. ԼԴ. 18. 19. ԼԴ. 22. ԽԱ. 2. ԳԷ. 10. Բ Կորնթ. Ա. 10. Բ Պետ. Բ. 9.
ժ Գղ. ԺԵ. 37.
ի Գղ. Դ. 23.

զումք ժողովեալ՝ եւ աղօթս առ-
նէին ։
13 Եւ ՚ի բախելն զդուրս դրանն,
մատեաւ աղախին մի՝ ունկն դնել,
որում անուն էր Հռովդէ ։
14 Եւ ծանուցեալ զձայնն Պետ-
րոսի՝ ՚ի խնդալոյն ոչ եբաց զդուռն.
՚ի ներքս ընթացեալ պատմեաց, թէ
Պետրոս առ դրանն կայ ։
15 Նոքա ասեն ցնա՝ Մոլիս. եւ
նա եւս պնդէր՝ թէ այդպէս է. եւ
նոքա ասէին՝ հրեշտակ նորա իցէ ։

16 Եւ Պետրոս առէր բախէր.
իբրեւ բացին, տեսին զնա՝ եւ զար-
մացան ։
17 Եւ նա ձեռամբ ցուցանէր նո-
ցա լռել. եւ պատմեաց որպէս Տէր
եհան զնա ՚ի բանտէն. եւ ասէ.
Պատմեցէք Յակոբայ եւ եղբարց
զայս. եւ ել գնաց յայլ տեղի ։

18 Եւ իբրեւ այգ եղեւ՝ էր խռո-
վութիւն մեծ ՚ի մէջ զինուորացն,
զի՞ արդեօք Պետրոսն եղեւ ։
19 Իսկ Հերովդէս իբրեւ խնդ-
րեաց զնա՝ եւ ոչ եգիտ, հարցեալ
զպահապանսն՝ հրամայեաց սպանա-
նել, եւ իջեալ ՚ի Հրէաստանէ ՚ի
Կեսարիա՝ եւ անդ լինէր ։

20 Եւ էր Հերովդէս ցասմամբ ընդ
Տիւրացիս եւ ընդ Սիդոնացիս, եւ
նոքա առ հասարակ եկին առ նա.
եւ ՚ի բանի արարեալ զԲղաստոս
սենեկապետն արքայի, խնդրէին
զխաղաղութիւն վասն կերակրելոյ
երկրին նոցա յարքունուստ ։

21 Յաւուր միում յիբեւելում՝ Հե-
րովդէս զգեցեալ էր զհանդերձ
թագաւորութեան՝ եւ նստէր յատե-

այնտեղ շատեր կային ժողովված՝
եւ աղօթք էին անում ։
13 Եւ դուռն որ թակեց, մին
աղախին՝ որ նորա անունը Հռոդէ
էր՝ մօտ եկաւ, որ ականջ դնէ ։
14 Եւ Պետրոսի ձայնն որ ճանա-
չեց՝ ուրախութենիցը դուռը բաց
չարաւ. ներս վազեց եւ պատմեց,
թէ Պետրոսը դռանը կանգնած է ։
15 Նորանք ասացին նորան՝ Ցի-
մարվել ես. եւ նա էլ ուժի հաս-
տատումէր՝ թէ այդպէս է. եւ նո-
րանք ասումէին՝ թէ նորա հրեշ-
տակը † կըլինի ։
16 Եւ Պետրոս շատ շատ դուռն
թակումէր. երբոր բացին, տեսին
նորան՝ եւ զարմացան ։
17 Եւ նա ձեռով ցոյց էր տալիս
նորանց որ լուռ † կենան. եւ պատ-
մեց՝ թէ ինչպէս Տէրը բանտիցն ի-
րեն հանեց. եւ ասաց, Այս բանս
պատմեցէք Յակոբին եւ եղբարցնե-
րին. եւ դուրս եկաւ գնաց ուրիշ
տեղ ։
18 Եւ երբոր առաւօտ էղաւ՝ մեծ
խռովութիւն էր այն զինուորներին
մէջ, Թէ Պետրոսն ինչ էղաւ ։
19 Բայց Հերոդէսն երբոր նորան
ուզեց՝ եւ չը գտաւ, պահապաննե-
րին հարցրուց՝ եւ հրամանն տուաւ՝
որ սպանեն նորանց. եւ Հրէաստա-
նիցը վէր եկաւ Կեսարիա՝ եւ այն-
տեղ էր լինում ։
20 Եւ Հերոդէս շատ բարկացած
էր Տիւրացոց եւ Սիդոնացոց վե-
րայ. եւ նորանք ամէնքը միաբան
եկին նորան մօտ. եւ Բղաստոսին
թագաւորի ներսի տան վերակա-
ցուին հաւանացնելով՝ խաղաղու-
թիւն էին խնդրում. ինչու որ՝ նո-
րանց երկիրը՝ թագաւորի երկրիցն
էր † կերակրվում ։
21 Մին հանդիսաւոր օր՝ Հերո-
դէսը թագաւորական շոր էր հա-
գել՝ եւ ատեանումը նստած էր եւ

ւ Հռովմ. 5 ։ | Մատթ. ԺԸ. 10 ։ | ԺԹ. 33։ ԻԱ. 40։ | 11։ Եզեկ. ԻԷ.
խ Ծննդ. ԽԸ. 16 ։ | ծ Գղ. ԺԳ. 16 ։ | կ Գ Թագ. Ե ։ 9 | 17 ։

նի, եւ խօսէր ընդ նոսա հրապարակաւ։

22 Եւ ամբոխն աղաղակէր՝ թէ Աստուծոյ բարբառ է, եւ ոչ մարդոյ։

23 Եւ անդէն հարաւ զնա հրեշտակ Տեառն, փոխանակ զի ոչ ետ փառս Աստուծոյ. եւ եղեալ որդնալից՝ սատակեցաւ։

24 Եւ բանն Աստուծոյ աճէր եւ բազմանայր։

25 Բառնաբաս եւ Սօղոս դարձան յԵրուսաղէմէ՝ իբրեւ կատարեցին զպաշտօնն. առեալ էր ընդ իւրեանս եւ զՅովհաննէս՝ որ կոչեցեալն էր Մարկոս։

ամենին առաջին խօսումէր նորանց հետ։

22 Եւ ամբոխն աղաղակումէր՝ թէ Այդ Աստուծոյ ձայն է, եւ ոչ մարդոյ։

23 Եւ չուտով Տէրին հրեշտակը զարկեց ձնորան, ինչու որ Աստուծոյ փառք չը տուաւ. եւ որդունքներով լցուաւ՝ եւ ծսատակվեցաւ։

24 Եւ Աստուծոյ խօսքն աճումէր եւ ղշատանումէր։

25 Բառնաբասն ու Սօղոսն երբոր պաշտօնմունքը կատարեցին՝ Երուսաղէմիցը յետ դարձան. եւ Յովհաննէսին ճէլ իրենց հետ էին մառել՝ որ Մարկոս էր կոչված։

## ԳԼ. ԺԳ

1 Էին ոմանք յԱնտիոք ըստ եկեղեցւոյն մարգարէք եւ վարդապետք. Բառնաբաս՝ եւ Շմաւոն կոչեցեալն Նիգէր, եւ Ղուկիոս Կիւրենացի, եւ Մանայէն դայեկորդի Հերովդի չորրորդապետի, եւ Սօղոս։

2 Մինչդեռ 'ի պաշտաման Տեառն կային՝ եւ պահէին, ասէ Հոգին Սուրբ. Որոշեցէք ինձ զԲառնաբաս եւ զՍօղոս 'ի գործ՝ յոր կոչեցեալ է իմ զդոսա։

3 Յայնժամ պահեալ՝ եւ աղօթս արարեալ՝ եդին ձեռն 'ի վերայ նոցա՝ եւ արձակեցին։

4 Եւ նոքա առաքեալք 'ի Հոգւոյն Սրբոյ՝ իջին 'ի Սելեւկիա, եւ անտի նաւեցին 'ի Կիպրոս։

5 Եւ հասեալ 'ի Սաղամինա՝ պատ-

1 Անտիոքումը՝ այնտեղ լինող եկեղեցւոյն մէջ կային մի քանի մարգարէներ եւ նվարդապետներ. Բառնաբասը՝ եւ Նիգէր ասված շՇմաւօնը, եւ Ղուկիոս Կիւրենացին, եւ Հերովդէս չորրորդապետի ծծմօր որդի Մանայէնը, եւ ոՍօղոսը։

2 Դեռ քանի որ Տէրի պաշտօնին մէջն էին՝ եւ պաս էին պահում, Սուրբ Հոգին ասաց. Ինձ համար ջոկեցէք Բառնաբասին եւ Սօղոսին՝ այն գործին չհամար, որ ես դորանց կանչել պեմ։

3 Այնժամանակը պաս պահեցին՝ եւ աղօթք արին, նորանց վերայ ձեռք դրին՝ եւ ջարձակեցին։

4 Եւ նորանք Սուրբ Հոգուցն ուղարկված՝ վէր եկին Սելեւկիա, եւ այնտեղից նաւով գնացին ռԿիպրոս։

5 Եւ Սաղամինա որ հասին՝ Աս-

ձ Ա Թագ. ԻԵ. 38. Բ Թագ. ԻԴ. 17.
ղ Սաղ. ՃԺԵ. 1.
ճ Եսայ. ԾԵ. 11. Գղ. Զ. 7. ԺԹ. 20. Կող. Ա. 6. Գղ. ԺԱ. 29, 30.
մ Համար. 12.
յ Գղ. ԺԳ. 5. 13. ԺԵ. 37.
—
ն Գղ. ԺԱ. 27. ԺԴ. 26. ԺԵ 35.
շ Գղ. ԺԱ. 22— 26.
ո Հռովմ. ԺԶ. 21.
չ Թու. Ը. 14. Գղ. Թ. 15. ԻԲ 21. Հռովմ. Ա. 1. Գաղ. Ա. 15. Բ. 9.
պ Մատթ. Թ. 38. Գղ. ԺԴ. 25. Հռովմ. Ժ. 15. Եփես. Դ. 7, 8. Ա Տիմ. Բ. 7. Բ Տիմ. Ա. 11. Եբր. Ե. 4.
ջ Գղ. Զ. 6.
ռ Գղ. Դ. 36.

մէին զբանն Աստուծոյ 'ի ժողո-
վուրդս Հրէիցն . ունէին եւ զՅով-
հաննէս պաշտօնեայ ։
6 Շրջեալ ընդ ամենայն կղզին
մինչեւ 'ի Պափոս , գտին այր զոմն
մոգ սուտ մարգարէ՝ Հրէայ ,
որում անուն էր Բարյեսու ։
7 Որ էր ընդ փոխանակի բդեշ-
խին Սերգեայ Պօղոսի՝ առն իմաստ-
նոյ . նորա աղաչեալ զԲառնաբաս
եւ զՍօղոս խնդրէր լսել զբանն Աս-
տուծոյ ։
8 Ընդդէմ կայր նոցա Եղիմաս
մոգ . քանզի այսպէս թարգմանի
անուն նորա . խնդրէր շրջել զփո-
խանակ բդեշխին 'ի հաւատոց ։
9 Իսկ Սօղոս , որ եւ Պօղոսն՝
լցեալ Հոգւով Սրբով հայեցաւ 'ի
նա ,
10 Եւ ասէ . Ո՛վ լի ամենայն նեն-
գութեամբ եւ խարդախութեամբ՝
որդի Սատանայի՛ թշնամի ամենայն
արդարութեան , ոչ լռես 'ի թիւ-
րելոյ զճանապարհս Տեառն ուղի-
ղըս ։
11 Եւ արդ՝ ահա ձեռն Տեառն
'ի վերայ քո , եւ եղիցիս կոյր չտե-
սանել զարեւ մինչեւ 'ի ժամանակ
մի . եւ անդէն անկաւ 'ի վերայ նո-
րա մէգ եւ խաւար , եւ շրջեալ
խնդրէր առաջնորդս ։
12 Յայնժամ տեսեալ փոխանակի
բդեշխին զիրսն որ եղեն , հաւա-
տաց , զարմացեալ ընդ վարդապե-
տութիւնն Տեառն ։
13 Եւ ամբարձեալ 'ի Պափեայ Պօ-
ղոսեանցն՝ եկին 'ի Պերգէ Պամփի-
լեայ . Յովհաննէս մեկնեալ 'ի նո-
ցանէ՝ դարձաւ յԵրուսաղէմ ։

տուծոյ խօսքը պատմումէին Հրէա-
ներու ժողովարաններումը . Յովհան-
նէսին էլ պաշտօնեայ բ ունէին ։
6 Ման եկին բոլոր կղզումը
մինչեւ ի Պափոս , եւ այնտեղ մին
կախարդ մարդ գտին՝ սուտ մար-
գարէ՝ Հրէայ , որ նորա անունը
Բարյեսու ծ էր ,
7 Որ փոխանակ բդեշխ Սերգի-
ոս Պօղոս իմաստուն մարդուն հետ
էր . նա Բառնաբասին եւ Սօղոսին
աղաչելով խնդրումէր որ Աստուծոյ
խօսքին լսէ ։
8 Նորանից հակառակ կացաւ Ե-
ղիմաս ծ կախարդը . ինչու որ՝ այս-
պէս է թարգմանվում նորա անու-
նը . ուզումէր փոխանակ բդեշխին
հաւատքիցը փոխել ։
9 Բայց Սօղոսն , որ եւ Պօղոս՝
Սուրբ Հոգով լցված մտիկ տուաւ
նորան ,
10 Եւ ասաց . Ո՛վ դու՝ որ ամէն
խաբէբայութենով եւ խարդախու-
թենով լցված ես , Սատանայի
որդի եւ ամէն արդարութեան թըշ-
նամի . չես դադարում Տէրոջ ուղիղ
ճանապարհներըն ծ ծռելուց ։
11 Եւ հիմիկ՝ ահա Տէրոջ ձեռքը
քեզ ծ վերայ , եւ կոյր կը լինիս՝ որ
չը տեսնես արեգակը մինչեւ մին
ժամանակ . եւ շուտով մութ եւ
խաւար ընկաւ նորա վերայ , եւ
ման էր գալիս — ձեռք բռնող մար-
դիկ էր ուզում ։
12 Այն ժամանակը փոխանակ բդ-
դեշխին երբոր տեսաւ այն բաները՝
որ եղան , հաւատաց , եւ Տէրոջ վար-
դապետութեանը վրայ զարմացաւ ։
13 Եւ Պօղոսն ու հետը եղող մար-
դիկը Պափեայիցը դուրս ելան՝ ե-
կին Պամփիլիայի Պերգէ քաղաքը .
Բայց Յովհաննէս նորանցից հեռացաւ՝
եւ յետ դարձաւ Երուսաղէմ ։

ա Համար . 46 ։
բ Գէ . ԺԲ . 25 ։
ԺԵ . 37 ։
գ Գէ . Ը . 9 ։

է Ելից . Է . 11 ։ Բ
Տիմ . Գ . 8 ։
ե Գէ . Գ . 8 ։
ժ Մատթ . ԺԳ . 38 ։

Յովհ . Ը . 44 ։ Ա
Յովհ . Գ . 8 ։
ծ Ելից . Թ . 3 ։ Ա
Թագ . Ե . 6 ։

ե Գէ . ԺԵ . 38 ։

14 Եւ նոքա գնացեալ ՚ի Պերգեայ՝ եկին յԱնտիոք Պիսիդեայ. եւ մտեալ ՚ի ժողովուրդն յաւուր շաբաթու՝ նստան։

15 Եւ յետ ընթեռնլոյ զօրէնսն եւ զմարգարէս, առաքեցին առ նոսա ժողովրդապետքն եւ ասեն. Արք եղբարք՝ եթէ իցեն ՚ի ձեզ բանք մխիթարութեան առ ժողովուրդդ՝ խօսեցարուք։

16 Յոտն եկաց Պօղոս՝ շարժեաց զձեռն եւ ասէ. Արք Իսրայէլացիք՝ եւ որք երկնչիք յԱստուծոյ՝ լուարուք։

17 Աստուած ժողովրդեանս այսորիկ Իսրայէլի ընտրեաց զհարսն մեր. եւ զժողովուրդն բարձրացոյց ՚ի պանդխտութեան յերկրին Եգիպտացւոց. եւ ՚ի բազուկ բարձր եհան զնոսա անտի։

18 Եւ իբրեւ քառասնամեայ ժամանակ կերակրեաց զնոսա յանապատի։

19 Եւ քակեալ ազգս եօթն յերկրին Քանանու՝ ժառանգեցոյց նոցա զերկիր նոցա՝

20 Իբրեւ ամս չորեքհարիւր եւ յիսուն. եւ յետ այսորիկ ետ նոցա դատաւորս մինչեւ ՚ի Սամուէլ մարգարէ։

21 Եւ անտի յառաջ խնդրեցին թագաւոր, եւ ետ նոցա Աստուած զՍաւուղ որդի Կիսեայ՝ այր յազգէ Բենիամենի, ամս քառասուն։

22 Եւ իբրեւ փոխեաց զնա, յարոյց նոցա զԴաւիթ թագաւոր, ո-

14 Եւ նորանք Պերգեայիցը գնացին՝ եկին Պիսիդիայի Անտիոք. եւ շաբաթ օրը ժողովարանին մէջ մտան՝ հ նստեցին։

15 Եւ օրէնքըն ու մարգարէները կարդալուցն ետեւ, ժողովրդապետները նորանց մօտ ուղարկեցին եւ ձ ասացին. Մարդիկ եղբարք՝ թէ որ դուք այս ժողովրդիդ համար մխիթարութեան խօսքեր ունիք՝ ղ խօսեցէք։

16 Պօղոս վերկացաւ՝ իրեն ձեռքը շարժեց եւ ճ ասաց. Ո՛վ Իսրայէլացի մարդիկ, եւ դուք որ Աստուածանից վախումէք՝ մ լսեցէք։

17 Այս Իսրայէլացի ժողովրդիս Աստուածը մեր հարանցը յ ընտրեց. եւ ժողովուրդը բարձրացուց պանդխտութենումը Եգիպտացոց երկրին ն մէջ. եւ բարձր բազկով նորանց այնտեղից դուրս շ հանեց.

18 Եւ քառասուն տարոյ չափ ժամանակ նորանց կերակրեց անապատին ո մէջ.

19 Եւ Քանանու երկրումը եօթն ազգեր չ կործանեց՝ եւ նորանց երկիրը նորանց ժառանգել պ տուաւ՝

20 Չորս հարիւր եւ յիսուն տարոյ ջ չափ. եւ որանից ետեւ նորանց դատաւորներ տուաւ մինչեւ Սամուէլ ռ մարգարէն։

21 Եւ յետոյ առաջ գալով թագաւոր ուզեցին, եւ Աստուած տուաւ նորանց Կեսեայի որդի Սաւուղը՝ մին մարդ Բենիամենի ցեղիցը, քառասուն ս տարի։

22 Եւ երբոր նորան վ փոխեց, Դաւթին նորանց համար թագաւոր

հ Գլ. ԺԶ. 13. ԺԷ. 2. ԺԸ. 4.
ձ Ղու. Դ. 16. Համար. 27.
ղ Եբր. ԺԳ. 22.
ճ Գլ. ԺԲ. 17.
մ Համար. 26. 42. 43. Գլ. Ժ. 35.
յ Բ Օրէն. Է. 6, 7.
ն Ելից. Ա. 1. Սաղ. ՃԵ. 23, 24. Գլ. Է. 17.
շ Ելից. Զ. 6. ԺԳ. 14. 16.
ո Ելից. ԺԶ. 35. Թու. ԺԴ. 33, 34. Սաղ. ՂԵ. 9, 10. Գլ. Է. 36.
չ Բ Օրէն. Է. 1.
պ Յես. ԺԴ. 1. 2. Սաղ. ՀԸ. 55.
ջ Դատ. Բ. 16.
ռ Ա Թագ. Գ. 20.
ս Ա Թագ. Ը. 5. Ժ. 1.
վ Ա Թագ. ԺԵ. 23. 26. 28. ԺԶ. 1. Ովսէ. ԺԳ. 11.

բում եւ տաց վկայութեամբ. Գտի զԴաւիթ որդի Յեսսեայ այր ըստ սրտի իմում՝ որ արասցէ զամենայն զկամս իմ։

23 Ի սորա զաւակէ Աստուած ըստ աւետեացն յարոյց Իսրայէլի զՓրկիչն Յիսուս։

24 Ըստ յառաջագոյն քարոզութեանն Յովհաննու, առաջի երեսաց մտին նորա մկրտութիւն ապաշխարութեան՝ ամենայն ժողովրդեանն Իսրայէլի։

25 Եւ իբրեւ լնոյր Յովհաննէս զընթացսն, ասէր. Զո՞ ոք կարծէք զինէն՝ թէ իցեմ. չեմ ես այն. այլ ահա գայ զկնի իմ, որում չեմ արժանի զկօշիկս ոտիցն լուծանել։

26 Արք եղբարք՝ որդիք Աբրահամեան ազգին, եւ որ ՚ի ձեզ երկիւղածք իցեն յԱստուծոյ. ձեզ բանս այս փրկութեան առաքեցաւ։

27 Բայց որ բնակեալ են յԵրուսաղէմ, եւ իշխանք նոցա՝ անծանօթ եղեն ՚ի նմանէ. եւ ըստ բարբառոյ մարգարէիցն, որ զամենայն շաբաթս ընթեռնուին՝ դատեալ կատարեցին։

28 Եւ ոչ մի ինչ պատճառս մահու գտեալ՝ խնդրեցին ՚ի Պիղատոսէ սպանանել զնա։

29 Եւ իբրեւ կատարեցին զամե-

կանգնացրուց, որ նորան էլ վկայութիւն տուաւ եւ ⁊ ասաց. Յեսսէի որդի Դաւթին ⁊ գտի իմ սրտիս ուզածին պէս մարդ՝ որ նա իմ ամէն կամքերս ⁊ կանէ։

23 Սորա զաւակիցն –Աստուած աւետիքին պէս Իսրայէլացոց համար ‡ Յիսուս Փրկիչը + վերկացրուց։

24 Ինչպէս որ Յօհաննէս նորա երեսի առաջին մանելոյ ժամանակին, առաջուց ապաշխարութեան մկրտութիւնը քարոզեց Իսրայէլի ամէն ◦ ժողովրդին։

25 Եւ երբոր Յօհաննէս վերջացընումէր իրեն գնալըն՝ ասումէր. Ինձ համար ով էք կարծում՝ որ լինիմ. ես նա ‡ չեմ. բայց ահա իմ ետեւէս գալիս է նա, որ ես չեմ արժանի նորա ոտաց կօշիկներըն արձակելոյ։

26 Մարդիկ եղբարք՝ Աբրահամի ցեղի որդիքներ, եւ ով որ ձեզանում աստուածավախ են. ձեզ ուղարկեցաւ այս փրկութեան –խօսքըս։

27 Բայց նորանք որ բնակված են Երուսաղէմումը, եւ նորանց իշխանները նորան ‡ չը ճանաչեցին. եւ մարգարէների խօսքերին պէս, որ ամէն շաբաթներումը ‡ կարդացւումին՝ դատաստան անելով ⁊ կատարեցին։

28 Եւ թէպէտ նորա վերայ մեռնելոյ պատճառ Ի չը գտին, Պիղատոսիցն ուզեցին՝ որ նորան սպանէ։

29 Եւ երբոր այն ամէնըն՝ որ նո-

† Ա Թագ. ԺԶ. 13։ Բ Թագ. Բ. 4։ Է. 3։
‡ Սաղ. ՁԹ. 20։
* Ա Թագ. ԺԳ. 14։ Գլ. Է. 46։
– Եսայ. ԺԱ. 1։ Ղուկ. Ա. 32. 69. Գլ. Բ. 30։ Հռովմ. Ա. 3։
‡ Բ Թագ. Է. 12։ Սաղ. ՃԼԲ. 11։
+ Մատթ. Ա. 21։ Հռովմ. ԺԱ. 26։
◦ Մատթ. Գ. 1։ Ղուկ. Գ. 3։
§ Մատթ. Գ. 11։ Մարկ. Ա. 7։ Ղուկ. Գ. 16. Յովհ. Ա. 20. 27։
– Մատթ. Ժ. 6։ Ղուկ. ԻԴ. 47։ Համար. 46։ Գլ. Գ. 26։
‡ Ղուկ. ԻԴ. 34։ Գլ. Գ. 17։ Ա Կորնթ. Բ. 8։
‡ Համար. 14, 15։ Գլ. ԺԵ. 21։
† Ղուկ. ԻԴ. 20. 44։ Գլ. ԻԶ. 22։ ԻԸ. 23։
Ի Մատթ. ԻԷ. 22։ Մարկ. ԺԵ. 13, 14։ Ղուկ. ԻԳ. 21, 22։ Յովհ. ԺԹ. 6. 15։
Ն Գլ. Գ. 13, 14։

նայն՝ որ վասն նորա գրեալ էր, ի-
ջուցեալ 'ի փայտէն՝ եդին 'ի գերեզ-
մանի։
30 Այլ Աստուած յարոյց զնա 'ի
մեռելոց. որ երեւեցաւ աւուրս
բազումս այնոցիկ,
31 Որ ելեալ էին ընդ նմա 'ի Գա-
լիլեէ յԵրուսաղէմ. որք եւ արդ
խոկ վկայք են նորա առ ժողո-
վուրդն։
32 Եւ մեք ձեզ աւետարանեմք
զխոստումն՝ որ առ հարսն եղեալ
էր.
33 Զի զնոյն Աստուած կատարեաց
առ մեզ որդւոց նոցա՝ յարուցեալ
զՅիսուս. որպէս եւ 'ի սաղմոսին
գրեալ է յերկրորդում. Որդի իմ
ես դու. եւ ես այսօր ծնայ զքեզ։

34 Եւ զի յարոյց զնա 'ի մեռելոց,
եւ ոչ եւս դառնալոց է յապակա-
նութիւն. այսպէս ասէ. Եթէ Տաց
ձեզ զսրբութիւնսն Դաւթի զհաւա-
տարիմս։

35 Քանզի եւ 'ի միւսումն ասէ.
Ո՛չ տացես Սրբոյ քում տեսանել
զապականութիւն։
36 Այլ Դաւիթ յազգի անդ իւ-
րում պաշտեաց. եւ 'ի կամս Աս-
տուծոյ ննջեաց, եւ յաւելաւ առ
հարս իւր՝ եւ ետես զապականու-
թիւն։
37 Բայց զոր Աստուածն յարոյց՝
ոչ ետես զապականութիւն։

38 Յայտնի լիցի ձեզ՝ արք եղ-
բարք, զի սովաւ ձեզ թողութիւն

րա համար գրված էր [ե] կատարեցին,
փայտից վէր բերին՝ եւ գերեզմա-
նի մէջ [ը] դրին։
30 Բայց Աստուած նորան մեռել-
ների միջիցն [թ] յարոյց. որ շատ օ-
րերով երեւեցաւ [ժ] նորանց,
31 Որ նորա հետ Գալիլեայից
վեր էին ելել [ի] Երուսաղէմ. որ նո-
րանք հիմիկ էլ նորա համար վկա-
ներ են ժողովրդի [լ] առաջին։
32 Եւ մենք աւետարանումենք
ձեզ այն խոստմունքն՝ որ հարանցն
եղած [խ] էր։
33 Ինչու որ՝ Աստուած նա կա-
տարեց մեզանում՝ որ նորանց որ-
դիքն ենք, Յիսուսին յարուցանե-
լով. ինչպէս որ երկրորդ սաղմո-
սումը գրված է. Դու իմ Որդիս
ես. ես այսօր ծնայ [ծ] քեզ։
34 Եւ նա որ մեռելներից միջիցն
յարոյց նորան, եւ որ էլ չը պիտի
դառնայ ապականութեան մէջ՝ այս-
պէս ասաց. Թէ, Ձեզ կը տամ
Դաւթի հաւատարիմ [կ] սրբութիւն-
ները։
35 Ինչու որ՝ ուրիշ տեղումն էլ
ասումէ. Քո Սրբոյդ չես տալ որ
ապականութիւն [հ] տեսնէ։
36 Բայց Դաւիթն այն իրենն ազ-
գումը ծառայեց Աստուծոյ կամքին,
եւ ննջեց, եւ գնաց աւելացաւ ի-
րենց հարանցը հետ՝ եւ ապակա-
նութիւն [ձ] տեսաւ։
37 Բայց նորան՝ որ Աստուած յա-
րոյց, նա ապականութիւն չը տե-
սաւ։
38 Թող յայտնի լինի ձեզ մարդիկ
եղբարք, որ սորանով մեղաց թո-

ե Ղուկ. ԺԸ. 31. ԻԴ. 44. Յովհ. ԺԹ. 28. 30. 36. 37.
ը Մատթ. ԻԷ. 59. Մարկ. ԺԵ. 46. Ղուկ. ԻԳ. 53. Յովհ. ԺԹ. 38.
թ Մատթ. ԻԸ. 6. Գործ. Բ. 24. Գ. 13. 15. 26. Ե. 30.
ժ Մատթ. ԻԸ. 16. Գործ. Ա. 3. Ա Կորնթ. ԺԵ. 5, 6, 7.
ի Գործ. Ա. 11.
լ Գործ. Ա. 8. Բ. 32. Գ. 15. Ե. 32.
խ Ծննդ. Գ. 15. ԺԲ. 3. ԻԲ. 18. Գործ. ԻԶ. 6. Հռովմ. Դ. 13. Գաղ. Գ. 16.
ծ Սաղ. Բ. 7. Եբր. Ա. 5. Ե. 5.
կ Եսայ. ԾԵ. 3.
հ Սաղ. ԺԶ. 10. Գործ. Բ. 31.
ձ Գ Թագ. Բ. 10. Գործ. Բ. 29.

մեղաց աւետարանի. եւ յամենայ-
նէ՝ յորմէ ոչ կարացէք օրինօքն
Մովսէսի արդարանալ.

39 Սովաւ ամենայն որ հաւատայ՝
արդարանայ։
40 Զգոյշ կացէք՝ գուցէ եկեսցէ
՚ի վերայ ձեր ասացեալն ՚ի մարգա-
րէս՝
41 Տեսէք՝ արհամարհոտք, եւ զար-
մացարուք եւ եղծարուք. զի գործ
մի գործեմ ես յաւուրս ձեր. գործ՝
որում ոչ հաւատայցէք, եթէ ոք
պատմեսցէ ձեզ։

42 Եւ իբրեւ ելին անտի, աղա-
չէին ՚ի միւսում շաբաթու խօսել
նոցա զնոյն բանս։

43 Իբրեւ արձակեցաւ ժողովուր-
դըն, զհետ երթային բազումք ՚ի
Հրէից անտի եւ ՚ի պաշտօնէից ե-
կամտից զՊօղոսի եւ զԲառնաբայ.
որք խօսէին ընդ նոսա, եւ հաւա-
նեցուցանէին զնոսա կալ մնալ ՚ի
շնորհսն Աստուծոյ։

44 Եւ ՚ի գալ միւսոյ շաբաթուն,
գրեթէ ամենայն քաղաքն ժողովե-
ցաւ լսել զբանն Աստուծոյ։

45 Իբրեւ տեսին Հրէայքն զամ-
բոխն՝ լցան նախանձու. եւ ընդ-
դէմ դառնային ասացելոցն ՚ի Պօ-
ղոսէ՝ հայհոյէին։
46 Համարձակեալ Պօղոսի եւ Բառ-
նաբայ՝ ասէին. Առ ձեզ նախ պարտ
էր խօսել զբանն Աստուծոյ. եւ
քանզի դուք մերժեցէք զնա, եւ
ոչ արժանի համարիք զձեզ կենացն

թողութիւն է աւետարանվում ղ ձեզ.
եւ այն ամէն բաներիցն՝ որ Մովսէ-
սի օրէնքովը չըկարացիք արդա-
րանալ.
39 Սորանով ամէն ով որ հաւա-
տայ՝ ե կարդարանայ։
40 Զգոյշ կացէք՝ որ չըլլինի թէ
ձեզ վերայ գայ նա որ մարգարէ-
ներիցն ասված է ՛ թէ.
41 Տեսէք անարգողներ, եւ զար-
մացէք եւ փչացէք. ինչու որ՝ ես
մին գործ եմ գործում ձեր օրե-
րումը. այնպիսի գործ, որ նորան
չէք հաւատալ՝ թէ որ մինը պատմէ
ձեզ։
42 Եւ երբոր այնտեղիցն դուրս
ելին, աղաչումէին որ միւս շա-
բաթումն էլ այն բանը խօսին ի-
րենց համար։
43 Երբոր ժողովուրդն արձակվե-
ցաւ, այն Հրէաներիցը՝ եւ նոր
դարձած աստուածապաշտ մարդ-
կանցիցը շատերը գնումէին Պօ-
ղոսին եւ Բառնաբասին ետեւէն.
որ էլ նորանց հետ խօսումէին,
եւ նորանց ՝ հաւանացնում՝ որ
Աստուծոյ շնորհքին մէջ կենան
՝ մնան։
44 Եւ երբոր միւս շաբաթն ե-
կաւ, համարեա թէ բոլոր քաղա-
քը հաւաքվեցաւ՝ որ Աստուծոյ
խօսքը լսեն։
45 Երբոր Հրէաները այն ամբոխը
տեսան՝ նախանձով լցվան. եւ Պօ-
ղոսից ասված խօսքերին հակա-
ռակ կենալով ւ հայհոյումէին։
46 Պօղոսն ու Բառնաբասը հա-
մարձակութենով ասումէին. Առաջ
պէտք էր Աստուծոյ բանը ձեզ - խօ-
սել. եւ որովհետեւ դուք դուրս
էք անում նորան, եւ արժան չէք

ղ Երեմ. ԼԱ. 34. Դան. Թ. 24. Ղու. ԻԴ. 47. Ա Յովհ. Բ. 12. ե Եսայ. ԽԳ. 11. Հռովմ. Գ. 28. Ը. 3. Եբր. Է. 19. ՛ Եսայ. ԻԹ. 14. Ամբ. Ա. 5. ՝ Գրծ. ԺԱ. 23. ԺԴ. 22. ՝ Տիտ. Բ. 11. Եբր. ԺԲ. 15. Ա Պետ. Ե. 12. ւ Գրծ. ԺԸ. 6. Ա Պետ. Դ. 4. Յուդ. 10. - Մատթ. Ժ. 6. Գրծ. Գ. 26. Համար. 26. Հռովմ. Ա. 16.

յաւիտենականաց, ահաւասիկ դառնամք ՚ի հեթանոսս։

47 Զի այսպէս պատուիրեաց մեզ Տէր. Եդի զքեզ ՚ի լոյս հեթանոսաց՝ լինել քեզ ՚ի փրկութիւն մինչեւ ՚ի ծագս երկրի։

48 Զայս լուեալ հեթանոսացն՝ ուրախ լինէին, եւ փառաւոր առնէին զբանն Տեառն. եւ հաւատացին՝ որք էին կարգեալ ՚ի կեանսն յաւիտենականս։

49 Եւ շրջէր բանն Աստուծոյ ընդ ամենայն գաւառն։

50 Բայց Հրէայքն գրգռեցին ըզ պաշտօնեայ կանայս զպատուաւ՝ եւ զգլխաւորս քաղաքին, եւ յարուցին հալածանս ՚ի վերայ Պօղոսի եւ Բառնաբայ՝ հանին զնոսա ՚ի սահմանացն իւրեանց։

51 Եւ նոցա թօթափեալ զփոշին յոտից ՚ի վերայ նոցա, եկին յԻկոնիոն։

52 Եւ աշակերտքն լնուին խնդութեամբ՝ եւ Հոգւով Սրբով։

համարում ձեզ յաւիտենական չկենացը, ահա դէպի հեթանոսներին ենք դդառնում.

47 Պատճառն որ՝ Տէրն այսպէս պատուիրեց մեզ. Ես քեզ հեթանոսներին լոյս դրի՝ որ դու փրկութիւն լինիս մինչեւ երկրին ծայրերը։

48 Երբոր հեթանոսները այս լսումէին՝ ուրախանումէին, եւ Տէրի խօսքին փառաւորում. եւ հաւատացին նորանք՝ որ կարգուած էին դէպի յաւիտենական =կեանքը։

49 Եւ Աստուծոյ խօսքը փռվումէր ″այն ամէն գաւառը։

50 Բայց Հրէաները գրգռեցին աստուածապաշտ պարկեշտ կանանցը եւ քաղաքի գլխաւորներին, եւ հալածանք վերկացնելով Պօղոսին եւ Բառնաբասին վերայ՝ նորանց դուրս հանեցին իրենց -սահմաններիցը։

51 Եւ նորանք իրենց ոտների փոշին թափ տուին նորանց վերայ, եւ եկին Հ Իկոնիոն։

52 Եւ աշակերտները լցվումէին ուրախութեամբ եւ Սուրբ +Հոգով։

## ԳԼ. ԺԴ

1 Եւ եղեւ յԻկոնիոն ՚ի միասին մտանել նոցա ՚ի ժողովուրդ Հրէից, եւ խօսել նոյնպէս. մինչեւ հաւատալ Հրէից եւ Յունաց բազմաց յոյժ։

2 Բայց անհաւան Հրէայքն յարուցին եւ չարացուցին զանձինս հեթանոսացն ՚ի վերայ եղբարց։

3 Բազում ժամանակս շրջէին համարձակեալք Տեառն վկայութեամբ, բանիւ շնորհաց իւրոց.

1 Եւ էլաւ Իկոնիոնումը որ նորանք իրար հետ մտնումէին Հրէաների ժողովարանին մէջ, եւ այնպէս խօսում, մինչեւ որ Հրէից եւ Յունաց խիստ շատ հոգիք հաւատ կացան։

2 Բայց անհաւան Հրէաները հեթանոսների անձները վերկացրին՝ եւ չարաչար գրգռեցին եղբարներին վերայ։

3 Շատ ժամանակ մնան էին գալիս համարձակված Տէրի վկայութեամբը՝ նորա շնորհաց խօսքովը.

ւ Ելից. ԼԲ. 10. Բ Օրին. ԼԲ. 21. Եսայ. ԾԵ. 5. Մատթ. ԻԱ. 43. Հռովմ. Ժ. 19.
դ Գլ. ԺԸ. 6. ԻԸ. 28.
է Եսայ. ԽԲ. 6. ԽԹ. 6. Ղուկ. Բ. 32.
– Գլ. Բ. 47.
= Բ Տիմ. Գ. 11.
է Մատթ. Ժ. 14. Մարկ. Զ. 11. Ղուկ. Թ. 5. Գլ. ԺԸ. 6.
+ Մատթ. Ե. 12. Յովհ. ԺԶ. 22. Գլ. Բ. 46.

եւ տալ նշանս եւ արուեստս լինե-
լոյ 'ի ձեռս նոցա ։
4 Եւ եղեն հերձուածք 'ի բազ-
մութեան քաղաքին . ոմանք էին
'ի Հրէայսն , եւ ոմանք յառաքեալ-
սն ։
5 Իբրեւ եղեւ դիմել հեթանո-
սացն եւ Հրէից իշխանօքն իւրեանց
'ի թշնամանել եւ 'ի քարկոծել ըզ
նոսա ։
6 Ազդ եղեալ նոցա՝ փախեան 'ի
քաղաքս Լիկայոնացւոց 'ի Լիւստրա
եւ 'ի Դերբէ՝ եւ շուրջ զգաւառաւն ,
եւ անդ աւետարանէին ։
7 Եւ այր մի Լիւստրացի տկար
յոտից նստէր՝ կաղ յորովայնէ մօր
իւրոյ , որոյ երբէք չէր գնացեալ ։
8 Սա լուաւ զխօսսն Պօղոսի , ո-
րոյ հայեցեալ 'ի նա , եւ տեսեալ՝
թէ ունի հաւատս փրկութեան ,
9 Ասէ մեծաձայն . Քեզ ասեմ
յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի՝ յոտն կաց 'ի վերայ ոտից քոց
ուղիղ . եւ վազվազէր՝ եւ գնայր ։
10 Եւ ժողովրդոցն տեսեալ զոր
արարն Պօղոս , բարձին զձայնս իւ-
րեանց Լիկայոնարէն , եւ ասեն .
Աստուածք նմանեալք մարդկան ի-
ջին առ մեզ ։
11 Եւ կոչէին զԲառնաբաս Դիոս ,
եւ զՊօղոս Հերմէս . քանզի նա էր
առաջնորդ բանին ։
12 Իսկ քուրմն Դիոյ՝ որ կայր ա-
ռաջի քաղաքին , ցուլս եւ պսակս
հասուցեալ 'ի դրունսն՝ հանդերձ
բազմութեամբքն՝ կամէր զոհել ։
13 Եւ լուեալ առաքելոցն Բառնա-
բայ եւ Պօղոսի , պատառեալ զհան-

եւ նշաններ ու հրաշքներ տալու
լինել նորանց ա ձեռովը ։
4 Եւ տարաձայնութիւն էլաւ
քաղաքի բազմութեանը մէջ . որ
մին քանիսը Հրէաների կողմն էին ,
եւ մին քանիսն առաքեալներին
բ կողմը ։
5 Երբոր էլաւ որ հեթանոսները
ու Հրէաները իրենց իշխաններովը
վերայ վազեցին՝ որ նորանց նախա-
տինք տան եւ քարկոծ գ անեն ։
6 Նորանք իմացան՝ եւ փախան
Լիկայոնացոց Լիւստրա եւ Դերբէ
դ քաղաքները՝ եւ գաւառի չորս
կողմերը , եւ այնտեղ աւետարա-
նումէին ։
7 Եւ մին Լիւստրացի մարդ ոտ-
ներով տկար նստած էր՝ որ իրեն
մօր փորից կաղ էր ծնւած , եւ
բնաւ չէր ե ման եկած ։
8 Սա լսեց Պօղոսին խօսքերը .
նա էլ նորա վերայ նայեց , եւ
տեսաւ՝ որ հաւատք ունի զ փրկը-
վելոյ ,
9 Մեծ ձայնով ասաց . Քեզ եմ
ասում՝ մեր Տէր Յիսուսի Քրիստո-
սի անունովը քո ոտներիդ վերայ
շիտակ կանգնէ . եւ նա վազումէր
եւ է գնումէր ։
10 Եւ ժողովուրդն որ տեսաւ նա՝
որ Պօղոսն արաւ , իրենց ձայնը
բարձրացրին Լիկայոներէն՝ եւ ա-
սացին . Աստուածները մարդկանց
նման էլած մեր եկին մեզ ը մօտ ։
11 Եւ Բառնաբասին Դիոս էին
կոչում , եւ Պօղոսին Հերմէս . ին-
չու որ՝ նա էր խօսքի առաջնորդը ։
12 Բայց Դիոսի քուրմը որ քա-
ղաքին առաջին էր , արջառներ եւ
պսակներ հասցրուց դուռը՝ եւ այն
բազմութեան հետ կամենումէր մա-
տաղ թ անել ։
13 Եւ երբոր Բառնաբաս եւ Պօ-
ղոս առաքեալները լսեցին , իրենց

ա Մարկ . ԺԶ . 20 ։ Եբր . Բ . 4 ։
բ Գղ . ԺԳ . 3 ։
գ Բ Տիմ . Գ . 11 ։
դ Մատթ . Ժ . 23 ։
ե Գղ . Գ . 2 ։
զ Մատթ . Ը . 10 ։ Թ . 28 . 29 ։
է Եսայ . ԼԵ . 6 ։
ը Գղ . Ը . 10 . ԻԸ . 6 ։
թ Դան . Բ . 46 ։

դերձս իւրեանց՝ արտաքս վազեցին յամբոխէն. աղաղակէին,

14 Եւ ասէին. Արք՝ զի՞նչ գործէք զայդ. մեք ձեզ նմանօղք կարեաք մարդիկ եմք. աւետարանել ձեզ յայդպիսի ունայնութեանց դառնալ յԱստուած կենդանի. որ արար զերկինս եւ զերկիր եւ զծով՝ եւ զամենայն որ 'ի նոսա.

15 Որ յանցեալ ազգսն՝ թոյլ ետ ամենայն հեթանոսաց գնալ 'ի ճանապարհս իւրեանց.

16 Եւ սակայն ոչ եթէ առանց վկայութեան զինքն եթող բարերարութեամբն տալ յերկնից ձեզ անձրեւս՝ եւ ժամանակս պտղաբերս, լնուլ կերակրովք եւ ուրախութեամբ զսիրտս ձեր.

17 Եւ զայս՝ ասացեալ՝ հազիւ լռեցուցանէին զժողովուրդսն 'ի չզոհելոյ նոցա. այլ գնալ յիւրաքանչիւր անդր.

18 Եւ 'ի չրջելն նոցա եւ յուսուցանել՝ եկին հասին յԱնտիոքէ եւ յԻկոնիէ Հրէայք. եւ 'ի վճռել նոցա համարձակութեամբ՝ պատրեցին զժողովուրդսն՝ 'ի բաց կալ 'ի նոցանէ, եւ ասէին՝ թէ Ո՛չ ինչ ճշմարտութիւն ասեն, այլ զամենայն ստեն. եւ քարկոծեալ զՊօղոս՝ քարշեցին արտաքս քան զքաղաքն, եւ համարէին զնա մեռեալ.

19 Եւ 'ի պատել զնովաւ աշակերտ-

չորերը պատառած՝ ամբոխի միջիցը դուրս վազեցին. մեծ ձայնով ժ կանչումէին,

14 Եւ ասում. Մարդի՛կ՝ դա ինչ էք ի անում. մենք էլ ձեզ նման կարօտութիւն ունօղ մարդիկ լ ենք. որ աւետարանումենք ձեզ՝ որ այդպէսի ոչ ինչ բաներից յետ խ դառնաք դէպի կենդանի ծ Աստուածը. որ ստեղծեց երկինքըն ու երկիրըս եւ ծովը՝ եւ այն ամէնըն՝ որ նորանց մէջն է,

15 Որ անցկացած ազգերումը թոյլ տուաւ ամէն հեթանոսներին՝ որ իրենց ճանապարհներովը հ գնան.

16 Միայն թէ ինքն իրեն առանց վկայութեան ձ չը թողեց. ինչու որ՝ բարերարութենով երկնքիցը տուաւ ձեզ անձրեւներ՝ եւ պտղաբեր ժամանակներ, որ կերակուրներով եւ ուրախութենով ձեր սրտերը լցընէ.

17 Եւ սա ասելով հազիւ թէ ժողովուրդները զաղարացնումէին՝ որ մատաղ չանեն իրենց համար. բայց գընան ամէն մէկն իրենց տեղը.

18 Եւ երբոր նորանք մնան էին գալիս եւ սովրցնում, Հրէաներ եկին հասին Իկոնիոնիցը ու ճ Անտիոքէը. եւ նորանք որ համարձակութենով վճռումնք էին անում, ժողովուրդները խաբեցին՝ որ յետ կենան նորանցից, եւ ասումէին՝ թէ Նոքա ճշմարտութիւն չեն ասում, բայց ամէնը սուտ են խօսում. եւ Պօղոսին քարկոծ անելով քաղաքիցը դուրս քաշեցին, եւ նորան մեռած էին մ համարում.

19 Եւ երբոր աշակերտները նորա

ժ Մատթ. ԻԶ. 65.
ի Գղ. Ժ. 26.
լ Յակ. Ե. 17. Յայտ. ԺԹ. 10.
խ Ա Թագ. ԺԲ. 21. Գ Թագ. ԺԶ. 13. Երեմ. ԺԴ. 22. Ամովս. Բ. 4. Ա Կորնթ. Ը. 4.
ծ Ա Թես. Ա. 9.
կ Ծննդ. Ա. 1. Սաղ. ԼԳ. 6. ՃԽԶ. 6. Յայտ. ԺԴ. 7.
հ Սաղ. ՁԱ. 12. Գղ. ԺԷ. 30. Ա Պետ. Դ. 3.
ձ Գղ. ԺԷ. 27. Հռովմ. Ա. 20.
ղ Ղեւ. ԻԶ. 4. Բ Օրին. ԺԱ. 14. ԻԸ. 12. Յոբ. Ե. 10. Սաղ. ԿԵ. 10. ԿԸ. 9. ՃԽԷ. 8. Երեմ. ԺԴ. 22. Մատթ. Ե. 45.
ճ Գղ. ԺԳ. 45.
մ Բ Կորնթ. ԺԱ. 25. Բ Տիմ. Գ. 11.

տայն՝ յարեալ եմուտ 'ի քաղաքն ·
եւ 'ի վաղիւ անդր ել Բառնաբաւ
հանդերձ 'ի Դերբէ ·

20 Աւետարանեալ 'ի քաղաքին
յայնմիկ՝ եւ աշակերտեալ զբազու-
մս, դարձան 'ի Լիւստրայ՝ եւ յԻ-
կոնիոն՝ եւ յԱնտիոքիայ ·
21 Հաստատել զանձինս աշակեր-
տելոցն՝ եւ մխիթարել կալ հաստա-
տուն 'ի հաւատսն · եւ թէ բազում
նեղութեամբք պարտ է մեզ մտա-
նել յարքայութիւնն Աստուծոյ ·
22 Ձեռնադրեցին նոցա բստ եկե-
ղեցւոյ՝ երիցունս · աղօթս արա-
րեալ հանդերձ պահօք, յանձն ա-
ռարին զնոսա Տեառն՝ յոր հաւա-
տացեալ էին ·
23 Եւ շրջեալ ընդ Պիսիդայ՝ եկին
'ի Պամփիւլիայ ·
24 Եւ խօսեցեալ 'ի Պերգէ զբանն
Տեառն, իջին յԱտալիայ ·
25 Եւ անտի նաւարկեալ՝ գնացին
յԱնտիոք, ուստի էին յանձն արա-
րեալ շնորհացն Աստուծոյ 'ի գործն՝
զոր կատարեցին ·
26 Եկեալ եւ ժողովեալ զեկեղե-
ցին՝ պատմեցին որչափ արար Աս-
տուած ընդ նոսա · եւ զի եբաց հե-
թանոսաց դուռն հաւատոց ·

27 Երջէին ժամանակս ոչ սակա-
ւս ընդ աշակերտսն ·

չորս կողմանը պատեցան, վերկա-
ցաւ մտաւ քաղաքը · եւ առաւօտը
Բառնաբասին հետ դուրս եկաւ
գնաց Դերբէ ·
20 Այն քաղաքումն աւետարանե-
ցին, եւ շատերին աշակերտ շինե-
ցին · եւ ապա յետ դարձան Լիւստ-
րա՝ եւ Իկոնիոն՝ եւ շ Անտիոքիա ·
21 Աշակերտներին անձները հաս-
տատեցին եւ ն մխիթարեցին՝ որ հաս-
տատ կենան հաւատքին մէջ · եւ թէ
շատ նեղութիւններով պէտք է մեզ
մտնել Աստուծոյ շ արքայութիւնը ·
22 Նորանց ամէն մէկ եկեղեցի-
ներին համար երէցներ ձեռնադրե-
ցին · աղօթք արին ծոմ պահելով,
եւ յանձնեցին նորանց Տէրին՝ որ
հաւատացել էին – նորան ·
23 Եւ Պիսիդիային մէջ ման ե-
կած՝ Պամփիլիայի մէջ եկին ·
24 Եւ երբոր Պերգէի մէջ Տէրի
բանը խօսեցին, վէր եկին Ատալիա ·
25 Եւ այնտեղից նաւով գնացին
Անտիոք, որ ջ այնտեղից Աստուծոյ
շնորհքին յանձնըւած էին՝ այն գոր-
ծոյն համար՝ որ ռ կատարեցին ·
26 Եւ եկին միտեղ ժողովեցին
եկեղեցին՝ պատմեցին ինչ որ Աս-
տուած արաւ իրենց Ս հետ · եւ թէ
նա հեթանոսներին համար՝ հաւատ-
քի դուռը – բացաւ ·
27 Ե– քիչ ժամանակ չէրաւ՝ որ
աշակերտներին հետ ման եկին ·

# ԳԼ. ԺԵ

1 Եւ ոմանք իջեալ 'ի Հրէաս-
տանէ՝ ուսուցանէին զեղբարս · Ե-
թէ ոչ թլփատիք բստ օրինացն Մով-
սէսի՝ ոչ կարէք ապրել ·

1 Եւ մին քանիսն որ Հրէաստա-
նիցը վէր էին եկած՝ եղբայրներին
– սովորցնում էին, Թէ որ ֆ չըթլ-
փատվիք Մօսէսի օրէնքին պէս՝ չէք
կարող ÷ ապրել ·

յ Մատթ. ԻԸ. 19 ·
ն Գլ. ԺԱ. 23 ·
ԺԳ. 43 ·
շ Մատթ. Ժ. 38 ·
ԺԶ. 24 · Ղու.
ԻԲ. 28, 29 · Հռ-
ռովմ. Ը. 17 · Բ
Տիմ. Բ. 11, 12 ·
Գ. 12 ·
– Տիտ. Ա. 5 ·
ջ Գլ. ԺԳ. 1. 3 ·
ռ Գլ. ԺԵ. 40 ·
Ս Գլ. ԺԵ. 4. 12 ·
ԻԱ. 19 ·
– Ա Կորնթ. ԺԶ. 9 ·
Բ Կորնթ. Բ. 12 ·
Կող. Դ. 3 · Յայտ.
Գ. 8 ·
—
– Գաղ. Բ. 12 ·
ֆ Յովհ. Է. 22 ·
Հռովմ. 5 · Գաղ.
Ե. 2 · Փիլիպ.
Գ. 2 · Կող. Բ.
8. 11. 16 ·
÷ Ծննդ. ԺԷ. 10 ·
Ղև. ԺԲ. 3 ·

2 Եւ 'ի լինել ոչ սակաւ հակառակութեան եւ խնդրոյ՝ Պօղոսի եւ Բառնաբայ ընդ նոսա, եդին ելանել Պօղոսի եւ Բառնաբայ եւ ոմանց 'ի նոցանէ՝ առ առաքեալսն եւ երիցունս յԵրուսաղէմ վասն խնդրոյս այսորիկ։

3 Նոքա յուղարկեալք յեկեղեցւոյն, շրջէին ընդ Փիւնիկէ, եւ ընդ Սամարիայ, պատմէին զդարձն հեթանոսաց, եւ առնէին ուրախութիւն մեծ ամենայն եղբարցն։

4 Եւ հասեալ յԵրուսաղէմ ընկալեալք յեկեղեցւոյն եւ յառաքելոցն եւ յերիցանց, պատմեցին որչափ ինչ արար ընդ նոսա Աստուած։

5 Յարեան ոմանք 'ի հերձուածոյն փարիսեցւոց հաւատացեալք, եւ ասեն՝ թէ Պարտ է թլփատել զնոսա, եւ պատուիրել պահել զօրէնսն Մովսէսի։

6 Եւ ժողովեցան առաքեալքն եւ երիցունք տեսանել վասն բանիս այսորիկ։

7 Եւ յետ բազում խնդրոյ լինելոյ՝ յարեաւ Պետրոս՝ եւ ասէ ցնոսա. Արք եղբարք՝ դուք գիտէք, զի յաւուրցն առաջնոց 'ի միջի ձերում ընտրեաց Աստուած բերանով իմով լսել հեթանոսաց բանին աւետարանի, եւ հաւատալ։

8 Եւ սրտագէտն Աստուած վկայեաց նոցա, տալով նոցա զՀոգին Սուրբ որպէս եւ մեզ.

9 Եւ ոչինչ ընտրութիւն արար 'ի մէջ նոցա եւ մեր, հաւատովք սրբեալ զսիրտս նոցա։

10 Արդ՝ ընդէր փորձէք զԱստ-

2 Եւ Պօղոսի եւ Բառնաբասի հակառակութիւն եւ վիճմունք քիչ չէր՝ որ նորանց հետ ունին. խօսք դրին որ Պօղոսն ու Բառնաբասը եւ նորանցից մին քանիսն այն խնդիրքին համար գնան Երուսաղէմ առաքեալներին եւ երէցներին դ մօտ։

3 Նորանք ժողովրդից ճանապարհ դրվեցան, եւ Փիւնիկէի ու Սամարիային մէջ մանէ ելին. պատմումէին հեթանոսների դառնալը, եւ մեծ ուրախութիւն անում ամէն զ եղբայրներին։

4 Եւ երբոր հասին Երուսաղէմ, եկեղեցուցն ու առաքեալներիցը եւ երէցներիցը ընդունվեցան, եւ պատմեցին որչափ բան որ Աստուած իրենց հետ է արաւ։

5 Փարիսեցոց հերձուածիցը մին քանի հաւատացեալներ վեր կացան, եւ ասումէին՝ թէ, Պէտք է թլփատել դորանց, եւ պատուէր տալ՝ որ Մօվսէսին օրէնքը ը պահեն։

6 Եւ առաքեալներն ու երէցները ժողովվեցան՝ որ տեսնեն այս բանիս համար։

7 Եւ շատ քննութիւն լինելուցն ետեւ՝ Պետրոս վերկացաւ՝ եւ նորանց ասաց. Մարդիկ եղբարք՝ դուք ինքներդ գիտումէք, որ առաջին օրերիցը ձեր միջումը Աստուած ընտրեց՝ որ իմ բերանովս հեթանոսներն աւետարանի խօսքը լսեն, եւ թ հաւատան։

8 Եւ սիրտ գիտող Աստուածը վկայութիւն տուաւ ժ նորանց, Սուրբ Հոգին տալով նորանց ինչպէս որ էլ ի մեզ։

9 Եւ ոչ ինչ ջոկութիւն չարաւ նորանց եւ մեր լ մէջ, որ հաւատքով սրբեց նորանց խ սրտերը։

10 Հիմիկ՝ ինչու էք Աստուծոյն

դ Գաղ. Բ. 1.
ե Հռովմ. ԺԵ. 24 Ա կորնթ. ԺԶ 6. 11.
զ Գլ. ԺԴ. 26.
է Համար. 12. Գլ. ԺԴ. 26. ԻԱ. 19.
ը Համար. 1.
թ Գլ. Ժ. 20. ԺԱ. 12.
ժ Ա Մնաց. ԻԸ. 9. Գլ. Ա. 24.
ի Գլ. Ժ. 44.
լ Հռովմ. Ժ. 12
խ Գլ. Ժ. 15. 28. 43. Ա կորնթ. Ա. 2. Ա պետ. Ա. 22.

տուած, դնել լուծ ՚ի վերայ պարա-
նոցի աշակերտացն, զոր ոչ հարքն
մեր՝ եւ ոչ մեք կարացաք բառնալ։

11 Այլ շնորհօքն Տեառն Յիսուսի
Քրիստոսի հաւատամք ապրել, զոր-
օրինակ եւ նոքա։
12 Լռեաց ամենայն ժողովուրդն,
եւ լսէին Բառնաբայ եւ Պօղոսի
պատմելոյն. որչափ արար Աստ-
ուած նշանս եւ արուեստս ՚ի հե-
թանոսս ՚ի ձեռն նոցա։

13 Եւ յետ լռելոյն՝ նոցա՝ պա-
տասխանի ետ Յակոբոս՝ եւ ասէ.
Արք եղբարք՝ լուարուք ինձ։

14 Շմաւոն պատմեաց՝ որպէս յա-
ռաջագոյն Աստուած այց արար՝
առնուլ ժողովուրդ ՚ի հեթանոսաց
անուան իւրոյ։
15 Եւ այնմ միաբանին բանք մար-
գարէիցն. որպէս եւ գրեալ է.

16 Յետ այսորիկ դարձայց՝ եւ շի-
նեցից զխորանն Դաւթի՝ զանկեալն
եւ զկործանեալսն նորա վերստին
շինեցից՝ եւ կանգնեցից զնա։

17 Որպէս զի խնդրեսցեն մնա-
ցորդք մարդկան զՏէր. եւ ամե-
նայն հեթանոսք՝ յորոց վերայ կո-
չեցեալ է անուն իմ, ասէ Տէր.
որ առնէ զայս ամենայն,
18 Յայտնի է ՚ի յաւիտենից
(Տեառն գործ իւր)։
19 Վասն որոյ եւ ես իրաւունս
համարիմ, մի՛ նեղել զայնոսիկ՝ որ
՚ի հեթանոսացն դառնան առ Աստ-
ուած։
20 Այլ տալ թուղթ առ նոսա,
խորշել ՚ի կերակրոց կռոց՝ եւ ՚ի

փորձում, որ լուծ էք դնում ա-
շակերտների վզին, որ ոչ մեր
հայրերը՝ եւ ոչ էլ մենք չը կարացինք
վեր * առնել։
11 Բայց Տէր Յիսուսի Քրիստոսի
շնորհքովը հաւատումենք ապրել,
ինչպէս որ էլ * նորանք։
12 Բոլոր ժողովուրդը լուռ կա-
ցաւ, եւ Բառնաբասին եւ Պօղոսի
պատմելոյն լսումէին. թէ Աստ-
ուած որչափ նշաններ եւ հրաշք-
ներ արաւ նորանց ձեռովը հեթա-
նոսներին * մէջ։
13 Եւ երբոր նորանք լուռ կա-
ցան, Յակոբոսը պատասխան տը-
ւաւ՝ եւ ասաց. Մարդիկ եղբարք՝
ինձ * լսեցէք.
14 Շմաւոնը պատմեց՝ թէ ինչպէս
Աստուած առաջուց տեսութիւն ա-
րաւ՝ որ հեթանոսներիցը ժողովուրդ
առնէ իրեն անուանին * համար։
15 Եւ նորա հետ միաբանվումեն
մարգարէներին խօսքերը. ինչպէս
որ էլ գրված է. *
16 Սորանից ետեւ կը դառնամ՝ եւ
Դաւթի ընկածը կը շինեմ, եւ
նորա վեր ընկածը եւ քանդվածը
նոր կը շինեմ՝ եւ կը կանգնացնեմ
* նորան.
17 Որ մարդկանց մնացածները Տէ-
րին խնդրեն. եւ ամէն հեթանո-
սներն՝ որ նորանց վերայ իմ անունս
կոչված է, ասումէ Տէրը. որ այս
ամէնրս անումէ։
18 Յաւիտենից հետէ յայտնի է
Տէրին իրեն գործը։
19 Նրահամար ես էլ իրաւունք
եմ համարում, որ նեղութիւն չը
տան նորանց՝ որ * հեթանոսներիցը
դառնումեն դէպի * Աստուած։
20 Բայց որ թուղթ գրվի նո-
րանց, որ քաշվեն կուռքերի * կե-

* Մատթ. ԻԳ. 4։ Գաղ. Ե. 1։
* Հռովմ. Գ. 24։ Եփես. Բ. 8։ Տիտ. Բ. 11։ Գ. 4. 5։
* Գլ. ԺԴ. 26։
* Գլ. ԺԲ. 17։
* Համար. 7։
* Ամով. Թ. 11. 12։
* Համար. 28։
* Ա. Թես. Ա. 9։
* Յոհնդ. ԼԵ. 2։ Եղծ. Ի. 3. 23։ Եզեկ. Ի. 30։ Ա. Կորնթ. Ը. 1։ Յայտ. Բ. 14. 20. Ժ. 20. 28։

պոռնկութենէ եւ 'ի մեռելոտւոյ՝ եւ յարենէ ։

21 Զի Մովսէս յազգաց առաջնոց ըստ քաղաքաց զքարոզիչսն իւր ունի՝ 'ի ժողովսն ըստ ամենայն շաբաթուց ընթերցեալ ։

22 Յայնժամ հաճոյ թուեցաւ առաքելոցն եւ երիցանցն ամենայն եկեղեցեաւն, արս ընտրեալս 'ի նոցանէ առաքել յԱնտիոք ընդ Պօղոսի եւ ընդ Բառնաբայ, զՅուդա՝ զկոչեցեալն Բարսաբայ, եւ զՇիղա՝ արս գլխաւորս ։

23 Գրեալ առ եղբարս 'ի ձեռն նոցա զայս ինչ. Առաքեալք եւ երիցունք եւ եղբարք, յԱնտիոք եւ 'ի Սիւրիա եւ 'ի Կիւլիկիա եղբարցդ՝ որ 'ի հեթանոսացդ էք, ողջոյն ։

24 Քանզի լուաք՝ թէ ոմանք 'ի մէնջ խռովեցուցին զձեզ բանիւք, խախտել զանձինս ձեր. ասեն թլփատել եւ պահել զօրէնսն՝ որոց ոչ հրամայեցաք ։

25 Հաճոյ թուեցաւ մեզ միաբան ժողովելոցս, արս ընտրեալս յղել առ ձեզ ընդ սիրելիս մեր՝ ընդ Բառնաբայ եւ ընդ Պօղոսի ։

26 Արք՝ որ մատնեցին զանձինս իւրեանց վասն անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

27 Արդ՝ առաքեցաք զՅուդա եւ զՇիղա. եւ նոքա 'ի բանից զնոյն պատմել ։

28 Զի հաճոյ թուեցաւ Հոգւոյն Սրբոյ եւ մեզ, մի ինչ աւելի բե-

բակուռներիցը, եւ շ պոռնկութենից, եւ մեռած բաներից՝ եւ ո արիւնից ։

21 Ինչու որ՝ Մօսէս առաջին դարերից հետէ՝ ամէն քաղաքներումն իրեն քարոզիչներըն ունի. որովհետեւ ժողովարաններին մէջն ամէն շաբաթ օրերը չ կարդվումէ ։

22 Այն ժամանակը հաճոյ երեւեցաւ առաքեալներին եւ երէցներին եւ ամէն եկեղեցուն, որ իրենցից ընտրուած մարդիկ ուղարկեն Անտիոք՝ Պօղոսի եւ Բառնաբասի հետ, այն Բարսաբայ կոչված Յուդային, եւ Շիղային՝ գլխաւոր պ մարդկանցը ։

23 Նորանց ձեռովը եղբայրներին գրեցին այս բանըս. Առաքեալներս եւ երէցներս եւ եղբայրներս, Անտիոքի եւ Սիւրիայի եւ Կիւլիկիայի մէջ եղբայրներիդ՝ որ հեթանոսներից էք, ողջոյն ։

24 Որովհետեւ լսեցինք՝ թէ մին քանիսն իբր թէ մեր կողմանէ՝ խռովացրին ձեզ խօսքերով, որ ձեր անձներըն տեղահան կանեն. ասումեն թէ պէտք է թլփատուիլ՝ եւ օրէնքը պահել. որ նորանց մենք հրաման չենք տուել ։

25 Մեզ միաբան ժողովվածներիս հաճոյ երեւեցաւ՝ որ մեր սիրելի Բառնաբասի եւ Պօղոսի հետ ընտրեալ մարդիկ ուղարկենք ձեզ մօտ

26 Էնպէս մարդիկ՝ որ իրենց անձները մատնեցին մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անուանն ռ համար ։

27 Սորա համար Յուդային եւ Շիղային ուղարկեցինք. որ նորանք էլ խօսքով իսկ այն բանը պատմեն ։

28 Ինչու որ՝ Սուրբ Հոգուն եւ մեզ էլ հաճոյ երեւեցաւ, որ բնաւ

շ Ա Կորնթ. Զ. 9. 18։ Գաղ. Ե. 19։ Եփես. Ե. 3։ Կող. Գ. 5։ Ա Թես. Դ. 3։ Ա Պետ. Դ. 3։
ո Ծննդ. Թ. 4։ Ղև. Գ. 17։ Բ Օրին. ԺԲ. 16. 23։
չ Գրծ. ԺԳ. 15. 27։
պ Գրծ. Ա. 23։
ջ Համար. 1։ Գաղ. Բ. 4։ Ե. 12։ Տիտ. Ա. 10, 11։
ռ Գրծ. ԺԳ. 50. ԺԴ. 18։ Ա Կորնթ. ԺԵ. 30։ Բ Կորնթ. ԺԱ. 23. 26։

բեռն դնել ձեզ, բայց միայն 'ի կարեւորացս յայսցանէ.

29 'Ի բաց կալ 'ի զոհելոց կռոց՝ և յարենէ՝ և 'ի հեղձուցելոյ՝ և 'ի պոռնկութենէ. յորոց պահեալ զանձինս բարւոք գործէք. ողջ լերուք ։

30 Եւ նոքա արձակեալք՝ իջին յԱնտիոք, և ժողովեալ զժողովուրդն՝ ետուն զթուղթն ։

31 Եւ ընթերցեալ՝ ուրախ եղեն 'ի վերայ մխիթարութեանն ։

32 Յուդա և Շիղա՝ զի և նոքա մարգարէք էին, բանիւք բազմօք մխիթարեցին զեղբարսն՝ և հաստատեցին ։

33 Եւ եղեալ անդ ժամանակս՝ արձակեցան խաղաղութեամբ յեղբարց առ առաքեալսն ։

34 Եւ հաճոյ թուեցաւ Շիղայի մնալ անդէն ։

35 Բայց Պօղոս և Բառնաբաս շրջէին յԱնտիոք, ուսուցանէին և աւետարանէին՝ և այլովք բազմօք զբանն Տեառն ։

36 Եւ յետ աւուրց ինչ ասէ Պօղոս ցԲառնաբաս, Դարձցուք և շրջեսցուք զեղբարսն՝ ըստ ամենայն քաղաքաց՝ յորս քարոզեցաք զբանն Տեառն՝ թէ որպէս ունիցին ։

37 Բառնաբաս կամէր առնուլ և զՅովհաննէս՝ զկոչեցեալն Մարկոս ։

38 Բայց Պօղոս աղաչէր՝ թէ զդմեկնեալն 'ի նոցանէ 'ի Պամփիւլիայ, և չեկեալն ընդ նոսա 'ի գործն, մի առնուլ ընդ ինքեանս ։

39 Եւ եղեւ գժտութիւն՝ մինչեւ մեկնել նոցա 'ի միմեանց, Բառնա–

աւելի բեռն չը դնենք ձեզ վերայ, բայց միայն այս հարկաւոր բաներս.

29 Որ հեռու կենաք կռքի մատաղ ⁎արածներից՝ և արիւնից՝ և խեղդուածից՝ և †պոռնկութենից. որոնցից որ պահէք ձեր անձներին՝ լաւ կանէք. ողջ կացէք ։

30 Եւ նորանք՝ որ արձակուեցան՝ վէր եկին Անտիոք, և ժողովուրդը հաւաքեցին՝ և այն թուղթը տուին

31 Եւ երբոր կարդացին, ուրախ էլան այն մխիթարութեանը վերայ

32 Յուդան և Շիղան՝ որովհետեւ նորանք էլ մարգարէք էին՝ շատ խօսքերով մխիթարեցին և հաստատեցին ‡եղբայրներին ։

33 Եւ երբոր մին ժամանակ այն տեղ էլան, եղբայրներիցը խաղաղութենով արձակուեցան գնալ դէպի §առաքեալներր ։

34 Եւ Շիղային հաճոյ երեւեցաւ՝ որ այնտեղ մնայ ։

35 Բայց Պօղոսն ու Բառնաբասը Անտիոքին մէջ մնան էին գալիս, որ Տէրի խօսքը շատ ուրիշների հետ սովրցնէին և աւետարանէին ։

36 Բայց մին քանի օրից ետեւ Պօղոսն ասաց Բառնաբասին. Դառնանք և մտնանք եղբայրներին մօտ՝ այն ամէն քաղաքներին, որ նորանցում Տէրի խօսքը ⁎քարոզեցինք, տեսնենք թէ ինչպէս կան ։

37 Բառնաբաս կամենումէր այն Մարկոս կոչված Յօհաննէսին էլ վեր †առնել ։

38 Բայց Պօղոսն աղաչումէր՝ որ այն Պամփիւլիայի մէջ իրենցից ջոկուածը, և նորանց հետ գործի մէջ չեկածըին իրենց հետ ‡չառնեն ։

39 Եւ կռիւ էլաւ նորանց միջամը. մինչեւ որ նորանք ջոկուեցան

⁎ Համար. 20. Գլ. ԻԵ. 25. Յայտ. Բ. 14. 20. † Ղեւտ. ԺԷ. 14. ‡ Գլ. ԺԴ. 21. ԺԸ. 23. § Ա Կորնթ. ԺԶ. 11. Եբր. ԺԱ. 31. ‖ Գլ. ԺԴ. 1.

⁎ Գլ. ԺԴ. 4. 13. 14. 51. ԺԴ. 1. 6. 24. 25. † Գլ. ԺԲ. 12. 25 ԺԴ. 5. Կող. Դ. 10. Բ Տիմ. Դ. 11. Փիլիմ. 24. ‡ Գլ. ԺԳ. 13.

բայ առնուլ զՄարկոս նաւել 'ի Կիպրոս.

40 Եւ Պօղոսի ընտրեալ զՇիղա՝ ել, յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ յեղբարց անտի:

41 Եւ շրջէր 'ի կողմանս Ասորւոց եւ Կիւլիկեցւոց, եւ հաստատէր զեկեղեցիսն:

իրարմէ. Բառնաբաս Մարկոսն առաւ որ նաւով գնայ Կիպրոս:

40 Եւ Պօղոս Շիղային ընտրեց, եւ այն եղբայրներէն Աստուծոյ շնորհքին յանձնըրված գնաց ա ելաւ,

41 Եւ Ասորւոց եւ Կիւլիկեցւոց կողմերն մտն էր գալիս, եւ եկեղեցիները բ հաստատում:

## ԳԼ. ԺԶ.

1 Եկն եհաս 'ի Դերբէ եւ 'ի Լիւստրա. եւ ահա աշակերտ մի էր անդ՝ անուն Տիմոթէոս, որդի կնոջ Հրէի հաւատացելոյ՝ եւ հօր Հեթանոսի,

2 Որ վկայեալ էր 'ի Լիւստրացւոց եւ յԻկոնացւոց եղբարց:

3 Զսա կամեցաւ Պօղոս ընդ իւր առնուլ՝ եւ առեալ թլփատեաց զնա վասն Հրէիցն, որ էին 'ի տեղիսն յայնոսիկ. քանզի գիտէին ամենեքին զհայր նորա՝ թէ Հեթանոս էր:

4 Իբրեւ անցանէին ընդ քաղաքսն՝ աւանդէին նոցա պահել զհրամանսն առաքելոցն եւ երիցանցն՝ որք յԵրուսաղէմ:

5 Եւ եկեղեցիքն հաստատէին 'ի հաւատս, եւ յաւելուին 'ի թիւ հանապազօր:

6 Եւ շրջեցան ընդ Փռիւգիա եւ ընդ կողմանս Գաղատացւոց, արգելեալք 'ի Հոգւոյն Սրբոյ խօսել զբանն յԱսիա:

7 Բայց եկեալ առ Միւսիաւ՝ թեւակոխէին երթալ 'ի Բիւթանիա, եւ ոչ համարձակեաց նոցա Հոգին Յիսուսի:

8 Եւ անցեալ ըստ Միւսիա՝ իջին 'ի Տրովադա:

1 Եւ եկաւ հասաւ Դերբէ եւ ա Լիւստրա. եւ ահա մին աշակերտ կար այնտեղ՝ Տիմոթէոս բ անուն. որ Հրէայ հաւատացեալ կնկան՝ եւ Հեթանոս հօր որդի գ էր,

2 Որ բարի վկայութիւն ունէր Լիւստրացի եւ Իկոնիացի դ եղբայրներիցը:

3 Պօղոս կամեցաւ որ սորան առնի իրեն հետ. եւ առաւ թլփատեց նորան՝ Հրէաների պատճառովն, որ այնտեղերումն ե էին, ինչու որ՝ ամէնքը գիտումէին՝ որ նորա հայրը Հեթանոս էր:

4 Երբոր անցանում էին այն քաղաքներովը՝ աւանդեցին նորանց պահել այն հրամանները, որ Երուսաղէմումը լինող առաքեալներիցը ու երէցներիցը պատուիրած զ էին:

5 Եւ եկեղեցիները հաւատքի մէջ հաստատվումէին, եւ օրէ օր թըւով է աւելանում:

6 Եւ Փռիւգիայի եւ Գաղատացոց կողմերը մտն եկին, Սուրբ Հոգուցն արգելված՝ որ Ասիայի մէջն Աստուծոյ բանը չխօսին:

7 Բայց երբոր եկին Միւսիայի կողմերը, ջանք էին անում որ գնան Բիւթանիա, եւ Յիսուսի Հոգին թող չըտուաւ նորանց:

8 Եւ Միւսիայիցն որ անցան՝ վէր եկին ը Տրովադա:

ա Գլ. ԺԴ. 25.
բ Գլ. ԺԶ. 5.
—
ա Գլ. ԺԴ. 6.
բ Գլ. ԺԹ. 22.
Հռովմ. ԺԶ. 21.
Ա Կորնթ. Դ. 17.
Փիլիպ. Բ. 19.
Ա Թես. Գ. 2.
Ա Տիմ. Ա. 2.
Բ Տիմ. Ա. 2.
գ Բ Տիմ. Ա. 5.
դ Գլ. Ձ. 3.
ե Ա Կորնթ. Թ. 20.
Գաղ. Բ. 3. Ե. 2.
զ Գլ. ԺԵ. 28, 29.
է Գլ. ԺԵ. 41.
ը Բ Կորնթ. Բ. 12.
Բ Տիմ. Դ. 12.

9 Եւ տեսիլ երեւեցաւ 'ի գիշերի
Պօղոսի. այր ոմն Մակեդոնացի
կայր, աղաչէր զնա՝ եւ ասէր. Ան-
ցեալ 'ի Մակեդոնիա՝ օգնեսցես
մեզ:
10 Եւ իբրեւ զտեսիլն ետես, վաղ-
վաղակի խնդրեցաք ելանել 'ի Մա-
կեդոնիա. տեղեկացեալք՝ թէ հր-
աւիրեաց զմեզ Տէր աւետարանել
նոցա:
11 Եւ ելեալ 'ի Տրովադայ՝ դէպ
ուղիղ գնացաք 'ի Սամոթրակէ, եւ
'ի վաղիւ անդր 'ի Նոր քաղաքն:
12 Եւ անտի 'ի Փիլիպպուս, որ է
առաջին վիճակ Մակեդոնացւոց
քաղաք Կողոնիա. եւ անդ 'ի քա-
ղաքին դադարեալ մեր աւուրս
ինչ,
13 Յաւուրն շաբաթու ելաք ար-
տաքոյ քաղաքին առ գետափն՝ ուր
համարէր աղօթս մատուցանել. եւ
նստեալ խօսէաք ընդ ժողովեալ
կանայսն:
14 Եւ կին ոմն անուն Լիդիա ծի-
րանավաճառ՝ 'ի Թիւատիր քաղաքէ՝
երկիւղած յԱստուծոյ՝ լսէր. զորոյ
Տէր իսկ եբաց զսիրտն անսալ խօ-
սիցն Պօղոսի:

15 Եւ իբրեւ մկրտեցաւ ինքն եւ
տուն իւր, աղաչէր եւ ասէր. Եթէ
համարիցիք զիս հաւատացեալ Տեա-
ռն, մտեալ 'ի տուն իմ ագերուք.
եւ բռնադատեաց տարաւ զմեզ:

16 Եւ եղեւ մինչ երթայաք մեք
յաղօթս, պատահեաց մեզ աղա-
խին ոմն՝ զոր ունէր այս հարցուկ.
որ շահս բազումս տայր տերանց
իւրոց մոլելովն:

17 Նա զհետ եղեալ Պօղոսի եւ
մեր՝ աղաղակէր եւ ասէր. Արքս
այս՝ ծառայք Աստուծոյ բարձրելոյ

9 Եւ Պօղոսին գիշերը տեսիլք
երեւեցաւ. մին Մակեդոնացի մարդ
կանգնած էր, աղաչումէր նորան՝
եւ ասում. Անցիր Մակեդոնիա՝ եւ
մեզ բ օգնէ:
10 Եւ երբոր տեսաւ այն տեսիլքը՝
շուտով խնդրեցինք որ դուրս գանք
ժ Մակեդոնիա. ինչու որ՝ իմա-
ցանք՝ որ Տէրը հրաւիրեց մեզ, որ
աւետարանենք նորանց:
11 Եւ Տրօադայիցը դուրս ելած՝
շիտակ գնացինք Սամոթրակէ. եւ
յետեւի օրը Նոր քաղաքը:
12 Եւ այնտեղիցը Փիլիպպուսը,
որ Մակեդոնացոց առաջին բաժինն
է՝ է Կողոնիա քաղաք. եւ մենք՝ որ
այնտեղ քաղաքումը մին քանի օր
դադարեցինք "մնացինք,
13 Շաբաթ օրը քաղաքիցը դուրս
ելանք դէպի գետին ափն՝ որ այն-
տեղ սովոր էին աղօթք անել. եւ
նստած խօսումէինք ժողոված կա-
նանցը հետ:
14 Եւ մին կին Լիդիա անուն՝ ծի-
րանի ծախօղ՝ որ Թիւատիր քաղա-
քիցն էր՝ Աստուածանից վախօղ՝
լսեց. որ իսկ Տէրը նորա սիրտը
բացաւ, որ Պօղոսի խօսքերին մը-
տիկ ւանէ:
15 Եւ երբոր ինքը եւ իրեն տու-
նը մկրտվեցաւ, աղաչումէր եւ ա-
սում. Թէ որ ինձ Տէրին հաւատա-
ցած համարիք, մտէք իմ տունըս,
այնտեղ մնացէք. եւ ստիպեց տա-
րաւ ի մեզ:
16 Եւ էլաւ գնա քանի որ մենք
գնումէինք աղօթք անել, մին ա-
ղախին պատահեց մեզ՝ որ կախար-
դութեան գեւ ժ ունէր. որ կա-
խարդութեանովն իրեն տէրերին շատ
շահ էր ւբերում:
17 Նա Պօղոսի եւ մեր ետեւէն
ընկած՝ աղաղակումէր եւ ասում.
Այս մարդիկս բարձրեալ Աստուծոյ

բ Գղ. Ծ. 30:
ժ Բ Կորնթ. Բ. 13.
է Փիլիպ. Ա. 1:
ւ Ղու. ԻԴ. 45:
ի Երեմ. ԺԹ. 3:
ԼԴ. 11: Գաղ.
ԺԹ. 21: Ղու.
ԻԴ. 29: Եբր.
ԺԳ. 2:
ժ Ա Թագ. ԻԸ. 7:
ւ Գղ. ԺԹ. 21:

են, որ պատմեն ձեզ զճանապարհս փրկութեան։

18 Եւ զայս առնէր 'ի բազում աւուրս. զայրացեալ Պօղոս՝ դարձաւ եւ ասէ ցայսն. Պատուիրեմ քեզ յանուն Յիսուսի Քրիստոսի. ել 'ի դմանէ. եւ ել 'ի նմին ժամու։

19 Իբրեւ տեսին տեարքն նորա՝ եթէ հատաւ յոյս շահի նոցա, առեալ զՊօղոս եւ զՇիղա՝ ձգեցին 'ի հրապարակ առ իշխանսն։

20 Եւ ածեալ զնոսա առ զօրագլուխսն՝ ասէին. Արքս այս խռովեցուցանեն զքաղաքս մեր՝ Հրեայք են,

21 Եւ պատմեն մեզ օրէնս՝ զոր չէ արժան մեզ ընդունել, եւ ոչ առնել. զի Հռովմայեցիք եմք։

22 Եւ կուտեցաւ ամբոխն 'ի վերայ նոցա. եւ զօրագլուխքն պատառեցին զհանդերձս բերեանց. հրամայեցին գան հարկանել։

23 Եւ բազում վէրս եդեալ 'ի վերայ նոցա՝ արկին 'ի բանտ. պատուիրեցին բանտապետին զգուշութեամբ պահել զնոսա։

24 Որոյ առեալ զայսպիսի պատուէր՝ արկ զնոսա 'ի ներքին բանտն. եւ զոտս նոցա պնդեաց 'ի կոճեղս։

25 Եւ 'ի մէջ գիշերոյն Պօղոս եւ Շիղա կային յաղօթս՝ եւ օրհնէին զԱստուած. եւ ունկն դնէին նոցա կալանաւորքն։

26 Եւ եղեւ յանկարծակի շարժումն մեծ՝ մինչեւ 'ի շարժել հիմանց բանտին. եւ բացան անդրէն դրունքն ամենայն, եւ ամենեցուն կապանք լուծան։

ծառաներն են, որ ձեզ պատմում են փրկութեան ճանապարհները։

18 Եւ շատ օրեր այս բանըս անում էր. Պօղոսին զզուար եկաւ՝ յետ դարձաւ եւ հ ոգուն ասաց. Յիսուս Քրիստոսի անունովը պատուիրում եմ քեզ՝ դուրս եկ դորանից. եւ ոգին իսկ այն ժամումը դուրս ձ եկաւ։

19 Երբոր նորա տէրերը տեսին՝ թէ իրենց շահին յոյսը կտրուեցաւ, Պօղոսին եւ Շիղային ղ առին՝ քաշեցին տարան իշխաններին մ մօտ։

20 Եւ նորանց տարան զօրապետներին մօտ եւ ասացին. Այս մարդիկս խռովացնում են մեր քաղաքը՝ իրենք Հրեաներ յ են,

21 Եւ մեզ այնպիսի օրէնք են պատմում՝ որ մեզ արժան չէ՝ ոչ ընդունել, եւ ոչ անել. ինչու որ՝ մենք Հռովմայեցի ենք։

22 Եւ ամբոխը կիտուեցաւ նորանց վերայ. եւ զօրապետները իրենց շորերը պատառեցին, եւ հրաման տուին որ ն ծեծեն։

23 Եւ երբոր նորանց վերայ շատ խոցեր դրին՝ բանտին մէջ քցեցին. եւ բանտապետին պատուիրեցին, որ նորանց զգուշութենով պահէ։

24 Նա էլ որ այսպէսի պատուէր առաւ, նորանց ներսի բանտը ձգեց. եւ նորանց ոտները կոճեղումը պնդացրուց։

25 Եւ կէս գիշերին Պօղոսն ու Շիղան աղօթք էին անում, եւ օրհնութիւն տալիս Աստուծոյ. եւ բանդվածներն նորանց ականջ էին դնում։

26 Եւ յանկարծակի մեծ շարժմունք էլաւ՝ մինչեւ որ բանտի հիմունքներն էլ շ շարժվուեցին. եւ շուտով ամէն դռները բացվան, եւ ամէնի կապանքներն ո արձակվեցան

հ Մարկ. Ա. 25. 34.
ձ Մարկ. ԺԶ. 17.
ղ Գլ. ԺԹ. 25. 26.
ճ Բ Կորնթ. Զ. 5.
մ Մատթ. Ժ. 18.
յ Գ Թագ. ԺԸ. 17. Գլ. ԺԷ. 6.
ն Բ Կորնթ. Զ. 5. ԺԱ. 23. 25. Ա Թես. Բ. 2.
շ Գլ. Դ. 31.
ո Գլ. Ե. 19. ԺԲ. 7. 10.

27 Երբեւ զարթեաւ բանտապահն՝
եւ ետես բացեալ զդուրս բանտին,
ձգեաց զսուսեր՝ եւ կամէր երթալ
զիւրովին · կարծէր փախուցեալ
զկապեալսն ։

28 Եւ գոչեաց ՚ի ձայն մեծ Պօ-
ղոս՝ եւ ասէ · Մի ինչ գործեր ընդ
անձն քո չար, քանզի ամենեքին
աստ եմք ։
29 Խնդրեաց լոյս՝ եւ դիմեաց ՚ի
ներքս · եւ զահի հարեալ անկաւ
առաջի Պօղոսի եւ Շիղայի ։
30 Եւ ածեալ զնոսա արտաքս՝
ասէ · Տեարք՝ զինչ պարտ է ինձ
առնել՝ զի ապրեցայց ։
31 Եւ նոքա ասեն · Հաւատա ՚ի
Տէր Յիսուս Քրիստոս, եւ ապրես-
ցիս դու՝ եւ ամենայն տուն քո ։
32 Եւ խօսեցան նմա զբանն Տեա-
ռն՝ եւ ամենեցուն որ էին ՚ի տան
նորա ։
33 Եւ առեալ զնոսա ՚ի նմին ժա-
մու գիշերոյն՝ լուաց ՚ի վիրաց
անտի · եւ մկրտեցաւ ինքն եւ իւրքն
ամենեքեան անդէն վաղվաղակի ։
34 Եւ ածեալ զնոսա ՚ի տուն իւր,
եդ առաջի նոցա սեղան · եւ ու-
րախ եղեւ ամենայն տամբն հաւա-
տացեալ յԱստուած ։
35 Եւ իբրեւ այգ եղեւ՝ առաքե-
ցին զօրագլուխքն զգաւազանակիրսն եւ
ասեն · Արձակեա զարսդ զայդո-
սիկ ։
36 Եւ պատմեաց բանտապահն բղ
բանսն Պօղոսի, եթէ առաքեցին
զօրագլուխքն զի արձակիցիք · արդ
ելէք եւ երթայք խաղաղութեամբ ։

37 Իսկ Պօղոս ասէ ցնոսա · Գան-
հարեալ զմեզ հրապարակաւ՝ արս
անմեղս Հռովմայեցիս արկին ՚ի
բանտ, եւ արդ լռելեայն հանեն
զմեզ · ոչ այդպէս, այլ եկեսցեն՝
ինքեանք իսկ հանցեն զմեզ ։

27 Երբոր բանտապահը զարթնե-
ցաւ, եւ տեսաւ որ բանտի դռնե-
րըն բացուած էին, սուրը քաշեց՝ եւ
կամենումէր ինքն իրեն սպանել ·
ինչու որ՝ կարծումէր՝ թէ կապած-
ները փախել են ։
28 Եւ Պօղոս մեծ ձայնով կան-
չեց՝ եւ ասաց · Քո անձին չար
բան մի գործեր, ինչու որ՝ մենք
ամէնքս այստեղ ենք ։
29 Ճրագ ուզեց՝ եւ ներս վազեց ·
եւ շատ վախով բռնուած Պօղոսի
եւ Շիղայի առաջին վէր ընկաւ ։
30 Եւ նորանց դուրս հանեց եւ
ասաց · Տէրեր՝ ես ինչ պէտք է ա-
նեմ որ ՚ ազատիմ ։
31 Եւ նորանք ասացին · Հաւատա
Տէր Յիսուս Քրիստոսին եւ կապրիս
դու՝ եւ ՚քո ամէն տունը ։
32 Եւ Տէրի բանը խօսեցին նո-
րան՝ եւ այն ամէնին, որ նորա
տանումն էին ։
33 Եւ նորանց վէր առաւ գիշերի
այն ժամին այն խոցերիցը լուա-
ցաւ · եւ չուտով մկրտուեցաւ ին-
քը՝ եւ նորա բոլոր ընտանիքը ։
34 Եւ նորանց տարաւ իրեն տունը,
նորանց առաջին սեղան դրաւ · եւ
ուրախ էլաւ ամէն ընտանիքներովը՝
որ Աստուծոյն Հ հաւատաց ։
35 Եւ երբոր լուսացաւ, զօրա-
գլուխները ուղարկեցին տանանի
պաշտօնեաններին՝ եւ ասացին · Ար-
ձակէ այդ մարդկանցը ։
36 Եւ բանտապահն այն խօսքերը
Պօղոսին պատմեց, թէ զօրագլուխ-
ները ուղարկեցին՝ որ արձակվէք ·
ուրեմն դուրս ելէք, եւ գնացէք
խաղաղութենով ։
37 Բայց Պօղոսն ասաց նորանց ·
Ամէնի առաջին ծեծեցին մեզ՝ որ ան-
մեղ Հռօմայեցի մարդիկ ենք, եւ բան-
տը ձգեցին · եւ հիմիկ մեզ թաքուն
են հանում · այդպէս չէ, բայց թող
իսկ իրենք գան մեզ հանեն ։

ւ Ղու. Գ. 10 ։ | դ Յովհ. Գ. 16. | Յովհ. Ե. 10 ։ | Ժ. 6 ։
Գղ. Բ. 37 ։ Թ. 6 ։ | 36 ։ Զ. 47 ։ Ա | է Ղու. Ե. 29 ։ | ա Գղ. ԻԲ. 25 ։

38 Եւ պատմեցին զօրապլխացն նուիրակքն զբանսն . զահի հարան իբրեւ լուան թէ Հռովմայեցիք են . եւ եկեալ աղաչեցին զնոսա ։

38 Եւ ատեանի պաշտօնեաներն այն խօսքերը զօրագլուխներին պատմեցին . շատ վախեցան՝ երբոր լսեցին թէ Հռօմայեցիք են . եւ եկին աղաչեցին նորանց ։

39 Եւ իբրեւ հանին , աղաչէին գնալ 'ի քաղաքէն ։

39 Եւ երբոր հանեցին , աղաչումէին՝ որ այն քաղաքիցը - գնան ։

40 Եւ ելեալ 'ի բանտէն՝ մտին առ Լիդիա . եւ տեսեալ զեղբարսն՝ մխիթարեցին զնոսա եւ գնացին ։

40 Եւ բանտիցը դուրս ելին՝ մտան Լիդիային Հ մօտ . եւ եղբարներին որ տեսին՝ նորանց մխիթարեցին եւ գնացին ։

## ԳԼ. ԺԷ.

1 Եւ շրջեալ ընդ Ամփիպօլիս եւ ընդ Ապողոնիա , եկին 'ի Թեսաղոնիկէ , ուր էր ժողովուրդ Հրէից ։

1 Եւ Ամփիպօլիսի ու Ապօղոնիային մէջ ման գալով եկին Թեսաղոնիկէ , որ այնտեղ Հրէաների ժողովարան կար ։

2 Եւ ըստ սովորութեանն Պօղոս եմուտ առ նոսա , եւ 'ի շաբաթս երիս խօսեցաւ ընդ նոսա 'ի գրոց ։

2 Եւ Պօղոս՝ սովորութեանը պէս մտաւ նորանց մօտ , եւ երեք շաբաթ նորանց հետ խօսեց = գրքերից ։

3 Բանայր՝ եւ դնէր առաջի , եթէ պարտ էր Քրիստոսի չարչարել եւ յառնել 'ի մեռելոց , եւ թէ նա է Քրիստոսն Յիսուս՝ զոր ես պատմեմ ձեզ ։

3 Բանում էր՝ եւ առաջին դնում , թէ պէտք էր՝ որ Քրիստոսը չարչարուէր՝ եւ մեռելների միջից յարութիւն ƀ առնէ . եւ թէ՝ այն Յիսուսը որ ես պատմումեմ ձեզ , Քրիստոսն է ։

4 Եւ ոմանք 'ի նոցանէ հաւանեցան , եւ վիճակեցան Պօղոսի եւ Շիղայի , բայց պաշտօնէիցն Հեթանոսաց էր բազմութիւն յոյժ , եւ 'ի կանանց գլխաւորաց ոչ սակաւք ։

4 Եւ նորանցից մին քանիսը ‡ հաւանեցին, եւ ‡‡ Պօղոսին ու Շիղային հետ միաւորվեցան . բայց աստուածպաշտ Հեթանոսների շատ բազմութիւն կար , եւ գլխաւոր կանանցիցն էլ քիչ չէ ։

5 Եւ նախանձեցան Հրէայքն , եւ առեալ արս ոմանս գռեհիկս անօրէնս՝ ամբոխ արարեալ խռովեցին զքաղաքն . եւ կուտեալ առ յապարանսն Յասոնի , խնդրէին զնոսա ածել 'ի հրապարակ ։

5 Եւ Հրէաները նախանձեցան , եւ մէկքանի ռամիկ անօրէն մարդիկ առին՝ ամբոխ արին , քաղաքին մէջ շփոթութիւն շինեցին . եւ Յասոնի տան մօտ հաւաքված՝ ուզումէին , որ նորանց տանեն ƀ գատաստանատունը ։

6 Եւ իբրեւ ոչ գտին զնոսա՝ քարշէին զՅասոն եւ զոմանս եղբարս առ քաղաքապետսն . բողոք

6 Եւ երբոր չը գտին նորանց՝ Յասոնին եւ մին քանի եղբայրներին քաշումէին քաղաքապետներին մօտ.

- Մատթ . Ը . 34 ։
Հ Համար 14 ։
—
= Ղուկ . Դ . 16 ։ Գլ . Թ . 20 ։ ԺԳ . 5 . 14 ։ ԺԴ . 1 ։ ԺԶ . 13 ։ ԺԹ . 8 .
ƀ Ղուկ . ԻԴ . 26 . 46 ։ Գլ . ԺԸ . 28 ։ Գաղ . Գ . 1 ։
‡ Գլ . ԻԸ . 24 ։
‡‡ Գլ . ԺԵ . 22 . 27 . 32 . 40 ։
ƀ Հռովմ . ԺԶ . 21 ։

բարձեալ՝ թէ որք զաշխարհս խը-
ռովեցին՝ սոքա եւ այսր հասին ։

7 Զորս ընկալեալ է Յասոնի ·
եւ սոքա ամենեքեան հակառակ
հրամանացն կայսեր գործեն · թա-
գաւոր զայն ասեն զՅիսուս ։

8 Եւ խռովեցուցին զժողովուրդ-
սն եւ զքաղաքապետսն , որ լսէ-
ին զայս ։
9 Եւ առեալ երաշխաւորութիւն
առ ՚ի Յասոնեայ եւ յայլոցն՝ արձա-
կեցին զնոսա ։
10 Բայց եղբարքն վաղվաղակի գի-
շերայն յուղարկեցին զՊօղոս եւ ըզ
Շիղայ ՚ի Բերիա · որք իբրեւ հա-
սին անդր՝ ՚ի ժողովուրդն Հրէից
գնացին ։
11 Զի սոքա էին ազնուականա-
գոյնք՝ քան որ ՚ի Թեսաղոնիկէն է-
ին · որք ընկալան զբանն ամենայն
յօժարութեամբ · հանապազ քննէին
զգիրս , եթէ իցէ այս այսպէս ։

12 Եւ բազումք ՚ի նոցանէ հաւա-
տացին · եւ ՚ի Յունաց կանանց
զգաստից եւ յարանց ոչ սակաւք ։
13 Բայց իբրեւ գիտացին՝ որ ՚ի
Թեսաղոնիկէ Հրէայքն էին , եթէ
եւ ՚ի Բերիայ պատմեցաւ ՚ի Պօղո-
սէ բանն Աստուծոյ , եկին եւ անդր՝
շարժել եւ խռովեցուցանել զժողո-
վուրդսն ։
14 Յայնժամ վաղվաղակի զՊօղոս
առաքեցին եղբարքն գնալ մինչեւ
՚ի ծովեզր · եւ մնացին Շիղա եւ
Տիմոթէոս անդէն ։
15 Եւ որք տանէին զՊօղոս , ածին
զնա մինչեւ յԱթէնս · եւ առեալ
պատուէր ՚ի նմանէ առ Շիղա եւ
Տիմոթէոս , զի վաղվաղակի եկես-
ցեն առ նա , եւ գնացին ։

եւ ասոնք աղաղակումէին՝ թէ սո-
րանք՝ որ աշխարհքը շփոթացրին ,
այստեղ էլ հասին ․
7 Որ Յասոնն ընդունել է նո-
րանց · եւ սորանք ամէնքը կայսե-
րի հրամաններին հակառակ են գոր-
ծում · որ մին Յիսուս թագաւոր
են ասում ։
8 Եւ շփոթացրին ժողովուրդնե-
րին եւ քաղաքապետներին՝ որ սա
լսումէին ։
9 Եւ Յասոնից ու ուրիշներից
երաշխաւորութիւն առին՝ եւ նո-
րանց արձակեցին ։
10 Բայց եղբայրները՝ Պօղոսին եւ
Շիղային շուտով գիշերը ճանապարհ
ձգեցին դէպի Բերիա · որ նորանք
երբոր այնտեղ հասին , գնացին
Հրէաներին ժողովարանը ·
11 Ինչու որ՝ սորանք աւելի ազ-
նիւ անձինք էին՝ քան նորանք՝ որ
Թեսաղոնիկէումն էին · որ Աստուծոյ
խօսքին ամէն յօժարութեամբ ըն-
դունեցին · միշտ գրքերը քննում-
էին , թէ սա այսպէս է ։
12 Եւ նորանցից շատերը հաւա-
տացին · եւ Յոյն պարկեշտ կանան-
ցից ու մարդկանցից էլ քիչ չէ ։
13 Բայց այն Հրէաները՝ որ Թե-
սաղոնիկէումն էին , երբոր գիտա-
ցին՝ թէ Բերիայի մէջն էլ Աստու-
ծոյ խօսքը պատմվեցաւ Պօղոսից
այնտեղ էլ եկին՝ որ ժողովուրդնե-
րը շարժեն եւ շփոթացնեն ։
14 Այն ժամանակին եղբայրները Պօ-
ղոսին շուտով ուղարկեցին՝ որ մին-
չեւ ծովի եզրը գնայ · եւ Շիղան
եւ Տիմոթէոսն այնտեղ մնացին ։
15 Եւ նորանք՝ որ Պօղոսին տա-
նումէին , նորան մինչեւ Աթէնքը
տարան · եւ որ պատուէր առին
նորանից Շիղային եւ Տիմոթէոսին
համար , որ շուտով գան նորա
մօտ · գնացին ։

ա Գլ. ԺԶ. 20. բ Ղու. ԻԳ. 2։ Յովհ. ԺԹ. 12։ | Ա Պետ. Բ. 15։ գ Գլ. Թ. 25։ Հռո-մայ. 14։ | դ Եսայ. ԼԴ. 16։ Ղու. ԺԶ. 29։ Յովհ. Ե. 39։ | ե Մատթ. Ժ. 23։ զ Գլ. ԺԵ. 5։

16 Եւ յԱթէնս 'ի մնալ նոցա Պօղոսի, զայրանայր հոգի նորա 'ի նմա. զի տեսանէր 'ի կռապաշտութեան զքաղաքն։

17 Եւ խօսէր 'ի ժողովրդեանն ընդ Հրէայս եւ ընդ պաշտօնեայսն՝ եւ 'ի հրապարակին զամենայն օր՝ որոց եւ պատահէին։

18 Ոմանք յէպիկուրեանցն եւ 'ի Ստոյիկեանց փիլիսոփայից հակառակէին ընդ նմա. եւ ոմանք ասէին, Զինչ կամիցի սերմնաքաղս այս խօսել. իսկ այլք, Թէ Օտարոտի իմն դից թուի պատմիչ լինել. քանզի զՅիսուս եւ զյարութիւնն աւետարանէր։

19 Եւ առեալ զնա ածին յԱրիսպագոսն, եւ ասէին. Կարասցուք գիտել՝ թէ զինչ է նոր վարդապետութիւնդ՝ որ 'ի քէն պատմի։

20 Օտարացուցիչս իմն բերես 'ի լսելիս մեր. կամիմք գիտել՝ թէ զինչ կամիցի այս լինել։

21 Զի Աթենացիք ամենեքին եւ եկքն օտարք ոչ յայլ ինչ պարապէին, բայց ասել ինչ կամ լսել նորագոյնս։

22 Եկաց Պօղոս 'ի մէջ Արիսպագին եւ ասէ. Արք Աթենացիք, ըստ ամենայնի իբրեւ պաշտօնասէրս տեսանեմ զձեզ։

23 Քանզի շրջեալ եւ տեսեալ ըզ պաշտամունս ձեր, գտի բագին մի՝ յորում գրեալ էր, ԱՆԾԱՆՕԹԻ ԱՍՏՈՒԾՈՅ. զոր դուքն յանծանօթս պաշտէք, ես զնոյն պատմեմ ձեզ։

24 Աստուած՝ որ արար զաշխարհս եւ զամենայն որ 'ի նմա, նա երկ-

Գ Թագ. Ը. 8. | Ես. ԿԶ. 1.

16 Եւ Պօղոսն երբոր Աթէնքումը նորանց սպասումէր, նորա հոգին սաստիկ զժուարանումէր ներսումը. ինչու որ՝ այն քաղաքը կռապաշտութեան մէջ էր տեսնում։

17 Եւ ժողովարաններումը Հրէաներին հետ եւ աստուածապաշտներին հետ խօսումէր՝ հրապարակներումն էլ ամէն օր նորանց հետ՝ որ պատահումէին։

18 Եպիկուրեան եւ Ստոյիկեան փիլիսոփաներիցը մին քանիսը նորա հետ հակառակումէին. եւ մին քանիսն ասումէին. Այս սերմնաքաղս ինչ է կամենում խօսել. բայց ուրիշները թէ, Երեւումէ, որ մին օտար կռքի համար է պատմում. պատճառն որ՝ Յիսուսին եւ յարութիւնն էր աւետարանում։

19 Եւ առին տարան նորան Արիսպագոսը՝ եւ ասումէին. Կարող ենք իմանալ՝ թէ ինչ է այդ նոր վարդապետութիւնդ՝ որ դու պատմումես։

20 Մին նոր օտար բան ես բերում մեր ականջներին. կամենումենք իմանալ՝ թէ սա ինչ բան պիտի լինի։

21 Ինչու որ՝ ամէն Աթենացիք՝ եւ այնտեղ եկած օտարները՝ էլ ուրիշ բանի չէին հետեւում, բայց միմիայն որ նոր բան ասեն կամ լսեն։

22 Պօղոս կանգնեց Արիսպագին մէջ եւ ասաց. Ով Աթէնացի մարդիկ, ես ձեզ ամէն կողմանէ կռօնասէր եմ տեսնում.

23 Պատճառն որ՝ ես ման եկի եւ ձեր պաշտամունքները տեսի, մին սեղան գտի որ նորա վերայ գրած էր ԶԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՍՏՈՒԾՈՅՆ. նա որ դուք առանց ճանաչելոյ էք պաշտում, ես ճիշդ նա եմ պատմում ձեզ։

24 Աստուած՝ որ այս աշխարհքըս եւ ամէն բան՝ որ նորանում է կայ՝

նից եւ երկրի է Տէր. ոչ 'ի ձեռա-
գործ տաճարս բնակէ ։

25 Եւ ոչ 'ի ձեռաց մարդկան պաշ-
տի իբրեւ կարօտ ինչ. նա տայ
ամենայնի կեանս եւ շունչ՝ եւ զա-
մենայն ինչ ։
26 Արար 'ի միոջէ արեանէ զամե-
նայն ազգս մարդկան՝ բնակել 'ի
վերայ ամենայն երեսաց երկրի.
հաստատեաց կարգեալ ժամանակս
եւ սահմանադրութիւնս բնակու-
թեան նոցա՝ խնդրել զԱստուած ։

27 Զի թերեւս զննեսցեն զնա՝ եւ
գտանիցեն. նաեւ ոչ հեռի իսկ է
յիւրաքանչիւր ումեքէ 'ի մէնջ ։
28 Զի նովաւ կեամք եւ շարժիմք
եւ եմք, որպէս եւ ոմանք 'ի ձերոց
ճարտարաց ասացին, թէ նորա եւ
ազգ իսկ եմք ։

29 Եւ արդ՝ որովհետեւ ազգ եմք
Աստուծոյ, ոչ պարտիմք համարել
ոսկւոյ՝ կամ արծաթոյ՝ կամ քարի,
որ 'ի ճարտարութենէ եւ 'ի մտաց
մարդոյ քանդակեալ իցէ, զԱստ-
ուածայինն լինել նմանօղ ։

30 Բայց զժամանակս անգիտու-
թեան անտես արարեալ Աստուծոյ,
արդ զայս պատուիրէ մարդկան՝
ամենայն ումեք ապաշխարել ։

31 Քանզի հաստատեաց օր՝ յորում
պատրաստ է դատել զաշխարհս արդա-
րութեամբ. 'ի ձեռն առն՝ որով
սահմանեաց տալ հաւատս ամենե-
ցուն՝ յարուցեալ զնա 'ի մեռելոց ։

արաւ, նա երկնքի եւ երկրիս Տէրն
ծ է. նա ձեռքով շինած տաճարնե-
րին մէջ կ չի բնակվում,
25 Եւ մարդկանց ձեռքով չի
պաշտվում՝ իբրեւ մի բանի կա-
րօտ հ լինի. նա ամէնին կեանք եւ
շունչ՝ եւ ամէն բան տալիս ձ է ։
26 Նա մի արիւնից մարդկանց
ամէն ազգերին արաւ՝ որ երկրի
ամէն երեսին վերայ բնակվեն.
կարգված ժամանակներ եւ սահ-
մաններ հաստատեց նորանց բնա-
կութեան ղ համար՝ որ Աստուծուն
ճ խնդրեն.
27 Որ լինի թէ քննեն նորան եւ
գտնեն. եւ ինքը հեռու չէ մեր
ամէն մ մէկիցս էլ ։
28 Ինչու որ՝ մենք նորանով ենք
ապրում եւ շարժվում՝ եւ յ կանք.
ինչպէս որ ձեր իմաստուններիցը
մի քանիսն էլ ասացին թէ Հենց
նորա ազգիցն էլ ն ենք ։
29 Եւ հիմիկ՝ որովհետեւ Աստու-
ծոյ ազգիցն ենք, պէտք չէ՝ որ
մենք համարենք՝ թէ Աստուածու-
թիւնը նման լինի ոսկոյ՝ կամ ար-
ծաթի կամ քարի, որ մարդոյ վար-
պետութենով եւ մտքով փորված
շինած շ է ։
30 Բայց Աստուած՝ որ անգիտու-
թեան ժամանակներին անտես ո ա-
րաւ հիմիկ մարդկանց սա է պատ-
ուիրում, որ ամէն մէկն չ ապաշ-
խարէ ։
31 Պատճառն որ՝ պ օր հաստա-
տեց՝ որ նորանում արդարութենով
աշխարհքըս պիտի դատէ այն մար-
դոյ ձեռովը որ սահմանեց նորանով
ամէնին հաւատք տալ՝ որ նորան
մեռելների միջիցն ջ յարոյց ։

ծ Մատթ. ԺԱ. 25
կ Գլ. Է. 48.
հ Սաղ. Ծ. 10—13
ձ Ծննդ. Բ. 7. Թուոց. ԺԶ. 22. Յոբ. ԺԲ. 10. Իէ. 3. ԼԳ. 4. Եսայ. ԽԲ. 5. ԾԷ. 16. Զաք. ԺԲ. 1.
ղ Բ Օրէն. ԼԲ. 8.
ճ Հռովմ. Ա. 20.
մ Գլ. ԺԴ. 16.
յ Կող. Ա. 17. Եբր. Ա. 3.
ն Տիտ. Ա. 12.
շ Եսայ. Խ. 18.
ո Գլ. ԺԴ. 15. Հռովմ. Գ. 25.
չ Ղուկ. ԻԴ. 47. Տիտ. Բ. 11, 12. Ա Պետ. Ա. 14. Դ. 3.
պ Գլ. Ժ. 42. Հռովմ. Բ. 16. ԺԴ. 10.
ջ Գլ. Բ. 24.

—

32 Իբրեւ լուան զյարութիւն մեռելոց, ոմանք ծաղր առնէին. կէսքն ասէին՝ Լուիցուք 'ի քէն վասն այդորիկ միւսանգամ ։

33 Եւ ապա Պօղոս ել գնաց 'ի միջոյ նոցա ։

34 Եւ ոմանք արք անկեալք 'ի նա, հաւատացին. ընդ որս էր եւ Դիոնէսիոս Արիսպագացի, եւ կին մի անուն Դամարիս՝ եւ այլք ընդ նոսա ։

32 Երբոր լսեցին մեռելների յարութիւն առնելը, մին քանիսը ծաղր էին անում. կէսերն ասումէին՝ Այդ բանիդ համար քեզանից դարձեալ պիտի լսենք ։

33 Եւ յետոյ Պօղոսը նորանց միջիցը դուրս եկաւ գնաց ։

34 Եւ մին քանի մարդիկ նորա կողմն ընկան, եւ հաւատացին. որ նորանց հետն էր Դիոնէսիոս Արիսպագացին, եւ մին Դամարիս անուն կին՝ եւ ուրիշներ էլ նորանց հետ ։

## ԳԼ . ԺԸ

1 Յետ այսորիկ մեկնեալ Պօղոսի յԱթենացւոց անտի՝ եկն 'ի Կորնթոս ։

2 Եւ եգիտ Հրէայ զոմն անուն Ակիւղաս՝ յազգէ Պոնտացի, այն ինչ եկեալ յԻտալիոյ. եւ զՊրիսկիղա կին նորա, վասն հրամանին Կղօդեայ՝ որոշել զամենայն Հրէայս 'ի Հռովմայ. եւ յարեցաւ 'ի նոսա ։

3 Եւ վասն զի համարուեստ էր, եղեւ առ նոսա՝ եւ գործէր. քանզի էին խորանագործք արուեստիւ ։

4 Եւ խօսէր 'ի ժողովրդեանն ըստ ամենայն շաբաթուց, եւ հաւանեցուցանէր զՀրէայս եւ զՀեթանոսս ։

5 Իբրեւ իջին 'ի Մակեդոնիայ՝ Շիղա եւ Տիմոթէոս, ստիպէր հոգւովն Պօղոս դնել վկայութիւն Հրէիցն՝ թէ Յիսուս է Քրիստոսն ։

6 Եւ յընդդէմ դառնալ նոցա՝ եւ 'ի հայհոյել. թօթափեաց զձորձն՝ եւ ասէ ցնոսա. Արիւն ձեր 'ի գլու-

1 Սորանից ետեւ Պօղոսն այն Աթենացիներիցը հեռացաւ՝ եկաւ Կորնթոս ։

2 Եւ մին Հրէայ գտաւ Պոնտացոց ազգիցը՝ Ակիւղաս = անուն, որ Իտալիայիցը նոր էր եկել, եւ նորա Պրիսկիղա կինն էլ, Կղօդիայի հրամանին համար՝ որ ամէն Հրէաները Հռոմիցը դուրս գնան. եւ նորանց մօտ գնաց ։

3 Եւ որովհետեւ ճիշդ նոյն արուեստիցն էր, մնաց նորանց մօտ՝ եւ բան էր անում. պատճառն որ արուեստով խորանակար ÷ էին ։

4 Եւ ժողովարանին մէջ ամէն շաբաթ օր խօսումէր եւ Հրէաներին եւ Հեթանոսներին ± հաւանացնում ։

5 Երբոր Շիղան եւ Տիմոթէոսը վէր եկին ∓ Մակեդոնիայիցը, Պօղոս հոգովը վառվռումէր՝ որ վկայութիւն դնէ Հրէաներին՝ թէ Յիսուսն է ⊦ Քրիստոսը ։

6 Եւ երբոր նորանք ներհակ էին դառնում եւ ւ հայհոյում, շորերը թափ տուաւ՝ եւ նորանց ⊦ ասաց .

= Հռովմ. ԺԶ. 3. Ա Կորնթ. ԺԶ. 19. Բ Տիմ. Դ. 19.
÷ Գլ. Ի. 34. Ա Կորնթ. Դ. 12.
Ա Թես. Բ. 9. Բ Թես. Գ. 8.
± Գլ. ԺԷ. 2.
∓ Գլ. ԺԷ. 14. 15.
⊦ Յոբ. ԼԲ. 18.
Գլ. ԺԷ. 3. Համար. 28.
ւ Գլ. ԺԳ. 45. Ա Պետ. Դ. 4.
⊦ Նէեմ. Ե. 13. Մատթ. Ժ. 14.
Գլ. ԺԳ. 51.

խս ձեր, քաւեալ եմ ես. յայսմ
հետէ 'ի հեթանոսս երթամ ։

7 Եւ գնացեալ անտի՝ եմուտ 'ի
տուն ուրուք, որում անուն էր
Տիտոս Յուստոս՝ պաշտօնեայ Աս-
տուծոյ. որոյ ապարանքն էին մերձ
'ի ժողովրդեանն ։
8 Կրիսպոս ժողովրդապետն հա-
ւատաց 'ի Տէր ամենայն տամբ իւ-
րով. և բազմաց 'ի Կորնթացւոցն
լուեալ՝ հաւատային և մկրտեցան ։

9 Եւ ասէ Տէր 'ի գիշերին տես-
լեամբ ցՊօղոս. Մի երկնչիր՝ այլ
խօսեաց և մի լռեր ։
10 Զանզի ես ընդ քեզ եմ, և
ոչ ոք ընդդէմ դարձցի քո՝ 'ի չար-
չարել զքեզ. քանզի ժողովուրդ է
իմ բազում 'ի քաղաքիս յայսմիկ ։

11 Եւ նստաւ անդ տարի մի և
ամիսս վեց՝ ուսուցանել նոցա զբա-
նն Աստուծոյ ։
12 Եւ Գաղղիոնեաւ՝ փոխանակա-
բդեշխին Աքայեցւոց, յարեան մի-
աբան Հրեայք 'ի վերայ Պօղոսի,
և ածին զնա յատեան ։
13 Եւ ասէին, եթէ Արտաքոյ
օրինաց պատրէ սա զմարդիկ՝ պաշ-
տել զԱստուած ։
14 Եւ իբրև մերձ էր Պօղոս բանալ
զբերան իւր, ասէ Գաղղիոն ցՀրե-
այսն. Եթէ էր ինչ անիրաւութիւն
կամ խարդախութիւն չարեաց՝ ով
Հրեայք, 'ի դէպ էր ինձ անսալ
ձեզ ։
15 Ապա եթէ խնդիրք ինչ են
վասն բանի և անուանց և օրի-
նաց ձերոց՝ տեսէք ձեզէն. քանզի
դատաւոր այդպիսի իրաց ոչ կամիմ
լինել ։

Ձեր արիւնը ձեր գլխներից է վե-
րայ, ես անպարտ բ եմ. հիմիկուց
ետև հեթանոսներին մօտն եմ
ր գնում ։
7 Եւ այնտեղից գնաց մտաւ մէկի
տունը՝ որ նորա անունը Տիտոս
Յուստոս էր, մին Աստուածապաշտ
մարդ, որ նորա տունը ժողովարա-
նին մօտ էր ։
8 Կրիսպոս ժողովրդապետն իրեն
ամէն տանովը հաւատաց Տէրին.
և Կորնթացոց շատերին երբոր
լսեցին՝ հաւատացին և է մկրտա-
վեցան ։
9 Եւ Տէրը գիշերը տեսիլքով Պօ-
ղոսին ասաց. Մի վախենար՝ բայց
խօսէ՝ և լուռ մի կենար.
10 Ինչու որ՝ ես քեզ հետ եմ,
և ոչ ով քեզ ներհակ չի դառնալ՝
որ քեզ չարչարէ. պատճառն որ
ես շատ ժողովուրդ ունիմ այս
ի քաղաքումս ։
11 Եւ այնտեղ մին տարի և վեց
ամիս նստեց՝ և նորանց Աստուծոյ
խօսքը սովորցնումէր ։
12 Աքայեցոց Գաղիոս փոխանակ
բդեշխի ժամանակին Հրեաները
միաբան վերկացան Պօղոսին վերայ,
և նորան քաշեցին դատաստան .
13 Եւ ասումէին, թէ Սա մարդ-
կանց խաբումէ՝ որ օրինաց հակա-
ռակ Աստուած պաշտեն ։
14 Եւ երբոր Պօղոս մօտ էր որ
իրեն բերանը բանայ, Գաղիոն
Հրեաներին ասաց. Ո՛վ Հրեաներ,
թէ որ մին անիրաւութիւն կամ
մին չար նենգութիւն լինէր, ինձ
արժան էր որ ի լսէի ։
15 Բայց թէ որ ձեր օրէնքին և
խօսքի և անունների համար խըն-
դիրք կան, դուք ինքն տեսէք.
ինչու որ՝ այդպէսի բաների դատա-
ւոր չեմ կամենում լինել ։

ք Ղւ. Ի. 9. 11.
12. Բ Թագ. Ա.
16. Եզեկ. ԺԸ.
13. Ղւ. 4.

բ Եզեկ. Գ. 18,
19. Ղկ. 9. Գլ.
Ի. 26.
ր Գլ. ԺԳ. 46.

ԻԸ. 28.
ի Ա Կորնթ. Ա. 14.
ւ Գլ. ԻԳ. 11.
ի Եբր. Ա. 18.

19. Մատթ. ԻԸ.
20.
ր Գլ. ԻԳ. 29.
ԻԵ. 11. 19.

16 Եւ մերժեաց զնոսա յատենէ անտի։

17 Եւ առեալ ամենեցուն Յունաց զՍոսթենէս ժողովրդապետն՝ հարկանէին առաջի ատենին. եւ ոչ ինչ զայնմանէ Գաղիոնի փոյթ լինէր։

18 Բայց Պօղոսի աւելեւս մնացեալ աւուրս բազումս, յեղբարց հրաժարեալ՝ նաւէր յԱսորիս. եւ ընդ նմա Պրիսկիղա եւ Ակիւղաս, փոքրել զգլուխ 'ի Կենքրեայ. քանզի ուխտաւոր էր։

19 Եւ հասեալ յԵփեսոս՝ զնոսա եթող անդ, եւ ինքն մտեալ 'ի ժողովուրդն խօսէր ընդ Հրէայսն։

20 Եւ աղաչեցին զնա՝ բազում ժամանակս լինել անդ. եւ ոչ առ յանձն։

21 Այլ հրաժարեաց 'ի նոցանէ, եւ ասէ. Դարձեալ շրջեցայց առ ձեզ Աստուծոյ կամօք. ամբարձաւ յԵփեսոսէ,

22 Եւ իջեալ 'ի Կեսարիա՝ ել եւ ետ ողջոյն եկեղեցւոյն. էջ յԱնտիոք։

23 Եւ եղեալ անդ ժամանակ ինչ, ել շրջել կարգաւ ընդ Գաղատացւոց աշխարհն եւ ընդ Փռիւգիա, հաստատել զամենայն աշակերտեալսն։

24 Հրէայ ոմն Ապողոս անուն Աղեքսանդրացի յազգէ, այր ճարտասան եկն եհաս յԵփեսոս. զօրաւոր էր գրովք։

25 Սա էր աշակերտեալ ճանապարհին Տեառն, եւ եռայր հոգւով. խօսէր՝ եւ ուսուցանէր ճշմարտութեամբ վասն Յիսուսի. գիտէր միայն զմկրտութիւնն Յովհաննու։

16 Եւ նորանց այն դատաստանիցը դուրս հանեց։

17 Եւ ամէն Յոյները Սոսթենէս ժողովրդապետին բռնեցին՝ եւ ատեանին առաջին [ա] ծեծումէին. եւ Գաղիոն նորա համար ոչ ինչ հոգս չունէր։

18 Բայց Պօղոս դեռ շատ օրեր մնալուցն ետեւ, եղբայրներիցը հրաժարեց, եւ նաւով գնումէր դէպի Ասորիք. եւ Պրիսկիղան ու Ակիւղան նորա հետ, [բ] Կենքրեայումը գլուխը [գ] խուզեց. ինչու որ՝ ուխտ դրած էր։

19 Եւ երբոր հասին Եփեսոս, նորանց այնտեղ թողեց, եւ ինքը մտաւ ժողովարանը եւ Հրէաներին հետ խօսումէր։

20 Եւ աղաչումէին նորան՝ որ շատ ժամանակ այնտեղ մնայ, ու չը կամեցաւ։

21 Բայց նորանցից հրաժարեց եւ ասաց. Աստուծոյ կամքովը կրկին ձեզ մօտ յետ կը դառնամ. Եփեսոսիցը վերկացաւ։

22 Եւ վէր եկաւ Կեսարիա, վեր ելաւ եւ ողջոյն տուաւ եկեղեցւոյն. վէր եկաւ Անտիոք։

23 Եւ այնտեղ որ մին ժամանակ մնաց, դուրս եկաւ՝ որ Գաղատացոց աշխարհքումն ու Փռիւգիայումն մէջ կարգով մտնի [ե] գայ, ամէն աշակերտներըր [զ] հաստատելով։

24 Մին Ապողոս անուն [է] Հրէայ՝ ազգով Աղեքսանդրացի, ճարտար խօսող մարդ՝ եկաւ հասաւ Եփեսոս. նա գրքերովը զօրաւոր էր։

25 Սա Տէրի ճանապարհին ուսուցուած էր, հոգով [ը] վառվռումէր. Յիսուսին համար խօսում եւ ճշմարտութենով սովրցնումէր. այլ միայն Յօհաննէսի մկրտութիւնն էր [թ] գիտում։

ա Ա Կորնթ. Ա. 1. բ Հռովմ. ԺԶ. 1. գ Թուոց. Զ. 18. Գծ. ԻԱ. 24. դ Ա Կորնթ. Դ. 19. Եբր. Զ. 3. Յակ. Դ. 15. ե Գաղ. Ա. 2. Դ. 14. զ Գծ. ԺԴ. 21. ԺԵ. 32. 41. է Ա Կորնթ. Ա. 12. Գ. 5. 6. Դ. 6. Տիտ. Գ. 13. ը Հռովմ. ԺԲ. 11. թ Գծ. ԺԹ. 3.

26 Սա սկսաւ համարձակել 'ի ժո–
ղովրդեանն. Եւ լուեալ 'ի նմանէ
Ակիւղայ եւ Պրիսկիղայ, առին զնա
առ ինքեանս, եւ ճշմարտագոյնս
պատմեցին նմա զճանապարհն Աս–
տուծոյ:
27 Իբրեւ կամեցաւ նա գնալ յԱ–
քայիա, յորդորեալ եղբարքն՝ գրե–
ցին առ աշակերտսն ընդունել զնա.
որ իբրեւ եհաս անդր՝ բազում
նպաստ լինէր հաւատացելոցն 'ի
ձեռն շնորհացն:

28 Քանզի սաստագոյն զՀրէայսն
յանդիմանէր հրապարակաւ. ցուցա–
նել գրովք՝ եթէ Քրիստոսն է Յի–
սուս:

26 Սա սկսեց ժողովարաններին մէջ
համարձակ խօսիլ. եւ երբոր Ակիւ–
ղան եւ Պրիսկիղան նորանից լսե–
ցին, նորան իրենց մօտ առին, եւ
էլ աւելի ճշմարտութեամբ Աստու–
ծոյ ճանապարհը պատմեցին նորան
27 Երբոր նա կամեցաւ գնալ Ա–
քայիա, եղբարները յօժար էլան
եւ գրեցին աշակերտներին՝ որ նո–
րան ընդունեն. երբոր նա այնտեղ
հասաւ, հաւատացեալներին շատ
օգնութիւն էր տալիս շնորհքի = ձե–
ռովը.
28 Ինչու որ՝ խիստ սաստութեամբ
յանդիմանում էր Հրէաներին ւամէ–
նին առաջին. գրքերը ցոյց տալով՝
թէ Յիսուս է ւՔրիստոսը:

## ԳԼ. ԺԹ

1 Եւ եղեւ մինչդեռ Ապողոսն 'ի
Կորնթոս էր, Պօղոսի շրջեալ զվե–
րին կողմամբքն՝ եւ իջեալ յԵփեսոս,
եւ գտեալ զոմանս զաշակերտս,

2 Ասէ ցնոսա. եթէ Հոգի Սուրբ
ընկալարուք 'ի հաւատալն. Նոքա
ասեն ցնա. Այլ եւ ոչ թէ Հոգի
Սուրբ գուցէ՝ լուեալ է մեր:

3 Եւ ասէ, Իսկ յի՞նչ մկրտեցա–
րուք. Նոքա ասեն. 'Ի Յովհաննու
մկրտութիւնն:
4 Եւ ասէ Պօղոս. Յովհաննէս
մկրտեաց մկրտութիւն ապաշխա–
րութեան ամենայն ժողովրդեանն.
եւ ասէր, զի որ գալոցն է յետ նո–
րա՝ 'ի նա հաւատասցեն. այսինքն է
'ի Յիսուս Քրիստոս:

5 Եւ իբրեւ լուան, մկրտեցան
յանուն Տեառն Յիսուսի:
6 Եւ 'ի դնել 'ի վերայ նոցա Պօ–
ղոսի զձեռն, եկն Հոգին Սուրբ 'ի

1 Եւ էլաւ դեռ քանի որ Ապօ–
ղոս Կորնթոս էր, Պօղոսն որ վերի
կողմերումը ման էր եկել՝ վէր ե–
կաւ Եփեսոս. եւ մին քանի աշա–
կերտներ = գտաւ.
2 Ասաց նորանց. Միթէ Սուրբ
Հոգին ընդունեցիք՝ երբոր հաւա–
տացիք. Նորանք ասացին նորան.
Մենք բնաւ չենք էլ լսել՝ եթէ
Սուրբ Հոգի ‡ կայ:
3 Եւ ասաց. Ապա ինչո՞վ մկրտ–
վեցաք. Նորանք ասացին. Յօհան–
նէսի ‡ մկրտութեամբը:
4 Եւ Պօղոսն ասաց. Յօհաննէսն
ամէն ժողովրդին ապաշխարու–
թեան մկրտութիւնը ∓ քարոզեց.
եւ ասում էր. թէ նա՝ որ նորա ե–
տեւէն պիտի գայ, նորան հաւա–
տան. այսինքն է՝ Յիսուս Քրիստո–
սին:
5 Եւ երբոր լսեցին, Տէր Յիսու–
սի անունովը ե մկրտվեցան:
6 Եւ երբոր Պօղոս ձեռքը դրաւ
նորանց վերայ, Սուրբ Հոգին եկաւ

= Ա. Կորնթ. Գ. 6:
ւ Գլ. Թ. 22: ԺԷ.
3: Համեր. 5:
—

= Ա. Կորնթ. Ա.
12: Գ. 5, 6:
ե Ա. Թագ. Գ. 7:
Գլ. Ը. 16:

‡ Գլ. ԺԸ. 25:
∓ Մատթ. Գ. 11.
Յովհ. Ա. 15.
27. 30: Գլ. Ա.

5: ԺԱ. 16: ԺԳ.
24. 25:
ե Գլ. Ը. 16:

վերայ նոցա. խօսէին լեզուս՝ եւ մարգարէանային։

7 Եւ էին ամենեքեան արք իբրեւ երկոտասան։

8 Եւ մտեալ 'ի ժողովուրդն՝ համարձակէր ամիսս երիս. խօսէր՝ եւ հաւանեցուցանէր վասն արքայութեանն Աստուծոյ։

9 Իբրեւ ոմանք խստանային՝ եւ ընդդէմ դառնային բամբասել զճանապարհն առաջի բազմութեանն, մեկնեալ 'ի նոցանէ՝ որոշեաց զաշակերտսն. հանապազօր խօսէր 'ի դպրանոցին Տիւրաննեայ ուրումն։

10 Եւ այս եղեւ ցերկեամ մի, մինչեւ ամենայն բնակչացն Ասիացւոց լսել զբան Տեառն՝ Հրէից եւ Հեթանոսաց։

11 Եւ զօրութիւնս ոչ սակաւս առնէր Աստուած 'ի ձեռն Պօղոսի։

12 Մինչ զի եւ 'ի հիւանդս տանել 'ի քրտանէ նորա թաշկինակս կամ փարշամակս, եւ մերժել 'ի նոցանէ ախտիցն, եւ այսոց չարաց ելանել։

13 Յանդգնեցան ոմանք 'ի շրջող Հրէիցն՝ որ երդմնեցուցիչքն էին, անուանել 'ի վերայ այնոցիկ՝ որ ունէին այսս չարս, զանուն Տեառն Յիսուսի, եւ ասէին. Երդմնեցուցանեմ զձեզ 'ի Յիսուս՝ զոր Պօղոսն քարոզէ։

14 Էին ուրումն Սկեւեայ Հրէի քահանայապետի եօթն որդիք, որ զայս առնէին։

15 Պատասխանի ետ այսն չար՝ եւ ասէ ցնոսա. ԶՅիսուս գիտեմ եւ զՊօղոս ճանաչեմ, բայց դուք ո՞վ էք։

նորանց ւ՚ի վերայ. լեզուներ էին խօսում՝ եւ փ մարգարէանում։

7 Եւ ամէնքը տասներկու մարդոյ չափ էին։

8 Եւ ժողովարանին մէջ մտած՝ երեք ամիս համարձակ ք խօսումէր. եւ Աստուծոյ արքայութեանը օ հաւանացնում։

9 Երբոր մին քանիսը պնդանումէին՝ եւ ներհակ ֆ դառնում՝ այն ճանապարհը բամբասելով բազմութեան առաջին, նա հեռացաւ նորանցից՝ եւ աշակերտները է ջոկեց. ամէն օր մին Տիւրան խօջայ ժողովարանումն էր խօսում։

10 Եւ սա էլաւ մին երկու տարի, մինչեւ որ Ասիայի ամէն բնակիչներ՝ Հրէաները ու Հեթանոսներ Տէրի խօսքը ւ լսեցին։

11 Եւ Աստուած քիչ զօրութիւններ չէր որ անումէր Պօղոսի փ ձեռովը.

12 Մինչեւ որ նորա քրտինքիցը թաշկինակներ եւ փարշամակներ տանումէին դնում հիւանդների վրայ, եւ ցաւերը հեռանումէին նորանցից, եւ չար դեւերն դուրս ֆ գալիս։

13 Մին քանիսն այն ման եկող Հրէաներիցն՝ որ երդում ւ տուող էին՝ համարձակվեցան Տէր Յիսուսի անունին տալ նորանց վրայ՝ որ չար դեւեր ունէին, եւ ասումէին. Երդում եմ տալիս ձեզ այն Յիսուսովն՝ որ Պօղոսը հ քարոզումէ։

14 Մին Սկեւի Հրէայ քահանայապետի եօթն որդիք կային, որ սա անումէին։

15 Չար դեւը պատասխան տուաւ եւ ասաց նորանց. Յիսուսին գիտեմ՝ եւ Պօղոսին ճանաչումեմ, բայց դուք ո՞վ էք։

ւ Գլ. Զ. 6։ Ը. 17։
փ Գլ. Բ. 4։ Ժ. 46։
ք Գլ. ԺԷ. 2։ ԺԸ. 4։
օ Գլ. Ա. 3։ ԻԸ. 23։
ֆ Բ Տիմ. Ա. 15։ Բ Պետ. Բ. 2։ Յուդ. 10։
է Գլ. Թ. 2։ ԻԲ. 4։ ԻԴ. 14։ Հա. մար. 23։
ւ Գլ. Ի. 31։
փ Մարկ. ԺԶ. 20։ Գլ. ԺԴ. 3։
ֆ Գլ. Ե. 15։ Դ Թագ. Գ. 29։
ւ Մատթ. ԺԲ. 27։
հ Մարկ. Թ. 38։ Ղուկ. Թ. 49։

16 Եւ վազեաց այրն՝ յորում էր
այսն չար՝ ընթանալ զերկոսեան
յաղթահարեաց զնոսա, մինչեւ
մերկս եւ վիրաւորս փախչել 'ի տա-
նէ անտի:
17 Եւ յայտնի եղեւ ամենայն Հրէ-
ից եւ Հեթանոսաց՝ որ բնակեալ
էին յԵփեսոս. եւ անկաւ երկիւղ
յամենեսեան 'ի նոսա. եւ մեծա-
նայր անուն Տեառն Յիսուսի:
18 Եւ (այլ) բազումք 'ի հաւատա-
ցելոցն գային, եւ խոստովան լինէ-
ին՝ եւ պատմէին զգործս իւրեանց:
19 Եւ բազում 'ի կախարդաարարա-
ցըն բերէին զգիրսն, այրէին առա-
ջի ամենեցուն. եւ համարեցան ըզ
գինս նոցա՝ եւ գտանէին արծաթոյ
բիւրս հինգ:
20 Եւ այսպէս բանն Աստուծոյ ա-
ճէր՝ եւ զօրանայր:
21 Եւ իբրեւ կատարեցաւ այս,
եդ Պօղոս 'ի մտի շրջել ընդ Մակե-
դոնիա եւ ընդ Աքայիա՝ եւ գալ
յԵրուսաղէմ. ասէ՝ եթէ Յետ եր-
թալոյն իմ անդր, պարտ է ինձ եւ
զՀռովմ տեսանել:
22 Առաքեաց 'ի Մակեդոնիա եր-
կուս 'ի պաշտօնէիցն իւրոց զՏիմո-
թէոս եւ զԵրաստոս, եւ ինքն մնաց
ժամանակ ինչ յԱսիա:
23 Եւ եղեւ 'ի ժամանակին յայն-
միկ խռովութիւն ոչ սակաւ վասն
ճանապարհին:
24 Իսկ Դեմետրիոս ոմն անուն՝ ար-
ծաթագործ, գործէր մեհեանս ար-
ծաթիս Արտեմի դից. եւ տայր
ճարտարացն լինել ոչ սակաւ շահ:
25 Որ ժողովեաց իսկ զձեռագործս
արուեստին, եւ ասէ. Արք՝ դուք
ձեզէն իսկ գիտէք, զի յայսմ գոր-
ծոյ է շահ մեզ:

16 Եւ այն մարդն՝ որ նորանում
չար ոգի կար՝ վազեց այն երկու-
սին բռնեց, նորանց տակը ձգեց,
մինչեւ որ մերկ եւ խոցված այն
տանիցը փախան:
17 Եւ այն յայտնի էլաւ ամէն
Հրէաներին ու Հեթանոսներին՝ որ
Եփեսոսումը բնակված էին. եւ ահ
ընկաւ նորանց ամէնին վերայ. եւ
Տէր Յիսուսի անունը մեծանումէր:
18 Եւ հաւատացեալներիցը շա-
տերը գալիս խոստովանումէին, եւ
իրենց գործքերըն ղ պատմում:
19 Եւ կախարդութեան հնարաւօղ-
ներից շատերը գրքերը բերում, եւ
ամէնի առաջին այրումէին. եւ նո-
րանց գինը համարեցին՝ եւ գտնու-
մէին յիսուն հազար արծաթի:
20 Եւ այսպէս Աստուծոյ խօսքն
աճումէր եւ ճ զօրանում:
21 Եւ երբոր սա կատարվեցաւ,
Պօղոս միտքը մ գրաւ՝ որ Մակե-
դօնիայի եւ Աքայիայի միջովն ան-
ցանէ յ գնայ Երուսաղէմ. ասաց՝ թէ
Իմ այնտեղ գնալուցն ետեւ, պէտք
է ինձ՝ որ Հռօմ էլ ն տեսնեմ:
22 Իրեն պաշտօնեաներիցն շ եր-
կուսին՝ Տիմոթէոսին եւ Երաստոսին
ուղարկեց Մակեդօնիա, եւ ինքը մին
ժամանակ մնաց Ասիայի ո մէջ:
23 Եւ այն ժամանակումը շատ
խռովութիւն չ էլաւ այն ճանա-
պարհին պ համար.
24 Ինչու որ՝ մին արծաթագործ՝
Դեմետրիոս անունով, Արտեմիս կռա-
քի արծաթէ տաճարներ էր շինում.
եւ քիչ շահ չէր՝ որ տալիս էր
ջ վարպետներին.
25 Որ այն արուեստի բանվորներին
էլ ժողվեց՝ եւ ասաց. Ո՛վ մարդիկ՝
դուք ինքներդ գիտումէք, որ այս
գործիցս մենք շահ ունինք:

ծ Ղուկ. Ա. 65. Ե. 16. Գլ. Բ. 43. Ե. 5. 11.
ղ Մատթ. Գ. 6.
ճ Գլ. Զ. 7. ԺԲ. 24.
մ Հռովմ. ԺԵ. 25. Գաղ. Բ. 1.
յ Գլ. Ի. 22.
ն Գլ. ԺԸ. 21. ԻԳ. 11. Հռովմ. ԺԵ. 24—28.
շ Գլ. ԺԳ. 5.
ո Հռովմ. ԺԶ. 23. Բ Տիմ. Դ. 20
չ Բ Կորնթ. Ա. 8.
պ Գլ. Թ. 2.
ջ Գլ. ԺԶ. 16. 19.

26 Եւ տեսանէք եւ լսէք՝ եթէ ոչ
միայն զԵփեսացւոց, այլ գրեթէ
զամենայն իսկ Ասիացւոց՝ Պօղոս
այս հաւանեցուցեալ շրջեաց բա-
զում ժողովս՝ ասել, թէ Ո՛չ են աս-
տուածք ձեռագործք։

27 Եւ ոչ միայն այս ճգնէ զմեր
կողմնս գալ ՚ի յանդիմանութիւն,
այլ եւ զմեծին աստուծոյ Արտեմ-
եայ զմեհեանն յոչինչ համարել՝
նաեւ քակելոց եւս իցէ մեծութիւն
նորա, զոր ամենայն Ասիա՝ եւ աշ-
խարհք պաշտեն։
28 Եւ զայս իբրեւ լուան, լի ե-
ղեն բարկութեամբ. աղաղակէին
եւ ասէին, Մեծ է Արտեմիս Եփե-
սացւոց։
29 Եւ լցաւ քաղաքն խառնակու-
թեամբ. դիմեցին առ հասարակ ՚ի
թէատրոնն. յափշտակէին զԳայիոս
եւ զԱրիստարքոս Մակեդոնացի՝
ուղեկիցսն Պօղոսի։

30 Բայց Պօղոս իբրեւ կամեցաւ
մտանել յամբոխն, ոչ թողին զնա
աշակերտքն։
31 Ոմանք եւ յԱսիացւոց իշխանացն՝ որ
էին նորա բարեկամք, յղէին առ
նա՝ եւ աղաչէին, մի՛ տալ զանձն
՚ի թէատրոնն։

32 Այլք այլ ինչ աղաղակէին, զի
էր ժողովն նոցա խառնեալ. եւ բա-
զումք ՚ի նոցանէ ոչ գիտէին, թէ
վասն ո՞յր ժողովեալ իցեն։

33 Եւ յամբոխէն բազմութեննէ յա-
ռաջ կոչեցին զԱղէքսանդրոս. եւ
իբրեւ ածին զնա Հրէայքն յառաջ,
Աղէքսանդրոս շարժեաց զձեռն՝ եւ
կամէր պատասխանի տալ ամբո-
խին։

26 Եւ տեսնում ու լսում էք՝ որ
այս Պօղոսը չէ թէ միայն Եփեսա-
ցոց, բայց համարեա թէ՝ բոլոր
Ասիայցոց շատ ժողովուրդ հաւա-
նացնելով այն կողմը դարձրուց.
որ ասում է՝ թէ Ձեռքով շինած
բաներն աստուած չեն։
27 Եւ չէ թէ միայն մեր բանն
է ջանք անում որ անարգվի, բայց
մեծ աստուծոյ Արտեմիսայի տաճարն
էլ ոչ ինչի տեղ է համարվում. եւ
նորա մեծութիւնն էլ կը քանդվի,
որ բոլոր Ասիան՝ եւ աշխարհք
պաշտում են նորան։
28 Եւ երբոր աս լսեցին, բար-
կութեանով լցվան. աղաղակումէին՝
եւ ասում, Մեծ է Եփեսացոց Ար-
տեմիսը։
29 Եւ քաղաքը չփոթութեանով
լցվաւ. ամէնքն էլ միաբան վազե-
ցին թէատրոնը. եւ առին քաշե-
ցին = Գայիոսին եւ Արիստարքոս
Մակեդօնացոյն՝ Պօղոսի ճանապար-
հի ընկերներին։
30 Բայց Պօղոսն երբոր կամեցաւ
ամբոխի մէջ մտնել, աշակերտները
չը թողին նորան։
31 Ասիայի իշխանաւորներիցը մին
քանիսն էլ՝ որ նորա բարեկամներն
էին, ուղարկեցին նորա մօտ՝ եւ
աղաչումէին, որ իրեն անձը չտայ
թէատրօնին մէջ։
32 Այն ամբոխումն ամէն մէկը
մին ուրիշ բան էր աղաղակում. ին-
չու որ՝ նորանց ժողովքը խառնված
էր. եւ նորանցից շատերը չէին
գիտում, թէ ինչու համար են հա-
ւաքված։
33 Եւ այն մեծ ամբոխին միջից
Աղէքսանդրոսին բռնեցին դուրս
քաշեցին. եւ երբոր Հրէաները նո-
րան առաջ բերին, = Աղէքսանդ-
րոսը ձեռքը շարժեց՝ եւ կամենու-
մէր ամբոխին պատասխան տալ։

ր Սաղ. ՃԺԵ. 4. Եսայ. ԽԴ. 10—20. Երեմ. Ժ 3. | = Հռոմ. ԺԶ. 23. Ա Կորնթ. Ա. 14. Հ Գլ. Ի. 4. Իէ. | 2. Կող. Դ. 10. Փիլիմ. 24. ր Ա Տիմ. Ա. 20. | Բ Տիմ. Դ. 14. ք Գլ. ԺԲ. 17.

34 Երբեւ գիտացին՝ եթէ այրն Հրեայ է, միաբարբառ եղեալ յամենեցունց՝ իբրեւ ժամս երկուս աղաղակէին, եթէ Մեծ է Արտեմիս Եփեսացւոց։

35 Լռեցոյց դպրապետն զամբոխն՝ եւ ասէ. Արք Եփեսացիք՝ իսկ ո՞ է 'ի մարդկանէ՝ որ ոչ գիտէ զԵփեսացւոց քաղաքս մեհենապաշտ՝ մեծին Արտեմեայ գոլն, եւ Դիոպետեայ։

36 Եւ զի այդ այդպէս անշուշտ՝ ձեզ պարտ է հանդարտել, եւ մի ինչ յանդգնութեամբ գործել։

37 Ածէք զարս զայդոսիկ այսր, ոչ մեհենակապուտս՝ եւ ոչ հայհոյիչս աստուծոյ մերոյ։

38 Ջի եթէ Դեմետրիոս եւ որք ընդ նմա ճարտարքն՝ ունիցին ինչ ընդ ումեք բանս, յատեանն երթիցեն, եւ դատաւորք գոն, եւ ամբաստան լիցին զմիմեանց։

39 Ապա եթէ վասն այլ իրիք խնդիր իցէ՝ յօրինաւոր ժողովն վճարեսցին։

40 Քանզի եւ մեզ վիշտ վտանգի է ընդ կռուոյս այսր աւուր՝ առանց իրիք յանցանաց լինելոյ, զորմէ ոչ կարասցուք պատասխանի տալ վասն ժողովոյս այսորիկ. եւ զայս ասացեալ՝ արձակեաց զժողովն։

34 Երբոր գիտցին՝ թէ այն մարդը Հրեայ է, ամէնքն ալ մէկ ձայնով երկու ժամի չափ աղաղակեցին, թէ մեծ է Եփեսացւոց Արտեմիսը։

35 Կարգադրողներին գլխաւորը այն ամբոխին դադարեցնելով՝ եւ ասաց. Ո՛վ Եփեսացի մարդիկ՝ ո՞վ է այն մարդն՝ որ չի գիտեր թէ այս Եփեսացւոց քաղաքս մեծ Արտեմիս կռոցի եւ Դիոպետեան կռուքերի տաճարներովը զարդարուած է։

36 Եւ որովհետեւ աս չխօսուելի այդպէս է, պէտք է ձեզ որ հանդարտիք, եւ չափէն դուրս բան չըգործէք։

37 Այդ մարդկանցը բերիք աստեղ, ոչ կռոցի տուն են կողոպտեր՝ եւ ոչ մեր աստուծոյն հայհոյանք տուեր։

38 Ուրեմն՝ թէ որ Դեմետրիոսը նորա հետ լինող վարպետներովը մէկուն հետ բան ունենան, թող գնան ատեանը եւ դատաւորներ կան, եւ թող մէկը մէկուն 'գանգատ անեն։

39 Ապա թէ որ ուրիշ բանի համար խնդիր լինի, թող օրինաւոր ժողովքին մէջ կատարուին։

40 Ինչու որ՝ մեզ ալ մեծ վտանգ կայ՝ այսօրուան կռուին համար. որովհետեւ յանցանք չըկայ, այս ժողովքիս համար չենք կարող պատասխան տալ. եւ աս ասելով՝ ժողովուրդը արձակեց։

## ԳԼ. Ի

1 Եւ յետ դադարելոյ ամբոխին՝ կոչեաց Պօղոս զաշակերտսն, եւ մխիթարեաց. ողջոյն ետ՝ եւ ել գնաց 'ի Մակեդոնիա։

2 Եւ շրջեալ ընդ կողմանսն ընդ այնոսիկ՝ եւ մխիթարեալ զնոսա բանիւք բազմօք, եկն յԵլլադա։

3 Իբրեւ արար անդ ամիսս երիս, եղեւ նմա դաւ 'ի Հրէիցն, մինչդեռ

1 Եւ ամբոխին դադարելուն ետեւ՝ Պօղոս աշակերտներին կանչեց, եւ մխիթարեց. ողջոյն տուաւ՝ եւ դուրս ելաւ գնաց – Մակեդոնիա։

2 Եւ այն կողմերին որ մտաւ ելաւ՝ եւ շատ խօսքերով մխիթարեց նորանց, եկաւ Ելլադա։

3 Երբոր այնտեղ երեք ամիս կացաւ, Հրէաները որոգայթ ձգեցին

– Ա Կորնթ. ԺԶ. 5։ Ա Տիմ. Ա. 3։

կամէր նաւել յԱսորիս · խորհուրդ կալաւ դառնալ ընդ Մակեդովնիայ ։

4 Եւ երթայր ընդ նմա մինչեւ յԱսիայ՝ Սոսիպատրոս Պիւռոս Բերիացի, եւ 'ի Թեսաղոնիկեցւոց՝ Արիստարքոս եւ Սեկունդոս՝ եւ Գայիոս Դերբացի եւ Տիմոթէոս, եւ Ասիացիք՝ Տիւքիկոս եւ Տրոփիմոս ։

5 Սոքա յառաջ երթեալ մնային մեզ 'ի Տրովադայ ։

6 Եւ մեք նաւեցաք յետ աւուրցն բաղարջակերաց 'ի Փիլիպպեայ՝ եւ եկաք առ նոսա 'ի Տրովադա՝ մինչեւ յաւուրս հինգ · անդ դադարեցաք աւուրս եօթն ։

7 Եւ յաւուրն շաբաթուց՝ մինչ գեռ ժողովեալ էաք բեկանել զհացն, Պօղոս խօսէր ընդ նոսա՝ զի գնալոց էր 'ի վաղիւ անդր · եւ երկայնեաց զբանն մինչեւ 'ի մէջ գիշերայն ։

8 Էին լապտերք բազումք 'ի վերնատանն, ուր էաքն ժողովեալ ։

9 Եւ նստէր ոմն երիտասարդ անուն Եւտիքոս՝ 'ի վերայ պատուհանին, ներհէր 'ի քուն թմբրութեան՝ 'ի խօսելն Պօղոսի յաճախ, ընկղմեալ 'ի քնոյ անտի՝ անկաւ՝ յերրորդ դստիկանէն 'ի վայր, եւ բարձաւ մեռեալ ։

10 Եւ իջեալ Պօղոսի անկանէր ըդ նովաւ, առնոյր զնա ընդ գիրկս՝ եւ ասէր · Մի խռովիք, քանզի հոգի սորա 'ի սմին է ։

11 Եւ ել եբեկ զհացն՝ եւ ճաշակ-

[բ] նորան, դեռ քանի որ կամենումէր դուրս գալ Ասորւոց երկիրը · խորհուրդ արաւ՝ որ Մակեդոնիայի միջովը յետ դառնայ ։

4 Եւ մինչեւ Ասիա նորա հետ գնումէր Սոսիպատրոս Բերիացին՝ Պիւռոսի որդին · եւ Թեսաղոնիկեցիներիցն Արիստարքոսն ու [գ] Սեկունդոսը՝ եւ Գայիոս [դ] Դերբեցին եւ [ե] Տիմոթէոսը, եւ Ասիացիներիցը՝ [զ] Տիւքիկոսն ու [է] Տրոփիմոսը ։

5 Սորանք առաջ գնացին՝ սպասումէին մեզ Տրովադայի մէջ ։

6 Եւ մենք բաղարջակերաց օրերից ետեւ նաւով գնացինք [ը] Փիլիպպեայից, եւ մինչեւ հինգ օր եկինք Տրովադա նորանց մօտ · այն տեղ եօթն օր [թ] դադարեցինք ։

7 Եւ շաբաթ օրը՝ դեռ որ ժողոված էինք հաց կտրելու [ժ] համար, Պօղոս նորանց հետ խօսումէր՝ ինչու որ՝ յետեւի օրը պէտք էր գնայ · եւ խօսքն երկարացրեց մինչեւ կէս գիշերը ։

8 Եւ շատ լապտերներ կային այն վերնատանը՝ որ մենք ժողովված [ի] էինք ։

9 Եւ մին Եւտիքոս անուն երիտասարդ պատուհանին վերայ նստած էր · Պօղոսի երկար խօսելոյ ժամանակը, թմբր քնին մէջը նինջումէր · եւ որ խոր քնով բռնըված էր՝ տան երրորդ դստիկանիցը վէր ընկաւ, եւ մեռած վեր առան ։

10 Եւ Պօղոս վէրընկաւ նորա վերայ ընկաւ · [լ] Եւ նորան՝ գիրկն էր առնում եւ ասում · Մի [խ] չփոթվիք, ինչու որ՝ սորա հոգին սորանում է ։

11 Եւ վեր ելաւ հացը կտրեց՝ եւ

բ Գլ. Թ. 23. ԻԳ. 12. ԻԵ. 3. Բ Կորնթ. ԺԱ. 26
գ Գլ. ԺԹ. 29. ԻԷ. 2. Կող. Դ. 10.
դ Գլ. ԺԹ. 29.
ե Գլ. ԺԶ. 1.
զ Եփես. Զ. 21. Կող. Դ. 7. Բ Տիմ. Դ. 12. Տիտ. Գ. 12.
է Գլ. ԻԱ. 29. Բ Տիմ. Դ. 20.
ը Ելից. ԺԲ. 14. 15. ԻԳ. 15.
թ Գլ. ԺԶ. 3. Բ Կորնթ. Բ. 12. Բ Տիմ. Դ. 13.
ժ Գլ. Բ. 42. 46. Ա Կորնթ. Ժ. 16. ԺԱ. 20. [illegible]
ի Գլ. Ա. 13.
լ Գ Թագ. ԺԷ. 21. Դ Թագ. Դ. 34.
խ Մատթ. Թ. 24.

եաց · Եւ բազում եւս խօսեցաւ
մինչեւ յառաւօտ, եւ ապա ել գը-
նաց ։
12 Եւ ածին զպատանին կենդա-
նի, եւ մխիթարեցան ոչ սակաւ ։
13 Եւ մեք մատեալ 'ի նաւն՝ ամ-
բարձաք յԱսոն · անտի ակն ունե-
աք միւսանգամ առնուլ զՊօղոս · զի
այնպէս պատուիրեալ էր՝ մինչ ինքն
զցամաքաւն երթալոց էր ։
14 Եւ իբրեւ զիպեցաւ մեզ 'ի յԱ-
սոն, առեալ զնա եկաք 'ի Մետի-
լինէ ։
15 Եւ անտի նաւեալ՝ 'ի վաղիւ-
անդր հասաք հանդէպ Քիայ · եւ
'ի միւս օրն հասաք 'ի Սամոս · եւ
'ի վաղիւ անդր եկաք 'ի Միլիտոն ։
16 Զի 'ի մտի եդեալ էր Պօղոսի
նաւել առ Եփեսաւ՝ որպէս զի մի
լիցի նմա ժամանակ ինչ յամել յԱ-
սիայ · քանզի փութայր եթէ հնար
ինչ իցէ նմա՝ զօրն Պենտեկոստէից
երթալ յԵրուսաղէմ ։
17 Եւ 'ի Միլիտոնէ յղեալ յԵփե-
սոս՝ կոչեաց զերիցունս եկեղեցւոյն ։
18 Եւ իբրեւ եկին առ նա, ասէ
ցնոսա · Դուք ձեզէն գիտէք յօրէ
յառաջնմէ՝ յորմէ եկի յԱսիա · որ-
պէս ընդ ձեզ զամենայն ժամանակ-
սն եղէ ։
19 Ծառայել Տեառն ամենայն խո-
նարհութեամբ եւ բազում արտա-
սուօք եւ փորձութեամբք՝ որ զէ-
պեցան ինձ 'ի նենգութեանց Հրէից ։
20 Որպէս ոչինչ զանգիտեցի յօգ-
տակարացն չպատմել ձեզ՝ եւ ու-
սուցանել զձեզ հրապարակաւ եւ
տանտնին ։
21 Տալ վկայութիւն Հրէից եւ հե-
թանոսաց զապաշխարութեանն՝ որ

կերաւ · եւ էլ շատ խօսեց մինչեւ
առաւօտը, եւ յետոյ դուրս ելաւ
եւ գնաց ։
12 Եւ այն տղայն բերին կենդա-
նի, եւ շատ մխիթարուեցան ։
13 Եւ մենք նաւը մտինք՝ գնա-
ցինք Ասոն · այնտեղից յոյս ունէ-
ինք՝ որ նորէն Պօղոսին մեզ հետ
առնենք · ինչու որ՝ այնպէս էր
պատուիրել՝ զեռ որ ինքը ցամա-
քովը գնալու էր ։
14 Եւ երբոր Ասոնումը հանդի-
պեցաւ մեզ, մենք առինք նորան ե-
կինք Միտիլինէ ։
15 Եւ այնտեղից նաւով գնացինք՝
յետեւի օրը հասինք Քիոյի դիմա-
ցը · եւ միւս օրը հասինք Սամոս ·
եւ յետեւի օրը եկինք Միլիտոն ·
16 Ինչու որ՝ Պօղոսն իրեն մտքին
մէջ դրել էր՝ որ Եփեսոսի մօտովը
նաւով անցանէ՝ որ չըլինի թէ նա
Ասիային մէջ մին ժամանակ յետ
մնայ · պատճառն որ՝ ծ փութամէր,
որ եթէ կարելի լինի նորան՝ Պեն-
տէկոստէի է օրը գնայ ը Երուսա-
ղէմ ։
17 Եւ Միլիտոնէյիցն ուղարկեց Ե-
փեսոս՝ եկեղեցւոյ երէցները կանչեց ։
18 Եւ երբոր եկին նորա մօտ, նո-
րանց ասաց · Դուք ինքներդ գի-
տէք՝ թէ այն առաջին օրիցն ե-
տեւ որ Ասիա եկի՝ ինչպէս էլայ
բոլոր ժամանակները ձեզ թ հետ ·
19 Որ ամէն խոնարհութենով Տէ-
րին ծառայեցի, եւ շատ արտա-
սունքով եւ փորձութիւններով որ
Հրէաների հնարքներիցը պատահե-
ցին ինձ ։
20 Ինչպէս որ բնաւ մին օգտա-
կար բան փախով չըծածկեցի, որ
չըպատմեմ եւ սովորցնեմ ձեզ՝ թէ
փողոցումը եւ թէ տանը ժա մէջ ·
21 Հրէաներին եւ հեթանոսներին
վկայութիւն ժբ տուի այն ապաշխա-

ծ Գրծ. ԺԹ. 21 ։ ԺԹ. 21 ։ ԻԱ. 4. 12 ։
է Գրծ. Բ. 1 ։ Ա Կորնթ. ԺԶ. 8 ։
ը Գրծ. ԻԴ. 17 ։
թ Գրծ. ԺԸ. 19 ։ ԺԹ. 1. 10 ։
ժ Հռոմ. 3 ։
ժա Հռոմ. 27 ։
ժբ Գրծ. ԺԸ. 5 ։

առ Աստուած, եւ զհաւատսն՝ որ
'ի Տէր մեր Յիսուս Քրիստոս։

22 Եւ արդ՝ ահաւասիկ ես կապ-
եալ հոգւով երթամ յԵրուսաղէմ.
եւ որ ինչ անդ ընդ իս անցանելոց
իցէ՝ չգիտեմ.
23 Բայց զի Հոգին Սուրբ ըստ քա-
ղաքաց վկայէ ինձ՝ եւ ասէ, եթէ
կապանք եւ նեղութիւնք մնան
քեզ։
24 Այլեւ ոչ ինչ համարիմ զան-
ձըն իմ պատուական՝ որպէս զկա-
տարել զընթացս իմ ուրախու-
թեամբ, եւ զպաշտօնն՝ զոր առի
'ի Տեառնէ Յիսուսէ՝ վկայ լինել ա-
ւետարանի շնորհացն Աստուծոյ։

25 Եւ արդ՝ ահաւասիկ գիտեմ ես,
թէ ոչ եւս տեսանելոց էք զերեսս
իմ դուք ամենեքեան, յորս շրջեցայ
քարոզել զարքայութիւնն։

26 Վասն որոյ վկայութիւն դնեմ
ձեզ յաւուր յայսմիկ՝ զի սուրբ եմ
յարենէ ամենեցուն։
27 Քանզի ոչ խորշեցայ 'ի պատ-
մելոյ ձեզ զամենայն կամս Աստու-
ծոյ։
28 Զգոյշ կացէք անձանց եւ ամե-
նայն հօտին, յորում եդ զձեզ Հո-
գին Սուրբ տեսուչ՝ հովուել զժո-
ղովուրդ Տեառն, զոր ապրեցոյց
արեամբ իւրով։
29 Քանզի գիտեմ ես՝ եթէ յետ
իմոյ մեկնելոյ՝ գայցեն գայլք յափշ-
տակողք 'ի ձեզ, որ ոչ խնայեսցեն
հօտին։

րութեան համար՝ որ դէպի Աստ-
ուած է, եւ մեր Տէր Յիսուս Քրիս-
տոսին հաւատալուն շ համար։
22 Եւ հիմիկ՝ ահա ես հոգւովը
կապըւած գնալու եմ Երուսաղէմ. եւ
չեմ գիտեր՝ թէ այնտեղ ինչ պի-
տի անցնի ինծի ո վրայ.
23 Միայն թէ՝ Սուրբ Հոգին քա-
ղաքէ քաղաք վկայում է ինծի՝ եւ
ասում, թէ կապանքըներ եւ նեղու-
թիւններ են սպասում չ քեզ։
24 Բայց ես ոչ մէն բանով էլ իմ
անձըս պատուական չեմ պ համա-
րում՝ որ ուրախութեամբ կատա-
րեմ իմ ջ վազելըս, եւ այն ռ պաշ-
տօնըն՝ որ Տէր Յիսուս Քրիստոսից
առի, որ Աստուծոյ շնորհաց աւե-
տարանին վկայ լինիմ։
25 Եւ հիմիկ՝ ահա ես գիտեմ,
որ էլ իմ երեսըս չէք տեսնել դուք
վ ամէնքդ, որ ձեր մէջը ման եկի
Աստուծոյ արքայութիւնը քարո-
զելու համար։
26 Սրա համար՝ այս օր վկայութիւն
եմ դնում ձեզ՝ որ ձեր ամէնից ա-
րիւնից անմեղ տ եմ.
27 Ինչու որ՝ յետ ր չըքաշվեցայ
Աստուծոյ ամէն կամքը ձեզ ց պատ-
մելուց։
28 Զգոյշ կացէք անձերնիդ՝ եւ ա-
մէն ւ հօտին, որ Սուրբ Հոգին ձեզ վե-
րակացու դրաւ փ նորանում, որ արա-
ծացնէք Տէրի ժողովուրդը. նորան՝
որ իրեն ք արիւնովը օ ապրեցրուց.
29 Պատճառն այ՝ ես գիտեմ,
որ իմ հեռանալուցս ետեւ՝ յափշ-
տակող գայլեր կը գան ձեր մէջը,
որ հօտին չեն ֆ խնայիլ,

շ Մարկ. Ա. 15. Ղու. ԻԴ. 47. Գրծ. Բ. 38.
ո Գրծ. ԺԹ. 21.
չ Գրծ. ԻԱ. 4. 11. Ա Թես. Գ. 3.
պ Գրծ. ԻԱ. 13. Հռովմ. Ը. 35. Բ Կորնթ. Դ. 16.
ջ Բ Տիմ. Դ. 7.
ռ Գրծ. Ա. 17. Բ Կորնթ. Դ. 1.
ս Գաղ. Ա. 1. Տիտ. Ա. 3.
վ Համար. 38. Հռովմ. ԺԵ. 23.
տ Գրծ. ԺԸ. 6. Բ Կորնթ. Է. 2.
ր Համար. 20.
ց Ղու. Է. 30. Յովհ. ԺԵ. 15. Եփես. Ա. 11.
ւ Ա Տիմ. Դ. 16. Ա Պետ. Ե. 2.
փ Ա Կորնթ. ԺԲ. 28.
ք Եբր. Թ. 14.
օ Եփես. Ա. 7. 14. Կող. Ա. 14. Եբր. Թ. 12. Ա Պետ. Ա. 19. Յայտ. Ե. 9.
ֆ Մատթ. Է. 15. Բ Պետ. Բ. 1.

30 Եւ 'ի ձէնջ յարիցեն արք՝ որք խօսիցին թիւրս, ձգել զաշակերտսն զհետ իւրեանց։

31 Վասն այսորիկ արթո՛ւն կացէք, եւ յիշեցէք՝ զի զերկեամ մի զցայգ եւ զցերեկ ո՛չ դադարեցի արտասուօք խրատել զմի մի իւրաքանչիւր։

32 Եւ արդ՝ յանձն առնեմ զձեզ Աստուծոյ՝ եւ բանի շնորհաց նորա, որ կարօղն է շինել՝ եւ տալ ձեզ ժառանգութիւն ընդ սուրբս ամենայն։

33 Արծաթոյ՝ կամ ոսկւոյ՝ կամ հանդերձից ո՛չ ուրուք 'ի ձէնջ ցանկացայ։

34 Դուք ինքնին գիտէք՝ զի զպէտս իմ եւ որոց ընդ իս էին՝ պաշտեցին ձեռքս այս։

35 Եւ զամենայն ինչ ցուցի ձեզ. զի այսպէս պարտ է վաստակել, եւ զարմանել զհիւանդս. եւ յիշել զբանն Տեառն Յիսուսի, զոր ինքն իսկ ասաց. Երանելի է մանաւանդ տալ՝ քան առնուլ։

36 Եւ զայս իբրեւ ասաց, եդեալ ծունր ամենեքումբք՝ եկաց յաղօթս։

37 Բազում լալիւն եղեւ ամենեցուն. եւ անկեալ զպարանոցաւն Պօղոսի՝ համբուրէին զնա։

38 Մորմոքէին մանաւանդ 'ի վերայ բանին՝ զոր ասէր, թէ ո՛չ եւս տեսանելոց էն զերեսս նորա. եւ յուղարկեցին զնա 'ի նաւ անդր։

30 Եւ ձեզանից էլ մարդիկ վեր կը կենան՝ որ ծուռ բաներ կը խօսեն, որ աշակերտներին իրենց ետեւէն * քաշեն։

31 Սրա համար արթուն կացէք, եւ մտքներդ բերէք՝ որ երեք տարի գիշեր եւ ցերեկ չը դադարեցի ամէն մէկիդ արտասուքով‡ խրատելը

32 Եւ հիմիկ՝ ձեզ Աստուծոյ եմ յանձնում՝ եւ նորա շնորհաց = խօսքին, որ նա կարող է Բ շինել՝ եւ ամէն սրբերին հետ ձեզ ժառանգութիւն ÷ տալ։

33 Ձեզանից մէկի արծաթին կամ ոսկուն կամ շորերին ‡ չը ցանկացայ։

34 Դուք ձեզանից գիտումէք՝ որ այս ձեռներս վաստակեցին իմ պէտքս, եւ նորանցն էլ՝ որ ինձ հետ Ի էին։

35 Եւ ամէն ինչ ցոյց տուի ձեզ՝ որ այսպէս պէտք է աշխատել, եւ հիւանդներին հոգս տանել, եւ Տէր Յիսուսի խօսքը յիշել, որ ինք ինքն Հ ասաց. Աւելի երանելի է տալը քան թէ առնելը։

36 Եւ երբոր սա ասաց, ծունր դրաւ ամէնին հետ՝ եւ աղօթք Ի արաւ։

37 Ամէնքն էլ շատ լաց էին լինում. եւ Պօղոսի վզովը ընկած՝ նորան Ը համբուրում էին։

38 Սրանքն էլ մանաւանդ կսկծումէին այն խօսքին համար՝ որ ասումէր, թէ նորա երեսն էլ չը պիտի տեսնեն. եւ նորան ճանապարհ ձգեցին դէպի Թ նաւը։

* Ա Տիմ. Ա. 20։ Ա Յովհ. Բ. 19։
‡ Գլ. ԺԹ. 10։
= Եբր. ԺԳ. 9։
Բ Գլ. Թ. 31։
÷ Գլ. ԻԶ. 18։ Եփես. Ա. 18։ Կող. Ա. 12։ Գ. 24։ Եբր. Թ. 15։ Ա Պետ. Ա. 4։
‡ Ա Թագ. ԺԲ. 3։ Ա Կորնթ. Թ. 12։ Բ Կորնթ. Է. 2։ ԺԱ. 9. ԺԲ. 17։
Ի Գլ. ԺԸ. 3։ Ա Կորնթ. Դ. 12։ Ա Թես. Բ. 9։ Բ Թես. Գ. 8։
Հ Հռոմ. ԺԵ. 1։ Ա Կորնթ. Թ. 12։ Բ Կորնթ. ԺԱ. 9. 12։ ԺԲ. 13։ Եփես. Դ. 28։ Ա Թես. Դ. 11։ Ե. 14։ Բ Թես. Գ. 8։
Ի Գլ. Է. 59։ ԻԱ. 5։
Ը Ծննդ. ԽԵ. 14։ ԽԶ. 29։
Թ Համար. 25։

## ԳԼ. ԻԱ.

1 Եւ իբրեւ եղեւ նաւել մեզ եւ
մեկնել 'ի նոցանէ, հանգէտ գնաց-
եալ եկաք 'ի Կով. եւ 'ի վաղիւ-
անդր 'ի Հռոդոն, եւ անտի 'ի Պա-
տարայ:
2 Եւ գտեալ նաւ մի՝ զի՛ երթայր
'ի Փիւնիկէ, եւ ելեալ 'ի նա գնա-
ցաք:
3 Եւ յայտ եղեալ Կիպրեայ՝ թո-
ղաք զնա 'ի ձախակողմն, նաւեցաք
յԱսորիս, եւ իջաք 'ի Տիւրոս.
քանզի անդ էր նաւն թափելոց ըզ
բեռինն:

4 Եւ գտեալ զաշակերտսն՝ կա-
ցաք անդ աւուրս եօթն. որք ասէ-
ին զՊօղոս 'ի ձեռն Հոգւոյն՝ մի՛ ե-
լանել յԵրուսաղէմ:

5 Եւ իբրեւ եղեւ մեզ կատարել
զաւուրսն՝ ելեալ գնայաք, յու-
ղարկեալ զմեզ ամենեցուն հանդերձ
կանամբք եւ որդւովք մինչեւ ար-
տաքոյ քաղաքին. եւ եդեալ ծու-
նր առ ծովեզերին՝ կացաք յաղօթս:

6 Եւ հրաժարեցաք 'ի միմեանց՝
եւ ելաք 'ի նաւն. եւ նոքա դար-
ձան յիւրեանց տեղիս:
7 Եւ մեր զնաւն աւարտեալ 'ի
Տիւրոսէ՝ հասաք 'ի Պտղեմայիդա.
եւ ողջոյն տուեալ եղբարց՝ եղաք
օր մի առ նոսա:

8 Եւ 'ի վաղիւ անդր ելեալ ան-
տի՝ եկաք 'ի Կեսարիայ. եւ մտեալ
յապարանս Փիլիպպոսի աւետա-
րանչի, որ էր յեօթանց անտի, ա-
գաք առ նմա:
9 Նորա էին դստերք չորք՝ կոյսք
մարգարէք:
10 Եւ 'ի լինելն մեր անդ աւուրս

1 Եւ երբոր եղաւ՝ որ մենք դուրս
ելլինք եւ նորանցից ջոկուեցանք,
շիտակ գնալով եկինք Կով. եւ յե-
տեւի օրը Հռոդոն, եւ այնտեղէն
Պատարա:
2 Եւ մէն նաւ որ գտինք՝ որ
Փիւնիկէն էր գնում, նորան մէջը
մտինք գնացինք:
3 Եւ երբոր Կիպրոսն երեւեցաւ՝
նորան մեր ձախ կողմը թողինք,
նաւը շտակեցինք դէպի Ասորիք,
եւ վեր ելլինք Տիւրոս. ինչու որ՝
նաւը բեռները այնտեղ պիտի թա-
փէր:
4 Եւ աշակերտներին որ գտինք՝
այնտեղ եօթն օր մնացինք. որ նո-
րանք Սուրբ Հոգոյ ձեռովը Պօղո-
սին ասումէին, որ վեր չելլի = Երու-
սաղէմ:
5 Եւ երբոր մենք այն օրերը
կատարեցինք, դուրս ելլինք գնա-
ցինք. ամէնքը մեզ կանանցով եւ
որդիքներով ճամապարհ ձգեցին
մինչեւ քաղաքի դուրս կողմը. եւ
ծովի եզրին մօտ ծունր դրինք ու
աղօթք ‡ արինք:
6 Եւ իրարմէ բաժանեցանք եւ
վեր ելանք նաւը. եւ նորանք յետ
դարձան իրենց տեղերը:
7 Եւ մենք նաւը Տիւրոսէն ա-
ռաջ ձգեցինք՝ հասինք Պտղեմա-
յիդա. եւ եղբայրներին ողջոյն
տուինք՝ նորանց մօտ մէն օր մնա-
ցինք:
8 Եւ յետեւի օրն այնտեղից
դուրս ելանք՝ եկինք Կեսարիա. եւ
Փիլիպպոս աւետարանչի տունը
÷ մտինք՝ որ նա այն եօթնից էր,
եւ նորա մօտ ÷ մնացինք:
9 Նա չորս կոյս աղջիկներ ու-
նէր՝ որ մարգարէ ⁑ էին:
10 Եւ երբոր մենք այնտեղ շատ

= Համար. 12։ Գլ. Ի. 23։
‡ Գլ. Ի. 36։
÷ Եփես. Դ. 11։ Բ Տիմ. Դ. 5։
÷ Գլ. Զ. 5։ Ը. 26. 40։
⁑ Յովէլ. Բ. 28։ Գլ. Բ. 17։

բազումս, էջ ոմն 'ի Հրէաստանէ մարգարէ՝ անուն Ագաբոս։

11 Եւ եկեալ առ մեզ, առեալ զգօտին Պօղոսի՝ կապեաց զոտս եւ զձեռս իւր, եւ ասէ. Այսպէս ասէ Հոգին Սուրբ. Զայրն որոյ գօտիս այս է՝ այսպէս կապեսցեն յԵրուսաղէմ Հրէայք, եւ մատնեսցեն 'ի ձեռս հեթանոսաց։

12 Եւ իբրեւ լուաք զայն՝ աղաչէաք մեք, եւ որ 'ի տեղւոջն էին՝ չելանել նմա յԵրուսաղէմ։

13 Յայնժամ պատասխանի ետ Պօղոս. Զի՞նչ գործէք, զի լայք եւ ճմլեցուցանէք զսիրտ իմ. քանզի ես ոչ միայն կապելոյ՝ այլեւ մեռանելոյ յԵրուսաղէմ պատրաստ եմ վասն անուանն Տեառն Յիսուսի Քրիստոսի։

14 Եւ 'ի չառնուլն նորա՝ լռեցաք, եւ ասեմք. Տեառն կամք լիցին։

15 Եւ յետ աւուրցն այնոցիկ՝ հանդերձեալ ելանէաք յԵրուսաղէմ։

16 Եկին ընդ մեզ եւ յաշակերտաց անտի Կեսարացւոց, եւ ածէին զմեզ առ որում վանս առնելոց էաք՝ Մնասոնի ումեմն Կիպրացւոյ՝ առաջին աշակերտի։

17 Եւ 'ի մտանելն մեր յԵրուսաղէմ, խնդութեամբ ընկալան զմեզ եղբարքն։

18 'Ի վաղիւ անդր եմուտ Պօղոս ընդ մեզ առ Յակովբոս, եւ եկին ամենայն երիցունքն։

19 Եւ ողջոյն տուեալ նոցա՝ պատմէր մի ըստ միոջէ՝ զոր արար Աստ-

օրեր մնացէինք, մին Ագաբոս անուն մարգարէ մը եկաւ դ Հրէաստանիցը,

11 Եւ մեզ մօտ որ եկաւ, Պօղոսի գօտին առաւ՝ իրեն ոտներն ու ձեռքերը կապեց եւ ասաց. Սուրբ Հոգին այսպէս է ասում. Այն մարդը՝ որ այս գօտին նորանն է, Հրէաները Երուսաղէմումն այսպէս ե կը կապեն, եւ նորան հեթանոսներին ձեռքը կը մատնեն։

12 Եւ երբոր նա լսեցինք՝ մենք աղաչումէինք, եւ նորանք էլ՝ որ այնտեղ էին՝ որ նա վեր չելլի Երուսաղէմ։

13 Այն ժամանակը Պօղոս պատասխան տուաւ եւ ասաց. Ի՞նչ էք անում, ինչու համար էք լաց լինում եւ իմ սիրտս զ կսկծացնում. ինչու որ՝ ես ոչ թէ մինակ կապվելոյ՝ բայց Երուսաղէմումն մեռնելոյ էլ պատրաստ եմ Տէր Յիսուսի Քրիստոսի անուանին համար։

14 Եւ երբոր նա ականջ չը դրաւ, լուռ կացանք՝ եւ ասացինք. Թող Տէրի կամքը է լինի։

15 Եւ այն օրերիցն ետեւ՝ պատրաստվեցանք՝ վերէինք ելլում Երուսաղէմ։

16 Այն Կեսարացի աշակերտներիցն էլ մեզ հետ եկին, եւ տանումէին մեզ մին Մնասոն անուն Կիպրացի մարդոյ՝ առաջին աշակերտի մօտ, որ նորա մօտ պէտք էր կենայինք։

17 Եւ երբոր մենք Երուսաղէմ մտինք, եղբարքը մեզ ուրախութենով ը ընդունեցին։

18 Բայց յետեւի օրը Պօղոս մեզ հետ մտաւ թ Յակոբի մօտ. եւ բոլոր երէցները եկին։

19 Եւ ողջոյն տուաւ նորանց՝ մին մին պատմումէր ինչ որ Աստուած

դ Գլ. ԺԱ. 28։
ե Համար. 33։ Գլ. Ի. 23։
զ Գլ. Ի. 24։
է Մատթ. Զ. 10։ ԻԶ. 42։ Ղու. ԺԱ. 2։ ԻԲ. 42։
ը Գլ. ԺԵ. 4։
թ Գլ. ԺԵ. 13։ Գաղ. Ա. 19։ Բ. 9։

ուած 'ի հեթանոսս 'ի ձեռն պաշտաման նորա ։

20 Եւ նոցա լուեալ՝ փառաւոր առնէին զԱստուած. եւ ասեն ցնա. Տեսանես եղբայր, քանի բիւրք են հաւատացելոցն Հրէից, եւ ամենեքեան նախանձաւոր օրինացն են ։

21 Բայց իրազեկ եղեն վասն քո՝ թէ ապստամբութիւն ուսուցանես 'ի Մովսիսէ՝ որոց 'ի հեթանոսս ամենայն Հրէայք են. ասես՝ մի թլփատել զորդիս նոցա, եւ մի ըստ կրօնիցն գնալ ։

22 Արդ՝ զինչ լինիցի՝ ապաքէն լսեն, եթէ եկեալ ես ։

23 Արդ զայս արա՝ զոր ասեմք քեզ. են 'ի մեզ արք չորք ուխտադիրք յանձինս իւրեանց ։

24 Զնոսա առեալ՝ սրբեաց ընդ նոսա. եւ ծախեա ինչ 'ի նոսա՝ զի գերծցեն զգլուխս. եւ գիտասցեն ամենեքին, թէ զորոց իրազեկ եղեն զքէն՝ ոչինչ է. այլ միաբանես եւ դու պահել զօրէնս ։

25 Բայց վասն հաւատացելոցն հեթանոսաց, մեք առաքեցաք՝ որպէս ընտրեցաք, մի ինչ այնպիսի պահել նոցա. բայց միայն զգուշանալ 'ի կռոց զոհելոյ, եւ յարենէ, եւ 'ի հեղձուցելոյ, եւ 'ի պոռնկութենէ ։

26 Յայնժամ Պօղոսի առեալ զարսն՝ 'ի վաղիւ անդր ընդ նոսա սրբեալ եմուտ 'ի տաճարն, յայտ առնել զկատարումն աւուրցն սրբութեան, մինչեւ մատեաւ 'ի վերայ իւրաքանչիւր ուրուք 'ի նոցանէ պատարագ ։

հեթանոսներին մէջին ւ արաւ իրեն փ ծառայութիւնովը ։

20 Եւ երբոր նորանք լսեցին, փառք էին տալիս Աստուծոյ. եւ նորան ասում. Ո՛վ եղբայր՝ տեսնում ես, որչափ հազարաւոր հաւատացեալ Հրէաներ կան, եւ ամէնքն օրէնքին համար նախանձով լցված ք են ։

21 Բայց քեզ համար այնպէս են իմացել՝ թէ հեթանոսներին մէջ լինող Հրէաներին սովորցնում ես, որ Մօսէսից յետ քաշվին. ասում ես թէ իրենց որդիքները չը թլփատեն, եւ օրէնաց կրօնքի պէս չը փարվին ։

22 Հիմիկ ինչ կը լինի՝ իրաւի որ՝ կը լսեն որ դու եկել ես ։

23 Հիմիկ աս արա՝ որ քեզ ասում ենք. Մեզանում չորս մարդ կան՝ որ ուխտ են դրած իրենց անձներին վերայ ։

24 Նորանց առ՝ եւ նորանց հետ սրբուէ. եւ նորանց վերայ ծախք արա՝ որ իրենց գլխները օ ածիլեն. եւ ամէնքը կը գիտնան, թէ ինչ որ քեզ համար խօսել էին՝ ոչ ինչ է. եւ թէ դու էլ միաբան ես օրէնքը պահելոյ համար ։

25 Բայց այն հաւատացեալներին համար՝ որ հեթանոսներիցն են, մենք ուղարկեցինք՝ ինչպէս որ սահմանեցինք, որ նորանք այնպէսի բան չը պահեն, բայց միայն յետ կենան կռքի մատաղից եւ արիւնից, եւ խեղդվածիցն ու ֆ պոռնկութիւնից ։

26 Այն ժամանակը Պօղոս այն մարդկանցը առաւ, յետեւի օրը նորանց հետ սրբվեցաւ, եւ տաճարը մտաւ ցոյց ա տալով սրբութեան օրերի բ կատարվիլը. մինչեւ որ նորանց ամէն մէկին վերայ պատարագ էլաւ ։

ւ Գլ. ԺԵ. 4. 12։ Հռովմ. ԺԵ. 18. 19։
փ Գլ. Ա. 17։ Ի. 24։
ք Գլ. ԻԲ. 3։ Հռովմ. Ժ. 2։ Գաղ. Ա. 14։
օ Թուոց. Զ. 2. 13. 18։ Գլ. ԺԸ. 18։
ֆ Գլ. ԺԵ. 20. 29։
ա Գլ. ԻԴ. 18։
բ Թուոց. Զ. 13։

27 Եւ իբրեւ մերձ էին եօթն աւուրքն 'ի կատարել, տեսեալ զնա 'ի տաճարին Ասիացւոց Հրէիցն՝ գեգուէին զխռնեալ զամենայն զամբոխն. եւ արկեալ 'ի նա ձեռս՝ աղաղակէին.

28 Արք Իսրայէլացիք՝ օգնեցէք. այս այր է՝ որ հակառակ ժողովրդեանն եւ օրինաց եւ տեղւոյս այսորիկ՝ ամենեցուն ամենայն ուրեք ուսուցանէ. մինչեւ Հեթանոս եւս եմոյծ 'ի տաճարն՝ եւ պղծեաց զսուրբ տեղին։

29 Քանզի էր յառաջագոյն տեսեալ զՏրոփիմոս զԵփեսացի 'ի քաղաքին ընդ նմա. զոր կարծէին, եթէ 'ի տաճար անդր եմոյծ Պօղոս։

30 Շարժեցաւ քաղաքն ամենայն, եւ կուտեցաւ ժողովուրդն. եւ առեալ զՊօղոս՝ ձգէին արտաքոյ տաճարին. եւ վաղվաղակի փակեցան դրունքն։

31 Եւ խնդրէին զնա սպանանել, եհաս գրոյց 'ի հազարապետ գնդին, եթէ խռովեալ է ամենայն Երուսաղէմ։

32 Որոյ անդէն առեալ զզօրականս եւ հարիւրապետս՝ դիմեաց 'ի վերայ նոցա. եւ նոքա տեսեալ զհազարապետն եւ զզօրականսն, դադարեցին 'ի հարկանելոյ զՊօղոս։

33 Յայնժամ մատուցեալ հազարապետն կալաւ զնա, եւ հրամայեաց կապել կրկին շղթայիւք՝ եւ հարցանէր՝ թէ ո իցէ, եւ զինչ իցէ արարեալ։

34 Այլք այլ ինչ աղաղակէին ընդ նմանէ յամբոխին. իբրեւ ոչ կարաց գիտել զստոյգն վասն ամբոխին, հրամայեաց ածել զնա 'ի բանակն։

27 Եւ երբոր այն եօթը օրերը կատարուելու մօտ էին, Ասիայի Հրէաները նորան տաճարումը ճ տեսան, եւ ամէն ամբոխին նորա վերայ թափեցին, եւ նորան ձեռք ձգելով մ աղաղակում էին.

28 Ո՛վ Իսրայէլացի մարդիկ՝ օգնեցէք. սա այն մարդն է՝ որ ժողովրդին՝ եւ օրէնքին եւ այս տեղիս հակառակ՝ ամէնին ամէն տեղ սովորցնում՝ մինչեւ որ Հեթանոսներ էլ մտցրուց տաճարին մէջ՝ եւ այս սուրբ տեղը յ պղծեց։

29 Ինչու որ՝ Տրոփիմոս Եփեսացին առաջուց նորա հետ քաղաքումը տեսել ն էին. եւ կարծումէին՝ թէ Պօղոս մտցրուց նորան տաճարին մէջ։

30 Բոլոր քաղաքը շարժուեցաւ, եւ ժողովուրդը կիտուեցաւ. եւ Պօղոսին բռնած տաճարիցը դուրս էին քաշում՝ եւ շուտով դռներին շ փակուեցան։

31 Եւ ուզումէին՝ որ նորան սպանեն. զրուց հասաւ գնդի հազարապետին՝ թէ ամէն Երուսաղէմը շփոթուել է։

32 Նա էլ շուտով զինուորներ եւ հարիւրապետներ առաւ՝ եւ նորանց վերայ ո վազեց. եւ նորանք երբոր հազարապետին եւ զինուորներին տեսան, Պօղոսին ծեծելուց դադարեցին։

33 Այն ժամանակը հազարապետը մօտեցաւ բռնեց նորան՝ եւ հրամայեց, որ երկու շղթայով չ կապեն. եւ հարցնումէր՝ թէ ով է, եւ ինչ է արել։

34 Ամէն մէկն ամբոխին մէջ մին ուրիշ բան էր աղաղակում նորանից. երբոր ամբոխի շփոթութենիցը չէր կարողացաւ ճշմարիտն իմանալ, հրամայեց որ նորան տանեն բանակը։

ճ Գլ. ԻԴ. 18։
մ Գլ. ԻՁ. 31։
յ Գլ. ԻԴ. 5, 6։
ն Գլ. Ի. 4։
շ Գլ. ԻՁ. 21։
ո Գլ. ԻԴ. 27։ ԻԴ. 7։
չ Համար. 11։ Գլ. Ի. 23։

35 Եւ իբրեւ եհաս յաստիճանսն, դէպ եղեւ բառնալ բերել զնա 'ի զօրականացն՝ վասն բռնութեան ամբոխին:

36 Քանզի զհետ երթայր բազմութիւն ժողովրդեանն, եւ ասէին՝ Բարձ զդա:

37 Մինչդեռ մտանելոց էր Պօղոս 'ի բանակն, ասէ ցհազարապետն՝ եթէ Արժան իցէ ինձ խօսել ընդ քեզ · եւ նա ասէ · Յունարէն գիտես:

38 Մի արդեօք դու իցես Եգիպտացին, որ յառաջ քան զայս աւուրս ապստամբեցուցեր՝ եւ հաներ յանապատ չորս հազարս արս սիկարեանս:

39 Եւ ասէ Պօղոս, Ես եմ այր Հրեայ 'ի Տարսոնէ Կիլիկեցւոց · ոչ անծանօթ քաղաքի քաղաքացի · աղաչեմ զքեզ հրամայեա ինձ խօսել առ ժողովուրդդ:

40 Եւ 'ի հրամայելն նորա, Պօղոս կացեալ 'ի վերայ աստիճանացն՝ շարժեաց զձեռն ժողովրդեանն · իբրեւ բազում լռութիւն լինէր, սկսաւ բարբառել Եբրայեցւոց բարբառովն՝ եւ ասէ ·

35 Եւ երբոր հասաւ աստիճանները, պէտք էղաւ որ ամբոխին սաստիկոյն պատճառովը՝ զինուորները նորան վերցունեն բերեն ·

36 Ինչու որ՝ շատ ժողովուրդ էր ետեւէն գնում, եւ ասումէին · Միջիցն վեր առ ‒ զորան:

37 Դեռ քանի որ Պօղոս բանակը մտնելու վերայ էր, հազարապետին ասաց · Կարելի է ինձ՝ որ քեզ հետ խօսիմ · Նա էլ ասաց՝ Յունարէն գիտե՞ս ·

38 Չըլինի թէ դու այն Եգիպտացին ես, որ այս օրերից առաջ չխռովութիւն արիր՝ եւ չորս հազար սիկարեան մարդիկ հանեցիր Չ անապատը:

39 Եւ Պօղոս ասաց · Ես Հրէայ մարդ եմ Կիլիկեցոց ‒ Տարսոնից · ոչ թէ անծանօթ քաղաքի քաղաքացի · աղաչումեմ քեզ՝ հրաման տուր ինձ, որ այս ժողովրդին հետ խօսիմ:

40 Եւ երբոր նա հրամայեց, Պօղոս աստիճաններին վերայ կանգնեց՝ եւ դէպի ժողովուրդը ձեռքը ‒ շարժեց · Երբոր շատ լռել կացան, սկսեց Եբրայեցոց լեզուովը խօսիլ՝ եւ ասաց ·

## ԳԼ · ԻԲ

1 Արք եղբարք եւ հարք՝ լուարուք ինձ այժմ առ ձեզ պատասխանատուութեանս:

2 Իբրեւ լուան՝ եթէ Եբրայեցւոց լեզուաւն բարբառեցաւ նոցա՝ առաւել եւս դադարեցին 'ի լռութիւն:

3 Եւ ասէ · Ես եմ այր Հրեայ ծնեալ 'ի Տարսոնի Կիլիկեցւոց՝ սնեալ 'ի քաղաքիս յայսմիկ առ ոտս Գամաղիէլի, խրատեալ բաս ճշմարտութեան հայրենի օրինաց · նա–

1 Մարդիկ եղբարք եւ հարք՝ հիմիկ իմ ձեզ պատասխանն ասելս ‒ լսեցէք:

2 Երբոր լսեցին՝ թէ Եբրայեցոց լեզուովը նորանց հետ խօսեց, էլ աւելի լռել կացան:

3 Եւ նա ասաց · Ես Հրէայ մարդ եմ Կիլիկեցոց Տարսոնումը ‡ ծնված՝ այս քաղաքումս մեծացած † Գամաղիէլի ոտքին տակ, ճշմարիտ հայրենական օրէնքին վրայ ‡ վարժված ·

‒ ԳԼ · ԻԹ · 18 · | ԻԲ · 3 ·
Յովհ · ԺԹ · 15 · | ‒ ԳԼ · ԺԲ · 17 ·
ԳԼ · ԻԲ · 22 · | —
Չ ԳԼ · Ե · 36 · | ‒ ԳԼ · Ե · 2 ·
‒ ԳԼ · Թ · 11 · | ‡ ԳԼ · ԻԱ · 39 · ‡

Կորնթ · ԺԱ · 22 · | ԳԼ · Ճ · 39 ·
Փիլիպ · Գ · 5 · | ‡ ԳԼ · ԻԶ · 5 ·
‡ ԳԼ · Ե · 34 ·
‡ Բ Օրին · ԼԳ · 3 ·
Գ Թագ · Գ · 38 ·

նախանձայոյզ էի Աստուծոյ՝ որպէս ամենեքին դուք այսօր։

4 Որ զայն ճանապարհ հալածեցի մինչեւ ՚ի մահ, կապել եւ մատնել ՚ի բանտս արս եւ կանայս.

5 Որպէս եւ քահանայապետն վկայէ ինձ՝ եւ ամենայն ծերակոյտ. յորոց եւ թուղթս առեալ առ եղբարս ՚ի Դամասկոս երթայի, ածել եւ անտի կապեալս յԵրուսաղէմ, զի պատժեսցին։

6 Եւ եղեւ ինձ ՚ի գնալն եւ ՚ի մերձենալ ՚ի Դամասկոս. զմիջաւուրբն յանկարծակի յերկնից փայլատակեաց լոյս առատ զինեւ։

7 Եւ անկայ յերկիր, եւ լուայ բարբառ՝ որ ասէր ցիս. Սաւուղ Սաւուղ՝ զի՞ հալածես զիս։

8 Եւ ես ետու պատասխանի՝ թէ Ո՞վ ես տէր. եւ ասէ ցիս, Ես եմ Յիսուս Նազովրեցի՝ զոր դուն հալածես։

9 Բայց որ ընդ իսն էին՝ զլոյսն տեսանէին. այլ զձայնն ոչ լսէին՝ որ խօսէր ընդ իս։

10 Եւ ասեմ. Զի՞նչ արարից՝ Տէր. եւ ասէ ցիս Տէր. Յարուցեալ երթիցես ՚ի Դամասկոս, եւ անդ պատմեսցի քեզ վասն ամենայնի՝ որ հրաման է քեզ առնել։

11 Իբրեւ ոչ տեսանէի ՚ի փառաց լուսոյն այնորիկ, ձեռնանէ ձգեալ ՚ի նոցանէ՝ որ ընդ իսն էին, մտի ՚ի Դամասկոս։

12 Անանիա ոմն այր երկիւղած ըստ օրինաց, վկայեալ յամենայն բնակչաց՝ որ ՚ի Դամասկոս հրէայքն էին։

Աստուծոյ կողմանէ խիստ նախանձով ջերմեռանդ չէի՝ ինչպէս որ այս օր դուք ամէնքդ է էք,

4 Որ իսկ այս ճանապարհին հալածեցի մահու չափ. որ մարդկանց եւ կանանց կապում եւ մատնումէի բանտերի ը մէջ.

5 Ինչպէս որ քահանայապետն էլ ինձ վկայում՝ եւ ծերերի ամէն ժողովը թ էլ. որ նորանցից էլ թղթեր առած գնումէի Դամասկոս եղբայրներին մօտ, որ այն տեղից էլ կապածներ բերեմ Երուսաղէմ, որ ժ պատժվէին։

6 Եւ էլաւ ի երբոր ես գնումէի եւ Դամասկոսին մօտենում, կէս օրվան դէմ՝ յանկարծակի երկնքիցը մին առատիկ լոյս փայլեց իմ չորս է կողմսը,

7 Եւ մէր ընկայ գետնին վերայ, եւ ձայն լսեցի՝ որ ասումէր ինձ. Սաւուղ Սաւուղ՝ ինձ ինչու ես հալածում։

8 Եւ ես պատասխան տուի՝ թէ Տէր՝ դու ով ես. եւ ինձ ասաց. Ես Յիսուս Նազօրեցին եմ՝ որ դու հալածումես։

9 Բայց նորանք՝ որ ինձ հետ էին՝ լոյսը տեսնումէին, իսկ այն ձայնն չէին լսում՝ որ ինձ հետ լ խօսումէր։

10 Եւ ասացի. Ի՞նչ անեմ՝ Տէր. եւ Տէրն ասաց ինձ. Վե՛ր կաց՝ գնա Դամասկոս, եւ այն տեղ կը պատմվի քեզ ամէն բանի համար՝ որ քեզ հրաման է որ անես։

11 Երբոր այն լուսոյ փառքիցը կարօղ չէի տեսնել, նորանք՝ որ ինձ հետ էին, ձեռիցս բռնեցին՝ եւ մտի Դամասկոս։

12 Մին Անանիա մարդ՝ աստուածավախ օրէնք ծ պահօղ, Դամասկոսումը բնակված ամէն կ Հրէաներիցը բարի վկայութիւն ունեցօղ,

զ Գլ. ԻԱ. 20։ Գաղ. Ա. 14։
է Հռոմ. Ժ. 2։
ը Գլ. Ը. 3։ ԻԶ. 9—11։ Փիլիպ. Գ. 6։ Ա Տիմ. Ա. 13։
թ Ղու. ԻԲ. 66։ Գլ. Դ. 5։
ժ Գլ. Թ. 2։ ԻԶ. 10. 12։
ի Գլ. Թ. 3։ ԻԶ. 12, 13։
լ Գլ. Թ. 7։ Դան. Ժ. 7։
խ Գլ. Թ. 17։
ծ Ա Տիմ. Գ. 7։
կ Գլ. Ժ. 22։

13 Եկն եկաց առ իս՝ եւ ասէ. Սաւուղ եղբայր՝ ՚ի վեր հայեաց:

14 Եւ ես նոյնժամայն ՚ի վեր հայեցայ ՚ի նա. եւ նա ասէ ցիս. Աստուած հարցն մերոց յառաջագոյն ընտրեաց զքեզ ծանուցանել զկամս նորա, եւ տեսանել զԱրդարն, եւ լսել բարբառ ՚ի բերանոյ նորա:

15 Զի եղիցիս վկայ նորա առ ամենայն մարդիկ՝ որոց տեսերն եւ լուար:

16 Եւ արդ՝ զի՞ հեղգաս, արի՛ մկրտեաց եւ լուա զմեղս քո ՚ի կարդալ զանուն նորա:

17 Եւ եղեւ ինձ ՚ի դառնալն յԵրուսաղէմ՝ եւ կալ յաղօթս ՚ի տաճարին, լինել ՚ի զարմացման:

18 Եւ տեսանել զնա՝ զի ասէր ցիս. Փութա՛՝ ել յԵրուսաղէմէ վաղվաղակի, քանզի չեն ընդունելոց զքո վկայութիւնդ վասն իմ:

19 Եւ ես ասեմ. Տէ՛ր՝ նոքեանք իսկ գիտեն՝ զի ես էի՝ որ ՚ի բանտս տայի, եւ գան հարկանէի ըստ ժողովրդոց զհաւատացեալս ՚ի քեզ:

20 Եւ յորժամ հեղոյր արիւնն Ստեփաննոսի վկայի քո, ես ինքն էի՝ որ ՚ի վերայ կայի, եւ կամակից լինէի սպանմանն նորա, եւ պահէի զհանդերձս սպանողացն նորա:

21 Եւ ասէ ցիս. Գնա՛՝ զի ես ՚ի հեթանոսս հեռաւորս առաքեցից զքեզ:

13 Նա եկաւ ինծի մօտ կանգնեցաւ՝ եւ ասաց. Սաւուղ եղբայր՝ վեր նայէ:

14 Եւ ես իսկ այն ժամին դէպի նա վերեւ նայեցի, եւ նա ինծի ասաց. Մեր հարանց Աստուածն հ առաջուց քեզ ձ ընտրեց՝ որ նորա կամքը ճանաչես, եւ այն ղ Արդարը ճ տեսնես, եւ նորա բերանիցը խօսք մ լսես,

15 Որ նորան վկայ լինիս բոլոր մարդկանցը մէջ՝ այն բաներին յ համար, որ տեսիր եւ ն լսեցիր:

16 Եւ հիմիկ՝ ինչու ես ծուլանում, վեր կաց մկրտուէ՛ եւ քո մեղքերդ շ լուա՛ նորա անունը ո կանչելով:

17 Եւ էլաւ երբոր ես յետ դարձայ Երուսաղէմ, եւ տաճարումը աղօթք էի անում, ափշութիւն ինծի չ բռնեց,

18 Եւ նորան տեսի՝ որ ինծի պ ասումէր. Փութա՛ շուտով դուրս ել ջ Երուսաղէմիցը. պատճառն որ՝ չեն ընդունիլ քո վկայութիւնդ՝ որ ինծի համար տալիս ես:

19 Եւ ես ասացի. Տէ՛ր իսկ նորանք գիտումեն՝ որ ես էի՝ որ քեզ հաւատացողներին բանտի մէջ էի ռ տալիս, եւ ամէն ժողովարաններումը ս ծեծումէի:

20 Եւ երբոր քո Ստեփաննոս վկայից արիւնը վ թափվումէր, ես ինքս էի՝ որ նորա մօտ կանգնած, եւ նորա սպանողներին կամակից էի, եւ նորա սպանողների շորերը տ պահում:

21 Եւ ասաց ինծի. Գնա՛, ինչու որ՝ ես հեռու հեթանոսների մէջ կուղարկեմ ր քեզ:

հ Գլ. Գ. 13. Ե. 30.
ձ Գլ. Թ. 15. ԻԶ. 16.
ղ Գլ. Գ. 14. Է. 52.
ճ Ա Կորնթ. Թ. 1. ԺԵ. 8.
մ Ա Կորնթ. ԺԱ. 23. Գաղ. Ա. 12.
յ Գլ. ԻԳ. 11.
ն Գլ. Դ. 20. ԻԶ. 16.
շ Գլ. Բ. 38. Եբր. Ժ. 22.
ո Գլ. Թ. 14. Հռոմ. Ժ. 13.
չ Գլ. Թ. 26. Բ Կորնթ. ԺԲ. 2.
պ Համար. 14.
ջ Մատթ. Ժ. 14.
ռ Համար. 4. Գլ. Ը. 3.
ս Մատթ. Ժ. 17.
վ Գլ. Է. 58.
տ Ղուկ. ԺԱ. 48. Գլ. Ե. 59. Հռոմ. Ա. 32.
ր Գլ. Թ. 15. ԺԳ. 2. 46, 47. ԺԸ. 6. ԻԶ. 17. Հռոմ. Ա. 5. ԺԱ. 13. ԺԵ. 16. Գաղ. Ա. 15, 16. Բ. 7, 8. Եփես. Գ. 7, 8. Ա Տիմ. Բ. 7. Բ Տիմ. Ա. 11.

22 Եւ ունկն դնէին նմա մինչեւ
ցայս բան. ապա բարձին զձայնս
իւրեանց՝ եւ ասեն. Բարձ յերկրէ
զայդպիսին՝ զի չէ պարտ այդպիսւ-
ւոյ կեալ։

23 Եւ յաղաղակելն նոցա՝ եւ ընկե-
կենուլ զհանդերձս՝ եւ զփոշին ցա-
նել յօդս.
24 Հրամայեաց հազարապետն մու-
ծանել զնա ՚ի բանակն. ասէր՝ գա-
նիւ հարցանել զնա, զի գիտասցէ
վասն որոյ յանցանաց այնպէս աղա-
ղակէին զնմանէ։

25 Եւ իբրեւ պրկեցին զնա փո-
կօք, ասէ Պօղոս ցհարիւրապետն՝
որ ՚ի վերայ կայր. եթէ Զայր Հռ-
ովմայեցի եւ անպարտ պարտ իցէ
ձեզ գան հարկանել։
26 Իբրեւ լուաւ հարիւրապետն,
մատուցեալ առ հազարապետն պատ-
մեաց՝ եւ ասէ. Զի՞նչ կամիս առ-
նել՝ քանզի այրս այս Հռովմայե-
ցի է։
27 Եւ մատուցեալ հազարապետն,
ասէ ցնա. Ասա դու ցիս՝ Հռովմա-
յեցի՞ ես. եւ նա ասէ. Այո։
28 Պատասխանի ետ հազարապե-
տըն. Ես բազում գլխոց զզինուո-
րութիւնս զայս ստացայ. ասէ Պօ-
ղոս. Ես ծնեալ իսկ ՚ի դմին եմ։
29 Եւ վաղվաղակի ՚ի բաց կացին
՚ի նմանէ՝ որ հարկանելոցն էին զն
նա. եւ հազարապետն իսկ եր-
կեաւ, իբրեւ գիտաց եթէ Հռով-
մայեցի է, եւ զի կապեալն եւս էր
զնա։
30 Եւ ՚ի վաղիւ անդր կամէր գի-
տել զճշմարիտն, թէ զինչ չարա-
խօսութիւն իցէ Հրէիցն. արձա-
կեաց զնա՝ եւ հրամայեաց կոչել
զքահանայապետսն եւ զամենայն
ատեանն, եւ իջուցեալ զՊօղոս
կացոյց ՚ի մէջ նոցա։

22 Եւ մինչեւ այս խօսքս ականջ
էին դնում նորան. յետոյ իրենց
ձայները բարձրացրին՝ եւ ասացին.
Այդպիսի մարդը երկրիցս վեր ɔ առ.
ինչու որ՝ պէտք չէ որ այդպիսին
– ապրի։
23 Եւ երբոր նորանք աղաղակու-
մէին՝ եւ չորերն վեր ձգում, եւ
փոշին օդին մէջը ցանում.
24 Հազարապետը հրամայեց որ նո-
րան բանակին մէջ մացնեն. ասա-
մէր՝ պէտք է ծեծելով հարցնել նո-
րան՝ որ գիտենամ, թէ ինչ յան-
ցանքի համար էին նորա վերայ այն-
պէս աղաղակում։
25 Եւ երբոր նորան կաշիէ փո-
կերով պինդ կապեցին, Պօղոսն ա-
սաց հարիւրապետին՝ որ մօտ կանգ-
նած էր, թէ Արժան է որ դուք
Հռոմայեցի անմեղ մարդ ‡ ծեծէք։
26 Երբոր լսեց հարիւրապետը,
մօտեցաւ հազարապետին պատմեց՝
եւ ասաց. Ի՞նչ ես կամենում ա-
նել, ինչու որ՝ այս մարդս Հռոմա-
յեցի է։
27 Եւ հազարապետը մօտ եկաւ՝
եւ նորան ասաց. Դու ինձ ասա՝
Հռոմայեցի՞ ես. եւ նա ասաց. Այո։
28 Հազարապետը պատասխան տը-
ւաւ. Ես շատ բանով ստացայ այս
զինուորութիւնս. եւ Պօղոսն ասաց.
Ես իսկ դրանում ծնված եմ.
29 Եւ նորանք՝ որ նորան պիտի
ծեծէին, շուտով հեռացան նորա-
նից. եւ հազարապետն էլ վախե-
ցաւ՝ երբոր իմացաւ թէ Հռոմայեցի
է. ինչու որ՝ կապել էր նորան։

30 Եւ յետեւի օրը կամենումէր՝ որ
ճշմարիտն իմանայ, թէ ինչ է Հրէ-
աների չարախօսութիւնը. նորան
արձակեց՝ եւ հրամայեց որ քահա-
նայապետն ու բոլոր ատեանը կան-
չեն. եւ Պօղոսին էլ վեր բերաւ
նորանց մէջը կանգնացրուց։

ɔ Գլ. ԻԱ. 36. | – Գլ. ԻԵ. 24. | ‡ Գլ. ԺԶ. 37. | —

## ԳԼ. ԻԳ.

1 Եւ հայեցեալ Պօղոսի յատեանն՝
ասէ. Արք եղբարք՝ ես ամենայն
ուղիղ մտօք գնացեալ եմ առաջի
Աստուծոյ մինչեւ ցայսօր։
2 Եւ քահանայապետն Անանիա
հրամայեաց սպասաւորացն հարկա-
նել զբերան նորա։
3 Յայնժամ Պօղոս ասէ ցնա.
Հարկանելոց է զքեզ Աստուած՝ որմ
բռեալ. եւ դու նստիս դատել զիս
ըստ օրինաց, եւ առանց օրինաց
հրամայես զիս հարկանել։

4 Եւ որ շուրջն կային՝ ասեն.
Զքահանայապետն Աստուծոյ հայհո-
յես։

5 Եւ ասէ Պօղոս. Ո՛չ գիտէի՝ եղ-
բարք, եթէ իցէ քահանայապետ.
գրեալ իսկ է՝ Զիշխան ժողովրդ-
եան քո մի՛ հայհոյեսցես։
6 Իբրեւ գիտաց Պօղոս՝ եթէ մի
կողմն սադուկեցւոց է՝ եւ միւսն
փարիսեցւոց, աղաղակէր 'ի մէջ ա-
տենին. Արք եղբարք՝ ես փարի-
սեցի եմ, որդի փարիսեցւոյ. վասն
յուսոյ եւ յարութեան մեռելոց՝
ես աստէն դատիմ։

7 Եւ զայս իբրեւ ասաց, եղեն
հերձուածք փարիսեցւոցն եւ սա-
դուկեցւոց. եւ պատառեցաւ բազ-
մութիւնն։
8 Քանզի սադուկեցիքն ասեն,
Չիք յարութիւն՝ ոչ հրեշտակ՝ եւ
ոչ հոգի. բայց փարիսեցիքն խոս-
տովանին զերկոսեան։

9 Եւ եղեւ աղաղակ մեծ. յառն

1 Եւ Պօղոս ատեանին մտիկ ը-
րաւ՝ եւ ասաց. Մարդիկ եղբարք՝
ես ամէն շիտակ մտքով վարուել եմ
Աստուծոյ առաջին մինչեւ [ա] այսօր։
2 Եւ Անանիա քահանայապետը
ծառաներին հրամայեց՝ որ նորա
բերանը [բ] թակեն։
3 Այն ժամանակը Պօղոսն ասաց
նորան. Աստուած պիտի քեզ զար-
կէ՝ բաւ ծեփած պատ. եւ դուն
նստել ես որ ինձ օրէնքին պէս
դատես, եւ օրէնքին հակառակ
հրամայում ես՝ որ ինձ [գ] թակեն։
4 Եւ նորանք՝ որ նորան մօտն է-
ին՝ ասացին. Դու Աստուծոյ քա-
հանայապետին հայհոյանք ես տա-
լիս։
5 Եւ Պօղոսն ասաց. Եղբարք՝
ես չէի գիտում՝ որ քահանայապետ
է. ինչպէս գրւած է՝ թէ Քո ժո-
ղովրդի իշխանը [դ] չը հայհոյես։
6 Երբոր Պօղոսն իմացաւ թէ մին
կողմը սադուկեցոցն է՝ եւ միւս
կողմը փարիսեցոցը, ատեանին մէջն
աղաղակում էր. Մարդիկ եղբարք՝
ես փարիսեցի եմ՝ եւ փարիսեցոյ
[ե] որդի. ահա մեռելների յուսոյն՝
եւ յարութիւն առնելոյն համար եմ
[զ] դատւում ես հիմիկ։
7 Եւ երբոր սա ասաց, փարի-
սեցոց ու սադուկեցոց մէջը տարա-
ձայնութիւն ընկաւ. եւ բազմու-
թիւնը պատառւեցաւ,
8 Պատճառն որ՝ սադուկեցիքն ա-
սում են, թէ ոչ յարութիւն կայ՝
ոչ հրեշտակ՝ եւ ոչ [է] հոգի. բայց
փարիսեցիքը երկուսն էլ դաւանու-
մեն։
9 Եւ մեծ աղաղակ էլաւ. փա-

ա Գլ. ԻԴ. 16. Ա Կորնթ. Դ. 4. Բ Կորնթ. Ա. 12. Բ Տիմ. Ա. 3. Եբր. ԺԳ 18.

բ Գ Թագ. ԻԲ. 24. Երեմ. Ի. 2. Յովհ. ԺԸ. 22. գ Ղեւ. ԺԹ 35. Բ Օրին. ԻԵ. 1. 2. Յովհ. Է. 51.

դ Ելից. ԻԲ. 28. Ժող. Ժ. 20. Բ Պետ. Բ. 10. Յուդ. 8. ե Գլ. ԻԶ. 5. Փիլ. Գ. 5.

զ Գլ. ԻԴ. 15. 21. ԻԶ. 6. ԻԸ. 20. է Մատթ. ԻԲ. 23. Մարկ. ԺԲ. 18. Ղուկ. Ի. 27.

կացին ումանք 'ի դպրաց՝ անտի 'ի կողմանէ փարիսեցւոց, հակառակէ-ին եւ ասէին. Ո՛չինչ չարութիւն գտանեմք յառնս յայսմիկ, բայց թէ հոգի խօսեցաւ 'ի դմա՝ կամ հրեշտակ։

40 Եւ 'ի բազմանալ ամբոխին՝ եր-կուցեալ հազարապետն՝ թէ գուցէ ճեղքեսցի Պօղոս 'ի նոցանէ, հրամայ-եաց զօրականին իջանել յափշտակել զնա 'ի միջոյ նոցա, եւ ածել 'ի բա-նակն։

11 Եւ 'ի վաղուեան գիշերին եկեալ առ նմա Տէր, եւ ասէ. Քաջալեր-եաց Պօղէ, զի որպէս վկայեցեր վասն իմ յԵրուսաղէմ, նոյնպէս պարտ է քեզ եւ 'ի Հռոմ վկայել։

12 Եւ իբրեւ այգ եղեւ՝ արարեալ ժողով Հրէիցն՝ նզովեցին զանձինս, ոչ ուտել եւ ոչ ըմպել՝ մինչեւ սպանցեն զՊօղոս։

13 Եւ էին աւելի քան զքառասուն՝ որոց զայս ընդ միմեանս երդմունս արարեալ էր։

14 Որք մատեան առ քահանայապետսն եւ երիցունսն՝ եւ ասեն. Նզովիւք նզովեցաք զանձինս՝ ոչինչ ճաշակել մինչեւ սպանցուք զՊօղոս։

15 Բայց դուք զգացուցէք հազա-րապետին հանդերձ ատենիւ, զի իջուսցէ զնա առ ձեզ, որպէս թէ կամիցիք ճշմարտագոյնս ինչ գիտել զնմանէ. եւ մեք յառաջ քան զմօ-տել նորա՝ պատրաստ եմք 'ի սպա-նանել զնա։

16 Եւ լուեալ քեռորդւոյն Պօղոսի զդաւաճանութիւնն, եկն եմուտ 'ի բանակ անդր՝ պատմեաց Պօղոսի։

17 Եւ կոչեցեալ Պօղոսի առ ինքն զմի 'ի հարիւրապետացն անտի՝ ասէ. Զպատանիս զայս տար առ հազա-

րիսեցոց կողմէն մէկ քանի կար-գադրողներ վեր կենալով, հակառա-կութիւն եւ ասաց. Մենք բնաւ չարութիւն չենք գտնում այս ա մար-դումս. միայն թէ հոգի խօսեց ա-նոր կամ բ հրեշտակ։

10 Եւ երբոր խռովութիւնը չա-տցաւ, հազարապետը վախցաւ՝ որ չըլլայ թէ Պօղոս նորանցմէ ճեղքուի. զինուորներին հրամայեց՝ որ վար գան նորան նորանց միջից առնեն, եւ բերեն բանակին մէջ։

11 Եւ յետեւի գիշերը Տէրը կանգ-նեց նորան մօտ եւ ասաց. Սրտա-պնդիր կաց՝ Պօղէ, ինչու որ՝ ինչ-պէս ինծի համար Երուսաղէմումը վկայեցիր, այնպէս էլ պէտք է Հռոմումը գ վկայես։

12 Եւ երբոր առաւօտ էլաւ Հրէ-աները ժողովք արին՝ իրենց անձե-րին վերայ նզովք դրին, որ չու-տեն՝ եւ չխմեն, մինչեւ որ Պօ-ղոսին դ սպանեն։

13 Եւ քառասուն մարդուց աւելի էին նորանք՝ որ այս երդումն իրար հետ արել էին։

14 Նորանք քահանայապետներին ու երէցներին մօտ եկին՝ եւ ասա-ցին. Նզովքով նզովեցինք մեր անձները՝ որ ոչ ինչ չուտենք՝ մին-չեւ Պօղոսին սպանենք։

15 Բայց դուք ատեանին հետ ի-մաց արէք հազարապետին. որ նո-րան վէր բերէ ձեզ մօտ. իբր թէ կամենաք էլ աւելի ճշմարտութե-նով բան իմանալ նորա համար. մենք էլ նորա մօտ գալուցն առաջ՝ պատրաստ ենք՝ որ սպանենք նորան։

16 Եւ Պօղոսի քեռորդին երբ-որ նորանց այն արած հնարքները լսեց, եկաւ մտաւ այն բանակը եւ Պօղոսին պատմեց։

17 Եւ Պօղոսն այն հարիւրապետ-ներիցը մէկին կանչեց իրեն մօտ՝ եւ ասաց. Այս պատանին տար հազարա-

ա Գլ. ԻԵ. 25. ԻԶ. 31. | բ Գլ. ԻԲ. 7. 17, 18. | գ Գլ. ԺԸ. 9. ԻԷ. 23, 24. | դ Համեմ. 21. 30. ԻԵ. 3.

բաշխեան, զի ունի ինչ պատմել նմա։
18 Եւ նորա առեալ զնա տարաւ առ հազարապետն՝ եւ ասէ. Կապեալն Պօղոս կոչեաց զիս, եւ աղաչեաց զպատանիս զայս ածել առ քեզ, ունի ինչ խօսել ընդ քեզ։
19 Առեալ զձեռանէ նորա հազարապետին՝ գնաց մեկուսի, հարցանէր՝ թէ Զի՞նչ ունիս խօսել ընդ իս։
20 Եւ նա ասէ. Հրէայք միաբանեցին աղաչել զքեզ, զի 'ի վաղիւ զՊօղոս իջուցես յատեան, իբրեւ թէ կամիցին ինչ ճշմարտագոյնս հարցանել վասն նորա։
21 Արդ՝ դու մի անսայցես նոցա. քանզի դարան գործեալ է նմա 'ի նոցանէ արանց աւելի քան զքառասուն, որ նզովեցին զանձինս՝ ոչ ուտել եւ ոչ ըմպել՝ մինչեւ սպանցեն զնա. արդ պատրաստ են՝ եւ սպասեն քում հրամանի։
22 Ապա հազարապետն արձակեաց զպատանին՝ պատուիրեալ մի ումեք ասել, թէ զայս ցուցուցեր ինձ։
23 Եւ կոչեաց երկուս 'ի հարիւրապետացն՝ եւ ասէ. Պատրաստեցէք զօրականս երկերիւր, որպէս զի երթիցեն մինչեւ 'ի Կեսարիա. եւ հեծեալս եօթանասուն՝ եւ տիգաւորս երկերիւր՝ 'ի յերրորդ ժամու գիշերոյն։
24 Եւ գրաստ պատրաստականն՝ որպէս զի իջուցեալ զՊօղոս ապրեցուսցեն առ Փելիքս դատաւոր։
25 Գրեաց թուղթ, որ ունէր օրինակ զայս։
26 Կղօդիոս Լիւսիաս առ քաջ դատաւորդ Փելիքս՝ ողջոյն։
27 Զայրս զայս կալեալ 'ի Հրէից՝ եւ մերձ 'ի սպանանել 'ի նոցանէ,

ւ Համար . 12 .

պետին մօտ. ինչու որ բան ունի նորան պատմելու։
18 Եւ նա առաւ նորան հազարապետին մօտ տարաւ՝ եւ ասաց. Կապած Պօղոսն ինձ կանչեց՝ եւ աղաչեց, որ այս տղային բերեմ քեզ մօտ որ մէկ բան ունի քեզ հետ խօսելու։
19 Հազարապետը նորա ձեռքից բռնեց. գնաց առանձին տեղ՝ հարցնումէր, թէ Ի՞նչ բան ունիս ինձ հետ խօսելու։
20 Եւ նա ասաց. Հրէաներն իրար հետ խօսք դրին՝ որ քեզ աղաչեն, որ վաղը Պօղոսին վեր բերես ատեանին մէջ, իբրեւ թէ կամենան մէկ աւելի ճշմարիտ քննութիւն անել նորա ւ համար։
21 Բայց դու մտիկ չիտանես նորանց. պատճառն որ՝ նորանցից քառասուն մարդու էլ աւելի հընարք են գործել նորա համար որ անձներն էլ նզովեցին՝ որ չուտեն եւ չըխմեն՝ մինչեւ որ նորան սպանեն. հիմիկ էլ պատրաստ են՝ եւ քո հրամանից են սպասում։
22 Ապա հազարապետն այն տղային թող տուաւ՝ պատուէր տալով, որ ոչ մէկին չասէ, որ այս բանս իմաց արիր ինձ։
23 Եւ հարիւրապետներից երկուսին կանչեց՝ եւ ասաց. Երկու հարիւր զինուոր պատրաստեցէք, որ գնան մինչեւ Կեսարիա. եւ եօթանասուն ձիաւոր՝ եւ երկու հարիւր էլ տիգաւոր գիշերի երեք ժամի ժամանակումը.
24 Եւ գրաստներ էլ պատրաստեն՝ որ Պօղոսին այնտեղ վեր բերեն ապրեցնեն։
25 Եւ Փելիքս դատաւորին թուղթ գրեց, որ նորա օրինակն այս էր.
26 Կղօդիոս Լիւսիաս՝ պատուական Փելիքս դատաւորին, ողջոյն.
27 Այս մարդս Հրէաներից բռնուած՝ եւ նորանցից սպանուելու

հասեալ 'ի վերայ զօրականաւ ապրեցուցի, իմացեալ թէ Հռոմայեցի է։
28 Կամեցայ գիտել զպատճառն վասն որոյ ամբաստանէին զդմանէ, իջուցի զդա յատեան նոցա։
29 Զոր գտի ամբաստանեալ վասն խնդրոյ իրիք իւրեանց օրինաց. եւ ոչինչ արժանի մահու կամ կապանաց ունէր զդա։
30 Իբրեւ ազդ եղեւ նենգութեան լինելոց 'ի նոցանէ՝ յղեցի առ քեզ. հրաման տուեալ եւ չարախօսացն խօսել զդմանէ առաջի քո. Ո՛ղջ լեր։
31 Եւ զօրականացն ըստ հրամանի նորա առեալ զՊօղոս՝ ածին գիշերայն յԱնտիպատրիս։
32 Եւ 'ի վաղիւ անդր արձակեալ զհեծեալսն ընդ նմա երթալ՝ դարձան 'ի բանակն։
33 Նոքա մտին 'ի Կեսարիա. եւ տուեալ դատաւորին զթուղթն, առաջի կացուցին նորա եւ զՊօղոս։
34 Իբրեւ ընթերցաւ՝ եհարց թէ յորմէ նահանգէ իցէ. եւ ստուգեալ եթէ 'ի Կիլիկեայ է.
35 Լուայց քեզ՝ ասէ, յորժամ եւ չարախօսքն քո եկեսցեն. եւ հրամայեաց յապարանսն Հերովդի պահել զնա։

մօտ էր. ես զինուորներով վրայ հասի ազատեցի, իմանալով որ Հռոմայեցի ծ է։
28 Ուզեցի որ նորա յանցանքը իմանամ՝ որ նորա համար պանդատ էին անում դորանից. վեր բերի դորան՝ նորանց ծ ատեանը։
29 Նաև գտի՝ որ իրենց օրէնքերին մին վիճմունքերին համար ամբաստանուած ժ է, եւ բնաւ մեռնելոյ կամ կապվելոյ արժանի յանցանք հ չունէր։
30 Երբոր իմ ականջն հասաւ՝ որ նորանք այդ մարդոյդ համար հնարք են ձ գործել՝ նորան քեզ մօտ ուղարկեցի. եւ չարախօսներին էլ հրաման տուի որ դորանից քո առաջիդ ղ խօսեն. Ո՛ղջ կաց։
31 Եւ զինուորները նորա հրամանին պէս՝ գիշերումը Պօղոսին առին տարան Անտիպատրիս։
32 Եւ յետեւի օրն արձակեցին էն զինուորները որ նորա հետ գնացել էին, եւ յետ դարձան բանակը։
33 Նորանք մտին Կեսարիա. եւ թուղթը դատաւորին տուին, եւ Պօղոսին էլ նորա առաջին կանգնացրին։
34 Երբոր կարդաց՝ հարցրուց թէ ո՞ր գաւառիցն է. եւ երբոր տեղեկացաւ թէ Կիլիկիայիցն ճ է,
35 Ասաց. Կը լսեմ քեզ՝ երբոր քո չարախօսներդ էլ մ կը գան. եւ հրամայեց՝ որ Հերովդէսի պալատումը պահեն յ նորան։

## ԳԼ. ԻԴ

1 Եւ յետ հինգ աւուր էջ քահանայապետն Անանիա հանդերձ ծերովք ոմամբք. եւ ճարտարախօսաւ Տերտուղեաւ ոմամբ. որք եւ զգացուցին դատաւորին վասն Պօղոսի։

1 Եւ հինգ օրից ~ետեւ՝ Անանիա քահանայապետը մին քանի ծերերի եւ մին ճարտար խօսող Տերտուղոս անուն մարդոյ հետ վեր եկաւ, որ սորանք էլ իմաց արին դատաւորին՝ Պօղոսին շ համար։

ծ Գլ. ԻԱ. 33. ԻԴ. 7.
ծ Գլ. ԻԲ. 30.
ժ Գլ. ԺԸ. 15. ԻԵ. 19.
հ Գլ. ԻԶ. 31.
ձ Համր. 20.
ղ Գլ. ԻԴ. 8. ԻԵ. 6.
ճ Գլ. ԻԱ. 39.
մ Գլ. ԻԴ. 1. 10. ԻԵ. 16.
յ Մատթ. ԻԷ. 27.

ն Գլ. ԻԱ. 27.
շ Գլ. ԻԴ. 2 30. 35. ԻԵ. 2.

2 Եւ 'ի կոչել նորա՝ սկսաւ Տեր-
տուղոսն ամբաստան լինել եւ ասել.
Բազում խաղաղութիւն գտեալ է
'ի քէն՝ եւ բազում ուղղութիւնք ազ-
գիս այսմիկ քով խնամով։

3 Ամենայնիւ եւ ամենայն ուրեք
շնորհակալ եմք՝ քաջդ Փելիքս՝ ա-
մենայն գոհութեամբ։
4 Բայց զի մի աւելի եւս աշխատ
արարից զքեզ, աղաչեմ լսել մեզ
կարճ 'ի կարճոյ՝ քոյին հեզութեամ-
բդ։
5 Քանզի գտաք զայրս զայս ա-
պականիչ եւ խռովիչ ամենայն Հրէ-
ից՝ որք են ընդ աշխարհս, եւ
առաջնորդ Նազովրեցւոց հերձուա-
ծոյն։
6 Որ եւ զտաճարն խել կամեցաւ
պղծել. զոր եւ կալաք, եւ ըստ
մերում օրինաց դատել կամեցաք։

7 Եկեալ Լիւսիաս հազարապետ՝
մեծաւ բռնութեամբ 'ի ձեռաց մե-
րոց եհան։
8 Հրամայեաց եւ չարախօսացն
նորա գալ առ քեզ. յորմէ դու իսկ
բաւական լինիցիս վերայ հասա-
նել, ամենայնի հասու լինել՝ զո-
րոց մեքս ամբաստանեմք զդմանէ։

9 Միաբանեցին եւ Հրէայքն,
ասեն՝ Այդ այդպէս է։
10 Պատասխանի ետ Պօղոս, յակ-
նարկել նմա դատաւորին խօսել.
'Ի բազում ամաց լինել քեզ դատա-
ւոր ազգիս այսմիկ գիտեմ. յօժա-
րութեամբ վասն իմոց իրաց պա-
տասխանի տամ։

11 Քանզի կարող ես գիտել, զի
ոչինչ աւելի է իմ քան զաւուրս
երկոտասան՝ յորմէ հետէ ելի երկիր-
պագանել յԵրուսաղէմ։

2 Եւ երբոր նորան կանչեց՝ Տեր-
տուղոսն սկսեց զանգատ անել եւ
ասել. Որովհետեւ քեզանից շատ
խաղաղութիւն ենք գտել՝ եւ այս
ազգիս համար շատ բաների շինա-
կութիւն՝ քո խնամք առնելովդ.
3 Ամէն կերպով եւ ամէն տեղ
շատ գոհութենով շնորհակալ ենք
քեզանից ով ազնուական Փելիքս։
4 Բայց որ չըլինի թէ էլ աւելի
նեղութիւն տամ քեզ, աղաչու-
մեմ՝ որ մին քիչ լսես մեզ քո հե-
զութենովդ.
5 Պատճառն որ՝ մենք գտինք այս
մարդը՝ որ ապականում եւ խառ-
վացնումէ այն ամէն Հրէաներին, որ
բոլոր աշխարհքումն կան. եւ Նա-
զօրեցոց հերձուածի առաջնորդ ‡ է.
6 Որ նա խել տաճարն էլ կամե-
ցաւ պղծել. որ էլ նորան ÷ բանտե-
ցինք. եւ մեր օրէնքին պէս ուզե-
ցինք դատաստան ⊦ անել։
7 Լիւսիաս հազարապետն եկաւ՝
եւ մեծ բռնութենով մեր ձեռնե-
րիցը ≂ հանեց,
8 Հրամայեց՝ որ նորա չարախօս-
ներն էլ գան քեզ մօտ. որ դու
ինքդ նորէն դատաստան անելով
կարող ես տեղեկանալ նորանից
ամէն բանի համար՝ որ մենք գան-
գատումենք ⊦ գորանից։
9 Հրէաներն էլ միաբան էլած՝
ասացին Այդպէս է։
10 Պօղոս պատասխան տուաւ՝
երբոր դատաւորը նորան աչքով
արաւ որ խօսի. Գիտումեմ որ դու
շատ տարուց հետէ այս ազգիս դա-
տաւորն ես. — յօժար սրտով իմ
բաներիս համար պատասխան եմ
տալիս։
11 Ինչու որ՝ դու կարող ես գի-
տել, որ տասներկու օրից աւելի
չէ՝ որ ես եկի երկրպագութիւն ա-
նել ≍ Երուսաղէմումը.

‡ Ղու. ԻԴ. 2
Գր. Գ. 13. ԺԶ.
20. ԺԷ. 6։ ԻԱ.
28։ Ա Պետ. Բ.
12. 15։
÷ Գր. ԻԱ. 28։
⊦ Յովհ. ԺԸ. 31։
≂ Գր. ԻԱ. 33։
⊦ Գր. ԻԴ. 30։
≍ Համար. 17. Գր.
ԻԱ. 26։

12 Եւ ոչ 'ի տաճարի անդ գտին
զիս ընդ ումեք խօսեցեալ , եւ կամ
ժողովս արարեալ բազմաց , ոչ 'ի
ժողովուրդս ,
13 Եւ ոչ 'ի քաղաքի . եւ ոչ յան-
դիման առնել կարեն քեզ՝ վասն
որոյ այժմ չարախօսեն զինէն ։

14 Բայց զայս խոստովանիմ քեզ ,
եթէ ըստ ճանապարհին՝ զոր ասեն
հերձուած , այնպէս պաշտեմ զհայ-
րենի Աստուածն . հաւատացեալ
ամենայնի՝ որ ինչ յօրէնս եւ 'ի մար-
գարէս գրեալ է ։

15 Ունիմ յոյս առ Աստուած , ո-
րում եւ դոքա իսկ ակնունին թէ
յարութիւն լինելոց է արդարոց եւ
մեղաւորաց ։
16 Յորում եւ ես իսկ ճգնիմ , ան-
խիղճ միտս ունել առ Աստուած եւ
առ մարդիկ յամենայն ժամ ։

17 'Ի բազում ամաց ողորմութիւ-
նս եկի առնել յազգի իմ . եւ նուէ
պատարագս ։
18 Որովք գտին զիս արբեալ 'ի
տաճարին՝ ոչ բազմօք եւ ոչ ամբո-
խիւ ։
19 Ոմանք յԱսիացւոց անտի Հրէ-
այք՝ որոց պարտ էր գալ առաջի
քո՝ եւ ամբաստան լինել , եթէ ու-
նիցին ինչ զինէն ։
20 Եւ կամ ինքեանք սոքա ասաս-
ցեն , զինչ գտին յիս անիրաւութիւն՝
մինչդեռ կայի յատենին ։
21 Բայց միայն վասն միոյ բարբա-
ռոյս այսորիկ՝ զոր աղաղակեցի
մինչ կայի 'ի մէջ նոցա . եթէ Վա-
սն յարութեան մեռելոց դատիմ ես
այսօր 'ի ձէնջ ։

12 Եւ տաճարումն ինձ չեն գտել՝
որ մին մարդոյ հետ խօսացել եմ ,
եւ կամ շատ մարդ միմեանց հաւա-
քելեմ՝ ոչ բ ժողովարանումը
13 Եւ ոչ քաղաքումը . եւ չեն
կարող քո առաջին ցոյց տալ նա
որ հիմիկ նորահամար չարախօսու-
մեն ինձանից ։
14 Բայց սա եմ խոստովանիլում
քեզ , թէ այն ճանապարհովը՝ որ
ասումեն գ հերձուած , այնպէս եմ
պաշտում հայրենական Աստուծոյն ,
ամէն բաներին է հաւատալով որ
օրէնքումն ու մարգարէներումը
գրուած ե է ։
15 Յոյս ունիմ դէպի Աստուած ,
որ դորանք էլ սպասումեն զ նորան՝
թէ արդարների եւ մեղաւորների
յարութիւն պիտի է լինի ,
16 Որ ճիշդ նորանով ես էլ ջանք
եմ անում , որ ամէն ժամ անմեղ
խղճմտանք ունենամ Աստուծոյ ա-
ռաջին՝ եւ մարդկանց առաջին ։
17 Շատ տարիներից ետեւ եկի՝
որ իմ ազգիս մէջ ողորմութիւն ա-
նեմ . եւ պատարագացու թ տալի ,
18 Սորանով ինձ գտին տաճարու-
մը սրբված՝ ոչ շատերով եւ ոչ էլ
ժ ամբոխով ։
19 Մին քանի Ասիացի Հրէաներ՝
որ նորանից պէտք էր գալ քո ա-
ռաջին՝ եւ գանգատ անել , թէ որ
մին բան ունենան ի ինձանից ։
20 Եւ կամ իսկ սորանք՝ թող ասեն .
ինձանում ինչ անիրաւութիւն գտին՝
դեռ քանի որ ատեանումը կայի ։
21 Բայց միմիայն այս խօսքիս հա-
մար՝ որ երբոր նորանից մէջ կանգ-
նած էի , աղաղակեցի , թէ Մեռել-
ների յարութիւն անելոյն համար՝
եմ ես այսօր դատվում լ ձեզանից ։

բ Գլ . ԻԵ . 8 ։ ԻԸ . 17 ։
գ Ամովս . Ը . 14 ։ Գլ . Թ . 2 ։
դ Բ Տիմ . Ա . 3 ։
ե Գլ . ԻԶ . 22 ։ ԻԸ . 23 ։
զ Գլ . ԻԳ . 6 ։ ԻԶ . 6 ։ 7 ։ ԻԸ . 20 ։
է Դան . ԺԲ . 2 ։ Յովհ . Ե . 28 . 29 ։
ը Գլ . ԻԳ . 1 ։
թ Գլ . ԺԱ . 29 . 30 ։ Ի . 16 ։ Հռովմ . ԺԵ . 25 ։ Բ Կորնթ . Ը . 4 ։ Գաղ . Բ . 10 ։
ժ Գլ . ԻԱ . 26 . 27 ։ ԻԶ . 21 ։
ի Գլ . ԻԳ . 30 ։ ԻԵ . 16 ։
լ Գլ . ԻԳ . 6 ։ ԻԸ . 20 ։

22 Եւ յապաղեաց զնոսա Փելիքս,
զի ստուգագոյնս գիտէր վասն ճա֊
նապարհին, ասէ. Յորժամ Լիւսիաս
հազարապետ իջցէ այսր, տեղե֊
կացայց վասն ձեր։

23 Հրամայեաց հարիւրապետին
պահել զնա. եւ ունել յընդար֊
ձակի, եւ մի զոք յիւրոց անտի
արգելուլ 'ի պաշտելոյ զնա։
24 Եւ յետ աւուրց ինչ եկն Փե֊
լիքս համդերձ Դրուսիղաւ կնաւ
իւրով, որ էր Հրեայ. կոչեաց զՊօ֊
ղոս՝ եւ լուաւ 'ի նմանէ վասն որ
'ի Յիսուս Քրիստոս հաւատոյն։

25 Եւ 'ի խօսելն նորա վասն ար֊
դարութեան եւ ժուժկալութեան
եւ հանդերձեալ դատաստանին,
զահի հարեալ Փելիքս, ետ պատաս֊
խանի. Դու առ այժմ երթ՝ եւ յոր֊
ժամ ժամ լինի, կոչեցից զքեզ։

26 Մանաւանդ եւ ակն ունէր՝
թէ տացի ինչ նմա 'ի Պօղոսէ. վասն
որոյ ստէպ կոչեցեալ զնա՝ խօսէր
ընդ նմա։

27 Եւ 'ի կատարել երկուց ամաց՝
եկն փոխանակ Փելիքսի Փեստոս
Պորկիոս. իբրեւ կամեցաւ շնորհս
առնել Հրէից Փելիքս եթող զՊօ֊
ղոս կապեալ։

22 Եւ Փելիքս նորանց ուշացրուց՝
մինչու որ՝ շատ լաւ տեղեկացած էր
այն ճանապարհին համար, ասաց.
Երբոր Լիւսիաս հազարապետն այս֊
տեղ կը գայ, կը տեղեկանամ ձեր
ժ համար։
23 Հարիւրապետին հրամայեց՝ որ
նորան պահէ. եւ իրեն մարդկան֊
ցից բնաւ մինին չարգելէ՝ նորան
ծառայութիւն յ անելոյ։
24 Եւ մին քանի օրից ետեւ Փե֊
լիքս եկաւ իրեն Դրուսիլա կնկանը
հետ՝ որ նա Հրեայ էր. Պօղոսին
կանչեց՝ եւ նորանցից՝ Յիսուսի
Քրիստոսի հաւատքին համար բան
լսեց։
25 Եւ երբոր նա խօսումէր ար֊
դարութեան եւ պարկեշտութեան
եւ նոր գալու դատաստանին հա֊
մար, Փելիքս շատ ահով բանդրկե֊
փեցաւ, եւ պատասխանն տուաւ.
Դու հիմիկս գնա՝ եւ երբոր ժամա֊
նակ կը լինի, կը կանչեմ քեզ։
26 Բայց նա այնպէս յոյս էր ու֊
նէր՝ որ Պօղոսից մին քան տըվլի
իրեն. եւ նրահամար շատ անգամ
կանչումէր նորան՝ եւ նորա հետ
ն խօսում։
27 Եւ երբոր երկու տարին կա֊
տարվեցաւ, Փեստոս Պորկիոսն ե֊
կաւ Փելիքսին տեղը. ւ որովհետեւ
Փելիքս կամեցաւ՝ որ Հրէաներին
մին շնորհք անէ, Պօղոսին կապած
ւթողեց։

## ԳԼ. ԻԵ

1 Փեստոս իբրեւ եհաս յիշխա֊
նութիւնն, յետ երից աւուրց ել յԵ֊
րուսաղէմ 'ի Կեսարիայ։
2 Եւ զգացուցին նմա քահանա֊
յապետքն եւ գլխաւորք Հրէից ըզ
Պօղոսէ։
3 Եւ աղաչէին խնդրել շնորհս 'ի
նմանէ. զի կոչեսցէ զնա յԵրուսա֊

1 Փեստոս երբոր իշխանութեանը
հասաւ, երեք օրից ետեւ Կեսա֊
րիայից վեր ելաւ Երուսաղէմ։
2 Եւ քահանայապետներն ու Հր֊
էաներն գլխաւորները Պօղոսին
համար իմացում տուին —նորան,
3 Եւ աղաչումէին՝ այս շնորհքը
խնդրելով նորանից, որ Երուսա֊

ժ Համար. 7.
յ Գլ. ԻԷ. 3. ԻԸ. 16.
ն Ելից. ԻԳ. 8.
ւ Ելից. ԻԳ. 2. Գլ. ԺԳ. 3. ԻԵ. 9. 14.
— Գլ. ԻԴ. 1. Համար. 15.

դէմ. դարան գործեալ սպանանել
զնա 'ի ճանապարհին:

4 Իսկ Փեստոս արար պատաս-
խանի՝ պահել զնա 'ի Կեսարիա. թէ
ինքն իսկ ընդ հուպ անդր երթա-
լոց է:
5 Եւ որ 'ի ձէնջ կարողք իցեն՝
ասէ, ընդ իս իջցեն, եւ եթէ իցէ
ինչ յառնն վնաս՝ ամբաստան լիցին
զնմանէ:

6 Եւ լեալ անդ աւուրս՝ ոչ ա-
ւելի քան զութ կամ զտասն, եկն
էջ ի Կեսարիա. եւ 'ի վաղիւ անդր
նստեալ յատենին, հրամայեաց ածել
զՊօղոս:
7 Եւ իբրեւ եկն՝ կացին շուրջ
զնովաւ՝ որ յԵրուսաղեմէ իջեալ էին
Հրէայք. բազում եւ ծանր վնաս
դնէին՝ զոր ոչ կարէին ցուցանել:

8 Բանիցի առնէր պատասխանի
Պօղոս, եթէ Ո՛չ յօրէնս Հրէից՝ եւ
ոչ 'ի տաճարն՝ եւ ոչ 'ի կայսր ինչ
վնասակար եմ:
9 Բայց Փեստոս կամեցեալ Հրէ-
ից շնորհս առնել՝ պատասխանի ետ
Պօղոսի՝ եւ ասէ. Կամիս յԵրուսա-
ղէմ երթալ՝ եւ անդ վասն գոցին
իրաց դատել առաջի իմ:

10 Եւ ասէ Պօղոս. Յատենի կայ-
սեր հասեալ կամ՝ ուր պարտ է ինձ
դատել. Հրէից ինչ չեմ վնասակար,
որպէս եւ դու իսկ քաջ գիտես:

11 Արդ թէ վնասակար իցեմ՝ եւ
արժանի մահու ինչ գործեցի, ոչ
զանգիտեմ 'ի մեռանելոյ. իսկ եթէ
ոչինչ իցէ՝ զորոց սոքա ամբաստան
լինին զինէն, ոչ ոք կարէ զիս

դէմ կանչէ նորան. ինչու որ՝ հ-
նարք էին գործել՝ որ ճանապար-
հումն սպանեն բ նորան:
4 Բայց Փեստոս պատասխան
տուաւ՝ որ նորան Կեսարիայումը
կը պահէ. եւ որ իսկ ինքն էլ շու-
տով այնտեղ կը գնայ:
5 Եւ ձեզանից ով որ կարող են՝,
ասաց՝ թող ինձ հետ գան. եւ թէ
որ այն մարդումը մէն յանցանք
կը լինի՝ թող նորանից գանգատ
գ անեն:
6 Եւ այնտեղ ութ կամ տասն
օրից աւելի չը մնացած՝ վէր եկաւ
Կեսարիա. եւ յետեւի օրը ատեան
նստեց, եւ հրամայեց որ Պօղոսին
բերեն:
7 Եւ երբոր եկաւ՝ նորա չորս
կողմովը կանգնեցին՝ այն Հրէա-
ներն, որ Երուսաղէմից՝ եկել էին.
չար եւ ծանր յանցանք էին դնում
նորա վրայ՝ որ չէին կարող դ ցոյց
տալ:
8 Պատճառն որ՝ Պօղոս պատաս-
խան էր տալիս, թէ՝ Ո՛չ Հրէաների
օրէնքին՝ եւ ոչ կայսերին դէմ մէն
մեղք եմ ե գործել:
9 Բայց Փեստոս որ կամեցաւ
Հրէաներին շնորհք անել, պատաս-
խան տուաւ Պօղոսին՝ եւ ասաց.
Կամենո՞ւմես Երուսաղէմ գնալ՝ եւ
այնտեղ այդ բաներից զ համար դա-
տվիլ իմ է առաջիս:
10 Եւ Պօղոս ասաց. Կայսերի ա-
տեանին եմ հասած կանգնած, որ
այնտեղ պէտք է ես դատվիմ. Հր-
էաներին մէն վնաս չեմ տուել,
ինչպէս որ դու էլ լաւ գիտումես:
11 Բայց թէ որ վնաս տուող եմ
եւ մեռնելոյ արժանի բան գործե-
ցի՝ մեռնելուց չեմ ը փախենում.
այլ թէ որ ընաւ այնպէսի բան չը
կայ, որ սորանք ինձանից գանգա-

բ Գղ. ԻԳ. 12. 15.
գ Գղ. ԺԸ. 14. Համր. 18.
դ Մարկ. ԺԵ. 3. Ղուկ. ԻԳ. 2. 10. Գղ. ԻԴ. 5. 13.
ե Գղ. Զ. 13. ԻԴ. 12. ԻԸ. 17.
զ Գղ. ԻԴ. 27.
է Համր. 20.
ը Համր. 25. Գղ. ԺԸ. 14. ԻԳ. 29. ԻԶ. 31.

դոցա շնորհել ․ 'ի կայսր բողո-
քեմ ։

12 Յայնժամ Փեստոս խօսեցեալ
ընդ խորհրդականսն՝ արար պատաս-
խանի ․ 'Ի կայսր բողոքեցեր՝ առ
կայսր երթիցիս ։
13 Իբրեւ անցին աւուրք ինչ՝ Ագ-
րիպպաս արքայ եւ Բերինիկէ եկին
'ի Կեսարիա՝ յողջոյն Փեստոսի ։

14 Եւ իբրեւ աւուրս բազումս հա-
նէին անդր , Փեստոս զեկոյց ար-
քային զՊօղոսէ՝ եւ ասէ ․ Այր մի
է աստ մնացեալ կապեալ 'ի Փե-
լիքսէ ։
15 Վասն որոյ իբրեւ չոգայ յԵ-
րուսաղէմ , զգացուցին ինձ քահա-
նայապետքն եւ գլխաւորք Հրէից ․
խնդրէին յինէն առնել նմա պա-
տուհաս ։
16 Որոց ետու պատասխանի , ե-
թէ չէ օրէն Հռովմայեցւոց շնոր-
հել ումեք զոք մինչեւ ամբաստա-
նեալն յանդիման ունիցի զդատա-
խազսն եւ տեղի պատասխանւոյ առ-
նուցու վասն ամբաստանութեանն ։

17 Եւ իբրեւ եկին աստ՝ ոչինչ
յապաղեցի , այլ 'ի վաղիւն նստեալ
յատենի՝ հրամայեցի ածել զայրն ։

18 Վասն որոյ մատուցեալ ամ-
բաստանքն եւ ոչ մի ինչ վնաս չա-
րութեան 'ի մէջ բերէին՝ զորոց ես
կարծէի ։
19 Բայց խնդիրս ինչ վասն իւ-
րեանց պաշտաման ունէին ընդ նմա ․
եւ վասն Յիսուսի ուրումն մեռե-
լոյ , զորմէ ասէր Պօղոս թէ կեն-
դանի է ։
20 Իբրեւ անհնարս մայի վասն այս-
պիսի իրաց քննութեան՝ ասեմ , Ե-
թէ կամիցի երթալ յԵրուսաղէմ ,
եւ անդ դատել վասն նոցին իրաց ։

տումին , ոչ ով ինձ կարող չէ դա-
րանց ձեռքը տալ ․ Ես դէպի կայ-
սերն եմ բ բողոքում ։
12 Այն ժամանակը Փեստոս խոր-
հրդականների հետ խօսեց՝ եւ պա-
տասխան տուաւ , Դէպի կայսերը
բողոքեցիր՝ կայսերին մօտ գնա ։
13 Երբոր մի քանի օր անցաւ ,
Ագրիպպաս թագաւորն ու Բերինի-
կէն եկին Կեսարիա՝ Փեստոսին ող-
ջոյն տալու համար ։
14 Եւ երբոր այնտեղ շատ օրեր
անցուցին , Փեստոսը Պօղոսին հա-
մար իմացրուց թագաւորին՝ եւ ա-
սաց ․ Այստեղ մի մարդ է մնացել
Փելիքսից ծ կապված ,
15 Որ նորա համար երբոր Երու-
սաղէմ գնացի , քահանայապետներն
ու Հրէաների գլխաւորներն խնդրե-
րին ինձ ․ խնդրումէին ինձանից՝ որ
նորան պատիժ է տամ ։
16 Նորանց էլ պատասխան տուի ,
թէ Հռոմայեցոց օրէնք չէ՝ որ մէկը
մի ուրիշի ձեռքը տրվի՝ դեռ որ
ամբաստանվածն իրեն չարախօսնե-
րին իրեն դէմացը չունենայ՝ եւ այն
չարախօսութեան համար պատաս-
խան տալու կարողութիւն ւ չառնէ ։
17 Եւ երբոր այստեղ եկին՝ չյա-
պաղեցի , բայց յետեւի օրը ատեան
նստած՝ հրամայեցի որ այն մար-
դուն ե բերեն ։
18 Եւ երբոր չարախօսներն առաջ
եկին , նորա համար բնաւ մի չա-
րախօսութեան վնաս չէին առաջ
բերում՝ ինչ որ ես կարծումէի ։
19 Բայց իրենց պաշտամունքին
համար վիճմունք ունէին նորա հետ ․
եւ մի մեռած Յիսուսի համար՝ որ
նորա համար Պօղոսն ասումէր՝ թէ
կենդանի ժ է ։
20 Երբոր ես բաւական չէի այնպէ-
սի բաները քննելոյ՝ ասացի, թէ կա-
մենումես Երուսաղէմ գնալ՝ եւ այն-
տեղ դատվիլ այդ բաներից համար ։

բ Գլ. ԻԶ. 32 ։ ԻԸ. 19 ։
ծ Գլ. ԻԴ. 27 ։
է Համր. 2, 3 ։
ւ Համր. 4, 5 ։
ե Համր. 6 ։
ժ Գլ. ԺԸ. 15 ։ ԻԳ. 29 ։

21 Բայց 'ի Պօղոսի բողոքելն՝ զի
պահեսցի 'ի քաջի արանցն յանդի-
մանութիւն , հրամայեցի պահել
զնա՝ մինչեւ տաց տանել առ կայսր ։

22 Ագրիպպաս ցՓեստոս ասէ ․
կամէի եւ ես լսել առնն ․ եւ նա
ասէ՝ Վաղիւ լուիցես ։
23 Եւ 'ի վաղիւ անդր իբրեւ եկն
Ագրիպպաս եւ Բերինիկէ՝ բազում
երեւելի սպասուք , եւ մտին յա-
տեանն հանդերձ հազարապետօքն
եւ արամբք պատուականօք քաղա-
քին ․ եւ հրամայեալ Փեստոսի՝ ա-
ծին զՊօղոս ։
24 Եւ ասէ Փեստոս ․ Արքայ Ագ-
րիպպա՝ եւ ամենայն արք՝ որք ընդ
մեզ էք ․ տեսանէք զսա , վասն ո-
րոյ ամենայն ժողովք Հրէից ամ-
բաստան եղեն ինձ յԵրուսաղէմ , եւ
աստ աղաղակէին՝ թէ չէ պարտ
դմա կեալ ։

25 Բայց ես 'ի վերայ հասի թէ
ոչինչ է գործ արժանի մահու գոր-
ծեալ ․ եւ զորա ինքնին բողոք
կոչեալ առ քաջ արանցն , խորհե-
ցայ յղել ։
26 Վասն որոյ աստուգութեամբ
ինչ գրել տեառն իմում ոչ ունիմ ․
վասն այսորիկ ածի զդա առաջի
ձեր՝ եւ մանաւանդ առաջի քո՝ ար-
քայ Ագրիպպա ․ որպէս վերայն
քննեալ՝ մարթացից ինչ գրել ։

27 Քանզի անպատեհ իմն թուի
ինձ՝ առ տանել կապեալ մի , եւ
ոչինչ զվնաս զնմանէ նշանակել ։

21 Բայց Պօղոսն երբոր բողոքեց՝
որ կայսերի քննութեան համար
պահուի , հրաման տուի՝ որ նորան
պահեն , մինչեւ որ տանել տամ
կայսերին մօտ ։
22 Ագրիպպասը Փեստոսին ասաց ․
Ես էլ կամենումէի որ լսեմ այն մար-
դոյն ․ եւ նա ասաց՝ Վաղը կը լսես ։
23 Եւ յետեւի օրն երբոր Ագրիպ-
պասն ու Բերինիկէն՝ շատ եւ փա-
ռաւոր հանդիսով եկան , եւ հազա-
րապետներին ու քաղաքի պատ-
ուական մարդկանցը հետ ատեանը
մտան , Փեստոս հրամայեց՝ եւ Պօ-
ղոսին բերին ։
24 Եւ Փեստոսն ասաց ․ Ով Ագ-
րիպպաս թագաւոր՝ եւ ամէ՛ն մար-
դիկք՝ որ մեզ հետ էք , տեսնումէք
սորան ․ Հրէաների ամէն ժողո-
վուրդն իմ առաջիս գանգատ արին
սորա համար [բ] Երուսաղէմումը , եւ
այստեղ աղաղակումէին՝ թէ Պէտք
չէ որ դա [գ] ապրի ։
25 Բայց ես տեղեկացայ՝ որ դա
բնաւ մեռնելոյ արժանի բան [դ] չի
գործել ․ եւ երբոր դա ինքն իրեն
դէպի կայսերը բողոքեց , խորհուրդ
արի որ [ե] ուղարկեմ ,
26 Որ նորա համար մին հաստատ
բան չունիմ՝ որ գրեմ իմ տէրիս ․
նորահամար զորան բերի ձեր առա-
ջին՝ եւ մանաւանդ քո առաջիդ՝
ով Ագրիպպաս թագաւոր ․ որ կըր-
կին քննելով կարող լինիմ մին բան
գրել ․
27 Ինչու որ՝ ինձ անպատշաճ է
երեւում , որ մին կապած մարդ
տանել տամ , եւ նորան մին արած
վատութիւն չիմացնեմ ։

## ԳԼ. ԻԶ

1 Եւ Ագրիպպաս ասէ ցՊօղոս ․
Հրամայեալ է քեզ՝ վասն քո խօսել ․
յայնժամ Պօղոսի ձգեալ զձեռն առ-
նէր պատասխանի ։

1 Եւ Ագրիպպաս Պօղոսին ասաց ․
հրաման է որ քեզ համար խօսիս ․
այն ժամանակը Պօղոս ձեռքը մեկ-
նեց՝ եւ պատասխան էր տալիս ։

[ա] Գլ. Թ. 15 ։
[բ] Հռովմ. 2 ։ 3. 7 ։
[գ] Գլ. ԻԲ. 22 ։
[դ] Գլ. ԻԳ. 9. 29 ։ ԻԶ. 31 ։
[ե] Հռովմ. 11 ։ 12 ։

2 Վասն ամենայն ամբաստանու-
թեան Հրէից զինէն՝ արքայ Ագ-
րիպպա՝ համարիմ զանձն երանելի․
զի քո առաջի այսօր տալոց եմ պա-
տասխանի։

3 Մանաւանդ զի գիտող իսկ ես
ամենայն կրօնից և խնդրոց Հրէից․
վասն որոյ աղաչեմ երկայնմտու-
թեամբ լսել ինձ։

4 Քանզի զկենաց իմոց՝ որ 'ի
մանկութենէ, 'ի սկզբանէ լեալ
յազգի իմում յԵրուսաղէմ, անգ-
եալ են ամենայն Հրէայք։
5 Յառաջագոյն գիտեն 'ի վաղուց
հետէ, եթէ կամիցին վկայել․ զի
ճշմարտագոյն կրօնից օրինացն մերոց
կեցեալ եմ փարիսեցի։

6 Եւ արդ վասն յուսոյն՝ առ հար-
սն եղելոյ աւետեացն Աստուծոյ՝
դատեալ կամ յատենի։

7 Յոր երկոտասան ազգատոհմս
մերոյ անդադար զցայգ և զցերեկ
պաշտեալ ակն ունին հասանել․ վաս-
ն որոյ յուսոյ ամբաստանիմ՝ ար-
քայ, 'ի Հրէից։
8 Զինչ անհաւատ թուի ձեզ՝
եթէ Աստուած զմեռեալս յարու-
ցանէ։
9 Ես իսկ խորհէի պատշաճ հա-
մարէի՝ զբազում ինչ հակառակ ան-
ուանն Յիսուսի Նազովրեցւոյ գոր-
ծել։
10 Զոր և արարի իսկ յԵրուսա-
ղէմ․ և զբազումս 'ի սրբոցն ես

2 Այն ամէն ամբաստանութեան
համար՝ որ Հրէաները արին ինծա-
նից՝ ով Ագրիպպաս թագաւոր՝ իմ
անձս երանելի եմ համարում, որ
այսօր քու առաջիդ պատասխան
պիտի տամ։
3 Մանաւանդ՝ որ իսկ դու տե-
ղեակ ես Հրէաների ամէն սովո-
րութիւններին և վիճմունքներին․
նորահամար աղաչումեմ՝ որ համբե-
րութեամբ լսես ինձ։
4 Ինչու որ՝ ամէն Հրէաները տե-
ղեակ են իմ կեանքիս՝ որ տղայու-
թենէս հետէ սկզբէն իմ ազգիս
մէջ Երուսաղէմումն եմ եղել։
5 Առաջուց շատ վաղուց հետէ
գիտումեն, թէ որ կամենան վկա-
յութիւն տալ․ որ ես մեր օրէնքի
ուխտի ճշմարիտ կրօնքումը եմ ապ-
րել՝ փարիսեցի ա լինելով։
6 Եւ հիմիկ՝ ատեանին մէջ կանգ-
նած դատապարտվումեմ այն յու-
սոյն համար՝ որ մեր հարանցն Աստ-
ուածանից բ տրված աւետիքին
վերայ գ է,
7 Որ մեր տասներկու դ ցեղը գի-
շեր և ցերեկ անդադար ե պաշտե-
լով, սպասումեն հասնել նորան․
և այս յուսոյս համար ամբաստան-
վումեմ Հրէաներիցը՝ ով թագաւոր։
8 Ի՞նչ անհաւատալի բան է ե-
րեւում ձեզ՝ որ Աստուած մեռել-
ներին յարութիւն տանել է տալիս։
9 Իսկ ես ինքս հարկաւոր էի
համարում՝ որ Յիսուս Նազովրեցւոյ
անուանին հակառակ շատ բաներ
է գործեմ․
10 Որ Երուսաղէմումն էլ ը արի․
և սրբերից շատերին ես բանտի

ա Գլ. ԻԲ. 3։ ԻԳ. 6։ ԻԴ. 15. 21։ Փիլիպ. Գ. 5։
բ Գլ. ԻԳ. 6։
գ Ծննդ. Գ. 15։ ԻԲ. 18 ԻԶ. 4։ ԽԹ. 10։ Բ Օրին. ԺԸ. 15։ Բ Թագ. Է. 12։ Սաղ. ՃԼԲ. 11։ Եսայ. Դ. 2։ Է. 14։ Թ. 5։ Խ. 10։ Երեմ. ԻԳ. 5։ ԼԳ. 14. 15. 16։ Եզեկ. ԼԴ. 23։ ԼԷ. 24։ Դան. Թ. 24։ Միք. Է. 20։ Գլ. ԺԳ. 32։ Հռովմ. ԺԵ. 8։ Տիտ. Բ. 13։
դ Յակ. Ա. 1։
ե Ղուկ. Բ. 37։ Ա Տիմ. Ե. 5։ Ա Թես. Գ. 10։
զ Փիլիպ. Գ. 11։
է Յովհ. ԺԶ. 2։ Ա Տիմ. Ա. 13։
ը Գլ. Ը. 3։ Գաղ. Ա. 13։

բանտարգել առնէի · 'ի քահանայապետացն առեալ իշխանութիւն · եւ զսպանելոցն նոցա բերէի համար :

11 Եւ ըստ ամենայն ժողովրդեան՝ բազում անգամ պատժելով զնոսա բռնադատէի հայհոյել · առաւել եւս մոլեալ 'ի վերայ նոցա՝ հալածէի մինչեւ յարտաքին քաղաքսն :

12 Որովք գնացեալ 'ի Դամասկոս՝ իշխանութեամբ եւ հրամանաւ քահանայապետացն ,

13 Զմիջաւուրբն 'ի ճանապարհի տեսի արքայ՝ յերկնից առաւել քան զլուսաւորութիւն արեգական ծագեալ զինեւ լոյս , եւ զնոքօք՝ որ ընդ իս երթային :

14 Եւ յանկանել մեր ամենեցուն յերկիր , լուայ ձայն՝ որ ասէր ընդ իս Հեբրայեցւոց բարբառովն · Սաւուղ Սաւուղ՝ զի հալածես զիս · խիստ է քեզ ընդդէմ խթանի աքացել :

15 Եւ ես ասեմ , Ո՞ ես Տէր · եւ Տէր ասէ · Ես եմ Յիսուս՝ զոր դուն հալածես :

16 Այլ արի եւ կաց 'ի վերայ ոտից քոց · զի վասն այսորիկ երեւեցայ քեզ՝ առնուլ զքեզ 'ի ձեռն պաշտօնեայ եւ վկայ՝ որոց տեսերդ զիս , եւ որոց երեւեցայց քեզ :

17 Փրկել զքեզ 'ի ժողովրդենէդ՝ եւ 'ի հեթանոսաց , յորս ես առաքեցից զքեզ :

18 Բանալ զաչս նոցա , դարձուցանել 'ի խաւարէ 'ի լոյս , եւ յիշխանութենէ Սատանայի յԱստուած ·

մէջ դնել էի տալիս · ինչպէս որ քահանայապետներից իշխանութիւն էի առել՝ եւ նորանց սպանուելու համարը բերումէի նորանց [ե] ձեռ :

11 Եւ ամէն ժողովարաններումը շատ անգամ պատիժ տալով նորանց բռնադատումէի որ հայհոյեն · եւ էլ աւելի նորանց վերայ կատաղած՝ հալածումէի մինչեւ դրսի [զ] քաղաքները :

12 Այս պատճառով երբոր քահանայապետների իշխանութեամբն ու հրամանովը գնումէի ի Դամասկոս ,

13 Կէս օրի ժամանակին ճանապարհին վերայ տեսի՛ ով թագաւոր՝ որ արեգականի լուսիցն աւելի մէն պայծառ լոյս երկնքիցը ծագեց իմ չորս կողմիս՝ եւ նորանցով էլ՝ որ ինծ հետ գնումէին :

14 Եւ մենք ամէնքս գետնին վերայ ընկանք , եւ մէն ձայն լսեցի՛ որ Հեբրայեցոց լեզուովն ինծ ասումէր · Սաւուղ Սաւուղ՝ ինծ ինչու ես հալածում · դժուար է քեզ՝ որ խթանի դէմ քացի տաս :

15 Եւ ես ասացի · Դու ո՛վ ես՝ Տէր · եւ Տէրն ասաց · Ես Յիսուսն եմ՝ որ դու հալածումես :

16 Բայց վե՛ր կաց՝ եւ ոտներիդ վերայ կանգնէ՛ որ նորա համար երեւեցայ քեզ՝ որ քեզ ձեռքս առնեմ պաշտօնեայ եւ վկայ լինելայ այն բաներին՝ որ դու տեսիր , եւ այն բաներին որ նորանցով պիտի երեւիմ [ը] քեզ ,

17 Որ ազատեմ քեզ այդ ժողովրդից՝ եւ հեթանոսներից , որ ես նորա՛նց մէջ պիտի ուղարկեմ [թ] քեզ ·

18 Որ նորանց աչքերը բանաս՝ եւ յետ [ժ] դարձնես խաւարից դէպի լոյսը , եւ Սատանայի իշխանութեւ-

ե Գլ. Թ. 14. 21 . ԻԲ. 5 .
զ Գլ. ԻԲ. 19 .
է Գլ. Թ. 3 . ԻԲ. 6 .
ը Գլ. ԻԲ. 15 .
թ Գլ. ԻԲ. 21 .
ժ Եսայ. ԼԵ. 5 . ԽԲ. 7 . Ղուկ. Ա. 79 . Յովհ. Ը. 12 . Բ Կորնթ. Դ. 4 . Եփես. Ա. 18 . Ա Թես. Ե. 5 .

առնուլ նոցա զթողութիւն մեղաց, և վիճակ ընդ սուրբս հաւատովքն որ յիս ։

19 Ուստի արքայ Ագրիպպա, ոչ եղէ անհաւան երկնաւոր տեսլեանն ։

20 Այլ նախ՝ որոց ՚ի Դամասկոս և յԵրուսաղէմ էին, և ընդ ամենայն գաւառս Հրէաստանի և ՚ի հեթանոսս, պատմեցի զղջանալ՝ և դառնալ յԱստուած կենդանի. արժանի ապաշխարութեան գործս գործել ։

21 Վասն այսորիկ Հրէից կալեալ զիս ՚ի տաճարին, կամէին սպանանել ։

22 Օգնութիւն հասեալ առ յԱստուծոյ՝ մինչև ցայսօր կամ վկայեալ փոքու և մեծի. ոչինչ արտաքոյ ասել՝ քան զոր մարգարէքն և Մովսէս խօսեցան գալոց լինելոյ.

23 Եթէ չարչարելոց է Քրիստոսն, եթէ առաջին ՚ի յարութենէ մեռելոց՝ լոյս պատմելոց է ժողովրդեանն և հեթանոսաց ։

24 Եւ նորա զայս պատասխանի տուեալ, Փեստոս ՚ի ձայն մեծ ասէ. Մոլիս՝ Պօղէ, բազում գրութիւնքդ զքեզ ՚ի մոլորութիւն դարձուցանեն ։

25 Իսկ Պօղոս ասէ, Ո՛չ մոլիմ՝ քաջդ Փեստոս, այլ զգաստութեան և ճշմարտութեան բանս բարբառիմ ։

նիցը դէպի Աստուած. որ նորանք ինձ հաւատալովը իրենց մեղաց [ը] թողութիւն՝ և սրբերին [թ] հետ ժառանգութիւն [ժ] առնեն ։

19 Սրա համար՝ ով Ագրիպպաս թագաւոր՝ անհաւան չեղայ այն երկնային տեսիլքին ։

20 Բայց առաջ նորանց՝ որ Դամասկոսումը և Երուսաղէմումն էին, և ամէն Հրէաստանի և հեթանոսների գաւառներումը՝ [ի] պատմեցի, որ զղջանան և դառնան կենդանի Աստուծոյն մօտ, որ ապաշխարութեան արժանի գործքեր [լ] գործեն ։

21 Սրա համար Հրէաները ինձ տաճարումը բռնելով՝ ուզումէին որ [խ] սպանեն ։

22 Որովհետև Աստուածանից ինձ օգնութիւն հասաւ՝ մինչև այս օր կանգնեցի և վկայեցի փոքրին և մեծին. նրանից դուրս բան չասելով՝ քան որ [ծ] մարգարէները, և Մօսէսը խօսեցին այն նոր գալու լինելիքների համար ։

23 Թէ Քրիստոսը պիտի [հ] չարչարուի, թէ նա էլ առաջինը պիտի լինի մեռելների [ձ] յարութենից՝ և լոյս պիտի քարոզէ ժողովրդին՝ և [ղ] հեթանոսներին ։

24 Եւ նա երբոր այս պատասխանը տուաւ, Փեստոս մեծ ձայնով ասաց. Գժուած ես՝ Պօղոս, շատ կարդացողութիւններդ մոլորացնումեն [ճ] քեզ ։

25 Պօղոս ասաց. Չեմ գժուել՝ ով ազնիւ Փեստոս, բայց հեղութեան և ճշմարտութեան բաներ եմ խօսում ։

է Բ Կորնթ. Զ. 14. Եփես. Դ. 18. Ե. 8. Կող. Ա. 13. Ա Պետ. Բ. 9. 25.
ը Ղուկ. Ա. 77.
թ Գործ. Ի. 32.
ժ Եփես. Ա. 11. Կող. Ա. 12.
ի Գործ. Թ. 20. 22. 29. ԺԱ. 26. ԺԴ. ԺԴ. ԺԶ. ԺԷ. ԺԸ. ԺԹ. Ի. ԻԱ.
լ Մատթ. Գ. 8.
խ Գործ. ԻԱ. 30, 31.
ծ Ղուկ. ԻԴ. 27. 44. Գործ. ԻԴ. 14. ԻԸ. 23. Հռովմ. Գ. 21.
կ Յովհ. Ե. 46.
հ Ղուկ. ԻԴ. 26. 46.
ձ Ա Կորնթ. ԺԵ. 20. Կող. Ա. 18. Յայտ. Ա. 5.
ղ Ղուկ. Բ. 32.
ճ Դ Թագ. Թ. 11. Յովհ. Ժ. 20. Ա Կորնթ. Ա. 23. Բ. 13, 14. Դ. 10.

26 Գիտակ իսկ է այսոցիկ արքայ ,
ընդ որում և համարձակեալս խօ-
սիմ . քանզի ծածկել 'ի քէն ինչ
'ի սոցանէ չհաւանիմ յանձն . զի ոչ
եթէ յանկեան ուրեք գործեալ իցէ
այս :

27 Հաւատաս՝ Արքայ Ագրիպպա
մարգարէից . գիտեմ զի հաւատաս :

28 Եւ ասէ Ագրիպպաս ցՊօղոս .
Փոքու իւիք հաւանեցուցանես զիս
լինել քրիստոնեայ :
29 Եւ Պօղոս ասէ . Խնդրէի յԱս-
տուծոյ՝ և փոքու և մեծաւ՝ ոչ
միայն զքեզ՝ այլ զամենեսեան որ
լսեն ինձ այսօր , լինել այսպիսի որ-
պէս և ես եմ , բաց 'ի կապանաց
աստի :

30 Յոտն եկաց՝ արքայն և դա-
տաւորն և Բերինիկէ , և որ ընդ
նոսայն նստէին :
31 Եւ իբրև գնացին , խօսէին
ընդ միմեանս և ասէին . Թէ Ո՛չ-
ինչ արժանի մահու կամ կապանաց
գործէ այրս այս :
32 Իսկ Ագրիպպաս ցՓեստոս ասէ .
Արձակել մարթ էր զայրս զայս՝ եթէ
ոչ էր բողոքեալ 'ի կայսր :

26 Թագաւորն էլ այս բաներիս
տեղեակ է , որ նորա հետ էլ հա-
մարձակ խօսում եմ . ինչու որ՝ չեմ
կարծում որ սորանցից մինն էլ քե-
զանից ծածկուած լինի . պատճառն
որ՝ այս բանս ոչ թէ մին անկիւնի
մէջ է եղած :
27 Հաւատում ես դու մարգարէ-
ներին՝ ով Ագրիպպաս թագաւոր .
գիտեմ որ հաւատում ես :
28 Եւ Ագրիպպաս Պօղոսին ա-
սաց . Մին քիչ է մնում որ ինձ
համոզես որ քրիստոնեայ լինիմ
29 Եւ Պօղոսն ասաց . Աստուա-
ծանից խնդրում եմ՝ թէ քիչով թէ
շատով լինի որ ոչ թէ միայն դու ,
բայց այն ամէնքն էլ՝ որ այսօր լը-
սում են ինձ , այնպէս լինէին՝ ինչ-
պէս որ ես եմ , այս կապանքների-
ցըս – ջոկ :
30 Վերկացաւ թագաւորը և դա-
տաւորը և Բերինիկէն , և նորանք
էլ՝ որ նորանց հետ նստած էին :
31 Եւ երբոր գնացին , իրար հետ
խօսում էին և ասում . Թէ , Այս
մարդս բնաւ մահուան կամ կապան-
քի արժանի բան – չի գործել :
32 Բայց Ագրիպպաս Փեստոսին
ասաց . Կարելի էր այս մարդս ար-
ձակել՝ թէ որ դէպի կայսրը չէր
բողոքել :

## ԳԼ. ԻԷ

1 Իբրև հրամայեցաւ մեզ նա-
ւել յԻտալիա , տային զՊօղոս՝ և
զայլս ոմանս կապեալս ցհարիւրա-
պետ մի , որում անուն էր Յուլիոս
Սեբաստեան գնդին :

2 Եւ ելեալ 'ի նաւ մի Ադրա-
միտացի , որ երթալոց էր 'ի կող-
մանս Ասիացւոց՝ գնացաք . էր ընդ
մեզ և Արիստարքոս՝ Մակեդոն
Թեսաղոնիկեցի :
3 Եւ 'ի վաղիւ անդր իջաք 'ի

1 Երբոր հրաման էլաւ մեզ՝ որ
նաւով գնանք Իտալիա , Պօղոսին՝
և ուրիշ մին քանի կապվածներ էլ
տուին մին հարիւրապետի , որ նո-
րա անունը Յուլիոս էր՝ Սեբաստա-
ցի – գնդից :
2 Եւ որ վեր ելանք մին Ադրա-
միտացի նաւ՝ որ պէտք էր գնայ
Ասիացոց կողմերը , գնացինք . Ա-
րիստարքոս Մակեդոն Թեսաղոնի-
կեցին էլ մեզ հետ բ էր :
3 Եւ վեր եկանք Սիդոն . և

– Ա Կորնթ . Է . 7 .
– ԳԼ . ԻԳ . 9 . 29 . ԻԵ . 25 .
ա ԳԼ . ԻԵ . 11 .
– ԳԼ . ԻԵ . 12 . 25 .
բ ԳԼ . ԺԹ . 29 .

Սիդովն. եւ մարդասիրութիւն ցու-
ցեալ Յուլեայ առ Պօղոս, հրամայ-
եաց առ բարեկամսն երթալ՝ եւ
դարման գտանել։
4 Եւ անտի ելեալ խոտորնագոյն
նաւեցաք 'ի Կիպրոս՝ վասն հողմոյն
ընդդէմ լինելոյ։
5 Յայնժամ ընդ մէջ ծովուն Կի-
լիկեայ եւ Պամփիլեայ նաւեալ՝ ի-
ջաք 'ի Միւռայ Լիկիացւոց։
6 Եւ անդ գտեալ հարիւրապե-
տին նաւ մի Աղեքսանդրացի՝ որ
երթայր յԻտալիա, եմոյծ զմեզ
անդր։
7 Եւ 'ի բազում աւուրս ծանրա-
նաւեալք հազիւ հասաք առ Կնի-
դաւ. եւ 'ի չթողացուցանել մեզ
հողմոյն, նաւեցաք խոտորնագոյն
'ի Կրետէ առ Սաղամինեաւ։
8 Հազիւ անցեալ առ նովաւ՝ ե-
կաք 'ի տեղի ինչ՝ որ կոչէր Գեղե-
ցիկ նաւահանգիստ. յոր հուպ էր
քաղաքն Ղասեայ։
9 Եւ իբրեւ բազում ժամանակք
անցանէին, եւ վտանգ եւս լինէր
նաւելոյն. եւ վասն այն ինչ եւս
պահոցն անցանելոյ, ասէր խրատ
Պօղոս,
10 Եւ ասէ ցնոսա. Արք՝ տեսա-
նեմ զի թշնամանօք եւ բազում
վնասու՝ ոչ միայն բեռինն եւ նա-
ւին, այլ եւ անձանց մերոց լինե-
լոց է նաւարկութիւնս։

11 Իսկ հարիւրապետին նաւապե-
տին եւ նաւատերին աւելի ան-
սայր՝ քան բանիցն Պօղոսի։

12 Իբրեւ դժպատեհ իմն թուէր
նաւահանգիստն առ 'ի ձմերել, բա-
զումք խորհեցան գնալ անտի.
թերեւս կարասցեն հասանել 'ի Փիւ-
նիկէ՝ ձմերել 'ի նաւահանգստին
Կրետացւոց, որ հայէր ընդ հարա-
ւակողմն եւ ընդ ալխարհն։

Յուլիոս սէր ցոյց տալով Պօղոսին՝
հրամայեց որ բարեկամներին մօտ
գնայ՝ եւ հանգիստ գտնէ։

4 Եւ այնտեղից նաւով գնացինք
Կիպրոսի ցած կողմովը քամու նե-
հակ լինելոյ պատճառովը։
5 Այն ժամանակը Կիլիկիայի եւ
Պամփիլիայի ծովին մէջովը գնա-
լով մէք եկինք Լիկիացոց Միւռան
6 Եւ հարիւրապետն այնտեղ մին
Աղեքսանդրացի նաւ գտաւ՝ որ Ի-
տալիա էր գնում, եւ մեզ այնտեղ
մտցրուց։
7 Եւ շատ օր նաւովը ծանր գը-
նալով դժուար հասինք Կնիդի կող-
մերը. եւ երբոր քամին չթողեց
մեզ, նաւով գնացինք Կրետէի ցած
կողմը Սաղմոնեայից մօտ։
8 Երբոր նորանով դժուար ան-
ցանք՝ եկինք մի տեղ, որ Գեղե-
ցիկ նաւահանգիստ էր կոչվում. որ
Ղասէ քաղաքը նորա մօտ էր։
9 Եւ երբոր շատ ժամանակ էլ
անցել էր՝ եւ նաւով գնալոյ համար
վտանգաւոր էր լինում, ինչու որ՝
ծոմի ժամանակն էլ անցել էր, Պօ-
ղոս խրատ էր տալիս,
10 Եւ նորանց ասում. Ո՛վ մար-
դիկ՝ ես տեսնում եմ որ այս նա-
ւարկութիւնս նեղութեամբ եւ շատ
վնասով պիտի լինի, ոչ թէ միայն
բեռինից եւ նաւից, բայց մեր անձ-
ներին էլ։
11 Իսկ հարիւրապետը նաւապե-
տին եւ նաւ բռնողին աւելի էր ա-
կանջ գնում՝ քան թէ Պօղոսի խօս-
քերին։
12 Որովհետեւ այն նաւահանգիստը
անյարմար էր երեւում ձմեռն ան-
ցուցանելոյ համար, շատերը մտածե-
ցին՝ որ այնտեղից գնան. որ լինի թէ
ձմեռ մնալոյ համար կարողանան
Փիւնիկէն հասնիլ Կրէտացոց այն
նաւահանգիստը որ դէպի հարաւի
կողմի եւ ալխարհքն էր նայում։

‡ Գղ. ԻԴ. 23.| ԻԸ. 16։ | ‡ Ղկ. ԻԴ. 27. 29։

13 Եւ 'ի շնչել հարաւոյն , համա-
րեցան ուր զկամեայն էին հասանել ·
եւ արկեալ՝ մօտ անցանէին զԿրետա-
եաւ ։
14 Եւ ոչ յետ բազում ժամուց՝ ան-
կաւ զնովաւ հողմ ուռուցիկ , որ
կոչի Եւրակիւղոն ։
15 Ընդ յափշտակել նաւին՝ եւ
'ի չհանդուրժել ընդդէմ հողմոյն ,
թոյլ տուեալ երթայաք եւ գայաք ։
16 'Ի կղզի մի զմտեալ՝ որ կոչէր
Կղօդեայ , հազիւ կարացաք ըմբռ-
նել զմակոյկն ։
17 Զոր առեալ յօգնականութիւն
կապէին ընդ նաւն , երկուցեալ թէ
գուցէ 'ի յորձանուտն անկանիցին ·
իջուցեալ զառագաստն՝ այնպէս
երթային եւ գային ։
18 Եւ 'ի սաստկագոյն փչմանցն
մերոյ՝ 'ի վաղիւն անդր զկարասին
ընկեցիկ առնէին ։
19 Եւ յերիր աւուր ընդ իւրեանց
ձեռն զգործն նաւին ընկեցին ։
20 Իբրեւ ոչ արեւ եւ ոչ աստեղք
երեւէին 'ի բազում աւուրս , եւ
ձմեռն ոչ սակաւ կայր 'ի վերայ ,
ապա բառնայր ամենայն յոյս փըր-
կութեան մերոյ ։
21 Եւ զի բազում աւուրս նօթի
էին , յայնժամ Պօղոս կացեալ 'ի
մէջ նոցա՝ ասէ · Պարտ էր ձեզ՝
ով արք՝ անսալ ինձ , եւ ոչ ելա-
նել 'ի Կրետեայ՝ եւ շահել զվիշտս
զայս եւ զվնաս ։
22 Եւ արդ՝ խրատեմ զձեզ քա-
ջալերել · զի վնաս անձին՝ եւ ոչ
միում 'ի ձէնջ լինիցի , բայց 'ի նա-
ւէդ ։
23 Քանզի երեւեցաւ ինձ յայսմ
գիշերի հրեշտակ Աստուծոյ՝ որոյ
եմն եմ , եւ պաշտեմ զնա ,

24 Եւ ասէ · Մի երկնչիր Պօղէ ·
կայսեր ետս պարտ է քեզ յանդի-
ման լինել · եւ ահա շնորհեալ է

13 Եւ երբոր հարաւի քամին փը-
չեց , կարծեցին թէ ուզը դրած
տեղը կը հասնին · եւ մօտ ձգած՝
Կրետէի կողմնէն անցանում էին ։
14 Եւ որ շատ ժամանակ չէր ան-
ցած՝ նորա վերայ ուռած քամի ըն-
կաւ՝ որ Եւրակիւլոն է կոչվում ։
15 Երբոր նաւը բռնըւեցաւ՝ եւ
քամուն դէմ չը կարաց դիմանալ ,
թոյլ տուած գնում եւ գալիս էինք ։
16 Երբոր ջանք արինք գնալ մին
կղզի՝ որ Կղօդա էր կոչվում , դըժ-
ուար կարացինք մակոյկը բռնել ,
17 Որ առին նաւին հետ օգնու-
թեան համար կապեցին , եւ վա-
խելով որ չը լինի թէ յորձանուտը
ընկնին , առագաստը վէր թողին՝
այնպէս գնում եւ գալիս էին ։
18 Եւ երբոր մենք շատ նեղու-
թիւն էինք քաշում , միւսի օրումն
կարասին ծովին մէջ էին ձգում ։
19 Եւ երրորդ օրն իրենց ձեռովը
նաւի գործքը դուրս ձգեցին ։
20 Երբոր շատ օրեր՝ ոչ արեւ եւ
ոչ աստղներ չէին երեւում , եւ
ձմեռն էլ քիչ չէր որ մեզ վերայ
կար , ապա մեր ազատվելոյ ամէն
յոյսը կորըւեցաւ ։
21 Եւ որովհետեւ շատ օր սոված
էին , այն ժամանակը Պօղոս նորանց
մէջ կանգնած՝ ասաց · Ով մարդիկ՝
պէտք էր ձեզ՝ որ ինձ լսէիք , եւ
Կրետէայիցը դուրս չը գայիք՝ եւ այս
նեղութիւնս եւ վնաս չը քաշէիք ։
22 Եւ հիմիկ խրատումեմ ձեզ՝ որ
սրտապինդ կենաք · ինչու որ՝ ձե-
զանից բնաւ մինի անձին էլ վնաս
չի լինիլ · այլ նաւիցդ ջոկ ·
23 Պատճառն որ՝ այս գիշերս ե-
րեւեցաւ ինձ այն Աստուծոյ հրեշ-
տակն՝ որ ես նորանն եմ , եւ նո-
րան ե պաշտումեմ ,
24 Եւ ասաց · Մի վախենար ,
Պօղոս · պէտք է քեզ՝ որ կայսերի
դիմացն էլ կանգնես · եւ ահա Աստ-

ե Յովն. Ա. 5։
ղ Գրծ. ԻԳ. 11։
ե Դան. Զ. 16։
Հռովմ. Ա. 9։
բ Տիմ. Ա. 3։

քեզ Աստուած զամենեսեան, որ
են ընդ քեզ ՚ի նաւիդ ։
25 Վասն այսորիկ քաջալերեցա-
րուք արք, զի հաւատամ յԱստուած,
թէ այսպէս լինի՝ զորօրինակ խօ-
սեցաւ ընդ իս ։
26 Բայց ՚ի կղզի ինչ հասանել մեզ
անկանել ։
27 Իբրեւ չորեքտասաներորդ գի-
շեր լինէր՝ մինչդեռ ծփէաք ՚ի Հադ-
րիին անդ ու անդ, ՚ի մէջ գիշերին
կարծէին նաւավարքն եթէ հասանել
իցեն յաշխարհ ուրեք ։

28 Եւ ընկեցեալ զգուածն՝ գտին
գիրկս քսան. եւ սակաւ ինչ գա-
ղարեալ՝ դարձեալ ընկեցին եւ
գտին գիրկս հնգետասան ։
29 Զահի հարեալ թէ գուցէ ՚ի
խիստ ինչ տեղիս անկանիցին, յե-
տուստ կողմանէ ընկեցին խարիսխս
չորս. բղձային այգուն լինելոյ ։
30 Բայց նաւավարքն խնդրէին
փախչել ՚ի նաւէ անտի. եւ իջու-
ցեալ զկուրն ՚ի ծով անդր՝ պատ-
ճառանօք որպէս թէ առաջոյ կող-
մանէ խարիսխս ձգելոց իցեն ։
ց31 Ասէ Պօղոս ցհարիւրապետն եւ
ցզօրականսն. Եթէ ոչ դոքա մնան
՚ի նաւիդ՝ դուք ապրել ոչ կարէք ։

32 Յայնժամ զօրականքն հատին
զլարս կրին՝ եւ ՚ի բաց ընկեցին ։

33 Եւ մինչդեռ այգն կամէր լի-
նել, աղաչէր Պօղոս զամենեսեան
առնուլ կերակուր, եւ ասէ. Այս չո-
րեքտասաներորդ օր է՝ որում ակն
ունիք նօթիս կատարել, եւ չէ ինչ
ճաշակեալ ։
34 Վասն որոյ աղաչեմ զձեզ՝ ճա-
շակել կերակուր, զի այն իսկ վա-
սն ձերոյ փրկութեան է. զի ոչ
ուրուք ՚ի ձէնջ մազ մի ՚ի գլխոյ
կորիցէ ։

տուած բաշխեր է քեզ այդ ամէնքը՝
որ քեզ հետ այդ նաւին մէջը կան ։
25 Ասոր համար՝ սրտապինդ կեցէք՝
ով մարդիկ. ինչու որ՝ հաւատա-
լեմ Աստուծոյն՝ որ այնպէս պիտի
ըլլայ ինչպէս որ ինծի հետ խօսեցաւ ։
26 Բայց պէտք է որ՝ զնանք մէկ
կղզի մը ինկնինք ։
27 Երբոր տասնըչորս գիշերն
եղաւ՝ քանի որ դեռ Հադրիին ան-
դունդներուն այս կողմն այն կողմն
էինք չարչարուած, կէս գիշերուան
նաւավարները կարծեցին՝ թէ մէկ
աշխարհքի մը հասած ըլլան ։
28 Եւ գնդերը ձգեցին, քսան
գիրկ խոր գտին. եւ մէկ քիչ որ
կեցան՝ նորէն ձգեցին՝ եւ տաս-
նըհինգ գիրկ գտին ։
29 Վախցան որ չըլլայ թէ այնպէս
տեղերու մէջ ինկնին. եւ ետեւի
կողմէն չորս խարիսխ ձգեցին.
սպասեցին որ լուսնայ ։
30 Բայց նաւավարներն ուզէ-
ին՝ որ այն նաւէն փախչին. եւ
կուրը վար բերին ծովը. այն պատ-
ճառանքով՝ իբր թէ առջի կող-
մէն ալ պիտի խարիսխ ձգեն ։
31 Պօղոս հարիւրապետին եւ զին-
ուորներուն ըսաւ, թէ որ դոքա
այս նաւուն չմնան, դուք չէք
կրնար ապրիլ ։
32 Այն ժամանակը զինուորները
կրի չուանները կտրեցին՝ եւ նորան
դուրս ձգեցին ։
33 Եւ դեռ քանի որ ուզումէր որ
առաւօտ լինի, Պօղոս ամէնքին ա-
ղաչումէր՝ որ կերակուր առնեն,
ըսաւ. Ահա տասնըչորս օրն է՝
որ դուք սպասելով՝ անօթի էք
մնացեր, եւ մէկ բան չէք կերեր ։
34 Նորա համար աղաչումեմ ձեզ՝
որ կերակուր ուտէք, որ իսկ նա
ձեր փրկութեան համար է. ինչու
որ՝ ձեզմէնից մէկին գլխէն բնաւ
մին մազ մը չի կորչիլ ։

ե Ղու. Ա. 45 ։ Հռոմ. Դ. 20 ։
21։ Բ Տիմ. Ա. 12 ։ Բ Պղ. ԻԸ. 1 ։
ժ Գ Թագ. Ա. 52 ։ Մատթ. Ժ. 30.
Ղու. ԺԲ. 7 ։ ԻԱ. 18 ։

35 Եւ իբրեւ ասաց զայս, առեալ
հաց՝ գոհացաւ զԱստուծոյ առաջի
ամենեցուն . եբեկ՝ եւ սկսաւ ու-
տել :
36 Եւ քաջալերեցան ամենեքին,
եւ նոքա առին կերակուր :
37 Եւ էաք ամենայն հոգիք ՚ի նա-
ւին՝ երկերիւր եօթանասուն եւ վեց :

38 Իբրեւ յագեցան կերակրովն,
եւ թեթեւացուցին զնաւն՝ թա-
փել զցորեանն ՚ի ծովն :
39 Եւ իբրեւ այգ եղեւ՝ զերկիրն
ոչ ճանաչէին, բայց զծոց մի նշ-
մարէին՝ թէ ափն ծովուն իցէ . յոր
խորհէին թէ հնար ինչ իցէ՝ զեր-
ծուցանել զնաւն :
40 Եւ զխարիսխն հատեալ՝ թողե-
ցին ՚ի ծովն, թուլացուցին զխառ-
նելիս թիւոյն, եւ ՚ի բաց առին
զառագաստն . եւ ետուն հողմոյն
յափն կոյս ծովուն :
41 Անկեալ ՚ի տեղի մի երկծով՝
թիւրեցին զնաւն . եւ առաջին
կողմն նաւին խրեալ՝ անշարժ մնայր,
եւ յետին կողմն քակէր ՚ի բռնու-
թենէն :

42 Եւ զօրականացն խորհուրդ ա-
րարեալ՝ զի զկապեալսն սպանցեն,
եւ մի ոք լողիցէ եւ փախիցէ :
43 Եւ հարիւրապետն՝ քանզի կա-
մեցաւ ապրեցուցանել զՊօղոս, ար-
գել զնոսա ՚ի խորհրդոյն . հրամա-
յեաց զի որ կարօղն իցեն լողել՝
անկանիցին նախ, եւ ՚ի ցամաք ե-
լանիցեն :
44 Եւ զայլսն՝ զոմս ՚ի տախտակս,
եւ զոմս յայլ ինչ կահ ՚ի նաւէն ան-
տի . եւ այսպէս եղեւ ամենեցուն
փրծանել յերկիր :

35 Եւ երբոր աս ասաց, հաց ա-
ռաւ ամէնի առաջին Աստուածանից
գոհացաւ . կտրեց՝ եւ սկսեց է ու-
տել :
36 Եւ ամէնքը սրտապնդուեցան,
եւ նորանք էլ կերակուր առին :
37 Եւ նաւին մէջ ամէնքս երկու-
հարիւր եօթանասուն եւ վեց հո-
գիք էինք :
38 Երբոր այն կերակրովը կշտա-
ցան, նաւը թեթեւացրին՝ եւ ցո-
րենը ծովին մէջ թափեցին :
39 Եւ երբոր առաւօտ էլաւ՝ այն
երկիրը չէին ճանաչում, բայց մին
ծոց տեսանումէին՝ որ ծովի եզրն է.
մտածումէին որ եթէ հնար լինի,
նաւն այնտեղ պրծացնեն :
40 Եւ այն խարիսխները որ հատա-
ված էր՝ ծովը ձգեցին . թիւերի
կապվածները թուլացրին . եւ առա-
գաստը վերառին, եւ քամուն առին
դէպի ծովի եզրի կողմը :
41 Մինտեղ ընկան՝ որ երկու կող-
միցը ծով ունէր՝ նաւը ւ ծռեցին .
եւ նաւի առաջին կողմը խրված
անշարժ էր մնում, եւ յետին կողմը
ալիքների սաստկութենիցը քանդ-
վումէր :
42 Եւ զինուորները խորհուրդ էին
արել՝ որ կապածներին սպանեն, որ
չըլինի թէ մինը լողայ փախչի :
43 Եւ հարիւրապետը՝ որովհետեւ
կամեցաւ որ Պօղոսին ապրեցնէ,
նորանց այն խորհրդիցը խափանեց.
հրամայեց որ՝ ով որ կամենայ լող
տալ՝ առաջ ընկնեն՝ եւ դուրս գնան
ցամաքը :
44 Եւ ուրիշներն էլ՝ որը տախ-
տակներով՝ եւ որն այն նաւի մին
ուրիշ կարասիներովը . եւ այնպէս
էլաւ՝ որ ամէնքը պրծան դուրս
եկին ‡ ցամաքը :

է Ա Թագ . Թ . 13 : Մատթ . ԺԵ . 36 : Մարկ . Ը . 6 : Յովհ . Զ . 11 : Ա Տիմ . Դ . 3 , 4 : ւ Բ Կորնթ . ԺԱ . 25 : ‡ Համար . 22 :

## ԳԼ. ԻԸ.

1 Եւ ապրեալքն՝ յայնժամ գիտացաք թէ Մելիտինէ էր անուն կղզւոյն. բայց բարբարոսքն շնորհեցին ոչ սակաւ մարդասիրութիւն մեզ.

2 Քանզի լուցին խարոյկ՝ եւ ընկալան զամենեսին զմեզ վասն անձրեւին՝ որ առկայէր, եւ վասն ցրտոյն.

3 Եւ 'ի ժողովել Պօղոսի խռիւ ինչ բազում՝ եւ դնել 'ի վերայ խարուկին, իժ մի 'ի ջերմութենէն ելեալ՝ կալաւ զձեռանէ նորա.

4 Եւ իբրեւ տեսին բարբարոսքն կախեալ զգազանն զձեռանէ նորա, ասէին ցմիմեանս. Ամենեւին սպանող է այրս այս՝ որ թէպէտ եւ ապրեցաւ 'ի ծովէն, իրաւունքն չտան կեալ.

5 Եւ նորա թօթափեալ զգազանն 'ի հուրն, եղեւ նմա չար եւ ոչինչ.

6 Եւ նոքա ակն ունէին նմա այտնլոյ՝ կամ անկանելոյ՝ եւ յանկարծակի մեռանելոյ. իբրեւ շատ ակն կալեալ՝ եւ տեսանէին թէ ոչ ինչ վնաս եղեւ նմա՝ դարձեալ դարձուցեալ զբանն՝ ասէին թէ աստուած ոմն է.

7 Եւ շուրջ զանդեաւն զայնուիկ էին գիւղք գլխաւորի կղզւոյն՝ որում անուն էր Պոպղիոս. որ առ զմեզ յերաշխիս զերիս աւուրս՝ եւ սիրով ընկալաւ.

8 Եւ եղեւ հօրն Պոպղեայ 'ի ջերմն եւ յախտ թանչից հիւանդանալ դնել. առ որ մտեալ Պօղոս՝ եւ կացեալ յաղօթս՝ եդ զձեռն եւ բժշկեաց զնա.

1 Եւ երբոր ազատեցանք, այն ժամանակը գիտացինք՝ որ այն կղզւոյ անունը Մելիտինէ -էր. բայց բարբարոսները քիչ մարդասիրութիւն չէր՝ որ ցոյց տուին բ մեզ.

2 Ինչու որ՝ կրակ վառեցին՝ եւ մեզ ամէնքս ընդունեցին այն անձրեւին համար՝ որ վերայ էր գալիս. եւ սաստիկ ցրտին համար.

3 Եւ երբոր Պօղոս՝ մին քիչ խռաշար էր հաւաքում, եւ դնում կրակին վերայ, այն տաքութենից մին իժ դուրս եկաւ՝ եւ նորա ձեռքիցը բռնեց.

4 Եւ երբոր բարբարոսները տեսին՝ որ այն գազանը նորա ձեռքիցը կախված էր, իրար ասումէին. Ամենեւին այս մարդս մարդասպան է, որ թէ եւ ծովիցը պրծաւ, բայց արդար իրաւունքները չը թողին որ ապրի.

5 Եւ նա այն գազանը կրակին մէջ թափ տուաւ. եւ նորան ոչ մին վնաս էլ գ չէլաւ.

6 Բայց նորանք սպասումէին՝ թէ կամ կուռչի կամ վէր կընկնի եւ շուտով կը մեռնի. երբոր շատ սպասեցին, եւ տեսին որ ընաւ վնաս չէլաւ նորան, իրենց խօսքը նորէն դարձրին եւ ասումէին, թէ սա մին աստուած դ է.

7 Եւ այնտեղի չորս կողմանցն՝ այն կղզւոյ գլխաւորին գիւղերը կային՝ որ նորա անունը Պապլիոս էր. որ խօսք տալով մեզ երեք օր իրեն մօտ առաւ՝ եւ սիրով ընդունեց.

8 Եւ էլաւ՝ որ Պապլիոսի հայրը անհանգիստ եւ փորի լուծերովը հիւանդացած պառկած էր. Պօղոս նորա մօտ մտաւ՝ եւ աղօթք ե արաւ, եւ ձեռքը նորա վերայ դրաւ, եւ նորան զ բժշկեց.

ա Գրծ. ԻԷ. 26.
բ Հռովմ. Ա. 14. Ա Կորնթ. ԺԴ. 11. Կող. Գ. 11.
գ Մարկ. ԺԶ. 18. Ղուկ. Ժ. 19.
դ Գրծ. ԺԴ. 11.
ե Յակ. Ե. 14, 15.
զ Մարկ. Զ. 5. Է. 32. ԺԶ. 18. Ղուկ. Դ. 41. Գրծ. ԺԹ. 11, 12. Ա Կորնթ. ԺԲ. 9. 28.

9 Եւ իբրեւ այս եղեւ, այլ հի-
ւանդք՝ որ էին ՚ի կղզւոջն գային
եւ բժշկէին ։
10 Որք եւ բազում պատուովք
պատուեցին զմեզ. եւ իբրեւ գնա-
ցաք՝ ետուն՝ որ ինչ պէտք էին ։
11 Եւ յետ երից ամսոց ելաք ՚ի
նաւ մի Աղեքսանդրացի՝ որ ձմե-
րեալ էր ՚ի կղզւոջն նշանաւորաւ
Դիոսկուրացւոց ։

12 Եւ իջեալ ՚ի Սիրակուսա՝ եղաք
աւուրս երիս ։
13 Ուստի գնացեալ հասաք ՚ի Հռե-
գիոն. եւ յետ աւուր միոյ ՚ի շնչել
հարաւոյն, երկօրեայք եկաք ՚ի Պո-
տիողոս ։
14 Ուր եւ գտաք եղբարս՝ աղա-
չեցեալք ՚ի նոցանէ լինել աւուրս
եօթն. եւ այսպէս եկաք ՚ի Հռոմ ։

15 Եւ անտի լուեալ եղբարցն զմէ-
նջ՝ եկին ընդ առաջ մեր մինչեւ
յանգստեանն Ապփեայ՝ եւ Երիցն
կրպակաց. զոր տեսեալ Պօղոսի՝
գոհացաւ զԱստուծոյ՝ եւ քաջալե-
րեցաւ ։

16 Եւ իբրեւ մտաք ՚ի Հռոմ, հրա-
մայեցաւ Պօղոսի լինել առանձինն
հանդերձ զինուորաւն՝ պահպանու-
թեամբ ։
17 Եւ եղեւ յետ երից աւուրց՝
կոչել նմա զՀրէիցն գլխաւորս. եւ
իբրեւ եկին, ասէ ցնոսա. Ես արք
եղբարք, ոչինչ հակառակ գործեալ
ժողովրդեանն՝ կամ կրօնից հայ-
րենեաց, կապեալ յԵրուսաղէմէ՝
մատնեցայ ՚ի ձեռս Հռոմայեցւոց ։

18 Որք իբրեւ զննեցին զիս՝ կա-
մեցան արձակել, վասն եւ ոչ մի
ինչ վնաս մահու գտանելոյ յիս ։

9 Եւ երբոր աս էլաւ, ուրիշ հի-
ւանդներ որ այն կղզումը կային,
գալիս էին եւ բժշկվում ։
10 Որ նորանք էլ շատ պատուով
պատուեցին մեզ. եւ երբոր գնա-
ցինք, ինչ որ մեզ պէտք էր՝ ե տուեին ։
11 Եւ երեք ամսիցն ետեւ մեր
էլանք մին Աղեքսանդրացի նաւ՝ որ
այն ձմեռն այն կղզումն էր ան-
ցուցրել՝ եւ Դիոսկուրացոց նշանն
ունէր ։
12 Եւ մեր եկինք Սիրակուսա՝ եւ
երեք օր այնտեղ մնացինք ։
13 Այն տեղից գնացինք հասինք
Հռեգիոն. եւ մին օրից ետեւ երբոր
հարաւի քամին փչեց, երկրորդ օրը
եկինք Պոտիողոս ։
14 Որ այնտեղ եղբայրներ էլ գը-
տինք, նորանք աղաչեցին՝ որ եօթն
օր այնտեղ մնանք. եւ յետոյ գալով
եկինք Հռոմ ։
15 Եւ երբոր այնտեղից եղբայրնե-
րը մեզ համար լսեցին՝ մեր առաջը
գալու եկին մինչեւ Ապփիոսի հր-
ապարակն՝ եւ Երեք խանութները.
Պօղոս որ նորանց տեսաւ, Աստու-
ծունից գոհացաւ՝ եւ սրտապինդ
էլաւ ։
16 Եւ երբոր մտանք Հռոմ, Պօղո-
սին հրաման էլաւ՝ որ իրեն պա-
հապան զինուորին հետ առանձին
զ կենայ ։
17 Եւ երեք օրից ետեւ էլաւ՝ որ
նա Հրէաների գլխաւորներին կան-
չեց. եւ երբոր եկին, նորանց ա-
սաց. Մարդիկ եղբարք՝ ես թէ եւ
ժողովրդին կամ հայրենական կրօն-
քին հակառակ մին բան չեմ է գոր-
ծել, Երուսաղէմիցը կապված մատ-
նուեցայ Հռոմայեցոց ը ձեռքը ։
18 Նորանք երբոր ինձ քննեցին՝
կամեցան թող տալ, ինչու որ ին-
ձանում բնաւ մին մեռնելոյ վնաս
էլ թ չը գտին ։

ե Մատթ. ԺԵ. 6։ Ա Տիմ. Ե. 17։ զ Գր. ԻԴ. 25։ ԻԵ. 3։ է Գր. ԻԴ. 12, 13։ ԻԵ. 8։ ը Գր. ԻԱ. 33։ թ Գր. ԻԲ. 24։ ԻԴ. 10։ ԻԵ. 8։ ԻԶ. 31։

19 ՚Ի հակառակել Հրէիցն՝ հարկ եղեւ բողոքել ՚ի կայսր · իբր ոչ եթէ զազգէն իմմէ ունէի ինչ չարախօսել ։

20 Վասն այսր պատճառանաց աղաչեցի զձեզ՝ տեսանել եւ խօսել · քանզի վասն յուսոյն Իսրայէլի կամ ՚ի շղթայս յայսոսիկ ։

21 Եւ նոքա ասեն ցնա · Մեք ոչ թուղթս ինչ վասն քո ընկալաք ՚ի Հրէաստանէ, եւ ոչ եկեալ ոք յեղբարց պատմեաց՝ կամ խօսեցաւ ինչ վասն քո չարութիւն ։

22 Բայց աղաչեմք ՚ի քէն լսել՝ թէ զի՞նչ խորհիցիս · զի՞ վասն հերձուածոյդ այդորիկ յայտ իսկ է մեզ, զի ամենայն ուրեք հակառակութիւն կրէ ։

23 Ժամ եդեալ նմա օր մի, եկին ՚ի վանսն առ նա բազումք · որոց պատմէր վկայութեամբ զարքայութիւն Աստուծոյ · եւ հաւանեցուցանէր զնոսա վասն Յիսուսի, յօրինացն Մովսէսի եւ ՚ի մարգարէից՝ յայգուէ մինչեւ ցերեկոյ ։

24 Եւ ոմանք հաւանէին բանիցն, եւ կէսքն չհաւատային ։

25 Եւ անմիաբանք լեալ միմեանց՝ արձակէին, յասելն Պօղոսի բան մի · թէ Բարւոք խօսեցաւ Հոգին Սուրբ ՚ի ձեռն Եսայեայ մարգարէի առ հարսն մեր ·

26 Եւ ասէ · Ե՛րթ առ ժողովուրդն, եւ ասասցես · Լսելով լուիջիք՝ եւ մի իմասջիք, եւ տեսանելով տեսջիք՝ եւ մի տեսջիք ·

19 Բայց երբոր Հրէաները ներհակութիւն էին անում, պէտք էլաւ որ ես դէպի կայսրը բողոքեմ · ոչ թէ որ իմ ազգիցս մի չարախօսելոյ բան ունէի ։

20 Այս պատճառներիս համար աղաչեցի ձեզ՝ որ տեսնեմ ձեզ եւ խօսիմ · ինչու որ՝ Իսրայէլի յուսոյն [փ] համար ես այս շղթայիս մէջն [ք] եմ ։

21 Եւ նորանք ասացին նորան · Մենք քեզ համար Հրէաստանիցը ոչ թուղթ ենք առացել՝ եւ ոչ էլ եղբարներիցը մինն եկաւ պատմեց՝ կամ քեզ համար մին չար բան խօսեց ։

22 Բայց աղաչումենք որ քեզանից լսենք՝ թէ ինչ խորհուրդ ունիս · ինչու որ՝ այդ հերձուածիդ համար իսկ մեզ յայտնի է, որ ամէն տեղ ներհակութիւն է կրաչում ։

23 Երբոր նորա հետ մին օր ժամանակ դրած էին, շատ մարդիկ նորա մօտ եկին այն բնակարանումը որ նորանց Աստուծոյ արքայութիւնը վկայութիւնով [բ] պատմումէր · եւ Յիսուսին համար նորանց հաւանացնում, Մովսէսի օրէնքիցն ու մարգարէներիցը՝ առաւօտանց մինչեւ [գ] իրիկունը ։

24 Եւ մին քանիսը խօսքերին հաւանումէին, եւ կէսերը չէին [դ] հաւանում ։

25 Եւ իրար հետ չըմիաբանելած՝ արձակվեցան, երբոր Պօղոս այն մին խօսքըն ասաց · թէ Սուրբ Հոգին Եսայի մարգարէի ձեռովը մեր հայրանց հետ լաւ խօսեց ·

26 Եւ ասաց · Գնա՛ ժողովրդին մօտ՝ եւ ասա · Դուք լսելով կըլսէք՝ եւ չէք իմանայ · եւ տեսնելով կըտեսնէք՝ եւ չէք [ե] տեսնիլ ·

ւ Գլ. ԻԵ. 11 ։
փ Գլ. ԻԶ. 6, 7 ։
ք Գլ. ԻԶ. 29 ։ Եփես. Գ. 1 ։ Դ. 1 ։ Զ. 20 ։ Բ Տիմ. Ա. 16 ։ Բ. 9 ։ Փիլիմ. 10. 13 ։
ա Ղու. Բ. 34 ։ Գլ. ԻԴ. 5. 14 ։ Ա Պետ. Բ. 12 ։ Դ. 14 ։
բ Ղու. ԻԴ. 27 ։ Գլ. ԺԷ. 3 ։ ԺԹ. 8 ։
գ Գլ. ԻԶ. 6. 22 ։
դ Գլ. ԺԴ. 4 ։ ԺԷ. 4 ։ ԺԹ. 9 ։
ե Եսայ. Զ. 9. Երեմ. Ե. 21 ։ Եզեկ. ԺԲ. 2 ։ Մատթ. ԺԳ. 14 ։ 15 ։ Մարկ. Դ. 12 ։ Ղու. Ը. 10 ։ Յովհ. ԺԲ. 40 ։ Հռովմ. ԺԱ. 8 ։

27 Զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանն այնորիկ, եւ ականջօք իւրեանց ծանր լուան, եւ զաչս իւրեանց կափուցին. զի մի երբեք տեսցեն աչօք՝ եւ ականջօքն լուիցեն եւ սրտիւք իմասցին՝ եւ դարձցին, եւ բժշկեցից զնոսա:

ˊ28 Եւ արդ՝ յայտնի լիցի ձեզ, զի հեթանոսաց առաքեցաւ փրկութիւն Աստուծոյ՝ նոքին եւ լուիցեն:

29 Եւ իբրեւ զայս ասաց՝ արտաքս գնացին 'ի նմանէ Հրէայքն. որք ունէին 'ի մէջ իւրեանց զբազում խնդիրս:

30 Եւ եղեւ զերկեամ մի բովանդակ իւրով վարձու:

31 Եւ ընդունէր զամենեսեան՝ որ մտանէին առ նա,

32 Քարոզէր զարքայութիւնն Աստուծոյ, եւ ուսուցանէր վասն Տեառն Յիսուսի Քրիստոսի, անխափան՝ ամենայն համարձակութեամբ:

27 Պատճառն որ՝ այն ժողովրդի սիրտը թանձրացաւ, եւ իրենց ականջներովը, ծանր լսեցին, եւ իրենց աչքերը խփեցին. որ բնաւ աչքով չըտեսնեն՝ եւ ականջներով չըլսեն, եւ սրտով չիմանան՝ եւ չըդառնան, եւ ես բժշկեմ նորանց:

28 Եւ հիմիկ՝ յայտնի լիցի ձեզ՝ որ Աստուծոյ այս փրկութիւնս ուղարկվեցաւ հեթանոսներին, եւ նորանք ˊ կըլսեն:

29 Եւ երբոր սա ասաց՝ Հրէաները դուրս գնացին նորանից. որ նորանք իրենց մէջ շատ վիճմունք ունէին:

30 Եւ բոլոր երկու 'տարի, իրեն վարձքովը կեցաւ այնտեղ:

31 Եւ այն ամէնքին՝ որ նորա մօտ էին մտնում, ընդունումէր,

32 Աստուծոյ արքայութիւնն քարոզում, եւ Տէր Յիսուսի Քրիստոսի համար սովորցնում անխափան ամէն ։ համարձակութենով:

ˊ Մատթ. ԺԳ. 41: 43: Գղ. ԺԳ. 46. 47: ԺԸ. 6: ԻԹ. 21: ԻԶ. 17, 18: Հռովմ. ԺԱ. 11:

։ Գղ. Գ. 31: Եփես. Զ. 19:

# ԹՈՒՂԹ
## ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑ
### ԱՌ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 Պօղոս ծառայ Յիսուսի Քրիստոսի, կոչեցեալ առաքեալ, որոշեալ յաւետարանն Աստուծոյ.

2 Որ յառաջ խոստացաւ ՚ի ձեռն մարգարէից իւրոց գրովք սրբովք,

3 Վասն Որդւոյ իւրոյ եղելոյ ՚ի զաւակէ Դաւթի ըստ մարմնոյ.

4 Սահմանելոյ Որդւոյն Աստուծոյ զօրութեամբ ըստ Հոգւոյն սրբութեան. ՚ի յարութենէ մեռելոց Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ.

5 Որով ընկալաք շնորհս եւ առաքելութիւն՝ ՚ի հնազանդութիւն հաւատոց յամենայն հեթանոսս վասն անուան նորա։

6 Յորս եւ դուք էք կոչեցեալ Յիսուսի Քրիստոսի։

7 Ամենեցուն որոց էք ՚ի Հռովմ, սիրելեաց Աստուծոյ՝ կոչեցելոց սրբոց, շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ՝ եւ ՚ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։

8 Նախ՝ գոհանամ զԱստուծոյ իմոյ ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի

---

1 ՊՕՂՈՍ՝ Յիսուսի Քրիստոսի ծառայ՝ կանչուած ա առաքեալ՝ Աստուծոյ աւետարանին համար բ ընտրուած.

2 Նա որ գ առաջուց խոստացաւ իրեն մարգարէներին ձեռովը սուրբ դ գրքերումը,

3 Իրեն Որդայ համար՝ որ մարմնոյ կողմանէ Դաւթի ե զաւակիցն եղաւ.

4 Եւ Աստուծոյ Որդին սահմանուեցաւ զ զօրութենով սրբութեան Հոգւոյն կողմանէ՝ մեռելների միջից յարութիւն առնելովը՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի է համար.

5 Որ նորանով ընդունեցինք շնորհք եւ ը առաքելութիւն՝ որ հաւատքի հնազանդութիւնն ամէն հեթանոսներին մէջ թ հաստատուի նորա անունին է համար.

6 Որ նորանց միջումը դուք էլ Յիսուսի Քրիստոսի կանչուած էք։

7 Ձեզ ամէնիդ՝ որ Հռոմայ էք՝ Աստուծոյ սիրելիներիդ՝ կանչուած ւ սրբերիդ՝ շնորհք ձեզ հետ եւ խաղաղութիւն Աստուած մեր Հօրից եւ Տէր Յիսուս ե Քրիստոսից։

8 Առաջ գոհանում եմ իմ Աստուածանիցս՝ Յիսուսի Քրիստոսի ձե-

---

ա Գործ. ԻԲ. 21. Ա Կորնթ. Ա. 1 Գաղ. Ա. 1. Ա Տիմ. Ա. 11. Բ. 7. Բ Տիմ. Ա. 11.
բ Գործ. Թ. 15. ԺԳ. 2. Գաղ. Ա. 15.
գ Գլ. Գ. 21. ԺԶ. 26. Գաղ. Գ. 8
դ Գործ. ԻԶ. 6. Տիտ. Ա. 2.
ե Յովհ. Ա. 14 Գաղ. Դ. 4.
զ Մատթ. Ա. 6. 16. Ղու. Ա. 32. Գործ. Բ. 30. Բ Տիմ. Բ. 8.
է Գործ. ԺԳ. 33.
ը Եբր. Թ. 14.
թ Գլ. ԺԲ. 3. ԺԵ. 15. Ա Կորնթ ԺԵ. 10. Գաղ. Ա. 15. Բ. 9. Եփես. Գ. 8.
ժ Գործ. Զ. 7. Գլ. ԺԶ. 26.
ի Գլ. Թ. 15.
լ Գլ. Թ. 24. Ա Կորնթ. Ա. 2. Ա Թես. Դ. 7.
խ Ա Կորնթ. Ա. 3. Բ Կորնթ. Ա. 2. Գաղ. Ա. 3.

վասն ձեր ամենեցուն. զի հաւատք
ձեր պատմին ընդ ամենայն
աշխարհ։
9 Վկայ է ինձ Աստուած, զոր
պաշտեմն հոգւով իմով յաւետարա-
նի Որդւոյ նորա,

10 Թէ որպէս զյիշատակ ձեր առ-
նեմ յամենայն ժամ յաղօթս իմ, ա-
ղաչելով՝ զի թերեւս երբէք յաջո-
ղեսցի ինձ կամօքն Աստուծոյ գալ
առ ձեզ։
11 Քանզի՞ անձկացեալ եմ տեսա-
նել զձեզ, զի փոխեսցից ՚ի ձեզ շը-
նորհս ինչ հոգեւորս՝ առ ՚ի հաս-
տատել զձեզ.
12 Այսինքն է, մխիթարակից լի-
նել ձեզ վասն ընդ միմեանց իմոյ
եւ ձերդ հաւատոյ։
13 Ո՛չ կամիմ եթէ աղէտ իցէք
եղբարք. զի բազում անգամ յօ-
ժարեցի գալ առ ձեզ, եւ արգելեալ
մինչեւ ցայժմ. զի եւ ՚ի ձեզ գտից
պտուղ ինչ որպէս եւ յայլ հեթա-
նոսս։

14 Քանզի Յունաց եւ Բարբարո-
սաց՝ իմաստնոց եւ անմտից պար-
տապան եմ,
15 Այնպէս՝ որչափ իմովսանն, յօ-
ժարութեամբ եւ ձեզ՝ որ ՚ի Հռով-
մայ էք՝ աւետարանել։
16 Զի ոչ եթէ ամօթ ինչ համա-
րիմ զաւետարանն. քանզի զօրու-
թիւն Աստուծոյ է ՚ի փրկութիւն
ամենայն հաւատացելոց, նախ Հրէի՝
եւ ապա Հեթանոսի։

ասիլը ձեզ ամէնքիդ ծ համար. ինչու
որ՝ ձեր հաւատքին ամէն աշխարհ-
քին մէջ պատմըւած է.
9 Աստուած ինծի վկայ հ է՝ որ նո-
րանն ես պաշտաումեմ իմ հոգւոյս՝ նորա
Որդւոյ ձ աւետարանովը՝ թէ ինչպէս
ձեր յիշատակութիւնն ղ անուանեմ.
10 Ամէն ժամանակ իմ աղօթքու-
մբս աղաչելով որ ըլլի թէ մէկ ան-
գամ յաջողվի ճ ինծի՝ Աստուծոյ կամ-
քովը ձեզ մօտ մ գալ.

11 Ինչու որ՝ շատ ցանկանումեմ
ձեզ տեսնելոյ՝ որ մէկ հոգեւոր շը-
նորհք ձեզ վրայ պարգեւեմ, ձեզ
հաստատելոյ յ համար.
12 Այսինքն՝ որ ձեզ հետ մխի-
թարւիմ այս իմ եւ ձեր հաւատքին
համար՝ որ իրար հետ ն ունինք։
13 Եղբարք՝ չեմ կամենում որ
դուք չգիտենաք, թէ շատ ան-
գամ յօժար էլայ՝ որ ձեզ մօտ գամ,
այլ մինչեւ հիմիկ ո արգելւեցայ.
որ ձեր միջումն էլ մէկ պտուղ
գտնեմ ինչպէս որ ուրիշ հեթանոս-
ներին մէջ չ էլ։
14 Պատճառն որ՝ ես Յունաց եւ
Բարբարոսաց. իմաստուններին եւ
անմիտներին պարտական պ եմ։
15 Այնպէս՝ որքան որ ձեռքիցս
գալիս է՝ յօժար եմ ձեզ էլ, որ Հռ-
ոմայ էք՝ աւետարանը քարոզելոյ։
16 Ինչու որ՝ աւետարանն ամօթ
չեմ համարում. պատճառն ջ որ՝
Աստուծոյ ռ զօրութիւն է այն ա-
մէնը փրկելոյ համար՝ որ հաւա-
տումն, առաջ Հրէային՝ եւ յետոյ
ս Հեթանոսին։

ծ Ա Կորնթ. Ա. 4. Փիլիպ. Ա. 3, Կող. Ա. 3. 4. Ա Թես. Ա. 2. Փիլիմ. 4.
կ Գլ. ԺԶ. 19. Ա Թես. Ա. 8.
հ Գլ. Թ. 1. Բ Կորնթ. Ա. 23. Փիլիպ. Ա. 8. Ա Թես. Բ. 5.
ձ Գործ. ԻԵ. 23 Բ Տիմ. Ա. 3.
ղ Ա Թես. Գ. 10.
ճ Գլ. ԺԵ. 23. 32. Ա Թես. Գ. 10.
մ Յովհ. Դ. 15.
յ Գլ. ԺԵ. 29.
ն Տիտ. Ա. 4. Բ Պետ. Ա. 1.
շ Գլ. ԺԵ. 23.
ո Գործ. ԺԶ. 7. Ա Թես. Բ. 18.
չ Փիլիպ. Դ. 17.
պ Ա Կորնթ. Թ. 16.
ջ Սաղ. Խ. 9, 10.
ռ Մարկ. Ը. 38. Բ Տիմ. Ա. 8.
ս Ա Կորնթ. Ա. 18. ԺԵ. 2.
վ Ղուկ. Բ. 30, 31, 32. ԻԴ. 47. Գործ. Գ. 26. ԺԳ. 26. 46. Գլ. Բ. 9.

17 Զի արդարութիւնն Աստուծոյ նովաւ յայտնի ՚ի հաւատոց ՚ի հաւատս. որպէս եւ գրեալ է, թէ Արդարն ՚ի հաւատոց կեցցէ։

18 Քանզի յայտնեալ է բարկութիւնն Աստուծոյ յերկնից ՚ի վերայ ամենայն ամբարշտութեան եւ անիրաւութեան մարդկան, որք զճշմարտութիւնն անիրաւութեամբ ունին։

19 Վասն զի գիտութիւնն Աստուծոյ յայտնի է ՚ի նոսա. քանզի Աստուած իսկ յայտնեաց նոցա։

20 Զի աներեւոյթք նորա ՚ի ըս-կըզբանէ աշխարհի, արարածովքս իմացեալ տեսանին. այսինքն է մշտնջենաւորութիւն եւ զօրութիւն՝ եւ Աստուածութիւն նորա. զի ոչ գտանիցեն ամենեւին տալ պատասխանի։

21 Զի ծանեան զԱստուած, եւ ոչ իբրեւ զԱստուած փառաւորեցին՝ կամ գոհացան, այլ նանրացան ՚ի խորհուրդս իւրեանց, եւ խաւարեցան անմտութեամբ սիրտք նոցա։

22 Զանձինս առ իմաստունս ունէին՝ յիմարեցան։

23 Եւ փոխեցին զփառս անեղծին Աստուծոյ՝ ՚ի նմանութիւն պատկերի եղծանելի մարդոյ եւ թռչնոց եւ չորքոտանեաց եւ սողնոց։

24 Վասն որոյ մատնեաց՝ զնոսա Աստուած ՚ի ցանկութիւն սրտից

17 Ինչու որ՝ Աստուծոյ արդարութիւնը նորանով յայտնըւում՝ հաւատքից հաւատքի մէջ. ինչպէս որ էլ գրւած Հէ. թէ Արդարը հաւատքից + կապրի։

18 Պատճառն որ՝ Աստուծոյ բարկութիւնը երկինքից կը յայտնըւի մարդկանց ամէն ամբարշտութեան եւ անիրաւութեան վերայ, որ ճշմարտութիւնըն անիրաւութենով ր խափանումեն.

19 Նորահամար որ՝ Աստուծոյ գիտութիւնը յայտնի է յ նորանցում. ինչու որ՝ իսկ Աստուած յայտնեց – նորանց։

20 Պատճառն որ՝ նորա աներեւոյթ ÷ բաները, որ է՝ նորա մշտա լինելը եւ զօրութիւնը եւ Աստուածութիւնը աշխարհքի սկզբիցն ստեղծւածներովս իմացւելով տեսնըւումեն, այնպէս որ բնաւ չը կարողանան պատասխան տալ։

21 Ինչու որ՝ Աստուծոյն ճանաչեցին, այլ նորան Աստուծոյ պէս չը փառաւորեցին՝ կամ չնորհակալ էլան. բայց իրենց մտածմունքներումը փչացան՝ եւ նորանց սրտերն անմտութենով + խաւարեցան։

22 Իրենց անձները՝ որ իմաստուններ տեղ էին համարում, • յիմարեցան։

23 Եւ չապականելի Աստուծոյ փառքը փոխեցին ապականելի մարդոյ եւ թռչուններին եւ չորս ոտանիների եւ սողացողների պատկերին նմանութեան ÷ հետ։

24 Նորահամար Աստուած նորանց մատնեց իրենց սրտերի – ցանկու-

Հ Գղ. Գ. 21.
+ Ամբ. Բ. 4. Յովհ. Գ. 36. Գաղ. Գ. 11. Փիլիպ. Գ. 9. Եբր. Ժ. 38.
ր Գործ. ԺԷ. 30. Եփես. Ե. 6. Կող. Գ. 6.
յ Գործ. ԺԴ. 16.
– Յովհ. Ա. 9.
÷ Սաղ. ԺԹ. 1. Գործ. ԺԴ. 16. ԺԷ. 27. ևն.
+ Դ Թագ. ԺԷ. 15. Երեմ. Բ. 5. Եփես. Դ. 17, 18.
• Երեմ. Ժ. 14.
÷ Բ Օրին. Դ. 16. ևն. Սաղ. ՃԶ. 20. Եսայ. Խ. 18. 26. Երեմ. Բ. 11. Եզեկ. Ը. 10. Գործ. ԺԷ. 29.
– Սաղ. ՁԱ. 12. Գործ. Է. 42. Եփես. Դ. 18, 19. Բ Թես. Բ. 10, 11.

նոցա 'ի պղծութիւն, անարգել ըզ մարմինս իւրեանց յանձինս ։

25 Որք փոխանակեցին զճշմարտութիւն Աստուծոյ ընդ ստութեան. հնազանդեցան՝ եւ պաշտեցին զարարածս, եւ ոչ զԱրարիչն. որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն ։

26 Վասն այնորիկ մատնեաց ըզ նոսա Աստուած 'ի կիրս անարգութեան. զի էգք նոցա փոխանակեցին զպէտս բնականս 'ի պէտս անբնականս ։
27 Նոյնպէս եւ արուայն թողեալ զբնական պէտս իգութեանն, բորբոքեցան ցանկութեամբք իւրեանց 'ի միմեանս. արուք ընդ արուս ըզ խայտառակութիւն գործէին, եւ զվարձ փոխարինին՝ որ պարտ էր մոլորութեան նոցա՝ յանձինս իւրեանց ընդունէին ։

28 Եւ որպէս՝ զի ոչ ընտրեցին զԱստուած ունել 'ի գիտութեան, մատնեաց զնոսա Աստուած 'ի միտս անարգութեան՝ գործել զանարժանս ։
29 Լցեալքն ամենայն անիրաւութեամբ, պոռնկութեամբ, անզգամութեամբ, ագահութեամբ, չարութեամբ, լի նախանձու, սպանութեամբ, հեռիւ, նենգութեամբ, չարաբարութեամբ, շողմոգք,
30 Զրախօսք, Աստուածատեացք, թշնամանօղք, ամբարտաւանք, ամբարհաւաճք, գտիչք չարեաց, ըզ ծնօղս անարգուք.

31 Անմիտք, ուխտադրուժք, անագորոյնք, աննուէրք, անողորմք.

թեան մէջ որ պղծուին. որ իրենց բ մարմիններն իրենց անձերնումը գ խայտառակեն.
25 Նորանք որ Աստուծոյ ճշմարտութիւնը ստութեան հետ դ փոխեցին. հնազանդվեցան եւ պաշտեցին ստեղծուածներին, եւ ոչ թէ ե Ստեղծողին. որ օրհնուած է յաւիտեան. ամէն ։
26 Նրա համար Աստուած մատնեց նորանց խայտառակ ցանկութիւններին մէջ. որ նորանց կանայքը բնական գործածութիւնը փոխեցին անբնական գործածութեան զ հետ ։
27 Այնպէս էլ արձ մարդիկը կանանց բնական գործածութիւնը թողին, եւ իրենց ցանկութիւններովն իրար հետ բորբոքվեցան. արձ մարդ արձ մարդոյ հետ խայտառակութիւն էին գործում, եւ այն փոխադարձն՝ որ արժան էր իրենց մոլորութեանն՝ իրենց անձերնումն ընդունումէին ։
28 Եւ նրա համար որ չընտրեցին՝ Աստուծոյն ճանաչել, Աստուած մատնեց նորանց անարգութեան մտքի մէջ որ անարժան բաներ է գործեն.
29 Այն լցվածներն ամէն անիրաւութենով, պոռնկութենով, անզգամութենով, ագահութենով, չարութենով, լիքն նախանձութենով, մարդասպանութենով, կռվով, խաբեբայութենով, չարասրտութենով. քսուներ,
30 Բամբասօղներ, Աստուածատօղներ, թշնամանք խօսօղներ, ամբարտաւաններ, գոռօղներ, չար բաներ հնարօղներ, ծնօղներին անարգօղներ,
31 Անմիտներ, խօսք չը պահօղներ, անգութներ, անմարդիներ, անողորմներ.

բ Ղև. ԺԸ. 22.
գ Ա Կորնթ. Զ. 18. Ա Թես. Դ. 4. Ա Պետ. Դ. 3.
դ Ա Թես. Ա. 9. Ա Յովհ. Ե. 20.
ե Եսայ. ԽԴ. 20. Երեմ. Ժ. 14. ԺԴ. 25. Ամովս. Բ. 4.
զ Ղև. ԺԸ. 22. 23. Եփես. Ե. 12. Յուդ. 10.
է Եփես. Ե. 4.

32 Ովք հասեալ էին յԱստուծոյ իրաւանցն վերայ, եթէ ովք զայսպիսիսն գործեն՝ արժանի են մահու. եւ ոչ միայն որ զայն առնեն, այլ եւ որ կամակիցն լինին գործելեացն։

32 Որ նորանք լաւ հասկանումէին Աստուծոյ ա իրաւունքները, թէ նորանք որ այսպէսի բաներ են գործում՝ մահի արժանաւոր են. եւ չէ թէ որ միմիայն սա են բ անում, այլ եւ որ սա գործողներին կամակից են գ լինում։

## ԳԼ. Բ

1 Վասն որոյ առանց պատասխանի տալոյ ես՝ ով մարդ, որ դատիդ. զի որով դատիս զընկերն, զանձն քո դատապարտես, զի զնոյն գործես՝ որով դատիսն։

2 Քանզի գիտեմք, եթէ Աստուծոյ դատաստանն ճշմարտութեամբ է 'ի վերայ այնոցիկ՝ որ զայնպիսիսն գործեն։

3 Իսկ արդ՝ խորհիցիս զայս՝ ով մարդ, որ դատիս զայնոսիկ՝ որ զայնպիսիսն գործեն՝ եւ դու զնոյն գործես, եթէ դու ապրիցես 'ի դատաստանաց անտի Աստուծոյ։

4 Եթէ զմեծութեամբ քաղցրութեանն նորա, եւ զներելոյն եւ զերկայնմտութեանն արհամարհիցես. չգիտիցես՝ զի քաղցրութիւնն Աստուծոյ զքեզ յապաշխարութիւն ածէ։

5 Այլ ըստ խստութեան քում, եւ ըստ անզեղջ սրտի գանձես անձին քում բարկութիւն՝ յաւուր բարկութեան եւ յայտնութեան արդար դատաւորութեանն Աստուծոյ։

6 Որ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց։

1 Նորահամար դու առանց պատասխան տալոյ ես՝ ով մարդ, որ ա դատումես. պատճառն որ՝ ինչ բանով որ քո ընկերից դատումես, նորանով քո անձը բ դատապարտումես. ինչու որ՝ դու էլ խկ նոյն բանն ես գործում՝ որ նորանով դատումես։

2 Պատճառն որ՝ գիտումենք թէ Աստուծոյ դատաստանը ճշտակ է նորանց վերայ, որ այնպէսի բաներ են գործում։

3 Բայց՝ ով մարդ, որ դատումես նորանց՝ որ այսպէսի բաներ են գործում, եւ դու խկ նոյնն ես գործում, միթէ կարծումես՝ թէ դու ազատ կը մնաս Աստուծոյ դատաստանիցը։

4 Միթէ նորա քաղցրութեան գ մեծութիւնը եւ դ ներելը ու երկայնամտութիւնը ոչ ինչ ե կը համարես. միթէ չես գիտում, որ Աստուծոյ քաղցրութիւնը քեզ դէպի ապաշխարութիւն է զ տանում։

5 Բայց դու քո խստութիւնովդ եւ անզեղջ սրտովդ բարկութիւն ես կիտում քո անձից համար՝ բարկութեան եւ Աստուծոյ արդար դատաստանի յայտնութեան է օրուայ։

6 Նա որ ամէն մէկին իւրեանց գործքերին պէս հատուցումն ը կը տայ։

ա Գլ. Բ. 2. բ Գլ. Զ. 21. գ Ովսէ Է. 3. Սաղ. Ծ. 18.

—

ա Գլ. Ա. 20. բ Բ Թագ. ԺԲ. 5. 6. 7. Մատթ. Է. 1. 2. Յովհ. Ը. 9. գ Գլ. Թ. 23. Եփես. Ա. 7. Բ. 4. 7. դ Գլ. Գ. 25. ե Եսայ ԼԴ. 6. զ Եսայ. Լ. 18. Բ Պետ. Գ. 9. 15. է Բ Օրին. ԼԲ. 35. Յակ. Ե. 3. ը Յոբ. ԼԴ. 11. Սաղ. ԿԲ. 12. Առակ. ԻԴ. 12. Երեմ. ԺԷ. 10. ԼԲ. 19. Մատթ. ԺԶ. 27. Գլ. ԺԴ. 12. Ա Կորնթ. Գ. 8. Բ Կորնթ. Ե. 10. Յայտ. Բ. 23. Ի. 12. ԻԲ. 12.

7 Որ համբերութեամբ են 'ի
գործս բարութեան՝ փառս եւ
պատիւ եւ զանեղծութիւն խնդ-
րեն, զկեանսն յաւիտենից։

8 Իսկ որ 'ի հակառակութենէ
անտի են՝ եւ ապստամբք 'ի ճշ-
մարտութենէն՝ եւ զհետ երթեալ
զանիրաւութեան, բարկութիւն եւ
սրտմտութիւն՝
9 Նեղութիւն եւ անձկութիւն 'ի
վերայ ամենայն մարդոյ՝ որ գործէ
զչար. նախ Հրէի՝ եւ ապա Հեթա-
նոսի։
10 Փառք պատիւ եւ խաղաղու-
թիւն ամենայնի՝ որ գործէ զբարի.
նախ Հրէի՝ եւ ապա Հեթանոսի։

11 Զի ոչ է աչառութիւն առա-
ջի Աստուծոյ։
12 Որք միանգամ առանց օրի-
նացն մեղան, առանց օրինացն
կորիցեն. եւ որք ընդ օրինօքն մե-
ղան, օրինօքն եւ դատեսցին։

13 Զի ոչ եթէ որ լսօղք օրինացն
են՝ արդարացեալ են առաջի Աս-
տուծոյ, այլ առնօղք օրինացն ար-
դարասցին։
14 Այլ յորժամ հեթանոսք՝ որ զօ-
րէնս ոչ ունին, բնութեամբ զօրի-
նացն գործիցեն, նոքա՝ որ զօրէնսն
ոչ ունին՝ անձանց իւրեանց իսկ են
օրէնք։

15 Որք ցուցանեն զգործս օրինացն
գրեալ 'ի սիրտս իւրեանց՝ վկայու-
թեամբ մտաց իւրեանց, եւ յան-
դիմանել զմիմեանս 'ի խորհրդոց
իւրեանց, կամ թէ պատասխանի
իսկ տալ,
16 Յաւուրն՝ յորում դատիցի Աստ-

7 Նորանց՝ որ համբերութենով
բարի գործքերի մէջ կացած են՝
եւ փառք եւ պատիւ եւ չապակա-
նելի բաներ են ուզում, յաւիտե-
նական կեանքը.
8 Բայց նորանց՝ որ հակառակող
են՝ եւ ճշմարտութենիցն ապստամբ-
ված՝ եւ անիրաւութեան ետեւէն
գնացած, բարկութիւն եւ ե սրտա-
մտութիւն։
9 Նեղութիւն եւ վիշտք այն ա-
մէն մարդոյ վերայ՝ որ չարութիւն
է գործում. առաջ Հրէային՝ եւ
յետոյ զ Հեթանոսին։
10 Փառք եւ պատիւ եւ խաղա-
ղութիւն այն ամէնին վերայ՝ որ
բարի է գործում. առաջ Հրէային՝
եւ յետոյ է Հեթանոսին։
11 Ինչու որ՝ Աստուծոյ մօտ երես-
պաշտութիւն ը չըկայ։
12 Նորանք՝ որ օրէնքից դուրս
մեղք գործեցին, էլ օրէնքից դուրս
կը կորչին. եւ նորանք՝ որ օրէնքի
տակ մեղք գործեցին, օրէնքովը
կը դատուին։
13 Պատճառն որ՝ չէ թէ նորանք՝
որ օրէնք լսող են՝ Աստուծոյ ա-
ռաջին արդար են, բայց օրէնք
կատարօղները թ կարդարանան։
14 Որովհետեւ Հեթանոսները՝ որ օ-
րէնքը չունին՝ երբոր բնութենով
օրէնքին գործքերն անեն, նորանք՝
որ օրէնքը չունին, իրենց անձ-
ներին համար իսկ իրենք են օ-
րէնք,
15 Որ ցոյց են տալիս թէ օրէնքի
գործքը նորանց սրտերումը գրված
է՝ որ նորանց միտքն էլ վկայում է,
եւ նորանց մտածմունքները իրար
յանդիմանումեն, կամ թէ պատաս-
խան են տալիս,
16 Այն օրն՝ որ Աստուած մարդ-

բ Յոբ. ԻԴ. 13. Գղ. Ա. 18. բ Թես. Ա. 8. դ Ամով. Գ. 2. Ղուկ. ԺԲ. 47. 48. Ա Պետ. Դ. 17. է Ա Պետ. Ա. 7. ը Բ Օրին. Ժ. 17. Բ Մնաց. ԺԹ. 7. Յոբ. ԼԴ. 19. Գործ. Ժ. 34. Գաղ. Բ. 6. Եփես. Զ. 9. Կող. Գ. 25. Ա Պետ. Ա. 17. թ Մատթ. Է. 21. Յակ. Ա. 22. 23. 25. Ա Յովհ. Գ. 7.

տուած զգաղտնիս մարդկան՝ ըստ
աւետարանին իմոյ, ՚ի ձեռն Յի-
սուսի Քրիստոսի։
17 Ապա եթէ դու Հրեայ ան-
ուանեալ ես, եւ յենեալ ես յօ-
րէնսն՝ եւ պարծիս յԱստուած,
18 Եւ գիտես զկամս նորա, եւ
ընտրես զլաւն, եւ խրատեալ ես
յօրինացն.
19 Վստահ ես յանձն քո առաջ-
նորդ լինել կուրաց՝ լոյս խաւարե-
լոց.
20 Խրատիչ անզգամաց՝ վարդա-
պետ տղայոց. ունել զկերպարանս
գիտութեան եւ ճշմարտութեան օ-
րինացն։
21 Իսկ արդ՝ որ ուսուցանես զըն-
կերն, զանձն քո ոչ ուսուցանես.
որ քարոզես չգողանալ՝ գողանաս։
22 Որ ասես չշնալ՝ շնաս. որ
գարշիս ՚ի մեհենեաց՝ զսեղանս կո-
ղոպտես։
23 Որ օրինօքն պարծիս՝ յանցա-
նել ըստ օրէնսն զԱստուած անար-
գես։
24 Զի անուն Աստուծոյ վասն ձեր
հայհոյի ՚ի մէջ հեթանոսաց՝ որպէս
եւ գրեալ է։
25 Թլփատութիւն օգնէ եթէ զօ-
րէնսն պահիցես. ապա եթէ յան-
ցաւոր օրինացն իցես, թլփատու-

կանց ծածուկ բաները [ծ] կը դատէ՝
իմ աւետարանիս [կ] նայէն Յիսուս
Քրիստոսի [հ] ձեռքով։
17 Ապա դու՝ որ Հրեայ [ձ] անուան-
ուած ես, եւ օրէնքին վրայ յոյս ես
[ղ] դնում, եւ Աստուծով [ճ] պար-
ծենում.
18 Եւ նորա կամքը [մ] գիտում ես,
եւ նա որ լաւն է ընտրում, եւ օ-
րէնքիցն խրատուած [յ] ես.
19 Քո անձիդ վրայ վստահու-
թիւն ունիս՝ որ կոյրերի առաջ-
նորդ լինիս՝ եւ խաւարվածների
[ն] լոյս.
20 Անմիտների խրատ տուող՝ տղ-
աների վարդապետ. որ օրէնքի
գիտութեան եւ ճշմարտութեան
կերպարանքն [շ] ունիս։
21 Ուրեմն դու՝ որ քո ընկերից
սովորցնումես, քո անձիդ չես սո-
վորցնում. դու որ քարոզումես՝
թէ չը գողանան, [ո] գողանումես.
22 Որ ասումես՝ թէ շնութիւն չը-
գործեն՝ շնութիւն ես գործում.
դու որ կռքերիցը գարշումես՝ սե-
ղանները ես [չ] թալանում.
23 Դու՝ որ օրէնքովը պարծենու-
մես, օրէնքին դէմ գործելով Աս-
տուծուն [պ] անարգումես։
24 Ինչու որ՝ Աստուծոյ անունը
ձեր պատճառովը հայհոյւումէ հե-
թանոսներին մէջ, ինչպէս որ էլ
գրած [ջ] է։
25 Թլփատութիւնը շահաւոր է
թէ որ օրէնքը պահես. ապա թէ
որ օրէնքին դէմ գործես, քո

ծ Ժող. ԺԲ. 14. Մատթ. ԻԵ. 31. Յովհ. ԺԲ. 48. Գլ. Գ. 6. Ա Կորնթ. Դ. 5. Յայտ. Ի. 12.
կ Գլ. ԺԶ. 25. Ա Տիմ. Ա. 11. Բ Տիմ. Բ. 8.
հ Յովհ. Ե. 22. Գործ. Ժ. 42. ԺԷ. 31. Բ Տիմ. Դ. 1. 8. Ա Պետ. Դ. 5.
ձ Մատթ. Գ. 9. Յովհ. Ը. 33. Գլ. Թ. 6, 7. Բ Կորնթ. ԺԱ. 22.
ղ Միք. Գ. 11. Գլ. Թ. 4.
ճ Եսայ. ԽԸ. 2. Յովհ. Ը. 41.
մ Բ Օրին. Դ. 8. Սաղ. ՃԽԷ. 19. 20.
յ Փիլիպ. Ա. 10.
ն Մատթ. ԺԵ. 14. ԻԳ. 16, 17. 19. 24. Յովհ. Թ. 34. 40. 41.
շ Գլ. Զ. 17. Բ Տիմ. Ա. 13. Գ. 5.
ո Սաղ. Ծ. 16, ևն. Մատթ. ԻԳ. 3. ևն.
չ Մաղ. Գ. 8.
պ Համար. 17.
ջ Բ Թագ. ԺԲ. 14. Եսայ. ԾԲ. 5. Եզեկ. ԼԶ. 20. 23.

թիւն քո անթլփատութիւն եղեւ։

26 Իսկ եթէ անթլփատութիւնն զիրաւունս օրինացն պահիցէ, ոչ ապաքէն անթլփատութիւն նորա 'ի թլփատութիւն համարեսցի.

27 Եւ դատեսցի որ 'ի բնէ անթլփատութիւն՝ զօրէնսն կատարելով՝ զքեզ, որ գրովն եւ թլփատութեամբն յանցաւոր օրինացն իցես։

28 Զի ոչ եթէ՝ որ յայտնի Հրէայն է, եւ ոչ որ յայտնի մարմնով թլփատութիւն.

29 Այլ որ 'ի ծածուկ Հրէայն է, եւ թլփատութիւն՝ սրտի հոգւով եւ ոչ գրով. որոյ գովութիւնն ոչ 'ի մարդկանէ է, այլ յԱստուծոյ։

թլփատութիւնդ անթլփատութիւն —եղաւ։

26 Բայց թէ որ անթլփատութիւնն օրէնքի իրաւունքները պահէ, չէ՞ որ նորա անթլփատութիւնը թլփատութիւն - կը համարուի։

27 Եւ նա որ բուն անթլփատութիւն է՝ օրէնքը կատարելով կը դատէ քեզ, որ գրով եւ թլփատութենով օրէնքի դէմ գործող կ'ըլլաս.

28 Պատճառն որ՝ ոչ թէ նա է Հրէայ՝ որ դրսի երեւութով է, եւ ոչ թէ նա է թլփատութիւնն՝ որ մարմնով դրսի երեւութով ÷ է.

29 Բայց նա՝ որ ներսեւանց ծածուկ Հրէայ = է, եւ սրտի = թլփատութիւնը հոգւով եւ ոչ թէ — գրով. որ նորա գովասանքը ոչ թէ մարդկանցից է, այլ ‡ Աստուածանից։

## ԳԼ. Գ

1 Իսկ արդ՝ զինչ աւելի է Հրէին, կամ զինչ օգուտ 'ի թլփատութենէ անտի։

2 Բազում ինչ ամենայն իրօք. նախ այն իսկ՝ զի հաւատարիմ եղեն պատգամքն Աստուծոյ։

3 Իսկ արդ՝ եթէ չէր հաւատացեալ ոմանց՝ միթէ անհաւատութիւն նոցա զԱստուծոյ հաւատամն խափանէ՞ր. քաւ լիցի։

4 Արդ՝ եղիցի Աստուած ճշմարիտ՝ եւ ամենայն մարդ սուտ. որպէս եւ գրեալ է. Որպէս արդար եղիցիս 'ի բանս քո, եւ յաղթեսցես 'ի դատել քեզ։

5 Իսկ արդ՝ եթէ ապիրատութիւն մեր զԱստուծոյ արդարութիւն յան-

1 Ապա ուրեմն՝ Հրէան ինչ աւելի բան ունի, կամ՝ այն թլփատութենիցն ինչ օգուտ է գալիս։

2 Շատ բաներ՝ ամէն կողմանէ. առաջ իսկ նա որ Աստուծոյ աւանդները նորանց — հաւատացվեցան։

3 Բայց ինչ է. թէ որ մէկ քանիսը ‡ չըհաւատացին՝ միթէ նորանց անհաւատութիւնն Աստուծոյ հաւատքը կը խափանէ՞. քաւ ‡ լիցի։

4 Ուրեմն թող Աստուած ճշմարիտ ÷ լինի՝ եւ ամէն մարդ ⊢ սուտ. ինչպէս որ էլ գրված է նորահամար. Որ արդար լինիս քո խօսքերումդ, եւ յաղթես՝ երբոր ⊥ դատվիս։

5 Բայց թէ որ մեր անիրաւութիւնն՝ Աստուծոյ արդարութիւնը

— Գաղ. Ե. 3.
— Գործ. Ժ. 34, 35.
Հ Մատթ. ԺԲ. 41, 42.
÷ Մատթ. Գ. 9.
Յովհ. Ը. 39.
Գղ. Թ. 6; 7.
Գաղ. Զ. 15.

Յայտ. Բ. 9.
Ա Պետ. Գ. 4.
Կող. Բ. 11.
Փիլիպ. Գ. 3.
Գլ. Ե. 6. Բ
Կորնթ. Գ. 6.
‡ Ա Կորնթ. Դ. 5.
Բ Կորնթ. Ժ. 18.

Ա Թեսա. Բ. 4.
—
— Բ Օրին. Դ. 7, 8. Սաղ. ՃԽԷ. 19, 20 Գլ. Բ. 18. Թ. 4.
Բ Գլ. Ժ. 16. Եբր. Դ. 2.

‡ Թուոց. ԻԳ. 19.
Գլ. Թ. 6. ԺԱ. 29. Բ Տիմ. Բ. 13. Յոբ. Խ. 8.
÷ Յովհ. Գ. 33.
⊢ Սաղ. ԿԲ. 9. ՃԺԵ. 11.
⊥ Սաղ. ԾԱ. 4.

դիման կացուցանէ՝ զինչ ասեմք ․
միթէ անիրաւ ինչ է Աստուած՝ որ
ածէ զբարկութիւն ․
6 Ըստ մարդկութեան ասեմ, քաւ
լիցի ․ ապա թէ ոչ՝ զիա՞րդ դատի
Աստուած զաշխարհ ։
7 Զի եթէ ճշմարտութիւնն Աս-
տուծոյ յիմում ստութեանն առա-
ւելաւ ՚ի փառս նորա, զի՞ ես ևս
իբրև զմեղաւոր դատիմ ։

8 Եւ կամ թէ՝ որպէս հայհո-
յիմքն, և որպէս ասեն զմէնջ ո-
մանք ասել, թէ արասցուք չար՝
զի եկեսցէ բարի ․ որոց դատաս-
տանքն յիրաւի են ․

9 Եւ արդ՝ ի՞ւ իւիք առաւել ի-
ցեմք ․ ապաքէն և ոչ իւիք ․ քան-
զի յառաջագոյն իսկ մեղադիր եղ-
եաք Հրէից և հեթանոսաց՝ ամե-
նեցուն ընդ մեղօք լինելոյ ։

10 Որպէս և գրեալ է ․ թէ Ո՛չ
ոք է արդար՝ և ոչ մի ․
11 Եւ ոչ գոյ որ իմանայ, և ոչ
ոք է՝ որ խնդրէ զԱստուած ։

12 Ամենեքեան խոտորեցան ՚ի մի-
ասին և անպիտանացան, ոչ ոք է՝
որ առնէ զքաղցրութիւն, և ոչ ոք
է մինչև ՚ի մի ։
13 Գերեզման բաց է կոկորդ նո-
ցա, լեզուօք իւրեանց նենգաւորք
եղեն ․ թոյնք իժից ՚ի ներքոյ շր-
թանց նոցա ։
14 Որոց բերանք անիծիւք և
դառնութեամբ լի են ։
15 Երագ են ոտք նոցա հեղուլ
զարիւն ։
16 Բեկումն և թշուառութիւն ՚ի
ճանապարհս նոցա ․

յայտնի երևցնում է, էլ ինչ ա-
սենք ․ միթէ անիրաւ է Աստուած՝
որ բարկութիւնն է թափում ։
6 Մարդոյ կերպով եմ ե ասում ․
քաւ լիցի ․ ապա թէ չէ՝ Աստուած
ինչպէս կը դատէ զ աշխարհքը ։
7 Ինչու որ՝ եթէ Աստուծոյ ճըշ-
մարտութիւնն իմ ստութենովս ա-
ւելացաւ նորա փառքին համար,
էլ ինչու ես մեղաւորի պէս կըդատա-
վիմ ։
8 Եւ կամ թէ՝ ինչպէս որ մենք
հայհոյվումենք, և ինչպէս որ մին
քանիսն ասումեն մեզ համար՝ որ ա-
ասցինք, թէ չար գործենք՝ որ բա-
րին է գայ ․ որ նորանց դատաստա-
նըն ուղղոյ է ․
9 Եւ հիմիկ՝ ինչ բանով աւելի
ենք ․ խօսքի որ՝ բնաւ մին բանով
էլ չէ ․ պատճառն որ՝ առաջ մե-
ղադրեցինք Հրէաներին և հեթա-
նոսներին՝ որ ամէնքը մեղքերի տակն
ը են ․
10 Ինչպէս որ էլ գրված է, թէ
Արդար չկայ՝ բնաւ մինն էլ թ չէ ։
11 Եւ ոչ մի չկայ՝ որ իմանայ,
և ոչ մի չկայ՝ որ Աստուծոյն
խնդրէ ։
12 Ամէնքը ճանապարհիցը դուրս
գնացին՝ և անպիտան էղան ․ ոչ
մի չկայ՝ որ քաղցրութիւն անէ,
ոչ մի չկայ մինչև մինն էլ չկայ ։
13 Նորանց կոկորդը բաց գերեզ-
ման է, և իրենց լեզուներովը խա-
բեբայութիւն են ժ անում ․ օձերի
թոյնը նորանց պռօշներին տակն ի է ։
14 Նորանց բերանը անէծքով և
դառնութենով լիքն լ է ։
15 Նորանց ոտները շուտաշնաց
են արիւն թափելոյ խ համար ։
16 Կորուստ և թշուառութիւն է
նորանց ճանապարհներումը,

ե Գղ. Զ. 19 · Գաղ. Գ. 15 ·
զ Յննդ. ԺԸ. 25 · Յոբ. Ը. 3 · ԼԴ. 17 ·
է Գղ. Ե. 20 · Զ. 1. 15 ·
ը Համար. 23 · Գաղ. Գ. 22 ·
թ Սաղ. ԺԴ. 1, 2. 9 · ԾԳ. 1 ·
ժ Սաղ. Ե. 9 · Երեմ. Ե. 16 ·
ի Սաղ. ՃԽ. 3 ·
լ Սաղ. Ծ. 7 ·
խ Առակ. Ա. 16 · Եսայ. ԾԹ. 7, 8 ·

17 Եւ զճանապարհն խաղաղութեան ոչ ծանեան։

18 Ո՛չ է երկիւղ Աստուծոյ առաջի աչաց նոցա։

19 Բայց գիտեմք՝ որ ինչ միանգամ օրէնքն ասեն՝ այնոցիկ որ ընդ օրինօքն են ասեն. զի ամենայն բերան խցցի, եւ պարտապարտ լիցի ամենայն աշխարհ Աստուծոյ։

20 Զի 'ի գործոց օրինաց ոչ արդարասցի ամենայն մարմին առաջի նորա. քանզի յօրինացն է գիտութիւն մեղաց։

21 Բայց արդ՝ առանց օրինացն իսկ արդարութիւնն Աստուծոյ յայտնեալ է՝ վկայեալ յօրինաց անտի եւ 'ի մարգարէից։

22 Քանզի արդարութիւնն Աստուծոյ 'ի հաւատոց անտի Յիսուսի Քրիստոսի յամենայն հաւատացեալս. եւ ոչ ինչ է խտիր։

23 Քանզի ամենեքեան մեղան. եւ նուազեալ են 'ի փառաց անտի Աստուծոյ։

24 Եւ արդարանան ձրի նորին շնորհօք 'ի ձեռն փրկութեանն որ 'ի Քրիստոս Յիսուս.

25 Զոր յառաջն եդ Աստուած 'ի քաւութիւն 'ի ձեռն հաւատոց արեամբն նորա, 'ի հանդէս արդարութեան նորա վասն թողութեան

17 Եւ խաղաղութեան ճանապարհը չը ճանաչեցին։

18 Աստուծոյ վախը նորանց աչքերին առաջին հ չէ։

19 Բայց գիտեմք՝ թէ ամէն ինչ որ օրէնքն ասէ՝ նորանց է ասում, որ օրէնքին տակն ձ են. որ ամէն բերան ղ խփուի, եւ ամէն աշխարհք Աստուծոյ առաջին պատապարտելի ճ լինի։

20 Պատճառն որ՝ օրէնքի գործքերիցը բնաւ մին մարմին չի արդարանալ նորա մ առաջին. ինչու որ՝ օրէնքովը մեղքի գիտութիւն է յ լինում։

21 Բայց հիմիկ՝ իսկ առանց օրէնքին Աստուծոյ արդարութիւնը յայտնուած ն է՝ նա որ օրէնքիցն ու շ մարգարէներիցը վկայուած ո է։

22 Պատճառն որ՝ Աստուծոյ արդարութիւնը Յիսուսի Քրիստոսի հաւատքիցն այն ամէնին վերայ է գալիս՝ որ չ հաւատումեն. եւ բնաւ ջոկութիւն պ չկայ։

23 Նրահամար որ՝ ամէնքը մեղանչեցին, եւ Աստուծոյ փառքիցը ջ պակասեցան։

24 Եւ ձրի են արդարանում նորա ռ շնորհքովը՝ այն փրկութեան ձեռովն՝ որ Յիսուս Քրիստոսումն ս էլաւ.

25 Որ Աստուած նորան առաջ դրաւ՝ քաւութիւն վ լինելոյ համար նորա արիւնովը հաւատքի տ ձեռովը. որ իւրեն արդարութիւնը ցոյց

հ Սաղ. ԼԵ. 1. ձ Յովհ. Ժ. 34. ԺԵ. 25. ղ Յոբ. Ե. 16. Սաղ. ՃԵ. 42. Եզեկ. ԺԶ. 63. Գլ. Ա. 20. Բ. 1. ճ Համար. 9. 23. Գլ. Բ. 2. մ Սաղ. ՃԽԲ. 2. Գործ. ԺԳ. 39. Գաղ. Բ. 16. Գ. 11. Եփես. Բ. 8, 9. Տիտ. Գ. 5. յ Գլ. Է. 7. ն Գործ. ԺԵ. 11. Գլ. Ա. 17. Փիլիպ. Գ. 9. Եբր. ԺԱ. 4, [illegible]. շ Յովհ. Ե. 46. Գործ. ԻԶ. 22. ո Գլ. Ա. 2. Ա Պետ. Ա. 10. չ Գլ. Դ. պ Գլ. Ժ. 12. Գաղ. Գ. 28. Կող. Գ. 11. ջ Համար. 9. Գլ. ԺԱ. 32. Գաղ. Գ. 22. ռ Գլ. Դ. 16. Եփես. Բ. 8. Տիտ. Գ. 5. 7. ս Մատթ. Ի. 28. Եփես. Ա. 7. Կող. Ա. 14. Ա Տիմ. Բ. 6. Եբր. Թ. 12. Ա Պետ. Ա. 18. 19. վ Ղևտ. ԺԶ. 15. Ա Յովհ. Բ. 2. Դ. 10. տ Կող. Ա. 20.

յառաջագոյն մեղացն գործելոց ։

26 'Ի ներելն Աստուծոյ՝ 'ի հանդէս
արդարութեան նորա 'ի ժամանակիս
յայսմիկ․ զի եղիցի նա արդար,
եւ արդարացուցէ զայն՝ որ 'ի հա-
ւատոյն Յիսուսի ։
27 Իսկ արդ՝ ուր են պարծանքն․
արգելան․ յորմէ օրինաց, 'ի գոր-
ծոց անտի․ ոչ, այլ 'ի հաւատոյն
օրինաց ։

28 Քանզի համարիմք հաւատովք
արդարանալ մարդոյ՝ առանց գոր-
ծոց օրինաց ։
29 Եթէ Հրէից միայն իցէ Աստ-
ուած՝ եւ հեթանոսաց ոչ․ այո՛ եւ
հեթանոսաց ։
30 Զի եթէ մի է Աստուած՝ որ
արդարացուցանէ զթլփատութիւնն
'ի հաւատոց, ապա եւ զանթլփա-
տութիւնն նովին հաւատովք ։

31 Արդ՝ զօրէնսն խափանեմք
հաւատովքս․ քաւ լիցի․ այլ զօ-
րէնսն հաստատեմք ։

տալ՝ այն առաջուց գործուած ը մեղ-
քերի թողութեան զ համար ․
26 Երբոր Աստուած ներումէր՝ որ
իրեն արդարութիւնն երեւցնէ այս
ժամանակումս․ որ ինքն արդար
լինի, եւ արդարացնէ նորան՝ որ
Յիսուսի Քրիստոսի հաւատքիցն է ։
27 Ուրեմն հիմիկ ո՞րտեղ մնաց
պարծանքը․ խափանվեցաւ․ ի՞նչ օ-
րէնքով, միթէ գործքերի օրէն-
քով․ չէ․ այլ հաւատքի – օրէն-
քով ․
28 Պատճառն որ՝ համարումենք,
որ մարդը հաւատքով է արդարա-
նում առանց օրէնքի ‡ գործքերին ։
29 Միթէ Աստուած միմիայն Հրէա-
ներին է՝ եւ հեթանոսներին չէ․
այո՛ հեթանոսներին էլ է ․
30 Պատճառն որ՝ մին Աստուած
է՝ որ թլփատութիւնը հաւատքիցն
արդարացնումէ՝ եւ ապա անթլփա-
տութիւնն էլ իսկ նոյն + հաւատ-
քով ։
31 Ապա միթէ օրէնքը խափա-
նումենք հաւատքովս․ քաւ լիցի․
բայց օրէնքն հաստատումենք ։

## ԳԼ. Դ

1 Իսկ արդ՝ զի՞նչ ասիցեմք ըղ
գտանելն Աբրահամու նահապետին
մերոյ ըստ մարմնոյ ։
2 Զի եթէ Աբրահամու գործովք
էր արդարացեալ՝ ունել ունէր պար-
ծանս՝ այլ ոչ առ Աստուած ։

3 Իսկ զի՞նչ ասիցէ գիր․ Հաւա-
տաց Աբրահամ յԱստուած՝ եւ հա-
մարեցաւ նմա յարդարութիւն ․

4 Բայց այնմ՝ որ գործիցէն, ոչ

1 Ապա ի՞նչ ասենք՝ նա որ մեր
նահապետ Աբրահամի գտաւ մարմ-
նոյ – կողմանէ ։
2 Ինչու որ՝ եթէ Աբրահամ գործ-
քերովն արդարացած լինէր՝ իրաւի
որ պարծենալոյ պատճառ ‡ ունէր․
բայց չէ թէ Աստուծոյ առաջին ։
3 Սակայն գիրքն ինչ է ասում․
Աբրահամ հաւատաց Աստուծոյն,
եւ արդարութիւն համարվեցաւ
‡ նորան ։
4 Բայց նորան՝ որ գործք է ա-

ը Գործ. ԺԷ. 30. Եբր. Թ. 15.
զ Գործ. ԺԳ. 38, 39. Ա Տիմ. Ա. 15.
– Գղ. Բ. 17. 23. Գ. 2. Ա Կորնթ. Ա. 29. 31. Եփես. Բ. 9.
‡ Գործ. ԺԳ. 38, 39. Հռոմ. 20–22. Գղ. Ը. 3. Գաղ. Բ. 16.
+ Գղ՝ Ժ. 12. 13. Գաղ. Գ. 8. 20. 28.

—

– Եսայ. ԾԱ. 2. Մատթ. Գ. 9. Յովհ. Ը. 33. 39. Բ Կորնթ. ԺԱ. 22.
‡ Գղ. Դ. 20. 27. 28.
‡ Ծննդ. ԺԵ. 6. Գաղ. Գ. 26. Յակ. Բ. 23.

համարին վարձքն ըստ շնորհաց՝ այլ ըստ պարտուց։
5 Իսկ այնմ՝ որ ոչն գործիցէ՝ բայց հաւատայցէ յայն, որ արդարացուցանէ զամբարիշտն, համարին հաւատքն նորա յարդարութիւն։
6 Որպէս եւ Դաւիթ ասէ զերանութիւն մարդոյ՝ որում Աստուած համարի արդարութիւն առանց գործոց։
7 Երանի որոց թողան անօրէնութիւնք, եւ որոց ծածկեցան մեղք իւրեանց։
8 Երանեալ է այր՝ որում ոչ համարեսցի Տէր զմեղս նորա։
9 Արդ՝ երանութիւնս այս ի վերայ թլփատութեանն է, եթէ ի վերայ անթլփատութեան. քանզի ասեմք՝ եթէ համարեցաւ Աբրահամու հաւատքն յարդարութիւն։
10 Արդ զիարդ համարեցաւ. մինչդեռ ի թլփատութեանն էր՝ եթէ յանթլփատութեան. ոչ ի թլփատութեանն, այլ յանթլփատութեան։
11 Եւ նշանակ առ զթլփատութիւնն, կնիք արդարութեան հաւատոյն՝ որ յանթլփատութենէ անտի։
12 Զի եղիցի նա հայր ամենայն հաւատացելոց, որ յանթլփատութենէ անտի իցեն, առ ի համարելոյ եւ նոցա արդարութիւն. եւ հայր թլփատութեան՝ որոց ոչ ի թլփատութենէ անտի եւեթ, այլեւ որոց երթայցեն ընդ հետս անթլփատութեան հաւատոյ հօր մերոյ Աբրահամու։
13 Զի ոչ եթէ օրինօքն են աւետիքն Աբրահամու՝ եւ զաւակի նորա ժառանգ լինել աշխարհի, այլ ի հաւատոցն արդարութենէ։

նում, վարձքը չէն համարւում շնորհքի տեղ, բայց պարտքի ա տեղ։
5 Իսկ նորան՝ որ գործք չունէ՝ բայց հաւատում նորան՝ որ ամբարիշտներին արդարացնում է, նորա հաւատքն է համարւում արդարութեան բ տեղ։
6 Ինչպէս որ Դաւիթն էլ երանելի է ասում այն մարդուն՝ որ Աստուած նորան արդարութիւն է համարում առանց գործքերի.
7 Երանի նորանց՝ որ նորանց անօրէնութիւնները թողվան, եւ նորանց մեղքերը գ ծածկվեցան։
8 Երանի է այն մարդուն՝ որ Տէրը նորա մեղքերը նորան չի համարիլ։
9 Արդ այս երանութիւնս միթէ թլփատութեան վերայ է՝ կամ թէ անթլփատութեան վերայ. ինչու որ՝ ասում ենք՝ թէ Աբրահամի հաւատքն արդարութիւն համարվեցաւ։
10 Արդ ինչպէս համարվեցաւ. երբոր թլփատութեանումն էր՝ թէ դեռ որ անթլփատութեանումն էր. ոչ թէ թլփատութեանումը, բայց անթլփատութեան ժամանակումը։
11 Եւ թլփատութիւնը նշանի տեղ առաւ՝ որ այն հաւատքի արդարութեանը կնիք լինի՝ որ անթլփատութեանումն դ ունէր.
12 Որ նա հայր լինի այն ամէն հաւատացեալներին՝ որ անթլփատութենիցն են՝ որ նորանց էլ համարվի արդարութիւնը. եւ էլ թլփատութեան հայր՝ չէ թէ միայն նորանց՝ որ թլփատութենիցն են, բայց նորանց էլ՝ որ այն հաւատքի ճանապարհումն են գնում, որ մեր հայր Աբրահամն անթլփատութեանումն ե ունէր։
13 Պատճառն որ՝ ոչ թէ օրէնքովն էլան Աբրահամին եւ նորա զաւակին այն աւետիքն որ աշխարհքի ժառանգ լինին, բայց հաւատքի զ արդարութենիցը։

ա Գլ. ԺԱ. 6։ բ Յես. ԻԴ. 2։ գ Սաղ. ԼԲ. 1, 2։ դ Ծննդ. ԺԷ. 10։ ե Ղու. ԺԹ. 9։ Համր. 16։ Գաղ. Գ. 7։ զ Ծննդ. ԺԷ. 4։ Է։ Գաղ. Գ. 29։

14 Զի եթէ որք՝ յօրինացն են, ժառանգ իցեն. ապա ընդունայն են հաւատքն՝ եւ դատարկ աւետիքն։
15 Քանզի օրէնքն զբարկութիւն գործեն. բայց ուր ոչ են օրէնք՝ եւ ոչ յանցանք ինչ։

16 Վասն այնորիկ ՚ի հաւատոց անտի, զի ըստ շնորհացն իցէ. առ ՚ի լինելոյ հաստատուն աւետեացն ամենայն զաւակին. ոչ այնմ միայն՝ որ յօրինաց անտի, այլ եւ այնմ՝ որ ՚ի հաւատոյն Աբրահամու, որ է հայր ամենեցուն։
17 Որպէս եւ գրեալ է, թէ Հայր ազգաց բազմաց արարի զքեզ առաջի Աստուծոյ. որում հաւատաց՝ եթէ կենդանի առնէ զմեռեալս, եւ կոչէ զչգոյսն իբրեւ զգոյս։

18 Որ յանյոյսն յուսով հաւատաց լինել նմա հայր ազգաց բազմաց. որպէս եւ ասացաւ, թէ Այնպէս եղիցի զաւակ քո։
19 Եւ նա ոչ երկմտեաց ՚ի հաւատոյն. թէպէտ եւ հայեցաւ ՚ի մարմին իւր այնուհետեւ իբրեւ ՚ի մեռեալ. քանզի հարիւրամենից ուրեմն էր. եւ ՚ի մեռելութիւն արգանդին Սառայի։
20 Բայց յաւետեացն Աստուծոյ ոչ երկմտեաց անհաւատութեամբ. այլ զօրացաւ հաւատովք, ետ փառս Աստուծոյ.
21 Եւ հաստատեցաւ ՚ի միտս իւր, եթէ որ խոստացաւն կարող է առնել։
22 Վասն որոյ համարեցաւ նմա յարդարութիւն։

14 Ինչու որ՝ եթէ նորանք՝ որ օրէնքիցն են, ժառանգ լինէին՝ ապա հաւատքն ունայն էր՝ եւ աւետիքը ժ դատարկ։
15 Պատճառն որ՝ օրէնքը բարկութիւն է գործում. բայց որտեղ որ օրէնք չկայ՝ այնտեղ էլ օրէնքի դէմ մեղք ի չկայ։
16 Սորա համար հաւատքիցն է՝ որ շնորհքովը ըլլի. որ աւետիքը հաստատ լինի ամէն զաւակին լ համար. ոչ թէ միայն նորա համար՝ որ օրէնքիցն է, բայց նորա համար էլ՝ որ Աբրահամի հաւատքիցն է, որ նա մեր ամէնիս հայրն խ է։
17 Ինչպէս որ էլ գրված է, թէ Շատ ազգերի հայր կանգնեմ քեզ՝ Աստուծոյ առաջին. որ նա հաւատաց նորան՝ թէ մեռելները կենդանի է անում՝ եւ չըլինող բանը լինողին պէս է հ կանչում,
18 Որ չըյուսալու բանին մէջ յուսով հաւատաց՝ որ նա շատ ազգերի հայր լինի. ինչպէս որ էլ ասվեցաւ՝ թէ Այնպէս պիտի լինի քո ղաւակդ։
19 Եւ նա չերկմտեցաւ հաւատքիցը, թէ եւ իրեն մարմինըն այնուհետեւ մեռածի պէս ճ տեսաւ. ինչու որ հարիւր տարեկանի չափ էր, եւ Սառայի փորն էլ մեռած։

20 Բայց Աստուծոյ աւետիքին համար չերկմտեցաւ անհաւատութենով, բայց հաւատքով զօրացաւ, ւ Աստուծոյ փառք տուաւ։
21 Եւ իրեն մտքումը հաստատ գրաւ, թէ նա՝ որ նա խոստացաւ, կարող է մ անել։
22 Նորա համար՝ արդարութիւն համարվեցաւ նորան։

ժ Գաղ. Գ. 18.
ի Գէ. Գ. 20. Ե. 13. 20. Է. 8. 10. 11. Ա Կորնթ. ԺԵ. 56. Բ Կորնթ. Գ. 7. 9. Գաղ. Գ. 10. 19. Ա Յովհ. Գ. 4.
լ Գէ. Գ. 24.
խ Գաղ. Գ. 22.
ծ Եսայ. ԾԱ. 2. Գէ. Թ. 8.
կ Ծննդ. ԺԷ. 5.
հ Գէ. Ը. 11. Եփես. Բ. 1. 5.
ձ Գէ. Թ. 25. Ա Կորնթ. Ա. 28. Ա Պետ. Բ. 10.
ղ Ծննդ. ԺԵ. 5.
ճ Ծննդ. ԺԷ. 17. ԺԸ. 11. Եբր. ԺԱ. 11. 12.
մ Սաղ. ՃԺԵ. 3. Ղուկ. Ա. 37. 45. Եբր. ԺԱ. 19.

23 Արդ՝ զի գրեցաւ, ոչ եթէ վասն նորա միայն՝ եթէ համարեցաւ նմա.

24 Այլ եւ վասն մեր՝ որոց համարելոց է. որք հաւատամք յայն՝ որ յարոյցն զՅիսուս զՏէր մեր ՚ի մեռելոց.

25 Որ մատնեցաւ վասն յանցանաց մերոց, եւ յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ։

23 Բայց նա՝ որ գրուեցաւ, ոչ թէ մինակ նորա համար է՝ թէ նորան համարուեցաւ յ արդարութիւն,

24 Այլ մեզ համար էլ՝ որ մեզ պիտի համարուի. որ մենք հաւատումենք նորան՝ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսին յարոյց ն մեռելներէն,

25 Որ նա մատնուեցաւ մեր մեղաց շ համար. եւ յարութիւն առաւ մեզ արդարացնելոյ ո համար։

## ԳԼ. Ե

1 Այսուհետեւ արդարացեալք ՚ի հաւատոց անտի, խաղաղութիւն կալցուք առ Աստուած ՚ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

2 Որով եւ զընծայութիւն ընկալաք հաւատովք ՚ի շնորհս յայսոսիկ՝ յորում կամք, եւ պարծիմք յուսով փառացն Աստուծոյ։

3 Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ պարծիմք եւս ՚ի նեղութիւնս մեր. քանզի գիտեմք, եթէ նեղութիւնք զհամբերութիւն գործեն,

4 Համբերութիւն՝ զհանդէս, հանդէս՝ զյոյս.

5 Յոյս ոչ երբէք ամաչեցուցանէ. զի սէրն Աստուծոյ սփռեալ է ՚ի սիրտս մեր, ՚ի ձեռն Հոգւոյն Սրբոյ՝ որ տուաւ մեզ։

6 Զի մինչդեռ տկարքն էաք՝ Քրիստոս վասն մեր ՚ի ժամանա-

1 Ուրեմն մենք՝ որ հաւատքովը արդարացած ա ենք, Աստուծոյ հետ խաղաղութիւն ունենանք՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի բ ձեռովը,

2 Որ նորանով էլ ընդունեցինք հաւատքով մտնելու այս շնորհքիս գ մէջ՝ որ նորանում կացած դ ենք, եւ Աստուծոյ փառաց յուսովը ե պարծենումենք։

3 Եւ ոչ թէ մինակ այսչափ, բայց մեր նեղութիւններին համար էլ զ պարծենումենք. ինչու որ՝ գիտումենք, որ նեղութիւնները համբերութիւն են է գործում,

4 Համբերութիւնը՝ փորձութիւն, փորձութիւնը ը յոյս։

5 Յոյսը բնաւ մէկ ժամանակ չի թ ամաչեցնում. պատճառն որ՝ Աստուծոյ սէրը փռված է մեր սրտերի մէջ Սուրբ Հոգոյ ձեռովը՝ որ տրվաւ ժ մեզ։

6 Ինչու որ՝ երբոր մենք դեռ տկար էինք՝ Քրիստոս մեզ համար

յ Գղ. ԺԵ. 4. Ա կորնթ. Ժ. 6. 11.
ն Գործ. Բ. 24. ԺԳ. 30.
շ Եսայ. ԾԳ. 5, 6. Գղ. Գ. 25. Ե. 6. Ը. 32. Բ կորնթ. Ե. 21. Գաղ. Ա. 4. Ա Պետ. Բ. 24. Գ. 18. Եբր. Թ. 28.
ո Ա կորնթ. ԺԵ. 17. Ա Պետ. Ա. 21.

—

ա Եսայ. ԼԲ. 17. Յովհ. ԺԶ. 33. Գղ. Գ. 28. 30.
բ Եփես. Բ. 14. Կող. Ա. 20.
գ Յովհ. Ժ. 9. ԺԴ. 6. Եփես. Բ. 18. Գ. 12. Եբր. Ժ. 19.
դ Ա կորնթ. ԺԵ. 1.
ե Եբր. Գ. 6.
զ Մատթ. Ե. 11. 12. Գործ. Ե. 41. Բ կորնթ. ԺԲ. 10. Փիլիպ. Բ. 17. Յակ. Ա. 2. 12. Ա Պետ. Գ. 14.
է Յակ. Ա. 3.
ը Յակ. Ա. 12.
թ Փիլիպ. Ա. 20.
ժ Բ կորնթ. Ա. 22. Գաղ. Դ. 6. Եփես. Ա. 13. 14.

կի ՚ի վերայ ամբարշտաց մեռաւ։

7 Զի վասն արդարոյ հազիւ ոք
թէ մեռանիցի. այլ վասն բարւոյ
թերեւս համարձակիցի ոք մեռանել։

8 Յայտնեաց Աստուած զսէրն
իւր ՚ի մեզ, զի մինչդեռ մեղա-
ւորքն էաք,

9 Քրիստոս վասն մեր մեռաւ.
որչափ եւս առաւել յարդարանալս
մերում այժմիկ արեամբն նորա՝
ապրեսցուք նովաւ ՚ի բարկութենէ
անտի։

10 Զի եթէ մինչ թշնամիքն էաք՝
հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ
Որդւոյ նորա, որչափ եւս առաւել
՚ի հաշտիս մերում՝ ապրեսցուք
կենօքն նորա։

11 Եւ ոչ այսչափ միայն, այլեւ
պարծիմք եւս յԱստուած ՚ի ձեռն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի,
որով եւ զհաշտութիւնն իսկ ընկա-
լաք։

12 Զի որպէս ՚ի ձեռն միոյ մարդոյ
մեղք յաշխարհ մտին՝ եւ ՚ի մեղաց
անտի մահ. եւ այնպէս յամենայն
մարդիկ տարածեցաւ մահ՝ որով ա-
մենեքին մեղան։

13 Քանզի մինչեւ յօրէնսն մեղք
էին յաշխարհի. բայց մեղք ոչ հա-
մարին, ուր օրէնք ոչ իցեն։

14 Այլ թագաւորեաց մահ յԱդա-
մայ մինչեւ ցՄովսէս՝ եւ ՚ի վերայ
չմեղուցելոցն, ըստ նմանութեան
յանցուածոցն Ադամայ. որ է օրի-
նակ հանդերձելոյն։

իրեն ժամանակին ամբարիշտներուն
վերայ է մեռաւ։

7 Ինչու որ դժուար կը լնի՝ որ
մին արդարի համար մէկը մեռնի.
բայց մին բարի մարդոյ համար կը
լնի, որ մէկը համարձակի մեռնիլ։

8 Աստուած իրեն սէրը մեզ վե-
րայ յայտնեց, որ երբոր մենք դեռ
մեղաւոր էինք,

9 Քրիստոս մեզ համար մեռաւ.
ապա որքան աւելի հիմիկ՝ որ ար-
դարացանք նորա թ արիւնովը՝ կը
փրկուինք նորանով այն ժ բարկու-
թենէնը։

10 Պատճառն որ՝ եթէ դեռ որ
թշնամի էինք, Աստուծոյ հետ
հաշտուեցանք նորա Որդւոյն մահովը՝
էլ որքան աւելի որ հաշտուած ենք,
կապրինք նորա կենդանութեամբը։

11 Եւ ոչ թէ միայն այսչափ,
բայց Աստուծով էլ ենք պարծե-
նում՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի
ձեռքովը, որ իսկ նորանով հիմիկ
հաշտութիւնն ընդունեցինք։

12 Պատճառն որ՝ ինչպէս որ մին
մարդոյ ձեռքովը մեղքը մտաւ կ աշ-
խարհս եւ այն մեղքովն էլ հ մա-
հը. եւ այնպէս մահն ամէն մարդ-
կանց վերայ փոխեցաւ, որովհետեւ
ամէնքը մեղանչեցին։

13 Ինչու որ՝ մինչեւ օրէնքը՝ մեղք
կար աշխարհքումս, բայց մեղքը
չի համարուած որտեղ որ օրէնք
ձ չկայ։

14 Այլ մահը թագաւորեց Ադա-
մից մինչեւ Մովսէս նոցանց վերայ
էլ՝ որ Ադամի մեղքին նման չմե-
ղանչեցին. որ նա օրինակ է նորա
համար՝ որ յետոյ գալու ղ էր։

է Համար. 8. 9. Հռ. Դ. 25. ը Յովհ. ԺԵ. 13. Ա Պետ. Գ. 18. Ա Յովհ. Գ. 16. Դ. 9, 10. թ Հռ. Գ. 25. Եփես. Բ. 13. Եբր. Թ. 14. Ա Յովհ. Ա. 7. ժ Հռ. Ա. 18. Ա Թես. Ա. 10. ի Հռ. Ը. 32. լ Բ Կորնթ. Ե. 18. 19. Եփես. Բ. 16. Կող. Ա. 20. 21. խ Յովհ. Ե. 26. ԺԴ. 19. Բ Կորնթ. Դ. 10, 11. ծ Հռ. Բ. 17. Գ. 29, 30. Փիլպ. Դ. 9. կ Ծննդ. Գ. 6. Ա Կորնթ. ԺԵ. 21. հ Ծննդ. Բ. 17. Հռ. Զ. 23. Ա Կորնթ. ԺԵ. 21. ձ Հռ. Դ. 15. Յովհ. Գ. 4. ղ Ա Կորնթ. ԺԵ. 21. 22. 45.

15 Այլ ոչ որպէս յանցանքն՝ նոյն-
պէս եւ շնորհքն․ զի եթէ միոյն
յանցանօք բազումք մեռան, որչափ
եւս առաւել շնորհքն Աստուծոյ եւ
պարգեւքն՝ շնորհօք միոյն մարդոյ
Յիսուսի Քրիստոսի 'ի բազումս ա-
ռաւելաւ ։
16 Եւ ոչ որպէս 'ի միոջէ յան-
ցուցելոյն պարգեւքս․ զի դատաս-
տանն 'ի միոջէ յանցուածոյ անտի
'ի դատապարտութիւն․ այլ շնորհքն
'ի բազմաց յանցուածոյն յարդա-
րութիւն ։

17 Զի եթէ 'ի միոյն յանցանաց
մահ թագաւորեաց միովն, որչափ
եւս առաւել՝ որք զառաւելութիւն
շնորհաց եւ զպարգեւաց արդա-
րութեանն առնուցուն, կենօք թա-
գաւորեսցեն 'ի ձեռն միոյն Յիսու-
սի Քրիստոսի ։
18 Արդ ուրեմն՝ որպէս միոյն յան-
ցանօք յամենայն մարդիկ դատա-
պարտութիւն, նոյնպէս եւ միոյն
արդարութեամբ՝ յամենայն մարդիկ
արդարութիւն կենաց ։

19 Զի որպէս անհնազանդու-
թեամբ միոյն մարդոյ՝ մեղաւորք
բազումք եղեն, նոյնպէս եւ հնա-
զանդութեամբ միոյն, արդարք բա-
զումք եղիցին ։
20 Բայց օրէնք 'ի նիրքս մտին,
զի յանցանքն բազմասցին․ զի ուր
առաւել եղեն մեղքն, առաւել եւս
յաւելան շնորհքն ։
21 Զի որպէս թագաւորեցին մեղ-
քըն 'ի մահու անդ, նոյնպէս եւ
շնորհքն թագաւորեսցեն արդա-
րութեամբ 'ի կեանս յաւիտենից 'ի
ձեռն Յիսուսի Քրիստոսի Տեառն
մերոյ ։

15 Բայց շնորհքն այնպէս չէ՝ ինչ-
պէս որ մեղքը․ ինչու որ՝ եթէ մի-
նի մեղքովը շատ մարդիկ մեռան՝
էլ որքան աւելի Աստուծոյ շնորհ-
քըն ու պարգեւը մին Յիսուս Քրիս-
տոս մարդոյ շնորհքովը աւելացաւ
շատերի ~ վերայ ։
16 Եւ պարգեւն այնպէս չէ՝ ինչ-
պէս նա որ մին մեղաւորից էլաւ․
ինչու որ՝ դատաստանն այն մին
մեղքիցը դատապարտութիւն բե-
րաւ․ բայց շնորհքը շատ մեղքե-
րից արդարութեան մէջ է տա-
նում ։
17 Պատճառն որ՝ եթէ մինի մեղ-
քին համար մահը թագաւորեց այն
մինի ձեռովը, որքան էլ աւելի նո-
քանք, որ շնորհաց լիութիւնն ու
արդարութեան պարգեւներն առ-
նեն, կեանքով կը թագաւորեն՝ այն
մին Յիսուսի Քրիստոսի ձեռովը ։
18 Այս ուրեմն՝ ինչպէս որ մինի
մեղքովը ամէն մարդկանց վերայ
դատապարտութիւն ե—, իսկ այն-
պէս էլ մինի արդարութիւնովը ա-
մէն մարդկանց վերայ կենաց ~ ար-
դարութիւն ,
19 Ինչու որ՝ ինչպէս որ մին մար-
դոյ անհնազանդութիւնովը շատ մե-
ղաւորներ էլան, այնպէս էլ մինի
հնազանդութիւնովը շատ արդարներ
կը լինին ։
20 Բայց օրէնքը մէջ ընկաւ՝ որ
մեղքը ~ շատանայ․ ինչու որ որտեղ
որ աւելի էլաւ մեղքը՝ այնտեղ էլ
աւելի շատացաւ ~ շնորհքը ,
21 Պատճառն որ՝ ինչպէս որ մեղ-
քը թագաւորեց մահին ձեռովը,
այնպէս էլ շնորհքը կը թագաւորէ
արդարութիւնով յաւիտենական
կեանքին մէջ՝ մեր Տէր Յիսուսի
Քրիստոսի ձեռովը ։

ւ Եսայ․ ՆԳ․ 11 ։ Մատթ․ Ի․ 28․ ԻԶ․ 28 ։ | ~ Յովհ․ ԺԲ․ 32 ։ Եբր․ Բ․ 9 ։ ւ Յովհ․ ԺԵ․ 22 ։ | Գլ․ Գ․ 20 ։ Դ․ 15 ։ Է․ 8 ։ Գաղ․ Գ․ 19․ 23 ։ | ղ Ղուկ․ Է․ 47 ։ Ա Տիմ․ Ա․ 14 ։

## ԳԼ. Զ

1 Իսկ արդ՝ զինչ ասիցեմք, յա-
մախեսցուք ՚ի մեղսն՝ զի շնորհքն
բազմասցին։
2 Քաւ լիցի. որք մեռաք մե-
ղացն, զիա՞րդ ապաքէն ՚ի նմին
կեցցեմք։
3 Եթէ ոչ գիտէք՝ զի որ միան-
գամ մկրտեցաք ՚ի Քրիստոս Յի-
սուս՝ ՚ի մահ անդր նորա մկրտե-
ցաք։
4 Թաղեցաք ընդ նմին մկրտու-
թեամբն ՚ի մահ, զի որպէս յարեաւ
Քրիստոս ՚ի մեռելոց փառօք Հօր,
նոյնպէս եւ մեք ՚ի նորոգութիւն կե-
նաց շրջեսցուք։
5 Զի եթէ տնկակից եղեաք նը-
մանութեան մահու նորա. այլ եւ
յարութեան նորա լինիցիմք։
6 Զայս գիտասջի՛ք՝ զի հին մար-
դըն մեր խաչակից եղեւ նորա, զի
խափանեսցի մարմին մեղացն, մի
եւս ծառայել մեզ մեղացն։
7 Զի որ մեռանին՝ արդարացեալ
է ՚ի մեղաց անտի։
8 Իսկ եթէ մեռաք ընդ Քրիստո-
սի, հաւատամք՝ թէ եւ կեցցուք
ընդ նմա։
9 Գիտեմք՝ եթէ Քրիստոս յա-
րուցեալ է ՚ի մեռելոց. այսուհե-
տեւ ոչ մեռանի, եւ մահ նմա ոչ
եւս տիրէ։
10 Զի որ մեռաւն՝ մեղացն մե-
ռաւ միանգամ, եւ որ կենդանին
է՝ կենդանի է Աստուծոյ։

1 Ուրեմն ինչ պիտի ասենք.
էլ աւելի վարվինք մեղքին մէջ,
որ շնորհքը ա շատանայ։
2 Քաւ լիցի. մենք որ մեռանք
մեղքին, էլ ինչպէս դեռ ապրինք
բ նորանում։
3 Կամ թէ չէ՞ք գիտում՝ թէ՛ մենք
ամէնքս, որ Յիսուս Քրիստոսումը
գ մկրտվեցանք՝ նորա մահին մէջ
դ մկրտվեցանք։
4 Մկրտութեամբը նորա հետ
թաղվեցանք մահի ե մէջ. որ ինչ-
պէս Քրիստոս Հօր զ փառքովը մե-
ռելների միջիցն յարութիւն է ա-
ռաւ, իսկ այնպէս էլ մենք նորոգ-
ված կեանքումը ման ը գանք։
5 Պատճառն որ՝ եթէ մենք նորա
հետ տնկակիցվեցանք, որ նորա մահին
նման լինինք. ապա նորա յարու-
թեանն էլ նման թ կը լինինք։
6 Սա գիտացէք, որ մեր հին
մարդը նորա հետ ժ խաչվեցաւ, որ
մեղաց մարմինը խափանվի, որ մենք
էլ չը ծառայենք ի մեղքին։
7 Պատճառն որ՝ նա որ մեռնումէ՝
արդարացած է լ մեղքից։
8 Բայց թէ որ Քրիստոսի հետ
մեռանք, հաւատումենք՝ որ նորա
հետ կապրինք խ էլ։
9 Գիտումենք որ՝ Քրիստոս մե-
ռելների միջիցն յարութիւն է ծ ա-
ռել. այնուհետեւ չի մեռնում,
եւ մահը նորա վերայ էլ չի տիրում,
10 Ինչու որ՝ նա որ մեռաւ՝ մեղ-
քին մեռաւ կ միանգամ, եւ նա
որ կենդանի է՝ Աստուծոյն է հ կեն-
դանի։

ա Գղ. Դ. 8. Համար. 15.
բ Համար. 11. Գղ. Ե. 4. Գաղ. Բ. 19. Զ. 14.
գ Կող. Դ. 3. Ա Պետ. Բ. 24.
դ Ա Կորնթ. ԺԵ 29.
ե Կող. Բ. 12.
զ Յովհ. Բ. 11. ԺԱ. 40.
է Գղ. Ը. 11. Ա Կորնթ. Զ. 14. Բ Կորնթ. ԺԳ. 4.
ը Գաղ. Զ. 15. Եփես. Դ. 22, 23. 24. Կող. Գ 10.
թ Փիլիպ. Գ. 10, 11.
ժ Գաղ. Բ. 20. Ե 24. Զ. 14. Եփես. Դ. 22 Կող. Գ. 5. 9.
ի Կող. Բ. 11.
լ Ա Պետ. Դ. 1.
խ Բ Տիմ. Բ. 11.
ծ Յայտ. Ա. 18.
կ Եբր. Թ. 27. 28.
հ Ղուկ. Ի. 38.

11 Նոյնպէս եւ դուք համարեսջիք զանձինս մեռեալս մեղացն, եւ կենդանիս Աստուծոյ ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի Տէր մեր։
12 Մի՛ այսուհետեւ թագաւորեսցէ մեղք ՚ի մահկանացու մարմինս ձեր՝ հնազանդել ցանկութեանց նորա։
13 Եւ մի՛ պատրաստէք զանդամս ձեր զէն անիրաւութեան մեղացն. այլ պատրաստեցէք զանձինս ձեր Աստուծոյ՝ որպէս ՚ի մեռելոց ՚ի կենդանիս, եւ զանդամս ձեր զէն արդարութեանն Աստուծոյ։
14 Զի մեղք ձեզ ոչ տիրեսցեն. քանզի ոչ էք ընդ օրինօք՝ այլ ընդ շնորհօք։
15 Իսկ արդ՝ զինչ. մեղիցուք՝ զի չեմք ընդ օրինօք՝ այլ ընդ շնորհօք. քաւ լիցի։
16 Ո՞չ գիտէք՝ թէ որում պատրաստէք զանձինս ձեր ծառայս ՚ի հնազանդութիւն, ծառայ էք՝ որում հնազանդիքդ, եթէ մեղաց՝ ՚ի մահ, եւ եթէ ՚ի հնազանդութիւն արդարութեանն՝ ՚ի կեանս։
17 Այլ շնորհք Աստուծոյ. զի էիք ծառայք մեղաց՝ հնազանդեցայք ՚ի սրտէ՝ որում աւանդեցայք յառակ վարդապետութեան։
18 Արդ՝ ազատեցեալք ՚ի մեղաց՝ ծառայեցէք արդարութեան։
19 Մարդկօրէն ասեմ վասն ապկարութեան մարմնոյ ձերոյ. զի որպէս պատրաստեցիք զանդամս ձեր

11 Իսկ այնպէս էլ դուք ձեր անձները մեղքին մեռած համարեցէք, եւ Աստուծոյն կենդանի մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռովը։
12 Սրա համար թող մեղքը չթագաւորէ ձեր մահկանացու մարմիններիդ վերայ՝ որ նորա ցանկութիւններին հնազանդվիք։
13 Եւ չըլինի որ ձեր անդամներըդ մեղքի անիրաւութեանը զէնք պատրաստէք. բայց ձեր անձներըդ պատրաստեցէք Աստուծոյն՝ ինչպէս մեռելներիցը կենդանի էլած, եւ ձեր անդամներըդ արդարութեան զէնք՝ Աստուծոյ համար։
14 Ինչու որ՝ մեղքը չի տիրիլ ձեզ վերայ. պատճառն որ՝ օրէնքի ներքեւը չէք, բայց շնորհքի ներքեւը։
15 Ապա ինչպէս. միթէ մեղք գործենք՝ նրահամար որ օրէնքի ներքեւը չենք՝ բայց շնորհքի ներքեւը. քաւ լիցի։
16 Չէ՞ք գիտում, թէ ում որ ձեր անձներըդ ծառայ էք պատրաստում՝ նորան հնազանդվելոյ համար, նորա ծառայ էք՝ որ հնազանդվումէք նորան. թէ մեղքին՝ դէպի մահ, եւ թէ արդարութեան հնազանդութեանը՝ դէպի կեանքը։
17 Բայց շնորհակալութիւն Աստուծոյ. որ մեղքի ծառայ էիք՝ եւ սրտով հնազանդվեցայք այն վարդապետութեան օրինակին՝ որ նորան յանձնվեցայք։
18 Ապա մեղքերից ազատված՝ ծառայեցէք արդարութեանը։
19 Մարդկանց կերպով կասեմ՝ ձեր մարմնոյ ակարութեան համար. որ ինչպէս որ ձեր անդամներըդ

Համար. Զ.
Գաղ. Բ. 19.
Սաղ. ԾԹ. 13.
ՃԺԹ. 133.
Գղ. Ե. 5. Կող. Գ. 5. Յակ. Դ.
1.
Գղ. Ժ. ...
Պետ. Բ. 24.
Գղ. 2 ...
Գղ. Ե. ... 6.
Ը. 2. Գաղ. Ե.
18. Գ.
Ա Կորնթ. Թ. 21
Պետ. ... 24.
Յովհ. Ը. 34.
Բ Պետ. Բ. 19.
Բ Տիմ. Բ. 13.
Յովհ. Ը. 32.
Ա Կորնթ. Է. 22.
Գաղ. Ե. 13.
Պետ. Բ. 16.

ծառայս պղծութեան եւ անօրէնութեան յանօրէնութիւն, նոյնպէս եւ այժմ պատրաստեցէք զանդամս ձեր ծառայս արդարութեան ՚ի սրբութիւն։

20 Զի մինչ ծառայքն էիք մեղաց՝ ազատացեալ էիք յարդարութենէն։
21 Իսկ արդ՝ զինչ պտուղ ունէիք յայնժամ, որովք այժմդ զամօթի հարեալ էք. զի վախճան նոցա մահ է։
22 Բայց արդ ազատացեալք ՚ի մեղացն՝ եւ ծառայեալք Աստուծոյ՝ ունիք զպտուղ ձեր ՚ի սրբութիւն, եւ վախճան նորա կեանք յաւիտենից։
23 Զի թոշակն մեղաց մահ է. այլ շնորհքն Աստուծոյ, կեանք յաւիտենից ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի Տէր մեր։

ծառայ պատրաստեցիք պղծութեան եւ անօրէնութեան՝ անօրէնութիւն գործելոյ համար, ճիշդ այնպէս էլ հիմիկ ձեր անդամները ծառայ պատրաստեցէք արդարութեանը՝ սրբութեան համար։
20 Ինչու որ՝ երբոր մեղքի ծառայ էիք՝ ազատ էիք ՟ արդարութենիցը։
21 Ապա ինչ պտուղ ունէիք այն – ժամանակը, որ նորա համար հիմիկ ամօթ էք քաշում. ինչու որ՝ նորա վերջը մահն – է։
22 Բայց հիմիկ որ մեղքից ազատուած եւ Աստուծոյ ծառայ էք եղած՝ ձեր պտուղն նա ունիք՝ որ սուրբ լինիք, եւ նորա վերջը յաւիտենական կեանքն ՟ է։
23 Պատճառն որ՝ մեղքին պաշարը մահն ՟ է, բայց Աստուծոյ շնորհքը՝ յաւիտենական կեանք՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ՟ ձեռովը։

## ԳԼ. Է.

1 Եթէ ոչ գիտէք եղբարք, զի ընդ գիտունս օրինաց խօսիմ. զի օրէնք տիրեն մարդոյ՝ որչափ ժամանակս կենդանի իցէ։

2 Քանզի կին առնակին ՚ի կենդանւոյ այր իւր կապեալ կայ օրինօք. իսկ եթէ մեռցի այրն, արձակեալ է յօրինաց առն։

3 Ապա ուրեմն մինչ կենդանի է այրն, շուն կոչի՝ եթէ լինիցի առն այլում. եւ եթէ մեռցի այրն՝ ազատ է յօրինացն, չհամարեալ շուն՝ եթէ լինիցի առն այլում։

4 Այսուհետեւ եւ դուք եղբարք, մեռայք օրինացն մարմնովն Քրիստոսի, լինել այլում որ ՚ի մեռելոցն

1 Միթէ չէ՞ք գիտում՝ եղբարք, (ինչու որ՝ օրէնք գիտողներին հետ եմ խօսում). որ օրէնքը մարդոյ վերայ տիրում՝ քանի ժամանակ որ նա կենդանի է.
2 Պատճառն որ՝ մարդ ունօղ կին՝ իրեն կենդանի մարդոյն հետ կապուած է օրէնքովը. բայց թէ որ մարդը մեռնի՝ նա մարդոյ օրէնքիցը արձակուած – է։
3 Ապա ուրեմն՝ քանի որ մարդը կենդանի է՝ նա շնացօղ է կոչվում՝ թէ որ ուրիշ մարդոյ ՟ գնայ. եւ թէ որ մարդը մեռնի, այն օրէնքիցն ազատ է՝ որ չը համարվի շնացօղ՝ եթէ ուրիշ մարդոյ գնայ։
4 Ուրեմն դուք էլ՝ եղբարք, Քրիստոսի մարմնովը մեռաք ՟ օրէնքին՝ որ ուրիշի լինիք՝ նորան որ

ՙ Յովհ. Ը. 34.
– Գլ. Է. 5.
– Գլ. Ա. 32.
՛ Յովհ. Ը. 32.
՟ Ծննդ. Բ. 17. Գլ. Ե. 12. Յակ. Ա. 15.
՟ Գլ. Բ. 7. Ե. 17. 21. Ա Պետ. Ա. 4.

—

– Ա Կորնթ. Է. 29.
՟ Մատթ. Ե. 32.
՟ Գլ. Ը. 12. Գաղ. Բ. 19. Ե. 18. Եփես. Բ. 15. Կող. Բ. 14.

յարուցեալ է, զի պտղաբեր լի–
ցուք Աստուծոյ։

5 Քանզի մինչ էաքն մարմնով,
կարիք մեղաց՝ որ օրինօքն էին՝ գո–
րծէին յանդամս մեր, առ 'ի
պտղաբեր առնելոյ զմեզ մահու։

6 Բայց այժմ զատարկեցաք յօ–
րինաց անտի. քանզի մեռաք այն–
միկ՝ որով ըմբռնեալն էաք, առ 'ի
ծառայել մեզ նորոգութեամբ հոգ–
ւոյն՝ եւ ոչ հնութեամբ գրոյն։

7 Իսկ արդ զինչ ասեմք. օրէնքն
մեղք իցեն. քաւ լիցի. այլ զմեղս
ոչ գիտէի, եթէ ոչ օրինօք. եւ
զցանկութիւն ոչ ճանաչէի, եթէ
ոչ օրինացն էր ասացեալ՝ Մի ցան–
կանայցես։
8 Պատճառս առին մեղքն պատ–
ուիրանաւն, եւ գործեցին յիս զա–
մենայն ցանկութիւն. զի առանց օ–
րինացն մեղքն մեռեալ էին։
9 Եւ ես առանց օրինացն երբեմն
էի կենդանի. այլ իբրեւ հաս յիս
պատուիրանն, մեղքն կենդանա–
ցան։
10 Եւ ես մեռայ, եւ գտաւ ինձ
պատուիրանն՝ որ 'ի կեանս էր,
նոյն 'ի մահ։
11 Զի մեղացն պատճառս առեալ
պատուիրանաւն՝ խաբեցին զիս, եւ
նովին սպանին։
12 Այսուհետեւ օրէնք սուրբ են՝
եւ պատուիրանն սուրբ եւ արդար
եւ բարերար։
13 Իսկ արդ՝ ինձ բարին մահ ե–
ղեւ. քաւ լիցի. այլ մեղքն. զի
երեւեսցին մեղքն բարեաւն գործել
ինձ զմահ. զի եղիցին ըստ առա–

մեռելների միջից յարութիւն է ա–
ռել, որ պտուղ բերենք փ Աստու–
ծոյն։
5 Ինչու որ՝ քանի որ մարմնով
էինք, մեղաց ցանկութիւնները՝ որ
օրէնքովն էին՝ զօրանում էին մեր
ք անդամներումը, որ մենք պտուղ
բերենք ղ մահին։
6 Բայց հիմիկ այն օրէնքիցն ար–
ձակվեցանք. ինչու որ՝ մեռանք նո–
րան՝ որ նորանով բռնըված էինք,
որ մենք հոգու նորոգութենովը ծա–
ռայենք՝ եւ ոչ թէ գրի ր հնութե–
նովը։
7 Ապա ինչ ասենք. միթէ օ–
րէնքը մեղք է. քաւ լիցի. բայց
մեղքը չէի գիտենալ՝ եթէ ոչ շ օ–
րէնքովը. եւ ցանկութիւնը չէի ճա–
նաչել՝ թէ որ օրէնքը չէր ասել՝ Թէ
Մի բ ցանկանար։
8 Մեղքը պատճառ առաւ պատ–
ուիրանքովը, եւ ինձանում ամէն
ցանկութիւն ծ գործեց. ինչու որ՝
առանց օրէնքին մեղքը մեռած ե էր։
9 Եւ ես առանց օրէնքին մին ժա–
մանակով կենդանի էի. բայց եր–
բոր պատուիրանքը հասաւ ինձ,
մեղքը կենդանի էլաւ։
10 Եւ ես մեռայ, եւ իսկ այն
պատուիրանքը՝ որ կենաց համար
էր, ինձ մահի պատճառ ւ էլաւ։
11 Ինչու որ՝ մեղքը պատճառ ա–
ռած պատուիրանքովը խաբեց ինձ,
եւ նորանով սպանեց։
12 Ուրեմն՝ օրէնքը սուրբ է՝ եւ
պատուիրանքն էլ սուրբ եւ արդար
եւ ի բարի։
13 Ապա միթէ նա՝ որ բարի է,
ինձ համար մահ էլաւ. քաւ լիցի.
բայց մեղքը. որ երեւի թէ՝ մեղքը
բարիովն ինձ մահ գործեց. որ

փ Գաղ. Ե. 22։
ք Գղ. Զ. 13։
ղ Գղ. Զ. 21։ Գաղ. Ե. 19 Յակ. Ա. 15։
ր Գղ. Բ. 29։ Բ Կորնթ. Գ. 6։
շ Ել. Ի. 20։
բ Ելց. Ի. 17։ Բ Օրին. Ե. 21։ Գործ. Ի. 33։ Գղ. ԺԳ. 9։
ծ Գղ. Դ. 15։ Ե. 20։
ե Ա Կորնթ. ԺԵ. 56։
ւ Ղկ. ԺԸ. 5։ Եզեկ. Ի. 11. 13. 21։ Բ Կորնթ. Գ. 7։
ի Սաղ. ԺԹ. 8։ ՃԺԹ. 38. 137։ Ա Տիմ. Ա. 8։

ւելութեան մեղքն մեղաւոր 'ի ձե-
ռըն պատուիրանին ։
14 Գիտեմք՝ զի օրէնքն հոգեւոր
են. այլ ես մարմնաւոր եմ, ընդ
մեղօք վաճառեալ ։
15 Զի զոր գործեմն՝ ոչ գիտեմ.
ոչ եթէ զոր կամիմն՝ զայն առնեմ,
այլ զոր ատեամն՝ զայն գործեմ ։

16 Ապա թէ զոր ոչն կամիմ՝ զայն
առնեմ, վկայեմ օրինացն՝ եթէ
բարւոք են ։
17 Այլ արդ՝ ոչ եթէ ես գործեմ
զայն, այլ բնակեալ յիս մեղքն ։

18 Գիտեմ զի ոչ բնակեալ է յիս,
այսինքն 'ի մարմնի իմում բարի
ինչ. զի կամքն առաջի կան ինձ.
եւ առնել զբարին ոչ ։

19 Զի ոչ եթէ՝ զոր կամիմ զբա-
րին՝ առնեմ, այլ զոր ոչն կամիմ
զչարն, զայն գործեմ ։

20 Ապա եթէ զոր ոչն կամիմ՝
զայն առնեմ, ոչ եւս ես առնեմ
զայն՝ այլ բնակեալ յիս մեղքն ։

21 Եւ արդ՝ գտանեմ զօրէնս այ-
նորիկ՝ որ կամիցին առնել զիս ըզ
բարին. եւ ինձ չարն առաջի կայ ։
22 Հաճեալ եմ ընդ օրէնսն Աս-
տուծոյ ըստ ներքին մարդոյն ։
23 Բայց տեսանեմ այլ օրէնս
յանդամս իմ, զինեալ հակառակ օ-
րինաց մտաց իմոց. եւ գերեալ զիս
օրինօքն մեղաց՝ որ են յանդամս
իմ ։
24 Այր մի տառապեալ եմ ես՝
ով ապրեցուսցէ զիս 'ի մարմնոյ
աստի մահու ։
25 Այլ շնորհքն Աստուծոյ 'ի ձեռն
Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ.

մեղքն էլ աւելի մեղաւոր լինի
պատուիրանքի ձեռովը ։
14 Գիտեմնք՝ որ օրէնքը հոգե-
ւոր է. բայց ես մարմնաւոր եմ՝
մեղքին ներքեւ ծ ծախուած ։
15 Ինչու որ՝ չեմ գիտում ինչ որ
գործումեմ. որ ոչ թէ ինչ որ կա-
մենումեմ՝ նա եմ գործում. բայց
ինչ որ ատումեմ՝ նա եմ կգոր-
ծում ։
16 Ապա թէ որ՝ ինչ որ չեմ կա-
մենում՝ նա եմ գործում, օրինաց
համար վկայումեմ՝ թէ բարի է ։
17 Ապա ուրեմն ոչ թէ ես եմ
գործում նա, բայց մեղքն՝ որ բը-
նակված է ինձանում ։
18 Գիտումեմ որ ինձանում՝ այ-
սինքն իմ մարմնումս մին բարի
բան բնակված չըկայ. ինչու որ՝
կամք կայ ինձ մօտ, եւ բարին ա-
նելը հ չըկայ.
19 Պատճառն որ՝ ոչ թէ բարին՝
որ կամենումեմ, անումեմ. բայց
չարը՝ որ չեմ կամենում, նա եմ
գործում ։
20 Ապա թէ որ նա՝ որ չեմ կա-
մենում, նա եմ անում. էլ ես չեմ
անում, բայց մեղքն՝ որ ինձանում
բնակված է ։
21 Ուրեմն գտնումեմ նորա օրէն-
քըն՝ որ կամենումէ բարին անել ին-
ձանում. եւ չարն իմ առաջիս կայ ։
22 Հաւանումեմ Աստուծոյ ձ օ-
րէնքներին՝ ներսի ղ մարդովը,
23 Բայց տեսնումեմ ուրիշ ճ օրէնք
իմ անդամներումս՝ որ իմ մտքիս
օրէնքներին դէմ հակառակ է կենում,
եւ ինձ գերի է բռնում այն մեղքին
օրէնքովը՝ որ իմ անդամներումս մ է ։
24 Ես մին խղճալի մարդ եմ՝ ով
կազատեցնէ ինձ այս մահի մարմնիցս ։

25 Միայն թէ Աստուծոյ շնորհքը
մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռովը.

ծ Գ Թագ. ԻԱ. 20. 25. Դ Թագ. ԺԷ. 17.
կ Գաղ. Ե. 17.
հ Ծննդ. Զ. 5. Ը. 21.
ձ Սաղ. Ա. 2.
ղ Բ Կորնթ. Դ. 16. Եփես. Գ. 16. Կող. Գ. 9, 10.
ճ Գաղ. Ե. 17.
մ Գղ. Զ. 13. 19.

ապա ուրեմն՝ ես ինքնին մտօք ի-մովք ծառայեմ օրինացն Աստու-ծոյ. եւ մարմնով օրինացն մեղաց։

ուրեմն ես ինքս իմ մտքովս ծա-ռայում եմ Աստուծոյ օրէնքին, եւ մարմնովս մեղքի ա օրէնքին։

## ԳԼ. Ը

1 Թէ այսպէս իցէ՝ ոչինչ դա-տապարտութիւն է այնոցիկ որ ՚ի Քրիստոս Յիսուս։

2 Զի օրէնք հոգւոյն կենաց ՚ի Քրիստոս Յիսուս ազատեցին զիս յօրինաց մեղացն եւ մահու։

3 Զի որ անհնարին էր օրինացն՝ որով տկարանայր մարմնով. Աստ-ուած զՈրդին իւր առաքեաց ՚ի նմ-մանութիւն մարմնոյ մեղաց՝ եւ վա-սն մեղաց, եւ դատապարտեաց զմեղս ՚ի մարմնի անդ։

4 Զի արդարութիւն օրինացն կատարեսցի ՚ի մեզ, որք ոչ ըստ մարմնոյ գնայցեմք՝ այլ ըստ հոգ-ւոյն։

5 Զի որք ըստ մարմնոյն են զմ մարմնոյն խորհին, եւ որք ըստ հոգւոյն՝ զհոգւոյն։

6 Զի խորհուրդ մարմնոյ՝ մահ է. եւ խորհուրդ հոգւոյն, կեանք եւ խաղաղութիւն։

7 Քանզի խորհուրդ մարմնոյ թշնամութիւն է յԱստուած՝ զի օ-րինացն Աստուծոյ ոչ հնազանդի. նաեւ կարէ իսկ ոչ։

8 Զի որ մարմնաւորն են, Աստու-ծոյ հաճոյ լինել ոչ կարեն։

9 Բայց դուք ոչ էք մարմնով՝ այլ հոգւով, եթէ իցէ Հոգին Աս-

1 Թէ որ այսպէս է՝ բնաւ դա-տապարտութիւն չըկայ նորանց հա-մար՝ որ Յիսուս Քրիստոսումն են՝ որ մարմնոյ պէս չեն ա վարւում։

2 Ինչու որ՝ կենաց հոգւոյ բ օրէն-քը Յիսուս Քրիստոսումը՝ ազատեց գ ինձ մեղքի եւ մահի դ օրէնքից.

3 Պատճառն որ՝ ինչ որ անկարե-լի էր օրէնքին. որովհետեւ տկար էր մարմնոյ ե պատճառովը, Աստ-ուած իրեն Որդին ուղարկեց մե-ղաւոր մարմնոյ նմանութեամբը եւ մեղքին համար, եւ մեղքին դատա-պարտեց այն զ մարմնումը,

4 Որ օրէնքի արդարութիւնը կա-տարվի մեզանում, որ մարմնոյն պէս չենք վարւում՝ բայց հոգւոյն է պէս։

5 Ինչու որ՝ նորանք որ մարմնոյն պէս են՝ մարմնոյ բաներըն են մը-տածում. եւ նորանք՝ որ հոգւոյն ը պէս՝ հոգւոյ թ բաները.

6 Պատճառն որ՝ մարմնոյ մտած-մունքը մահ է. եւ հոգւոյ մտած-մունքը՝ կեանք եւ ժ խաղաղութիւն

7 Ինչու որ՝ մարմնոյ մտածմունքն Աստուծոյ դէմ թշնամութիւն է է. նրա համար որ՝ Աստուծոյ օրէնքին չի հնազանդվում, եւ չէ էլ ւ կա-րող.

8 Պատճառն որ՝ նորանք՝ որ մարմնաւորն են, չեն կարող Աստու-ծոյ հաճոյ լինել։

9 Բայց դուք մարմնով չէք՝ այլ հոգով, թէ որ Աստուծոյ Հոգին

ա Ա Կորնթ. ժե 57։

—

ա Համար. 4։ Գաղ. ե. 16. 25։
բ Ա Կորնթ. ժե 45. Բ Կորնթ. գ. 6։
գ Յովհ. Ը. 36։ Գլ. Զ. 18. 22։ Գաղ. բ. 19։ ե. 1։
դ Գլ. է. 24, 25։
ե Գործ. ժգ. 39։ Գլ. գ. 20։ Եբր. ե. 18, 19։ ժ. 1. 2. 10 14։
զ Գաղ. գ. 13։ Բ Կորնթ. ե. 21։
է Համար. 1։
ը Յովհ. գ. 6։ Ա Կորնթ. բ. 14։
թ Գաղ. ե. 22. 25։
ժ Գլ. Զ. 21։ Համար. 13։ Գաղ. Զ. 8։
ի Յակ. դ. 4։
լ Ա Կորնթ. բ. 14։

տուծոյ 'ի ձեզ բնակեալ. ապա եթէ
ոք զՀոգի Քրիստոսի ոչ ունի, նա
չէ նորա։
10 Իսկ եթէ Քրիստոս 'ի ձեզ է՝
ապա մարմինն մեռեալ է վասն մե-
ղաց. և հոգին կենդանի է վասն
արդարութեան։
11 Եթէ Հոգի այնորիկ՝ որ յարոյց
զՅիսուս 'ի մեռելոց, բնակեալ է 'ի
ձեզ. ապա և որ յարոյց զՅիսուս
Քրիստոս 'ի մեռելոց՝ կենդանա-
ցուսցէ զմահկանացու մարմինս ձեր
բնակելոյ Հոգւոյն իւրով 'ի ձեզ։

12 Այսուհետև եղբարք, պար-
տապան եմք ոչ մարմնոյ՝ ըստ մար-
մնոյ կեալ։
13 Զի թէ ըստ մարմնոյ կեցջէք՝
մեռանելոց էք. իսկ եթէ հոգւով
զգործս մարմնոյ սպանանիցէք՝ կեց-
ջիք։
14 Զի որ Հոգւոյն Աստուծոյ վա-
րին, նոքա են որդիք Աստուծոյ։

15 Զի ոչ առէք զհոգին ծառայու-
թեան միւսանգամ յերկիւղ, այլ
առէք զհոգին որդեգրութեան, ո-
րով աղաղակեմք. Աբբա՛ Հայր։

16 Նոյն ինքն Հոգին վկայէ հոգ-
ւոյս մերում, եթէ եմք որդիք Ա-
ստուծոյ։
17 Եւ եթէ որդիք, ապա և ժա-
ռանգք. ժառանգք Աստուծոյ՝ և
ժառանգակիցք Քրիստոսի. եթէ
չարչարակից կցորդ լինիմք, և փա-
ռացն հաղորդ լինելոց եմք։

ձեզանում բնակված ե է. ապա թէ
որ մէկը Քրիստոսի Հոգին չունի՝
նա նորանը զ չէ։
10 Բայց թէ որ Քրիստոս ձեզա-
նում է՝ ապա մարմինը մեռած է
մեղքին համար, և հոգին կենդա-
նի է արդարութեան համար։
11 Թէ որ նորա Հոգին՝ որ Յիսու-
սին յարոյց մեռելներիցը՝ ձեզա-
նում բնակված է է, ապա նա՝ որ
Յիսուս Քրիստոսին յարոյց մեռել-
ներիցը, ձեր մահկանացու մարմին-
ներին էլ կը կենդանացնէ իրեն Հո-
գովը, որ ձեզանում բնակված ը է։
12 Ուրեմն՝ եղբարք, պարտական
ենք ոչ թէ մարմնոյն՝ որ մարմնոյն
պէս ապրենք։
13 Ինչու որ՝ եթէ մարմնոյն պէս
ապրիք՝ ժ կը մեռնիք. բայց թէ որ
հոգով մարմնոյ գործքերը սպանէք՝
ի կապրիք։
14 Պատճառն որ՝ նորանք որ Աս-
տուծոյ Հոգովն են վարվում, նո-
րանք Աստուծոյ որդիք լ են։
15 Ինչու որ՝ ծառայութեան հո-
գին չէք խ առել՝ որ նորէն ծ վախե-
նաք. բայց որդեգիր լինելոյ հոգին
էք կ առել, որ նորանով աղաղա-
կումենք՝ Աբբա, հ Հայր։
16 Իսկ այն Հոգին վկայութիւն
է տալիս մեր հոգւոյն, որ մենք
Աստուծոյ որդիք ձ ենք։
17 Եւ թէ որ որդիք՝ ապա էլ ժա-
ռանգներ. Աստուծոյ ժառանգներ
և Քրիստոսի ժառանգ ղ ընկերներ.
թէ որ նորա չարչարանքներին ըն-
կեր լինինք՝ փառքին էլ մասնակից
ճ կը լինինք։

ե Ա կորնթ. գ. 16. Զ. 19.
զ Յովհ. դ. 34. գաղ. դ. 6. փիլիպ. Ա. 19. Ա պետ. Ա. 11.
է գործ. բ. 24.
ը Գղ. Զ. 4. 5 Ա կորնթ. Զ. 14. Բ կորնթ. դ. 14. Եփես. բ. 5.
թ Գղ. Զ. 7. 14.
ժ Հռոմ. 6. գաղ. Զ. 8.
ի Եփես. դ. 22. կող. գ. 5.
լ գաղ. Ե. 18.
խ Ա կորնթ. բ. 12 Եբր. բ. 15.
ծ Բ Տիմ Ա. 7. Ա Յովհ. դ. 18.
կ Եսայ. ԿԶ. 5 գաղ. դ. 5, 6.
հ Մարկ. ԺԴ. 36.
ձ Բ կորնթ. Ա. 22 Ե. 5. Եփես. Ա. 13. դ. 30.
ղ Գործ. ԻԶ. 18. Գաղ. դ. 7.
ճ Գործ. ԺԴ. 22. Փիլիպ. Ա. 29. Բ Տիմ. բ. 11, 12.

18 Ինձ այսպէս թուի՝ եթէ ոչ են արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոց փառացն՝ որ յայտնելոց են 'ի մեզ:

19 Զի ակնկալութիւն արարածոց՝ յայտնութեան որդւոցն Աստուծոյ սպասէ:

20 Զի ընդունայնութեան արարածք հնազանդեցան, ոչ իւրեանց կամաւ՝ այլ վասն այնորիկ որ հնազանդեցոյցն յուսով:

21 Զի եւ ինքնին արարածքն ազատեսցին 'ի ծառայութենէ ապականութեան՝ յազատութիւն փառաց որդւոցն Աստուծոյ:

22 Քանզի գիտեմք, եթէ ամենայն արարածք հեծեն եւ երկնեն մինչեւ ցայժմ:

23 Եւ ոչ այսչափ միայն. այլ եւ մեք իսկ՝ որ զպտուղ Հոգւոյն ունիմք, անձամբ յանձինս մեր հեծեմք՝ որդեգրութեան ակն կալեալ փրկութեան մարմնոյ մերոյ:

24 Զի յուսով ապրեցաք. այլ յոյս տեսանելի չէ յոյս. զի զոր տեսանէ ոք՝ զի՞ եւս յուսայ:

25 Ապա թէ զոր ոչն տեսանեմք յուսամք, համբերութեամբ ակն ունիմք:

26 Նոյնպէս եւ Հոգին 'ի թիկունս հասանէ տկարութեան մերում. զի զոր կամքն յաղօթս՝ որպէս արժան իցէ՝ ոչ գիտեմք. այլ ինքնին Հոգին բարեխօս լինի 'ի հեծութիւնս անմռունչս:

18 Ինձ այնպէս է երեւում՝ թէ այս ժամանակիս չարչարանքները չեն արժանի այն նոր գալու փառքին՝ որ մեզանում պիտի — յայտնուի.

19 Ինչու որ՝ ստեղծուածների ⁼ յայտն Աստուծոյ որդւոց յայտնութեանն է ⁝ սպասում.

20 Պատճառն որ՝ ստեղծուածները հնազանդվեցան ունայնութեանը, ոչ թէ իրենց կամքովը՝ բայց նորա համար՝ որ հնազանդացուցաւ + յուսով:

21 Ինչու որ՝ իսկ իրենք ստեղծուածներն էլ ապականութեան ծառայութիւնիցը կազատուին՝ Աստուծոյ որդւոց փառաւոր ազատութեան մէջս.

22 Պատճառն որ՝ գիտումենք՝ թէ ամէն ստեղծուածները մինչեւ հիմիկ հառաչումն՝ եւ սաստիկ ցաւի եւ աշխատանքի մէջ ⁝ են:

23 Եւ ոչ թէ միմիայն այսքան. բայց իսկ մենք էլ՝ որ Հոգւոյ պտուղն ⁝ ունինք, ինքներս մեր անձներումս — հառաչումենք՝ որդիներու որդեգիր լինելուն ենք ‡ սպասում. մեր մարմնոյ + ազատութեանը:

24 Ինչու որ մենք յուսով ապրեցանք. բայց յոյսն՝ որ տեսնուումէ, յոյս չէ. պատճառն որ՝ այն բանն, որ մենք տեսնումենք՝ ինչպէս էլ կըյուսայ * նորան:

25 Բայց թէ որ նա՝ որ չենք տեսնում, նորան յոյս ունինք, ապա համբերութենով սպասումենք.

26 Ճիշդ այնպէս էլ Հոգին ձեռն է տալիս մեր տկարութեան. ինչու որ՝ մենք չենք գիտում թէ ինչ բանի համար աղօթք անենք ինչպէս որ արժան ÷ է. բայց ինքը Հոգին անասելի հառաչանքով բարեխօս է — լինում:

— Բ Կորնթ. Դ. 17.
Ա Պետ. Ա. 6,
7. Դ. 13.
= Բ Պետ. Գ. 13.
⁝ Ա Յովհ. Գ. 2.

+ Համար. 22.
Ծննդ. Գ. 19.
⁝ Երեմ. ԺԲ. 11.
⁝ Բ Կորնթ. Ե. 5.
Եփես. Ա. 14.

— Բ Կորնթ. Ե. 2. 4.
‡ Ղուկ. Ի. 36.
+ Ղուկ. ԻԱ. 28.
Եփես. Դ. 30.
* Բ Կորնթ. Ե. 7.

Եբր. ԺԱ. 1.
÷ Մատթ. Ի. 22.
Յակ. Դ. 3.
— Զաք. ԺԲ. 10.
Եփես. Զ. 18.

27 Բայց որ քննէն զսիրտս՝ գիտէ զինչ խորհուրդ է Հոգւոյն . զի ըստ Աստուծոյ բարեխօսէ վասն սրբոց ։

28 Բայց գիտեմք՝ եթէ որոց սիրեն զԱստուած՝ յամենայնի գործակից լինի 'ի բարիս՝ որք հրաւիրանաւն կոչեցան ։

29 Զի զոր յառաջն ճանաչէր՝ յառաջագոյն եւ հրաւիրեաց կերպարանակից լինել պատկերի Որդւոյն իւրոյ . զի եղիցի նա անդրանիկ 'ի մէջ եղբարց բազմաց ։

30 Եւ զորս յառաջագոյնն հրաւիրեաց՝ զնոսին եւ կոչեաց . եւ զորս կոչեացն՝ զնոսին եւ արդարացոյց . եւ զորս արդարացոյցն՝ ըզնոսին եւ փառաւորս արար ։

31 Իսկ արդ զինչ ասեմք առ այս . եթէ Աստուած 'ի մեր կոյս է , ո՞վ իցէ մեր հակառակ ։

32 Որ յիւր Որդին ոչ խնայեաց՝ այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա . զիա՞րդ ոչ նովաւ հանդերձ զամենայն շնորհիցէ մեզ ։

33 Ո՞վ իցէ որ մեղադիր լինիցի ընտրելոց Աստուծոյ . Աստուած է որ արդարացուցանէ .

34 Իսկ արդ՝ ո՞վ է որ դատապարտ առնիցէ . Քրիստոս Յիսուս՝ որ մեռաւն մանաւանդ թէ յարուցեալ իսկ է . եւ է ընդ աջմէ Աս-

27 Իսկ նա՝ որ սրտերը քննումէ , նա գիտումէ թէ ինչ է Հոգւոյն ք խորհուրդը . ինչու որ Աստուծոյն վայելած կերպով սրբոց համար օ բարեխօսումէ ։

28 Բայց գիտումենք , որ նորանց՝ որ Աստուծոյն սիրումեն՝ նա ամէն բանի մէջ օգնական է լինում դէպի բարին նորանց՝ որ հրաւիրելովը ֆ կանչվեցան .

29 Պատճառն որ՝ նորանց՝ որ՞ առաջուց ա ճանաչեց , առաջուց բ հրաւիրեց՝ որ նորա Որդւոյ պատկերին նման գ լինին . որ նա առաջինեկ լինի շատ եղբայրների դ մէջ ։

30 Եւ նորանց՝ որ առաջուց հրաւիրեց , նորանց էլ կանչեց . եւ նորանց՝ որ ե կանչեց , նորանց էլ զ արդարացրուց . եւ նորանց որ արդարացրուց , նորանց էլ փառաւոր է արաւ ։

31 Ապա ինչ ասենք սորահամար . թէ որ Աստուած մեր կողմն է՝ էլ ով կը լինի մեզ ը հակառակ ,

32 Որ իրեն Որդուն էլ թ չը խնայեց՝ այլ մեզ ամէնիս համար մատնեց նորան . էլ ինչպէս նորան հետ ամէն բան չի շնորհիլ ժ մեզ ։

33 Ո՞վ է նա՝ որ Աստուծոյ ընտրվածներին վերայ մեղադրանք կանէ . Աստուած է՝ որ ի արդարացնումէ ։

34 Ուրեմն ով է նա՝ որ մեզ լ կը դատապարտէ . Քրիստոս Յիսուս , որ մեռաւ՝ եւ աւելի էլ որ իսկ ինքն յարութիւն առաւ եւ Աստու-

ք Ա Մնաց . ԻԸ . 9 . Սաղ . Է . 9 . Առակ . ԺԷ . 3 . Երեմ . ԺԱ . 20 . ԺԷ . 10 . Ի . 12 . Գործ . Ա . 24 . Ա Թես . Բ . 4 . Յայտ . Բ . 23 .
օ Ա Յովհ . Ե . 14 .
ֆ Հռ . Թ . 11 . 23 , 24 . Բ Տիմ . Ա . 9 .
ա Ելից . ԼԳ . 12 . 17 . Սաղ . Ա . 6 . Երեմ . Ա . 5 . Մատթ . Է . 23 . Հռ . ԺԱ . 2 . Բ Տիմ . Բ . 19 . Ա Պետ . Ա . 2 .
բ Եփես . Ա . 5 . 11 .
գ Յովհ . ԺԷ . 22 . Բ Կորնթ . Գ . 18 . Փիլիպ . Գ . 21 . Ա Յովհ . Գ . 2 .
դ Կող . Ա . 15 . 18 . Եբր Ա . 6 . Յայտ . Ա . 5 .
ե Հռ . Ա . 6 . Թ . 24 . Եփես . Դ . 4 . Եբր . Թ . 15 . Ա Պետ . Բ . 9 .
զ Ա Կորնթ . Զ . 11 .
է Յովհ . ԺԷ . 22 . Եփես . Բ . 6 .
ը Թու . ԺԴ . 9 . Սաղ . ՃԺԸ . 6 .
թ Հռ . Ե . 6 . 10 .
ժ Հռ . Դ . 25 .
ի Եսայ . Ծ . 8 . 9 . Յայտ . ԺԲ . 10 . 11 .
լ Յոբ . ԼԴ . 29 .

տուծոյ, որ եւ բարեխօս իսկ է
վասն մեր։
35 Արդ՝ ո՞վ մեկնեսցէ զմեզ ՚ի սի-
րոյն Քրիստոսի. նեղութիւն, թէ
անձկութիւն, թէ հալածանք, թէ
սով, թէ մերկութիւն, թէ վիշտք,
թէ սուր։
36 Որպէս եւ գրեալ է. Վասն քո
մեռանիմք զօրհանապազ, համարե-
ցաք իբրեւ զոչխարս ՚ի սպանդ։
37 Այլ յայսմ ամենայնի, առա-
ւել յաղթեմք նովաւ՝ որ սիրեացն
զմեզ։
38 Քանզի հաստատեալ եմ, եթէ
ոչ մահ եւ ոչ կեանք եւ ոչ հրեշ-
տակք եւ ոչ իշխանութիւնք, եւ ոչ
որ կանն եւ ոչ հանդերձեալքն եւ
ոչ զօրութիւնք,
39 Եւ ոչ բարձրութիւն եւ ոչ
խորութիւն, եւ ոչ այլ ինչ արա-
րած՝ կարէ մեկնել զմեզ ՚ի սիրոյ
անտի Աստուծոյ, որ ՚ի Քրիստոս
Յիսուս ՚ի Տէր մեր։

ծոյ աջ կողմն ɔ է, որ իսկ ինքն էլ
մեզ համար բարեխօս ւ է։
35 Ապա ո՞վ կը բաժանէ մեզ Քը-
րիստոսի սիրոյցը. նեղութիւն, թէ
չարչարանք, թէ հալածմունք,
թէ սով, թէ մերկութիւն, թէ
վիշտ, թէ սուր.
36 Ինչպէս որ էլ գրուած է, Թէ
Քեզ համար ամէն օր մեռնումենք,
եւ մորթուելու ոչխարի պէս ⁴ հա-
մարուեցանք։
37 Բայց այս ամէն բաներումն էլ
աւելի յաղթումենք նորա ձեռքովը՝
որ մեզ ʳ սիրեց.
38 Պատճառն որ՝ հաստատ գի-
տեմ, որ ոչ մահ եւ ոչ կեանք,
եւ ոչ հրեշտակներ եւ ոչ իշխա-
նութիւններ, եւ ոչ հիմիկուան բա-
ներ եւ ոչ յետոյ եկողներ, եւ ոչ
ɹ զօրութիւններ,
39 Եւ ոչ բարձրութիւններ եւ ոչ
խորութիւններ, եւ ոչ մէկ ուրիշ
ստեղծուած բան կարող է մեզ բա-
ժանել Աստուծոյ սիրոյցը որ մեր
Տէր Յիսուս Քրիստոսումն է։

## ԳԼ. Թ

1 Ստուգութեամբ ասեմ ՚ի Քրի-
րիստոս՝ եւ ոչ ստեմ, վկայէ ինձ
միտք իմ ՚ի Հոգի Սուրբ։
2 Զի տրտմութիւն է ինձ յոյժ
եւ անպակաս ցաւք սրտի իմոյ։
3 Զի ուխտիւք խնդրէի ես իսկ
ինքնին նզովք լինել ՚ի Քրիստոսէ,
վասն եղբարց իմոց եւ ազգակա-
նաց ըստ մարմնոյ։

1 Ճշմարիտն ասումեմ Քրիստո-
սովը՝ եւ սուտ չեմ ասում, որ
նոյնը իմ խղճմտանքս էլ վկայում է
ինձ Սուրբ-Հոգովը,
2 Որ սաստիկ տրտմութիւն ու-
նիմ՝ եւ անպակաս ցաւ իմ սրտիս
ᵽ մէջ.
3 Ինչու որ՝ փափագելով խնդ-
րումէի որ իսկ ես ինքս նզովուած
լինիմ Քրիստոսից իմ եղբայրներիս
եւ մարմնաւոր ազգականներիս ǂ հա-
մար,

ɔ Մարկ. ԺԶ. 19. Կող. Գ. 1. Եբր. Ա. 3. Ը. 1. ԺԲ. 2. Ա Պետ. Գ. 22.
ւ Եբր. Է. 25. Թ. 24. Ա Յովհ. Բ. 1.
⁴ Սաղ. ԽԴ. 22. Ա կորնթ. ԺԵ. 30, 31. Բ կորնթ. Դ. 11.
ʳ Ա կորնթ. ԺԵ. 57. Բ կորնթ. Բ. 14. Ա Յովհ. Դ. 4. Ե. 4. 5. Յայտ. ԺԲ. 11.
ɹ Եփես. Ա. 21. Զ. 12. Կող. Ա. 16. Բ. 15. Ա Պետ. Գ. 22.
—
= Հռ. Ա. 9. Բ կորնթ. Ա. 23. ԺԱ. 31. ԺԲ. 19. Գաղ. Ա. 20. Փիլիպ. Ա. 8. Ա Տիմ. Բ. 7.
ᵽ Հռ. Ժ. 1.
ǂ Ելից ԼԲ. 32.

4 Որ են Իսրայէլացիք. որոց որ-
դեգրութիւնն եւ փառքն եւ կտա-
կարանքն եւ օրէնսդրութիւնն եւ
պաշտօնն եւ աւետիքն,
5 Որոց հարքն, յորոց եւ Քրիս-
տոս ըստ մարմնոյն, որ է ՚ի վերայ
ամենեցուն Աստուած օրհնեալ յա-
ւիտեանս. ամէն։
6 Ո՛չ ինչ է մարթ՝ եթէ անկեալ
լինիցի բանն Աստուծոյ. զի ոչ ա-
մենեքեան՝ որ յԻսրայէլէն են, նո-
քա Իսրայէլեանք իցեն։
7 Եւ ոչ որ զաւակն Աբրահա-
մու են՝ ամենեքեան որդիք իցեն.
այլ Իսահակաւ կոչեսցի քեզ զա-
ւակ։
8 Այսինքն՝ ոչ եթէ որ որդիք
մարմնոյն են, են որդիք Աստուծոյ,
այլ որդիք աւետեացն համարին ՚ի
զաւակ։
9 Քանզի աւետեաց բան է բանս
այս, եթէ ՚ի ժամանակի յայսմիկ
եկից՝ եւ եղիցի որդի Սառայի։
10 Եւ ոչ այնչափ միայն այլ եւ
՚ի Հռեբեկայ ՚ի միոջէ անկողնոյ
Սահակայ հօր մերոյ։
11 Զի մինչչեւ ծնեալ էին, եւ
մինչչեւ բարի ինչ կամ չար գոր-
ծեալ էին. զի ըստ ընտրութեանն
առաջադրութիւնն Աստուծոյ հաս-
տատեսցի.
12 Ո՛չ ՚ի գործոց՝ այլ յայնմանէ՝
որ կոչեացն, ասացաւ նմա.

4 Որ նորանք Իսրայէլացի [ա] են.
որ նորանցն է որդեգիր [բ] լինելը,
եւ [գ] փառքը, եւ [դ] կտակարանները,
[ե] օրէնսդրութիւնն ու [զ] պաշտօնը
եւ [է] աւետիքը,
5 Որ նորանցն են [ը] հարքը՝ որ
նորանցից էլ Քրիստոսն է մարմնոյ
[թ] կողմանէ՝ նա որ ամէնին վերայ է
[ժ] Աստուած, օրհնեալ յաւիտեանս.
ամէն։
6 Բնաւ կարելի չէ՝ որ Աստու-
ծոյ խօսքը գետնին [ի] ընկնի. ինչու
որ՝ ոչ թէ ամէնքն որ Իսրայէլից
են՝ նորանք Իսրայէլացիք [լ] են։
7 Եւ ոչ թէ՝ նորանք որ Աբրա-
համի զաւակ են՝ այն ամէնքը որ-
դիք [խ] են. այլ Իսահակով քեզ հա-
մար զաւակ պիտի [ծ] կանչուի։
8 Այսինքն՝ ոչ թէ նորանք որ
մարմնոյ որդիք են՝ Աստուծոյ որ-
դիք են. այլ աւետիքի որդիքը զա-
ւակ [կ] կը համարուին,
9 Պատճառն որ՝ սա է յատուկ
աւետիքի խօսքը, թէ այս ժամա-
նակումս կը գամ եւ Սառային որդի
[հ] կը լինի։
10 Եւ ոչ թէ միայն այսքան. բայց
Հռեբեկան էլ մեր հայր Իսահակից
մին անկողնից [ձ] յղացաւ,
11 Որ դեռ նորանք չէին ծնված,
եւ դեռ մին բարի կամ չար բան
չէին գործած. որ ընտրութեան
պէս Աստուծոյ առաջուց սահման-
ւածը հաստատ մնայ.
12 Ո՛չ թէ գործքերից՝ այլ նո-
րանից՝ որ կանչեց, ասվեցաւ [ղ] նո-
րան.

ա Բ Օրին. Է. 6.
բ Ելից Դ. 22. Բ Օրին. ԺԴ. 1. Երեմ. ԼԱ. 9.
գ Ա Թագ. Դ. 21. Գ Թագ. Ը. 11. Սաղ. ԿԴ. 2. ՀԸ. 61.
դ Գործ. Գ. 25. Եբր. Ը. 8, 9, 10.
ե Սաղ. ՃԽԷ. 19.
զ Եբր. Թ. 1.
է Գործ. ԺԳ. 32. Գղ. Գ. 2. Եփես. Բ. 12.
ը Բ Օրին. Ժ. 15. Գղ. ԺԱ. 28.
թ Ղու. Գ. 23. Գղ. Ա. 3.
ժ Երեմ. ԻԳ. 6. Յովհ. Ա. 1. Գործ. Ի. 28. Եբր. Ա. 8. Ա Յովհ. Ե. 20.
ի Թու. ԻԳ. 19. Գղ. Գ. 3.
լ Յովհ. Ը. 39. Գղ. Բ. 28. 29. Դ. 12. 16. Գաղ. Զ. 16.
խ Գաղ. Դ. 23.
ծ Ծննդ. ԻԱ. 12. Եբր. ԺԱ. 18.
կ Գաղ. Դ. 28.
հ Ծննդ. ԺԸ. 10. 14.
ձ Ծննդ. ԻԵ. 21.
ղ Գղ. Դ. 17. Ը. 28.

13 Թէ Երէցն կրտսերոյն ծառայեսցէ, որպէս եւ գրեալ է. թէ Զյակովբ սիրեցի, եւ զԵսաւ ատեցի։

14 Իսկ արդ՝ զի՞նչ ասեմք. միթէ անիրաւութիւն իցէ Աստուծոյ. քաւ լիցի։

15 Զի Մովսիսի ասէ. Ողորմեցայց՝ որում ողորմեցայցն, եւ գթացայց՝ յորս գթացայցն։

16 Ապա ոչ ըստ այնմ ինչ է՝ որ կամիցին, եւ ոչ ըստ այնմ՝ որ ընթանայցէ. այլ ըստ Աստուծոյ՝ որ ողորմին։

17 Քանզի ասէ գիր ցՓարաւոն. թէ Վասն այնորիկ զարուցի զքեզ, զի 'ի քեզ ցուցից զզօրութիւն իմ, եւ պատմեսցի անուն իմ ընդ ամենայն երկիր։

18 Ապա ուրեմն՝ ում կամի ողորմի, եւ ում կամի խստանայ։

19 Իսկ արդ ասիցես, թէ Մեղ եւս զի՞ գտէ՝ զի կամաց նորա ոչ ոք կայ հակառակ։

20 Իսկ արդ դու ով ես մարդ՝ որ պատասխանի տաս Աստուծոյ. միթէ ասիցէ ստեղծուածն ցՍտեղծիչն՝ թէ Ընդէ՞ր այդպէս արարեր զիս։

21 Եթէ ոչ ունիցի իշխանութիւն բրուտն կաւոյն, 'ի նմին զանգուածոյ առնել անօթ՝ զոմն 'ի պատիւ եւ զոմն յանարգանս։

22 Ապա եթէ կամէր Աստուած ցուցանել զբարկութիւն, եւ յայտնի առնել զզօրութիւն իւր, որ համբերեաց բազում երկայնմտութեամբ

13 Թէ Մեծը պիտի ծառայէ [ժ] փոքրին. ինչպէս որ էլ գրված է, թէ Յակոբին սիրեցի, եւ Եսաւին [ի] ատեցի։

14 Ապա ինչ ասենք. միթէ Աստուծոյ մօտ անիրաւութիւն կայ. քաւ [լ] լիցի։

15 Պատճառն որ՝ նա Մօւսէսին ասումէ. Կողորմիմ՝ ում որ կողորմիմ, եւ գթած կը լինիմ՝ ում որ գթած [ւ] կը լինիմ։

16 Ապա նորանից չէ՝ որ կամենումէ եւ ոչ էլ նորանից՝ որ վազումէ, բայց Աստուածանից՝ որ ողորմումէ։

17 Պատճառն որ՝ գիրքն ասումէ [ղ] Փարաւոնին, թէ Նորա համար գրգեցի քեզ՝ որ քեզանում ցոյց տամ իմ զօրութիւնս, եւ իմ անունս ամէն երկրի մէջ [ճ] պատմուի։

18 Ապա ուրեմն՝ ում որ կամենումէ՝ ողորմումէ. եւ ում կամենումէ՝ պինդ է կենում։

19 Ապա լինի որ ասես թէ, Էլ նա ինչու է մեղադրում՝ պատճառն որ՝ ոչ ով նորա կամքին հակառակ [մ] չի կենայ։

20 Ապա դու ով ես՝ մարդ՝ որ Աստուծոյն պատասխանում տաս. միթէ ստեղծվածը կասէ իրեն Ստեղծողին՝ թէ Ինչու այսպէս արիր [յ] ինձ։

21 Միթէ բրուտն իշխանութիւն չունի հողին վերայ, որ խակ մին շաղախվածքիցն ամաններ շինէ՝ մինը՝ որ պատուաւոր լինի, եւ միւսը՝ որ անարգ [շ] լինի։

22 Ապա թէ որ Աստուած կամենումէր ցոյց տալ բարկութիւնը, եւ յայտնել իրեն զօրութիւնն՝ որ շատ երկայնմտութենով համբերեց

ժ Ծննդ. ԻԵ. 23։ ի Մաղ. Ա. 2, 3։ Բ Օրին. ԻԱ. 15։ Առակ. ԺԴ. 24։ Մատթ. Ժ. 37։ Ղուկ. ԺԴ. 26։ Յովհ. ԺԲ. 25։ լ Բ Օրին. ԼԲ. 4։ Բ Մնաց. ԺԹ. 7։ Յոբ. Ը. 3։ ԼԴ. 10։ Սաղ. ՂԲ. 15։ ւ Ելից. ԼԳ. 19։ ղ Գաղ. Գ. 8. 22։ ճ Ելից. Թ. 16։ մ Բ Մնաց. Ի. 6։ Յոբ. Թ. 12։ ԻԴ. 13։ Դան. Դ. 35։ յ Եսայ. ԻԹ. 16։ ԽԵ. 9, ԿԴ. 8։ ն Առակ. ԺԶ. 4։ Երեմ. ԺԸ. 6։ շ Բ Տիմ. Բ. 20։

անօթոցն բարկութեան՝ պատրաստելոցն 'ի կորուստ ։

23 Զի յայտնի արասցէ զմեծութիւն փառաց իւրոց 'ի վերայ անօթոցն ողորմութեան, զոր պատրաստեաց 'ի փառս ։

24 Զորս եւ կոչեաց զմեզ, ոչ միայն 'ի Հրէից, այլ եւ 'ի հեթանոսաց .

25 Որպէս եւ Յովսէէ ասէ . Կոչեցից՝ զոր ոչ ժողովուրդն իմ, ժողովուրդ իմ . եւ զչսիրեցեալն՝ սիրեցեալ ։

26 Եւ եղիցի 'ի տեղւոջ յորում ասացաւ նոցա՝ թէ ոչ ժողովուրդ իմ դուք, անդ կոչեսցին նոքա որդիք Աստուծոյ կենդանւոյ ։

27 Եսայի աղաղակէ վասն Իսրայէլի . Եթէ իցէ թիւ որդւոցն Իսրայէլի իբրեւ զաւազ ծովու՝ սակաւ ինչ մնացորդք մնասցեն ։

28 Զի բան մի հակիրճ եւ համառօտ արդարութեամբ . զբանն հակիրճ արասցէ Տէր 'ի վերայ երկրի ։

29 Եւ որպէս ասէ Եսայի . Թէ ոչ Տէրն զօրութեանց թողեալ էր մեզ զաւակ, իբրեւ զՍոդոմ լինէաք՝ եւ Գոմորայ նմանէաք ։

30 Իսկ արդ զինչ ասիցեմք . զի հեթանոսք՝ որ ոչ երթային զհետ արդարութեան՝ հասին արդարութեան, այն արդարութեան՝ որ 'ի հաւատոց անտի ։

31 Այլ Իսրայէլ երթայր զհետ օրինացն արդարութեան՝ եւ յօրէնս արդարութեան ոչ ժամանեաց ։

32 Ընդէր . զի ոչ 'ի հաւատոց՝ այլ իբրեւ 'ի գործոց օրինաց . քանզի

բարկութեան ր ամաններին՝ որ կորուստի համար պատրաստուած ց էին .

23 Որ յայտնի ցոյց տայ իւր փառաց ւ մեծութիւնը՝ ողորմութեան ամաններին վերայ, որ նորանց պատրաստեց փառաց փ համար .

24 Որ նորանցում մեզ էլ կանչեց, ոչ թէ միայն Հրէաներիցը, բայց հեթանոսներիցն ք էլ ։

25 Ինչպէս որ Յովսէէն էլ ասումէ . Նա որ իմ ժողովուրդս չէ, իմ ժողովուրդ կը կանչեմ . եւ չը սիրեցածը՝ օ սիրեցած ։

26 Եւ կը լինի որ այնտեղն որ ասվեցաւ նորանց՝ թէ դուք իմ ժողովուրդ չէք՝ այնտեղ նորանք կենդանի Աստուծոյ որդիք ֆ կը կոչվին

27 Եսային աղաղակումէ Իսրայէլի համար . Թէ որ Իսրայէլի որդոց համար ծովի աւազին պէս չափ ա լինի՝ նորանցից քիչ մնացուք բ կը մնան .

28 Պատճառն որ՝ մին կարճ եւ համառօտ բան [illegible] արդարութենով . Տէրն կարճ կանէ բանն երկրի գ վերայ ։

29 Եւ ինչպէս որ Եսային ասումէ . Թէ որ զօրութեանց Տէրը մեզ համար զաւակ չէր դ թողած, մենք Սոդոմին պէս կը լինէինք եւ Գոմորին ե կը նմանէինք ։

30 Ապա ինչ ասենք . Նա որ հեթանոսներին՝ որ արդարութեան ետեւէն չէին ընկնում՝ արդարութեան հասին, այն արդարութեանն՝ որ հաւատքիցն զ է .

31 Բայց Իսրայէլը՝ արդարութեան օրէնքի ետեւէն էր ընկնում՝ եւ արդարութեան օրէնքին է չը հասաւ

32 Ինչու համար . Նրա համար՝ որ ոչ թէ հաւատքիցը, բայց օրէնքի

ր Ա Թես . Ե . 9 ։
ց Ա Պետ . Բ . 8 . Յուդ . 4 ։
ւ Հռ . Բ . 4 . Եփես Ա . 7 . Կող . Ա 27 ։
փ Հռ . Ը . 28—30 ։
ք Հռ . Գ . 29 ։
օ Ովսէ . Բ . 23 . Ա Պետ . Բ . 10 ։
ֆ Ովսէ . Ա . 10 ։
ա Եսայ . Ժ . 22, 23 ։
բ Հռ . ԺԱ . 5 ։
գ Եսայ . ԻԸ . 21 ։
դ Եսայ . Ա . 9 ։ Ողբ . Գ . 22 ։
ե Եսայ . ԺԳ . 19 ։ Երեմ . Ծ . 40 ։
զ Հռ . Դ . 11 ։ Ժ . 20 ։
է Հռ . Ա . 17 ։
ը Հռ . Ժ . 2 ։ ԺԱ . 7 ։
թ Գաղ . Ե . 4 ։

զարկին նոքա առ վիմին գայթագ-
ղութեան ․

33 Որպէս որ գրեալ է ․ Ահաւա-
սիկ դնեմ 'ի Սիոն քար գայթակ-
ղութեան եւ վէմ գլորման ․ եւ ա-
մենայն որ հաւատասցէ 'ի նա՝ մի
ամաչեսցէ ։

գործքերից ․ պատճառն որ՝ նորանք
գայթակղութեան քարին վերայ
ծ գլորվեցան ․

33 Ինչպէս որ էլ գրված է ․ Ահա
ես Սիօնին մէջ գայթակղութեան
է քար եւ գլորելոյ վէմ եմ ը դնում ․
եւ ամէն ով որ կը հաւատայ նո-
րան՝ նա չի ամաչիլ ։

## Գլ. Ժ

1 Եղբարք՝ իմ կամք սրտի եւ
աղօթք առ Աստուած, վասն նոցա
են 'ի փրկութիւն ։

2 Վասնզի վկայեմ նոցա՝ թէ զնա-
խանձ Աստուծոյ ունին, այլ ոչ գի-
տութեամբ ։

3 Զի ագէտ են Աստուծոյ արդա-
րութեան, եւ զիւրեանցն խնդրեն
կացուցանել ․ զի արդարութեանն
Աստուծոյ ոչ հնազանդեցան ։

4 Վասնզի կատարած օրինացն Քրի-
ստոս է՝ յարդարութիւն ամենայն
հաւատացելոց ։

5 Մովսէս գրէ զարդարութիւնն՝
որ յօրինաց անտի է ․ Թէ արասցէ
զայն մարդ՝ կեցցէ նովիմ ։

6 Իսկ զհաւատոյն արդարութենէ
այսպէս ասէ ․ Մի ասիցես 'ի սրտի
քում ․ Ո՞վ ելանիցէ յերկինս, այ-
սինքն է՝ զՔրիստոս իջուցանել ։

7 Կամ ով իջանիցէ յանդունդս,
այսինքն է զՔրիստոս հանել 'ի մե-
ռելոց ։

8 Այլ զինչ ասէ գիր ․ Մերձ է
բանն 'ի բերան քո, եւ 'ի սրտի
քում է ․ այսինքն է՝ բանն հաւա-
տոյ զոր քարոզեմք ։

9 Զի եթէ խոստովանեսցես բե-

1 Եղբարք՝ իմ սրտիս կամքն ու
դէպի Աստուած աղօթքը նորանց
համար նա է, որ փրկվին ․

2 Ինչու որ՝ վկայում եմ նորանց՝
որ Աստուծոյ համար նախանձ ու-
նին՝ բայց գիտութենով ա չէ ․

3 Պատճառն որ՝ Աստուծոյ ար-
դարութիւնն չեն բ գիտում, եւ իւ-
րենցն են կամենում գ կանգնա-
ցնել ․ նորահամար որ Աստուծոյ ար-
դարութեանը չը հնազանդվեցան ․

4 Ինչու որ՝ Քրիստոսն է օրէնքին
վախճանը որ արդար լինի ամէն՝
ով որ հաւատումէ դ նորան ։

5 Մօսէս գրումէ այն արդարու-
թեան համար՝ որ օրէնքիցն է, թէ որ
մէն մարդ նա անէ՝ կապրի ե նորանով ։

6 Բայց հաւատքի արդարութեա-
նը համար այսպէս է ասում ․ Չի
ասես քո սրտումդ, Ո՞վ վերկէլլի
երկինքը՝ այսինքն՝ Քրիստոսն վէր
բերելոյ զ համար ․

7 Կամ թէ՝ ով վէր կըջայ ան-
դունդը՝ այսինքն՝ Քրիստոսին մե-
ռելների միջիցը հանելոյ համար ։

8 Բայց գիրքն ինչ է ասում ․
Այն խօսքը մօտիկ է քո բերանից,
եւ քո սրտումդ է է ․ այսինքն, հա-
ւատքի խօսքն՝ որ քարոզումենք ։

9 Պատճառն որ՝ եթէ քո բերա-

ծ Ղու. Բ. 34. Ա Կորնթ. Ա. 23.
է Սաղ. ՃԺԸ. 22 Եսայ. Ը. 14. ԻԸ. 16. Մատթ. ԻԱ. 42. Ա Պետ. Բ. 6, 7, 8.
ը Գլ. Ժ. 11.

—

ա Գործ. ԻԱ. 20. ԻԲ. 3. Գաղ. Ա. 14. Դ. 17. Գլ. Թ. 31.
բ Գլ. Ա. 17. Թ. 30.
գ Փիլիպ. Գ. 9.
դ Մատթ. Ե. 17. Գաղ. Գ. 24.
ե Ղև. ԺԸ. 5. Նեեմ. Թ. 29. Եզեկ. Ի. 11. 13 21. Գաղ. Գ. 12.
զ Բ Օրին. Լ. 12. 13.
է Բ Օրին. Լ. 14.

բերանով քով Տէր զՅիսուս, և հաւատասցես 'ի սրտի քում, թէ Աստուած յարոյց զնա 'ի մեռելոց, կեցցես։

10 Զի սրտիւ հաւատայք յարդարութիւն, և բերանով խոստովանիք 'ի փրկութիւն։

11 Քանզի ասէ գիր. Ամենայն որ հաւատասցէ 'ի նա, մի՛ ամաչեսցէ։

12 Զի ոչ գոյ խտիր Հրէի և Հեթանոսի. քանզի նոյն Տէր է ամենեցուն, բաւական յամենեսին՝ որք կարդան առ նա։

13 Զի ամենայն՝ որ կարդասցէ զանուն Տեառն՝ կեցցէ։

14 Իսկ զիա՞րդ կարդասցեն՝ յոր ոչն հաւատացին. կամ զիա՞րդ հաւատասցեն՝ որում ոչ լուան. կամ զիա՞րդ լուիցեն առանց ուրուք քարոզելոյ։

15 Կամ զիա՞րդ քարոզեսցեն, եթէ ոչ առաքեսցին. որպէս և գրեալ է. Որպէս զի գեղեցիկ են ոտք աւետարանչացն խաղաղութեան և աւետարանչացն բարութեան։

16 Այլ ոչ ամենեքեան հնազանդ եղեն աւետարանին. Եսայի ասէ. Տէ՛ր՝ ո՞ հաւատաց լրոյ մերում։

17 Ապա ուրեմն՝ հաւատք 'ի լսելոյ են, և լուր 'ի բանէն Քրիստոսի։

18 Այլ ասեմ, Միթէ ոչ լուա՞ն. մանաւանդ զի ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա, և ընդ ծագս աշխարհաց խօսք նոցա։

նովդ Յիսուսին Տէր դաւանես, և քո սրտումդ հաւատաս՝ թէ Աստուած յարոյց նորան մեռելներիցը՝ դու ը կապրիս։

10 Ինչու որ՝ սրտով հաւատումենք արդարանալոյ համար, և բերանով դաւանումենք փրկվելոյ համար։

11 Պատճառն որ՝ գիրքն ասումէ. Ամէն ով որ կը հաւատայ նորան՝ թ չի ամաչիլ։

12 Ինչու որ՝ ջոկութիւն չը կայ Հրէայի և Հեթանոսի ժ մէջ. նորա համար որ՝ ամէնին իսկ մին Տէր ի է, որ բաւական է ամէնին համար՝ որ կանչումեն լ նորան։

13 Ինչու որ ամէն ով 'որ Տէրի խ անունը՝ կը կանչէ՝ ծ կապրի։

14 Ապա ինչպէս կանչեն նորան, որ չը հաւատացին. կամ ինչպէս հաւատան նորան, որ չը լսեցին. կամ ինչպէս լսեն, թէ որ մինը կ չը քարոզէ.

15 Կամ ինչպէս քարոզեն, թէ որ չուղարկվիլին. ինչպէս որ էլ գրված է. Թէ ինչպէս գեղեցիկ են նորանց ոտները՝ որ խաղաղութիւն են քարոզում և բարի բաների աւետիք են հ տայիս։

16 Բայց ամէնքը հնազանդ չէլան աւետարանին, ինչպէս որ Եսային ձ ասումէ. Տէ՛ր՝ ո՞վ հաւատաց մեր ղ խօսքին։

17 Ուրեմն հաւատքը լսելուցն է, և լսելը՝ Քրիստոսի խօսքիցը։

18 Բայց ասումեմ. Միթէ չը լսեցին. իսկ է որ նորանց ձայնը դուրս գնաց բոլոր ճ երկիրը, և նորանց խօսքը մինչև աշխարհքի մ ծայրերը։

ը Մատթ. Ժ. 32. Ղուկ. ԺԲ. 8. Գործ. Ը. 37.
թ Եսայ. ԻԸ. 16. ԽԹ. 23. Երեմ. ԺԷ. 7. Հռ. Թ. 33.
ժ Հռ. Գ. 22. Գործ. ԺԵ. 9. Գաղ. Գ. 28.
ի Գործ. Ժ. 36. Հռ. Գ. 29. Ա Տիմ. Բ. 5.
լ Եփես. Ա. 7. Բ. 4. 7.
խ Գործ. Թ. 14.
ծ Յովէլ. Բ. 32. Գործ. Բ. 21.
կ Տիտ. Ա. 3.
հ Եսայ. ԾԲ. 7. Նաւում. Ա. 15.
ձ Հռ. Գ. 3. Եբր. Դ. 2.
ղ Եսայ. ԾԳ. 1. Յովհ. ԺԲ. 38.
ճ Սաղ. ԺԹ. 4. Մատթ. ԻԴ. 14. ԻԸ. 19. Մարկ. ԺԶ. 15. Կող. Ա. 6. 23.
մ Գ Թագ. ԺԸ. 10. Մատթ. Դ. 8.

19 Այլ ասեմ, Միթէ Իսրայէլ ոչ լուաւ. նախ Մովսէս ասէ, Ես նախանձեցուցից զձեզ ոչինչ ժողովրդեամբ, եւ ազգաւ անմտաւ զկծեցուցից զձեզ։

19 Բայց ասում եմ. Միթէ Իսրայէլը չը լսեց. առաջ Մովսէսն է ասում. Ես ձեզ նախանձաւոր կը շինեմ մին ոչ ինչ յ ժողովրդով, եւ մին անմիտ ազգով կը կծացնեմ ն ձեզ։

20 Բայց Եսայի համարձակի խօսի եւ ասէ. Գտայ այնոցիկ՝ որ զիսն ոչ խնդրէին. յայտնի եղէ այնոցիկ՝ որ զինէն ոչ հարցանէին։

20 Բայց Եսային էլ աւելի համարձակվումէ՝ եւ ասում. Ես գտնվայ նորանցից՝ որ ինձ չէին շ խնդրում. յայտնի էլայ նորանց՝ որ ինձ համար չէին հարցնում։

21 Այլ առ Իսրայէլ ասէ. Զօր ամենայն ձգեցի զձեռս իմ առ ժողովուրդ անհաւան՝ եւ հակառակող։

21 Բայց Իսրայէլին ասումէ. Ամէն օր իմ ձեռս մեկնեցի դէպի անհաւատ եւ հակառակօղ ո ժողովուրդը։

## ԳԼ. ԺԱ.

1 Իսկ արդ ասեմ, Միթէ մերժեաց Աստուած զժողովուրդ իւր. քաւ լիցի. քանզի եւ ես Իսրայէլացի եմ, ՚ի զաւակէ Աբրահամու. յազգէ Բենիամինի։

1 Ապա ասում եմ. Միթէ Աստուած զէն ձգեց իւրեն չ ժողովուրդը. քաւ լիցի. ինչու որ՝ ես էլ Իսրայէլացի եմ՝ Աբրահամի զաւակից, Բենիամինի պ ցեղից։

2 Ո՛չ մերժեաց Աստուած զժողովուրդ իւր, զոր յառաջն ծանեաւ. թէ ոչ գիտէք յԵղիա զինչ ասէ գիր. որպէս ամբաստան լինի Աստուծոյ զԻսրայէլէ։

2 Աստուած զէն չը ձգեց իւրեն ժողովուրդն՝ որ նորան առաջուց ջ ճանաչեց. կամ թէ չէք գիտում թէ գիրքն ինչ է ասում Եղիայի համար. թէ ինչպէս նա Իսրայէլին դէմ ամբաստանումէ Աստուծոյ առաջին։

3 Տէր զմարգարէս քո կոտորեցին, եւ զսեղանս քո կործանեցին. եւ ես մնացի միայն, եւ խնդրեն զանձն իմ։

3 Տէր՝ քո մարգարէներից կոտորեցին եւ քո սեղաններից կործանեցին. ես մնակ մնացի, եւ իմ անձիս են մահ ռ գալիս։

4 Այլ զինչ ասէ նմա պատասխանին. Թողի ինձ՝ ասէ, եօթն հազար այր, որ ոչ կրկնեցին ծունր Բահաղու։

4 Բայց պատասխանն ինչ է ասում նորան. Եօթն հազար մարդ՝ ասումէ, թողի ինձ համար, որ Բահաղին ծունր ս չը դրին։

5 Նոյնպէս եւ յայսմ ժամանակի մնացորդք՝ ըստ ընտրութեան շնորհացն եղեն։

5 Ճիշտ այնպէս էլ այս ժամանակումս շնորհքի ընտրութեան պէս մնացածներ վ էլան։

6 Իսկ եթէ շնորհօք՝ ոչ եւս ՚ի գործոց. ապա թէ ոչ՝ շնորհքն ոչ եւս շնորհք լինին։

6 Բայց թէ որ շնորհքով է՝ էլ գործքերից չէ. ապա թէ չէ՝ շնորհքն էլ շնորհք տ չի լինիլ։

---

յ Բ Օրին. ԼԲ. 21. Գլ. ԺԱ. 11.
ն Տիտ. Գ. 3.
շ Եսայ. ԿԵ. 1. Գլ. Թ. 30.
ո Եսայ. ԿԵ. 2.
—
չ Ա Թագ. ԺԲ. 22. Երեմ. ԼԱ. 37.
պ Բ Կորնթ. ԺԱ. 22. Փիլիպ. Գ. 5.
ջ Գլ. Ը. 29.
ռ Գ Թագ. ԺԹ. 10, 14.
ս Գ Թագ. ԺԹ. 18.
վ Գլ. Թ. 27.
տ Գլ. Դ. 4, 5. Գաղ. Ե. 4. Բ Օրին. Թ. 4. 5.

7 Իսկ արդ՝ զոր խնդրէրն Իս-
րայէլ, այնմ ոչ եհաս. բայց ընտ-
րութեանն եհաս, եւ այլքն կուրա-
ցան.
8 Որպէս գրեալ է. Ետ նոցա
Աստուած հոգի յիմարութեան, ա-
չս՝ որովք ոչ տեսանիցեն, եւ ա-
կանջս՝ որովք ոչ լսիցեն, մինչեւ
ցայսօր ժամանակի.
9 Եւ Դաւիթ ասէ. Եղիցին սե-
ղանք նոցա յորոգայթ եւ 'ի յորս
եւ 'ի գայթակղութիւն՝ եւ 'ի հա-
տուցումն նոցին.
10 Խաւարեսցին աչք նոցա զի մի
տեսցեն. եւ զթիկունս նոցա հա-
նապազ կորացո.
11 Իսկ արդ ասեմ. Միթէ վասն
այնորիկ յանցեան՝ զի կործանես-
ցին. քաւ լիցի. այլ նոցա յանցա-
նօքն փրկութիւն հեթանոսաց. զի
նախանձ արկցէ նոցա.
12 Իսկ եթէ յանցանքն նոցա մե-
ծութիւն աշխարհի, եւ պակասու-
թիւնն նոցա մեծութիւն հեթանո-
սաց. որչափ եւս առաւել լրու-
թիւն նոցա.
13 Այլ ձեզ ասեմ հեթանոսաց՝
որչափ ժամանակս իցեմ հեթանո-
սաց առաքեալ, զպաշտօնն իմ փա-
ռաւոր առնեմ.
14 Զի թերեւս նախանձ արկից
նոցա մարմնոյ իմոյ՝ եւ ապրե-
ցուցից զոմանս 'ի նոցանէ.
15 Զի եթէ մերժումն նոցա հաշ-
տութիւն աշխարհի է. իսկ ընդու-
նելութիւնն զինչ իցէ՝, եթէ ոչ կեն-
դանութիւն 'ի մեռելոց.

7 Արդ ուրեմն՝ ինչ որ Իսրայէլը
խնդրումէր՝ նորան չը հասաւ. բայց
ընտրուածները հասին, եւ միւսները
է կուրացան.
8 Ինչպէս որ էլ գրված է. Թէ
Աստուած տուաւ նորանց թմրու-
թեան Ը հոգի. աչքեր՝ որ նորանով
չը տեսնեն, եւ ականջներ՝ որ նո-
րանով Թ չը լսեն, մինչեւ այս օրվան
ժամանակս.
9 Եւ Դաւիթն ասումէ. Նորանց
սեղանները թող որոգայթ լինին նո-
րանց՝ եւ ակնոտ եւ գայթակղու-
թիւն՝ եւ նորանց համար է հատու-
ցում.
10 Թող նորանց աչքերը խաւար-
վին՝ որ չը տեսնեն. եւ նորանց
թիկունքները միշտ Ի ծռեցրու.
11 Ուրեմն ասումեմ. Միթէ նորա-
համար գլորվեցան՝ որ կործանվեին.
քաւ լիցի. բայց նորանց գլորվելովը
հեթանոսներին փրկութիւնն էլաւ՝
որ նախանձ ձգէ նորանց Լ սիրտը.
12 Բայց թէ որ նորանց ընկնելն
աշխարհքի մեծութիւն էլաւ, եւ
նորանց տակ ձգուիլը՝ հեթանոս-
ների մեծութիւն. էլ որքան աւելի
նորանց լիութիւնը.
13 Բայց ձեզ հեթանոսներիդ ա-
սումեմ. քանի ժամանակ որ հե-
թանոսների առաքեալ եմ՝ իմ պաշ-
տօնս փառաւոր Խ կանեմ,
14 Որ լինի թէ՝ իմ մարմնովս նա-
խանձ ձգեմ նորանց սիրտը, եւ նո-
րանցից մին քանիսն Ծ ազատեմ.
15 Պատճառն որ՝ թէ որ նորանց
երեսից ձգվիլը՝ աշխարհքի հաշ-
տութիւն է. ապա նորանց ընդու-
թիւնն ինչ է, եթէ ոչ կենդանի
լինիլ մեռելներից.

է Գլ. Թ. 31. Ժ. 3.
Ը Եսայ. ԻԹ. 10
Թ Բ Օրին. ԻԹ. 4. Եսայ. Զ. 9. Երեմ. Ե. 21. Եզեկ. ԺԲ. 2 Մատթ. ԺԳ. 14. Յովհ. ԺԲ. 40. Գործ. ԻԸ. 26, 27.
Ժ Սաղ. ԿԹ. 22.
Ի Սաղ. ԿԹ. 23.
Լ Գործ. ԺԳ. 46. ԺԸ. 6. ԻԲ. 18. 21. ԻԸ. 24. 28. Գլ. Ժ. 19.
Խ Գործ. Թ. 15. ԺԳ. 2. ԻԲ. 21. Գլ. ԺԵ. 16. Գաղ. Ա. 16. Բ. 2 7, 8. 9. Եփես. Գ. 8. Ա Տիմ. Բ. 7. Բ Տիմ. Ա. 11.
Ծ Ա Կորնթ. Է. 16. Թ. 22. Ա Տիմ. Դ. 16. Յակ. Ե. 20.

16 Իսկ եթէ ակիզբն սուրբ է՝ եւ զանգուածն. եւ եթէ արմատն՝ ապա եւ ոստքն։
17 Եթէ յոստոց անտի ոմանք փշրեցան, եւ դու որ ձիթենիդ վայրենի էիր՝ պատուաստեցար ՚ի նոսա, եւ բաժանորդ եղեր արմատոյն՝ եւ պարարտութեան ձիթենւոյն.
18 Մի պարծիր առ ոստովքն. ապա եթէ պարծիցիս՝ ոչ եթէ դու զարմատն ՚ի վեր ունիս, այլ արմատն զքեզ։
19 Իսկ արդ՝ ասիցես, Ոստքն փշրեցան՝ զի ես պատուաստեցայց։

20 Բարւոք է. անհաւատութեամբն փշրեցան, եւ դու հաւատովք հաստատեցար. մի հպարտանար, այլ երկիր։
21 Զի եթէ Աստուած ՚ի բնուն ոստոցն ոչ խնայեաց, գուցէ երբէք եւ ՚ի քեզ ոչ խնայիցէ։
22 Արդ տես զքաղցրութիւն՝ եւ զսաստկութիւնն Աստուծոյ. ՚ի վերայ կործանելոցն սաստկութիւն, եւ ՚ի վերայ քո քաղցրութիւնն Աստուծոյ, եթէ կացցես ՚ի նմին քաղցրութեան. ապա թէ ոչ՝ եւ դու կոտորեսցիս։
23 Եւ նոքա եթէ ոչ ՚ի նմին անհաւատութեան կայցեն, պատուաստեսցին. զի կարող է Աստուած միւսանգամ պատուաստել զնոսա։

24 Զի եթէ դու ՚ի բնուն ՚ի վայրենի ձիթենւոյ անտի հատար՝ եւ յանբնուն ՚ի բարի ձիթենւոջն պատուաստեցար, որչափ եւս առաւել նոքա՝ որ բնուքն իսկ են՝ պատուաստեսցին յիւրեանց ձիթենւոջն։

25 Ո՛չ կամիմ եղբարք՝ եթէ արգէտք իցէք խորհրդոյս այսմիկ,

16 Եւ թէ որ ակիզբը սուրբ է՝ ապա հունցվածն էլ. եւ թէ որ արմատը՝ ապա ճղերն հ էլ։
17 Թէ որ ճղերից մին քանիսը ջ փշրուեցան, եւ դու որ վայրի ձիթենի էիր՝ նորանց վերայ պատուաստուեցար, եւ հաղորդ էլար արմատին՝ եւ ձիթենոյ ղ պարարտութեանը.
18 Մի պարծենար այն ճղերին դէմ. ապա թէ որ պարծենաս՝ դու չես արմատը վեր առնում, այլ արմատը՝ ճ քեզ.
19 Ուրեմն կը լինի որ ասես, Ճղները փշրուեցան՝ որ ես պատուաստուիմ։
20 Լաւ է. նորանք անհաւատութենով փշրուեցան, եւ դու հաւատքով հաստատուեցար. մի լինիր մ ամբարտաւան, այլ յ վախէ։
21 Ինչու որ՝ եթէ Աստուած բնական ճղերին չը խնայեց, կը լինի որ քեզ էլ չը խնայէ։
22 Ուրեմն տես Աստուծոյ քաղցրութիւնը եւ սաստկութիւնը. կործանուածներին վերայ սաստկութիւնը, եւ քեզ վերայ Աստուծոյ քաղցրութիւնը, թէ որ դու իսկ այն քաղցրութեանմը ն կենաս. ապա թէ չէ՝ դու էլ շ կը կտրուիս։
23 Եւ նորանք թէ որ այն անհաւատութենումն էլ չը կենան՝ կը պատուաստուին. ինչու որ՝ Աստուած կարող է նորէն պատուաստել ո նորանց։
24 Պատճառն որ՝ եթէ դու բնական վայրի ձիթենուցն կտրուեցար՝ եւ բնութեան դէմ բարի ձիթենոյ վերայ պատուաստուեցար, էլ որքան աւելի նորանք՝ որ բնական են՝ կը պատուաստուին իրենց ձիթենուն վերայ։
25 Չեմ կամենում եղբարք՝ որ չը գիտենաք այս խորհուրդս, որ ձեր

հ Ղև. ԻԳ. 10. Թւ. ԺԵ. 18, 19, 20, 21.
ջ Երեմ. ԺԱ. 16.
ղ Գործ. Բ. 39. Եփես. Բ. 12, 13.
ճ Ա Կորնթ. Ժ. 12.
մ Հռ. ԺԲ. 16.
յ Առակ. ԻԸ. 14. Եսայ. ՂԶ. 2. Փիլիպ. Բ. 12.
ն Ա Կորնթ. ԺԵ. 2. Եբր. Գ. 6, 14.
շ Յովհ. ԺԵ. 2.
ո Բ Կորնթ. Գ. 16.

զի մի յանձինս ձեր իցէք իմաս-
տունք · զի կուրութիւն փոքր 'ի
շատէ եղեւ Իսրայէլի · մինչեւ լրումն
հեթանոսաց մտցէ ։
26 Եւ ապա ամենայն Իսրայէլ
կեցցէ · որպէս եւ գրեալ է · Եկես-
ցէ 'ի Սիովնէ Փրկիչ՝ եւ դարձու-
ցէ զամբարշտութիւնս 'ի Յակով-
բայ ։
27 Եւ այս նոցա՝ որ յինէն ուխտ
յորժամ բարձից զմեղս նոցա ։

28 Ըստ աւետարանին թշնամիք
են վասն ձեր, բայց ընտրութեանն
սիրելիք վասն հարցն ։

29 Քանզի անզեղջ են շնորհք եւ
կոչումն Աստուծոյ ։
30 Զի որպէս եւ դուք երբեմն
ապստամբ էիք յԱստուծոյ՝ եւ արդ
ողորմութիւն գտէք առ նոցա ապըս-
տամբութեամբն ։

31 Նոյնպէս եւ նոքա այժմ ապըս-
տամբ եղեն առ ձերում ողորմու-
թեամբդ · զի եւ նոքա ողորմու-
թիւն գտցեն ։
32 Քանզի արգել Աստուած զամե-
նեսին յանհաւանութեան, զի ամե-
նեցուն ողորմեսցի ։
33 Ո՞վ խորք մեծութեան եւ իմաս-
տութեան եւ գիտութեան Աստու-
ծոյ · որպէս զի առանց քննելոյ են
դատաստանք նորա, եւ առանց
քննելոյ են ճանապարհք նորա ։
34 Զի ով գիտաց զմիտս Տեառն,
կամ ով խորհրդակից եղեւ նմա ։

35 Կամ ով ետ նմա փոխ, եւ առ-
նու զփոխարէն 'ի նմանէ ։

անձերնուդ ձեզ իմաստուն չը
համարիք · նա որ փոքր 'ի շատէ Իս-
րայէլին կուրութիւն ղ եղաւ, մինչեւ
որ հեթանոսներուն լրութիւնը Լ մտնէ ։
26 Եւ նորանից ետեւ բոլոր Իս-
րայէլը կապրի · ինչպէս որ էլ գըր-
ված է, թէ Սիօնից Փրկիչ կը գայ՝
եւ ամբարշտութիւնները դէն կը
ձգէ — Յակոբիցը ։
27 Եւ սա է ուխտապայմանս՝ որ
ես նորանց հետ կը դնեմ՝ երբոր
նորանց մեղքերը • վեր կառնեմ ։
28 Աւետարանին մասին տալով՝
նորանք թշնամի են ձեր պատճա-
ռով, ընտրութեան մասին տալով՝
սիրելի են հարանց Լ համար ։
29 Պատճառն որ՝ Աստուծոյ շը-
նորհքն ու կոչումը՝ զղջման = չունի ։
30 Ինչու որ՝ ինչպէս որ դուք էլ
մին ժամանակ ապստամբված էիք
Աստուածանից՝ եւ հիմիկ ողորմու-
թիւն գտաք նորանց ε ապստամբու-
թեանովը ·
31 Ճիշդ այնպէս էլ նորանք հի-
միկ ապստամբ էլան ձեր ողորմու-
թեանովը · որ նորանք էլ ողորմու-
թիւն գտնեն ։
32 Պատճառն որ՝ Աստուած ամէ-
նին անհաւատութեան մէջ արգե-
լեց՝ որ ամէնին ε ողորմի ։
33 Ո՜վ Աստուծոյ մեծութեան եւ
իմաստութեան խորութիւնը · ինչ-
պէս անքննելի են նորա — դատաս-
տանները, եւ անհասկանալի են նո-
րա ‡ ճանապարհները ։
34 Պատճառն որ՝ ով գիտաց Տէրի
+ միտքը, կամ ով խորհուրդի ըն-
կեր կը լինի • նորան ։
35 Կամ ով նորան փոխ տուաւ, որ
նորա հատուցումն առնէ § նորանից ։

ւ Գղ. ԺԲ. 16 ։
ղ Հռոմ. 7. Բ Կորնթ. Գ. 14 ։
Ը Ղուկ. ԻԱ. 24 ։ Յայտ. Է. 9 ։
— Եսայ. ԾԹ. 20 ։ Սաղ. ԺԴ. 7 ։

— Եսայ. ԻԷ. 9 ։ Երեմ. ԼԱ. 31 ։ Եբր. Ը. 8 ։ Ժ. 16 ։
Լ Բ Օրին. Է. 8 ։ Թ. 5 ։ Ժ. 15 ։
= Թուռ. ԻԳ. 19 ։

ε Եփես. Բ. 2 ։ Կող. Գ. 7 ։
ε Գղ. Գ. 9 ։ Գաղ. Գ. 22 ։
— Սաղ. ԼԶ. 6 ։
‡ Յոբ. ԺԱ. 7 ։ Սաղ. ՂԲ. 5 ։

+ Յոբ. ԺԵ. 8 ։ Եսայ. Խ. 13 ։ Երեմ. ԻԳ. 18 ։ Ա Կորնթ. Բ. 16 ։
• Յոբ. ԼԶ. 22 ։
§ Յոբ. ԼԵ. 7 ։ ԽԱ. 11 ։

36 Զի 'ի նմանէ՝ եւ նովաւ՝ եւ 'ի նոյն ամենայն. նմա փառք յաւիտեանս. ամէն։

36 Պատճառն որ՝ նորանից եւ նորանով եւ նորանումն է ամէն ա բան. նորան փառք յաւիտեանս. բ ամէն

## ԳԼ. ԺԲ

1 Աղաչեմ զձեզ եղբարք՝ գթութեամբքն Աստուծոյ՝ պատրաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի սուրբ՝ հաճոյ Աստուծոյ զխօսուն պաշտօնդ ձեր։

2 Եւ մի՛ կերպարանիք կերպարանօք աշխարհիս այսորիկ. այլ նորոգեցարուք 'ի նորոգութիւն մտաց ձերոց, առ 'ի քննել ձեզ ընդ լաւն, եւ եթէ զինչ են կամք Աստուծոյ՝ բարին եւ հաճոյն եւ կատարեալն։

3 Զայս ասեմ շնորհօքն Աստուծոյ՝ որ տուեալ են ինձ, ամենայնի որ է 'ի ձեզ, մի՛ առաւել ինչ խորհել քան զարժանն խորհելոյ. այլ խորհել 'ի զգաստանալ իւրաքանչիւր՝ որպէս եւ բաժանեաց Աստուած չափ հաւատոյ։

4 Որպէս 'ի միում մարմնի անդամս բազումս ունիմք. եւ անդամքն ամենայն ոչ զնոյն գործ ունին։

5 Նոյնպէս եւ բազումքս մի մարմին եմք 'ի Քրիստոս, այլ իւրաքանչիւր միմեանց անդամք եմք։

6 Բայց ունիմք մեք շնորհս ըստ շնորհացն, որ տուեալ են մեզ այ-

1 Աղաչում եմ ձեզ եղբարք՝ Աստուծոյ ա ողորմութիւնովը, որ բ ձեր մարմինները գ պատրաստէք կենդանի սուրբ եւ Աստուծոյ ընդունելի պատարագ որ նա ձեր բանաւոր պաշտօնը դ լինի։

2 Եւ մի՛ կերպարանուիք այս աշխարհքիս ե կերպարանքովը. բայց նորոգուեցէք ձեր մտքի զ նորոգութիւնովը, որ դուք քննէք նա՝ որ լաւն է է. եւ թէ ինչ է Աստուծոյ կամքը՝ այն բարին եւ հաճելին եւ կատարեալն։

3 Աստուծոյ շնորհքովը՝ որ ինձ տրուած ը է՝ ես եմ ասում ամէնին, որ ձեր մէջումն է, որ ինքն մին բան չը մտածէք նորանից աւելի, քան թէ նա որ արժան է թ մտածելոյ. բայց որ մտածելումը պարկեշտ կենաք այնպէս՝ ինչպէս որ Աստուած ամէն մէկին հաւատքի չափը ժ բաժանեց։

4 Ինչպէս որ մին մարմնոյ մէջ շատ անդամներ ունինք, եւ այն ամէն անդամները մին գործ ի չունին։

5 Այնպէս էլ մենք շատերս մին մարմին ենք Քրիստոսումը, բայց ամէն մէկն իրար հետ անդամ լ ենք։

6 Միայն թէ կերպ կերպ շնորհքներ խ ունինք այն շնորհքին պէս՝

ա Ա Կորնթ. Ը. 6. Կող. Ա. 16.
բ Գաղ. Ա. 5. Ա Տիմ. Ա. 17. Բ Տիմ. Դ. 18. Եբր. ԺԳ. 21. Ա Պետ. Ե. 11. Բ Պետ. Գ. 18. Յուդ. 25. Յայտ. Ա. 6.

—

ա Բ Կորնթ. Ժ. 1.
բ Ա Պետ. Բ. 5.
գ Սաղ. Ծ. 13, 14. Գլ. Զ. 13. 16 19. Ա Կորնթ. Զ. 13. 20.
դ Եբր. Ժ. 20.
ե Ա Պետ. Ա. 14. Ա Յովհ. Բ. 15.
զ Եփես. Ա. 18. Դ. 23. Կող. Ա. 21. 22. Գ. 10.
է Եփես. Ե. 10. 17. Ա Թես. Դ. 3.
ը Գլ. Ա. 5. ԺԵ. 15. Ա Կորնթ. Գ. 10. ԺԵ. 10. Գաղ. Բ. 9. Եփես. Գ. 2. 7, 8.
թ Առակ. ԻԵ. 27. Ժող. Է. 16. Գլ. ԺԱ. 20.
ժ Ա Կորնթ. ԺԲ. 7. 11. Եփես. Դ. 7.
ի Ա Կորնթ. ԺԲ. 12. Եփես. Դ. 16.
լ Ա Կորնթ. Ժ. 17. ԺԲ. 20. 27. Եփես. Ա. 23. Դ. 25.
խ Ա Կորնթ. ԺԲ. 4. Ա Պետ. Դ. 10. 11.

պէս ազգս · եթէ մարգարէութիւն՝ ըստ չափուն հաւատոյ ,

7 Եթէ պաշտօն՝ ըստ պաշտամանն , եթէ որ ուսուցանէն՝ ըստ վարդապետութեանն ,

8 Եթէ որ մխիթարէն՝ ըստ մխիթարութեանն · որ տաան է՝ զուարթութեամբ , որ վերակացուն է՝ փութով , որ ողորմին՝ լրջմտութեամբ ։

9 Սէր առանց կեղծաւորութեան · ատել զչար · զհետ երթալ բարեաց ։

10 Յեղբայրսիրութեան առ միմեանս գթածք · 'ի պատիւ զմիմեանս երանել ։

11 'Ի փոյթ՝ մի՛ վեհերոտք · հոգւով եռացէք , Տեառն ծառայեցէք ,

12 Յուսով խնդացէք , նեղութեան համբերեցէք , աղօթից առէջ կացէք ։

13 Ի պէտս սրբոց հաղորդեցարուք · զհիւրասիրութեան զհետ երթայք ։

14 Օրհնեցէք զհալածիչս ձեր , օրհնեցէք եւ մի՛ անիծանէք ։

15 Խնդալ ընդ խնդացողս , լալ ընդ լացողս ։

որ մեզ տրուած ծ է · եթէ մարգարէութիւն՝ հաւատքի կ չափովը ,

7 Եթէ պաշտօն՝ պաշտամունքի չափովը · եթէ՛ նա՝ որ սորվեցնումէ՝ վարդապետութեան հ չափովը ։

8 Եթէ՛ նա՝ որ մխիթարումէ՝ մխիթարութեան ձ չափովը · նա որ առատաձեռն է՝ ղ ուրախութեամբ · նա որ վերակացու է՝ հոգս տանելովը · նա որ ողորմութիւն է ճ անում՝ ուրախ մ սրտով ։

9 Սէր՝ առանց յ կեղծաւորութեան · չարն ատեցէք , բարոյն ն հետեւեցէք ։

10 Եղբայրսիրութեամբ իրար վերայ գթած շ եղէք · պատիւ տալով իրար առաջ ո անցէք ։

11 Ջանք անելովը՝ թոյլ չի՛ լինիք · հոգւովը ջերմեռանդ եղէք , Տէրին ծառայեցէք ·

12 Յուսով չ ուրախացէք , նեղութեան պ համբերեցէք , աղօթքին խիստ ջ հետեւեցէք ։

13 Սրբոց հարկաւոր լինող բաներին հաղորդ ռ եղէք · օտարասիրութեան ս հետեւեցէք ։

14 Ձեզ անիծողներին օրհնեցէք , օրհնեցէք եւ մի՛ վ անիծէք ։

15 Ուրախացողներին հետ ուրախացէք , եւ լաց լինողներին հետ լաց տ եղէք ։

ծ Հռոմ . 3 ։
կ Գործ . ԺԱ . 27 ։ Ա Կորնթ . ԺԲ 10 . 28 ։ ԺԴ . 2 ։ ԺԴ . 1 . 6 . 29 . 31 ։
հ Գործ . ԺԳ . 1 ։ Եփես . Դ . 11 ։ Գաղ . Զ . 6 ։ Ա Տիմ . Ե . 17 ։
ձ Գործ . ԺԵ . 32 ։ Ա Կորնթ . ԺԴ . 3 ։
ղ Մատթ . Զ . 1 . 2 . 3 ։ Բ Կորնթ . Ը . 2
ճ Գործ . Ի . 28 ։ Ա Տիմ . Ե . 17 ։ Եբր . ԺԳ . 7 . 24 ։ Ա Պետ . Ե . 2 ։
մ Բ Կորնթ . Թ . 7 ։
յ Ա Տիմ . Ա . 5 ։ Ա Պետ . Ա . 22 ։
ն Սաղ . ԼԴ . 14 ։ ԼԶ . 4 . ՂԷ . 10 ։ Ամովս . Ե . 15 ։
շ Եբր . ԺԳ . 1 ։ Ա Պետ . Ա . 22 ։ Բ . 17 ։ Գ . 8 ։ Բ Պետ . Ա . 7 ։
ո Փիլիպ . Բ . 3 ։ Ա Պետ . Ե . 5 ։
չ Ղուկ . Ժ . 20 ։ Գլ . Ե . 2 ։ ԺԵ . 13 ։ Փիլիպ . Գ . 1 ։ Դ . 4 ։ Ա Թես . Ե . 16 ։ Եբր . Գ . 6 ։ Ա Պետ . Դ . 13 ։
պ Ղուկ . ԻԱ . 19 ։ Ա Տիմ . Զ . 11 ։ Եբր . Ժ . 36 ։ ԺԲ . 1 ։ Յակ . Ա . 4 ։ Ե . 7 ։ Ա Պետ . Բ . 19 , 20 ։
ջ Ղուկ . ԺԸ . 1 ։ Գործ . Բ 42 ։ ԺԲ . 5 ։ Կող . Դ . 2 ։ Եփես . Զ . 18 ։ Ա Թես . Ե . 17
ռ Ա Կորնթ . ԺԶ . 1 Բ Կորնթ . Թ . 1 . 12 ։ Եբր . Զ . 10 ։ ԺԳ . 16 ։ Ա Յովհ . Գ . 17 ։
ս Ա Տիմ . Գ . 2 ։ Տիտ . Ա . 8 ։ Եբր . ԺԳ . 2 ։ Ա Պետ . Դ . 9 ։
վ Մատթ . Ե . 44 ։ Ղուկ . Զ . 28 ։ ԻԳ 34 ։ Գործ . Է . 59 ։ Ա Կորնթ . Դ . 12 ։ Ա Պետ . Բ . 23 ։ Գ . 9 ։
տ Ա Կորնթ . ԺԲ . 26 ։

16 Զնոյն միմեանց խորհեսջիք · մի ամբարտաւանք, այլ ընդ խոնարհս զիջանիցիք · մի լինիք իմաստունք յանձինս ձեր :

17 Մի ումեք չարի չար հատուցանէք · խորհեցարուք զբարիս առաջի ամենայն մարդկան :

18 Եթէ հնար ինչ իցէ ձեզ՝ ընդ ամենայն մարդկան զխաղաղութիւն կալջիք :

19 Մի զանձանց վրէժ խնդրէք՝ սիրելիք, այլ տուք տեղի բարկութեան · քանզի գրեալ է · Իմ է վրէժխնդրութիւն, և ես հատուցից՝ ասէ Տէր :

20 Այլ եթէ քաղցեալ իցէ թշնամի քո՝ հաց տուր նմա, և եթէ ծարաւի՝ ջուր տուր նմա · զայս արարեալ՝ կայծակունս հրոյ կուտեսցես ՚ի գլուխ նորա :

21 Մի յաղթիր ՚ի չարէն · այլ յաղթեա բարեաւն չարին :

16 Իրար հետ խոկ մին խորհուրդ r ունենաք · ամբարտաւան մի ɜ լինիք, բայց խոնարհներին հետ խոնարհվեցէք · ձեր անձերումդ ձեզ իմաստուն մի – համարէք :

17 Մէկին չարի տեղ չար մի ÷ հատուցանէք · ամէն մարդկանց առաջին բարի խորհուրդ + ունենաք :

18 Եթէ կարելի լինի ձեզ՝ ամէն մարդկանց հետ խաղաղութիւն • ունենաք :

19 Ձեր անձներիդ համար վրէժխնդրութիւն մի անէք ‡ սիրելիներս, բայց բարկութեան տեղ տուէք · ինչու որ՝ գրված է՝ թէ Վրէժխնդրութիւն անելն իմն – է · և ես հատուցումը կը տամ, ասումէ Տէրը :

20 Բայց թէ որ քո թշնամին քաղցած լինի՝ հաց տուր նորան · և թէ որ ծարաւ լինի՝ ջուր տուր F նորանը. սա անելով կրակի կայծակներ կը ժողովես նորա գլխին վերայ :

21 Մի յաղթվիր չարից, այլ բարիովը յաղթէ չարին :

## ԳԼ. ԺԳ

1 Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ իցէ՝ ՚ի հնազանդութեան կացցէ · քանզի ոչ ուստեք է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ · և որ են, յԱստուծոյ կարգեալ են :

2 Այսուհետև որ հակառակ կայ իշխանութեանն, Աստուծոյ հրամանին հակառակ կայ · և որք հակառակն կան, անձանց դատաստանս ընդունին :

1 Ամէն անձն՝ որ իշխանութեան ներքև է՝ թող հնազանդութենով – կենայ · պատճառն որ՝ իշխանութիւնը ոչ մէկից չէ, եթէ ոչ F Աստուածանից · և նորանք որ կան՝ Աստուածանից են կարգված :

2 Ապա ուրեմն՝ նա որ իշխանութեանը հակառակ է ÷ կենում՝ Աստուծոյ հրամանին է հակառակ կենում · և նորանք՝ որ հակառակ են կենում՝ իրենց անձներին համար դատաստան կընդունին :

r Գլ. ԺԵ. 5 · Ա Կորնթ. Ա. 10 · Փիլիպ. Բ. 2 Գ. 16 · Ա Պետ. Գ. 8 ·
ɜ Սաղ. ՃԼԱ. 1. 2 · Երեմ. ԽԵ. 5 ·
– Առակ. Գ. 7 · ԻԶ. 12 · Եսայ. Ե. 21 · Գլ. ԺԱ. 25 ·
÷ Առակ. Ի. 22 · Մատթ. Ե. 39 · Ա Թես. Ե. 15 · Ա Պետ. Գ. 9 ·
+ Գլ. ԺԴ. 16 · Բ Կորնթ. Ը. 21 ·
• Մարկ. Թ. 49 · Գլ. ԺԴ. 19 · Եբր. ԺԲ. 14 ·
‡ Ղև. ԺԹ. 18 · Առակ. ԻԴ. 29 · Գլ. ԺԲ. 17 ·
– Բ Օրին. ԼԲ. 35 · Եբր. Ժ. 30 ·
F Ելից. ԻԳ. 4, 5 · Առակ. ԻԵ. 21, 22 · Մատթ. Ե. 44 ·

—

– Տիտ. Գ. 1 · Ա Պետ. Բ. 13 ·
F Առակ. Ը. 15, 16 · Դան. Բ. 21 · Դ. 32 · Յովհ. ԺԹ. 11 ·
÷ Տիտ. Գ. 1 ·

3 Զի իշխանքն ոչ են յերկիւղ բարեաց գործոց՝ այլ չարաց . կամիս չերկնչել յիշխանութենէ անտի . զբարիս գործեա, եւ ընկալցիս զգովութիւն ՚ի նմանէ :

4 Զի Աստուծոյ պաշտօնեայ է քեզ ՚ի բարիս . ապա եթէ չար գործիցես, երկիր . զի ոչ եթէ վայրապար ածեալ է սուսեր ընդ մէջ . Աստուծոյ սպասաւոր է՝ վրէժխնդիր ՚ի բարկութիւն, այնմ՝ որ զչարն գործիցէ :

5 Վասն որոյ հարկ է հնազանդ լինել՝ ոչ միայն վասն բարկութեանն, այլեւ վասն մտացն խղճի :

6 Վասն այնորիկ եւ հարկս հարկանէք, զի Աստուծոյ սպասաւորք են՝ ՚ի նոյն կանխեալք :

7 Արդ հատուցէք իւրաքանչիւր զպարտս . որում զհարկ՝ զհարկն, որում զմաքս՝ զմաքսն, որում զերկիւղ՝ զերկիւղն, որում զպատիւ՝ զպատիւն :

8 Եւ մի ումեք պարտապան գտանիցիք, բայց զմիմեանս սիրելոյ . զի որ սիրէ զընկերն, զօրէնսն կատարէ :

9 Զմի շնայցես, եւ Մի սպանանիցես, եւ Մի գողանայցես, եւ Մի սուտ վկայիցես, եւ Մի ցանկանայցես, եւ եթէ այլ ինչ պատուիրան է՝ յայն բան բովանդակի, եթէ Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո :

10 Սէր ընկերի խրատ չար ոչ առնէ . լրումն օրինացն սէր է :

11 Եւ զայս գիտասջիք վասն ժա-

3 Ինչու որ՝ իշխանները բարի գործքերին վախի պատճառ չեն, բայց չար գործքերին . կամենումես որ այն իշխանութենից չը վախենաս, բարի գործք արա, եւ նորանից գովասանք ե կընդունես :

4 Պատճառն որ՝ նա Աստուծոյն պաշտօնեայ է քեզ համար դէպի բարին . ապա թէ որ չարագործ լինիս՝ վախէ . ինչու որ՝ նա զուր տեղը սուրը չի կապել մէջքին . նա Աստուծոյն սպասաւոր է՝ բարկութենով վրէժխնդրութիւն անելոյ նորան՝ որ չարն է գործում :

5 Նորահամար պէտք է հնազանդ ե լինել՝ ոչ թէ միայն բարկութեան համար, բայց խղճմտանքերին համար ղ էլ :

6 Նորահամար հարկ էլ էք վճարում . ինչու որ՝ նորանք Աստուծոյ սպասաւորներ են՝ հէնց այն բանին պարապվելոյ համար :

7 Ուրեմն ամէնին վճարեցէք ինչ պարտք որ ե կայ . ում որ հարկ՝ հարկը . ում որ մաքս՝ մաքսը . ում որ վախ՝ վախը . ում որ պատիւ՝ պատիւը :

8 Եւ ոչ մէկին պարտական չը մնաք՝ նորանից ջոկ՝ որ իրար սիրէք . ինչու որ՝ նա որ ընկերը սիրումէ՝ նա օրէնքը զ կատարումէ :

9 Այն Մի շնար, եւ Մի գողանար, եւ Մի սուտ վկայեր, եւ Մի ե ցանկանար, եւ էլ ինչ որ ուրիշ պատուիրանք կայ, այն խօսքումը ժողովված բովանդակումն, թէ Քո ընկերիդ քո անձիդ պէս ե սիրէ :

10 Սէրն իրեն ընկերին չար չի անիլ . օրէնքին բովանդակիլը՝ սէրն ե է :

11 Այս ժամանակիս համար սա

ք Ա Պետ. Բ. 14. Գ. 13.
ե Ժող. Ը. 2.
ղ Ա Պետ. Բ. 19.
ե Մատթ. ԻԲ. 21. Մարկ. ԺԲ. 17.
Ղուկ. Ի. 25.
զ Համար. 10. Գաղ. Ե. 14. Կող. Գ. 14. Ա Տիմ. Ա. 5. Յակ. Բ. 8.
բ Ելից. Ի. 13, 14. Օրին. Ե. 17. Մատթ. ԺԹ. 18.
ֆ Ղև. ԺԹ. 18. Մատթ. ԻԲ. 39. Մարկ. ԺԲ. 31. Գաղ. Ե. 14. Յակ. Բ. 8.
է Մատթ. ԻԲ. 40. Համար. 8.

ժամանակս . զի արդ ժամ իսկ է՞ մեզ 'ի քնոյ զարթնուլ . զի այժմ մերձ է մեզ փրկութիւն . քան յորժամ հաւատացաքն ։

12 Գիշերն մերժեցաւ՝ եւ տիւն մերձեցաւ . 'ի բաց արասցուք այսուհետեւ զգործս խաւարի , եւ զգեցցուք զզէնս լուսոյ ։
13 Որպէս 'ի տուընջեան զգաստացեալք շրջեսցուք . մի անառակութեամբք՝ եւ արբեցութեամբք , եւ մի խառն անկողնովք՝ եւ պղծութեամբք , եւ մի նախանձու՝ եւ հակառակութեամբ .
14 Այլ զգեցջիք զՏէր Յիսուս Քրիստոս . եւ մարմնոյ խնամ մի առնէք 'ի ցանկութիւնս ։

էլ գիտացէք . որ իսկ հիմիկ ժամանակն է՝ որ քունէն լ զարթնենք . պատճառն որ՝ հիմիկ մեզ աւելի մօտ է փրկութիւնը՝ քան թէ այն ժամանակն՝ որ հաւատացինք ։
12 Գիշերը հեռացաւ եւ ցերեկը մօտեցաւ . ուրեմն հեռու անենք խաւարի խ գործքերը , եւ լուսոյ զէնքը ծ հագնենք ։
13 Ինչպէս ցերեկուան՞ պարկեշտ կեցած կ ման գանք . չէ ըլլի որ հ անառակութենով եւ հարբեցութենով եւ խառն ձ պառկելածներով եւ պղծութիւններով , եւ չէ ըլլի որ ղ նախանձով եւ հակառակութենով ։
14 Բայց Տէր Յիսուս՞ Քրիստոսն ճ հագէք . եւ մարմնոյ համար հոգս մի ընէք դէպի մ ցանկութիւն ։

## ԳԼ. ԺԴ

1 Այլ զտկարացեալն 'ի հաւատս ընկալարուք՝ մի խղճիւ երկմտութեանց ։
2 Ոմն հաւատայ ուտել զամենայն . եւ որ հիւանդն է , բանջար կերիցէ ։
3 Որ ուտէն , զայն՝ որ ոչն ուտէ՝ մի արհամարհեսցէ . եւ որ ոչն ուտէ , զայն՝ որ ուտէն , մի դատեսցի . քանզի Աստուած զնա ընկալաւ ։

4 Դու ով ես՝ որ դատիս զայլոյ ծառայ . իւրում Տեառն կայ՝ կամ անկանի . բայց կացցէ՝ զի կարող է Տէր հաստատել զնա ։

5 Ոմն պաշտէ օր ըստ օրէ՝ եւ ոմն պաշտէ զօրհանապազ . իւրա—

1 Բայց հաւատքի մէջ տկարացածներին ընդունեցէք առանց տարակուսանք անելոյ յ խղճմտանքերին ։
2 Մէկը հաւատումէ՝ թէ ամէն բան կարող է ն ուտել . եւ նա որ հիւանդ է՝ բանջար կուտէ ։
3 Նա՝ որ ուտումէ , թող չարհամարհէ նորան՝ որ չի ուտում . եւ նա՝ որ չի ուտում , թող չը դատէ նորան՝ որ շ ուտումէ , ինչու որ Աստուած ընդունեց նորան ։
4 Դու ով ես՝ որ ուրիշի ծառային ո դատես . իրեն Տիրոջն է կենում՝ կամ ընկնում . բայց կը կենայ , ինչու որ Տէրը կարող է հաստատել նորան ։
5 Մէկը պահումէ օր օրի վերայ , եւ միւսը պահումէ ամէն չ օր . ա—

լ Ա Կորնթ . ԺԵ . 34 ։ Եփես . Ե . 14 ։ Ա Թես . Ե . 5 , 6 ։
խ Եփես . Ե . 11 ։ Կող . Գ . 8 ։
ծ Եփես . Զ . 13 ։ Ա Թես . Ե . 8 ։
կ Փիլիպ . Դ . 8 ։ Ա Թես . Դ . 11 ։ Ա Պետ . Բ . 12 ։
հ Առակ . ԻԳ . 20 ։ Ղու . ԻԱ . 34 ։ Ա Պետ . Դ . 3 ։
ձ Ա Կորնթ . Զ . 9 ։ Եփես . Ե . 5 ։
ղ Յակ . Գ . 14 ։
ճ Գաղ . Գ . 27 ։ Եփես . Գ . 24 ։ Կող . Գ . 10 ։
մ Գաղ . Ե . 16 ։ Ա Պետ . Բ . 11 ։

—

յ Գլ . ԺԵ . 1 . 7 ։ Ա Կորնթ . Ը . 9 . 11 ։ Թ . 22 ։
ն Համար . 14 ։ Ա Կորնթ . Ժ . 25 ։ Ա Տիմ . Դ . 4 ։ Տիտ . Ա . 15 ։
շ Կող . Բ . 16 ։
ո Յակ . Դ . 12 ։
չ Գաղ . Դ . 10 ։ Կող . Բ . 16 .

քանչիւր ոք զիւր միտս հաճեսցէ ։

6 Որ խորհի զօրն՝ Տեառն խորհի. եւ որ ոչն խորհի զօրն, Տեառն չխորհի. եւ որ ուտէ, Տեառն ուտէ եւ գոհանայ զԱստուծոյ. եւ որ ոչն ուտէ, Տեառն չուտէ, եւ գոհանայ զԱստուծոյ ։

7 Զի ոչ ոք ՚ի մէնջ անձամբ կեայ, եւ ոչ անձամբ մեռանի ։

8 Եթէ կեամք՝ Տեառն կեամք, եւ եթէ մեռանիմք՝ Տեառն մեռանիմք. եւ արդ՝ եթէ կեամք եւ եթէ մեռանիմք՝ Տեառն եմք ։

9 Քանզի ՚ի նոյն իսկ եւ Քրիստոս մեռաւ եւ եկեաց, զի մեռելոց եւ կենդանեաց սա հաւասարակ տիրեսցէ ։

10 Դու զի՞ դատիս զեղբայր քո. կամ ընդէ՞ր անարգանես զեղբայր քո. քանզի ամենեքեան կացցեմք առաջի ատենին Քրիստոսի ։

11 Զի գրեալ է. Կենդանի եմ ես՝ ասէ Տէր, զի ինձ կրկնեսցի ամենայն ծունր՝ եւ ամենայն լեզու խոստովան լիցի Աստուծոյ ։

12 Ապա ուրեմն՝ իւրաքանչիւր ոք ՚ի մէնջ ընդ անձին համարս տացէ Աստուծոյ ։

13 Այսուհետեւ՝ մի՛ զմիմեանս դատեսցուք. այլ առաւել զայս դիք ՚ի մտի՝ չդնել գայթագղութիւն եղբօրն ։

14 Զայս գիտեմ, եւ հաստատեալ

մէն մէկը թող իրեն մտքին ուզածն անէ ։

6 Նա՝ որ օրին մտիկ է անում, Տէրին համար է մտիկ անում. եւ նա՝ որ օրին մտիկ չի անում, Տէրին համար մտիկ ւ չի անում. եւ նա՝ որ ուտում է, Տէրին համար է ուտում, եւ Աստուածանից գոհանում. եւ նա՝ որ չի ուտում, Տէրին համար չի ուտում, եւ Աստուածանից ե գոհանում ։

7 Պատճառն որ՝ մեզանից մէկը չը կայ՝ որ ինքն իրեն համար ապրի եւ ինքն իրեն համար ջ մեռնի ։

8 Թէ որ ապրինք՝ Տէրին ենք ապրում, եւ թէ որ մեռնինք՝ Տէրին ենք մեռնում. ուրեմն թէ ապրինք եւ թէ մեռնինք՝ Տէրին ենք ։

9 Պատճառն որ՝ իսկ նորահամար էլ Քրիստոս մեռաւ եւ բ կենդանացաւ՝ որ մեռելներին եւ կենդանիներին վերայ առհասարակ ժ տիրապետէ ։

10 Դու ինչու համար ես եղբօրդ դատում, կամ ինչու ես քո եղբօրդ անարգում. ինչու որ մենք ամէնքս Քրիստոսի դատաստանի աթոռի առաջին պիտի ի կենանք ։

11 Պատճառն որ՝ գրուած է՝ թէ Ես կենդանի եմ, ասում է Տէրը. որ ամէն ծունր ինձ պիտի չոքի, եւ ամէն լեզու պիտի խոստովան լինի լ Աստուծոյն ։

12 Ուրեմն մեզանից ամէն մէկն իրեն անձին կողմանէ պիտի համար տայ խ Աստուծոյն ։

13 Սրահամար իրար չը դատենք. բայց աւելի սա դրէք ձեր միտքը, որ եղբօրը բնաւ գայթակղութիւն ծ չը դնէք ։

14 Ես գիտեմ, եւ հաստատ

ւ Գաղ. Դ. 10 ։ ե Ա Կորնթ. Ժ. 31 ։ Ա Տիմ. Դ. 3 ։ ջ Ա Կորնթ. Զ. 19, 20 ։ Գաղ. Բ. 20 ։ Ա Թես. Ե. 10 ։ Ա Պետ. Դ. 2 ։ բ Բ Կորնթ. Ե. 15 ։ ժ Գործ. Ժ. 36 ։ ի Մատթ. ԻԵ. 31, 32 ։ Գործ. Ժ. 42 ։ ԺԷ. 31 ։ Բ Կորնթ. Ե. 10 ։ Յովհ. 14 ։ 15 ։ լ Եսայ. ԽԵ. 23 ։ Փիլիպ. Բ. 10 ։ խ Մատթ. ԺԲ. 36 ։ Գաղ. Զ. 5 ։ Ա Պետ. Դ. 5 ։ ծ Ա Կորնթ. Ը. 9. 13 ։ Ժ. 32 ։

եմ ՚ի Քրիստոս Յիսուս, զի ոչ ինչ
է պիղծ նովաւ. բայց այնմ, որ
համարիցի ոք ինչ պիղծ՝ նմա է
պիղծ։
15 Զի եթէ վասն կերակրոյ եղ-
բայրն քո տրտմի, ոչ եւս սիրով
գնայցես. մի՛ կերակրովն քով զնա
կորուսաներ, վասն որոյ Քրիստոսն
մեռաւ։

16 Մի՛ հայհոյեսցի բարին ձեր։

17 Զի ոչ է արքայութիւն Աս-
տուծոյ կերակուր եւ ըմպելի, այլ
արդարութիւն եւ խնդութիւն եւ
խաղաղութիւն ՚ի Հոգին Սուրբ։

18 Զի որ յայսմ ծառայէ Քրիս-
տոսի, հաճոյ է Աստուծոյ՝ եւ ընտ-
րիր մարդկան։

19 Ապա ապաւինեալ զհետ երթի-
ցուք զխաղաղութեան, եւ զշինու-
թեան՝ որ առ միմեանս։
20 Մի՛ վասն կերակրոյ քակեր զգ
գործ Աստուծոյ. ամենայն ինչ սուրբ
է. այլ չար այնմ մարդոյ է՝ որ
խղճիւն ուտիցէ։

21 Լաւ է ոչ ուտել միս, ՚եւ ոչ
ըմպել գինի. եւ ոչ՝ որով եղբայրն
քո գայթագղի կամ գթէ կամ տ-
կարանայ։

22 Դու ապաքէն հաւատս ունիս,
կա՛լ առանձինն առաջի Աստուծոյ.
երանի որ ոչ դատիցի զանձն, որով
զընտրելին փորձիցէ։

23 Բայց որ խղճէն, թէպէտ եւ

խանում Յիսուս Քրիստոսումը՝ որ
ոչ մին բան պիղծ չէ կ իրենով.
բայց ով որ մին բան պիղծ կը հա-
մարէ՝ նորա համար է հ պիղծ։
15 Բայց թէ որ կերակուրի պատ-
ճառով քո եղբայրդ տրտմումէ, էլ
դու նորա հետ սիրով չը վարվեցար.
քո կերակուրովդ մի կորցներ նո-
րան, որ նորա համար Քրիստոս
ձ մեռաւ։
16 Չըլինի որ ձեր բարի բանը
ղ հայհոյվի։
17 Պատճառն որ՝ Աստուծոյ ար-
քայութիւնը ուտելիք եւ խմելիք
ճ չէ. բայց արդարութիւն եւ խա-
ղաղութիւն եւ ուրախութիւն Սուրբ
Հոգովը։
18 Ինչու որ՝ նա որ այսմանով Քր-
րիստոսին ծառայումէ, Աստուծոյն
հաճոյ է, եւ մարդկանց մ պատ-
ուելի։
19 Ապա ուրեմն խաղաղութեան
ետեւէն յ գնանք, եւ այն շինու-
թեան՝ որ իրար մէջ ն է։
20 Կերակուրի պատճառովը մի
քանդեր Աստուծոյ շ գործը. ամէն
բան սուրբ ո է. բայց չար այն մար-
դոյ համար՝ որ խղճմտանքով է ու-
տում չ նորան։
21 Աւելի լաւ է՝ ոչ միս ուտել եւ
ոչ գինի խմել, եւ ոչ այն բանն
ընէլ՝ որ նորանով քո եղբայրդ գայ-
թակղվումէ կամ գլորվում կամ
պ տկարանում։
22 ՚Ի հարկէ դու հաւատք ունիս.
ապա քեզ առանձին պահէ Աստու-
ծոյ առաջին. երանի է նորան՝ որ
իրեն անձը չը դատապարտէ նորա-
նով՝ որ ընտրելին ջ փորձումէ։
23 Բայց նա՝ որ խղճմտանք է ու-

կ Գործ. Ժ. 15։ Հռոմ. 2. 20։ Ա Կորնթ. Ժ. 25։ Ա Տիմ. Դ. 4։ Տիտ. Ա. 15։
հ Ա Կորնթ. Ը. 7. 10։
ձ Ա Կորնթ. Ը. 11։
ղ Գղ. ԺԲ. 17։
ճ Ա Կորնթ. Ը. 8։
մ Բ Կորնթ. Ը. 21։
յ Սաղ. ԼԴ. 14։ Գղ. ԺԲ. 18։
ն Գղ. ԺԵ. 2։ Ա Կորնթ. ԺԴ. 12։ Ա Թես. Ե. 11։
շ Հռոմ. 15։
ո Մատթ. ԺԵ. 11։ Գործ. Ժ. 15։ Հռոմ. 14։ Տիտ. Ա. 15։
չ Ա Կորնթ. Ը. 9—12։
պ Ա Կորնթ. Ը. 13։
ջ Ա Յովհ. Դ. 21։

ուտիցէ՝ դատապարտեալ է՝ զի ոչ ըստ հաւատոց. զի ամենայն ինչ որ ոչ 'ի հաւատոց է՝ մեղք են։

24 Այլ այնմ, որ կարողն է հաստատել զձեզ ըստ աւետարանիս իմոյ եւ ըստ քարոզութեանն Յիսուսի Քրիստոսի, ըստ յայտնութեան խորհրդոյն՝ ժամանակօքն յաւիտենից լռեցելոյ,

25 Եւ յայտնելոյ այժմիկ 'ի ձեռն գրոց մարգարէականաց՝ ըստ հրամանի մշտնջենաւորին Աստուծոյ, 'ի հնազանդութիւն հաւատոց, յամենայն հեթանոսս ծանուցելոյ՝

26 Միայնոյ իմաստնոյն Աստուծոյ, 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի. որում փառք յաւիտեանս. ամէն։

նում, թէ որ ուտէ՝ դատապարտըւած է. Ինչու որ հաւատքէն չէ. բայց ամէն ինչ որ հաւատքէն չէ, մեղք — է.

24 Բայց նորան որ կարող է ձեզ հաստատել պահել իմ աւետարանիս պէս, եւ Յիսուսի Քրիստոսի քարոզութեան պէս, այն խորհրդոյ յայտնութեան պէս՝ որ յաւիտենից ժամանակէն լուռ պահուած էր,

25 Եւ հիմիկ մարգարէից գրքերովը յայտնուեցաւ՝ յաւիտենական Աստուծոյ հրամանին պէս, եւ հաւատքի հնազանդութիւնը [illegible] ամէն հեթանոսների մէջ իմացում տրվեր.

26 Այն միայն իմաստուն Աստուծոյն՝ նորան փառք յաւիտեան Յիսուսի Քրիստոսի ձեռօք. ամէն։

## ԳԼ. ԺԵ

1 Պարտ է՛մեզ՝ որ կարողս եմք՝ զտկարութիւն տկարացն բառնալ. եւ մի անձանց եւ եթ հաճոյ լինել։

2 Այլ իւրաքանչիւր ոք 'ի մէնջ ընկերին հաճոյ լիցի 'ի բարիս՝ վասն շինութեան։

3 Քանզի եւ Քրիստոս ոչ եթէ անձին հաճոյ եղեւ, այլ որպէս եւ գրեալ է. Նախատինք նախատչաց քոց անկան 'ի վերայ իմ։

4 Բայց որ ինչ գրեցան՝ 'ի մեր վարդապետութիւն գրեցաւ. զի համբերութեամբ եւ մխիթարութեամբ գրոց զյոյսն ընկալցուք։

5 Այլ Աստուած համբերութեան եւ ամենայն մխիթարութեան, տացէ ձեզ զնոյն խորհել ընդ միմեանս ըստ Յիսուսի Քրիստոսի.

1 Մենք որ կարող ենք՝ պէտք է որ տկարների – տկարութիւնը բ վեր առնենք, եւ միայն մեր անձներին հաճոյ չը լինինք,

2 Այլ մեզմէնից ամէն մէկը թող հաճոյ լինի ընկերին դէպի գ բարին՝ շինութեան դ համար.

3 Պատճառն որ՝ Քրիստոս էլ չէ թէ իրեն անձին հաճոյ ե եղաւ, բայց ինչպէս որ էլ գրված է, թէ Քեզ նախատինք տուողների նախատինքները ինծ վերայ զ ընկան։

4 Բայց ինչ որ գրվեցաւ՝ մեր վարդապետութեան համար է գրվեցաւ, որ համբերութենով եւ գրքերի մխիթարութենովը յոյս ընդունինք։

5 Բայց համբերութեան եւ ամէն մխիթարութեան Աստուածը տայ ձեզ՝ որ իրեն մէկ մտածմունք ունենաք իրար ը հետ՝ Յիսուսի Քրիստոսին պէս,

– Տիտ. Ա. 15.
—
'– Գաղ. Զ. 1.
բ Գլ. ԺԴ. 1.
գ Ա Կորնթ. Թ. 19. 22. Ժ. 24. 33. ԺԳ. 5. Փիլիպ. Բ. 4. 5.
դ Գլ. Է ԺԴ. 19.
ե Մատթ. ԻԶ. 39. Յովհ. Ե. 30. Զ. 38.
զ Սաղ. ԿԹ. 9.
է Գլ. Դ 23. 24. Ա Կորնթ. Թ. 9. 10. Ժ. 11. Բ Տիմ. Գ. 16. 17.
ը Գլ. ԺԲ. 16. Ա Կորնթ. Ա. 10. Փիլիպ. Գ. 16.

6 Զի միաբանութեամբ 'ի մի բերան փառաւոր առնիցէք զԱստուած, եւ զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

7 Վասն որոյ ընկալարուք զմիմեանս. որպէս եւ Քրիստոս ընկալաւ զձեզ 'ի փառս Աստուծոյ ։

8 Ասեմ, թէ Քրիստոսի սպասաւոր թլփատութեանն լինել՝ վասն ճշմարտութեանն Աստուծոյ էր, առ 'ի հաստատուն առնելոյ զաւետիս հարցն ։

9 Այլ հեթանոսք վասն ողորմութեան փառաւոր առնեն զԱստուած, որպէս եւ գրեալ է. Վասն այսորիկ գոհացայց զքէն 'ի հեթանոսս, եւ անուան քում սաղմոս ասացից ։

10 Եւ 'դարձեալ ասէ. Ուրախ լերուք հեթանոսք ընդ ժողովրդեան նորա ։

11 Եւ դարձեալ թէ, Օրհնեցէք ամենայն հեթանոսք զՏէր, եւ գովեցէք զնա ամենայն ժողովուրդք ։

12 Եւ դարձեալ Եսայի ասէ. Եղիցի արմատն Յեսսեայ. եւ որ կանգնելոցն է իշխան հեթանոսաց, 'ի նա հեթանոսք յուսասցին ։

13 Այլ Աստուած յուսոյ՝ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ եւ խաղաղութեամբ, առաւելուլ ձեզ յուսով զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ ։

14 Հաստատեալ եմ եւ ես ինքնին եղբարք իմ՝ վասն ձեր, զի եւ դուք լի էք բարութեամբ, լի էք ամենայն գիտութեամբ, կարող էք եւ զմիմեանս խրատել ։

15 Այլ համարձակագոյնս գրեցի

6 Որ միաբան մէկ բերանով փառաւոր անէք Աստուծոյն, եւ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի բ Հօրը ։

7 Անոր համար իրար գ ընդունեցէք, ինչպէս որ Քրիստոս ալ ձեզ ընդունեց Աստուծոյ փառաց դ համար ։

8 Միայն թէ ասում եմ ձեզ. թէ նա որ Քրիստոս թլփատութեան սպասաւոր էղաւ՝ Աստուծոյ ճշմարտութեան համար ե էր, որ հարանց էղած աւետիքը զ հաստատէ ։

9 Բայց հեթանոսները ողորմութեան համար փառաւորութիւն է Աստուծոյն, ինչպէս որ ալ գրված է. թէ Ասոր համար կը գոհանամ՝ քեզանից հեթանոսներին մէջ, եւ քու անունիդ սաղմոս ը կասեմ ։

10 Եւ նորէն՝ թէ Ուրախացէք ով հեթանոսներ նորա ժողովրդին թ հետ

11 Եւ նորէն՝ թէ Օրհնեցէք Տէրն ամէն հեթանոսներ, եւ գովեցէք նորան ամէն ժ ժողովուրդներ ։

12 Եւ նորէն ասում է Եսային. Յեսսէին արմատ կը լինի, եւ նա որ հեթանոսներին համար իշխան կը կանգնի. նորան յոյս կը դնեն ի հեթանոսները ։

13 Բայց յուսոյ Աստուածը՝ լիքն անէ ձեզ ամէն ուրախութենով եւ խաղաղութենով, որ յուսով աւելնաք Սուրբ Հոգւոյ լ զօրութենովը ։

14 Ես ինքս ալ՝ իմ եղբարքս՝ ձեզ համար հաստատ խ եմ, որ դուք լիքն էք բարութենով. լիքն էք ամէն ծ գիտութենով, կարող էք իրար խրատել ։

15 Բայց համարձակվեցայ եղբարք՝

բ Գործ. Դ. 24. 32 ։
գ Գղ. ԺԴ. 1. 3 ։
դ Գղ. Ե. 2 ։
ե Մատթ. ԺԵ. 24. Յովհ. Ա. 11 ։ Գործ. Գ. 25, 26 ։ ԺԳ. 46 ։
զ Գղ. Գ. 3 ։ Բ Կորնթ. Ա. 20 ։
է Յովհ. Ժ. 16 ։ Գղ. Թ. 24 ։
ը Սաղ. ԺԸ. 49 ։
թ Բ Օրին. ԼԲ. 43 ։
ժ Սաղ. ՃԺԷ. 1 ։
ի Եսայ. ԺԱ. 1. 10 ։ Յայտ. Ե. 5 ։ ԻԲ. 16 ։
լ Գղ. ԺԲ. 12 ։ ԺԴ. 17 ։
խ Բ Պետ. Ա. 12 ։ Ա Յովհ. Բ. 21 ։
ծ Ա Կորնթ. Ը. 1. 7. 10 ։

առ ձեզ եղբարք իմ՝ փոքր 'ի շա-
տէ, իբրեւ յիշեցուցանելով ձեզ
վասն շնորհացն՝ որ տուեալ են ինձ
յԱստուծոյ ։
16 Լինել ինձ սպասաւոր Յիսուսի
Քրիստոսի 'ի հեթանոսս. բղձակերտա-
տանել զաւետարանն Աստուծոյ,
զի եղիցի՝ պատարագն հեթանոսաց
ընդունելի՝ սրբեալ Հոգւովն Սըր-
բով ։
17 Ունիմ այսուհետեւ պարծանս
'ի Քրիստոս Յիսուս առ Աստուած ։
18 Քանզի ոչ իշխեմ խօսել ինչ՝
զոր ոչ գործեաց Քրիստոս ինեւ 'ի
հնազանդութիւն հեթանոսաց՝ բա-
նիւք եւ արդեամբք ։
19 Զօրութեամբ նշանաց եւ ար-
ուեստից, զօրութեամբ Հոգւոյն
Սրբոյ. որպէս ինձ յԵրուսաղէմէ
եւ շուրջ՝ մինչեւ 'ի կողմանս Իւ-
րիկեցւոց լնուլ զաւետարանն Քրիս-
տոսի ։
20 Այնպէս տատանեցեալ յաւետա-
րանել, ոչ ուր անուանեցաւ Քրիս-
տոս, զի մի իբրեւ յայլոյ հիման
վերայ ջ շինիցեմ, այլ որպէս եւ գը-
րեալ է ,
21 Թէ Որոց ոչ պատմեցաւ վասն
նորա՝ տեսցեն, եւ որոց ոչ լուեալ
է՝ 'ի միտ առցեն ։
22 Վասն որոյ շատ խափանեցայ
գալ առ ձեզ ։
23 Բայց արդ՝ ոչ եւս գոյ ինձ տե-
ղի 'ի կողմանս յայսոսիկ. եւ ան-
ձուկ յոյժ ունիմ 'ի բազում ամաց
գալ առ ձեզ ։
24 Յորժամ անցանիցեմ 'ի Սպա-

եւ փոքր 'ի շատէ գրեցի ձեզ. իբր
թէ ձեր մտքերդ բերելով այն շը-
նորհքին՝ որ ինձ տրված է ն Աստ-
ուածանից ,
16 Որ ես Յիսուսի Քրիստոսի սպա-
սաւոր լինիմ հեթանոսներին մէջ.
Աստուծոյ աւետարանը ցանկալի
անելոյ, որ հեթանոսների պատա-
րագն ընդունելի լինի՝ Սուրբ Հո-
գովը ⁼ սրբված ։
17 Սրահամար պարծանք ունինք
Յիսուս Քրիստոսումն Աստուծոյ
առաջին ։
18 Ինչու որ՝ չեմ համարձակվում
մին բան խօսել՝ որ նորան Քրիստոս
չը գործեց ինձանով՝ հեթանոս-
ները հնազանդացնելոյ համար՝ խօս-
քերով եւ ⁼ գործքերով ,
19 Նշանների եւ հրաշքների զօ-
րութենով, Սուրբ Հոգոյ ՝ զօրու-
թենով. ինչպէս որ ես Երուսաղէ-
միցը մինչեւ Իւրիկեցոց կողմերը
Քրիստոսի աւետարանը լցրի ։
20 Այնպէս ջանք արի աւետա-
րանը քարոզել, չէ թէ տեղն որ
Քրիստոսի անունն անուանվեցաւ՝
որ չը լինի թէ իբր ուրիշի հիմունքի
վերայ ⁼ շինեմ. բայց ինչպէս որ էլ
գրված է .
21 Թէ նորանք որ նորանից չի պատ-
մըված նորա համար՝ կը տեսնեն, եւ
նորանք որ չեն լսել՝ միտք ⁼ կառնեն
22 Սրահամար շատ անգամ խա-
փանվեցայ ձեզ մօտ ռ գալուց ։
23 Բայց հիմիկ ես այս կողմերումս
էլ տեղ չունիմ. եւ շատ տարուց
եւեւ սաստիկ փափաք ունիմ՝ որ
ձեզ մօտ ⁼ գամ ։
24 Երբոր կանցանեմ Սպանիա ,

ն Գղ. Ա. 5. ԺԲ.
3. Գաղ. Ա. 15.
Եփես. Գ. 7, 8.
ռ Գղ. ԺԱ. 13.
Գաղ. Բ. 7, 8,
9. Ա Տիմ. Բ. 7.
Բ Տիմ. Ա. 11.

Փիլիպ. Բ. 17.
⁼ Եսայ. ԿԶ. 20
Փիլիպ. Բ. 17.
ն Գործ. ԻԱ. 19.
Գաղ. Բ. 8.
⁼ Գղ. Ա. 5. ԺԶ.
26.

ջ Գործ. ԺԹ. 11.
Բ Կորնթ. ԺԲ.
12.
⁼ Բ Կորնթ. Ժ. 13.
15, 16.
⁼ Եսայ. ԾԲ. 15.
Հ Գղ. Ա. 13. Ա

Թես. Բ. 17, 18.
⁼ Գործ. ԺԹ. 21.
Համար. 32. Գղ.
Ա. 11.

նիա, ակն ունիմ յանցանելն առ
նոսա տեսանել զձեզ. եւ 'ի ձէնջ
յուղարկել անդր, եթէ նախ խակ
փոքր 'ի շատէ ձեօք լցայց ։

25 Բայց այժմ երթամ յԵրուսա-
ղէմ պաշտել զսուրբսն ։

26 Քանզի հաճոյ թուեցաւ Մակե-
դոնացւոյն եւ Աքայեցւոյն հաղոր-
դութիւն ինչ առնել ընդ աղքատս
սրբոցն՝ որ են յԵրուսաղէմ ։

27 Հաճոյ թուեցաւ, քանզի եւ
պարտապան խակ են նոցա. զի
եթէ հոգեւորացն նոցա հաղորդ ե-
ղեն հեթանոսք, պարտին եւ մարմ-
նաւորացն կցորդ լինել նոցա ։

28 Արդ զայս կատարեալ՝ եւ կնքե-
եալ զպտուղ նոցա, անցից առ ձեօք
'ի Սպանիա ։

29 Զայս գիտեմ. զի 'ի գալն առ
ձեզ, լրութեամբ օրհնութեան ա-
ւետարանին Քրիստոսի եկից ։
30 Աղաչեմ զձեզ եղբարք՝ 'ի ձե-
ռըն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստո-
սի եւ սիրով Հոգւոյն, պատերազ-
մակից լինել ինձ յաղօթս վասն իմ
առ Աստուած ։

31 Զի ապրեցայց յապստամբացն,
որ 'ի Հրէաստանի են. եւ պաշտօ-
նըն իմ՝ որ յԵրուսաղէմ, ընդունելի
լիցի սրբոցն ։

32 Զի խնդութեամբ եկեալ առ
ձեզ 'ի կամս Աստուծոյ, հանգեայց
ընդ ձեզ ։

յոյս ունիմ որ դէպի նորանց անց-
նելոյս ժամանակը տեսնեմ ‡ ձեզ.
եւ ձեզանից ճանապարհ դնիլիմ այն
տեղ՝ եթէ առաջ փոքր 'ի շատէ
ձեզանով կշտանամ ։
25 Բայց հիմիկ Երուսաղէմ ‡ եմ
գնում որ սրբերին ծառայութիւն
‡ կատարեմ ։
26 Պատճառն որ՝ Մակեդոնացոց
եւ Աքայեցոց հաճոյ երեւեցաւ՝ որ
մին հաղորդութիւն անեն աղքատ
սրբերին հետ՝ որ Երուսաղէմումն
‡ են ։
27 Հաճոյ երեւեցաւ, ինչու որ՝
խակ պարտական էլ են նորանց.
պատճառն որ՝ եթէ հեթանոսները
նորանց հոգեւորին մասնակից ‡ ե-
լան, պէտք է որ մարմնականին
էլ մասնակից անեն ‡ նորանց ։
28 Ուրեմն սա որ կատարեմ՝ եւ
նորանց պտուղն իրենց անցը ‡ դը-
նեմ, կանցանեմ Սպանիա ձեր մի-
ջովը ։
29 Սա գիտեմ՝ որ երբոր ձեզ
մօտ գամ, Քրիստոսի աւետարանի
առատ օրհնութենովը ‡ կը գամ ։
30 Աղաչումեմ ձեզ եղբարք՝ մեր
Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռովը
եւ Հոգոյ ‡ սիրովը, որ ինձ պա-
տերազմի ընկեր լինիք՝ ինձ հա-
մար աղօթք անելով դէպի ‡ Աստ-
ուած,
31 Որ փրկվիմ այն ապստամբների
ձեռքիցն՝ որ Հրէաստանումն ‡ են.
եւ իմ ծառայութիւնս՝ որ Երուսա-
ղէմի մէջ ‡ սրբերին ըն-
դունելի ‡ լինի,
32 Որ ուրախութենով ձեզ մօտ
‡ գամ Աստուծոյ կամքովը, եւ
ձեզ հետ հանգիստ ‡ անեմ ։

‡ Գործ. ԺԽ. 3. Համար. 32.
‡ Գործ. ԺԹ. 21. Ի. 22. ԻԴ. 17.
‡ Ա կորնթ. ԺԶ. 1. 2. Բ կորնթ. Ը. 1. Թ. 2. 12.
‡ Գղ. ԺԱ. 17.
‡ Ա կորնթ. Թ. 11. Գաղ. Զ. 6.
‡ Փիլիպ. Դ. 17.
‡ Գղ. Ա. 11.
‡ Փիլիպ. Բ. 1.
‡ Բ կորնթ. Ա. 11. կող. Դ. 12.
‡ Բ Թես. Գ. 2.
‡ Բ կորնթ. Ը. 4.
‡ Գղ. Ա. 10.
‡ Գործ. ԺԸ. 21. Ա կորնթ. Դ. 19. Յակ. Դ. 15.
‡ Ա կորնթ. ԺԶ. 18. Բ կորնթ. Է. 13. Բ Տիմ. Ա. 16. Փիլիմ. 7. 20.

33 Եւ Աստուած խաղաղութեան եղիցի ընդ ձեզ ամենեսին . Ամէն ։

33 Եւ խաղաղութեան Աստուածը ձեզ ամէնիդ հետ ըլլի . Ամէն ։

## ԳԼ. ԺԶ

1 Յանձն առնեմ ձեզ զՓիբէ ըզ քոյր մեր , որ է սպասաւոր եկեղեցւոյն Կենքրացւոց .

2 Զի զնա ընկալջիք ՚ի Տէր՝ արժանի սրբոց , եւ վերակացու լինիջիք նմա՝ յոր պէտս իրաց եւ կոչեսցէ զձեզ . քանզի եւ նա վերակացու եղեւ բազմաց , եւ ինձ իսկ գլխովին ։

3 Ողջոյն տայջիք Պրիսկեայ եւ Ակիւղայ՝ գործակցաց իմոց ՚ի Քրիստոս Յիսուս .

4 Որք ընդ անձին իմոյ զիւրեանց պարանոցս մատուցին . զորոց ոչ ես միայն գոհանամ , այլ եւ ամենայն եկեղեցիք հեթանոսաց .

5 Եւ առ տանն եկեղեցւոյն նոցա . ողջոյն տայջիք Եպենետեայ սիրելւոյ իմոյ՝ որ է պտուղ Ասիացւոց ՚ի Քրիստոս ։

6 Ողջոյն տայջիք Մարիեայ՝ որ բազում վաստակս վաստակեաց ՚ի ձեզ ։

7 Ողջոյն տայջիք Անդրոնիկեայ եւ Յունեայ ազգականաց իմոց՝ եւ գերեկցաց , որք երեւելիքն իսկ են յառաքեալս . որք եւ յառաջ իսկ քան զիս եղեն ՚ի Քրիստոս ։

8 Ողջոյն տայջիք Ամպղեայ սիրելւոյ իմոյ ՚ի Տէր ։

9 Ողջոյն տայջիք Ուրբանեայ գործակցի իմոյ ՚ի Տէր , եւ Ստաքեայ սիրելւոյ իմոյ ։

10 Ողջոյն տայջիք Ապեղեայ՝ որ ընտիր է ՚ի Տէր .

1 Յանձնումեմ ձեզ մեր Փիբէ քոյրը , որ Կենքրացւոց եկեղեցւոյն սպասաւոր է ,

2 Որ նորան ընդունիք Տէրով . ինչպէս որ սրբերուն արժան է . եւ նորան ձեռն տուող էլէք՝ ինչ հարկաւոր բանի համար որ կանչէ ձեզ . պատճառն որ՝ նա էլ շատ մարդկանց ձեռն տուաւ , եւ յատուկ ինձ էլ ։

3 Ողջոյն տուէք Պրիսկային եւ Ակիւղային՝ իմ գործընկերներիս Քրիստոս Յիսուսումը .

4 Որ իմ անձիս տեղակ իրենց վզերն առաջ դրին , որ նորանցից ոչ թէ միայն ես եմ շնորհակալ՝ բայց հեթանոսների ամէն եկեղեցիներն էլ ,

5 Եւ նորանց տանը լինող եկեղեցւոյն էլ . ողջոյն տուէք Եպենետին՝ իմ սիրելւոյս՝ որ Ասիացւոց պտուղն է Քրիստոսումը ։

6 Ողջոյն տուէք Մարիային՝ որ շատ աշխատանքով աշխատեց ձեր միջումը ։

7 Ողջոյն տուէք Անդրոնիկէին եւ Յունէին՝ իմ ազգականներիս , եւ գերութեան ընկերներիս . որ առաքեալներին մէջ երեւելի են՝ որ նորանք հենց ինձանից առաջ Քրիստոսումն էլան ։

8 Ողջոյն տուէք Ամպղեային իմ սիրելւոյս Տէրով ։

9 Ողջոյն տուէք Ուրբանէին՝ իմ գործընկերիս Տէրով , եւ Ստաքէին իմ սիրելւոյս ։

10 Ողջոյն տուէք Ապէլլին՝ որ ազնիւ է Տէրով ։

ը Գղ. ԺԶ. 20. Ա Կորնթ. ԺԴ. 33. Բ Կորնթ. ԺԴ. 11. Փիլիպ. Դ. 9. Ա Թես. Ե. 23. Բ Թես. Գ. 16. Եբր. ԺԳ 20.

—

ա Գործ. ԺԸ. 18. բ Փիլիպ. Բ. 29. Գ Յովհ. 5, 6. գ Գործ. ԺԸ. 2. 18. 26. Բ Տիմ. Դ. 19. դ Ա Կորնթ. ԺԶ. 19. Կող. Գ. 15. Փիլիմ. 2. ե Ա Կորնթ. ԺԶ. 15. զ Գաղ. Ա. 22.

11 Ողջոյն տաջիք նոցա, որ յԱրիս-
տաբուղեայ տանէ անտի են. ողջոյն
տաջիք Հերովդիոնեայ ազգականի
իմոյ. ողջոյն տաջիք այնոցիկ՝ որք
'ի Նարկիսեայ տանէն իցեն 'ի Տէր։
12 Ողջոյն տաջիք Տրիփոնեայ եւ
Տրիփոսեայ վաստակաւորաց 'ի Տէր.
ողջոյն տաջիք Պերսիդեայ սիրելւոյ,
որ բազում վաստակս վաստակեաց
'ի Տէր։
13 Ողջոյն տաջիք Ռուփեայ ընտ-
րելոյ 'ի Տէր, եւ մօր նորա եւ ի-
մոյ։
14 Ողջոյն տաջիք Ասինկրիտեայ՝
Փղեգոնտեայ՝ Երմեայ՝ Պատրոբայ
Երմայ, եւ որ ընդ նոսա եղբարք
իցեն։
15 Ողջոյն տաջիք Փիղողոգեայ՝
Յուլեայ՝ Ներեայ՝ եւ քեռ նորա.
եւ Ողիմպեայ, եւ որ ընդ նոսա
սուրբք ամենեքին իցեն։
16 Ողջոյն տաջիք միմեանց 'ի համ-
բոյր սրբութեան. ողջոյն տան ձեզ
ամենայն եկեղեցիք Քրիստոսի։
17 Աղաչեմ զձեզ եղբարք՝ դիտել
զայնոսիկ, որ հերձուածս եւ
գայթակղութիւնս առնիցեն արտա-
քոյ վարդապետութեանն զոր դու-
քին ուսայք. եւ խորշեցարուք 'ի
նոցանէ։
18 Զի այնպիսիքն Տեառն մերում
Քրիստոսի ոչ ծառայեն, այլ իւ-
րեանց որովայնի. եւ քաղցրաբա-
նութեամբ եւ օրհնութեամբ պատ-
րեն զսիրտս անմեղաց։
19 Զի ձեր հնազանդութիւնն առ
ամենեսեան հասեալ է. եւ արդ 'ի
ձեզ ուրախ եմ. բայց կամիմ զձեզ
իմաստունս լինել 'ի բարիս՝ եւ ան-
մեղս 'ի չարիս։

11 Ողջոյն տուէք նորանց՝ որ Արիս-
տաբուլի տանիցն են. ողջոյն տուէք
Հերոդիոնին՝ իմ ազգականիս. ող-
ջոյն տուէք նորանց, որ Նարկիսէի
տանիցն են՝ Տէրով։
12 Ողջոյն տուէք Տրիփոնին եւ
Տրիփոսին՝ աշխատաւորներին Տէ-
րով. ողջոյն տուէք Պերսիդէին սի-
րելուն՝ որ շատ աշխատանքով աշ-
խատեց Տէրով։
13 Ողջոյն տուէք Ռուփային՝ որ
ազնիւ ե է Տէրով. եւ նորա եւ իմ
մօրը։
14 Ողջոյն տուէք Ասինկրիտին,
Փղեգոնտային, Երմէին, Պատրո-
բին, Երմին, եւ եղբայրներին՝ որ
նորանց հետ են։
15 Ողջոյն տուէք Փիլողոգին եւ
Յուլիային եւ Ներէային եւ նորա
Ողիմպիա քրոջը եւ ամէն սրբե-
րին՝ որ նորանց հետ են։
16 Ողջոյն տուէք իրար սուրբ
զ համբուրովը. ողջոյն են տալիս
ձեզ Քրիստոսի ամէն եկեղեցիները։
17 Աղաչումեմ ձեզ եղբարք, որ
մտիկ տաք նորանց՝ որ հերձուած-
ներ եւ գայթակղութիւններ են չի-
նում այն վարդապետութենիցը
դուրս՝ որ դուք է սովրեցիք եւ
հեռու քաշվեցէք ը նորանցից։
18 Պատճառն որ՝ այնպէսիները
մեր Տէր Քրիստոսին չեն ծառայում,
բայց իրենց թ փորին. եւ քաղցր
խօսքերով եւ օրհնութենով խաբու-
մեն անմեղների ժ սրտերը։
19 ի Ինչու որ՝ ձեր հնազանդութիւ-
նըն ամենին ե հասաւ. եւ սորա հա-
մար ուրախ եմ ձեզ համար. միայն
թէ ուզումեմ՝ որ դուք իմաստուն
լինիք դէպի բարին՝ եւ անմեղ չա-
րի լ կողմանէ։

ե Բ Յովհ. 1։
զ Ա Կորնթ. ԺԶ. 20։ Բ Կորնթ. ԺԳ. 12։ Ա Թես. Ե. 26։ Ա Պետ. Ե. 14։
է Գործ. ԺԵ. 1. 5. 24։ Ա Տիմ. Զ. 3։
ը Ա Կորնթ. Ե. 9. 11։ Բ Թես. Գ. 6. 14։ Բ Տիմ. Գ. 5։ Տիտ. Գ. 10։ Բ Յովհ. 10։
թ Փիլիպ. Գ. 19։ Ա Տիմ. Զ. 5։
ժ Կող. Բ. 4։ Բ Տիմ. Գ. 6։ Տիտ. Ա. 10։ Բ Պետ. Բ. 3։
ի Գղ. Ա. 8։
լ Մատթ. Ժ. 16։ Ա Կորնթ. ԺԴ. 20։

20 Եւ Աստուած խաղաղութեան
խորտակեսցէ զՍատանայ ընդ ո-
տիւք ձերովք մերձ ընդ մերձ. շը-
նորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի ընդ ձեզ։
21 Ողջոյն տայ ձեզ Տիմոթէոս եղ-
բայր եւ գործակից իմ, եւ Ղուկի-
ոս, եւ Յասոն, եւ Սոսիպատրոս
ազգականք իմ։
22 Ողջոյն տամ ձեզ՝ եւ ես Տեր-
տիոս, որ գթուղթս գրեցի ՚ի Տէր։
23 Ողջոյն տայ ձեզ Գայիոս աս-
պնջական իմ, եւ ամենայն եկե-
ղեցւոյն. ողջոյն տայ ձեզ Երաս-
տոս շահապ քաղաքիս, եւ Կուար-
տոս եղբայր։
24 Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի ընդ ձեզ ընդ ամենեսին.
Ամէն։
25 Այլ այնմ, որ կարօղն է հաս-
տատել զձեզ ըստ աւետարանին ի-
մում, եւ ըստ քարոզութեանն Յի-
սուսի Քրիստոսի, ըստ յայտնու-
թեան խորհրդոյս այսորիկ՝ ժամա-
նակօք յաւիտենից լռեցելոյ,
26 Եւ յայտնելոյ այժմիկ ՚ի ձեռն
գրոց մարգարէականաց՝ ըստ հրա-
մանի մշտնջենաւորին Աստուծոյ,
՚ի հնազանդութիւն հաւատոց. յա-
մենայն հեթանոսս ծանուցելոյ,
27 Միայնոյ իմաստնոյն Աստուծոյ
՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի. նմա

20 Եւ խաղաղութեան կ Աստուա-
ծը կը խորտակէ Սատանային ձեր
ոտաց ներքեւը հ շուտով. մեր Տէր
Յիսուսի Քրիստոսի շնորհքը ըլլի
ձեզ ձ հետ։
21 Ողջոյն է տալիս ձեզ Տիմոթէ-
ոս եղբայրը եւ իմ ղ գործընկերս,
եւ ճ Ղուկիոս եւ մ Յասոն եւ յ Սո-
սիպատրոս՝ իմ ազգականներս։
22 Ողջոյն եմ տալիս ձեզ ես Տեր-
տիոս էլ՝ որ այս թուղթը գրեցի
Տէրովը։
23 Ողջոյն է տալիս ձեզ ն Գայիոս՝
որ իմ եւ ամէն եկեղեցւոյ ընդու-
նողն է. ողջոյն է տալիս ձեզ շ Ե-
րաստոս՝ քաղաքիս հոգատարը, եւ
Կուարտոս եղբայրը։
24 Մեր Տէր Յիսուսի Քրիստոսի
շնորհքը ձեզ ամէնից ո հետ. Ամէն։
25 Բայց նորան՝ որ կարող է ձեզ
հաստատ չ պահել իմ աւետարանիս
պ պէս՝ եւ Յիսուսի Քրիստոսի քա-
րոզութեան պէս. այն խորհրդոյ
յայտնութեանը ջ պէս՝ որ յաւիտե-
նից ժամանակները լուռ պահուած
ռ էր,
26 Բայց հիմիկ մարգարէից գրքե-
րովը յայտնուեցաւ՝ յաւիտենական
Աստուծոյ հրամանովն ս պէս եւ հա-
ւատքի հնազանդութիւնն ամէն
հեթանոսների միջումն իմացուեց
վ տարածուեց.
27 Այն միայն իմաստունին տ Աստու-
ծոյն, որուն պատիւ եւ փառք յա-

կ Գլ. ԺԵ. 33. հ Ծննդ. Գ. 15. ձ Համար. 24. Ա Կորնթ. ԺԶ. 23. Բ Կորնթ. ԺԳ. 13. Փիլիպ. Դ. 24. Ա Թես. Ե. 28. Բ Թես. Գ. 18. Յայտ. ԻԲ. 21. ղ Գործ. ԺԶ. 1. Կող. Ա. 1. Փիլիպ. Բ. 19. Ա Թես. Գ. 2. Ա Տիմ. Ա. 2. Եբր. ԺԳ. 23. ճ Գործ. ԺԳ. 1. մ Գործ. ԺԷ. 5. յ Գործ. Ի. 4. ն Ա Կորնթ. Ա. 14. շ Գործ. ԺԹ. 22. Բ Տիմ. Դ. 20. ո Համար. 20. Ա Թես. Ե. 28. չ Եփես. Գ. 20. Ա Թես. Գ. 13. Բ Թես. Բ. 16. Գ. 3. Յուդ. 24. պ Գլ. Բ. 16. ջ Եփես. Ա. 9. Գ. 3, 4, 5. Կող. Ա. 27. ռ Ա Կորնթ. Բ. 7. Եփես. Գ. 5. 9. Կող. Ա. 26. ս Եփես. Ա. 9. Բ Տիմ. Ա. 10. Տիտ. Ա. 2, 3. Ա Պետ. Ա. 20. վ Գործ. Զ. 7. Գլ. Ա. 5. ԺԵ. 18. տ Ա Տիմ. Ա. 17. Զ. 15. Յուդ. 25.

պատիւ եւ փառք յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

յաւիտեանս յաւիտենից Յիսուս Քրիստոսի ձեռովը. Ամէն։

(Հռովմայեցոց վերայ գրվեցաւ Կորնթոս քաղաքից, Փեբէի սպասաւորի ձեռքով։)

# ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

## ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍՆ ԱՌԱՋԻՆ

---

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 ՊՕՂՈՍ կոչեցեալ առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամօքն Աստուծոյ, եւ Սոսթենէս եղբայր.

2 Եկեղեցւոյդ Աստուծոյ՝ որ է 'ի Կորնթոս՝ նուիրելոց 'ի Քրիստոս Յիսուս, կոչեցելոց սրբոց՝ ամենեքումբք հանդերձ, որք կարդան զանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յամենայն տեղիս նոցա՝ եւ մեր.

3 Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ՝ եւ 'ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։

4 Գոհանամ զԱստուծոյ իմոյ յամենայն ժամ վասն ձեր՝ 'ի վերայ շնորհացն Աստուծոյ՝ որ տուեալ են ձեզ 'ի Քրիստոս Յիսուս։

5 Զի յամենայնի մեծացարուք դուք նովաւ՝ ամենայն բանիւ եւ ամենայն գիտութեամբ։

6 Որպէս վկայութիւնն իսկ Աստուծոյ հաստատեցաւ 'ի ձեզ։

7 Զի դուք մի՛ նուազիցիք՝ եւ մի՛ իւիք շնորհօք, ակնկալեալ յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

1 ՊՕՂՈՍ Յիսուսի Քրիստոսի կանչուած ա առաքեալ՝ Աստուծոյ բ կամքովը, եւ Սոսթենէս գ եղբայրը.

2 Աստուծոյ եկեղեցւոյն՝ որ Կորնթոսումն է, Յիսուս Քրիստոսումը դ սրբվածներից՝ կանչված ե սրբերից՝ այն ամենին հետ որ մեր զ Տէր Յիսուսի Քրիստոսի անունը է կանչումեն ամէն նորանց եւ մեր ը տեղերումը.

3 Շնորհք ձեզ հետ եւ խաղաղութիւն Աստուած մեր Հօրիցը՝ եւ Տէր Յիսուս թ Քրիստոսիցը։

4 Ամէն ժամանակ գոհանումեմ իմ Աստուածանիցս ձեզ ժ համար, Աստուծոյ այն շնորհքներին համար՝ որ տրվիած են ձեզ Յիսուս Քրիստոսումը,

5 Որ ամէն բանի մէջ հարստացաք նորանով՝ ամէն խօսքով եւ ամէն ի գիտութեամբ.

6 Ինչպէս որ իսկ Աստուծոյ վկայութիւնը հաստատվեցաւ ձեր լ մէջումը,

7 Որ դուք չը պակասիք ոչ մի շնորհքով էլ՝ եւ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի յայտնութեանն խ սպասումէք,

ա Հռովմ. Ա. 1. բ Բ Կորնթ. Ա. 1. Եփես. Ա. 1. Կող. Ա. 1. գ Գործ. ԺԸ. 17. դ Յուդ. 1. Յովհ. ԺԷ. 19. Գործ. ԺԵ 9. ե Հռովմ. Ա. 7. Բ Տիմ. Ա. 9. զ Գլ. Ը. 6. է Գործ. Թ. 14. 21. ԻԲ. 16. Բ Տիմ. Բ. 22. ը Հռովմ. Գ. 22. Ժ. 12. թ Հռովմ. Ա. 7. Բ Կորնթ. Ա. 2. Եփես. Ա. 2. Ա Պետ. Ա. 2. ժ Հռովմ. Ա. 8. ի Գլ. ԺԲ. 8. Բ Կորնթ. Ը. 7. լ Գլ. Բ. 1. Բ Տիմ. Ա. 8. Յայտ. Ա. 2. խ Փիլիպ. Գ. 20. Տիտ. Բ. 13. Բ Պետ. Գ. 12. Կող. Գ. 4.

8 Որ եւ հաստատեսցէ զձեզ մինչեւ 'ի կատարած՝ անարատս՝ յօր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

9 Հաւատարիմ է Աստուած, որով կոչեցարուք 'ի հաղորդութիւն Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ։

10 Աղաչեմ զձեզ եղբարք՝ անուամբն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. զի զնոյն բան ունիցիք ամենեքեան, եւ մի իցեն 'ի ձեզ հերձուածք. քանզի էիք հաստատեալք 'ի նոյն միտս եւ 'ի նոյն հանճար։

11 Ազդ եղեւ ինձ վասն ձեր եղբարք՝ 'ի Քղուացւոց անտի, թէ հակառակութիւնք են 'ի ձեզ։

12 Եւ այս ասեմ իսկ, եթէ իւրաքանչիւրոք 'ի ձէնջ ասէ. Ես Պօղոսեան եմ, եւ միւսն՝ եթէ Ես Ապողոսեան, եւ միւսն՝ եթէ Ես Կեփայեան. եւ միւսն՝ եթէ Ես Քրիստոսեան։

13 Իսկ արդ՝ բաժանեալ ինչ իցէ Քրիստոս. միթէ Պօղոս 'ի խաչ ելեալ իցէ վասն ձեր, կամ յանուն Պօղոսի մկրտեցարուք։

14 Գոհանամ զԱստուծոյ իմոյ՝ զի ոչ զոք 'ի ձէնջ մկրտեցի՝ բայց միայն զԿրիսպոս եւ զԳայիոս. զի մի ոք ասիցէ,

15 Թէ յիմ անուն մկրտեցարուք։

16 Տուի եւս կնիք եւ տանն Ստեփանեայ. եւ զայլ ոք ոչ գիտեմ ամենեւին՝ թէ մկրտեցի։

17 Զի ոչ առաքեաց զիս Քրիստոս մկրտել՝ այլ աւետարանել. ոչ ճարտարութեամբ բանից, զի մի

8 Որ նա էլ հաստատ կը պահէ ձեզ մինչեւ [ա] վերջը՝ որ անմեղ լինիք մինչեւ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի [բ] օրը։

9 Հաւատարիմ է [գ] Աստուած՝ որ դուք նորանով կանչվեցաք դէպի նորա Որդւոյ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի [դ] հաղորդութիւնը։

10 Աղաչում եմ ձեզ եղբայրք՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անունովը, որ ամէնքդ էլ մին խօսք [ե] ունենաք, եւ հերձուածք չը լինի ձեր միջումը. ինչու որ՝ էլ մին մտքի եւ մին կարծիքի մէջ հաստատված էիք։

11 Եղբայրք՝ ես այն Քղուացիներից իմացայ ձեզ համար՝ որ հակառակութիւններ կան ձեզանում։

12 Ուրեմն սա եմ ասում՝ որ ձեզանից ամէն մէկն ասում է՝ թէ Ես Պօղոսեան [զ] եմ, եւ միւսը՝ թէ Ես [է] Ապողոսեան, եւ միւսը՝ թէ Ես [ը] Կեփասեան, եւ միւսը՝ թէ Ես Քրիստոսեան։

13 Ապա ուրեմն բաժանված է [թ] Քրիստոս. միթէ Պօղոս խաչվեցաւ ձեզ համար՝ կամ Պօղոսի անունովը մկրտվեցաք։

14 Գոհանում եմ Աստուծանից՝ որ ձեզանից մէկին չը մկրտեցի. բայց միայն [ժ] Կրիսպոսին եւ [ժա] Գայիոսին. որ մէկը չասէ,

15 Թէ դուք իմ անունովս մկրտվեցաք։

16 Ստեփանի տունն էլ [ժբ] մկրտեցի. մին ուրիշը բնաւ չեմ գիտում, թէ մկրտեցի։

17 Պատճառն որ՝ Քրիստոս չուղարկեց ինձ մկրտելու, բայց աւետարանը քարոզելու. ոչ թէ վար-

[ա] Ա Թես. Գ. 13. [բ] Կող. Ա. 22. Ա Թես. Ե. 23. [գ] Եսայ. ԽԹ. 7. Գլ. Ժ. 13. Ա Թես. Ե. 24. Բ Թես. Գ. 3 Եբր. Ժ. 23. [դ] Յովհ. ԺԷ. 4. ԺԷ. 21. Ա Յովհ. Ա. 3. Դ. 13. [ե] Հռովմ. ԺԲ. 16. ԺԵ 5. Բ Կորնթ. ԺԳ. 11. Փիլիպ. Բ. 2. Գ. 16. Ա Պետ. Գ. 8. Գլ. ԺԱ. 18. [զ] Գլ. Գ. 4. [է] Գործ. ԺԸ. 24. ԺԹ. 1. Գլ. ԺԶ. 12. [ը] Յովհ. Ա. 42. [թ] Բ Կորնթ. ԺԱ. 4. Եփես. Դ. 5. [ժ] Գործ. ԺԸ. 8. [ժա] Հռովմ. ԺԶ. 23. [ժբ] Գլ. ԺԶ. 15, 17.

ընդունայն լիցի խաչն Քրիստոսի ։

18 Զի ճառ խաչին, կորուսելոցն
՚յիմարութիւն է. այլ փրկելոցս մեզ՝
զօրութիւն Աստուծոյ ։

19 Զի գրեալ է. Կորուսից զիմաստութիւն իմաստնոց, եւ զխորհուրդս խորհրդականաց արհամարհեցից ։
20 Ո՛ւր իմաստուն, ո՛ւր դպիր, ո՛ւր քննիչ աշխարհիս այսորիկ. ո՛չ ապաքէն յիմարեցոյց Աստուած զիմաստութիւն աշխարհիս այսորիկ ։

21 Քանզի իմաստութեամբն Աստուծոյ ոչ ծանեաւ աշխարհ իմաստութեամբն զԱստուած. հաճեցաւ Աստուած յիմարութեամբ քարոզութեամբն ապրեցուցանել զհաւատացեալս ։
22 Իսկ որովհետեւ Հրեայք նշան հայցեն, եւ Հեթանոսք զիմաստութիւն խնդրեն.
23 Մեք քարոզեսցուք զխաչելեալն Քրիստոս, Հրէից գայթակղութիւն, եւ Հեթանոսաց յիմարութիւն ։
24 Բայց նոցին իսկ կոչեցելոցն Հրէից եւ Հեթանոսաց, զՔրիստոս՝ Աստուծոյ զօրութիւն՝ եւ Աստուծոյ իմաստութիւն ։

25 Զի յիմարն Աստուծոյ իմաստնագոյն է քան զմարդիկ. եւ տկարն Աստուծոյ զօրագոյն է քան ըզ մարդիկ ։

պերճաբան Է խօսքերով, որ ունայն չըլինի Քրիստոսի խաչը.
18 Ինչու որ՝ խաչի խօսքը կորածներին — համար՝ յիմարութիւն = է, բայց մեզ փրկւածներիս Է համար՝ Աստուծոյ ⁼ զօրութիւն.
19 Ինչու որ՝ գրւած է. Թէ իմաստունների իմաստութիւնը կը կորցնեմ, եւ խելացիների խորհուրդները ⁼ կանարգեմ ։
20 Ել ո՞րտեղ կայ իմաստուն, ո՞րտեղ կարդացող, ո՞րտեղ այս աշխարհքիս ⁼ քննող. չէ՞ որ Աստուած այս աշխարհքիս իմաստունը — յիմարացուց ։
21 Նրահամար որ՝ Աստուծոյ իմաստութենովն աշխարհը իմաստութենով չը ճանաչեց ⁺ Աստուծոյն. Աստուած հաճեցաւ որ յիմար քարոզութենով ապրեցնէ հաւատացեալներին ։
22 Բայց որովհետեւ Հրէաները նշան են ⁺ ուզում, եւ Հեթանոսները իմաստութիւն են խնդրում.
23 Մենք կը քարոզենք խաչւած Քրիստոսին, Հրէաներին համար ⁺ գայթակղութիւն եւ Հեթանոսներին համար ⁼ յիմարութիւն.
24 Բայց իսկ նոյն Հրէաներին եւ Հեթանոսներին համար, որ կանչւած են, Քրիստոսին ⁺⁼⁼⁼⁼⁺ Աստուծոյ — զօրութիւն եւ Աստուծոյ ⁼ իմաստութիւն.
25 Պատճառն որ՝ Աստուծոյ յիմարն աւելի իմաստուն է քան թէ մարդիկը. եւ Աստուծոյ տկարն աւելի զօրաւոր է քան թէ մարդիկը.

Է Գղ. Բ. 1. 4. 13։ Բ Պետ. Ա. 16։
— Բ Կորնթ Բ. 15։
= Գործ. ԺԷ. 18։ Գղ. Բ. 14։
Է Գղ. ԺԵ. 2։
⁼ Հռովմ. Ա. 16։ Գղ. Ա. 24։
Ր Յոբ. Ե. 12. 13 Եսայ. ԻԹ. 14։ Երեմ. Ը. 9։
Յ Եսայ. ԼԳ. 18։
— Յոբ. ԺԲ. 17. 20. 24։ Եսայ. ԽԴ. 25։ Հռովմ. Ա. 22։
Է Հռովմ. Ա. 20. 21. 28։ Մատթ. ԺԱ. 25։ Ղուկ. Ժ. 21։
⁺ Մատթ. ԺԲ. 38. ԺԶ. 1։ Մարկ. Ը. 11։ Ղուկ. ԺԱ. 16։ Յովհ. Դ. 48։
⁺ Եսայ. Ը. 14։ Մատթ. ԺԱ. 6։ ԺԳ. 57։ Ղուկ. Բ. 34։ Յովհ. Զ. 61. 67։ Հռովմ. Թ. 32։ Գաղ. Ե. 11։ Ա Պետ. Բ. 8։
⁼ Համար. 18։ Գղ. Բ. 14։
— Հռովմ. Ա. 4. 16։ Համար. 18։
Բ Կող. Բ. 3։

26 Թէպէտ և զձեր իսկ կոչումնդ տեսէք եղբարք, զի ոչ բազում իմաստունք ըստ մարմնոյ, և ոչ բազում հզօրք, և ոչ բազում ազնուականք.
27 Այլ զյիմարս աշխարհիս ընտրեաց Աստուած՝ զի յամօթ արասցէ զիմաստունս. և զտկարս աշխարհիս ընտրեաց Աստուած, զի յամօթ արասցէ զհզօրս.
28 Եւ զանտոհմս աշխարհի և զարհամարհեալս ընտրեաց Աստուած՝ և զոչինչսն, զի զէսն իմն խափանեսցէ.
29 Որպէս զի մի պարծեսցի ամենայն մարմին առաջի Աստուծոյ.
30 Զի 'ի նմանէ դուք էք 'ի Քրիստոս Յիսուս, որ եղև մեզ իմաստութիւն յԱստուծոյ, արդարութիւն և սրբութիւն և փրկութիւն

31 Զի որպէս և գրեալ է. Որ պարծին՝ 'ի Տէր պարծեսցի.

26 Էլ հենց ձեր կոչումը տեսէք եղբարք, որ ոչ շատ իմաստուններ մարմնոյ կողմանէ, և ոչ շատ զօրաւորներ, և ոչ շատ ‡ ազնուականներ,
27 Բայց այս աշխարհքիս յիմարներին Աստուած ընտրեց՝ որ ամօթ անէ իմաստուններին. և աշխարհքիս տկարներին Աստուած ընտրեց՝ որ ամօթ անէ զօրաւորներին.
28 Եւ աշխարհքիս ցած մարդկանց և անարգվածներին Աստուած † ընտրեց՝ և ‹ ոչինչներին՝ որ մին բան լինողներին ‡ ոչինչացնէ,
29 Որ ոչ մին մարմին չը պարծենայ Աստուծոյ ‡ առաջին.
30 Ինչու որ՝ նորանից դուք էք Յիսուս Քրիստոսումն՝ որ Աստուածանից մեզ համար էլաւ ‡ իմաստութիւն, ‡ արդարութիւն և ‡ սրբութիւն և ‡ փրկութիւն,
31 Որ ինչպէս որ էլ գրված է. Նա որ պարծենումէ՝ թող Տէրով ‡ պարծենայ.

## Գլ. Բ

1 Եւ ես թէպէտ և եկի առ ձեզ եղբարք՝ ոչ ըստ առաւելութեան ինչ բանից իմաստութեան պատմել ձեզ զվկայութիւնն Աստուծոյ.
2 Զի ոչ եթէ 'ի միտ եդի գիտել ինչ 'ի ձեզ՝ բայց միայն զՅիսուս Քրիստոս՝ և զնոյն 'ի խաչ ելեալ.

3 Եւ ես տկարութեամբ՝ և երկիւղիւ և դողութեամբ բազմաւ եղէ առ ձեզ.
4 Եւ բանն իմ և քարոզութիւն,

1 Եւ ես էլ եղբարք՝ ձեզ մօտ եկի, ոչ թէ իմաստութեան բարձր – խօսքերով Աստուծոյ վկայութիւնը ձեզ ‡ պատմելու.
2 Պատճառն որ՝ միտքս չէի դրած՝ մին ուրիշ բան գիտել ձեր միջումը՝ բայց միայն Յիսուս Քրիստոսին և նորան ‡ խաչված.
3 Եւ ես տկարութենով և շատ վախով և † դողութենով էլայ ձեզ ‡ մօտ.
4 Եւ իմ խօսքս և քարոզու–

‡ Յովհ. Է. 48.
† Մատթ. ԺԱ. 25. Յակ. Բ. 5. Սաղ. Ը. 2.
‡ Հռովմ. Դ. 17.
‡ Գլ. Բ. 6.
‡ Հռովմ. Գ. 27. Եփես. Բ. 9.
‡ Համար. 24.
‡ Երեմ. ԻԴ. 5. 6. Հռովմ. Դ. 25. Բ Կորնթ. Ե. 21. Փիլիպ. Գ. 9.
‡ Յովհ. ԺԷ. 19.
‡ Եփես. Ա. 7.
‡ Երեմ. Թ. 23. 24. Բ Կորնթ. Ժ. 17.

—

– Գլ. Ա. 17. Համար. 1. 13. Բ Կորնթ. Ժ. 10. ԺԱ. 6.
‡ Գլ. Ա. 6.
‡ Գաղ. Զ. 14. Փիլիպ. Գ. 8.
† Բ Կորնթ. Դ. 7. Ժ. 1. 10. ԺԱ. 30. ԺԲ. 5. 9. Գաղ. Դ. 13.
‡ Գործ. ԺԸ. 1. 6. 12.

ոչ պատիր բանիւք իմաստութեան՝ այլ արդեամբք Հոգւոյն եւ զօրութեամբ ։

5 Զի հաւատք ձեր մի՛ իցեն իմաստութեամբ մարդկան, այլ զօրութեամբ Աստուծոյ ։

6 Զիմաստութիւն խօսիմք ընդ կատարեալս. զիմաստութիւն՝ ոչ զաշխարհիս այսորիկ, եւ ոչ զիշխանաց աշխարհիս այսորիկ զխափանելեաց.

7 Այլ խօսիմք զԱստուծոյ իմաստութիւնն ծածուկ խորհրդով, զոր յառաջ քան զյաւիտեանս սահմանեաց Աստուած ՚ի փառս մեր ։

8 Զոր ոչ ոք յիշխանաց աշխարհիս այսորիկ ծանեաւ. զի եթէ էր ծանուցեալ՝ ոչ արդեօք զՏէրն փառաց ՚ի խաչ հանէին ։

9 Այլ որպէս եւ գրեալ է. Զոր ակն ոչ ետես, եւ ունկն ոչ լուաւ, եւ ՚ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց ։

10 Այլ մեզ յայտնեաց Աստուած Հոգւովն իւրով. զի Հոգին զամենայն քննէ՝ եւ զխորս Աստուծոյ ։

11 Զի ո՛ ոք ՚ի մարդկանէ գիտէ ինչ զմարդոյն, եթէ ոչ հոգի մարդոյն՝ որ ՚ի նմա. նոյնպէս եւ ոչ զԱստուծոյն ոք գիտէ՝ եթէ ոչ Հոգին Աստուծոյ ։

թիւնս՝ ոչ թէ իմաստութեան խաբերայ խօսքերով չեղաւ, այլ Հոգւոյ ներգործութենովն ու ե զօրութենովը ,

5 Որ ձեր հաւատքը մարդկանց իմաստութենովը չըլլայ՝ բայց Աստուծոյ ը զօրութենովը ։

6 Իմաստութիւն ենք խօսում կատարեալներին թ հետ, չէ թէ այս աշխարհքիս ժ իմաստութիւնը, եւ ոչ էլ այս աշխարհքիս իշխաններին՝ որ պիտի ի խափանվելին ։

7 Բայց Աստուծոյ իմաստութիւնն ենք խօսում՝ ծածուկ խորհրդով, որ Աստուած յաւիտեններից առաջ սահմանեց նորան մեր փառաց լ համար ,

8 Որ նորան այս աշխարհքի իշխաններից ոչ մէկ խ չը ճանաչեց . ինչու որ՝ եթէ ճանաչած լինէին՝ էլ փառաց Տէրը խաչ չէին ծ հանել ։

9 Բայց ինչպէս որ էլ գրած է . Ինչ որ աչք չը տեսաւ՝ եւ ականջ կ չըլսեց՝ եւ մարդոյ սիրտը չընկաւ՝ նա պատրաստեց Աստուած իրեն սիրողներին հ համար ։

10 Բայց մեզ Աստուած յայտնեց իրեն ձ Հոգովը . ինչու որ Հոգին ամէն բան քննում է, եւ Աստուծոյ խոր բաներն էլ ։

11 Պատճառն որ՝ մարդկանցից ով է նա՝ որ մարդոյ բանը գիտենայ՝ եթէ ոչ մարդոյ հոգին, որ նորանում յ է . այնպէս էլ Աստուծոյ բանն ոչ ով չի գիտում, եթէ ոչ Աստուծոյ ղ Հոգին ։

ղ Համար. 1. Գղ. Ա. 17. Բ Պետ. Ա. 16.
ե Հռովմ. ԺԵ. 19. Ա Թես. Ա. 5.
ը Բ Կորնթ. Գ. 7. Զ. 7.
թ Գղ. ԺԳ. 20. Եփես. Գ. 13. Փիլիպ. Գ. 15. Եբր. Ե. 14.
ժ Գղ. Ա. 20. Գ. 19. Համար Ա. 13. Բ Կորնթ. Ա. 12. Յակ. Գ. 15.
ի Գղ. Ա. 28.
լ Հռովմ. ԺԶ. 25. 26. Եփես. Գ. 5. 9. Կող. Ա. 26. Բ Տիմ. Ա. 9.
խ Մատթ. ԺԱ. 25. Յովհ. Ե. 48. Գործ. ԺԳ. 27. Բ Կորնթ. Գ. 14.
ծ Ղու. ԻԳ. 34. Գործ. Գ. 17. Յովհ. ԺԶ. 3.
կ Եսայ. ԿԴ. 4.
հ Մատթ. ԺԳ. 11. ԺԶ. 17. Յովհ. ԺԳ. 26. ԺԶ. 13. Ա Յովհ. Բ. 27.
յ Առակ. Ի. 27. ԻԵ. 19. Երեմ. ԺԷ. 9.
ղ Հռովմ. ԺԱ. 33. 34.

12 Այլ մեք ոչ եթէ զհոգի աշխարհիս առաք՝ այլ զՀոգին՝ որ յԱստուծոյ. զի ծանիցուք զայն՝ որ յԱստուծոյն շնորհեցաւ մեզ։

13 Եւ զոր խօսիմքն՝ ոչ եթէ մարդկեղէն ուսմամբ ճարտարութեան բանից, այլ վարդապետութեամբ Հոգւոյն ընդ հոգեւորս զհոգեւորսն համեմատեմք։

14 Քանզի շնչաւոր մարդ ոչ ընդունի զՀոգւոյն Աստուծոյ՝ զի յիմարութիւն է նմա. եւ ոչ կարէ գիտել՝ եթէ հոգեպէս քննիցի։

15 Իսկ հոգեւորն քննէ զամենայն, եւ ինքն յումեքէ ոչ քննի։

16 Իսկ արդ՝ ով գիտաց զմիտս Տեառն, որ եւ խրատու լինիցի նմա. այլ մեք զմիտս Քրիստոսի ունիմք։

12 Բայց մենք ոչ թէ այս աշխարհքիս հոգին առինք, այլ այն Հոգին՝ որ Աստուածանից ճ է. որ ճանաչենք այն շնորհքն՝ որ Աստուածանից տրվեր մեզ,

13 Որ ատ էլ խօսումենք՝ չէ թէ մարդկանցից սովրած վարպետաբան մ խօսքերով, բայց Հոգոյ վարդապետութենովը՝ հոգեւորները հոգեւորներին հետ համեմատումենք.

14 Պատճառն որ՝ մարմնաւոր մարդըն Աստուծոյ Հոգոյ բաները յ չի ընդունում. ինչու որ՝ յիմարութիւն է նորա ն առաջին. եւ չի կարող գիտել՝ որ հոգեւոր կերպով պէտք է շ քննվի.

15 Բայց հոգեւոր մարդն ամէն բան ո քննումէ եւ ինքն ոչ մէկից էլ չի քննվում.

16 Ապա ով է որ Տէրի միտքը գիտաց, որ բան սովրեցընէ չ նորան. բայց մենք Քրիստոսի միտքն պ ունինք.

## ԳԼ. Գ

1 Եւ ես եղբարք՝ ոչ կարացի խօսել ընդ ձեզ իբրեւ ընդ հոգեւորս՝ այլ իբրեւ ընդ մարմնաւորս։

2 Իբրեւ տղայոց 'ի Քրիստոս, կաթն ջամբեցի ձեզ՝ եւ ոչ կերակուր, զի ոչ եւս կարէիք. նաեւ արդ իսկ ոչ կարէք. քանզի դեռ մարմնաւոր էք։

3 Ուր եւ արդ են իսկ 'ի ձեզ հեն եւ նախանձ. ոչ ապաքէն մարմնաւոր էք՝ եւ ըստ մարդկան գնայք։

4 Յորժամ ասէ ոք 'ի ձէնջ՝ Ես

1 Եւ ես եղբարք՝ չը կարացի ձեզ հետ խօսել ինչպէս հոգեւորների ա հետ, այլ ինչպէս մարմնաւորների բ հետ.

2 Ինչպէս տղաներին գ Քրիստոսումը՝ կաթը տուի ձեզ ուտել եւ չէ թէ դ կերակուր. ինչու որ՝ դեռ չէիք կարող, եւ իսկ հիմիկ էլ կարող ե չէք. նրահամար որ դեռ մարմնաւոր էք։

3 Որովհետեւ դեռ հիմիկ կռիւ եւ նախանձ կայ զ ձեզանում. չէ՞ որ մարմնաւոր էք՝ եւ մարդկանց կերպով էք վարվում։

4 Երբոր ձեզանից մինն ասումէ՝

ճ Հռովմ. Ը. 15.
մ Բ Պետ. Ա. 16. Գղ. Ա. 17. Համար. 4.
յ Մատթ. ԺԶ. 23
ն Գղ. Ա. 18. 23
շ Հռովմ. Ը. 5. 6. 7. Յուդ. 19.
ո Ղուկ. ԻԸ. 5. Ա Թես. Ե. 21. Ա Յովհ. Դ. 1.
չ Յոբ. ԺԵ. 8. Իմաստ. Թ. 13. Երեմ. ԻԳ. 18. Հռովմ. ԺԱ. 34.
պ Յովհ. ԺԵ. 15.

—

ա Գղ. Բ. 15.
բ Գղ. Բ. 14.
գ Եբր. Ե. 13.
դ Ա Պետ. Բ. 2.
ե Յովհ. ԺԶ. 12.
զ Գղ. Ա. 11. ԺԱ. 18. Գաղ. Ե. 20. 21. Յակ. Գ. 16.

Պօղոսեան եմ, եւ միւսն՝ թէ Ես
Ապողոսեան, ոչ մարդիկ էք. իսկ
արդ՝ ո՛վ է Պօղոս, կամ ո՛վ է Ա-
պողոսն։
5 Պաշտօնեայք՝ որովք հաւատա-
ցէքն, եւ իւրաքանչիւր որպէս եւ
Տէր ետ։
6 Ես տնկեցի, Ապողոս ջուր
ետ, այլ Աստուած աճեցոյց։

7 Այսուհետեւ՝ ոչ այն ոք ինչ է՝
որ տնկեացն, եւ ոչ այն՝ որ ջուրն
ետ. այլ որ աճեցոյցն Աստուած։
8 Որ տնկեացն եւ որ զջուրն ետ՝
մի են. բայց իւրաքանչիւրոք զիւր
վարձս առնուցու ըստ իւրում վաս-
տակոց։
9 Զի Աստուծոյ գործակից եմք,
Աստուծոյ արդիւն էք, Աստուծոյ
շինած էք։
10 Ըստ շնորհացն Աստուծոյ՝ որ
տուեալ են ինձ, իբրեւ իմաստուն
ճարտարապետ հիմն եդի. բայց
այլ է՝ որ շինէն. այլ իւրաքան-
չիւրոք զգո՛յշ լիցի՝ թէ որպէս շի-
նիցէ։
11 Զի հիմն այլ ոք ոչ կարէ
դնել քան զեդեալն՝ որ է Յիսուս
Քրիստոս։
12 Եթէ ոք շինէ ՚ի վերայ հիմանս
այսորիկ՝ ոսկի, արծաթ, ականս
պատուականս, փայտ, խոտ, եղէգն,
13 Իւրաքանչիւր գործն յայտնե-
լոց է. զի օրն ընտրեսցէ, զի հրով
յայտնելոց է։

թէ Ես Պօղոսեան եմ, եւ միւսը՝
թէ Ես ե Ապողոսեան. չէ՞ որ դուք
մարդիկ էք. ապա ո՛վ է Պօղոսը
կամ ո՛վ է Ապողոսը։
5 Պաշտօնեաներ են՝ որ նորանց
ձեռովը զ հաւատացիք. եւ ամէն
մէկին՝ ինչպէս որ Տէրը է տուաւ։
6 Ես ը տնկեցի. Ապողոսը ջուր
թ տուաւ, բայց Աստուած ժ մեծա-
ցրուց։
7 Ուրեմն ոչ՛ նա՝ որ տնկեց, մին
բան ի է. եւ ոչ՛ նա՝ որ ջուր տուաւ.
բայց Աստուած որ մեծացրուց։
8 Նա՝ որ տնկեց եւ նա՝ որ ջուր
տուաւ, մին են. բայց ամէն մէկն
իրեն վարձքը կառնէ իրեն աշխա-
տանքի լ չափովը։
9 Ինչու որ՝ մենք Աստուծոյ գոր-
ծընկեր խ ենք. դուք Աստուծոյ
գործն էք, Աստուծոյ շինուածն ծ էք։
10 Աստուծոյ շնորհքի չափովը՝ որ
ինձ տրուած կ է, իմաստուն ճար-
տարապետի պէս հիմն հ դրի. բայց
ուրիշն է՝ որ շինում է. միայն թէ
ամէն մէկը լաւ մտիկ տայ՝ թէ ինչ-
պէս ձ շինէ.
11 Ինչու որ՝ ոչ ով ուրիշ հիմունք
չը կարող դնել՝ քան թէ նա որ դրը-
ուած ղ է, որ է Յիսուս ճ Քրիստոսը։
12 Թէ որ մէկն այս հիմունքիս վե-
րայ շինէ ոսկի, արծաթ, ազնիւ
ականներ, փայտ, խոտ, եղէգ,
13 Ամէն մէկի գործը մ պիտի
մ յայտնուի. ինչու որ՝ օրը յ կերեւ-
ցնէ. ինչու որ՝ կրակով պիտի
ն յայտնուի։

ե Գլ. Ա. 12.
զ Գլ. Դ. 1. Բ Կորնթ. Գ. 3.
է Հռովմ. ԺԲ. 3, 6. Ա Պետ. Դ. 11.
ը Գործ. ԺԸ. 4. 8. 11. Գլ. Դ. 15. Թ. 1. ԺԵ. 1. Բ Կորնթ. Ժ. 14, 15.
թ Գործ. ԺԸ. 24. 27. ԺԹ. 1.
ժ Գլ. Ա. 30. ԺԵ. 10. Բ Կորնթ. Գ. 5.
ի Բ Կորնթ. ԺԲ. 11. Գաղ. Զ. 3.
լ Սաղ. ԿԲ. 12. Հռովմ. Բ. 6. Գլ. Դ. 5. Գաղ. Զ. 4, 5. Յայտ. Բ. 23. ԻԲ. 12.
խ Գործ. ԺԵ. 4. Բ Կորնթ. Զ. 1.
ծ Եփես. Բ. 20. Կող. Բ. 7. Եբր. Գ. 3, 4. Ա Պետ. Բ. 5.
կ Հռովմ. Ա. 5. ԺԲ. 3.
հ Հռովմ. ԺԵ. 20. Գլ. Դ. 15. Յայտ. ԻԱ. 14.
ձ Ա Պետ. Դ. 11.
ղ Եսայ. ԻԸ. 16. Մատթ. ԺԶ. 18. Բ Կորնթ. ԺԱ. 4. Գաղ. Ա. 7.
ճ Եփես. Բ. 20.
մ Գլ. Դ. 5.
յ Ա Պետ. Ա. 7. Դ. 12.
ն Ղուկ. Բ. 35.

14 Եւ զիւրաքանչիւր գործն զի-
նչ եւ իցէ՝ հուրն փորձեսցէ։
15 Եթէ ուրուք գործն՝ զոր շինե-
աց, կացցէ, վարձս առցէ. եւ
եթէ ուրուք գործն այրեսցի՝ տու-
ժեսցի, բայց ինքն կեցցէ. այլ այն-
պէս՝ որպէս թէ 'ի հուր։
16 Ո՛չ գիտէք՝ եթէ տաճար էք
Աստուծոյ՝ եւ Հոգի Աստուծոյ բը-
նակեալ է ձեզ։
17 Եթէ ոք զտաճար Աստուծոյ
ապականէ, ապականեսցէ զնա Աստ-
ուած. զի տաճար Աստուծոյ սուրբ
է, որ էք դուք։
18 Մի՛ ոք զանձն խաբեսցէ. եթէ
ոք կամիցի 'ի ձէնջ իմաստուն լի-
նել յաշխարհիս յայսմիկ, յիմար
լիցի՝ զի եղիցի իմաստուն։

19 Զի իմաստութիւն աշխարհիս
այսորիկ՝ յիմարութիւն է առաջի
Աստուծոյ. քանզի գրեալ է՝ թէ
Որ ըմբռնէ զիմաստունս 'ի խորա-
գիտութեան իւրեանց։
20 Եւ դարձեալ՝ թէ Տէր ճանա-
չէ զխորհուրդս իմաստնոց՝ զի են
ընդունայն։
21 Այսուհետեւ մի՛ ոք պարծեսցի
'ի մարդկանէ։
22 Զի ամենայն ինչ ձեր է. ե-
թէ Պօղոս, եթէ Ապողոս, եթէ
Կեփաս, եթէ աշխարհ, եթէ կեանք,
եթէ մահ, եթէ որ կան, եթէ հան-
դերձեալքն. ամենայն ինչ ձեր է։
23 Դուք Քրիստոսի, Քրիստոս Աս-
տուծոյ։

14 Եւ ամէն մէկի գործքը թէ ինչ-
պէս է՝ կրակը կը փորձէ։
15 Թէ որ մէկի գործքը՝ որ շինեց,
հաստատ կենայ՝ վարձք ձ կառնէ.
եւ թէ որ մէկի գործքն այրվի՝ վնաս
կը քաշէ, բայց ինքն կապրի. բայց
այնպէս՝ ինչպէս որ ղ կրակով։
16 Չէ՞ք գիտում՝ որ դուք Աստու-
ծոյ տաճար էք, եւ Աստուծոյ Հո-
գին բնակված է ճ ձեզանում։
17 Թէ որ մինը Աստուծոյ տաճա-
րըն ապականէ, նորան էլ Աստուած
կապականէ. ինչու որ՝ Աստուծոյ
տաճարը սուրբ է՝ որ նա դուք էք։
18 Չը լինի որ մինն իրեն անձը
խաբէ. թէ որ ձեզանից մինը կա-
մենայ իմաստուն լինել այս աշխարհ-
քումս, թող նա յիմար լինի՝ որ ի-
մաստուն մ լինի.
19 Պատճառն որ՝ այս աշխարհքիս
իմաստութիւնը յիմարութիւն է Աս-
տուծոյ յ առաջին. ինչու որ՝ գըր-
ված է՝ ն Իմաստուններին կը բռնէ
իրենց խորագիտութեան մէջ։
20 Եւ դարձեալ թէ Տէրը ճանա-
չում է իմաստուններին մտածմունք-
ները, որ ունայն շ են։
21 Ուրեմն՝ չը լինի որ մարդկան-
ցից մինը ո պարծենայ.
22 Պատճառն որ՝ ամէն բան ձերն
է. թէ Պօղոս, թէ Ապողոս, թէ Կե-
փաս, թէ աշխարհք, թէ կեանք, թէ
մահ, թէ հիմիկլինող եւ թէ նոր գա-
լու բաները. ամէն բան ձերն չ է,
23 Դուք Քրիստոսին եւ Քրիստո-
սըն պ Աստուծոյն։

## ԳԼ. Դ

1 Այսպէս համարեսցին զմեզ
մարդիկ, իբրեւ զպաշտօնեայս Քրի-

1 Թող մարդիկ այսպէս համարեն
մեզ՝ ինչպէս Քրիստոսի ջ պաշտօն-

ձ Գղ. Գ. 5.
ղ Յուդ. 23.
ճ Գղ. Զ. 19. Բ Կորնթ. Զ. 16. Եփես. Բ. 21. 22. Եբր. Գ. 6. Ա Պետ. Բ. 5.
մ Առակ. Ե. 7. Եսայ. Ե. 21.
յ Գղ. Ա. 20. Բ. 6.
ն Յոբ. Ե. 13.
շ Սաղ. ՂԴ. 11
ո Գղ. Ա. 12. Դ. 6. Համր. 4. 5, 6.
չ Բ Կորնթ. Դ. 5. 15.
պ Հռոմ. ԺԴ. 8. Գղ. ԺԱ. 3. Բ Կորնթ. Ժ. 7. Գաղ. Գ. 29.

—

ջ Մատթ. ԻԴ. 45. Գղ. Գ. 5. Թ. 17. Բ Կորնթ. Զ. 4. Կող. Ա. 25.

րիստոսի՝ եւ հազարապետս խորհըր-
դոցն Աստուծոյ ։
2 Այդ՝ խնդիր է 'ի մէջ հազա-
րապետաց՝ եթէ որ հաւատարիմ
գտցի ։
3 Այլ ինձ եւ այս անարգանք
են , եթէ 'ի ձէնջ դատեցայց՝ կամ
բնաւ իսկ 'ի մարդկանէ . նաեւ զան-
ձըն իմ ոչ քննեմ ։
4 Զի ոչինչ գիտեմ զանձին ի-
մոյ . այլ ոչ եթէ այնու արդարա-
նամ, զի որ քննէն զիս՝ Տէր է ։
5 Այսուհետեւ մի յառաջ քան զը
ժամանակն դատիք . մինչեւ եկեսցէ
Տէր , որ լուսաւոր արասցէ զգաղտ-
նիս խաւարի , եւ յայտնեսցէ զխոր-
հուրդս սրտից . եւ ապա իւրաքան-
չիւր գովութիւն եղիցի յԱստուծոյ ։
6 Զայս եղբարք՝ առակեցի յան-
ձըն իմ եւ յԱպողոս վասն ձեր . զի
'ի մէնջ ուսջիք՝ մի ինչ առաւել
քան զգրեալսն խմանալ . զի մի այր
քան զընկեր հպարտանայցէք 'ի վե-
րայ ընկերին ։
7 Իսկ արդ ո՞վ է՝ որ քննիցէ զը
քեզ . զինչ ունիս՝ զոր ոչ իցէ
առեալ . եւ եթէ առեր՝ զի պարծիս
իբրեւ զչառեալ ։
8 Արդէն իսկ յագեալ իցէք՝ եւ
արդէն մեծացարուք , առանց մեր
թագաւորեցէք . եւ երանի թէ թա-
գաւորէիք՝ զի եւ մեք ընդ ձեզ թա-
գաւորէաք ։
9 Ինձ այսպէս թուի՝ եթէ զմեզ
զառաքեալս յետինս արար Աստ-
ուած՝ իբրեւ զմահապարտս . զի տե-

ծառաները եւ Աստուծոյ խորհուրդ-
ներուն [բ] տնտեսները ։
2 Հիմիկ տնտեսներուն մէջն ալ. նա
են խնդրում՝ որ մէկը հաւատարիմ
գտնուի ։
3 Բայց ինձ համար շատ էլ հեշտ
բան է՝ որ ձեզանից դատուիմ՝ կամ
ոչ մին մարդուց . ես էլ չեմ քըն-
նում իմ անձս ,
4 Ինչու որ՝ իմ անձիս համար բան
չեմ գիտում . բայց ոչ թէ սրանով
[գ] արդարանում եմ . պատճառն որ՝
նա՝ որ ինձ քննում է , Տէրն է ։
5 Սորահամար՝ ժամանակիցն ա-
ռաջ մի [դ] դատէք . մինչեւ որ Տէրը
կը գայ՝ որ խաւարի ծածուկ բանե-
րը լուսոյ մէջ կը բերէ, եւ սրտերի
խորհուրդները [ե] կը յայտնէ . եւ ա-
պա ամէն մէկին գովասանք կը լի-
նի [զ] Աստուածանից ։
6 Այս բանը եղբարք՝ իմ ան-
ձիս եւ Ապողոսին վերայ առակով
ասացի՝ ձեզ [է] համար . որ մեզանից
սովորիք գրուածքիցն աւելի բան
[ը] չխմանալ . որ չը լինի թէ մարդ
ընկերի վերայ հպարտանայ ընկերի
[թ] պատճառովը ։
7 Ապա ով է՝ որ քեզ կը քննէ .
ինչ ունիս դու՝ որ նա չես [ժ] առել .
եւ թէ որ առել ես՝ ինչու ես պար-
ծենում չառածի պէս ։
8 Իսկ հիմիկ կըշտացել էք՝ եւ իսկ
հիմիկ [ժ] հարստացաք , առանց մեզ
թագաւորեցիք . եւ երանի թէ թա-
գաւորէիք , որ մենք էլ ձեզ հետ
թագաւորէինք ։
9 Ինձ այսպէս է երեւում՝ թէ
Աստուած մեզ առաքեալներիս շատ
յետին արաւ՝ մահապարտների պէս.

բ Ղու. ԺԲ. 42 ։ Տիտ. Ա. 7 ։ Ա Պետ. Դ. 10 ։
գ Յոբ. Ի. 2 ։ Սաղ. ՃԼ. 3 ։ ՃԽԳ. 2 ։ Առակ. ԻԱ. 2 ։ Հռովմ. Գ. 20 ։ Դ. 2 ։
դ Մատթ. Է. 1 ։ Հռովմ. Բ. 1. 16 ։ ԺԴ. 4. 10. 13 ։ Յայտ. Ի. 12 ։
ե Գլ. Գ. 13 ։
զ Հռովմ. Բ. 29 ։ Բ Կորնթ. Ե. 10 ։
է Գլ. Ա. 12 ։ Գ. 4 ։
ը Հռովմ. ԺԲ. 3 ։ Բ Գլ. Գ. 21 ։ Ե. 2. 6 ։
թ Յովհ. Գ. 27 ։ Յակ. Ա. 17 ։ Ա Պետ. Դ. 10 ։
ժ Յայտ. Գ. 17 ։
ի Սաղ. ԽԳ. 22 ։ Հռովմ. Ը. 36 ։ Գլ. ԺԵ. 30, 31 ։ Բ Կորնթ. Դ. 11 ։ Զ. 9 ։

սիլ եղեաք աշխարհի, եւ հրեշտա-
կաց եւ մարդկան ։

10 Մեք յիմարք վասն Քրիստոսի,
եւ դուք իմաստունք ՚ի Քրիստոս.
մեք տկարք՝ եւ դուք հզօրք.
դուք փառաւորեալք՝ եւ մեք անար-
գըք ։
11 Մինչեւ ցայսօր ժամանակի՝ եւ
քաղցեաք եւ ծարաւեցաք եւ մերկ
գնացաք եւ կափահարեցաք եւ ան-
հանգիստ եղեաք ։

12 Եւ աշխատեցաք ձեռօք մե-
րովք. բամբասէին զմեզ՝ օրհնէաք.
հալածէին՝ յանձն առնուաք ։

13 Հայհոյէին՝ աղաչէաք. իբրեւ
աստակնշաւակի եղեաք ամենայն աշ-
խարհի. ամենեցուն փարելի լինել
մինչեւ ցայժմ ։

14 Ո՛չ եթէ ամօթ ինչ առնելով
զձեզ՝ գրեմ զայս, այլ իբրեւ զոր-
դիս սիրելիս խրատեմ ։
15 Թէպէտ եւ բիւր զաստիարակս
ունիցիք ՚ի Քրիստոս՝ այլ ոչ եթէ
բազում հարս. զի ՚ի Քրիստոս Յի-
սուս աւետարանաւն ես ծնայ զձեզ ։

16 Արդ՝ աղաչեմ զձեզ նմանօղք
ինձ եղիջիք՝ որպէս եւ ես Քրիս-
տոսի ։
17 Վասն այնորիկ առաքեցի առ
ձեզ զՏիմոթէոս, որ է իմ որդի

ինչու որ աշխարհքի տեսարան է-
ղանք, հրեշտակաց էլ՝ մարդկանց
ե էլ ։
10 զ Մենք յիմար Քրիստոսի է հա-
մար, եւ դուք՝ իմաստուն Քրիստո-
սումը. մենք տկար՝ եւ դուք ը զօ-
րաւոր. դուք փառաւորված եւ մենք
անարգված ։
11 Մինչեւ այս օրուան ժամանակս
սովեցինք եւ թ ծարաւեցինք, եւ
մերկ ժ գնացինք եւ գլխներս ի զարկ-
վեցաւ եւ հանգստութիւն չը գը-
տինք ։
12 Եւ աշխատեցինք մեր լ ձեռ-
ներովս. բամբասումէին մեզ՝ եւ
մենք օրհնումէինք, հալածումէին՝
եւ մենք սիրով խ համբերումէինք
13 Հայհոյումէին՝ եւ մենք աղա-
չանք էինք անում. ինչպէս խայ-
տառակութեան օրինակ էղանք ա-
մէն աշխարհքին՝ մինչեւ հիմիկ ջնջ-
ջոց լինելով ամէն մարդկանց ծ ա-
ռաջին ։
14 Չէ թէ ձեզ ամօթ անելոյ հա-
մար եմ սա գրում. բայց ինչպէս
իմ սիրելի որդիքներս կ խրատումեմ ։
15 Թէ եւ հազարաւոր վարդա-
պետներ ունենաք Քրիստոսումը՝
բայց ոչ թէ շատ հարք. ինչու որ
Յիսուս Քրիստոսումն ես ծնայ ձեզ
հ աւետարանովը ։
16 Ուրեմն աղաչումեմ ձեզ՝ որ
ինձ նմանող լինիք, ինչպէս որ ես
էլ ձ Քրիստոսի ։
17 Նրահամար Տիմոթէոսին ու-
ղարկեցի ձեզ ղ մօտ, որ իմ սիրելի

ե Եբր. Ժ. 33.
զ Գլ. Թ. 3.
է Գործ. ԺԷ. 18. ԻԶ. 24. Գլ. Ա. 18. Ա. Բ. 14. Գ. 18. Դ Թագ. Թ. 11.
ը Բ Կորնթ. ԺԳ. 9.
թ Բ Կորնթ. Դ. 8. ԺԱ. 23-27. Փիլիպ. Դ. 12.
ժ Եսայ. ԻԲ. 6. Հռովմ. Ը. 35.
ի Գործ. ԺԴ. 18. ԻԳ. 2.
լ Գործ. ԺԸ. 3. Ի. 34. Ա Թես. Բ. 9. Բ Թես. Գ. 8. Ա Տիմ. Դ. 10.
խ Մատթ. Ե. 44. Ղուկ. Զ. 28. ԻԳ. 34. Գործ. Է. 59. Հռովմ. ԺԲ. 14. 20. Ա Պետ. Բ. 23. Գ. 9.
ծ Ողբ. Գ. 45.
կ Ա Թես. Բ. 11.
հ Գործ. ԺԸ. 11. Հռովմ. ԺԵ. 20. Գլ. Գ. 6. Գաղ. Դ. 19. Փիլիմ. 10. Յակ. Ա. 18.
ձ Գլ. ԺԱ. 1. Փիլիպ. Գ. 17. Ա Թես. Ա. 6. Բ Թես. Գ. 9.
ղ Գործ. ԺԹ. 22. Գլ. ԺԶ. 10. Փիլիպ. Բ. 19. Ա Թես. Գ. 2.

սիրելի՝ եւ հաւատարիմ ՚ի Տէր . որ
յիշեցուսցէ ձեզ զճանապարհս իմ,
որ ՚ի Քրիստոս Յիսուս . որպէս եւ
ամենայն ուրեք՝ յամենայն եկեղե-
ցիս ուսուցանեմ ։
18 Որպէս թէ ես չիցեմ գալոց
առ ձեզ՝ ոմանք հպարտացան ։
19 Այլ եկից հուպ ընդ հուպ՝ ե-
թէ Տէր կամեսցի . եւ ՚ի միտ առից
ոչ զբանս հպարտացելոցն , այլ զզ-
օրութիւն ։
20 Զի ոչ եթէ բանիւք է արքա-
յութիւն Աստուծոյ , այլ զօրու-
թեամբ ։
21 Արդ՝ որպէս կամիք՝ գաւազա-
նաւ եկից առ ձեզ , եթէ սիրով
հոգւոյն՝ հեզութեան եւ արդարու-
թեան եւ խոնարհութեան ։

եւ հաւատարիմ որդիս է Լ Տէրով .
որ ձեր մտքներդ բերէ իմ ճամբա-
պարհներս՝ որ Յիսուս Քրիստոսումն
— են . ինչպէս որ ամեն տեղ ամեն
- եկեղեցիներումը Հ սովորցնում եմ ։
18 Մէկ քանիսն ամբարտաւանու-
թենով պարծենումեն՝ իբր թէ ես
չը պիտի գամ ձեզ = մօտ ։
19 Բայց կը գամ այս մօտիկ ր ժա-
մանակներումս՝ թէ որ Տէրն ջ կա-
մենայ . եւ միտքս կանեմ՝ ոչ թէ
գոռոզացածներին խօսքերը՝ բայց
զօրութիւնը ․
20 Ինչու որ՝ Աստուծոյ արքայու-
թիւնն ոչ թէ խօսքերով է՝ բայց
- զօրութենով ։
21 Ապա ինչպէս էք կամենում,
գաւազանով գամ ձեզ ‡ մօտ , թէ
սիրով եւ հեզութեան ու արդա-
րութեան ու խոնարհութեան հո-
գովը ։

## ԳԼ . Ե

1 Բնաւ եւ անուանի իսկ ՚ի ձեզ
ընդէր պոռնկութիւն , եւ այնպիսի
պոռնկութիւն՝ որ ոչ եւ ՚ի հեթա-
նոսս , որպէս թէ զկին հօր իւրոյ
ունել ։
2 Եւ դուք հպարտացեալ էք . եւ
ոչ առաւել սգացարուք , զի բարձցի
՚ի միջոյ ձերմէ՝ որ զգործն զայն
գործեաց ։
3 Զի ես թէպէտ մարմնով մե-
կուսի եմ , սակայն հոգւով մերձ
եմ . բայց արդէն իսկ իբրեւ ՚ի մօ-
տոյ ընդարկեցի զայն՝ որ այնպէսն
գործեաց ։
4 Յանուն Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի , ժողովել ձեզ ՚ի միասին

1 Եւ ձեր միջումդ ինչպէս է
պոռնկութիւն բնաւ անուանելում,
եւ այնպէսի պոռնկութիւն՝ որ հե-
թանոսներին մէջ էլ — չըկայ , այն-
պէս որ մէկն իւրեն հօր Բ կնկան ‡ ու-
նենայ ։
2 Եւ դուք գոռոզացած ╤ էք՝ եւ
աւելի սուգ չէք Ի մնում՝ որ ձեր
միջիցը վեր առնըլլի նա՝ որ այն
բանը գործեց ։
3 Ես թէ եւ մարմնովս հեռու եմ,
բայց հոգովս մօտիկ ւ եմ . եւ սրա-
համար իսկ հիմիկ մօտ լինողի պէս
վըճռեցի՝ որ նորան՝ որ այնպէսի
բան գործեց ․
4 Մեր Տէր Յիսուսի Քրիստոսի
անունովը՝ ձեր եւ իմ հոգոյս մէկ

Լ Ա Տիմ . Ա . 2 . Բ Տիմ . Ա . 2 . — Գլ . ԺԱ . 2 . - Գլ . ԺԴ . 33 . Հ Գլ . Ե . 17 . = Գլ . Ե . 2 . ր Գործ . ԺԹ . 21 Գլ . ԺԶ . 5 . Բ Կորնթ . Ա . 15 . 23 . ջ Գործ . ԺԸ . 21 . Հռովմ . ԺԵ . 32 . Եբր . Զ . 3 . Յակ . Դ . 15 . - Գլ . Բ . 4 . Ա Թես . Ա . 5 . ‡ Բ Կորնթ . Ժ . 2 . ԺԳ . 10 . — Եփես . Ե . 3 . Բ Ղև . ԺԸ . 8 . Բ Օրին . ԻԲ . 30 . ԻԷ . 20 . ‡ Բ Կորնթ . Է . 12 . ╤ Գլ . Դ . 18 . Ի Բ Կորնթ . Է . 7 . 10 . ւ Կող . Բ . 5 .

եւ իմով հոգւովս՝ զօրութեամբն հանդերձ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

5 Մատնել զայնպիսին Սատանայի ՚ի սատակումն մարմնոյ. զի ոգին ապրեսցի յաւուրն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

6 Ո՛չ բարւոք են պարծանքդ ձեր. ո՛չ գիտէք՝ եթէ փոքր մի խմոր զամենայն զանգուածն խմորէ։

7 Սրբեցէք ՚ի բաց զհին զխմորն՝ զի եղիջիք նոր զանգուած, որպէս էքդ անխմորք. քանզի զատիկ մեր զենաւ Քրիստոս։

8 Այսուհետեւ արասցուք տօնս. մի ՚ի խմորն հին, եւ մի ՚ի խմորն չարութեան եւ անզգամութեան. այլ յանխմորս սրբութեան եւ ճշմարտութեան։

9 Գրեցի ձեզ ՚ի թղթի անդր չխառնակել ընդ պոռնիկս։

10 Եւ ոչ եթէ ընդ պոռնիկս աշխարհիս այսորիկ՝ կամ ընդ ագահս եւ ընդ յափշտակօղս՝ կամ ընդ կռապաշտս. ապա թէ ո՛չ՝ պարտ էիք եւ յաշխարհէ իսկ ելանել։

11 Բայց արդ՝ գրեցի ձեզ չխառնակել. եթէ ոք եղբայր անուանեալ, կամ պոռնիկ իցէ կամ կռապաշտ՝ կամ ագահ՝ կամ բամբասօղ՝ կամ արբեցօղ՝ կամ յափշտակօղ, ընդ այնպիսւոյն եւ հաց մի ուտել։

12 Զի՞ կայ իմ եւ զարտաքինսն

տեղ ժողովվելոյ ժամանակումը՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի զօրութեան ե հետ,

5 Այնպիսին զ մատնեմ Սատանայի թ ձեռքն՝ որ մարմինը սատկի, որ հոգին ապրի մեր Տէր Յիսուսի Քրիստոսի օրումը։

6 Ձեր պարծանքը լաւ ժ չէ. չէ՞ք գիտում՝ որ մին փոքր խմոր ամէն շաղաղվածը ի խմորայնումէ։

7 Դէն ձգեցէք հին խմորքն՝ որ նոր շաղաղված լինիք. ինչպէս որ դուք չըխմորված էք, պատճառն որ Քրիստոս մեզ լ համար զատիկ խ մորթվեցաւ։

8 Ուստի համար տօն ծ կատարենք. ոչ թէ հին կ խմորով, եւ ոչ թէ չարութեան եւ չարագործութեան հ խմորովը, բայց արդարութեան եւ ճշմարտութեան չըխմորվածովը։

9 Գրեցի ձեզ այդ թղթումդ՝ որ չըխառնվիլիք պոռնիկներին ձ հետ։

10 Եւ նա՝ ոչ թէ այս ղ աշխարհքիս պոռնիկներին հետ, կամ ագահներին հետ, կամ յափշտակօղներին հետ, կամ կռապաշտներին ճ հետ. ապա թէ չէ՝ պէտք էր ձեզ՝ որ հենց աշխարհքիցս դուրս մ գնայիք։

11 Բայց հիմիկ գրեցի ձեզ՝ որ չըխառնվիլիք. թէ որ մինն՝ որ եղբայր է յ անուանուած, կամ պոռնիկ լինի, կամ ագահ, կամ բամբասօղ կամ հարբեցօղ կամ յափշտակօղ, այնպիսոյն հետ հաց էլ մի ն ուտէք։

12 Ինձ ինչ պէտք է՝ որ դրսին-

ե Մատթ. ԺԶ. 19. ԺԸ. 18. Յովհ. Ի. 23. Բ Կորնթ. Բ. 10. ԺԳ. 3. 10.
զ Յոբ. Բ. 6. Սաղ. ՃԹ. 6. Ա Տիմ. Ա. 20.
թ Գործ. ԻԶ. 18.
ժ Հռոմ. 2. Գղ. Գ. 21. Դ. 19. Յովհ. Դ. 16.
ի Գղ. ԺԵ. 33. Գաղ. Ե. 9. Բ Տիմ. Բ. 17.
լ Եսայ. ԾԳ. 7 Յովհ. Ա. 29. Գղ. ԺԵ. 3. Ա Պետ. Ա. 19. Յայտ. Ե. 6. 12.
խ Յովհ. ԺԹ. 14.
ծ Ելից. ԺԲ. 15. ԺԳ. 6.
կ Բ Օրին. ԺԶ. 3.
հ Մատթ. ԺԶ. 6 12. Մարկ. Ը. 15. Ղուկ. ԺԲ. 1.
ձ Հռոմ. 2. 7. Կորնթ. Զ. 14. Եփես. Ե. 11.
ղ Գղ. Ա. 20.
ճ Գղ. Զ. 27.
մ Յովհ. ԺԷ. 15. Ա Յովհ. Ե. 19.
յ Մատթ. ԺԸ. 17. Հռոմ. ԺԶ. 17. Բ Թես. Գ. 6. 14. Բ Յովհ. 10.
ն Գաղ. Բ. 12.

դատելոյ. ոչ ապաքէն դուք զներ-
քինսն դատիցիք։
13 Եւ զարտաքինսն Աստուած դա-
տեսցի. բարձէք զչարն ՚ի միջոյ
ձերմէ։

ները ւ դատեմ. չէ՞ որ դուք ներսի-
ները պիտի փ դատէք։
13 Եւ դուրսիններն Աստուած կը-
դատէ. ք չարը ձեր միջէնը վէր
առէք։

## Գլ. Զ

1 Իշխէ՞ ոք ՚ի ձէնջ՝ եթէ իրք
ինչ իցեն ընդ ընկերի իւրում, դա-
տել առաջի անիրաւաց՝ և ոչ առա-
ջի սրբոց։

1 Ձեզմէ մէկը՝ թէ որ բան
ունենայ ընկերին հետ, համարձակ-
վի՞մէ՝ որ անիրաւների առջին
դատաստան անէ և ոչ թէ սրբե-
րի առջին։

2 Եթէ ոչ գիտէք՝ զի սուրբք
զաշխարհ դատին. և եթէ ձեօք
դատի աշխարհ՝ ապա ոչ էք արժա-
նի՞ անարգ ատենից։

2 Կամ թէ չէ՞ք գիտում՝ որ սուր-
բերն աշխարհքըս ա կը դատեն. և
թէ որ ձեզմով աշխարհքը կը դատ-
ուի՝ ապա չէ՞ք արժան՝ որ ցած բա-
ների վրայ դատաստան անէք։

3 Ո՞չ գիտէք եթէ զհրեշտակս
դատիմք, թո՛ղ թէ զերկրաւորս։

3 Չէ՞ք գիտում որ մենք հրեշ-
տակները բ կը դատենք. էլ ո՞րքան
աւելի երկրաւոր բաները։

4 Զերկրաւոր ատեանս եթէ յան-
ձին առնուցուք, զանարգան եկեղե-
ցւոյ դատաւորս նստուցէք։

4 Երկրաւոր բաների համար թէ
որ դատաստան ունիք՝ եկեղեցայ
ցած մարդկանցը ձեզ համար դա-
տաւոր գ նստացրէք։

5 Առ ամօթոյ ձերոյ ասեմ. այն-
չափ ոչ գոյ ոք իմաստուն ՚ի ձեզ,
որ կարիցէ իրաւունս ընտրել ՚ի մէջ
եղբօր իւրոյ։

5 Ձեր ամօթին համար եմ ասում.
էլ այնքան մին իմաստուն մարդ չը
կա՞յ ձեր միջումը՝ որ կարող լինի
իրաւունք անել իրեն եղբայրների
մէջ։

6 Այլ եղբայր ընդ եղբօր դատի,
և զայն՝ ՚ի մէջ անհաւատից։

6 Բայց եղբայր եղբօր հետ դա-
տաստան է գնում. և նա էլ ան-
հաւատների մէջ։

7 Եւ արդ՝ ամենևին իսկ վա-
թարութիւն է ՚ի ձեզ, զի դատաս-
տանք իսկ գոն ՚ի միջի ձերում. ըն-
դէ՞ր ոչ դուք զրկիք, և ոչ դուք
առաւել նեղիք։

7 Եւ հիմիկ՝ հենց իսպառ վատ-
բան է՝ որ ձեր միջումը դատաս-
տան և կռիւ կայ. ինչո՞ւ դուք չէք
զրկուում. և աւելի չէք դուք նեղը
դ մնանում։

8 Այլ դուք զրկէք և նեղէք, և
այդ՝ զեղբարս ևս։

8 Բայց դուք զրկում էք և նե-
ղացնում էք՝ և նա էլ ձեր ե եղ-
բայրներին։

ւ Մարկ. Դ. 11. Կող. Դ. 5. Ա Թես. Դ. 11. Ա Տիմ. Գ. 7.
փ Գլ. Զ. 1—4.
ք Բ Օրին. ԺԳ. 5. ԺԷ. 7. ԻԱ. 21. ԻԲ. 21, 22. 24.
—
ա Սաղ. ԽԹ. 14. Դան. Է. 22. Մատթ. ԺԹ. 28. Ղուկ. ԻԲ. 30. Յայտ. Բ. 26. Գ. 21. Ի. 4.
բ Բ Պետ. Բ. 4. Յուդ. 6.
գ Գլ. Ե. 12.
դ Առակ. Ի. 22. Մատթ. Ե. 39. 40. Ղուկ. Զ. 29. Հռովմ. ԺԲ. 17. 19. Ա Թես. Ե. 15.
ե Ա Թես. Դ. 6.

9 Եթէ ո՞չ գիտէք՝ զի անիրաւք զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն. մի՛ խաբիք՝ ոչ պոռնիկք, ոչ կռապաշտք, ոչ շունք,

10 Ո՛չ խաղացեալք, ոչ արուագէտք, ոչ գողք, ոչ ագահք, ոչ արբեցողք, ոչ բամբասողք եւ ոչ յափշտակողք՝ զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն:

11 Եւ դուք այսպիսի ոմանք էիք. այլ լուացարուք՝ այլ սրբեցարուք՝ այլ արդարացարուք յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ ՚ի Հոգին Աստուծոյ մերոյ:

12 Ամենայն ինչ ինձ մարթ է՝ այլ ոչ ամենայն ինչ օգուտ է. ամենայն ինչ ինձ մարթ է, այլ ոչ եթէ ես ընդ իշխանութեամբ ուրուք լինիցիմ:

13 Կերակուր՝ որովայնի, եւ որովայն կերակրոյ. այլ Աստուած ըզ սա եւ զնոսա խափանեսցէ. բայց մարմին ոչ պոռնկութեան՝ այլ Տեառն, եւ Տէր մարմնոյ:

14 Այլ Աստուած՝ որ եւ զՏէրն յարոյց եւ զձեզ յարուսցէ զօրութեամբ իւրով:

15 Ո՞չ գիտէք՝ եթէ մարմինք ձեր անդամք են Քրիստոսի. արդ՝ առեալ զանդամս Քրիստոսի, առնիցեմ անդամս պոռնկի. քաւ լիցի:

16 Եթէ ո՞չ գիտէք՝ զի որ մերձենայ ՚ի պոռնիկ՝ մի մարմին է. Եղիցին, ասէ, երկոքին ՚ի մարմին մի:

9 Կամ թէ չէ՞ք գիտում՝ որ անիրաւներին Աստուծոյ արքայութիւնը չեն ժառանգիլ. մի՛ խաբուիք. ոչ պոռնիկները, ոչ կռապաշտները, ոչ շնացողները,

10 Ո՛չ իգի տեղ անցնողները, ոչ արուագէտները, ոչ գողերը, ոչ բամբասողները, եւ ոչ յափշտակողները՝ Աստուծոյ արքայութիւնը չեն ղ ժառանգիլ:

11 Եւ դուք մէկ քանիներդ այնպիսիներ ե էիք. բայց լուացուեցաք՝ բայց սրբուեցաք՝ բայց արդարացաք մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անունովը եւ մեր Աստուծոյ ը Հոգւովը:

12 Ամէն բան կարելի է ինծի, բայց ամէն բան օգուտ չէ. ամէն բան կարելի է ինծի, բայց չը լինի որ ես մէկ բանի իշխանութեան տակը թ լինիմ:

13 Կերակուրը փորին համար, եւ փորը կերակուրին ժ համար. բայց Աստուած սրան եւ նրան կը խափանէ. միայն թէ՝ մարմինը պոռնկութեան համար չէ, բայց Տէրին ի համար. եւ Տէրը մարմնոյն լ համար:

14 Բայց Աստուած՝ որ մեր Տէրն խ յարոյց, ձեզ էլ կը յարուցանէ իրեն ծ զօրութեամբը:

15 Չէ՞ք գիտում՝ որ ձեր մարմինները Քրիստոսի անդամներ կ են. ապա Քրիստոսի անդամներին առնենք եւ պոռնիկի անդամ շինենք. քաւ լիցի:

16 Կամ թէ չէ՞ք գիտում՝ որ նա՝ որ պոռնիկին մօտենում է, մին մարմին է [illegible]. Երկուսն՝ ասում է, մին մարմին հ կը լինին:

ղ Գլ. ԺԵ. 50. Գաղ. Ե. 21. Եփես. Ե. 5. Ա Տիմ. Ա. 9. Եբր. ԺԲ. 14. ԺԳ. 4. Յայտ. ԻԲ. 15.

ե Գլ. ԺԲ. 2. Եփես. Բ. 2. Գ. 22. Ե. 8. Կող. Գ. 7. Տիտ. Գ. 3.

ը Գլ. Ա. 3. Եբր. Ժ. 22.

թ Գլ. Ժ. 23.

ժ Մատթ. ԺԵ. 17. Հռովմ. ԺԴ. 17. Կող. Բ. 22, 23.

ի Համար. 15. 19. 20. Ա Թես. Դ. 3. 7.

լ Եփես. Ե. 23.

խ Հռովմ. Զ. 5. 8. Ը. 11. Բ Կորնթ. Դ. 14.

ծ Եփես. Ա. 19, 20.

կ Հռովմ. ԺԲ. 5. Գլ. ԺԲ. 27. Եփես. Դ. 12. 15. 16. Ե. 30.

հ Ծննդ. Բ. 24. Մատթ. ԺԹ. 5. Եփես. Ե. 31.

17 Եւ որ մերձենայ ՚ի Տէր՝ մի հոգի է։

18 Փախերուք ՚ի պոռնկութենէ. զամենայն մեղս՝ զոր եւ գործէ մարդ՝ արտաքոյ մարմնոյ իւրոյ է. իսկ որ պոռնկի՝ յիւր մարմին մեղանչէ։

19 Եթէ ոչ գիտէք՝ զի մարմինք ձեր տաճար են Հոգւոյն Սրբոյ՝ որ է ՚ի ձեզ՝ զոր ունիք յԱստուծոյ. եւ չէք անձանց տէր։

20 Քանզի գնոց գնեցայք. փառաւոր արարէք զԱստուած ՚ի մարմինս ձեր եւ յոգիս, որ է յԱստուծոյ։

17 Եւ նա՝ որ Տէրին մօտենում է՝ մին հոգի է ձ նորա հետ։

18 Փախէք ղ պոռնկութիւնից. ամէն մեղք ինչ որ մարդ գործում է, իրեն մարմնիցը դուրս է. բայց նա՝ որ պոռնկութիւն է անում, իրեն մարմնոյն դէմ է ճ մեղանչում։

19 Կամ թէ չէք գիտում, որ ձեր մարմինները Սուրբ Հոգոյ տաճար են՝ որ ձեզանում է, որ նորան Աստուածանից մ ունիք. եւ ձեր անձին տէր յ չէք։

20 Պատճառն որ՝ մեծ գին տալով ն գնվեցաք. էլ փառք տուէք Աստուծոյն ձեր մարմնումը եւ ձեր հոգումը որ են Աստուծոյ։

## ԳԼ. Է

1 Այլ վասն որոյ գրեցէքն առ իս, Բարւոք է մարդոյ՝ ՚ի կին մարդ չմերձենալ։

2 Բայց վասն պոռնկութեան իւրաքանչիւրոք զիւր կին կալցի. եւ իւրաքանչիւրոք կին զիւր այր կալցի։

3 Կնոջ՝ այր իւր զպարտսն հատուսցէ. նոյնպէս եւ կինն՝ առն իւրում։

4 Չի կին մարմնոյ իւրում ոչ իշխէ՝ այլ այրն. նոյնպէս եւ այրն իւրում մարմնոյ ոչ իշխէ՝ այլ կինն։

5 Մի զրկէք զմիմեանս. բայց եթէ ինչ ՚ի միաբանութենէ առ ժամանակ մի, զի ուխտիցն պարապիցէք. եւ դարձեալ ՚ի նոյն դարձջիք, զի մի փորձեսցէ զձեզ Սատանայ վասն անխառնութեան ձերոյ։

1 Բայց այն բանի համար որ ինձ գրեցիք, Լաւ է մարդոյ համար՝ որ կնկան շ չը մօտենայ։

2 Միայն թէ՝ պոռնկութեան պատճառովը թող ամէն մէկ մարդ իրեն կնիկը պահէ. եւ ամէն մէկ կին թող իրեն մարդը պահէ։

3 Կնկանն իրեն մարդը թող պարտքը վճարէ. եւ այնպէս էլ կինն իրեն ո մարդոյն։

4 Պատճառն որ՝ կինն իրեն մարմնոյն վերայ իշխանութիւն չունի՝ բայց մարդը. այնպէս էլ մարդն իրեն մարմնոյն վերայ իշխանութիւն չունի՝ բայց կինը։

5 Չը լինի որ իրար զրկէք. բայց եթէ իրար հետ միաբանվելիք մին քիչ ժամանակ, որ աղօթքի պարապվիք. եւ նորէն միանաք չ դարձէք, որ Սատանան չը փորձէ ձեզ՝ ձեր անժուժկալութեան պ պատճառաւը։

ձ Յովհ. ԺԷ. 21—23. Եփես. Դ. 4. Ե. 30.
ղ Հռովմ. Զ. 12. 13. Եբր. ԺԳ. 4.
ճ Հռովմ. Ա. 24. Ա Թես. Դ. 4.
մ Գղ. Գ. 16. Բ Կորնթ. Զ. 16.
յ Հռովմ. ԺԴ. 7, 8.
ն Գործ. Ի. 28. Գղ. Է. 23. Գաղ. Գ. 13. Եբր. Թ. 12. Ա Պետ. Ա. 18, 19. Բ Պետ. Բ. 1. Յայտ. Ե. 9.

—

շ Համեմ. 8. 26.
ո Ելից. ԻԱ. 10. Ա Պետ. Գ. 7.
չ Յովէլ. Բ. 16. Զաք. Է. 3. Ելից. ԺԹ. 15. Ա Թագ. ԻԱ. 4, 5.
պ Ա Թես. Գ. 5.

6 Զայս ասեմ ներելով՝ եւ ոչ հրամանաւ։

7 Քանզի կամիմ եթէ ամենայն մարդ լինէր իբրեւ զիս. այլ իւրաքանչիւրոք զիւր շնորհս ունի յԱստուծոյ՝ ոմն այսպէս եւ ոմն այնպէս։

8 Բայց ամուրեացն եւ այրեացն ասեմ, Լաւ է նոցա՝ եթէ կայցեն իբրեւ զիս։

9 Ապա թէ ոչ ունիցին ժոյժ՝ ամուսնասցին. զի լաւ է ամուսնանալ՝ քան պջնանալ։

10 Այլ կանամբեացն պատուիրեմ, ոչ ես՝ այլ Տէր. Կնոջ յառնէ մի մեկնել։

11 Ապա եթէ մեկնեսցի, անայր մնասցէ՝ կամ անդրէն ընդ առն իւրում հաշտեսցի. եւ առն՝ զկին իւր մի թողուլ։

12 Բայց այլոց ես պատուիրեմ, ոչ եթէ Տէր. Եթէ ոք եղբայր կին ունիցի անհաւատ, եւ նմա հաճոյ իցէ բնակել ընդ նմա՝ մի թողցէ զնա։

13 Եւ կին, որ ունիցի զայր անհաւատ՝ եւ նմա կամ իցէ բնակել ընդ նմա՝ մի թողցէ զայրն։

14 Զի սուրբ է այրն անհաւատ կնաւն, եւ սուրբ է կինն անհաւատ արամբն. ապա թէ ոչ՝ որդիքն ձեր պիղծ էին. բայց այժմ սուրբ են։

15 Ապա եթէ անհաւատն մեկնեսցի, մեկնեսցի. զի ոչինչ հարկ ՚ի վերայ կայ եղբօրն կամ քեռն յայնպիսի իրս. քանզի ՚ի խաղաղութիւն կոչեաց զմեզ Աստուած։

6 Սա ներելով եմ ասում, եւ ոչ թէ հրամանով է ասում։

7 Պատճառն որ կամենումեմ՝ որ ամէն մարդ ինձ պէս է լինէր բայց ամէն մարդ իւրեն շնորհքն ունի Աստուածանից. մինն այսպէս եւ մինն այնպէս։

8 Այլ կին չունեցողներին եւ որբեւայրիներին ասումեմ թէ՝ Լաւ է նորանց համար՝ որ ինձ պէս ե կենան։

9 Ապա թէ որ չը զսպանան՝ թող պսակվին. ինչու որ աւելի լաւ է պսակվիլ, քան թէ տաքանալ։

10 Բայց պսակվածներին պատուիրումեմ, ոչ թէ է ես՝ այլ Տէրը. որ կինը չը ջոկվի իւրեն մարդուցը։

11 Ապա թէ որ ջոկվի թող առանց մարդու մնայ՝ կամ կրկին իւրեն մարդոյն հետ հաշտվի. եւ որ մարդն էլ իւրեն կինը չարձակէ։

12 Բայց ուրիշներին ես եմ պատուիրում, չէ թէ է Տէրը. որ եթէ մին եղբայր անհաւատ կին ունենայ, եւ նորան հաճոյ լինի նորա հետ բնակվիլ՝ թող չարձակէ նորան։

13 Եւ մին կին որ անհաւատ մարդ ունենայ, եւ նա կամենայ նորա հետ բնակվիլ՝ նա թող մարդոյն չը թողէ։

14 Պատճառն որ անհաւատ մարդըն՝ սրբված է կնկանովը, եւ անհաւատ կինը սրբված է մարդովը. ապա թէ չէ՝ ձեր որդիքը պիղծ կը լինէին. բայց հիմիկ սուրբ են։

15 Իսկ թէ որ անհաւատը ջոկվելու լինի, թող ջոկվի. ինչու որ՝ այսպիսի բաների մէջ քոյր կամ եղբօր վերայ հարկաւորութիւն չը կայ. նրահամար որ՝ Աստուած կանչեց մեզ խաղաղութեան մէջ։

ա Համար. 12. 25. Բ Կորնթ. Ը. 8.
ԺԱ. 17.
գ Գործ. ԻԶ. 29.
դ Գղ. Թ. 5.
ե Մատթ. ԺԹ. 12.
Գղ. ԺԲ. 11.
զ Համար. 1. 26.
է Ա Տիմ. Ե. 14.
ը Համար. 12. 25. 40.
թ Մաղաք. Բ. 14.
16. Մատթ. Ե. 32. ԺԹ. 6. 9. Մարկ. Ժ. 11, 12. Ղուկ. ԺԶ. 18.
ժ Համար. 6.
ի Մաղ. Բ. 15.
լ Հռովմ. ԺԲ. 18. ԺԴ. 19. Գղ. ԺԴ. 33. Եբր. ԺԲ. 14.

16 Զի՞ գիտես կին դու՝ եթէ զայրն
քո ապրեցուցանես. կամ զի՞ գիտես
այր դու՝ եթէ զկին քո ապրեցուցա-
նես։
17 Եթէ ոչ՝ իւրաքանչիւր ումեք
որպէս եւ բաժանեաց Տէր, զիւրա-
քանչիւրոք որպէս եւ կոչեաց Աստ-
ուած՝ այնպէս գնասցէ. եւ այսպէս
ընդ ամենայն եկեղեցիս պատուէր
տամ։
18 Թլփատեալ ոք կոչեցաւ՝ մի
ցանկասցի անթլփատութեան. յան-
թլփատութենէ ոք կոչեցաւ՝ մի
թլփատեսցի.
19 Զի թլփատութիւն ոչինչ է եւ
անթլփատութիւն ոչինչ, այլ պահ-
պանութիւն Աստուծոյ պատուիրա-
նացն։
20 Բայց իւրաքանչիւրոք յոր կո-
չումն կոչեցաւ՝ 'ի նմին կացցէ։
21 Ծառայ կոչեցար՝ մի փոյթ լիցի
քեզ. այլ թէ եւ կարիցես ազատ
լինել՝ քեզ այնպէս լաւ իցէ։
22 Զի որ 'ի Տէր կոչեցեալ է ծա-
ռայն՝ ազատ Տեառն է. նոյնպէս եւ
որ ազատն կոչեցեալ է՝ ծառայ
Քրիստոսի է։
23 Գնոց գնեցայք՝ մի լինիք ծա-
ռայք մարդկան։
24 Իւրաքանչիւրոք՝ յոր կոչումն
կոչեցաւ՝ եղբարք, 'ի նմին կացցէ
առաջի Աստուծոյ։
25 Այլ վասն կուսանաց՝ հրաման
ինչ 'ի Տեառնէ ոչ ունիմ. բայց
խրատ տամ՝ որպէս ողորմեալ ու-
րուք 'ի Տեառնէ, հաւատարիմ լինել։

16 Ի՞նչ ես գիտում ով կին՝ որ քո
մարդդ [հ] կապրեցնես. եւ ինչ ես
գիտում ով մարդ՝ որ քո կինդ կապ-
րեցնես։
17 Միայն թէ ամէն մէկին ինչ-
պէս որ Տէրը բաժանեց նորան. ա-
մէն մէկն ինչպէս որ Աստուած կան-
չեց նորան, այնպէս գնայ. եւ
այնպէս ամէն եկեղեցիներումը
պատուէր եմ [ծ] տալիս։
18 Մէկն որ թլփատուած կանչուե-
ցաւ, թող անթլփատութեանը չը
ցանկանայ. մէկն որ անթլփատու-
թենիցը կանչուեցաւ՝ թող [ղ] չը թլ-
փատուի։
19 Ինչու որ՝ թլփատութիւնն ոչ
ինչ է, եւ անթլփատութիւնն ոչ
[ճ] ինչ. այլ Աստուծոյ պատուիրանք-
ների [մ] պահպանութիւնը։
20 Բայց ամէն մէկն՝ որ կոչումի
մէջ որ կանչուեցաւ, թող նորանում
կենայ։
21 Ծառայ կանչուեցար՝ թող՝ հո-
գս մի անէր. բայց թէ որ կարե-
նաս ազատ էլ լինել՝ քեզ համար
այնպէս էլ լաւ է.
22 Պատճառն որ՝ ծառան որ Տէ-
րովը կանչուած է՝ նա Տէրի ազատն
[յ] է. իսկ այնպէս էլ ազատն որ կան-
չուած է՝ Քրիստոսի ծառայ [ն] է։
23 Մէկ գնով գնուեցայք՝ մարդկանց
ծառայ մի [շ] լինիք։
24 Ամէն մէկն ինչ կոչումի մէջ
որ կանչուեցաւ՝ եղբարք, թող նո-
րանում կենայ Աստուծոյ [ո] առաջին։
25 Բայց կուսանքների համար մին
հրաման չունիմ [չ] Տէրից. միայն թէ
խրատ եմ տալիս՝ ինչպէս մէկն որ
Տէրիցն ողորմութիւն [պ] գտաւ հա-
ւատարիմ [ջ] լինելոյ։

հ Ա Պետ. Գ. 1։
ծ Գղ. Դ. 17։ Բ Կորնթ. ԺԱ. 28։
ղ Գործ. ԺԵ. 1. 5. 19. 24. 28։ Գաղ. Ե. 2։
ճ Գաղ. Ե. 6։ Զ. 15։
մ Յովհ. ԺԵ. 14։ Ա Յովհ. Բ. 3։ Գ. 24։
յ Յովհ. Ը. 36։ Հռովմ. Զ. 18. 22։ Փիլիմ. 16։
ն Գղ. Թ. 21։ Գաղ. Ե. 13։ Եփես. Զ. 6։ Ա Պետ. Բ. 16։
շ Գղ. Զ. 20։ Ա Պետ. Ա. 18. 19։ Ղև. ԻԵ. 42։
ո Հռովմ. 20։
չ Հռովմ. 6. 10. 40։ Բ Կորնթ. Ը. 8. 10։
պ Ա Տիմ. Ա. 16։
ջ Գղ. Դ. 2։ Ա Տիմ. Ա. 12։

26 Համարիմ թէ այնպէս լաւ ի-
ցէ․ բայց վասն վտանգին՝ որ 'ի
վերայ կայ, բարւոք է մարդոյ՝ թէ
այնպէս իցէ։
27 Կապեալ ես 'ի կին, մի խնդ-
րեր արձակել․ արձակեալ ես 'ի
կնոջէ, մի խնդրեր կին։
28 Զի եթէ ամուսնանայցես՝ ոչ
մեղար․ եւ եթէ ամուսնանայցէ կոյ-
սն՝ ոչ մեղաւ, բայց նեղութիւն
մարմնոյ ունիցին այնպիսիքն․ այլ
ես խնայեցի 'ի ձեզ։
29 Բայց զայս ասեմ եղբարք՝ եթէ
ժամանակս կարճեալ է այսուհետեւ․
զի որ ունիցին կանայս՝ որպէս թէ
չունիցին։
30 Եւ որ լայցեն՝ որպէս թէ ոչ
լայցեն․ եւ որ խնդասցեն՝ որպէս թէ
չխնդասցեն․ եւ որ գնեսցեն՝ որպէս
թէ չունիցին։
31 Եւ որ վարեսցեն զաշխարհս՝ որ-
պէս թէ չվարեսցեն․ զի անցանել
է վայելչութիւն աշխարհիս այսո-
րիկ։
32 Այլ կամիմ զձեզ անհոգս լի-
նել․ զի որ անկին է՝ հոգայ զի
Տեառն, թէ որպէս հաճոյ լիցի
Տեառն։
33 Եւ որ կանամբի է, հոգայ
զաշխարհս՝ թէ որպէս հաճոյ լիցի
կնոջ իւրում։
34 Եւ ահա մեկնեցան 'ի միմեանց
անամուսինն եւ կոյսն․ զի կոյսն հո-
գայ զՏեառն՝ զի իցէ սուրբ հոգւով
եւ մարմնով, եւ ամուսնին հոգայ
զաշխարհս՝ թէ որպէս հաճոյ լիցի
առն իւրում։
35 Այլ զայս վասն ձերոյ օգտի

26 Ես համարում թէ այնպէս
լաւ է․ բայց վտանգին համար՝ որ
մօտիկ է, լաւ է մարդուն՝ որ այն-
պէս —մնի։
27 Կնկան հետ որ կապուած ես՝ մի
հեռանար արձակուելու․ կնկանէդ
որ արձակուած ես՝ կին մի ուզեր։
28 Բայց թէ որ պսակուիս՝ չը մե-
ղանչեցիր․ եւ թէ որ մէկ կոյս պը-
սակուի չը մեղանչեց․ միայն թէ այն-
պէսները մարմնոյ նեղութիւն կու-
նենան․ բայց ես խնայում եմ ձեզ։
29 Միայն աս եմ ասում եղբարք՝
թէ ժամանակս կարճ է սրանից
=ետեւ, որ նորանք որ կին ունին
ինչպէս թէ չունենային․
30 Եւ նորանք՝ որ լաց են լինում
ինչպէս թէ լաց չը լինէին․ եւ նո-
րանք՝ որ ուրախանում են, ինչպէս
թէ չուրախանային․ եւ նորանք՝
որ ծախու առնում են, ինչպէս թէ
չունենային․
31 Եւ նորանք՝ որ այս աշխարհքս
վայելում են, ինչպէս թէ Հ չը վա-
յելէին․ ինչու որ այս աշխարհքիս
գեղեցկութիւնն անցնել =է․
32 Բայց կամենում եմ որ դուք
հոգսի մէջ չը լինիք․ պատճառն որ
նա՝ որ կին չունի՝ Տէրի բաներին
համար է հոգս անում, թէ ինչպէս
հաճոյ լինի ։ Տէրին․
33 Եւ նա՝ որ կին ունի, աշխարհ-
քի բաներին համար է հոգս անում,
թէ ինչպէս հաճոյ լինի իւրն կըն-
կանը․
34 Եւ այսպէս էլ իրարից ջոկված
են պսակված կինը եւ կոյսը․ ինչու
որ՝ կոյսը Տէրի բաներին համար է
հոգս անում՝ որ սուրբ լինի մարմ-
նով եւ ։ հոգով, եւ պսակված կի-
նըն աշխարհքի կողմանէ է հոգս
անում՝ թէ ինչպէս հաճոյ լինի ի-
րեն մարդուն․
35 Միայն թէ՝ աս ձեր չահին հա-

— Հռոմ․ 1․ 8։ | ե Պետ․ Ը․ 8, 9։
= Հռովմ․ ԺԴ․ 11։ | Հ Դվ․ Թ․ 18։
Ա Պետ․ Դ․ 7։ | ։ Սաղ․ ԼԹ․ 6։

Յակ․ Ա․ 10։ Դ․ 14։ Ա Պետ․ Ա․ 24։ Դ․ 7։ Ա | Յովհ․ Բ․ 17։
։ Ա Տիմ․ Ե․ 5։
։ Ղու․ Ժ․ 40։ Ա։

ասեմ. ոչ եթէ խեղդ ինչ արկա-
նել ձեզ, այլ վասն պարկեշտու-
թեան՝ եւ հպատակութեան Տեառն
առանց զբաղմանց ։

36 Ապա թէ ոք ամօթ համարեսցի
վասն կուսին իւրոյ՝ եթէ իցէ եր-
եալ ըստ չափ, եւ այնպէս ինչ
պարտ իցէ լինել. զոր կամիցի
արասցէ, ոչ մեղանչէ՝ ամուսնաս-
ցի ։
37 Իսկ որ հաստատեալ է 'ի սըր-
տի իւրում, եւ վասնզի ինչ ոչ իցէ
նմա, իշխանութիւն ունի 'ի վերայ
կամաց իւրոց. եւ զայն ընտրեաց
'ի սրտի իւրում՝ պահել զկոյսն իւր,
բարւոք առնէ ։
38 Եւ որ ամուսնացուցանէ զկոյսն
իւր՝ բարւոք առնէ. եւ որ ոչ ա-
մուսնացուցանէ՝ լաւ եւս առնէ ։

39 Կին կապեալ է՝ ցորքան ժա-
մանակս կենդանի է այր նորա.
ապա եթէ ննջեսցէ այր նորա, ազատ
է ում կամիցի ամուսնանալ. այլ
միայն Տերամբ ։

40 Բայց երանելի եւս է՝ թէ այն-
պէս կացցէ ըստ իմում խրատու.
եւ այսպէս համարիմ, եթէ եւ յիս
իցէ Հոգի Աստուծոյ ։

մար եմ ասում. եւ չէ թէ ձեր վը-
զերին խեղդելու չուան եմ ձգում.
բայց պարկեշտութեան համար՝ եւ
առանց զբաղմունքի Տէրին հետե-
ւելոյ համար ։
36 Ապա թէ որ մէկն ամօթ հա-
մարէ իրեն կուսին համար՝ որ տա-
րիքի չափիցը դուրս է ելել, եւ
այնպէսի բան պէտք է լինել. նա
ինչպէս որ կամենում է թող անէ.
չի մեղանչում՝ թող պսակվի ։
37 Բայց նա՝ որ իրեն սրտին մէջ
հաստատել է՝ եւ մին վասնզի չը
կայ նորա համար, էլ իրեն կամքին
վերայ իշխանութիւն ունի. եւ նա
ընտրեց իրեն սրտումն՝ որ իրեն
կոյսը պահէ, նա լաւ է անում ։
38 Եւ նա՝ որ իրեն կոյսը մարդի
է տալիս, լաւ է — անում, եւ նա՝
որ մարդի չի տալիս, էլ աւելի
լաւ է անում ։
39 Կինը կապված է՝ քանի ժամա-
նակ որ նորա մարդը կենդանի է.
բայց թէ որ նորա մարդը ննջէ,
ապա ազատ է պսակվելու ում
հետ ‡ կը կամենայ, միայն թէ
* Տէրով ։
40 Բայց էլ աւելի երանելի է. թէ
որ այնպէս կենայ՝ իմ տված խրա-
տիս • պէս. ես այսպէս եմ համա-
րում. թէ ինձանում էլ Աստուծոյ
Հոգին ‡ կայ ։

## ԳԼ. Ը

1 Այլ վասն զոհից կռոց գի-
տեմք՝ եթէ ամենեքեան գիտութիւն
ունիմք. գիտութիւն հպարտացու-
ցանէ, այլ սէր շինէ ։

2 Եթէ ոք կարծիցէ գիտել ինչ,
չեւեւս գիտաց՝ որպէս արժանն էր
գիտել ։

1 Բայց կռքերի մատաղներին
— համար գիտենք, որ ամէնքս
գիտութիւն ‡ ունինք. գիտութիւնը
հպարտացնում է, բայց սէրը ‡ շի-
նում է ։
2 Թէ որ մէկը մաքի մէջ դնէ թէ
բան գիտէ, նա դեռ բան չը գի-
տաց՝ ինչպէս որ պէտք է ‡ գի-
տել ։

— Եբր. ԺԳ. 4.
‡ Հռովմ. Է. 2.
* Բ Կորնթ. Զ. 14.
• Համար. 25.

‡ Ա Թես. Դ. 8.

—

— Գործ. ԺԵ. 20. 29. Գղ. Ժ. 19.

‡ Հռովմ. ԺԴ. 14. 22.
‡ Հռովմ. ԺԴ. 3. 10.

‡ Գղ. ԺԱ. 8, 9. 12. Գաղ. Զ. 3. Ա Տիմ. Զ. 4.

3 Բայց որ սիրէ զԱստուած, նա է ծանուցեալ 'ի նմանէ:

4 Այլ վասն կերակրոյ զոհելոց՝ գիտեմք եթէ ոչինչ իսկ կուռքդ են յաշխարհի. զի չիք ոք Աստուած բաց 'ի միոյն:

5 Զի թէպէտ և իցեն անուանեալ աստուածք՝ եթէ յերկինս և եթէ յերկրի. որպէս և են աստուածք բազումք՝ և տեարք բազումք:

6 Այլ մեզ մի է Աստուած Հայր՝ յորմէ ամենայն, և մեք 'ի նա. և մի Տէր Յիսուս Քրիստոս՝ որով ամենայն, և մեք նովաւ:

7 Այլ ոչ յամենեսին գիտութիւն է. ոմանք առ խղճի մտաց մինչև ցայժմ զկռոցն իբրև զզոհեալ ուտեն. և խիղճ մտացն նոցա՝ քանզի տկար է, պղծի:

8 Այլ կերակուր զմեզ առաջի Աստուծոյ ոչ կացուցանէ. ոչ եթէ չուտեմք՝ պակասեմք ինչ, և ոչ եթէ ուտեմք՝ առաւելումք ինչ:

6 Բայց զգոյշ լերուք, գուցէ իշխանութիւնդ ձեր այդ՝ գայթակղութիւն լինիցի տկարացն:

10 Եթէ ոք տեսանիցէ զքեզ՝ որ զգիտութիւնդ ունիս՝ բազմեալ 'ի մեհենի, ոչ ապա խիղճ մտաց նորա՝ որ տկարութեամբ զգածեալ է՝

3 Բայց նա՝ որ Աստուծոյն սիրումէ, նա ճանաչված է ե Նորանից:

4 Ուրեմն զոհված կերակուրներին համար գիտեմնք որ կուռքերը ոչ ինչ են զ աշխարհքումս. պատճառն որ՝ ոչ մին Աստուած չը կայ այն մէկից է ջոկ:

5 Որ թէ և կան՝ որ Աստուածներ անուանվածին՝ թէ երկինքումը և թէ երկրիս վերայ. ինչպէս որ շատ աստուածներ կան և շատ ը տէրեր:

6 Բայց մենք մին Աստուած ունինք՝ թ Հայրը, որ նորանից ամէն բան է, և մենք նորա ժ համար. և մին Տէր Յիսուս ի Քրիստոս՝ որ նորանով է ամէն բան, և մենք լ նորանով:

7 Միայն թէ ամէնքը գիտութիւն չունին. ինչու որ՝ մին քանիսը մինչև հիմիկ կռքի բանը զոհված բանի պէս խղճմտանքով են խ ուտում, և նորանց խղճմտանքն՝ որ տկար է, ծ պղծվումէ:

8 Բայց կերակուրը նա չէ՝ որ մեզ ընդունելի է անում Աստուծոյ կ առաջին. որ եթէ չուտենք՝ մին բանով չենք պակասիլ, և եթէ ուտենք՝ մին բանով չենք աւելանալ:

9 Միայն թէ զգոյշ կացէք՝ որ այդ ձեր հ ազատութիւնդ՝ գայթակղութիւն չը լինի տկարներին ձ համար:

10 Թէ որ մինը քեզ՝ որ այդ գիտութիւնըդ ունիս՝ կռքի տան մէջ տեսնէ սեղան նստած, չէ՞ որ նորա խղճմտանքը՝ որ տկարութենով

ե Ելից. ԼԳ. 12. 17. Նաւ. Ա. 7. Մատթ. Է. 23. Գաղ. Դ. 9. Բ Տիմ. Բ. 19.
զ Եսայ. ԽԱ. 24. Գլ. Ժ. 19.
է Բ Օրին. Դ. 39. Զ. 4. Եսայ. ԽԴ. 8. Մարկ. ԺԲ. 29. Հռմար. 6. Եփես. Դ. 6. Ա Տիմ. Բ. 5.
ը Յովհ. Ժ. 34.
թ Մաղ. Բ. 10. Եփես. Դ. 6.
ժ Գործ. ԺԷ. 28. Հռոմ. ԺԱ. 36.
ի Յովհ. ԺԳ. 13. Գործ. Բ. 36. Գլ. ԺԲ. 3. Եփես. Դ. 5. Փիլիպ. Բ. 11.
լ Յովհ. Ա. 3. Կող. Ա. 6. Եբր. Ա. 2.
խ Գլ. Ժ. 28. 29.
ծ Հռոմ. ԺԴ. 14. 23.
կ Հռոմ. ԺԴ. 17.
հ Գաղ. Ե. 13.
ձ Հռոմ. ԺԴ. 13. 21.

անդրէն չինիցի՞ ուտել զզոհեալսն ։

11 Եւ կորնչիցի տկար եղբայրն ՚ի
քում գիտութեանդ, վասն որոյ
Քրիստոսն մեռաւ ։
12 Եւ այնպէս յանցուցեալ յեղ-
բարս, եւ զխիղճ նոցա տկարացն
գայթակղեցուցեալ, ՚ի Քրիստոս մեղան-
չէք ։
13 Վասն ՚որոյ՝ եթէ կերակուր
գայթակղեցուցանէ զեղբայրն իմ,
ոչ կերայց միս յաւիտեան, զի մի
զեղբայրն իմ գայթակղեցուցից ։

բռնուած է՝ նորէն կըզօրըզվի՞ որ զոհ-
ւած բանն ուտէ ։
11 Եւ այն տկար եղբայրը կը կորչի
քու գիտութենովդ, նա՝ որ նորա
համար Քրիստոս ‡ մեռաւ ։
12 Եւ այսպէս եղբայրներին դէմ
մեղանչելով, եւ տկարների խղճ-
մտանքը գրդելով՝ Քրիստոսին դէմ
մեղք էք ՛ գործում ։
13 Նորահամար՝ թէ որ կերակուր
իմ եղբօրը գայթակղեցնում է, ես
յաւիտեան միս չեմ ուտիլ, որ իմ
եղբօրը ; չը գայթակղեցնեմ ։

## ԳԼ. Թ

1 Ո՞չ ապաքէն ՚ազատ եմ, ոչ
ապաքէն առաքեալ եմ, ոչ ապա-
քէն զՏէր մեր Յիսուս Քրիստոս
աչօք իմովք տեսի, ոչ ապաքէն գործ
իմ դուք էք ՚ի Տէր ։
2 Թէպէտ եւ այլոց չիցեմ առաք-
եալ, այլ գէթ ձեզ եմ. զի կնիք
իսկ առաքելութեան իմոյ դուք էք
՚ի Տէր ։
3 Իմ պատասխանիս՝ առ զիս հար-
ցանիցեն, այս է ։
4 Միթէ ոչ ունիցիմք իշխանու-
թիւն ուտել եւ ըմպել ։
5 Միթէ ոչ ունիցիմք իշխանու-
թիւն զքոյր՝ կանայս շրջեցուցա-
նել ընդ մեզ. որպէս եւ այլ առա-
քեալքն, եւ եղբարքն Տեառն, եւ
Կեփաս՚ ։
6 Եթէ միայն ես եւ Բառնաբաս
ոչ ունիցիմք իշխանութիւն ՚չգոր-
ծել իմիք ։
7 Ո՞ որ երբէք զինուորիցի իւ-
րովք թոշակօք. ո՞ որ տնկիցէ այգի՝

1 Չէ՞ որ ազատ եմ, չէ՞ որ ա-
ռաքեալ – եմ, չէ՞ որ մեր Տէր Յի-
սուսին Քրիստոսին իմ աչքովս ‡ տե-
սի, չէ՞ որ դուք իմ գործս էք
÷ Տէրով ։
2 Թէ եւ ուրիշներին համար ա-
ռաքեալ չը լինիմ, բայց գէթ ձեզ
եմ. ինչու որ իմ առաքելութեանս
կնիքը դուք էք ⸗ Տէրով ։
3 Որոնք որ ինձ հարցնեն, իմ
պատասխանս սա է ։
4 Միթէ իշխանութիւն չունինք
ուտելոյ եւ ⊢ խմելոյ ։
5 Միթէ իշխանութիւն չունինք
քոյրեր՝ կանայք մանածելոյ մեզ
հետ, ինչպէս որ ուրիշ առաքեալ-
ները եւ Տէրի եղբայրքն ւ էլ, եւ
Կեփասն ⊢ էլ ։
6 Միթէ մինակ ես եւ Բառնա-
բաս իշխանութիւն չունինք որ բան
ը չը գործենք ։
7 Ո՞վ կայ երբէք որ իրենին պաշա-
րովը զինուորութիւն ֆ անէ. ով

ւ Գղ. Ժ. 28. 32.
‡ Հռովմ. ԺԴ. 15
21.
՛ Մատթ. ԻԵ. 40.
45.
; Հռովմ. ԺԴ. 21.
Բ Կորնթ. ԺԱ.
29.

– Գործ. Թ. 15.
ԺԳ. 2. ԻԶ. 17.
Բ Կորնթ. ԺԲ.
12. Գաղ. Բ. 7.
8. Ա Տիմ. Բ.
7. Բ Տիմ. Ա. 11.
‡ Գործ. Թ. 3. 17.
ԺԸ. 9. ԻԲ. 14.
18. ԻԳ. 11.

Գղ. ԺԵ. 8.
÷ Գղ. Գ. 6. Դ.
15.
⸗ Բ Կորնթ. Գ. 2.
ԺԲ. 12.
⊢ Հռմայ. 14. Ա
Թես. Բ. 7. Բ
Թես. Գ. 9.
ւ Մատթ. ԺԳ. 55.

Մարկ. Զ. 3.
Ղու. Զ. 14.
Գաղ. Ա. 19.
⊢ Մատթ. Ը. 14.
ը Բ Թես. Գ. 8, 9.
ֆ Բ Կորնթ. Ժ. 4.
Ա Տիմ. Ա. 18.
Զ. 12. Բ Տիմ.
Բ. 3. Դ. 7.

եւ 'ի պտղոյ նորա ոչ ուտիցէ. ո՞ որ արածիցէ խաշն՝ եւ 'ի կաթանէ խաշինն ոչ ուտիցէ ։

8 Միթէ ըստ մարդկութեան խօսիցիմ զայս. կամ թէ եւ օրէնքն զայն ոչ ասիցեն ։

9 'Ի Մովսէսի իսկ յօրէնսն գրեալ է, Ո՛չ կապեսցես զցռուկ եզին կալոտւոյ. միթէ զեզանց ինչ փոյթ էր Աստուծոյ ։

10 Ո՞չ ապաքէն վասն մեր ասէ. քանզի վասն մեր գրեցաւ. զի յուսով պարտի, որ սերմանէն՝ սերմանել. եւ որ կասէն՝ յուսով վայելել ։

11 Եթէ մեք 'ի ձեզ զհոգեւորսն սերմանեցաք՝ մեծ ինչ է, եթէ 'ի ձէնջ զմարմնաւորսդ հնձիցեմք ։

12 Եթէ այլք ձերով իշխանութեամբդ վայելեն, ոչ առաւել եւս մեք. այլ ոչ 'ի գործ ինչ արկաք զիշխանութիւնս զայս. բայց ամենայնի համբերեմք. զի մի խափան ինչ լինիցիմք աւետարանին Քրիստոսի ։

13 Ո՞չ գիտէք եթէ որ 'ի տաճարին գործեն, 'ի տաճարէ անտի ուտեն. եւ որ սեղանոյն պաշտօնեայք են, 'ի սեղանոյ անտի վայելեն ։

14 Նոյնպէս եւ Տէր հրաման ետ, որոց զաւետարանն աւետարանեն, յաւետարանէ անտի կեալ ։

15 Բայց ես եւ ոչ զմի ինչ յայսցանէ արկի 'ի գործ, եւ ոչ գրեցի զայդ՝ զի ինձ այնպէս ինչ լինիցի. լաւ է ինձ մանաւանդ մեռանել, եւ

է որ այգի տնկէ՝ եւ նորա պտղիցը [դ] չուտէ. մի՞ է որ հօտ արածացնէ եւ հօտի կաթնիցը [ե] չուտէ ։

8 Միթէ այս բաները մարդոյ կերպով եմ ասում, կամ չէ՞ որ օրէնքն էլ է այս բանս ասում ։

9 Իսկ Մովսէսի օրէնքումը գրըւած է՝ թէ Կալի մէջ աշխատող եզան դունչը մի՛ [զ] կապիր. միթէ Աստուած եզներին համար էր հոգս անում ։

10 Չէ՞ որ մեզ համար է ասում. պատճառն որ՝ մեզ համար գրըւեցաւ, որ նա որ ցանում է, պէտք է յուսով ցանել. եւ նա՝ որ կասումմէ, յուսով [է] վայելել ։

11 Թէ որ մենք ձեզանում հոգեւորները սերմանեցինք՝ էլ մեծ բան է՝ որ ձեզանից մարմնաւորները [ը] հնձենք ։

12 Թէ որ [թ] ուրիշներն այդ ձեզ վերայ իշխանութիւնը կը վայելեն, էլ աւելի ինչու մենք չէ. միայն թէ մենք այս իշխանութիւնս չըր բանացրինք. բայց ամէն բանի համբերում ենք, որ բնաւ խափանմունք չը[ժ]դնենք Քրիստոսի Աւետարանին ։

13 Չէ՞ք գիտում թէ նորանք՝ որ տաճարումը գործումեն, այն տաճարիցն են ուտում. եւ նորանք՝ որ սեղանի պաշտօնեաներ են, այն սեղանիցն են [ի] վայելում ։

14 Այնպէս էլ Տէրը հրաման [լ] տըւաւ, որ նորանք որ աւետարանը են քարոզում, այն աւետարանիցն [խ] ապրին ։

15 Բայց ես սորանցից ոչ մինն էլ չըր բանացրի. եւ այդ բանըդ չըր գրեցի նորա համար որ՝ ինձ էլ այդ

դ Բ Օրին. Ի. 6. Առակ. ԻԷ. 18. Գղ. Գ. 6, 7, 8.
ե Յովհ. ԻԱ. 15. Ա Պետ. Ե. 2.
զ Բ Օրին. ԻԵ. 4. Ա Տիմ. Ե. 18.
է Բ Տիմ. Բ. 6.
ը Հռովմ. ԺԵ. 27. Գաղ. Զ. 6.
թ Գործ. Ի. 33. Համար. 15. 18. Բ Կորնթ. ԺԱ. 7. 9. ԺԲ. 13. Ա Թես. Բ. 7.
ժ Բ Կորնթ. ԺԱ. 12.
ի Ղև. Զ. 16. 26. Է. 6, [illegible]. Թու. Ե. 9. 10. ԺԸ. 8—20. Բ Օրին. Ժ. 9. ԺԸ. 1.
լ Մատթ. Ժ. 10. Ղուկ. Ժ. 7.
խ Գաղ. Զ. 6. Ա Տիմ. Ե. 17.

ոչ զի զպարծանս իմ ոք ընդունայն համարիցի ։

16 Զի եթէ աւետարանեմ, ոչ ինչ են ինձ պարծանք, քանզի հարկ 'ի վերայ կայ. բայց վայ է ինձ, եթէ ոչ աւետարանեմ ։

17 Եթէ կամաւ զայն առնեմ, վարձք են ինձ. եւ եթէ ակամայ՝ տնտեսութիւն յանձն է ինձ ։

18 Եւ արդ՝ զինչ վարձք իցեն ինձ, եթէ յաւետարանելն ձրի առից զաւետարանն, զի մի զեղծիցիմ ինչ իշխանութեամբս իմով յաւետարանի անդ ։

19 Քանզի ազատ էի յամենայնէ՝ եւ ամենեցուն զանձն 'ի ծառայութեան կացուցի. զի զբազումս շահեցայց ։

20 Եղէ ընդ Հրէայսն իբրեւ ըզՀրեայ, զի զՀրեայսն շահեցայց ։

21 Եղէ ընդ օրինօք իբրեւ զայնոսիկ՝ որ ընդ օրինօքն էին. իբր ոչ եթէ ընդ օրինօքն էի, այլ զի որ ընդ օրինօքն իցեն՝ եւ զնոսա շահեցայց. ընդ անօրէնս եղէ իբրեւ զանօրէն. իբր ոչ եթէ անօրէն ինչ էի Աստուծոյ, այլ ընդ օրինօք Քրիստոսի. զի շահեցայց զանօրէնսն ։

22 Եղէ ընդ տկարս իբրեւ զտկար՝ զի զտկարսն շահեցայց. ընդ ամենայնի ամենայն եղէ, զի թերեւս ապրեցուցից զոմանս ։

պէտքի բան մ' լինի. էլ աւելի լաւ է ինձ՝ որ մեռնիմ, քանթէ՝ որ մինը իմ պարծանքս ունայն յ համարէ.

16 Պատճառն որ՝ թէ որ աւետարանը քարոզեմ, նա պարծանք չէ ինձ համար. ինչու որ՝ նա հարկ է ինձ ն վերայ. բայց վայ է ինձ՝ թէ որ չաւետարանեմ ։

17 Թէ որ նա յօժար կամքով անեմ, վարձ կը լինի շ ինձ. եւ թէ որ ակամայ՝ էլ տնտեսութիւնը յանձնուած է ո ինձ ։

18 Այս ես ինչ վարձք ունիմ, նա որ՝ աւետարանելոյ ժամանակն ձրի տամ չ աւետարանը, որ իմ իշխանութիւնըս վատ չը բանեցնեմ՝ որ այն աւետարանումն պ է.

19 Պատճառն որ՝ ամէն մարդոց ազատ էի, եւ իմ անձս ամենին ծառայ ռ արի, որ շատ մարդկանց ս շահեմ ։

20 Հրէաներին հետ Հրէայի պէս էլայ, որ Հրէաները վ շահեմ ։

21 Օրէնքին ներքեւ լինողներին հետ նորանց պէս էլայ, որ օրէնքի ներքեւն էին. իբր թէ չէ որ ես օրէնքի ներքեւն էի, բայց որ նորանց էլ շահեմ՝ որ օրէնքի ներքեւն են. անօրէններին հետ անօրէնի պէս տ էլայ. իբր չէ թէ ես Աստուծոյ առաջին մին անօրէն էի, բայց Քրիստոսի օրէնքի ր ներքեւն, որ անօրէններին շահեմ ։

22 Տկարներին հետ տկարի պէս ց էլայ՝ որ տկարներին շահեմ. ամենին հետ ամէն բան ւ էլայ, որ լինի թէ մին քանիսն փ ապրեցնեմ ։

մ Համար 12 ։ Գործ. ԺԸ. 3 ։ Ի. 34 ։ Վր. Դ. 12 ։ Ա Թես. Բ. 9 ։ Բ Թես. Գ. 8 ։
յ Բ Կորնթ. ԺԱ. 10 ։
ն Հռովմ. Ա. 14 ։
շ Վր. Դ. 8. 14 ։
ո Վր. Դ. 1 ։ Գաղ. Բ. 7 ։ Փիլիպ. Ա. 16 ։ Կող. Ա. 25 ։
չ Վր. Ժ. 33 ։ Բ Կորնթ. Դ. 5 ։ ԺԱ. 7 ։
պ Վր. Է. 31 ։
ջ Համար. 1 ։
ռ Գաղ. Ե. 13 ։
ս Մատթ. ԺԸ. 15 ։ Ա Պետ. Գ. 1 ։
վ Գործ. ԺԶ. 3 ։ ԺԸ. 18 ։ ԻԱ. 23, Ճ ։
տ Հռովմ. Բ. 12. 14 ։ Գաղ. Գ. 2 ։
ր Վր. Է. 22 ։
ց Հռովմ. ԺԵ. 1 ։ Բ Կորնթ. ԺԱ. 29 ։
ւ Վր. Ժ. 33 ։
փ Հռովմ. ԺԱ. 14 ։ Վր. Է. 16 ։

23 Զայս ամենայն առնեմ վասն աւետարանին, զի կցորդ եղէց նմա։

24 Ո՞չ գիտէք՝ եթէ որ յասպարիսին ընթանան, ընթանալ ամենեքին ընթանան, բայց մի ոք առնու զյաղթութիւնն. այնպէս ընթացարուք՝ զի հասանիցէք։

25 Ամենայն՝ որ պատերազմի, ամենայնի ժուժկալ լինի. նոքա զի զեղծանելի պսակն առնուցուն՝ եւ մեք զանեղծութեանն։

26 Արդ՝ ես խոկ այնպէս ընթանամ, ոչ որպէս յաներեւոյթս. այնպէս մրցիմ, որպէս ոչ թէ զհողմս ինչ կոծելով։

27 Այլ ճնշեմ զմարմին իմ եւ հնազանդեցուցանեմ. զի գուցէ որ այլոցն քարոզեցի՝ ես ինքնին անպիտան գտանիցիմ։

23 Այս ամէն բաներս աւետարանին համար եմ անում, որ բաժին ունենամ նորա հետ։]

24 Չէ՞ք գիտում՝ թէ նորանք որ ասպարէզին մէջ վազումեն, վազելով ամէնքն են վազում, բայց մինն է՝ որ յաղթութեան պսակն առնումէ. դուք այնպէս վազեցէք՝ որ + հասնիք։

25 Ամէն՝ ով որ պատերազմում է անում, ամէն բանից ժուժկալ է * կենում. նորանք՝ որ մին ապականելի պսակ առնեն, եւ մենք՝ նա որ չի ‡ ապականվիլ։

26 Ուրեմն ես խոկ այնպէս եմ վազում, չէ թէ ինչպէս աներեւոյթ բանի = համար. այնպէս եմ կռւում, չէ թէ ինչպէս քամիների զարկելով։

27 Բայց իմ մարմինս ներքեւ եմ ‡ ճզում՝ եւ ÷ հնազանդացնում, որ չը լինի թէ ես՝ որ ուրիշներին քարոզեցի, ինքս անպիտան ₸ գտնըվիմ։

## ԳԼ. Ժ

1 Ո՛չ կամիմ եթէ ագէտք իցէք եղբարք, զի հարքն մեր ամենեքին ընդ ամպովն էին. եւ ամենեքին ընդ ծովն անցին։

2 Եւ ամենեքին ՚ի Մովսէս մկրտեցան յամպն եւ ՚ի ծովն։

3 Եւ ամենեքին զնոյն հոգեւոր կերակուրն կերան։

4 Եւ ամենեքին զնոյն հոգեւոր ըմպելին արբին, զի ըմպէին ՚ի հո-

1 Չեմ կամենումեմ եղբարք՝ որ չը գիտենաք՝ թէ մեր հարքն ամէնքն էլ ամպին տակն — էին. եւ ամէնքը ծովին միջովն ‡ անցան։

2 Եւ ամէնքը Մովսէսի ձեռովը մկրտվեցան՝ այն ամպին եւ ծովին մէջ։

3 Եւ ամէնքն էլ նոյն հոգեւոր կերակուրը ÷ կերին։

4 Եւ ամէնքն էլ այն հոգեւոր խմելիքը ₸ խմեցին. ինչու որ՝ այն

---

+ Գաղ. Բ. 2։ Ե. 7։ Փիլիպ. Բ. 16։ Գ. 14։ Բ Տիմ. Դ. 7։ Եբր. ԺԲ. 1։
* Եփես. Զ. 12։ Ա Տիմ. Զ. 12։ Բ Տիմ. Բ. 5։ Դ. 7։
‡ Բ Տիմ. Դ. 8։ Յակ. Ա. 12։ Ա Պետ. Ա. 4։ Ե. 4։ Յայտ. Բ. 10։ Գ. 11։
= Բ Տիմ. Բ. 5։
‡ Հռովմ. Ը. 13։ Կող. Գ. 5։
÷ Հռովմ. Զ. 18. 19։
₸ Երեմ. Զ. 30։ Բ Կորնթ. ԺԳ. 5. 6

—

— Ելից. ԺԳ. 21։ Խ. 34։ Թու. Թ. 18։ ԺԴ. 14։ Բ Օրին. Ա. 33։ Նեեմ. Թ. 12. 19։ Սաղ. ՀԸ. 14։ ՃԵ. 39։
‡ Ելից. ԺԴ. 22։ Թու. ԼԳ. 8։ Յես. Դ. 23։ Սաղ. ՀԸ. 13։
÷ Ելից. ԺԶ. 15. 35։ Նեեմ. Թ. 15. 20։ Սաղ. ՀԸ. 24։
₸ Ելից. ԺԷ. 6։ Թու. Ի. 11։ Սաղ. ՀԸ. 15։

գնայր վիմէն՝ որ երթայր զհետ նո-
ցա. եւ վէմն էր ինքն Քրիստոս։

5 Այլ ոչ եթէ ընդ բազումս 'ի
նոցանէ հաճեցաւ Աստուած. քան-
զի տապաստ անկան յանապատի
անդ։
6 Եւ այն օրինակաւ լինէր վասն
մեր. զի մի լիցուք [զ] ցանկացողք
չարեաց, որպէս եւ նոքայն ցանկա-
ցան։
7 Եւ մի կռապաշտս լինել՝ որ-
պէս ոմանք 'ի նոցանէ, որպէս եւ
գրեալ է. Նստաւ ժողովուրդն
ուտել եւ ըմպել՝ եւ յարեան 'ի խա-
ղալ։
8 Եւ մի պոռնկեսցուք. որպէս
ոմանք 'ի նոցանէ պոռնկեցան, եւ
անկան 'ի միում աւուր քսան եւ
չորք հազարք։

9 Եւ մի փորձեսցուք զՏէր. որ-
պէս ոմանք 'ի նոցանէ փորձեցին,
եւ յօձից անտի սատակեցան։

10 Եւ մի տրտնջեսցուք. որպէս
ոմանք 'ի նոցանէ տրտնջեցին, եւ
կորեան 'ի սատակչէ անտի։

11 Այլ այն ամենայն օրինակաւ
անցանէր ընդ նոսա. բայց գրեցաւ
վասն մերոյ խրատու, յորս վախ-
ճան յաւիտեանցն եհաս։

12 Այսուհետեւ որ համարիցի հաս-
տատուն կալ՝ զգոյշ լիցի, գուցէ
անկանիցի։

հոգեւոր վէմէն էին խմում՝ որ գը-
նումէր նորանց հետ. եւ այն վէմը
Քրիստոս ինքն էր։
5 Բայց Աստուած նորանցից շա-
տերին չը հաւանեցաւ. ինչու որ՝
այն անապատին մէջ գետինն ձըգ-
ված փռված [ե] վերընկան։
6 Եւ նա էլաւ՝ որ մեզ օրինակ
լինի. որ չար բաների ցանկացող
չը լինինք, ինչպէս որ նորանք [զ] ցան-
կացան։
7 Եւ կռապաշտ [է] չը լինինք՝ ինչ-
պէս որ նորանցից մինը քանիսը.
ինչպէս որ գրված է, թէ Ժողո-
վուրդը նստեց որ ուտէ եւ խմէ՝
եւ վերկացան որ խաղ [ը] անեն։
8 Եւ պոռնկութիւն [թ] չանենք,
ինչպէս որ նորանցից մինը քանիսը
պոռնկութիւն արին, եւ մին օր
քսան եւ չորս հազար մարդ վեր [ժ] ըն-
կան։
9 Եւ Տէրը չը փորձենք, ինչպէս
որ նորանցից մինը քանիսը [ի] փորձե-
ցին, եւ այն օձերից [լ] սատակվե-
ցան։
10 Եւ չը տրտնջենք, ինչպէս որ
նորանցից մինը քանիսը [խ] տրտնջե-
ցին, եւ այն սատակողի [ծ] ձեռովը
[կ] կորան։
11 Բայց այն ամէնն օրինակի հա-
մար էր նորանց վերայ անցնում,
բայց մեզ խրատի համար [հ] գրվե-
ցաւ, որ ժամանակներին վերջը հա-
սաւ [ձ] մեզ։
12 Ուրեմն ով որ համարէ՝ թէ
հաստատ է կանգնած, թող զգոյշ
լինի, որ վեր [ղ] չընկնի։

ե Թուոց. ԺԴ. 29. 32. 35. ԻԶ. 64, 65. Սաղ. ՃԶ. 26. Եբր. Գ. 17. Յուդ. 5.
զ Թուոց. ԺԱ. 4. 33. 34. Սաղ. ՃԶ. 14.
է Համար. 14.
ը Ելից. ԼԲ. 6.
թ Գլ. Զ. 18. Յայտ. Բ. 14.
ժ Թուոց. ԻԵ. 1. 9. Սաղ. ՃԶ. 29.
ի Ելից. ԺԷ. 2. 7. Թուոց. ԻԱ. 5. Բ Օրին. Զ. 16. Սաղ. ՀԸ. 18. 56. ՂԵ. 9. ՃԶ. 14.
լ Թուոց. ԻԱ. 6.
խ Ելից. ԺԶ. 2. ԺԷ. 2. Թուոց. ԺԴ. 2. 29. ԺԶ. 41.
ծ Ելից. ԺԲ. 23. Բ Թագ. ԻԴ. 16. Ա Մնաց. ԻԱ. 15.
կ Թուոց. ԺԴ. 37. ԺԶ. 49.
հ Հռովմ. ԺԵ. 4. Գլ. Թ. 10.
ձ Գլ. Է. 29. Փիլիպ. Դ. 5. Եբր. Ժ. 25. 37. Ա Յովհ. Բ. 18.
ղ Հռովմ. ԺԱ. 20.

13 Փորձութիւն 'ի ձեր վերայ ոչ է եկեալ բայց 'ի մարդկանէ. այլ հաւատարիմ է Աստուած՝ որ ոչ արկցէ զձեզ 'ի փորձութիւն առաւել քան զկար ձեր, այլ արասցէ ընդ փորձութեանն և զելս՝ զի համբերել կարասջիք։

14 Վասն որոյ սիրելիք իմ, փախերուք 'ի կռապաշտութենէ։

15 Իբրև ընդ իմաստունս խօսիմ. ընտրեցէք ձեզէն՝ զոր ասեմս։

16 Բաժակին օրհնութեան՝ զոր օրհնեմք, ոչ ապաքէն հաղորդութիւն է արեանն Քրիստոսի. հացն՝ զոր բեկանեմք, ոչ ապաքէն հաղորդութիւն է մարմնոյն Քրիստոսի։

17 Զի մի հաց՝ մի մարմին եմք բազումքս. զի ամենեքին 'ի միոջէ հացէ անտի վայելեմք։

18 Տեսէք զԻսրայէլն ըստ մարմնոյ. ոչ ապաքէն որ ուտեն 'ի զոհիցն՝ հաղորդ են սեղանոյն։

19 Իսկ արդ զինչ ասեմ, թէ զոհեալն իցէ ինչ. և կամ թէ կուռքն իսկ իցեն ինչ։

20 Այլ զոր զոհենն հեթանոսք, դիւաց՝ և ոչ Աստուծոյ զոհեն. ոչ կամիմ զձեզ հաղորդս դիւաց լինել. քանզի ոչ կարէք զբաժակն Տեառն ըմպել և զբաժակն դիւաց։

21 Եւ ոչ կարէք 'ի սեղանոյ Տեառն վայելել՝ և 'ի սեղանոյ դիւաց։

13 Ուրիշ փորձութիւն ձեզ վերայ չի եկել՝ բայց միայն մարդկանցից. բայց Աստուած հաւատարիմ [ա] է՝ որ չի ձգիլ ձեզ փորձութեան մէջ ձեր կարողութիւնիցն [բ] աւելի, բայց այն փորձութեան հետ դուրս գալն էլ կանէ՝ որ կարենաք [գ] համբերել։

14 Նորահամար իմ սիրելիքս՝ փախէք [դ] կռապաշտութիւնիցը։

15 Ինչպէս իմաստուններին հետ եմ [ե] խօսում, դուք ինքդ դատեցէք նա՝ որ ասում եմ,

16 Օրհնութեան բաժակն՝ որ օրհնում ենք, չէ՞ որ նա հաղորդութիւն է Քրիստոսի [զ] արիւնին. հացն՝ որ կտրում ենք, չէ՞ որ նա հաղորդութիւն է Քրիստոսի [է] մարմնոյն։

17 Որովհետև մին հաց մին մարմին [ը] ենք մենք շատերս. ինչու որ ամէնքս նոյն մին հացիցն ենք վայելում։

18 Տեսէք [թ] Իսրայէլին մարմնոյ [ժ] կողմանէ. չէ՞ որ նորանք՝ որ մատաղներիցն են ուտում, մասնակից են [ի] սեղանին։

19 Արդ ինչ ասեմ. միթէ զոհածը մին բան է, և կամ թէ կռքերն էլ մին բան [լ] են։

20 Բայց նա, որ հեթանոսները մատաղ են անում, դևերին են մատաղ [խ] անում, և ոչ թէ Աստուծոյն. չեմ կամենում՝ որ դուք դևերին մասնակից լինիք. պատճառն որ՝ չէք կարող Տէրոջն բաժակը [ծ] խմել՝ և դևերի բաժակն [կ] էլ։

21 Եւ չէք կարող Տէրոջն սեղանիցը վայելել՝ և դևերի սեղանիցն էլ։

ա Գղ. Ա. 9.
բ Սաղ. ՃԻԵ. 3. Բ պետ. Բ. 9.
գ Երեմ. ԻԹ. 11.
դ Համար. 7. Բ կորնթ. Զ. 17. Ա Յովհ. Ե. 21.
ե Գղ. Ը. 1.
զ Մատթ. ԻԶ. 26, 27. 28.
է Գործ. Բ. 42, 46. Գղ. ԺԱ. 23, 24.
ը Հռոմ. ԺԲ. 5. Գղ. ԺԲ. 27.
թ Հռոմ. Դ. 12. Գաղ. Զ. 16.
ժ Հռոմ. Դ. 1. Թ. 3. 5. Բ կորնթ. ԺԱ. 18.
ի Ղև. Գ. 3. Է. 15.
լ Գղ. Ը. 4.
խ Ղև. ԺԷ. 7. Բ Օրէն. ԼԲ. 17. Սաղ. ՃԶ. 37. Յայտ. Թ. 20.
ծ Բ կորնթ. Զ. 15, 16.
կ Բ Օրէն. ԼԲ. 38.

22 Եթէ նախանձ ինչ արկանիցեմք Տեառն. միթէ զօրագո՞յնք իցեմք քան զնա. ամենայն ինչ ինձ մարթ է՝ այլ ոչ ամենայն ինչ օգուտ է։

23 Ամենայն ինչ ինձ մարթ է, այլ ոչ ամենայն ինչ շինէ։

24 Մի ոք զանձինն եւեթ խնդրեսցէ՝ այլ եւ զընկերին։

25 Ամենայն ինչ՝ որ ՚ի սպանդանոցի վաճառի, կերիջք՝ եւ մի խտրէք վասն խղճի մտաց։

26 Զի Տեառն է երկիր լրիւ իւրով։

27 Եթէ ոք կոչէ զձեզ յանհաւատից՝ եւ կամիցիք երթալ. զամենայն ինչ՝ որ առաջի դնիցի, կերիջք եւ մի խտրէք վասն խղճի մտաց։

28 Ապա եթէ ոք ասասցէ ձեզ՝ թէ Այդ զոհեալ է, մի ուտիցէք վասն նորա որ գուշակն եղեւ, եւ վասն խղճի մտաց։

29 Այլ զխիղճ մտացն ասեմ ոչ զքոյն, այլ զընկերին. իսկ ընդէ՞ր բնաւ ազատութիւնս իմ դատիցի յայլոյ խղճէն մտաց։

30 Եթէ ես շնորհօք վայելեմ, ընդէ՞ր հայհոյիցիմ, վասն որոյ ես գոհանամ։

31 Արդ եթէ ուտիցէք՝ եթէ ըմպիցէք՝ եթէ զինչ եւ առնիցէք, զամենայն ինչ ՚ի փառս Աստուծոյ արասջիք։

32 Առանց գայթակղութեան գնալոյ Հրէից եւ հեթանոսաց լինիջիք՝ եւ եկեղեցւոյն Աստուծոյ։

22 Կամ թէ Տէրը նախանձի — շարժենք. միթէ նորանից աւելի զօրաւոր ‡ ենք. ամէն բան կարելի է ինձ. բայց ամէն բան օգուտ չէ։

23 Ամէն բան կարելի է ինձ, բայց ամէն բան շինութիւն + չի տալիս։

24 Չը լինի որ մէկն իրեն անձին բանին միայն հետեւի, բայց նորան էլ որ ընկերինն • է։

25 Ամէն ինչ բան՝ որ սպանդանոցումը ծախւում է, կերէք՝ եւ չը քննէք խղճմտանքի ‡ պատճառովը։

26 Պատճառն որ՝ երկիրը Տէրինն է իրեն ամէն = լիութենովը։

27 Թէ որ անհաւատներիցը մինն կանչէ ձեզ՝ եւ դուք կամենաք գնալ, ամէն բան որ ձեր առաջին դնէլի՝ կերէք, եւ չը քննէք խղճմտանքի ‡ պատճառովը։

28 Ապա թէ որ մինն ասէ ձեզ՝ թէ Այդ զոհված բան է, մի ուտէք՝ նորա պատճառովն՝ որ իմացում տուաւ, եւ խղճմտանքի ‡ պատճառովը։

29 Բայց խղճմտանք եմ ասում ոչ թէ իրանը, այլ ընկերինը. էլ ինչու իմ ազատութիւնս պիտի ընաւ դատվի ուրիշի խղճմտանքիցը։

30 Թէ որ ես շնորհակալութենով եմ վայելում, ինչու հայհոյվիմ այն բանի ‡ համար՝ որ ես նորա համար ‡ գոհանում եմ։

31 Ուրեմն՝ թէ ուտէք՝ թէ խմէք՝ թէ ինչ գործ էլ որ անէք, ամէն բան Աստուծոյ փառաց համար • արէք։

32 Առանց գայթակղութեան տալոյ լինիք Հրէաներին եւ ‡ հեթանոսներին եւ Աստուծոյ ≡ եկեղեցուն։

— Բ Օրէն. ԼԲ. 21.
‡ Եզեկ. ԻԲ. 14.
+ Գղ. Ջ. 12.
• Հռովմ. ԺԵ. 1. 2. Համար. 33. Գղ. ԺԴ. 5. Փիլիպ. Բ. 4.
21.
‡ Ա Տիմ. Դ. 4.
— Ելից. ԺԹ. 5. Բ Օրէն. Ժ. 14. Սաղ. ԻԴ. 1. Ծն. 12. Համար. 28.
Բ Ղու. Ժ. 7.
‡ Գղ. Ը. 10. 12.
‡ Հռովմ. ԺԴ. 16
Ւ Հռովմ. ԺԴ. 6. Ա Տիմ. Դ. 3. 4.
Ղ Կող. Գ. 17. Ա Պետ. Դ. 11.
Ւ Հռովմ. ԺԴ. 13. Գղ. Ը. 13. Բ Կորնթ. Զ. 3.
≡ Գործ. Ի. 28. Գղ. ԺԱ. 22. Ա Տիմ. Գ. 5.

33 Որպէս և ես ամենեւին ամենեցուն հաճոյ լինիմ. ոչ խնդրեմ զանձին օգուտ, այլ զբազմաց՝ զի ապրեսցին։

## ԳԼ. ԺԱ.

1 Նմանօղք ինձ եղերուք, որպէս և ես Քրիստոսի։

2 Գովեմ զձեզ՝ զի զամենայն ինչ զիմ յիշէք. և որպէս աւանդեցի ձեզ՝ զաւանդութիւնս ունիցիք։

3 Կամիմ զի գիտիցէք դուք. եթէ առն ամենայնի գլուխ Քրիստոս է, և գլուխ կնոջ այր, և գլուխ Քրիստոսի Աստուած։

4 Ամենայն այր՝ յորժամ յաղօթս կայցէ՝ կամ մարգարէանայցէ՝ և զգլուխն ծածկեալ ունիցի, յամօթ առնէ զգլուխն իւր։

5 Եւ ամենայն կին՝ յորժամ յաղօթս կայցէ՝ կամ մարգարէանայցէ բացաւ գլխով յամօթ առնէ զգլուխն իւր, զի այնպէս համարի՝ թէ գերծեալ իցէ։

6 Զի եթէ ոչ ագօղեսցի կին, փարթեսցէ զհերս իւր. ապա եթէ անպատեհ է կնոջ փարթել կամ գերծուլ, ագօղեսցի։

7 Առն մարդոյ չէ պարտ ծածկել զգլուխ իւր, զի պատկեր և փառք Աստուծոյ է. իսկ կին փառք առն իւրոյ է։

8 Զի ոչ եթէ այր ՚ի կնոջէ է, այլ կին յառնէ։

9 Քանզի ոչ իսկ հաստատեցաւ

33 Ինչպէս որ ես էլ ամէն բանով ամէնքին հաճոյ եմ ի լինում. իմ անձիս օգուտը չեմ խնդրում, բայց շատերինը՝ որ լ փրկվին։

1 Ինձ նմանօղ եղէք, ինչպէս որ ես էլ ա Քրիստոսին։

2 Գովում եմ ձեզ՝ որ իմ ամէն բաները բ յիշում էք, և ինչպէս որ պատուիրեցի ձեզ՝ այն պատուիրանքները գ պահում էք։

3 Կամենում եմ՝ որ դուք գիտենաք, թէ ամէն մարդի գլուխը Քրիստոս դ է, և կնկան գլուխը ե մարդը, և Քրիստոսի գլուխն զ Աստուած։

4 Ամէն մարդ՝ երբոր աղօթք անէ՝ կամ է մարգարէանայ՝ և գլուխը ծածկած ունենայ, ամօթ է անում իրեն գլուխը։

5 Եւ ամէն կին՝ երբոր աղօթք անէ՝ կամ մարգարէանայ բաց ը գլխով, ամօթ է անում իրեն գլուխն. ինչու որ՝ այնպէս է համարվում՝ թէ վերարած թ է.

6 Որ եթէ կին քող չը ձգէ՝ թող իրեն մազերն էլ կտրէ. ապա թէ որ կնկան անպատշաճ է մազերը կտրել կամ ժ վերմանել՝ թող քող ձգէ։

7 Արու մարդոյ պէտք չէ որ իրեն գլուխը ծածկէ, պատճառն որ՝ նա Աստուծոյ պատկեր և փառք ի է. բայց կինն իրեն մարդոյն փառքն է։

8 Ինչու որ՝ ոչ թէ մարդը կնկանից է, բայց կինը լ մարդուցը։

9 Պատճառն որ՝ ոչ թէ մարդը

ի Հռովմ. ԺԵ. 2. Գղ. Թ. 19. 22. լ Համար. 21.

—

ա Գղ. Դ. 16. Եփես Ե. 1. Փիլիպ. Գ. 17. Ա Թես. Ա. 6. Բ Թես. Գ. 9. բ Գղ. Դ. 17. գ Գղ. Ե. 17. Բ Թես. Բ. 14. Գ 6. դ Եփես. Ե. 23. ե Ծննդ. Գ. 16. Ա Տիմ. Բ. 11. 12. Ա Պետ. Գ. 1. 5, 6. զ Յովհ. ԺԴ. 28. Գղ. Գ. 23. ԺԵ. 27. 28. Փիլիպ. Բ. 7—9. է Գղ. ԺԲ. 10. 28. ԺԴ. 1, ա. ը Գործ. ԻԱ. 9. թ Բ Օրին. ԻԱ. 12. ժ Թու. Ե. 18. Բ Օրին. ԻԲ. 5. ի Ծննդ. Ա. 26, 27. Ե. 1. Թ. 6, լ Ծննդ. Բ. 21, 22.

այր վասն կնոջ, այլ կին վասն առն ։

10 Վասն այնորիկ պարտի կինն քող դնել գլխոյն վասն հրեշտակաց ։

11 Բայց ոչ կին առանց առն, եւ ոչ այր առանց կնոջ ՚ի Տէր ։

12 Զի որպէս կին յառնէ՝ նոյնպէս եւ այր ՚ի կնոջէ, բայց ամենայն յԱստուծոյ ։

13 Այլ դուք ձեզէն տուք զիրաւրդ, արժան է կնոջ մարդոյ հոլանի յաղօթս կալ առաջի Աստուծոյ ։

14 Եւ ոչ բնութիւնն իսկ ուսուցանէ զձեզ. զի այր եթէ գիսաւոր է՝ անարգանք են նմա ։

15 Բայց կին եթէ գիսաւոր է փառք են նմա. զի գէսք փոխանակ զգեստու տուեալ են նմա ։

16 Ապա թէ ոք կամի հակառակօղ լինել, մեք չունիմք այնպիսի սովորութիւն, եւ ոչ եկեղեցիքն Աստուծոյ ։

17 Այլ զայս պատուիրեմ, ոչ որպէս թէ գովիցեմ, զի ոչ ՚ի լաւ անդր՝ այլ ՚ի վատթարն նկրտիք ։

18 Նախ՝ յորժամ ՚ի մի վայր ժողովիցիք յեկեղեցին, լսեմ եթէ հերձուածք գոն ՚ի ձեզ. եւ սակաւ ինչ հաւատացի ։

19 Բայց եւ հերձուածք լինելոց են ՚ի ձեզ. զի որ ընտիրն իցեն ՚ի ձեզ՝ երեւեսցին ։

20 Եւ արդ՝ ՚ի ժողովելն ձեզ ՚ի միասին՝ ոչ է տունն Տեառն ձեզ տեղի հաց ուտելոյ ։

կնկան համար ստեղծուեցաւ՝ բայց կինը մարդուն խ համար ։

10 Նորա համար պէտք է, որ կինը մեծարանքի նշան դնէ գլխին ծ վերայ հրեշտակներին կ համար ։

11 Միայն թէ՝ ոչ կինն առանց մարդոյ է, եւ ոչ մարդն առանց կնկան հ Տէրումը ։

12 Ինչու որ՝ ինչպէս որ կինը մարդուցը, այնպէս էլ մարդը կնկանիցը. բայց ամէնն ձ Աստուածանից ։

13 Բայց դուք ինքներդ իրաւունք դատեցէք. միթէ կնկան արժան է՝ որ բաց գլխով աղօթք անէ Աստուծոյ առաջին ։

14 Եւ բնութիւնն ինքն էլ չի սովորցնում ձեզ. պատճառն որ՝ թէ որ մարդը մազեր ունի՝ նա անարգանք է նորան ։

15 Բայց կինը թէ որ երկար մազեր ունի՝ նա փառք է նորան. ինչու որ՝ երկար մազերը հագուստի տեղ է տրուած նորան ։

16 Ապա թէ որ մէկը կամենումէ ղ հակառակել, մենք այնպէսի սովորութիւն չունինք՝ եւ ոչ էլ Աստուծոյ ճ եկեղեցիները ։

17 Բայց սա էլ պատուիրումեմ՝ եւ չեմ գովում ձեզ, որ դուք ոչ թէ դէպի լաւն՝ այլ դէպի վատն ընկած վազումէք ։

18 Առաջ՝ երբոր մէնտեղ էք ժողովվում եկեղեցուն մէջ, լսումեմ որ հերձուածներ կան ձեր մ մէջումը. եւ մին քիչ էլ հաւատացի ։

19 Բայց հերձուածներ էլ պիտի լինեն ձեր յ մէջումը՝ որ նոքանք՝ որ ձեզանում ընտիր են՝ յայտնի ն լինին ։

20 Ուրեմն երբոր մէնտեղ էք ժողովվում՝ Տէրի տունը ձեզ համար հաց ուտելոյ տեղ չէ ։

խ Ծննդ. Բ. 18. 21. 23.
ծ Ծննդ. ԻԴ. 65.
կ Ժող. Ե. 6.
հ Գաղ. Գ. 28.
ձ Հռովմ. ԺԱ. 36.
ղ Ա Տիմ. Զ. 4.
ճ Գլ. Ե. 17. ԺԴ. 33.
մ Գլ. Ա. 10—12. Գ. 3.
յ Մատթ. ԺԸ. 7. Ղու. ԺԷ. 1. Գործ. Ի. 30. Ա Տիմ. Դ. 1. Բ Պետ. Բ. 1, 2.
ն Ղու. Բ. 25. Ա Յովհ. Բ. 19. Բ Օրին. ԺԳ. 3.

21 Զի իւրաքանչիւրոք զիւր ընթ-
րիս յառաջանայ ուտել, եւ ոմն
քաղցեալ՝ եւ ոմն արբեալ։
22 Միթէ տունս ոչ ունիցիք ու-
տելոյ կամ ըմպելոյ. եթէ զեկեղեց-
եաւն Աստուծոյ արհամարհիցէք, եւ
յամօթ առնէք զչքաւորսն. զինչ
ասացից. գովեցից զձեզ. յայդմ ոչ
գովեմ։
23 Զի ես ընկալայ 'ի Տեառնէ՝ զոր
եւ ձեզն աւանդեցի, եթէ Տէր Յի-
սուս 'ի գիշերին յորում մատնէր,
առ հաց,
24 Գոհացաւ՝ եբեկ եւ ասէ. Ա-
ռէք՝ եւ կերայք. այս է մարմին
իմ, որ վասն ձեր բաշխի, զայս
արարէք առ իմոյ յիշատակի։
25 Նոյնպէս եւ զբաժակն յետ
ընթրեացն առ եւ ասէ. Այս բա-
ժակ՝ նոր ուխտ է իմով արեամբ.
զայս արարէք քանիցս անգամ եթէ
ըմպիցէք՝ առ իմոյ յիշատակի։

26 Քանզի որչափ անգամ թէ ուտիցէք
զհացս զայս, եւ զբաժակս ըմպիցէք,
զմահն Տեառն պատմիցէք, մինչեւ
եկեսցէ նա։
27 Այսուհետեւ՝ որ ուտիցէ զհա-
ցս, կամ ըմպիցէ զբաժակս Տեա-
ռն անարժանութեամբ, պարտա-
կան եղիցի մարմնոյ եւ արեան Տեա-
ռն։
28 Փորձեսցէ մարդ զանձն իւր,
եւ ապա 'ի հացէ անտի կերիցէ, եւ
'ի բաժակէն արբցէ։
29 Զի որ ուտէ եւ ըմպէ անար-
ժանութեամբ՝ դատաստանս անձին
իւրում ուտէ եւ ըմպէ. զի ոչ խորա-
բէ զմարմինն Տեառն։

30 Վասն այսորիկ իսկ են 'ի ձեզ

21 Վասն զի՝ ամէն մէկը փու-
թայ իրեն ընթրիքն ուտելոյ. եւ
մէկը անօթի է, եւ մէկը ւ հարբած։
22 Միթէ տուն չունիք ուտելոյ
եւ խմելոյ. կամ թէ Աստուծոյ ե-
կեղեցին ոչ ինչ էք ¬ համարում,
եւ չքաւորներին ամօթ էք ւ ձգում.
ինչ ասեմ. գովեմ ձեզ. այդ բա-
նումս չեմ գովում։
23 Վասն զի՝ ես Տէրոջմէն ըն-
դունեցի նա՝ որ ձեզ էլ ˜ տուի. որ
Տէր Յիսուսն այն գիշերումն որ
մատնվումէր, հաց առաւ,
24 Գոհացաւ, կոտրեց եւ ասաց.
Առէ՛ք, կերէ՛ք. աս է իմ մարմինս՝
որ ձեզ համար փշրվումէ. աս արէ՛ք
իմ յիշատակիս Հ համար։
25 Այնպէս էլ՝ ընթրիք ուտելուցն
ետեւ բաժակն առաւ եւ ասաց.
Այս բաժակս նոր ուխտ ու պայմանն
է իմ արիւնովս. աս արէ՛ք՝ քանի
անգամ որ խմէք, իմ յիշատակիս
համար։
26 Քանի անգամ որ այս հացս ու-
տէք, եւ այս բաժակս խմէք, Տէրի
մահը պատմեցէք՝ մինչեւ որ նա
˜ կը գայ։
27 Ուրեմն ով որ այս հացս ուտէ՝
կամ Տէրի բաժակը խմէ անարժա-
նութեամբ, նա պարտական կը լինի
Տէրի մարմնոյն եւ ¬ արիւնին։

28 Թող մարդը փորձէ իրեն անձը,
եւ ապա այն հացիցն ուտէ՝ եւ այն
բաժակիցը Հ խմէ։
29 Վասն զի՝ նա որ անարժա-
նութեամբ է ուտում եւ խմում,
իրեն անձին համար դատաստան է
ուտում եւ խմում. ինչու որ՝ նա
չի ջոկում Տէրի մարմինը։
30 Իսկ նորահամար էլ ձեր միջումը

ւ Բ Պետ. Բ. 13։
Յուդ. 12։
¬ Գղ. Ժ. 32։
՟ւ Յակ. Բ. 6։
˜ Գղ. ԺԵ. 3։
Գաղ Ա. 1. 11,
12։
Հ Մատթ. ԻԶ. 26.
Մարկ. ԺԴ. 22.
Ղու. ԻԲ. 19։
˜ Յովհ. ԺԴ. 3։
ԻԱ. 22։ Գործ.
Ա. 11։ Գղ. Դ.
5։ ԺԵ. 23։ Ա
Թես. Դ. 15։ Բ
Թես. Ա. 10.
Յուդ. 14։ Յայտ
Ա. 7։
¬ Թու. Թ. 10. 13։
Յովհ. Զ. 51. 63.
64։ ԺԴ. 27։
Գղ. Ժ. 21։
Հ Բ Կորնթ. ԺԴ.
5։ Գաղ. Զ. 4։

բազում հիւանդք եւ ախտաժէտք․
եւ չափ եւս այն են, որ եւ ննջեցեալք իսկ իցեն ։
31 Զի եթէ զանձինս քննէաք՝ ապա ոչ դատապարտէաք ։
ɾ32 Եւ եթէ դատիմք՝ 'ի Տեառնէ խրատիմք․ զի մի ընդ աշխարհի դատապարտեսցուք ։
33 Այսուհետեւ եղբարք՝ յորժամ 'ի մի վայր ժողովիցիք ուտել՝ միմեանց մնասջիք ։
34 Ապա թէ որ քաղցեալ իցէ՝ 'ի տան իւրում կերիցէ․ զի մի 'ի դատապարտութիւն ժողովիցիք․ բայց զայլ ինչ յորժամ եկից՝ յայնժամ պատուիրեցից ։

շատ հիւանդներ եւ ցաւագարներ կան. եւ շատ էլ նորանք են՝ որ ննջած են ։
31 Ինչու որ՝ եթէ մեր անձները կը քննէինք, ապա չէինք ⊤ դատապարտուէլ ։
32 Եւ թէ որ դատուինք՝ Տէրէն ɾ խրատուիմնք, որ աշխարհքի հետ չը դատապարտուինք ։
33 Ուրեմն եղբարք՝ երբոր ժողովվիք ուտելոյ համար, իրար սպասեցէք ։
34 Ապա թէ որ մէկը անօթի է՝ թող իրեն տանը ուտէ․ որ դատապարտութեան համար չը ժողովվիք․ բայց ուրիշ բաները՝ երբոր ‡ կը գամ՝ այն ժամանակը + կը պատուիրեմ ։

ԳԼ. ԺԲ

1 Այլ վասն հոգեւորացն, եղբարք՝ ոչ կամիմ եթէ ագէտք իցէք ։
2 Գիտէք իսկ՝ զի մինչ հեթանոսքն էիք առ կուռսն անմռունչս՝ որպէս երթայիք եւ գայիք ։
3 Վասն որոյ ցուցանեմ ձեզ․ զի ոչ ոք Հոգւով Աստուծոյ խօսի՝ եւ ասիցէ թէ Նզովեալ Յիսուս․ եւ ոչ ոք կարէ ասել՝ Տէր զՅիսուս, եթէ ոչ Հոգւովն Սրբով ։
4 Թէպէտ եւ բաժինք շնորհաց են՝ այլ Հոգի նոյն է ։
5 Եթէ բաժինք պաշտամանց են, այլ Տէր նոյն է ։
6 Եթէ բաժինք յաջողութեանց են, այլ Աստուած նոյն է․ որ

1 Բայց հոգեւոր շնորհներուն համար, եղբարք՝ չեմ կամենում որ = չը գիտենաք ։
2 Իսկ դուք լաւ գիտէք՝ որ երբոր հեթանոս ‡ էիք, ինչպէս գէպի այն անձայն կուռքերը գնում եւ գալիս ‡ էիք ։
3 Նորահամար յայտնի տալիս եմ ձեզ, որ ոչ ով չկայ՝ որ Աստուծոյ Հոգովը խօսի՝ եւ Յիսուսին նզովք ÷ կարդայ․ եւ ոչ ով չի կարող Յիսուսին Տէր ասել՝ եթէ ոչ Սուրբ Ի Հոգովը ։
4 Թէեւ շնորհքները բաժանված ւ են, բայց Հոգին նոյն մին ե է ։
5 Թէ որ պաշտօնները բաժանված են, բայց Տէրն նոյն մին ւ է ։
6 Թէ որ յաջողութիւնները բաժանված են՝ բայց Աստուած նոյն

⊤ Սաղ. ԼԲ. 5. Ա Յովհ. Ա. 9.
ɾ Սաղ. ՂԴ. 12. 13. Եբր. ԺԲ. 5—11.
ɔ Համեմ. 21.
– Համեմ. 22.
‡ Գլ. Դ. 19.
+ Գլ. Ե. 17. Տիտ. Ա. 5.

—

= Գլ. ԺԴ. 1. 37.
ɛ Գլ. Զ. 11. Եփես. Բ. 11. 12. Ա Թես. Ա. 9. Տիտ. Գ. 3. Ա Պետ. Դ. 3.
÷ Սաղ. ՃԺԵ. 5.
⫧ Մարկ. Թ. 39. Ա Յովհ. Դ. 2. 3.
Ի Մատթ. ԺԶ. 17. Յովհ. ԺԵ. 26. Բ Կորնթ. Գ. 5.
ւ Հռովմ. ԺԲ. 4. 5. Եբր. Բ. 4. Ա Պետ. Դ. 10.
ե Եփես. Դ. 4.
ա Հռովմ. ԺԲ. 6—8. Եփես. Դ. 11.

յաջողէ զամենայն յամենայնի:
7 Բայց իւրաքանչիւր ումեք տու-
եալ է յայտնութիւն Հոգւոյն՝ առ
իւրաքանչիւր օգուտ:
8 Ումեմն ՚ի Հոգւոյն տուեալ է
բան իմաստութեան. այլում բան
գիտութեան ըստ նմին Հոգւոյ:
9 Միւսումն հաւատք նովին Հոգ-
ւով. այլում շնորհք բժշկութեանց
նովին Հոգւով:
10 Այլում յաջողութիւն զօրու-
թեանց. այլում մարգարէութիւն.
այլում ընտրութիւն հոգւոց. այ-
լում ազգք լեզուաց. այլում թարգ-
մանութիւն լեզուաց:
11 Այլ զայս ամենայն յաջողէ մի
եւ նոյն Հոգի, եւ բաժանէ իւրա-
քանչիւր որպէս եւ կամի:
12 Որպէս մարմին մի է, եւ ան-
դամս բազումս ունի. եւ ամենայն
բազում անդամք մարմնոյն՝ մի մար-
մին է. նոյնպէս եւ Քրիստոս.
13 Քանզի միով Հոգւով մեք ա-
մենեքին ՚ի մի մարմին մկրտեցաք.
եթէ Հրեայք, եթէ հեթանոսք,
եթէ ծառայք, եթէ ազատք, ամե-
նեքին զմի Հոգի արբաք:
14 Քանզի մարմին ոչ մի անդամ
է, այլ բազում:
15 Եթէ ասիցէ ոտն, Զի չեմ ձե-

մին է, որ ամէնքը ամէն բանին
մէջ [բ] յաջողում է:
7 Բայց ամէն մէկին տուված է
Հոգույ յայտնութիւնը՝ ամէն մէկի
շահին [գ] համար:
8 Մէկին տուված է Հոգւով ի-
մաստութեան [դ] խօսքը. ուրիշին
գիտութեան խօսք՝ ճիշդ նոյն Հո-
գույ [ե] ձեւովը:
9 Միւսին հաւատք ճիշդ նոյն
[զ] Հոգովը. ուրիշին բժշկութեան
շնորհք ճիշդ նոյն [է] Հոգովը:
10 Ուրիշին զօրութիւններ անե-
լոյ [ը] յաջողութիւն. ուրիշին [թ] մար-
գարէութիւն. ուրիշին հոգիներին
[ժ] ընտրութիւն. ուրիշին կերպ կերպ
[ի] լեզուներ. ուրիշին լեզուների
թարգմանութիւններ:
11 Բայց այս ամէնքս ճիշդ նոյն
մին Հոգին է յաջողում, եւ ամէն
մէկին [լ] բաժանում է ինչպէս որ
[խ] կամենում է:
12 Ինչպէս որ մարմինը մին է, եւ
շատ անդամներ ունի. եւ մարմ-
նոյ այն ամէն շատ անդամները մին
մարմին [ծ] են. այնպէս էլ [կ] Քրիս-
տոս:
13 Պատճառն որ՝ մենք ամէնքս
մին Հոգով մկրտուեցանք մին մար-
մին [հ] ըլլալոյ. թէ Հրէաներ, թէ
հեթանոսներ, թէ ծառաներ, թէ
[ձ] ազատներ, ամէնքս մին Հոգին
[ղ] խմեցինք:
14 Ինչու որ՝ մարմինը մին անդամ
չէ, այլ շատ:
15 Թէ որ ոտն ասէ. Որովհետեւ

բ Եփես. Ա. 23:
գ Հռովմ. ԺԲ. 6—8: Գղ. ԺԴ. 26: Եփես. Դ. 7: Ա Պետ. Դ. 10, 11:
դ Գղ. Բ. 6. 7:
ե Գղ. Ա. 5: ԺԳ. 2: Բ Կորնթ. Ը. 7:
զ Մատթ. ԺԷ. 19, 20: Գղ. ԺԳ. 2. Բ Կորնթ. Դ. 13
է Մարկ. ԺԶ. 18. Յակ. Ե. 14:
ը Համար. 28, 29: Մարկ. ԺԶ. 17. Գաղ. Գ. 5:
թ Հռովմ. ԺԲ. 6. Գղ. ԺԳ. 2: ԺԴ. 1, [illegible]:
ժ Գղ. ԺԴ. 29: Ա Յովհ. Դ. 1:
ի Գործ. Բ. 4: Ժ. 46: Գղ. ԺԴ. 1:
լ Հռովմ. ԺԲ. 6: Գղ. Է. 7: Բ Կորնթ. Ժ. 13: Եփես. Դ. 7:
խ Յովհ. Գ. 8: Եբր. Բ. 4:
ծ Հռովմ. ԺԲ. 4, 5: Եփես. Դ. 4, 16:
կ Գղ. ԺԲ. 27: Գաղ. Գ. 16:
հ Հռովմ. Զ. 5:
ձ Գաղ. Գ. 28: Եփես. Բ. 13, 14, 16: Կող. Գ. 11:
ղ Յովհ. Զ. 64: Է. 37—39:

որն՝ չեմ 'ի մարմնոյ անտի, ոչ այ-
նու չիցէ 'ի մարմնոյ անտի։

16 Եւ եթէ ասիցէ ունկն, Վա-
սն զի չեմ ակն՝ չեմ 'ի մարմնոյ
անտի, ոչ այնու չիցէ 'ի մարմնոյ
անտի։
17 Եթէ ամենայն մարմինն ակն էր՝
ո՞ւր էր ունկն. եւ եթէ ամենայն
լսելիք էր՝ ո՞ւր էին հոտոտելիք։

18 Բայց արդ՝ Աստուած եդ զան-
դամսն՝ զմի մի իւրաքանչիւր 'ի նո-
ցանէ 'ի մարմնին՝ որպէս եւ կամե-
ցաւ։
19 Ապա թէ էր ամենայն մի ան-
դամ, ո՞ւր էր մարմինն։
20 Բայց արդ՝ անդամք բազում
են, եւ մարմին մի։
21 Ո՛չ կարէ ակն ասել ձեռին,
թէ Չես ինձ պիտոյ, եւ կամ դարձ-
եալ գլուխ ոտից՝ թէ Չէք ինձ պի-
տոյ։
22 Այլ առաւել որ թուին ան-
դամք մարմնոյն թէ տկարագոյնք ի-
ցեն, կարեւորք են։

23 Եւ որ թուին թէ անարգա-
գոյնք իցեն մարմնոյն, զայնս առա-
ւելագոյն պատիւ ածեմք. եւ ա-
մօթոյքն մեր առաւել եւս պարկեշ-
տութիւն ունին։
24 Եւ պարկեշտագոյն մերոյ չէ ինչ
պիտոյ. քանզի Աստուած խառնեաց
զմարմինն, եւ նուաղին առաւել
եւս պատիւ ետ։
25 Զի մի իցեն հերձուածք 'ի
մարմնի անդ, այլ զի նոյնք զմիմ-
եանց հոգայցեն անդամքն։

26 Եթէ վշտանայ ինչ մի անդա-
մըն, վշտանան ամենայն անդամքն
ընդ նմա. եւ եթէ փառաւորի մի
անդամն, խնդան ամենայն անդամ-
քըն ընդ նմա։

ձեռ չեմ՝ էլ նոյն մարմնից չեմ.
միթէ նորանով այն մարմնից չի՞
լինիլ։
16 Եւ թէ որ ականջն ասէ, Ո-
րովհետեւ ես աչք չեմ՝ էլ նոյն
մարմնից չեմ. միթէ նորանով նոյն
մարմնից չի՞ լինիլ։
17 Թէ որ բոլոր մարմինն աչք լի-
նէր՝ էլ ո՞ւր տեղ էր ականջը. եւ
թէ որ բոլոր մարմինը լսելիք լինէր՝
էլ ո՞ւր տեղ էր հոտոտելիքը։
18 Բայց հիմիկ Աստուած անդամ-
ները՝ նորանցից ամէն մէկը մին
մին դրաւ մարմնոյ մէջ՝ ինչպէս
որ Ն կամեցաւ։
19 Ապա թէ որ ամէնը մին ան-
դամ լինէր, ո՞ւր տեղ էր մարմինը։
20 Բայց հիմիկ՝ անդամները շատ
են, այլ մարմինը՝ մին։
21 Աչքը չի կարող ձեռքին ասել,
թէ Ինձ պէտք չես. կամ դարձեալ
գլուխը ոտներին՝ թէ Ինձ պէտք
չէք։
22 Բայց աւելի՛ էլ՝ մարմնոյ այն
անդամներն՝ որ երեւումն թէ շատ
տկար են, նորանք շատ հարկաւոր
են։
23 Եւ նորանք՝ որ երեւումն՝ թէ
մարմնոյ շատ անարգվածներն են,
նորանց էլ աւելի պատիւ ենք ա-
նում. եւ մեր ամօթալիքներն էլ
աւելի պարկեշտութիւն ունին։
24 Եւ մեր պարկեշտանդամներին
մին բան պէտք չէ. պատճառն որ՝
Աստուած մարմինը բարեխառնեց,
եւ ցածին էլ աւելի պատիւ տուաւ.
25 Որ նոյն մարմնոյն մէջ տարա-
ձայնութիւն չը լինի. բայց որ իսկ
նոյն անդամներն իրար համար հոգս
ունենան։
26 Եւ թէ որ մին անդամ ցա-
ւումէ, ամէն անդամներն էլ նորա
հետ ցաւումեն. եւ թէ որ մին ան-
դամ փառաւորվումէ, ամէն ան-
դամներն էլ նորա հետ ուրախա-
նումեն։

գ Գղ. ԺԲ. 28. [ է Հռովմ. ԺԲ. 3.] Գղ. Գ. 5. Հռ.] Մար. 11.]

27 Այլ դուք մարմին Քրիստոսի էք, և անդամք յանդամոց նորա։

28 Եւ զոսն եդ Աստուած յեկեղեցւոջ այս են. նախ՝ զառաքեալս, երկրորդ՝ զմարգարէս, երրորդ զվարդապետս, ապա զօրութիւնս, ապա շնորհս բժշկութեանց, օգնութիւնս՝ վարիչս, ազգս լեզուաց՝ թարգմանութիւնս լեզուաց։

29 Միթէ ամենեքին առաքեա՞լք իցեն. միթէ ամենեքին մարգարէ՞ք իցեն. միթէ ամենեքին վարդապե՞տք իցեն. միթէ ամենեքին զօրութի՞ւնք իցեն։

30 Միթէ ամենեքին շնորհս բժշկութեան ունիցին. միթէ ամենեքին ՚ի լեզուս խօսիցին. միթէ ամենեքին թարգմանիցեն։

31 Բայց նախանձաւոր լերուք շնորհացն, որ լաւն են. այլ ես առաւել ևս ճանապարհ ցուցանեմ ձեզ։

27 Բայց դուք Քրիստոսի մարմին — էք, և նորա անդամներիցն = անդամներ։

28 Եւ նրանք՝ որ Աստուած եկեղեցումը դրաւ, սրանք Հ են. առաջ՝ + առաքեալները. երկրորդ՝ ր մարգարէները. երրորդ՝ վարդապետները. յետոյ յ զօրութիւնները. յետոյ բժշկութեան — շնորհքները, ‡ օգնութիւնները, + կառավարութիւնները, կերպ կերպ • լեզուները, լեզուների թարգմանութիւնները։

29 Միթէ ամէնքն առաքեալ են. միթէ ամէնքը մարգարէ՞ են. միթէ ամէնքը վարդապետ են. միթէ ամէնքը զօրութիւն են։

30 Միթէ ամէնքը բժշկութեան շնորհքներ ունին. միթէ ամէնքը լեզուներ են խօսում. միթէ ամէնքը թարգմանում են։

31 Բայց դուք խիստ հետևեցէք այն շնորհքներին՝ որ շատ լաւ ‡ են. բայց ես էլ աւելի — ճանապարհ եմ ցոյց տալիս ձեզ։

## ԳԼ. ԺԳ

1 Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ և զհրեշտակաց՝ և սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրև պղինձ, որ հնչէ. կամ իբրև զծնծղայ՝ որ ղօղանջէն։

2 Եւ եթէ ունիցիմ մարգարէութիւն, և գիտիցեմ զխորհուրդս ամենայն՝ և զամենայն գիտութիւն. և եթէ ունիցիմ զամենայն հաւատս՝ մինչև զլերինս փոփոխել, և սէր ոչ ունիցիմ, ոչինչ եմ։

1 Թէ որ մարդկանց և հրեշտակների լեզուներովը խօսիմ՝ և սէր չունենամ, ես պղնձի պէս կը լինիմ՝ որ ձայն է հանում, կամ ծնծղաների պէս՝ որ ձայնում են։

2 Եւ թէ որ մարգարէութիւն ունենամ, և ամէն խորհուրդները գիտենամ՝ և ամէն — գիտութիւնը. և թէ որ ամէն հաւատք ունենամ՝ մինչև որ սարերն էլ Ք փոխեմ, և սէր չունենամ, ոչինչ եմ։

— Հռովմ. ԺԲ. 5. Եփես. Ա. 23. Դ. 12. Ե. 23. 30. Կող. Ա. 24.
= Եփես. Ե. 30.
Հ Եփես. Դ. 11.
+ Եփես. Բ. 20. Գ. 5.
ր Գործ. ԺԳ. 1. Հռովմ. ԺԲ. 6.
յ Համար. 10.
— Համար. 9.
‡ Թու. ԺԱ. 17.
+ Հռովմ. ԺԲ. 8. Ա Տիմ. Ե. 17. Եբր. ԺԳ. 17. 24.
• Համար. 10.
‡ Գլ. ԺԴ. 1. 39.

— Գլ. ԺԲ. 8. 9. 10. 28. ԺԴ. 1.
Ճ Մատթ. Է. 22.
Ք Մատթ. ԺԷ. 19. Մարկ. ԺԱ. 23. Ղուկ. ԺԷ. 6.

3 Եւ եթէ ջամբեցից զամենայն
ինչս իմ աղքատաց , եւ մատնեցից
զմարմինս իմ յայրումն , եւ սէր ոչ
ունիցիմ , ոչինչ օգտիմ ։

4 Սէր երկայնամիտ է՝ քաղցրա-
նայ · սէր ոչ նախանձի , ոչ ամ-
բարհաւաճէ , ոչ հպարտանայ ։
5 Ո՛չ յանդգնի , ոչ խնդրէ զիւր ,
ոչ գրգռի , ոչ խորհի զչար ։

6 Ո՛չ խնդայ ընդ անիրաւութիւն՝
այլ խնդայ ընդ ստուգութիւն ։

7 Ամենայնի տանէ · ամենայնի հա-
ւատայ · ամենեւին յուսայ · ամե-
նայնի համբերէ ։

8 Սէր ոչ երբէք անկանի · եթէ
մարգարէութիւնք են՝ խափանես-
ցին · եթէ լեզուք՝ լռեսցեն · եթէ
գիտութիւն՝ խափանեսցի ·

9 Բանզի փոքր 'ի շատէ գիտեմք ·
եւ փոքր 'ի շատէ մարգարէանամք ։

10 Այլ յորժամ եկեսցէ կատա-
րումն , փոքր 'ի շատէս խափանես-
ցի ։
11 Մինչ տղայն էի՝ իբրեւ զտղ-
այ խօսէի , իբրեւ զտղայ խորհէի ,
իբրեւ զտղայ համարէի · այլ յոր-
ժամ եղէ այր՝ զտղայութեանն 'ի
բաց խափանեցի ։

12 Այժմ տեսանեմք իբրեւ ընդ
հայելի օրինակաւ , այլ յայնժամ
դէմ յանդիման · այժմ խելամուտ
եմ փոքր 'ի շատէ , այլ յայնժամ
գիտացից՝ որպէս եւ նայն ծանեաւ
զիս ։

3 Եւ թէ որ իմ ամէն ապրան-
քըս աղքատներին գ ուտացնեմ , եւ
իմ մարմինըս մատնեմ որ այրվի ,
եւ սէր չունենամ , ես ոչ մին օ-
գուտ չեմ ունենալ ։
4 դ Սէրը երկայնամիտ է՝ քաղցր
է · սէրը չի նախանձվում , չի գո-
ռոզանում , չի հպարտանում ,
5 Չի լրբանում , իրեն բանը չի
ե ուզում · չի գրգռվում , չար բան
չի մտածում ·
6 Անիրաւութեան համար զ չի
ուրախանում , բայց ճշմարտու-
թեան համար է ուրախանումէ ·
7 Ամէն բանի ը գիմանումէ · ա-
մէն բանի հաւատումէ , ամէն բա-
նի համար յոյս ունի , ամէն բանի
համբերումէ ։
8 Սէրն ոչ մին ժամանակ վէր չի
ընկնիլ · թէ որ մարգարէութիւն-
ներ կան՝ կը խափանվլին · թէ որ
լեզուներ՝ լուռ կը կենան · թէ որ
գիտութիւն՝ կը խափանվլի ։
9 Պատճառն որ՝ փոքր 'ի շատէ
գիտումենք · եւ փոքր 'ի շատէ
թ մարգարէանումենք ։
10 Բայց երբոր կատարեալը կը-
գայ , այս փոքր 'ի շատէս կը խա-
փանվլի ։
11 Երբոր տղայ էի՝ տղայի պէս
էի խօսում , տղայի պէս էի մտա-
ծում , տղայի պէս էի համարում ·
բայց երբոր մարդ էլայ՝ այն տղա-
յութեան բաները հեռու խափա-
նեցի ։
12 Հիմիկ իբր թէ հայելոյ մէջ օ-
րինակով ենք ժ տեսնում , բայց այն
ժամանակը երեսմադէմ · հիմիկ
փոքր 'ի շատէ տեղեակ եմ , բայց
այն ժամանակն այնպէս կը գիտե-
նամ՝ ինչպէս որ էլ նա ինձ ճա-
նաչեց ։

գ Մատթ. Զ. 1. 2.
դ Առակ. Ժ. 12.
Ա Պետ. Դ. 8.
ե Գղ. Ժ. 24. Փի-
լիպ. Բ. 4.
զ Սաղ. Ծ՛. 3.
Հռովմ. Ա. 32.
է Բ Յովհ. 4.
ը Հռովմ. ԺԵ. 1.
Գաղ. Զ. 2. Բ
Տիմ. Բ. 24.
թ Գղ. Ը. 2.
ժ Բ Կորնթ. Դ. 18.
Ե. 7.
ի Մատթ. ԺԸ. 10.
Ա Յովհ. Գ. 2.

13 Բայց արդ՝ մնան հաւատք, յոյս, սէր, սոքա երեքեան. և մեծ քան զսոսա սէր է։

13 Ուրեմն կը մնան հաւատք, յոյս, սէր. այս երեքը. և ասոնցմէ մեծը սէրն է։

## ԳԼ. ԺԴ

1 Զհետ երթայք սիրոյ, և նախանձաւոր լերուք հոգևորացն առաւել՝ զի և դուք մարգարէանայցէք։

2 Զի որ խօսի 'ի լեզուս՝ ոչ ընդ մարդկան խօսի, այլ ընդ Աստուծոյ. զի ոչ ոք է՝ որ լսէ, բայց Հոգւով խօսի խորհուրդս։

3 Իսկ որ մարգարէանայն, մարդկան խօսի շինութիւն և մխիթարութիւն և սփոփութիւն։

4 Որ խօսի 'ի լեզուս՝ զանձն իւր շինէ. և որ մարգարէանայն՝ զեկեղեցին շինէ։

5 Կամիմ զի ամենեքին դուք 'ի լեզուս խօսիցէք՝ առաւել զի մարգարէանայցէք. զի լաւ է՝ որ մարգարէանայն քան զայն՝ որ 'ի լեզուս խօսիցի. բայց եթէ թարգմանիցէ՝ զի եկեղեցին շինութիւն առնուցու։

6 Բայց այժմ եղբարք՝ եթէ եկից առ ձեզ 'ի լեզուս խօսելով. զինչ օգուտ լինիցիմ ձեզ՝ եթէ ոչ խօսիցիմ, կամ յայտնութեամբ, կամ գիտութեամբ, կամ մարգարէութեամբ, կամ վարդապետութեամբ։

7 Այնպէս՝ որպէս անշունչքն ձայն տայցեն, եթէ փող, և եթէ քնար. զի եթէ ընտրութիւն ինչ բարբառոյն չտանիցեն, զիա՞րդ ճանաչիցի փողոյն հարկանել՝ կամ քընարին հնչել։

8 Քանզի եթէ խառնաձայն արձակիցի փողն, ո՞վ պատրաստեսցի 'ի պատերազմ։

1 Սիրոյն հետևեցէք, և հոգևոր շնորհներուն = եղէք. և աւելի նորան՝ որ դուք ալ ‡ մարգարէանաք.

2 Պատճառն որ՝ նա որ լեզուներով է խօսում, մարդկանց հետ չի խօսում, այլ Աստուծոյ ‡ հետ. ինչու որ ոչ ոք չլսեր՝ որ լսէ, բայց Հոգւովը խորհուրդներ է ‡ խօսում։

3 Իսկ նա՝ որ մարգարէանումէ, մարդկանց շինութիւն և մխիթարութիւն և սիրտ առօղ բան է խօսում։

4 Նա որ լեզուներով է խօսում, իրեն անձին է շինում, և նա՝ որ մարգարէանումէ, եկեղեցին է շինում։

5 Կամենումեմ որ դուք ամէներդ լեզուներով խօսիք, բայց էլ աւելի որ մարգարէանաք. ինչու որ՝ աւելի լաւ է նա՝ որ մարգարէանումէ, քանթէ նա՝ որ լեզուներով խօսումէ. միայն թէ որ թարգմանէ՝ որ եկեղեցին շինութիւն առնէ։

6 Բայց հիմիկ եղբարք՝ թէ որ ես ձեզ մօտ գամ և լեզուներով խօսիմ, ինչ օգուտ կը լինի ձեզ՝ որ չը խօսիմ կամ + յայտնութենով, կամ գիտութենով, կամ մարգարէութենով, կամ վարդապետութենով։

7 Այնպէս՝ ինչպէս որ շունչ չունեցող բաները որ ձայն են տալիս, փող լինի, թէ քնար լինի. թէ որ ձայնի մէջ զատուցութիւն չանեն, ինչպէս կըճանաչվի փողի փչելը, կամ քնարի ձայն հանելը։

8 Ինչու որ՝ եթէ փողը խառնած ձայն դուրս տայ, էլ ով կը պատրաստվի պատերազմի համար։

= Գլ. ԺԲ. 31. 29.
‡ Թուոց. ԺԱ. 25. ‡ Գործ. Բ. 4. Ժ. 46.
‡ Գործ. ԺԹ. 9.
+ Համար. 26.

9 Նոյնպէս եւ դուք՝ եթէ լեզուօք ոչ նշանակիցէք զբանն՝ զիարդ ճանաչիցին խօսքն. զի լինիցիք այնուհետեւ իբրեւ ընդ օդս խօսեցեալք։

10 Զի այնչափ ազգք ձայնից են յաշխարհի, եւ ոչինչ անձայն է։

11 Իսկ արդ՝ եթէ ոչ գիտիցեմ զզօրութիւն ձայնին, լինիցիմ այնմ, որ խօսիցին ընդ իս՝ խուժ, եւ նա՝ որ խօսիցի ընդ իս՝ գուժ։

12 Նոյն եւ դուք՝ քանզի նախանձորդք էք հոգեւորացն, վասն շինուածոյ եկեղեցւոյն խնդրեցէք՝ զի առաւել եւս իցէք։

13 Վասն որոյ որ խօսին 'ի լեզուս աղօթս արասցէ՝ զի եւ թարգմանիցէ։

14 Եթէ կամ յաղօթս լեզուաւ՝ հոգին իմ կայ յաղօթս. այլ միտք իմ անպտուղ են։

15 Իսկ արդ՝ զինչ իցէ. կացից յաղօթս հոգւով, կացից յաղօթս եւ մտօք. սաղմոս ասացից հոգւով, սաղմոս ասացից եւ մտօք։

16 Ապա թէ ոչ՝ եթէ օրհնեսցես հոգւով, որ կայցէ 'ի տեղւոջ առգիտին, զիարդ ասիցէ 'ի քում գոհութեանդ՝ Ամէնն. քանզի զոր ասեսն՝ նա ոչ գիտէ։

17 Զի դու բարւոք գոհանաս, այլ ընկերն ոչ շինի։

18 Գոհանամ զԱստուծոյ՝ վասն ամենեցուն ձեր՝ առաւել լեզուաւ խօսիմ։

19 Այլ 'ի մէջ եկեղեցւոյ կամիմ բանս հինգ մտօք խօսել՝ զի եւ զայլս խրատեցից, քան բազում բանս լեզուաւ։

20 Եղբարք մի լինիք տղայք միտօք, այլ 'ի չարեաց տղայացարուք, եւ մտօք կատարեալ լինիջիք։

9 Այնպէս էլ դուք՝ թէ որ լեզուներովը բանըն յայտնի չասէք՝ այն խօսքն ինչպէս կիմացվի. ինչու որ՝ իբր թէ օդին հետ խօսած կըլինիք։

10 Պատճառն որ՝ այնքան կերպ ձայներ կան աշխարհըումս. եւ նորանից ոչ մինն էլ առանց ձայնի չէ։

11 Ուրեմն թէ որ ես ձայնի զօրութիւնը չըգիտենամ, այնպէս նորան՝ որ ինձ հետ խօսումէ՝ խուժ կըլինիմ, եւ նա որ ինձ հետ խօսումէ՝ գուժ։

12 Այնպէս էլ դուք՝ որ հոգեւոր [illegible]ումէք, եկեղեցոյ շինութեան համար ջանք էք անում՝ որ էլ աւելի աւելնաք։

13 Ուրեմն նա՝ որ լեզուներով է խօսում, թող աղօթք անէ՝ որ թարգմանէ էլ։

14 Թէ որ ես աղօթք անեմ՝ լեզուով՝ իմ հոգիս է աղօթք անում. բայց միտքս պտուղ չի տալիս։

15 Ապա ուրեմն ինչ պիտի լինի. աղօթք անեմ հոգւով էլ, աղօթք անեմ մտքով էլ. սաղմոս ասեմ ղ հոգով, սաղմոս ասեմ մտքով ճ էլ։

16 Ապա թէ չէ՝ թէ որ դու օրհնես հոգով, նա որ տգէտի կարգումն է՝ ինչպէս Ամէն ասէ քո օրհնութեանդ մ համար. պատճառն որ՝ նա չի գիտում այն որ դու ասումես։

17 Ի[illegible]՝ որ դու լաւ ես գոհանում. բայց ընկերը չի շինվում։

18 Գոհանումեմ Աստուածանից՝ նրահամար որ ձեր ամէնիցդ աւելի եմ խօսում լեզուներով։

19 Բայց եկեղեցոյն մէջ աւելի կամենումեմ որ հինգ խօսք խօսիմ՝ մտքով, որ ուրիշներին խրատ տամ, քանթէ շատ խօսքեր՝ լեզուներով։

20 Եղբարք՝ մտքով տղայ մի յ լինիք. բայց չարութիւնից ն տղայացէք, եւ մտքով կատարեալ շ էլէք։

ղ Եփես. Ե. 19։ Կող. Գ. 16։
ճ Սաղ. ԽԷ. 7։
մ Գղ. ԺԱ. 24։
յ Սաղ. ՃԼԱ. 2։ Մատթ. ԺԱ. 25։ ԺԸ. 3։ ԺԹ. 14։ Հռովմ. ԺԶ. 19։ Գղ. Գ. 2։ Եփես Դ. 14։ Եբր. Ե 12. 13։
ն Մատթ. ԺԸ. 3։ Ա Պետ. Բ. 2։
շ Գղ. Բ. 6։

21 Քանզի եւ յօրէնսն գրեալ է, եթէ Յօտար լեզուս եւ 'ի շրթունս օտարոտիս խօսեցայց ընդ ժողովրդեանդ ընդ այդմիկ, սակայն եւ ոչ այնպէս լուիցեն ինձ՝ ասէ Տէր։

22 Ապա ուրեմն լեզուքն նշանակի վասն են՝ ոչ հաւատացելոց՝ այլ անհաւատից. իսկ մարգարէութիւն՝ ոչ անհաւատից՝ այլ հաւատացելոց։

23 Ապա եթէ գայցէ եկեղեցին ամենայն 'ի մի վայր, եւ ամենեքին 'ի լեզուս խօսիցին, եւ մտանիցեն անդր տգէտք կամ անհաւատք. ոչ ասիցեն՝ եթէ զի մոլիք։

24 Իսկ եթէ ամենեքին մարգարէանայցեն, եւ մտանիցէ ոք անդր անհաւատ՝ կամ տգէտ, յանդիմանի յամենեցունց, եւ քննի յամենեցունց։

25 Եւ գաղտնիք սրտի նորա յայտնի լինին. եւ ապա անկեալ 'ի վերայ երեսաց՝ երկիրպագանիցէ Աստուծոյ, եւ խոստովան լինիցի՝ թէ արդարեւ Աստուած է 'ի ձեզ։

26 Եւ արդ՝ զինչ իցէ եղբարք. յորժամ 'ի մի վայր ժողովիցիք, իւրաքանչիւրոք 'ի ձէնջ եթէ սաղմոս ունիցի, թէ վարդապետութիւն ունիցի, եթէ յայտնութիւն ունիցի, եթէ լեզուս ունիցի, եթէ թարգմանութիւն ունիցի, ամենայն 'ի շինած լինիցի։

27 Եթէ 'ի լեզուս ոք խօսեսցի՝ երկուք, եւ եթէ եւս աւելի՝ երեք, եւ ապա մի ըստ միոջէ. եւ մին թարգմանեսցէ։

28 Ապա եթէ չիցէ ոք՝ որ թարգմանիցէ, լուռ լիցի յեկեղեցւոջն. ընդ միտս իւր՝ եւ ընդ Աստուծոյ խօսեսցի։

21 Պատճառն որ՝ օրէնքումն էլ գրուած է, թէ Օտար լեզուներով եւ օտար պռօշներով կը խօսիմ այդ ժողովրդիդ հետ. բայց այնպէս էլ ինձ ականջ չեն դնիլ՝ ասում է Տէրը։

22 Ապա ուրեմն՝ լեզուները նշանի համար են՝ ոչ թէ հաւատացեալներին այլ անհաւատներին. բայց մարգարէութիւնն ոչ թէ անհաւատներին՝ այլ հաւատացեալներին համար է։

23 Ապա թէ որ բոլոր եկեղեցին մին տեղ գայ, եւ ամէնքը լեզուներով խօսին. եւ ագէտներ եւ անհաւատներ մտնեն այնտեղ, միթէ չեն ասիլ թէ՝ դուք գժուած էք։

24 Բայց թէ որ ամէնքը մարգարէանան, եւ մին անհաւատ կամ ագէտ մարդ այն տեղ մտնէ, նա ամէնից կը յանդիմանուի, եւ ամէնից կը քննուի։

25 Եւ նորա սրտին ծածուկը յայտնի կըլինի. եւ ապա երեսին վերայ ընկած Աստուծոյն երկրպագութիւն կանէ, եւ խոստովան կըլինի թէ՝ ստոյգ որ Աստուած ձեր մէջումն է։

26 Ուրեմն ինչպէս է եղբարք. երբոր մինտեղ ժողովիք, ձեզանից ամէն մէկը թէ սաղմոս ունենայ, թէ վարդապետութիւն ունենայ, թէ յայտնութիւն ունենայ, թէ լեզուներ ունենայ, թէ թարգմանութիւն ունենայ, այն ամէնը թող շինութեան համար լինի։

27 Թէ որ մինը լեզուներով խօսի՝ թող երկու, եւ թէ որ էլ աւելի՝ շատ երեք լինին. եւ ապա մինը մինից ետեւ. եւ մինը թող թարգմանէ։

28 Ապա թէ որ մին մարդ չըկայ որ թարգմանէ, թող լուռ կենայ եկեղեցումը. թող իրեն մտքումն ու Աստուծոյ հետ խօսի։

ւ Օրէն. Ժ. 34. ծ Եսայ. ԻԸ. 11. 12. ծ Գործ. Բ. 13. է Եսայ. ԽԵ. 14. Զաք. Ը. 23. հ Համար. 6. Գլ. ԺԲ. 8—10. ձ Գլ. ԺԲ. 7. Բ Կորնթ. ԺԲ. 19. Եփես. Դ. 12.

29 Բայց ՚մարգարէք երկու կամ երեք խօսեսցին, եւ այլքն քննեսցեն։
30 Ապա եթէ այլ ումեք՝ որ նստիցին՝ յայտնեսցի, առաջինն լռեսցէ։

31 Քանզի կարող էք ամենեքին մի ըստ միոջէ մարգարէանալ. զի ամենեքեան ուսանիցին, եւ ամենեքեան մխիթարեսցին։
32 Քանզի եւ հոգիք իսկ մարգարէից՝ մարգարէից հնազանդեսցին։

33 Զի ոչ եթէ խռովութեան է Աստուած՝ այլ խաղաղութեան. որպէս յամենայն եկեղեցիս սրբոց։

34 Կանայք յամենայն եկեղեցիս լուռ լիցին. զի ոչ հրամայի նոցա խօսել՝ այլ հնազանդ լինել. որպէս եւ օրէնքն իսկ ասեն։

35 Ապա եթէ ուսանել ինչ կամիցին, ՚ի տան զարս իւրեանց հարցանիցեն. քանզի անպատեհ է կնոջ մարդոյ յեկեղեցւոջ խօսել։

36 Եթէ ՚ի՞ ձէ՞նջ բանն Աստուծոյ ել. եւ կամ առ ձեզ միայն եհաս։

37 Իսկ եթէ ոք համարիցի մարգարէ լինել՝ կամ հոգեւոր, գիտասցէ՝ զոր գրեցից առ ձեզ, եթէ Տեառն պատուիրանք են։
38 Ապա թէ ոք ագիտանայցէ, ագիտասցի։
39 Այսուհետեւ եղբարք՝ նախանձեցարուք մարգարէանալ՝ եւ զխօսելն լեզուօք մի արգելուք։
40 Եւ ամենայն ինչ ձեր պարկեշտութեամբ եւ ըստ կարգի լինիցի։

29 Բայց մարգարէները թող երկու կամ երեք խօսին, եւ ուրիշները ւ քննեն։
30 Բայց թէ որ մէկ ուրիշի՝ որ այնտեղ նստած է՝ յայտնութիւն լինի, այն առաջինը թող լուռ ֆ կենայ.
31 Պատճառն որ՝ կարող էք մէկը մէկէն ետեւ մարգարէանալ. որ ամէնքը սորվին, եւ ամէնքը ʃ մխիթարուին։
32 Ինչու որ՝ իսկ մարգարէների հոգիներն էլ՝ մարգարէներին ɹ հնազանդվումեն.
33 Պատճառն որ՝ Աստուած խռովութեան Աստուած չէ, բայց խաղաղութեան. ինչպէս որ սրբերի ամէն ւ եկեղեցիներումը։
34 Կանայքն ամէն եկեղեցիներումը լուռ ւ կենան. ինչու որ՝ նոցանց հրաման չկայ որ խօսին՝ այլ որ հնազանդ ւ լինին. ինչպէս որ օրէնքն էլ – ասում է։
35 Ապա թէ որ մէկ բան կամենան սովորել՝ թող տանը մէջ իրենց մարդկանցիցը հարցնեն. ինչու որ՝ կնկանը չի վայելում՝ որ եկեղեցումը խօսի։
36 Միթէ Աստուծոյ խօսքը ձեզանից դուրս եկաւ, կամ թէ միայն ձեզ հասաւ։
37 Բայց թէ որ մէկը ւ կարծէ՝ որ նա մարգարէ է՝ կամ հոգեւոր, թող գիտենայ այդ որ գրեցի ձեզ, որ Տէրի պատուիրանքն է։
38 Ապա թէ որ մէկը ագէտ է, թող ագէտ լինի։
39 Ուրեմն եղբարք՝ ջանք արէք որ ղ մարգարէանաք, եւ լեզուներով խօսելը մի արգելէք։
40 Եւ ձեր ամէն բանը թող պարկեշտութեամբ եւ կարգով ջ լինի։

ւ Գղ. ԺԲ. 10.
ֆ Ա Թես. Ե. 19, 20.
ʃ Ա Յովհ. Դ. 1.
ɹ Գղ. ԺԱ. 16.

ւ Ա Տիմ. Բ. 11, 12.
ւ Գղ. ԺԱ. 3. Եփես. Ե. 22. Կող. Գ. 18.

Տիտ. Բ. 5. Ա Պետ. Գ. 1.
– Ծննդ. Գ. 16.
ւ Բ Կորնթ. Ժ. 7. Ա Յովհ. Դ. 6.

ղ Գղ. ԺԲ. 31. Ա Թես. Ե. 20.
ջ Համար. 33.

—

## ԳԼ. ԺԵ

1 Ցուցանեմ ձեզ եղբարք զաւետարանն իմ, զոր աւետարանեցի ձեզ. զոր եւ ընկալարուք, յոր եւ հաստատեալ էք.
2 Որով ապրեցայքն. որով բանիւ աւետարանեցի ձեզ՝ թէ ունիցիք. բայց եթէ ՚ի զուր ինչ հաւատացէք.
3 Զի ես ձեզ զայն նախ աւանդեցի՝ զոր եւ ես ընկալայ. թէ եւ Քրիստոս մեռաւ վասն մեղաց մերոց՝ ըստ գրոց.
4 Եւ զի թաղեցաւ, թէ եւ յարեաւ յաւուր երրորդի՝ ըստ գրոց.
5 Եւ թէ երեւեցաւ Կեփայի, եւ ապա երկոտասանիցն.
6 Ապա երեւեցաւ աւելի եւս քան զհինգ հարիւր եղբարց միանգամայն. յորոց բազումք կան մինչեւ ցայժմ, եւ ոմանք ննջեցին.
7 Եւ ապա երեւեցաւ Յակոբայ, ապա առաքելոցն ամենեցուն.
8 Հուսկ յետոյ քան զամենեսին իբրեւ անարգի միոջ՝ երեւեցաւ եւ ինձ.
9 Զի ես իսկ եմ տրուպն առաքելոց. որ չեմ իսկ արժանի թէ կոչեցայց առաքեալ. զի հալածեցի զեկեղեցին Աստուծոյ.
10 Այլ շնորհօքն Աստուծոյ եմ զինչ եւ իցեմ. եւ շնորհք նորա որ յիս՝ ընդունայն ինչ ոչ եղեն. այլ առաւել քան զնոսա ամենեսին վաստ-

1 Իմացունեմ ձեզ եղբարք այն աւետարանը՝ որ ա աւետարանեցի, որ նորան էլ ընդունեցիք, որ նորանում էլ հաստատուած բ էք,
2 Որ նորանով գ ապրեցաք, այն բանով՝ որ ձեզ աւետարանեցի, թէ որ բռնած ունենաք, եթէ զուր տեղն չէք դ հաւատացել.
3 Պատճառն որ՝ ես առաջուց այն տուի ե ձեզ՝ որ ես էլ զ ընդունեցի, թէ Քրիստոս մեր մեղաց համար մեռաւ՝ գրքերի ասածին է պէս,
4 Եւ թէ թաղուեցաւ, եւ թէ երեք օրումն յարութիւն առաւ՝ գրքերին ը պէս.
5 Եւ թէ երեւեցաւ թ Կեփասին, եւ յետոյ այն ժ տասներկուսին.
6 Յետոյ երեւեցաւ հինգ հարիւրից աւելի եղբարներին միանգամ. որ նորանցից շատերն մինչեւ հիմիկ կան, եւ մին քանիսն ննջեցին.
7 Եւ յետոյ երեւեցաւ Յակոբին, յետոյ ամէն ի առաքեալներին.
8 Ամէնից ետեւ իբր թէ մին անպիտանի ինձ էլ լ երեւեցաւ.
9 Ինչու որ՝ ես առաքեալների յետինն խ եմ. որ արժանի էլ չեմ առաքեալ կոչվելոյ. ինչու որ՝ Աստուծոյ եկեղեցին ծ հալածեցի.
10 Բայց Աստուծոյ շնորհքովն եմ ինչ որ կ եմ. եւ նորա շնորհքն՝ որ ինձանում է՝ ունայն չէլաւ. այլ նորանցից ամէնիցն աւելի հ աշխատ-

ա Գաղ. Ա. 11.
բ Հռովմ. Բ. 5.
գ Հռովմ. Ա. 16. Գլ. Ա. 21.
դ Գաղ. Գ. 4.
ե Գլ. ԺԱ. 2. 23.
զ Գաղ. Ա. 12.
է Սաղ. ԻԲ. 15. ԿԲ. Եսայ. ԾԳ. 5, 6, ԿԲ. Դան. Թ. 26. Զաք. ԺԳ. 7. Ղուկ. ԻԴ. 26. 46. Գործ. Գ. 18. ԻԶ. 23. Ա Պետ. Ա. 11. Բ. 24.
ը Սաղ. Բ. 7. ԺԶ. 10. Եսայ. ԾԳ. 10. Ովսէ. Զ. 2. Ղուկ. ԻԴ. 26 46. Գործ. Բ. 25—31. ԺԳ. 33—35. ԻԶ. 22. 23. Ա Պետ. Ա. 11.
թ Ղուկ. ԻԴ. 34.
ժ Մատթ. ԻԸ. 17. Մարկ. ԺԶ. 14. Ղուկ. ԻԴ. 36. Յովհ. Ի. 19. 26. Գործ. Ժ. 41.
ի Ղուկ. ԻԴ. 50. Գործ. Ա. 3. 4.
լ Գործ. Թ. 4. 17. ԻԲ. 14. 18. Գլ. Թ. 1.
խ Եփես. Գ. 8.
ծ Գործ. Ը. 3. Թ. 1. Գաղ. Ա. 13. Փիլիպ. Գ. 6. Ա Տիմ. Ա. 13.
կ Եփես. Բ. 7. 8.
հ Բ Կորնթ. ԺԱ. 23. ԺԲ. 11.

աշխատեցի. եւ ոչ եթէ ես՝ այլ շնորհքն Աստուծոյ՝ որ ընդ իս։
11 Արդ՝ եթէ ես եւ եթէ նոքա՝ այսպէս քարոզեցաք, եւ դուք այսպէս հաւատացէք։
12 Ապա եթէ Քրիստոս քարոզի՝ թէ ՚ի մեռելոց յարուցեալ է, զիարդ ասեն ոմանք ՚ի ձէնջ՝ եթէ յարութիւն մեռելոց չիք։
13 Եթէ յարութիւն մեռելոց չիք, ապա եւ Քրիստոս չէ յարուցեալ։
14 Եւ եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն է քարոզութիւնն մեր. ընդունայն են եւ հաւատքն ձեր։
15 Եւ գտանիցիմք սուտ վկայք Աստուծոյ, զի վկայեցաք զԱստուծոյ՝ թէ յարոյց զՔրիստոս. զոր ոչն յարոյց՝ եթէ մեռեալք ոչ յառնիցեն։
16 Իսկ եթէ մեռեալք ոչ յառնեն՝ ապա եւ Քրիստոս չէ յարուցեալ։
17 Եւ եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն են հաւատքն ձեր. եւ տակաւին ՚ի նմին մեղս կայցէք։
18 Իսկ արդ՝ որ ննջեցինն ՚ի Քրիստոս, կորեան արդեօք։
19 Եթէ այսու կենօքս միայն յուսացեալ եմք ՚ի Քրիստոս, ողորմելի եմք քան զամենայն մարդիկ։
20 Այլ արդ՝ Քրիստոս յարուցեալ է ՚ի մեռելոց՝ առաջին պտուղ ննջեցելոց.
21 Քանզի մարդով եղեւ մահ, եւ մարդով յարութիւն մեռելոց։

տեցի. եւ սա՝ ոչ թէ ես, բայց Աստուծոյ շնորհքն՝ որ ինձ հետ է։
11 Ապա թէ ես՝ եւ թէ նորանք՝ այսպէս քարոզեցինք, եւ դուք այսպէս հաւատացիք։
12 Ապա թէ որ Քրիստոս է քարոզւում՝ որ մեռելների միջիցն յարութիւն է առել, էլ ինչպէս ձեզանից մին քանիսն ասում են՝ թէ Մեռելների յարութիւն չկայ։
13 Թէ որ մեռելների յարութիւն չկայ, ապա Քրիստոս էլ յարութիւն չի առել։
14 Եւ թէ որ Քրիստոս յարութիւն չի առել՝ ունայն է մեր քարոզութիւնը, ունայն է ձեր հաւատքն էլ.
15 Եւ մենք էլ Աստուծոյ սուտ վկաներ ենք գտնւում, որ Աստուծոյ համար վկայեցինք՝ թէ Քրիստոսին յարոյց. որ իրաւի չյարոյց՝ թէ որ մեռելներին յարութիւն չառնեն։
16 Բայց թէ որ մեռելներին յարութիւն չեն առնում՝ ապա Քրիստոս էլ յարութիւն չի առել։
17 Եւ թէ որ Քրիստոս յարութիւն չի առել՝ ունայն է ձեր հաւատքը. եւ դեռ այն ձեր մեղաց մէջն էք կենում.
18 Ապա նորանք՝ որ Քրիստոսումը ննջեցին կորան։
19 Թէ որ մենք միմիայն այս կեանքումս յոյս ունինք Քրիստոսի վերայ, ամէն մարդկանցից աւելի ողորմելի ենք։
20 Բայց հիմիկ՝ Քրիստոս յարութիւն է առել մեռելների միջիցը՝ ինքն ննջածների առաջինեկ պտուղը։
21 Պատճառն որ՝ մարդով էլաւ մահը, եւ մարդով մեռելների յարութիւնը։

ծ Մատթ. Ժ. 20. Հռովմ. ԺԵ. 18. 19. Բ Կորնթ. Գ. 5. Գաղ. Բ. 8. Եփես. Գ. 7. Փիլիպ. Բ. 13. ղ Ա Թես. Գ. 13. ճ Գործ. Բ. 24. 32. Գ. 10. 33. ԺԳ. 30. մ Հռովմ. Գ. 25. յ Բ Տիմ. Գ. 12. ն Ա Պետ. Ա. 3. շ Գործ ԻԶ. 23. Համար. 23. Կող. Ա. 18. Յայտ. Ա. 5. ո Հռովմ. Ե 12. 17. չ Յովհ. ԺԱ. 25. Հռովմ. Զ. 23.

22 Որպէս Ադամաւն ամենեքին մեռանին. նոյնպէս եւ Քրիստոսիւ ամենեքեան կենդանասցին:
23 Իւրաքանչիւր յիւրում կարգի. նախ Քրիստոս եւ ապա Քրիստոսեանք ՚ի գալստեան նորա:
24 Եւ ապա կատարած, յորժամ տացէ ՚ի ձեռս զթագաւորութիւնն Աստուծոյ՝ եւ Հօր. յորժամ խափանեսցէ զամենայն իշխանութիւնս եւ զամենայն պետութիւն եւ զզօրութիւն:
25 Զի պարտ է նմա թագաւորել՝ մինչեւ դիցէ զամենայն թշնամիս ՚ի ներքոյ ոտից իւրոց:
26 Յետին թշնամին խափանի՝ մահ. եւ զամենայն ինչ հնազանդ արար ՚ի ներքոյ ոտից նորա:
27 Այլ յորժամ ասիցէ. թէ Հնազանդեալ է նմա ամենայն, յայտ է՝ թէ բաց յայնմանէ՝ որ հնազանդեցոյց նմա զամենայն:
28 Այլ յորժամ հնազանդեսցի նմա ամենայն՝ յայնժամ եւ ինքն Որդի հնազանդեսցի այնմ, որ հնազանդեցոյց նմա զամենայն. զի եղիցի Աստուած ամենայն յամենայնի:
29 Ապա թէ ոչ՝ զինչ գործիցեն, որ մկրտիցին վասն մեռելոց, եթէ արդարեւ մեռեալք ոչ յառնիցեն. ընդէր իսկ բնաւ մկրտին վասն նոցա:
30 Ընդէր եւ մեք ճգնիմք յամենայն ժամ,
31 Եւ հանապազ մեռանիմք. ՚ի պարծանս ձեր եղբարք՝

22 Ինչպէս որ Ադամին ամէնքը մեռնումին՝ այնպէս էլ Քրիստոսին ամէնքը կենդանի կըլինին:
23 Ամէն մէկն իրեն կարգումը. առաջ դ Քրիստոս, եւ յետոյ Քրիստոսեանները նորա գալոյ ժամանակումը,
24 Եւ ապա վերջը, երբոր թագաւորութիւնըն Աստուծոյ եւ Հօր ձեռքը ե կըտայ. երբոր կըխափանէ ամէն իշխանութիւններին ու ամէն պետութիւնը եւ զօրութիւնը:
25 Պատճառն որ՝ պէտք է որ նա թագաւորէ՝ մինչեւ որ ամէն թշնամիներին իրեն ոտացը ներքեւ զ դնէ:
26 Յետին թշնամին՝ որ կը խափանուի՝ մահն է է. Ինչու ը ամէն բան հնազանդացրուց նորա ոտացը տակ:
27 Բայց երբոր ասէ՝ թէ Ամէն բան հնազանդ է նորան, յայտնի է որ նորանցից ջոկ որ ամէն բան հնազանդացրուց նորան:
28 Բայց երբոր ամէնը կըհնազանդվի թ նորան՝ այն ժամանակն ինքն Որդին էլ կըհնազանդվի նորան՝ որ ամէնը հնազանդացրուց ժ նորան. որ Աստուած լինի ամէնին ամէն բանի մէջ:
29 Ապա թէ չէ՝ ինչ կանեն նորանք, որ մեռելներին համար մկրտվումին՝ թէ որ մեռելներին յարութիւն չկանեն. էլ ինչու են բնաւ նորանց համար մկրտվում:
30 Ինչու մենք էլ ամէն ժամանակ նեղութիւն ենք ի քաշում,
31 Եւ ամէն ժամանակ լ մեռնում. երդում եմ ուտում եղբարք՝ ձեր

դ Համար. 20։ Ա Թես. Դ. 14, 15, 16։
ե Դան. Է. 14. 27։
զ Սաղ. ՃԺ. 1։ Գործ. Բ. 34, 35։ Եփես. Ա. 22։ Եբր. Ա. 13. Ժ. 13։
է Բ Տիմ. Ա. 10։ Յայտ. Ի. 14։
ը Սաղ. Ը. 6։ Մատթ. ԻԸ. 18։ Եբր. Բ. 8։ Ա Պետ. Գ. 22։
թ Փիլիպ. Գ. 21։
ժ Գլ. Գ. 23. ԺԱ. 3։
ի Բ Կորնթ. ԺԱ. 26։ Գաղ. Ե. 11։
լ Հռովմ. Ը. 36։ Գլ. Դ. 9։ Բ Կորնթ. Դ. 10, 11։ ԺԱ. 23։

զոր ունիմ 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր։
32 Եթէ վասն մարդոյ 'ի գազանամարտի լեալ էի յԵփեսոս, զի՞նչ օգուտ էր ինձ, եթէ մեռեալք ոչ յառնեն. կերիցուք՝ արբցուք. քանզի վաղիւ մեռանիմք։
33 Մի՛ խաբիք. ապականեն ըզ բարս քաղցունս բանք չարք։
34 Սթափեցարուք արդարութեամբ՝ եւ մի՛ մեղանչէք. զի ըզ գիտութիւն Աստուծոյ ոչ ունին ոմանք. առ ամօթոյ ձերոյ ասեմ։
35 Այլ ասիցէ ոք. Զիա՞րդ յառնեն մեռեալք՝ կամ որո՞վ մարմնով գայցեն։
36 Անմիտ՝ դու զոր սերմանեսն, ոչ կենդանանայ՝ եթէ ոչ մեռանիցի։
37 Եւ զոր սերմանեսն, ոչ զնոյն մարմին որ ծնանելոցն իցէ՝ սերմանես, այլ հատ մերկ. եթէ ցորենոյ իցէ, եւ եթէ այլոց սերմանեաց։
38 Եւ Աստուած տայ նմա մարմին՝ որպէս եւ կամի. եւ իւրաքանչիւր սերմանեացն զիւր մարմին։
39 Ո՛չ ամենայն մարմին նոյն մարմին է, այլ՝ այլ մարմին է մարդկան, եւ այլ մարմին անասնոց, այլ մարմին թռչնոց՝ եւ այլ մարմին ձկանց։
40 Եւ մարմինք երկնաւորք՝ եւ մարմինք երկրաւորք. այլ՝ այլ փառք երկնաւորացն՝ եւ այլ փառք երկրաւորաց։
41 Այլ փառք արեգական, եւ այլ փառք լուսնի, եւ այլ փառք աս-

պարծանքովս՝ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսովն է ունիմ.
32 Թէ որ մարդոյ համար Եփեսոսումը գազանների կռւի մէջ մը-տել + էի՝ նա ինչ օգուտ էր ինձ համար, թէ որ մեռելներին յարութիւն չըն առնում. ուտենք՝ խմենք, ինչու որ վաղը *կը մեռնինք։
33 Մի խաբվիք. չար խօսքեր ապականումեն քաղցր ‡ վարքերը։
34 Արթուն կացէք արդարութենով՝ եւ մեղք մի = գործէք. ինչու որ՝ միքանիսին Աստուծոյ գիտութիւնը ‡ չունենին. սա ձեր ամօթի համար եմ † ասում։
35 Բայց կը լինի որ մինն ասէ. Մեռելներն ինչպէս յարութիւն կառնեն՝ կամ թէ ինչ մարմնով ⸗ կըգան։
36 Անմիտ, նա՞ որ դու սերմանում ես, չի կենդանանալ՝ թէ որ Է չմեռնի։
37 Եւ նա որ սերմանում ես, չէ թէ այն մարմինն ես սերմանում, որ պիտի ծնվի, բայց մէն մերկ հատ. թէ ցորենի լինի, եւ թէ ուրիշ սերմացուների։
38 Եւ Աստուած մարմին է տալիս նորան՝ ինչպէս որ էլ կամենումէ, եւ ամէն մէկ սերմացուներին իրենց մարմինը։
39 Ամէն մարմին նոյն մարմինը չէ. այլ՝ ուրիշ մարմին է մարդկանց, ուրիշ մարմին անասունների. ուրիշ մարմին թռչուններին՝ եւ ուրիշ մարմին ձկներին։
40 Եւ կան երկնաւոր մարմիններ՝ եւ երկրաւոր մարմիններ. բայց ուրիշ փառք ունին երկնաւորներն՝ եւ ուրիշ փառք երկրաւորները։
41 Ուրիշ փառք է արեգականն՝ եւ ուրիշ փառք լուսնին, ուրիշ փառք

† Ա Թես. Բ. 19.
+ Բ Կորնթ. Ա. 8.
* Եսայ. ԻԲ. 13. ԾԶ. 12. Ժող. Բ. 24. Ղու. ԺԲ. 19.
‡ Գղ. Ե. 6.
= Հռովմ. ԺԳ. 11. Եփես Ե. 14.
‡ Ա Թես. Դ. 5.
† Գղ. Զ. 5.
⸗ Եզեկ. ԼԷ. 3.
Է Յովհ. ԺԲ. 24.

աստեղաց. եւ աստղ քան զաստղ առաւել է փառօք։

42 Նոյնպէս եւ յարութիւն մեռելոց. սերմանի ապականութեամբ՝ եւ յառնէ առանց ապականութեան։

43 Սերմանի անարգութեամբ՝ եւ յառնէ փառօք. սերմանի տկարութեամբ՝ եւ յառնէ զօրութեամբ։

44 Սերմանի մարմին շնչաւոր՝ եւ յառնէ մարմին հոգեւոր. եթէ գոյ մարմին շնչաւոր, գոյ եւ հոգեւոր։

45 Որպէս եւ գրեալ է. Եղեւ մարդն առաջին Ադամ 'ի շունչ կենդանի. երկրորդն Ադամ 'ի հոգի կենդանարար։

46 Բայց ոչ նախ հոգեւորն, այլ շնչաւորն, եւ ապա հոգեւորն։

47 Առաջին մարդն յերկրէ՝ հողեղէն. իսկ երկրորդ մարդն՝ Տէր, յերկնից։

48 Որպէս հողեղէնն, նոյնպէս եւ հողեղէնք, եւ որպէս երկնաւորն՝ նոյնպէս եւ երկնաւորքն։

49 Եւ որպէս զգեցաք զպատկեր հողեղինին, զգեցցուք եւ զպատկեր երկնաւորին։

50 Բայց զայս ասեմ եղբարք՝ եթէ մարմին եւ արիւն զարքայութիւն Աստուծոյ ժառանգել ոչ կարեն. եւ ոչ ապականութիւն զանապականութիւն ժառանգէ։

51 Արդ՝ խորհուրդ մի ասեմ ձեզ. Ո՛չ թէ ամենեքեան ննջեսցուք, այլ ամենեքեան նորոգեսցուք։

աստղերինն. եւ մին աստղը միւս աստղիցն աւելի է փառքով։

42 Այնպէս էլ մեռելների ղ յարութիւնը. սերմվում է ապականութենով՝ եւ յարութիւն է առնում առանց ապականութեան.

43 Սերմվում է անարգութենով՝ եւ յարութիւն է առնում ճ փառքով. սերմվում է տկարութենով՝ եւ յարութիւն է առնում զօրութենով։

44 Սերմվում է շնչաւոր մարմին՝ եւ յարութիւն է առնում հոգեւոր մարմին. թէ որ շնչաւոր մարմին կայ, հոգեւոր էլ կայ։

45 Այնպէս էլ գրված է, Առաջին մարդ Ադամը կենդանի շունչ մ առնուեցաւ. երկրորդ յ Ադամը կենդանի անող ն հոգի։

46 Միայն թէ հոգեւորն առաջ չէ, բայց շնչաւորը, եւ յետոյ հոգեւորը։

47 Առաջին մարդն երկրիցն է՝ հողից ո եղած. բայց երկրորդ մարդն է՝ Տէրը, չ երկնքիցը։

48 Ինչպէս որ այն հողեղէնը, այնպէս էլ հողեղէններս. եւ ինչպէս որ այն երկնաւորը, այնպէս էլ պ երկնաւորները։

49 Եւ ինչպէս որ հողեղէնի պատկերը ջ հագանք, երկնաւորի պատկերն էլ պիտի ռ հագնենք։

50 Միայն թէ սա եմ ասում եղբարք՝ որ մարմին եւ արիւն չեն կարող Աստուծոյ արքայութիւնը ս ժառանգել. եւ ոչ ապականութիւն անապականութիւնն է ժառանգում։

51 Ահա մին խորհուրդ եմ ասում ձեզ. Ո՛չ թէ մենք ամէնքս վ կը ննջենք, այլ ամէնքս տ կը նորոգվինք։

ղ Դան. ԺԲ. 3. Մատթ. ԺԳ. 43.
ճ Փիլիպ. Գ. 21.
մ Ծննդ. Բ. 7.
յ Հռովմ. Ե. 14.
ն Յովհ. Ե. 21. Զ. 33. 39, 40. 54. 57. Փիլիպ. Գ. 21. Կող. Գ. 4.
շ Յովհ. Գ. 31.
ո Ծննդ. Բ. 7. Գ. 19.
չ Յովհ. Գ. 13. 31.
պ Փիլիպ. Գ. 20, 21.
ջ Ծննդ. Ե. 3.
ռ Հռովմ. Ը. 29. Բ Կորնթ. Գ. 18. Գ. 11. Փիլիպ. Գ. 21. Ա Յովհ. Գ. 2.
ս Մատթ. ԺԶ. 17. Յովհ. Գ. 3. 5.
վ Ա Թես. Դ. 14, 15, 16.
տ Փիլիպ. Գ. 21.

52 Յանկարծակի յական թօթա-
փել՝ 'ի փող յետոյն · քանզի փող հար-
կանի , եւ մեռեալք յարիցեն առանց
ապականութեան , եւ մեք նորո-
գեսցուք ։
53 Զի պարտ է ապականութեա-
նըս այսմիկ զգենուլ զանապակա-
նութիւն , եւ մահկանացուիս այս-
միկ զգենուլ զանմահութիւն ։
54 Այլ յորժամ մահկանացուս այս
զգեցցի զանմահութիւն , եւ ապա-
կանութիւնս զանապականութիւն ,
յայնժամ եղիցի բանն՝ որ գրեցաւ.
եթէ Ընկլաւ մահ՝ 'ի յաղթութիւն ։
55 Ո՞ւր է մահ՝ յաղթութիւն քո.
ուր դժոխք՝ խայթոց քո ։
56 Խայթոց մահու մեղք են , եւ
զօրութիւն մեղաց օրէնք ։
57 Այլ շնորհք Աստուծոյ , որ ետ
մեզ զյաղթութիւն 'ի ձեռն Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի ։
58 Այսուհետեւ եղբարք իմ սիրե-
լիք , հաստատուն եղերուք , ան-
շարժ կացէք , առաւել լերուք 'ի
գործս Տեառն յամենայն ժամ , գի-
տասջիք , զի վաստակք ձեր ոչ են
ընդունայն առաջի Տեառն ։

52 Յանկարծ աչքի թօթափելում
յետին փողի ժամանակին · ինչու որ
փողը ՛ կը փչէ , եւ մեռեալները յա-
րութիւն կառնեն առանց ապակա-
նութեան , եւ մենք կը նորոգուինք ։
53 Զատճառն որ՝ պէտք է որ այս
ապականութիւնս անապականու-
թիւնը հագնի , եւ այս մահկանա-
ցուս անմահութիւնը յ հագնի ։
54 Բայց երբոր այս մահկանացուս
անմահութիւնը կը հագնի , եւ այս
ապականութիւնս անապականու-
թիւնը , այն ժամանակը կը լմնի այն
բանն՝ որ գրուած է · թէ Մահը քո
յաղթութեանդ մէջ ն կուլ տրուեցաւ ։
55 Ո՛վ մահ՝ ուրտեղ է քու յաղթու-
թիւնդ · գերեզման՝ ուրտեղ է քու
ւ խայթոցդ ։
56 Մահին խայթոցը մեղքն է , եւ
մեղքի զօրութիւնը՝ = օրէնքը ։
57 Բայց շնորհակալութիւն ւ Աս-
տուծոյ , որ մեզ յաղթութիւն տու-
աւ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի
դ ձեռքովը ։
58 Ուրեմն իմ սիրելի եղբարքս ,
հաստատ էլէք , անշարժ ջ կացէք ,
ամէն ժամանակ աւելի առաջ ցէք
Տէրի գործումը , գիտցէք՝ որ ձեր
աշխատանքը զուր չեն Տէրի — առա-
ջին ։

## ԳԼ. ԺԶ

1 Այլ վասն հաշուին , որ 'ի
սուրբսն է , որպէս պատուէր ետու
եկեղեցեացն Գաղատացւոց , նոյն-
պէս եւ դուք արասջիք ։
2 Ըստ իւրաքանչիւր միաշաբա-
թուջն իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ
առանձին իւրում գանձեսցէ՝ որ ինչ
եւ յաջողեսցի ։

1 Բայց այն տուրքը ժողովելուն
կողմանէ՝ որ սուրբերուն համար = է ,
ինչպէս որ Գաղատացոց եկեղեցի-
ներումը պատուիրեցի , այնպէս ալ
դո՛ւք ըրէք ։
2 Ամէն մէկ՝ մէկ շաբթի օրերը
ձեզմանից ամէն մէկը թող իրեն մօտ
հաւաքէ՝ ինչ որ բ կը յաջողի ։

՛ Զաք. Թ. 14. Մատթ. ԻԴ. 31. Յովհ. Ե. 25. Ա Թես. Դ. 15.
յ Բ Կորնթ. Ե. 4.
ն Եսայ. ԻԵ. 8. Եբր. Բ. 14. 15. Յայտ. Ի. 14.
ւ Ովսէ. ԺԳ. 14.
= Հռովմ. Գ. 15. Ե. 13. Է. 5. 13.
ւ Հռովմ. Է. 25.
դ Ա Յովհ. Ե. 4. 5.
ջ Բ Պետ. Գ. 14.
— Գղ. Գ. 8.

= Գործ. ԺԱ. 29. ԻԴ. 17. Հռովմ. ԺԵ. 26. Բ Կորնթ. Ը. 4. Թ. 1. 12. Գաղ. Բ. 10.
բ Գործ. Ի. 7. Յայտ. Ա. 10.

3 Զի մի՛ յորժամ գայցեմ, յայն-
ժամ հաւաքք լինիցին. այլ յորժամ
եկից՝ զոր միաբանեալ ընտրեսջիք
թղթովք, զնոսա առաքեցից տանել
զշնորհսն ձեր յԵրուսաղէմ։

4 Ապա թէ արժան իցէ եւ ինձ
երթալ՝ ընդ իս երթիցեն։
5 Այլ եկից առ ձեզ՝ յորժամ 'ի
Մակեդովնիա անցանիցեմ, բայց
իբրեւ շրջեցայց 'ի Մակեդովնիա,

6 Թէ դէպ լիցի, առ ձեզ մնացից՝
եւ կամ ձմերեցից. զի եւ դուք
յուղարկիցէք զիս՝ ուր եւ երթա-
լոցն եմ։
7 Զի ոչ կամիմ զձեզ այժմ 'ի
հարեւանցի տեսանել. այլ ունիմ
ժամանակ ինչ յամել առ ձեզ, ե-
թէ Տէր հրամայեսցէ։

8 Բայց այժմ լինիմ յԵփեսոս մին-
չեւ ցՊենտեկոստէ։
9 Զի դուռն բացեալ է ինձ մեծ
եւ կարեւոր, եւ հակառակորդք
բազում են։
10 Արդ՝ եթէ եկեսցէ Տիմոթէոս՝
տեսջիք զիարդ աներկիւղ լինիցի առ
ձեզ. զի զգործ Տեառն գործէ՝ որ-
պէս եւ ես։
11 Մի ոք զնա անգոսնեսցէ. եւ
յուղարկեսջիք զնա խաղաղու-
թեամբ՝ զի եկեսցէ առ իս. քանզի
ակն ունիմ նմա եղբարբք հանդերձ։

12 Այլ վասն Ապողոսի եղբօր յոյժ
աղաչեցի զնա՝ զի եկեսցէ առ ձեզ
եղբարբք հանդերձ. եւ արդեօք ոչ
էին կամք՝ զի այժմ եկեսցէ. այլ

3 Որ չը լինի թէ երբոր գամ,
այն ժամանակը լինի ժողվելը.
բայց երբոր գամ՝ իսկ այն որ ձեր
թղթերովը գ ընտրեցիք, նորանց
կուղարկեմ՝ որ ձեր շնորհքը տանին
դ Երուսաղէմ։
4 Ապա թէ որ ինձ ալ պէտք լի-
նի գնալ՝ թող ինձ հետ ե գնան։
5 Բայց ձեզ մօտ կուգամ՝ երբոր
Մակեդոնիայէն կանցնիմ. իսկ
երբոր Մակեդոնիային մէջ զ մնամ
կը գամ,
6 Եթէ բանն այնպէս բերէ, ձեզ
մօտ կը մնամ՝ կամ թէ ձմեռը կան-
ցընեմ. որ դուք ինձ ճանապարհ
դնէք՝ ուրեք որ գնալու է լինիմ.
7 Ինչու որ՝ չեմ կամենում որ
ձեզ հիմիկ անցանողի պէս տեսնեմ.
յոյս ունիմ որ մին ժամանակ ձեզ
մօտ կենամ, թէ որ Տէրը ը հրա-
մայէ։
8 Բայց հիմիկ Եփեսոսումն եմ
կենում՝ մինչեւ Պենտեկոստէն։
9 Ինչու որ՝ մեծ եւ հարկաւոր
դուռն բացուած է թ ինձ, եւ հա-
կառակորդները շատ ժ են։
10 Հիմիկ թէ որ Տիմոթէոսը գայ՝
նայեցէք թէ ինչպէս անվախ լինի
ձեզ ի մօտ. ինչու որ՝ Տէրի գործ-
քերն է գործում, ինչպէս որ լ ես։
11 Չը լինի որ մէկն անարգէ խ նո-
րան. եւ խաղաղութենով ճանա-
պարհ դրէք նորան՝ որ ինձ մօտ
ծ գայ. ինչու որ՝ սպասումեմ նորան
եղբայրներին հետ։
12 Բայց Ապօղոս եղբօր կ համար՝
որ շատ աղաչեցի նորան՝ որ ձեզ
մօտ գայ եղբայրներին հետ. եւ ի-
բաւի որ կամք չունէր՝ որ հիմիկ

գ Բ Կորնթ. Ը. 19.
դ Բ Կորնթ. Ը. 4. 6. 19.
ե Բ Կորնթ. Ը. 4. 19.
զ Գործ. ԺԹ. 21. Բ Կորնթ. Ա. 16.
է Գործ. ԺԵ. 3. ԺԷ. 15. ԻԱ. 5. Հռովմ. ԺԵ. 24. Բ Կորնթ. Ա. 16.
ը Գործ. ԺԸ. 21. Գղ. Դ. 19. Յակ. Դ. 15.
թ Գործ. ԺԴ. 26. Բ Կորնթ. Բ. 12. Կող. Դ. 3. Յայտ. Գ. 8.
ժ Գործ. ԺԹ. 9.
ի Գործ. ԺԹ. 22. Գղ. Դ. 17.
լ Հռովմ. ԺԶ. 21. Փիլիպ. Բ. 20. 22. Ա Թես. Գ. 2.
խ Ա Տիմ. Դ. 12.
ծ Գործ. ԺԵ. 33.
կ Գղ. Ա. 12. Գ. 4. 6.

եկեսցէ յորժամ եւ պարապեսցէ ։

13 Հսկեցէք, հաստատուն կացէք 'ի հաւատս, ժրացարուք զօրացարուք ։
14 Ամենայն ինչ ձեր սիրով լինիցի ։
15 Աղաչեմ զձեզ եղբարք՝ գիտէք զտունն Ստեփանեայ եւ Փորտունատեայ, որ են պտուղ Աքայեցւոց. եւ 'ի պաշտօն սրբոցն կարգեցին զանձինս ։
16 Զի եւ դուք հնազանդ լինիցիք այնպիսեացն. եւ ամենայնի՝ որ գործակից իցէ եւ վաստակակից ։

17 Ուրախ եմ 'ի գալ Ստեփանեայ եւ Փորտունատեայ եւ Աքայիկոսի, զի զձեր պակասութիւնդ նոքա լցին ։
18 Քանզի հանգուցին զոգի իմ՝ եւ զձեր. արդ ծանիջիք զայնպիսիսն ։
19 Ողջոյն տան ձեզ եկեղեցիքն Ասիացւոց. ողջոյն շատ տան ձեզ 'ի Տէր՝ Ակուիղաս, եւ Պրիսկիղա՝ հանդերձ տանն եկեղեցեաւն իւրեանց ։
20 Ողջոյն տան ձեզ եղբարք ամենեքեան. ողջոյն տուք միմեանց 'ի համբոյր սրբութեան ։
21 Ողջոյնդ այդ՝ իմով ձեռամբ Պօղոսի է ։
22 Եթէ ոք ոչ սիրէ զՏէր Յիսուս, եղիցի նզովեալ՝ մարանաթայ ։

23 Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ ։

գայ. բայց կը գայ երբոր պարապութիւն կունենայ ։
13 Արթուն [հ] եղէք, հաստատ կացէք [ձ] հաւատքումը. ժիր եղէք եւ [ղ] զօրացէք ։
14 Ձեր ամէն բաները թող սիրով [ճ] լինին ։
15 Աղաչում եմ ձեզ եղբարք՝ գիտէք Ստեփանի եւ Փորտունատի [մ] տունը, որ Աքայեցւոց պտուղն [յ] են, եւ իրենց անձները սուրբերի ծառայութեան [ն] տուին,
16 Որ դուք էլ հնազանդ լինիք [շ] այնպէսիններին. եւ ամենին՝ որ գործքի եւ աշխատանքին ընկեր [ո] են ։
17 Ուրախ էլայ Ստեփանի եւ Փորտունատի եւ Աքայիկոսի գալուն համար, ինչու որ նորանք ձեր պակասութիւնն [չ] լցրին.
18 Պատճառն որ՝ իմ եւ ձեր հոգին հանգիստ [պ] տուին. ուրեմն ճանաչեցէք [ջ] այնպիսիններին ։
19 Ողջոյն են տալիս ձեզ Ասիացւոց եկեղեցիները. շատ ողջոյն են տալիս ձեզ Տէրով՝ Ակիւղասը եւ Պրիսկիղան՝ այն եկեղեցոյն հետ՝ որ նորանց տանն [ռ] է ։
20 Ողջոյն են տալիս ձեզ բոլոր եղբայրքը. ողջոյն տուէք իրար սուրբ [ս] համբուրովը ։
21 Այդ ողջոյնդ՝ իմ Պօղոսի ձեռքին [վ] է ։
22 Թէ որ մէկը Տէր Յիսուսին [տ] չը սիրէ, անիծեալ [ր] լինի՝ [ց] մարանաթա ։
23 Մեր Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքը ձեզ հետ [ւ] լինի ։

հ Մատթ. ԻԴ. 42. ԻԵ. 13. Ա Թես. Ե. 6. Ա Պետ. Ե. 8.
ձ Գլ. ԺԵ. 1. Փիլիպ. Ա. 27. Դ. 1. Ա Թես. Գ. 8. Բ Թես. Բ. 14.
ղ Եփես. Զ. 10. Կող. Ա. 11.
ճ Գլ. ԺԴ. 1. Ա Պետ. Դ. 8.
մ Գլ. Ա. 16.
յ Հռովմ. ԺԶ. 5.
ն Բ Կորնթ. Ը. 4. Թ. 1. Եբր. Զ. 10.
շ Եբր. ԺԳ. 17.
ո Եբր. Զ. 10.
չ Բ Կորնթ. ԺԱ. 9. Փիլիպ. Բ. 30. Փիլիմ. 13.
պ Կող. Դ. 8.
ջ Ա Թես. Ե. 12. Փիլիպ. Բ. 29.
ռ Հռովմ. ԺԶ. 5. 15. Փիլիմ. 2.
ս Հռովմ. ԺԶ. 16.
վ Կող. Դ. 18. Բ Թես. Գ. 17.
տ Եփես. Զ. 24.
ր Գաղ. Ա. 8, 9.
ց Յուդ. 14, 15.
ւ Հռովմ. ԺԶ. 20.

—

24 Եւ սէրն իմ ընդ ամենեսեան ձեզ
'ի Քրիստոս Յիսուս. Ամէն:

24 Եւ իմ սէրս ձեզ ամէնիդ հետ
Քրիստոս Յիսուսումը. Ամէն:

Կորնթացւոց առաջին թուղթն ի Փիլիպպեայ գրեցաւ ձեռամբ՝ Ստեփանայ և Փուրտունատոսի և Աքայիկոսի յղեցաւ:

# ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

## ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍՆ ԵՐԿՐՈՐԴ

---

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 ՊՕՂՈՍ առաքեալ Յիսուսի
Քրիստոսի կամօքն Աստուծոյ, եւ
Տիմոթէոս եղբայր. եկեղեցւոյդ Աս-
տուծոյ՝ որ է 'ի Կորնթոս՝ սրբովք
ամենեքումբք՝ որ են յամենայն կող-
մանս Աքայեցւոց,
2 Շնորհք ընդ ձեզ եւ խաղա-
ղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ
'ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ:
3 Օրհնեալ է Աստուած եւ Հայր
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.
Հայր գթութեանց, եւ Աստուած
ամենայն մխիթարութեան:
4 Որ մխիթարէն զմեզ յամենայն
նեղութիւնս մեր. առ 'ի կարօղ լի-
նելոյ մեզ մխիթարել զայնոսիկ՝ որ
յամենայն նեղութիւնս իցեն, մխի-
թարութեամբն՝ որով մեք մխիթա-
րիմք յԱստուծոյ:
5 Զի որպէս առաւելուն չարչա-
րանքն Քրիստոսի 'ի մեզ. նոյնպէս
եւ 'ի ձեռն Քրիստոսի առաւել լի-
ցի եւ մխիթարութիւն մեր:
6 Զի եթէ նեղիմք վասն ձերոյ
մխիթարութեան եւ փրկութեան,
եւ եթէ մխիթարիմք վասն ձերոյ
մխիթարութեան եւ փրկութեան,

1 ՊՕՂՈՍ Յիսուսի Քրիստոսի
առաքեալ՝ Աստուծոյ ա կամքովը,
եւ Տիմոթէոս եղբայրը. Աստուծոյ
եկեղեցիին՝ որ Կորնթոսումն է՝
ամէն սրբերին հետ՝ որ Աքայեցոց
ամեն կողմերումն բ են,
2 Շնորհք ձեզ հետ եւ խաղա-
ղութիւն՝ Աստուած մեր Հօրիցը,
եւ Տէր Յիսուս գ Քրիստոսիցը:
3 Օրհնեալ է Աստուած եւ մեր
Տէր Յիսուսի Քրիստոսի դ Հայրը. ո-
ղորմութեան Հայրը, եւ ամէն մը-
խիթարութեան Աստուածը,
4 Որ նա մխիթարում է մեզ մեր
ամեն նեղութիւններումն, որ մենք
կարօղ լինենք մխիթարել նորանց՝
որ ամէն նեղութիւնների մէջ են,
այն մխիթարութիւնովը՝ որ մենք
Աստուածանից նորանով մխիթար-
վումենք:
5 Պատճառն որ՝ ինչպէս որ Քրիս-
տոսի չարչարանքները աւելացած
մեզանում. այնպէս էլ Քրիստոսի
ձեռովը մեր մխիթարութիւնն ա-
ւելի ե կը լինի:
6 Որ թէ նեղութիւն քաշենք՝
նա ձեր մխիթարութեան եւ փրկու-
թեան համար զ է. եւ թէ որ մխի-
թարվինք՝ ձեր մխիթարութեան եւ

ա Ա Կորնթ. Ա. 1. Եփես. Ա. 1. Կող. Ա. 1. Ա Տիմ. Ա. 1. Բ Տիմ. Ա. 1. բ Փիլիպ. Ա. 1.
Կող. Ա. 2. գ Հռովմ. Ա. 7. Ա Կորնթ. Ա. 3. Գաղ. Ա. 3. Փիլիպ. Ա. 2. Կող. Ա. 3. Ա
Թես. Ա. 2. Բ Թես. Ա. 2. Փիլիմ. 3. դ Եփես. Ա. 3. Ա Պետ. Ա. 3. ե Գործ. Թ. 4.
Գղ. Դ. 10. Կող. Ա. 24. զ Գղ. Դ. 15.

որ յաջողեալն է համբերութեամբ նոյնին չարչարանաց. զոր և մեքն չարչարիմք:

7 Եւ յոյսն մեր հաստատուն է վասն ձեր. քանզի գիտեմք՝ եթէ որպէս կցորդ էք չարչարանացն՝ նոյնպէս և մխիթարութեանն:

8 Քանզի ոչ կամիմ ագէտս լինել ձեզ եղբարք՝ վասն նեղութեանցն մերոց եղելոց յԱսիա. զի առաւել քան զկար մեր ծանրացաք, մինչև անյոյս լինելոյ մեզ և ՚ի կենաց:

9 Այլ անձամբ յանձինս զվճիռ մահու ընկալաք. զի մի՛ յանձինս ապաստանեալ իցեմք՝ այլ յԱստուած՝ որ յարուցանէ զմեռեալս:

10 Որ յայնպիսի մահուանէ փրկեաց զմեզ՝ և փրկեսցէ:

11 Քանզի յուսացեալ եմք, եթէ տակաւին փրկեսցէ օգնականութեամբ աղօթից ձերոց վասն մեր. զի ՚ի բազմադէմ շնորհացն՝ որ ՚ի մեզ, բազմօք յածախեսցին գոհութիւնքն վասն մեր:

12 Քանզի պարծանք մեր այս են. վկայութիւն մտաց մերոց. զի սրբութեամբ և առատութեամբ Աստուծոյ, և ոչ մարմնեղէն իմաստութեամբ, այլ շնորհօքն Աստուծոյ շրջեցաք յաշխարհի. բայց առաւել ևս առ ձեզ:

13 Քանզի ոչ եթէ այլազգ ինչ գրեմք առ ձեզ, այլ զոր ընթեռնուցուքն՝ և գիտակ լինիցիք. քանզի յուսամ եթէ մինչև ՚ի վախճան գիտիցէք:

փրկութեան համար է, որ յաջողվումէ իսկ այն չարչարանքներին համբերութեամբը, որ մենք չարչարվումենք:

7 Եւ մեր յոյսը ձեզ համար հաստատ է. ինչու որ՝ գիտումենքթէ՝ ինչպէս որ չարչարանքներին մասնակից էք՝ այնպէս էլ ե մխիթարութեանը:

8 Պատճառն որ չեմ կամենում եղբարք՝ որ դուք չգիտենաք այն նեղութիւնքն որ Ասիային մէջ մեզ վերայ ը եկաւ. ինչու որ՝ մեր կարողութենիցն աւելի ծանր էկաւ մեզ վերայ. մինչև որ մեր կենաց յոյսն էլ կտրել էինք:

9 Բայց և մենք ինքներս մեզ վերայ մեռնելոյ վճիռն առինք. նրահամար որ՝ մեր անձներիս վերայ յոյս չդնենք, բայց Աստուծոյ վերայ՝ որ մեռելներին թ յարուցանումէ,

10 Որ նա այնպէսի մահիցը մեզ փրկեց՝ և էլ ժ կփրկէ:

11 Ինչու որ՝ յոյս ունինք՝ որ դեռ էլ կփրկէ ձեր մեզ համար արած աղօթքի ի օգնականութենովը. որ այն շատ կերպ շնորհքներիցն՝ որ մեզ տրվումեն՝ շատերի ձեռովը գոհութիւնները շատանան մեզ լ համար:

12 Պատճառն որ՝ մեր պարծանքը աս է, մեր խղճմտանքի վկայութիւնը. որ սրբութենովն ու Աստուծոյ խ ճշմարտութենովը՝ և չէ թէ մարմնական իմաստութենով, բայց Աստուծոյ շնորհքովը վարվեցանք աշխարհքին ծ մէջ, և էլ աւելի ձեզ հետ:

13 Ինչու որ՝ ուրիշ բան չենք գրում ձեզ, բայց միմիայն նա որ կարդումէք՝ և անգիտակ էք. որ յոյս ունիմ թէ մինչև վերջը կգիտենաք:

ե Հռովմ. Ը. 17. Բ Տիմ. Բ. 12.
ը Գործ. ԺԹ. 23. Ա Կորնթ. ԺԵ 32: ԺԶ. 9.
թ Երեմ. ԺԷ. 5. 7.
ժ Բ Պետ. Բ. 9.
ի Հռովմ. ԺԵ. 30. Փիլիպ. Ա. 19. Փիլիմ. 22.
լ Գղ. Գ. 15.
խ Գղ. Բ. 17. Գ. 2.
ծ Ա Կորնթ. Բ. 4. 13.

14 Որպէս եւ խոստովան եղէք մեզ
փոքր 'ի շատէ . զի պարծանք ձեր
եմք , որպէս եւ դուք մեր յաւուրն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

15 Եւ յայս ապաստան կամէի նախ
առ ձեզ գալ , զի դուք կրկին շնոր-
հըս ընդունիջիք ։

16 Եւ 'ի ձէնջ երթալ 'ի Մակե-
դովնիայ . եւ դարձեալ 'ի Մակե-
դովնիայ գալ առ ձեզ . եւ 'ի ձէնջ
յուղարկել 'ի Հրէաստան ։

17 Իսկ եթէ զայս խորհեցայ՝ մի-
թէ թեթեւութեամբ ինչ գնացի .
եւ կամ զոր խորհիմն՝ ըստ մարմնոյ
ինչ խորհիցիմ , այլ զի եղիցի յինէն
կողմանէ , այոն՝ այո , եւ ոչն՝ ոչ ։

18 Հաւատարիմ է Աստուած՝ զի
բանն մեր՝ որ առ ձեզ եհաս , ոչ է
այո , եւ ոչ ։
19 Քանզի Որդին Աստուծոյ Յի-
սուս Քրիստոս , որ 'ի ձեզ մեօք
քարոզեցաւ , ինեւ եւ Սիղուանոսիւ
եւ Տիմոթէիւ . ոչ եղեւ այո եւ ոչ .
այլ այոն 'ի նմին եղեւ ։

20 Զի որչափ աւետիքն Աստու-
ծոյ են՝ 'ի նմին այոն . վասն որոյ
եւ նովին ամէնն մեօք 'ի փառս Աս-
տուծոյ ։

21 Այլ որ հաստատեացն զմեզ
ձեօք հանդերձ 'ի Քրիստոս , եւ որ
օծ զմեզ , Աստուած է ։
22 Որ եւ կնքեաց զմեզ , եւ ետ
զառհաւատչեայ Հոգւոյն 'ի սիրտս
մեր ։
23 Այլ ես վկայ զԱստուած կոչեմ

14 Ինչպէս որ էլ փոքր 'ի շատէ
հասկացաք մեզ . ինչու որ՝ մենք
ձեր պարծանք [կ] ենք . ինչպէս որ
դուք էլ [հ] մերը՝ Տէր Յիսուսի Քը-
րիստոսի օրումը ։
15 Եւ սրա վերայ վստահացած՝ կա-
մենումէի՝ որ առաջ ձեզ մօտ [ձ] գամ ,
որ դուք երկու չափով շնորհք [ղ] ըն-
դունիք ։
16 Եւ որ ձեզանից գնամ Մակե-
դօնիա . եւ դարձեալ Մակեդօնիա-
յիցը ձեզ մօտ գամ , եւ ձեզանից
ճանապարհ ձգվիմ դէպի [ճ] Հրէաս-
տան ։
17 Բայց թէ որ սա միտք արի՝ մի-
թէ թեթեւամտութեամբ վարվեցայ .
եւ կամ թէ նա որ միտք եմ անում՝
մարմնոյ կերպով եմ միտք [մ] անում .
որ իմ կողմանէս էլ այոն՝ այո լի-
նի , եւ չէն՝ չէ ։
18 Աստուած հաւատարիմ է՝ որ
մեր խօսքն՝ որ ձեզ հասաւ , այո եւ
չէ չեղաւ ։
19 Ինչու որ՝ Աստուծոյ Որդին Յի-
սուս Քրիստոսը , որ մեզանով ձեր
միջումը [յ] քարոզվեցաւ , ինձանով
եւ Սիղուանոսով եւ Տիմոթէոսով՝
այո եւ չէ չեղաւ . բայց այոն նորա-
նում [ն] էղաւ ։
20 Պատճառն որ՝ որքան Աստու-
ծոյ աւետիքներ որ կան՝ նորանում
են [շ] այոն . եւ նրահամար էլ ամէնը
նորանով՝ որ Աստուծոյն փառք լի-
նի մեզանով ։
21 Բայց Աստուած է՝ որ մեզ ձեզ
հետ հաստատեց Քրիստոսումը եւ
մեզ [ո] օծեց ,
22 Որ նա էլ կնքեց [չ] մեզ , եւ
Հոգոյ զրաւը մեր սրտերն մէջ
[պ] դրաւ ։
23 Բայց ես Աստուծոյն վկայ եմ

[կ] Գղ . Ե . 12 ։
[հ] Փիլիպ . Բ . 16 ։ Դ . 1 ։ Ա Թես . Բ . 19 , 20 ։
[ձ] Ա Կորնթ . Դ . 19 ։
[ղ] Հռովմ . Ա . 11 ։
[ճ] Ա Կորնթ . ԺԶ . 5 , 6 ։
[մ] Գղ . Ժ . 2 ։
[յ] Մարկ . Ա . 1 . Ղու . Ա . 35 . Գործ . Թ . 20 ։
[ն] Եբր . ԺԳ . 8 ։
[շ] Հռովմ . ԺԵ . 8 , 9 ։
[ո] Ա Յովհ . Բ . 20 , 27 ։
[չ] Եփես . Ա . 13 ։ Դ . 30 ։ Բ . Տիմ . Բ . 19 ։ Յայտ . Բ . 17 ։
[պ] Գղ . Ե . 5 ։ Եփես . Ա . 14 ։

անձին իմոյ. զի վասն խնայելոյ ՚ի ձեզ՝ ոչ եւս եկի ՚ի Կորնթոս. զի ոչ եթէ տիրեմք ձեզ հաւատովքն՝ այլ գործակից եմք շնորհացդ ձերոց, քանզի հաւատովք հաստատեալ կայք։

կանչում իմ անձիս Աստուծոյ վերայ. որ ձեզ խնայելոյ համար՝ կրկին չեկի = Կորնթոս. ինչու որ՝ չէ թէ հաւատքնիս ձեզ վերայ տիրապետութիւնք՝ բայց ձեր շնորհացդ գործակիցներ = ենք, ինչու որ՝ հաւատքով հաստատ կանգնած էք։

## ԳԼ. Բ

1 Բայց զայս եւ եթ խորհեցայ՝ զի մի միւսանգամ տրտմութեամբ եկից առ ձեզ։
2 Զի եթէ ես տրտմեցուցանեմ զձեզ. եւ ո՞վ է՝ որ ուրախ առնիցէ զիս, եթէ ոչ՝ որ տրտմեցինն յինէն։
3 Եւ զայս զի գրեցի՝ զի մի յորժամ գայցեմ տրտմութիւն ինչ կրեցից, ուստի պարտն իցէ ինձ ուրախ լինել. յուսացեալ եմ ՚ի ձեզ ամենեսին, զի իմ ուրախութիւնս՝ ձեր ամենեցուն է։
4 Զի ՚ի բազում վշտաց՝ եւ ՚ի նեղութենէ սրտի գրեցի առ ձեզ բազում արտասուօք. ոչ զի տրտմեսջիք, այլ զի զսէրն իմ գիտասջիք, զոր ունիմ առաւելապէս առ ձեզ։
5 Ապա եթէ ոք տրտմեցոյց՝ ոչ եթէ զիս տրտմեցոյց՝ այլ փոքր ՚ի շատէ, զի մի ծանրացայց ամենեցուն ձեզ։
6 Շատ է այնպիսւոյն պատուհասն այն՝ որ ՚ի բազմաց անտի է։
7 Այսուհետեւ նմին հակառակ՝ մանաւանդ շնորհել ձեզ նմա, եւ մխիթարել. զի մի յառաւել տրտմութենէն ընկղմեսցի այնպիսին։

1 Բայց ես աս խորհեցայ՝ որ կրկին տրտմութենով չըգամ ձեզ = մօտ։
2 Ինչու որ՝ թէ որ ես ձեզ տրտմեցնեմ, էլ ո՞վ է՝ որ ինձ ուրախացնէ՝ եթէ ոչ նա՝ որ ինձմէնից տրտմութիւն է առնում։
3 Եւ աս գրեցի՝ որ չըլինի թէ երբոր գամ՝ տրտմութիւն քաշեմ այն ÷ կողմանէ՝ որ պէտք էր ինձ ուրախ լինել. յոյսս դրած եմ ձեզ ամէնիդ վերայ, որ իմ ուրախութիւնս՝ ձեր ամէնիդ ÷ է։
4 Պատճառն որ՝ շատ ցաւից եւ սրտի նեղութիւններից գրեցի ձեզ շատ արտասուքով. չէ թէ որ = տրտմիք բայց որ իմ սէրս գիտենաք, որ աւելի ունիմ ձեզ վերայ։
5 Ապա թէ որ մինը ÷ տրտմացրուց չէ թէ ինձ տրտմացրուց, բայց փոքր ՚ի շատէ, որ ձեզ ամէնիդ ծանրութիւն = չըտամ։
6 Բաւական է այնպիսի մարդուն համար այն պատիժն՝ որ նա շատերիցն ÷ է։
7 Որմէնից ետեւ՝ նրա հակառակը՝ աւելի ներեցէք դուք նորան, եւ = մխիթարեցէք. որ չըլինի թէ շատ սաստիկ տրտմութիւնիցն այնպիսին խեղդվի։

ը Հռովմ. Ա. 9. Գղ. ԺԱ. 31. Գաղ. Ա. 8. Փիլիպ. Ա. 8.
= Ա Կորնթ. Գ. 21. Գղ. Բ. 3. ԺԲ. 20. ԺԳ. 2. 10.
= Ա Կորնթ. Գ. 5. Ա Պետ. Ե. 3.
Հ Հռովմ. ԺԱ. 20. Ա Կորնթ. ԺԵ. 1.
—
= Գղ. Ա. 23. ԺԲ. 20, 21. ԺԳ. 10.
Բ Գղ. ԺԲ. 21.
÷ Գղ. Է. 16. Ը. 22. Գաղ. Ե. 10.
÷ Գղ. Է. 8, 9. 12.
Ի Ա Կորնթ. Ե. 1.
= Գաղ. Դ. 12.
Ի Ա Կորնթ. Ե. 4. 5. Ա Տիմ. Ա. 20.
ε Գաղ. Զ. 1.

8 Վասն որոյ աղաչեմ զձեզ հաստատել 'ի նա զսէրն ։

9 Վասն այնորիկ իսկ եւ գրեցի. զի զչափ առից զձեր՝ եթէ յամենայնի հպատակ իցէք ։

10 Զի եթէ ումեք շնորհիցէք՝ եւ ես. քանզի եւ ես եթէ շնորհիցեմ, զոր ինչ շնորհիցեմն՝ վասն ձեր 'ի դէմս Քրիստոսի ։

11 Զի մի՛ զրկիցիմք 'ի Սատանայէ. քանզի չեմք ինչ անտեղեակ խորհրդոցն նորա ։

12 Այլ իբրեւ հասի ես 'ի Տրովադա յաւետարանն Քրիստոսի, եւ դուռն բաց էր ինձ 'ի Տէր ։

13 Ո՛չ եղեւ հանգիստ հոգւոյ իմում. քանզի ոչ գտի ես անդ զՏիտոս զեղբայր իմ. այլ հրաժարեալ 'ի նոցանէ՝ գնացի 'ի Մակեդոնիա ։

14 Այլ Աստուծոյ շնորհքն՝ որ յամենայնի հռչակ հարկանէ զմեզ 'ի Քրիստոս Յիսուս, եւ զհոտ գիտութեանն իւրոյ յայտնի առնէ մեօք յամենայն տեղիս ։

15 Զի հոտ անուշ եմք Քրիստոսի առ Աստուած՝ 'ի մէջ փրկելոցն՝ եւ 'ի մէջ կորուսելոցն ։

16 Ոմանց հոտ՝ մահուանէ 'ի մահ, եւ ոմանց հոտ՝ կենդանութենէ 'ի կեանս. եւ առ այս ո՞ բաւական իցէ ։

17 Քանզի ոչ եմք իբրեւ զայլսն՝ որ վաճառականս լինին բանին Աստուծոյ. այլ իբրեւ 'ի հաստատութենէ, այլ իբրեւ յԱստուծոյ՝ առաջի Աստուծոյ 'ի Քրիստոս խօսիմք ։

8 Ասոր համար աղաչումեմ ձեզ՝ որ սէրը հաստատէք նորա վերայ ։

9 Իսկ նորա համար էլ գրեցի ձեզ, որ ձեզ փորձով գիտենամ՝ եթէ ամէն բանի մէջ հնազանդ բ էք ։

10 Բայց թէ որ դուք մինին ներէք՝ ապա ես էլ. պատճառն որ՝ ես էլ թէ որ ներեմ, ինչ բան որ ներումեմ՝ ձեզ համար է Քրիստոսի առաջին ։

11 Որ չը զրկվինք Սատանայիցը. ինչու որ՝ նորա մաքի խորհուրդներին անտեղեակ չենք ։

12 Բայց երբոր ես հասի Տրօադա Քրիստոսի աւետարանին թ համար, եւ դուռն ինձ համար բաց էր ե Տէրով.

13 Իմ հոգոյս հանգիստ ւ չըրաւի. ինչու որ՝ ես իմ Տիտոս եղբօրս չըգտի. բայց նորանցից բարեւմնաս արած գնացի Մակեդոնիա ։

14 Բայց շնորհակալութիւն Աստուծոյն՝ որ ամէն բանի մէջ մեզ հռչակաւոր է անում Քրիստոս Յիսուսով. եւ իրեն գիտութեան հոտը մեզանով յայտնումէ ամէն ի տեղ ։

15 Ինչու որ՝ մենք Քրիստոսի անուշ հոտ ենք Աստուծոյ առաջին, փրկվածներին ը մէջ եւ կորածներին ի մէջ ։

16 Մին քանիսին համար՝ հոտ մահիցը դէպի մահը. եւ մին քանիսին համար՝ հոտ կեանքիցը դէպի ի կեանքը. եւ այս բանիս համար ով բաւական յ կըլինի ։

17 Պատճառն որ՝ ուրիշներին պէս չենք, որ Աստուծոյ խօսքը վաճառականութիւն են անում. բայց ինչպէս հաստատութենիցը, ինչպէս Աստուծանից՝ Աստուծոյ առաջին խօսումենք ձ Քրիստոսումը ։

բ Գղ. Ե. 15. Ժ. 6.
գ Գործ. ԺԶ. 8. Ի. 6.
դ Ա կորնթ. ԺԶ. 9.
ւ Գղ. Ե. 5. 6.
ե Եբր. Ա. 3.
թ Ա կորնթ. Ա. 18.
է Գղ. Դ. 3.
ի Ղու. Բ. 34.
Յովհ. Թ. 39. Ա Պետ. Բ. 7. 8.
յ Ա կորնթ. ԺԵ. 10. Գղ. Գ. 5. 6.
ւ Գղ. Դ. 2. ԺԱ. 13. Բ Պետ. Բ. 3.
ձ Գղ. Ա. 12. Դ. 2.

## ԳԼ. Գ

1 Սկսանիմք աստուստեաւ վերստին զանձինս ընծայեցուցանել. թէպէտ եւ ոչ պիտոյ իցեն մեզ, որպէս ոմանց՝ թուղթք ընծայութեան առ ձեզ, կամ 'ի ձէնջ։

2 Այլ թուղթք մեր դուք էք՝ գրեալ 'ի սիրտս մեր, ծանուցեալ՝ եւ ընթերցեալ յամենայն մարդկանէ։

3 Յայտնեալք՝ զի էք թուղթք Քրիստոսի, պաշտեցեալ 'ի մէնջ. եւ գրեալ՝ ոչ մրով, այլ Հոգւովն Աստուծոյ կենդանւոյ. ոչ 'ի տախտակս քարեղէնս, այլ 'ի տախտակս սրտի մարմնեղէնս։

4 Յոյս մի [այսպիսի ունիմք 'ի ձեռն Քրիստոսի առ Աստուած։

5 Երբեւ ոչ եթէ անձամբ բաւական եմք խորհել ինչ իբրեւ 'ի մէնջ. այլ բաւականութիւնն մեր յԱստուծոյ է։

6 Որ եւ բաւականս արար զմեզ՝ պաշտօնեայս Նորոյ Կտակարանացըս՝ ոչ գրով, այլ Հոգւով. զի գիրն սպանանէ, այլ Հոգին կեցուցանէ։

7 Զի եթէ պաշտօնն մահու գըրով դրոշմեալ 'ի տախտակս քարեղէնս՝ եղեւ փառօք, զի մի կարասցեն հայել որդիքն Իսրայէլի յերեսն Մովսէսի՝ [վասն փառաց երեսաց նորա, որ խափանելոցն էր.

1 Ուրեմն նորէն սկսանինք մեր անձերնիս գովելով ձեր առջին ա դնել. թէ եւ պէտք չեն մեզ՝ ինչպէս որ մինքանիներին՝ ձեզ վերայ՝ կամ ձեզմէնից գովութեան բ թղթեր։

2 Բայց մեր թուղթս դուք էք՝ մեր սրտի մէջ գրած՝ ամէն մարդկանցից իմացըւած եւ գ կարդացըւած։

3 Դուք որ յայտնի էլած էք՝ թէ Քրիստոսի թուղթն էք, մեզանից դ ծառայըւած. եւ գրըւած՝ ո՛չ թէ թանաքով, բայց կենդանի Աստուծոյ Հոգովը. ո՛չ թէ քարէ տախտակների ե վերայ, բայց սրտի մարմնէ տախտակների զ վերայ։

4 Մենք այսպիսի յոյս ունինք Աստուծոյն Քրիստոսի ձեռովը,

5 Որ ոչ թէ մենք մեզմանով բաւական ենք մին բան միտք անել ինչպէս է մեզմանից, բայց մեր ամէն բաւական լինելն Աստուածմանից ը է,

6 Որ նա էլ բաւական արաւ մեզ նոր թ Կտակարանի պաշտօնեայ ժ լինելոյ՝ ոչ թէ գրով, այլ ի Հոգով. ինչու որ՝ գիրն լ սպանումէ, այլ Հոգին խ կենդանացնումէ։

7 Բայց թէ որ մահի ծ պաշտօնըն՝ որ գրով քարէ տախտակների վերայ փորած էր՝ փառքով կ էլաւ, մինչեւ որ Իսրայէլի որդիքը չէին կարող Մովսէսի երեսին մտիկ անել՝ նորա երեսի փառքին համար, որ խափանւելու հ էր։

ա Գլ. Ե. 12. Ժ. 8. 12. ԺԲ. 11.
բ Գործ. ԺԸ. 27.
գ Ա Կորնթ. Թ. 2.
դ Ա Կորնթ. Գ. 5.
ե Ելից. ԻԴ. 12. ԼԴ. 1.
զ Սաղ. Խ. 8. Երեմ. ԼԱ. 33. Եզեկ. ԺԱ. 19. ԼԶ. 26. Եբր. Ը. 10.
է Յովհ. ԺԵ. 5. Գլ. Բ. 16.
ը Ա Կորնթ. ԺԵ. 10. Փիլիպ. Բ. 13.
թ Երեմ. ԼԱ. 31. Մատթ. ԻԶ. 28. Եբր. Ը. 6. 8.
ժ Ա Կորնթ. Գ. 5. ԺԵ. 10. Գլ. Ե. 18. Եփես. Գ. 7. Կող. Ա. 25. 29. Ա Տիմ. Ա. 11, 12. Բ Տիմ. Ա. 11.
ի Հռովմ. Բ. 27. 29. Է. 6.
լ Հռովմ. Գ. 20. Դ. 15. Է. 9, 10, 11. Գաղ. Գ. 10.
խ Յովհ. Զ. 64. Հռովմ. Ը. 2.
ծ Հռովմ. Է. 10.
կ Ելից. ԼԴ. 1. 28. Բ Օրին. Ժ. 1. ա.
հ Ելից. ԼԴ. 29. 30. 35.

8 Ո՞րչափ եւս առաւել պաշտօն
հոգւոյն եղիցի փառօք։
9 Զի եթէ պաշտօն դատապար-
տութեանն փառօք էր, որչափ եւս
առաւել պաշտօն արդարութեանն
փառօք։
10 Քանզի ոչ եթէ փառաւորի
փառաւորեալն յայսմ մասին՝ վասն
առաւելութեան փառացն։
11 Զի եթէ որ խափանելոցն էր՝
այն փառօք էր, որչափ եւս առա-
ւել՝ որ կայացն է, փառօք իցէ։

12 Եւ արդ՝ զի ունիմք այսպիսի
յոյս, բազում համարձակութեամբ
վարեսցուք։
13 Եւ ոչ որպէս Մովսէս արկա-
նէր քօղ ՚ի վերայ երեսաց իւրոց,
վասն չհայելոյ որդւոցն Իսրայէլի ՚ի
վախճան խափանելոցն։

14 Այլ կուրացան միտք նոցա.
քանզի մինչեւ ցայսօր ժամանակի
նոյն քօղ ձգեալ կայ ՚ի վերայ ըն-
թերցուածոց Հին Կտակարանացն.
եւ ոչ վերանայ, զի Քրիստոսիւ
խափանելոց է։

15 Այլ մինչեւ ցայսօր՝ յորժամ
ընթեռնուն զՄովսէս՝ նոյն առա-
գաստ կայ ՚ի վերայ սրտից նոցա։
16 Այլ յորժամ դարձցին առ Տէր՝
ապա վերասցի առագաստն։

17 Զի Տէր Հոգին է. ուր Հոգի
Տեառն է, անդ ազատութիւն է։

18 Բայց մեք ամենեքեան բացա-
երեսօք զփառսն Տեառն իբրեւ ընդ
հայելի տեսեալ՝ ՚ի նոյն պատկեր

8 Էլ որքան աւելի հոգւոյ պաշ-
տամունքը փառքով պիտի ց ըլլայ։
9 Ինչու որ եթէ դատապարտու-
թեան պաշտամունքը փառքով էր,
էլ որքան աւելի արդարութեան
պաշտամունքը փառքով ւ է։
10 Որուհամար՝ այն փառաւորն էլ
փառաւոր չէ այս կողմանէն՝ այն
աւելի աւելցած փառքին համար։
11 Պատճառն որ՝ թէ որ նա որ
խափանվելու էր՝ փառքով էր, էլ
որքան աւելի փառքով է նա՝ որ
պիտի հաստատ կենայ։
12 Ուրեմն՝ որ այսպէսի յոյս ու-
նինք, էլ շատ համարձակութենով
ճ վարվինք։
13 Եւ ոչ թէ ինչպէս որ Մովսէ-
սն իրեն երեսին վերայ քօղ էր
ձգում՝ որ Իսրայէլի որդիքը չը
նային այն բանին վերջին՝ որ պէտք
էր չ խափանվի,
14 Բայց նորանց միտքը կուրացաւ.
ինչու որ՝ մինչեւ այս օրվան ժամա-
նակս իսկ այն քօղը ձգված է Հին
Կտակարանի կարդացմունքին վե-
րայ. եւ վեր չի առնվում, որ
նա Քրիստոսովը պէտք է ջ խա-
փանվի։
15 Բայց մինչեւ այսօր՝ երբոր Մով-
սէսին կարդումն, իսկ այն ծածկո-
ցը նորանց սրտերին վերայ կայ։
16 Այլ երբոր դէպի Տէրը ւ կը
դառնան՝ ապա այն ծածկոցը վեր
ա կառնվի։
17 Ինչու որ՝ Տէրն՝ է Հոգին. որ-
տեղ որ Տէրի Հոգին է՝ այնտեղ ա-
զատութիւն ռ է։
18 Բայց մենք ամէնքս՝ որ բացե-
րեսով Տէրի ս փառքին ինչպէս հա-
յելոյն մէջ նայելով, իսկ այն

յ Գաղ. Գ. 5.
ւ Հռովմ. Ա. 17. Գ. 21.
փ Գղ. Է. 4. Եփես. Զ. 19.
ք Ելից. ԼԴ. 33. 35.
յ Հռովմ. Ժ. 4. Գաղ. Գ. 23.
ն Եսայ. Զ. 10. Մատթ. ԺԳ. 11. 14. Յովհ. ԺԲ. 40. Գործ. ԻԸ. 26. Հռովմ. ԺԱ. 7. 8. 25. Գղ. Դ. 4.
ւ Ելից. ԼԴ. 34. Հռովմ. ԺԱ. 23. 26.
- Եսայ. ԻԵ. 7.
ւ Ա Կորնթ. ԺԵ. 45. Հռովմ. 6.
ղ Գղ. Դ. 4. 6. Ա Տիմ. Ա. 11.
ջ Ա Կորնթ. ԺԳ. 12.

նորոգիմք փառաց 'ի փառս. որպէս եւ 'ի Տեառն Հոգւոյ:

պատկերի նման նորոգվումենք՝ փառքից դէպի ա փառք. ինչպէս թէ Տէրին Հոգուցը:

## Գլ. Դ

1 Վասն այսորիկ ունիմք զպաշտօնս զայս՝ որպէս եւ գտաք զողորմութիւն, եւ ոչ ձանձրանամք:

2 Այլ հրաժարեցաք 'ի գաղտնեաց ամօթոյն. զի մի գնասցուք խորամանկութեամբ, եւ մի նենգեսցուք զբանն Աստուծոյ. այլ յայտնութեամբ ճշմարտութեանն ընծայեցուսցուք զանձինս մեր առ ամենայն միտս մարդկան առաջի Աստուծոյ:

3 Ապա թէ իցէ եւս ծածկեալ աւետարանն մեր, 'ի մէջ կորուսելոցն է ծածկեալ:

4 Որոց աստուած աշխարհիս այսորիկ կուրացոյց զմիտս անհաւատիցն, զի մի ծագեսցէ 'ի նոսա լուսաւորութիւն աւետարանի փառացն Քրիստոսի. որ է պատկեր աներեւութին Աստուծոյ:

5 Զի ոչ եթէ զանձինս քարոզեմք, այլ զՅիսուս Քրիստոս ըզ Տէր. եւ զմեզ ծառայս ձեզ վասն Քրիստոսի:

6 Զի Աստուած՝ որ ասաց 'ի խաւարէ լոյս ծագել. որ եւ ծագեաց իսկ 'ի սիրտս մեր 'ի լուսաւորութիւն գիտութեան փառացն Աստուծոյ 'ի դէմս Յիսուսի Քրիստոսի:

1 Սորա համար մենք այս պաշտօնս ա ունինք, ինչպէս որ ողորմութիւն գտինք՝ եւ չենք բ ձանձրանում:

2 Բայց ամօթալի ծածուկ բաներիցը յետ գ քաշվեցանք. որ խորամանկութենով չըվարվինք, եւ Աստուծոյ խօսքը դ չըծռենք. այլ ճշմարտութեան ե յայտնութենովը մեր անձներս ընդունելի անենք ամէն մարդկանց խըղճմտանքին՝ Աստուծոյ առաջին:

3 Ապա թէ մեր աւետարանը ծածկված էլ լինի, նա կորածներին մէջն է զ ծածկված,

4 Որ այս աշխարհիս է Աստուածըն այն անհաւատների մտքերըն ը կուրացրուց, որ Քրիստոսի փառաւոր աւետարանի լուսաւորութիւնը չը ծագէ նորանց թ վերայ. որ նա աներեւոյթ Աստուծոյ պատկերն ժ է:

5 Ինչու որ՝ մենք ոչ թէ մեր անձներս ենք քարոզում, բայց Յիսուս Քրիստոսին՝ թէ նա Տէրն ի է. եւ մենք ձեր ծառաներ՝ Քրիստոսի լ համար:

6 Պատճառն որ՝ Աստուած՝ որ ասաց թէ՝ խաւարիցը լոյս խ ծագէ. ինքն մեր սրտերին մէջ ծ ծագեց՝ Աստուծոյ փառաց գիտութեան լուսաւորութիւնը տալոյ Յիսուսի Քրիստոսի կ դէմքովը:

ա Հռովմ. Ը. 29. Ա Կորնթ. ԺԵ. 49. Կող. Գ. 10.

—

ա Գլ. Գ. 6.
բ Ա Կորնթ. Է. 25. Ա Տիմ. Ա. 13.
գ Հռովմ. Զ. 21.
դ Գլ. Բ. 17. Ա Թես. Բ. 3. 5.
ե Գլ. Զ. 4. 7. Է. 14.
զ Գլ. Ե. 12.
է Ա Կորնթ. Ա. 18. Գլ. Բ. 15. Բ Թես. Բ. 10.
ը Յովհ. ԺԲ. 31. ԺԴ. 30. ԺԶ. 11. Եփես. Զ. 12.
թ Եսայ. Զ. 10. Յովհ. ԺԲ. 40. Գլ. Գ. 14.
ժ Գլ. Գ. 8, 9. 11. 18. Հռոմ. 6.
ի Յովհ. Ա. 18. ԺԲ. 45. ԺԴ. 9. Փիլիպ. Բ. 6. Կող. Ա. 15. Եբր. Ա. 3.
լ Ա Կորնթ. Ա. 13. 23. Ժ. 33.
խ Ա Կորնթ. Թ. 19. Գլ. Ա. 24.
ծ Ծննդ. Ա. 3.
կ Բ Պետ. Ա. 19.
հ Հռոմ. 1. Ա Պետ. Բ. 9.

7 Այսուհետեւ ունիմք զգանձս զայս յամանս խեցեղէնս. զի առաւելութիւն զօրութեանն իցէ յԱստուծոյ, եւ ոչ 'ի մէնջ։

8 Յամենայնի նեղեալք՝ այլ ոչ նուաղեալք, կարօտեալք՝ այլ ոչ տարակուսեալք։

9 Հալածեալք՝ այլ ոչ լքեալք. չարչարեալք՝ այլ ոչ սատակեալք։

10 Յամենայն ժամ զմահն Յիսուսի 'ի մարմնիս մեր կրեսցուք՝ զի եւ կեանքն Յիսուսի 'ի մարմնիս մեր յայտնեսցին։

11 Զանզի միշտ մեք՝ որ կենդանիքս եմք, 'ի մահ մատնիմք վասն Յիսուսի. զի եւ կեանքն Յիսուսի յայտնի լիցին 'ի մահկանացու մարմնիս մեր։

12 Այսուհետեւ մահ 'ի մեզ զօրանայ, եւ կեանք 'ի ձեզ։

13 Արդ՝ ունիմք զնոյն հոգի հաւատոց. որպէս եւ գրեալ է. Հաւատացի՝ վասն որոյ եւ խօսեցայ. եւ մեք հաւատամք՝ վասն որոյ եւ խօսիմք իսկ։

14 Զայս գիտեմք՝ եթէ որ յարոյցն զՅիսուս, եւ զմեզ ընդ Յիսուսի յարուսցէ՝ եւ յանդիմանն կացուսցէ ձեօք հանդերձ։

15 Զանզի ամենայն ինչ վասն ձեր է. զի շնորհքն յաճախեալք 'ի բազմաց 'ի գոհութենէ առատ՝ առաւելասցին 'ի փառս Աստուծոյ։

16 Վասն որոյ եւ ոչ ձանձրանամք. այլ թէպէտ եւ արտաքինն մարդս մեր ապականի, այլ ներքինն մարդն մեր նորոգի օր ըստ օրէ։

7 Բայց այս գանձրս ունինք հողէ շինած ծ ամաններումը. որ զօրութեան մեծութիւնն Աստուածանից լինի, եւ ոչ թէ ղ մեզանից։

8 Ամէն բանի մէջ նեղացած բայց չենք ճ թուլացած, կարօտութեան մէջ կացած՝ բայց տարակուսութիւն չքաշած.

9 Հալածված՝ բայց երեսից չընկած. չարչարված՝ բայց մ չը սատակված.

10 Ամէն ժամանակ Յիսուսի մահըն մեր մարմինումը յ տանումենք՝ որ Յիսուսի կեանքն էլ մեր մարմինումըս ն յայտնուի։

11 Պատճառն որ՝ մենք որ կենդանի ենք, միշտ Յիսուսի համար մահնելոյ մէջ ենք շ մատնըվում. որ Յիսուսի կեանքն էլ յայտնուի մեր մահկանացու մարմինումս։

12 Ուրեմն մահը մեզանում է զօրանում, եւ կեանքը ո ձեզանում։

13 Բայց մէն հաւատքի հոգին չ ունինք, ինչպէս որ էլ գրված է. Հաւատացի՝ եւ նորահամար էլ պ խօսեցի. մենք էլ հաւատումենք՝ եւ իսկ սորահամար էլ խօսումենք։

14 Սա ենք գիտում, որ նա՝ որ Յիսուսին ջ յարոյց, մեզ էլ Յիսուսի հետ կը յարուցանէ, եւ ձեզ հետ էլ՝ առաջին կը կանգնացնէ։

15 Պատճառն որ՝ ամէն բան ձեզ համար ռ է. որ շատացած շնորհքն այն շատերի գոհութիւնցն՝ աւելանայ Աստուծոյ փառաց ս համար։

16 Նրահամար էլ չենք թուլանում. բայց թէ եւ մեր դրսի մարդն ապականվումէ, այլ մեր ներսի մարդս օրէ օր վ նորոգվումէ։

ծ Գղ. Ե. 1.
ղ Ա Կորնթ. Բ. 5. Գղ. ԺԲ. 9.
ճ Գղ. Ե. 5.
մ Սաղ. ԼԵ. 24.
յ Ա Կորնթ. ԺԵ. 31. Գղ. Ա. 5-9. Գաղ. Զ. 17. Փիլիպ. Գ. 10.
ն Հռովմ. Ը. 17. Բ Տիմ. Բ. 11, 12. Ա Պետ. Դ. 13.
շ Սաղ. ԽԴ. 22. Հռովմ. Ը. 36. Ա Կորնթ. ԺԵ. 31. 49. Գղ. Ա. 8. 9.
ո Գղ. ԺԴ. 9.
չ Հռովմ. Ա. 12. Բ Պետ. Ա. 1.
պ Սաղ. ՃԺԵ. 10.
ջ Հռովմ. Ը. 11. Ա Կորնթ. Զ. 14.
ռ Ա Կորնթ. Գ. 22. Գղ. Ա. 6. Կող. Ա. 24. Բ Տիմ. Բ. 10.
ս Գղ. Ա. 11. Ը. 19. Թ. 11, 12.
վ Հռովմ. Է. 22. Եփես. Գ. 16. Կող. Գ. 9. Ա Պետ. Գ. 4.

17 Զի առժամայն յաճախութիւն
թեթեւ նեղութեանս մերում՝ 'ի յա-
ւիտենականն առաւելութիւն , զմե-
ծութիւն փառացն գործէ 'ի մեզ ։

18 Քանզի ոչ զիտեմք զերեւելի-
սըս՝ այլ զաներեւոյթսն . զի երեւե-
լիքս առժամանակ մի են , եւ աներե-
ւոյթքն յաւիտենականք ։

17 Ինչու որ՝ մեր ժամանակաւոր
թեթեւ նեղութեան չափաւորութիւնը՝
յաւիտենական աւելութեան փառ-
քի մեծութիւն է գործում մեզ
† համար ։
18 Պատճառն որ՝ այս երեւօղ բա-
ները չենք զիտում , բայց նա որ
‡ չի երեւում . ինչու որ՝ երեւօղներս
մին քիչ ժամանակի են , եւ չերեւօղ-
ներն յաւիտենական ։

## Գլ . Ե

1 Քանզի գիտեմք՝ եթէ երկրա-
ւոր տաճար շինուածոյս մերոյ քակ-
տեսցի , շինած յԱստուծոյ ունիմք՝
տաճար առանց ձեռագործի , յաւի-
տենական յերկինս ։

2 Եւ ընդ այս հառաչեմք . քան-
զի զբնակութիւն երկնից փափա-
գեմք զգենուլ ։

3 Միայն թէ յօժամ զգենու-
ցումքն՝ ոչ մերկ գտանիցիմք ։
4 Քանզի որ եմք ընդ յարկաւս
ընդ այսորիկ՝ հառաչեմք ծանրաց-
եալք . զի ոչ կամիմք մերկանալ ,
այլ զայն 'ի վերայ այսր զգենուլ .
զի ընկղմեսցի մահկանացուս 'ի կե-
նաց անտի ։
5 Այլ որ յաջողէն մեզ 'ի սոյն՝
Աստուած է . որ ետ մեզ զառհա-
ւատչեայ Հոգւոյն ։
6 Արդ՝ համարձակեմք յամենայն
ժամ , եւ գիտեմք եթէ որչափ յա-
մեմք 'ի մարմնի աստ՝ օտարանամք
'ի Տեառնէ ։

7 Զի հաւատովք գնամք՝ եւ ոչ
կարծեօք ։

1 Պատճառն որ՝ գիտումենք որ՝
եթէ մեր երկրաւոր շինուածքի տա-
ճարը – քանդվի , Աստուծմէնից մին
շինուածք ունինք՝ մին տաճար ա-
ռանց ձեռքի գործված , որ յաւի-
տենական է երկինքումը ,
2 Եւ սրահամար զրզվումենք .
ինչու որ՝ ցանկանումենք հագնիլ
այն բնակութիւնըն՝ որ երկինքիցն
‖ է ,
3 Միայն թէ՝ երբոր նա հագնենք՝
մերկ § չը գտնվինք ։
4 Պատճառն որ՝ որ մենք այս
ծածքիս տակը ծանրացած զրզվու-
մենք . որ չենք կամենում մերկա-
նալ , բայց նա սրա վերայ հագնիլ .
որ այս մահկանացուս այն կենա-
քին մէջ ¶ ամբղվի ։
5 Բայց նա՝ որ այս բանիս յաջո-
ղումէ մեզ՝ Աստուած ե է . որ Հո-
գոյ գրաւը տուաւ է մեզ ։
6 Նրահամար ամեն ժամանակ
համարձակութիւն ունինք , եւ գի-
տումենք թէ՝ քանի որ այս մարմ-
նումս ուշանումենք՝ Տէրիցն օտա-
րանումենք ։
7 Ինչու որ՝ հաւատքով ենք զը-
նում , եւ ոչ թէ ե կարծիքով ։

† Մատթ . Ե . 12 . Հռովմ . Ը . 18 . Ա Պետ . Ա . 6 . Ե . 10 .
‡ Հռովմ . Ը . 24 . Գլ . Ե . 7 . Եբր . ԺԱ . 1 .
– Յոբ Դ . 19 . Գլ . Դ . 7 . Բ Պետ . Ա . 13 , 14 .
‖ Հռովմ . Ը . 23 .
§ Յայտ . Գ . 18 . ԺԶ . 15 .
¶ Ա Կորնթ . ԺԵ . 53 , 54 .
ե Եսայ . ԻԹ . 23 . Եփես . Բ . 10 .
է Հռովմ . Ը . 23 . Գլ . Ա . 22 . Եփես . Ա . 14 . Դ . 30 .
ե Հռովմ . Ը . 24 , 25 . Գլ . Դ . 18 . Ա Կորնթ . ԺԳ . 12 . Եբր . ԺԱ . 1 .

8 Այլ համարձակիմք՝ եւ առաւել եւս հաճեալ եմք ելանել 'ի մարմնոյ աստի՝ եւ մտանել առ Աստուած ։

9 Վասն որոյ եւ աստատանամք ․ զի եթէ յամիցեմք՝ եւ եթէ ելանիցեմք՝ հաճոյ եւեթ լիցուք նմա ։

10 Վասնզի ամենեցուն մեզ յանդիմանս լինել կայ առաջի ատենին Քրիստոսի ․ զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնովն՝ զոր ինչ գործեաց յառաջ՝ եթէ բարի, եւ եթէ չար ։

11 Իսկ արդ՝ զահն Տեառն գիտելով չափ, զմարդկան ինչ միտս հաճեմք ․ սակայն առաջի Աստուծոյ յայտնեալ եմք ․ բայց եւ յուսամ եւ 'ի ձեր միտս յայտնի լինել ։

12 Իբր ոչ եթէ միւսանգամ զանձինս ինչ ընծայեցուցանեմք ձեզ, այլ պատճառս տամք ձեզ պարծանաց վասն մեր ․ զի ունիցիք առ այնոսիկ՝ որ առ աչօք պարծիցին, եւ ոչ սրտիւք ։

13 Զի եթէ ատանցաք ինչ՝ այն Աստուծոյ է ․ եւ եթէ զգաստանամք՝ այն ձեր է ։

14 Զի սէրն Քրիստոսի ստիպէ ըզ մեզ քննել զայս ․ զի եթէ մին փոխանակ ամենեցուն մեռաւ, ապա ուրեմն ամենեքեան մեռեալ էին ։

15 Եւ 'ի վերայ ամենեցուն մեռաւ, զի որ կենդանիքն իցեն՝ մի անձանց իցեն կենդանիք, այլ այնմ՝ որ 'ի վերայ նոցայն մեռաւ, եւ յարեաւ ։

8 Բայց սիրտ ենք առնում, եւ էլ աւելի հաճոյ է մեզ այս մարմնիցս դուրս գնանք՝ եւ Աստուծոյ մօտ ը մանենք ։

9 Նորահամար էլ ջանք ենք անում, որ եթէ ուշանանք՝ եւ եթէ դուրս գնանք՝ միմիայն հաճոյ լինենք նորան ։

10 Պատճառն որ՝ մենք ամէնքս պէտք է յայտնի լինենք Քրիստոսի դատաստանի աթոռի թ առաջին ․ որ ամէն մէկն ընդունի իւրեն մարմնովը՝ ինչ որ առաջ գործեց՝ թէ բարի, եւ թէ ժ չար ։

11 Ուրեմն՝ մենք Տէրի ահաւորութիւնը լաւ գիտենալով, մարդկանց միտքը ի հաւանեցնումենք ․ բայց Աստուծոյ առաջին սիրտ յայտնըվինք ․ եւ ես յոյս ունիմ՝ որ ձեր մտքումն էլ յայտնի լ եմ ․

12 Չէ որ՝ իբր թէ նորէն մեր անձներս գովելով ձեր առաջին խ գովենք ․ բայց պատճառ ենք տալիս ձեզ՝ մեզ համար ծ պարծենալոյ, որ մին բան ունենաք նորանց դէմ՝ որ երեսութիւն պէտս են պարծենում, եւ ոչ թէ սրտով ։

13 Ինչու որ՝ թէ որ չափիցն անցանք՝ նա Աստուծոյ համար է ․ եւ թէ որ չափաւոր ենք՝ նա ձեզ համար կ է ։

14 Պատճառն որ՝ Քրիստոսի սէրն ստիպումէ մեզ՝ որ սա միտք անենք ․ ինչու որ՝ եթէ մինն ամէնին տեղ մեռաւ, ապա ամէնքը մեռած հ են ։

15 Եւ նա ամէնին վերայ մեռաւ, որ նորանք որ կենդանի են՝ ոչ թէ իրենց անձներին համար կենդանի լինեն, այլ նորա համար՝ որ իրենց վերայ մեռաւ, եւ յարութիւն ձ առաւ ։

ը Փիլիպ. Ա. 23 ։
թ Մատթ. ԻԵ. 31, 32 ։ Հռովմ. ԺԴ. 10 ։
ժ Հռովմ. Բ. 6 ։ Գաղ. Զ. 8 ։ Եփես. Զ. 8 ։ Կող. Գ. 24, 25 ։ Յայտ. ԻԲ. 12 ։
ի Յոբ. ԼԱ. 23 ։ Եբր. Ժ. 31 ։ Յուդ. 23 ։
լ Գլ. Գ. 2 ։
խ Գլ. Գ. 1 ։
ծ Գլ. Ա. 14 ։
կ Գլ. ԺԱ. 1. 16, 17 ։ ԺԲ. 6, 11 ։
հ Հռովմ. Ե. 15 ։
ձ Հռովմ. Զ. 11, 12 ։ ԺԴ. 7, 8 ։ Ա Կորնթ. Զ. 19 ։ Գաղ. Բ. 20 ։ Ա Թես. Ե. 10 ։ Ա Պետ. Դ. 2 ։

16 Այսուհետեւ մեք ոչ զոք գիտեմք մարմնով. զի թէպէտ եւ գիտէաք մարմնով զՔրիստոս՝ այլ արդ ոչ եւս նոյնպէս գիտեմք։

17 Բայց եթէ ինչ 'ի Քրիստոս նոր արարած իցէ. զի հինն անց եւ արդ նոր եղեւ ամենայն։

18 Այլ ամենայն ինչ յԱստուծոյ՝ որ հաշտեցոյց զմեզ ընդ իւր 'ի ձեռն Քրիստոսի. եւ ետ մեզ ըզ պաշտօնն հաշտութեան։

19 Եւ քանզի Աստուած էր՝ Քրիստոսիւ զաշխարհս հաշտեցուցանել ընդ իւր, եւ չհամարել նոցա զմեղս իւրեանց, եւ եդ 'ի մեզ՝ զբանն հաշտութեան։

20 Արդ՝ վասն Քրիստոսի պատգամաւորեմք՝ որպէս եւ Աստուծոյ բարեխօսութեամբ մեօք. աղաչեմք վասն Քրիստոսի՝ հաշտեցարուք ընդ Աստուծոյ։

21 Զի զայն՝ որ ոչն գիտէր ըզ մեղս, վասն մեր մեղս արար. զի մեք եղիցուք նովաւ արդարութիւն Աստուծոյ։

16 Ալ ասանից ետեւ մենք ոչ մէ-կին չենք գիտում մարմնոյ ղկերպմա-նէ. եւ թէ եւ Քրիստոսին էլ գի-տումէինք մարմնոյ կերպմանէ, բայց հիմիկ՝ էլ այնպէս չենք ճգիտում։

17 Բայց թէ որ մինը Քրիստոսու-մն մէ՝ մին նոր ստեղծւած է. ինչու որ հինն անցաւ, եւ հիմիկ ամէն բան նոր նէլաւ։

18 Սիրայն թէ՝ այն ամէնն Աստ-ուածանից է, որ մեզ իրենն հետ հաշտացրուց Քրիստոսի շձեռովը. եւ մեզ հաշտութեան պաշտօնըն տուաւ։

19 Ինչու որ՝ Աստուած էր նա, որ Քրիստոսովն աշխարհքս հաշտա-ցրուց իրենն հետ, եւ նորանց մեղ-քերը չըհամարեց ոնորանց. եւ հաշտութեան խօսքը մեր միջումը դրաւ։

20 Ուրեմն Քրիստոսի կողմանէն պատգամաւոր չենք, ինչպէս որ Աստուած էլ յորդորումէ մեզանով. աղաչումենք Քրիստոսի կողմանէն՝ հաշտւեցէք Աստուծոյ պհետ։

21 Պատճառն որ՝ ինքը նորան՝ որ մեղք չէր գիտում, մեզ համար մեղք ջարաւ. որ մենք նորանով Աստուծոյ արդարութիւն ռլինինք։

## ԳԼ. Զ.

1 Գործակից եմք ձեր՝ եւ աղաչեմք. մի ընդունայն զշնորհսն Աստուծոյ ընդունել ձեզ։

2 Զի 'ի ժամանակի ընդունելութեան՝ լուայ քեզ, եւ յաւուր փրկութեան օգնեցի քեզ. ա-

1 Ձեր գործքի ընկեր սենք՝ եւ վաղաչումենք, որ դուք Աստուծոյ շնորհքը դուր տեղը տչըընդունիք։

2 Պատճառն որ՝ ասումէ. Ըն-դունելի ժամանակումը լսեցի քեզ, եւ փրկութեան օրումն օգնեցի քեզ.

ղ Մատթ. ԺԲ. 50. Յովհ. ԺԵ. 14. Գաղ. Ե. 6. Փիլիպ. Գ. 7. 8. Կող. Գ. 11.
ճ Յովհ. Զ. 63.
մ Հռովմ. Ը. 10. ԺԶ. 7. Գաղ. Զ. 15.
յ Գաղ. Ե. 6. Զ. 15.
ն Եսայ. ԽԳ. 18. 19. ԿԵ. 17. Եփես. Բ. 15. Յայտ. ԻԱ. 5.
շ Հռովմ. Ե. 10. Եփես. Բ. 16. Կող. Ա. 20. Ա Յովհ. Բ. 2. Դ. 10.
ո Հռովմ. Գ. 24. 25.
չ Յոբ. ԼԳ. 23. Մաղ. Բ. 7. Գղ. Գ. 6. Եփես. Զ. 20.
պ Գղ. Զ. 1.
ջ Եսայ. ԾԳ. 6. 9. 12. Գաղ. Գ. 13. Ա Պետ. Բ. 22. 24. Ա Յովհ. Գ. 5.
ռ Հռովմ. Ա. 17. Ե. 19. Ժ. 3.

—

ս Ա Կորնթ. Գ. 9.
վ Գղ. Ե. 20.
տ Եբր. ԺԲ. 15.

հաւասիկ ժամանակ ընդունելի. ա-
հա օր փրկութեան։
3 Մի՛ եւ մի՛ ինչ տայցէք պատ-
ճառս, զի մի՛ արատասցի պաշտօ-
նըն։
4 Այլ յամենայնի ընծայեցուցէք
զանձինս ձեր իբրեւ զպաշտօնեայս
Աստուծոյ՝ համբերութեամբ բազ-
մաւ. 'ի նեղութիւնս, 'ի վիշտս, 'ի
չարչարանս,
5 'Ի գանս, 'ի բանտս, 'ի խռո-
վութիւնս, յաշխատութիւնս, 'ի
հսկմունս, 'ի պահս,

6 'Ի սրբութեան, 'ի գիտութեան,
յերկայնմտութեան, 'ի քաղցրու-
թեան, 'ի Հոգի Սուրբ, 'ի սէր՝ ա-
նանց կեղծաւորութեան.
7 'Ի բանս ճշմարտութեան, 'ի
զօրութեան Աստուծոյ. վասն զի-
նուն արդարութեան որ ընդ աջմէն
եւ ընդ ահեկէն է։
8 Փառօք եւ անարգութեամբ,
գովութեամբ եւ պարսաւանօք,
իբրեւ մոլարք՝ եւ ճշմարիտք.

9 Իբրեւ անծանօթք՝ եւ ծանու-
ցեալք. իբրեւ մահկանացուք՝ եւ
ահաւասիկ կենդանի եմք. իբրեւ
խրատեալք՝ եւ ոչ մահապարտեալք.

10 Իբրեւ տրտմեալք՝ եւ հանա-
պազ ուրախ եմք. իբրեւ աղքատք՝
եւ զբազումս մեծացուցանեմք. իբ-
րեւ ոչինչ ունիցիմք, եւ զամենայն
ինչ ունիմք։
11 Բերանք մեր բացեալ են առ
ձեզ Կորնթացիք, եւ սիրտք մեր
ընդարձակեալք։
12 Ո՛չինչ նեղիք 'ի մէնջ՝ բայց ե-
թէ 'ի գութս ձեր նեղիցիք։

ահա ընդունելի ժամանակ է. հի-
միկ փրկութեան ա օրը։
3 Չըլլայ որ ոչ մէն բանով գայ-
թակղութիւն տանք, որ պաշտօնը
բ չըլ նախատուի.
4 Բայց ամէն բանի մէջ ձեր
անձերնիդ առաջ դրէք ինչպէս Աս-
տուծոյ պաշտօնեաներ՝ շատ համ-
բերութեամբ նեղութիւններում,
վիշտերում, գ չարչարանքներում,
5 Ծեծուածներում, դ բանտերում,
խռովութիւններում, աշխատանք-
ներում, հսկմունքներում, ծոմե-
րում,
6 Սրբութենում, գիտութենում,
երկայնմտութենում, քաղցրութե-
նում, Սուրբ Հոգւով, անանց կեղ-
ծաւորութեան սիրով.
7 Ճշմարտութեան ե խօսքերովը,
Աստուծոյ զ զօրութեամբը՝ արդա-
րութեան զէնքերն առած աջ կողմա-
նէ եւ ձախ է կողմանէ։
8 Փառքով եւ անարգանքով, գո-
վասանքով եւ բամբասանքով, ինչ-
պէս մոլորեցնօղներ՝ եւ ճշմարիտ
խօսօղներ.
9 Ինչպէս չը ճանաչուածներ՝ եւ
ը ճանաչուածներ. ինչպէս մեռածներ՝
եւ ահա կենդանի թ ենք. ինչպէս
պատժուածներ՝ եւ մահապարտ ժ չը-
դատուածներ։
10 Ինչպէս տրտմածներ՝ եւ միշտ
ուրախ ենք. ինչպէս աղքատներ՝
եւ շատերին հարստացնումենք.
ինչպէս թէ ոչ ինչ ունինք՝ եւ ա-
մէն բան ունինք։
11 Մեր բերանս բացուած է դէպի
ձեզ Կորնթացիք, եւ մեր սիրտս
լայն արձակ ի եղած։
12 Մեզանից մին բանով նեղու-
թիւն չունիք, եթէ ոչ ձեր սրտի
գութովը լ նեղուիք։

ա Եսայ. ԽԹ. 8.
բ Հռովմ. ԺԴ. 13. Ա Կորնթ. Թ. 12. Ժ. 32.
գ Ա Կորնթ. Դ. 1.
դ Գլ. ԺԱ. 23, ա.
ե Գլ. Դ. 2. Է. 14.
զ Ա Կորնթ. Բ. 4.
է Գլ. Ժ. 4. Եփես. Զ. 11. 13. Բ Տիմ. Դ. 7.
ը Գլ. Գ. 2. Ե. 11, ԺԱ. 6.
թ Ա Կորնթ. Դ. 9. Գլ. Ա. 9. Դ. 10, 11.
ժ Սաղ. ՃԺԸ. 18.
ի Գլ. Է. 3.
լ Գլ. ԺԲ. 15.

13 Այդ՝ զնոյն հատուցումն իբրեւ
ընդ որդեակս ասեմ . ընդարձա-
կեցարուք եւ դուք ։

14 Եւ մի՛ լինիք լծակիցք անհա-
ւատից . քանզի զի՞նչ հաղորդու-
թիւն է արդարութեան ընդ անօ-
րէնութեան . եւ կամ զի՞նչ հաւա-
սարութիւն է լուսոյ ընդ խաւա-
րի ։
15 Եւ կամ զի՞նչ միաբանութիւն
է Քրիստոսի ընդ Բելիարայ . կամ
զի՞նչ բաժին կայ հաւատացելոյն
ընդ անհաւատին ։
16 Կամ զի՞նչ նմանութիւն է տա-
ճարի Աստուծոյ՝ մեհենաց . ապա-
քէն դուք տաճար Աստուծոյ կեն-
դանւոյ էք . որպէս եւ ասաց Աստ-
ուած , թէ Բնակեցայց 'ի նոսա , եւ
գնացից 'ի նոսա . եւ եղէց նոցա
Աստուած , եւ նոքա եղիցին իմ
ժողովուրդ ։

17 Վասն որոյ ելէք 'ի միջոյ նո-
ցա եւ մեկնեցարուք , ասէ Տէր ,
եւ 'ի պիղծս մի՛ մերձենայք ։

18 Եւ ես ընկալայց զձեզ . եւ ես
եղէց ձեզ 'ի Հայր , եւ դուք եղի-
ջիք ինձ յուստերս եւ 'ի դստերս ,
ասէ Տէր Ամենակալ ։

13 Հիմիկ՝ որ ճիշդ մէն հատու-
ցումին ինչպէս թէ իմ որդիքներուս
հետ ունենամ . դուք ալ լայն սր-
տով հ եղէք ։
14 Եւ անհաւատներուն հետ լծի
ընկեր մի՛ ձ ըլլաք . պատճառն ո՞ր
ինչ հաղորդութիւն կայ արդարու-
թեանն՝ անօրէնութեան հետ . եւ
կամ թէ ինչ հաւասարութիւն լու-
սոյն՝ խաւարին հետ ։
15 Եւ կամ թէ ինչ միաբանու-
թիւն կայ Քրիստոսին՝ Բելիարին
հետ . կամ ինչ բաժին ունի հաւա-
տացեալն անհաւատին հետ ։
16 Կամ ինչ նմանութիւն կայ Աս-
տուծոյ տաճարին՝ կուռքերի տան
ղ հետ . բայց դուք կենդանի Աս-
տուծոյ տաճարն ճ էք . ինչպէս որ
Աստուած ասաց , թէ Նորանց մի-
ջումը կբնակվիմ , եւ նորանց մի-
ջումը ման կգամ . եւ նորանց Աստ-
ուած կը լինիմ , եւ նորանք իմ մ ժո-
ղովուրդս ։
17 Նրահամար՝ նորանց միջիցը
դուրս գնացէք եւ ջոկվեցէք , ա-
սումէ Տէրը , եւ պիղծ բաների մի՛
յ մօտենաք ։
18 Եւ ես կընդունիմ ձեզ . եւ ես
Հօր տեղ կըլինիմ ձեզ , եւ դուք
ինձ որդիքների եւ աղջիկների տեղ
կը լինիք , ասումէ Ամենակարող
ն Տէրը ։

## ԳԼ. Է

1 Իսկ որովհետեւ զայս աւետիս
ունիմք սիրելիք՝ սրբեսցուք զանձի-
նս մեր յամենայն պղծութենէ մարմ-
նոյ եւ հոգւոյ , կատարեսցուք զսր-
բութիւն ահիւն Աստուծոյ ։

1 Բայց որովհետեւ մենք այս ա-
ւետիքը ունինք սիրելիներ՝ մեր
անձներս սրբենք հոգով եւ մարմնոյ
ամէն պղծութենիցը , սրբութիւնը
կատարենք Աստուծոյ շ ահովը ։

հ Ա Կորնթ. Գ. 14։
ձ Բ Օրին. Է. 2, 3։ Ա Կորնթ. Ե. 9։ Է. 39։
ղ Ա Թագ. Ե. 2, 3։ Գ Թագ. ԺԸ. 21։ Ա Կորնթ. Ժ. 21։ Եփես. Ե. 7. 11։
ճ Ա Կորնթ. Գ. 16 Զ. 19։ Եփես. Բ. 21, 22։ Եբր. Գ. 6։
մ Ելից. ԻԹ. 45։ Ղեւ. ԻԶ. 12։ Երեմ. ԼԱ. 33։ ԼԲ. 38։ Եզեկ. ԺԱ. 20։ ԼԶ. 28։ ԼԷ. 26, 27, Զաք. Ը. 8։ ԺԳ. 9։
յ Եսայ. ԾԲ. 11։ Գլ. Է. 1։ Յայտ. ԺԸ. 4։
ն Երեմ. ԼԱ. 1. 9։ Յայտ. ԻԱ. 7։
—
շ Գլ. Զ. 17, 18։ Ա Յովհ. Գ. 3.

2 Տարայք մեզ, զի ոչ ումեք մեղաք, եւ ոչ զոք եղծաք, եւ ոչ զոք զրկեցաք։

3 Ո՛չ եթէ 'ի դատապարտութիւն ինչ ասեմ. քանզի յառաջ իսկ ասացի, եթէ 'ի սրտի մերում կայք՝ 'ի կեալ եւ 'ի մեռանել ընդ ձեզ։

4 Բազում համարձակութիւն է ինձ առ ձեզ. բազում պարծանք են ինձ վասն ձեր. լի եմ մխիթարութեամբ. առաւելեալ եմ ուրախութեամբ յամենայն նեղութիւնս մեր։

5 Քանզի յորժամ հասաք մեք 'ի Մակեդոնիա, եւ ոչ միով իւիք հանգիստ գտաւ մարմնոյ մերում, այլ յամենայնի նեղեալք. քանզի արտաքոյ մարտք՝ եւ 'ի ներքոյ արհաւիրք։

6 Այլ որ մխիթարէն զխոնարհս, մխիթարեաց զմեզ Աստուած 'ի գալստեանն Տիտոսի։

7 Ո՛չ միայն 'ի գալստեանն նորա, այլեւ 'ի մխիթարութեանն՝ զոր մխիթարեցաւ նա 'ի ձեզ, 'ի պատմել մեզ զանձկութիւն ձեր՝ զողբումն ձեր՝ զնախանձն ձեր վասն իմ, մինչ առաւել ուրախ լինել ինձ։

8 Զի թէ եւ տրտմեցուցի զձեզ թղթովն՝ ոչ զղջանամ, թէպէտ եւ զղջացեալ էի. քանզի տեսանեմ՝ զի թուղթն այն թէ եւ առ ժամանակ մի տրտմեցոյց զձեզ։

9 Արդ՝ ուրախ եմ, ոչ զի տրտմեցայք՝ այլ զի յապաշխարութիւն տրտմեցարուք. քանզի տրտմեցայք դուք ըստ Աստուծոյ. զի մի իւիք զրկիցիք 'ի մէնջ։

10 Զի որ ըստ Աստուծոյն տրտմ-

2 Մտիկ արէք մեզ՝ որ մէկու դէմ մեղք չարինք, եւ մէկուն վնաս չը-տուինք, եւ մէկուն բ չզրկեցինք։

3 Ո՛չ թէ ձեզ դատապարտելոյ համար եմ ասում սա. պատճառն որ՝ հենց առաջուց ասացի, որ դուք մեր սրտումն էք՝ մինչեւ ձեզ հետ կենդանի լինել եւ գ մեռնել։

4 Շատ համարձակութիւն ունիմ դէպի դ ձեզ. շատ պարծանք ունիմ ձեզ ե համար. մխիթարութենով լիքն եմ. ուրախութենով աւելացած եմ մեր ամէն զ նեղութիւններումն։

5 Պատճառն որ՝ երբոր հասանք Մակեդոնիա, խիստ մին բանով էլ հանգստութիւն չը գտաւ մեր մարմնոյ է համար, բայց ամէն բանի մէջ նեղութիւն ը քաշեցինք. ինչու որ՝ դրսից կռիւ՝ եւ ներսից ահ եւ վախ թ էր։

6 Բայց նա որ խոնարհներին ժ մխիթարումէ՝ Աստուած մխիթարեց մեզ Տիտոսի ի գալովն։

7 Ո՛չ թէ միայն նորա գալովն, բայց էլ էն մխիթարութենովն՝ որ նա ձեր մէջումն մխիթարուեցաւ, երբոր նա պատմեց մեզ ձեր սրտի փափագը՝ ձեր ողբալը՝ եւ ձեր ջերմեռանդութիւնը ինձ համար, մինչեւ որ էլ աւելի ուրախացայ։

8 Որ թէ եւ տրտմեցրի ձեզ էն թղթովն՝ չեմ զղջանում, եւ թէ որ զղջացած էլ էի. որովհետեւ տեսնում եմ՝ որ էն թուղթն մին փոքր ժամանակ ձեզ լ տրտմեցրուց։

9 Էլ հիմիկ ուրախ եմ, ո՛չ թէ նորա համար որ տրտմեցաք՝ բայց որ տրտմեցաք ապաշխարութենով. ինչու որ՝ դուք Աստուծոյ տրտմեցաք, որ խիստ մեզանից մին բանով վնաս չը քաշէք։

10 Պատճառն որ՝ էն տրտմութիւ-

բ Գործ. Ի. 33։ Գլ. ԺԲ. 17։
գ Գլ. Զ. 11, 12։
դ Գլ. Գ. 12։
ե Ա Կորնթ. Ա. 4։ Գլ. Ա. 14։
զ Գլ. Ա. 4։ Փիլիպ. Բ. 17։ Կող. Ա. 24։
է Գլ. Բ. 13։
ը Գլ. Դ. 8։
թ Բ Օրին. ԼԲ. 25։
ժ Գլ. Ա. 4։
ի Գլ. Բ. 13։
լ Գլ. Բ. 4։

մութիւն է, ապաշխարութիւն 'ի փրկութիւն առանց զղջմանալոյ գործէ. իսկ աշխարհի տրտմութիւն՝ մահ գործէ:

11 Արդ՝ նոյն իսկ որ ըստ Աստուծոյն տրտմեցարուք, որչափ ինչ փոյթ գործեաց 'ի ձեզ, կամ աղերս՝ կամ ատ՝ կամ երկիւղ՝ կամ անձուկ՝ կամ նախանձ՝ կամ վրէժխնդրութիւն. քանզի յամենայնի ընծայեցուցիք զանձինս ձեր՝ սուրբս լինել իրիդ յայդմիկ:

12 Ապա ուրեմն՝ թէ և գրեցի ես առ ձեզ, ոչ վասն այնորիկ՝ որ զրկեացն, և ոչ վասն այնորիկ՝ որ զրկեցաւն. այլ վասն յայտնի լինելոյ փութոյն ձերոյ՝ որ վասն մեր՝ առ ձեզ առաջի Աստուծոյ:

13 Վասն այնորիկ մխիթարեալ եմք 'ի վերայ մխիթարութեանն մերոյ. առաւել ևս խնդացաք 'ի վերայ խնդութեանն Տիտոսի. քանզի հանգուցեալ էր հոգի նորա 'ի ձէնջ ամենեցունց:

14 Զի զինչ և պարծեցայ առ նմա վասն ձեր՝ ոչ ամաչեցի. այլ որպէս զամենայն ճշմարտութեամբ խօսեցաք ընդ ձեզ, նոյնպէս և պարծանքն մեր առ Տիտոսի ճշմարիտ եղեն:

15 Նաև գութք նորա առաւել ևս են 'ի ձեզ. քանզի յիշեցուցանէր մեզ զամենեցուն զձեր հնազանդութիւն. թէ որպէս ահիւ և դողութեամբ ընկալարուք զնա:

16 Եւ արդ՝ ուրախ եմ, զի յամենայնի համարձակ եմ առ ձեզ:

որն որ Աստուծով է, ապաշխարութիւն է գործում փրկութեան համար առանց Ե զղջմանալու. բայց աշխարհքի տրտմութիւնն՝ մահ է Զ գործում:

11 Հիմիկ՝ հենց էն որ դուք Աստուծով տրտմեցաք, որքան ջանք գործեց ձեզանում, կամ աղաչանք՝ կամ յանդիմանութիւն՝ կամ վախ՝ կամ փափագ՝ կամ նախանձաւորութիւն՝ կամ վրէժխնդրութիւն. ինչու որ՝ ամէն բանով ցոյց տուիք ձեր անձներդ՝ որ անմեղ էք էդ բանումդ:

12 Ուրեմն թէ և ես գրեցի ձեզ՝ ոչ թէ նորա համար էր՝ որ զրկանք արաւ, և ոչ թէ նորա համար՝ որ զրկանք քաշեց. բայց որ ձեր ջանքն՝ որ մեզ վերայ ունիք, յայտնի լինի ձեզ մօտ՝ Աստուծոյ Է առաջին:

13 Նրահամար մխիթարուած ենք ձեր մխիթարութեան համար. և էլ աւելի ուրախացանք Տիտոսի ուրախութեան համար. ինչու որ՝ նորա հոգին ձեր ամէնիցդ հանգիստ էր Ը առած:

14 Պատճառն որ՝ ինչ որ էլ ձեզ համար պարծեցայ նորա առաջին՝ չամաչեցի. բայց ինչպէս որ ամէն բան ճշմարտութեամբ խօսեցինք ձեզ հետ, էնպէս էլ մեր պարծանքն ճշմարիտ էլաւ Տիտոսի առաջին:

15 Բայց նորա սէրն էլ աւելի ձեզ վերայ կապուած է. ինչու որ՝ մտքս էր բերում ձեր ամէնի հնազանդութիւնն, թէ ինչպէս ահով և դողալով ընդունեցիք Թ իրան:

16 Որահամար՝ ուրախ եմ, որ ամէն բանի մէջ վստահութիւն ունիմ ձեզ Ժ վերայ:

Ե Բ Թագ. ԺԲ. 13. Մատթ. ԻԶ. 75.
Զ Ղուկ. ԺԵ. 22.
Է Գլ. Բ. 4.
Ը Հռովմ. ԺԵ. 32.
Թ Գլ. Բ. 9. Փիլիպ. Բ. 12.
Ժ Բ Թես. Գ. 4. Փիլիմ. 8. 21.

## ԳԼ. Ը

1 Ցուցանեմ ձեզ եղբարք զշնորհսն Աստուծոյ՝ որ տուեալ են եկեղեցեացն Մակեդոնացւոց ։

2 Զի մեծաւ համբերութեամբ նեղութեանն՝ առատութիւն խնդութեանն նոցա, եւ ծանր աղքատութիւն նոցա առաւել եղեւ ՚ի մեծութիւն առատութեանն նոցա ։

3 Զի ըստ կարի նոցա վկայեմ, եւ աւելի քան զկար ։

4 Ինքնակամ բազում աղաչանօք աղաչէին զշնորհսն, եւ զհաղորդութիւն պաշտամանն, որ ՚ի սուրբսն՝ տալ մեզ ։

5 Ո՛չ որչափ ակն ունէաք, այլեւ զանձինս եւս ետուն, նախ Տեառն՝ եւ ապա մեզ կամօքն Աստուծոյ ։

6 Աղաչել զՏիտոս՝ զի որպէս սկսաւ յառաջագոյն, նոյնպէս եւ կատարեսցէ ՚ի ձեզ եւ զայդ եւս շնորհ ։

7 Այլ որպէս յամենայնի առաւել էք հաւատովք՝ եւ բանիւ եւ գիտութեամբ եւ ամենայն փութով, եւ որ ՚ի մէնջ ՚ի ձեզ սէրն է, զի եւ յայդմ եւս շնորհի առաւել լինիցիք ։

8 Ո՛չ որպէս հրաման տալով ասեմ, այլ վասն այլոց փութոյ, եւ վասն ձերոյ սիրոյ՝ զմտերմութիւնդ փորձեմ ։

9 Քանզի գիտէք զշնորհսն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. զի վասն ձեր աղքատացաւ՝ որ մեծատունն էր, զի դուք նորա աղքատութեամբն մեծասջիք ։

10 Եւ խրատ մի յայսմիկ տամ.

1 Ե՛ղբարք՝ ցոյց եմ տալիս ձեզ Աստուծոյ այն շնորհքըն՝ որ Մակեդոնացոց եկեղեցիներին տուած է ։

2 Ինչու որ նեղութեան մեծ փորձանքն էլ աւելի շատ էլաւ նորանց ուրախութիւնը. եւ նորանց ծանր աղքատութիւնն էլ աւելի էլաւ նորանց համար մեծ ա առատութիւն ։

3 Պատճառն որ՝ իրենց կարողութեան չափովը՝ վկայումեմ, եւ կարողութենիցն էլ աւելի ։

4 Ինքն իրենց կամքով շատ աղաչանքով աղաչումէին՝ որ այն պաշտօնի շնորհքը, եւ հաղորդութիւնըն՝ որ սրբերին է լինում, մեր ձեռքը բ տան ։

5 Ո՛չ թէ որքան որ յոյս ունէինք, բայց իրենց անձներըն էլ տուին, առաջ Տէրին՝ եւ ապա մեզ՝ Աստուծոյ կամքովը,

6 Որ մենք էլ Տիտոսին աղաչեցինք՝ որ ինչպէս որ առաջուց սկսեց՝ այնպէս էլ այդ շնորհքըդ կատարէ ձեր գ մէջումը ։

7 Բայց ինչպէս որ ամէն բանի մէջ աւելանումէք հաւատքով եւ խօսքով եւ գիտութենով եւ ամէն ջանքով եւ ձեր սիրովն որ դէպի մեզ դ է, ապա այդ շնորհքումն էլ ե աւելացնէք ։

8 Ո՛չ թէ իբր հրաման տալով եմ ասում, բայց ուրիշների ջանք անձնեայն համար, եւ ձեր սիրոյ համար՝ ձեր հարազատութիւնըն եմ զ փորձում ։

9 Ինչու որ՝ գիտումէք մեր Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքը. որ ձեզ համար աղքատացաւ է նա՝ որ հարուստ էր, որ դուք նորա աղքատութենովը հարստանաք ։

10 Եւ այս բանիս մէջ մին խրատ

ա Մարկ. ԺԲ. 44։ Գլ. Թ. 11։ բ Գործ. ԺԱ. 29։ ԻԴ. 17։ Հռոմ. ԺԵ. 25. 26։ Ա. Կորնթ. ԺԶ. 1. 3. 4։ Գլ. Թ. 1։ գ Համար. 17։ Գլ. ԺԲ. 18։ դ Ա. Կորնթ. Ա. 5։ ԺԲ. 8։ ե Գլ. Թ. 8։ զ Ա. Կորնթ. Է. 6։ է Մատթ. Ը. 20։ Ղուկ. Թ. 58։ Փիլիպ. Բ. 6, 7։

զի այն իսկ օգտի ձեզ է. որք ոչ
միայն զառնելն՝ այլ եւ զկամելն յա-
ռաջագոյն գ սկսայք ՚ի հերուն հետէ։

11 Բայց արդ եւ զառնելն իսկ կա-
տարեցէք. զի որպէս յօժարութիւնն
՚ի կամաց է, նոյնպէս եւ առնելն
ըստ գոյին։

12 Զի եթէ յօժարութիւնն առա-
ջի կայ, ըստ գոյին ընդունելի է՝
եւ ոչ եթէ ըստ չգոյին։
13 Զի ոչ եթէ այլոց հանգիստ
կամիցիմ, եւ ձեզ նեղութիւն։

14 Այլ հաւասարութեամբ՝ յայժ-
մու ժամանակիս. ձեր առաւելու-
թիւնդ ՚ի նոցա պակասութեանն.
զի եւ նոցա առաւելութիւնն եղիցի
՚ի ձերում պակասութեանդ, զի ե-
ղիցի հաւասարութիւն՝ որպէս եւ
գրեալ է։
15 Թէ որ բազումն նա՝ ոչ առա-
ւելաւ. եւ որ սակաւն՝ ոչ նուազե-
ցաւ։
16 Բայց շնորհք Աստուծոյ՝ որ արկ
զնոյն փոյթ վասն ձեր ՚ի սիրտ Տի-
տոսի։
17 Զի զաղաչանսն ընկալաւ՝ եւ
փութացաւ յօժարագոյնս գնաց
գալ առ ձեզ։
18 Եւ առաքեցաք ընդ նմա զեղ-
բայրն՝ որոյ գովութիւն յաւետարա-
նի անդ է ընդ ամենայն եկեղեցիս։

19 Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ
ձեռնադրեալ յեկեղեցեաց անտի,
ուղեկից մեր եղեւ ՚ի շնորհս յայ-
սմիկ՝ որ պաշտի ՚ի մէնջ, ՚ի փա-
ռս Տեառն՝ եւ ՚ի մեր յօժարու-
թիւն։
20 Բայց զայս խորշէաք իսկ. թէ
զուցէ արատ ոք ինչ գտցէ ՚ի հաս-

եմ ա տալիս. ինչու որ՝ նա օգուտ
է բ ձեզ. որ ոչ թէ միայն անելը՝
բայց էլ կամենալը առաջուց սկսե-
ցիք՝ անցած տարուցն գ հետէ։
11 Իսկ հիմիկ անելըն էլ կատա-
րեցէք. որ ինչպէս որ յօժարու-
թիւնը կամքիցն է առաջ գալիս,
այնպէս էլ անելն՝ ունեցածի չա-
փովը։
12 Ինչու որ՝ եթէ յօժարութիւն
կայ, ունեցածի չափովն ընդունելի
է՝ եւ չէ թէ չունեցածի դ չափովը։
13 Պատճառն որ՝ չէ թէ ուրիշ-
ներին հանգստութիւն եմ կամե-
նում, եւ ձեզ նեղութիւն։
14 Բայց հաւասարութեամբ՝ հի-
միկվայ ժամանակումս ձեր աւելու-
թիւնը նորանց պակասութեանն
ծառայէ. որ նորանց աւելութիւնն
էլ ծառայէ ձեր պակասութեանը, որ
հաւասարութիւն լինի. ինչպէս որ
էլ գրված է։
15 Թէ նա՝ որ շատ արաւ, չա-
ւելացաւ. եւ նա որ քիչ՝ ե չպա-
կասեցաւ։
16 Բայց շնորհակալութիւն Աս-
տուծոյն՝ որ իսկ այն ջանքը ձեզ
համար ձգեց Տիտոսին սիրտը։
17 Ինչու որ՝ իմ աղաչանքս ըն-
դունեց, եւ շատ յօժար սրտով
փութաց որ ձեզ մօտ զ գայ։
18 Եւ նորա հետ ուղարկեցինք
այն է եղբօրն՝ որ նորա գովասան-
քըն աւետարանումն է ամէն եկե-
ղեցիների մէջ։
19 Եւ չէ թէ միայն այսքան, բայց
նա եկեղեցիներիցն էլ ձեռնադրված՝
մեր ճանապարհութեան ընկեր էլաւ
այս ը շնորհքումս՝ որ մենք ծառա-
յումենք նորան՝ Աստուծոյ փառաց
համար եւ մեր յօժար հոգու։
20 Բայց այս բանիցս զգուշութիւն
էինք անում, որ չըլինի թէ մինը

ա Ա. Կորնթ. Է. 25.
բ Առակ. ԺԹ. 17.
Մատթ. Ժ. 42.
Ա. Տիմ. Զ. 18.
19. Եբր. ԺԳ.
16.
գ Գլ. Թ. 2.
դ Մարկ. ԺԲ. 43,
44. Ղուկ. ԻԱ. 3.
ե Ելից. ԺԶ. 18.
զ Համար. 6.
է Գլ. ԺԲ. 18.
ը Ա. Կորնթ. ԺԶ.
3, 4.
թ Գլ. Դ. 15.

առատութեանս յայսմիկ՝ որ պաշտե-
ցաւս ՚ի մէնջ ։

21 Զանզի խորհիմք զբարիս՝ ոչ
միայն առաջի Տեառն, այլ եւ ա-
ռաջի մարդկան ։

22 Եւ առաքեցաք ընդ նոսա զեղ-
բայրն մեր՝ զոր ընտրեցաք ՚ի բա-
զում իրս բազում անգամ փոյթ
գոլով · եւ առաւել եւս այժմ փու-
թագոյն՝ յուսով մեծաւ ՚ի ձեզ ։

23 Բայց եթէ վասն Տիտոսի ինչ
բանք են, իմ հաւասար է՝ եւ ձեր
գործակից · եւ եթէ եղբարք մեր,
առաքեալքն եկեղեցւոյ՝ եւ փառք
Քրիստոսի ։

24 Եւ արդ՝ զհանդէս սիրոյ ձերոյ՝
եւ զմերոյ պարծանացն վասն ձեր,
՚ի դէմս ցուցջիք յանդիման ամե-
նայն եկեղեցեաց ։

## ԳԼ. Թ

1 Այլ վասն պաշտամանն՝ որ ՚ի
սուրբսն է, աւելի է ինձ եւ գրել
առ ձեզ ։
2 Զի գիտեմ զյօժարութիւն ձեր,
զոր վասն ձեր պարծեցեալ եմ ՚ի
մէջ Մակեդոնացւոցն, թէ Աքա-
յեցիքն ՚ի հերուն հետէ պատրաստ
են · եւ ձեր նախանձն զբազումս
յորդորեաց ։

3 Եւ առաքեցաք զեղբարսն, զի
մի պարծանքն մեր որ վասն ձեր՝
ընդունայն լինիցին ՚ի մասին յայս-
միկ · այլ որպէս ասէի իսկ, պատ-
րաստագոյնք գտանիջիք ։
4 Գուցէ յորժամ գայցեն ընդ ՚իս
Մակեդոնացիքն՝ եւ գտանիցեն ըզ

մէկն աղօ ձգէ այս հաստատ լը--
բ-ն- վերայ՝ որ մենք ծառայումենք
նորան ։
21 Պատճառն որ՝ բարի բաներ ենք
մտածում, չէ թէ միայն Տէրի ա-
ռաջին, բայց մարդկանց առաջին
ծ էլ ։
22 Եւ նորանց հետ ուղարկեցինք
մեր եղբօրըն՝ որ նորան շատ բանի
մէջ ընտրեցինք եւ շատ անգամ
մեր գովինք · եւ հիմիկ՝ էլ աւելի
ջանք անող այն մեծ վստահութե-
նովն՝ որ ունի դէպի ձեզ ։
23 Բայց թէ որ Տիտոսի համար
խօսք լինի, նա իմ հաւատարս է՝ եւ
ձեզ համար ղ գործընկերս · եւ թէ
որ մեր եղբայրներին՝ ղ-չ-ծ եկեղե-
ցոյ առաքեալներն են եւ Քրիստո-
սի փառք ։
24 Ուրեմն ձեր սիրոյ չափին՝ եւ
մեր ձեր համար պարծենալոյ գ--
ճ--ը, ցոյց տուէք դորանց՝ ամէն
եկեղեցիների ճ առաջին ։

1 Բայց այն պաշտամունքին հա-
մար՝ որ սրբերին է լինում, աւե-
լորդ է ինձ որ գրեմ = ձեզ ։
2 Ինչու որ՝ գիտումեմ ձեր Բ յօ-
ժարութիւնըն, որ նորանով Մա-
կեդոնացոց մէջ ձեզ համար պար-
ծեցել Գ եմ · թէ Աքայեցիքըն ան-
ցած տարուցն հետէ պատրաստ
Դ են, եւ ձեր ջանքը շատերին յոր-
դորեց ։
3 Եւ եղբայրներին ուղարկեցինք,
որ մեր ձեզ վերայ պարծենալը դատ-
ըչ լինի այս կողմանէդ · բայց ինչ-
պէս որ իսկ ասել եմ, լաւ պատ-
րաստ Ե գտնուիք ·
4 Որ չը լինի թէ՝ երբոր Մակե-
դոնացիքը մեզ հետ գան՝ եւ ձեզ

| | | | |
|---|---|---|---|
| ծ Հռովմ. ԺԲ. 17. Փիլիպ Դ. 8. Ա Պետ. Բ. 12. ղ Փիլիպ. Բ. 25. ճ Գլ. Է. 14. | Թ. 2. — = Գործ. ԺԱ. 29. Հռովմ. ԺԵ. 26. Ա Կորնթ. ԺԶ. | 1. Գլ. Ը. 4. Գաղ Բ. 10. Բ Գլ. Ը. 19. Գ Գլ. Ը. 24. Դ Գլ. Ը. 10. | Ե Գլ. Ը. 6. 17, 18 22. |

ձեզ անպատրաստս, եւ ամաչեսցուք մեք. զի մի ասասցուք՝ թէ դուք, 'ի մասինդ յայդմիկ պարծանաց։

5 Արդ՝ կարեւոր համարեցայ աղաչել զեղբարս, զի յառաջագոյն եկեսցեն առ ձեզ, եւ յառաջագոյն պատրաստեսցեն զյառաջագոյն խոստացեալ օրհնութիւնն ձեր 'ի պատրաստի ունել. այնպէս իբրեւ զօրհնութիւն, եւ մի իբրեւ զագահութիւն։

6 Բանզի որ սերմանէ ճշգելով՝ ճշգելով եւ հնձեսցէ. եւ որ սերմանէ առատութեամբ՝ առատութեամբ եւ հնձեսցէ։

7 Իւրաքանչիւր որպէս եւ յօժարեսցի ոք սրտիւ, մի առ հարկի եւ տրտմութեան. քանզի զտուրս զուարթառատս սիրէ Աստուած։

8 Այլ կարող է Աստուած զամենայն շնորհս առաւելուլ 'ի ձեզ. զի յամենայնի յամենայն ժամ զամենայն բաւականութիւն ընկալեալ՝ առաւելուցուք յամենայն գործս բարութեան։

9 Որպէս եւ գրեալ է. Սփռեաց եւ ետ տնանկաց. արդարութիւն նորա մնայ յաւիտեան։

10 Այլ այն որ պարգեւէ սերմն սերմանականաց՝ եւ հաց 'ի կերակուր, պարգեւեսցէ եւ բազմացուսցէ զսերմանիս ձեր, եւ աճեցուսցէ զարդիւնս արդարութեան ձերոյ։

11 Յամենայնի մեծացեալք ամենայն առատութեամբ՝ որ յօրինէ մեօք գոհութիւն Աստուծոյ։

չը պատրաստուած գտնեն, մենք էլ որ չասենք թէ դուք ամօթ լինենք այդ մեր պարծանքի կողմանէ։

5 Նորահամար հարկաւոր համարեցի եղբայրներին աղաչել, որ առաջուց ձեզ մօտ գան, եւ առաջուց պատրաստեն ձեր առաջուց խոստացած օրհնութիւնքը՝ որ պատրաստ լինի, ւ այնպէս՝ ինչպէս օրհնութիւն՝ եւ ոչ թէ ինչպէս ագահութիւն։

6 Պատճառն որ՝ դա է ―― նա՝ որ խնայելով է սերմում, խնայելով էլ հնձում. եւ նա՝ որ առատութենով է սերմում, առատութենով էլ ե հնձում.

7 Ամէն մէկն ինչպէս որ սրտի յօժարութիւն կայ, չէ թէ հարկաւորութենով եւ ւ տրտմութենով. ինչու որ՝ Աստուած ուրախ տուողներին է բ սիրում։

8 Բայց Աստուած կարող է ամէն շնորհքները աւելացնել ձեզանում. որ ամէն բանի մէջ ամէն ժամանակ ամէն բաւականութիւն ունէք, եւ ամէն բարի գործքերով ժ աւելանաք։

9 Ինչպէս որ էլ գրած է. Փռեաց եւ աղքատներին տուաւ. նորա արդարութիւնը մնում է յաւիտեան։

10 Բայց նա՝ որ սերմ ցանողներին սերմ է ընծայում, եւ հաց՝ կերակուրի համար, նա էլ կընծայէ եւ կը շատացնէ ձեր ւ սերմանիքները, եւ ձեր արդարութեան պըտուղը ե կը մեծացնէ,

11 Որ ամէն բանի մէջ հարուստ լինիք ամէն լիութենով՝ որ նա մեզանով գոհութիւն է բերում ժ Աստուծոյն։

ւ Ծննդ. ԼԳ. 11. Ա Թագ. ԻԵ. 27. Դ Թագ. Ե. 15. ե Առակ. ԺԱ. 24. ԺԹ. 17. ԻԲ. 9. Գաղ. Զ. 8, 9. ւ Բ Օրին. ԺԵ. 7. բ Եկլեզ. ԻԵ. 2. ԼԵ. 5. Առակ. ԺԱ. 25. Հռովմ. ԺԲ. 8. Գղ. Ը. 12. ժ Առակ. ԺԱ. 24, 25. ԻԸ. 27. Փիլիպ. Դ. 19. է Սաղ. ՃԺԲ. 9. ւ Եսայ. ԾԵ. 10. ե Ովսէ. Ժ. 12. ժ Գղ. Ա. 11. Դ. 15.

12 Զի պաշտօն հարկիս այսորիկ՝
ոչ միայն առ ՚ի լնուլ զպակասու-
թիւն սրբոցն է, այլեւ առաւելուլ
բազմաց գոհութիւնս Աստուծոյ։

13 Համբաւիւ պաշտամանս այսո-
րիկ փառաւորել զԱստուած ՚ի վե-
րայ հնազանդութեան խոստովա-
նութեան ձերոյ յաւետարանն Քրիս-
տոսի. եւ առատութեամբ հաղոր-
դութեանն ՚ի նոսա՝ եւ յամենեսին.
եւ նոցա աղօթք վասն ձեր, քան-
զի անձկացեալ են առ ձեզ վասն
առաւել շնորհացն Աստուծոյ՝ որ ՚ի
ձեզ։
14 Այլ շնորհք Աստուծոյ ՚ի վե-
րայ անպատում պարգեւացն նորա։

12 Ինչու որ՝ այս տուրքիս պաշտօ-
նը չէ թէ միայն սուրբերի պակա-
սութիւնը լցնելու համար [*] է՝ բայց
էլ որ շատերի ձեռամբ Աստուծոյ
գոհութիւնը շատնայ,
13 Որ այս պաշտամունքէս փորձա-
ւորին Աստուած փառաւորելի ձեր Քը-
րիստոսի աւետարանին հնազանդ դա-
ւանութեանը [*] համար. եւ այն ա-
ռատ հաղորդութենէն՝ որ նորանց
եւ ամենին հետ է [*] լինում. եւ նո-
րանց ձեզ համար —[*]— աղօթքովը,
որ նորանց փափագը ձեզ վրայ է՝
Աստուծոյ այն հարուստ շնորհքնե-
րին համար՝ որ ձեզմէ [*] ունին։
14 Բայց շնորհակալութիւն Աս-
տուծոյ՝ իրեն անպատմելի պարգե-
ներին [*] համար։

## ԳԼ. Ժ

1 Այլ ես ինքն Պօղոս աղաչեմ
զձեզ հեզութեամբն եւ հանդար-
տութեամբն Քրիստոսի, որ յան-
դիման ձեզ՝ իբրեւ տառապեալ մի
եմ ՚ի միջի ձերում. բայց ՚ի հե-
ռաստ համարձակիմ առ ձեզ։
2 Աղաչեմ, զի մի ՚ի մօտոյ եւ
եթ համարձակիցիմ վստահութեամբ.
կամ համարիցիմ յանդգնել ՚ի վերայ
ոմանց՝ որ կարծեն զմեզ՝ եթէ ըստ
մարմնոյ գնայցեմք։

3 Զի թէպէտ եւ մարմնով գը-
նամք՝ այլ ոչ եթէ ըստ մարմնոյ
զինուորիմք։
4 Զի զէն զինուորութեան մե-
րոյ ոչ է մարմնաւոր, այլ զօրա-
ւոր յԱստուծոյ, առ ՚ի քակելոյ զա-
մուրս. զխորհուրդս քակեմք,

5 Եւ զամենայն բարձրութիւն
հպարտացեալ ՚ի վերայ գիտութեա-

1 Բայց ինք ես Պօղոս աղաչու-
մեմ ձեզ՝ Քրիստոսի հեզութենովը
ու [*] հանդարտութենովը, որ ես
ձեր դիմացը ցած եմ ձեր [*] միջա-
մը. բայց հեռուանցից համարձակ
եմ դէպի ձեզ։
2 Աղաչումեմ որ չըլլամ՝ թէ մօ-
տերիցն էլ վստահութենով համարձակ
լինիմ. կամ այնպէս համարվիմ՝ որ
յանդուգն լինիմ մին քանիսին
[*] դէմ, որ մեզ համար կարծումեն՝
թէ մարմնոյ պէս ենք վարվում։
3 Ինչու որ՝ թէ եւ մարմնով ենք
վարվում՝ բայց չէ թէ մարմնոյն
պէս ենք զինուորութիւն անում։
4 Պատճառն որ՝ մեր [*] զինուորու-
թեան զէնքը մարմնաւոր [*] չէ, բայց
Աստուծով [*] զօրաւոր, բերդերը
[*] քանդելոյ. խորհուրդներըն ենք
քանդում։
5 Եւ ամէն բարձրութիւնըն՝ որ
գոռոզանումէ Աստուծոյ գիտու-

[*] Գղ. Ը. 14.
[*] Մատթ. Ե. 16.
[*] Եբր. ԺԳ. 16.
[*] Գղ. Ը. 1.
[*] Յակ. Ա. 17.
[*] Հռովմ. ԺԲ. 1.
[*] Համար. 10. Գղ. ԺԲ. 5. 7. 9.
[*] Ա Կորնթ. Դ. 2. Գղ. ԺԳ. 2. 10.
[*] Ա Տիմ. Ա. 18.
[*] Բ Տիմ. Բ. 3.
[*] Եփես. Զ. 13. Ա Թես. Ե. 8.
[*] Գործ. Ի. 22. Ա Կորնթ. Բ. 5. Գղ. Զ. 7. ԺԳ. 3. 4.
[*] Երեմ. Ա. 10.

նըն Աստուծոյ . եւ գերեմք զամե-
նայն միտս ՚ի հնազանդութիւն Քրի-
րիստոսի ։
6 Եւ ՚ի պատրաստի ունիմք խնդ-
րել զվրէժ ՚յամենայն անհնազան-
դութեան՝ յորժամ ձեր եւս հնա-
զանդութիւնդ կատարեսցի ։

7 Ըստ խրաքանչիւր երեսաց գի-
տասջիք , եթէ ոք վստահ յանձն
իցէ Քրիստոսի լինել , զայս խոր-
հեսցի դարձեալ ՚ի միտս իւր , թէ
որպէս նայն Քրիստոսի է՝ նոյնպէս
եւ մեք ։
8 Զի եթէ առաւել եւս պար-
ծեցայց վասն իշխանութեանս մե-
րոյ՝ զոր ետ մեզ Տէր ՚ի շինել՝ եւ
ոչ ՚ի քակել զձեզ , ոչինչ ամաչե-
ցից ։
9 Զի մի թուեցայց իբրեւ ա՛
ինչ արկանել ձեզ թղթովքս ։
10 Ասիցէք , Թուղթքս ծանունք
են եւ սաստիկք . բայց անձին մարմ-
նոյ տկար՝ եւ բանն արհամարհեալ ։

11 Զայս խորհեսցի այնպիսին , զի
որպիսիք եմք բանիւք թղթոցդ ՚ի
հեռաստ , նոյնպիսիք եւ ՚ի մօտոյ
արդեամբք ։
12 Քանզի ոչ իշխեմք կշռել եւ
համեմատել զանձինս մեր ումեք ,
որ զանձինս իւրեանց ձեզ ընծայե-
ցուցանեն . այլ անձամբ յանձինս՝
զանձինս չափեն , եւ ՚ի կշռել ան-
ձամբ յանձինս՝ ոչ առնուն ՚ի միտ ։

13 Այլ մեք ոչ եթէ յանչափս ինչ
պարծեսցուք . այլ ըստ չափոյ կա-
նոնին , զոր բաժանեաց մեզ Աստ-

թեան դէմ . եւ ամէն միտքը գերի
ենք անում՝ որ հնազանդ լինի ը Քրի-
ստոսին ։
6 Եւ պատրաստ կացած ենք
վրէժխնդրութիւն անելոյ ամէն ան-
հնազանդութեան բ համար՝ երբոր
ձեր հնազանդութիւնն էլ կատար-
եալ ծ կը լինի ։
7 Ամէն մէկի երեսին է նայեցէք ,
թէ որ մինն իրեն անձին վերայ
վստահ է՝ որ նա Քրիստոսինն ւ է ,
թող իրեն մտքումն սա էլ մտածէ՝
թէ ինչպէս որ նա Քրիստոսինն է՝
այնպէս էլ ե մենք ։
8 Ինչու որ՝ եթէ էլ աւելի պար-
ծենալու լինիմ մեր իշխանութեան
համար՝ որ Տէրը տուաւ մեզ , ձեզ
շինելոյ՝ եւ ոչ թէ քանդելոյ ծ հա-
մար , բնաւ չեմ ! ամաչիլ ։
9 Որ չերեւիմ իբր թէ վախ ձը-
գել ձեզ վերայ այս թղթերովս ։
10 Մինի որ ասէք , Թղթերս ծա-
նըր են եւ սաստիկ . բայց մարմնոյ
կերպարանքը հ տկար՝ եւ խօսքն էլ
ոչ ինչ ժ համարուած ։
11 Այնպէսին թող սա միտք անէ ,
թէ մենք ինչպէս որ հեռուանց ենք
այդ թղթերից խօսքերումը , այնպէս
էլ մօտանց գործքով ։
12 Պատճառն որ՝ մենք չենք հա-
մարձակվում մեր անձը կշռել եւ
համեմատել մին քանիսին հետ՝ որ
իրենց անձները գովելով ձեր առա-
ջին են գնում . բայց նորանք ինքն
իրենցով իրենց անձները չափա-
մեն , եւ այնպէս իրենք իրենց կըշ-
ռելով՝ բան չեն ւ հասկանում ։
13 Բայց մենք ոչ թէ չափից դուրս
ենք պարծենում . այլ այն կանոնի
չափովը , որ նորանով Աստուած

ը Ա Կորնթ . Ա . 19 ։ Գ . 19 ։
բ Գղ . ԺԳ . 2 . 10 ։
ծ Գղ . Բ . 9 ։ Ե . 15 ։
է Յովհ . Ե . 24 ։ Գղ . Ե . 12 ։ ԺԱ . 18 ։
ւ Ա Կորնթ . ԺԴ . 37 ։ Ա Յովհ . Գ . 6 ։
ե Ա Կորնթ Գ . 23 Թ . 1 ։ Գղ . ԺԱ . 23 ։
ծ Գղ . ԺԴ . 10 ։
! Գղ . Ե . 14 ։ ԺԲ . 6 ։
հ Ա Կորնթ . Բ . 3 . 5 ։ Հռոմ . 1 ։ Գղ . ԺԲ . 5 . 7 . 9 ։ Գաղ . Գ . 13 ։
ժ Ա Կորնթ . Ա . 17 ։ Բ . 1 . 4 ։ Գղ . ԺԱ . 6 ։
ւ Գղ . Գ . 1 . Ե . 12 ։

ուած չափով՝ հասանել մինչեւ առ ձեզ։
14 Իբր ոչ եթէ հասու ինչ չիցեմք 'ի ձեզ, եւ ձիգեցուցանիցեմք զանձինս. քանզի մինչեւ առ ձեզ հասաք աւետարանաւն Քրիստոսի։
15 Եւ ոչ յանչափս ինչ պարծիմք օտար վաստակօք, բայց յոյս մի ունիմք զաճմանն հաւատոց ձերոյ՝ այգրէն 'ի ձեզ մեծանալոյ՝ ըստ կանոնիս մերոյ յառաւելութիւն։
16 'Ի վեր եւս քան զձեզ աւետարանել՝ ոչ օտար կանոնաւ 'ի պատրաստականս ինչ պարծել։
17 Զի որ պարծին՝ 'ի Տէր պարծեսցի։
18 Զի ոչ եթէ որ զանձն իւր ընծայեցուցանէ՝ նա է ընտրեալ. այլ զոր Տէրն ընծայեցուցանէ։

բաժանեց մեզ՝ հասնել մինչեւ ձեզ ժ մօտ։
14 Ո՛չ թէ՝ իբր թէ ձեզ մօտ հասած չը լինէինք, եւ մեր անձներս երկայնացնէինք. ինչու որ՝ մինչեւ ձեզ մօտ հասանք Քրիստոսի ի աւետարանովը։
15 Եւ չափից դուրս չենք պարծենում՝ օտար լ աշխատանքներովը, բայց յոյս ունինք՝ որ ձեր հաւատքի մեծանալոյ ժամանակումը՝ նորէն մեծանանք ձեզանում աւելութենով՝ մեր կանոնիս պէս,
16 Որ ձեզանից այն կողմն էլ աւետարանենք՝ եւ չէ թէ օտար կանոնով պատրաստուածների վրայ պարծենանք։
17 Ինչու որ՝ ով որ պարծենում է՝ թող Տէրովը խ պարծենայ։
18 Պատճառն որ՝ ոչ թէ նա՝ որ իրեն անձն գովելով առաջի է գնում՝ նա է ծ ընտրուած. այլ նա՝ որ Տէրը նորան գովելով առաջի է կ գնում։

## ԳԼ. ԺԱ.

1 Լաւ էր եթէ ներէիք փոքր մի եւ խնում անզգամութեանս. այլեւ անսայէք իսկ։
2 Նախանձեցուցանեմ զձեզ 'ի նախանձն Աստուծոյ. զի խօսեցայ զձեզ առն միում, իբրեւ զկոյս մի սուրբ յանդիման կացուցանել Քրիստոսի։
3 Բայց երկնչիմ գուցէ որպէս օձն խաբեաց զԵւայ խորամանկութեամբ իւրով՝ ապականեսցին միտք ձեր 'ի միամտութենէն՝ որ 'ի Քրիստոս։
4 Զի եթէ որ գալոցն իցէ՝ այլ

1 Լաւ կը լինէր՝ թէ որ մին քիչ իմ յիմարութեանս էլ ա ներէիք. եւ ինձ էլ համբերեցէք։
2 Ձեզ համար նախանձաւոր եմ Աստուծոյ բ նախանձովը. ինչու որ՝ ձեզ մին մարդոյ հետ գ նշանեցի՝ որ ինչպէս մին սուրբ դ կոյս Քրիստոսի առաջին ե կանգնեցնեմ։
3 Բայց վախենում եմ՝ որ չը լինի թէ ինչպէս օձն իրեն խորամանկութեամբը խաբեց զ Եւային՝ այնպէս էլ ձեր միտքն ապականուելի այն միամտութենէն՝ որ Քրիստոսումն է է։
4 Ինչու որ՝ թէ որ մինը գայ եւ

ժ Համար. 15։
ի Ա. Կորնթ. Գ. 5. 10։ Դ. 15։ Թ. 1։
լ Հռովմ. ԺԵ. 20
խ Եսայ. ԿԵ. 16 Երեմ. Թ. 24։ Ա. Կորնթ. Ա. 31։
ծ Առակ. ԻԷ. 2։
կ Հռովմ. Բ. 29։ Ա. Կորնթ. Դ. 5

—

ա Համար. 16։ Գլ. Ե. 13։
բ Գաղ. Դ. 17, 18
գ Ովսէ Բ. 19, 20։ Ա. Կորնթ. 15.
դ Ղև. ԻԱ. 13։
ե Կող. Ա. 28։
զ Ծննդ. Գ. 4։ Յովհ. Ը. 44։
է Եփես. Զ. 24։ Կող. Բ. 4. 8. 18։ Ա. Տիմ. Ա. 3։ Դ. 1։ Եբր. ԺԳ. 9։ Բ. Պետ. Գ. 17։

Քրիստոս քարոզիցէ՝ զոր մեքն ոչ
քարոզեցաք, կամ այլ հոգի առ-
նուցուք՝ զոր ոչ առէք, կամ աւե-
տարան այլ՝ զոր ոչ ընկալարուք,
բարւոք անսայիք նմա։
5 Բայց ես այսպէս համարիմ,
թէ ոչինչ իւիք պակաս իցեմ քան
զլաւ առաքեալսն։

6 Թէպէտ եւ տգէտ եւս իցեմ
բանիւ, այլ ոչ եթէ գիտութեամբ․
սակայն յամենայնի յայտնեցաք զան-
ձինս ամենեւին առ ձեզ։
7 Եւ եթէ մեղս ինչ գործեցի՝
զի զանձն խոնարհեցուցի․ եւ այն՝
զի դուք բարձրասջիք․ զի ձրի զա-
ւետարանն Աստուծոյ աւետարանե-
ցի ձեզ։
8 Զայլ եկեղեցիս կողոպտեցի
առեալ թոշակ ՚ի ձեր սպասաւո-
րութիւն։
9 Եւ յորժամ եկի առ ձեզ, թէ-
պէտ եւ պակասեալ էի, ոչ զոք
՚ի ձէնջ ծանրացուցի, զի զպակա-
սութիւն իմ լցին եղբարքն եկեալք
՚ի Մակեդոնացւոց․ եւ յամենայ-
նի առանց ծանրանալոյ ձեզ զան-
ձն իմ պահեցի, եւ պահեցից։

10 Քանզի գոյ յիս ճշմարտու-
թիւնն Քրիստոսի․ զի պարծանքս
այս ոչ արգելցին յինէն ՚ի կողմա-
նս Աքայեցւոց։
11 Ընդէր․ իբրու թէ ոչ սիրի-
ցեմ զձեզ․ զայն Աստուած գիտէ։

12 Զոր առնեմս՝ եւ արարից․ զի
հատից զպատճառս այնոցիկ՝ որ ըղ-
պատճառանսն կամիցին․ զի որով

ուրիշ Քրիստոս քարոզէ՝ որ մենք
չքարոզեցինք, կամ ուրիշ հոգի
առնէք՝ որ չառիք, կամ ուրիշ ա-
ւետարան՝ որ չընդունեցիք, ապա
լաւ կը համբերէիք նորանց։
5 Բայց ես այսպէս եմ համա-
րում՝ թէ ոչ մին բանով էլ պա-
կաս չեմ քան թէ այն լաւ բ առաք-
եալները։
6 Թէ եւ տգէտ լինիմ գ խօսքով՝
բայց չէ թէ դ գիտութենով․ միայն
թէ ամէն բանի մէջ իսպառ անձ-
ներս յայտնեցինք ե ձեզ։
7 Կամ թէ մին մեղք գործեցի՝
որ իմ անձըս զ խոնարհացրի․ եւ նա
նորահամար՝ որ դուք բարձրանաք․
ինչու որ՝ Աստուծոյ աւետարանըն
ձրի աւետարանեցի ձեզ։
8 Ուրիշ եկեղեցիները թալանե-
ցի՝ եւ վարձք առի՝ որ ձեզ ծառա-
յեմ։
9 Եւ երբոր ձեզ մօտ էի, թէ
եւ մին բանի պակասութիւն քաշե-
ցի, ձեզանից մինին ծանրութիւն
է չըտուի․ ինչու որ՝ իմ պակասու-
թիւնս այն Մակեդոնացիներիցն ե-
կած եղբարքը ը լցրին․ եւ ամէն բա-
նի մէջ առանց ձեզ ծանրութիւն
տալոյ՝ իմ անձըս պահեցի, եւ էլ
թ կը պահեմ։
10 Պատճառն որ՝ Քրիստոսի ճըշ-
մարտութիւնն ինձանում ժ կայ․ որ
այս պարծանքս Աքայեցոց կողմե-
րումը չեն խափանվիլ ի ինձանից։
11 Ինչու համար․ իբր թէ ձեզ
չեմ լ սիրում․ նա Աստուած է գի-
տում։
12 Նա որ անումեմ՝ էլ կանեմ․
որ պատճառը կտրեմ նորանց՝ որ
պատճառ են խ խնդրում․ որ ինչու

ա Գաղ․ Ա։ 7, 8։
բ Ա Կորնթ․ ԺԵ 10։ Գղ․ ԺԲ․ 11։ Գաղ․ Բ․ 6։
գ Ա Կորնթ․ Ա․ 17։ Բ․ 1․ 13։ Գղ․ Ժ․ 10։
դ Եփես․ Գ․ 4։
ե Գղ․ Դ․ 2։ Ե․ 11։ ԺԲ․ 12։
զ Գործ․ ԺԸ․ 3։ Ա Կորնթ․ Թ․ 6․ 12։ Գղ․ Ժ․ 1։
է Գործ․ Ի․ 33։ Գղ․ ԺԲ․ 13։ Ա Թես․ Բ․ 9։ Բ Թես․ Գ․ 8, 9։
ը Փիլիպ․ Դ․ 10․ 15, 16։
թ Գղ․ ԺԲ․ 14, 16
ժ Հռովմ․ Թ․ 1։
ի Ա Կորնթ․ Թ․ 15։
լ Գղ․ Զ․ 11։ Է․ 3։ ԺԲ․ 15։
խ Ա Կորնթ․ Թ․ 12։

պարծիցին, եւ նոքա իբրեւ զմեզ
գտանիցին։
13 Զի այնպիսիքն սուտ առաք-
եալք, մշակք նենգաւորք, կեր-
պարանեալ ՚ի կերպարանս առաքե-
լոց Քրիստոսի։
14 Եւ չէ ինչ զարմանք. քան-
զի եւ ինքն Սատանայ կերպարանի
՚ի հրեշտակ լուսոյ։

15 Եւ ոչինչ է մեծ՝ թէ եւ պաշ-
տօնեայք նորա կերպարանիցին իբրեւ
պաշտօնեայք արդարութեան. ո-
րոց կատարածն եղիցի ըստ գոր-
ծոց իւրեանց։

16 Դարձեալ ասեմ. մի ոք հա-
մարեսցի զիս անզգամ. ապա թէ
ոչ՝ գոնէ իբրեւ զանզգամ ընկալա-
րուք զիս, զի եւ ես փոքր մի ինչ
պարծեցայց։
17 Եւ զոր խօսիմ՝ ոչ եթէ ըստ
Տեառն խօսիմ, այլ իբրեւ անզգա-
մութեամբ՝ ըստ կարգի այդց պար-
ծանաց։

18 Եւ քանզի բազումք պարծին
ըստ մարմնոյ՝ եւ ես պարծեցայց։

19 Մտադիր լինի անսայք ան-
մտացն ձերովդ իմաստութեամբ։

20 Քանզի անսայք, եթէ ոք խա-
բէ զձեզ, եթէ ոք ծառայեցուցա-
նէ, եթէ ոք ուտէ զձեր, եթէ ոք
առնու ինչ, եթէ ոք հպարտանայ,
եթէ ոք զձեզ յանդիման հարկանէ։

21 Ըստ անարգանացդ ասեմ, իբ-
րեւ թէ մեք տկարացաք արդեօք.
յոր ինչ ոք համարձակիցի, անզգ-

որ պարծենումմին՝ նորանք էլ մեզ
նման գտնվելին։
13 Ինչու որ՝ այնպիսիներր սուտ
յ առաքեալներ, խաբեբայ մշակներ,
Քրիստոսի առաքեալների կերպա-
րանքովը ն կերպարանափոխվումեն։
14 Եւ զարմանալի բան էլ չէ.
ինչու որ՝ իսկ ինքը Սատանան էլ
լուսոյ հրեշտակի կերպարանքն ի-
րեն վերայ է շ առնում։
15 Եւ ընաւ մեծ բան չէ՞ որ
նորա պաշտօնեաներն էլ արդա-
րութեան պաշտօնեաներին նման
ո կերպարանվելին. որ նորանց վեր-
ջըն էլ իրենց գործքերին պէս չ կը
լինի։
16 Դարձեալ ասումեմ. չը լինի որ
մէկն ինձ յիմար համարէ. ապա թէ
չէ՞ գոնեա յիմարի պէս ընդունե-
ցէք ինձ, որ ես էլ մինչեւ պ պար-
ծենամ։
17 Եւ սա ինչ որ խօսումեմ՝ ոչ
թէ Տէրին մօտիկ տալով եմ ՚ի խօ-
սում, այլ ինչպէս յիմարութենով՝
ինչպէս որ այդ պարծանքից կար-
գը ջ բերումէ։
18 Եւ որովհետեւ շատերը մարմ-
նոյ կողմանէն պարծենումեն՝ ես էլ
այնպէս ռ կը պարծենամ։
19 Յօժար մտքով համբերումէք
անմիտներին՝ ձեր ՚ի իմաստութե-
նովը։
20 Պատճառն որ՝ համբերումէք
թէ որ մէկը խաբէ ձեզ, թէ որ
մէկը ծառայացնէ, թէ որ մէկը ձեր
բանն ուտէ, թէ որ մէկը բան առ-
նէ, թէ որ մէկը գոռոզանայ, թէ
որ մէկը ձեր երեսին ս զարկէ։
21 Այդ անարգանքից համար եմ
ասում, իբր թէ մենք տկարացանք
ր արդեօք. ինչ բանով որ մէկն հա-

յ Գործ. ԺԵ. 24։ Հռովմ. ԺԶ. 18։ Գաղ. Ա. 7։ Զ. 12։ Փիլիպ. Ա. 15։ Բ Պետ. Բ. 1։ Ա Յովհ. Դ. 1։ Յայտ. Բ. 2։
ն Գղ. Բ. 17։ Փիլիպ. Գ. 2։ Տիտ. Ա. 10, 11։
շ Գաղ. Ա. 8։
ո Գղ. Գ. 9։
չ Փիլիպ. Գ. 19։
պ Հռոմ. 1։ Գղ. ԺԲ. 6. 11։
ջ Ա Կորնթ. Է. 6. 12։
ռ Գղ. Բ. 4։
ս Փիլիպ. Գ. 3, 4
վ Ա Կորնթ. Գ. 10։
տ Գաղ. Բ. 4։ Դ. 9։
ր Գղ. Ժ. 10։

գամութեամբ ասեմ, համարձակիմ
եւ ես ։
22 Եբրայեցի՞ք իցեն, եւ ես. Իսրայէլացի՞ք իցեն, եւ ես. զաւակ
Աբրահամու իցեն, եւ ես ։
23 Պաշտօնեայք Քրիստոսի՞ իցեն, յանդգնագոյնս ասացից՝ թէ առաւել եւս ես, եթէ վաստակօք՝ առաւել, եթէ գանիւք՝ եւս առաւել. եթէ բանտիւ՝ աւելի քան զնոսա, եթէ մահուամբք՝ բազում անգամ ։
24 'Ի Հրէից՝ հնգիցս քառասուն միով պակաս առի ։
25 Երիցս ձաղկեցայ. մի անգամ քարկոծ եղէ. երիցս նաւաբեկ եղէ. զտիւ եւ զգիշեր յանդունդս տառապեցայ ։
26 'Ի ճանապարհս բազում անգամ, վիշտս 'ի գետոց, վիշտս յաւազակաց, վիշտս յազգէ, վիշտս 'ի հեթանոսաց, վիշտս 'ի քաղաքի, վիշտս յանապատի, վիշտս 'ի ծովու, վիշտս 'ի սուտ եղբարց ։
27 'Ի ջանս եւ 'ի վաստակս. 'ի տքնութիւնս բազում անգամ, 'ի քաղց եւ 'ի ծարաւ. 'ի պահս բազում անգամ. 'ի ցուրտ եւ 'ի մերկութեան ։
28 Թո՛ղ զայլ նեղութիւնսն. եւ զի հանապազ խուժումն 'ի վերայ իմ կուտէր՝ եւ հոգք ամենայն եկեղեցեաց ։
29 Ո՞ հիւանդանայ՝ եւ ո՛չ ես հի-

մարձակիլ, (յիմարութենով եմ ասում,) ես էլ ɜ կը համարձակիմ ։
22 Եբրայեցի՞ներ են, ես էլ. Իսրայէլացի՞ներ են, ես – էլ. Աբրահամի զաւա՞կ են, ես էլ.
23 Քրիստոսի պաշտօնեաներ են, համարձակութենով կասեմ՝ թէ էլ աւելի ես էլ, թէ աշխատանքով՝ ‡ աւելի, թէ ծեծով՝ էլ աւելի, թէ բանտով՝ նորանցից + աւելի, թէ մահով՝ շատ • անգամ ։
24 Հրէաներիցը հինգ անգամ՝ քառասունից մինը պակաս ծեծ § կերայ.
25 Երեք անգամ ձաղկով – ծեծվեցայ. մին անգամ ƒ քարկոծվեցայ. երեք անգամ նաւաբեկ ‡ էլայ. ցերեկ եւ գիշեր անդընդումը նեղութիւն քաշեցի.
26 Շատ անգամ ճանապարհներումը, գետերիցը նեղութիւններ, աւազակներիցը ∓ նեղութիւններ, ազգիցս նեղութիւններ, հեթանոսներիցը ⊦ նեղութիւններ, քաղաքի մէջ նեղութիւններ, անապատի մէջ նեղութիւններ, ծովի մէջ նեղութիւններ, սուտ եղբայրներիցը նեղութիւններ.
27 Ջանքի մէջ եւ աշխատանքի մէջ. շատ անգամ արթնութիւնների ⊤ մէջ. սովի եւ ծարաւի ⊢ մէջ. շատ անգամ ծոմի մէջ. ցրտի եւ մերկութեան մէջ.
28 Թո՛ղ ուրիշ նեղութիւններն էլ. եւ որ ամէն ժամանակ շատ զբաղմունք էր ինձ վերայ կիտվում եւ ամէն եկեղեցիների ⊏ հոգսը ։
29 Ո՞վ կը հիւանդանայ՝ եւ ես

ɜ Փիլիպ. Գ. 4 ։
– Գործ. ԻԲ. 3. Հռովմ. ԺԱ. 1 ։ Փիլիպ. Գ. 5 ։
‡ Ա Կորնթ. ԺԵ. 10 ։
+ Գործ. Թ. 16 ։ Ի. 23 ։ ԻԱ. 11 ։ Գղ. Զ. 4, 5 ։
• Ա Կորնթ. ԺԵ. 30, 31, 32 ։ Գղ. Ա. 9, 10 ։ Դ. 11. Զ. 9 ։
§ Բ Օրին. ԻԵ. 3 ։
– Գործ. ԺԶ. 22 ։
ƒ Գործ. ԺԴ. 18
‡ Գործ. ԻԷ. 41 ։
∓ Գործ. Թ. 23 ։ ԺԳ. 50 ։ ԺԴ. 5 ։ ԺԷ. 5 ։ Ի. 3 ։ ԻԱ. 31 ։ ԻԳ. 10—12 ։ ԻԵ. 3 ։
⊦ Գործ. ԺԴ. 5 ։ ԺԹ. 24 ։
⊤ Գործ. Ի. 31 ։ Գղ. Զ. 5 ։
⊢ Ա Կորնթ. Դ. 11 ։
⊏ Գործ. Ի. 18, [illegible] ։ Հռովմ. Ա. 14 ։

ւանդանամ · ո՞ գայթագղի՝ եւ ո՛չ
ես տապանամ ։
30 Եթէ պարծել ինչ պարտ իցէ,
զտկարութեանն պարծեցայց ։

31 Աստուած եւ Հայր Տեառն մե-
րոյ Յիսուսի Քրիստոսի գիտէ՝ որ
է օրհնեալ յաւիտեանս, զի ոչ ստ-
եմ ։
32 Ի Դամասկոս ազգապետն Ա-
րետայ արքայի պահէր զքաղաքն
Դամասկացւոց ունել զիս ։

33 Եւ ընդ պատուհանն վանդա-
կաւ կախեցայ ընդ պարիսպն, եւ
փախեայ ՚ի ձեռաց նորա ։

չեմ հիւանդանայ · եւ ով կը գայ-
թակղի՝ եւ ես չեմ բ բորբոքւիլ ։
30 Թէ որ պարծենալ պէտք լինի
ինձ, իմ տկարութիւններս ժ կը պար-
ծենամ ։
31 Աստուած եւ մեր Տէր Յիսուս
Քրիստոսի Հայրն՝ որ յաւիտեան
օրհնեալ է ի՝ գիտումէ որ սուտ չեմ
լ ասում ։
32 Դամասկոսումն Արետա թա-
գաւորի ազգապետը Դամասկացւոց
քաղաքին պահ էր դրել՝ որ ինձ
խ բռնէ ։
33 Եւ պատուհանից քթոցով
կախվեցայ պարսպիցը, եւ փախայ
նորա ձեռքիցը ։

## ԳԼ. ԺԲ

1 Արդ՝ պարծել ինչ պարտ իցէ ·
այլ օգնէ ինչ ոչ · բայց եկից ՚ի
տեսիլս եւ ՚ի յայտնութիւնս Տեառն ։

2 Գիտեմ այր մի ՚ի Քրիստոս յա-
ռաջ քան զչորեքտասան ամ, ե-
թէ մարմնով՝ ոչ գիտեմ, եւ եթէ
առանց մարմնոյ՝ ոչ գիտեմ, Աստ-
ուած գիտէ · յափշտակեալ զայն-
պիսին մինչեւ յերրորդ երկինս ։

3 Եւ գիտեմ զայնպիսի այր · ե-
թէ մարմնով՝ եւ եթէ առանց մարմ-
նոյ՝ ոչ գիտեմ · Աստուած գիտէ ։

4 Զի յափշտակեցաւ ՚ի դրախ-
տն · եւ լուաւ բանս անճառս, զոր
ոչ է պարտ մարդոյ խօսել ։

5 Վասն այնպիսւոյն պարծեցայց ·
այլ վասն անձին իմոյ ոչ պարծե-
ցայց, բայց եթէ ՚ի տկարութիւնս ։

6 Զի եթէ եւ կամիցիմ պարծել՝

1 Այս՝ պարծենալ որ պէտք
լինի, էլ օգուտ չի բերում ինձ ·
բայց կը գամ Տէրի տեսիլքներին եւ
յայտնութիւններին մէջ ։
2 Մին մարդ եմ գիտում Քրիս-
տոսումը տասն չորս տարուց ա-
ռաջ, եթէ մարմնով էր՝ չեմ գի-
տում, եւ եթէ առանց մարմնոյ էր՝
չեմ գիտում, Աստուած է — գիտում.
նա յափշտակվեցաւ մինչեւ երրորդ
ծ երկինքը ։
3 Եւ գիտումեմ այնպէսի մարդն
եթէ մարմնով՝ եւ եթէ առանց
մարմնոյ էր՝ չեմ գիտում · Աստ-
ուած է գիտում,
4 Որ նա յափշտակվեցաւ դրախ-
տի մէջ · եւ անասելի բաներ կ լսեց՝
որ մարդուն պէտք չէ նորանից խօ-
սել ։
5 Այնպէսոյն համար պարծենամ ·
բայց իմ անձիս համար չը պարծե-
նամ, բայց մինակ իմ տկարու-
թեանս հ համար ·
6 Ինչու որ՝ թէ էլ կամենամ

բ Ա. Կորնթ. Ը. 13. Թ. 22.
ժ Գլ. ԺԲ. 5. 9. 10.
ի Հռովմ. Թ. 5.
լ Հռովմ. Ա. 9. Թ. 1. Գլ. Ա. 23. Գաղ. Ա. 3. Ա. Թես. Բ. 5.
խ Գործ. Թ. 24. 25.
—
— Հռովմ. ԺԶ. 7. Գլ. Ե. 17. Գաղ. Ա. 22. Գործ. ԺԴ. 6.
ծ Գործ. ԻԲ. 17.
կ Ղուկ. ԻԳ. 43.
հ Գլ. ԺԱ. 30.

ոչ եղէց անզգամ · քանզի զճշմարիտն ասեմ · այլ խնայեմ, գուցէ ոք համարիցի ինչ զիս աւելի՝ քան զոր տեսանիցէ զիս, կամ լսիցէ յինէն ։

7 Եւ զի մի՛ առաւելութեամբ յայտնութեանցն հպարտացայց, տուաւ ինձ խայթ մարմնոյ հրեշտակ Սատանայ՝ կափել զիս · զի մի՛ հպարտացայց ։

8 Եւ վասն այնորիկ երիցս անգամ աղաչեցի զՏէր՝ զի ՚ի բաց արասցէ յինէն ։

9 Եւ ասէ ցիս · Շատ են քեզ շնորհք իմ, զի զօրութիւն իմ ՚ի տկարութեան կատարի · եւ արդ՝ լաւ եւս լիցի ինձ պարծել ՚ի տկարութիւնս, զի բնակեսցէ յիս զօրութիւնն Քրիստոսի ։

10 Վասն որոյ հաճեալ եմ ընդ տկարութիւնս, ընդ թշնամանս, ընդ վիշտս, ընդ հալածանս, եւ ընդ նեղութիւնս վասն Քրիստոսի · զի յորժամ տկարանամ, յայնժամ զօրանամ ։

11 Եղէ անզգամ, քանզի դուք ստիպեցէք զիս · զի ինձ պարտ էր ՚ի ձէնջ վկայութիւն առնուլ՝ թէ ոչինչ պակաս գտայ քան զլաւ առաքեալսն · զի թէպէտ եւ ես ոչինչ եմ ։

12 Սակայն նշանք առաքելոյ գործեցան ՚ի ձեզ՝ ամենայն համբերութեամբ, նշանօք եւ արուեստիւք՝ եւ զօրութեամբք ։

13 Եւ արդ զի՞նչ իցէ, որով պակաս գտայք քան զայլ եկեղեցիս ·

պարծենալ՝ յիմար չեմ ըլլար · պատճառն որ՝ ուղղորդն եմ ասում · բայց խնայում եմ՝ որ չը լինի թէ մէկն ինձ համար աւելի բան համարէ, քանթէ նա՝ որ ինձանում տեսնէ կամ ինձանից ի լսէ ։

7 Եւ որ փառաւոր յայտնութիւններովս չը հպարտանամ, մարմնոյ խայթ տրվիա լ ինձ՝ Սատանայ հրեշտակ, որ ինձ բռունցքով ծեծէ, որ խ չը գոռոզանամ ։

8 Եւ նորա համար երեք անգամ աղաչեցի Տէրին, որ նա հեռացնէ ծ ինձանից ։

9 Եւ ինձ ասաց · Իմ շնորհքս բաւական է քեզ համար, ինչու որ՝ իմ զօրութիւնս տկարութեան մէջն է կատարվում · եւ նորա համար աւելի լաւ կը լինի ինձ տկարութիւններով կ պարծենալ, որ Քրիստոսի զօրութիւնը բնակվի հ ինձանում ։

10 Նորա համար ուրախ եմ տկարութիւններումը, թշնամանքներումը, վիշտերումը, հալածանքներումը, եւ նեղութիւններումը Քրիստոսի ձ համար · ինչու որ՝ երբոր տկարանում եմ, այն ժամանակը ղ զօրանում եմ ։

11 Յիմար էլայ, ինչու որ դուք ճ բռնադատեցիք · պատճառն որ՝ պէտք էր ինձ ձեզանից վկայութիւն առնել՝ թէ ոչ մէկ բանով պակաս չէլայ քանթէ այն լաւ մ առաքեալները · որ թէ եւ ես ոչ ինչ յ եմ ։

12 Բայց առաքելոյն նշանները ձեր մէջումը գործվեցան՝ ամէն համբերութեամբ՝ նշաններով եւ հրաշքներով՝ եւ ն զօրութիւններով ։

13 Այս ինչ է՝ որ նորանով պակաս գտաք քանթէ ուրիշ շ եկեղե-

ի Գղ. Ժ. 8. ԺԱ. 16.
լ Եզեկ. ԻԸ. 24. Գաղ. Դ. 13. 14.
խ Յոբ. Բ. 7. Ղուկ. ԺԳ. 16.
ծ Բ Օրին. Գ. 23— 27. Մատթ. ԻԶ. 44.
կ Գղ. ԺԱ. 30.
հ Ա Պետ. Դ. 14
ձ Հռովմ. Ե. 3. Գղ. Է. 4.
ղ Գղ. ԺԳ. 4.

ճ Գղ. ԺԱ. 1. 16, 17.
մ Գղ. ԺԱ. 5. Գաղ. Բ. 6, 7, 8.
յ Ա Կորնթ. Գ. 7. ԺԵ. 8, 9. Եփես. Գ. 8.
ն Հռովմ. ԺԵ. 18, 19. Ա Կորնթ. Բ. 2. Գղ. Դ. 2. Զ. 4. ԺԱ. 6.
շ Ա Կորնթ. Ա. 7.

բայց եթէ այնու՝ զի ես զձեզ ոչ ծանրացուցի. շնորհեցէք ինձ ըզ վնաս զայդ։

14 Անաւասիկ այս երրորդ անգամ պատրաստեալ եմ գալ առ ձեզ. եւ ձեզ բեռն ինչ ոչ եղէց. զի ոչ խնդրեմ ինչ զձեր՝ այլ զձեզ. քանզի ոչ պարտին որդիք հարց գանձել՝ այլ հարք որդւոց։

15 Բայց ես մտադիւրութեամբ ծախեցից, եւ ծախեցայց վասն անձանց ձերոց. զի թէպէտ եւ յառաւել սիրոյն զձեզ սակաւ սիրիցիմ։

16 Այլ գրեթէ ես ոչինչ ծանրացայ ձեզ. այլ քանզի խորագէտ էի, խեղօք կալայ զձեզ։

17 Միթէ որովք առաքեցին առ ձեզ՝ նոքօք ինչ ագահեցի՞ 'ի ձէնջ։

18 Աղաչեցի զՏիտոս՝ եւ առաքեցի ընդ նմա զեղբայրն, միթէ ագահեաց ինչ զձեր Տիտոս. ոչ նովին հոգւով գնացաք. ոչ նովին շաւղօք շրջեցաք։

19 Դարձեալ համարիցիք՝ եթէ յաղօք անկեալ ինչ ձեզ ատենաբանեմք. առաջի Աստուծոյ 'ի Քրիստոս խօսիմք, զի ամենայն ինչ սիրելիք վասն ձերոյ շինութեան է։

20 Այլ երկնչիմ, գուցէ եկեալ ոչ որպէս ես կամիմն գտանիցեմ զձեզ. եւ ես գտանիցիմ ձեզ՝ որպէս եւ դուք ոչ կամիցիք. գուցէ դարձեալ՝ հեռ, նախանձ, սրտմտութիւնք, գրգռութիւնք, չարախօսութիւնք, քսութիւնք հպարտ-

ցինելը. եթէ ոչ նրանով՝ որ ես ծանրութիւն չը տուի ղ ձեզ. բաշխեցէք ինձ այդ ճ վնասը։

14 Ահա սա երրորդ անգամն է՝ որ պատրաստված եմ ձեզ մօտ մ գալու՝ եւ ձեզ բեռն չեմ լինիլ. պատճառն որ՝ չեմ ուզում ձեր բանը՝ բայց յ ձեզ. ինչու որ՝ ոչ թէ որդիքը հարանց համար պէտք է գանձ հաւաքեն՝ այլ հարքն որդոց ն համար։

15 Բայց ես յօժար սրտով ձեր անձների համար ծախք շ կանեմ, եւ ծախք կը լինիմ. թէ եւ աւելի սիրելով ձեզ՝ ես քիչ չ սիրվիմ։

16 Բայց կը լինի՝ որ ես ոչ մին բանով ծանրութիւն չեղայ պ ձեզ. միայն թէ՝ ես որ խորագէտ էի, խեղքով բռնեցի ձեզ։

17 Միթէ նորանից ձեռամբ՝ որ ձեզ մօտ ուղարկեցի՝ մին բան քաշեցի ջ ձեզանից։

18 Աղաչեցի ռ Տիտոսին՝ եւ նորա հետ այն եղբօրն էլ ս ուղարկեցի, միթէ Տիտոս ձեզանից մին բան քաշեց. չէ՞ որ մենք իսկ մին հոգով վարվեցանք. չէ՞ որ իսկ մին ճանապարհ գնացինք։

19 Մին էլ կարծում էք՝ թէ առաջ խօսքով ձեզ վ աղաչում ենք. Աստուծոյ առաջին Քրիստոսով տ խօսում ենք, որ ամէն բան սիրելիներ՝ ձեր շինութեան համար ր է։

20 Բայց վախում եմ, որ չը լինի թէ իմ գալոյ ժամանակը ձեզ այնպէս չը գտնեմ՝ ինչպէս որ կամենում եմ. եւ ես գտնվիմ ձեզ համար՝ ինչպէս որ դուք էլ չէք ց կամենում. որ նորէն չը լինի՝ կռիւ, նախանձ, բարկութիւններ, գրգռ-

ղ Ա կորնթ. Թ. 12 Գլ. ԺԱ. 9.
ճ Գլ. ԺԱ. 7.
մ Գլ. ԺԳ. 1.
յ Գործ. Ի. 33. Ա կորնթ Ժ. 33
ն Ա կորնթ. Դ. 14 15.
շ Ա Թես. Բ 8. Փիլիպ. Բ. 17.
ո Յովհ. Ժ. 11. Գլ. Ա. 6. կող Ա. 24. Բ Տիմ. Բ. 10.
չ Գլ. Զ. 12, 13.
պ Գլ. ԺԱ. 9.
ջ Գլ. Է. 2.
ռ Գլ. Ը. 6. 16 22.
ս Գլ. Ը. 18.
վ Գլ. Ե. 12.
տ Հռոմ. Թ. 1. Գլ. ԺԱ. 31.
ր Ա կորնթ. Ժ. 33.
ց Ա կորնթ. Գ. 21. Գլ. Ժ. 2. ԺԳ. 2. 10.

ութիւնք, ամբարտաւանութիւնք, խռովութիւնք։

ութիւններ, չարախօսութիւններ, խօսք խառնելը, գոռոզութիւններ, ամբարտաւանութիւններ, խռովութիւններ.

21 Գուցէ դարձեալ յորժամ գայցեմ՝ նկուն իմն արասցէ զիս Աստուած իմ առ ձեզ. եւ սուգ առնուցում վասն բազմաց յառաջագոյն մեղուցելոց՝ եւ ոչ ապաշխարելոց՝ ի վերայ պղծութեան եւ պոռնկութեան եւ գիջութեան՝ զոր գործեցին։

21 Որ չըլլայ թէ նորէն իմ գալուս ժամանակին՝ իմ Աստուածս ինձ ցածացնէ ձեզ – մօտ. եւ սուգ մտնեմ շատերուն համար՝ որ առաջուց մեղք ‡ գործեցին, եւ չապաշխարեցին՝ այն պղծութեան եւ ‡ պոռնկութեան եւ գիճութեան համար՝ որ գործեցին։

## ԳԼ. ԺԳ

1 Այս երրորդ անգամ գամ առ ձեզ. զի ի բերանոյ երկուց եւ երից վկայից հաստատեսցի ամենայն բան։

2 Յառաջ ասացի եւ դարձեալ կանխաւ ասեմ յանդիման երկիցս անգամ. եւ այժմ ի բացուստ գրեմ յառաջագոյն յանցուցելոցն՝ եւ այլոցն ամենեցուն. զի եթէ եկից դարձեալ՝ ոչ խնայեցից։

1 Աս երեք անգամն է՝ որ ձեզ մօտ եմ – գալիս, որ երկու եւ երեք վկայի բերանէցն ամէն բան ‡ հաստատվի։

2 Առաջուց ասացի եւ կրկին առաջ ասումեմ՝ իբր մօտ լինող երկու անգամը. եւ հիմիկ հեռուանց ‡ գրումեմ այն առաջուց մեղք գործածներին՝ եւ ամէն ‡ ուրիշներին. որ եթէ միւսանգամ գամ՝ չեմ ‡ խնայիլ։

3 Եթէ զփորձ ինչ խնդրէք ըզՔրիստոսի, որ ինեւս ընդ ձեզ խօսի. որ հզօրացեալն է ի ձեզ, եւ ոչ տկարացեալ։

4 Զի թէպէտ եւ խաչեցաւ ի մերմէ տկարութենէ, այլ կենդանի է զօրութեամբն Աստուծոյ. եւ մեք թէպէտ եւ տկարանայցեմք վասն նորա, այլ կենդանի լիցուք ընդ նմա զօրութեամբն Աստուծոյ։

3 Որ թէ ուզումէք փորձ առնել Քրիստոսի, որ ինձանով ձեզ հետ ‡ խօսումէ. որ ձեր միջումը զօրաւոր է, եւ տկար ‡ չէ։

4 Ինչու որ՝ թէ եւ խաչվեցաւ մեր ‡ տկարութենիցը, բայց կենդանի է Աստուծոյ ‡ զօրութենովը. եւ մենք թէ եւ տկարանումենք նորա համար՝ բայց կենդանի կը լինինք նորա հետ Աստուծոյ ‡ զօրութենովը։

5 Փորձեցէք զանձինս ձեր, եթէ կայք ի նոյն հաւատս. քննեցէք զանձինս, եթէ ոչ գիտէք զանձինս՝ զի Քրիստոս Յիսուս ի ձեզ

5 Փորձեցէք ձեր ‡ անձերդ, եթէ այն հաւատքին մէջ կանգնած էք. քննեցէք անձներդ, կամ թէ չէք գիտում անձներդ՝ որ Յիսուս

– Գլ. Բ. 1. 4։
‡ Գլ. ԺԳ 2։
+ Ա Կորնթ. Ե. 1։
—
– Գլ. ԺԲ. 14։
բ Թու. ԼԵ. 30։ Բ Օրին. ԺԷ. 6։ ԺԹ. 15։ Մատթ. ԺԸ. 16։ Յովհ. Ը. 17։ Եբր. Ժ. 28։
‡ Գլ. Ժ. 2։
‡ Գլ. ԺԲ. 21։
‡ Գլ. Ա. 23։
ղ Մատթ. Ժ. 20։ Ա Կորնթ. Ե. 4։ Գլ. Բ. 10։
‡ Ա Կորնթ. Բ. 2։
ը Փիլիպ. Բ. 7. 8։ Ա Պետ. Գ. 18։
բ Հռովմ. Զ. 4։
‡ Գլ. Ժ. 3. 4։
‡ Ա Կորնթ. ԺԱ. 28։

է. բայց եթէ անպիտան ինչ իցէք:
6 Այլ ակնունիմ թէ գիտիցէք.
զի մեք ոչ եմք անպիտանք:
7 Այլ խնդրեմք յԱստուծոյ՝ զի
մի ինչ արասցէ ձեզ չար. ոչ զի
մեք ընտիրք երեւեսցուք, այլ զի
դուք զբարիս գործիցէք՝ եւ մեք
անպիտանք լիցուք:
8 Զի ոչ կարեմք ինչ հակառակ
կալ ճշմարտութեանն. այլ վերա-
կացու եմք ճշմարտութեանն:
9 Խրախ եմք՝ յորժամ մեք տկա-
րանայցեմք՝ եւ դուք զօրաւոր ի-
ցէք. զայն իսկ եւ աղօթս առնեմք
զձեր հաստատութիւնդ:
10 Վասն այնորիկ զայս 'ի հե-
ռաստ գրեմ. զի մի՛ յորժամ եկից՝
սաստկութեամբ վարեցայց ըստ իշ-
խանութեանս, զոր ետ ինձ Տէր 'ի
շինել՝ եւ ոչ 'ի քակել:

11 Այսուհետեւ եղբարք, ողջ լե-
րուք, հաստատուն կացէք, մխի-
թարեցարուք, միաբան լերուք,
խաղաղութիւն արարէք. եւ Աստ-
ուած խաղաղութեան եւ սիրոյ՝ ե-
ղիցի ընդ ձեզ:
12 Ողջոյն տուք միմեանց 'ի համ-
բոյր սրբութեան. ողջոյն տան ձեզ
սուրբք ամենայն:
13 Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի, եւ սէրն Աստուծոյ, եւ
հաղորդութիւն Հոգւոյն Սրբոյ ընդ
ձեզ ամենեսին, Ամէն:

Քրիստոս ձեզմանում է. եթէ ոչ
անպիտան [խ] ըլլաք:
6 Բայց յոյս ունիմ որ գիտնաք,
թէ մենք անպիտան չենք:
7 Միայն խնդրումեմ Աստուածա-
նից՝ որ չար բան չանէք. ոչ թէ
որ մենք ընտիր երեւինք, բայց որ
դուք բարին գործէք, եւ մենք ան-
պիտան [ծ] գտնուինք:
8 Ինչու որ՝ չենք կարող հակա-
ռակ ըլնիլ ճշմարտութեան. բայց
ճշմարտութեան վերակացու ենք:
9 Ուրախ ենք՝ երբոր մենք [կ] տ-
կարանումենք՝ եւ դուք զօրանու-
մէք. իսկ զրահամար աղօթքէլ ենք
անում, որ դուք հաստատ [հ] ըլնիք:
10 Նրահամար աս հեռուանց եմ
[ձ] գրում. որ չը ըլնի թէ իմ գալոյ
ժամանակը սաստկութենով [ղ] վար-
վիմ, իմ իշխանութեան չափովը,
որ Տէրը նորան տուաւ ինձ շինե-
լոյ՝ եւ չէ թէ քանդելոյ [ճ] համար:
11 Էլ այսուհետեւ եղբարք, ողջ
էլէք, հաստատ կացէք, մխիթար-
վեցէք, միաբան [մ] էլէք, եւ խաղա-
ղութենով վարվեցէք. եւ խաղա-
ղութեան եւ սիրոյ Աստուածը ձեզ
հետ [յ] ըլնի:
12 Իրար ողջոյն տուէք սուրբ համ-
բուրովը. ողջոյն են տալիս ձեզ
ամէն [ն] սրբերը:
13 Մեր Տէր Յիսուսի Քրիստոսի
[շ] շնորհքը, եւ Աստուծոյ սէրը, եւ
Սուրբ Հոգւոյ հաղորդութիւնը ձեզ
ամէնից [ո] հետ, Ամէն:

Կորնթացւոց Վերոյ Երկրորդ Թուղթը Փիլիպեայ քաղաքէն գրեցաւ՝ Տիտոսի եւ Ղուկասի ձեռամբ:

լ Հռովմ. Ը. 10. Գաղ. Դ. 19.
խ Ա Կորնթ. Թ. 27.
ծ Գլ. Զ. 9.
կ Ա Կորնթ. Դ. 10. Գլ. ԺԱ. 30. ԺԲ. 5. 9. 10.
հ Ա Թես. Գ. 10.
ձ Ա Կորնթ. Դ. 21. Գլ. Բ. 3. Ժ. 2. ԺԲ. 20, 21.
ղ Տիտ. Ա. 13.
ճ Գլ. Ժ. 8.
մ Հռովմ. ԺԲ. 16. 18. ԺԵ. 5. Ա Կորնթ. Ա. 10. Փիլիպ. Բ. 2. Գ. 16. Ա Պետ. Գ. 8.
յ Հռովմ. ԺԵ. 33.
ն Հռովմ. ԺԶ. 16. Ա Կորնթ. ԺԶ. 20. Ա Թես. Ե. 26. Ա Պետ. Ե. 14.
շ Հռովմ. ԺԶ. 24.
ո Փիլիպ. Բ. 1.

# ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԱՌ ԳԱՂԱՏԱՑԻՍ

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 ՊՕՂՈՍ առաքեալ ոչ 'ի մարդկանէ եւ ոչ 'ի ձեռն մարդոյ, այլ 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եւ Աստուծոյ Հօր, որ յարոյց զնա 'ի մեռելոց։

2 Եւ որ ընդ իս են եղբարք ամենեքին, եկեղեցեացդ Գաղատացւոց։

3 Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ 'ի Հօրէ՝ եւ 'ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ։

4 Որ ետ զանձն իւր վասն մեղաց մերոց, զի զմեզ փրկեսցէ յաշխարհէ աստի չարէ՝ ըստ կամացն Աստուծոյ եւ Հօր մերոյ։

5 Որում փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։

6 Զարմանամ՝ զի այդպէս վաղվաղակի փոխիք յայնմանէ՝ որ կոչեացն զձեզ 'ի շնորհսն Քրիստոսի՝ յայլ աւետարան։

7 Որ ոչ գոյ այլ բայց եթէ իցեն ոմանք՝ որ խռովեցուցանիցեն զձեզ, եւ կամիցին շրջել զաւետարանն Քրիստոսի։

8 Այլ թէ մեք, կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր աւետարանեցաքն ձեզ, նզովեալ լիցի։

9 Որպէս յառաջագոյն ասացաք՝ եւ արդ դարձեալ ասեմ, Եթէ որ

1 ՊՕՂՈՍ առաքեալ ոչ մարդկանցմէ եւ ոչ մարդոյ [ա] ձեռօք, այլ Յիսուսի Քրիստոսի ձեռօքը՝ եւ Հայր [բ] Աստուծոյ, որ մեռելներէն յարոյց [գ] նորան։

2 Եւ ամէն եղբարքը՝ որ ինձ հետ [դ] են. Գաղատացւոց [ե] եկեղեցիներին։

3 Շնորհք ձեզ հետ եւ խաղաղութիւն Աստուած Հօրիցը՝ եւ մեր Տէր Յիսուս [զ] Քրիստոսիցը.

4 Որ իրեն անձը մեր մեղաց համար [է] տուաւ, որ մեզ այս չար աշխարհքիցս փրկէ՝ Աստուծոյ եւ մեր Հօր կամքին [ը] պէս,

5 Որ նորան փառք յաւիտեանս, ամէն։

6 Զարմանումեմ՝ որ այդպէս շուտով փոխուումէք [թ] նորանից՝ որ ձեզ կանչեց Քրիստոսի շնորհքի մէջ՝ դէպի ուրիշ աւետարան.

7 Որ էլ ուրիշ —[ժ]— չկայ. միայն թէ որ մին քանիսը կան՝ որ ձեզ խռովացնումեն, եւ կամենումեն Քրիստոսի աւետարանը [ի] փոխել։

8 Բայց թէ որ մենք, կամ երկնքիցը հրեշտակ աւետարանէ ձեզ աւելի քանթէ նա՝ որ մենք աւետարանեցինք ձեզ, նզոված [լ] լինի։

9 Ինչպէս որ առաջ ասացինք՝ նորէն հիմիկ ենք ասում, թէ որ

ա Հռոմ. 11. 12.
բ Գործ. Թ. 7. ԻԲ. 10. 15. 21. ԻԶ. 16. Տիտ. Ա. 3.
գ Գործ. Բ. 24.
դ Փիլիպ. Բ. 22. Դ. 22.
ե Ա Կորնթ. ԺԶ. 1.
զ Հռոմ. Ա. 7. Ա Կորնթ. Ա. 3. Բ Կորնթ. Ա. 2. Եփես. Ա. 2. Փիլիպ. Ա. 2. Կող. Ա. 3. Ա Թես. Ա. 2. Բ Թես. Ա. 2. Բ Յովհ. 3.
է Մատթ. Ի. 28. Հռոմ. Դ. 25. Գղ. Բ. 20. Տիտ Բ. 14.
ը Եսայ. ԿԵ. 17. Յովհ. ԺԵ. 19. ԺԷ. 14. Եբր. Բ. 5. Զ. 5. Ա Յովհ. Ե. 19.
թ Գղ. Ե. 8.
ժ Բ Կորնթ. ԺԱ. 4.
ի Գործ. ԺԵ. 1. 24. Բ Կորնթ. Բ. 17. ԺԱ. 13.
լ Ա Կորնթ. ԺԶ. 22.

աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր առէքն, նզովեալ լիցի։

10 Արդ՝ մարդկան հաճոյ լինիցիմ, թէ Աստուծոյ. կամ՝ խնդրիցեմ մարդկան հաճոյ լինել. եթէ տակաւին մարդկան հաճոյ լինէի, ապա Քրիստոսի ծառայ ոչ էի։

11 Ցուցանեմ ձեզ եղբարք՝ զաւետարանն, որ աւետարանեցաւ յինէն. զի ոչ է ըստ մարդոյ։

12 Քանզի եւ ոչ ես ՚ի մարդոյ առի, եւ ոչ ուսայ յուսմնէ. այլ ՚ի յայտնութենէն Յիսուսի Քրիստոսի։

13 Քանզի լուեալ իսկ է ձեր զիմ գնացսն, որ երբեմն ՚ի Հրէութեանն անդ. զի անչափ հալածէի զեկեղեցին Աստուծոյ, եւ աւեր հարկանէի զնա։

14 Եւ յառաջադէմ էի ՚ի Հրէութեանն՝ քան զբազում հասակակիցս իմ, որ յազգին իմում էին. առաւել նախանձախնդիր էի իմոյ հայրենի աւանդութեանցն։

15 Այլ յորժամ հաճեցաւ Աստուած՝ որ զատոյց զիս յորովայնէ մօր իմոյ, եւ կոչեաց ՚ի ձեռն շնորհաց իւրոց,

16 Յայտնել զՈրդին իւր յիս. զի աւետարանեցից զնա ՚ի հեթանոսս. անդէն վաղվաղակի ոչ ինչ զգացուցի մարմնոյ եւ արեան։

17 Եւ ոչ ելի յԵրուսաղէմ, առ որ յառաջագոյն քան զիս առաքեալքն

մէկն աւելի աւետարանէ քան նա՝ որ դուք [է] առիք, նզովեալ լինի։

10 Ապա մարդկանց հաճոյ լինիմ, թէ [ը] Աստուծոյն. կամ ուզեմ որ մարդկանց հաճոյ [թ] լինիմ. թէ որ դեռ մարդկանց հաճոյ լինէի, ապա Քրիստոսի ծառայ չէի։

11 Ցոյց կու տամ ձեզ եղբարք՝ այն աւետարանը, որ ինձմէ աւետարանեցաւ. որ նա մարդոյ բան [ժ] չէ։

12 Պատճառն որ՝ ես էլ մարդուց չառի, եւ ոչ մէկից [ի] չը սորվեցի. բայց Յիսուսի Քրիստոսի [լ] յայտնութենովը։

13 Ինչու որ՝ լսել էք դուք իմ վարքս, որ մէկ ժամանակ Հրէութեան մէջն էի. որ չափէն դուրս հալածումէի Աստուծոյ [խ] եկեղեցին, եւ թալանումէի [ծ] նորան։

14 Եւ Հրէութեան մէջ աւելի առաջ էի՝ քան իմ շատ հասակակից ընկերներս, որ իմ ազգիս մէջն էին. աւելի նախանձաւոր էի իմ հայրենական աւանդութիւններին [հ] համար։

15 Բայց երբոր Աստուած հաճեցաւ՝ որ իմ մօրս փորէն ինծի [ձ] զատեց, եւ իրեն շնորհքովը կանչեց,

16 Որ իրեն Որդին ինծանով [ղ] յայտնէ. որ նորան հեթանոսներու մէջումն [ճ] աւետարանեմ. այն ժամանակը շուտով մարմնոյ եւ արիւնի իմաց [մ] չըրի,

17 Եւ չը գնացի Երուսաղէմ նորանց մօտ, որ ինձմէ առաջ ա-

է Բ Օրին. Դ. 2. ԺԲ. 32. Առակ. Լ. 6. Յայտ. ԻԲ. 18.
ը Ա Թես. Բ. 4. Ա Թագ. ԻԴ. 7. Մատթ. ԻԸ. 14. Ա Յովհ. Գ. 9.
թ Ա Թես. Բ. 4. Յակ. Դ. 4.
ժ Ա Կորնթ. ԺԵ. 1.
ի Ա Կորնթ. ԺԵ. 1. 3. Համառ. 1.
լ Եփես. Գ. 3.
խ Գործ. Թ. 1. ԻԲ. 4. ԻԶ. 11. Ա Տիմ. Ա. 13.
ծ Գործ. Ը. 3.
կ Գործ. ԻԲ. 3. ԻԶ. 9. Փիլիպ. Գ. 6.
հ Երեմ. Թ. 14. Մատթ. ԺԵ. 2. Մարկ. Է. 5.
ձ Եսայ. ԽԹ. 1. 5. Երեմ. Ա. 5. Գործ. Թ. 15. ԺԳ. 2. ԻԲ. 14, 15. Հռովմ. Ա. 1.
ղ Բ Կորնթ. Դ. 6.
ճ Գործ. Թ. 15. ԻԲ. 21. ԻԶ. 17, 18. Հռովմ. ԺԱ. 13. Եփես. Գ. 8.
մ Մատթ. ԺԶ. 17. Ա Կորնթ. ԺԵ. 50. Եփես. Զ. 12.

էին. այլ չոգայ յԱրաբիա, եւ
դարձեալ դարձայ ՚ի Դամասկոս։

18 Ապա յետ երից ամաց ելի յԵ-
րուսաղէմ տեսանել զՊետրոս. եւ
եղէ առ նմա աւուրս հնգետասան։

19 Զայլ ոք յառաքելոց անտի՝ ոչ
տեսի, բայց միայն զՅակոբոս զեղ-
բայրն Տեառն։
20 Այլ զոր գրեմս առ ձեզ, ա-
հաւասիկ առաջի Աստուծոյ՝ զի ոչ
ստեմ։
21 Ապա եկի ՚ի կողմանս Ասորւոց
եւ Կիլիկեցւոց։
22 Եւ յանծանօթս էի երեսաց ե-
կեղեցեացն՝ որ ՚ի Թլփատութենէ
անտի էին ՚ի Քրիստոս։
23 Բայց զի լսելով լսեալ էր,
թէ Որ հալածէրն զմեզ յայնժամ,
արդ աւետարանէ զհաւատսն՝ զոր
երբեմն խախտէր։
24 Եւ փառաւոր առնէին յինեւ
զԱստուած։

առաքեալներ էին. բայց գնացի Ա-
րաբիա, եւ կրկին դարձայ Դամաս-
կոս։
18 Յետոյ երեք տարուց ետեւ գը-
նացի Երուսաղէմ, որ Պետրոսին
տեսնեմ. եւ տասնուհինգ օր նո-
րա մօտ կեցայ։
19 Առաքեալներէն ուրիշ մէկմը
−չը տեսայ, այլ միայն Տէրոջ եղբայր
− Յակոբին։
20 Բայց այս բաները՝ որ ձեզ գը-
րումեմ, ահա Աստուծոյ առաջին՝
որ սուտ չեմ ըսում։
21 Յետոյ եկի Ասորոց եւ Կիլի-
կեցոց ⁊ կողմերը։
22 Եւ երեսով ճանաչ չէի այն ⁊ ե-
կեղեցիներին՝ որ Թլփատութենէիցն
էին ⁊ Քրիստոսումը,
23 Միայն թէ՝ նա լսել էին, թէ
Նա՝ որ այն ժամանակին մեզ հալա-
ծումէր, հիմիկ այն հաւատքին է ա-
ւետարանում՝ որ առաջ քանդումէր։
24 Եւ ինձանով փառաւորումէին
Աստուծոյն։

## ԳԼ. Բ

1 Ապա յետ ամաց չորեքտասա-
նից միւսանգամ ելի յԵրուսաղէմ
ընդ Բառնաբայ, առեալ ընդ իս եւ
զՏիտոս։
2 Եւ ելի ըստ յայտնութեանն.
եւ զգացուցի նոցա զաւետարանն՝
զոր քարոզէի ՚ի հեթանոսս, առան-
ձինն այնոցիկ՝ որ կարծեցեալքն էին,
գուցէ ընդ ունայն ինչ ընթացեալ ՚ի
ցեմ՝ կամ ընթանայցեմ։

3 Այլեւ ոչ Տիտոս՝ որ ընդ իս ՚ի
Հեթանոսաց էր, բռնադատեցաւ
թլփատել։
4 Այլ վասն սպրդողաց սուտ եղ-
բարցն, որք սպրդեցին մտանել զի-
տել զազատութիւնն մեր՝ զոր ու-

1 Յետոյ տասնուչորս տարուց
ետեւ կրկին միւսանգամ Բառնաբա-
սին հետ գնացի Երուսաղէմ, եւ
Տիտոսին էլ ինձ հետ − առի։
2 Եւ [illegible] յայտնութեան պատ-
ճառովը գնացի. եւ նորանց խօ-
սեցի այն աւետարանն՝ որ հեթանո-
ներին մէջ ⁊ քարոզումէի, ⁊ մաս-
նաւորապէս նորանց՝ որ մեծ էին
համարված. որ չը լինի թէ՝ զուր
տեղը վազած լինիմ կամ ⁊ վազեմ։
3 Բայց Տիտոսն էլ՝ որ Հեթանոս-
ներին միջիցն ինձ հետ էր, չը բռ-
նադատեցաւ թլփատուելի։
4 Եւ այն ներս սպրդած սուտ եղ-
բայրներին պատճառով, որ ներս
սպրդան ⁊ մտնել՝ մեր ազատութիւնը

---

Է Գործ. Թ. 26.
− Ա Կորնթ. Թ. 5.
- Մատթ. ԺԳ. 55
Մարկ. Զ. 3.

Է Հռովմ. Թ. 1.
⁊ Գործ. Թ. 30.
բ Ա Թես. Բ. 14.
ց Հռովմ. ԺԶ. 7.

⁊ Գործ. ԺԵ. 2.
բ Գործ ԺԵ. 12.
գ Փիլիպ. Բ. 16.
Ա Թես. Գ. 5.

⁊ Գործ. ԺԵ. 1.
21. Բ Կորնթ.
ԺԱ. 26.

ունիմք 'ի Քրիստոս Յիսուս , զի զմեզ ծառայեցուսցեն ։

5 Որոց և ոչ առ ժամանակ մի անսացաք հնազանդութեամբն . զի ճշմարտութիւն աւետարանին հաստատեսցի առ ձեզ ։

6 Բայց զկարծեցեալսն եթէ իցեն ինչ , որպիսի ոք երբեմն էին , չէ ինչ ինձ փոյթ . քանզի Աստուած ակն մարդկան ոչ առնու . զի ինձ կարծեցեալքն այնպիսի ինչ ոչ զգացուցին ։

7 Այլ զնորին հակառակն՝ իբրև տեսին թէ հաւատացեալ է ինձ աւետարանն անթլփատութեան , որպէս Պետրոսի թլփատութեան .

8 Զի որ յաջողեացն Պետրոսի յառաքելութիւն թլփատութեանն , յաջողեաց և ինձ 'ի հեթանոսս ։

9 Իբրև զիտացին զշնորհսն որ տուեալ էին ինձ , Յակոբոս՝ և Կեփաս՝ և Յովհաննէս , որ կարծեալ սիւնքն էին , ձեռն ետուն հաղորդութեան ինձ և Բառնաբայ . զի մեք 'ի հեթանոսս , և նոքա 'ի թլփատութեանն ։

10 Բայց միայն զի զաղքատսն յիշեսցուք . զոր և ես փութացայ զնոյն առնել ։

11 Այլ յորժամ եկն Կեփաս յԱնտիոք , ընդդէմ դարձայ նորա .

քննելու համար՝ որ Քրիստոս Յիսուսումն ե ունինք , որ մեզ զ ծառայեցնեն ։

5 Անոնց ոչ մէկ քիչ ժամանակ էլ ականջ չը դրինք՝ հնազանդ լինելու համար . որ աւետարանի ճշմարտութիւնը ձեզմանում է հաստատուի ։

6 Բայց այն կարծվածներին համար՝ թէ մէկ բան ը լինին , ինչպէս մէկ ժամանակ էին , ես բնաւ հոգս չեմ անում . պատճառն որ՝ Աստուած մարդկանց երեսին թ չի նայում . ինչու որ այն կարծվածներն այնպէսի բան չիմացրին ժ ինձ ։

7 Բայց նրա հակառակն՝ երբոր տեսին թէ անթլփատութեան ի աւետարանն ինձ հաւատացված լ է , ինչպէս որ Պետրոսին թլփատութեան .

8 Պատճառն որ՝ նա որ Պետրոսի առաքելութիւնը յաջողեց թլփատութեանը մէջ , ինձ խ էլ յաջողեց հեթանոսներին ծ մէջ .

9 Երբոր իմացան այն շնորհքն որ ինձ տրված կ էր , Յակոբոսն ու Կեփասը և Յոհաննէսը , որ նրանք էին կարծված հ սիւները , ինձ և Բառնաբասին ձեռք տուին և հաղորդեցան . որ մենք հեթանոսներին մէջ երթանք , և նրանք թլփատվածներին ։

10 Բայց միայն որ աղքատները յիշենք . որ ես էլ ջանք արի նա ձ անելու ։

11 Իսկ երբոր Կեփաս եկաւ Անտիոք , ես հակառակ կացայ ղ նո-

ե Գղ . Գ . 25 . Ե . 1 . 13 .
զ Բ Կորնթ . ԺԱ . 20 . Գղ . Դ . 3 . 9 .
է Համար . 14 . Գղ . Գ . 1 . Դ . 16 .
ը Գղ . Զ . 3 .
թ Գործ . Ժ . 34 . Հռոմ . Բ . 11 .
ժ Բ Կորնթ . ԺԲ . 11 .
ի Գործ . ԺԳ . 46 . Հռոմ . Ա . 5 . ԺԱ . 13 . Ա Տիմ . Բ . 7 . Բ Տիմ . Ա . 11 .
լ Ա Թես . Բ . 4 .
խ Գործ . Թ . 15 . ԺԳ . 2 . ԻԲ . 21 . ԻԶ . 17 . 18 . Ա Կորնթ . ԺԵ . 10 . Գղ . Ա . 16 . Կող . Ա . 29 .
ծ Գղ . Գ . 5 .
կ Հռոմ . Ա . 5 . ԺԲ . 3 . 6 . ԺԵ . 15 . Ա Կորնթ . ԺԵ . 10 . Եփես . Գ . 8 .
հ Մատթ . ԺԶ . 18 . Եփես . Բ . 20 . Յայտ . ԻԱ . 14 .
ձ Գործ . ԺԱ . 30 . ԻԴ . 17 . Հռոմ . ԺԵ . 25 . Ա Կորնթ . ԺԶ . 1 . Բ Կորնթ . Ը և Թ .
ղ Գործ . ԺԵ . 35 .

քանզի զօդ իբրեւ ստղանեալ իմն էր։

12 Քանզի մինչչեւ եկեալ էին ոմանք առ 'ի Յակոբայ, ընդ հեթանոսս ուտէր անխտիր. իսկ իբրեւ եկին, զատանէր եւ որոշէր զանձն. երկուցեալ յայնցանէ՝ որ 'ի թլփատութենէ անտի էին։

13 Եւ կեղծաւորեցան ընդ նմա եւ այլ Հրէայքն. մինչեւ Բառնաբաս անգամ խոնարհեցաւ 'ի նոցա կեղծաւորութիւնն։

14 Այլ իբրեւ տեսի թէ ոչ ուղիղ գնան 'ի ճշմարտութիւն աւետարանին, ասեմ ցԿեփաս առաջի ամենեցուն, եթէ դու որ Հրէայդ ես՝ հեթանոսաբար եւ ոչ Հրէաբար կեաս, զիարդ ստիպես հեթանոսաց լինել Հրէաբէն։

15 Զի մեք բուն Հրէայք եմք, եւ ոչ 'ի հեթանոսաց մեղաւորք։

16 Զայս գիտեմք՝ եթէ ոչ արդարանայ մարդ 'ի գործոց օրինաց, եթէ ոչ՝ 'ի հաւատոյն Յիսուսի Քրիստոսի. եւ մեք 'ի Քրիստոս Յիսուս հաւատացաք, զի արդարասցուք 'ի հաւատոյն Քրիստոսի, եւ ոչ 'ի գործոց օրինաց. զի 'ի գործոց օրինաց ոչ արդարասցի ամենայն մարմին։

17 Իսկ եթէ մինչ խնդրեցեմք արդարանալ 'ի Քրիստոս, եւ գտանիցիմք մեղաւորք. ապա ուրեմն Քրիստոս մեղաց պաշտօնեայ եղեւ. քաւ լիցի։

18 Զի եթէ զոր քակեցին՝ զնոյն միւսանգամ շինիցեմ. ապա յանցա-

րան. պատճառն որ՝ իր մեղադրելի էր։

12 Ինչու որ՝ դեռ որ մի քանի մարդիկ չէին եկած Յակոբէից, առանց ջոկելոյ հեթանոսներին հետ [ճ] ուտում էր. բայց երբոր եկին, իրեն անձն ջոկում էր եւ բաժանվում, վախենալով նորանից՝ որ թլփատութենիցն էին։

13 Եւ նորա հետ ուրիշ Հրէաներ էլ կեղծաւորութիւն արին. մինչեւ որ Բառնաբասն էլ ծռվեցաւ դէպի նորանց կեղծաւորութիւնը։

14 Բայց երբոր տեսի որ աւետարանի ճշմարտութեան մէջ շիտակ չեն [մ] գնում, ամէնին առաջին ասացի [յ] Կեփասին. եթէ դու որ Հրէայ ես, հեթանոսի պէս ես վարվում՝ եւ ոչ թէ Հրէայի պէս, էլ ինչու համար ես բռնադատում հեթանոսներին՝ որ Հրէայի պէս [ն] վարվին։

15 Ինչու որ [շ] մենք բուն Հրէաներ ենք, եւ ոչ թէ հեթանոսներին միջից [ո] մեղաւորներ։

16 Աս գիտենք՝ որ մարդն օրէնքի գործերից չի [չ] արդարանում, բայց միայն Յիսուսի Քրիստոսի հաւատքից. եւ մենք Յիսուս Քրիստոսի հաւատացինք, որ Քրիստոսի հաւատքիցն արդարանանք, եւ ոչ թէ օրէնքի [պ] գործերից. պատճառն որ՝ օրէնքի գործերից ոչ մին մարմին չի [ջ] արդարանալ։

17 Ապա թէ որ մենք՝ երբոր ուզումենք Քրիստոսովն արդարանալ, էլ մեղաւոր [ռ] գտնուենք. ուրեմն Քրիստոս մեղքի պաշտօնեայ էլաւ. քաւ լիցի։ 10

18 Պատճառն որ՝ եթէ նա՝ որ քանդեցի, իսկ նորան կրկին շինեմ, ա-

[ճ] Գործ. Ժ. 28. ԺԱ. 3.
[մ] Հռոմ. 5.
[յ] Ա Տիմ. Ե. 20.
[ն] Գործ. Ժ. 28. ԺԱ. 3.
[շ] Գործ. ԺԵ. 10, 11.
[ո] Մատթ. Թ. 11. Եփես. Բ. 3. 12.
[չ] Գործ. ԺԳ. 38, 39.
[պ] Հռոմ. Ա. 17. Դ. 22. 28. Ը. 3. Գղ. Գ. 24. Եբր. Է. 18, 19.
[ջ] Սաղ. ՃԽԲ. 2 Հռոմ. Գ. 20. Գղ. Գ. 11.
[ռ] Ա Յովհ. Գ. 8, 9.

ւոր զանձն իմ ես յանձին՝ երեւեցուցանեմ։

19 Զի ես օրինօք օրինացն մեռայ, զի Աստուծոյ կեցից, եւ ընդ Քրիստոսի ՚ի խաչ ելից։

20 Եւ կենդանի եմ այսուհետեւ, ոչ ես՝ այլ կենդանի է յիս Քրիստոս. այլ որ այժմս կեամ մարմնով, հաւատովք Որդւոյն Աստուծոյ կեամ. որ սիրեացն զիս եւ մատնեաց զանձն վասն իմ։

21 Եւ ես ոչ անարգեմ զշնորհսն Աստուծոյ, զի եթէ յօրինաց անտի էր արդարութիւն, ապա Քրիստոս զուր մեռաւ։

պա ես ինքս իմ անձս մեղաւոր եմ երեւցնում.

19 Ինչու որ ես = օրէնքովը մեռայ Լ օրէնքին, որ ապրիմ + Աստուծոյն, եւ ես Քրիստոսի հետ ր խաչվիմ։

20 Եւ սրանից ետեւ կենդանի եմ, չէ թէ ես՝ այլ Քրիստոսը կենդանի է ինձանում. բայց ինչ որ հիմիկ կենդանի եմ մարմնով՝ Որդոյ Աստուծոյ հաւատքովն եմ ? կենդանի. որ ինձ սիրեց եւ իրեն անձն ինձ համար - մատնեց։

21 Եւ ես Աստուծոյ շնորհքը չեմ անարգում, ինչու որ՝ եթէ արդարութիւնն օրէնքիցն էր, ապա Քրիստոս զուր տեղը ÷ մեռաւ։

## ԳԼ. Գ

1 Ո՛ անմիտ Գաղատացիք, ո՞ նախանձ արար զձեզ (ոչ հնազանդել ճշմարտութեանն). որոց գրեթէ առաջի աչաց Քրիստոս Յիսուս գրեցաւ ՚ի խաչ ելեալ։

2 Զայս միայն կամիմ ուսանել ՚ի ձէնջ. ՚Ի գործոց օրինաց զհոգին ընկալարուք՝ եթէ ՚ի լրոյ հաւատոյ։

3 Այդչափ անմիտ էք. սկսեալ հոգւով՝ եւ արդ մարմնով վախճանիք։

4 Եւ այնչափ անցք անցին ընդ ձեզ զուր՝ եթէ իցէ զուր։

5 Իսկ արդ՝ որ բաշխեաց ՚ի ձեզ զհոգին՝ եւ յաջողեաց ՚ի ձեզ զզօ-

1 Ո՛վ անմիտ Գաղատացիք, ո՞վ նախանձով լցրուց = ձեզ որ ճշմարտութեանը ÷ չը հնազանդվիք. որ համարեա թէ ձեր աչքերից առաջին գրվեցաւ Յիսուս Քրիստոսը խաչ հանված։

2 Սա եմ միայն կամենում սովորիլ ձեզանից. Օրէնքի գործքերիցն ընդունեցիք ÷ Հոգին՝ թէ հաւատքի ∓ քարոզութենիցն։

3 Մինթէ այդքան անմիտ էք. հոգով ⊢ սկսեցիք, եւ հիմիկ մարմնով էք ւ վերջանում։

4 Մինթէ այնքան նեղութիւնները ձեր գլխովը զուր անցան՝ թէ որ զուր ⊢ լինի։

5 Ապա նա՝ որ Հոգին բաժանեց ձեզ՝ եւ ձեր միջումն զօրութիւն-

= Հռովմ. Ը. 2.
Լ Հռովմ. Զ. 14. Ե. 4. 6.
+ Հռովմ. Զ. 11. Բ Կորնթ. Ե. 15.
ր Հռովմ. Զ. 6. Գղ. Ե. 24. Զ. 14.
? Բ Կորնթ. Ե. 15. Ա Թես. Ե. 10. Ա Պետ. Դ. 2.
- Գղ. Ա. 4. Եփես. Ե. 2. Տիտ. Բ. 14.
÷ Գղ. Գ. 21. Եբր. Է. 11. Հռովմ. ԺԱ. 6. Գղ. Ե. 4.
= Գղ. Ե. 7.
÷ Գղ. Բ. 14. Ե. 7.
÷ Գործ. Բ. 38. Ը. 15. Ժ. 47. ԺԵ. 8. Համար. 14. Եփես. Ա. 13. Եբր. Զ. 4.
∓ Հռովմ. Ժ. 16, 17.
⊢ Գղ. Դ. 9.
ւ Եբր. Է. 16. Թ. 10.
⊢ Եբր. Ժ. 35, 36. Բ Յովհ. 8.

րութիւնս · ՚ի գործոց օրինաց է՞
եթէ ՚ի լրոյ հաւատոց ։

6 Որպէս Աբրահամ՝ հաւատաց
յԱստուած՝ եւ համարեցաւ նմա յար-
դարութիւն ։
7 Գիտիցէք արդեօք · զի որք ՚ի
հաւատոց անտի են, նոքա են որ-
դիք Աբրահամու ։
8 Յառաջագոյն գիտէր գիր, եթէ
՚ի հաւատոց անտի արդարացուցանէ
Աստուած զհեթանոսս, յառաջագոյն
խոստացաւ Աբրահամու · թէ ՚Ի քեզ
օրհնեսցին ամենայն ազգք ։

9 Այսուհետեւ որք ՚ի հաւատոց
անտի են՝ օրհնին ընդ հաւատացե-
լոյն Աբրահամու ։
10 Զի որ միանգամ ՚ի գործոց օ-
րինացն են, ընդ անիծիւք են ·
քանզի գրեալ է · թէ Անիծեալ ա-
մենայն մարդ՝ որ ոչ կացցէ յամե-
նայն գրեալսն ՚ի գիրս օրինաց՝ առ-
նել զամենայն ։
11 Զի օրինօքն ոչ ոք արդարա-
նայ առաջի Աստուծոյ, այն յայտ
նի է · զի Արդարն՝ ասէ, ՚ի հա-
ւատոց կեցցէ ։

12 Բայց օրէնքն չեն ՚ի հաւատոց,
այլ որ արասցէ զայն՝ կեցցէ ՚ի նո-
սին ։
13 Քրիստոս գնեաց զմեզ յանիծից
օրինացն, եղեալ վասն մեր անէծք ·
զի գրեալ է · թէ Անիծեալ ամենայն,
որ կախեալ կայցէ զփայտէ ։

14 Զի ՚ի հեթանոսս օրհնութիւն
Աբրահամու եկեսցէ ՚ի Քրիստոս Յի-

ներ ու յաջողեց, նա օրէնքի գործ-
քերէն է՞ թէ հաւատքի քարոզու-
թենէն ։
6 Ինչպէս որ Աբրահամին հաւա-
տաց Աստուծոյն՝ եւ նա արդա-
րութիւն համարվեցաւ իրեն ։
7 Ուրեմն գիտցէք · թէ նորանք՝
որ հաւատքէն են, նորանք են Աբ-
րահամի որդիք ։
8 Գիրքն առաջուց գիտալով թէ
Աստուած հաւատքէն կարդարացը-
նէ հեթանոսներին, առաջուց Աբ-
րահամին խոստացաւ, թէ Քեզա-
նում պիտի ամէն ազգեր ու օրհնը-
վին ։
9 Ուրեմն նորանք՝ որ այն հա-
ւատքէն են՝ օրհնըված Աբրահամի
հետ կօրհնըվին ։
10 Պատճառն որ նորանք ամէնքը՝
որ օրէնքի գործքերէն են, անէծ-
քի տակ են · ինչու որ գրված է ·
թէ Անիծեալ ըլլայ ամէն մարդ՝ որ
չը կենայ օրէնքի գրքի մէջի ամէն
գրվածներուն, որ ամէնքին անէ ։
11 Պատճառն որ՝ օրէնքովը ոչ ով
չի արդարանում Աստուծոյ առա-
ջին, նա յայտնի է · ինչու որ Ար-
դարն՝ ասաւ հաւատքէն պիտի
ապրի ։
12 Բայց օրէնքը հաւատքէն չէ,
այլ ով որ նորան կը կատարէ՝ նա
կապրի նորանով ։
13 Քրիստոս գնեց մեզ օրէնքի ա-
նէծքէնը, մեզ համար անէծք ըլ-
լալով · ինչու որ՝ գրված է · թէ
Անիծեալ ըլլայ ամէն, ով որ փայ-
տիցը կախված ըլլայ ։
14 Որ Աբրահամի օրհնութիւնը
հեթանոսներին մէջ ըլլի Յիսուս

ւ Բ Կորնթ. Դ. 8.
փ Ծննդ. ԺԵ. 6. Հռովմ. Դ. 3. 9. 21. 22 Յակ. Բ. 23.
ք Յովհ. Ը. 39. Հռովմ. Դ. 11. 12. 16.
օ Հռովմ. Թ. 17. Համար. 22.
ֆ Ծննդ. ԺԲ. 3. ԺԸ. 18.
ա Բ Օրին. ԻԷ. 26. Երեմ. ԺԱ. 3.
բ Գաղ. Բ. 16.
գ Ամբ. Բ. 4. Հռովմ. Ա. 17. Եբր. Ժ. 38.
դ Հռովմ. Դ. 4, 5. Ժ. 5, 6. ԺԱ. 6.
ե Ղեւ. ԺԸ. 5. Նեեմ. Թ. 29. Եզեկ. Ի. 11. Հռովմ. Ժ. 5.
զ Հռովմ. Ը. 3. Բ Կորնթ. Ե. 21. Գաղ. Դ. 5.
է Բ Օրին. ԻԱ. 23.

տոսւ, զի մեք զաւետիս Հոգւոյն Սրբոյ առցուք հաւատովք։

15 Ըստ մարդկութեան ասեմ եղբարք. այսպէս զմարդկան հաստատեալ կտակ ոչ ոք կարէ անարգել. եւ ոչ այլ հրաման 'ի վերայ այնր տալ։

16 Իսկ Աբրահամու խոստացան աւետիքն, եւ զաւակի նորա. եւ ոչ ասէ՝ Զաւակաց իբրեւ զբազմաց, այլ իբրեւ զմիոյ, թէ՝ Եւ զաւակի քում, որ է Քրիստոս։

17 Բայց զայս ասեմ, Զկտակն յառաջագոյն հաստատեալ յԱստուծոյ 'ի Քրիստոս. օրէնքն որ յետ չորեքհարիւր եւ երեսուն ամի եղան, ոչ կարեն խափանել առ 'ի խափանելոյ զաւետիսն։

18 Եթէ յօրինաց անտի է ժառանգութիւնն, ապա ոչ եւս յաւետեացն. բայց Աբրահամու աւետեօք շնորհեաց Աստուած։

19 Իսկ զինչ իցեն օրէնքն. յանցուածոց վասն յաւելան. մինչեւ եկեսցէ զաւակն, որում խոստացեալն էր՝ կարգեալ հրեշտակօք 'ի ձեռն միջնորդի։

20 Իսկ միջնորդ միոյ ուրուք ոչ է՝ բայց Աստուած մի է։

21 Իսկ արդ օրէնքն հակառակ ինչ իցեն աւետեացն Աստուծոյ. քաւ լիցի. զի եթէ տուեալ էին

Քրիստոսով, որ մենք Սուրբ Հոգւոյ աւետիքըն ընդունինք ՚ հաւատքով։

15 Մարդկանց սովորութեան պէս եմ ասում եղբարք. չխափան՝ որ մին մարդոյ հաստատած կտակը ոչ մինը չի կարող անարգել. եւ ոչ էլ նորա վերայ ուրիշ հրաման ՚ աւելացնել։

16 Ապա Աբրահամին խոստացվեցան այն աւետիքները. եւ նորա զաւակին. եւ չի ասում՝ Զաւակներին՝ ինչպէս շատերին, բայց ինչպէս մինին, թէ՝ Եւ քո ՚ զաւակին, որ է ՚ Քրիստոսը։

17 Բայց սա եմ ասում. Այն կտակին, որ առաջուց Աստուծանից հաստատված էր Քրիստոսի վերայ. օրէնքն որ չորս հարիւր եւ երեսուն տարուցն ետեւ ՚ գրվեց, չի կարող քանդել՝ այնպէս որ աւետիքը ՚ խափանվի։

18 Եթէ ժառանգութիւնն օրէնքից ՚ լինէր, ապա աւետիքից ՚ չէր. բայց Աստուած՝ Աբրահամին շնորհեց աւետիքով։

19 Ապա օրէնքն ինչ է. ՚ յանցանքների պատճառին ՚ աւելացաւ. մինչեւ որ գայ ՚ զաւակը, որ խոստմունքը նորա համար ՚ էլան. ՚ հրեշտակներով ՚ կարգվեցաւ միջնորդին ՚ ձեռովը։

20 Բայց միջնորդ մէկին չէ՝ այլ Աստուած մին ՚ է։

21 Ապա ուրեմն օրէնքն Աստուծոյ աւետիքներին հակառակ է. քաւ լիցի. պատճառն որ՝ եթէ օրէնք

ժ Հռովմ. Գ. 9 16։
շ Եսայ. ԼԲ. 15։ ԽԳ. 3։ Երեմ. ԼԱ. 33։ ԼԲ. 40։ Եզեկ. ԺԱ. 19։ ԼԶ. 27։ Յովէլ. Բ. 28, 29։ Զաք. ԺԲ. 10։ Յովհ. Է. 39։ Գործ. Բ. 33։
ն Եբր. Թ. 17։
շ Ծննդ. ԺԲ. 3. 7։ ԺԷ. 7։ Հռոմ. 8։
ո Ա Կորնթ. ԺԲ. 12։
չ Եւկ ԺԲ. 40. 41։
պ Հռովմ. Դ. 13. 14։ Հռոմ. 21։
ջ Հռովմ. Ը. 17։
ռ Հռովմ. Դ. 14։
ս Յովհ. ԺԵ. 22։ Հռովմ. Դ. 15. Ե. 20. Է. 8. 13։ Ա Տիմ. Ա. 9
վ Հռոմ. 16։
տ Գործ. Է. 53։ Եբր. Բ. 2։
ր Եփես. 1. 19. 21։ 22։ Բ Օրին. Ե. 5. 22, 23. 27. 31։ Յովհ. Ա. 17։ Գործ. Է. 38։ Ա Տիմ. Բ. 5։
ց Հռովմ. Գ. 29. 30։

օրէնքն՝ որ կարող էին կենդանի առնել, ապա հաստատ յօրինաց անտի էր արդարութիւն։
22 Այլ փակեցին գիրք զամենեսին ընդ մեղօք, զի աւետիքն ՚ի հաւատոց անտի Յիսուսի Քրիստոսի տացին հաւատացելոց։
23 Մինչչեւ հաւատքն եկեալ էին՝ ընդ օրինօքն փակեալ պահէաք ՚ի համադրեալ հաւատսն, որ յայտնելոց էին ՚ի մեզ։
24 Ապա օրէնքն դաստիարակ եղեն մեզ ՚ի Քրիստոս Յիսուս, զի ՚ի հաւատոցն արդարասցուք։
25 Այլ իբրեւ եկին հաւատքն, ոչ եւս ընդ դաստիարակաւ եմք։
26 Քանզի ամենեքին որդիք Աստուծոյ էք հաւատովք ՚ի Յիսուս Քրիստոս։
27 Որք միանգամ ՚ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս զգեցեալ էք. չիք խտիր,
28 Ո՛չ Հրէի՝ եւ ոչ Հեթանոսի, ոչ ծառայի՝ եւ ոչ ազատի, ոչ արուի, եւ ոչ իգի. զի ամենեքեան դուք մի էք ՚ի Քրիստոս Յիսուս։
29 Ապա եթէ դուք Քրիստոսի էք, ուրեմն Աբրահամու զաւակ էք՝ ըստ աւետեացն ժառանգք։

տրուած ըլլար՝ որ կարող էր կենդանի ընել, ապա հաստատ այն օրէնքէն էր = արդարութիւնը։
22 Բայց ‡ գիրքը ամէնքն մեղքի ներքեւ + փակեց, որ աւետիքը Յիսուսի Քրիստոսի հաւատքէն տրուի ∘ հաւատացեալներուն։
23 Դեռ որ հաւատքը չէր եկեր՝ օրէնքի ներքեւը փակուած պահուածէինք՝ դէպի այն նոր գալու հաւատքը, որ մեզանում պէտք էր յայտնուելի։
24 Ուրեմն օրէնքը մեզ համար տղայի վարժապետ էղաւ՝ դէպի Յիսուս ‡ Քրիստոս, որ հաւատքէն = արդարանանք։
25 Բայց երբոր հաւատքը եկաւ, էլ այն վարժապետի հրամանին տակ չենք։
26 Ինչու որ ամէնքդ Աստուծոյ որդիք էք՝ Յիսուսի Քրիստոսի ‡ հաւատքովը։
27 Դուք ամէնքդ՝ որ Քրիստոսումը ‡ մկրտուեցաք, Քրիստոսին հագած ÷ էք. Ջոկութիւն ⊢ չըկայ։
28 Ո՛չ Հրէայի՝ եւ ոչ Հեթանոսի, ոչ ծառայի՝ եւ ոչ ազատի, ոչ արձի՝ եւ ոչ էգի. պատճառն որ՝ դուք ամէնքդ մին էք Քրիստոս ւ Յիսուսումը։
29 Ապա թէ որ դուք Քրիստոսին էք, ուրեմն Աբրահամի զաւակներն ⊢ էք՝ աւետիքին պէս ⊏ ժառանգներ։

## ԳԼ. Դ

1 Զայս ասեմ. ցորքան ժամանակս ժառանգն տղայ է՝ չէ ինչ

1 Աս եմ ասում. թէ դեռ քանի ժամանակ որ ժառանգը տղայ է՝

| | | | |
|---|---|---|---|
| − Գղ. Բ. 21։ | Թ. 9, 10։ | ÷ Հռովմ. ԺԳ. 14։ | 15, 16։ |
| ‡ Համար. 8։ | − Գործ. ԺԳ. 39։ | ⊢ Հռովմ. Ժ. 12։ | ⊢ Ծննդ. ԻԱ. 10. |
| + Հռովմ. Գ. 9. | Գղ. Բ. 16։ | Ա Կորնթ. ԺԲ. | 12։ Հռովմ. Թ. |
| 19. 23։ ԺԱ. 32։ | ‡ Եփես. Ա. 12 | 13։ Գղ. Ե. 6։ | 7։ Եբր. ԺԱ. |
| ∘ Հռովմ. Դ. 11, | Հռովմ. Ը. 14, | Կող. Գ. 11։ | 18։ |
| 12. 16։ | 15, 16։ Գղ. Դ. | ւ Եփես. Ժ. 16։ | ⊏ Հռովմ. Ը. 17։ |
| ‡ Մատթ. Ե. 17։ | 5։ Ա Եփես. Գ | Ժե. 20, 21։ | Գղ. Դ. 7. 28։ |
| Հռովմ. Ժ. 4։ | 1, 2։ | Եփես. Բ. 14։ | Եփես. Գ. 6։ |
| Կող. Բ. 17։ Եբր. | ‡ Հռովմ. Զ. 3։ | 15, 16։ Գ. 4. | — |

տուեալ քան զծառայն. թէպէտ և տէր իցէ ամենեցուն։

2 Այլ ընդ հազարապետօք է և ընդ գաւառապետօք՝ մինչև ՚ի ժամանակակէտ հօրն։

3 Նոյնպէս և մեք՝ մինչ տղայքն էաք՝ ընդ տարերբք աշխարհիս ՚ի ծառայութեան կայաք։

4 Այլ իբրև եկն լրումն ժամանակին, առաքեաց Աստուած զՈրդին իւր՝ որ եղև ՚ի կնոջէ, և եմուտ ընդ օրինօք։

5 Զի զնոսա՝ որ ընդ օրինօքն իցեն, գնեսցէ, զի մեք զորդեգրութիւն ընկալցուք։

6 Եւ զի էք դուք որդիք, առաքեաց Աստուած զՀոգի Որդւոյն իւրոյ ՚ի սիրտս մեր՝ որ աղաղակէ Աբբա՝ Հայր։

7 Այսուհետև չես ծառայ, այլ որդի. եթէ որդի՝ և ժառանգ Աստուծոյ։

8 Այլ յայնժամ մինչ ոչն գիտէիք զԱստուած՝ ծառայէիք այնոցիկ՝ որ ոչն էին ՚ի բնէ Աստուածք։

9 Այլ այժմիկ ծանեայք զԱստուած, մանաւանդ թէ ծանուցայք իսկ յԱստուծոյ, զիարդ դառնայք միւսանգամ անդրէն ՚ի տարերսն՝ ՚ի տկարս և յաղքատս, որոց միւսանգամ զանձինս ծառայեցուցանել կամիք։

նա բնաւ աւելի չէ քան թէ ծառան. թէ և ամէն բանի տէր է,

2 Բայց վերակացուներին և տնտեսներին ներքևն է՝ մինչև հօր դրած հաստատած ժամանակը։

3 Այնպէս էլ մենք՝ դեռ քանի որ տղայ էինք՝ աշխարհքի սկզբունքներին ներքևը ծառայութեան մէջ ա էինք։

4 Բայց երբոր ժամանակի լրմունքն եկաւ, Աստուած ուղարկեց իւրեն բ Որդին՝ որ գ կնկանից դ ելաւ, և օրէնքի ներքևը ե մտաւ.

5 Որ գնէ զ նրանց՝ որ օրէնքի տակին է են, որ մենք որդեգրութիւնն ընդունինք։

6 Եւ դուք որովհետև որդիք էք՝ Աստուած իւրեն Որդւոյ Հոգին ուղարկեց մեր սրտերին մէջն՝ որ աղաղակումէ Աբբա ը Հայր։

7 Ուրեմն չես ծառայ՝ բայց որդի. և թէ որ որդի՝ էլ Աստուծոյ թ ժառանգ։

8 Բայց այն ժամանակին՝ որ Աստուծոյն չէիք ժ գիտում, նրանց էիք ծառայում՝ որ յառաջ Աստուածներ ի չէին։

9 Իսկ հիմիկ որ ճանաչեցիք Աստուծոյն, մանաւանդ թէ Աստուածմից էլ լ ճանաչվեցաք, էլ ինչպէս կրկին յետ էք խ դառնում դէպի այն տկար և աղքատ ծ սկզբունքներին, որ կամենումէք կրկին ճեր անձներդ նրանց ծառայութեանը մէջ ձգել։

ա Համար. 9. Գղ. Ե. 1. Կող. Բ. 8. 20. Եբր. Թ. 10.
բ Ծննդ. ԽԹ. 10. Դան. Թ. 24. Մարկ. Ա. 15. Եփես. Ա. 10.
գ Ծննդ. Գ. 15. Եսայ. Է. 14. Միք. Ե. 2. Մատթ. Ա. 23. Ղուկ. Ա. 31. Բ. 7.
դ Յովհ. Ա. 14. Հռովմ. Ա. 3. Փիլիպ. Բ. 7. Եբր. Բ. 14.
ե Մատթ. Ե. 17. Ղուկ. Բ. 27.
զ Յովհ. Ա. 12. Գ. 26. Եփես. Ա. 5.
է Մատթ. Ի. 28. Գղ. Գ. 13. Տիտ. Բ. 14. Եբր. Թ. 12. Եփես. Ա. 7. Ա Պետ. Ա. 18, 19.
ը Հռովմ. Ե. 5. Ը. 15.
թ Հռովմ. Ը. 16, 17.
ժ Եփես. Բ. 12. Ա Թես. Դ. 5.
ի Հռովմ. Ա. 25. Ա Կորնթ. ԺԲ. 2. Եփես. Բ. 11, 12. Ա Թես. Ա. 9.
լ Ա Կորնթ. Ը. 3. ԺԳ. 12. Բ Տիմ. Բ. 19.
խ Գղ. Գ. 3. Կող. Բ. 20.
ծ Հռովմ. Ը. 3. Եբր. Է. 18. Համար. 3.

10 Զաւուրս խարէք՝ եւ զամիսս՝
եւ զժամանակս՝ եւ զտարիս ։

11 Երկնչիմ 'ի ձէնջ, գուցէ թէ
'ի զուր ինչ վաստակեցի 'ի ձեզ ։

12 Եղերուք իբրեւ զիս, քանզի
եւ ես իբրեւ զձեզ էի ․ Եղբարք՝
աղաչեմ զձեզ, չիք ինչ ձեր մե-
ղուցեալ առ իս ։
13 Գիտէք դուք՝ զի ախտութ-
եամբ մարմնոյ աւետարանեցի ձեզ
զառաջինն ․ եւ զփորձանսն՝ որ 'ի
մարմնի իմում էին,
14 Ո՛չ անարգեցէք՝ եւ ոչ անգոս-
նեցէք ․ այլ իբրեւ զհրեշտակ Աս-
տուծոյ ընկալայք զիս՝ իբրեւ զՔր-
իստոս Յիսուս ։
15 Իսկ արդ ո՞ւր է երանութիւ-
նըն ձեր ․ վկայեմ ձեզ, եթէ հը-
նար ինչ էր՝ զաչս ձեր հանէիք եւ
տայիք ինձ ։
16 Արդ՝ զի թշնամի իմն եղէ ձեզ,
զի զստոյգն խօսեցայ ։

17 Այլ նախանձեցուցանեն զձեզ
ոչ 'ի բարի ․ եւ արգելուլ կամին
զձեզ՝ զի նոցա նախանձաւորք լի-
նիցիք ։

18 Բայց լաւ է նախանձաւոր լի-
նել 'ի բարիս յամենայն ժամ, եւ
ոչ միայն յորժամ 'ի ձերում միջի
իցեմ ։
19 Որդեակք իմ, զորս դարձեալ
վերստին երկնեմ, մինչեւ նկարես-
ցի Քրիստոս 'ի ձեզ ։
20 Կամէի այժմ գալ առ ձեզ՝ եւ
փոխել զբարբառ իմ ․ զի տարա-
կուսեալ եմ ես վասն ձեր ։

10 Ջոկութիւն էք տալու օրերի
մէջ՝ եւ ամիսների՝ եւ ժամանակնե-
րի՝ եւ տարիների ‡ մէջ ։
11 Վախնումեմ ձեզանից՝ որ չը-
լնի թէ զուր տեղն աշխատեցի
ձեր § միջումը ։
12 Ինձ նման եղէք, ինչու որ ես
էլ ձեզ նման էի ․ Եղբարք՝ աղա-
չումեմ ձեզ, դուք ինձ զէմ մեն
մեղք չէք ¶ արել ։
13 Դուք գիտումէք՝ որ մարմնոյ
‖ տկարութենով առաջին անգամն
աւետարանեցի ǁ ձեզ ․ եւ այն փոր-
ձանքներըն՝ որ իմ մարմնումս էին,
14 Զանարգեցիք՝ եւ երեսից չը-
ձգեցիք ․ բայց ինչպէս Աստուծոյ
հրեշտակ ընդունեցիք † ինձ՝ ինչ-
պէս Յիսուս ☞ Քրիստոսին ։
15 Ապա որտեղ է այն ձեր երա-
նութիւնը ․ վկայումեմ ձեզ համար,
որ եթէ կարելի էր՝ ձեր աչքերը
կը հանէիք եւ ինձ կը տայիք ։
16 Ուրեմն՝ միթէ թշնամի՞ եղայ
ձեզ, նորահամար որ ճշմարիտը
⁂ տուայի ։
17 Բայց նոքա ձեզ նախանձով են
չարժում՝ չէ թէ բարի բանի հա-
մար ․ եւ կամենումեն արգելել ձեզ՝
որ նորանց համար նախանձաւոր
※ լինիք ։
18 Բայց լաւ է բարի բաների հա-
մար ամէն ժամանակ նախանձաւոր
լինիլը, եւ չէ թէ միայն երբոր
ձեր միջումը լինիմ ։
19 Իմ որդեակներս, որ ձեզ նո-
րէն ցաւով ծնումեմ, մինչեւ որ
Քրիստոս կերպարանուի * ձեզանում ։
20 Կամենումէի որ հիմիկ ձեզ մօտ
գամ՝ եւ իմ ձայնս փոխեմ ․ ինչու
որ՝ տարակուսանքի մէջ եմ ձեզ
համար ։

‡ Հռովմ. ԺԴ. 5. Կող. Բ. 16.
§ Գղ. Բ. 2. Ե 2. 4. Ա Թես. Գ. 5.
¶ Բ Կորնթ. Բ. 5.
‖ Ա Կորնթ. Բ. 3. Բ Կորնթ. ԺԱ. 30. ԺԲ. 7. 9.
ǁ Գղ. Ա. 6.
† Բ Թագ. ԺԹ. 27. Մաղ. Բ. 7. Զաք. ԺԲ. 8.
☞ Մատթ. Ժ. 40. Ղուկ. Ժ. 16. Յովհ. ԺԳ. 20. Ա Թես. Բ. 13.
⁂ Գղ. Բ. 5. 14.
※ Հռովմ. Ժ. 2. Բ Կորնթ. ԺԱ. 2.
* Ա Կորնթ. Դ. 15. Փիլիմ. 10. Յակ. Ա. 18.

21 Ասէք ինչ ինձ՝ որ ընդ օրինօքըն կամիք լինել, չիցէ՞ ընթերցեալ ձեր զօրէնս ։

22 Զի գրեալ է՝ թէ Աբրահամու երկու որդիք էին, մի յաղախնոյ անտի, եւ մի յազատէն ։

23 Այլ որ յաղախնոյն [էր՝] ըստ մարմնոյ ծնեալ էր, եւ որ յազատէն՝ ըստ աւետեաց ։

24 Որ է առակ օրինակի. զի այս ինքն են երկու Կտակարանք, մի ՚ի լեռնէ Սինայ ՚ի ծառայութիւն ծնեալ՝ որ է Հագար ։

25 Քանզի Հագարն՝ լեառն Սինայ է յԱրաբիա, համաստր է այժմ Երուսաղէմի. զի ծառայէ որդւովք իւրովք հանդերձ ։

26 Այլ վերինն Երուսաղէմ ազատ է, որ է մայր մեր ամենեցուն ։

27 Զի գրեալ է. Ուրախ լեր ամուլ՝ որ ոչ ծնանէիր, գոչեա եւ աղաղակեա՛ որ ոչդ երկնէիր. զի բազում են որդիք միայնակին առաւել քան զարամբւոյն ։

28 Այլ մեք եղբարք՝ ըստ Իսահակայ աւետեացն որդիք եմք ։

29 Այլ որպէս յայնժամ, որ ըստ մարմնոյն ծնեալ էր՝ հալածէր զայն որ ըստ հոգւոյն, նոյնպէս եւ այժմ ։

30 Այլ զինչ ասէ գիր. ՚Ի բաց հան զաղախինն եւ զորդի դորա. զի մի ժառանգեսցէ որդի աղախնոյն ընդ որդւոյն ազատի ։

31 Վասն որոյ եղբարք՝ չեմք որ-

21 Ասացէ՛ք ինձ դուք՝ որ կամենումէք օրէնքին ներքեւը լինիլ, մի՞թէ դուք օրէնքը չէ՞ք կարդացել.

22 Որ գրուած է՝ թէ Աբրահամը երկու որդիք ունէր, մէկն ւ աղախնիցն, եւ միւսն ղ ազատիցը ։

23 Բայց նա՝ որ աղախնիցն էր՝ մարմնոյ կողմանէն էր ճ ծնած, եւ նա՝ որ ազատիցը աւետիքին մ պէս,

24 Որ սա օրինակի տակ է. ինչու որ՝ խօ այս երկու Կտակարաններն են, մինը Սինայ սարիցը ծառայութեան մէջ ծնած՝ որ Հագարն յ էր.

25 Պատճառն որ՝ Հագարը Սինա սարն է՝ Արաբիայումը, եւ համասար է այս Երուսաղէմիս. որ իւրեն որդիքներովը ծառայ է ։

26 Բայց վերին Երուսաղէմն [ազատ է, որ մեր ամէնի մայրն ն է ։

27 Պատճառն որ գրուած է թէ, Ուրախ կաց ով ամուլդ՝ որ չէիր ծընում, կանչէ եւ աղաղակիր դու՝ որ երախայ բերելոյ ցաւ չէիր քաշում. ինչու որ դու արձակուածդ աւելի որդիք ունիս՝ քան թէ մարդ շ ունեցողն ։

28 Բայց մենք եղբարք՝ Իսահակին պէս աւետիքի որդիքն ո ենք ։

29 Միայն ինչպէս որ այն ժամանակումը նա՝ որ մարմնոյ կողմանէ ծընուած էր, հալածումէր նորան՝ որ հոգւոյ կողմանէն չ էր, այնպէս էլ պ հիմիկ ։

30 Բայց գիրքն ինչ է ջ ասում. Դուրս հանէ աղախինը եւ նորա ռ որդին. որ աղախնի որդին ժառանգութիւն չըստանայ ազատի որդւոյն ս հետ ։

31 Սրա համար եղբարք՝ մենք ա-

ւ Ծննդ. ԺԶ. 15.
ղ Ծննդ. ԻԱ. 2.
ճ Հռովմ. Թ. 7, 8.
մ Ծննդ. ԺԸ. 10. 14. ԻԱ. 1, 2. Եբր. ԺԱ. 11.
յ Բ Օրին. ԼԳ. 2.
ն Եսայ. Բ. 2. Եբր. ԺԲ. 22. Յայտ. Գ. 12. ԻԱ. 2. 10.
շ Եսայ. ԾԴ. 1.
ո Գործ. Գ. 25. Հռովմ. Թ. 8. Գղ. Գ. 29.
չ Ծննդ. ԻԱ. 9.
պ Գղ. Ե. 11. Զ. 12.
ջ Գղ. Գ. 8. 22.
ռ Ծննդ. ԻԱ. 10. 12.
ս Յովհ. Ը. 35.

դիք աղախնոյն , այլ ազատին · ազատութեամբն , որով Քրիստոս զմեզ ազատեաց ։

## ԳՂ. Ե

1 Պնդ կացէք այսուհետեւ , եւ մի միւսանգամ ընդ լծով ծառայութեան մտանէք ։

2 Ահաւասիկ ես Պօղոս ասեմ ձեզ · զի եթէ թլփատիք , Քրիստոս ինչ ձեզ ոչ օգնէ ։

3 Վկայեմ ամենայն մարդոյ՝ որ թլփատիցի , թէ պարտական է զամենայն օրէնսն կատարել ։

4 Խափանեալ էք 'ի Քրիստոսէ՝ որ օրինօքն արդարանայք · եւ անկեալ էք 'ի շնորհաց անտի ։

5 Զի մեք Հոգւովն՝ 'ի հաւատոյ յուսոյն արդարութեան ակն ունիմք ։

6 Զի 'ի Քրիստոս Յիսուս՝ ոչ թլփատութիւն ինչ կարող է՝ եւ ոչ անթլփատութիւն · այլ հաւատք սիրով յաջողեալք ։

7 Բարւոք ընթանայիք · ո կասեցոյց զձեզ ճշմարտութեանն չհաւանել ։

8 Զի այն հրապոյրք՝ ոչ յայնմանէ են՝ որ կոչեացն զձեզ ։

9 Փոքր մի խմոր զամենայն զանգուածն խմորէ ։

10 Այլ ես յուսացեալ եմ 'ի ձեզ Տէրամբ՝ թէ ոչ այլազգ ինչ խորհիցիք · եւ որ խռովեցուցանէ զձեզ՝ կրեսցէ զդատաստան՝ ո ոք եւ իցէ ։

11 Այլ ես եղբարք՝ եթէ թլփատութիւն քարոզէի՝ ընդէ՞ր տանջա-

ղախնի որդիք չենք , բայց ‡ ազատին · այն ազատութենովը՝ որ Քրիստոս նորանով մեզ ազատ – արաւ ։

1 Ուրեմն հաստատ կացէք՝ եւ նորէն ծառայութեան լծի ներքեւը մի – մտնէք ։

2 Ահա ես Պօղոս ասումեմ ձեզ · որ եթէ թլփատվիք , Քրիստոսն ձեզ բնաւ օգնութիւն չի բ անիլ ։

3 Վկայումեմ ամէն մարդոյ համար՝ որ թլփատվիլումէ , թէ նա պարտական է ամէն օրէնքը գ կատարել ։

4 Քրիստոսիցն հեռացած էք՝ որ օրէնքովը էք կամենում դ արդարանալ · եւ շնորհքիցը վէրընկած ե էք ։

5 Ինչու որ՝ մենք Հոգովը հաւատքիցն ենք սպասում արդարութեան զ յուսոյն ։

6 Պատճառն որ Քրիստոս Յիսուսումն՝ ոչ թլփատութիւնը մին բան կարող է՝ եւ ոչ է անթլփատութիւնը · բայց հաւատք որ սիրով յաջողված ըէ ։

7 Լաւ էիք թ վազում , ձեզ ով յետ կանգնացրուց՝ որ չը հաւանիք ժ ճշմարտութեանը ։

8 Ինչու որ այն հաւանացնելը՝ նորանից չէ՝ որ կանչեց ի ձեզ ։

9 Մինքիչ խմոր բոլոր շաղաղվածը լ խմորայնումէ ։

10 Բայց ես ձեզ վերայ յոյս ունիմ Տէրովը՝ որ ուրիշ բան խ չը մըտածէք · եւ նա որ խռովայնումէ ծ ձեզ՝ դատաստան կը քաշէ՝ ով որ կ լինի ։

11 Այլ ես եղբարք՝ թէ որ թըլփատութիւն հ քարոզեմ՝ էլ ինչու

‡ Յովհ . Ը . 36 . Գղ . Ե . 1 . 13 .
– Յովհ . Ը . 32 . Հռովմ . Զ . 18 . Ա Պետ . Բ . 16 .

—

– Գործ . ԺԵ . 10 . Գղ . Բ . 4 . Դ . 9 .
բ Գործ . ԺԵ . 1 . Գործ . ԺԶ . 3 .
գ Գղ . Գ . 10 .
դ Հռովմ . Թ . 31 . 32 . Գղ . Բ . 21 .
ե Եբր . ԺԲ . 15 .
զ Հռովմ . Ը . 24 . 25 . Բ Տիմ . Դ . 8 .
է Ա Կորնթ . Է . 19 . Գղ . Գ . 28 . Զ . 15 . Կող . Գ . 11 .
ը Ա Թես . Ա . 3 . Յակ . Բ . 18 . 20 . 22 .
թ Ա Կորնթ . Թ . 24 .
ժ Գղ . Գ . 1 .
ի Գղ . Ա . 6 .
լ Ա Կորնթ . Ե . 6 . ԺԵ . 33 .
խ Բ Կորնթ . Բ . 3 . Ը . 22 .
ծ Գղ . Ա . 7 .
կ Բ Կորնթ . Ժ . 6 .
հ Գղ . Զ . 12 .

ւին հալածիմ. ապա ուրեմն խափանեալ իցէ գայթագղութիւն խաչին:
12 Երանի թէ մոտակտուր իսկ լինէին՝ որ զձեզն խռովեցուցանեն:
13 Զի դուք յազատութիւն կոչեցեալ էք՝ եղբարք. միայն զի ազատութիւն ձեր ոչ լինիցի 'ի պատճառս մարմնոյ. այլ սիրով ծառայեցէք միմեանց:
14 Զի ամենայն օրէնք 'ի մի բան կատարին. 'Ի սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո:

15 Ապա եթէ զմիմեանս խածատիցէք՝ եւ ուտիցէք. զգոյշ լերուք զուցէ 'ի միմեանց սատակիցիք:
16 Բայց զայս ասեմ. Հոգւով գնացէք, եւ զցանկութիւն մարմնոյ մի կատարէք:
17 Զի մարմին ցանկայ հակառակ հոգւոյ, եւ հոգի հակառակ մարմնոյ. եւ զի սոքա միմեանց հակառակ են. մի զոր կամիցիքն՝ զայն առնիցէք:

18 Իսկ եթէ Հոգւով վարիք, ապա չէք ընդ օրինօք:
19 Զի յայտնի են գործք մարմնոյ, այսինքն են՝ շնութիւն, պոռնկութիւն, պղծութիւն, գիջութիւն,
20 կռապաշտութիւն, կախարդութիւն, թշնամութիւն, հեռ, նախանձ, բարկութիւն, հակառակութիւնք, երկպառակութիւնք, հերձուածք,

համար եմ դեռ ձ հալածվում. ապա ուրեմն խաչի գայթակղութիւնը խափանված ղ լինէր:
12 Երանի թէ կտրվէին ճ նորանք՝ որ խռովացնումեն մ ձեզ:
13 Ինչու որ՝ դուք ազատութեան մէջ էք կանչվել եղբարք. միայն թէ ձեր ազատութիւնը պատճառ չը տայ յ մարմնոյն. բայց սիրով ծառայեցէք ն իրար:
14 Պատճառն որ՝ ամէն օրէնքն այն մին խօսքումն է շ կատարվում. Եւ Քո ընկերդ քո անձիդ պէս ո սիրէ:
15 Բայց թէ որ իրար կծէք՝ եւ ուտէք, զգոյշ կացէք՝ որ չը լինի թէ իրարից սատակվիք:
16 Բայց ես եմ ասում. Հոգով գնացէք, եւ մարմնոյ ցանկութիւնը մի չ կատարէք:
17 Պատճառն որ՝ մարմինը ցանկանումէ հոգուն հակառակ, եւ հոգին մարմնոյն պ հակառակ. եւ սորանք իրար հակառակ են, չը լինի թէ նա որ դուք կամենաք՝ ջ նա անէք:
18 Բայց թէ որ հոգով վարվիք՝ ապա օրէնքի ներքեւ ռ չէք:
19 Պատճառն որ՝ յայտնի են մարմնոյ գործքերը, որ սորանք ս են՝ շնութիւն, պոռնկութիւն, պըղծութիւն, գիջութիւն,
20 Կռապաշտութիւն, կախարդութիւն, թշնամութիւն, կռիւ, նախանձ, բարկութիւն, հակառակութիւններ, երկպառակութիւններ, բաժանմունքներ,

ձ Ա Կորնթ. ԺԵ. 30. Գղ. Գ. 29. Զ. 17.
ղ Ա Կորնթ. Ա. 23.
ճ Յես. Ի. 25. Ա Կորնթ. Ե. 13. Գղ. Ա. 9.
մ Գործ. ԺԵ. 1, 2. 24.
յ Ա Կորնթ. Ը. 9. Ա Պետ. Բ. 16. Բ Պետ. Բ. 19. Յուդ. 4.
ն Ա Կորնթ. Թ. 19. Գղ. Զ. 2.
շ Մատթ. Է. 12. ԻԲ. 40. Յակ. Բ. 8.
ո Ղև. ԺԹ. 18. Մատթ. ԻԲ. 39. Հռովմ. ԺԳ. 8, 9.
չ Հռովմ. Զ. 12. Ը. 1. 4. 12. ԺԴ. 14. Համար 25. Ա Պետ. Բ 11.
պ Հռովմ. Է. 23. Ը. 6. 7.
ջ Հռովմ. Է. 15 19.
ռ Հռովմ. Զ. 14. Ը. 2.
ս Ա Կորնթ. Գ. 3. Եփես. Ե. 3. Կող. Գ. 5. Յակ. Գ. 14, 15.

21 Չարակնութիւնք, սպանութիւնք, արբեցութիւնք, անառակութիւնք, եւ որ ինչ այդմին նմանն են. զոր յառաջագոյն խօսիմ ձեզ, որպէս կանխաւն ասէի, թէ որ զայնպիսի ինչ գործեն՝ զարքայութիւն Աստուծոյ ոչ ժառանգեն։

22 Նոյն պտուղ Հոգւոյն այս է. սէր, խնդութիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն,

23 Քաղցրութիւն, բարութիւն, հաւատք, հեզութիւն, ժուժկալութիւն. զայսպիսեաց աստի օրէնքն չեն հակառակ։

24 Նոյ որ Քրիստոսականքն են ըզմարմինս իւրեանց 'ի խաչ հանին կարեօքն եւ ցանկութեամբքն հանդերձ։

25 Եթէ կեամք Հոգւով՝ ընդ Հոգւոյն՝ եւ միաբանեսցուք։

26 Եւ մի լիցուք մնապարծք՝ միմեանց ձայն տալոյ, եւ ընդ միմեանս նախանձելոյ։

21 Չար աչքով նայիլը, սպանութիւններ, հարբեցութիւններ, անառակութիւններ, եւ ինչ որ ասոնց նման են. աս որ առաջուց ասում եմ ձեզ, ինչպէս որ էլ սկըզբն ասում էի, թէ նոքա որ այսպիսի բան են գործում՝ Աստուծոյ արքայութիւնը չեն ժառանգիլ։

22 Բայց Հոգոյ պտուղը աս + է. սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն,

23 ։ Քաղցրութիւն, ։ բարութիւն, – հաւատք, հեզութիւն, ժուժկալութիւն. այսպէսներին օրէնքը հակառակ ÷ չէ։

24 Սակայն նորանք՝ որ Քրիստոսինն են, իրենց մարմինները խաչ հանեցին ախտերին եւ ցանկութիւններին + հետ։

25 Թէ որ Հոգով ենք ապրում, էլ Հոգոյն հետ միաբան • լինինք,

26 Եւ ունայն պարծանքին չը հետեւինք՝ իրար գրգռելով, եւ իրար վերայ ÷ նախանձելով։

## ԳԼ. Զ

1 Եղբարք՝ եթէ յանկարծ ըմբռնեսցի ոք 'ի ձէնջ յինչ եւ իցէ յանցանս, դուք որ հոգեւորքդ էք՝ հաստատեսջիք զայնպիսին հոգւով հեզութեան. զգոյշ լինիջիք անձանց՝ զի մի եւ դուք փորձիցիք։

2 Զմիմեանց բեռն բարձէք, եւ այնպէս կատարեցէք զօրէնսն Քրիստոսի։

3 Եթէ համարիցի ոք լինել

1 Եղբարք՝ թէ որ ձեզանից մինը յանկարծ բռնուի ինչ սխալմունքով որ = լինի, դուք որ հոգեւոր ը էք՝ այնպէսներին հաստատեցէք հեզութեան ÷ հոգով. զգոյշ կացէք ձեր անձներից՝ որ դուք էլ ÷ չը փորձվիք։

2 Իրար բեռը ի միր առէք, եւ այսպէս Քրիստոսի օրէնքը ղ կատարեցէք։

3 Թէ որ մինը համարի թէ մին

Հ Ա կորնթ. Զ. 9։ Եփես. Ե. 5։ Կող. Գ. 6։ Յայտ. ԻԲ. 15։
Փ Յովհ. ԺԵ 2։ Եփես. Ե. 9։
Բ Կող. Գ. 12։ Յակ. Գ. 17։
Ց Հռովմ. ԺԵ. 14։
– Ա կորնթ. ԺԳ. 7։
÷ Ա Տիմ. Ա. 9։
+ Հռովմ. Զ. 6։ ԺԳ. 14։ Գղ. Բ. 19։ Ա Պետ. Բ. 11։
• Հռովմ. Ը. 4։ 5։ Հռովմ. 16։
÷ Փիլիպ. Բ. 3։

—

= Հռովմ. ԺԴ. 1։ ԺԵ. 1։ Եբր. ԺԲ. 13։ Յակ. Ե. 19։
Բ Ա կորնթ. Բ. 15։ Գ. 1։
÷ Ա կորնթ. Գ. 21։ Բ Թես. Գ. 15։ Բ Տիմ. Բ. 25։
÷ Ա կորնթ. Ժ. 12։
Ի Հռովմ. ԺԵ. 1։ Գղ. Ե. 13։ Ա Թես. Ե 14։
Ղ Յովհ. ԺԳ. 14. 15. 34։ ԺԵ 12։ Յակ. Բ. 8։ Ա Յովհ. Դ. 21։

ինչ՝ եւ չիցէ, զանձն իւր խաբէ :

4 Զգործ իւր կշռեսցէ իւրաքան-
չիւրոք, եւ ապա անձին իւրում
միայն պարծանս առցէ, եւ մի առ
ընկերաւն :
5 Զի իւրաքանչիւրոք զիւր բե-
ռըն բառնալոց է :
6 Հաղորդութիւն արասցէ աշա-
կերտն վարդապետին՝ յամենայն բա-
րութիւնս :
7 Մի խաբիք . Աստուած ոչ ար-
համարհի :
8 Զի զոր ինչ սերմանէ մարդ՝
զնոյն եւ հնձեսցէ . որ սերմանէ 'ի
մարմին իւր, 'ի մարմնոյ անտի հըն-
ձեսցէ զապականութիւն . եւ որ
սերմանէ 'ի Հոգին՝ 'ի Հոգւոյ անտի
հնձեսցէ զկեանսն յաւիտենից :

9 Այլ զբարիս գործել մի ձանձ-
րասցուք, զի 'ի ժամանակի իւրում
հնձեսցուք առանց լքանելոյ :

10 Այսուհետեւ մինչդեռ ժամա-
նակս 'ի ձեռս է՝ գործեսցուք զբա-
րիս առ ամենեսեան, մանաւանդ
առ ընտանիսն հաւատոյ :
11 Տեսէք՝ որպիսի գրովք գրեցի առ
ձեզ իմով ձեռամբ :
12 Զի որ միանգամ կամին բա-
րեհամբաւ լինել մարմնով, նոքա
ստիպեն զձեզ թլփատել . միայն զի
մի զխաչին Քրիստոսի զհետ եր-
թիցեն :
13 Քանզի որ թլփատեալքն իսկ

բան է՝ եւ չըլլայ, նա իրեն՝ ան-
ձը ը խաբուէ :
4 Ամէն մէկը թող իրեն գործը
կշռէ, եւ ապա միայն իրեն անձին
պարծանք ե ունենայ, եւ ոչ թէ իրեն
ընկերին է մօտ :
5 Ինչու որ՝ ամէն մէկն իրեն բե-
ռը պիտի թ վերանէ :
6 Աշակերտը թող հաղորդութիւն
անէ վարդապետին՝ ամէն բարի
ժ բաներով :
7 Մի ի խաբուիք . Աստուած չի
լ անարգուիլ :
8 Պատճառն որ՝ ինչ որ մարդը
սերմանէ՝ նոյն խ կը հնձէ . նա՝
որ իրեն մարմնոյն մէջն է սերմանել,
այն մարմինէն ապականութիւնը
ծ կը հնձէ . եւ նա՝ որ Հոգւոյն մէ-
ջըն է սերմանել, այն Հոգւոյն ել
յաւիտենական կեանքը կը հնձէ :
9 Բայց չը ձանձրանանք բարի
կ գործելուցը, ինչու որ՝ իրեն ժա-
մանակումը կը հնձենք առանց ձ ալա-
կանելոյ :
10 Ուրեմն քանի որ ժամանակը
ձեռներումս հ է՝ բարի գործենք ա-
մէնուն ղ համար, մանաւանդ հա-
ւատքի ճ ընտանիքներին :
11 Տեսէք թէ ինչպէսի գրերով
գրեցի ձեզ իմ ձեռքս :
12 Այն ամէնքն՝ որ կամենումեն
հաճոյ երեւիլ մարմնոյ կողմանէ,
նորանք են ստիպում ձեզ՝ որ մ թլ-
փատուիք . միայն յ նորա համար՝ որ
Քրիստոսի խաչի ետեւէն ն չը գնան :
13 Ինչու որ իսկ նորանք էլ՝ որ

ե Հռովմ. ԺԲ. 3. Ա Կորնթ. Ը. 2. Գղ. Բ. 6.
զ Բ Կորնթ. Գ. 5. ԺԲ. 11.
է Ա Կորնթ. ԺԱ. 28. Բ Կորնթ. ԺԳ. 5.
ը Ղուկ. ԺԸ. 11.
թ Հռովմ. Բ. 6. Ա Կորնթ. Գ. 8.

ժ Հռովմ. ԺԵ. 27. Ա Կորնթ. Թ. 11. 14.
ի Ա Կորնթ. Զ. 9. ԺԵ. 33.
լ Յոբ. ԺԳ. 9.
խ Ղուկ. ԺԶ. 25. Հռովմ. Բ. 6. Բ Կորնթ. Ե. 6.
ծ Յոբ. Դ. 8. Առակ. ԺԱ. 18. ԻԲ. 8. Ովսէ. Ը. 7. Ժ. 12. Հռովմ. Ը. 13. Յակ. Գ. 18.

կ Բ Թես. Գ. 13. Ա Կորնթ. ԺԵ. 58.
հ Մատթ. ԻԳ. 13. Եբր. Գ. 6. 14. Ժ. 36. ԺԲ. 3. 5. Յայտ. Բ. 10.

ձ Յովհ. Թ. 4. ԺԲ. 35.
ղ Ա Թես. Ե. 15. Ա Տիմ. Զ. 18. Տիտ. Գ. 8.
ճ Եփես. Բ. 19. Եբր. Գ. 6.
մ Գղ. Բ. 3. 14.
յ Փիլիպ. Գ. 18.
ն Գղ. Ե. 11.

են, նոքա զօրէնսն ոչ պահեն. այլ կամին՝ զի դուք թլփատիցիք, զի ձերով մարմնովդ պարծեսցին։

՛14 Այլ ինձ քաւ լիցի պարծել՝
բայց միայն ՚ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որով ինձ աշխարհ ՚ի խաչ ելեալ է՝ եւ ես աշխարհի։
15 Զի (՚ի Քրիստոս Յիսուս), ոչ
թլփատութիւն ինչ է՝ եւ ոչ անթլփատութիւն, այլ նոր արարածս։
16 Եւ որ միաբանգամ այսմ կանոնի
միաբան լինին, խաղաղութիւն ՚ի վերայ նոցա եւ ողորմութիւն՝ եւ ՚ի վերայ Իսրայէլին Աստուծոյ։
17 Այսուհետեւ աշխատ ոք զիս
մի արասցէ. զի ես զխարանս Քրիստոսի ՚ի մարմնի իմում կրեմ։

18 Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի ընդ ոգւոյդ ձերում եղբարք. ամէն։

թլփատուած են, նորանք օրէնքը չեն պահում. այլ կամենում են՝ որ դուք թլփատուիք, որ ձեր մարմնովը պարծենան։
14 Բայց ինձ քաւ լիցի պարծե-
նալ, բայց միայն մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ւխաչովը. որ նորանով աշխարհքն ինձ համար խաչուած է, եւ ես էլ ղաշխարհքին։
15 Պատճառն որ՝ Յիսուս Քրիս-
տոսումը՝ ոչ թլփատութիւնը մին բան է՝ եւ ոչ ւանթլփատութիւնը, բայց նոր –ստեղծուած։
16 Եւ ամէնքն՝ որ այս կանոնխս
միաբան –են, նորանց վերայ խաղաղութիւն եւ ողորմութիւն՝ եւ էլ Աստուծոյ Իսրայէլին ւվերայ։
17 Սրանից ետեւ թող մինը չաշ-
խատացնէ ինձ. ինչու որ ես Քրիստոսի չարչարանքներին իմ մարմնոյս մէջն եմ =տանում։
18 Մեր Տէր Յիսուսի Քրիստոսի
շնորհքը եղբարք՝ ձեր հոգուն հետ լինի. ր ամէն։

Գաղատացւոց վերայ Հռոմ քաղաքիցը գրեցաւ։

# ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑ

## ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍ

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 ՊՕՂՈՍ առաքեալ Յիսուսի
Քրիստոսի՝ կամօքն Աստուծոյ՝ սրբոց որ են յԵփեսոս, եւ հաւատացելոց ՚ի Քրիստոս Յիսուս։
2 Շնորհք ընդ ձեզ եւ խաղա-
ղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ՝ եւ ՚ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։

1 ՊՕՂՈՍ Յիսուսի Քրիստոսի
առաքեալ՝ Աստուծոյ –կամքովը՝ սրբերին որ Եփեսոսումն բ են, եւ Քրիստոսումը ⁝ հաւատացեալներին,
2 Շնորհք ձեզ հետ եւ խաղա-
ղութիւն Աստուած մեր Հօրիցը՝ եւ Տէր Յիսուս ÷Քրիստոսիցը։

ւ Փիլիպ. Գ. 3. 7, 8։
ղ Հռովմ. Զ. 6. Գղ. Բ. 19։
ւ Ա Կորնթ. Է. 19. Գղ. Ե. 6։ Կող. Գ. 11։

– Բ Կորնթ. Ե. 17։
= Փիլիպ. Գ. 16։
Լ Սաղ. ԾԴ. 5։ Հռովմ. Բ. 29։ Գ. 12։ Թ. 6, 7, 8։ Գղ. Գ. 7. 9. 29։ Փի-
լիպ. Գ. 3։
÷ Բ Կորնթ. Ա. 5։ Դ. 10։ ԺԱ. 23. Գղ. Ե. 11։ Կող. Ա. 24։
ր Բ Տիմ. Դ. 22։ Փիլիմ. 25։

– Բ Կորնթ. Ա. 1։
բ Հռովմ. Ա. 7։ Բ Կորնթ. Ա. 1։
⁝ Կող. Ա. 2։
÷ Գաղ. Ա. 3։ Տիտ. Ա. 4։

3 Օրհնեալ է Աստուած եւ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի · որ օրհնեաց զմեզ ամենայն հոգեւոր օրհնութեամբ յերկնաւորս 'ի Քրիստոս ։

4 Որպէս ընտրեաց զմեզ նովաւ յառաջ քան զլինելն աշխարհի լինել մեզ սուրբս եւ անարատս առաջի նորա սիրով ։

5 Յառաջագոյն սահմանեաց ըզմեզ յորդեգրութիւն 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի 'ի նոյն՝ ըստ հաճութեան կամաց իւրոց ։

6 'Ի գովեստ փառաց շնորհաց իւրոց · որով զուարճացոյց զմեզ սիրելեաւն ։

7 Որով ունիմք զփրկութիւն 'ի ձեռն արեան նորա, զթողութիւն մեղաց՝ ըստ մեծութեան շնորհաց իւրոց ·

8 Որ առաւելաւ 'ի մեզ ամենայն իմաստութեամբ եւ գիտութեամբ ։

9 Ցուցանել մեզ զխորհուրդս կամաց իւրոց՝ ըստ հաճութեան իւրում · զոր յառաջագոյն եդ նովաւ ,

10 'Ի տնտեսութիւն լրման ժամանակաց, բովանդակել զամենայն Քրիստոսիւ, որ ինչ յերկինս՝ եւ որ ինչ յերկրի՝ 'ի նմին ։

3 Օրհնեալ է Աստուած՝ եւ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ե Հայրը · որ մեզ օրհնեց ամէն հոգեւոր օրհնութիւնով երկնաւոր բաներումը Քրիստոսով ·

4 Ինչպէս որ զ ընտրեց մեզ նորանով աշխարհքի լինելուցն է առաջ, որ մենք սուրբ եւ անարատ ըլլինք նորա առաջին ը սիրով ։

5 Առաջուց սահմանեց թ մեզ · որ իսկ իրեն որդեգիր ըլլինք Յիսուսի Քրիստոսի ժ ձեռամբը՝ իրեն կամքի հաճութեան ի պէս ,

6 Իրեն փառաւոր շնորհաց գովասանքին համար · որ սորանով ուրախացուց լ մեզ՝ այն խ սիրելովը ։

7 Որ նորանով ունինք փրկութիւն նորա արիւնովը, մեղաց ծ թողութիւնըն՝ իրեն շնորհաց մեծութեան կ չափովը ·

8 Որ նա աւելացաւ մեզանում ամէն իմաստութիւնով եւ գիտութիւնով ։

9 Ցոյց տուաւ մեզ իրեն կամքի խորհուրդներըն՝ իրեն հաճոյութեան հ պէս · նա որ առաջուց դրաւ ձ նորանով ,

10 Ժամանակներին լրմանց տնտեսութեան ղ համար, որ ամէն ճ բան բոլորվի Քրիստոսովը, ինչ որ երկինքումն է՝ եւ ինչ որ երկրումը՝ իսկ մ նորանում ,

ե Բ Կորնթ. Ա. 3 ։ Ա Պետ. Ա. 3 ։
զ Ա Պետ. Ա. 2, 3 ։
է Հռովմ. Ը. 28 ։ Բ Թես. Բ. 12 ։ Բ Տիմ. Ա. 9 ։ Յակ. Բ. 5 ։ Ա Պետ. Ա. 2 ։ Բ. 9 ։
ը Ղուկ. Ա. 75 ։ Եփես. Բ. 10 ։ Ե. 27 ։
թ Հռովմ. Ը. 29, 30 ։ Համար. 11 ։
ժ Յովհ. Ա. 12 ։ Հռովմ. Ը. 15 ։ Բ Կորնթ. Զ. 18 ։ Գաղ. Դ. 5 ։ Ա Յովհ. Գ. 1 ։
ի Մատթ. ԺԱ. 26 ։ Ղուկ. ԺԲ. 32 ։ Ա Կորնթ. Ա. 21 ։ Համար. 9 ։
լ Հռովմ. Գ. 24 ։ Ե. 15 ։
խ Մատթ. Գ. 17 ։ ԺԷ. 5 ։ Յովհ. Գ. 35 ։ Ժ. 17 ։
ծ Գործ. Ի. 28 ։ Հռովմ. Գ. 24 ։ Կող. Ա. 14 ։ Եբր. Թ. 12 ։ Ա Պետ. Ա. 18, 19 ։ Յայտ. Ե. 9 ։
կ Հռովմ. Բ. 4 ։ Գ. 24 ։ Թ. 23 ։ Գլ. Բ. 7 ։ Գ. 8. 16 ։ Փիլիպ. Դ. 19 ։
հ Հռովմ. ԺԶ. 25 ։ Գլ. Գ. 4. 9 ։ Կող. Ա. 26 ։
ձ Գլ. Գ. 11 ։ Բ Տիմ. Ա. 9 ։
ղ Գաղ. Դ. 4 ։ Եբր. Ա. 2 ։ Թ. 10 ։ Ա Պետ. Ա. 20 ։
ճ Ա Կորնթ. Գ. 22, 23 ։ ԺԱ. 3 ։ Գլ. Բ. 15 ։ Գ. 15 ։
մ Փիլիպ. Բ. 9, 10 ։ Կող. Ա. 20 ։

11 Որով եւ վիճակեցաք յառաջա-
գոյն հրաւիրեալք՝ ըստ յառաջադ-
րութեանն Աստուծոյ. որ զամե-
նայն յաջողէ ըստ խորհրդոց կա-
մաց իւրոց.

12 Լինել մեզ ՚ի գովեստ փառաց
նորա յառաջագոյն յուսացելոցս ՚ի
Քրիստոս։

13 Որով եւ դուք իբրեւ լուարուք
զբանն ճշմարտութեան, զաւետա-
րանն փրկութեան ձերոյ, որով եւ
հաւատացեալ կնքեցայք Հոգւովն
Սրբոյ աւետեաց։

14 Որ է առհաւատչեայ ժառան-
գութեան մերոյ, ՚ի փրկութիւն
նուաճութեան, ՚ի գովեստ փա-
ռաց նորա։

15 Վասն այնորիկ եւ ես իբրեւ
լուայ զհաւատսն ձեր՝ որ ՚ի Տէր
Յիսուս, եւ զսէրն որ ընդ ամե-
նայն սուրբս,

16 Ո՛չ դադարեմ ՚ի գոհանալոյ
վասն ձեր՝ յիշել զձեզ յաղօթս։

17 Զի Աստուած Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի Հայրն փառաց՝
տացէ ձեզ զհոգին իմաստութեան
եւ յայտնութեան՝ գիտութեամբն
իւրով։

18 Լուսաւոր առնել զաչս սրտից՝
առ ՚ի գիտելոյ մեզ՝ զինչ է յոյս
կոչման նորա, եւ զինչ մեծութիւն
փառաց ժառանգութեան նորա ՚ի
սուրբս։

11 Որ նորանով էլ ստացանք ժա-
ռանգութիւնը յ մենք՝ որ առաջուց
հրաւիրեցանք, Աստուծոյ առա-
ջադրութեան ն պէս. որ ամէն բան
յաջողում իրեն կամքի խորհուրդ-
ներին շ պէս.

12 Որ մենք գովասանք լինինք նո-
րա ո փառացը, որ առաջուց մեր
յոյսը Քրիստոսի վերայ ենք չ դը-
րել,

13 Որ նորանով դուք էլ երբոր
ճշմարտութեան խօսքը լսեցիք՝ ձեր
փրկութեան պ աւետարանը, որ նո-
րան էլ երբոր հաւատացիք՝ աւե-
տիքի Սուրբ Հոգովը ջ կնքուեցաք.

14 Որ նա մեր ժառանգութեան
գրաւն ռ է, մինչեւ ս ստացուածի
վ փրկութիւնը, որ նորա փառացը
գովասանք տ լինի.

15 Նորա համար ես էլ երբոր լսե-
ցի ձեր հաւատքը՝ որ կայ Տէր Յի-
սուսին վերայ, եւ այն սէրըն որ
դէպի ամէն սրբերին ր ունինք,

16 Չեմ դադարում ձեզ համար
գոհութիւն տալուց՝ եւ յիշումեմ
ձեզ ց աղօթքումս.

17 Որ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի
ւ Աստուածը փառաց Հայրը՝ տայ ձեզ
իմաստութեան եւ յայտնութեան
հոգին՝ իրեն փ գիտութիւնովը,

18 Որ լուսաւոր անէ ձեր սրտերի
ք աչքերը՝ որ մենք գիտենանք՝ թէ
ինչ է այն մեր կոչումի օ յոյսը, եւ
ինչ է իրեն ժառանգութեան փա-
ռաւոր մեծութիւնը, որ է ֆ սրբե-
րումը.

յ Գործ. Ի. 32։ ԻԶ. 18։ Հռոմ. Ը. 17։ Կող. Ա. 12։ Գ. 24։ Տիտ. Գ. 7։ Յակ. Բ. 5։ Ա Պետ. Ա. 4։
ն Համար. 5։
շ Եսայ. ԽԶ. 10, 11։
ո Համար. 6. 14։ Բ Թես. Բ. 13։
չ Յակ. Ա. 18։
պ Յովհ. Ա. 17։ Բ Կորնթ. Զ. 7։
ջ Բ Կորնթ. Ա. 22։ Գլ. Դ. 30։
ռ Բ Կորնթ. Ա. 22 Ե. 5։
ս Գործ. Ի. 28։
վ Ղուկ. ԻԱ. 28։ Հռոմ. Ը. 23 Գլ. Դ. 30։
տ Համար. 6. 12։
ր Կող. Ա. 4։ Փիլիմ. 5։
ց Հռոմ. Ա. 9։ Փիլիպ. Ա. 3. 4։ Կող. Ա. 3։ Ա Թես. Ա. 2։ Բ Թես. Ա. 3։
ւ Յովհ. Ի. 17։
փ Կող. Ա. 9։ Բ. 3։
ք Գործ. ԻԶ. 18։
օ Գլ. Բ. 12։ Դ. 4։
ֆ Համար. 11։

19 Եւ զինչ է առաւելութիւն մե-
ծութեան զօրութեան նորա ՚ի մեզ
հաւատացեալս . ըստ յաղթութեան
կարողութեան զօրութեան իւրոյ ։
20 Զոր յաղթեաց ՚ի Քրիստոս . զի
յարոյց զնա ՚ի մեռելոց՝ եւ նստոյց
ընդ աջմէ իւրմէ յերկնաւորս ։

21 ՚Ի վերայ ամենայն իշխանու-
թեան եւ պետութեան եւ զօրու-
թեան եւ տէրութեան եւ ամենայն
անուան անուանելոյ , ոչ միայն յաշ-
խարհիս յայսմիկ՝ այլ եւ ՚ի հան-
դերձելումն ։
22 Եւ զամենայն ինչ հնազանդ ա-
րար ՚ի ներքոյ ոտից նորա , եւ զնա
եդ գլուխ ՚ի վերայ ամենայն իրիք
եկեղեցւոյ ,
23 Որ է մարմին նորա , լրումն՝
որ զամենայն յամենայնի լնու ։

19 Եւ ինչ է նորա զօրութեան
գերազանց մեծութիւնը մեզանում՝
որ հաւատացինք , իրեն կարող զօ-
րութեան յաղթութեան [ա] պէս ,
20 Որ Քրիստոսումը յաղթեց . ին-
չու որ յարոյց նորան մեռելներին
[բ] միջիցը՝, եւ իրեն աջ կողմը նըս-
տացուց [գ] երկինքումը ,
21 [դ] Ամէն իշխանութեան եւ պե-
տութեան եւ զօրութեան եւ տէ-
րութեան վերայ՝ եւ ամէն անուա-
ներին վերայ՝ որ անուանվումեն ,
ոչ թէ միայն այս աշխարհքումս՝
բայց էլ այն նոր եկողին [ե] մէջ ։
22 Եւ ամէն բան հնազանդացուց
նորա ոտաց [զ] ներքեւը , եւ նորան
գլուխ դրաւ եկեղեցւոյ ամէն բանե-
րին [է] վերայ ,
23 Որ նա նորա մարմինն [ը] է , նորա
[թ] լրութիւնն՝ որ ամէնքին ամէնին
մէջ [ժ] լցնումէ ։

## ԳԼ . Բ

1 Եւ զձեզ՝ որ մեռեալն էիք ՚ի
մեղս ձեր եւ յանցանս .

2 Յորս երբեմն գնայիք ըստ յա-
ւիտենի աշխարհիս այսորիկ՝ ըստ
իշխանին իշխանութեան օդոյս այ-
սոյ , որ այժմ ընդդիմակալ է յորդի-
սըն ապստամբութեան ։

3 Յորս եւ մեք ամենեքեան շրր-
ջէաք երբեմն ՚ի ցանկութիւնս մարմ-
նոյ մերոյ , եւ առնէաք զկամս մարմ-

1 Եւ [ա] զձեզ՝ որ մեռած էիք
ձեր մեղքերումն ու [բ] յանցանքնե-
րումը .
2 Որ նորանցում մին ժամանակ
գնումէիք այս աշխարհքիս սովո-
րութեան [գ] պէս՝ այն իշխանին պէս՝
որ այս օդիս մէջն իշխանութիւն է
[դ] անում , այն չար հոգւոյն պէս՝ որ
հիմիկ մնալ է ապստամբութեան
որդիքներին [ե] մէջ ,
3 Որ նորանց միջումը մենք ամէն-
քըս էլ մին ժամանակ ման [զ] էինք
գալիս՝ մեր մարմնոյ ցանկութիւն-

[ա] Գղ. Գ. 7. Կող. Ա. 29. Բ. 12.
[բ] Գործ. Բ. 24. 32.
[գ] Սաղ. ՃԺ. 1. Գործ. Է. 55. Կող. Գ. 1. Եբր. Ա. 3. Ժ. 12.
[դ] Փիլիպ. Բ. 9. 10. Կող. Բ. 10. Եբր. Ա. 4.
[ե] Հռովմ. Ը. 38. Կող. Ա. 16. Բ. 15.
[զ] Սաղ. Ը. 6. Մատթ. ԻԸ. 18. Ա Կորնթ. ԺԵ. 27. Եբր. Բ. 8.
[է] Գղ. Դ. 15. 16 Կող. Ա. 18. Եբր. Բ. 7.
[ը] Հռովմ. ԺԲ. 5. Ա Կորնթ. ԺԲ. 12. 27. Գղ. Դ. 12. Ե. 23. 30. Կող. Ա. 18 24.
[թ] Կող. Բ. 9. 10.
[ժ] Ա Կորնթ. ԺԲ. 6. Գղ. Դ. 10. Կող. Գ. 11.

—

[ա] Յովհ. Ե. 24. Կող. Բ. 13.
[բ] Հռովմ. 5. Գղ. Դ. 18.
[գ] Ա Կորնթ. Զ. 11. Գղ. Դ. 22. Կող. Ա. 21. Գ. 7. Ա Յովհ. Ե. 19.
[դ] Գղ. Զ. 12.
[ե] Գղ. Ե. 6. Կող. Գ. 6.
[զ] Տիտ. Գ. 3. Ա Պետ. Դ. 3.

նոյ՝ եւ զմտաց, եւ էաք՝ արդարեւ
որդիք բարկութեան իբրեւ այլքն ։

4 Այլ Աստուած՝ որ մեծն է ո-
ղորմութեամբ, վասն բազում սի-
րոյն իւրոյ՝ զոր սիրեաց զմեզ,
5 Մինչդեռ մեռեալն էաք ՚ի մե-
ղս մեր, կենդանիս արար զմեզ ՚ի
Քրիստոս. քանզի շնորհօք ապրե-
ցաք ։
6 Ընդ նմին յարոյց, եւ ընդ նր-
մին նստոյց յերկնաւորս ՚ի Քրիստոս
Յիսուս ։
7 Զի ցուցցէ ՚ի յաւիտեանսն որ
գալոցն են՝ զառաւել մեծութիւն
շնորհացն իւրոց՝ քաղցրութեամբ ՚ի
մեզ ՚ի Քրիստոս Յիսուս ։

8 Զի շնորհօք նորա էք փրր-
կեալք ՚ի ձեռն հաւատոյն. եւ այս
ոչ ՚ի ձէնջ, այլ Աստուծոյ պարգեւ
է ։
9 Ո՛չ ՚ի գործոց, զի մի ոք պար-
ծեսցի ։
10 Զի նորա արարածք եմք՝ հաս-
տատեալք Քրիստոսիւ Յիսուսիւ ՚ի
գործս բարութեան, յորս յառաջա-
գոյն պատրաստեաց Աստուած, զի
՚ի նոյնս գնասցուք ։

11 Վասն որոյ եւ դուք յիշեցէք՝
զի երբեմն հեթանոսք էիք մարմ-
նով. որ կոչեցեալքն էին անթլփա-
տութիւն՝ յանուանեալ թլփատու-

ներումը, եւ մարմնոյ ու մտքի կամ-
քերն էինք [ե] կատարում, եւ իրաւի
բարկութեան որդիք էինք՝ ինչպէս
[ը] ուրիշները.
4 Բայց Աստուած՝ որ մեծ է ո-
ղորմութիւնով, իւրեն շատ սիրոյն
համար՝ որ սիրեց [թ] մեզ,
5 Երբոր մեռած էինք մեղացը
[ժ] մէջ, մեզ կենդանի արաւ [ի] Քրիս-
տոսումը. ինչու որ շնորհքով [լ] ապ-
րեցանք ։
6 Նորա հետ [խ] յարոյց, եւ նո-
րա հետ երկինքումը նստացրուց՝ Քը-
րիստոս [ծ] Յիսուսումը.
7 Որ նոր եկող ժամանակներու-
մըն յաւիտեան ցոյց տայ՝ իւրեն շը-
նորհաց գերազանց մեծութիւնը,
այն քաղցրութիւնովն՝ որ մեզ վերայ
էլաւ Քրիստոս [կ] Յիսուսումը ։
8 Պատճառն որ՝ նորա շնորհքովը
փրկված [հ] էք հաւատքի [ձ] ձեռամբը.
եւ սա ոչ թէ ձեզանից է, այլ Աս-
տուծոյ պարգեւն [ղ] է ։
9 Ո՛չ թէ գործքերիցը, որ ոչ մի-
նը [ճ] չը պարծենայ ։
10 Ինչու որ՝ նորա ստեղծվածն
[մ] ենք՝ Քրիստոսով Յիսուսով հաս-
տատված բարի գործքերին համար.
որ Աստուած նորանց համար առա-
ջուց պատրաստեց մեզ, որ նորան-
ցում [յ] վարվենք ։
11 Նրահամար դուք էլ մտաբերե-
ցէք՝ որ ժամանակով հեթանոս
էիք մարմնոյ [ն] կողմանէ, որ ան-
թլփատութիւն էն կոչված այն

ե Գաղ. Ե. 16.
ը Սաղ. ԾԱ. 5. Հռովմ. Ե. 12. 14.
թ Հռովմ. Ժ. 12. Գղ. Ա. 7. Համառ. 7.
ժ Հռովմ. Ե. 6. 8. 10. Համառ. 1.
ի Հռովմ. Զ. 4, 5. Կող. Բ. 12. 13. Գ. 1. 3.
լ Գործ. ԺԵ. 11. Համառ. 8. Տիտ. Գ. 5.
խ Գղ. Ա. 20.
ծ Տիտ. Գ. 4.
կ Համառ. 5. Հռովմ. Գ. 24. Բ Տիմ. Ա. 9.
հ Հռովմ. Դ. 16.
ձ Մատթ. ԺԶ. 17. Յովհ. Զ. 44. 66. Հռովմ. Ժ. 14, 15. 17. Գղ. Ա. 19. Փիլիպ. Ա. 29.
ղ Հռովմ. Գ. 20. 27, 28. Դ. 2. Թ. 11. ԺԱ. 6. Ա Կորնթ. Ա. 29. 30. 31. Բ Տիմ. Ա. 9. Տիտ. Գ. 5.
ճ Բ Օրին. ԼԲ. 6. Սաղ. Ճ. 3. Եսայ. ԺԹ. 25. ԻԹ. 23. ԽԴ. 21. Յովհ. Գ. 3. 5. Ա Կորնթ. Գ. 9. Բ Կորնթ. Ե. 5. 17. Գղ. Դ. 24. Տիտ. Բ. 14.
մ Գղ. Ա. 4.
յ Ա Կորնթ. ԺԲ. 2. Գղ. Ե. 8. Կող. Ա. 21. Բ. 13.

թենէ անտի մարմնաւոր ձեռագործին ։

12 Զի էիք 'ի ժամանակին յայնմիկ առանց Քրիստոսի, (եւ օտարացեալ յառաքինութենէն Իսրայէլի,) եւ աստանդիկք յուխտից աւետեացն, եւ յոյս ինչ ոչ ունէիք՝ եւ անաստուածք էիք յաշխարհի ։

13 Իսկ այժմիկ 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, դուք՝ որ երբեմն հեռաւորքն էիք՝ մերձաւորք եղերուք արեամբն Քրիստոսի ։

14 Զի նա է խաղաղութիւն մեր՝ որ արար զերկոսեան մի․ եւ զմիջնորմն ցանկոյն քակեաց զթշնամութիւն 'ի մարմնի իւրում ։

15 Եւ զօրէնս պատուիրանացն հրամանօքն խափանեաց․ զի զերկոսին հաստատեսցէ ինքեամբ 'ի մի նոր մարդ, եւ արասցէ խաղաղութիւն ։

16 Եւ հաշտեսցուսցէ զերկոսին միով մարմնով ընդ Աստուծոյ՝ խաչիւն իւրով, քանզի սպան զթըշնամութիւն յանձին իւրում ։

17 Եւ եկն աւետարանեաց խաղաղութիւն ձեզ հեռաւորաց՝ եւ խաղաղութիւն մերձաւորաց ։

18 Զի նովաւ ունիմք զմատուցութիւն երկոքին՝ միով Հոգւով առ Հայր ։

19 Ապա այսուհետեւ ոչ էք օտարք եւ պանդուխտք, այլ քա-

մարմնաւոր ձեռքով արած ն թլփատութիւնը ,

12 Որ այն ժամանակուան առանց շ Քրիստոսի էիք, եւ օտարացած Իսրայէլի ո քաղաքացիութենէն․ եւ դուրս արած աւետիքի չ ուխտ ու պայմաններէն, բնաւ յոյս պ չունէիք, եւ առանց Աստուծոյ էիք ջ աշխարհքումս ․

13 Բայց հիմիկ Յիսուսի Քրիստոսի ձեռքովը, ռ դուք՝ որ ժամանակով հեռաւոր էիք՝ մօտաւոր էլաք Քրիստոսի ս արիւնովը ։

14 Պատճառն որ՝ նա է մեր վ խաղաղութիւնը՝ որ երկուքին մին տ արաւ․ եւ մէջտեղ դրած պատերն այսինքն թշնամութիւնը ր քանդեց՝ իրեն ց մարմնովը ։

15 Եւ հրամաններովը գրած պատուիրանքներուն օրէնքը խափանեց․ որ ինք իրենով երկուքին մին նոր մարդ ւ հաստատէ, եւ խաղաղութիւն ընէ,

16 Եւ երկուքին մին մարմնով հաշտեցնէ Աստուծոյ հետ՝ իրեն փ խաչովը․ ինչու որ՝ թշնամութիւնին սպաննեց իրեն ք անձնումը ,

17 Եւ եկաւ աւետարանեց խաղաղութիւն ձեզ օ հեռաւորներուդ՝ եւ խաղաղութիւն ֆ մօտաւորներուն ․

18 Պատճառն որ՝ նորանով – երկուքս մին Հոգւով ունինք մօտենալը Հօր ƒ մօտ ։

19 Ապա այսուհետեւ օտար եւ պանդուխտ չէք, բայց սրբերին

ն Հռովմ. Բ. 28, 29. Կող. Բ. 11.
շ Գղ. Գ. 18. Կող. Ա. 21.
ո Եզեկ. ԼԳ. 9. Յովհ. Ժ. 16.
չ Հռովմ. Թ. 4, 8.
պ Ա Թես. Դ. 12.
ջ Գաղ. Դ. 8. Ա Թես. Դ. 5.
ռ Գաղ. Գ. 28.
ս Գործ. Բ. 39. Համար. 17.
վ Միք. Ե 5. Յովհ. ԺԶ. 33. Գործ. Ժ. 26. Հռովմ. Ե 1. Կող. Ա. 20.
տ Յովհ. Ժ. 16. Գաղ. Գ. 28.
ր Կող. Բ. 14. 20.
ց Կող. Ա. 22.
ւ Բ Կորնթ. Ե. 17. Գաղ. Զ. 15. Գղ. Դ. 24.
փ Կող. Ա. 20, 21, 22.
ք Հռովմ. Զ. 6, Ը. 3. Կող. Բ. 14.
օ Եսայ. ՆԷ. 19. Զաք. Թ. 10. Գործ. Բ. 39. Ժ. 36. Հռովմ. Ե. 1. Համար. 13, 14.
ֆ Սաղ. ճԽԸ. 14.
– Յովհ. Ժ. 9. ԺԴ. 6. Հռովմ. Ե. 2. Գղ. Գ. 12. Եբր. Դ. 16. Ժ. 19, 20. Ա Պետ. Գ. 18.
ƒ Ա Կորնթ. ԺԲ. 13. Գղ. Դ. 4.

ղաքակիցք սրբոց եւ ընտանիք Աստուծոյ ։

20 Շինեալք ՚ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից․ որոյ է գլուխ անկեանն Քրիստոս Յիսուս ։

21 Յորում ամենայն շինուածն յօդեալ եւ պատշաճեալ՝ աճէ ՚ի տաճար սուրբ Տէրամբ ։

22 Յորում եւ դուք ընդ նմին շինիք ՚ի բնակութիւն Աստուծոյ Հոգւով ։

հետ ÷ քաղաքացիներ եւ Աստուծոյ ╤ ընտանիքներ ։

20 Առաքելոց եւ ⊢ մարգարէից հիմունքին ⌐ վրայ ⊩ շինված․ որ նորա անկիւնի գլուխն Յիսուս Քրիստոս ɛ է ,

21 Որ նորանում բոլոր շինվածքը միաւորված եւ յարմարված Բ է՝ եւ աճում՝ ու լինի սուրբ տաճար ⸸ Տէրովը ։

22 Որ նորանում դուք էլ նորա հետ շինվումէք Աստուծոյ բնակարան ⫶ Հոգովը ։

## ԳԼ. Գ.

1 Վասն այսորիկ ես Պօղոս կապեալ Յիսուսի Քրիստոսի վասն ձեր հեթանոսաց ։

2 Թերեւս լուեալ իցէ ձեր զտնտեսութիւն շնորհացն Աստուծոյ, որ տուեալ են ինձ ՚ի ձեզ ։

3 Զի ըստ յայտնութեանն ցուցաւ ինձ խորհուրդն․ որպէս յառաջագոյն գրեցի առ ձեզ սակաւուք

4 Առ ՚ի կարօղ լինելոյ ընթեռնուլ՝ եւ ՚ի միտ առնուլ զիմաստութիւնն զիմ ՚ի խորհրդեանն Քրիստոսի ։

5 Զի այլոց ազգաց ոչ ցուցաւ որդւոց մարդկան․ որպէս այժմ յայտնեցաւ սրբոց իւրոց առաքելոց եւ մարգարէից՝ Հոգւովն ։

1 Սրա համար ես Պօղոս՝ որ Յիսուսի Քրիստոսի կապվածն — եմ ձեզ հեթանոսներիդ ÷ համար ,

2 Կը լինի որ՝ դուք լսած էք Աստուծոյ շնորհաց այն ╤ տնտեսութիւնը , որ ինձ տրված է ձեզ ⊢ համար ․

3 ⊢ Որ յայտնութեամբ ցոյց ⌐ տրված ինձ այն ⊩ խորհուրդը ․ ինչպէս որ առաջուց կարճառօտ գրեցի ɛ ձեզ ․

4 Որ կարօղ լինիք կարդալ եւ մտքներդ առնել իմ տեղեկութիւնս՝ որ Քրիստոսի խորհրդին համար Բ է ․

5 Որ ուրիշ անցած ազգերի մարդկանց զաւակներին ցոյց չը ⸸ տրվաւ ․ ինչպէս որ հիմիկ իւրեանց սուրբ առաքեալներին եւ մարգարէներին յայտնվեցաւ՝ ⫶ Հոգովը ․

÷ Փիլիպ. Գ. 20 ։ Եբր. ԺԲ. 22. 23 ։
╤ Գաղ. Զ. 10 ։ Եփ. Գ. 15 ։
⊢ Ա Կորնթ. ԺԲ. 28 ։ Եփ. Դ. 11 ։
⌐ Մատթ. ԺԶ. 18 Գաղ. Բ. 9 ։ Յայտ. ԻԱ. 14 ։
⊩ Ա Կորնթ. Գ. 9. 10 ։ Եփ. Դ. 12 ։ Ա Պետ. Բ. 4, 5 ։
ɛ Սաղ. ՃԺԸ. 22 Եսայ ԻԸ. 16 ։ Մատթ. ԻԱ. 4 ։
Բ Եփ. Դ. 15 ։ 16 ։
⸸ Ա Կորնթ. Գ 17 ։ Զ. 19 ։ Բ Կորնթ. Զ. 16 ։
⫶ Ա Պետ. Բ. 5 ։

—

− Գործ. ԻԱ. 33 ։ ԻԸ. 17. 20 ։ Եփ. Դ. 1 ։ Զ. 20 ։ Փիլիպ. Ա. 7. 13 ։ 14 ։ 17 ։ Կող. Դ. 3. 18 ։ Բ Տիմ. Ա. 8 ։ Բ. 9 ։ Փիլիմ. 1. 9 ։
Բ Կող. Ա. 24 ։ Բ Տիմ. Բ. 10 ։
÷ Հռովմ. Ա. 5 ։ ԺԱ. 13 ։ Ա Կորնթ. Դ. 1 ։ Եփ. Դ 7 Կող. Ա. 25 ։
╤ Գործ. Թ. 15 ։ ԺԳ. 2 ։ Հռովմ. ԺԲ. 3 ։ Գաղ. Ա. 16 ։ Համար. 8 ։
⊢ Գործ. ԻԲ. 17. 21 ։ ԻԶ. 17. 18 ։
⌐ Հռովմ. ԺԶ. 25 ։ Կող. Ա. 26, 27 ։
⊩ Գաղ. Ա. 12 ։
ɛ Եփ. Ա. 9, 10 ։
Բ Ա Կորնթ. Դ. 1 ։ Եփ. Զ. 19 ։
⸸ Գործ. Ժ. 28 ։ Հռովմ. ԺԶ. 25 ։ Համար. 9 ։
⫶ Եփ. Բ. 20 ։

6 Լինել հեթանոսաց ժառանգակիցս եւ մարմնակիցս, եւ հաղորդս աւետեացն 'ի Քրիստոս Յիսուս՝ աւետարանաւն։

7 Որոյ եղէ ես սպասաւոր ըստ պարգեւաց շնորհացն Աստուծոյ՝ որ տուաւ ինձ ըստ յաջողութեան զօրութեան նորա։

8 Ինձ՝ որ նուաստս եմ ամենայն սրբոց, տուաւ շնորհքս այս, 'ի հեթանոսս աւետարանել զանքննին մեծութիւնն Քրիստոսի։

9 Եւ լուսաւոր առնել զամենեսին, թէ զինչ է տնտեսութիւն խորհրդոյն, որ ծածկեալ էր յամենայն յաւիտենից առ Աստուծոյ՝ որ զամենայն ինչ արար։

10 Զի յայտնեսցի այժմ իշխանութեանց եւ պետութեանց՝ որ յերկինս են 'ի ձեռն եկեղեցւոյ՝ բազմապատիկ իմաստութիւնն Աստուծոյ։

11 Ըստ յառաջադրութեան յաւիտենիցն՝ մերոյ զոր արար 'ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

12 Որով ունիմք զհամարձակութիւն եւ զմատուցութիւն յուսով 'ի ձեռն հաւատոց նորա։

13 Վասն որոյ աղաչեմ մի ձանձրանալ 'ի նեղութեանս մերում, որ վասն ձեր է. որ է փառք ձեր։

14 Վասն այսորիկ կրկնեմ ծունր առ

6 Նա որ հեթանոսները ւ ժառանգութեան՝ եւ մարմնոյ ընկեր ի են, եւ Քրիստոս Յիսուսովը աւետիքին մասնակից՝ ծ աւետարանովը,

7 Որ նորան ես Պօղոս սպասաւոր կ եղայ՝ Աստուծոյ շնորհաց պարգեւին պէս՝ որ տրուեցաւ հ ինծի, ինչպէս որ նորա զօրութիւնը ձ յաջողուեց։

8 Ինծի՝ որ ամէն սրբերի յետիններն եմ, տրուեցաւ այս ղ շնորհքս, որ հեթանոսներին ճ մէջումն աւետարանեմ Քրիստոսի անքննելի մ մեծութիւնը.

9 Եւ ամէնքին լուսաւորեմ, թէ ինչ է այն խորհրդի յ տնտեսութիւնը, որ ամէն յաւիտենի ժամանակէն հետեւ ծածկուած էր Աստուծոյ ն մօտ՝ նա որ ամէն բան շ արաւ.

10 Որ հիմիկ իշխանութիւններին եւ ո պետութիւններին՝ որ երկինքումն են, եկեղեցոյ ձեռովք յայտնուի Աստուծոյ այն շատ չ կերպով պ 'ի մաստութիւնը,

11 Այն յաւիտենական առաջադրութեան պէս՝ որ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռովը ջ ըրաւ,

12 Որ նորանով ունինք ռ համարձակութիւն եւ յուսով մօտենալը նորան ս հաւատալովը։

13 Նորահամար աղաչումեմ՝ որ չը ձանձրանաք մեր վ նեղութիւններէն, որ ձեզ համար տ է. որ ձեր փառքն ր է։

14 Որահամար ծունր եմ դնում

ւ Գաղ. Գ. 28, 29. Գղ. Բ. 14.
ի Գղ. Բ. 15. 16.
ծ Գաղ. Գ. 14.
կ Հռովմ. ԺԵ. 16. կող. Ա. 23. 25.
հ Հռովմ. Ա. 5.
ձ Հռովմ. ԺԵ. 18, 19. Գղ. Ա. 19. կող. Ա. 29.
ղ Ա կորնթ. ԺԵ. 9. Ա Տիմ. Ա. 13. 15.
ճ Գաղ. Ա. 16. Բ. 8. Ա Տիմ. Բ. 7. Բ Տիմ. Ա. 11.
մ Գղ. Ա. 7. կող. Ա. 27.
յ Համար. 3. Գղ. Ա. 9.
ն Հռովմ. ԺԶ. 25. Համար. 5. Ա կորնթ. Բ. 7. կող. Ա. 26.
շ Սաղ. ԼԳ. 6. Յովհ. Ա. 3. կող. Ա. 16. Եբր. Ա. 2.
ո Ա կորնթ. Բ. 7. Ա Տիմ. Գ. 16.
չ Ա Պետ. Ա. 12.
պ Հռովմ. Ը. 38. Գղ. Ա. 21. կող. Ա. 16. Ա Պետ. Գ. 22.
ջ Գղ. Ա. 9.
ռ Եբր. Դ. 16.
ս Գղ. Բ. 18.
վ Գործ. ԺԴ. 21. Փիլիպ. Ա. 14. Ա Թես. Գ. 3.
տ Համար 1.
ր Բ կորնթ. Ա. 6.

Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։
15 Ուստի ամենայն հայրութիւն յերկինս եւ յերկրի անուանի ։

16 Զի տացէ ձեզ ըստ մեծութեան փառաց իւրոց, հաստատել զօրութեամբ ՚ի ձեռն Հոգւոյն իւրոյ ՚ի ներքին մարդն ։
17 Բնակել Քրիստոսի հաւատովք ՚ի սիրտս ձեր . սիրով արմատացեալք եւ հաստատեալք ։

18 Զի կարող լինիջիք հասանել ընդ ամենայն սուրբս, զինչ է լայնութիւն եւ երկայնութիւն եւ բարձրութիւն եւ խորութիւն ։

19 Ճանաչել զառաւելութիւն գիտութեան սիրոյն Քրիստոսի . զի լցջիք ամենայն լրութեամբն Աստուծոյ ։
20 Այլ այնմ որ կարողն է առաւել քան զամենայն ինչ առնել յաճախութեամբ՝ քան զոր խնդրեմքն եւ իմանամք, ըստ զօրութեանն՝ որ յաջողեալն է ՚ի մեզ ։

21 Նմա փառք յեկեղեցւոջ, եւ ՚ի Քրիստոս Յիսուս, յամենայն ազգս յաւիտենից յաւիտեանս . ամէն ։

մեր Տէր Յիսուսի Քրիստոսի Հօր առաջին,
15 Որ նորմէնից ամէն հայրութիւն երկինքումն ու երկրումս անուն է ։ առնում,
16 Որ իրեն մեծ փառքին պէս տայ ~ ձեզ, որ նորա Հոգւոյ ձեռովը ‡ հաստատվիք ներսի * մարդումը .

17 Որ՝ Քրիստոս հաւատքով ընակվի ձեր * սրտերումը . եւ սիրով արմատ ձգած եւ հաստատված ‡ լինիք,
18 Որ կարող լինիք ամէն սրբերին հետ ~ իմանալ, թէ ինչ է ‡ լայնութիւնն ու երկայնութիւնը եւ բարձրութիւնն ու խորութիւնը .
19 Որ Քրիստոսի ամէն գիտութենից գերազանց սէրը ճանաչէք . որ Աստուծոյ ամէն լիութենովը ‡ լցվիք ։
20 Բայց նորան՝ որ կարող է առատութենով ‡ անել այն ամէն բաներիցն աւելի՝ քանթէ նա՝ որ մենք ենք խնդրում եւ ‡ իմանում, այն զօրութեան չափովը՝ որ մեզանում յաջողված ‡ է,
21 Նորան փառք ~ եկեղեցումը, որ Քրիստոս Յիսուսումն է՝ ամէն ազգերին մէջ յաւիտեանըս յաւիտենից . ամէն ։

## ԳԼ. Դ

1 Արդ՝ աղաչեմ զձեզ ես՝ որ կապեալս եմ ՚ի Տէր, արժանի գնալ կոչմանն՝ յոր կոչեցարուք ։

1 Ուրեմն աղաչումեմ ձեզ ես՝ որ կապված եմ Տէրին ~ համար, որ այնպէս գնաք ինչպէս որ այն կոչումին կը վայելէ՝ որ նորա մէջ ‡ կանչվեցաք .

• Գլ. Ա. 10 ։ Փիլիպ. Բ. 9–11 ։
~ Հռովմ. Թ. 23 ։ Գլ. Ա. 7 ։ Փիլիպ. Դ. 19. Կող. Ա. 27 ։
‡ Գլ. Զ. 10 ։ Կող. Ա. 11 ։
* Հռովմ. Ը. 22 ։ Բ Կորնթ. Գ. 16 ։
* Յովհ. ԺԴ. 23 ։ Գլ. Բ. 22 ։
‡ Կող. Ա. 23 ։ Բ. 7 ։
~ Գլ. Ա. 18 ։
‡ Յովհ. Ա. 16 ։ Գլ. Ա. 23 ։ Կող. Բ. 9, 10 ։
‡ Հռովմ. ԺԶ. 25 ։ Յուդ. 24 ։
‡ Ա Կորնթ. Բ. 9 ։
‡ Համար. 7 ։ Կող. Ա. 29 ։
~ Հռովմ. ԺԱ. 36 ։ ԺԶ. 27 ։ Եբր. ԺԳ. 21 ։

—

~ Գլ. Գ. 1 ։ Փիլեմ. 1. 9 ։
‡ Փիլիպ. Ա. 27 ։ Կող. Ա. 10 ։ Ա Թես. Բ. 12 ։

2 Ամենայն խոնարհութեամբ եւ հեզութեամբ եւ երկայնմտութեամբ՝ անսալ միմեանց սիրով։

3 Փութալ պահել զմիաբանութիւն Հոգւոյն յօդիւ խաղաղութեան։

4 Մի մարմին՝ եւ մի հոգի. որպէս եւ կոչեցարուք ի մի յոյս կոչման ձերոյ։

5 Մի է Տէր, մի հաւատ՝ մի մկրտութիւն։

6 Մի Աստուած, եւ Հայր ամենեցուն՝ որ ի վերայ ամենայնի եւ ընդ ամենեսին՝ եւ յամենեսին ի մեզ։

7 Այլ իւրաքանչիւր ումեք ի մէնջ տուեալ են շնորհք ըստ չափոյ պարգեւացն Քրիստոսի։

8 Վասն որոյ եւ ասէ. Ել ի բարձունս՝ գերեաց զգերութիւն. եւ ետ պարգեւս մարդկան։

9 Որ ելն զի՞նչ է, եթէ ոչ՝ զի էջ նախ ի ստորին կողմն երկրի։

10 Որ էջն, նոյն է՝ եւ որ ելն ի վեր քան զամենայն երկինս. զի լցցէ զամենայն։

11 Եւ նա ետ զոմանս առաքեալս, զոմանս մարգարէս, զոմանս աւետարանիչս, զոմանս հովիւս եւ վարդապետս։

12 Ի հաստատութիւն սրբոց, ի գործ պաշտաման, ի շինուած մարմնոյն Քրիստոսի։

2 Ամէն խոնարհութեամբ եւ հեզութեամբ եւ երկայնմտութեամբ, եւ իրար համբերեցէք գ սիրով։

3 Ջանք ըրէք Հոգւոյ միաբանութիւնը պահել՝ խաղաղութեան դ կապովը։

4 Մէկ ե մարմին՝ եւ մէկ զ Հոգի. ինչպէս որ ալ կոչուեցաք ձեր կոչումի մէկ յուսոյ է մէջ.

5 Մէկ Տէր ը է, մէկ թ հաւատք, մէկ ժ մկրտութիւն,

6 Մէկ Աստուած, եւ ամէնքի ի Հայր՝ որ ամէնքին վրայ եւ ամէնքին հետ՝ եւ մեր ամէնքիս լ մէջ։

7 Բայց մեր ամէն մէկիս տրուած է շնորհքը՝ Քրիստոսի պարգեւներուն չափին խ պէս։

8 Ասոր համար ալ ասումէ. ծ Վեր ելաւ բարձր կ տեղերը՝ գերի առաւ գերութիւնը. եւ մարդկանց պարգեւներ տուաւ։

9 Նա՛ որ վեր ելաւ՝ ի՞նչ է, եթէ ոչ՝ որ առաջ վար իջաւ երկրի ցած հ կողմը։

10 Նա՛ որ վար իջաւ, նոյն նա է՝ որ ամէն երկինքներէն աւելի բարձր վեր ձ ելաւ, որ ամէնքը ղ լեցնէ։

11 Եւ նա մէկ քանիները առաւ որ առաքեալ ըլլան, մէկ քանիները ճ մարգարէ, մէկ քանիները մ աւետարանիչ, մէկ քանիները յ հովիւ եւ ն վարդապետ.

12 Որ սրբերը հաստատուին՝ պաշտամունքի գործին շ համար, Քրիստոսի ո մարմնոյ շինութեան չ համար,

գ Գործ. Ի. 19. Գաղ. Ե. 22, 23. Կող. Գ. 12, 13.
դ Կող. Գ. 14.
ե Հռովմ. ԺԲ. 5. Ա Կորնթ. ԺԲ. 12, 13. Եփ. Բ. 16.
զ Ա Կորնթ. ԺԲ. 4. 11.
է Եփ. Ա. 18.
ը Ա Կորնթ. Ա. 13. Ը. 6. ԺԲ. 5. Բ Կորնթ. ԺԱ. 4.
թ Յուդ. 3. Համար. 13.
ժ Գաղ. Գ. 27, 28. Եբր. Զ. 6.
ի Մաղ. Բ. 10. Ա Կորնթ. Ը. 6. ԺԲ. 6.
լ Հռովմ. ԺԱ. 36.
խ Հռովմ. ԺԲ. 3, 6. Ա Կորնթ. ԺԲ. 11.
ծ Սաղ. ԿԸ. 18.
կ Դատ. Ե. 12. Կող. Բ. 15.
հ Յովհ. Գ. 13. Զ. 33. 63.
ձ Գործ. Ա. 9, 11. Ա Տիմ. Գ. 16. Եբր. Դ. 14. Է. 26. Ը. 1. Թ. 24.
ղ Գործ. Բ. 33.
ճ Ա Կորնթ. ԺԲ. 28. Եփ. Բ. 20.
մ Գործ. ԻԱ. 8. Բ Տիմ. Դ. 5.
յ Գործ. Ի. 28.
ն Հռովմ. ԺԲ. 7.
շ Ա Կորնթ. ԺԲ. 7.
ո Եփ. Ա. 23. Կող. Ա. 24.
չ Ա Կորնթ. ԺԴ. 26.

13 Մինչեւ հասցուք ամենեքեան 'ի մի միաբանութիւն հաւատոյ եւ գիտութեան Որդւոյն Աստուծոյ, յայր կատարեալ 'ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի ։

14 Զի մի յայսմհետէ լինիցիմք տղայք խռովեալք եւ տատանեալք յամենայն հողմոց վարդապետութեան, խաբէութեամբ մարդկան. խորամանկութեամբ 'ի խաբէութիւն մոլորութեան ։

15 Այլ ճշմարտեալք սիրով՝ աճեսցուք 'ի նա զամենայն, որ է գլուխ Քրիստոս ։

16 Ուստի ամենայն մարմինն յօդեալ եւ պատշաճեալ ամենայն խաղալեօք տարբերութեան՝ ըստ ազդեցութեան՝ չափով ըստ իւրաքանչիւր մասին՝ զաճումն մարմնոյ գործէ՝ 'ի շինած անձին իւրոյ սիրով ։

17 Արդ՝ զայս ասեմ, եւ ուխտեմ 'ի Տէր. մի եւս ձեզ գնալ օրինակ գնալ՝ որպէս եւ այլ հեթանոսք գնան՝ ունայնութեամբ մտաց իւրեանց ։

18 Որոց խաւարեալ են միտք իւրեանց, եւ օտարացեալ են 'ի կենաց անտի Աստուծոյ՝ վասն ագիտութեանն՝ որ է 'ի նոսա, վասն կուրութեան սրտից իւրեանց ։

19 Որք զանձանց իւրեանց զյոյս հատին, եւ մատնեցին զանձինս գիջութեան, 'ի գործս ամենայն պղծութեան ագահութեամբ ։

20 Այլ դուք ոչ այսպէս ուսարուք զՔրիստոս ։

13 Մինչեւ որ ամէնքս հասնինք հաւատքի մէկ միաբանութեան մէջ՝ եւ Աստուծոյ Որդւոյ գիտութեան ղ մէջ. եւ կատարեալ մարդ ըլլանք Քրիստոսի կատարեալ հասակին ճ չափովը .

14 Որ ասկից ետեւ տղայ – չըլլանք չփոթված եւ այս կողմն այն կողմը շարժված վարդապետութեան – ամէն ճ քամիներէն՝ մարդկանց խաբեբայութեամբը . որ խորամանկութեամբ խաբեն եւ + մոլորացնեն ։

15 Բայց ճշմարտութիւն ըլլանք ր սիրով , եւ աճինք ամէն բանով շ նորանում՝ որ է գլուխը – Քրիստոս ,

16 Որ նորանից բոլոր մարմինն իրար հետ կապված՝ եւ հաղորդութեան ամէն խաղերովը ÷ յարմարված՝ այն զօրութեան չափովը՝ որ ամէն մէկ անդամումն է՝ այն մարմնոյ աճիլը գործումէ՝ իրեն անձը սիրով շինելոյ համար ։

17 Ուրեմն սա եմ ասում՝ եւ վկայում Տէրով . որ դուք նորէն չըգնաք այն + կերպովն՝ ինչպէս որ ուրիշ հեթանոսներն են գնում իրենց մտքի • ունայնութեամբը ,

18 Որ նորանց սրտերը խաւարված ÷ են , եւ օտար են Աստուծոյ կեանքիցը , այն ագէտութեան պատճառովն՝ որ նորանցում – է . իրենց սրտերի կուրութեան ք համար ,

19 Որ իրենց անձների յոյսը ÷ կտրեցին , եւ իրենց անձները մատնեցին գիջութեան , ամէն պղծութեան գործերի մէջ՝ ⁊ ագահութեամբ ։

20 Բայց դուք Քրիստոսին այսպէս չը սորվեցիք ։

ղ Կող. Բ. 2.
ճ Ա Կորնթ. ԺԴ. 20. Կող. Ա. 28.
– Եսայ. ԻԸ. 9. Ա Կորնթ. ԺԳ. 20.
– Եբր. ԺԳ. 9.
ճ Մատթ. ԺԱ. 7.
+ Հռովմ. ԺԶ. 18.
Բ Կորնթ. Բ. 17.
ր Զաք. Ը. 16. Բ Կորնթ. Դ. 2. Հռովմ. 25. Ա Յովհ. Դ. 18.
շ Գղ. Ա. 22. Բ 21.
– Կող. Ա. 18.
÷ Կող. Բ. 19.
+ Գղ. Բ. 1—3. Հռովմ. 22. Կող. Դ. 7. Ա Պետ. Դ. 3.
• Հռովմ. Ա. 21.
÷ Գործ. ԻԶ. 18.
– Գղ. Բ. 12. Գաղ. Դ. 8. Ա Թես. Դ. 5.
ք Հռովմ. Ա. 21.
÷ Ա Տիմ. Դ. 2.
⁊ Հռովմ. Ա. 24. 26. Ա Պետ. Դ. 3.

21 Թէպէտ եւ լուարուք զնմանէ, եւ նովաւ ուսայք՝ որպէս է ճշմարտութիւնն Յիսուսի։

22 'Ի բաց մերկանալ 'ի ձէնջ ըստ առաջին գնացիցն զմարդն հին՝ զապականեալն ցանկութեամբք խաբէութեանն։

23 Եւ նորոգել հոգւովն մտաց ձերոց։

24 Եւ զգենուլ զնոր մարդն՝ որ ըստ Աստուծոյն հաստատեալ է՝ արդարութեամբ եւ սրբութեամբ ճշմարտութեանն։

25 Վասն որոյ 'ի բաց ընկեցէք զստութիւն. խօսեցարուք զճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում, զի եմք միմեանց անդամք։

26 Բարկանայք՝ եւ մի մեղանչէք. արեգակն 'ի վերայ բարկութեան ձերոյ մի մտցէ։

27 Եւ մի տայք տեղի Սատանայի։

28 Որ գողանայրն՝ մի եւս գողասցի, այլ մանաւանդ վաստակեսցէ գործել ձեռօք իւրովք զբարիս. զի բաւական լիցի տալ՝ ում պիտոյ իցէ։

29 Ամենայն բան աղտեղ 'ի բերանոյ ձերմէ մի ելցէ. այլ որ ինչ բարին է 'ի շինած պիտոյից, զի տացէ շնորհս այնոցիկ՝ որ լսենն։

30 Եւ մի տրտմեցուցանէք զՀոգին Սուրբ Աստուծոյ, որով կնքեցարուք յաւուրն փրկութեան։

21 Թէ որ նորանից լսեցիք, եւ նորանով սովորեցիք՝ ինչպէս որ ճշմարտութիւն է ե Յիսուսումը.

22 Որ ձեզանից դուրս զ հանէք հին է մարդն այն առաջին գնացքին պէս, նա՝ որ խաբեբայ ցանկութիւններով ապականուած ը է,

23 Եւ ձեր մտքի հոգւովն թ նորոգուիք.

24 Եւ նոր մարդն ժ հագնիք՝ որ Աստուծոյն պէս ստեղծուած է՝ ճշմարիտ արդարութեամբ եւ ի սրբութեամբ.

25 Նրահամար ձգեցէք սուտ ասելը. խօսեցէք ճշմարտութիւն ամէն մարդ իրեն ընկերին լ հետ. ինչու որ մենք իրար անդամ խ ենք.

26 Թէ որ բարկանաք՝ էլ մի մեղանչէք. թող արեգակը ձեր բարկութեան վերայ ծ չը մանէ.

27 Եւ պատճառ չը տաք կ Սատանային.

28 Նա՝ որ գողանումէր՝ թող էլ չը գողանայ, բայց էլ աւելի աշխատի իրեն ձեռներովը բարին հ գործելով. որ բաւական ունենայ տալոյ՝ ում որ պէտք ձ է.

29 Ամենեւին գէշ խօսք չը դուրս գայ ձեր ղ բերանիցը. բայց նա՝ որ բարի է՝ շինութեան համար ճ հարկաւոր, որ շնորհք տայ նորանց՝ որ մ լսումեն.

30 Եւ մի տրտմեցնէք Աստուծոյ Սուրբ յ Հոգին, որ նորանով կնքեցաք ն դէպի փրկութեան շ օրը.

ե Եփ. Ա. 13։
զ Կող. Բ. 11։ Գ. 8. 9։ Եբր. ԺԲ 1։ Ա Պետ. Բ. 1։
է Հռովմ. Զ. 6։
ը Եփ. Բ. 2. 3։ Համար. 17։ Կող. Գ. 7։ Ա Պետ. Գ. 3։
թ Հռովմ. ԺԲ. 2։ Կող. Գ. 10։
ժ Հռովմ. Զ. 4։ Բ Կորնթ. Ե. 17։ Գաղ. Զ. 15։ Եփ. Զ. 11։ Կող. Գ. 10։
ի Եփ. Բ. 10։
լ Զաք. Ը. 16։ Համար. 15։ Կող. Գ. 9։
խ Հռովմ. ԺԲ. 5։
ծ Սաղ. Դ. 4։ ԼԵ 8։
կ Բ Կորնթ. Բ. 10. 11։ Յակ. Դ. 7։ Ա Պետ. Ե 9։
հ Գործ. Ի. 35։ Ա Թես. Դ. 11։ Բ Թես. Գ. 8. 11. 12։
ձ Ղու. Գ. 11։
ղ Մատթ. ԺԲ. 36 Եփ. Ե. 4։ Կող. Գ. 8։
ճ Կող. Դ. 6։ Ա Թես. Ե. 11։
մ Կող. Գ. 16։
յ Եսայ. Է. 13։ ԿԳ. 10։ Եզեկ. ԺԶ 43։ Ա Թես. Ե 19։
ն Եփ. Ա. 13։
շ Ղու. ԻԱ. 28։ Հռովմ. Ը. 23։ Եփ. Ա. 14։

31 Ամենայն դառնութիւն եւ բարկութիւն՝ եւ սրտմտութիւն եւ աղաղակ՝ եւ հայհոյութիւն բարձցի 'ի ձէնջ ամենայն չարութեամբն հանդերձ :

32 Լերուք ընդ միմեանս քաղցունք՝ գթածք. շնորհել միմեանց, որպէս եւ Աստուած Քրիստոսիւ շնորհեաց մեզ :

## ԳԼ. Ե

1 Եղերուք նմանօղք Աստուծոյ, իբրեւ որդիք սիրելիք :

2 Եւ գնացէք սիրով՝ որպէս եւ Քրիստոս սիրեաց զմեզ, եւ մատնեաց զանձն իւր 'ի վերայ մեր՝ պատարագ եւ զենումն Աստուծոյ 'ի հոտ անուշից :

3 Այլ պոռնկութիւն եւ ամենայն պղծութիւն, կամ ագահութիւն՝ եւ անուանեսցի մի 'ի միջի ձերում, որպէս եւ վայել է սրբոց.

4 Եւ զազրութիւն՝ կամ խօսք յիմարութեան կամ խեղկատակութիւն՝ որ ոչ վայել է. այլ մանաւանդ գոհութիւն :

5 Զայս անգիտացեալ գիտասջիք. թէ ամենայն պոռնիկ՝ կամ պիղծ՝ կամ ագահ, որ է կռապաշտ՝ ոչ ունի ժառանգութիւն յարքայութեանն Քրիստոսի եւ Աստուծոյ :

6 Մի ոք զձեզ խաբեսցէ բանիւք սնոտեաւք. զի վասն այսորիկ գայ բարկութիւն Աստուծոյ

31 Ամէն դառնութիւն եւ բարկութիւն եւ սրտմտութիւն եւ աղաղակ եւ հայհոյութիւն թող վերառնուի ձեր մէջէն՝ ամէն չարութեան հետ :

32 Իրար հետ քաղցր էլէք, գթած՝ որ իրար ներէք, ինչպէս որ Աստուած ալ Քրիստոսովը մեզ ներեց :

1 Նմանօղ էլէք Աստուծոյն՝ ինչպէս սիրելի որդիքներ :

2 Եւ սիրով գնացէք, ինչպէս որ Քրիստոս ալ սիրեց մեզ, եւ իրեն անձը մեզ համար մատնեց, պատարագ եւ մատաղ՝ Աստուծոյ անոյշ հոտ ըլլալու :

3 Բայց պոռնկութիւն եւ ամէն պղծութիւն, կամ ագահութիւն՝ թող ալ չանուանուի ձեր մէջումը, ինչպէս որ սրբերուն կը վայլէ,

4 Եւ զարշութիւն, կամ յիմար խօսքեր, կամ ծաղրաբանութիւն՝ որ չըր վայլելում. բայց ալ աւելի գոհութիւն :

5 Ասոնց անգիտացէք գիտցէք. որ ամէն պոռնիկ՝ կամ պիղծ՝ կամ ագահ, որ նա կռապաշտ է՝ ժառանգութիւն չունի Քրիստոսի եւ Աստուծոյ արքայութենումը :

6 Չըլլի որ մէկը խաբէ ձեզ ունայն խօսքերով. ինչու որ իսկ այս պատճառովն է՝ Աստուծոյ բար-

ա Կող. Գ. 8. 19 :
բ Տիտ. Գ. 2. Եբր. Գ. 11 : Ա Պետ. Բ. 1 :
գ Տիտ. Գ. 3 :
դ Բ Կորնթ. Բ. 10. Կող. Գ. 12, 13 :
ե Մատթ. Զ. 14. Մարկ. ԺԱ. 25 :
—
ա Մատթ. Ե. 45. 48 : Ղուկ. Զ. 36. Գղ. Գ. 32 :
բ Յովհ. ԺԳ. 34 : ԺԵ. 12 : Ա Թես. Դ. 9 : Ա Յովհ. Գ. 11. 23 : Դ. 21 :
գ Գաղ. Ա. 4 : Բ. 20 : Եբր. Է. 27 : Թ. 14. 26 : Ժ. 10. 12 : Ա Յովհ. Գ. 16 :
դ Ծննդ. Ը. 21 : Ղև. Ա. 9 : Բ Կորնթ. Բ. 15 :
ե Հռովմ. Զ. 13 : Ա Կորնթ. Զ. 18. Բ Կորնթ. ԺԲ. 21 : Գղ. Ե. 19. 20 : Կող. Գ. 5 : Ա Թես. Դ. 3, 7 :
զ Ա Կորնթ. Ե. 1 :
է Մատթ. ԺԲ. 35. Գղ. Դ. 29 :
ը Հռովմ. Ա. 23 :
թ Ա Կորնթ. Զ. 9 : Գաղ. Ե. 19. 21 :
ժ Կող. Գ. 5 : Ա Տիմ. Զ. 17 :
ի Գաղ. Ե. 21 : Յայտ. ԻԲ. 15 :
լ Երեմ. ԻԹ. 8 : Մատթ. ԻԴ. 4 : Կող. Բ. 4. 8. 18 : Բ Թես. Բ. 3 :

'ի վերայ որդւոցն՝ անհաւանու-
թեան ։
7 Մի այսուհետեւ լինիք բաժա-
նորդք նոցա ։
8 Զի թէպէտ եւ երբեմն էիք
խաւար, արդ լոյս էք 'ի Տէր․ իբ-
րեւ զորդիս լուսոյ գնասջիք ։
9 Զի պտուղ լուսոյ ամենայն բա-
րութեամբ է՝ եւ արդարութեամբ
եւ ճշմարտութեամբ ։
10 Փորձեցէք զինչ է հաճոյ Տեա-
ռն ։
11 Եւ մի կցորդ լինիք անպտ-
ղութեան գործոցն խաւարի․ այլ
մանաւանդ յանդիմանեցէք ։
12 Զի որ 'ի ծածուկ ինչ գործի 'ի
նոսա՝ զայն եւ խօսել աղտեղի է ։
13 Այլ ամենայն ինչ յանդիմանե-
ալ 'ի լուսոյ՝ յայտնի լինի․ զի ա-
մենայն ինչ՝ որ յայտնի է՝ լոյս է ։
14 Վասն որոյ եւ ասէ․ Արի որ
ննջեսդ, եւ կանգնեաց 'ի մեռելոց,
եւ լուսատու լիցի քեզ Քրիստոս ։
15 Տեսջիք՝ որպէս ճշմարտիւ գը-
նայցէք․ մի իբրեւ անիմաստք,
16 Այլ իբրեւ իմաստունք․ գնե-
ցէք զժամանակս՝ զի աւուրքս չա-
րութեան են ։
17 Վասն այնորիկ մի լինիք ան-

կութիւնը գալիս է ե անհաւանու-
թեան որդիքներին զ վերայ ։
7 Ուրեմն մասնակից մի լինիք
նորանց հետ ։
8 Որ թէ եւ մին ժամանակ խա-
ւար է էիք, էլ հիմիկ լոյս էք ը Տէ-
րումը․ լուսոյ որդիքներին պէս
թ գնացէք ։
9 Ինչու որ լուսոյ պտուղն ամէն
բարութիւնով է, եւ արդարութիւ-
նով, եւ ճշմարտութիւնով ։
10 Փորձեցէք՝ թէ ինչ է հաճոյ
ի Տէրին ։
11 Եւ մասնակից մի լ լինիք խա-
ւարի անպտուղ խ գործքերին․ բայց
էլ աւելի ծ յանդիմանեցէք ։
12 Պատճառն որ նա՝ որ նորանց
միջումը ծածուկ է գործվում, նա
խօսքով ասելն էլ գարշելի կ է ։
13 Բայց ամէն բան՝ լուսիցն որ
յանդիմանվի՝ յայտնի է լինում․
ինչու որ ամէն բան՝ որ յայտնի է՝
նա լոյս հ է ։
14 Սրահամար էլ ասում է․ Վեր-
կաց դու՝ որ քնած ձ ես, եւ վեր
կանգնէ մեռելներիցը, եւ Քրիստոս
կը լուսաւորէ ղ քեզ ։
15 Նայեցէք թէ ինչպէս զգուշ
գնաք․ չէ թէ ինչպէս ճ անխելք-
ները,
16 Բայց ինչպէս խելացիները․ գը-
նեցէք մ ժամանակըս, ինչու որ՝ օ-
րերս չար յ են ։
17 Նրահամար մի լինիք ն անմիտ,

ե Հռովմ. Ա. 18. զ Գլ. Բ. 2. է Եսայ. Թ. 1. Մատթ. Դ. 16. Գործ. ԻԶ. 18. Հռովմ. Ա. 21. Գլ. Բ. 11, 12. Դ. 18. Տիտ. Գ. 3. Ա Պետ. Բ. 9. ը Յովհ. Ը. 12. ԺԲ. 46. Բ Կորնթ. Գ. 18. Դ. 6. Ա Թես. Ե. 5. Ա Յովհ. Բ. 9. թ Ղուկ. ԺԶ. 8. Յովհ. ԺԲ. 36. ժ Գաղ. Ե. 22. ի Հռովմ. ԺԲ. 2. Փիլիպ. Ա. 10. Ա Թես. Ե. 21. Ա Տիմ. Բ. 3. լ Ա Կորնթ. Ե. 9, 11. Ժ. 20. Բ Կորնթ. Զ. 14. Բ Թես. Գ. 6. 14. խ Հռովմ. Զ. 21. ԺԳ. 12. Գաղ. Զ. 8. ծ Ղև. ԺԹ. 17. Ա Տիմ. Ե. 20. կ Հռովմ. Ա. 24, 26. Վերև. 3. հ Յովհ. Գ. 20, 21. Եբր. Դ. 13. ձ Եսայ. Կ. 1. Հռովմ. ԺԳ. 11. 12. Ա Կորնթ. ԺԵ. 34. Ա Թես. Ե. 6. ղ Յովհ. Ե. 25. Հռովմ. Զ. 4, 5. Գլ. Բ. 5. Կող. Գ. 1. ճ Կող. Դ. 5. մ Կող. Դ. 5. Գաղ. Զ. 10. յ Ժող. ԺԱ. 2. ԺԲ. 1. Յովհ. ԺԲ. 35. Գլ. Զ. 13. ն Կող. Դ. 5.

միտք , այլ իմացարուք՝ զինչ կամք
են Տեառն ։
18 Եւ մի՛ արբենայք գինւով , յո-
րում գիջութիւն է , այլ մանա-
ւանդ լցարուք Հոգւով ։
19 Խօսել 'ի միտս ձեր սաղմոսիւ-
քւ , եւ օրհնութեամբ եւ երգովք
հոգեւորօք , երգել եւ սաղմոս ա-
սել 'ի սիրտս ձեր Տեառն ։
20 Գոհացարուք յամենայն ժամ 'ի
վերայ ամենայնի , յանուն Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ Հօրն եւ
Աստուծոյ ։
21 Հնազանդ լերուք միմեանց եր-
կիւղիւն Քրիստոսի ։
22 Կանայք իւրեանց արանց հնա-
զանդ լիցին իբրեւ Տեառն ։

23 Զի այր է գլուխ կնոջ՝ որպէս
եւ Քրիստոս գլուխ է եկեղեցւոյ ,
եւ ինքն է Փրկիչ մարմնոյ ։

24 Այլ որպէս եկեղեցին հնազանդ
լինի Քրիստոսի , նոյնպէս եւ կա-
նայք իւրեանց արանց յամենայնի ։

25 Արք՝ սիրեցէք զկանայս ձեր .
որպէս եւ Քրիստոս սիրեաց զեկե-
ղեցի , եւ զանձն իւր մատնեաց
վասն նորա ։
26 Զի զնա՛ սրբեսցէ սրբութեամբ
աւազանին բանիւ ։
27 Զի կացուսցէ ինքն իւր յան-
դիման փառաւոր զեկեղեցի , զի մի՛
ունիցի ինչ արատ՝ կամ աղտեղու-

այլ [ա] իմացէք՝ թէ ինչ է Տէրի
[բ] կամքը ։
18 Եւ մի՛ հարբենաք գինով , որ
նորանում անառակութիւն կայ ,
բայց աւելի լցուեցէք [գ] Հոգով ,
19 Որ ձեր սրտերումդ սաղմոսներ
եւ օրհնութիւններ խօսիք՝ եւ հո-
գեւոր երգեր . որ Տէրին երգէք եւ
սաղմոս ասէք ձեր [դ] սրտերումդ ։
20 Ամէն ժամանակ ամէն բանի
վերայ գոհացէք Աստուածանից եւ
[ե] Հօրից՝ մեր Տէր Յիսուսի Քրիս-
տոսի [զ] անունովը ։
21 Իրար հնազանդ եղէք Քրիստո-
սի [է] վախովը ։
22 Կանայքն թող հնազանդ լինին
իրենց [ը] մարդկանցն՝ ինչպէս [թ] Տէ-
րին ։
23 Պատճառն որ մարդն է կնկան
[ժ] գլուխը՝ ինչպէս որ Քրիստոս էլ
եկեղեցոյ գլուխն [ի] է , եւ ինքն է-
րէն մարմնոյ Փրկիչն [լ] է ։
24 Բայց ինչպէս որ եկեղեցին հը-
նազանդ է լինում Քրիստոսին , այն-
պէս էլ կանայքն իրենց մարդկան-
ցըն ամէն բանի [խ] մէջ ։
25 Մարդիկ՝ սիրեցէք ձեր կանան-
ցը , ինչպէս որ Քրիստոսն էլ սի-
րեց [ծ] եկեղեցուն , եւ իրեն անձը
մատնեց նորա [կ] համար ,
26 Որ նորան սրբէ աւազանի [հ] սրր-
բութեամբը՝ [ձ] խօսքովը .
27 Որ ինքն իրեն առաջին փառա-
ւոր կանգնացնէ [ղ] եկեղեցուն , որ
բնաւ չունենայ մին արատ կամ կեղ-

ա Հռովմ . ԺԲ . 2 .
բ Ա Թես . Դ . 3 . Ե . 18 .
գ Առակ . Ի . 1 . ԻԳ . 29 . 30 . Եսայ Ե . 11 . 22 . Ղուկ . ԻԱ . 34 .
դ Գործ . ԺԶ . 25 . Ա Կորնթ . ԺԴ . 26 . Կող . Գ . 16 . Յակ . Ե . 13 .
ե Սաղ . ԼԴ . 1 . Եսայ . ԿԳ . 7 . Կող . Գ . 17 . Ա Թես . Ե . 18 . Բ Թես . Ա . 3 .
զ Եբր . ԺԳ . 15 . Ա Պետ . Բ . 5 . Դ . 11 .
է Փիլիպ . Բ . 3 . Ա Պետ . Ե . 5 .
ը Ծննդ . Գ . 16 . Ա Կորնթ . ԺԴ . 34 . Կող . Գ . 18 . Տիտ . Բ . 5 . Ա Պետ . Գ . 1 .
թ Եփ . Զ . 5 .
ժ Ա Կորնթ . ԺԱ . 3 .
ի Եփ . Ա . 22 . Դ . 15 . Կող . Ա . 18 .
լ Եփ . Ա . 23 .
խ Կող . Գ . 20 . 22 . Տիտ . Բ . 9 .
ծ Կող . Գ . 19 . Ա Պետ . Գ . 7 .
կ Գործ . Ի . 28 . Գաղ . Ա . 4 . Բ . 20 . Հանմբ . 2 .
հ Յովհ . Գ . 5 . Տիտ . Գ . 5 . Եբր . Ժ . 22 . Ա Յովհ . Ե . 6 .
ձ Յովհ . ԺԵ . 3 . ԺԷ . 17 .
ղ Բ Կորնթ . ԺԱ . 2 . Կող . Ա . 22 .

թիւն , կամ այլ ինչ յայնպիսեաց ·
այլ զի իցէ սուրբ եւ անարատ ։

28 Նոյնպէս պարտին արք սիրել
զիւրեանց կանայս՝ իբրեւ զիւրեանց
մարմինս · որ սիրէ զկին իւր՝ զան-
ձըն իւր սիրէ ։
29 Զի ոչ ոք երբէք ատեաց զան-
ձըն իւր , այլ սնուցանէ եւ դար-
մանէ զնա · որպէս եւ Քրիստոս
զեկեղեցի ։
30 Զի անդամք եմք մարմնոյ նո-
րա , 'ի մարմնոյ նորա եւ յոսկերաց
նորա ։
31 Վասն այսորիկ թողցէ այր ըզ
հայր եւ զմայր իւր , եւ երթիցէ ըզ
հետ կնոջ իւրոյ , եւ եղիցին երկո-
քին 'ի մարմին մի ։
32 Խորհուրդս այս մեծ է՝ բայց
ես ասեմ 'ի Քրիստոս եւ յեկեղեցի ։

33 Այլ եւ դուք նոյնպէս մի ըստ
միոջէ · զի իւրաքանչիւրաք զիւր
կին այնպէս սիրեսցէ՝ իբրեւ զիւր
անձն · եւ կին երկնչիցի յառնէ
իւրմէ ։

տատութիւն կամ ուրիշ այսպէսի
ի բաներ , բայց որ սուրբ եւ անա-
րատ լ լինի ։
28 Իսկ այնպէս պէտք է՝ որ մար-
դիկն իրենց կանանցը սիրեն, ինչպէս
իրենց մարմիններնը · նա որ իրեն կըն-
կանը սիրումէ, իրեն անձն է սիրում ։
29 Ինչու որ ոչ մինը չը կայ՝ որ
իրեն անձըն ատէ , բայց կերակրու-
մէ եւ պահպանումնորան · ինչպէս
որ Քրիստոս էլ եկեղեցին ։
30 Պատճառն որ նորա մարմնոյ
անդամներն ենք , նորա մարմնիցը
եւ նորա խ ոսկորներիցը ։
31 Սորա համար մարդը կը թողէ ի-
րեն հօրն ու մօրը , եւ իրեն կըն-
կան հետ ծ կըցնայ , եւ երկուքը
մին մարմին կ կը լինին ։
32 Այս խորհուրդս մեծ է , բայց
ես Քրիստոսի եւ եկեղեցոյ վերայ
եմ ասում ։
33 Իսկ այնպէս դուք էլ ամէն մէ-
կըդ · ինչու որ ամէն մէկն իրեն
կնկանը թող այնպէս սիրէ , ինչպէս
իրեն հ անձը · եւ կինը վախենայ ի-
րեն ձ մարդուցը ։

## ԳԼ · Զ

1 Որդիք՝ հնազանդ լերուք ծնո-
ղաց ձերոց 'ի Տէր · զի այն է ար-
ժանն ։
2 Պատուեա զհայր քո եւ զմայր ·
որ է առաջին պատուիրան յաւե-
տեաւ ։
3 Զի քեզ բարի եղիցի , եւ եր-
կայնակեաց լինիցիս 'ի վերայ երկրի ։
4 Հարք՝ մի զայրացուցանէք զոր-
դիս ձեր , այլ սնուցանիջիք զնոսա
խրատու եւ ուսմամբ Տեառն ։

1 Որդիք՝ հնազանդ եղէք ձեր
ծնողներին Տէրովը · ինչու որ էն է
ղ արժանն ։
2 Պատուիր քո հօրդ եւ մօրդ ·
որ էս առաջին պատուիրանն է ա-
ւետիքին ճ հետ ։
3 Որ քեզ լաւ լինի , եւ երկար
ապրիս երկրի վերայ ։
4 Հարք՝ մի բարկացնէք ձեր մ որ-
դիքներդ · բայց մեծացրէք նորանց
խրատով եւ Տէրի յ ուսմունքովը ։

ի Երգ · Դ · 7 ·
լ Գղ · Ա · 4 ·
խ Ծննդ · Բ · 22 · Հռովմ · ԺԲ · 5 · Ա Կորնթ · Զ · 15 · ԺԲ · 27 ·
ծ Ծննդ · Բ · 24 · Մատթ · ԺԹ · 5 · Մարկ · Ժ · 7 · 8 ·
կ Ա Կորնթ · Զ · 16 ·
հ Համար 25 · Կող · Գ · 19 ·
ձ Ա Պետ · Գ · 6 ·

—

ղ Առակ · ԻԳ · 22 · Կող · Գ · 20 ·
ճ Ելից · Ի · 12 · Բ Օրին · Ե · 16 · Իե · 16 · Երեմ · ԼԵ · 18 · Եզեկ · ԻԲ · 7 · Մաղ · Ա · 6 · Մատթ · ԺԵ · 4 · Մարկ · Է · 10 ·
մ Կող · Գ · 21 ·
յ Ծննդ · ԺԸ · 19 · Բ Օրին · Դ · 9 · Զ · 7 · 20 · ԺԱ · 19 · Սաղ · ՀԸ · 4 · Առակ · ԺԹ · 18 · ԻԲ · 6 · ԻԹ · 17

5 Ծառայք՝ հնազանդ լերուք տե-
րանց ձերոց մարմնաւորաց, ահիւ
եւ դողութեամբ եւ միամտութեամբ
սրտից ձերոց՝ որպէս եւ Քրիստոսի ։
6 Մի առ ականէ ծառայել իբրեւ
մարդահաճոյք. այլ իբրեւ ծառայք
Քրիստոսի առնել զկամս Աստուծոյ ։
7 Սրտի մտօք ծառայել՝ իբրեւ
Տեառն, եւ մի իբրեւ մարդկան ։
8 Գիտասջի՛ք՝ թէ իւրաքանչիւ-
րոք որ զինչ առնէ զբարիս, զնոյն
ընդունի եւ 'ի Տեառնէ՝ եթէ ծա-
ռայ եւ եթէ ազատ ։
9 Եւ դուք տեարք՝ զնոյն առ-
նիջիք առ նոսա. ներելով առնել
զսպառնալիս. գիտասջիք թէ եւ
նոցա եւ ձեր Տէր գոյ յերկինս. եւ
ակնառութիւն ոչ գոյ առաջի նո-
րա ։
10 Այսուհետեւ զօրացարո՛ւք Տե-
րամբ, եւ կարողութեամբ զօրու-
թեան նորա ։
11 Եւ զգեցարո՛ւք զսպառազինու-
թիւնն Աստուծոյ. զի կարօղ լինի-
ջիք կալ ընդդէմ հնարից Սատա-
նայի ։
12 Զի ոչ է մեզ պատերազմ ընդ
մարմնոյ եւ ընդ արեան. այլ ընդ
իշխանութիւնս, եւ ընդ պետու-
թիւնս, եւ ընդ աշխարհակալս խա-
ւարիս այսորիկ՝ ընդ այսս չարու-
թեան՝ որ 'ի ներքոյ երկնից ։
13 Վասն այսորիկ առէք զսպա-
ռազինութիւնն Աստուծոյ, զի կա-

5 Ծառաներ՝ հնազանդ եղէք ձեր
մարմնաւոր ե տէրերուն, վախով եւ
զ դողալով եւ ձեր սրտի միամտու-
թեամբ՝ ինչպէս որ է Քրիստոսին ։
6 Ո՛չ թէ միայն աչքերի առա-
ջին ծառայելով՝ ինչպէս մարդոց
հաճոյ ըլլօղները. բայց ինչպէս Քրի-
ստոսի ծառաները՝ որ Աստուծոյ
կամքն են ը անում,
7 Եւ յօժար մտքով են ծառա-
յում ինչպէս Տէրին, եւ ո՛չ թէ ինչ-
պէս մարդկանց ։
8 Գիտցէք որ ամէն մէկն ինչ
բարի որ անէ, նոյն նա կընդունի
թ Տէրիցը. թէ ծառայ ըլնի եւ թէ
ժ ազատ ։
9 Եւ դուք տէրերդ՝ ճիշդ նոյնն ա-
րէք ի նորանց. որ ներելով անէք
լ սպառնալիքը. գիտցէք որ նորանց
եւ ձեր էլ Տէր կայ ի երկինքումը.
եւ նորա առաջին երեսպաշտու-
թիւն ծ չը կայ ։
10 Այսուհետեւ զօրացէք Տէրով,
եւ նորա զօրութեանը կարողութե-
նովը,
11 Եւ Աստուծոյ զէնքերը հագէք.
որ կարօղ ըլլիք Սատանայի հնարք-
ներին հակառակ հ կենալ ։
12 Ինչու որ մենք մարմնոյ եւ
արեանի հետ պատերազմ ձ չու-
նինք. բայց իշխանութիւններին եւ
պետութիւններին ղ հետ, այս խա-
ւար աշխարհքիս տիրապետողներին
ճ հետ, այն չար ոգիներին հետ՝ որ
երկնքի ներքեւն են ։
13 Սորա համար Աստուծոյ զէնքերն
առէք, որ կարօղ ըլլիք չարին

ե կող. գ. 22 ։ Ա Տիմ. Զ. 1 ։ Տիտ Բ. 9 ։ Ա Պետ Բ. 18 ։
զ Բ կորնթ. Է. 15 ։ Փիլիպ. Բ. 12 ։
է Ա Մնաց. ԻԹ. 17 կող. գ. 22 ։
ը կող. գ. 22, 23 ։
թ Հռովմ. Բ. 6 ։ Բ կորնթ. Ե. 10 կող. գ. 24 ։
ժ գաղ. գ. 28 ։ կող. գ. 11 ։
ի կող. դ. 1 ։
լ Ղկ. ԻԵ. 43 ։
խ Յովհ. ԺԳ. 13 ։ Ա կորնթ. Է. 22 ։
ծ Հռովմ. Բ. 11 ։ կող. գ. 25 ։
կ Գղ. Ա. 19 ։ Դ. 16 ։ կող. Ա. 11 ։
հ Հռովմ. ԺԳ. 12 ։ Բ կորնթ. Զ. 7 ։ Հաւմսր. 13 ։ Ա Թես. Ե. 8 ։
ձ Մատթ. ԺԶ. 17 ։ Ա կորնթ. ԺԵ. 50 ։
ղ Հռովմ. Ը. 38 ։ Գղ. Ա. 21 ։ կող. Բ. 15 ։
ճ Ղու. ԻԲ. 53 ։ Յովհ. ԺԲ. 31 ։ ԺԴ. 30 ։ Գղ. Բ. 2 ։ կող. Ա. 13 ։

րող լինիցիք 'ի դիմի հարկանել չա-
րին՝ յաւուրն չարութեան ։
14 Եւ իբրեւ զամենայն ինչ կա-
տարիցէք , հաստատուն կացէք ․ ըզ-
ատեղի կալջիք պնդեալ զմէջս ձեր
ճշմարտութեամբ , եւ զգեցեալ ըզ-
զրահն արդարութեան ,
15 Եւ ագուցեալ զոտս պատրաս-
տութեամբ աւետարանին խաղա-
ղութեան ։
16 Եւ 'ի վերայ ամենայնի առէք
զվահանն հաւատոյ ․ որով կարող
լինիջիք զամենայն նետս մուխս չա-
րին շիջուցանել ։
17 Եւ առէք զսաղաւարտն փըր-
կութեան , եւ զսուսեր Հոգւոյն՝ որ
է բանն Աստուծոյ ։
18 Ամենայն աղօթիւք եւ խնդ-
րուածովք՝ աղօթս առնել յամենայն
ժամանակի Հոգւով ․ եւ 'ի նոյն ար-
թնիջիք ամենայն ժուժկալութեամբ՝
եւ խնդրուածովք վասն ամենայն
սրբոց ,
19 Եւ վասն իմ ․ զի ինձ տացի
բան 'ի բանալ բերանոյ իմոյ , հա-
մարձակութեամբ ցուցանել զխոր-
հուրդ աւետարանին ։
20 Վասն որոյ պատգամաւորիմ
կապանօքս ․ զի նովին համարձա-
կեցայց , որպէս եւ պարտ իցէ ինձ
խօսել ։
21 Բայց զի գիտիցէք եւ դուք զի-
նէն , զինչ գործիցեմ ․ զամենայն
ինչ ցուցցէ ձեզ Տիւքիկոս սիրելի
եղբայր՝ եւ հաւատարիմ պաշտօն-
եայ 'ի Տէր ։

հակառակ ʼ կենալ՝ չարութեան
չ օրումը ․
14 Եւ երբոր ամէնը կատարէք ,
հաստատ կացէք ․ ուրեմն կանգ-
նեցէք՝ ձեր մէջքերնիդ ճշմարտու-
թենով ն պնդացրած , եւ արդարու-
թեան զրահն ւ հագած ,
15 Եւ ոտներնիդ կօշիկ հագած՝ խա-
ղաղութեան աւետարանի - պատ-
րաստութենովը ․
16 Եւ ամէնէն վերայ հաւատքի
վահանըն առէք ․ որ կարող ըլլէք
չարի ամէն մուխ այրած նետերըն
ւ անցնել ․
17 Եւ փրկութեան՝ սաղաւարտըն
դ առէք , եւ Հոգւոյ սուրըն՝ որ Ա-
ստուծոյ խօսքն է ։
18 Ամէն աղօթքով եւ աղաչան-
քով աղօթք ըրէք ամէն ժամանակ
— Հոգւով ․ եւ նոյնում արթուն կա-
ցէք ամէն - համբերութենով՝ եւ ա-
մէն սուրբերուն համար աղաչանք է ա-
նելով ,
19 Եւ ինձ + համար ․ որ խօսք տըր-
վի ինձ իմ բերանս բանալու ժամա-
նակը , որ համարձակութենով ցոյց
տամ աւետարանի ր խորհուրդները ,
20 Որ նորա համար ես ջ կապան-
քովս պատգամաւոր — եմ ․ որ նո-
րանով համարձակ ըլլամ , ինչպէս
որ ալ պէտք է ինձ ÷ խօսիլ ։
21 Բայց որ դուք ալ գիտնաք
ինձ համար՝ թէ ինչ եմ + գործում ․
ամէն բան ցոյց կըտայ ձեզ Տիւքի-
կոս սիրելի եղբայրը՝ եւ Տէրումը
հաւատարիմ ∘ պաշտօնեան ,

ʼ Բ Կորնթ․ Ժ․ 4
Հռոմ․ 11․
չ Գղ․ Ե․ 16․
ն Եսայ․ ԺԱ․ 5․
Ղուկ․ ԺԲ․ 35․
Ա Պետ․ Ա․ 13․
ւ Եսայ․ ԾԹ․ 17․
Բ Կորնթ․ Զ․ 7․
Ա Թես․ Ե․ 8․
- Եսայ․ ԾԲ․ 7․
Հռոմ․ Ժ․ 15․

ւ Ա Յովհ․ Ե․ 4․
դ Եսայ ԾԹ․ 17․
Ա Թես․ Ե․ 8․
Է Եբր․ Դ․ 12․
Յայտ․ Ա․ 16․
Բ․ 16․ ԺԹ․ 15․
— Ղուկ․ ԺԸ․ 1․
Հռոմ․ ԺԲ․ 12․
Կող․ Դ․ 2․ Ա
Թես․ Ե․ 17․
- Մատթ․ ԻԶ․ 41․

Մարկ․ ԺԴ․ 33․
Է Գղ․ Ա․ 16․ Փի-
լիպ․ Ա․ 4․ Ա
Տիմ․ Բ․ 1․
+ Գործ․ Դ․ 29․
Կող․ Դ․ 3․ Բ
Թես․ Գ․ 1․
ր Բ Կորնթ Գ․ 12․
ջ Գործ․ ԻԶ․ 29․
ԻԸ․ 20․ Գղ․ Գ․
1․ Փիլիպ․ Ա․ 7․

13․ 14․ Բ Տիմ․
Ա․ 16․ Բ 9․
Փիլիմ․ 10․
— Բ Կորնթ Ե․ 20․
÷ Գործ․ ԻԸ․ 31․
Փիլիպ․ Ա․ 20․
Ա Թես․ Բ․ 2․
+ Կող․ Դ․ 7․
∘ Գործ․ Ի․ 4․ Բ
Տիմ․ Դ․ 12․
Տիտ․ Գ․ 12․

22 Զոր առաքեցի առ ձեզ զմին
իրի, զի գիտասջիք դուք զմէնջ.
եւ մխիթարեսցէ զսիրտս ձեր։
23 Խաղաղութիւն ընդ եղբարս.
եւ սէր հաւատովքն հանդերձ յԱստուծոյ 'ի Հօրէ՝ եւ 'ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։
24 Շնորհք ընդ ամենեսին՝ որք սիրեն զՏէր մեր Յիսուս Քրիստոս անեղծութեամբ. ամէն։

22 Որ նորան դրա համար ուղարկեցի ձեզ մօտ. որ դուք ինձ համար գիտենաք՝ եւ ֆ մխիթարուիք։
23 Խաղաղութիւն եղբայրներին հետ, եւ սէր հաւատքով Աստուած Հօրից եւ Տէր Յիսուս = Քրիստոսից։
24 Շնորհք այն ամէնին հետ, որ մեր Տէր Յիսուսին Քրիստոսին սիրում են առանց բ ապականութեան. ամէն։

Եփեսացւոց գրեալ թղթոյն Հռովմայ առաքեցաւ՝ Տիւքիկոսի ձեռամբ։

# ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

## ԱՌ ՓԻԼԻՊՊԵՑԻՍ

---

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 ՊՕՂՈՍ եւ Տիմոթէոս ծառայք Յիսուսի Քրիստոսի՝ ամենայն սրբոց 'ի Քրիստոս Յիսուս, որ են 'ի կողմանս Փիլիպեցւոց՝ եպիսկոպոսակցօք եւ սարկաւագօք.
2 Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ՝ եւ 'ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։
3 Գոհանամ զԱստուծոյ իմոյ 'ի վերայ ամենայն յիշատակաց ձերոց,
4 Յամենայն ժամ յամենայն խնդրուածս իմ՝ վասն ձեր ամենեցուն առնել աղօթս խնդութեամբ.
5 Վասն հաղորդութեան ձերոյ ընդ աւետարանին, յօրէ յառաջնմէ մինչեւ ցայժմ։
6 Վստահ եմ յայդ, թէ որ սկըսաւն 'ի ձեզ զգործս բարեաց՝ կատարեսցէ մինչեւ յօրն Յիսուսի Քրիստոսի։

1 ՊՕՂՈՍ եւ Տիմոթէոս Յիսուսի Քրիստոսի = ծառաները՝ ամէն սուրբերին Յիսուս Քրիստոսումը, որ Փիլիպեցոց կողմերումն են՝ եպիսկոպոսներին եւ սարկաւագներին հետ.
2 Շնորհք ձեզ հետ եւ խաղաղութիւն Աստուած մեր Հօրից, եւ Տէր Յիսուս բ Քրիստոսից։
3 Գոհանում եմ իմ Աստուածանից ամէն ժամանակ որ ձեզ ֆ յիշում եմ,
4 Որ ամէն ժամանակ իմ ամէն աղաչանքներումս՝ ձեզ ամէնից համար աղօթք եմ անում ուրախութենով.
5 Ձեր աւետարանին հաղորդ լինելուն համար՝ այն առաջին օրից մինչեւ ÷ հիմիկ։
6 Եւ հաստատ յոյս ունիմ նորա վերայ՝ թէ նա՝ որ ձեզանում սկըսեց այս բարի է գործը, էլ կը կատարէ մինչեւ Յիսուսի Քրիստոսի ն օրը.

ֆ Կող. Դ. 8.
= Ա Պետ. Ե. 14.
բ Տիտ. Բ. 7.

---

= Ա Կորնթ. Ա. 2.
բ Հռովմ. Ա. 7.
Բ Կորնթ. Ա. 2.
Ա Պետ. Ա. 2.
ֆ Հռովմ. Ա. 8. 9.
Ա Կորնթ. Ա. 4.
Եփես. Ա. 15. 16. Կող. Ա. 3.
Ա Թես. Ա. 2.
Բ Թես. Ա. 3.
÷ Հռովմ. ԺԲ. 13. ԺԵ. 26. Բ Կորնթ. Ը. 1. Փլ. Դ. 14. 15.
է Յովհ. Զ. 29.
Ա Թես. Ա. 3.
ն Համար. 10.

7 Որպէս իրաւ իսկ թուի ինձ խորհել զայս վասն ձեր ամենեցուն․ վասն ունելոյ ինձ զձեզ 'ի սրտի 'ի կապանս իմում, եւ 'ի պատասխանատուութեան իմում, եւ 'ի հաստատութեան աւետարանին․ կցորդս ինձ շնորհաց զձեզ ամենեսին լինել :

8 Վկայ է ինձ Աստուած, որպէս անձկացեալ եմ առ ձեզ ամենեսին գթովքն Քրիստոսի Յիսուսի :

9 Եւ զայն աղօթս առնեմ․ զի սէրն ձեր եւս քան զեւս առաւել լիցի 'ի գիտութեան եւ յամենայն իմաստութեան․

10 Ընտրել ձեզ զլաւն, զի իցէք հաստատունք եւ առանց գայթակղութեան 'ի յաւուրն Քրիստոսի :

11 Լցեալ պտղովք արդարութեան 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի՝ 'ի փառըս եւ 'ի գովեստ Աստուծոյ :

12 Կամիմ թէ գիտիցէք եղբարք․ զի որ ինչ վասն իմ էր, եւս քան զեւս 'ի յառաջադիմութիւն աւետարանին եկն :

13 Մինչեւ կապանաց իմոց յայտնի լինել 'ի Քրիստոս յամենայն հրրապարակին, եւ առ այլս ամենեսին․

14 Եւ առ բազում եղբարս 'ի Տէր, որ վստահ են կապանօքս իմովք՝ առաւել եւս համարձակել՝ առանց երկիւղի զբանն Աստուծոյ խօսել :

15 Ոմանք առ նախանձու եւ հակառակութեան, եւ ոմանք մտադիւրութեամբ իսկ զՔրիստոս քարոզեն :

7 Ինչպէս որ իրաւունք է երեւում ինձ մտածելոյս այս բանս ձեզ ամէնիդ համար․ ինչու որ ձեզ իմ սրտիս մէջն [ե] ունիմ իմ [զ] կապանքներումս, եւ իմ պատասխան տալոյս եւ աւետարանին հաստատելոյ [թ] ժամանակումս․ որ դուք ամէնդ ինձ հետ շնորհացը հաղորդ [ժ] էլաք :

8 Աստուած ինձ վկայ [ի] է, թէ ինչպէս ձեզ ամէնիդ ցանկանումեմ Քրիստոսի Յիսուսի քաղցր[լ] սիրովը :

9 Եւ սա եմ աղօթք անում․ որ ձեր սէրն աւելի եւ աւելի հարստանայ գիտութենով եւ ամէն [խ] իմաստութենով․

10 Որ դուք լաւերն [ծ] ընտրէք, որ հաստատ լինիք եւ առանց [կ] գայթակղութեան Քրիստոսի [հ] օրումը,

11 Արդարութեան պտուղներով լցուած՝ Յիսուսի Քրիստոսի [ձ] ձեռովը, Աստուծոյ փառքին եւ գովասանքին [ղ] համար :

12 Կամենումեմ եղբարք․ որ գիտենաք․ թէ ինչ բան որ ինձ վիրայ էլաւ, աւելի եւ աւելի յառաջեց աւետարանին առաջանալը,

13 Մինչեւ որ իմ կապանքներս Քրիստոսումը յայտնի էլան ատեանի բոլոր տանը մէջ եւ ուրիշ ամէնքին [ճ] էլ :

14 Եւ շատ եղբարներին՝ Տէրումը, որ իմ կապանքներովս սիրտ առին՝ որ աւելի համարձակ էլան՝ առանց վախի Աստուծոյ բանը խօսելոյ :

15 Մէն քանիսը նախանձաւորութենով եւ հակառակութեան [մ] պատճառով, եւ մէն քանիսը բարեյօժար մտքով քարոզումեն Քրիստոսին :

ե Բ Կորնթ. Գ. 2. Է. 3 :
զ Եփես. Գ. 1. Ջ. 20 : Կող. Դ. 3. 18 : Բ Տիմ. Ա. 8
թ Համար. 16 :
ժ Փլ. Դ. 14 :
ի Հռոմ. Ա. 9 . Բ. 1 : Գաղ. Ա. 20 : Ա Թես. Բ. 5 :
լ Փլ. Բ. 26 : Դ. 1 :
խ Ա Թես. Գ. 12 : Փիլիմ. 6 :
ծ Հռոմ. Բ. 18 : ԺԲ. 2 : Եփես. Ե. 10 :
կ Գործ. ԻԴ. 16 : Ա Թես. Գ. 13 : Ե. 23 :
հ Ա Կորնթ. Ա 8 :
ձ Յովհ. ԺԵ. 4, 5 : Եփես. Բ. 10 : Կող. Ա. 6 :
ղ Յովհ. ԺԵ. 8 : Եփես. Ա. 12. 14 :
ճ Փլ. Դ. 23 :
մ Փլ. Բ. 3 :

16 Եւ ոմանք 'ի սիրոյ, քանզի գիտեն՝ եթէ 'ի պատասխանատու-
ութիւն աւետարանին կամ ։
17 Եւ ոմանք առ հեստութեան
զՔրիստոս պատմեն, այլ ոչ սր-
բութեամբ · քանզի համարին նե-
ղութիւնս յարուցանել 'ի վերայ կա-
պանաց իմոց ։
18 Բայց զայս զինչ է · որով օրի-
նակաւ եւ իցէ, եթէ պատճառա-
նօք՝ եւ եթէ ճշմարտութեամբ՝ Քր-
րիստոս պատմի · եւ ընդ այս խըն-
դամ՝ այլեւ ուրախ եւս եղէց ։
19 Զի գիտեմ, եթէ այս պահի
ինձ 'ի փրկութիւն՝ 'ի ձերոց խնդ-
րուածոց՝ եւ 'ի պարգեւաց Հոգ-
ւոյն Յիսուսի Քրիստոսի ,
20 Ըստ ակնկալութեան եւ յու-
սոյն իմոյ · զի մի խիք յամօթ ե-
ղէց, այլ ամենայն համարձակու-
թեամբ՝ որպէս եւ յամենայն ժամ եւ
այժմ մեծասցի Քրիստոս 'ի մարմնի
իմում, եթէ կենօք՝ եւ եթէ մահու ։
21 Զի ինձ կեանք՝ Քրիստոս է,
եւ մեռանել՝ շահ ։
22 Ապա եթէ կեանքս մարմնոյ՝
այս ինձ պտուղ գործոյ է · եւ զինչ
ընտրեցից՝ զայն ոչ գիտեմ ։
23 Նեղեալ եմ յերկոցունց · բղ-
ձանկալն, ելանել եւ ընդ Քրիստո-
սի լինել՝ առաւել լաւ համարիմ ։
24 Եւ կալ մնալ առաւել 'ի մար-
մնի, կարեւոր եւս վասն ձեր ։
25 Եւ զայս յուսացեալ գիտեմ,
եթէ կացից՝ եւ մնացից ամենեցուն
ձեզ, 'ի ձեր զարգանալ եւ խրախ
լինել 'ի հաւատս ։
26 Զի պարծանք ձեր առաւել լի-
ցին 'ի Քրիստոս Յիսուս ինեւ 'ի

16 Եւ մէկքանիները սիրով · ինչու
որ գիտումեն թէ աւետարանը ջա-
տագովելոյ համար կեցած եմ ։
17 Եւ մէկքանիները ծուռ մտքով են
պատմում Քրիստոսին, եւ ոչ թէ
պարզ կամքով · ինչու որ կարծու-
մեն թէ իմ կապանքներիս վերայ
նեղութիւն շ բերեն ։
18 Բայց աս ինչ է · որ կերպով որ
լինի, թէ պատճառանքով՝ եւ թէ
ճշմարտութենով՝ Քրիստոսն է պատ-
մըւում · եւ սորա համար ուրախ եմ՝
եւ էլ ուրախ կը լինիմ ։
19 Ինչու որ գիտումեմ՝ թէ այս
բանս ինձ փրկութեան պատճառ կը
լինի ձեր ՚ աղօթքներովը՝ եւ Յի-
սուսի Քրիստոսի Հոգւոյ ւ պարգեւ-
ներովը ,
20 Ինչպէս որ ես սպասումեմ եւ
յոյս = ունիմ · որ ոչ մին բանով ա-
մօթ ւ չը լինիմ, բայց ամէն համար-
ձակութենով՝ ինչպէս որ ամէն ժա-
մանակ, հիմիկ էլ Քրիստոս փառա-
ւորվի իմ մարմնումս, թէ կեան-
քով՝ եւ թէ ղ մահով ։
21 Պատճառն որ ինձ համար Քր-
րիստոս՝ կեանք է, եւ մեռնելը՝ շահ ։
22 Բայց թէ որ այս մարմնիս կեան-
քըն իմ գործոյս պտուղ է բերում · էլ
չեմ գիտում՝ թէ որն ընտրեմ ։
23 Երկուսիցը նեղացած Հ եմ ·
դուրս գալոյ՝ եւ Քրիստոսի հետ լի-
նելոյ ցանկանալըն՝ աւելի լաւ եմ
— համարում ,
24 Եւ այստեղ մարմնումը կենալ
մնալն՝ աւելի հարկաւոր՝ ձեզ հա-
մար ։
25 Եւ հաստատ յուսով աս եմ գի-
տում, որ կը կենամ եւ կը մնամ
ձեզ ամէնից = հետ, որ դուք առա-
ջանաք եւ ուրախ լինիք հաւատ-
քումը ·
26 Որ ձեր պարծանքն աւելի լինի
Յիսուս Քրիստոսումն Հ ինձանով՝

; Հռովմ. 7 ։
՚ Բ Կորնթ. Ա. 11 ։
ւ Հռովմ. Ը. 9 ։
= Հռովմ. Ը. 19 ։
ւ Հռովմ. Ե. 5 ։
ղ Եփես. Զ. 19 ։
20 ։
Հ Բ Կորնթ. Ե. 8 ։
— Բ Տիմ. Գ. 6 ։
= Գղ. Բ. 24 ։
Հ Բ Կորնթ. Ա. 14 ։
Ե. 12 ։

միւսանգամ գալստեան իմում առ ձեզ ։

27 Միայն թէ արժանի աւետարանին Քրիստոսի գնասջիք . զի եթէ գայցեմ , եւ տեսանիցեմ զձեզ . եւ եթէ հեռի իցեմ , եւ լսիցեմ ըզձէնջ . զի հաստատուն կայցէք 'ի մի հոգի , եւ միով շնչով նահատակիցիք 'ի հաւատս աւետարանին ։

28 Եւ մի զանգիտիցէք՝ եւ մի իւիք 'ի հակառակորդաց անտի . որ է նոցա հանդէս կորստեան , եւ ձերոյ փրկութեան ։

29 Եւ այդ յԱստուծոյ է՝ որ ձեզ շնորհեցաւ վասն Քրիստոսի , ոչ միայն 'ի նա հաւատալ՝ այլեւ վասն նորա չարչարիլ ։

30 Զնոյն պատերազմ ունել՝ զոր յիս տեսէք , եւ այժմ լսէք յինէն ։

երբոր ես կրկին կը գամ ձեզ մօտ ։

27 Միայն թէ ինչպէս որ կը վայլէ աւետարանին՝ այնպէս + գնացէք . որ թէ գամ եւ տեսնեմ ձեզ , եւ թէ հեռու լինիմ եւ լսեմ ձեզանից՝ որ հաստատ էք մէն ‡ հոգւով , եւ իբր հէտ մէն ÷ մարդով կանգնիք աւետարանին հաւատքին ⸗ համար ։

28 Եւ ոչ մէն բանով մի վախենաք այն հակառակորդներիցն , որ նա նորանց կորստի նշան ‡ է , եւ ձեր + փրկութեան ։

29 Եւ ձեզ Աստուածանից դա շընորհեց եղաւ Քրիստոսի ° համար , որ չէ թէ միայն հաւատաք նորան , այլ եւ նորա համար ‡ չարչարուիք ։

30 Եւ ինձ այն պատերազմը ⸗ քաշէք՝ որ ինձանում տեսաք , եւ հիմիկ ինձանից ‡ լսում էք ։

## ԳԼ . Բ

1 Արդ եթէ մխիթարութիւն ինչ իցէ 'ի Քրիստոս , եթէ սփոփութիւն սիրոյ , եթէ հաղորդութիւն Հոգւոյ , եթէ գթութիւն եւ ողորմութիւն .

2 Լցէք զխնդութիւնս իմ . ըզնոյն խորհիջիք , զնոյն սէր յանձին ունիցիք , համաշունչք , միախորհուրդք ։

3 Մի ինչ ըստ գրգռութեան , եւ մի ինչ ըստ սնափառութեան . այլ խոնարհութեամբ զմիմեանս լաւ համարել առաւել քան զանձինս ։

4 Մի զանձանց եւ եթ զխնամ՝ այլ իւրաքանչիւրոք զընկերին ։

1 Ուրեմն թէ որ մէն մխիթարութիւն կայ Քրիստոսումը , թէ սիրով սրտի հովութիւն , թէ Հոգւոյ ⸗ հաղորդութիւն , թէ գթածութիւն եւ ‡ ողորմութիւն ,

2 Այսա լցրէք իմ ÷ ուրախութիւնս . ⸗ մէն միտք ունենաք , մէն սէր ունենաք ձեր մէջումը , մէն շունչ , մէն + խորհուրդ ։

3 Ոչ մէն բան չը լինի գրգռութենով , եւ ոչ էլ ունայն պարծանքի ‡ համար . բայց խոնարհութենով թող մէնը միւսին իրենից առաւել լաւ ⸗ համարէ ։

4 Մենակ անձներից բանին մտիկ չը տաք , բայց ամէն մէկն իրեն ընկերի ‡ բանին ։

+ Եփես . Դ . 1 Կող . Ա . 10 . Ա Թես . Բ . 12 . Դ . 1 .
‡ Գլ . Դ . 1 .
÷ Ա Կորնթ . Ա . 10 .
⸗ Յուդ . 3 .
‡ Բ Թես . Ա . 5 .
+ Բ Տիմ . Բ . 11 .
° Գործ . Ե . 41 . Հռովմ . Ե . 3 .
‡ Եփես . Բ . 8 .
⸗ Կող . Բ . 1 .
‡ Գործ . ԺԶ . 19 , 22 . Ա Թես . Բ . 2

⸗ Բ Կորնթ . ԺԳ 13 .
‡ Կող . Գ . 12 .
‡ Յովհ . Գ . 29 .
÷ Հռովմ . ԺԲ . 16 . ԺԵ . 5 . Ա Կորնթ . Ա . 10 . Բ Կորնթ . ԺԳ . 11 . Գլ . Ա . 27 . Գ . 16 . Դ . 2 . Ա Պետ . Գ . 8 .
‡ Գաղ . Ե . 26 . Գլ . Ա . 15 . 17 . Յակ . Գ . 14 .
‡ Հռովմ . ԺԲ . 10 . Եփես . Ե . 21 . Ա Պետ . Ե . 5 .
‡ Ա Կորնթ . Ժ . 24 . 33 . ԺԳ 5 .

82

5 Զայն խորհեսցի խորհուրդք 'ի ձէնջ, որ և 'ի Քրիստոս Յիսուս :

6 Որ 'ի կերպարանս Աստուծոյ է, ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ զլինելն հաւասար Աստուծոյ :

7 Այլ զանձն ունայնացոյց` զկերպարանս ծառայի առեալ, 'ի նմանութիւն մարդկան եղեալ` և կերպարանօք գտեալ իբրև զմարդ :

8 Խոնարհեցոյց զանձն, լեալ հնազանդ մահու չափ` և մահու խաչի :

9 Վասն որոյ և Աստուած զնա առաւել բարձրացոյց. և շնորհեաց նմա անուն, որ 'ի վեր է քան զամենայն անուն :

10 Զի յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի` երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց :

11 Եւ ամենայն լեզու խոստովան լիցի, թէ Տէր է Յիսուս Քրիստոս 'ի փառս Աստուծոյ Հօր :

12 Այսուհետև սիրելիք իմ, որպէս յամենայնի հնազանդեցարուք, մի միայն 'ի գալստեան իմում, այլ առաւել ևս այժմ` յորժամ հեռի եմ 'ի ձէնջ, ահիւ և դողութեամբ զանձանց փրկութիւն գործեցէք :

13 Զի Աստուած է` որ յաջողէ 'ի

5 Ձեր ամէն միտք թող նա մտածէ, որ էլ Քրիստոս [ը] Յիսուսումը ,

6 Որ Աստուծոյ կերպարանքումը [թ] լինելով, բնաւ յափշտակութիւն չը համարեց Աստուծոյն հաւասար [ժ] լինելը .

7 Այլ իրեն անձըն [ի] ունայնացրուց, և ծառայի կերպարանքըն [լ] առաւ, և մարդոյ նման էլաւ` և կերպարանքով մարդոյ պէս [խ] գըտուեց .

8 Իրեն անձը խոնարհեցուց, և հնազանդ էլաւ մինչև 'ի մահ` և էլ խաչի [ծ] մահը :

9 Նրա համար Աստուած էլ աւելի բարձրացրուց [կ] նորան, և նորան շնորհեց [հ] անուն, որ ամէն անուններից աւելի բարձր է .

10 Որ Յիսուսի Քրիստոսի անունով ամէն ծունր պիտի երկնաւորներին և երկրաւորներին և երկրի տակ [ձ] լինողներին ,

11 Եւ ամէն լեզու դաւանի, թէ Յիսուս Քրիստոս Տէր է Հօր Աստուծոյ փառքին [ղ] համար :

12 Ուրեմն իմ սիրելիներս, ինչպէս որ ամէն բանով հնազանդվեցաք` չէ թէ միայն իմ գալոյ ժամանակը, բայց էլ աւելի հիմիկ` հեռու եմ [ճ] ձեզանից, ահով և դողալով գործեցէք ձեր անձներից [մ] փրկութիւնը :

13 Պատճառն որ Աստուած է` որ

ը Մատթ. ԺԱ. 29. Յովհ. ԺԳ. 15: Ա Պետ. Բ. 21: Ա Յովհ. Բ. 6:
թ Յովհ. Ա. 1, 2: ԺԷ. 5: Բ Կորնթ. Դ. 4: Կող. Ա. 15: Եբր. Ա. 3:
ժ Յովհ. Ե. 18: Ժ. 33:
ի Սաղ. ԻԲ. 6: Եսայ. ԾԳ. 3. Դան. Թ. 26: Մարկ. Թ. 11. Հռովմ. ԺԵ. 3
լ Եսայ. ԽԲ. 1: ԽԹ. 3. 6: ԾԲ. 13: ԾԳ. 11. Եզեկ. ԼԴ. 23: 24: Զաք. Գ. 8: Մատթ. Ի. 28: Ղուկ. ԻԲ. 27:
խ Յովհ. Ա. 14 Հռովմ. Ա. 3: Ը. 3: Գաղ. Դ. 4: Եբր. Բ. 14 17:
ծ Մատթ. ԻԶ. 39. 42: Յովհ. Ժ. 18: Եբր. Ե. 8 ԺԲ. 2:
կ Յովհ. ԺԷ. 1. 2. 5: Գործ. Բ. 33: Եբր. Բ. 9:
հ Եփես. Ա. 20: 21: Եբր. Ա. 4:
ձ Եսայ. ԽԵ. 23 Մատթ. ԻԸ. 18: Հռովմ. ԺԴ. 11: Յայտ. Ե. 13:
ղ Յովհ. ԺԳ. 13: Գործ. Բ. 36: Հռովմ. ԺԴ. 9: Ա Կորնթ. Ը. 6: ԺԲ. 3:
ճ Գղ. Ա. 5:
մ Եփես. Զ. 5:

ձեզ զկամենալն եւ զառնելն վասն
հաճութեան։
14 Զամենայն ինչ գործեցէք ա-
ռանց տրտնջելոյ եւ քրթմնջելոյ.
15 Զի եղիջիք անբիծք եւ անա-
րատք՝ որդիք Աստուծոյ, անմեղք
՚ի մէջ կամակոր եւ խոտորեալ ազ-
գին. յորոց միջի երեւեցէք իբրեւ
լուսաւորք յաշխարհի.
16 Զբանն կենաց ունել յանձին՝
՚ի պարծանս ինձ յաւուրն Քրիս-
տոսի. զի ոչ ընդունայն ինչ ըն-
թացայ՝ եւ ոչ ընդունայն վաստա-
կեցի։
17 Այլ թէպէտ եւ նուիրիմ ՚ի վե-
րայ պատարագի եւ պաշտաման հա-
ւատոց ձերոց, խնդամ եւ ուրա-
խակից եմ ամենեցուն ձեր։
18 Նոյնպէս եւ դուք խնդացէք՝
եւ ուրախակից եղերուք ինձ։
19 Բայց յուսամ ՚ի Տէր Յիսուս ըզ
Տիմոթէոս վաղվաղակի առաքել
առ ձեզ. զի եւ ինձ սրտի դիւր լի-
նիցի, յորժամ գիտացից ինչ զձէնջ։
20 Զի ոչ զոք ունիմ համախոհ՝
եթէ ընտանեբար հոգայցէ վասն
ձեր.
21 Զի ամենեքին զանձանց խնդ-
րեն, եւ ոչ զՅիսուսի Քրիստոսի։
22 Բայց զփորձ նորա գիտէք եւ
դուք, զի իբրեւ որդի հօր ծառայ-
եաց ընդ իս յաւետարանին։
23 Արդ՝ զսա ակնունիմ արձա-
կել, որպէս նայեցայց զանձնէ
տառապեցելոյ։

յաջողումը ձեզանում կամենալը եւ
անելը իրեն հաճութեան յ պէս ։
14 Ամէն բան գործեցէք առանց
ն տրտնջելոյ եւ շ փնթփնթալոյ.
15 Որ լինիք անբիծ եւ անարատ՝
Աստուծոյ ո որդիք, չ անմեղ այն
կամակորչա եւ ծուռ պ ազգումը.
որ նորանց մէջումն երեւիք ինչպէս
լոյս տուօղներն աշխարհքին ջ մէջ.
16 Կենաց խօսքը պահելով ձեր
անձներումը՝ որ նա պարծանք լի-
նի ինձ Քրիստոսի ռ օրումը. որ
զուր տեղը չը վազեցի եւ զուր
ս չաշխատեցի։
17 Բայց թէ եւ մատաղ լինիմ ձեր
հաւատքի վ պատարագին եւ պաշ-
տամունքին տ վերայ՝ էլ ուրախ եմ,
եւ ձեզ ամէնից հետ ուրախանու-
մեմ։
18 Այնպէս էլ դուք ուրախ էլէք՝
եւ ինձ հետ ուրախացէք։
19 Բայց յոյս ունիմ Տէր Յիսու-
սումն, որ Տիմոթէոսին շուտով ու-
ղարկեմ ձեզ ց մօտ, որ իմ սիրտս
էլ հանգիստ լինի, երբոր ձեզ վե-
րայ մէն բան իմանամ։
20 Պատճառն որ չունիմ մէկն ինձ
հետ միաբան, որ ընտանեաց պէս
հոգս տանի ձեզ ւ համար։
21 Ինչու որ ամէնքն իրենց բա-
ներին են մտադրալիս, եւ չէ թէ
Յիսուսի Քրիստոսի փ բաներին։
22 Բայց դուք էլ փորձելէք գի-
տումէք նորան, որ ինչպէս որդի
իւր հօրն՝ այնպէս ինձ հետ ծառա-
յեց ք աւետարանին։
23 Ուրեմն յոյս ունիմ, որ սորան
ուղարկեմ շուտով իսկ այն ժամա-
նակումն՝ որ իմ անձիս համար կը-
տեղեկանամ։

յ Բ Կորնթ. Գ. 5. Եբր. ԺԳ. 21.
ն Ա Կորնթ. Ժ. 10. Ա Պետ. Դ. 9.
շ Հռովմ. ԺԴ. 1.
ո Մատթ. Ե. 45. Եփես. Ե. 1.
չ Ա Պետ. Բ. 12.
պ Բ Օրին. ԼԲ. 5.
ջ Մատթ. Ե. 14. 16. Եփես. Ե. 8.
ռ Բ Կորնթ. Ա. 14. Ա Թես. Բ. 19.
ս Գաղ. Բ. 2. Ա Թես. Գ. 5.
վ Բ Տիմ. Դ. 6.
տ Հռովմ. ԺԵ. 16.
ր Բ Կորնթ. Է. 4. Կող. Ա. 24.
ց Հռովմ. ԺԶ. 21. Ա Թես. Գ. 2.
ւ Սաղ. ԾԵ. 13.
փ Ա Կորնթ. Ժ. 24. 33. ԺԳ. 5. Բ Տիմ. Գ. 9. 16.
ք Ա Կորնթ. Դ. 17. Ա Տիմ. Ա. 2. Բ Տիմ. Ա. 2.

24 Այլ յուսացեալ եմ 'ի Տէր՝ թէ եւ ես իսկ ընդ հուպ եկից ։
25 Բայց լաւ համարեցայ զԵպափրոդիտոս զեղբայր՝ եւ զգործակից եւ զզինուորակից իմ, զձեր առաքեալ, եւ զպաշտօնեայ իմոց պիտոյից՝ առաքել առ ձեզ ։

26 Քանզի եւ ինքն իսկ յոյժ անձկացեալ է տեսանել զամենեսին ըզ ձեզ. եւ հոգայր՝ զի ձեր լուեալ էր թէ խօթացաւ ։

27 Եւ արդարեւ խօթացաւ մերձ 'ի մահ, այլ Աստուած ողորմեցաւ նմա. ոչ նմա միայն, այլեւ ինձ՝ զի մի տրտմութիւն 'ի վերայ տրտմութեան կրիցեմ ։

28 Արդ՝ փութապէս յղեցի զնա, զի տեսեալ զնա միւսանգամ ուրախ լինիցիք. եւ ես առանց տրտմութեան եղէց ։
29 Ընկալջիք զնա 'ի Տէր ամենայն խնդութեամբ, եւ զայնպիսիսն առ պատուականս ունիջիք ։

30 Զի վասն գործոյ Տեառն մինչեւ 'ի մահ մերձեցաւ, զանձն զործեալ ոգւովք չափ, զի լցցէ զձեր պակասութիւն իմոյ պաշտաւորութեան ։

24 Բայց յոյս ունիմ Տէրումն, որ իսկ ես ալ շուտով ° գամ ։
25 Միայն լաւ համարեցի՝ որ Եպափրոդիտոս եղբօրս՝ իմ * գործոյս եւ զինուորութեան = ընկերիս, այն ձեր ‡ առաքեալը, եւ իմ պէտք լինող բաներուս պաշտօնեան՝ ուղարկեմ ձեզ ‡ մօտ.
26 Ինչու որ իսկ ինքն ալ խիստ փափագ ունի, որ ձեզ ամէնքդ տեսնէ. եւ հոգս էր քաշում՝ որ դուք լսել էիք՝ թէ նա հիւանդացաւ ։
27 Եւ իրաւի որ հիւանդացաւ մինչեւ մահի մօտ, բայց Աստուած ողորմեցաւ նորան. չէ թէ միայն նորան, բայց ինձ ալ, որ տրտմութիւն տրտմութեան վերայ չը քաշեմ ։
28 Ուրեմն շուտով ուղարկեցի նորան, որ տեսնելով նորան նորէն ուրախ լինիք, եւ ես առանց տրտմութեան լինիմ ։
29 Ընդունեցէք նորան Տէրումն ամէն ուրախութենով, եւ այնպէսիներին պատուական ‡ համարեցէք.
30 Ինչու որ Տէրի գործոյ համար մինչեւ 'ի մեռնիլը մօտեցաւ. հոգոյ չափ ջանք անելով, որ լցնէ ինչ որ ձեզ պակասումէր իմ ծառայութեանս ւկողմանէ ։

## ԳԼ. Գ

1 Այսուհետեւ եղբարք իմ, ուրախ լերուք 'ի Տէր. զնոյն գրել առ ձեզ՝ ինձ ոչինչ ծանրագոյն է, եւ ձեզ կարի զգուշալի ։

2 Զգոյշ եղերուք 'ի շանց անտի. զգոյշ եղերուք 'ի չար մշակաց ան-

1 Այսուհետեւ իմ եղբարք, ուրախ եղէք = Տէրումը. միայն մին բանն գրելը ձեզ՝ ինձ համար ծանրութիւն չէ՝ եւ ձեզ շատ զգուշութիւն է տալիս ։
2 Զգոյշ կացէք այն ‡ շներիցը. զգոյշ կացէք այն չար ‡ մշակներէ-

* ԳԼ. Ա. 25. Փիլիմ. 22.
† ԳԼ. Գ. 18.
= Փիլիմ. 2.
‡ Բ Կորնթ. Ը. 23.
‡ Բ Կորնթ. ԺԱ. 9. ԳԼ. Գ. 18.
‡ ԳԼ. Ա. 8.
‡ Ա Կորնթ. ԺԶ. 18. Ա Թես. Ե. 12. Ա Տիմ. Ե. 17.
‡ Ա Կորնթ. ԺԶ. 17. ԳԼ. Գ. 10.

—

= Բ Կորնթ. ԺԳ. 11. ԳԼ. Դ. 4. Ա Թես. Ե. 16.
‡ Եսայ. ԾԶ 10. Գաղ. Ե. 15.
‡ Բ Կորնթ. ԺԱ. 13.

տի· զգոյշ լերուք 'ի կրճատու-
թենէ անտի։
3 Զի թլփատութիւն մեք եմք,
որ հոգւովն Աստուծոյ պաշտեմք,
եւ պարծիմք 'ի Քրիստոս Յիսուս,
եւ ոչ 'ի մարմին պանծացեալ եմք։
4 Թէպէտ եւ ես խակ գոյն վս-
տահութիւն ունիմ 'ի մարմնի, եթէ
ոք համարիցի այլազգ վստահ լինել
'ի մարմին, առաւել եւս ես։
5 Թլփատութեամբ ութօրեայ·
յազգէ Իսրայէլի 'ի ցեղէ Բենիա-
մենի· Եբրայեցի յԵբրայեցւոյ· ըստ
օրինացն փարիսեցի։
6 Ըստ նախանձայոյզն լինելոյ
հալածէի զեկեղեցին· ըստ արդա-
րութեան օրինացն լեալ անարատ։
7 Այլ որ ինչ ինձ շահն էր՝ զայն
վնաս համարիմ վասն Քրիստոսի։
8 Այլ եւ համարիմ խակ զամե-
նայն վնաս՝ վասն առաւել գիտու-
թեանն Յիսուսի Քրիստոսի Տեառն
մերոյ· վասն որոյ զամենայնն զրկե-
ցայ՝ եւ համարիմ կղկղանս, զի ըզ
Քրիստոս շահեցայց։
9 Եւ գտայց 'ի նմա· իբրեւ ոչ
եթէ զիմ ինչ արդարութիւն՝ որ
յօրինաց անտի է՝ ունիցիմ, այլ ըզ
հաւատոցն Քրիստոսի, որ յԱստու-
ծոյ արդարութիւնն է։
10 Հաւատովք ծանուցեալ զնա՝ եւ

ցը· զգոյշ կացէք այն ծայրի † կտ-
րածներիցը·
3 Ինչու որ թլփատութիւնը մենք
† ենք, որ Աստուծոյ հոգովը † պաշ-
տումենք, եւ Քրիստոս Յիսուսովը
պարծենում, եւ մարմնով պարծանք
չենք † անում։
4 Թէ եւ խակ ես էլ այն համար-
ձակութիւնը ունիմ մարմնոյ կող-
մանէ· թէ որ մէկն ուրիշ մարդ կար-
ծէ որ մարմնով համարձակ լինի՝
էլ աւելի † ես,
5 Որ ութ օրումը † թլփատուե-
ցայ· Իսրայէլի † ազգիցը՝ Բենիա-
մինի † ցեղիցը· Եբրայեցի Եբրայե-
ցուց [illegible]· օրինաց կողմանէ՝
† փարիսեցի·
6 Ջերմեռանդութեան † կողմա-
նէ՝ հալածումէի † եկեղեցին· օ-
րէնքի արդարութեանը մասին † հաշ-
ւով անարատ † էի։
7 Բայց ինչ բան որ ինձ շահ էր,
նա վնաս եմ համարում Քրիստոսի
† համար։
8 Եւ ամէն բան էլ խակ վնաս եմ
համարում այն մեր Տէր Յիսուսի
Քրիստոսի գերազանց գիտութեանը
† համար, որ նորա համար ամէն
բանից զրկուեցայ՝ եւ [illegible] աղբ եմ
համարում, որ Քրիստոսին առ-
նում,
9 Եւ նորանում գտնուիմ· չէ որ
իբրթէ իմ արդարութիւնս ունե-
նամ՝ որ օրէնքիցն † է, բայց նա՝
որ Քրիստոսի հաւատքիցն է· որ
այն արդարութիւնն Աստուածանից
† է,
10 Որ հաւատքով ճանաչեմ նո-

† Հռովմ. Բ. 28 Գաղ. Ե. 2.
† Բ Օրին. Ժ. 16 Ղ. 6. Երեմ. Դ 4. Հռովմ. Բ 29. Դ 11, 12. Կող. Բ 11.
† Յովհ. Դ. 23, 24. Հռովմ. Ե. 6.
† Գաղ. Զ. 14.
† Բ Կորնթ. ԺԱ. 18. 21.
† Ծննդ. ԺԷ. 12.
† Բ Կորնթ. ԺԱ. 22.
† Հռովմ. ԺԱ. 1.
† Բ Կորնթ. ԺԱ. 22.
† Գործ. ԻԳ. 6. ԻԶ. 4, 5.
† Գործ. ԻԲ. 3. Գաղ. Ա. 13, 14.
† Գործ. Ը. 3. Թ. 1.
† Հռովմ. Ժ. 5.
† Ղուկ. Ա. 6.
† Մատթ. ԺԳ. 44.
† Եսայ. ԾԳ. 11. Երեմ. Թ. 23, 24. Յովհ. ԺԷ 3. Ա Կորնթ. Բ. 2.
† Հռովմ. Ժ. 3. 5.
† Հռովմ. Ա. 17. Գ. 21, 22. Թ. 30. Ժ. 3. 6. Գաղ. Բ. 16.

զզօրութիւն յարութեան նորա՝ և զհաղորդութիւն չարչարանաց նորա, կերպարանակից լինել մահուն նորա.

11 Թէ որպէս հասից 'ի մեռելոցն յարութիւն։

12 Ոչ եթէ արդէն առեալ իցեմ, կամ արդէն կատարեալ իցեմ. զհետ մտեալ եմ թէ հասից, մանաւանդ թէ ըմբռնեալ իսկ իցեմ 'ի Քրիստոսէ Յիսուսէ։

13 Եղբարք՝ ես ոչ համարիմ զանձն իմ թէ հասեալ իցեմ. բայց մի ինչ է՝ զի զառ 'ի յետոյն մոռացեալ եմ, և 'ի յառաջագոյն նկրտեալ եմ։

14 Ուստի եղեալ ընթանամ 'ի կէտ կոչմանն Աստուծոյ 'ի Քրիստոս Յիսուս։

15 Այսուհետև՝ որ միանգամ կատարեալքդ էք՝ զայս խորհեսցուք. և եթէ այլ ազգ ինչ խորհիցիք՝ ապա և զայն Աստուած ձեզ յայտնեսցէ։

16 Բայց յոր ժամանեցաքս՝ զնոյն խորհել՝ և նովին կանոնի միաբան լինել։

17 Նմանօղք ինձ եղիջիք եղբարք՝ և դիտասջիք զայնոսիկ, որ այնպէս գնայցեն, որպէս ունիքդ ըզ մեզ ձեզ օրինակ։

18 Զի բազումք գնան՝ զորոց բազում անգամ ասէի ձեզ. բայց արդ և լալով իսկ ասեմ, զթշնամեաց խաչին Քրիստոսի։

բան՝ և նորա յարութեան զօրութիւնը՝ և նորա չարչարանքներին մասնակից լինելը, որ նորա մահին նման ~ կերպարանուիմ.

11 Որ լինի թէ մեռելներին յարութեանը ւ հասնիմ։

12 Չէ որ՝ իսկոյն թէ իսկ հիմիկ առած ~ լինիմ, կամ թէ իսկ հիմիկ կատարեալ եղած ւ լինիմ. հետեւումեմ որ հասնեմ նրան, որ նորա համար էլ Քրիստոս Յիսուսիցը բռնուած եմ։

13 Եղբարք՝ ես իմ անձիս չեմ համարում՝ որ հասած լինիմ. բայց մին բան է՝ նա որ յետեւի բաներն մոռացել ~ եմ, և դէպի առաջ լինողներին եմ հասնելոյ ջանք անում։

14 Միտք դնելով ~ վազումեմ դէպի Աստուծոյ կոչումի նպատակը՝ Քրիստոս ~ Յիսուսումը։

15 Նրա համար դուք ամէնքդ՝ որ կատարեալ Է էք, սա ~ մտածեցէք. և թէ որ մին ուրիշ բան մտածէք, նա էլ Աստուած կը յայտնէ ձեզ.

16 Միայն թէ նորանում որ մենք ր հասինք՝ իսկ մին կերպով ց մտածենք՝ և իսկ մին կանոնում միաբան ~ լինինք։

17 Ինձ նմանօղ եղէք Է եղբարք և դիտացէք այնպիսիներին, որ այն կերպով են գնում ինչպէս որ մեզ օրինակ ունիք ձեզ ․ համար.

18 Պատճառն որ շատերն են գնում, որ նորանց համար շատ անգամ ասումէի ձեզ. և հիմիկ էլ լալով եմ ասում, Քրիստոսի խաչի թշնամիներին ․ համար,

ւ Հռովմ. Զ. 3-5. Ը. 17. Բ Կորնթ. Դ. 10, 11. Բ Տիմ. Բ. 11, 12. Ա Պետ. Դ. 13.
ւ Գործ. ԻԶ. 7.
~ Ա Տիմ. Զ. 12.
ւ Եբր. ԺԲ. 23.
ղ Սաղ. ԽԵ. 10. Ղուկ. Թ. 62. Բ Կորնթ. Ե. 16.
Է Ա Կորնթ. Թ. 24. 26. Եբր. Զ. 1.
~ Բ Տիմ. Դ. 7, 8. Եբր. ԺԲ. 1.
~ Եբր. Դ. 1.
Է Ա Կորնթ. Բ. 6. ԺԴ. 20.
~ Գաղ. Ե. 10.
ր Հռովմ. ԺԲ. 16. ԺԵ. 5.
ց Գղ. Բ. 2.
~ Գաղ. Զ. 16.
Է Ա Կորնթ. Դ. 16. ԺԱ. 1. Փլ. Դ. 9. Ա Թես. Ա. 6.
+ Ա Պետ. Ե. 3.
․ Գաղ. Ա. 7. Բ. 21. Զ. 12. Գղ. Ա. 15. 17.

19 Որոց կատարածն 'կորուստ է · որոց աստուած որովայնն իւրեանց է · եւ փառք ամօթն իւրեանց , որք զերկրաւորս եւ եթ խորհին ։

20 Այլ մեր առաքինութիւնն յերկինս է , ուստի եւ Փրկչին ակն ունիմք Տեառն Յիսուսի Քրիստոսի ։

21 Որ նորոգեսցէ զմարմինս խոնարհութեան մերոյ՝ կերպարանակից լինել մարմնոյ փառաց իւրոց , ըստ զօրութեանն՝ առ 'ի կարող լինելոյ հնազանդեցուցանել ընդ իւրեւ զամենայն ։

19 Որ նորանց վերջը կորուստ ‡ է · որ նորանց աստուածն իրենց փորն − է · եւ փառքն իրենց ամօթն ‡ է · որ միայն երկրաւոր բաներին են ÷ մտածում ։

20 Բայց մեր քաղաքավարութիւնը երկնքումն ⊤ է , որ ⊢ այնտեղից մըտիկ ենք սպասում Փրկչին՝ Տէր Յիսուս ⸗ Քրիստոսին ·

21 Որ մեր խոնարհ մարմինը կընորոգէ՝ որ իրեն փառաւոր մարմնոյ կերպարանքին նման ⊢ լինի , այն զօրութեան ≡ չափովը , որ կարող է ամէն բան հնազանդեցնել իրեն ‡ ներքեւը ։

## ԳԼ. Դ

1 Այսուհետեւ եղբարք իմ սիրելիք եւ ցանկալիք , ուրախութիւն իմ եւ պսակ · այսպէս հաստատուն կացէք 'ի Տէր՝ սիրելիք ·
2 Զեւոդիա աղաչեմ եւ զՍիւնտիքէ աղաչեմ , զնոյն խորհել 'ի Տէր ։
3 Այո աղաչեմ եւ զքեզ՝ մակբեմ իմ եւ լծակից , եւ դու օգնական լինիջիր նոցա՝ որք յաւետարանին նահատակեցան ընդ իս Կղեմաւ հանդերձ՝ եւ այլովք գործակցօք իմովք · որոց անուանքն են 'ի դպրութեան կենաց ։

4 Ուրախ լերուք 'ի Տէր յամենայն ժամ · դարձեալ ասեմ՝ ուրախ 'լերուք ։
5 Հեզութիւն ձեր յայտնի լիցի

1 Ուրեմն իմ սիրելի եւ ցանկալի − եղբարք , իմ ուրախութիւնս եւ ‡ պսակս · այսպէս հաստատ կացէք Տէրոջմը՝ ÷ սիրելիներ ։
2 Եւոդիային աղաչում եմ , եւ Սիւնտիքէին էլ աղաչում եմ , որ խելմին միաք ունենան ⊤ Տէրոջմը ։
3 Նաեւ քեզ էլ եմ աղաչում՝ իմ լծի հարազատ ընկերս , դու էլ օգնէ՝ նորանց՝ որ աւետարանումն ինձ հետ միասին պատերազմեցին՝ Կղեմէսի եւ իմ գործակից ընկերներին ⊢ հետ , որ նորանց անունները կենաց գրքումն ⸗ են ։
4 Ուրախ էլէք Տէրոջմն ամէն ժամանակ · կրկին ասում եմ՝ ուրախ ⊢ էլէք ։
5 Ձեր հեզահոգի լինելը թող

‡ Բ Կորնթ. ԺԱ. 15։ Բ Պետ. Բ. 1։
− Հռովմ. ԺԶ. 18։ Տիտ. Ա. 11։
‡ Ովսէ Դ. 7։ Բ Կորնթ. ԺԱ. 12։ Գաղ. Զ. 13։
÷ Հռովմ. Ը. 5։
⊤ Եփես. Բ. 6. 19։ Կող. Գ. 1. 3։
⊢ Գործ. Ա. 11։
⸗ Ա Կորնթ. Ա. 7։ Ա Թես. Ա. 10։ Տիտ. Բ. 13։
⊢ Ա Կորնթ. ԺԵ. 43. 48. 49։ Կող. Գ. 4։ Ա Յովհ. Գ. 2։
≡ Եփես. Ա. 19։
‡ Ա Կորնթ. ԺԵ. 26. 27։

—

− Փղ. Ա. 8։
‡ Բ Կորնթ. Ա. 14։ Փղ. Բ. 16։ Ա Թես. Բ. 19, 20։
÷ Փղ. Ա. 27։
⊤ Փղ. Բ. 2։ Գ. 16։
⊢ Հռովմ. ԺԶ. 3։ Փղ. Ա. 27։
⸗ Ելից. ԼԲ. 32։ Սաղ. ԿԹ. 28։ Դան. ԺԲ. 1։ Ղուկ. Ժ. 20։ Յայտ. Գ. 5։ ԺԳ. 8։ Ի. 12։ ԻԱ. 27։
⊢ Հռովմ. ԺԲ. 12։ Փղ. Գ. 1։ Ա Թես. Ե. 16։ Ա Պետ. Դ. 13։

ամենայն մարդկան . Տէր մերձ է ։

6 Մի ինչ հոգայք . այլ ամենայն աղօթիւք եւ խնդրուածովք , գոհութեամբ խնդրուածք ձեր յայտնի լիցին առ Աստուած ։

7 Եւ խաղաղութիւնն Աստուծոյ՝ որ ՚ի վեր է քան զամենայն միտս , պահեսցէ զսիրտս ձեր եւ զմիտս ՚ի Քրիստոս Յիսուս ։

8 Այսուհետեւ եղբարք՝ որ ինչ ճշմարտութեամբ է , որ ինչ պարկեշտութեամբ , որ ինչ արդարութեամբ՝ որ ինչ սրբութեամբ , որ ինչ սիրով , որ ինչ համբաւ բարեաց , որ ինչ քաջութեամբ , որ ինչ գովութեամբ , զայն խորհեցիք ։

9 Զոր ուսարուքն եւ ընկալարուք եւ լուայք եւ տեսէք յիս , զայն արարէք . եւ Աստուած խաղաղութեան եղիցի ընդ ձեզ ։

10 Ուրախ եղէ ես ՚ի Տէր յոյժ . զի եւ դուք զմտաւ ածիք հոգալ ինչ վասն իմ , որպէս եւ հոգայիքն . բայց բարպարէիք իմն է ։

11 Երբ ոչ առ կարօտութեան ինչ ասեմ . զի ես ուսայ՝ որովք կարեմ բաւական լինել ։

12 Գիտեմ նուաղել , գիտեմ առաւելուլ . յամենայնի ամենեւին խրատեալ եմ , եւ յագել՝ եւ քաղցնուլ . եւ առաւելուլ՝ եւ նուազել ։

13 Յամենայնի կարօղ եմ այնու՝ որ զօրացուցին զիս ։

յայտնի լինի ամէն մարդկանց . Տէրը մօտ է ։

6 Հոգս մի անէք մին բանի համար . բայց ամէն աղօթքով եւ աղաչանքով եւ գոհութենով՝ ձեր խնդրուածքները թող յայտնի լինին Աստուծոյ Առաջին ։

7 Եւ Աստուծոյ խաղաղութիւնն՝ որ ամէն մտքից վերեւ է , պահպանէ ձեր սրտերին ու մտքերը Քրիստոս Յիսուսումը ։

8 Ուրեմն եղբարք՝ ինչ որ ճշմարտութենով է , ինչ որ պարկեշտութենով , ինչ որ արդարութենով , ինչ որ սրբութենով , ինչ որ սիրով , ինչ որ բարի անունով , ինչ որ բարեպարծութենով , ինչ որ գովութենով՝ նա մտածեցէք ։

9 Նա՛ որ սովորեցիք՝ եւ ընդունեցիք՝ եւ լսեցիք՝ եւ ինձանում տեսիք՝ նա շարէք . եւ խաղաղութեան Աստուածը ձեզ հետ կը լինի ։

10 Ես շատ ուրախացայ Տէրումը . որ դուք էլ մտքներդ բերիք հոգս տանել ինձ համար , ինչպէս որ էլ հոգս էիք անում . բայց պատշաճ ժամանակ չէիք գտնում ։

11 Չէ թէ կարօտութեան պատճառով եմ ասում սա . ինչու որ ես սովորեցի բաւական լինել նրանով՝ որ ունիմ ։

12 Գիտեմ պակասութիւն քաշել , եւ աւելութենով լինել . ամէն բանի մէջ ամէնին լաւ սովորեցած եմ . կշտանալն էլ՝ սովելն էլ . աւելութենով լինելն էլ՝ պակասութիւն քաշելն էլ ։

13 Ամէն բան կարող եմ նորա ձեռովն՝ որ ինձ զօրացրուց ։

| | | | |
|---|---|---|---|
| Ե Եբր . Ժ . 25 . | Մատթ . Զ . 25 . | Ը Գղ . Գ . 17 . | Ժ Բ Կորնթ ԺԱ . 9 . |
| Յակ . Ե . 8 . 9 . | Ղու . ԺԲ . 22 . | Թ Հռովմ . ԺԵ . 33 . | ԺԱ Ա Տիմ . Զ . 6 . 8 . |
| Ա Պետ . Դ . 7 . Բ | Ա Պետ . Ե . 7 . | ԺԶ . 20 . Ա Կորնթ . | ԺԲ Ա Կորնթ . Գ . 11 . |
| Պետ . Գ . 8 . 9 | Է Յովհ . ԺԴ . 27 . | ԺԴ . 33 . Բ Կորնթ . | Բ Կորնթ . Զ . 10 . |
| Բ Թես . Բ . 2 . | Հռովմ . Ե . 1 . | ԺԳ . 11 . Ա Թես . | ԺԱ . 27 . |
| Զ Սաղ . ԾԵ 22 . | Կող . Գ . 15 . | Ե . 23 . Եբր . | ԺԳ Յովհ . ԺԵ . 5 . |
| Ղուկ . ԺԶ . 3 . | Ժ Ա Թես . Ե . 22 . | ԺԳ . 20 . | Բ Կորնթ . ԺԲ . 9 . |

14 Բայց բարւոք արարէք՝ զի կցորդ եղերուք ինձ 'ի նեղութեանս։

15 Գիտէք եւ դուք Փիլիպեցիք, զի 'ի սկզբան աւետարանին իբրեւ ելի ես 'ի Մակեդոնիէ, եւ ոչ մի եկեղեցի հաղորդեաց ինձ յաղագս տալոյ եւ առնլոյ, բայց միայն դուք։

16 Զի եւ 'ի Թեսաղոնիկէ միանգամ եւ երկիցս զպէտս իմ հասուք բերել։

17 Ոչ եթէ խնդրեմ զտուրս, այլ խնդրեմ զպտուղն, որ յաճախէ 'ի քան ձեր։

18 Այլ իմ առեալ զամենայն, եւ առաւելեալ եմ. ընկալայ՝ եւ լի եմ 'ի ձեռն Եպափրոդիտեայ, որ 'ի ձէնջ հոտ անուշից՝ պատարագ ընդունելի՝ հաճոյ Աստուծոյ։

19 Եւ Աստուած իմ լի արասցէ զամենայն պէտս ձեր ըստ իւրում մեծութեանն՝ փառօք 'ի Քրիստոս Յիսուս։

20 Այլ Աստուծոյ եւ Հօր մերում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

21 Ողջոյն տաջիք ամենայն սրբոց՝ 'ի Քրիստոս Յիսուս։

22 Ողջոյն տան ձեզ՝ որ ընդ իս են եղբարք։

23 Ողջոյն տան ձեզ ամենայն սուրբք. մանաւանդ որ 'ի տանէ կայսեր են։

24 Շնորհք Տեառն Յիսուսի Քրիստոսի ընդ ոգւոյդ ձերում. ամէն։

14 Բայց լաւ արիք, որ հաղորդ էլաք ինձ իմ [ղ] նեղութենումս։

15 Դուք էլ գիտումէք Փիլիպեցիք, որ աւետարանելոյ սկզբումն՝ երբոր Մակեդոնիայիցը դուրս ելի, ոչ մին եկեղեցի էլ հաղորդութիւն չարաւ ինձ՝ տալոյ եւ առնելոյ համարովը, բայց մինակ [ճ] դուք։

16 Ինչու որ Թեսաղոնիկէի մէջ էլ մինեւերկու անգամ բերիլ տուիք ինձ պէտք եղած բաներ։

17 Ո՛չ թէ այնպէս՝ որ տուրքըն եմ ուզում, այլ պտուղըն եմ ուզում որ աւելանայ ձեր [մ] համարումը։

18 Բայց ես ամէն բան առել եմ, եւ աւելութիւն ունիմ. լցուն եմ, որ Եպափրոդիտոսի ձեռամբ ընդունեցի [յ] այն, որ ձեզանից է՝ անուշ [ն] հոտ, ընդունելի պատարագ՝ Աստուծոյ [շ] հաճոյ։

19 Եւ իմ Աստուածս լցնէ ձեր ամէն [ո] կարօտութիւնըն իւրեն հարըստութեան չափովը՝ փառքով Քրիստոս [չ] Յիսուսումը։

20 Բայց Աստուծոյ մեր Հօրը փառք յաւիտեանս [պ] յաւիտենից. ամէն։

21 Ողջոյն տուէք ամէն սրբերին՝ Քրիստոս Յիսուսումը։

22 Ողջոյն են տալիս ձեզ եղբարներին՝ որ ինձ հետ [ջ] են։

23 Ողջոյն են տալիս ձեզ ամէն սրբերը. մանաւանդ նորանք՝ որ կայսերի տանիցն [ռ] են։

24 Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքըն ձեր հոգւոյն [ս] հետ. ամէն։

Փիլիպեցւոց թուղթը գրուեցաւ Հռոմ քաղաքէն՝ Եպափրոդիտոսի ձեռքով։

ղ Փլ. Ա. 7։
ճ Բ Կորնթ. ԺԱ. 8, 9։
մ Հռովմ. ԺԵ. 28։ Տիտ. Գ. 14։
յ Փլ. Բ. 25։
ն Եբր. ԺԳ. 16։
շ Բ Կորնթ. Թ. 12։
ո Սաղ. ԻԳ. 1։ Բ Կորնթ. Թ. 8։
չ Եփես. Ա. 7։ Գ. 16։
պ Հռովմ. ԺԶ. 27։ Գաղ. Ա. 5։
ջ Գաղ. Ա. 2։
ռ Փլ. Ա. 13։
ս Հռովմ. ԺԶ. 24։

—

# ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑ

## ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍ

---

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 ՊՕՂՈՍ առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամօքն Աստուծոյ, եւ Տիմոթէոս եղբայր :

2 Առ Կողոսացիս սուրբս եւ հաւատացեալս եղբարս ՚ի Քրիստոս :

3 Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ (եւ ՚ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ) . գոհանամք զԱստուծոյ եւ զՀօրէ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յամենայն ժամ վասն ձեր աղօթս առնեմ :

4 Իբրեւ լուաք զհաւատսն ձեր՝ որ ՚ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, եւ զսէրն՝ որ ընդ ամենայն սուրբս ունիք :

5 Վասն յուսոյն՝ որ պահի ձեզ յերկինս . զորմէ լուարուք բանիւն ճշմարտութեան աւետարանին,

6 Որ եհաս առ ձեզ՝ . որպէս ընդ ամենայն աշխարհ աճէ՝ եւ պտղաբերէ . որպէս եւ ՚ի ձերում միջի . յօրէ յորմէ լուարուք՝ եւ ծանեայք զշնորհսն Աստուծոյ ճշմարտութեամբ :

7 Որպէս եւ ուսարուք յԵպափրեայ սիրելւոյ ծառայակցէ մերմէ, որ է հաւատարիմ վասն ձեր՝ պաշտօնեայ Յիսուսի :

8 Որ եւ պատմեաց մեզ զձեր սէրն հոգւով :

9 Վասն այնորիկ եւ մեք՝ յօրէ յորմէ լուաք՝ ոչ դադարեմք վասն

1 ՊՕՂՈՍ՝ Յիսուսի Քրիստոսի առաքեալ Աստուծոյ [ա]կամքովը, եւ Տիմոթէոս եղբայրը :

2 Կողոսացի սրբերին եւ հաւատացեալ եղբայրներին Քրիստոսումը :

3 Շնորհք ձեզ հետ՝ եւ խաղաղութիւն Աստուած մեր Հօրիցն՝ ու Տէր Յիսուս [բ]Քրիստոսիցը . գոհանումենք Աստուածանից եւ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի Հօրիցը . ու ամէն ժամանակ աղօթք եմ անում ձեզ [գ]համար :

4 Երբոր լսեցինք ձեր հաւատքն՝ որ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի վերայ [դ]է, եւ սէրն՝ որ ամէն սրբերին հետ [ե]ունիք,

5 Այն յուսոյն համար՝ որ պահվումէ ձեզ համար [զ]երկինքումն . որ նորա համար լսեցիք աւետարանի ճշմարիտ խօսքովը,

6 Որ հասաւ ձեզ, ինչպէս որ ամէն աշխարհքի մէջ, եւ [է]մեծանումէ եւ պտուղ [ը]բերում . ինչպէս որ ձեր միջումն էլ . այն օրիցն հետէ՝ որ լսեցիք եւ Աստուծոյ շնորհքն ճանաչեցիք [թ]ճշմարտութեամբ .

7 Ինչպէս որ էլ սովորեցիք սիրելի Եպափրասից, մեր ծառայութեան [ժ]ընկերիցը, որ ձեզ համար Յիսուսի հաւատարիմ պաշտօնեայ է,

8 Որ էլ պատմեց մեզ ձեր սէրը [լ]հոգով .

9 Նրահամար մենք էլ այն օրիցն հետէ որ լսեցինք՝ չենք դադարում

---

ա Եփես. Ա. 1.
բ Գաղ. Ա. 3.
գ Ա Կորնթ. Ա. 4. Եփես. Ա. 16. Փիլիպ. Ա. 3. Դ. 1.
դ Համար. 9. Եփես. Ա. 15. Փիլիմ 5.
ե Եբր. Զ. 10.
զ Բ Տիմ. Դ. 8. Ա Պետ. Ա. 4.
է Մատթ. ԻԴ. 14. Մարկ. ԺԶ. 15. Հռովմ. Ժ. 18. Համար. 23.
ը Մարկ. Դ. 8. Յովհ. ԺԵ. 16. Փիլիպ. Ա. 11.
թ Բ Կորնթ. Զ. 1. Եփես. Գ. 2. Տիտ. Բ. 11. Ա Պետ. Ե. 12.
ժ Գղ. Դ. 12. Փիլիմ 23.
ի Բ Կորնթ. ԺԱ. 23. Ա Տիմ. Դ. 6.
լ Հռովմ. ԺԵ. 30.

ձեր աղօթս առնել՝ եւ խնդրուածս մատուցանել . զի լնուցուք զգիտութիւն կամացն նորա , ամենայն իմաստութեամբ եւ հոգեւոր հանճարով ։

10 Գնալ ձեզ արժանի Տեառն յամենայն հաճութեան , յամենայն գործս բարութեան պտղաբերք եւ աճեցունք զգիտութեամբն Աստուծոյ ։

11 Ամենայն զօրութեամբ զօրացեալք ըստ զօրութեան փառաց նորա . յամենայն համբերութիւն եւ երկայնմտութիւն ուրախութեամբ .

12 Գոհանալ զԱստուծոյ Հօրէ՝ որ կոչեաց զձեզ 'ի մասն վիճակի սըրբոցն 'ի լոյս ։

13 Որ փրկեաց զմեզ յիշխանութենէ խաւարի , եւ փոխեաց զմեզ յարքայութիւն Որդւոյն իւրոյ սիրելւոյ ։

14 Որ ունիմք զփրկութիւն՝ արեամբն նորա , եւ զթողութիւն մեղաց մարմնովն նորա ։

15 Որ է պատկեր աներեւութին Աստուծոյ , անդրանիկ ամենայն արարածոց ։

16 Զի նովաւ հաստատեցաւ ամենայն , որ ինչ յերկինս՝ եւ որ ինչ յերկրի , որ երեւելին՝ եւ որ ոչն երեւելին . եթէ աթոռք , եթէ տէրութիւնք , եթէ պետութիւնք , եթէ իշխանութիւնք . ամենայն ինչ նո-

ձեզ համար աղօթք անել , եւ խընդրուածք խ մատուցանել , որ ծ լցուիք նորա կամաց կ գիտութիւնովը , ամէն իմաստութիւնով եւ հոգեւոր հ խելքով .

10 Որ դուք գնաք ինչպէս որ արժանի է ձ Տէրոջն , ամէն բանի մէջ հաճոյ ղ լինելով , ամէն բարի գործքերով պտղաբեր լինիք եւ Աստուծոյ գիտութիւնովը ճ մեծնաք .

11 Եւ ամէն զօրութիւնովը զօրանաք իրեն փառքի զօրութեան մ չափովը . ամէն համբերութիւնով եւ յ երկայնմտութեամբ ն ուրախութիւնով .

12 Եւ գոհութիւն տաք շ Հօրը՝ որ մեզ կանչեց մասնակից լինելու սըրբերի վիճակին ո լուսումը .

13 Որ փրկեց մեզ խաւարի չ իշխանութիւնիցը , եւ փոխեց տարաւ մեզ իրեն սիրելի Որդւոյ արքայութեան պ մէջ .

14 Որ նորա ձեռովն ունինք փըրկութիւն՝ նորա արիւնովը , եւ մեղաց թողութիւն նորա ջ մարմնովը .

15 Որ նա աներեւոյթ Աստուծոյ պատկերն ռ է՝ ամէն ստեղծուածների ս առաջինն է ։

16 Ինչու որ՝ նորանով ամէն բան ստեղծուեցաւ , ինչ որ երկնքումն՝ եւ ինչ որ երկրումն . նա որ երեւումն՝ եւ նա որ չի երեւում . թէ աթոռները , թէ տէրութիւնները , թէ պետութիւնները , թէ տ իշխա-

խ Եփես . Ա . 15 . 16 . Հռոմ . 3 , 4 .
ծ Ա Կորնթ . Ա . 5 .
կ Հռոմ . ԺԲ . 2 . Եփես . Ե . 10 . 17 .
հ Եփես . Ա . 8 .
ձ Եփես . Դ . 1 . Փիլիպ . Ա . 27 . Ա Թես . Բ . 12 .
ղ Ա Թես . Դ . 1 .
ճ Յովհ . ԺԵ . 16 . Բ Կորնթ . Թ . 8 Փիլիպ . Ա . 11 . Տիտ . Գ . 1 . Եբր . ԺԳ . 21 .
մ Եփես . Գ . 16 . Ջ . 10 .
յ Եփես . Դ . 2 .
ն Գործ . Ե . 41 . Հռոմ . Ե . 3 .
շ Եփես . Ե . 20 . Գղ . Գ . 15 .
ո Գործ . ԻԶ . 18 . Եփես . Ա . 11 .
չ Եփես . Զ . 12 . Եբր . ԺԲ . 14 . Ա Պետ . Բ . 9 .
պ Ա Թես . Բ . 12 . Բ Պետ . Ա . 11 . Մատթ . Գ . 17 . Եփես . Ա . 6 .
ջ Եփես . Ա . 7 .
ռ Բ Կորնթ . Դ . 4 . Եբր . Ա . 3 .
ս Յայտ . Գ . 14 .
վ Յովհ . Ա . 3 . Ա Կորնթ . Ը . 6 . Եփես . Գ . 9 . Եբր . Ա . 2 .
տ Հռոմ . Ը . 38 . Եփես . Ա . 21 . Գղ . Բ . 10 . 15 . Ա Պետ . Գ . 22 .

վաւ՝ եւ 'ի նոյն հաստատեցաւ ։

17 Եւ նա է յառաջ քան զամենայն, եւ ամենայն ինչ նովաւ եկաց բովանդակ ։
18 Եւ նա է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ . որ է սկիզբն, անդրանիկ 'ի մեռելոց . զի եղիցի ինքն յամենայնի յառաջացեալ ։

19 Զի 'ի նմա հաճեցաւ ամենայն լրումն Աստուածութեանն բնակել ։

20 Եւ նովաւ հաշտեցուցանել զամենայն 'ի նոյն . արար խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ, որ ինչ յերկրի՝ եւ որ ինչ յերկինս ։

21 Եւ զձեզ՝ որ երբեմն օտարացեալ էիք, եւ թշնամիք խորհրդովք 'ի գործս չարութեան,
22 Այժմ աւադիկ հաշտեցոյց անդամովք մարմնոյ իւրոյ 'ի ձեռն մահուն իւրոյ, յանդիման կացուցանել զձեզ սուրբս՝ եւ անբիծս՝ եւ անարատս առաջի նորա ։
23 Եթէ կայցէք 'ի հաւատսն արմատացեալք եւ հաստատեալք . եւ անշարժք 'ի յուսոյ աւետարանին զոր լուարուք, քարոզելոյ ընդ ամենայն արարածս 'ի ներքոյ երկնից . որոյ եղէ ես Պօղոս պաշտօնեայ ։

24 Եւ արդ՝ ուրախ եմ 'ի չարչարանս իմ վասն ձեր . եւ լնում զպակասութիւն նեղութեանցն Քրիս-

նութիւնները . ամէն բան նորանով՝ եւ նորա համար ր ստեղծուեցաւ ։
17 Եւ նա ամէնիցն առաջ է, եւ ամէն բան նորանով բովանդակ ջ էլաւ ։
18 Եւ նա մարմնոյ այսինքն եկեղեցւոյ գլուխն – է . որ նա է սկիզբը, մեռելներից ÷ առաջինեկը . նրա համար որ նա ամէն բանի մէջ առաջինը լինի ։
19 Պատճառն որ հաճոյ էլաւ Աստուծոյն, որ նորանում Աստուածութեան ամէն լրութիւնը + բնակվի .
20 Եւ նորանով + ամէնքին՝ իրեն հետ ÷ հաշտացնէ . նա խաղաղութիւն արաւ իրեն խաչի արիւնովը, նա որ երկրումն է՝ եւ նա որ երկնքումն – է ։
21 Եւ ձեզ էլ՝ որ ժամանակով օտարացած ֆ էիք, եւ թշնամի մտքով չար ÷ գործքերումը,
22 Հիմիկ հաշտացրուց իրեն մարմնոյ անդամներումն՝ իրեն ÷ մահովը, որ ձեզ սուրբ՝ եւ անբիծ՝ եւ անարատ կանգնացնէ նորա ֆ առաջին ։

23 Թէ որ հաւատքի մէջ արմատ ձգած կենաք եւ ՟ հաստատված . եւ առանց շարժվելոյ այն աւետարանի յուսիցն՝ որ ֆ լսեցիք, որ երկնքի տակ լինող ամէն ՟ ստեղծվածներին ֆ քարոզվեցաւ . որ ես Պօղոս նորա պաշտօնեայ ֆ էլայ ։
24 Եւ հիմիկ ուրախ եմ ֆ իմ չարչարանքներումս ձեզ ՟ համար . եւ Քրիստոսի նեղութիւններին պակասը

ր Հռովմ. ԺԱ. 36. Եբր. Բ. 10 ։
ջ Յովհ. Ա. 1. 3. Ժէ. 5 ։ Ա Կորնթ. Ը. 6 ։
– Եփես. Ա. 10. 22 . Դ. 15 . Ե. 23 ։ Ա Կորնթ. ԺԱ. 3 ։
÷ Գործ. ԻԶ. 23 ։ Ա Կորնթ. ԺԵ. 20. 23 ։ Յայտ Ա. 5 ։
+ Յովհ. Ա. 16 . Գ. 34 ։ Գղ. Բ. 9 ։ Գ. 11 ։
+ Եփես Ա. 10 ։
÷ Բ Կորնթ. Ե. 18 ։
– Եփես. Բ. 14. 15 ։ 16 ։
ֆ Եփես. Բ. 1. 2. 12. 19 ։ Դ. 18 ։
÷ Տիտ. Ա. 15. 16 ։
÷ Եփես. Բ. 5. 16 ։
ֆ Ղու. Ա. 75 ։ Եփես Ա. 4 ։ Ե 27 ։ Ա Թես. Դ. 7 ։ Տիտ. Բ. 14 ։ Յուդ. 24 ։
՟ Եփես. Գ. 17. Գղ. Բ. 7 ։
ֆ Յովհ. ԺԵ. 6 ։
՟ Հռովմ. 6 ։
ֆ Հռովմ. Ժ. 18 ։
ֆ Գործ. Ա. 17 ։ Բ Կորնթ. Գ. 6 ։ Դ. 1 ։ Ե. 18 ։ Եփես Գ 7. Հռովմ. 25. Ա Տիմ. Բ. 7 ։
ֆ Հռովմ. Ե. 3 ։ Բ Կորնթ. Է. 4 ։
՟ Եփես. Գ. 1. 13 ։

տասի 'ի մարմնի խում վասն մարմնոյ նորա որ է եկեղեցի ։
25 Որոյ եղէ ես Պօղոս պաշտօնեայ՝ ըստ տնտեսութեանն Աստուծոյ, որ տուեալ է ինձ 'ի ձեզ կատարել զբանն Աստուծոյ ։
26 Զխորհուրդն՝ որ ծածկեալն էր 'ի յաւիտենից եւ յազգաց . որ այժմ յայտնեցաւ սրբոց նորա ։
27 Որոց կամեցաւ Աստուած ցուցանել, թէ զինչ է մեծութիւն փառաց խորհրդոյ նորա 'ի հեթանոսս, որ է Քրիստոս 'ի ձեզ՝ յոյս փառաց ։
28 Զոր մեքն քարոզեմք եւ խրատեմք զամենայն մարդ, եւ ուսուցանեմք զամենայն մարդ ամենայն հոգեւոր իմաստութեամբ, զի կացուսցուք զամենայն մարդ կատարեալ 'ի Քրիստոս Յիսուս ։
29 Յոր եւ աշխատիմ պատերազմեալ ըստ յաջողութեան նորա, որ յաջողեալ է յիս զօրութեամբ ։

լցնում եմ իմ ժ մարմնումս՝ նորա մարմնոյն համար՝ որ եկեղեցին ի է .
25 Որ ես Պօղոսս նորա պաշտօնեայ էլայ՝ Աստուծոյ այն տնտեսութեան պէս, որ ինձ տրւած է լ ձեզանում՝ որ Աստուծոյ խօսքը խ կատարեմ .
26 Այն խորհուրդն՝ որ ծածկւած էր յաւիտենից ու ծ ազգերից . որ կ հիմիկ յայտնւեցաւ իրեն սրբերին .
27 Որ Աստուած կամեցաւ ցոյց տալ հ նորանց, թէ ինչ է իրեն խորհրդոյ փառաւոր մեծութիւնը ձ հեթանոսներումն, որ նա Քրիստոսն է ձեզանում՝ փառաց ղ յոյսը .
28 Որ մենք քարոզում ենք նորան, եւ ամէն մարդ խրատում՝ եւ ամէն մարդ սովորցնում ամէն հոգեւոր ճ իմաստութենով, որ ամէն մարդ կատարեալ կանգնացնենք Քրիստոս մ Յիսուսումը .
29 Նրահամար էլ յ աշխատում եմ պատերազմ ն անելով նորա յաջողութեան չափովն՝ որ ինձանում յաջողւած է շ զօրութենով ։

## ԳԼ . Բ

1 Կամիմ զի գիտիցէք դուք՝ որպիսի ճգնութիւն ունիմ յանձին վասն ձեր՝ եւ վասն Լաւոդիկեցւոցն, եւ որոց չիցէ տեսեալ զերեսս իմ մարմնով ։
2 Զի մխիթարեսցին սիրտք նոցա տեղեկացեալք սիրով . եւ յամենայն մեծութիւն լրութեան իմաստութեան՝ 'ի գիտութիւն խորհրդոյն Աստուծոյ Հօր 'ի Քրիստոս Յիսուս ։

1 Կամենում եմ որ գիտենաք դուք՝ թէ ինչպէսի պատերազմ ունիմ իմ անձնումս՝ ձեզ համար եւ Լաւոդիկեցոց համար, եւ նորանց համար որ իմ երեսս մարմնով չեն ո տեսել,
2 Որ նորանց սրտերը չ մխիթարւին եւ տեղեկանան սիրով . եւ կատարեալ իմաստութեան ամէն պ մեծութենով, որ իմանան Աստուծոյ խորհուրդը Քրիստոս ջ Յիսուսումը .

ժ Բ Կորնթ . Ա . 5, 6 . Փիլիպ . Գ . 10 . Բ Տիմ . Ա . 8 . Բ . 10 .
ի Եփես . Ա . 23 .
լ Ա Կորնթ . Թ . 17 . Գաղ . Բ . 7 . Եփես . Գ . 2 . Համար . 23 .
խ Հռովմ . ԺԵ . 19 .
ծ Հռովմ . ԺԶ . 25 . Ա Կորնթ . Բ . 7 . Եփես . Գ . 9 .
կ Մատթ . ԺԳ . 11 . Բ Տիմ . Ա . 10 .
հ Բ Կորնթ . Բ . 14 .
ձ Հռովմ . Թ . 23 . Եփես . Ա . 7 . Գ . 8 .
ղ Ա Տիմ . Ա . 1 .
ճ Գործ . Ի . 20 . 27 . 31 .
մ Բ Կորնթ . ԺԱ . 2 . Եփես . Ե . 27 . Համար 22 .
յ Ա Կորնթ . ԺԵ . 10 .
ն Գղ . Բ . 1 .
շ Եփես . Ա . 19 . Գ . 7 . 20 .
ո Գղ . Ա . 29 . Փիլիպ . Ա . 30 . Ա Թես . Բ . 2 .
չ Բ Կորնթ . Ա . 6 .
պ Գղ . Գ . 14 .
ջ Փիլիպ . Գ . 8 . Գղ . Ա . 9 .

—

3 Յորում ամենայն գանձք իմաստութեան եւ գիտութեան ծածկեալ կան։
4 Այլ զայս ասեմ, զի մի ոք ըզ ձեզ զառանցուսցէ պատիր բանիւք։

5 Զի թէպէտ եւ մարմնով հեռի եմ, այլ հոգւով ընդ ձեզ եմ. խնդամ իբրեւ տեսանեմ զկարգն ձեր՝ եւ զհաստատութիւն հաւատոյն ձերոյ որ ՚ի Քրիստոս Յիսուս։

6 Արդ՝ որպէս ընկալարուք զՔրիստոս Յիսուս զՏէր, նովին գնասջիք.
7 Արմատացեալք եւ շինեալք ՚ի նա, եւ հաստատեալք ՚ի հաւատս, որպէս ուսարուքն՝ առաւելեալք ՚ի նմին գոհութեամբ։

8 Զգոյշ լերուք՝ մի ոք իցէ՝ որ զձեզ կողոպտիցէ ճարտարմտութեամբ՝ եւ սնոտի խաբէութեամբ, որք ըստ մարդկան աւանդութեան՝ եւ ըստ տարերց աշխարհիս՝ եւ ոչ ըստ Յիսուսի Քրիստոսի։

9 Զի ՚ի նմա բնակէ ամենայն լրումն Աստուածութեանն մարմնապէս։
10 Եւ էք դուք՝ նովաւ լցեալք, որ է գլուխ ամենայն իշխանութեան եւ պետութեան։
11 Որով թլփատեցարուք հաւատովք զանձեռագործ թլփատութիւնն՝ ՚ի մերկանալ զմարմ-

3 Որ նորանում ծածկված կան իմաստութեան եւ գիտութեան ամէն ե գանձերը։
4 Բայց սա եմ ասում, չը լինի թէ մինը մոլորացնէ ձեզ խաբեբայ զ խօսքերով։
5 Ինչու որ՝ թէ եւ մարմնով հեռու եմ, բայց հոգով ձեզ հետ է եմ. ուրախանում եմ՝ երբոր ձեր կարգը ը տեսնում եմ, եւ ձեր հաւատքի հաստատութիւնն՝ որ Քրիստոս Յիսուսումն թ է։
6 Ուրեմն ինչպէս որ Քրիստոս Յիսուս Տէրն ընդունեցիք, նորանով էլ ժ գնացէք.
7 Արմատ ձգած՝ եւ նորանում շինված, եւ հաւատքումն ի հաստատված, ինչպէս որ սովորեցիք՝ եւ առաջացէք նորանում գոհութենով։
8 Զգոյշ կացէք՝ որ չը լինի թէ մինը թալանէ ձեզ փիլիսոփայութենով՝ եւ ունայն լ խաբեբայութենով, որ մարդկանց աւանդութեան է պէս՝ եւ աշխարհքիս սկզբունքներին պէս խ է՝ եւ չէ թէ Յիսուս Քրիստոսին պէս։
9 Ինչու որ նորանում բնակված է Աստուածութեան ամէն լըրութիւնը կ մարմնապէս։
10 Եւ դուք նորանով լցված հ էք, որ նա ամէն իշխանութիւնների եւ ձ պետութիւնների գլուխն ղ է.
11 Որ նորանով դուք թլփատվեցաք հաւատքով՝ այն առանց ձեռքի էլած ճ թլփատութենովը, մարմնոյ

ե Ա Կորնթ. Ա. 24. Բ. 6. 7. Եփես. Ա. 8. Կղ. Ա. 9.
զ Հռովմ. ԺԶ. 18. Բ Կորնթ. ԺԱ. 13. Եփես Դ. 14. Ե. 6. Համար. 8 18.
է Ա Կորնթ. Ե. 3. Ա Թես. Բ. 17.
ը Ա Կորնթ. ԺԴ. 40.
թ Ա Պետ. Ե. 9.
ժ Ա Թես. Դ. 1. Յուդ. 3.
ի Եփես. Բ. 21. 22. Գ. 17. Կղ. Ա. 32.
լ Եբրայ. ԻԹ. 8. Հռովմ. ԺԶ. 17. Եփես. Ե. 6. Համար. 18. Եբր ԺԳ. 9.
խ Մատթ. ԺԵ. 2. Գաղ. Ա. 14. Համար. 22.
ծ Գաղ. Դ. 3. 9. Համար. 20.
կ Յովհ. Ա. 14. Կղ. Ա. 19.
հ Յովհ. Ա. 16.
ձ Կղ. Ա. 16.
ղ Եփես. Ա. 20. 21. Ա Պետ. Գ. 22.
ճ Բ Օրին. Ժ. 16. Ղ. 6. Երեմ. Դ. 4. Հռովմ. Բ. 29. Փիլիպ. Գ. 8.

նոյ թլփատութեամբն Քրիստոսի ։

12 Թաղեալք ընդ նմին 'ի մկրտութեանն, որով եւ ընդ նմին յարեայք հաւատովք Աստուծոյ ազդեցութեանն, որ յարոյց զնա 'ի մեռելոց ։

13 Եւ զձեզ՝ որ երբեմն մեռեալն էիք 'ի մեղս եւ յանթլփատութեան մարմնոյ ձերոյ, կենդանացոյց յանձին իւրում. շնորհեաց մեզ զամենայն յանցանս մեր ։

14 Եւ ջնջեաց զձեռագիր մերոյ հակառակութեան հրամանօքն իւրովք. որ կայր մեզ հակառակ՝ եւ բարձ զայն 'ի միջոյ՝ եւ բեւեռեաց ընդ խաչափայտին ։

15 Մերկեաց զիշխանութիւնս եւ զպետութիւնս. յայտ յանդիման խայտառակեաց նշաւակեալ զնոսա յանձին իւրում 'ի յարութեան իւրում ։

16 Մի ոք այսուհետեւ զձեզ դատեսցի՝ ուտելով կամ ըմպելով, կամ մասամբք տօնից կամ ամսամտիւք կամ շաբաթուք ։

17 Որ են ստուերք հանդերձելոցն. այլ մարմին Քրիստոս է ։

18 Մի ոք զձեզ խաբեսցէ, որ կամիցի խոնարհութեամբ եւ կրօնիւք հրեշտակաց, զոր չիցէ տեսեալ զրահիւ փարել՝ տարապարտ հպարտացեալ 'ի մտաց մարմնոյ իւրոյ.

19 Եւ ոչ ունիցի զգլուխն Քրիստոս, ուստի ամենայն մարմինն յօ-

անդամները չըլլալով հանելովը՝ Քրիստոսի ՛ թլփատութենովը .

12 Որ թաղվեցաք նորա հետ ; մկրտութենովը, որ նորանով էլ յարութիւն առիք նորա ՝ հետ այն հաւատքովը՝ որ Աստուած ՝ գործեց, որ յարոյց նորան մեռելների = միջիցը ։

13 Եւ ձեզ՝ որ մին ժամանակ մեռած էիք մեղքումը՝ եւ ձեր մարմնոյ անթլփատութենումը, իրեն անձնովը կենդանացրուց. մեր ամէն մեղքերը բաշխեց ՝ մեզ,

14 Եւ ջնջեց այն ձեռագիրն՝ որ մեզ հակառակ էր՝ իրեն հրամաններովը. որ նա մեզ հակառակ կար՝ նորան վեր կալաւ մէջ տեղիցը՝ եւ խաչափայտին վերայ ¬ բեւեռեց ։

15 Իշխանութիւններին եւ ՛ պետութիւններին մերկացրուց. յայտնի նորանց խայտառակեց եւ յաղթութեան նշան արաւ իրեն անձնովն իրեն – յարութենումը ։

16 Ուրեմն թող մինը չը դատէ = ձեզ՝ ուտելոյ կամ խմելոյ ՛ համար, կամ տօների կամ ամսագլուխների կամ շաբաթների ⁼ կողմանէ .

17 Որ սորանք նոր գալու բաների շուքներն են. բայց մարմինը Քրիստոս ՙ է ։

18 Չի լինի որ մինը խաբէ ձեզ, որ կամենայ խոնարհութենով եւ հրեշտակների ՟ պաշտամունքով զուր տեղը հետեւիլ այն բանին՝ որ չի տեսած՝ եւ զուր տեղն գոռոզացած լինի իրեն մարմնաւոր – մաքովը .

19 Եւ չունենայ Քրիստոս ՟ գլուխը, որ նորանից ամէն մարմինը

ՙ Հռովմ. Զ. 6. Եփես. Դ. 22. Գղ. Գ. 8. 9.
; Հռովմ. Զ. 4.
՝ Գղ. Գ. 1.
ւ Եփես. Ա. 19. Գ. 7.
= Գործ. Բ. 24.
ւ Եփես. Բ. 1. 5. 6. 11.
¬ Եփես. Բ. 15. 16.
՛ Եփես. Զ. 12.
– Ծննդ. Գ. 15. Սաղ. ԿԸ. 18. Եսայ. ԾԳ. 12. Մատթ. ԺԲ. 29. Ղուկ. Ժ. 18. ԺԱ. 22. Յովհ. ԺԲ. 31. ԺԶ. 11. Եփես. Գ. 8. Եբր. Բ. 14.
= Հռովմ. ԺԴ. 3. 10. 13.
՛ Հռովմ. ԺԴ. 2. 17. Ա Կորնթ. Ը. 8.
⁼ Հռովմ. ԺԴ. 5. Գաղ. Դ. 10.
ՙ Եբր. Ը. 5. Թ. 9. Ժ. 1.
՟ Հռովմ. 4. 23.
– Եզեկ. ԺԳ. 3. Ա Տիմ. Ա. 7.
՟ Եփես. Գ. 15. 16.

զինք 'եւ խաղալեօք տարաբերեալ եւ խառնեալ՝ աճէ զաճումն Աստուծոյ ։
20 Եթէ մեռարուք ընդ Քրիստոսի 'ի տարերց աշխարհիս՝ զի՞ եւս իբրեւ զկենդանիս աստէն յաշխարհի կրճատուրիք ։

21 Մի մերձենար, մի ճաշակեր, մի հուպ լինիր ։
22 Որ է ամենայն ինչ 'ի պէտս ապականութեան, ըստ պատուիրանաց եւ վարդապետութեան մարդկան ։
23 Որ յիմաստութիւն ինն համարէ, ինքնակամ կրօնիւք եւ խոնարհութեամբ՝ եւ անխնայութեամբ մարմնոյ, եւ ոչ 'ի պատիւ ինչ լրութեան մարմնոյ ։

յօդուածներով եւ խաղերով ջոկված եւ խառնուած՝ մեծանումէ Աստուծոյ աճմանովը ։
20 Թէ որ Քրիստոսի հետ + մեռար այս աշխարհքիս * սկզբունքներէն՝ էլ ինչու էք այս աշխարհքիս մէջ կենդանիներին պէս հնազանդում ‡ օրէնքին ։
21 Մի մօտենար, համ մի առներ, մի = դիպչիր ·
22 Որ այս ամէնը ապականվելումէ գործածութենով, եւ մարդկանց պատուիրանքներին եւ վարդապետութեան պէս Բ է ,
23 Որ մին իմաստութիւն է ‡ համարվում, իրեն կամքով հաստատված պաշտամունքով եւ խոնարհութենով՝ եւ մարմնոյն չխնայելով, եւ մարմնոյն պատիւ չը տալով՝ որ կշտացնեն = նորան ։

## ԳԼ. Գ

1 Եթէ յարերուք ընդ Քրիստոսի · ապա զվերինն խնդրեցէք · ուր Քրիստոսն նստի ընդ աջմէ Աստուծոյ ։
2 Զվերինն խորհեցարուք, մի զայս՝ որ յերկրի աստ է ։
3 Քանզի մեռարուք՝ եւ կեանքն ձեր ծածկեալ են ընդ Քրիստոսի յԱստուած ,
4 Իսկ յորժամ Քրիստոս յայտնեսցի՝ կեանքն ձեր , յայնժամ եւ դուք ընդ նմա յայտնեսջիք փառօք ։

5 Սպանէք այսուհետեւ զանդամս ձեր զերկրաւորս · 'ի բաց ընկեցէք զպոռնկութիւն՝ զպղծութիւն՝ զբիծ՝

1 Թէ որ Քրիստոսի հետ յարութիւն = առիք , ապա խնդրեցէք այն վերինքն՝ որտեղ որ Քրիստոսն է նստում Աստուծոյ աջ ‡ կողմը ։
2 Այն վերինքը մտածեցէք , չէ թէ նա՝ որ այս երկրումն է ։
3 Պատճառն որ դուք ‡ մեռաք՝ եւ ձեր կեանքը Քրիստոսի հետ ծածկված է Աստուծոյ = մէջ ։
4 Բայց երբոր Բ Քրիստոս՝ ձեր կեանքը կը Հ յայտնվի , այն ժամանակը դուք էլ նորա հետ կը յայտնվիք Ե փառքով ։
5 Ուրեմն ≈ սպաննեցէք ձեր երկրաւոր Բ անդամները · ձգեցէք պոռնկութիւնը՝ Ձ պղծութիւնը՝ կեղ-

+ Հռովմ. Զ. 3. 5. Է. 4. 6
Գաղ. Բ. 19.
Եփես. Բ. 15.
* Համառ. 8.
‡ Գաղ. Գ. 3 9.
= Ա Տիմ. Դ. 3.
Բ Եսայ. ԻԹ. 13.
Մատթ. ԺԵ. 9.

Տիտ. Ա. 14.
‡ Ա Տիմ. Դ. 8.
= Համառ. 8.
—
= Հռովմ. Զ. 5.
Եփես. Բ. 6.
Գղ. Բ. 12.
Բ Հռովմ. Ը. 34.
Եփես. Ա. 20.

‡ Հռովմ. Զ. 2.
Գաղ. Բ. 20.
Գղ. Բ. 20.
= Բ Կորնթ. Ե 7.
Գղ. Ա. 5.
Բ Ա Յովհ. Գ. 2.
Հ Յովհ. ԺԱ. 25.
ԺԴ 6.
Ե Ա Կորնթ. ԺԵ.

43. Փիլիպ. Գ.
21.
≈ Հռովմ. Զ. 13.
Բ Հռովմ. Ը. 13.
Գաղ. Ե. 24.
Ձ Եփես. Ե. 3.

զցանկութիւն չարեաց, և զագահութիւն՝ որ է կռապաշտութիւն։

6 Վասն որոյ գայ բարկութիւն
Աստուծոյ 'ի վերայ որդւոյն անհնազանդութեան։
7 Որովք և դուք երբեմն գնայիք՝ մինչ կենդանիք էիք 'ի նոսա։

8 Արդ 'ի բաց թօթափեցէք և
դուք զայն ամենայն, զբարկութիւն
զսրտմտութիւն՝ զչարութիւն՝ զհայհոյութիւն՝ զխեղկատակութիւն 'ի
բերանոց ձերոց։
9 Մի ստէք միմեանց. մերկացարուք զհին մարդն գործովքն իւրովք։
10 Եւ զգեցարուք զնորն նորոգեալ 'ի գիտութիւն ըստ պատկերի
Արարչին իւրոյ։
11 Ուր ոչ է Հրէայ՝ և ոչ Հեթանոս, թլփատութիւն՝ և անթլփատութիւն, խուժ՝ դուժ՝ Սկիւթացի՝ ծառայ՝ ազատ. այլ ամենայն
և յամենայնի Քրիստոս։

12 Զգեցարուք այսուհետև իբրև
ընտրեալք Աստուծոյ՝ սուրբք և
սիրեցեալք, զգութ՝ զողորմութիւն՝
զքաղցրութիւն՝ զխոնարհութիւն՝
զհեզութիւն՝ զերկայնմտութիւն։

13 Ներել միմեանց, շնորհել իրերաց. եթէ ուրուք զումեքէ տրտունջ ինչ իցէ, որպէս Աստուած
Քրիստոսիւ շնորհեաց ձեզ՝ նոյնպէս
և դուք։

ախտութիւնը՝ չար ցանկութիւնը, և ագահութիւնը՝ որ կռապաշտութիւն է.
6 Որ ատոր համար Աստուծոյ
բարկութիւնը գալու է անհնազանդութեան որդիներուն վրայ.
7 Որ նորանցմով դուք էլ մէկ ժամանակ գնացեր էք, երբոր կենդանի
էիք նորանցում։
8 Բայց հիմիկ դուք էլ թափեցէք այն ամէնը. բարկութիւնը՝ սրտմտութիւնը՝ չարութիւնը՝ հայհոյութիւնը՝ ծաղրածանութիւնը ձեր
բերանիցը։
9 Սուտ մի խօսիք իրար հետ.
ձեզմէնից հանեցէք հին մարդը իրեն գործքերովը։
10 Եւ նոր մարդը հագէք՝ որ
նորոգված է գիտութեամբ՝ իրեն
Ստեղծողի պատկերին պէս,
11 Որ այնտեղ ոչ Հրէայ կայ՝ և
ոչ Հեթանոս, ոչ թլփատութիւն՝
և ոչ անթլփատութիւն, խուժ՝
դուժ՝ Սկիւթացի՝ ծառայ՝ ազատ.
բայց ամէնը և ամէնին մէջ Քրիստոս է։
12 Ուրեմն ինչպէս Աստուծոյ ընտրեալներ՝ սրբեր և սիրելիներ,
հագէք գթածութիւնը՝ ողորմութիւնը՝ քաղցրութիւնը՝ խոնարհութիւնը՝ հեզութիւնը՝ երկայնմտութիւնը։
13 Իրար ներեցէք, և իրար թողէք, թէ որ մէկը մէկալից տրտունջ ունենայ, ինչպէս որ Աստուած Քրիստոսով ձեզ թողութիւն արաւ՝ այնպէս էլ դուք։

է Ա Թես. Դ. 5. ը Եփես. Ե. 5. թ Հռովմ. Ա. 18. Եփես. Ե. 6. Յայտ. ԻԲ. 15 ժ Եփես. Բ. 2. ի Հռովմ. Զ. 19. 20. Է. 5. Ա Կորնթ. Զ. 11. Եփես. Բ. 2. Տիտ. Գ. 3. լ Եփես. Դ. 22. Ա Պետ. Բ. 1. Եբր. ԺԲ. 1. Յակ. Ա. 21. խ Եփես. Դ. 29. Ե. 4. ծ Ղև. ԺԹ. 11. Եփես. Դ. 25. կ Եփես. Դ. 22. 24. հ Հռովմ. ԺԲ. 2. ձ Եփես. Բ. 10. ղ Եփես. Դ. 23. 24. ճ Հռովմ. Ժ. 12. Ա Կորնթ. ԺԲ. 13. Գաղ. Գ. 28. Ե. 6. Եփես. Զ. 8. մ Եփես. Ա. 23. յ Ա Թես. Ա. 4. Ա Պետ. Ա. 2. Բ Պետ. Ա. 10. ն Եփես. Դ. 24. շ Գաղ. Ե. 22. Փիլիպ. Բ. 1. Եփես. Դ. 2. 32. ո Մարկ. ԺԱ. 25. Եփես. Դ. 2. 32.

14 Եւ ՚ի վերայ այսր ամենայնի զսէրն, որ է զօդ կատարմանն։

15 Եւ խաղաղութիւն Քրիստոսի հաստատեսցի ՚ի սիրտս ձեր, յոր եւ կոչեցարուք միով մարմնով. եւ գոհացօղք լինիջիք։

16 Զի բանն Քրիստոսի բնակեսցէ ՚ի ձեզ առատապէս. ամենայն իմաստութեամբ ուսուցանել եւ խրատել զմիմեանս. սաղմոսիւք եւ օրհնութեամբք եւ երգովք հոգեւորօք՝ եւ շնորհօք օրհնել ՚ի սիրտս ձեր զԱստուած։

17 Եւ զամենայն զոր եւ առնիցէք բանիւք եւ արդեամբք, զամենայն յանուն Տեառն Յիսուսի արասջիք. գոհացօղք լինիջիք զԱստուծոյ եւ զՀօրէ նմա։

18 Կանայք՝ հնազանդ լերուք արանց ձերոց, որպէս եւ վայել է ՚ի Տէր։

19 Արք՝ սիրեցէք զկանայս ձեր, եւ մի դառնացուցանէք զնոսա։

20 Որդիք՝ հնազանդ լերուք ծնողաց ձերոց յամենայնի՝ զի այն է հաճոյ առաջի Տեառն։

21 Հարք՝ մի զայրացուցանէք զորդիս ձեր. զի մի տրտմեսցին։

22 Ծառայք՝ հնազանդ լերուք տեարանց ձերոց յամենայնի. մի առ ական ծառայութեամբ՝ իբրեւ մարդահաճոյք. այլ միամտութեամբ սրտի երկնչել ՚ի Տեառնէ։

14 Եւ ամէնի ձ վերայ հագէք ղ սէրը՝ որ կատարելութեան կապն ճ է։

15 Եւ Քրիստոսի խաղաղութիւնն հաստատուի ձեր մ սրտերումը, որ նորա մէջ էլ յ կանչվեցաք մին ն մարմնով. եւ գոհացող շ եղէք։

16 Որ Քրիստոսի խօսքը լիութենով բնակվի ձեր միջումը. որ ամէն իմաստութենով իրար սովորցնէք եւ խրատէք, սաղմոսներով եւ օրհնութիւններով եւ հոգեւոր ո երգերով՝ եւ շնորհքով Աստուծոյն օրհնէք ձեր չ սրտերումը։

17 Եւ ամէն ինչ՝ որ անէք խօսքով եւ գործով, այն ամէնը Տէր Յիսուսի անուանովը պ արէք. եւ նորա ձեռովը գոհութիւն տուէք Աստուծոյն եւ ջ Հօրը։

18 Կանայք՝ հնազանդ եղէք ձեր ռ մարդկանց, ինչպէս որ կը վայելէ ս Տէրումը։

19 Մարդիկ՝ սիրեցէք ձեր վ կանանցը, եւ մի դառնացնէք տ նորանց։

20 ր Որդիք՝ հնազանդ եղէք ձեր ծնողներին ամէն բանի ց մէջ՝ որ նա հաճոյ է Տէրին։

21 Հարք մի կսկծացնէք ձեր որդոց սիրտը, որ ւ չը տրտմին։

22 փ Ծառաներ՝ հնազանդ եղէք ձեր ք տէրերին ամէն բանի օ մէջ. չէ թէ աչքի առաջին ծառայութենով՝ երեսպաշտներին պէս. բայց սրտի միամտութենով՝ Տէրիցը վախենալով։

ձ Ա Պետ. Դ. 8։
ղ Յովհ. ԺԳ. 34։ Հռովմ. ԺԳ. 8։ Ա Կորնթ. ԺԳ. Եփես. Ե. 2։ Գղ. Բ. 2։ Ա Թես. Դ. 9։ Ա Տիմ. Ա. 5։ Ա Յովհ. Գ. 23. Դ. 21։
ճ Եփես. Դ. 3։
մ Հռովմ. ԺԴ. 17։ Փիլիպ. Դ. 7։
յ Ա Կորնթ. Է. 15։
ն Եփես. Բ. 16, 17։ Դ. 4։
շ Գղ. Բ. 7։ Համար. 17։
ո Ա Կորնթ. ԺԴ. 26։ Եփես. Ե. 19։
չ Գղ. Դ. 6։
պ Ա Կորնթ. Ժ. 31։
ջ Հռովմ. Ա. 8։ Եփես. Ե. 20։ Գղ. Ա. 12։ Բ. 7։ Ա Թես. Ե. 18։ Եբր. ԺԳ. 15։
ռ Եփես. Ե. 22։ Տիտ. Բ. 5։ Ա Պետ. Գ. 1։
ս Եփես. Ե. 3։
վ Եփես. Ե. 25. 28. 33։ Ա Պետ. Գ. 7։
տ Եփես. Դ. 31։
ր Եփես. Զ. 1։
ց Եփես. Ե. 24։ Տիտ. Բ. 9։
ւ Եփես. Զ. 4։
փ Եփես. Զ. 5, 6։ Ա Տիմ. Զ. 1։ Տիտ. Բ. 9։ Ա Պետ. Բ. 18։
ք Փիլիմ. 16։
օ Համար. 20։

23 Զոր ինչ առնիցէք՝ սրտի մտօք գործեսջիք իբրեւ Տեառն, եւ ոչ իբրեւ մարդկան։

24 Գիտասջիք՝ զի 'ի Տեառնէ առնուցուք զհատուցումն ժառանգութեան ձերոյ. քանզի Տեառն Քրիստոսի ծառայէք։

25 Իսկ ապիրատն ընկալցի ըստ իւրում ապիրատութեանն. զի չիք ակնառութիւն առաջի Աստուծոյ։

23 Ինչ որ անէք՝ յօժար սրտով արէք՝ ինչպէս Տէրին, եւ չէ թէ ինչպէս ւ մարդկանց։

24 Գիտցէք որ Տէրիցը կառնէք ձեր ժառանգութեան փ հատուցումը. ինչու որ Տէր Քրիստոսին էք ք ծառայում։

25 Բայց անօրէնն իւրն անիրաւութեան չափովը կընդունի. պատճառն որ երեսպաշտութիւն չըկայ Աստուծոյ ֆ առաջին։

## ԳԼ. Դ

1 Տեարք՝ զիրաւունս եւ զհաւասարութիւն ծառայից ձերոց շնորհեցէք. գիտասջիք զի եւ ձեր Տէր գոյ յերկինս։

2 Աղօթից սաէք կացէք. արթնոլ 'ի նմին գոհութեամբ։

3 Աղօթս արարէք միանգամայն եւ վասն մեր. զի Աստուած բացցէ մեզ դուռն բանին, խօսել ըզ խորհուրդն Քրիստոսի, վասն որոյ եւ կապեալս կամ։

4 Զի յայտնի արարից զնա որպէս արժան իցէ ինձ խօսել։

5 Իմաստութեամբ գնասջիք առ արտաքինսն, գնոյ առեալ զժամանակս։

6 Եւ բանն ձեր յամենայն ժամ լի շնորհօք Տեառն իբրեւ աղիւ համեմեալ լիցի, գիտել որպէս արժան իցէ ձեզ իւրաքանչիւր ումեք տալ պատասխանի։

7 Այլ որ ինչ զինէն իցէ՝ ցուցցէ ձեզ զամենայն Տիւքիկոս սիրելի եղբայր՝ եւ հաւատարիմ պաշ-

1 Դուք էլ աղաներ՝ ինչ որ իրաւունք եւ հաւասար է՝ շնորհեցէք ձեր ծառաներին. գիտցէք՝ որ դուք էլ Տէր ունիք ա երկինքումը։

2 Աղօթքին միշտ բ հետեւեցէք. եւ արթուն կացէք նորանում գ գոհութենով։

3 Մեզ համար էլ աղօթք դ արէք, որ Աստուած խօսքի դուռն բանայ մեզ ե համար՝ որ Քրիստոսի խորհուրդը զ խօսինք, որ նորա համար էլ ես կապված է եմ.

4 Որ յայտնեմ նորան՝ ինչպէս որ ինձ արժան է խօսել։

5 Իմաստութենով վարուեցէք դրսիններին ը հետ, եւ ժամանակը թ գնեցէք։

6 Եւ ձեր խօսքը թող ամէն ժամանակ Տէրի շնորհքովը ժ լինի՝ իբր աղով համեմված ի լինի, որ գիտենաք թէ ինչպէս արժան է ձեզ՝ ամէն մէկին պատասխան լ տալ։

7 Բայց ինչ որ իմ մասին է՝ ամէնը ցոյց կը տայ ձեզ Տիւքիկոս սիրելի եղբայրը եւ հաւատարիմ

ւ Եփես. Զ. 6. 7.
փ Եփես. Զ. 8.
ք Ա. Կորնթ. Է. 22.
ֆ Բ Օրին. Ժ. 17. Հռովմ. Բ. 11. Եփես. Զ. 9. Ա Պետ. Ա. 17.

—

ա Եփես. Զ. 9.
բ Ղու. ԺԸ. 1. Հռովմ. ԺԲ. 12. Եփես. Զ. 18. Ա Թես. Ե. 17. 18.
գ Կղ. Բ. 7. Գ. 15.
դ Եփես. Գ. 19. Բ Թես. Գ. 1.
ե Ա. Կորնթ. ԺԶ. 9. Բ Կորնթ. Բ. 12.
զ Մատթ. ԺԳ. 11. Ա. Կորնթ. Դ. 1. Եփես. Զ. 19. Կղ. Ա. 26. Բ. 2.
Եփես. Զ. 20. Փիլիպ. Ա. 7.
ը Եփես. Ե. 15. Ա Թես. Դ. 11.
թ Եփես. Ե. 16.
ժ Ժող. Ժ. 12. Կղ. Գ. 16.
ի Մարկ. Թ. 49.
լ Ա Պետ. Գ. 15.

տօնեայ, եւ ծառայակից 'ի Տէր։

8 Զոր առաքեցի առ ձեզ զմին իրի, զի գիտասջիք վասն մեր. եւ մխիթարեսցէ զսիրտս ձեր.

9 Ոնեսիմաւ հանդերձ եղբարբ հաւատարմաւ եւ սիրելեաւ՝ որ է 'ի ձէնջ. զամենայն ինչ ցուցցեն ձեզ՝ որ ինչ աստ է։

10 Ողջոյն տայ ձեզ Արիստարքոս գերեկից իմ, եւ Մարկոս եղբօրորդի Բառնաբայ. վասն որոյ առէք պատուէր՝ եթէ եկեսցէ առ ձեզ ընկալջիք զնա։

11 Եւ Յեսու՝ որ անուանեալն է Յուստոս, որք են 'ի թլփատութենէ անտի. զի դոքա միայն գործակից եղեն ինձ յարքայութեանն Աստուծոյ, որք եւ եղեն իսկ ինձ մխիթարութիւն։

12 Ողջոյն տայ ձեզ Եպափրաս՝ որ 'ի ձէնջ ծառայ Քրիստոսի Յիսուսի է. յամենայն ժամ պատերազմեալ վասն ձեր յաղօթս, զի կայցէք կատարեալք եւ լցեալք յամենայն կամս Աստուծոյ։

13 Վկայեմ նմա, զի բազում աշխատութիւն ունի վասն ձեր, եւ վասն Լաւոդիկեցւոյն, եւ վասն այնոցիկ՝ որ յՅերապօլիսն են։

14 Ողջոյն տայ ձեզ Ղուկաս բժիշկ եւ սիրելի, եւ Դեմաս։

15 Ողջոյն տաջիք եղբարց՝ որ են 'ի Լաւոդիկիայ եւ Նիմփայ, եւ որ տանն իւրում եկեղեցին է նորա։

16 Եւ յորժամ ընթեռնուցու առ ձեզ թուղթդ՝ արասջիք զի եւ 'ի

պաշտօնեան, եւ ծառայութեանս ընկերը + Տէրոջմէն,

8 Որ նորան իսկ դորա համար ուղարկեցի ձեզ մօտ, որ մեզ համար գիտնաք, եւ ձեր սրտերը * մխիթարէ.

9 Ոնեսիմոս հաւատարիմ եւ սիրելի եղբօրն հետ, որ նա ձեզմանից [կ] է. նորանք ամէն բան ցոյց կուտան ձեզ՝ ինչ որ այստեղ լինումէ։

10 Ողջոյն են տալիս ձեզ Արիստարքոսն՝ իմ գերութեան [հ] ընկերս, եւ Մարկոս Բառնաբասի եղբօր [ձ] որդին. որ նորա համար պատուիրանք առիք՝ որ եթէ ձեզ մօտ գայ՝ ընդունիք նորան։

11 Եւ Յիսուսն՝ որ Յուստոս անուանուած է, որ նորանք թլփատութենիցն են, որ միայն դորանք իմ գործակից ընկեր էին Աստուծոյ արքայութեանումը, որ ինձ համար էլ մխիթարութիւն էին։

12 Ողջոյն է տալիս ձեզ Եպափրաս՝ Յիսուսի Քրիստոսի ծառան, որ ձեզմանից [ղ] է. որ ամէն ժամանակ ձեզ համար պատերազմումէ [ճ] աղօթքումը, որ կատարեալ եւ լցուած լինիք Աստուծոյ ամէն [մ] կամքումը։

13 Վկայումեմ նորան՝ որ շատ աշխատանք է քաշում ձեզ համար, եւ Լաւոդիկեցոց համար, եւ նորանից համար էլ՝ որ յԵրապօլիսումն են։

14 Ողջոյն է տալիս ձեզ Ղուկաս բժիշկը եւ [յ] սիրելին, եւ [ն] Դեմասը,

15 Ողջոյն տուէք եղբայրներին՝ որ Լաւոդիկեայումն են եւ Նիմփային, եւ եկեղեցուն՝ որ նորա տանն [շ] է։

16 Եւ երբոր այս թուղթս ձեզ մօտ կարդացուած [ո] լինի՝ արէք որ

ի Եփես. Զ. 21։
ծ Եփես. Զ. 22։
կ Փիլիմ. 10։
հ Գործ. ԺԹ. 29։ Ի. 4։ ԻԷ. 2։ Փիլիմ. 24։
ձ Գործ. ԺԵ. 37։ Բ Տիմ. Դ. 11։
ղ Կղ. Ա. 7։ Փիլիմ. 23։
ճ Հռովմ. ԺԵ. 30։
մ Մատթ. Ե. 48։ Ա Կորնթ. Բ. 6։ ԺԴ. 20։ Փիլիպ. Գ. 15։ Եբր. Ե. 14։
յ Բ Տիմ. Դ. 11։
ն Բ Տիմ. Դ. 9։ Փիլիմ. 24։
շ Հռովմ. ԺԶ. 4։ Ա Կորնթ. ԺԶ. 19։
ո Ա Թես. Ե. 27։

Լաւոդիկեցւոց եկեղեցւոյն ընթերցցի. եւ զառ 'ի Լաւոդիկեցւոցն զի եւ դուք ընթեռնուցուք։
17 Եւ ասասջիք զԱրքիպպոս. Զգոյշ լեր սպասաւորութեանդ՝ զոր ընկալար 'ի Տէր, զի զայդ կատարեսցես։
18 Ողջոյնդ ձեռամբ իմով Պօղոսի է. յուշ լիցին ձեզ կապանքս իմ. շնորհք ընդ ձեզ, ամէն։

Լաւոդիկեցւոց եկեղեցւոյ միջումն էլ կարդացուի. եւ նա որ Լաւոդիկեցւոյն է՝ որ դուք էլ կարդաք։
17 Եւ Արքիպպոսին ասացէք. Ըզգոյշ կաց քո սպասաւորութեանդ՝ որ ընդունեցիր Տէրումը, որ դրան ‑կատարես։
18 Այս ողջոյնս իմ Պօղոսիս ձեռքն է. իմ կապանքս թող ձեր մտքներումդ ‑լինին. շնորհքը ձեզ հետ, ‑ ամէն։

Կողոսացւոց թուղթս գրեցաւ Հռոմայ քաղաքէն Տիւքիկոսի եւ Ոնեսիմոսի ձեռամբ։

# ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

## ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍՆ ԱՌԱՋԻՆ

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 ՊՕՂՈՍ եւ Սիղուանոս եւ Տիմոթէոս եկեղեցւոյդ Թեսաղոնիկեցւոց՝ յԱստուած Հայր մեր եւ 'ի Տէր Յիսուս Քրիստոս։
2 Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն. գոհանամք զԱստուծոյ յամենայն ժամ վասն ձեր ամենեցուն՝ յիշատակ առնել յաղօթս մեր անդադար։

3 Յիշել զձեր գործն հաւատոյ՝ եւ զվաստակ սիրոյ՝ եւ զհամբերութիւն յուսոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ առաջի Աստուծոյ եւ Հօր մերոյ։

4 Գիտէք եղբարք սիրելիք յԱստուծոյ՝ զԸնտրութիւնն ձեր։

5 Զի աւետարանն մեր ոչ եղեւ առ ձեզ միայն բանիւ, այլ եւ զօ-

1 ՊՕՂՈՍ եւ Սիղուանոս եւ ‑Տիմոթէոս Թեսաղոնիկեցւոց եկեղեցւոյն՝ Աստուած մեր Հօրումը եւ Տէր Յիսուս Քրիստոսումը։
2 Շնորհք ձեզ հետ եւ ‑ խաղաղութիւն. ամէն ժամանակ գոհանումնք Աստուածմէնից ձեզ ամէնից ‑ համար՝ որ անդադար յիշատակ ենք անում մեր ‑ աղօթքումը,
3 Եւ յիշումենք ձեր հաւատքի ‑ գործը՝ եւ սիրոյ աշխատանքը, եւ այն յուսոյ համբերութիւնը՝ որ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի վերայ ունիք Աստուծոյ եւ մեր Հօր առաջին։
4 Աստուածմէնից սիրած եղբարք, գիտեմք ձեր ‑ ընտրութիւնը,
5 Որ մեր աւետարանը ձեզ մօտ ոչ միայն խօսքով էլաւ, բայց էլ

ս Փիլիմ. 2։
վ Ա Տիմ. Գ. 6։
տ Ա կորնթ. ԺԶ 21։ Բ Թես. Գ 17։
ր Եբր. ԺԳ. 3։
ց Եբր. ԺԳ. 25։
ա Բ կորնթ. Ա. 19։ Բ Թես. Ա. 1։ Ա Պետ. Ե. 12։
բ Եփես. Ա. 2։
գ Հռովմ. Ա. 8։ Եփես. Ա. 16։ Փիլիմ. 4։
դ Գղ. Բ. 13։
ե Յովհ. Զ. 29։ Գաղ. Ե. 6։ Գղ. Գ. 6։ Բ Թես. Ա. 3. 11։ Յակ. Բ. 17։
զ Հռովմ. ԺԶ. 6։ Եբր. Զ. 10։
է Կող. Գ. 12։ Բ Թես. Բ. 12։

րութեամբ՝ եւ Հոգւով Սրբով՝ եւ
լրութեամբ բազմաւ. որպէս եւ
գիտէք իսկ՝ թէ որպիսիք եղեաք ՚ի
միջի ձերում վասն ձեր։
6 Եւ դուք նմանեալք մեր՝ եւ
Տեառն, ընկալայք զբանն ՚ի բա-
զում նեղութեան՝ խնդութեամբ
Հոգւոյն Սրբոյ.
7 Լինել ձեզ օրինակ ամենայն
հաւատացելոց, որ են ՚ի Մակե-
դովնիա եւ յԱքայիա։
8 Զի ՚ի ձէնջ հնչեաց բանն Ա-
տուծոյ. ոչ միայն ՚ի Մակեդովնիա
եւ յԱքայիա, այլ յամենայն տեղիս
հաւատքն ձեր՝ որ առ Աստուած
են, սփռեցան. զի այսուհետեւ
ոչինչ է պիտոյ մեզ եւ խօսել ինչ։
9 Զի նոքին իսկ պատմեն վասն
մեր, թէ որպէս եղեւ մեզ մուտ
առ ձեզ. եւ որպէս դարձայք առ
Աստուած ՚ի կռոց անտի, ծառայել
Աստուծոյ կենդանւոյ եւ ճշմարտի։
10 Եւ ակնունել Որդւոյ՟ նորա
յերկնից, զոր յարոյց ՚ի մեռելոց
զՅիսուս՝ որ փրկեսցէ զմեզ ՚ի
բարկութենէ անտի՝ որ գալոց է։

[ը] զօրութենով՝ եւ Սուրբ [թ] Հոգւով՝
եւ շատ [ժ] լիութենով. ինչպէս որ
էլ լաւ գիտէք, թէ ինչպէս ձեր
միջումը վարուեցանք ձեզ համար։
6 Եւ դուք նմանեցաք մեզ՝ եւ
Տէրոջը, եւ խօսքն ընդունեցիք շատ
նեղութեան [լ] մէջ՝ Սուրբ Հոգւոյ
[ի] ուրախութենովը.
7 Որ դուք օրինակ էլաք այն ամէն
հաւատացեալներին, որ Մակեդոնի-
այի եւ Աքայիայի մէջն են։
8 Պատճառն որ ձեզմէնից դուրս
ելաւ Աստուծոյ խօսքի ձայնը. ոչ
միմիակ Մակեդոնիայի եւ Աքայիայի
[ծ] մէջ, բայց ամէն տեղ փռուեցաւ
ձեր հաւատքն՝ որ դէպի Աստուած
ունիք. որ էլ այսուհետեւ բնաւ
պէտք չէ մեզ՝ որ մենք բան [կ] խօսինք.
9 Ինչու որ իսկ նորանք են պատ-
մում մեզմէնից, թէ ինչպէս էլաւ
մեր ձեզ մօտ [հ] մտնելը. եւ ինչպէս
այն կռքերից դարձաք դէպի Աս-
տուած, որ ծառայէք կենդանի եւ
ճշմարիտ [ձ] Աստուծոյն,
10 Եւ մնիկ տաք նորա [ղ] Որդոյն
[ճ] երկնքից, որ նորան յարոյց մե-
ռելների միջից այն [մ] Յիսուսին, որ
մեզ պիտի փրկէ այն գալու [յ] բար-
կութենիցը։

## ԳԼ. Բ

1 Դուք ինքնին գիտէք եղբարք
զմուտն մեր առ ձեզ. զի ոչ ըն-
դունայն ինչ եղեւ։
2 Այլ յառաջագոյն չարչարեալք՝
եւ թշնամանեալք, որպէս եւ դուք
իսկ գիտէք. ՚ի մէջ Փիլիպեցւոց
համարձակեցաք Աստուծով մերով

1 Դուք ինքներդ գիտէք եղ-
բարք՝ այն մեր ձեզ մօտ մտնելըն.
որ բնաւ ունայն [ա] չէլաւ։
2 Բայց որ առաջ չարչարուեցանք՝
եւ թուքումուր քաշեցինք, ինչպէս
որ դուք էլ լաւ գիտէք. Փի-
լիպպեցոց [բ] միջումն էլ համարձակ-

ը Մարկ. ԺԶ. 20։ Ա Կորնթ. Բ. 4. Դ. 20։
թ Բ Կորնթ. Զ. 6։
ժ Կող. Բ. 2։
ի Գլ. Բ. 1. 5. 10. 11։ Բ Թես. Գ. 7։
լ Ա Կորնթ. Դ. 16։ ԺԱ. 1։ Փիլիպ. Գ. 17։ Գլ. Բ. 14։ Բ Թես. Գ. 9։
խ Գործ. Ե. 41։ Եբր. Ժ. 34։
ծ Հռովմ. Ժ. 18։
կ Հռովմ. Ա. 8։ Բ Թես. Ա. 4։
հ Գլ. Բ. 1։
ձ Ա Կորնթ. ԺԲ. 2։ Գաղ. Դ. 8։
ղ Հռովմ. Բ. 7։ Փիլիպ. Գ. 20։ Տիտ. Բ. 13։ Բ Պետ. Գ. 12։ Յայտ. Ա. 7։
ճ Գործ. Ա. 11։ Գլ. Դ. 15։ Բ Թես. Ա. 7։
մ Գործ. Բ. 24։
յ Մատթ. Գ. 7։ Հռովմ. Ե. 9։ Գլ. Ե. 9։

—

ա Գլ. Ա. 5. 9։
բ Գործ. ԺԶ. 22։

պատմել ձեզ զաւետարանն Աստուծոյ մեծաւ պատերազմաւ։

3 Զի մխիթարութիւնն մեր ոչ ՚ի մոլորութենէ է՝ եւ ոչ ՚ի պղծութենէ՝ եւ ոչ նենգութեամբ։

4 Այլ որպէս ընտրեցաք յԱստուծոյ հաւատարիմ լինել աւետարանին, նոյնպէս եւ խօսիմք. ոչ իբրեւ մարդկան հաճոյ լինել, այլ Աստուծոյ, որ քննէն զսիրտս մեր։

5 Զի ոչ երբէք բանիւք ողոքանաց եղեաք առ ձեզ, որպէս եւ դուք իսկ գիտէք. եւ ոչ ՚ի պատճառս ագահութեան, որպէս եւ Աստուած վկայ է։

6 Եւ ոչ խնդրէաք փառս ՚ի մարդկանէ, ոչ ՚ի ձէնջ եւ ոչ յայլոց։

7 Կարող էաք իբրեւ Քրիստոսի առաքեալս ծանրանալ, այլ եղեաք հեզք ՚ի մէջ ձերում՝ որպէս դայեակ մի, որ սնուցանիցէ մանկունս։

8 Նոյնպէս եւ մեք գթայաք ՚ի ձեզ, հաճոյ թուէր մեզ տալ ձեզ ոչ միայն զաւետարանն Աստուծոյ, այլ եւ զանձինս մեր, քանզի սիրելիք մեր եղերուք։

9 Յիշէք եղբարք՝ զվաստակն մեր եւ զջան, զի զցայգ եւ զցերեկ գործէաք վասն չծանրանալոյ ումեք

վերցուցինք մեր գ Աստուծմէն՝ որ Աստուծոյ աւետարանը ձեզ դ պատմենք մեծ ե պատերազմով։

3 Պատճառն որ՝ մեր յորդորմունքն ոչ մոլորութենից է՝ եւ ոչ պղծութենից՝ եւ ոչ զ խաբեբայութենից։

4 Բայց ինչպէս որ մենք Աստուածմէն է ընտրուեցանք աւետարանին հաւատարիմ լինելոյ, այնպէս էլ ը խօսումենք. չէ թէ որ մարդկանց հաճոյ թ լինինք, բայց Աստուծոյն՝ որ մեր սրտերը ժ քննումէ։

5 Ինչու որ ոչ մին ժամանակ շողոքորթելոյ խօսքերով չը վարուեցանք ձեզ հետ, ինչպէս որ դուք էլ լաւ ի գիտումէք. եւ ոչ էլ ագահութեան պատճառանքով, ինչպէս որ Աստուած էլ լ վկայումէ.

6 Եւ մարդկանցից փառք չը խնդրեցինք, ոչ ձեզանից, եւ ոչ խ ուրիշներից։

7 Կարող ծ էինք ինչպէս Քրիստոսի կ առաքեալները ծանրութիւն տալ, բայց հեզահոգի էլանք ձեր մէջումը՝ մին ծծմայր պէս, որ երախաներ է ձ մեծացնում։

8 Իսկ այնպէս էլ մենք քաղցր սիրով էինք վարվում ձեզ հետ. ախորժ էր երեւում մեզ՝ չէ թէ միայն Աստուծոյ աւետարանն տալ ղ ձեզ, բայց մեր անձներս էլ, պատճառն որ մեր սիրելիներս ճ էլաք։

9 Յիշեցէք եղբարք՝ մեր աշխատանքն ու ջանքը, որ գիշեր ու ցերեկ մ գործումէինք որ ձեզանից

գ Գղ. Ա. 5։
դ Գործ. ԺԷ. 2։
ե Փիլիպ. Ա. 30։ Կող. Բ. 1։
զ Բ Կորնթ. Է. 2։ Համար. 5։ Բ Պետ. Ա. 16։
է Ա Կորնթ. Է. 25։ Ա Տիմ. Ա. 11, 12։
ը Ա Կորնթ. Թ. 17։ Գաղ. Բ. 7։ Տիտ. Ա. 3։
թ Գաղ. Ա. 10։
ժ Առակ. ԺԷ. 3։ Հռովմ. Ը. 27։
ի Գործ. Ի. 33։ Բ Կորնթ. Բ. 17։ Դ. 2։ Է. 2։ ԺԲ. 17։
լ Հռովմ. Ա. 9։
խ Յովհ. Ե. 41. 44։ ԺԲ. 43։ Ա Տիմ. Ե. 17։
ծ Ա Կորնթ. Թ. 4. 6. 12. 18։ Բ Կորնթ. Ժ. 1, 2. 10։ 11։ ԺԳ. 10։ Բ Թես. Գ. 9։ Փիլիմ. 8, 9։
կ Ա Կորնթ. Թ. 1, 2. 5։
հ Բ Կորնթ. ԺԱ 9 ԺԲ. 13, 14։ Բ Թես. Գ. 8։
ձ Ա Կորնթ. Բ. 3։ Թ. 22։ Բ Կորնթ. ԺԳ. 4։ Բ Տիմ. Բ. 24։
ղ Հռովմ. Ա. 11։ ԺԵ. 29։
ճ Բ Կորնթ. ԺԲ. 15։
մ Գործ. Ի. 34։ Ա Կորնթ. Դ. 12։ Բ Կորնթ. ԺԱ. 9։ Բ Թես. Գ. 8։

'ի ձէնջ. եւ քարոզէաք ձեզ զաւետարանն Աստուծոյ։

10 Դուք ինքնին վկայէք՝ եւ Աստուած. որպէս սրբութեամբ եւ արդարութեամբ եւ անբծութեամբ՝ ձեզ հաւատացելոցդ եղեաք։

11 Որպէս եւ գիտէք իսկ. զի զիւրաքանչիւրաք 'ի ձէնջ՝ իբրեւ հայր՝ զորդիս
12 Մխիթարէաք եւ աղաչէաք. եւ գնէաք վկայութիւն գնալ ձեզ արժանապէս Աստուծոյ, որ կոչեացն զձեզ յիւր արքայութիւնն եւ 'ի փառս։
13 Վասն այնորիկ եւ մեք գոհանամք զԱստուծոյ անդադար, զի առեալ զլուր բանին Աստուծոյ առ 'ի մէնջ՝ ընկալարուք, ոչ իբրեւ զբան մարդկան, այլ որպէս ճշմարտիւ՝ զբան Աստուծոյ. որ եւ յաջողեալ իսկ է 'ի ձեզ հաւատացելոցդ։
14 Զի դուք նմանօղ եղերուք եղբարք՝ եկեղեցեացն Աստուծոյ՝ որ են 'ի Հրէաստանի 'ի Քրիստոս Յիսուս. զի զնոյն չարչարանս չարչարեցայք եւ դուք 'ի ձերոց ազգականաց, որպէս եւ նոքայն 'ի Հրէից։
15 Որք եւ զՏէրն Յիսուս սպանին՝ եւ զմարգարէսն, եւ զմեզ հալածեցին, եւ Աստուծոյ յաչաց ելին. եւ ամենայն մարդկան հակառակ եղեն։
16 Եւ արգելուլն զմեզ խօսել հեթանոսաց՝ զի ապրեսցին. զի կա-

ու մինչեւ ծանրութիւն չըլլամք. եւ Աստուծոյ աւետարանը քարոզեցինք ձեզ։
10 Դուք ինքնին վկայումէք՝ եւ Աստուած է, թէ ինչպէս սրբութենով եւ արդարութենով եւ անարատութենով՝ վարուեցանք ձեր հաւատացեալներիդ մէջումը։
11 Ինչպէս որ էլ գիտումէք, որ ձեզանից ամէն մէկին՝ ինչպէս որ հայր՝ որդիքներին
12 Յորդորումէինք եւ մխիթարում. եւ վկայութիւն տալին՝ որ դուք գնաք, ինչպէս որ Աստուծոյն կը փափաքէ, որ ձեզ իրեն արքայութեան եւ փառաց մէջ կանչեց։
13 Նրահամար էլ մենք անդադար գոհանումենք Աստուածանից, որ դուք Աստուծոյ խօսքի քարոզութիւնը մեզանից առած՝ ընդունեցիք. ոչ թէ իբր մարդկանց խօսք, այլ ինչպէս Աստուծոյ ճշմարիտ խօսքը. որ նա էլ յաջողված է ձեզանում հաւատացեալներումդ։
14 Ինչու որ եղբարք՝ դուք նման էլաք Աստուծոյ այն եկեղեցիներին՝ որ Հրէաստանումն են Քրիստոս Յիսուսումը. ինչու որ դուք էլ իսկ այն չարչարանքովը չարչարվեցաք ձեր ազգականներիցն, ինչպէս որ նորանք էլ Հրէաներիցը,
15 Որ նորանք Տէր Յիսուսին էլ սպաննեցին՝ եւ մարգարէներին, եւ մեզ էլ հալածեցին, եւ Աստուծոյ աչքիցը դուրս էլան. եւ ամէն մարդկանց հակառակ կացան։
16 Եւ մեզ էլ արգելումէին, որ չը խօսինք հեթանոսներին՝ որ փըր-

յ Բ Կորնթ. ԺԲ. 13. 14։
ն Գղ. Ա. 5։
շ Բ Կորնթ. Է. 2։ Բ Թես. Գ. 7։
ո Եփես. Դ. 1։ Փիլիպ. Ա. 27 Կող. Ա. 10 Գղ. Դ. 1։
չ Ա Կորնթ. Ա. 9։ Գղ. Ե. 24։ Բ Թես. Բ. 13։ Բ Տիմ. Ա. 9։
պ Գղ. Ա. 2։
ջ Մատթ. Ժ. 40։ Գաղ. Դ. 14։ Բ Պետ. Գ. 2։
ռ Գաղ. Ա. 22։
ս Գործ. ԺԷ. 5. 13։
վ Եբր. Ժ. 33. 34։
տ Գործ. Բ. 23. Գ. 15։ Ե. 30։ Է. 52։
ր Մատթ. Ե. 12։ ԻԳ. 34. 37։ Ղուկ. ԺԳ. 33, 34։ Գործ. Է. 52։
ց Եսթեր. Գ. 8։
ւ Ղուկ. ԺԱ. 52։ Գործ. ԺԳ. 50։ ԺԴ. 5. 18. ԺԷ. 5. 13։ ԺԸ. 12։ ԺԹ. 9։ ԻԲ. 21, 22։

տարեսցեն զմեղս իւրեանց յամենայն
ժամ . քանզի հասեալ է 'ի վերայ
նոցա բարկութիւն մինչեւ իսպառ :

17 Այլ մեք եղբարք՝ թէպէտ եւ
որբ մնացաք 'ի ձէնջ առ ժամանակ
մի, երեսօք՝ եւ ոչ սրտիւք . առա-
ւել եւս փութացաք տեսանել զե-
րեսս ձեր մեծաւ ցանկութեամբ :
18 Վասն այսորիկ կամեցայ գալ առ
ձեզ ես Պօղոս՝ միանգամ եւ երկիցս,
եւ խափանեաց զմեզ Սատանայ :
19 Քանզի ո՛վ է մեր յոյս կամ
խնդութիւն կամ պսակ պարծանաց
մերոց . թէ ոչ դուք 'ի Տէր՝ առաջի
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի
'ի նորա գալստեանն :
20 Զի դուք էք փառք մեր եւ
խնդութիւն :

կըլլին . որ ամէն ժամանակ իրենց
մեղքերը կատարելայ ‡ անոնն . պատ-
ճառն որ հասեր է նորանց վերայ
բարկութիւնը մինչեւ * վերջը :
17 Բայց մենք եղբարք՝ թէ եւ մին
քիչ ժամանակ ձեզմէնից որբ մնա-
ցինք , երեսով՝ եւ ոչ թէ * սրտով.
էլ աւելի փութացինք ձեր երեսը
տեսնելոյ մեծ ‡ ցանկութենով :
18 Որահամար ես Պօղոս մին երկու-
անգամ կամեցայ՝ որ ձեզ մօտ գամ,
եւ Սատանան խափանեց – մեզ :
19 Ինչու որ ով է մեր յոյսը կամ
‡ ուրախութիւնը կամ պարծանքի
պսակը . եթէ ոչ դուք ‡ Տէրումը՝
մեր Տէր Յիսուսի Քրիստոսի առա-
ջին նորա գալոյ ‡ ժամանակումը .
20 Պատճառն որ դուք էք մեր
փառքն ու ուրախութիւնը :

## ԳԼ. Գ

1 Վասն որոյ ոչ եւս անձինք
ժոյժ , զի բարւոք թուեցաւ մեզ
միայն մնալ յԱթէնս :

2 Եւ առաքեցաք զՏիմոթէոս
զեղբայր մեր եւ զգործակից աւե-
տարանին՝ Աստուծոյ եւ Հօրն Քրի-
ստոսի , հաստատել զձեզ՝ եւ մի-
խիթարել վասն հաւատոյն ձերոյ :
3 Զի մի տագնապեսցէք 'ի նեղու-
թիւնս յայսոսիկ . քանզի դուք ինք-
նին իսկ գիտէք , զի 'ի սոյն կամք :

4 Քանզի մինչ առ ձեզն իսկ էաք՝
յառաջագոյն ասէաք ձեզ , թէ նե-
ղութիւնք հասանելոց են 'ի վերայ
մեր . որպէս եւ եղեւ իսկ՝ եւ գի-
տացէք :

1 Այս՛ պատճառաւս էլ աւելի
համբերութիւն – չունենք . որ լաւ
երեւեցաւ մեզ՝ որ մենք միայնակ
մնանք ‡ Աթէնքումը .
2 Եւ ուղարկեցինք մեր Տիմոթէոս
եղբօրս եւ Աստուծոյ եւ Քրիստոսի
Հօր աւետարանի գործընկերին՝ որ
ձեզ հաստատէ եւ մխիթարէ ձեր
հաւատքին ‡ համար ,
3 Որ չըթուլանաք այս ‡ նեղու-
թիւններումս . ինչու որ իսկ դուք
էլ գիտումէք , ՞որ ճիշդ որահամար
կանգնած ‡ ենք :
4 Եւ երբոր ձեզ մօտ էինք՝ առա-
ջուց ասում էինք ձեզ , թէ նեղու-
թիւններ կը հասնեն մեզ վերայ .
ինչպէս որ էլ էլաւ՝ եւ դուք գի-
տացաք :

÷ Ծննդ . ԺԵ . 16 .
Մատթ . ԻԳ . 32 .
+ Մատթ . ԻԳ . 6 .
14 .
« Ա Կորնթ . Ե . 3 .
Կող . Բ . 5 .
÷ Գղ . Գ . 10 .
= Հռովմ . Ա . 13 .

ԺԵ . 22 .
‡ Բ Կորնթ . Ա . 14 .
Փիլիպ . Բ . 16
Գ . 1 .
÷ Առակ . ԺԶ . 31 .
‡ Ա Կորնթ . ԺԵ .
23 . Գղ . Գ . 13 .
Յայտ . Ա . 7 .

ԻԲ . 12 .
—
= Համբր . 5 .
‡ Գործ . ԺԷ . 15 .
÷ Հռովմ . ԺԶ . 21 .
Ա Կորնթ . ԺԶ .
10 . Բ Կորնթ . Ա .
19 .

‡ Եփես . Գ . 13 .
‡ Գործ . Թ . 16 .
ԺԴ . 21 . Ի . 23 .
ԻԱ . 11 . Ա Կորնթ .
Դ . 9 . Բ Տիմ .
Գ . 12 . Ա Պետ .
Բ . 21 .
‡ Գործ . Ի . 23 .

5 Վասն այնորիկ եւ ես զի ոչ
եւս ունէի ժոյժ՝ առաքեցի գիտել
զհաւատսն ձեր. գուցէ արդեօք
փորձեաց եւ զձեզ փորձիչն, եւ
ընդունայն լինիցի ջանն մեր։
6 Բայց արդ՝ իբրեւ եկն Տիմո-
թէոս 'ի ձէնջ առ մեզ, եւ ետ մեզ
զաւետիս հաւատոյն ձերոյ եւ զսի-
րոյ, զի ունիք 'ի մտի զյիշատակս
մեր բարեաց յամենայն ժամ. ցան-
կացեալ էք տեսանել զմեզ՝ որպէս
եւ մեք զձեզ։
7 Վասն այնորիկ մխիթարեցաք
'ի ձեզ եղբարք՝ 'ի վերայ ամենայն
վշտաց եւ նեղութեանց ձերոց՝ 'ի
ձեռն հաւատոյն ձերոյ։
8 Զի այժմ կենդանի եմք՝ եթէ
դուք հաստատուն կայցէք 'ի Տէր։
9 Զինչ՞ կարեմք գոհութիւն մա-
տուցանել Աստուծոյ վասն ձեր, 'ի
վերայ ամենայն խնդութեանն, զոր
խնդամք վասն ձեր առաջի Աստու-
ծոյ մերոյ։
10 Զցայգ եւ զցերեկ առաւել եւս
աղաչեմք՝ տեսանել զերեսս ձեր,
եւ հաստատել զպակասութիւն հա-
ւատոյն ձերոյ։
11 Այլ ինքն Աստուած եւ Հայր
մեր՝ եւ Տէր մեր Յիսուս Քրիստոս՝
ուղղեսցէ զճանապարհս մեր առ
ձեզ։
12 Եւ զձեզ ինքն Տէր բազմասցու-
սցէ եւ առաւելցուսցէ սիրով
ընդ միմեանս եւ առ ամենեսին՝
որպէս եւ մեք 'ի ձեզ։
13 Հաստատել զսիրտս ձեր անա-
րատս 'ի սրբութիւն առաջի Աստու-
ծոյ եւ Հօր մերոյ՝ 'ի գալստեանն

5 Նրահամար ես էլ՝ որ համբե-
րութիւն չունէի, ուղարկեցի՝ որ
ձեր հաւատքը [ե] գիտենամ. որ չի
լինի թէ փորձիչը ձեզ էլ [զ] փորձեց,
եւ մեր աշխատանքն զուր [է] լինի։
6 Բայց հիմիկ երբոր Տիմոթէոսը
ձեզանից եկաւ մեզ մօտ, եւ ձեր
հաւատքի եւ սիրոյ աւետիքը առաւ-
մեզ, որ ամէն ժամանակ մեր բարի
յիշատակը մտքումդ [ը] ունիք. եւ
ցանկանումէք մեզ տեսնել՝ ինչպէս
որ մենք էլ [թ] ձեզ.
7 Նրահամար եղբարք՝ մխիթար-
վեցանք ձեզ վերայ այն մեր ամէն
վիշտերումն ու նեղութիւններումը՝
ձեր հաւատքի [ժ] ձեռովը։
8 Ինչու որ հիմիկ մենք կենդանի
ենք՝ թէ որ դուք հաստատ կենաք
[ի] Տէրումը։
9 Էլ ինչ գոհութիւն կարող ենք
տալ Աստուծոյ ձեզ համար՝ այն ա-
մէն ուրախութեան պատճառովը,
որ ուրախանումենք ձեզ համար
մեր Աստուծոյ [լ] առաջին։
10 Գիշեր եւ ցերեկ էլ աւելի
[խ] աղաչումեմ՝ որ ձեր երեսը [ծ] տես-
նեմ, եւ ձեր հաւատքի պակասու-
թիւնը [կ] հաստատեմ։
11 Բայց ինքն Աստուած եւ մեր
Հայրը՝ եւ մեր Տէր Յիսուս Քրիս-
տոսը՝ շիտակէ մեր ճանապարհը
դէպի [հ] ձեզ։
12 Եւ Տէրն ինքը տայ ձեզ շատա-
նալ եւ աւելանալ [ձ] սիրով իրար
հետ եւ դէպի ամէնը, ինչպէս որ
մենք էլ դէպի [ղ] ձեզ.
13 Որ ձեր սրտերը հաստատուին
եւ անարատ լինին սրբութենով Աս-
տուծոյ եւ մեր Հօր [ճ] առաջին՝ այն

ե Համար. 1.
զ Ա կորնթ. Է. 5. Բ կորնթ. ԺԱ. 3.
է Գաղ. Բ. 2. Դ. 11. Փիլիպ. Բ. 16.
ը Գործ. ԺԸ. 1. 5.
թ Փիլիպ. Ա. 8.
ժ Բ կորնթ. Ա. 4. Ե. 6. 7. 13.
ի Փիլիպ. Դ. 1.
լ Գղ. Ա. 2.
խ Գործ. ԻԶ. 7. Բ Տիմ. Ա. 3.
ծ Հռովմ. Ա. 10, 11. ԺԵ. 32.
կ Գղ. Բ. 17.
հ Բ կորնթ. ԺԳ. 9. 11. Կող. Գ. 12.
ձ Մարկ. Ա. 3.
ղ Գղ. Գ. 11.
ճ Գղ. Գ. 9. Ե. 15. Բ Պետ. Ա. 7.
մ Ա կորնթ. Ա. 8. Փիլիպ. Ա. 10. Գղ. Ե. 23. Բ Թես. Բ. 16. Ա Յովհ. Գ. 20. 21.

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի
հանդերձ ամենայն սրբովք իւրովք։

ժամանակումն, որ մեր Տէր Յիսուս
Քրիստոսը կը գայ իրեն ամէն սուր-
բերովը։

## ԳԼ. Դ

1 Այսուհետեւ եղբարք՝ աղա-
չեմք զձեզ՝ եւ մխիթարեմք 'ի Քրի-
ստոս Յիսուս. զի որպէս ընկալա-
րուք 'ի մէնջ, թէ որպէս պարտ իցէ
ձեզ գնալ՝ եւ հաճոյ լինել Աստու-
ծոյ. որպէս եւ գնայքդ իսկ, զի եւս
քան զեւս յաւելուցուք 'ի նոյն։
2 Եւ գիտէք՝ թէ որպիսի պատ-
ուիրանս տուաք ձեզ 'ի Տէր Յի-
սուս։
3 Զի այս են կամք Աստուծոյ,
սրբութիւն ձեր. 'ի բաց լինել ձեզ
'ի պոռնկութենէ։
4 Գիտել իւրաքանչիւր ումեք 'ի
ձէնջ զիւր աման ստանալ սրբու-
թեամբ եւ պատուով։
5 Մի 'ի ցաւս ցանկութեան որ-
պէս եւ այլ հեթանոսք՝ որ ոչ գի-
տեն զԱստուած։
6 Մի զանցանել եւ զրկել յիրիք
յայդմիկ զեղբայր իւր. քանզի վրէ-
ժխնդիր է Տէր 'ի վերայ ամե-
նայնի այդորիկ. որպէս յառաջա-
գոյն ասացաք ձեզ՝ եւ եղաք վկա-
յութիւն։
7 Քանզի ոչ կոչեաց զմեզ Աս-
տուած 'ի պղծութիւն՝ այլ 'ի սրբ-
ութիւն։
8 Այսուհետեւ որ անարգէ, ոչ
զմարդ անարգէ, այլ զԱստուած՝
որ եւ ետ զՀոգին Սուրբ 'ի ձեզ։

1 Ուրեմն եղբարք՝ աղաչումենք
ձեզ՝ եւ յորդորում Քրիստոս Յիսու-
սումը. որ ինչպէս ընդունեցիք – մե-
զանից, թէ ինչպէս պէտք է ձեզ
⊧ գնալ եւ հաճոյ լինիլ ÷ Աստուծոյ՝
ինչպէս որ էլ գնումէք, որ աւելի
եւ աւելի առաջանաք նորանում։
2 Եւ գիտումէք՝ թէ ինչպէսի
պատուիրանք տուինք ձեզ Տէր Յի-
սուսումը։
3 Ինչու որ աս է Աստուծոյ ╤ կամ-
քը, ձեր ⊦ սրբութիւնը. որ դուք
յետ կենաք ⱬ պոռնկութենից.
4 Եւ ձեզանից ամէն մէկը գի-
տենայ իրեն ամանը պահել սրբու-
թենով եւ ⊦ պատուով.
5 Զէ թէ ցանկութեան ⊏ ցաւե-
րով, ինչպէս ուրիշ ⊧ հեթանոսնե-
րըն՝ որ Աստուծոյն չեն ⊦ գիտում։
6 Չի լինի որ մէկն այդ բանումը
չափիցն անցանէ եւ իրեն եղբօրը
⊧ զրկէ. ինչու որ Տէրն այդ ամէն
բաներից վերայ վրէժխնդիր ւ է.
ինչպէս որ առաջուց ասացինք ձեզ՝
եւ վկայութիւն տուինք։
7 Պատճառն որ Աստուած մեզ
չը կանչեց պղծութեան մէջ՝ այլ
սրբութեան ⊦ մէջ։
8 Ուրեմն նա՝ որ — անարգու-
մէ, ոչ թէ մարդ է անարգում,
այլ ⊳ Աստուծոյն՝ որ էլ Սուրբ Հո-
գին տուաւ ⦙ ձեզ։

ւ Զաք. ԺԴ. 5։ Յուդ. 14։
—
– Փիլիպ. Ա. 27։ Կող. Բ. 6։
⊧ Գղ. Բ. 12։
÷ Կող. Ա. 10։
╤ Հռովմ. ԺԲ. 2։ Եփես. Ե. 17։
⊦ Եփես. Ե. 27։
ⱬ Ա Կորնթ. Զ. 15. 18։ Եփես. Ե. 3։ Կող. Գ. 5։
⊦ Հռովմ. Զ. 19։ Ա Կորնթ. Զ. 15 18։
⊏ Հռովմ. Ա. 24. 26։ Կող. Գ. 5։
⊧ Եփես. Դ. 17. 18։
⊦ Ա Կորնթ. ԺԵ. 34։ Գաղ. Դ. 8 Եփես. Բ. 12։ Դ. 18։ Բ Թես. Ա. 8։
⊧ Ղև. ԺԹ. 11. 13։ Ա Կորնթ. Զ. 8։
ւ Բ Թես. Ա. 8։
⊦ Ղև. ԺԱ. 44։ ԺԹ. 2։ Ա Կորնթ. Ա. 2։ Եբր. Ժ. 14։ Ա Պետ. Ա. 15, 16։
⊳ Ղու. Ժ. 16։
⦙ Ա Կորնթ. Բ. 10։ Է. 40։ Ա Յովհ. Գ. 24։

9 Այլ վասն եղբայրսիրութեան՝ չէ ինչ պիտոյ գրել առ ձեզ. զի դուք ինքնին իսկ Աստուածուսոյցք էք առ զմիմեանս սիրելոյ.

10 Քանզի եւ առնէք իսկ զայն յամենայն եղբարս որ են յամենայն կողմանս Մակեդոնացւոց. աղաչեմք զձեզ եղբարք՝ առաւել եւս առաւելուլ եւ առատանալ. հանդարտել.

11 Եւ գործել զիւրաքանչիւր. եւ գործել ձեռօք ձերովք, որպէս եւ պատուիրեցաք ձեզ, զի գնասջիք պարկեշտութեամբ առ արտաքինսն՝ եւ մի իւիք կարօտեալ իցէք.

12 Ո՛չ կամիմ եղբարք՝ եթէ անգէտ իցէք վասն ննջեցելոցն. զի մի տրտմիցիք որպէս եւ այլքն՝ որոց ոչ գոյ յոյս.

13 Եթէ հաւատամք՝ եթէ Յիսուս մեռաւ եւ յարեաւ. նոյնպէս եւ Աստուած զննջեցեալսն ՚ի ձեռն Յիսուսի ածցէ ընդ նմա.

14 Բայց զայս ասեմք Տեառն բանիւ, եթէ մեք՝ որ կենդանիքս եմք մնացեալք, ՚ի գալստեանն Տեառն ոչ ժամանեմք ննջեցելոցն.

15 Զի ինքնին Տէր հրամանաւ, ՚ի ձայն հրեշտակապետի եւ ՚ի փող Աստուծոյ իջանէ յերկնից. եւ մեռեալք ՚ի Քրիստոս յարիցեն յառաջագոյն.

16 Ապա եւ մեք որ կենդանիքս

9 Բայց եղբայրասիրութեան համար պէտք չէ մեն բան գրել Հ ձեզ. ինչու որ դուք ինքներդ Աստուածանից սովորած Ձ էք իրար Ղ սիրել.

10 Որ իսկ դա էլ անում էք այն ամէն եղբայրներին՝ որ Մակեդոնացոց ամէն կողմերումն Ճ են. աղաչում ենք ձեզ եղբարք՝ որ էլ աւելի աւելանաք եւ ջանք անէք. որ հանդարտ Մ լինիք.

11 Եւ ամէն մէկն իրեն գործ Յ գործէ. եւ ձեր ձեռքով Ն աշխատէք, ինչպէս որ պատուիրեցինք ձեզ՝ որ պարկեշտութեամբ վարվիք դրսիններին հետ՝ եւ ոչ մեն բանով կարօտ Շ չը լինիք.

12 Չեմ կամենում եղբարք՝ որ անգէտ լինիք ննջեցելոց կողմանէ. որ չը տրտմիք ինչպէս Ո ուրիշներն՝ որ յոյս Չ չունին.

13 Թէ որ հաւատում ենք՝ որ Յիսուս մեռաւ եւ յարութիւն Պ առաւ. իսկ այնպէս էլ Աստուած ննջեցեալներին Յիսուսի ձեռով կը բերէ նորա Ջ հետ.

14 Բայց սա ենք ասում Տէրի Ռ խօսքովը, թէ մենք՝ որ կենդանի մնացած ենք մինչեւ Տէրին գալը, ննջեցեալներիցը չենք Ս առաջանալ.

15 Ինչու որ Տէրը ինքը հրամանովը, հրեշտակապետի Վ ձայնովը ու Աստուծոյ փողովը վեր կըգայ Տ երկնքիցը. եւ Քրիստոսով մեռելները առաջ յարութիւն Ր կառնեն.

16 Յետոյ մենք էլ որ կենդանի

Հ Գղ. Ե. 1. Ձ Երեմ. ԼԱ. 34. Յովհ. Զ. 45. ԺԳ. 26. Եբր. Ը. 11. Ա Յովհ. Բ. 20. 27. Ղ Մատթ. ԻԲ. 39. Յովհ. ԺԳ. 34. ԺԵ. 12. Եփես. Ե. 2. Ա Պետ. Գ. 8. Ա Յովհ. Գ. 11. 23. Դ. 21. Ճ Գղ. Ա. 7. Մ Գղ. Գ. 12. Յ Բ Թես. Գ. 11. Ա Պետ. Դ. 15. Ն Գործ. Ի. 35. Եփես. Դ. 28. Բ Թես. Գ. 7. 8. 12. Շ Հռովմ. ԺԳ. 13. Բ Կորնթ. Ը. 21. Կող. Դ. 5. Ա Պետ. Բ. 12. Ո Ղև. ԺԹ. 28. Բ Օրին. ԺԴ. 1. 2. Բ Թագ. ԺԲ. 20. Չ Եփես. Բ. 12. Պ Ա Կորնթ. ԺԵ. 18. Ջ Ա Կորնթ. ԺԵ. 18. 23. Գղ. Գ. 13. Ռ Գ Թագ. ԺԳ. 17, 18. Ի. 35. Ս Ա Կորնթ. ԺԵ. 51. Վ Մատթ. ԻԴ. 30, 31. Գործ. Ա. 11. Բ Թես. Ա. 7. Տ Ա Կորնթ. ԺԵ. 52. Ր Ա Կորնթ. ԺԵ. 23. 52.

մնացեալ իցեմք՝ նոքօք հանդերձ յափշտակեսցուք ամպովք ընդ առաջ Տեառն յօդս. եւ այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինիցիմք։

17 Այսուհետեւ մխիթարեսջիք զմիմեանս բանիւքս այսոքիւք։

ենք ͻ մնացածս՝ նորանց հետ միասին ամպերով օդին մէջ կը յափշտակուինք Տէրոջը − առաջը. եւ այնպէս ամէն ժամանակ Տէրոջը հետ ‡ կըլլինք։

17 Ուրեմն իրար մխիթարեցէք այս + խօսքերովս։

## ԳԼ. Ե

1 Այլ վասն ժամուց եւ ժամանակաց եղբարք՝ չէ ինչ պիտոյ գրել առ ձեզ։

2 Զի դուք ինքնին իսկ ստոյգ գիտէք, թէ օրն Տեառն իբրեւ զգող գիշերի՝ այնպէս հասանէ։

3 Յորժամ ասիցեն թէ խաղաղութիւն եւ շինութիւն է, յանժամ յանկարծակի հասցէ նոցա սատակումն՝ որպէս եւ երկն յղւոյ, եւ մի ապրեսցին։

4 Այլ դուք եղբարք՝ ոչ էք ՚ի խաւարի՝ թէ օրն ձեր իբրեւ զգող ՚ի վերայ հասանիցէ։

5 Զի ամենեքին դուք որդիք լուսոյ էք՝ եւ որդիք տուընջեան. չեմք գիշերոյ՝ չեմք խաւարի։

6 Ապա մի զքնով ամփոփիցուք՝ որպէս եւ այլքն, այլ արթունք եւ զուարթունք եղիցուք։

7 Զի որ ննջենն՝ գիշերի ննջեն, եւ որ արբենանն՝ գիշերի արբենան։

8 Այլ մեք զի տուընջեան եմք, արթունք եղիցուք, եւ զգեցցուք

1 Բայց ժամերին եւ ժամանակներին համար − եղբարք՝ պէտք չէ որ գրեմ ‡ ձեզ։

2 Ինչու որ դուք ինքներդ հաստատ գիտումէք, թէ Տէրոջը օրն ինչպէս գիշերվան գողը՝ այնպէս ÷ կը հասնի։

3 Երբոր կասեն թէ խաղաղութիւն եւ շինութիւն է, այդ ժամանակը յանկարծակի կորուստը կըհասնի նորանց ÷ վերայ՝ ինչպէս որ ցաւը յղացածին վերայ, եւ բնաւ չեն ⊢ ապրծնիլ։

4 Բայց դուք եղբարք՝ չէք խաւարումն, որ այն օրն ինչպէս գող ձեզ վերայ ⁊ հասնի։

5 Ինչու որ՝ դուք ամէներդ լուսոյ որդիք էք՝ եւ ցերեկի որդիք, գիշերին չենք՝ խաւարին ⊢ չենք։

6 Ապա ուրեմն չը լինի որ քնոյ մէջ ընկնինք ուրիշներին ⁊ պէս, բայց արթուն եւ զարթուն ‡ լինինք։

7 Պատճառն որ՝ նորանք՝ որ քնումեն՝ գիշերըն են ÷ քնում, եւ նորանք՝ որ հարբենումեն՝ գիշերն են ⊢ հարբենում։

8 Բայց մենք որ ցերեկի ենք՝ արթուն լինինք, եւ հաւատքի եւ

ͻ Ա Կորնթ. ԺԵ. 51։
− Գործ. Ա. 9։ Ցայտ. ԺԱ. 12։
‡ Յովհ. ԺԲ. 26։ ԺԴ. 3։ ԺԷ. 24։
+ Գղ. Ե. 11։
—
− Մատթ. ԻԴ. 36։ Գործ. Ա. 7։
‡ Գղ. Գ. 9։
÷ Մատթ. ԻԴ. 43. 44։ ԻԵ. 13։ Ղու. ԺԲ. 39. 40։ Բ Պետ. Գ. 10։ Ցայտ. Գ. 3։ ԺԶ 15։
÷ Եսայ. ԺԳ. 6-9։ Ղու. ԺԷ. 27. 28. 29։ ԻԱ. 34. 35։ Բ Թես. Ա. 9։
⊢ Երեմ. ԺԳ. 21։ Ովսէ. ԺԳ. 13։
⁊ Հռովմ. ԺԳ. 12. 13։ Ա Յովհ. Բ 8։ Եփես. Ե. 8։
⁊ Մատթ. ԻԵ. 5։
‡ Մատթ. ԻԴ. 42 ԻԵ. 13։ Հռովմ. ԺԳ. 11—13։ Ա Պետ. Ե. 8.
+ Ղու. ԻԱ. 34. 36։ Հռովմ. ԺԳ. 13։ Ա Կորնթ. ԺԵ. 34։ Եփես. Ե. 14։
⊢ Գործ. Բ. 15։

զզրահն հաւատոյ եւ սիրոյ, եւ
զխոյրն զսաղաւարտին յուսոյն փր-
կութեան:
9 Զի ոչ եդ զմեզ Աստուած ՚ի
բարկութիւն, այլ ՚ի փրկութիւն
կենդանութեան ՚ի ձեռն Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի:
10 Որ մեռաւն վասն մեր. զի եթէ
արթունք իցեմք՝ եւ եթէ ննջի-
ցեմք, նովաւ հանդերձ կեցցուք:
11 Վասն որոյ մխիթարեցէք զմի-
միեանս, եւ շինեցէք զիրեարս՝
որպէս եւ առնէքդ իսկ:
12 Աղաչեմք զձեզ եղբարք՝ ճա-
նաչել զվաստակաւորս եւ զվերա-
կացուս ձեր ՚ի Տէր, եւ զխրատիչս
ձեր:
13 Եւ համարեցարուք զնոսա առ-
ժանիս առաւել սիրոյ՝ վասն գործոյ
նոցա. խաղաղութիւն արարէք ընդ
միմեանս:
14 Աղաչեմք զձեզ եղբարք՝ խրա-
տեցէք զատաղսն. մխիթարեցէք
զկարճամիտս, պատսպարան լերուք
տկարաց, երկայնամիտ լերուք առ
ամենեսեան:
15 Զգոյշ լերուք՝ գուցէ՞ ոք չարի
չար հատուցանիցէ, այլ յամենայն
ժամ զբարիս զհետ երթայք առ
միմեանս եւ առ ամենեսեան:
16 Յամենայն ժամ ուրախ լերուք:
17 Անպակաս աղօթս արարէք:
18 Յամենայնի գոհացարուք. զի
այս են կամք Աստուծոյ Քրիստոսիւ
Յիսուսիւ ՚ի ձեզ:

սիրոյ զրահը հագնինք, եւ փրկու-
թեան յուսոյ սաղաւարտը լ դնենք:

9 Ինչու՞ որ՝ Աստուած մեզ բար-
կութեան համար խ չը դրաւ, բայց որ
փրկութենով կենդանի լլանք՝ մեր
Տէր Յիսուսի Քրիստոսի ծ ձեռքովը:
10 Որ նա մեզ համար մեռաւ. որ
թէ արթուն ըլլանք՝ եւ թէ քնենք,
նորա հետ կ ապրինք:
11 Ասոր համար իրար մխիթարե-
ցէք, եւ իրար շինեցէք՝ ինչպէս որ
էլ հ անումէք:
12 Աղաչումենք ձեզ եղբարք՝ որ
ճանաչէք ձեր աշխատաւորներին եւ
վերակացուներին Տէրումը, եւ ձեր
խրատողներին ձ էլ:
13 Եւ նորանց աւելի սիրոյ ար-
ժանի համարեցէք իրենց գործքին
համար. իրար հետ խաղաղութե-
նով ղ վարվեցէք:
14 Աղաչումենք ձեզ եղբարք՝ խրա-
տեցէք ճ անկարգներին, մխի-
թարեցէք մ թուլասրտներին, օգ-
նական էլէք յ տկարներին, երկայ-
նամիտ էլէք ամէնին ն հետ:
15 Զգոյշ կացէք՝ որ չը լնի թէ
մէկը չարին չար շհատուցանէ, բայց
ամէն ժամանակ բարոյն հետեւե-
ցէք՝ իրար հետ եւ ամէնին ո հետ:
16 Ամէն ժամանակ ուրախ չ էլէք:
17 Անդադար աղօթք պ արէք:
18 Ամէն բանի մէջ գոհացէք. ին-
չու որ այս է Աստուծոյ կամքը ձեզ
վերայ՝ Քրիստոս ջ Յիսուսումը:

լ Եսայ. ԾԹ. 17. Եփես. Զ. 14. 16. 17.
խ Հռովմ. Թ. 22. Գլ. Ա. 10. Ա Պետ. Բ. 8. Յուդ. 4.
ծ Բ Թես. 12. 13.
կ Հռովմ. ԺԴ. 8. 9. Բ Կորնթ. Ե. 15.
հ Գլ. Գ. 17.
ձ Ա Կորնթ. ԺԶ. 18. Փիլիպ. Բ. 29. Ա Տիմ. Ե. 17. Եբր. ԺԳ. 7. 17.
ղ Մարկ. Թ. 49.
ճ Բ Թես. Գ. 11, 12.
մ Եբր. ԺԲ. 12.
յ Հռովմ. ԺԴ. 1. ԺԵ. 1. Գաղ. Զ. 1. 2.
ն Գաղ. Ե. 22. Եփես. Դ. 2. Կող. Գ. 12. Բ Տիմ. Դ. 2.
շ Ղև. ԺԹ. 18. Առակ. Ի. 22. ԻԴ. 29. Մատթ. Ե. 39. 44. Հռովմ. ԺԲ. 17. Ա Կորնթ. Զ. 7. Ա Պետ. Գ. 9.
ո Գաղ. Զ. 10. Գլ. Գ. 12.
չ Բ Կորնթ. Զ. 10. Փիլիպ. Դ. 4.
պ Ղու. ԺԸ. 1. ԻԱ. 36. Հռովմ. ԺԲ. 12. Եփես. Զ. 18. Կող. Դ. 2. Ա Պետ. Դ. 7.
ջ Եփես. Ե. 20. Կող. Գ. 17.

19 Զհոգին մի՛ շիջուցանէք ։
20 Զմարգարէութիւնս մի՛ արհա-
մարհէք ։
21 Զամենայն ինչ փորձեցէք, ըզ
բարին ընկալարուք ։
22 Յամենայն իրաց չարաց 'ի բաց
կացէք ։
23 Եւ ինքն Աստուած խաղաղու-
թեան սուրբ արասցէ զձեզ համօ-
րէն. եւ բովանդակ ձեր ոգի եւ
շունչ եւ մարմին՝ անարատ 'ի գա-
լուստն Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի պահեսցի ։
24 Հաւատարիմ է՝ որ կոչեացն ըզ
ձեզ, որ եւ արասցէ զնոյն ։
25 Եղբարք՝ աղօթս արարէք եւ
'ի մեր վերայ ։
26 Ողջոյն տաջիք եղբարց ամե-
նեցուն 'ի համբոյր սրբութեան ։
27 Երդմնեցուցանեմ զձեզ 'ի Տէր՝
ընթեռնուլ զթուղթդ առաջի ամե-
նայն եղբարց սրբոց ։
28 Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի ընդ ձեզ. ամէն ։

19 Հոգին մի՛ =մարեցնէք ։
20 Մարգարէութիւնները մի՛ =ա-
նարգէք ։
21 Ամէն բան ւ փորձեցէք, ա
բարին =ընդունեցէք ։
22 Ամէն չար բաներէն հեռու ւ կա-
ցէք ։
23 Եւ խաղաղութեան ‡ Աստուա-
ծըն ինքը ձեզ սուրբ անէ ամէն
=կերպով. եւ ձեր բոլոր հոգին եւ
շունչերն ու մարմինն՝ անարատ
պահուի մինչեւ մեր Տէր Յիսուսի
Քրիստոսի ‡ գալը ։
24 Հաւատարիմ է նա՝ որ կանչեց
ձեզ, որ իսկ նա էլ + կանէ ։
25 Եղբարք՝ աղօթք արէք մեզ
վրայ ° էլ ։
26 Ողջոյն տուէք ամէն եղբայրնե-
րին սուրբ ‡ համբուրովը ։
27 Երդում եմ տալիս ձեզ Տէրու-
մըն, որ այս թուղթըս ամէն սուրբ
եղբայրների առաջին =կարդաք ։
28 Մեր Տէր Յիսուսի Քրիստոսի
շնորհքն ձեզ հետ. ‡ ամէն ։

Թեսաղոնիկեցւոց վրայ առաջին թուղթն Աթէնքէ գրուեցաւ ։

# ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

## ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ ԵՐԿՐՈՐԴ

---

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 ՊՕՂՈՍ եւ Սիղուանոս եւ
Տիմոթէոս՝ եկեղեցւոյդ Թեսաղոնի-
կեցւոց՝ յԱստուած Հայր մեր եւ 'ի
Տէր Յիսուս Քրիստոս ։
2 Շնորհք ընդ ձեզ եւ խաղա-
ղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ,
եւ 'ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ ։

1 ՊՕՂՈՍ եւ Սիղուանոս եւ
=Տիմոթէոս՝ Թեսաղոնիկեցոց եկե-
ղեցայդ՝ Աստուած մեր Հօրումը եւ
Տէր Յիսուս ‡ Քրիստոսումը ։
2 Շնորհք ձեզ հետ եւ խաղա-
ղութիւն Աստուած մեր Հօրիցը՝ եւ
Տէր Յիսուս ‡ Քրիստոսիցը ։

| | | | |
|---|---|---|---|
| – Ա կորնթ. ԺԴ. 30։ Եփես. Դ. 30։ Ա Տիմ. Դ 14։ Բ Տիմ. Ա 6։ | 15։ Ա Յովհ. Դ. 1։ = Փիլիպ. Դ. 8։ ւ Գղ. Դ. 11։ ա Փիլիպ Դ. 9։ | Ժ. 13։ Բ Թես. Գ. 3։ ° Կող. Գ. 3։ Բ Թես. Գ. 1։ | Բ Հռովմ. ԺԶ. 20. 24։ Բ Թես. Գ. 18։ |
| = Ա կորնթ. ԺԳ 1. 39։ ‡ Ա կորնթ. Բ. 11. | – Գղ. Գ. 13։ ‡ Ա կորնթ. Ա. 8. + Ա կորնթ. Ա. 9։ | ‡ Հռովմ. ԺԶ. 16։ = Կող. Դ. 16։ Բ Թես. Գ. 14։ | – Բ կորնթ. Ա. 19։ Բ Ա Թես. Ա. 1։ ‡ Ա կորնթ. Ա. 3։ |

3 Գոհանալ պարտիմք զԱստու-
ծոյ յամենայն ժամ վասն ձեր եղ-
բարք՝ որպէս եւ արժան իսկ է.
զի եւս քան զեւս աճեն հաւատքն
ձեր, եւ յաճախէ սէր իւրաքան-
չիւր ամենեցուն ձեր առ միմեանս։

4 Որպէս եւ մեզ ձեօք պարծել
յեկեղեցիսն Աստուծոյ՝ վասն համ-
բերութեան ձերոյ եւ հաւատոց՝
յամենայն հալածանս ձեր եւ 'ի նե-
ղութիւնս, որում դուքն համբե-
րէք։
5 Յօրինակ՝ արդար դատաստանին
Աստուծոյ. արժանի լինել ձեզ ար-
քայութեանն Աստուծոյ, վասն ո-
րոյ եւ զճգնութիւնս կրէք։

6 Եթէ պարտ է առաջի Աստու-
ծոյ՝ հատուցանել նեղչացն ձերոց
նեղութիւն.
7 Եւ ձեզ նեղելոցդ հանգիստ ընդ
մեզ՝ 'ի յայտնութեանն Տեառն մե-
րոյ Յիսուսի, յերկնից հրեշտակօք
զօրութեան իւրոյ։
8 'Ի բոց հրոյ առնուլ զվրէժս
յայնցանէ՝ որք ոչ ճանաչեն զԱստ-
ուած, եւ որ ոչ հնազանդին աւե-
տարանին Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի։
9 Որք տացեն վրէժս 'ի սատա-
կումն յաւիտենից՝ յերեսաց Տեա-
ռն՝ եւ 'ի փառաց զօրութեան նո-
րա։
10 Յորժամ գայցէ փառաւոր լի-
նել 'ի մէջ սրբոց իւրոց, եւ սքան-
չելի 'ի մէջ ամենայն հաւատացե-
լոց. զի հաւատարիմ եղեւ վկայու-
թիւնն մեր 'ի վերայ ձեր յաւուր
յայնմիկ։

3 Պէտք է մեզ որ ամէն ժամա-
նակ Աստուծոյ գոհութիւն տանք
ձեզ համար եղբարք՝ ինչպէս որ էլ
արժան է. ինչու որ ձեր հաւատ-
քըն առաջանալով մեծանումէ, եւ
ձեր ամէն մէկի սէրն աւելանումէ
իրար [դ] վերայ.
4 Մինչեւ որ մենք էլ ձեզանով
պարծենումենք Աստուծոյ [ե] եկեղե-
ցիներումը՝ ձեր համբերութեան եւ
հաւատքին [զ] համար՝ այն ձեր ամէն
հալածանքներումն ու նեղութիւն-
ներումն, որ դուք [է] համբերումէք.
5 Որ նա՛ Աստուծոյ արդար դա-
տաստանի նշան է. որ դուք ար-
ժանի լինիք Աստուծոյ [ը] արքայու-
թեան, որ նորա համար էլ նեղու-
թիւն էք [թ] քաշում.
6 Որ պէտք է Աստուծոյ առա-
ջին՝ որ ձեզ նեղացնողներին նե-
ղութիւն [ժ] հատուցանէ,
7 Եւ ձեզ նեղացածներիդ հան-
գիստ մեզ [ի] հետ՝ երբոր Տէր Յի-
սուսը կը յայտնուի երկնքիցն իւրեն
զօրութեան [լ] հրեշտակներովը.
8 Կրակի բոցով վրէժ առնելով
[խ] Նորանցից՝ որ Աստուծոյն չեն [ծ] ճա-
նաչում, եւ մեր Տէր Յիսուսի ա-
ւետարանին չեն [կ] հնազանդվում,

9 Որ նորանք պատիժ կը քաշեն
յաւիտենական կորուստը՝ Տէրի [հ] ե-
րեսիցը՝ եւ նորա փառաւոր [ձ] զօրու-
թենիցը.
10 Երբոր կը գայ՝ որ փառաւոր լի-
նի իւրեն [ղ] սրբերումը, եւ զարմա-
նալի ամէն հաւատացեալներումը.
որ մեր վկայութիւնն որ ձեզ ա-
րինք՝ հաւատարիմ կը լինի այն [ճ] օ-
րումը,

դ Ա Թես. Ա. 2. 3. Գ. 6. 9. Գղ. Բ. 12.
ե Բ Կորնթ. Է. 14. Թ. 2. Ա Թես. Բ. 19. 22.
զ Ա Թես. Ա. 3.
է Ա Թես. Բ. 14.
ը Փիլիպ. Ա. 28.
թ Ա Թես. Բ. 14.
ժ Յայտ. Զ. 10.
ի Յայտ. ԺԳ. 13.
լ Ա Թես. Դ. 15. Յուդ. 14.
խ Եբր. Ժ. 27. ԺԲ. 29. Բ Պետ. Գ. 7. Յայտ. ԻԱ. 8.
ծ Սաղ. ՀԹ. 6. Ա Թես. Դ. 5.
կ Հռոմ. Բ. 8.
հ Փիլիպ. Գ. 19. Բ Պետ. Գ. 7.
ձ Բ Օրին. ԼԳ. 2. Եսայ. Բ. 19. Գղ. Բ. 8.
ղ Սաղ. ՁԹ. 7.
ճ Սաղ. ԿԸ. 35.

11 Յոր եւ աղօթս առնեմք վասն ձեր յամենայն ժամ, զի զձեզ արժանիս արասցէ կոչմանն ձերում Աստուած մեր՝ մինչեւ լցցէ զամենայն հաճութիւն բարութեան, եւ զգործս հաւատոյն զօրութեամբ ։

12 Զի փառաւոր լիցի անուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի ձեզ՝ եւ դուք 'ի նմա, ըստ շնորհացն Աստուծոյ մերոյ եւ Տեառն Յիսուսի Քրիստոսի ։

11 Որ այս պատճառաւ էլ ամէն ժամանակ աղօթք ենք անում ձեզ համար, որ Աստուած ձեզ արժանի անէ ձեր ր կոչումին՝ մինչեւ որ կատարէ ամէն բարի հաճոյութիւնը, եւ հաւատքի գործերը ց զօրութենով.

12 Որ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անունը փառաւոր լինի ւ ձեզանում՝ եւ դուք նորանում, մեր Աստուծոյ եւ Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքին պէս ։

## ԳԼ. Բ

1 Աղաչեմ զձեզ եղբարք՝ վասն գալստեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ մերոյ ժողովելոյն առ նա ։

2 Մի վաղվաղակի խռովել ձեզ 'ի մտաց՝ եւ մի զարհուրել, մի հոգւով եւ մի բանիւ եւ մի թղթովք՝ իբրեւ թէ 'ի մէնջ. որպէս թէ եկեալ հասեալ իցէ օրն Տեառն ։

3 Մի ոք զձեզ խաբեսցէ՝ եւ մի իւիք իրօք. զի եթէ ոչ նախ եկեսցէ ապստամբութիւնն, եւ յայտնեսցի մարդն անօրէնութեան՝ որդին կորստեան,

4 Հակառակորդն համբարձեալ 'ի վերայ ամենայնի, որ անուանեալ իցէ Աստուած՝ կամ պաշտօն. մինչեւ նստել նմա 'ի տաճարին Աստուծոյ, եւ ցուցանել զանձն՝ թէ Աստուած իցէ ։

5 Ո՞չ յիշէք զի մինչ առ ձեզն էի՝ ասէի զայս ։

1 Աղաչումեմ ձեզ եղբարք՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ա գալուն, եւ մեր նորա մօտ ժողովուելուն բ համար.

2 Չը լինի թէ դուք շուտով շարժվիք ձեր մտքիցը՝ եւ մի զարհուրիք, ոչ հոգով եւ ոչ խօսքով՝ եւ ոչ թղթերով՝ իբր թէ գ մեզանից. ինչպէս թէ Տէրի օրն եկած հասած լինի ։

3 Չը լինի որ մէնը խաբէ ձեզ՝ եւ ոչ մին բանով դ էլ. պատճառն որ [illegible] եթէ առաջ չը գայ այն ե ապստամբութիւնը, եւ յայտնուի անօրէնութեան զ մարդը՝ կորուստի է որդին,

4 Այն հակառակօղն՝ որ գոռոզացած ը է այն ամէնին վերայ, որ Աստուած՝ կամ Աստուծոյ պաշտօն է անուանված. մինչեւ որ նա Աստուծոյ տաճարին մէջ կը նստի, եւ իրեն անձը ցոյց կը տայ՝ թէ Աստուած թ է ։

5 Չէք յիշում՝ որ դեռ քանի որ ձեզ մօտ էի՝ այս բաները ասումէի ։

ր Համար. 5.
ց Ա Թես. Ա. 3.
ւ Ա Պետ. Ա. 7. Դ. 14.

—

ա Ա Թես. Դ. 15.
բ Մատթ. ԻԴ. 31. Մարկ. ԺԳ. 27. Ա Թես. Դ. 16.
գ Մատթ. ԻԴ. 4. Եփես. Ե. 6. Ա Յովհ. Դ. 1.
դ Մատթ. ԻԴ. 4. Եփես. Ե. 6.
ե Ա Տիմ. Դ. 1.
զ Դան. Է. 25. Ա Յովհ. Բ. 18. Յայտ. ԺԳ. 11, 12.
է Յովհ. ԺԷ. 12.
ը Եսայ. ԺԴ. 13. Եզեկ. ԻԸ. 2. 6. 9. Դան. Է. 25. ԺԱ. 36. Յայտ. ԺԳ. 6.
թ Ա Կորնթ. Ը. 5.

6 Եւ արդ դուք ինքնին գիտէք
զայն՝ որ ունին յայտնել նմա յիւ-
րում ժամանակի ։
7 Զի խորհուրդն անօրէնութեան
արդէն իսկ զօրանայ. բայց յայն-
ժամ մինչ ՚ի միջոյ բարձցի՝ որ այժ-
մըդ ունի ։
8 Եւ ապա յայտնեսցի անօրէնն,
զոր Տէր Յիսուս սատակեսցէ հոգ-
ւով բերանոյ իւրոյ, եւ խափանես-
ցէ յայտնութեամբ գալստեանն իւ-
րոյ ։
9 Որոյ գալուստն ըստ ազդեցու-
թեանն Սատանայի է, ամենայն զօ-
րութեամբ եւ նշանօք եւ արուես-
տիւք ստովք.
10 Եւ ամենայն պատրանօք անի-
րաւութեան ՚ի վերայ կորուսելոցն.
փոխանակ զի զսէրն ճշմարտութեան
ոչ ընկալան՝ զի ապրեսցին, եւ ՚վա-
սն այնորիկ առաքեսցէ նոցա Աստ-
ուած ազդեցութիւն մոլորութեան՝
հաւատալ նոցա ստութեանն ։
11 Զի դատապարտեսցին ամենեք-
եան՝ որ ոչ հաւատացին ճշմարտու-
թեանն, այլ հաճեցան ընդ անօրէ-
նութիւնն ։
12 Այլ մեք ՚պարտիմք, գոհանալ
զԱստուծոյ յամենայն ժամ վասն
ձեր եղբարք սիրելիք ՚ի Տեառնէ.
զի ընտրեաց զձեզ Աստուած ՚ի
սկզբանէ ՚ի փրկութիւն՝ սրբու-
թեամբ Հոգւոյն՝ եւ հաւատովքն
ճշմարտութեան ։
13 Յոր եւ կոչեաց զձեզ աւե-
տարանաւն մերով ՚ի փրկութիւն

6 Եւ հիմիկ դուք ինքներդ գի-
տումէք նա՝ որ խափանումէ, որ
իրեն ժամանակումը յայտնուիլ ։
7 Ինչու որ անօրէնութեան խոր-
հուրդն իսկ հիմիկ զօրանումէ.
միայն թէ մինչեւ այն ժամանակն
որ մէջ տեղէցը վերանուիլի նա՝ որ
հիմիկ խափանումէ.
8 Եւ ապա կը յայտնուիլ այն ան-
օրէնն՝ որ նորան Տէր Յիսուսը կը
սատակացնէ իրեն բերանի հոգո-
վը, եւ կը խափանէ իրեն գալոյ
յայտնութենովը.
9 Որ այն անօրէնին գալը Սատա-
նայի ներգործութենովն է, ամէն
զօրութենով եւ սուտ նշաններով
եւ հրաշքներով.
10 Եւ ամէն անիրաւութեան խա-
բեբայութիւններով նորանց վերայ՝
որ կորած են. նորա համար որ ճըշ-
մարտութեան սէրը չընդունեցին՝
որ ապրին. իսկ նորա համար Աստ-
ուած մոլորութեան ներգործութիւ-
նը կուղարկէ նորանց՝ որ հաւա-
տան ստութեան.
11 Որ դատապարտուին ամէնքն՝ որ
չը հաւատացին ճշմարտութեան,
բայց հաւանեցին անօրէնութեան ։
12 Իսկ մենք պէտք է որ ամէն
ժամանակ Աստուածանից գոհանանք
ձեզ համար՝ Տէրիցը սիրուած եղ-
բարք, որ Աստուած սկզբէն ընտ-
րեց մեզ՝ որ փրկութիւն ստանանք
Հոգոյ սրբութենովը՝ եւ ճշմարիտ
հաւատքովը.
13 Որ նորա մէջ ձեզ էլ կանչեց՝
մեր աւետարանովը մեր Տէր Յի-

Ա Յովհ. Բ. 18. Դ. 3.
Դան. Է. 10, 11.
Յոբ. Դ. 9. Եսայ. ԺԱ. 4, [illegible] Ովսէ. Զ. 5. Յայտ. Բ. 16. ԺԹ. 15. 20. 21.

Գղ. Ա. 8, 9. Եբր. Ժ. 27.
Յովհ. Ը. 41. 44. Եփես. Բ. 2. Յայտ. ԺԸ. 23.
Բ Օրին. ԺԳ. 1. Մատթ. ԻԴ. 24. Յայտ. ԺԳ. 13. ԺԹ. 20.

Բ Կորնթ. Բ. 15. Դ. 3.
Գ Թագ. ԻԲ. 22. Եզեկ. ԺԴ. 9. Հռովմ. Ա. 24. [illegible]
Մատթ. ԻԴ. 5. 11. Ա Տիմ. Դ. 1.

Հռովմ. Ա. 32.
Գղ. Ա. 3.
Եփես. Ա. 4.
Ա Թես. Ա. 4.
Ղուկ. Ա. 75. Ա Պետ. Ա. 2.

փառացն Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի։
14 Այսուհետեւ եղբարք հաստա-
տուն կացէք՝ եւ պինդ կալարուք
զաւանդութիւնսն՝ զոր ուսարուք,
եթէ բանիւ եւ եթէ թղթով մերով։
15 Այլ ինքն Տէր մեր Յիսուս Քրի-
ստոս եւ Աստուած եւ Հայր մեր,
որ սիրեացն զմեզ՝ եւ ետ մեզ մը-
խիթարութիւն յաւիտենից՝ եւ յոյս
բարեաց շնորհօք,
16 Մխիթարեսցէ զսիրտս ձեր՝ եւ
հաստատեսցէ յամենայն բանս եւ ՚ի
գործս բարութեան։

սուսի Քրիստոսի փառաւոր փրկու-
թեան մէջ։
14 Ուրեմն եղբարք՝ հաստատուն կե-
ցէք, եւ պինդ բռնեցէք այն ա-
ւանդութիւնները՝ որ սորվեցիք,
թէ խօսքով եւ թէ մեր թղթով։
15 Բայց ինքն մեր Տէր Յիսուս
Քրիստոսը եւ մեր Հայր Աստուա-
ծը, որ սիրեց մեզ՝ եւ յաւիտենա-
կան մխիթարութիւն տուաւ մեզ՝
եւ բարի յոյս շնորհքով,
16 Նա մխիթարէ ձեր սրտերը՝
եւ ամէն բարի խօսքերի եւ գործ-
քերի մէջ հաստատէ։

## ԳԼ. Գ

1 Այսուհետեւ եղբարք՝ աղօթս
արարէք ՚ի վերայ մեր, զի բանն
Տեառն ընթանայցէ. եւ փառաւոր
լինիցի յամենայն տեղիս՝ որպէս եւ
առ ձեզ։
2 Զի ապրեսցուք յանօրինաց եւ
յանզգամաց մարդկաց. զի ոչ ամե-
նեցուն են հաւատք։
3 Այլ հաւատարիմ է Տէր, որ
եւ հաստատեսցէ զձեզ՝ եւ պահես-
ցէ ՚ի չարէ անտի։
4 Վստահ եմք ՚ի ձեզ Տերամբ,
թէ զոր պատուիրեցաքն ձեզ, եւ
առնէք՝ եւ առնիցէք։

5 Այլ Տէր ուղղեսցէ զսիրտս ձեր
՚ի սէրն Աստուծոյ՝ եւ ՚ի համբերու-
թիւնն Քրիստոսի։
6 Պատուիրեմ ձեզ եղբարք յա-
նուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի, խորշել ձեզ յամենայն եղբօ-
րէ՝ որ ստահակն գնայցէ. եւ ոչ

1 Այսուհետեւ եղբարք՝ աղօթք
արէք մեզ վերայ, որ Աստուծոյ
խօսքըն առաջանայ, եւ ամէն տեղ
փառաւոր ըլլի՝ ինչպէս որ էլ ձեզ
մօտ։
2 Որ փրկուինք անօրէն եւ անզգ-
գամ մարդկանց ձեռքիցը. ինչու
որ հաւատքն ամէնի բան չէ։
3 Բայց Տէրը հաւատարիմ է, որ
էլ կըհաստատէ ձեզ՝ եւ այն չա-
րիցն կը պահէ։
4 Վստահութիւն ունինք ձեզ վե-
րայ Տէրով, որ այն որ պատուիրե-
ցինք ձեզ՝ էլ անումէք՝ եւ էլ կ՚ա-
նէք։
5 Բայց Տէրը շիտակէ ձեր սըր-
տերը դէպի Աստուծոյ սէրը՝ եւ դէ-
պի Քրիստոսի համբերութիւնը։
6 Պատուիրումեմ ձեզ եղբարք՝
մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անու-
նովը, որ յետ քաշուիք ամէն եղ-
բայրներիցն՝ որ անկարգութենով են

ռ Յովհ. ԺԷ. 22. Ա Թես. Բ. 12. Ա Պետ. Ե. 10.
ս Ա Կորնթ. ԺԶ. 13. Փիլիպ. Դ. 1.
վ Ա Կորնթ. ԺԱ. 2. Գղ. Գ. 6.
տ Գղ. Ա. 1, 2.
ր Ա Յովհ. Գ. 10. Յայտ. Ա. 5.
ց Ա Պետ. Ա. 3.
ւ Ա Կորնթ. Ա. 8. Ա Թես. Գ. 13. Ա Պետ. Ե. 10.

—

ա Եփես. Զ. 19. Կող. Դ. 3. Ա Թես. Ե. 25.
բ Հռովմ. ԺԵ. 31.
գ Գործ. ԻԸ. 21. Հռովմ. Ժ. 16.
դ Ա Կորնթ. Ա. 9. Ա Թես. Ե. 24.
ե Յովհ. ԺԷ. 15. Բ Պետ. Բ. 9.
զ Բ Կորնթ. Է. 16. Գաղ. Ե. 10.
է Ա Մնաց. ԻԹ. 18. Ա Թես. Ա. 3.
ը Հռովմ. ԺԶ. 17. Համար. 14. Ա Տիմ. Զ. 5. Բ Յովհ. 10.
թ Ա Կորնթ. Ե. 11. 13.

ըստ աւանդութեանն՝ զոր ընկալարուք 'ի մէնջ ։

7 Զի դուք ինքնին գիտէք՝ թէ
որպէս պարտ է ձեզ նմանել մեզ ․
եւ ոչ երբէք ստահակեցաք առ ձեզ ։

8 Եւ ոչ ձրի զուրուք հաց կերաք , այլ ջանիւ եւ վաստակով ըզ
ցայգ եւ զցերեկ գործէաք՝ վասն
չծանրանալոյ ումեք 'ի ձէնջ ։

9 Ո՛չ եթէ չունէաք իշխանութիւն ․ այլ զի զանձինս օրինակ առասցուք ձեզ՝ նմանօղս լինել մեզ ։

10 Քանզի մինչդեռ առ ձեզն իսկ
էաք՝ զայս պատուիրէաք ձեզ , թէ
որ ոչն կամիցի գործել՝ եւ կերիցէ
մի ։
11 Արդ՝ լսեմք զոմանս 'ի ձէնջ՝
թէ ստահակութեամբ գնան ․ գործ
ինչ ոչ գործեն , այլ յուլացեալ՝ հետաքրքիր շրջին ։

12 Այնպիսեացն պատուէր տամք՝
եւ աղաչեմք 'ի Տէր Յիսուս Քրիստոս , զի հանդարտութեամբ գործեսցեն՝ եւ զիւրեանց ղ հաց կերիցեն ։
13 Այլ դուք եղբարք՝ մի ձանձրանայք զբարիս գործել ։
14 Ապա եթէ ոչ ոք հնազանդեսցէ
բանիս մերում թղթովս այդորիկ , դուք նշանակեսջիք զնա ․ եւ
մի խառնակեսջիք ընդ նմա՝ զի
պատկառեսցէ ։
15 Բայց մի իբրեւ զթշնամի հա

ժ վարուիմ ․ եւ ոչ թէ այն պատուիրանքին պէս՝ որ ընդունեցիք
ի մեզմանից ։
7 Ինչու որ դուք ինքներդ գիտեմք՝ թէ ինչպէս պէտք է ձեզ՝
որ մեզ նմանող լ լինիք ․ որ ձեզ
մօտ բնաւ անկարգութեամբ խ չըվարուեցանք ։
8 Եւ ոչ մէկի հացըն էլ ձրի չըկերինք , բայց ջանքով եւ աշխատանքով գիշեր եւ ցերեկ գործամէինք՝ որ ձեզմանից ոչ մէկին ծանրութիւն ծ չը տանք ։
9 Ոչ թէ որ իշխանութիւն կ չունինք ․ բայց որ մեր անձներս օրինակ տանք ձեզ՝ որ մեզ նմանող
հ լինիք ։
10 Ինչու որ երբոր ձեզ մօտ էինք՝ սա էինք պատուիրում , թէ՝
նա որ չը կամենայ գործել՝ թող էլ
ձ չուտէ ։
11 Բայց ձեզմանից մինքանիսին համար լսումենք՝ որ անկարգութեամբ
են ղ վարուիմ ․ մէկ բան չեն գործում , բայց ծուլացած հետաքրքիր
ման են ճ գալիս ։
12 Էնպիսիներին պատուիրումենք՝
եւ աղաչումենք Տէր Յիսուս մ Քրիստոսումն , որ հանդարտութեամբ
աշխատանքն եւ իրենց հացն յ ուտեն ։
13 Բայց դուք եղբարք՝ մի ձանձրանաք բարիք ն գործելուցը ։
14 Ապա թէ որ մինը չհնազանդի
մեր խօսքին այդ թղթովը , դուք
նշանեցէք նորան ․ եւ մի խառնուիք
նորա հետ՝ որ շ ամաչէ ։

15 Բայց թշնամոյ պէս մի ո հա

ժ Ա թես. Դ. 11.
Ե. 14. Հռոմ.
11, 12. 14.
ի Գղ. Բ. 14.
լ Ա Կորնթ. Դ. 16.
ԺԱ. 1. Ա թես.
Ա. 6. 7.
խ Ա թես. Բ. 10.

ծ Գործ. ԺԸ. 3.
Ի. 34. Բ Կորնթ.
ԺԱ. 9. Ա թես.
Բ. 9.
կ Ա Կորնթ. Թ. 6.
Ա թես. Բ. 6, 7.
հ Հռոմ. 7.
ձ Ծննդ. Գ. 19.

Ա թես. Դ. 11.
ղ Հռոմ. 6.
ճ Ա թես. Դ. 11
Ա Տիմ. Ե. 13.
Ա Պետ. Դ. 15.
մ Ա թես. Դ. 11.
յ Եփես. Դ. 28.
ն Գաղ. Զ. 9.

շ Մատթ. ԺԸ. 17.
Ա Կորնթ. Ե. 9.
11. Հռոմ. 6.
ո Ղև. ԺԹ. 17.
Ա թես. Ե. 14.

մարիջիք՝ այլ խրատեսջիք իբրեւ
զեղբայր :
16 Եւ ինքն Տէր խաղաղութեան՝
տացէ ձեզ խաղաղութիւն յամենայն
ժամ յամենայն իրս . Տէր ընդ ամե-
նեսին ընդ ձեզ :
17 Ողջոյնս իմով ձեռամբ Պօղոսի է ,
որ է նշանակ . յամենայն թուղթս
այսպէս գրեմ :
18 Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի ընդ ամենեսին ձեզ . ա-
մէն :

մարէք , այլ խրատեցէք նորան ինչ-
պէս ւ եղբայր :
16 Եւ ինքն խաղաղութեան Տէրը՝
տայ ձեզ խաղաղութիւն ամէն ժա-
մանակ , եւ ամէն բանի մէջ . Տէրը
ձեզ ամենիդ փ հետ :
17 Ողջոյնս իմ Պօղոսիս ձեռքինն է ,
որ նշան է ամէն թղթերումս .
այսպէս եմ ք գրում .
18 Մեր Տէր Յիսուսի Քրիստոսի
շնորհքը ձեզ ամենիդ հետ լինի .
օ ամէն :

Թեսաղոնիկեցւոց միւս երկրորդ (Բ—ԴԲ) Աթենէ գրեցաւ երկրորդ :

# ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

## ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԱՌԱՋԻՆ

---

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 ՊՕՂՈՍ առաքեալ Յիսուսի
Քրիստոսի՝ ըստ հրամանի Փրկչին
մերոյ Աստուծոյ եւ Քրիստոսի Յի-
սուսի յուսոյն մերոյ .
2 Տիմոթէոսի որդւոյ սիրելւոյ հա-
ւատովք . շնորհք՝ ողորմութիւն՝
խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ եւ
՚ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստո-
սէ :
3 Որպէս աղաչեցի զքեզ կալ յԵ-
փեսոս՝ մինչ երթայի ՚ի Մակեդո-
նիա . զի պատուէր տացես ումանց
չլինել օտարուսմունս ,
4 Եւ չհայել յառասպելս եւ ՚ի
տոհմաթիւս անչափս . որ մանա-
ւանդ խնդիրս յուզեն , եւ ոչ զարդն-

1 ՊՕՂՈՍ Յիսուսի Քրիստոսի
առաքեալ՝ մեր Փրկիչ ա Աստուծոյ
բ հրամանովը՝ եւ Յիսուս Քրիստոսի
մեր գ յուսոյ .
2 դ Տիմոթէոսի՝ սիրելի որդոյս
ե հաւատքով . շնորհք՝ ողորմութիւն՝
եւ խաղաղութիւն՝ Աստուած Հօրի-
ցը եւ մեր Տէր Յիսուս զ Քրիստո-
սիցը :
3 Ինչպէս որ աղաչեցի քեզ՝ որ
Եփեսոսումը մնաս՝ երբոր ես գնու-
մէի է Մակեդոնիա . որ պատուիրես
մին քանիսին՝ որ օտար ուսմունք
ը չը սովորցնեն ,
4 Եւ մտիկ չը տան առասպել
բաններին եւ թ ազգահամարներին ,
որ չափ չունին , որ աւելի վիճա-

ւ Տիտ . Գ . 10 .
փ Հռովմ . ԺԵ . 33 . ԺԶ . 20 . Ա Կորնթ . ԺԴ . 33 . Բ Կորնթ . ԺԳ . 11 . Ա Թես . Ե . 23 .
ք Ա Կորնթ . ԺԶ . 21 . Կող . Դ . 18 .
օ Հռովմ . ԺԶ . 24 .

—

ա Գղ . Բ . 3 . Դ . 10 . Տիտ . Ա . 3 . Բ . 10 . Գ . 4 . Յուդ . 25 .
բ Գործ . Թ . 15 . Գաղ . Ա . 1 . 12 .
գ Կող . Ա . 27 .
դ Գործ . ԺԶ . 1 . Ա Կորնթ . Դ . 17 . Փիլիպ . Բ . 19 . Ա Թես . Գ . 2 .
ե Տիտ . Ա . 4 .
զ Գաղ . Ա . 3 . Բ Տիմ . Ա . 2 . Ա Պետ . Ա . 2 .
է Գործ . Ի . 1 . 3 . Փիլիպ . Բ . 24 .
ը Գաղ . Ա . 6 , 7 . Գղ . Զ . 3 . 10 .
թ Գղ . Դ . 7 . Զ . 4 . 20 . Բ Տիմ . Բ . 14 . 16 . 23 . Տիտ . Ա . 14 . Գ . 9 .

տնտեսութիւն Աստուծոյ հաւատովք ։

5 Քանզի գլուխ պատուիրանին սէր է, 'ի սուրբ սրտէ՝ եւ 'ի մըտաց բարեաց՝ եւ յանկեղծաւոր հաւատոց ։
6 Յորոց ոմանք վրիպեցան՝ խոտորեալք յունայնութիւն բանից ։

7 Կամին լինել վարդապետք օրինաց, մինչեւ ոչ իմանան զինչ խօսին՝ եւ ոչ վասն որոց պնդեալն են ։

8 Գիտեմք՝ եթէ բարւոք են օրէնք, եթէ ոք՝ զնոսա օրինօքն կըրեսցէ ։
9 Բայց զայս գիտասցէ զի 'ի վերայ արդարոց օրէնք ոչ կան, այլ 'ի վերայ անօրինաց եւ անհնազանդից՝ ամպարշտաց եւ մեղաւորաց՝ անսրբոց եւ պղծոց, զհայր եւ զմայր անարգողաց, մարդասպանաց,

10 Պոռնկաց, արուագիտաց, մարդագերողաց, ստոց, ստերդմնոց. եւ եթէ այլ ինչ իցէ հակառակ ողջամիտ վարդապետութեանն ։

11 Որ ըստ աւետարանի փառաց երանելւոյն Աստուծոյ է, յորում եղէ ես հաւատարիմ ։
12 Շնորհ ունիմ այնմիկ, որ զօրացոյցն զիս 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր. զի հաւատարիմ համարեցաւ կարգել 'ի սպասաւորութիւն ։

13 Որ յառաջագոյն հայհոյիչն էի

բանութիւններ են գրգռում, եւ չէ թէ Աստուծոյ տնտեսութիւնն՝ որ հաւատքով [ժ] է ։
5 Ինչու որ պատուիրանքի գըլուխը սէրն [ի] է, սուրբ սրտից, եւ բարի մտքից, եւ անկեղծ [լ] հաւատքից .
6 Որ մէն քանիսը նորանցից թեքվեցան՝ եւ ունայն բաների ետեւէն [խ] գնացին ։
7 Կամենումեն օրէնքի վարդապետ լինել, եւ իրենք չեն իմանում թէ ինչ են խօսում, եւ ոչ էլ այն բաները՝ որ նորանց [ծ] հաստատումեն ։
8 Գիտումենք՝ որ օրէնքը բարի է, թէ որ մէկն օրինաւոր կերպով վարէ [կ] նորան ։
9 Բայց սա պէտք է գիտենայ՝ որ արդարներին վերայ օրէնք [հ] չըկայ, բայց անօրէններին, անհնազանդներին, ամպարիշտներին, մեղաւորներին, անսուրբներին, պղծներին, հօր եւ մօր անարգօղներին, մարդասպանօղներին,
10 Պոռնիկներին, արուագէտներին, մարդագողացօղներին, սուտ ասօղներին, սուտ երդում ուտօղներին վերայ. եւ թէ ուրիշ բան կայ՝ որ հակառակ է ողջամիտ [ձ] վարդապետութեանն,
11 Որ երանելի Աստուծոյ փառաւոր աւետարանին պէս [ղ] է, որ ես հաւատարիմ էղայ [ճ] նորան ։
12 Շնորհակալ եմ նորանից՝ որ զօրացուց ինձ մեր Տէր Յիսուս [մ] Քրիստոսը. որ ինձ հաւատարիմ [յ] համարեց՝ եւ սպասաւորութեան մէջ [ն] դրաւ,
13 Որ ես առաջուց հայհոյօղ եւ

ժ Գլ. Զ. 4.
ի Հռովմ. ԺԳ. 8 10. Գաղ. Ե. 14.
լ Բ Տիմ. Բ. 22.
խ Գլ. Զ. 4. 20.
ծ Գլ. Զ. 4.
կ Հռովմ. Է. 12.
հ Գաղ. Գ. 19. Ե. 23.
ձ Գլ. Զ. 3. Բ Տիմ. Դ. 3. Տիտ. Ա. 9. Բ. 1.
ղ Գլ. Զ. 15.
ճ Ա Կորնթ. Թ. 17. Գաղ. Բ. 7. Կող. Ա. 25. Ա Թես. Բ. 4. Գլ. Բ. 7. Բ Տիմ. Ա. 11. Տիտ. Ա. 3.
մ Բ Կորնթ. ԺԲ. 9.
յ Ա Կորնթ. Է. 25.
ն Բ Կորնթ. Դ. 5. 6. Դ. 1. Կող. Ա. 25.

եւ հալածիչ եւ թշնամանիչ. այլ գտի ողորմութիւն, զի զայն յան-գիտութեան եւ յանհաւատութեան գործէի։

14 Եւ առաւել եղեն շնորհք Տեա-ռըն մերոյ հաւատովքն եւ սիրով՝ որ ՚ի Քրիստոս Յիսուս։

15 Հաւատարիմ է բանն՝ եւ ամե-նայն ընդունելութեան արժանի է. զի Քրիստոս Յիսուս եկն յաշխարհ փրկել զմեղաւորս, որոց գլուխն ես եմ։

16 Այլ վասն այնորիկ գտի ողոր-մութիւն, զի նախ յիս եցոյց Յի-սուս Քրիստոս զամենայն երկայն-մտութիւն՝ յօրինակ այնոցիկ՝ որ հաւատալոցն իցեն ՚ի նա, ՚ի կեանսն յաւիտենից։

17 Այլ Թագաւորին յաւիտենից՝ անեղծի եւ աներեւութի, միայն Աստուծոյ՝ փառք եւ պատիւ յաւի-տեանս յաւիտենից. ամէն ։ ։

18 Զայս պատուիրան աւանդեմ քեզ՝ որդեակ իմ Տիմոթէոս, ըստ կանխելոց ՚ի քեզ մարգարէութեան-ցըն. զի դու զինուորեսցիս նոքօք զգեղեցիկ զինուորութիւնն։

19 Ունիցիս հաւատս սրբովք մը-տօք, զոր ոմանց մերժեալ յանձանց խըթանաց՝ նաւաբեկեցան ՚ի հաւատս։

20 Որոց ասկի են Հիմենոս՝ եւ Ա-ղեքսանդրոս, զորս մատնեցի Սա-

հալածող եւ թշնամանող ւ էի. բայց ողորմութիւն գտի, ինչու որ տը-գիտութենով եւ անհաւատութենով էի գործում = նա։

14 Բայց էլ աւելի շատ էլաւ մեր Տէրի ւ շնորհքը ¬ հաւատքովն ու է սիրովը՝ որ Քրիստոս Յիսուսումն է։

15 Ճշմարիտ է այս խօսքս՝ եւ ա-մէն կողմանէ արժանի է — ընդունե-լելու. որ Յիսուս Քրիստոս աշխարհ եկաւ մեղաւորները փրկելու, որ նորանց գլխաւորը ես = եմ։

16 Այլ նորահամար ողորմութիւն Էգտի, որ առաջ ինձանում Յիսուս Քրիստոս ցոյց տայ ամէն երկայնմը-տութիւնըն՝ որ օրինակ լինի նորանց՝ որ հաւատալու են նորան յաւիտե-նական կեանքըն ․․․ ւ համար։

17 Բայց յաւիտենական ւ Թագա-ւորին՝ այն ; անապականելոյն եւ — աներեւութին, այն մին ‡ Աս-տուծոյն՝ փառք եւ պատիւ յաւիտ-եանս + յաւիտենից. ամէն։

18 Այս պատուիրանքըս աւան-դումեմ քեզ՝ իմ Տիմոթէոս * որդ-եակըս, այն մարգարէութիւններին պէս՝ որ առաջուց քեզ վերայ ‡ է-լան. որ նորանցով բարի զինուո-րութենով — պատերազմիս։

19 Եւ հաւատք ունենաս ու բարի ‡ մտքով, որ նորան մին քանիսն դուրս ձգեցին իրենց անձներիցը՝ եւ հաւատքումը նաւաբեկութիւն ‡ քաշեցին,

20 Որ նորանց միջումն են ¬ Հիմե-նոսն ու ւ Աղէքսանդրոսը, որ նո-

ւ Գործ. Ը. 3. Թ. 1. Ա Կորնթ. ԺԵ. 9. Փիլիպ. Գ. 6.
= Ղու. ԻԳ. 31. Յովհ. Թ. 39. 41. Գործ. Գ. 17. ԻԶ. 9.
ւ Հռովմ. Ե. 20. Ա Կորնթ. ԺԵ. 10.
¬ Բ Տիմ. Ա. 13.

է Ղու. Է. 47.
— Գլ. Գ. 1. Դ. 9. Բ Տիմ. Բ. 11. Տիտ. Գ. 8.
= Մատթ. Թ. 13. Մարկ. Բ. 17. Ղու. Ե. 32. ԺԹ. 10. Հռովմ. Ե. 8. Ա Յովհ. Գ. 5.
Հ Բ Կորնթ. Դ. 1.

ւ Գործ. ԺԳ. 39.
ւ Սաղ. Ժ. 16. ՃԽԵ. 1. 3. Դան. Է. 14. Գլ. Զ. 15, 16.
; Հռովմ. Ա. 23.
— Յովհ. Ա. 18. Եբր. ԺԱ. 27. Ա Յովհ. Դ. 12.
‡ Հռովմ. ԺԶ. 27. Յուդ. 25.

+ Ա Մնաց. ԻԹ. 11.
* Գլ. Զ. 13, 14. 20. Բ Տիմ. Բ. 2.
‡ Գլ. Դ. 14.
— Գլ. Զ. 12. Բ Տիմ. Բ. 3. Գ. 7.
‡ Գլ. Գ. 9.
‡ Գլ. Զ. 9.
¬ Բ Տիմ. Բ. 17.
ւ Բ Տիմ. Դ. 14.

սատանայի, զի խրատեսցին չհայհո-
յել ։

րանց մատնեցի ւ Սատանային, որ
խրատուլին ի չը հայհոյել ։

## ԳԼ. Բ

1 Եւ արդ աղաչեմ, նախ քան
զամենայն առնել աղօթս՝ խնդ-
րուածս՝ պաղատանս՝ գոհութիւնս
վասն ամենայն մարդկան ։
2 Մանաւանդ վասն թագաւորաց
և ամենայն իշխանաց․ զի խաղա-
ղութեամբ և հանդարտութեամբ
վարեսցուք զկեանս մեր, ամենայն
աստուածպաշտութեամբ և սրբու-
թեամբ ։
3 Զի այն է բարի և ընդունելի
առաջի Փրկչին մերոյ Աստուծոյ ։
4 Որ զամենայն մարդիկ կամի զի
կեցցեն՝ և ՚ի գիտութիւն ճշմար-
տութեան եկեսցեն ։
5 Զի մի է Աստուած, և մի միջ-
նորդ Աստուծոյ և մարդկան՝ մար-
դըն Յիսուս Քրիստոս ։
6 Որ ետ զանձն փրկանս ընդ ա-
մենեցուն՝ վկայութիւն ժամանակաց
իւրոց ։
7 Յոր եդայ ես քարոզ և առա-
քեալ․ ճշմարիտ ասեմ ՚ի Քրիստոս՝
և ոչ ստեմ, եղէ վարդապետ հե-
թանոսաց հաւատովք և ճշմար-
տութեամբ ։
8 Կամիմ՝ զի արք կայցեն յաղօ-
թըս յամենայն տեղիս․ բառնայցեն

1 Ասորհամար աղաչումեմ, որ ա-
մէնէցն առաջ աղօթք անելի,
խնդրուածք, աղաչանք, գոհու-
թիւն ամէն մարդկանց համար ․
2 Մանաւանդ – թագաւորներին
և ամէն իշխաններին բ համար․ որ
խաղաղութենով և հանդարտութե-
նով մեր կեանքը վարենք, ամէն
աստուածպաշտութենով և սրբու-
թենով ։
3 Ինչու որ նա է բարի և գ ըն-
դունելի մեր Փրկիչ Աստուծոյ դ ա-
ռաջին,
4 Որ կամենումէ՝ որ ամէն մար-
դիկ ե ազատին, և դէպի ճշմարտու-
թեան գիտութիւնը զ գան ։
5 Պատճառն որ մին Աստուած
է կայ, և մին միջնորդ Աստուծոյ
և մարդկանց մէջ՝ Յիսուս Քրիստոս
ը մարդը,
6 Որ իրեն անձրն ամէնին համար
փրկութեան գին թ տուաւ, որ վը-
կայութիւն ժ ըլլայ իրեն ի ժամանակ-
ներումը ․
7 Որ ես նորա քարոզիչ և ա-
ռաքեալ լ կարգուեցայ․ ճշմարիտն
եմ ասում Քրիստոսումը՝ և սուտ
չեմ խ խօսում․ ես էլայ ծ հեթանոս-
ների վարդապետ հաւատքով և
ճշմարտութենով ։
8 Ուրեմն կամենումեմ՝ որ մարդիկ
ամէն տեղ աղօթք կ անեն․ սուրբ

ւ Ա Կորնթ. Ե. 5։
ի Գործ. ԺԳ. 45։
—
– Եզրաս. Զ. 10։
Երեմ. ԻԹ. 7։
բ Հռովմ. ԺԳ. 1։
գ Հռովմ. ԺԲ. 2։
Գղ. Ե. 4։
դ Գղ. Ա. 1։ Բ Տիմ. Ա. 10։
ե Եզեկ. ԺԸ. 23։
Յովհ. Գ. 16։ 17։ Տիտ. 11։
Բ Պետ. Գ. 9։
զ Յովհ. ԺԷ. 3։ Բ Տիմ. Բ. 25։
է Հռովմ. Գ. 29, 30։ Ժ. 12։ Գաղ. Գ. 20։
ը Եբր. Ը. 6։ Թ. 15։
թ Մատթ. Ի. 28։
Մարկ. Ժ. 45։
Եփես. Ա. 7։
Տիտ. Բ. 14։
ժ Ա Կորնթ. Ա. 6։
Բ Թես. Ա. 10։
Բ Տիմ. Ա. 8։
ի Հռովմ. Ե. 6։
Գաղ. Դ. 4։
Եփես. Ա. 10։
Գ. 5։ Տիտ. Ա. 3։
լ Եփես. Գ. 7, 8։
Բ Տիմ. Ա. 11։
խ Հռովմ. Թ. 1։
ծ Հռովմ. ԺԱ. 13։ ԺԵ. 16։ Գաղ. Ա. 16։
կ Մաղ. Ա. 11։
Յովհ. Դ. 21։

զսուրբ *ձեռս 'ի վեր առանց բար-
կութեան եւ երկմտութեան ։
9 Նոյնպէս եւ կանայք 'ի զարդ
խոնարհութեան՝ ակնածութեամբ
եւ զգաստութեամբ զարդարել զան-
ձինս . մի 'ի հիւսս ոսկեմանս ըն-
դելուզեալս մարգարտով, կամ 'ի
հանդերձս պաճուճեալս .

10 Այլ որպէս վայելէ կանանց՝
զաստուածպաշտութիւն յանձնառե-
լոց գործովք բարութեան ։

11 Կին մարդ լռութեամբ ուսցի
ամենայն հնազանդութեամբ ։
12 Այլ ուսուցանել կնոջ մարդոյ
ոչ հրամայեմ, եւ ոչ ճոխանալ լի-
նել քան զայր մարդ . այլ 'ի լռու-
թեան կալ ։
13 Զի Ադամ նախ ստեղծաւ՝ եւ
ապա Եւայ ։
14 Եւ Ադամ ոչ պատրեցաւ՝ այլ
կինն պատրեցաւ եւ յանցեաւ ։
15 Բայց կեցցեն վասն որդեծնու-
թեանն՝ եթէ կացցեն 'ի հաւատս
եւ 'ի սէր եւ 'ի սրբութիւն պար-
կեշտութեամբ ։

ձեռներ վեր՝ բարձրացնեն առանց
բարկութեան եւ հ երկմտութեան ։
9 Այնպէս ալ կանայքը խոնար-
հութեան զարդարանքով ամօթ-
խածութեամբ եւ զգաստութեամբ
իրենց անձերը զարդարեն . չէ թէ
ոսկէ հիւսուածներով մարգարիտնե-
րով շարած՝ կամ պայծառ ձ շորե-
րով .
10 Բայց ինչպէս որ վայել է այն
կանանցն՝ որ աստուածապաշտու-
թիւնըն անձներըն են առել՝ բարի
ղ գործքերով ։
11 Կինը թող լռութեամբ սորվի՝
ամէն հնազանդութեամբ ։
12 Կնկան հրաման չեմ տալիր՝ որ
ճ սորվեցնէ, եւ ոչ ալ մարդուն ա-
ւելի խօսք խօսի, բայց որ լուռ
մ կենայ ։
13 Վասնզի որ Ադամ առաջ ըս-
տեղծուեցաւ՝ եւ յետոյ յ Եւան ։
14 Եւ Ադամ չը խաբուեցաւ՝ բայց
կինը խաբուեցաւ եւ մեղքն ն գործեց ։
15 Միայն թէ կայցի որդեծնու-
թեան համար՝ թէ որ կենայ հա-
ւատքով եւ սիրով եւ սրբութեամբ
պարկեշտութեան հետ ։

## ԳԼ. Գ

1 Հաւատարիմ է բանս . եթէ
ոք եպիսկոպոսութեան ցանկայ՝
բարւոյ գործոյ ցանկայ ։

2 Պարտ է եպիսկոպոսին անա-
րատ լինել, միոյ կնոջ այր, հեզ՝
ցած՝ պարկեշտ՝ հիւրասէր՝ ուսու-
ցիչ .
3 Մի թշնամանող, մի հարկա-
նող, այլ հանդարտ . մի կռւող,
մի արծաթասէր ։

1 Ճշմարիտ է այս շ խօսքս . թէ
որ մէկն եպիսկոպոսութեան ո ցան-
կանայ՝ մէկ բարի գործոյ է չ ցան-
կանում ։
2 Եպիսկոպոսին պէտք է որ ան-
արատ պ ըլլի, մէկ կնկան ջ մարդ,
հեզահոգի՝ խոնարհ՝ պարկեշտ՝ օ-
տարասէր՝ ռ սորվեցնող .
3 Չէ թէ նախատինք ս տուող,
եւ ոչ վ զարկող, բայց տ հանդարտ .
չէ թէ կռիւ անող, եւ ոչ ր արծա-
թասէր .

հ Սաղ. ՃԼԳ. 2 ։ Եսայ. Ա. 15 ։
ձ Ա Պետ. Գ. 3 ։
ղ Ա Պետ. Գ. 4 ։
ճ Ա Կորնթ. ԺԴ. 34 ։
մ Եփես. Ե. 24 ։
յ Ծննդ. Ա. 27 ։ Բ. 18. 22 ։ Ա Կորնթ. ԺԱ. 8, 9 ։
ն Ծննդ. Գ. 6 ։ Բ Կորնթ. ԺԱ. 3 ։
շ Գղ. Ա. 15 ։
ո Գործ. Ի. 28 ։ Փիլիպ. Ա. 1 ։
չ Եփես. Դ. 12 ։
պ Տիտ. Ա. 6, 7 ։
ջ Գղ. Ե. 9 ։
ռ Բ Տիմ. Բ. 24 ։
ս Համար. 8 ։ Տիտ. Ա. 7 ։
վ Բ Տիմ. Բ. 24 ։
տ Բ Տիմ. Բ. 25 ։
ր Ա Պետ. Ե. 2 ։

4 Զի իւրում տանն իսկ բարւոք
վերակացու լեալ իցէ ․ որդեակս
ունիցի, որ 'ի հնազանդութեան
կացցեն ամենայն պարկեշտու-
թեամբ ․
5 Ապա եթէ ոք իւրում տանն
վերակացու չգիտիցէ լինել, զիարդ
եկեղեցւոյ Աստուծոյ խնամակալ լի-
նիցի ․
6 Մի մատաղատունկ, զի մի հը-
պարտացեալ 'ի դատաստանս Սա-
տանայի անկանիցի ․

7 Այլ պարտ է նմա վկայութիւն
բարի եւ յարտաքնոցն ունել ․ զի
մի 'ի նախատինս անկանիցի՝ եւ յո-
րոգայթս Սատանայի ․
8 Նոյնպէս եւ զսարկաւագունս
պարկեշտս ․ մի երկբանս, մի՛ գի-
նեսէրս, մի զօշաքաղս ․

9 Այլ ունիցին զխորհուրդ հա-
ւատոյն սուրբ մտօք ․
10 Նոքանք նախ փորձեսցին, եւ
ապա 'ի պաշտօնն մատիցեն, զի ա-
նարատք իցեն ․
11 Նոյնպէս եւ կանայք նոցա
պարկեշտք ․ մի չարախօսք, հեզք՝
հաւատարիմք յամենայնի ․

12 Սարկաւագք լինիցին միոյ կնոջ
արք ․ որք որդւոց իւրեանց բարւոք
վերակացու լեալ իցեն, եւ տանց
իւրեանց ․
13 Զի որ բարւոքն պաշտիցեն,
աստիճան բարի անձանց իւրեանց
շահին, եւ բազում համարձակու-
թիւն 'ի հաւատսն՝ որ 'ի Քրիստոս
Յիսուս ․

14 Զայս գրեմ առ քեզ՝ զի ակն-
ունիմ 'ի մօտոյ գալ ․

4 Որ իսկ իրեն տանը բարի վե-
րակացու էլած լինի ․ որ որդիքները
ունենայ՝ որ հնազանդ են ամէն
է պարկեշտութենով ․

5 Բայց թէ որ մինը չը գիտենայ
իրեն տանը վերակացու լինել, նա
ինչպէս Աստուծոյ եկեղեցուն հո-
գաբարձու կը լինի ․
6 Ո՛չ թէ հաւատքը նոր եկած,
որ չը լինի՝ թէ գոռոզանայ եւ
Սատանայի դատաստանի մէջն
ընկնի ․
7 Բայց պէտք է նորան, որ դըր-
սեցիներից էլ բարի վկայութիւն է ու-
նենայ ․ որ նախատինքի եւ Սատա-
նայի որոգայթին մէջ ծ չընկնի ․
8 Այնպէս էլ սարկաւագները
պարկեշտ ե լինին ․ ոչ երկու երեսով
խօսող, ոչ գինեսէր, ոչ պիղծ շահ
ն սիրող ․
9 Բայց ծ հաւատքի խորհուրդը
սուրբ մտքով ծ ունենան ․
10 Իրենք առաջ թող փորձվին,
եւ յետոյ այն պաշտօնին մէջ մըտ-
նեն, որ անարատ լինին ․
11 Այնպէս էլ նորանց կանայքը՝
պարկեշտ ․ չէ թէ չարախօս, հե-
զահոգի՝ ամէն բանի մէջ հաւա-
տարիմ ․
12 Սարկաւագները մին կնկան
մարդիք լինին ․ որ իրենց որդոցը
բարի վերակացու էլած լինին, եւ
իրենց տներին ․
13 Ինչու որ նորանք՝ որ պաշտօնը
լաւ են կատարում, իրենց անձնե-
րին համար բարի աստիճան են շահ-
վում, եւ շատ համարձակութիւն
այն հաւատքումն՝ որ Քրիստոս Յի-
սուսումն ճ է ․
14 Սա գրումեմ քեզ՝ որ յոյս էլ
ունիմ թէ մօտիկ ժամանակումս
գամ ․

է Տիտ. Ա. 6.
ը Եսայ. ԾԶ. 12.
թ Գործ. ԻԲ. 12։
Ա Կորնթ. Ե. 12։
Ա Թես. Դ. 11։
ժ Գղ. Զ. 9։ Բ
Տիմ. Բ. 26։
ի Գործ. Զ. 3։
հ Ղև. Ժ. 9։ Եզեկ.
ԽԴ. 21։ Հա-
մար. 3։
ծ Գղ. Ա. 19։
ղ Տիտ. Բ. 3։
ճ Մատթ. ԻԵ. 21։

՛15 Ապա թէ յամիցեմ՝ զի գիտաս-
ցես, թէ որպէս պարտ իցէ քեզ 'ի
տան Աստուծոյ շրջել. որ է եկե-
ղեցի Աստուծոյ կենդանւոյ, սիւն
եւ հաստատութիւն ճշմարտութեան։

16 Եւ յայտնի իսկ մեծ է խոր-
հուրդն աստուածպաշտութեան. որ
երեւեցաւ մարմնով՝ արդարացաւ
Հոգւով՝ յայտնեցաւ հրեշտակաց՝
քարոզեցաւ 'ի հեթանոսս՝ հաւատա-
րիմ եղեւ յաշխարհի՝ եւ՝ վերացաւ
փառօք։

15 Բայց թէ որ ուշանամ՝ որ գի-
տնաս թէ ինչպէս պէտք է վար-
վիլ Աստուծոյ տանը ՛ մէջ. որ նա
կենդանի Աստուծոյ եկեղեցին է,
ճշմարտութեան սիւն եւ հաստա-
տութիւն։

16 Եւ յայտնի է՛ մեծ է Աստուա-
ծապաշտութեան խորհուրդը. որ նա
երեւցաւ յ մարմնով՝ արդարացաւ
ն Հոգւով՝ յայտնուեցաւ շ հրեշտակ-
ներին՝ քարոզուեցաւ ՛ – հեթանոս-
ներին՝ հաւատացուեցաւ չ աշխարհ-
քումս՝ եւ վերացաւ պ փառքով։

## ԳԼ. Դ

1 Այլ Հոգին Սուրբ յայտնապէս
ասէ. թէ 'ի ժամանակս յետինս՝
քակեսցին ոմանք 'ի հաւատոյն. եւ
հայեսցին յայսս մոլորութեան, եւ
'ի վարդապետութիւնս դիւաց,

2 Կեղծաւորութեամբ ստաբանք,
խարանեալք իւրեանց խղճիւն մտաց։

3 Որ արգելուցուն յամուսնանա-
լոյ, եւ մեկնեսցեն 'ի կերակրոց՝ զոր
Աստուած հաստատեաց 'ի վայելել
հաւատացելոց, եւ որք հասեալ ի-
ցեն 'ի ճշմարտութեանն վերայ։

4 Զի ամենայն արարած Աս-
տուծոյ՝ բարի են, եւ չիք ինչ խո-

1 Բայց Սուրբ ՛ Հոգին յայտնի
– ասում է, թէ յետին ժամանակնե-
րումը մէկ քանիսը հաւատքիցը բ կը
հեռանան. եւ մոլորութեան ÷ հո-
գիներին՝ եւ դեւերի վարդապե-
տութիւններին մտիկ փ կը տան,

2 Նորանց՝ որ կեղծաւորութենով
սուտ են ե խօսում, եւ իրենց խղճ-
մտանքովը տաղված շ են,

3 Որ պսակվելուցը ե կարգելեն,
եւ կը հրամայեն այն ը կերակուր-
ներիցն՝ որ Աստուած ստեղծեց՝ որ
նորանց բ վայելեն հաւատացեալ-
ները, եւ նորանք որ ճշմարտու-
թիւնը ճանաչել ծ են.

4 Պատճառն որ՝ Աստուծոյ ամէն
ստեղծվածները բարի են, եւ ոչ մէն

՛ Եփես. Բ. 21, 22.
Բ Տիմ. Բ. 20։
յ Յովհ. Ա. 14։ Ա
Յովհ. Ա. 2.
ն Մատթ. Գ. 16։
Յովհ. Ա. 32,
33։ ԺԵ. 26։
ԺԶ. 8, 9։ Հռ-
ոմ. Ա. 4։ Ա
Պետ. Գ. 18։ Ա
Յովհ. Ե. 6, 7։
շ Մատթ. ԻԸ. 2։
Մարկ. ԺԶ. 5։
Ղուկ. Բ. 13։
ԻԴ. 4։ Յովհ.
Ի. 12։ Եփես.
Գ. 10։ Ա Պետ.
Ա. 12։
– Գործ. Ժ. 34։
ԺԳ. 46. 48։
Գաղ. Բ. 8։
Եփես. Գ. 5, 6.
8։ Հռոմ. Ժ.
18։ Կող. Ա. 27,
28։ Գղ. Բ. 7։
չ Կող. Ա. 6. 23։
պ Ղուկ. ԻԴ. 51։
Գործ. Ա. 9։ Ա
Պետ. Գ. 22։
—
– Յովհ. ԺԶ. 13։
Բ Թես. Բ. 3։ Բ
Տիմ. Գ. 1. ա.
Բ Պետ. Գ. 3։
Ա Յովհ. Բ. 18։
Յուդ. 4. 18։
բ Ա Պետ. Ա. 20։
÷ Բ Տիմ. Գ. 13։
Բ Պետ. Բ. 1։
Յայտ. ԺԶ. 14։
փ Դան. ԺԱ. 35.
37։ 38։ Յայտ.
Թ. 20։
ե Մատթ. Ի. 15։
Հռոմ. ԺԶ. 18։
Բ Պետ. Բ. 3։
շ Եփես. Դ. 19։
ե Ա Կորնթ. Է. 28.
36. 38։ Կող. Բ.
20, 21։ Եբր.
ԺԳ. 4։
ը Հռոմ. ԺԴ. 3.
17։ Ա Կորնթ. Ը.
8։
բ Ծննդ. Ա. 29։
Թ. 3։
ծ Հռոմ. ԺԴ. 6
Ա Կորնթ. Ժ. 30։

տան · մանաւանդ որ գոհութեամբ
ընդունիցին ։
5 Զի սրբի բանիւն Աստուծոյ՝ և
աղօթիւք ։
6 Զայս խրատ տուեալ եղբարց՝
բարւոք պաշտօնեայ լինիցիս Քրիս-
տոսի Յիսուսի · սնանիցիս բանիւք
հաւատոց, և բարւոք վարդապե-
տութեամբն՝ զորոյ զհետեան իսկ ե-
ղեր ։
7 Այլ 'ի պիղծ բանից՝ և յա-
ռասպելաց պառաւանց հրաժարեա-
ջիր · բայց կրթեա զանձն քո յաստ-
ուածպաշտութիւն ։
8 Զի մարմնոյ կրթութիւն առ
սակաւ ինչ օգտակար է · իսկ աստ-
ուածպաշտութիւն առ ամենայն ինչ
օգտակար է · և զաւետիս կենաց
ունի զարդիս և զհանդերձելոցն ։
9 Հաւատարիմ է բանս՝ և ամե-
նայն ընդունելութեան արժանի է ։
10 Զի 'ի սոյն իսկ վաստակեմք՝ և
նախատինս յանձն առնումք · զի
յուսացեալ եմք յԱստուած կենդա-
նի, որ է Փրկիչ ամենայն մարդ-
կան, մանաւանդ հաւատացելոց ։
11 Պատուէր տաջիր զայդ՝ և ու-
սուցանիջիր ։
12 Զի մի ոք զքո մանկութիւնդ
արհամարհիցէ · այլ օրինակ լինիջիր
հաւատացելոց՝ բանիւք՝ գնացիւք՝
սիրով՝ հաւատովք՝ սրբութեամբ ։
13 Մինչև գամ ես, միտ դիր ըն-
թերցուածոց մխիթարութեան՝ վար-
դապետութեան ։
14 Մի անփոյթ առներ զշնորհա-

բան անարգելի չէ · մանաւանդ այն
որ գոհութենով է ի ընդունուած ։
5 Ինչու որ՝ Աստուծոյ խօսքովը
ու աղօթքով սրբվումէ ։
6 Այս խրատս որ եղբայրներին
տաս՝ Քրիստոսի Յիսուսի բարի պաշ-
տօնեայ կը լինիս, կը մեծանաս և
կալրիս հաւատքի խօսքերովը, և
այն բարի վարդապետութենովը՝ որ
նորան լ հետևեցիր ։
7 Բայց պիղծ խօսքերիցն ու պա-
ռաւների առասպելներիցը յետ խ կաց ·
այլ վարժացրու քո անձդ աստուա-
ծապաշտութենումը ·
8 Ինչու որ՝ մարմնոյ վարժու-
թիւնը քիչ բանի համար օգուտ
ծ ունի · բայց աստուածապաշտու-
թիւնն ամէն բանի համար օգուտ
կ ունի · և հիմիկվան և նոր գա-
լու կենաց աւետիքն հ ունի ։
9 Ճշմարիտ է այս բանս՝ և ամէն
կողմանէ արժանի ձ ընդունվելոյ ·
10 Ինչու որ՝ իսկ սորահամար ենք
աշխատում և նախատինք ղ քա-
շում · որ կենդանի Աստուծոյ վե-
րայ ենք դրել ճ յոյսն, որ նա Փըր-
կիչ է ամէն մարդկանց, և մանա-
ւանդ մ հաւատացեալներին ։
11 Այդ բանդ պատուիրէ և յ սո-
վորցրու ։
12 Զէ լինի որ մինը քո տղայու-
թիւնդ ն անարգէ · բայց օրինակ
լինիր հաւատացեալներին խօսքե-
րով, վարքով, սիրով, հաւատքով,
շ սրբութենով ։
13 Մինչև որ գամ՝ միտք դիր
կարդացմունքին, յորդորմունքին
և վարդապետութեանը ։
14 Անհոգ մի լինիր այն շնորհքին

ի Հռովմ. ԺԴ. 14. 20. Ա Կորնթ. Ժ. 25. Տիտ. Ա. 15.
լ Բ Տիմ. Գ. 14, 15.
խ Գղ. Ա. 4. Ջ. 20. Բ Տիմ. Բ. 16. 23. Գ. 4. Տիտ. Ա. 14.
ծ Ա Կորնթ. Ը. 8. Կող. Բ. 23.
կ Գղ. Ջ. 6.
հ Սաղ. ԼԷ. 4. ՂԳ. 11. ՃԺԲ. 2, 3. ՃԽԵ. 19. Մատթ. Զ. 33. ԺԹ. 29. Մարկ. Ժ. 30. Հռովմ. Ը. 28.
ձ Գղ. Ա. 15.
ղ Ա Կորնթ. Գ. 11, 12.
ճ Գղ. Ջ. 17.
մ Սաղ. ԼՁ. 6. ՃԵ. 2. 6, Ճ.
յ Գղ. Ջ. 2.
ն Ա Կորնթ. ԺՁ. 11. Տիտ. Բ. 15.
շ Տիտ. Բ. 7. Ա Պետ. Ե. 3.

ցդ՝ որ ՚ի քեզ էն, որ տուաւ քեզ մարգարէութեամբ ՚ի ձեռնադրութենէ երիցութեան։

15 Զայդ խորհեաց՝ եւ ՚ի դմին կանխեսջիր. զի քո յառաջադիմութիւնդ ամենեցուն յայտնի լիցի։

16 Զգոյշ լինիջիր անձին եւ վարդապետութեանդ՝ եւ ՚ի դմին յամեսջիր. զայդ եթէ առնիցես՝ եւ զանձն ապրեցուցես, եւ զայնոսիկ՝ որ քեզն լսիցեն։

համար՝ որ քեզանում ա է. որ տրուաւ քեզ բ մարգարէութենով երէցների գ ձեռնադրութենից։

15 Դա մտածէ՛ գործածում ջանք արա. որ քո առաջանալդ ամէնին յայտնի լինի։

16 Զգոյշ կաց անձիդ եւ վարդապետութեանդ՝ եւ գործածում՝ մնա. դա թէ որ անես՝ քո անձդ զ կապրեցնես, եւ նորանց էլ՝ որ քեզ է կըլսեն։

## ԳԼ. Ե

1 Զծերս մի՛ պատուհասեսցես, այլ մխիթարեսջիր իբրեւ զհայր, զերիտասարդս իբրեւ զեղբարս.

2 Զպառաւունս իբրեւ զմարս, զմանկամարդս իբրեւ զքորս՝ ամենայն սրբութեամբ։

3 Զայրիս պատուեա՛, որ ստոյգ այրիքն իցեն։

4 Ապա թէ ոք այրի՝ որդիս եւ թոռունս ունիցի, ուսանիցին նախ իւրեանց տանց բարի առնել՝ եւ զփոխարէնս հատուցանել ծնողացն. զի այն է բարի՝ եւ ընդունելի առաջի Աստուծոյ։

5 Իսկ որ ճշմարիտն այրին իցէ. եւ միայնացեալ յուսացեալ յԱստուած, եւ կանխեալ յաղօթս եւ ՚ի խնդրուածս զցայգ եւ զցերեկ։

6 Իսկ զիրգ այրին՝ կենդանւոյն մեռեալ է։

7 Զայս պատուիրեա՛ զի անարատք իցեն։

8 Իսկ եթէ ոք իւրոց՝ եւ մանաւանդ ընտանեացն խնամ ոչ տանիցի, ՚ի հաւատոյն ուրացեալ է՝

1 Ծերին սաստիկ մի յանդիմանիր, բայց յորդորէ նորան ինչպէս ա հօր. երիտասարդներին՝ ինչպէս եղբայրներին.

2 Պառաւներին՝ ինչպէս մայրեր. մատղաշ կանանց ինչպէս քոյրեր՝ ամէն սրբութենով։

3 Որբեւէրիներին պատուիր՝ նորանց որ ճշմարիտ որբեւէրի բ են։

4 Բայց թէ որ մինն որբեւէրի՝ որդիք եւ թոռներ ունենայ, թող նորանք գ առաջ սովորին իրենց տանը բարի անել՝ եւ ծնողաց փոխ հատուցանել. ինչու որ նա է բարի՝ եւ Աստուծոյ առաջին դ ընդունելի։

5 Բայց նա՝ որ ճշմարիտ որբեւէրի է եւ միայնակ կացած՝ յոյսն Աստուծոյ վերայ է ե դնում, եւ գիշեր եւ զ ցերեկ աղօթքին եւ աղաչանքին է հետեւում։

6 Այլ փափկասէր որբեւէրին՝ հենց կենդանի մեռած ը է։

7 Սա պատուիրէ՛ որ անարատ թ լինին։

8 Բայց թէ որ մինն իւրեններին՝ եւ մանաւանդ ընտանիքներին համար հոգս ժ չունենայ, նա հաւատա-

ա Բ Տիմ. Ա. 6։
բ Գլ. Ա. 18։
գ Գործ. Զ. 6։ Ը. 17։ ԺԳ. 3։ ԺԹ. 6։ Գլ. Ե. 22։
դ Բ Տիմ. Ա. 6։
ե Գործ. Ի. 28։
զ Եզեկ. ԼԳ. 9։
է Հռոմ. ԺԱ. 14։ Ա Կորնթ. Թ. 22։ Յակ. Ե. 20։

—

ա Ղեւ. ԺԹ. 32։
բ Համար. Ե. 16։
գ Ծննդ. ԽԵ. 10։ 11։ Մատթ. ԺԵ. 4։ Եփես. Զ. 1. 2։
դ Գլ. Բ. 3։
ե Ա Կորնթ. Է. 32։
զ Գործ. ԻԶ. 7։
է Ղուկ. Բ. 37։ ԺԸ. 1։
ը Յակ. Ե. 5։
թ Գլ. Ա. 3։ Դ. 11։ Զ. 17։
ժ Եսայ. ԾԸ. 7։ Գաղ. Զ. 10։

եւ չար եւս քան զանհաւատն է ։

9 Այրի ընդ այրիս անուանեսցի, որ չիցէ պակաս 'ի վաթսնամենից, միոյ առն կին լեալ ·

10 Եւ 'ի գործս բարիս վկայեալ, եթէ մանկունս սնուցեալ իցէ, եթէ զհիւրս ընկալեալ իցէ, ի եթէ զսրբոց զոտս լուացեալ իցէ, եթէ նեղելոց բաւական լեալ իցէ, եթէ զամենայն գործոց բարեաց զհետ երթեալ իցէ ։

11 Այլ 'ի մանկամարդաց այրեացն հրաժարեա, զի յորժամ խայտան զՔրիստոսիւ՝ ամուսնանալ կամին ։

12 Իսկ զդատաստանս ընդունին, զի զառաջին հաւատն արհամարհեցին ։

13 Միանգամայն եւ դատարկաձանձք ուսանին՝ շրջօղք տանէ 'ի տուն · եւ ոչ միայն դատարկք՝ այլ եւ փաղփուք եւ հետաքրքիրք · եւ խօսին՝ որ ինչ ոչ է պիտոյ ։

14 Կամիմ զմանկամարդացդ ամուսնանալ, որդիս ծնանել, տանաբարս լինել, եւ մի ինչ պատճառս տալ 'ի հակառակորդին 'ի հայհոյութեան աղագս ։

15 Զի արդէն իսկ ոմանք խոտորեցան զհետ Սատանայի ։

16 Եթէ ոք հաւատացեալ՝ այրիս ունիցի՝ բաւական լիցի նոցա, եւ մի ծանրասցի եկեղեցւոյն · զի ճշմարիտ այրեացն բաւական լինիցի ։

17 Որ բարւոք վերակացու լինին երիցունք՝ կրկին պատուոյ արժանի

քին ուրացած է է՝ եւ անհաւատներէն ալ չար ը է ։

9 Այն որբեւէրին որբեւէրիներու կարգին մէջ դասուի՝ որ վաթսուն տարուց պակաս չէ՝ եւ մէն մարդոյ կին եղած թ է ·

10 Եւ բարի գործքերով վկայուած է՝ որ երախաներ մեծցուցած լինի, որ օտարներին ընդունած ժ լինի, որ սրբերու ոտներին լուացած ի լինի, որ նեղացածներին ձեռնտուած լինի, որ ամէն բարի գործքերին հետեւած լինի ։

11 Բայց մատղաշ որբեւէրիներին յետ կաց · ինչու որ երբոր ուրախութենով աւելնանումին՝ Քրիստոսին հակառակ՝ կամենումին պսակվիլ,

12 Եւ դատաստան են ընդունում իրենց վերայ՝ որ առաջին հաւատքը ձգեցին ։

13 Սրա վերայ էլ գործքից դատարկ մնալ են սովորում՝ տանից տուն մանդալով · եւ չէ թէ միայն դատարկ՝ բայց էլ շատախօս եւ հետաքրքիր · եւ խօսումեն՝ ինչ որ պէտք հ չէ ։

14 Կամենումեմ որ մատղաշ որբեւէրիները պսակվին, որդիք ծնին, տանտիկին ձ լինին · եւ հակառակորդին բնաւ պատճառ չը տան հայհոյանք ղ անելոյ ։

15 Ինչու որ՝ իսկ հիմիկ մինքանիսը ճանապարհից դուրս գնացին Սատանային ետեւէն ։

16 Թէ որ մէն հաւատացեալ՝ որբեւէրիներ ունենայ՝ նա թող հոգս անէ նորանց համար, եւ եկեղեցին ծանրութիւն չը տայ · որ ճշմարիտ որբեւէրիներին բաւական ճ լինի ։

17 Երէցները որ լաւ վերակացութիւն են մ անում՝ թող երկու պա–

է Բ Տիմ. Գ. 5։ Տիտ. Ա. 16։
ը Մատթ. ԺԸ. 17։
թ Ղու. Բ. 36. Գլ. Գ. 2։
ժ Գործ. ԺԶ. 15։ Եբր. ԺԳ. 2։ Ա Պետ. Դ. 9։
ի Ծննդ. ԺԸ. 4։ ԺԹ. 2։ Ղու. Է. 38. 44։ Յովհ. ԺԳ. 5. 14։
հ Բ Թես. Գ. 11։
ձ Ա Կորնթ. Է. 9։
ղ Գլ. Զ. 1։ Տիտ. Բ 8։
ճ Համար. 3 5։
մ Հռովմ. ԺԲ. 8։ Ա Կորնթ. Թ. 10. 14։ Գաղ. Զ. 6։ Փիլիպ. Բ. 29։ Ա Թես. Ե. 12. 13։ Եբր. ԺԳ. 7. 17։

եղիցին · մանաւանդ որ աշխատիցին
բանիւ եւ վարդապետութեամբ ։

18 Բանզի ասէ գիր · Մի կապես-
ցես զցռուկ եզին կալոտւոյ · եւ
Արժանի է մշակն վարձու իւրոյ ։

19 Զերիցուէ չարախօսութիւն մի
ընդունիցիս · բայց եթէ երկուք՝ եւ
երիւք վկայիւք ։
20 Իսկ որ մեղանչենն՝ առաջի ա-
մենեցուն յանդիմանեա , զի եւ
այլքն երկիցեն ։
21 Վկայութիւն դնեմ առաջի Ա-
ստուծոյ եւ Յիսուսի Քրիստոսի՝ եւ
ընտրելոց հրեշտակաց , զի զայդ
պահեսցես առանց մտահաճութեան ·
մի ինչ առնել աչառանօք ։

22 Ձեռս վաղվաղակի յուրուք վե-
րայ մի դնիցես , եւ մի կցորդ լի-
նիցիս մեղաց օտարաց · զանձն քո
սուրբ պահեսջիր ։
23 Այսուհետեւ մի ջուր ՚եւ եթ
ըմպիցես՝ այլ սակաւիկ մի եւ գինի
խառնեսջիր վասն ստամոքսի եւ բա-
զում հիւանդութեանց ։
24 Են մարդք՝ որոց մեղքն յայտ-
նի են՝ եւ յառաջագոյն հասեալ ՚ի
դատաստան , եւ են՝ որոց զհետ եր-
թան ։
25 Նոյնպէս եւ բարի գործքն յայտ-
նի են · եւ որ այլ ազգ եւս ինչ
իցեն՝ թաքչել ոչ կարեն ։

տիկ պատուոյ արժանի լինին · եւ
մանաւանդ նորանք՝ որ խօսքով եւ
վարդապետութեամբ են ՚ աշխա-
տում ։
18 Պատճառն որ գիրքն ասում է ·
Կալսին մէջն աշխատող եզի բերա-
նը մի ՚ կապիր · եւ թէ Մշակըն
արժանի է իւրեն ՚ վարձքին ։
19 Երիցու վերայ չարախօսութիւն
մի ընդունիր · բայց միայն երկու
կամ երեք ՚ վկայով ։
20 Իսկ նորանք՝ որ մեղք են գոր-
ծում , ամէնի առաջին ՚ յանդիմա-
նէ , որ ուրիշներն էլ ՚ վախենան ։
21 Վկայութիւն եմ դնում Աստու-
ծոյ եւ Յիսուսի Քրիստոսի եւ ըն-
տրուած հրեշտակներին առաջին , որ
դա պահես առանց քո մտքի հաճո-
յութեան նայելոյ · ոչ մին բան չա-
նես ՚ երեսպաշտութեամբ ։
22 Ձեռն մի դներ շուտով մինի
՚ վերայ , եւ ուրիշների մեղացը
մասնակից՝ մի լինիր · քո անձըդ
սուրբ ՚ պահէ ։
23 Այսուհետեւ միմիակ ջուր չը-
խմես , բայց մինչեւ գինի էլ խառ-
նէ քո ստամոքսի եւ շուտ շուտ
հիւանդութիւններից ՚ համար ։
24 Կան մարդիկ՝ որ նորանց մեղ-
քերն յայտնի են , եւ առաջ դա-
տաստանի մէջ ՚ հասած · եւ կան
էլ որ ետեւէն են գալիս ։
25 Այնպէս էլ բարի գործքերն
յայտնի են · եւ ուրիշ կերպ էլ՝ որ
լինին՝ չեն կարող ծածուկ կենալ ։

## ԳԼ. Զ

1 Որ միանգամ ընդ լծով ծառա-
յութեան իցեն , զիւրաքանչիւր
տեարս պատուոյ արժանի համարես-

1 Նորանք որ ծառայութեան լը-
ծի տակն են՝ ամէն մէկը թող ի-
րենց տէրերին պատուոյ արժանի ՚ հա-

յ Գործ . ԻԸ . 10 ։ ն Բ Օրին . ԻԵ . 4 ։ Ա Կորնթ . Թ . 9 ։ շ Ղեւ . ԺԹ . 13 ։ Բ Օրին . ԻԴ . 14 ։ 15 ։ Մատթ . Ժ . 10 ։ Ղուկ . Ժ . 7 ։

ո Բ Օրին . ԺԹ . 15 ։ չ Գաղ . Բ . 11 . 14 ։ Տիտ . Ա . 13 ։ պ Բ Օրին . ԺԳ . 11 ։ ջ Ղւ . Զ . 13 ։ Բ Տիմ . Բ . 14 ։ Դ . 1 ։

ռ Գործ . Զ . 6 ։ ԺԳ . 3 ։ Գլ . Դ . 14 ։ Բ Տիմ . Ա . 6 ։ ս Բ Յովհ . 11 ։ վ Սաղ . ՃԴ . 15 ։ տ Գաղ . Ե . 19 ։

ր Եփես . Զ . 5 ։ Կող . Գ . 22 ։ Տիտ . Բ . 9 ։ Ա Պետ . Բ . 18 ։

ցեն ․ զի մի անուանն Աստուծոյ եւ վարդապետութիւնն հայհոյեսցի ։

2 Իսկ որ հաւատացեալ տեարս ունիցին՝ մի արհամարհեսցեն , զի եղբարք են ․ այլ առաւել ծառայեսցեն՝ զի հաւատացեալք են եւ սիրունք ․ որք զբարերարութիւն յանձինս ունիցին ․ զայս ուսուցանիջիր՝ եւ մխիթարեսջիր ։

3 Իսկ եթէ ոք այլազգ ինչ ուսուցանիցէ , եւ ոչ անսայցէ ողջմտութեան բանից Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի , եւ ըստ աստուածպաշտութեան վարդապետութեանն ։

4 Այնպիսին հպարտացեալ է , եւ ոչինչ ոչ գիտէ ․ այլ տապի ՚ի խնդիրս եւ ՚ի բանս հակառակութեան ․ ուստի լինին նախանձ՝ հեռ՝ հայհոյութիւն՝ կարծիք չարեաց ,

5 Խարդախութիւնք՝ ապականելոց մտաց մարդկան՝ եւ օտարացելոց ՚ի ճշմարտութենէ անտի , որ շահավաճառ համարին զաստուածպաշտութիւն ․ բայց դու մերժեսջիր յայնպիսեացն ։

6 Այլ շահավաճառ մեծ աստուածպաշտութիւն է՝ բաւականութեամբ հանդերձ ։

7 Զի ոչ բերաք ինչ յաշխարհս՝ եւ ոչ տանել ինչ կարասցուք ։

8 Այլ ունիմք կերակուր եւ հանդերձս , եւ այնու շատասցուք ։

9 Իսկ որք կամին մեծանալ՝ ան-

մարեն ․ որ Աստուծոյ անուանն ու վարդապետութիւնը ե չը հայհոյուի ։

2 Բայց նորանք որ հաւատացեալ տէրեր ունին՝ չը լինի որ անարգեն , նորահամար որ եղբարք զ են ․ բայց էլ աւելի ծառայութիւն անեն , նորահամար՝ որ հաւատացեալ եւ սիրելի են , որ բարերարութեանը մասնակից են ․ աս սովորցրու եւ է յորդորէ ։

3 Բայց թէ որ մէկն՝ ուրիշ կերպով ը սովորցնէ՝ եւ մտիկ չը տայ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ողջամիտ թ խօսքերին , եւ այն վարդապետութեանն՝ որ աստուածպաշտութեանը ժ կը վայելէ ։

4 Այնպիսի մարդը գոռոզացած է , եւ բնաւ բան չի ի գիտում ․ բայց այրվում է վիճաբանութիւններով եւ հակառակութեան խօսքերով , որ նորանից լինում է նախանձութիւն , կռիւ , հայհոյութիւններ , չար խ կարծիքներ ,

5 ծ Խարդախութիւններ մարդկանց՝ որ մտքով ապականված եւ ճշմարտութենից օտարացած են ․ որ աստուածապաշտութիւնը շահեկան արհեստ են կ համարում ․ բայց դու յետ քաշվէ հ այնպիսիներից ։

6 Սակայն մեծ շահ է աստուածապաշտութիւնը՝ բաւականութեան ձ հետ ։

7 Պատճառն որ՝ ոչ մին բան չենք բերել այս աշխարհքս՝ եւ էլ չենք կարենալ մին բան դուրս ղ տանել ։

8 Բայց թէ որ կերակուր եւ շորեր ունինք , էլ նորանով բաւական ճ լինինք ։

9 Իսկ նորանք որ կամենում են

ե Եսայ. ԾԲ. 5. Հռովմ. Բ. 24. Տիտ. Բ. 5. 8.
զ Կող. Գ. 1.
է Գլ. Գ. 11.
ը Գլ. Ա. 3.
թ Գլ. Ա. 10. Բ Տիմ. Ա. 13. Գ. 3. Տիտ. Ա. 9.
ժ Տիտ. Ա. 1.
ի Ա Կորնթ. Ը. 2. Գլ. Ա. 7.
լ Գլ. Ա. 4. Բ Տիմ. Բ. 23. Տիտ. Գ. 9.
խ Գլ. Ա. 6.
ծ Բ Տիմ. Գ. 8.
կ Տիտ. Ա. 11. Բ Պետ. Բ. 3.
հ Հռովմ. ԺԶ. 17. Բ Տիմ. Գ. 5.
ձ Սաղ. ԼԶ. 16. Առակ. ԺԵ. 16. ԺԶ. 8. Եբր. ԺԳ. 5.
ղ Յոբ. Ա. 21. Սաղ. ԽԸ. 17. Առակ. ԻԷ. 24. Ժող. Ե. 15.
ճ Ծննդ. ԻԸ. 20. Եբր. ԺԳ. 5.

կամին 'ի փորձութիւն և յորոգայթ, և 'ի բազում ցանկութիւնս անմիտս և վնասակարս. որք ընկղմեն զմարդիկ 'ի սատակումն և 'ի կորուստ ։

10 Զի արմատ ամենայն չարեաց արծաթսիրութիւն է. որում ոմանց ցանկացեալ՝ վրիպեցան 'ի հաւատոյն, և զանձինս արկին ընդ բազում ցաւովք ։

11 Այլ դու ով մարդ Աստուծոյ՝ փախիր յայնցանէ, և երթ զհետ արդարութեան՝ զաստուածպաշտութեան՝ զհաւատոյ՝ զսիրոյ՝ զհամբերութեան՝ զհեզութեան ։

12 Եւ մարտիր զբարւոք մարտն հաւատոյ, և բուռն հար զկենացն յաւիտենականաց՝ յոր կոչեցար'ն, և դաւանեցեր զբարւոք դաւանութիւնն առաջի բազում վկայից ։

13 Պատուիրեմ քեզ առաջի Աստուծոյ՝ որ կենդանի առնէ զամենայն, և Յիսուսի Քրիստոսի՝ որ վկայեաց առաջի Պոնտացւոյ Պիղատոսի զբարւոք դաւանութիւնն .

14 Պահել քեզ զպատուիրանն անբիծ՝ անարատ, մինչև 'ի յայտնութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

15 Զոր յիւր ժամանակի ցուցցէ Երանելին՝ և միայն Հզօր, Թագաւոր թագաւորաց և Տէր տերանց ։

16 Որ միայն ունի զանմահութիւն՝ բնակեալ 'ի լոյս անմատոյց . զոր ոչ ոք տեսեալ 'ի մարդկանէ՝ և ոչ տե-

հարստանալ՝ յ փորձութեան և որոգայթի և շատ անմիտ և վնասակար ցանկութիւնների մէջ են ընկնում . որ մարդկանց սատակման և կորստեան մէջ ն ձգում ։

10 Պատճառն որ՝ ամէն չարի արմատն արծաթի սէրն ո է . որ մին քանիսը ցանկացան նորան՝ և հաւատքիցը թերվեցան, և իրենց անձները շատ ցաւի մէջ ձգեցին ։

11 Բայց չ դու ով Աստուծոյ մարդ՝ փախիր նորանցից, և հետևէ արդարութեան, աստուածպաշտութեան, հաւատքին, սիրոյն, համբերութեան, պ հեզութեան ։

12 Եւ պատերազմէ հաւատքի բարի ջ պատերազմովը, և պինդ բռնէ յաւիտենական կեանքըն՝ որ նորա մէջ ռ կանչվեցար, և դաւանեցիր բարի դաւանութիւն շատ վկաների ս առաջին ։

13 Պատուիրում եմ քեզ Աստուծոյ վ առաջին՝ որ ամէն բան կենդանի է տ անում, և Յիսուսի Քրիստոսի առաջին՝ որ բարի դաւանութիւն վկայեց Պոնտացի Պիղատոսի ր առաջին .

14 Որ դու պատուիրանքը մաքուր և անարատ պահես, մինչև մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ց յայտնութիւնը .

15 Որ նորան իրեն ժամանակումը ցոյց կըտայ այն Երանելին՝ և մինակ ւ Զօրաւորը, թագաւորների Թագաւորը և տէրերի փ Տէրը .

16 Որ նա մինակ անմահութիւն ունի՝ անմօտենալի լուսոյ մէջ ք բընակված . որ մարդկանցից ոչ մինը

յ Առակ. ԻԵ. 27. Ի 21. ԻԸ. 20. Մատթ. ԻԳ. 22. Եփ. Ե. 1.
ն Գղ. Գ. 7.
շ Գղ. Ա. 19.
ո Եկեղ. ԻԳ. 8. Բ Օրին. ԺԶ. 19.
չ Բ Տիմ. Բ. 22.
պ Բ Օրին. ԼԳ. 1. Բ Տիմ. Գ. 17.
ջ Ա Կորնթ. Թ. 25. 26. Գղ. Ա. 18. Բ Տիմ. Դ. 7.
ռ Փիլիպ. Գ. 12. 14. Հռոմ. 19.
ս Եբր. Ժ. 23.
վ Գղ. Ե. 21.
տ Բ Օրին. ԼԲ. 39. Ա Թագ. Բ. 6. Յովհ. Ե. 21.
ր Մատթ. ԻԷ. 11. Յովհ. ԺԸ. 37. Յայտ. Ա. 5. Գղ. 14.
ց Փիլիպ. Ա. 6. 10. Ա Թես. Գ. 13. Ե. 23.
ւ Գղ. Ա. 11. 17.
փ Յայտ. ԺԷ. 14. ԺԹ. 16.
ք Գղ. Ա. 17.

տեսանել կարող է. որում պատիւ և զօրութիւն յաւիտեանս, ամէն։

17 Մեծատանց՝ որ են յայսմ աշխարհի՝ պատուէր տուջիր՝ մի հպարտանալ և մի յուսալ 'ի մեծութիւն մնացուն, այլ յԱստուած՝ որ տայ մեզ զամենայն առատապէս 'ի վայելել։

18 Զբարիս գործել, մեծանալ գործովք բարութեան, առատս սփռունս, հաղորդս լինել։

19 Գանձել անձանց հիմն բարի 'ի հանդերձեալսն. զի բուռն հարկանիցեն զճշմարիտ կենացն։

20 Ո՛վ Տիմոթէէ պահեա զաւանդդըն՝ խոտորեալ 'ի պղծոց և 'ի նորաձայն բանից և 'ի հակառակութենէ և 'ի մոլարանուն գիտութենէ։

21 Զոր ոմանց յանձն առեալ՝ վրիպեցան 'ի հաւատոց անտի. շնորհք ընդ քեզ. ամէն։

չը տեսաւ նորան՝ և ոչ էլ կարող է ։ տեսնել. նորան պատիւ և զօրութիւն յաւիտեանս, — ամէն։

17 Հարուստներին՝ որ այս աշխարհումս են՝ պատուիրիր, որ չըգոռոզանան՝ և ունայն մեծութեան ‡ վերայ յոյսը † չը դնեն, բայց Աստուծոյ * վերայ՝ որ ամէն բան տալիս է մեզ լիութեամբ՝ որ ‡ վայելենք.

18 Որ բարի գործեն, բարի գործքերով — հարուստանան, ‡ առատաձեռք, սիրելի, հաղորդող ‡ լինին։

19 Իրենց անձներին համար բարի հիմն դիզեն նոր ‡ եկողներումը. որ ճշմարիտ կեանքը ձեռք ‡ բերեն։

20 Ո՛վ Տիմոթէէ պահէ ‡ աւանդը. և յետ կաց պիղծ և նորաձայն խօսքերիցն ու սուտ անուն ունող գիտութեան ‡ հակառակութիւններիցը.

21 Որ նորան միքանիսն ընդունեցին՝ և հաւատքիցը ։ թերացան. շնորհքը քեզ հետ լինի. ամէն։

Տիմոթէոսին գրած առաջին թուղթը գրուեցաւ Լաոդիկէէն քաղաքէն՝ որ Պակատիանոսի մայրաքաղաքն է։

# ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

## ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԵՐԿՐՈՐԴ

---

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 ՊՕՂՈՍ առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամօքն Աստուծոյ, ըստ

1 ՊՕՂՈՍ Յիսուսի Քրիստոսի առաքեալ Աստուծոյ — կամքովը,

ɜ Ելից. ԼԳ. 20. Յովհ. Զ. 46.
— Եփես. Գ. 21. Փիլիպ. Դ. 20. Յուդ. 25. Յայտ. Ա. 6. Դ. 11. Ե. 21.
‡ Առակ. ԻԳ. 5.
† Յոբ. ԼԱ. 24. Սաղ. ԾԲ. 7. ԿԲ. 10. Մարկ. Ժ. 24. Ղուկ. ԺԲ. 21.
* Ա Թես. Ա. 9. Գլ. Գ. 15. Դ. 10.
‡ Գործ. ԺԴ. 16. ԺԷ. 25.
— Ղուկ. ԺԲ. 21. Գլ. Ե. 10. Տիտ. Գ. 8. Յակ. Բ. 5.
‡ Հռովմ. ԺԲ. 13.
‡ Գաղ. Զ. 6. Եբր. ԺԳ. 16.
‡ Մատթ. Զ. 20. ԺԹ. 21. Ղուկ. ԺԲ 33. ԺԶ. 9.
‡ Համար. 12.
‡ Բ Տիմ. Ա. 14. Տիտ. Ա. 9. Յայտ. Գ. 3.
‡ Գլ. Ա. 4. 6. Դ. 7. Բ Տիմ. Բ. 14. 16. 23. Տիտ. Ա. 14. Գ 9.
‡ Գլ. Ա. 6. 19. Բ Տիմ. Բ. 18.

—

— Բ Կորնթ. Ա. 1.

աւետեաց կենացն՝ որ ՚ի Քրիստոս Յիսուս ։

2 Տիմոթեայ որդւոյ սիրելւոյ՝ շնորհք ողորմութիւն եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ՝ եւ ՚ի Քրիստոսէ Յիսուսէ Տեառնէ մերմէ ։

3 Շնորհ ունիմ Աստուծոյ՝ զոր պաշտեմն ՚ի նախնեաց մտօք սրբովք, իբրեւ զի անդադար ունիմ զքէն յիշատակ յաղօթս իմ զցայգ եւ զցերեկ ։

4 Ցանկացեալ եմ տեսանել զքեզ, յիշատակեալ զարտասուսն քո՝ զի լցայց ուրախութեամբ ։

5 Զմտաւ ածեալ զանխաբ հաւատսն՝ որ են ՚ի քեզ. որ յառաջագոյն բնակեցաւ ՚ի հանի քում Լաւիդեայ, եւ մօր քում Եւնիկեայ. հաստատեալ եմ՝ թէ եւ ՚ի քեզ է ։

6 Վասն որոյ յիշեցուցանեմ քեզ արծարծել զշնորհսն Աստուծոյ՝ որ են ՚ի քեզ ՚ի ձեռնադրութենէ իմմէ ։

7 Զի ոչ ետ մեզ Աստուած հոգի վեհերոտութեան, այլ զօրութեան եւ սիրոյ եւ զգաստութեան ։

8 Մի այսուհետեւ ամօթ համարիցիս զվկայութիւն Տեառն մերոյ՝ եւ մի զիս զկապեալ նորա. այլ կցորդ լեր չարչարանաց աւետարանին՝ ըստ զօրութեանն Աստուծոյ ։

9 Որ փրկեաց զմեզ, եւ կոչեաց ՚ի կոչումն սուրբ ոչ ըստ գործոց մերոց՝ այլ ըստ կամաց յառաջա-

կեանքի աւետիքին պէս՝ որ Քրիստոս Յիսուսովն [բ] է ։

2 Տիմոթէոս սիրելի որդւոյս՝ շնորհք, ողորմութիւն եւ խաղաղութիւն լինի Աստուած Հօրիցը եւ մեր Տէր Յիսուս [գ] Քրիստոսիցը ։

3 Շնորհակալ եմ [դ] Աստուածանից՝ որ իմ առաջին հարանցից ը- [ե] նորան պաշտում եմ սուրբ մտքով. որ անդադար քեզանից յիշատակ եմ անում իմ աղօթքներումս՝ գիշեր եւ [զ] ցերեկ ։

4 Ցանկանում եմ քեզ տեսնել՝ յիշելով քո արտասուքդ՝ որ ուրախութեամբ [է] լցուիմ ։

5 Ինչու որ իմ միտքս եմ բերում այն անկեղծ հաւատքը՝ որ քեզանում [ը] է. որ առաջ քո Լաւոյիս տատումդ եւ քո Եւնիկէ մօրումդ [թ] բնակվեցաւ. հաստատ գիտեմ որ էլ քեզանում է ։

6 Նորա համար քո միտքդ եմ բերում որ զարթեցնես Աստուծոյ այն շնորհքն որ քեզանում [ժ] է՝ իմ ձեռնադրութենիցս ։

7 Պատճառն որ Աստուած չըտուաւ մեզ վախկոտութեան [ի] հոգի, այլ զօրութեան՝ եւ սիրոյ՝ եւ պարկեշտութեան ։

8 Ուրեմն ամօթ մի [խ] համարիր մեր Տէրոջ [ծ] վկայութիւնն եւ ոչ էլ ինձ՝ որ նորա կապուածն [կ] եմ. բայց մասնակից լինիր չարչարանքներին՝ աւետարանի համար՝ Աստուծոյ [հ] զօրութեամբը

9 Որ փրկեց [ձ] մեզ, եւ սուրբ [ղ] կոչումով կանչեց. ոչ թէ մեր գործքերին [ճ] համար՝ այլ իրեն առաջա-

[բ] Եփես. Գ. 6. Տիտ. Ա. 2. Եբր. Թ. 15. [գ] Ա Տիմ. Ա. 2. [դ] Հռովմ. Ա. 8. Եփես. Ա. 16. [ե] Գործ. ԻԲ. 3. ԻԳ. 1. ԻԴ. 14. ԻԷ. 23. Հռովմ. Ա. 9. Գաղ. Ա. 14. [զ] Ա Թես. Ա. 2. Գ. 10. [է] Գլ. Դ. 9. 21. [ը] Ա Տիմ. Ա. 5. Գ. 6. [թ] Գործ. ԺԶ. 1. [ժ] Ա Թես. Ե. 19. Ա Տիմ. Դ. 14. [ի] Հռովմ. Ը. 15. [լ] Ղուկ. ԻԴ. 49. Գործ. Ա. 8. [խ] Հռովմ. Ա. 16. [ծ] Ա Տիմ. Բ. 6. Յայտ. Ա. 2. [կ] Եփես. Գ. 1. Փիլիպ. Ա. 7. [հ] Կող. Ա. 24. Գլ. Դ. 5. [ձ] Ա Տիմ. Ա. 1. Տիտ. Գ. 4. [ղ] Ա Թես. Դ. 7. Եբր. Գ. 1. [ճ] Հռովմ. Գ. 20. Թ. 11. Տիտ. Գ. 5.

դրութեանն եւ շնորհաց․ որ տուաւ մեզ ՚ի Քրիստոս Յիսուս յառաջ քան զժամանակս յաւիտենից ։

10 Բայց յայտնեցաւ այժմիկ յերեւել Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի․ որ խափանեաց զմահ՝ եւ լուսաւոր արար զկեանս եւ զանեղծութիւն ՚ի ձեռն աւետարանին ։

11 Որոյ եդայ ես քարոզ եւ առաքեալ՝ եւ վարդապետ հեթանոսաց ։

12 Վասն որոյ եւ զայս չարչարանս կրեմ, այլ ոչինչ ամօթ համարիմ․ քանզի գիտեմ՝ յո հաւատացեալ եմ․ եւ հաստատեալ եմ, թէ կարող է զաւանդն իմ պահել յօրն յայն ։

13 Ունիցիս օրինակ ողջմտութեան բանիցն, զորս յինէն լուար՝ հաւատովք եւ սիրով որ ՚ի Քրիստոս Յիսուս ։

14 Զբարւոք աւանդն պահեսջիր՝ ՚ի ձեռն Հոգւոյն Սրբոյ ՚ի մեզ բնակելոյ ։

15 Զայս գիտասջիր՝ զի մեկնեցան ՚ի մէնջ ամենեքեան՝ որ էին յԱսիա, որոց աւելի են Փիգեղոս եւ Հերմոգինէս ։

16 Տացէ Աստուած ողորմութիւն տանն Ոնեսիփորայ․ զի բազում անգամ հանգոյց զիս, եւ զկապանս իմ ոչ ամօթ համարեցաւ ։

դրութեան եւ շնորհքին ժ պէս․ որ տրված մեզ Քրիստոս Յիսուսումն յաւիտենական ժամանակներից ի առաջ ։

10 Բայց յայտնուեցաւ հիմիկ՝ երբոր Փրկիչ Յիսուս Քրիստոսն լ երեւցաւ․ որ խափանեց մահին եւ լուսոյ մէջ բերաւ կեանքըն ու անմահութիւնըն իրեն խ աւետարանովը ։

11 Որ ես նորա քարոզիչ եւ առաքեալ կարգւեցայ, եւ հեթանոսների ծ վարդապետ ։

12 Նորահամար էլ այս չարչարանքներըս քաշում եմ, բայց բնաւ ամօթ չեմ կ համարում․ պատճառն որ՝ գիտումեմ՝ թէ ում եմ հ հաւատացել․ եւ հաստատ եմ՝ թէ կարող է իմ աւանդըս ձ պահել մինչեւ այն ղ օրը ։

13 Ողջամիտ ճ խօսքերի մ օրինակն յ ունեցիր, որ ինձանից ն լսեցիր՝ հաւատքով եւ սիրով՝ որ Քրիստոս Յիսուսումն շ է ։

14 Այն բարի քեզ պահ տրված բանըն պահէ՝ Սուրբ Հոգւոյ ո ձեռովն որ մեզանում բնակված չ է ։

15 Աս գիտնաս՝ որ ինձանից պ ջոկվեցան այն ամէնքն՝ որ Ասիայի մէջ էին․ որ նորանց մէջումն են Փիգեղոս եւ ջ Հերմոգինէս ։

16 Աստուած ողորմութիւն ռ տայ Ոնեսիփորի ս տանն․ ինչու որ շատ անգամ հանգստացրուց վ ինձ, եւ իմ տ կապանքներըս ամօթ ր չը համարեց ։

ժ Հռովմ. Ը. 28.
ի Հռովմ. ԺԶ. 25. Եփես. Ա. 4. Գ. 11. Տիտ. Ա. 2. Ա Պետ. Ա. 20.
լ Հռովմ. ԺԶ. 26. Եփես. Ա. 9. Կող. Ա. 26. Տիտ. Ա. 3. Ա Պետ. Ա. 20.
խ Ա Կորնթ. ԺԵ. 54. 55. Եբր. Բ. 14.
ծ Գործ. Թ. 15. Եփես. Գ. 7. 8. Ա Տիմ. Բ. 7. Գղ. Գ. 17.
կ Եփես. Գ. 1. Գղ. Բ. 9.
հ Ա Պետ. Դ. 19.
ձ Ա Տիմ. Զ. 20.
ղ Համար. 18. Գղ. Դ. 8.
ճ Ա Տիմ. Ա. 10. Զ. 3.
մ Հռովմ. Բ. 20.
յ Գղ. Գ. 14. Տիտ. Ա. 9. Եբր. Ժ. 23. Յայտ. Բ. 25.
ն Գղ. Բ. 2.
շ Ա Տիմ. Ա. 14.
ո Ա Տիմ. Զ. 20.
չ Հռովմ. Ը. 11.
պ Գղ. Գ. 9. 16.
ջ Գործ. ԺԹ. 10.
ռ Մատթ. Ե. 7.
ս Գղ. Գ. 19.
վ Փիլիմ. 7.
տ Գործ. ԻԸ. 20. Եփես. Զ. 20.
ր Համար. 8.

17 Այլ իբրեւ եկն 'ի Հռովմ, պըն-
դագոյնս խնդրեաց զիս՝ եւ եգիտ։
18 Տացէ նմա Տէր՝ ողորմութիւն
գտանել 'ի Տեառնէ յաւուրն յայն-
միկ. եւ որչափ ինչ միանգամ յԵ-
փեսոս սպաս կալաւ ինձ, զայն դու
ինքնին քաջ գիտես։

17 Բայց երբոր եկաւ Հռոմ, շատ
ջանքով ման եկաւ ինծ՝ եւ գտաւ։
18 Տէրը տայ նորան՝ որ ողորմու-
թիւն գտնէ ե Տէրիցն այն զ օրումը.
եւ որքան որ Եփեսոսումը ծառա-
յութիւն արաւ ինծ՝ նա դու ինքդ
ես լաւ է գիտում։

## ԳԼ. Բ

1 Այլ դու որդեակ իմ, զօ-
րացիր շնորհօքն՝ որ 'ի Քրիստոս
Յիսուս։
2 Եւ զոր լուար յինէն բազում
վկայիւք՝ զայն աւանդեսցես հաւա-
տարիմ մարդոց՝ որ բաւական իցեն
եւ զայլս ուսուցանել։
3 Վշտակից լեր իբրեւ զբարւոք
զինուոր Քրիստոսի Յիսուսի։
4 Ո՛չ ոք զինուորեալ առնէ ընդ
կեանս աշխարհիս պատաղի, եթէ
զօրավարին հաճոյ լինիցի։
5 Եւ եթէ մարտիկ ոք իցէ՝ ոչ
պսակի՝ եթէ ոչ ըստ օրինին մար-
տիցէ։
6 Եւ հողագործին աշխատելոյ
պարտ է նախ 'ի պտղոյ վայելել։
7 Իմա զինչ ասեմս. տացէ քեզ
Տէր իմաստութիւն յամենայնի։
8 Յիշեա զՔրիստոս Յիսուս յա-
րուցեալ 'ի մեռելոց 'ի զաւակէ
Դաւթի՝ ըստ աւետարանին իմում։
9 Յորում չարչարիմ կապանօք
չափ՝ իբրեւ զչարագործ. այլ բանն

1 Բայց դու իմ ա որդեակս, զօ-
րացիր այն շնորհքովը՝ որ Քրիստոս
Յիսուսումն բ է.
2 Եւ նա որ ինձանից լսեցիր շատ
վկաներէ գ առաջին՝ նա յանձնէ հա-
ւատարիմ դ մարդկանց՝ որ կարող
են ուրիշներին էլ ե սովրեցնել։
3 Նեղութեան քաշիր զ լինիս ինչ-
պէս Քրիստոսի Յիսուսի քաջ է զին-
ուոր։
4 Ոչ մի՝ որ զինուորութիւն է
անում, այս աշխարհքի բաներումն
չի զբաղվում՝ որ զօրապետին հա-
ճոյ ը լինի։
5 Եւ թէ որ մինը կռուի մէջ մրցա-
նէ՝ պսակ չի առնում՝ թէ որ կար-
գի պէս թ չը կռուի։
6 Եւ հողագործն որ աշխատու-
մէ՝ առաջ պէտք է որ պտղից ժ վա-
յելէ։
7 Իմացիր ինչ եմ ասում. Տէրը
տայ քեզ իմաստութիւն ամէն բա-
նի մէջ։
8 Յիշէ Յիսուս Քրիստոսին մե-
ռելներէ միջիցն յարութիւն ի առա-
ծին՝ որ Դաւթի զաւակիցն լ է, իմ
աւետարանիս խ պէս.
9 Որ նորա համար ծ չարչարվու-
մեմ մինչեւ կապանքի մէջ կ լինել՝

ե Մատթ. ԻԵ. 34–40.
զ Բ Թես. Ա. 10. Հռովմ. 12.
է Եբր. Զ. 10.
—
ա Ա Տիմ. Ա. 2. Գղ. Ա. 2.
բ Եփես. Զ. 10.
գ Գղ. Ա. 13. Գ. 10. 14.
դ Ա Տիմ. Ա. 18.
ե Ա Տիմ. Գ. 2. Տիտ. Ա. 9.
զ Գղ. Ա. 8. Գ. 5.
է Ա Տիմ. Ա. 18.
ը Ա Կորնթ. Թ. 25.
թ Ա Կորնթ. Թ. 25. 26.
ժ Ա Կորնթ. Թ. 10.
ի Ա Կորնթ. ԺԵ. 1. 4. 20.
լ Հռովմ. Ա. 3. 4. Գործ. Բ. 30. ԺԳ. 23.
խ Հռովմ. Բ. 16.
ծ Գործ. Թ. 16. Գղ. Ա. 12.
կ Եփես. Գ. 1. Փիլիպ. Ա. 7. Կող. Դ. 3. 18.

Աստուծոյ ոչ եթէ կապեալ իցէ ։

10 Վասն այնորիկ ամենայնի համ-
բերեմ վասն ընտրելոցն, զի եւ
նոքա փրկութեանն հասանիցեն որ
՚ի Քրիստոս Յիսուս երկնաւոր փա-
ռօքն հանդերձ ։
11 Հաւատարիմ է բանս . զի եթէ
ընդ նմա մեռաք՝ ընդ նմին եւ կեց-
ցուք ։
12 Եւ եթէ համբերեմք, ընդ նմին
եւ թագաւորեսցուք, եւ եթէ ու-
րանամք՝ եւ նա ուրանայ զմեզ ։
13 Եւ եթէ չհաւատամք նա հա-
ւատարիմ մնայ, ուրանալ զանձն
իւր ոչ կարէ ։
14 Զայս յուշ արասջիր վկայու-
թիւն եդեալ առաջի Աստուծոյ . մի
բանակռիւ լինել յոչինչ պէտս ՚ի
կործանումն լսողաց ։

15 Փութասջիր զանձն քո ընտիր
կացուցանել առաջի Աստուծոյ, մշակ
առանց ամօթոյ, ուղիղ հատանօղ
զբանն ճշմարտութեան ։

16 Այլ ՚ի պղծոց եւ ՚ի սնոտի խօ-
սից մերժեսջիր . զի առաւել յառաջ
գայցեն յամպարշտութիւնս ։

17 Եւ բանք նոցա իբրեւ զքաղց-
կեղ ճարակ գտանեն . որոց աստի
են Հիմենոս՝ եւ Փիղետոս ։

18 Որք վրիպեցան ՚ի ճշմարտու-
թենէ, եւ ասեն՝ եթէ Յարութիւն
մեռելոց արդէն իսկ եղեալ է . եւ
կործանեն զհաւատս ոմանց ։

մին չարագործի պէս . բայց Աստու-
ծոյ խօսքը կապուած [հ] չէ ։
10 Նորա համար ամէն բանի համ-
բերում եմ ընտրեալների [ձ] պատճա-
ռովը՝ որ նորանք էլ հասնեն այն
փրկութեանը՝ որ Քրիստոս Յիսու-
սումն է՝ երկնաւոր փառքին [ղ] հետ ։
11 Ճշմարիտ է այս [ճ] խօսքս . որ
եթէ նորա հետ մեռանք՝ նորա հետ
էլ [մ] կապրինք ։
12 Թէ որ համբերենք, նորա հետ
էլ [յ] կը թագաւորենք . եւ թէ որ
ուրանանք՝ նա էլ կուրանայ [ն] մեզ ։
13 Եւ թէ որ չը հաւատանք, նա
հաւատարիմ [շ] կը մնայ . իրեն ան-
ձին չի կարող [ո] ուրանալ ։
14 Այս բաները յիշեցրու եւ Աս-
տուծոյն առաջին վկայութիւն [չ] դիր,
որ խօսքերով կռիւ չանեն՝ որ նա
անօգուտ է եւ լսողներին [պ] կործա-
նումէ ։
15 Ջանք արա որ քո անձը ըն-
տիր կանգնացնես Աստուծոյ առա-
ջին՝ մշակ առանց ամօթոյ, որ ճշ-
մարտութեան խօսքին չիտակ կար-
ճառօտ քարոզէ ։
16 Բայց պիղծ եւ ունայն խօսքե-
րից յետ [ջ] քաշուէ . ինչու որ՝ աւելի
առաջ են գնում ամպարշտութիւն-
ների մէջ ։
17 Եւ նորանց խօսքերը կերցաւի
պէս ուտելով առաջանումեն . որ
նորանց միջումն են Հիմէնոսն եւ
[ռ] Փիղետոսը ։
18 Որ նորանք ճշմարտութենիցը
[ս] թերվեցան, եւ ասումեն՝ թէ Մե-
ռելների յարութիւնը իսկ հիմիկ ե-
ղած [վ] է . եւ մինքանիսի հաւատքը
կործանում ։

հ Գործ . ԻԸ . 31 . Եփես . Զ . 19 . 20 . Փիլիպ . Ա . 13 . 14 .
ձ Եփես . Գ . 13 . Կող . Ա . 24 .
ղ Բ Կորնթ . Ա . 6 .
ճ Ա Տիմ . Ա . 15 .
մ Հռովմ . Զ . 5 . 8 . Բ Կորնթ . Գ . 10 .
յ Հռովմ . Ը . 17 . Ա Պետ . Գ . 13 .
ն Մատթ . Ժ . 33 . Մարկ . Ը . 38 . Ղուկ . Թ . 9 .
շ Հռովմ . Գ . 3 . Թ . 6 .
ո Թուոց . ԻԳ . 19 .
չ Ա Տիմ . Ե . 21 . Զ . 13 . Գաղ . Դ . 1 .
պ Ա Տիմ . Ա . 4 . Զ . 4 . Տիտ . Գ . 9 . 11 .
ջ Ա Տիմ . Գ . 7 . Զ . 20 . Տիտ . Ա . 14 .
ռ Ա Տիմ . Ա . 20 .
ս Ա Տիմ . Զ . 21 .
վ Ա Կորնթ . ԺԵ . 12 .

19 Այլ հաստատուն հիմն Աստուծոյ կայ՝ եւ ունի զկնիքս զայս, եթէ ծանեաւ Տէր զայնոսիկ՝ որ իւրն են. եւ 'ի բաց լիցի յանիրաւութենէ ամենայն՝ որ անուանէ զանուն Տեառն։

20 Այլ 'ի տան մեծի ոչ միայն են անօթք ոսկեղէնք եւ արծաթեղէնք, այլ եւ փայտեղէնք եւ խեցեղէնք. են՝ որ 'ի պատուի են, եւ են՝ որ յանարգութեան։

21 Եթէ ոք սրբեսցէ զանձն իւր յայսպիսեաց անտի, եղիցի անօթ պատուական՝ սրբեալ եւ պիտանի Տեառն իւրում՝ յամենայն գործս բարութեան պատրաստեալ։

22 Այլ յերիտասարդական ցանկութեանց փախիր. եւ երթ զհետ արդարութեան՝ զհաւատոյ՝ զսիրոյ՝ զխաղաղութեան՝ զսրբութեան, ընդ այնոսիկ՝ որ կարդան զանուն Տեառն սուրբ սրտիւք։

23 Այլ 'ի յիմար եւ յանխրատ խնդրոց հրաժարեա. գիտասջիր՝ թէ անտի ծնանին կռիւք։

24 Բայց ծառայի Տեառն ոչ է պարտ կռուել, այլ հեզ լինել առ ամենեսին, ուսուցիչ, անոխակալ,

25 Համբերութեամբ խրատել զհակառակօղսն. թերեւս տացէ նոցա Աստուած ապաշխարութիւն 'ի գիտութիւն ճշմարտութեան։

26 Եւ սթափեսցին յորոգայթից

19 Բայց Աստուծոյ հաստատ հիմն կանգնած կայ՝ եւ այս կնիքը ունի, թէ Տէրը ճանաչումէ նորանց՝ որ իրենն են. եւ թէ հեռու լինի անիրաւութիւններէն այն ամէնն՝ որ Տէրի անունն անուանումէ։

20 Բայց մեծ տան մէջ չէ թէ միայն ոսկէ եւ արծաթէ ամաններ կան. բայց փայտէ եւ հողէ ալ. կան՝ որ պատուաւոր բանի համար են, եւ կան՝ որ անարգ բանի համար են։

21 Թէ որ մէկը իրեն անձը սրբէ այնպէսի բաներէն, նա պատուական աման կը լինի՝ սրբած եւ իրեն տիրոջն օգտակար՝ ամէն բարի գործքերի համար պատրաստած։

22 Բայց երիտասարդական ցանկութիւններից փախիր. եւ հետեւէ արդարութեան՝ հաւատքին՝ սիրոյն՝ խաղաղութեան՝ սրբութեան, նորանց հետ միասին՝ որ Տէրի անունը կանչումեն սուրբ սրտով։

23 Բայց յիմար եւ անխրատ վիճաբանութիւններից յետ քաշուէ. գիտացիր որ նորանցից կռիւներ են առաջ գալիս։

24 Սակայն Տէրի ծառային պէտք չէ՝ որ կռիւ անէ, այլ որ ամէնին հետ հեզահոգի լինի, սովորեցնօղ՝ ոխ չը պահօղ,

25 Հակառակօղներին հանդարտութեամբ խրատէ. որ լինի թէ Աստուած նորանց ապաշխարութիւն տայ՝ որ ճշմարտութիւնն իմանան,

26 Եւ զգաստանան Սատանայի ո-

ա Մատթ. ԻԴ. 24. Հռովմ. Ը. 35. Ա Յովհ. Բ. 19.
բ Թուոց. ԺԶ. 5 Նաւում. Ա. 7 Յովհ. Ժ. 14. 27.
գ Ա Տիմ. Գ. 15.
դ Հռովմ. Թ. 21.
ե Եսայ. ԾԲ. 11.
զ Գղ. Գ. 17. Տիտ Գ. 1.
է Ա Տիմ. Զ. 11.
ը Գործ. Բ. 14. Ա Կորնթ. Ա. 2.
թ Ա Տիմ. Ա. 5. Գ. 12.
ժ Ա Տիմ. Ա. 4. Գ. 7. Զ. 4. Համար. 16. Տիտ. Գ. 9.
ի Տիտ. Գ. 2.
լ Ա Տիմ. Գ. 2, 3. Տիտ. Ա. 9.
խ Գաղ. Զ. 1. Ա Տիմ. Զ. 11. Ա Պետ. Գ. 15.
ծ Գործ. Ը. 22.
կ Ա Տիմ. Բ. 4. Գղ. Գ. 7. Տիտ. Ա. 1.

Սատանայի, որսացեալք 'ի նմանէ 'ի նորա կամս :

րոգայթներից, որ նորանից որսացվել են՝ նորա կամքն անելոյ [ա] համար :

## ԳԼ. Գ

1 Զայս գիտասջիր՝ եթէ յաւուրս յետինս եկեսցեն ժամանակք չարք ։

2 Զի եղիցին մարդիկ անձնասէրք՝ արծաթասէրք՝ հպարտք՝ ամբարտաւանք՝ հայհոյիչք՝ անհաւանք ծնողաց՝ անշնորհք՝ անսուրբք,

3 Անմուէրք՝ անգութք՝ բանսարկուք՝ անժոյժք՝ վէնք՝ անբարեսէրք,

4 Մատնիչք՝ յանդգունք՝ ամբարհաւանք, ցանկասէրք մանաւանդ՝ քան աստուածասէրք.

5 Որ ունիցին զկերպարանս աստուածպաշտութեան, եւ 'ի զօրութենէ անտի նորա ուրացեալ իցեն. եւ խորշեսջիր 'ի նոցանէ ։

6 Քանզի 'ի նոցանէ են՝ որ մտանեն տանէ 'ի տուն, եւ գերեն զկանայս շեղջակուտեալս մեղօք վարեալք 'ի պէսպէս ցանկութիւնս ։

7 Որ յամենայն ժամ ուսանին, եւ երբէք 'ի գիտութիւն ճշմարտութեան ոչ հասանեն ։

8 Այլ որպէս Յանէսն եւ Յամբրէս հակառակ կացին Մովսէսի. նոյնպէս եւ սոքա հակառակ կան ճշմարտութեանն. մարդք ապականեալք մտօք՝ անպիտանք 'ի հաւատս ։

1 Աս գիտցիր՝ որ յետոյ օրերումը չար ժամանակներ [բ] կը գան ։

2 Ինչու որ մարդիկ կը լինին [գ] անձնասէր, [դ] արծաթասէր, [ե] հպարտ, [զ] ամբարտաւան, [է] հայհոյող, ծնողաց [ը] չը հնազանդող, ապերախտ, չարագործ,

3 [թ] Անմարդի, [ժ] անգութ, խռովութիւն [ի] սիրող, [լ] անժուժկալ, կատաղած, բարին չը սիրող,

4 [խ] Մատնիչ, յանդուգն, գոռոզ, ցանկութիւն աւելի սիրող՝ քան թէ Աստուծոյն է սիրող.

5 Որ աստուածապաշտութեան կերպարանքն ունին, և նորա զօրութենից ուրացած [կ] են. և յետ քաշվէ [հ] նորանցից ։

6 Ինչու որ նորանց միջիցն են՝ որ տանից տուն են մտնում, և գերի են տանում այն կանանցն՝ որ մեղքերով լցված կրված են՝ և կերպ կերպ ցանկութիւններով [ձ] վարված,

7 Որ ամէն ժամանակ սովորումեն, և դէպի ճշմարտութեան գիտութիւնն այլ մին ժամանակ չեն [ղ] հասնում ։

8 Բայց ինչպէս որ Յանէսն ու Յամբրէսը Մովսէսին հակառակ կացան. այնպէս էլ սորանք են հակառակ կենում [ճ] ճշմարտութեանը. մարդիկ՝ մտքով [մ] ապականված՝ և անպիտան հաւատքի [յ] համար ։

ա Ա Տիմ. Գ. 7.

—

բ Ա Տիմ. Դ. 1. Գղ. Դ. 3. Բ Պետ. Գ. 3. Ա Յովհ. Բ. 18. Յուդ. 18.
գ Փիլիպ. Բ. 21.
դ Բ Պետ. Բ. 3.
ե Ա Տիմ. Զ. 4.
զ Յուդ. 16.
է Ա Տիմ. Ա. 20. Բ Պետ. Բ. 12. Յուդ. 10.
ը Հռովմ. Ա. 30.
թ Հռովմ. Ա. 31.
ժ Հռովմ. Ա. 31.
ի Տիտ. Բ. 3.
լ Բ Պետ. Գ. 3.
խ Բ Պետ. Բ. 10.
ծ Փիլիպ. Գ. 19. Բ Պետ. Բ. 13, 19. Յուդ. 4 19.
կ Ա Տիմ. Ե. 8. Տիտ. Ա. 16.
հ Բ Թես. Գ. 6.
ձ Մատթ. ԻԳ. 14.
ղ Ա Տիմ. Բ. 4.
ճ Ելից. Է. 11.
մ Ա Տիմ. Զ. 5.
յ Հռովմ. Ա. 28. Բ Կորնթ. ԺԳ. 5. Տիտ. Ա. 16.

9 Այլ ոչ երբէք գայցեն յառաջ 'ի լաւ անդր․ քանզի անմտութիւն սոցա յայտնի լինիցի ամենեցուն, որպէս եւ նոցայն իսկ եղեւ ։

10 Այլ դու զհետ եկիր վարդապետութեան իմոյ՝ առաջնորդութեան՝ յօժարութեան՝ հաւատոյ՝ երկայնմտութեան՝ սիրոյ՝ համբերութեան,

11 Հալածանաց՝ չարչարանաց․ որպիսիք եղեն ինձ յԱնտիոք եւ յԻկոնիոն եւ 'ի Լիւստրա, որպիսի հալածանաց համբերի․ եւ յամենայնէ փրկեաց զիս Տէր ։

12 Եւ ամենեքին՝ որ կամիցին աստուածպաշտութեամբ կեալ 'ի Քրիստոս Յիսուս, 'ի հալածանս կացցեն ։

13 Այլ մարդք չարք եւ կախարդք յառաջ եկեսցեն 'ի չար անդր․ մոլորեալք եւ մոլորեցուցանիցեն ։

14 Այլ դու հաստատուն կաց՝ յոր ուսարդ, եւ հաւատարիմ եղեր․ գիտես ուստի ուսար ։

15 Զի 'ի մանկութենէ զգիրս սուրբս գիտես, որ կարող են իմաստուն առնել զքեզ 'ի փրկութիւն՝ 'ի ձեռն հաւատոյն որ 'ի Քրիստոս Յիսուս ։

16 Ամենայն Գիրք Աստուածաշունչք եւ օգտակարք, 'ի վարդապետութիւն են՝ եւ յանդիմանութիւն եւ յուղղութիւն եւ 'ի խրատ արդարութեան ։

17 Զի կատարեալ լիցի մարդն Ա-

9 Բայց բնաւ աւելի չեն առաջանալ չարութեան մէջ․ ինչու որ նորանց անմտութիւնն ամէնին յայտնի կը լինի․ ինչպէս որ էլ նորանցն յ էր ։

10 Բայց դու հետեւեցիր իմ վարդապետութեան, առաջնորդութեան, յօժարութեան, հաւատքի, երկայնմտութեան, սիրոյ, համբերութեան,

11 Հալածմունքներիս, ն չարչարանքներիս․ ինչպէս որ էլան ինձ վերայ շ Անտիոքումը՝ եւ ո Իկոնիոնումը՝ եւ չ Լուստրայումը․ ինչպէս որ այն հալածմունքներին համբերեցի․ եւ այն ամէնիցը Տէրն ինձ պ ազատեց ։

12 Եւ ամէնքն՝ որ կամենումեն աստուածպաշտութենով ապրել Քրիստոս Յիսուսումը, հալածմունքների մէջ պիտի ջ կենան ։

13 Բայց չար եւ կախարդ մարդիկը աւելի առաջ կը գնան չարութեան մէջ․ մոլորված են եւ ռ մոլորացնումեն ։

14 Իսկ դու հաստատ կաց նորանում, որ սովորեցիր եւ հաւատացիր․ գիտես թէ ումից ս սովորեցիր․

15 Որ տղայութենիցդ սուրբ գըրքերը գիտես, որ նորանք կարող են քեզ իմաստուն անել փրկութեան համար՝ այն հաւատքի ձեռովն՝ որ Քրիստոս Յիսուսումն վ է ։

16 Ամէն Գրքերն տ աստուածաշունչ եւ օգտակար են վարդապետութեան, եւ յանդիմանութեան, եւ շիտակելոյ եւ արդարութեան խրատ տալոյ ր համար,

17 Որ Աստուծոյ մարդը կատար-

յ Ելից․ Է․ 12։ Ը․ 18․ Թ․ 11։
ն Փիլիպ․ Բ․ 22։ Ա Տիմ․ Գ․ 6։
շ Գործ․ ԺԳ․ 45․ 50։
ո Գործ․ ԺԴ․ 1․ 5։
չ Գործ․ ԺԴ․ 20, 21։
պ Սաղ․ ԼԳ․ 19։ Բ Կորնթ․ Ա․ 10։ Գղ․ Դ․ 7։
ջ Եսա․ ԺԵ․ 14։ Սաղ․ ԼԳ․ 19։ Գործ․ ԺԴ․ 21։ Մատթ․ ԺԶ․ 24։ Ա Կորնթ․ ԺԵ․ 19։ Ա Թես․ Գ․ 3։
ռ Բ Թես․ Բ․ 11։ Ա Տիմ․ Դ․ 1։ Գղ․ Բ․ 16։
ս Գղ․ Ա․ 13։ Բ․ 2։
վ Յովհ․ Ե․ 39։
տ Բ Պետ․ Ա․ 20․ 21։
ր Հռովմ․ ԺԵ․ 4։

տուծոյ յամենայն գործս բարու-
թեան հաստատեալ :

կալ ɔ լինի՝ ամէն բարի գործերի
մէջ ~հաստատուած :

## ԳԼ. Դ

1 Զայս վկայութիւն դնեմ առա-
ջի Աստուծոյ՝ եւ Յիսուսի Քրիստո-
սի, որ դատելոց է զկենդանիս եւ
զմեռեալս՝ ՚ի յայտնութեան իւրում
եւ յարքայութեան :

2 Եւ դու քարոզեա զբանն, հաս
՚ի վերայ ժամու եւ տարաժամու,
յանդիմանեա՝ սաստեա՝ մխիթար-
եա ամենայն երկայնմտութեամբ եւ
վարդապետութեամբ :
3 Քանզի եկեսցէ ժամանակ՝ զի
ողջմտութեան վարդապետութեանն
ոչ անսայցեն. այլ ըստ իւրաքան-
չիւր ցանկութեանց կուտեսցեն իւ-
րեանց վարդապետս՝ ըստ մարմաջե-
լոյ լսելեաց իւրեանց :

4 Եւ ՚ի ճշմարտութենէ անտի
դարձուցանիցեն զլսելիս՝ եւ յա-
ռասպելս կործանեսցին :
5 Այլ դու զուարթ կաց յամե-
նայնի, ճգնեաց, զգործս աւետա-
րանչի գործեա. զպաշտօնդ քո կա-
տարեալ կալ :
6 Զի ես այսուհետեւ նուիրեալ
եմ, եւ ժամանակ դարձի իմոյ հա-
սեալ կայ :
7 Զբարւոք պատերազմ պատե-
րազմեցայ, զընթացսն կատարեցի,
զհաւատսն պահեցի :
8 Այսուհետեւ կայ մնայ ինձ ար-
դարութեան պսակն, զոր հատուս-
ցէ ինձ Տէր յաւուր յայնմիկ արդա-

1 Այս վկայութիւնս կուտամ
Աստուծոյ եւ Յիսուսի Քրիստոսի
~առջեւն՝ որ կենդանիներուն եւ
մեռելներուն պիտի դատէ՝ իրեն յայտ-
նութենովն ու ⊦ թագաւորութե-
նովը :
2 Քարոզէ բանը. պատշաճ ժա-
մանակ լինի թէ չը լինի՝ վրան հա-
սիր, յանդիմանէ, ⊤ սաստէ, մխի-
թարէ ամէն երկայնմտութենով եւ
⊤ վարդապետութենով :
3 Պատճառն որ ժամանակ ⊦ կը
գայ՝ որ ողջամիտ վարդապետու-
թեանը չեն ականջ դնիլ. հապա ի-
րենց յատուկ ցանկութիւններին
պէս՝ վարդապետներ կը դիզեն ի-
րենց վրայ, ինչպէս որ իրենց ա-
կանջներուն եռալուն համար ⊦ է :
4 Եւ ականջները ճշմարտութե-
նէն յետ կը դարձնեն եւ առասպել
բաներու մէջ ≈ կը նետուին :
5 Բայց դու արթուն կաց ամէն
բանի մէջ, ջանք ⊦ արա, աւետա-
րան քարոզողի գործքը ⊦ գործէ.
քու պաշտօնդ կատարեալ ⊦ բռնէ :
6 Ինչու որ ես այսուհետեւ նուիր-
ուած ⊥ եմ, եւ իմ դարձ անելու
ժամանակը հասած ⊦ է :
7 Այն բարի պատերազմը պատե-
րազմեցի, վազելս կատարեցի,
հաւատքը ⊦ պահեցի :
8 Այսուհետեւ պատրաստուած
մնացէ ինձ արդարութեան ⊦ պը-
սակն՝ որ նորան Տէրը կը տայ ինձ

ɔ Ա Տիմ. Զ. 11.
~ Գղ. Բ. 21.
—
= Ա Տիմ. Ե. 21. Զ. 13. Գղ. Բ 14.
բ Գործ. Ժ. 42.
♀ Ա Տիմ. Ե. 20. Տիտ. Ա. 13. Բ. 15.
⊤ Ա Տիմ. Դ. 13.
ի Գղ. Գ. 1.
ւ Ա Տիմ Ա. 10
ի Գղ Դ. 6.
ք Ա Տիմ. Ա. 4. Դ. 7. Տիտ. Ա. 14
բ Գղ. Ա. 8. Բ. 3.
ժ Գործ. ԻԱ. 8. Եփես Դ 11.
ⅰ Հռովմ. ԺԵ 19. Կող. Ա. 25. Դ. 17.
ւ Փիլիպ. Բ. 17.
ի Փիլիպ. Ա. 23. Բ Պետ. Ա 14.
ծ Ա Կորնթ. Թ. 24. 25. Փիլիպ. Գ. 14. Ա Տիմ. Զ. 12. Եբր. ԺԲ. 1.
ⅰ Ա Կորնթ. Թ. 25. Յակ. Ա. 12. Ա Պետ. Ե. 4. Յայտ. Բ. 10.

րըն դատաւոր . ոչ միայն ինձ , այլ-
եւ ամենեցուն՝ որ սիրեցին զյայտ-
նութիւն նորա ։

9 Փութասջիր գալ առ իս վաղ-
վաղակի . զի Դեմաս եթող զիս՝ եւ
սիրեաց զաշխարհս , եւ գնաց ՚ի
Թեսաղոնիկէ ։
10 Կրեսկէս՝ ՚ի Գաղղիա , Տիտոս
՚ի Դաղմատիա ։
11 Ղուկաս միայն է ընդ իս . ըզ
Մարկոս առեալ ընդ քեզ ածիցես՝
զի է ինձ պիտանի ՚ի սպասաւորու-
թիւն ։
12 ԶՏիւքիկոս առաքեցի յԵփեսոս ։

13 ԶՓիլոնն թողի ՚ի Տրովադայ
առ Կարպոսի . յորժամ գայցես՝
բերջիր եւ զգիրսն մանաւանդ ըզ
մագաղաթսն ։
14 Աղեքսանդրոս (դարբին) բա-
զում չարչարանս եցոյց ինձ . հա-
տուսցէ նմա Տէր ըստ գործս նորա ։

15 Յորմէ եւ դու անձնապահ լի-
նիջիր . զի յոյժ հակառակ եկաց
բանից մերոց ։
16 Յառաջնում ատենին ոչ ոք
ինձ ՚ի թիկունս եկաց , այլ ամենե-
քին թողին զիս . մի համարեսցի
նոցա այն ։
17 Այլ Տէր օգնեաց ինձ , եւ զօ-
րացոյց զիս , զի ինեւ քարոզութիւ-
նըս հաստատեսցի , եւ լուիցեն ա-
մենայն հեթանոսք . եւ ապրեցայ
ես ՚ի բերանոյ առիւծուն ։
18 Փրկեսցէ զիս Տէր յամենայն
գործոց չարաց , եւ կեցուսցէ զիս
յարքայութիւն իւր՝ որ յերկինս է .

այն [հ] օրումը՝ այն արդար դատա-
ւորը . եւ չէ թէ միայն ինձ , բայց
էլ ամէնին , որ սիրեցին նորա յայտ-
նութիւնը ։
9 Փութացիր որ շուտով ինձ մօտ
գաս . ինչու որ Դիմասն թողեց
[յ] ինձ՝ եւ աշխարհքը սիրեց , եւ
գնաց [ն] Թեսաղոնիկէ ։
10 Կրեսկէսն էլ՝ Գաղղիա . Տիտո-
սին՝ Դաղմատիա ։
11 [շ] Ղուկասը միայն է ինձ [ո] հետ .
Մարկոսին առնես քեզ հետ [չ] բե-
րես . ինչու որ պէտք է ինձ ծա-
ռայութեան համար ։
12 Տիւքիկոսին ուղարկեցի [պ] Եփե-
սոս ։
13 Փիլոնը Տրովադայումը Կարպո-
սին մօտ թողի . երբոր գաս՝ գրր-
քերըն էլ բեր , եւ մանաւանդ մա-
գաղաթի գրքերը ։
14 Աղեքսանդրոս [ջ] դարբինն ինձ շատ
չարչարանք տուաւ . Տէրը նորան
հատուցումը տայ իրեն գործքերին
[ռ] պէս ։
15 Դու էլ քո անձդ հեռու պա-
հէ նորանից . ինչու որ նա շատ
հակառակ կացաւ մեր խօսքերին ։
16 Առաջին ատեանին մէջ ոչ ով
չը կացաւ իմ կողմն , բայց ամէնքը
թողին [ս] ինձ . նա թող չը համարուի
[վ] նորանց ։
17 Բայց Տէրն օգնեց ինձ , եւ զօ-
րացրուց [տ] ինձ՝ որ ինձանով քարո-
զութիւնը հաստատուի , եւ ամէն
հեթանոսները [ր] լսեն . եւ ես էլ ա-
զատուեցայ առիւծի [ց] բերանիցը ։
18 Տէրը կը փրկէ ինձ ամէն չար
բաներից , եւ ազատ կը հասցնէ ի-
րեն արքայութեան մէջ որ երկին-

հ Գղ . Ա . 12 .
յ Կող . Դ . 14 . Փի-
լիմ . 24 .
ն Ա Յովհ . Բ . 15 .
շ Կող . Դ . 14 . Փի-
լիմ . 24 .
ո Գղ . Ա . 15 .
չ Գործ . ԺԲ . 25 . ԺԵ . 37 . Կող .
Դ . 10 .
պ Գործ . Ի . 4 .
Եփես . Զ . 21 .
Կող . Դ . 7 . Տիտ .
Գ . 12 .
ջ Գործ . ԺԹ . 33 .
Ա Տիմ . Ա . 20 .
ռ Բ Թագ . Գ . 39 .
Սաղ . ԻԸ . 4 .
Յայտ . ԺԸ . 6 .
ս Գղ . Ա . 15 .
վ Գործ . Է . 59 .
տ Մատթ . Ժ . 19 .
Գործ . ԻԳ . 11 .
ԻԵ . 23 .
ր Գործ . Թ . 15 .
ԻԶ . 17 . 18 . Ե-
փես . Գ . 8 .
ց Սաղ . ԻԲ . 21 . Բ
Պետ . Բ . 9 .

որում փառք յաւիտեանս յաւիտե-
նից . ամէն ։
19 Ողջոյն տասջիր Պրիսկիղեայ եւ Ա-
կիւղեայ՝ եւ Ոնեսիփորայ տանն ։
20 Երաստոս մնաց 'ի Կորնթոս ,
զՏրոփիմոս թողի 'ի Միլիտոս հի-
ւանդացեալն ։
21 Փութասջիր յառաջ քան զձմ-
եռն գալ . ողջոյն տան քեզ Եւ-
բուղոս եւ Պուդէս եւ Լինոս եւ
Կղաւդիա՝ եւ եղբարք ամենեքեան ։
22 Տէր Յիսուս Քրիստոս ընդ ոգ-
ւոյդ քում . շնորհք ընդ քեզ . ա-
մէն ։

ղ քանին է . որ նորան փառք յաւի-
տեանս յաւիտենից . ճ ամէն ։
19 Ողջոյն տուր Պրիսկիղէին եւ մ Ա-
կիւղային , եւ Ոնեսիփորի յ տանը ։
20 Երաստոսը մնաց ն Կորնթոսու-
մը . Տրոփիմոսին թողի հիւանդ
շ Միլիտոսումը ։
21 Փութացիր որ ձմեռնից առաջ
ո գաս . ողջոյն են տալիս քեզ Եւ-
բուղոսը , եւ Պուդէսը եւ Լինոսը ,
եւ Կղաւդիան՝ եւ ամէն եղբարքը ։
22 Տէր Յիսուս Քրիստոսը քո հո-
գւոյդ հետ լինի . շնորհքը քեզ հետ .
չ ամէն ։

Տիմոթէոսի վերայ երկրորդ թուղթ որ նա Եփեսացւոց եկեղեցւոյ առաջին ձեռնադրեալ
եպիսկոպոսն էր՝ Հռոմ քաղաքիցը գրեցաւ երբոր Պօղոսն երկրորդ անգամ
ատենաւոր կանգնեց Հռոմայ կայսեր Ներոնի առաջին ։

# ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑ

## ԱՌ ՏԻՏՈՍ

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 ՊՕՂՈՍ ծառայ Աստուծոյ եւ
առաքեալ Յիսուսի Քրիստոսի , ըստ
հաւատոց ընտրելոցն Աստուծոյ , եւ
'ի գիտութիւն ճշմարտութեանն՝ որ
ըստ աստուածպաշտութեանն է .

2 Յուսով կենացն յաւիտենից ,
զոր խոստացաւ անսուտն Աստուած
յառաջ քան զժամանակս յաւիտենից .

3 Բայց յայտնեաց իւրովք ժամա-
նակօք զբանն իւր քարոզութեամբ ,
որոյ եղէ ես հաւատարիմ ըստ հրա-
մանի Փրկչին մերոյ Աստուծոյ .

1 ՊՕՂՈՍ Աստուծոյ ծառայ
եւ Յիսուսի Քրիստոսի առաքեալ ,
Աստուծոյ ընտրեալներին հաւատ-
քին պէս , եւ ճշմարտութեան գի-
տութեան ա համար՝ որ աստուածա-
պաշտութիւնին բ է .
2 Յաւիտենական կենաց գ յուսո-
վըն՝ որ նորան յաւիտենական ժա-
մանակներիցն դ առաջ խոստացաւ
Աստուած , որ սուտ ե չի խօսում .
3 Բայց իրեն ժամանակին յայտ-
նեց իրեն խօսքը զ քարոզութեամբ ,
որ ինձ է հաւատացվեցաւ մեր Փրկ-
չին Աստուծոյ հրամանովն ը մէջ .

ղ Սաղ . ՃԻԱ . 7 .
ճ Հռոմ . ԺԱ . 36 . Գաղ . Ա . 5 . Եբր ԺԳ . 21 .
մ Գործ . ԺԸ . 2 . Հռոմ . ԺԶ . 3 .
յ Գլ . Ա . 16 .
ն Գործ . ԺԹ . 22 . Հռոմ . ԺԶ . 23 .
շ Գործ . Ի . 4 . ԻԱ . 29 .
ո Համար . 8 .
չ Գաղ . Զ . 18 . Փիլիմ . 25 .
—
ա Բ Տիմ . Բ . 25 .
բ Ա Տիմ . Գ . 16 . Զ . 3 .
գ Բ Տիմ Ա . 1 . Գլ . Դ . 7 .
դ Հռոմ . ԺԶ . 25 . Բ Տիմ Ա . 9 . Ա Պետ . Ա . 20 .
ե Թուոց . ԻԳ . 19 . Բ Տիմ . Բ . 13 .
զ Բ Տիմ . Ա . 10 .
է Ա Թես . Բ . 4 . Ա Տիմ . Ա . 11 .
ը Ա Տիմ . Ա . 1 . Բ . 3 . Դ . 10 .

4 Տիտոսի որդւոյ սիրելւոյ ըստ
հասարակաց հաւատոց, շնորհք՝ եւ
խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ՝ եւ
՚ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ Փրկ-
չէ մերմէ ։
5 Վասն այնորիկ թողի զքեզ
՚ի Կրետէ, զի որ ինչ մնա-
ցեալ պակաս իցէ՝ ուղղեսցես, եւ
կացուսցես ըստ քաղաքաց երիցունս՝
որպէս եւ ես քեզ պատուիրեցի ։
6 Եթէ ոք անարատ իցէ, միոյ
կնոջ այր, որդեակս ունիցի հաւա-
տացեալս՝ եւ ոչ յամբաստանութիւն
անառակութեան, կամ անհնազան-
դըս ։
7 Զի պարտ է եպիսկոպոսին ա-
նարատ լինել՝ որպէս եւ Աստուծոյ
տնտեսի. մի յանդուգն, մի բար-
կացօղ, մի թշնամանօղ մի հարկա-
նօղ, մի զօշաքաղ.

8 Այլ՝ հիւրասէր, բարեսէր,
ցած, արդար, սուրբ, ժուժկալ.
9 Վերակացու լինել հաւատա-
րիմ բանին վարդապետութեան, զի
կարօղ իցէ եւ մխիթարել ողջմտու-
թեամբ վարդապետութեամբն, եւ
զհակառակորդսն կշտամբել ։
10 Քանզի բազումք են անհնա-
զանդք՝ զրախօսք եւ մտախաբք.
մանաւանդ որ ՚ի թլփատութենէ
անտի են ։
11 Զորս պարտ է ըմբերանել. որք
զամենայն տունս կործանեն, եւ
ուսուցանեն զոր չէ արժան՝ վասն
զօշաքաղութեան ։

4 ՝ Տիտոսի սիրելի ՚ որդւոյս, մեր
հասարակաց հաւատքին ՚ի մէջ, շը-
նորհք՝ ողորմութիւն եւ խաղաղու-
թիւն լինի Աստուած Հօրմէն՝ եւ
մեր Փրկիչ Քրիստոս Յիսուսէն ։
5 Ասոր համար թողի քեզ Կրետէի
մէջն՝ որ ամէն ինչ որ պակաս է՝
կարգի ՚ դնես, եւ ամէն մէկ քա-
ղաքներու մէջ երէցներ կանգնեցնես՝
ինչպէս որ ես պատուիրեցի ՚ քեզ ։
6 Թէ որ մէկն անարատ է, մէկ
կնկան մարդ, հաւատացեալ որդիք
ունենայ՝ որ նորանց վրայ չար-
խօսութիւն չըլլայ՝ թէ անառակ
կամ անհնազանդ են ։
7 Պատճառն որ՝ եպիսկոպոսը
պէտք է որ անարատ լինի ինչպէս
Աստուծոյ տնտես. եւ ոչ յանդու-
գըն, ոչ բարկացող, ոչ նախատինք
խօսող, ոչ զարկող, ոչ պիղծ շահ
քաղող.
8 Բայց օտարասէր, բարեսէր,
խոհեմ, արդար, սուրբ, ժուժկալ.
9 Որ վարդապետութեան խօսքի
հաւատարիմ վերակացու է, որ
կարող լինի ողջամիտ վարդապե-
տութենով յորդորել, եւ հակառա-
կորդներուն յանդիմանել ։
10 Պատճառն որ՝ շատ անհնա-
զանդներ, զուր-խօսողներ, եւ
միտք խաբողներ կան. մանաւանդ
նորանք որ թլփատութենէն են.
11 Որ պէտք է նորանց բերանը
խցկել, որ ամէն տները կործա-
նումեն, եւ սորվեցնում են որ ար-
ժան չէ՝ պիղծ շահ քաղելու պատ-
ճառովը ։

ի Բ Կորնթ. Բ. 13։
Է. 13. Ը. 6.
16. 23։ ԺԲ. 18։
Գաղ. Բ. 3։
ժ Ա Տիմ. Ա. 2։
է Հռովմ. Ա. 12։
Բ Կորնթ. Գ. 13։
Բ Պետ. Ա. 1։
ւ Եփես. Ա. 2։
Կող. Ա. 3։ Ա
Տիմ. Ա. 2։ Բ
Տիմ. Ա. 2։
ի Ա Կորնթ. ԺԱ.
35։
ծ Գործ. ԺԳ. 22։
Բ Տիմ. Բ. 2։
կ Ա Տիմ. Գ. 2, ա.
հ Ա Տիմ. Գ. 12։
յ Ա Տիմ. Գ. 4.
12։
ղ Մատթ. ԻԴ. 45։
Ա Կորնթ. Դ. 1.
2։
ճ Ա Տիմ. Գ. 3. 8։
մ Ա Տիմ. Գ. 3. 8
Ա Պետ. Ե. 2։
յ Ա Տիմ. Դ. 2։
ն Ա Տիմ. Զ. 3։
Բ Տիմ. Բ. 2։
շ Ա Տիմ. Ա. 10։
Զ. 3։ Բ Տիմ.
Դ. 3։ Տիտ. Բ. 1։
ո Ա Տիմ. Ա. 6։
չ Հռովմ. ԺԶ. 18։
պ Գործ. ԺԵ. 1։
ջ Մատթ. ԻԳ. 14։
Բ Տիմ. Գ. 6։
ռ Ա Տիմ. Զ. 5։

12 Ասաց ոմն 'ի նոցանէ՝ իւրեանց
խոկ մարգարէ, Կրետացիք հանա-
պազասուտք, չարաճճիք, դատար-
կապորտք:
13 Եւ ստոյգ է վկայութիւնս այս.
վասն որոյ կշտամբեսջիր զնոսա
խստագոյնս, զի առողջասցին 'ի
հաւատս:
14 Եւ մի՛ հայեսցին 'ի Հրէականս
առասպելս, եւ 'ի պատուէրս մարդ-
կան զառածելոցն 'ի ճշմարտութե-
նէ:
15 Ամենայն ինչ սուրբ է սրբոց,
բայց պղծոյն եւ անհաւատից՝ ո-
չինչ է սուրբ. այլ պղծեալ են
միտք եւ խորհուրդք նոցա:

16 Խոստանան գիտել զԱստուած,
եւ գործովք իւրեանց ուրանան.
պիղծք են անհաւանք՝ եւ յամենայն
գործս բարեաց անպիտանք:

12 Նրանցից մինն՝ խոկ իրենց յա-
տուկ մարգարէ ասաց. Կրետացի-
ները միշտ ստախօս են, չար ճը-
ճուններներ, = դատարկափոր:
13 Եւ այս վկայութիւնս ճշմարիտ
է. Նորահամար սաստիկ յանդիմանես
Հնորանց՝ որ առողջ լինին * հա-
ւատքումը:
14 Եւ մտիկ չը տան Հրէական ‡ ա-
ռասպելներին եւ այն մարդկանց
պատուիրանքներին՝ որ ճշմարտու-
թիւնից թեքուած ɔ են:
15 Ամէն բան սուրբ է – սրբե-
րին. բայց պղծերին եւ անհաւատա-
ներին ոչ մին բան սուրբ չէ. այլ
պղծուած է նորանց միտքն ու ‡ խոր-
հուրդները.
16 Եւ խոստանումն թէ Աստու-
ծոյն գիտենան, եւ իրենց գործքե-
րովն + ուրանումն. որ պիղծ են
եւ անհաւատ՝ եւ ամէն բարի գործ-
քերի համար ° անպիտան:

## ԳԼ. Բ

1 Այլ դու խօսեաց որ ինչ վա-
յել է ողջամիտ վարդապետութեա-
նըդ:
2 Ծերոց զգաստս լինել, պար-
կեշտս՝ ցածունս, ողջամիտս 'ի հա-
ւատս, 'ի սէր 'ի համբերութեան 'ի
ժուժկալութեան:
3 Պառաւանց նոյնպէս 'ի զգաս-
տութեան՝ 'ի սուրբ վայելչութեան,
մի բանսարկուս՝ մի գինեմոլս, այլ
բարեխրատս.

4 Զի զգաստացուցանիցեն զման-
կամարդսն՝ այրասէրս լինել՝ որդե-
սէրս,

1 Բայց դու խօսէ ինչ որ կը վա-
յելէ ողջամիտ – վարդապետու-
թեանց:
2 Ծերերին՝ որ զգաստ լինին,
պարկեշտ, խոնարհ, ողջամիտ ‡ հա-
ւատքի, սիրոյ, համբերութեան,
ժուժկալութեան մէջ:
3 Այնպէս էլ պառաւներին՝ որ
զգաստութենով լինին՝ սրբերին վա-
յելած ‡ վարքով՝ ոչ ‡ չարախօս,
ոչ գինեմոլ, բայց բարի խրատ
տուօղ.
4 Որ զգաստացնեն մատաղաչ կա-
նանցըն իրենց մարդկանցը սիրելոյ
եւ զաւակները ‡ սիրելոյ,

= Գործ. ԺԵ. 28:
Հ Բ Կորնթ. ԺԴ. 10. Բ Տիմ. Դ. 2:
‡ Գղ. Բ. 2:
‡ Ա Տիմ. Ա. 4. Դ. 7. Բ Տիմ. Դ. 4:
ɔ Եսայ. ԻԹ. 13. Մատթ. ԺԵ. 9. Կող. Բ. 22:
– Ղուկ. ԺԱ. 39—41. Հռովմ. ԺԴ. 14. 20. Ա Կորնթ. Զ. 12. Ժ. 23. 25. Ա Տիմ. Դ. 3, 4:
‡ Հռովմ. ԺԴ. 23. + Բ Տիմ. Գ. 5. Յուդ. 4:
° Հռովմ. Ա. 28. Բ Տիմ. Գ. 8:

—

– Ա Տիմ. Ա. 10. Զ. 3. Բ Տիմ. Ա. 13. Գղ. Ա. 9:
‡ Գղ. Ա. 13:
‡ Ա Տիմ. Բ. 9, 10. Գ. 11. Ա Պետ. Գ. 3, 4:
‡ Բ Տիմ. Գ. 3:
‡ Ա Տիմ. Ե. 14:

5 Ցածունս, սուրբս, տնարարս, բարեգործս, հնազանդս իւրեանց արանց. զի մի՛ բանն Աստուծոյ եւ վարդապետութիւնն հայհոյեսցի։

6 Զերիտասարդս նոյնպէս աղաչեսջիր՝ ցածունս լինել,
7 Ամենեցուն զանձն օրինակ կացուցանել՝ գործոց բարութեան, վարդապետութեամբ զանեղծութիւն ունել, զսրբութիւն, զպարկեշտութիւն,
8 Զբանն ողջմտութեան, անպարսաւ լինել. զի որ հակառակորդն իցէ՝ յամօթ լիցի, եւ մի ինչ ունիցի ասել զմէնջ չարութիւն։
9 Զծառայս՝ իւրեանց տերանց հնազանդ լինել՝ եւ հաճոյս յամենայնի, մի հակառակօղս,

10 Մի հատուս. այլ զամենայն հաւատս ցուցանել բարութեամբ, զի զվարդապետութիւն Փրկչին մերոյ Աստուծոյ զարդարեսցեն յամենայնի։
11 Քանզի երեւեցաւ շնորհն Աստուծոյ փրկիչ ամենայն մարդկան։

12 Որ խրատէ զմեզ՝ զի ուրասցուք զամբարշտութիւն եւ զաշխարհական ցանկութիւնս. զգաստութեամբ եւ արդարութեամբ եւ աստուածպաշտութեամբ կեցցուք յաշխարհի։
13 Եւ ակնկալցուք երանելի յուսոյն՝ եւ յայտնութեան փառաց մե-

5 Խոհեմ, սուրբ, տնաշէն, բարի ընող, իրենց մարդկանց հնազանդ ղ ըլլալոյ. որ Աստուծոյ խօսքին ու վարդապետութիւնը ճ չհայհոյվի։
6 Այնպէս ալ յորդորէ երիտասարդները՝ որ խոհեմ լինին։
7 Ամէն բանի մէջ քու անձըդ բարի գործքերի օրինակ ըրէ՝ որ վարդապետութենովդ ունենաս մ անարատութիւն, սրբութիւն, պարկեշտութիւն,
8 Ողջամիտ խօսքին՝ որ մեղադրելի յ չէ. որ նա՝ որ հակառակող ն է, ամօթ լինի, եւ բնաւ մեզ վըրայ չար ասելոյ բան շ չունենայ։
9 Ծառաներին՝ որ իրենց տէրերին հնազանդ ո ըլլին, եւ ամէն բանի մէջ չ հաճոյ, հակառակող չը լինին,
10 Բան չը քաշեն պահեն՝ բայց ամէն հաւատարմութիւն ցոյց տան բարութենով. որ մեր Փրկիչ Աստուծոյ վարդապետութիւնը զարդարեն ամէն բաներու պ մէջ։
11 Պատճառն որ Աստուծոյ փրկութիւն տուող ջ շնորհքըն երեւեցաւ ամէն ռ մարդկանց.
12 Որ ալ խրատումէ մեզ՝ որ ուրանանք ս ամբարշտութիւնքն ու աշխարհական ցանկութիւնները. եւ պարկեշտութենով, եւ արդարութենով եւ աստուածպաշտութենով ապրինք այս վ աշխարհքումս.
13 Եւ մտիկ ընենք այն տ երանելի ր յուսոյն՝ եւ մեծ Աստուծոյ եւ մեր

ղ Ա Կորնթ. ԺԴ. 31. Եփես. Ե. 22. Կող. Գ. 18. Ա Տիմ. Բ. 11. Ա Պետ. Գ. 1. 5.
ճ Հռովմ. Բ. 24. Ա Տիմ. Զ. 1.
մ Ա Տիմ. Դ. 12. Ա Պետ. Ե. 3.
յ Ա Տիմ. Զ. 3.
ն Նեեմ. Ե. 9. Ա Տիմ. Ե. 14. Ա Պետ. Բ. 12. 15. Գ. 16.
շ Բ Թես. Գ. 14.
ո Եփես. Զ. 5. Կող. Գ. 22. Ա Տիմ. Զ. 1. 2. Ա Պետ. Բ. 18.
չ Եփես. Ե. 24.
պ Մատթ. Ե. 16. Փիլիպ. Բ. 15.
ջ Հռովմ. Ե. 15. Գաղ. Գ. 4. 5. Ա Պետ. Ե. 12.
ռ Ղուկ. Գ. 6. Յովհ. Ա. 9. Ա Տիմ. Բ. 4.
ս Հռովմ. Զ. 19. Ա Պետ. Դ. 2. Ա Յովհ. Բ. 16.
վ Ղուկ. Ա. 75. Եփես. Ա. 4. Կող. Ա. 22. Ա Թես. Դ. 7.
տ Ա Կորնթ. Ա. 7. Փիլիպ. Գ. 20. Բ Պետ. Գ. 12.
ր Գործ. ԻԴ. 15. Կող. Ա. 5. 23. Գղ. Ա. 2. Գ. 7.

ծին Աստուծոյ՝ եւ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի ։
14 Որ ետ զանձն վասն մեր, զի փրկեսցէ զմեզ յամենայն անօրէնութենէ, եւ սրբեսցէ իւր ժողովուրդ անդչական՝ նախանձաւոր գործոց բարութեան ։
15 Զայս խօսեաց՝ եւ մխիթարեա եւ յանդիմանեա ամենայն սաստիւք. զի մի ոք իցէ, որ զքեզ արհամարհիցէ ։

Փրկիչ Յիսուսի Քրիստոսի փառաւոր ն յայտնութեանը ։
14 Որ իրեն անձը մեզ համար շ տուաւ, որ մեզ ամէն անօրէնութենիցը փրկէ, եւ ո սրբելով իրեն համար յատուկ ժողովուրդ չ ընէ՝ որ ջերմեռանդութենով բարի գործքերուն պ հետեւի ։
15 Դա խօսէ եւ յորդորէ եւ յանդիմանէ ամէն հրամանաւ. որ մէկը չը լինի, որ քեզ ռ անարգէ ։

## ԳԼ. Գ

1 Եւ յուշ արասջիր նոցա, իշխանութեանց եւ պետութեանց հնազանդ լինել՝ եւ հպատակ կալ. եւ ամենայն գործոց բարութեան պատրաստ գտանել ։
2 Մի զոք հայհոյել՝ անկռիւս լինել՝ հեզս, զամենայն ցածութիւն առ ամենայն մարդիկ ցուցանել ։
3 Զի էաք երբեմն եւ մեք անմիտք, անհաւանք, մոլորեալք, ծառայէաք ցանկութեանց եւ պէսպէս անառակութեանց. չարութեամբ՝ եւ նախանձու շրջէաք, ատեցեալք՝ եւ զմիմեանս ատէաք ։
4 Իսկ յորժամ քաղցրութիւն եւ մարդասիրութիւն Փրկչին մերոյ Աստուծոյ յայտնեցաւ,
5 Ո՛չ ի գործոց արդարութեան՝ զոր արարաք մեք, այլ ըստ իւրում

1 Եւ նորանց մտքերը բեր՝ որ իշխանութիւններուն եւ պետութիւններուն հնազանդ ա լինին, հպատակ կենան, եւ ամէն բարի գործքերի համար պատրաստ բ գըտնըւլին ։
2 Մէկուն հակառակ գ չը հայհոյեն, կռիւ դ չանեն, հեզ ե լինին, ամէն մարդկանց ամէն խոնարհութիւն ցոյց զ տան ։
3 Ինչու որ մենք ալ մէկ ժամանակ անմիտ էինք, անհնազանդ, մոլորված, ցանկութիւններու եւ կերպ կերպ անառակութիւններուն ծառայումէինք. չարութենով եւ նախանձով վարվումէինք, ատելի էինք եւ իրար է ատումէինք ։
4 Բայց երբոր մեր ը Փրկիչ Աստուծոյ քաղցրութիւնն ու մարդասիրութիւնը թ յայտնըվեցաւ,
5 Ոչ թէ արդարութեան գործքերուն համար որ մենք ժ ըրինք,

ն Կող. Գ. 4. Բ Տիմ. Դ. 1. 8. Եբր. Թ. 28. Ա Պետ. Ա. 7. Ա Յովհ. Գ. 2.
շ Գաղ. Ա. 4. Բ. 20. Եփես. Ե. 2. Ա Տիմ. Բ. 6.
ո Եբր. Թ. 14.
չ Ելից. ԺԹ. 5. Բ Օրին. Է. 6. ԺԴ. 2. ԻԶ. 18. Ա Պետ. Բ. 9.
պ Եփես. Բ. 10. Գղ. Դ. 8.
ջ Բ Տիմ. Դ. 2.
ռ Ա Տիմ. Դ. 12

—

ա Հռոմ. ԺԳ. 1. Ա Պետ. Բ. 13
բ Կող. Ա. 10. Բ Տիմ. Բ. 21. Եբր. ԺԳ. 21.
գ Եփես. Դ. 31.
դ Բ Տիմ. Բ. 24. 25.
ե Փիլիպ. Դ. 5.
զ Եփես. Դ. 2. Կող. Գ. 12.
է Ա Կորնթ. Զ. 11. Եփես. Բ. 1. Կող. Ա. 21. Գ. 7. Ա Պետ. Դ. 3.
ը Ա Տիմ. Բ. 3.
թ Գղ. Բ. 11.
ժ Հռոմ. Գ. 20. Թ. 11. ԺԱ. 6. Գաղ. Բ. 16. Եփես. Բ. 4. 8. 9. Բ Տիմ. Ա. 9.

ողորմութեանն՝ ապրեցոյց զմեզ 'ի ձեռն աւազանին միւսանգամ ծննդեանն, եւ նորոգութեամբ Հոգւոյն Սրբոյ ։
6 Զոր եհեղ 'ի մեզ առատութեամբ, 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի Փրկչին մերոյ ․
7 Զի արդարացեալք շնորհօքն՝ եղիցուք ժառանգաւորք յուսով կենացն յաւիտենականաց ։
8 Հաւատարիմ է բանս ․ եւ 'ի սոյն կամիմ զքեզ հաստատուն լինել, զի փոյթ արասցեն գործոց բարեաց վերակացու լինել՝ հաւատացեալքն յԱստուած, զի այն է բարի եւ օգտակար մարդկան ։
9 Այլ զյիմարութեան խնդիրս՝ եւ զտոհմաթիւս, եւ զհեռ՝ եւ զօրինական կռիւսն 'ի բաց մերժեսջիր ․ զի անօգուտք են՝ եւ ունայնք ։
10 Յառնէ հերձուածողէ՝ յետ միանգամ եւ երկիցս խրատելոյ՝ հրաժարեսջիր ։
11 Գիտասջիր՝ զի թիւրեալ է այնպիսին, եւ մեղանչէ՝ անձամբ զանձն դատապարտեալ ։
12 Այլ յորժամ յղեցից առ քեզ զԱրտեմայ կամ զՏիւքիկոս, փութասջիր գալ առ իս 'ի Նիկոպօլիս ․ զի անդ եդի 'ի մտի ձմերել ։
13 Եւ զԶենան զօրինական դպիր՝ եւ զԱպօղոս՝ փութով արձակեսջիր, զի մի ինչ պակասիցէ նոցա ։
14 Ուսցին եւ մերքն եւս՝ բարեաց գործոց վերակացու լինել 'ի պէտս

այլ իրեն ողորմութեան համար՝ ապրեցուց մեզ նոր ծննդեան աւազանովը, եւ Սուրբ Հոգւոյ է նորոգութենովը ․
6 Որ նորան առատութենով թափեց մեզ վերայ, մեր Փրկիչ Յիսուսի Քրիստոսի ը ձեռովը ․
7 Որ շնորհքով թ արդարացած յուսով այն յաւիտենական ժ կեանքին ժառանգ ի լինինք ։
8 Հաւատարիմ է այս լ խօսքս ․ եւ կամենում եմ որ իսկ սորանում հաստատ լինիս ․ որ նորանք որ Աստուծոյն հաւատացին, ջանք անեն բարի գործքերի վերայ խ կենալոյ ․ ինչու որ նա է բարի եւ մարդկանց օգտակար ․
9 Բայց յիմար վիճաբանութիւնները, եւ ազգաբանութիւնները եւ հակառակութիւնները, եւ օրէնքի կռիւները ծ ձգէ ․ ինչու որ անօգուտ եւ ունայն կ են ։
10 Հերձուածող մարդուն՝ երբոր մէկերկու անգամ խրատել հ ես, յետ ձ կաց ։
11 Գիտա որ այնպէսին ծռված է եւ մեղք է գործում՝ ինքն իրեն անձն ղ դատապարտելով ։
12 Բայց երբոր Արտեմասին կամ Տիւքիկոսին ուղարկեմ քեզ ճ մօտ՝ փութա որ գաս Նիկոպօլիս ինձ մօտ ․ ինչու որ միտքս դրի՝ որ ձմեռն այն տեղ մնամ ։
13 Եւ օրէնք գիտող Զենասին՝ եւ Ապօղոսին շուտով մ արձակէ ․ մին բան չը պակասի նորանց ։
14 Բայց մերոնքն էլ թող սովրին բարի գործքերի վերայ յ կենալ

է Յովհ. Գ. 3. 5 ։ Եփես. Ե. 26 ։ Ա Պետ. Գ. 21 ։
ը Եզեկ. ԼԶ. 25 ։ Յովէլ. Բ. 28 ։ Յովհ. Ա. 16 ։ Գործ. Բ. 33 ։ Ժ. 4. 5 ։ Հռովմ. Ե. 5 ։
թ Հռովմ. Գ. 24 ։ Գաղ. Բ. 16 ։ Գլ. Բ. 11 ։
ժ Գլ. Ա. 2 ։
ի Հռովմ. Ը. 23, 24 ։
լ Ա Տիմ. Ա. 15 ։
խ Համար. 1. 14 ։ Գլ. Բ. 14 ։
ծ Ա Տիմ. Ա. 4 ։ Բ Տիմ. Բ. 23 ։ Գլ. Ա. 14 ։
կ Բ Տիմ. Բ. 14 ։
հ Բ Կորնթ. ԺԳ. 2 ։
ձ Մատթ. ԺԸ. 17 ։ Հռովմ. ԺԶ. 17 ։ Բ Թես. Գ. 6. 14 ։ Բ Տիմ. Գ. 5 ։ Բ Յովհ. 10 ։
ղ Գործ. ԺԳ. 46 ։
ճ Գործ. Ի. 4 ։ Բ Տիմ. Դ. 12 ։
մ Գործ. ԺԸ. 24 ։
յ Համար. 8 ։

կարեւորս · զի մի անպտուղք լինիցին ։

15 Ողջոյն տան քեզ՝ որ ընդ իս են ամենեքին · ողջոյն տուր սիրելեաց մերոց հաւատովք · շնորհք ընդ ձեզ ամենեսին · ամէն ։

հարկաւոր բաներին համար , որ առանց պտղոյ ղ չըլլան ։

15 Ողջոյն են տալիս քեզ այն ամէնքն՝ որ ինձ հետ են · ողջոյն տուր նորանց՝ որ սիրում են մեզ հաւատքով · շնորհքը ձեզ ամէնից հետ լինի · ամէն ։

Տիտոսի Կրետացւոց եկեղեցւոյ առաջին ձեռնադրելոյ եպիսկոպոսին գրեալ Մակեդոնացւոց Նիկոպօլսէ ([illegible]) գրեցաւ ։

# ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

## ԱՌ ՓԻԼԻՄՈՆ

1 ՊՕՂՈՍ կապեալ Յիսուսի Քրիստոսի , եւ Տիմոթէոս եղբայր , Փիլիմոնի սիրելւոյ՝ եւ գործակցի մերոյ ,

2 Եւ Ապփեայ քեռ , եւ Արքիպպեայ զինուորակցի մերոյ՝ եւ տանեին եկեղեցւոյդ ,

3 Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ՝ եւ ՚ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ ։

4 Գոհանամ զԱստուծոյ իմոյ յամենայն ժամ՝ յիշատակեալ յաղօթս իմ վասն քո ,

5 Իբրեւ լսեմ զքո հաւատոն եւ զսէր , զոր ունիս առ Տէր Յիսուս՝ եւ առ ամենայն սուրբս ,

6 Զի հաղորդութիւն հաւատոյն քոյ արդար լինիցի՝ գիտութեամբ ամենայն բարութեան , որ ՚ի ձեզ է ՚ի Քրիստոս Յիսուս ։

7 Խնդութիւն յոյժ ընկալայ՝ եւ մխիթարութիւն ՚ի վերայ սիրոյն քո · զի գութք սրբոց քեւ հանգուցեալ են եղբայր ։

8 Վասն որոյ բազում համարձա-

1 ՊՕՂՈՍ Յիսուսի Քրիստոսի կապուածը՝ եւ Տիմոթէոս-եղբայրը՝ Փիլիմոնին սիրելիին եւ մեր բ գործընկերին ·

2 Եւ Ապփիա քոյրին՝ եւ գ Արքիպպոսին մեր զինուորութեան դ ընկերին՝ եւ եկեղեցւոյն որ քու տանդ ե է ,

3 Շնորհք ձեզ հետ , եւ խաղաղութիւն Աստուած մեր Հօրից՝ եւ Տէր Յիսուս Քրիստոսից ։

4 Գոհանում եմ իմ Աստուծանից ամէն ժամանակ՝ յիշելով քեզ իմ է աղօթքումս ,

5 Երբոր լսում եմ քո հաւատքդ եւ այն սէրը , որ ունիս դէպի Տէր Յիսուսը՝ եւ դէպի ամէն ը սրբերին ,

6 Որ քո հաւատքի հաղորդակցութիւնը ազդարար լինի այն ամէն բարի բաների թ գիտութիւնովը՝ որ ունիք Քրիստոս Յիսուսումն ։

7 Շատ ուրախութիւն եւ մխիթարութիւն ընդունեցի քո սիրոյդ պատճառովը · եւ սրբերի սրտերը քեզանով հանգիստ են գտել ով ժ եղբայր ։

8 Նորահամար էլ շատ համարձա-

ղ Հռովմ. ԺԵ. 28. Փիլիպ. Ա. 11. Գ. 17. Կող. Ա. 10. Բ Պետ. Ա. 8.

—

ա Եփես. Գ. 1. Դ. 1. Բ Տիմ. Ա. 8. Համար. 9.

բ Փիլիպ. Բ. 25.

գ Կող. Դ. 17.

դ Փիլիպ. Բ. 25.

ե Հռովմ. ԺԶ. 4. Ա Կորնթ. ԺԶ. 19.

զ Եփես. Ա. 2.

է Եփես. Ա. 16. Ա Թես. Ա. 2. Բ Թես. Ա. 3.

ը Եփես. Ա. 15. Կող. Ա. 4.

թ Փիլիպ. Ա. 9. 11.

ժ Բ Կորնթ. Է. 13. Բ Տիմ. Ա. 16. Համար. 20.

կութիւն ունիմ 'ի Քրիստոս հրաման
տալ քեզ զպատշաճն:
9 Վասն սիրոյ՝ մանաւանդ թէ
աղաչեմ իսկ այնպիսի լեալ՝ որպէս
եւ Պօղոս ծերացեալ, արդ եւ կապ-
եալ եւս Յիսուսի Քրիստոսի:
10 Աղաչեմ զքեզ վասն որդւոյ ի-
մոյ՝ զոր ծնայ 'ի կապանս իմ, զՈ-
նեսիմոս.
11 Որ երբեմն անպիտան էր քեզ.
բայց արդ քեզ եւ ինձ պիտանի,
12 Զոր յղեցի առ քեզ: Եւ դու
զդա ընկալջիր՝ այսինքն է զիմ ա-
ղիս:
13 Զոր կամէի առ իս արգելուլ,
զի ընդ քո ունիցի ինձ սպաս 'ի
կապանս աւետարանին:
14 Բայց առանց քո կամաց ոչինչ
կամեցայ առնել, զի մի բարիքդ քո
'ի հարկէ լինիցին՝ այլ կամաւ:
15 Եւ թերեւս վասն այնորիկ մեկ-
նեցաւ առ ժամանակ մի, զի յա-
ւիտեան ունիցիս զդա:
16 Մի եւս իբրեւ զծառայ՝ այլ 'ի
վեր քան զծառայ, իբրեւ զեղբայր
սիրելի. եթէ ինձ այսպէս՝ որչափ
եւս առաւել քեզ մարմնով եւ Տե-
առամբ:
17 Եթէ զիս քեզ հաղորդ համա-
րիցիս, ընկալ զդա իբրեւ զիս.
18 Եւ եթէ յանցուցեալ ինչ իցէ
կամ պարտիցի, զայն ինձ համար-
եսց:
19 Ես Պօղոս գրեցի իմով ձեռամբ.
ես հատուցից, զի մի ասիցեմ քեզ՝
թէ եւ դու զանձն քո ինձ պարտիս:
20 Այո եղբայր՝ ես քո փոխանակ
եղեց 'ի Տէր. հանգո զաղիս իմ 'ի
Քրիստոս:

կութիւն ունիմ Քրիստոսումը՝ հրա-
մայել քեզ ինչ որ արժան է է.
9 Բայց սիրոյ համար աւելի աղա-
չումեմ՝ իսկ այնպէսի լինելով՝ ինչ-
պէս որ ծերացած Պօղոս, եւ հիմիկ
էլ Յիսուսի Քրիստոսի ւ կապուած:
10 Աղաչումեմ քեզ իմ Ոնեսիմոս
որդույս ի համար՝ որ նորան ծնայ իմ
ծ կապանքներումս.
11 Որ մին ժամանակ անպիտան
էր քեզ. բայց հիմիկ քեզ եւ ինձ
օգտակար.
12 Նորան ուղարկեցի քեզ մօտ:
Եւ դու ընդունէ՛ զորան՝ ինչպէս
իմ ներսի աղիքս:
13 Կամենումէի նորան ինձ մօտ
բռնել, որ քո տեղը ծառայութիւն
անէ ինձ աւետարանի կ կապանք-
ներումս:
14 Բայց առանց քո կամացդ չը
կամեցայ մին բան անել, որ քո
բարիքդ բռնադատութենով չը լի-
նին՝ բայց հ կամքով:
15 Եւ կարելի է՝ թէ նրահամար
մին ժամանակ հեռացաւ քեզանից,
որ յաւիտեան ունենաս յ զորան:
16 Ո՛չ թէ կրկին ինչպէս ծառայ,
այլ ծառայիցն աւելի վեր, ինչպէս
սիրելի ղեղբայր. որ եթէ ինձ
այսպէս է, որքան էլ աւելի քեզ՝
թէ մարմնոյ եւ թէ Տէրի ճ կողմանէ:
17 Թէ որ ինձ քո ընկեր համա-
րես, ընդունէ՛ զորան՝ ինչպէս մ ինձ:
18 Եւ թէ որ քեզ մին վաս բան
արած լինի՝ կամ պարտք ունենայ,
նա ինձ համարէ:
19 Ես Պօղոս իմ ձեռովս գրեցի.
ես կը վճարեմ. որ չասեմ քեզ՝ թէ
դու քո անձդ ինձ պարտական ես:
20 Այնպէս է եղբայր, թող հա-
տուցումն առնեմ քեզանից Տէրու-
մը. հանգստացրու այդ իմ աղիքս
յ Քրիստոսումը:

ե Ա թես. Բ. 7.
ւ Հռոմ. 1.
ի Կող. Դ. 9.
ծ Ա կորնթ. Դ. 15.
Գաղ. Դ. 19.
կ Ա կորնթ. ԺԶ. 17. Փիլիպ. Բ. 30.
հ Բ կորնթ. Թ. 7.
յ Ծննդ. ԽԵ 5 8.
ղ Մատթ. ԻԳ. 8. Ա Տիմ. Զ. 2.
ճ Կող. Գ. 22.
մ Բ կորնթ. Ը. 23.
յ Հռոմ. 7.

21 Յուսացեալ 'ի հնազանդութիւնըդ քո՝ գրեցի առ քեզ . քանզի գիտեմ թէ առաւել ևս քան զոր ասեմդ՝ առնիցես ։

22 Միանգամայն և պատրաստեսջիր ինձ վանս . քանզի յուսամ՝ եթէ աղօթիւք ձերովք շնորհեցայց ձեզ ։

23 Ողջոյն տայ ձեզ Եպափրաս գերեկից իմ 'ի Քրիստոս Յիսուս .

24 Եւ Մարկոս, և Արիստարքոս, և Դեմաս, և Ղուկաս՝ գործակիցք իմ ։

25 Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ոգւոյդ ձերում . ամէն ։

21 Քո հնազանդութեան վերայ վստահացած՝ գրեցի քեզ . ինչու որ գիտումեմ որ էլ աւելի կանես, քան թէ նա որ [ն] ասումեմ ։

22 Սրավերայ կենալոյ տեղ էլ պատրաստէ ինձ . ինչու որ յոյս [շ] ունիմ՝ որ ձեր աղօթքներով շընորհվիմ [ո] ձեզ ։

23 Ողջոյն է տալիս քեզ Եպաֆրասն իմ գերութեան ընկերը՝ Քրիստոս [չ] Յիսուսումը .

24 Եւ [պ] Մարկոս, և [ջ] Արիստարքոս, և [ռ] Դեմաս, և Ղուկաս՝ իմ գործոյ [ս] ընկերներս ։

25 Տէր Յիսուսի շնորհքն ձեր հոգւոյ հետ . [վ] ամէն ։

Փիլիմոնի և Ապփեայի՝ Ոնեսիմոսի տերերին, և Արքիպոսին Կողոսացոց եկեղեցու սարկաւագին մեր Հռոմ քաղաքից գրեցաւ, Ոնեսիմոս ծառայի ձեռովը ։

# ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

## ԱՌ ԵԲՐԱՅԵՑԻՍ

---

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 ԲԱԶՈՒՄ մասամբք և բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարսն մեր մարգարէիւք ։

2 'Ի վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ Որդւովն՝ զոր եդ ժառանգ ամենայնի . որով և զյաւիտեանսն արար ։

3 Որ է լոյս փառաց՝ և նկարագիր էութեան նորա . որ կրէ զամենայն բանիւ զօրութեան իւրոյ .

1 ՇԱՏ կերպերով և շատ օրինակներով Աստուած առաջուց մեր հարանց հետ խօսեց մարգարէների [ա] ձեռովը .

2 Այս վերջին [բ] օրերումս մեզ հետ խօսեց [գ] Որդովը, որ նորան ամէն բանի ժառանգ [դ] դրաւ, որ նորանով էլ յաւիտեանները [ե] արաւ ։

3 Որ նորա փառաց լոյսն է՝ և նորա էութեան [զ] պատկերը . որ իրեն զօրաւոր խօսքովն ամէն բան

ն Բ Կորնթ. Է. 16 ։
շ Փիլիպ. Ա. 25 . Բ. 24 ։
ո Բ Կորնթ. Ա. 11 ։
չ Կող. Ա. 7 . Դ. 12 ։
պ Գործ. ԺԲ. 12 . 25 ։
ջ Գործ. ԺԹ. 29 ։ Ի. 2 . Կող. Դ. 10 ։
ռ Կող. Դ. 14 ։
ս Բ Տիմ. Դ. 11 ։
վ Բ Տիմ. Դ. 22 ։

—

ա Թու. ԺԲ. 6 . 8 ։
բ Բ Օրէն. Դ. 30 . Գաղ. Դ. 4 . Եփես. Ա. 10 ։
գ Յովհ. Ա. 17 . ԺԵ. 15 . Գղ. Բ. 3 ։
դ Սաղ. Բ. 8 . Մատթ. ԻԱ. 38 . ԻԸ. 18 . Յովհ. Գ. 35 . Հռովմ. Ը. 17 ։
ե Յովհ. Ա. 3 . Ա Կորնթ. Ը. 6 . Կող. Ա. 16 ։
զ Յովհ. Ա. 14 . ԺԴ. 9 . Բ Կորնթ. Դ. 4 . Կող. Ա. 15 ։

սրբութիւն մեղաց մերոց արարեալ՝ նստաւ ընդ աջմէ մեծութեանն ՚ի բարձունս ։

4 Այնչափ առաւել եղեալ քան զհրեշտակս . որչափ լաւ ևս քան զնոսա անուան ժառանգեաց ։

5 Քանզի ցո՞ երբէք ասաց ՚ի հրեշտակաց . Որդի իմ ես դու՝ ես այսօր ծնայ զքեզ . և դարձեալ՝ թէ Ես եղէց նմա ՚ի Հայր , և նա եղիցի ինձ յՈրդի ։

6 Այլ յորժամ միւսանգամ մուծցէ զանդրանիկն յաշխարհ , ասէ . Երկիրպագցեն նմա ամենայն հրեշտակք Աստուծոյ ։

7 Այլ առ հրեշտակսն ասէ . Ո՛ արար զհրեշտակս իւր հոգիս , և զպաշտօնեայս իւր բոց հրոյ ։

8 Իսկ ցՈրդին ասէ . Աթոռ քո Աստուած յաւիտեանս յաւիտենից . գաւազան ուղղութեան՝ գաւազան արքայութեան քո ։

9 Սիրեցեր զարդարութիւն և ատեցեր զանօրէնութիւն . վասն այսորիկ օծ զքեզ Աստուած՝ Աստուած քո իւղով ուրախութեան՝ առաւել քան զընկերս քո ։

10 Եւ դու Տէր ՚ի սկզբանէ զերկիր հաստատեցեր . և գործք ձեռաց քոց երկինք են ։

11 Նոքա կորիցեն՝ և դու կաս՝ և մնաս . ամենեքեան իբրև ըզ ձորձս մաշեսցին ,

12 Եւ իբրև զվերարկուս . գալարեսցես զնոսա իբրև զհանդերձ , և գալարեսցին . բայց դու նոյն

է պահպանում . որ երբոր մեր մեղքերի սրբութիւն ըրաւ՝ մեծութեան աջ կողմն նստեց թ ՚ի բարձունս ։

4 Եւ հրեշտակներիցն այնքան աւելի գերազանց էլաւ՝ որքան նորանցից աւելի գերազանց անուն ժ ժառանգեց ։

5 Ինչու որ հրեշտակներից որին ասաց . Դու իմ որդիս ես , ես այսօր ծնայ ի քեզ . և դարձեալ թէ Ես նորան Հայր կը լինիմ , և նա ինձ Որդի լ կը լինի ։

6 Եւ դարձեալ երբոր առաջնեկին աշխարհք է խ մտցնում՝ ասում է . Թող երկրպագութիւն տան նորան Աստուծոյ ամէն ծ հրեշտակները ։

7 Բայց հրեշտակների համար ասում է . Նա որ իւրեն հրեշտակները հոգի արաւ , և իւրեն պաշտօնեաները կրակի կ բոց ։

8 Բայց Որդուն ասում է . Աստուած քո աթոռդ յաւիտեանս յաւիտենից . քո թագաւորութեան գաւազանը , շիտակ գաւազան է ։

9 Սիրեցիր արդարութիւնը և ատեցիր հ անօրէնութիւնը . որա համար Աստուած՝ քո Աստուածդ օծեց քեզ ուրախութեան իւղովը՝ աւելի քանթէ քո ձ ընկերներդ ։

10 Եւ դու ով Տէր , սկզբից երկիրը հաստատեցիր . և երկինքը քո ձեռքերի գործն է ։

11 Նորանք կը կորչին , բայց դու կը կենաս՝ կը մնաս . ամէնքը շորերի պէս կը մաշուին ,

12 Եւ վերարկուի պէս կը գալարես նորանց հագուստի պէս՝ և կը գալարուին . բայց դու հենց նա ես՝

է Յովհ . Ա . 3 . Կող . Ա . 17 . Յայտ . Դ . 11 .
ը Գլ . Է . 27 . Թ . 12 . 14 . 16 .
թ Սաղ . ՃԺ . 1 . Եփես . Ա . 20 . Գլ . Ը . 1 . Ժ . 12 . ԺԲ . 2 . Ա Պետ . Գ . 22
ժ Եփես . Ա . 21 . Փիլիպ . Բ . 9 , 10 .
ի Սաղ . Բ . 7 . Գործ . ԺԳ . 33 Գլ . Ե . 5 .
լ Բ Թագ . Է . 14 . Ա Մնաց . ԻԲ . 10 . ԻԸ . 6 . Սաղ . ՁԹ . 26 . 27 .
խ Հռովմ . Ը . 29 . Կող . Ա . 18 . Յայտ . Ա . 5 .
ծ Բ Օրին . ԼԲ . 42 . Սաղ . ՂԷ . 7 . Ա Պետ . Գ . 22 .
կ Սաղ . ՃԴ . 4 .
հ Սաղ . ԽԵ . 6 . 7 .
ձ Եսայ . ԿԱ . 1 . Գործ . Դ . 27 . Ժ . 38 .
ղ Սաղ . ՃԲ . 25 .

նոյն ես՝ և ամք քո ոչ պակասեն։
13 Յո՞ երբէք ասաց 'ի հրեշտա-
կաց. նիստ ընդ աջմէ իմմէ՝ մին-
չև եդից զթշնամիս քո պատուան-
դան ոտից քոց։
14 Ոչ ապաքէն ամենեքեան հոգիք
են հարկաւորք՝ որ առաքին 'ի սպա-
սաւորութիւն վասն այնոցիկ, որ
ժառանգելոցն են զփրկութիւն։

և քո տարիները չեն [*] պակասիլ։
13 Հրեշտակներից բնաւ որի՞ն ա-
սաց. Իմ աջ կողմս նստէ՛ մինչև
որ քո թշնամիներդ քո ոտքի կո-
խելիք [*] դնեմ։
14 Չէ՞ որ ամէնքը պաշտօնեայ հո-
գիներ [*] են՝ որ ուղարկւում են սպա-
սաւորութիւն անելոյ նորանց հա-
մար՝ որ փրկութիւնը պիտի [*] ժա-
ռանգեն։

## ԳԼ. Բ

1 Վասն այնորիկ պարտ է մեզ
առաւել ևս ունկնդիր լինել բա-
նիցն ասացելոց՝ զի մի երբէք նուա-
զեսցուք։
2 Զի եթէ որ 'ի ձեռն հրեշտա-
կաց խօսեցաւ բանն՝ հաստատուն
եղև, և ամենայն յանցաւորու-
թիւն և անհնազանդութիւն ընկա-
լաւ զպատիժ պատուհասի։
3 Մեք զիա՞րդ ապրեսցուք հեղ-
գացեալք յայնպիսի փրկութենէ,
որ սկիզբն առ խօսելոյ 'ի Տեառնէ.
և 'ի ձեռն այնոցիկ որ լուանն՝ 'ի
մեզ հաստատեցաւ.
4 Վկայեալ յԱստուծոյ նշանօք
և արուեստիւք և պէսպէս զօրու-
թեամբք, և մասամբք Հոգւոյն
Սրբոյ ըստ իւրոց կամաց։
5 Զի ոչ եթէ հրեշտակաց հնա-

1 Նորահամար՝ պէտք է մեզ, որ
էլ աւելի ականջ դնենք այն ասած
բաներին, որ չը լինի թէ դատար-
կացած պակասվենք։
2 Պատճառն որ՝ եթէ այն բանն
հաստատ էլաւ՝ որ հրեշտակների ձե-
ռովը [*] խօսվեցաւ, և ամէն յան-
ցանքն ու անհնազանդութիւնն ըն-
դունեց իրեն արդար [*] պատիժը.
3 Ապա մենք ինչպէս կը պրծնը-
վինք, թէ որ անհոգ լինինք այն-
պէսի փրկութեան [*] համար՝ որ
սկզբումը քարոզուեցաւ [*] Տէրիցը,
և նորանց ձեռովն որ լսեցին՝ մեր
միջումը [*] հաստատվեցաւ.
4 Որ Աստուած նորան [*] վկայեց
նշաններով և հրաշքներով, և
կերպ կերպ [*] զօրութիւններով, և
Սուրբ Հոգույ բաշխած [*] պարգևե-
ներով՝ ինչպէս որ ինքն [*] կամե-
ցաւ։
5 Պատճառն որ՝ չէ թէ հրեշտակ-

[*] Եսայ. ԼԴ. 4. ԾԱ. 6. Մատթ. ԻԴ. 35. Բ Պետ. Գ. 7. 10. Յայտ. ԻԱ. 1.
[*] Սաղ. ՃԺ. 1. Մատթ. ԻԲ. 44. Մարկ. ԺԲ. 36. Ղու. Ի. 43. Գլ. Ժ. 12. Համար. 3.
[*] Ծննդ. ԺԹ. 16. ԼԲ. 1, 2. 24. Սաղ. ԼԴ. 7. ՂԱ. 11. ՃԳ. 20. 21. Դան. Գ. 28. Է. 10. Ժ. 11. Մատթ. ԺԸ. 10. Ղու. Ա. 19. Բ. 9. 13. Գործ. ԺԲ. 7. ԻԷ. 23.
[*] Հռովմ. Ը. 17. Տիտ. Գ. 7. Յակ. Բ. 5. Ա Պետ. Գ. 7.
—
[*] Բ Օրին. ԼԳ. 2. Սաղ. ԿԸ. 17. Գործ. Է. 53. Գաղ. Գ. 19.
[*] Թու. ԺԵ. 30, 31. Բ Օրին. Գ. 3. ԺԷ. 2. 5. 12. ԻԷ. 26.
[*] Գլ. Ժ. 28. 29. ԺԲ. 25.
[*] Մատթ. Դ. 17. Մարկ. Ա. 14. Գլ. Ա. 2.
[*] Ղու. Ա. 2.
[*] Մարկ. ԺԶ. 20. Գործ. ԺԴ. 3. ԺԹ. 11. Հռովմ. ԺԵ. 18. 19. Ա Կորնթ. Բ. 4.
[*] Գործ. Բ. 22. 43.
[*] Ա Կորնթ. ԺԲ. 4. 7. 11.
[*] Եփես. Ա. 5. 9.

զանդեցոյց զհանդերձեալ աշխարհն,
վասն որոյ մեքս խօսիմք ։

6 Վկայեաց ոք ուրեք՝ եւ ասէ.
Զի՞նչ է մարդ՝ եթէ յիշեցես զնա,
կամ որդի մարդոյ՝ թէ այց արասցես նմա ։
7 Փոքր մի խոնարհ արարեր զնա
քան զհրեշտակս. փառօք եւ պատուով պսակեցեր զնա՝ եւ կացուցեր
զնա ՚ի վերայ ձեռակերտաց քոց ։

8 Զամենայն ինչ հնազանդ արարեր ՚ի ներքոյ ոտից նորա. արդ՝ ՚ի
հնազանդեցուցանելն զամենայն, ոչինչ եթող անհնազանդ ՚ի նմանէ.
բայց այժմ ոչ եւս տեսանեմք հնազանդեալ նմա զամենայն ։

9 Այլ զփոքր մի խոնարհեալ քան
զհրեշտակս տեսանեմք զՅիսուս՝
վասն չարչարանացն մահուն, փառօք
եւ պատուով պսակեալ. զի շնորհօքն Աստուծոյ վասն ամենեցուն
զմահ ճաշակեսցէ ։

10 Զի վայելէր նմա, վասն
որոյ ամենայն՝ եւ որով ամենայն,
բազում որդիս ՚ի փառս ածել՝ եւ
զառաջնորդ փրկութեան նոցա չարչարանօք կատարել ։

11 Զի որ սրբէն եւ որ սրբին՝ ՚ի
միոջէ են ամենեքին, վասն որոյ
ոչ ամօթ համարի եղբարս անուանել զնոսա եւ ասել.

12 Պատմեցից զանուն քո եղբարց

ներքին հնազանդ արաւ այն նոր գալու աշխարհքն, որ մենք նորանից
ժ խօսումենք ։
6 Մինը վկայեց մինտեղ եւ ասումէ. Մարդն ի՞նչ է՝ որ դու յիշես նորան, կամ մարդոյ որդին՝ որ
տես գաս նորան ։
7 Մինչեւ ցած արիր նորան քան
թէ հրեշտակները. փառքով եւ
պատուով պսակեցիր նորան՝ եւ քո
ձեռքի գործքերին վերայ կանգնացրիր ի նորան ։
8 Ամէն բան հնազանդ արիր նորա ոտաց տակը. ուրեմն ամէնն որ
հնազանդացրաւ՝ ոչ մին բան չը
թողեց՝ որ հնազանդ չը լինի լ նորան. բայց հիմիկ դեռ չենք տեսնում՝ թէ ամէն բան հնազանդ է
խ նորան ։
9 Բայց նորան որ մինչեւ աւելի
ցած էլաւ քանթէ հրեշտակները՝
տեսնումենք որ Յիսուսն է, մահի
չարչարանքերին ծ համար. փառքով
եւ պատուով կ պսակված. որ Աստուծոյ շնորհքովն ամէնին համար
մահի համն հ առնէ ։
10 Պատճառն որ վայելումէր ձ նորան՝ որ ամէն բան նորա համար՝
եւ ամէն բան նորանով ղ է, որ շատ
որդիք փառքի մէջ տանի, եւ նորանց փրկութեան ճ առաջնորդը
չարչարանքով մ կատարէ ։
11 Ինչու որ՝ նա որ սրբումէ, եւ
նորանք՝ որ յ սրբվումեն, ամէնքն
այն մինիցն ն են. եւ նրահամար
ամօթ չի համարում՝ նորանց եղբայր
կոչել՝ եւ շ ասել.
12 Կը պատմեմ քո անունդ իմ եղ-

ժ Գլ. Զ. 5. Բ Պետ. Գ. 13.
ի Յոբ. Է. 17. Սաղ. Ը. 4. ՃԽԳ. 3.
լ Մատթ. ԻԸ. 18. Ա Կորնթ. ԺԵ. 27. Եփես. Ա. 22. Գլ. Ա. 13.
խ Ա Կորնթ. ԺԵ. 25.
ծ Փիլիպ. Բ. 7, 8, 9.
կ Գործ. Բ. 33.
հ Յովհ. Գ. 16. ԺԲ. 32. Հռովմ. Ե. 18. Ը. 32. Բ Կորնթ. Ե. 15. Ա Տիմ. Բ. 6. Ա Յովհ. Բ. 2. Յայտ. Ե. 9.
ձ Ղուկ. ԻԴ. 46.
ղ Հռովմ. ԺԱ. 36.
ճ Գործ. Գ. 15. Ե. 31. Գլ. ԺԲ. 2.
մ Ղուկ. ԺԳ. 32. Գլ. Ե. 9.
յ Գլ. Ժ. 10. 14.
ն Գործ. ԺԷ. 26.
շ Մատթ. ԻԸ. 10. Յովհ. Ի. 17. Հռովմ. Ը. 29.

քոց · 'ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ ։

13 Եւ դարձեալ՝ թէ Ես եղէց յուսացեալ 'ի նա · եւ դարձեալ · Ահաւասիկ ես եւ մանկունք իմ, զոր ետ ինձ Աստուած ։

14 Արդ՝ որովհետեւ մանկունք հաղորդեցան արեան եւ մարմնոյ, եւ ինքն իսկ մերձաւորութեամբ կցորդ եղեւ նոցունց · զի մահուն իւրով խափանեսցէ զայն, որ զիշխանութիւն մահուն ունէր, այսինքն է՝ զՍատանայ ։

15 Եւ ապրեցուսցէ զայնոսիկ, որ մահուն երկիւղիւ հանապազ կէին վտարանդեալք 'ի ծառայութիւն ։

16 Քանզի ոչ երբէք զհրեշտակաց բուռն հարկանէ · այլ զզաւակէն Աբրահամու բուռն հարկանէ ։

17 Ուստի պարտ իսկ էր նմա ամենայնիւ եղբարց նմանել · զի ողորմած լինիցի, եւ հաւատարիմ քահանայապետ յԱստուածակերպս կողմանէ անտի, առ 'ի քաւելոյ զմեղս ժողովրդեանն ։

18 Զի որով ինքն չարչարեցաւ ընդ փորձ առեալ, կարող է եւ փորձանաւորացն օգնական լինել ։

բայրներիս, եւ եկեղեցւոյ միջումը կօրհնեմ [ա] զքեզ,

13 Եւ դարձեալ՝ թէ Ես յոյս կը դնեմ նորայ [բ] վրայ · եւ դարձեալ · Ահա ես եւ իմ [գ] մանուկներս՝ որ նորանց Աստուած տուաւ [դ] ինձ ։

14 Ուրեմն որովհետեւ մանուկներն արիւնին եւ մարմնոյ մասնակից եղան, իսկ ինքն էլ մօտաւոր լինելով մասնակից եղաւ [ե] նորանց · որ իրեն մահովը խափանէ նորան, որ մահի իշխանութիւնն ունէր, այսինքն՝ [զ] Սատանային ։

15 Եւ ապրեցնէ նորանց, որ մահից վախենալով միշտ ծառայութեան մէջ ընկած բռնված [է] էին,

16 Պատճառն որ՝ նա բնաւ հրեշտակներին ձեռք չի տալիս · բայց Աբրահամի զաւակին է ձեռք տալիս ։

17 Իսկ նրա համար պէտք էր նորան՝ որ բոլոր եղբայրներին [ը] նմանիլ · որ ողորմած լինի, եւ հաւատարիմ քահանայապետ Աստուծոյ առաջին անելոյ բաներումն, որ ժողովրդի մեղքերը [թ] քաւէ ։

18 Ինչու որ՝ նորանով որ ինքն չարչարվեցաւ եւ փորձվեցաւ, կարող է նորանց էլ օգնութիւն տալ՝ որ [ժ] փորձվումեն ։

## ԳԼ. Գ.

1 Ուստի եղբարք սուրբք՝ երկնաւոր կոչմանն բաժանորդք, նայեցարուք ընդ առաքեալն եւ ընդ քահանայապետ խոստովանութեան մերոյ՝ ընդ Յիսուս Քրիստոս ·

2 Որ հաւատարիմ է արարչին

1 Ուրեմն սուրբ եղբարք՝ որ երկնաւոր կոչումին մասնակից [ա] էք, մտիկ տուէք մեր դաւանութեան առաքելոյն եւ քահանայապետին՝ Յիսուս [բ] Քրիստոսին ·

2 Որ հաւատարիմ է իրեն հաս-

ա Սաղ. ԻԲ. 22 25. բ Սաղ. ԺԷ. 2. Եսայ. ԺԲ. 2. գ Եսայ. Ը. 18. դ Յովհ. Ժ. 29 ԺԷ. 6. 9. 11. 12. ե Յովհ. Ա. 14. Հռովմ. Ը. 3. Փիլիպ. Բ. 7. զ Ա Կորնթ. ԺԵ. 54. 55. Կող. Բ. 15. Բ Տիմ. Ա. 10. է Ղուկ. Ա. 74. Հռովմ. Ը. 15. Բ Տիմ. Ա. 7. ը Փիլիպ. Բ. 7. թ Գլ. Դ. 15. Ե. 1, 2. ժ Գլ. Գ. 15, 16. Ե. 2. Ե. 25.

—

ա Հռովմ. Ա. 7. Ա Կորնթ. Ա. 2. Եփես. Դ. 1. Փիլիպ. Գ. 14. Բ Թես. Ա. 11. Բ Տիմ. Ա. 9. Բ Պետ. Ա. 10. բ Հռովմ. ԺԵ. 8. Գլ. Բ. 17. Դ. 14. Ե. 5. Զ. 20. Ը. 1. Թ. 11. Ժ. 21.

իւրոյ՝ որպէս եւ Մովսէս յամենայն
'ի տան նորա ։
3 Զի առաւել եւս փառաց քան
զՄովսէս արժանի եղեւ. որչափ ա-
ռաւել պատիւ ունիցի քան զտունն՝
տանն առնելի ։
4 Զի ամենայն տուն կազմի,
յումեքէ կազմի. իսկ որ զամենայն
արար, Աստուած է ։
5 Մովսէս հաւատարիմ է յամե-
նայն տան նորա իբրեւ զծառայ՝ առ
'ի վկայութիւնէ բանիցն ասացելոց ։
6 Այլ Քրիստոս իբրեւ որդի 'ի
վերայ տան իւրոյ. որոյ տունն մեք
իսկ եմք. միայն թէ զհամարձակու-
թիւն եւ զպարծանս յուսոյն մին-
չեւ 'ի վախճան հաստատուն ունի-
ցիմք ։
7 Վասն որոյ այսպէս ասէ Հո-
գին Սուրբ. Այսօր եթէ ձայնի նո-
րա լուիցէք,
8 Մի խստացուցանէք զսիրտս
ձեր իբրեւ 'ի դառնութեանն յաւու-
րըն փորձութեան յանապատի.

9 Ուր փորձեցին զիս հարքն ձեր.
քննեցին զիս՝ եւ տեսին զգործս իմ
զքառասուն ամ ։
10 Վասն որոյ տաղտկացայ ազ-
գաւն այնուիկ, եւ ասացի. Միշտ
մոլորեալ են սրտիւք. եւ նոքա ոչ
ծանեան զճանապարհս իմ ։
11 Որպէս երդուայ 'ի բարկութեան
իմում՝ թէ Մտցեն 'ի հանգիստ իմ ։

12 Տեսէք եղբարք, գուցէ երբէք
լինիցի յումեք 'ի ձէնջ սիրտ չար
անհաւատութեան՝ ապստամբ լինել
յԱստուծոյ կենդանւոյ ։

առաքողին, ինչպէս որ Մովսէսն էլ
նորա բոլոր ÷ տանը ։
3 Պատճառն որ նա էլ աւելի
փառքի արժան էլաւ քան թէ Մով-
սէս. որքան որ տան շինողն աւե-
լի պատիւ ունի քան թէ ∓ տունը ։
4 Ինչու որ ամէն տուն՝ որ շին-
ւում է, մէկից է շինւում. բայց նա
որ ամէնն արաւ՝ Աստուած ⊦ է ։
5 Մովսէս հաւատարիմ է նորա
բոլոր տանը ⌐ մէջ՝ ինչպէս ⊦ ծառայ՝
այն ասելոց բաներին վկայ ⌐ լինելով ։
6 Բայց Քրիստոս՝ ինչպէս որդի
իրեն տան ⊢ վերայ. որ նորա տու-
նըն իսկ մենք ⊦ ենք. միայն թէ
այն յուսոյ համարձակութիւնն ու
պարծանքը մինչեւ վերջը հաստատ
⊦ պահենք ։
7 Նրա համար Սուրբ Հոգին այս-
պէս է ⊏ ասում. Այս օր թէ նորա
ձայնը լսէք,
8 Մի խստացնէք ձեր սրտերը՝
ինչպէս որ այն բարկացնելոյ ժամա-
նակումը, փորձութեան օրումն՝
անապատին ⊦ մէջ.
9 Որ այնտեղ ձեր հարքը փորձե-
ցին ինձ. քննեցին ինձ՝ եւ իմ գործ-
քերս տեսին քառասուն տարի ։
10 Նրա համար զզուեցայ այն ազ-
գիցը՝ եւ ասացի. Միշտ մոլորուած
են սրտով. եւ նորանք չը ճանաչե-
ցին իմ ճանապարհներս ։
11 Ինչպէս որ երդւում կերի իմ
բարկութիւնումս, թէ Որ մտնեն իմ
հանգստիս մէջ ։
12 Նայեցէք եղբարք, որ չը լինի
թէ ձեզանից մինն անհաւատութեան
չար սիրտ ունենայ՝ որ ապստամբ
լինի կենդանի Աստուածանիցը ։

÷ Թու. ԺԲ. 7։ Համար. 5։
∓ Զաք. Զ. 12։ Մատթ. ԺԶ. 18։
⊦ Եփես. Բ. 10։ Գ. 9։ Գղ. Ա. 2։
⌐ Համար. 2։
⊦ Եզկ. ԺԳ. 31։ Թու. ԺԲ. 7։ Բ Օրին. Գ. 24։ Յես. Ա. 2։ Ը. 31։
⊏ Բ Օրին. ԺԸ. 15. 18. 19։
⊢ Գղ. Ա. 2։
⊦ Ա Կորնթ. Գ. 16։ Զ. 19. Բ Կորնթ. Զ. 16։ Եփես. Բ. 21, 22։ Ա Տիմ. Գ. 15։ Ա Պետ. Բ. 5։
⊦ Համար. 14։ Մատթ. Ժ. 22։ ԻԴ. 13։ Հայտն. Ե. 9։ Կող. Ա. 23։ Գղ. Զ. 11։ Ժ. 35։
⊏ Բ Թագ. ԻԳ. 2։ Գործ. Ա. 16։
⊦ Համար. 15։ Սաղ. ՂԵ. 7։

13 Այլ մխիթարեցէք զմիմեանս զօրհանապազ՝ մինչդեռ այսօրդ առաջի կայ . զի մի ոք խստասցի 'ի ձէնջ խաբէութեամբ մեղաց ։

14 Քանզի բաժանորդք եղեաք Քրիստոսի . միայն թէ զսկիզբն հաստատութեանն մինչեւ ցվախճան պինդ կալցուք ։

15 Յասելն , Այսօր եթէ ձայնի նորա լուիջէք՝ մի խստացուցանէք զսիրտս ձեր իբրեւ 'ի դառնութեանն ։

16 Քանզի ոմանք լուան եւ դառնացուցին , այլ ոչ ամենեքեան՝ որ ելեալ էին յԵգիպտոսէ 'ի ձեռն Մովսէսի ։

17 Յումէ՞ տաղտկացաւ զքառասուն ամն . ոչ ապաքէն 'ի յանցուցելոցն . որոց ոսկերքն անկան յանապատի անդ ։

18 Ո՞ւմ երդուաւ չմտանել 'ի հանգիստն իւր , եթէ ոչ անհաւատիցն ։

19 Եւ տեսանեմք՝ զի ոչ կարացին մտանել վասն անհաւատութեանն ։

13 Բայց իրար մխիթարեցէք ամէն ժամանակ , քանի որ այս օրս առաջիդ կայ . որ չի լինի թէ ձեզանից մինը պնդանայ մեղքի խաբէութենովը ։

14 Պատճառն որ մասնակից եղանք Քրիստոսի . միայն թէ այն սկսած հաստատութիւնը մինչեւ վերջը պինդ ծ բռնենք ։

15 Նա որ ասում է , թէ Այսօր՝ թէ որ նորա ձայնն լսէք , մի պնդացնէք ձեր սրտերն ինչպէս որ բարկացնելոյ կ ժամանակումը ։

16 Ինչու որ մի քանիսն լսեցին եւ հ բարկացրին . բայց ոչ թէ այն ամէնքն՝ որ Եգիպտոսից դուրս էին եկած Մովսէսի ձեռովը ։

17 Ումի՞ց զզվեցաւ այն քառասուն տարին . չէ՞ որ այն մեղք գործողներիցն , որ նորանց ոսկորներն ընկան այն անապատին ձ մէջ ։

18 Ո՞ւմ երդում կերաւ՝ որ իրեն հանգստին մէջ չը պիտի մտնեն , եթէ ոչ այն ղ անհաւատներին ։

19 Եւ տեսնումենք՝ որ չը կարացին մտնել այն անհաւատութեան ճ պատճառովը ։

## ԳԼ . Դ

1 Երկիցուք այսուհետեւ , գուցէ 'ի թողուլ զաւետիսն 'ի մտանելոյ 'ի հանգիստն նորա՝ զանխիցի ոք 'ի ձէնջ նուազեալ ։

2 Քանզի եմք աւետարանեալք որպէս եւ նոքայն . այլ նոցա ոչինչ օգնեաց լուր բանին , չխառնելոցն 'ի հնազանդութիւն հաւատոց ։

3 Այլ մեք մտանեմք 'ի հանգիստն , որք հաւատացաքս . որպէս եւ ասացն՝ թէ Որպէս երդուայ 'ի

1 Ուրեմն վախենանք՝ որ չը լինի թէ նորա հանգստին մէջ մտնելոյ աւետիքը թողելով՝ ձեզանից մինը պակասած մ դատուի ։

2 Պատճառն որ՝ աւետիքը քարոզեցաւ մեզ ինչպէս որ նորանց էլ . բայց նորանց բնաւ օգուտ չի բերում խօսքի քարոզութիւնն , որ չի կակղացան հաւատքի հնազանդութեամբը ։

3 Բայց մենք այն հանգստին մէջ ենք մտնում՝ որ յ հաւատացինք . ինչպէս որ նա էլ ասաց . թէ Ինչ-

ծ Համար . 6 .
կ Համար . 7 .
հ Թուել . ԺԴ . 2 . 4 . 11 . 24 . 30 36 38 .
ձ Թուել . ԺԴ . 22 29 . ԻԶ . 65 . Սաղ . ՃԶ . 26 . Ա Կորնթ . Ժ . 5 . Յուդ . 5 .
ղ Թուել . ԺԴ . 30 . Բ Օրին . Ա . 34 , 35 .
ճ Գլ . Դ . 9 .
մ Գլ . ԺԲ . 15 .
յ Գլ . Գ . 14 .

բարկութեան իմում, թէ մտցեն 'ի հանգիստ իմ. թէպէտ եւ արդիւնքն 'ի սկզբանէ աշխարհի լեալ էին:

4 Քանզի ասէ ուրեք վասն աւուրն եօթներորդի այսպէս. Եւ հանգեաւ Աստուած յաւուրն եօթներորդի յամենայն գործոց իւրոց:

5 Եւ աստ դարձեալ ասէ՝ թէ Մտցեն 'ի հանգիստ իմ:

6 Եւ արդ քանզի արգելան ոմանք մտանել 'ի նա, եւ որք յառաջագոյն աւետարանեալքն էին՝ չմտին վասն անհաւատութեանն:

7 Դարձեալ այլ օր սահմանէ՝ զայսօրն 'ի Դաւիթ, եւ ասէ՝ Յետ այնչափ ժամանակաց, որպէս յառաջագոյնն ասաց, Այսօր եթէ ձայնի նորա լուիջիք՝ մի խստացուցանէք զսիրտս ձեր:

8 Զի եթէ զնոսա Յեսու հանգուցեալ էր, ապա վասն այլոյ աւուր ոչ խօսէր յետ այնորիկ:

9 Արդ ուրեմն նուազեալ է շաբաթումն ժողովրդեանն Աստուծոյ:

10 Զի որ եմուտ 'ի հանգիստն նորա, եւ նա հանգեաւ յիւրոց գործոց անտի. որպէս եւ Աստուած յիւրայոցն:

11 Փութասցուք այսուհետեւ մտանել յայն հանգիստ. զի մի ոք ընդ նովին օրինակաւ անհաւատութեանն անկանիցի:

12 Քանզի կենդանի է բանն Աստուծոյ՝ եւ ազդող՝ եւ հատու քան զամենայն սուր երկսայրի, եւ անցանէ մինչեւ ցորոշումն շնչոյ՝ եւ ոգւոյ՝ եւ յօդից՝ եւ ուղղոց. եւ

պէս որ երդուեմ սրի իմ բարկութենովս, եթէ մտնեն իմ հանգստիս գ մէջ. թէ եւ գործքերն աշխարհքի սկզբէնը կատարուած էին:

4 Ինչու որ մէկտեղ եօթներորդ օրին համար այսպէս է ասում. Եւ Աստուած եօթներորդ օրումը հանգստացաւ իրեն ամէն դ գործքերէն:

5 Եւ այստեղ դարձեալ ասում՝ եւ թէ Մտնեն իմ հանգստիս մէջ:

6 Ուրեմն որովհետեւ մնում է որ մէկքանիսը նորա մէջ մտնեն, եւ նորանք՝ որ առաջուց աւետիքը քարոզվեցաւ նոցա՝ չը մտին անհաւատութեան ե պատճառովը:

7 Կրկին ուրիշ օր է հաստատում՝ այն այսօրն Դաւթումը, եւ այնքան ժամանակներից ետեւ ասում է, ինչպէս որ առաջ ասաց. Այսօր որ նորա ձայնը լսէք, մի պնդացնէք ձեր է սրտերը:

8 Ինչու որ եթէ Յեսուն նորանց հանգստի մէջ էր տարել՝ էլ նորանից ետեւ ուրիշ օրի համար չէր խօսիլ:

9 Ապա ուրեմն մնում է շաբաթի հանգիստ Աստուծոյ ժողովրդին համար:

10 Պատճառն որ՝ նա որ նորա հանգիստը մտաւ, նա էլ հանգստացաւ այն իրեն գործքերից. ինչպէս որ Աստուած էլ իրեններից:

11 Ուրեմն ջանք անենք այն հանգստին մէջ մտնելու. որ չը լինի թէ մէկն իսկ այն անհաւատութեան օրինակին պէս ընկնի:

12 Ինչու որ Աստուծոյ խօսքը կենդանի է եւ զօրաւոր՝ եւ աւելի կտրուկ քանթէ ամէն ը երկսայրեանի թ սուր, եւ ներս է մտնում մինչեւ շունչի եւ հոգոյ եւ խազերի

գ Սաղ. ՂԵ. 11. Գլ. Գ. 11.
դ Ծննդ. Բ. 2. Ելից. Ի. 11. ԼԱ. 17.
ե Գլ. Գ. 19.
զ Սաղ. ՂԵ. 7. Գլ. Գ. 7.
է Գլ. Գ. 12. 18, 19.
ը Եսայ. ԽԹ. 2. Երեմ. ԻԳ. 29. Բ Կորնթ. Ժ. 4, 5. Ա Պետ. Ա. 23.
թ Առակ. Ե. 4.

քննիչ է մտաց՝ եւ խորհրդոց սրտից։

13 Եւ չիք արարած աներեւոյթ յերեսաց նորա. այլ ամենայն ինչ մերկապարանոց կայ առաջի աչաց նորա՝ զորմէ մեր բանքս են։

14 Ունիմք այսուհետեւ քահանայապետ մեծ անցեալ ընդ երկինս, զՅիսուս զՈրդին Աստուծոյ. ունիցուք զխոստովանութիւնն։

15 Քանզի ոչ եթէ ունիմք քահանայապետ՝ որ չիցէ կարող չար-չարակից լինել տկարութեանն մերոյ. այլ փորձ է ամենայնիւ ըստ նմանութեան առանց մեղաց։

16 Մատիցուք այսուհետեւ համարձակութեամբ առաջի աթոռոյ շնորհացն նորա. զի ընկալցուք զողորմութիւն՝ եւ գտցուք շնորհս ՚ի դէպ ժամանակի օգնութեան։

եւ ծուծի բաժանմունքը. եւ մտքերը եւ սրտի խորհուրդներ է քննող է։

13 Եւ ոչ մէկ ստեղծուած աներեւոյթ չէ նորա ւ երեսէնը. բայց ամէն բան մերկ եւ յայտնի է նորա աչացն առաջին՝ որ նորա վրայ մենք ꝑ խօսումենք։

14 Ուրեմն որովհետեւ մեծ քահանայապետ ունինք՝ Յիսուսն Աստուծոյ ծ Որդին, որ երկինքներէն ꝉ անցաւ. էլ պինդ բռնենք ֆ դաւանութիւնը։

15 Պատճառն որ չէ թէ այնպիսի քահանայապետ ունինք՝ որ չը կարենայ մեր տկարութեան հետ չարչարակից յ լինել. բայց նա ամէն բանով փորձուեցաւ մեզի նման՝ բայց առանց ճ մեղաց։

16 Ուրեմն համարձակութենով մօտենանք նորա շնորհաց աթոռին, որ ողորմութիւն ընդունինք եւ շնորհք գտնենք այն ժամանակումն՝ որ օգնութիւն պէտք ՚է։

## ԳԼ. Ե

1 Զի ամենայն քահանայապետ ՚ի մարդկանէ առեալ՝ վասն մարդկան կայ յԱստուածակայս կարգի անդր. զի մատուսցէ պատարագս եւ զոհս վասն մեղաց։

2 Չափով չարչարակից կարող է լինել տգիտաց եւ մոլորելոց. քանզի եւ ինքն խոկ տկարութեամբ պատեալ է։

3 Վասն այնորիկ հարկ է որպէս վասն ժողովրդեանն, նոյնպէս եւ

1 Պատճառն որ՝ ամէն քահանայապետ մարդկանցմէ առած՝ եւ մարդկանց ⁻համար Աստուածային բաներումը կարգուած ꝑ է. որ պատարագներ եւ մատաղներ մատուցանէ մեղաց ÷համար.

2 Որ նա կարող է չափով չարչարակից լինել ագէտներին եւ ÷մոլորվածներին. պատճառն որ խոկ ինքն էլ տկարութենով պատած ꝑ է։

3 Այն պատճառովը պէտք է՝ որ ինչպէս ժողովրդին համար՝ այնպէս

ծ Եփես. Զ. 17. Յայտ. Ա. 16.
է Ա Կորնթ. ԺԴ. 24, 25.
ւ Սաղ. ԼԹ. 13, 14. Ղ. 8. ճԼԹ. 11, 12.
ꝑ Յոբ. ԻԶ. 6. ԼԴ. 21. Առակ. ԺԵ. 11.
ժ Գլ. Գ. 1.
ꝉ Գլ. Է. 26. Թ. 12. 24.
ֆ Գլ. Ժ. 23.
յ Եսայ. ԾԳ. 3. Գլ. Բ. 18.
ղ Ղուկ. ԻԲ. 28.
ճ Բ Կորնթ. Ե. 21. Գլ. Է. 26. Ա Պետ. Բ. 22. Ա Յովհ. Գ. 5.
ւ Եփես. Բ. 18. Գ. 12. Գլ. Ժ. 19. 21, 22.

—

⁻ Գլ. Ը. 3.
ꝑ Գլ. Բ. 17.
÷ Գլ. Ը. 3, 4. Թ. 9. Ժ. 11. ԺԱ. 4.
÷ Գլ. Բ. 18. Դ. 15.
ꝑ Եբր. Է. 28.

ընդ անձին մատուցանել պատա-
րագս վասն մեղաց ։
4 Եւ ոչ եթէ անձամբ ոք առնու
պատիւ. այլ կոչեցեալն յԱստուծոյ՝
որպէս եւ Ահարոնն ։

5 Նոյնպէս եւ Քրիստոս ոչ եթէ
անձին ինչ շուք եդ լինել քահա-
նայապետ. այլ որ խօսեցաւն ընդ
նմա՝ թէ Որդի իմ ես դու՝ ես այսօր
ծնայ զքեզ ։
6 Որպէս եւ 'ի միւսումն ասէ.
Դու ես քահանայ յաւիտեան ըստ
կարգին Մելքիսեդեկի ։
7 Որ յաւուրս մարմնոյ իւրոյ՝ ա-
ղօթս եւ պաղատանս առ այն, որ
կարօղն էր ապրեցուցանել զնա 'ի
մահուանէ, ուժգին գոչմամբ եւ
արտասուօք մատուցանէր. եւ լսե-
լի լինէր առ յաւութեանն ։
8 Թէպէտ եւ Որդի էր՝ ուսաւ 'ի
չարչարանաց անտի զհնազանդու-
թիւն ։
9 Եւ իբրեւ կատարեցաւ՝ եղեւ
ամենայն հնազանդելոց իւրոց պատ-
ճառ փրկութեան յաւիտենից ։

10 Եւ անուանեցաւ յԱստուծոյ
քահանայապետ յաւիտենից ըստ
կարգին Մելքիսեդեկի ։
11 Վասն որոյ բազումք են մեզ
բանք, եւ դժուարապատում 'ի մեկ-
նել. քանզի խօթամիտք եղերուք
լսելեօք ։
12 Փոխանակ զի պարտ էր ձեզ
լինել վարդապետս վասն ժամանա-
կին. դարձեալ պիտոյ է ձեզ ու-

էլ իրեն անձին համար պատարագ
մատուցանէ մեղաց [զ] համար ։
4 Եւ չէ թէ մէկն իրեն անձնովը
է այն պատիւն [է] առնում. բայց նա
որ Աստուածանից կանչուած է՝ ինչ-
պէս [ը] Ահարոն ։
5 Նոյնպէս էլ Քրիստոս չէ թէ
ինքն փառք տուաւ իրեն անձին՝ որ
քահանայապետ [թ] լինի. բայց նա որ
ասաց նորան՝ թէ Դու ես իմ Որ-
դիս, ես այսօր ծնայ [ժ] քեզ ։
6 Ինչպէս որ էլ միւս տեղումն
ասումէ. Դու քահանայ ես յաւիտ-
եան Մելքիսեդեկի կարգին [ի] պէս ։
7 Նա որ իրեն մարմնոյ օրերու-
մըն աղօթք եւ [լ] աղաչանք սաստիկ
աղաղակով եւ արտասուքով մա-
տուցանումէր [խ] նորան՝ որ կարող էր
ապրեցնել [ծ] իրեն. եւ լսվումէր ի-
րեն յաւութեան [կ] համար ։
8 Թէ եւ Որդի [հ] է՝ այն չարչա-
րանքներիցն հնազանդութիւնը [ձ] սո-
վրեց ։
9 Եւ երբոր կատարվեցաւ՝ իրեն
ամէն հնազանդողներին համար յա-
ւիտենական փրկութեան պատճառ
[ղ] եղաւ ։
10 Եւ Աստուածանից անուանվե-
ցաւ յաւիտենական քահանայապետ՝
Մելքիսեդեկի կարգին [ճ] պէս ։
11 Որ նորա համար շատ բան ու-
նինք ասելոյ, որ դժուար է խօ-
սքերով [մ] մեկնել. ինչու որ թուլ եւ
ակար էլաք [յ] ականջներով ։
12 Նրա տեղակ որ պէտք էր ձեզ
վարդապետ լինել ժամանակին մտիկ
տալով. կրկին պէտք է որ դուք

[զ] Ղե. Դ. 3. Թ. 7. ԺԶ. 6. 15. 16. 17. Գղ. Է. 27. Թ. 7.
[է] Բ Մնաց. ԻԶ. 18. Յովհ. Գ. 27.
[ը] Ելից. ԻԸ. 1. Թուոց. ԺԶ. 5. 40. Ա Մնաց. ԻԳ. 13.
[թ] Յովհ. Ը. 54.
[ժ] Սաղ. Բ. 7. Գղ. Ա. 5.
[ի] Սաղ. ՃԺ. 4. Գղ. Է. 17. 21.
[լ] Մատթ. ԻԶ. 39. 42. 44. Մարկ. ԺԴ. 36. 39. Յովհ. ԺԷ. 1.
[խ] Սաղ. ԻԱ. 1. Մատթ. ԻԷ. 46. 50. Մարկ. ԺԵ. 34. 37.
[ծ] Մատթ. ԻԶ. 53. Մարկ. ԺԴ. 36.
[կ] Մատթ. ԻԶ. 37. Մարկ. ԺԴ. 33. Ղուկ. ԻԲ. 43. Յովհ. ԺԲ. 27.
[հ] Գղ. Գ. 6.
[ձ] Փիլիպ. Բ. 8.
[ղ] Գղ. Բ. 10. ԺԱ. 40.
[ճ] Համար. 6. Գղ. Զ. 20.
[մ] Յովհ. ԺԶ. 12. Բ Պետ. Գ. 16.
[յ] Մատթ. ԺԳ. 15.

ուսանել՝ թէ զի՛նչ են նշանագիրք սկզբան բանիցն Աստուծոյ. և եղերուք կարօտք կաթին՝ և ոչ հաստատուն կերակրոյ։
13 Զի ամենայն որ կաթնկեր է, տգէտ է բանին արդարութեան, քանզի տղայ է։
14 Այլ կատարելոցն է հաստատուն կերակուր. որոց՝ վասն ՚ի չափ հասանելոյ, ճաշակելիքն կիրթ են ընտրութեան բարւոյ և չարի։

սովորիք՝ թէ ինչ են Աստուծոյ խօսքերի առաջին ն նշանագիրները. և կարօտ էլաք կաթի՝ և ոչ թէ հաստատ շ կերակուրի։
13 Ինչու որ՝ ամէն ով որ կաթնակեր է, տգէտ է արդարութեան խօսքին, որովհետև տղայ ո է։
14 Բայց հաստատ կերակուրը կատարեալներին չ է. որ նորանք չափհաս են. և նրահամար ունելոյ վարժված գործքերներ ունին՝ բարին և չարն իրարից ջոկելոյ պ համար։

## ԳԼ. Զ

1 Վասն որոյ թողեալ զբանն սկզբան Քրիստոսի, ՚ի կատարումն եկեսցուք. մի միւսանգամ արկանել հիմն ապաշխարութեան՝ ՚ի մեռելոտի գործոց անտի, և հաւատոյն որ յԱստուած.
2 Եւ մկրտութեանցն՝ վարդապետութեան, և ձեռնադրութեան ձեռաց, և յարութեան մեռելոց, և դատաստանին յաւիտենից։
3 Եւ արդ՝ արասցուք զայն, եթէ Աստուած հրամայեսցէ։
4 Քանզի անհնար է միանգամ մկրտելոցն, որ ճաշակեցին յերկնաւոր պարգեւացն, և հաղորդք եղեն Հոգւոյն Սրբոյ,
5 Եւ զգեղեցիկ բանին Աստուծոյ ճաշակս ճաշակեցին, և զզօրութիւնս հանդերձելոյ աշխարհին,
6 Եւ կործանեցին. միւսանգամ

1 Նրահամար Քրիստոսի վարդապետութեան առաջին սկզբունքները թողենք, և դէպի կատարեալը ա գանք. առանց նորէն հիմն դնելոյ ապաշխարութեան այն մեռած բ գործքերից, և հաւատքին՝ որ դէպի Աստուած է.
2 Եւ մկրտութիւնների գ ուսմունքին, և ձեռքի դ ձեռնադրութեան, և մեռելների յարութիւն ե առնելուն, և յաւիտենական զ դատաստանին։
3 Եւ հիմիկ նա անենք՝ թէ որ Աստուած է հրամայէ։
4 Պատճառն որ՝ անկարելի ը է՝ որ նորանք որ մին անգամ մկրտված թ են, որ երկնաւոր պարգեւների համն ժ առին, և Սուրբ Հոգւոյն մասնակից ի էլան,
5 Եւ Աստուծոյ աղնիւ խօսքի, և նոր գալու աշխարհքի զօրութիւնների համն լ առին,
6 Եւ ետոյ կործանվելին. որ նորէն

ն Գղ. Զ. 1.
շ Ա կորնթ. Գ. 1—3.
ո Ա կորնթ. ԺԴ. 11. ԺԴ. 20. Եփես. Դ. 14. Ա Պետ. Բ. 2.
չ Ա կորնթ. Բ. 6. Եփես. Գ. 13. Փիլիպ. Գ. 15.
պ Եսայ. Է. 15. Ա կորնթ. Բ. 14. 15.

—

ա Փիլիպ. Գ. 12—14. Գղ. Ե. 12.
բ Գղ. Թ. 14.
գ Գործ. ԺԹ. 4, 5.
դ Գործ. Ը. 14—17. ԺԹ. 6.
ե Գործ. ԺԷ. 31, 32.
զ Գործ. ԻԴ. 25. Հռովմ. Բ. 16.
է Գործ. ԺԸ. 21 Ա կորնթ. Դ. 19.
ը Մատթ. ԺԲ. 31, 32. Գղ. Ժ 26. Բ Պետ. Բ 20, 21. Ա Յովհ. Ե. 16.
թ Գղ. Ժ. 32.
ժ Յովհ. Դ. 10. Զ. 32. Եփես. Բ. 8.
ի Գաղ. Գ. 2. 5. Գղ. Բ. 4.
լ Գղ. Բ. 5.

նորոգել յապաշխարութիւն. եւ
վերստին ՚ի խաչ հանել անձանց
զՈրդին Աստուծոյ, եւ դարձեալ
խայտառակել.
7 Քանզի երկիր՝ որ ըմպիցէ
զանձրեւ բազում անգամ եկեալ ՚ի
վերայ նորա, եւ ծնանիցի արդիւ-
նս չայեկանս նոցա՝ վասն որոյ
գործիցին, ընդունի զօրհնութիւն
յԱստուծոյ.
8 Իսկ որ բերէ զփուշ եւ զտա-
տասկ, անպիտան է՝ եւ մերձ յա-
նէծս. եւ վախճան նորա յայրումն.
9 Բայց[ո] հաստատեալ եմ վասն
ձեր սիրելիք[ո]՚ի լաւ անդր, եւ որ
լին է փրկութեամբ. զի թէպէտ եւ
այսպէս խօսիմք.
10 Ո՛չ եթէ անիրաւ ինչ է Աստ-
ուած՝ մոռանալ զգործս ձեր, եւ զզ
սէրն՝ զոր ցուցէք յանուն նորա.
զի պաշտեցէք զսուրբսն, եւ պաշտէք.

11 Եւ մեք ըղձանամք՝ զի իւրա-
քանչիւրոք ՚ի ձէնջ զնոյն փոյթ
ցուցանիցէ ՚ի հաստատութիւն յու-
սոյն՝ մինչեւ ցվախճան.
12 Զի մի հեղգամիտք լինիցիք.
նմանողք եղերուք այնոցիկ որ հա-
ւատովքն եւ երկայնմտութեամբ
ժառանգեցին զաւետիսն.
13 Զի Աբրահամու խոստացեալ
զաւետիսն Աստուծոյ, քանզի յայլ
ոք ՚ի մեծ ոչ գոյր երդնուլ.

14 Ցանձն իւր երդուաւ, եւ ասէ.
Այո, օրհնելով օրհնեցից զքեզ, եւ
բազմացուցանելով բազմացուցից
զքեզ.
15 Եւ այնպէս երկայնամիտ եղ-
եալ՝ եհաս աւետեացն.
16 Ապաքէն մարդիկ՝ որ ինչ ՚ի

միւսանգամ նորոգվելն ապաշխա-
րութիւն գալոյ. ինչու որ՝ Աստու-
ծոյ Որդոյն կրկին իրենց համար խա-
չեցին եւ կրկին խայտառակ է արին.
7 Պատճառն որ մէն հող՝ որ շատ
անգամ իրեն վերայ եկած անձրեւը
խմէ, եւ չահաւոր պտուղ բու-
սցնէ նորանց համար՝ որ գործե-
ցին նորան, նա Աստուծոյ օրհնու-
թիւնը ՟ կընդունի.
8 Բայց նա որ փուշ եւ տատասկ է
բերում, անպիտան է՝ եւ անէծքին
մօտ. եւ նորա վերջն այրվիլն է.
9 Բայց հաստատ եմ ձեզ համար
սիրելիներ, որ լաւ կողմն էք, եւ
նա որ լիքն է փրկութենով. թէ
եւ այսպէս ենք խօսում.
10 Ինչու ՟ որ՝ Աստուած անիրաւ
՟ չէ՝ որ մոռանայ ձեր գործքերն ու
սէրն՝ որ նորա անունովը ցոյց
տուիք. նորանով որ սրբերին ծա-
ռայեցիք եւ [ծ] ծառայում էք.
11 Եւ մենք ցանկանումենք՝ որ
ձեզանից ամէն մէկը իւր այն ջան-
քը ցոյց տայ՝ որ յոյսը հաստատ
մնայ մինչեւ [ֆ] վերջը.
12 Որ ծոյլ թոյլ չըլինիք. Բայց
նմանող էլէք նորանց՝ որ հաւատ-
քով եւ երկայնմտութենով աւե-
տիքները ժառանգեցին.
13 Պատճառն որ Աստուած երբոր
Աբրահամին տուաւ աւետիքի խոստ-
մունքը, որովհետեւ մէն ուրիշ ա-
ւելի մեծ չըկար՝ որ նորանով եր-
դում ուտէ.
14 Իրեն անձնովն երդում կերաւ,
եւ ասաց. Ուղորդ որ՝ օրհնելով
կօրհնեմ քեզ, եւ շատացնելով կը
շատացնեմ.
15 Եւ նա այնպէս երկայնամիտ
էլաւ՝ եւ աւետիքներին հասաւ.
16 Իրաւ է որ մարդիկք նորանով

ե Գղ. Ճ. 29.
ծ Սաղ. ԿԵ. 10.
ֆ Եսայ. Ե. 6.
հ Առակ. ՃԴ. 31.
Մատթ. Ժ. 42.
ԻԵ. 40. Յովհ.
ԺԴ. 20.
յ Հռովմ. Գ. 4. Բ
Թես. Ա. 6, 7.
չ Ա Թես. Ա. 3.
ճ Հռովմ. ԺԵ. 25.
Բ Կորնթ. Ը. 4.
Թ. 1. 12. Բ Տիմ.
Ա. 18.
ղ Գղ. Գ. 6. 14.
ջ Ծննդ. ԻԲ. 16.
17. Սաղ. ՃԵ. 9.
Ղուկ. Ա. 73.

վեր է քան զինքեամբ՝ յայն երդ-
նուն. եւ ամենայն հակառակու-
թեան նոցա վճիռ առ 'ի հաստա-
տութիւն, երդումն է ։
17 Որով առաւել եւս կամեցեալ
Աստուծոյ՝ ցուցանել ժառանգաւո-
րաց աւետեացն զհաստատութիւն
խորհրդոյն իւրոյ, միջնորդեաց երդ-
մամբ ։
18 Զի երկու անփոփոխելի իրօք՝
որովք անհնարին էր սուտ Աստու-
ծոյ, հաստատուն մխիթարութիւն
ունիցիմք. որք ապաւինն եղեաք
բուռն հարկանել զհանդերձեալ յու-
սոյն ։
19 Զոր իբրեւ զխարիսխ հաստա-
տուն եւ անշարժ ունիցիմք ան-
ձանց մերոց, որ եւ մտանիցէ 'ի
ներքին կողմն վարագուրին ։
20 Ուր կարապետն մեր Յիսուս ե-
մուտ վասն մեր, ըստ կարգին Մել-
քիսեդեկի՝ եղեւ քահանայապետ
յաւիտենից ։

են երդում առում՝ որ իրանցից
վերեւ է, եւ նորանց ամէն հակա-
ռակութիւնների վճիռն՝ երդումն է՝
որ նորանով բանը՝ հաստատվումէ ։
17 Դրահամար Աստուած էլ՝ որով-
հետեւ էլ աւելի կամեցաւ աւետիքի
ժառանգօղներին ցոյց տալ՝ իւրեն
խորհրդոյ հաստատութիւնը, եր-
դումն մէջ գրաւ.
18 Որ երկու բանով՝ որ չեն փո-
փոխելի, որ նորանցով անկարելի է
որ Աստուած սուտ խօսի, հաստատ
մխիթարութիւն ունենանք. մենք
որ ապաւինեցանք առաջի դրած
յոյսը ձեռքով բռնելոյ ։
19 Որ նորան՝ հաստատ եւ անշարժ
խարիսխի պէս՝ ունինք մեր անձնե-
րիս համար. որ էլ մտնումէ վարա-
գուրի ներսի կողմը.
20 Որ տեղ որ մեր առաջնորդ Յի-
սուս մտաւ մեզ համար, Մելքի-
սեդեկի կարգին պէս՝ յաւիտենա-
կան քահանայապետ եղած ։

## ԳԼ. Է

1 Քանզի այս Մելքիսեդեկ՝ թա-
գաւոր էր Սաղիմայ. քահանայ Աս-
տուծոյ բարձրելոյ. որ էր ընդ ա-
ռաջ Աբրահամու, յորժամ դարձեալ
գայր 'ի կոտորածէ թագաւորացն՝
եւ օրհնեաց զնա ։
2 Որում եւ տասանորդս յամե-
նայնէ եառ Աբրահամ. նախ թարգ-
մանի թագաւոր արդարութեան,
ապա թագաւոր Սաղեմայ՝ որ է
թագաւոր խաղաղութեան ։
3 Անհայր՝ անմայր՝ չհամարեալ
ազգս, որոյ ոչ սկիզբն աւուրց եւ
ոչ կատարած կենաց. նմանեալ
Որդւոյ Աստուծոյ կայ մնայ քահա-
նայ մշտնջենաւոր ։

1 Պատճառն որ՝ այս Մելքիսե-
դեկս Սաղէմի թագաւոր էր. բար-
ձրեալ Աստուծոյ քահանայ. որ
դուրս ելաւ Աբրահամին առաջը,
երբոր նա թագաւորների կոտորե-
լուցն յետ դարձած գալիս էր՝ եւ
օրհնեց նորան ։
2 Որ Աբրահամ նորան էլ ամէն
բաներից տասանորդ տուաւ. նա
առաջ թարգմանվումէ արդարու-
թեան թագաւոր, եւ ապա՝ Սաղէ-
մի թագաւոր՝ որ է խաղաղութեան
թագաւոր ։
3 Առանց հօր, առանց մօր, մէն
ազգի մէջ չը համարված, որ ոչ օ-
րերի սկիզբն ունի, եւ ոչ կենաց
վերջը. Աստուծոյ Որդուն նման ե-
ղած՝ կենում միշտ յաւիտենական
քահանայ ։

| | | | |
|---|---|---|---|
| ն Ելից. ԻԲ. 11. | 29. | ղ Գլ. Գ. 14. Ը. | 6. 10. Է. 17. |
| շ Գլ. Ժ. ԺԱ. 9. | չ Ղև. ԺԶ. 15. | 1. Թ. 24. | — |
| ո Հռոմ. ԺԱ. | Գլ. Թ. 7. | չ Գլ. Գ. 1. Ե. | պ Ծննդ. ԺԴ. 18. |

4 Այդ տեսէք որպիսի ոք էր սա, որում եւ Աբրահամ տասանորդս ետ յաւարէ անտի՝ նահապետն :

5 Եւ որք յորդւոցն Ղեւեայ են քահանայութիւնն առնուն, պատուէր ունին տասանորդել զժողովուրդն ըստ օրինացն. այսինքն է՝ զեղբարս իւրեանց. թէպէտ եւ ելեալ իցեն յերանացն Աբրահամու :

6 Իսկ չհամարեալն յազգս ՚ի նոցանէ՝ տասանորդեաց զԱբրահամ. եւ զնա՝ որոյ զաւետիսն ընկալեալ էր, օրհնեաց :

7 Զի առանց ամենայն հակառակութեան, նուաստն ՚ի լաւէ անտի օրհնեսցի :

8 Եւ աստ մարդիք մահկանացուք տասանորդս առնուն. բայց անդ վկայեցաւ՝ թէ կենդանի է. եւ որպէս բանից կարգ է ասել.

9 Թէ Աբրահամաւ եւ Ղեւի իսկ՝ որ զտասանորդսն առնոյր, տասանորդեցաւ :

10 Զի դեռեւս յերանս հօր իւրոյ էր՝ յորժամ ընդ առաջ եղեւ նմա Մելքիսեդեկ :

11 Իսկ արդ՝ եթէ կատարումն ՚ի ձեռն Ղեւտացւոց քահանայութեանն էր, քանզի ժողովուրդն յայն օրէնս դրեցաւ. զինչ պիտոյ էր ըստ կարգին Մելքիսեդեկի այլում քահանայի յառնել, եւ ոչ ասել՝ թէ ըստ կարգին Ահարոնի :

12 Այլ ՚ի փոխել քահանայութեանն, հարկ էր եւ օրինացն փոփոխումն լինել :

13 Զի զորմէ այսպէսն ասի՝ յայլմէ ազգէ կալաւ հաղորդութիւն, յորմէ ոչ ոք երբէք եղեւ հաղորդ սեղանոյն :

14 Արդ յայտ իսկ է, թէ յազգէ

4 Հիմիկ տեսէք թէ քանի մեծ էր սա՝ որ Աբրահամ նահապետն էլ նորան տասանորդ տուաւ այն աւարիցը :

5 Եւ Ղեւիի որդիներիցը նորանք որ քահանայութիւնը առնումեն, հրաման ունին տասանորդ առնելու ժողովրդից օրէնքին պէս. այսինքն՝ իրենց եղբայրներիցը. թէ եւ իրենք էլ Աբրահամի երանքիցն են առաջ եկած :

6 Բայց նա, որ նորանց ազգի մէջ չը համարուած՝ տասանորդ առաւ Աբրահամիցը. եւ օրհնեց նորան՝ որ աւետիքներն ընդունել էր :

7 Հիմիկ առանց ամէն հակառակութեան է, որ ցածն է մեծիցն օրհնվում :

8 Եւ այստեղ մեռնելոյ մարդիք տասանորդ են առնում. բայց այնտեղ վկայվեցաւ թէ նա կենդանի է :

9 Եւ ինչպէս որ խօսքի կարգն է բերում. ասեմ թէ Աբրահամով Ղեւին էլ՝ որ տասանորդ է առնում, տասանորդ տուաւ :

10 Ինչու որ՝ դեռ նա իրեն հօր երանքումն էր՝ որ երբոր Մելքիսեդեկ նորա առաջին եկաւ :

11 Ապա ուրեմն թէ որ կատարելութիւնը Ղեւտացոց քահանայութենովն էր, (ինչու որ ժողովուրդը նորա ներքեւն օրէնքն ընդունեց). էլ ինչ պէտք էր որ Մելքիսեդեկի կարգին պէս մին ուրիշ քահանայ առաջ գայ՝ եւ Ահարոնի կարգին պէս չասուի :

12 Բայց երբոր քահանայութիւնը փոխվումէ, պէտք է որ օրէնքն էլ փոխվի :

13 Պատճառն որ՝ նա որ նորա համար այսպէս է ասվում՝ ուրիշ ցեղի մասնակից է. որ նորանցից ոչ մինը սեղանին հաղորդ չէլաւ :

14 Ինչու որ յայտնի բան է՝ որ

բ Ծննդ. ԺԴ. 20. | գ Ծննդ. ԺԴ. 19. | Գաղ. Գ. 16. | Համար. 18. 19.
ե Թուոց. ԺԸ. 21. 26 | ե Հռովմ. Դ. 13. | ե Գաղ. Բ. 21. | Գղ. Ը. 7.

Յուդայ ծագեաց Տէր մեր․ յորմէ ազգէ վասն քահանայից Մովսէս ինչ ոչ ճառեաց։

15 Եւ ևս առաւել յայտ է՝ թէ ըստ նմանութեան Մելքիսեդեկի յառնելոց է այլ քահանայ։

16 Որ ոչ ըստ մարմնաւոր պատուիրանին եղեւ, այլ ըստ զօրութեան կենացն անվախճանից։
17 Քանզի վկայեցաւ, թէ Դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի։
18 Արհամարհութիւն լինէր առաջին պատուիրանին՝ վասն նորին տկարութեան եւ անշահութեան։
19 Քանզի ոչինչ կատարումն գործեցին օրէնքն, եւ մուտ ազնուական յուսոյն՝ որով մերձենամք առ Աստուած։

20 Եւ այնչափ, զի ոչ առանց երդման․ զի են ոմանք՝ որ առանց երդման էին կացեալ քահանայք։
21 Բայց սա երդմամբ 'ի ձեռն այնորիկ՝ որ ասացն 'ի նա․ Երդուաւ Տէր՝ եւ ոչ եւս զղջասցի, դու ես քահանայ յաւիտեան։
22 Եւ այնչափ լաւագոյն ուխտի եղեւ երաշխաւոր Յիսուս։

23 Եւ բազում էին կացեալ քահանայք՝ վասն մահու արգելուլ լինելոյ 'ի մշտնջենաւորել։
24 Իսկ սա վասն յաւիտեան կալոյ՝ առանց անցանելոյ ունի զքահանայութիւնն։
25 Ուստի եւ կենդանի առնել համօրէն կարող է զմատուցեալս նովաւ առ Աստուած․ քանզի միշտ

մեր Տէրը, Յուդայի ցեղիցը ե ծագեց․ որ այն ցեղի վերայ Մովսէս բնաւ բան չը խօսեց քահանայութեան համար։
15 Եւ էլ աւելի յայտնի է թէ Մելքիսեդեկի նմանութեան պէս մէն ուրիշ քահանայ պիտի առաջ գայ,
16 Որ մարմնաւոր պատուիրանքին պէս չէլաւ, բայց վերջը չունեցող կեանքի զօրութեան պէս։
17 Ինչու որ՝ վկայուեցաւ, թէ Դու քահանայ ես յաւիտեան Մելքիսեդեկի կարգին ը պէս։
18 Ել դէն է ձգուած առաջին պատուիրանքը՝ իրեն տկարութեան եւ անօգուտ ըլլալուն թ համար։
19 Պատճառն որ՝ օրէնքն ոչ մին կատարելութիւն ժ չըր գործեց, եւ նէրս մտաւ աղնիւ ի յոյս՝ որ նորանով մօտենումենք Աստուծոյ լ մօտ։
20 Եւ այնքան որ առանց երդումի չէ․ (ինչու որ՝ նորանք առանց երդումի քահանայ են էլած․)
21 Բայց սա՝ երդումով նորա ձեռամբ՝ որ ասաց նորան․ Տէրն երդուաւ՝ եւ էլ չի զղջանայ, թէ դու քահանայ ես խ յաւիտեան։
22 Եւ այսքան աւելի աղնիւ ուխտադրութեան երաշխաւոր էլաւ ծ Յիսուսը։
23 Եւ նորանք շատ քահանայ են էլել․ ինչու որ՝ մահն արգելումէր նորանց՝ որ միշտ մնան։
24 Բայց սա որովհետեւ յաւիտեան է կենում, քահանայութիւնն ունի առանց անցանելոյ․
25 Որ նրահամար էլ բոլորովին կարող է կենդանի անել նորանց՝ որ նորանով մօտենումեն Աստուծոյ

ե Եսայ. ԺԱ. 1։ Մատթ. Ա. 3։ Ղուկ. Գ. 33։ Հռովմ. Ա. 3։ Յայտ. Ե. 5։
ը Սաղ. ՃԺ. 4։ Գլ. Ե. 6. 10։ Զ. 20։
թ Հռովմ. Ը. 3։ Գաղ. Դ. 9։
ժ Գործ. ԺԳ. 39։ Հռովմ. Գ. 20։ 21. 28։ Ը. 3։ Գաղ. Բ. 16։ Գլ. Թ. 9։
ի Գլ. Զ. 18։ Ը. 6։
լ Հռովմ. Ե. 2։ Եփես. Բ. 18՝ Գ. 12։ Գլ. Դ. 16։ Ժ. 19։
խ Սաղ. ՃԺ. 4։
ծ Գլ. Ը. 6։ Թ. 15։ ԺԲ. 24։

կենդանի է՝ լինել՝ բարեխօս վասն նոցա ։

26 Զի այսպիսի իսկ եւ վայել էր մեզ քահանայապետ, սուրբ, անմեղ, անարատ, զատեալ 'ի մեղաւորաց, եւ բարձրացեալ քան զերկինս.

27 Որում ոչ հանապազ հարկ է որպէս այլոց քահանայապետիցն, նախ վասն իւրեանց մեղացն պատարագս մատուցանել՝ եւ ապա վասն ժողովրդեանն. իսկ սա զայն միանգամայն կատարեաց, զի զանձն իւր մատոյց պատարագ.

28 Օրէնքն զմարդիկ կացուցանեն քահանայապետս՝ զդածեալս տկարութեամբ. իսկ բանն երդման յետ օրինացն՝ զՈրդի, որ յաւիտեան կատարեալ է ։

մէտ. ինչու որ՝ միշտ կենդանի է՝ որ նորանց համար բարեխօսութիւն ‡ անէ ։

26 Պատճառն որ՝ ճիշդ այսպէսի քահանայապետ էր վայելում մեզ, սուրբ, անմեղ, անարատ, մեղաւորներիցն ^ ջոկված եւ երկնքիցն էլ վեր ) բարձրացած ։

27 Որ նորան պէտք չէ ինչպէս ուրիշ քահանայապետներին, որ ամէն ժամանակ առաջ իրենց մեղքերին համար պատարագներ ⌐ մատուցանելն՝ եւ յետոյ ժողովրդին § համար. բայց սա մին անգամ կատարեց այն նրանով՝ որ իրեն անձն պատարագ ′ մատոյց ։

28 Օրէնքն մարդկանց կանգնացնումէ քահանայապետ՝ որ պատած են ‿ տկարութենով. բայց այն երդումի խօսքն՝ որ օրէնքներիցն ետեւ է՝ [illegible] Որդոյն՝ որ յաւիտեան կատարեալ ˎ է ։

## Գլ. Ը

1 Եւ բանից գլուխ խօսիցս՝ այսպիսի ունիմք քահանայապետ, որ նստաւ ընդ աջմէ մեծութեան աթոռոյն յերկինս,

2 Սրբութեանցն պաշտօնեայ՝ եւ խորանին ճշմարտութեան, զոր Տէրն կանգնեաց՝ եւ ոչ մարդ.

3 Զի ամենայն քահանայապետ վասն մատուցանելոյ զոհս եւ զպատարագս կայ. ուստի հարկ է եւ նմա ունել ինչ՝ զոր մատուցանիցէ ։

4 Զի եթէ էր յերկրի, թերեւս չէր իսկ քահանայ. զի գոյին՝ որ

1 Եւ ասած խօսքերի գլուխն այս է. մենք այսպէսի քահանայապետ ունինք, որ մեծութեան աթոռի աջ կողմն նստեց — երկնքումն ։

2 Եւ սրբութեանց պաշտօնեայ ⊧ է՝ եւ ճշմարիտ խորանի, որ նորան Տէրն կանգնեցրուց՝ եւ ոչ թէ ‡ մարդ ։

3 Պատճառն որ՝ ամէն քահանայապետ մատաղներ եւ պատարագներ մատուցանելոյ համար կարգված ⊤ է. ուրեմն նորան էլ պէտք է որ մին բան ունենայ՝ որ ⊦ մատուցանէ ։

4 Ինչու որ եթէ երկրիցս էր՝ էլ քահանայ չէր. պատճառն որ նա-

‡ Հռովմ. Ը. 34. Ա Տիմ. Բ. 5. Գլ. Թ. 24. Ա Յովհ. Բ. 1.
^ Գլ. Դ. 15.
) Եփես. Ա. 20. Դ. 10. Գլ. Ը. 1.
⌐ Ղեւ. Թ. 7. ԺԶ. 6. 11. Գլ. Ե. 3. Թ. 7.
§ Ղեւ. ԺԶ. 15.
′ Հռովմ. Զ. 10. Գլ. Թ. 12. 28. Ժ. 12.
‿ Գլ. Ե. 1. 2.
ˎ Գլ. Բ. 10. Ե. 9.

—

— Եփես. Ա. 20. Կող. Գ. 1. Գլ. Ա. 3. Ժ. 12. ԺԲ. 2.
⊧ Գլ. Թ. 8. 12. 24.
‡ Գլ. Թ. 11.
⊤ Գլ. Ե. 1.
⊦ Եփես. Ե. 2. Գլ. Թ. 14.

մատուցանելին ըստ օրինացն պա-
տարագ .
5 Որք ստուերաւ և օրինակաւ
պաշտէին երկնաւորացն . որպէս և
հրամայեցաւ Մովսէսի յորժամ գոր-
ծելոց էր զվրան ժամուն՝ Տեսջի՛ր՝
ասէ . արասցես զամենայն ըստ օ-
րինակին՝ որ ցուցաւ քեզ ՚ի լերինն .
6 Բայց արդ՝ առաւելագոյն ևս
պաշտաման եհաս Յիսուս , որչափ
լաւագոյն ևս ուխտի է միջնորդ՝
և յառաւել աւետեացն օրինադրե-
ցաւ .
7 Զի եթէ առաջինն անարատ
էր , ապա երկրորդին տեղի ոչ
խնդրէր .
8 Նա աւանիկ բամբասէ զնոսա
և ասէ . Ահաւասիկ աւուրք եկես-
ցեն՝ ասէ Տէր , և կատարեցից ՚ի
վերայ տանն Իսրայէլի և ՚ի վերայ
տանն Յուդայ՝ ուխտ նոր .
9 Ո՛չ ըստ ուխտին՝ զոր եդի ընդ
հարս նոցա՝ յաւուր յորում առի ՚ի
ձեռն հանել զնոսա յերկրէն Եգիպ-
տացւոց . և զի նոքա ոչ կացին
յուխտին իմում , և ես անփոյթ ա-
րարի զնոցանէ , ասէ Տէր ամենա-
կալ .
10 Այլ այս է ուխտն՝ զոր եդից
տանն Իսրայէլի յետ աւուրցն այ-
նոցիկ՝ ասէ Տէր . տաց զօրէնս իմ
՚ի միտս նոցա՝ և ՚ի սիրտս նոցա
գրեցից զնոսա . և եղէց նոցա Աս-
տուած , և նոքա եղիցին ինձ ժո-
ղովուրդ .
11 Եւ ոչ ևս ուսուցանիցեն իւ-
րաքանչիւր զքաղաքակից իւր , և
իւրաքանչիւր զեղբայր իւր , և ա-
սիցեն թէ Ծանիր զՏէր . զի ամե-

րանք կային՝ որ օրէնքին պէս պա-
տարագ էին մատուցանում .
5 Որ նորանք երկնաւոր բաների
ստուերին և օրինակին ծառայու-
մէին , ինչպէս որ հրաման էլաւ Մօ-
սէսին . երբոր նա ժամի խորանն
շինելու էր , Մտիկ արա ասում է .
որ ամէն բան անես այն օրինակին
պէս՝ որ ցոյց տրվաւ քեզ՝ սարումն .
6 Բայց հիմիկ՝ Յիսուս աւելի ազ-
նիւ պաշտամունքի հասաւ , որքան
ինքն աւելի լաւ ուխտապայմանի
միջնորդ է՝ որ աւելի ազնիւ աւե-
տիքների վրայ ը հաստատուեցաւ .
7 Ինչու որ՝ եթէ առաջինն ա-
ռանց պակասութեան լինէր , էլ
երկրորդին համար տեղ չէր թ խըն-
դրվիլ .
8 Բայց անհամ յանդիմանում է նո-
րանց և ասում . Ահա օրեր կը
գան՝ ասում է ժ Տէրն . և նոր ուխտ
կը կատարեմ Իսրայէլի տանն և
Յուդայի տանն վրայ .
9 Ո՛չ թէ այն ուխտին պէս՝ որ
նորանց հարանց հետ դրի՝ այն օ-
րումն , որ ձեռքերն բռնեցի նորանց
Եգիպտացոց երկրիցն հանելու հա-
մար . ինչու որ՝ նորանք հաստատ
չը կացան իմ ուխտիս մէջ , և ես
երեսից ձգեցի նորանց , ասում է
ամենակարող Տէրն .
10 Բայց այս է ուխտն՝ որ կը դը-
նեմ Իսրայէլի տանն հետ՝ այն օրե-
րիցն ետև , ասում է Տէրը . կը տամ
իմ օրէնքներս նորանց մտքին մէջ
և նորանց սրտերին մէջ կը գրեմ
ի նորանց . և նորանց Աստուած կը
լինիմ , և նորանք ինձ ժողովուրդ
լ կը լինին .
11 Եւ էլ նորանց ամէն մէկը չի
սովորցնիլ իրեն քաղաքացուն , և
ոչ էլ ամէն մէկն իրեն եղբօրը՝ և
ասել , թէ ճանաչէ Տէրն . ինչու

զ Կող. Բ. 17. Գլ. Թ. 23. Ժ. 1.
է Ելից. ԻԵ. 4. ԻԶ. 30. ԻԷ. 8. Թու. Ը. 4. Գործ. Է. 44.
ը Բ Կորնթ. Գ. 6. 8, 9. Գլ. Է. 22.
թ Գլ. Է. 11. 18.
ժ Երեմ. ԼԱ. 31—34.
ի Գլ. Ժ. 16.
լ Զաք. Ը. 8.

նեքին ծանիցեն զիս 'ի փոքրկանց մինչեւ 'ի մեծամեծս նոցա ։

12 Զի քաւիչ եղէց անիրաւութեանց նոցա . եւ զմեղս նոցա՝ եւ զանօրէնութիւնս այլ ոչ եւս յիշեցից ։

13 Արդ՝ ասելովն նոր , հնացոյց զառաջինն . եւ որ հնանայն եւ ծերանայ՝ մերձ է յապականութիւն ։

որ՝ ամէնքն էլ կը ճանաչեն ինձ՝ նորանց փոքրներիցը մինչեւ [ի] մեծամեծները ։

12 Պատճառն որ՝ նորանց անօրէնութիւններին քաւիչ կը լինիմ . եւ նորանց մեղքերին ու անօրէնութիւններին էլ չեմ [ժ] յիշիլ ։

13 Ասա նոր ասելովը՝ այն առաջինը հնացրուց . եւ նա որ հնանումէ եւ ծերանում՝ մօտ է [լ] ապականութեան ։

## ԳԼ. Թ

1 Ունէր ունէր եւ առաջինն իրաւունս պաշտաման յայնժամ զաշխարհական սրբութիւնն ։

2 Զի խորանն առաջին հանդերձեցաւ այսպէս . յորում աշտանակն եւ սեղանն եւ հացն նուիրաց՝ որ Սրբութիւնն կոչէր ։

3 Եւ յետ երկրորդ վարագուրին խորանն՝ որ կոչէր Սրբութիւն սրբութեանց .

4 Յորում կայր բուրվառն ոսկի , եւ արկղն կտակարանաց պատեալ ներքոյ եւ արտաքոյ ոսկւով . յորում սափորն ոսկի լի մանանայիւ , եւ գաւազանն Ահարոնի՝ որ ծաղկեցաւ , եւ տախտակք կտակարանացն .

5 Եւ 'ի վերայ նորա քերովբէքն փառաց՝ որ հովանի առնէին 'ի վերայ քաւութեանն . վասն որոյ ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ ։

6 Եւ այս ամենայն իբրեւ այսպէս հանդերձեալ կայր , յառաջին խո-

1 Ուստի որ առաջին [illegible] էլ այն ժամանակը պաշտամունքի իրաւունք ունէր՝ այն աշխարհական [ա] սրբարանը ։

2 Ինչու որ՝ առաջին խորանն այսպէս [բ] պատրաստվեցաւ . որ նորանում [գ] էր [դ] ճրագակալը՝ եւ սեղանը եւ նուէրքի [ե] հացը , եւ այն Սրբութիւն էր կոչվում ։

3 Եւ երկրորդ վարագուրիցն ետեւ այն խորանն էր՝ որ Սրբութեանց սրբութիւն էր [զ] կոչվում ,

4 Որ նորանում կար ոսկէ բուրվառը , եւ կտակարանների տապանակը ներսիցն ու դրսիցն ոսկով [է] պատած , որ նորանում կար ոսկէ սափորը մանանայով [ը] լիքն , եւ Ահարոնի գաւազանն՝ որ [թ] ծաղկեց , եւ կտակարանների [ժ] տախտակները ,

5 Եւ նորա վերայ փառաց քերոբէները՝ որ շուք էին անում քաւութեանը [ի] վերայ . որ նորա համար պէտք չէ հիմիկ մին մին ասել ։

6 Եւ երբոր այն ամէնն այսպէս պատրաստած էր , քահանայքն ա-

ի Եսայ . ԾԴ . 13 ։ Յովհ . Զ . 45 ։ Ա Յովհ . Բ . 27 ։
ժ Հռովմ . ԺԱ . 27 ։ Գլ . Ժ . 17 ։
լ Բ Կորնթ . Ե . 17 ։

—

ա Ելից . ԻԵ . 8 ։
բ Ելից . ԻԶ . 1 ։
գ Ելից . ԻԶ . 35 ։ Խ . 4 ։
դ Ելից . ԻԵ . 31 ։
ե Ելից . ԻԵ . 23 . 30 ։ Ղե . ԻԴ . 5 , 6 ։
զ Ելից . ԻԶ . 31 . 33 ։ Խ . 3 . 21 ։ Գլ . Ժ . 19 ։
է Ելից . ԻԵ . 10 ։ ԻԶ . 33 ։ Խ . 3 . 21 ։
ը Ելից . ԺԶ . 33 . 34 ։
թ Թուոց . ԺԷ . 10 ։
ժ Ելից . ԻԵ . 16 . 21 ։ ԼԴ . 29 ։ Խ . 20 ։ Բ Օրին . Ժ . 2 . 5 ։ Գ Թագ . Ը . 9 . 21 ։ Բ Մնաց . Ե . 10 ։
ի Ելից . ԻԵ . 18 . 22 ։ Ղե . 2 , Գ Թագ . Ը . 6 , 7 ։

րանն յամենայն ժամ մտանէին քա-
հանայք զպաշտամունս կատարել ։

7 Բայց յերկրորդն միանգամ 'ի
տարւոջն քահանայապետն . եւ զայն
ոչ առանց արեան , զոր մատուցա-
նէր վասն իւր՝ եւ վասն ժողովր-
դեանն անգիտութեան ։

8 Զայս ցուցեալ Հոգւոյն Սրբոյ՝
մինչչեւ յայտնեալ էր ճանապարհն
սրբութեանցն . քանզի դեռ առա-
ջին խորանն ունէր զհաստատու-
թիւն ։

9 Որ է առակ ժամանակին , որ
առաջի կայր . յորում պատարագքն
եւ զոհքն մատչէին , որք ոչ կա-
րէին ըստ միտս կատարել զպաշ-
տամունս . բայց միայն կերակրովք
եւ ըմպելեօք ,

10 Եւ պէսպէս մկրտութեամբք՝
մարմնոյ արդարութիւնքն . որ մին-
չեւ 'ի ժամանակս ուղղութեանն 'ի
վերայ կային ։

11 Այլ Քրիստոս եկեալ Քահանա-
յապետ հանդերձելոցն բարեաց՝
մեծաւն եւ կատարելովն՝ եւ ան-
ձեռագործ խորանաւ , այսինքն է՝
որ ոչ յայսց արարածոց ,

12 Եւ ոչ արեամբ նոխազաց եւ
զուարակաց . այլ իւրով արեամբն
եմուտ միանգամ 'ի սրբութիւնսն՝
յաւիտենական գտեալ փրկու-
թիւն ։

13 Զի եթէ արիւն ցլուցն եւ նո-

մէն ժամանակ մտնումէին առաջին
խորանին մէջ՝ որ պաշտամունքնե-
րը ւ կատարեն .

7 Բայց երկրորդին մէջ քահանա-
յապետը տարին մէն խ անգամ , նա
ալ թէ առանց արիւնի , որ իրեն
համար՝ եւ ժողովրդի ագիտու-
թիւններին համար ծ մատուցանու-
մէր .

8 Որ Սուրբ Հոգին նորանով ա
ցոյց էր կ տալիս՝ որ դեռ սրբու-
թիւններին ճանապարհը յայտնըւած
հ չէր . նորահամար որ՝ առաջին խո-
րանը դեռ հաստատ կանգնած էր .

9 Որ նա մէն առակ էր այն ժա-
մանակին համար , որ առաջի կար .
որ նորանում պատարագներ եւ մա-
տաղներ էին մատուցանվում , որ
խղճմտանքին մտքի տալով՝ չէին
կարող կատարել անել նորանց՝ որ
ձ պաշտումէին ։

10 Բայց միմիակ կերակուրներով եւ
ղ խմելիքներով եւ կերպ կերպ
ճ լուացմունքներով մարմնոյ արդա-
րութիւններ . որ նորանք մինչեւ
շտկելու ժամանակը կարգւած
մ էին ։

11 Իսկ Քրիստոս որ յետոյ լինելու
յ բարիքների Քահանայապետ ն ե-
կաւ՝ մեծ եւ կատարեալ՝ եւ առանց
ձեռքի շինած խորանովը , այսին-
քըն՝ որ այս ստեղծվածներիցը շ չէ ,

12 Եւ ոչ թէ նոխազների եւ ար-
ջառների ո արիւնովը . այլ իրեն
չ արիւնովը մէն անգամ մտաւ այն
պ սրբարանը՝ եւ յաւիտենական
փրկութիւն ջ գտաւ ։

13 Ինչու որ՝ եթէ ցուլերի եւ նո-

ւ Թուոց . ԻԸ . 3 . Դան . Ը . 11 .
խ Ելից Լ . 10 . Ղեւ . ԺԶ . 2 . 11 , 12 15 . 34 . Համար 25 .
ծ Գլ . Ե . 3 . Է . 27 .
կ Գլ . Ժ . 19 20 .

հ Յովհ . ԺԴ . 6 .
ձ Գաղ . Գ . 21 . Գլ . Է . 18 . 19 . Ժ . 1 . 11 .
ղ Ղեւ . ԺԱ . 2 . Կող . Բ 16 .
ճ Թուոց . ԺԹ . 7 .
մ Եփես . Բ . 15 . Կող . Բ . 20 . Գլ . Է . 16 .
յ Գլ . Ժ . 1 .
ն Գլ . Գ . 1 .
շ Գլ . Ը . 2 .
ո Գլ . Ժ . 4 .
չ Գործ . Ի . 28 . Եփես . Ա . 7 . Կող . Ա . 14 . Ա Պետ . Ա . 19 . Յայտ . Ա . 5 . Ե . 9 .
պ Զաք . Գ . 9 . Համար . 26 . 28 . Գլ . Ժ . 10 .
ջ Դան . Թ . 24 .

խազաց՝ եւ մոխիր երինջոյն ցանեալ՝
զպղծեալսն սրբէր առ 'ի մարմնոյ
սրբութենէ ,

14 Ո՞րչափ եւս առաւել արիւնն
Քրիստոսի , որ 'ի ձեռն Հոգւոյն յա-
ւիտենականի մատոյց զանձն անա-
րատ պատարագ Աստուծոյ , սրբես-
ցէ զխիղճ մտաց ձերոց 'ի մեռելոտի
գործոց անտի՝ պաշտել զԱստուած
կենդանի ։
15 Եւ վասն այնորիկ նորոյ ուխ-
տիս է միջնորդ . զի յորժամ մահ
լինիցի՝ 'ի փրկութիւն վասն առաջին
ուխտին յանցանաց , զաւետիս առ-
ցեն հրաւիրեալքն 'ի ժառանգու-
թիւն յաւիտենից ։

16 Քանզի ուր կտակ է , հարկ է
զմահ 'ի մէջ բերել կտակագրին ։

17 Զի կտակ յետ մահու հաստա-
տուն է , ապա թէ ոչ՝ զօրեղ իցէ
հաստատուն , մինչ կտակագիրն կեն-
դանի է ։
18 Ուստի եւ ոչ առաջինն առանց
արեան նորոգէր ։
19 Քանզի իբրեւ պատմեցաւ ամե-
նայն պատուիրանք օրինացն 'ի Մով-
սիսէ ժողովրդեանն , առեալ զա-
րիւն ցլուցն եւ նոխազացն , ջրով
եւ բրդով՝ կարմրով եւ զոպայիւ ,
զկտակարանօքն իսկ եւ զամենայն
ժողովրդեամբն սրսկեաց ,
20 Եւ ասէ . Այս է արիւն կտա-
կին՝ զոր պատուիրեաց ձեզ Աստ-
ուած ։
21 Եւ զխորանաւն եւ զամենայն

խազների – արիւնը՝ եւ երինջների
մոխիրը ցանելով՝ սրբումէր պղծը-
ւածներին՝ մարմնաւոր սրբութեան
ստանալոյ = համար .
14 Ալ որչափ աւելի Քրիստոսի
Հ արիւնը՝ որ յաւիտենական Հոգւոյ
∓ ձեռքովը՝ իրեն անձն անարատ պա-
տարագ մատոյց ր Աստուծոյն , ձեր
խղճմտանքը ɔ կը սրբէ այն մեռած
– գործքերէն՝ որ կենդանի Աստու-
ծոյն ǂ պաշտէք ։
15 Եւ + նորա համար նա նոր ուխտի
միջնորդ ∘ է , որ երբոր մահ եղաւ
փրկութեան համար այն առաջին
ուխտի ժամանակուանն եղած յան-
ցանքներին ‡ պատճառովը , աւետի-
քին առնեն նորանք՝ որ ժառան-
գութեան մէջ կանչված – են ։
16 Պատճառն որ՝ ուրեղ որ մին
կտակ կայ՝ հարկաւոր է որ այն կը-
տակ գրողի մեռնիլն առաջ բերուի ։
17 Ինչու որ՝ կտակ մեռնելուցն
ետեւ հաստատ է . ապա թէ չէ՝
ինչպէս հաստատ կը լինի՝ քանի որ
այն կտակ գրողը կենդանի ≡ է ։
18 Նորա համար առաջինն էլ ա-
ռանց արիւնի ‡ չը հաստատուեցաւ ։
19 Պատճառն որ՝ երբոր Մովսէսն
օրէնքի ամէն պատուիրանքները
պատմեց ժողովրդին , ցուլերի եւ
նոխազների արիւնն ∓ առաւ՝ ջրի եւ
կարմիր բրդի եւ զոպայի հետ , եւ
իսկ այն կտակարաններին եւ ամէն
ժողովրդին վերայ Ի ցանեց ,
20 Եւ ասաց . Սա է կտակի արիւ-
նըն՝ որ Աստուած նորան պատուի-
րեց Ւ ձեզ ։
21 Եւ խորաններին եւ պաշտամունքի

– Ղե. ԺԶ. 14 16։
= Թու. ԺԹ. 2. 17։
Հ Ա Պետ. Ա. 19։ Ա Յովհ. Ա. 7։ Յայտ. Ա. 5։
∓ Հռովմ. Ա. 4։ Ա Պետ. Գ. 18։
ր Եփես. Բ. 5։ Տիտ. Բ. 14։ Գլ. Է. 27։
ɔ Գլ. Ա. 3։ Ժ. 22։
– Գլ. Զ. 1։
ǂ Ղու. Ա. 74։ Հռովմ. Զ. 13. 22։ Ա Պետ. Գ. 2։
+ Ա Տիմ. Բ. 5։
∘ Գլ. Է. 22։ Ը. 6։ Ժ. 24։
‡ Հռովմ. Գ. 25։ Ե. 6։ Ա Պետ. Գ. 18։
– Գլ. Գ. 1։
≡ Գաղ. Գ. 15։
‡ Ելից. ԻԴ. 6։
∓ Ելից. ԻԴ. 5, 6. 8։ Ղե. ԺԶ. 14, 15. 18։
Ի Ղե. ԺԴ. 4. 6. 7. 49. 51, 52։
Ւ Ելից. ԻԴ. 8։ Մատթ. ԻԶ. 28։

կահիւ պաշտաման նոյնպէս սրսկեաց
զարիւնն ։
22 Եւ գրեթէ ամենայն ինչ ար-
եամբն սրբէր ըստ օրինացն. եւ
առանց հեղման արեան չլինէր թո-
ղութիւն ։
23 Ապա հարկ էր օրինաւորացն
այնպիսեօքն սրբել. եւ բուն իսկ
երկնաւորացն՝ առաւել եւս պատա-
րագօք քան զնոյնս ։

24 Զի ոչ եթէ 'ի ձեռագործ սըր-
բութիւնս եմուտ Քրիստոս յօրի-
նակս ճշմարտութեանն. այլ 'ի բուն
իսկ յերկինս, յանդիման լինել ե-
րեսացն Աստուծոյ վասն մեր ։

25 Ո՛չ զի բազում անգամ մատու-
ցանիցէ զանձն պատարագ՝ որպէս
քահանայապետն, որ մտանէր 'ի
սրբութիւն սրբութեանցն ամի ամի
արեամբն օտարաւ .
26 Ապա թէ ո՛չ՝ պարտ էր նմա
բազում անգամ չարչարել 'ի սկզբ-
բանէ աշխարհի. բայց արդ աւա-
րտի միանգամ 'ի կատարած յաւի-
տենից՝ յանարգութիւն մեղաց իւ-
րով պատարագաւն յայտնեալ է ։
27 Եւ զոր օրինակ կայ մնայ մարդ-
կան միանգամ մեռանել՝ եւ յետ
այնորիկ դատաստան .

28 Նոյնպէս եւ Քրիստոս միան-
գամ մատուցեալ պատարագ առ 'ի
բառնալոյ զմեղս բազմաց . իսկ
յերկրորդումն առանց մեղաց յայտ-
նեսցի այնոցիկ, որ ակն ունիցին
նմա հաւատովք 'ի փրկութիւն ։

ամէն ամաններին վերայ էլ իսկ
այնպէս արիւնը [ե] ցանեց ։
22 Եւ համարեա թէ ամէն բան
արիւնով էր սրբվում օրէնքի հրա-
մանին պէս, եւ առանց արիւն թա-
փելոյ թողութիւն չէր [ը] լինում ։
23 Ապա հարկաւոր էր՝ որ երկ-
նաւոր բաների օրինակները այսպէ-
սի բաներով սրբվէին . բայց յատուկ
երկնաւորները իրենքն նորանից ա-
ւելի ազնիւ [թ] պատարագներով ։
24 Պատճառն որ՝ չէ թէ ձեռքով
շինված սրբարանների մէջ մտաւ
[ժ] Քրիստոս՝ որ ճշմարտութեան օրի-
նակներ [ի] էին, բայց իսկ յատուկ
երկինքին մէջ՝ որ Աստուծոյ երեսի
առաջին երեւի մեր [լ] համար ։
25 Ոչ էլ որ շատ անգամ իրեն ան-
ձն պատարագ մատուցանէ՝ ինչ-
պէս որ քահանայապետն, որ ամ-
բաց տարի մտնումէր սրբութեանց
սրբութիւնն օտար [խ] արիւնով .
26 Ապա թէ չէ՝ պէտք էր որ նա
աշխարհքի սկզբիցն ետեւ շատ ան-
գամ չարչարվէր . բայց հիմիկ՝ անձն
ժամանակների [ծ] վերջումը մին [կ] ան-
գամ յայտնվեցաւ, որ մեղքը դէն
ձգէ իրեն պատարագովը ։
27 Եւ ինչպէս որ մարդկանց հա-
մար սահմանված է մին անգամ
[հ] մեռնելն՝ ու նրանից ետեւ [ձ] դա-
տաստանը .
28 Ճիշտ այնպէս էլ Քրիստոս մին-
անգամ [ղ] պատարագվեցաւ [ճ] շատե-
րի մեղքերը վերացնելոյ [մ] համար .
բայց երկրորդ անգամն առանց մեղ-
քի կը յայտնվելի նորանց՝ որ սպա-
սումեն նորան հաւատքով՝ որ [յ] փըր-
կվէին ։

ե Ելից . ԻԹ . 12 . 36 . Ղև . Ը . 15 . 19 . ԺԶ . 14 . 15 . 16 . 18 . 19 .
ը Ղև . ԺԷ . 11 .
թ Գղ . Ը . 5 .
ժ Գղ . Զ . 20 .
ի Գղ . Ը . 2 .
լ Հռովմ . Ը . 34 . Գղ . Է . 25 . Ա Յովհ . Բ . 1 .
խ Համար . 7 .
ծ Ա Կորնթ . Ժ . 11 . Գաղ . Գ . 4 . Եփես . Ա . 10 .
կ Համար . 12 . Գղ . Ե . 27 . Ժ . 10 . Ա Պետ . Գ . 18
հ Ծննդ . Գ . 19 . Ժող . Գ . 20 .
ձ Բ Կորնթ . Ե . 10 . Յայտ . Ի . 12 . 13 .
ղ Հռովմ . Զ . 10 . Ա Պետ . Գ . 18 .
ճ Մատթ . ԻԶ . 28 . Հռովմ . Ե . 15 .
մ Ա Պետ . Բ . 24 . Ա Յովհ . Գ . 5 .
յ Տիտ . Բ . 13 . Բ Պետ . Գ . 12 .

## ԳԼ. Ժ

1 Քանզի ստուեր հանդերձելոց բարեացն ունէին օրէնքն, եւ ոչ զնոյն կերպարանս իրացն. ամի ամի զնոյն պատարագս մատուցանեն ցանդ, որք ոչ են կարող զմատուցեալսն կատարել.

2 Ապա թէ ոչ՝ դադարէին ՚ի մատուցանելոյ, վասն եւ ոչ մի ինչ այնուհետեւ խիղճ մտաց ունելոյ պաշտօնէիցն միանգամ սրբելոցն.

3 Այլ անդէն ՚ի նմին ՚ի յիշատակս մեղացն կային ամի ամի ։

4 Քանզի ոչ կարէր արիւն նոխազացն եւ ցլուց բառնալ զմեղս ։

5 Վասն որոյ ՚ի մտանել իւրում յաշխարհ՝ ասէ. Զոհս եւ պատարագս ոչ կամեցար, բայց մարմին հաստատեցեր ինձ ։

6 Ընդ ողջակէզս եւ ընդ վասն մեղացն ոչ հաճեցար ։

7 Յայնժամ ասացի թէ Ահաւասիկ եկի. ՚ի գլուխ գրոց գրեալ է վասն իմ, առնել զկամս քո՝ Աստուած ։

8 Վերագոյն ասէ, թէ Ընդ զոհս եւ ընդ պատարագս՝ եւ ընդ ողջակէզս՝ եւ ընդ վասն մեղացն ոչ հաճեցար, եւ ոչ կամեցար՝ որք ըստ օրինացն մատչէին ։

9 Ապա ասէ՝ Ահաւասիկ գամ առնել զկամս քո Աստուած. մերժէ զառաջինն՝ զի զերկրորդն հաստատեսցէ ։

1 Պատճառն որ՝ օրէնքն յետոյ գալու ա բարիքներին շուքն բ ունէր, ոչ թէ այն բաներին յատուկ կերպարանքը. տարուց տարի միշտ նոյն պատարագներն են գ մատուցանում՝ որ չեն կարող կատարեալ անել դ մատուցանողներին ։

2 Ապա թէ չէ՝ կը դադարէին այն մատուցանելուցը, նրահամար որ պաշտօն անողները նրանից ետեւ էլ մեղքի խղճմտանք բնաւ չէին ունենալ. ինչու որ՝ միանգամ սրբվեցան ։

3 Բայց այն պատարագներով տարուց տարի մեղքերի յիշատակ էր ե լինում ։

4 Ինչու որ նոխազների եւ ցուլերի արիւնը չէր կարող մեղքերը զ վերացնել ։

5 Նրահամար իրեն աշխարհք մտնելոյ ժամանակումն ասումէ. Մատաղներ եւ պատարագներ չը կամեցար, բայց մարմինը պատրաստեցիր է ինձ ։

6 Ողջակէզներն ու մեղաց համար պատարագները հաճոյ չէլան քեզ ։

7 Այն ժամանակն ասացի թէ՝ Ահա եկի. գրքերի խօսքերումը գրված է ինձ համար՝ քո կամքը անելոյ՝ ով Աստուած ։

8 Վերեւումն ասումէ թէ՝ Մատաղներն ու պատարագները եւ ողջակէզներն ու մեղաց համար պատարագները հաճոյ չէլան քեզ, եւ չը կամեցար նորանց՝ որ օրէնքի հրամանքին պէս նորանք էին մատուցանվում.

9 Ապա ասումէ. Ահա գալիս եմ քո կամքը անելոյ՝ ով Աստուած. առաջինն ձգումէ որ երկրորդն հաստատէ.

ա Գլ. Թ. 11.
բ Կող. Բ. 17. Գլ. Ը. 5. Թ. 23.
գ Գլ. Թ. 9.
դ Համար. 14.
ե Ղև. ԺԶ. 21. Գլ. Թ. 7.
զ Միք. Զ. 6. 7. Գլ. Թ. 13. Համար. 11.
է Սաղ. Խ. 6. Ծ. 8. Եսայ. Ա. 11. Երեմ. Զ. 20. Ամովս. Ե. 21. 22.

10 Որով կամօք եւ մեք սրբեցաք՝
՚ի ձեռն պատարագի մարմնոյն Յի-
սուսի Քրիստոսի միանգամ ։
11 Եւ ամենայն քահանայապետ
կայ հանապազորդ ՚ի պաշտամունս.
եւ զնոյն պատարագս մատուցանէ
բազում անգամ, որք ոչ երբէք կա-
րօղ են բառնալ զմեղս ։
12 Իսկ սա զմի վասն մեղաց մա-
տոյց պատարագ. եւ մշտնջենաւոր
նստաւ ընդ աջմէ Աստուծոյ ։
13 Եւ այսուհետեւ ակն ունի՝ մին-
չեւ գիցին թշնամիք իւր ՚ի ներքոյ
ոտից իւրոց ։
14 Քանզի միով պատարագաւ կա-
տարեաց զսրբեալսն ՚ի մշտնջենա-
ւորս ։
15 Այլ վկայէ մեզ եւ Հոգին
Սուրբ՝ յետ ասելոյն յառաջագոյն.
16 Եթէ Այս է ուխտն՝ զոր եդից
ընդ հարս նոցա յետ աւուրցն այ-
նոցիկ, ասէ Տէր. տաց զօրէնս իմ
՚ի սիրտս նոցա, եւ ՚ի խորհուրդս
նոցա գրեցից զնոսա ։
17 Ապա ասէ՝ Թէ զմեղս նոցա եւ
զանօրէնութիւնս նոցա այլ ոչ եւս
յիշեցից ։
18 Իսկ ուր թողութիւն է, ոչ
եւս պիտոյ է վասն մեղաց պատա-
րագ ։
19 Ունիմք այսուհետեւ եղբարք՝
համարձակութիւն ՚ի մուտս սրբու-
թեանցն արեամբն Յիսուսի.
20 Զոր նորոգեաց մեզ ճանապարհ
նորոգ եւ կենդանի ՚ի ձեռն վարա-
գուրին, այսինքն է՝ մարմնոյ իւ-
րոյ ։
21 Եւ քահանայ մեծ ՚ի վերայ
տանն Աստուծոյ ։

10 Որ այն կամքովը մենք էլ
ը սրբվեցանք՝ միանգամ Յիսուսի
Քրիստոսի մարմնոյ թ պատարագովը ։
11 Եւ ամէն քահանայապետ ամէն
օր կանգնած պաշտամունք է կատա-
րում. եւ իսկ այն պատարագները
շատ անգամ ժ մատուցանում, որ բնաւ
չեն կարող մեղքերը ի վերացնել ։
12 Բայց սա մին պատարագ մա-
տոյց մեղաց համար, եւ միշտ եւ
յաւիտեան նստեց Աստուծոյ աջ
լ կողմն ։
13 Եւ սրանից ետեւ սպասում է՝
մինչեւ որ իրեն ամէն թշնամիներն
իրեն ոտաց ներքեւը խ դնվին ։
14 Ինչու որ՝ մին պատարագով
միշտ եւ յաւիտեան կատարեց նո-
րանց որ ծ սրբվում են ։
15 Բայց Սուրբ Հոգին էլ վկայու-
մէ մեզ, երբոր առաջ ասաց.
16 Թէ Սա է ուխտն որ կը դնեմ
նորանց հետ այն օրերին ետեւ.
կը տամ իմ օրէնքներս նորանց սրտե-
րին մէջ, եւ նորանց խորհուրդնե-
րին մէջ կը գրեմ կ նորանց ։
17 Յետոյ ասում է՝ Թէ նորանց
մեղքերն ու նորանց անօրէնու-
թիւնները մին էլ չեմ յիշիլ ։
18 Բայց որտեղ որ թողութիւն է՝
այնտեղ էլ մեղքի համար պատա-
րագ պէտք չէ ։
19 Ուրեմն եղբարք՝ համարձակու-
թիւն հ ունինք սրբատեղը մանելոյ
Յիսուսի ձ արիւնովը.
20 Որ նա պատրաստեց նոր եւ
կենդանի ճանապարհ մեզ ղ համար
վարագուրի միջովը, այսինքն՝ ի-
րեն ճ մարմնովը,
21 Եւ մեծ մ քահանայ Աստուծոյ
տան յ վերայ ։

ը Յովհ. ԺԷ. 19. Գլ. ԺԳ. 12.
թ Գլ. Թ. 12.
ժ Թուո. ԻԸ. 3. Գլ. Ե. 21.
ի Համբ. 4.
լ Գլ. Ա. 3. Կող. Գ. 1.
խ Սաղ. ՃԺ. 1. Գործ. Բ. 35. Ա Կորնթ. ԺԵ. 25. Գլ. Ա. 13.
ծ Համբ. 1.
կ Երեմ. ԼԱ. 33, 34. Գլ. Ը. 10. 12.
հ Հռովմ. Ե. 2. Եփես. Բ. 18. Գ. 12.
ձ Գլ. Թ. 8. 12.
ղ Յովհ. Ժ. 9. ԺԴ. 6. Գլ. Թ. 8.
ճ Գլ. Թ. 3.
մ Գլ. Գ. 14.
յ Ա Տիմ. Գ. 15.

22 Մատիցուք ճշմարիտ սրտիւ՝
լրութեամբ հաւատոց, լուացեալ
զսիրտս 'ի խղճէ չարեաց՝ եւ մկր-
տեալ զմարմինս 'ի ջուրս սրբու-
թեան ։
23 Պնդով կալցուք զխոստովանու-
թիւն անշարժ յուսոյն, զի հաւա-
տարիմ է որ խոստացաւն ։

24 Եւ զգուշասցուք միմեանց յոր-
դորմամբք սիրոյ եւ գործոց բար-
եաց ։
25 Եւ մի թողցուք զժողովս մի-
միանց, որպէս եւ սովոր են ոմանք.
այլ մխիթարեսցուք, եւ այնչափ
եւս առաւել՝ որչափ տեսանիցէք
զօրն մերձենալ ։
26 Զի կամակար մեղք եթէ յան-
ցանիցեմք յետ ընդունելութեան
գիտութեան ճշմարտութեանն՝ այ-
նուհետեւ ոչ եւս պիտոյ է վասն
մեղաց պատարագ,

27 Այլ ահեղ ակնկալութիւն դա-
տաստանին, եւ նախանձ հրոյն՝ որ
ուտիցէ զհակառակորդսն ։
28 Արհամարհեալ ուրուք զօրէնսն
Մովսէսի, առանց ողորմութեանց՝
առ երկուք կամ երիւք վկայիւք
մեռանէր.
29 Իսկ որչափ առաւել պատժոց
արժանի համարիցիք զայն, որ զՈր-
դին Աստուծոյ առ ոտն եհար. եւ
զարիւն նորոյ ուխտին խառնակ հա-
մարեցաւ՝ որով եւ սրբեցաւն. եւ
զՀոգին շնորհաց թշնամանեաց ։

22 Ասա թող մօտենանք նորան
ճշմարիտ ՚սրտով, կատարեալ ՚հա-
ւատքով, սրտերս լուացած չար
՚խղճմտանքիցը, եւ մարմիններս
մկրտուած սուրբ ՚ջրովը ։
23 Պինդ բռնենք յուսոյ դաւա-
նութիւնն առանց ՚շարժելոյ.
պատճառն որ հաւատարիմ է նա՝
որ նա ՚խոստացաւ ։
24 Եւ հոգս տանինք իրար համար՝
դէպի սէր եւ բարի գործքեր յոր-
դորելով ։
25 Եւ չը թողունք մեր իրար ժողով-
քըն, ինչպէս որ մէկ քանիին սովոր
են ՚անել. բայց ՚իրար յորդորենք,
եւ այնքան էլ աւելի՝ որքան ՚տես-
նումէք՝ որ այն օրը մօտեցած է ։
26 Պատճառն որ եթէ մենք ճշ-
մարտութեան գիտութիւնն ընդու-
նելուցն ՚ետեւ՝ յօժար մեղք մեղք
՚գործենք, էլ նրանից ետեւ մե-
ղաց համար մեղաց համար պատարագ
չի մնում,
27 Այլ դատաստանի ահաւոր սպա-
սելը, եւ կրակի նախանձն՝ որ
հակառակորդներին ՚կը լափէ
28 Մինն որ Մովսէսի օրէնքն անար-
գումէր՝ առանց ՚ողորմութեան
երկու կամ երեք վկայով ՚մեռնու-
մէր.
29 Էլ որքան աւելի սաստիկ պատ-
ժոյ արժանի կը համարիք նրան, որ
Աստուծոյ Որդին ոտի տակ ՚կո-
խեց. եւ նոր ուխտի արիւնը պիղծ
համարեց՝ որ նա սրբուեցաւ ՚նո-
րանով. եւ շնորհաց Հոգուն նախա-
տինք ՚տուաւ ։

՚ Գլ. Դ. 16.
՚ Եփես. Դ. 12. Յակ. Ա. 6. Ա Յովհ. Գ. 21.
՚ Գլ. Թ. 14.
՚ Եզեկ. ԼԶ. 25. Բ Կորնթ. Է. 1.
՚ Գլ. Դ. 14.
՚ Ա Կորնթ. Ա. 9. Ժ. 13. Ա Թես. Ե. 24. Բ Թես. Գ. 3. Գլ. ԺԱ. 11.
՚ Գործ. Բ. 42. Յուդ. 19.
՚ Հռովմ. ԺԳ. 11.
՚ Փիլիպ. Դ. 5. Բ Պետ. Գ. 9. 11. 14.
՚ Բ Պետ. Բ. 20, 21.
՚ Թուոց. ԺԵ. 30. Գլ. Զ. 4.
՚ Եզեկ. ԼԶ. 5. Սոփոն. Ա. 18. Գ. 8. Բ Թես. Ա. 8. Գլ. ԺԲ. 29.
՚ Գլ. Բ. 2.
՚ Բ Օրին. ԺԷ. 2. 6. ԺԹ. 15. Մատթ. ԺԸ. 16. Յովհ. Ը. 17. Բ Կորնթ. ԺԳ. 1.
՚ Գլ. Բ. 3. ԺԲ. 25.
՚ Ա Կորնթ. ԺԱ. 29. Գլ. ԺԳ. 20.
՚ Մատթ. ԺԲ. 31. 32. Եփես. Դ. 30.

30 Այլ գիտեմք զայն՝ որ ասացն. Իմ են վրէժխնդրութիւնք, և ես հատուցից՝ ասէ Տէր. և դարձեալ թէ՝ Դատի Տէր զժողովուրդ իւր։

31 Ահ մեծ է անկանել ՚ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ։

32 Արդ՝ յիշեցէք զաւուրսն զառաջինս. յորս լուսաւորեալք բազում ճգանց և չարչարանաց համբերէք։

33 Մերթ ՚ի նախատինս և ՚ի նեղութիւնս խայտառակեալք, մերթ կցորդք այնպիսեաց վաստակաւորացն լինել։

34 Քանզի և ընդ կապեալս չարչարեցարուք, և զյափշտակութիւն ընչից ձերոց խնդութեամբ ընկալարուք. քանզի գիտէիք թէ լաւագոյն ևս ստացուածս ունիք անձանց յերկինս՝ ուր կան և մնան։

35 Արդ մի՛ մերժէք ՚ի ձէնջ զհամարձակութիւնն ձեր, յորում կայ մեծայ վարձուց հատուցումն։

36 Պիտոյ է ձեզ համբերութիւն. զի զկամս Աստուծոյ արարեալ՝ հասջիք աւետեացն։

37 Զի փոքր մի ևս քան որչափ՝ որ գալոցն իցէ՝ եկեսցէ և ոչ յամեսցէ։

38 Զի արդարն իմ ՚ի հաւատոց կեցցէ. և եթէ յերկմիտս ոք իցէ, ոչ հաճեսցի ընդ նա անձն իմ։

30 Բայց գիտեմնք նորան՝ որ ասաց. Վրէժ առնելն իմն է, և ես հատուցումն կը տամ՝ ասում է Տէրը. և կրկին թէ Տէրը կը դատէ իւրեն բ ժողովրդին։

31 Սոսկալի վախենալոյ բան է՝ կենդանի Աստուծոյ ձեռքին մէջ գ ընկնիլը։

32 Ուրեմն յիշեցէք առաջին դ օրերը, որ դուք ե լուսաւորուեցաք և շատ նեղութիւններին և չարչարանքներին զ համբերեցիք։

33 Ինչու որ ժամանակ կար՝ որ նախատինքներին և նեղութիւններին մէջ է խայտառակուեցաք, և ժամանակ կար՝ որ այնպէսի բան քաշողներին հետ մասնակից ը եղաք։

34 Պատճառն որ կապվածներին հետ էլ թ չարչարուեցաք, և ձեր ապրանքներին յափշտակութիւնն էլ ուրախութեամբ ժ ընդունեցիք. ինչու որ գիտէիք որ ձեր անձներիդ համար էլ աւելի լաւ ստացուածք ունիք երկնքումն՝ որ կենում և ի մնում է։

35 Ուրեմն չը ձգէք ձեր վստահութիւնն՝ որ նորանում մեծ վարձքի հատուցումն լ կայ։

36 Համբերութիւն պէտք է խ ձեզ. որ Աստուծոյ կամքն անելով՝ աւետիքին ծ հասնէք։

37 Ինչու որ՝ մինքիչ ժամանակ կ էլ՝ և նա որ գալու է՝ կը գայ և չի հ ուշանալ։

38 Բայց իմ՝ արդարս հաւատքիցը ձ կապրի. և թէ որ մինն երկմիտ լինի, նորան իմ անձս չի հաւանել։

ա Բ Օրին. ԼԲ. 35։ Հռովմ. ԺԲ. 19։
բ Բ Օրին. ԼԲ. 36։ Սաղ. Ծ. 4։ ՃԼԵ. 14։
գ Ղու. ԺԲ. 5։
դ Փող. Գ. 4։ Բ Յովհ. 8։
ե Գլ. Զ. 4։
զ Փիլիպ. Ա. 29. 30։ Կող. Բ. 1։
է Ա Կորնթ. Դ. 9։
ը Փիլիպ. Ա. 7։ Գ. 14։ Ա Թես. Բ. 14։
թ Փիլիպ. Ա. 7։ Բ Տիմ. Ա. 16։
ժ Մատթ. Ե. 12։ Գործ. Ե. 41։ Յակ. Ա. 2։
ի Մատթ. Զ. 20։ ԺԹ. 21։ Ղու. ԺԲ. 33։ Ա Տիմ. Զ. 19։
լ Մատթ. Ե. 12։ Ժ. 32։
խ Ղու. ԻԱ. 19։ Գաղ. Զ. 9։ Գլ. ԺԲ. 1։
ծ Կող. Գ. 24։ Գլ. Թ. 15։ Ա Պետ. Ա. 9։
կ Ղու. ԺԸ. 8։ Բ Պետ. Գ. 9։
հ Ամբ. Բ. 3. 4։
ձ Հռովմ. Ա. 17։ Գաղ. Գ. 11։

39 Բայց մեք ոչ եմք երկմտութեամբ 'ի կորուստ. այլ հաւատովք 'ի փրկութիւն հոգւոց։

39 Իսկ մենք երկմտութենով չենք՝ որ [a] կորչինք. այլ հաւատքով որ հոգիներս [b] փրկվին։

## ԳԼ. ԺԱ.

1 Զինչ են հաւատք, եթէ ոչ յուսացելոց իրաց հաստատութիւն, եւ յանդիմանութիւն՝ որոց ոչն երեւին։

2 Զի նովաւ վկայեցան առաջինքըն։

3 Հաւատովք իմանամք՝ հաստատեալ զյաւիտեանս բանիւ Աստուծոյ, յաներեւութից զերեւելիսս եղեալ։

4 Հաւատովք լաւ պատարագս Հաբէլ քան զԿայէն մատուցանէր Աստուծոյ, որով վկայեցաւ իսկ արդար լինել. զի 'ի վերայ պատարագացն եղեւ նմա վկայութիւն յԱստուծոյ. զի թէպէտ եւ մեռաւ 'ի նմին, սակայն տակաւին խօսի։

5 Հաւատովք Ենովք փոխեցաւ՝ զի մի զմահ ճաշակեսցէ. եւ ոչ ուրեք գտանէր, քանզի փոխեաց զնա Աստուած. եւ յառաջ քան զփոխելն նորա՝ վկայեցաւ հաճոյ լինել Աստուծոյ։

6 Բայց առանց հաւատոց անհնար է հաճոյ լինել. այլ հաւատալ արժան է այնմ որ մերձենայ առ Աստուած՝ թէ է Աստուած. եւ որ խնդրեն զնա՝ լինի պարգեւատու։

7 Հաւատովք առեալ հրաման Նոյի՝ վասն չեւեւս երեւելեացն՝ զահի հարեալ կազմէր զտապանն 'ի

1 Հաւատքն ինչ է, եթէ ոչ յուսացած բաների հաստատութիւն, եւ այն բաների ցոյց տալն՝ որ չեն [c] երեւում։

2 Ինչու որ նորանով առաջին մարդիկը վկայութիւն [d] ընդունեցին։

3 Հաւատքով ենք իմանում որ աշխարհքները հաստատվեցան Աստուծոյ խօսքովը, որ աներեւոյթ բաներից այս երեւօրներս [e] էլան։

4 Հաւատքով Աբէլ Կայէնիցն աւելի լաւ պատարագ էր մատուցանում [f] Աստուծոյն՝ որ նորանով էլ վկայութիւն ընդունեց որ արդար է. ինչու որ այն պատարագներին վերայ վկայութիւն էլաւ նորան Աստուածանից. որ նա՝ թէ եւ մեռաւ նորանով, բայց դեռ հիմիկ [g] խօսումէ։

5 Հաւատքով Ենօք փոխվեցաւ՝ որ մահը [h] չըր տեսնէ. եւ ոչ մինտեղ չէր գտնվում. ինչու որ՝ Աստուած փոխեց նորան. եւ իրեն փոխվելուցն առաջ վկայվեցաւ՝ որ հաճոյ է Աստուծոյն։

6 Բայց առանց հաւատքի անկարելի է հաճոյ լինել Աստուծոյն. այլ նորան որ Աստուծոյն մօտենումէ՝ պէտք է որ հաւատայ՝ թէ Աստուած կայ. եւ նորանց որ խնդրումեն նորան՝ պարգեւ կը հատուցանէ։

7 Հաւատքով Նոյ հրաման առաւ դեռ չերեւած բաների [i] համար՝ եւ խիստ վախով բանված շինումէր

[a] Բ Պետ. Բ. 20, 21։
[b] Փորձ. ԺԶ. 30. 31։ Ա Թես. Ե. 9։ Բ Թես. Բ. 14։
[c] Հռովմ. Ը. 24։ 25։ Բ Կորնթ. Դ. 18։ Ե. 7։
[d] Համար. 39։
[e] Ծննդ. Ա. 1։ Սաղ. ԼԳ. 6։ Յովհ. Ա. 3։ Գլ. Ա. 2։ Բ Պետ. Գ. 5։
[f] Ծննդ. Դ. 4։ Ա Յովհ. Գ. 12։
[g] Ծննդ. Դ. 10։ Մատթ. ԻԳ. 35։ Գլ. ԺԲ. 24։
[h] Ծննդ. Ե. 22 24։
[i] Ծննդ. Զ. 13. 22։

փրկութիւն տան իւրոյ, որով դա– տեցաւն զաշխարհ. եւ հաւատոյն արդարութեան եղեւ ժառանգա– ւոր ։

8 Հաւատովք որ Աբրահամն կո– չեցաւ՝ ունկնդիր եղեւ ելանել 'ի տեղին, զոր առնելոց էր 'ի ժա– ռանգութիւն. ել գնաց՝ եւ ոչ գի– տէր յով երթիցէ ։

9 Հաւատովք պանդխտեցաւ յերկ– րին աւետեաց իբրեւ յօտարու– թեան. խորանօք բնակեաց Իսահա– կաւ եւ Յակովբաւ համբերձ ժա– ռանգակցօք նոյին աւետեաց ։

10 Քանզի ակն ունէր հիմամբք հաստատելոյ քաղաքին, որոյ ճար– տարապետ եւ արարիչ Աստուած է ։

11 Հաւատովք եւ ինքն Սառա՝ որ ամուլն էր, զօրութիւն առնլոյ զսերմն որդեծնութեան՝ ընդունէր, եւ 'ի տարաժամ հասակի ծնանէր. քանզի հաւատարիմ համարեցաւ զայն՝ որ խոստացաւն ։

12 Վասն որոյ եւ 'ի միոջէն ծնա– նէին. եւ այն՝ 'ի յանդեալ ժամա– նակի, իբրեւ զաստեղս երկնից բազմութեամբ, եւ իբրեւ զաւազ առ ափն ծովու անթիւ թուոյ ։

13 Ըստ հաւատոյ մեռան ամենե– քին սոքա, եւ չեւեւս ընկալեալ զաւետիսն. այլ 'ի հեռուստ տեսին զնոսա՝ եւ ցնծացան, եւ խոստո– վան եղեն՝ եթէ օտարք եւ պան– դուխտք են յերկրի ։

այն տապանն իրեն տան փրկու– թեան ը համար, որ նորանով աշ– խարհքիս դատեց. եւ այն արդա– րութիւնը ժառանգեց՝ որ հաւատ– քիցն թ է ։

8 Հաւատքով Աբրահամ երբոր կանչվեցաւ՝ հնազանդ էլաւ՝ դուրս գնալոյ այնտեղն, որ նորա ժառան– գութեան պէտ պիտի առնէր. դուրս ելաւ գնաց եւ չէր գիտում թէ ուր ժ գնայ ։

9 Հաւատքով պանդուխտ էլաւ աւետիքի երկրումն իբր մին օտար տեղում. խորաններում բնակվեցաւ Սահակի եւ Յակոբայ ի հետ՝ որ նո– րանք էլ նորա հետ իսկ այն աւե– տիքի ժառանգ լ էին ։

10 Պատճառն որ՝ սպասումէր այն հիմունքով հաստատված խ քաղա– քին, որ նորա ճարտարապետն ու շինօղն Աստուած ծ է ։

11 Հաւատքով Սառան ինքն էլ՝ որ ամուլ էր, սերմն առնելոյ զօ– րութիւն էր ընդունում՝ որդի ծը– նելոյ կ համար. եւ ժամանակից դուրս հասակի մէջ հ որդի էր ծը– նում. ինչու որ հաւատարիմ համա– րեց նորան՝ որ նա ձ խոստացաւ ։

12 Նորահամար այն մէկիցն՝ որ էլ իրեն ժամանակով անցած էր՝ այնքան շատեր ղ ծնվումէին, ինչպէս երկնքի աստղներին ու ինչպէս աւազը ծովի եզրին մօտ՝ անթիւ ճ համարի ։

13 Սրանք ամէնքը մեռան հաւատ– քի մէջ, եւ դեռ աւետիքներին մ չընդունեցին. բայց հեռուանց տե– սին նորանց՝ եւ յ ուրախացան. եւ դաւանեցին թէ օտար եւ պան– դուխտ են ն երկրումս ։

ը Ա Պետ. Գ. 20.
թ Հռովմ. Գ. 22. Դ. 13. Փիլիպ. Գ. 9.
ժ Ծննդ. ԺԲ. 1. 4. Գործ. Է. 2-4.
ի Ծննդ. ԺԲ. 8. ԺԳ. 3. 18. ԺԸ. 1. 9.
լ Գղ. Զ. 17.
խ Գղ. ԺԲ. 22. ԺԳ. 14.
ծ Գղ. Գ. 4. Յայտ. ԻԱ. 2. 10.
կ Ծննդ. ԺԷ. 19. ԺԸ. 11. 14. ԻԱ. 2.
հ Ղու. Ա. 36.
ձ Հռովմ. Դ. 21. Գղ. Ժ. 23.
ղ Հռովմ. Դ. 19.
ճ Ծննդ. ԻԲ. 17. Հռովմ. Դ. 18.
մ Համար. 39.
յ Համար. 27. Յովհ. Ը. 56.
ն Ծննդ. ԻԳ. 4. ԽԷ. 9. Ա Մնաց. ԻԹ. 15. Սաղ. ԼԹ. 12. ՃԺԹ. 19. Ա Պետ. Ա. 17. Բ. 11.

14 Զի որք զայնպիսիսն խօսին, յայտ առնեն՝ եթէ զաւառ իմն խնդրեն։

15 Զի եթէ զայն յիշէին՝ ուստի ելինն, գոյր ժամանակ դառնալոյ անդրէն։

16 Նա աւանիկ ազնուականի իմն ցանկացեալ են, այսինքն է՝ երկնաւորին. վասն որոյ ոչ ամօթ համարի Աստուած՝ կոչել նոցա Աստուած. քանզի պատրաստեաց նոցա քաղաք։

17 Հաւատովք մատոյց Աբրահամ 'ի փորձութեան իւրում զԻսահակ պատարագ. եւ զմիամօրն մատուցանէր, որոյ զաւետիսն ընկալեալ էր.

18 Որում ասացաւ, թէ ՚Իսահակաւ կոչեսցի քեզ զաւակ։

19 Եդ 'ի միտ իւրում, թէ 'ի մեռելոց կարող է յարուցանել Աստուած. ուստի եւ յառակս ընկալաւ զնա։

20 Հաւատովք՝ վասն հանդերձելոց իրաց օրհնեաց Իսահակ զՅակովբ եւ զԵսաւ։

21 Հաւատովք՝ Յակովբ 'ի մեռանել իւրում զիւրաքանչիւրոք յորդւոցն Յովսեփու օրհնեաց, եւ երկիր եպագ 'ի ծայր գաւազանի իւրոյ։

22 Հաւատովք Յովսէփ 'ի վախճանել իւրում յիշեաց զելս որդւոցն Իսրայէլի, եւ վասն ոսկերաց իւրոց պատուիրեաց։

23 Հաւատովք՝ Մովսէս իբրեւ ծնաւ, թաքուցաւ ամիս երիս 'ի հարց իւրոց. քանզի տեսին կայտառ զմանուկն, եւ ոչ զանգի-

14 Պատճառն որ՝ նորանք որ այնպէսի բաներ են խօսում՝ յայտնի ցոյց են տալիս՝ որ մէն գաւառի են ման ա գալիս։

15 Եւ թէ որ նա կը յիշէին՝ որ նորանցից դուրս ելին, ժամանակ կար յետ դառնալոյ։

16 Բայց հիմիկ մէն աւելի ազնիւին են ցանկացած, այսինքն երկնաւորին. եւ նրահամար Աստուած էլ ամօթ չի համարում՝ նորանց Աստուած բ կոչուիլ. ինչու որ քաղաք պատրաստեց նորանց գ համար։

17 Հաւատքով Աբրահամ Իսահակին պատարագ մատոյց՝ իրեն փորձուելոյ դ ժամանակումը. եւ միածընունդ որդուն մատուցանումէր նորան որ աւետիքն ընդունել ե էր

18 Նորան որ ասվեցաւ՝ թէ Իսահակով կը կոչուի քո զ զաւակդ։

19 Նա միտք արաւ՝ թէ Աստուած կարող է մեռելների միջիցն էլ է յարուցանել. եւ այս պատճառովս էլ օրինակի համար ընդունեց նորան։

20 Հաւատքով Իսահակ Յակոբին եւ Եսաւին օրհնեց նոր գալու բաներին ը համար։

21 Հաւատքով Յակոբ իրեն մեռնելոյ ժամանակումը Յօսէփի որդիքներիցն ամէն մէկին թ օրհնեց, եւ իրեն գաւազանի ծայրին վերայ ընկած երկրպագութիւն ժ արաւ։

22 Հաւատքով Յօսէփ իրեն վախճանվելոյ ժամանակումը յիշեց Իսրայէլի որդոց դուրս գնալը, եւ իրեն ոսկորներին համար հրաման ի տուաւ։

23 Հաւատքով Մօսէս՝ երբոր ծընվաւ՝ երեք ամիս թաքուն պահվեցաւ իրեն ծնօղքիցը. ինչու որ՝ տեսին թէ մանուկը գեղեցիկ լ էր,

ա Գղ. ԺԳ. 14.
բ Ելից. Գ. 6. 15 Մատթ. ԻԲ. 32. Գործ. Է. 32.
գ Փիլիպ. Գ. 20 Գղ. ԺԳ. 14.
դ Ծննդ. ԻԲ. 1. 9.
ե Յակ. Բ. 21.
զ Ծննդ. ԻԱ. 12. Հռոմ. Թ. 7.
է Հռոմ. Դ. 17. 19. 21.
ը Ծննդ. ԻԷ. 27. 39.
թ Ծննդ. ԽԸ. 5. 16. 20.
ժ Ծննդ. ԽԷ. 31.
ի Ծննդ. Ծ. 24, 25. Ելից. ԺԳ. 19.
լ Ելից. Բ. 2. Գործ. Է. 20.

երկեան ՚ի հրամանէ թագաւորին։

24 Հաւատովք Մովսէս իբրեւ անձնեայ՝ ուրացաւ կոչել որդի դստերն Փարաւոնի։

25 Լաւ համարեցաւ չարչարել ընդ ժողովրդեանն Աստուծոյ, քան առ ժամանակ մի վայելել ՚ի մեղս։

26 Կարեւոր համարեցաւ զնախատինսն Քրիստոսի, քան զմեծութիւն գանձուցն Եգիպտացւոց. զի հայեցեալ անդ առնէր վարձուցն հատուցման։

27 Հաւատովք թողոյր զերկիրն Եգիպտացւոց, եւ ոչ երկնչէր ՚ի ցասմանէ թագաւորին. զի աներեւոյթն իբրեւ զտեսեալ համբերութեամբ համարեցաւ։

28 Հաւատովք արար զզատիկն եւ զհեղումն արեանն. զի մի սատակիչ անդրանկացն մերձեսցէ ՚ի նոսա։

29 Հաւատովք անցին ընդ ծովն Կարմիր՝ իբրեւ ընդ ցամաք երկիր. զորոյ զփորձ առեալ Եգիպտացւոցն՝ ընկղմեցան։

30 Հաւատովք պարիսպքն Երիքովի անկան, շուրջ եկեալ զնոքօք զեօթն օր։

31 Հաւատովք Ռախաբ պոռնիկ ոչ կորեաւ ընդ անհաւատսն, որոյ ընկալեալ էր զլրտեսսն խաղաղութեամբ։

32 Եւ արդ՝ զինչ եւս ասացից. զի ոչ բաւական ժամանակս պատմելոյ վասն Գեդէովնի, Բարակայ, Սամփսովնի, Յեփթայեայ, Դաւթի եւ Սամուէլի եւ այլոց մարգարէիցն.

եւ չը վախեցան թագաւորի ‡ հրամանիցը։

24 Հաւատքով Մովսէս՝ երբոր մեծցաւ՝ չը կամեցաւ փարաւոնի աղջկան որդի + կոչուիլ.

25 Աւելի լաւ համարեց Աստուծոյ ժողովրդին հետ չարչարուիլ, քան թէ քիչ ժամանակ մեղքով ∘ վայելել։

26 Աւելի՜ աղէկ համարեց Քրիստոսի նախատինքները, քան թէ Եգիպտացւոց հարուստ ‡ գանձերը. ինչու որ աչք դրած մտիկ էր տալիս վարձքի = հատուցմունքին։

27 Հաւատքով թողեց Եգիպտացւոց երկիրը, եւ չը վախեցաւ թագաւորի ƀ բարկութենիցը. ինչու որ՝ համբերութենով աներեւոյթ բաները տեսածի պէս ‡ համարեց։

28 Հաւատքով արաւ զատիկն ու արիւն թափելը. որ առաջնեկներին սատակողը չը մօտենայ ⸗ նրանց։

29 Հաւատքով անցան Կարմիր ծովէն ինչպէս ցամաք երկրի վերայ. որ Եգիպտացիներն էլ նոր փորձեցին՝ եւ ⊢ խեղդվեցան։

30 Հաւատքով Երիքովի պարիսպները վէր ընկան, երբոր եօթն օր նորա չորս կողմերը ղ պտըտեցին։

31 Հաւատքով Ռախաբ պոռնիկը չը կորաւ անհաւատներին ⊢ հետ, որ նա լրտեսներին ընդունել էր ⸓ խաղաղութենով։

32 Եւ հիմիկ՝ էլ ինչ ասեմ. ինչու որ՝ ժամանակս բաւական չէ պատմելոյ ƀ Գեդէօնի, ⸗ Բարակի, ⸗ Սամփսօնի, ⸓ Յեփթայի, ⊢ Դաւթի եւ Սամուէլի եւ ուրիշ մարգարէների ⸗ համար։

‡ Ելից. Ա. 16. 22.
+ Ելից. Բ. 10. 11.
∘ Սաղ. ՁԹ. 10.
‡ Ղկ. ԺԴ. 13.
= Ղկ. Ժ. 35.
ƀ Ելից. Ժ. 28, 29. ԺԲ. 37. ԺԳ. 17. 18.
‡ Համար. 13.
⸗ Ելից. ԺԲ. 21.
⊢ Ելից. ԺԴ. 22 29.
ղ Յես. Զ. 20.
⊢ Յես. Զ. 23. Յակ. Բ. 25.
⸓ Յես. Ա. 1.
ƀ Դատ. Զ. 11.
⸗ Դատ. Դ. 6.
⸗ Դատ. ԺԳ. 24.
⸓ Դատ. ԺԱ. 1. ԺԲ. 7.
⊢ Ա Թագ. ԺԶ. 1. 13. ԺԷ. 45.
⸗ Ա Թագ. Ա. 20. ԺԲ. 20.

33 Որք հաւատովք պարտեցին զթագաւորութիւնս. գործեցին զարդարութիւն. հասին աւետեաց. խցին զբերանս առիւծուց.

34 Շիջուցին զզօրութիւն հրոյ. ապրեցան 'ի բերանոյ սրոյ. զօրացան 'ի տկարութենէ. եղեն զօրաւորք 'ի պատերազմի. ածին զբանակս օտարաց:

35 Ընկալան կանայք 'ի յարութենէ զմեռեալս իւրեանց. կէսք կոչկոճեցան՝ եւ չեւ եւս ընկալեալ զփրկութիւն, զի լաւագոյն՝ յարութեանն հասանիցեն:

36 Եւ կէսք զաղանջանաց եւ զգանից զփորձ առին, զկապանաց եւ զբանտից:

37 Քարկոծեցան, սղոցեցան, փորձեցան, սպանմամբ սրոյ մեռան, շրջեցան (խաշն մաշկօք՝) եւ մորթովք այծենեօք. կարօտեալք, նեղեալք, չարչարեալք.

38 Զորս ոչ արժէ աշխարհս. յանապատի մոլորեալք՝ եւ 'ի լերինս՝ եւ յայրս՝ եւ 'ի փապարս երկրի:

39 Եւ սոքա ամենեքին վկայեալք 'ի հաւատոյն, չեւ եւս ընկալան զաւետիսն:

40 Աստուծոյ վասն մեր լաւագոյն համարեալ, զի մի առանց մեր կատարեսցին:

33 Որ նորանք հաւատքով թագաւորութիւնների յաղթեցին. արդարութիւն գործեցին. աւետիքներ [ա] առացան, առիւծների բերանները [բ] խցեցին.

34 Կրակի զօրութիւնն [գ] անցրին. սրի բերանից [դ] պրծան. տկարութենից [ե] զօրացան. պատերազմի մէջ զօրաւոր եղան. օտարների բանակներըն [զ] առին:

35 Կանայքն իրենց մեռելները յետ ընդունեցին [է] յարութենից. կէսերը սաստիկ չարչարուեցան եւ չը կամեցան ազատուիլ, որ աւելի լաւ յարութեան [ը] հասնեն.

36 Եւ կէսերը աղանջանքների եւ ծեծերի համբերեցին, կապանքների եւ [թ] բանտերի.

37 Քարկոծուեցան, սղոցուեցան, փորձուեցան, սրով սպանուած [ժ] մեռան. ոչխարի մորթերով եւ այծի կաշիքներով [ի] մանեկին. կարօտութիւն քաշած, նեղացած, չարչարուած.

38 Որ աշխարհք նորանց արժանի չէ. անապատ տեղերի մէջ մոլորուեցան եւ սարերի եւ [լ] այրերի՝ եւ երկրի փոսերի մէջ:

39 Եւ սորանք ամէնքը հաւատքով վկայութիւն առին, եւ աւետիքը դեռ [խ] չընդունեցին:

40 Ինչու որ՝ Աստուած մեզ համար աւելի լաւ [ծ] համարեց, որ առանց մեզ [կ] չը կատարուին:

## ԳԼ. ԺԲ

1 Այսուհետեւ եւ մեք՝ որ այսչափ շուրջ զմեօք մածեալ ունիմք

1 Ուրեմն մենք էլ՝ որ վկաների այսքան բազմութիւն ունինք մեր

ա Բ Թագ. Ե. 11:
բ Դատ. ԺԴ. 5, 6 Ա Թագ. ԺԷ. 34, 35: Դան. Զ. 22:
գ Դան. Գ. 25:
դ Ա Թագ. Ի. 1. Գ Թագ. ԺԹ. 3: Դ Թագ. Զ. 16:
ե Գ Թագ. Ի. 7: Յոբ. ԽԲ. 10: Սաղ. Զ. 8:
զ Դատ. ԺԵ. 8. 15: Ա Թագ. ԺԴ 13: ԺԷ. 51, 52: Բ Թագ. Ը. 1:
է Գ Թագ. ԺԷ. 22 Դ Թագ. Դ. 35:
ը Գործ. ԻԲ. 25:
թ Ծննդ. ԼԹ. 20: Երեմ. Ի. 2: ԼԷ. 15:
ժ Գ Թագ. ԻԱ. 13 Բ Մնաց. ԻԴ. 21: Գործ. Է. 58: ԺԴ. 19:
ի Դ Թագ. Ա. 8: Մատթ. Գ. 4: Զաք. ԺԳ. 4:
լ Գ Թագ. ԺԸ. 4: ԺԹ. 9:
խ Համար. 2. 13:
ծ Գլ. Ե. 22: Ը. 6:
կ Գլ. Ե. 9: ԺԲ. 23: Յայտ. Զ. 11:

զբազմութիւն վկայից, զհպարտութիւն զամենայն 'ի բաց ընկեսցուք՝ եւ զմեղս կապեալս. համբերութեամբ ընթասցուք 'ի պատերազմ՝ որ առաջի կայ մեզ:

2 Հայեցարուք 'ի զօրագլուխն հաւատոյ՝ եւ 'ի կատարիչն Յիսուս. որ փոխանակ ուրախութեանն՝ որ նմա առաջի կայր, յանձն առ ըզ խաչն, արհամարհեալ զամօթ, նստաւ ընդ աջմէ աթոռոյն Աստուծոյ:

3 Ա՛րդ ածէք զմտաւ, որ զայսպիսի համբերութիւն 'ի մեղաւորաց հակառակութենէ անտի կրեաց. զի մի՛ աշխատ լինիցիք անձամբք ձերովք՝ եւ լքանիցիք:

4 Զի չեւ եւս արեանց չափ պատերազմեալք՝ հակառակ կացէք մեղացն.

5 Եւ մոռացարուք զմխիթարութիւնն, որ ընդ ձեզ իբրեւ ընդ որդեակս խօսի. Որդեակ իմ՝ մի՛ լքանիր 'ի խրատու Տեառն. եւ մի՛ վհատիցիս՝ յանդիմանեալ 'ի նմանէ:

6 Զի զոր սիրէ Տէր՝ խրատէ, տանջէ զամենայն որդի՝ զոր ընդունի:

7 'Ի խրատու համբերութեան կայք, իբրեւ յորդիս մատուցեալ է 'ի ձեզ Աստուած. մի որդի է՝ զոր ոչ խրատիցէ հայր:

8 Զի եթէ առանց խրատու լինիցիք, որով ամենեքին բաժանորդք եղեն. ապա խորթք իցէք՝ եւ ոչ որդիք:

չորս կողմանը պատած՝ ամէն գոռոզութիւն ա ձգենք, եւ մեղքն էլ որ պաշարում է մեզ. համբերութենով վազենք այն պատերազմի մէջ որ մեր առաջին բ կայ:

2 Մտիկ անենք Յիսուսին հաւատքի զօրագլխին եւ կատարողին. որ նա ուրախութեան տեղ՝ որ նորա առաջին կար, խաչն իրեն վերայ առաւ, եւ ամօթը ոչ ինչ գ համարեց. եւ Աստուծոյ աթոռի աջ կողմն դ նստեց:

3 Ուրեմն մտածեցէք նորան, որ համբերութենով այսպէսի բաներ քաշեց այն մեղաւորներից ե հակառակութիւնները. որ դուք վաստակած չը լինիք ձեր անձներովդ՝ եւ զ թուլանաք:

4 Ինչու որ՝ դեռ մինչեւ արիւն թափելոյ չափ պատերազմելով՝ հակառակ չէք կացած է մեղքին.

5 Եւ մոռացաք այն մխիթարութիւնն՝ որ ձեզ հետ ինչպէս որդեակներին հետ է խօսում: Իմ որդեակս մի թուլանար Տէրի խրատից. եւ թող սիրտդ չը կոտրվի՝ երբոր յանդիմանվիս ը նորանից:

6 Պատճառն որ՝ Տէրը՝ նորան որ սիրում է՝ խրատում է՝ տանջում է ամէն որդի՝ որ թ ընդունում է:

7 Խրատին մէջ թէ որ համբերութենով կենաք, Աստուած ձեզ հետ ինչպէս որդոց հետ ժ կը վարվի. մի որդի կայ՝ որ նորան հայրը չի խրատում:

8 Բայց թէ որ առանց խրատի լինիք՝ որ ամէնքը մասնակից էլան նորան. ապա խորթ կը լինիք՝ եւ չէ թէ ի որդիք:

ա Կող. Գ. 8. Ա Պետ. Բ. 1.
բ Ա Կորնթ. Թ. 24. Փիլիպ. Գ. 13, 14. Հռովմ. ԺԲ 12. Գղ. Ժ. 36.
գ Ղու. ԻԴ. 26 Փիլիպ. Բ. 8. Ա Պետ. Ա. 11.
դ Սաղ. ՃԺ. 1. Գղ. Ա. 3. 13. Ը. 1. Ա Պետ. Գ. 22.
ե Մատթ. Ժ. 24. 25. Յովհ. ԺԵ. 20.
զ Գաղ. Զ. 9.
է Ա Կորնթ. Ժ. 13. Գղ. Ժ. 32—34
ը Յոբ. Ե. 17. Առակ. Գ. 11.
թ Սաղ. ՂԳ. 12. ՃԺԸ. 75. Առակ Գ. 12. Յայտ. Գ. 19.
ժ Բ Օրին. Ը. 5. Բ Թագ. Է. 14. Առակ. ԺԳ. 24. ԺԹ. 18. ԻԳ. 13.
ի Սաղ. ՀԳ. 1. Ա Պետ. Ե. 9.

9 Զի եթէ 'ի մարմնաւոր հարցն մերոց՝ զոր ունէաք խրատիչս՝ պատկառէաք, ո՞րչափ եւս առաւել հնազանդեսցուք Հօրն հոգւոց՝ եւ կեցցուք ։

10 Զի նոքա առ սակաւ ժամանակս ըստ կամաց իւրեանց խրատէին . իսկ նա վասն օգտի, առ 'ի ընդունելոյ զսրբութիւն նորա ։

11 Ամենայն խրատ առ ժամանակն ոչ ուրախութեան թուի՝ այլ տրտմութեան . բայց յետոյ պտուղ խաղաղութեան նովաւ կրթելոցն հատուցանէ յարդարութիւն ։

12 Վասն որոյ զձեռս լքեալս՝ եւ զծունկս կթոտս հաստատեցէք .

13 Եւ շաւիղս ուղիղս արարէք ոտից ձերոց, զի մի որ կաղն իցէ՝ գլորեսցի, այլ մանաւանդ բժշկեսցի ։

14 Զխաղաղութեան զհետ երթայք ընդ ամենեսին՝ եւ զսրբութեան . առանց որոյ ոչ ոք տեսանիցէ զՏէր ։

15 Զգոյշ լերուք՝ գուցէ ոք յետնեալ գտանիցի 'ի շնորհացն Աստուծոյ ։ Մի ոք արմատ դառնութեան 'ի վեր երեւեալ նեղիցէ, եւ նովաւ բազումք պղծիցին ։

16 Մի ոք պոռնիկ եւ պիղծ իբրեւ զԵսաւ . որ ընդ միոյ կերակրոյ զանդրանկութիւնն վաճառեաց ։

17 Գիտէք՝ զի թէպէտ եւ յետոյ կամեցաւ ժառանգել զօրհնութիւնն, խոտան գտաւ . զի ապաշխարութեան տեղի ոչ եգիտ, թէպէտ

9 Ինչու որ՝ եթէ մեր մարմնաւոր հայրանիցին՝ որ խրատող ունէինք՝ վախով ամաչումէինք, էլ որքան աւելի պիտի հնազանդվինք հոգիների Հօրը՝ եւ ւ ապրինք ։

10 Ինչու որ՝ նորանք մին քիչ ժամանակ իրենց կամաց պէս էին խրատում . բայց նա օգտի համար՝ որ նորա սրբութիւնն խ ընդունինք ։

11 Ամէն խրատ՝ առնելոյ ժամանակումն ուրախութիւն չի երեւում, բայց տրտմութիւն . այլ յետոյ նորանով վարժվածներին խաղաղութեան պտուղ է վճարում ծ արդարութենով ։

12 Նրա համար հաստատեցէք թուլացած ձեռները . եւ տկարացած ե ծնկները .

13 Եւ ձեր ոտների գնալոյ ճանապարհը հ շիտակեցէք, որ նա՝ որ կաղ է՝ չը գլորվի, բայց էլ աւելի ձ բժշկվի ։

14 Հետեւեցէք խաղաղութեան ամէնին հետ՝ եւ սրբութեան, որ առանց նորան ոչ ով Տէրին չի ճ տեսնիլ ։

15 Զգոյշ մ կացէք, որ չը լինի թէ մինը յետ մնայ Աստուծոյ յ շնորհքիցը . Որ մին դառն արմատ վեր չը բուսնէ եւ նեղութիւն տայ, եւ նորանով շատ հոգիք ն պղծվին ,

16 Որ մինը պոռնիկ եւ պիղծ չը լինի՝ ինչպէս շ Եսաւ . որ մին կերակուրի համար իրեն առաջնեկութիւնը ո ծախեց ։

17 Գիտեմք՝ որ թէ եւ յետոյ կամեցաւ օրհնութիւնը ժառանգել, անպէտք չ գտաւ . ինչու որ ապաշխարութեան ճար չը գտաւ թէ

ւ Թու. ԺԶ. 22. Իէ. 16. Յոբ. ԺԲ. 10. Ժող. ԺԲ. 7. Եսայ. ԽԲ. 5. Ծն. 16. Զաք. ԺԲ. 1.
խ Ղկ. ԺԱ. 44. ԺԹ. 2. Ա Պետ. Ա. 15. 16.
ծ Յակ. Գ. 18.
ե Յոբ. Դ. 3. 4. Եսայ. ԼԵ. 3.
հ Առակ. Դ. 26. 27.
ձ Գաղ. Զ. 1.
ղ Սաղ. ԼԴ. 14. Հռովմ. ԺԲ. 18. ԺԴ. 19. Բ Տիմ. Բ. 22.
ճ Մատթ. Ե. 8. Բ Կորնթ. Ե. 1. Եփես. Ե. 5.
մ Բ Կորնթ. Զ. 1.
յ Գաղ. Ե. 4.
ն Բ Օրին. ԻԹ. 18. Գլ. Գ. 12.
շ Եփես. Ե. 3. Կող. Գ. 5. Ա Թես. Դ. 3.
ո Ծննդ. ԻԵ. 33.
չ Ծննդ. ԻԷ. 34. 36. 38.

եւ արտասուօք խնդրեաց զնա։

18 Զի ոչ էք մատուցեալ առ
լեառն շօշափելի՝ որ հրովն վառեալ
էր՝ եւ միգով եւ մառախղով եւ
խաւարաւ եւ մթով։

19 Ուր փողն հնչէր եւ բարբառ
պատգամացն. ուստի՝ որք լուանն՝
հրաժարեցին, զի մի կրկնեսցի առ
նոսա բանն։
20 Քանզի ոչ հանդարտէին հրա-
մանին. Թէ պէտ եւ գազան մերձե-
նայր ՚ի լեառն՝ քարկոծ լինէր։

21 Եւ այնպէս ահագին էր տեսի-
լըն, զի եւ Մովսէս ասէր, եթէ
Զահի հարեալ եմ եւ դողամ։

22 Այլ մատուցեալ էք ՚ի Սիովն
լեառն եւ ՚ի քաղաք Աստուծոյ կեն-
դանւոյ՝ յԵրուսաղէմ յերկինս, եւ
՚ի բիւրաւոր բանակս հրեշտակաց,

23 Եւ յեկեղեցիս անդրանկաց գը-
րելոց յերկինս, եւ առ Դատաւորն
ամենեցուն Աստուած, եւ յոգիս
արդարոց կատարելոց.

24 Եւ ՚ի նորոց կտակարանաց միջ-
նորդն Յիսուս, եւ ՚ի հեղումն ար-
եան նորա՝ որ առաւել խօսի քան
զՀաբելին։
25 Զգոյշ լերուք գուցէ հրաժարի-
ցէք յայնմանէ՝ որ խօսեցաւն. զի
եթէ նոքա ոչ կարացին զերծանել
հրաժարեալք յայնմանէ՝ որ յերկրին
հրաման տայր, մեծ եւս առա-

եւ արտասունքով խնդրեց [ղ]նո-
րան։
18 Պատճառն որ՝ դուք չէք մօ-
տեցած այն սարին՝ որ ձեռք կարող
էին դիպչել, որ կրակով վառված
էր՝ եւ այն մէգին եւ մշուշին եւ
խաւարին եւ [ճ]մթնին.
19 Որ այնտեղ փողը փչումէր եւ
հրամանքների ձայնը, որ նորանից
յետ քաշվեցան նորանք որ լսեցին,
որ խօսքը կրկին չասվի [յ]նորանց։
20 Ինչու որ՝ չէին դիմանում այն
հրամանին. եւ թէ որ անասուն մօ-
տենումէր սարին՝ քարկոծ էր [ն]լի-
նում։
21 Եւ այնպէս ահաւոր էր այն
տեսիլքն, որ Մօսէս էլ ասումէր,
Թէ Ահով բռնված եմ եւ [շ]դողու-
մեմ։
22 Բայց մօտեցել էք Սիօն [ո]սա-
րին եւ կենդանի Աստուծոյ քաղա-
քին, երկնաւոր [չ]Երուսաղէմին, եւ
հազար հազարաւոր հրեշտակների
[պ]բազմութեանը,
23 Եւ առաջինեկների [ջ]եկեղեցոյն՝
որ երկնքումը գրված [ռ]են, եւ Աս-
տուծոյն ամէնքի [ս]Դատաւորին, եւ
կատարեալ արդարների [վ]հոգինե-
րին.
24 Եւ Յիսուսին նոր կտակարանի
[տ]միջնորդին. եւ նորա արեան [ր]թա-
փելուն՝ որ աւելի լաւ է խօսում
քանթէ [ց]Հաբելինը։
25 Զգոյշ կացէք որ չըլինի թէ
երես յետ դարձնէք նորանից՝ որ
խօսեց. պատճառն որ՝ եթէ նորանք
չը կարացին ազատվել՝ որ երես դար-
ձրին նորանից՝ որ երկրիս վերայ

ղ Գլ. Զ. 6.
ճ Ելից. ԺԹ. 12. 18, 19. Ի. 18. Բ Օրին. Դ. 11. Ե. 22. Հռովմ. Զ. 14. Ը. 15. Բ Տիմ. Ա. 7.
յ Ելից. Ի. 19. Բ Օրին. Ե. 5. 25. ԺԲ. 16.
ն Ելից. ԺԹ. 13.
շ Ելից. ԺԹ. 16.
ո Գաղ. Դ. 26. Յայտ. Գ. 12. ԻԱ. 2. 10.
չ Փիլիպ. Գ. 20.
պ Բ Օրին. ԼԳ. 2. Սաղ. ԿԸ. 17. Յուդ. 14.
ջ Ելից. Դ. 22. Յակ. Ա. 18. Յայտ. ԺԴ. 4.
ռ Ղուկ. Ժ. 20. Փիլիպ. Դ. 3. Յայտ. ԺԳ. 8.
ս Ծննդ. ԺԸ. 25. Սաղ. ՂԴ. 2.
վ Փիլիպ. Գ. 12. Գլ. ԺԱ. 40.
տ Գլ. Ը. 6. Թ. 15.
ր Ելից. ԻԴ. 8. Գլ. Ժ. 22. Ա Պետ. Ա. 2.
ց Ծննդ. Դ. 10. Գլ. ԺԱ. 4.

ւել մեք, եթէ յերկնաւորէն թիկունս դարձուցանիցեմք ։

հրաման էր տալիս, էլ որքան աւելի մենք, թէ որ երկնաւորից երես ‡ դարձնենք ․

26 Որոյ ձայնն զերկիր շարժեաց յայնժամ. և այժմ խոստացեալ է՝ և ասէ. Միւսանգամ շարժեցից ոչ միայն զերկիր՝ այլ և զերկինս ։

26 Որ նորա ձայնն այն ժամանակումը երկիրը ₸ շարժեց ․ և հիմիկ խոստացել է՝ և ասում ․ թէ նորէն կը շարժեմ, չէ թէ մինակ երկիրը՝ բայց երկինքն ⊦ էլ ։

27 Այլ միւսանգամն յայտ առնէ զշարժելեացն իբրև զեղելոց փոփոխումն, զի հաստատուն կացցեն անշարժքն ։

27 Բայց այն միւսը ցոյց է տալիս՝ որ շարժվելի բաները իբր թէ եղածները պիտի փոխվին, որ հաստատ մնան նորանք որ շարժվելի ւ չեն ։

28 Վասն որոյ թագաւորութիւն անշարժ ընկալեալ, պինդ կալցուք զշնորհսն, որով պաշտեսցուք զԱստուած հաճութեամբ՝ ահիւ և դողութեամբ ։

28 Նրահամար որովհետև չը շարժվելի թագաւորութիւն ընդունեցինք, պինդ բռնենք այն շնորհքն՝ որ նորանով պաշտումենք Աստուծուն, ինչպէս որ հաճոյ է նորան՝ ահով և դողալով ։

29 Քանզի Աստուած մեր հուր ծախիչ է ։

29 Պատճառն որ մեր Աստուած այրող փչացնող կրակ ⊦ է ։

## ԳԼ. ԺԳ

1 Եղբայրսիրութիւն հաստատեսցի առ ձեզ ։

2 Զօտարասիրութիւն մի մոռանայք. զի այնու ոմանք յանգէտս ընկալան զհրեշտակս ։

1 Եղբայրսիրութիւնը թող հաստատ լինի ձեր ‒ մէջումը ։

2 Օտարասիրութիւնը մի ‡ մոռանաք ․ պատճառն որ՝ նորանով միքանիսն առանց գիտելոյ հրեշտակներին ‡ ընդունեցին ։

3 Յուշ լիցին ձեզ կապեալքն՝ որպէս թէ դուք ընդ նոսա կապեալ իցէք. և չարչարեալքն, որպէս և դուք իսկ մարմնաւոր էք ։

4 Պատուական է ամուսնութիւն ամենեւին՝ և սուրբ անկողինք. բայց զշունս և զպոռնիկս դատի Աստուած ։

3 Յիշեցէք կապվածներին ինչպէս թէ դուք էլ նորանց հետ կապված լինէիք ․ և չարչարվածներին՝ ինչպէս թէ դուք էլ մարմնումն ₸ էք ։

4 Ամուսնութիւնն ամէն կողմանէ պատուական է՝ և անկողինները սուրբ ․ բայց շնացողներին և պոռնիկներին Աստուած ⊦ կը դատէ ։

‡ Գլ. Բ. 2, 3. Գ. 17. Ժ. 28, 29.
₸ Ելից. ԺԹ. 18.
⊦ Անգ. Բ. 6.
ւ Սաղ. ՃԲ. 26. Մատթ. ԻԴ. 35. Բ Պետ. Գ. 10. Յայտ. ԻԱ. 1.
⊦ Ելից. ԻԴ. 17. Բ Օրին. Դ. 24. Թ. 3. Սաղ. Ծ. 3; Ղե. 3. Եսայ. ԿԶ. 15. Բ Թես. Ա. 8. Գլ. Ժ. 27.

—

‒ Հռովմ. ԺԲ. 10. Ա Թես. Դ. 9. Ա Պետ. Ա. 22. Բ. 17. Դ. 8. Բ Պետ. Ա. 7. Ա Յովհ. Գ. 11. Դ. 7. 20. 21.
‡ Մատթ. ԻԵ. 35. Հռովմ. ԺԲ. 13. Ա Տիմ. Գ. 2. Ա Պետ. Դ. 9.
‡ Ծննդ. ԺԸ. 3. ԺԹ. 2.
₸ Մատթ. ԻԵ. 36. Հռովմ. ԺԲ. 15. Ա Կորնթ. ԺԲ. 26. Կող. Դ. 18. Ա Պետ. Գ. 8.
⊦ Ա Կորնթ. Զ. 9. Գաղ. Ե. 19. 21. Եփես. Ե. 5. Կող. Գ. 5, 6. Յայտ. ԻԲ. 15.

5 Բարք անարծաթսէրք լինի-
ցին , բաւական համարել որչափ
ինչ ՚ի ձեռս իցէ · քանզի ինքն իսկ
ասաց · Ո՛չ թողից զքեզ՝ եւ ո՛չ ընդ
վայր հարից ։
6 Որպէս համարձակ լիցուք ա-
սել · Տէր է իմ օգնական , եւ ես
ոչ երկիցայց , զի՞ արասցէ ինձ
մարդ ։
7 Յիշեսջի՛ք զառաջնորդս ձեր որ
խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ ·
հայեցեալք յելս գնացից նոցա՝ նը-
մանօղք եղերուք հաւատոցն ։

8 Յիսուս Քրիստոս երէկ եւ այս-
օր , նոյն եւ յաւիտեանս ։
9 Ուսմունս պէսպէսս եւ յօտա-
րաձայնս մի՛ զանգիտիջիք · զի լաւ է
շնորհօք հաստատել զսիրտ՝ եւ ոչ
կերակրովք · որովք ոչինչ օգտե-
ցան՝ որ այնպէսն գնացին ։

10 Ունիմք մեք սեղան , ուստի ոչ
ունին իշխանութիւն ճաշակել , որք
պաշտեն զպաշտօն խորանին ։

11 Զի որոց անասնոց մատչէր ար-
իւնն ՚ի սրբութիւնս վասն մեղաց
՚ի ձեռն քահանայապետին , նոցուն
մարմինքն այրէին արտաքոյ բանա-
կին ։
12 Վասն որոյ եւ Յիսուս՝ զի սըր-
բեսցէ իւրով արեամբն զժողովուր-
դն , արտաքոյ դրանն չարչարեցաւ ։
13 Արդ՝ եկայք ելցուք առ նա
արտաքոյ բանակին , առեալ յանձն
զնախատինս նորա ։

5 Վարքերնիդ առանց արծաթասի-
րութեան ըլլան , որ բաւական հա-
մարէք նա՝ որ ձեռներնիդ մէ ունիք ·
ինչու որ ինք ինքն ըսաւ , թէ Չեմ
թողուր քեզ՝ եւ երեսէդ չեմ ձգեր ։
6 Այնպէս որ համարձակ ըլլանք
ըսելու · Տէրն է իմ օգնականս , եւ
չեմ վախնար , ինչ կրնայ ինձ
ը մարդը ։
7 Յիշեցէ՛ք ձեր առաջնորդներնիդ՝
որ Աստուծոյ բանը խօսեցին ձեզ ·
նայեցէք նորանց վարմունքի վախ-
ճանին՝ եւ նմանն եղէք նոցա ՚ի հա-
ւատքին ։
8 Յիսուս Քրիստոսն՝ երեկ եւ
այսօր , եւ նոյն էլ է յաւիտեան ։
9 Կերպ կերպ ուսմունքներով եւ
օտար խօսքերով մի՛ շարժվիք այս
եւ այն ՚ի կողմն · ինչու որ՝ լաւ է
որ շնորհքով սրտերը հաստատվին՝
եւ ոչ թէ կերակուրներով · որ նո-
րանցով քնաւ բան չը շահվեցան նո-
րանք՝ որ այնպէս ՚ի գնացին ։
10 Մենք ունինք սեղան , որ նո-
րանից ուտելու իշխանութիւն չու-
նին նորանք՝ որ խորանի պաշտա-
մունքին ՚ի ծառայումն ։
11 Ինչու որ այն անասունների
արիւնն որ քահանայապետի ձեռովը
սրբարանքին մէջ մատուցանվումէր
մեղաց համար՝ նորանց մարմինները
այրվումէին բանակից դուրս ։
12 Նորահամար Յիսուս էլ՝ որ իրեն
արիւնովը ժողովրդին սրբէ , դրան
դրսիկողմն ՚ի չարչարվեցաւ ։
13 Ուրեմն եկէք բանակիցը դուրս
գնանք նորա մօտ , եւ նորա նա-
խատինքը մեզ վրայ առնենք ։

ղ Մատթ. Զ. 25. 34։ Փիլիպ. Դ. 11. 12։ Ա Տիմ. Զ. 6 8։
ճ Ծննդ. ԻԸ. 15։
մ Օրին. ԼԱ. 6. 8։ Յես. Ա. 5։ Ա Մնաց. ԻԸ. 20։ Սաղ. ԼԷ. 25։
յ Սաղ. ԻԷ. 7։ ԾԶ. 4. 11. 12։ ՃԺԸ. 6։
ն Համար. 17։
շ Գղ. Զ. 12։
ո Յովհ. Ը. 58։ Գղ. Ա. 12։ Յայտ. Ա. 4։
չ Եփես. Դ. 14։ Ե. 6։ Կող. Բ. 4. 8։ Ա Յովհ. Դ. 1։
պ Հռովմ. ԺԴ. 17։ Կող. Բ. 16։ Ա Տիմ. Դ. 3։
ջ Ա Կորնթ. Թ. 13։ Ժ. 18։
ռ Ելից. ԻԹ. 14։ Ղև. Դ. 11. 12. 21։ Զ. 30։ Թ. 11։ ԺԶ. 27։ Թու. ԺԹ. 3։
ս Յովհ. ԺԹ. 17. 18։ Գործ. Է. 58։
վ Գղ. ԺԱ. 26։ Ա Պետ. Դ. 14։

14 Քանզի ոչ եթէ ունիմք քաղաք՝ որ աստէն մնալոց իցէ, այլ զհանդերձեալսն խնդրեմք ։

15 Արդ՝ 'ի ձեռն նորա մատուսցուք պատարագ օրհնութեան յամենայն ժամ Աստուծոյ. այսինքն է՝ պտուղ շրթանց խոստովանելոց յանուն նորա ։

16 Զբարերարութիւն եւ զհաղորդութիւն մի մոռանայք, զի ընդ այնպիսի պատարագս հաճի Աստուած ։

17 Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց, եւ հպատակ կացէք նոցա. զի նոքա արթնին վասն ոգւոց ձերոց՝ որպէս թէ համարս տալոց իցեն ընդ ձեր. զի խնդութեամբ արասցեն զայն՝ եւ մի յոգւոց հանելով. զի այն ոչ յօգուտ ձեր է ։

18 Աղօթս արարէք վասն մեր. զի հաստատեալ գիտեմք եթէ բարւոք միտս ունիմք. յամենայնի կամիմք բարւոք գնացս ցուցանել ։

19 Եւ առաւել աղաչեմ՝ զի զայն առնիցէք, զի վաղվաղակի պատսպարեցայց ձեզ ։

20 Եւ Աստուած խաղաղութեան՝ որ եհան 'ի մեռելոց զհովիւն հօտից զմեծն արեամբ յաւիտենական ուխտին զՏէր մեր Յիսուս,

21 Հաստատեսցէ զձեզ 'ի գործս

14 Պատճառն որ այստեղ հաստատ մնացող քաղաք չունինք. բայց նա որ պիտի լինի՝ նորան ենք ղ ուզում ։

15 Ուրեմն նորա ձեռովը ամէն ժամանակ օրհնութեան պատարագ մատուցանենք ճ Աստուծոյ. այսինքն՝ պռօշների պտուղ՝ որ դաւանումն նորա մ անունը ։

16 Բարի անելն ու հաղորդութիւն անելը մի յ մոռանաք. ինչու որ այնպիսի պատարագներին է Աստուած ն հաւանում ։

17 Ականջ դրէք ձեր առաջնորդներին, եւ հնազանդ կացէք շ նորանց. ինչու որ նորանք արթուն են կենում ձեր հոգիներին համար՝ ինչպէս թէ համար պիտի տան ձեզ համար՝ որ նա ուրախութենով անեն, եւ չէ թէ յոգոց հանելով, որ նա ձեզ օգուտ ո չէ ։

18 Աղօթք արէք մեզ չ համար. ինչու որ հաստատ գիտեմնք որ բարի խղճմտանք ունինք. ամէն բանի մէջ կամենումենք բարի վարք ցոյց պ տալ ։

19 Եւ էլ աւելի աղաչումեմ՝ որ նա անէք, որ շուտով կարենամ դառնալ ձեզ ջ մօտ ։

20 Եւ խաղաղութեան ռ Աստուածը՝ որ մեռելներիցը վեր ս հանեց հօտի մեծ վ հովիւը՝ յաւիտենական ուխտի արիւնովը՝ մեր Տէր տ Յիսուսին,

21 Հաստատէ ձեզ բարի գործքերի

ղ Միք. Բ. 10. Փիլիպ. Գ. 20. Գղ. ԺԱ. 10. 16. ԺԲ. 22.
ճ Եփես. Ե. 20. Ա Պետ. Բ. 5. Ղև. Է. 12. Սաղ. Ծ. 14. 23. ԿԹ. 30. 31. ՃԷ. 22. ՃԺԶ. 17.
մ Ովսէ. ԺԴ. 2.
յ Հռովմ. ԺԲ. 13.
ն Բ Կորնթ. Թ. 12. Փիլիպ. Դ. 18. Գղ. Զ. 10.
շ Փիլիպ. Բ. 29. Ա Թես. Ե. 12. Ա Տիմ. Ե. 17. Համար. 7.
ո Եզեկ. Գ. 17. ԼԳ. 2. 7. Գործ. Ի. 26. 28.
չ Հռովմ. ԺԵ. 30. Եփես. Զ. 19. Կող. Դ. 3. Ա Թես. Ե. 25. Բ Թես. Գ. 1.
պ Գործ. ԻԳ. 1. ԻԴ. 16. Բ Կորնթ. Ա. 12.
ջ Փիլիմ. 22.
ռ Հռովմ. ԺԵ. 33. Ա Թես. Ե. 23.
ս Գործ. Բ. 24. 32. Հռովմ. Դ. 24. Ը. 11. Ա Կորնթ. Զ. 14. ԺԵ. 15. Բ Կորնթ. Դ. 14. Գաղ. Ա. 1. Կող. Բ. 12. Ա Թես. Ա. 10. Ա Պետ. Ա. 21.
վ Եսայ. Խ. 11. Եզեկ. ԼԴ. 23. ԼԷ. 24. Յովհ. Ժ. 11. 14. Ա Պետ. Բ. 25. Ե. 4.
տ Զաք. Թ. 11. Գղ. Ժ. 22.

բարութեան՝ առնել զկամս նորա. եւ արասցէ ՚ի մեզ զհաճոյսն առաջի իւր ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի. որում փառք յաւիտեանս. ամէն։

22 Աղաչեմ զձեզ եղբարք, անսալ բանիս մխիթարութեան. քանզի սակաւուք գրեցի ձեզ։
23 Եւ ծանիջիք զեղբայրն մեր զՏիմոթէոս զարձակեալն առ ձեզ. ընդ որում, եթէ վաղվաղակի գայցէ՝ տեսից զձեզ։
24 Ողջոյն տայջիք ամենայն առաջնորդաց ձերոց, եւ ամենայն սրբոց. ողջոյն տան ձեզ՝ որ ՚ի կողմանս Իտալիացւոց են։
25 Շնորհք ընդ ամենեսին ձեզ. ամէն։

մէջ՝ նորա կամքն ր ընելոյ. եւ գործէ մեզանում ինչ որ հաճոյ է նորա առջին Յիսուսի Քրիստոսի ց ձեռօքը. որ նորան փառք – յաւիտեանս. ամէն։
22 Աղաչումեմ ձեզ եղբարք, որ այս մխիթարութեան խօսքիս ականջ դնէք, ինչու որ քիչ գրեցի փ ձեզ։
23 Ծանուցումէք մեր Տիմոթէոս ք եղբօրն որ ձեզ մօտ ուղարկուած օ է. թէ որ նա շուտով գայ՝ նորա հետ կը տեսնեմ ձեզ։
24 Ողջոյն տուէք ձեր ամէն ֆ առաջնորդներին, եւ ամէն սրբերին. ողջոյն են տալիս ձեզ նորանք որ Իտալիայի կողմերումն են։
25 Շնորհքն ձեզ ամէնից հետ. – ամէն։

Եբրայեցւոց գրեալ Իտալիայ եւ տարեալ Տիմոթէոսի ձեռամբ։

# ԹՈՒՂԹ ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ

## ՅԱԿՈՎԲՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 ՅԱԿՈՎԲՈՍ Աստուծոյ եւ Տեառն Յիսուսի Քրիստոսի ծառայ. երկոտասան ազգացդ որ ՚ի սփիւռս էք՝ ողջոյն.
2 Ամենայն ուրախութեան արժանի համարիջիք եղբարք, յորժամ ՚ի պէսպէս փորձութեանց ՚ի մէջ անկանիջիք։
3 Գիտասջիք զի հանդէս ձերոյ հաւատոյն յօրինեալ գործէ զհամբերութիւն։
4 Իսկ համբերութիւնն գործ կա-

1 ՅԱԿՈՎԲՈՍ՝ – Աստուծոյ եւ Տէր Յիսուսի Քրիստոսի բ ծառայ. տասներկու գ ցեղերուն որ ցրուած էք՝ դ ողջոյն։
2 Ամէն ուրախութեան արժանի համարեցէք ե եղբարք, երբոր կերպ կերպ փորձանքի մէջ ըլնիք։
3 Գիտցէք՝ որ ձեր հաւատքի փորձը՝ լաւ կարգաւ՝ համբերութիւն է է գործում։
4 Բայց համբերութիւնը պէտք է

ր Բ Թես. Բ. 17. Ա Պետ. Ե. 10.
ց Փիլիպ. Բ. 13.
– Գաղ. Ա. 5. Բ Տիմ. Դ. 18. Յայտ. Ա. 6.
փ Ա Պետ. Ե. 12.
ք Ա Թես. Գ. 2.
օ Ա Տիմ. Զ. 12.
ֆ Համար. 7. 17.
– Տիտ. Գ. 15.

—

– Գործ. ԺԲ. 17. ԺԵ. 13. Գաղ. Ա. 19. Բ. 9. Յուդ. 1.
բ Տիտ. Ա. 1.
գ Գործ. ԻԶ. 7.
դ Բ Օրին. ԼԲ. 26. Յովհ. Է. 35. Գործ. Բ. 5. Ը. 1. Ա Պետ. Ա. 1.
ե Մատթ. Ե. 12. Գործ. Ե. 41. Եբր. Ժ. 34.
զ Ա Պետ. Դ. 13. 16. Ա. 6.
է Հռովմ. Ե. 3.

տարեալ ունիցի , 'զի իցէք ողջան-
դամք եւ կատարեալք , եւ ոչ իւիք
նուազեալք :

5 Ապա թէ ոք 'ի ձէնջ իցէ նը-
ուազեալ յիմաստութենէ, խնդրես-
ցէ յԱստուծոյ , որ տայն ամենայնի
առատապէս՝ եւ ոչ նախատէ . եւ
տացի նմա :

6 Բայց խնդրեսցէ հաւատովք՝ եւ
մի երկմտեսցէ . զի որ երկմիտն է՝
նման է հողմակոծեալ եւ տատան-
եալ ալեաց ծովու :

7 Մի ակնկալցի մարդն այն առ-
նուլ ինչ յԱստուծոյ :

8 Զի այր երկմիտ՝ առանց հաս-
տատութեան է յամենայն ճանա-
պարհս իւր :
9 Պարծեսցի եղբայր՝ խոնարհ 'ի
բարձրութիւն իւր ,
10 Եւ որ մեծատունն իցէ՝ 'ի խո-
նարհութեան իւր . քանզի իբրեւ
զծաղիկ խոտոյ անցցէ :
11 Զի ծագեաց արեւ հանդերձ
խորշակաւ՝ եւ ցամաքեցոյց զխոտն ,
եւ թօթափեցաւ ծաղիկն նորա , եւ
կորեաւ վայելչութիւն երեսաց նո-
րա . նոյնպէս եւ մեծատունն հան-
դերձ չանիւքն իւրովք թարշամես-
ցի :
12 Երանեալ է այր որ համբերի-
ցէ փորձանաց . զի եթէ ընտիր եւս
գտանիցի , առցէ զպսակն կենաց՝
զոր խոստացաւ սիրելեաց իւրոց :

կատարեալ գործ ունենայ . որ ամե-
նեւին ամբողջ եւ կատարեալ լի-
նիք , եւ ոչ մէկ բանով պակասու-
թիւն չունենաք :
5 Իսկ թէ որ ձեզմէնից մէկը պա-
կասած լինի ը իմաստութենէցը ,
թող խնդրէ Աստուածանից , որ ա-
մէնքին տալիս է առատութենով՝ եւ
ժ չի նախատում . եւ կը տրվի ի նո-
րան :
6 Միայն թէ թող հաւատքով
խնդրէ՝ եւ ոչ թէ է երկմտութենով .
պատճառն որ՝ ով որ երկմիտ է՝ քա-
միով ծփված եւ տատանված ծովու
ալիքներին նման է :
7 Այնպէսի մարդն թող յոյս չու-
նենայ որ Աստուածանից մէն բան
առնէ :
8 Պատճառն որ երկմիտ մարդն՝
առանց հաստատութեան է իրեն
ամէն լ ճանապարհներումը :
9 Թող խոնարհ եղբայրը պար-
ծենայ իրեն բարձրութենովը .
10 Եւ նա որ հարուստ է՝ իրեն
խոնարհութենովը . ինչու որ խոտի
ծաղկի նման է խ կանցանէ :
11 Ինչու որ արեգակը ծագեց ի-
րեն խիստ տաքութենովը՝ եւ խոտը
ցամաքացրուց , եւ նորա ծաղիկը
թափվեց , եւ նորա երեսի գեղեց-
կութիւնը կորաւ . այնպէս էլ հա-
րուստն իրեն չանված բաների հետ
կը թառամի :
12 Երանելի է այն մարդն՝ որ համ-
բերումէ ծ փորձանքներին . ինչու որ՝
եթէ ընտիր գտնվելի՝ կենաց պսակը
կ կառնէ , նա որ Տէրն խոստացաւ
իրեն հ սիրողներին :

ը Գ Թագ. Գ. 9. 11. 12. Առակ. Բ. 3.
ժ Մատթ. Է. 7. ԻԱ. 22. Մարկ. ԺԱ. 24. Ղուկ. ԺԱ. 9. Յովհ. ԺԴ. 13. ԺԵ. 7. ԺԶ. 23.
ի Երեմ. ԻԹ. 12. Ա Յովհ. Ե. 14, 15.
լ Մարկ. ԺԱ. 24. Ա Տիմ. Բ. 8.
լ Գղ. Դ. 8.
խ Յոբ. ԺԴ. 2. Սաղ. ԼԵ. 2. Ղ. 5, 6. ՃԲ. 11. ՃԳ. 15. Եսայ. Խ. 6. Ա Կորնթ. Է. 31. Գղ. Դ. 14. Ա Պետ. Ա. 24. Ա Յովհ. Բ. 17.
ծ Յոբ. Ե. 17. Առակ. Գ. 11, 12. Եբր. ԺԲ. 5. Յայտ. Գ. 19.
կ Ա Կորնթ. Թ. 25. Բ Տիմ. Դ. 8. Գղ. Բ. 5. Ա Պետ. Ե. 4. Յայտ. Բ. 10.
հ Մատթ. Ժ. 22. ԺԹ. 28, 29. Գղ. Բ. 5.

13 Մի՛ ոք որ ’ի փորձութեան իցէ՝ ասիցէ թէ յԱստուծոյ փորձիմ . զի Աստուած անփորձ է չարեաց . փորձէ նա եւ ոչ զոք .

14 Իւրաքանչիւր ոք փորձի առ յիւրոյն ցանկութեանց ձգեալ եւ պատրեալ .

15 Ապա այնուհետեւ ցանկութիւնըն յղացեալ՝ զմեղս ծնանի . եւ մեղքն կատարեալ՝ զմահ ծնանին :

16 Մի՛ խաբիք եղբարք իմ սիրելիք .

17 Զի ամենայն տուրք բարիք՝ եւ ամենայն պարգեւք կատարեալք ’ի վերուստ են իջեալ առ ’ի Հօրէն լուսոյ . յորում չիք փոփոխումն՝ եւ կամ շրջելոյ ստուեր :

18 Կամեցեալ ծնաւ զմեզ բանիւ ճշմարտութեան , լինել մեզ պտուղ ինչ արարածոց նորա :

19 Գիտասջիք եղբարք իմ սիրելիք , եղիցի ամենայն մարդ արագ առ ’ի լսել , եւ ծանր առ ’ի խօսել , եւ ծանր առ ’ի բարկանալ :

20 Զի բարկութիւն մարդոյ զարդարութիւն Աստուծոյ ոչ գործէ :

21 Որով ’ի բաց թօթափեալ զամենայն աղտեղութիւնս եւ զյաւելուածս չարեաց , հեզութեամբ ընկալջիք զբանն ընդաբոյս . որ կարօղն է կեցուցանել զոգիս ձեր :

22 Լինիջիք առնելիք բանին , եւ

13 Ո՛չ ով՝ որ փորձանքին մէջ է , թող չասէ թէ Աստուածանից եմ փորձվում . ինչու որ՝ Աստուած չար բաների փորձօղ չէ . նա ոչ մէկին չի փորձում .

14 Ամէն մէկը փորձումէ՝ երբոր իրեն ցանկութիւններիցն քաշվումէ եւ խաբվում .

15 Ապա նրանից ետեւ ցանկութիւնը յղացած՝ մեղք է յ ծնում . եւ մեղքն էլ երբոր կատարվի՝ մահ ն կը ծնի :

16 Մի՛ խաբվիք իմ սիրելի եղբարքս .

17 Պատճառն որ ամէն բարի տուրքերը , եւ ամէն կատարեալ պարգեւները՝ վերեւիցն են վեր եկել լուսոյ շ Հօրիցը . որ նորանում բնաւ փոփոխմունք կամ շուռ տուօղ շուք ո չը կայ :

18 Իրեն կամենալովն ալէս ծնաւ մեզ ճշմարտութեան չ խօսքովը , որ մենք նորա ունեցածների առաջին պտուղ պ լինինք :

19 Գիտացէք իմ սիրելի եղբարքս . թող ամէն մարդ միր լինի՝ լսելոյ ջ համար , եւ ծանր՝ խօսելոյ ռ համար , եւ ծանր՝ բարկանալոյ ս համար :

20 Պատճառն որ մարդոյ բարկութիւնն Աստուծոյ արդարութիւնը չի գործում :

21 Սրա համար ամէն պղծութիւն , եւ չարութեան աւելորդը վ ձգեցէք , եւ խոնարհութեամբ ընդունեցէք այն առաջին խօսքն՝ որ կարօղ է ձեր հոգիներին տ ազատեցնել :

22 Խօսքն անօղ էլէք , եւ ոչ թէ

յ Յոբ . ԺԵ . 35 . Սաղ . Է . 14 .
ն Հռովմ . Զ . 21 . 23 .
շ Յովհ . Գ . 27 . Ա Կորնթ . Դ . 7 .
ո Թուոց . ԻԳ . 19 . Ա Թագ . ԺԵ . 29 . Մաղ . Գ . 6 . Հռովմ . ԺԱ . 29 .
չ Յովհ . Ա . 13 . Գ . 3 . Ա Կորնթ . Դ . 15 . Ա Պետ . Ա . 23 .
պ Եփես . Ա . 12 . Երեմ . Բ . 3 . Յայտ . ԺԴ . 4 .
ջ Ժող . Ե . 1 .
ռ Առակ . Ժ . 19 . ԺԷ . 27 . Ժող . Ե . 2 .
ս Առակ . ԺԴ . 17 . ԺԶ . 32 . Ժող . Է . 9 .
վ Կող . Գ . 8 . Ա Պետ . Բ . 1 .
տ Գործ . ԺԳ . 26 . Հռովմ . Ա . 16 . Ա Կորնթ . ԺԵ . 2 . Եփես . Ա . 13 . Տիտ . Բ . 11 . Եբր . Բ . 3 . Ա Պետ . Ա . 9 .

մի լսօղք միայն համարեսջիք զանձինս :
23 Զի եթէ ոք լսող միայն իցէ բանին՝ և ոչ առնելի, նման է նա մարդոյ՝ որ պշուցեալ հայիցի ընդ երեսս իւր՝ որ ծնանիցին ՚ի հայելւոջ.
24 Զի հայեցեալ ետես զինքն՝ և գնաց արար, և անդէն մոռացաւ թէ որպիսի ոք էր :
25 Իսկ որ յառեալ ՚ի կատարեալ օրէնս ազատութեանն հայիցի՝ և ՚ի նմին կայցէ, ոչ եղեւ նա լսող մոռացութեան՝ այլ առնելի գործոյն, նա՝ յառնելն իւրում լիցի երանելի :
26 Եթէ ոք կարծիցի կրօնաւոր լինել՝ և ոչ սանձահարիցէ զլեզու իւր՝ այլ զբաղեցուցանիցէ զսիրտ իւր, այնպիսւոյն՝ վայրապար է կրօնաւորութիւնն :
27 Կրօնաւորութիւն սուրբ և անարատ առ ՚ի յԱստուծոյ և ՚ի Հօրէ՝ այս է, Այցելու լինել որբոց և այրեաց ՚ի նեղութեան իւրեանց, անարատ պահել զանձն յաշխարհէ :

մինակ լսող համարէք ձեր ‡անձնիդ :
23 Ինչու որ եթէ մէկը մինակ խօսքի լսող է՝ և ոչ ընող, նա նման է այն մարդուն՝ որ պշուցած կը նայի իրեն երեսին՝ որ հայելոյ միջումն = երևումէ.
24 Որ նայելով տեսաւ իրեն՝ և անցաւ, և էլ չուտով մոռացաւ թէ ինքն ինչպէս էր :
25 Բայց նա՝ որ ազատութեան կատարեալ Հօրէնքին մէջ աչքը ձգած մտիկ ⸗ կը տայ՝ և նորանում կը կենայ, նա մոռացող լսող չէլաւ՝ բայց գործ կատարող. նա՝ իրեն անելումն երանելի ፣ կը լինի :
26 Թէ որ մէկն կամենայ աստուածապաշտ լինել՝ և իրեն լեզուն ‡ չը սանձահարէ, այլ իրեն սիրտն զբաղմունքի տայ, այնպէսի ‡ աստուածապաշտութիւնը զուր է :
27 Սուրբ և անարատ աստուածապաշտութիւնն Աստուծոյ և Հօր առաջին սա է, Որբերին և որբեւէրիներին տես գալ իրենց նեղութեանը = մէջ . ‡ և իրեն անձն աշխարհքիցն անարատ ‡ պահել :

## ԳԼ. Բ

1 Եղբարք իմ, մի ակնառութեամբ ունիցիք զհաւատսն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ Տէրն է փառաց :
2 Եթէ մտանիցէ ՚ի ժողովուրդ ձեր այր՝ որ ունիցի մատանի ոսկի և հանդերձս պայծառս, մտանիցէ անդր և աղքատ ոք՝ ՚ի հանդերձս աղտեղիս,
3 Հայիցիք ընդ այն՝ որ ունիցի զհանդերձսն պայծառս. և ասիցէք՝

1 Իմ եղբարքս՝ չը լինի թէ երեսին նայելով ունենաք մեր Տէր Յիսուսի Քրիստոսի = հաւատքը, որ նա փառաց Տէրն ‡ է :
2 Թէ որ մի մարդ մանէ ձեր ժողովարանը՝ որ ոսկէ մատանի և պայծառ հագուստ ունենայ. մէկն աղքատ էլ մանէ այնտեղ՝ կեղտոտ շորերով,
3 Եւ մտիկ տաք նորան որ պայծառ հագուստ ունի, և ասէք՝ թէ

– Մատթ. Է. 21: Ղուկ. Զ. 46: ԺԱ. 28: Հռովմ. Բ. 13: Ա Յովհ. Գ. 7:
= Ղուկ. Զ. 47: Գլ. Բ. 14:
Հ Գլ. Բ. 12:
‡ Բ Կորնթ. Գ. 18
‡ Յովհ. ԺԳ. 17:
‡ Սաղ. ԼԳ. 13 ԼԹ. 1: Ա Պետ. Գ. 10:
– Եսայ. Ա. 16. 17: Զք. 6. 7: Մատթ. ԻԵ. 36:
‡ Հռովմ. ԺԲ. 2: Գլ. Դ. 4: Ա Յովհ. Ե. 18:

—

– Ղև. ԺԹ. 15: Բ Օրին. Ա. 17: ԺԶ. 19: Առակ. ԻԴ. 23: ԻԸ. 21: Մատթ. ԻԲ. 16: Համար. 9. Յուդ. 16:
Բ Ա Կորնթ. Բ. 8:

եթէ Դու նիստ աստ պատուով. եւ ցաղքատն ասիցէք՝ եթէ Յոտն կաց դու այդր. կամ թէ Ե՛կ նիստ առ պատուանդանիս իմում:

4 Ո՞չ խղճիցէք յանձինս՝ եւ լինիցիք դատաւորք չարեացն խորհրդոց:

5 Լուարուք ինձ եղբարք իմ սիրելիք, ոչ ապաքէն Աստուած ընտրեաց զաղքատս աշխարհիս, որ են մեծատունք հաւատովք, եւ ժառանգաւորք արքայութեանն՝ զոր խոստացաւ սիրելեաց իւրոց:

6 Եւ դուք անարգէք զաղքատս, ոչ մեծատունք յաղթահարեն զձեզ՝ եւ նոքա քարշեն զձեզ 'ի դատաստան:

7 Ո՞չ նոքա հայհոյեն զբարւոք անունն՝ որ կոչեցեալ է 'ի վերայ ձեր:

8 Ապա թէ զօրէնսն կատարիցէք զարքունականս ըստ Գրոց, եթէ Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո, բարւոք առնէք:

9 Իսկ եթէ աչառիցէք, մեղս գործէք, յանդիմանեալք յօրինացն իբրեւ օրինազանցք:

10 Որ ոք զամենայն օրէնսն պահիցէ, եւ միով իւիք ինչ գթիցէ, եղեւ ամենայն օրինացն պարտական:

11 Զի որ ասացն՝ թէ Մի սպանանիցես, ասաց՝ թէ եւ Մի շնայցես. զի եթէ սպանանիցես ոչ՝ բայց շնայցես, եղեր յանցաւոր օրինացն:

12 Այնպէս խօսեցարուք՝ եւ այնպէս արարէք, որպէս զի ազատութեան օրինօքն իցէք դատելոց:

Դու այս տեղս նստէ պատուով, եւ աղքատին ասէք՝ թէ Այդ տեղդ ոտաց վերայ կաց, կամ թէ Ե՛կ իմ ոտներիս մօտը նստէ:

4 Միթէ խղճմտանք չէք անում ձեզանում, եւ չէլաք չար խորհուրդների դատաւորներ:

5 Լսեցէք ինձ իմ սիրելի եղբարքըս, չէ՞ որ Աստուած ընտրեց այս աշխարհքիս գ աղքատներին, որ հաւատքով հարուստ դ են, եւ արքայութեան ժառանգ՝ որ Աստուած խոստացաւ իրեն ե սիրողներին:

6 Բայց դուք ոչինչի տեղ էք դնում զ աղքատներին. չէ՞ որ հարուստները են ձեզ հարստահարում եւ նորանք ձեզ դատաստան է քաշում:

7 Չէ՞ որ նորանք են հայհոյում այն բարի անունն՝ որ ձեզ վերայ կանչված է:

8 Ապա թէ որ թագաւորական օրէնքը կատարէք Գրքի —ը— պէս՝ թէ Սիրէ քու ընկերիդ քու անձիդ պէս, լաւ էք ը անում:

9 Բայց եթէ երեսնայիք՝ մեղք էք գործում, յանդիմանուած օրէնքիցն իբրեւ օրէնքի թ քանդողներ:

10 Ով որ ամէն օրէնքը պահէ, եւ մէկումը մեղանչէ, ամէն օրէնքին էլաւ ժ պարտական:

11 Ինչու որ ի— որ ասաց՝ թէ Մի սպանիր, ասաց էլ՝ թէ Շնութիւն մի՛ անիր. որ եթէ չսպանես՝ բայց շնութիւն անես, էլար օրէնքին քանդօղ:

12 Այնպէս խօսեցէք՝ եւ այնպէս արէք, որպէս (կը վայելէ ձեզ) թէ ազատութեան օրէնքովն պիտի լ դատվիք:

գ Յովհ. Է. 48: Ա Կորնթ. Ա. 26. 28:
դ Ղու. ԺԲ. 21: Ա Տիմ. Զ. 18: Յայտ. Բ. 9:
ե Ելից. Ի. 6: Ա Թագ. Բ. 30: Առակ. Ը. 17: Մատթ. Ե. 3: Ղու. Զ. 20: ԺԲ. 32: Ա Կորնթ. Բ. 9: Բ Տիմ. Դ. 8: Գլ. Ա. 12:
զ Ա Կորնթ. ԺԱ. 22:
է Գործ. ԺԳ. 50: ԺԴ. 6: ԺԸ. 12: Գլ. Ե. 6:
ը Ղև. ԺԹ. 18: Մատթ. ԻԲ. 39: Հռովմ. ԺԳ. 8. 9: Գաղ. Ե. 14: Զ. 2:
թ Համառ. 1:
ժ Բ Օրին. ԻԷ. 26: Մատթ. Ե. 19: Գաղ. Գ. 10:
ի Ելից. Ի. 13, 14:
լ Գլ. Ա. 25:

13 Զի անողորմ դատաստան լի-
նելոց է այնմ, որ ոչ առնիցէ ող-
որմութիւն. քանզի բարձրագլուխ
պարծի ողորմութիւն առ դատաս-
տանաւն։

14 Զի՞նչ օգուտ իցէ եղբարք իմ,
եթէ ասիցէ ոք հաւատս ունել՝ եւ
գործս ոչ ունիցի. միթէ կարիցե՞ն
հաւատքն ապրեցուցանել զնա։
15 Եթէ եղբայր ոք կամ քոյր՝ խ-
ցեն մերկ կամ կարօտեալ աւուրն
կերակրոյ,
16 Ասիցէ ոք ՚ի ձէնջ ցնոսա. Եր-
թայք խաղաղութեամբ, ջեռարուք
եւ յագեցարուք. եւ տայցէք ոչ
նոցա զպէտս մարմնոյն, զի՞նչ օ-
գուտ իցէ։
17 Սոյնպէս եւ հաւատք եթէ
գործս ոչ ունիցին, մեռեալ են ա-
ռանձինն։
18 Այլ թերեւս ասիցէ՞ ոք. Եթէ
Դու հաւատս ունիս՝ եւ ես գործս
ունիմ. ցոյց ինձ զհաւատսն քո ա-
ռանց գործոց, եւ ես ցուցից քեզ
՚ի գործոցն իմոց զհաւատս։

19 Դու հաւատաս՝ զի մի է Աստ-
ուած, բարւոք առնես. եւ դեւք
հաւատան՝ եւ սարսեն։
20 Կամիս գիտել ով մարդ ունայն,
զի հաւատք առանց գործոց դա-
տարկ են։
21 Աբրահամ հայր մեր ոչ ապաքէն
՚ի գործոց արդարացաւ՝ հանեալ ՚ի
սեղան զորդին իւր զԻսահակ պա-
տարագ։
22 Տեսանես՝ զի հաւատքն եղեն
գործակից գործոց նորա. եւ ՚ի գոր-
ծոց անտի հաւատքն կատարեցան։

13 Դատաստան որ՝ անողորմ դա-
տաստան պիտի լինի նորա վերայ,
որ ողորմութիւն չի [ի] անում. ինչու
որ ողորմութիւնը գլուխը բարձր
բռնած կը պարծենայ դատաստանի
[լ] առաջին։
14 Ի՞նչ օգուտ է՞ իմ եղբարքս,
թէ որ մէկն ասէ որ հաւատք ունի՝
եւ գործ չունենայ. միթէ հաւատ-
քը կը կարենա՞յ ազատենել [խ] նորան։
15 Թէ որ մէկ եղբայր կամ քոյր՝
մերկ լինին կամ օրվան կերակրին
[ծ] կարօտ,
16 Եւ ձեզանից մէկն նորանց ա-
սէ. Գնացէք խաղաղութեամբ, տա-
քացէք եւ կշտացէք. եւ մարմնոյ
պէտք եղածը չը տայ նորանց, ինչ
օգուտ [կ] կը լինի։
17 Այնպէս էլ հաւատքը՝ եթէ
գործք չունենայ՝ ինքն իրանում մե-
ռած է։
18 Բայց լինի որ մէկն ասէ. թէ
Դու հաւատք ունիս՝ եւ ես գործք
ունիմ. ցոյց տուր ինձ քո հաւատ-
քդ առանց գործքերի, եւ ես իմ
հաւատքըս ցոյց կը տամ քեզ իմ
[հ] գործքերովս։
19 Դու հաւատում ես թէ մին Աստ-
ուած կայ, լաւ ես անում. դեւերն
էլ են հաւատում եւ [ձ] դողում։
20 Կամենում ես գիտել ով փուչ
մարդ, որ հաւատքն առանց գործ-
քերի ունայն է։
21 Մեր հայր Աբրահամը չէ՞ որ
գործքերով արդարեցաւ՝ իւրեն որ-
դի Իսահակին պատարագ հանելով
սեղանի [ղ] վերայ։
22 Տեսնում ես՝ որ հաւատքն օգ-
նական էլաւ նորա գործքերին. եւ
այն գործքերովը հաւատքը կատար-
եալ [ճ] էլաւ։

ի Յոբ. ԻԲ. 6. Առակ. ԻԱ. 13. Մատթ. Զ. 15. ԺԸ. 35. Իե. 41, 42.
լ Ա Յովհ. Դ. 17, 18.
խ Մատթ. Է. 26. Գղ. Ա. 23.
ծ Յոբ. ԼԱ. 19, 20. Ղուկ. Գ. 11.
կ Ա Յովհ. Գ. 18.
հ Գղ. Գ. 13.
ձ Մատթ. Ը. 29. Մարկ. Ա. 24. Ե. 7. Ղուկ. Դ. 34. Գործ. ԺԹ. 15.
ղ Ծննդ. ԻԲ. 9. 12.
ճ Եբր. ԺԱ. 17.

23 Եւ կատարեցաւ գիրն՝ որ ասէ.
Հաւատաց Աբրահամ յԱստուած,
եւ համարեցաւ նմա յարդարութիւն.
եւ կոչեցաւ բարեկամ Աստուծոյ:
24 Տեսանէ՛ք՝ զի 'ի գործոց արդա-
րանայ մարդ՝ եւ ոչ 'ի հաւատոց
միայն:
25 Սոյնպէս եւ Ռախաբ պոռնիկ՝
ոչ ապաքէն 'ի գործոց արդարա-
ցաւ, ընկալեալ զլրտեսսն՝ եւ ընդ
այլ ճանապարհ արձակեաց:
26 [Զոր օրինակ մարմին՝ առանց
հոգւոյ մեռեալ է, սոյնպէս եւ հա-
ւատք առանց գործոց մեռեալ] են:

23 Եւ կատարուեցաւ գիրքն՝ որ ա-
սումէ. Աբրահամ հաւատաց Աս-
տուծոյն, եւ արդարութիւն հա-
մարվեցաւ նորա համար. եւ Աս-
տուծոյ բարեկամ կոչվեցաւ:
24 Տեսնումէ՛ք՝ որ մարդ գործքե-
րով է արդարանում՝ եւ ոչ թէ մի-
նակ հաւատքով:
25 Այնպէս էլ Ռախաբ պոռնիկը.
չէ՞ որ գործքերով արդարացաւ, ու-
րախնեւ լրտեսներին իրեն մօտ
առաւ՝ եւ ուրիշ ճանապարհով – ար-
ձակեց:
26 Ինչպէս որ մարմինն առանց
հոգոյ մեռած է, այնպէս էլ հա-
ւատքն առանց գործքերի մե-
ռած է:

## ԳԼ. Գ.

1 Մի՛ բազում վարդապետք լի-
նել եղբարք իմ, գիտասջի՛ք՝ զի
մեծ դատաստան ընդունելոց եմք:
2 Բանզի բազում ինչ յանցանեմք
ամենեքեան.
3 Եթէ ոք բանիւ ոչ յանցանիցէ՝
նա է մարդ կատարեալ, որ կարող
է սանձահարել զամենայն մարմին
իւր:
4 Տես զի ձիոց սանձս 'ի բերան
դնեմք՝ առ անսալոյ նոցա մեզ, եւ
զամենայն մարմինս նոցա նուաճեմք:
5 Ահաւասիկ եւ նաւք որչափ
ինչ են, եւ 'ի սաստիկ հողմոց վա-
րին. եւ փոքր թեւովն շրջին՝ յոր
կոյս եւ միտք ուղղչին կամիցին:
6 Սոյնպէս եւ լեզու փոքր ինչ
անդամ է՝ եւ մեծամեծս բարբառի.

1 Չէ՛ լինի որ շատերդ վարդա-
պետ լինիք իմ – եղբարքս. գիտա-
ցէ՛ք՝ որ մեծ դատաստան պիտի
‡ ընդունինք:
2 Պատճառն որ՝ շատ բաներով
մեղանչումենք ‡ ամէնքս.
3 Թէ որ մինն խօսքովը ‡ չը մե-
ղանչէ՝ նա է կատարեալ մարդ, որ
կարող է իրեն բոլոր մարմինը ‡ սան-
ձահարել:]
4 Տե՛ս որ ձիոյ բերանը սանձք
ենք դնում՝ որ նորանք հնազանդ-
վին մեզ, եւ նորանց բոլոր մար-
մինները ՚ հնազանդացնումենք:
5 Ահա նաւերն էլ ինչպէս ‡ մեծ բան
են, եւ սաստիկ քամիներով են
քշվում. բայց փոքր թիով դառնու-
մեն՝ որ կողմն որ նաւ ՚կառավա-
րողի միտքը կամենայ:
6 Այնպէս էլ լեզուն մին փոքր
անդամ ‡ է՝ եւ մեծ մեծ բաներ է

ˆ Ծննդ. ԺԵ. 6: Հռովմ. Դ. 3: Գաղ. Գ. 6:
ˆ Բ Մնաց. Ի. 7: Եսայ. ԽԱ. 8:
– Յես. Բ. 1: Եբր. ԺԱ. 31:
—
– Մատթ. ԻԳ. 8. 14: Հռովմ. Բ. 20, 21: Ա Պետ. Ե. 3:
‡ Ղու. Զ. 37:
‡ Գ Թագ. Ը. 46: Բ Մնաց. Զ. 36: Առակ. Ի. 9: Ժող. Է. 20: Ա Յովհ. Ա. 8:
‡ Սաղ. ԼԳ. 13: ԳԼ. Ա. 26: Ա Պետ. Գ. 10:
‡ Մատթ. ԺԲ. 37:
‡ Սաղ. ԼԲ. 9:
‡ Առակ. ԺԲ. 18: ԺԵ. 2:

ահա եւ սակաւ ինչ հուր զորպիսի
անտառս հրդեհէ ։

7 Եւ լեզու հուր՝ զարդ անիրաւ-
ութեան , լեզու հաստատեալ է
յանդամս մեր , որ զամենայն մար-
մինն ապականէ , եւ վառէ հրով
զանիւ ծննդեան , եւ բորբոքեալ
տաչարի 'ի գեհենէ ։

8 Ամենայն բնութիւն գազանաց՝
եւ թռչնոց եւ սողնոց եւ որ 'ի ծո-
վու են՝ հնազանդեալ է՝ եւ հնա-
զանդի մարդկեղէն բնութեան ։

9 Բայց զլեզու մարդկան ոչ ոք
կարէ հնազանդել՝ զչարն եւ զան-
կարգ՝ եւ լի թունօք մահաբերին ։

10 Նովաւ օրհնեմք զՏէրն եւ զ
Հայր · եւ նովաւ անիծանեմք զմար-
դիկ՝ որ ըստ նմանութեան Աստու-
ծոյ արարան ։
11 'Ի նմին բերանոյ ելանեն օրհ-
նութիւնք եւ անէծք · ոչ է պարտ
եղբարք իմ այդմ այդպէս լինել ։

12 Միթէ աղբիւր անդստին 'ի միոյ
ակնէն բղխիցէ քաղցր եւ դառն ։
13 Միթէ մարթ ինչ իցէ եղբարք
իմ՝ թզենւոյ ձէթ բերել , կամ որ-
թոյ թուզ , եւ ոչ աղտաղտին անդ-
ւոյ ջուր քաղցր առնել ։

14 Ո՞վ իցէ իմաստուն եւ հանճա-
րեղ 'ի ձեզ , ցուցցէ 'ի բարւոք գը-
նացից զգործս իւր հեզութեամբ
իմաստութեանն ։
15 Ապա եթէ նախանձ՝ եւ դառ-
նութիւն եւ հակառակութիւն ու-
նիցիք 'ի սիրտս ձեր , մի պարծիք
սուտ առնել զճշմարտութիւնն ։

ը խօսում · ահա որ մին փոքր կրակ
էլ ինչպէսի անտառներ է կրակ տա-
լիս ։
7 Եւ լեզուն կրակ է՝ անիրաւու-
թեան թ զարդարանք · լեզուն զըր-
ված է մեր անդամներին մէջ , որ
նա բոլոր մարմինն ապականում է ,
եւ կրակով վառում մեր ծնընդի
պտուտքը , եւ ինքն բորբոքված
այրվում է ժ գեհէննիցը ։
8 Գազաններին եւ թռչուններին
եւ սողացող կենդանիներին եւ ծո-
վում լինողներին՝ ամէն բնութիւնն՝
հնազանդված է՝ եւ հնազանդվում է
մարդկային բնութեանն ·
9 Բայց մարդկանց լեզուն ոչ ով
կարող չէ հնազանդացնել՝ այն չարը
եւ անկարգը՝ եւ մահաբեր թոյնով
ի լցվածն ։
10 Նորանով ենք օրհնում Տէրը եւ
Աստուած Հայրը , եւ նորանով ենք
անիծում մարդկանց՝ որ Աստուծոյ
նմանութենովն լ ստեղծվեցան ։
11 Այն մին բերանիցն են դուրս
գալիս օրհնութիւն եւ անէծքներ ·
պէտք չէ որ այնպէս լինի՝ իմ եղ-
բարքս ։
12 Միթէ մին աղբիւր հենց մին
ակնից քաղցր եւ դառն կը բղխէ ։
13 Իմ եղբարքս միթէ կարելի է՝
որ թզենին ձէթի պտուղ բերէ ,
կամ խաղողի որթը թուզ · այնպէս
էլ աղի գետինն չի կարող քաղցր
ջուր տալ ։
14 Ո՞վ է ձեզանում իմաստուն եւ
խ խելացի · թող իւրեն բարի վար-
քովը ցոյց տայ իւրեն ծ գործքերն
իմաստութեան կ հեզութենովը ։
15 Բայց թէ որ նախանձ՝ եւ դառ-
նութիւն եւ հակառակութիւն ու-
նենաք ձեր հ սրտերումը , մի պար-
ծենաք եւ սուտ մի ասէք ճշմար-
տութեան ձ դէմ ։

ը Սաղ . ԺԲ . 3 ։
ԺԴ . 8 . 9 ։
թ Առակ ԺԶ . 27 ։
ժ Մատթ . ԺԵ . 11 .
18, 19, 20 ։ Մարկ .
Է . 15 . 20 . 23 ։
ի Սաղ . ԾԹ . 3 ։
լ Ծննդ . Ա . 26 ։
Ե . 1 ։ Թ . 6 ։
խ Գաղ . Զ . 4 ։
ծ Գղ . Բ . 18 ։
կ Գղ . Ա . 21 ։
հ Հռովմ . ԺԳ . 13 ։
ձ Հռովմ . Բ . 17 .
23 ։

16 Ո՛չ է իմաստութիւնս այս իջեալ 'ի վերուստ. այլ երկրաւոր՝ շնչաւոր՝ եւ դիւական :

17 Զի ուր նեն եւ նախանձ, անդ է անկարգութիւն՝ եւ ամենայն իրք չարք :

18 Իսկ վերին իմաստութիւնն, նախ զի սուրբ է՝ ապա խաղաղարար, հեզ՝ դիւրահաւան՝ լի ողորմութեամբ եւ պտղովք բարեաց, անխտիր, առանց կեղծաւորութեան :

19 Պտուղ արդարութեան խաղաղութեամբ սերմանի այնոցիկ՝ որ առնեն զխաղաղութիւն :

16 Սա այն իմաստութիւնն չէ՝ որ վերեւիցն է վէր ղ գալիս, բայց երկրաւոր՝ շնչաւոր եւ դիւական :

17 Ինչու որ՝ որտեղ որ քէն եւ նախանձ կայ, այնտեղ անկարգութիւն՝ եւ ամէն չար բաներ ճ կան :

18 Բայց վերին իմաստութիւնը, առաջ՝ սուրբ է, եւ յետոյ՝ խաղաղութիւն անող, հեզ՝ շուտ հաւանող՝ ողորմութեամբ եւ բարի պտուղներով լցուն, առանց մ մեղադրանքի, առանց յ կեղծաւորութեան :

19 Արդարութեան պտուղը խաղաղութեամբ է սերմնվում նորանց համար, որ խաղաղութիւն են ն անում :

## ԳԼ. Դ

1 Ուստի՞ պատերազմունք՝ եւ ուստի՞ կռիւք 'ի ձեզ. ո՛չ աստուստի ցանկութեանց ձերոց՝ որ զօրացեալ են յանդամս ձեր :

2 Ցանկանայք՝ եւ ո՛չ 'ունիք. սպանանէք եւ նախանձիք՝ եւ ո՛չ կարէք հասանել. պատերազմիք կռուիք՝ եւ ո՛չ ունիք, վասն զի ո՛չ խնդրէք :

3 Խնդրէք՝ եւ ո՛չ առնուք, վասն զի չարաչար խնդրէք. զի անդէն 'ի ցանկութիւնս ձեր մաշեսջիք :

4 Շնացօղք՝ ո՛չ գիտէք՝ զի սէր աշխարհիս այսորիկ թշնամութիւն է առ Աստուած. զի որ ոք կամիցի սիրել զաշխարհ՝ թշնամի առնէ զանձն իւր Աստուծոյ :

5 Կամ թէ վայրապար համարիցիք՝ զոր ասէ Գիրն. Առ նախանձ

1 Որտեղից են պատերազմունքներ, եւ որտեղից կռիւներ ձեր միջումը. չէ՞ որ ձեր այդպէսի ցանկութիւններիցը՝ որ զօրացել են ձեր շ անդամներումը :

2 Ցանկանումէք՝ եւ չունիք. սպանումէք եւ նախանձումէք՝ եւ կարում չէք հասնիլ. պատերազմումէք կռվումէք՝ եւ չունիք, պատճառն որ չէք խնդրում :

3 Խնդրումէք՝ եւ չէք ո առնում, պատճառն որ չար կերպով էք խնդրում, որ էլ ձեր ցանկութիւններումը չ մաշէք :

4 պ Շնացողներ՝ չէք գիտում որ այս աշխարհքիս սէրը թշնամութիւն է Աստուծոյ ջ դէմ. պատճառն՝ ով որ կամենայ աշխարհքս սիրել, իրեն անձն Աստուծոյ թշնամի ռ կանէ :

5 Կամ թէ կարծումէք՝ թէ Գիրքը զուր տեղն է ասում. թէ Հոգին

ղ Գղ. Ա. 17. Փիլիպ. Գ. 19.
ճ Ա Կորնթ. Գ. 3. Գաղ. Ե. 20.
մ Ա Կորնթ. Բ. 6, 7.
յ Հռովմ. ԺԲ. 9. Ա Պետ. Ա. 22. Բ. 1. Ա Յովհ. Գ. 18.
ն Առակ. ԺԱ. 18. Ովսէ. Ժ. 12. Մատթ. Ե. 9. Փիլիպ. Ա. 11. Եբր. ԺԲ. 11.
—
շ Հռովմ. Է. 23. Գաղ. Ե. 17. Ա Պետ. Բ. 11.
ո Յոբ. ԻԷ. 9. ԼԵ. 12. Սաղ. ԺԸ. 41. Առակ. Ա. 28. Եսայ. Ա. 15. Երեմ. ԺԱ. 11. Միք. Գ. 4. Զաք. Է. 13.
չ Սաղ. ԿԶ. 18. Ա Յովհ. Գ. 22. Ե. 14.
պ Սաղ. ՀԳ. 27.
ջ Ա Յովհ. Բ. 15.
ռ Յովհ. ԺԵ. 19.

ինչ՝ որում փափագէ հոգին՝ որ բնակեաց 'ի մեզ ,

6 Տայ զառաւել շնորհսն . վասն որոյ ասէ . Տէր ամբարտաւանից հակառակ կայ , այլ շնորհս խոնարհաց ։

7 Հնազանդեցարո՛ւք այսուհետեւ Աստուծոյ . եւ կացէք հակառակ չարախօսին . եւ ելցէ փախստական 'ի ձէնջ ։

8 Մերձեցարո՛ւք առ Աստուած՝ եւ մերձեսցի առ ձեզ ։ Սրբեցէք զձեռս՝ մեղաւորք , եւ ուղիղ արարէք զսիրտս՝ երկմիտք ։

9 Տառապեցարո՛ւք՝ սգացարո՛ւք եւ լացէք . ծաղր ձեր 'ի սուգ դարձցի , եւ ուրախութիւն ձեր 'ի տրտմութիւն ։

10 Խոնարհեցարո՛ւք առաջի Տեառն՝ եւ բարձրացուսցէ զձեզ ։

11 Մի բամբասէք զմիմեանս եղբարք . որ բամբասէ զեղբայր՝ կամ դատի զեղբայր իւր , զօրէնսն բամբասէ՝ եւ զօրէնսն դատի . իսկ եթէ զօրէնսն դատիցիս՝ ոչ առնելի օրինացն ես՝ այլ դատաւոր ։

12 Մի է Օրէնսդիր եւ Դատաւոր՝ որ կարօղն է փրկել եւ կորուսանել ։

13 Դու ո՞ ես՝ որ դատիս զընկերն . ահաւասիկ են , որ ասեն . Այսօր՝ եւ վաղիւ երթիցուք յայս անուն քաղաք , եղիցուք անդ ամի մի , վաճառեսցուք՝ եւ շահեսցուք.

որ մեզանում բնակվեցաւ՝ փափագումէ ե նախանձուն ,

6 Բայց աւելի շնորհք է տալիս . որ նորահամար էլ ասումէ . Տէրն ամբարտաւաններին հակառակ է կենում , ու խոնարհներին շնորհք ը տալիս ։

7 Ուրեմն հնազանդվեցէք Աստուծոյն , եւ հակառակ կացէք Սատանային . եւ կը փախչի թ ձեզանից ։

8 Մօտեցէք Աստուծոյ , եւ նա կը մօտենայ ժ ձեզ ։ Սրբեցէք ձեռներդ՝ ով ի մեղաւորներ, եւ սրտերդ չիտակ լ արէք՝ ով խ երկմիտներ ։

9 Չարչարվեցէք՝ սուգ արէք եւ լաց էլէք . ձեր ծաղրը թող սուգ դառնայ , եւ ձեր ուրախութիւնը ծ տրտմութիւն ։

10 Խոնարհվեցէք Տէրի առաջին , եւ կը բարձրացնէ կ ձեզ ։

11 Իրար մի բամբասէք հ եղբարք . ով որ իրեն եղբօրը կը բամբասէ՝ կամ իրեն եղբօրը կը դատէ , օրէնքըն է բամբասում՝ եւ օրէնքըն է ձ դատում . ապա թէ որ օրէնքը դատես , էլ օրէնքի կատարող չես՝ այլ դատաւոր ։

12 Մինն է օրէնք դնող եւ Դատաւոր , որ կարող է փրկել եւ ղ կորցնել . դու ով ես որ ընկերիդ ճ դատաւմես ։

13 Ա՛նա կան որ ասումեն , թէ Այսօր եւ վաղը գնանք այս անուն քաղաքը , այնտեղ մին տարի մնինք , վաճառենք եւ մ շահվինք .

ե Ծննդ. Զ. 5 ։ Ը. 21 ։ Թուոց. ԺԱ. 29 ։ Առակ. ԻԱ. 10 ։
ը Յոբ. ԻԲ. 29 ։ Սաղ. ՃԼԸ. 6 ։ Առակ. Գ. 34 ։ ԻԹ. 23 ։ Մատթ. ԻԳ. 12 ։ Ղուկ. Ա. 52 ։ ԺԴ. 11 ։ ԺԸ. 14 ։ Ա Պետ. Ե. 5 ։
թ Եփես. Դ. 27 ։ Զ. 11 ։ Ա Պետ. Ե. 9 ։
ժ Բ Մնաց. ԺԵ. 2
ի Եսայ. Ա. 16 ։
լ Ա Պետ. Ա. 22 ։ Ա Յովհ. Գ. 3 ։
խ Յկ. Ա. 8 ։
ծ Մատթ. Ե. 4 ։
կ Յոբ. ԻԲ. 29 ։ Մատթ. ԻԳ. 12 ։ Ղուկ. ԺԴ. 11 ։ ԺԸ. 14 ։ Ա Պետ. Ե. 6 ։
հ Եփես. Դ. 31 ։ Ա Պետ. Բ. 1 ։
ձ Մատթ. Է. 1 ։ Ղուկ. Զ. 37 ։ Հռովմ. Բ. 1 ։ Ա Կորնթ. Դ. 5 ։
ղ Մատթ. Ժ. 28 ։
ճ Հռովմ. ԺԴ. 4. 13 ։
մ Առակ. ԻԷ. 1 ։ Ղուկ. ԺԲ. 18 ։

14 Որք ոչ գիտէք զվաղիւն,

¯15 Ո՞րպիսի ինչ են կեանք ձեր. զի իբրեւ զմրրիկ էք, որ առ սակաւ մի երեւեալ՝ եւ ապա ապականեալ։ Փոխանակ զի ասէիք՝ Եթէ Տէր կամեսցի՝ եւ կեցցուք, արասցուք զայս ինչ՝ կամ զայն։

16 Եւ արդ՝ պարծիք յամբարտաւանութեան ձերում. ամենայն ինչ այսպիսի պարծանք չարութեան են։

17 Որ ոք գիտիցէ զբարին՝ եւ ոչ առնիցէ, մեղք են նմա։

14 Դուք որ չէք գիտում վաղվան օրը,

15 Ի՞նչպէսի բան է ձեր կեանքը. ինչու որ մրրկի նման էք, որ քիչ մի երեւումէ՝ եւ յ ապականվում. ու նորա տեղը պէտք էր ասել՝ Թէ որ Տէրը կամենայ՝ կապրինք, եւ այս բանը կամ այն բանը ն կանենք։

16 Ուրեմն պարծենումէք ձեր ամբարտաւանութիւնով. ամէն այնպէսի պարծանքները չարութիւն ւ են։

17 Ով որ բարին գիտենայ՝ եւ չանէ, նորա համար մեղք – է։

## ԳԼ. Ե

1 Արդ՝ այսուհետեւ մեծատունք լացէք եւ ողբացէք ՚ի վերայ թշուառութեանցն, որ գալոց են ՚ի վերայ ձեր։

2 Զի մեծութիւնք ձեր յոչինչ է, եւ հանդերձք ձեր կերակուր ցեցոյ։

3 Արծաթ ձեր եւ ոսկի ժանգահար, եւ ժանգ նոցա լիցի ձեզ ՚ի վկայութիւն, եւ կերիցէ զմարմինս ձեր. իբրեւ զհուր զանձեցէք աւուրցն յետնոց։

4 Ահաւասիկ վարձք մշակաց՝ որ գործեն զանդս ձեր առ ձեզ են. զրկեալն ՚ի ձէնջ աղաղակէ, եւ բողոք հնձողացն եհաս յականջս Տեառն զօրութեանց։

5 Փափկացայք ՚ի վերայ երկրի՝ եւ զբօսայք. սնուցէք զսիրտս ձեր իբրեւ աւուր սպանման։

6 Զրկեցիք՝ սպանէք զարդարն, որ ոչ կայր ձեզ հակառակ։

1 Ուրեմն եկէք ով հարուստներ՝ լաց էլէք եւ ողբ արէք – ն թշուառութիւններին վերայ, որ պիտի գան ձեզ – վերայ։

2 Պատճառն որ՝ ձեր մեծութիւնը ոչ ինչ է, եւ ձեր շորերը ցեցի բ կերակուր։

3 Եւ ձեր արծաթն ու ոսկին ժանգոտված, եւ նորանց ժանգը կը լինի ձեզ դէմ վկայ, եւ ձեր մարմինները կուտէ. ու ÷–÷ կրակի նման գիզեցիք յետին օրի ÷ համար։

4 Ահա այն մշակների վարձքն՝ որ ձեր յանդերումը բանումեն՝ ձեզ մօտ են. ձեզանից զրկվածն ∓ աղաղակում, եւ հնձողների աղաղակը հասաւ զօրութեանց Տէրի ⊦ ականջը։

5 Երկրի վերայ փափուկ կացաք՝ եւ զբօսանքի մէջ էլաք. ձեր սրտերը գիրացրիք՝ ինչպէս մորթելոյ օրին ղ համար։

6 Զրկեցիք՝ սպանեցիք արդարին, որ ձեզ հակառակ չէր ⊦ կենում։

յ Յոբ. Է. 7. Սաղ. ՃԲ. 3. Գլ. Ա. 10. Ա Պետ. Ա. 24. Ա Յովհ. Բ. 17. ն Գործ. ԺԸ. 21. Ա Կորնթ. Դ. 19. ԺԶ. 7. Եբր. Զ. 3.

ւ Ա Կորնթ. Ե. 6. – Ղուկ. ԺԲ. 47. Յովհ. Թ. 41. ԺԵ. 22. Հռովմ. Ա. 20, 21. 32. Բ. 17, 18. 23 — – Առակ. ԺԱ. 28.

Ղուկ. Զ. 24. Ա Տիմ. Զ. 9. բ Յոբ. ԺԳ. 28. Մատթ. Զ. 20. Գլ. Բ. 2. ÷ Հռովմ. Բ. 5. ∓ Ղկ. ԺԹ. 13. Յոբ. ԻԴ. 10.

14. Երեմ. ԻԲ. 13. Մաղ. Գ. 5. ⊦ Բ Օրին. ԻԴ. 15. ղ Յոբ. ԻԱ. 13. Ամոս. Զ. 1. 4. Ղուկ. ԺԶ. 19. 25. Ա Տիմ. Ե. 6. ⊦ Գլ. Բ. 6.

7 Երկայնամիտ լերուք եղբարք
իմ մինչեւ ՚ի գալուստն Տեառն. ա-
հա մշակ երկայնամտեալ սպասէ
պատուական պտղոյն երկրի, մին-
չեւ առցէ զկանուխն եւ զանագան:
8 Երկայնամտեցէք եւ դուք, եւ
հաստատեցէք զսիրտս ձեր. զի գա-
լուստն Տեառն մերձեալ է:
9 Մի տրտմեցուցանէք զմիմեանս
եղբարք, զի մի դատիցիք. ահաւա-
սիկ Դատաւորն առ դրունս կայ:
10 Օրինակ առէք եղբարք՝ չար-
չարանաց եւ երկայնմտութեան ըզ
մարգարէսն, որ խօսեցան յանուն
Տեառն:
11 Ահաւասիկ երանեմք համբերո-
ղաց. զհամբերութիւն Յոբայ լուա-
րուք՝ եւ զկատարումն Տեառն տե-
սէք. զի բազմագութ է Տէր՝ եւ
ողորմած:
12 Յառաջ քան զամենայն ինչ եղ-
բարք իմ, մի երդնուցուք՝ մի յեր-
կինս՝ մի յերկիր՝ մի յայլ ինչ եր-
դումն, այլ եղիցի ձեր այոն՝ այո,
եւ ոչն՝ ոչ. զի մի ՚ի կեղծաւորու-
թիւն ինչ անկանիցիք:
13 Վշտանայցէ ոք ՚ի ձէնջ, յա-
ղօթս կացցէ. բերկրեսցի ոք, սաղ-
մոս ասասցէ:
14 Հիւանդանայցէ ոք ՚ի ձէնջ՝
կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյն, եւ
արասցեն ՚ի վերայ նորա աղօթս,
օծցեն իւղով յանուն Տեառն:
15 Եւ աղօթքն հաւատովք փըր-
կեսցեն զաշխատեալն, եւ յարուսս-
ցէ զնա Տէր. եւ եթէ մեղս ինչ
իցէ գործեալ՝ թողցի նմա:
16 Խոստովան եղերուք միմեանց

7 Ո՛վ եղբարքս երկայնամիտ է-
ղէք մինչեւ Տէրոջն գալը. ահա մը-
շակը երկայնամիտ էլած սպասում է
երկրի պատուական պտղին՝ մինչեւ
որ առնէ կանուխ եւ ուշ հասածը:
8 Երկայնամիտ էլէք դուք էլ՝
հաստատեցէք ձեր սրտերը. ինչու
որ Տէրոջն գալը մօտեցել է:
9 Մի՛ տրտմեցնէք իրար եղբարք,
որ չըլ դատուիք. ահա Դատաւորը
դրան առաջին կանգնած է:
10 Եղբարք՝ չարչարանքի եւ եր-
կայնամիտ ըլնելոյ օրինակ առէք
ձեզ մարգարէներին, որ Տէրոջն ա-
նունովը խօսեցին:
11 Ահա համբերողներին երանի
ենք տալիս. Յօբայ համբերու-
թիւնը լսեցիք՝ եւ Տէրի կատա-
րումն տեսաք. ինչու որ Տէրը
շատ գթած է եւ ողորմած:
12 Ո՛վ եղբարքս՝ ամէն բանից ա-
ռաջ՝ երդում մի՛ ուտէք, ոչ երկըն-
քովը, ոչ երկրովս, եւ ոչ մին ու-
րիշ երդումով, բայց թող ըլնի ձեր
այոն՝ այո, եւ չէն՝ ոչ. որ մին
կեղծաւորութեան մէջ չընկնիք:
13 Թէ ով ձեզանից մինը նեղու-
թիւն քաշէ, թող աղօթք անէ.
թէ ով մինն ուրախանայ, թող սաղ-
մոս ասէ:
14 Թէ որ ձեզանից մինը հիւան-
դանայ՝ թող եկեղեցոյ էրէցներին
կանչէ, եւ նորա վերայ աղօթք ա-
նեն, իւղով օծեն Տէրի անունովը:
15 Եւ աղօթքը հաւատքով՝ կը
փրկէ այն ախտացածին, եւ Տէրը
վերկացնէ նորան. եւ թէ որ մին
մեղք գործած ըլնի՝ կը թողվի նո-
րան:
16 Մեղքերդ խոստովանեցէք ի-

Է Բ Օրին. ԺԱ. 14. Երեմ. Ե. 24. Ովսէ. Զ. 3 Յովէլ. Բ. 23. Զաք. Ժ. 1.
ը Փիլիպ. Դ. 5. Եբր. Ժ. 25. 37.
Ա Պետ. Դ. 7.
թ Գղ. Դ. 11.
ժ Մատթ. ԻԴ. 33. Ա Կորնթ. Դ. 5.
լ Մատթ. Ե. 12. Եբր. ԺԱ. 35.
խ Սաղ. ԿԴ. 12. Մատթ. Ե. 10, 11. Ժ. 22.
ծ Յոբ. Ա. 21, 22. Բ. 10.
կ Յոբ. ԽԲ. 10.
հ Թու. ԺԴ. 18. Սաղ. ՃԳ. 8.
ձ Մատթ. Ե. 34.
ղ Եփես. Ե. 19. Կող. Գ. 16.
ճ Մարկ. Զ. 13. ԺԶ. 18.
մ Եսայ. ԼԳ. 24. Մատթ. Թ. 2.

զմեղս, եւ աղօթս արարէք 'ի վերայ միմեանց՝ որպէս զի բժշկեսջիք. քանզի յոյժ զօրաւոր են աղօթք արդարոց յօգնականութիւն։

17 Եղիա մարդ էր իբրեւ զմեզ չարչարելի. եւ յաղօթս եկաց՝ եւ ոչ տեղաց յերկիր զերիս ամս եւ զվեց ամիս։

18 Եւ դարձեալ եկացյաղօթս՝ եւ ետուն երկինք զանձրեւ՝ եւ բուսոյց երկիր զպտուղ իւր։

19 Եղբարք իմ, եթէ ոք 'ի ձէնջ մոլորեսցի 'ի ճշմարտութեան ճանապարհէն՝ եւ դարձուսցէ ոք զնա.

20 Գիտասցէ, զի որ դարձուսցէ զմեղաւորն 'ի մոլորութեան ճանապարհէն իւրմէ, փրկեսցէ զոգի իւր 'ի մահուանէ՝ եւ ծածկեսցէ զբազմութիւն մեղաց։

բար, եւ իրար վերայ աղօթք ըրէք, որ բժշկվիք. պատճառն որ՝ արդարների աղօթքները շատ զօրաւոր են օգնականութիւն անելոյ ջ համար։

17 Եղիան մարդ էր մեզ պէս չարչարանքի ներքեւ ռ լինող. եւ աղօթք արաւ՝ եւ անձրեւ ս չեկաւ երկրի վերայ երեք տարի եւ վեց վ ամիս։

18 Եւ դարձեալ աղօթք արաւ՝ եւ երկինքն անձրեւ տուաւ՝ եւ երկիրըն իւրն պտուղը տ բուսացրուց։

19 Իմ եղբարքս՝ թէ որ մէկը ձեզանից մոլորվի ճշմարտութեան ճանապարհից՝ եւ մէկը դարձնէ ր նորան,

20 Թող գիտենայ՝ թէ նա որ մեղաւորին իւրեն մոլորութեան ճանապարհից կը դարձնէ, իւրեն հոգին կը փրկէ ց մահից՝ եւ մեղաց շատութիւնը ւ կը ծածկէ։

# ԹՈՒՂԹ ԿԱԹՈՂԻԿԵԱՅՑ

## ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ ԱՌԱՋԻՆ

---

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 ՊԵՏՐՈՍ առաքեալ Յիսուսի Քրիստոսի, ընտրելոցդ նժդեհից, որ 'ի սփիւռս Պոնտացւոց, Գաղատացւոց եւ Կապադովկեցւոց եւ Ասիացւոց եւ Բիւթանացւոց,

2 Ըստ կանխագիտութեանն Աստուծոյ Հօր. սրբութեամբ Հոգւոյն, 'ի հնազանդութիւն եւ 'ի հե-

1 ՊԵՏՐՈՍ Յիսուսի Քրիստոսի առաքեալ, ընտրեալ օտարականներին՝ որ ցրուած էք Պոնտացոց, Գաղատացոց եւ Կապադովկացոց եւ Ասիացոց եւ Բիւթանացոց փ եր-կրներումն է,

2 Հօր Աստուծոյ կանխագիտութեան պէս. Հոգւոյ՝ սրբութենովը, Յիսուսի Քրիստոսի հնազանդու-

ջ Ծննդ. Ի. 17. Թուղ. ԺԱ. 2. Բ Օրին. Թ. 18. 19. 20. Ցես. Ժ. 12. Ա Թագ. ԺԲ. 18. Գ Թագ. ԺԳ. 6. Դ Թագ. Դ. 33. ԺԹ. 15. 20.
Ի. 2. 4. Սաղ. Ժ. 17. ՂԴ. 15. ՃԽԵ. 18. Առակ. ԺԵ. 29. ԻԸ. 9. Ցովհ. Թ. 31. Ա Ցովհ. Գ. 22.
ռ Գործ. ԺԴ. 15.
ս Գ Թագ. ԺԷ. 1.
վ Ղու. Դ. 25.
տ Գ Թագ. ԺԸ. 42. 45.
ր Մատթ. ԺԸ. 15.
ց Հռովմ. ԺԱ. 14. Ա Կորնթ. Թ. 22. Ա Տիմ. Դ. 16.
ւ Առակ. Ժ. 12. Ա Պետ. Դ. 8.

—

փ Ցովհ. Է. 35. Գործ. Բ. 5. 9. 10. Ցակ. Ա. 1.
ք Հռովմ. Ը. 29. ԺԱ. 2. Եփես. Ա. 4. Գաղ. Բ. 9. Բ Թես. Բ. 13.

ցողումն արեանն Յիսուսի Քրիստոսի. շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն բազմասցի։

3 Օրհնեալ է Աստուած եւ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ըստ բազում ողորմութեանն իւրում ծնաւ զմեզ վերստին 'ի յոյսն կենդանի. 'ի ձեռն յարութեանն Յիսուսի Քրիստոսի 'ի մեռելոց,

4 Յանեղծ եւ յանարատ եւ յանթառամ ժառանգութիւնն որ պահեալ է յերկինս 'ի ձեզ.

5 Որ զօրութեամբն Աստուծոյ պահեալ էիք հաւատովք 'ի պատրաստեալ փրկութիւնն, յայտնել 'ի յետին ժամանակս։

6 Որով ուրախ լինիջիք՝ որ այժմ սակաւիկ մինչ ըստ պատշաճի իրացդ տրտմեալ էք 'ի պէսպէս փորձութիւնս։

7 Զի հանդէս ձերոյ հաւատոյն առաւել քան զոսկի կորստականն պատուական է. որ հրով փորձեալ՝ գտաւ 'ի գովութիւն եւ 'ի փառս, եւ 'ի պատիւ 'ի յայտնութեանն Յիսուսի Քրիստոսի։

8 Զոր ոչն տեսէք՝ եւ սիրեցէք. ընդ որ այժմ ոչ հայեցեալք՝ բայց հաւատացէք. եւ ուրախ էք անճառ եւ փառաւորեալ խնդութեամբն։

9 Ընկալեալ զկատարումն հաւատոյն ձերոյ զոգւոյն փրկութիւն։

թեան եւ Նորա արիւնը թափելոյ [ե] համար. շնորհք եւ խաղաղութիւն շատանայ ձեզ [զ] վերայ։

3 Օրհնեալ է Աստուած եւ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի [է] Հայրը, որ իրեն առատ ողորմութենովը մեզ կրկին ծնաւ դէպի կենդանի [ը] յոյս. Յիսուսի Քրիստոսի մեռելների միջից յարութիւն առնելովը,

4 Դէպի այն անապականելի եւ անարատ եւ անթառամ՝ [ի] ժառանգութիւնը՝ որ երկնքումն պահված է ձեզ [լ] համար.

5 Որ Աստուծոյ զօրութենովը պահված էիք հաւատքով դէպի այն փրկութիւնը՝ որ պատրաստված էր, որ յայտնվի յետին [խ] ժամանակներումը.

6 Որ նորանով ուրախ պիտի լինիք [ծ] դուք, որ հիմիկ ինչպէս որ բանը բերում է քիչ [կ] մի տրտմած էք կերպ կերպ փորձանքներին [հ] մէջ.

7 Որ ձեր հաւատքի փորձութիւնն աւելի պատուական գտնվի քան կորստական [ձ] ոսկին. որ կրակով փորձված [ղ] է, որ գովութիւն եւ փառք եւ պատիւ լինի Յիսուսի Քրիստոսի յայտնվելոյ [ճ] ժամանակումն.

8 Որ նորան չը տեսիք՝ եւ [մ] սիրեցիք. որ նորան էլ հաւատացիք թէ եւ հիմիկ չէք տեսնում, եւ ուրախ էք այն անպատմելի եւ փառաւոր [յ] խնդութենովը

9 Ձեր հաւատքի կատարածն ընդունելով, այսինքն հոգոց [ն] փրկութիւնը.

ե Եբր. Ժ. 22. ԺԲ. 24.
զ Հռովմ. Ա. 7. Բ Պետ. Ա. 2. Յուդ. 2.
է Բ Կորնթ. Ա. 3. Եփես. Ա. 3.
ը Տիտ. Գ. 5.
թ Յովհ. Գ. 3. 5. Յակ. Ա. 18.
ժ Ա Կորնթ. ԺԵ. 20. Ա Թես. Դ. 14. Գղ. Գ. 21
ի Գղ. Ե. 4.
լ Կող. Ա. 5. Բ Տիմ. Դ. 8.
խ Յովհ. Ժ. 28, 29. ԺԷ. 11, 12, 15. Յուդ. 1.
ծ Մատթ. Ե. 12. Հռովմ. ԺԲ. 12. Բ Կորնթ. Զ. 10. Գղ. Դ. 13.
կ Բ Կորնթ. Դ. 17. Գղ. Ե. 10.
հ Յակ. Ա. 2.
ձ Յակ. Ա. 3. 12. Գղ. Գ. 12.
ղ Յոբ. ԻԳ. 10. Սաղ. ԿԶ. 10. Առակ. ԺԷ. 3. Եսայ. ԽԸ. 10. Զաք. ԺԳ. 9. Ա Կորնթ. Դ. 13.
ճ Հռովմ. Բ. 7. 10. Ա Կորնթ. Դ. 5. Բ Թես. Ա. 7—12.
մ Ա Յովհ. Դ. 20.
յ Յովհ. Ի. 29. Բ Կորնթ. Ե. 7. Եբր. ԺԱ. 1. 27.
ն Հռովմ. Զ. 22.

10 Վասն որոյ փրկութեան խնդրեցին եւ քննեցին մարգարէքն․ որք վասն որոյ 'ի ձեզ լինելոց էին շնորհքն՝ մարգարէանային․
11 Քննէին յորում եւ յորպիսի ժամանակի գուշակէր 'ի նոսա Հոգին Քրիստոսի․ որ նախ զչարչարանացն Քրիստոսի վկայէր՝ եւ յետ այնորիկ՝ զփառացն ։
12 Որոց եւ յայտնեցաւ իսկ․ զի ոչ եթէ անձանց, այլ մեզ մատակարարք լինէին նոցին․ որք այժմ պատմեցան այնորիկ, որ աւետարանեցինն ձեզ Հոգւովն Սրբով, որ առաքեցաւ յերկնից․ զոր ցանկային տեսանել զանեալ ընդ աղօտ հրեշտակք ։
13 Որով ածեալ զմէջս մտաց ձերոց՝ զուարթացեալք բովանդակ ըսպասեցէք հասելոցն ձեզ շնորհաց 'ի յայտնութեանն Յիսուսի Քրիստոսի,
14 Իբրեւ զորդիս հնազանդութեան․ մի կերպարանեալք առաջին ձերովք անգիտութեանն ցանկութեամբք․
15 Այլ ըստ Սրբոյն որ կոչեաց զձեզ՝ եւ դուք սուրբք յամենայն գնացս ձեր լինիջիք ։
16 Վասն որոյ գրեալ է, եթէ Եղերուք սուրբք զի ես սուրբ եմ ։

10 Որ այն փրկութեան համար մանն եկլին եւ քննեցին մարգարէները, որ մարգարէանումէին այն շնորհքին համար՝ որ լինելու էր ձեզ ձեզանում։
11 Քննումէին թէ ինչպէս՝ եւ ինչպէսի ժամանակի համար Քրիստոսի ւ Հոգին՝ որ նորանցում էր, գուշակումէր․ որ նա առաջուց վկայումէր Քրիստոսի չարչարանքներին համար, եւ նրանց հետեւօղ փառքին ւ համար․
12 Որ նորանց յայտնուեցաւ էլ, որ չէ թէ իրենց անձներին, այլ մեզ համար էին սպասաւորում այն բաները՝ որ հիմիկ պատմուեցան ձեզ նորանց ձեռովն՝ որ աւետարանը քարոզեցին ւ ձեզ այն Սուրբ Հոգովին՝ որ երկնքիցն ուղարկուեցաւ․ որ հրեշտակներն էլ ցանկանումէին նորանց գաղտնի մտիկ կերպով նայենալ։
13 Նրահամար ձեր մտքի մէջը ամրանալով՝ զարթնացած բոլորովին սպասեցէք այն շնորհքին որ կը հասնէ ձեզ՝ Յիսուսի Քրիստոսի յայտնութենումը,
14 Հնազանդ որդոց պէս․ որ չը կերպարանուիք՝ այն ձեր առաջին ցանկութիւններին պէս՝ որ անգիտութեան ժամանակումն էիք։
15 Բայց այն Սրբոյն պէս՝ որ ձեզ կանչեց, դուք էլ սուրբ եղէք ձեր ամէն ճանապարհներումը։
16 Որահամար գրուած է, Սուրբ եղէք, ինչու որ ես սուրբ եմ։

յ Ծննդ. ԽԹ. 10։
Դան. Բ. 44։
Անգէ Բ 7։ Զաք.
Զ. 12։ Մատթ
ԺԳ. 17։ Ղու.
Ժ. 24։ Բ Պետ
Ա. 19, 20. 21։
ե Գղ. Գ. 18։ Բ
Պետ. Ա. 21։
ւ Սաղ. ԻԲ. 6։
Եսայ. ԾԳ. 3.
Դան. Թ. 26։

Ղու. ԻԴ. 25.
26. 44 46։ Յովհ.
ԺԲ. 41։ Գործ.
ԻԶ. 22, 23։
ա Դան. Թ. 24։
ԺԲ. 9. 13։
ւ Եբր. ԺԱ. 13.
39, 40։
դ Գործ. Բ. 4։
կ Եփե. ԻԵ. 20։
Դան. Ը. 12։
ԺԲ. 5, 6։ Եփես.

Գ. 10։
ա Ղու. ԺԲ. 35։
Եփես. Զ. 14։
ա Ղու. ԻԱ. 34։
Հռովմ. ԺԳ. 13։
Ա Թես. Ե. 6. 8։
Գղ. Գ. 7։ Ե. 9։
կ Ղու. ԺԵ. 30։
Ա Կորնթ. Ա. 7։
Բ Թես. Ա. 7։
պ Հռովմ. ԺԲ. 2։
Գղ. Դ. 2։

ր Գործ. ԺԵ. 30։
Ա Թես. Դ. 5։
ց Ղու. Ա. 74, 75։
Բ Կորնթ. Է. 1։
Ա Թես, Դ. 3.
4. 7։ Եբր. ԺԲ.
14։ Բ Պետ. Գ.
11։
ւ Ղև. ԺԱ. 44։
ԺԹ. 2։ Ի. 7։

17 Եւ եթէ Հայր կոչիցէք զայն,
որ առանց ակնառութեան դատի
ըստ իւրաքանչիւր գործոց. ապա
երկիւղիւ զձերոյն պանդխտու-
թեան ժամանակս գնասջիք:

18 Գիտասջիք, զի ոչ ապականա-
ցու արծաթեղինօք եւ ոսկեղինօքն
փրկեցարուք 'ի ձերոց ունայնու-
թեան հայրենաւոր գնացիցն.
19 Այլ պատուական արեամբն
Քրիստոսի, իբրեւ անբիծ եւ անա-
րատ գառին:
20 Որ յառաջ ծանօթն էր՝ նախ
քան զիսկզբանէ աշխարհի. եւ ե-
րեւեցաւ 'ի վախճան ժամանակաց
վասն ձեր.
21 Որք նովաւ հաւատացիք յԱս-
տուած՝ որ յարոյց զնա 'ի մեռելոց,
եւ ետ նմա փառս. զի հաւատքն
ձեր եւ յոյս իցեն յԱստուած:

22 Զանձինս ձեր սրբել հնազան-
դութեամբ ճշմարտութեանն, յեղ-
բայրսիրութեան առանց կեղծաւո-
րութեան, 'ի սուրբ սրտէ սիրել
սերտիւ զմիմեանս:

23 Ծնեալք վերստին ոչ յապակա-
նութեան սերմանէն. այլ յանապա-
կանացուէն, կենդանի եւ մշտնջե-
նաւորն բանիւն Աստուծոյ:
24 Քանզի ամենայն մարմին իբ-
րեւ զխոտ է. եւ ամենայն փառք

17 Եւ թէ որ Հայր կանչէք նո-
րան որ առանց երեսնայելոյ է դա-
տաստան անում ամէն մէկի գործ-
քին ‡ պէս, ապա ձեր օտարակա-
նութեան + ժամանակումը վախով
• գնացէք:
18 Գիտացէք՝ որ չէ թէ ապա-
կանվելի արծաթով եւ ‡ ոսկով
փրկվեցաք ձեր փուչ հայրենական
– սովորութիւնքը.
19 Բայց Քրիստոսի պատուական
Բ արիւնով, ինչպէս մի անբիծ եւ
անարատ ‡ գառի.
20 Որ առաջուց ճանաչված էր աշ-
խարհքի սկզբիցն ‡ առաջ. եւ ժա-
մանակների վերջումն երեւեցաւ
ձեզ Է համար,
21 Որ նորանով հաւատացէք Աս-
տուծոյն՝ որ նորան մեռելների մի-
ջիցն Ը յարոյց, եւ նորան փառք
տուաւ, որ ձեր հաւատքն ու յոյսն
Աստուծոյ վերայ Է լինի.
22 Որ ձեր անձները սրբեցէք հը-
նազանդ լինելով ճշմարտութեան
(Սուրբ Հոգովն), առանց կեղծա-
ւորութեան եղբայրսիրութենով, որ
սուրբ սրտով ջերմեռանդութենով
իրար Բ սիրէք:
23 Որովհետեւ նոր ծնվել էք՝ ոչ
թէ ապականվելի՝ բայց անապական
սերմիցը, Է –յ–ի–ւ Աստուծոյ կեն-
դանի եւ յաւիտենական է խօսքովը:
24 Պատճառն որ՝ ամէն մարմին
խոտի պէս է, եւ մարդոյ ամէն

‡ Բ Օրին. Ժ. 17. Գործ. Ժ. 34. Հռովմ. Բ. 11.
+ Բ Կորնթ. Ե. 1. Փիլիպ. Բ. 12. Եբր. ԺԲ. 28.
• Բ Կորնթ. Ե. 6. Եբր. ԺԱ. 13. Գղ. Բ. 11.
‡ Ա Կորնթ. Զ. 20. Է. 23.
– Եզեկ. Ի. 18. Գղ. Դ. 3.
Բ Գործ. Ի. 28. Եփես. Ա. 7. Եբր. Թ. 12. 14. Յայտ. Ե. 9.
‡ Ելից. ԺԲ. 5. Եսայ. ՆԳ. 7. Յովհ. Ա. 29. 36. Ա Կորնթ. Ե. 7.
‡ Հռովմ. Գ. 25. ԺԶ. 25. 26. Եփես. Գ. 9. 11. Կող. Ա. 26. Բ Տիմ. Ա. 9, 10. Տիտ. Ա. 2. 3. Յայտ. ԺԳ. 8.
Է Գաղ. Դ. 4. Եփես. Ա. 10. Եբր. Ա. 2. Թ. 26.
Ը Գործ. Բ. 24.
Է Մատթ. ԻԸ. 18. Գործ. Բ. 33. Գ. 13. Եփես. Ա. 20. Փիլիպ. Բ. 9. Եբր. Բ. 9. Գղ. Գ. 22.
Ը Գործ. ԺԵ. 9.
Բ Հռովմ. ԺԲ. 9, 10. Ա Թես. Դ. 9. Ա Տիմ. Ա. 5. Եբր. ԺԳ. 1. Գղ. Բ. 17. Գ. 8. Գ. 8. Բ Պետ. Ա. 7. Ա Յովհ. Գ. 18. Գ. 7. 21.
Է Յովհ. Ա. 13. Գ. 5. Ա Յովհ. Գ. 9.
‡ Յակ. Ա. 18.

մարդոյ իբրեւ զծաղիկ խոտոյ. խոտն ցամաքեցաւ՝ եւ ծաղիկն թօթափեցաւ։

25 Եւ բան Տեառն մնայ յաւիտեան. այսինքն է բանն, որ 'ի ձեզ աւետարանեցաւ։

փառքը խոտի ծաղկին նման. խոտը ցամաքեցաւ՝ եւ ծաղիկը ւ թափվեցաւ։

25 Բայց Տէրին խօսքը մնումէ ծ յաւիտեան. որ այն խօսքն է, որ ձեզ խ աւետարանվեցաւ։

## ԳԼ. Բ

1 'Ի բաց թօթափեալ այսուհետեւ զամենայն չարութիւն՝ եւ զամենայն նենգութիւն եւ զկեղծաւորութիւնս եւ զնախանձ, եւ զամենայն չարախօսութիւն։

2 Իբրեւ զարդի ծնեալ մանկունս խօսունս. եւ անխարդախ կաթինն փափագիջէք. զի նովաւ աճիցէք 'ի փրկութիւն։

3 Եթէ ճաշակիցէք՝ զի քաղցր է Տէր։

4 Առ որ մատուցեալ 'ի Վէմն կենդանի, որ թէպէտ 'ի մարդկանէ անարգեալ. այլ առ 'ի յԱստուծոյ ընտրեալ եւ պատուական է։

5 Եւ դուք իբրեւ զվէմս կենդանիս շինիք տաճար հոգեւոր. յանարատ քահանայութիւն մատուցանել զհոգեւորն պատարագս՝ հաճոյս Աստուծոյ, 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի։

6 Քանզի կայ խոկ 'ի գրի, թէ Ահաւասիկ դնեմ 'ի Սիոն վէմ ընտիր՝ գլուխ անկեան պատուական, եւ որ 'ի նա հաւատասցէ՝ մի ամաչեսցէ։

7 Ձեզ այսուհետեւ հաւատացե-

1 Ձգեցէք ամէն չարութիւնը եւ ամէն խաբէութիւնը, եւ կեղծաւորութիւնը, եւ նախանձը, եւ ամէն ա չարախօսութիւնը,

2 Եւ նոր ծնած երեխաների բ պէս, ցանկացէք այն բանաւոր եւ մաքուր կաթին՝ որ նորանով աճէք դէպի գ փրկութիւնը։

3 Թէ որ համը առել էք՝ որ Տէրը քաղցր դ է.

4 Որ նորան մօտեցել էք իբրեւ կենդանի Քարին, որ թէ եւ մարդկանցից անարգված, բայց Աստուծոյ մօտ ընտրված եւ պատուական ե է։

5 Դուք էլ կենդանի քարերի պէս զ շինվումէք հոգեւոր է տաճար, անարատ ը քահանայութիւն՝ որ հոգեւոր պատարագ թ մատուցանէք Աստուծոյ ընդունելի՝ Յիսուսի Քրիստոսի ժ ձեռովը.

6 Պատճառն որ խոկ գրքին մէջ էլ կայ, թէ Ահա Սիոնումն՝ անկիւնի գլուխ ընտիր պատուական քար եմ դնում, եւ ով որ նորան հաւատայ՝ ի չի ամաչիլ։

7 Ուրեմն ձեզ հաւատացեալնե-

ւ Սաղ. ՃԳ. 15. Եսայ. Խ. 6. ԾԱ. 12. Յակ. Ա. 10.
ծ Սաղ. ՃԲ. 12. 26. Եսայ. Խ. 8. Ղուկ. ԺԶ. 17.
խ Յովհ. Ա. 1. 14. Ա Յովհ. Ա. 1. 3.
—
ա Եփես. Դ. 22. 25. 31. Կող. Գ. 8. Եբր. ԺԲ. 1. Յակ. Ա. 21. Ե. 9. Գղ. Դ. 2.
բ Մատթ. ԺԸ. 3. Մարկ. Ժ. 15. Հռովմ. Զ. 4. Ա Կորնթ. ԺԴ. 20. Գղ. Ա. 23.
գ Ա Կորնթ. Գ. 2. Եբր. Ե. 12. 13.
դ Սաղ. ԼԳ. 8. Եբր. Զ. 5.
ե Սաղ. ՃԺԸ. 22. Մատթ. ԻԱ. 42. Գործ. Դ. 11.
զ Եփես. Բ. 21. 22.
է Եբր. Գ. 6.
ը Եսայ. ԿԱ. 6 ԿԶ. 21. Հռոմ. 9.
թ Ովս. ԺԴ. 2. Մաղ. Ա. 11. Հռովմ. ԺԲ. 1. Եբր. ԺԳ. 15, 16.
ժ Փիլիպ. Դ. 18. Գղ. Դ. 11.
ի Եսայ. ԻԸ. 16. Հռովմ. Թ. 33.

լոյց է մեզ պատուական . իսկ անհաւատից , վէմ զոր անարգեցին շինողքն , նա եղեւ գլուխ անկեան :

8 Եւ վէմ գլորման եւ վէմ գայթակղութեան , որ գայթակղին ապստամբեալք 'ի բանէն՝ յոր եւ եդանն :

9 Այլ դուք ազգ էք ընտիր , թագաւորութիւն , քահանայութիւն . ազգ սուրբ , ժողովուրդ սեպհական . որպէս զի զձեր առաքինութիւնս նուիրիցէք այնմ , որ զձեզ 'ի խաւարէն կոչեաց յիւր սքանչելի լոյսն :

10 Որք երբեմն չժողովուրդ՝ բայց արդ ժողովուրդ Աստուծոյ . որք չողորմեալք՝ այժմ ողորմութիւն գտիք :

11 Սիրելիք՝ աղաչեմ , իբրեւ զպանդուխտս եւ զնժդեհս 'ի բաց մերժել 'ի մարմնաւոր ցանկութեանցն , որ զինուորին ընդդէմ ոգւոց

12 Զվարս ձեր 'ի մէջ հեթանոսաց պարկեշտս ցուցանել . զի որով բամբասեսցեն զձեզ իբրեւ զչարագործս , 'ի բարւոք գործոցն ձերոց զիտեալ՝ փառաւոր առնիցեն զԱստուած յաւուրն այցելութեան :

13 Հնազանդ լերուք ամենայն մարդկեղէն ստեղծուածոյ վասն Տեառն . եթէ թագաւորի՝ իբրեւ առաւել ումեք .

րիդ պատուական քար է . բայց անհաւատներուն այն քարն որ շինողներն անարգեցին , նա անկիւնի գլուխ ւ եղաւ .

8 Եւ գլորելոյ քար , եւ գայթակղելոյ ե քար , որ խօսքին ապստամբվածները ծ գայթակղվումն . որ իսկ նորահամար դրված կ էին :

9 Բայց դուք ընտիր ազգ հ էք , թագաւորութիւն , ձ քահանայութիւն , սուրբ ղ ազգ , սեպհական ճ ժողովուրդ . որ ձեր առաքինութիւններն ընծայէք նորան , որ ձեզ խաւարից կանչեց դէպի իրեն զարմանալի մ լոյսը :

10 Որ դուք ժամանակով ժողովուրդ չէիք . բայց հիմիկ Աստուծոյ ժողովուրդ . որ ողորմված չէիք , բայց հիմիկ ողորմութիւն յ գտիք :

11 Սիրելիներ՝ աղաչումեմ ձեզ , ինչպէս պանդուխտներ եւ ն օտարականներ հեռու փախէք մարմնաւոր շ ցանկութիւններից , որ հոգիների դէմ են ո կռվում :

12 Ձեր վարքը հեթանոսներին մէջ պարկեշտ ցոյց տուէք , որ այն բանին որ ձեզ չարագործի պէս չ բամբասումն , ձեր բարի գործքերը տեսնելով՝ փառաւորեն պ Աստուծոյն քննութեան ջ օրումը :

13 Հնազանդ էլէք ամէն մարդկային կարգին , Տէրոջն համար . թէ թագաւորին՝ ինչպէս թէ մէն աւելի ռ մեծաւորին .

ւ Սաղ . ՃԺԷ . 22 .
Մատթ . ԻԱ . 42 .
Գործ . Դ . 11 .
ե Եսայ . Է . 14 .
Ղու . Բ . 34
Հռովմ . Թ . 33 ,
ծ Ա Կորնթ . Ա . 23 .
կ Ելից . Թ . 16 .
Հռովմ . Թ . 22 .
Ա Թես . Ե . 9 .
Յուդ . 4 .
հ Բ Օրին . Ժ . 15 .
Գղ . Ա . 2 .

ձ Ելից . ԺԹ . 5 , 6 .
Յայտ . Ա . 6 . Ե .
10 .
ղ Յովհ . ԺԷ . 19 .
Ա Կորնթ . Գ . 17 .
Բ Տիմ . Ա . 9 .
ճ Բ Օրին . Դ . 20
Է . 6 . ԺԴ . 2 .
ԻԶ . 18 . 19 .
Գործ . Ի . 28 .
Եփես . Ա . 14 .
Տիտ . Բ . 14 .
մ Գործ . ԻԶ . 18 .

Եփես . Ե . 8 .
Կող . Ա . 13 . Ա
Թես . Ե . 4 . 5 .
յ Ովս . Ա . 9 . 10 .
Բ . 23 . Հռովմ .
Թ . 25 .
ն Ա Մնաց . ԻԹ . 15 .
Սաղ . ԼԹ . 12 .
ՃԺԹ . 19 . Եբր .
ԺԱ . 13 . Գղ . Ա .
17 .
շ Հռովմ . ԺԳ . 14 .
Գաղ . Ե . 16 .

ո Յակ . Դ . 1 .
չ Հռովմ . ԺԲ . 17 .
Բ Կորնթ . Ը . 21 .
Փիլիպ . Բ . 15 .
Տիտ . Բ . 8 . Գղ .
Գ . 16 .
պ Մատթ . Ե . 16 .
ջ Ղու . ԺԹ . 44 .
ռ Մատթ . ԻԲ . 21 .
Հռովմ . ԺԳ . 1 .
Տիտ . Գ . 1 .

14 Եթէ դատաւորաց՝ իբրեւ ՚ի նմանէ առաքելոց ՚ի վրէժխնդրութիւն չարագործաց՝ եւ ՚ի գովութիւն բարեգործացն ։

15 Զի այսպէս են կամք Աստուծոյ . բարեգործացն պապանձեցուցանել զանգգամ մարդոյ զանգիտութիւն ։

16 Իբրեւ զազատս լինել՝ եւ մի իբրեւ պատրուակ չարութեան ունել զազատութիւն . այլ իբրեւ Աստուծոյ ծառայք ։

17 Զամենեսեան պատուեցէք . զեղբայրսիրութիւն սիրեցէք . յԱստուծոյ երկերուք . զթագաւորս պատուեցէք ։

18 Ծառայք հնազանդ լինել յամենայնի երկիւղիւ տերանց , ոչ միայն բարերարացն եւ հեզոց , այլ եւ կամակորացն ։

19 Զի այս շնորհք յԱստուծոյ են , եթէ բարւոք ինչ մտօք տանիցի ոք վշտաց յանիրաւի ։

20 Քանզի զի՞նչ երախտիք իցեն , եթէ յորժամ մեղանչիցէք՝ տանջիցիք, եւ համբերիցէք . այլ թէ բարիս գործիցէք՝ չարչարիցիք՝ եւ համբերիցէք , այն շնորհք յԱստուծոյ են ։

21 Քանզի ՚ի դոյն իսկ կոչեցարուք . զի եւ Քրիստոս վասն ձեր մեռաւ , եւ ձեզ եթող օրինակ՝ զի զհետ երթայցէք հետոց նորա .

22 Որ ո՛չ արար մեղս , եւ ոչ գտաւ նենգութիւն ՚ի բերան նորա .

14 Թէ դատաւորներին՝ ինչպէս նորանից ուղարկուածներին չարագործները ա պատժելու՝ եւ բարեգործներին գովելու բ համար .

15 Պատճառն որ Աստուծոյ կամքն այսպէս է , որ բարի գործքերով պապանձացնէք անխելք մարդկանց գ տգիտութիւնն .

16 Որ ազատի պէս լինիք , եւ չէ թէ որ ազատութիւնն ինչպէս չարութեան ծածկոց դ ունենաք . բայց ինչպէս Աստուծոյ ե ծառաներ ։

17 Ամէնին զ պատուեցէք . եղբայրսիրութիւնը է սիրեցէք . Աստուածանից վախեցէք . թագաւորներին ը պատուեցէք ։

18 Ծառաները հնազանդ լինին տէրերին ամէն վախով . չէ թէ միայն նորանց որ բարերար եւ հեզահոգի են , բայց նորանց էլ որ հաստատագլուխ թ են ։

19 Ինչու որ սա էլ ճշմարիտ շնորհք է Աստուածանից՝ թէ որ մինը բարի խղճմտանքով նեղութիւններին համբերէ անիրաւ ժ տեղը ։

20 Պատճառն որ՝ ինչ բարի բան է , թէ երբոր մեղանչէք՝ տանջվիք , եւ համբերէք . բայց թէ որ բարիք գործէք՝ չարչարվիք եւ համբերէք , նա շնորհք է ի Աստուածանից ։

21 Ինչու որ դուք խոկ այդ բանիս մէջ լ կանչվեցաք . պատճառն որ Քրիստոս էլ ձեզ համար խ մեռաւ , եւ ձեզ օրինակ թողեց՝ որ նորա գնացքին ետեւէն ծ գնաք .

22 Որ մեղք չը գործեց , եւ խաբէութիւն չը գտաւ նորա կ բերանումն .

ա Հռովմ . ԺԳ . 4 ։
բ Հռովմ . ԺԳ . 3 ։
գ Տիտ . Բ . 8 ։ Համար . 12 ։
դ Գաղ . Ե . 13 ։
ե Ա Կորնթ . Է . 22 ։
զ Հռովմ . ԺԲ . 10 ։ Փիլիպ . Բ . 3 ։
է Եբր . ԺԳ . 1 ։ Գղ . Ա . 22 ։
ը Առակ . ԻԴ . 21 ։ Մատթ . ԻԲ . 21 ։ Հռովմ . ԺԳ . 7 ։
թ Եփես . Զ . 5 ։ Կող . Գ . 22 ։ Ա Տիմ . Զ . 1 ։ Տիտ . Բ . 9 ։
ժ Մատթ . Ե . 10 ։ Գղ . Գ . 14 ։
ի Գղ . Գ . 11 ։ Գ . 14 , 15 ։
լ Մատթ . ԺԶ . 24 Գործ . ԺԴ 21 Ա Թես . Գ . 3 Բ Տիմ . Գ . 12 ։
խ Գղ . Գ . 18 ։
ծ Յովհ . ԺԳ 15 Փիլիպ . Բ . 5 ։ Ա Յովհ . Բ . 6 ։
կ Եսայ . ԾԳ . 9 ։ Ղուկ . ԻԳ . 41 ։ Յովհ . Ը . 46 ։ Բ Կորնթ . Ե . 21 ։ Եբր . Դ . 15 ։

23 Որ բամբասեալ՝ եւ ոչ փոխարէն բամբասէր · չարչարեալ՝ եւ ոչ սպառնէր սպառնալիս · բայց իրաւամբք մատնէր դատաւորին ·

24 Որ զմեր մեղս իւրով մարմնովն վերացոյց 'ի խաչափայտն · զի լիցուք զերծեալք 'ի մեղաց անտի, եւ կեցցուք արդարութեամբն կենակիցք · որոյ վիրօքն բժշկեցարուք ·

25 Քանզի էիք իբրեւ զոչխարս մոլորեալս · այլ այժմ դարձարուք առ Հովիւն եւ Տեսուչ ոգւոց ձերոց ·

23 Որ բամբասվելումէջ ինքն նորա տեղ չէր բամբասում · չարչարվելումէջ՝ եւ ոխ չէր սպառնում, բայց իրաւունքով դատողի ձեռքն էր յանձնում ·

24 Որ մեր մեղքերն իրեն մարմնովը խաչափայտին վերայ է բարձրացրուց · որ այն մեղքերիցն ազատվինք, եւ նորա արդարութեան համար կենդանի Ը լինինք, որ նորա խայերովը ÷ բժշկվեցանք ·

25 Պատճառն որ՝ մոլորված ոչխարների պէս Ե էիք · բայց հիմիկ դարձաք դէպի Հովիւը եւ ձեր հոգիների Հոգս քաշողը ·

## ԳԼ · Գ

1 Սոյնպէս եւ կանայք հնազանդ լինել արանց իւրեանց · զի եթէ իցեն նոքա ապստամբք 'ի բանէ անտի յաղագս կանանց գնացից, եւ առանց բանին խօսի շահեսցին,

2 Գիտել երկիւղիւ զձեր՝ պարկեշտ գնացս ·

3 Որոց լիցի ոչ արտաքուստ հիւսիւք եւ ոսկեհուռ ծամակալօք՝ կամ պաճուճեալ զգեստուք զարդ ·

4 Այլ ծածուկ սրտին մարդն · անեղծութեամբ հեզութեան՝ եւ հանդարտութեան հոգւոյն, որ է առաջի Աստուծոյ բազմապատիկ ·

5 Քանզի այսպէս երբեմն եւ կանայք՝ որ յուսացեալ էին յԱստուած՝ զարդարէին զանձինս հնազանդել իւրեանց արանց ·

1 Այսպէս էլ կանայքը հնազանդ լինին իրենց –մարդկանցը · որ եթէ նորանք ապստամբված լինին խօսքիցը, կանանց վարվելովը՝ եւ առանց խօսքի Ե էլ ÷ շահվին,

2 Ձեր պարկեշտ երկիւղածութեամբ վարվելը տեսնելով ·

3 Որ նորանց զարդարանքը չը լինի դրսեւանց՝ ծամերի հիւսվածքներով, եւ ոսկով զարդարված ծամակալներով, կամ գեղեցիկ Ի շորերով ·

4 Բայց սրտի ծածկված մարդը՝ հեզ եւ հանդարտ հոգոյ անապականութենովը, որ Աստուծոյ առաջին շատ պատուական է ·

5 Ինչու որ այնպէս էլ հին ժամանակով կանայքն՝ որ իրենց յոյսն Աստուծոյ վերայ էին դրել՝ զարդարումէին իրենց անձներն՝ իրենց մարդկանց հնազանդ լինելով ·

ւ Եսայ · ԾԳ · 7 · Մատթ · ԻԷ · 39 · Յովհ · Ը · 48 · 49 · Եբր · ԺԲ · 3 ·
փ Ղուկ · ԻԳ · 46 ·
ք Եսայ · ԾԳ · 4 · 5 · 6 · 11 · Մատթ · Ը · 17 · Եբր · Թ · 28 ·
ֆ Հռովմ · Զ · 2 · 11 · Է · 6 ·
÷ Եսայ · ԾԳ · 5 ·
է Եսայ · ԾԳ · 6 · Եզեկ · ԼԴ · 6 ·
ւ Եզեկ · ԼԴ · 23 · ԼԷ · 24 · Յովհ · Ժ · 11 · 14 · 16 · Եբր · ԺԳ · 20 ·
Գղ · Ե · 4 ·

—

– Ա Կորնթ · ԺԴ · 34 · Եփես · Ե · 22 · Կող · Գ · 18 · Տիտ · Բ · 5 ·
Ե Ա Կորնթ · Է · 16 ·
÷ Մատթ · ԺԸ · 15 · Ա Կորնթ · Թ · 19–22 ·
փ Գղ · Բ · 12 ·
Ի Ա Տիմ · Բ · 9 · Տիտ · Բ · 3 ·
ւ Սաղ · ԽԵ · 13 · Հռովմ · Բ · 29 · Է · 22 · Բ Կորնթ · Դ · 16 ·

6 Որպէս եւ Սառայ՝ զի հնազանդ էր Աբրահամու. եւ Տէր իւր կոչէր զնա. որոյ եղերուք դուք որդիք. բարեգործք էիք, եւ ոչ կասկածէիք՝ եւ ոչ 'ի միոջէ ինչ երկիւղէ։

7 Սոյնպէս եւ արք իմաստութեամբ բնակեսցեն ընդ նոսա. իբրեւ տկար անօթոյ կանանցն պատիւ կալեալ՝ իբրեւ ժառանգակցաց շնորհացն կենաց. զի մի խափան լինիցին աղօթիցն ձերոց։

8 Եւ գլուխ ամենայնի, զի համամիտք իցէք՝ համակարիք, եղբայրասէրք, ողորմածութք, խոնարհք։

9 Մի՛ չար փոխանակ չարի հատուցանել, կամ բամբասանս ընդ բամբասանաց. այլ զորին հակառակն՝ օրհնել, զի յայս իսկ կոչեցարուք՝ զի զօրհնութիւն ժառանգիցէք։

10 Զի որ կամիցի զկեանս սիրել՝ եւ տեսանել զաւուրս բարութեան, լռեցուսցէ զլեզու իւր 'ի չարութենէ, եւ զշրթունս իւր 'ի չխօսելոյ զնենգութիւն։

11 Խոտորեսցի 'ի չարէ, եւ արասցէ զբարի. խնդրեսցէ զխաղաղութիւն, եւ երթիցէ զհետ նորա։

12 Զի աչք Տեառն 'ի վերայ արդարոց, եւ ականջք նորա յաղօթս նոցա. երեսք Տեառն 'ի վերայ չարագործաց։

13 Եւ ո՞ իցէ որ չարչարիցէ զձեզ,

6 Ինչպէս որ Սառան՝ էլ հնազանդ էր Աբրահամին, եւ իրեն տէր էր կոչում [ե] նորան. որ դուք նորա որդիքներ էք էլել. բարեգործ էիք, եւ կասկած չունէիք ոչ մին վախից էլ։

7 Այնպէս էլ մարդիկը թող իմաստութենով բնակվին նորանց հետ. ինչպէս տկար ամանի՝ կանանց պատիւ տան՝ եւ ինչպէս կենաց շնորհքի ժառանգ [զ] ընկերներին. որ ձեր աղօթքը [է] չը խափանվի։

8 Եւ վերջապէս՝ մին միտք [ը] ունենաք, մին կամք, եղբայրասէր ու լինիք, [թ] քաղցրասիրտ, խոնարհ։

9 Չը՛ լինի չարին տեղակ չար հատուցանէք, կամ բամբասանքի տեղ [ժ] բամբասանք. բայց նորա հակառակն՝ օրհնեցէք, ինչու որ գիտի այդ կանչվեցաք, որ օրհնութիւնը [ի] ժառանգէք։

10 Պատճառն որ՝ ով որ կամենում է կեանքը սիրել՝ եւ իրեն օրերը բարութեան մէջ [լ] տեսնել, թող իրեն լեզուն լաւ պահէ որ չար չը խօսի, եւ իրեն պռօշները՝ որ խաբեբայութիւն [խ] չը խօսին։

11 Չարիցն յետ քաշվի, եւ բարի անէ. խաղաղութեան ման գայ, եւ նորա ետեւէն [ծ] գնայ։

12 Ինչու որ Տէրի աչքերն արդարների վերայ են, եւ նորա ականջները դէպի նորանց [կ] աղօթքը. Տէրի երեսը չարագործներին վերայ է։

13 Եւ ով է նա՝ որ չարչարէ ձեզ,

ե Ծննդ. ԺԸ. 12։
զ Ա Կորնթ. Է. 3։ Եփես. Ե. 25։ Կող. Գ. 18։
է Ա Կորնթ. ԺԲ. 23։ Ա Թես. Դ. 4։
ը Յոբ. ԽԲ. 8։ Մատթ. Ե. 23. 24։ ԺԸ. 19։
թ Հռովմ. ԺԲ. 16։ ԺԵ. 5։ Փիլիպ. Գ. 16։
ժ Հռովմ. ԺԲ. 10։ Եբր. ԺԳ. 1։ Պետ. Բ. 17։
ի Կող. Գ. 12։ Եփես. Դ. 32։
լ Ղուկ. ԺԵ. 13։ Ի. 22։ Մատթ. Ե. 39։ Հռովմ. ԺԲ. 14. 17։ Ա Կորնթ. Դ. 12։ Ա Թես. Ե. 15։
խ Մատթ. ԻԵ. 34։
ծ Սաղ. ԼԴ. 12։
կ Յակ. Ա. 26։ Պետ. Բ. 1. 22։ Յայտ. ԺԴ. 5։
հ Սաղ. ԼԶ. 27, Եսայ. Ա. 16, 17։ Գ Յովհ. 11։
ձ Հռովմ. ԺԲ. 18։ ԺԴ. 19։ Եբր. ԺԲ. 14։
ղ Յովհ. Թ. 31։ Յակ. Ե. 16։

եթէ դուք բարւոյն նախանձաւորք
լինիցիք ։
14 Այլ թէ և չարչարիցիք վասն
յաղագս արդարութեան, երանելի
էք ․ բայց յերկիւղէ նոցա մի եր-
կնչիցիք և մի խռովեսջիք ։
15 Այլ զՏէր զնոյն զՔրիստոս՝
սուրբ արասջիք 'ի սիրտս ձեր, պատ-
րաստ լինել առ պատասխանի ա-
մենայնի որ խնդրիցէ զբանն ․ որ է
վասն յուսոյն ձերոյ ։
16 Այլ հեզութեամբ և երկիւղիւ-
ունիցիք բարս քաղցունս ․ զի որով
չարախօսիցեն զձէնջ՝ յամօթ լիցին՝
որք բամբասեն զձեր բարւոք գնա-
ցըս 'ի Քրիստոս ։

17 Զի լաւ է բարեգործաց, եթէ
կամիցին ըստ Աստուծոյ կամացն
չարչարիլ՝ քան չարագործացն ։

18 Զի և Քրիստոս միանգամ վա-
սըն մեղաց 'ի վերայ ձեր մեռաւ,
Արդարն 'ի վերայ անօրինաց ․ զի
զձեզ մերձեցուսցէ առ Աստուած ․
թէպէտ և մեռաւ մարմնով, այլ
կենդանի է հոգւով ։
19 Որով և ոգւոցն՝ որ էին 'ի
բանտին, երթեալ քարոզեաց ․

20 Երբեմն ապստամբելոյն, յոր-
ժամ ներէր նոցա Աստուծոյ եր-
կայնմտութիւնն յաւուրս Նոյի, յո-
րում տապանն կազմէր ․ յոր նուա-
զունք՝ այսինքն ոգիք իբրև ութ
ապրեցան 'ի ջրոյն ։

21 Որ և զձեզ ըստ նմին օրինա-

թէ որ դուք բարի անելոյն հետե-
ւող ։ ըլլաք ։
14 Բայց թէ չարչարուիք էլ ար-
դարութեան համար, երանելի՝ էք ․
միայն թէ նորանց ահ տալուցը մի
վախենաք և մի շփոթուիք ։
15 Բայց այն մին Տէր Քրիստոսին
ձեր սրտին մէջ սուրբ պահեցէք ․
պատրաստ եղէք պատասխան տալ
ամէնին որ համար է խնդրում՝
այն ձեր յուսոյ — կողմանէ ։
16 Միայն թէ խոնարհութենով և
վախով քաղցր վարք ունենաք ․
որ նորանով որ չար են խօսում
ձեզանից, ամօթով մնան նորանք՝
որ բամբասումեն ձեր բարի վար-
մունքը — Քրիստոսումը ։
17 Պատճառն որ՝ աւելի լաւ է՝ ե-
թէ Աստուծոյ կամքը կամենայ՝ բա-
րեգործութեան համար չարչարուիլ,
քանթէ չարագործութեան համար ։
18 Ինչու որ Քրիստոս էլ մինան-
գամ մեղաց համար ձեզ վերայ մե-
ռաւ, Արդարը անօրէններին ՚ վե-
րայ ․ որ ձեզ մօտեցնէ Աստուծոյն ․
որ թէ և — մարմնով — մեռաւ,
բայց հոգովը կենդանի Լէ ․
19 Որ նորանով գնաց այն հոգի-
ներին էլ — քարոզեց՝ որ բանտումն
ը էին ․
20 Որ նորանք ժամանակով ապս-
տամբած էին՝ երբոր Աստուծոյ
երկայնմտութիւնը համբերումէր Նո-
յանց Նոյի ։ օրերումը, երբոր տա-
պանը — պատրաստուումէր ․ որ նո-
րանով քիչ՝ այսինքն՝ ութ հոգի
ջրից ÷ պրծան ․
21 Որ ձեզ էլ այն օրինակին պէս

ջ Առակ․ ԺԶ․ 7
Հռովմ․ Ը․ 28 ։
ն Մատթ․ Ե․ 10․
11, 12 ։ Գղ․ Բ
19 ։ Դ․ 14 ։ Յակ․
Ա․ 12 ։
շ Եսայ Ը․ 12, 13
Երեմ․ Ա․ 8 ։
Յովհ․ ԺԴ․ 1․
27 ։
— Սաղ․ ՃԺԹ․ 46
Գործ․ Դ․ 8․
Կող․ Դ․ 6 ։ Բ
Տիմ․ Բ․ 25 ։
ւ Եբր․ ԺԴ․ 18 ։
ղ Տիտ․ Բ․ 8 ։ Գղ․
Բ․ 12 ։
ջ Հռովմ․ Ե․ 6 ։
Եբր․ Թ․ 26 28 ։
Գղ Բ․ 21 ։ Դ 1 ։
— Կող․ Ա․ 21, 22 ։
— Բ Կորնթ․ ԺԳ․ 4 ։
ւ Հռովմ․ Ա․ 4 ։
Ը․ 11 ։
ր Գղ․ Ա․ 12 Դ 6 ։
ր Եսայ․ ԽԲ․ 7 ։
ԽԹ․ 9 ։ ԿԱ․ 1 ։
ց Ծննդ․ Զ․ 3․ 5․
13 ։
— Եբր․ ԺԱ․ 7 ։
÷ Ծննդ․ Է․ 7 ։ Ը․
18 ։ Բ Պետ․ Բ․
5 ։

կի կեցուցանէ մկրտութիւնն. ոչ ըզ մարմնոյ աղտն 'ի բաց ընկենլով՝ այլ զխորհուրդ մտացն հանդէպ առ Աստուած 'ի ձեռն յարութեանն Յիսուսի Քրիստոսի.

22 Որ է ընդ աջմէ Աստուծոյ երթեալ յերկինս, 'ի հնազանդել նմա հրեշտակաց և իշխանութեանց և զօրութեանց։

կազատէ + մկրտութիւնը. (չէ թէ մարմնոյ աղտն * ձգելով՝ բայց բարի խղճմտանաց հաստատութիւնը դէպի Աստուած). Յիսուսի Քրիստոսի ‡ յարութենովը։

22 Որ գնացեր է երկինքը, և Աստուծոյ աջ կողմն — է. հրեշտակներն ու իշխանութիւնները և զօրութիւնները հնազանդելով ‡ նորան։

## ԳԼ. Դ

1 Քրիստոսի չարչարելոյն մարմնով վասն մեր, և դուք 'ի նոյն միտս վառեցարուք. զի որ չարչարի մարմնով՝ դադարէ 'ի մեղաց։

2 Զի մի ևս ըստ մարդկան ցանկութեանց՝ այլ ըստ կամացն Աստուծոյ կեցցէ զայլ ևս ժամանակն։

3 Քանզի բաւական է անցեալ ժամանակն լինելոյ կամացն հեթանոսաց, որք գնային գիջութեամբք՝ ցանկութեամբք, գինեհարութեամբք՝ անառակութեամբք՝ արբեցութեամբք՝ անօրէն կռապաշտութեամբք։

4 Որով օտարացեալք՝ ոչ ընդ ձեզ վարին 'ի նոյն անկարգութեան զեղխութիւն, և հայհոյեն՝

5 Որ տացեն պատասխանի այնմ, որ 'ի պատրաստի ունի դատել ըզ կենդանիս և զմեռեալս։

1 Քրիստոս՝ որ մարմնով մեզ համար չարչարուեցաւ, դուք էլ այն մաքովը զինուեցէք — ձեզ. պատճառն որ՝ ով որ մարմնով չարչարուած է, մեղք անելուցը ‡ դադարած է.

2 Որ էլ ոչ թէ մարդկանց ցանկութիւններին ‡ պէս՝ բայց Աստուծոյ կամաց ÷ պէս ապրի իրեն մնացած ‡ ժամանակը։

3 Պատճառն որ բաւական է որ այն անցած շ ժամանակը հեթանոսաց կամքին պէս անցկացրիք, որ նորանք վարուեցին գիճութիւններով՝ ցանկութիւններով, գինովնալով՝ անառակութիւններով՝ հարբեցութիւններով՝ անօրէն ‡ կռապաշտութիւններով,

4 Որ նորա համար զարմանումն որ դուք չէք վարւում իրենց հետ այն անառակ կեանքի անկարգութեան մէջ, և շ հայհոյումն,

5 Որ նորանք պիտի պատասխան տան նորան՝ որ պատրաստուած է դատաստան անել կենդանիներին և ‡ մեռելներին.

+ Եփես. Ե. 26.
* Տիտ. Գ. 5.
‡ Գղ. Ա. 3.
— Սաղ. ՃԺ. 1. Հռովմ. Ը. 34. Եփես. Ա. 20. Կող. Գ. 1. Եբր. Ա. 3.
‡ Հռովմ. Ը. 38. Ա Կորնթ. ԺԵ. 24. Եփես. Ա. 21.

— Գղ. Գ. 18.
‡ Հռովմ. Զ. 2. 7. Գաղ. Ե. 24. Կող. Գ. 3. 5.
‡ Հռովմ. ԺԳ. 17. Գղ. Բ. 1.
÷ Եզէկ. Ա. 13. Հռովմ. Զ. 11 Բ Կորնթ. Ե. 15 Յակ. Ա. 18.
‡ Գղ. Ա. 14.
շ Եզեկ. ԽԳ. 6 ԽԵ. 9. Գործ. ԺԷ. 30.
‡ Եփես. Բ. 2. Գ. 17. Ա Թես. Գ. 5. Տիտ. Գ. 3. Գղ. Ա. 14.
շ Գործ. ԺԳ. 45. ԺԸ. 6. Գղ. Գ. 16.
‡ Գործ. Ժ. 42. ԺԷ. 31. Հռովմ. ԺԴ. 10. 12. Ա Կորնթ. ԺԵ. 51, 52. Բ Տիմ. Դ. 1. Յակ. Ե. 9.

6 Զի ՚ի այդ իսկ եւ մեռելոց
խոստացեալ է , զի դատեսցին ըստ
մարդկան մարմնով՝ եւ կենդանի
լինիցին ըստ Աստուծոյ հոգւով ։

7 Ամենեցուն վախճան մերձեալ
է . զգաստացարուք այսուհետեւ՝
եւ լերուք զուարթունք յաղօթս ։
8 Նախ քան զամենայն սէր անպա-
ունել ընդ միմեանս . զի սէր ծած-
կէ զբազմութիւն մեղաց ։

9 Օտարասէրք լինել ընդ միմեա-
նս առանց տրտնջելոյ ։
10 Իւրաքանչիւրոք որպէս եւ ըն-
կալաւ շնորհս ինչ՝ ՚ի միմեանս ըզ-
նոյն մատակարարել , իբրեւ զբար-
ւոք հազարապետս այնպէս շնոր-
հացն Աստուծոյ ։
11 Եթէ ոք խօսեսցի՝ իբրեւ զԱս-
տուծոյ պատգամս . եթէ ոք մա-
տակարարիցէ՝ իբրեւ ՚ի զօրութենէ՝
զոր շնորհէ Աստուած . զի յամե-
նայնի փառաւորեսցի Աստուած ՚ի
ձեռն Յիսուսի Քրիստոսի , որում
փառք եւ զօրութիւն յաւիտեանս
ամէն ։

12 Սիրելիք՝ մի օտարոտի համա-
րել զեռանդն ինչ որ ՚ի փորձու-
թիւն ձեզ լինիցի , որպէս թէ օ-
տար ինչ իրք ձեզ դիպիցին ։

13 Այլ իբրեւ հաղորդեալք Քրիս-
տոսի չարչարանացն՝ ուրախ լինի-

6 Որ պատճառաւ՝ մեռելներին էլ
խոստմունք տրուած է , որ մարդոց
կողմանէ մարմնով դատուին ,
բայց հոգով կենդանի լինին Աս-
տուծոյ [զ] կողմանէ ։
7 Ամէն բանի վերջը մօտեցել
[է] է . ուրեմն պարկեշտ կացէք՝ եւ
արթուն եղէք [ը] աղօթքով ։
8 Ամէնից առաջ՝ այնտա սէր ու-
նենաք իրար [թ] հետ . պատճառն որ
սէրը ծածկում է մեղաց [ժ] շատու-
թիւնը ։
9 Օտարասէր եղէք իրար [ի] հետ՝
առանց [լ] տրտնջելու ։
10 Ամէն մէկը ինչպէս որ մի շը-
նորհք է ընդունել՝ նա իրար հա-
ղորդեցէք , [խ] տուէք . ինչպէս Ա-
ստուծոյ կերպ կերպ [ծ] շնորհաց լաւ
[կ] տնտեսներ ։
11 Եթէ մէկը խօսի՝ թող խօսէ ինչ-
պէս Աստուծոյ [հ] հրաման . եթէ մի-
նըն ընծայէ՝ թող ընէ ինչպէս այն զօ-
րութենէն որ Աստուած է ; շնոր-
հում . որ ամէն բանի մէջ Աստ-
ուած փառաւորուի Յիսուս Քրիստո-
սի [ղ] ձեռքով . որ նորան է փառք
եւ զօրութիւն յաւիտեանս . [ճ] ա-
մէն ։
12 Սիրելիներ՝ օտար բան մի հա-
մարեք այն բորբոքած նեղութիւ-
նը՝ որ ձեզ փորձելու համար [մ] կը
լինի , իբր թէ մի օտար բան է
պատահում ձեզ ։
13 Բայց ուրախ [յ] եղէք ինչպէս
Քրիստոսի չարչարանացը մասնակից

զ Գլ. Գ. 19։
է Մատթ. ԻԴ. 13. 14։ Հռովմ. ԺԳ. 12։ Փիլիպ. Դ. 5։ Եբր. Ժ. 25։ Յակ. Ե. 8։ Բ Պետ. Գ. 9. 11։ Ա Յովհ. Բ. 18։
ը Մատթ. ԻԶ. 41։ Ղու. ԻԱ. 34։ Կող. Դ. 2։ Գլ. Ա. 13։ Ե. 8։
թ Եբր. ԺԳ. 1։ Կող. Գ. 14։
ժ Առակ. Ժ. 12։ Ա Կորնթ. ԺԳ. 7։ Յակ. Ե. 20։
ի Հռովմ. ԺԲ. 13։ Եբր. ԺԳ. 2։
լ Բ Կորնթ. Թ. 7։ Փիլիպ. Բ. 14։ Փիլեմ. 14։
խ Հռովմ. ԺԲ. 6։ Ա Կորնթ. Դ. 7։
ծ Ա Կորնթ. ԺԲ. 4։ Եփես. Դ. 11։
կ Մատթ. ԻԴ. 45։ ԻԵ. 14. 21։ Ղու. ԺԲ. 42։ Ա Կորնթ. Դ. 1. 2։ Տիտ. Ա. 7։
հ Երեմ. ԻԳ. 22։
ձ Հռովմ. ԺԲ. 6, 7, 8։ Ա Կորնթ. Գ. 10։
ղ Եփես. Ե. 20։ Գլ. Բ. 5։
ճ Ա Տիմ. Զ. 16։ Գլ. Ե. 11։ Յայտ. Ա. 6։
մ Ա Կորնթ. Գ. 13։ Գլ. Ա. 7։
յ Գործ. Ե. 41։ Յակ. Ա. 2։

ջիք, զի ՚ի յայտնութեան փառաց նորա ցնծացեալք խնդասջիք։

14 Իսկ եթէ նախատիցիք եւս վասն անուանն Քրիստոսի, երանելի էք. զի փառացն եւ զօրութեան անուանն է, եւ Աստուծոյ Հոգին ՚ի վերայ ձեր հանգուցեալ է։
15 Մի ոք ՚ի ձէնջ չարչարեսցի իբրեւ զսպանող, կամ իբրեւ զգող, կամ իբրեւ զչարագործ, կամ իբրեւ զօտարատեսուչ։

16 Ապա եթէ իբրեւ զքրիստոնեայ՝ մի ինչ ամաչեսցէ. այլ փառաւոր արասցէ զԱստուած անուամբս այսուիկ։
17 Զի ժամանակ է սկիզբն լինելոյ դատաստանին ՚ի տանէն Աստուծոյ. զի եթէ նախ ՚ի մէնջ, իսկ զինչ կատարած այնոցիկ իցէ՝ որ ոչ հաւանեցան Աստուծոյ աւետարանին։
18 Եւ եթէ արդարն հազիւ կեցցէ, իսկ ամպարիշտն եւ մեղաւորն ուր գտանիցի։
19 Որպէս զի որ չարչարիցին ըստ Աստուծոյ կամացն, հաւատարիմ Հաստչին աւանդեսցեն զիւրեանց ոգիս բարերարութեամբք։

ղէլանները, որ նորա փառքի յայտնութեան ժամանակումը ցնծալով ուրախանաք։
14 Ապա եթէ նախատուիք էլ Քրիստոսի անուանին համար, երանելի էք. պատճառն որ փառաց եւ զօրութեան անունն ու Աստուծոյ Հոգին հանգչում է ձեզ ‑վերայ։
15 Չը լինի որ ձեզանից մինը չարչարուի ինչպէս սպանող, կամ ինչպէս գող, կամ ինչպէս ‑չարագործ, կամ ինչպէս ուրիշի ապրանքի աչք է դնող.
16 Ապա եթէ ինչպէս քրիստոնեայ ‑‑‑‑՝ թող չամաչէ, բայց փառք տայ Աստուծոյն այս ‑անուանովը.
17 Ինչու որ ժամանակն է՝ ‑ դատաստան սկսի Աստուծոյ ‑ տանիցը. բայց թէ որ առաջ ‑ մեզանից, ապա ինչ պիտի լինի նորանց վերջն՝ որ Աստուծոյ աւետարանին ‑չը հաւանեցին։
18 Եւ թէ որ արդարը դժուար կապրի, ապա ամբարիշտն ու մեղաւորը որտեղ պիտի ‑ գտնուի։
19 Սրա համար նորանք՝ որ Աստուծոյ կամաց պէս չարչարւում են, թող հաւատարիմ Ստեղծողին պահ տան իրենց հոգիները բարեգործութիւններ ‑ անելով։

## ԳԼ. Ե

1 Զերիցունս այսուհետեւ աղաչեմ՝ իբրեւ երիցակից՝ եւ վկայ չարչարանացն Քրիստոսի, որ եւ հանդերձեալ փառացն յայտնելոց հաղորդ.

1 Ուրեմն երէցներին աղաչում՝ ինչպէս մին էրեցընկեր՝ եւ Քրիստոսի չարչարանքներին ‑վկայ. եւ էլ այն նոր գալու յայտնուելու փառքին ‑ մասնակից։

դ Հռովմ. Ը. 17. Բ Կորնթ. Ա. 7. Դ. 10. Փիլիպ. Գ. 10. Կող. Ա. 24. Բ Տիմ. Բ. 12. Գլ. Ե. 1. 10. Յայտ. Ա. 9.
է Գլ. Ա. 5. 6.
ը Մատթ. Ե. 11.
Բ Կորնթ. ԺԲ. 10. Յակ. Ա. 12. Գլ. Բ. 19. 20. Գ. 14.
թ Գլ. Բ. 20.
ժ Ա Թես. Դ. 11. Ա Տիմ. Ե. 13.
ի Գործ. Ե. 41.
լ Եսայ. Ժ. 12.
Երեմ. ԻԵ. 29. ԽԹ. 12. Եզեկ. Թ. 6. Մաղ. Գ. 5.
խ Ղուկ. ԻԳ. 31.
ծ Ղուկ. Ժ. 12. 14.
կ Առակ. ԺԱ. 31. Ղուկ. ԻԳ. 31.
հ Սաղ. ԼԱ. 5.
Ղուկ. ԻԴ. 46. Բ Տիմ. Ա. 12.

—

ա Ղուկ. ԻԴ. 48. Գործ. Ա. 8. 22. Ե. 32. Ժ. 39.
բ Հռովմ. Ը. 17. 18. Յայտ. Ա. 9.

2 Արածեցէք՝ որ ՚ի ձեզ հօտդ է Աստուծոյ. վերակացու լինել՝ մի՛ իբրեւ ակամայ՝ այլ կամաւ ըստ Աստուծոյ. մի՛ զօշաքաղութեամբ, այլ յօժարութեամբ.

3 Մի՛ իբրեւ տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին.

4 Զի յերեւել Հովուապետին՝ ընդունիջիք զանթառամ փառացն պսակ.

5 Սոյնպէս եւ երիտասարդք՝ հնազանդ լերուք ծերոց. ամենեքեան ընդ միմեանս զխոնարհութիւն ունիցիք. զի Աստուած ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց.

6 Խոնարհեցարուք ընդ հզօր ձեռամբն Աստուծոյ. զի զձեզ բարձրացուսցէ ՚ի ժամանակի.

7 Զամենայն հոգս ձեր ընկեցէք ՚ի նա, զի նա է՝ որ հոգայ վասն ձեր.

8 Արթո՛ւն լերուք՝ հսկեցէք, զի ոսոխն ձեր Սատանայ իբրեւ զառիւծ գոչէ, շրջի եւ խնդրէ՝ թէ զո՛ կլանիցէ.

9 Որում ՚ի դիմի հարկանիցիք հաստատունք հաւատովք. գիտասջիք զնոյն անցս չարչարանաց եղբայրութեան ձերոյ՝ յաշխարհի յանձինս կատարել.

10 Եւ Աստուած ամենայն շնոր-

2 Արածացրէք Աստուծոյ հօտն որ ձեզ մօտ ա է. որ վերակացու լինիք՝ ոչ թէ ակամայ, այլ յօժար կամքով՝ Աստուծոյ կամքին բ պէս, ոչ թէ պիղծ շահասիրութենով՝ այլ գ յօժարութենով.

3 Ո՛չ թէ ինչպէս թեմերին դ վրայ ե տիրապետելով՝ այլ հօտին օրինակ զ լինելով.

4 Որ երբոր Հովուապետը է երեւի, այն ը անթառամ փառաց պըսակն թ ընդունիք.

5 Այսպէս էլ դուք երիտասարդներ՝ հնազանդ էլէք ծերերին. ամէնքդ իրար հետ խոնարհութիւն ժ ունեցէք. պատճառն որ Աստուած ամբարտաւաններին հակառակ ի կայ, եւ խոնարհներին շնորհք է լ տալիս.

6 Խոնարհվեցէք Աստուծոյ հզօր ձեռքին տակ, որ ձեզ բարձրացնէ խ ժամանակներով.

7 Ձեր բոլոր հոգսը նորա վերայ ձգեցէք, ինչու որ՝ նա է որ հոգս է անում ձեզ ծ համար.

8 Արթո՛ւն էլէք՝ հսկում կ արէք. ինչու որ ձեր ոսոխ թշնամին՝ Սատանան առիւծի պէս գոռալով՝ ման է գալիս եւ պտրտում թէ որին կուլ տայ.

9 Որ հաւատքով հաստատուած՝ հակառակ կենաք ձ նորան. գիտացէք որ այդ չարչարանքները ձեր եղբայրներին էլ իրենց անձներումը քաշեցին այս աշխարհքիս ղ մէջ.

10 Եւ ամէն շնորհքի Աստուածը,

ա Յովհ. ԻԱ. 15, 16, 17. Գործ Ի. 28.
բ Ա Կորնթ. Թ. 17.
գ Ա Տիմ. Գ. 3, 8. Տիտ Ա. 7.
դ Սաղ. ԼԴ. 12. ՃԴ. 2.
ե Եզեկ. ԼԴ. 4. Մատթ. Ի. 25, 26. Բ Կորնթ Ա. 24.
զ Փիլիպ. Գ. 17. Բ Թես. Գ. 9. Ա Տիմ. Դ. 12. Տիտ. Բ. 7.
է Եբր. ԺԳ. 20.
ը Գլ. Ա. 4.
թ Ա Կորնթ. Թ. 25. Բ Տիմ. Դ. 8. Յակ. Ա. 12.
ժ Հռովմ. ԺԲ. 10. Եփես. Ե. 21. Փիլիպ. Բ. 3.
ի Յակ. Դ. 6.
լ Եսայ. ԾԷ. 15. ԿԶ. 2.
խ Յակ. Դ. 10.
ծ Սաղ. ԼԵ. 5. ԾԵ. 22. Մատթ. Զ. 25. Ղուկ. ԺԲ. 11, 22. Փիլիպ. Դ. 6. Եբր. ԺԳ. 5.
կ Ղուկ. ԻԱ. 34, 36. Ա Թես. Ե. 5, 6. Գլ. Դ. 7.
հ Յոբ. Ա. 7. Բ. 2. Ղուկ. ԻԲ. 31. Յայտ. ԺԲ. 12.
ձ Եփես. Զ. 11, 13. Յակ. Դ. 7.
ղ Գործ. ԺԴ. 21. Ա Թես. Գ. 3. Բ Տիմ. Գ. 12. Գլ. Բ. 21.

հաց՝ որ կոչեաց զձեզ՝ յիւր 'ի յաւիտենական փառսն Քրիստոսիւ Յիսուսիւ, որում փոքր մի եղերուք չարչարեալքդ, նա կազդուրեսցէ կարողացուսցէ, հաստատեսցէ ։

11 Նմա իշխանութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն ։

12 'Ի ձեռն Սիղուանոսի հաւատարիմ եղբօր, որպէս կարծեմ՝ փոքր 'ի շատէ գրեցի առ ձեզ մխիթարել. եւ 'ի վերայ սորին վկայել. զի եւ այս ճշմարիտ շնորհք Աստուծոյ են՝ յոր հաստատեալ կայցէք ։

13 Ողջոյն տայ ձեզ՝ որ 'ի Բաբելոն ընտրեալկից եկեղեցին է. եւ Մարկոս որդին իմ ։

14 Ողջոյն տաջիք միմեանց 'ի համբոյր սրբութեան. խաղաղութիւն ընդ ձեզ ամենեսին, որ էք 'ի Քրիստոս Յիսուս. ամէն ։

որ ձեզ կանչեց իրեն յաւիտենական փառքի մէջ Քրիստոսով ։ Յիսուսով, որ մէկ քիչ նորա չարչարանքին մասնակից » ըլլաք, նա ձեզ զօրացնէ, ու կարօղացնէ, հաստատուն » անէ ։

11 Նորան իշխանութիւն եւ փառք յաւիտեանս. [illegible] ։

12 Սիղուանոս հաւատարիմ եղբօր ձեռքովը՝ ինչպէս որ » կարծումեմ՝ փոքր 'ի շատէ գրեցի ձեզ, որ յորդորեմ եւ այս բանիս համար վկայութիւն կտամ՝ թէ աս է Աստուծոյ ճշմարիտ շնորհքը, որ դուք նորանում հաստատուած կանգնած » էք ։

13 Ողջոյն է տալիս ձեզ՝ ձեզ հետ ընտրուած եկեղեցին՝ որ Բաբիլոնումն է. եւ իմ որդի » Մարկոսը ։

14 Իրար ողջոյն տուէք սուրբ համբուրով. խաղաղութիւն ձեզ ամէնից հետ՝ որ Քրիստոս Յիսուսումն » էք. ամէն ։

# ԹՈՒՂԹ ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ

## ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ ԵՐԿՐՈՐԴ

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 ՇԻՄԵՈՎՆ Պետրոս՝ ծառայ եւ առաքեալ Յիսուսի Քրիստոսի, որոց համապատիւ մեզ հասէքդ հաւատոց յարդարութիւն Աստուծոյ մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի՝

2 Շնորհք ընդ ձեզ՝ եւ խաղաղութիւն բազմասցի գիտութեամբն Աստուծոյ՝ եւ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ ։

1 ՍԻՄՈՆ Պետրոս՝ Յիսուսի Քրիստոսի ծառայ եւ առաքեալ, ձեզ որ մեզ հետ հաւասար պատուական հաւատքին հասիք՝ մեր Աստուծոյ եւ Փրկիչ Յիսուսի Քրիստոսի » արդարութեամբը,

2 Շնորհք եւ խաղաղութիւն շատանայ ձեզ վերայ Աստուծոյ եւ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի » գիտութեամբը,

յ Ա Կորնթ. Ա. 9։ Ա Տիմ. Զ. 12։
ն Բ Կորնթ. Դ. 17։ Գղ. Ա. 6։
շ Յուդ. 24։
ո Բ Թես. Բ. 16։ Գ. 3։
չ Գղ. Դ. 11։
Յայտ. Ա. 6։
պ Բ Կորնթ. Ա. 19։
ջ Եբր. ԺԴ. 22։
ռ Գործ. Ի. 24։ Ա Կորնթ. ԺԵ. 1։ Բ Պետ. Ա. 12։
ս Գործ. ԺԲ. 12. 25։
վ Հռովմ. ԺԶ. 16։ Ա Կորնթ. ԺԶ. 20։ Բ Կորնթ. ԺԳ. 12։ Ա Թես. Ե. 26։
տ Եփես. Զ. 23։
—
ր Հռովմ. Ա. 12։ Բ Կորնթ. Դ. 13։ Եփես. Դ. 5։ Տիտ. Ա. 4։
ց Դան. Դ. 1։ Զ. 25։ Ա Պետ. Ա. 2։ Յուդ. 2։

3 Որպէս ամենայն ինչ մեզ՝ ի-
րոյ աստուածեղէն զօրութեանն առ
'ի կենաց եւ յաստուածպաշտութիւն
շնորհեալ . 'ի ձեռն գիտութեան այ-
նորիկ, որ կոչեացն զմեզ յիւր 'ի
փառս եւ 'ի վայելչութիւն ։
4 Որով մեծամեծքն եւ պատուա-
կան աւետիք պարգեւեալ են մեզ .
զի նովիմբ աստուածեղէն բնու-
թեանն լինիցիք հաղորդակիցք ,
փախուցեալք 'ի ցանկութեանց աշ-
խարհիս եւ յապականութեանց ։

5 Եւ աւելի այսմիկ զամենայն փոյթ
'ի մէջ առեալ՝ ձերովք հաւատովքն
մատակարարեսջիք զառաքինու-
թիւն , եւ առաքինութեամբն զգի-
տութիւն ,
6 Եւ գիտութեամբն զժուժկա-
լութիւն , եւ ժուժկալութեամբն
զհամբերութիւն , եւ համբերու-
թեամբն զաստուածպաշտութիւն ,
7 Եւ աստուածպաշտութեամբն
զեղբայրսիրութիւն , եւ եղբայրսի-
րութեամբն զսէր ։
8 Զայսոսիկ ձեր յանձին կալեալ՝
եւ 'ի սոյն յաճախեալ , ոչ դատար-
կս եւ անպտուղս զձեզ հաստատե-
ցէն 'ի Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի գիտութիւնն ։
9 Իսկ յոր ոչն իցեն սոքա մերձ ,
կոյր է եւ զաչացաւ . 'ի մոռացմունս
դարձուցեալ զսրբութիւն առաջնոց
իւրոյն յանցանաց ։
10 Վասն որոյ եղբարք՝ առաւել
փութասջիք՝ զի բարեաւն գործովք
հաստատուն զձեր կոչումն , եւ
զընտրութիւն պահիցէք . զայս արա-
րեալ՝ ոչ երբէք յանցանիցէք .

3 Ինչպէս որ նորա աստուածային
զօրութիւնը շնորհեց մեզ այն ամէն
բան՝ որ կեանքին եւ աստուածա-
պաշտութեան համար պէտք է . նորա
* գիտութեամբը , որ մեզ կանչեց
դէպի փառքն ու † վայելչութիւնը .
4 Որ նորանցով շատ մեծ եւ պա-
տուական աւետիքներ են տրված
է մեզ . որ նորանցով մասնակից լի-
նինք աստուածային ‡ բնութեանը՝
աշխարհքի ցանկութիւններից եւ
ապականութիւններից յետ § փախ-
չելով ։
5 Եւ հէնց սորա համար՝ ամէն ջանք
‖ արէք , որ ձեր հաւատքովը ընծա-
յէք առաքինութիւն , եւ առաքի-
նութեամբը գիտութիւն ,

6 Եւ գիտութեամբը ժուժկալու-
թիւն , եւ ժուժկալութեամբը համ-
բերութիւն , եւ համբերութեամբը
աստուածապաշտութիւն ,
7 Եւ աստուածապաշտութեամբը
եղբայրսիրութիւն , եւ եղբայրսի-
րութեամբը ¶ սէր ։
8 Եթէ այս բաները ձեր անձնե-
րումը պահէք՝ եւ միշտ սորանց
հետեւիք , որ դատարկ եւ անպը-
տուղ չինի թողել ձեզ մեր Տէր Յի-
սուսի Քրիստոսի ** գիտութեամբը ։
9 Բայց նա՝ որ այս բաները իրեն
հետ չունի , կոյր է եւ †† կարճա-
տես . եւ մոռացել է իրեն առաջին
մեղքերից ‡‡ սրբվիլը ։
10 Որահամար եղբարք՝ աւելի
ջանք արէք որ ձեր կոչումն ու
ընտրութիւնը հաստատ պահէք բա-
րի §§ գործքերով . պատճառն որ՝
այսպէս անելով ոչ մին ժամանակ
չէք ‖‖ մեղանչիլ ։

* Յովհ . ԺԷ . 3 .
† Ա Թես . Բ . 12 . Գ . 7 . Բ Թես . Բ . 13 . Բ Տիմ . Ա . 9 . Ա Պետ . Բ . 9 . Գ . 9 .
‡ Բ Կորնթ . Ե . 1 .
§ Բ Կորնթ . Գ . 18 . Եփես . Դ . 24 . Եբր . ԺԲ . 10 . Ա Յովհ . Գ . 2 .
‖ Գղ . Բ . 18 . 20 .
¶ Գղ . Գ . 18 .
** Գաղ . Զ . 10 . Ա Թես . Գ . 12 . Ե . 15 . Ա Յովհ . Դ . 21 .
†† Յովհ . ԺԵ . 2 . Տիտ . Գ . 14 .
‡‡ Ա Յովհ . Բ . 9 . 11 .
§§ Եփես . Ե . 26 . Եբր . Թ . 14 . Ա Յովհ . Ա . 7 .
‖‖ Ա Յովհ . Գ . 19 .
¶¶ Գղ . Գ . 17 .

11 Զի այսպէս առատապէս շնոր-
հեսցի ձեզ մուտ 'ի յաւիտենական
արքայութիւն Տեառն մերոյ եւ
Փրկչին Յիսուսի Քրիստոսի ։
12 Որով պատրաստեցից միշտ ձեզ
յիշեցուցանել վասն սոցին առաւել
եւս գիտակցացն եւ հաստատելոցն՝
եկեալ հասեալ ճշմարտութեանն ։
13 Քանզի իրաւունս համարիմ
մինչդեռ եմ 'ի մարմնի աստ՝ զար-
թուցանել զձեզ յիշատակօք ։

14 Գիտեմ թէ վաղվաղակի է ելա-
նելոյ մերկանալ յինէն մարմնոյս ․
որպէս եւ Տէր մեր Յիսուս Քրիս-
տոս եցոյց ինձ ։
15 Եւ փութամ ձեռամբ միշտ զձեզ
յորդորել ․ զի եւ յետ իմոյ ելանե-
լոյ յաշխարհէս՝ առնիցէք զյիշատա-
կս այսոցիկ ։
16 Քանզի ոչ եթէ պաճուճեալ
ինչ առասպելաց զհետ երթեալ ցու-
ցաք ձեզ զՏեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի զզօրութիւնն եւ զգա-
լուստն ․ այլ մերձն եղեալ ականա-
տեսք նորա մեծութեանն ։
17 Քանզի առեալ յԱստուծոյ եւ 'ի
Հօրէ զպատիւ եւ զփառս ․ եկեալ
յայնպիսի բարբառոյ՝ 'ի մեծ վա-
յելչութեանն փառաց անտի ․ եթէ
Դա է Որդի իմ սիրելի՝ ընդ որ ես
հաճեցայ ։
18 Եւ զայս բարբառ մեք իսկ
լուաք եկեալ յերկնից՝ որ ընդ նմա
իսկ էաք 'ի սուրբ լերինն ։

19 Եւ ունիմք հաստատագոյն եւ
զբանն մարգարէական ․ որում եթէ
անսայցէք՝ բարւոք առնէք ․ իբրեւ

11 Ինչու որ այսպէս առատութե-
նով կը տրուի ձեզ՝ որ մտնէք մեր
Տէր եւ Փրկիչ Յիսուսի Քրիստոսի
յաւիտենական արքայութիւնը ։
12 Ասոր համար միշտ պատրաստ եմ
որ ձեզ յիշեցնեմ ասոնց [ա] համար՝
թէեւ գիտէք եւ հաստատուած
էք՝ այս եղած [բ] ճշմարտութենումն ։
13 Պատճառն որ իրաւունք եմ
համարում, որ դեռ քանի որ մար-
մնոյս մէջ [գ] եմ՝ յիշեցնելով զարթ-
նացնեմ [դ] ձեզ ։
14 Գիտեմ որ շուտով պիտի
ինձմէնից հանեմ իմ [ե] մարմինս ․ ինչ-
պէս որ մեր Տէր Յիսուս Քրիստոսը
ցոյց տուաւ [զ] ինձ ։
15 Եւ ջանք եմ անում եւ փու-
թամ միշտ յորդորել ձեզ, որ իմ
աշխարհքից գնալս գալուցն ետեւ՝
այս բաներս յիշէք ։
16 Պատճառն որ՝ մենք ոչ թէ
[illegible] հնարած բաների հե-
տեւելով ցոյց տուինք ձեզ մեր Տէր
Յիսուսի Քրիստոսի զօրութիւնը եւ
[է] գալը ․ այլ իսկ մենք մերիններս աչ-
քով տեսանք նորա [ը] մեծութիւնը ,
17 Որ Աստուածմէնից եւ Հօրից
փառք եւ պատիւ առաւ , երբոր այն
մեծվայելչութեան փառքիցն այն-
պէսի ձայն եկաւ ․ թէ Դա է իմ
սիրելի Որդիս՝ որ [թ] զորան հաւանել
ել եմ ։
18 Եւ այս ձայնն՝ որ երկնքիցն ե-
կաւ՝ մենք մերիններս լսեցինք ․ որ
իսկ նորա հետ այն սուրբ սարումն
[ժ] էինք ։
19 Եւ մարգարէական շատ հաս-
տատ խօսքերն էլ ունինք ․ որ եթէ
սորանց մտիկ անէք՝ լաւ կանէք ․

[ա] Հռովմ. ԺԵ. 14, 15։ Փիլիպ. Գ. 1։ Գղ. Գ. 1։ Ա Յովհ. Բ. 21։ Յուդ. 5։
[բ] Ա Պետ. Ե. 12։ Գղ. Գ. 17։
[գ] Բ Կորնթ. Ե. 1. 4։
[դ] Գղ. Գ. 1։
[ե] Բ Օրին. Գ. 21, 22։ ԼԱ. 14։ Բ Տիմ. Դ. 6։
[զ] Յովհ. ԻԱ. 18, 19։
[է] Ա Կորնթ. Ա. 17. Բ. 1. 4։ Բ Կորնթ. Բ. 17։ Դ. 2։
[ը] Մատթ. ԺԷ. 1, 2։ Մարկ. Թ. 2։ Յովհ. Ա. 14։ Ա Յովհ. Ա. 1. Դ. 14։
[թ] Մատթ. Գ. 17։ ԺԷ. 5։ Մարկ. Ա. 11։ Թ. 6։ Ղուկ. Գ. 22։ Թ. 35։
[ժ] Ելից. Գ. 5։ Յեսու. Ե. 15։ Մատթ. ԺԷ. 6։

ճրագի՝ որ տայցէ լոյս ՚ի խաւարչային տեղւոջ, մինչեւ տիւն լուսաւորեսցէ, եւ արուսեակն ծագեսցէ, ՚ի սիրտս ձեր։

20 Բայց նախ զայս գիտակ լինիջիք զի ամենայն մարգարէութիւն իւրոց գրոց լուծումն ոչ ունի։

21 Քանզի ոչ եթէ ըստ կամաց մարդկան տուաւ մարգարէութիւն երբեք, այլ ՚ի Հոգւոյն Սրբոյ կրեալք՝ խօսեցան մարդիկ յԱստուծոյ։

ինչպէս մէկ ճրագի՝ որ լոյս տայ մութ տեղին ւ մէջ, մինչեւ որ ցերեկը լուսանայ, եւ արուսեակը ծագի ձեր ¬ սրտերումը։

20 Բայց առաջ ասոր պէտք է գիտնաք. որ ամէն մարգարէութիւն իրեն գրվածքի մեկնութիւնը Ղ չունի։

21 Պատճառն որ՝ ոչ թէ մարդկանց կամքերին պէս բնաւ մէկ ժամանակ տրվեցաւ — մարգարէութիւն, բայց Սուրբ Հոգւոյն շարժված՝ խօսեցին Աստուծոյ = մարդիկը։

## ԳԼ · Բ

1 Եղեն եւ սուտ մարգարէք ՚ի ժողովրդեանն՝ որպէս եւ այժմ ՚ի ձեզ լինիցին սուտ վարդապետք. որք սպրդեալ մուծանեն հերձուածս կորստեան, եւ զոր Տէրն գնեաց զնոսա ուրացեալ՝ ածեն ՚ի վերայ անձանց զարագահաս կորուստ։

2 Եւ բազումք անկեալ երթիցեն զհետ նոցա անառակութեանցն. վասն որոյ ճշմարտութեանն ճանապարհ հայհոյեսցի։

3 Եւ ագահութեամբ մտացածին բանիւք առնիցեն զձեզ վաճառանոցի, որոց դատաստանն ՚ի բնէ ոչ դատարկանայ, եւ կորուստն նոցա ոչ նիրհեսցէ։

4 Զի եթէ ՚ի հրեշտակսն յանցուցելոց Աստուած ոչ խնայեաց, այլ խաւարին կապանօք արկեալ ՚ի

1 Սուտ մարգարէք ալ կային այն ժողովրդին — մէջ, ինչպէս որ ձեր մէջն ալ պիտի սուտ վարդապետներ ըլլան. որ ներս սպրդած՝ կորստական հերձուածողութիւններ ‡ կը մտցնեն. † ուրանալովն այն Տէրն որ իրենց ÷ գնեց՝ ու իրենց վրայ շուտահաս կորուստ մը կը բերեն։

2 Եւ շատ մարդիկ կը հետեւին նորանց անառակութիւններին. որ նորա համար ճշմարտութեան ճանապարհը կը հայհոյուի։

3 Եւ ագահութենով իրենց մտաց հնարված ‡ խօսքերով ձեզ ÷ կը խաբեն. որ նորանց դատաստանին ոչ մէն ժամանակ դատարկ չի կենայ, եւ նորանց կորուստը զուր ⁑ չի հանիլ։

4 Ինչու որ եթէ Աստուած ‡ մեղանչող հրեշտակներին ÷ չը խնայեց, բայց խաւարի կապանքով

ւ Սաղ. ՃԺԹ. 105. Յովհ. Ե. 35.
¬ Յայտ. Բ. 28. ԻԲ. 16. Բ Կորնթ. Դ. 4. 6.
Ղ Հռովմ. ԺԲ 6.
— Բ Տիմ. Գ. 16. Ա Պետ. Ա. 11.
= Բ Թագ. ԻԳ. 2. Ղուկ. Ա. 70. Գործ. Ա. 16. Գ. 18.

—

— Բ Օրին. ԺԳ. 1.
‡ Մատթ. ԻԴ. 11. Գործ. Ի. 30. Ա Կորնթ. ԺԱ. 19. Ա Տիմ. Դ. 1. Բ Տիմ. Գ. 1 5. Ա Յովհ. Դ. 1. Յուդ. 18.
÷ Ա Կորնթ. Զ. 20. Գաղ. Գ. 13. Եփես. Ա. 7. Եբր. Թ. 29. Ա Պետ. Ա. 18. Յայտ. Ե. 9.
⁑ Յուդ. 4.
† Փիլիպ. Գ. 19.
ւ Հռովմ. ԺԶ. 18. Բ Կորնթ. ԺԲ 17. 18. Ա Տիմ. Զ. 5. Տիտ. Ա. 11.
‡ Բ Կորնթ. Բ. 17. Գղ. Ա. 16.
⁑ Բ Օրին. ԼԲ. 25. Յուդ. 4. 15.
‡ Յովհ. Ը. 44. Ա Յովհ. Գ. 8.
÷ Յոբ. Դ. 18. Յուդ. 6.

տարտարոսն՝ ետ պահել 'ի դատաս-
տան ։
5 Նա եւ ոչ 'ի սկզբանն աշխար-
հի խնայեաց . բայց զութերորդն
զՆոյ՝ զարդարութեանն քարոզ պա-
հեաց 'ի ջրհեղեղէ աշխարհի՝ ամ-
բարշտելոցն ածեալ ։

6 Եւ զքաղաքս Սոդոմացւոցն եւ
Գոմորացւոց դարձուցեալ յաճիւն՝
դատեցաւ , օրինակ տա յապա ամ-
բարշտելոցն կացուցանէր ։

7 Եւ զարդարն զՂովտ ձանձ-
րացեալ յանկարգ պղծութեանն գը-
նացից փրկեաց ։
8 Քանզի ականատես եւ ական-
ջալուր արդարն բնակեալ 'ի մէջ
նոցա , օր ըստ օրէ զհոգի սուրբ ո-
գին նոցա անօրէն գնացիւքն տան-
ջէր ։
9 Գիտէ Տէր զաստուածապաշտս
փրկել 'ի փորձութենէ , եւ զանի-
րաւս պահել 'ի տանջանս աւուրն
դատաստանի ։
10 Մանաւանդ՝ որ զհետ մարմնոյ
պղծալից ցանկութեանց իցեն եր-
թեալ . արհամարհողք տէրութեա-
նցն , ժպիրհք , յանդգունք , չզան-
գիտեն զփառս հայհոյել ։

11 Ուր հրեշտակք զօրութեամբ եւ
կարողութեամբ քան զնոսա մեծա-
մեծք՝ չածեն զնոքօք 'ի Տեառնէ
զհայհոյութեանն դատաստան ։

12 Այլ սոքա իբրեւ զանխօս անա-
սունս ըստ բնածին բարուցն յըմ-
բռնումն եւ յապականութիւն՝ որոց
չենն գիտակ , հայհոյեն յապակա-

ձգեց տարտարոսը՝ եւ պահել տուաւ
որ է դատուին ,
5 Եւ առաջին աշխարհքին էլ չը
խնայեց . բայց միայն Նոյին որ ու-
թերորդն [ը] էր՝ այն արդարութեան
քարոզչին պահեց աշխարհքի ջըր-
հեղեղիցն , որ ամբարիշտներին վե-
րայ [ժ] ածեց ,
6 Եւ Սոդոմացոց եւ Գոմորացոց
քաղաքները մոխիր դարձնելով՝ դա-
տաստան [ի] արաւ , որ յետոյ գալոց
եկող ամբարիշտներին օրինակ էր
[լ] դնում ,
7 Եւ փրկեց արդար Ղովտին՝ որ
անկարգ պղծութեան վարմունքնե-
րովը ձանձրացել [խ] էր .
8 Ինչու որ այն արդարը նրանց
մէջ բնակելով՝ որ աչքովը տեսաւ
եւ ականջովը լսեց , օրէցօր իրեն
սուրբ հոգին տանջումէր նրանց
անօրէն [ծ] գործքերովը ։
9 Տէրը գիտումէ աստուածա-
պաշտներին փրկել փորձանքից , եւ
անօրէններին պահել դէպի դատաս-
տանի օրն՝ որ [կ] տանջելին ։
10 Մանաւանդ նրանց՝ որ մար-
մնոյ պիղծ ցանկութիւնների ետե-
ւէն են [հ] գնացած . ու տէրութիւ-
նըն անարգումեն , անամօթներ ,
յանդուգներ , որ չեն վախում փառ-
քը [ձ] հայհոյել ։
11 Թէ եւ հրեշտակներն որ զօ-
րութենով եւ կարողութենով աւե-
լի մեծ են նրանցից , հայհոյանքի
դատաստանը չեն բերում նրանց
վերայ Տէրի [ղ] առաջին .
12 Այլ սորանք ինչպէս անխօս
անասուններ՝ որ իրենց բնութեան
պէս աւերվելոյ եւ ապականվելոյ
համար են ծնված , հայհոյումեն այն

է Ղու . Ը . 31 . Յայտ . Ի . 2 . 3 ։
ը Ծննդ . Է . 1 . 7 . 23 ։ Եբր . ԺԱ . 7 ։ Ա Պետ . Գ . 20 ։
թ Ա Պետ . Գ . 19 ։
ժ Գղ . Գ . 6 ։
ի Ծննդ . ԺԹ . 24 ։ Բ Օրին . ԻԹ . 23 ։ Յուդ . 7 ։
լ Թու . ԻԶ . 10 ։
խ Ծննդ . ԺԹ . 16 ։
ծ Սաղ . ՃԺԹ 139 . 158 ։ Եզեկ . Թ . 4 ։
կ Սաղ . ԼԴ . 17 . 19 ։ Ա Կորնթ . Ժ . 13 ։
հ Յուդ . 4 . 7 . 8 . 10 . 16 ։
ձ Յուդ . 8 ։
ղ Յուդ . 9 ։

նութեան իւրեանց , եւ ապակա-
նեսցին ,
13 Տանջեալք 'ի վարձուց անիրա-
ւութեան . որ ցանկութիւն զաւու-
րըն փափկութիւն համարին . բըծ-
կանք արատաւորք՝ փափկացեալք
'ի պատիրս իւրեանց . ընդ ձեզ խը-
րախճանակիցք ,

14 Աչս ունին համբուրս պոռնկաց՝
անդադարս 'ի մեղաց , պատրեն
զանձինս յողդողդս . որ ունին
սիրտ հարեալ ագահութեան , ան-
կունք անիծից .
15 Թողեալ զուղորդ ճանապարհն՝
մոլորեցան . գնեն երթեալ ճանա-
պարհին Բաղաամու Բէովրեան՝ ըզ
վարձս անիրաւութեան սիրեցին ,
16 Որ կշտամբանս իւրոյ անօրէն-
նութեանն առացաւ զէշն անխօսուն .
մարդկեղէն բարբառովն բարբա-
ռեալ՝ արգել զմարգարէին զանօրէ-
նութիւն ,
17 Այսոքիկ են աղբիւրք ան-
ջրդիք՝ եւ մէգք վարեալք 'ի մրրկէ .
որոց աղջամուղջք խաւարին յաւի-
տեան պահեալ կան :

18 Քանզի մեծաբանս ունայնաց
բարբառեալ պատրեն գիջութեամբք
ցանկութեամբք մարմնոյ զայնոսիկ՝
որ սակաւ մի փախուցեալ էին յայնցանէ՝ որ
'ի մոլորութեանն շրջին .

19 Նոցա ազատութիւն խոստա-
նան , եւ ինքեանք ապականութեանն
ծառայք են . զի որով ոք յաղթի-
ցի ոք , նորին եւ ծառայ է ,

20 Զի եթէ փախուցեալք 'ի պըղ-

բաներն որ չեն գիտում , եւ իրենց
ապականութեամբը կապականուին,
13 Անիրաւութեան վարձքովը
տանջված . որ նորանք ցանկու-
թիւն են համարում այս օրվան
փափկութիւնը . որ աղտութեան
հետեւօղ աղտոր , եւ իրենց խաբե-
բայութեամբ փափկացած են , եւ
ձեր հացկերութեան ընկեր են լի-
նում :
14 Պոռնիկների նման աչքեր ու-
նին , որ մեղքիցը չեն դադարիլ .
խաբումն թեթեւամիտների անձ-
ները . որ սրտեր ունին ագահութե-
նով բանդված՝ անէծքի որդիք .
15 Որ չիտակ ճանապարհը թողած՝
մոլորվեցան . Բէօրեան Բաղաամի
ճանապարհին հետեւելով՝ անիրա-
ւութեան վարձքը սիրեցին .
16 Որ իրեն անօրէնութեանը յան-
դիմանօղ առացաւ այն անխօս էշին .
որ մարդու ձայնովը խօսելով՝ ար-
գելեց այն մարգարէի անօրէնու-
թիւնը ,
17 Այսպէսիններն անջուր աղբիւր-
ներ են , եւ մրրիկ քամուց քշված
ամպեր . որ խաւարի թանձր մթու-
թիւնը նորանց համար պահված կայ
յաւիտեան .
18 Որ մեծ մեծ դատարկ բաներ
խօսելով՝ գիճութիւններով՝ մար-
մնոյ անառակ ցանկութիւններով
խաբումն նորանց , որ ճշմարտա-
պէս փախչումն նորանցից . որ
մոլորութեան մէջն են ման գա-
լիս ,
19 Նորանց ազատութիւն են խոս-
տանում , եւ իրենք ապականու-
թեան ծառաներ են . ինչու որ ինչ
բանով որ մէկը յաղթվի , նորան էլ
ծառայ է ,
20 Պատճառն որ՝ եթէ աշխարհքի

| | | | |
|---|---|---|---|
| չ Երեմ . ԺԲ . 3 . Յուդ . 10 . | է Ա Կորնթ . ԺԱ . 20 . 21 . | 11 . | մար . 20 . |
| ռ Փիլիպ . Գ . 19 . | ր Յուդ . 11 . | ձ Յուդ . 12 , 13 . | ջ Գաղ . Ե . 13 . Ա Պետ . Բ . 16 . |
| ւ Հռոմ . ԺԶ . 13 . | ց Թուոց . ԻԲ . 5 . 7 . 21 . 23 . 28 . Յուդ . | փ Յուդ . 16 . | ռ Յովհ . Ը . 34 . Հռոմ . Զ . 16 . |
| դ Յուդ . 12 . | | ք Գործ . Բ . 40 . Գղ . Ա . 4 . Հա- | |

ծանօթեանց աշխարհի գիտութեամբ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, եւ դարձեալ ընդ նոյնս շաղխեալք պարտիցին՝ եղեւ նոցա վախճանն չար քան զառաջինն:

21 Զի լաւ էր նոցա եթէ բնաւ իսկ չէր ծանուցեալ զարդարութեանն ճանապարհ. քանզի ծանեան՝ եւ յետս կացին 'ի սուրբ պատուիրանէն որ նոցա աւանդեցաւ:

22 Եկեալ 'ի դէպ նոցա ճշմարիտ առակին զրօսութեան, եթէ Շուն դառնայ անդրէն 'ի փսխած իւր, եւ խոզ լուացեալ՝ ընդ տիղմ թաւալեալ:

‡ պղծութիւններէն * փախած՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի գիտութենովը, եւ կրկին նորանում շաղախուած պարտուին, նորանց վերջը չար կը լինի քանթէ ◦ առաջինը:

21 Ինչու որ լաւ էր նորանց՝ որ բնաւ չը ճանաչէին արդարութեան ճանապարհը, քանթէ որ ճանաչեցին՝ եւ յետ քաշուեցան այն սուրբ պատուիրանքէն որ տրուաւ § նորանց,

22 Որ նորանց լաւ յարմար է գալիս խրատութեան այն ճշմարիտ առակը, թէ Շունն կրկին դառնումէ դէպի իրեն փսխածը, եւ լուացուած խոզը ցեխին մէջ — թաւալվումէ,

## ԳԼ. Գ

1 Զայս ձեզ սիրելիք՝ երկրորդ թուղթ գրեմ. որով զարթուցից 'ի յիշատակ զհաստատուն միտս ձեր.

2 Յիշել զյառաջագոյն ասացեալ պատգամս 'ի սրբոց մարգարէից եւ յառաքելոցն ձերոց, զպատուէրս Տեառն եւ Փրկչին:

3 Բայց զայս նախ գիտասջիք, զի յաւուրս յետինս եկեսցեն արհամարհօղք՝ այպանօղք, որ ըստ իւրեանց ցանկութեանց գնասցեն:

4 Եւ ասիցեն՝ Ո՞ւր են աւետիք գալստեան նորա. զի յորմէ հետէ հարքն ննջեցին՝ ամենայն ինչ նոյնպէս կայ միայն 'ի սկզբանէ արարածոց:

5 Եւ զայն մոռացեալ իցէ նոցա՝ որ զայսն կամին. եթէ երկինք եղեն 'ի սկզբանէ՝ եւ երկիր 'ի ջրոց,

1 Սիրելիներ՝ սա երկրորդ թուղթն է՝ որ գրումեմ ձեզ, որ սորանով ձեր հաստատ մտքները զարթնացնեմ յիշելոյ = համար.

2 Որ յիշէք այն խօսքերն ու առաջուց ասած են սուրբ մարգարէներից՝ եւ ձեր առաքեալներից՝ այն Տէրի եւ Փրկչի ⁑ պատուիրանքները:

3 Բայց առաջ՝ սա գիտացէք, որ յետին օրերումը՝ բանի տեղ չը դընող, ծաղրանօղ [illegible] ‡ կը գան, որ իրենց ցանկութեանց պէս ∓ կը վարուին,

4 Եւ կասեն՝ Ո՞ւր է նորա գալուաւետիքը. ինչու որ նրանից ետեւ որ հարքը վախճանուեցան՝ ամէն բան ճիշդ այնպէս կենումէ մնում աշխարհքի ստեղծագործութեան սկզբից ⊢ ետեւ:

5 Բայց նորանք՝ որ սա են ուզում՝ այն բանը մոռացել են, թէ երկինքն սկզբից էլաւ, եւ երկիրս

‡ Գլ. Ա. 4. Համոր. 18.
* Մատթ. ԺԲ. 45. Ղու. ԺԱ. 26. Եբր. Զ. 4. Ժ. 26, 27.
◦ Գլ. Ա. 2.
§ Ղու. ԺԲ. 47. 48. Յովհ. Թ. 41. ԺԵ. 22.
— Առակ. ԻԶ. 11.
= Գլ. Ա. 13.
⁑ Յուդ. 17.
‡ Ա Տիմ. Դ. 1. Յուդ. 18.
∓ Գլ. Բ. 10.
⊢ Եսայ. Ե. 19. Երեմ. ԺԷ. 15. Եզեկ. ԺԲ. 22. 27. Մատթ. ԻԴ. 48. Ղու. ԺԲ. 45.

եւ ջուրք հաստատեալ բանիւն Աս-
տուծոյ .
6 Վասն որոյ երբեմն աշխարհ
ջրհեղեղաւ ապականեալ կորեաւ ։
7 Եւ այժմ երկինք եւ երկիր նո-
վին բանիւ գանձեալ են . հրոյ
պահեալք յօրն դատաստանի՝ եւ
կորստեան ամբարշտաց մարդկան ։
8 Եւ այս եւս մի լիցի ՚ի ձէնջ
ծածկեալ՝ սիրելիք , զի մի օր Տեա-
ռն իբրեւ զհազար ամ է , եւ հա-
զար ամ իբրեւ զմի օր ։
9 Ո՛չ յամեցուցանէ Տէր զաւետի-
սն՝ որպէս ոմանք յամր համարին ,
այլ երկայնամիտ լինի առ ձեզ .
քանզի ո՛չ կամի՝ եթէ ոք կորիցէ ,
այլ զամենեցուն հասանել յապաշ-
խարութիւն ։
10 Այլ եկեսցէ օր Տեառն իբրեւ
զգող . յորում երկինք խաղնապատա-
ռանցցեն , եւ բնութիւնք հրով կի-
զեալ լուծցին , եւ երկիր՝ եւ որ ՚ի
նմա գործք գտանիցին ։
11 Եւ ՚ի լուծանել այսպէս այսր
ամենայնի , որպիսի ինչ պարտ իցէ
ձեզ գտանել . այլ սուրբ եւ աս-
տուածապաշտ կարգաւ ակնունել ,
12 Եւ փութալ հասանել գալըս-
տեան աւուրն Տեառն . յորում եր-
կինք հրայրեացք լուծանիցին , եւ
բնութիւնք հրդեհեալ հալիցին ։
13 Նորոյ երկնից՝ եւ նորոյ երկրի
ըստ աւետեացն հայցեալ սպասե-

ջրից , եւ ջրով շհաստատվեցաւ՝
Աստուծոյ ի խօսքովը .
6 Նրահամար այն հին աշխարհքը՝
մէն ժամանակ ջրհեղեղով ապական-
ված է կորաւ ։
7 Եւ հիմիկ երկինքը եւ երկիրս
խոկ այն խօսքովը կացած է ամբար-
ված են . կրակի համար պահված
մինչեւ դատաստանին օրը , եւ ամ-
բարիշտ մարդկանց ի կորուստը ։
8 Եւ սա էլ ձեզանից ծածուկ չը
լինի՝ սիրելիներ , թէ Տէրին ---ըն
մէն օր հազար տարոյ պէս է , եւ
հազար տարին ինչպէս մէն է օր ։
9 Տէրը չի ուշացնիլ աւետիքը՝
ինչպէս որ մինքանիսն ուշ են կար-
ծում , բայց երկայնամիտ է լինում
ձեզ ի վերայ . պատճառն որ չի կա-
մենում որ մէնը ի կորչի , այլ ամէն-
քին ապաշխարութեան ծ հասնին ։
10 Բայց Տէրին օրը գողի պէս հ կը
գայ . որ նորանում երկինքը սաս-
տիկ ձայնով կանցանէ , եւ տարերքը
կրակով վառված կը հալվին , եւ եր-
կիրն էլ եւ ամէն բաներն էլ՝ որ
նորանում ձ գտնվլին ։
11 Ուրեմն երբոր այս ամէնս այս-
պէս կը հալվի , ինչպէսի պէտք է
գտնվիք դուք՝ որ սուրբ եւ աս-
տուածապաշտ ղկարգով ճ սպա-
սէք ,
12 Եւ ջանք անէք հասնէք Տէրի
գալու օրին , որ նորանում երկինքը
կրակով այրված մ կը քանդվին . եւ
տարերքը կրակ ընկած յ կը հալվին ։
13 Բայց նորա խոստմունքին պէս ,
նոր երկնքի եւ նոր երկրի ենք սպ-

զ Սաղ. ԻԴ. 2. ՃԼԶ. 6. Կող. Ա. 17.
է Ծննդ. Ա. 6. 9. Սաղ. ԼԳ. 6. Եբր. ԺԱ. 3.
ը Ծննդ. Է. 11. 21. 22. 23. Գլ. Բ. 5.
թ Համար. 10.
ժ Մատթ. ԻԵ. 41. Բ Թես. Ա. 8.
ի Սաղ. Զ. 4.
լ Ամբ. Բ. 3. Եբր. Ժ. 37.
խ Եսայ. Լ. 18. Ա Պետ. Գ. 20. Համար. 15.
ծ Եզեկ. ԺԸ. 23. 32. ԼԳ. 11.
կ Հռովմ. Բ. 4.
հ Մատթ. ԻԴ. 43. Ղուկ. ԺԲ. 39. Ա Թես. Ե. 2. Յայտ. Գ. 3. ԺԶ. 15.
ձ Սաղ. ՃԲ. 26. Եսայ. ԾԱ. 6. Մատթ. ԻԴ. 35. Մարկ. ԺԳ. 31.
Եբր. Ա. 11. Յայտ. Ի. 11. ԻԱ. 1.
ղ Ա Պետ. Ա. 15.
ճ Ա Կորնթ. Ա. 7. Տիտ. Բ. 13.
մ Սաղ. Ծ. 3. Եսայ. ԼԴ. 4.
յ Միք. Ա. 4. Համար. 10.

ցեմք, յորս արդարութիւնն բնակէ։

14 Վասն որոյ սիրելիք՝ այսպիսի
ապասեալ, փոյթ յանձին ունիջիք՝
անբիծք եւ անարատք գտանել նմա
'ի խաղաղութիւն.

15 Եւ զՏեառն երկայնմտութիւ-
նըն՝ փրկութիւն համարիջիք. զոր
օրինակ եւ սիրելի եղբայրն մեր Պօ-
ղոս՝ ըստ շնորհելոյ իմաստութեանն
նմա յԱստուծոյ՝ գրեաց ձեզ։
16 Որպէս եւ յամենայն իսկ թղթ-
ոցն խօսի վասն այնոցիկ. յորս գը-
տանի ինչ ինչ դժուարիմաց, զոր
անուսմունքն եւ յողդողդքն կամա-
կորեն. որպէս եւ զամենայն իսկ
գիրս առ իւրեանց անձանցն կո-
րուստ։

17 Դուք այսուհետեւ սիրելիք՝ կը-
րեւ զկանխագիտս զգուշասջիք,
զի մի անօրէնաց մոլորութեամբն
զգածեալք՝ անկանիջիք յաստեաց
հաստատութեանն։
18 Աճեցէք շնորհօք եւ գիտու-
թեամբն Տեառն մերոյ եւ Փրկչին
Յիսուսի Քրիստոսի. նմա փառք՝ եւ
այժմ, եւ յօրն յաւիտենից. ամէն։

տնի ասլով սպասում. որ նրան-
ցում արդարութիւն է ՝ բնակվում։
14 Սրահամար սիրելիներ՝ սորանց
սպասելով ջանք արէք՝ որ առանց
պղծութեան եւ անարատ գտնը-
վիք նորա առաջին խաղաղութեան
ւ մէջ։
15 Եւ Տէրի երկայնամիտ լինելը
փրկութիւն համարեցէք. ինչպէս որ
մեր սիրելի եղբայր Պօղոսն էլ՝ այն
Աստուածանից իրեն տրված իմաս-
տութեան պէս՝ գրեց ձեզ։
16 Ինչպէս որ ամէն թղթերումն
էլ խօսում է այս բաներիս համար.
որ նրանցում մին քանի դժուար
հասկանալու բաներ կան. որ ուս-
մունք չը գիտցողներն ու թեթեւա-
միտները նրանց կամքով ծռումեն,
ինչպէս որ ամէն գրքերն էլ՝ իրենց
անձները կորցնելոյ համար։
17 Ուրեմն սիրելիներ՝ դուք բանը
հասկացողներին պէս զգոյշ կա-
ցէք. որ չը լինի թէ անօրէն մո-
լորութենով շաղաղված՝ վէր ընկնիք
այդ ձեր հաստատութենիցդ։
18 Աճեցէք մեր Տէր եւ Փրկիչ Յի-
սուսի Քրիստոսի շնորհքումն ու գի-
տութենովը. նորան լինի փառք հի-
միկ էլ՝ եւ մինչեւ յաւիտենական
օրն էլ. ամէն։

# ԹՈՒՂԹ ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ

## ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ ԱՌԱՋԻՆ

---

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 Որ էրն 'ի սկզբանէ. զորմէ
լուաքն՝ որում ականատեսն իսկ ե-
ղեաք. ընդ որ հայեցաքն, եւ

1 Նա որ սկզբից էր, որ նո-
րանից լսեցինք, որ նորան իսկ
մեր աչքերովս տեսանք. որ նորա

ըՃ Եսայ. ԿԵ. 17։ ԿԶ. 22։ Յայտ. ԻԱ. 1. 27։
ւ Ա Կորնթ. Ա. 8։ ԺԵ. 58։ Փիլիպ. Ա. 10։ Ա Թես. Գ. 13։ Ե. 23։

— Հռովմ. Բ. 4։ Ա Պետ. Գ. 20։ Համար. 9։
ւ Հռովմ. Ը. 19։ Ա Կորնթ. ԺԵ. 24։ Ա Թես. Գ. 14։

ղ Մարկ. ԺԳ. 23։ Գլ. Ա. 12։
Հ Եփես. Դ. 14։ Գլ. Ա. 10, 11։ Բ. 18։
— Եփես. Դ. 15։ Ա Պետ. Բ. 2։

— Բ Տիմ. Գ. 18։ Յայտ. Ա. 6։

—

— Յովհ. Ա. 1։ Գլ. Բ. 13։

ձեռք մեր շօշափեցին ՚ի վերայ բանին կենաց ։

2 Եւ կեանքն յայտնեցան, եւ տեսաք՝ եւ վկայեմք եւ պատմեմք ձեզ զյաւիտենականն կենացն, որ էր առ Հօր՝ եւ երեւեցաւ մեզ ։

3 Զոր տեսաքն եւ լուաք՝ պատմեմք եւ ձեզ, զի եւ դուք հաղորդութիւն ունիցիք ընդ մեզ ։ եւ մեր հաղորդութիւնն իցէ ընդ Հօր՝ եւ ընդ Որդւոյ նորուն Յիսուսի Քրիստոսի ։

4 Եւ զայս գրեմք ձեզ, զի ձեր ուրախութիւնն կատարեալ լիցի ։

5 Եւ այս են աւետիքն՝ զոր լուաք առ ՚ի նմանէ՝ եւ պատմեմք ձեզ ։ զի Աստուած լոյս է, եւ խաւար ՚ի նմա չիք եւ ոչ մի ։

6 Եթէ ասիցեմք՝ եթէ հաղորդութիւն ունիմք ընդ նմա՝ եւ ՚ի խաւարի շրջիցիմք, ստեմք՝ եւ ոչ առնեմք զճշմարտութիւնն ։

7 ՚Իսկ եթէ ընդ լոյս գնասցուք՝ որպէս եւ նա լոյս է, հաղորդութիւն ունիմք ընդ միմեանս ։ եւ արիւնն Յիսուսի Որդւոյ նորա սրբէ զմեզ յամենայն մեղաց ։

8 Եթէ ասիցեմք՝ եթէ Մեղս ինչ մեք ոչ ունիմք, զանձինս խաբեմք ։ եւ ճշմարտութիւն ՚ի մեզ ոչ գոյ ։

9 Ապա եթէ խոստովան լինիցիմք

վերայ մտիկ ե ըրինք, եւ մեր ձեռները դիպան կենաց բանին զ վերայ ։

2 (Եւ է կեանքը յայտնուեցաւ մեզ, եւ ը տեսանք, եւ թ վկայումենք, եւ պատմումենք ձեզ յաւիտենական կենաց ժ համար, որ Հօր մօտն էր՝ եւ երեւեցաւ ի մեզ ։)

3 Նա որ տեսինք եւ լսեցինք՝ պատմումենք ձեզ, որ դուք էլ հաղորդութիւն ունենաք մեզ լ հետ ։ եւ մեր հաղորդութիւնը լինի Հօր հետ՝ եւ նորա Որդի Յիսուսի Քրիստոսի խ հետ ։

4 Եւ սա գրումենք ձեզ, որ ձեր ուրախութիւնը կատարեալ ծ լինի ։

5 Եւ սա է այն աւետիքն՝ որ նորանից լսեցինք՝ եւ պատմումենք կ ձեզ ։ թէ Աստուած լոյս է, եւ բնաւ մին խաւար չը կայ հ նորանում ։

6 Եթէ ասենք՝ թէ Հաղորդութիւն ունինք նորա հետ, եւ խաւարի մէջ մանգանք, սուտ ենք ասում՝ եւ ճշմարտութիւնը չենք ձ անում ։

7 Բայց եթէ լուսոյ մէջ] մանգանք՝ ինչպէս որ նա լոյս է, — հաղորդութիւն ունինք իրար հետ ։ եւ նորա Որդւոյ Յիսուսի Քրիստոսի արիւնը մեզ սրբումէ ամէն ղ մեղքից ։

8 Եթէ ասենք թէ Մենք մեղք չունինք, մեր անձներս ենք ճ խաբում ։ եւ ճշմարտութիւն չը կայ մ մեզանում ։

9 Ապա եթէ մեր մեղքը խոստո-

ե Յովհ. Ա. 14. Բ Պետ. Ա. 16. Գլ. Դ. 14.
զ Ղուկ. ԻԴ. 39. Յովհ. Ի. 27.
է Յովհ. Ա. 4. ԺԱ. 25. ԺԴ. 6.
ը Հռովմ. ԺԶ. 26. Ա Տիմ. Գ. 16. Գլ. Գ. 5.
թ Յովհ. ԻԱ. 24. Գործ. Բ. 32.
ժ Գլ. Ե. 20.
ի Յովհ. Ա. 1, 2.
լ Գործ. Դ. 20.
խ Յովհ. ԺԷ. 21. Ա Կորնթ. Ա. 9. Գլ. Բ. 24.
ծ Յովհ. ԺԵ. 11. ԺԶ. 24. Բ Յովհ. 12.
կ Գլ. Գ. 11.
հ Յովհ. Ա. 9. Ը. 12. Թ. 5. ԺԲ. 35. 36.
ձ Բ Կորնթ. Զ. 14. Գլ. Բ. 4.
ղ Ա Կորնթ. Զ. 11. Եփես. Ա. 7. Եբր. Թ. 14. Ա Պետ. Ա. 19. Գլ. Բ. 2. Յայտ. Ա. 5.
ճ Գ Թագ. Ը. 46. Բ Մնաց. Զ. 36. Յոբ. Թ. 2. ԺԵ. 14. ԻԵ. 4. Առակ. Ի. 9. Ժող. Է. 20. Յակ. Գ. 2.
մ Գլ. Բ. 4.

զմեղս մեր, հաւատարիմ է նա՝ եւ արդար առ 'ի թողուլ զմեղս մեր, եւ սրբել զմեզ յամենայն անիրաւութենէ։

10 Եւ եթէ ասիցեմք՝ եթէ Ո՛չինչ մեղաք, սուտ առնեմք զնա, եւ բան նորա ոչ է 'ի մեզ։

դաւանինք, նա հաւատարիմ է եւ արդար՝ որ մեր մեղքը թողէ [ղ] մեզ, եւ մեզ ամէն անիրաւութենից [ճ] սրբէ։

10 Եթէ ասենք՝ թէ Մենք բնաւ մեղք չը գործեցինք, սուտ ենք անում նորան, եւ նորան խօսքը մեզանում չէ։

## ԳԼ. Բ

1 Որդեակք իմ, զայս գրեմ ձեզ՝ զի մի՛ մեղիցէք, եւ եթէ մեղիցէ ոք, ունիմք բարեխօս առ Աստուած զՅիսուս Քրիստոս զարդարն՝ եւ զանարատ։

2 Եւ նա է քաւութիւն մեղաց մերոց. եւ ոչ եթէ մերոցն միայն՝ այլ եւ ամենայն աշխարհի։

3 Եւ յայսմիկ գիտեմք՝ եթէ ծանեաք զնա, եթէ զպատուիրանս նորա պահիցեմք։

4 Որ ասիցէ՝ եթէ Ծանեայ զնա եւ զպատուիրանս նորա ոչ պահիցէ, սուտ է՝ եւ ճշմարտութիւն 'ի նմա ոչ գոյ։

5 Իսկ որ պահիցէ զբան նորա, արդարեւ 'ի նմա կատարեալ է սէրն Աստուծոյ. այսուիկ ճանաչեմք՝ եթէ 'ի նմա եմք։

6 Որ ասիցէ 'ի նմա բնակել, այնպէս պարտի գնալ՝ որպէս եւ նայն գնաց։

7 Սիրելիք՝ ոչ եթէ նոր ինչ պատուիրան գրեմ ձեզ, այլ զհին պատուիրանն՝ զոր 'ի սկզբանէ ունէիք. եւ հին պատուիրանն՝ բանն է զոր լուարուք։

1 Իմ որդեակներս, այս եմ գրում ձեզ՝ որ չը մեղանչէք, եւ եթէ որ մէկը մեղանչէ, բարեխօս ունենք Աստուծոյ մօտ Յիսուս Քրիստոսին՝ այն արդարին եւ [ա] անարատին։

2 Եւ նա է մեր մեղաց [բ] քաւութիւնը. եւ ոչ թէ միմիայն մերին՝ բայց ամէն [գ] աշխարհքի էլ։

3 Եւ սորանով ենք գիտում՝ որ ճանաչեցինք նորան, թէ որ նորա պատուիրանքները պահենք։

4 Ով որ ասէ՝ թէ Ճանաչեցի նորան՝ եւ նորա պատուիրանքները [դ] չը պահէ, սուտ է՝ եւ ճշմարտութիւն չը կայ [ե] նորանում։

5 Բայց նա՝ որ նորա խօսքը [զ] պահումէ, չիտակ է՝ որ Աստուծոյ սէրը նորանում կատարեալ [է] է. սորանով ճանաչումենք որ նորանում [ը] ենք։

6 Ով որ ասումէ թէ նորանում եմ [թ] բնակւում. այնպէս պէտք է գնայ, ինչպէս որ նա [ժ] գնաց։

7 Սիրելիներ՝ չէ թէ մին նոր պատուիրանք եմ գրում [ի] ձեզ, բայց այն հին պատուիրանքն՝ որ սկզբանէն ունէինք, եւ հին պատուիրանքն այն խօսքն է՝ որ [լ] լսեցիք։

ղ Սաղ. ԼԲ. 5. Առակ. ԻԸ. 13.
ճ Համար. 7. Սաղ. ԾԱ. 2.

—

ա Հռովմ. Ը. 34. Ա Տիմ. Բ. 5. Եբր. Է. 25. Թ. 24.
բ Հռովմ. Գ. 25. Բ Կորնթ. Ե. 18. Գլ. Ա. 7. Դ. 10.
գ Յովհ. Ա. 29. Դ. 42. ԺԱ. 51. 52. Գլ. Դ. 14.
դ Գլ. Ա. 6. Գ. 20.
ե Գլ. Ա. 8.
զ Յովհ. ԺԴ. 21. 23.
է Գլ. Դ. 12.
ը Գլ. Գ. 13.
թ Յովհ. ԺԵ. 4. 5.
ժ Մատթ. ԺԱ. 29. Յովհ. ԺԳ. 15. Ա Պետ. Բ. 21.
ի Բ Յովհ. 5.
լ Գլ. Գ. 11. Բ Յովհ. 5.

8 Դարձեալ նոր պատուիրան գր-
եմ ձեզ՝ որ է ճշմարիտ 'ի նմա
եւ 'ի ձեզ. զի խաւարն անցանէ,
եւ լոյսն ճշմարիտ արդէն իսկ ե-
րեւի։
9 Որ ասէ եթէ 'ի լոյսն իցէ՝ եւ
զեղբայր իւր ատիցէ, սուտ է՝ եւ
'ի խաւարի է տակաւին։
10 Որ սիրէ զեղբայր իւր, 'ի լոյս
բնակէ՝ եւ գայթակղութիւն 'ի նը-
մա չիք։
11 Իսկ որ ատեայ զեղբայր իւր՝
'ի խաւարի է, եւ ընդ խաւար շըր-
ջի. եւ ոչ գիտէ յո երթայ, զի խա-
ւարն կուրացոյց զաչս նորա։
12 Գրեմ ձեզ որդեակք՝ զի թո-
ղեալ են ձեզ մեղքն ձեր վասն ան-
ուան նորա։
13 Գրեմ ձեզ հարք՝ զի ծանեայք
դուք զայն՝ որ 'ի սկզբանէն է. գը-
րեմ ձեզ երիտասարդք՝ զի յաղթե-
ցիք դուք չարին։
14 Գրեցի ձեզ մանկունք՝ զի ծա-
նեայք դուք զՀայրն. գրեցի ձեզ
հարք՝ զի ծանեայք դուք զայն որ
'ի սկզբանէն է, գրեցի ձեզ երի-
տասարդք, զի էք դուք հզօրագոյ-
նայք՝ եւ բանն Աստուծոյ 'ի ձեզ
բնակէ, եւ յաղթեցիք դուք չարին։
15 Մի սիրէք զաշխարհ՝ եւ մի որ
ինչ յաշխարհի է։
16 Եթէ ոք սիրէ զաշխարհ, ոչ է
'ի նմա սէր Հօր. զի ամենայն որ
ինչ յաշխարհի է՝ ցանկութիւն է
մարմնոյ, եւ ցանկութիւն է աչաց,
եւ ամբարտաւանութիւն աստի կե-

8 Դարձեալ նոր պատուիրանք եմ
գրում ձեզ՝ որ ճշմարիտ է նորա-
նում եւ [խ] ձեզանում. ինչու որ խա-
ւարը [ծ] անցաւ, եւ ճշմարիտ լոյսն
ճիշտ հիմիկ է [կ] երեւում։
9 Ով որ ասէ թէ լուսոյն մէջ է՝
եւ իրեն եղբօրն ատէ, սուտ է՝ եւ
դեռ հիմիկ խաւարին մէջ [հ] է։
10 Նա՛ որ իրեն եղբօրը սիրում է,
լուսոյն մէջ է [ձ] բնակվում, եւ գայ-
թակղութիւն չը կայ [ղ] նորանում։
11 Բայց նա՛ որ իրեն եղբօրն ա-
տում է, խաւարումն է, եւ խաւա-
րի մէջ է ման գալիս, եւ չի գի-
տում թէ ուր է գնում. ինչու որ խա-
ւարը կուրացրուց նորա [ճ] աչքերը։
12 Գրում եմ ձեզ որդեակներ՝ պատ-
ճառն որ ձեր մեղքերը թողված են
ձեզ՝ նորա անուանն [մ] համար։
13 Գրում եմ ձեզ հարք՝ ինչու որ
դուք ճանաչեցիք նորան՝ որ սկըզ-
բիցն [յ] է. գրում եմ ձեզ երիտա-
սարդներ՝ ինչու որ դուք յաղթե-
ցիք չարին։
14 Գրեցի ձեզ մանկունք՝ պատ-
ճառն որ դուք ճանաչեցիք Հօրը.
գրեցի ձեզ հարք՝ պատճառն որ
դուք ճանաչեցիք նորան՝ որ սկըզ-
բիցն է. գրեցի ձեզ երիտասարդ-
ներ՝ ինչու որ դուք զօրացել էք,
եւ Աստուծոյ խօսքը բնակվում է ձե-
զանում, եւ դուք յաղթեցիք [ն] չա-
րին։
15 Մի սիրէք աշխարհքս, եւ ոչ
էլ այն ամէնն՝ որ աշխարհքիս մէ-
ջըն [շ] է։
16 Թէ որ մէկն աշխարհքին սիրէ՝
Հօր սէրը նորանում — չէ. պատճա-
ռն որ ամէն ինչ որ աշխարհքում [ո]
է՝ մարմնոյ ցանկութիւն, եւ աչ-
քերի [չ] ցանկութիւն, եւ այս կեան-

[խ] Յովհ. ԺԳ. 34. ԺԵ. 12.
[ծ] Հռովմ. ԺԳ. 12. Եփես. Ե. 8. Ա Թես. Ե. 5. 8.
[կ] Յովհ. Ա. 9. Ը. 12. ԺԲ. 35.
[հ] Ա Կորնթ. ԺԳ. 2. Բ Պետ. Ա. 9. Գլ. Գ. 14, 15.
[ձ] Գլ. Գ. 14.
[ղ] Բ Պետ. Ա. 10.
[ճ] Յովհ. ԺԲ. 25.
[մ] Ղուկ. ԻԴ. 47. Գործ. Գ. 12. Ժ. 43. ԺԳ. 38. Գլ. Ա. 7.
[յ] Գլ. Ա. 1.
[ն] Եփես. Զ. 11.
[շ] Հռովմ. ԺԲ. 2.
[ո] Մատթ. Զ. 24. Գաղ. Ա. 10. Յակ. Դ. 4.
[չ] Ժող. Ե. 11.

նացս · որ ոչ է առ 'ի Հօրէ՝ այլ
յաշխարհէ աստի է ։
17 Եւ աշխարհս անցանէ, եւ ցան-
կութիւն նորա · իսկ որ առնէ զ
կամս Աստուծոյ՝ մնայ յաւիտեան ։

18 Որդեակք՝ յետին ժամանակ է,
եւ որպէս լուարուք՝ եթէ Նեռն գա-
լոց է, եւ արդէն իսկ նեռինք բա-
զումք եղեալ են, որով մարթեմք
իմանալ՝ եթէ յետին ժամանակ է ։

19 Առ 'ի մէնջ ելին, այլ ոչ էին
'ի մէնջ · զի եթէ 'ի մէնջ էին՝ ապա
առ մեզ մնային · այլ զի յայտնի լի-
նիցին՝ եթէ ոչ էին ամենեքին նո-
քա 'ի մէնջ ։
20 Եւ դուք օծութիւն ունիք առ
'ի Սրբոյն, եւ գիտէք ամենեքին ։

21 Ո՛չ գրեցի ձեզ՝ եթէ ոչ գիտէք
զճշմարտութիւն, այլ թէ գիտէք
զնա · եւ թէ՝ զի ամենայն սու-
թիւն ոչ է 'ի ճշմարտութենէ անտի ։
22 Իսկ ո՞ իցէ սուտ, եթէ ոչ՝ որ
ուրանայ եթէ Յիսուս չէ Քրիստո-
սըն · նա իսկ է Նեռն, որ ուրա-
նայ զՀայր եւ զՈրդի ։
23 Ամենայն որ ուրանայ զՈրդի,
եւ ոչ զՀայր ընդունի · իսկ որ
խոստովանի զՈրդի՝ նա եւ զՀայր
ընդունի ։
24 Դուք՝ զոր լուարուքն 'ի սկզ-
բանէ՝ 'ի ձեզ մնասցէ · զի եթէ
'ի ձեզ մնասցէ՝ զոր 'ի սկզբանէն
լուարուք, եւ դուք յՈրդի եւ 'ի
Հայր մնասջիք ։

քիս ամբարտաւանութիւն · դ Հօ-
րիցն չէ՝ բայց այս աշխարհքիցս է ։
17 Եւ աշխարհքս անցանում է
եւ նորա ցանկութիւնն էլ · բայց
նա՝ որ Աստուծոյ կամքն է անում,
մնում է յաւիտեան ։
18 Որդեակներ՝ յետին ժամանա-
կըն է, եւ ինչպէս որ լսեցիք՝ թէ
Նեռն գալու է, եւ հիմա հիմիկ
շատ Նեռներ են եղել, որ սորա-
նով կարող ենք իմանալ՝ թէ յետին
ժամանակն է ։
19 Մեզանից դուրս գնացին, բայց
մեզանից չէին. պատճառն որ՝ եթէ
մեզանից լինէին, ապա մեզ մօտ կը
մնային · բայց որ յայտնի լինին՝ թէ
նորանք ամէնքը մեզանից չէին ։
20 Եւ դուք օծութիւն ունիք
այն Սրբիցը, եւ ամէն բան գի-
տումէք ։
21 Չի գրեցի ձեզ՝ իբր թէ ճշմար-
տութիւնը չէք գիտում, բայց որ
գիտումէք նորան · եւ որ ամէն սը-
տութիւն այն ճշմարտութենիցը չէ ։
22 Բայց ով է սուտ, եթէ ոչ նա՝
որ ուրանումէ թէ Յիսուսը չէ Քը-
րիստոսը · իսկ նա է Նեռն, որ ու-
րանումէ Հօրը եւ Որդուն ։
23 Ամէն ով որ Որդուն ուրանու-
մէ, Հօրն էլ չի ընդունում · նա
որ Որդուն դաւանումէ, Հօրն էլ
ընդունումէ ։
24 Դուք՝ նա որ լսեցիք սկզբիցը,
թող մնայ ձեզանում · պատ-
ճառն որ՝ թէ որ մնայ ձեզանում
նա՝ որ սկզբիցը լսեցիք, դուք էլ
կը մնայք Որդուն եւ Հօրը մէջ ։

դ Ա Կորնթ. Է. 31 · Յակ. Ա. 10 · Դ. 14 · Ա Պետ. Ա 24 ·
ե Յովհ. ԻԱ. 5 ·
զ Եբր. Ա. 2 ·
է Բ Թես. Բ. 3 · Բ Պետ. Բ. 1 · Գղ. Դ. 3 ·
ը Մատթ. ԻԴ. 5 · 24 · Բ Յովհ. 7 ·
թ Ա Տիմ. Դ. 1 · Բ Տիմ. Գ. 1 ·
ժ Բ Օրին. ԺԳ. 13 · Սաղ. ԽԱ. 9 · Գործ. Ի. 30 ·
ի Մատթ. ԻԴ. 24 · Յովհ. Զ. 37 · Ժ. 28 · 29 · Բ Տիմ. Բ. 19 ·
լ Ա Կորնթ. ԺԱ. 19 ·
խ Բ Կորնթ. Ա 21 · Եբր. Ա. 9 · Համար. 27 ·
ծ Մարկ. Ա. 24 · Գործ. Գ. 14 ·
կ Յովհ. Ժ. 4 · 5 · ԺԴ. 26 · ԺԶ. 13 · Համար. 27 ·
հ Գղ. Գ. 3 · Բ Յովհ. 7 ·
ձ Յովհ. ԺԵ. 23 · Բ Յովհ. 9 ·
ղ Յովհ. ԺԴ. 7. 9. 10 · Գղ. Դ. 15 ·
ճ Բ Յովհ. 6 ·
մ Յովհ. ԺԴ. 23 · Գղ. Ա. 3 ·

25 Եւ այս են աւետիքն՝ զոր աւ-
ետարանեաց նա մեզ՝ զկեանսն յաւ-
իտենականս ։
26 Զայս գրեցի ձեզ, զի մի ոք
զձեզ մոլորեցուցանիցէ ։
27 Եւ դուք օծութիւնն՝ զոր ըն-
կալարուք 'ի նմանէ՝ բնակեսցէ 'ի
ձեզ. եւ չէ ինչ պիտոյ՝ թէ ոք ըզ
ձեզ ուսուսցէ, այլ որպէս զի նորա
օծութիւնն ուսուցանիցէ զձեզ վա-
սն ամենայնի. եւ ճշմարիտ է՝ եւ
չէ սուտ. եւ որպէս ուսոյց զձեզ,
կայք 'ի նմա ։

28 Եւ այժմ որդեակք՝ կացէք 'ի
նմին. զի եթէ յայտնեսցի, ունի-
ցիմք համարձակութիւն, եւ մի ա-
մաչեսցուք 'ի նմանէ 'ի գալստեանն
նորա ։
29 Զի եթէ գիտիցէք՝ եթէ արդար
է նա, խմասջի՛ք եթէ ամենայն որ
առնէ զարդարութիւն՝ առ 'ի նմանէ
է ծնեալ ։

25 Եւ սա է աւետիքն՝ որ նա ա-
ւետարանեց մեզ՝ այսինքն յաւիտե-
նականն կեանքը ։
26 Սա գրեցի ձեզ՝ որ չի լինի թէ
մինը մոլորացնէ ըձեզ ։
27 Եւ դուք այն օծութիւնն, որ
նորանից ընդունեցիք՝ կը բնակվի
ի ձեզանում. եւ պէտք չէ՝ որ մի-
նը սովորցնէ ըձեզ. բայց ինչպէս
որ նորա օծութիւնը սովորցնում է
ձեզ ամէն բանի համար. այնպէս էլ
ճշմարիտ է՝ եւ սուտ չէ. եւ ինչ-
պէս որ նա սովորցրուց ձեզ՝ կա-
ցէք ի նորանում ։
28 Եւ հիմիկ որդեակներ՝ կացէք
նորանում. որ երբոր նա կը յայտ-
նուի, համարձակութիւն ունե-
նանք, եւ չամաչենք նորանից նո-
րա գալուց ժամանակումը ։
29 Եթէ գիտումէք՝ որ նա արդար
է, կիմանաք թէ ամէն ով որ ար-
դարութիւն կանէ՝ նորանից է ծնը-
ւած ։

## ԳԼ. Գ

1 Տեսէք՝ որպիսի սէր շնորհեաց
մեզ Հայր. զի որդիք Աստուծոյ
կոչեսցուք եւ եմք. վասն այսորիկ
աշխարհ ոչ ճանաչէ զմեզ՝ քանզի
ոչ ծանեաւ զնա ։
2 Սիրելիք՝ այժմ որդիք Աստու-
ծոյ եմք, եւ չեւեւս է յայտ՝ եթէ
զինչ լինելոց իցեմք. գիտեմք՝ զի
յորժամ նա յայտնեսցի՝ նման նմա
լինելոց եմք, զի տեսանելոց եմք
զնա՝ որպէս եւ էն ։
3 Եւ ամենայն որ ունի զայս յոյս

1 Տեսէք՝ թէ Հայրն ինչպէսի
սէր շնորհեց մեզ. որ Աստուծոյ որ-
դիք կոչվինք. սորա համար աշ-
խարհքը չի ճանաչում մեզ, վասն
զի նորան էլ չը ճանաչեց ։
2 Սիրելիներ՝ հիմիկ Աստուծոյ որ-
դիք ենք, եւ դեռ յայտնի չէ՝ թէ
ինչ պիտի լինինք. գիտումենք՝
թէ երբոր նա կը յայտնուի՝ նորան
նման կը լինինք, ինչու որ կը
տեսնենք նորան՝ ինչպէս որ է ։
3 Եւ ամէն ով որ այս յոյսս ու-

ի Յովհ. ԺԷ. 3։ Գլ. Ա. 2։ Ե 11։
լ Գլ. Գ. 7։ Բ Յովհ. 7։
խ Համար. 20։
ծ Երեմ. ԼԱ. 33. 34։ Եբր. Ը. 10. 11։
կ Յովհ. ԺԴ. 26։ ԺԶ. 13։ Համար. 20։
հ Գլ. Գ. 2։
ձ Գլ. Գ. 17։
ղ Գործ. ԻԲ. 14։
ճ Գլ. Գ. 7. 10։
—
ա Յովհ. Ա. 12։
բ Յովհ. ԺԵ. 18. 19։ ԺԶ. 3։ ԺԷ. 25։
գ Եսայ. ԾԶ. 5։ Հռովմ. Ը. 15։ Գաղ. Գ. 26։ Դ. 6։ Գլ. Ե. 1։
դ Հռովմ. Ը. 18։ Բ Կորնթ. Դ. 17։
ե Հռովմ. Ը. 29։ Ա Կորնթ. ԺԵ. 49։ Փիլիպ. Գ. 21։ Կող. Գ. 4։ Բ Պետ. Ա. 4։
զ Յոբ. ԺԹ. 26։ Սաղ. ԺԶ. 11։ Մատթ. Ե. 8։ Ա Կորնթ. ԺԳ. 12։ Բ Կորնթ. Ե. 7։

յանձին, սրբէ զանձն իւր՝ որպէս
եւ նայն սուրբ է։
4 Ամենայն որ զմեղս գործէ, նա
եւ զանօրէնութիւն առնէ, եւ ինքն
իսկ մեղքն անօրէնութիւն է։
5 Եւ գիտեմք՝ զի նա յայն սակս
յայտնեցաւ՝ զի զմեղս բարձցէ, եւ
'ի նմա մեղք ոչ են։

6 Ամենայն որ 'ի նմա է հաստա-
տեալ՝ ոչ մեղանչէ. եւ ամենայն
որ մեղանչէ, ոչ ետես զնա՝ եւ ոչ
ծանեաւ զնա։

7 Մանկունք՝ մի ոք զձեզ խա-
բեսցէ. որ առնէ զարդարութիւն,
արդար է՝ որպէս եւ նայն արդար է։

8 Եւ որ առնէ զմեղս՝ 'ի Սատա-
նայէ է, զի 'ի սկզբանէ Սատանայ
մեղանչէ. վասն այսորիկ յայտնե-
ցաւ Որդին Աստուծոյ՝ զի լուծցէ
զգործս Սատանայի։
9 Ամենայն որ յԱստուծոյ է ծնե-
եալ՝ զմեղս ոչ առնէ, զի սերմն
նորա 'ի նմա մնայ. եւ ոչ կարէ մե-
ղանչել, զի յԱստուծոյ է ծնեալ։

10 Այսուիկ յայտնի են 'ի միմեանց
որդիք Աստուծոյ՝ եւ որդիք Սատա-
նայի. ամենայն որ ոչ առնէ զար-
դարութիւն՝ չէ նա յԱստուծոյ, եւ
որ ոչ սիրէ զեղբայր իւր։

11 Զի այս է պատուիրանն՝ զոր
լուարուք 'ի սկզբանէ՝ զի սիրես-
ցուք զմիմեանս։
12 Ո՛չ որպէս Կայէնն 'ի չարէ ան-

նի իրենում, սրբում է իրեն անձն՝
ինչպէս որ նա սուրբ ե է։
4 Ամէն ով որ մեղք է գործում,
նա անօրէնութիւն էլ է անում, եւ
մեղքն ինքն անօրէնութիւն ը է։
5 Եւ գիտեմք՝ թէ նա նրա-
համար թ յայտնուեցաւ՝ որ մեր մեղ-
քերը ժ վերցանէ. եւ նորանում
մեղք ի չի կայ։
6 Ամէն ով որ նորանում հաս-
տատուած է՝ չի մեղանչում. եւ
ամէն ով որ մեղանչում է, ոչ տե-
սաւ նորան՝ եւ ոչ ճանաչեց լ նո-
րան։
7 Մանկունք՝ չըլինի թէ մէկը
ձեզ խ խաբէ. նա՝ որ արդարութիւն
է անում, արդար է, ինչպէս որ
նա էլ արդար ծ է։
8 Եւ նա որ մեղք է անում՝ Սա-
տանայից է. ինչու որ Սատանան
սկզբից կ մեղանչում է. նրա համար
յայտնուեցաւ Աստուծոյ Որդին՝ որ
Սատանայի գործքերը հ քանդէ։
9 Ամէն ով որ Աստուածանից է
ծնուած՝ մեղք չի ձ անում. ինչու որ
նորա սերմն մնում է նորանում. եւ
կարող չէ մեղանչել, պատճառն որ
Աստուածանից է ղ ծնուած։
10 Սրանով իրարից յայտնի են Աս-
տուծոյ որդիքը՝ եւ Սատանայի որ-
դիքը. ամէն ով որ արդարութիւն
չի անում՝ նա Աստուածանից ճ չէ,
եւ ոչ էլ նա՝ որ իրեն եղբօրը չի
մ սիրում։
11 Ինչու որ սա է այն պատուի-
րանքըն՝ որ սկզբից յ լսեցիք՝ որ
պէտք է իրար ն սիրենք՝
12 Չէ թէ ինչպէս Կայէնն ու չա-

ե Գլ. Գ. 17։
ը Հռովմ. Դ. 15։
Գլ. Ե. 17։
թ Գլ. Ա. 2։
ժ Եսայ. ԾԳ. 5,
6. 11։ Ա Տիմ.
Ա. 15։ Եբր. Ա.
3։ Թ. 26։ Ա
Պետ. Բ. 24։

ի Բ Կորնթ. Ե. 21։
Եբր. Դ. 15։ Թ.
28։ Ա Պետ. Բ.
22։
լ Գլ. Բ. 4։ Դ.
8։ Գ Յովհ. 11։
խ Գլ. Բ. 26։
ծ Եզեկ. ԺԸ. 5-9։
Հռովմ. Բ. 13։

Գլ. Բ. 29։
կ Մատթ. ԺԳ. 28։
Յովհ. Ը. 44։
հ Ծննդ. Գ. 15։
Ղուկ. ԺԱ. 18։
Յովհ. ԺԶ. 11։
Եբր. Բ. 14։
ձ Գլ. Ե. 18։
ղ Ա Պետ. Ա. 23։

ճ Գլ. Բ. 29։
մ Գլ. Դ. 8։
յ Գլ. Ա. 5։ Բ. 7։
ն Յովհ. ԺԳ. 34։
ԺԵ. 12։ Հռովմ.
22։ Գլ. Դ. 7.
21։ Բ Յովհ. 5։

ան էր՝ եւ սպան զեղբայրն իւր ,
եւ յոր սակս սպան զնա . զի իւր
գործքն չար էին , եւ եղբօրն բա—
րիք ։
13 Եւ մի՛ ինչ զարմանայք եղբարք՝
եթէ աշխարհ զձեզ ատեայ ։
14 Մեք գիտեմք՝ զի փոխեցաք 'ի
մահուանէ 'ի կեանս , քանզի սի—
րեմք զեղբարս . իսկ որ ոչն սիրէ ,
անդէն 'ի մահուան մնայ ։

15 Ամենայն որ ատեայ զեղբայր
իւր՝ մարդասպան է . եւ գիտէք՝
զի ամենայն մարդասպան ոչ ունի
կեանս յաւիտենականս յանձին հաս—
տատեալ ։
16 Այսուիկ գիտացաք զսէրն Աս—
տուծոյ . զի նա զանձն իւր եդ փո—
խան մեր . եւ մեք վասն եղբարց
մերոց պարտիմք դնել զանձինս ։

17 Որ ունիցի զկեանս ինչ աշ—
խարհիս՝ եւ տեսանիցէ զեղբայր իւր
կարօտեալ իմիք՝ եւ փակիցէ զգութս
իւր առ 'ի նմանէ , զիա՞րդ սէրն Աս—
տուծոյ 'ի նմա իցէ բնակեալ ։

18 Որդեակք՝ մի՛ բանիւք եւ լե—
զուօք սիրեսցուք , այլ արդեամբք
եւ ճշմարտութեամբ ։
19 Եւ այսուիկ լիցուք ծանուց—
եալք՝ եթէ 'ի ճշմարտութենէ անտի
իցեմք . եւ առաջի նորա արդարասցուք
համակէս սրտից մերոց ։
20 Եթէ ստգտանիցեն զմեզ սիրտք
մեր՝ այլ Աստուած մեծ է քան ըզ
սիրտս մեր՝ եւ գիտէ զամենայն ։

21 Սիրելիք՝ եթէ սիրտք մեր ըզ

րիցն էր՝ եւ իրեն եղբօրն սպա—
նեց . եւ ինչո՞ւ համար սպաննեց նո—
րա . նորան համար որ իրեն գործե—
րը չար էին եւ եղբօրը բարի ։
13 Մի՛ զարմանաք եղբարք , եթէ
աշխարհըս ատէ *ձեզ ։
14 Մենք գիտեմնք՝ որ մահիցը
դէպի կեանքը փոխուեցանք . պատ—
ճառն որ եղբայրներին սիրումենք .
բայց ով որ չի սիրում եղբայրնե—
րին , մահին մէջ է = մնում ։
15 Ամէն ով որ իրեն եղբօրն ա—
տումէ՝ մարդասպան Նէ . եւ գի—
տումէք՝ որ ամէն մարդասպան յա—
ւիտենական կեանքը չունի հաս—
տատված = իրանում ։
16 Սրանով գիտացինք Աստուծոյ
սէրը , որ նա իրեն անձն դրուեց
= մերոյ . եւ մենք էլ պէտք է մեր
եղբարց վերոյ դնենք մեր անձնե—
րը ։
17 Նա՛ որ այս աշխարհքիս ապ—
րանքըն ունենայ , եւ տեսնէ թէ ի—
րեն եղբայրը կարօտ է մին բանի ,
եւ իրեն գութը փակէ Նորանից ,
էլ ինչպէս Աստուծոյ սէրը բնակ—
ված կը լինի = նորանում ։
18 Որդեակներ՝ ոչ թէ խօսքերով
եւ լեզուներով սիրենք , այլ գործ—
քով եւ = ճշմարտութենով ։
19 Եւ սրանով ճանաչվումենք՝ թէ
այն ճշմարտութենիցն = ենք . եւ
նորա առաջի կանենք մեր սրտերի
քննութիւնը ։
20 Եթէ մեր սրտերը մեղադրեն
մեզ , բայց Աստուած մեր սրտե—
րիցն էլ աւելի մեծ է՝ եւ ամէն
բան = գիտումէ ։
21 Սիրելիներ՝ եթէ մեր սրտերը

ւ Ծննդ . Դ . 4 8 . Եբր . ԺԱ . 4 . Յուդ . 11 . = Յովհ . ԺԵ . 18 , 19 ԺԷ . 14 . Բ Տիմ . Գ . 12 . ււ Գլ . Բ . 10 . ու Գլ . Բ . 9 . 11 .

Հ Մատթ . Ե . 21 , 22 . Գլ . Դ . 20 . = Գաղ . Ե . 21 Յայտ . ԻԱ . 8 . = Յովհ . Գ . 16 . ԺԵ . 13 Հռովմ . Ե . 8 . Եփես . Ե 2 . 25 . Գլ . Դ . 9 . 11 .

Հ Բ Օրին . ԺԵ . 7 . Ղուկ . Գ . 11 . + Գլ . Դ . 20 . ր Եզեկ . ԼԳ . 31 . Հռովմ . ԺԲ . 9 . Եփես . Դ . 15 . Յակ . Բ . 15 . Ա Պետ . Ա . 22 .

Յովհ . ԺԸ . 37 . Գլ . Ա . 8 . = Ա Կորնթ . Դ . 4 .

մեզ ոչ ՚ստգտանիցեն , համարձա-
կութիւն ունիմք առ Աստուած ։
22 Եւ զոր ինչ հայցեմք , առնումք
՚ի նմանէ . զի զպատուիրանս նորա
պահեմք , եւ զհաճոյս առաջի նորա
առնեմք ։

23 Եւ այս է պատուիրան նորա ,
զի հաւատասցուք յանուն Որդւոյ
նորա Յիսուսի Քրիստոսի , եւ սի-
րեսցուք զմիմեանս , որպէս եւ ետ
մեզ պատուէր ։
24 Եւ որ պահէ զպատուիրանս
նորա , ՚ի նմա է հաստատեալ՝ եւ
նա ՚ի նմա . եւ յայսմանէ գիտեմք
եթէ բնակէ ՚ի մեզ ՚ի Հոգւոյ ան-
տի՝ զոր ետ մեզ ։

չը մեղադրեն մեզ , համարձակու-
թիւն ունինք Աստուծոյ ‡ առաջին ,
22 Եւ ինչ որ խնդրենք՝ կառնենք
* նորանից . պատճառն որ նորա պա-
տուիրանքները պահումենք , եւ այն
բաները՝ որ նորա առաջին հաճոյ
են , ° անումենք ։
23 Եւ աս է նորա պատուիրանքը ,
որ հաւատանք նորա Որդւոյ Յիսու-
սի Քրիստոսի § անունին , եւ իրար
– սիրենք , ինչպէս որ նա պատուի-
րանք տուաւ ‡ մեզ ։
24 Եւ նա՛ որ նորա պատուիրանք-
ները ÷ պահումէ , նորանում հաս-
տատուած է՝ եւ նա ‡ սորանում . եւ
սորանից գիտումենք թէ բնակվումէ
մեզանում այն Հոգուցն՝ որ տուաւ
⊢ մեզ ։

## ԳԼ. Դ

1 Սիրելիք՝ մի ամենայն հոգւոյ
հաւատայք . այլ քննեցէք զհո-
գիսն՝ եթէ յԱստուծոյ իցեն . զի
բազում սուտ մարգարէք ելեալ են
յաշխարհ ։
2 Եւ մեք այսուիկ ճանաչեմք ըզ
Հոգին Աստուծոյ . ամենայն հոգի՝
որ խոստովանի զՅիսուս Քրիստոս
մարմնով եկեալ , յԱստուծոյ է նա ։

3 Եւ ամենայն հոգի՝ որ ոչ խոս-
տովանի զՅիսուս մարմնով եկեալ ,
չէ նա յԱստուծոյ . եւ այս նեռին
է , զորմէ լուարուք՝ եթէ գալոց

1 Սիրելիներ՝ ամէն հոգու մի
– հաւատաք . բայց փորձեցէք հոգի-
ներին թէ Աստուածանից ‡ են .
պատճառն որ շատ սուտ մարգարէ-
ներ են ելել ÷ աշխարհք ։
2 Եւ մենք սորանով ենք ճանա-
չում Աստուծոյ Հոգին . ամէն հոգի
որ Յիսուս Քրիստոսին մարմնով ե-
կած է խոստովանում , նա Աստուա-
ծանից ‡ է ։
3 Եւ ամէն հոգի որ Յիսուս Քը-
րիստոսին մարմնով եկած չի խոս-
տովանում , նա Աստուածանից չէ .
եւ աս նեռինն ⊢ է , որ նորա հա-

‡ Յոբ . ԻԲ . 26 ։ Եբր . Ժ . 22 ։ Գլ . Բ . 28 ։ Դ . 17 ։
* Սաղ . ԼԴ . 15 ։ ՃԽԵ . 18 ։ 19 ։ Առակ . ԺԵ . 29 ։ Երեմ . ԻԹ . 12 ։ Մատթ . Է . 8 ։ ԻԱ . 22 ։ Մարկ . ԺԱ . 24 ։ Յովհ . ԺԴ . 13 ։ ԺԵ . 7 ։ ԺԶ . 23 . 24 ։ Յակ . Ե . 16 . Գլ . Ե . 14 ։
° Յովհ . Զ . 29 ։ Թ . 31 ։
§ Յովհ . Զ . 29 . ԺԷ . 3 ։
– Մատթ . ԻԲ . 39 Յովհ . ԺԳ . 34 ։ ԺԵ . 12 ։ Եփես . Ե . 2 ։ Ա Թես . Դ . 9 ։ Ա Պետ . Դ . 8 ։ [illegible] . 11 ։ Գլ . Դ . 21 ։
‡ Գլ . Բ . 8 . 10 ։
÷ Յովհ . ԺԳ . 23 ։ ԺԵ . 10 ։ Գլ . Դ . 12 ։
‡ Յովհ . ԺԷ . 21
⊢ Հռովմ . Ը . 9 Գլ . Դ . 13 ։

—

– Երեմ . ԻԹ . 8 ։ Մատթ . ԻԴ . 4 ։
‡ Ա Կորնթ . ԺԴ . 29 ։ Ա Թես . Ե . 21 ։ Յայտ . Բ . 2 ։
÷ Մատթ . ԻԴ . 5 . 24 ։ Գործ . Ի . 30 ։ Ա Տիմ . Դ . 1 ։ Բ Պետ . Բ . 1 ։ Գլ . Բ . 18 ։ Բ Յովհ . 7 ։
‡ Ա Կորնթ . ԺԲ . 3 ։ Գլ . Ե . 1 ։
⊢ Գլ . Բ . 22 ։ Բ Յովհ . 7 ։

է, եւ արդէն իսկ յաշխարհի է։

4 Դուք յԱստուծոյ էք որդեակք, եւ յաղթեցէք նոցա. զի մեծ է որ 'ի ձեզդ է՝ քան զայն որ յաշխարհին է։

5 Նոքա՝ յաշխարհէ են, վասն այնորիկ յաշխարհէ խօսին, եւ աշխարհ լսէ նոցա։

6 Մեք յԱստուծոյ եմք. որ զԱստուած ճանաչէ՝ լսէ մեզ. եւ որ ոչ է յԱստուծոյ՝ ոչ լսէ մեզ. այսուիկ ճանաչեմք զհոգին ճշմարտութեան եւ զհոգին խաբէութեան։

7 Սիրելիք՝ սիրեսցուք զմիմեանս, զի սէր յԱստուծոյ է. եւ ամենայն որ սիրէ՝ յԱստուծոյ է ծնեալ՝ եւ ճանաչէ զԱստուած։

8 Եւ որ ոչն սիրէ՝ ոչ ճանաչէ զԱստուած, զի Աստուած սէր է։

9 Եւ զի յայսմ երեւեցաւ սէրն Աստուծոյ 'ի մեզ, զի զՈրդին իւր միածին առաքեաց յաշխարհ, զի եղիցուք նովաւ կենդանիք։

10 Յայսմ է սէրն. ոչ զի մեք սիրեցաք զԱստուած՝ այլ զի նա սիրեաց զմեզ, եւ առաքեաց զՈրդին իւր 'ի քաւութիւն մեղաց մերոց։

11 Սիրելիք՝ եթէ Աստուած այնպէս սիրեաց զմեզ, ապա եւ մեք պարտիմք զմիմեանս սիրել։

մար լսեցիք թէ գալու է, եւ իսկ հիմիկ աշխարհքումն ղ է։

4 Դուք Աստուածանից էք որդեակներ, եւ յաղթեցիք ճ Նորանց. պատճառն որ՝ նա որ ձեզանում է՝ մեծ է, քանթէ նա՝ որ աշխարհքին մէջ մ է։

5 Նորանք աշխարհքիցն են, նորահամար աշխարհքիցն են յ խօսում, եւ աշխարհքը լսում է ն նորանց։

6 Մենք Աստուածանից ենք. ով որ Աստուծոյն ճանաչում է՝ լսում է շ մեզ. եւ ով որ Աստուածանից չէ՝ չի լսում մեզ. որանով ենք ճանաչում ճշմարտութեան ո Հոգին՝ եւ խաբեբայութեան հոգին։

7 Սիրելիներ՝ իրար չ սիրենք, ինչու որ սէրն Աստուածանից է. եւ ամէն ով որ սիրում է՝ Աստուածանից է ծնված, եւ ճանաչում է Աստուծոյն։

8 Նա՝ որ չի սիրում, Աստուծոյն չի պ ճանաչում. ինչու որ Աստուած սէր ջ է։

9 Եւ որանով Աստուծոյ սէրն երեւեցաւ մեր ռ միջնումն, որ Աստուած իրեն միածին Որդին ուղարկեց աշխարհք, որ նորանով կենդանի ս լինինք։

10 Որանում է սէրն. որ ոչ թէ մենք սիրեցինք Աստուծոյն, բայց որ նա սիրեց վ մեզ, եւ իրեն Որդին ուղարկեց մեր մեղքերը քաւելու տ համար։

11 Սիրելիներ՝ եթէ Աստուած այսպէս սիրեց մեզ, ապա մենք էլ պէտք է իրար ր սիրենք։

ղ Բ Թես. Բ. 7. Գլ. Բ. 18. 22.
ճ Գլ. Ե. 4.
մ Յովհ. ԺԲ. 31. ԺԴ. 30. ԺԶ. 11. Ա Կորնթ. Բ. 12. Եփես. Բ. 2. Զ. 12.
յ Յովհ. Գ. 31.
ն Յովհ. ԺԵ. 19. ԺԷ. 14.
շ Յովհ. Ը. 47. Ժ. 27. Ա Կորնթ. ԺԴ. 37. Բ Կորնթ. Ժ. 7.
ո Եսայ. Ը. 20. Յովհ. ԺԴ. 17.
չ Գլ. Գ. 10. 11. 23.
պ Գլ. Բ. 4. Գ. 6.
ջ Համար. 16.
ռ Յովհ. Գ. 16. Հռովմ. Ե. 8. Ը. 32. Գլ. Գ. 16.
ս Գլ. Ե. 11.
վ Յովհ. ԺԵ. 16. Հռովմ. Ե. 8. 10. Տիտ. Գ. 4.
տ Գլ. Բ. 2.
ր Մատթ. ԺԸ. 33. Յովհ. ԺԵ. 12. 13. Գլ. Գ. 16.

12 ԶԱստուած ուրուք երբէք չիք տեսեալ · եթէ սիրեսցուք զմիմեանս՝ Աստուած 'ի մեզ բնակէ, եւ սէր նորա 'ի մեզ կատարեալ է ։

13 Այսուիկ գիտեմք, եթէ մեք 'ի նմա բնակեալ եմք՝ եւ նա 'ի մեզ, զի 'ի Հոգւոյն իւրմէ ետ մեզ ։

14 Եւ մեք տեսաք՝ եւ վկայեմք զի Հայր առաքեաց զՈրդին իւր Փրկիչ աշխարհի ։

15 Որ ոք խոստովանեսցի՝ եթէ Յիսուս է Որդի Աստուծոյ, Աստուած 'ի նմա բնակէ՝ եւ նա յԱստուած ։

16 Եւ մեք հաւատացաք՝ եւ ծանեաք զսէրն Աստուծոյ՝ զոր ունի առ մեզ · Աստուած սէր է, եւ որ կայ 'ի սէրն՝ բնակեալ է յԱստուած, եւ Աստուած 'ի նմա բնակէ ։

17 Յայսմիկ կատարեալ է սէրն նորա 'ի մեզ · զի համարձակութիւն ունիցիմք յաւուրն դատաստանի · զի որպէս եւ նայն է՝ նոյնպէս եւ մեք եմք յաշխարհի յայսմիկ ։

18 Երկիւղ ոչ գոյ 'ի սէր, այլ սէրն կատարեալ 'ի բաց մերժէ զերկիւղն · զի երկիւղ ընդ տանջանօք է · իսկ որ երկնչին, չէ կատարեալ 'ի սէրն ։

19 Մեք սիրեսցուք զԱստուած, վասն զի նա նախ սիրեաց զմեզ ։

20 Եթէ ոք ասիցէ՝ եթէ Սիրեմ զԱստուած, եւ զեղբայր իւր ատիցէ, սուտ է · որ ոչ սիրէ զեղբայր իւր՝ զոր տեսանէ, զԱստուած զոր ոչն տեսանէ՝ զիարդ կարիցէ սիրել ։

12 Ոչ մին ժամանակ մենք չենք տեսել Աստուծոյն · թէ որ իրար սիրենք՝ Աստուած մեզանում է ա բնակվում, եւ նորա սէրը մեզանում կատարեալ բ է ։

13 Սրանով գիտենք որ մենք նորանում ենք բնակված՝ եւ նա մեզանում · որ իրեն Հոգուցը գ տուաւ մեզ ։

14 Եւ մենք տեսանք եւ դ վկայում ենք, որ Հայրն իրեն Որդին ուղարկեց աշխարհքի ե Փրկիչ ։

15 Ով որ դաւանի՝ թէ Յիսուս է Աստուծոյ Որդին, Աստուած նորանում է բնակվում՝ եւ նա զ Աստուածանում ։

16 Եւ մենք հաւատացինք եւ ճանաչեցինք Աստուծոյ սէրն՝ որ ունի մեզ վերայ · Աստուած սէր է է, եւ ով որ սիրոյն մէջ է կենում Աստուծոյ մէջն է բնակվում, եւ Աստուած նորանում է ը բնակվում ։

17 Սրանում է նորա սէրը կատարեալ մեզ հետ, որ համարձակութիւն ունենք դատաստանի թ օրումը · պատճառն որ ինչպէս որ նա է՝ այնպէս էլ մենք ենք այս աշխարհքումս ։

18 Վախ չը կայ սիրոյն մէջ · այլ կատարեալ սէրը հեռացնում է վախին · ինչու որ վախը տանջանք ունի · բայց նա՝ որ վախում է, կատարեալ չէ սիրոյն ժ մէջ ։

19 Մենք սիրենք Աստուծոյն · պատճառն որ առաջ նա սիրեց մեզ ։

20 Թէ որ մինն ասէ՝ թէ Սիրում եմ Աստուծոյն, եւ իրեն եղբօրն ատէ, նա սուտ է · ինչու որ նա՝ որ իրեն եղբօրն որ տեսնում է՝ ի չի սիրում, Աստուծոյն որ չի տեսել՝ ինչպէս կարող է լ սիրել ։

ա Յովհ. Ա. 18. Ա Տիմ. Զ. 16. Համեմ. 20.
բ Գղ. Բ. 5. Համեմ. 18.
գ Յովհ. ԺԴ. 20. Գղ. Գ. 24.
դ Յովհ. Ա. 14. Գղ. Ա. 1, 2.
ե Յովհ. Գ. 17.
զ Հռովմ. Ժ. 9. Գղ. Ե. 1, 5.
է Համեմ. 8.
ը Գղ. Գ. 24. Համեմ. 12.
թ Յակ. Բ. 13. Գղ. Բ. 28. Գ. 19. 21.
ժ Գղ. Գ. 3.
ի Համեմ. 12.
լ Գղ. Բ. 4. Գ. 17.
խ Համեմ. 12.

21 Եւ զայս պատուէր ունիմք առ 'ի նմանէ, զի որ սիրէ զԱստուած՝ սիրէ նա եւ զեղբայր իւր։

21 Եւ այս պատուիրանքս ունինք նորանից, թէ նա որ Աստուծոյն սիրում, իրեն եղբօրն էլ – սիրէ։

## ԳԼ. Ե

1 Ամենայն որ հաւատայ՝ եթէ Յիսուս է Քրիստոսն, յԱստուծոյ ծնեալ է. եւ ամենայն որ սիրէ զծնօղն, սիրէ եւ զծնեալն 'ի նմանէ։

1 Ամէն ով որ – հաւատում՝ թէ Յիսուս է Բ Քրիստոսը, Աստուածանից է ‡ ծնված. եւ ամէն ով որ ծնօղին սիրում, նորանից ծնվածին էլ † սիրում։

2 Այսուիկ ճանաչեմք՝ եթէ սիրեմք զՈրդին Աստուծոյ, յորժամ զԱստուած սիրեսցուք՝ եւ զպատուիրանս նորա արասցուք։

2 Սրանով ենք ճանաչում՝ թէ Աստուծոյ Որդին սիրումենք, երբոր Աստուծոյն սիրենք, եւ նորա պատուիրանքներին անենք։

3 Քանզի այս է սէրն Աստուծոյ, եթէ զպատուիրանս նորա պահեսցուք. եւ պատուիրանք նորա չեն ինչ ծանունք։

3 Պատճառն որ Աստուծոյ սէրը սա է, որ նորա պատուիրանքները Ի պահենք. եւ նորա պատուիրանքները բնաւ ծանր Ղ չեն։

4 Զի ամենայն որ յԱստուծոյ ծնեալ է՝ յաղթէ աշխարհի. եւ այս է յաղթութիւնն՝ որ յաղթէ աշխարհի, հաւատքն մեր։

4 Ինչու որ՝ ամէն ով որ Աստուածանից է ծնված՝ յաղթում աշխարհքին. եւ սա է յաղթութիւնն՝ որ աշխարհքին յաղթում, – մեր Ի հաւատքը։

5 Եւ ո՞ իցէ՝ որ յաղթիցէ աշխարհի. եթէ ոչ որ հաւատայցէ՝ եթէ Յիսուս է Որդի Աստուծոյ։

5 Եւ ով է՝ որ յաղթում աշխարհքին, բայց միայն նա՝ որ հաւատում, թէ Յիսուս Աստուծոյ Որդին Ը է։

6 Սա է որ եկն ջրով եւ հոգւով եւ արեամբ, Յիսուս Քրիստոս. ոչ ջրով միայն, այլեւ արեամբ եւ ջրով. եւ Հոգին է՝ որ վկայէ, զի Հոգին իսկ է ճշմարտութիւն։

6 Սա է որ եկաւ ջրով եւ հոգով եւ արիւնով՝ – Յիսուս Քրիստոսն. ոչ թէ միայն ջրով, բայց արիւնով եւ Բ ջրով. եւ Հոգին է որ վկայում, որ Հոգին է Ժ ճշմարտութիւնը։

7 Զի երեք են որ վկայեն յերկինս, Հայր, Բանն եւ Հոգին Սուրբ. եւ երեքեան մի են։

7 Պատճառն որ երեք են որ երկինքումը վկայումեն, Հայրն ու Բանը եւ Սուրբ Է Հոգին. եւ այս երեքքս մի Լ են։

8 Եւ երեք են որ վկայեն յերկրի. հոգի, ջուր եւ արիւն. եւ երեքեան մի են։

8 Եւ – երեքս են որ երկրումն են վկայում. հոգին, եւ ջուրը, եւ արիւնը. եւ այս երեքս մի են։

– Մատթ. ԻԲ. 37-39. Յովհ. ԺԳ. 34. ԺԵ. 12. Գղ. Գ. 23.

—

– Յովհ. Ա. 12.
Բ Գղ. Բ. 22, 23. Գ. 2. 15.
‡ Յովհ. Ա. 13.
† Յովհ. ԺԵ. 23
Ի Յովհ. ԺԴ. 15. 21. 23. ԺԵ. 10. Բ Յովհ. 6.
Ղ Միք. Զ. 8. Մատթ. ԺԱ. 30
Ի Յովհ. ԺԶ. 33. Գղ. Գ. 9. Դ. 4.
Ը Ա Կորնթ. ԺԵ. 57. Գղ. Գ. 15.
Բ Յովհ. ԺԹ. 34.
Ժ Յովհ. ԺԴ. 17. ԺԵ. 26. ԺԶ. 13. Ա Տիմ. Գ. 16.
Է Յովհ. Ա. 1. Յայտ. ԺԹ. 13.
Լ Յովհ. Ժ. 30.

9 Եթէ զմարդկան ինչ վկայութիւն ընդունիցիմք՝ ապաքէն ի Աստուծոյ վկայութիւնն մեծ իցէ, այս է վկայութիւնն Աստուծոյ, զի վկայեաց ՚ի վերայ Որդւոյն իւրոյ։

10 Որ հաւատայ յՈրդին Աստուծոյ, ունի յանձին զվկայութիւնս զայս. որ ոչ հաւատայ Որդւոյ Աստուծոյ, սուտ առնէ զնա. քանզի ոչ հաւատայ վկայութեանն՝ զոր վկայեաց Աստուած ՚ի վերայ Որդւոյն իւրոյ։

11 Եւ այս իսկ է վկայութիւնն, զի կեանս յաւիտենականս ետ մեզ Աստուած. եւ այս են կեանք՝ որ յՈրդին նորա են։

12 Որ ընդունի զՈրդին, ընդունի եւ զկեանս. եւ որ ոչ ընդունի զՈրդին Աստուծոյ, եւ ոչ զկեանս ընդունի։

13 Զայս գրեցի ձեզ՝ զի գիտասջիք եթէ կեանս յաւիտենականս ունիք. եւ զի հաւատասջիք յանուն Որդւոյն Աստուծոյ։

14 Եւ այս է համարձակութիւնն զոր ունիմք մեք առ նա, զի զոր ինչ հայցեսցուք ըստ կամաց նորա, լուիցէ մեզ։

15 Զի եթէ գիտիցեմք՝ եթէ լուիցէ հայցուածոցն մերոց. ապա գիտեմք՝ եթէ առնումք զհայցուածսն՝ զոր հայցեմք առ ՚ի նմանէ։

16 Եթէ որ տեսցէ զեղբայր իւր մեղուցեալ մեղս՝ որ ոչ առ ՚ի մահ, խնդրեսցէ՝ եւ տացէ նմա կեանս՝ մեղուցելոյն ոչ առ ՚ի մահ. են մեղք՝ որ մահուչափ են, ոչ վասն այնորիկ ասեմ եթէ խնդրեսցես։

9 Եթէ մարդկանց վկայութիւնն ընդունումենք, ապա ուրեմն Աստուծոյ վկայութիւնն աւելի մեծ ի է. սա է Աստուծոյ վկայութիւնն, որ վկայեց իրեն Որդոյն ծ վերայ։

10 Ով որ հաւատումէ Աստուծոյ Որդոյն, այս վկայութիւնս ունի իրեն կ անձումը. ով որ չի հաւատում Աստուծոյ Որդոյն, սուտ է անում հ նորան. պատճառն որ չի հաւատում այն վկայութեանն, որ Աստուած վկայեց իրեն Որդոյ վերայ։

11 Եւ իսկ սա է վկայութիւնն, որ Աստուած յաւիտենական կեանքը տուաւ ձ մեզ. եւ այս կեանքս այն է՝ որ նորա Որդոյ միջումն ղ է։

12 Ով որ Որդոյն ընդունի, կեանքն էլ կընդունի. եւ ով որ Աստուծոյ Որդոյն չընդունի, կեանքն էլ չի ճ ընդունիլ։

13 Սա գրեցի մ ձեզ որ հաւատաք՝ թէ յաւիտենական կեանքն յ ունիք, եւ էլ որ հաւատաք Աստուծոյ Որդոյ անունին։

14 Եւ սա է այն համարձակութիւնն որ մենք ունինք նորա մօտ, թէ ինչ որ նորա կամաց պէս խնդրենք՝ կը լսէ ն մեզ։

15 Եւ թէ որ գիտումենք՝ թէ մեր խնդրուածքներին կը լսէ. ապա գիտումենք որ կառնենք շ այն խնդրուածքներն՝ որ խնդրումենք նորանից։

16 Թէ որ մինը տեսնէ՝ թէ իրեն եղբայրն մեղանչել է ... մեղքով՝ որ դէպի մահն չէ, թող խնդրէ Աստուծանից՝ եւ կեանք կը տայ նորան՝ ... նորան որ մեղանչել է չէ թէ դէպի ո մահ. կայ մեղք՝ որ մահու չափ է, նորա համար ես չեմ ասում որ չ խնդրես։

ի Յովհ. Ը. 17 18։
ծ Մատթ. Գ. 16, 17։ ԺԷ. 5։
կ Հռովմ. Ը. 16։ Գաղ. Դ. 6։
հ Յովհ. Գ. 33։ Ե. 38։
ձ Գլ. Բ. 25։
ղ Յովհ. Ա. 4։ Գլ. Դ. 9։
ճ Յովհ. Գ. 36։ Ե. 24։
մ Յովհ. Ի. 31։
յ Գլ. Ա. 1, 2։
ն Գլ. Գ. 22։
շ Յոբ. ԽԲ. 8։ Յակ. Ե. 14, 15։
ո Մատթ. ԺԲ. 31, 32։ Մարկ. Գ. 29։ Ղուկ. ԺԲ. 10։ Եբր. Զ. 4 6։ Ժ. 26։
չ Երեմ. Է. 16։ ԺԴ. 11։ Յովհ. ԺԷ. 9։

17 Ամենայն անիրաւութիւն՝ մեղք
են. եւ են մեղք՝ որ մահու չափ են։
18 Գիտեմք եթէ ամենայն որ յԱս-
տուծոյ է ծնեալ՝ ոչ մեղանչէ. այլ
որ յԱստուծոյն է ծնեալ՝ պահէ զան-
ձըն, եւ չարն առ նա ոչ մերձենայ։

19 Գիտեմք եթէ յԱստուծոյ եմք,
եւ աշխարհ ամենայն ՚ի չարի կայ։

20 Եւ գիտեմք՝ եթէ Որդին Աս-
տուծոյ եկն, եւ ետ մեզ միտս, զի
ծանիցուք զճշմարիտն. եւ եմք ՚ի
ճշմարտ՚ն Որդւոյ նորա Յիսուսի
Քրիստոսի. զի նա է ճշմարիտ Աս-
տուած՝ եւ կեանք յաւիտենականն։

21 Որդեակք՝ պահեցէք զանձինս
՚ի կռապաշտութենէ։

17 Ամէն անիրաւութիւն մեղք է.
եւ կայ մեղք որ մահու չափ չէ։
18 Գիտեմնք որ ամէն ով որ Աս-
տուածանից է ծնած՝ մեղք չի
գործում, բայց նա՝ որ Աստուածանից
է ծնած, իրեն անձն –պահում է,
եւ չարը չի մօտենում նորան։
19 Գիտեմնք որ մենք Աստուա-
ծանից ենք, եւ բոլոր աշխարհք
չարութեան մէջ է – կենում։
20 Եւ գիտեմնք որ Աստուծոյ
Որդին եկաւ, եւ մեզ միտք տուաւ,
որ ճշմարիտը –ճանաչենք. եւ ճըշ-
մարտին մէջումն ենք, –ընդ– նորա
Որդի Յիսուս Քրիստոսումը. սրա-
ճան որ նա ճշմարիտ Աստուած
է՝ եւ յաւիտենական կեանքն։
21 Որդեակներ՝ ձեր անձները պա-
հեցէք –կռապաշտութենից։

# ԹՈՒՂԹ ԿԱԹՈՂԻԿԵԱՅՑ

## ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ ԵՐԿՐՈՐԴ

1 ՅԵՐԻՑՈՒԷ առ ընտրեալ
Կիւրիա, եւ առ որդեակս իւր,
զոր ես սիրեմ ճշմարտութեամբ,
եւ ոչ եթէ ես միայն, այլ եւ ա-
մենեքեան, որք գիտակ են ճշմար-
տութեանն.
2 Վասն որոյ ճշմարտութեանն՝
որ ՚ի մեզ հաստատեալ է, զի եւ
ընդ ձեզ իցէ. եւ զուգ յաւիտենից
ընդ մեզ իցէք.
3 Շնորհք, ողորմութիւն, խա-
ղաղութիւն յԱստուծոյ ՚ի Հօրէ, եւ
՚ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ Որդ-
ւոյն Հօր՝ ճշմարտութեամբ եւ սի-
րով եղիցին ընդ ձեզ։

1 ԷՐԷՑԻՍ կողմանէ ընտրեալ
Կիւրիային, եւ իրեն որդեակներին՝
որ ես նորանց սիրում եմ –ճշմար-
տութենով, եւ ոչ թէ միայն ես,
բայց այն ամէնքն էլ որ ճշմարտու-
թիւնը ճանաչել են.
2 Այն ճշմարտութեան պատճա-
ռածն՝ որ մեզանում հաստատուած է,
որ նա էլ ձեզ հետ լինի, եւ դուք
յաւիտեան մեզ հետ լինիք,
3 Շնորհք, ողորմութիւն, խա-
ղաղութիւն Աստուած Հօրից, եւ
Տէր Յիսուս Քրիստոսից Հօր Որ-
դուցը՝ լինի ձեզ հետ, ճշմարտու-
թենով եւ սիրով։

ղ Գղ. Գ. 4։
ճ Ա Պետ. Ա. 23։
Գղ. Գ. 9։
մ Յակ. Ա. 27։
յ Գաղ. Ա. 4։
ն Ղուկ. ԻԴ. 45։
շ Յովհ. ԺԷ. 3։
ո Եսայ. Թ. 6։

ԽԴ. 6։ ԾԴ. 5։
Յովհ. Ի. 28։
Գործ. Ի. 28։
Հռովմ. Թ. 5։
Ա Տիմ. Գ. 16։
Տիտ. Բ. 13։
Եբր. Ա. 8։
չ Հռովմ. 11—13։

– Ա Կորնթ. Ժ. 14։
—
– Ա Յովհ. Գ. 18։
Գ Յովհ. 1։ Հռո-
մայ. 3։
բ Յովհ. Ը. 32։
Գաղ. Բ. 5. 14։
Գ. 1։ Ե. 7։ Կող.

Ա. 5։ Բ Թես.
Բ. 12։ Ա Տիմ.
Բ. 4։ Եբր. Ժ.
26։
ռ Ա Տիմ. Ա. 2։
ս Հռովմ. 1։

4 Ուրախ եղէ յոյժ, զի գտի յոր-
դեկացդ քոց՝ որ գնան ճշմարտու-
թեամբ, ըստ պատուիրանին զոր
առաք 'ի Հօրէ։
5 Եւ արդ աղաչեմ զքեզ՝ Կիւ-
րիա. ոչ իբրեւ թէ նոր ինչ պա-
տուիրան գրեմ քեզ, այլ զոր 'ի
սկզբանէն ունէաք, զի սիրեսցուք
զմիմեանս։
6 Եւ այս է սէրն, զի գնասցուք
ըստ պատուիրանաց նորա. եւ այս
է պատուիրանն, զի որպէս լուա-
րուքն 'ի սկզբանէ՝ ըստ նմին գնաս-
ջիք։
7 Զի բազում մոլորեցուցիչք ելին
յաշխարհ. որ ոք ոչ խոստովանի
զՅիսուս Քրիստոս եկեալ մարմնով,
նա մոլորեցուցիչ է՝ եւ նեռն։
8 Զգոյշ լինիջիք անձանց՝ զի մի
կորուսանիցէք՝ զոր վաստակեցէքն,
այլ զի առնուցուք բաւանդակ լի
վարձս։
9 Ամենայն որ յանցանէ՝ եւ ոչ
կայ 'ի վարդապետութեանն Քրիս-
տոսի, զԱստուած ոչ ճանաչէ. որ
կայ 'ի վարդապետութեանն, նա՝
եւ զՈրդի եւ զՀայր ընդունի։
10 Եթէ ոք գայցէ առ ձեզ՝ եւ
զվարդապետութիւնս զայս ոչ ունի-
ցի, մի ընդունիցիք զնա 'ի տուն,
եւ մի ողջոյն տայցէք նմա։
11 Եւ որ տայցէ նմա ողջոյն՝
կցորդ լիցի չարեաց գործոց նորա։
12 Բազում ինչ ունէի գրել առ
ձեզ՝ այլ ոչ կամեցայ քարտիսիւ եւ
դեղով գրել. զի ակնունիմ ինձէն
խօսել գալ առ ձեզ, եւ բերան 'ի բե-

4 Շատ ուրախ էղայ, որ քու որ-
դիներէդ գտայ՝ որ ճշմարտութե-
նով կը գնան, այն պատուիրան-
քին պէս որ Հօրմէն [ի] առինք։
5 Եւ հիմիկ աղաչումեմ քեզ Կիւ-
րիայ. իբր ոչ թէ մինոր պատուի-
րանք եմ գրում քեզ, այլ հին նա
որ սկզբէն [լ] ունէինք, որ իրար
[խ] սիրենք։
6 Եւ աս է սէրն, որ նորա պա-
տուիրանքներին պէս [ծ] գնանք, եւ
աս է պատուիրանքն, որ ինչպէս որ
լսեցիք սկզբէն՝ այնպէս [կ] գնաք։
7 Ինչու որ շատ մոլորացնողներ
դուրս ելլին աշխարհքի [հ] մէջ. ով
որ չի դաւանում Յիսուս Քրիստոսին
որ մարմնով է [ձ] եկած, նա մոլո-
րացնող է՝ եւ [ղ] Նեռը։
8 Զգոյշ կացէք անձներիդ՝ որ չըլ-
լինի թէ կորսնէք այն որ վաստա-
կեցիք. բայց որ բոլոր վարձ [ճ] առ-
նէք։
9 Ամէն ով որ յանցանք գործէ,
եւ չը կենայ Քրիստոսի վարդապե-
տութեանը մէջ, Աստուծոյն [մ] չի ճա-
նաչում. ով որ կենումէ վարդա-
պետութեանը մէջ, նա՝ Որդին էլ
եւ Հօրն էլ ընդունումէ։
10 Թէ որ մէկը ձեզ մօտ գայ եւ
այս վարդապետութիւնս չունենայ,
մի ընդունիք նորան ներս տունը, եւ
ողջոյն մի տաք [յ] նորան։
11 Ով որ Ողջոյն տայ նորան,
մասնակից կը լինի նորա չար գործ-
քերին։
12 Շատ բան ունէի ձեզ գրելու,
բայց չը կամեցայ թղթով եւ թա-
նաքով գրել. պատճառն որ յոյս ու-
նիմ՝ որ ես ինքս գամ ձեզ մօտ,

ի Գ Յովհ. 3.
լ Ա Յովհ. Բ. 7, 8, Գ. 11.
խ Յովհ. ԺԳ. 34, ԺԵ. 12, Եփես. Ե. 2, Ա Թես. Դ. 8, Ա Յովհ. Գ. 23.
ծ Յովհ. ԺԴ. 15, 21, ԺԵ. 10, Ա Յովհ. Բ. 5, Ե. 3.
կ Ա Յովհ. Բ. 24.
հ Ա Յովհ. Դ. 1.
ձ Ա Յովհ. Դ. 2, 3.
ղ Ա Յովհ. Բ. 22, Դ. 3.
ճ Գաղ. Գ. 4, Եբր. Ժ. 32, 35.
մ Ա Յովհ. Բ. 23.
յ Հռովմ. ԺԶ. 17, Ա Կորնթ. Ե. 11, ԺԶ. 22, Գաղ. Ա. 8, 9, Բ Տիմ. Գ. 5, Տիտ. Գ. 10.

բան խօսել · զի ուրախութիւնն
մեր լցեալ կատարեսցի ։
13 Ողջոյն տան քեզ որդիք քեռ
քո ընտրելոյ · շնորհք ընդ ձեզ ։

եւ բերանէ բերան[ն] խօսիմ · որ մեր
ուրախութիւնը կատարեալ [ɔ] լինի ։
13 Ողջոյն են տալիս քեզ քո ընտ-
րեալ քրոջդ որդիքը · շնորհք լինի
ձեզ հետ ։

# Թ Ո Ւ Ղ Թ Կ Ա Թ Ո Ւ Ղ Ի Կ Ե Ա Ց

## ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ ԵՐՐՈՐԴ

1 ՅԵՐԻՑՈՒԷ առ Գայիոս սի-
րելի, զոր ես սիրեմ ճշմարտու-
թեամբ ։
2 Սիրելի՛ վասն ամենայն խրատ
քեզ յաջողութեան եւ առողջութեան
աղօթս առնեմ · որպէս է իսկ յա-
ջողութիւն անձին քո ։
3 Յոյժ ուրախ եղէ 'ի գալ եղ-
բարց՝ եւ լինել վկայ քոյոյ ճշմար-
տութեանդ, որպէս գնաս դու ճշ-
մարտութեամբ ։
4 Մեծ եւս ինչ ուրախութիւն
քան զայս ոչ ունիմ · զի լսեմ եթէ
իմ որդեակքն ճշմարտութեամբ գը-
նան ։
5 Սիրելի՛ հաւատարիմ գործես
զայս, զոր եթէ առնիցես առ եղ-
բարս՝ զգայն եւ առ օտարս ։

6 Որք վկայեցին զքո սիրոյդ ա-
ռաջի եկեղեցւոյ · որոց բարիս արա-
րեալ յուղարկես արժանիս Աստու-
ծոյ ։
7 Զի վասն անուանն ելին, եւ
ոչինչ յումեքէ առնուն զհեթանո-
սականացն ։
8 Մեք այսուհետեւ պարտիմք ըն-
դունել զայնպիսիսն, զի գործա-
կիցք լիցուք ճշմարտութեանն ։

9 Գրեցի ինչ եկեղեցւոյն · այլ
որ յառաջագոյնն 'ի նոցանէ է՝ Դի-
ոտրեփէս, ոչ ընդունի զմեզ ։

1 ԷՐԷՑԻՍ կողմանէ սիրելի
Գայիոսին, որ ես սիրումեմ ‒ ճշ-
մարտութենով ։
2 Սիրելի՛ քո ամէն բանի յաջո-
ղութեան եւ առողջութեան համար
աղօթք եմ անում · ինչպէս որ քո
անձնդ էլ յաջողութեան մէջ է ։
3 Շատ ուրախ էլայ երբոր եղ-
բարքն եկին, եւ քո ճշմարտութեա-
նըդ վկայ էլան, ինչպէս որ դու
ճշմարտութենով [ե] գնումես ։
4 Էլ սրանից աւելի մեծ ուրա-
խութիւն չունիմ, որ լսումեմ թէ
իմ որդեակներս ճշմարտութենով
են [ե] գնում ։
5 Սիրելի՛ հաւատարմութենով ես
գործում այդ ինչ որ անումես եղ-
բարներին, իսկ դա էլ օտարական-
ներին կանես,
6 Որ նրանք քո սիրոյդ վկայու-
թիւն տուին եկեղեցւոյ առաջին · որ
եթէ նրանց Աստուծոյ արժանաւոր
ճանապարհ[ղ] դնես, լաւ կանես ։
7 Ինչու որ Քրիստոսի անուանն հա-
մար դուրս եկին, եւ ոչ մին հե-
թանոսից մին բան չեն [փ] առնում ։
8 Ուրեմն պէտք է որ մենք ըն-
դունինք այնպէսիններին, որ օգնա-
կան լինինք ճշմարտութեան գոր-
ծոյն ։
9 Մին բան գրեցի եկեղեցւոյն ·
բայց Դիոտրեփէս՝ որ նրանց մի-
ջումն առաջ ընկնողն է, մեզ չի
ընդունում ։

ձ Գ. Յովհ. 13. 14. ɔ Յովհ. ԺԵ. 13. Ա Յովհ. Ա. 4.
ղ Ա. Պետ. Ե. 13. — ‒ Բ Յովհ. 1.
բ Բ Յովհ. 4. ե Ա Կորնթ. Դ. 15. Փիլիմ. 10.
փ Ա Կորնթ. Թ. 12. 15.

10 Վասն այսորիկ եթէ եկից՝ յի-
շեցուցից զգործս նորա՝ զոր առնէ,
բանիւք չարեօք շատախօսութեան
առնէ զմեզ աշխատ, եւ ոչ այնու-
քիւք շատացեալ, ոչ ինքն ընդունի
զեղբարս, եւ զայնոսիկ՝ որ ընդու-
նին, արգելու. նաեւ յեկեղեցւոյ
եւս հանէ:
11 Սիրելի՛ մի՛ լինիցիս նմանող
չարի՝ այլ բարւոյ. զի որ զբարիս
առնէ՝ յԱստուծոյ է. եւ որ զչարիս
գործէ՝ նա ոչ ետես երբէք զԱս-
տուած:
12 ԶԴեմետրեայ վկայեալ է յամե-
նեցունց, եւ յեկեղեցւոյն՝ եւ ՚ի
ճշմարտութենէ, եւ մեք վկայեմք.
եւ դու գիտես՝ զի ճշմարիտ է մեր
վկայութիւնն:
13 Բազում ինչ ունէի գրել քեզ.
այլ ոչ կամիմ քարտիսիւ եւ գրչով
գրել:
14 Զի ակնունիմ ՚ի մօտոյ իսկ տե-
սանել զքեզ, եւ բերան ՚ի բերան
խօսել:

15 Խաղաղութիւն ընդ քեզ. ող-
ջոյն տան քեզ սիրելիք. ողջոյն
տաջիր սիրելեաց մերոց իւրաքան-
չիւր յանուանէ:

10 Սրա համար թէ որ գամ՝ նորա
գործքերը կը յիշեմ՝ որ նա անումէ.
շատախօսութեան չար խօսքերով
նեղացնում է մեզ. եւ սրանով էլ
բաւական չի լինում, ինքն չի ըն-
դունում եղբայրներին, եւ նրանց
էլ՝ որ ընդունում են, արգելում է.
եւ եկեղեցուց միջից էլ հանում է:
11 Սիրելի՛ մի՛ լինիր նման չարին՝
բայց ի բարուն. ինչու որ ով որ բա-
րի է գործում՝ Աստուածանից է.
եւ ով որ չարիք է գործում՝ նա ոչ
մին ժամանակ Աստուծոյն չի տեսած:
12 Դեմետրը բոլորի վկայութիւն ունի
ի ամէնեցուն, եւ եկեղեցուցն էլ, եւ
իսկ ճշմարտութենիցն էլ, եւ մենք
էլ վկայում ենք. եւ դու գիտում ես
որ մեր վկայութիւնը ճշմարիտ է:
13 Շատ բան ունէի քեզ գրելու,
բայց չեմ կամենում թղթով եւ
թանաքով ի գրել.
14 Պատճառն որ՝ յոյս ունիմ որ
իսկ մօտ ժամանակումս քեզ տես-
նեմ, եւ բերանէ բերան քեզ հետ
խօսիմ:
15 Խաղաղութիւն լինի քեզ հետ.
ողջոյն են տալիս քեզ սիրելիքը.
ողջոյն տուր մեր սիրելիներին ամէն
մէկին իրեն անունովը:

# ԹՈՒՂԹ ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ

## ՅՈՒԴԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՅ

1 ՅՈՒԴԱՅ Յիսուսի Քրիստոսի
ծառայ, եւ եղբայր Յակոբայ.
հեթանոսաց՝ որ յԱստուծոյ Հօրէ էք
սիրեցեալք, եւ Յիսուսի Քրիստոսի
պահեալք եւ ընտրեալք:
2 Ողորմութիւն ձեզ՝ եւ խաղա-
ղութիւն եւ սէր բազմասցի:
3 Սիրելիք՝ զամենայն փոյթ յան-

1 ՅՈՒԴԱՅ Յիսուսի Քրիստոսի
ծառայ, եւ Յակոբայ ա եղբայր.
ձեզ հեթանոսներիդ՝ որ Աստուած Հօ-
րից սիրուած էք, եւ Յիսուս Քրիս-
տոսումն բ պահուած եւ գ ընտրուած:
2 Ողորմութիւն, խաղաղութիւն
եւ սէր շատանայ ձեզ դ վերայ:
3 Սիրելիներ՝ որովհետեւ ամէն

ի Սաղ. ԼԵ. 27. Եսայ. Ա. 16. 17. Ա Պետ. Գ. 11. լ Ա Յովհ. Բ. 29. Գ. 6. 9.
կ Ա Տիմ. Գ. 7. հ Յովհ. ԺԱ. 24. ձ Բ Յովհ. 12.
—
ա Ղուկ. Զ. 16. Գործ. Ա. 13. բ Յովհ. ԺԷ. 11. 12. 15. Ա Պետ. Ա. 5. գ Հռովմ. Ա. 7.
դ Ա Պետ. Ա. 2. Բ Պետ. Ա. 2.

ձին կալեալ գրել ձեզ վասն մերոյ հասարակաց փրկութեանն, հարկ յանձին կալայ գրել ձեզ եւ աղաչել՝ զի ճգնիջիք ՚ի վերայ հաւատոյն, որ միանգամ աւանդեցաւ սրբոց։

4 Քանզի սպրդեցին մարդիկ ոմանք, որ յառաջագոյն բնաւ կատարեալ էին ՚ի այն դատաստան. ամբարիշտք, որ զԱստուծոյ մերոյ շնորհսն դարձուցին յանկարգութիւն. եւ զմի միայն Իշխանն՝ եւ զՏէր մեր Յիսուս Քրիստոս ուրացեալք։

5 Յիշեցուցանել ձեզ այսուհետեւ կամ է ինձ՝ որ գիտէք զամենայն. զի Աստուած միանգամ զժողովուրդն փրկեաց յԵգիպտոսէ. երկրորդ անգամ զանհաւատսն կորոյս։

6 Եւ զհրեշտակս՝ որ ոչ պահեցին զիւրեանց իշխանութիւն, այլ թողին զիւրեանց բնակութիւն, ՚ի դատաստանս մեծի աւուրն՝ մշտնջենաւոր կապանօք պահեաց ՚ի խաւարի։

7 Որպէս Սոդոմ եւ Գոմոր, եւ որ՞ շուրջ զնոքօք քաղաքքն, որ ըստ նմին օրինակի պոռնկեցան զհետ ընկերայն մարմնոց, կան առաջի օրինակ՝ զյաւիտենական հրոյն ընկալեալ զդատաստանն։

8 Ըստ նմին օրինակի եւ սոքա իբրեւ քնով դանդաչեալք՝ զմարմին պղծեն, զտէրութիւնս քամահեն՝ զփառս հայհոյեն։

9 Ուր Միքայէլ հրեշտակապետն՝

ջանք արի որ գրեմ ձեզ մեր հասարակաց փրկութեան համար. հարկ էլաւ ինձ որ գրեմ ձեզ՝ եւ [ե] աղաչեմ, որ ջանք անէք այն հաւատքին վերայ՝ որ մէկանգամ սրբերին պահ [զ] տրւեցաւ։

4 Պատճառն որ մէկքանիսն ներս սպրդան [է] մարդիկ, որ նորանք առաջուց հաստատուած էին այս դատաստանիս [ը] համար. ամբարիշտներ՝ որ մեր Աստուծոյ [թ] շնորհքն անկարգութեան [ժ] դարձրին. եւ այն մէն մինակ (Աստուծոյն եւ) Իշխանին, եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսին [ի] ուրացան։

5 Արդ համար իմ կամքս սա է՝ որ ձեր միտքը բերեմ ձեզ որ այն ամէն բաները գիտումէք. թէ Աստուած մէկանգամ ժողովուրդը փրկեց [լ] Եգիպտոսիցը. եւ երկրորդ անգամ անհաւատներին [խ] կորցուց։

6 Եւ այն հրեշտակներին՝ որ իրենց իշխանութիւնը չը պահեցին, այլ իրենց բնակութիւնը [ծ] թողին, յաւիտենական կապանքներով խաւարի մէջ [կ] պահեց մեծ օրի դատաստանին [հ] համար։

7 Ինչպէս որ Սոդոմ եւ Գոմոր, եւ նորանց չորս կողմի քաղաքները, որ իսկ այն կերպով պոռնկեցան ետեւէ ընկերների մարմիններին հետ, օրինակի համար առաջներս դրված՝ յաւիտենական կրակի դատաստանն [ձ] ընդունելով։

8 Ճիշտ այնպէս էլ՝ սորանք իբր քնով թմրացած՝ մարմինը [ղ] պղծումեն. տէրութիւններին անարգում, եւ փառքը [ճ] հայհոյում։

9 Մինչ որ Միքայէլ հրեշտակա-

ե Տիտ. Ա. 4.
զ Փիլիպ. Ա. 27. Ա Տիմ. Ա. 18. Զ. 12. Բ Տիմ. Ա. 13. Դ. 7.
է Գաղ. Բ. 4. Բ Պետ. Բ. 1.
ը Հռովմ. Թ. 21, 22. Ա Պետ. Բ. 8.
թ Տիտ. Բ. 11. Եբր. ԺԲ. 15.
ժ Բ Պետ. Բ. 10.
ի Տիտ. Ա. 16. Բ Պետ. Բ. 1. Ա Յովհ. Բ. 22.
լ Ա Կորնթ. Ժ. 9.
խ Թուոց. ԺԴ. 29. 37. ԻԶ. 64. Սաղ. ՃԶ. 26. Եբր. Գ. 17. 19.
ծ Յովհ. Ը. 44.
կ Բ Պետ. Բ. 4.
հ Յայտ. Ի. 9.
ձ Ծննդ. ԺԹ. 24. Բ Օրին. ԻԹ. 23. Բ Պետ. Բ. 6.
ղ Բ Պետ. Բ. 10.
ճ Ելից. ԻԲ. 28.

յորժամ բանսարկուն Սատանայի վի-
ճեալ ասէր պատասխանի վասն Մով-
սիսեան մարմնոյն, ոչ ժպրհեցաւ
հայհոյութեան դատաստանին հան-
դուրժել. այլ ասէ, Սաստեսցէ 'ի
քեզ Տէր:
10 Իսկ սոքա զոր ինչ ոչն գիտա-
նան՝ հայհոյեն, և զայն ինչ զոր
բնութեամբ իբրև զանխօս անա-
սունս գիտեն, 'ի նոսին ապակա-
նեսցին:
11 Վայ է նոցա, զի ընդ ճանա-
պարհն Կայենի գնացին, և ընդ
մոլորութեանն Բաղաամայ զեղխե-
ցան զգնոյ վարձուց, և ընդ հա-
կառակութեանն Կորխայ կորեան:
12 Սոքա են աղտեղեալք չոգմոլք՝
երթեալ զհետ ցանկութեանց իւր-
եանց. 'ի սէրս իւրեանց խարդա-
խութեամբ, լինին ընդ ձեզ ուրա-
խակիցք. աներկիւղ զանձինս ճա-
րակեն. ամպք անջրդիք հողմակո-
ծեալք, ՚ծառք պտղակորոյսք ան-
պտուղք, կրկնամեռք՝ խլեալք ար-
մատաքի,
13 Անսաստ ալիք ծովու, որ միշտ
փրփրեն զիւրեանց զանձանց զա-
մօթ. աստեղք մոլարք, որոց վիճ
խաւարին յաւիտենից պահեալ է:
14 Մարգարէացաւ վասն նոցա և
եօթներորդն յԱդամայ Ենովք՝ և
ասէ. Ահաւասիկ եկն Տէր բիւրովք
սրբովք հրեշտակօք,
15 Առնել դատաստան ընդ ամե-

պետն երբոր բանսարկու Սատանայի
հետ հակառակելով պատասխան էր
տալիս Մովսէսի մարմնոյն մ համար,
չը համարձակվեցաւ հայհոյանքի
դատաստան շ անել, բայց ասաց՝
Տէրը քեզ ն սաստէ.
10 Բայց՝ սորանք այն բանն որ չեն
իմանում՝ հայհոյումեն. և ինչ որ
էլ անխօս անասունի պէս բնութե-
նով գիտումեն՝ նորանցով շ կապա-
կանվին:
11 Վայ է նորանց, ինչու որ Կա-
յէնի ճանապարհովը ո գնացին. և
Բաղաամի մոլորութեան պէս չար
վարձքի շահին չ հետևեցին, և
Կորխայ հակառակութեան պէս պ կո-
րան:
12 Սորանք աղտեղի են՝ քաղցրա-
խօս ջ խաբեբայք, որ իրենց ցան-
կութիւններին են ռ հետևում. ի-
րենց սէրը ցոյց տալիս խաբեբայու-
թենով, ձեզ հետ ուրախութեան
ընկեր են լինում, և առանց վախի
իրենց անձներին արածացնում. ան-
ջուր ս ամպեր քամիներով անդա-
դար վ տատանված. պտուղ կորցը-
նող անպտուղ ծառեր, երկու ան-
գամ մեռած՝ արմատից տ պոկված,
13 Ծովու կատաղած ր ալիքներ,
որ միշտ իրենց անձների ամօթն են
ց փրփրացնում. մոլորված աստղ-
ներ, որ յաւիտենական խաւարի
անդունդը նորանց համար է ւ պահ-
ված:
14 Ենօքն էլ՝ որ եօթներորդն է
փ Ադամից, սորանց համար մարգա-
րէացաւ՝ և ասաց. Ահա Տէրը հա-
զարաւոր սուրբ հրեշտակներով
ք եկաւ,
15 Որ դատաստան անէ ամէնին,

մ Դան. Ժ. 13: ԺԲ. 1: Յայտ ԺԲ. 7:
յ Բ Պետ. Բ. 11:
ն Զաք. Գ. 2:
շ Բ Պետ. Բ. 12
ո Ծննդ. Դ. 5: Ա Յովհ. Գ. 12:
չ Թուոց. ԻԲ. 7. 21: Բ Պետ. Բ. 15:
պ Թուոց. ԺԶ. 1:
ջ Բ Պետ. Բ. 13:
ռ Ա Կորնթ. ԺԱ. 21:
ս Առակ. ԻԵ. 14: Բ Պետ. Բ. 17:
վ Եփես. Դ. 14:
տ Մատթ. ԺԵ. 13:
ր Եսայ. ԾԷ. 20:
ց Փիլիպ. Գ. 19:
ւ Բ Պետ. Բ. 17:
փ Ծննդ. Ե. 18:
ք Բ Օրին. ԼԳ. 2: Դան. Է. 10: Զաք. ԺԴ. 5: Մատթ. ԻԵ. 31: Բ Թես. Ա. 7: Յայտ. Ա. 7:

նայնի, և յանդիմանել զամենայն
ամպարիշտս վասն գործոց իւրեանց՝
զոր ամպարշտեցին. և վասն ամե-
նայն խիստ բանից, զոր խօսեցան
զնմանէ մեղաւորք և ամպարիշտք։

16 Սոքա են տրտնջօղք և չոգ-
մոգք, երթեալք ըստ իւրեանց ան-
ձանց ցանկութեանց. և բերանք
նոցա համբարտաւանս բարբառին.
առնուն ակն երեսաց վասն օգտի։

17 Բայց դուք սիրելիք՝ յիշեցէք
զկանխասաց բանս առաքելոցն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.
18 Զի ասէին ձեզ, եթէ 'ի յետին
ժամանակս եղիցին մարդք արհա-
մարհօղք, երթեալք ըստ իւրեանց
ամպարշտութեանցն ցանկութեանց։

19 Սոքա են նշաւակեալք՝ շնչա-
ւորք, որ զՈգին ոչ ունիցին։
20 Այլ մեք սիրելիք՝ եղիցուք շի-
նեալ զանձինս սրբութեամբն հաւա-
տոյ 'ի Հոգին Սուրբ. կացցուք յա-
ղօթս,
21 Պահել զանձինս սիրովն Աս-
տուծոյ. ակնունել ողորմութեանն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի
կեանսն յաւիտենականս։

22 Եւ ոմանց դատապարտելոց լի-
նիջիք կշտամբիչք,
23 Եւ զոմանս ապրեցուցանիջիք՝
յափշտակեալ 'ի հրոյ. և ոմանց
ողորմեսջիք երկիւղիւ ատել, և
զպատմուճանն որ 'ի մարմնոյն իցէ
աղտեղեալ։

և ամպարիշտներին յանդիմանէ ի-
րենց գործքերին համար՝ որ նորանք
ամպարշտութենով գործեցին. և
ամէն կակիծ և ծանր խօսքերին
համար՝ որ ամպարիշտները ու մե-
ղաւորները նորանից * խօսեցին։
16 Սորանք են տրտնջօղներ և
փախօղներ, որ իրենց անձների
ցանկութիւնների պէս են գնում.
և նորանց բերանները ամբարտա-
ւան բաներ են * խօսում. երես-
պաշտութիւն են անում շահի * հա-
մար։
17 Բայց դուք սիրելիներ՝ յիշեցէք
մեր Տէր Յիսուսի Քրիստոսի առա-
քելոց առաջուց ասած խօսքերը.
18 Ինչու որ ասումէին ձեզ՝ թէ
Յետին ժամանակներումն անարգօղ-
մարդիկ կը լինին, որ իրենց ամբա-
րշտութեան ցանկութեանց ետե-
ւէն * կը գնան։
19 Սորանք են ջոկված * հեռացած
և շնչաւորներ, որ Հոգի չունին։
20 Բայց մենք սիրելիներ՝ ձեր անձ-
ները սուրբ հաւատքին վերայ շի-
նենք Սուրբ Հոգովը, աղօթք
է անենք,
21 Որ անձներս Աստուծոյ սիրովը
պահենք. մեր Տէր Յիսուսի Քրիս-
տոսի ողորմութեանը մտիկ տալով՝
յաւիտենական կենացը հասնելոյ
է համար։
22 Եւ մէկքանիսին որ դատա-
պարտվելոյ վերայ են, խրատ տուէք։
23 Եւ մէկքանիսին * ազատեցէք՝
կրակից դուրս է քաշելով. և մէկ-
քանիսին վերայ խղճացէք՝ որ վա-
խով դատապարտէք այն շորն էլ՝
որ մարմինը կեղտոտած է է։

ժ Ա Թագ. Բ. 3. Սաղ. ԼԱ. 18. ՂՂ. 4. Մաղ. Գ. 13.
ժա Բ Պետ. Բ. 18.
ժբ Առակ. ԻԸ. 21. Յակ. Բ. 1 9.
ժգ Բ Պետ. Գ. 2.
ժդ Ա Տիմ. Դ. 1. Բ Տիմ. Գ. 1. Դ. 3. Բ Պետ. Բ. 1. Գ. 3.
ժե Առակ. ԺԸ. 1. Եզեկ. ԺԴ. 7. Ովս. Դ. 14. Թ. 10. Եբր. Ժ. 25.
ժզ Ա Կորնթ. Բ. 14. Յակ. Գ. 15.
ժէ Կող. Բ. 7. Ա Տիմ. Ա. 4.
ժը Հռոմ. Ը. 26. Եփես. Զ. 18.
ժթ Տիտ. Բ. 13. Բ Պետ. Գ. 12.
ի Հռոմ. ԺԱ. 14. Ա Տիմ. Դ. 16.
իա Ամովս. Դ. 11. Ա Կորնթ. Գ. 15. Զաք. Գ. 2.
իբ Զաք. Գ. 4. 5. Յայտ. Գ. 4.

24 Եւ այնմ, որ կարողն է պահել զձեզ անսայթաքս եւ անբիծս, հաստատել առաջի իւրոյ փառացն աներկեան ցնծութեամբ.

25 Միայն Աստուծոյ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ՝ փառք, մեծութիւն, զօրութիւն եւ իշխանութիւն՝ յառաջ քան զամենայն յաւիտեանս, եւ այժմ եւ յամենայն յաւիտեանս. ամէն։

24 Եւ նորան՝ որ կարող է ւ անսաբառ եւ անկեղծ պահել փ ձեզ, ու իրեն փառաց առաջին կանգնեցնել առանց վախի ցնծութենով.

25 Այն մին Աստուծոյն՝ եւ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսին՝ լինի փառք, մեծութիւն, զօրութիւն եւ իշխանութիւն ամէն յաւիտեաններիցն առաջ, եւ հիմի եւ ամէն յաւիտեաններուն. ք ամէն։

# ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ
## ՅՈՎՀԱՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ
### ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱՒԵՏԱՐԱՆՉԻՆ

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ Յիսուսի Քրիստոսի, ՚ի ձեռն որոյ ետ Աստուած ցուցանել ծառայից իւրոց՝ որ ինչ լինելոց է վաղվաղակի. եւ նշանակեաց առաքելով ՚ի ձեռն հրեշտակի իւրոյ, առ ծառայ իւր Յովհաննէս։

2 Որ վկայեաց զվկայութիւն բանին Աստուծոյ, եւ զվկայութիւն Յիսուսի Քրիստոսի՝ զոր ետես. եւ որ էր՝ եւ որ լինելոցն էր յետ այնորիկ.

3 Երանի որ կարդասցէ կամ լուիցէ զբանս մարգարէութեանս, եւ պահեսցէ զոր ՚ի սմա գրեալ է. զի ժամանակս մերձեալ է։

4 ՚Ի Յովհաննէ առ եօթն եկեղեցիսն՝ որ են յԱսիա, շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ՝ յէէն՝ եւ որ էն՝ եւ որ գալոցն է,

1 ՅԻՍՈՒՍԻ Քրիստոսի յայտնութիւնն՝ որն որ Աստուած տուաւ իրեն՝ որ ցոյց տայ իրեն ա ծառաներին՝ այն որ շուտով պիտի բ լինի. եւ իրեն հրեշտակի ձեռովը ուղարկեց ցոյց տուաւ իրեն Յոհաննէս ծառային.

2 Որ վկայեց Աստուծոյ բանին, եւ Յիսուսի Քրիստոսի դ վկայութեանն՝ որ ե տեսաւ. նա որ էր, եւ որ նորանից ետեւ պիտի լինէր։

3 Երանի նորան՝ որ կարդայ կամ լսէ այս մարգարէութեան խօսքերը, եւ պահէ նա՝ որ սորանում գրված զ է. ինչու որ ժամանակը մօտացել է է։

4 Յոհաննէսից եօթն եկեղեցիներին՝ որ Ասիայի մէջ են, շնորհք լինի ձեզ հետ՝ եւ խաղաղութիւն Աստուածանից՝ նորանից որ ը է.

ւ Հռովմ. ԺԶ. 25. Եփես. Գ. 20.
փ Կող. Ա. 22.
ք Հռովմ. ԺԶ. 27. Ա Տիմ. Ա. 17. Բ. 3.

ա Յովհ. Գ. 32. Ը. 26. ԺԲ. 49.
բ Գլ. Դ. 1. Համար. 3.
գ Գլ. ԻԲ. 16.
դ Ա Կորնթ. Ա. 6. Գլ. Զ. 9. ԺԲ. 17. Համար. 9.
ե Ա Յովհ. Ա. 1.
զ Ղուկ. ԺԱ. 28. Գլ. ԻԲ. 7.
է Հռովմ. ԺԳ. 11. Յակ. Ե. 8. Ա Պետ. Դ. 7. Գլ. ԻԲ. 10.
ը Ելից. Գ. 14. Համար. 8.

եւ յեօթն զօրութեանց Հոգւոյն՝ որ
է առաջի աթոռոյն իւրոյ ։

5 Եւ ՚ի Յիսուսէ Քրիստոսէ հա-
ւատարիմ վկայէն, որ է անդրանիկ
՚ի մեռելոց, եւ իշխան թագաւո-
րութեանց երկրի․ որ սիրեաց զ
մեզ, եւ ելոյծ զկապանս մեղաց
մերոց արեամբն իւրով ։
6 Եւ արար զմեզ թագաւորս եւ
քահանայս Աստուծոյ եւ Հօր իւրոյ․
որում փառք եւ զօրութիւն՝ այժմ
եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտե-
նից․ ամէն ։
7 Ահաւասիկ գալոց է ընդ ամպս․
եւ տեսցեն զնա ամենայն աչք, եւ
տեսցեն զնա ծագք երկրի, եւ որք
խոցեցին զնա ամենեքեան յերկրի,
եւ կոծեսցեն ՚ի վերայ նորա․ այո՝
ամէն ։
8 Ես եմ Այբ եւ ես եմ Քէ, ասէ
Տէր Աստուած, որ էն՝ եւ որ է՝ եւ
որ գալոց է՝ Ամենակալ ։

9 Ես Յովհաննէս եղբայր ձեր եւ
հաւասարակից նեղութեան՝ եւ ար-
քայութեան՝ եւ համբերութեան որ
՚ի Քրիստոս Յիսուս․ եղէ ես ՚ի
կղզւոջն որ անուանեալ կոչի Պատ-
մոս՝ վասն բանին եւ վասն վկայու-
թեանն Յիսուսի Քրիստոսի ։
10 Եւ եղեւ յիս Հոգի ՚ի կիւրա-
կէի աւուր, եւ լուայ զձայն զհետ
իմ զմեծ իբրեւ զձայն փողոյ, որ

եւ որ [թ] էր, եւ որ գալու է, եւ
եօթն Հոգիներէն, որ նորա աթոռին
առաջքին [ժ] են ։
5 Եւ Յիսուս Քրիստոսէն՝ այն հա-
ւատարիմ [ի] վկայէն, որ մեռելներուն
միջէն առաջինեկն [լ] է, եւ երկրի
թագաւորներուն [խ] իշխանը․ որ մեզ
[ծ] սիրեց, եւ մեր մեղաց կապանք-
ներէն արձակեց իրեն [կ] արիւնովը,
6 Եւ մեզ արաւ թագաւորներ եւ
քահանաներ Աստուծոյ եւ իրեն Հօր
[հ] համար․ որ նորան փառք եւ զօ-
րութիւն՝ հիմիկ եւ միշտ եւ յաւի-
տեանս յաւիտենից․ [ձ] ամէն ։
7 Ահա գալիս է ամպերով․ եւ
ամէն աչքերը կը տեսնեն նորան,
եւ երկրի ծայրերը, եւ նորանք էլ
որ խոցեցին [ղ] նորան․ եւ երկրի
ամէն ազգերը կոծ կանեն նորա վե-
րայ․ իրաւի՝ [ճ] ամէն ։
8 Ե՛ս եմ Ալֆան՝ եւ ես եմ Քէն,
ասումէ Տէր [մ] Աստուած, նա որ է՝
եւ որ էր՝ եւ որ գալու է՝ [յ] Ամե-
նակարողը ։
9 Ես Յօհաննէս ձեր եղբայր եւ
հաւասար [ն] ընկեր նեղութեան՝ եւ
[շ] արքայութեան եւ համբերութեան
որ Քրիստոս Յիսուսումն է․ ես
Պատմոս՝ ասուած կղզիումն էի՝ Աս-
տուծոյ բանին համար, եւ Յիսուսի
Քրիստոսի վկայութեանը [ո] համար ։
10 Եւ Հոգի էկաւ ինձ [չ] վերայ
կիրակի [պ] օրը․ եւ իմ ետեւէս մին
մեծ ձայն լսեցի ինչպէս փողի, որ

թ Յովհ. Ա. 1։
ժ Զաք. Գ. 9։ Դ. 10։ Գլ. Գ. 1։ Դ. 5։ Ե. 6։
ի Յովհ. Ը. 14։ Ա Տիմ. Զ. 13։ Գլ. Գ. 14։
լ Ա Կորնթ. ԺԵ. 20։ Կող. Ա. 18։
խ Եփես. Ա. 20։ Գլ. ԺԷ. 14։ ԺԹ. 16։
ծ Յովհ. ԺԳ. 34։ ԺԵ. 9։ Գաղ. Բ. 20։
կ Եբր. Թ. 14։ Ա Յովհ. Ա. 7։
հ Ա Պետ. Բ. 5. 9։ Գլ. Ե. 10։ Ի. 6։
ձ Ա Տիմ. Զ. 16։ Եբր. ԺԳ. 21։ Ա Պետ. Դ. 11։ Ե. 11։
ղ Դան. Է. 13։ Մատթ. ԻԴ. 30։ ԻԶ. 64։ Գործ. Ա. 11։
ճ Զաք. ԺԲ. 10։ Յովհ. ԺԹ. 37։
մ Եսայ. ԽԱ. 4։ ԽԴ. 6։ ԽԸ. 12։ Համար 10, 17։ Գլ. Բ. 8։ ԻԱ. 6։ ԻԲ. 13։
յ Համար. 4։ Գլ. Դ. 8։ ԺԱ. 17։ ԺԶ. 5։
ն Փիլիպ. Ա. 7։ Դ. 14։ Բ Տիմ. Ա. 8։
շ Հռովմ. Ը. 17։ Բ Տիմ. Բ. 12։
ո Գլ. Զ. 9։ Համար. 2։
չ Գործ. Ժ. 10։ Բ Կորնթ. ԺԲ 2։ Գլ. Դ. 2։ ԺԷ. 3։ ԻԱ. 10։
պ Յովհ. Ի. 26։ Գործ. Ի. 7։ Ա Կորնթ. ԺԶ. 2։

ասէր ցիս · Ես եմ Ալփա եւ Ով ·
առաջին եւ վերջին ։
11 Զոր տեսանես՝ գրեա ՚ի գիրս,
եւ տուր տանել յեօթն եկեղեցիս՝
որ յԵփեսոս եւ ՚ի Զմիւռնիա՝ ՚ի
Պերգամոնն եւ ՚ի Թիւատիրա, եւ
՚ի Սարդիկէ, եւ ՚ի Փիղադեղփիա,
եւ ՚ի Լաւոդիկեա ։
12 Եւ դարձայ տեսանել զձայնն՝
որ խօսէր ցիս · եւ ՚ի դառնալն ի-
մում տեսի եօթն ճրագարան ոսկի ։
13 Եւ ՚ի մէջ եօթն ճրագարա-
նացն նման Որդւոյ մարդոյ, զգե-
ցեալ պատմուճան պճղնաւոր, եւ
գօտեւորեալ առ ստեամբքն գօտի
ոսկեղէն ·
14 Եւ գլուխ նորա եւ հերքն ի-
բրեւ զասր սպիտակ՝ եւ որպէս ըզ
ձիւն. եւ աչք նորա որպէս բոց հրոյ ·
15 Եւ ոտք նորա նմանեալ պղնձոյ
ծխելոյ ՚ի մէջ հնոցի հրաչէկ · եւ
ձայն նորա իբրեւ զձայն ջուրց բազ-
մաց ։
16 Եւ ունէր յաջոյ ձեռինն իւրում
աստեղս եօթն, եւ ՚ի բերանոյ նո-
րա ելանէր սուր երկսայրեան ·
եւ երեսք նորա իբրեւ զարեգակն
ճառագայթեալ երեւէին ։
17 Եւ իբրեւ տեսի զնա՝ անկայ
առ ոտս նորա իբրեւ զմեռեալ · եւ
եդ ՚ի վերայ իմ զաջ իւր՝ եւ ասէ
ցիս · Մի երկնչիր, ես եմ առաջին
եւ ես եմ յետին ·

ասումէր լ ինձ · Ես եմ Ալֆան եւ
խ Օն, առաջինը եւ ծ վերջինը ։
11 Ինչ որ տեսանումես՝ գրէ մին
գրքի մէջ, եւ տուր տանել այն
եօթն եկեղեցիներին որ Եփեսոսի
եւ Զմիւռնիայի, եւ Պերգամոնի,
եւ Թիւատիրայի, եւ Սարդիկէի,
եւ Փիլադելփիայի, եւ Լաւոդիկ-
եայի մէջ են ։
12 Եւ դարձայ որ այն ձայնն տեսա-
նեմ՝ որ ինձ հետ խօսումէր · եւ
երբոր դարձայ՝ եօթն ոսկի ճրագա-
կալ կ տեսայ ։
13 Եւ այն եօթն ճրագակալների
հ մէջտեղը (մին կար) Որդւոյ մարդոյ
ձ նման, որ երկար վերարկու ունէր
հագած մինչեւ ոտների ծայրերը, եւ
ծծերի մօտ ոսկի գօտի ղ կապած ·
14 Եւ նորա գլուխն ու մազերը
բրդի պէս՝ եւ ձիւնի պէս ճ սպիտակ-
եւ նորա աչքերը կրակի բոցի մ պէս ·
15 Եւ նորա ոտները կարմրած յ
պղնձի պէս որ փռան մէջ կրա-
կով կարմրած ն է, եւ նորա ձայնը
շատ ջրերի ձայնի շ պէս ·
16 Եւ իրեն աջ ձեռքին մէջ եօթն
աստղեր ո ունէր, եւ նորա բերա-
նիցն երկու բերանի սուր էր դուրս
չ գալիս, եւ նորա երեսն արեգա-
կան պէս ճառագայթած էր պ երե-
ւում ։
17 Եւ երբոր տեսայ նորան՝ մեռածի
պէս վէր ընկայ նորա ոտների ջ ա-
ռաջին · եւ իրեն աջ ձեռն ինձ վե-
րայ դրաւ՝ եւ ասաց ռ ինձ · Մի վա-
խենար, ես եմ առաջինը եւ ս վեր-
ջինը ·

լ Գլ. Դ. 1. Ժ. 8.
խ Համար. 8.
ծ Համար. 17.
կ Համար. 20. Եսայ ԽԵ. 37. Զաք. Դ. 2.
հ Գլ. Բ. 1.
ձ Եզեկ. Ա. 26. Դան. Է. 13. Ժ. 16. ԺԴ. 14.
ղ Դան. Ժ. 5.
ճ Յայտ. ԺԵ. 6.
մ Դան. Է. 9.
յ Դան. Ժ. 6. Գլ. Բ. 18. ԺԹ. 12.
ն Եզեկ. Ա. 7. Դան. Ժ. 6. Գլ. Բ. 18.
շ Եզեկ. ԽԳ. 2. Դան. Ժ. 6. Գլ. ԺԴ. 2. ԺԹ. 6.
ո Համար 20. Գլ. Բ. 1. Գ. 1.
չ Եսայ. ԽԹ. 2. Եփես. Զ. 17. Եբր. Դ. 12. Գլ. Բ. 12. 16. ԺԹ. 15. 21.
պ Գործ. ԻԶ. 13. Գլ. Ժ. 1.
ջ Եզեկ. Ա. 28.
ռ Դան. Ը. 18. Ժ. 10.
ս Եսայ. ԽԱ. 4. ԽԴ. 6. ԽԲ. 12. Գլ. Բ. 8. ԻԲ. 13. Համար. 10.

18 Եւ ես եմ կեանք՝ եւ ես նոյն
որ մեռայ, եւ եմ կենդանի այժմ
եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտե-
նից, ամէն. եւ ունիմ զփականս
մահու եւ դժոխոց։
19 Գրեա զոր տեսանես՝ որ էն,
եւ որ յապայն՝ եւ որ հանդերձեալ
է լինել աստ։
20 Զխորհուրդ եօթն աստեղացդ՝
զոր տեսեր յաջու իմ, եւ զեօթն
ճրագարանս ոսկիս. եօթն աստեղ-
քըն՝ հրեշտակք եօթն եկեղեցեացն
են, եւ ճրագարանքն եօթն՝ եօթն
եկեղեցիքն են։

18 Եւ ե կենդանին, եւ ես էլ նա որ
մեռայ, եւ ահա՛ կենդանի եմ հիմիկ
եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտե-
նից, զ ամէն. եւ ունիմ մահու եւ
դժոխքի է բանալիքները։
19 Գրէ ինչ որ ը տեսանումես՝ եւ
ինչ որ է է, եւ ինչ որ յետոյ լինե-
լու է։
20 Այն եօթն աստեղներին խոր-
հուրդն որ իմ աջ ձեռքս մէջ թ տե-
սար, եւ այն եօթն ոսկի ժ ճրագա-
կալները. եօթն աստեղները՝ եօթն
եկեղեցիներին հրեշտակներն են, եւ
եօթն ճրագակալները՝ եօթն եկե-
ղեցիներն ի են։

## ԳԼ · Բ

1 Առ հրեշտակ Եփեսացւոց եկե-
ղեցւոյն գրեա. Այսպէս ասէ Կա-
լողն՝ որ ունի զաստեղս եօթն յա-
ջու ձեռին իւրում, եւ շրջի 'ի մէջ
եօթն աշտանակի ոսկւոյ։
2 Գիտեմ զգործս քո եւ զվաս-
տակս քո եւ զհամբերութիւն քո.
եւ զի ոչ բառնաս զչարս, եւ փոր-
ձեցեր՝ որ ասեն զինքեանս առաք-
եալս՝ եւ ոչ են, եւ Հերքեցեր՝
եւ ստեն։
3 Եւ համբերեցեր եւ վշտացար
վասն անուան իմոյ՝ եւ աշխատե-
ցար։
4 Այլ ունիմ առ քեզ, զի զսէրն
քո զառաջին թողեր։
5 Յիշեա այժմ ուստի անկարն՝
եւ ապաշխարեա, եւ զառաջին զգոր-
ծըսն քո արա. ապա թէ ոչ՝ գամ
ես վաղվաղակի, եւ շարժեցից զաշ-
տանակս քո 'ի տեղւոջէ իւրմէ՝ ա-
թէ ոչ ապաշխարեսցես։

1 Եփեսացւոց եկեղեցւոյ հրեշտա-
կին գրէ. Այսպէս է ասում այն
Կալողն՝ որ եօթն աստեղներն ունի
իրեն աջ ա ձեռումը, եւ եօթն ոսկի
ճրագակալներին մէջ ման է բ գալիս։
2 Գիտեմ քո գործքերդ՝ եւ
քո վաստակներդ եւ քո գ համբե-
րութիւնդ. եւ որ չարերին չես
համբերում, եւ փորձեցիր դ նորանց
որ իրենց առաքեալ են ասում՝ եւ
չեն, եւ Նրրայեցիր՝ եւ սուտ ե են։
3 Եւ իմ անուանս համար համ-
բերեցիր, եւ նեղութիւն քաշեցիր
եւ աշխատեցիր (եւ ձեռ չը թուլացար)։
4 Բայց ես եմ ասում քեզ՝ որ քո
առաջին սէրդ թողիր։
5 Յիշէ թէ որտեղից վէր ընկար՝
եւ զղջա, եւ քո առաջին գործ-
քերդ արա. ապա թէ չէ՝ ես կը
գամ շուտով, եւ քո ճրագակալդ
կը շարժեմ իրեն տեղիցը՝ թէ որ
է չապաշխարես։

ե Յովհ. ԺԱ. 25. ԺԴ. 5. Հռովմ. Զ. 9.
զ Գլ. Դ. 9. Ե. 14.
է Սաղ. ԿԸ. 20. Գլ. Ի. 1.
ը Համար. 12.
թ Գլ. Բ. 1.
ժ Գլ. Գ. 1.
ի Համար. 16.
լ Համար. 12.
խ Մաղ. Բ. 7. Գլ. Բ. 1.
ծ Զաք. Դ. 2. Մատթ. Ե. 15. Փիլիպ. Բ. 15.

—

ա Գլ. Ա. 16. 20.
բ Գլ. Ա. 13.
գ Սաղ. Ա. 6. Համար 9. 13. 19. Գլ. Ա. 8. 13.
դ Ա Յովհ. Դ. 1.
ե Բ Կորնթ. ԺԱ. 13. Բ Պետ. Բ. 1.
զ Գաղ. Զ. 9. Եբր. ԺԲ 3. 5.
է Մատթ. ԻԱ. 41. 43.

6 Այդ՝ զայս ունիս՝ զի ատեցես
զգործսն Նիկողայոսի՝, զոր ես ա-
տեմ ։
7 Որ ունի ականջս լսելոյ՝, լուի-
ցէ զինչ ասէ Հոգին Սուրբ առ ե-
կեղեցիս ․ Որ յաղթէն , տաց նմա
ուտել 'ի փայտէն կենաց՝ որ է 'ի
մէջ դրախտին Աստուծոյ ։

8 Եւ առ հրեշտակ Զմիւռնացւոց
եկեղեցւոյն գրեա ․ Այսպէս ասէ
Անսկիզբն եւ անվախճանն , որ ե-
ղեւ մեռեալ՝ եւ կենդանացաւ ։
9 Տեսի զգործս քո՛ եւ զնեղու-
թիւն եւ զաղքատութիւն , այլ աղ-
քատութիւն քո մեծութիւն եղիցի ․
եւ զհայհոյութիւնն՝ որ ասէին զին-
քեանս Հրէայս զոլ՝ եւ չէին ինչ ,
այլ ժողով Սատանայի ։

10 Մի երկնչիր՝ վասն որոյ կամիս
չարչարիլ ․ ահա հանդերձէ Բան-
սարկուն արկանել 'ի ձէնջ 'ի բանտ,
զի փորձիցիք , եւ ունիք նեղու-
թիւն աւուրս տասն ․ լեր հաւատա-
րիմ մինչեւ 'ի մահ , եւ տաց քեզ
զպսակն կենաց ։
11 Որ ունի ականջս լսելոյ՝ լուի-
ցէ զինչ Հոգին Սուրբ ասէ առ ե-
կեղեցիս ․ Որ յաղթէ , ոչ անիրաւի
յերկրորդ մահուանէն ։
12 Եւ առ հրեշտակն՝ որ 'ի Պեր-
գամոն եկեղեցին , գրեա ․ Այսպէս
ասէ՝ որ ունի զսուսերն երկսայրի
սրեալ ։
13 Տեսի զգործս քո՛ եւ զի բնա-
կեալ ես ուր աթոռն է Սատանայի,
եւ ունիս զանուն իմ, եւ ոչ ուրա-
ցար զհաւատս իմ յաւուր յորում
Անթիպաս վկայն իմ հաւատարիմ

6 Բայց այս բանս ունիս՝ որ Նի-
կողայոսի գործքերն ատես , նա որ
ես ալ ը ատեմ ։
7 Ով որ լսելոյ ականջ ունի՝ թող
լսէ ինչ որ Սուրբ Հոգին ասումէ
թ եկեղեցիներին ․ Ով որ յաղթումէ՝
նորան ժ կենաց փայտիցն ուտել կը
տամ, որ Աստուծոյ դրախտին մէ-
ջըն ի է ։
8 Եւ Զմիւռնացոց եկեղեցւոյ հրե-
շտակին գրէ ․ Այսպէս է ասում
լ նա՝ որ ոչ սկիզբն ունի եւ ոչ վերջ ,
որ եղաւ մեռեալ՝ եւ կենդանացաւ ․
9 Տեսի քո գործքերդ եւ նեղու-
թիւնդ եւ խ աղքատութիւնդ ․ բայց
քո աղքատութիւնդ մեծութիւն ծ կը
լինի ․ եւ կ նորանց հայհոյանքն որ ի-
րենց համար ասումեն թէ Հրէայ
են՝ եւ չեն , բայց Սատանայի ժո-
ղովք հ են ։
10 Մի վախենար այն բաներիցն
որ պիտի չարչարուիս ․ ահա Սատա-
նան պատրաստուած է որ ձեզանից
բանտի մէջ ձգէ , որ փորձուիք , եւ
տասն օր նեղութիւն ձ կունենաք ․
հաւատարիմ կաց մինչեւ ղ մահ , եւ
կենաց պսակը կը տամ ճ քեզ ։
11 Ով որ լսելու ականջ ունի՝ թող
լսէ ինչ որ Սուրբ Հոգին ասումէ
մ եկեղեցիներին ․ ով որ յաղթումէ ,
երկրորդ մահիցը վնաս յ չի քաշիլ ։
12 Եւ Պերգամայի եկեղեցոյ հրեշ-
տակին գրէ ․ Այսպէս՛ է ասում նա՝
որ երկու բերանի սուրը սրած
ն ունի ․
13 Տեսի քո շ գործքերդ , եւ որ
դու այնտեղն ես բնակվում՝ որտեղ
որ Սատանայի աթոռն ո է ․ եւ իմ
անունս ունիս , եւ իմ հաւատքս
չուրացար՝ այն օրն , որ իմ Անթի-

ը Համար . 15 ։
թ Մատթ . ԺԱ . 15 . ԺԳ . 9 . 43 ։ Համար . 11 . 17 . 29 . Գլ . Գ . 6 . 13 . 22 ։ ԺԳ . 9 ։
ժ Ծննդ . Բ . 9 ։
ի Գլ . ԻԲ . 2 . 14 ։
լ Գլ . Ա . 8 . 17 , 18 ։
խ Համար . 2 ։
ծ Ղուկ . ԺԲ . 21 ։ Ա Տիմ . Զ . 18 ։ Յակ . Բ . 5 ։
կ Հռովմ . Բ . 17 . 28 . 29 ։ Թ . 6
հ Գլ . Գ . 9 ։
ձ Մատթ . Ժ . 22 ։
ղ Մատթ . ԻԴ . 13 ։
ճ Յակ . Ա . 12 ։ Գլ . Գ . 11 ։
մ Համար . 7 ։ Գլ . ԺԳ . 9 ։
յ Գլ . Ի . 14 ։ ԻԱ . 8 ։
ն Գլ . Ա . 16 ։
շ Համար . 2 ։
ո Համար . 9 ։

եղեւ · զի վկայ է իմ հաւատարիմ
ամենայն հաւատացելոց՝ որ սպանաւ
'ի ձէնջ , ուր կայք ուր Սատանայ է
բնակեալ :

14 Այլ ունիմ առ քեզ սակաւ ·
զի կան առ քեզ վարդապետութիւ–
նքն Բաղաամու՝ որ ուսոյց զԲաղակ
դնել գայթակղութիւն առաջի որդ–
ւոցն Իսրայէլի , ուտել 'նոցա զոհ–
եալ՝ եւ պոռնկել :

15 Այսպէս եւ դու ունիս զվար–
դապետութիւնն Նիկողայեցւոց՝ զոր
ես ատեմ :
16 Արդ՝ ապաշխարեա , ապա թէ
ոչ՝ գամ վաղվաղակի · եւ պատե–
րազմեցայց ընդ 'նոսա սրով բերա–
նոյ իմոյ :
17 Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուի–
ցէ զինչ Հոգին ասէ առ եկեղեցիս ·
Որ յաղթէ՝ տաց 'նմա ուտել 'ի մա–
նանայէն թաքուցելոյ , եւ տաց
'նմա զգիրն սրբութեան · եւ գրեալ
անուն 'նոր 'ի գիրն , զոր ոչ՝ոք գի–
տէ՝ բայց միայն որ առնուն :

18 Եւ առ հրեշտակն որ 'ի Թի–
ւատիրայ եկեղեցւոյն՝ գրեա · Այսպէս
ասէ Որդին Աստուծոյ , որոյ աչք
իւր են իբրեւ զբոց հրոյ , եւ ոտք
'նորա 'նման պղնձի ծխելոյ :
19 Գիտեմ զգործս քո՝ եւ զսէր եւ
զհաւատս՝ եւ զպաշտօն քո համբե–
րութեամբ · զի բազում է վաստակ
քո վերջինն քան զառաջինն :

20 Այլ ունիմ առ քեզ բազում ·
զի թողեր զկինն զՅեզաբէլ · որ
ասէր զինքն մարգարէ , եւ ու–
սուցանէր մոլորութ՛եան զծառայս

պաս վկաս հաւատարիմ էրաւ · (ին–
չու որ ամէն հաւատացելոց՝ իմ հա–
ւատարիմ վկաս է ·) որ ձեր մէջումն
սպանուեցաւ՝ որտեղ որ Սատանան
է բնակւում :
14 Բայց քեզ դէմ քիչ բան ունիմ ·
պատճառն որ քեզ մօտ կայ Բաղա–
ամի վարդապետութիւնն՝ որ Բա–
ղակին սովորցրուց , որ գայթակղու–
թիւն դնէ Իսրայէլի որդոց առա–
ջին , որ նորանք կռոց մատաղ ու–
տեն՝ եւ պոռնկութիւն անեն :
15 Այսպէս էլ դու՝ Նիկողայեցոց
վարդապետութիւնն ունիս՝ որ ես
— ատում եմ :
16 Ուրեմն ապաշխարէ , ապա թէ
չէ՝ կը գամ շուտով , եւ կը կռուիմ
նորանց հետ իմ բերանիս — սրովը :

17 Ով որ ունի ականջ ունի՝ թող
լսէ ինչ որ Հոգին ասում է եկե–
ղեցիներին · Ով որ յաղթում է՝ այն
պահուած մանանայիցն ուտել կը
տամ նորան , եւ սրբութեան գիր
կը տամ նորան · եւ այն գրի վերայ
նոր անուն գրուած , որ ոչ մինը չի
գիտում , բայց նա՝ որ — առնում է :
18 Եւ Թիւատիրի եկեղեցոյ հրեշ–
տակին գրէ · Այսպէս է ասում Աս–
տուծոյ Որդին , որ նորա աչքերն
կրակի բոցի նման են , եւ նորա ոտ–
ները մաքուր զտած պղնձի ։ պէս ·
19 Գիտեմ քո ։ գործքերդ , եւ սէրդ ,
եւ հաւատդ , եւ քո ծառայու–
թիւնդ , եւ քո համբերութիւնդ ·
որ քո վերջին աշխատանքդ շատ է
քանթէ առաջինը :
20 Բայց քեզ շատ եմ ասում · նա
որ Յեզաբէլ կնկանը թող ասիր՝
որ մարգարէ էր ասում իրեն , եւ
իմ ծառաներիս մոլորութիւն է — սո–

ւ Թու . ԻԴ . 14 ։ ԻԵ . 1 ։ ԼԱ . 16 ։ Բ Պետ . Բ . 15 ։ Յուդ . 11 ։
դ Համար . 20 ։ Գործ . ԺԵ . 29 ։
Ա Կորնթ . Ը . 9 , 10 ։ Ժ . 19 , 20 ։
Է Ա Կորնթ . Զ . 13 ։
— Համար . 6 ։
— Եսայ . ԺԱ . 4 ։ Բ Թես . Բ . 8 ։
Գլ . Ա . 16 . ԺԹ . 15 . 21 ։
Հ Համար . 7 . 11 ։
— Գլ . Գ . 12 ։ ԺԹ . 12 ։
— Գլ . Ա . 14 , 15 ։
յ Համար . 2 . 9 13 ։
— Գ Թագ . ԺԶ . 31 ։ ԻԱ . 25 ։ Դ Թագ . Թ . 7 ։

իմ՝ պոռնկել եւ ուտել զզոհեալ ։

21 Եւ ետու նոցա ժամանակ ապաշխարել զպոռնկութենէն իւրեանց՝ եւ ոչ ապաշխարեցին ։
22 Ահաւասիկ ես արկանեմ զնա 'ի հնոց, եւ զգործակիցս իւր ընդ որս չնացաւ՝ 'ի նեղութիւնս մեծամեծս . եթէ ոչ ապաշխարեսցեն 'ի գործոց իւրեանց ։
23 Եւ զորդիս նոցա սպանից մահուամբ . եւ ծանիցեն ամենայն եկեղեցիք՝ թէ ես եմ որ յանդիմանեմ զերիկամունս եւ զսիրտս . եւ տամ ձեզ իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց ։
24 Այլ ձեզ ասեմ որք 'ի Թիւատիր էք, եւ ոչ ունիք զվարդապետութիւնս զայս . որ ոչ ծանեայք զխորս Սատանայի՝ զոր խօսին . Ո՛չ արկից զձեօք ծանրութիւն ։

25 Այլ զոր ունիք, պահեցէք՝ մինչեւ ես գամ ։
26 Եւ որ յաղթէ եւ պահէ զգործս իմ մինչեւ ցվախճան, տաց նմա իշխանութիւն 'ի վերայ ազգաց ։
27 Եւ հովուեսցէ զնոսա գաւազանաւ երկաթեաւ . եւ իբրեւ զանօթ բրտի փշրեսցէ զնոսա ։
28 Որպէս եւ ես ընկալայ 'ի Հօրէ իմմէ, եւ տաց նոցա զաստղն առաւօտուն ։
29 Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ զինչ Հոգին ասէ առ եկեղեցիս ։

փորձնում, որ պոռնկութիւն անեն եւ կռոց մատաղ † ուտեն ։
21 Եւ ժամանակ տուի նորանց՝ որ ապաշխարեն իրենց պոռնկութեան համար, եւ * չապաշխարեցին ։
22 Ահա ես նորան փառն մէջ կը ձգեմ, եւ նորա գործընկերներին էլ որ նա նորանց հետ չնացաւ՝ մեծ մեծ նեղութիւնների մէջ . թէ որ չապաշխարեն իրենց գործքերից ։
23 Եւ նորանց որդիքները մահով կըսպանեմ . եւ ամէն եկեղեցիները կը ճանաչեն՝ թէ ես եմ որ քննումեմ երիկամունքները եւ ° սրտերը, եւ տալիս եմ ձեզ ամէն մէկիդ իրեն գործքերի ‡ չափովը ։
24 Բայց ձեզ ասումեմ՝ որ Թիւատիրումն էք, եւ այս վարդապետութիւնս չունիք . որ Սատանայի խորութիւններին էլ չը ճանաչեցիք, ինչպէս որ նորանք խօսումեն . Ձեզ վերայ ծանրութիւն չեմ = ձգիլ ։
25 Բայց նա որ ունիք՝ պահեցէք մինչեւ ես ‡ գամ ։
26 Եւ ով որ յաղթումէ՝ եւ իմ գործքերս պահումէ մինչեւ † վերջը, նորան իշխանութիւն կը տամ ազգերի = վերայ ։
27 Եւ երկաթէ գաւազանով կը հովուէ նորանց, եւ բրուտի ամանի պէս կը փշրէ ‡ նորանց ։
28 Ինչպէս որ ես էլ իմ Հօրիցս ընդունեցի, եւ կը տամ նորանց առաւօտու աստղը ։
29 Ով որ ականջ ունի՝ թող լսէ ինչ որ Հոգին ասումէ եկեղեցիներին ։

† Ելից . ԼԴ . 15 ։ Գործ . ԺԵ 20 29 ։ Ա Կորնթ . Ժ . 19, 20 Համար . 14 ։
* Հռովմ . Բ . 4 ։ Գղ . Թ . 20 ։
° Ա Թագ . ԺԶ . 7 ։ Ա Մնաց . ԻԸ . 9 ։ ԻԹ . 17 ։ Բ Մնաց . Զ . 30 ։ Սաղ . Է 9 ։ Երեմ . ԺԱ . 20 ։ ԺԷ . 10 ։ Ի . 12 ։ Յովհ . Բ . 24, 25 ։ Գործ . Ա . 24 ։ Հռովմ Ը . 27 ։
‡ Սաղ . ԿԲ . 12 ։ Մատթ . ԺԶ . 27 ։ Հռովմ . Բ . 6 . ԺԴ . 12 ։ Բ Կորնթ . Ե . 10 ։ Գաղ . Զ . 5 ։ Գղ . Ի . 12 ։
= Գործ . ԺԵ . 28 ։
‡ Գղ . Գ . 11 ։
‡ Յովհ . Զ . 29 ։ Ա Յովհ . Գ . 23 ։
= Մատթ . ԺԹ . 28 ։ Ղու . ԻԲ . 29 . 30 ։ Ա Կորնթ . Զ . 3 ։ Գղ . Գ . 21 ։ Ի . 4 ։
‡ Սաղ . Բ . 8, 9 ։ ԽԹ . 14 ։ Դան Է . 22 ։ Գղ . ԺԲ 5 ։ ԺԹ . 15 ։
‡ Բ Պետ . Ա . 19 ։ Գղ . ԻԲ . 16 ։
‡ Համար . 7 ։

—

## ԳԼ · Գ

1 Եւ առ հրեշտակ Սարդիացւոց եկեղեցւոյն գրեա · Այսպէս ասէ՝ որ ունի զեօթն Հոգին Աստուծոյ՝ եւ զեօթն աստեղս · Գիտեմ զգործս քո՝ զի անուն կենդանւոյ ունիս եւ մեռեալ ես ։

2 Լեր արթուն՝ եւ հաստատեա պատուհասաւ՝ զի հանդերձեալ են մեռանել · քանզի ոչ գտի զգործս քո կատարեալ առաջի Աստուծոյ ։

3 Արդ եկ յիշեա թէ որպէս լուարն, եւ պահեա եւ ապաշխարեա · ապա թէ ոչ զուարթնասցես՝ գամ որպէս գող · եւ ոչ ոք իմանայ զգալուստ իմ առ քեզ ։

4 Ունիս սակաւ մի զանուանս Սարդիացւոցն, որք ոչ աղտեղացուցին զհանդերձս իւրեանց · եւ շրջին 'ի սպիտակս՝ որում արժանի եղեն ։

5 Որ յաղթէ՝ այսպէս զգեցցի սպիտակս · եւ ոչ ջնջեցից զանուն նորա 'ի գրութենէն կենաց · եւ խոստովանեցայց զանուն նորա առաջի Հօր իմոյ եւ առաջի հրեշտակաց ։

6 Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ զինչ ասէ Հոգին առ եկեղեցիս ։

7 Եւ առ հրեշտակն Փիղադելփեաց եկեղեցւոյն գրեա · Այսպէս ասէ Սուրբն, Ճշմարիտն, որ ունի զփականս Դաւթի · բանայ՝ եւ ոչ

1 Եւ Սարդիացոց եկեղեցւոյ հրեշտակին գրէ · Ա՛յսպէս է ասում նա՝ որ Աստուծոյ եօթն Հոգիքն, եւ եօթն աստղերն [ա]ունի · Գիտեմ քո [բ]գործքերդ, ինչու որ կենդանոյ անուն ունիս՝ եւ մեռած [գ]ես ։

2 Արթնացի կաց, եւ մնացեալներն հաստատիր, որ (շուտով) պիտի մեռնին · պատճառն որ քո գործքերդ կատարեալ չը գտի Աստուծոյ առաջին ։

3 Ուրեմն միտքդ բեր թէ ինչպէս լսեցիր, եւ [դ]պահէ՛ ու [ե]ապաշխարէ · ապա թէ որ չզարթնանաս՝ կը գամ գողի պէս · եւ ոչ ով չի իմանալ իմ գալս քեզ [զ]մօտ ։

4 Բայց մի քիչ անուններ էլ ունիս Սարդիացոց [է]մէջ, որ իրենց շորերը [ը]չը կեղտոտացրին, եւ սպիտակ [թ]զգեստով ինձ մանգալիս՝ որ նոքան արժանի [ժ]էլան ։

5 Ով որ յաղթում է՝ այսպէս սպիտակ [ի]կը հագնի · եւ նորա անունըն կենաց գրքիցը [լ]չի ջնջիլ · եւ կը դաւանեմ նորա անունն իմ Հօրս առաջին՝ եւ նորա [խ]հրեշտակներին առաջին ։

6 Ով որ [ծ]ականջ ունի՝ թող լսէ ինչ որ Հոգին ասում է եկեղեցիներին ։

7 Եւ Փիլադելփիայի եկեղեցոյ հրեշտակին գրէ · Այսպէս է ասում [կ]նա Սուրբը, [հ]Ճշմարիտը, որ Դաւթի բանալիքներին [ձ]ունի · բա-

ա Գլ · Ա · 4 · 16 · Գ · 5 · Ե · 6 ·
բ Գլ · Բ · 2 ·
գ Եփես · Բ · 1 · 5 · Ա Տիմ · Ե · 6 ·
դ Ա Տիմ · Զ · 20 · Բ Տիմ · Ա · 13 · Հայտնութ · 11 ·
ե Հայտնութ · 19 ·
զ Մատթ · ԻԴ · 42, 43 · ԻԵ · 13 · Մարկ · ԺԳ · 33 · Ղուկ · ԺԲ · 39, 40 · Ա Թեսաղ · Ե · 2 · 6 · Բ Պետ · Գ · 10 · Գլ · ԺԶ · 15 ·
է Գործ · Ա · 15 ·
ը Յուդ · 23 ·
թ Գլ · Դ · 4 · Զ · 11 · Է · 9 · 13 ·
ժ Գլ · ԺԹ · 8 ·
ի Ելից · ԼԲ · 32 · Սաղ · ԿԹ · 28 ·
լ Փիլիպ · Դ · 3 · Գլ · ԺԳ · 8 · ԺԷ · 8 · Ի · 12 · ԻԱ · 27 ·
խ Մատթ · Ժ · 32 · Ղուկ · ԺԲ · 8 ·
ծ Գլ · Բ · 7 ·
կ Գործ · Գ · 14 ·
հ Ա Յովհ · Ե · 20 · Հայտնութ · 14 · Գլ · Ա · 5 · Զ · 10 · ԺԹ · 11 ·
ձ Եսայ · ԻԲ · 22 · Ղուկ · Ա · 32 · Գլ · Ա · 18 ·

ոք է որ փակէ , եւ փակէ՝ եւ ոչ
ոք է որ բանայ ։

8 Տեսի զգործս քո . ահա եդու
առաջի քո դուռն բացեալ , զոր ոչ
ոք կարէ փակել . զի սակաւիկ ու-
նիս զօրութիւն , եւ պահեցեր զբ
բանս իմ , եւ ոչ ուրացար զանուն
իմ ։
9 Ահաւասիկ ես տամ քեզ զժո-
ղովս Սատանայի , որք ասեն զին-
քեանս Հրէայս գոլ՝ եւ ոչ են , այլ
ստեն . արարից զնոսա՝ զի եկեսցեն՝
եւ երկիրպագցեն առաջի ոտից քոց ,
եւ ծանիցեն զի ես սիրեցի զքեզ ։

10 Զի պահեցեր զբան համբերու-
թեան իմոյ , եւ ես պահեցից զքեզ
՚ի ժամ փորձութեան քո . որ հան-
դերձեալ է գալ յամենայն տիեզերս
փորձել զամենայն բնակեալս յերեսս
երկրի ։
11 Ահա գամ վաղվաղակի , կալ
զոր ունիսդ՝ զի մի ոք առցէ զպսակ
քո ։
12 Որ յաղթէ՝ արարից զնա սիւն
տաճարի Աստուծոյ իմոյ , եւ ար-
տաքս այլ մի եւս ելցէ . եւ գրե-
ցից ՚ի վերայ նորա զանուն Աստու-
ծոյ իմոյ , եւ զանուն քաղաքի Ա-
ստուծոյ իմոյ՝ զնորն Երուսաղէմ ,
որ իջանելոց է յերկնից Աստուծոյ
իմոյ . եւ զանուն նորա նոր ։

13 Որ ունի ականջս՝ լուիցէ զինչ
ասէ Հոգին առ եկեղեցիս ։

14 Եւ առ հրեշտակն Լաւոդիկեայ
եկեղեցւոյն գրեա . Այսպէս ասէ
Ամէնն՝ Վկայն հաւատարիմ եւ ճըշ-

նումէ՝ եւ ոչ ով չը կայ որ [ւ]փակէ ,
եւ փակումէ՝ եւ ոչ ով չը կայ որ
[՟] բանայ ։
8 Տեսի քու [՛] գործքերդ . ահա քու
առաջիդ [՛] բացված դուռն մը ,
որ նորան ոչ ով կարող չէ [;] փակել ,
ինչու որ քիչ զօրութիւն ունիս ,
եւ իմ խօսքերս պահեցիր , եւ իմ
անունս չուրացար ։
9 Ահա ես Սատանայի ժողովքը
քեզ եմ տալիս , որ իրենց համար
ասումեն թէ Հրէայ են՝ եւ չեն ,
բայց սուտ են [՚] ասում . ահա կա-
նեմ նորանց՝ որ գան քու ոտներից
առաջին երկրպագութիւն անեն , եւ
ճանաչեն թէ ես սիրեցի [ւ] քեզ .
10 Որովհետեւ իմ համբերութեանս
խօսքը պահեցիր , ես էլ քեզ կը պա-
հեմ փորձանքի [«] ժամանակը , որ պիտի
գայ բոլոր աշխարհքին վերայ որ
փորձէ [ւ] ամէնքին , որ երկրի երեսի
վերայ բնակված [ղ] են ։
11 Ահա կը գամ [ՙ] շուտով , բռնէ
այն որ [-] ունիս , որ չը լինի թէ
մինն առնէ քու [«] պսակդ ։
12 Ով որ յաղթումէ՝ սիւն կանեմ
նորան իմ Աստուծոյս տաճարումը ,
եւ էլ դուրս [ՙ] չի գնալ . եւ նորա
վերայ կը գրեմ իմ Աստուծոյ անու-
նըն , եւ իմ Աստուծոյս քաղաքի
[՞] անունը , [—] այսինքն նոր Երուսաղէ-
մինն՝ որ երկնքից պիտի վէր գայ
իմ [՞] Աստուածանից , եւ իմ նոր
[՝] անունս ։
13 Ով որ ականջ ունի թող լսէ
ինչ որ Հոգին ասումէ [-] եկեղեցի-
ներին ։
14 Եւ Լաւոդիկեայ եկեղեցւոյ հր-
րեշտակին գրէ . Այսպէս է ասում
[ՙ] Ամէնը՝ այն հաւատարիմ եւ ճըշ-

ւ Մատթ. ԺԶ. 19
՟ Յոբ. ԺԲ. 14։
՛ Համբր. 1։
; Ա Կորնթ. ԺԶ 9։ Բ Կորնթ. Բ. 12։
՚ Գլ. Բ. 9։
ւ Եսայ. ԽԹ. 23. Կ 14։
« Բ Պետ. Բ. 9։
ւ Ղու. Բ. 1։
ղ Եսայ. ԻԴ. 17։
ՙ Փիլիպ. Դ. 5։ Գլ. Ա. 3։ ԻԲ. 7. 12. 20։
- Գլ. Բ. 25։
« Գլ. Բ. 10։
ՙ Գ Թագ. Է. 21։ Գաղ. Բ. 9։
՞ Գլ. Բ. 17։ ԺԴ. 1։ ԻԲ. 4։
— Գաղ. Դ. 26։ Եբր. ԺԲ. 22։ Գլ. ԻԱ. 2. 10։
՞ Գլ. ԻԲ. 4։
- Գլ. Բ. 7։
ՙ Եսայ. ԿԵ. 16։

մարտիրոս, Սկիզբն արարածոց
Աստուծոյ։

15 Գիտեմ զգործս քո՝ զի ոչ ցուրտ
ես՝ եւ ոչ ջերմ. պարտ էր քեզ
ցուրտ լինել՝ եւ կամ ջերմ։

16 Այլ դու գաղջ ես՝ եւ ոչ ջերմ
եւ ոչ ցուրտ, հանդերձեալ եմ փըս-
խել 'ի բերանոյ իմմէ։

17 Զի ասես. Մեծատուն եմ եւ
մեծացայ, եւ ոչ ինչ կարօտ եմ.
եւ ոչ գիտես՝ թէ դու ես ողորմե-
լի եւ հեղգ եւ աղքատ՝ մերկ եւ
կոյր։

18 Արդ՝ ես խորհրդակից [եղէց]
քեզ, առ գնեա յինէն ոսկի փոր-
ձեալ 'ի հրոյ՝ զի մեծասցիս, եւ
հանդերձս սպիտակս՝ զի զգեցցիս,
զի մի երեւեսցի անվայելչութիւն
մերկութեան քո. եւ դիր դեղ յա-
չըս քո՝ զի տեսցես։

19 Ես՝ զոր սիրեմ, յանդիմանեմ
եւ խրատեմ. նախանձեաց այժմ, եւ
ապաշխարեա։

20 Ահաւասիկ կամ 'ես առ դուրս
եւ բախեմ. եթէ ոք լուիցէ ձայնի
իմում՝ եւ բանայցէ զդրունսն, մը-
տից առ նա՝ եւ ընթրիս արարից
առ նա, եւ նա ընդ իս։

21 Որ յաղթէ՝ տաց նմա նստել
ընդ իս յաթոռ իմ, որպէս եւ ես
յաղթեցի՝ եւ նստայ յաթոռ Հօր
իմոյ։

22 Որ ունիցի ականջս՝ լուիցէ
զինչ ասէ Հոգին առ եկեղեցիս։

մարտիրոս + Վկան, Աստուծոյ ստեղ-
ծուածներուն + Սկիզբը.

15 Գիտեմ քու ֆ գործքերդ՝ որ
ոչ ցուրտ ես՝ եւ ոչ տաք. պէտք էր
որ դու ցուրտ լինէիր՝ եւ կամ տաք։

16 Բայց դու գոլ ես՝ եւ ոչ տաք
եւ ոչ ցուրտ, որ պիտի փսխեմ զքեզ
իմ բերանիցս։

17 Պատճառան որ ասումես թէ Հա-
րուստ եմ՝ եւ մեծացայ, եւ ոչ մին
բանով կարօտ –չեմ. եւ չես գի-
տում՝ թէ դու ողորմելի ես՝ եւ
ծոյլ՝ աղքատ, մերկ՝ եւ կոյր,

18 Ուրեմն ես խրատ տամ քեզ.
գնէ՝ առ ինձանից կրակումը փորձ-
ուած ոսկի, որ Է հարստանաս, եւ
սպիտակ շորեր՝ որ հագնես, որ քու
մերկութեան ամօթը ֆ չերեւի. եւ
դեղ դիր քու աչքերիդ որ տեսնես։

19 Ես ում որ սիրում եմ՝ յանդի-
մանում եմ եւ գ խրատում. ուրեմն
ջանք արա, եւ ապաշխարէ։

20 Ահա ես դրան առաջին կանգ-
նած եմ եւ ի թակում եմ. թէ որ
մինը լսէ իմ ձայնս եւ դուռն բա-
նայ, կը մտնեմ նորա մօտն ու ընթ-
րիք կանեմ նորա հետ, եւ նա ինձ
ղ հետ։

21 Ով որ յաղթում է կը տամ նո-
րան, որ ինձ հետ նստի աթոռիս
ջ վերայ, ինչպէս որ ես յաղթեցի՝
եւ նստեցի իմ Հօրս աթոռը։

22 Ով որ ականջ ունի թող լսէ
ինչ որ Հոգին ասում է ե եկեղեցի-
ներին։

## ԳԼ. Դ

1 Եւ յետ այսր ամենայնի տեսի՝
եւ ահա դրունք երկնից բացեալ

1 Եւ այս ամէն բաներից ետեւ՝
տեսի, եւ ահա ր դուռն էր բաց-

+ Գլ. Ա. 5։ ԺԹ. 11։ ԻԲ. 6։ Համար. 7։
ե Կող. Ա. 15։
ֆ Համար. 1։
– Ովս. ԺԲ. 8։ Ա Կորնթ. Դ. 8։
Է Եսայ. ԾԵ. 1։ Մատթ. ԺԳ. 44 ԻԵ. 9։
ֆ Բ Կորնթ. Ե. 3 Գլ. Է. 13։ ԺԶ. 15։ ԺԹ. 8։
գ Յոբ. Ե. 17։ Առակ. Գ. 11, 12։ Եբր. ԺԲ. 5, 6։ Յակ. Ա. 12։
ի Երգ. Ե. 2։
ղ Ղուկ. ԺԲ. 37։
ե Յովհ. ԺԴ. 23։
ջ Մատթ. ԺԹ. 28։ Ղուկ. ԻԲ. 30։ Ա Կորնթ. Զ. 2։ Բ Տիմ. Բ. 12։ Գլ. Բ. 26, 27։
ր Գլ. Բ. 7։

էին, եւ ձայն փողոյն առաջնոյ զոր
լուայ՝ խօսէր ընդ իս եւ ասէր.
Ե՛լ այսր, եւ ցուցից քեզ՝ զինչ լի-
նելոց է յապա ժամանակս։

2 Եւ ժամանեալ յիս Հոգի, եւ
ահա աթոռ մի՝ զի կայր յերկինս։

3 Եւ 'ի վերայ աթոռոյն նստէր
նման տեսլեան ականց յասպիսոյ եւ
սարդիոնի։
4 Եւ քահանայք շուրջ զաթո-
ռովն նմանք տեսլեան զմրխտի, եւ
շուրջ զաթոռովն աթոռք քսան եւ
չորք, եւ 'ի վերայ աթոռոցն նըս-
տէին քսան եւ չորք երիցունք՝
զգեցեալ հանդերձս սպիտակս, եւ
'ի գլուխս իւրեանց պսակս ոսկիս։

5 Եւ յաթոռոյ անտի ելանէին
փայլատակմունք եւ ձայնք եւ ո-
րոտմունք. եւ եօթն ղամբարք հը-
րոյ բորբոքեալ առաջի աթոռոյն,
որ են եօթն Հոգիքն Աստուծոյ։

6 Եւ էր առաջի աթոռոյն ծով
ապակեղէն՝ նման սպիտակութեան
սառին, եւ 'ի մէջ աթոռոյն չորք
կենդանիք՝ եւ լի էին աչօք առա-
ջոյ եւ յետոյ։
7 Եւ էր կենդանին առաջին նը-
ման առիւծու, եւ երկրորդ կեն-
դանին նման զուարակի, եւ եր-
րորդ կենդանին ունէր երեսս մար-
դոյ, եւ չորրորդ կենդանին նման
արծուոյ թռուցելոյ։
8 Եւ չորից կենդանեացն էին միոյ

ված երկինքումը եւ այն առաջին
ձայնն որ փողի պէս լսեցի՝ խօսու-
մէր ինձ հետ եւ [ա]ասում. Վեր
ելիր [բ]այստեղ՝ եւ ցոյց կը տամ
քեզ ինչ որ լինելու է յետոյ [գ]ժա-
մանակներումը։
2 Եւ իսկ այն ժամումը Հոգի ե-
կաւ ինձ [դ]վերայ. եւ տեսի որ մին
աթոռ կար [ե]երկինքումը։
3 Եւ նա՝ որ աթոռին վերայ նըս-
տած էր, յասպիս եւ սարդիոն ա-
կունքի նման տեսիլք ունէր։
4 Եւ այն աթոռի չորս կողմովը
կանանչ կարմիր գօտիկ կար, որ
զմրուխտի նման տեսիլք ունէր.
եւ աթոռի չորս կողմովը քսան եւ
չորս աթոռներ, եւ այն աթոռներին
վերայ քսան եւ չորս էրէցներ նըս-
տած [զ]էին սպիտակ շորեր [է]հա-
գած, եւ իրենց գլխներումն ոսկի
[ը]պսակներ։
5 Եւ այն աթոռից փայլատակ-
մունք եւ ձայներ եւ որոտմունք
էին դուրս [թ]գալիս. եւ եօթն լամ-
բարներ կրակով բորբոքված աթոռի
[ժ]առաջին, որ նորանք Աստուծոյ
եօթն Հոգիներն [ի]են։
6 Եւ աթոռի առաջին ապակեայ
պէս ծով կար սպիտակ սառուցի
[լ]նման, եւ աթոռին մէջ չորս [խ]կեն-
դանիք՝ որ առաջուց եւ յետուց
լիքն էին [ծ]աչքերով։
7 Եւ առաջին կենդանին առիւծի
նման էր, եւ երկրորդ կենդանին
եզի նման, եւ երրորդ կենդանին
մարդոյ երեսս ունէր, եւ չորրորդ
կենդանին թռած արծուի [կ]նման։

8 Եւ այն չորս կենդանիքն ամէն

ա Գլ. Ա. 10։
բ Գլ. ԺԱ. 12։
գ Գլ. Ա. 19։ ԻԲ. 6։
դ Գլ. Ա. 10։ ԺԵ. 3։ ԻԱ. 10։
ե Եսայ. Զ. 1։ Երեմ. ԺԷ. 12։ Եզեկ. Ա. 26։ Ժ. 1։ Դան. Է. 9։
զ Գլ. ԺԱ. 16։
է Գլ. Գ. 4, 5, Զ. 11։ Է. 9. 13, 14։ ԺԹ. 14։
ը Համար. 10։
թ Գլ. Ը. 5։ ԺԶ. 18։
ժ Եզեկ. ԼԵ. 23։ Բ Մնաց. Դ. 20։ Եզեկ. Ա. 13։ Զաք. Դ. 2։
ի Գլ. Ա. 4։ Գ. 1։ Ե. 6։
լ Եզեկ. ԼԸ. 8։ Գլ. ԺԵ. 2։
խ Եզեկ. Ա. 5։
ծ Համար. 8։
կ Եզեկ. Ա. 10։ Ժ. 14։

միոյ 'ի նոցանէ վեց թեւք, շուրջանակի եւ 'ի ներքոյ լի էին աչօք, ոչ հանգչէին՝ ոչ զտիւ եւ ոչ զգիշեր՝ ասելով. Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր Աստուած Ամենակալ՝ որ էն, եւ ես, եւ որ գալոց ես։

9 Եւ յորժամ տային կենդանիքն փառս եւ պատիւ եւ գոհութիւն նստելոյն 'ի վերայ աթոռոյն՝ կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից,

10 Անկանէին քսան եւ չորք երիցունքն առաջի նստելոյն յաթոռն, եւ երկիր պագանէին կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից. եւ դնէին զպսակս իւրեանց առաջի աթոռոյն ասելով,

11 Արժանի ես Տէր Աստուած մեր սուրբ՝ առնուլ փառս եւ պատիւ եւ զօրութիւն, զի դու ստեղծեր զամենայն. եւ 'ի կամսն քո ստեղծան՝ եւ կան հաստատուն։

մէկը վեց թեւ ունէին, իրենց չորս [հ] կողմերը եւ ներսէւանց լեցուն էին [յ] աչքերով. եւ հանգիստ չէին առնում՝ ոչ ցերեկ եւ ոչ գիշեր՝ ասելով. Սուրբ, Սուրբ, [ղ] Սուրբ, Տէր Աստուած [ճ] Ամենակարող, եւ որ էր, եւ ես, եւ որ գալու [մ] ես։

9 Եւ երբոր այն կենդանիքը փառք, եւ պատիւ, եւ գոհութիւն էին տալիս աթոռի վերայ նստողին՝ որ կենդանի է յաւիտեանս [յ] յաւիտենից,

10 Քսան եւ չորս երէցները վեր էին ընկնում աթոռի վերայ նստողի [ն] առաջին, եւ երկրպագութիւն էին տալիս նորան՝ որ կենդանի է յաւիտեանս [շ] յաւիտենից. եւ իրենց պսակները վեր էին դնում աթոռի առաջին եւ [ո] ասում.

11 Արժանի ես մեր սուրբ Տէր Աստուած՝ որ փառք, եւ պատիւ, եւ զօրութիւն [չ] առնես. պատճառն որ դու ստեղծեցիր ամէն բան, եւ քո կամենալով ստեղծվեցան՝ եւ կենումն [պ] հաստատ։

## ԳԼ. Ե

1 Եւ տեսի 'ի ձեռս աջոյ՝ որ նստէր 'ի վերայ աթոռոյն՝ գիրք գրեալ ներքոյ եւ արտաքոյ, եւ կնքեալ եօթն կնքով։

2 Եւ տեսի հրեշտակ մի զօրաւոր՝ զի քարոզէր 'ի ձայն մեծ. Ո՞ է արժանի բանալ զգիրսն՝ եւ լուծանել զկնիք նորա։

3 Եւ ոչ ոք կարէր՝ ոչ 'ի յերկինս եւ ոչ յերկիր եւ ոչ 'ի ներքոյ երկրի՝ բանալ զգիրսն, զի ոչ տեսանել զնա։

4 Եւ ես լայի ուժգին՝ զի ոչ ոք

1 Եւ աթոռի վերայ նստողի աջ ձեռումը մին գիրք տեսի, որ ներսէւանց եւ դրսեւանց գրված [ռ] էր, եւ եօթը կնքով [ս] կնքված։

2 Եւ մին զօրաւոր հրեշտակ տեսի որ մեծ ձայնով կանչումէր եւ քարոզում. Ո՞վ է արժանի բանալ այս գիրքը՝ եւ սորա կնիքները արձակել։

3 Եւ ոչ մինը՝ ոչ երկինքումը եւ ոչ երկրի վերայ եւ ոչ երկրի ներքեւումը՝ կարող չէր այն գիրքը բանալ, եւ ոչ էլ տեսնել [տ] նորան։

4 Եւ ես սաստիկ լաց էի լինում,

---

հ Եսայ. Զ. 2։
յ Համար. 6։
ղ Եսայ. Զ. 3։
ճ Գլ. Ա. 8։
մ Գլ. Ա. 4։
յ Գլ. Ա. 18։ Ե. 14։ ԺԵ. 7։
ն Գլ. Ե. 8, 14։
շ Համար. 9։
ո Համար. 4։
չ Գլ. Ե. 12։
պ Ծննդ. Ա. 1։ Գործ. ԺԷ. 24։ Եփես. Գ. 9։ Կող. Ա. 16։ Գլ. Ժ. 6։

ռ Եզեկ. Բ. 9, 10։
ս Եսայ. ԻԹ. 11։ Դան. ԺԲ. 4։
տ Համար. 13։

գտաւ արժանի բանալ զգիրքն եւ հայել 'ի նա ։

5 Եւ մի յերիցանցն ասէ ցիս. Մի լար, ահաւասիկ յաղթեաց Առիւծն յազգէն Յուդայ յարմատոյն Դաւթի՝ բանալ զգիրքն՝ եւ լուծանել զեօթն կնիքսն նորա ։

6 Եւ տեսի 'ի մէջ աթոռոյն եւ 'ի մէջ չորից կենդանեացն՝ եւ 'ի մէջ երիցանցն Գառն կայր զենեալ, որ ունէր եօթն եղջիւրս՝ եւ աչս եօթն, որ են եօթն Հոգիք Աստուծոյ՝ որ են առաքեալ ընդ ամենայն երկիր ։

7 Եւ եկն ընկալաւ յաջոյ ձեռանէ նորա՝ որ նստէր 'ի վերայ աթոռոյն ։

8 Եւ յորժամ առ զգիրսն, չորք կենդանիքն եւ քսան եւ չորք երիցունքն անկանէին առաջի Գառինն. եւ ունէին իւրաքանչիւր քնար՝ եւ բուրվառս ոսկիս լի խնկով, որ է աղօթք սրբոց ։

9 Եւ օրհնէին երգս նորս եւ ասէին. Արժանի ես առնուլ զգիրսն՝ եւ բանալ զկնիքս դորա, զի զենար՝ եւ գնեցեր զմեզ Աստուծոյ արեամբդ քով՝ յամենայն ազգաց եւ 'ի լեզուաց եւ 'ի ժողովրդոց հեթանոսաց ։

10 Եւ արարեր զդոսա Աստուծոյ մերոյ թագաւորս եւ քահանայս՝ թագաւորել 'ի վերայ երկրի ։

որ ոչ ով չէր գտուած արժանի՝ որ այն գիրքը բանայ, եւ նորան մէջ նայի ։

5 Եւ այն էրէցներիցը մէկն ասաց ինձ. Լաց մի՛ լինիր, ահա յաղթեց այն Առիւծն որ Յուդայի ցեղիցն ա է՝ Դաւթի արմատիցն, որ գիրքը բ բանայ՝ եւ նորա եօթն կնիքներն գ քա-ձակէ ։

6 Եւ տեսի այն աթոռին մէջ՝ եւ չորս կենդանիներին մէջ՝ եւ էրէցներին մէջ մէկ Գառն էր կանգնած մորթածի դ նման, որ եօթն եղջիւր ունէր՝ եւ եօթն ե աչք, որ Աստուծոյ եօթն Հոգիքն են, որ ուղարկված են ամէն զ երկիրները ։

7 Եւ նա եկաւ՝ եւ այն աթոռի վերայ նստողի աջ ձեռքէն (այն գիրքըն) է առաւ ։

8 Եւ երբոր գիրքըն առաւ չորս կենդանիներն ու քսան եւ չորս էրէցները վեր ինկան Գառնի ը առաջին. եւ նորանց ամէն մէկը քնար ունէին՝ եւ ոսկի բուրվառ խնկով թ լիքըն, որ սրբոց աղօթքըն ժ էր ։

9 Եւ նոր երգով օրհնութիւն եւ ի ասում. արժանի ես այդ գիրքդ առնել՝ եւ դորա կնիքները լ բանալ, ինչու որ խ մորթվեցար, եւ քո արիւնովդ մեզ գնեցիր Աստուծոյ ծ համար ամէն ազգերից՝ եւ լեզուներից՝ եւ հեթանոսների կ ժողովրդից ։

10 Եւ մեր Աստուծոյն համար թագաւորներ եւ քահանաներ արիր, որ երկրի վերայ թագաւորութիւն հ անենք ։

ա Ծննդ. ԽԹ. 9, 10. Եբր. Է. 14. բ Եսայ. ԺԱ. 1, 10. Հռովմ. ԺԵ. 12. Գլ. ԻԲ. 16. գ Համար. 1. Գլ. Զ. 1. դ Եսայ. ԾԳ. 7. Յովհ. Ա. 29. 36. Ա Պետ. Ա. 19. Գլ. ԺԳ. 8. Համար. 9. 12. ե Զաք. Գ. 9. Դ. 10. զ Գլ. Դ. 5. է Գլ. Դ. 2. ը Գլ. Դ. 8. 10. թ Գլ. ԺԴ. 2. ԺԵ. 2. ժ Սաղ. ՃԽԱ. 2. Գլ. Ը. 3. 4. ի Սաղ. Խ. 3. Գլ. ԺԴ. 3. լ Գլ. Դ. 11. խ Համար. 6. ծ Գործ. Ի. 28. Հռովմ. Գ. 24. 25. Ա Կորնթ. Զ. 20. Է. 23. Եփես. Ա. 7. Կող. Ա. 14. Եբր. Թ. 12. Ա Պետ. Ա. 18, 19. Բ Պետ. Բ. 1. Ա Յովհ. Ա. 7. կ Դան. Դ. 1. Զ. 25. Գլ. Է. 9. ԺԱ. 9. ԺԴ. 6. հ Ելից. ԺԹ. 6. Գլ. Ա. 6. Ի. 6. ԻԲ. 5.

11 Եւ տեսի, եւ լուայ զձայն հրե-
շտակաց բազմաց՝ որք կային շուրջ
զաթոռովն եւ զչորիւք կենդանեօ-
քըն եւ զքահանայիւքն. եւ էր
թիւ նոցա բիւրք բիւրուց՝ եւ հա-
զարք հազարաց։
12 Ասէին ձայնիւ մեծաւ. Արժանի
է Գառնդ զենեալ առնուլ զմեծու-
թիւն եւ զիմաստութիւն եւ զզօ-
րութիւն եւ զպատիւ եւ զփառս
եւ զօրհնութիւն։
13 Եւ ամենայն արարածք՝ որ են
յերկինս եւ յերկրի եւ ՚ի ծովու եւ
որ ՚ի նոսա՝ լուայ զի ասէին. Որ
նստի յաթոռն՝ եւ Գառնին օրհնել
բարձրացել եւ փառաւորել յա-
ւիտեանս յաւիտենից։
14 Եւ չորք կենդանիքն ասէին,
Ամէն. եւ երիցունքն անկանէին ա-
ռաջի նորա եւ երկիրպագանէին։

11 Եւ տեսայ՝ եւ շատ հրեշտակնե-
րի ձայն լսեցի՝ որ աթոռի եւ չորս
կենդանիքների եւ երէցների չորս
կողմը ᶠ կանգնած էին. եւ նո-
րանց համարն էր բիւրք բիւրոց՝ եւ
հազարք ց հազարաց.
12 Որ մեծ ձայնով ասում էին. Ար-
ժանի է Գառնը՝ որ մորթուած է՝
որ մեծութիւն եւ իմաստութիւն
եւ զօրութիւն եւ պատիւ եւ փառք
եւ օրհնութիւն ե առնէ։
13 Եւ ամէն ստեղծուածներն որ
երկնքումն են եւ երկրի վերայ եւ
ծովումը, եւ նորանք որ նորա մէջն
են, ամենեքեան լսեցի որ ն ասու-
մէին. Նա որ աթոռին վերայ նըս-
տած է՝ եւ Գառն ո էլ, օրհնուած
բարձրացած եւ փառաւորուած լինի
յաւիտեանս ն յաւիտենից։
14 Եւ չորս կենդանիքներն ղ ա-
սում էին, Ամէն. եւ երէցները վեր
էին ընկնում նորա առաջին եւ եր-
կրպագութիւն ճ անում։

## ԳԼ. Զ

1 Եւ տեսի զի եբաց զմին ՚ի
կնքոցն, եւ լուայ ՚ի միոյ ՚ի չորից
կենդանեացն իբրեւ զձայն որոտ-
ման՝ զի ասէր՝ Թէ Գամ։
2 Եւ տեսի՝ եւ ահա ձի սպիտակ,
եւ որ հեծեալն էր ՚ի նմա՝ ունէր
աղեղն. եւ տուաւ նմա պսակ, եւ
ել յաղթօղն՝ զի յաղթեսցէ։
3 Եւ յորժամ եբաց զկնիքն եր-
կրորդ, լուայ յերկրորդ կենդան-
ւոյն՝ զի ասէր, Գամ։
4 Եւ ել այլ ձի կարմիր. եւ որ
հեծեալն էր ՚ի վերայ նորա՝ տուաւ

1 Եւ տեսայ որ Գառն այն կնիք-
ներիցը մինը ո բացաւ, եւ այն չորս
կենդանիքներիցը մինիցը լսեցի որո-
տմունքի ձայնի պէս՝ որ ասում էր
թէ ե Կը գամ։
2 Եւ տեսայ՝ եւ ահա մին սպի-
տակ տ ձի. եւ նա՝ որ նորա վերայ
հեծած էր՝ մին աղեղ ւ ունէր. եւ
մին պսակ արուեցաւ ւ նորան, եւ
ելաւ յաղթօղն՝ որ յաղթէ։
3 Եւ երբոր երկրորդ կնիքը բա-
ցաւ, երկրորդ կենդանիքը լսեցի՝
որ ասում էր՝ թէ ն Կը գամ.
4 Եւ ուրիշ ձի դուրս ելաւ փ կար-
միր. եւ նա՝ որ նորա վերայ հե-

ᶠ Գլ. Դ. 4. 6։
ց Սաղ. ԿԸ. 17։
Դան. Է. 10
Եբր. ԺԲ. 22։
ե Գլ. Դ. 11։
ն Փիլիպ. Բ. 10։
Հռոմ. 3։

ո Գլ. Զ. 16։ Է.
10։
ն Ա Մնաց. ԻԹ. 11։
Հռոմ. Թ. 5։
ԺԶ. 27։ Ա Տիմ.
Զ. 16։ Ա Պետ.
Դ. 11։ Ե. 11։

Գլ. Ձ. 6։
ղ Գլ. ԺԹ. 4։
ճ Գլ. Դ. 9, 10։
—
ո Գլ. Ե. 5, 6, 7։
ե Գլ. Դ. 7։
տ Զաք. Զ. 3։ Գլ.

ԺԹ. 11։
ւ Սաղ. ԽԵ. 4, 5։
ւ Զաք. Զ. 11։
Գլ. ԺԴ. 14։
ն Գլ. Դ. 7։
փ Զաք. Զ. 2։

նմա առնուլ զխաղաղութիւն յերկ-
րէ, զի զմիմեանս զենցեն. և
տուաւ նմա սուր մի մեծ։

5 Եւ յորժամ եբաց զկնիքն եր-
րորդ՝ լուայ յերրորդ կենդանւոյն՝
զի ասէր՝ Թէ Գամ. և տեսի՝ և
ահա ձի սեաւ, և որ նստեալն էր
'ի վերայ նորա՝ ունէր կշիռս 'ի ձե-
ռին իւրում։
6 Եւ լուայ ձայն 'ի միջոյ չորից
կենդանեացն. Կապիճ մի ցորեան՝
դենարի միոյ, և երեք կապիճ
գարի՝ դենարի միոյ. և ձէթ և
գինի մի վնասեսցես։
7 Եւ յորժամ եբաց զկնիքն չոր-
րորդ, լուայ ձայն 'ի չորրորդ կեն-
դանւոյն՝ զի ասէր՝ Թէ Գամ։
8 Եւ տեսի՝ և ահա ձի չլասս,
և որ նստէրն 'ի վերայ՝ ունէր
Մահ, և Դժոխք երթային զհետ
նորա. և տուաւ նմա իշխանու-
թիւն չորրորդ մասին աշխարհի՝
սատակել սրով և սովով և մահ-
ուամբ՝ և գազանօք երկրի։

9 Եւ յորժամ եբաց զկնիքն հին-
գերորդ՝ տեսի 'ի ներքոյ սեղանոյն
զհոգիս ամենայն մարդկան զենելոյ
վասն բանին Աստուծոյ՝ և վասն
վկայութեանն նորա զոր ունէին։

10 Որք աղէին 'ի ձայն մեծ. Մին-
չև յերբ Տէր սուրբ և ճշմարիտ՝
ոչ դատիս, և խնդրես զվրէժ ա-
րեան մերոյ 'ի բնակչաց երկրի։

11 Եւ տուաւ նոցա պատմուճանս
սպիտակս, և ասացաւ նոցա զի
հանգիցեն փոքր մի ժամանակ, մին-
չև լցցին ծառայակիցք նոցա և

ծած էր՝ նորան տրվեցաւ որ խաղա-
ղութիւնը վեր առնէ երկրիցը, որ
իրար մորթեն. և մին մեծ սուր
տրվեցաւ նորան։
5 Եւ երբոր երրորդ կնիքը բա-
ցաւ, երրորդ կենդանիցը լսեցի որ
ասումէր՝ Թէ ա Եկ գամ. և տեսի
և ահա մին սև բ ձի, և նա՝ որ
նորա վերայ նստած էր՝ կշիռք ու-
նէր իւրեն ձեռքին։
6 Եւ չորս կենդանիների միջիցը
ձայն լսեցի՝ թէ Մին կապիճի չափ
ցորենը մին դենարի, և երեք կա-
պիճի չափ գարին մին դենարի, և
ձէթին և գինուն վնաս գ չը տաս։
7 Եւ երբոր չորրորդ կնիքը բա-
ցաւ, չորրորդ կենդանիցը ձայն լը-
սեցի՝ որ ասումէր՝ Թէ դ Եկ գամ։
8 Եւ տեսի՝ և ահա մին մոխրա-
գոյն ե ձի, և նա՝ որ նորա վերայ
նստած էր՝ նորա անունը Մահ էր,
և Դժոխք էր գնում նորա ետևէն.
և իշխանութիւն տրվեցաւ նորան
աշխարհի չորրորդ բաժնին վերայ՝
որ սրով և սովով և զ մահով՝ և
երկրի գազաններովը է սատակացնէ։
9 Եւ երբոր հինգերորդ կնիքը
բացաւ, տեսի սեղանի ը ներքևն
այն ամէն մարդկանց թ հոգիքն՝ որ
մորթված էին Աստուծոյ բանին ժ հա-
մար՝ և նորա վկայութեան համար
որ ի ունէին,
10 Որ մեծ ձայնով ասումէին.
Սուրբ Տէր և լ ճշմարիտ՝ մինչև
խ Երբ դատաստան չես առնում, և
մեր արիւնի վրէժ չես խնդրում երկ-
րի վերայ բնակողներիցը։
11 Եւ սպիտակ վերարկուներ տրվ-
վաւ ծ նորանց, և ասվեցաւ նո-
րանց՝ որ մին քիչ ժամանակ հան-
գիստ կ առնեն, մինչև որ նորանց

ա Գլ. Դ. 7.
բ Զաք. Զ. 2.
գ Գլ. Թ. 4.
դ Գլ. Դ. 7.
ե Զաք. Զ. 3.
զ Եզեկ. ԺԴ. 21.
է Ղև. ԻԶ. 22.
ը Գլ. Ը. 3. Թ 13. ԺԴ. 18.
թ Գլ. Ի. 4.
ժ Գլ. Ա. 9.
ի Բ Տիմ. Ա. 8.
Գլ. ԺԲ. 17. ԺԹ. 10.
լ Գլ. Գ. 7.
խ Զաք. Ա. 12.
ծ Գլ. ԺԱ. 18. ԺԹ. 2.
կ Գլ. Գ. 4, 5. Է. 9. 14.
հ Եբր. ԺԱ. 40.
Գլ. ԺԴ. 13.

եղբարք նոցա՝ որք հանդերձեալ են կատարիլ իբրեւ զնոսա։

12 Եւ տեսի յորժամ եբաց զկնիքն վեցերորդ՝ եղեւ շարժումն մեծ, եւ արեգակն եղեւ սեաւ իբրեւ զխաղերս այծեայ, եւ լուսինն բոլորովին եղեւ արիւն։
13 Եւ աստեղք երկնից թօթափեցան 'ի յերկիր, որպէս տերեւ թզենւոյ զի ուժգին շարժիցի 'ի հողմոյ։
14 Եւ երկինքն իբրեւ զմագաղաթեայ գիրս գալարէր. եւ ամենայն լերինք եւ կղզիք 'ի տեղւոյ իւրեանց շարժեցան։
15 Եւ թագաւորք երկրի եւ իշխանք՝ հազարապետք եւ մեծամեծք եւ զօրաւորք՝ եւ ամենայն ծառայք եւ ամենայն ազատք թաքուցին զինքեանս յայրս եւ 'ի ծերպս վիմաց։
16 Եւ ասէին լերանց՝ թէ Անկերուք 'ի վերայ մեր, եւ ցբլուրս՝ թէ ծածկեցէք զմեզ։

17 Զի եկն օր մեծ բարկութեան նոցա. եւ ով կարէ կալ առաջի նոցա։

ծառայ ընկերներն ու նորանց եղբայրներն էլ կատարվին՝ որ նորանց պէս պիտի սպանվին։
12 Եւ տեսի երբոր վեցերորդ կնիքը բացաւ՝ մեծ շարժմունք էղաւ, եւ արեգակը սեւացաւ այծի մազէ կարկատանի պէս, եւ լուսինը իսպառ արիւնի պէս եղաւ։
13 Եւ երկնքի աստղերը թափվեցան երկրի վրայ՝ ինչպէս թզենի ծառ տերեւ՝ որ սաստիկ շարժվումէ քամուցը։
14 Եւ երկինքը մագաղաթէ գրքի պէս ծրարվումէր. եւ ամէն սարեր եւ կղզիներ իրենց տեղիցը շարժվեցան։
15 Եւ երկրի թագաւորներն ու իշխաններն՝ հազարապետներն ու մեծամեծները եւ զօրաւորները՝ եւ ամէն ծառաներն ու ամէն ազատները թաքցրին իրենց անձները՝ այրերի եւ սարերի քարերին մէջ։
16 Եւ սարերին ասումէին՝ Վէր ընկէք մեզ վրայ, եւ բլուրներին՝ թէ ծածկեցէք մեզ աթոռի վրայ նստողի երեսիցը, եւ Գառի բարկութենիցը։
17 Ինչու որ նորա բարկութեան մեծ օրը եկել է, եւ ով է կարող կենալ նորա առաջին։

## ԳԼ · Է

1 Եւ յետ այնորիկ տեսի չորս հրեշտակս՝ զի կային 'ի չորս անկիւնս երկրի. եւ ունէին զչորս հողմս երկրի՝ զի մի շնչեսցէ հողմ 'ի վերայ երկրի, եւ մի 'ի ծովու՝ եւ մի 'ի ծառս։
2 Եւ տեսի այլ հրեշտակ՝ զի ել յարեւելից, եւ ունէր զկնիք Աստուծոյ կենդանւոյ, եւ աղաղա-

1 Եւ սորանից ետեւ տեսի՝ որ չորս հրեշտակ էին կանգնած երկրի չորս անկիւնումը. եւ երկրի չորս քամին էլ բռնել էին՝ որ քամի չը փչէ, ոչ երկրի վրայ՝ ոչ ծովի վրայ, եւ ոչ ծառերի վրայ։
2 Եւ մին ուրիշ հրեշտակ տեսի՝ որ արեւելքիցը գալիս էր, եւ կենդանի Աստուծոյ կնիքն ունէր,

կոչեաց ձայնիւ մեծաւ առ չորս հրեշտակսն՝ որոց տուեալ էր իշխանութիւն ապականել զերկիր եւ զծով։

3 Եւ ասէր. Մի՛ վնասէք երկրի՝ մի՛ ծովու՝ մի՛ ծառոց, զադարեցէք մինչեւ կնքեսցուք զծառայս Աստուծոյ մերոյ 'ի ճակատս նոցա։

4 Եւ լուայ զթիւ կնքելոցն՝ հարիւր քառասուն եւ չորք հազար կնքեալք յազգէ որդւոյն Իսրայէլի։

5 Յազգէն Յուդայ՝ երկոտասան հազար կնքեալ. յազգէն Ռուբենի՝ երկոտասան հազար կնքեալ. յազգէն Գադայ՝ երկոտասան հազար կնքեալ։

6 Յազգէն Ասերայ՝ երկոտասան հազար կնքեալ. յազգէն Նեփթաղիմայ՝ երկոտասան հազար կնքեալ. յազգէն Մանասէի՝ երկոտասան հազար կնքեալ։

7 Յազգէն Շմաւոնի՝ երկոտասան հազար կնքեալ. յազգէն Ղեւեայ՝ երկոտասան հազար կնքեալ. յազգէն Իսաքարայ՝ երկոտասան հազար կնքեալ։

8 Յազգէն Զաբուղոնի՝ երկոտասան հազար կնքեալ. յազգէն Յովսէփայ՝ երկոտասան հազար կնքեալ. յազգէն Բենիամենի՝ երկոտասան հազար կնքեալ։

9 Եւ յետ այսորիկ տեսի՝ եւ ահա ժողովուրդ բազում որոց ոչ գոյր թիւ, յամենայն հեթանոսաց եւ յամենայն ազգաց եւ յամենայն լեզուաց եւ յամենայն ժողովրդոց, որք կային առաջի աթոռոյն եւ առաջի Գառինն՝ արկեալ զիւրեամբք հանդերձս սպիտակս, եւ արմաւենիս 'ի ձեռս իւրեանց։

եւ մեծ ձայնով աղաղակեց դէպի այն չորս հրեշտակներին՝ որ իշխանութիւն էին առել որ երկրին ու ծովին ապականեն.

3 Եւ ասում էր. Դեռ մի՛ տաք ոչ երկրին՝ ոչ ծովուն՝ եւ ոչ էլ ք ծառերին, զադարեցէք մինչեւ որ իմ՝ Աստուծոյս ծառաներին վերայ կնիք ռ դնեմ՝ (իրենց ե ճակատներումը։

4 Եւ կնքվածների համարը ըլսեցի՝ հարիւր քառասուն եւ չորս հազար՝ որ կնքվեցան Իսրայէլի որդոց ամեն է ցեղերիցը։

5 Յուդայի ցեղիցը՝ տասներկու հազար կնքված. Ռուբենի ցեղիցը՝ տասներկու հազար կնքված. Գադայ ցեղիցը՝ տասներկու հազար կնքված.

6 Ասերի ցեղիցը՝ տասներկու հազար կնքված. Նեփթաղիմի ցեղիցը՝ տասներկու հազար կնքված. Մանասէի ցեղիցը՝ տասներկու հազար կնքված.

7 Շմաւոնի ցեղիցը՝ տասներկու հազար կնքված. Ղեւիի ցեղիցը՝ տասներկու հազար կնքված. Իսաքարի ցեղիցը՝ տասներկու հազար կնքված.

8 Զաբուղոնի ցեղիցը՝ տասներկու հազար կնքված. Յովսէփի ցեղիցը՝ տասներկու հազար կնքված. Բենիամինի ցեղիցը՝ տասներկու հազար կնքված։

9 Եւ այս բաներիցս ետեւ տեսի՝ եւ ահա շատ ժողովուրդ կայ որ հարանց համար ը չը կար, ամէն հեթանոսներիցն ու ամէն ազգերիցը եւ ամէն լեզուներիցն ու ամէն ժողովուրդներիցը, որ աթոռի առաջին եւ Գառի առաջին կանգնած թ էին իրենց վերայ սպիտակ շորեր ժ հագած, եւ իրենց ձեռներումը արմաւենիներ.

ք Գլ. Զ. 6։ Թ. 4։
ռ Եզեկ. Թ. 4։
Գլ. ԺԴ. 1։
ե Գլ. ԻԲ. 4։
շ Գլ. Թ. 16։
է Գլ. ԺԴ. 1։
ը Հռովմ. ԺԱ. 25։
թ Գլ. Ե. 9։
ժ Գլ. Գ. 5. 18։
Դ. 4։ Զ. 11։
Համար. 14։

10 Աղաղակէին ՚ի ձայն մեծ եւ ասէին. Փրկութիւն Աստուծոյ մերոյ՝ որ նստի ՚ի վերայ աթոռոյն եւ Գառինն։

11 Եւ ամենայն հրեշտակք կային շուրջ զաթոռովն եւ զերիցամբքն եւ զչորիւք կենդանեօքն, եւ անկանէին յերեսս առաջի աթոռոյն՝ եւ երկիրպագանէին Աստուծոյ,

12 Ասելով. Ամէն. օրհնութիւն եւ փառք եւ իմաստութիւն եւ գոհութիւն եւ պատիւ եւ զօրութիւն եւ շնորհք Տեառն Աստուծոյ մերոյ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

13 Եւ ասէ ցիս մի յերիցանց անտի. Սոքա որ զգեցեալ են զհանդերձս սպիտակս՝ ո՞յք են՝ եւ կամ ուստի՞ գան։

14 Եւ ասացի ցնա. Տէր՝ դու գիտես. եւ ասէ ցիս. Սոքա են՝ որ գան ՚ի վշտաց մեծաց, եւ լուացին զպատմուճանս իւրեանց՝ եւ սպիտակացուցին արեամբ Գառինն։

15 Վասն այնորիկ են առաջի աթոռոյն Աստուծոյ եւ պաշտեն զնա զտիւ եւ զգիշեր ՚ի տաճարի նորա. եւ որ նստի ՚ի վերայ աթոռոյն՝ բնակեալ է ՚ի նոսա։

16 Ո՛չ քաղցիցեն եւ ոչ ծարաւեսցեն, եւ ոչ ոք մերձեսցէ նոցա՝ ոչ արեգակն եւ ոչ տօթ։

17 Եւ Գառնն ՚ի միջոյ աթոռոյն հովուեսցէ զնոսա, եւ առաջնորդեսցէ նոցա ՚ի կենաց աղբեր ջրոյ կենդանւոյ. քանզի եհատ Աստուած զամենայն արտօսր յերեսաց նոցա։

10 Աղաղակումէին բարձր ձայնով՝ եւ ասում. Փրկութիւն մեր է Աստուծոյն՝ որ աթոռի վերայ նստումէ, եւ ը Գառին։

11 Եւ ամէն հրեշտակները կանգնած էին աթոռի եւ երէցների՝ եւ չորս կենդանիքների չորս կողմովը, եւ վէր էին ընկնում երեսներին վերայ աթոռի առաջին՝ եւ երկրպագութիւն անում թ Աստուծոյն,

12 Ասելով. Ամէն. օրհնութիւն եւ փառք եւ իմաստութիւն եւ գոհութիւն եւ պատիւ եւ զօրութիւն եւ շնորհք լինի մեր Տէր Աստուծոյն՝ յաւիտեանս յաւիտենից. ժ ամէն։

13 Եւ այն էրէցներից մինն ասաց ինձ. Սորանք՝ որ սպիտակ շորեր են հագել՝ ով են, եւ կամ որտեղից են ի գալիս։

14 Եւ ասացի նորան. Տէր՝ դու ես գիտում. եւ ասաց ինձ. Սորանք են՝ որ մեծ նեղութիւններից են լ գալիս, եւ իրենց վերարկուները լուացին՝ եւ սպիտակացրին Գառի խ արիւնովը։

15 Նրա համար Աստուծոյ աթոռի առաջին են՝ եւ ցերեկ ու գիշեր պաշտումեն նորան իրեն տաճարին մէջ. եւ նա՝ որ աթոռի վերայ նստած է, բնակված է նրանց ծ մէջումը։

16 Ո՛չ կը սովին՝ եւ ոչ կ կը ծարաւին, եւ ոչ ով չի նեղացնել նրանց՝ ոչ արեգակը եւ ոչ հ տաքութիւնը։

17 Եւ Գառն իրեն աթոռի միջինը կարածացնէ ձ նրանց, եւ կառաջնորդէ նրանց դէպի կենաց աղբիւրի ջուրը. եւ Աստուած սրբից ամէն արտասունքը նրանց ղ երեսներիցը։

է Սաղ. Գ. 8. Եսայ. ԽԳ. 11. Երեմ. Գ. 23. Ովս. ԺԳ. 4. Գլ. ԺԹ. 1.
ը Գլ. Ե. 13.
թ Գլ. Դ. 6.
ժ Գլ. Ե. 13. 14.
ի Հռոմ. 9.
լ Գլ. Զ. 9. ԺԷ. 6.
խ Եսայ. Ա. 18. Եբր. Թ. 14. Ա Յովհ. Ա. 7. Գլ. Ա. 5. Զաք. Գ. 3—5.
ծ Եսայ. Դ. 5, 6. Գլ. ԻԱ. 3.
կ Եսայ. ԽԹ. 10.
հ Սաղ. ՃԻԱ. 6. Գլ. ԻԱ. 4.
ձ Սաղ. ԻԳ. 1. ԼԶ. 8. Յովհ. Ժ. 4. 11. 14.
ղ Եսայ. ԻԵ. 8. Գլ. ԻԱ. 4.

—

# ԳԼ. Ը

1 Եւ յորժամ եբաց զկնիքն եօթներորդ՝ եղեւ լռութիւն յերկինս՝ որպէս կէս ժամու ։

2 Եւ տեսի հրեշտակս եօթն, որ առաջի Աստուծոյ կային. եւ տուաւ նոցա եօթն փողս ։

3 Եւ այլ հրեշտակ եկն եկաց առ սեղանն, եւ ունէր խնկամանոց ոսկի. եւ տուաւ նմա խունկ բազում, զի մատուսցէ զաղօթս ամենայն սրբոց ՚ի վերայ ոսկեղէն սեղանոյ առաջի աթոռոյն ։

4 Եւ ել ծուխ խնկոցն՝ աղօթք սրբոցն ՚ի ձեռաց հրեշտակացն առաջի Աստուծոյ ։

5 Եւ եառ հրեշտակն զխնկամանոցն ՚ի հրոյ սեղանոյն՝ եւ արկ զնա յերկիր. եւ եղեւ որոտումն եւ ձայնք եւ փայլատակումն եւ շարժումն մեծ ։

6 Եւ եօթն հրեշտակքն որ ունէին եօթն փողս՝ պատրաստեցին զինքեանս առ ՚ի հարկանել ։

7 Եւ առաջին հրեշտակն եհար զփողն, եւ եղեւ կարկուտ եւ հուր եւ արիւն խառնեալ՝ եւ անկաւ յերկիր, եւ զերրորդ մասն երկրի այրեաց, եւ զերրորդ մասն ծառոց այրեաց, եւ զամենայն դալար խոտոյ այրեաց ։

8 Եւ երկրորդ հրեշտակն փողեաց, եւ իբրեւ զլեառն մի մեծ հրդեհեալ անկաւ ՚ի ծով, եւ եղեւ երրորդ մասն ծովու արիւն ։

9 Եւ սատակեցաւ երրորդ մասն

1 Եւ երբ որ եօթներորդ կնիքը բացաւ՝ լռութիւն էլաւ երկնքումը՝ կէս ժամի չափ ա ժամանակ ։

2 Եւ եօթն հրեշտակներ տեսի՝ որ Աստուծոյ առաջին կանգնած բ էին. եւ եօթն փող տրվեցաւ գ նորանց ։

3 Եւ մին ուրիշ հրեշտակ եկաւ կանգնեց սեղանին մօտ, եւ ոսկի խնկամանն ունէր. եւ շատ խունկ տրվեցաւ նորան, որ ամէն սրբերի դ աղօթքը մատուցանէ այն ոսկի սեղանին վերայ որ աթոռի առաջին ե էր.

4 Եւ խնկերի ծուխը՝ զ սըրբոց աղօթքը վեր էլաւ հրեշտակների ձեռներիցն Աստուծոյ առաջին ։

5 Եւ հրեշտակն այն խնկամանը լցրուց այն սեղանի կրակիցը, եւ ձգեց նորան երկրի վերայ. եւ որոտմունք եւ ձայներ եւ է փայլատակմունք եւ մեծ շարժ ը էլաւ ։

6 Եւ այն եօթն հրեշտակներն՝ որ այն եօթն փողերն ունէին՝ իրենց պատրաստեցին որ փչեն ։

7 Եւ առաջին հրեշտակը փողը փչեց, եւ էլաւ կարկուտ եւ կրակ եւ արիւն թ խառնըված՝ եւ ընկաւ երկրի վերայ եւ երկրի երրորդ բաժինն ժ այրեց, եւ ծառերի երրորդ բաժինն այրեց, եւ բոլոր կանանչ խոտերն ի այրեց ։

8 Եւ երկրորդ հրեշտակը փչեց, եւ մին մեծ սարի պէս որ կրակով բորբոքված էր՝ ընկաւ ծովի լ մէջ, եւ ծովի երրորդ խ բաժինն արիւն ծ դարձաւ ։

9 Եւ լողացող կենդանիքների եր-

ա Գլ. Զ. 1 ։
բ Մատթ. ԺԸ. 10 ։ Ղուկ. Ա. 19 ։
գ Բ Մնաց. ԻԹ. 25—28 ։
դ Գլ. Ե. 8 ։
ե Ելից. Լ. 1 ։ Գլ. Զ. 9 ։
զ Սաղ. ՃԽԱ. 2 ։ Ղուկ. Ա. 10 ։
է Գլ. ԺԶ. 18 ։
ը Բ Թագ. ԻԲ. 8 ։ Գ Թագ. ԺԹ. 11 ։ Գործ. Դ. 31 ։
թ Եզեկ. ԼԸ. 22 ։
ժ Գլ. ԺԶ. 2 ։
ի Եսայ. Բ. 13 ։ Գլ. Թ. 4 ։
լ Երեմ. ԾԱ. 25 ։ Ամովս. Ե. 4 ։
խ Գլ. ԺԶ. 3 ։
ծ Եզեկ. ԺԴ. 19 ։

լուղակաց , եւ որ ունէր շունչ կեն-
դանի՝ ապականեցաւ · եւ երրորդ
մասն նաւուց ընկղմեցաւ ։

10 Եւ երրորդ հրեշտակն փողեաց ,
եւ անկաւ յերկնից աստղ մի մեծ՝
բորբոքեալ իբրեւ զջամբար , եւ
անկաւ յերրորդ մասն գետոց եւ
աղբերաց ·
11 Եւ էր անուն աստեղն Դառ-
նութիւն · եւ բազումք մեռան 'ի
դառնութենէ ջուրցն ։
12 Եւ չորրորդ հրեշտակն փողեաց,
եւ վիրաւորէր երրորդ մասն արե-
գական՝ եւ երրորդ մասն լուսնի՝
եւ երրորդ մասն աստեղաց · եւ
խաւարէր երրորդ մասն նոցա , եւ
երրորդ մասն գիշերոյ նոյնպէս ։

13 Եւ տեսի եւ լուայ ձայն հրեշ-
տակի թռուցելոյ 'ի մէջ երկնից՝ զի
ասէր 'ի ձայն մեծ , Վայ , վայ , վայ՝
որ բնակեալ են յերկրի · յարժամ
լինելոյ ձայն երիցն եւս փողոց , զոր
կամիցին հրեշտակքն հարկանել ։

րորդ բաժինը սատակվեցաւ , եւ նա
էլ որ կենդանի շունչ ունէր՝ ե ա-
պականվեցաւ · եւ նաւերի երրորդ
բաժինը ծովի մէջ կործանվեցաւ ։
10 Եւ երրորդ հրեշտակը փչեց ,
եւ մին մեծ աստղ ընկաւ երկինքիցը՝
լամբարի պէս զ բորբոքված , եւ
ընկաւ գետերի եւ աղբիւրների եր-
րորդ բաժնի է վերայ ։
11 Եւ աստղի անունը Դառնու-
թիւն էր · եւ շատ մարդիկ մեռան
այն ջրերի ը դառնութենիցը ։
12 Եւ չորրորդ հրեշտակը փչեց ,
եւ վիրաւորվեցաւ արեգական եր-
րորդ բաժինը , եւ լուսնի երրորդ
բաժինը · եւ աստղների երրորդ բա-
ժինը , եւ նորանց երրորդ բաժինը
խաւարվեցաւ · եւ ցերեկի երրորդ
բաժինը լոյս չէր տալիս , այնպէս
էլ գիշերի երրորդ թ բաժինը ։
13 Եւ տեսի եւ ձայն լսեցի , որ
մին հրեշտակ երկինքին մէջ թռած
մեծ ձայնով ասում էր · Վայ , վայ ,
վայ նորանց՝ որ բնակված են երկրի
վերայ , երբոր այն միւս երեք փո-
ղերի ձայնը կը լինի՝ որ հրեշտակ-
ները պիտի ժ փչեն ։

## ԳԼ. Թ

1 Եւ հինգերորդ հրեշտակն փո-
ղէր · եւ տեսի զի աստղ մի անկաւ
յերկնից , եւ տուաւ նմա բանալի
գբոյն՝ անդնդոց ·

2 Եւ ելանէր ծուխ 'ի գբոյն որ-
պէս զծուխ հնոցի մեծի · եւ խա-
ւարեցաւ արեգակն եւ օդք ։
3 Եւ 'ի գբոյն ելանէր մարախ 'ի
յերկիր · եւ տուաւ նոցա իշխանու-
թիւն իբր զխայթոցս կարճի ·

1 Եւ հինգերորդ հրեշտակը փը-
չումէր · եւ տեսի որ մին աստղ եր-
կինքիցը վեր ընկաւ երկրի խ վերայ ·
եւ անդունդի գբի բանալիքը տրվ-
վաւ կ նորան ,
2 Եւ այն գբիցը ծուխ էր դուրս
գալիս մեծ փռան ծխի պէս · եւ ա-
րեգակն ու օդը հ խաւարվեցաւ ։
3 Եւ գբիցը մարախ էր դուրս
գալիս երկրի ձ վերայ · եւ նորանց
իշխանութիւն տրվաւ կարիճի խայ-
թոցի ղ պէս ։

ե Գլ. ԺԶ. 3 ։
զ Եսայ. ԺԴ. 12 ։
Գլ. Թ. 1 ։
է Գլ. ԺԶ. 4 ։
ը Հռովմ. Ա. 20 ։
թ Եզեկ. ԺԵ. 23 ։
Երեմ. Թ. 15
ԻԳ. 15 ։
ժ Եսայ. ԺԴ. 10 ։
Ամով. Ը. 9 ։
ի Գլ. ԺԴ. 6 ։
ԺԹ. 17 ։
լ Գլ. Թ. 12 ։ ԺԱ
14 ։
—
խ Ղուկ. Ժ. 18 ։
Գլ. Ը. 10 ։
ծ Ղուկ. Ը. 31 ։
Գլ. ԺԵ. 8 ։ Ի.
1 ։ Համար. 2. 11 ։
կ Յովել. Բ. 2 10 ։
հ Եզեկ. Ժ. 4 ։
Դատ. Է. 12 ։
ձ Համար. 10 ։

4 Եւ ասացաւ նոցա՝ զի մի՛ մե-
ղիցեն խոտոյ երկրի եւ մի՛ ամե-
նայն ծառոց, բայց միայն մարդոյ
երկրաւորաց, որ ոչ ունիցին զկնիք
՚ի վերայ ճակատու իւրեանց ։

5 Եւ տուաւ նոցա հրաման՝ զի
մի՛ սպանանիցեն զնոսա, այլ չար-
չարեսցեն զնոսա ամիսս հինգ ։ Եւ
չարչարանք նոցա իբրեւ զխայթոցս
կարճի՝ որ հարկանիցէ զմարդ ։
6 Եւ յաւուրսն յայնոսիկ խնդ-
րեսցեն մարդիկ զմահ՝ եւ մի՛ գտա-
ցեն ։ Եւ ցանկան մեռանել՝ եւ փա-
խիցէ ՚ի նոցանէ մահ ։
7 Եւ նմանութիւն մարախսն,
նմանութիւն ձիոյ պատրաստելոյ ՚ի
պատերազմ ։ Եւ ՚ի վերայ գլխոց
նոցա իբրեւ պսակ՝ նմանեալ ոսկ-
ւոյ ։ Եւ երեսք նոցա իբրեւ զերեսս
մարդոյ ։
8 Եւ հերք նոցա իբրեւ զհերս
կնոջ ։ Եւ ատամունք նոցա իբրեւ
առիւծու ։
9 Եւ ունէին զրահս իբրեւ ըզ
զրահս երկաթի ։ Եւ ձայն թեւոց
նոցա իբրեւ զձայն կառավար ձիոց
բազմաց՝ որ արշաւեն ՚ի պատե-
րազմ ։
10 Եւ ունին ագիս ըստ նմանու-
թեան կարճի ։ Եւ խայթոց յագիս
նոցա ։ Եւ ունէին իշխանութիւն
չարչարել զմարդիկ ամիսս հինգ ։

11 Եւ ունէին թագաւոր ՚ի վերայ
իւրեանց զհրեշտակն զդժոխոց ։ Եւ
անուն նորա Եբրայեցերէն Աբադ-
դոն, որ կոչի ՚ի Հայ բարբառ Կո-
րուստ ։
12 Ահաւասիկ վայ մի էանց, եւ
վայք երկու գալոց են ։
13 Եւ վեցերորդ հրեշտակն հար-

4 Եւ նորանց ասուեցաւ՝ որ երկ-
րի [ա] խոտին վնաս [բ] չը տան, եւ ոչ
էլ ամէն ծառերին, բայց միայն
երկրաւոր մարդկանց, որ Աստուծոյ
կնիքը չունին իրենց ճակատներին
[գ] վերայ ։
5 Եւ հրաման տրվեցաւ նորանց՝ որ
չը սպանեն նորանց, բայց հինգ ա-
միս չարչարեն նորանց ։ Եւ նորանց
չարչարանքը կարիճի խայթոցի պէս
էր՝ որ մին մարդոյ է կծում ։
6 Եւ այն օրերումը մարդիկ մահ [ե]
կը խնդրեն՝ եւ չեն գտնիլ ։ Եւ կը
ցանկանան մեռնելոյ՝ եւ մահը կը
փախչի նորանցից ։
7 Եւ այն մարախի կերպը՝ նման
էր ձիոյ՝ որ պատրաստուած է կռւի
[զ] համար ։ Եւ նորանց գլուխներին վե-
րայ պսակի պէս մին բան՝ ոսկոյ
[է] նման ։ Եւ նորանց երեսները մար-
դոյ երեսի [ը] նման ։
8 Եւ նորանց մազերը կնկան մա-
զերի պէս ։ Եւ նորանց ատամները
առիւծի [illegible] [թ] նման ։
9 Եւ զրահներ ունէին՝ ինչպէս
երկաթէ զրահներ ։ Եւ նորանց թե-
ւերի ձայնին նման էր՝ շատ կառք
քաշող ձիանց պէս՝ որ կռւի մէջ
[ժ] վազում են ։
10 Եւ ագիներ ունէին կարիճի նը-
ման, եւ խայթոց կար իրենց ագի-
ներումը ։ Եւ իշխանութիւն ունէին՝
որ հինգ ամիս մարդկանց [ի] չարչա-
րեն ։
11 Եւ իրենց վերայ թագաւոր՝ [լ] ու-
նէին դժոխքի [խ] հրեշտակը ։ Եւ նո-
րա անունը՝ Եբրայեցերէն Աբադ-
դոն էր ։ որ Հայերէն Կորուստ կան-
չի ։
12 Ահա մին վայն անցաւ, եւ եր-
կու վայ էլ [illegible] [ծ] գան ։
13 Եւ վեցերորդ հրեշտակը փողը

ա Գլ. Ը. 7.
բ Գլ. Զ. 6 ; Է. 3
գ Ելից. ԺԲ. 23.
Եզեկ. Թ. 4.
Գլ. Է. 3.
դ Գլ. ԺԱ. 7 ; Հա-
մար. 10.
ե Յոբ. Գ. 21 ;
Եսայ. Բ. 19
Երեմ. Ը. 3 ;
Գլ. Զ. 16.
զ Յովէլ. Բ. 4.
է Նաւում. Գ. 17.
ը Դան. Է. 8.
թ Յովէլ. Ա. 6.
ժ Յովէլ. Բ. 5—7.
ի Համար. 5.
լ Եփես. Բ. 2.
խ Համար. 1.
ծ Գլ. Ը. 13.

կանէր զփողն. եւ լուայ ձայն 'ի չորից կենդանեացն՝ որ էին առաջի սեղանոյն Աստուծոյ.

14 Զի ասէր ցհրեշտակն վեցերորդ՝ որ ունէր զփողն. Լոյծ զչորս հրեշտակսն զկապեալս 'ի վերայ գետոյն Եփրատայ։

15 Եւ լուծան չորս հրեշտակքն՝ պատրաստեալք 'ի ժամ եւ յօր եւ յամիս եւ 'ի տարի, զի սպանցեն զերրորդ մասն մարդկան։

16 Եւ համարք հեծելոց զօրաց նոցա՝ բիւրք բիւրուց՝ եւ հազարք հազարաց՝ լուայ զթիւ նոցա։

17 Եւ տեսի ձիս 'ի տեսլեանն, եւ հեծեալս 'ի նոսա՝ որք ունէին բզ զրահս հրեղէնս, եւ յակինթս հրագեհեալս ծծմբով. եւ գլուխք ձիոյն իբրեւ զգլուխ առիւծուց. եւ 'ի բերանոյ նոցա հուր ելանէր՝ եւ ծուխ եւ ծծումբ։

18 Եւ 'ի հարուածոցս յայսցանէ մեռաւ երրորդ մասն մարդկան՝ 'ի հրոյն եւ 'ի ծխոյն եւ 'ի ծծմբոյն, որ ելանէր 'ի բերանոյ նոցա։

19 Զի իշխանութիւն 'ի բերանս է նոցա՝ եւ յագիս նոցա, եւ ագիք նոցա նմանութիւն օձի. եւ ունէին գլուխս՝ որով աստակէին զանիրաւս։

20 Եւ այլք 'ի մարդկանէ որ ոչ մեռան 'ի հարուածոցս յայսցանէ, ոչ ապաշխարեցին եւ ոչ դարձան 'ի գործոց ձեռաց իւրեանց, յերկրպագութենէ դիւաց եւ կռոց յոսկեղինաց եւ յարծաթեղինաց՝ եւ 'ի պղնձոյ եւ 'ի քարէ եւ 'ի փայտէ, որք ոչ տեսանել կարեն՝ եւ ոչ լսել եւ ոչ գնալ։

փչեց. եւ ձայն լսեցի այն չորս կենդանիներէն՝ որ Աստուծոյ սեղանին առաջին էին,

14 Որ ասաւ վեցերորդ հրեշտակին՝ որ այն փողն ունէր. Թէ Արձակէ այն չորս հրեշտակները՝ որ Եփրատ գետի վերայ կապուած ր են։

15 Եւ այն չորս հրեշտակներն արձակուեցան, որ պատրաստուած էին ժամին եւ օրին եւ ամսին եւ տարւոյն համար, որ մարդկանց երրորդ բաժինն սպաննեն։

16 Եւ նոցանց ձիաւոր զօրքին համարը՝ բիւրք բիւրուց եւ հազարք ւ հազարաց՝ լսեցի նոցանց ւ համարը։

17 Եւ այն տեսիլքին մէջ ձիանք տեսայ, եւ նոցանց վերայ հեծածները կրակէ եւ յակինթէ եւ ծծումբով վառած զրահներ ունէին. եւ ձիանքին գլուխներն առիւծի գլուխներու նման. եւ նոցանց բերանէնը կրակ եւ ծուխ եւ ծծումբ էր դուրս - գալիս։

18 Եւ այս կատարմունքներէն՝ մարդկանց երրորդ բաժինը մեռաւ այն կրակէն ու ծխէն եւ ծծումբէն, որ նոցանց բերանէնը դուրս էր գալիս։

19 Ինչու որ նոցանց զօրութիւնն իրենց բերանումն էր՝ եւ իրենց ագիներումը, եւ նոցանց ագիներն օձի նման են եւ գլուխներ ունէին՝ որ նոցանցով սպանումէին ւ անիրաւներին։

20 Եւ այն միւս մարդիկն որ չը մեռան այս կատարմունքներէս, չապաշխարեցին եւ յետ չը դարձան իրենց ձեռաց դ գործքերէն, որ երկրպագութիւն չանեն Հ դեւերին եւ ոսկէ եւ արծաթէ եւ պղնձէ եւ քարէ եւ փայտէ շինած կուռքերին, որ ոչ տեսանել կարող են՝ եւ ոչ լսել՝ եւ ոչ - գնալ։

ր Գլ. ԺԶ. 12. ց Եզեկ. ԼԸ. 4. ւ Սաղ. ԿԸ. 17. Դան. Է. 10.

ւ Գլ. Ե. 4. - Ա Մնաց. ԺԲ. 8. Եսայ. Ե. 28. 29. ւ Եսայ. Թ. 15.

դ Բ Օրին. Ա. 29. Հ Ղև. ԺԷ. 7. Բ Օրին. ԼԲ. 17. Սաղ. ՃԶ. 37.

Ա Կորնթ. Ժ. 20. - Սաղ. ՃԺԵ. 4. ՃԼԵ 15. Դան. Ե. 23.

21 Եւ ոչ ապաշխարեցին 'ի մար-
դասպանութենէ՝ եւ 'ի դեղատու-
թենէ, եւ 'ի պոռնկութենէ՝ եւ 'ի
գողութենէ իւրեանց :

## ԳԼ. Ժ

1 Եւ տեսի այլ հրեշտակ զօրա-
ւոր՝ զի իջանէր յերկնից, եւ զգե-
ցեալ էր ամպ՝ եւ ծիածան 'ի գլուխ
նորա . եւ երեսք նորա իբրեւ զա-
րեգակն, եւ ոտք նորա որպէս սիւն
հրոյ :

2 Եւ ունէր 'ի ձեռին իւրում
գրքոյկ մի բացեալ . եւ եդ զոտն
իւր զաջ 'ի վերայ ծովու . եւ զձախն
'ի վերայ երկրի :
3 Եւ աղաղակեաց 'ի ձայն մեծ՝
գոչեաց իբրեւ զառիւծ . եւ յորժամ
աղաղակեաց՝ խօսեցան եօթն որոտ-
մունք յիւրեանց ձայնս :
4 Եւ յորժամ խօսեցան եօթն ո-
րոտմունքն՝ կամէի գրել . եւ լուայ
ձայն յերկնից՝ զի ասէր, Կնքեա
զոր խօսեցան եօթն որոտմունքն՝
եւ մի գրեր :
5 Եւ հրեշտակն զոր տեսի, որ
եդ զոտն իւր 'ի վերայ ծովու եւ
զմիւսն 'ի ցամաքի, համբարձ զձեռն
իւր զաջ յերկինս :

6 Եւ երդուաւ 'ի Կենդանին յա-
ւիտենից՝ որ հաստատեաց զերկինս՝
եւ որ 'ի նմա, եւ զերկիր եւ որ
'ի նմա . զի ոչ եւս կայ այլ ժամա-
նակ .

7 Այլ յաւուրս ձայնի եօթնե-
րորդ հրեշտակին՝ յորժամ հարցէ
զփողն, կատարեսցի խորհուրդն
Աստուծոյ՝ որ աւետարանեցաւ 'ի

21 Եւ չապաշխարեցին իրենց մար-
դասպանութիւններէն՝ ու ր-ձէ դեղ
ա տալուցն՝ ու պոռնկութիւններէն՝ եւ
գողութիւններէն :

1 Եւ մէկ ուրիշ զօրաւոր հրեշ-
տակ տեսայ՝ որ երկնքէն վար էր
գալիս, եւ ամպ ունէր հագած՝ եւ
իրեն գլխին կանաչ կարմիր ա գօ-
տիկ . եւ նորա երեսն արեգական
նման բ էր . եւ նորա ոտները կրա-
կի սիւնի գ պէս :
2 Եւ իրեն ձեռքին մէկ փոքր
գիրք ունէր բացած . եւ իրեն աջ
ոտը դրաւ ծովու վերայ, եւ ձախը
երկրի դ վերայ .
3 Եւ մեծ ձայնով աղաղակեց՝ ա-
ռիւծի պէս գոռաց . եւ երբոր ա-
ղաղակեց՝ եօթն որոտմունքն իրենց
ձայնովը ե խօսեցին :
4 Եւ երբոր եօթն որոտմունքը
խօսեցին՝ կամենումէի գրել . եւ
ձայն լսեցի երկնքէն՝ որ ասումէր,
Կնքէ այն որ եօթն որոտմունքը
զ խօսեցին՝ եւ մի գրեր :
5 Եւ այն հրեշտակն որ տեսայ՝
որ իրեն ոտը դրաւ ծովու վերայ՝
եւ միւսը ցամաքի վերայ, իրեն աջ
ձեռքն դէպի երկինքը է բարձրաց-
րուց,
6 Եւ երդուաւ նորանով Որ կեն-
դանի է յաւիտեանս յաւիտենից,
որ ստեղծեց երկինքը՝ եւ ինչ որ
նորանումէ, եւ երկիրն՝ եւ ինչ որ
նորանումկայ, (եւ ծովն՝ եւ ինչ
որ նորանում ը է .) թէ էլ աւելի
ժամանակ թ չը կայ :
7 Բայց եօթներորդ հրեշտակի
ձայն հանելոյ օրերումը՝ երբոր փո-
ղը կը փչէ, Աստուծոյ խորհուրդը
կը կատարուի՝ նա որ աւետարանել-

ա Գլ. ԻԲ. 15.
—
ա Եզեկ. Ա. 28.
բ Մատթ. ԺԷ. 2.
Գլ. Ա. 16.

գ Գլ. Ա. 15.
դ Մատթ. ԻԸ. 18.
ե Գլ. Ը. 5.
զ Դան. Ը. 26.
ԺԲ. 4. 9.

է Ելից. Զ. 8.
Դան. ԺԲ. 7.
ը Նեեմ. Թ. 6.
Գլ. Դ. 11.
ԺԴ. 7.

թ Դան. ԺԲ. 7.
Գլ. ԺԶ. 17.

ձեռն ծառայից իւրոց մարգարէիցն։
8 Եւ ձայնն՝ զոր լուայ յերկնից
դարձեալ խօսեցաւ ընդ իս՝ եւ ասէ.
Երթ առ զգրքոյկն՝ զոր ունի հրեշ-
տակն բացեալ 'ի ձեռին իւրում, եւ
կայ 'ի վերայ ծովու եւ ցամաքի։

9 Եւ ես երթեալ առ հրեշտակն՝
խնդրեցի 'ի նմանէ. եւ ասէ ցիս,
Առ զդա՝ եւ կեր զդա, եւ դառ-
նասցի յորովայն քո. այլ 'ի բերան
քո է քաղցր իբրեւ զմեղր։

10 Եւ առի զգրքոյկն բացեալ 'ի
հրեշտակէն՝ եւ կլայ զնա. եւ էր
'ի բերան իմ որպէս մեղր. եւ յոր-
ժամ կերայ, դառնացաւ որովայն
իմ։
11 Եւ ասէ ցիս. Հարկ է քեզ
դարձեալ մարգարէանալ 'ի ժողո-
վուրդս եւ 'ի հեթանոսս եւ 'ի լե-
զուս եւ 'ի թագաւորս երկրի։

ցուց իրեն ծառայ ժ մարգարէներինը։
8 Եւ այն ձայնն որ երկնքիցը լը-
սեցի՝ կրկին խօսեց ինձ հետ՝ եւ
ի ասաց. Գնա առ այն փոքր գիր-
քըն՝ որ հրեշտակը բաց բռնած ու-
նի իրեն ձեռումը՝ եւ կանգնած է
ծովու եւ ցամաքի վերայ։
9 Եւ ես գնացի հրեշտակին մօտ՝
եւ խնդրեցի նորանից. եւ նա ա-
սաց ինձ՝ Առ որան՝ եւ կեր որան,
եւ կը դառնանայ քո փորումդ,
բայց քո բերանումդ քաղցր կը լինի
մեղրի լ պէս։
10 Եւ այն բաց փոքր գիրքն առի
հրեշտակիցը՝ եւ կուլ տուի նորան.
եւ իմ բերանումս քաղցր էր մեղրի
խ նման. եւ երբոր կերի՝ դառնա-
ցաւ իմ ծ փորումս։
11 Եւ ասաց ինձ. Պէտք է որ
դու մին էլ մարգարէանաս ժողո-
վուրդների՝ եւ ազգերի՝ եւ լեզու-
ների՝ եւ թագաւորների առաջին։

## ԳԼ. ԺԱ.

1 Եւ տուաւ ինձ եղէգն նման
գաւազանի. եւ կայր հրեշտակն եւ
ասէր ցիս. Արի եւ չափեա զտա-
ճարն Աստուծոյ եւ զսեղանն՝ եւ
զերկրպագուսն որ 'ի նմա։

2 Եւ զգաւիթն որ արտաքոյ տա-
ճարին՝ թող զնա՝ եւ մի չափեր.
զի տուեալ է զնա հեթանոսաց. եւ
զքաղաքն սուրբ կոխեսցեն ամիսս
քառասուն եւ երկուս։

3 Եւ տաց երկուց վկայից իմոց՝
եւ մարգարէասցեն աւուրս հազար
երկերիւր եւ վաթսուն՝ զգեցեալ
քուրձ։
4 Սոքա են երկու ձիթենիքն՝ եւ

1 Եւ մին եղէգ տրվաւ ինձ գա-
ւազանի ա նման. եւ կանգնած էր
հրեշտակը՝ եւ ինձ ասում էր. Վեր
կաց եւ չափէ Աստուծոյ տաճարն
ու սեղանն՝ եւ նորանց էլ որ նո-
րանում երկրպագութիւն են բ ա-
նում։
2 Եւ գաւիթն որ տաճարիցը
դուրս է՝ թող նորան՝ եւ մի գ չա-
փիր. ինչու որ նա հեթանոսներին
է դ տրվիլած. եւ սուրբ քաղաքն էլ
ոտքի տակ կոխ ե կը տան քառասուն
եւ երկու զ ամիս։
3 Եւ իմ երկու վկաներիս է կը
տամ՝ եւ հազար երկու հարիւր եւ
վաթսուն ը օր կը մարգարէանան՝
քուրձ թ հագած։
4 Սորանք են էն երկու ձիթենի-

ժ Գլ. ԺԱ. 15։
ի Համար. 4։
լ Երեմ. ԺԵ 16։
Եզեկ. Բ. 8։ Գ. 1, 2, 3։

խ Եզեկ. Գ. 3։
ծ Եզեկ. Բ. 10։
—
ա Եզեկ. Խ. 3. 5։
Զաք. Բ. 1։ Գլ.

ԻԱ. 15։
բ Թու. ԻԳ. 18։
գ Եզեկ. Խ. 17. 20
դ Սաղ. ՀԹ. 1։
Ղու. ԻԱ. 24։

ե Դան. Ը. 10։
զ Գլ. ԺԳ. 5։
է Գլ. Ի. 4։
ը Գլ. ԺԲ. 6։
թ Գլ. ԺԲ. 10։

երկու ճրագք, որ կան առաջի Աստուծոյ յերկրի ։

5 Եւ որք կամիցին վնասել նոցա, հուր ելցէ 'ի բերանոյ նոցա՝ եւ կերիցէ զթշնամիս նոցա. եւ որք կամիցին մեղանչել նոցա՝ այսպէս սատակեսցին ։

6 Սոքա ունին իշխանութիւն փակել զերկինս՝ զի մի անձրեւեսցէ զաւուրս մարգարէութեան նոցա. եւ ունին իշխանութիւն 'ի վերայ ջուրց՝ դարձուցանել զնոսա յարիւն, եւ հարկանել զերկիր յամենայն հարուածս՝ քանիցս անգամ եւ կամիցին ։

7 Եւ յորժամ կատարեսցեն զամենայն աւուրս վկայութեան՝ իւրեանց, յայնժամ գազանն որ ելանէ յանդնդոց՝ տացէ ընդ նոսա պատերազմ, եւ յաղթեսցէ նոցա եւ սպանցէ զնոսա ։

8 Եւ դի նոցա անկեալ կայցէ 'ի մէջ հրապարակաց քաղաքին նոցա մեծի, որ անուանեալ կոչի բառ հոգւոյն Սոդոմ եւ Եգիպտոս. ուր եւ Տէրն նոցա խաչեցաւ ։

9 Եւ տեսցեն զնոսա ամենայն ցեղք եւ ժողովուրդք՝ եւ ամենայն լեզուք եւ հեթանոսք, զի դի նոցա անկեալ կայցէ զերիս աւուրս եւ կէս. եւ ոչ տացեն թաղել 'ի գերեզմանս զոսկերս նոցա ։

10 Եւ որ բնակեալ են յերկրի՝ ուրախ լինին եւ խնդան 'ի վերայ նոցա, մինչեւ ընծայս եւ պատա-

քըն՝ ու երկու ճրագները, որ Աստուծոյ առաջին կանգնած են ժ երկրումը ։

5 Եւ նորանք որ կամենան վնաս տալ նորանց, կրակ դուրս կը գայ նորանց բերանիցը՝ եւ կայրէ իրենց ի թշնամիներին. եւ նորանք որ կամենան վնաս հասցնել նորանց՝ այսպէս պիտի լ սատակուին ։

6 Սորանք իշխանութիւն ունին երկինքը փակելոյ՝ որ անձրեւ չը գայ իրենց մարգարէութեան խ օրերումը. եւ իշխանութիւն ունին ջրերի վերայ՝ որ արիւն դարձնեն նորանց, եւ ամէն կերպ պատուհասներով պատուհասեն երկիրը քանի անգամ որ ծ կամենան ։

7 Եւ երբոր իրենց վկայութեան ամէն օրերը կ կը կատարեն, այն ժամանակին այն հ գազանն՝ որ անդունդէն է դուրս ձ գալու՝ կռիւ կը տայ նորանց հետ, եւ կը յաղթէ նորանց՝ եւ կը սպաննէ ղ նորանց ։

8 Եւ նորանց մեռած մարմինները վեր ընկած կը մնան նորանց մեծ քաղաքի փողոցներին ճ մէջ, որ նորա անունը հոգեւոր մաքով Սոդոմ եւ Եգիպտոս է կոչվում. որտեղ որ նորանց Տէրն էլ մ խաչվեցաւ ։

9 Եւ նորանց կը տեսնեն ամէն ազգերն ու ժողովուրդները՝ եւ ամէն լեզուներն ու յ հեթանոսները, ինչու որ նորանց մեռած մարմինները վեր ընկած կը մնան երեք օր ու կէս. եւ թող չեն տալ՝ որ նորանց ոսկորները թաղվեն գերեզմանի ն մէջ ։

10 Եւ նորանք՝ որ երկրի վերայ բնակված են, ուրախ կը լինին՝ եւ խնդութիւն կանեն նորանց շ վերայ,

ժ Սաղ. ՃԲ. 8. Երեմ. ԺԱ. 16. Զաք. Դ. 3. 11 14.
ի Դ Թագ. Ա. 10 12. Երեմ. Ա 10. Ե 14. Եզեկ ԽԴ. 3. Ովս. Զ. 5.
լ Թուռ. ԺԶ. 29.
խ Գ Թագ. ԺԷ. 1. Յակ Ե. 16, 17.
ծ Ելից. Է. 19.
կ Ղուկ. ԺԴ. 32.
հ Գլ. ԺԳ. 1. 11. ԺԷ. 8.
ձ Գլ. Թ. 2.
ղ Դան. Է. 21 Զաք. ԺԴ. 2.
ճ Գլ. ԺԴ. 8. ԺԷ 1. 5. ԺԸ. 10.
մ Եբր. ԺԳ. 12. Գլ. ԺԸ. 24.
յ Գլ. ԺԷ. 15.
ն Սաղ. ՀԹ. 2, 3.
շ Գլ. ԺԲ. 12. ԺԳ. 8.

բաժս տանել միմեանց · վասն զի
այդս երկոքին մարգարէքս չարչա-
րեցին զբնակիչս երկրի ։

11 Եւ յետ երից աւուրց և կիսոյ՝
հոգի կենդանի յԱստուծոյ մտցէ 'ի
նոսա · և յարիցեն կացցեն 'ի վե-
րայ ոտից իւրեանց, և ահ և եր-
կիւղ մեծ անկաւ 'ի վերայ ամենե-
ցուն՝ որ տեսանէին զնոսա ։
12 Եւ լուայ զձայն մեծ՝ որ ասէր
զնոսա · Վերացիք ելէք աստ · և
վերացան ելին յերկինս ամպովք ·
և տեսին զնոսա թշնամիք իւրեանց ։

13 Եւ 'ի ժամուն յայնմիկ շարժու-
մըն մեծ եղև, և տասներորդ մա-
սըն քաղաքին ընկղմեցաւ, և մե-
ռան 'ի շարժմանէն արք եօթն հա-
զար · և յետ այնորիկ ահ մեծ ե-
ղև յամենեսեան, և փառս տային
Աստուծոյ երկնաւորի ։

14 Անցաւորիկ վայն երկրորդ է-
անց, և վայն երրորդ գալոց է
վաղվաղակի ։
15 Եւ յորժամ եօթներորդ հրեշ-
տակին հարկանէր զփողն, եղև
ձայն յերկինս՝ և ասէ · Եղև թա-
գաւորութիւն ամենայն աշխարհաց
Տեառն մերոյ՝ և Յիսուսի Քրիստոսի
իւրոյ · և թագաւորեսցէ 'ի վերայ
ամենայնի յաւիտեանս յաւիտենից ։
16 Եւ քսան և չորս երիցունքն՝
որ նստէին յաթոռս իւրեանց առաջի
Աստուծոյ, անկանէին 'ի վերայ ե-
րեսաց իւրեանց՝ և երկրպագա-
նէին Տեառն Աստուծոյ, և ասէին.

մինչև որ մէկը մէկին ընծաներ և
պարգևներ = տանել · ինչու որ այս
երկու մարգարէքս չարչարեցին եր-
կրի վերայ ւ բնակողներին ։
11 Եւ երեք ու կէս օրէն ղ ետև՝
Աստուածանից կենդանի հոգի կը
մտնէ նորանց մէջ, և վեր կը կե-
նան կը կանգնին իրենց ոտներին
՟ վերայ · և մեծ վախ ընկաւ նո-
րանց վերայ որ տեսին նորանց ։
12 Եւ մեծ ձայն լսեցի երկնքիցն՝
որ ասումէր նորանց · Վերացէք
վերելէք այստեղ · և = ամպերով
վերացան վերելան = երկինքը · և
նորանց թշնամիները տեսին ՟նո-
րանց ։
13 Եւ իսկ նոյն ժամումը մեծ
շարժմունք ÷ էլաւ, և քաղաքի
տասներորդ բաժինը ր կործանվե-
ցաւ, և այն շարժիցն եօթն հա-
զար մարդիկ մեռան · և նրանից
ետև մեծ վախ էլաւ ամէնի վե-
րայ, և փառք էին տալիս երկնա-
ւոր ⁝ Աստուծոյն ։
14 Անն երկրորդ վայն անցաւ,
և երրորդ վայն շուտով պիտի =գայ ։

15 Եւ երբոր եօթներորդ հրեշտա-
կը փողը ÷ փչեց, մեծ ձայն էլաւ
երկինքումը՝ և ÷ ասաց · Բոլոր աշ-
խարհքի թագաւորութիւնն էլաւ
մեր Տէրինն՝ և նորա ՟ Քրիստոսին ·
և կը թագաւորէ ամէնին վերայ
յաւիտեանս ՟ յաւիտենից ։
16 Եւ քսան ու չորս էրէցներն՝ որ
իրենց աթոռներին վերայ նստած
էին Աստուծոյ առաջին, իրենց ե-
րեսներին վերայ վեր էին ընկնում՝
և երկրպագութիւն անում Տէր
Աստուծոյն, և =ասում ·

= Եսթ. Թ. 19. 22։
ւ Գլ. ԺԶ. 10։
ղ Համր. 9։
՟ Եզեկ. ԼԷ. 5. 9. 10. 14։
= Եսայ. Կ. 8։ Գործ. Ա. 9։

= Եսայ. ԺԴ. 13։ Գլ. ԺԲ. 5։
՟ Գ Թագ. Բ. 1. 5. 7։
÷ Գլ. Զ. 12։
ր Գլ. ԺԶ. 19։
⁝ Յեսու. Է. 19։ Գլ. ԺԴ. 7։ ԺԵ. 4։

= Գլ. Ը. 13։ Թ. 12։ ԺԵ. 1։
÷ Գլ. Ժ. 7։
÷ Եսայ. ԻԷ. 13։ Գլ. ԺԶ. 17։ ԺԹ. 6։

՟ Գլ. ԺԲ. 10։
՟ Դան. Բ. 44։ Է. 14. 18. 27։
= Գլ. Դ. 4։ Ե. 8։ ԺԹ. 4։

17 Գոհանամք զքէն Տէր Աստուած Ամենակալ, որ էն եւ էն՝ եւ առեր զզօրութիւն քո մեծ, եւ թագաւորեցեր:

18 Եւ հեթանոսք բարկացան, եւ եկն բարկութիւն քո, եւ ժամանակ մեռելոց՝ զի դատեսցին. եւ տաս վարձս ծառայից քոց մարգարէից. եւ սրբոց երկիւղածաց անուան քոյ՝ փոքունց եւ մեծամեծաց, եւ ապականես զապականիչս երկրի:

19 Եւ բացաւ տաճարն Աստուծոյ որ յերկինս, եւ երեւեցաւ տապանակն Աստուծոյ՝ 'ի տաճարն իւր. եւ եղեն փայլատակմունք եւ ձայնք եւ որոտմունք եւ շարժումն, եւ կարկուտ մեծամեծ:

17 Գոհանումենք քեզանից Տէր Աստուած Ամենակարող, որ էիր եւ բ ես, եւ քո մեծ զօրութիւնդ առիր, եւ գ թագաւորեցիր.

18 Եւ հեթանոսները բարկացան, եւ քո բարկութիւնդ դ եկաւ, եւ մեռելների ժամանակն՝ որ դատուելին. որ վարձք տաս քո ծառայ մարգարէներին եւ սրբերին, եւ քո անունից զ վախեցողներին՝ փոքրներին եւ մեծերին՝ եւ երկիրը ապականողներին է ապականես:

19 Եւ Աստուծոյ տաճարն որ երկնքումն էր՝ բաց էլաւ, եւ Աստուծոյ տապանակն երեւեցաւ իրեն տաճարին ը մէջ. եւ փայլատակմունք եւ ձայներ եւ որոտմունքներ, եւ շարժմունքներ, եւ մեծ մեծ կարկուտ թ էլան:

## ԳԼ. ԺԲ

1 Եւ նշան մեծ երեւեցաւ յերկինս. կին մի արկեալ զիւրեւ զարեգակն, եւ լուսին 'ի ներքոյ ոտից նորա. եւ 'ի վերայ գլխոյ նորա պսակ աստեղաց երկոտասանից:

2 Եւ էր յղի. եւ ճչէր յերկնելն, եւ բազում վշտօք մերձ էր 'ի ծնանել:

3 Եւ երեւեցաւ այլ նշան յերկինս՝ եւ ահաւասիկ վիշապ մի մեծ հրեղէն, որոյ էին գլուխք եօթն եւ եղջիւրք տասն. եւ 'ի վերայ գլխոյ նորա եօթն խոյրք:

4 Եւ ագին նորա քարշէր զերրորդ մասն աստեղաց երկնից, եւ արկ զնոսա յերկիր. եւ վիշապն կայր առաջի կնոջն որ հանդերձեալ էր ծնանել, զի յորժամ ծնցի կինն

1 Եւ մին մեծ նշան երեւեցաւ երկնքումը. այսպէս մին կին՝ որ արեգակն իրեն վերայ էր առել, եւ լուսինն էլ իրեն ոտներին տակ. եւ իրեն գլխի վերայ տասներկու աստղներից մին պսակ:

2 Եւ յղի էր. եւ ցաւ քաշելումը տառապելով աղաղակումէր, եւ չար չարչարանքով ծնելոյ մօտ ա էր:

3 Եւ մին ուրիշ նշան էլ երեւեցաւ երկնքումը. եւ ահա մին մեծ կրակի պէս վիշապ բ էր. որ եօթն գլուխ ունէր եւ տասն գ եղջիւր, եւ նորա գլուխներին վերայ եօթն թագաւորական դ պսակ:

4 Եւ նորա ե ագին քաշումէր երկնքի աստղների երրորդ զ բաժինը, եւ նորանց ձգեց երկրի է վերայ. եւ վիշապը կանգնած էր այն կնկան առաջին՝ որ պիտի ը ծնէր,

բ Գլ. Ա. 4. 8. Դ. 8. ԺԶ. 5.
գ Գլ. ԺԹ. 6.
դ Համար. 2 9.
ե Դան. Է. 9. 10. Գլ. Զ. 10.
զ Գլ. ԺԹ. 5.
է Գլ. ԺԳ. 10. ԺԸ. 6.
ը Գլ. ԺԵ. 5. 8.
թ Գլ. Ը. 5. ԺԶ. 18.

ա Եսայ. ԿԶ. 7. Գաղ. Դ. 19.
բ Գլ. ԺԵ. 3.
գ Գլ. ԺԵ. 9, 10.
դ Գլ. ԺԳ. 1.
ե Գլ. Թ. 10. 19.
զ Գլ. ԺԷ. 18.
է Դան. Ը. 10.
ը Համար. 2.

զորդի իւր՝ կլցէ զնա վիշապն ։

5 Եւ ծնաւ կինն արու՝ որ հանդերձեալ է հովուել զամենայն հեթանոսս գաւազանաւ երկաթեաւ . եւ յափշտակեցաւ որդի նորա առ Աստուած , եւ առ աթոռ նորա ։
6 Եւ կինն փախեաւ յանապատ՝ ուր էր տեղի նմա պատրաստեալ յԱստուծոյ , զի կերակրեսցի անդ աւուրս հազար երկերիւր եւ վաթսուն ։
7 Եւ եղեւ պատերազմ յերկինս , Միքայէլ եւ հրեշտակք իւր կռուէին ընդ վիշապին . եւ վիշապն պատերազմէր զօրօք իւրովք ։
8 Եւ ոչ կարացին կալ ընդդէմ , եւ տեղի ոչ գտաւ նոցա յերկինս ։

9 Եւ անկաւ վիշապն մեծ՝ օձն առաջին , որ անուանեալ կոչի Բէեղզեբուղ եւ Սատանայ , որ մոլորեցոյց զամենայն տիեզերս երկրի . եւ հրեշտակք նորա ընդ նմա անկան ։
10 Եւ լուայ ձայն մեծ յերկնից՝ որ ասէր . Արդ եղեւ զօրութիւն եւ փրկութիւն եւ արքայութիւն Աստուծոյ մերոյ , եւ իշխանութիւն Օծելոյ նորա զի անկաւ չարախօսն եղբարց մերոց , որ չարախօսէր զնոցանէ առաջի Աստուծոյ զտիւ եւ զգիշեր ։

11 Եւ նոքա յաղթեցին նմա արեամբ Գառինն , եւ բանիւ վկայութեան նոցա . եւ ոչ հաճեցան ընդ վիշապն մինչեւ ՚ի մահ ։

12 Վասն այսորիկ ուրախ լիջիք երկինք՝ եւ ամենայն որ բնակեալ

Նորահամար որ երբոր կինն իրեն որդին ծնի՝ վիշապը կուլ տայ բ նորանն ։
5 Եւ կինն արու զաւակ ծնաւ՝ որ նա պիտի բոլոր հեթանոսներին երկաթէ գաւազանով գ հովուէ . եւ նորա որդին յափշտակուեցաւ Աստուծոյ մօտ՝ եւ նորա աթոռին մօտ ։
6 Եւ կինը փախաւ մին անապատ երկիր՝ որ այն տեղ Աստուածանից տեղ էր պատրաստուած նորա դ համար , որ կերակրուի այն տեղ հազար երկու հարիւր եւ վաթսուն ե օր ։
7 Եւ կռիւ էլաւ երկնքումը , Միքայէլը եւ իրեն զ հրեշտակները կռվումէին վիշապին է հետ . եւ վիշապը կռվումէր իրեն զօրքերովը ։
8 Եւ չը կարացին դէմ կենալ , եւ տեղ էլ չը գտնվաւ նորանց համար երկնքումը ։
9 Եւ վէր ընկաւ մեծ ը վիշապը՝ այն առաջին օձն , որ Բէեղզեբուղ եւ Սատանայ է կոչվում , որ բոլոր բովանդակ աշխարհքը թ մոլորացրուց . եւ իրեն հրեշտակներն էլ իրեն հետ վէր ընկան ։
10 Եւ մեծ ձայն լսեցի երկնքիցն՝ որ ասումէր . Հիմիկ զօրութիւնն ու փրկութիւնը եւ թագաւորութիւնն էլաւ մեր Աստուծոյն , եւ իշխանութիւնը նորա ժ Օծեալին . ինչու որ վէր ընկաւ մեր եղբարներին չարախօսն՝ որ ցերեկ եւ գիշեր նորանցից չարախօսութիւն էր անում Աստուծոյ ի առաջին ։
11 Եւ նորանք յաղթեցին նորան Գառի արիւնովը՝ եւ նորա վկայութեան լ խօսքովը . եւ բնաւ հաւան չը կացան վիշապին մինչեւ խ մահն ։
12 Սորահամար թող ուրախ լինին երկինքը , եւ ամէնքը որ բնակված

բ Եսայ . Ա . 16 ։
գ Սաղ . Բ . 9 ։ Գղ . Բ . 27 ։ ԺԹ . 15 ։
դ Համար . 4 ։
ե Գղ . ԺԱ . 3 ։
զ Դան . Ժ . 13 . 21 ։ ԺԲ . 1 ։
է Համար . 3 ։ Գղ . Ի . 2 ։
ը Ղուկ . Ժ . 18 ։ Յովհ . ԺԲ . 31 ։
թ Ծննդ . Գ . 1 . 4 . Գղ . Ի . 2 ։
ժ Գղ . Ի . 3 ։
ի Գղ . Թ . 1 ։
լ Գղ . ԺԱ . 15 ։ ԺԹ . 1 ։
խ Յոբ . Ա . 9 ։ Բ . 5 ։ Զաք . Գ . 1 ։
ծ Հռովմ . Ը . 33 . 34 . 37 ։ ԺԶ . 20 ։
կ Ղուկ . ԺԴ . 26 ։

են 'ի նմա. վայ երկրի եւ ծովու՝
զի անկաւ Բանսարկուն առ ձեզ,
որ ունի զցասումն բազում. եւ
կայցէ առ սակաւ մի ժամանակս:

13 Եւ յորժամ ետես վիշապն թէ
անկաւ յերկիր, զհետ եղեւ կնոջն՝
որ ծնաւ զմանուկն արու:

14 Եւ տուաւ կնոջն երկու թեւք
արծուոյ մեծի՝ զի թռիցէ յանապատ
'ի տեղի իւր. ուր կերակրէր անդ
ժամանակ եւ ժամանակս եւ կէս
ժամանակի՝ յերեսաց օձին:

15 Եւ եհեղ օձն 'ի բերանոյ իւրմէ
զհետ կնոջն ջուր՝ զի ընկղմեսցէ
զնա:
16 Եւ օգնեաց երկիր կնոջն, եւ
եբաց երկիր զբերան իւր եւ եկուլ
զջուրն՝ զոր եհեղ վիշապն 'ի բե-
րանոյ իւրմէ:
17 Եւ ցասեաւ վիշապն ընդ կնո-
ջըն, եւ գնաց պատերազմել ընդ
այլ զաւակս նորա՝ որք պահէին զպ
պատուիրանս Աստուծոյ, եւ ունէին
զվկայութիւնն Յիսուսի:

18 Եւ կաց 'ի վերայ աւազոյ ծո-
վու:

էք շնորհաւոր. վայ երկրին եւ ծո-
վուն, ինչու որ Բանսարկուն վէր
ընկաւ ձեզ մօտ, որ նա մեծ սաս-
տիկ բարկութիւն = ունի. պատճառն
որ գիտումէ որ մինչեւ ժամանակ
պիտի ւ մնայ:
13 Եւ երբոր տեսաւ վիշապը՝ թէ
վէր ընկաւ երկրի վերայ, այն կըն-
կան ետեւէն ընկաւ՝ որ այն արու
զաւակը դ ծնաւ:
14 Եւ այն կնկանն երկու մեծ
արծուի թեւ շնորհուեցաւ՝ որ = թռչի
անապատն իրեն = տեղը. որ այն
տեղ կերակրուիմէր՝ մէն ժամանակ
եւ ժամանակներ եւ կէս ժամանակ
օձի երեսիցը [illegible]:
15 Եւ օձն իրեն բերանիցը ջուր
թափեց այն կնկան ետեւէն՝ որ նո-
րան ջրով ~ խեղդէ:
16 Եւ երկիրն օգնութիւն արաւ
կնկանը, եւ երկիրն իրեն բերանը
բացաւ եւ այն ջուրը կուլ տուաւ՝
որ վիշապն իրեն բերանիցը թափեց:
17 Եւ վիշապը բարկացաւ այն
կնկան վերայ, եւ գնաց որ նորա
միւս զաւակներին հետ կռուի ° անոնց՝
որ Աստուծոյ պատուիրանքները
ը պահումէին, եւ Յիսուսի վկայու-
թիւնն = ունէին:
18 Եւ ծովու աւազի վերայ կանգ-
նեց:

## ԳԼ. ԺԳ

1 Եւ տեսի զի ելանէր 'ի ծովէն
գազան, եւ ունէր գլուխս եօթն՝
եւ եղջիւրս տասն, եւ 'ի վերայ եղ-
ջերաց նորա տասն խոյր, եւ 'ի վե-
րայ գլխոյ նորա անուն հայհոյու-
թեան:

1 Եւ տեսի որ ծովէնը մէն գա-
զան էր դուրս = գալիս, եւ եօթն
գլուխ ունէր եւ տասն ° եղջիւր,
եւ նորա եղջիւրներին վերայ տասն
թագաւորական պսակ կայ, եւ նորա
գլխներին վերայ հայհոյութեան ա-
նուններ:

ւ Սաղ. ՂԶ. 11: Եսայ. ԽԹ. 13. ԳԼ. ԺԸ. 20. = ԳԼ. Ը. 13: ԺԱ. 10: ւ ԳԼ. Ժ. 6: դ Համար. 5:
Լ Եկեղ. ԺԹ. 4: ~ Համար. 6: = ԳԼ. ԺԷ. 3: Հ Դան. Է. 25: ԺԲ. 7: ~ Եսայ. ԾԹ. 19. ը Ծննդ. Գ. 15:
ԳԼ. ԺԱ. 7: ԺԳ. 7: ° ԳԼ. ԺԴ. 12: = Ա Կորնթ. Բ. 1: Ա Յովհ. Ե. 10: ԳԼ. Ա. 2. 9:
Զ. 9: Ի. 4:
= Դան. Է. 2. 7: ° ԳԼ. ԺԲ. 3 ԺԷ. 3. 9. 12:

2 Եւ գազանն զոր տեսի՝ նման
ընձու , եւ ոտք նորա իբրեւ զարջու ,
եւ բերան նորա որպէս զառիւծու .
եւ ետ նմա վիշապն զզօրութիւն
իւր՝ եւ զաթոռ իւր եւ զիշխանու-
թիւն մեծ ։

3 Եւ մի 'ի գլխոց նորա վիրա-
ւորեալ էր 'ի մահ . եւ վէր մահուան
նորա ողջացաւ . եւ զարմացաւ
ամենայն երկիր ընդ գազանն , զի
ետ նմա վիշապն զթագաւորու-
թիւն իւր ։
4 Եւ երկիրպագին վիշապին՝ որ
ետ զիշխանութիւնն գազանին , եւ
ասէին . Ո՞վ իցէ նման գազանիս .
կամ ո՞վ կարիցէ պատերազմել ընդ
դմա ։
5 Եւ տուաւ նմա բերան խօսել
զմեծամեծս , եւ զհայհոյութիւն . եւ
տուաւ նմա իշխանութիւն զամիսս
քառասուն եւ երկու ։
6 Եւ եբաց զբերան իւր հայհո-
յութեամբ առ Աստուած , եւ հայ-
հոյեաց զանուն նորա՝ եւ զխորանն
նորա , եւ զերկնայինն խորանն ։

7 Եւ տուաւ նմա իշխանութիւն
առնել պատերազմ ընդ սուրբս՝ եւ
յաղթել նոցա . եւ տուաւ նմա իշ-
խանութիւն 'ի վերայ ամենայն ազ-
գաց եւ լեզուաց եւ ժողովրդոց ։
8 Զի երկիրպագանիցեն նմա ամե-
նայն որ բնակեալ են ընդ երկնաւ
երկրի . որոց ոչ են գրեալ անուանք
նոցա 'ի դպրութիւն կենաց Գառի-
նըն զենլոյ 'ի սկզբանէ աշխարհի ։

9 Որք ունիցին ականջս լսելոյ՝
լուիցեն ։

2 Եւ այն գազանն որ տեսայ՝ այդ
ինձի նման ա էր , եւ նորա ոտներն
արջի բ նման , եւ նորա բերանն
առիւծի գ նման . եւ այն վիշապը
տուաւ նորան իրեն դ զօրութիւնը
եւ իրեն ե աթոռը եւ իրեն մեծ
զ իշխանութիւնը ։
3 Եւ նորա գլուխներիցը մէկը մեռ-
նելոյ չափ խոցված էր . եւ նորա
մահու խոցն է ողջանումէր . եւ բոլոր
երկիրը զարմացաւ այն գազանին
վերայ , (ինչու որ վիշապն իրեն թա-
գաւորութիւնը տուաւ ը նորան) ։
4 Եւ երկրպագութիւն արին վի-
շապին՝ որ իշխանութիւնը տուաւ
գազանին , եւ ասումէին . Ո՞վ կը
լինի այս գազանիս նման . կամ ո՞վ
կարող է դորա հետ կռիւ թ անել ։
5 Եւ բերան տրվեցաւ նորան որ
մեծ մեծ բաներ խօսի , եւ ժ հայհո-
յանք . եւ իշխանութիւն տրվեցաւ
նորան քառասուն եւ երկու ի ամիս ։
6 Եւ իրեն բերանը հայհոյանքով
բացաւ Աստուծոյ դէմ , եւ հայհո-
յեց նորա անունը՝ եւ նորա լ խո-
րանը՝ եւ նորանց էլ որ երկնքումը
բնակված են ։
7 (Եւ տրվեցաւ նորան որ սրբերին
դէմ կռիւ անէ եւ նորանց խ յաղ-
թէ) . եւ իշխանութիւն տրվեցաւ
նորան ամէն ազգերի եւ լեզուների
եւ ժողովուրդների ծ վերայ .
8 Որ երկրպագութիւն կանեն նո-
րան այն ամէնքը՝ որ երկրի երեսի
վերայ բնակված են , որ նորանց կ ա-
նունները գրված չեն Գառի կենաց
գրքին մէջ՝ որ աշխարհքի ստեղծա-
գործութեան սկզբից է հ մորթված ։
9 Ով որ լսելոյ ականջ ունի՝ թող
ձ լսէ ։

ա Դան . Է . 6 ։
բ Դան . Է . 5 ։
գ Դան . Է . 4 ։
դ Գլ . ԺԲ . 9 ։
ե Գլ . ԺԶ . 10 ։
զ Գլ . ԺԲ . 4 ։
է Համար . 12 . 14 ։
ը Գլ . ԺԷ . 8 ։
թ Գլ . ԺԲ . 18 ։
ժ Դան . Է . 8 . 11 . 25 ։ ԺԱ . 36 ։
ի Գլ . ԺԱ . 2 ։ ԺԲ . 6 ։
լ Յովհ . Ա . 14 ։ Կող . Բ . 9 ։
խ Դան . Է . 21 ։ Գլ . ԺԱ . 7 ։ ԺԲ . 17 ։
ծ Գլ . ԺԱ . 18 ։ ԺԷ . 15 ։
կ Ելից . ԼԲ . 32 ։ Դան . ԺԲ . 1 ։ Փիլիպ . Դ . 3 ։ Գլ . Գ . 5 ։ Ի . 12 . 15 ։ ԻԱ . 27 ։
հ Գլ . ԺԷ . 8 ։
ձ Գլ . Բ . 7 ։

10 Զի են ոմանք՝ որք 'ի գերութեան վարեսցին, եւ են ոմանք՝ որ սրով մեռցին, եւ են ոմանք՝ որ անձամբ զանձինս սպանանեն. աստ է համբերութիւն եւ հաւատ սրբոց ։

11 Եւ տեսի այլ գազան՝ զի ելանէր յերկրէ, եւ ունէր եղջիւրս երկու նման գառինն. եւ խօսէր իբրեւ զվիշապն ։

12 Եւ զիշխանութիւն զամենայն զառաջնոյ գազանին գործէր առաջի նորա. եւ առնէր զերկիր եւ զամենայն բնակիչս նորա՝ զի երկիրպագանիցեն գազանին առաջնոյ՝ մինչեւ ողջացաւ վէր մահու նորա ։

13 Եւ առնէր նշանս բազումս, եւ տայր հրոյ իջանել յերկնից յերկիր՝ առաջի մարդկան ։

14 Եւ մոլորեցուցանէր զորս բնակեալ են յերկիր՝ նշանօքն որ տուեալ են 'ի ձեռս նորա՝ առնել առաջի գազանին. ասեն ցնա բնակիչք երկրի. Արա՛ զպատկեր գազանին, որ 'ի վերայ սրոյն եկեաց ։

15 Եւ տուաւ նմա իշխանութիւն, զի տացէ հոգի պատկերի գազանին, եւ զի խօսեսցի պատկերն. եւ երկրպագեսցեն նմա ամենայն բնակիչք երկրի. եւ որ ոչ պագցէ երկիր պատկերի գազանին, սպանցէ զնա ։

16 Եւ արասցէ զամենայն փոքունս եւ զմեծամեծս եւ զմեծատունս եւ զազատս եւ զաղքատս եւ զծառայս, զի տացէ նոցա դրոշմ յա-

10 Ինչու որ կան մին քանիսն՝ որ պիտի գերութեան մէջ մ քաշվին, եւ կան մին քանիսն՝ որ պիտի սրով յ մեռնին, եւ կան մին քանիսն, որ պիտի իրենք իրենց սպանեն, այս տեղ է սրբերի համբերութիւնն ու ն հաւատքը ։

11 Եւ տեսի մին ուրիշ գազան՝ որ դուրս էր գալիս շ երկրիցը, եւ երկու եղջիւր ունէր գառի նման. եւ վիշապի նման էր խօսում ։

12 Եւ այն առաջի գազանի ամէն իշխանութիւնը բանեցնում էր նորա առաջին. եւ այնպէս էր անում, որ երկիրն ու նորա վերայ ամէն բնակողները՝ երկրպագութիւն անեն այն առաջին գազանին, մինչեւ որ նորա մահի խոցն ո ողջանայ ։

13 Եւ շատ նշաններ էր չ անում, եւ երկնքիցը կրակ էր վէր բերում երկրի՝ մարդկանց պ առաջին ։

14 Եւ մոլորացնում էր նորանց, որ բնակված են երկրի ջ վերայ՝ այն նշաններովը որ տրված էին նորա ռ ձեռքն՝ որ գործէ գազանի առաջին. եւ երկրի բնակողներին ասացին նորան՝ Պատկեր շինէ այն գազանին՝ որ այս սրի խոցիցն ս ապրեցաւ ։

15 Եւ իշխանութիւն տրվեցաւ նորան՝ որ հոգի տայ այն գազանի պատկերին, եւ որ պատկերն էլ խօսի. եւ երկրպագութիւն կանեն նորան՝ երկրի վերայ ամէն բնակողները. եւ ով որ երկրպագութիւն չանէ գազանի պատկերին, նորան վ կըսպանէ ։

16 Եւ կանէ որ ամէնքը փոքրներըն ու մեծամեծները, հարուստներըն ու ազատները եւ աղքատներն ու ծառաներն՝ իրենց աջ ձեռումն

մ Եսայ. ԼԳ. 1.
յ Ծննդ. Թ. 6. Մատթ. ԻԶ. 52.
ն Գղ. ԺԴ. 12.
շ Գղ. ԺԱ. 7.
ո Համար. 3.
չ Բ Օրին. ԺԳ. 1—3. Մատթ. ԻԴ. 24. Բ Թես. Բ. 9. Գղ. ԺԶ. 14.
պ Գ Թագ. ԺԸ. 38. Դ Թագ. Ա. 10. 12.
ջ Գղ. ԺԲ. 9. ԺԹ. 20.
ռ Բ Թես. Բ. 9. 10.
ս Դ Թագ. Ի. 7.
վ Գղ. ԺԶ. 2. ԺԹ. 20. Ի. 4.

ջու ձեռին՝ եւ 'ի վերայ ճակատու
նոցա ։
17 Եւ ոչ ոք կարասցէ գնել եւ
վաճառել՝ եթէ ոչ ունիցի զդրոշմ
դրոյն՝ եւ զանուն գազանին եւ ըզ
թիւ անուան նորա ։
18 Աստ է իմաստութիւն . որ ու-
նի միտս՝ համարեսցի զթիւ գազա-
նին . թիւ եղեալն մարդոյ, եւ թիւ
անուան նորա է այս . վեց հարիւր
վաթսուն եւ վեց ։

ու իրենց ճակատումը դրոշմ նշան
⊤ ընդունին ։
17 Եւ որ ոչ մինը չը կարողանայ
գնել եւ ծախել՝ թէ որ այն գազանի
նշանն ու նորա r անունը՝ եւ նորա
անունի համարը ɔ չունենայ ։
18 Այստեղ է – իմաստութիւն . ով
որ միտք ունի՝ թող գազանի հա-
մարն ǂ համարէ . ինչու որ մին մար-
դոյ համարն է, եւ նորա անունի
համարը սա է, վեց հարիւր վաթ-
սուն եւ + վեց ։

## ԳԼ. ԺԴ

1 Եւ տեսի՝ եւ ահա Գառն կայր
'ի վերայ լերինն Սիովնի . եւ ընդ
նմա հարիւր քառասուն եւ չորս
հազարք, որ ունէին զանուն նորա՝
եւ զանուն Հօր նորա գրեալ 'ի վե-
րայ ճակատուց նոցա ։
2 Եւ լուայ ձայն յերկնից՝ որպէս
զձայն ջուրց բազմաց՝ եւ ձայն ո-
րոտման մեծի . եւ լուայ իբրեւ ըզ
ձայն քնարահարաց, զի հարկանէին
զքնարս իւրեանց ։
3 Եւ երգէին զերգս նորս առա-
ջի աթոռոյն՝ եւ առաջի չորից կեն-
դանեացն՝ եւ առաջի երիցանցն .
եւ ոչ ոք կարէ գիտել զերգս նոցա՝
բայց միայն հարիւր քառասուն եւ
չորս հազարքն՝ որք ազատեալ են
յերկրէ ։
4 Սոքա են՝ որք ընդ կանայս ոչ
խառնակեցան, եւ են կուսանք .
սոքա զկնի երթան Գառինն՝ ուր եւ
երթիցէ . սոքա ընտրեցան 'ի մարդ-
կանէ առաջի Աստուծոյ եւ Գառինն ։
5 Եւ 'ի բերան նոցա ոչ գտաւ
սուտ զի անբիծք են ։

1 Եւ տեսայ՝ եւ ահա Գառն կանգ-
նած էր Սիոն սարին – վերայ . եւ
նորա հետ հարիւր քառասուն եւ
չորս հազար Բ հոգի, որ նորա անու-
նըն ու նորա Հօր անունը գրած ու-
նէին իրենց ճակատներին ǂ վերայ ։
2 Եւ ձայն լսեցի երկնքիցը շատ
ջրերի ձայնի պէս, եւ մեծ որոտ-
մունքի ձայնի ⊤ պէս . եւ քնար ա-
ծողների ձայնի պէս լսեցի՝ որ ի-
րենց քնարներն Ի ածումէին ։
3 Եւ նոր երգեր էին երգում ա-
թոռի առաջին եւ չորս կենդանի-
ների առաջին՝ եւ երէցների ɿ առա-
ջին . եւ ոչ ով չի կարող գիտել
նորանց երգերը՝ բայց միայն այն
հարիւր քառասուն եւ չորս հազար-
ների, որ երկրից ազատուել Ի են ։
4 Սորանք են՝ որ կանանց հետ
չը խառնակուեցան եւ կոյս ε են .
սորանք Գառի ետեւէն են գնում
որտեղ որ Բ գնայ . սորանք մարդ-
կանցից ɟ ընտրուեցան Աստուծոյ եւ
Գառի ǂ առաջին ։
5 Եւ նորանց բերանումը սուտ
ւ չը գտնուեց՝ ինչու որ անարատ Ի են ։

⊤ Գլ. ԺԴ. 9. ԺԹ. 20. Ի. 4.
r Գլ. ԺԴ. 11.
ɔ Գլ. ԺԵ. 2.
– Գլ. ԺԷ. 9.
ǂ Գլ. ԺԵ. 2.
+ Գլ. ԻԱ. 17.
– Գլ. Ե. 5.
Բ Գլ. Է. 4.
ǂ Գլ. Է. 3. ԺԳ. 16.
⊤ Գլ. Ա. 15. ԺԹ. 6.
Ի Գլ. Ե. 8.
ɿ Գլ. Ե. 9. ԺԵ. 3.
Ի Համբ. 1.
ε Բ Կորնթ. ԺԱ. 2.
Բ Գլ. Գ. 4. Է. 15. 17. ԺԷ. 14.
ɟ Գլ. Ե. 9.
ǂ Յակ. Ա. 18.
ւ Սաղ. ԼԲ. 2. Սոփ. Գ. 13.
Ի Եփես. Ե. 27. Յուդ. 24.

6 Եւ տեսի այլ հրեշտակ թռուցեալ 'ի մէջ երկնից. եւ ունէր աւետիս յաւիտենական՝ աւետարանել ամենայն ազգաց եւ լեզուաց՝ որ բնակեալ են յերկրի ։

7 Եւ ասէր 'ի ձայն մեծ. Երկերո՛ւք յԱստուծոյ՝ եւ տուք փառս նմա, զի եկն ժամ դատաստանի նորա. եւ երկիր պագէք Արարչին երկնի եւ երկրի եւ ծովու եւ աղբերաց ջուրց ։

8 Եւ այլ հրեշտակ երկրորդ գայր զհետ նորա եւ ասէր. Անկաւ՝ անկաւ Բաբելոն մեծն՝ 'ի գինւոյ արբեցութենէ՝ 'ի ցասմանէ՝ 'ի պոռնկութենէ իւրմէ՝ որ արբեցոյց զամենայն հեթանոս ։

9 Եւ այլ հրեշտակ երրորդ գայր զհետ նոցա՝ եւ 'ի ձայն մեծ ասէր. Ով որ երկրպագեաց գազանին եւ պատկերի նորա՝ եւ կալ զգրոշմ նշանի նորա առ 'ի ճակատ իւր՝ եւ կամ 'ի վերայ աջոյ ձեռին իւրոյ,

10 Այնպիսին արբցէ 'ի բաժակէ ցասմանն Աստուծոյ՝ արկելոյ յանապակ բարկութեան բաժակին. եւ տանջեսցի հրով եւ ծծմբով առաջի Աստուծոյ եւ Գառինն ։

11 Եւ ծուխ նոցա ելցէ յաւիտեանս յաւիտենից. եւ ոչ ունին հանգիստ՝ որք երկիրպագին գազանին 'ի տուէ 'ի գիշերի. եւ որք երկիր պագին պատկերին, եւ առնուն զգրոշմ եւ զանուն նորա ։

6 Եւ մին ուրիշ՝ հրեշտակ տեսի որ թռչումէր երկինքին ժ մէջ, եւ յաւիտենական աւետիս ունէր ի աւետարանել ամէն ազգերին եւ լեզուներին՝ որ երկրումը բնակված լ են ։

7 Եւ մեծ ձայնով ասումէր. Վախեցէք Աստուածանից՝ եւ փառք տուէք խ Նորան. պատճառն որ նորա դատաստանի ժամը եկաւ. եւ երկրպագութիւն արէք երկինքի եւ երկրի եւ ծովի եւ աղբիւրի ջրերի ծ Ստեղծօղին ։

8 Եւ մին ուրիշ երկրորդ հրեշտակ էր գալիս նորա ետեւէն եւ ասում. Վէր ընկաւ՝ վէր ընկաւ էն մեծ կ Բաբիլօնն, ինչու որ ամէն հեթանոսներին հարբեցրուց իրեն պոռնկութեան բարկութեան հարբեցնօղ գինուցը ։

9 Եւ մին ուրիշ երրորդ հրեշտակ էր գալիս նորանց ետեւէն՝ եւ մեծ ձայնով ասում. Ով որ երկրպագութիւն արաւ գազանին եւ նորա պատկերին, եւ կամ նորա նշանի գրոշմն առաւ իրեն ճակատը կամ իրեն աջ ձեռին հ վերայ,

10 Այնպէսին Աստուծոյ բարկութեան բաժակիցը պիտի խմէ՝ որ առանց խառնվելոյ ձ թափվումէ նորա բարկութեան բաժակին մէջ. եւ կրակով ու մ ծծմբով պիտի տանջվի Աստուծոյ եւ Գառի յ առաջին ։

11 Եւ նորանց ծուխը վէր կելլի յաւիտեանս ն յաւիտենից. եւ ցերեկ եւ գիշեր հանգիստ չունինենարանք՝ որ երկրպագութիւն արին գազանին՝ եւ նորա պատկերին. եւ ով որ էլ նորա նշանն ու անունն ընդունեցին ։

ժ Գլ. Ը. 13։
ի Եփես. Գ. 9, 10. 11։ Ցիտ. Ա. 2.
լ Գլ. ԺԴ. 7։
խ Գլ. ԺԱ. 18. ԺԵ. 4։
ծ Նէեմ. Թ. 6։ Սաղ. ԼԳ. 6։ ՃԺԴ. 8։ ՃԽԶ. 5, 6։ Գործ. ԺԴ. 15։ ԺԷ. 24։
կ Եսայ. ԻԱ. 9. Երեմ. ԾԱ. 8։ Գլ. ԺԸ. 2։
հ Գլ. ԺԳ. 14. 15, 16։
ձ Սաղ. ՀԵ. 8։ Եսայ. ԾԱ. 17։ Երեմ. ԻԵ. 15։
ղ Գլ. ԺԸ. 6։
ճ Գլ. ԺԶ. 19։
մ Գլ. ԺԹ. 20։
յ Գլ. Ի. 10։
ն Եսայ. ԼԴ. 10։ Գլ. ԺԹ. 3։

12 Եւ համբերութիւն սրբոցն աստ է. այս՝ որք պահեն զպատուիրանս Աստուծոյ, եւ զհաւատս Յիսուսի։

13 Եւ լուայ ձայն յերկնից՝ որ ասէր ցիս. Գրեա, Երանի մեռելոցն՝ որք 'ի Տէր ննջեցին այժմիկ վաղվաղակի. զայս ասէ Հոգին, քանզի հանգեան յաշխատութենէ իւրեանց. բայց միայն գործք իւրեանց չոգան զհետ նոցա։

14 Եւ տեսի՝ եւ ահա ամպ սպիտակ, եւ 'ի վերայ ամպոյն նստէր նման Որդւոյ մարդոյ, եւ 'ի գլուխ իւր պսակ ոսկի, եւ 'ի ձեռին իւրում ունէր գերանդի սրեալ։

15 Եւ այլ հրեշտակ ելանէր յերկնից, աղաղակէր 'ի ձայն մեծ՝ եւ ասէր. Որ նստիդ 'ի վերայ ամպոյդ՝ առաքեա զգերանդիդ քո՛ եւ հնձեա, զի եկն ժամանակ հնձոց, եւ հասեալ են հունձք երկրի։

16 Եւ արկ՝ որ նստէր 'ի վերայ ամպոյն՝ զգերանդին իւր յերկիր, եւ հնձէր զամենայն բնակիչս երկրի։

17 Եւ այլ հրեշտակ ելանէր 'ի տաճարէն՝ որ յերկինս, եւ ունէր եւ սա գերանդի սրեալ։

18 Եւ այլ հրեշտակ ելանէր 'ի սեղանոյն՝ որ ունէր իշխանութիւն 'ի վերայ հրոյ, եւ աղաղակեաց 'ի ձայն մեծ առ հրեշտակն՝ որ ունէր զգերանդին սրեալ՝ եւ ասէր. Կթեա զողկոյզս յայգւոյ երկրէ, զի հասեալ է խաղողդ 'ի դմա։

12 Այստեղ է սրբերի Ղ համբերութիւնը. նրանք որ Աստուծոյ պատուիրանքները, եւ Յիսուսի հաւատքը − պահում են։

13 Եւ երկնքիցը ձայն լսեցի որ ասումէր ինձ. Գրէ, Երանի այն = մեռելներին որ հիմիկ չուտով Տէրումը հանգչեցին. Հոգին սա է ասում. պատճառն որ իրենց աշխատանքներիցը հանգիստ ⁼ առնին, բայց իրենց գործքերը գնային իրենց ետեւէն։

14 Եւ տեսայ՝ եւ ահա մին սպիտակ ամպ, եւ մէկը նստած էր ամպի վերայ Որդւոյ մարդոյ ⁝ նման, եւ նորա գլխին վերայ ոսկի ⁝ պսակ, եւ իրեն ձեռումը մին սրած գերանդի ունէր։

15 Եւ ուրիշ հրեշտակ էր դուրս գալիս − երկնքիցը, մեծ ձայնով աղաղակումէր՝ եւ ասում. Դու որ ամպի վերայ նստած ես՝ ուղարկէ քո գերանդիդ՝ եւ + հնձէ. ինչու որ հնձի ժամանակն եկաւ, եւ երկրի հունձքը հասել + է։

16 Եւ նա՝ որ ամպի վերայ նստած էր՝ վէր ձգեց իրեն գերանդին երկրի վերայ, եւ հնձումէր երկրի ամէն բնակողներին։

17 Եւ ուրիշ հրեշտակ էլ դուրս էր գալիս այն տաճարիցն՝ որ երկնքումն է, եւ սա էլ սրած գերանդի ունէր։

18 Եւ ուրիշ հրեշտակ էր դուրս գալիս սեղանիցն՝ որ իշխանութիւն ունէր կրակի ° վերայ, եւ մեծ ձայնով աղաղակեց դէպի այն հրեշտակին՝ որ այն սրած գերանդին ունէր՝ եւ ասումէր. Ուղարկէ քո սուր գերանդիդ՝ եւ երկրի այգոյ ողկոյզները քաղէ, ինչու որ դորա միջի խաղողն հասել ‡ է։

Ղ Գղ. ԺԳ. 10.
− Գղ. ԺԲ. 17.
= Ժող. Դ. 1, 2.
Գղ. Ի. 6.
Ւ Ա Կորնթ. ԺԵ 18. Ա Թես. Դ. 16.
+ Բ Թես. Ա. 7. Եբր. Դ. 9, 10. Գղ. Զ. 11.
: Եղեկ. Ա. 26. Դան. Է. 13.
Գղ. Ա. 13.
⁝ Գղ. Զ. 2
− Գղ. ԺԶ. 17.
+ Յովէլ. Գ. 13 Մատթ. ԺԳ 39.
+ Երեմ. ԾԱ. 33.
Գղ. ԺԳ. 12.
° Գղ. ԺԶ. 8.
‡ Յովէլ. Գ. 13.

19 Եւ արկ հրեշտակն զգերանդի իւր յերկիր, եւ կթէր զխաղող նորա. եւ արկանէր ՚ի հնձանն Աստուծոյ ՚ի մեծ ։

20 Եւ կոխեցաւ հնձանն արտաքոյ քաղաքին, եւ ելանէր ՚ի հնձանէն արիւն մինչեւ ՚ի սանձս ձիոյն. եւ երկայնութիւն նորա հազար եւ վեց հարիւր ասպարէզ ։

19 Եւ հրեշտակն իրեն գերանդին ձգեց երկրի վերայ, եւ նորա խաղողը քաղում էր, եւ ձգում Աստուծոյ մեծ հնձանին մէջ ։

20 Եւ հնձանը է կոխվեցաւ քաղաքի դուրս է կողմումը, եւ արիւն էր դուրս գալիս հնձանիցը մինչեւ ձիոց սանձքը. եւ նորա երկարութիւնն հազար եւ վեց հարիւր ասպարէզ էր ։

## ԳԼ. ԺԵ

1 Եւ տեսի այլ՝ նշան յերկինս մեծ եւ սքանչելի. հրեշտակս եօթն՝ որք ունէին եօթն վէրս զնի. զի նոքօք կատարէր բարկութիւն Աստուծոյ ։

2 Եւ տեսի որպէս ծով ապակեղէն խառնեալ հրով. եւ որք յաղթեցին գազանին՝ եւ թուոյ անուան նորա՝ եւ պատկերի նորա՝ եւ դրոշմի նորա, նոքա կային ՚ի վերայ ծովուն ապակեղինի. եւ ունէին զքնարս Աստուծոյ ։

3 Եւ երգէին զերգս Մովսէսի ծառայի Աստուծոյ, եւ զերգս Գառինն՝ ասելով. Թէ Մեծամեծ եւ սքանչելի են գործք քո՝ Տէր Աստուած Ամենակալ, արդար՝ եւ ճշմարիտ են ճանապարհք քո, Թագաւոր ամենայն հեթանոսաց ։

4 Եւ ով ոք ոչ երկիցէ՝ եւ փառաւորեսցէ զանուն քո. զի դու միայն սուրբ, եւ արժանի երկրպագելոյ. զի ամենայն հեթանոսք՝ եկեսցեն եւ երկիր պագցեն

1 Եւ մին ուրիշ մեծ եւ զարմանալի նշան տեսայ երկնքումը. եօթն հրեշտակ՝ որ վերջին եօթն պատուհասը բռնած է ունէին. ինչու որ Աստուծոյ բարկութիւնը նորանցով էր է կատարվում ։

2 Եւ տեսայ մին ապակեայ նման ծով՝ կրակի հետ է խառնած. եւ նորանք որ յաղթեցին գազանին՝ եւ նորա անուանը համարին՝ եւ նորա պատկերին՝ եւ նորա դրոշմին, նորանք կանգնած էին այն ապակեայ ծովի վերայ, եւ Աստուծոյ քնարները է ունէին ։

3 Եւ Մովսէսի ՙերգն ու Գառի երգն էին երգում Աստուծոյ ծառային, ասելով. Թէ Մեծ եւ զարմանալի են քո գործքերդ՝ Տէր Աստուած Ամենակալող. արդար եւ ճշմարիտ են քո ճանապարհներդ, ով ամէն հեթանոսների Թագաւորդ ։

4 Եւ ով է որ քեզանից չի վախենայ՝ ով Տէր եւ քո անունդ չփառաւորէ. պատճառն որ մինակ դու ես սուրբ եւ արժանաւոր երկրպագութիւն առնելոյ. ինչու որ ամէն

ա Գլ. ԺԹ. 15։
բ Եսայ. ԿԳ. 3։ Ողբ. Ա. 15։
գ Գլ. ԺԱ. 8։ Եբր. ԺԳ. 12։
դ Գլ. ԺԹ. 14։
—
ե Գլ. ԺԲ. 1. 3։

զ Գլ. ԺՁ. 1։ ԻԱ. 9։
է Գլ. ԺԴ. 10։
ը Գլ. Դ. 6։ ԻԱ. 18։
թ Մատթ. Գ. 11։
ժ Գլ. ԺԴ. 15. 16։ 17։

ի Գլ. Ե. 8։ ԺԴ. 2։
լ Ելից ԺԵ. 1։ Բ Օրին. ԼԱ. 30։ Գլ. ԺԴ. 3։
խ Բ Օրին. ԼԲ. 4։ Սաղ. ՃԺԱ. 2։ ՃԼԹ. 14։

ծ Սաղ. ՃԽԵ. 17։ Ովսէ. ԺԴ. 9։ Գլ. ԺԶ. 7։
կ Ելից. ԺԵ. 14, 15։ 16։ Երեմ. Ժ. 7։

առաջի քո Տէր՝ յորժամ արդարութիւն քո յայտնեսցի ։

5 Եւ յետ այսորիկ տեսի և բացաւ տաճարն խորանին վկայութեան՝ որ էր 'ի յերկինս ։

6 Եւ ելանէին եօթն հրեշտակք որք ունէին եօթն հարուածս, և զգեցեալ էին 'ի տաճարին կտաւս մաքուրս՝ և պայծառս ․ և գօտեւորեալ էին առ ստեամբք իւրեանց գօտիս ոսկեղէնս ։

7 Եւ 'ի չորից կենդանեացն տուաւ եօթն հրեշտակացն՝ եօթն սկաւառակս լի ցասմամբն Աստուծոյ կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից ։

8 Եւ լցաւ տաճարն ծխով փառացն Աստուծոյ՝ և զօրութեանն նորա ․ և ոչ ոք կարէր մտանել 'ի տաճարն՝ մինչև կատարեսցին եօթն հարուածքն յեօթն հրեշտակացն ։

հեթանոսները պիտի գան եւ քո առաջիդ երկրպագութիւն անեն՝ ով Տէր, երբոր քո արդարութիւնդ ւ կը յայտնուի ։

5 Եւ ասկէց ետեւ տեսայ՝ եւ վկայութեան խորանի տաճարն՝ որ երկնքումն էր՝ ի բացուեցաւ ։

6 Եւ եօթն հրեշտակ էին դուրս գալին՝ որ եօթն պատուհասն ծ ունէին, եւ տաճարումը մաքուր եւ պայծառ կտաւ էին հագած, եւ ծծերնին մօտերը ոսկէ գօտիներ կ կապած ։

7 Եւ այն չորս կենդանիներիցը մինն այս եօթն հրեշտակներին եօթըն ոսկէ սկաւառակ տուաւ Աստուծոյ բարկութեամբ հ լիքն՝ որ նա կենդանի է յաւիտեանս ձ յաւիտենից ։

8 Եւ ղ տաճարը լցվաւ Աստուծոյ փառաց՝ եւ նորա զօրութեան ճ ծըխովը ․ եւ ոչ մէկ կարող չէ մտնել տաճարին մէջ՝ մինչեւ այն եօթն հրեշտակներին եօթն պատուհասները կատարուին ։

## ԳԼ․ ԺԶ

1 Եւ լուայ ձայն մեծ 'ի տաճարէն՝ զի ասէր ցեօթն հրեշտակսն, Երթայք հեղէք զեօթն սկաւառակսդ ցասմանն Աստուծոյ յերկիր ։

2 Եւ գնաց առաջին հրեշտակն՝ և եհեղ զսկաւառակ իւր յերկիր, և եղև հարուածք չարաչար 'ի վերայ մարդկան, որ ունէին զդրոշմ գազանին, և երկիր պագին պատկերի նորա ։

3 Եւ երկրորդ հրեշտակն եհեղ զսկաւառակ իւր 'ի ծով, և զար-

1 Եւ մեծ ձայն լսեցի տաճարէցըն՝ որ ասումէր այն եօթն-հրեշտակներին ․ Գնացէք՝ եւ այդ եօթն սկաւառակներդ որ Աստուծոյ բարկութեամբը լիքն են՝ թափեցէք երկրի մ վերայ ։

2 Եւ առաջին հրեշտակը գնաց՝ եւ իրեն սկաւառակը թափեց երկրի ն վերայ, եւ չարաչար պատուհասներ ելան մարդկանց շ վերայ, որ գազանի դրոշմն ո ունէին, եւ նորա պատկերին երկրպագութիւն չ արին ։

3 Եւ երրորդ հրեշտակն իրեն սկաւառակը թափեց ծովի պ մէջ,

ւ Եսայ․ ԿԶ․ 22․
ի Թուէ․ Ա․ 50․
Գլ․ ԺԱ․ 19․
ծ Համր․ 1․
կ Եզեկ․ ԽԸ․ 6․ 8․
Եզեկ․ ԽԴ․ 17,
18․ Գլ․ Ա․ 13․
հ Գլ․ Դ․ 6․
ձ Ա Թես․ Ա․ 9․
Գլ․ Դ․ 9․ Ժ․ 6
ղ Եզեկ․ Ժ․ 34․ Գ
Թագ․ Ը․ 10․ Բ
Մնաց․ Ե․ 14․
Եսայ․ Զ․ 4․
ճ Բ Թես․ Ա․ 9․
—
մ Գլ․ ԺԵ․ 1․
յ Գլ․ ԺԴ․ 10․
ԺԵ․ 7․
ն Գլ․ Ը․ 7․
շ Ելից․ Թ․ 9—11․
ո Գլ․ ԺԳ․ 16․ 17․
չ Գլ․ ԺԳ․ 14․
պ Գլ․ Ը․ 8․

ձան ջուրքն յարեան մեռելոյ. եւ ամենայն շունչ կենդանի որ էր 'ի ծովու սատակեցաւ։

4 Եւ երրորդ հրեշտակն եհեղ զսկաւառակ իւր 'ի գետս՝ եւ յաղբերս ջուրց, եւ եղեւ արիւն։

5 Եւ լուայ 'ի հրեշտակէն՝ զի ասէր. Արդար է՝ որ էնն եւ է, եւ սուրբ 'ի գործս իւր՝ զի այսպէս դատեցաւ։

6 Վասն զի զարիւն սրբոց՝ եւ զարիւն մարգարէիցն հեղլին ամպարիշտք. վասն այնորիկ արիւն ետ ըմպել նոցա ըստ արժանւոյն։

7 Եւ լուայ 'ի սեղանոյ անտի զի ասէր. Այո՛ Տէր Աստուած Ամենակալ, արդար եւ ճշմարիտ են դատաստանք քո։

8 Եւ չորրորդ հրեշտակն եհեղ 'ի սկաւառակէ իւրմէ 'ի վերայ արեգական։

9 Եւ տուաւ նմա խարշակահար առնել զմարդիկ հրով. եւ տապացան մարդիկ 'ի տապ մեծ, եւ հայհոյեցին զԱստուած՝ որ ունի իշխանութիւն 'ի վերայ հարուածոցս այսոցիկ. եւ ոչ ապաշխարեցին 'ի փառս Աստուծոյ։

10 Եւ հինգերորդ հրեշտակն եհեղ 'ի սկաւառակէ իւրմէ 'ի վերայ աթոռոյ գազանին, եւ եղեւ թագաւորութիւն նորա խաւարեալ. եւ ծամէին զլեզուս իւրեանց յախտէ ցաւոցն։

11 Եւ հայհոյեցին զԱստուած երկնից 'ի ցաւոց իւրեանց՝ եւ յախտէ

եւ ջրերը դարձան մեռածի ը արեան. եւ ամէն կենդանի շունչ՝ որ ծովումն էր՝ բ սատակվեցաւ։

4 Եւ երրորդ հրեշտակն իրեն սկաւառակը թափեց գետերի եւ ջրերի աղբիւրների ծ վերայ եւ եղաւ է արիւն։

5 Եւ ձայն լսեցի ջրերի հրեշտակին՝ որ ասում էր. Արդար ես ւ Դու՝ որ էր եւ է, եւ սուրբ է իրեն գործքերումը, որ այսպէսի դատաստան ի արաւ։

6 Պատճառն որ այն ծ ամբարիշտները սրբերի եւ մարգարէների արիւնը լ թափեցին. նորա համար նորանց արիւն խմել տուաւ՝ ինչպէս որ արժան հ էր։

7 Եւ այն սեղանիցը յ ձայն լսեցի՝ որ ասում էր. Իրաւ է՝ Տէր Աստուած ծ Ամենակալդ, արդար եւ ճշմարիտ են քո ւ դատաստաններդ։

8 Եւ չորրորդ հրեշտակն իրեն սկաւառակը թափեց արեգական հ վերայ։

9 Եւ տրվեցաւ նորան որ մարդկանց խաշէ ր կրակով. եւ սաստիկ տաքովը այրվեցան մարդիկը, եւ Աստուծոյն հայհոյեցին՝ որ այս պատուհասներիս վերայ իշխանութիւն շ ունի. եւ ն չապաշխարեցին որ փառք տան ւ նորան։

10 Եւ հինգերորդ հրեշտակն իրեն սկաւառակն թափեց գազանի աթոռին ա վերայ. եւ նորա թագաւորութիւնը խաւար ւ էլաւ. եւ իրենց լեզուները ծամումէին ցաւի ղ տանջանքիցը։

11 Եւ երկնքի Աստուծոյն հայհոյեցին իրենց չ ցաւերի եւ դառն

ը Ելից. Է. 17. 20.
բ Գլ. Ը. 9.
ծ Գլ. Ը. 10.
է Ելից Է. 20.
ւ Գլ. ԺԵ. 3.
ի Գլ. Ա. 4. 8. Դ. 8. ԺԱ. 17.

ծ Մատթ. ԻԳ. 31. 35. Գլ. ԺԳ. 15.
լ Գլ. ԺԱ. 18. ԺԸ. 20.
հ Եսայ. ԽԹ. 26.
յ Գլ. ԺԵ. 3.
ւ Գլ. ԺԳ. 10.

ԺԳ. 10. ԺԹ. 2.
հ Գլ. Ը. 12.
ր Գլ. Թ. 17. 18. ԺԴ. 18.
յ Համար. 11. 21.
ն Դան. Ե. 22, 23. Գլ. Թ. 20.

շ Գլ. ԺԱ. 13. ԺԴ. 7.
ա Գլ. ԺԴ. 2.
ւ Գլ. Թ. 2.
ղ Գլ. ԺԱ. 10.
չ Համար. 9. 21.

զաւանութեանն, եւ ոչ ապաշխա-
րեցին 'ի գործոց իւրեանց ։
12 Եւ վեցերորդ հրեշտակին եհեղ
'ի սկաւառակէ իւրմէ 'ի վերայ գե-
տոյն մեծի Եփրատայ, եւ ցամաքե-
ցան ջուրք նորա՝ զի պատրաստեսցի
ճանապարհ թագաւորի ելիցն
արեւու ։
13 Եւ տեսի՝ զի ելանէր 'ի բերա-
նոյ վիշապին՝ եւ 'ի բերանոյ գա-
զանին՝ եւ 'ի բերանոյ սուտ մար-
գարէին ոգիք երեք անսուրբք իբ-
րեւ գորտ ։
14 Քանզի նոքա էին ոգիք դիւա-
կանք, որք առնէին նշանս՝ եւ
ելանէին առ թագաւորս ամենայն
երկրի՝ ժողովել զնոսա 'ի պատե-
րազմ, յօրն մեծ Տեառն Ամենա-
կալի ․ քանզի այսպէս ասաց Տէր ․
15 Ահա գամ իբրեւ զգող, երանի
որ հսկեն արթունք, եւ պահեսցեն
զհանդերձս իւրեանց ․ զի մի մերկ
շրջեսցին, եւ երեւեսցին ամօթանք
իւրեանց ։
16 Եւ ժողովեսցէ զնոսա՝ 'ի տեղի
մի, որ կոչի Եբրայեցերէն՝ Արմա-
գեդոն ։
17 Եւ եօթներորդ հրեշտակին եհեղ
'ի սկաւառակէ իւրմէ 'ի վերայ օդոյ․
եւ ել ձայն մեծ յերկնից՝ եւ յա-
թոռոյն՝ ասելով ․ Եղեւ ։
18 Եւ եղեն փայլատակմունք եւ
ձայնք եւ որոտմունք ․ եւ եղեւ
շարժումն մեծ՝ որպիսի չէր եղեալ
'ի սկզբանէ՝ յորմէ հետէ եղեւ մարդ
'ի վերայ երկրի՝ այնպիսի շարժումն
մեծ ։

տանջանքի ─ պատճառով ․ եւ չա-
պաշխարեցին իրենց = գործքերից ։
12 Եւ վեցերորդ հրեշտակին իրեն
սկաւառակը թափեց մեծ Եփրատ
գետին Հ վերայ, եւ նորա ջրերը
⸗ ցամաքեցան՝ որ արեւելքի թա-
գաւորներին համար ճանապարհ
ր պատրաստուի ։
13 Եւ տեսայ որ վիշապի բերանի-
ցը՝ ու գազանի ջ բերանիցը՝ եւ
սուտ մարգարէի ─ բերանիցն երեք
պիղծ հոգի էին դուրս գալիս գոր-
տի ÷ նման ։
14 Ինչու որ նորանք դիւական
հոգիք + էին՝ որ նշաններ էին ⁎ ա-
նում, եւ գնումէին բոլոր երկրի
թագաւորների ‡ մօտ՝ որ նորանց
ժողովեն կռուելու համար, Ամենա-
կարող Տէրի մեծ ─ օրումը ․ (պատ-
ճառն որ այսպէս ասաց Տէրը ․)
15 Ահա գողի նման եմ բ գալիս,
երանի նորանց որ արթուն լինին,
եւ իրենց շորերը պահպանեն ․ որ
մերկ ման չը գան, եւ իրենց ամօ-
թանքը ÷ չերեւի ։
16 Եւ կը ժողովեմ նորանց մի-
տեղ՝ որ Եբրայեցերէն Արմագեդօն
է ⸗ կոչվում ։
17 Եւ եօթներորդ հրեշտակին ի-
րեն սկաւառակն թափեց օդի վե-
րայ ․ եւ մեծ ձայն դուրս եկաւ
երկնքի (տաճարիցն) ու աթոռիցն՝
որ ասումէր թէ՝ Ի եղաւ ։
18 Եւ փայլատակմունք եւ ձայներ
եւ որոտմունք Ղ եղան ․ եւ մեծ
շարժմունք ե եղաւ՝ որ այնպէսի մեծ
շարժմունք չի եղած սկզբիցը՝ քա-
նի որ մարդիք երկրի վերայ հաս-
տատվել ը են ։

─ Համար․ 2 ։
= Համար․ 9 ։
Հ Գլ․ Թ․ 14 ։
⸗ Երեմ․ Ծ․ 38 ԾԱ․ 36 ։
ր Եսայ․ ԽԱ․ 2-25 ։
ջ Գլ․ ԺԲ․ 3․ 9 ։
─ Գլ․ ԺԹ․ 20 Ի․ 10 ։
÷ Ա Յովհ․ Դ․ 1 2, 3 ։
+ Ա Տիմ․ Դ․ 1 Յակ․ Գ․ 15 ։
⁎ Բ Թես․ Բ․ 9 Գլ․ ԺԳ․ 13, 14 ։ ԺԹ․ 20 ։
‡ Ղու․ Բ․ 1 ։
─ Գլ․ ԺԷ․ 14 ԺԹ․ 19 ։ Ի․ 8 ։
բ Մատթ․ ԻԴ․ 43 ։ Ա Թես․ Ե․ 2 ։ Բ Պետ․ Գ․ 10 ։ Գլ․ Գ․ 3 ։
÷ Բ Կորնթ․ Ե․ 3 ։ Գլ․ Գ․ 4․ 18 ։
⸗ Գլ․ ԺԹ․ 19 ։
Ի Գլ․ ԻԱ․ 6 ։
Ղ Գլ․ Դ․ 5 ։ Ը․ 5 ։ ԺԱ․ 19 ։
ե Գլ․ ԺԱ․ 13 ։
ը Դան․ ԺԲ․ 1 ։

19 Եւ եղեւ քաղաքն մեծ յերիս
մասունս, եւ քաղաքք ազգաց անկան.
եւ Բաբելոն մեծ յիշեցաւ առաջի
Աստուծոյ, տալ նմա զբաժակն գի-
նւոյ ցասման բարկութեան նորա։

20 Եւ ամենայն կղզիք փախեան,
եւ լերինք 'ի միջոյ բարձան։
21 Եւ կարկուտ մեծ իբրեւ կշիռ
տաղանդոյ միոյ իջանէր յերկնից 'ի
վերայ մարդկան. եւ հայհոյեցին
մարդիկ զԱստուած յերկնից՝ վասն
հարուածոյ կարկտին, զի մեծ էր
հարուածն եւ սաստիկ։

19 Եւ մեծ քաղաքն երեք կտոր
Բ եղաւ, եւ ազգերի քաղաքները
վէր ընկան. եւ մեծ Բաբելօնը յիշ-
վեցաւ Աստուծոյ Ժ առաջին, որ ի-
րեն սրտմտութեան գինւոյ բաժակն
նորան է տայ։
20 Եւ ամէն կղզիները փախան,
եւ սարերը միջիցն Լ անհետվեցան։
21 Եւ երկնքից մեծ մեծ կար-
կուտ էր վէր գալիս մարդկանց վե-
րայ, մինը մին տաղանդի կշռաքի
Է չափով. եւ մարդիկ հայհոյեցին
Աստուծոյն Ժ (երկնքումը՝) այն կար-
կտի պատուհասի համար, ինչու
որ մեծ եւ սաստիկ էր այն Լ պա-
տուհասը։

## ԳԼ. ԺԷ

1 Եւ եկն մի ոմն յեօթն հրեշ-
տակացն՝ որք ունէին զեօթն սկա-
ւառակսն, խօսեցաւ ընդ իս՝ եւ
ասէ. Ե՛կ այսր եւ ցուցից քեզ զդ
դատաստանս մեծ պոռնկին՝ որ նստի
'ի վերայ ջուրց բազմաց։

2 Ընդ որում պոռնկեցան թա-
գաւորք երկրի՝ եւ արբեցան բնա-
կիչք երկրի 'ի գինւոյ արբեցութեան
պոռնկութեան նորա։
3 Եւ առ տարաւ զիս յանապատ
հոգւովն. եւ տեսի կին մի՝ զի նըս-
տէր 'ի վերայ կարմիր գազանի, եւ
լի էր անուամբք հայհոյութեան. եւ
գազանն զոր տեսի՝ ունէր գլուխս
եօթն եւ եղջիւրս տասն։

4 Եւ կինն զգեցեալ էր ծիրանիս
եւ կարմիրս, եւ զարդարեալ ոսկ-
ւով եւ մարգարտով եւ ակամբք

1 Եւ այն եօթն հրեշտակներիցն՝
որ այն եօթն սկաւառակներն ու-
նէին՝ մէկն եկաւ խօսեց, ինձ հետ՝
եւ = ասաց. Ե՛կ այստեղ՝ եւ քեզ
ցոյց Բ կը տամ այն մեծ պոռնկի
Ի դատաստանն, որ շատ ջրերի վե-
րայ է Ժ նստում,
2 Որ նորա հետ պոռնկվեցան
երկրի Ի թագաւորներն՝ ու երկրի
բնակողները նորա պոռնկութեան
հարբեցնող գինովը Ղ հարբեցան։
3 Եւ ինձ հոգովն տարաւ տարա-
նապատ Ի տեղ. եւ մին կին տե-
սի որ կարմիր գազանի վերայ նըս-
տած Ջ էր, եւ լիքն էր հայհոյու-
թեան Բ անուններով. եւ այն գազանն
որ տեսի՝ եօթն գլուխ Ժ ունէր եւ
տասն Է եղջիւր։
4 Եւ այն կինը ծիրաններ եւ
կարմիրներ էր Լ հագել, եւ ոսկով
եւ մարգարիտով եւ պատուական

Բ Գլ. ԺԴ. 8. ԺԷ. 18.
Ժ Գլ. ԺԸ. 5.
Է Եսայ. ԽԱ. 17. 22. 23. Երեմ. ԻԵ. 15. 16. Գլ. ԺԴ. 10.
Լ Գլ. Զ. 14.
Ի Գլ. ԺԱ. 19.
Ժ Համար. 9. 11.
Լ Եփց. Թ. 23–25.

—

= Գլ. ԻԱ. 9.
Բ Գլ. ԺԶ. 19. ԺԸ. 16. 17. 19.
Ի Նաւում. Գ. 4.
Գլ. ԺԹ. 2.
Ղ Երեմ. ԾԱ. 13.
Համար. 15.
Ի Գլ. ԺԸ. 3.
Ղ Երեմ. ԾԱ. 7.
Գլ. ԺԴ. 8.
ԺԸ. 3.
Ի Գլ. ԺԲ. 6. 14.
Ջ Գլ. ԺԲ. 3.
Բ Գլ. ԺԳ. 1.
Ժ Համար. 9.
Է Համար. 12.
Լ Գլ. ԺԸ. 12. 16.

պատուականօք , ոսկելով բաժակ
ոսկի 'ի ձեռին իւրում , եւ լի էր
գարշելի եւ անմաքուր պոռնկու-
թեամբ :
5 Եւ 'ի ճակատն նորա գրեալ
անուն՝ խորհրդով . Մեծն Բաբելոն՝
մայր պոռնկաց եւ գարշելեաց երկ-
րի :
6 Եւ տեսի զկինն արբեցեալ յա-
րենէ սրբոց՝ եւ յարենէ ամենայն
վկայիցն . եւ զարմացայ՝ տեսեալ
զնա զարմացումն մեծ :
7 Եւ ասէ ցիս հրեշտակն . Ընդէր
զարմացար , ես ասացից քեզ զխոր-
հուրդս կնոջն , եւ զգազանին որ
բարձեալ ունի զնա . որ ունի զեօ-
թըն գլուխն՝ եւ զտասն եղջիւր :
8 Եւ գազանդ զոր տեսեր՝ որ
էր , եւ չէր , եւ հանդերձեալ է
ելանել 'ի գծոխոց՝ եւ 'ի կորուստ
երթալ . եւ զարմասցին ամենեքեան՝
որ բնակեալ են 'ի վերայ երկրի .
որոց ոչ էր գրեալ անուանք նոցա
'ի գիր կենաց 'ի սկզբանէ աշխարհի.
զոր տեսանէիր զգազանն , զի էր՝
եւ չէ եւ մերձ է :
9 Աստ է իմաստութիւն՝ որ ունի
միտս . եւ եօթն գլուխն՝ եօթն լե-
րինք են , ուր կինն նստեալ էր 'ի
վերայ նոցա . եւ նոքին թագաւորք
են եօթն . եւ թագաւորք եօթն
գոլով :
10 Հինգն անկան , եւ մին կայ ,
եւ միւսն ոչ է եկեալ . եւ յորժամ
գայ՝ սակաւիկ մի ժամանակ ունի :
11 Եւ գազանն՝ որ էր՝ եւ չէ՝ եւ
նա ութերորդ է . եւ է յեօթանց
անտի , եւ 'ի կորուստ երթալոց է :
12 Եւ տասն եղջիւրքն՝ զոր տեսեր՝

ակունքներով զարդարուած ւ էր , եւ
մէկ ոսկի բաժակ ունէր իրեն փ ձե-
ռքը , որ լեցուն էր գարշելի եւ
պիղծ ք պոռնկութենով :
5 Եւ նորա ճակատումը գրուած
էր անունը՝ օ Խորհուրդ . Մեծ ֆ Բա-
բելոնը՝ պոռնիկներու եւ երկրի գար-
շելիներու ա մայրը :
6 Եւ տեսի որ այն կինն հարբած
բ էր սուրբերու գ արիւնովը՝ եւ Յի-
սուսի ամէն վկաներու դ արիւնովը .
եւ երբոր տեսի նորան՝ մեծ զար-
մանքով զարմացայ :
7 Եւ հրեշտակն ասաց ինձ . Ին-
չու համար զարմացար . ես կասեմ
քեզ այն կնկան խորհուրդը , եւ այն
գազաննին էլ՝ որ նորան վերկալած
ունի . որ եօթն գլուխ ունի եւ
տասն եղջիւր :
8 Գազանդ որ տեսար՝ նա էր , եւ
չէ , եւ պիտի դժոխքէն դուրս
ե գալ՝ եւ կորուստը զ գնայ . եւ
ամէնքն որ երկրի վրայ բնակած
են՝ որ նորանց անունները գրուած
չեն կենաց գրքին մէջ աշխարհքի
սկզբնաւորութենէն է հիմայ՝ կը
զարմանան երբոր տեսնեն այդ գա-
զանդ որ էր , եւ չէ , եւ ը մօտ է :
9 Այստեղ է իմաստութիւնը՝ նա
որ միտք թ ունի . այն եօթն գլուխն՝
եօթն սարերն են որ կինը նորանց
վրայ նստած ժ է . (եւ նորանք
եօթն թագաւորներ են .) եւ եօթն
թագաւոր որ էին ,
10 Հինգը վէր ընկան , եւ մէկը
կայ , եւ միւսը դեռ չի եկել . եւ եր-
բոր գայ՝ մի քիչ ժամանակ ունի :
11 Եւ գազանն որ էր , եւ չէ , նա
էլ ութերորդն է . եւ այն եօթներէն
է , եւ պիտի կորուստը ի գնայ :
12 Եւ տասն եղջիւրներն որ տե-

ւ Դան. ԺԱ. 38.
փ Երեմ. ԾԱ. 7. Գլ. ԺԸ. 6.
ք Գլ. ԺԴ. 8.
օ Բ Թես. Բ. 7.
ֆ Գլ. ԺԱ. 8. ԺԴ. 8. ԺԶ. 19. ԺԸ. 2. 10. 21.
ա Գլ. ԺԸ. 9. ԺԹ. 2.
բ Գլ. ԺԸ. 24.
գ Գլ. ԺԳ. 15. ԺԶ. 6.
դ Գլ. Զ. 9, 10. ԺԲ. 11.
ե Գլ. ԺԱ. 7. ԺԳ. 1.
զ Գլ. ԺԳ. 10. Համար. 11.
է Գլ. ԺԳ. 8.
ը Գլ. ԺԳ. 3.
թ Գլ. ԺԳ 18.
ժ Գլ. ԺԳ. 1.
ի Համար. 8.

տասն թագաւորք են․ որոց չեւ եւս է առեալ զթագաւորութիւն, այլ առնուն՝ եւ կան իշխանք 'ի մի ժամ․ եւ առնուն նոքա զիշխանութիւն ընդ գազանին ։

13 Սոքա մի կամս ունին, եւ ըզ զօրութիւն եւ զիշխանութիւն գազանին տան ։

14 Եւ ընդ Գառինն պատերազմին․ եւ Գառնն յաղթէ նոցա․ զի Տէր է նոցա, եւ Թագաւոր թագաւորաց․ եւ որք ընդ նմա՝ կոչեցեալք են, ընտրեալք եւ հաւատացեալք ։

15 Եւ ասաց ցիս․ Եւ զջուրսն զոր տեսեր՝ ուր նստէր պոռնիկն, ժողովուրդք են, եւ բազմութիւնք եւ ազգք եւ լեզուք ։

16 Եւ տասն եղջիւրքն՝ զոր տեսեր գազանին, նոքա ատեսցեն ըզ պոռնիկն՝ եւ աւերեսցեն զնա, եւ զմարմինս նորա կերիցեն՝ եւ այրեսցեն զնա հրով ։

17 Քանզի Աստուած ետ 'ի սիրտս նոցա ՝առ 'ի լինել նոցա մի կամս, եւ տալ զթագաւորութիւն գազանին՝ մինչեւ կատարեսցի բանն Աստուծոյ ։

18 Եւ կինն զոր տեսեր՝ է քաղաքն մեծ, որ ունի զթագաւորութիւն 'ի վերայ թագաւորութեանց երկրի ։

որ՝ տասն թագաւոր = են․ որ դեռ թագաւորութիւն չեն առել, բայց պիտի ճիշդ մէկ ժամի չափ թագաւորի պէս իշխանութիւն առնեն այն գազանի հետ ։

13 Սորանք մէկ կամք ունին, եւ իրենց զօրութիւնը եւ իշխանութիւնը կը տան գազանին ։

14 Եւ կռիւ կանեն Գառին հետ, եւ Գառն կը յաղթէ նորանց, ինչու որ նորանց Տէրն է, եւ թագաւորներին + Թագաւորը․ եւ նորանք՝ որ նորա հետ են կոչված, ընտրված եւ ‡ հաւատացեալ ։

15 Եւ ասաց ինձ․ Այդ ջուրը որ տեսիր՝ որ տեղ որ պոռնիկը նստած ≈ էր, ժողովուրդներ են, եւ բազմութիւններ եւ ազգեր եւ − լեզուներ ։

16 Եւ տասն եղջիւրները՝ որ տեսիր գազանումը, նորանք (կը ատենեն ‡ պոռնիկին) եւ կաւերեն + նորան․ եւ նորա մարմինը կուտեն՝ եւ կրակով կայրեն • նորան ։

17 Պատճառն որ Աստուած դրաւ նորանց սրտին մէջ՝ որ նորանք մէկ կամք ունենան, եւ որ իրենց թագաւորութիւնը տան ‡ գազանին՝ մինչեւ որ Աստուծոյ խօսքը − կատարվի ։

18 Եւ կինն որ տեսիր՝ այն մեծ քաղաքն ‡ է, որ թագաւորութիւն է անում երկրի թագաւորութիւններին ‡ վերայ ։

## ԳԼ․ ԺԸ

1 Եւ յետ այսորիկ տեսի այլ հրեշտակ իջեալ յերկնից՝ որ ունէր իշխանութիւն մեծ, եւ երկիր լուսաւորեցաւ 'ի փառաց նորա ։

1 Եւ այս բաներիցը ետեւ տեսի որ մէկ ուրիշ հրեշտակ երկնքիցը վէր էր գալիս՝ որ մեծ իշխանութիւն = ունէր, եւ երկիրը լուսաւորվեցաւ նորա ‡ փառքիցը ։

= Դան․ Է․ 20․ Զաք․ Ա․ 18․ 19․ 21․ Գլ․ ԺԳ․ 1․
Հ Գլ․ ԺԶ․ 14․ ԺԹ․ 19․
+ Բ Օրին․ Ժ․ 17․

Ա Տիմ․ Զ․ 15․ Գլ․ ԺԹ․ 16․
≈ Երեմ․ Ծ․ 44․ 45․ Գլ․ ԺԳ․ 4․
≈ Եսայ․ Ը․ 7․ համար․ 1․
− Գլ․ ԺԳ․ 7․

‡ Երեմ․ Ծ․ 41․ 42․ Գլ․ ԺԶ․ 12․
+ Եզեկ․ ԺԶ․ 37—44․ Գլ․ ԺԸ․ 16․
• Գլ․ ԺԸ․ 8․
‡ Բ Թեսս․ Բ․ 10․
= Գլ․ Ժ․ 7․

‡ Գլ․ ԺԶ․ 19․
‡ Գլ․ ԺԲ․ 4․
—
= Գլ․ ԺԷ․ 1․
‡ Եզեկ․ ԽԳ․ 2․

2 Եւ աղաղակեաց ՚ի ձայն մեծ՝
ասելով. Անկաւ Բաբելոն մեծն, որ
եղեալ էր բնակութիւն դիւաց՝ եւ
արգել ամենայն այսոց պղծոց, եւ
բանտ պահպանութեան ամենայն
ոգւոց անսրբոց՝ եւ ատելեաց։
3 Վասն զի ՚ի բարկութենէ գի-
նւոյ պոռնկութեան նորա արբին
ամենայն ազգք եւ թագաւորք երկ-
րի՝ որ ընդ նմա պոռնկեցան. եւ
վաճառականք երկրի՝ ՚ի նորա զօ-
րութեանն յօրանելոյ մեծացան։

4 Եւ լուայ ձայն յերկնից՝ զի
ասէր. Ելէք ՚ի միջոյ դորա ժողո-
վուրդ իմ, զի մի՛ հաղորդ լիջիք
մեղաց դորա, եւ մի՛ զհարուածս
դորա ընդունիցիք.
5 Զի հասին կցեցան մեղք դորա
մինչեւ յերկինս. եւ յիշեաց Աս-
տուած զանիրաւութիւնս դորա։
6 Եւ հատուցանէ՛ք դմա որպէս եւ
հատոյցն մեզ, եւ ապէ դա երկ-
պատիկ ըստ գործոց իւրոց. եւ ընդ
բաժակին որով խառնեաց՝ խառնե-
ցէք դմա կրկին։

7 Եւ որչափ փառաւորեաց զին-
քըն եւ խայտաց, այնչափ հատու-
ցէք դմա սուգ. զի ՚ի սրտի իւ-
րում ասէր՝ թէ Յամենայն ժամ
նստայց ես թագուհի՝ եւ այրի ոչ
եւս եղէց։

8 Վասն այնորիկ ՚ի միում աւուր
եկեսցեն ՚ի վերայ դորա հարուածք՝
մահ եւ սուգ եւ սով, եւ ՚ի հուր

2 Եւ մեծ ձայնով աղաղակեց՝ եւ
ասաց. Վէր ընկաւ այն մեծ ÷ Բա-
բելօնը, եւ էլաւ դեւերի բնակու-
թիւն՝ եւ ամէն պիղծ հոգիների կե-
նալու ∓ տեղ, եւ ամէն անսուրբ եւ
ատելի հոգիների ⊢ բանտ։
3 Պատճառն որ նորա պոռնկու-
թեան գինոյ բարկութենիցը խմե-
ցին ամէն ազգերն ու երկրի թա-
գաւորները՝ որ նորա հետ ⊥ պոռնկ-
վեցան. եւ երկրի վաճառականները
հարստացան նորա փափկութեան
⊦ առատութենիցը։
4 Եւ ձայն լսեցի երկնքիցն՝ որ
ասումէր. Դուրս ելէք դորա մի-
ջիցն իմ ժողովուրդ, որ մասնակից
չըլլիք դորա մեղացը, եւ դորա
պատուհասը ⊏ չընդունիք.
5 Ինչու որ դորա մեղքերը հասին
մինչեւ Բ երկինքը. եւ Աստուած յի-
շեց դորա ǂ անիրաւութիւնները։
6 Եւ հատուցումն արէ՛ք դորան՝
ինչպէս որ դա հատուցումն տուաւ
ձեզ, եւ թէ՛ դա իրեն գործա-
ներին չափովը երկու պատիկ ŀ առ-
նէ. եւ այն բաժակին որ դա լցրուց
Լ ձեզ, լցրէ՛ք դորա համար երկու
ŀ չափով.
7 Եւ որչափ որ իրեն փառաւո-
րեց եւ փափկացաւ, այնչափ սուգ
եւ տանջանք հատուցումն տուէ՛ք
‡ դորան. ինչու որ իրեն սրտումը
ասումէր՝ թէ Միշտ թագուհի պիտի
նստիմ՝ եւ որբեւէրի չեմ լինիլ.
(եւ էլ սուգ չեմ տեսնիլ)։
8 Նրահամար ճիշդ մին օրումը
պիտի գան դորա վերայ պատուհաս՝
մահ, եւ սուգ, եւ հ սով, եւ կրա-

÷ Եսայ. ԺԳ. 19։ ԽԱ. 9։ Երեմ. ԾԱ. 8։ Գլ. ԺԴ. 8։
∓ Եսայ. ԺԳ. 21։ ԽԱ. 8։ ԼԴ. 14։ Երեմ. Ծ. 39։ ԾԱ. 37։
⊢ Եսայ. ԺԳ. 23։ ԼԴ. 11։ Մարկ. Ե. 2, 3։
⊥ Գլ. ԺԴ. 8։ ԺԷ. 2։
⊦ Համար. 11. 15։ Եսայ. ԽԷ. 15։
⊏ Եսայ. ԽԸ. 20։ ԾԲ. 11։ Երեմ. Ծ. 8։ ԾԱ. 6. 45։ Բ Կորնթ. Զ. 17։
Բ Ծննդ. ԺԸ. 20, 21։ Երեմ. ԾԱ. 9։ Յովն. Ա. 2։
ǂ Գլ. ԺԶ. 19։
ŀ Սաղ. ՃԼԷ. 8։ Երեմ. Ծ. 15. 29։ ԾԱ. 24. 49։ Բ Տիմ. Դ. 14։ Գլ. ԺԳ. 10։
Լ Գլ. ԺԴ. 10։
ŀ Գլ. ԺԶ. 19։
‡ Եզեկ. ԻԸ. 2։
§ Եսայ. ԽԷ. 7, 8։ Սոփոն. Բ. 15։
հ Եսայ. ԽԷ. 9։ Համար. 10։

այրեսցի. զի հզօր է Տէր Աստուած՝ որ դատեցաւն զդա ։

9 Եւ լայցեն՝ եւ կոծեսցե՛ն ՚ի վերայ դորա թագաւորք երկրի, որք ընդ դմա պոռնկեցան եւ խաղացին. եւ հեծեսցեն՝ յորժամ տեսցեն զծուխ կիզման տանջանաց դորա ։

10 ՚Ի հեռաստանէ կայցեն վասն երկիւղի տանջանաց դորա՝ եւ ասասցեն. Վա՜յ քաղաքիդ մեծի Բաբելոնի. քաղաք հզօր, զի ՚ի միում ժամու եկին հասին դատաստանք քո ։

11 Եւ վաճառականք երկրի ողբասցեն եւ սգասցեն ՚ի վերայ քո, զի բեռն նոցա ոչ ոք գնէ ։

12 Եւ չահք որ ՚ի քէն՝ ոչ եւս իցէ՝ ոսկւոյ եւ արծաթոյ եւ ականց պատուականաց՝ եւ մարգարտոյ եւ բեհեզոյ եւ ծիրանւոյ եւ ասկեթելի եւ որդան, եւ ամենայն փայտ խնկոյ՝ եւ ամենայն անօթ փղոսկրեայ, եւ ամենայն անօթ ՚ի փայտէ պատուականէ եւ ՚ի պղնձոյ եւ յերկաթոյ եւ ՚ի կճոյ ։

13 Եւ կինամոմոն եւ ամենայն խունկ եւ իւղ եւ կնդրուկ, եւ գինի եւ ձէթ եւ նաշիհ եւ ցորեան, եւ անասունք ամենայն, արջառ եւ ոչխար. եւ երիվարաց եւ կառաց՝ որ վայել է մարմնոց եւ ոգւոց մարդկան ։

14 Եւ ամենայն ցանկութիւն անձին քո գնաց ՚ի քէն, եւ ամենայն լուսաւոր վայելչութիւնն, պարարտն եւ գէրն եւ ազխազն գնաց ՚ի քէն, եւ ոչ եւս գտցես զայդ ։

15 Եւ ամենայն չահավաճառք ազգաբուք մեծացեալք՝ ՚ի քէն ՚ի բաց

կրակով պիտի ե այրուի. Ինչու որ հզօր է Տէր Աստուածն որ զորա դատաստանն զ ըրաւ ։

9 Եւ լաց եւ կոծ կանեն զորա է վերայ երկրի թագաւորները՝ որ զորա հետ պոռնկեցան եւ ը խաղացին. եւ որք կանեն երբոր տանջանքով զորա այրելոյն ծուխն թ կը տեսնեն ։

10 Հեռու կը կանգնին զորա տանջանքի վախէն՝ եւ կասեն. Վա՜յ քեզ՝ մեծ քաղաքդ Բաբիլոն, զօրաւոր ժ քաղաք. Ինչու որ ճիշդ մէկ ժամումը քո դատաստանդ եկաւ ի հասաւ ։

11 Եւ երկրի վաճառականները ողբ եւ սուգ կանեն քեզ վերայ, Ինչու որ ոչ մէկը չը կայ որ նորանց բեռները լ առնէ ։

12 Եւ քեզանից էլ չահ չի լինիլ ոսկոյ եւ արծաթի եւ պատուական ակունքների՝ եւ մարգարիտի եւ բեհեզի եւ ծիրանի եւ ասկէթէլի եւ կարմիր որդի, եւ ամէն կերպ խնկէ փայտի՝ եւ ամէն փղի ոսկորից շինած ամանները, եւ ամէն ազնիւ փայտից եւ պղնձից եւ երկաթից եւ կիճ քարից շինած խ ամանները,

13 Եւ կինամոն եւ ամէն կերպ խունկ եւ իւղ եւ կնդրուկ, եւ գինի եւ ձէթ, եւ չորմաղի ալիւր եւ ցորեն, եւ ամէն [illegible] ապրանք, արջառ եւ ոչխար. եւ ձիանք եւ կառքեր՝ այն որ մարդկանց մարմիններին եւ հոգիներին ծ կը վայելէ ։

14 Եւ քո անձիդ ամէն ցանկութիւնը գնաց քեզանից, եւ ամէն լաւամ փայլող վայելչութիւնը, պարարտն ու գիրացածը եւ ազիտակը գնաց քեզանից, եւ էլ չես գտնիլ զորան ։

15 Եւ ամէն վաճառականներն՝ որ սրանցով հարստացան՝ փղանից հեռու

ե Գլ. ԺԸ. 16.
զ Երեմ. Ծ. 34.
Գլ. ԺԱ. 17.
է Երեմ. Ծ. 46.
ը Եզեկ. ԻԶ. 16, 17. Գլ. ԺԸ. 2.
Համար. 3.
թ Համար. 18. Գլ. ԺԹ. 3.
ժ Եսայ. ԻԱ. 9.
Գլ. ԺԴ. 8.
ի Համար. 17, 19.
լ Եզեկ. ԻԷ. 27—36. Համար. 3.
խ Գլ. ԺԸ. 4.
ծ Եզեկ. ԻԷ. 13.

կացցեն վասն երկիւղի տանջանաց
քոց լալով՝ եւ սուգ առնելով։
16 Եւ ասասցեն. Վայ վայ քա-
ղաք մեծ. որ զգեցեալ էիր բեհեզս
եւ ծիրանիս եւ որդան եւ ոսկե-
զօծս՝ եւ քարինս պատուականս՝ եւ
մարգարիտս։
17 Զի ՚ի միում ժամու պակասե-
ցաւ այսչափ մեծութիւն քո. եւ
ամենայն նաւավար՝ եւ ամենայն
որ ՚ի տեղիս տեղիս նաւէին, եւ նա-
ւաստիք եւ որք միանգամ ուղխանաւ
գործեն՝ ՚ի հեռաստանէ կացցեն լա-
լով։

18 Եւ աղաղակեսցեն՝ տեսանելով
զծուխ կիզման նորա, ասելով. Ո՞
նման է քաղաքիս այսմիկ մեծի։

19 Եւ արկցեն հող ՚ի վերայ գըլ-
խոց իւրեանց՝ եւ գոչելով ձայ-
նիւ մեծաւ՝ լալով եւ ՚ողբալով ա-
սասցեն. Վայ վայ քաղաք մեծ,
որով ամենեքեան մեծանային՝ որք
ունէին նաւս ՚ի ծովու՝ վասն պատ-
ուականութեան քո. զի ՚ի միում
ժամու ապականեալ կործանեցար։

20 Ուրախ լեր դու ՚ի վերայ նորա
երկինք՝ եւ սուրբ առաքեալք եւ
մարգարէք. զի դատեաց Աստուած
զդատաստան ձեր ՚ի դմանէ։

21 Եւ առ ՚հրեշտակն հզօր՝ քար
մի իբրեւ զերկան մեծ, եւ ընկէց
՚ի ծով՝ ասելով. Այսպէս յարձակ-
մամբ անկցի Բաբելոն քաղաք մեծ,
եւ այլ ոչ եւս գտցի։

22 Եւ ձայն քնարերգաց եւ երա-
ժըշտականաց՝ արուեստականաց եւ

կը կենան քո տանջանքի վախից
լաց եւ սուգ անելով.
16 Կասեն. Վայ վայ քեզ մեծ քա-
ղաք, որ բեհեզներ եւ ծիրանի եւ
կարմիր որդ էիր հագած. եւ ոսկով
եւ ազնիւ քարերով եւ մարգարի-
տով զարդարուած.
17 Ինչու որ ճիշդ մին ժամի մէջ
այնչափ մեծութիւնդ պակասե-
ցաւ. եւ ամէն նաւավարներն ու
այն ամէնքն որ տեղ տեղ նաւով
են գնում, եւ նորանք որ նաւի մէջ
են գործում, եւ այն ամէնքն որ
ուղխան են բանացնում՝ հեռու կը
կանգնեն լաց լինելով,
18 Եւ կաղաղակեն՝ նորա այրվե-
լոյ ծուխը տեսնելով եւ կասեն.
Ո՞ր քաղաք է նման այս մեծ քա-
ղաքին.
19 Եւ հող կը ձգեն իրենց գլխնե-
րին վերայ, եւ մեծ ձայնով կաղա-
ղակեն եւ լաց եւ սուգ անելով
կասեն. Վայ վայ մեծ քաղաք, որ
ձեռով էինք հարստանում ամէնքս,
որ ծովի վերայ նաւեր ունէինք քո
պատուականութեան համար. Ինչ-
պէս մին ժամի մէջ ապականված
կործանվեցար։
20 Ուրախ էլէք նորա վերայ եր-
կինք՝ եւ սուրբ առաքեալք եւ
մարգարէք, ինչու որ Աստուած
ձեր դատաստանը դատեց նորա
վերայ։
21 Եւ մին զօրաւոր հրեշտակ՝ մին
քար առաւ մեծ ջաղացաքարի պէս՝
եւ ձգեց ծովի մէջ ասելով. Այսպէս
պիտի սաստիկ վէր ընկնի Բաբելոն
մեծ քաղաքը, եւ էլ չի գըտ-
նըւիլ.
22 Եւ էլ քնար ածողների, եւ
երաժիշտների եւ արուեստականնե-

Համար. 3. 11։
Գլ. ԺԵ. 4։
Համար. 10։
Եսայ. ԻԴ. 14։
Եզեկ. ԻԷ. 29։
Եզեկ. ԻԷ. 30։
31։ Համար. 9։
Գլ. ԺԳ. 4։
Երեմ. Է. 6։ Ո.
Թագ. Դ. 12։
Յոբ. Բ. 12։
Եզեկ. ԻԷ. 30։
Համար. 8։
Եսայ. ԽԴ. 23։
ԽԹ. 13։ Երեմ.
ԾԱ. 48։
Ղուկ. ԺԱ. 49.
50։ Գլ. ԺԹ. 2։
Երեմ. ԾԱ. 64։
Գլ. ԺԲ. 8։ ԺԶ.
20։

փողահարաց՝ եւ թմբկի, այլ ոչ եւս լուիցի 'ի քեզ։
23 Եւ լոյս ճրագի եւ ձայն երկանի՝ այլ ոչ երեւեսցի 'ի քեզ. եւ ձայն փեսայի եւ ձայն հարսին այլ ոչ եւս լուիցի 'ի քեզ. եւ ոչ վաճառականք քո՝ փառաւորք եւ մեծամեծք երկրի, որ զուարճացեալ էին 'ի քեզ. վասն զի կախարդութեամբ դեղատուութեան քո մոլորեցան ամենայն ազգք։

24 Եւ 'ի քեզ ամենայն արիւն մարգարէից եւ սրբոց գտաւ, եւ ամենայն զենլոց յերկրին կենդանեաց։

րի, եւ փող փչօղների եւ թմբուկի ձայն չը պիտի լսուի քո − միջումդ։
23 Եւ ճրագի լոյս եւ ջաղացի ձայն էլ բնաւ չը պիտի երեւի քո ‡ միջումդ. եւ փեսայի ձայն եւ հարսի ձայն էլ չը պիտի լսուի ÷ քեզանում. եւ ոչ էլ քո վաճառականներդ երկրի մեծաւորներ եւ փառաւորներ էլէ-նչ. որ նորանք քեզանով էին ուրախանում, ÷ պարծենում. ինչու որ քո դեղատուութեան կախարդութեններովն ամէն ազգերը † մոլորվեցան
24 Եւ քեզանում գտաւ մարգարէների եւ սրբերի եւ այն ամէնի ւարիւնն՝ որ կենդանեաց երկրումը զրկած † են։

## ԳԼ. ԺԹ

1 Եւ յետ այսորիկ լուայ ձայն մեծ բազմութեան յերկինս ասելով. Ալէլուիա, փրկութիւն եւ փառք եւ պատիւ եւ զօրութիւն Աստուծոյ մերում.
2 Զի ճշմարիտ եւ արդար են դատաստանք նորա. զի դատեաց զպոռնիկն մեծ 'ի պոռնկութեան իւրում, եւ խնդրեաց զվրէժ արեան ծառայից իւրոց 'ի ձեռաց նորա։
3 Եւ կրկին անգամ օրհնեցին՝ եւ ասացին, Ալէլուիա. եւ ծուխ նորա ելանէր յաւիտեանս յաւիտենից։

4 Եւ անկան քսան եւ չորք երիցունքն՝ եւ չորք կենդանիքն, եւ երկիրպագին Աստուծոյ՝ որ նստէրն յաթոռ փառաց, ասելով, Ամէն՝ ալէլուիա։

1 Եւ սորանից յետոյ մեծ բազմութեան ձայն լսեցի երկնքումն՝ որ − ասում էին. Ալէլուիա, փրկութիւն եւ փառք եւ պատիւ եւ զօրութիւն մեր ‡ Աստուծոյն։
2 Ինչու որ նորա դատաստանները ճշմարիտ եւ արդար են. ուրեմն այն մեծ պոռնիկը դատեց իւրեն ÷ պոռնկութեննումը, եւ իւրեն ծառաների արիւնի վրէժը խնդրեց նորա ÷ ձեռքիցը։
3 Եւ երկրորդ անգամ էլ օրհնեցին ՟եւ ասացին, Ալէլուիա. եւ նորա ծուխը դուրս էր գալիս յաւիտեանս † յաւիտենից։
4 Եւ քսան եւ չորս էրէցներն ու չորս կենդանիքները վէր ընկան՝ եւ երկրպագութիւն արին Աստուծոյն՝ որ իրեն փառաց աթոռի վերայ նստած էր՝ եւ ւասացին. Ամէն՝ † Ալէլուիա։

− Եսայ. ԻԴ. 8։ Երեմ. Է. 34։ ԺԶ. 9։ ԻԵ. 10։ Եզեկ. ԻԶ. 13։
‡ Երեմ. ԻԵ. 10։
÷ Երեմ. Է. 34։ ԺԶ. 9։ ԻԵ. 10։ ԼԳ. 11։

÷ Եսայ. ԻԳ. 8։
† Դ Թագ. Թ 22։ Նաւում. Գ. 4։ Գլ. ԺԷ. 2. 5։
ւ Գլ. ԺԷ. 6։
† Երեմ. ԾԱ. 49։

− Գլ. ԺԱ. 15։
‡ Գլ. Դ. 11։ Է. 10. 12։ ԺԲ. 10։
÷ Գլ. ԺԵ. 3։ ԺԶ. 7։
÷ Բ Օրին. ԼԲ. 43։ Գլ. Զ. 10։ ԺԸ. 20։
† Եսայ. ԼԴ. 10։ Գլ. ԺԴ. 11։ ԺԸ. 9. 18։
ւ Գլ. Դ. 4 6. 10։ Ե. 14։
† Ա Մնաց. ԺԶ. 36։ Նեեմ. Ե. 13։ Ը. 6։ Գլ. Ե. 14։

5 Եւ ձայն յաթոռոյն ելանէր՝ ա-
սելով. Օրհնեցէք զԱստուած մեր
ամենայն ծառայք նորա, եւ որք
երկնչիք 'ի նմանէ՝ փոքունք եւ մե-
ծամեծք։
6 Եւ լուայ ձայն բազմութեան
մեծի՝ իբրեւ զձայն ջուրց բազմաց,
եւ իբրեւ զձայն հզօր որոտման,
ասելով դարձեալ. Ալէլուիա, վասն
զի թագաւորեաց Տէր Աստուած մեր
Ամենակալ։
7 Խնդամք՝ եւ ցնծամք եւ տամք
փառս նմա, զի եկին հարսանիք Գա-
ռինն, եւ կինն հարսն նորա պատ-
րաստեաց զինքն։
8 Եւ տուաւ նմա զգենուլ բե-
հեզս սպիտակս սուրբս եւ լուսա-
փայլս. որ է բեհեզն արդարութիւն
սրբոցն։
9 Եւ մի յերիցանցն ասէր ցիս.
Գրեա զայդ, Երանելիք են ամե-
նեքեան՝ որ կոչեցեալ են յընթրիս
հարսանեաց Գառինն։

10 Եւ ես անկեալ առաջի ոտից
նորա, երկիրպագի նմա. եւ ասէ
ցիս. Անսա մի՛ անկանիր առաջի
իմ, քանզի եւ ես ծառայակից քո
եմ, եւ եղբարց քոց՝ որք ունին
զվկայութիւնն Յիսուսի Քրիստոսի.
Տեառն Աստուծոյ միայն երկրպա-
գեա. քանզի հաստատութեամբ
Յիսուսի է տեսիլդ, եւ հոգի մար-
գարէութեանց. զի վկայութիւն
Յիսուսի է Հոգւովն Սրբով, որ 'ի
մարգարէսն էր։

11 Եւ տեսի զերկինս բացեալ, եւ

5 Եւ աթոռիցը ձայն էր դուրս
գալիս՝ ասելով. Օրհնեցէք Աստու-
ծոյն՝ նորա ամէն լ ծառաները, եւ
դուք էլ որ նորանից վախումէք՝
փոքրները եւ խ մեծերը։
6 Եւ մեծ բազմութեան ձայն
լսեցի՝ շատ ջրերի ձայնի պէս, եւ
սաստիկ որոտմունքի ձայնի նման,
որ_դարձեալ ծ ասումէր. Ալէլուիա,
պատճառն որ Ամենակարող Տէր
Աստուածը կ թագաւորեց։
7 Խնդանք եւ ուրախ լինինք, եւ
փառք տանք նորան. ինչու որ Գառ-
նի հարսանիքն եկաւ. եւ կինն՝
(նորա հարսն) իրեն հ պատրաստեց։
8 Եւ արվիլաւ նորան՝ որ սպիտակ
սուրբ եւ լուսով փայլօղ բեհեզ
ձ հագնի. ինչու որ բեհեզը սրբոց
արդարութիւնն ղ է։
9 Եւ էրէցներիցը մինն ասումէր
ինձ. Գրէ՛ դա, Երանելի են այն
ամէնքն՝ որ կանչված են Գառի
հարսանիքի ճ ընթրիքը. (եւ ասաց
ինձ՝ սա են Աստուծոյ ճշմարիտ խօս-
քերը։)
10 Եւ ես վէր ընկայ նորա առա-
ջին որ երկրպագութիւն անեմ մ նո-
րան. եւ ասաց ինձ. Զգո՛յշ կաց՝
մի՛ ընկներ իմ առաջիս, ինչու որ
ես էլ ծառայ ընկեր եմ քեզ հետ
եւ քո եղբայրներիդ յ հետ, որ Յի-
սուսի Քրիստոսի վկայութիւնն ն ու-
նին. միայն Տէր Աստուծոյն երկր-
պագութիւն արա. (պատճառն որ
այդ տեսիլքդ եւ մարգարէութեան
հոգին Յիսուսի հաստատութեամբն
է.) ինչու որ Յիսուսի վկայութիւնը
Սուրբ Հոգովն է, որ մարգարէնե-
րումն էր։
11 Եւ տեսի երկինքը շ բացված,

լ Սաղ. ՃԼԴ. 1. ՃԼԵ. 1.
խ Գղ. ԺԱ. 18. Ի. 12.
ծ Եզեկ. Ա. 24. ԽԳ. 2. Գղ. ԺԴ. 2.
կ Գղ. ԺԱ. 15. 17. ԺԲ. 10. ԻԱ. 22.
հ Մատթ. ԻԲ. 2. ԻԵ. 10. Բ Կորնթ. ԺԱ. 2. Եփես. Ե. 32. Գղ. ԻԱ. 2. 9.
ձ Սաղ. ԽԵ. 13, 14. Եզեկ. ԺԶ. 10. Գղ. Գ. 18.
ղ Սաղ. ՃԼԲ. 9.
ճ Մատթ. ԻԲ. 2. 3. Ղու. ԺԴ. 15. 16.
մ Գղ. ԻԲ. 8.
յ Գործ. Ժ. 26. ԺԴ. 14, 15. Գղ. ԻԲ. 9.
ն Ա Յովհ. Ե. 10. Գղ. ԺԲ. 17.
շ Գղ. ԺԵ. 5.

ահա ձի սպիտակ. եւ որ հեծեալն էր ՚ի նմա՝ Հաւատարիմ եւ Ճշմարիտ, եւ արդարութեամբ դատի եւ պատերազմի։

12 Եւ աչք նորա բոց հրոյ, եւ ՚ի վերայ գլխոյ նորա պսակս բազումս. եւ ունէր անուն գրեալ, զոր ոչ ոք գիտէ՝ բայց միայն ինքն։

13 Եւ արկեալ զիւրեաւ հանդերձ ներկեալ արեամբ. եւ կոչէր անուն նորա՝ Բան Աստուծոյ։

14 Եւ զօրավարք երկնից՝ եւ զօրք երկնից գնեաց երթային նորա ձիովք սպիտակօք, զգեցեալ բեհեզս սուրբս եւ սպիտակս։

15 Եւ ՚ի բերանոյ նորա ելանէր սուր սրեալ. զի նովաւ հարցէ զազգս. եւ նա հովուեսցէ զնոսա գաւազանաւ երկաթեաւ. եւ նա կոխեսցէ զհնձան գինւոյ՝ ցասման բարկութեան Աստուծոյ Ամենակալի։

16 Եւ ունէր ՚ի վերայ պատմուճանի իւրոյ եւ ՚ի վերայ անդամոց իւրոց գիր գրեալ. ԹԱԳԱՒՈՐ ԹԱԳԱՒՈՐԱՑ, ԵՒ ՏԷՐ ՏԵՐԱՆՑ։

17 Եւ տեսի այլ հրեշտակ՝ որ կայր ՚ի վերայ արեգական, զի աղաղակեաց ՚ի ձայն մեծ ամենայն հաւուց թռուցելոց ընդ մէջ երկնից՝ ասելով. Եկայք ժողովեցարուք յընթրիս մեծին Աստուծոյ։

18 Եւ կերիջիք զմարմինս թագաւորաց, եւ (զմարմինս հզօրաց), եւ զմարմինս երիվարաց՝ եւ ամենայն հեծելոց ՚ի նոսա, եւ զմարմինս ազատաց եւ ծառայից՝ մեծի եւ փոքու։

եւ ահա մին սպիտակ ձի. եւ նա՝ որ նորա վերայ հեծած ʹէր, կոչւում Հաւատարիմ եւ ɔ Ճշմարիտ, եւ արդարութիւնով է դատաստան անում՝ եւ ъ կռւում։

12 Եւ նորա աչքերը կրակի ɛ բոց, եւ նորա գլխի վերայ շատ պսակներ = կար. եւ անուն ունէր գրած, որ նորանից ոչ մինը չի գիտում՝ բայց միայն ɛ ինքն։

13 Եւ իրեն վերայ արիւնով ներկած շոր էր ղ ձգել. եւ նորա անունն Աստուծոյ Բան էր ՟ կոչւում։

14 Եւ երկնքի զօրավարներն ու զօրքերը՝ նորա ետեւէն գնումէին սպիտակ – ձիով՝ սուրբ եւ սպիտակ բեհեզ = հագած։

15 Եւ նորա բերանիցը սրած սուր էր դուրս գալիս, որ նորանով զարկէ ՟ ազգերին. եւ նա երկաթէ գաւազանով կը հովուէ ⁺ նորանց. եւ Ամենակարող Աստուծոյ բարկութեան սրտմտութեան գինոյ հնձանը նա ոտքի ɾ կոխէ։

16 Եւ իրեն վերարկուին վերայ, եւ իրեն անդամներին վերայ գիր ունէր ɔ գրած. ԹԱԳԱՒՈՐՆԵՐԻ ԹԱԳԱՒՈՐ՝ ԵՒ ՏԷՐԵՐԻ – ՏԷՐ։

17 Եւ մէկ հրեշտակ տեսի՝ որ կանգնած էր արեգական վերայ, եւ մեծ ձայնով աղաղակեց եւ ամէն թռչունքներին՝ որ երկնքի մէջ թռչումէին՝ ‡ ասաց. Եկէք հաւաքւեցէք մեծ Աստուծոյ + ընթրիքը։

18 Եւ կերէք թագաւորների մարմինները, եւ ձիանքի՝ եւ նորանց վերայ ամէն հեծածների մարմինները, եւ ազատների եւ ծառաների՝ մեծի եւ փոքրի ° մարմինները։

ʹ Գլ. Զ. 2։
ɔ Գլ. Գ. 14։
ъ Եսայ. ԺԱ. 4։
ɛ Գլ. Ա. 14։ Բ. 18։
= Գլ. Զ. 2։
ɛ Գլ. Բ. 17։ Համար. 16։
ղ Եսայ. ԿԳ. 2, 3։
՟ Յովհ. Ա. 1։ Ա Յովհ. Ե. 7։
– Գլ. ԺԴ. 20։
= Մատթ. ԻԸ. 3։ Գլ. Դ. 4։ Է. 9։
՟ Եսայ. ԺԱ. 4։ Բ Թես. Բ. 8։
Գլ. Ա. 16։ Համար. 21։
⁺ Սաղ. Բ. 9։ Գլ. Բ. 27։ ԺԲ. 5։
ɾ Եսայ. ԿԳ. 3։ Գլ. ԺԴ. 19, 20։
ɔ Համար. 12։
– Դան. Բ. 47։ Ա Տիմ. Զ. 15։ Գլ. ԺԷ. 14։
‡ Համար. 21։
+ Եզեկ. ԼԹ. 17։
° Եզեկ. ԼԹ. 18. 20։

19 Եւ տեսի զգազանն՝ եւ զթա-
գաւորս երկրի՝ եւ զզօրս նոցա ժո-
ղովեալս առնել պատերազմ ընդ
այնմ, որ հեծեալն էր 'ի ձին սպի-
տակ՝ եւ ընդ զօրս նորա ։
20 Եւ ըմբռնեցաւ գազանն, եւ
որ ընդ նմա սուտ մարգարէն՝ որ
առնէր զնշանսն առաջի նորա, եւ
զորս մոլորեցոյց · եւ եա առնուլ
զդրոշմ գազանին՝ եւ զերկրպա-
գուս պատկերի նորա · եւ կենդա-
նւոյն արկին զնոսա 'ի լիճ հրոյ այ-
րեցելոյ ծծմբով ։

21 Եւ այլքն մեռան 'ի սրոյ հե-
ծելոյն 'ի վերայ ձիոյն · յորոյ բե-
րանոյ ելանէր սուրն · եւ ամենայն
թռչունք յագեցան 'ի մարմնոց նո-
ցա ։

19 Եւ տեսի ‡գազանին եւ երկրի
թագաւորներին եւ նորանց զօրքե-
րին միմեանց ժողոված՝ որ կռիւ
անեն նորա դէմ որ այն սպիտակ ձին
հեծել էր՝ եւ նորա զօրքերին ‡ դէմ,
20 Եւ գազանը բռնուեցաւ, եւ
նորա հետ սուտ մարգարէն էլ՝ որ
նշաններ էր անում նորա առաջին,
եւ նորանցով մոլորացրուց = նորանց՝
որ գազանի դրոշմն առին, եւ նո-
րանց էլ՝ որ երկրպագութիւն արին
նորա ‡ պատկերին · եւ նորանց այն-
պէս ‡ կենդանի ձգեցին կրակի լճին
մէջ՝ որ ծըծմբով ‡ այրւում է ։
21 Եւ ուրիշները մեռան այն ձիոյ
վերայ նստողի սրիցն, որ նորա բե-
րանիցը սուր էր դուրս ‡ գալիս ·
եւ ամէն ‡թռչուններքը կշտացան
նորանց ‡ մարմիններիցը ։

## Գլ. Ի

1 Եւ տեսի այլ հրեշտակ՝ զի է-
ջանէր յերկնից, եւ ունէր զփա-
կանս դժոխոց, եւ շղթայ մեծ 'ի
ձեռին իւրում ·
2 Եւ ըմբռնեաց զվիշապն (զօձն)
զառաջին, որ է Բանսարկուն եւ
Սատանայ, եւ կապեաց զնա հազար
ամ,
3 Եւ արկ զնա յանդունդս դժո-
խոց, եւ փակեաց եւ կնքեաց զնա՝
զի այլ մի եւս մոլորեցուսցէ զազ-
գս, մինչեւ կատարեսցի հազար
ամն · եւ յետ այնորիկ պարտ է լու-
ծանել նմա սակաւ մի ժամանակ ։
4 Եւ տեսի աթոռս · եւ նստան
'ի վերայ նոցա · եւ դատաստանու-
թիւն տուաւ նոցա, ըմբռնել զհո-
գիս չարչարելոցն վասն վկայու-
թեանն Յիսուսի՝ եւ վասն բանին

1 Եւ մին ուրիշ հրեշտակ տեսի՝
որ վէր էր գալիս երկնքիցը, եւ
դժոխքի բանալիքն ունէր, եւ մին
մեծ շղթայ իրեն = ձեռումը ։
2 Եւ այն առաջին վիշապին բռա-
նեց՝ որ է Բանսարկուն եւ Սատա-
նան, եւ նորան կապեց հազար
‡ տարի ·
3 Եւ ձգեց նորան դժոխքի ան-
դունդը, եւ փակեց՝ եւ կնիք դրաւ
նորա ‡ վերայ՝ որ էլ չը մոլորացնէ
ազգերին, մինչեւ որ հազար տարին
լցվի · եւ նորանից ետեւ պէտք է որ
նա մինչեւ ժամանակ ‡ արձակվի ։
4 Եւ աթոռներ տեսի, եւ նորանց
վերայ ‡ նստեցին · եւ դատաստանու-
թիւն արվիլաւ ‡նորանց, որ ըմբռնեն
նորանց հոգիքն որ գլխատվել էին
Յիսուսի վկայութեան համար՝ եւ Աս-

‡ Գլ. ԺԶ. 16. ԺԷ. 13, 14.
= Գլ. ԺԶ. 13, 14.
‡ Գլ. ԺԳ. 12. 15.
‡ Գլ. Ի. 10. Դան. Է. 11.
‡ Գլ. ԺԴ. 10. ԻԱ. 8.
‡ Համար. 15.
‡ Համար. 17. 18.
‡ Գլ. ԺԷ. 16.

—

= Գլ. Ա. 18. Բ. 1.
‡ Գլ. ԺԲ. 9. Բ Պետ. Բ. 4. Յուդ. 6.
‡ Դան. Զ. 17.
‡ Գլ. ԺԶ. 14. 16. Համար. 8.
‡ Դան. Է. 9. 22. 27. Մատթ. ԺԹ. 28. Ղուկ. ԻԲ. 30.
‡ Ա Կորնթ. Զ. 2, 3.

Աստուծոյ. եւ զորս ոչ երկիրպագին
գազանին, եւ ոչ առին զդրոշմ նո-
րա ՚ի ճակատս իւրեանց՝ եւ ոչ ՚ի
վերայ աջու ձեռին իւրեանց. եւ
կեցին՝ եւ թագաւորեցին ընդ Քրի-
ստոսի հազար ամ:

5 Եւ յետ այսորիկ ՚ի մեռելոց ոչ
ոք եկաց, մինչեւ ՚ի կատարել հա-
զար ամին. այս է յարութիւն ա-
ռաջին:
6 Երանի սրբոցն, որք ունին
բաժին ՚ի յարութեանն առաջնում,
՚ի վերայ սոցա երկրորդ մահն ոչ
ունի իշխանութիւն. այլ եղիցին
քահանայք Աստուծոյ՝ եւ Տեառն
Յիսուսի Քրիստոսի. եւ թագաւո-
րեսցեն ընդ նմա հազար ամ:
7 Եւ յետ հազար ամին լուծցի
զՍատանայ՝ եւ հանցէ ՚ի բանտէ
անտի. ելցէ եւ մոլորեցուսցէ զազ-
գըս ամենայն ընդ չորս կողմանս
երկրի. եւ զԳոգ եւ զՄագոգ ածցէ
՚ի ձեռն՝ ժողովել նոքօք զամենայն
զօրս ՚ի պատերազմ. որոց թիւ նո-
ցա իբրեւ զաւազ ծովու:
8 Եւ ելցեն ՚ի լայնութիւն երկրի,
եւ պատեսցեն շուրջ զբանակս սըր-
բոցն, եւ զքաղաքն սիրելւոյ:
9 Եւ իջցէ հուր յերկնից առ ՚ի
յԱստուծոյ՝ եւ կերիցէ զնոսա եւ
զզօրավարն նոցա զՍատանայ՝ որ
մոլորեցոյց զնոսա. եւ արկցէ ըզ
նոսա ՚ի ծով հրոյ եւ ծծմբոյ, ուր
էր գազանն՝
10 Եւ սուտ մարգարէն. եւ չար-
չարեսցին զտիւ եւ զգիշեր:

տուծոյ բանին ե համար. եւ նորանց
որ երկրպագութիւն չի արին գազա-
նին, (եւ ոչ էլ նորա ը պատկերին),
եւ նորա դրոշմը չառին իրենց ճա-
կատին՝ եւ ոչ էլ իրենց աջ ձեռին
թ վերայ. եւ սորանք կենդանացան՝
եւ Քրիստոսի հետ թագաւորութիւն
արին հազար ժ տարի:
5 Եւ սորանից ետեւ էլ ոչ մի չը
կենդանացաւ մեռելներիցը, մինչեւ
որ հազար տարի լցվի. սա է առա-
ջին յարութիւնը:
6 Երանի այն սրբերին, որ բաժին
ունին առաջին յարութեան մէջ.
սորանց վերայ իշխանութիւն չունի
երկրորդ ի մահը. բայց Աստուծոյ՝
եւ (Տէր Յիսուսի) Քրիստոսի քահա-
նայք լ կը լինին. եւ նորա հետ կը
թագաւորեն հազար խ տարի:
7 Եւ հազար տարուցն ետեւ՝ կար-
ձակէ Սատանային՝ եւ այն բանտիցը
ծ կը հանէ. եւ դուրս կը գայ եւ կը
մոլորացնէ բոլոր ազգերն որ երկրի
չորս կողմումն կ են. եւ Գոգն ու
Մագոգն էլ (իրեն ձեռքն հ կառնէ՝)
որ ամէն զօրքերն կռւի մէջ ժողո-
վէ. (որ նորանց համարը ծովի ա-
ւազի պէս ձ է.
8 Եւ դուրս կը գան երկրի լայ-
նութեան վերայ, եւ սրբերի բա-
նակները եւ սիրելի քաղաքը կը
պատեն չորս ղ կողմէ.
9 Եւ երկնքից կրակ վէր կը
գայ Աստուածանից՝ եւ կայրէ կը
սատակացնէ նորանց եւ նորանց
զօրագլուխ Սատանան՝ որ նորանց
ճ մոլորացրաց՝ կը ձգլի կրակի եւ
ծծմբի ծովը, որտեղ որ այն գա-
զանն՝ ու սուտ մարգարէն մ էին.
10 Եւ կը չարչարվին ցերեկ եւ
յ գիշեր:

ե Գլ. Զ. 9.
ը Գլ. ԺԳ. 12.
թ Գլ. ԺԳ. 15. 16.
ժ Համեմ. Ը. 17. Բ Տիմ. Բ. 12. Գլ. Ե. 10.
ի Գլ. Բ. 11. ԻԱ. 8.
լ Եսայ. ԿԱ. 6. Ա Պետ. Բ. 9. Գլ. Ա. 6. Ե. 10.
խ Համար. 4.
ծ Համար. 2.
կ Համար. 3. 9.
հ Եզեկ. ԼԸ. 2. ԼԹ. 1.
ձ Գլ. ԺԶ. 14.
ղ Եսայ. Ը. 8. Եզեկ. ԼԸ. 9. 16.
ճ Համար. 9.
մ Գլ. ԺԹ. 20.
յ Գլ. ԺԴ. 10. 11.

11 Եւ տեսի աթոռ սպիտակ մեծ. եւ 'ի վերայ նորա նստեալ՝ յորոյ երեսացն երկնչէին եւ փախնչէին երկինք եւ երկիր, եւ տեղի ոչ գտաւ նոցա։

12 Եւ տեսի զմեռեալս մեծամեծս եւ զփոքունս, որկային առաջի աթոռոյն. եւ գրեանք բանային. եւ այլ գիրք բացաւ կենաց, եւ դատեցան մեռեալք 'ի գրելոցն՝ ըստ գործոց իւրեանց։

13 Եւ ետ ծով զմեռեալս իւր, եւ մահ եւ դժոխք զիւրեանց մեռեալս. եւ դատեցան իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց։

14 Մահ եւ դժոխք մատնեցան 'ի լիճ հրոյն. (այս է մահն երկրորդ։)

15 Եւ որ ոք ոչ գտաւ 'ի գիրն կենաց գրեալ՝ արկաւ 'ի լիճ հրոյն։

11 Եւ մին սպիտակ մեծ աթոռ տեսի, եւ նորան էլ որ նորա վերայ նստած էր. որ նորա երեսիցն երկինքն ու երկիրը փախուստ էին եւ ն փախչում. եւ տեղ չը գտնուաւ նորանց ւ համար։

12 Եւ տեսի որ մեռելները՝ մեծ եւ փոքր՝ կանգնած էին աթոռի – առաջին. եւ գրքեր էին ւ բացվում. եւ մին ուրիշ գիրք բացվաւ, որ է կենաց [illegible], եւ մեռելները դատվեցան այն ղ գրքերիցն իրենց գործքերին է պէս։

13 Եւ ծովն իրեն մէջ մեռելներն տուաւ, եւ մահն եւ դժոխքն իրենց – մեռելները. եւ ամէն մէկն իրենց գործքերին պէս – դատվեցան։

14 Մահն ու դժոխքը մատնվեցան կրակի լճին ւ մէջ. (սա է երկրորդ – մահն)։

15 Եւ ով որ գրված չը գտաւ կենաց գրքին մէջ, կրակի լճին մէջ ր ձգվեցաւ։

## ԳԼ. ԻԱ.

1 Եւ տեսի երկինս նոր՝ եւ երկիր նոր. քանզի առաջինն երկինք եւ երկիր անցին. եւ ծով ոչ գոյր։

2 Եւ զքաղաքն սուրբ զնորն Երուսաղէմ տեսի՝ զի իջանէր յԱստուծոյ՝ եւ յերկնից, զարդարեալ եւ պատրաստեալ որպէս հարսն առն իւրոյ։

3 Եւ լուայ ձայն յերկնից՝ որ ասէր. Ահաւասիկ խորանն Աստուծոյ 'ի մէջ մարդկան, եւ բնակեսցէ

1 Եւ տեսի՝ նոր երկինք եւ նոր – երկիր. ինչու որ առաջին երկինքըն ու երկիրն ֆ անցաւ. եւ ծով էլ չը կար։

2 Եւ սուրբ՝ քաղաքն՝ այն նոր Երուսաղէմը տեսի՝ որ վէր էր գալիս ֆ Աստուածանից երկնքիցը՝ պատրաստված ինչպէս մին զարդարված հարսն իրեն մարդուն ֆ համար։

3 Եւ ձայն լսեցի երկնքիցն՝ որ ասում էր. Ահա Աստուծոյ խորանը մարդկանց միջումը, նա կը բնակվէ

ն բ Պետ. Գ. 7 10. 11. Գլ. ԻԱ. 1.
ւ Դան. Բ. 35.
– Գլ. ԺԹ. 5.
ւ Դան. Է. 10.
ղ Սաղ. ԿԹ. 28 Դան. ԺԲ. 1. Փիլիպ. Դ. 3. Գլ. Գ. 5. ԺԳ. 8. ԻԱ. 27.
է Երեմ. ԺԷ. 10. ԼԲ. 19. Մատթ. ԺԶ. 27. Հռովմ. Բ. 6. Գլ. Բ. 23. ԻԲ. 12. Համար. 13.
– Գլ. Զ. 8.
– Համար. 12.
ւ Ա Կորնթ. ԺԵ. 26. 54, 55.
ր Համար. 6. Գլ. ԻԱ. 8.
ր Գլ. ԺԹ. 20.

—

– Եսայ. ԿԵ. 17. ԿԶ. 22. բ Պետ. Գ. 13.
ֆ Գլ. Ի. 11.
ֆ Եսայ. ՆԲ. 1. Գաղ. Դ. 26. Եբր. ԺԱ. 10. ԺԲ. 22. ԺԳ. 14. Գլ. Գ. 12. Համար. 10.
ֆ Եսայ. ՆԴ. 5. ԿԱ. 10. բ Կորնթ. ԺԱ. 2.

ընդ նոսա . եւ նոքա ժողովուրդ
նմա , եւ սա Աստուած նոցա ։

4 Եւ ջնջեսցէ զամենայն արտասուս
յաչաց նոցա . եւ մահ ոչ եւս գոյ ,
ոչ սուգ՝ եւ ոչ աղաղակ , ոչ ցաւք՝
եւ ոչ աշխատանք ոչ եւս գոյ , զի
առաջինն էանց ։
5 Եւ ասաց ցիս՝ որ նստէր 'ի վե-
րայ աթոռոյն . Ահաւասիկ առնեմ
զամենայն նոր . եւ ասէ ցիս , Գրեա.
այս բանք ճշմարիտ եւ հաւատա-
րիմք ։
6 Եւ ասէ ցիս . Եղեւ՝ ես Ալֆա
եւ Ով , սկիզբն եւ կատարած . ես
ծարաւելոյն տամ յաղբերէ ջրոյ կե-
նաց ձրի ։
7 Որ յաղթէ , ժառանգեսցէ զայս
ամենայն . եւ ես եղէց նոցա Աս-
տուած , եւ նոքա եղիցին ինձ որ-
դիք ։
8 Եւ ծուլոյն եւ անհաւատից՝
սպանողաց եւ պոռնկաց՝ եւ կա-
խարդաց եւ կռապաշտից՝ եւ պե-
ղատուաց՝ եւ ամենայն ստոց՝ ամ-
բարշտաց , որոց բաժինն իւրեանց
'ի լճին այրեցելոյ հրով եւ ծծմբով .
որ է ՚մահն երկրորդ ։

9 Եւ եկն առ իս մի յեօթն հրեշ-
տակացն , որք ունէին զեօթն սկա-
ւառակսն լցեալս եօթն վախճանաւ
կատարածովք , խօսեցաւ ընդ իս
եւ ասէ . Ե՛կ ցուցից քեզ զհարսնն
եւ զկինն Գառինն ։
10 Եւ առ տարաւ զիս 'ի լեառն

նորանց հետ . եւ նորանք կը լլան
նորան ժողովուրդ , եւ ինքն նորանց
է Աստուած ։
4 Եւ ամէն արտասունքը կը սրբէ
նորանց աչքերիցը . եւ էլ մահ չի
ըլլալ , ոչ սուգ եւ ոչ աղաղակ .
եւ ոչ ցաւ եւ ոչ աշխատանք էլ չի
ըլլալ , ինչու որ առաջինն անցաւ ։
5 Եւ նա որ աթոռին վերայ նըս-
տած էր՝ ասաց ինձ . Ահա ամէն
բան նոր եմ շինում . եւ ասաց
ինձ . Գրէ . ինչու որ՝ այս խօսքերս
ճշմարիտ եւ հաւատարիմ է են ։
6 Եւ ինձ ասաց . Եղաւ . ես եմ
Ալֆան եւ Օն . սկիզբն ու վերջը .
ես ձրի կը տամ ծարաւներին կենաց
աղբիւրի ջրից ։
7 Ով որ յաղթէ , այս ամէնս կը
ժառանգէ . եւ ես կը լինիմ նորան
Աստուած, եւ նա կը լինի ինձ որդի

8 Բայց ծուլերին եւ անհաւատնե-
րին, մարդասպաններին եւ պոռնիկ-
ներին, եւ կախարդներին, եւ կռա-
պաշտներին՝ եւ մահագեղ սուօղնե-
րին՝ եւ ամէն սուտ ասօղներին՝ եւ
ամբարիշտներին՝ նորանց բաժինն
այն լճումը կը լինի որ կրակով եւ
ծըծմբով վառվում է . որ է երկրորդ
մահը ։
9 Եւ մինն այն եօթն հրեշտակ-
ներիցն՝ որ այն եօթն սկաւառակն
ունէին՝ վերջին եօթն պատուհաս-
ներովը լցված , ինձ մօտ եկաւ , խօ-
սեց ինձ հետ եւ ասաց . Ե՛կ ցոյց
տամ քեզ Գառին կին հարսը ։
10 Եւ հոգումն առաւ տարաւ ինձ

ի Ղե . ԻԶ . 11 , 12 . Եզեկ . ԽԶ . 7 . Բ Կորնթ . Զ . 16 . Գլ . Է . 15 .
ղ Եսայ . ԻԵ . 8 . Գլ . Է . 17 .
ժ Ա Կորնթ . ԺԵ . 26 . 54 . Գլ . Ի . 14 .
ը Եսայ . ԼԵ . 10 . ԿԱ . 3 . ԿԵ . 19 .
բ Գլ . Դ . 2 . 9 . Ե . 1 . Ի . 11 .
ծ Եսայ . ԽԳ . 19 . Բ Կորնթ . Ե . 17 .
է Գլ . ԺԹ : 9 .
ւ Գլ . ԺԶ . 17 .
ի Գլ . Ա . 8 . ԻԲ . 13 .
ծ Եսայ . ԺԲ ; 3 . ՆԵ . 1 . Յովհ . Դ . 10 . 14 . Է . 37 . Գլ . ԻԲ . 17 .
կ Զաք . Ը . 8 . Եբր . Ը . 10 .
հ Ա Կորնթ . Զ . 9 . 10 . Գաղ . Ե . 19 , 20 , 21 . Եփես ; Ե . 5 . Ա Տիմ . Ա . 9 . Եբր . ԺԲ . 14 . Գլ . ԻԲ . 15 .
յ Գլ . Ի . 14 , 15 .
ղ Գլ . ԺԵ . 1 . 6 , 7 .
ճ Գլ . ԺԹ . 7 . Հա-մար . 2 .

մի բարձր եւ մեծ՝ հոգւովն. եւ
եցոյց ինձ զքաղաքն մեծ եւ սուրբ՝
Երուսաղէմ. զի իջեալ էր յերկնից
առ 'ի յԱստուծոյ,
11 Եւ ունէր զփառս Աստուծոյ.
եւ էր 'ի նմա լուսաւորութիւն,
նմանեալ ականց պատուականաց՝
քար յասպիս սառնատեսակ եւ կեն-
դանի։
12 Եւ էին պարիսպք նորա մեծ
եւ բարձր, 'եւ ունէր դրունս եր-
կոտասան. եւ յերկոտասան դրուն-
սն երկոտասան հրեշտակս, եւ ան-
ուանք իւրաքանչիւրոցն 'ի վերայ
դրանցն գրեալ էին՝ ըստ երկոտա-
սան ցեղիցն Իսրայէլի։
13 Յարեւելից կողմանէ դրունք
երեք, եւ 'ի հիւսիսոյ կողմանէ
դրունք երեք, եւ 'ի հարաւոյ կող-
մանէ դրունք երեք, եւ յարեւմտից
կողմանէ դրունք երեք։
14 Եւ պարիսպ քաղաքին ունէր
հիմունս երկոտասան, եւ 'ի նոսա
երկոտասան անուանք երկոտասան
առաքելոց Գառինն։
15 Եւ որ խօսէրն ընդ իս, ունէր
եղէգն ոսկի 'ի ձեռին իւրում, զի
չափեսցէ զքաղաքն՝ եւ զդրունս
նորա՝ եւ զպարիսպս նորա։
16 Եւ էր քաղաքն քառակուսի.
եւ որչափ երկայնութիւն նորա՝
նոյնչափ եւ լայնութիւն՝ եւ բարձ-
րութիւն՝ հաւասար, եւ էր չափ
երկայնութեան նորա երկոտասան
հազար ասպարէզս. եւ լայնութիւն
նորա եւ բարձրութիւն միաչափ՝
կիփօս։
17 Եւ չափեաց զպարիսպն նորա՝
հարիւր եւ քառասուն եւ չորս աս-
պարէզ. չափ մարդոյ՝ որ է հրեշ-
տակի։
18 Եւ էր շինուած պարսպաց քա-
ղաքին յասպիս. եւ քաղաքն էր

մին բարձր մ սար, եւ ինձ ցոյց
տուաւ այն մեծ սուրբ քաղաքը՝
Երուսաղէմը, որ երկինքիցն էր վէր
եկել յ Աստուածանից։
11 Եւ Աստուծոյ փառքն ունէր.
եւ լուսաւորութիւն ունէր պատ-
ուական ակունքի պէս, ինչպէս սա-
ռուցի պէս պայծառ յասպիս քարի
ն նման։
12 Եւ նորա պարիսպները մեծ եւ
բարձր էին, եւ տասներկու դուռն
ունէր. եւ տասներկու դռնումն
տասներկու հրեշտակ. եւ ամէն մէկ
դռներին վերայ անուններ էին գը-
րած՝ որ Իսրայէլի տասներկու ցեղի
անուններն շ էին։
13 Արեւելքի կողմիցն երեք դու-
ռն, եւ հիւսիսի կողմիցն երեք
դուռն, եւ հարաւի կողմիցն երեք
դուռն, եւ արեւմուքի կողմիցն ե-
րեք ո դուռն։
14 Եւ քաղաքի պարիսպը տասն-
երկու հիմունք ունէր, եւ նորանց
վերայ Գառի տասներկու առաքելոց
տասներկու չ անունները։
15 Եւ նա որ ինձ հետ խօսումէր,
մին ոսկէ եղէգ ունէր իւրեն ձե-
ռումը, որ քաղաքը եւ նորա դըռ-
ները եւ նորա պարիսպները պ չափէ։
16 Եւ քաղաքը քառակուսի էր.
եւ որչափ նորա երկայնութիւնն էր,
այնչափ էլ նորա լայնութիւնը՝ եւ
բարձրութիւնը՝ հաւասար. եւ նորա
երկայնութեան չափը տասներկու
հազար ասպարէզ էր. եւ նորա լայ-
նութիւնն ու բարձրութիւնը միա-
չափ։
17 Եւ նորա պարիսպը չափեց հա-
րիւր եւ քառասուն եւ չորս աս-
պարէզ. մարդոյ չափովն՝ որ հրեշ-
տակինն է։
18 Եւ քաղաքի պարիսպների շի-
նուածքը յասպիս քարէ էր. եւ քա-

մ Գլ. Ա. 10։ ԺԷ. 3։
յ Եզեկ. ԽԸ։ Համար. 2։
ն Գլ. ԻԲ : 5։ Համար. 23։
շ Եզեկ. ԽԸ. 31—34։
ո Եզեկ. ԽԸ. 31—34։
չ Մատթ. ԺԶ. 18։ Գաղ. Բ. 9։ Եփես. Բ. 20։
պ Եզեկ. Խ. 3։ Զաք. Բ. 1։ Գլ. ԺԱ. 1։

ոսկի մաքուր՝ նման սուրբ եւ յս-
տակ ապակւոյ ։
19 Եւ հիմունք քաղաքին յամե-
նայն ականց պատուականաց . հիմն
առաջին պարսպին յասպիս , երկ-
րորդն շափիղա , երրորդն պղնձա-
գոյն , չորրորդն զմրուխտ ,
20 Հինգերորդն եղեգնաքար , վե-
ցերորդն սարդիոն , եօթներորդն
ոսկեքար , ութերորդն բիւրեղ , ին-
ներորդն տպազիոն , տասներորդն
քրիսոպրասոս , մետասանն յակինթ,
երկոտասանն ամեթուսս ։

21 Եւ էին երկոտասան 'դրունք
յերկոտասան մարգարտոց՝ միաձեւ.
եւ իւրաքանչիւրոյն դրունք՝ էին մի
մի դուռն 'ի միոյ միոյ մարգարտէ .
եւ ընդարձակութիւն քաղաքին ոսկի
մաքուր՝ որպէս զապակի պայծառ ։
22 Եւ տաճար ոչ տեսի 'ի նմա ,
քանզի Տէր Աստուած Ամենակալ
տաճար էր 'ի նմա՝ եւ Գառնն ։
23 Եւ քաղաքին չէին պէտք արե-
գական եւ լուսնի , զի լուսաւորես-
ցեն զնա . քանզի ~ փառքն Աստու-
ծոյ լուսաւորէին զնա յամենայն
ժամ . եւ ճրագ 'ի նմա Գառնն .
24 Եւ գնային հեթանոսք 'ի լոյս
նորա . եւ թագաւորք երկրի լու-
սազգեստ լինէին 'ի փառաց նորա ։
25 Եւ դրունք նորա ոչ փակէին
'ի տուէ եւ 'ի գիշերի , այլ բաց կա-
յին հանապազորդ . եւ գիշեր ոչ
եւս լինէր 'ի նմա ։
26 Այլ փառք եւ պատիւ ազգաց ։

27 Եւ ոչ մտցէ անդ ամենայն չա-
րակամ՝ եւ պիղծ եւ ստութիւն ,
բայց միայն որ գրեալ են 'ի դպրու-
թիւն կենաց Գառինն ։

ղաքն մաքուր ոսկի էր՝ յստակ եւ
սպիտակ ապակւոյ նման ։
19 Եւ քաղաքի հիմունքն ամէն
ազնիւ ականքներից էր . պարսպի
առաջին հիմն յասպիս , երկրորդը՝
շափիղայ , երրորդը՝ պղնձագոյն ,
չորրորդը՝ Լ զմրուխտ .
20 Հինգերորդը՝ եղնգնաքար , վե-
ցերորդը՝ սարդիոն , եօթներորդը՝
ոսկէքար, ութերորդը՝ բիւրեղ , ին-
ներորդը՝ տպազիոն , տասներորդը՝
քրիսոպրասոս , տասնեւմէկերորդը՝
յակինթ , տասներկուերորդը՝ ամէ-
թօս ։
21 Եւ տասներկու դուռն կար՝
տասներկու մարգարիտից՝ մէն ձե-
ւով . եւ ամէն մէկ դուռն մէնմէնմար-
գարիտից . եւ քաղաքի բաց փողոց-
ները յստակ ոսկի՝ ինչպէս պայծառ
~ ապակի ։
22 Եւ տաճար չը տեսի նորան մէջ ,
ինչու որ Տէր Աստուած Ամենակալո-
ղը՝ եւ Գառն էր տաճար նորա = մէջ ։
23 Եւ քաղաքը բնաւ արեգական
եւ լուսնի պէտք չունէր՝ որ լուսա-
ւորեն նորան . ինչու որ Աստուծոյ
փառքը միշտ լուսաւորումէր նորան,
եւ նորա ճրագը Գառնն Հ էր ։
24 Եւ հեթանոսներ նորա լուսովն
էին գնում . եւ երկրի թագաւոր-
ները նորա փառաց լոյսը ⁎ հագնում ։
25 Եւ նորա դռները չէին փակ-
վում ցերեկ եւ գիշեր , այլ միշտ
բաց էին ր մնում . եւ գիշեր էլ չէր
լինում նորան յ մէջ ։
26 Եւ ազգերի փառքն ու պա-
տիւը [illegible] նորա — մէջ ։
27 Եւ բնաւ չար կամք ունող չի
մտնիլ այն տեղ , եւ ոչ էլ պիղծ՝
եւ ‡ ստութիւն , բայց միայն նո-
րանք՝ որ Գառին կենաց գրքին մէջ
գրված + են ։

| | | | |
|---|---|---|---|
| Լ Եսայ . ԾԴ . 11 ։ | ԻԲ . 5 ։ Համար . 11 ։ | Զաք . ԺԴ . 7 ։ | Յովէլ . Գ . 17 ։ |
| ~ Գլ . ԻԲ . 2 ։ | ⁎ Եսայ . Կ . 3 , 5 . | Գլ . ԻԲ . 5 ։ | Գլ . ԻԲ . 14 , 15 ։ |
| = Եզեկ . Դ . 23 ։ | 11 ։ ԿԶ . 12 ։ | — Համար . 24 ։ | + Փիլիպ . Դ . 3 ։ |
| Հ Եսայ . ԻԴ . 23 ։ | ր Եսայ . Կ . 11 ։ | ‡ Եսայ . ԼԵ . 8 ։ | Գլ . Գ . 5 ։ ԺԳ . |
| Կ . 19 ։ 20 ։ Գլ . | յ Եսայ . Կ . 20 ։ | ԾԲ . 1 ։ Կ . 21 ։ | 8 ։ Ի . 12 ։ |

## ԳԼ · ԻԲ

1 Եւ եցոյց ինձ մաքուր գետ
կենդանի ջրոյ՝ սառնատեսակ, որ
ելանէր յաթոռոյն Աստուծոյ եւ
Գառինն ։

2 Եւ գնայր 'ի մէջ հրապարակաց
քաղաքին · եւ զեղերբ գետոյն աստի
եւ անտի ծառ կենաց՝ որ բերէր
պտուղս երկոտասան · ըստ միոյ միոյ
ամսոյ տայքն զպտուղս իւրեանց ,
եւ տերեւ ծառոյն էր բժշկութիւն
հեթանոսաց ։

3 Եւ նզովք անդ ոչ եւս էին ·
եւ աթոռն Աստուծոյ եւ Գառին
նորա էր 'ի նմա · եւ ծառայք նորա
պաշտէին զնա ։
4 Եւ տեսանէին զերեսս նորա ·
եւ անունն նորա գրեալ էր 'ի ճա-
կատս նոցա ։
5 Եւ գիշեր ոչ անդ՝ եւ չէր ինչ
անդ պէտք ճրագի եւ լուսոյ արե-
գական · վասն զի 'Տէր Աստուած
լուսաւորէր զնոսա · եւ թագաւո-
րեսցեն յաւիտեանս յաւիտենից ։

6 Եւ ասէ ցիս · Այս բանք հա-
ւատարիմ է եւ ճշմարիտ · եւ Տէր
Աստուած մարգարէից սրբոց՝ առա-
քեաց զհրեշտակ իւր՝ ծառայից իւ-
րում ցուցանել՝ զոր լինելոց է վաղ-
վաղակի ։
7 Ահա գամ վաղվաղակի · երանի՝
որ պահէ զբանս մարգարէութեանս
գրոյս ։
8 Եւ ես Յովհաննէս լուայ՝ եւ
տեսի զայս ամենայն · եւ յորժամ
լուայ եւ տեսի , անկայ՝ եւ երկիր-

1 Եւ ինձ մի մաքուր գետ ցոյց
տուաւ , կենդանի ջրի՝ սառուցի
նման փայլուն , որ Աստուծոյ եւ
Գառի աթոռիցն էր դուրս ա գա-
լիս ։
2 Եւ քաղաքի բաց փողոցներին
միջովն բ գնում · եւ գետի եզերքն
այս կողմից այն կողմից կենաց ծառ
կայ՝ որ տասներկու պտուղ էր գ բե-
րում · ամէն մէկ ամսին իրենց պը-
տուղը տալիս էին · եւ ծառի տե-
րեւը բժշկութիւն էր հեթանոսնե-
րին դ համար ։
3 Եւ այնտեղն էլ բնաւ նզովք
ե չը կար · եւ Աստուծոյ եւ Գառի
աթոռն էր զ նորանում · եւ նորա
ծառաները պաշտում էին է նորան ։
4 Եւ նորա երեսը տեսնում էին ·
եւ նորա անունը գրված էր նորանց
ը ճակատումը ։
5 Եւ գիշեր չը կար այնտեղ , եւ
բնաւ ճրագի եւ արեգական լոյս
պէտք չէր թ այնտեղ · պատճառն որ
Տէր Աստուածը լուսաւորում էր ժ նո-
րանց · եւ կը թագաւորեն յաւի-
տեանս ի յաւիտենից ։
6 Եւ ասաց ինձ · Այս խօսքերս
հաւատարիմ եւ ճշմարիտ լ են · եւ
Տէրը սուրբ մարգարէից Աստուածը
իրեն հրեշտակն ուղարկեց՝ որ իրեն
ծառաներին 'ցոյց տայ նա որ շու-
տով պիտի խ լինի ։
7 Ահա շուտով ծ կը գամ · երանի
նորան՝ որ այս գրքի մարգարէու-
թեան խօսքերը կ կը պահէ ։
8 Եւ ես Յովհաննէս այս ամէն
բաները լսեցի եւ տեսի · եւ երբոր
լսեցի եւ տեսի , վեր ընկայ՝ որ եր-

ա Եզեկ. ԽԷ. 1 ։ Զաք. ԺԴ. 8 ։
բ Եզեկ. ԽԷ. 12 ։ Գլ. ԻԱ. 21 ։
գ Ծննդ. Բ. 9 ։ Գլ. Բ. 7 ։
դ Գլ. ԻԱ. 24 ։
ե Զաքար. ԺԴ. 11 ։
զ Եզեկ. ԽԸ. 35 ։
է Մատթ. Ե. 8 ։ Ա Կորնթ. ԺԳ. 12 ։ Ա Յովհ. Գ. 2 ։
ը Գլ. Գ. 12 ։ ԺԴ. 1 ։
թ Գլ. ԻԱ. 23. 25 ։
ժ Սաղ. ԼԶ. 9 ։ ՁԴ. 11 ։
ի Դան. Է. 27 ։ Հռովմ. Ե. 17 ։ Բ Տիմ. Բ. 12 ։ Գլ. Գ. 21 ։
լ Գլ. ԺԹ. 9 ։ ԻԱ. 5 ։
խ Գլ. Ա. 1 ։
ծ Գլ. Գ. 11 ։ Համար. 10. 12. 20 ։
կ Գլ. Ա. 3 ։

ոտից հրեշտակին՝ որ ցուցանէր ինձ զայս ամենայն։

9 Եւ ասէ ցիս. Մի՛ անկանիր առաջի իմ՝ եւ երկիր պագաներ. քանզի եւ ես ծառայակից քո եմ եւ եղբարց քոց՝ որ պահեսցեն զբան մարգարէութեան գրոյս այսորիկ. Աստուծոյ երկիր պագ։

10 Եւ ասէ ցիս դարձեալ. Մի՛ կնքեր զբանս մարգարէական գրոցս այսմիկ. քանզի ժամանակս մերձ է։

11 Որ ամպարշտանալոցն է՝ ամպարշտեսցի, եւ որ աղտեղանալոցն է՝ աղտեղասցի, եւ որ արդարանալոցն է՝ արդարասցի, եւ որ սրբելոցն է՝ սրբեսցի։

12 Ահա գամ վաղվաղակի՝ եւ վարձք իմ ընդ իս, հատուցանել իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց։

13 Ես եմ Ալփայ եւ Ով, սկիզբն եւ կատարած, առաջին եւ վերջին։

14 Երանելիք են՝ որ պահեն զպատուիրանս նորա. նոցա ունիցին իշխանութիւն ուտել ՚ի փայտէն կենաց՝ եւ մտանել ընդ դրունս քաղաքին։

15 Այլ եղիցին արտաքս՝ շունք եւ դեղատուք եւ սպանօղք եւ կռապաշտք, եւ ամենեքեան որ սիրեն զստութիւն։

16 Ես Յիսուս առաքեցի զհրեշտակ իմ վկայել զայս ձեզ եկեղեցեացդ. ես արմատ եւ ազգ ՚ի Դաւ-

կրկրպագութիւն ընել այն հրեշտակին, որ այս ամէն բաները ցոյց կու տար ինծի։

9 Եւ ինծի ըսաւ. Մի՛ ընկներ իմ առջեւ եւ երկրպագութիւն մի՛ անէր. ինչու որ ես ալ ծառայ ընկեր եմ քեզ եւ քու եղբայրներուդ՝ որ այս գրքիս մարգարէութեան խօսքերը կը պահեն. Աստուծոյն երկրպագութիւն արա։

10 Եւ ըսաւ դարձեալ ինծի. Մի՛ կնքեր այս գրքի մարգարէական խօսքերը. ինչու որ ժամանակը մօտեցեր է։

11 Ով որ ամբարիշտ է՝ թող ամբարշտանայ, եւ ով որ կեղտոտ է՝ թող կեղտոտուի, եւ ով որ արդար է՝ թող ալ արդարանայ, եւ ով որ սուրբ է՝ թող ալ սրբուի։

12 Ահա շուտով կը գամ՝ եւ իմ վարձքս ալ ինծի հետ. որ ամէն մէկին հատուցանեմ իրեն գործքին պէս։

13 Ես եմ Ալֆան եւ Օն. սկիզբն ու կատարածը, առաջինն ու վերջինը։

14 Երանելի են նորանք՝ որ նորա պատուիրանքները կը պահեն. նորանք իշխանութիւն ունին որ կենաց փայտէն ուտեն՝ եւ քաղաքի դռնէն ներս մտնեն։

15 Բայց դուրս պիտի մնան շուները, եւ մահադեղ տուողները, սպանողները, եւ կռապաշտները, եւ այն ամէնքն որ ստութիւն են սիրում։

16 Ես՝ Յիսուս իմ հրեշտակս ուղարկեցի՝ որ վկայէ ձեզ եկեղեցիներին՝ այս բաներու համար. ես եմ

ճ Գլ. ԺԹ. 10։
մ Գլ. ԺԹ. 10։
յ Դան. Ը. 26։ ԺԲ. 4. 9։ Գլ. Ե. 4։
ն Գլ. Ա. 3։
շ Եզեկ. Գ. 27։ Դան. ԺԲ. 10։
ո Բ Տիմ. Գ. 13։
չ Համար. 7։
պ Եսայ. Խ. 10։ ԿԲ. 11։
ջ Հռովմ. Բ. 6։ ԺԴ. 12։ Գլ. Ի. 12։
ռ Եսայ. ԽԱ. 4։
ԽԴ. 6։ ԽԸ. 12։ Գլ. Ա. 8. 11։ ԻԱ. 6։
ս Դան. ԺԲ. 12։ Ա Յովհ. Գ. 24։
վ Համար. 2։ Գլ. Բ. 7։
տ Գլ. ԻԱ. 27։
ր Ա Կորնթ. Զ. 9, 10։ Գաղ. Ե. 19, 20, 21։ Կող. Գ. 6։ Գլ. Թ. 20, 21։ ԻԱ. 8։
ց Փիլիպ. Գ. 2։
ւ Գլ. Ա. 1։

թայ , եւ աստղ պայծառ առաւօ-
տին ։
17 Եւ Հոգի , եւ փեսայն՝ որ գա-
լոցն եմ․ եւ *որ լսէ՝ ասասցէ թէ
Ե՛կ , եւ որ ծարաւի իցէ՝ եկեսցէ ,
եւ որ ոք կամի առնուլ զՋուրն կե-
նաց ձրի ։
18 Վկայեմ ես ամենայնի՝ որ
լսէ զբանս մարգարէութեան գրոցս
այսմիկ․ թէ ոք յաւելցէ 'ի սա ,
յաւելցէ Աստուած 'ի վերայ նորա
զեօթն հարուածսն՝ գրեալս 'ի գիրս
յայս ։

19 Եւ եթէ ոք պակասեցուսցէ 'ի
բանից մարգարէութեան գրոցս այս-
միկ՝ պակասեցուսցէ եւ հասցէ Աս-
տուած զբաժին նորա 'ի ծառոյն կե-
նաց՝ եւ 'ի քաղաքէն սրբոց՝ որ
գրեալ է 'ի գիրս յայս ։
20 Ասաց՝ որ վկայեացն զայս․ Գամ
ես վաղվաղակի․ Ամէն ։ Ե՛կ Տէր
Յիսուս Քրիստոս ։
21 Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի 'ի վերայ ամենայն սրբոց․
Ամէն ։

Դաւթի արմատն ու + ցեղը , եւ
առաւօտու պայծառ = աստղը ։
17 Եւ Հոգին՝ եւ հարսն ասումեն
= Ե՛կ․ եւ նա որ լսումէ՝ թող ասէ՝
Ե՛կ․ եւ ով որ ծարաւ է՝ թող գայ ,
եւ նա որ կամենումէ կենաց ջուրը
ձրի – առնել ։
18 Ես վկայումեմ ամէնին՝ ով որ
այս գրքի մարգարէութեան խօս-
քերը լսումէ․ թէ որ մէկն բան ա-
ւելացնէ սորա + վերայ , Աստուած
կաւելացնէ նորա վերայ այն եօթն
պատուհասներն՝ որ այս գրքումս
գրուած են ։
19 Եւ թէ որ մէկն այս գրքիս մար-
գարէութեան խօսքերից բան պա-
կասացնէ , Աստուած կը պակասա-
ցնէ եւ կը կտրէ նորա բաժինը կե-
նաց + ծառից , եւ սրբերի քաղա-
քիցն՝ որ այս գրքումս գրուած * են ։
20 Նա որ այս բաները վկայեց՝ ա-
սաց․ Ես շուտով + կը գամ․ – Ամէն։
Ե՛կ Տէր + Յիսուս ։
21 Մեր Տէր Յիսուսի Քրիստոսի
շնորհքը լինի ամէն սրբերին վերայ *
+ Ամէն ։

+ Գլ․ Ի․ 5․
բ Թու․ ԻԴ․ 17․
Զաք․ Զ․ 12․ Բ
Պետ․ Ա․ 19․
Գլ․ Բ․ 28։
գ Գլ․ ԻԱ․ 2․ 9․

– Եսայ․ ԾԵ․ 1․
Յովհ․ Է․ 37․
Գլ․ ԻԱ․ 6․
+ Բ Օրին․ Դ․ 2․
ԺԲ․ 32։ Առակ․
Լ․ 6․

+ Եսայ․ ԼԲ․ 33․
Սաղ․ ԿԹ․ 28․
Գլ․ Գ․ 5․ ԺԳ․
8․
* Գլ․ ԻԱ․ 2․
+ Հռով․ 12։

– Յովհ․ ԻԱ․ 5․
Բ Բ Տիմ․ Դ․ 8․
+ Հռովմ․ ԺԶ․ 20․
24․ Բ Թես․ Գ․
18․

## ՎԱԽՃԱՆ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

ՀԱՅԿ. ... ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
...ЧНАЯ БИБЛИОТЕКА
7/XI 1922
ИМЕНИ А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

25n,

1291

1291